Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material



ԱԲՐԱՀԱՄ
ԳՐԻԳՅ

ARAKEL

TERTSAHAKIAN

ՄԱՇՏՈՑԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱՀԱՆ

2 բայի կենացը տարիքը։ Եւ Սար-
բան մեռաւ Կարիաթարբայումը,
որ է Քեբրոն՝ Քանանի երկրումը.
և Աբրահամն եկաւ որ Սարբայի
3 համար սուգ անէ և ողբայ։ Եւ
Աբրահամն իր մեռելի առաջից
վեր կացաւ և Քետի որդիների
4 հետ խօսեց ասելով, Ես ձեր մէջ
օտարական և պանդուխտ եմ, ձեր
մէջ ինձ գերեզմանի ստացուածք
տուէք, որ իմ երեսի առաջից
5 մեռելս թաղեմ։ Եւ Քետի որ-
դիքը պատասխանեցին Աբրահա-
6 մին, և նորան ասեցին. Տէր իմ,
լսիր մեզ, դու մեր մէջ մի իշ-
խան Աստուծոյ ես. մեր գերեզ-
մանների ընտիրումը թաղիր քո
մեռելը. մեզանից մէկը չի խնա-
յիլ իր գերեզմանը քեզանից քո
7 մեռելը թաղելու։ Եւ Աբրահա-
մը վեր կացաւ, և խոնարհու-
թիւն արաւ այն երկրի ժողովրդ-
8 դին՝ Քետի որդիներին. Եւ նո-
րանց հետ խօսեց ասելով, Եթէ
ձեր մտքումը կայ, որ ես իմ ե-
րեսի առաջից մեռելս թաղեմ,
ինձ լսեցէք, և ինձ համար Սա-
հառի որդի Եփրոնի հետ խօսե-
9 ցէք, Որ ինձ տայ *Մաքփելայի
այրը, որ նորանն է, և նորա ար-
տի ծայրումն է. լիքը գինով ինձ
տայ, որ գերեզմանի ստացուածք
10 ունենամ ձեր մէջ։ Եւ Եփրոնը
նստել էր Քետի որդկանց մէջ։
Եւ Քետացի Եփրոնը պատասխա-
նեց Աբրահամին Քետի որդկանց
ականջի առաջին՝ այն ամենքի ա-
ռաջին որ դռնովը մտնում էին,
11 և ասեց. Ոչ, տէր իմ, ինձ լսիր.
արտը քեզ տուի և այրն էլ, որ
նորանում է, քեզ տուի այն, իմ
ժողովուրդի որդոց աչքի առա-
ջին քեզ տուի այն. թաղիր քո
12 մեռելը։ Եւ Աբրահամն այն երկ-
րի ժողովրդի առաջին խոնար-
13 հութիւն արաւ. Եւ Եփրոնի
հետ խօսեց այն երկրի ժողովրդի
ականջի առաջին և ասեց. Ո՛հ
եթէ դու մէկ ինձ լսէիր. ես
արտի փողը տամ. առ ինձանից,
և ես մեռելս այնտեղ թաղեմ։

*Կրկնութիւն։

Եւ Եփրոնը պատասխանեց Աբ- 14
րահամին և նորան ասեց. Տէր 15
իմ, ինձ լսիր. տափը չորս հա-
րիւր սիկղ արծաթ է. իմ ու քո
մէջ դա ինչ է. ուրեմն թաղիր
քո մեռելը։ Եւ Աբրահամը լսեց 16
Եփրոնին, և Աբրահամը կշռեց
արծաթը Եփրոնին [illegible], ինչպէս
նա Քետի որդկանց առաջին խօ-
սել էր, [illegible] չորս հարիւր
սիկղ արծաթ՝ վաճառականների
մէջ անցնող։ Եւ հաստատուե- 17
ցաւ Եփրոնի արտը, որ Մաքփե-
լայումը Մամբրէի դիմացն է, ար-
տը և այն այրը, որ նորանում է,
և շուրջանակի նորա սահմանն-
երի մէջ եղած արտի միջի բոլոր
ծառերը Աբրահամի վերայ իբրև 18
ստացուածք Քետի որդկանց աչ-
քի առաջին, այն ամենի [illegible],
որ նորա քաղաքի դռնովը մտ-
նում են։ Եւ սորանից յետոյ 19
Աբրահամն իր կին Սարբային թա-
ղեց Մամբրէի դիմացի Մաքփե-
լայի արտի այրումը, որ է Քեբրոն՝
Քանանի երկրումը։ Եւ հաստատ- 20
ուեցաւ արտը և այրը, որ նորա-
նում էր, Աբրահամի վերայ, որ
գերեզմանի ստացուածք լինի,
Քետի որդիներից։

ԳԼ ԻԴ

Եւ Աբրահամը ծեր էր և օ- 1
րերն անցկացրած, և Եհովան ա-
մեն բանում օրհնել էր Աբրա-
համին։ Եւ Աբրահամն ասեց իր 2
ծառային՝ իր տան երէցին, որ իր
բոլոր ունեցածի վերակացուն էր,
թէ Զեռքդ իմ երանքի տակը
դիր. Եւ ես քեզ երդում եմ 3
տալիս Եհովայով երկնքի Աստու-
ծովը և երկրի Աստուծովը, որ իմ
որդու համար կին չ՚առնես Քա-
նանացիների աղջիկներիցը, որոնց
մէջ ես բնակվում եմ։ Այլ 4
իմ երկիրն և իմ ազգականների
մօտ գնաս, և իմ որդի Իսահակի
համար կին առնես։ Եւ ծառան 5
ասեց նորան. Գուցէ այն կինը
չ՚ուզենայ իմ ետևից այս երկիրը
գալ. արդեօք քո որդին դար-
ձընեմ տանեմ այն երկիրը, որ-

6 տեղից դու դուրս ես եկել։ Եւ
Աբրահամն ասեց նորան. Զգու-
շացիր որ իմ որդին այն տեղ չը
7 դարձնես։ Եհովան՝ երկնքի Աստ-
ուածը, որ ինձ իմ հօր տանիցն
և իմ ծնած երկրիցը հանեց, և
որ խօսեց ինձ հետ, և որ երդում
արաւ ինձ, ասելով, Այս երկի-
րը քո սերունդին կ'տամ, նա իր
հրեշտակը կ'ուղարկէ քո առա-
ջին, և դու այն տեղից իմ որ-
8 դու համար կին կ'առնես։ Եւ
եթէ կինը քո ետևից գալ չ'ու-
զէ, այն ժամանակ դու իմ այս
երդումիցը անպարտ ես, միայն
թէ իմ որդին այնտեղ չ'դարձը-
9 նես։ Եւ ծառան իր ձեռքը դը-
բաւ իր տիրոջ Աբրահամի երան-
քի տակ և այս բանի համար եր-
դում արաւ նորան։
40 Եւ ծառան իր տիրոջ ուղտե-
րից տասը ուղտ առաւ ու գնաց,
ըստ որում իր տիրոջ բոլոր բա-
րիքները իր ձեռքին էր. և վեր
կացաւ ու գնաց Միջագէտ Նա-
44 քովրի քաղաքը։ Եւ քաղաքի
դրսումը ուղտերը նստեցրեց մի
ջրհորի մօտ իրիկուայ դէմ ջուր
քաշող կանանց դուրս գալիս
42 ժամանակը, Եւ ասեց. Ով Եհո-
վայ՝ իմ տիրոջ Աբրահամի Աստ-
ուած, հանդիպեցրու իմ առա-
ջին այսօր, և իմ տիրոջ Աբրա-
համին բարերարութիւն արա.
43 Ահա ես ջրի աղբիւրի մօտ կը
կանգնեմ. և այս քաղաքի մարդ-
կանց աղջկերքը դուրս են գալիս
44 ջուր հանելու։ Եւ լինի՝ այն աղ-
ջիկը որին որ ես ասեմ, Սափորդ
ցածացրու որ խմեմ, և նա ասէ
թէ Խմիր, և քո ուղտերին էլ
կ'խմեցնեմ, նա լինի քո ծառայ
Իսահակի համար սահմանածդ.
և սորանով գիտենամ որ իմ
տիրոջը բարերարութիւն արիր։
45 Եւ եղաւ որ նա տակաւին իր
խօսքը չէր վերջացրել, և ահա
Աբրահամի եղբայր Նաքովրի կնոջ
Մեղքայի որդու Բաթուէլի ծը-
նած Ռեբեկան դուրս եկաւ, սա-
46 փորը ուսին։ Եւ աղջիկը մի շատ
գեղեցիկ տեսքով կոյս էր, և
մարդ նորան գիտեցած չէր. և
նա իջաւ աղբիւրը, և իր սափո-
րը լցրեց ու վեր գնաց։ Եւ ծա- 47
ռան նորան դիմաւորելու վազեց,
և ասեց. Սափորիցդ ինձ մի քիչ
ջուր խմեցրու։ Եւ նա ասեց. 48
Խմիր, տէր իմ. և շուտով սա-
փորը իր ձեռքի վերայ իջեցրեց,
և խմեցրեց նորան։ Եւ երբոր նո- 49
րան խմեցրեց պրծաւ, ասեց. Ուղ-
տերիդ էլ ջուր քաշեմ մինչև
որ ամենքը խմեն վերջացնեն։ Եւ 20
շուտով սափորը աւազանի մէջ
թափեց, և դարձեալ հորի մօտ
վազեց ջուր քաշելու, և նորա
բոլոր ուղտերի համար ջուր քա-
շեց։ Բայց այն մարդը զարմանա- 21
լով նորա վերայ լռած մտածում
էր, թէ արդեօք Եհովան նորա
ճանապարհը յաջողել է, թէ ոչ։
Եւ երբոր ուղտերը խմելը վեր- 22
ջացրին, մարդը մի ոսկի օղակ ա-
ռաւ կէս սիկղ ծանր, և նորա
ձեռքերի համար երկու ապա-
րանջան հանեց՝ տասը սիկղ ոս-
կի. Եւ ասեց. Դու ո՞ւմ աղջիկն 23
ես, ասա ինձ. քո հօր տանը մեզ
համար իջևանելու տեղ կայ։ Եւ 24
նա ասեց նորան. Ես Մեղքայի
որդի Բաթուէլի աղջիկն եմ, որ
Նաքովրի համար ծնեց։ Նաև ա- 25
սեց նորան. Մենք յարդ և ճա-
րակ շատ ունինք, և իջևանելու
տեղ ԵԼ։ Եւ մարդը խոնահեց և 26
Եհովային երկրպագութիւն ա-
րաւ. Եւ ասեց. Օրհնեալ լինի 27
իմ տիրոջ Աբրահամի Եհովայ
Աստուածը, որ իր ողորմութիւնն
ու ճշմարտութիւնը իմ տէրից
չէ զրկում. ես ճանապարհումը
լինելով Եհովան ինձ իմ տիրոջ
եղբայրների տունն առաջնորդեց։
Եւ աղջիկը վազեց, և այս բանե- 28
րը պատմեց իր մօրը։
Եւ Ռեբեկան մի եղբայր ու- 29
նէր Լաբան անունով. և Լաբա-
նը դուրս վազեց այն մարդի մօտ
դէպի աղբիւրը. Որովհետև տես- 30
նելով օղակը և իր քրոջ ձեռ-
քերին ապարանջանները և լսե-
լով իր քրոջ Ռեբեկայի խօսքե-
րը, որ ասում էր թէ այն մարդը
այսպէս խօսեց ինձ հետ, այն
մարդի մօտ եկաւ. և ահա նա

կանգնել էր ուղտերի մօտ աղ-
34 բիւրի կշտին. Եւ ասեց. Եկ, ով
Եհովայի օրհնեալ, ինչո՞ւ ես
դուրսը կանգնել. և ես տունը
պատրաստել եմ, և ուղտերի
32 համար էլ տեղ։ Եւ մարդը ե-
կաւ տունը. և ուղտերի կապերը
լուծեց, և ուղտերին յարդ ու
ճարակ տուաւ, և ջուր՝ նորա
ոտքերը և նորա հետ լինող մարդ-
կանց ոտքերը լուանալու համար։
33 Եւ նորա առաջին կերակուր դը-
ուեցաւ որ ուտէ. բայց նա ա-
սեց. Չեմ ուտիլ, մինչև որ իմ
խօսքերը չ'խօսիմ. և ասեց. Խօ-
34 սիր։ Եւ նա ասեց. Ես Աբրահա-
35 մի ծառան եմ. Եւ Եհովան շատ
օրհնել է իմ տիրոջը, և նա մի
մեծ մարդ է. և նորան հօտեր և
արջառներ, և արծաթ և ոսկի,
և ծառաներ ու աղախիններ, և
36 ուղտեր ու էշեր է տուել։ Եւ
իր կինը Սարրան իր պառաւու-
թիւնիցը յետոյ մի որդի ծնեց
իմ տիրոջ համար, որ բոլոր իր
37 ունեցածը նորան է տուել։ Եւ
իմ տէրն ինձ երդում անել
տուաւ ասելով, Իմ որդու հա-
մար կին չ'առնես Քանանացիների
աղջիկներիցը, որոնց երկրումը ես
38 բնակվում եմ. Այլ իմ հօր
տունն ու իմ ազգատոհմի մօտ
գնա, և իմ որդու համար կին
39 առ։ Եւ ես ասեցի իմ տիրոջը.
Գուցէ այն կինը իմ ետևիցը չը
40 գայ։ Եւ նա ասեց. Եհովան, որի
առաջին ես վարվում եմ, իր
հրեշտակը քեզ հետ կ'ուղարկէ,
և քո ճանապարհը կը յաջողուի,
և իմ որդու համար իմ ազգա-
տոհմիցը և իմ հօր տանիցը կին
41 կ'առնես։ Իսկ այն ժամանակ իմ
42 երդումիցն անպարտ կ'լինիս։ Եւ
այսօր աղբիւրի մօտ եկայ, և ա-
սեցի. Ով Եհովայ՝ իմ տիրոջ
Աբրահամի Աստուած, եթէ այս
իմ ճանապարհը, որ ես նորանով
գնում եմ, դու յաջողում ես,
43 Ահա ես ջրի աղբիւրի մօտ կը
կանգնեմ. և լինի այն աղջիկը,
որ ջուր քաշելու գայ, և ես նո-
րան ասեմ թէ Ինձ քո սափորի-
44 ցը մի քիչ ջուր խմեցրու, Եւ
նա ինձ ասէ՝ Դու էլ խմիր և
ուղտերիդ համար էլ ջուր կ'քա-
շեմ, նա լինի այն կինը որ Եհո-
վան սահմանել է իմ տիրոջ որ-
դու համար։ Եւ ես տակաւին 45
խօսքս չէի վերջացրել սրտումս,
և ահա Ռեբեկան դուրս եկաւ
սափորը ուսին, և իջաւ աղբիւ-
րը, և ջուր քաշեց. և ես ասեցի
նորան՝ Ինձ ջուր խմեցրու։ Եւ 46
նա շուտով իր սափորը իր ուսի
վերայից իջեցրեց, և ասեց. Խմիր
և ուղտերիդ էլ կ'խմեցնեմ. և
ես խմեցի, և ուղտերին էլ խը-
մեցրեց։ Եւ հարցրի նորանից և 47
ասեցի. Դու ո՞ւմ աղջիկն ես.
նա էլ ասեց. Մեղքայի Նաքով-
րի համար ծնած որդու Բաթու-
էլի աղջիկն եմ. այն ժամանակ
օղակը նորա քիթը, և ապարան-
ջանները նորա ձեռքերն անցրի։
Եւ խոնարհեցի և Եհովային եր- 48
կրպագութիւն արի, և իմ տի-
րոջ Աբրահամի Եհովայ Աստ-
ուածն օրհնեցի, որ ինձ ուղիղ
ճանապարհով առաջնորդեց որ
իմ տիրոջ եղբօր աղջիկն իր որ-
դու համար առնեմ։ Եւ արդ 49
եթէ իմ տիրոջը շնորհք և հա-
ւատարմութիւն էք անելու, ինձ
պատմեցէք. և եթէ ոչ, ինձ ա-
սեցէք. որ ես աջ կամ ձախ
դառնամ։ Եւ Լաբանը և Բա- 50
թուէլը պատասխանեցին և ասե-
ցին. Այս բանը Եհովայիցն է
դուրս եկել. մենք քեզ վատ
կամ լաւ չենք կարող ասել։
Ահա Ռեբեկան քո առջևն է, առ 51
և գնա. և թող քո տիրոջ որ-
դու համար կին լինի, ինչպէս Ե-
հովան ասել է։ Եւ եղաւ երբոր 52
Աբրահամի ծառան նորանց խօս-
քերը լսեց, մինչև գետինը երկրը-
պագութիւն արաւ Եհովային։
Եւ ծառան արծաթեղէն զարդեր 53
և ոսկեղէն զարդեր և հանդերձ-
ներ հանեց, և Ռեբեկային տուաւ.
և նորա եղբօրը և մօրը պատուա-
կան ընծաներ տուաւ։ Եւ կերան 54
և խմեցին ինքը և այն մարդիկը որ
նորա հետ էին, և գիշերը մնա-
ցին. և առաւօտանց վեր կացան,
և նա ասեց. Ինձ ճանապարհ դը-

55 բէք դէպի իմ տէրը։ Եւ նորա
եղբայրը և մայրն ասեցին. Թող
աղջիկը մի քանի օր կամ տասը
օր մեզ մօտ կենայ, յետոյ կը
56 գնայ։ Եւ նա ասեց նորանց. Ինձ
մի ուշացնէք, որովհետև Եհովան
յաջողել է իմ ճանապարհը. ինձ
ճանապարհեցէք, և ես իմ տիրոջ
57 մօտ գնամ։ Եւ նորանք ասեցին.
Աղջկանը կանչենք և նորա բե-
58 րանը հարցնենք։ Եւ կանչեցին
Ռեբեկային, ու ասեցին նորան.
Այս մարդի հետ կ'գնա՞ս. և նա
59 ասեց՝ Կ'գնամ։ Եւ ճանապար-
հեցին իրանց քրոջը Ռեբեկային
և նորա դայեակին, և Աբրահա-
մի ծառային և նորա մարդկան-
60 ցը։ Եւ օրհնեցին Ռեբեկային և
ասեցին նորան. Ով մեր քոյր,
շատ և շատ հազարներ դառնաս
և քո սերունդն իր թշնամիների
61 դուռը ժառանգէ։ Եւ վեր կա-
ցաւ Ռեբեկան և իր աղախին-
ները և հեծան ուղտերը, և
այն մարդի ետևիցը գնացին. և
ծառան առաւ Ռեբեկային և
գնաց։
62 Եւ Իսահակը ետ դառած գա-
լիս էր Լահայ-բոյի ջրհորիցը. ո-
րովհետև հարաւային երկրումն
63 էր բնակվում։ Եւ Իսահակն ի-
րիկուայ դէմ դաշտն էր դուրս
եկել *մտածելու. և իր աչքերը
բարձրացրեց և մտիկ տուաւ, և
64 ահա ուղտեր էին գալիս։ Եւ Ռե-
բեկան իր աչքերը բարձրացրեց,
և Իսահակին տեսաւ, և ուղտիցն
65 իջաւ. Եւ ասեց ծառային. Այդ
մարդը ո՞վ է որ դաշտումը մեր
առաջն է գալիս։ Եւ ծառան ա-
սեց. Նա իմ տէրն է։ Եւ նա
66 քօղն առաւ և ծածկուեց։ Եւ
ծառան պատմեց Իսահակին բո-
67 լոր բաները որ արել էր։ Եւ Ի-
սահակը նորան իր մօր Սարրայի
վրանը տարաւ, և առաւ Ռեբե-
կային, և նա նորա կին եղաւ. և
նա սիրեց նորան։ Եւ Իսահակ
մխիթարուեցաւ իր մօրից յե-
տոյ։

*Կամ աղօթելու

ԳԼ. ԻԵ

Եւ Աբրահամը դարձեալ կին 1
առաւ, և նորա անունը Քետու-
րա էր։ Եւ նա Զեմրանին և Յեկ- 2
սանին և Մադանին և Մադիանին
և Յեսբոնին և Սովէին ծնեց նո-
րա համար։ Եւ Յեկսանը ծնեց 3
Սաբային և Դեդանին. և Դեդա-
նի որդիքն էին Ասուրիմ և Լա-
տուսիմ և Լովոմիմ։ Եւ Մա- 4
դիանի որդիքը՝ Գեփա և Ափէր
և Ենովք և Աբիդա և Ելդագա
էին, սորանք ամենը Քետուրայի
որդիքն էին։
Եւ Աբրահամն իր բոլոր ունե- 5
ցածը տուաւ Իսահակին. Բայց 6
Աբրահամի հարճերի որդկանցը
Աբրահամը պարգևներ տուաւ,
և նորանց իր որդի Իսահակի մօ-
տիցը՝ քանի որ տակաւին կեն-
դանի էր՝ դէպի արևելք արևել-
եան երկիրը արձակեց։
Եւ սա է Աբրահամի կենաց 7
տարիների օրերը որ ինքը ապրեց,
հարիւր եօթանասունեւ հինգ տա-
րի։ Եւ Աբրահամը լաւ ծերու- 8
թեամբ ալևորած և իր օրերիցը
կշտացած աւանդեց իր հոգին և
մեռաւ, և իր ժողովրդին խառ-
նուեցաւ։ Եւ իր որդիքը Իսա- 9
հակը և Իսմայէլը թաղեցին նո-
րան Մաքփելայի պրումը, որ Քե-
տացի Սահառի որդի Եփրոնի
արտումը Մամբրէի դիմացն է.
Այն արտը որ Աբրահամը Քետի 10
որդիներիցը ծախու առել էր.
այն տեղ թաղուեցաւ Աբրահա-
մը և իր կինը Սարրան։
Եւ եղաւ որ Աբրահամի մեռ- 11
նելուց յետոյ Աստուած օրհնեց
նորա որդի Իսահակը. և Իսահա-
կը Լահայ-բոյի ջրհորի մօտ էր
բնակվում։
Եւ սորանք են Աբրահամի որ- 12
դի Իսմայէլի ծնունդքը, որին
Սարրայի Եգիպտացի աղախին Հա-
գարը ծնեց Աբրահամի համար։
Եւ Իսմայէլի որդկանց անունները 13
սորանք են իրանց անուններովը
և իրանց ծնունդներովը. Իսմայէ-
լի անդրանիկը Նաբէօթ, յետոյ
Կեդար և Ադբեէլ և Մաբսամ,

14 Եւ Մասմա և Դումա և Մասսէ,
15 Քոդադ և Թեմա, Յետուր, Նա-
16 փէս և Կեդմա, Սորանք են Իս-
մայէլի որդիքը. և սորանք են նո-
րանց անուններն իրանց վրաններ-
ովը և իրանց գեղերովը՝ տասներ-
կու իշխաններ էին իրանց ազգե-
17 րի համեմատ։ Եւ սա է Իսմայէ-
լի կենաց օրերը՝ հարիւր երեսուն-
և եօթը տարի. և իր հոգին ա-
ւանդեց և մեռաւ, և իր ժողո-
18 վրդին խառնուեցաւ։ Եւ Իսմայէ-
լայիք բնակուեցին Եւիլայից մին-
չև Սուր, որ Եգիպտոսի դիմացը
Ասորեստան գնալու ճանապարհի
վերայ է. բոլոր իր եղբայրների
առջև բնակուեց։
19 Եւ Աբրահամի որդի Իսահակի
ծնունդները սորանք են. Աբրա-
20 համը ծնեց Իսահակին։ Եւ Իսա-
հակը քառասուն տարեկան էր,
երբոր Միջագետից Ասորի Բա-
թուէլի աղջիկ՝ Ասորի Լաբանի
քոյր Ռեբեկային իրան կին ա-
21 ռաւ։ Եւ Իսահակն աղաչեց Ե-
հովային իր կնոջ համար որ ա-
մուլ էր. և Եհովան լսեց նորա
աղաչանքը. և նորա կինը Ռեբե-
22 կան յղացաւ։ Եւ տղերքը խա-
ղում էին նորա արգանդումը. և
նա ասեց. Եթէ այսպէս է, ին-
չո՞ւ եղա ինձ այս. և գնաց Ե-
23 հովային հարցնելու։ Եւ Եհովան
ասեց նորան. Երկու ազգեր կան
արգանդիդ մէջ, և երկու ժո-
ղովուրդներ կ'բաժանուին քո ո-
րովայնից. և ժողովրդի մէկը միւ-
սից զօրաւոր կ'լինի, և մեծը
24 կ'ծառայէ փոքրին։ Եւ երբոր նո-
րա օրերը լրացան որ ծնէր, և ա-
հա երկուորեակ էին նորա ար-
25 գանդումը։ Եւ առաջինը ելաւ
կարմրագոյն, բոլոր մարմինը մազոտ
վերարկուի պէս էր. և նորա ա-
26 նունը *Եսաւ դրին, Եւ նորանից
յետոյ ելաւ նորա եղբայրը, և
նորա ձեռքը բռնել էր Եսաւի
գարշապարիցը, և նորա անունը
†Յակոբ դրին. և Իսահակը վաթ-
սուն տարեկան էր նորանց ծնե-

*Մազոտ
†Գարշապար բռնող

լու ժամանակը։ Եւ մանուկները 27
մեծացան. և Եսաւը վարպետ որ-
սորդ՝ դաշտի մարդ եղաւ. իսկ
Յակոբը համեստ մարդ էր և բը-
նակվում էր վրանների մէջ։ Եւ 28
Իսահակը սիրում էր Եսաւին,
որովհետև որս էր ուտում. բայց
Ռեբեկան Յակոբին էր սիրում։
Մի օր Յակոբը թան էր եփում. 29
Եսաւը դաշտից եկաւ և սոված
թուլացած էր։ Եւ Եսաւը ասեց 30
Յակոբին. Խնդրեմ՝ այդ շիկա-
թանիցը թող տուր ուտեմ. ո-
րովհետև ես թուլացել եմ. սո-
րա համար անունը *Եդովմ կոչ-
ուեցաւ։ Եւ Յակոբն ասեց. 31
Ծախիր ինձ վերայ այս օր քո
անդրանկութիւնը։ Եւ Եսաւն ա- 32
սեց. Ահա ես գնալով մեռնելու
եմ, և ի՞նչ պէտք է ինձ անդ-
րանկութիւն։ Եւ Յակոբն ասեց. 33
Այս օր ինձ երդում արա. և նա
երդում արաւ նորան, և իր անդ-
րանկութիւնը ծախեց Յակոբին։
Եւ Յակոբն Եսաւին հաց և ոսպի 34
թան տուաւ, և նա կերաւ և
խմեց, և վեր կացաւ և գնաց. և
Եսաւն անարգեց անդրանկու-
թիւնը։

ԳԼ. ԻԶ

Եւ երկրի մէջ սով եղաւ բացի 1
այն առաջի սովից որ Աբրահամի
օրերում եղել էր. և Իսահակը
գնաց Փղշտացիների Աբիմելէք
թագաւորի մօտ Գերար։ Եւ Ե- 2
հովան երևեցաւ նորան, և ասեց.
Եգիպտոս մի իջնիր, բնակուիր
այն երկրումը որ քեզ կ'ասեմ։
Պանդուխտ եղիր այս երկրի մէջ. 3
և ես քեզ հետ կ'լինիմ և քեզ
կ'օրհնեմ. որովհետև քեզ և քո
սերունդին եմ տալու բոլոր այս
երկիրները, և կ'հաստատեմ այն
երդումը որ երդուեցի քո հայր
Աբրահամին. Եւ կ'շատացնեմ 4
քո սերունդը երկնքի աստղերի
չափ, և բոլոր այս երկիրները քո
սերունդին կ'տամ. և երկրի բո-
լոր ազգերը քո սերունդովը կ'օրհ-

*Կարմիր

5 նուին։ Նորա համար որ Աբրա-
համն իմ ձայնին լսեց, և պահեց
իմ հրամանները և իմ պատուի-
րանքները և իմ կանոնները ու
իմ օրէնքները։
6 Եւ Իսահակը բնակուեց Գե-
7 րարումը։ Եւ այն տեղի մարդիկը
հարցրին նորանից նորա կնոջ մա-
սին. և նա ասեց. Իմ քոյրն է
նա. որովհետև վախեց ասելու՝
թէ Իմ կինն է, մի գուցէ այս
տեղի մարդիկը ինձ սպանեն Ռե-
բեկայի պատճառով. որովհետև
8 տեսքով գեղեցիկ էր։ Եւ եղաւ
երբոր նա երկար ժամանակ այն
տեղ կացաւ, Փղշտացիների թա-
գաւորը Աբիմելէքը պատուհա-
նից նայեց և տեսաւ, և ահա Ի-
սահակն իր կնոջ Ռեբեկայի հետ
9 խաղում էր։ Եւ Աբիմելէքը կան-
չեց Իսահակին և ասեց. Ահա
հէնց քո կինդ է նա. և ի՞նչպէս
ասեցիր՝ Նա իմ քոյրն է. և Ի-
սահակն ասեց նորան. Որովհետև
ասեցի Մի գուցէ նորա պատճա-
40 ռով մեռնիմ։ Եւ Աբիմելէքն
ասեց. Սա ի՞նչ է որ մեզ արիր.
քիչ էր մնացել որ ժողովրդից
մէկը քո կնոջ հետ պառկել էր,
և դու մեր վերայ յանցանք բե-
41 րած կ'լինէիր։ Եւ Աբիմելէքը հրա-
մայեց բոլոր ժողովրդին ասելով,
Ով որ այս մարդին կամ նորա
կնոջը դպչելու լինի, մահով պի-
տի մեռնի։
42 Իսահակն այն երկրի մէջ ցա-
նեց և այն տարին հարիւրի չափ
արդիւնք գտաւ. և Եհովան օրհ-
43 նեց նորան։ Եւ մարդը բարձրա-
ցաւ, և քանի գնաց մեծացաւ,
44 մինչև որ շատ մեծացաւ։ Եւ ոչ-
խարներ, և արջառներ, և շատ
ծառաներ ունեցաւ, և Փղշտա-
45 ցիք նախանձեցին նորան։ Եւ իր
հօր Աբրահամի օրերումն իր հօր
ծառաների փորած բոլոր ջրհոր-
ները Փղշտացիք գոցեցին, և հո-
46 ղով լցրին նորանց։ Եւ Աբիմե-
լէքն ասեց Իսահակին. Գնա մե-
զանից, որովհետև մեզանից շատ
47 աւելի զօրաւոր եղար։ Եւ Ի-
սահակը գնաց այն տեղից և իր
վրանները Գերարի ձորումը բա-
ցաւ, և այն տեղ բնակուեց։
Եւ Իսահակը դարձեալ այն 48
ջրհորները փորեց, որ իր հօր օ-
րերումը փորել էին և որ Փղշ-
տացիք գոցել էին Աբրահամի
մեռնելուց յետոյ. և նորանց ա-
յն-ա-ի-ի անուններ դրաւ, ինչպիսի
անուններ դրել էր իր հայրը։ Եւ 49
Իսահակի ծառաները փորեցին
ձորումը, և այն տեղ մի կենդա-
դանի ջրի ջրհոր գտան։ Եւ Գե- 20
րարի հովիւները կռվում էին Ի-
սահակի հովիւների հետ ասելով՝
Այդ ջուրը մերն է. և այն ջրհո-
րի անունը դրաւ *Լսէք, որովհե-
տև իրար հետ կռուեցին։ Եւ մի 21
ուրիշ ջրհոր փորեցին, և նորա
վերայ էլ կռուեցին, և նորա ա-
նունը դրաւ †Սիթնա։ Եւ այն 22
տեղից չուեց, և մի ուրիշ հոր
փորեց, և նորա վերայ չ'կռուե-
ցին, և նորա անունը դրաւ ‡Ռո-
հոբոթ, և ասեց թէ Հիմա Եհո-
վան մեզ ընդարձակեց, և երկրի
մէջ պտղաբեր կ'լինինք։
Եւ այն տեղից ելաւ Բերսաբէէ։ 23
Եւ Եհովան երևեցաւ նորան այն 24
գիշերը և ասեց. Ես եմ քո հօր
Աբրահամի Աստուածը, մի վա-
խիր, որովհետև ես քեզ հետ
եմ. և կ'օրհնեմ և կ'շատցնեմ
քո սերունդը իմ ծառայ Աբրա-
համի պատճառով։ Եւ այն տեղ 25
սեղան շինեց և Եհովայի անունը
կանչեց, և այն տեղ բացաւ իր
վրանը. և այն տեղ Իսահակի
ծառաները ջրհոր քանդեցին։
Եւ Աբիմելէքը գնաց նորա մօտ 26
Գերարից, ու նորա բարեկամնե-
րից Ոքոզաթը և նորա սպարա-
պետը Փիքող։ Եւ Իսահակն ա- 27
սեց. Ինչո՞ւ համար էք եկել ինձ
մօտ, քանի որ դուք ինձ ատում
էք, և ինձ ձեր մօտիցը դուրս ա-
րիք։ Եւ նորանք ասեցին. Մենք 28
տեսանք որ Եհովան քեզ հետ
է, և ասեցինք թող երդում լինի
մեր մէջ այսինքն մեր ու քո մէջ,
և քեզ հետ ուխտ դնենք, Որ 29

*Կռիւ
†Թշնամութիւն
‡Ընդարձակութիւն

մեզ չար բան չ'անես, ինչպէս որ
մենք էլ քեզ չենք դպել, և
ինչպէս որ քեզ հետ միայն բա-
րի վարուեցինք, և քեզ խաղա-
ղութեամբ ճանապարհեցինք.
դու հիմա Եհովայի օրհնեալն ես։
30 Եւ նա նորանց համար խնջոյք ա-
րաւ. և նորանք կերան ու խմե-
31 ցին։ Եւ առաւօտանց կանուխ
վեր կացան և իրար երդում ա-
րին. և Իսահակը նորանց ճանա-
պարհեց, և նորանից գնացին խա-
32 ղաղութեամբ։ Եւ եղաւ այն ժա-
մանակ որ Իսահակի ծառաները
եկան և նորան պատմեցին այն
ջրհորի մասին որ փորում էին,
և ասեցին նորան ԲԷ Ջուր ենք
33 գտել։ Եւ նորա անունը դրաւ
*Սաբէէ. սորա համար այն քա-
ղաքի անունը †Բերսաբէէ է մին-
չև այսօր։
34 Եւ Եսաւը քառասուն տարե-
կան էր, երբոր Քետացի Բէերի
աղջիկ Յուդիթին և Քետացի Ե-
լօնի աղջիկ Բասեմաթին կին ա-
35 ռաւ։ Եւ սորանք Իսահակի և
Ռեբեկայի համար հոգու դառ-
նութիւն եղան։

ԳԼ. ԻԷ

1 Եւ եղաւ երբոր Իսահակը ծե-
րացաւ, և աչքերը տկարացան
տեսնելուց, իր մեծ որդի Եսաւին
կանչեց և ասեց նորան. Որդի։ Եւ
2 նա ասեց նորան, Ահա ես։ Եւ
ասեց. Ահա ես ծերացել եմ,
3 չ'գիտեմ իմ մեռնելու օրը. Եւ
հիմա առ դու քո գործիքը՝ քո
կապարճը և քո աղեղը, և դուրս
եկ գնա դաշտը, և ինձ համար
4 մի որս որսա. Եւ ինձ համար
խորտիկներ շինիր ինչպէս որ ես
սիրում եմ, և բեր ինձ մօտ որ
ուտեմ, և նորա համար օրհնէ
քեզ իմ հոգին՝ ես տակաւին
5 չ'մեռած։ Եւ Ռեբեկան լսում էր
Իսահակը իր որդի Եսաւի հետ
խօսելիս։ Եւ Եսաւը դուրս գնաց
դաշտը, որ որս որսայ և բերէ։
Եւ Ռեբեկան խօսեց իր որդի 6
Յակոբին ասելով. Ահա լսեցի որ
հայրդ խօսում էր քո եղբայր Ե-
սաւի հետ և ասում. Ինձ հա- 7
մար որս բեր, և ինձ համար խոր-
տիկներ շինիր, որ ուտեմ և օրհ-
նեմ քեզ Եհովայի առջև իմ
մեռնելուց առաջ։ Եւ հիմա, որ- 8
դիս, լսիր իմ ձայնին ինչ որ ես
քեզ պատուիրում եմ։ Գնա հօ- 9
տերի մօտ և այն տեղից ինձ հա-
մար երկու լաւ այծի ուլեր բեր.
և ես նորանցից խորտիկներ շի-
նեմ քո հօր համար ինչպէս որ
նա սիրում է։ Եւ դու կ'տանես 10
քո հօր մօտ և նա կ'ուտէ, և նո-
րա համար կ'օրհնէ քեզ իր մեռ-
նելուց առաջ։ Եւ Յակոբն ա- 11
սաց իր մայր Ռեբեկային. Ահա
եղբայրս Եսաւը մազոտ մարդ է,
իսկ ես լերկ մարդ եմ։ Գուցէ 12
իմ հայրն ինձ շօշափէ, և նորա
աչքին զզուելի լինիմ, և ինձ վե-
րայ անէծք բերեմ և ոչ թէ օրհ-
նութիւն։ Եւ մայրն ասեց նորան. 13
Քո անէծքն իմ վերայ, որդիս,
միայն թէ լսիր իմ ձայնին, և
գնա բեր ինձ համար։ Եւ նա գը- 14
նաց, առաւ և բերաւ իր մօր հա-
մար. և նորա մայրը խորտիկներ
շինեց ինչպէս նորա հայրը սիրում
էր։ Եւ Ռեբեկան առաւ իր մեծ 15
որդի Եսաւի ազնիւ հանդերձնե-
րը, որ տանն իր մօտ էր, առաւ
և հագցրեց իր փոքր որդի Յակո-
բին։ Եւ այծի ուլերի մորթերն 16
հագցրեց նորա ձեռքերին և վզի
լերկ տեղին։ Եւ խորտիկները և 17
այն հացն էլ, որ շինել էր, տուաւ
իր որդի Յակոբի ձեռքը։
Եւ նա գնաց իր հօր մօտ և 18
ասեց. Հայր իմ։ Եւ նա ասեց.
Ահա ես. դու ո՞վ ես, որդիս։ Եւ 19
Յակոբն ասեց իր հօրը. Ես քո
անդրանիկ Եսաւն եմ. ես արի
ինչպէս որ ասեցիր ինձ. վեր կաց,
նստիր, և կեր իմ որսիցը, որ քո
հոգին ինձ օրհնէ։ Եւ Իսահակն 20
ասեց իր որդուն. Սա ի՞նչ շու-
տով գտար, որդիս։ Եւ նա ա-
սեց. Որովհետև քո Եհովայ Ա-
ստուածը հանդիպեցրեց իմ առ-
ջև։ Եւ Իսահակն ասեց Յակո- 21

*Երդում
†Երդման ջրհոր

բին. Մօտեցիր և թող քեզ շօ-
շափեմ, որդիս, թէ արդեօք
դու ես իմ որդի Եսաւը, թէ ոչ։
22 Եւ Յակոբը մօտեցաւ իր հայր
Իսահակին, և նա շօշափեց նո-
րան և ասեց. Զայնը Յակոբի ձայ-
նն է, իսկ ձեռքերը Եսաւի
23 ձեռքերը։ Եւ չ'ճանաչեց նորան,
որովհետև ձեռքերը նորա եղ-
բայր Եսաւի ձեռքերի պէս մա-
24 զոտ էին. և օրհնեց նորան. Եւ
ասեց. Սա դո՞ւ ես, իմ որդի Ե-
25 սաւ։ Եւ նա ասեց. Ես եմ։ Եւ
ասեց. Մօտեցրու ինձ որ ուտեմ
իմ որդու որսերը որ դորա հա-
մար օրհնէ քեզ իմ հոգին։ Եւ
նա մօտեցրեց նորան, և նա կե-
բաւ, և նորա համար գինի բե-
26 բաւ, և նա խմեց։ Եւ նորա հայ-
րը Իսահակն ասեց նորան. Մօ-
տեցիր ինձ և համբուրիր ինձ,
27 որդիս։ Եւ նա մօտեցաւ և համ-
բուրեց նորան, և նա հոտոտաց
նորա հանդերձների հոտը և օրհ-
նեց նորան, և ասեց. Տես իմ
որդու հոտը՝ այն արտի հոտի
նման է, որն որ օրհնեց Եհովան։
28 Եւ Աստուած տայ քեզ երկնքի
ցօղիցը և երկրի պարարտութիւ-
նիցը, և ցորենի և գինու առա-
29 տութիւն։ Ազգեր ծառայեն քեզ
և ժողովուրդներ քեզ երկրպա-
գեն. քո եղբօր վերայ իշխան ե-
ղիր. և քո մօր որդիքը քեզ եր-
կրպագեն. քեզ անիծողներն ա-
նիծեալ և քեզ օրհնողներն օրհ-
նեալ լինին։
30 Եւ եղաւ երբոր Իսահակը Յա-
կոբին օրհնեց վերջացրեց, և ե-
ղաւ հէնց որ Յակոբը դուրս ե-
կաւ իր հօր Իսահակի առջևից,
նորա եղբայր Եսաւը եկաւ որ-
31 սիցը։ Նա էլ խորտիկներ շինեց
և բերաւ իր հօր մօտ, և ասեց
հօրը. Վեր կաց, հայր իմ, և
կեր քո որդու որսիցը, որ քո հո-
32 գին ինձ օրհնէ։ Եւ նորա հայր
Իսահակը ասեց նորան. Դու ո՞վ
ես։ Եւ նա ասեց. Ես քո անդ-
33 րանիկ որդի Եսաւն եմ։ Եւ Ի-
սահակը մեծ սարսափով սաստիկ
սարսափեց և ասեց. Ապա նա ո՞վ
էր, որ որս էր որսել և բերել
ինձ համար, և ես ամենիցը կե-
բայ քո գալուց առաջ և օրհնե-
ցի նորան. Նա օրհնուած էլ կ'մը-
նայ։ Եւ երբ որ Եսաւը լսեց իր 34
հօր խօսքերը, մեծ և դառն ա-
ղաղակով սաստիկ լաց եղաւ, և
ասեց իր հօրը. Ինձ էլ օրհնիր,
հայր իմ, ինձ էլ։ Եւ նա ասեց. 35
Քո եղբայրն եկաւ նենգութեամբ
և առաւ քո օրհնութիւնը։ Եւ 36
նա ասեց. Մի՞թէ նորա անունը
Յակոբ չեն ասում. և ահա սա
երկու անգամ է որ ինձ խաբել է.
իմ անդրանկութիւնն առաւ, և
հիմա էլ ահա օրհնութիւնս ա-
ռաւ. և ասեց. Ինձ համար օրհ-
նութիւն չե՞ս թողել։ Եւ Իսա- 37
հակը պատասխանեց և ասեց Ե-
սաւին. Ահա նորան քեզ վերայ
իշխան դրի, և իր բոլոր եղբայրնե-
րը տուի նորան ծառաներ լինելու
համար. և ցորենով ու գինով
հաստատեցի նորան. և հիմա
քեզ ի՞նչ անեմ, որդիս։ Եւ Ե- 38
սաւն ասեց իր հօրը. Մի՞թէ դու
մէկ հատ օրհնութիւն ունիս,
հայր իմ. ինձ էլ օրհնիր, հայր
իմ։ Եւ Եսաւը բարձրացրեց իր
ձայնը և լացաւ։ Եւ նորա հայր 39
Իսահակը պատասխանեց և ասեց
նորան. Ահա երկրի պարարտու-
թիւնը լինի քո բնակարանը՝ և
երկնքի ցօղիցը վերևից։ Եւ քո 40
սրովն ապրես. և քո եղբօրը ծա-
ռայես, և կ'լինի որ երբ դու
քաշուիս նորա լուծը քո վզի
վրայից կոտրես։
Եւ Եսաւն ատում էր Յակո- 41
բին այն օրհնութեան համար, որ
հայրը նորան օրհնեց. և Եսաւն
ասում էր իր սրտումը, իմ հօր
համար սգի օրերը մօտենում են.
և ես սպանելու եմ իմ եղբայր
Յակոբին։ Եւ Ռեբեկային պատ- 42
մեցին իր մեծ որդի Եսաւի բա-
ները, և մարդ ուղարկեց և կան-
չեց իր փոքր որդի Յակոբին և
ասեց նորան. Ահա քո եղբայրն
Եսաւը քեզանից վրէժխնդիր է,
որ քեզ սպանէ։ Եւ հիմա, որ- 43
դիս, լսիր իմ ձայնին, և փախիր
գնա իմ եղբայր Լաբանի մօտ
խառան։ Եւ բնակիր նորա մօտ 44

25 աղախին տուաւ։ Եւ եղաւ ա-
ռաւօտանց, և ահա նա Լիան
էր. և Յակոբը Լաբանին ասեց.
Ի՞նչ է սա որ դու ինձ արել ես.
մի՞թէ ես քեզ Ռաքէլի համար
չեմ ծառայել. ապա ինչո՞ւ հա-
26 մար ինձ խաբեցիր։ Եւ Լաբանն
ասեց. Մեր երկրումն այսպէս չեն
անիլ. որ փոքրը մեծից առաջ
27 տան։ Լրացրու այս եօթնեակը,
և ես սորան էլ կ'տամ քեզ այն
ծառայութեան համար որ ինձ
ծառայես ուրիշ եօթը տարի էլ։
28 Եւ Յակոբն այնպէս արաւ, և
այն եօթնեակն էլ լրացրեց, և
Լաբանն իր Ռաքէլ աղջիկը նո-
29 րան կին տուաւ։ Եւ Լաբանն իր
աղախին Բաղղան իր աղջիկ Ռա-
30 քէլին աղախին տուաւ։ Եւ նա
Ռաքէլի մօտ էլ մտաւ, և Ռա-
քէլին Լիայիցն աւելի սիրեց. և
Լաբանին եօթը տարի էլ ծա-
ռայեց։
31 Եւ երբոր Եհովան տեսաւ որ
Լիան ատվում է, նորա արգան-
դը բացաւ. բայց Ռաքէլը ամուլ
32 էր։ Եւ Լիան յղացաւ, և մի
որդի ծնեց, և նորա անունը *Ռու-
բէն դրաւ. որովհետև ասեց. Ե-
հովան իմ տառապանքին նայեց,
ուրեմն հիմա իմ մարդն ինձ կը
33 սիրէ։ Եւ դարձեալ յղացաւ և
մի որդի ծնեց, և ասեց. Որովհե-
տև Եհովան լսեց որ ես ատվում
եմ, նորա համար ինձ այս որդին
էլ տուաւ. և նորա անունը †Շը-
34 մաւոն դրաւ։ Եւ դարձեալ յը-
ղացաւ և մի որդի ծնեց և ասեց.
Հիմա այս անգամ իմ մարդն ինձ
հետ կ'միաւորուի. որովհետև ե-
րեք որդի ծնեցի նորա համար.
այս պատճառով նորա անունը
35 ‡Ղևի դրաւ։ Եւ դարձեալ յը-
ղացաւ և մի որդի ծնեց, և ա-
սեց. Այս անգամ պիտի գոհա-
նամ Եհովայից. նորա համար նո-
րա անունը ‖Յուդա դրաւ. և
ծնելուց դադարեց։

*Ահա որդի։
†Լսել։
‡Միաւորութիւն։
‖Գոհութիւն։

ԳԼ. Լ

Եւ Ռաքէլը տեսաւ որ ինքը 1
Յակոբի համար չէ ծնում, նա-
խանձեց իր քրոջ Լիայի վերայ և
ասեց Յակոբին. Ինձ որդիներ
տուր. եթէ ոչ՝ կ'մեռնիմ։ Եւ 2
Յակոբի բարկութիւնը բորբոքեց
Ռաքէլի դէմ, և ասեց. Մի՞թէ
ես Աստուծոյ փոխանորդն եմ, որ
արգանդի պտուղը քեզանից ար-
գիլել է։ Եւ նա ասեց. Ահա իմ 3
աղախին Բաղղան, նորա մօտ մը-
տիր. նա իմ ծունկերի վերայ
ծնէ, և ես էլ նորանից որդիներ
ստանամ։ Եւ իր Բաղղա աղա- 4
խինը նորան կին տուաւ. և Յա-
կոբը նորա մօտ մտաւ։ Եւ Բաղ- 5
ղան յղացաւ և Յակոբի համար
մի որդի ծնեց։ Եւ Ռաքէլն ա- 6
սեց. Աստուած ինձ դատաստան
արաւ, և իմ ձայնն էլ լսեց, և
ինձ որդի տուաւ. նորա համար
նորա անունը **Դան դրաւ։ Եւ 7
Ռաքէլի աղախին Բաղղան դարձ-
եալ յղացաւ և Յակոբի համար
երկրորդ որդի ծնեց։ Եւ Ռաքէլն 8
ասեց. Իմ քրոջ հետ աստուա-
ծային ըմբշամարտութիւնով մար-
տընչեցի և յաղթեցի էլ. և նո-
րա անունը ††Նեփթաղիմ դրաւ։
Եւ Լիան տեսաւ որ ինքը ծը- 9
նելուց դադարեց, իր աղախին
Զեղփային առաւ և նորան Յա-
կոբին կին տուաւ։ Եւ Լիայի ա- 10
ղախին Զեղփան Յակոբի համար
որդի ծնեց։ Եւ Լիան ասեց. Բաղ- 11
դը բերաւ. և նորա անունը
‡‡Գադ դրաւ։ Եւ Լիայի աղախի- 12
նը Զեղփան մի երկրորդ որդի ծը-
նեց Յակոբի համար։ Եւ Լիան 13
ասեց. Երանելի եմ. որովհետև
աղջիկները ինձ պիտի երանեն. և
նորա անունը ‖‖Ասեր դրաւ։
Եւ Ռուբէնը ցորենի հունձքի 14
օրերը գնաց, և դաշտումը ման-
րագորներ գտաւ և իր մայր
Լիային բերաւ. և Ռաքէլն ասեց

**Դատող։
††Ըմբշամարտութիւնս։
‡‡Բաղդ։
‖‖Երանելի։

Լիայլին. [ինդրեմ՝ քո որդու մանդրագործներուն փոխարէն, եւ իբրեւ Յակոբը գաշտէն գալիս էր. Լիան գուբս եկաւ նորան դիմաւորելու և ասեց. Ինձ մեծ պիտի մընես. որովհետև քեզ վարձքով առել եմ իմ որդու մանդրագործներովը. և նա այն գիշերը նորա հետ պառկեց։ Եւ Աստուած լսեց Լիային. և նա յղացաւ և Յակոբի համար հինգերորդ որդի ծնեց։ Եւ Լիան ասեց. Աստուած իմ վարձքը տուաւ, որովհետև աղախինս իմ մարդին տուի. և նորա անունը Իսաքար դրաւ։ Եւ Լիան գործեալ յղացաւ և Յակոբի համար վեցերորդ որդի ծնեց։ Եւ Լիան ասեց. Աստուած ինձ բարի պարգև պարգեւեց. այս անգամ մարդս ինձ հետ պիտի բնակուի, որովհետև նորա համար վեց որդի ծնեցի. և նորա անունը †Զաբուղոն դրաւ։ Եւ յետոյ մի աղջիկ ծնեց, և նորա անունը ‡Դինա դրաւ։

Եւ Աստուած յիշեց Ռաքելին, և Աստուած լսեց նորան, և նորա արգանդը բացաւ։ Եւ նա յղացաւ և մի որդի ծնեց և ասեց. Աստուած իմ նախատինքը վեր առաւ։ Եւ նորա անունը ||Յովսէփ դրաւ և ասեց. Եհովան ինձ մի ուրիշ որդի էլ է աւելացնելու։

Եւ եղաւ երբոր Ռաքելը ծնեց Յովսէփին, Յակոբն ասեց Լաբանին. Թող տուր ինձ որ իմ տեղը և իմ երկիրը գնամ։ Իմ կանայքն ու աղիքը որոնց համար քեզ ծառայեցի, ինձ տուր որ գնամ. որովհետև դու գիտես իմ ծառայութիւնը, որ ես քեզ ծառայել եմ։ Եւ Լաբանն ասեց նորան. Եթէ քո առաջին շնորհք գտայ, ազդուած եմ քեզ փորձով իմացայ որ Եհովան ինձ օրհնուած է քո պատճառով։ Եւ ասեց. Քո վարձքն ինձ իմացրու, և ես կ'վճարեմ։ Եւ նա ասեց նորան. Դու գիտես թէ ես ինչպէս ծառայեցի քեզ, և քո նաւտունները ինչպէս էին ինձ մօտ. Որովհետև քո ունեցածը իմ գալուց առաջ քիչ էր, և աճեց չափազանց, և Եհովան քեզ օրհնեց իմ գալովը. և հիմա ես ե՞րբ աշխատեմ իմ տան համար։ Եւ նա ասեց. Քեզ ինչ տամ։ Եւ Յակոբն ասեց. Ինձ մի բան մի տար. եթէ այս բանն ինձ անես, դարձեալ քո հօտը կ'արածեցնեմ՝ կ'պահեմ. Այսօր քո բոլոր հօտերի միջովն անցնեմ, որ նորանից ամէն պիտակ և խայտաբորբ ոչխարը, և ամէն սեւ ոչխարը, և խայտաբորբ և պիտակ այծերը զատեմ, և իմ վարձքս նորանք լինին։ Եւ հետագային օրն իմ արդարութիւնը քո առաջին կ'լսայանուի. երբոր գաս իմ վարձքի վերայ նայելու, բոլոր ինձ մօտ գտնուած այծերը որ պիտակ ու խայտաբորբ չ'լինին՝ և ոչխարները սեւ, նա գողացած լինի ինձ մօտ։ Եւ Լաբանն ասեց. Թող քո ասածի պէս լինի։ Եւ այն օրը ջոկեց բիծաւոր և խայտաբորբ նոխազները, և բոլոր պիտակ և խայտաբորբ էգ այծերը, և ամէն ապիտակ ունեցողը, և բոլոր սեւ ոչխարները, և իր որդիների ձեռքը տուաւ։ Եւ երեք օրուայ ճանապարհի միջոց դրաւ ու Յակոբի մէջտեղը. և Յակոբը արածեցնում էր Լաբանի մնացած հօտերը։

Եւ Յակոբն իր համար գալար պիտակ կաղամախի և նուշի և ոսի գաւազաններ առաւ, և նորանց կեղեւները տեղ տեղ քերծեց պիտակացրեց, այնպէս որ գաւազանների վերայ եղած պիտակը երեւում էր։ Եւ իր քերծած գաւազանները դրաւ ջուրը

խմեցնելու աւազանների մէջ, որ երբ որ հօտերը ջուր խմելու գան, նորանք ոչխարների առաջին լինին, և նորանք տաքանան երբոր խմելու գան։ Եւ ոչխարները տաքանում էին գաւազանների առաջին, և ոչխարները բիծաւոր, պիտակ և խայտաբորբ գառներ էին ծնում։ Եւ Յակոբը բաժանում էր պիտակ գառները, և հօտերի երեսը Լաբանի հօտերի մէջ եղած բիծաւոր և ամէն սեւ ոչխարներին էր դարձնում. և իր հօտերը առանձին դրաւ, և նորանց Լաբանի հօտերի մօտ չ'դրաւ։ Եւ եղաւ որ միշտ զօրաւոր ոչխարները տաքանային, Յակոբն այն գաւազանները ոչխարների աչքի առաջին աւազանների մէջ էր դնում, որ գաւազանների առաջին տաքանան, Բայց տկար ոչխարներին չէր դնում. և տկարները եղան Լաբանին և զօրաւորները՝ Յակոբին։ Եւ մարդը խիստ շատ աճեց, և շատ հօտեր, և աղախիններ, և ծառաներ, և ուղտեր և էշեր ունեցաւ։

ԳԼ. Լ.Ա

Եւ Յ-ՀՓԸ լսեց Լաբանի որդիների խօսքերը, որ ասում էին. Յակոբը մեր հօր բոլոր ունեցածն առաւ, և այս բոլոր փառքը մեր հօր առացուածքիցն առացաւ։ Եւ Յակոբը Լաբանի երեսին մտիկ տուաւ, և ահա նորան հետ երեկուայ և մէկել օրուայ պէս չէր։ Եւ Եհովան ասեց Յակոբին. Դարձիր քո հայրենիքը և քո ծննդեան երկիրը, և ես քեզ հետ կ'լինիմ։

Եւ Յակոբը Ռաքելը և Լիան դաշտը իր հօտերի մօտ. Եւ ասեց նորանց. Ես ձեր հօր երեսը տեսնում եմ, որ ինձ դէմ երեկուայ և մէկել օրուայ պէս չէ. բայց իմ հօր Աստուածն ինձ հետ է։ Եւ դուք գիտէք, որ ես իմ բոլոր զօրութեամբը ծառայեցի ձեր հօրը. Իսկ ձեր հայրն ինձ խաբեց, և իմ վարձքը տասը անգամ փոխեց. բայց Աստուած նորան թոյլ չ'տուաւ ինձ վնասելու։ Եւ եթէ այսպէս էր ասում, Բէ Քո վարձքը պիտակները լինին, այն ժամանակ բոլոր ոչխարները պիտակ էին ծնում. և եթէ այսպէս էր ասում, Բէ Քո վարձքը բիծաւորները լինին, այն ժամանակ բոլոր ոչխարները բիծաւոր էին ծնում։ Այսպէս Աստուած ձեր հօր հօտերն առաւ և ինձ տուաւ. Եւ եղաւ որ հօտերի տաքացած ժամանակ, աչքերս բարձրացրի և երազում տեսայ, և ահա հօտերի հետ զուգաւորուող խոյերը բիծաւոր, խայտաբորբ, և գորշախայտ էին։ Եւ Աստուծոյ հրեշտակն ասեց ինձ երազի մէջ. Յակոբ. և ես ասացի. Ահա եմ։ Եւ նա ասեց. Աչքերդ բարձրացրու, և հօտերի հետ զուգաւորուող խոյերին նայիր. բիծաւոր, խայտաբորբ և գորշագոյն են. որովհետև տեսայ բոլորն ինչ որ քեզ արաւ Լաբանը։ Ես եմ Բեթէլի Աստուածը, որ պինեզ աբձան օծեցիր, և ինձ պինեզ ուխտ արիր. հիմա վեր կաց գնա այս երկրիցը, և քո ծննդեան երկիրը դարձիր։

Եւ Ռաքելն ու Լիան պատասխանեցին և ասացին նորան. Տակաւին մեր հօր տանը մեզ համար բաժին և ժառանգութիւն կայ։ Մի՞թէ մենք օտարականներ չ'համարուեցանք նորա համար. որովհետև մեզ ծախեց, և մեր փողն էլ կերաւ. Սորա համար այն բոլոր հարստութիւնը որ Աստուած մեր հօրից առաւ, մերն է և մեր զաւակներինն է. և հիմա ինչ որ Աստուած քեզ ասել է, արա։

Եւ Յակոբը վեր կացաւ և իր որդիներն ու կնիկները ուղտերի վերայ հեծցրեց, Եւ քշեց իր բոլոր անասուններն ու իր բոլոր ըստացուածքը որ ստացաւ, իր ըստացած անասուններն որ Փադան-արամում (Միջագետում) ստացաւ, գնալի իր Իսահակ հօրը գնալու՝ Քանանի երկիրը։ Եւ

---

*Վարձք
†Ընակութիւն
‡Գառասատան
||Յաւելացրեց

Լաբանը գնացել էր իր խաշինքը
ասրակտուր անելու. և Ռաքէլն
իր հօր *թերափիմները գողացաւ։
20 Եւ Յակոբն Ասորի Լաբանից ծա-
ծուկ փախաւ. որովհետև նորան
21 չ'իմացրեց թէ փախչում է։ Այս-
պէս փախաւ նա և իր բոլոր ու-
նեցածը, և վեր կացաւ ու Գե-
տիցն անցաւ. և իր երեսը դէպի
Գաղաադ սարը դարձրեց։
22 Եւ երրորդ օրը Լաբանին պատ-
մուեցաւ, թէ Յակոբը փախել է։
23 Եւ նա իր եղբայրներին իր հետ
առաւ, և նորա ետևից եօթը
օրուայ ճանապարհ գնաց, և նո-
րան հասաւ Գաղաադ սարումը։
24 Եւ Աստուած դիշերուայ երա-
զում Ասորի Լաբանի մօտ եկաւ
և ասեց նորան. Զգուշացիր որ
Յակոբի հետ ոչ լաւ և ոչ վատ
25 չ'խօսես։ Եւ Լաբանը հասաւ
Յակոբին. և Յակոբն իր վրանը
բացել էր սարումը. և Լաբանն
իր եղբայրների հետ Գաղաադ
սարումը բացաւ։
26 Եւ Լաբանն ասեց Յակոբին.
Սա ի՞նչ արիր որ ինձանից ծա-
ծուկ փախիր, և իմ աղջիկները
որով դերի առուածների պէս
27 քշեցիր։ Ինչո՞ւ թաքցրիր և ին-
ձանից ծածուկ փախիր, և ինձ
չ'իմացրիր, որ ես քեզ ճանա-
պարհ դնէի ուրախութեամբ և
երգերով, թմբուկներով և քը-
28 նարներով։ Եւ թոյլ չ'տուիր
ինձ, որ որդիներս ու աղջիկներս
համբուրէի. հիմա յիմարութիւն
29 արիր։ Իմ ձեռքն ոյժ ունի ձեզ
չարիք անելու. բայց ձեր հօր
Աստուածը երէկ դիշեր ինձ հետ
խօսեց ասելով. Զգուշացիր որ
Յակոբի հետ ոչ լաւ ոչ վատ չը
30 խօսես։ Եւ հիմա գնալը գնում
ես՝ ըստ որում քո հօր տանը
փափաքելով փափաքեցիր, բայց
ինչո՞ւ համար գողացիր իմ աստ-
31 ուածները։ Եւ Յակոբը պատաս-
խանեց և ասեց Լաբանին. Նորա
համար որ վախեցի, որովհետև
ասեցի. Մի գուցէ յափշտակես
32 քո աղջիկներն ինձանից։ Բայց քո
աստուածները որի մօտ որ գըտ-
նես, թող նա չ'ապրի. մեր եղ-
բայրների առաջին պտրտիր. ինչ
որ ինձ մօտ լինի՝ առ քեզ հա-
մար. որովհետև Յակոբը չ'գիտէր
որ Ռաքէլը գողացել էր նորանց։
Եւ Լաբանը մտաւ Յակոբի վրա- 33
նը և Լիայի վրանը և երկու ա-
ղախինների վրանը, բայց չ'գտաւ,
և Լիայի վրանից դուրս եկաւ և
Ռաքէլի վրանը մտաւ։ Եւ Ռա- 34
քէլն առաւ կուռքերը և նո-
րանց դրաւ ուղտի պատատումը,
և վերան նստեց. և Լաբանը բո-
լոր վրանը պտրտեց, բայց չ'գը-
տաւ։ Եւ նա իր հօրն ասեց. Թող 35
իմ տէրը չ'բարկանայ, որ չեմ
կարող վեր կենալ քո առաջին,
որովհետև կանանց սովորութեան
մէջ եմ։ Եւ նա պտրտեց, բայց
կուռքերը չ'գտաւ։
Եւ Յակոբը բարկացաւ և վի- 36
ճում էր Լաբանի հետ. և Յա-
կոբը պատասխանեց և ասեց Լա-
բանին. Ի՞նչ է իմ յանցանքը,
ի՞նչ է իմ մեղքը, որ ետևիցս
ընկար։ Որ իմ բոլոր կարասիքը 37
խառնեցիր. ի՞նչ գտար քո տան
ամեն կարասիքիցը. այստեղ դիր
իմ եղբայրների և քո եղբայրնե-
րի առաջին, և թող նորանք դա-
տեն մեր երկուսի մէջ։ Ահա 38
քսան տարի է, որ քեզ հետ եմ.
ոչխարներդ ու այծերդ ձագ չ'վի-
ժեցին. և քո հօտի խոյերը չ'կե-
րայ. Գազանից պատառուածը չը 39
բերի քեզ մօտ. ես էի քաշում
վնասը. ցերեկը գողացուածը և
դիշերը գողացուածը իմ ձեռ-
քիցն էիր պահանջում։ Այսպէս 40
էի. ցերեկով տաքը և դիշերով
ցուրտն էր մաշեցնում ինձ, և
քունս փախել էր աչքերիցս։
Այսպէս քսան տարի քո տանը 41
քեզ ծառայեցի, տասնեւչորս տա-
րի քո երկու աղջիկների համար,
և վեց տարի քո հօտերի համար.
և տասն անգամ փոխեցիր իմ
վարձքը։ Եթէ իմ հօր Աստուա- 42
ծը, Աբրահամի Աստուածը, և
Իսահակի Երկիւղը ինձ հետ չ'լի-
նէր, անպատճառ ինձ հիմա դա-
տարկ էիր ճանապարհ դրել։

*Կուռքերը։

Աստուած տեսաւ իմ տառա-
պանքը և իմ ձեռքի աշխատու-
թիւնը, և երէկ դիշեր տէր յան-
դիմանեց։
43 Եւ Լաբանը պատասխանեց և
ասեց Յակոբին. Այս աղջիկները
իմ աղջիկներն են, և այս որդի-
ները իմ որդիներն են, և այս
հօտերն իմ հօտերն են, և ամեն
ինչ որ դու տեսնում ես, իմս
են. և ի՞նչ անեմ այսօր այս իմ
աղջիկներին կամ իրանց ծնած
44 զաւակներին։ Բայց հիմա եկ, ես
և դու ուխտ անենք, և իմ ու
քո մէջտեղը վկայութիւն լինի։
45 Եւ Յակոբը մի քար առաւ, և
46 արձան կանգնեցրեց նորան։ Եւ
Յակոբն իր եղբայրներին ասեց.
Քարեր ժողովեցէք. և նորանք
քարեր առին և դէզ շինեցին, և
այնտեղ այն դէզի վերայ հաց կե-
47 րան։ Եւ Լաբանը նորա անու-
նը *Եէկար-սահադութա դրաւ,
բայց Յակոբը նորա անունը †Գա-
48 ղաադ դրաւ։ Եւ Լաբանն ասեց.
Այս դէզը այսօր իմ ու քո մէջ-
տեղը վկայ է. նորա համար նո-
րա անունը Գաղաադ ասուեցաւ.
49 Եւ ‡Մասփա էլ. որովհետև ա-
սեց. Եհովան դիտէ իմ ու քո
մէջտեղը, երբ մենք իրարից բա-
50 ժանուենք։ Եթէ իմ աղջիկնե-
րին վշտացնես, և կամ եթէ իմ
աղջիկների վերայ սարիչ կանայք
առնես, մէկը չ'կայ մեզ հետ.
տես իմ ու քո մէջտեղը Աստ-
51 ուած է վկայ։ Եւ Լաբանն ա-
սեց Յակոբին. Ահա այս դէզը, և
ահա այն արձանը, որ ես կանգ-
52 նեցրի իմ ու քո մէջտեղը. Վը-
կայ է այս դէզը և վկայ է այս
արձանը, որ ես այս դէզից չ'անց-
նեմ դէպի քեզ, և դու այս դէ-
զից և այս արձանից չ'անցնես
53 դէպի ինձ, չարիքի համար։ Աբ-
րահամի Աստուածը և Նաքովրի
Աստուածը, նորանց հայրերի Աս-
տուածը մեր մէջը դատաւոր լի-
նի։ Եւ Յակոբն իր հայր Իսա-
հակի Երկիւղովը երդում արաւ։
Եւ Յակոբը զոհեր մատուցրեց 54
այն սարի վերայ, և իր եղբայր-
ներին կանչեց հաց ուտելու. և
հաց կերան, և դիշերը սարումը
մնացին։ Եւ Լաբանն առաւօ- 55
տանց կանուխ վեր կացաւ և իր
որդիներին և իր աղջիկներին համ-
բուրեց, և օրհնեց նորանց. և Լա-
բանը գնաց և իր տեղը դարձաւ։

ԳԼ. ԼԲ

Եւ Յակոբը գնաց իր ճանա- 1
պարհը, և Աստուծոյ հրեշտակ-
ները նորան պատահեցին։ Եւ 2
Յակոբը երբոր տեսաւ նորանց,
ասեց. Սա Աստուծոյ բանակն է,
և այն տեղի անունը ‖Մանայիմ
դրաւ։
Եւ Յակոբն իր առջև պատ- 3
գամաւորներ ուղարկեց իր եղ-
բայր Եսաւին դէպի Սէիր երկի-
րը Եդովմի գաւառը։ Եւ պատ- 4
ուիրեց նորանց ասելով. Այսպէս
ասացէք իմ տիրոջ Եսաւին, քո
ծառայ Յակոբը այսպէս է ասում.
Լաբանի մօտ պանդխտութիւն
արի, և մինչև հիմա ուշացայ։
Եւ ունիմ արջառներ և էշեր, 5
հօտեր և ծառաներ և աղախին-
ներ. հիմա ուղարկում եմ իմ
տիրոջն իմացնելու, որ քո առա-
ջին շնորհք գտնեմ։ Եւ պատ- 6
գամաւորները յետ դարձան Յա-
կոբի մօտ և ասեցին. Քո եղբօր
Եսաւի մօտ գնացինք, և նա էլ
չորս հարիւր մարդով գալիս է
քեզ դիմաւորելու։
Եւ Յակոբը շատ վախեց և շը- 7
փոթուեցաւ, և իր հետ եղած
ժողովուրդը, և հօտերը և ար-
ջառները, և ուղտերը երկու
խումբի բաժանեց, Եւ ասեց. Ե- 8
թէ Եսաւը մէկ խումբին հաս-
նէ, և նորան զարկելու լինի, միւս
խումբը կ'ազատուի։ Եւ Յակոբն 9
ասեց. Ով իմ հօր Աբրահամի
Աստուած, և իմ հօր Իսահակի

*Վկայութեան դէզ։ (Քաղդէ-
արէն։)
†Վկայութեան դէզ։ (Եբրայե-
ցերէն։)
‡Դիտանոց։

‖Երկու բանակ։

Աստուած, ով Եհովայ, որ ասե-
ցիր ինձ. Ետ դարձիր քո երկիրը
և քո հայրենիքը, և քեզ բարիք
10 կ'անեմ. Ես արժանի չեմ այն
ամեն ողորմութիւններին և ամեն
հաւատարմութեանը, որ քո ծա-
ռային արել ես. որովհետև իմ
գաւազանովն անցայ այս Յորդա-
նանիցը, և հիմա երկու խումբի
11 դէր եղայ։ Ազատիր հիմա ինձ
իմ եղբայր Եսաւի ձեռքիցը, ո-
րովհետև նորանից վախում եմ,
մի գուցէ գայ և զարկէ ինձ և
12 մօրը տղաներովը։ Եւ դու ասել
ես, թէ անպատճառ քեզ բա-
րիք կ'անեմ, և քո սերունդը
ծովի աւազի չափ կ'անեմ, որ
շատութիւնից չի համրուիլ։
13 Եւ այն գիշերն այնտեղ մնաց.
և իր ձեռքի եղածիցն իր եղբայր
Եսաւի համար ընծաներ առաւ.
14 Երկու հարիւր այծ և քսան նո-
խազ, երկու հարիւր էգ ոչխար
15 և քսան խոյ, Երեսուն ծիծ տը-
ւող ուղտ իրանց ձագերովը, քա-
ռասուն կով և տասը ցուլ,
քսան էգ էշ և տասը աւանակ։
16 Եւ ամեն մէկ հօտը ջոկ ջոկ իր
ծառաների ձեռքը յանձնեց, և
ասեց իր ծառաներին. Առաջս
անցէք, և հօտերի մէջտեղը մի-
17 ջոց թողեցէք։ Եւ առաջինին
պատուիրեց ասելով. Երբոր իմ
եղբայր Եսաւը քեզ պատահէ և
քեզ հարցնէ, ասելով Դու ո-
րի՞նն ես և ո՞ւր ես գնում, և
18 այս առաջիններդ որի՞նն են. Այն
ժամանակ ասիր. Քո ծառայ Յա-
կոբինն է. սա ընծայ է ուղար-
կուած իմ տէր Եսաւին, և ահա
19 ինքն էլ մեր ետևին է։ Եւ այս-
պէս էլ պատուիրեց երկրորդին,
և երրորդին, և հօտերի ետևից
բոլոր գնացողներին, և ասեց.
Այս խօսքի պէս խօսեցէք Եսաւի
20 հետ, երբոր նորան գտնէք։ Եւ
ասեցէք. Ահա քո ծառայ Յա-
կոբն էլ մեր ետևին է. որովհե-
տև ասում էր, կ'կակղացնեմ
նորա երեսն այս ընծաներով, որ
իմ առաջին գնում են, և յե-
տոյ կ'տեսնեմ նորա երեսը, գու-
21 ցէ ինձ ընդունէ։ Եւ ընծաները
նորա առաջին գնացին. և նա այն
գիշերը [illegible] մնաց բանակի մէջ,
Եւ այն գիշերը վեր կացաւ, և 22
իր երկու կանայքը, և իր երկու
աղախիններն, և իր տասնեմէկ
որդիներն առաւ, և Յաբոկի անց-
քիցն անցաւ։ Եւ նորանց առաւ, 23
ու վտակիցն անցրեց, և իր [illegible]
ունեցածն անցրեց։
Եւ Յակոբը մինակ մնաց, և մի 24
մարդ գօտեմարտում էր նորա
հետ մինչև արշալոյսի ծագելը։
Եւ տեսաւ որ չ'կարողացաւ նո- 25
րան [illegible], նորա զստին ամոլա-
ջին դիպաւ. և Յակոբի զստի ա-
մոլաջիղը թուլացաւ նորա գօտե-
մարտած ժամանակը։ Եւ նա ա- 26
սեց. Թող տուր ինձ, որովհետև
արշալոյսը ծագեց. և Յ[illegible] ա-
սեց. Չեմ թողիլ քեզ՝ մինչև որ
ինձ չ'օրհնես։ Եւ նա ասեց նո- 27
րան. Ի՞նչ է անունդ. նա էլ ա-
սեց. Յակոբ է։ Եւ նա ասեց. 28
Այլ ևս քո անունը Յակոբ չ'ա-
սուի, այլ *Իսրայէլ. որովհետև
Աստուծոյ հետ և մարդկանց հետ
մարտնչեցիր, և յաղթեցիր։ Եւ 29
Յակոբը հարցրեց և ասեց. Աղա-
չեմ՝ անունդ ասիր։ Եւ նա ա-
սեց. Ինչո՞ւ ես իմ անունը հար-
ցնում. և նա օրհնեց նորան այն-
տեղ։ Եւ Յակոբն այն տեղի ա- 30
նունը †Փանուէլ դրաւ. որովհե-
տև [illegible]. Դէմ առ դէմ տեսայ
Աստուծոյն, և իմ անձը ողջ մնաց։
Եւ արեգակը դուրս եկաւ նո- 31
րա վերայ, երբոր Փանուէլիցն ան-
ցաւ. և իր զստի վերայ կաղում
էր։ Նորա համար Իսրայէլի որ- 32
դիքը զստի վերայ թուլացած ջի-
ղը չեն ուտում մինչև այսօր, ո-
րովհետև Յակոբի զստի թուլա-
ցած ջիղին դիպաւ։

ԳԼ. ԼԳ

Եւ Յակոբն իր աչքերը բարձ- 1
րացրեց և մտիկ տուաւ, և ահա
Եսաւը գալիս էր, և նորա հետ
չորս հարիւր մարդ. և զաւակնե-

*Աստուծոյ հետ գօտեմարտող։
†Աստուծոյ երես։

րին բաժանեց՝ [illegible] Լիային և
Ռաքէլին և երկու աղախիններին։
2 Եւ աղախիններին իրանց զաւակ-
ներովը առաջ դրաւ, և Լիային
իր զաւակներովը՝ ետև, և Ռա-
քէլին ու Յովսէփին՝ ամենից ե-
3 տև։ Եւ ինքն անցաւ նորանց ա-
ռաջը, և մինչև երկիրը եօթն
անգամ խոնարհութիւն արաւ
4 մինչև իր եղբօր մօտենալը։ Եւ
Եսաւը վազեց նորան դիմաւորե-
լու. և գրկեց նորան, և նորա պա-
րանոցովն ընկաւ. և համբուրեց
5 նորան. և լացին։ Եւ [illegible] իր
աչքերը բարձրացրեց և տեսաւ
կանայքն ու զաւակները և ա-
սեց. Սորանք քո ի՞նչն են. և նա
ասեց. Այն զաւակներն են, որ
Աստուած քո ծառային պարգե-
6 ւել է։ Եւ աղախիններն ու նո-
րանց զաւակները մօտեցան և
7 խոնարհութիւն արին։ Եւ Լիան
էլ և իր զաւակները մօտեցան,
և խոնարհութիւն արին. և յե-
տոյ Յովսէփը և Ռաքէլը մօտեցան
8 և խոնարհութիւն արին։ Եւ Ե-
[illegible] ասեց. Ի՞նչ են այս քո բո-
լոր խումբը, որին ես պատահե-
ցի. և Յ[illegible] ասեց. Իմ տիրոջ
առաջին շնորհք գտնելու համար
9 է։ Եւ Եսաւն ասեց. Ես շատ
ունիմ, եղբայր իմ, քոնը քեզ
10 լինի։ Եւ Յակոբն ասեց. Ոչ,
խնդրեմ՝ եթէ քո առաջին շը-
նորհք գտայ, ընդունիր ընծաս
իմ ձեռքիցը, հէնց նորա համար
որ տեսայ քո երեսը Աստուծոյ
երեսը տեսնելու պէս, և ինձ հա-
11 ճեցիր։ Խնդրեմ՝ ընդունիր քեզ
բերած *ընծաս. որովհետև Ա-
ստուած ողորմեց ինձ, և որովհե-
տև ես ամեն բան ունիմ. և ըս-
տիպեց նորան, և նա էլ ընդու-
12 նեց։ Եւ նա ասեց. Վեր կենանք
գնանք. և ես գնամ քո առա-
13 ջին։ Եւ Յ[illegible] ասեց նորան. Իմ
տէրը գիտէ որ զաւակները փա-
փուկ են, և իմ հետ եղած հօ-
տերն ու արջառները ձագերով
են. և եթէ մէկ օր սաստիկ քը-
շեն նորանց, բոլոր հօտերը կը
մեռնեն։ Ուրեմն թող իմ տէրն 14
իր ծառայի առաջին անցնէ, և
ես մինակ կամաց կամաց կ'գնամ
իմ առաջին եղած անասունների
ոտքովը և երեխաների ոտքովը,
մինչև որ գամ Սէիր իմ տիրոջ
մօտ։ Եւ Եսաւն ասեց. Թող իմ 15
հետ եղող ժողովրդիցը քեզ մօտ
ձգեմ. և նա ասեց. Ինչո՞ւ է
պէտք. Թող իմ տիրոջ առա-
ջին շնորհք գտնեմ։ Այսպէս ետ 16
դարձաւ Եսաւն այն օրը իր ճա-
նապարհովը դէպի Սէիր։
Եւ Յակոբը Սոկքովթ չուեց, 17
և իր համար տուն շինեց, և իր
հօտերի համար փարախներ շի-
նեց. նորա համար այն տեղի ա-
նունը †Սոկքովթ ասուեցաւ։
Եւ Յակոբը Միջագետից գա- 18
լիս Սիւքէմացոց Սաղէմ քաղա-
քը եկաւ, որ Քանանի երկրումն
է, և քաղաքի առաջին բնակ-
ուեց։ Եւ այն արտի կալուածքը, 19
ուր կանգնեցրել էր իր վրանը,
Սիւքէմի հայր Եմովրիցը ծախու
առել էր հարիւր ‡կէսիթայի. Եւ 20
այնտեղ մի սեղան շինեց, և ա-
նունը ‖Էլ-Էլօհէ-Իսրայէլ դրաւ։

ԳԼ. ԼԴ

Եւ Լիայի աղջիկ Դինան, որին 1
նա ծնել էր Յակոբի համար, ե-
լաւ այն երկրի աղջկերանց տես-
նելու։ Եւ այն երկրի իշխան Խե- 2
ւացի Եմովրի որդի Սիւքէմը տե-
սաւ նորան, և առաւ ու պառ-
կեց նորա հետ, և պղծեց նորան։
Եւ նորա հոգին Յակոբի Դինա 3
աղջկան յարեց. և սիրեց այն
աղջկանը. և աղջկայ հետ **քաղց-
րութեամբ խօսեց։ Եւ Սիւքէմը 4
խօսեց իր հայր Եմովրի հետ ա-
սելով, Այս դուստրն ինձ հա-
մար կին առ։ Եւ Յակոբը լսեց, 5
որ նա իր Դինա աղջկան պղծեց.
բայց նորա որդիները նորա հօտե-
րի հետ դաշտումն էին. և Յա-

*Օրհնութիւնս։

†Գոմեր։
‡Փողի անուն է։
‖Աստուած Իսրայէլի Աստուածը։
**Սրտին։

կոբը լռեց մինչև նորանց գալը։
6 Եւ Սիւքէմի հայր Եմովրը գը-
նաց Յակոբի մօտ, նորա հետ խօ-
7 սելու։ Եւ Յակոբի որդիքը հէնց
որ լսեցին՝ եկան դաշտիցը. և
մարդիկը նեղացան և շատ բար-
կացան, որ Իսրայէլի մէջ անզգա-
մութիւն արաւ Յակոբի աղջկան
հետ պառկելով, որ այսպէս լի-
8 նելու չէր։ Եւ Եմովրը խօսեց նո-
րանց հետ և ասեց. Իմ Սիւքէմ
որդու հոգին ձեր աղջկան սիրա-
հարուել է. խնդրեմ նորան կին
9 տուէք նորա համար։ Եւ մեզ
հետ խնամութիւն արէք. ձեր
աղջկերքը մեզ տուէք, և մեր
10 աղջկերքը ձեզ համար առէք։ Եւ
մեզ հետ բնակուեցէք, և այս
երկիրը ձեր առաջին կ'լինի. նո-
րանում բնակուեցէք և առու-
տուր արէք, և նորանում կալ-
11 ուածքներ ստացէք։ Եւ Սիւքէմ
ասեց աղջկայ հօրը և նորա եղ-
բայրներին. Թող ձեր առջև շը-
նորհք գտնեմ, և ինչ որ ինձ ա-
12 սէք, կ'տամ։ Ինձ վերայ դրէք
խիստ շատ օժիտ և ընծայ, և ես
կ'տամ ինչպէս որ ինձ ասէք,
միայն թէ աղջիկն ինձ կին տուէք։
13 Եւ Յակոբի որդիքը խաբէու-
թեամբ պատասխանեցին Սիւքէ-
մին և նորա հայր Եմովրին, և ա-
սեցին, (որ իրենց Դինա քրոջը
14 պղծել էր,) Եւ ասեցին նորանց.
Մենք չենք կարող այս բանը ա-
նել, որ մեր քոյրը տանք մի մար-
դի, որ անթլփատ է. ըստ որում
դա մեզ համար ամօթ բան է։
15 Բայց միայն սորանով կ'համա-
ձայնուենք ձեզ հետ եթէ մեզ
պէս լինիք՝ ձեզանից ամեն մի ա-
16 րուն թլփատուելով։ Այն ժա-
մանակ մեր աղջկերքը ձեզ կ'տանք,
և ձեր աղջկերքը մենք կ'առ-
նենք, և ձեզ հետ կ'բնակուենք,
ու մէկ ժողովուրդ կ'լինինք։
17 Բայց եթէ մեզ ականջ չ'դնէք
որ թլփատուիք, այն ժամանակ
մենք մեր աղջիկը կ'առնենք ու
18 կ'գնանք։ Եւ նորանց խօսքը հա-
ճելի եղաւ Եմովրին, և Եմովրի
19 որդի Սիւքէմին։ Եւ այն պատա-
նին չ'ուշացաւ այս բանը անելու.
որովհետև Յակոբի աղջկան հա-
ւանել էր, և նա իր հօր տանը
մէջ եղողների ամենից պատուա-
կանն էր։
Եւ Եմովրը և նորա որդի Սիւ- 20
քէմը եկան իրանց քաղաքի դու-
ռը, և իրանց քաղաքի մարդկանց
հետ խօսեցին ասելով, Այս մար- 21
դիկը խաղաղութեամբ են վար-
վում մեզ հետ. ուստի թող
այս երկրում բնակուեն և նորա
մէջ առուտուր անեն. և ահա
երկիրը ընդարձակ է նորանց ա-
ռաջին. Իսրայէլ նորանց աղջկերքը
մեզ համար կին առնենք, և մեր
աղջկերքը նորանց տանք։ Միայն 22
սորանով են այն մարդիկը մեզ
հետ համաձայնվում որ մեզ հետ
բնակուեն մէկ ժողովուրդ լինե-
լու համար, որ մեզանից ամեն
արուն թլփատուի ինչպէս որ նո-
րանք են թլփատվում։ Նորանց 23
հօտերը և նորանց ստացուածքը,
և ամեն անասուններ մի թէ մե-
րը չեն լինիլ. միայն թէ մենք նո-
րանց հետ համաձայնուենք, որ
մեզ հետ բնակուեն։ Եւ Եմով- 24
րին և նորա որդի Սիւքէմին ա-
կանջ դրին նորա քաղաքի դռնից
դուրս եկողների բոլորը. և ամեն
արու որ նորա քաղաքի դռնից
դուրս էր գալիս, թլփատուեցաւ։
Եւ եղաւ երրորդ օրը, երբոր 25
նորանք ցաւի մէջն էին, Յակոբի
երկու որդիքը Շմաւոնը և Ղևին՝
Դինայի եղբայրները ամեն մէկն
իր սուրն առաւ, և համարձակ
մտան քաղաքը, և սպանեցին ա-
մեն արուն. Եւ Եմովրին և նորա 26
որդի Սիւքէմին սուրի բերանով
սպանեցին. և Սիւքէմի տանիցն
առին Դինան և դուրս եկան։ Եւ 27
Յակոբի որդիքը այն սպանուած-
ների վերայ եկան, և քաղաքը
կողոպտեցին, որ իրանց քրոջը
պղծել էին։ Նորանց հօտերը և 28
նորանց արջառները և նորանց է-
շերը և քաղաքումը եղածը և
դաշտումը եղածը առին։ Եւ նո- 29
րանց բոլոր ստացուածքը և նո-
րանց բոլոր տղերքն ու կանայքը
գերի առին և կողոպտեցին տան
մէջ բոլոր գտնուածը։ Եւ Յա- 30

կոբն ասեց Շմաւոնին և Ղևիին,
Ինձ այս երկրի բնակիչների՝ Քա-
նանացիների և Փերեզացիների
մէջ *տանելի անելով ինձ փոր-
ձանքի մէջ գցեցիք. և ինձ հետ
քիչ մարդիկ կան. նորանք ինձ
վերայ կ'հաւաքուին, ինձ կ'զար-
կեն, կ'կորչեմ ես և իմ տունը։
31 Եւ նորանք ասեցին. Ապա բոզի
պէս պէ՞տք էր անել մեր քրոջը։

ԳԼ. ԼԵ

1 Եւ Աստուած ասեց Յակոբին.
Վեր կաց, ելիր դէպի Բեթէլ և
այնտեղ բնակուիր, և այնտեղ
մի սեղան շինիր Աստուծոյն որ
քեզ երևեցաւ քո եղբայր Եսա-
ւի երեսից փախած ժամանակդ։
2 Եւ Յակոբն ասեց իր ընտանիքին
և բոլոր իր հետ եղողներին. Հե-
ռացրէք օտար աստուածները որ
կան ձեր միջումը, և մաքրուե-
ցէք, և ձեր հանդերձները փոխե-
3 ցէք։ Եւ վեր կենանք գնանք վեր
դէպի Բեթէլ. և այնտեղ սեղան
շինեմ այն Աստուծոյն, որ իմ
նեղութեան օրը ինձ լսեց, և իմ
գնացած ճանապարհումն ինձ հետ
4 էր։ Եւ բոլոր օտար աստուած-
ները, Յակոբին տուին, որ իրանց
ձեռքին էր, և իրանց ականջնե-
րումն եղած օղերը. և Յակոբը
թաղեց նորանց Սիւքէմի մօտ ե-
5 ղած բևեկնու տակին։ Եւ ճա-
նապարհ ելան. և իրանց շուրջը
եղած քաղաքների վերայ Աստու-
ծոյ վախը ընկաւ, և Յակոբի որդ-
6 կանց ետևից չ'ընկան։ Եւ Յա-
կոբն եկաւ Լուզ, որ Քանանի
երկրումն է, այսինքն Բեթէլ Ե-
հաւ, ինքը և իր հետ եղող բոլոր
7 ժողովուրդը. Եւ այնտեղ մի սե-
ղան շինեց և այն տեղի անունը
†Էլ-Բեթէլ դրաւ. որովհետև
Աստուած այնտեղ իրան երևա-
ցել էր, երբոր իր եղբօր երեսից
փախչում էր։
8 Եւ Ռեբեկայի դայեակ Դեբո-
րան մեռաւ, և Բեթէլից ցած
կողմը կաղնու տակին թաղուե-
ցաւ. և նորա անունը ‡Ալօն-բա-
խութ գրուեցաւ։
Եւ Աստուած դարձեալ երևե- 9
ցաւ Յակոբին երբոր նա Միջա-
գետիցը գալիս էր, և օրհնեց նո-
րան։ Եւ Աստուած ասեց նորան. 10
Քո անունը Յակոբ է. քո անունը
այլևս Յակոբ չ'ասուի, այլ Իս-
րայէլ լինի քո անունը. և նորա
անունը Իսրայէլ դրաւ։ Եւ Աստ- 11
ուած ասեց նորան. Ես եմ Ամե-
նակարող Աստուածը. աճիր և
շատացիր. քեզանից ազգ և ազ-
գերի բազմութիւն լինի, և քո
երանքից թագաւորներ դուրս
գան։ Եւ այն երկիրը, որ Աբրա- 12
համին և Իսահակին տուի, քեզ
կ'տամ. և քեզանից յետոյ քո
սերունդին կ'տամ այն երկիրը։
Եւ Աստուած բարձրացաւ նորա- 13
նից այն տեղ, ուր որ նորա հետ
խօսեց։ Եւ Յակոբը մի արձան 14
կանգնեցրեց այն տեղը, ուր որ
Աստուած իր հետ խօսեց, մի քա-
րի արձան և նորա վերայ թափե-
լու նուէր թափեց, և նորա վե-
րայ իւղ թափեց։ Եւ Յակոբն այն 15
տեղի անունը, ուր որ Աստուած
իրան հետ խօսեց, Բեթէլ դրաւ։
Եւ Բեթէլից ճանապարհուե- 16
ցան. և մի քիչ ճանապարհ կար
մինչև Եփրաթա ուր որ Ռաքէլը
ծնեց, և ծնելիս շատ դժուարու-
թիւն քաշեց։ Եւ եղաւ երբոր 17
ծնելիս շատ դժուարութիւն էր
քաշում, ծնուցիչն ասեց նորան.
Մի վախիր, որովհետև սա էլ քեզ
համար ազայ է։ Եւ եղաւ երբոր 18
նորա հոգին դուրս էր գալիս (ո-
րովհետև մեռաւ,) նորա անունը
‖Բենօնի դրաւ. բայց նորա հայրը
**Բենիամին կոչեց նորան։ Եւ Ռա- 19
քէլը մեռաւ, և թաղուեցաւ Եփ-
րաթայի ճանապարհին, որ Բեթ-
լեհէմն է։ Եւ Յակոբը նորա գե- 20
րեզմանի վերայ մի արձան կանգ-
նեցրեց, որ մինչև այսօր Ռաքէլի
գերեզմանի արձանն է։

*Գարշահոտ։
†Բեթէլի Աստուածը։

‡Սուգի կաղնի։
‖Յաւիս որդին։
**Աջի որդի։

21 Եւ Խրայէլը ճանապարհուե-
ցաւ, և իր վրանը բացաւ *Միգ-
22 դալ-եդերի այն կողմումը։ Եւ ե-
ղաւ երբոր Խրայէլը բնակվում
էր այն երկրումը, Ռուբէնը գնաց
և իր հօր հարճ Բաղղայի հետ
պառկեց. և Խրայէլը լսեց այս։
Եւ Յակոբի որդիքը տասնևեր-
23 կու էին։ Լիայի որդիքը՝ Յակոբի
անդրանիկը Ռուբէն, Շմաւոն,
Ղևի, Յուդա, Խաքար և Զա-
24 բուղոն։ Ռաքէլի որդիքը՝ Յովսէփ
25 և Բենիամին։ Եւ Ռաքէլի աղա-
խին Բաղղայի որդիքը՝ Դան և
26 Նեփթաղիմ։ Եւ Լիայի աղախին
Զեղբայի որդիքը՝ Գադ և Ասեր։
Սորանք են Յակոբի որդիքը, որ
Միջագետումը ծնուեցան նորա
համար։
27 Եւ Յակոբը եկաւ իր հայր Ի-
սահակի մօտ Մամբրէ Աբրայի
քաղաքը այսինքն Քեբրոն, ուր որ
Աբրահամը և Իսահակը պանդրխ-
28 տութեամբ բնակուեցան։ Եւ Ի-
սահակի օրերը հարիւր ութսուն
29 տարի եղան։ Եւ Իսահակը ծե-
րացած և օրերից կշտացաց ա-
ւանդեց հոգին և մեռաւ, և իր
ժողովրդին խառնուեցաւ. և նո-
րա որդիքը Եսաւն ու Յակոբը
թաղեցին նորան։

ԳԼ. ԼԶ

1 Եւ սորանք են Եսաւի այսինքն
2 Եդովմի ծնունդները։ Եսաւն իր
կանայքը Քանանի աղջիկներիցն
առաւ, Քետացի Ելօնի աղջիկ
Ադդան, և Խևացի Սեբեգօնի
աղջկայ Անայի աղջիկ Ողիբաման,
3 Եւ Խամայէլի աղջիկ Նաբէօթի
4 քոյր Բասեմաթը։ Եւ Ադդան
ծնեց Եսաւի համար Եղիփազը,
5 Բասեմաթը ծնեց Ռագուէլը, Եւ
Ողիբաման ծնեց Յեուսը և Յեգ-
ղոմը և Կորխը. սորանք են Եսա-
ւի որդիքը, որ ծնուեցան իր հա-
մար Քանանի երկրումը։
6 Եւ Եսաւն առաւ իր կանայքը
և տղերքը և աղջկերքը և իր տան
բոլոր մարդիկը և իր հօտերն ու
իր բոլոր անասունները և իր բոլոր
ստացուածքը, որ Քանանի երկ-
րումն ստացաւ, և գնաց իր եղ-
բայր Յակոբի երեսից մի երկիր։
Որովհետև իրանց ստացուածքը 7
շատ էին որ չէին կարող մէկտեղ
բնակուել. և երկիրը չէր կարո-
ղանում տանել նորանց պանդրխ-
տութիւնը նորանց հօտերի պատ-
ճառովը։ Եւ Եսաւը Սէիր սա- 8
րումը բնակուեց. Եսաւը Եդով-
մն է։
Եւ սորանք են Եդովմայեցինե- 9
րի հայր Եսաւի ծնունդները Սէիր
սարումը։ Եսաւի որդկանց ա- 10
նունները սորանք են՝ Եսաւի կնոջ
Ադդայի որդին Եղիփազ, Եսաւի
Բասեմաթի որդին Ռագուէլ։ Եւ 11
Եղիփազի որդիքն էին՝ Թէման,
Սեփով և Գոթամ և Կենէզ։ Եւ 12
Թամնան Եսաւի որդի Եղիփազի
հարճն էր, որ Եղիփազի համար
Ամաղէկը ծնեց։ Եսաւի կնոջ Ադ-
դայի որդիքը սորանք էին։ Եւ 13
Ռագուէլի որդիքը սորանք են.
Նահաթ, Զարա, Սամմա, ու Մէ-
զա. սորանք էին Եսաւի կնոջ Բա-
սեմաթի որդիքը։ Եւ Եսաւի կնոջ 14
Սեբեգօնի աղջկայ Անայի աղջիկ
Ողիբամայի որդիքը սորանք են.
և ծնեց Եսաւի համար Յեուսը
և Յեգղոմը և Կորխը։
Սորանք են Եսաւի որդիների 15
իշխանները. Եսաւի անդրանիկ Ե-
ղիփազի որդիներինը՝ Թեման իշ- 16
խան, Օմար իշխան, Սեփով իշ-
խան, Կենէզ իշխան, Կորխ իշխան,
Գոթամ իշխան, Ամաղէկ իշխան։
Սորանք են Եդովմի երկրումը Ե-
ղիփազի իշխանները. Սորանք Ադ-
դայի որդիքն էին։ Եւ Եսաւի որ- 17
դի Ռագուէլի որդիքը սորանք են.
Նահաթ իշխան, Զարա իշխան,
Սամա իշխան, Մէզա իշխան։ Սո-
րանք են Եդովմի երկրումը Ռա-
գուէլի իշխանները. սորանք Եսա-
ւի կնոջ Բասեմաթի որդիքն էին։
Եւ սորանք են Եսաւի կնոջ Ողի- 18
բամայի որդիքը. Յեուս իշխան,
Յեգղոմ իշխան, Կորխ իշխան. սո-
րանք են Եսաւի կնոջ Անայի աղ-
ջիկ Ողիբամայի իշխանները։ Սո- 19
րանք են Եսաւի այսինքն Եդովմի

*Հօտի աշտարակ։

որդիները, և սորանք են նորանց
իշխանները։
20 Եւ այն երկրումը բնակուող
Քոռեցի Սէիրի որդիքը սորանք
են. Ղոտան և Սոբաղ, և Սեբե-
21 գօն և Անա, Եւ Դիսօն և Եսեր
և Դիսան։ Սորանք են Սէիրի որ-
դիք Քոռեցիների իշխանները Ե-
22 դովմի երկրումը։ Եւ Ղոտանի
որդիքն էին Քոռի և Հեմամ, և
23 Ղոտանի քոյրը Թամնա։ Եւ Սո-
բաղի որդիքը սորանք են. Գա-
զուան, և Մանաքաթ, և Գեբաղ,
24 Սեփով և Օնամ։ Եւ Սեբեգօնի
որդիքը սորանք են. Այիա և Ա-
նա. սա այն Անան է, որ իր հօր
Սեբեգօնի էշերն արածեցնելիս ա-
նապատումը ջերմուկներ գտաւ։
25 Եւ սորանք են Անայի որդիքը՝
Դիսօն, և Անայի աղջիկը Ողիբա-
26 մա։ Եւ սորանք են Դիսօնի որ-
դիքը. Ամադան, և Եսբան, և
27 Յեթրան և Քառան։ Սորանք են
Եսերի որդիքը. Բաղղան և Զա-
28 աւան և Ական։ Սորանք են Դի-
29 սանի որդիքը՝ Հուս և Առան։ Սո-
րանք են Քոռեցիների իշխանները.
Ղոտան իշխան, Սոբաղ իշ-
խան, Սեբեգօն իշխան, Անա իշ-
30 խան, Դիսօն իշխան, Եսեր իշխան,
Դիսան իշխան. սորանք են Քոռե-
ցիների իշխանները Սէիրի երկ-
րումը իրանց իշխանութեանը ֆա-
ատանների համեմատ։
31 Եւ սորանք են այն թագաւոր-
ները, որ Եդովմի երկրումը թա-
գաւորեցին, Խրայէլի որդկանց
վերայ մի թագաւոր թագաւո-
32 րելուց առաջ։ Եւ Բէովրի որդին
Բաղան թագաւորեց Եդովմումը.
և նորա քաղաքի անունը Դեն-
33 նաբա էր։ Եւ Բաղան մեռաւ, և
նորա փոխանակ թագաւորեց Բօս-
34 րացի Զարայի որդի Յովաբը։ Եւ
Յովաբը մեռաւ, և նորա փոխա-
նակ Թեմանացոց երկրից Հուսա-
35 մը թագաւորեց։ Եւ Հուսամը
մեռաւ, և նորա փոխանակ Բա-
դադի որդի Ադադը թագաւո-
րեց, Մովաբի դաշտումը Մադիա-
նացիներին կոտորողը. և նորա
36 քաղաքի անունը Աւիթ էր։ Եւ
Ադադը մեռաւ, և նորա փոխա-
նակ Մասրեկացի Սամաղան թա-
գաւորեց։ Եւ Սամաղան մեռաւ, 37
և նորա փոխանակ Գետի մօտ լի-
նող Ռոբովթից Սաւուղը թագա-
ւորեց։ Եւ Սաւուղը մեռաւ, և 38
նորա փոխանակ Աքոբորի որդի
Բաաղանանը թագաւորեց։ Եւ 39
Աքոբորի որդի Բաաղանանը մե-
ռաւ, և նորա փոխանակ Ադադը
թագաւորեց, և նորա քաղաքի
անունը Փոգով էր. և նորա կնոջ
անունը Մետաբեէլ, որ Մեզաա-
բի աղջկայ Մատրեթի աղջիկն էր։
Եւ սորանք են Եսաւի իշխան- 40
ների անունները իրանց տոհմերի
և իրանց տեղերի համեմատ ի-
րանց անուններովը. Թամնա իշ-
խան, Գաղուա իշխան, Յեթաթ
իշխան, Ողիբամա իշխան, Ելա իշ- 41
խան, Փինօն իշխան, Կենէզ իշ- 42
խան, Թեման իշխան, Մաբզար
իշխան, Մագեդիէլ իշխան, Իրամ
իշխան։ Սորանք են Եդովմի իշ- 43
խանները իրանց բնակութեանը
համեմատ իրանց ստացուածքի
երկրումը. այս է Եսաւը Եդով-
մացիների հայրը։

ԳԼ. ԼԷ

Եւ Յակոբն իր հօր պանդխտա- 1
ցած երկրումը՝ Քանանի երկրու-
մը բնակուեց։ Սորանք են Յակո- 2
բի ծնունդները. Յովսէփը տասն-
ևեօթը տարեկան էր՝ իր եղբայր-
ների հետ հօտերը արածեցնում
էր, և պատանի էր իր հօր կա-
նանց Բաղղայի որդիների հետ և
Զեղփայի որդիների հետ. և Յով-
սէփը նորանց չար լուրը բերում
էր իրանց հօր մօտ։ Եւ Խրայէլն 3
իր բոլոր որդիներից աւելի սի-
րում էր Յովսէփին, որովհետև
նա իր ծերութեան որդին էր. և
թևքերով պատմուճան շինեց նո-
րա համար։ Եւ նորա եղբայրնե- 4
րը տեսան, որ իրանց հայրը սի-
րում էր նորան իր բոլոր եղբայր-
ներից աւելի, ատեցին նորան, և
խաղաղութեամբ չէին կարողա-
նում խօսել նորա հետ։
Եւ Յովսէփը մի երազ տեսաւ, 5
և իր եղբայրներին պատմեց. և

Նորանք աւելի սաստկին Նորան։
6 Եւ ասեց Նորանց. Խնդրեմ, ա-
կանջ դրէք այս իմ տեսած է-
7 րազը. Ահա մենք դաշտումը ո-
րաներ էինք կապում, և ահա
իմ որան վեր կացաւ և ուղիղ
կանգնեց. և ահա ձեր որանները
Նորա շուրջը կանգնեցին ու իմ
որային երկրպագութիւն արին։
8 Եւ Նորա եղբայրներն ասեցին Ն-
րան. Իրա՞ւ մեր վերայ թագա-
ւորելու ես, կամ իրաւ մեր վե-
րայ տիրելո՞ւ ես. և Նորա երազ-
ների և խօսքերի համար աւելի ա-
9 տեցին Նորան։ Եւ մի ուրիշ երազ
էլ տեսաւ, և իր եղբայրներին
պատմեց Նորան և ասեց. Ահա
մի երազ էլ տեսայ, և ահա ա-
րեգակը և լուսինը և տասնեմեկ
աստղեր ինձ երկրպագութիւն է-
10 ին անում։ Եւ իր հօր ու իր եղ-
բայրներին պատմեց. և իր հայրը
յանդիմանեց Նորան, և ասեց Ն-
րան. Այդ ինչ երազ է որ տե-
սել ես. մի՞թէ ես և քո մայրը
և քո եղբայրները իրաւ գալու
11 ենք որ մինչև գետինը քեզ խո-
նարհութիւն անենք։ Եւ եղ-
բայրները նախանձեցին Նորա վե-
րայ · բայց հայրը պահեց այս
խօսքը։
12 Եւ Նորա եղբայրները գնացին
իրանց հօր հօտերը Սիւքէմումն
13 արածեցնելու։ Եւ Իսրայէլն ա-
սեց Յովսէփին. Ահա քո եղբայր-
ները Սիւքէմումը արածեցնում
են. եկ քեզ Նորանց մօտ ուղար-
14 կեմ. և Նա ասեց. Ահա ես։ Եւ
Նա ասեց Նորան. Գնա տես, քո
եղբայրները առո՞ղջ են, և հօ-
տերը ո՞ղջ են, և ինձ համար
լուր բեր։ Եւ Նորան ուղարկեց
Քեբրոնի հովիտիցը. և Նա էլ
15 Սիւքէմ եկաւ։ Եւ մի մարդ
գտաւ Նորան, որ դաշտումը թա-
փառում էր. և այն մարդը հար-
ցրեց Նորան ասելով. Ինչ ես
16 պտրտում։ Եւ Նա ասեց. Իմ եղ-
բայրներին եմ պտրտում. խնդ-
րեմ ասիր ինձ, Նորանք ո՞րտեղ
17 են արածեցնում։ Եւ այն մարդն
ասեց. Այստեղից չուեցին. որով-
հետև լսեցի որ ասում էին՝ Գը-
նանք Դոթայիմ։ Եւ Յովսէփն իր
եղբայրների եւսից գնաց և Ն-
րանց Դոթայիմի մէջ գտաւ։ Եւ 18
երբոր Նորան հեռուանց տեսան,
գեռ ինքը Նորանց չմօտեցած,
դաւաճանութիւն արին Նորան
սպանելու։ Եւ իրար ասեցին. Ա- 19
հա այն երազ տեսնողը գալիս է.
Եւ հիմա եկէք սպանենք Նորան, 20
և գուբերի մէկի մէջ գցենք Ն-
րան. և ասենք՝ Թէ մի չար գա-
զան կերել է Նորան. և տեսնենք
Նորա երազները ինչ կ'լինին։ Եւ 21
Ռուբէնը լսեց և Նորանց ձեռ-
քից ազատեց Նորան, ասելով.
Չսպանենք Նորան։ Եւ Ռուբէնն 22
ասեց Նորանց. Արիւն մի թա-
փիր. Նորան այս գուբը գցեցէք
որ այս անապատումն է, և Ն-
րան ձեռք մի զարկէք. որպէս զի
ազատէր Նորան Նորանց ձեռքից,
որ իր հօրը դարձնէր։
Եւ եղաւ հէնց որ Յովսէփն իր 23
եղբայրների մօտ եկաւ, մերկա-
ցրին Յովսէփին իր պատմուճա-
նից, պօրնէն իր վերայի թևքե-
րով պատմուճանից։ Եւ առին 24
Նորան և գուբը գցեցին. և գու-
բը դատարկ էր, միջը ջուր չկար։
Եւ նստեցին հաց ուտելու. և ի- 25
րանց աչքերը բարձրացրին և տե-
սան, և ահա Իսմայէլացիների մէկ
կարաւանը գալիս էր Գաղաադից,
և իրանց ուղտերը համեմունք-
ներով և բալասանով և դմռնաւով
բեռնած գնում էին, որ տանեն
յած Եգիպտոս։ Եւ Յուդան ա- 26
սեց իր եղբայրներին. Ինչ օգուտ
եթէ մեր եղբօրը սպանենք, և
Նորա արիւնը ծածկենք. Եկէք 27
Իսմայէլացիներին ծախենք Նորան,
և մեր ձեռքը Նորան չդպչի. ո-
րովհետև նա մեր եղբայրը՝ մեր
մսեղբայրն է. և Նորա եղբայրները
լսեցին։ Եւ Մադիանացի վաճա- 28
ռականները անցնում էին. և Յով-
սէփին գուբից քաշեցին ու
դուրս հանեցին, և Իսմայէլացի-
ներին ծախեցին Յովսէփին քսան
արծաթի. Նորանք էլ Յովսէփին
տարին Եգիպտոս։ Եւ Ռուբէնը 29
դարձաւ դէպի գուբը, և ահա
Յովսէփը գուբումը չէր. և իր

30 հանդերձները պատառեց, Եւ
դարձաւ իր եղբայրներին և ա-
սեց. Տղան չկայ, և ես ո՞ւր գնամ։
31 Եւ առին Յովսէփի պատմուճանը, և այծերից մի նոխազ մոր-
թեցին, և պատմուճանը արիւնի
32 մէջ թաթախեցին։ Եւ ուղար-
կեցին թևքերով պատմուճանը
և բերին իրանց հօր մօտ, և ա-
սեցին. Ահա գտել ենք, հիմա ճա-
նաչիր թէ սա քո որդու պատ-
33 մուճանն է, թէ ոչ։ Եւ Նա ճա-
նաչեց Նորան, և ասեց. Իմ որ-
դու պատմուճանն է, մի չար
գազան կերել է Նորան. Յովսէփն
34 անպատճառ գիշատուել է։ Եւ
Յակոբը պատառեց իր հանդերձ-
ները, և քուրձ հագաւ իր մէջ-
քի վերայ և իր որդու համար
35 շատ օրեր սուգ արաւ։ Եւ Նորա
բոլոր որդիները և Նորա բոլոր
աղջկերքը վեր կացան Նորան մը-
խիթարելու, բայց Նա մխիթ-
արուելու, բայց Նա մխիթար
էր մխիթարուիլ, և ասեց. Ես
սուգով կ'իջնեմ գերեզմանը իմ
որդու մօտ։ Եւ Նորա Հայրը լա-
ցաւ Նորա համար։ Եւ Մադիա-
36 նացիները ծախեցին Նորան Եգիպ-
տոսում Փարաւոնի ներքինի պե-
տափրէս գահճապետին։

ԳԼ. Լ.Ը

4 Եւ եղաւ որ այն ժամանակ
Յուդան իր եղբայրների մօտից ի-
ջաւ և գնաց մի Ադոդոմացի մար-
2 դի մօտ, անունը Իրաս։ Եւ Յու-
դան Շաւա անունով մի Քանա-
նացու աղջկանը տեսաւ և առաւ
3 Նորան և մտաւ Նորա մօտ։ Եւ
Նա յղացաւ և մի որդի ծնեց և
4 Նորա անունը Էր դրաւ։ Եւ դարձ-
եալ յղացաւ և որդի ծնեց, և
5 Նորա անունը Օնան դրաւ։ Եւ
դարձեալ մի որդի ծնեց, և Ն-
րա անունը Սելօմ դրաւ. և Յու-
դան Քեզիբումն էր Նորան ծնելիս։
6 Եւ Յուդան իր առաջինեկ որ-
դուն Էրի համար կին առաւ, ա-
7 նունը Թամար։ Եւ Յուդայի ա-
ռաջինեկ Էրը չար էր Եհովայի
առաջին. և Եհովան սպանեց Ն-
8 րան։ Եւ Յուդան ասեց Օնանին.

Մտիր քո եղբօր կնոջ մօտ և
ապգրաւիճան պարտքը կատա-
րիր Նորա համար, և քո եղբօր
համար սերունդ հանիր։ Եւ Օ- 9
նանը գիտաց, որ սերունդը իրա-
նը չի լինելու. Նորա համար երբոր
իր եղբօր կնոջ մօտ էր մտնում,
-ետ գետինն էր թափում, որ
իր եղբօրը սերունդ չտայ։ Եւ 10
այս բանը որ Նա արաւ, չար ե-
րևեցաւ Եհովայի առաջին, և Նա
Նորան էլ սպանեց։ Եւ Յուդան 11
իր Նոր Թամարին ասեց. Որբևայ-
րի նստիր քո հօր տանը մինչև
որ իմ Սելօմ որդին մեծանայ.
որովհետև ասեց. Մի գուցէ Նա
էլ իր եղբայրների պէս մեռնի.
և Թամարը գնաց ու իր հօր տա-
նը նստեց։
Եւ շատ օրերից յետոյ մեռաւ 12
Շաւայի աղջիկը՝ Յուդայի կինը.
և Յուդան մխիթարուել էր, և
գնաց Թամնա իր Հօտերը ոտա-
կատուր անողների մօտ ինքը և իր
բարեկամը Ադոդոմացի Իրասը։ Եւ 13
պատմեցին Թամարին ասելով.
Ահա քո սկեսրայրը գնալի Թամ-
նա է գալիս իր ոչխարները
ոտակատուր անելու։ Նա էլ իր 14
որբևայրութեան հանդերձները
հանեց իր վերայից և քօղով
ծածկուեցաւ և փաթաթուե-
ցաւ, և Թամնայի ճանապարհու-
մի Էզոզ Էնայիմի մուտքումը
նստեց. որովհետև տեսաւ որ Սե-
լօմը մեծացել էր, բայց իրան
Նորա համար կին չտուին։ Եւ 15
Յուդան տեսաւ Նորան և բոզ
կարծեց, որովհետև երեսը ծած-
կել էր։ Եւ ճանապարհին դէպի 16
Նորան գարձաւ և ասեց. Խնդ-
րեմ, թոզ քեզ մօտ մտնեմ. ո-
րովհետև չգիտեր թէ Նա իր
Տարան էր։ Եւ Նա ասեց. Ինչ
կ'տաս ինձ որ ինձ մօտ մտնես։
Նա էլ ասեց. Ես մի այծի ուլ 17
կ'ուղարկեմ Հօտերիցը. և Նա ա-
սեց. Երդուած գրաւ կ'տա՞ս մին-
չև ուղարկելդ։ Եւ Յուդան ա- 18
սեց. Ինչ գրաւ տամ քեզ. և
Նա ասեց. Քո կնիքը և ժապա-
ւէնը և գաւազանը. Նա էլ տուաւ
Նորան. և մտաւ Նորա մօտ, և

49 Թ֊ՀԷԸ յղի մնաց նորանից, եւ
ձեր կացաւ գնաց, և իր վերայից
քօղը հանեց, և իր որբևայրու-
20 թեան հանդերձները հագաւ. եւ
Յուդան այծի ուլն ուղարկեց իր
բարեկամ Ոդողամացու Ջեռքա-
վը, որ այն կնոջ ձեռքիցը գրաւն
առնէ. բայց նա չ'գտաւ նորան,
21 եւ այն տեղի մարդկանցից հար-
ցրեց ասելով. Ո՞ւր է այն բոզը
որ Ինայիմաւմ ճանապարհի վե-
րայ էր. և նորանք ասեցին. Այս-
22 տեղ բոզ չ'կար, եւ նա դար-
ձաւ Յուդային մօտ և ասեց. Չը
գտայ նորան, և այն տեղի մար-
դիկն էլ ասեցին' Թէ Այստեղ
23 բոզ չ'կար, եւ Յուդան ասեց.
Թող իրան լինի, միայն Թէ խայ-
տառակ չ'լինինք, ահա ես այս
ուլը ուղարկեցի, և դու չ'գտար
24 նորան։ Եւ եղաւ որ երեք ամիից
յետոյ Յուդային պատմեցաւ՝
ասելով. Քո հարս Թամարը պոռ-
նկացել է, նաև ահա պոռնիկ-
կութիւնից յղի է. այն ժամա-
նակ Յուդան ասեց. Հանեցէք
25 նորան, և պէտք է այրուի։ Երբ-
որ նորան դուրս էին հանում,
նա ՏԷՐ֊ՆԷՐԸ իր սկեսրայրին ու-
ղարկեց ասելով. Ես այս բանե-
րի տիրոջից եմ յղի. Նաև ա-
սեց. Խնդրեմ՝ ճանաչիր Թէ ո-
րինն է այս կնիքը և ժապաւէնը
26 և գաւազանը։ Եւ Յուդան ճա-
նաչեց և ասեց. Դա ինձանից ար-
դար է. որովհետև նորան իմ որ-
դի Սելոմին չ'տուի. և այլ ևս չը
դիտաց նորան։
27 Եւ եղաւ որ նորա ծնելու ժա-
մանակը՝ ահա նորա արդանդու-
28 մը երկուորեակ էին։ Եւ եղաւ
որ ծնելիս, ձեռը ձեռքը մեկնեց.
և մանկաբարձն առաւ և նորա
ձեռքի վերայ կարմիր դերձան
կապեց ասելով. Աւագ այս
29 դուրս եկաւ։ Եւ նա չէնց որ իր
ձեռքը ետ քաշեց, ահա նորա
եղբայրը դուրս եկաւ. և Փա֊
Ռ֊ԷՑ ասեց. Ինչո՞ւ պատռտեցիր
ցանկը. պատռտումդ քեզ վերայ.
Նորա համար նորա անունը *Փա-

*Պատռտումն։

րէս դրուեցաւ։ Եւ յետոյ ձեռ- 30
քին կարմիր դերձան ունեցող
եղբայրը դուրս եկաւ, և նորա
անունը Զարա դրուեցաւ։

ԳԼ. ԼԸ

Եւ Յովսէփին իջեցրին Եգիպ- 1
տոս. և Փարաւոնի ներքինի՝ Ե-
գիպտացի Պետափրէս գահճապե-
տը ծախու առաւ նորան Իսմա-
էելացիներից ձեռքիցը, որ նորան
այնտեղ էին իջեցրել։ Եւ Եհո- 2
վան Յովսէփ հետ էր, և նա յա-
ջողակ մարդ էր. և իր Եգիպտա-
ցի տիրոջ տանն էր։ Եւ նորա 3
տէրը տեսաւ որ Եհովան նորա
հետ էր, և Թէ ինչ որ անում
էր, Եհովան յաջողում էր նորա
ձեռքով։ Եւ Յովսէփը շնորհք 4
գտաւ նորա առաջին, և ծառա-
յում էր նորան, և նա իր տան
վերայ վերակացու արաւ նորան,
և իր բոլոր ունեցածը նորա ձեռ-
քը յանձնեց։ Եւ եղաւ որ նո- 5
րան իր տան և իր բոլոր ունե-
ցածի վերայ վերակացու արած
ժամանակից յետոյ, Եհովան Ե-
գիպտացու տունը օրհնեց Յով-
սէփի պատճառով. և Եհովայի
օրհնութիւնը լինում էր Թէ տա-
նը և Թէ դաշտումը նորա բոլոր
ունեցածի վերայ։ Եւ նա իր բոլոր 6
ունեցածը Յովսէփի ձեռքին Թո-
ղեց. և նորա մօտ եղած մէկ բա-
նից տեղեկութիւն չ'առնէր բացի
իր կերած հացիցը։ Եւ Յովսէփը
գեղեցիկ էր դէմքով և գեղե-
ցիկ տեսքով։

Եւ եղաւ այս բաներից յետոյ 7
որ նորա տիրոջ կինը աչք բարձ-
րացրեց Յովսէփի վերայ, և ա-
սեց. Պառկիր ինձ հետ։ Բայց նա 8
մերժեց, և իր տիրոջ կնոջն ա-
սեց. Ահա իմ տէրը ինչ որ տա-
նը մէջ ինձ մօտ կայ չ'գիտէ. և
իր բոլոր ունեցածն իմ ձեռքն է
յանձնել։ Այս տան մէջ ինձա- 9
նից մեծը չ'կայ. և ինձանից մի
բան չ'արգիլեց բացի քեզանից,
քանի որում դու նորա կինն ես.
ուրեմն ես ինչպէս գործեմ այս
մեծ չարութիւնը, և Աստուծոյ

40 դէմ մեղանչեմ։ Եւ եղաւ քա-
նի որ նա օրէցօր Յովսէփին ա-
ռաւմ էր, բայց նա չէր լսում
նորան, որ նորա հետ պառկի
41 կամ նորա հետ լինի։ Եւ եղաւ
որ նա մի օր իր գործը կատարե-
լու համար տուն եկաւ. և այն-
տեղ տան մէջ տան մարդիկնե-
42 րից մէկը չ'կար. Եւ ՓԷՒՏԸ բըռ-
նեց նորա հանդերձից ասելով,
Պառկիր ինձ հետ. և նա իր հան-
դերձը Թողեց նորա ձեռքին և
43 փախաւ դուրս գնաց։ Եւ ե-
դաւ երբոր տեսաւ որ նա իր
հանդերձը նորա ձեռքին Թողեց,
44 և դուրս փախաւ, իր տան մարդ-
կանցը կանչեց և պատմեց նորանց
ասելով. Տեսէք, մեզ համար մի
Եբրայեցի բերաւ մեզ խայտա-
ռակ անելու համար. նա ինձ մօտ
եկաւ, որ ինձ հետ պառկի, ու
ես բարձր ձայնով աղաղակեցի։
45 Եւ եղաւ երբոր լսեց Թէ ես իմ
ձայնը բարձրացրի և աղաղակե-
ցի, իր հանդերձը ինձ մօտ Թո-
ղեց և փախաւ ու դուրս գնաց։
46 Եւ կինը նորա հանդերձը իր մօտ
պահեց, մինչև որ նորա տէրը տուն
47 եկաւ։ Եւ խօսեց նորա հետ այս
խօսքերի պէս ասելով, Ինձ մօտ
եկաւ այն Եբրայեցի ծառան, որ
դու մեզ համար բերիր, որ ինձ
48 խայտառակ անի։ Եւ եղաւ եր-
բոր իմ ձայնը բարձրացրի և ա-
ղաղակեցի, իր հանդերձը ինձ
մօտ Թողեց և դուրս փախաւ։
49 Եւ եղաւ երբոր նորա տէրը
լսեց իր կնոջ խօսքերը, որ պատ-
մեց իրան ասելով, Քո ծառան
ինձ այսպիսի բաներ արաւ, նորա
20 բարկութիւնը բորբոքուեց։ Եւ
Յովսէփի տէրը առաւ նորան և
բանտը դրաւ՝ այն տեղը ուր որ
Թագաւորի բանտարկեալները
կապած էին. և նա այնտեղ
21 բանտումն էր։ Բայց Եհովան Յով-
սէփի հետ էր, և ողորմութիւն
ցոյց տուաւ նորան, և բանտա-
պետի առաջին շնորհք գտնել
22 տուաւ նորան։ Եւ բանտապետը
Յովսէփի ձեռքը յանձնեց բան-
տումը եղած բոլոր բանտարկեալ-
ները. և ամեն ինչ որ այնտեղ
անում էին, անողը նա էր։ Բան- 23
տապետը նորա ձեռքին եղած ոչ
մէկ բանին չէր նայում. որովհե-
տև Եհովան նորա հետ էր. և նո-
րա ամեն արածները Եհովան
յաջողում էր։

ԳԼ. Խ

Եւ եղաւ որ այս բաներից յե- 1
տոյ Եգիպտոսի Թագաւորի մատ-
առուակը և հացագործը իրանց
տիրոջ՝ Եգիպտոսի Թագաւորի
դէմ յանցանք գործեցին։ Եւ 2
Փարաւոնը բարկացաւ իր երկու
ներքինիների՝ այսինքն մատառու-
կապետի և հացագործապետի վե-
րայ. Եւ նորանց գահճապետի 3
տան բանտի մէջ բանտարկեց,
ուր որ Յովսէփը բանտարկուած
էր։ Եւ գահճապետը Յովսէփին 4
վերակացու նշանակեց նորանց
համար, և նա ծառայում էր նո-
րանց. և նորանք մի որ ժամա-
նակ մնացին բանտումը։

Եւ երկուսն էլ երազ տեսան՝ 5
ամեն մէկն իր երազը մէկ գիշեր՝
ամեն մէկն իր երազի նշանակու-
թեամբը՝ Եգիպտոսի Թագաւորի
մատառուակը և հացագործը, ո-
րոնք բանտումը կապուած էին։
Եւ Յովսէփն առաւօտեան նորանց 6
մօտ եկաւ, և տեսաւ նորանց, որ
տրտմած էին։ Եւ հարցրեց Փա- 7
րաւոնի ներքինիներին, որ իր տի-
րոջ տանը իր հետ բանտարկուած
էին ասելով, Ինչո՞ւ համար ձեր
երեսները այսօր տխուր են։ Եւ 8
նորանք ասեցին նորան. Երազ
ենք տեսել, և նորան մեկնող
չ'կայ։ Եւ Յովսէփն ասեց նորանց.
Ա՜հա մեկնութիւնները Աստու-
ծոյն են ՎԵՐ֊ԲԵՐԵ֊Ր. խնդրեմ,
պատմեցէք ինձ։
Եւ մատառուակապետը պատ- 9
մեց իր երազը Յովսէփին և ասեց
նորան. Երազումս տեսայ, որ առ-
ջևս մի որթի կաթ. Եւ այն որթի 10
վերայ երեք ուռ կային, և Հէնց
որ բողբոջեց ծաղիկ տուաւ, և
նորա ողկոյզները խաղող հասցրին.
Եւ փարաւոնի բաժակը իմ ձեռ- 11
քին էր. և խաղողներն առի, և

փարաւօնի բաժակի մէջ ճմլեցի,
և դաւաթը փարաւօնի ձեռքը
12 տուի։ Եւ Յովսէփը նորան ասեց.
Սա է դորա մեկնութիւնը. երեք
13 ուռը երեք օր է. Երեք օրից յե-
տոյ փարաւօնը քո գլուխը կը
բարձրացնէ, և քեզ դարձեալ
քո պաշտօնի վերայ կ'դնէ. և
փարաւօնի բաժակը նորա ձեռ-
քը կ'տաս այն առաջի սովորու-
թեան պէս, երբոր նորա մատ-
14 ռուակն էիր։ Բայց ինձ միտքդ
բեր, երբ որ քեզ բարիք կ'լինի,
և խնդրեմ ինձ բարերարութիւն
արա, և ինձ յիշիր փարաւօնի
առաջին և ինձ հանիր այս տու-
15 նիցը. Որովհետև իրաւ գողաց-
ուեցայ Եբրայեցիների երկրիցը.
և այստեղ էլ մի բան չեմ արել
որ ինձ այս գուրը նետեն։
16 Եւ հացագործապետը տեսաւ
որ լաւ մեկնեց, ասեց Յովսէփին.
Ես էլ երազումս տեսայ, որ գլ-
խիս վերայ երեք նաշիհի սակառ
17 ունէի. Եւ ամենի վերայի սակա-
ռի մէջ կար փարաւօնի ամեն
կերակուրներիցը, որ հացագործը
շինում է, և թռչունները ու-
տում էին նորանց գլխիս վերայի
18 սակառիցը։ Եւ Յովսէփը պա-
տասխանեց, և ասեց. Սա է դո-
րա մեկնութիւնը. երեք սակա-
19 ռը երեք օր է. Երեք օրից յե-
տոյ փարաւօնը քո վերայից վեր
կ'առնէ քո գլուխը, և քեզ մի
ծառից կ'կախէ. և թռչուն-
ները քո վերայից կ'ուտեն քո մար-
մինը։
20 Եւ եղաւ երրորդ օրը, որ փա-
րաւօնի ծննդեան օրն էր, և իր
բոլոր ծառաների համար խնջոյք
արաւ. և իր ծառաների մէջ
մատռուակապետի և հացագոր-
ծապետի գլուխները վեր հանեց։
21 Եւ դարձրեց մատռուակապետին
իր պաշտօնին, և նա բաժակը
22 փարաւօնի ձեռքը տուաւ։ Բայց
հացագործապետին կախել տը-
ւաւ, ինչպէս Յովսէփը մեկնել
23 էր նորանց։ Բայց մատռուակա-
պետը չ'յիշեց Յովսէփին, և մո-
ռացաւ նորան։

ԳԼ. ԽԱ

Եւ եղաւ երկու տարուց յետոյ 1
փարաւօնը երազ տեսաւ, և ա-
հա կանգնել էր գետի եզերքին։
Եւ ահա գետիցը գեղեցիկ տես- 2
քով և պարարտ մարմնով եօթը
երինջներ ելան և արածում էին
պրտուների մէջ։ Եւ ահա նո- 3
րանց ետևից ուրիշ եօթը երինջ-
ներ ելան գետիցը՝ զազիր տես-
քով և վտիտ մարմնով, և կանգ-
նեցին այն երինջների մօտ գետի
եզերքումը։ Եւ զազիր տեսքով 4
և վտիտ մարմնով երինջները կե-
րան այն եօթը գեղեցիկ տեսքով
ու պարարտ երինջներին։ Եւ փա-
րաւօնը զարթնեց։ Եւ քնեց, և 5
երկրորդ անգամ երազ տեսաւ,
և ահա մէկ փունջի վերայ եօ-
թը պարարտ և լաւ հասկեր էին
դուրս գալիս։ Եւ ահա նորանց ե- 6
տևից եօթը վտիտ և խորշակահար
հասկեր էին բուսնում. Եւ այն 7
վտիտ հասկերը կուլ տուին այն
եօթը պարարտ և լիքը հասկե-
րին։ Եւ փարաւօնը զարթնեց, և
ահա երազ էր։ Եւ եղաւ որ ա- 8
ռաւօտանց նորա հոգին խռով-
ուեցաւ, և նա կանչել տուաւ
Եգիպտոսի բոլոր մոգերին, և նո-
րա բոլոր իմաստուններին. և փա-
րաւօնը պատմեց նորանց իր ե-
րազները, բայց մէկը չ'կար, որ
մեկնէր նորանց փարաւօնի հա-
մար։
Եւ մատռուակապետը խօսեց 9
փարաւօնի հետ ասելով. Ես
այսօր յիշում եմ իմ յանցանք-
ները։ փարաւօնը բարկացաւ իր 10
ծառաների վերայ, և ինձ դահ-
ճապետի տան բանտը դրաւ՝ ինձ
և հացագործապետին։ Եւ ես ու 11
նա մէկ գիշեր երազ տեսանք.
մեզանից ամեն մէկը իր երազի
նշանակութեան պէս երազ տե-
սանք։ Եւ այնտեղ մեզ հետ մի 12
Եբրայեցի պատանի կար՝ դահ-
ճապետի ծառան, և մենք պատ-
մեցինք նորան, և նա մեկնեց մեզ
մեր երազները. ամեն մէկիս իր
երազի պէս մեկնեց։ Եւ ինչպէս 13
որ նա մեկնեց, այնպէս եղաւ.

ինձ իմ պաշտօնիս դարձրեց, և
նորան կախեց։
14 Եւ փարաւօնը մարդ ուղարկեց
և կանչեց Յովսէփին, և շուտով
բանտիցը հանեցին նորան, և նա
ածիլուեցաւ և իր հանդերձները
փոխեց, և եկաւ փարաւօնի մօտ։
15 Եւ փարաւօնը ասեց Յովսէփին.
Երազ տեսայ, և մէկը չ'կայ որ
մեկնէ նորան. և ես քեզ համար
լսեցի որ ասում են. երազ ես
16 լսում և մեկնում։ Եւ Յովսէփը
պատասխանեց փարաւօնին և ա-
սեց. Ոչ թէ ես. Աստուած կը
տայ խաղաղութեան պատասխան
փարաւօնին։
17 Եւ փարաւօնն ասեց Յովսէ-
փին. Երազումս ահա գետի ե-
18 զերքումը կանգնել էի. Եւ ա-
հա գետիցը եօթը երինջներ ելան
պարարտ և գեղեցիկ տեսքով, և
պրտուների մէջ արածում էին։
19 Եւ ահա նորանց ետևից ուրիշ
եօթը երինջներ ելան նիհար ու
շատ զազիր տեսքով և վտիտ
մարմնով, որ նորանց պէս զազիր
չեմ տեսել Եգիպտոսի բոլոր եր-
20 կրումը։ Եւ այն վտիտ և զազիր
երինջները կերան առաջի եօթը
21 պարարտ երինջներին։ Եւ նորանց
փորը գնացին, և չէր գիտաց-
վում, թէ նորանք նորանց փորն
են գնացել. այլ նորանց տեսքը
22 զազիր էր ինչպէս առաջ։ Յետոյ
զարթնեցի։ Եւ երազումս տե-
սայ, և ահա մէկ փունջի վերայ
եօթը լիքը և լաւ հասկեր էին
23 դուրս գալիս. Եւ ահա նորանց
ետևից եօթը չոր, նիհար խորշա-
կահար հասկեր էին բուսնում.
24 Եւ նիհար հասկերը կուլ տուին
այն եօթը լաւ հասկերին։ Եւ ես
պատմեցի մոգերին, բայց մէկը
չ'կայ որ ինձ մեկնէ։
25 Եւ Յովսէփն ասեց փարաւօ-
նին. փարաւօնի երազը մէկ է.
Աստուած իր անելիքը յայտնեց
26 փարաւօնին։ Այն եօթը լաւ ե-
րինջները եօթը տարի են, և այն
եօթը լաւ հասկերը եօթը տարի
27 են. երազը մէկ է։ Եւ այն եօթը
վտիտ և զազիր երինջները, որ
նորանց ետևից ելան՝ եօթը տա-
րի են, և այն եօթը դատարկ
խորշակահար հասկերը եօթը տա-
րի սով են նշանակում։ Այս է 28
իմ խօսքը որ ասում եմ փարա-
ւօնին. թէ Աստուած իր անելի-
քը փարաւօնին ցոյց է տուել։
Ահա եօթը տարի են գալու, որ 29
բոլոր Եգիպտոսի երկրումը մեծ
առատութիւն կ'լինի։ Եւ նո- 30
րանց ետևից եօթը տարի սով
կ'գայ, և Եգիպտոսի երկրի մէջ
բոլոր առատութիւնը կ'մոռաց-
ուի. և սովը կ'սպառէ երկիրը.
Եւ չի իմացուիլ երկրի մէջ ա- 31
ռատութիւնը այն սովի պատճա-
ռով, որ նորանից յետոյ կ'գայ,
որովհետև շատ սաստիկ կ'լինի։
Եւ երազը երկու անգամ փարա- 32
ւօնի համար կրկնուելու պատ-
ճառը այս է, որ այս բանը Աստ-
ուածանից հաստատուած է, և
Աստուած շուտով անելու է այս։
Եւ հիմա թող փարաւօնը հան- 33
ճարեղ և իմաստուն մարդ գըտ-
նէ, և նորան Եգիպտոսի երկրի
վերայ դնէ։ Թող փարաւօնը այս- 34
պէս անէ, և երկրի վերայ գոր-
ծակալներ նշանակէ, և Եգիպտո-
սի երկրի արմտիքներից առատու-
թեան եօթը տարիներումը հին-
գից մէկն առնէ։ Եւ այն եկող 35
լաւ տարիների բոլոր պաշարը ժո-
ղովեն. և փարաւօնի ձեռքի տակ
ցորեն դիզեն, և քաղաքներում
պաշար պահեն։ Եւ կերակուրը 36
պաշար լինի երկրիս համար այն
եօթը տարուայ սովի դէմ, որ
Եգիպտոսի երկրումը լինելու է,
որ երկիրը սովից չ'կորչի։
Եւ այս բանը լաւ երևեցաւ 37
փարաւօնի աչքին և նորա բոլոր
ծառաների աչքին։ Եւ փարաւօնն 38
ասեց իր ծառաներին. Կարո՞ղ
ենք գտնել սորա պէս մի մարդ,
որի մէջ լինի Աստուծոյ Հոգին։
Եւ փարաւօնն ասեց Յովսէփին. 39
Որովհետև Աստուած այս ամենը
քեզ իմացրեց, քեզ պէս հան-
ճարեղ և իմաստուն չ'կայ։ Դու 40
իմ տան վերայ եղիր, և իմ բո-
լոր ժողովուրդը քո բերանին հը-
նազանդուին. ես միայն աթոռով
քեզանից մեծ լինիմ։ Եւ փարա- 41

ւօնն ասեց Յովսէփին. Ահա քեզ
Եգիպտոսի բոլոր երկրի վերայ
42 դրի։ Եւ փարաւօնն իր ձեռքից
մատանին հանեց, և Յովսէփի
ձեռքն անցրեց, և նորան բէհեզ
հանդերձներ հագցրեց, և
նորա պարանոցին ոսկի մանեակ
43 դրաւ։ Եւ իր երկրորդ կառքի
վերայ հեծցրեց, և գոչում էին
նորա առաջին. Ծունր դրէք. և
Եգիպտոսի բոլոր երկրի վերայ
44 նշանակեց նորան։ Եւ փարաւօնն
ասեց Յովսէփին. Ես փարաւօնն
եմ, և առանց քեզ մէկն իր
ձեռքը կամ իր ոտքը չ'բարձրացրնէ Եգիպտոսի բոլոր երկրի մէջ։
45 Եւ փարաւօնը Յովսէփի անունը
*Փոսմիթոմիսիանէ դրաւ, և Աբեգ
քաղաքի Պետափրեայ քուրմի աղջիկ Ասանէթը նորան կին առաւ.
և Յովսէփը ելաւ որ Եգիպտոսի
երկիրը ՛ն ։

46 Եւ Յովսէփը երեսուն տարեկան էր, երբոր Եգիպտոսի փարաւօն Թադաւորի առաջին կանգնեց, և Յովսէփը փարաւօնի առջևից դուրս ելաւ և Եգիպտոսի
47 բոլոր երկիրը մանեկաւ։ Եւ առատութեան եօթը տարիներուն երկիրը խիտ շատ արդիւնք
48 առաւ։ Եւ եօթը տարիներ բոլոր պաշարը որ Եգիպտոսի երկրումը եղաւ, ժողովեց, և քաղաքներումը դրաւ պաշարը. այն քաղաքի շուրջի արտերի պաշարը նոյն ։ղ։ մէջ դրաւ։ Եւ
49 Յովսէփը ծովի աւազի չափ խիտ շատ ցորեն դիզեց՝ այնչափ որ թուելը ձգեցին, որովհետև անթիւ էր։

50 Եւ Յովսէփի համար երկու որդի ծնուեցան առի տարիները գալուց առաջ, որ Աբեգ քաղաքի Պետափրեայ քուրմի աղջիկ Ասանէթը ծնեց նորա համար։
51 Եւ Յովսէփը առաջինեկի անունը †Մանասէ դրաւ, որովհետև ասեց. Աստուած ինձ մոռացրեց իմ բոլոր վիշտերը, և իմ հօր
52 բոլոր տունը։ Եւ երկրորդի անունը ‡Եփրեմ դրաւ. որովհետև ասեց. Աստուած իմ տառապանաց երկրումն աճեցրեց ինձ։

53 Եւ Եգիպտոսի երկրումն առատութեան եօթը տարին անցաւ։
54 Եւ Յովսէփի ասածի պէս սկսեցին գալ սովի եօթը տարին. և բոլոր երկիրներում սով եղաւ, բայց Եգիպտոսի երկրի մէջ հաց կար։ Եւ երբոր Եգիպտոսի բոլոր
55 երկիրը անօթեցաւ, ժողովուրդը հացի համար դէպի փարաւօնն աղաղակեց. և փարաւօնն ասեց բոլոր Եգիպտացիներին. Գնացէք Յովսէփի մօտ, ինչ որ ձեզ ասէ
56 արէք։ Եւ սովը երկրի բոլոր երեսի վերայ եղաւ. և Յովսէփը բացաւ բոլոր ՛ե՛ր՛ն՛ն՛ն՛ն՛ը, որանց մէջ դ՛ը՛ը կար և Եգիպտացիներին պաշար ծախեց. և սովը սաստկացաւ Եգիպտոսի երկրումը։
57 Եւ բոլոր աշխարհ գալիս էին Եգիպտոս Յովսէփից պաշար ծախու առնելու. որովհետև սովն երկրի մէջ սաստկացաւ։

Գլ. Խ

Եւ Յակոբը տեսաւ, որ Եգիպ- 1
տոսումն պաշար կայ, և Յակոբն
ասեց իր որդիներին. Ինչո՞ւ էք
իրար մոռիկ տալիս։ Եւ ասեց. Ա- 2
հա լսել եմ որ Եգիպտոսումն
պաշար կայ, այնտեղ իջէք և այն
տեղից մեզ համար ծախու առէք
որ ողջ մնանք և չ'մեռնինք։ Եւ 3
Յովսէփի տասը եղբայրներն իջան
Եգիպտոսից ցորեն ծախու առնելու։ Բայց Յակոբը Յովսէփի եղ- 4
բայր Բենիամինին նորա եղբայրների հետ չ'ուղարկեց. որովհետև ասեց. Մի գուցէ փորձանք պատահի նորան։

Եւ Իսրայէլի որդիները եկան 5
‡Դ՛ը՛ե՛ղ գնացողների հետ պաշար
ծախու առնելու. որովհետև Քանանի երկրումի սով կար։ Եւ 6
Յովսէփն այն երկրի իշխանն էր.
և ինքը երկրի բոլոր ժողովրդին
պաշար էր ծախում. Յովսէփի
եղբայրները եկան, և իրանց ե-

*Երկրի փրկիչը։
†Մոռացնող։
‡Պատաբեր։

բեռները մինչև գետինը խոնար-
7 Տւելիուն արին նորան։ Եւ տեսնց
որ Յովսէփն իր եղբայրներին տեսաւ՝ ճանաչեց նորանց, բայց ի-
րան նորանց չ'ճանաչեցրնէց. և նորանց հետ խոստութեամբ խօսեց,
և նորանց ասեց. Ո՞րտեղից էք եկել. և նորանք ասեցին. Քանանի երկրիցը՝ կերակուր ծախու
8 առնելու։ Եւ Յովսէփն իր եղբայրներին ճանաչեց, բայց նո-
9 րանք չ'ճանաչեցին նորան։ Եւ Յովսէփը յիշեց այն երազները,
որ նորանց վերայ տեսել էր, և ասեց նորանց. Դուք լրտեսներ
էք. եկել էք երկրի բացութիւնը
10 տեսնելու։ Եւ ասեցին նորան. Ո՛չ,
տէր իմ, այլ քո ծառաները եկել են կերակուր ծախու առնե-
11 լու։ Մենք ամենքս մէկ մարդի որդիներ ենք. մենք ուղիղ ենք.
12 ծառաներդ լրտեսներ չենն։ Եւ նա ասեց նորանց. Ո՛չ, այլ եկել էք
երկրի բացութիւնը տեսնելու։
13 Եւ նորանք ասեցին. Մենք տասևերկու ծառաներդ Քանանի երկրումը մէկ մարդի որդիքը ենք՝ եղբայրներ. և ահա կրտսերը այսօր
մեր հօր մօտ է, և մէկը չ'կայ։
14 Եւ Յովսէփն ասեց նորանց. Սա
է որ ձեզ հետ խոսելի ասելով՝
15 թէ Դուք լրտեսներ էք. Սորանով պէտք է փորձուիք. փարաւօնի կեանքը վ՛ա՛ է, որ դուք
այս տեղից չէք դուրս գալ եթէ
ձեր կրտսեր եղբայրը այստեղ
16 չ'գայ։ Ձեզանից մէկին ուղարկեցէք ձեր եղբօրը բերելու, և դուք
կ'բանտարկուիք, որ ձեր խօսքերը փորձուին, թէ արդեօք ձեզնում ճշմարտութիւն կա՞յ. և
եթէ ոչ, փարաւօնի կեանքը վ՛ա՛
17 է որ դուք լրտեսներ էք։ Եւ եբեք օր բանտը դրաւ նորանց։
18 Եւ երրորդ օրը Յովսէփն ասեց
նորանց. Սա արէք որ ողջ մնաք,
ես Աստուածանից վախող եմ։
19 Եթէ դուք ուղիղ էք, ձեր եղբայրներից մէկը ձեր բանտարկուած տան մէջ արգիլուի. և
դուք գնացէք, ձեր տան սովամահութեան համար պաշար տա-
20 րէք։ Եւ ձեր կրտսեր եղբօրն ինձ
մօտ բերէք, որ ձեր խօսքերը ճշմարտանան, և չէք մեռնիլ։ Եւ
այնպէս արին։ Եւ նորանք իրար 21
ասում էին. Իրաւ մենք մեր եղբօր վրայով յանցաւոր ենք, որովհետև տեսանք նորա հոգու
նեղութիւնը երբոր նա մեզ աղաչում էր, և չ'լսեցինք. նորա
համար գալիս է այս նեղութիւ- 22
նը մեր վերայ։ Եւ Ռուբէնը պատասխանեց նորանց ասելով. Ես
չէի ասում, թէ այդ տղայի դէմ
մեղք մի գործէք, և դուք ա-
կանջ չ'դրիք. և ահա հիմա նորա 23
արիւնը պահանջվում է։ Եւ նորանք չ'գիտէին որ Յովսէփը հասկանում էր. որովհետև թարգմանով էր խոսում իրանց հետ։
Եւ նորանցից բաժանուեցաւ և 24
լացաւ. և դարձաւ դէպի նորանց,
և խօսեց նորանց հետ. և նորանցից Շմաւոնին առաւ, և նորանց
աչքի առաջին կապեց նորան։ Եւ 25
Յովսէփը հրամայեց, որ նորանց
ամանները ցորենով լցնեն և ամեն մէկի փողը իր քսակի մէջ
դնեն, և նորանց պաշար տան ճանապարհի համար։ Եւ նորանց
այսպէս արաւ։ Եւ նորանք իրանց 26
էշերի վերայ բեռնեցին իրանց ցորենը, և այն տեղից գնացին։ Եւ 27
նորանցից մէկը բացաւ իջևանում իր քսակը իր էշին կերակուր
տալու համար, և տեսաւ իր փողը, որ ահա իր քսակի բերանումն էր։ Եւ իր եղբայրներին 28
ասեց. Փողս էս ե՛կել. և ահա
այստեղ իմ քսակի մէջ է. և նորանց սիրտը խառնուեցաւ, և վախելով իրար ասեցին. Սա ինչ է
որ Աստուած արաւ մեզ։ Եւ ե- 29
կան Քանանի երկիրը իրանց հայր
Յակոբի մօտ, և բոլոր իրանց պատահածները պատմեցին նորան
ասելով. Ահա երկրի տէրը եղօ- 30
մարդը մեզ հետ խոստութեամբ
խօսեց, և մեզ երկիրը լրտեսների
տեղ դրաւ։ Եւ ասեցինք նորան. 31
Մենք ուղիղ ենք. լրտեսներ չենք.
Մենք տասնևերկուս եղբայրներ 32
ենք մեր հօր որդիքը. մէկը չ'կայ,
և կրտսերը Քանանի երկրումը
մեր հօր մօտ է այսօր։ Եւ այն 33

երկրի տէրը եղող մարդը ասեց
մեզ. Սորանով կ'իմանամ թէ
դուք ուղիղ էք. ձեր եղբայրնե-
րից մէկին ինձ մօտ թողեցէք. և
ձեր տան սովածութեան համար
34 պաշար առէք, և գնացէք։ Եւ
ձեր կրտսեր եղբօրն ինձ մօտ բե-
րէք, որ գիտենամ թէ դուք
լրտեսներ չէք, այլ ուղիղ էք.
ձեր եղբայրը ձեզ կ'տամ, և այս
35 երկրումը առուտուր կ'անէք։ Եւ
եղաւ որ նորանք իրանց քսակ-
ները դատարկելիս, ահա ամեն
մէկի փողի ծրարը իր քսակումն
էր. և իրանք ու իրանց հայրը
տեսան փողի ծրարները և վախե-
36 ցին։ Եւ նորանց հայր Յակոբն
ասեց նորանց. Ինձ անորդի թո-
ղեցիք. Յովսէփը չ'կայ, Շմաւոնը
չ'կայ, Բենիամինն էլ էք առ-
նում. սորանց ամենը ինձ վերայ
37 եկաւ։ Եւ Ռուբէնը խօսեց իր
հօրը հետ և ասեց. Իմ երկու
որդիներս սպանիր, եթէ ես նո-
րան քեզ մօտ չ'բերեմ. նորան
իմ ձեռքը յանձնիր, և ես ետ
կ'բերեմ նորան քեզ համար։
38 Բայց Յակոբն ասեց. Իմ որդին
ձեզ հետ չի իջնիլ, որովհետև
նորա եղբայրը մեռած է, և նա
է մնացել մինակ. և եթէ ձեր
գնալու ճանապարհին նորան մի
փորձանք պատահելու լինի, իմ
սպիտակ մազերը տրտմութիւ-
նով գերեզմանը կ'իջեցնէք։

ԳԼ. ԽԳ

1 Եւ սովը սաստկացաւ այն երկրի
2 մէջ։ Եւ եղաւ երբոր Եգիպտո-
սից բերած պաշարը կերան վեր-
ջացրին, նորանց հայրը ասեց նո-
րանց. Գնացէք դարձեալ մեզ
համար մի քիչ ուտելիք ծախու
3 առէք։ Եւ Յուդան խօսեց նորա
հետ ասելով. Այն մարդը մեզ
հետ հաստատ վկայութեամբ խօ-
սեց ասելով. Իմ երեսը չ'տես-
նէք, եթէ ձեր եղբայրը ձեզ հետ
4 չ'լինի։ Եթէ մեր եղբայրը մեզ
հետ ուղարկես, կ'իջնենք և քեզ
համար ուտելիք ծախու կ'առ-
5 նենք։ Բայց եթէ չ'ուղարկես,
չենք իջնիլ, որովհետև այն մար-
դը ասեց մեզ. Իմ երեսը չը
տեսնէք, եթէ ձեր եղբայրը ձեզ
հետ չ'լինի։ Եւ Իսրայէլն ասեց. 6
Ինչո՞ւ համար չարութիւն արիք
ինձ այն մարդին իմացնելով, թէ
ուրիշ եղբայր ունիք։ Եւ նորանք 7
ասեցին. Այն մարդը մեզ հա-
մար և մեր ազգականների հա-
մար հարցուփորձ արաւ ասելով.
Ձեր հայրը ո՞ղջ է, էլ եղբայր
ունի՞ք. և մենք այս խօսքերի հա-
մեմատ պատասխանեցինք նորան.
մի՞թէ մենք կարող էինք գիտե-
նալ, որ նա կ'ասէ թէ ձեր եղ-
բայրը իջեցրէք։ Եւ Յուդան իր 8
հօրը Իսրայէլին ասեց. Տղան ինձ
հետ ուղարկիր, և վեր կենանք
գնանք, որ ողջ մնանք և չ'մեռ-
նինք, մենք էլ, դու էլ, մեր ե-
րեխերքն էլ։ Ես երաշխաւոր կը 9
լինիմ նորա համար. իմ ձեռքից
պահանջիր նորան. եթէ նորան
քեզ մօտ չ'բերեմ, և քո առա-
ջին չ'կանգնեցնեմ, յաւիտեան
քեզ յանցաւոր լինիմ։ Որովհե- 10
տև եթէ չ'յապաղէինք, հիմա
երկրորդ անգամ դարձած կ'լի-
նէինք։ Եւ նորանց հայր Իսրայէ- 11
լն ասեց նորանց. Եթէ այդպէս
է, հիմա այս արէք, ձեր ամա-
ններումը այս երկրի ընտիր պտուղ-
ներիցն առէք, և այն մարդի հա-
մար ընծայ տարէք, մի քիչ բա-
լասան, մի քիչ մեղր, համեմներ
և զմուռս, պիստակ և նուշ։ Եւ 12
ձեր ձեռքը կրկնապատիկ փող
առէք, և ձեր քսակների բերա-
նում ետ եկած փողը ձեռքի ա-
ռած ետ տարէք, գուցէ սխալ-
մունք եղած է։ Եւ ձեր եղբայրն 13
էլ առէք, և ելէք դարձեալ այն
մարդի մօտ գնացէք. Եւ Ամե- 14
նակարող Աստուածը ձեզ շնորհք
կ'տայ այն մարդի առաջին, և
նա կ'արձակէ ձեզ համար ձեր
միւս եղբօրը և Բենիամինին, և
ես եթէ անզաւակ եմ լինելու,
անզաւակ լինիմ։
Եւ մարդիկն առին այս ընծա- 15
ները, և իրանց ձեռքը կրկնա-
պատիկ փող առին, նաև Բենիա-
մինին, և վեր կացին իջան Ե-

գիպտոս, և Յովսէփի առաջին
46 կանգնեցին։ Եւ Յովսէփը Բենիա-
մինին նորանց հետ տեսաւ, և իր
տան վերակացուին ասեց. Տուն
տար այս մարդիկը, և մորթէլէ
մորթիր, և պատրաստիր. որով-
հետև այս մարդիկը կէս օրին
47 ինձ հետ պիտի ճաշեն։ Եւ այն
մարդը Յովսէփի ասածի պէս ա-
րաւ, և այն մարդը Յովսէփի
տունը տարաւ այն մարդկանցը։
48 Եւ մարդիկը վախեցին, որ Յով-
սէփի տունը տարուեցան, և ա-
սեցին. Առաջի անգամին մեր քը-
սակներումը ետ դարձած փողի
համար ենք տարվում, որ մեր
վերայ յարձակուի և մեզ վերայ
ընկնի, և մեզ ծառաներ անի և
49 մեր էշերը։ Եւ մօտեցան Յովսէ-
փի տան վերակացու մարդին, և
խօսեցին նորա հետ տանը դռա-
20 նը, Եւ ասեցին. Ոհ տէր, մենք
սորանից առաջ եկել էինք կե-
21 րակուր ծախու առնելու, Եւ ե-
ղաւ երբոր իջևանը եկանք, և
մեր քսակները բացինք, ահա ա-
մեն մէկի փողը իր քսակի բերա-
նումն էր, մեր փողը իր կշիռքո-
վը. և ետ ենք բերել նորան մեր
22 ձեռքովը. Եւ մեր ձեռքին ու-
րիշ փող ենք բերել կերակուր
ծախու առնելու համար, չ'գի-
տենք թէ ով դրաւ մեր փողը
23 մեր քսակներումը։ Եւ նա ասեց.
Խաղաղութիւն է ձեզ համար,
մի վախիք. ձեր Աստուածը և ձեր
հօր Աստուածը ձեզ գանձ է
տուել ձեր քսակներումը. ձեր
փողը եկաւ ինձ։ Եւ Շմաւոնին
դուրս հանեց նորանց մօտ։
24 Եւ այն մարդը Յովսէփի տունը
տարաւ այն մարդկանցը, և ջուր
տուաւ, և իրանց ոտքերը լուա-
ցին, և նորանց էշերին դարման
25 տուաւ։ Եւ նորանք ընծաները
պատրաստեցին մինչև Յովսէփի
կէս օրուան գալը. որովհետև ի-
մացան որ այնտեղ էին հաց ու-
26 տելու։ Եւ Յովսէփն եկաւ տուն,
և նորանք իրանց ձեռքի ընծա-
ները նորան մատուցրին տանը, և
մինչև գետինը ծռելով նորան խո-
27 նարհութիւն արին։ Եւ նորանց
ողջութիւնը հարցրեց ասելով.
Ձեր այն ծեր հայրը ո՞ղջ է, որի
համար խօսել էիք, տակաւին
կենդանի՞ է։ Եւ ասեցին. Քո ծա- 28
ռան մեր հայրը ողջ է, տակաւին
կենդանի է. և ծռեցին և խոնար-
հութիւն արին։ Եւ իր աչքերը 29
բարձրացրեց, և տեսաւ իր մօր
որդի իր եղբայր Բենիամինին, և
ասեց. Սա՞ է ձեր կրտսեր եղբայ-
րը, որի համար ինձ հետ խօսել
էիք. և ասեց Բենիամինին. Աստ-
ուած ողորմէ քեզ, որդեակ իմ։
Եւ Յովսէփը շուտով ելաւ. ո- 30
րովհետև իր աղիքը գալարեցին
իր եղբօր վերայ, և տեղ էր պը-
տըրտում որ լայ. և ներքին սեն-
եակը մտաւ և այն տեղ լացաւ։
Եւ լուացաւ իր երեսը, և դուրս 31
եկաւ. և զսպեց իրան, և ասեց՝
Հաց բերէք։ Եւ իրան առանձին 32
բերին, և նորանց՝ առանձին, և
այն Եգիպտացիների համար որ
իր հետ ուտում էին առանձին
դրին. որովհետև Եգիպտացիները
Եբրայեցիների հետ հաց չէին
կարողանում ուտել, որովհետև
Եգիպտացիների համար պիղծ է-
ին։ Եւ նստեցին նորա առաջին, 33
անդրանիկը իր անդրանկութեան
համեմատ, և փոքրը իր փոքրու-
թեան համեմատ. և մարդիկն ի-
րար նայելով զարմանում էին։
Եւ նա իր առաջից բաժիններ 34
ուղարկեց նորանց համար. բայց
Բենիամինի բաժինը միւսների բա-
ժինից հինգ անգամ աւելի էր.
և խմեցին և նորա հետ միասին
գինով եղան։

ԳԼ. ԽԴ

Եւ իր տանը վերակացուին հը- 1
րամայեց ասելով, Այս մարդ-
կանց քսակները լցրու ուտելիքով
որքան որ կարողանան տանել, և
ամեն մէկի փողը իր քսակի բերա-
նումը դիր։ Եւ իմ բաժակը՝ ար- 2
ծաթի բաժակը դիր փոքրի քսա-
կի բերանումը և իր պաշարի փողն
էլ։ Եւ նա այդ խօսքի համեմատ
արաւ, որ Յովսէփն ասեց իրան։
Եւ առաւօտը լուսացաւ, և 3

մարդիկը ճանապարհուեցան, ի-
4 րանք և իրանց էշերը։ Նորանք
քաղաքից դուրս եկած դէռ չէին
հեռացել, որ Յովսէփն իր տան
վերակացուին ասեց. Վեր կաց
այն մարդկանց ետևից վազիր, և
նորանց հասիր, և ասա նորանց.
Ինչո՞ւ չար հատուցրիք բարիի
5 փոխարէն։ Սա այն չէ՞, որով իմ
տէրը խմում է, և հմայում է
նորանով. դուք չարութիւն ա-
6 րիք ձեր այսպէս անելովը։ Եւ
նա հասաւ նորանց, և ասեց նո-
7 րանց այն խօսքերը։ Եւ ասեցին
նորան. Ինչո՞ւ է իմ տէրը այս-
պիսի խօսքեր խօսում. քաւ լիցի
որ քո ծառաները այդպիսի բան
8 անեն։ Ահա այն փողը, որ գտել
էինք մեր քսակների բերանում,
Քանանի երկրիցը քեզ ետ դար-
ձրինք. և ի՞նչպէս կ'գողանանք
քո տիրոջ տանից արծաթ կամ
9 ոսկի։ Քո ծառաներիցն որի մօտ
որ գտնուի, թող նա մեռնի, և
մենք էլ տիրոջս ծառաները լի-
10 նինք։ Եւ նա ասեց. Հիմա հէնց
թող ձեր ասածի պէս լինի. որի
մօտ որ գտնուի, նա ինձ ծառայ
լինի, իսկ դուք անպարտ լինիք։
11 Ուստի ամեն մէկը շուտով իր
քսակը գետինը իջեցրեց, և ամեն
12 մէկն իր քսակը բացաւ։ Եւ նա
մեծիցն սկսեց պտրտել, և մինչև
փոքրը նայեց վերջացրեց, և բա-
ժակը Բենիամինի քսակի մէջ
գտնուեցաւ։
13 Այն ժամանակ նորանք իրանց
հանդերձները պատառեցին. և
ամեն մէկն իր էշը բեռնեց, և
14 ետ դարձան քաղաքը, Եւ Յու-
դան և նորա եղբայրները Յովսէ-
փի տունը եկան, և նա տակա-
ւին այնտեղ էր, և նորա առա-
15 ջին գետինը ընկան։ Եւ Յովսէփն
ասեց նորանց. Այս ի՞նչ բան է
որ արիք. դուք չ'գիտէ՞ք թէ
ինձ պէս մի մարդ անպատճառ
16 կ'հմայէ։ Եւ Յուդան ասեց. Ի՞նչ
ասենք իմ տիրոջը, ի՞նչ խօսենք
կամ ի՞նչպէս արդարացնենք մեզ.
Աստուած բռնել է քո ծառա-
ների յանցանքը. ահա մենք մեր
տիրոջ ծառաներն ենք, մենք էլ՝
նա էլ, որի մօտ բաժակը գտ-
նուել է։ Եւ նա ասեց. Քաւ լի- 17
ցի որ ես այդպէս անեմ. Հայն
այն մարդը, որի մօտ բաժակը
գտնուել է, նա ինձ ծառայ լի-
նի, և դուք խաղաղութեամբ
ձեր հօր մօտ վեր գնացէք։
Այն ժամանակ Յուդան մօտե- 18
ցաւ նորան և ասեց. Ոհ, տէր իմ,
խնդրեմ՝ թող քո ծառան մի
խօսք խօսէ իմ տիրոջ ականջնե-
րին, և ծառայիդ վերայ քո բար-
կութիւնը չ'բորբոքուի, որովհե-
տև դու Փարաւօնի պէս ես։ Իմ 19
տէրն իր ծառաներին հարցրեց
ասելով. Հայր կամ եղբայր ու-
նի՞ք։ Եւ մենք ասեցինք մեր տի- 20
րոջը, թէ մի ծեր հայր ունինք,
և նորա ծերութեան մի պզտիկ
որդին, և նորա եղբայրը մեռած
է, և միայն նա է մնացել իր մօ-
րից, և նորա հայրը սիրում է նո-
րան։ Եւ քո ծառաներին ասե- 21
ցիր. Ինձ մօտ իջեցրէք նորան, որ
աչքովս տեսնեմ նորան։ Եւ մենք 22
տիրոջս ասեցինք. Տղան չէ կա-
րող ձգել իր հօրը, որովհետև
եթէ իր հօրը ձգելու լինի, նա
կ'մեռնի։ Եւ դու քո ծառանե- 23
րին ասեցիր. Եթէ ձեր կրտսեր
եղբայրը ձեզ հետ չ'իջնէ, իմ ե-
րեսը էլ միւսանգամ չ'տեսնէք։
Եւ եղաւ երբոր վեր գնացինք քո 24
ծառայ իմ հօր մօտ, իմ տիրոջ
խօսքերը պատմեցինք նորան։ Եւ 25
մեր հայրն ասեց. Գնացէք դարձ-
եալ, մեզ համար մի քիչ կե-
րակուր ծախու առէք։ Եւ մենք 26
ասեցինք. Չենք կարող իջնել.
եթէ մեր կրտսեր եղբայրը մեր
հետ լինի, այն ժամանակ կ'իջ-
նենք. որոհետև չենք կարող տես-
նել այն մարդի երեսը, եթէ որ
մեր կրտսեր եղբայրը մեր հետ չը
լինի։ Եւ քո ծառայ իմ հայրն 27
ասեց մեզ. Դուք գիտէք որ իմ
կինը երկու որդի ծնեց ինձ հա-
մար։ Եւ մէկը մօտիցս ելաւ, և 28
ես ասեցի. Անպատճառ գազանից
գիշատուել է, և մինչև հիմա չը
տեսայ նորան։ Եւ սորան էլ էք 29
առնում իմ առջևից, և նորան
մի փորձանք կ'պատահի, և իմ

սպիտակ մազերը տրտմութիւնով
30 գերեզմանը կ'իջեցնէք։ Եւ արդ
երբոր քո ծառայ իմ հօր մօտ
երթամ և տղան մեր հետ չ'լի-
նի, և ըստ որում նորա հոգին
այդ տղու հոգու հետ կապուած
31 է, Անպատճառ հէնց որ տեսաւ
թէ տղան չ'կայ, կ'մեռնի. և ծա-
ռաներդ քո ծառայ մեր հօր ըս-
պիտակ մազերը ցաւով գերեզ-
32 մանը կ'իջեցնենք։ Որովհետև ծա-
ռադ այդ տղու համար իմ հօրը
երաշխաւոր եղայ ասելով. Եթէ
ես նորան քեզ մօտ չ'բերեմ, իմ
հօրը յաւիտեան յանցաւոր լի-
33 նիմ։ Եւ հիմա աղաչեմ, թող
ծառադ այդ տղու փոխարէն իմ
տիրոջը ծառայ մնայ, և տղան
34 իր եղբայրների հետ գնայ. Որով-
հետև ի՞նչպէս վեր գնամ իմ
հօր մօտ, եթէ տղան ինձ հետ
չ'լինի. մի գուցէ տեսնեմ այն չա-
րիքը որ պատահելու է իմ հօրը։

ԳԼ. ԽԵ

1 Եւ Յովսէփը չ'կարողացաւ զըս-
պել իրան բոլոր իր մօտ կանգ-
նողների առաջին, և աղաղակեց,
Դուրս հանեցէք բոլոր այդ մար-
դիկը իմ մօտից. և մօտը մարդ
չ'կար՝ երբոր Յովսէփն իրան ճա-
2 նաչեցրեց իր եղբայրներին։ Եւ
ձայնը լացի տուաւ. և Եգիպտա-
ցիք լսեցին և Փարաւօնի տունը
3 լսեց։ Եւ Յովսէփն ասեց իր եղ-
բայրներին. Ես Յովսէփն եմ. իմ
հայրը տակաւին ո՞ղջ է. և եղ-
բայրները չէին կարողանում պա-
տասխան տալ նորան, որովհետև
նորա առաջին ապշել մնացել է-
4 ին։ Եւ Յովսէփն ասեց իր եղ-
բայրներին. Ինձ մօտ եկէք, նո-
րանք էլ մօտ եկան. և ասեց. Ես
ձեր եղբայր Յովսէփն եմ, որ ինձ
5 ծախեցիք Եգիպտոս։ Եւ հիմա
մի վշտանաք և մի նեղուիք որ
ինձ ծախեցիք այստեղ. որովհե-
տև Աստուած ուղարկեց ինձ ձեր
առաջին կեանք պահելու հա-
6 մար։ Որովհետև երկրիս վերայ
սովի երկրորդ տարին է այս. և
տակաւին հինգ տարի կայ որ վա-
րուցան և հունձք չի լինիլ։ Եւ 7
Աստուած ինձ ձեր առաջին ու-
ղարկեց որ երկրի վերայ ձեզ հա-
մար սերունդ պահէ, և ձեզ ապ-
րեցնէ մեծ ազատութիւնով։ Եւ 8
արդ՝ ոչ թէ դուք ուղարկեցիք
ինձ այս տեղ, այլ Աստուած. և
ինձ Փարաւօնին հայր և նորա
բոլոր տանը տէր և Եգիպտոսի
բոլոր երկրին իշխան դրաւ։ Շու- 9
տով իմ հօր մօտ գնացէք, և ա-
սեցէք նորան. Այսպէս է ասում
քո որդի Յովսէփը, Աստուած բո-
լոր Եգիպտոսի տէր արաւ ինձ.
ինձ մօտ իջիր, մի կանգնիր։ Եւ 10
Գեսեմի երկրումը կ'բնակուիս,
որ ինձանից մօտիկ կ'լինիս, դու
և քո որդիքը և քո որդիների որ-
դիքը և հօտերդ և արջառներդ
և քո բոլոր ունեցածը. Եւ ես 11
քեզ կ'սնուցանեմ այնտեղ. ո-
րովհետև տակաւին հինգ տարի
սով կայ. մի գուցէ չքաւորու-
թիւն քաշես դու և քո տունը
և քո բոլոր ունեցածը։ Եւ ահա 12
ձեր աչքերը և իմ եղբայր Բե-
նիամինի աչքերը տեսնում են, որ
իմ բերանն է ձեզ հետ խօսողը։
Եւ Եգիպտոսի մէջ իմ ունեցած 13
բոլոր փառքը, և ձեր բոլոր տե-
սածը պատմեցէք իմ հօրը, և
շուտով իմ հօրը այստեղ իջե-
ցրէք։ Եւ իր եղբայր Բենիամինի 14
պարանոցովն ընկաւ և լացաւ.
Բենիամինն էլ նորա պարանոցի
վերայ լացաւ։ Եւ իր բոլոր եղ- 15
բայրներին համբուրեց և նորանց
վերայ լացաւ. և սորանից յետոյ
եղբայրները նորա հետ խօսեցին։
Եւ այս լուրը Փարաւօնի տա- 16
նը լսուեցաւ, թէ Յովսէփի եղ-
բայրները եկել են. և Փարաւօ-
նին և նորա ծառաներին հաճելի
եղաւ։ Եւ Փարաւօնն ասեց Յով- 17
սէփին. Քո եղբայրներին ասիր,
Սա արէք. բեռնեցէք ձեր անա-
սունները, և Քանանի երկիրը գը-
նացէք. Եւ ձեր հայրն ու ձեր 18
ընտանիքներն առէք, և ինձ մօտ
եկէք. և Եգիպտոսի երկրի լաւ
տեղը ձեզ կ'տամ, և երկրի պա-
րարտութիւնը կ'ուտէք։ Եւ քեզ 19
հրաման եղաւ. Սա արէք, ձեր

երեխաների համար և ձեր կա-
նանց համար Եգիպտոսի երկրիցը
կառքեր առէք, և ձեր հայրը
20 բերէք, և եկէք։ Եւ ձեր աչքը
ձեր կարասիքի վերայ չ՚մնայ. ո-
րովհետև բոլոր Եգիպտոսի երկրի
բարիքը ձերն է։
21 Եւ Իսրայէլի որդիներն այնպէս
արին. և Յովսէփը նորանց կառ-
քեր տուաւ Փարաւօնի խօսքի
պէս, և ճանապարհի համար պա-
22 շար տուաւ նորանց։ Նորանց ա-
մեն մէկին նորանոր հանդերձներ
տուաւ, բայց Բենիամինին երեք
հարիւր [illegible] արծաթ և հինգ
ձեռք նորանոր հանդերձներ
23 տուաւ։ Եւ իր հօր համար այս-
պիսի բաներ ուղարկեց. տասը էշ
Եգիպտոսի բարիքներով բեռնած՝
և տասը էգ էշ ցորենով և հա-
ցով և ուտելիքներով բեռնած
իր հօր ճանապարհորդութեան
24 համար։ Եւ իր եղբայրներին ու-
ղարկեց, և գնացին. և ասեց նո-
րանց. Ճանապարհին չ՚կռուիք։
25 Եւ նորանք Եգիպտոսից ելան,
և դէպի Քանանի երկիրն իրանց
26 հայր Յակոբի մօտ գնացին. Եւ
նորան պատմեցին ասելով. Յով-
սէփը տակաւին ողջ է, և նա իշ-
խում է Եգիպտոսի բոլոր երկ-
րին։ Եւ նորա սիրտը նուաղեց,
որովհետև չ՚հաւատաց նորանց։
27 Եւ նորան պատմեցին Յովսէփի
բոլոր խօսքերը որ իրանց ասել
էր, և երբ որ տեսաւ Յովսէփի
ուղարկած կառքերը որ իրան
տանեն, այն ժամանակ իրանց
հայր Յակոբի հոգին կենդանա-
28 ցաւ։ Եւ Իսրայէլն ասեց. Բաւա-
կան է, իմ որդին՝ Յովսէփը տա-
կաւին կենդանի է. գնամ և մեռ-
նելիցս առաջ տեսնեմ նորան։

ԳԼ. ԽԶ

1 Եւ Իսրայէլն իր բոլոր ունեցա-
ծովը ճանապարհ ելաւ, և Բեր-
սաբէէ եկաւ, և իր հօր Իսահա-
կի Աստուծոյն զոհեր մատուցրեց։
2 Եւ Աստուած գիշերուայ տեսիլ-
քի մէջ խօսեց Իսրայէլի հետ և
ասեց. Յակոբ՝ Յակոբ. և նա ա-
սեց. Ահա ես։ Եւ ասեց. Ես եմ 3
Աստուածը՝ քո հօր Աստուածը,
մի՛ վախիր Եգիպտոս իջնելու. ո-
րովհետև ես քեզ այնտեղ մեծ
ազգ եմ շինելու։ Ես քեզ հետ 4
Եգիպտոս կ՚իջնեմ, նաև ան-
պատճառ կ՚հանեմ, և Յովսէփը
կ՚դնէ իր ձեռքը քո աչքերի վե-
րայ։ Եւ Յակոբն ելաւ Բերսաբէ- 5
էիցը. և Իսրայէլի որդիները տա-
րին իրանց հայր Յակոբին և ի-
րանց երեխաներին և իրանց կա-
նանցը այն կառքերովը, որ Փա-
րաւօնն ուղարկել էր նորան տա-
նելու համար։ Եւ առին իրանց 6
անասունները և իրանց ստաց-
ուածքը որ Քանանի երկրումն
ստացել էին, Յակոբը և իր բո-
լոր սերունդը իր հետ։ Իր որդի- 7
ները և իր որդկանց որդիները իր
հետ, իր աղջկերքը և իր որդկանց
աղջկերքը և իր բոլոր սերունդը
իր հետ Եգիպտոս բերաւ։
Եւ սորանք են Իսրայէլի որդ- 8
կանց անունները, որ Եգիպտոս
եկան, Յակոբը և նորա որդիքը.
Յակոբի անդրանիկը Ռուբէն. Եւ 9
Ռուբէնի որդիքը Ենովք, և Փաղ-
ղուս, և Եսրոն և Քարմի։ Եւ 10
Շմաւոնի որդիքը Յամուէլ, և
Յամին, և Ոհադ, և Յաքին, և
Սահառ, և Քանանացի կնոջ որ-
դին, Սաւուղ։ Եւ Ղևիի որդի- 11
քը՝ Գերսոն՝ Կահաթ՝ և Մերա-
րի։ Եւ Յուդայի որդիքը՝ Էր ու 12
Օնան, և Սելոմ, և Փարէս և
Զարա. բայց Էրը և Օնանը Քա-
նանի երկրումը մեռան, և Փա-
րէսի որդիքը՝ Եսրոն և Համուլ։
Եւ Իսաքարի որդիքը՝ Թավղա, և 13
Փուա, և *Յոբ և Սամրոն։ Եւ 14
Զաբուղոնի որդիքը՝ Սարէգ և Ե-
լոն և Յաղէլ։ Սորանք են Լիայի 15
որդիքը, որոնց Միջագետումը ծը-
նեց Յակոբի համար, և նորա Դի-
նա աղջիկը. նորա բոլոր որդիները
և աղջկերքը երեսունեւերեք հոգի
էին։ Եւ Գադի որդիքը Սափոն, 16
և Անգի, Սունի, և Եսբոն, Էրի
և Արոտի և Արելի։ Եւ Ասերի 17
որդիքը՝ Յեմնա և Յեսուա, և Յե-

*Յասուբ։

սուի, և Բարիա, և նորանց քոյրը՝
Սարա, և Բարիայի որդիքը՝ Քա-
18 բեր և Մաղքիէլ։ Սորանք են
Զեղփայի որդիքը՝ որ Լաբանն իր
Լիա աղջկանը տուաւ, և նա
ծնեց սորանց Յակոբի համար՝
19 տասնեւվեց հոգի։ Յակոբի կին
Ռաքէլի որդիքը՝ Յովսէփ և Բե-
20 նիամին։ Եւ Յովսէփի համար Ե-
գիպտոսի երկրումը Մանասէն և
Եփրեմը ծնուեցան, որոնց Արեգ
քաղաքի քուրմ Պետափրեայի
աղջիկ՝ Ասանէթը ծնեց նորա հա-
21 մար։ Եւ Բենիամինի որդիքը՝ Բա-
ղա և Բոքոր, և Ասբէլ, Գերա,
և Նէեման, Էհի, և Ռոսի, Մու-
22 փիմ, և Ռոփիմ և Արեգ։ Սո-
րանք են Ռաքէլի որդիքը՝ որոնք
ծնուեցան Յակոբի համար, ամե-
23 նը տասնեւչորս հոգի։ Եւ Դանի
24 որդիքը Հուսիմ։ Եւ Նեփթաղի-
մի որդիքը՝ Յասիէլ, և Գունի,
25 և Յասիր և Սիլլեմ։ Սորանք են
Բաղղայի որդիքը, որ Լաբանն իր
աղջկանը տուաւ. և նա Յակոբի
համար ծնեց սորանց, ամենը եօ-
26 թը հոգի։ Յակոբի հետ Եգիպտոս
եկող բոլոր հոգիները, որ նորա
երանքիցն ելած էին բացի Յակո-
բի որդկանց կանանցից ամենը
27 վաթսունեւվեց հոգի էին։ Եւ
Յովսէփի որդիքը՝ որ Եգիպտոսի
մէջ նորա համար ծնուեցան, եր-
կու հոգի էին. Յակոբի տան բո-
լոր հոգիները, որ Եգիպտոս գնա-
ցին, եօթանասուն էին։
28 Եւ Յուդային ուղարկեց իր ա-
ռաջին Յովսէփի մօտ, որ Գեսեմը
ցոյց տայ նորան. և նորանք եկան
29 Գեսեմի երկիրը։ Եւ Յովսէփն իր
կառքը պատրաստեց, և ելաւ իր
հայր՝ Իսրայէլին դիմաւորելու
համար Գեսեմ [illegible]. և երբոր
նորան երևեցաւ, նորա պարանո-
ցովն ընկաւ, և նորա պարանոցի
30 վերայ բաւական լացաւ։ Եւ Իս-
րայէլն ասեց Յովսէփին. Հիմա
թող մեռնիմ քո երեսը տեսնե-
լուցս յետոյ. որովհետև տակա-
31 ւին կենդանի ես։ Եւ Յովսէփն
իր եղբայրներին և իր հօր տանն
ասեց. Վեր գնամ, և Փարաւօ-
նին պատմեմ, և ասեմ նորան.
Իմ եղբայրներն և իմ հօր ըն-
տանիքը, որ Քանանի երկրումն
էին, ինձ մօտ եկան։ Եւ այն 32
մարդիկը հովիւներ են, որովհե-
տև խաշանց տէր են, և իրանց
հօտերը և իրանց արջառները և
իրանց բոլոր ունեցածը բերել են։
Եւ կ՚լինի որ, երբ Փարաւօնը ձեզ 33
կանչէ, և ասէ. Թէ Ի՞նչ է ձեր
արհեստը, ասեցէք. Ծառաներդ 34
մեր մանկութիւնից մինչև հիմա՝
մենք էլ, մեր հայրերն էլ, խա-
շանց տէր ենք. որ Գեսեմի երկ-
րումը բնակուիք. որովհետև ա-
մեն հովիւ Եգիպտացիների առա-
ջին գարշելի է։

ԳԼ. ԽԷ

Եւ Յովսէփն եկաւ և պատմեց 1
Փարաւօնին և ասեց. Իմ հայրն
ու եղբայրները և նորանց հօտերն
ու արջառները, և նորանց բոլոր
ունեցածը եկել են Քանանի երկ-
րիցը, և ահա Գեսեմի երկրումն
են. Եւ իր եղբայրների միջից 2
հինգ մարդ առաւ, և նորանց
Փարաւօնի առաջին ներկայացրեց։
Եւ Փարաւօնն ասեց նորա եղ- 3
բայրներին. Ի՞նչ է ձեր գործը.
և նորանք Փարաւօնին ասեցին.
Քո ծառաները հովիւներ ենք,
մենք էլ մեր հայրերն էլ։ Նաև 4
ասեցին Փարաւօնին, եկել ենք
այս երկրումը պանդխտանալու.
որովհետև քո ծառաների հօտե-
րի համար արօտ չ՚կայ, Քանանի
երկրումը սովը սաստկանալու
պատճառով. մենք հիմա խընդ-
րում ենք, թող ծառաներդ Գե-
սեմի երկրումը բնակուին։ Եւ 5
Փարաւօնը խօսեց Յովսէփի հետ
ասելով. Քո հայրն ու եղբայրնե-
րը քեզ մօտ են եկել։ Եգիպտո- 6
սի երկիրը առաջիդ է. քո հօրն
ու եղբայրներին երկրի ամենա-
լաւ տեղը բնակեցրու. Գեսեմի
երկրի մէջ թող բնակուեն. և
եթէ գիտես, թէ նորանց մէջ
ժիր մարդիկ կան, իմ հօտերի
վերայ վերակացու շինիր նորանց։
Եւ Յովսէփն իր հայր Յակոբին 7
բերաւ և Փարաւօնի առաջին

ներկայացրեց. և Յակոբն օրհնեց
8 Փարաւօնին։ Եւ Փարաւօնն ա-
սեց Յակոբին. Ո՞բքան է քո կեան-
9 քի տարիների օրերը։ Եւ Յակոբն
ասեց Փարաւօնին. Իմ պանդըխ-
տութեան տարիների օրերը հա-
րիւր երեսուն տարի են. իմ
կեանքի տարիների օրերը քիչ և
ցաւով եղան, և չեն հասնիլ իմ
հայրերի կեանքի տարիների օրե-
րին իրանց պանդխտութեան օ-
10 րերումը։ Եւ Յակոբն օրհնեց
Փարաւօնին, և դուրս եկաւ Փա-
րաւօնի առջևից։
11 Եւ Յովսէփը բնակեցրեց իր
հօրն ու եղբայրներին և նորանց
ստացուածքը Եգիպտոսի երկրի
ամենալաւ տեղը՝ Ռամսեսի երկ-
րումը, ինչպէս որ Փարաւօնը հր-
12 ամայել էր։ Եւ Յովսէփը սնու-
ցանում էր իր հօրն և իր եղբայր-
ներին և իր հօր բոլոր տանը՝ հաց
տալով ընտանիքներին։
13 Եւ բոլոր երկրի մէջ հաց չ՚կար.
որովհետև սովը շատ սաստկա-
ցաւ. և Եգիպտոսի երկիրը և
Քանանի երկիրը սովի պատճա-
14 ռովը նուաղեց։ Եւ Յովսէփը հա-
ւաքեց Եգիպտոսի երկրի մէջ և
Քանանի երկրի մէջ գտնուած
բոլոր փողը այն ծախած պաշա-
րովը, որ նորանք առնում էին.
և Յովսէփը փողը Փարաւօնի տու-
15 նը տարաւ։ Եւ Եգիպտոսի երկ-
րիցը և Քանանի երկրիցը փողը
վերջացաւ, և բոլոր Եգիպտացի-
ները եկան Յովսէփի մօտ և ա-
սեցին. Մեզ հաց տուր, որովհե-
տև ինչո՞ւ մեռնինք քո առաջին,
16 թէ փող չ՚կայ։ Եւ Յովսէփն ա-
սեց. Ձեր անասունները բերէք,
և ձեր անասունների փոխարէն
17 տամ ձեզ, եթէ փող չ՚կայ։ Եւ
նորանք իրանց անասունները Յով-
սէփի մօտ բերին, և Յովսէփը
հաց տուաւ նորանց ձիերի փո-
խարէն, և ոչխարների փոխարէն,
և արջառների փոխարէն, և էշե-
րի փոխարէն. և այն տարի նո-
րանց հացով կերակրեց իրանց
բոլոր անասունների փոխարէն։
18 Եւ լրացաւ այն տարին, և հե-
հևեալ տարին նորա մօտ եկան
և ասեցին նորան. Մենք չենք ծած-
կիլ մեր տէրիցը, որ փողը վեր-
ջացել է, և մեր անասուններն էլ
մեր տիրոջը եղան, էլ մի բան
չ՚մնաց մեր տիրոջ առաջին, բացի
մեր անձերիցը և մեր երկրիցը։
Ինչո՞ւ համար քո աչքի առաջին 19
մեռնինք՝ մենք էլ՝ մեր երկիրն
էլ. մեզ ու մեր երկիրը հացով
ծախու առ, և մենք ու մեր եր-
կիրը Փարաւօնին ծառաներ լի-
նինք. և սերմ տուր որ ապրինք
և չ՚մեռնինք, և երկիրը չ՚անա-
պատանայ։ Եւ Յովսէփը բոլոր 20
Եգիպտոսի երկիրը ծախու առաւ
Փարաւօնի համար. որովհետև Ե-
գիպտացիք ծախում էին՝ ամեն
մէկն իր արտը, որովհետև սովը
սաստիկ էր նորանց վերայ և եր-
կիրը Փարաւօնինը եղաւ։ Եւ ժո- 21
ղովրդին էլ բերել տուաւ քա-
ղաքների մէջ Եգիպտոսի սահմա-
նի մէկ ծայրից մինչև միւս ծայ-
րը։ Միայն քուրմերի երկիրը ծա- 22
խու չ՚առաւ, որովհետև քուրմե-
րը Փարաւօնիցը մի որոշուած մասն
ունէին, և ուտում էին իրանց ո-
րոշուածը, որ Փարաւօնը տալիս
էր նորանց, նորա համար իրանց
երկիրը չ՚ծախեցին։ Եւ Յովսէփն 23
ասեց ժողովրդին. Ահա այսօր
ծախու առի ձեզ և ձեր երկիրը
Փարաւօնի համար. ահա ձեզ
սերմ, և սերմանեցէք երկիրը. Եւ 24
արդիւնքի ժամանակ հինգից մէ-
կը Փարաւօնին պիտի տաք, և
չորս մասը ձերը պիտի լինի. որ
արտի համար սերմ և ձեզ հա-
մար և ձեր տանը եղողների և
ձեր երեխաների համար ուտելիք
լինի։ Եւ ասեցին. Մեզ ապրե- 25
ցրիր, թող մեր տիրոջը առաջին
շնորհք գտնենք, և Փարաւօնին
ծառաներ լինինք։ Եւ Յովսէփն 26
այս օրէնքը հաստատեց Եգիպտոսի
երկրումը մինչև այսօր, որ հին-
գից մէկը Փարաւօնինը լինի. բա-
ցի քուրմերի երկրիցը, որ Փարա-
ւօնինը չ՚եղաւ։
Եւ Իսրայէլը բնակվում էր Ե- 27
գիպտոսի երկրում Գեսեմի երկ-
րումը, և այնտեղ կալուածք ստա-
ցան, և աճեցին և խիստ շատացան։

28 Եւ Յակոբը Եգիպտոսի երկ-
րումը տասնևեօթը տարի ապրեց.
և Յակոբի կեանքի տարիների օ-
րերը հարիւր քառասունևեօթը
29 տարի եղան։ Եւ Իսրայէլի մեռ-
նելու օրերը մօտեցան, և կանչեց
իր որդի Յովսէփին, և ասեց նո-
րան. Եթէ հիմա քո առաջին
շնորհք գտայ, աղաչեմ՝ ձեռքդ
իմ երանքի տակը դիր, և ինձ
մարդասիրութիւն և հաւատար-
մութիւն արա. աղաչեմ՝ ինձ Ե-
30 գիպտոսի մէջ մի թաղիր։ Այլ
թող իմ հայրերի հետ ննջեմ,
և դու ինձ Եգիպտոսից վեր առ,
և ինձ նորանց գերեզմանումը թա-
ղիր։ Եւ նա ասեց. Ես քո ասա-
31 ծի պէս կ՚անեմ։ Եւ նա ասեց.
Ինձ երդում արա. նա էլ եր-
դում արաւ նորան։ Եւ Իսրայէ-
լը *Գաւազանի գլխի վերայ եր-
կրպագութիւն արաւ։

ԳԼ. ԽԸ

1 Եւ եղաւ այս բաներից յետոյ
Յովսէփին ասեցին. Ահա քո հայ-
րը հիւանդ է. և նա առաւ իր
երկու որդիքը՝ Մանասէն և Եփ-
2 րեմը իր հետ։ Եւ Յակոբին պատ-
մեցին և ասեցին. Ահա քո որդի
Յովսէփը քեզ մօտ է գալիս. և
Իսրայէլը ուժովացաւ և անկողնի
3 վերայ նստեց։ Եւ Յակոբն ասեց
Յովսէփին. Ամենակարող Աստ-
ուածը Քանանի երկրումը Լուզի
մէջ երևեցաւ ինձ, և ինձ օրհ-
4 նեց։ Եւ ասեց ինձ. Ահա քեզ
կ՚աճեցնեմ և կ՚շատացնեմ. և
քեզ ազգերի ժողովք կ՚շինեմ.
և այս երկիրը քեզանից յետոյ քո
սերունդին կ՚տամ յաւիտենա-
5 կան կալուածք։ Եւ հիմա քո եր-
կու որդիքը, որ ծնուեցան քեզ
համար Եգիպտոսի երկրումը իմ
Եգիպտոս գալուց առաջ, նորանք
իմս են, Եփրեմը և Մանասէն՝
Ռուբէնի և Շմաւոնի պէս իմս
6 են։ Եւ նորանցից յետոյ քո ծնած
որդիքը քեզ լինին, իրանց ժա-
ռանգութեան մէջ իրանց եղ-
բայրների անուններովը կանչուին։
Եւ ես Միջագետից գալիս՝ Ռաքէ- 7
լը մեռաւ ինձ մօտ Քանանի երկ-
րումը այն ճանապարհին, որ տա-
կաւին քիչ է մնում Եփրաթա
գալու, և նորան այնտեղ Եփրա-
թայի այսինքն Բեթլեհէմի ճա-
նապարհումը թաղեցի։
Եւ Իսրայէլը տեսաւ Յովսէփի 8
որդիներին, և ասեց. Ո՞վ են սո-
րանք։ Եւ Յովսէփն ասեց իր հօ- 9
րը. Իմ որդիներն են որ Աստուած
այստեղ ինձ տուաւ, և նա ա-
սեց. Խնդրեմ ինձ մօտ բեր նո-
րանց որ օրհնեմ։ Եւ Իսրայէլի 10
աչքերը ծերութիւնից ծանրացել
էին, չէր կարողանում տեսնել.
և նորանց մօտեցրեց նորան, և նա
համբուրեց նորանց և գրկեց նո-
րանց։ Եւ Իսրայէլն ասեց Յովսէ- 11
փին. Ես քո երեսը տեսնելու յոյս
չ՚ունէի, և ահա Աստուած ինձ
քո սերունդն էլ ցոյց տուաւ։
Եւ Յովսէփը հանեց նորանց նորա 12
ծունկերիցը, և իր երեսովը մին-
չև գետինը խոնարհութիւն ա-
րաւ։ Եւ Յովսէփն առաւ նո- 13
րանց երկուսն էլ՝ Եփրեմին իր
աջ ձեռքովը դէպի Իսրայէլի
ձախ կողմը, և Մանասէին իր ձախ
ձեռքովը դէպի Իսրայէլի աջ
կողմը, և մօտեցրեց նորան։ Եւ 14
Իսրայէլն իր աջ ձեռքը մեկնեց,
և Եփրեմի գլխին դրաւ, որ փոքրն
էր, և իր ձախ ձեռքը Մանասէի
գլխին. դիտմամբ փոխեց իր ձեռ-
քերը, որովհետև Մանասէն անդ-
րանիկն էր։ Եւ օրհնեց Յովսէփին 15
և ասեց. Այն Աստուածը՝ որի ա-
ռաջին գնացին իմ հայրերը՝ Աբ-
րահամը և Իսահակը, այն Աստ-
ուածը, որ ինձ խնամում է քանի
որ կամ մինչև այսօր. Այն Հրեշ- 16
տակը, որ ինձ ամեն չարիքներից
ազատեց, օրհնէ այս ազաներին,
և իմ անունը և իմ հայրերի Աբ-
րահամի և Իսահակի անունը սո-
րանց վերայ կանչուի, և երկրի
մէջ խիստ շատանան։ Եւ Յով- 17
սէփը տեսաւ որ հայրն իր աջ
ձեռքը դրել է Եփրեմի գլխի
վերայ, իրան դժուարը եկաւ. և
իր հօր ձեռքը բռնեց, որ նորան

*Ոմանք՝ անկողնի

Եփրեմի գլխի վերայից Մանասէի
48 գլխի վերայ քաշէ։ Եւ Յակոբփն
ասաց իր Հօրը. Այդպէս չէ, Հայր
իմ, որովհետեւ անդրանիկը սա
է. աջ ձեռքդ սորա գլխին դիր։
49 Եւ Հայրը չ'ուզեց և ասաց. Գի-
տեմ, որդեակ իմ, գիտեմ. Նա
էլ ժողովուրդ կ'լինի, նա էլ մեծ
կ'լինի. բայց նորա փոքր եղբայրը
նորանից աւելի մեծ կ'լինի, և
նորա սերունդը ազգերի բազմու-
20 թիւն կ'լինի։ Եւ այն օրը օրհնեց
նորանց և ասաց. Իսրայէլը քե-
զանով պիտի օրհնէ, "Աստուած
քեզ եփրեմի պէս և Մանասէի
պէս անէ" ասելով. և Եփրեմին
Մանասէից առաջ դրաւ։
21 Եւ Իսրայէլն ասաց Յակոբփն.
Ահա ես մեռնում եմ, և Աստ-
ուած ձեզ հետ կ'լինի, և ձեզ
ձեր Հայրերի երկիրը կ'դարձնէ։
22 Եւ ես քո եղբայրներից մի կտոր
երկիր աւելի տուի քեզ, որ Ա-
մորհացիների ձեռքից իմ սրովը
և իմ աղեղովը առի։

Գլ. Խթ

4 Եւ Յակոբը կանչեց իր որդինե-
րին և ասաց. ժողովուեցէք որ
պատմեմ ձեզ ինչ որ պատահե-
2 լու է ձեզ վերջի օրերը։ ժողով-
ուեցէք և լսեցէք, ով Յակոբի
որդիներդ. և լսեցէք ձեր Հօրը
Իսրայէլին։
3 Ով Հռուբէն, իմ անդրանիկը,
Դու իմ ոյժն ու իմ զօրութեան
սկիզբը՝
Գերազանց յարգութեամբ և գե-
րազանց կարողութեամբ։
4 Ջրի պէս եռացիր.
Գերազանց չես լինիլ.
Որովհետեւ վեր ելար քո հօր ան-
կողինը,
Այն ժամանակ պղծեցիր
Անկողինս ելար։
5 Շմաւոն և Ղևի եղբայրներ.
Անիրաւութեան գործիքներ են
նորանց սուրերը։
6 Նորանց խորհուրդների մէջ չը
մտնէ իմ հոգին,
Նորանց ժողովքի հետ չ'միանայ
իմ պատիւը.
Որովհետեւ իրանց բարկութեամբ
սպանեցին,
Եւ իրանց կամապաշտութեամբը
ցուլի ջիղ կարեցին։
Անիծեալ լինի նորանց բարկու- 7
թիւնը, քանի որում խիստ էր,
Եւ նորանց սրտմտութիւնը, քանի
որում սաստիկ էր.
Կ'բաժանեմ նորանց Յակոբի մէջ,
Եւ կ'ցրուեմ Իսրայէլի մէջ։
Ով Յուդա, քեզ կ'գովեն քո 8
եղբայրները.
Ձեռքդ քո թշնամիների պարա-
նոցի վերայ լինէ.
Երկրպագութիւն անեն քեզ քո
հօր որդիքը։
Առիւծի ձագ է Յուդան. 9
Որդեակ իմ, կողոպուտից ելար,
Ծունկ կրկնեց՝ պառկեց առիւծի
պէս և մատակ առիւծի պէս.
Ո՞վ կ'զարթնեցնէ նորան։
Չ'պակասէ իշխողութիւնը Յու- 10
դայից,
Եւ օրէնսդիրը, նորա ազգերի մէջ
տեղից.
Մինչև որ Սիլովը գայ.
Եւ նորանն է ժողովուրդների
հնազանդութիւնը։
Կապ իր աւանակը որթին կ'կապէ, 11
Եւ ազնիւ որթին՝ իր էգ իշի
ձագը.
Գինով կ'լուանայ իր պատմու-
ճանը,
Եւ խաղողի արիւնով իր հան-
դերձը։
Իր աչքերը գինուց կարմիր՝ 12
Եւ իր ատամները կաթից սպի-
տակ կ'լինին։
Զաբուղոնը ծովի եզերքում կը 13
բնակուի,
Եւ նա նաւերի եզերքում կ'լինի,
Եւ նորա սահմանը մինչև Սիդօն։
Իսաքարը մի ամրապինդ էշ է, 14
Պառկում է գոմերի միջատեղը.
Եւ տեսաւ որ հանգստութիւնը 15
լաւ է,
Եւ երկիրը՝ որ գեղեցիկ է.
Իր ուսը ծռեց բեռ կրելու,
Եւ հարկատու ծառայ եղաւ։
Դանը կ'դատէ իր ժողովրդին 16
Իսրայէլի ցեղերի միւսի պէս։
Դանը մի օձ կ'լինի ճանապարհի 17
վերայ,

Մի իժ՝ շաւիղի վերայ,
Կծում է ձիան գաբշապարը.
Եւ վայր է ընկնում հեծեալը
եւևին։
18 Քո փրկութեանն եմ ապա-
սում, Եհովայ։
19 Գադը՝ մի գունդ կ'յարձակէ
նորա վերայ,
Բայց ինքը կ'յարձակուի եւևից։
20 Ասերի համար հացը պարարտ
է.
Եւ ինքը կ'տայ թագաւորի հա-
մադամ կերակուրներ։
21 Նեփթաղիմը մի ազատ եղջե-
րու է.
Որ գեղեցիկ խօսքեր է ասում։
22 Մի պտղատու ոստ է Յովսէփը,
Մի պտղաբեր ոստ՝ աղբիւրի վե-
րայ,
Բողբոջները տարածվում են պա-
տի վերայ։
23 Եւ վշտացրին նորան,
Եւ նետաձիգ արին,
Եւ ատեցին նորան աղեղնաւոր-
ները.
24 Բայց նորա աղեղը զօրաւոր մնաց,
Եւ ջլացած են նորա ձեռքի
բազուկները,
Յակոբի Հզօրի ձեռքերովը.
Այնտեղից է հովիւը Իսրայէլի
վէմը։
25 Քո Հօր Աստուածանից որ քեզ
կ'օգնէ,
Եւ Ամենակարողից որ քեզ
կ'օրհնէ,
Երկնքի օրհնութիւններովը՝ վե-
րևից,
Խորութեան օրհնութիւններովը՝ որ պառկած է ցածում.
Ծծերի և արգանդի օրհնութիւն-
ներով.
26 Քո Հօր օրհնութիւնները որ զո-
բացան մշտնջենաւոր լեռների օրհնութիւններից
Յաւիտենական բլուրների վայել-
չութիւնից բարձր, Յովսէփի
գլխի վերայ լինին.
Եւ իր եղբայրներից գերազանց
լինողի գագաթի վերայ։
27 Բենիամինը պատառոտող գայլ է,
Առաւօտուն որսը կ'ուտէ,
Եւ իրիկունը կողոպուտը կ'բա-
ժանէ։

Բոլոր այս Իսրայէլի ցեղերը 28
աստնեներկու են. և այս է որ նո-
րանց Հայրը խօսեց նորանց հետ,
և օրհնեց նորանց. ամէն մէկի
օրհնութեանը պէս օրհնեց նո-
րանց։ Եւ պատուիրեց նորանց և 29
ասեց նորանց. Ես իմ ժողովրդի
հետ պիտի խառնուիմ. իմ Հայ-
րերի հետ այն այրի մէջ թաղե-
ցէք ինձ, որ Քետացի Եփրոնի
արտումն է. Այն այրի մէջ, որ 30
Քանանի երկրումը Մամբրէի դի-
մաց եղող Մաքփելայի արտումն
է, որ Աբրահամը ծախու առաւ
այն արտի հետ միասին գերեզ-
մանի կալուածքի համար Քետաց-
ի Եփրոնից։ Այնտեղ թաղեցին 31
Աբրահամին և նորա կնոջը Սար-
բային. այնտեղ թաղեցին Իսա-
հակին և նորա կնոջը Ռեբեկա-
յին. և ես էլ այնտեղ թաղեցի
Լիային։ Այն արտը և այնտեղ 32
եղած այրը գնեցին Քետի որդիներիցը
ծախու առնելեցան։ Եւ Յակոբը 33
վերջացրեց իր որդիների պատ-
ուէր տալը, իր ոտքերը անկողնի
մէջ ժողովեց, և հոգին աւան-
դեց, և իր ժողովրդի հետ խառ-
նուեցաւ։

Գլ. Ե

Եւ Յովսէփն իր Հօր երեսի վե- 1
րայ ընկաւ, և լացաւ նորա վե-
րայ, և համբուրեց նորան։ Եւ 2
Յովսէփն իր բժիշկ ծառաներին
հրամայեց որ իր Հօրը զմռսեն. և
բժիշկները զմռսեցին Իսրայէլին։
Եւ նորա քառասուն օրը լրացան. 3
որովհետեւ այդպէս էին լրանում
զմռսուածների օրերը, և Եգիպ-
տացիք նորա համար հօթանաս-
ուն օր սուգ արին։ Եւ երբ նո- 4
րա սուգի օրերն անցան, Յովսէ-
փը խօսեց Փարաւօնի տան հետ
ասելով. Թէ որ հիմա ձեր առա-
ջին շնորհք գտայ, խնդրեմ Փա-
րաւօնի ականջին խօսեցէք և ա-
սեցէք. Իմ Հայրն ինձ երդում 5
անել տուաւ ասելով. Ահա ես
մեռնում եմ, իմ գերեզմանի
մէջ որ ես ինձ համար Քանանի
երկրումը փորեցի, ինձ այնտեղ

թաղես, և հիմա թող վեր գը-
նամ իմ հօրը թաղեմ, և ետ
6 դառնամ։ Եւ Փարաւօնն ասեց.
Ելիր և թաղիր քո հօրը ինչպէս
որ նա քեզ երդում անել տուաւ։
7 Եւ Յովսէփն ելաւ իր հօրը
թաղելու, և նորա հետ ելան
Փարաւօնի բոլոր ծառաները, նո-
րա տան ծերերը և Եգիպտոսի
8 երկրի բոլոր ծերերը։ Նաև Յով-
սէփի բոլոր տունը և նորա եղ-
բայրները և նորա հօր տունը.
միայն նորանց երեխաները և ի-
րանց հօտերը և իրանց արջառ-
ները Գեսեմի երկրումը թողեցին։
9 Եւ նորա հետ կառքեր և ձիա-
ւորներ ելան, և մի շատ մեծ
10 բանակ եղաւ։ Եւ եկան Ատադի
կալը, որ Յորդանանի միւս կող-
մին է. այնտեղ մեծ և խիստ
սաստիկ լացով ողբացին, և իր
հօր համար եօթը օր սուգ արաւ։
11 Եւ այն երկրի բնակիչ Քանանա-
ցիները երբոր տեսան Ատադի
կալի մէջի սուգը, ասեցին. Սա
մի մեծ սուգ է Եգիպտացիների,
նորա համար նորա անունը *Ա-
բէլմիսրաիմ դրին, որ Յորդանա-
12 նի միւս կողմին է։ Եւ նորա որ-
դիքն արին նորան ինչպէս որ
13 պատուիրել էր։ Եւ նորա որդի-
քը Քանանի երկիրը տարին նո-
րան, և թաղեցին նորան Մաք-
փելայի արտի այրումը, որ Աբ-
րահամը գերեզմանի կալուածքի
համար ծախու առաւ արտի հետ
մէկտեղ Քետացի Եփրոնից Մամբ-
14 րէի դիմացը։ Եւ Յովսէփը ետ
դարձաւ Եգիպտոս իր հօրը թա-
ղելուց յետոյ, ինքը և իր եղ-
բայրները և այն ամենը որ իր
հետ ելան իր հօրը թաղելու։
15 Եւ Յովսէփի եղբայրները տե-
սան որ իրանց հայրը մեռաւ, ա-
սեցին. Գուցէ Յովսէփը ոխ ու-
նենայ մեզ հետ և հատուցանէ
մեզ այն ամեն չարիքը, որ մենք
16 արինք իրան։ Եւ Յովսէփին պատ-
գամաւոր ուղարկեցին ասելով.
Քո հայրը մեռնելուց առաջ
պատուիրեց և ասեց. Այսպէս
ասեցէք Յովսէփին. Հիմա շնորհք 17
արա քո եղբայրների յանցանքն
ու նորանց մեղքը ներիր, որովհե-
տև քեզ չարութիւն արին. և
հիմա աղաչում ենք՝ ներիր քո
հօր Աստուծոյ ծառաների յան-
ցանքը։ Եւ Յովսէփը լացաւ նո-
րանց այս խօսքերի համար, որ
ասեցին իրան։ Եւ նորա եղբայր- 18
ներն էլ գնացին, և նորա առա-
ջին ընկան, և ասեցին. Ահա մենք
քո ծառաներն ենք։ Եւ Յովսէփն 19
ասեց նորանց. Մի վախիք, մի՞թէ
ես Աստուծոյ փոխանորդն եմ։
Եւ թէպէտ դուք ինձ դէմ չա- 20
րութիւն խորհեցիք, բայց Աստ-
ուած այն լաւի դարձնել խոր-
հեց, որ անէր այս օրուայ եղածի
պէս, այսինքն որ շատ ժողովուրդ
ապրեցնէր։ Եւ հիմա մի վախիք. 21
ես ձեզ և ձեր երեխաներին պի-
տի կերակրեմ։ Եւ մխիթարեց
նորանց և քաղցրութեամբ խօսեց։
Եւ Յովսէփը Եգիպտոսումը բը- 22
նակուեց, ինքը և իր հօր տունը,
և Յովսէփը հարիւր տասը տարի
ապրեց։ Եւ Յովսէփը Եփրեմի եր- 23
րորդ սերնդեան որդիները տե-
սաւ, և Մանասէի որդի Մաքիրի
որդիներն էլ Յովսէփի ծունկերի
վերայ ծնուեցան։ Եւ Յովսէփն 24
իր եղբայրներին ասեց. Ահա ես
մեռնում եմ, և Աստուած ան-
պատճառ ձեզ այցելութիւն է
անելու, և ձեզ այս երկրիցը հա-
նելու է դէպի այն երկիրը, որի
համար ինքը երդում արաւ Աբ-
րահամին, Իսահակին և Յակո-
բին։ Եւ Յովսէփն Իսրայէլի որդ- 25
կանցը երդում անել տուաւ ա-
սելով. Աստուած անպատճառ
ձեզ այցելութիւն է անելու, և
իմ ոսկորներն այստեղից հանե-
ցէք։ Եւ Յովսէփը մեռաւ հա- 26
րիւր տասը տարեկան, և զմուսե-
ցին նորան, դրին մի տապանի
մէջ Եգիպտոսումը։

*Եգիպտացիների սուգը։

ԵԼԻՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ սորանք են Իսրայէլի որդի-
ների անունները որ Եգիպտոս
գնացին, ամեն մէկը իր անովը
2 Յակոբի հետ գնաց։ Ռուբէն, Շը-
3 մաւոն, Ղեւի և Յուդա, Իսաքար,
4 Զաբուղոն և Բենիամին, Դան ու
5 Նեփթաղիմ, Գադ ու Ասեր։ Եւ
Յակոբի երանքիցը ելած բոլոր հո-
գիները եօթանասուն հոգի էին.
Յովսէփն էլ Եգիպտոսումն էր։
6 Եւ մեռաւ Յովսէփը և նորա բո-
լոր եղբայրները և բոլոր այն ազ-
7 գը։ Եւ Իսրայէլի որդիքը աճեցին
և բազմացան և շատացան և խիստ
զօրացան, և այն երկիրը նորան-
ցով լցուեցաւ։
8 Արդ Եգիպտոսի վերայ մի նոր
թագաւոր ելաւ, որ Յովսէփին
9 չէր ճանաչում։ Եւ նա ասեց իր
ժողովրդին. Ահա Իսրայէլի որ-
դիների ժողովուրդը մեզանից շատ
10 և զօրաւոր են. Եկէք իմաստու-
թեամբ վարուինք նորա դէմ, մի
գուցէ շատանան, և լինի որ երբ
պատերազմ պատահէ, և նորանք
էլ մեր թշնամիների հետ միա-
նան, և մեզ դէմ պատերազմեն,
11 և այս երկրից դուրս գնան։ Նո-
րա համար գործավարներ դրին
նորանց վերայ, որ չարչարեն նո-
րանց իրանց ծանր գործքերովը.
և շտեմարանի քաղաքներ շինե-
ցին Փարաւօնի համար՝ Փիթօմը
12 և Ռամսէսը։ Եւ որչափ որ չար-
չարում էին նորանց, այնչափ էլ
աւելի շատանում էին և աճում
էին. և նորանք Իսրայէլի որդի-
13 ներիցը երկիւղ կրեցին։ Եւ Ե-
գիպտացիք բռնութեամբ ծառա-
յեցնում էին Իսրայէլի որդինե-
14 րին։ Եւ նորանց կեանքը դառ-
նացնում էին ծանր ծառայու-
թեամբ՝ կաւով և աղիւսներով
և դաշտի ամեն գործերովը. ինչ
ծառայութիւն էլ որ նորանց ա-
նել տային բռնութեամբ էր լի-
նում։
Եւ Եգիպտոսի թագաւորը խօ- 15
սեց Եբրայեցիների մանկաբարձ-
ների հետ, որոնց մէկի անունը
Սեփրա և միւսի անունը Փուա
էր, Եւ ասեց. Եբրայեցի կանանց 16
ծնեցնելիս նստարանների վերայ
նայեցէք, եթէ աղայ է՝ մեռցրէք
նորան, և եթէ աղջիկ է՝ թող
ապրէ։ Բայց մանկաբարձները 17
Աստուածանից վախեցին, և չ՚ա-
րին ինչպէս ասել էր նորանց Ե-
գիպտոսի թագաւորը. այլ արու-
ներին ողջ էին թողում։ Եւ Ե- 18
գիպտոսի թագաւորը կանչեց
մանկաբարձներին, և ասեց նո-
րանց. Ինչո՞ւ արիք այս բանը և
արուներին ողջ թողեցիք։ Եւ 19
մանկաբարձներն ասեցին Փարա-
ւօնին. Որովհետև որ Եբրայե-
ցի կանայքը Եգիպտացի կանանց
պէս չեն. որովհետև նորանք ա-
ռոյգ են. մանկաբարձը դեռ նո-
րանց մօտ չ՚գնացած՝ ծնում են։
Եւ Աստուած մանկաբարձներին 20
բարիք արաւ. և ժողովուրդը շա-
տացաւ, և խիստ զօրացան։ Եւ 21
եղաւ որ մանկաբարձներն Աստ-
ուածանից վախում էին, և նա
նորանց համար տուներ շինեց։ Եւ 22
Փարաւօնը հրամայեց իր ժողո-
վրդին ասելով. Ամեն ծնած տը-
ղային գետը գցեցէք, և ամեն
աղջիկը ողջ թողեցէք։

ԳԼ. Բ

Եւ Ղեւիի տանից մէկը գնաց, 1
ու Ղեւիի Դէ աղջիկն առաւ։ Եւ 2
կինը յղացաւ, և մի որդի ծնեց.
և տեսաւ որ նա գեղեցիկ էր, ե-
րեք ամիս թաքցրեց նորան։ Եւ 3
երբ այլ ևս չ՚կարողացաւ թաք-
ցընել նորան, մի պրտուի տա-
պանակ առաւ նորա համար, և
կուպրով ու ձիւթով ծեփեց, և
տղան նորա մէջ դրաւ, և դրաւ
գետի եզերքում եղած շամբի
մէջ։ Եւ նորա քոյրը կանգնեց 4
հեռուանց, որ տեսնէ թէ ինչ

5 կը պատահէ նորան։ Եւ Փարաւ-
օնի աղջիկն իջաւ գետը լուացու-
ելու, և նորա աղախինները գե-
տի եզերքին ման էին գալիս. և
տեսաւ տապանակը շամբի մէջ-
տեղը, և իր աղախնին ուղարկեց,
6 որ առաւ նորան։ Եւ նա բացաւ
և տեսաւ տղան, և ահա տղան
լաց էր լինում. և խղճաց նորա
վերայ, և ասեց. Սա Եբրայեցի
7 տղաներիցն է։ Յետոյ նորա քոյրն
ասեց Փարաւօնի աղջկանը. Գնամ
և քեզ համար Եբրայեցիներից
մի ծիծ տուող կնիկ կանչեմ,
որ տղային ծիծ տայ քեզ համար։
8 Եւ Փարաւօնի աղջիկն ասեց նո-
րան. Գնա, և աղջիկը գնաց, և
9 այն տղայի մօրը կանչեց։ Եւ Փա-
րաւօնի աղջիկն ասեց նորան. Տար
այս տղային և ծիծ տուր ինձ հա-
մար, և ես քո վարձքը կ'տամ.
և կնիկն առաւ տղային, և ծիծ
10 տուաւ նորան։ Եւ տղան մեծա-
ցաւ, և նա Փարաւօնի աղջկան
մօտ բերաւ նորան, և նորան որ-
դի եղաւ, նա էլ նորա անունը
*Մովսէս դրաւ, և ասեց. որով-
հետև ջրիցը հանեցի նորան։
11 Եւ եղաւ այն օրերումը որ
Մովսէսը մեծացաւ, և դուրս
գնաց իր եղբայրների մօտ, և նո-
րանց ծանր գործքերը տեսաւ. և
տեսաւ մի Եգիպտացի, որ իր Եբ-
րայեցի եղբայրներից մէկին ծե-
12 ծում էր։ Եւ այս կողմ ու այն
կողմ մտիկ տուաւ և տեսաւ որ
մարդ չ'կայ, և մեռցրեց Եգիպ-
տացուն և աւազումը թաղեց նո-
13 րան։ Եւ հետևեալ օրը դուրս
եկաւ, և ահա երկու Եբրայեցի
մարդիկ կռվում էին իրար հետ,
և ասեց յանցաւորին. Ինչո՞ւ ես
14 քո ընկերին ծեծում։ Եւ նա ա-
սեց. Ո՞վ քեզ մեր վերայ իշ-
խան կամ դատաւոր դրաւ. ի՞նձ
էլ մեռցնելու միտք ունիս, ինչ-
պէս որ Եգիպտացուն մեռցրիր։
Եւ Մովսէսը վախեց և ասեց՝ Ան-
շուշտ այս բանը իմացուած է։
15 Եւ Փարաւօնը լսեց այս բանը,
և ուզում էր Մովսէսին մեռցը-
նել. բայց Մովսէսը փախաւ, և
Մադիամի երկրումը բնակուեց,
և մի հորի մօտ նստեց։ Եւ Մա- 16
դիամի քուրմը եօթը աղջիկ ու-
նէր, և նորանք եկան և ջուր
քաշեցին և իրանց հօր հօտը խը-
մեցնելու համար աւազանները
լցրին։ Եւ հովիւները եկան և 17
քշեցին նորանց. և Մովսէսը վեր
կացաւ ու օգնեց նորանց, և նո-
րանց հօտին ջուր խմեցրեց։ Եւ 18
նորանք իրանց հօր Ռագուէլի
մօտ եկան, և նա ասեց. Ինչո՞ւ
շուտ եկաք այսօր։ Եւ ասեցին. 19
Մէկ Եգիպտացի մեզ հովիւների
ձեռքիցն ազատեց, և մեզ հա-
մար ջուր էլ քաշեց և խմեցրեց։
Նա էլ ասեց իր աղջկերանցը. 20
Եւ ո՞ւր է, ինչո՞ւ այն մարդին
այդպէս թող տուիք. կանչեցէք
նորան որ հաց ուտէ։ Եւ Մովսէ- 21
սը համաձայնուեց այն մարդի հետ
բնակուիլ, և նա իր Սեպփօրա
աղջիկը Մովսէսին տուաւ։ Եւ 22
նա մի որդի ծնեց, և նա նորա
անունը †Գերսամ դրաւ. որովհե-
տև ասեց. Պանդուխտ եղայ օ-
տար երկրում։
Եւ այն շատ օրերումը եղաւ 23
որ Եգիպտոսի թագաւորը մե-
ռաւ, և Իսրայէլի որդիքը ծա-
ռայութեան պատճառով հառա-
չեցին և աղաղակեցին. և նորանց
աղաղակը ծառայութեան հա-
մար Աստուծոյ մօտ բարձրացաւ։
Եւ Աստուած նորանց հեծու- 24
թիւնը լսեց. և Աստուած յիշեց
իր ուխտը որ Աբրահամի, Իսա-
հակի և Յակոբի հետ դրել էր։
Եւ Աստուած նայեց Իսրայէլի 25
որդիների վերայ, և Աստուած ի-
մացաւ նորանց վիճակը։

ԳԼ. Գ

Եւ Մովսէսը Մադիամի քուրմի 1
իր աներոջ Յոթորի հօտը արա-
ծեցնում էր. և հօտը անապատի
ետևը քշելով Աստուծոյ Քորեբ
սարը եկաւ։ Եւ Եհովայի հրեշ- 2
տակը կրակի բոցով երևեցաւ նո-

*Ջրից հանուած

†Այնտեղ պանդուխտ

րան մորենու միջից. և նա տե-
սաւ որ ահա մորենին կրակով
վառվում էր, բայց մորենին չէր
3 ոպառվում։ Եւ Մովսէսն ասեց՝
Մէկ դառնամ ու տեսնեմ այս
մեծ տեսարանը, թէ ինչո՞ւ հա-
4 մար մորենին չէ այրվում։ Եւ Ե-
հովան տեսաւ, որ նա դարձաւ
տեսնելու, և Աստուած մորենու
միջիցը կանչեց նորան և ասեց.
Մովսէս, Մովսէս. և նա ասեց.
5 Ահա ես։ Եւ ասեց. Այս տեղին
մի մոտենար. կօշիկներդ հանիր
ոտքերիցդ, որովհետև այն տեղը,
որի վերայ դու կանգնել ես,
6 սուրբ երկիր է։ Նաև ասեց. Ես եմ
քո հօր Աստուածը՝ Աբրահամի
Աստուածը, Իսահակի Աստուածը
և Յակոբի Աստուածը. և Մովսէսն
իր երեսը ծածկեց. որովհետև
վախեց Աստուծոյն մտիկ տալու։
7 Եւ Եհովան ասեց. Իրաւ տե-
սայ իմ ժողովրդի չարչարանքը,
որ Եգիպտոսումն է, և գործա-
վարների պատճառով նորանց ա-
ղաղակը լսեցի. որովհետև նորանց
8 նեղութիւնները իմացայ. Եւ իջայ
նորանց Եգիպտացիների ձեռքիցն
ազատելու, և նորանց այն երկ-
րիցը մէկ լաւ ու լայնարձակ եր-
կիր՝ մի կաթ ու մեղր բղխող եր-
կիր՝ Քանանացիների և Քետացի-
ների և Ամորհացիների և Փերե-
զացիների և Խևացիների և Յե-
9 բուսացիների տեղը հանելու։ Եւ
ահա հիմա Իսրայէլի որդիների
աղաղակը ինձ մօտ է հասել. և
տեսայ էլ այն հարստահարու-
թիւնը, որ Եգիպտացիներն ա-
10 նում են նորանց։ Ուստի եկ հի-
մա քեզ Փարաւօնի մօտ ուղար-
կեմ, և հանիր իմ ժողովուրդը՝
Իսրայէլի որդիքը Եգիպտոսիցը։
11 Եւ Մովսէսն ասեց Աստուծոյն.
Ես ո՞վ եմ որ Փարաւօնի մօտ
գնամ, և Իսրայէլի որդիքը Ե-
12 գիպտոսիցը հանեմ։ Եւ ասեց.
Թէ ես քեզ հետ կ'լինիմ, և սա
քեզ համար նշան կ'լինի, որ ես
եմ քեզ ուղարկել. երբոր ժո-
ղովուրդը Եգիպտոսիցը հանես,
այս սարի վերայ կ'պաշտէք Ա-
ստուծոյն։
Եւ Մովսէսն ասեց Աստուծոյն. 13
Ահա ես գնում եմ Իսրայէլի որ-
դիների մօտ, և կ'ասեմ նորանց.
Ձեր հայրերի Աստուածն ինձ՝ ձեզ
մօտ է ուղարկել. և երբոր ինձ
ասեն. Թէ ի՞նչ է նորա անունը,
ես ի՞նչ ասեմ նորանց։ Եւ Ա- 14
ստուած ասեց Մովսէսին. Ես եմ
ՈՐ ԵՄ. և ասեց. Այսպէս ասիր
Իսրայէլի որդիներին. Ինձ ԵՄը
ուղարկեց ձեզ մօտ։ Նաև Ա- 15
ստուած ասեց Մովսէսին. Այս-
պէս ասիր Իսրայէլի որդիներին.
Ձեր հայրերի Եհովայ Աստուա-
ծը՝ Աբրահամի Աստուածը, Իսա-
հակի Աստուածը և Յակոբի Ա-
ստուածը ինձ ձեզ մօտ ուղարկեց,
այս է իմ անունը յաւիտեան, և
այս է իմ յիշատակը ազգից ազգ։
Գնա Իսրայէլի ծերերին մէկտեղ 16
ժողովիր, և ասիր նորանց. Ձեր
հայրերի Եհովայ Աստուածը, Աբ-
րահամի, Իսահակի և Յակոբի
Աստուածը երևեցաւ ինձ ասելով.
Արդարև այցելութիւն արի ձեզ,
և Եգիպտոսի մէջ ձեր քաշածը
տեսայ։ Եւ ասեցի՝ հանեմ ձեզ 17
Եգիպտոսի չարչարանքիցը դէպի
Քանանացիների և Քետացիների
և Ամորհացիների և Փերեզացի-
ների և Խևացիների և Յեբուսա-
ցիների երկիրը՝ կաթ և մեղր
բղխող երկիրը։ Եւ նորանք քո 18
ձայնին կ'լսեն. և դու և Իսրա-
յէլի ծերերը Եգիպտոսի թագա-
ւորի մօտ կ'մտնէք, և կ'ասէք նո-
րան. Եբրայեցիների Աստուածը՝
Եհովան մեզ հանդիպեց. և հի-
մա թող երեք օրուայ ճանա-
պարհ գնանք դէպի անապատը,
որ մեր Եհովայ Աստուծոյն զոհ
մատուցանենք։ Եւ ես գիտեմ, 19
որ Եգիպտոսի թագաւորը ձեզ
թող չի տալու որ գնաք՝ և ոչ
էլ՝ զօրաւոր ձեռքով։ Եւ ես իմ 20
ձեռքը կ'երկայնացնեմ և կ'զար-
կեմ Եգիպտոսը իմ ամեն հրաշք-
ներովը, որ նորա մէջ պիտի ա-
նեմ. և նորանից յետոյ ձեզ կը
թողէ։ Եւ այս ժողովրդին շը- 21
նորհք կ'տամ Եգիպտացիների ա-
ռաջին. և երբոր դուրս գաք,
դատարկ չէք դուրս գալ։ Այլ 22

ամեն կնիկ իր դրացուց և իր
տանը բնակուող կնոջից արծա-
թեղէն զարդեր և ոսկեղէն զար-
դեր և հանդերձներ կ'խնդրէ, և
կ'դնէք ձեր որդիների և աղջիկ-
ների վերայ. և Եգիպտոսին կը
կողոպտէք։

ԳԼ. Դ

1 Եւ Մովսէսը պատասխանեց և
ասեց. Բայց ահա նորանք ինձ
չեն հաւատալ, ոչ էլ իմ ձայ-
նին կ'լսեն. որովհետև կ'ասեն
թէ Եհովան քեզ չէ երևացել։
2 Եւ Եհովան ասեց նորան. Այդ
ի՞նչ է քո ձեռքինը. և նա ա-
3 սեց՝ Գաւազան։ Եւ ասեց. Գե-
տինը գցիր դորան. և նա գետի-
նը գցեց, և օձ եղաւ, և Մովսէ-
4 սը նորա առաջիցը փախաւ։ Եւ
Եհովան ասեց Մովսէսին. Ձեռ-
քըդ մեկնիր և ագիիցը բռնիր.
և նա իր ձեռքը մեկնեց և նո-
րան բռնեց, և նա գաւազան ե-
5 ղաւ նորա ձեռքումը. Որ հաւա-
տան թէ քեզ երևեցաւ իրանց
հայրերի Եհովայ Աստուածը, Աբ-
րահամի Աստուածը, Իսահակի
Աստուածը և Յակոբի Աստուածը։
6 Եւ Եհովան դարձեալ ասեց
նորան. Հիմա ձեռքդ տար ծոցդ.
և նա ձեռքը ծոցը տարաւ, և
դուրս հանեց, և ահա ձեռքը
7 ձիւնի պէս բորոտ եղաւ։ Եւ ա-
սեց. Ձեռքդ դարձեալ ծոցդ
տար. և նա դարձեալ ձեռքը
ծոցը տարաւ, և ծոցիցը հանեց,
և ահա իր մարմնի պէս էր եղել։
8 Եւ իցէ թէ քեզ չ'հաւատան, և
առաջի նշանի ձայնին չ'լսեն, այն
ժամանակ միւս նշանի ձայնին կը
9 հաւատան։ Իսկ իցէ թէ այս եր-
կու նշաններին էլ չ'հաւատան,
և քո ձայնին էլ չ'լսեն, գետի
ջրիցը վեր առ, և ցամաքի վերայ
թափիր, և այն ջուրը, որ գետի-
ցը վեր առիր, ցամաքի վերայ
արիւն կ'դառնայ։
10 Եւ Մովսէսն ասեց Եհովային.
Ոհ, Տէր իմ, ես ճարտարախօս
չեմ, ոչ երէկուանից ու մէկէլ
օրուանից, ոչ էլ ծառայիդ հետ
խօսելուցդ յետոյ, այլ ես ծան-
րախօս և ծանրալեզու եմ։ Եւ 11
Եհովան ասեց նորան. Ո՞վ է
մարդին բերան տուել. կամ ո՞վ
է անում համրը կամ խուլը կամ
աչք ունեցողը կամ կոյրը, չէ՞ որ
ես Եհովաս։ Եւ հիմա գնա, և 12
ես քո բերանի հետ կ'լինիմ, և
քեզ կ'սովորեցնեմ ինչ որ պիտի
խօսես։ Եւ նա ասեց. Ոհ, Տէր 13
իմ, աղաչեմ՝ ուղարկիր որի
ձեռքով որ ուզում ես ուղար-
կել։ Եւ Եհովայի բարկութիւնը 14
բորբոքուեց Մովսէսի դէմ, և ա-
սեց. Մի՞թէ ես քո Ահարօն եղ-
բօրը՝ Ղևտացուն չեմ ճանաչում
որ ճարտարախօս է. նաև ահա
նա դուրս է գալիս քեզ դիմա-
ւորելու, և քեզ տեսածի պէս
իր սրտումը պիտի ուրախանայ։
Եւ դու խօսիր նորա հետ, և 15
խօսքեր դիր նորա բերանումը. և
ես քո բերանի և նորա բերանի
հետ կ'լինիմ, և ձեզ կ'սովորե-
ցընեմ ինչ որ պիտի անէք։ Եւ 16
քո տեղը նա կ'խօսէ ժողովրդի
հետ. և նա քեզ համար բերանի
տեղ կ'լինի, ու դու նորա հա-
մար Աստուծոյ տեղ կ'լինիս։ Եւ 17
այս գաւազանն առ քո ձեռքը,
որ նորանով անես նշանները։
Եւ Մովսէսը գնաց, և իր աներ 18
Յոթորի մօտ դարձաւ, և ասեց
նորան. Թող գնամ, և ետ դառ-
նամ Եգիպտոսումը լինող եղ-
բայրներիս մօտ, և տեսնեմ թէ
տակաւին ո՞ղջ են. և Յոթորն
ասեց Մովսէսին. Գնա խաղաղու-
թեամբ։ Եւ Եհովան Մադիամի 19
մէջ ասեց Մովսէսին. Գնա ետ
դարձիր Եգիպտոս, որովհետև մե-
ռան այն ամեն մարդիկը, որ քո
կեանքը որոնում էին։ Եւ Մով- 20
սէսն իր կնոջն ու որդիներին ա-
ռաւ, և էշի վերայ հեծցրեց նո-
րանց, և ետ դարձաւ Եգիպտոսի
երկիրը. և Մովսէսն Աստուծոյ
գաւազանը իր ձեռքն առաւ։ Եւ 21
Եհովան ասեց Մովսէսին. Երբոր
ետ դառնաս գնաս Եգիպտոս,
նայիր որ փարաւօնի առաջին ա-
նես բոլոր այն հրաշքները, որ ես
քո ձեռքը դրի, և [illegible] նորա սիր-

տը կ'խստացնեմ, և նա ժողո-
22 վրդին թող չի տալ։ Եւ ասիր
փարաւօնին, Եհովան այսպէս է
ասում. Իսրայէլն իմ որդին՝ իմ
23 անդրանիկն է։ Եւ քեզ ասում
եմ. Թող տուր իմ որդին որ ինձ
պաշտէ. բայց եթէ նորան թող
տալ չ'ուզես, ահա ես քո որ-
դին՝ քո անդրանիկը կ'սպանեմ։
24 Եւ ճանապարհին մի իջևա-
նում եղաւ, որ Եհովան նորան
պատահեց, և ուզեց նորան ըս-
25 պանել։ Եւ Սեպփօրան մի սուր
քար առաւ, և իր որդու ան-
թըլփատութիւնը թլփատեց, և
նորա ստքերի մօտ գցեց, և ա-
սեց. Թէ Դու ինձ համար մի
26 արիւնոտ փեսայ ես։ Այսպէս
թող տուաւ նորան. այն ժամա-
նակ ասեց. Թլփատութեան հա-
մար արիւնոտ փեսայ։
27 Եւ Եհովան ասեց Ահարօնին.
Գնա անապատը Մովսէսին դի-
մաւորելու. և նա գնաց, և պա-
տահեց նորան Աստուծոյ սարի
28 վերայ, և համբուրեց նորան։ Եւ
Մովսէսը պատմեց Ահարօնին Ե-
հովայի բոլոր խօսքերը որ ուղար-
կեց իրան, և այն բոլոր նշաննե-
րը, որ իրան պատուիրեց։
29 Եւ Մովսէսն ու Ահարօնը գը-
նացին, և Իսրայէլի որդիների բո-
30 լոր ծերերին ժողովեցին։ Եւ Ա-
հարօնը Եհովայի Մովսէսին ա-
սած բոլոր խօսքերը պատմեց. և
նշաններն արաւ ժողովրդի առա-
31 ջին։ Եւ ժողովուրդը հաւատաց.
և լսեցին, թէ Եհովան այցելու-
թիւն է արել Իսրայէլի որդիներ-
ին, և թէ նորանց նեղութիւն-
ները տեսել է, և խոնարհուե-
ցին և երկրպագութիւն արին։

ԳԼ. Ե

1 Եւ յետոյ Մովսէսն ու Ահարօ-
նը եկան և ասեցին փարաւօնին.
Այսպէս է ասում Իսրայէլի Ե-
հովայ Աստուածը, իմ ժողովուր-
դը թող տուր, որ անապատումն
2 ինձ համար տօն կատարեն։ Եւ
փարաւօն[illegible]ասեց. Եհովան ո՞վ է,
որ նորա [illegible] լսեմ, և Իսրա-
յէլին թող տամ. Եհովան չեմ
ճանաչում, և Իսրայէլն էլ թող
չեմ տալիս։ Եւ նորանք ասեցին. 3
Եբրայեցիների Աստուածը մեզ
հանդիպեց. հրաման տուր որ ե-
րեք օրուայ ճանապարհ գնանք
անապատը, և մեր Եհովայ Աս-
տուծոյն զոհ մատուցանենք, որ
մի գուցէ ժանտախտով կամ սրով
մեզ վերայ յարձակուի։ Եւ Ե- 4
գիպտոսի թագաւորն ասեց նո-
րանց. Ով Մովսէս և Ահարօն,
ինչո՞ւ համար ժողովրդին իրանց
գործքերիցը ետ էք թողում, գը-
նացէք ձեր բանին։ Եւ փարա- 5
ւօնն ասեց. Ահա հիմա երկրի
ժողովուրդը շատ է, և դուք
դադարեցնում էք նորանց իրանց
գործքերիցը։
Եւ փարաւօնն այն օրը ժողո- 6
վրդի գործավարներին և նորանց
վերակացուներին հրամայեց ա-
սելով. Երէկուայ և մէկէլ օր- 7
ուայ պէս այլ ևս ժողովրդին
յարդ մի տաք աղիւս շինելու
համար. Թող իրանք գնան ի-
րանց համար յարդ ժողովեն։ Եւ 8
աղիւսների հաշիւը ինչպէս որ ե-
րէկ և մէկէլ օրը շինում էին՝
նորանց վերայ դրէք, նորանից մի
պակասեցնէք. որովհետև ծոյլ
են, նորա համար են նորանք ա-
ղաղակում՝ ասելով. Գնանք մեր
Աստուծոյն զոհ մատուցանենք։
Թող գործը այս մարդկանց վե- 9
րայ ծանրանայ, որ նորանով գոր-
ծեն, և դարտակ խօսքերի մտիկ
չ'անեն։ Եւ ժողովրդի գործավար- 10
ներն ու վերակացուները դուրս
գնացին, և ժողովրդի հետ խօ-
սեցին ասելով. Այսպէս է ա- 11
սում փարաւօնը. Ես ձեզ յարդ
չեմ տալ. դուք գնացէք ձեզ
համար յարդ առէք ուր որ գըտ-
նէք, սակայն ձեր գործիցը մի
բան պիտի չ'պակասէ։ Եւ ժողո- 12
վուրդը Եգիպտոսի բոլոր երկրի
մէջ ցրուեցաւ յարդի տեղ խո-
զան ժողովելու համար։ Եւ գոր- 13
ծավարները ստիպում էին ասե-
լով. Ձեր օրական բանը իր օրը
լրացրէք ինչպէս յարդ եղած ժա-
մանակը։ Եւ փարաւօնի գործա- 14

վարները Իսրայէլի որդիների վերայ դրած վերակացուներին ծեծում էին և ասում. Ինչո՞ւ համար չ՛լրացրիք ձեր վերայ դրած աղիւսների հաշիւը երէկ էլ այսօր էլ ինչպէս երէկ ու մէկէլ օրը։
15 Եւ Իսրայէլի որդիների վերակացուները եկան և բողոքեցին Փարաւօնին ասելով. Ինչո՞ւ ես այդպէս անում քո ծառաներին։
16 Քո ծառաներին յարդ չեն տալիս, բայց մեզ ասում են, թէ Աղիւսները շինեցէք. և ահա քո ծառաները ծեծուեցան. և յան-
17 ցանքը քո ժողովրդինն է։ Եւ նա ասեց. Ծոյլ էք դուք՝ ծոյլ. Նորա համար ասում էք թէ Գընանք Եհովային զոհ մատուցա-
18 նենք։ Ուստի գնացէք հիմա ծառայեցէք, և ձեզ յարդ չի տրուելու, բայց աղիւսների հաշի-
19 ւը պէտք է տաք։ Եւ Իսրայէլի որդիների վերակացուները իրանց չարիքի մէջ տեսան, երբ որ ասուեցաւ թէ Ձեր աղիւսների թիւից չ՛պակասացնէք. օրական բա-
20 նը իր օրը տուէք։ Եւ հանդիպեցին Մովսէսին և Ահարօնին, որ կանգնած էին իրանց դիմաւորելու, Փարաւօնի մօտից դուրս
21 գալիս։ Եւ ասեցին նորանց. Եհովան ձեզ վերայ նայէ և դատէ, որ մեր հոտը Փարաւօնի առաջին, և նորա ծառաների առաջին գարշելի արիք, մեզ սպանելու համար նորանց ձեռքը սուր տալով։
22 Եւ Մովսէսը ետ դարձաւ Եհովայի մօտ և ասեց. Ով Եհովայ, ինչո՞ւ համար այս ժողովուրդը չարիքի մէջ գցեցիր, և ինչո՞ւ համար ինձ ուղարկեցիր։
23 Որովհետև այն ժամանակից որ եկել եմ Փարաւօնի մօտ քո անունովը խօսելու, այս ժողովրդին չարութիւն է անում, և դու էլ չ՛փրկեցիր քո ժողովրդին։

ԳԼ. Զ

1 Եւ Եհովան ասեց Մովսէսին. Հիմա կ՛տեսնես թէ Փարաւօնին ինչ կ՛անեմ. որ հզօր ձեռքով թող կ՛տայ նորանց, և հզօր ձեռքով դուրս կ՛անէ նորանց իր
երկրիցը։ Եւ Աստուած խօսեց 2
Մովսէսի հետ և ասեց նորան. Ես եմ Եհովան։ Եւ երևեցայ 3
Աբրահամին, Իսահակին և Յակոբին Ամենակարող Աստուծոյ անունով, բայց իմ Եհովայ անունովը նորանց չ՛յայտնուեցայ։
Նաև նորանց հետ իմ ուխտը 4
հաստատեցի, որ նորանց տամ Քանանի երկիրը, նորանց պանդխտութեան երկիրը ուր որ պանդխտացան։ Եւ լսեցի էլ Իսրա- 5
յէլի որդիների հառաչանքը, որ Եգիպտացիները ծառայեցնում են նորանց. և յիշեցի իմ ուխտը։
Նորա համար Իսրայէլի որդիներին ասիր. Ես եմ Եհովան. և ես 6
ձեզ Եգիպտացիների ծանր գործքերի տակիցը կ՛հանեմ, և ձեզ նորանց ծառայութիւնիցը կ՛ազատեմ, և կ՛փրկեմ ձեզ մեկնած բազուկով և մեծ դատաստաններով։ Եւ ձեզ ինձ համար 7
ժողովուրդ վեր կ՛առնեմ, և ձեզ համար Աստուած կ՛լինիմ. և պիտի գիտենաք որ ես եմ Եհովան ձեր Աստուածը՝ ձեզ Եգիպտացիների ծանր գործքերի տակիցը
հանողը։ Եւ ձեզ այն երկիրը կը 8
տանեմ, որի համար իմ ձեռքը բարձրացրի որ տամ Աբրահամին, Իսահակին և Յակոբին, և ձեզ կ՛տամ ժառանգութիւն լի-
նելու Ես՝ Եհովաս։ Եւ Մովսէսն 9
Իսրայէլի որդիների հետ այսպէս խօսեց. բայց նորանք հոգու նեղութիւնից և գործի ծանրութիւնից չ՛լսեցին Մովսէսին։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 10
հետ ասելով. Մտիր խօսիր Ե- 11
գիպտոսի Փարաւօն թագաւորի հետ, որ Իսրայէլի որդիքն իր երկրիցն արձակէ։ Եւ Մովսէսը խօ- 12
սեց Եհովայի առաջին ասելով. Ահա Իսրայէլի որդիքը ինձ չեն լսում, ապա Փարաւօնը ինձ ի՞նչպէս կ՛լսէ. որ ես *ծանրալեզու
եմ։ Եւ Եհովան խօսեց Մովսէսի 13

*Անթլփատ շր[illegible]ով։

և Ահարօնի հետ, և հրաման տուաւ նորանց Իսրայէլի որդիների և Եգիպտոսի Փարաւօն թագաւորի մասին՝ Իսրայէլի որդիքը Եգիպտոսի երկրիցը հանելու համար։
14 Սորանք են նորանց հայրերի աների գլուխները. Իսրայէլի անդրանիկ Ռուբէնի որդիքը՝ Ենովք, Փաղղուս, Եսրոն և Քարմի. սո-
15 րանք են Ռուբէնի տոհմերը։ Եւ Շմաւոնի որդիքը՝ Յամուէլ, և Յամին և Ոհադ և Յաքին և Սահառ, և Քանանացի կնոջ որդին՝ Սաւուղ. սորանք են Շմաւոնի
16 տոհմերը։ Եւ սորանք են Ղևիի որդիների անունները իրանց ծնունդների համեմատ՝ Գերսոն և Կահաթ և Մերարի։ Եւ Ղևիի կեանքի տարիները հարիւր երե-
17 սունևեօթը տարի եղան։ Գերսոնի որդիքը իրանց տոհմերի համեմատ՝ Ղոբենի և Սեմէի էին։
18 Եւ Կահաթի որդիքը Ամրամ և Իսահառ և Քեբրոն և Ոզիէլ։ Եւ Կահաթի կեանքի տարիները հարիւր երեսունևերեք տարի ե-
19 ղան։ Եւ Մերարիի որդիքը՝ Մոողի և Մուսի. սորանք են Ղևիի տոհմերը իրանց ծնունդների համեմատ։ Եւ Ամրամն իր հօրաքոյր Յոքաբեդն իրան համար կին առաւ, և նա ծնեց նորա համար Ահարօնին և Մովսէսին։ Եւ Ամ-
20 րամի կեանքի տարիները հարիւր
21 երեսունևեօթը տարի եղան։ Եւ Իսահառի որդիքը՝ Կորխ և Նա-
22 փէկ և Զեքրի։ Եւ Ոզիէլի որդիքը՝ Միսայէլ և Եղիսափան և
23 Սեթրի։ Եւ Ահարօնն իր համար կին առաւ Ամինադաբի աղջիկ Նաասոնի քոյր Եղիսաբեթին, և նա ծնեց նորա համար Նադաբը և Աբիուդը, Եղիազարը և Իթա-
24 մարը։ Եւ Կորխի որդիքը՝ Ասիր և Եղկանա և Աբիասափ. սորանք
25 են Կորխեցիների տոհմերը։ Եւ Ահարօնի որդի Եղիազարը Փուտիէլի աղջիկներից իր համար կին առաւ. և նա ծնեց նորա համար Փենէհէսին, սորանք են Ղևտացիների հայրերի գլուխներն իրանց տոհմերի համեմատ։
Սորանք են Ահարօնը և Մովսէ- 26
սը, որոնց Եհովան ասեց. Հանեցէք Իսրայէլի որդիքն իրանց զօրքերովը Եգիպտոսի երկրիցը։ Սո- 27
րանք են Իսրայէլի որդիքը Եգիպտոսիցը հանելու համար Եգիպտոսի Փարաւօն թագաւորի հետ խօսողները. այս Մովսէսը և Ահարօնը։ Եւ եղաւ այն օրը որ 28
Եհովան խօսեց Մովսէսի հետ Եգիպտոսի երկրումը, Այն ժամա- 29
նակ Եհովան Մովսէսի հետ խօսեց ասելով. Ես եմ Եհովան, խօսիր Եգիպտոսի Փարաւօն թագաւորի հետ, ամեն ինչ որ քեզ ասում եմ։ Եւ Մովսէսը Եհովա- 30
յի առաջին ասեց. Ահա ես ծանրալեզու եմ, և Փարաւօնն ի՞նչպէս կ՛լսէ ինձ։

ԳԼ. Է

Եւ Եհովան ասեց Մովսէսին. 1
Տես քեզ Փարաւօնին աստուած արի, և քո եղբայր Ահարօնը քո
մարգարէն կ՛լինի։ Դու խօսիր այն 2
ամենը ինչ որ քեզ կ՛հրամայեմ, և քո եղբայր Ահարօնը թող խօսէ Փարաւօնի հետ, որ Իսրայէլի որդկանցն արձակէ իր երկրիցը։
Եւ ես Փարաւօնի սիրտը կ՛խըստացնեմ, և իմ նշանները և հրաշքներն Եգիպտոսի երկրումը կ՛շատացնեմ։ Եւ Փարաւօնը ձեզ 3
չի լսիլ. և ես իմ ձեռքը Եգիպտոսի վերայ կ՛գցեմ, և իմ զօրքերը՝ իմ ժողովուրդը Իսրայէլի որդիքը կ՛հանեմ Եգիպտոսի երկրիցը մեծ դատաստաններով։ Եւ 4
Եգիպտացիք կ՛իմանան, որ ես եմ Եհովաս երբոր իմ ձեռքը Եգիպտոսի վերայ երկայնացնեմ և Իսրայէլի որդիքը նորանց միջիցը հանեմ. Եւ Մովսէսն ու Ահարօնը 5
Եհովայի իրանց պատուիրածի պէս 6
արին, այնպէս արին։ Եւ Մովսէսն 7
ութսուն տարեկան էր, և Ահարօնը ութսունևերեք տարեկան էր, Փարաւօնի հետ խօսելիս։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի և 8
Ահարօնի հետ ասելով. Երբոր 9
Փարաւօնը ձեզ հետ խօսէ և ասէ. Ձեզ համար հրաշք ցոյց

տուէք. այն ժամանակ ասիր Ա-
հարօնին. Վեր առ գաւազանդ
և դցիր Փարաւօնի առաջին. նա
10 վիշապ կը դառնայ։ Եւ Մովսէսն
ու Ահարօնը մտան Փարաւօնի
մօտ և Եհովայի պատուիրածի
պէս արին. և Ահարօնն իր գա-
ւազանը դցեց Փարաւօնի առա-
ջին և նորա ծառաների առաջին,
11 և վիշապ եղաւ։ Փարաւօնն էլ
իմաստուններին և կախարդներին
կանչեց. և Եգիպտոսի մոգերն
էլ իրանց կախարդութիւններովը
12 այնպէս արին։ Եւ ամեն մէկն իր
գաւազանը դցում էր, և վիշապ-
ներ էին դառնում. բայց Ահա-
րօնի գաւազանը նորանց գաւա-
13 զաններին կուլ տուաւ։ Եւ Փա-
րաւօնի սիրտը կարծրացաւ, և
նորանց չ՚լսեց, ինչպէս որ Եհո-
վան ասել էր։
14 Եւ Եհովան ասեց Մովսէսին.
Փարաւօնի սիրտը խստացաւ, չէ
15 ուզում ժողովրդին արձակել։ Ա-
ռաւօտանց Փարաւօնի մօտ գնա.
ահա նա դէպի ջուրն է դուրս
գալիս, և դու գետի եզերքումը
նորա դիմացը կանգնիր, և այն օձ
դարձած գաւազանը ձեռքդ առ.
16 Եւ ասիր նորան. Եբրայեցիների
Եհովայ Աստուածը ինձ քեզ մօտ
ուղարկեց ասելով. Արձակիր իմ
ժողովուրդը որ անապատումը ինձ
պաշտեն, և ահա մինչև հիմա
17 չ՚լսեցիր։ Այսպէս է ասում Ե-
հովան. սորանով գիտենաս որ ես
եմ Եհովան. Ահա ես իմ ձեռ-
քի գաւազանը գետի միջի ջրին
կ՚զարկեմ, և ջրերը արիւն կ՚դառ-
18 նան։ Եւ գետի մէջ եղած ձկնե-
րը կ՚մեռնին, և գետը կ՚հոտի, և
Եգիպտացիք կ՚զզուին գետիցը
ջուր խմելու։
19 Եւ Եհովան ասեց Մովսէսին,
Ասիր Ահարօնին. Գաւազանդ
առ, և ձեռքդ մեկնիր Եգիպտա-
ցիների ջրերի վերայ, նորանց ա-
ռուների վերայ, նորանց գետերի
վերայ, և նորանց լճերի վերայ,
նորանց բոլոր ջրակուտակների
վերայ, և արիւն կ՚դառնան, և
Եգիպտոսի բոլոր երկրումը փայ-
տի և քարի ամանների միջի ջրերը
արիւն կ՚դառնան։ Եւ Մովսէ- 20
սն ու Ահարօնը Եհովայի պատ-
ուիրածի պէս արին, և նա գա-
ւազանը բարձրացրեց և Փարաւօ-
նի առաջին և նորա ծառաների
առաջին գետի միջի ջրերին զար-
կեց, և գետի միջի բոլոր ջրերը
արիւն դառան։ Եւ գետի մէջ 21
եղած ձկները մեռան, և գետը
հոտեց, և Եգիպտացիք չէին կա-
րողանում գետիցը ջուր խմել.
և արիւնը Եգիպտոսի բոլոր երկ-
րի մէջ կար։ Եւ Եգիպտոսի մո- 22
գերն էլ իրանց կախարդութիւն-
ներովը այնպէս արին. և Փարա-
ւօնի սիրտը կարծրացաւ, և Եհո-
վայի ասածին պէս նորանց չ՚լսեց։
Եւ Փարաւօնը դարձաւ և իր 23
տունը եկաւ, ու *սա էլ չ՚ազդեց
նորա սրտին։ Եւ բոլոր Եգիպտա- 24
ցիք գետի շուրջը փորեցին խմե-
լու ջրի համար. որովհետև գե-
տի ջրիցը չէին կարողանում խը-
մել։ Եւ Եհովան գետը զարկե- 25
լուց յետոյ եօթը օրը լրացաւ։

ԳԼ. Ը

Եւ Եհովան ասեց Մովսէսին. 1
Փարաւօնի մօտ գնա, և ասիր նո-
րան. Եհովան այսպէս է ասում.
Արձակիր իմ ժողովուրդը որ պաշ-
տեն ինձ։ Եւ եթէ արձակել չ՚ու- 2
զես, ահա ես քո բոլոր սահման-
ները գորտերով պիտի զարկեմ։
Եւ գետը շատ գորտեր կ՚հանէ, 3
և նորանք վեր կ՚ելնեն և քո տան
մէջ և ննջարան սենեակի մէջ և
քո անկողնի մէջ և քո ծառա-
ների տների մէջ և քո ժողովրդի
մէջ և քո թոնիրների մէջ և
խմորի տաշտերի մէջ կ՚մտնեն։
Եւ գորտերը քեզ վերայ և քո 4
ժողովրդի վերայ և քո բոլոր ծա-
ռաների վերայ կ՚ելնեն։
Եւ Եհովան ասեց Մովսէսին. 5
Այսպէս ասիր Ահարօնին. Ձեռքդ
մեկնիր քո գաւազանովը առու-
ների վերայ, գետերի և լճերի
վերայ, և Եգիպտոսի երկրի վե-
րայ գորտեր հանիր։ Եւ Ահարօ- 6

*Ուշ չ՚դրաւ սորա վերայ էլ։

նը մեկնեց իր ձեռքը Եգիպտոսի
ջրերի վերայ. և գորտերը ելան
և Եգիպտոսի երկիրը ծածկեցին։
7 Եւ մոգերն էլ այնպէս արին ի-
րանց կախարդութիւններովը, և
Եգիպտոսի երկրի վերայ գորտեր
հանեցին։
8 Եւ Փարաւօնը կանչեց Մովսէ-
սին և Ահարօնին և ասեց. Աղա-
չեցէք Եհովային որ ինձանից և
իմ ժողովրդիցը վեր առնէ գոր-
տերին, և ես ժողովրդին կ՚ար-
ձակեմ որ Եհովային զոհ մա-
9 տուցանեն։ Եւ Մովսէսն ասեց
Փարաւօնին. Ժամանակ որոշիր ինձ
համար. թէ երբ քեզ համար և
քո ծառաների համար և ժողո-
վրդիդ համար աղաչեմ, որ քե-
զանից և քո տներիցը գորտերը
կորչեն, և միայն գետի մէջ մնան։
10 Եւ նա ասեց. Էգուց։ Նա էլ ա-
սեց. քո խօսքի պէս լինի, որ գի-
տենաս թէ չ՚կայ մեր Եհովայ
11 Աստուծոյ նմանը։ Եւ քեզանից
և քո տներիցը և քո ծառաներ-
իցը և քո ժողովրդիցը գորտերը
կ՚հեռանան. միայն գետի մէջ
12 կ՚մնան։ Եւ Մովսէսն ու Ահարօ-
նը Փարաւօնի մօտիցը դուրս գնա-
ցին. և Մովսէսը Եհովային աղա-
ղակեց այն գորտերի համար, որ
13 Փարաւօնի վերայ բերել էր։ Եւ
Եհովան Մովսէսի ասածին պէս
արաւ. և տներիցը, բակերիցը և
14 արտերիցը գորտերը մեռան։ Եւ
դէզ դէզ ժողովեցին նորանց, և
15 երկիրը հոտեց։ Բայց երբոր Փա-
րաւօնը տեսաւ որ դիւրութիւն
եղաւ, իր սիրտը խստացրեց, և
նորանց չ՚լսեց Եհովայի ասածին
պէս։
16 Եւ Եհովան ասեց Մովսէսին.
Ասիր Ահարօնին. Գաւազանդ
մեկնիր, և երկրի հողին զարկ,
որ Եգիպտոսի բոլոր երկրի վերայ
17 մուն լինի։ Եւ այնպէս արին. ո-
րովհետև Ահարօնն իր ձեռքը
մեկնեց իր գաւազանովը և երկրի
հողին զարկեց, և մուն եղաւ
մարդկանց վերայ և անասուններ-
ի վերայ. Եգիպտոսի բոլոր երկ-
րի վերայ երկրի բոլոր հողը մուն
18 եղաւ։ Եւ մոգերն էլ իրանց կա-
խարդութիւններովը այնպէս արին
որ մուներ հանեն, բայց չ՚կարողա-
ցան. և այսպէս մարդկանց և ա-
նասունների վերայ մուն եղաւ։
Եւ մոգերն ասեցին Փարաւօնին. 19
Սա Աստուծոյ մատն է. բայց
Փարաւօնի սիրտը կարծրացաւ, և
նորանց չ՚լսեց Եհովայի ասածին
պէս։
Եւ Եհովան ասեց Մովսէսին. 20
Առաւօտանց կանուխ վեր կաց,
և Փարաւօնի առաջին կանգնիր.
(ահա դէպի ջուրն է դուրս գը-
նում.) և ասիր նորան. Եհովան
այսպէս է ասում. Արձակիր իմ
ժողովուրդը որ ինձ պաշտեն.
Բայց եթէ իմ ժողովուրդը չ՚ար- 21
ձակես, ահա ես քեզ վերայ և
քո ծառաների վերայ և քո ժո-
ղովրդի վերայ և քո տների վե-
րայ շանաճանճ կ՚ուղարկեմ, և
Եգիպտացիների տները շանաճան-
ճով կ՚լեցնուին, նաև այն գե-
տինը որի վերայ նորանք կան։ Եւ 22
այն օրը իմ ժողովրդի բնակուած
Գեսէմի երկիրը կ՚որոշեմ, և այն
տեղ շանաճանճ չի լինիլ. որ գի-
տենաս թէ ես եմ Եհովան երկ-
րի միջումը։ Եւ իմ ժողովրդի և 23
քո ժողովրդի մէջ խտրութիւն
կ՚դնեմ. էգուց կ՚լինի այս նշանը։
Եւ Եհովան այնպէս արաւ. և 24
շատ շանաճանճ եկաւ Փարաւօնի
տան և նորա ծառաների տների
և Եգիպտոսի բոլոր երկրի վերայ.
և շանաճանճի պատճառով եր-
կիրը փչացաւ։
Եւ Փարաւօնը կանչեց Մովսէ- 25
սին և Ահարօնին և ասեց. Գնա-
ցէք ձեր Աստուծոյն զոհ մատու-
ցրէք երկրիս մէջ։ Եւ Մովսէսն 26
ասեց. Կարելի չէ այդպէս անել.
ըստ որում Եգիպտացիների հա-
մար գարշելին ենք զոհում Եհո-
վային՝ մեր Աստուծոյն. եթէ Ե-
գիպտացիների համար գարշելին
իրանց աչքի առաջին զոհենք,
մեզ չե՞ն քարկոծիլ։ Երեք օր- 27
ուայ ճանապարհ գնանք անապա-
տը, և զոհ մատուցանենք մեր
Եհովայ Աստուծոյն, ինչպէս որ
ինքը մեզ ասէ։ Եւ Փարաւօնն 28
ասեց. Ես ձեզ թող կ՚տամ որ

[illegible] անապատումը ձեր Եհովայ
Աստուծոյն զոհ մատուցանէք,
միայն թէ հեռու չ'գնաք. ինձ
29 համար աղօթեցէք։ Եւ Մովսէսն
ասեց. Ահա ես քո մօտիցը դուրս
կ'գնամ և Եհովային կ'աղաչեմ
որ էգուց փարաւօնիցը, նորա ծա-
ռաներիցը և նորա ժողովրդիցը
շանաճանճը գնայ. բայց փարա-
ւօնը այլ ևս չ'խաբէ՝ ժողովրդին
թող չ'տալով որ Եհովային զոհ
30 մատուցանենք։ Եւ Մովսէսը փա-
րաւօնի մօտիցը գնաց դուրս, և
31 Եհովային աղաչեց։ Եւ Եհովան
Մովսէսի խօսքին պէս արաւ, և
վեր առաւ շանաճանճը փարա-
ւօնիցը, նորա ծառաներիցը, նո-
րա ժողովրդիցը, մէկ հատ էլ
32 չ'մնաց։ Եւ փարաւօնը այն ան-
գամին էլ խստացրեց իր սիրտը,
և ժողովրդին չ'արձակեց։

ԳԼ. Թ

1 Եւ Եհովան ասեց Մովսէսին.
Փարաւօնի մօտ գնա, և խօսիր նո-
րա հետ, թէ Եբրայեցիների Ե-
հովայ Աստուածը այսպէս է ա-
սում. Արձակիր իմ ժողովուրդը
2 որ ինձ պաշտեն. Որովհետև եթէ
չ'ուզես արձակել, և տակաւին
3 պինդ բռնես նորանց, Ահա Եհո-
վայի ձեռքը կ'գայ քո դաշտու-
մը եղած հօտերի վերայ, ձիերի,
էշերի, ուղտերի, արջառների և
ոչխարների վերայ, շատ սաստիկ
4 կոտորած կ'լինի։ Եւ Եհովան Իս-
րայէլի հօտերի և Եգիպտոսի հօ-
տերի մէջտեղը կ'որոշէ, և Իսրա-
յէլի որդիների մէկ [illegible] չի
5 մեռնիլ։ Եւ Եհովան ժամանակ
որոշեց ասելով. Էգուց կ'անէ Ե-
հովան այս բանը երկրի վերայ։
6 Եւ հետևեալ օրը Եհովան այս
բանը արաւ, այսինքն Եգիպտա-
ցիների բոլոր հօտերը մեռան,
բայց Իսրայէլի որդիների հօտե-
7 րիցը մէկ հատ չ'մեռաւ։ Եւ փա-
րաւօնը մարդ ուղարկեց, և ահա
Իսրայէլի հօտերիցը մէկն էլ չէր
մեռել. և փարաւօնի սիրտը խըս-
տացաւ, և ժողովրդին չ'արձա-
8 կեց։ Եւ Եհովան ասեց Մովսէսին
և Ահարօնին. Ձեր ձեռքերը լիքը
հնոցի մոխիր առէք, և Մովսէսը
նորան դէպի երկինքը ցրիւ տայ
փարաւօնի առաջին։ Եւ Եգիպ- 9
տոսի բոլոր երկրի վերայ փոշի
կ'լինի, և Եգիպտոսի բոլոր երկրի
մարդկանց և անասունների վերայ
խաղաւարտներ հանող ուռեցք-
ներ կ'լինին։ Եւ հնոցի մոխիրն ա- 10
ռին և փարաւօնի առաջին կանգ-
նեցին. և Մովսէսը նորան դէպի
երկինքը ցրիւ տուաւ. և մարդ-
կանց և անասունների վերայ խա-
ղաւարտներ հանող ուռեցքներ
եղան։ Եւ մոգերը չ'կարոզացան 11
կանգնել Մովսէսի առաջին ու-
ռեցքների պատճառով, որովհե-
տև ուռեցքները մոգերի վերայ
էլ և բոլոր Եգիպտացիների վե-
րայ էլ եղաւ։ Եւ Եհովան կար- 12
ծրացրեց փարաւօնի սիրտը, և
նորանց չ'լսեց, ինչպէս որ Եհովան
Մովսէսին ասել էր։
Եւ Եհովան ասեց Մովսէսին. 13
Առաւօտանց կանուխ վեր կաց,
և փարաւօնի առաջին կանգնիր,
և նորան ասիր. Այսպէս է ասում
Եբրայեցիների Եհովայ Աստուա-
ծը. Արձակիր իմ ժողովրդին որ
ինձ պաշտեն. Որովհետև այս ան- 14
գամ իմ բոլոր հարուծները պի-
տի ուղարկեմ քո սրտի վերայ և
քո ծառաների և քո ժողովրդի
վերայ, որպէս զի գիտենաս թէ
բոլոր երկրի մէջ ինձ նմանը չ'կայ։
Որովհետև հիմա իմ ձեռքը կը 15
մեկնեմ և կ'զարկեմ քեզ և քո
ժողովրդին ժանտախտով, և կը
կորչես երկրիցը։ Եւ հէնց սորա 16
համար քեզ վեր կացրի, որ իմ
զօրութիւնը քեզանով ցոյց տամ,
և բոլոր երկրի մէջ իմ անունը
պատմուի։ Դու տակաւին իմ 17
ժողովրդի դէմ ես կենում որ
չ'արձակե՞ս նորանց։ Ահա ես է- 18
գուց այս ժամանակ շատ սաստիկ
կարկուտ կ'տեղամ, որի պէս Ե-
գիպտոսումն եղած չէ՝ նորա հաս-
տատուած օրիցը մինչև հիմա։
Եւ հիմա [illegible] ուղարկիր, և ժո- 19
ղովիր հօտերդ, և ինչ որ ունիս
դաշտումը. [illegible] ամեն մարդ
և անասուն որ դաշտումը գտնուի՝

և տների մէջ չ'ժողովուին, նո-
րանց վերայ կարկուտ է իջնելու,
20 և պիտի մեռնին։ Եւ փարաւօնի
ծառաներիցը ով որ Եհովայի
խօսքիցը վախում էր, իր ծառա-
ներին և հօտերին տների մէջ ժո-
21 ղովեց. Եւ ով որ Եհովայի խօս-
քին ուշադրութիւն չ'արաւ, իր
ծառաները և իր հօտերը թողեց
դաշտումը։
22 Եւ Եհովան ասեց Մովսէսին.
Ձեռքդ դէպի երկինքը մեկնիր,
և Եգիպտոսի բոլոր երկրի մէջ
մարդկանց և անասունների վե-
րայ և Եգիպտոսի երկրումը եղած
արտերի բոլոր խոտի վերայ կար-
23 կուտ պիտի գայ։ Եւ Մովսէսն
իր գաւազանը դէպի երկինքը մեկ-
նեց և Եհովան որոտում և կար-
կուտ ուղարկեց, և երկրի վերայ
կրակ էր վազում. և Եհովան Ե-
գիպտոսի երկրի վերայ կարկուտ
24 տեղաց։ Եւ կարկուտ եղաւ, և
կարկտի հետ միասին խառնուած
կրակ եկաւ. շատ սաստիկ էր,
այնպէս որ Եգիպտոսի բոլոր երկ-
րումը նորա նմանը եղած չէր,
25 քանի որ նա ազգ էր եղել։ Եւ
կարկուտը զարկեց Եգիպտոսի
բոլոր երկրի մէջ դաշտումը ե-
ղածի ամենը՝ մարդից մինչև ա-
նասուն. և դաշտի բոլոր խոտը
զարկեց կարկուտը և դաշտի բո-
26 լոր ծառերը կոտրատեց։ Միայն
Գեսէմի երկրի մէջ, ուր որ Իս-
րայէլի որդիքն էին, կարկուտ
չ'եղաւ։
27 Եւ փարաւօնը [illegible] ուղարկեց,
և կանչեց Մովսէսին և Ահարօ-
նին և ասեց նորանց. Այս անգամ
մեղանչեցի. Եհովան արդար է,
իսկ ես և իմ ժողովուրդը յան-
28 ցաւոր ենք։ Աղաչեցէք Եհովային
որ Աստուծոյ որոտումները և
կարկուտը բաւական է. և ձեզ
կ'արձակեմ, և այլ ևս չէք մը-
29 նալ։ Եւ Մովսէսն ասեց նորան.
Հէնց որ քաղաքիցը դուրս գամ՝
ձեռքերս դէպի Եհովային կ'տա-
րածեմ, և որոտումները կ'դա-
դարեն, և այլ ևս կարկուտ չի
լինիլ, որ գիտենաս թէ երկիրը
30 Եհովայինն է։ Բայց ես գիտեմ,
որ դու և քո ծառաները տակա-
ւին Եհովայ Աստուածանից չէք
վախում։
Եւ կտաւատն ու գարին ջար- 31
դուեցան. որովհետև գարին հա-
սած էր, և կտաւատը սերմ բռ-
նած։ Բայց ցորենը և հաճարը չը 32
ջարդուեցան. որովհետև նորանք
ուշ են բուսնում։
Եւ Մովսէսը փարաւօնի մօտի- 33
ցը քաղաքից դուրս ելաւ, և
ձեռքերը դէպի Եհովային տա-
րածեց, և որոտումներն ու կար-
կուտը դադարեց, և երկրի վե-
րայ անձրև չ'կաթեց։ Եւ փա- 34
րաւօնը երբոր անձրևի և կարկը-
տի և որոտումի դադարելը տե-
սաւ, դարձեալ մեղանչեց, և
սիրտը խստացրեց՝ ինքը և իր ծա-
ռաները։ Եւ [illegible] փարաւօնի 35
սիրտը կարծրացաւ, և Իսրայէլի
որդիներին չ'արձակեց, ինչպէս
որ Եհովան Մովսէսին ասել էր։

ԳԼ. Ժ

Եւ Եհովան ասեց Մովսէսին. 1
Գնա փարաւօնի մօտ. որովհետև
ես խստացրի նորա սիրտը և նո-
րա ծառաների սիրտը որ այս իմ
նշաններն անեմ նորանց մէջ։ Եւ 2
որ պատմես քո որդու և որդուդ
որդու ականջներին՝ ինչ որ արի
Եգիպտացիների մէջ, և իմ նը-
շանները որ նորանց մէջ ցոյց
տուի, որ գիտենաք թէ ես եմ
Եհովան։
Եւ Մովսէսն ու Ահարօնը գնա- 3
ցին փարաւօնի մօտ և ասեցին
նորան. Եբրայեցիների Եհովայ
Աստուածն այսպէս է ասում.
Մինչև ե՞րբ չես ուզելու խոնար-
հուիլ իմ առաջին. արձակիր
իմ ժողովուրդը որ ինձ պաշտեն։
Որովհետև եթէ իմ ժողովուրդն 4
արձակել չ'ուզես, ահա էգուց
քո սահմանների վերայ մորեխ
կ'ուղարկեմ. Եւ երկրի երեսը կը 5
ծածկէ, և [illegible] չի կարողանալ
տեսնել երկիրը, և ձեզ համար
կարկտից ազատուած մնացածը
կ'ուտէ, և արտի մէջ բուսած
ձեր բոլոր ծառերը կ'ուտէ։ Եւ 6

կ'լցուին քո տները և քո բոլոր
ծառաների տները և բոլոր Ե-
գիպտացիների տները, որ ոչ քո
հայրերը և ոչ քո հայրերի հայ-
րերն են տեսել իրանց երկրի վե-
րայ եղած օրիցը մինչև այսօր։
Եւ դարձաւ ու փարաւօնի մօ-
տիցը դուրս ելաւ։
7 Եւ փարաւօնի ծառաներն ա-
սեցին նորան. Մինչև ե՞րբ սա
մեզ համար որոգայթ պիտի լի-
նի. արձակիր այս մարդիկը որ ի-
րանց Եհովայ Աստուծոյն պաշ-
տեն. մի՞թէ տակաւին չ'գիտես
8 որ Եգիպտոսը փչացաւ։ Եւ Մով-
սէսին ու Ահարօնին փարաւօնի
մօտ դարձրին, և նա ասեց նո-
րանց. Գնացէք պաշտեցէք ձեր
Եհովայ Աստուծոյն. ո՞վքեր են
9 գնացողները։ Եւ Մովսէսն ասեց.
Մեր երիտասարդներովը և մեր
ծերերովն ենք գնալու, մեր տը-
ղերքովն ու մեր աղջկերքովը, մեր
հօտերովը և մեր արջառներովն
ենք գնալու. որովհետև Եհովայի
10 տօն է մեզ համար։ Եւ նա ա-
սեց նորանց. Ուրեմն Եհովան ձեզ
հետ լինի, ինչպէս որ ես ձեզ և
ձեր երեխաներին կ'արձակեմ։
Զգուշացէք, ըստ որում չարիք
11 կան ձեր առաջին։ Ոչ այդպէս,
այլ դուք մարդիկներդ գնացէք
և Եհովային պաշտեցէք. որովհե-
տև դուք այդ էիք ուզում։ Եւ
փարաւօնի առջևից դուրս արին
նորանց։
12 Եւ Եհովան ասեց Մովսէսին.
Ձեռքդ մեկնիր Եգիպտոսի երկ-
րի վերայ մորեխների համար, որ
Եգիպտոսի երկրի վերայ ելնեն,
և ուտեն երկրի բոլոր խոտը՝ բո-
լորն ինչ որ թողել է կարկու-
13 տը։ Եւ Մովսէսը մեկնեց իր գա-
ւազանը Եգիպտոսի երկրի վերայ.
և Եհովան երկրի վերայ արևել-
եան հով փչել տուաւ այն բո-
լոր օրը և բոլոր գիշերը. և երբ-
որ առաւօտ եղաւ, արևելեան
14 հովը մորեխը բերաւ։ Եւ մորեխը
Եգիպտոսի բոլոր երկրի վերայ ե-
լաւ, և Եգիպտոսի բոլոր սահ-
մանների վերայ իջաւ, շատ սաս-
տիկ էր. նորանից առաջ այնպի-
սի մորեխ չէր եղած, նորանից
յետոյ էլ այնպէս չէ եղել։ 15 Եւ
բոլոր երկրի երեսը ծածկեց, և
երկիրը մթնեց, և երկրի բոլոր
խոտը՝ և կարկուտիցը մնացած
ծառերի բոլոր պտուղները կե-
րան. և եղած ծառերի վերայ և
արտի խոտերի վերայ բնաւ կա-
նաչեղէն չ'մնաց Եգիպտոսի բոլոր
երկրումը։
Եւ փարաւօնը շուտով կանչեց 16
Մովսէսին ու Ահարօնին, և ա-
սեց. Մեղանչեցի ձեր Եհովայ
Աստուծոյ դէմ և ձեզ դէմ։ Եւ 17
հիմա խնդրեմ՝ միայն այս ան-
գամը ներեցէք իմ յանցանքը. և
ձեր Եհովայ Աստուծոյն աղաչե-
ցէք, որ իմ վերայից այս մահը
միայն վեր առնէ։ Եւ նա փա- 18
րաւօնի մօտիցը դուրս ելաւ, և
Եհովային աղաչեց։ Եւ Եհովան 19
մի խիստ սաստիկ արևմտեան հով
ուղարկեց, որ մորեխը վեր առաւ
ու կարմիր ծովը քշեց նորանց.
Եգիպտոսի բոլոր սահմաններումը
մէկ մորեխ չ'մնաց։ Բայց Եհովան 20
կարծրացրեց փարաւօնի սիրտը,
և նա Իսրայէլի որդկանցը չ'ար-
ձակեց։ Եւ Եհովան ասեց Մով- 21
սէսին. Ձեռքդ դէպի երկինքը
մեկնիր, որ Եգիպտոսի երկրի վե-
րայ խաւար լինի, և շօշափելի
խաւար։ Եւ Մովսէսն իր ձեռքը 22
դէպի երկինքը մեկնեց և Եգիպ-
տոսի բոլոր երկրի մէջ թանձր
խաւար եղաւ երեք օր. Մարդ 23
մարդի չէր տեսնում, և երեք օր
մէկն իր տեղիցը վեր չ'կացաւ,
բայց բոլոր Իսրայէլի որդիների
համար լոյս կար իրանց բնակու-
թիւններումը։ Եւ փարաւօնը 24
կանչեց Մովսէսին և ասեց. Գնա-
ցէք և պաշտեցէք Եհովային. մի-
այն ձեր հօտերն ու արջառները
մնան. ձեր ընտանիքներն էլ թող
ձեզ հետ գնան։ Եւ Մովսէսն ա- 25
սեց. Դու պէտք է մեր ձեռքը
զոհեր ու ողջակէզներ էլ տաս,
որ մեր Եհովայ Աստուծոյն մա-
տուցանենք։ Եւ մեր հօտերն էլ 26
գնան մեր հետը. նորանցից մէկ
կճղակ էլ պիտի չ'մնայ. որովհե-
տև նորանցից ենք առնելու մեր

Եհովայ Աստուծոյն պաշտելու
համար, և մենք չ'գիտենք թէ
ինչով պիտի պաշտենք Եհովային
27 մինչև որ այնտեղ գնանք։ Եւ
Եհովան կարծրացրեց փարաւօնի
սիրտը, որ չ'ուզեց արձակել նո-
28 րանց։ Եւ փարաւօնն ասեց նո-
րան. Գնա իմ մօտիցը. զգուշա-
ցիր քո անձի համար, որ էլ իմ
երեսը չ'տեսնես. որովհետև այն
օրը որ իմ երեսը տեսնես, պիտի
29 մեռնես։ Եւ Մովսէսն ասեց.
Լաւ ես ասում, էլ քո երեսը
չեմ տեսնիլ։

ԳԼ. ԺԱ

1 Եւ Եհովան ասեց Մովսէսին.
փարաւօնի վերայ և Եգիպտոսի
վերայ մէկ հարուած էլ եմ բե-
րելու. նորանից յետոյ ձեզ այս
տեղից կ'արձակէ. և հէնց որ ար-
ձակէ, ձեզ այս տեղից՝ շուտով
2 դուրս պիտի անէ։ Հիմա խօսիր
ժողովրդի ականջներին, և ամեն
մարդ իր դրացուցը և ամեն կնիկ
իր դրացուցը արծաթեղէն զար-
դեր և ոսկեղէն զարդեր խնդրեն։
3 Եւ Եհովան շնորհք տուաւ ժո-
ղովրդին Եգիպտացիների առա-
ջին. և Մովսէսն էլ Եգիպտոսի
երկրի մէջ փարաւօնի ծառաների
առաջին և ժողովրդի առաջին
շատ մեծ մարդ էր։
4 Եւ Մովսէսն ասեց. Եհովան
այսպէս է ասում, Կէս գիշերին
ես դուրս կ'գամ Եգիպտոսի մէջ։
5 Եւ ամեն առաջինեկը կ'մեռնի
Եգիպտոսի երկրումը՝ իր աթոռի
վերայ նստող փարաւօնի առա-
ջինեկից մինչև երկանքի ետևին
եղող աղախնի առաջինեկը, և
բոլոր անասունների առաջինեկը։
6 Եւ Եգիպտոսի բոլոր երկրումը
մեծ աղաղակ կ'լինի որ նորա նը-
7 մանը եղած չէ, ոչ էլ կ'լինի. Եւ
Իսրայէլի որդիների ոչ մէկի դէմ
մարդից մինչև անասուն մի շուն
էլ չի շարժիլ իր լեզուն. որ գի-
տենաք թէ Եհովան Եգիպտացի-
ների և Իսրայէլի մէջտեղը տար-
8 բերութիւն է անում։ Եւ քո
այս բոլոր ծառաները ինձ մօտ
իջնեն, և ինձ խոնարհութիւն ա-
նեն ասելով. Դուրս գնա դու և
բոլոր քեզ հետևող ժողովուր-
դը. և նորանից յետոյ դուրս
կ'գնամ։ Եւ Մովսէսը դուրս ե-
կաւ փարաւօնի մօտիցը բարկու-
թեամբ։
Եւ Եհովան ասեց Մովսէսին. 9
փարաւօնը ձեզ չի լսելու, որպէս
զի իմ հրաշքները շատացնեմ Ե-
գիպտոսի երկրումը։ Եւ Մովսէսն 10
ու Ահարօնն արին այս ամեն հր-
աշքները փարաւօնի առաջին, և
Եհովան կարծրացրեց փարաւօնի
սիրտը, և նա չ'արձակեց Իսրա-
յէլի որդիքը իր երկրիցը։

ԳԼ. ԺԲ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի և 1
Ահարօնի հետ Եգիպտոսի երկ-
րումը ասելով. Այս ամիսը ձեզ 2
համար ամիսների սկիզբ լինի,
ձեզ համար տարուայ ամիսների
առաջինը լինի նա։ Իսրայէլի բո- 3
լոր ժողովքի հետ խօսեցէք ասե-
լով. Այս ամսի տասնին ամեն
մէկն իր համար մի գառն առնէ՝
իրանց հայրերի տան համեմատ՝
տունը մէկ գառն։ Եւ եթէ մէկ 4
տունը մէկ գառնի համար քիչ
լինի, թող նա իր տան մօտ ե-
ղած դրացու հետ՝ հոգիների թի-
ւին համեմատ առնէ. ամեն մէկն
իր կերածի չափ հաշիւ անէք
գառնի վերայ։ Ձեր գառը անա- 5
րատ՝ արու մէկ տարեկան լինի.
ոչխարներիցը կամ այծերիցն առ-
նէք։ Եւ պահէք ձեզ համար 6
մինչև ամսի տասնևչորսերորդ օ-
րը, և Իսրայէլի ժողովքի բոլոր
բազմութիւնը մորթեն նորան ի-
րիկուայ դէմ։ Եւ արիւնիցն առ- 7
նեն և տների երկու կողմի դրան-
գիներին և վերի սեմին քսեն, ուր
որ նորան պիտի ուտեն։ Եւ միսն 8
այն գիշերն ուտեն. նորան կրակի
վերայ խորոված՝ և բաղարջ ու-
տեն լեզի խոտերով. Նորանից 9
հում կամ ջրի մէջ եփած չ'ու-
տէք, այլ կրակի վերայ խորոված,
նորա գլուխը ոտքերովը և փորո-
տիքովը մէկտեղ ուտէք։ Եւ նո- 10

բանից մի բան չ'թողէք մինչև ա-
ռաւօտ. և նորանից մինչև առա-
ւօտ մնացածը՝ կրակով այրեցէք։
41 Եւ այսպէս ուտէք նորան. ձեր
գօտիները ձեր մէջքին՝ և ձեր կո-
շիկները ձեր ոտքերին՝ և ձեր ցու-
պերը ձեր ձեռքին լինելով, և
նորան շտապելով ուտէք. նա
42 *զատիկ է Եհովային։ Եւ այն գի-
շերը Եգիպտոսի երկրովը պիտի
անցնեմ, և զարկեմ Եգիպտոսի
երկրումը ամեն առաջինեկը մար-
դից մինչև անասուն. և Եգիպ-
տոսի բոլոր †աստուածների վե-
րայ դատաստան պիտի անեմ՝ ես
43 Եհովա։ Եւ արիւնը ձեզ հա-
մար նշան լինի ձեր եղած տների
վերայ, և երբոր արիւնը տեսնեմ,
ձեր վերայից պիտի անցնեմ. և
հարուածը ձեր վերայ պիտի չ'գայ
ձեզ կորցնելու համար, երբոր
44 Եգիպտոսի երկիրը զարկեմ։ Եւ
այն օրը ձեզ յիշատակի համար
լինի, և տօնեցէք նորան տօն Ե-
հովայի համար. ձեր սերունդնե-
րի մէջ յաւիտենական կանոնով
45 տօնեցէք նորան։ Եօթը օր բա-
զարջ կերէք. հէնց առաջին օրը
ձեր տներիցը դուրս գցէք խմորը,
որովհետև առաջի օրիցը մինչև
եօթներորդ օրը խմորեալ ուտող
46 անձը Իսրայէլիցը կորչի։ Եւ ա-
ռաջին օրը սուրբ ժողով լինի, և
եօթներորդ օրն էլ ձեզ համար
սուրբ ժողով լինի. այն օրերը բը-
նաւ մի գործ չ'գործուի, բացի
ամեն մէկի ուտելիքը. այն միայն
47 պատրաստէք։ Եւ բաղարջների
տօնը պահէք. որովհետև հէնց նոյն
օրուայ մէջ ձեր զօրքերը Եգիպ-
տոսի երկրիցը հանեցի. ուրեմն
ձեր սերունդների մէջ յաւիտե-
նական կանոնով այն օրը պահէք։
48 Առաջին ամսուայ տասնևչորսե-
րորդ օրուայ իրիկունից բաղարջ
պիտի ուտէք մինչև ամսուայ քը-
սանևմէկերորդ օրուայ իրիկունը։
49 Եօթը օր ձեր տներումը խմոր
չ'գտնուի. որովհետև խմորեալ
հաց ուտող անձը Իսրայէլի ժո-

*Փեսախ. անց կենալ։
†Իշխաններին.

ղովքիցը պիտի կորչի՝ թէ օտա-
րական և թէ երկրի բնակ։ Ոչ 20
մի խմորեալ բան պիտի չ'ուտէք.
ձեր բոլոր բնակութիւնների մէջ
բաղարջ ուտէք։
Եւ Մովսէսը կանչեց Իսրայէլի 21
բոլոր ծերերին և ասեց նորանց.
Ընտրեցէք, և ձեզ համար ձեր
ընտանեաց համեմատ գառն ա-
ռէք, և զատիկը մորթեցէք։ Եւ 22
զոպայի փունջ առէք, և կոնքի
մէջ եղած արիւնովը թաթախե-
ցէք և կոնքի մէջ եղած արիւնի-
ցը քսեցէք դրան վերայի սեմին՝
և երկու դրանդիներին, և մինչև
առաւօտ ձեզանից մէկն իր տան
դռնիցը դուրս չ'գայ։ Եւ Եհովան 23
Եգիպտացիներին զարկելու հա-
մար պիտի անցնէ, և երբ դրան
վերայ սեմի և երկու դրանդի-
ների վերայ արիւն տեսնէ, այն
ժամանակ Եհովան այն դրան վե-
րայիցը կ'անցնէ, և չի թողիլ սա-
տակիչին, որ ձեր տները մտնէ
ՏԵՂ զարկելու համար։ Եւ այս 24
բանը քեզ և քո որդիների հա-
մար կանոն պահէք մինչև յա-
ւիտեան։ Եւ երբոր կ'լինի որ այն 25
երկիրը գաք՝ որ Եհովան ձեզ պի-
տի տայ իր ասածին պէս, այն
ժամանակ այս պաշտօնը պահէք։
Եւ երբոր կ'լինի որ ձեր որդիքը 26
ձեզ կ'ասեն. Ինչ է ձեր այս
պաշտօնը, Այն ժամանակ ասէք, 27
որ սա զատկի զոհն է Եհովայի
համար, որ Եգիպտոսի մէջ Իս-
րայէլի որդիների տների վերայից
անցաւ Եգիպտացիներին զարկե-
լիս, և մեր տները ազատեց։ Եւ
ժողովուրդը խոնարհուեց և եր-
կրրպագութիւն արաւ։ Եւ Իս- 28
րայէլի որդիքը գնացին, և արին
ինչպէս Եհովան Մովսէսին և Ա-
հարօնին պատուիրել էր. այնպէս
արին։ Եւ եղաւ որ կէս գիշերին 29
Եհովան Եգիպտոսի երկրումը ա-
մեն առաջինեկին զարկեց, իր ա-
թոռի վերայ նստող Փարաւօնի
առաջինեկիցը մինչև բանտումը
եղած գերիի առաջինեկը՝ և ա-
մեն անասունի առաջինեկը։ Եւ 30
Փարաւօնը գիշերը վեր կացաւ և
նորա բոլոր ծառաները՝ և բոլոր

Եգիպտացիները, և Եգիպտոսի
մէջ մեծ աղաղակ կար, որովհե-
տև տուն չ'կար որ նորա մէջ մե-
ռել չ'լինէր։
31 Եւ գիշերը կանչեց Մովսէսին
և Ահարօնին և ասեց. Վեր կա-
ցէք դուրս ելէք իմ ժողովրդի
միջիցը դուք էլ և Իսրայէլի որ-
դիքն էլ, և գնացէք պաշտեցէք
32 Եհովային ինչպէս որ ասեցիք։ Ձեր
հօտերն էլ և ձեր արջառներն
էլ առէք՝ ինչպէս ասեցիք, և
33 գնացէք և ինձ էլ օրհնեցէք։ Եւ
Եգիպտացիք բռնադատեցին ժո-
ղովրդին, որ շուտով այն երկրիցը
դուրս ուղարկեն նորանց, որով-
հետև ասեցին. Ամենքս էլ կ'մեռ-
34 նենք։ Եւ ժողովուրդն իրանց
զանգուածը դեռ չ'խմորած՝ ի-
րանց խմորի տաշտերը իրանց կը-
տաւներովը փաթաթած իրանց
35 ուսերի վերայ վեր առին։ Եւ Իս-
րայէլի որդիքը Մովսէսի խօսքին
պէս արին, և Եգիպտացիներիցն
արծաթեղէն զարդեր և ոսկեղէն
զարդեր և հանդերձներ ուզեցին։
36 Եւ Եհովան ժողովրդին շնորհք
տուաւ Եգիպտացիների առաջին
և Եգիպտացիք նորանց ուզածը
տուին, և նորանք կողոպտեցին
Եգիպտացիներին։
37 Եւ Իսրայէլի որդիքը Ռամսե-
սից դէպի Սոկքովթ չուեցին.
բացի ընտանիքներից վեց հարիւր
հազարի չափ հետևակ մարդիկ
38 էին։ Եւ նորանց հետ խառն բազ-
մութիւն էլ ելաւ. և ոչխարներն
ու արջառները շատ մեծ հօտ
39 էին։ Եւ Եգիպտոսիցն իրանց հա-
նած զանգուածիցն անխմոր շօ-
թեր եփեցին, որովհետև խմոր-
եալ չէր. նորա համար որ Եգիպ-
տոսիցը քշուեցան, և չէին կա-
րողանում՝ ուշանալ. և իրանց
համար պաշար էլ չէին շինել։
40 Եւ Եգիպտոսի մէջ Իսրայէլի
որդիների բնակուած ժամանակը
չորս հարիւր երեսուն տարի էր։
41 Եւ եղաւ որ չորս հարիւր երե-
սուն տարուայ վերջին՝ հէնց նոյն
օրը Եհովայի բոլոր զօրքերը Ե-
42 գիպտոսի երկրիցն ելան։ Սա Ե-
հովայի համար պահելու մի գի-

շեր է, որ նորանց Եգիպտոսի երկ-
րիցը հանեց. սա այն գիշերն է
Եհովայի համար Իսրայէլի բոլոր
որդիներիցն իրանց ազգերի մէջ
պահուելու համար։
Եւ Եհովան ասեց Մովսէսին և 43
Ահարօնին. Այս է զատկի կանո-
նը. ոչ մի օտարական նորանից
պիտի չ'ուտէ։ Եւ ամեն մարդի 44
ստակով ծախու առած ծառան՝
երբոր նորան թլփատել ես, այն
ժամանակ թող ուտէ նորանից։
Օտարականն ու վարձկանը նորա- 45
նից պիտի չ'ուտէ։ Մէկ տան մէջ 46
պիտի ուտուի. տնից դուրս չը
հանես այն մսիցը, և նորա մէկ
ոսկորը չ'կոտրէք։ Իսրայէլի բո- 47
լոր ժողովքը անէ այն։ Եւ երբոր 48
մի օտարական քեզ մօտ պան-
դըխտանալու լինի, և Եհովայի
զատիկն անելու լինի, նորա ամեն
արուն թող թլփատուի, և այն
ժամանակ մօտենայ կատարելու
համար և ինքը երկրի բնակի պէս
լինի. որովհետև ոչ մէկ անթըլ-
փատ նորանից պիտի չ'ուտէ։
Երկրացու և ձեր մէջ բնակուող 49
օտարականի համար մէկ օրէնք
լինի։ Եւ Իսրայէլի բոլոր որդիքն 50
արին ինչպէս որ Եհովան Մովսէ-
սին և Ահարօնին պատուիրել
էր, այնպէս արին։ Եւ եղաւ որ 51
հէնց այն օրը Եհովան Եգիպտո-
սի երկրիցը հանեց Իսրայէլի որ-
դիքը իրանց զօրքերովը։

ԳԼ. ԺԳ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 1
հետ ասելով. Սրբիր ինձ համար 2
ամեն առաջինեկը՝ Իսրայէլի որ-
դիների մէջ՝ ամեն արգանդ բա-
ցողը, թէ մարդ թէ անասուն.
այն իմն է։ Եւ Մովսէսն ասեց 3
ժողովրդին. Յիշեցէք այս օրը որ
Եգիպտոսիցը ծառայութեան տը-
նից դուրս եկաք. որովհետև Ե-
հովան ձեզ այս տեղից զօրաւոր
ձեռքով հանեց. և խմորեալ
չ'ուտուի։ Դուք այսօր էք դուրս 4
եկել, Ապիպ ամսումը։ Եւ կը 5
լինի որ երբ Եհովան քեզ տա-
նելու լինի Քանանացիների և Քե-

տացիների և Ամօրհացիների և
Խևացիների և Ցեբուսացիների
երկիրը՝ որ քեզ տալու համար
քո հայրերին երդում արաւ, այն
կաթ ու մեղր բղխող երկիրը,
այս ամսումը պիտի կատարես այս
6 պաշտօնը։ Եօթը օր բաղարջ պի-
տի ուտես, և եօթներորդ օրը
7 տօն լինի Եհովայի համար։ Այն
եօթը օրերումը բաղարջ պիտի
ուտուի, և քեզ մօտ խմորեալ
հաց պիտի չ՚տեսնուի. ոչ էլ քեզ
մօտ խմոր պիտի տեսնուի քո բո-
8 լոր սահմաններումը։ Եւ այն օ-
րը քո որդուն պիտի պատմես՝ ա-
սելով. Այս նորա համար է որ
Եհովան արաւ ինձ՝ ես Եգիպտո-
9 սիցը դուրս գալիս։ Եւ սա քեզ
համար նշան պիտի լինի ձեռքիդ
վերայ, և յիշատակ՝ աչքերիդ
մէջ տեղը, որ Եհովայի օրէնքը
քո բերանումը լինի, որովհետև
Եհովան քեզ զօրաւոր ձեռքով
10 հանեց Եգիպտոսիցը։ Եւ դու
այս կանոնը տարուց տարի իր
11 ժամանակին պիտի պահես։ Եւ
կ՚լինի որ՝ երբ Եհովան քեզ Քա-
նանացիների երկիրը տանէ, ինչ-
պէս որ քեզ և քո հայրերին եր-
դում արաւ, որ նորան քեզ տայ.
12 Եւ այն ամենը որ արգանդ կը
բանայ, Եհովային ներկայացրու.
և քո ունեցած անասնի ամեն
առաջինեկ արուները Եհովայինը
13 լինի։ Եւ էշի ամեն առաջինեկը
մի ոչխարով փրկես, և եթէ չը
փրկես, նորա վիզը կոտրիր. և
քո որդիների մէջ մարդի ամեն
14 առաջինեկը պիտի փրկես։ Եւ կը
լինի որ քո որդին էգուց քեզ կը
հարցնէ ասելով. Սա ի՞նչ է. Նո-
րան պիտի ասես թէ՝ Եհովան
մեզ Եգիպտոսիցը ծառայութեան
տունիցը զօրաւոր ձեռքով հա-
15 նեց. Եւ եղաւ՝ երբ Փարաւօնը
խստացաւ և մեզ արձակել չ՚ա-
զեց, Եհովան Եգիպտոսի երկ-
րումն ամեն առաջինեկը՝ մարդի
առաջինեկից մինչև անասունի ա-
ռաջինեկը մեռցրեց. Նորա հա-
մար ես ամեն արգանդ բացող
արուն զոհում եմ Եհովային, և
իմ որդիների ամեն առաջինեկը
փրկում եմ։ Եւ սա քո ձեռքի 16
վերայ նշան և աչքերիդ մէջ տե-
ղը ճակատանոց լինի, որովհետև
Եհովան մեզ Եգիպտոսիցը զօ-
րաւոր ձեռքով հանեց։

Եւ եղաւ՝ երբ Փարաւօնը ժո- 17
ղովրդին արձակեց, այն ժամա-
նակ Աստուած նորանց Փղշտացի-
ների երկրի ճանապարհովը չ՚տա-
րաւ, թէև նա մօտ էր, որովհե-
տև Աստուած ասեց. Մի գուցէ
ժողովուրդը պատերազմը տես-
նելիս զղջայ և ետ դառնայ Ե-
գիպտոս։ Այլ Աստուած ժողո- 18
վրդին Կարմիր ծովի անապատի
ճանապարհովը պտոյտ անել տը-
ւաւ և Իսրայէլի որդիքը զօտե-
պնդուած ելան Եգիպտոսի երկ-
րիցը։ Եւ Մովսէսը՝ Յովսէփի ոս- 19
կորներն իր հետ առաւ. որովհե-
տև Իսրայէլի որդկանցը հաստատ
երդում էր անել տուել ասե-
լով. Անպատճառ Աստուած ձեզ
այցելութիւն է անելու, և իմ
ոսկորներն այս տեղիցը ձեզ հետ
հանեցեք։

Եւ Սոկքովթիցը չուեցին և Ո- 20
թոմի մէջ անապատի ծայրումը
իջևան արին։ Եւ Եհովան գնում 21
էր նորանց առաջին ցերեկը ամ-
պի սիւնով նորանց ճանապարհ
ցոյց տալու համար, և գիշերը
կրակի սիւնով, որ նորանց լոյս
տայ, որ ցերեկ և գիշեր գնան։
Ցերեկը ամպի սիւնը՝ և գիշերը 22
կրակի սիւնը՝ ժողովրդի առջևից
չ՚պակասեցրեց։

ԳԼ. ԺԴ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 1
հետ ասելով. Խօսիր Իսրայէլի 2
որդիների հետ որ ետ դառնան
և Փիաիրօթի առաջին Մագդոզի
և ծովի մէջտեղը բանակ տան
Բէեղսեփոնի առաջին. Նորա դի-
մացը ծովի մօտ բանակ տուէք։
Եւ Փարաւօնը Իսրայէլի որդի- 3
ների համար պիտի ասէ. Թէ
Երկրի մէջ մոլորուել են, անա-
պատը նորանց պատել է։ Եւ 4
Փարաւօնի սիրտը կ՚կարծրացնեմ,
և նորանց ետևիցը կ՚ընկնէ. և ես

Փարաւօնի վերայ և նորա բոլոր
զօրքերի վերայ կ՚փառաւորուիմ,
և Եգիպտացիք կ՚գիտենան թէ
ես եմ Եհովան։ Եւ նորանք այն-
պէս արին։
5 Եւ Եգիպտոսի թագաւորին
պատմուեցաւ, թէ ժողովուրդը
փախաւ. և Փարաւօնի և նորա
ծառաների սիրտը ժողովրդի դէմ
փոխուեցաւ, և ասեցին. Սա ի՞նչ
արինք մենք, որ Իսրայէլին մեզ
ծառայութիւն անելուց թող
6 տուինք։ Եւ իր կառքը պատրաս-
տեց և իր ժողովուրդն իր հետը
7 առաւ. Եւ վեր առաւ վեց հա-
րիւր ընտիր կառքեր և Եգիպտո-
սի բոլոր կառքերը՝ և նորանց ա-
8 մենի վերայ ոստիկաններ։ Եւ Ե-
հովան Եգիպտոսի Փարաւօն թա-
գաւորի սիրտը կարծրացրեց, և
նա Իսրայէլի որդիների ետևիցն
ընկաւ, և Իսրայէլի որդիքը բարձր
9 ձեռքով դուրս եկան։ Եւ Եգիպ-
տացիք նորանց ետևիցն ընկան.
և հասան նորանց ծովի մօտ բա-
նակ տուած Փարաւօնի ամեն ձի-
երը, կառքերը՝ և նորա ձիաւոր-
ները և զօրքերը՝ Փիաիրօթի մօտ
Բէեղսեփոնի առաջին։
10 Եւ Փարաւօնը մօտեցաւ, և Իս-
րայէլի որդիքն իրանց աչքերը
բարձրացրին, և ահա Եգիպտա-
ցիք գալիս էին իրանց ետևիցը,
և շատ վախեցին. և Իսրայէլի որ-
11 դիքն աղաղակեցին Եհովային. Եւ
ասեցին Մովսէսին. Մի՞թէ Ե-
գիպտոսումը գերեզմաններ չ՚կա-
յին, որ մեզ բերիր անապատի
մէջ մեռնելու. սա ի՞նչ է որ
մեզ արիր, որ մեզ Եգիպտոսիցը
12 հանեցիր։ Սա այն խօսքը չէ՞ որ
քեզ ասում էինք Եգիպտոսու-
մը. Թէ թող տուր մեզ՝ որ Ե-
գիպտացիներին ծառայութիւն
անենք. որովհետև աւելի լաւ է
մեզ համար Եգիպտացիներին ծա-
ռայութիւն անել, քան թէ ա-
13 նապատումը մեռնել։ Եւ Մով-
սէսն ասեց ժողովրդին. Մի վա-
խիք, կանգնեցէք, և տեսէք Ե-
հովայի փրկութիւնը՝ որ այսօր
կ՚անէ ձեզ համար. որովհետև
ձեր այսօրուայ տեսած Եգիպտա-
ցիներին այլ ևս պիտի չ՚տեսնէք
յաւիտեան։ Եհովան ձեզ համար 14
պիտի պատերազմէ, և դուք լուռ
կացէք։
Եւ Եհովան ասեց Մովսէսին. 15
Ինչո՞ւ ես ինձ աղաղակում. ասիր
Իսրայէլի որդիներին, որ չուեն.
Եւ դու գաւազանդ բարձրացրու, 16
և ձեռքդ մեկնիր ծովի վերայ և
ճեղքիր նորան. և Իսրայէլի որ-
դիքը ծովի միջովը ցամաքով գը-
նան։ Եւ ես ահա Եգիպտացինե- 17
րի սիրտը պիտի կարծրացնեմ, և
նորանց ետևիցը պիտի գնան. և
ես Փարաւօնի և նորա բոլոր զօր-
քերի վերայ՝ նորա կառքերի և
նորա ձիաւորների վերայ պիտի
փառաւորուիմ։ Եւ Եգիպտացիք 18
կ՚իմանան, թէ ես եմ Եհովան,
երբոր ես Փարաւօնի և նորա կառ-
քերի և նորա ձիաւորների վերայ
փառաւորուիմ։ Եւ Աստուծոյ 19
հրեշտակը՝ որ Իսրայէլի բանակի
առաջին գնում էր, ելաւ և նո-
րանց ետևիցը գնաց. և ամպի
սիւնը ելաւ նորանց առջևիցը և
կանգնեց նորանց ետքին, Եւ Ե- 20
գիպտացիների բանակի և Իսրա-
յէլի բանակի մէջտեղը եկաւ, ու
ամպ ու խաւար եղաւ, բայց գի-
շերը լոյս էր տալիս, և բոլոր գի-
շերը միմեանց չ՚մօտեցան։
Եւ Մովսէսը մեկնեց իր ձեռ- 21
քը ծովի վերան. և Եհովան սաս-
տիկ արևելեան հովով քշեց ծո-
վը բոլոր գիշերը և ծովը ցամա-
քացրեց, և ջրերը ճեղքուեցան։
Եւ Իսրայէլի որդիքը ծովի միջո- 22
վը ցամաքով գնացին. և ջրերը
նորանց աջ կողմից և ձախ կող-
մից պարիսպ եղան։
Եւ Եգիպտացիք նորանց ետե- 23
ւիցն ընկան. և Փարաւօնի բոլոր
ձիերը՝ կառքերը և ձիաւորները
նորանց ետևիցը ծովի մէջտեղը
գնացին։ Եւ եղաւ առաւօտեան 24
պահին, որ Եհովան Եգիպտացի-
ների բանակին նայեց կրակի ու
ամպի սիւնիցը, և Եգիպտացինե-
րի բանակը խռովութեան մէջ
գցեց. Եւ նորանց կառքերի ա- 25
նիւները հանեց, որ դժուարու-
թեամբ էին առաջ գնում. այն-

պէս որ Եգիպտացիք ասում էին. Փախչենք Իսրայէլի երեսից, որովհետև Եհովան նորանց համար պատերազմում է Եգիպտացիների հետ:

26 Եւ Եհովան ասեց Մովսէսին. Ձեռդ մեկնիր ծովի վերայ, որ ջրերը ետ դառնան Եգիպտացիների վերայ՝ նորանց կառքերի և
27 նորանց ձիաւորների վերայ: Եւ Մովսէսը մեկնեց ձեռքը ծովի վերայ, և առաւօտեան դէմ ծովը իր ընթացքին դարձաւ. և Եգիպտացիք նորա դիմացից փախան. և Եհովան թօթափեց Եգիպտացիներին ծովի մէջը:
28 Եւ ջրերը դարձան և ծածկեցին փարաւոնի կառքերը և ձիաւորները և բոլոր զօրքերը, որոնք նորանց ետևից ծովի մէջ մտան. և նորանցից
29 մէկն էլ չմնաց: Բայց Իսրայէլի որդիքը ծովի միջովը ցամաքով գնում էին, և ջրերը նորանց աջ կողմից և ձախ կողմից պարիսպ
30 էին նորանց համար: Եւ Եհովան այն օրը Եգիպտացիների ձեռքից ազատեց Իսրայէլին. և Իսրայէլը մեռած տեսաւ Եգիպտացիներին
31 ծովի եղերքում: Եւ Իսրայէլը տեսաւ այն մեծ ձեռքը, որ Եհովան ցոյց տուաւ Եգիպտացիների վերայ. և ժողովուրդը վախեց Եհովայից, և հաւատաց Եհովային և նորա ծառայ Մովսէսին:

ԳԼ. ԺԵ

1 Այն ժամանակ երգեց Մովսէսը և Իսրայէլի որդիքը այս երգը Եհովայի համար, և խօսեցին ասելով.
Երգում եմ Եհովային, որովհետև փառքով փառաւորեալ է.
Ձին և ձիաւորը ծովը դցեց.
2 Եհովան իմ զօրութիւնն ու իմ գովութիւնն է,
Եւ իմ փրկութիւնը եղաւ.
Նա իմ Աստուածն է. և ես կը փառաւորեմ նորան.
Նա իմ հօր Աստուածն է, և ես կ'բարձրացնեմ նորան:
3 Եհովան հզօր պատերազմող է.
Անունը ԵՀՈՎԱՅ է:
4 Փարաւոնի կառքերն ու նորա զօրքերը ծովը գցեց.
Եւ նորա ընտիր կառավարիչները կարմիր ծովի մէջ ընկղմուեցան:
5 Անդունդները ծածկեցին նորանց.
Նորանք իջան խորերը ինչպէս քար:
6 Քո աջ ձեռքն, ով Եհովայ, փառաւորուած է զօրութեամբ.
Քո աջ ձեռքը, ով Եհովայ, խորտակեց թշնամուն:
7 Եւ քո փառքի մեծութեամբդ խորտակում ես քեզ դէմ վեր կացողներին.
Ուղարկում ես քո բարկութիւնը, և ուտում է նորանց յարդի պէս:
8 Եւ քո շնչի փչելովը ջրերը ժողովուեցան.
Հեղեղները կանգնեցին դէզի պէս.
Անդունդները պաղեցին ծովի միջուտքում:
9 Թշնամին ասեց. Հալածեմ՝ հասնեմ,
Աւար բաժանեմ.
Անձս նորանցից կշտանայ.
Գաշեմ սուրս.
Ձեռքս նորանց յափշտակէ:
10 Փչեցիր քո քամիովը. ծովը ծածկեց նորանց.
Կապարի պէս ընկղմուեցան զօրաւոր ջրերի մէջ:
11 Ո՞վ է աստուածների մէջ քեզ պէս, ով Եհովայ.
Ո՞վ է քեզ պէս՝ սրբութեան մէջ փառաւորուած օրհնութիւններով աքանչելի,
Հրաշքներ անող:
12 Մեկնեցիր քո աջ ձեռքը.
Երկիրը կլանեց նորանց:
13 Քո ողորմութիւնովը առաջնորդեցիր այս ժողովրդին, որին դու փրկեցիր.
Քո զօրութիւնովը տարիր նորանց քո սուրբ բնակարանը:
14 Ժողովուրդները լսում են և կը սարսափեն.
Ցաւ է բռնելու փղշտացի բնակիչներին:
15 Այն ժամանակ Եդոմի իշխանները կ'տագնապեն.
Մովաբի զօրաւորներին դող կը բռնէ.
Կ'հալուին Քանանի բոլոր բնակիչները:
16 Նորանց վերայ վախ ու դող կ'բնկնէ,
Քո բազուկի մեծութիւնից կը սառչեն քարի պէս.
Մինչև որ անցնէ ժողովուրդդ, ով Եհովայ,
Մինչև որ անցնէ այս ժողովուրդը, որ դու առացար:
17 Դու կ'բերես նորանց և կ'տնկես նորանց քո ժառանգութեան սարի վերայ,
Այն տեղը, որ քո բնակութեան համար շինեցիր, ով Եհովայ.
Այն սրբարանը, Տէր, որ քո ձեռքերը շինեցին:
18 Եհովան պիտի թագաւորէ յաւիտեանս յաւիտենից:
19 Որովհետև փարաւոնի ձիերը նորա կառքերուն ու ձիաւորներովը ծովը մտան, և Եհովան ծովի ջրերը նորանց վերայ ածեց. բայց Իսրայէլի որդիքը ցամաքով գնացին ծովի միջովը:
20 Եւ Ահարոնի քոյր՝ Մարիամ մարգարէուհին թմբուկը ձեռքն առաւ. և բոլոր կանայքը թմբուկներով և պարերով նորա ետևից գնացին:
21 Եւ Մարիամ պատասխանեց նորանց.
Երգեցէք Եհովային, որովհետև փառքով փառաւորուած է.
Ձին ու ձիաւորը ծովը գցեց:
22 Եւ Մովսէսը Իսրայէլին կարմիր ծովիցը ճանապարհ հանեց, և նորանք Սուրի անապատը եկան, և երեք օրուայ ճանապարհ գնացին անապատումը, և ջուր չգտան:
23 Եւ եկան Մեռայ, և չէին կարողանում խմել Մեռայի ջրերիցը, որովհետև դառն էին, վասն որոյ նորա անունը *Մեռայ կոչուեցաւ:
24 Եւ ժողովուրդը տրանջաց Մովսէսի դէմ ասելով.
25 Ինչ խմենք: Եւ նա Եհովային աղաղակեց. և Եհովան նորան մի փայտ ցոյց տուաւ, և նա դցեց ջրերի մէջ, և ջրերը անուշացան:

*Դառնութիւն:

Այն տեղ նորանց կանոն և դատաստան դրաւ, և այնտեղ փորձեց նորանց,
26 Եւ ասեց. եթէ ի բաւ լսես քո Եհովայ Աստուծոյ ձայնին, և ինչ որ նորա աչքի առաջին ուղիղ է՝ անես, և նորա պատուիրանքներին ականջ դնես, և նորա բոլոր կանոնները պահես, այն ախտերից ոչ մէկը քեզ վերայ չեմ բերիլ, որոնք Եգիպտացիների վերայ բերի. որովհետև ես եմ Եհովան քո բժիշկը:
27 Եւ եկան Եղիմ, և այնտեղ տասներկու ջրի աղբիւրներ և եօթանասուն արմաւենիներ կային. և այն տեղ ջրերի մօտ բանակ տուին:

ԳԼ. ԺԶ

1 Եւ չուեցին Եղիմիցը, և Իսրայէլի որդիների բոլոր ժողովքը եկան Սին անապատը՝ որ Եղիմի ու Սինայի մէջտեղն է, նորանց Եգիպտոսի երկրից դուրս գալու երկրորդ ամսուայ տասնևհինգերորդ օրը:
2 Եւ Իսրայէլի որդիների բոլոր ժողովքը անապատումը Մովսէսի և Ահարոնի դէմ տրրտունջ արին.
3 Եւ Իսրայէլի որդիքն ասեցին նորանց. Երանի թէ Եհովայի ձեռքովը մեռած լինէինք Եգիպտոսի երկրումը, երբոր մսի կամաններն մօտ նստած էինք և կուշտ հաց էինք ուտում, որովհետև մեզ այս անապատը հանեցիք, որ բոլոր այս ժողովքը սովածութիւնից մեռցնէք:
4 Եւ Եհովան ասեց Մովսէսին. Ահա ես ձեզ երկնքիցը հաց պիտի տեղամ, և ժողովուրդը վեր կենայ՝ և օրուայ պէտք եղածը նոյն օրը ժողովէ, որ փորձեմ նորանց թէ իմ օրէնքի համեմատ պիտի գնան՝ թէ ոչ:
5 Եւ լինի որ վեցերորդ օրը, երբոր իրանց բերածը պատրաստեն, նա նորանց ամեն օրուայ ժողովածների կրկինը լինի:
6 Եւ Մովսէսն ու Ահարոնն ասեցին Իսրայէլի բոլոր որդիներին. Այս իրիկուն կ'իմանաք, որ ձեզ Եգիպտոսի երկրիցը հանողը

7 ՅՀովան է։ Եւ առաւօտը կ'տեսնէք ՅՀովայի փառքը, որովհետև
ՅՀովայի դէմ ձեր արած տրրտունջը ինքը լսեց. և մենք ո՞վ
ենք՝ որ մեզ դէմ տրտնջուած էք։
8 Եւ Մովսէսն ասեց. ՅՀովան ձեզ
իրիկունը ուտելու միս և առաւօտը կշտանալու չափ հաց տալիս՝ ՅՀովան լսած է իր դէմ ձեր
արած տրտունջը. և մենք ո՞վ
ենք. ձեր տրտունջը մեզ դէմ
9 չէ այլ ՅՀովայի դէմ։ Եւ Մովսէսն ասեց Ահարոնին. Իսրայէլի
որդիների բոլոր ժողովքին ասիր,
ՅՀովայի առաջին մտեցէք. ո-
րովհետև ձեր տրտունջը լսեց։
10 Եւ եղաւ որ Ահարոնը Իսրա-
յէլի որդիների բոլոր ժողովքի
հետ խօսելիս, դէպի անապատը
նայեցին, և ահա ՅՀովայի փառ-
11 քը ամպի մէջ երեւաց։ Եւ ՅՀո-
վան խօսեց Մովսէսի հետ ասե-
12 լով. Իսրայէլի որդիների տրտունջը լսեցի. խօսիր նոցանց հետ ասելով. Իրիկուայ դէմ միս պիտի ուտէք, և առաւօտանց հացով պիտի կշտանաք. և կ'իմանաք թէ ես եմ ՅՀովան՝ ձեր
Աստուածը։
13 Եւ եղաւ իրիկունը, որ լորա-
մարդիներ եկան և բանակը ծածկեցին և առաւօտանց բանակի
14 շուրջը ցօղ իջաւ։ Եւ երբոր ի-
ջած ցօղը վերացաւ, ահա անա-
պատի երեսի վերայ մանր թե-
փաձև մի բան կար՝ եղեամի պէս
15 մանր գետնի վերայ։ Եւ Իսրայէ-
լի որդիքը տեսան, և իրար ասե-
ցին. *Ի՞նչ է սա. որովհետև չ'գի-
տէին թէ ինչ էր. և Մովսէսն
ասեց նոցանց. Սա այն հացն է,
16 որ ՅՀովան տուաւ ձեզ ուտե-
լու։ ՅՀովայի պատուիրած բանը
այս է. ժողովեցէք նոցանից ամեն
մէկն իր կերածի չափ, մարդա-
գլուխ մէկ օմէր՝ ամեն մէկն իր
վրանի մէջ եղողների համար՝ ձեր
17 հոգիների թիւին նայելով։ Եւ
Իսրայէլի որդիքն այնպէս արին,
և որը շատ, և որը քիչ ժողո-
18 վեց։ Եւ օմէրով չափուած էին,

*Եբր. Մա՞ն հաւ։

շատ ունեցողինը չ'ուելացաւ, և
քիչ ունեցողինը չ'պակասեց. ա-
մեն մէկն իր կերածի չափ ժողո-
վեց։ Եւ Մովսէսն ասեց նոցանց. 19
Ոչ մէկը նոցանից մինչև առաւօ-
տը չ'պահէ։ Բայց չ'լսեցին Մով- 20
սէսին, այլ ամենք թողեցին նո-
ցանից մինչև առաւօտ, և որդնա-
ցաւ և հոտեց. և Մովսէսը բար-
կացաւ նոցանց վերայ։ Եւ ամեն 21
առաւօտ ժողովում էին նոցանից
ամեն մէկն իր կերածի չափ. ու
արեւը տաքանալիս հալւում էր։
Եւ եղաւ որ, վեցերորդ օրը 22
կրկնապատիկ ուտելիք՝ այսինքն
ամեն մէկի համար երկու օմէր
ժողովեցին, և ժողովքի բոլոր իշ-
խանները եկան և պատմեցին Մով-
սէսին։ Եւ նա ասեց նոցանց. Այս 23
է ՅՀովայի ասածը, էգուց հան-
գըստութեան սուրբ շաբաթն է
ՅՀովայի համար, ինչ որ եփելու
էք՝ եփեցէք, և ինչ որ եռացնե-
լու էք՝ եռացրէք, և ինչ որ կ'ա-
ւելանայ՝ ձեզ համար առաւօտ-
ուան պահուելու թողեցէք։ Եւ 24
նոքան առաւօտուան թողեցին
Մովսէսի հրամայածի պէս, և չը
հոտեց, ոչ էլ մէջը որդ եղաւ։
Եւ Մովսէսն ասեց. Այսօր կե- 25
րէք, որովհետև այսօր շաբաթ է
ՅՀովայի համար. այսօր դաշտի
մէջ նոցանից չէք գտնիլ։ Վեց 26
օր պիտի ժողովէք նոցան. բայց
եօթներորդ օրը՝ որ շաբաթ է,
պիտի չ'գտնուի։ Եւ եղաւ որ 27
եօթներորդ օրը ժողովողները ո-
մանք ժողովելու գնացին, բայց
չ'գտան։ Եւ ՅՀովան ասեց Մով- 28
սէսին. Մինչև ե՞րբ չէք ուզում
պահել իմ պատուիրանքներն ու
օրէնքները։ Տեսէք որ ՅՀովան 29
տուաւ ձեզ շաբաթը, նոքա հա-
մար վեցերորդ օրը ինքը ձեզ եր-
կու օրուայ հաց է տալիս. ամեն
մէկն իր տեղը թող նստէ. ոչ
մէկն իր տեղիցը գնայ չ'գնայ
եօթներորդ օրը։ Եւ ժողովուրդը 30
հանգստացաւ եօթներորդ օրը։
Եւ Իսրայէլի տունը նոքա անունը 31
Ման դրին. և նա դինձի սերմի
պէս սպիտակ, և համը մեղրով
չիաուած գաթայի պէս էր։

32 Եւ Մովսէսն ասեց. Այս է ՅՀովայի հրամայած բանը. Նոցա-
նից մի օմէր լցրէք, որ ձեր ա-
զգականների համար պահուի, որ
տեսնեն այն հացը՝ որ ձեզ ան-
ապատում՝ ձեզ եգիպ-
33 տսի երկրիցը հանելիս։ Եւ Մով-
սէսն ասեց Ահարոնին. Մի սա-
փոր առ, և նոքա մէջը մի օմէր
լիքը մանանայ դիր. և ՅՀովայի
առաջին դիր որ պահուի ձեր ա-
34 զգականների համար, ինչպէս որ
ՅՀովան Մովսէսին պատուիրեց,
այնպէս էլ Ահարոնը վկայու-
թեան առաջին դրաւ նոքան որ
35 պահուի։ Եւ Իսրայէլի որդիքը
քառասուն տարի կերան մանա-
նան, մինչև որ չէն երկիրն եկան՝
մանանան կերան՝ մինչև որ Քա-
36 նանի երկրի սահմանն եկան։ Եւ օ-
մէրը տասներորդ մասն է։

ԳԼ. ԺԷ

4 Եւ Իսրայէլի որդիների բոլոր
ժողովքը չուեցին ՅՀովայի խոս-
քին պէս իրանց գնացքի համե-
մատ Սին անապատիցը, և Ռա-
փիդիմում բանակ տուին. և ժո-
ղովրդի համար խմելու ջուր չը
2 կար։ Եւ ժողովուրդը Մովսէսի
հետ վիճեց և ասեց. Մեզ ջուր
տուէք, որ խմենք. և Մովսէսն
ասեց նոցանց. Ի՞նչ էք ինձ հետ
վիճում. ինչո՞ւ էք փորձում Ե-
3 հովային։ Եւ ժողովուրդն այն
տեղ ջրի համար ծարաւեց, և
ժողովուրդը Մովսէսի դէմ տրր-
տնջեց և ասեց. Ինչո՞ւ համար
մեզ եգիպտոսից հանեցիր, որ
մեզ ու մեր որդիներին և մեր
հօտերին ծարաւ մեռցնես։
4 Եւ Մովսէսը ՅՀովային աղա-
ղակեց՝ ասելով. Ի՞նչ անեմ այս
ժողովրդին. քիչ է մնացել որ
5 ինձ քարկոծեն։ Եւ ՅՀովան ա-
սեց Մովսէսին. ժողովրդի առաջն
անցիր, և Իսրայէլի ծերերիցը քեզ
հետ առ, և քո գաւազանը՝ ո-
րով գետը զարկիր, ձեռքդ առ
6 և գնա։ Ահա Քորէբում՝ այն
ժայռի վերայ՝ այնտեղ քո առա-
ջին կ'կանգնեմ, և դու ժայռին

զարկ և նոքանից ջուր դուրս
կ'գայ, և թող ժողովուրդը խմէ։
Եւ Մովսէսն այնպէս արաւ Իս-
րայէլի ծերերի առաջին, և այն 7
տեղի անունը *Մասա և Մերի-
բա դրաւ, Իսրայէլի որդիների
այնտեղ վիճելու և ՅՀովային փոր-
ձելու համար, որ ասեցին. Արդ-
եօք ՅՀովան մեզ մէջ է՝ թէ ոչ։
Եւ Ամաղէկն եկաւ և Ռափի- 8
դիմում Իսրայէլի հետ պատե-
րազմեց։ Եւ Մովսէսն ասեց Յե- 9
սուին. Մեզ համար մարդիկ ընտ-
րիր և դուրս գնա Ամաղէկի հետ
պատերազմելու. էգուց ես բլրի
գլխին կ'կանգնեմ Աստուծոյ գա-
ւազանը ձեռքիս։ Եւ Յեսուն 10
Մովսէսի ասածին պէս արաւ և
Ամաղէկի հետ պատերազմեց. և
Մովսէսը, Ահարոնը և Ովրը բլուր-
ի գլուխն ելան։ Եւ լինում էր 11
որ՝ երբոր Մովսէսն իր ձեռքերը
վեր էր բարձրացնում, Իսրայէլն
էր յաղթում. և հէնց որ իր ձեռ-
քերը իջեցնում էր, Ամաղէկն էր
յաղթում։ Եւ Մովսէսի ձեռ- 12
քերը ծանրանալիս մի քար առին
և նորա տակը դրին, և ինքը նորա
վերայ նստեց. և Ահարոնը և Ովրը
մէկը այս կողմից և միւսն այն
կողմից նորա ձեռքերը վեր բռնե-
ցին, և մինչև արեգակի մար
մտնելը նորա ձեռքերը հաստա-
տուն մնացին։ Եւ Յեսուն զար- 13
կեց սուրի բերանով Ամաղէկին
և նորա ժողովրդին։ Եւ ՅՀովան 14
ասեց Մովսէսին. Սա գրիր գրքու-
մի յիշատակի համար, և Յեսուի
ականջը գցիր՝ որ Ամաղէկի յի-
շատակը երկնքի տակից բոլորո-
վին պիտի ջնջեմ։ Եւ Մովսէսը 15
սեղան շինեց և նորա անունը †Ե-
հովանիսի դրաւ. Եւ ասեց. Ո- 16
րովհետև ‡ՅՀովան՝ ձեռքը աթո-
ռի վերայ է, ՅՀովան պատերազմ
ունի Ամաղէկի դէմ ազգից ազգ։

*Փորձութիւն և վէճ։
†ՅՀովան իմ դրօշակն է։
‡Կամ՝ որովհետև ձեռքը ՅՀո-
վայի աթոռի դէմ է, ՅՀովան
ունի։

ԳԼ. ԺԸ

1 Եւ Մովսէսի աներ՝ Մադիամի
քուրմ Յոթորը լսեց այն ամենը
որ Աստուած արաւ Մովսէսին և
իր Իսրայէլ ժողովրդին, և թէ
Եհովան Եգիպտոսիցը հանեց Իս-
2 րայէլին։ Եւ Մովսէսի աներ Յո-
թորը առաւ Մովսէսի կնիկ Սեպ-
փորային, նորան ետ ուղարկե-
3 լուց յետոյ. Եւ նորա երկու որ-
դիքը՝ որոնց մէկի անունը Գեր-
սամ էր, որովհետև ասել էր,
Պանդուխտ եղայ օտար երկրում.
4 Եւ միւսի անունը *Եղիազար էր,
որովհետև ասել էր, Իմ հօր
Աստուածը իմ օգնականն էր, և
ինձ փարաւօնի սուրիցն ազատեց։
5 Եւ Մովսէսի աներ՝ Յոթորը նո-
րա որդիներովը և նորա կնոջովը
եկաւ Մովսէսի մօտ դէպի անա-
պատը՝ ուր որ նա բանակ էր
6 տուել Աստուծոյ սարումը, Եւ
ասեց Մովսէսին. Ես՝ քո աներ՝
Յոթորը քեզ մօտ եմ գալիս,
նաև քո կինը և նորա երկու որ-
7 դիքը նորա հետ։ Եւ Մովսէսն
իր աներին դիմաւորելու ելաւ,
և խոնարհութիւն արաւ, և համ-
բուրեց նորան. և իրար ողջու-
թիւնը հարցրին՝ և վրանը մտան։
8 Եւ Մովսէսն իր աներին պատմեց
այն ամենը՝ որ Եհովան արաւ
Փարաւօնին և Եգիպտացիներին՝
Իսրայէլի պատճառով, այն բոլոր
աշխատութիւնը որ ճանապարհին
քաշել էին, և Եհովան նորանց
9 ազատել էր։ Եւ Յոթորն ուրա-
խացաւ այն բոլոր բարութիւն-
ների համար՝ որ Եհովան արել
էր Իսրայէլին, որ փրկել էր նո-
րան Եգիպտացիների ձեռքիցը։
10 Եւ Յոթորն ասեց. Օրհնեալ լի-
նի Եհովան՝ որ ազատեց ձեզ Ե-
գիպտացիների ձեռքիցը և Փա-
րաւօնի ձեռքիցը, որովհետև ա-
զատեց ժողովրդին Եգիպտացի-
11 ների ձեռքի տակիցը։ Հիմա գի-
տեմ որ Եհովան բոլոր աստ-
ուածներից մեծ է՝ հէնց այն
բանում, որով Եգիպտացիք հը-
պարտանում էին նորանց դէմ։
Եւ Մովսէսի աներ Յոթորը ող- 12
ջակէզ և զոհեր բերաւ Աստու-
ծոյն, և Ահարօնն ու Իսրայէլի
բոլոր ծերերը Մովսէսի աների
հետ եկան Աստուծոյ առաջին
հաց ուտելու։
Եւ եղաւ որ հետևեալ օրը 13
Մովսէսը նստեց ժողովուրդը դա-
տելու, և ժողովուրդը առաւօ-
տից մինչև իրիկուն Մովսէսի մօտ
կանգնած էր։ Եւ Մովսէսի անե- 14
րը տեսաւ ամենն ինչ որ անում
էր Մովսէսը ժողովրդին, և ասեց.
Ինչ է այս բանը՝ որ դու անում
ես ժողովրդին. ինչու ես դու
մենակ նստում, և բոլոր ժողո-
վուրդը կանգնում է առաւօտից
մինչև իրիկուն քեզ մօտ։ Եւ 15
Մովսէսն ասեց իր աներին. Թէ
ժողովուրդը գալիս է ինձ մօտ
Աստուածանից դատաստան հար-
ցընելու։ Երբոր նորանք մի բան 16
են ունենում՝ գալիս են ինձ մօտ,
և ես նորանց մէջ տեղը դատաս-
տան եմ անում և Աստուծոյ
կանոնները և նորա օրէնքները նո-
րանց հասկացնում։ Եւ Մովսէ- 17
սի աներն ասեց նորան. Քո արա-
ծը լաւ բան չէ։ Այդպէս ան- 18
պատճառ դու էլ կ'մաշուիս, և
քեզ հետ եղած այս ժողովուրդն
էլ. որովհետև այս բանը քեզ
համար շատ ծանր է. դու մե-
նակ չես կարող անել այս։ Հի- 19
մա լսիր իմ խօսքին. ես քեզ խը-
րատ եմ տալիս, և Աստուած
քեզ հետ կ'լինի։ Ժողովրդի հա-
մար դու գնա Աստուծոյ առա-
ջը. և դատերը դու ներկայացրու
Աստուծոյն. Եւ սովորեցրու նո- 20
րա կանոնները ու օրէնքները. և
հասկացրու նորանց իրանց գնա-
լու ճանապարհը և իրանց անե-
լու գործը։ Եւ դու բոլոր ժողո- 21
վրդիցը կարող մարդիկ՝ Աստ-
ուածանից վախող՝ հաւատարիմ՝
ագահութիւնը ատող մարդիկ
ընտրիր, և հազարապետներ, հա-
րիւրապետներ, յիսնապետներ և
տասնապետներ դիր նորանց վե-
րայ։ Եւ ամեն ժամանակ թող 22
նորանք դատեն ժողովրդին. և

*Իմ Աստուածը օգնական։

ամեն մեծ բան որ լինի քեզ ներ-
կայացնեն, և ամեն փոքր բանը
նորանք դատեն. և քո վերայիցը
բեռը թեթևացրու և նորանք
23 քեզ հետ թող կրեն։ Եթէ այս
անես, և Աստուած էլ քեզ
պատուիրէ, այն ժամանակ կա-
րող կ'լինիս կանգնել, և բոլոր
այս ժողովուրդն էլ խաղաղու-
թեամբ իրանց տեղը կ'գնան։
24 Եւ Մովսէսն իր աների խօսքին
լսեց, և նորա բոլոր ասածն ա-
25 րաւ։ Եւ Մովսէսը բոլոր Իսրա-
յէլիցը կարող մարդիկ ընտրեց,
և նորանց ժողովրդի վերայ գլ-
խաւորներ այսինքն հազարապետ-
ներ՝ հարիւրապետներ՝ յիսնա-
պետներ և տասնապետներ կար-
26 գեց։ Եւ ամեն ժամանակ նորանք
էին դատում ժողովրդին. դըժ-
ուար բանը Մովսէսին էին բե-
րում, բայց ամեն փոքր բանը ի-
27 րանք էին դատում։ Եւ Մովսէսն
իր աներին ճանապարհ դրաւ, և
նա իր երկիրը գնաց։

ԳԼ. ԺԹ

1 Երրորդ ամսումը Իսրայէլի որ-
դիների Եգիպտոսի երկրիցը դուրս
գալուց յետոյ նոյն օրը Սինայի
2 անապատն եկան։ Այսինքն Ռա-
փիդիմից չուեցին, և Սինայի ա-
նապատն եկան, և անապատումը
բանակ տուին. և Իսրայէլն այն-
տեղ սարի դիմացը բանակ տը-
3 ւաւ։ Եւ Մովսէսը վեր գնաց
Աստուծոյ մօտ։ Եւ Եհովան կան-
չեց նորան սարիցն՝ ասելով. Այս-
պէս ասիր Յակոբի տանը և ի-
մացրու Իսրայէլի որդիներին։
4 Դուք տեսաք ինչ որ արի Եգիպ-
տացիներին, և ձեզ արծիւի թե-
ւերի վերայ տարի և ինձ մօտ
5 բերի։ Եւ հիմա եթէ իրաւ իմ
ձայնին լսէք և իմ ուխտը պահէք,
այն ժամանակ դուք ինձ համար
սեպհական ժողովուրդ կ'լինիք
ամեն ազգերիցը, որովհետև իմն
6 է բոլոր երկիրը։ Եւ դուք ինձ
համար քահանաների թագաւո-
րութիւն և սուրբ ազգ կ'լինիք։
Սորանք են այն խօսքերը որ Իս-
րայէլի որդիներին պէտք է ասես։
Եւ Մովսէսն եկաւ և ժողովը- 7
րդի ծերերին կանչեց և նորանց
առաջին դրաւ այս բոլոր խօսքե-
րը, որոնք Եհովան պատուիրեց
իրան։ Եւ բոլոր ժողովուրդը մի- 8
ասին պատասխանեցին և ասեցին.
Եհովայի բոլոր ասածները կ'ա-
նենք։ Եւ Մովսէսը ժողովրդի
խօսքերը Եհովային դարձրեց։
Եւ Եհովան ասեց Մովսէսին. 9
Ահա ես քեզ մօտ կ'գամ թան-
ձրը ամպի մէջ, որ ժողովուրդը
լսէ՝ ես քեզ հետ խօսելիս, և
քեզ էլ հաւատայ յաւիտեան։
Եւ Մովսէսը ժողովրդի խօսքերը
Եհովային պատմեց։ Եւ Եհովան 10
ասեց Մովսէսին. Գնա ժողովրդի
մօտ և սրբիր նորանց այսօր և է-
գուց, և թող իրանց հանդերձ-
ները լուանան. Եւ երրորդ օր- 11
ուայ համար պատրաստ լինին.
որովհետև երրորդ օրը Եհովան
բոլոր ժողովրդի աչքի առաջին
Սինայ սարի վերայ պիտի իջնէ։
Եւ դու ժողովրդի շուրջը սահ- 12
ման դնես՝ ասելով. Զգուշացէք
սարը վեր ելնելուց կամ նորա
ծայրին դպչելուց. ով որ սարին
դպչի անպատճառ պիտի մեռ-
ցընուի։ Նորան ձեռք չ'դպչի. 13
[illegible] անպատճառ պիտի քար-
կոծուի, կամ նետով սպանուի.
թէ անասուն և թէ մարդ՝ պի-
տի չ'ապրէ. փողի ձայնը հնչուե-
լիս նորանք սարը ելնեն։
Եւ Մովսէսը սարիցը դէպի ժո- 14
ղովուրդն իջաւ և սրբեց ժողո-
վրդին. և նորանք իրանց հան-
դերձները լուացին։ Եւ նա ասեց 15
ժողովրդին. Երրորդ օրուայ հա-
մար պատրաստ եղիք, կնոջ մի
մօտենաք։
Եւ եղաւ երրորդ օրը՝ առա- 16
ւօտը ծագելիս որոտումներ և
կայծակներ էին լինում, և մի
թանձր ամպ կար սարի վերայ, և
շատ սաստիկ փողի ձայն, և բա-
նակի մէջ եղած բոլոր ժողովուր-
դը զարհուրեց։ Եւ Մովսէսը 17
դուրս հանեց ժողովրդին բանա-
կիցը Աստուծոյ առաջը. և նո-
րանք սարի տակին կանգնեցին։

18 Եւ Սինայ սարը բոլորովին ծխում
էր, որովհետև Եհովան նորա վե-
րայ իջաւ կրակով, և նորա ծու-
խը հնոցի ծուխի պէս էր դուրս
գալիս, և բոլոր սարը սաստիկ
19 դողում էր։ Եւ փողի ձայնը գը-
նալով շատ սաստկանում էր։
Մովսէսը խօսում էր, և Աստ-
ուած ձայնով նորան պատասխան
20 էր տալիս։ Եւ Եհովան Սինայ
սարի վերայ՝ սարի գլուխն իջաւ։
Եւ Եհովան կանչեց Մովսէսին
սարի գլուխը, և Մովսէսը վեր
21 գնաց։ Եւ Եհովան ասեց Մովսէ-
սին. Իջիր՝ ժողովրդին պատուի-
րիր, մի գուցէ սահմանիցն անց-
նեն Եհովային տեսնելու համար
22 և նորանցից շատերը կորչեն։ Եւ
Եհովային մօտեցող քահանաներն
էլ սրբուին, որ մի գուցէ Եհո-
վան նորանց վերայ յարձակուի։
23 Եւ Մովսէսն ասեց Եհովային.
Ժողովուրդը չէ կարող վեր գնալ
Սինայ սարը. որովհետև դու մեզ
պատուիրեցիր՝ ասելով. Սահման
24 դիր սարին, և սրբիր նորան։ Եւ
Եհովան ասեց նորան. Գնա՝ վայր
իջիր. և Ահարօնի հետ մէկտեղ
ելիր. բայց քահանաներն ու ժո-
ղովուրդը Եհովայի մօտ վեր գը-
նալու համար սահմանիցը չ՚անց-
նեն, որ մի գուցէ նորանց վերայ
25 յարձակուի։ Եւ Մովսէսը ժողո-
վրդի մօտ իջաւ և խօսեց նո-
րանց հետ։

ԳԼ. Ի

1 Եւ Աստուած այս բոլոր խօս-
քերը խօսեց ասելով.
2 Ես եմ Եհովան քո Աստուա-
ծը՝ որ քեզ Եգիպտոսի երկրիցը
ծառայութեան տունիցը հանեցի։
3 Բացի ինձանից ուրիշ աստ-
4 ուածներ չ՚ունենաս։ Քեզ հա-
մար կուռք չ՚շինես, և ոչ վերը
երկնքումը՝ կամ ցածը երկրի վե-
րայ՝ կամ երկրի տակի ջրերումը
եղած բաների մէկ նմանութիւ-
5 նը. Նորանց երկրպագութիւն չ՚ա-
նես, և նորանց չ՚պաշտես. որով-
հետև ես քո Եհովայ Աստուածը
նախանձոտ Աստուած եմ, որ
կ՚հատուցանեմ հայրերի անօրէ-
նութիւնը որդիների վերայ՝ մին-
չև նորանց երրորդ ու չորրորդ
ազգը՝ որ ատում են ինձ։ Եւ 6
կ՚ողորմեմ նորանց մինչև հազար
ազգը, որ սիրում են ինձ և իմ
պատուիրանքները պահում։
Քո Եհովայ Աստուծոյ անունը 7
դարտակ տեղը չ՚յիշես, որովհե-
տև Եհովան՝ իր անունը դարտակ
տեղը յիշողին անպատիժ չի թողիլ։
Յիշիր հանգստութեան օրը նո- 8
րան սուրբ պահելու համար։ Վեց 9
օր աշխատիր և քո բոլոր գործն
արա. Բայց եօթներորդ օրը՝ քո 10
Եհովայ Աստուծոյ հանգստու-
թեան օր է. ոչ մի գործ չ՚գոր-
ծես, ոչ դու, ոչ քո որդին՝ ոչ
քո աղջիկը, ոչ քո ծառան ու
աղախինը՝ ոչ քո անասունը՝ ոչ
էլ քո դռան օտարականը։ Որով- 11
հետև Եհովան վեց օրուայ մէջ
արաւ երկինքն ու երկիրը՝ ծովն
ու բոլոր նորանց մէջ եղածները,
և եօթներորդ օրը հանգստացաւ.
նորա համար Եհովան օրհնեց
հանգստութեան օրը և սրբեց
նորան։
Պատուիր քո հօրը և քո մօրը, 12
որ քո օրերը երկարանան այն երկ-
րի վերայ՝ որ քո Եհովայ Աստ-
ուածը կ՚տայ քեզ։
Սպանութիւն մի անիր։ 13
Շնութիւն մի անիր։ 14
Գողութիւն մի անիր։ 15
Քո դրացու դէմ սուտ վկայու- 16
թիւն մի անիր։
Մի ցանկանար քո դրացու տա- 17
նը, քո դրացու կնոջը կամ նորա
ծառային՝ կամ նորա աղախնին՝
կամ նորա եզին՝ կամ նորա էշին
և քո դրացու ոչ մէկ բանին։
Եւ բոլոր ժողովուրդը տեսնում 18
էին որոտումները՝ և կայծակնե-
րը՝ և փողի ձայնը և սարի ծխելը։
Եւ ժողովուրդը տեսաւ, և ետ
քաշուեցաւ ու հեռու կանգնեց.
Եւ ասեց Մովսէսին. Դու խօսիր 19
մեզ հետ, և մենք կ՚լսենք. բայց
Աստուած թող չ՚խօսէ մեզ հետ՝
որ չ՚մեռնենք։ Եւ Մովսէսն ա- 20
սեց ժողովրդին. Մի վախիք, ո-
րովհետև Աստուած ձեզ փորձե-

լու համար է եկել, այնպէս որ
նորա վախը ձեր առաջին լինի,
21 որ չ՚մեղանչէք։ Եւ ժողովուրդը
հեռու կանգնեց, և Մովսէսը մօ-
տեցաւ այն թանձր խաւարին՝
ուր որ Աստուած էր։
22 Եւ Եհովան ասեց Մովսէսին.
Այսպէս ասես Իսրայէլի որդինե-
րին. Դուք տեսաք որ երկնքիցը
23 խօսեցի ձեզ հետ։ Ինձ հետ հա-
ատուր արծաթի աստուածներ
չ՚շինէք, ոչ էլ ոսկի աստուածներ
24 շինէք ձեզ համար։ Ինձ համար
հողի սեղան շինիր, և նորա վերայ
մատուցրու քո ողջակէզները և
քո խաղաղութեան զոհերը՝ քո
ոչխարները և քո արջառները. Ա-
ամեն տեղ ուր որ իմ անունը
յիշել կ՚տամ, քեզ մօտ պիտի
25 գամ, և քեզ պիտի օրհնեմ։ Եւ
եթէ ինձ համար քարի սեղան
շինելու լինես, տաշած քարից
չ՚շինես. որովհետև եթէ նորա
վերայ երկաթի գործիքդ բարձ-
26 րացրիր, կ՚պղծես նորան։ Եւ աս-
տիճաններով վեր չ՚ելնես իմ սե-
ղանը, որ քո մերկութիւնը չ՚բաց-
ուի նորա վերայ։

ԳԼ. ԻԱ

1 Եւ սորանք են այն դատաստան-
ները, որ պիտի դնես նորանց ա-
2 ռաջին։ Եթէ Եբրայեցի ծառայ
ծախու առնելու լինիս, վեց տա-
րի պիտի ծառայէ, և եօթներորդ
3 տարին ազատ դուրս գայ ձրի։ Ե-
թէ նա մենակ է մտել, մենակ
դուրս գայ. եթէ կին ունեցող
մարդ էր, կինն էլ իր հետ դուրս
4 գայ։ Եթէ նորա տէրն է իրան
կին տուել, և նա իր համար որ-
դիներ կամ աղջիկներ է ծնել,
կինն ու նորա որդիքը տիրոջը
կ՚լինին, և ինքը մենակ դուրս
5 գայ։ Բայց եթէ ծառան յայտնի
ասելու լինի, թէ Ես սիրել եմ
իմ տիրոջը, իմ կնոջը և իմ որ-
դիներին, չեմ ուզում ազատ
6 դուրս գնալ. Այն ժամանակ նո-
րա տէրը տանէ նորան դատաւոր-
ների մօտ և նորան մօտեցնէ դը-
ռանը. կամ դրանդեացը. և նո-
րա տէրը նորա ականջը հերիւնով
ծակէ, և նա յաւիտեան ծառայ
լինի նորան։
Եւ եթէ մէկն իր աղջիկը ծա- 7
խէ աղախնութեան, նա ծառա-
ների դուրս գալու պէս դուրս
չ՚գայ։ Եթէ նա անհաճելի է իր 8
տիրոջ աչքին՝ որ նորան չէ նշա-
նում, թող փրկել տայ նորան,
օտար ազգի ծախելու իշխանու-
թիւն չ՚ունի, որովհետև խաբէ-
ութիւն արաւ նորան։ Եւ եթէ 9
նորան իր որդու համար նշանէ,
աղջկանց օրէնքի համեմատ անէ
նորա համար։ Եթէ իր համար 10
ուրիշն առնէ, նորա ուտելիքը՝
հանդերձը և մերձաւորութիւնը
պիտի չ՚կտրէ։ Եւ եթէ նորան 11
այս երեք բանը չ՚անէ, այն ժա-
մանակ նա առանց փողի ձրի
դուրս գայ։
Մարդ զարկող մեռցնողը ան- 12
պատճառ պիտի մեռցնուի։ Իսկ 13
եթէ դիտմամբ չ՚արաւ այլ Աստ-
ուած գցեց նորա ձեռքը. ես քեզ
համար մի տեղ պիտի սահմանեմ,
որ նա փախչէ այն տեղ։ Բայց 14
եթէ մէկն իր դրացուն ոխ ունե-
նայ, և նորան նենգութեամբ մեռ-
ցընէ, իմ սեղանիցն էլ առ նո-
րան որ մեռնէ։ Եւ իր հօրը կամ 15
մօրը զարկողը անպատճառ պիտի
մեռցնուի։
Եւ մարդ գողանողը՝ և նորան 16
ծախողը, և եթէ իր ձեռքին
գտնուի, անպատճառ պիտի մեռ-
ցընուի։
Եւ իր հօրը կամ մօրը անիծո- 17
ղը անպատճառ պիտի մեռցնուի։
Եւ եթէ մարդիկ իրար հետ 18
վիճեն և մէկը միւսին քարով
կամ բռունցքով զարկէ, և նա
չ՚մեռնէ, այլ անկողինը ընկնէ,
Եթէ վեր կենայ ցուպով ման 19
գայ, զարկողը անպատիժ լինի,
միայն նորա դադարելու արժէքը
տայ, և բոլորովին առողջացնէ։
Եւ եթէ մէկը դաւազանով իր 20
ծառային՝ կամ իր աղախնին զար-
կէ, և նա նորա ձեռքի տակին
մեռնէ, անպատճառ վրէժ պիտի
առնուի նորանից. Բայց եթէ մի 21
օր կամ երկու օր ապրէ, վրէժ

չ՚առնուի նորանից. որովհետև
նա իր փողն է։
22 Եւ եթէ մարդիկ կռուեն, և
յղի կնոջ զարկելով նորա տղան
անցնել տան, և մի վնաս չ՚լինի,
նա անպատճառ այն կնոջ մար-
դու նորա վերայ դրած տոյժը
քաշէ, և վճարէ դատաւորների
23 մօտ։ Բայց եթէ մի վնաս լինի,
24 անձի տեղ անձ պիտի տաս, Աչ-
քի տեղ՝ աչք, ատամի տեղ՝ ա-
տամ, ձեռքի տեղ՝ ձեռք, ոտ-
25 քի տեղ՝ ոտք, խարանի տեղ՝ խա-
րան, վէրքի տեղ՝ վէրք, հարուա-
ծի տեղ՝ հարուած։
26 Եթէ մէկը զարկէ իր ծառայի
աչքին կամ իր աղախնի աչքին
ու կուրացնէ, նորա աչքի փոխա-
27 րէն ազատ արձակէ նորան։ Եւ
եթէ իր ծառայի ատամը՝ կամ
իր աղախնի ատամը վայր դցէ,
նորա ատամի փոխարէն ազատ
28 արձակէ նորան։ Եւ եթէ մի եզ՝
մարդ կամ կնիկ հարէ, որ մեռ-
նէ, եզը անպատճառ պիտի քար-
կոծուի, և նորա միսը պիտի չ՚ու-
տուի. բայց եզի տէրը անպատիժ
29 լինի։ Բայց եթէ եզը երէկուանից
կամ մէկէլ օրուանից հարող է,
և նորա տիրոջն էլ բողոքուած
է, և նա նորան չէ պահել, եթէ
մարդ կամ կնիկ մեռցնելու լի-
նի, եզը պիտի քարկոծուի, և նո-
րա տէրն էլ պիտի մեռցնուի։
30 Եթէ փրկանք դրուի նորա վե-
րայ, նա իր անձի ազատութեան
համար՝ ինչ որ նորա վերայ դրը-
31 ուի, պիտի վճարէ։ Եւ թէ տը-
ղայ և թէ աղջիկ հարէ եզը, այս
դատաստանի պէս լինի նորան։
32 Եթէ եզը ծառայ կամ աղախին
հարէ, նորանց տիրոջ երեսուն
սիկղ արծաթ պիտի տայ, և ե-
զը պիտի քարկոծուի։
33 Եւ եթէ մէկը հոր բանայ, կամ
մէկը փոս փորէ՝ և չ՚ծածկէ, և
այն տեղ եզ կամ էշ ընկնէ,
34 փոսի տէրը տուժէ, և նորանց
տիրոջը փող պիտի տայ, և մե-
ռածը իրանը լինի։
35 Եւ եթէ մէկի եզն իր դրացու
եզին հարէ որ մեռնէ, ողջ եզը
ծախեն, և նորա փողը բաժանեն,
և մեռածն էլ բաժանեն։ Այլ 36
եթէ իմացուած է, որ եզը ե-
րէկուանից կամ մէկէլ օրուանից
հարող էր, և նորա տէրը նորան
չէ պահել, անպատճառ եզի տեղ
եզ հատուցանէ և մեռածը ի-
րանը լինի։

ԳԼ. ԻԲ

Եթէ մէկն արջառ կամ ոչխար 1
գողանայ՝ և մորթէ կամ ծախէ
նորան, մէկ արջառի տեղ հինգ
արջառ՝ և մէկ ոչխարի տեղ չորս
ոչխար հատուցանէ։ Եթէ գողը 2
տուն ծակելիս գտնուի և զար-
կուի որ մեռնէ, նորա համար
արիւն չ՚կայ։ Եթէ նորա վերայ 3
արևը ծագել էր, նորա արիւնը
նորա վերայ. Բոլորը հատուցա-
նէ, եթէ բան չ՚ունի այն ժամա-
նակ իր գողացած բանի համար
ծախուի։ Եթէ գողացածը իր 4
ձեռքին ողջ գտնուի, թէ եզ
լինի՝ թէ էշ և թէ ոչխար, կըր-
կինը հատուցանէ։
Եթէ մէկն արտ կամ այգի 5
արածեցնէ, թող տալով իր ա-
նասունին ուրիշի արտումը արա-
ծելու, իր արտի ամենալաւիցը և
իր այգու ամենալաւիցը հատու-
ցանէ։ Եթէ կրակ դուրս գայ և 6
փշերին փակչէ և դիզուած որա-
ները՝ կամ չ՚հնձուած ցորենը՝
կամ արտը այրէ, կրակը գցողը
այրածը հատուցանէ։
Եթէ մէկն իր դրացուն փող 7
կամ կարասիք պահ տայ, և այն
մարդի տնիցը գողանուայ, եթէ
գողը գտնուի, նա կրկինը հա-
տուցանէ. Եթէ գողը չ՚գտնուի, 8
տան տէրը դատաւորների մօտ
տարուի, թէ արդեօք նա իր
ձեռքը իր դրացու ստացուած-
քին չէ դպցրել։ Ամեն կերպ ա- 9
նիրաւութեան համար, թէ եզի՝
թէ էշի՝ թէ ոչխարի՝ թէ հան-
դերձի համար, ամեն կերպ կո-
րած բանի համար՝ որ մէկն ասէ
թէ իրանն է, երկուսի դատը դա-
տաւորների առաջը տարուի. ԵՒ
դատաւորները որի վերայ վճռե-
լու լինին, նա կրկինը հատուցա-
նէ իր դրացուն։

40 Եթէ մէկն իր դրացուն էշ
կամ եզ կամ ոչխար կամ ինչև-
իցէ անասուն պահ տայ, և նա
մեռնէ՝ կամ վնասուի՝ կամ յա-
41 փշտակուի և տեսնող չ՚լինի, Աչ-
ք ժամանակ երկուսի մէջտեղը Եհո-
վայի երդումը լինի՝ իր դրացու
ստացուածքին ձեռք չ՚դպցնելու
համար. և նորա տէրը ընդունէ
42 երդումը, և նա չ՚հատուցանէ։ Եւ
եթէ իրաւ իր մօտիցը գողաց-
ուել է, ինքը նորա տիրոջը հա-
43 տուցանէ։ Եթէ գազանից գիշատ-
ուել է, թող վկայութիւն բերէ,
և գիշատուածը չ՚հատուցանէ։
44 Եթէ մէկն իր դրացուց ան-
ասուն փոխ առնէ, և նա վնասուե-
լու կամ մեռնելու լինի նորա
տէրը հետը չ՚լինելով, ինքը ան-
45 պատճառ հատուցանէ։ Բայց ե-
թէ նորա տէրը հետն էր, չ՚հա-
տուցանէ, եթէ վարձքով առ-
նուած էր, վարձքի տեղն անցնէ։
46 Եթէ մէկը չ՚նշանուած աղջիկ
խաբէ և նորա հետ պառկէ, ան-
պատճառ նորա օժիտը տայ և
47 նորան իր համար կին առնէ։ Ե-
թէ նորա հայրը բնաւ չ՚ուզէ նո-
րան տալ, կոյսերի օժիտի չափ
փող պիտի վճարէ։
48 Կախարդը չ՚թողես ապրէ։
49 Ամեն ով որ անասունի հետ
պառկէ, անպատճառ մեռցնուի։
20 Բացի միայն Եհովայից ուրիշ
աստուածների զոհ անողը պիտի
կորչի։
21 Եւ օտարականին մի չարչարիր,
և նորան մի նեղիր, որովհետև
դուք էլ Եգիպտոսի երկրումն օ-
22 տարական էիք։ Ոչ մի որբևայրի
23 և որբ բնաւ մի չարչարէք։ Եթէ
նորան չարչարես, նա ինձ բողո-
քէ, անպատճառ պիտի լսեմ նո-
24 րա աղաղակը. Եւ իմ բարկու-
թիւնը կ՚բորբոքուի և ձեզ սրով
կ՚մեռցնեմ. և ձեր կանայքը որ-
բևայրի՝ և ձեր որդիները որբ կը
լինին։
25 Եթէ իմ ժողովրդիցը քեզ մօտ
եղած մէկ աղքատի փող փոխ
տաս, վաշխառուի պէս մի լինիր
նորա համար, և նորա վերայ
26 վաշխ մի դնիր։ Եթէ քո դրացու
հանդերձը գրաւ առնես, մինչև
արևը մար մտնելն իրան ետ դար-
ձրու։ Որովհետև այն է միայն նո- 27
րա ծածկոցը, իր մարմնի հան-
դերձն է այն. ինչո՞վ պիտի պառ-
կէ. և կ՚լինի որ երբոր ինձ աղա-
ղակէ, կ՚լսեմ, որովհետև ես ո-
ղորմած եմ։
Դատաւորներին մի հայհոյիր, և 28
քո ժողովրդի իշխանին մի անիծիր։
Քո արմտիքների և հեղանիւթ- 29
ների երախայրիները մի ուշացը-
նիր. քո որդիների անդրանիկներն
ինձ պիտի տաս։ Քո եզին ու ոչ- 30
խարին էլ այսպէս անես. եօթը
օր մօրը հետ լինի, և ութերորդ
օրը՝ նորան ինձ տաս։
Եւ դուք սուրբ մարդիկ պի- 31
տի լինիք ինձ համար. և դաշ-
տումը գիշատուածի միսը պիտի
չ՚ուտէք. շներին պիտի գցէք նո-
րան։

ԳԼ. ԻԳ

Սուտ լուր չ՚տարածես. անօրէ- 1
նի հետ ձեռքդ չ՚դնես որ անիրաւ
վկայ դառնաս։ Չարութիւն ա- 2
նելու համար՝ բազմութեանը չը
հետևես. և չ՚խօսես դատաստա-
նի մէջ իրաւունքը ծռելու հա-
մար շատերի ետևից խոտորելով։
Եւ աղքատին աչառութիւն չ՚ա- 3
նես նորա դատումը։
Եթէ քո թշնամու մոլորած ե- 4
զին կամ էշին հանդիպելու լի-
նիս, անպատճառ իրան դարձնես
նորան։ Եթէ տեսնես քեզ ատո- 5
ղի էշը իր բեռի տակ ընկած, և
չ՚կամենաս նորան ազատել, ան-
պատճառ նորա հետ էշն ա-
զատես։
Քո աղքատի իրաւունքը չ՚ծը- 6
ռես նորա հետ դատուելիս։
Սուտ խօսքից հեռու կաց, և 7
անմեղին ու արդարին մի մեռ-
ցնիր. որովհետև ես չարին չեմ
արդարացնիլ։
Եւ կաշառ չ՚առնես, որովհե- 8
տև կաշառը կուրացնում է աչ-
քաբացներին, և շուռ է տալիս
արդարների բանը։
Եւ օտարականին մի նեղիր. 9

դուք եւ գիտէք օտարականի
սիրտը. որովհետեւ եգիպտոսի երկ-
րում օտարական էիք։
10 Եւ երկիրդ վեց տարի ցանիր,
11 և նորա արդիւնքը ժողովիր. Բայց
եօթներորդումը պարապ թող և
ձգիր նորան, որ քո ժողովրդի
աղքատներն ուտեն, և նորանց
մնացածը դաշտի անասուններն
ուտեն. քո այգուն ևս ձիթա-
տանին եւ այսպէս անես։
12 Վեց օր քո գործը գործիր, և
եօթներորդ օրը հանգստացիր, որ
քո եզն ու էշը հանգստանայ, և
քո աղախնի որդին ու օտարա-
13 նը շունչ առնէ։ Եւ բոլոր ձեզ
ասածներս պահեցէք, և ուրիշ
աստուածներուն անունը չյիշէք.
բերանիդդ չլսուի։
14 Տարին երեք անգամ ինձ հա-
15 մար մօն պահիր։ Բաղարջակերաց
մօնը պահիր. եօթն օր անխթ-
մոր հաց կեր՝ քեզ պատուիրա-
ծիս պէս Աբիբ ամսուայ ասյ-
մանուած ժամանակին. որովհետեւ
այն ամսումն եգիպտոսից դուրս
եկար. և մէկը դատարկ չերեւայ
16 իմ առաջին։ Եւ արտի մէջ ցա-
նելու բանիդ երախայրիքը հնձե-
լու մօնը, և տարուայ վերջին ժո-
ղովելու մօնը գ=հէր արտիդը քո
17 բաները ժողովելիս։ Տարին երեք
անգամ քո ամէն արուները Տէր
Եհովայի առաջին պիտի երեւան։
18 Իմ զոհի արիւնը խմորեալ հա-
ցով չմատուցանես, և իմ մօնի
ճարպը մինչև առաւօտ չմնայ։
19 Քո երկրի առաջի երախայրիները
քո Եհովայ Աստուծոյ տունը տա-
նես։

Ուլը իր մօրը կաթի մէջ չեփես։
20 Ահա քո առաջին մի հրեշտակ
կ'ուղարկեմ, որ քեզ ճանապար-
հին պահպանէ, և քեզ տանէ
21 իմ պատրաստած տեղը։ Զգու-
շացիր նորա առաջին, և նորա
խօսքին լսիր, նորա դէմ մի յա-
մառիր. որովհետեւ նա ձեր յան-
ցանքը չի ներիլ, որովհետեւ իմ
22 անունը նորանումն է։ Բայց եթէ
լսես նորա խօսքին, և իմ բոլոր
ասածն անես, այն ժամանակ քո
թշնամիներին թշնամի կ'լինիմ,
և քո հակառակորդներին՝ հա-
կառակորդ։ Որովհետեւ իմ հրեշ- 23
տակը քո առաջին կ'գնայ, և քեզ
Ամորհացիների և Քետացիների և
Փերեզացիների և Քանանացիներ-
բի, և Խևացիների և Յեբուսացի-
ների մօտ կ'տանէ, և ես պիտի ջար-
գեմ նորանց։ Նորանց աստուած- 24
ներին երկրպագութիւն կամ ծա-
ռայութիւն չանես, և նորանց
արածի պէս չանես. այլ բոլորո-
վին կործանես նորանց և նորանց
կուռքերը բոլորովին կոտրատես։
Եւ ձեր Եհովայ Աստուածին պաշ- 25
տէք. և նա կ'օրհնէ քո հացը և
քո ջուրը, և ես քո միջիցը հի-
ւանդութիւնը կ'դարձնեմ։ Քո 26
երկրի մէջ վիժող և ամուլ չի
լինիլ, քո օրերի թիւը պիտի
լցնեմ։ Իմ երկիւղը կ'ուղարկեմ 27
քո առաջին, և կ'չփոթեցնեմ այն
բոլոր ժողովուրդը, որանց մէջ
դուն գնում ես, և քո բոլոր թըշ-
նամիների մէջը քեզ կ'դարձը-
նեմ. Եւ քո առաջին իշամեղուն 28
կ'ուղարկեմ, և նա կ'քշէ Խևա-
ցիներին, Քանանացիներին և Քե-
տացիներին քո առաջին։ Որանց 29
քո առաջին մէկ տարուայ մէջ
պիտի չքշեմ, որ մի դուցէ եր-
կիրը ամայի դառնայ, և քեզ վե-
րայ դաշտի գազանները շատա-
նան։ Որանք քո առջևից կա- 30
մաց կամաց պիտի քշեմ, մինչև
որ դուն բազմանաս և երկիրը ժա-
ռանգես. Եւ ես դնեմ քո սահ- 31
մանները Փղշտացիների ծովը և անապա-
տիցը մինչև Եփրատ գետը. որով-
հետեւ այն երկրի բակիչները քո
ձեռքը պիտի տամ. և պիտի
քշես քո առջևիցը։ Որանց հետ 32
և նորանց աստուածների հետ
դաշինք չդնես։ Քո երկրի մէջ 33
չբնակուին, որ քեզ մեղք գոր-
ծել չտան ինձ դէմ, որովհետեւ
եթէ նորանց աստուածները պաշ-
տես, անպատճառ նա քեզ հա-
մար որոգայթ կ'դառնայ։

Գլ. ԻԴ

Եւ Մովսէսին ասեց. Ելիր ե- 1

Հովայի մօտ դուս և Ահարոնը,
Նադաբը և Աբիհուդը և Իսրայէ-
լի ծերերից եօթանասուն հոգի,
և հեռուից երկրպագութիւն ա-
2 րէք։ Եւ միայն Մովսէսը մօտե-
նայ Եհովային, իսկ նորանք չմօ-
տենան, և ժողովուրդը նորա հետ
վեր չդնայ։
3 Եւ Մովսէսը եկաւ, և Եհովայի
բոլոր խօսքերը և բոլոր դատաս-
տանները պատմեց ժողովրդին.
և բոլոր ժողովուրդը միաձայն
պատասխան տուին և ասեցին. Ե-
հովայի բոլոր խօսքերը, որ խօսել
4 է, կ'անենք։ Եւ Մովսէսը Եհո-
վայի բոլոր խօսքերը գրեց, և ա-
ռաւօտը վեր կացաւ, և սարի
տակին սեղան շինեց. և Իսրայէլի
տասներկու ցեղերի համեմատ
տասներկու արձան կանգնեցրեց։
5 Եւ Իսրայէլի որդիների պատա-
նիներին ուղարկեց, և նորանք ող-
ջակէզներ մատուցին և խաղա-
ղութեան զոհերի համար զուա-
6 րակներ զոհեցին Եհովային։ Եւ
Մովսէսն արիւնի կէսն առաւ, և
կոնքերի մէջ դրաւ. և արիւնի
կէսն այն սեղանի վերայ սրսկեց։
7 Եւ առաւ ուխտի գիրքը՝ և ժո-
ղովրդի ականջների առաջին կար-
դաց. և նորանք ասեցին. Եհովա-
յի բոլոր ասածը կ'անենք և կը
8 լսենք։ Եւ Մովսէսն առաւ արիւ-
նը, և ժողովրդի վերայ սրսկեց,
և ասեց. Ահա այն ուխտի արիւ-
նը որ Եհովան արաւ ձեզ հետ
այս բոլոր խօսքերի համեմատ։
9 Այն ժամանակ Մովսէսն ու Ա-
հարոնը՝ Նադաբը և Աբիհուդը՝ և
Իսրայէլի ծերերից եօթանասուն
10 հոգի վեր գնացին. Եւ Իսրայէլի
Աստուածոյն տեսան. և նորա ոտ-
քերի տակը շափիւղայ աղիւսով
յատակածի պէս և բուն երկնքի
11 պէս պայծառ էր։ Եւ նա Իսրա-
յէլի որդիների ընտրեալների վե-
րայ իր ձեռքը չձգեց. և նորանք
Աստուածոյն տեսան և կերան և
խմեցին։
12 Եւ Եհովան ասեց Մովսէսին.
Սարը ելիր ինձ մօտ և այնտեղ
կանգնիր. և քարի տախտակները
և իմ գրած օրէնքը և պատուի-
րանքները քեզ կ'տամ որ նորանց
սովրեցնես։ Եւ Մովսէսն ու Նա- 13
բա պաշտօնեայ Յեսուն վեր կաց-
ան, և Մովսէսն Աստուծոյ սարը
ելաւ. Եւ ծերերին ասեց. Դուք 14
այստեղ մեզ սպասեցէք, մինչև
որ ձեզ մօտ դառնանք. և ահա
Ահարոնը և Ովրը ձեզ հետ են.
ով որ գործ ունենայ, թող նո-
րանց մօտ գնայ։
Եւ Մովսէսը սարը ելաւ, և ամ- 15
պը ծածկեց սարը։ Եւ Եհովայի 16
փառքը Սինայ սարի վերայ հան-
չեց, և ամպը ծածկեց նորան վեց
օր. և եօթներորդ օրը ամպի մի-
ջիցը կանչեց Մովսէսին։ Եւ Եհո- 17
վայի փառքի տեսիլքը սարի գա-
գաթի վերայ մաշող կրակի պէս
էր Իսրայէլի որդիների աչքի ա-
ռաջին։ Եւ Մովսէսն ամպի մէջը 18
մտաւ, և սարը ելաւ, և Մովսէ-
սը քառասուն օր և քառասուն
գիշեր սարումն էր։

Գլ. ԻԵ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ 1
ասելով. Խօսիր Իսրայէլի որդի- 2
ների հետ, որ ինձ ընծայ բերեն.
ամեն մարդից որ սիրտը յօժար
է, առէք իմ ընծան։ Եւ այս է 3
այն ընծան որ նորանցից պիտի
առնէք. ոսկի և արծաթ և պղ-
ինձ, Եւ կապուտակ և ծիրանե- 4
գոյն և կրկնակի կարմիր և բա-
րակ քթան՝ և այծի մազ, Եւ 5
կարմիր ներկուած խոյի մորթեր,
և թէհաշի մորթեր, և Սատիմի
փայտեր, Լոյսի համար իւղ՝ օծ- 6
ման իւղի համար և անուշահոտ
խունկի համար համեմներ, Ե- 7
ղընդնաքարեր՝ և եփուդի և լան-
ջապանակի վերայ անցնելու քա-
րեր։
Եւ ինձ համար մի սրբարան շի- 8
նեն՝ որ իրանց մէջ բնակուեմ։
Բոլոր ինչպէս որ քեզ ցոյց տուի 9
խորանի օրինակը և նորա բոլոր
կարասիքի օրինակը՝ այնպէս պի-
տի շինէք։
Եւ Սատիմի փայտից մի տա- 10
պանակ շինեն, նորա երկայ-
նութիւնը երկու կանգուն ու

կէս, և նորա լայնութիւնը մէկ
կանգուն ու կէս, և նորա բարձ-
րութիւնը մէկ կանգուն ու կէս։
11 Եւ մաքուր ոսկով պատեա նո-
րան՝ ներսիցը ու դուրսիցը պա-
տեա նորան, և նորա վերայ շուր-
ջանակի մի ոսկի շրջանակ շինեա։
12 Եւ նորա համար չորս ոսկի օղակ
ձուլեա, և նորա չորս անկիւննե-
րին դնեա, որ նորա մէկ կողմին
երկու օղակ և միւս կողմին եր-
13 կու օղակ լինին։ Եւ Աստիմի փայ-
տից ձողեր շինեա, և նորանց ո-
14 սկով պատեա։ Եւ ձողերը տապա-
նակի կողքերին եղած օղակներին
անցկացնեա, որ տապանակը նո-
15 րանցով վեր առնուի։ Ձողերը
տապանակի օղակների մէջ լինին.
16 նորանից չ'հանուին։ Եւ տապա-
նակի մէջ դնեա այն վկայութիւ-
նը, որ ես քեզ պիտի տամ։
17 Եւ մաքուր ոսկուց մի քաւու-
թիւն շինեա. նորա երկայնութիւ-
նը երկու կանգուն ու կէս, և
նորա լայնութիւնը մէկ կանգուն
18 ու կէս։ Եւ երկու ոսկի քերով-
բէներ շինեա քաւութիւնի երկու
ծայրի վերայ, կռածոյ շինեա նո-
19 րանց. Եւ մէկ քերովբէն այս
ծայրին և միւս քերովբէն այն
ծայրին շինեա. քերովբէները քա-
ւութիւնիցը պիտի շինեա նորա
20 երկու ծայրերի վերայ։ Եւ քե-
րովբէները տարածուած լինին թե-
ւերը վերևիցը՝ իրանց թևերովը
քաւութիւնը ծածկելով. և նո-
րանց երեսները դէպի իրար լինին.
քերովբէների երեսները դէպի
21 քաւութիւնը լինին։ Եւ քաւու-
թիւնը տապանակի վերայ պիտի
դնեա վերևիցը և տապանակի մէջ
22 դնեա այն վկայութիւնը՝ որ քեզ
կ'տամ։ Եւ ես կ'հանդիպեմ այն
տեղ և կ'խօսեմ քեզ հետ, քա-
ւութեան վերայիցը վկայութեան
տապանակի վերայ եղած երկու
քերովբէների մէջտեղիցն ամեն
ինչ որ պիտի պատուիրեմ քեզ
իսրայէլի որդիների համար։
23 Եւ Աստիմի փայտից մի սեղան
շինեա. նորա երկայնութիւնը եր-
կու կանգուն, և նորա լայնու-
թիւնը մէկ կանգուն, և նորա
բարձրութիւնը մէկ կանգուն ու
կէս պիտի լինի։ Եւ մաքուր ո-
24 սկով պատեա. և նորա շուրջը մի
ոսկի շրջանակ շինեա։ Եւ նորան
25 շուրջանակի մէկ թիզ ալօրա շի-
նեա. և ալօրային շուրջանակի մի
ոսկի շրջանակ շինեա։ Եւ նորան
26 չորս ոսկի օղակ շինեա, և այն օ-
ղակները դնեա անկիւնին նորա
չորս ոտքի մօտ։ Օղակները կըց-
27 ուած պիտի լինին ալօրային իբր
ձողերի տեղեր որ սեղանը վեր
առնուի։ Եւ ձողերը Աստիմի
28 փայտից շինեա, և նորանց ոսկով
պատեա. և սեղանը նորանցով
պիտի վեր առնուի։ Եւ շինիր նո-
29 րա սկուտեղները և նորա խնկա-
մանները և բաժակները ու սկա-
ւառակները, որ նորանցով թա-
փելու նուէր մատուցուի. նորանց
30 մաքուր ոսկուց շինեա։ Եւ սեղա-
նի վերայ միշտ առաջաւորու-
թեան հացը դնեա իմ առաջին։
31 Եւ մաքուր ոսկուց մի աշտա-
նակ շինեա. ճախարակեայ պիտի
շինուի աշտանակը, նորա բունը՝
ճիւղերը՝ սկահները՝ գնդակները
և ծաղիկները իրանից լինին։ Եւ
32 նորա կողերից վեց ճիւղեր դուրս
գան. երեք ճիւղը աշտանակի մէկ
կողմիցը, և երեք ճիւղը աշտա-
նակի միւս կողմիցը. երեք նշա-
33 ձև սկահ մէկ ճիւղի վերայ գն-
դակով և ծաղիկով, և երեք
նշաձև սկահ միւս ճիւղի վերայ
գնդակով և ծաղիկով, այսպէս
լինին աշտանակիցն ելած վեց ճիւ-
ղերը։ Եւ աշտանակի վերայ չորս
34 նշաձև սկահ լինին իրանց գնդակ-
ներովն ու ծաղիկներովը։ Եւ եր-
35 կու ճիւղի տակին իրանից մէկ
գնդակ և ից երկու ճիւղի տա-
կին իրանից մէկ գնդակ և երրորդ
երկու ճիւղի տակին իրանից մէկ
գնդակ. այսպէս այն վեց ճիւղե-
րին որ դուրս են գալիս աշտա-
նակիցը։ Նորանց գնդակներն ու
36 ճիւղերը իրանից լինին, ամենը
ճախարակեայ լինի մէկ կտոր մա-
քուր ոսկուց։ Եւ նորա ճրագնե-
37 րը եօթը շինեա. և նորա ճրագ-
ները վերան դնեն, և լոյս տայ
դէպի առջևի կողմը։ Եւ նորա
38 մաքրիչները և նորա բազմակալ-
ները մաքուր ոսկուց պիտի լինին։
39 Մէկ տաղանդ մաքուր ոսկուց
շինեն նորան բոլոր այս գործերը-
40 ներովը միասին։ Եւ նայիր որ ա-
րուես քեզ ցոյց տուած օրինակի
պէս շինես։

Գլ. ԻԶ

4 Եւ խորանը շինեա տասը վարա-
գոյրներով՝ մանած բարակ քթա-
նից և կապուտակից և ծիրանե-
գոյնից և կրկնակի կարմիրից.
ճարտար ասեղնագործ շինեա նո-
2 րանց քերովբէներով։ Մէկ վա-
րագոյրի երկայնութիւնը քսան-
ութը կանգուն, և մէկ վարա-
գոյրի լայնութիւնը չորս կանգուն
լինի. մէկ չափ լինի բոլոր վարա-
3 գոյրների համար։ Հինգ վարա-
գոյրները իրար կցուած, և ֆ—
հինգ վարագոյրները իրար կըց-
4 ուած։ Եւ կապուտակեայ օղակ-
ներ շինեա. մէկ վարագոյրի եզերք-
քի վերայ կցուածքի ծայրի մօտ
ծայրի վարագոյրի եզերքին. և
այսպէս անեա երկրորդ կցուած-
5 քին։ Յիսուն օղակ շինեա մէկ
վարագոյրի վերայ, և յիսուն օ-
ղակ շինեա միւս կցուածքի մօտ
եղած վարագոյրի ծայրին. օղակ-
ները իրար դէմ ու դէմ լինին։
6 Եւ յիսուն ոսկի ճարմանդներ
շինեա. և վարագոյրները ճար-
մանդներովը կոճակեա, որ մէկ
խորան դառնայ։
7 Եւ վրանի համար այծի մազի
վարագոյրներ շինեա խորանի վե-
րայ. տասնմէկ վարագոյր շինեա
8 նորանց։ Մէկ վարագոյրի երկայ-
նութիւնը երեսուն կանգուն՝ և
մէկ վարագոյրի լայնութիւնը չորս
կանգուն. մէկ չափ լինի տասնե-
9 մէկ վարագոյրների համար։ Եւ
հինգ վարագոյրները առանձին
կցիր, և վեց վարագոյրները առան-
ձին. և վեցերորդ վարագոյրը խո-
րանի առջևի կողմիցը երկապատիկ
10 անեա։ Եւ յիսուն օղակներ շինեա
մէկ վարագոյրի եզերքի վերայ
կցուածքի ծայրի մօտ և յիսուն
օղակներ միւս կցուածքի մօտ
եղած վարագոյրի եզերքի վերայ։
11 Եւ յիսուն պղնձի ճարմանդներ
շինեա, և ճարմանդները օղակնե-
րին անցկացնեա, և վրանը կոճա-
կեա, որ մէկ լինի։ Եւ վրանի վա-
12 րագոյրներից աւելորդ մնացածը՝
այն վարագոյրի աւելացած կէսը՝
խորանի ետևիցը կախուի։ Եւ
13 մէկ կանգունը այս կողմից և մէկ
կանգունը միւս կողմից վրանի
վարագոյրների երկայնութիւնից
աւելացածը՝ խորանի կողքերովը
կախուած մնայ նորան այս կող-
մից և այն կողմից ծածկելու հա-
մար։ Եւ վրանի համար կարմիր
14 ներկուած խոյի մորթերից ծած-
կոց շինեա, և թէհաշի մորթերից
մի ծածկոց էլ նորա վերայով։
15 Եւ խորանի համար տախտակ-
ները Աստիմի փայտից շինես՝
կանգնած։ Մէկ տախտակի եր-
16 կայնութիւնը տասը կանգուն՝ և
մէկ տախտակի լայնութիւնը մէկ
ու կէս կանգուն։ Ամեն մէկ
17 տախտակին երկու սափրիչ լինին
իրար ազուցիկ. խորանի բոլոր
տախտակներին այսպէս շինեա։ Եւ
18 խորանի տախտակներ շինես. դէ-
պի հարաւ՝ հարաւային կողմին
քսան տախտակ։ Եւ քառասուն
19 արծաթի խարիսխ շինես քսան
տախտակների տակ. մէկ տախ-
տակի տակ երկու խարիսխ իր
երկու սափրիչների համար և միւս
տախտակի տակ երկու խարիսխ
իր երկու սափրիչների համար։ Եւ
20 խորանի միւս կողմի համար հիւ-
սիսային կողմին՝ քսան տախտակ,
21 Եւ նորանց քառասուն արծաթի
խարիսխները, մէկ տախտակի տակ
երկու խարիսխ՝ և միւս տախ-
տակի տակ երկու խարիսխ։ Եւ
22 խորանի ետևի կողմին դէպի ա-
րեւմուտքը վեց տախտակ շինեա։
23 Եւ խորանի անկիւններին՝ ետևի
կողմին երկու տախտակ շինեա։
24 Եւ տակի կողմից զոյգ լինին և
վերևումը բոլորովին միացած լի-
նին մէկ օղակով. երկուսն էլ
այսպէս լինին. նորանք երկու ան-
կիւնների համար լինին։ Եւ ու-
25 թը տախտակ լինին, և նորանց
արծաթի խարիսխները տասնվեց
խարիսխ. մէկ տախտակի տակ

երկու խարիսխ՝ և միւս տախտակի տակ երկու խարիսխ լինի։
26 Եւ Սառիմի փայտից նիգեր շինես. խորանի մէկ կողմի տախ-
27 տակների համար հինգ, եւ խորանի միւս կողմի տախտակների համար հինգ նիգ, և դէպի արեմուտք խորանի հետևի կողմին տախտակների համար հինգ նիգ։
28 Եւ միջի նիգը, որ մէջտեղն էր տախտակների միջինը մէկ ծայրից միւս
29 ծայրը պիտի անցնէր։ Եւ տախտակները ոսկով պատես, և նրանց օղակները՝ որ նիգերի անցնելու տեղերը ոսկուց չինես, և նիգերը ոսկով պատես։
30 Եւ կանգնեցնես խորանը իր ձևի համեմատ, ինչպէս որ սարի վերայ քեզ ցոյց արուեցաւ։
31 Եւ կապուտակից և ծիրանեգոյնից՝ և կրկնակի կարմիրից և մանուած բարակ քէթանից մի վարագոյր շինես. նա ճարտար ասպնջագործ շինուի քերովբէ-
32 ներով։ Եւ նրան Սառիմի փայտից չորս ոսկեպատ սիւների վերայ դնես. նրանց բևեռները ոսկի լինին. չորս արծաթ խարիսխ-
33 ների վերայ։ Եւ վարագոյրը ճարմանդների տակից կախես, և այնտեղ վարագոյրի ներսի կողմը տանես վկայութեան տապանակը. և վարագոյրը ձեզ համար բաժանէ սրբութիւնի և սրբութեանց սրբութիւնի միջտեղը։
34 Եւ քաւութիւնը վկայութեան տապանակի վերայ՝ սրբութեանց
35 սրբութիւնում դնես։ Եւ վարագոյրի դուրսի կողմումը սեղանը, և սեղանի դիմացը խորանի հարաւային կողմում՝ աշտանակը դնես, և սեղանը հիւսիսային կողմումը դնես։
36 Եւ վրանի դրան համար մի սրահակ շինես կապուտակից և ծիրանեգոյնից և կրկնակի կարմիրից և մանուած բարակ քէթա-
37 նից՝ նկարագործ։ Եւ դրան սրահակի համար Սառիմի փայտից հինգ սիւն շինես, և նրանց ոսկով պատես, նրանց բևեռները ոսկի լինին. և նրանց համար հինգ պղնձի խարիսխ ձուլես։

ԳԼ. ԻՆ

1 Եւ զոհի սեղանը Սառիմի փայտից շինես, երկայնութիւնը հինգ կանգուն և լայնութիւնը հինգ կանգուն, սեղանը քառակուսի լինի, և նորա բարձրութիւնը երեք կանգուն։ Եւ նորա եղջիւր-
2 ները նորա չորս անկիւնների վերայ շինես. նորա եղջիւրներն իրանից լինին. և նորան պղնձով պատես։ Եւ նորա մխիթը ժողո-
3 վելու համար նորա թիաղարները՝ և նորա թիակները՝ և նորա կոնքերը՝ և նորա մանահանները՝ և նորա կրակարանները շինես. նորա բոլոր գործիքները պղնձից շի-
4 նես։ Եւ նորան մի ցանցակերպ գահաւորակ շինես պղնձից. և ցանցի վերայ չորս պղնձի օղակ շինես՝ նորա չորս անկիւնների վե-
5 րայ։ Եւ նորան դնես սեղանի շրջանակի տակ ներքևից, որ ցանցը մինչև սեղանի կէսը լինի։ Եւ
6 սեղանի համար ձողեր շինես, ձողերը Սառիմի փայտից. և նրանց պղնձով պատես։ Եւ նորա ձո-
7 ղերը օղակների մէջ պիտի անցնուին. և ձողերը սեղանի երկու կողքերին լինին՝ նորան վեր առնելու համար։ Մէջը դատարկ՝ և
8 տախտակներից շինես նորան. ինչպէս որ սարում քեզ ցոյց արուաւ, այնպէս պիտի շինին։

9 Եւ խորանի սրահը շինես հարաւային կողմի համար, սրահի առագաստները մանուած բարակ քէթանից մէկ կողմի երկայնութիւնը հարիւր կանգուն։ Եւ նո-
10 րա քսան սիւները և նրանց քսան խարիսխները պղնձից, և սիւների բևեռները և նրանց ճանկերը արծաթից լինին։ Եւ նոյն-
11 պէս հիւսիսային կողմի համար երկայնութեամբը առագաստները հարիւր կանգուն երկայն. և նորա քսան սիւները և նրանց քսան խարիսխները պղնձից, սիւների բևեռները և նրանց ճանկերը արծաթից լինին։ Եւ սրահի
12 լայնութեամբը արևմտեան կողմին առագաստները հիսուն կանգուն, նրանց սիւները տասը՝ և

նրանց խարիսխները տասը լինին։
13 Եւ սրահի լայնութեամբը արևելեան կողմին դէպի արևելք
14 հիսուն կանգուն։ Եւ մէկ կողքի առագաստները տասնեհինգ կանգուն. նրանց սիւները երեք՝ և
15 նրանց խարիսխները երեք։ Եւ միւս կողքին առագաստները տասնեհինգ կանգուն. նրանց սիւները երեք՝ և նրանց խարիսխները
16 երեք։ Եւ սրահի դրան համար մի նկարագործ վարագոյր կապուտակից՝ և ծիրանեգոյնից և կրկնակի կարմիրից և մանած բարակ քէթանից քսան կանգուն, նրանց սիւները չորս՝ և նրանց
17 խարիսխները չորս։ Սրահի շուրջանակի եղած բոլոր սիւները արծաթի կարթերով և նրանց բևեռները արծաթից՝ և նրանց
18 խարիսխները պղնձից լինին։ Սրահի երկայնութիւնը հարիւր կանգուն՝ և լայնութիւնը յիսուն յիսունով, և բարձրութիւնը հինգ կանգուն. պատուհանները մանած բարակ քէթանից և նրանց խա-
19 րիսխները պղնձից լինին։ Խորանի բոլոր գործիքները իր ամեն պաշտօնի համար՝ և նրա բոլոր ցիցերը՝ և սրահի բոլոր ցիցերը պղնձից լինին։
20 Եւ դու պատուիրիր Իսրայէլի որդիներին որ քեզ մաքուր ձեթ-
21 ուած ձիթապտղի իւղ բերեն լոյսի համար, որ միշտ ճրագ վառուի։ Ահարոնը և նրա որդիները ժողովքի խորանում վկայութեան առաջին վարագոյրի դրսի կողմումը իրիկուանից մինչև առաւօտ Եհովայի առաջին կարգադրեն նրան. սա նրանց համար յաւիտենական կանոն լինի իրանց ազգերի մէջ Իսրայէլի որդիներից կողմանէ։

ԳԼ. ԻԸ

1 Եւ դու քեզ մօտեցրու քո եղբայր Ահարոնին՝ և նրա որդիներին նրա հետ՝ Իսրայէլի որդիների միջից, որ ինձ քահանայութիւն անեն, Ահարոնին՝ և Ահարոնի որդիները՝ Նադաբին և Ա-
2 բիուդին՝ Եղիազարին և Իթամարին։ Եւ քո եղբայր Ահարոնի համար սուրբ զգեստներ շինես պատուի և փառքի համար։ Եւ
3 դու խօսիր բոլոր իմաստուն միտք ունեցողների հետ, որոնց ես իմաստութեան հոգով լցրի, որ Ահարոնի համար զգեստները շինեն՝ նրան սրբելու համար՝ որ
4 ինձ քահանայութիւն անէ։ Եւ սորանք են այն զգեստները, որ պիտի շինեն. լանջապանակ, և եփուդ և պատմուճան և նկարագործ շապիկ, խոյր և գօտի, և սուրբ զգեստներ շինեն քո եղբայր Ահարոնի՝ և նրա որդիների համար, որ ինձ քահանայութիւն անեն։
5 Եւ նորանք առնեն ոսկին և կապուտակը և ծիրանեգոյնը և կրկնակի կարմիրը և բարակ քէթանը. Եւ շինեն եփուդը ոսկի
6 թելից կապուտակից և ծիրանեգոյնից, կրկնակի կարմիրից և մանած բարակ քէթանից ճարտար ասպնջագործ։
7 Նրա երկու թիկունքները կցուած պիտի լինին նրա երկու ծայրերին, որ կռճակուին։ Եւ եփուդի վերայ եղած
8 ժապաւէնը՝ նրա շինուածքի պէս նոյն բանից լինի. ոսկուց, կապուտակից և ծիրանեգոյնից, և կրկնակի կարմիրից և մանած բարակ քէթանից։ Եւ երկու եղնգաքարեր առնես, և նրանց վերայ
9 փորագրես Իսրայէլի որդիների անունները։ Նրանց անունների
10 վեցը մէկ քարի վերայ՝ և միւսած վեց անունները միւս քարի վերայ՝ և նրանց ծնունդների համեմատ։ Ակնագործի արուեստով
11 կնիք քանդակողի պէս փորագրես այն երկու քարերի վերայ Իսրայէլի որդիների անունները, շրջապատած ոսկի խոշերի մէջ դնես
12 նրանց։ Եւ այն երկու քարերը եփուդի թիկունքների վերայ դրնես, որ Իսրայէլի որդիների համար յիշատակի քարեր լինին. և Ահարոնը նրանց անունները յիշատակի համար իր երկու ուսերի վերայ կրէ Եհովայի առաջին։ Եւ
13 ոսկուց խոշեր շինես։ Եւ մաքուր
14

ոսկուց երկու շղթաներ շինիր, ոլորած հիւսկէն գործ շինես, և հիւսուած շղթաները խորշերին անցկացնես։
15 Եւ դատաստանի լանջապանակը ճարտար ոստայնագործ շինես՝ եփուդի շինուածքի պէս շինես, ոսկուց՝ կապուտակից և ծիրանեգոյնից և կրկնակի կարմիրից և մանած բարակ քթանից շինես
16 նորան։ Քառակուսի լինի երկուտակ ծալուող. նորա երկայնութիւնը մէկ թիզ՝ և նորա լայնու-
17 թիւնը մէկ թիզ։ Եւ ընդելուզիր նորա մէջ ակունքների ընդելուզուածքի համեմատ՝ չորս կարգ քարեր. սարդիոնի, տպազիոնի և զմրուխտի կարգը՝ առա-
18 ջին կարգը լինի։ Եւ երկրորդ կարգը՝ կարկեհան, շափիւղայ և
19 ադամանդ. Եւ երրորդ կարգը
20 գոճազմ՝, ակատ և սուտակ. Եւ չորրորդ կարգը՝ ոսկեքար, եղընգնաքար, և յասպիս. ոսկի խորշե-
21 րի մէջ լինին ընդելուզուած։ Եւ քարերը Իսրայէլի որդիների անունների պէս տասնևերկու լինին, նորանց անունների համեմատ. քանդակուած կնիքի պէս ամեն մէկը իր անունովը տասնև-
22 երկու ցեղին համեմատ։ Եւ լանջապանակի վերայ ոլորուած շղթաներ շինիր՝ հիւսկէն գործ՝ մա-
23 քուր ոսկուց։ Եւ լանջապանակի վերայ երկու ոսկի օղակներ շինիր և այն երկու օղակները լանջապանակի երկու ծայրերի վերայ դը-
24 նես։ Եւ այն երկու հիւսուած ոսկի շղթաները՝ լանջապանակի ծայրերին եղած երկու օղակներ-
25 ին անցկացնես. Եւ այն երկու հիւսուած շղթաների միւս երկու ծայրերը՝ այն երկու խորշերին անցկացնես. և եփուդի թիկունքների վերայ դնես առջևի կողմից։
26 Եւ երկու ոսկի օղակներ շինես, և լանջապանակի ներսի կողմից՝ եփուդի կցուած եզերքի երկու
27 ծայրերին դնես նորանց։ Եւ երկու ոսկի օղակներ ևս շինես, և նորանց դնես եփուդի երկու ուսերին տակիցը, նորա առջևի կողմի կցուածքի մօտ՝ եփուդի ժա-
պաւէնի վերայից անցկացնես։ Եւ 28
լանջապանակը կապեն իր օղակներիցը՝ կապուտակից [illegible] լարով եփուդի օղակներին, որ եփուդի ժապաւէնի վերայ լինի, և լանջապանակը եփուդի վերայիցը չ՚բաժանուի։ Եւ Ահարօնը 29
Իսրայէլի որդիների անունները դատաստանի լանջապանակովը միշտ իր սրտի վերայ կրէ, երբոր մտնէ սրբարանը, նորանց Եհովայի առաջին յիշելու համար։ Եւ 30
դատաստանի լանջապանակի մէջ *Ուրիմը ու †Թումիմը դնես. և Ահարօնի սրտի վերայ լինին, երբոր Եհովայի առաջը գնայ. և Ահարօնը միշտ իր սրտի վերայ կրէ Իսրայէլի որդիների դատաստանը Եհովայի առաջին։
Եւ եփուդի պատմուճանը բո- 31
լորովին կապուտակից շինես։ Եւ 32
նորա մէջտեղը լինի նորա գլուխ [illegible] ճեղքուածքը. ճեղքուածքի շուրջը մի օձիք լինի զրահի ճեղքուածքի պէս հիւսուած, որ չ՚պատառուի։ Եւ նո- 33
րա քղանցքների վերայ կապուտակից և ծիրանեգոյնից և կրկնակի կարմիրից նռներ շինես՝ քղանցքների վերայ շուրջանակի. և նորանց մէջտեղը շուրջանակի ոսկի զանգակներ։ Պատմուճանի 34
քղանցքի վերայ շուրջանակի մի ոսկի զանգակ և մի նուռ, մի ոսկի զանգակ և մի նուռ լինի։ Եւ Ահարօնի վերայ լինի պաշտօ- 35
նի համար. և նորա ձայնը լսուի Եհովայի առաջին մտնելիս և դուրս գալիս, որ չ՚մեռնէ։
Եւ մաքուր ոսկուց մի թիթեզ 36
շինես, և նորա վերայ կնիք քանդակողի պէս փորագրես ‡ԳՕԴԻՇ ԼԻ ԵՀՈՎԱՅ։ Եւ նորան անց- 37
կացնես մի կապուտակ ժապաւէնի վերայ, որ խոյրի վերայ դրուի. խոյրի վերևի առջևի կողմին լինի։ Եւ Ահարօնի ճակատի 38
վերայ լինի, որ Ահարօնը կրէ. Իսրայէլի որդիների նուիրած բո-

*Լոյսեր
†Կատարելութիւններ
‡սուրբ՝ Եհովային

լոր սուրբ ընծաների անօրէնութիւնը միշտ իր ճակատի վերայ լինի, որ նորանք ընդունելի լինին Եհովայի առաջին։
39 Եւ շապիկը բարակ քթանից, և խոյրը բարակ քթանից շինես և գօտին հիւսկէն գործ շինես։
40 Եւ Ահարօնի որդիների համար շապիկներ շինես, և նորանց համար գօտիներ շինես. և պատուի և փառքի համար նորանց ապա-
41 րօշներ շինես։ Եւ նորանք քո եղբայր Ահարօնին՝ և նորա հետ նորա որդիներին հագցնես. և նորանց օծես, և նորանց ձեռքերը լցնես, և սրբես նորանց որ ինձ
42 քահանայութիւն անեն։ Եւ նորանց համար կտաւից անդրավարտիներ շինես մարմնի մերկութիւնը ծածկելու համար. մէջ-
43 քից մինչև ծնկերը լինին։ Եւ Ահարօնի և նորա որդիների վերայ լինին երբոր ժողովքի խորանը մտնեն, կամ երբոր սեղանին մօտենան սրբարանումը պաշտելու համար, և անօրէնութիւն չ՚կրեն որ չ՚մեռնեն. սա յաւիտենական կանոն լինի նորա համար և նորանից յետոյ նորա սերունդի համար։

ԳԼ. ԻԹ

1 Եւ սա է այն բանը որ նորանց պիտի անես, որ նորանց սրբես ինձ համար քահանայ լինելու. արջառներից մէկ զուարակ և եր-
2 կու անարատ խոյ առ, Եւ անխմոր հաց՝ և իւղով զանգուած անխմոր շօթեր՝ և իւղով օծուած անխմոր լաւաշներ. ցորենի բա-
3 րակ ալիւրից շինես սորանց։ Եւ մի սակառի մէջ դնես և մատուցանես նորանց սակառի մէջ, և
4 զուարակն ու երկու խոյերը։ Եւ Ահարօնին և նորա որդիներին ժողովքի խորանին դրանը մօտեցընես, և նորանց ջրով լուանաս։
5 Եւ զգեստները առնես և հագցընես Ահարօնին շապիկը և եփուդի պատմուճանը և եփուդը և լանջապանակը. և եփուդի ժա-
6 պաւէնովը գօտևորես նորան։ Եւ խոյրը նորա գլխին դնես, և խոյրի
վերայ սուրբ պսակը դնես։ Եւ 7
օծման իւղը առնես. և նորա գլխի վերայ թափես և օծես նորան։
Եւ նորա որդիները մօտեցնես, և 8
նորանց շապիկներ հագցնես. Եւ 9
գօտիներով գօտևորես նորանց՝ այսինքն Ահարօնին և նորա որդիներին, և նորանց գլխներին ապարօշներ փաթաթես. և քահանայութիւնը նորանցը լինի յաւիտենական կանոնով։ Եւ այսպէս լցրու Ահարօնի ձեռքը և նորա որդիների ձեռքը։
Եւ զուարակը ժողովքի խորա- 10
նի առաջին մօտեցնես, և Ահարօնը և նորա որդիներն իրանց ձեռքը զուարակի գլխին դնեն։
Եւ մորթես զուարակը ժողովքի 11
խորանի դրանը Եհովայի առաջին։
Եւ զուարակի արիւնիցն առնես 12
և մատովդ սեղանի եղջիւրներին քսես. և [illegible] բոլոր արիւնը սեղանի տակին թափես։ Եւ առ- 13
նես այն բոլոր ճարպը, որ ծածկում է փորոտիքը և լեարդի վերայի թաղանթը՝ և երկու երիկամունքը և նորանց վերայի եղած ճարպը և սեղանի վերայ այրես։
Բայց զուարակի միսը, և նորա 14
մորթը՝ և նորա աղբը բանակիցը դուրս կրակով այրես. մեղքի պատարագ է սա։
Եւ խոյերի մէկն առնես, և Ա- 15
հարօնը և նորա որդիքը իրանց ձեռքերը խոյի գլխին դնեն։ Եւ 16
այն խոյը մորթես, և նորա արիւնն առնես, և սեղանի վերայ շուրջանակի սրսկես։ Եւ խոյը կտոր 17
կտոր անես, և լուանաս նորա փորոտիքը և նորա ոտքերը, և նորանց նորա կտորների և գլխի վերայ դնես։ Եւ բոլոր խոյը այրես սե- 18
ղանի վերայ. սա ողջակէզ է Եհովայի համար. անուշահոտ պատարագ է Եհովային։
Եւ միւս խոյն առնես. և Ահա- 19
րօնը և նորա որդիքը իրանց ձեռքերը խոյի գլխին դնեն։ Եւ խոյը 20
մորթես, և նորա արիւնիցն առնես, և քսես Ահարօնի աջ ականջի բլթակին՝ և նորա որդկանց աջ ականջների բլթակին և նորանց աջ ձեռքի մեծ մատին և

նորանց աջ ոտքի մեծ մատին, և
[illegible] արիւնը սեղանի վերայ
21 շուրջանակի սրսկես։ Եւ սեղանի
վերայ եղած արիւնիցը և օծման
իւղիցն առնես, և Ահարօնի վե-
րայ և նորա զգեստների վերայ և
նորա հետ իր որդիների վերայ՝ և
իր որդիների զգեստների վերայ
սրսկես. և նա ու նորա զգեստ-
ները և նորա հետ իր որդիները
և իր որդիների զգեստները սուրբ
22 կ՚լինին։ Եւ խոյիցն առնես ճար-
պը և դմակը՝ և փորոտիքը ծած-
կող ճարպը՝ և լեարդի [illegible]
թաղանթը՝ և երկու երիկամուն-
քը և նորանց վերայի ճարպը, և
աջ զիստը, (որովհետև սա ձեռք
23 լցնելու խոյն է.) Եւ մէկ պան
հացի և մէկ իւղով հացի շօթ
և մէկ լաւաշ [illegible] այն անխմոր
հացի սակառիցը որ Եհովայի ա-
24 ռաջին է, Եւ ամենը Ահարօնի
ձեռքին և նորա որդիների ձեռ-
քին դնես, և նորանց Եհովայի
առաջին երերացնելու ընծայ ե-
25 րերացնես։ Եւ նորանց ձեռքիցն
առնես նորանց և սեղանի վերայի
ողջակէզի վերայ այրես Եհովայի
առաջին անոյշ հոտի համար. սա
26 պատարագ է Եհովային։ Եւ Ա-
հարօնի [illegible] լցնելու խոյիցը՝ եր-
բուծն առնես, և նորան Եհովայի
առաջին երերացնելու ընծայ մա-
տուցանես. և դա քո բաժինը լի-
27 նի։ Եւ Ահարօնի համար և նորա
որդիների համար [illegible] լցնելու
խոյիցը երերացնելու երբուծը և
28 բարձրացնելու զիստը սրբես։ Եւ
յաւիտենական կանոն դառնայ
Ահարօնի և նորա որդիների հա-
մար Իսրայէլի որդիների կողմա-
նէ. որովհետև սա բարձրացնելու
ընծայ է, և բարձրացնելու ընծայ
պիտի լինի Իսրայէլի որդիների
կողմանէ իրանց խաղաղութեան
զոհերիցը բուն իրանց բարձրա-
ցընելու ընծան Եհովայի համար։
29 Եւ Ահարօնի սուրբ զգեստ-
ները իրանից յետոյ իր որդիներ-
ին լինին՝ նորանցով օծուելու
և նորանցով ձեռք լցուելու հա-
30 մար։ Եօթը օր հագնէ նորանց իր
որդիներից իր փոխարէնը լինող
քահանան, որ սրբարանի մէջ
պաշտօն կատարելու համար ժո-
ղովքի խորանը կ՚մտնէ։ Եւ ձեռք 31
լցնելու խոյը առնես՝ և նորա միսը
եփես սուրբ տեղ։ Եւ Ահարօնը 32
և նորա որդիքը ժողովքի խորա-
նի դրանը ուտեն խոյի միսը և
սակառի միջի հացը։ Եւ նորանք 33
ուտեն այն բաները՝ որ իրանց
ձեռք լցնելու [illegible] սրբուելու հա-
մար նորանցով քաւութիւն ե-
զաւ, և օտարական պիտի չ՚ու-
տէ. որովհետև նորանք սուրբ են։
Եւ եթէ [illegible] լցնելու մսիցը և 34
հացիցը մինչև առաւօտը մնայ,
այս աւելացածը կրակով այրես.
նա պիտի չ՚ուտուի, որովհետև
սուրբ է։
Եւ Ահարօնին և նորա որդիներ- 35
ին այսպէս անես, ինչպէս որ բո-
լորը քեզ պատուիրել եմ. եօթը
օրուան մէջ նորանց ձեռքերը
լցնես։ Եւ օրը մէկ զուարակ մեղ- 36
քի պատարագ անես քաւութեան
համար. և սեղանի համար քա-
ւութիւն անես նորան մաքրելով
և նորան օծես սրբելու համար։
Եօթը օր քաւութիւն անես սե- 37
ղանի համար, և նորան սրբես, որ
սեղանը ամենասուրբ լինի. ամեն
ինչ որ սեղանին դպչի՝ սուրբ պի-
տի լինի։
Եւ սա է որ սեղանի վերայ պի- 38
տի անես. միշտ ամեն օր մէկ տա-
րեկան երկու գառ. Մէկ գառը 39
առաւօտանց մատուցանես, և
միւս գառը իրիկուայ դէմ մա-
տուցանես։ Եւ մէկ տասանորդ 40
բարակ ալիւր հիմենի քառորդ
ծեծուած ձէթով զանգուած, և
մէկ հիմենի քառորդ գինի թա-
փելու նուէր մատուցանես մէկ
գառի հետ։ Եւ միւս գառը ի- 41
րիկուայ դէմ զոհես. առաւօտ-
եան հացի ընծայի պէս՝ և նորա
թափելու նուէրի պէս անես նո-
րան՝ անուշահոտ պատարագ Ե-
հովայի համար։ Սա ձեր ազգերի 42
մէջ մշտնջենաւոր ողջակէզ լինի
Եհովայի առաջին ժողովքի խո-
րանի դրանը, ուր ձեզ կ՚հան-
դիպեմ՝ քեզ հետ խօսելու։ Եւ 43
այնտեղ կ՚հանդիպեմ Իսրայէլի

որդիներին, և [illegible] իմ փառ-
44 քովը սուրբ կ՚լինի։ Եւ ժողովքի
խորանն ու սեղանը կ՚սրբեմ. Ա-
հարօնին և նորա որդիներին էլ
կ՚սրբեմ, որ ինձ քահանայու-
45 թիւն անեն։ Եւ Իսրայէլի որդի-
ների մէջ կ՚բնակուեմ, և նո-
46 րանց Աստուած կ՚լինիմ։ Եւ կը
դիտենան, թէ ես եմ նորանց Ե-
հովայ Աստուածը, որ Եգիպտոսի
երկրիցը հանեցի նորանց, որ նո-
րանց մէջ բնակուեմ ես նորանց
Եհովայ Աստուածը։

ԳԼ. Լ.

1 Եւ խունկ ծխելու սեղան շի-
նես. Սատիմի փայտից շինես նո-
2 րան։ Նորա երկայնութիւնը մէկ
կանգուն և նորա լայնութիւնը
մէկ կանգուն. քառակուսի լինի,
և նորա բարձրութիւնը երկու
կանգուն. նորա եղջիւրները իրա-
3 նից լինին։ Եւ նորան մաքուր ոս-
կով պատես՝ նորա մակարդակը՝
նորա պատերը շուրջանակի՝ և
նորա եղջիւրները, և շուրջանակի
ոսկի պսակ շինես նորա համար։
4 Եւ նորա համար երկու ոսկի օ-
ղակներ շինես. պսակի տակիցը
նորա երկու կողքերին երկու
կողմերի վերայ շինես, որ նորան-
ցով նորա վեր առնելու համար
ձողերի [illegible] տեղերը լի-
5 նին։ Եւ ձողերը Սատիմի փայտից
շինես, և նորանց ոսկով պատես,
6 Եւ նորան դնես այն վարագոյրի
առաջին, որ վկայութեան տա-
պանակի դէմ է վկայութեան վե-
րայի քաւութիւնի դիմացը այն-
տեղ ուր ես քեզ կ՚հանդիպեմ։
7 Եւ Ահարօնը նորա վերայ անու-
շահոտ խունկ ծխէ. ամեն առա-
ւօտ ճրագները պատրաստելիս
8 խունկ ծխէ։ Եւ Ահարօնը իրիկ-
ուայ դէմ ճրագները վառելիս
խունկ ծխէ, որ Եհովայի առա-
ջին մշտնջենաւոր խունկ լինի ձեր
9 ազգերի մէջ։ Նորա վերայ օտար
խունկ, կամ ողջակէզ, կամ հա-
ցի ընծայ չ՚մատուցանէք, ոչ էլ
10 նորա վերայ նուէր թափէք։ Եւ
Ահարօնը տարին մէկ անգամ նո-
րա եղջիւրների վերայ քաւու-
թիւն անէ, քաւութիւնների
մեղքի պատարագի արիւնովը տա-
րին մէկ անգամ նորա վերայ
քաւութիւն անէ ձեր ազգերի
մէջ. սա ամենասուրբ է Եհովա-
յի համար։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 11
հետ ասելով. Երբոր Իսրայէլի 12
որդիների գումարը առնելու լի-
նես՝ իրանց թիւին նայելով, այն
ժամանակ նորանց ամեն մէկն իր
անձի փրկանքը տայ Եհովային՝
դու նորանց հաշուելիս, որ նո-
րանց մէջ հարուած չ՚լինի նո-
րանց հաշուելիս։ Այս պիտի 13
տան՝ հաշուի տակ ամեն մէկ
անցնողը կէս սիկղ [illegible] սրբա-
րանի սիկղի համեմատ. մէկ սիկ-
ղը քսան կերատ է. Եհովայի ընծ-
ան կէս սիկղ լինի։ Ամեն հաշ- 14
ուի տակ անցնող քսան տարե-
կանը և էլ աւելին տայ Եհովայի
ընծան։ Ոչ հարուստը աւելի՝ և 15
ոչ աղքատը պակաս պիտի տայ
կէս սիկղից ձեր անձերի համար
քաւութիւն անելու համար Ե-
հովային ընծայ տալիս։ Եւ առ- 16
նես Իսրայէլի որդիներից քաւու-
թեան արծաթը և ժողովքի խո-
րանի պաշտօնին տաս այն, որ Ե-
հովայի առաջին յիշատակ լինի
Իսրայէլի որդիներին՝ ձեր անձե-
րին քաւութիւն անելու համար։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 17
հետ ասելով. Նաև մի պղնձի 18
աւազան շինես լուացման հա-
մար, և նորա խարիսխն էլ պղնձի
լինի. և ժողովքի խորանի և սե-
ղանի մէջտեղը դնես այն, և նո-
րա մէջը ջուր լցնես։ Եւ Ահա- 19
րօնն ու նորա որդիքը իրանց ձեռ-
քերն ու ոտքերը լուանան նորա-
նից։ Ժողովքի խորանը մտնելիս 20
ջրով լուացուին որ չ՚մեռնեն՝
կամ սեղանին մօտենալիս, որ
պաշտօն կատարեն և կրակով Ե-
հովային զոհ մատուցանեն։ Այս- 21
պէս իրանց ձեռքերն ու ոտքերը
լուանան որ չ՚մեռնեն. և սա ի-
րանց համար յաւիտենական կա-
նոն լինի, թէ իր հաւար և թէ
իր սերունդի համար իրանց ազգե-

22 բի մէջ։ Եւ Եհովան խօսեց Մով-
23 սէսի հետ ասելով. Ա՛ռ քեզ
մօտ գլխաւոր համեմներ, զուտ
զմուռա հինգ հարիւր սկլ., և
նորա կէսի չափ՝ այսինքն երկու
հարիւր յիսուն սկլ. անուշահոտ
կինամոն, և երկու հարիւր յի-
սուն սիկղ անուշահոտ խունկե-
24 ղէգն, Եւ հինգ հարիւր սիկղ
կասիայ արրաբանի սիկղի համե-
մատ, և մէկ հիմին ձէթի իւղ.
25 Եւ սուրբ օծման իւղ շինես այն՝
իւղագործի արհեստով բաղա-
դրուած. նա սուրբ օծման իւղ
26 լինի։ Եւ նորանով օծես ժողովքի
խորանը. վկայութեան տապանա-
27 կը, Եւ սեղանը ու նորա ամէն
անօթները. և աշտանակը և նո-
րա գործիքները. և խունկի սե-
28 ղանը, Եւ ողջակէզի սեղանը իր
ամէն գործիքներով հետ մէկտեղ,
և աւազանը և նորա խարխափը։
29 Եւ սրբես նորանց, որ ամենա-
սուրբ լինին. ինչ որ նորանց դպչէ՝
30 սուրբ պիտի լինի։ Եւ Ահարոնին
և նորա որդիներին օծես, և սուրբ
անես նորանց որ ինձ համար քա-
31 հանայութիւն անեն։ Եւ խօսա-
յէլի որդիներուն հետ խօսես՝ ասե-
լով. սա ինձ համար սուրբ օծ-
ման իւղ պիտի լինի ձեր ազգերի
32 մէջ։ Մարդի մարմնի վերայ պի-
տի չ'թափուի նա, և նորա բա-
ղադրութեան պէս նորա նմանը
չ'շինէք. սա սուրբ է, ձեզ հա-
33 մար էլ սուրբ պիտի լինի։ Ով
որ նորա նմանը շինէ, կամ ով
որ նորանից օտարականի վերայ
դնէ, իր ժողովրդիցը պիտի կորչէ։
34 Եւ Եհովան ասեց Մովսէսին.
Ա՛ռ քեզ համար անուշահոտ
համեմներ, այսինքն ստակտէն և
եղունգն և քաղբան, այս անու-
շահոտ համեմները և մաքուր
կնդրուկ. ամէնը հաւասար կըշ-
35 ռով լինին։ Եւ նորանց իւղա-
գործի արհեստով բաղադրեալ
խունկ շինես աղուսած՝ մաքուր
36 սուրբ։ Եւ նորանցից մի փէշ ծե-
ծես շատ բարակ, և դնես ժո-
ղովքի խորանի մէջ վկայութեան-
ը առաջին, ուր ես քեզ կ'հան-
դիպեմ. նա ձեզ համար ամե-
նասուրբ լինի։ Եւ այն խունկը, 37
որ շինելու ես իրան բաղադրու-
թեան համեմատ, դուք ձեզ հա-
մար չ'շինէք. նա քեզ համար
սուրբ պիտի լինի Եհովայի հա-
մար։ Ով որ հոտառելու համար 38
նորա նմանը շինելու լինի, նա իր
ժողովրդիցը պիտի կորչէ։

ԳԼ. Լ Ա

Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ 1
ասելով. Ահա կանչեցի անունով 2
Ուրի որդի Ուրիի որդի Բեսալիէ-
լին Յուդայի ցեղիցը. Եւ լցրի նո-
րան Աստուծոյ Հոգով՝ իմաստու- 3
թիւնով և հանճարով և գիտու-
թիւնով և ամէն ճարտարութիւ-
նով, Որ վարպետի գործեր հնա- 4
րէ՝ ոսկով և արծաթով և պղնձ-
ով գործելու համար. Եւ քա- 5
րեր քանդակել՝ ընդելուզանելու
համար և փայտեր քանդակել՝ ա-
մէն կերպ արհեստով գործելու
համար։ Եւ ես ահա նորա հետ 6
տուի Ահելիաւտայի որդի Որոխիաբը
Դանի ցեղիցը. և ամէն իմաստուն
սիրտ ունեցողի սրտի մէջ իմաս-
տութիւն դրի, որ բոլոր ձեզ
պատուիրածս անեն. Ժողովքի 7
խորանը՝ և վկայութեան տապա-
նակը և նորա վերայի քաւու-
թիւնը՝ և խորանի բոլոր կահաւո-
ները, Եւ սեղանը և նորա անօթ- 8
ները՝ և մաքուր աշտանակը և
նորա բոլոր գործիքները՝ և խունկի սեղանը, Եւ ողջակէզի սեղա- 9
նը և նորա բոլոր գործիքները՝ և
աւազանը ու նորա խարխափը, Եւ 10
պաշտօնի զգեստները՝ և Ահարօն
քահանայի սուրբ զգեստները՝ և
նորա որդիների զգեստները՝ քա-
հանայութիւն անելու համար,
Եւ օծման իւղը՝ և սրբարանի 11
համար անուշահոտ խունկը՝ բո-
լոր ձեզ պատուիրածիս պէս
կ'անեն։

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 12
հետ, և ասեց. Եւ դու խօսիր 13
Իսրայէլի որդիների հետ ասելով.
Անպատճառ իմ շաբաթներս պա-
հէք. որովհետև սա մի նշան է
իմ և ձեր մէջտեղը ձեր ազգերի

մէջ, որ գիտենաք, թէ ես եմ
14 Եհովան ձեզ սուրբ անողը։ Ու-
րեմն շաբաթը պահեցէք. որով-
հետև նա ձեզ համար սուրբ է.
ով որ նորան պղծէ անպատճառ
պիտի մեռցնուի. որովհետև ա-
մէն ով որ այն օրը մի գործ գոր-
ծէ, այն անձը իր ժողովրդի մի-
15 ջից կորչէ։ Վեց օր գործ գոր-
ծուի, բայց եօթներորդ օրը հան-
գստութեան շաբաթը՝ սուրբ
պիտի լինի Եհովայի համար. ով
որ հանգստութեան օրը մի գործ
գործէ, անպատճառ պիտի մեռ-
16 ցնուի։ Եւ Իսրայէլի որդիքը պի-
տի պահեն շաբաթը, որ շաբաթը
իրանց ազգերի մէջ յաւիտենա-
17 կան ուխտ անեն։ Նա յաւիտենա-
կան նշան է իմ և Իսրայէլի որդի-
ների մէջտեղը. որովհետև Եհո-
վան վեց օրուայ մէջ սահմեց եր-
կինքն ու երկիրը, և եօթներորդ
օրը դադարեց և հանգստացաւ։
18 Եւ երբոր Սինա սարի վերայ
Մովսէսի հետ խօսելը վերջացրեց,
վկայութեան երկու տախտակնե-
րը տուաւ նորան՝ քարի տախ-
տակներ Աստուծոյ մատովը գրե-
ալած։

ԳԼ. Լ Բ

Եւ ժողովուրդը տեսաւ, որ Մով- 1
սէսը ուշացաւ սարիցն իջնելու,
և Ահարոնի մօտ ժողովուեցաւ
ժողովուրդը և ասեցին նորան.
Վեր կաց մեզ համար աստուած-
ներ շինիր որ մեր առաջին գնան.
որովհետև այդ Մովսէս մարդը,
որ մեզ Եգիպտոսի երկրիցը հա-
նեց, չ'գիտենք թէ ինչ եղաւ նո-
2 րան։ Եւ Ահարոն ասեց նորանց.
Ձեր կանանց, ձեր որդիների և
ձեր աղջկերանց ականջներին ե-
ղած ոսկի օղերը հանեցէք, և ինձ
3 մօտ բերէք։ Եւ բոլոր ժողովուրդն
իրանց ականջներին եղած ոսկի
օղերը հանեցին և Ահարոնի մօտ
4 բերին։ Եւ նա առաւ նորանց
ձեռքիցը և քանդակագործիով
ձեւակերպեց նորան և շինեց մի
ձուլածոյ որթ։ Եւ ասեցին. Սո-
րանք են քո աստուածները՝ ով
Իսրայէլ, որ քեզ Եգիպտոսի երկ-
րիցը հանեցին։ Եւ Ահարոնը տես- 5
նելով նորա առաջին սեղան շի-
նեց. և Ահարոնը կանչել տուաւ՝
ասելով. Էղուց մեծ է Եհովայի
համար։ Եւ հետևեալ առաւօտ- 6
եան կանուխ վեր կացան, և ող-
ջակէզներ մատուցրին, և խաղա-
ղութեան զոհեր բերին. և ժողո-
վուրդը նստաց ուտելու և խմե-
լու և վեր կացան խաղալու։
Եւ Եհովան ասեց Մովսէսին. 7
Գնա իջիր. որովհետև ապականե-
ուեցաւ քո ժողովուրդը՝ որ Եգ-
իպտոսի երկրիցը հանեցիր. Շու- 8
տով խոտորեցին այն ճանապար-
հիցը, որ իրանց պատուիրեցի. ի-
րանց համար ձուլածոյ որթ շի-
նեցին, և նորան երկրպագութիւն
արին, և նորան զոհեր մատուց-
րին, և ասեցին. Սորանք են քո
աստուածները, ով Իսրայէլ, որ
քեզ Եգիպտոսի երկրիցը հանե-
ցին։ Եւ Եհովան ասեց Մովսէսին. 9
Այս ժողովուրդը տեսայ, և ահա
խստապարանոց ժողովուրդ է նա։
Եւ հիմա թող սաբ իմ 10
բարկութիւնը նորանց վերայ բոր-
բոքուի և փչացնեմ նորանց. և
քեզ մեծ ազգ շինեմ։ Եւ Մով- 11
սէսն իր Եհովայ Աստուծոյ առաջին աղաչեց, և ասեց. Ով Եհո-
վայ, ինչո՞ւ քո բարկութիւնը
բորբոքուի քո ժողովրդի վերայ,
որ Եգիպտոսի երկրիցը հանեցիր
մեծ զօրութիւնով և զօրաւոր
ձեռքով։ Ինչո՞ւ համար Եգիպ- 12
տացիք խօսեն և ասեն. Թէ չա-
րութեան համար հանեց նորանց,
որ սարերուն մէջ մեռցնէ նորանց և
երկրի երեսիցը փչացնէ նորանց.
դարձիր քո սաստիկ բարկութի-
նիցը, և ետ առ այս չարիքը քո
ժողովրդի վերայից։ Յիշիր քո ծա- 13
ռաներ՝ Աբրահամին, Իսահակին
և Իսրայէլին, որոնց դու երդում
արիր քո անձովը, և ասեցիր նո-
րանց. Ձեր սերունդը երկնքի
աստղերի պէս պիտի շատացնեմ,
և բոլոր այս երկիրը՝ որի մասին
խօսեցի, ձեր սերունդին պիտի
տամ, ու պիտի ժառանգեն յա-
ւիտեան։ Եւ Եհովան ետ առաւ 14

այն չարիքը, որ ասել էր, թէ
իր ժողովրդին պիտի անէր։
15 Եւ Մովսէսը դարձաւ և սա-
րիցն իջաւ, և վկայութեան եր-
կու տախտակները ձեռքին էին.
տախտակներն երկու կողմերիցը
գրուած էին. այս կողմից և այն
16 կողմից գրուած էին նորանք։ Եւ
տախտակներն Աստուծոյ գործք
էին, և գրուածքն Աստուծոյ գրր-
ուածք էր տախտակների վերայ
17 փորագրուած։ Եւ Յեսուն լսեց
ժողովրդի ձայնը գոռալիս, և ա-
սեց Մովսէսին. Պատերազմի ձայն
18 կայ բանակումը։ Եւ նա ասեց.
Սա յաղթութեան աղաղակի ձայն
չէ, և պարտութեան աղաղակի
ձայն չէ. այլ խաղի ձայն եմ լը-
19 սում ես։ Եւ եղաւ երբոր բա-
նակին մօտեցաւ և տեսաւ որթը
և պարելը, Մովսէսի բարկութիւ-
նը բորբոքուեց, և տախտակներն
իր ձեռքիցը շպրտեց. և կոտրա-
20 տեց նորանց սարի տակին։ Եւ ա-
ռաւ նորանց շինած որթը և կրա-
կով այրեց, և մանրեց մինչև որ
փոշի արաւ, և ջրի վերայ ցանեց,
և խմեցրեց Իսրայէլի որդիներին։
21 Եւ Մովսէսն ասեց Ահարօնին.
Ա՛ս ժողովուրդն ի՞նչ արաւ քեզ,
որ նորանց վերայ բերիր այս մեծ
22 մեղքը։ Եւ Ահարօնն ասեց. Թող
իմ տիրոջ բարկութիւնը չ՚բոր-
բոքուի. դու գիտես այս ժողո-
վրդին՝ որ չարին հակամիտեալ են.
23 Եւ ինձ ասեցին. Թէ՝ Մեզ հա-
մար աստուածներ շինիր որ մեր
առաջին գնան, որովհետև այս
Մովսէս մարդը՝ մեզ Եգիպտոսի
երկրից հանողը՝ չ՚գիտենք թէ նո-
24 րան ինչ եղաւ։ Եւ ես ասեցի
նորանց. Ով որ ոսկի ունի, թող
հանէ, և բերեն ինձ մօտ. և ես
կրակը գցեցի այն և դուրս եկաւ
այս որթը։
25 Եւ Մովսէսը տեսաւ ժողովուր-
դը որ անզուսպ է, (որովհետև
Ահարօնը անզուսպ էր արել նո-
րանց իրանց թշնամիների մէջ
26 խայտառակ լինելու համար։) Եւ
Մովսէսը բանակի դրանը կանգ-
նեց, և ասեց. Ով որ Եհովայինն
է՝ ինձ մօտ գայ. և Ղևիի բոլոր
որդիքը նորա մօտ ժողովուեցան։
Եւ ասեց նորանց. Այսպէս է ա- 27
սում Իսրայէլի Եհովայ Աստուա-
ծը. Ամեն մարդ իր սուրը թող
մէջքը կապէ, և բանակի մէջ
դռնէ դուռ անցէք դարձէք, և
ամեն մարդ իր եղբօրը, և ամեն
մարդ իր ընկերին, ամեն մարդ իր
դրացուն մեռցնէ։ Եւ Ղևիի որ- 28
դիքը Մովսէսի խօսքին պէս արին.
և այն օրը ժողովրդիցն երեք հա-
զար մարդի չափ ընկան։ Որովհե- 29
տև Մովսէսն ասեց. Այսօր ձեր
ձեռքը լցրէք Եհովայի համար
հէնց ամեն մէկն իր որդու վերայ՝
և իր եղբօր վերայ, որ ձեր վե-
րայ օրհնութիւն տայ այսօր։
Եւ եղաւ հետևեալ օրը, որ 30
Մովսէսն ասեց ժողովրդին. Դուք
մեծ մեղք գործեցիք. և հիմա Ե-
հովայի մօտ պիտի վեր գնամ,
գուցէ քաւութիւն անեմ ձեր
մեղքի համար։ Եւ Մովսէսը ետ 31
դարձաւ Եհովայի մօտ և ասեց.
Ոհ, այս ժողովուրդը մեծ մեղք
գործեց, և իրանց համար ոսկի
աստուածներ շինեցին։ Բայց հիմա 32
եթէ նորանց մեղքերը ներես՝ նե-
րէր, եթէ ոչ՝ աղաչում եմ ջնջիր
ինձ քո գրած գրքիցը։ Եւ Եհո- 33
վան ասեց Մովսէսին. Ով որ ինձ
դէմ մեղանչել է, ես նորան կը
ջնջեմ իմ գրքիցը։ Իսկ հիմա 34
գնա, ժողովրդին տար այնտեղ, որ
քեզ ասեցի. ահա իմ հրեշտա-
կը կ՚գնայ քո առաջին. բայց այ-
ցելութիւն անելու օրս՝ նորանց
մեղքը իրանց վերայ պիտի բե-
րեմ։ Եւ Եհովան զարկեց ժո- 35
ղովրդին, այն իրանց շինած որթի
համար որ Ահարօնը շինեց։

ԳԼ. ԼԳ

Եւ Եհովան ասեց Մովսէսին. 1
Վեր կաց այստեղից դու և այն
ժողովուրդն որ Եգիպտոսի երկ-
րիցը հանեցիր, և գնա այն երկի-
րը՝ որի համար երդում արի Աբ-
րահամին, Իսահակին և Յակոբին՝
ասելով. Քո սերունդին պիտի
տամ նորան։ Եւ քո առաջին 2
մէկ հրեշտակ կ՚ուղարկեմ. և

դուրս կ՚անեմ Քանանացին, Ա-
մօրհացին, Քետացին, Փերեզա-
ցին, Խևացին և Յեբուսացին.
3 Կաթ ու մեղր բղխող երկիրը.
որովհետև ես ձեր մէջը վեր չեմ
գնալ, նորա համար որ դու մի
խստապարանոց ժողովուրդ ես.
մի գուցէ քեզ ճանապարհումը
բնաջինջ անեմ։
4 Եւ ժողովուրդը լսեց այս խիստ
խօսքը և սուգ արին. և ոչ մէկն
5 իր զարդն իր վերայ չ՚դրաւ. Ո-
րովհետև Եհովան ասել էր Մով-
սէսին. Ասիր Իսրայէլի որդինե-
րին. Դուք մի խստապարանոց
ժողովուրդ էք. եթէ մէկ րոպէ
ձեր մէջը վեր գնալու լինիմ, ձեզ
բնաջինջ կ՚անեմ. և հիմա ձեր
վերայից ձեր զարդերը վեր ա-
ռէք, որ իմանամ, թէ ձեզ ինչ
6 պիտի անեմ։ Եւ Իսրայէլի որ-
դիքն իրանց զարդերը հանեցին
Քորեբ սարի մօտ։
7 Եւ Մովսէսն առաւ խորանը,
և բանակիցը դուրս բանակիցը
հեռու կանգնեցրեց նորան և նո-
րա անունը՝ ժողովքի խորան դր-
բաւ. և ամեն ով որ Եհովային
խնդրում էր, բանակիցը դուրս
էր գնում ժողովքի խորանի մօտ,
8 որ բանակիցը դուրս էր։ Եւ Մով-
սէսը խորանը գնալիս բոլոր ժո-
ղովուրդը վեր էր կենում և ա-
մեն մէկն իր վրանի դրանը կանգ-
նում, և Մովսէսի ետևիցը մտիկ
տալիս նայում. մինչև որ նա խո-
9 րանն էր մտնում։ Եւ հէնց որ
Մովսէսը խորանն էր մտնում՝
ամպի սիւնը իջնում էր. և խո-
րանի դրանը կանգնում, և Եհո-
վան Մովսէսի հետ խօսում էր։
10 Եւ բոլոր ժողովուրդը տեսնում
էր ամպի սիւնը խորանի դրանը
կանգնած. և բոլոր ժողովուրդը
վեր էր կենում, և ամեն մէկն
իր վրանի դրան երկրպագութիւն
11 էր անում։ Եւ Եհովան խօսում
էր Մովսէսի հետ դէմ առ դէմ,
ինչպէս մի մարդ իր բարեկամի
հետ կ՚խօսէ. և Մովսէսը բանակն
էր դառնում. բայց նորա ծառան
Նաւէի որդի Յեսու պատանին
խորանի միջիցը չէր հեռանում։

Եւ Մովսէսն ասեց Եհովային. 12
Նայիր՝ դու ասում ես ինձ. Հա-
նիր այս ժողովուրդը. բայց դու
ինձ չ՚իմացրիր, թէ ում ես ինձ
հետ ուղարկելու. և դու ասե-
ցիր. Քեզ ճանաչում եմ քո ա-
նունովը, և իմ առաջին շնորհք
գտար։ Եւ հիմա աղաչում եմ, 13
եթէ քո առաջին շնորհք գտայ՝
խնդրեմ ինձ իմացրու քո ճանա-
պարհները՝ որ ճանաչեմ քեզ,
որ քո առաջին շնորհք գտնեմ.
և տես որ այս ազգը քո ժողո-
վուրդն է։ Եւ նա ասեց. Իմ ե- 14
րեսը պիտի գնայ, և ես քեզ կը
հանգստացնեմ։ Եւ Մովսէսն ա- 15
սեց նորան. Եթէ քո երեսը մեզ
հետ չ՚գնայ, մեզ այս տեղից մի
հանիր։ Եւ ինչով պիտի գիտցուի, 16
թէ շնորհք գտայ քո առաջին
ես և քո ժողովուրդը. չէ՞ որ քո
մեզ հետ գնալովը. և այսպէս ես
և քո ժողովուրդը երկրի երեսի
վերայ եղած բոլոր ժողովուրդնե-
րիցը կ՚գերազանցենք։
Եւ Եհովան ասեց Մովսէսին. 17
Այս բանն էլ կ՚անեմ որ ասե-
ցիր, որովհետև իմ առաջին շը-
նորհք գտար. և ես քեզ ճանա-
չում եմ քո անունովը։ Եւ նա 18
ասեց. Աղաչում եմ՝ քո փառ-
քը ցոյց տուր ինձ։ Եւ Եհովան 19
ասեց. Իմ բոլոր բարութիւնը քո
առջևից պիտի անցկացնեմ, և
Եհովայի անունը քո առաջին պի-
տի կանչեմ, և որին որ ողորմեմ
կ՚ողորմեմ, և որի վերայ որ գը-
թամ կ՚գթամ։ Եւ ասեց. Դու 20
իմ երեսը չես կարող տեսնել.
որովհետև մարդ չէ կարող ինձ
տեսնել և ապրել։ Եւ Եհովան 21
ասեց. Ահա ինձ մօտ մի տեղ
կայ. և այդ ժայռի վերայ կանգ-
նիր. Եւ կ՚լինի որ իմ փառքն 22
անցկենալիս, քեզ ժայռի խոռո-
չի մէջ կ՚դնեմ, և քեզ իմ ձեռ-
քովը կ՚ծածկեմ, մինչև որ ես
անցնեմ. Յետոյ իմ ձեռքը վեր 23
կ՚առնեմ, և իմ ետևը կ՚տես-
նես, բայց իմ երեսը չի տես-
նուիլ։

ԳԼ. ԼԴ

1 Եւ Եհովան ասեց Մովսէսին.
Քեզ համար երկու քարի տախ-
տակներ կոփիր առաջիններին պէս.
և այն տախտակների վերայ պի-
տի գրեմ այն խօսքերը, որ ա-
ռաջի տախտակների վերայ էին,
2 որոնք դու կոտրատեցիր։ Եւ ա-
ռաւօտուայ համար պատրաստ
եղիր, և առաւօտանց Սինայ սա-
րը ելիր և այնտեղ սարի գլխին
3 իմ առաջին կանգնիր։ Եւ ոչ
մէկը վեր չ'ելնէ քեզ հետ, և
ոչ մէկը չ'տեսնուի բոլոր սարի
վերայ, և ոչ էլ մի ոչխար կամ
արջառ արածէ այդ սարի ստո-
րոտումը։
4 Եւ նա երկու քարի տախտակ-
ներ կոփեց առաջիններին պէս,
և Մովսէսն առաւօտանց կանուխ
վեր կացաւ, և վեր ելաւ Սինայ
սարը ինչպէս որ Եհովան իրան
պատուիրել էր. և երկու քարի
տախտակներն իր ձեռքն առաւ։
5 Եւ Եհովան ամպով իջաւ, և այն
տեղ նորա մօտ կանգնեց. և Ե-
6 հովայի անունը կանչեց։ Եւ Եհո-
վան նորա առջևիցն անցաւ, և
կանչեց. Եհովայ Եհովայ՝ Աստ-
ուած ողորմած և գթած՝ երկայ-
նամիտ և առատ ողորմութիւ-
7 նով և ճշմարտութիւնով, Որ
հազարների ողորմութիւն ես ա-
նում, որ անօրէնութիւն՝ յան-
ցանք և մեղք ես ներում, բայց
յանցաւորին բնաւ անպարտ չես
թողում, որ հայրերի անօրէ-
նութիւնը հատուցանում ես որ-
դիների վերայ և որդոց որդիներ-
ի վերայ՝ մինչև երրորդ և չոր-
8 րորդ ազգը։ Եւ Մովսէսը շտա-
պելով մինչև դետինը խոնար-
հուեց և երկրպագութիւն արաւ,
9 Եւ ասեց. Ով Տէր, աղաչում
եմ՝ եթէ քո առաջին շնորհք
գտայ, խնդրեմ թող իմ Տէրը
մեզ հետ գնայ, որովհետև սա
մի խստապարանոց ազգ է. և
ներիր մեր անօրէնութիւնը և
մեր մեղքերը, և մեզ քո ժա-
ռանգութիւնը շինիր։
10 Եւ Եհովան ասեց. Ահա ես
ուխտ եմ դնում. քո բոլոր ժո-
ղովրդի առաջին այնպիսի սքան-
չելիքներ պիտի անեմ, որ բոլոր
երկրի վերայ և բոլոր ազգերի մէջ
չեն եղած. և բոլոր ժողովուրդը՝
որի մէջ դու կաս, պիտի տես-
նեն Եհովայի գործը. որովհետև
հիանալի է այն բանը՝ որ քեզա-
նով պիտի անեմ։ Միտքդ պա- 11
հիր ինչ որ ես քեզ պատուիրում
եմ այսօր. ահա պիտի քշեմ քո
առջևից Ամօրհացին՝ Քանանացին՝
և Քետացին և Փերեզացին՝ և
Խևացին և Յեբուսացին։ Զգուշա- 12
ցիր, մի գուցէ քո գնալու երկրի
բնակիչների հետ ուխտ դնես, որ
նա քո մէջ որոգայթ չ'դառնայ.
Այլ նորանց բագինները կործա- 13
նէք, և նորանց կուռքերը փշրէք,
և նորանց Աստարովթները կոտ-
րատէք։ Որովհետև ուրիշ աս- 14
տուծոյ երկրպագութիւն պիտի
չ'անես. նորա համար որ Եհովայի
անունը Նախանձոտ է, նախան-
ձոտ Աստուած է նա։ Մի գուցէ 15
այն երկրի բնակիչների հետ ուխտ
դնես, և նորանք իրանց աստուած-
ների ետևից գնալով պոռնկու-
թիւն անելիս և իրանց աստուած-
ներին զոհ անելիս քեզ կանչեն,
և դու նորանց զոհիցն ուտես. Եւ 16
առնես նորանց աղջիկներիցը քո
որդիներին, և նորանց աղջիկներն
իրանց աստուածների ետևից գը-
նալով՝ պոռնկութիւն անելիս քո
որդիներին պոռնկութիւն անել
տան իրանց աստուածների ետև-
ից գնալ տալով։ Զուլածոյ 17
աստուածներ չ'շինես քեզ համար։
Բաղարջակերաց տօնը պահես. 18
եօթը օր բաղարջ ուտես ինչպէս
որ պատուիրել եմ քեզ Աբիբ
ամսուայ որոշ ժամանակին, որով-
հետև Աբիբ ամսումն Եգիպտո-
սիցը դուրս եկար։
Ամեն մօր արգանդը բացողը իմն 19
է. և քո անասունների մէջ ամեն
արու առաջինեկն Էլ թէ արջառ
լինի և թէ ոչխար իմն է։ Բայց էշի 20
առաջինեկը գառնով փրկես. և
եթէ չ'փրկես, այն ժամանակ նո-
րա վիզը կոտրես։ Քո որդկանց
ամեն առաջինեկը փրկես. և իմ

առաջին ձեռնունայն չ'երևան։
21 Վեց օր պիտի գործես, և եօթ-
ներորդ օրը հանգստանաս. վա-
րուցանքին և հունձքին հանգըս-
տանաս։
22 Եւ շաբաթների՝ այսինքն ցո-
բենի հունձքի երախայրիների տօ-
նը. և տարուայ վերջը՝ արմտիքները
ժողովելու տօնը կատարես։
23 Տարին երեք անգամ քո ամեն
արու զաւակը Իսրայէլի Աստ-
ուած՝ Տէր Եհովայի առաջին ե-
24 րևայ։ Որովհետև քո առջևից
ազգերը պիտի քշեմ, և քո սահ-
մանները պիտի ընդարձակեմ. ոչ
ոք քո երկրին պիտի չ'ցանկանայ՝
տարին երեք անգամ քո Եհովայ
Աստուծոյ առաջին երևալու վեր
ելած ժամանակդ։
25 Իմ զոհի արիւնը խմորեալ հա-
ցի վերայ չ'թափես, և զատկի
տօնի զոհը մինչև առաւօտ չ'մը-
26 նայ։ Քո երկրի երախայրիների ա-
ռաջինները քո Եհովայ Աստու-
ծոյ տունը բերես։
Ուլն իր մօր կաթի մէջ չ'եփես։
27 Եւ Եհովան ասեց Մովսէսին.
Այս խօսքերը գրիր քեզ համար.
որովհետև այս խօսքերի համե-
մատ ուխտ դրի քեզ հետ և Իս-
րայէլի հետ։
28 Եւ նա այնտեղ մնաց Եհովայի
հետ քառասուն օր և քառասուն
գիշեր, հաց չ'կերաւ՝ և ջուր
չ'խմեց. և տախտակների վերայ
գրեց ուխտի խօսքերը՝ այսինքն
տասը պատուիրանքները։
29 Եւ եղաւ երբոր Մովսէսը Սի-
նայ սարիցն իջնում էր, վկայու-
թեան երկու տախտակները Մով-
սէսի ձեռքին էին սարիցն իջնե-
լիս. և Մովսէսը չ'գիտէր թէ իր
երեսի մորթը լուսափայլում էր
30 Եհովան իր հետ խօսելիս։ Եւ Ա-
հարօնն ու Իսրայէլի բոլոր որդի-
քը տեսան Մովսէսին, և ահա նո-
րա երեսի մորթը լուսափայլ էր,
և վախեցան նորան մօտենալու։
31 Եւ Մովսէսը կանչեց նորանց, և
Ահարօնը և ժողովքի բոլոր իշ-
խանները նորա մօտ դարձան, և
32 Մովսէսը խօսեց նորանց հետ։ Եւ
սորանից յետոյ Իսրայէլի բոլոր
որդիքը մօտեցան. և նա պատուի-
րեց նորանց ամեն ինչ որ Եհո-
վան խօսել էր իր հետ Սինայ
սարումը։ Եւ Մովսէսը վերջա- 33
ցրեց նորանց հետ խօսելը և իր
երեսին քօղ էր դրել։ Բայց Մով- 34
սէսը Եհովայի առաջին նորա հետ
խօսելու մտնելիս մինչև դուրս
գալը քօղը վեր էր առնում և
դուրս էր գալիս ու իրան պատ-
ուիրուածը ասում էր Իսրայէլի
որդիներին։ Եւ Իսրայէլի որդիքը 35
Մովսէսի երեսը տեսնում էին, որ
Մովսէսի երեսի մորթը լուսա-
փայլ էր. և Մովսէսն իր երեսը
քօղով ծածկում էր՝ մինչև Նո-
րա հետ խօսելու մտնելը։

ԳԼ. ԼԵ

Եւ Մովսէսը ժողովեց Իսրայէլի 1
որդիների բոլոր ժողովքը, և ա-
սեց նորանց. Սորանք են այն բա-
ները որ Եհովան պատուիրեց որ
անէք նորանց։ Վեց օր գործ 2
գործուի, բայց եօթներորդ օրը
սուրբ լինի ձեզ համար՝ այսինքն
հանգստութեան շաբաթ Եհովա-
յի համար. այն օրը գործ գոր-
ծողը պիտի մեռցնուի. Շաբաթ 3
օրը ձեր բոլոր բնակարաններումը
կրակ չ'վառէք։
Եւ Մովսէսը խօսեց Իսրայէլի 4
որդկանց բոլոր ժողովքի հետ ա-
սելով. Այս է այն բանը որ Եհո-
վան պատուիրեց ասելով. Ձեր 5
միջիցն ընծայ առէք Եհովայի հա-
մար. ով որ սրտով կ'յօժարուի՝
թող Եհովային ընծան բերէ, ոս-
կի և արծաթ և պղինձ, Եւ կա- 6
պուտակ ռ ծիրանեգոյն և կրկ-
նակի կարմիր և բարակ քթան և
այծի մազ, Եւ կարմիր ներկուած 7
խոյի մորթեր, և թէհաշի մոր-
թեր և Սատիմի փայտեր, Եւ 8
լոյսի համար իւղ, և համեմներ
օծման իւղի համար և անուշա-
հոտ խունկի համար, Եւ եղընդ- 9
նաքարեր և ընդելուզանելու քա-
րեր եփուդի համար և լանջա-
պանակի համար։ Եւ ձեզանում 10
ամեն սրտով իմաստուն եղողնե-
րը թող գան, և շինեն Եհովայի

11 բոլոր պատուիրած բաները, խո-
րանը, նորա վրանը, նորա ծած-
կոցը, նորա ճարմանդները, և նո-
րա տախտակները, նորա նիգերը,
նորա սիւները և նորա խարիսխ-
12 ները, Տապանակը և նորա ձողե-
րը, քաւութիւնը, և ծածկող
13 վարագոյրը, Եւ սեղանը և նորա
ձողերը և նորա բոլոր անօթները,
14 և առաջաւորութեան հացը, Եւ
լոյսի աշտանակը և նորա գոր-
ծիքները և նորա ճրագները և
15 լոյսի իւղը, Եւ խունկի սեղանը
և նորա ձողերը, և օծման իւղը,
և անուշահոտ խունկը, և խորա-
16 նի դրան սրահակը, Ողջակէզի
սեղանը և նորա պղնձի ցանցաՒԷՐԴ
գահաւորակը, նորա ձողերը և
նորա բոլոր գործիքները, աւազա-
17 նը և նորա խարիսխը, Սրահի ա-
ռագաստները, նորա սիւները և
խարիսխները և սրահի դրան վա-
18 րագոյրը, Խորանի ցիցերը և սրա-
հի ցիցերը և նորանց չուանները,
19 Պաշտօնի զգեստները՝ սրբարա-
նումը պաշտելու համար, Ա Ա-
հարօն քահանայի սուրբ զգեստ-
ները և նորա որդիների զգեստնե-
րը, որ քահանայութիւն անեն։
20 Եւ Իսրայէլի որդիների բոլոր
ժողովքը Մովսէսի առաջին գը-
21 նացին։ Եւ ամեն յօժարասիրտ
եղողը և ամեն բոլոր հոգով կա-
մեցողը եկան, և ժողովքի խորա-
նի գործի համար՝ և նորա բոլոր
պաշտօնի համար՝ և սուրբ զգ-
եստների համար Եհովայի ը-
22 ծան բերին։ Եւ եկան մարդիկ և
կանայք՝ ամեն ով որ սրտով կա-
մեցող կար, Ա բերին դինդեր և
օղեր և մատանիներ և կշտապա-
նակներ՝ ամեն տեսակ ոսկի զար-
դեր և ամեն ով որ ոսկի ընծայ
23 ընծայեց Եհովային։ Եւ ամեն
ով, որի մօտ որ գտնվում էր
կապուտակ և ծիրանեգոյն և
կրկնակի կարմիր և բարակ քը-
թան և այծի մազ և կարմիր
ներկուած խոյի մորթեր և թէ-
24 հաշի մորթեր, բերին։ Ամեն ար-
ծաթ և պղինձ ընծայ տուողը՝
Եհովային ընծան բերաւ, և ամեն
ով, որի մօտ որ գտնվում էր
պաշտօնի ամեն գործի համար
Սատիմի փայտեր, բերին։ Եւ ա- 25
մեն սրտով իմաստուն եղող կա-
նայքն իրանց ձեռքերովը մանե-
ցին, և իրանց մանած կապուտա-
կը, ծիրանեգոյնը, կրկնակի կար-
միրը և բարակ քթանը բերին։
Եւ բոլոր սրտով փափաքող և 26
յաջողակութիւն ունեցող կա-
նայքը այծի մազ մանեցին։ Եւ 27
իշխանները՝ եղնգնաքարեր, և ե-
փուդի և լանջապանակի համար
ընդելուզանելու քարեր բերին։
Նաև լոյսի համար՝ և օծման իւ- 28
ղի համար՝ և անուշահոտ խուն-
կի համար՝ համեմներ և իւղ։
Ամեն մարդ և կին՝ որոնք յօժա- 29
րութիւն ունէին բերելու ամեն
ՒԷՐԴ գործի համար՝ որ Մովսէսի
ձեռքովը պատուիրեց որ շինուի,
Իսրայէլի որդիքը յօժարակամ
ընծայ բերին Եհովային։
Եւ Մովսէսն ասեց Իսրայէլի 30
որդիներին. Տեսէք, Եհովան Ովրի
որդի Ուրիի որդի Բեսելիէլին կան-
չեց Յուդայի ցեղիցը՝ անունովը։
Եւ լցրեց նորան Աստուծոյ Հոգո- 31
վը՝ իմաստութիւնով՝ հանճարով՝
և գիտութիւնով՝ և ամեն ՒԷՐԴ
ճարտարութիւնով, Որ վարպե- 32
տի գործեր հնարելով՝ ոսկու և
արծաթի և պղնձի վերայ գործէ.
Եւ ընդելուզանելու համար քա- 33
րեր քանդակէ. և փայտեր քան-
դակէ և ամեն կերպ վարպետի
գործ գործէ։ Եւ նորա սրտի մէջ 34
դրաւ որ սովորեցնէ էլ, նորա էլ՝
և Դանի ցեղիցն Աքիսամայի որ-
դի Ողիաբին էլ։ Սրտի իմաս- 35
տութիւնով լցրեց նորանց, որ ա-
մեն տեսակ գործ գործող և հը-
նարքներ հնարող քանդակագոր-
ծի և արուեստաւորի գործը՝ նաև
կապուտակի և ծիրանեգոյնի՝ և
կրկնակի կարմիրի՝ և բարակ քը-
թանի վերայ նկարագործողի և
ոստայնանկի գործն անեն։

ԳԼ. ԼԶ

Եւ արին Բեսելիէլը ու Ողիա- 1
բը և ամեն սրտով իմաստուն ե-
ղողը՝ որոնց Եհովան իմաստու-

թիւն և հանճար տուաւ որ գի-
տենան սրբարանի պաշտօնի ամեն
կերպ գործքերը անելու, Եհովա-
յի բոլոր պատուիրածին պէս։
2 Եւ Մովսէսը կանչեց Բեսելիէլին
և Ողիաբին և ամեն սրտով ի-
մաստուն եղողին՝ որի սրտի մէջ
Եհովան իմաստութիւն դրաւ,
այսինքն այն ամենը որի սիրտը
փափաքում էր գործի մօտենալ
3 որ գործէ նորան։ Եւ առին Մով-
սէսիցը բոլոր ընծաները՝ որ Իս-
րայէլի որդիքը բերին սրբարանի
պաշտօնի գործը անելու համար։
Եւ նորանք տակաւին ամեն ա-
ռաւօտ կամաւոր ընծաներ էին
բերում նորա մօտ։
4 Եւ սրբարանի ամեն գործը ա-
նող բոլոր իմաստուն մարդիկը՝
ամեն մէկն եկաւ իր գործիցը որ
5 անում էր. Եւ խօսեցին Մովսէ-
սի հետ ասելով, Ժողովուրդը ա-
ւելի է բերում՝ քան թէ պէտք
էր այն գործի համար որ Եհո-
6 վան պատուիրել է շինել։ Եւ
Մովսէսը պատուիրեց քարոզ
կարդալ բանակի մէջ՝ ասելով.
Այլ ևս ոչ մարդ՝ ոչ կին մի գործ
չ՝գործեն սրբարանի ընծայի հա-
մար։ Եւ ժողովուրդը բերելուց
7 դադարեց։ Եւ նիւթը բաւական
էր այն բոլոր գործը շինելու հա-
մար, և աւելացաւ։
8 Եւ խորանի գործն անողներից
բոլոր սրտով իմաստուն եղողնե-
րը տասը վարագոյր շինեցին ման-
ուած բարակ քթանից և կա-
պուտակից և ծիրանեգոյնից և
կրկնակի կարմիրից ճարտարա-
գործ քերովբէներով շինեցին նո-
9 րանց։ Մէկ վարագոյրի երկայ-
նութիւնը քսանևութը կանգուն՝
և մէկ վարագոյրի լայնութիւնը
չորս կանգուն. ամեն վարագոյր-
10 ների համար չափը մէկ էր։ Եւ
հինգ վարագոյրը իրար կցեց, և
հինգ վարագոյրն էլ իրար կցեց։
11 Եւ կցուածքի ծայրի մէկ վարա-
գոյրի եղերքի վերայ կապուտա-
կից օղակներ շինեց. միւս կցը-
ուածքի ծայրի վարագոյրի եղերքն
12 էլ այնպէս արաւ։ Մէկ վարա-
գոյրի վերայ յիսուն օղակ շինեց.
և միւս կցուածքի վերան եղած
վարագոյրի ծայրին էլ յիսուն
օղակ շինեց. օղակները դէմ ու
դէմ էին։ Եւ յիսուն ոսկի ճար- 13
մանդներ շինեց. և վարագոյրները
ճարմանդներով իրար հետ կոճա-
կեց. ու խորանը մէկ դառաւ։
Եւ վրանի համար այծի մազից 14
վարագոյրներ շինեց նորան վերայ,
տասնևմէկ վարագոյր շինեց նո-
րանց։ Մէկ վարագոյրի երկայնու- 15
թիւնը երեսուն կանգուն՝ և մէկ
վարագոյրի լայնութիւնը չորս
կանգուն, տասնևմէկ վարագոյրի
չափը մէկ էր։ Եւ հինգ վարա- 16
գոյրները առանձին և վեց վարա-
գոյրները առանձին կցեց։ Եւ յի- 17
սուն օղակներ շինեց մէկ վարա-
գոյրի եղերքի վերայ կցուածքի
մօտ, և յիսուն օղակ միւս կցը-
ուածքի մօտ եղած վարագոյրի
եղերքի վերայ։ Եւ պղնձի յիսուն 18
ճարմանդներ շինեց, որ վրանը կո-
ճակէ, և մէկ լինի։ Եւ վրանի 19
համար մի ծածկոց շինեց կարմիր
ներկուած խոյի մորթերից, և թէ-
հաշի մորթերից մի ծածկոց էլ
նորա վերայով։
Եւ խորանի համար Սատիմի 20
փայտից կանգնած տախտակներ
շինեց։ Մէկ տախտակի երկայնու- 21
թիւնը տասը կանգուն՝ և մէկ
տախտակի լայնութիւնը մէկուկէս
կանգուն։ Ամեն մէկ տախտակը 22
երկու սփռիչ ունէր իրար ագու-
ցիկ, այնպէս շինեց խորանի բոլոր
տախտակների համար։ Եւ խորա- 23
նի տախտակները շինեց. դէպի
հարաւ՝ հարաւային կողմին քսան
տախտակ։ Քառասուն արծաթի 24
խարիսխ շինեց քսան տախտակ-
ների տակ, մէկ տախտակի տակ
իր երկու սփռիչների համար եր-
կու խարիսխ՝ և միւս տախտակի
տակ երկու խարիսխ իր երկու
սփռիչների համար։ Եւ խորանի 25
միւս կողմի համար դէպի հիւսիս
քսան տախտակ շինեց. Եւ նորանց 26
քառասուն արծաթի խարիսխներ,
մէկ տախտակի տակ երկու խա-
րիսխ՝ և միւս տախտակի տակ
երկու խարիսխ։ Եւ խորանի ե- 27
տևի կողմին դէպի արևմուտք՝

28 վեց տախտակ շինեց. Եւ խորանի
եռեւի կողմին անկիւններին եր-
29 կու տախտակ շինեց։ Եւ նորանք
տակի կողմիցը զոյգ էին, և վե-
բևումը բոլորովին միացած էին
մէկ օղակով. երկուսին էլ եր-
կու անկիւններումն այսպէս ա-
30 րաւ։ Եւ ութը տախտակ էին.
և նորանց արծաթի խարիսխները
տասնեւվեց խարիսխ էին, ամեն
մէկ տախտակի տակը երկերկու
31 խարիսխ էին։ Եւ Սատիմի փայ-
տից նիգեր շինեց. խորանի մէկ
կողմի տախտակների համար հինգ
32 նիգ, Եւ խորանի միւս կողմի
տախտակների համար հինգ նիգ.
և դէպի արեւմուտք՝ խորանի ե-
տեւի կողմի տախտակների համար
33 հինգ նիգ։ Եւ մէջտեղի նիգը շի-
նեց, որ անց կենայ տախտակնե-
րի մէջտեղիցը մէկ ծայրից մին-
34 չև միւս ծայրը։ Եւ տախտակնե-
րը ոսկով պատեց և նորանց օ-
ղակները ոսկուց շինեց՝ այսինքն
նիգերի համար անցնելու տեղեր,
և նիգերը պատեց ոսկով։
35 Եւ վարագոյրը շինեց կապու-
տակից և ծիրանեգոյնից և կրկ-
նակի կարմիրից և մանած բարակ
քթանից ճարտար ոստայնագործ
36 քերովբէներով շինեց նորան։ Եւ
Սատիմից չորս սիւն շինեց նորա
համար և ոսկով պատեց, նորանց
բևեռները ոսկի էին. և նորանց
չորս արծաթի խարիսխ ձուլեց։
37 Եւ խորանի դրան համար մի նը-
կարագործ որահակ շինեց կա-
պուտակից և ծիրանեգոյնից և
կրկնակի կարմիրից և մանած բա-
38 րակ քթանից. Եւ նորա հինգ
սիւները և նորանց բևեռները, և
նորանց խոյակներն ու նորանց կա-
պերը ոսկով պատեց. և նորանց
հինգ խարիսխները պղնձի էին։

ԳԼ. ԼԷ

1 Եւ Բեսելիէլը Սատիմի փայտից
շինեց տապանակը. նորա երկայ-
նութիւնը երկու ու կէս կան-
գուն՝ և նորա լայնութիւնը մէկ
ու կէս կանգուն՝ և նորա բարձ-
րութիւնը մէկ ու կէս կանգուն։
Եւ մաքուր ոսկով պատեց նորան 2
ներսիցը և դրսիցը. և նորա շուրջը
մի ոսկի շրջանակ շինեց։ Եւ նո- 3
րա չորս անկիւնների համար չորս
ոսկի օղակներ ձուլեց, այսինքն
նորա մէկ կողմիցը երկու օղակ՝
և միւս կողմիցը երկու օղակ։ Եւ 4
Սատիմի փայտից ձողեր շինեց, և
ոսկով պատեց նորանց։ Եւ ձողե- 5
րը տապանակի կողքերին եղած
օղակներին անցկացրեց, որ տա-
պանակը նորանցով վեր առնուի։
Եւ շինեց քաւութիւնը մա- 6
քուր ոսկուց. նորա երկայնու-
թիւնը երկու ու կէս կանգուն՝
և նորա լայնութիւնը մէկ ու կէս
կանգուն։ Եւ երկու ոսկի քե- 7
րովբէներ շինեց. կռածոյ շինեց
նորանց քաւութիւնի երկու ծայ-
րերիցը. Մէկ քերովբէն այս կող- 8
մի ծայրիցը՝ և միւս քերովբէն
միւս կողմի ծայրիցը, քաւու-
թիւնիցը շինեց քերովբէները՝ նո-
րա երկու ծայրերիցը։ Եւ քերով- 9
բէները տարածում էին իրանց թե-
ւերը վերևից իրանց թեւերովը
քաւութիւնը ծածկելով և նո-
րանց երեսները դէպի իրար էին,
քաւութիւնի վերայ էին քերով-
բէների երեսները։
Եւ շինեց սեղանը Սատիմի փայ- 10
տից. նորա երկայնութիւնը եր-
կու կանգուն, և լայնութիւնը
մէկ կանգուն. և բարձրութիւնը
մէկ ու կէս կանգուն։ Եւ մա- 11
քուր ոսկով պատեց նորան և նո-
րա շուրջը մի ոսկի շրջանակ շի-
նեց։ Եւ նորան շուրջանակի մի 12
թիզ ոլորտ շինեց, և այն ոլորտի
շուրջը՝ մի ոսկի շրջանակ։ Եւ 13
չորս ոսկի օղակ ձուլեց նորա հա-
մար, և այն օղակները դրաւ այն
չորս անկիւններին որ նորա չորս
ոտքերի մօտ էին։ Օղակները ո- 14
լորտի հետ կցուած էին՝ ձողերի
տեղեր՝ սեղանը վեր առնելու հա-
մար։ Եւ ձողերը Սատիմի փայ- 15
տից շինեց. և նորանց ոսկով պա-
տեց սեղանը վեր առնելու հա-
մար։ Եւ շինեց սեղանի վերայ ե- 16
ղած անօթները, նորա սկուտեղ-
ները և նորա խնկամանները և
սկաւառակները և բաժակները,

որոնցով նուէր է մատուցանվում
մաքուր ոսկուց։
17 Եւ շինեց աշտանակը մաքուր
ոսկուց. ճախարակեայ շինեց աշ-
տանակը. նորա բունը և նորա
ճիւղերը, նորա սկահները, գրն-
գակները և ծաղիկները իրանից
18 էին։ Եւ նորա կողերիցը վեց ճիւ-
ղեր էին դուրս գալիս. աշտանա-
կի երեք ճիւղը մէկ կողիցը և
աշտանակի երեք ճիւղը միւս կո-
19 ղիցը. Մէկ ճիւղի վերայ երեք
նշաձև սկահ գնդակով և ծա-
ղիկով. և միւս ճիւղի վերայ ե-
րեք նշաձև սկահ գնդակով և
ծաղիկով. այսպէս էին աշտանա-
կիցը դուրս եկած վեց ճիւղերը։
20 Եւ աշտանակի վերայ չորս նշա-
ձև սկահ իր գնդակներովն ու
21 ծաղիկներովը։ Եւ երկու ճիւղի
տակին իրանից մէկ գնդակ և
միւս երկու ճիւղի տակին իրա-
նից մէկ գնդակ և երրորդ երկու
ճիւղի տակին իրանից մէկ գրն-
գակ, այսպէս այն վեց ճիւղերին,
որ դուրս էին գալիս նորանից։
22 Նորանց գնդակներն ու ճիւղերը
իրանից էին ամենը ճախարակ-
եայ՝ մէկ կտոր՝ մաքուր ոսկուց։
23 Եւ նորան եօթը ճրագներն ու
ունելիները և նորա բազմակալ-
24 ները մաքուր ոսկուց շինեց։ Մէկ
տաղանդ մաքուր ոսկուց շի-
նեց նորան և նորա բոլոր գոր-
ծիքները։
25 Եւ շինեց խունկի սեղանը Սա-
տիմի փայտից. նորա երկայնու-
թիւնը մէկ կանգուն և նորա լայ-
նութիւնը մէկ կանգուն՝ քառա-
կուսի, և նորա բարձրութիւնը
երկու կանգուն, նորա եղջիւրնե-
26 րը իրանից էին։ Եւ մաքուր ոսկով
պատեց նորա վերևը և նորա պա-
տերը շուրջանակի և նորա եղ-
ջիւրները. և շուրջանակի մի ոսկի
27 պսակ շինեց նորա համար։ Եւ
նորա համար երկու ոսկի օղակ-
ներ շինեց նորա պսակի տակից՝
նորա երկու կողքերին երկու կող-
մերի վերայ, որ նորանցով նորան
վեր առնելու համար ձողերի
28 անցկացնելու տեղեր լինին։ Եւ
շինեց ձողերը Սատիմի փայտից,
և ոսկով պատեց նորանց։ Եւ շի- 29
նեց սուրբ օծման իւղը և մաքուր
անուշահոտ խունկը իւղագործի
արհեստով։

ԳԼ. ԼԸ

Եւ շինեց ողջակէզի սեղանը Սա- 1
տիմի փայտից. նորա երկայնու-
թիւնը հինգ կանգուն՝ և նորա
լայնութիւնը հինգ կանգուն՝ քա-
ռակուսի, և նորա բարձրութիւ-
նը երեք կանգուն։ Եւ նորա եղ- 2
ջիւրները նորա չորս անկիւններին
շինեց, նորա եղջիւրներն իրանից
էին. և պղնձով պատեց նորան։
Եւ սեղանի բոլոր գործիքները՝ 3
այսինքն թաղարները և թիակնե-
րը և կոնքերը և մսահանները ու
կրակի ամանները շինեց. նորա բո-
լոր գործիքները շինեց պղնձից։
Եւ սեղանի համար՝ մի ցանցա- 4
կերպ գահաւորակ շինեց պղնձից
նորա շրջանակի տակ ներքևիցը
մինչև նորա կէսը։ Եւ այն պղնձի 5
գահաւորակի չորս անկիւններին
չորս օղակներ ձուլեց ձողերին
տեղեր լինելու համար։ Եւ շինեց 6
ձողերը Սատիմի փայտից և պղնձ-
ով պատեց նորանց։ Եւ ձողերը 7
սեղանի մօտ եղած օղակներին
անցկացրեց, որ նա նորանցով վեր
առնուի՝ մէջը դարտակ և տախ-
տակներից շինեց նորան։
Եւ պղնձի աւազանը և նորա 8
պղնձի խարիսխը շինեց ժողովքի
խորանի դրանը խումբերով ժո-
ղովուող կանանց հայելիներից։
Եւ սրահը շինեց. հարաւային 9
կողմի համար դէպի հարաւ սրա-
հի առագաստները մանած բարակ
քթանից հարիւր կանգուն. Նո- 10
րանց սիւները քսան՝ և նորանց
պղնձի խարիսխները քսան. սիւ-
ների բևեռները և նորանց ճան-
կերը արծաթի էին։ Եւ հիւսի- 11
սային կողմի համար հարիւր կան-
գուն, սիւները քսան և նորանց
խարիսխները քսան՝ պղնձից. սիւ-
ների բևեռները և նորանց ճան-
կերը արծաթի էին։ Եւ արեւմըտ- 12
եան կողմի համար՝ առագաստ-
ները յիսուն կանգուն. նորանց

սիւները տասը՝ և նորանց խա-
րիսխները տասն էին. սիւների բե-
ւեռները և նորանց ճանկերը ար-
43 ծաթի էին։ Եւ արևելեան կող-
մի համար դէպի արևելք յիսուն
44 կանգուն։ Մէկ կողմի առագաստ-
ները տասնեւհինգ կանգուն՝ նո-
րանց սիւները երեք՝ ու նորանց
45 խարիսխները երեք։ Եւ միւս կող-
մի համար էլ՝ այսինքն սրահի
դրանը այս կողմից և միւս կող-
մից առագաստները տասնեւհինգ
կանգուն՝ նորանց սիւները երեք՝
և նորանց խարիսխները երեք էին։
46 Սրահի բոլոր առագաստները
շուրջանակի մանած բարակ քը-
47 թանից էին։ Եւ սիւների խա-
րիսխները պղնձից՝ սիւների բե-
ւեռները և նորանց ճանկերը ար-
ծաթի՝ և նորանց խոյակները ար-
ծաթապատ՝ և սրահի բոլոր սիւ-
ներն էլ արծաթի կարթերով
48 էին։ Եւ սրահի դրան վարագոյրը
նկարակործ էր, կապուտակից և
ծիրանեգոյնից՝ և կրկնակի կար-
միրից՝ ու մանած բարակ քթա-
նից. երկայնութիւնը քսան կան-
գուն՝ և լայնութեան միջի բարձ-
րութիւնը հինգ կանգուն էր սր-
սահի վարագոյրների համեմատ։
49 Եւ նորանց սիւները չորս՝ և նո-
րանց պղնձի խարիսխները չորս,
նորանց բեւեռները արծաթի՝ և
նորանց խոյակները արծաթապատ
20 և կարթերը արծաթի էին։ Եւ
խորանի ու շուրջանակի սրահի
բոլոր ցիցերը պղնձի էին։
21 Այս է խորանի՝ այսինքն վկա-
յութեան խորանի հաշիւը. որ
Մովսէսի պատուիրածին՝ պէս՝ Ղև-
տացիների պաշտօնի համար Ա-
հարօն քահանայի որդի Իթամա-
22 րի ձեռքովը հաշուեցաւ։ Եւ Ով-
րի որդի Ուրիի որդի Բեսելիէլն
Յուդայի ցեղիցն՝ արաւ այն ա-
մենը որ Եհովան Մովսէսին պատ-
23 ուիրեց։ Եւ նորա հետ Դանի ցե-
ղիցն Աքիսամայի որդի Ողիաբ
քանդակագործը և ճարտարագէ-
տը՝ կապուտակով և ծիրանե-
գոյնով և կրկնակի կարմիրով ու
բարակ քթանով նկարագործողը։
24 Բոլոր ոսկին որ այս շինուածքի
համար գործածուեցաւ, այսինքն
սրբարանի բոլոր շինուածքի հա-
մար նուիրուած ոսկին՝ քսանեւ-
ինը տաղանդ և եօթը հարիւր
երեսուն սիկղ էր սրբարանի
սիկղի համեմատ։ Եւ ժողովքի 25
համարուողների արծաթը՝ հա-
րիւր տաղանդ և հազար եօթը
հարիւր եօթանասունեւհինգ սիկղ
էր սրբարանի սիկղի համեմատ։
Մարդ գլուխ կէս սիկղ, այսինքն 26
սիկղի կէսը սրբարանի սիկղի հա-
մեմատ ամեն մէկից որ անցնում
էր համարուելով քսան տարե-
կանը և նորանից վեր. այսինքն վեց
հարիւր երեք հազար հինգ հա-
րիւր յիսուն մարդկանցից։ Եւ 27
գնաց հարիւր տաղանդ արծաթը
սրբարանի խարիսխները և վարա-
գոյրի խարիսխները ձուլելու հա-
մար հարիւր տաղանդից հարիւր
խարիսխ՝ մէկ տաղանդը մէկ խա-
րիսխի։ Եւ այն հազար եօթը հա- 28
րիւր եօթանասունեւհինգ սիկղ ար-
ծաթիցը շինեց սիւների բեւեռները,
և նորանց խոյակները պատեց, և
կարթեց նորանց։ Եւ նուիրուած 29
պղինձը եօթանասուն տաղանդ
ու երկու հազար չորս հարիւր
սիկղ էր։ Եւ նորանից շինեց ժո- 30
ղովքի խորանի դրան խարիսխները
և պղնձի սեղանը և նորա պղնձի
դահաւորակը և սեղանի բոլոր
գործիքները, Եւ շուրջանակի 31
սրահի խարիսխները և սրահի դր-
բան խարիսխները և խորանի բո-
լոր ցիցերը և շուրջանակի սրահի
բոլոր ցիցերը։

ԳԼ. ԼԹ

Եւ կապուտակից և ծիրանեգոյ- 1
նից և կրկնակի կարմիրից շինե-
ցին պաշտօնի հանդերձները՝ սրբ-
բարանի մէջ պաշտօն կատարե-
լու համար. և Ահարօնի համար
սուրբ զգեստները շինեցին ինչպէս
որ Եհովան Մովսէսին պատուի-
րել էր։
Եւ եփուդը շինեց ոսկուց, կա- 2
պուտակից և ծիրանեգոյնից և
կրկնակի կարմիրից և մանած բա-
րակ քթանից։ Եւ ոսկի թիթեղ- 3

ները ծեծեցին, և թել թել
կտրեցին, որ կապուտակի, ծի-
րանեգոյնի և կրկնակի կարմիրի
և բարակ քթանի հետ ճարտար
4 ոստայնագործ բանեցնեն։ Ագու-
ցիկ թիկունքներ շինեցին նորան.
երկու ծայրիցը կոճակվում էր։
5 Եւ եփուդի վերայ եղած ժապա-
ւէնը հենց իրանից էր՝ նորա գործ-
քի համեմատ, ոսկուց, կապու-
տակից և ծիրանեգոյնից և կրկ-
նակի կարմիրից և մանած բարակ
քթանից՝ ինչպէս Եհովան Մով-
սէսին պատուիրել էր։
6 Եւ շինեցին եղնգնաքարերը ոս-
կի խորշերի մէջ ընդելուզուած
և փորագրուած կնիք քանդա-
կողների արհեստի համեմատ Իս-
րայէլի որդիների անուններովը։
7 Եւ դրաւ նորանց եփուդի թի-
կունքների վերայ, իբրև յիշա-
տակի քարեր Իսրայէլի որդինե-
րի համար, ինչպէս Եհովան Մով-
սէսին պատուիրել էր։
8 Եւ լանջապանակը շինեց ճար-
տար ոստայնագործ եփուդի գոր-
ծի պէս ոսկուց, կապուտակից և
ծիրանեգոյնից և կրկնակի կարմի-
րից և մանած բարակ քթանից։
9 Քառակուսի՝ երկու տակ ծալ-
ուող շինեցին լանջապանակը.
մէկ թիզ նորա երկայնութիւնը
և մէկ թիզ լայնութիւնը՝ երկու
10 տակ ծալուող. Եւ նորա վերայ
ընդելուզեցին չորս կարգ քարեր.
սարդիոնի, տպազիոնի և զմրուխ-
տի կարգը առաջին կարգն էր։
11 Եւ երկրորդ կարգը՝ կարկեհան,
12 շափիւղայ և ադամանդ էր. Եւ
երրորդ կարգն էր՝ դոճազմ, ա-
13 կատ և սուտակ։ Եւ չորրորդ
կարգը ոսկեքար, եղնգնաքար և
յասպիս. ոսկի խորշերի մէջ ընդ-
14 դելուզուած էին։ Եւ քարերը՝
Իսրայէլի որդիների անունների
համեմատ, նորանց անունների
պէս տասնեւերկու էին քանդակ-
ուած կնիքի պէս՝ ամեն մէկն իր
անունովը տասնեւերկու ցեղերի
15 համեմատ։ Եւ լանջապանակի վե-
րայ մաքուր ոսկուց ոլորուած
16 հիւսուած շղթաներ շինեցին։ Եւ
երկու ոսկի խորշ և երկու ոսկի
օղակ շինեցին. և երկու օղակնե-
րը լանջապանակի երկու ծայրե-
րին դրին։ Եւ այն երկու հիւս- 17
ուած ոսկի շղթաները լանջապա-
նակի ծայրերին եղած երկու օ-
ղակներին անցկացրին։ Եւ այն 18
երկու հիւսուած շղթաների ՓՈՒ
երկու ծայրերը այն երկու խոր-
շերին անցկացրին. և եփուդի
թիկունքների վերայ դրին նորանց
նորա առաջին։ Եւ երկու ոսկի 19
օղակներ էլ շինեցին, և լանջա-
պանակի ներսի կողմից եփուդին
կցուած եզերքի երկու ծայրերին
դրին։ Եւ ՈՒՐԻՉ երկու ոսկի օղակ- 20
ներ շինեցին, և դրին նորանց ե-
փուդի երկու թիկունքների տա-
կիցը՝ և նորա առջևի կողմի կրց-
ուածքի մօտ՝ եփուդի ժապաւէ-
նի վերայից։ Եւ լանջապանակը 21
կապեցին իր օղակներիցը՝ կապու-
տակից ՀԻՍՈՒՆ լարով եփուդի
օղակներին, որ եփուդի ժապա-
ւէնի վերայ լինի, և լանջապա-
նակը եփուդի վերայից չ՚բաժան-
ուի, ինչպէս որ Եհովան Մովսէ-
սին պատուիրել էր։
Եւ եփուդի պատմուճանը ոս- 22
տայնագործ շինեց բոլորովին կա-
պուտակից. Եւ պատմուճանի 23
ճեղքուածքը նորա մէջտեղը զրա-
հի ճեղքուածքի պէս. և ճեղ-
քուածքի շուրջը մի օձիք կար,
որ չ՚պատառուի։ Եւ պատմուճա- 24
նի քղանցքներին նռներ շինեցին
կապուտակից և ծիրանեգոյնից և
կրկնակի կարմիրից՝ մանուած։ Եւ 25
մաքուր ոսկուց զանգակներ շի-
նեցին, և զանգակները դրին նռ-
ների մէջտեղերը պատմուճանի
քղանցքների վերայ՝ շուրջանակի
նռների մէջտեղերը. Մէկ զան- 26
գակ և մէկ նուռ՝ մէկ զանգակ
և մէկ նուռ պատմուճանի քը-
ղանցքների վերայ շուրջանակի
պաշտօնի համար, ինչպէս Եհո-
վան Մովսէսին պատուիրել էր։
Եւ շապիկները բարակ քթանից 27
հիւսկէն գործ շինեցին Ահարօնի
և նորա որդիների համար. Եւ 28
խոյրը բարակ քթանից՝ և գլխար-
կի ապարօշները բարակ քթանից
և կտաւեղէն անդրավարտիկները

29 մանած բարակ քթանից, Եւ գօ-
տին մանած բարակ քթանից և
կապուտակից և ծիրանեգոյնից և
կրկնակի կարմիրից նկարագործ,
ինչպէս որ Եհովան Մովսէսին
պատուիրել էր։
30 Եւ սուրբ պսակի թիթեղը մա-
քուր ոսկուց շինեցին, և նորա
վերայ փորագրեցին կնիք քան-
դակողի պէս *ԳՕԴԷՇ ԼԷ ԵՀՈ-
31 ՎԱՅ. Եւ նորան անցկացրին մի
կապուտակ ժապաւէնի վերայ, որ
վերևիցը խոյրի վերայ դրուի, ինչ-
պէս որ Եհովան Մովսէսին պատ-
ուիրել էր։
32 Եւ վերջացաւ խորանի՝ այսինքն
ժողովքի վրանի բոլոր գործը. և
Իսրայէլի որդիքն արին բոլորը
ինչպէս որ Եհովան Մովսէսին
պատուիրել էր. այնպէս արին։
33 Եւ խորանը Մովսէսի մօտ բերին,
վրանը և նորա բոլոր գործիքնե-
րը, նորա ճարմանդները, նորա
տախտակները, նորա նիգերը և
նորա սիւներն ու խարիսխները,
34 Եւ կարմիր ներկուած խոյի մոր-
թերից ծածկոցը, և թէհաշի մոր-
թերից եղած ծածկոցը, և ծածկող
35 վարագոյրը, Վկայութեան տա-
պանակը և նորա ձողերը, և քա-
ւութիւնը, Սեղանը և նորա բո-
լոր անօթները և առաջաւորու-
37 թեան հացը, Մաքուր աշտանա-
կը իր ճրագներովը, այսինքն կար-
դաւ դրուած ճրագներովը և իր
բոլոր գործիքներովը. և լոյսի իւղը,
38 Եւ ոսկի սեղանը, և օծման իւղը,
և անուշահոտ խունկը, և խորա-
39 նի սրահակը, Պղնձի սեղանը և
նորա պղնձի դահաւորակը, նորա
ձողերը և նորա բոլոր գործիքնե-
րը, աւազանը և նորա խարիսխը,
40 Սրահի առագաստները, նորա
սիւները և խարիսխները, և սրա-
հի դրան վարագոյրը, նորա չու-
անները և ցիցերը, և խորանի այ-
սինքն ժողովքի վրանի պաշտօնի
համար եղած բոլոր կարասիքը.
41 Սրբարանի մէջ պաշտելու հա-
մար՝ պաշտօնի հանդերձները, և
Ահարօն քահանայի համար սուրբ
զգեստները և նորա որդկանց ըզ-
գեստները, որ քահանայութիւն
անեն։ Ինչպէս որ Եհովան բոլո- 42
րը Մովսէսին պատուիրել էր,
այնպէս արին Իսրայէլի որդիքը
բոլոր գործը։
Եւ Մովսէսը նայեց բոլոր շին- 43
ուածքին. և ահա արել էին նո-
րան ինչպէս որ Եհովան պատ-
ուիրել էր, այնպէս էին արել. և
Մովսէսը օրհնեց նորանց։

ԳԼ. Խ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 1
հետ ասելով. Առաջին ամսուայ 2
առաջին օրը կանգնեցրու խորա-
նը, այսինքն ժողովքի վրանը։ Եւ 3
նորա մէջ դնես վկայութեան
տապանակը, և վարագոյրովը
ծածկես տապանակը։ Եւ սեղա- 4
նը ներս բերես, և նորա վերայ
շարուելու հացերը շարես. և աշ-
տանակը ներս բերես, և նորա
ճրագները վառես։ Եւ վկայու- 5
թեան տապանակի առաջին դը-
նես խունկի ոսկի սեղանը. և խո-
րանի դրանը դնես սրահակը։ Եւ 6
խորանի՝ այսինքն ժողովքի վրանի
դրանը առաջին դնես ողջակէզի
սեղանը։ Եւ աւազանը դնես ժո- 7
ղովքի վրանի և սեղանի մէջտե-
ղը և նորա մէջը ջուր ածես։ Եւ 8
շուրջանակի սրահը կանգնեցնես,
և սրահի դրանը վարագոյրը դնես։
Եւ օծման իւղը առնես, և խո- 9
րանը և նորա մէջ եղած բոլոր
բաները օծես. և սրբես նորան և
նորա բոլոր անօթները, որ սուրբ
լինին։ Եւ օծես ողջակէզի սեղա- 10
նը և նորա բոլոր գործիքները, և
սրբես սեղանը. և սեղանը ամե-
նասուրբ լինի։ Եւ օծես աւազա- 11
նը և նորա խարիսխը և սրբես
նորան։ Եւ Ահարօնին և նորա 12
որդկանցը մօտեցնես ժողովքի խո-
րանի դրանը, և ջրով լուանաս
նորանց։ Եւ Ահարօնին հագցնես 13
սուրբ զգեստները, և օծես նո-
րան և սրբես նորան, որ ինձ քա-
հանայութիւն անէ։ Եւ նորա 14
որդկանցն էլ մօտեցնես, և շա-
պիկներ հագցնես նորանց։ Եւ 15

*Սուրբ՝ Եհովային

նորանց էլ օծես ինչպէս որ օծե-
ցիր նորանց հօրը, որ ինձ քա-
հանայութիւն անեն. և նորանց
օծումը իրանց ազգերի մէջ յա-
ւիտենական քահանայութեան
համար լինի։
16 Եւ Մովսէսն արաւ բոլորովին
ինչպէս որ Եհովան իրան պատ-
17 ուիրել էր. այնպէս արաւ։ Եւ
եղաւ որ երկրորդ տարին՝ առա-
ջին ամսուայ առաջին օրը խորա-
18 նը կանգնուեցաւ։ Եւ Մովսէսը
կանգնեցրեց խորանը, և նորա
խարիսխները դրաւ, և կանգնե-
ցրեց նորա տախտակները, և նո-
րա նիգերը անցկացրեց, և սիւ-
19 ները կանգնեցրեց։ Եւ խորանի
վերայ տարածեց վրանը, և վրա-
նի ծածկոցը նորա վերայ դրաւ
վերևիցը, ինչպէս որ Եհովան
20 Մովսէսին պատուիրել էր։ Եւ
առաւ վկայութիւնը դրաւ տա-
պանակի մէջ և ձողերը տապա-
նակին անցկացրեց. և քաւու-
թիւնը դրաւ տապանակի վերայ
21 վերևիցը։ Եւ տապանակը խորա-
նի մէջը բերաւ, և ծածկող վա-
րագոյրը դրաւ, և վկայութեան
տապանակը ծածկեց, ինչպէս որ
Եհովան Մովսէսին պատուիրել
22 էր։ Եւ սեղանը դրաւ ժողովքի
վրանի մէջ՝ խորանի հիւսիսային
23 կողմիցը վարագոյրիցը դուրս. Եւ
նորա վերայ շարուելու հացերը
շարեց Եհովայի առաջին, ինչպէս
որ Եհովան Մովսէսին պատուի-
24 րել էր։ Եւ աշտանակը դրաւ
ժողովքի վրանի մէջ՝ սեղանի դի-
մացը խորանի հարաւային կող-
25 մին։ Եւ Եհովայի առջևի ճրագ-
ները վառեց, ինչպէս որ Եհովան
26 Մովսէսին պատուիրել էր։ Եւ
ոսկի սեղանը դրաւ ժողովքի վը-
րանի մէջ՝ վարագոյրի առաջին.
Եւ նորա վերայ անուշահոտ 27
խունկ ծխեց, ինչպէս որ Եհովան
Մովսէսին պատուիրել էր։ Եւ 28
խորանի դրանը դրաւ սրահակը։
Եւ խորանի՝ այսինքն ժողովքի վը- 29
րանի դրան մօտ դրաւ ողջակէզի
սեղանը. և նորա վերայ ողջակէ-
զը ու հացի ընծան մատուցրեց,
ինչպէս որ Եհովան Մովսէսին
պատուիրել էր։ Եւ աւազանը 30
դրաւ ժողովքի վրանի և սեղանի
մէջտեղը, և նորա մէջը լուաց-
ուելու համար ջուր ածեց։ Եւ 31
նորանից լուանում էին Մով-
սէսը և Ահարօնը և նորա որ-
դիքը իրանց ձեռքերը և ոտ-
քերը. Ժողովքի վրանը մտնելիս, 32
և սեղանին մօտենալիս լուանում
էին, ինչպէս որ Եհովան Մովսէ-
սին պատուիրել էր։ Եւ խորանի 33
ու սեղանի շուրջը սրահը կանգ-
նեցրեց, և սրահի դրանը վարա-
գոյրը դրաւ։ Այսպէս Մովսէսը
բոլոր գործը վերջացրեց։
Եւ մի ամպ ծածկեց ժողովքի 34
վրանը. և Եհովայի փառքը լցրեց
խորանը։ Եւ Մովսէսը չէր կարո- 35
ղանում մտնել ժողովքի վրանը.
որովհետև ամպը նորա վերայ
նստել էր, և Եհովայի փառքը
լցրել էր խորանը։ Եւ ամպը խո- 36
րանի վերայից վերանալիս Իսրա-
յէլի որդիքը չուում էին իրանց
բոլոր ճանապարհորդութիւնն-
երումը։ Եւ եթէ ամպը չէր վե- 37
րանում, չէին չուում մինչև նո-
րա վերանալու օրը։ Որովհետև 38
Եհովայի ամպը ցերեկը խորանի
վերայ էր, և գիշերը նորա վերայ
կրակ կար, Իսրայէլի բոլոր ժո-
ղովրդի առաջին՝ իրանց բոլոր
ճանապարհորդութիւններումը։

ՂԵՒՏԱՑՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ կանչեց Մովսէսն ու խօսեց
Նորա հետ ԵՀովան ժողովքի խա-
2 րանիցն ասելով. Խօսիր Իսրայէլի
որդիների հետ, և ասիր Նորանց.
Եթէ ձեզանից մէկ մարդ ցոհ
մատուցանելու լինի ԵՀովային,
ձեր ցոհը արջառներից կամ հօ-
ւաներից մատուցանէք։
3 Եթէ Նորա ցոհը ողջակէզ է
արջառներից, արու անարատ
մատուցանէ Նորան. և ժողովքի
խորանի դրան մօտ մատուցանէ
Նորան ԵՀովայի առաջին ընդու-
4 նելի լինելու համար։ Եւ իր ձեռ-
քը ողջակէզի գլխին դնէ, որ ըն-
դունելի լինի իրան քաւութիւն
5 լինելու համար։ Եւ զառարակը
մորթէ ԵՀովայի առաջին. և Ա-
հարօնի որդիքը՝ քահանաները
մատուցանեն արիւնը, ու սրսկեն
արիւնը ժողովքի խորանի դրան
մօտ եղած սեղանի վերայ շուր-
6 ջանակի։ Եւ ողջակէզը մաշկէ,
և յօշատէ Նորան կտոր կտոր։
7 Եւ Ա.հարօն քահանայի որդիքը
կրակ դնեն սեղանի վերայ, և
փայտեր շարեն այն կրակի վե-
8 րայ։ Եւ Ա.հարօնի որդիքը քա-
հանաները շարեն կտորները, գը-
լուխը և ճարպը սեղանի վերայ
եղած կրակի վերայի փայտերի
9 վերայ։ Բայց Նորա փորոտիքը և
ոտքերը ջրով լուանայ, և քա-
հանան այրէ ամէնը սեղանի վե-
րայ՝ իբրև ողջակէզ ԵՀովային
անուշահոտ պատարագ լինելու
համար։
10 Եւ եթէ Նորա ցոհը հօտերից՝
այսինքն ոչխարներից կամ այծե-
րից է ողջակէզի համար, արու
11 անարատ մատուցանէ Նորան։ Եւ
մորթէ Նորան սեղանի մօտ հիւ-
սիսային կողմումը ԵՀովայի ա-
ռաջին. և Ա.հարօնի որդիքը քա-
հանաները սրսկեն Նորա արիւնը
12 սեղանի վերայ շուրջանակի։ Եւ
յօշատեն Նորան կտոր կտոր, և
գլուխը և ճարպը. և քահանան
շարէ Նորանց սեղանի վերայ ե-
ղած կրակի վերայի փայտերի վե-
րայ։ Եւ փորոտիքն ու ոտքերը 13
ջրով լուանայ. և քահանան ա-
մէնը բերէ և սեղանի վերայ այ-
րէ. սա ողջակէզ է՝ անուշահոտ
պատարագ ԵՀովայի համար։
Եւ եթէ թռչուններից է Նո- 14
րա ողջակէզ ցոհը ԵՀովայի հա-
մար, այն ժամանակ նա իրան ցո-
հը տատրակներից կամ ազաւնու
ձագերից մատուցանէ։ Եւ քա- 15
հանան սեղանի մօտ բերէ Նորան
և Նորա գլուխը պոչէ, և սեղա-
նի վերայ այրէ, և Նորա արիւնը
սեղանի կողմին քամուի։ Եւ Նո- 16
րա կանարն իր աղտովը հանէ, և
դէն դցէ Նորան սեղանի արևել-
եան կողմում եղած մոխրանոցի
մէջ։ Եւ պատառէ Նորան թևե- 17
րիցը առանց բաժանելու. և քա-
հանան այրէ Նորան սեղանի վե-
րայ՝ կրակի վերայի փայտերի վե-
րայ. սա ողջակէզ է՝ անուշահոտ
պատարագ ԵՀովայի համար։

ԳԼ. Բ

Եւ երբոր մէկ անձ հացի նուէր 1
պատարագ մատուցանելու լինի
ԵՀովային, Նորա պատարագը բա-
րակ ալիւրից լինի. և Նորա վե-
րայ իւղ թափէ, և կնդրուկ դնէ
Նորա վերայ. Եւ Ա.հարօնի որդ- 2
կանցը՝ քահանաների մօտ բերէ
Նորան, և քահանան Նորանից իր
բուռը լիքն Նորա բարակ ալիւ-
րիցը և իւղիցը առնէ բոլոր կընդ-
րուկի հետ մէկտեղ, և քահա-
նան Նորա յիշատակի համար սե-
ղանի վերայ այրէ՝ ԵՀովային ա-
նուշահոտ պատարագ լինելու
համար։ Եւ հացի նուէրիցը մը- 3
նացածը՝ Ա.հարօնին և Նորա որդ-
կանցը լինի՝ ամենասուրբ պա-
տարագ ԵՀովայի համար։
Եւ եթէ թոնիրում թխած 4
հացի նուէր պատարագ մատու-

ցանելու լինիս, բարակ ալիւրից
իւղով զանգուած անխմոր շո-
թեր՝ կամ իւղով օծուած ան-
խմոր լաւաշներ լինին։
5 Եւ եթէ քո պատարագը տա-
պակի վերայ [illegible] հացի նուէր
է, բարակ ալիւրից իւղով զան-
6 գուած անխմոր լինի, կտոր կտոր
Նորան կտրես, և վերան իւղ
թափես. սա հացի նուէր է։
7 Եւ եթէ քո պատարագը կա-
կարայի [illegible] հացի բնծայ
է, բարակ ալիւրից իւղով շինուի։
8 Եւ սորանցից շինուած հացի նո-
ւէրը բերես ԵՀովայի մօտ, և
քահանային ներկայացնես, և Նա
9 սեղանին մատուցանէ Նորան։ Եւ
քահանան առնէ նուէրիցը Նորա
յիշատակը, և սեղանի վերայ այ-
րէ՝ ԵՀովային անուշահոտ պա-
10 տարագ լինելու համար։ Եւ նո-
ւէրիցը մնացածը Ա.հարօնին ու
Նորա որդկանցը լինի. սա ամե-
նասուրբ պատարագ է ԵՀովային։
11 Ոչ մի հացի նուէր որ դուք
ԵՀովային մատուցանէք, խմոր-
կալ չշինուի, որովհետև ոչ խո-
մոր և ոչ մեղր պիտի իբրև պա-
տարագ չմայրէք ԵՀովայի համար։
12 Իբրև երախայրեաց պատարագ
մատուցէք Նորանց ԵՀովային.
բայց սեղանի վերայ պիտի չմայ-
րուին անուշահոտութեան հա-
13 մար։ Եւ քո բոլոր հացի նուէրը
աղով աղես, և քո հացի նուէ-
րիցը քո Աստուծոյ ուխտի աղը
պակաս չանես. քո բոլոր պա-
տարագովը աղ էլ մատուցանես։
14 Եւ եթէ առաջի արմտեաց
նուէր մատուցանելու լինիս ԵՀո-
վային, կրակով հնդի սրած հա-
կերից ծեծուած ցորեն մատու-
ցանես քո առաջի արմտեաց նո-
15 ւէրը։ Եւ Նորա վերայ իւղ թա-
փես և կնդրուկ դնես վերան. սա
16 հացի նուէր է։ Եւ քահանան
այրէ Նորա յիշատակը Նորա ծե-
ծուած ցորենիցը և Նորա իւղիցը
Նորա բոլոր կնդրուկովը՝ ԵՀով-
այի պատարագ լինելու համար։

ԳԼ. Գ

Եւ եթէ Նորա պատարագը խա- 1
զաղութեան զոհ է, երբոր Նա
արջառներից է մատուցանում,
թէ արու լինի թէ էգ, ԵՀով-
այի առաջին անարատը մատու-
ցանէ։ Եւ իր ձեռքը իր պատա- 2
րագի գլխին դնէ, և ժողովքի
խորանի դրանը մորթէ Նորան.
և Ա.հարօնի որդիքը՝ քահա-
նաները սեղանի վերայ շուրջա-
նակի սրսկեն արիւնը։ Եւ խաղա- 3
զութեան զոհիցը պատարագ մա-
տուցանէ ԵՀովային, այսինքն փո-
րոտիքը ծածկող ճարպը՝ և փո-
րոտիքի վերայ եղած բոլոր ճար-
պը, Եւ երկու երիկամունքը՝ և 4
Նորանց վերայ և մէանանց վերայ
եղած ճարպը՝ և լեարդի թա-
ղանթը երիկամունքներով մէկ-
տեղ հանէ։ Եւ Ա.հարօնի որ- 5
դիքն այրեն սեղանի վերայ այն
ողջակէզի հետ որ կրակի վերայի
փայտերի վերայ է, ԵՀովային ա-
նուշահոտ պատարագ լինելու
համար։
Եւ եթէ հօտերիցն է Նորա խա- 6
զաղութեան զոհի համար ԵՀո-
վային [illegible] պատարագը,
թէ արու լինի և թէ էգ՝ անա-
րատը մատուցանէ։ Եթէ Նա իր 7
բնծան գառն է մատուցանում,
ԵՀովայի առաջին մատուցանէ Նո-
րան։ Եւ ձեռքն իր բնծայի գլու- 8
խին դնէ, և ժողովքի խորանի ա-
ռաջին մորթէ Նորան. և Ա.հարօ-
նի որդիքը սեղանի վերայ շուր-
ջանակի սրսկեն Նորա արիւնը։
Եւ խաղաղութեան զոհիցը պա- 9
տարագ մատուցանէ ԵՀովային,
այսինքն Նորա ճարպը և բոլոր
դմակը ողնայարի մօտիցը կտրե-
լով, և փորոտիքը ծածկող ճար-
պը՝ և փորոտիքի վերայ եղած բո-
լոր ճարպը, Եւ երկու երիկա- 10
մունքը՝ և Նորանց վերայ և մէա-
նանց վերայ եղած ճարպը՝ և
լեարդի թաղանթը երիկամունք-
ներով մէկտեղ հանէ։ Եւ քա- 11
հանան սեղանի վերայ այրէ սա՝
ԵՀովային պատարագի հաց լի-
նելու համար։
Եւ եթէ Նորա պատարագը այծ 12
է, ԵՀովայի առաջին բերէ Նո-
րան. Եւ իր ձեռքը Նորա գլխին 13

դնէ, և ժողովքի խորանի առա-
ջին մորթէ նորան. և Ահարօնի
որդիքը սեղանի վերայ շուրջա-
14 նակի սրսկեն նորա արիւնը։ Եւ
նա պատարագ մատուցանէ նո-
րանից իր պատարագը Եհովային,
այսինքն փորոտիքը ծածկող ճար-
պը՝ և փորոտիքի վերայ եղած
15 բոլոր ճարպը, Եւ երկու երիկա-
մունքը՝ և նորանց վերայ և մսա-
նանց վերայ եղած ճարպը՝ և
լեարդի թաղանթը երիկամունք-
16 ներով մէկտեղ հանէ։ Եւ քա-
հանան սեղանի վերայ այրէ նո-
րանց, անուշահոտ հացի պատա-
րագ լինելու համար. ամեն ճար-
17 պը Եհովայինն է։ Ձեր ազգերու-
մը ձեր բոլոր բնակարանների մէջ
յաւիտենական կանոն լինի, որ
բնաւ ոչ ճարպ ուտէք՝ ոչ էլ
արիւն։

ԳԼ. Դ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
2 հետ ասելով. Խօսիր Իսրայէլի
որդիներին հետ և ասիր. Եթէ
մէկ անձ սխալմամբ մեղանչէ, և
Եհովայի բոլոր այն պատուէրնե-
րի դէմ, որ պիտի չ՚անուին, նո-
3 րանցից մէկն անէ, Եթէ օծուած
քահանան մեղանչէ ժողովուրդը
յանցաւոր անելով, նա իր գոր-
ծած մեղքի համար արջառներից
մի անարատ զուարակ մատուցա-
նէ Եհովային մեղքի պատարագ։
4 Եւ զուարակը բերէ ժողովքի
խորանի դուռը Եհովայի առաջը,
և իր ձեռքը զուարակի գլխին
դնէ, և Եհովայի առաջին մորթէ
5 զուարակը։ Եւ օծուած քահա-
նան զուարակի արիւնից առնէ
6 և ժողովքի խորանը բերէ։ Եւ
քահանան իր մատը արիւնին
թաթախէ, և արիւնիցը սրսկէ
եօթը անգամ Եհովայի առաջին
7 որբարանի վարագոյրի դիմացը։ Եւ
քահանան արիւնիցը քսէ Եհո-
վայի առաջին անուշահոտ խուն-
կի սեղանի եղջիւրների վերայ, որ
ժողովքի խորանումն է. և զուա-
րակի Հայոց բոլոր արիւնը թա-
փէ ժողովքի խորանի դրան մօտ
եղած ողջակէզի սեղանի յատա-
կի վերայ։ Եւ մեղքի պատարագ 8
եղած զուարակի բոլոր ճարպը
վեր առնէ նորանից, այսինքն փո-
րոտիքը ծածկող ճարպը՝ և փո-
րոտիքի վերայ եղած բոլոր ճար-
պը. Եւ երկու երիկամունքը՝ և 9
նորանց վերայ և մսանանց վերայ
եղած ճարպը՝ և լեարդի վերա-
յի թաղանթը երիկամունքներովը
մէկտեղ հանէ, Ինչպէս որ հան- 10
վում է խաղաղութեան զոհի ար-
ջառիցը. և քահանան ողջակէզի
սեղանի վերայ այրէ նորանց։ Եւ 11
զուարակի մորթը՝ և նորա բոլոր
միսը՝ գլխովը և ոտքերովը, և նո-
րա փորոտիքը և աղբը, Այսինքն 12
բոլոր զուարակը բանակիցը դուրս
մի մաքուր տեղ մոխիր թափ-
ուած տեղը հանէ, և այրէ նորան
փայտերի վերայ կրակով. մոխիր
թափուած տեղը այրուի։
Եւ եթէ Իսրայէլի բոլոր ժո- 13
ղովքը սխալուի, և բանը ծածուկ
մնայ ժողովքի աչքիցը, և անեն
Եհովայի բոլոր պատուէրներից
մէկն, որ պիտի չ՚անուի, այն ժա-
մանակ յանցաւոր լինին։ Եւ իմա- 14
ցուի նորանց այն արած մեղքը,
ժողովքը արջառներից մի զուա-
րակ մատուցանեն մեղքի պատա-
րագ, և նորան բերեն ժողովքի
խորանի առաջը։ Եւ ժողովքի 15
ծերերն իրանց ձեռքերը զուարա-
կի գլխին դնեն Եհովայի առաջին.
և զուարակը մորթեն Եհովայի ա-
ռաջին։ Եւ օծուած քահանան զը- 16
ուարակի արիւնիցը բերէ ժողովքի
խորանը։ Եւ քահանան իր մատը 17
արիւնին թաթախէ, և եօթն ան-
գամ սրսկէ Եհովայի առաջին՝
վարագոյրի դիմացը։ Եւ արիւնի- 18
ցը քսէ ժողովքի խորանի մէջ Ե-
հովայի առաջին եղած սեղանի
եղջիւրներին. և Հայոց բոլոր ա-
րիւնը թափէ ժողովքի խորանի
դրան մօտ եղած ողջակէզի սե-
ղանի յատակի վերայ։ Եւ նորա 19
բոլոր ճարպը վեր առնէ նորա-
նից, և սեղանի վերայ այրէ։ Եւ 20
այս զուարակին այնպէս անէ ինչ-
պէս որ արաւ մեղքի պատարագ
եղած զուարակին։ Եւ քահանան

նորանց համար քաւութիւն անէ,
21 և նորանց թողութիւն լինի։ Եւ
բանակիցը դուրսհանէ զուարակը,
և այրէ նորան ինչպէս որ առաջի
զուարակն այրեց. ժողովքի հա-
մար մեղքի պատարագ է այս։
22 Երբոր մի իշխան մեղք գործե-
լու լինի, և անէ սխալմամբ իր
Եհովայ Աստուծոյ պատուէրնե-
րից մէկը, որ պիտի չ՚անուի, այն
23 ժամանակ յանցաւոր լինի։ Եթէ
իր արած մեղքն իրան իմացնուի,
իր համար այծերից մի արու ա-
նարատ նոխազ պատարագ բերէ.
24 Եւ իր ձեռքը նոխազի գլխին
դնէ, և մորթէ նորան Եհովայի
առաջին ողջակէզի մորթուելու
տեղը. մեղքի պատարագ է այս։
25 Եւ քահանան մեղքի պատարա-
գի արիւնիցն իր մատովն առնէ,
և քսէ ողջակէզի սեղանի եղ-
ջիւրներին, և նորա Հայոց արիւ-
նը թափէ ողջակէզի սեղանի յա-
26 տակի վերայ։ Եւ նորա բոլոր
ճարպը՝ սեղանի վերայ այրէ խա-
ղաղութեան զոհի ճարպի պէս.
և քահանան նորա մեղքի համար
քաւութիւն անէ, և թողու-
թիւն լինի նորան։
27 Եւ եթէ երկրի ժողովրդից մէ-
կը մեղանչէ՝ անելով Եհովայի
պատուէրների մէկն, որ պիտի
չ՚անուի, այն ժամանակ յանցա-
28 ւոր լինի։ Եթէ նորա արած մեղ-
քն իրան իմացնուի, իր արած
մեղքի համար իր պատարագը այ-
ծերից մի անարատ էգ այծ բե-
29 րէ։ Եւ իր ձեռքը մեղքի պա-
տարագի գլխին դնէ, և մեղքի
պատարագը մորթէ ողջակէզի տե-
30 ղը։ Եւ քահանան իր մատովը
նորա արիւնիցն առնէ, և քսէ
ողջակէզի սեղանի եղջիւրներին,
և Հայոց բոլոր արիւնը թափէ
31 սեղանի յատակի վերայ։ Եւ նո-
րա բոլոր ճարպը հանէ ինչպէս որ
հանվում է խաղաղութեան զո-
հի ճարպը. և քահանան այրէ
նորան սեղանի վերայ անոյշ հո-
տի համար Եհովայի առաջին. և
քահանան նորա համար քաւու-
թիւն անէ, և նորան թողութիւն
32 լինի։ Եւ եթէ գառն մատուցա-
նելու լինի մեղքի պատարագ, մի
անարատ էգ գառ բերէ. Եւ իր 33
ձեռքը մեղքի պատարագի գլ-
խին դնէ, և մորթէ նորան մեղ-
քի պատարագ՝ ուր որ ողջակէզ-
ները մորթում են մեղքի պատա-
րագ։ Եւ քահանան իր մատովը 34
մեղքի պատարագի արիւնիցն առ-
նէ, և քսէ ողջակէզի սեղանի եղ-
ջիւրներին. և Հայոց բոլոր ա-
րիւնը թափէ սեղանի յատակի
վերայ։ Եւ բոլոր ճարպը հանէ 35
ինչպէս որ խաղաղութեան զոհից
գառի ճարպը հանվում է. և
քահանան այրէ նորան սեղանի
վերայ Եհովայի պատարագների
հետ. և քահանան նորա արած
մեղքի համար քաւութիւն անէ,
և թողութիւն լինի նորան։

ԳԼ. Ե

Եւ եթէ մի անձ մեղանչէ, և 1
երդումի ձայնը լսէ և վկայ լինի,
կամ բանը տեսել է կամ գիտէ,
եթէ չ՚իմացնէ, այն ժամանակ իր
յանցանքը կրէ։ Կամ մի անձ 2
անմաքուր բանի կամ անմաքուր
գազանի դիակին կամ անմաքուր
անասունի դիակին՝ կամ անմա-
քուր սողունի դիակին դպչելու
լինի, թէև յայտնի չէր իրան,
այն ժամանակ նա անմաքուր և
յանցաւոր է։ Կամ դպչելու լի- 3
նի մարդի անմաքրութեան՝ որև-
իցէ անմաքուր անող անմաքրու-
թեան՝ թէև յայտնի չէր իրան,
բայց յետոյ իմանայ ինքը, այն
ժամանակ յանցաւոր լինի։ Կամ 4
մի անձ երդում անելու լինի՝ չա-
րիք կամ բարիք անելու հա-
մար՝ բերանովը դատարկախօսու-
թեամբ, (ինչպէս որ մարդս եր-
դումով դարտակ կ՚խօսէ.) և ի-
րան յայտնի չէր. բայց ինքը յե-
տոյ իմանայ, այն ժամանակ ոս-
րանց պէս մէկ բանի մէջ յան-
ցաւոր լինի։ Եւ եթէ այսպիսի 5
բաներից մէկում յանցաւոր լի-
նի. խոստովանէ այն ինչ որ մեղք
գործեց. Եւ բերէ իր արած մեղ- 6
քի համար իր յանցանքի պա-
տարագը Եհովային հօտերից մի

էգ, այսինքն մի էգ գառն կամ
այծերից մի էգ ուլ մեղքի պա-
տարագի համար. և քահանան
քաւութիւն անէ նորան՝ նորա
մեղքի համար։
7 Եւ եթէ նորա ձեռքը չ՚հասնէ
ոչխար կամ այծ բերելու, իր ա-
րած յանցանքի համար երկու
տատրակ կամ աղաւնու երկու
ձագ բերէ Եհովային, մէկը մեղ-
քի պատարագ, և միւսը ողջա-
8 կէզ։ Եւ քահանայի մօտ բերէ
նորանց, և նախ մատուցանէ այն
որ մեղքի պատարագ է, և նորա
գլուխը վզիցը ոլորէ բայց չ՚պոկէ.
9 Եւ մեղքի պատարագի արիւնի-
ցը սեղանի կողմին սրսկէ, և մը-
նացած արիւնը սեղանի յատակի
վերայ քամուի. սա մեղքի պա-
10 տարագ է։ Եւ միւսը ըստ օրինի
ողջակէզ անէ. և քահանան նո-
րան քաւութիւն անէ նորա ա-
րած մեղքի համար. և նորան
թողութիւն լինի։
11 Եւ եթէ նորա ձեռքը չ՚հասնէ
երկու տատրակ կամ աղաւնու
երկու ձագ բերելու, այն ժամա-
նակ մեղք գործողը իր ընծայի
համար արդուի տասներորդ մա-
սը բարակ ալիւր բերէ մեղքի
պատարագի համար. ոչ նորա վե-
րայ իւղ դնէ՝ ոչ էլ վերան կըն-
դրուկ դնէ. որովհետև մեղքի
12 պատարագ է այն։ Եւ քահանա-
յի մօտ բերէ այն, և քահանան
նորանից իր ձեռքը լիքը նորա
յիշատակի համար առնէ, և սե-
ղանի վերայ այրէ Եհովայի պա-
տարագների հետ. մեղքի պա-
13 տարագ է այն։ Եւ քահանան
քաւութիւն անէ նորան այսպիսի
բաների մէկում արած մեղքի
համար, և նորան թողութիւն
լինի. և մնացածը հացի ընծայի
պէս քահանայինը լինի։
14 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
15 հետ ասելով. Եթէ մի անձ յան-
ցանք անէ՝ և սխալմամբ Եհովա-
յի սուրբ բաների մէջ մեղք գոր-
ծէ, իր յանցանքի պատարագի
համար սրբարանի սիկղի համե-
մատ՝ քո արժեցրածի չափ սիկղի
արծաթով հօտերից մի անարատ
խոյ բերէ Եհովայի համար։ Եւ 16
սուրբ բաների մէջ իր արած վը-
նասը հատուցանէ, և նորա վե-
րայ հինգերորդ մասը աւելացնէ,
և քահանային տայ այն, և քա-
հանան յանցանքի պատարագի
խոյովը քաւութիւն անէ նորան,
և թողութիւն լինի նորան։
Եւ եթէ մի անձ մեղանչէ, և 17
անէ Եհովայի բոլոր այն պատ-
ուէրների դէմ որ պիտի չ՚ան-
ուին, թէև անգիտութեամբ,
յանցաւոր է, և իր անօրէնու-
թիւնը կրէ. Եւ քո արժեցրածի 18
պէս՝ յանցանքի պատարագի հա-
մար հօտերից մի անարատ խոյ
բերէ քահանայի մօտ. և քահա-
նան նորա համար քաւութիւն
անէ՝ նորա անգիտութեամբ որ-
խալուելու համար. և նորան թո-
ղութիւն լինի։ Այս՝ յանցանքի 19
պատարագ է. նա անպատճառ
յանցաւոր է Եհովայի առաջին։

ԳԼ. Զ.

Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ 1
ասելով. Եթէ մի անձ մեղանչէ, 2
և Եհովայի դէմ յանցանք անէ,
և իր դրացուն ստութիւն խօսէ
մի աւանդի համար՝ կամ իր ձեռ-
քը յանձնուած մի բանի համար՝
և կամ մի յափշտակուած բանի
համար, կամ իր դրացուն խար-
դախութիւն անելու լինի, Կամ 3
մի կորած բան գտնէ, և ուրա-
նայ ու սուտ երդում անէ, բո-
լոր այս բաների մէկում՝ որ մարդ
կարող է անել, մեղանչելով նո-
րանցով, Այն ժամանակ՝ ըստ ո- 4
րում մեղք է գործել ու յան-
ցանք արել, ետ տայ յափշտա-
կածը որ յափշտակել է կամ
խարդախութեամբ առածը կամ
իրան յանձնուած աւանդը՝ կամ
գտած կորուստը. Կամ ամեն 5
բան՝ որի համար սուտ երդում
է արել, բոլորովին հատուցանէ
նորան, և նորա հինգերորդ մասը
աւելացնէ վերան, որինը որ էր՝
նորան տայ իր յանցանքի պա-
տարագի օրումը։ Եւ իր յան- 6
ցանքի պատարագը բերէ Եհո-

վային, այսինքն հօտերից մի ա-
նարատ խոյ քո արժեցրածի հա-
մեմատ, իբրև յանցանքի պատա-
7 րագ քահանայի մօտ։ Եւ քա-
հանան նորա համար քաւութիւն
անէ Եհովայի առաջին. և թո-
ղութիւն լինի նորան ինչ բանի
համար որ յանցանք է գործել։
8 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
9 հետ ասելով. Պատուիրիր Ահա-
րօնին և նորա որդիներին և ա-
սիր. Այս է ողջակէզի օրէնքը.
ողջակէզը սեղանի վերայ եղած
կրակի վերայ պիտի լինի բոլոր
դիշերը մինչև առաւօտ, և սե-
ղանի կրակը նորա մէջ վառած
10 պիտի մնայ։ Եւ քահանան քը-
թանի պատմուճանը հագնէ, և
քթանի վարտիքը մարմինի վե-
րայով հագնէ, և կրակով այ-
րուած ողջակէզի մոխիրը սեղանի
վերայից վեր առնէ և սեղանի
11 մօտ դնէ։ Եւ իր զգեստները հա-
նէ, և ուրիշ զգեստներ հագնէ.
և մոխիրը բանակիցը դուրս մի
12 մաքուր տեղ տանէ։ Եւ սեղանի
վերայի կրակը նորա մէջ վառած
պիտի լինի, պիտի չ՚հանգչի. և
քահանան ամեն առաւօտ նորա
վերայ փայտեր այրէ, և ողջակէ-
զը նորա վերայ շարէ և այրէ նո-
րա վերայ խաղաղութեան զոհե-
13 րի ճարպը։ Կրակը սեղանի վերայ
միշտ վառած լինի, պիտի չը
հանգչի։
14 Եւ այդ է հացի ընծայի օրէն-
քը. Ահարօնի որդիքը մատուցա-
նեն նորան Եհովայի առաջին սե-
15 ղանի դիմացը։ Եւ վեր առնէ նո-
րանից իր ձեռքը լիքն՝ այսինքն
հացի ընծայի բարակ ալիւրիցը և
նորա իւղիցը և հացի ընծայի վե-
րայ եղած բոլոր կնդրուկը, և
այրէ նորա յիշատակը սեղանի
վերայ անոյշ հոտի համար Եհո-
16 վային։ Եւ նորանից մնացածն ու-
տեն Ահարօնը և նորա որդիքը.
նա անխմոր ուտուի սուրբ տեղը.
ժողովքի խորանի սրահի մէջ ու-
17 տեն նորան։ Խմորով չ՚եփուի.
իրանց համար բաժին տուի այն
իմ պատարագներիցը. սա մեղքի
ու յանցանքի պատարագների պէս
ամենասուրբ է։ Ահարօնի որդ- 18
կանց բոլոր արուները ուտեն այն.
Եհովայի պատարագներիցը ձեր
ազգերումը յաւիտենական կանոն
լինի այս. ամեն նորանց դպչողը
սուրբ լինի։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 19
հետ ասելով. Այս է Ահարօնի 20
և նորա որդիների պատարագը,
որ Եհովային պիտի մատուցանեն
նորա օծուելու օրը. արդուի տաս-
ներորդ մասը բարակ ալիւր ամեն
օր հացի նուէրի համար, կէսը
առաւօտին և կէսը իրիկունը։
Տապակի մէջ իւղով շինուի, 21
*հունցուած բերես այն, հացի
նուէրի եփած կտորները անոյշ
հոտի համար Եհովային մատու-
ցանես։ Եւ նորա որդիներիցը նո- 22
րա տեղը օծուելու քահանան
մատուցանէ այն. սա Եհովային
յաւիտենական կանոն է. բոլորո-
վին պիտի այրուի։ Եւ քահանա- 23
յի ամեն հացի նուէրը բոլորովին
պիտի այրուի, պիտի չ՚ուտուի։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 24
հետ ասելով. Խօսիր Ահարօնի և 25
նորա որդիների հետ և ասիր.
Այս է մեղքի պատարագի օրէն-
քը. ողջակէզի մորթուած տեղը
պիտի մորթուի մեղքի պատա-
րագը Եհովայի առաջին. այս ա-
մենասուրբ է։ Այն քահանան որ 26
մատուցանում է մեղքի պատա-
րագը, նա ուտէ այն. սուրբ տե-
ղը ուտուի ժողովքի խորանի սը-
րահումը։ Ամեն ինչ որ նորա մսին 27
դպչի՝ սուրբ պիտի լինի. և եթէ
նորա արիւնիցը հանդերձով տայ,
սուրբ տեղը լուանաս այն՝ որով
որ արիւնը տուել է։ Եւ հողի ա- 28
մանը որի մէջ եռ է ածուել այս
փոը, պիտի կոտրուի. և եթէ
պղնձի ամանի մէջ է եռացուած,
պիտի շփուի և ջրով լուացուի։
Քահանաների բոլոր արուները 29
պիտի ուտեն այն. այս ամենա-
սուրբ է։ Եւ ամեն մեղքի պա- 30
տարագը՝ որի արիւնիցը ժողովքի
խորանը բերուի սուրբ տեղի մէջ
քաւութիւն անելու համար, պի-

*Կամ՝ կտոր կտոր եղած։

տի չ՚ուտուի, կրակով պիտի այ-
րուի։

ԳԼ. Է

1 Եւ այս է յանցանքի պատարա-
գի օրէնքը. այս ամենասուրբ է։
2 Ողջակէզը մորթած տեղը մոր-
թեն յանցանքի պատարագը. և
նորա արիւնը սրսկէ սեղանի վե-
3 րայ շուրջանակի. Եւ նորանից
մատուցանէ բոլոր ճարպը՝ այսին-
քն դմակը և փորոտիքը ծած-
4 կող ճարպը. Եւ երկու երիկա-
մունքը և նորանց վերայ և մսա-
նանց վերայ եղած ճարպը և
լեարդի վերայի թաղանթը երի-
կամունքներովը մէկտեղ հանէ։
5 Եւ քահանան այրէ սորանց սե-
ղանի վերայ Եհովային պատարագ
լինելու. սա յանցանքի պատա-
6 րագ է։ Քահանաների ամեն ա-
րուն ուտէ այն. սուրբ տեղը ու-
7 տուի. սա ամենասուրբ է։ Ինչ-
պէս է մեղքի պատարագը այն-
պէս է և յանցանքի պատարագը,
նորանց օրէնքը մէկ է. նորանով
քաւութիւն անող քահանայինը
8 լինի այն։ Եւ մի քահանայ որ
մատուցանում է մէկի ողջակէ-
զը, այն ողջակէզի մորթը այն
քահանայինը լինի որ մատուցրեց։
9 Եւ բոլոր թոնիրի մէջ եփուած՝
և բոլոր կասկարայի մէջ և տա-
պակի վերայ շինուած հացի նը-
ուէրը, նորա մատուցանող քա-
10 հանայինը լինի։ Եւ ամեն իւղով
զանգուած՝ կամ չոր հացի նուէ-
րը՝ Ահարօնի բոլոր որդկանցը լի-
նի. իրար հաւասար են։
11 Եւ այս է Եհովային մատու-
ցանելու խաղաղութեան զոհի օ-
12 րէնքը. Եթէ շնորհակալութեան
համար մատուցանէ նորան, թող
մատուցանէ շնորհակալութեան
զոհի հետ իւղով զանգուած ան-
խմոր շօթեր և իւղով օծուած
անխմոր լաւաշներ և բարակ ա-
լիւրից իւղով զանգուած՝ հուն-
13 ցուած շօթեր։ Շօթերի հետ
խմորեալ հացի նուէր մատուցա-
նէ՝ շնորհակալութեան համար ե-
ղած իր խաղաղութեան զոհի
հետ։ Եւ նորանից այսինքն ամեն 14
ընծաներից մէկ հատ բարձրացը-
նելու ընծայ մատուցանէ Եհովա-
յին. և սա խաղաղութեան զոհի
արիւնը սրսկող քահանայինը լի-
նի։ Եւ նորա շնորհակալութեան 15
համար եղած խաղաղութեան զո-
հի միսը ուտուի մատուցրուած
օրը. նորանից մինչև առաւօտ չը
մնայ։ Եւ եթէ նորա պատարա- 16
գը ուխտի համար է կամ՝ կամա-
ւոր զոհ է, զոհը մատուցած օրը
ուտուի և մնացածը հետևեալ
օրը ուտուի։ Եւ զոհի մսիցը եր- 17
րորդ օրուայ մնացածը կրակով
այրուի։ Եւ եթէ իր խաղաղու- 18
թեան զոհի մսից երրորդ օրն
ուտուելու լինի, ընդունելի պի-
տի չ՚լինի, նորա մատուցանողին
պիտի չ՚համարուի, պղծութիւն
լինի, և նորանից ուտող անձը իր
անօրէնութիւնը կրէ։ Եւ ամեն 19
անմաքուր բանի դպած միսը պի-
տի չ՚ուտուի, կրակով պիտի այ-
րուի. սակայն ամեն մաքուրը ու-
տէ միսը։ Բայց այն անձը՝ որ Ե- 20
հովայի խաղաղութեան զոհիցը
միս ուտէ և ինքն անմաքուր է,
այն անձն իր ժողովրդիցը պիտի
կորչի։ Եւ ամեն անմաքուր բա- 21
նի դպչող անձը թէ մարդի ան-
մաքրութեան՝ թէ անմաքուր ա-
նասունի և թէ ամեն կերպ ան-
մաքուր *պիղծ բանի դպչի, եթէ
Եհովայի խաղաղութեան զոհի
մսիցն ուտելու լինի, այն անձն
իր ժողովրդիցը պիտի կորչի։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 22
հետ ասելով. Խօսիր Իսրայէլի 23
որդիների հետ և ասիր. Բնաւ
արջառի կամ ոչխարի կամ այծի
ճարպ չ՚ուտէք։ Եւ մեռած ա- 24
նասունի ճարպը՝ և պատառուա-
ծի ճարպը՝ ամեն գործի մէջ գոր-
ծածուի, բայց բնաւ պիտի չ՚ու-
տէք նորանից։ Որովհետև ով որ 25
ուտելու լինի այն անասունի ճար-
պիցը, որ պատարագ է մատուց-
ուել Եհովային, այն ուտող ան-
ձը իր ժողովրդիցը պիտի կորչի։
Եւ ձեր ամեն բնակարաններումը 26

*Կամ՝ սողունի։

բնաւ արիւն պիտի չ՚ուտէք, թէ
թռչունի լինի և թէ անասունի։
27 Ամեն անձ որ ինչ և իցէ արիւն
ուտէ, այն անձը իր ժողովրդիցը
պիտի կորչի։
28 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
29 հետ ասելով. Խօսիր Իսրայէլի
որդիների հետ և ասիր. Իր խա-
ղաղութեան զոհը Եհովային մա-
տուցանողը՝ իր խաղաղութեան
զոհիցը պատարագ բերէ Եհովա-
յին։ Եհովայի պատարագները իր
ձեռքովը բերէ. ճարպը երբու-
ծովը բերէ, որ երբուծը երերա-
ցընելու պատարագի համար ե-
բերացնուի Եհովայի առաջին։ Եւ
քահանան ճարպը այրէ սեղանի
վերայ. բայց երբուծը Ահարօնինը
32 և նորա որդիներինը լինի։ Եւ աջ
զիստը քահանային պիտի տաք՝
բարձրացնելու պատարագի հա-
մար ձեր խաղաղութեան զոհե-
33 րիցը։ Ահարօնի որդիներից ով որ
խաղաղութեան զոհի արիւնը և
ճարպը մատուցանէ, աջ զիստը
34 նորա բաժինը լինի։ Որովհետև
նորանց խաղաղութեան զոհերիցը
երերացնելու երբուծը և բարձ-
րացնելու զիստը Իսրայէլի որդի-
ներիցը վեր առի, և յաւիտենա-
կան կանոնով Իսրայէլի որդինե-
րից՝ Ահարօն քահանային և նո-
35 րա որդիներին տուի նորանց։ Սա
Եհովայի պատարագներիցը Ահա-
րօնի և նորա որդիների օծման
համար է՝ նորանց Եհովային քա-
հանայութիւն անելու մօտեցրած
36 օրը։ Որ Եհովան պատուիրեց
տալ նորանց՝ իրանց օծուած օրը՝
Իսրայէլի որդիներիցն իրանց ցե-
ղերի մէջ յաւիտենական կա-
նոնով։
37 Այս է ողջակէզի՝ հացի նուէ-
րի և մեղքի պատարագի և յան-
ցանքի պատարագի և ձեռք լրց-
նելու և խաղաղութեան զոհի օ-
38 րէնքը, Որ Եհովան պատուիրեց
Մովսէսին Սինա սարումը, այն օ-
րը որ նա Իսրայէլի որդիներին
պատուիրեց իրանց պատարագ-
ները Եհովային մատուցանելու
Սինայի անապատումը։

ԳԼ. Ը

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 1
հետ ասելով. Առ Ահարօնը և 2
նորա որդիքը նորա հետ, և ըզ-
գեստները և օծման իւղը և մեղ-
քի պատարագի զուարակը և եր-
կու խոյերը և անխմոր հացի սա-
կառը. Եւ բոլոր ժողովքը ժողո- 3
վիր ժողովքի խորանի դուռը։ Եւ 4
Մովսէսն արաւ Եհովայի իրան
պատուիրածին պէս. և ժողովքը
ժողովուեցաւ ժողովքի խորանի
դուռը։ Եւ Մովսէսն ասեց ժո- 5
ղովքին. Սա է այն բանը որ Եհո-
վան պատուիրեց անելու։ Եւ 6
Մովսէսը մօտեցրեց Ահարօնին և
նորա որդկանցը և ջրով լուա-
ցաւ նորանց։ Եւ հագցրեց նորան 7
շապիկը, և նորա մէջքը կապեց
գօտին, և պատմուճանը հագցը-
րեց նորան և եփուդը նորա վե-
րայ գցեց, և եփուդի ժապաւէ-
նովը գօտեպնդեց նորան, և նո-
րանով զգեստաւորեց նորան։ Եւ 8
լանջապանակը նորա վերայ դրաւ,
և լանջապանակին անցկացրեց Ու-
րիմը և Թումիմը։ Եւ խոյրը նո- 9
րա գլխին դրաւ, և խոյրի վերայ
դրաւ նորա առաջի կողմից ոսկի
թիթեղը՝ այսինքն սուրբ պսա-
կը, ինչպէս որ Եհովան Մովսէսին
պատուիրել էր։
Եւ Մովսէսն առաւ օծման իւ- 10
ղը, և օծեց խորանը և բոլոր նո-
րա մէջի եղածները, և սրբեց նո-
րանց։ Եւ սրսկեց նորանից սեղա- 11
նի վերայ եօթն անգամ. և օծեց
սեղանը և նորա բոլոր գործիքնե-
րը՝ և աւազանը և նորա խարիս-
խը, նորանց սրբելու համար։ Եւ 12
թափեց օծման իւղիցը Ահարօնի
գլխի վերայ և օծեց նորան սրբե-
լու համար։ Եւ Մովսէսը մօտե- 13
ցրեց Ահարօնի որդիներին, և շա-
պիկներ հագցրեց նորանց, և նո-
րանց մէջքներին գօտի կապեց,
և նորանց գլխին ապարօշներ փա-
թաթեց, ինչպէս որ Եհովան
Մովսէսին պատուիրել էր։
Եւ մեղքի պատարագի զուա- 14
րակը մօտեցրեց. և Ահարօնն ու
նորա որդիքը իրանց ձեռքերը

մեղքի պատարագի զուարակի
45 գլխին դրին, եւ մորթեց. և Մովսէան առաւ արիւնը, և իր մատովը սեղանի եղջիւրներին քսեց շուրջանակի, և մաքրեց սեղանը. և արիւնը սեղանի յատակի վերայ թափեց, և նորա վերայ քաւութիւն անելու համար՝ օրհնեց
46 նորան։ եւ առաւ փորոտիքի վերայ եղած բոլոր ճարպը, և լեարդի թաղանթը, և երկու երիկամունքը, և նորանց ճարպը, և Մովսէան այրեց սեղանի վերայ,
47 բայց զուարակը, մորթը նորա մորթը և միսը և նորա աղբը, բանակիցը դուրս կրակով այրեց, ինչպես որ Եհովան Մովսէսին պատուիրել էր։
48 եւ աղջակէզի խոյը մօտեցրեց. և Ահարոնն ու նորա որդիքը իրանց ձեռքերը խոյի գլխին դրին,
49 եւ մորթեց. և Մովսէսը շուրջանակի սեղանի վերայ սրսկեց արիւնը։ եւ խոյին կտոր կտոր արաւ. և Մովսէսն այրեց
24 գլուխը և կտորները և ճարպը։ եւ փորոտիքն ու ոտքերը ջրով լուացաւ. և Մովսէսն այրեց բոլոր խոյը սեղանի վերայ. սա աղջակէզ անուշահոտ պատարագ էր Եհովայի համար, ինչպես որ Եհովան Մովսէսին պատուիրել էր։
22 եւ մօտեցրեց միւս խոյը, այսինքն յե-ւ լցնելու խոյը. և Ահարոնն ու նորա որդիքը իրանց ձեռքերը խոյի գլխի վերայ դրին,
23 եւ մորթեց. և Մովսէսը նորա արիւնից առաւ, և քսեց Ահարոնի աջ ականջի բլթակին, և նորա աջ ձեռքի մեծ մատին, և
24 նորա աջ ոտքի մեծ մատին, եւ մօտեցրեց Ահարոնի որդիքը, և Մովսէսն այն արիւնիցը քսեց նրանց աջ ականջների բլթակներին, և նրանց աջ ձեռքերի մեծ մատներին, և նրանց աջ ոտքերի մեծ մատներին. և ճաշած արիւնը Մովսէսը շուրջանակի սեղանի վե-
25 րայ սրսկեց, եւ առաւ ճարպը, գմակը, և փորոտիքի վերայ եղած բոլոր ճարպը, և լեարդի թաղանթը, և երկու երիկամունքը, և նորանց ճարպը, և աջ
զեառը. եւ եհովայի առջեւի անմատնը հացի սակաւիկը մի անխմոր շօթի, մի իւղով հացի շօթի, և մի լաւաշ առաւ, և ճարպերի վերայ և աջ զառի վերայ դրաւ, եւ ամենը դրաւ Ահարոնի և նորա որդիների ձեռքը և երերացրեց նորանց եհովայի առաջին երերացնելու պատարագ։ եւ Մովսէսը նորանց ձեռքից առաւ նորանց, և սեղանումն եղած ողջակէզի վերայ այրեց. սորանք յե-ւ լցնելու համար անուշահոտ պատարագ էին եհովայի համար։ եւ Մովսէսն առաւ երբուծը և եհովայի առաջին երերացնելու պատարագ երերացրեց. սա յե-ւ լցնելու խոյիցը Մովսէսի բաժինը եղաւ, ինչպես որ եհովան Մովսէսին պատուիրել էր։ եւ Մովսէսն օծման իւղիցն ու սեղանի վերայ եղած արիւնիցն առաւ և սրսկեց Ահարոնի վերայ և նորա հանդերձների վերայ՝ և նորա հետ նորա որդիների վերայ և նորա որդիների հանդերձների վերայ. և սրբեց Ահարոնին, նորա հանդերձները, և նորա հետ նորա որդիներին և նորա որդիների հանդերձները։

եւ Մովսէսն ասեց Ահարոնին և նորա որդիներին. Միսը ժողովքի խորանի դրանը եփեցէք, և այնտեղ կերէք այն և ձեռք լցնելու սակաւիկ մէջի հացերը, ինչպես որ ես պատուիրեցայ ասելով թէ Ահարոնն ու նորա որդիքը ուտեն նորանց։ եւ մնիցն ու հացիցն աւելցածը կրակով այրեցէք։ եւ եօթը օր ժողովքի խորանի դռնիցը դուրս մի գաք մինչև ձեր ձեռք լցնելու օրերի վերջի օրը. որովհետև ձեր ձեռքերը եօթը օր կ'լցնեն, ինչպես որ այսօր արին, եհովան պատուիրեց ձեզ համար քաւութիւն անելու համար։ եւ ժողովքի խորանի դրանը նստեցէք ցերեկը և գիշերը եօթը օր, և եհովայի պահպանութիւնն արէք՝ որ չմեռնիք. որովհետև ինձ այսպէս է պատուիրուած։ եւ արաւ Ահարոնը ու նորա որ-

դիքը այն բոլոր բաները որ եհովան Մովսէսին պատուիրել էր։

ԳԼ. Թ

1 Եւ եղաւ ութերորդ օրը որ Մովսէսը կանչեց Ահարոնին և նորա որդիներին և Իսրայէլի ծե-
2 րերին. եւ ասեց Ահարոնին. Առ դու մեղքի պատարագի համար արջառներից մի զուարակ, և ողջակէզի համար մի խոյ. անարատ լինին, և եհովայի առաջին մատուցանես։ եւ Իսրայէլի որդիների հետ խօսիր՝ ասելով. Առէք մեղքի պատարագի համար այծերից մի նոխազ և ողջակէզի համար
4 մի զուարակ և մի գառն մէկ տարեկան. անարատ լինին, գան մի արջառ և մի խոյ իբր խաղաղութեան զոհ եհովայի առաջին զոհելու համար, և իւղով զանգած հացի նուէր. որովհետև այսօր եհովան ձեզ պիտի երե-
5 ւայ։ եւ Մովսէսի պատուիրածն առին բերին ժողովքի խորանի առաջը. և բոլոր ժողովքը մօտեցան և կանդնեցին եհովայի ա-
6 ռաջին։ եւ Մովսէսն ասեց. Այս է եհովայի պատուիրած բանը. այս արէք, և եհովայի փառքը
7 ձեզ կ'երեւայ։ եւ Մովսէսն ասեց Ահարոնին. Մօտեցիր սեղանին, և արա քո մեղքի պատարագը և ողջակէզը, և քաւութիւն արա քեզ համար և ժողովրդի համար. և արա ժողովրդի պատարագը և նորանց համար քաւութիւն արա՝ ինչպես որ եհովան պատուիրել էր։
8 եւ Ահարոնը մօտեցաւ սեղանին, և մորթեց իր համար եղած մեղքի պատարագի զուարակը։
9 եւ Ահարոնի որդիքը արիւնը մատուցին նորան. և նա իր մատը արիւնին թաթախեց, և սեղանի եղջիւրներին քսեց. և ճաշած արիւնը թափեց սեղանի յատակի
10 վերայ։ Բայց մեղքի պատարագից ճարպը և երիկամունքները և լեարդի թաղանթը սեղանի վերայ այրեց, ինչպես որ եհովան
11 Մովսէսին պատուիրել էր։ եւ միսն ու մորթը բանակիցը դուրս կրակով այրեց։ եւ աղջակէզը
12 մորթեց. և Ահարոնի որդիքը արիւնը նորան ներկայացրին, և նա սրսկեց նորան սեղանի վերայ շուրջանակի։ եւ ներկայացրին
13 նորան աղջակէզը կտորներով և գլուխը, և նա այրեց սեղանի վերայ։ եւ փորոտիքն ու ոտքերը
14 լուացաւ, և այրեց սեղանի վերայի աղջակէզի վերայ։
15 եւ մօտեցրեց ժողովրդի ընծան, և առաւ ժողովրդի համար մեղքի պատարագի նոխազը, և մորթեց նորան, և մեղքի պատարագ արաւ առաջինի պէս։
16 եւ աղջակէզը մօտեցրեց, և բան օրինի մատուցրեց։ եւ հացի ընծան
17 մօտեցրեց, և ձեռքը լցրեց նրանից և այրեց սեղանի վերայ, բացի առաւօտեան աղջակէզից։
18 եւ ժողովրդի խաղաղութեան զոհի արջառն ու խոյը մորթեց. և Ահարոնի որդիքը արիւնը նորան ներկայացրին, և սեղանի վերայ շուրջանակի սրսկեց այն։ եւ ա-
19 ջառից՝ ճարպերը և խոյիցը՝ գմակը և ֆ-ւ-ո-ւ-ը ծածկող ճ-ւ-ը, և երիկամունքները և լեարդի թաղանթը. եւ ճարպերը եր-
20 բուծների վերայ դրին, և այրեց ճարպերը սեղանի վերայ։ եւ
21 Ահարոնի երբուծները ու աջ զիստը երերացրեց եհովայի առաջին երերացնելու պատարագ, ինչպես որ Մովսէսը պատուիրել էր։
22 եւ Ահարոնն իր ձեռքերը ժողովրդի վերայ բարձրացրեց, և օրհնեց նորանց. և մեղքի պատարագն ու աղջակէզը և խաղաղութեան զոհերը մատուցանելուց յետոյ իջաւ։ եւ Մովսէսն
23 ու Ահարոնը ժողովքի խորանը մտան, և դուրս գալիս օրհնեցին ժողովուրդը. և եհովայի փառքը բոլոր ժողովրդին երեւեցաւ։
24 եւ եհովայի առաջիցը կրակ դուրս եկաւ, և այրեց սեղանի վերայի աղջակէզը և ճարպերը. և բոլոր ժողովուրդը տեսնելով աղաղակեցին, և իրանց երեսների վերայ ընկան։

ԳԼ. Ժ

1 Եւ Ահարօնի որդիքը՝ Նադաբն
ու Աբիուդը ամեն մէկն իր բուր-
վառն առաւ, և նորանց մէջը
կրակ դրին, և վերան խունկ դը-
րին, և Եհովայի առաջին օտար
կրակ մատուցրին, որ ինքը չէր
2 պատուիրել նորանց։ Եւ Եհովա-
յի առաջիցը կրակ ելաւ և սպա-
ռեց նորանց, և նորանք մեռան
3 Եհովայի առաջին։ Եւ Մովսէսն
ասեց Ահարօնին. Սա այն է որ
Եհովան խօսեց ասելով. Ինձ մօ-
տեցողներովը պիտի սրբուիմ, և
բոլոր ժողովրդի առաջին պիտի
փառաւորուիմ. և Ահարօնը լը-
4 ռեց։ Եւ Մովսէսը կանչեց Ահա-
րօնի հօրեղբայր՝ Ողիէլի որդիք
Միսայէլին և Եղիսափանին, և ա-
սեց նորանց. Մօտեցէք, ձեր եղ-
բայրներին սրբարանի առջևից
5 բանակիցը դուրս տարէք։ Եւ նո-
րանք մօտեցան և տարին նորանց
իրանց շապիկներովը բանակիցը
դուրս։
6 Եւ Մովսէսն ասեց Ահարօնին՝
և նորա որդկանցը՝ Եղիազարին և
Իթամարին. Ձեր գլուխները մի
բանաք, և ձեր հանդերձները մի
պատառէք, որ չ՚մեռնէք, և բո-
լոր ժողովրդի վերայ բարկութիւն
չ՚գայ. բայց ձեր եղբայրները՝ Իս-
րայէլի բոլոր տունը՝ թող Եհո-
վայի արած այրումի վերայ լաց
7 լինեն։ Եւ դուք ժողովքի խորա-
նի դռնիցը դուրս մի գաք, որ չը
մեռնէք. որովհետև Եհովայի օծ-
ման իւղը ձեր վերայ է. և նորանք
Մովսէսի խօսքի պէս արին։
8 Եւ Եհովան խօսեց Ահարօնի
9 հետ ասելով. Եհովայի ժողովքի
խորանը մտնելիս գինի և օղի չը
խմէք, թէ դու և թէ քո որդի-
քը քեզ հետ, որ չ՚մեռնէք. սա
ձեր ազգերի մէջ յաւիտենական
10 կանոն լինի, Սուրբի և անսուրբի
մէջտեղը, և անմաքուրի ու մա-
քուրի մէջտեղը տարբերելու հա-
11 մար. Եւ Իսրայէլի որդիների այն
բոլոր կանոնները սովորեցնելու
համար, որ Եհովան Մովսէսի
ձեռքովը խօսել է նորանց հետ։

Եւ Մովսէսը խօսեց Ահարօնի 12
հետ և նորա մնացած որդիք՝ Ե-
ղիազարի և Իթամարի հետ, թէ
Եհովայի պատարագներից աւե-
լացած հացի նուէրն առէք, և
սեղանի մօտ բաղարջ կերէք. ո-
րովհետև նա ամենասուրբ է։
Սուրբ տեղը կերէք այն. որովհե- 13
տև Եհովայի պատարագներիցը
քո իրաւունքն ու քո որդիների
իրաւունքն է. որովհետև ինձ
այսպէս է պատուիրուած։ Եւ ե- 14
բերացնելու երբուծը և բարձրա-
ցնելու զիստը դու և քո որդի-
քը և քո աղջիկները քեզ հետ
մի մաքուր տեղ պիտի ուտէք.
որովհետև Իսրայէլի որդիների
խաղաղութեան զոհերիցը սա
տրվում է իբրև քո իրաւունք և
քո որդիների իրաւունք։ Բարձ- 15
րացնելու զիստը և երերացնելու
երբուծը ճարպի պատարագներո-
վը Եհովայի առաջը բերեն երե-
րացնելու համար. և քոնը և քեզ
հետ քո որդիներինը լինի յաւի-
տենական կանոնով. ինչպէս որ
Եհովան պատուիրել է։
Եւ Մովսէսը մեղքի պատարա- 16
գի նոխազը զգուշութեամբ որո-
նեց, բայց ահա այրուած էր. և
Ահարօնի մնացած որդիք՝ Եղիա-
զարի և Իթամարի վերայ բար-
կացաւ ասելով. Ինչու մեղքի 17
պատարագը սուրբ տեղումը չը
կերաք. որովհետև սա ամենա-
սուրբ է, և Եհովան այն տուաւ
ձեզ որ ժողովքի անօրէնութիւ-
նը վեր առնէք Եհովայի առաջին
նորանց համար քաւութիւն ա-
նելով։ Ահա նորա արիւնը սրբ- 18
բարանի մէջը չ՚բերուեցաւ. դուք
պիտի ուտէիք այն իմ պատուի-
րածի պէս սուրբ տեղը։ Եւ Ա- 19
հարօնն ասեց Մովսէսին. Ահա
այսօր իրանց մեղքի պատարագն
ու ողջակէզը Եհովայի առաջին
մատուցրին, և ինձ այսպիսի բա-
ներ պատահեցին, և ԵՒԵ այսօր
մեղքի պատարագն ուտէի, Եհո-
վայի առաջին հաճոյ կ՚լինէ՞ր
արդեօք։ Եւ Մովսէսը լսեց, և 20
հաւանեց։

ԳԼ. ԺԱ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի և
Ահարօնի հետ ասելով նորանց.
2 Խօսեցէք Իսրայէլի որդիների հետ
և ասացէք. Այս են այն անա-
սունները որ կարող էք ուտել՝
երկրի վերայ եղած բոլոր անա-
3 սուններից. Ամեն կճղակաւոր և
կճղակը ճեղքուած որոճացող
4 անասունը ուտէք։ Բայց որոճա-
ցողներիցը, և կճղակաւորներիցը
սորանց պիտի չ՚ուտէք. ուղտը,
թէև նա որոճում է, բայց կճ-
ղակաբաշխ չէ, նա անմաքուր լի-
5 նի ձեզ համար։ Եւ ճագարը,
թէև որոճում է, բայց կճղակա-
բաշխ չէ, նա անմաքուր լինի ձեզ
6 համար։ Եւ նապաստակը, թէև
որոճում է, բայց կճղակաբաշխ
չէ, նա անմաքուր լինի ձեզ հա-
7 մար։ Եւ խոզը, թէև կճղակա-
ւոր է և ճեղքուած կճղակ ու-
նի, բայց չէ որոճում, նա անմա-
8 քուր լինի ձեզ համար։ Նորանց
մսիցը չ՚ուտէք, և դիակներին չը
դպչէք. նորանք անմաքուր են
ձեզ համար։
9 Ջրերի մէջ բոլոր եղածներիցը
սորանց ուտէք. ջրերի մէջ՝ այ-
սինքն ծովերի մէջ և գետերի
մէջ. ամեն թև և թեփ ունե-
10 ցողը ուտէք։ Բայց չ՚ուտէք այն
ամենը որ թև և թեփ չ՚ունին՝
ծովերի մէջ և գետերի մէջ ջրե-
րի բոլոր զեռուններից՝ և ջրերի
մէջ եղած բոլոր շնչաւոր կեն-
դանիներից՝ պիղծ լինին ձեզ հա-
11 մար։ Եւ պիղծ լինին նորանք ձեզ
համար. նորանց մսիցը պիտի չ՚ու-
տէք, և նորանց դիերիցը պիտի
12 զզուիք։ Ջրերի մէջ եղած բո-
լոր անթև և անթեփ եղածները
պիղծ լինին ձեզ համար։
13 Եւ թռչունների մէջ սորան-
ցից զզուեցէք. նորանք չ՚ուտուին,
պիղծ են. արծիւը, և պասկու-
14 ճը, և գետարծիւը, Եւ անգղը,
15 և ցինը իր տեսակի պէս, Ամեն
16 ագռաւը իր տեսակի պէս, Եւ
ջայլամը, և բուն, և որորը, և
17 բազէն իր տեսակի պէս, Եւ հաւ-
պատիրը, և հողամաղը, և քա-
ջահաւը, Եւ կարապը, և հաւա- 18
լուսը, և սև անգղը, Եւ արա- 19
գիլը, և քարագրը իր տեսակի
պէս, և յոպոպը, և չիղջը։
Ամեն չորս ոտքի վերայ գնա- 20
ցող թռչող զեռուն պիղծ լինի
ձեզ համար։ Իսկ սորանց ուտէք. 21
բոլոր չորս ոտքի վերայ գնացող
թռչող զեռուններից՝ երկրի վե-
րայ ոստոստելու համար իրանց
ոտքերի վերայ ազդր ունեցողնե-
րը։ Նորանցից սորանց ուտէք՝ 22
մարախն իր տեսակի պէս, և ջոր-
եակն իր տեսակի պէս, և խա-
րագուլը իր տեսակի պէս, և օ-
ձամարտն իր տեսակի պէս։ Բայց 23
ճաղաթ բոլոր չորս ոտքով թռ-
չող զեռունները պիղծ լինեն ձեզ
համար. Եւ նորանցով դուք ան- 24
մաքուր կ՚լինիք. ամեն նորանց
դիակներին դպչողը մինչև իրի-
կուն անմաքուր լինի։ Եւ ամեն 25
նորանց դիակները վեր առնողը
իր հանդերձները լուանայ, և մին-
չև իրիկուն անմաքուր լինի։ Բո- 26
լոր անասունները որոնք կճղա-
կաւոր են, բայց կճղակը ճեղ-
քուած չէ, և չեն որոճում, ան-
մաքուր են ձեզ համար. ամեն
նորանց դպչողը անմաքուր լինի։
Եւ բոլոր չորս ոտքի վերայ գը- 27
նացող անասուններից իրանց թա-
թերի վերայ գնացողների ամենը
անմաքուր լինի ձեզ համար. ա-
մեն նորանց դիակներին դպչողը
մինչև իրիկուն անմաքուր լինի։
Եւ նորանց դիակները վեր առ- 28
նողը իր հանդերձները պիտի լը-
ուանայ, և մինչև իրիկուն անմա-
քուր լինի. նորանք անմաքուր են
ձեզ համար։ Եւ երկրի վերայ 29
սողացող սողունների մէջ սորանք
անմաքուր լինեն ձեզ համար. ա-
քիսը՝ և մուկը՝ և տիտեռը իր
տեսակի պէս, Եւ անական՝ և 30
քոյը՝ և լեթատն՝ և խոմէթը՝ և
գետնառիւծը։ Բոլոր սողացողնե- 31
րի մէջ ձեզ համար անմաքուր-
ները սորանք են. ամեն ով որ նո-
րանց մեռածին դպչի, մինչև ի-
րիկուն անմաքուր լինի։ Եւ ամեն 32
ինչ բանի վերայ որ նորանց մէկ
մեռածը ընկնի, թէ փայտի ա-

ման լինի կամ հանդերձ՝ կամ
մորթ կամ քուրձ, ինչ տեսակ
գործածական ման որ լինի՝ ան-
մաքուր պիտի լինի. ջուրը պիտի
գցուի այն, և մինչև իրիկուն
անմաքուր լինի, և յետոյ մաքուր
33 է։ Եւ ամեն ինչ հողի ամանի
մէջ որ նորանցից ընկնելու լինի,
ամեն ինչ որ նորա մէջ է՝ ան-
մաքուր պիտի լինի, և այն ամանը
34 պիտի կոտրէք։ Ամեն ուտուելու
կերակուրը որի վերայ այն ջրիցը
գայ, անմաքուր պիտի լինի, նոյն-
պէս ամեն այնպիսի ամանի մէջ
եղած բոլոր խմուելու խմելիքը
35 անմաքուր պիտի լինի։ Եւ ամեն
բան՝ որի վերայ սորանց դիակն
ընկնի, անմաքուր պիտի լինի. Բէ
թոնիր և թէ վառարան լինի՝
պիտի քանդուի. սորանք անմա-
քուր են, և անմաքուր պիտի լի-
36 նին ձեզ համար։ Բայց աղբիւրը
և հորը և ջրակոյտը, մաքուր
պիտի լինի. սակայն նորանց դի-
ակներին դպչողը անմաքուր լինի։
37 Եւ եթէ նորանց դիակը ցանուե-
լու սերմի վերայ ընկնի՝ նա մա-
38 քուր է։ Բայց եթէ սերմի վերայ
ջուր դրուած լինի և նորա վե-
րայ ընկնի նորանց դիակը, նա
ձեզ համար անմաքուր պիտի լինի։
39 Եւ եթէ ձեր ուտելու կենդա-
նիներից մէկը մեռնի, նորա դի-
ակին դպչողը մինչև իրիկուն ան-
40 մաքուր պիտի լինի։ Եւ նորա դի-
ակիցն ուտողը իր հանդերձները
պիտի լուանայ, և մինչև իրիկուն
անմաքուր լինի. և նորա դիակը
վեր առնողը իր հանդերձները
պիտի լուանայ, և մինչև իրիկուն
անմաքուր լինի։
41 Եւ երկրի վերայ սողացող ա-
մեն սողունը պիղծ է, պիտի չ՚ուտ-
42 ուի։ Երկրի վերայ բոլոր սողա-
ցող սողուններից ամեն իր փորի
վերայ գնացողը՝ կամ ամեն չորս
ոտքի վերայ գնացողը՝ մինչև ա-
մեն բազմոտանին պիտի չ՚ուտէք,
43 որովհետև նորանք պիղծ են։ Ձեր
անձերը չ՚պղծէք ոչ մի սողացող
սողունով. և նորանցով չ՚պղ-
ծուիք և անմաքուր չ՚դառնաք
44 նորանցով։ Որովհետև ես եմ
ձեր Եհովայ Աստուածը. ուրեմն
սրբեցէք ձեր անձերը և սուրբ
եղէք, ըստ որում ես սուրբ եմ.
և չ՚պղծէք ձեր անձերը երկրի
վերայ ոչ մի սողացող սողունով։
Որովհետև ես եմ Եհովան՝ որ 45
ձեզ Եգիպտոսի երկրիցը հանեցի
որ ձեզ համար Աստուած լինեմ
և դուք սուրբ լինէք, որովհետև
ես սուրբ եմ։
Այս է չորքոտանիների և թռ- 46
չունների և ջրերի մէջ շարժող
բոլոր շնչաւոր կենդանիների՝ և
երկրի վերայ սողացող ամեն կեն-
դանիների օրէնքը. Անմաքուրի և 47
մաքուրի մէջ և ուտուելու ա-
նասունի և չ՚ուտուելու անասու-
նի մէջ տարբերութիւն անելու
համար։

ԳԼ. ԺԲ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 1
հետ ասելով. Խօսիր Իսրայէլի 2
որդիների հետ և ասիր. Եթէ մի
կնիկ սերմ ընդունէ և արու զա-
ւակ ծնէ, եօթն օր անմաքուր
պիտի լինի. նորա դաշտանի զատ-
ուելու օրերի համեմատ անմա-
քուր պիտի լինի։ Եւ ութերորդ 3
օրը անթլփատութեան մարմինը
թլփատուի։ Եւ երեսունևերեք 4
օր նա իր մաքրուելու արիւնովը
նստէ. և ընաւ մի սուրբ բանի
պիտի չ՚դպչի, ոչ էլ սրբարանը
մտնէ մինչև իր մաքրուելու օրե-
րի լրանալը։ Բայց եթէ աղջիկ 5
ծնելու լինի, երկու շաբաթ ան-
մաքուր պիտի լինի իր դաշտանի
պէս, և վաթսունևվեց օր նստէ
իր մաքրուելու արիւնովը։
Եւ տղայ կամ աղջիկ զաւակի 6
համար իր մաքրուելու օրերը լը-
րանալուց յետոյ, մի տարեկան
դառն բերէ ողջակէզի համար և
մեղքի պատարագի համար՝ մի
աղաւնու ձագ կամ մի տատրակ
ժողովքի խորանի դուռը քա-
հանայի մօտ։ Եւ նա մատուցա- 7
նէ նորան Եհովայի առաջին և
քաւութիւն անէ նորա համար,
և նա իր արեանը աղբիւրիցը մաք-
րուի։ Արու կամ էգ զաւակ ծը-

8 նողի օրէնքը այս է։ Եւ եթէ նո-
րա ձեռքը չ՚հասնէ գառն բերե-
լու, այն ժամանակ երկու տատ-
րակ կամ աղաւնու երկու ձագ
առնէ, մէկը ողջակէզի՝ և միւսը
մեղքի պատարագի համար, և
քահանան քաւութիւն անէ նո-
րա համար, և նա մաքրուի։

ԳԼ. ԺԳ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի և
2 Ահարօնի հետ ասելով. Եթէ մի
մարդի մարմնի մորթումը ուռեցք
կամ քոս կամ պաղպաջ լինի և
նորա մարմնի մորթումը բորոտու-
թեան ախտ դառնայ, այն ժա-
մանակ նա Ահարօն քահանայի
կամ նորա որդիների՝ քահանա-
3 ների մէկի մօտ տարուի։ Եւ
քահանան նայէ մարմնի մորթում
եղած ախտին. և եթէ ախտի մի-
ջի մազերը սպիտակի է փոխուել,
և ախտը մարմնի մորթիցը խոր է
երևում, բորոտութեան ախտ է
այն. և քահանան պիտի նայէ
նորան՝ և անմաքուր հրատարակէ
4 նորան։ Իսկ եթէ նորա մարմնի
մորթի մէջ պաղպաջը սպիտակ
է՝ և մորթիցը խոր չէ երևում,
և մազն էլ սպիտակի չէ փոխ-
ուել, այն ժամանակ քահանան
եօթը օր արգելուած պահէ ախ-
5 տակիրին։ Եւ քահանան եօթ-
ներորդ օրը նայէ նորան, և եթէ
ախտը իր կերպովը մնում է, և
մորթի մէջ չէ տարածուել, այն
ժամանակ քահանան եօթն օր
6 էլ արգելուած պահէ նորան։ Եւ
քահանան եօթներորդ օրը դարձ-
եալ նայէ նորան, և եթէ ախ-
տը շլացած լինի, և մորթի մէջ
տարածուած չ՚լինի, քահանան
նորան մաքուր հրատարակէ. դա
քոս է, և նա իր հանդերձները
7 լուանայ, և մաքուր է։ Բայց ե-
թէ քոսը տարածուելու լինի
մորթումը նորա մաքրուելու հա-
մար քահանայից նայուելուց յե-
տոյ, քահանային դարձեալ պի-
8 տի երևայ։ Եւ քահանան նայէ,
և եթէ քոսը մորթումը տա-
րածուել է, քահանան նորան
անմաքուր հրատարակէ. բորո-
տութիւն է։
Երբոր մի մարդի վերայ բորո- 9
տութեան ախտը լինի, նա քա-
հանայի մօտ պիտի տարուի։ Եւ 10
քահանան պիտի նայէ. և եթէ
մորթի մէջ սպիտակ ուռեցք
կայ՝ և սպիտակի է փոխուել մա-
զը՝ և ուռեցքի մէջ ողջ մսի կը-
տոր կայ, Սա նորա մարմնի մոր- 11
թումը հնացած բորոտութիւն է,
և քահանան նորան անմաքուր
հրատարակէ, արգելուած չ՚պա-
հէ նորան, որովհետև անմա-
քուր է նա։
Եւ եթէ բորոտութիւնը տա- 12
րածուել է մորթի մէջ, և ախ-
տակիրի բոլոր մորթը գլխիցը մին-
չև ոտքը, այսինքն քահանայի աչ-
քերի բոլոր տեսած տեղը բորո-
տութիւնը պատել է, Եւ քա- 13
հանան տեսնէ որ բորոտութիւ-
նը նորա բոլոր մարմինը պատել
է, այն ժամանակ ախտակիրին
մաքուր հրատարակէ. բոլորովին
սպիտակի է փոխուել. նա մա-
քուր է։ Բայց այն օրը որ նորա 14
վերայ ողջ միս տեսնուի, նա ան-
մաքուր լինի։ Եւ քահանան պի- 15
տի տեսնէ ողջ միսը, և նորան
անմաքուր հրատարակէ. ողջ մի-
սը անմաքուր է. բորոտութիւն
է։ Իսկ եթէ ողջ միսը դարձեալ 16
սպիտակի փոխուի, այն ժամա-
նակ քահանայի մօտ պիտի գայ։
Եւ քահանան պիտի տեսնէ նո- 17
րան. և եթէ ախտը սպիտակի է
փոխուել, այն ժամանակ քահա-
նան ախտակիրին մաքուր հրա-
տարակէ. նա մաքուր է։
Եւ եթէ մարմնի մորթի մէջ 18
պալար լինի և առողջանայ, Եւ 19
պալարի տեղը սպիտակ ուռեցք՝
կամ մի քիչ կարմրած սպիտակ
պաղպաջ լինի, նա քահանային
պիտի երևայ։ Եւ քահանան տես- 20
նէ. եթէ մորթիցը ցած երևայ,
և մազը սպիտակի է փոխուել,
քահանան նորան անմաքուր հր-
ատարակէ, նա բորոտութեան
ախտ է՝ պալարիցը տարածուած։
Եւ եթէ քահանան տեսնէ որ 21
սպիտակ մազ չ՚կայ նորա մէջ,

և մորթիցը ցած չէ՝ այլ շլացած
է, այն ժամանակ քահանան եօ-
թըն օր արգելուած պահէ նո-
22 րան։ Եւ եթէ մորթի մէջ տա-
րածուի, այն ժամանակ քահա-
նան նորան անմաքուր հրատա-
23 րակէ. ախտ է նա։ Բայց եթէ
պաղպաջը իր տեղը կենայ՝ չէ
տարածուել, նա պալարի սպին
է. և քահանան նորան մաքուր
հրատարակէ։
24 Իսկ եթէ մարմնի մորթի մէջ
կրակի այրած լինի, և այրածի
հարուածը մի քիչ կարմրած ըս-
պիտակ՝ կամ սպիտակ պաղպաջ
25 լինի, Եւ քահանան նորան նայէ,
եթէ պաղպաջի մէջ մազը սպի-
տակի է փոխուած, և մորթիցը
խոր է երևում, նա բորո-
տութիւն է՝ այրածից տարած-
ուած, և քահանան նորան ան-
մաքուր հրատարակէ. դա բորո-
26 տութեան ախտ է։ Բայց եթէ
քահանան նայէ, որ պաղպաջի
մէջ սպիտակ մազ չ՚կայ, և մոր-
թիցը ցած չէ, և շլացել է, այն
ժամանակ քահանան եօթն օր
27 արգելուած պահէ նորան։ Եւ
եօթներորդ օրը քահանան նայէ
նորան. եթէ մորթի մէջ տա-
րածուել է, քահանան նորան
անմաքուր հրատարակէ. դա բո-
28 րոտութեան ախտ է։ Եւ եթէ
պաղպաջը իր տեղը կենայ՝ և մոր-
թի մէջ չ՚տարածուի, և շլացել
է, դա այրածի ուռեցքն է. և
քահանան նորան մաքուր հրատա-
րակէ. որովհետև այրածի սպին է։
29 Եւ եթէ մի մարդի կամ կընկ-
ան գլխին կամ ծնօտին ախտ
30 լինի, Քահանան պիտի տեսնէ այն
ախտը. և եթէ մորթիցը խոր ե-
րևայ, և նորա մէջ բարակ դե-
ղին մազ լինի, այն ժամանակ
քահանան նորան անմաքուր հր-
ատարակէ. դա գոնջութիւն է,
գլխի կամ ծնօտի բորոտութիւն
31 է։ Եւ եթէ քահանան գոնջու-
թեան ախտը տեսնէ՝ որ մորթի-
ցը խոր չէ երևում, և նորա մէջ
սև մազ չ՚կայ, այն ժամանակ
քահանան գոնջութեամբ ախտա-
ցածին եօթն օր արգելուած պա-
հէ։ Եւ եօթներորդ օրը քահա- 32
նան ախտակիրին նայէ, և եթէ
գոնջութիւնը չէ տարածուել, և
նորա մէջ դեղին մազ չ՚կայ, և
գոնջութիւնը մորթիցը խոր չէ ե-
րևում, Նա ածիլուի, բայց գոն- 33
ջութիւնը չ՚ածիլէ. և քահանան
կրկին եօթն օր արգելուած պա-
հէ գոնջութիւն ունեցողին։ Եւ 34
եօթներորդ օրը քահանան գոն-
ջութիւն ունեցողին նայէ. և ե-
թէ գոնջութիւնը մորթի մէջ
չէ տարածուել, և մորթիցը խոր
չէ երևում, այն ժամանակ քա-
հանան նորան մաքուր հրատա-
րակէ. և նա իր հանդերձները
պիտի լուանայ, և մաքուր լինի։
Բայց եթէ իր մաքրուելուց յե- 35
տոյ գոնջութիւնը մորթի մէջ
տարածուի, Եւ քահանան նայէ 36
նորան. և եթէ գոնջութիւնը
մորթի մէջ տարածուել է, այն
ժամանակ քահանան դեղին մազ
չ՚որոնէ, նա անմաքուր է։ Բայց 37
եթէ գոնջութիւնը իր կերպովը
կենայ, և նորա մէջ սև մազ է
բուսել, գոնջութիւնը բժշկուած
է. նա մաքուր է, և քահանան
նորան մաքուր հրատարակէ։
Եւ եթէ մի մարդ կամ կնիկ 38
իր մարմնի մորթի մէջ պաղպաջ-
ներ՝ այսինքն սպիտակ պաղպաջ-
ներ ունենայ, Եւ քահանան նա- 39
յէ, և եթէ նորանց մարմինների
մորթի մէջի պաղպաջները շլա-
ցած սպիտակ լինեն, դա մորթի
մէջ գոյացած պիսակ է. նա մա-
քուր է։
Եւ եթէ մի մարդի գլխի մազը 40
թափուի, նա կունտ է. մաքուր
է։ Եւ եթէ նորա երեսի կողմի- 41
ցը թափուի նորա գլխի մազերը,
դա ճեղ է. մաքուր է։ Բայց ե- 42
թէ կնտութեան կամ ճեղու-
թեան մէջ մի քիչ կարմրած ըս-
պիտակ վէրք լինի, նա նորա կընտ-
ութեան կամ ճեղութեան մէջ
գոյացած բորոտութիւն է։ Այն 43
ժամանակ քահանան նայէ նո-
րան. և եթէ նորա կնտութեան
կամ ճեղութեան մէջ եղած
վէրքի ուռեցքը մի քիչ կարմր-
ած սպիտակ լինի մարմնի մոր-

թի մէջ եղած բորոտութեան ե-
44 րևոյթի պէս, Այն մարդը բորոտ
է, անմաքուր է. քահանան ան-
պատճառ նորան անմաքուր հր-
ատարակէ. նորա ախտը նորա
գլուխին է։
45 Եւ ախտ ունեցող բորոտի հան-
դերձը պատառած պիտի լինի, և
նորա գլուխը մերկ, և նորա շրբ-
թունքները ծածկուած պիտի լի-
նին, և "Անմաքուր, անմաքուր"
46 պիտի կանչէ։ Ախտը նորա վերան
եղած բոլոր օրերը անմաքուր պի-
տի լինի. նա անմաքուր է, մենակ
նստէ. նորա բնակութիւնը բա-
նակիցը դուրս պիտի լինի։
47 Եւ այն հանդերձը՝ որի մէջը
բորոտութեան ախտ կայ, թէ
բրդի հանդերձ և թէ քթանի
48 հանդերձ, Քթանեղէնի կամ բրդ-
եղէնի, առէչի կամ թեզանի
մէջ՝ կամ մորթի մէջ և կամ
մորթից շինուած ամեն բանի մէջ,
49 Այսինքն՝ եթէ հանդերձի կամ
մորթի մէջ՝ կամ առէչի կամ
թեզանի մէջ՝ կամ մորթից շին-
ուած ամեն կերպ բանի մէջ մի
քիչ կանանչ կամ կարմրած ախ-
տի նշան լինի, բորոտութեան
ախտ է, և քահանային պիտի ե-
50 րևայ։ Եւ քահանան նայէ ախ-
տին՝ և եօթն օր արգելուած պա-
51 հէ ախտացեալ բանը։ Եւ եօթ-
ներորդ օրը ախտացեալ բանին
նայէ. եթէ ախտը տարածուել
է հանդերձի մէջ, կամ առէչի
կամ թեզանի մէջ, կամ մորթի
մէջ, և կամ գործածութեան
համար մորթից շինուած ամեն
բանի մէջ, այս ախտը բորբոք-
ուող բորոտութիւն է. անմա-
52 քուր է։ Այն ժամանակ նա այրէ
բրդեղէն կամ քթանեղէն հան-
դերձը՝ կամ առէչը կամ թեզանը
կամ ամեն կերպ մորթից շինուած
բանը, որի մէջ այն ախտը կայ.
որովհետև բորբոքուած բորոտու-
թիւն է այն, կրակով պիտի այ-
53 րուի։ Եւ եթէ քահանան տես-
նէ, որ ախտը չէ տարածուել
հանդերձի մէջ, կամ առէչի
կամ թեզանի մէջ կամ ամեն
կերպ մորթից շինուած բանի մէջ,
Այն ժամանակ քահանան հրա- 54
մայէ, որ այն ախտացեալ բանը
լուանան. և կրկին եօթն օր ար-
գելուած պահէ նորան։ Եւ ախ- 55
տացեալ բանը լուացուելուց յե-
տոյ քահանան տեսնէ, եթէ ախ-
տը իր կերպը չէ փոխել, և ախ-
տը չէ տարածուել, նա անմա-
քուր է. կրակով այրես նորան.
նորա աստառին կամ երեսին փը-
տութիւն կայ։ Եւ եթէ քահա- 56
նան տեսնէ, որ նորա լուացուե-
լուց յետոյ ախտը շլացել է, այն
ժամանակ պատառէ նորան այն
հանդերձիցը կամ մորթիցը կամ
առէչիցը և կամ թեզանիցը։ Եւ 57
եթէ այն հանդերձի մէջ, կամ
առէչի կամ թեզանի մէջ, կամ
ամեն կերպ մորթից շինուած բանի
մէջ դարձեալ երևալու լինի, նա
տարածուած բորոտութիւն է. իր
վերայ ախտ ունեցող բանը կրա-
կով այրես։ Եւ այն հանդերձը, 58
կամ առէչը կամ թեզանը, կամ
ամեն կերպ մորթից շինուած բա-
նը, որ լուացուելուց յետոյ ախ-
տը նորանցից գնացել է, դարձ-
եալ պիտի լուացուի, և մաքուր
է։ Բրդի կամ քթանի հանդեր- 59
ձի մէջ, կամ առէչի կամ թե-
զանի մէջ, կամ մորթից շինուած
ամեն կերպ բանի մէջ երևացած
բորոտութեան ախտի օրէնքը այս
է, նորան մաքուր կամ անմա-
քուր հրատարակելու համար։

ԳԼ. ԺԴ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 1
հետ ասելով. Սա լինի բորոտի 2
օրէնքը իր մաքրուելու օրը. Նա
քահանայի մօտ պիտի տարուի.
Եւ քահանան բանակիցը դուրս 3
պիտի գայ, և քահանան պիտի
նայէ. և եթէ բորոտիցը բորո-
տութեան ախտը բժշկուել է,
Այն ժամանակ քահանան հրա- 4
մայէ, որ մաքրուելու մարդի հա-
մար երկու ողջ և մաքուր թռչ-
ուն՝ և եղևնափայտ և կրկնակի
կարմիր և զոպայ առնուի։ Եւ 5
քահանան հրամայէ, որ թռչու-
նի մէկը մորթեն հողի ամանի մէջ

6 կենդանի ջրի վերայ, իսկ նա ողջ թռչունն ու եղևնափայտը և
կրկնակի կարմիրը և զոպան առ-
նէ, և սորանց ողջ թռչունի հետ
կենդանի ջրի վերայ մերթուած
7 թռչունի արեանը թաթախէ։ Եւ
բորոտութիւնից մաքրուելու մար-
դի վերայ եօթն անգամ սրսկէ,
և մաքրէ նորան. և ողջ թռչու-
8 նը դէպի դաշտն արձակէ։ Եւ
մաքրուելու մարդն իր հանդերձ-
ները լուանայ, և իր բոլոր մա-
զերն ածիլէ, և ջրով լուացուի.
և մաքուր է, նորանից յետոյ բա-
նակը մտնէ և եօթն օր իր վրա-
9 նի դրսում կենայ։ Եւ եօթներ-
րորդ օրն իր բոլոր մազերը ածի-
լէ, իր գլխին ու մօրուքը և
յօնքերը՝ այսինքն իր բոլոր մա-
զերը ածիլէ. և իր հանդերձները
լուանայ, և իր մարմինը ջրով
լուանայ, և մաքուր է։
10 Եւ ութերորդ օրը երկու ա-
նարատ արու գառն, և մէկ տա-
րեկան մի անարատ էգ գառն, և
հացի նուէրի համար իւղով զան-
գուած երեք տասնորդ բարակ
ալիւր, և մէկ *լոգ իւղ պիտի
11 առնէ։ Եւ մաքրող քահանան
մաքրուելու մարդին սորանցով
Եհովայի առաջին ժողովքի խո-
12 րանի դրանը կանգնեցնէ։ Եւ
քահանան այն արու գառն մէկին
առնէ և մատուցանէ նորան յան-
ցանքի պատարագի համար, և մի
լոգ իւղն էլ. և նորանց Եհովա-
յի առաջին երերացնելու պա-
13 տարագ երերացնէ։ Եւ գառը
մերթէ մեղքի պատարագի և ող-
ջակէզի մերթուած տեղը՝ սուրբ
տեղը. որովհետև մեղքի պատա-
րագն պէս յանցանքի պատարա-
գը քահանայինն է. սա ամենա-
14 սուրբ է։ Եւ քահանան յանցան-
քի պատարագի արիւնից առնէ
և քահանան քսէ մաքրուելու
մարդի աջ ականջի բլթակին և
15 նորա աջ ձեռքի մեծ մատին և
նորա աջ ոտքի մեծ մատին։ Եւ
քահանան մի լոգ իւղից առնէ,
16 և իր ձախ ձեռքի մէջ ածէ։ Եւ

*Կամ է։

քի մէջ եղած իւղից Եհովայի
28 առաջին եօթն անգամ։ Եւ քա-
հանան քսէ իր ձեռքի մէջ եղած
իւղից մաքրուելու մարդի աջ
ականջի բլթակին և նորա աջ
ձեռքի մեծ մատին և նորա աջ
ոտքի մեծ մատին՝ յանցանքի պա-
29 տարագի արեան տեղի վերայ։ Եւ
քահանան իր ձեռքի մէջ մնա-
ցած իւղը քսէ մաքրուելու մար-
դի գլխին Եհովայի առաջին նորա
30 համար քաւութիւն անելով։ Եւ
տատրակներից կամ աղաւնու
ձագերից մէկը, որին որ ձեռքը
31 հասնէ. այսինքն որին որ ձեռ-
քը հասկ է, մէկը մեղքի պա-
տարագի համար՝ և միւսը ողջա-
կէզի համար հացի նուէրի հետ
մէկտեղ մատուցանէ. և քահա-
նան մաքրուելու մարդի համար
քաւութիւն անէ Եհովայի ա-
32 ռաջին։ Բորոտութեան տակ ու-
նեցողի և իր մաքրուելու համար
ձեռք չհասնողի օրէնքը սա է։
33 Եւ Եհովան խօսեց Մովսէսի և
34 Ահարոնի հետ ասելով. Երբոր
Քանանի երկիրը մտնէք՝ որ ես
տալիս եմ ձեզ ստացուածք լի-
նելու համար, և ես ձեր ստաց-
ուածքը եղած երկրի մէկ տանը
բորոտութեան հարուածը տալու
35 լինեմ, Այն տան տէրը պիտի
գայ, և իմացնէ քահանային ա-
սելով. Ինձ երևում է թէ իմ
36 տանը մէջ կայ։ Եւ քահանան
հրամայէ, որ տունը դատարկեն՝
դեռ ինքը տեսնելու ներս չմը-
տած, որպէս զի տանը եղած բա-
ներից մէկը անմաքուր չլինի. և
յետոյ քահանան մտնէ տունը
37 տեսնելու. Եւ տանին նայէ, և
եթէ տանը պատերի վերայ
կայ՝ մի քիչ կանանչած կամ
կարմրած փոս տեղուանքներ, և նո-
րանք պատի երեսից խոր են ե-
38 րևում, Այն ժամանակ քահա-
նան տանից դուրս դայ տան
դուռը. և եօթն օր տունը կողպէ։
39 Եւ եօթներորդ օրը քահա-
նան դարձեալ գայ և նայէ. և
եթէ տանը պատերի
40 վերայ տարածուել է, Այն ժա-
մանակ քահանան հրամայէ, որ

հանեն այն քարերը որոնց վերայ
կայ տանը, և քաղաքիցը դուրս
մի անմաքուր տեղ գցեն նորանց։
41 Եւ տունը ներսիցը չուրջանակի
քերել տայ, և նորանց քերած
հողը քաղաքիցը դուրս մի ան-
42 մաքուր տեղ թափեն։ Եւ ուրիշ
քարեր առնեն և այն քարերի
տեղը դնեն, և ուրիշ հող առ-
նեն, և տունը ծեփեն։ Եւ եթէ
43 քարերը հանելուց յետոյ՝ և տու-
նը քերելուց և ծեփելուց յետոյ՝
տանը դարձեալ գայ և տանը
մէջ երևայ, Այն ժամանակ քա-
44 հանան դայ և նայէ. և եթէ տա-
նը տանը մէջ տարածուել է
դա այն տան մէջ բորբոքուած
բորոտութիւն է. անմաքուր է
այն։ Եւ տունը, այսինքն նորա
45 քարերն ու փայտերը, և տան
բոլոր հողը քանդէ, և քաղաքի-
ցը դուրս մի անմաքուր տեղ տա-
նէ։ Եւ ամեն ով որ այն տունը
46 մտնէ նորա ամեն կողպուած օ-
րերը, մինչև իրիկուն անմաքուր
լինի։ Եւ այն տանը պառկողը իր
47 հանդերձները լուանայ, և այն
տանը հաց ուտողը իր հանդեր-
ձները լուանայ։ Եւ եթէ քահա-
48 նան գայ և նայէ, որ տունը ծեփ-
ուելուց յետոյ տանը մէջ
չէ տարածուել, այն ժամանակ
քահանան այն տունը մաքուր
հրատարակէ. որովհետև տանը
բժշկուած է։ Եւ այն տան մաք-
49 րութեան համար երկու թռչուն
և եղևնափայտ և կրկնակի կար-
միր և զոպայ առնէ։ Եւ մերթէ
50 թռչունի մէկը հողի ամանի մէջ՝
կենդանի ջրի վերայ։ Եւ եղևնա-
51 փայտն ու զոպան և կրկնակի
կարմիրն և ողջ թռչունը առնէ,
և մերթուած թռչնի արեանը և
այն կենդանի ջրին թաթախէ, և
եօթն անգամ տանը վերայ սրսկէ.
52 Եւ տունը մաքրէ թռչնի արիւ-
նովը և այն կենդանի ջրովը և այն
ողջ թռչնովը և եղևնափայտովը
և զոպայովը և կրկնակի կարմիրո-
53 վը։ Իսկ ողջ թռչունը քաղաքից
դուրս դէպի դաշտը արձակէ, և
այն տան համար քաւութիւն
անէ. և նա մաքուր է։

54 Բոլոր բորոտութեան ախտի և
55 գոնջութեան, Եւ հանդերձի կամ
56 տան բորոտութեան, Եւ ուռեց-
քի և քոսի և պաղպաջի օրէնքը
57 այս է. Որոշելու համար թէ երբ
է անմաքուր և երբ՝ մաքուր։
Բորոտութեան օրէնքը այս է։

ԳԼ. ԺԵ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի և
2 Ահարօնի հետ ասելով. Խօսե-
ցէք Իսրայէլի որդիների հետ և
ասեցէք նորանց. Երբոր մի մար-
դի մարմնիցը ծորում լինի, նորա
3 ծորումը անմաքուր է։ Եւ սա
լինի նորա ծորումի ժամանակին
նորա անմաքրութիւնը. ԷՐԷ նո-
րա մարմնիցը նորա ծորումը ծո-
րէ, կամ նորա մարմինը իր ծո-
րումիցը գոցուի. սա նորա ան-
4 մաքրութիւնն է։ Ամեն անկողին՝
որի վերայ ծորում ունեցողը պառ-
կէ, անմաքուր է. և ամեն բան
որի վերայ նա նստէ, անմաքուր
5 լինի։ Եւ նորա անկողնին դպչող
մարդը իր հանդերձները լուա-
նայ, և ինքը ջրով լուացուի, և
մինչև իրիկուն անմաքուր լինի։
6 Եւ ծորում ունեցողի նստած բա-
նի վերայ նստողը իր հանդերձնե-
րը պիտի լուանայ, և ինքը ջրով
լուացուի, և մինչև իրիկուն ան-
7 մաքուր լինի։ Եւ ծորում ունե-
ցողի մարմնին դպչողը իր հան-
դերձները պիտի լուանայ, և ին-
քը ջրով լուացուի, և մինչև ի-
8 րիկուն անմաքուր լինի։ Եւ եթէ
ծորում ունեցողը մի մաքուր
մարդի վերայ թքելու լինի, նա
իր հանդերձները պիտի լուանայ,
և ինքը ջրով պիտի լուացուի, և
մինչև իրիկուն անմաքուր լինի։
9 Եւ ամեն թամբ, որի վերայ ծո-
րում ունեցողը հեծնէ, անմա-
10 քուր պիտի լինի։ Եւ ամեն նորա
տակին եղած բանին դպչողը մին-
չև իրիկուն անմաքուր պիտի լի-
նի. և նորանց վեր առնողը իր
հանդերձները պիտի լուանայ, և
ինքը ջրով լուացուի, և մինչև
11 իրիկուն անմաքուր լինի։ Եւ ծո-
րում ունեցողն իր ձեռքը ջրով
չ՚ողողած որին որ դպչելու լինի,
նա իր հանդերձները պիտի լուա-
նայ, և ինքը ջրով լուացուի, և
մինչև իրիկուն անմաքուր լինի։
Եւ ծորում ունեցողի դպած հո- 12
ղի ամանը պիտի կոտրուի, և ա-
մեն փայտի ամանն ջրով պիտի ո-
ղողուի։ Եւ երբ ծորում ունե- 13
ցողն իր ծորումիցը մաքրուի, իր
մաքրուելու համար եօթն օր պի-
տի համարէ իր համար, և իր
հանդերձները լուանայ, և իր մար-
մինը կենդանի ջրի մէջ լուանայ.
և մաքուր է. Եւ ութերորդ օրը՝ 14
երկու տատրակ կամ աղաւնու
երկու ձագ պիտի առնէ իր հա-
մար, և Եհովայի առաջին ժողով-
քի խորանի դուռը գայ, և նո-
րանց քահանային տայ։ Եւ քա- 15
հանան նորանց մէկը մեղքի պա-
տարագ՝ և միւսը ողջակէզ անէ,
և քահանան Եհովայի առաջին
քաւութիւն անէ նորա համար
նորա ծորումիցը։
Եւ եթէ մի մարդի զուգաւո- 16
րութեան սերմը իրանից դուրս
գալու լինի, նա իր բոլոր մարմինը
ջրով պիտի լուանայ, և մինչև
իրիկուն անմաքուր լինի։ Եւ ա- 17
մեն հանդերձ և ամեն մորթ՝ որի
վերայ զուգաւորութեան սերմ
կայ, ջրով պիտի լուացուի, և
մինչև իրիկուն անմաքուր լինի։
Եւ երբոր մի մարդ կնոջը հետ 18
պառկէ սերմի զուգաւորութեան
համար, նորանք ջրով պիտի լու-
ացուին, և մինչև իրիկուն ան-
մաքուր լինեն։
Եւ եթէ մի կնիկ ծորում ու- 19
նենայ, և նորա մարմնի ծորումը
արիւն է, եօթն օր իր դաշտա-
նումը կենայ. և ամեն նորա դպ-
չողը մինչև իրիկուն անմաքուր
լինի։ Եւ նորա դաշտանի ժամա- 20
նակին ամեն ինչ բանի վերայ որ
պառկէ, այն բանը անմաքուր պի-
տի լինի. և ինչ բանի վերայ որ
նստէ, այն բանը անմաքուր պի-
տի լինի։ Եւ ամեն նորա անկող- 21
նին դպչողը իր հանդերձները պի-
տի լուանայ, և ինքը ջրով լուա-
ցուի, և մինչև իրիկուն անմա-
քուր լինի։ Եւ ով որ դպչէ մի 22
բանի որի վերայ նա նստեց, իր

հանդերձները պիտի լուանայ, և
ինքը ջրով լուացուի, և մինչև
23 իրիկուն անմաքուր լինի։ Եւ նորա
անկողնին կամ մէկ բանին, որի
վերայ նա նստէ, դպչելիս մինչև
իրիկուն անմաքուր պիտի լինի։
24 Եւ եթէ մի մարդ նորա հետ
զուգաւորութիւնով պառկէ, և նորա
պղծութիւնը նորան դպչէ, այն
մարդը եօթն օր անմաքուր լինի,
և ամեն անկողին՝ որի վերայ նա
պառկէ՝ անմաքուր լինի։
25 Եւ մի կնիկ՝ եթէ առանց դաշ-
տանի ժամանակը լինելու, իր
արեան ծորումը շատ օրեր ծորէ.
կամ իր դաշտանիցն աւելի ծո-
րելու լինի, իր անմաքրութեան
ծորումի բոլոր օրերը՝ իր դաշ-
տանի օրերի պէս պիտի լինի. նա
26 անմաքուր է։ Ամեն անկողին՝ որի
վերայ նա պառկէ իր ծորումի
բոլոր օրերը, իր դաշտանի ան-
կողնի պէս պիտի լինի իր համար,
և ամեն որ և է բանի վերայ որ
նստէ, իր դաշտանի անմաքրու-
թեան պէս անմաքուր պիտի լի-
27 նի։ Եւ ամեն նորանց դպչողը ան-
մաքուր պիտի լինի, և իր հան-
դերձները պիտի լուանայ, և ին-
քը ջրով լուացուի, և մինչև ի-
28 րիկուն անմաքուր լինի։ Եւ եթէ
իր ծորումիցը մաքրուի, այն ժա-
մանակ եօթն օր պիտի համարէ
իր համար, և յետոյ մաքուր է։
29 Եւ ութերորդ օրը երկու տատ-
րակ կամ աղաւնու երկու ձագ
առնէ իր համար, և նորանց բե-
րէ ժողովքի խորանի դուռը քա-
30 հանայի մօտ։ Եւ քահանան՝ մէ-
կը մեղքի պատարագ և միւսը
ողջակէզ անէ. և քահանան Ե-
հովայի առաջին քաւութիւն ա-
նէ նորա համար նորա մաքրու-
թեան ծորումիցը։
31 Այսպէս Իսրայէլի որդիքն ի-
րանց անմաքրութիւնիցը զգու-
շացնէք, որ իրանց մէջ եղած իմ
խորանը պղծելով՝ իրանց անմաք-
րութեան պատճառովը չ՚մեռ-
32 նեն։ Ծորում ունեցողի և իրանից
զուգաւորութեան սերմը դուրս
33 գալով անմաքուր եղողի, Եւ իր
դաշտանովը հիւանդ եղող կընկ-
ան և ծորում ունեցող մարդի
կամ կնկան՝ և անմաքուր կնկան
հետ պառկող մարդի օրէնքը
սա է։

ԳԼ. ԺԶ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 1
հետ, Ահարօնի երկու որդիների
մեռնելուց յետոյ, որոնք Եհովա-
յի առաջին մօտեցան և մեռան.
Եւ Եհովան ասեց Մովսէսին. 2
Խօսիր քո եղբայր Ահարօնի հետ,
որ ամեն ժամանակ սուրբ տեղը
չ՚մտնէ՝ վարագոյրի ներսը տապա-
նակի վերայ եղած քաւութիւնի
առաջին, որ չ՚մեռնէ. որովհետև
ամպի մէջ պիտի երևամ քա-
ւութիւնի վերայ։ Ահարօնն այս 3
բանիրով մտնէ սրբարանը. մի
զուարակով մեղքի պատարագի
համար, և մի խոյով ողջակէզի
համար։ Կտաւի սուրբ շապիկ 4
հագնէ, և իր մարմնի վերայ կը-
տաւի վարտիք ունենայ, և իր
մէջքը կտաւի գօտի կապէ, և իր
գլխին կտաւի խոյր դնէ. սորանք
սուրբ զգեստներ են. և իր մար-
մինը ջրով պիտի լուանայ, և յե-
տոյ հագնէ նորանց։ Եւ Իսրայէլի 5
որդիների ժողովքիցը այծերից եր-
կու նոխազ առնէ մեղքի պա-
տարագի համար, և մէկ խոյ ող-
ջակէզի համար։ Եւ Ահարօնը 6
մատուցանէ այն մեղքի պատա-
րագի զուարակը, որ իր համար
է, և քաւութիւն անէ իր համար
և իր տան համար։ Եւ երկու նո- 7
խազը առնէ և Եհովայի առաջին
ժողովքի խորանի դրանը կանգ-
նեցնէ։ Եւ Ահարօնն այն երկու 8
նոխազների վերայ վիճակներ գցէ.
մէկ վիճակը Եհովայի համար, և
միւս վիճակը ազատ արձակուող
նոխազի համար։ Եւ Ահարօնը մօ- 9
տեցնէ այն նոխազը որի վերայ
Եհովայի վիճակը ելաւ, և մեղ-
քի պատարագ անէ նորան։ Եւ 10
այն նոխազը որի վերայ ազատ ար-
ձակուող նոխազի վիճակը ելաւ,
Եհովայի առաջին ողջ կանգնե-
ցընէ՝ որ նորան համար քաւու-
թիւն անէ, որ բաց թողնէ նո-

բան իբրև ազատ արձակուող
նոխազ դէպի անապատը։
11 Եւ Ահարօնը մատուցանէ այն
մեղքի պատարագի զուարակը,
որ իր համար է, և քաւութիւն
անէ իր համար և իր տան հա-
մար, և մորթէ իր մեղքի պա-
12 տարագի զուարակը։ Եւ Եհովա-
յի առաջին եղած սեղանի վե-
րայից բուրվառը լիքը կրակի կայ-
ծեր առնէ, և բարակ ծեծուած
անուշահոտ խնկիցն իր ձեռքերը
լցնէ, և վարագոյրի ներսը տանէ։
13 Եւ խունկը այն կրակի վերայ
դնէ Եհովայի առաջին, և խնկի
ամպը վկայութիւնի վերայի քա-
ւութիւնը ծածկէ, և նա չի մեռ-
14 նիլ։ Եւ այն զուարակի արիւնի-
ցն առնէ, և իր մատովը քաւու-
թիւնի վերայ արևելեան կողմը
սրսկէ, և իր մատովը արիւնիցը
քաւութիւնի առաջին եօթն ան-
գամ սրսկէ։
15 Եւ մորթէ մեղքի պատարագի
նոխազը որ ժողովրդի համար է,
և նորա արիւնը վարագոյրի ներ-
սը տանէ, և նորա արիւնն անէ
ինչպէս որ արաւ զուարակի ա-
րիւնովը, այսինքն քաւութիւնի
վերայ և քաւութիւնի առաջին
16 սրսկէ այն։ Եւ սրբարանի համար
քաւութիւն անէ՝ Իսրայէլի որ-
դիների անմաքրութիւններիցն և
նորանց բոլոր մեղքերի յանցանք-
ներիցը, և այսպէս անէ ժողովքի
խորանի համար, որ նորանց հետ
է լինում նորանց անմաքրու-
17 թիւնների մէջ։ Եւ ոչ մի մարդ
ժողովքի խորանումը պիտի չ՛լինի
քաւութիւն անելու համար սրբ-
բարանը մտած ժամանակը, մին-
չև նորա դուրս գալը որ իր հա-
մար և իր տան համար և Իսրա-
յէլի բոլոր ժողովքի համար քա-
18 ւութիւն անէ։ Յետոյ դուրս
գայ Եհովայի առաջին եղած սե-
ղանը, և նորա համար քաւու-
թիւն անէ. և առնէ զուարակի
արիւնիցն ու նոխազի արիւնիցը,
և քսէ սեղանի եղջիւրների վե-
19 րայ շուրջանակի։ Եւ արիւնիցն
իր մատովը եօթն անգամ նորա
վերայ սրսկէ. և Իսրայէլի որդի-
ների անմաքրութիւններիցը մաք-
րէ նորան, և սուրբ անէ նորան։
Եւ վերջացնէ սրբարանի և ժո- 20
ղովքի խորանի և սեղանի համար
քաւութիւն անելը, և յետոյ
ողջ նոխազը մօտեցնէ. Եւ Ահա- 21
րօնն իր երկու ձեռքերը ողջ նո-
խազի գլխին դնէ, և խոստովանէ
նորա վերայ Իսրայէլի որդիների
բոլոր անօրէնութիւնները և նո-
րանց բոլոր յանցանքները իրանց
բոլոր մեղքերովը. և նորանց դնէ
նոխազի գլխին և մի պատրաստ
մարդի ձեռքով ուղարկէ անա-
պատը։ Եւ նոխազը նորանց բոլոր 22
անօրէնութիւնները իր վերայ մի
անբնակ երկիր տանէ. և մարդը
անապատումը թող տայ նոխազը։
Եւ Ահարօնը մտնէ ժողովքի 23
խորանը, և սրբարանը մտնելու
ժամանակին հանէ հագած կտա-
ւի հանդերձները, և նորանց այն-
տեղ դնէ։ Եւ իր մարմինը ջրով 24
լուանայ սուրբ տեղը, և իր հան-
դերձները հագնէ և դուրս գայ
իր ողջակէզն ու ժողովրդի ող-
ջակէզը մատուցանէ, և իր հա-
մար և ժողովրդի համար քաւու-
թիւն անէ։ Եւ մեղքի պատա- 25
րագի ճարպը սեղանի վերայ այրէ։
Եւ այն նոխազն իբրև ազատ 26
արձակուելու նոխազ տանողը իր
հանդերձները լուանայ, և իր
մարմինը ջրով լուանայ, և այ-
նուհետև բանակը մտնէ։
Եւ այն մեղքի պատարագի զը- 27
ուարակը և մեղքի պատարագի
նոխազը՝ որոնց արիւնը քաւու-
թիւն անելու համար սուրբ տե-
ղը բերուեցաւ, բանակիցը դուրս
հանեն, և նորանց մորթերն ու
նորանց մսերը և նորանց աղբը
կրակով այրեն։ Եւ նորանց այ- 28
րողն իր հանդերձները պիտի լու-
անայ, և մարմինը ջրով լուանայ,
և այնուհետև բանակը մտնէ։
Եւ սա ձեզ համար յաւիտե- 29
նական կանոն լինի, որ եօթնե-
րորդ ամսումը ամսի տասներորդին
ձեր անձները պիտի խոնարհեցը-
նէք, և բնաւ մի գործ չ՛գործէք,
թէ երկրացին և թէ ձեր մէջ
պանդխտացող օտարականը։ Ո- 30

րովհետև այն օրը քահանան ձեզ
համար քաւութիւն պիտի անէ
ձեզ մաքրելու համար, որ ձեր
բոլոր մեղքերիցը մաքրուիք Եհո-
31 վայի առաջին։ Նա ձեզ համար
հանգստութեան շաբաթ պիտի
լինի, և յաւիտենական կանոնով
պիտի խոնարհեցնէք ձեր անձնե-
32 րը։ Եւ քաւութիւնը անէ այն
օծուած և իր հօր տեղը քահա-
նայութիւն անելու համար ձեռ-
քը լցուած քահանան, և հագ-
նէ կտաւի հանդերձները՝ սուրբ
33 հանդերձները. Եւ ամենասուրբ
տեղի համար քաւութիւն անէ,
և ժողովքի խորանի համար և
սեղանի համար քաւութիւն ա-
նէ, և քահանաների և ժողովքի
բոլոր ժողովրդի համար քաւու-
34 թիւն անէ։ Եւ սա ձեզ համար
յաւիտենական կանոն լինի Իս-
րայէլի որդիների համար իրանց
բոլոր մեղքերին քաւութիւն ա-
նելու տարին մի անգամ։ Եւ
նա *անէ ինչպէս որ Եհովան
Մովսէսին պատուիրել էր։

ԳԼ. ԺԷ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
2 հետ ասելով. Խօսիր Ահարօնի և
նորա որդիների՝ և Իսրայէլի բո-
լոր որդիների հետ, և ասիր նո-
րանց. Այս է այն բանը որ Եհո-
3 վան պատուիրեց ասելով. Իսրա-
յէլի տանիցն ով որ արջառ կամ
ոչխար և կամ այծ բանակի մէջ
մորթէ, կամ բանակիցը դուրս
4 մորթէ, Եւ չ՛բերէ Եհովայի խո-
րանի առաջը Եհովային զոհ մա-
տուցանելու համար ժողովքի խո-
րանի դուռը, դա արիւն պիտի
համարուի այն մարդի համար.
նա արիւն է թափել, և այն
մարդն իր ժողովրդի միջիցը պի-
5 տի կորչէ։ Որպէս զի Իսրայէլի
որդիքը այն զոհերը որ դաշտի
մէջ մորթում են, Եհովային բե-
րեն ժողովքի խորանի դուռը
քահանայի մօտ, և զոհեն իբրև
խաղաղութեան զոհեր Եհովա-
յին։ Եւ քահանան սրսկէ արիւ- 6
նը ժողովքի խորանի դրանը Եհո-
վայի սեղանի վերայ, և ճարպն
այրէ անոյշ հոտի համար Եհո-
վայի առաջին։ Եւ իրանց զոհե- 7
րըն՝ այլ ևս չ՛զոհեն †դևերին, ո-
րոնց ետևից Իրթալով պոռնկու-
թիւն են անում. սա նորանց հա-
մար յաւիտենական կանոն լինի
իրանց ազգերի մէջ։ Եւ նորանց 8
ասես. Եթէ Իսրայէլի տանիցը
կամ նորանց մէջ պանդխտացող
օտարականներից մէկ մարդ ող-
ջակէզ կամ զոհ մատուցանելու
լինի, Եւ նորան չ՛բերէ Եհովային 9
մատուցանելու համար ժողովքի
խորանի դուռը, այն մարդն իր
ժողովրդի միջիցը պիտի կորչէ։
Եւ եթէ Իսրայէլի տանիցը կամ 10
նորանց մէջ պանդխտացող օտա-
րականներից մէկ մարդ ինչ և իցէ
արիւն ուտելու լինի, իմ երեսն
այն արիւն ուտող անձի վերայ
պիտի դարձնեմ և նորան կորցը-
նեմ իր ժողովրդի միջիցը. Որով- 11
հետև մարմնի հոգին արիւնումն
է. և ես ձեզ տուի այն, որ սե-
ղանի վերայ ձեր հոգիների հա-
մար քաւութիւն անէք. որովհե-
տև արիւնն է որ քաւութիւն է
անում իրանում եղող հոգիովը։
Նորա համար Իսրայէլի որդինե- 12
րին ասեցի. Ձեզանից ոչ մէկն
արիւն չ՛ուտէ. և ձեր մէջ պան-
դխտացող օտարականն էլ արիւն
չ՛ուտէ։ Եւ Իսրայէլի որդիներից՝ 13
կամ նորանց մէջ պանդխտացող
օտարականից մէկը՝ ԷՐԷ ուտուե-
լու անասունի կամ թռչունի որս
որսալու լինի, նորա արիւնը թա-
փէ, և հողով ծածկէ նորան։ Ո- 14
րովհետև ամեն մարմնի հոգին իր
արիւնն է իր հոգիովը. և Իսրա-
յէլի որդիներին ասեցի. Բնաւ մի
մարմնի արիւն պիտի չ՛ուտէք, ո-
րովհետև ամեն մարմնի հոգին իր
արիւնն է. ով որ ուտէ այն՝ պի-
տի կորչէ։
Եւ ամեն անձն որ դիակ կամ 15
գիշատուած ուտէ երկրացիներից
կամ օտարականներից՝ իր հան-

*արաւ։

†այծերին

դերձները պիտի լուանայ, և ինքը ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր լինի, յետոյ
16 մաքուր է։ Բայց եթէ չ՚լուանայ, և իր մարմինը չ՚լուանայ, այն ժամանակ իր անօրէնութիւնը պիտի կրէ։

ԳԼ. ԺԸ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
2 հետ ասելով. Խօսիր Իսրայէլի որդիների հետ և ասիր նորանց. Ես եմ Եհովան ձեր Աստուածը։
3 Այն ձեր բնակուած Եգիպտոս երկրի գործքին պէս չ՚անէք. և Քանանի երկրի գործքին պէս՝ ուր որ ձեզ պիտի տանեմ, չ՚անէք, ու նորանց կանոնների համեմատ
4 չ՚գնաք։ Իմ դատաստաններն արէք, և իմ կանոնները պահեցէք, որ նորանցով գնաք. ես եմ Եհո-
5 վան ձեր Աստուածը։ Եւ պահեցէք իմ կանոնները և իմ դատաստանները. ո՛ր մարդը որ նորանց կատարէ, նորանցով կ՚ապրէ. ես եմ Եհովան։
6 Ոչ մէկն իր արիւնակից ազգականին չ՚մօտենայ նորա մերկութիւնը բանալու համար. ես եմ
7 Եհովան։ Քո հօր մերկութիւնը կամ քո մօր մերկութիւնը չ՚բանաս. նա քո մայրն է. նորա մեր-
8 կութիւնը չ՚բանաս։ Քո հօր կնոջ մերկութիւնը չ՚բանաս. նա քո
9 հօր մերկութիւնն է։ Քո հօր աղջկայ կամ քո մօր աղջկայ՝ քո քրոջ մերկութիւնը, թէ տանը ծնուած լինի թէ դուրսը ծնուած, նորանց մերկութիւնը չը
10 բանաս։ Քո որդու աղջկայ կամ աղջկանդ աղջկայ մերկութիւնը՝ նորանց մերկութիւնը չ՚բանաս, ըստ որում նորանց մերկութիւ-
11 նը քոնն է։ Քո հօր կնոջ աղջկայ մերկութիւնը՝ որ քո հօրից ծնած քո քոյրը եղողն է՝ նորա մեր-
12 կութիւնը չ՚բանաս։ Քո հօր քրոջ մերկութիւնը չ՚բանաս. նա
13 քո հօր արիւնակիցն է։ Քո մօր քրոջ մերկութիւնը չ՚բանաս. որովհետև նա քո մօր ազգականն
14 է։ Քո հօր եղբօր մերկութիւնը չ՚բանաս, նորա կնոջը չ՚մօտենաս. նա քո հօր եղբօր կինն է։ Քո 15
հարսի մերկութիւնը չ՚բանաս. նա քո որդու կինն է, նորա մերկութիւնը չ՚բանաս։ Քո եղբօր 16
կնոջ մերկութիւնը չ՚բանաս, նա քո եղբօր մերկութիւնն է։ Մի 17
կնկան և նորա աղջկայ մերկութիւնը չ՚բանաս. և նորա որդու աղջիկը կամ նորա աղջկայ աղջիկը չ՚առնես՝ նորանց մերկութիւնը բանալու համար. նորանք նորա ազգականներն են. պղծութիւն է այդ։ Եւ մի կնիկ իր քր- 18
րոջ հետ չ՚առնես նորա կենդանութեան ժամանակ վշտացնելով նորա մերկութիւնը բանալու համար։
Եւ կնկան չ՚մօտենաս՝ նորա 19
անմաքրութեան դաշտանի ժամանակ նորա մերկութիւնը բանալու։ Եւ քո դրացու կնոջ հետ 20
զուգաւորութեան համար չը պառկես, նորա հետ պղծուելով, Քո սերունդիցը Մողոքի համար 21
կրակից անցնելու չ՚թողես, և քո Աստուծոյ անունը չ՚պղծես. ես եմ Եհովան։ Եւ արուի հետ՝ 22
կնկան հետ պառկելու պէս չը պառկես. պղծութիւն է այդ։ Եւ ոչ մի անասունի հետ չ՚զու- 23
գաւորուիս՝ նորա հետ պղծուելով. և բնաւ մի կնիկ անասունի առաջին չ՚կանգնէ՝ նորա հետ զուգաւորուելու. գարշութիւն է այդ։
Սորանց ոչ մէկովը չ՚պղծուիք, 24
որովհետև սորանց բոլորովը պղծուեցան այն ազգերը՝ որ ձեր առաջից պիտի քշեմ։ Եւ այն եր- 25
կիրը պղծուեցաւ, և ես նորա անօրէնութիւնը նորա վերայ պիտի հատուցանեմ, և այն երկիրն իր բնակիչներին պիտի փսխէ։ Իսկ 26
դուք իմ կանոնները ու դատաստանները պահէք, և այս պղծութիւններիցը ոչ մէկը չ՚անէք, ոչ երկրացին, ոչ ձեր մէջ պանդըխտացող օտարականը. Որովհե- 27
տև ձեզանից առաջ եղած այն երկրի մարդիկն արին այս բոլոր պղծութիւնները, և երկիրը պղծուեցաւ. Որ այն երկիրը ձեզ էլ 28

դուրս չ՚փսխէ՝ երբոր դուք նորան պղծէք, ինչպէս որ ձեզանից առաջ եղած ազգերին փսխեց։
29 Որովհետև ամեն ով որ այս բոլոր պղծութիւններիցը մէկն անելու լինի, այն անող անձինքն իրանց ժողովրդի միջիցը պիտի
30 կորչեն։ Եւ իմ հրամանները պահէք, որ ձեզանից առաջ գործուած պիղծ սովորութիւններիցը չ՚անէք, և նորանցով չ՚պղծուիք. ես եմ Եհովան ձեր Աստուածը։

ԳԼ. ԺԹ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Խօսիր Իսրայէլի որդիների բոլոր ժողովքի հետ և ասիր նորանց. Դուք սուրբ եղիք, որովհետև ես ձեր Եհովայ Աստուածը սուրբ եմ։
3 Ձեր ամեն մէկն իր մօրիցը և իր հօրիցը վախենայ. և իմ շաբաթները պահէք. ես եմ Եհովան ձեր Աստուածը։
4 Կուռքերի մի դառնաք, և ձեզ համար ձուլածոյ աստուածներ մի շինէք. ես եմ Եհովան ձեր Աստուածը։
5 Եւ եթէ խաղաղութեան զոհ մատուցանէք Եհովային ձեր ընդունելութեան համար մատու-
6 ցրէք։ Ձեր զոհ մատուցած օրը և հետևեալ օրը պիտի ուտուի. և երրորդ օրուայ մնացածը կրա-
7 կով պիտի այրուի։ Եւ եթէ նորանից երրորդ օրը ուտուելու լինի, նա պիղծ է, պիտի չ՚ընդուն-
8 ուի։ Եւ նորան ուտողը իր անօրէնութիւնը պիտի կրէ, որովհետև Եհովայի սուրբ բանը պղծեց, և այն անձն իր ժողովրդիցը պիտի կորչէ։
9 Եւ ձեր երկրի հունձքը հնձելիս քո արտի եզերքը մինչև վերջը չ՚հնձես, և քո հունձքից ընկած հասկերը չ՚ժողովես։ Եւ քո
10 այգին ճռաքաղ չ՚անես, այսինքն քո այգու մէջ մնացած ողկոյզները չ՚քաղես. նորանք աղքատին և օտարականին թողես. ես եմ Եհովան ձեր Աստուածը։
11 Գողութիւն մի անէք. սուտ մի խօսէք. և իրար մի խաբէք։ Եւ իմ անունովը զուր տեղը եր- 12
դում մի անէք. և ձեր Աստուծոյ անունը մի պղծէք. ես եմ Եհովան։ Քո դրացուն զրկանք մի 13
անիր, և յափշտակութիւն մի անիր. քեզ համար վարձքով բանողի օրական վարձքը մէկ դիշեր մինչև առաւօտ քեզ մօտ չ՚մնայ։
Խուլին մի հայհոյիր. և կոյրի 14
առաջին գայթակղութիւն մի դնիր, այլ քո Աստուծանից վախիր. ես եմ Եհովան։
Դատաստանի մէջ անիրաւու- 15
թիւն մի անէք. աղքատին երեսպաշտութիւն մի անիր, և մեծին մի շողոքորթիր. քո դրացուն արդարութիւնով դատիր։
Քո ժողովրդի մէջ չարախօսու- 16
թիւն անելու ման չ՚գաս. քո ընկերի արիւնը չ՚մտնես. ես եմ Եհովան։ Քո եղբօրը սրտումդ չ՚ա- 17
տես. քո դրացուն անպատճառ յանդիմանես, որ նորա համար մեղք չ՚կրես։ Վրէժ չ՚առնես, և 18
քո ժողովրդի որդիներին սխ չը պահես, այլ քո ընկերին սիրես քո անձի պէս. ես եմ Եհովան։
Իմ կանոնները պահէք. քո ա- 19
նասունի մէկ տեսակը միւս տեսակի հետ զուգաւորել չ՚տաս. քո արտումը զանազան սերմ չը վարես. և երկու նիւթից գործուած այլախառն հանդերձ չը հագնես։
Եւ եթէ մէկը մի կնկան հետ 20
պառկելով զուգաւորութիւն անէ, և նա մէկի նշանուած աղախինն է, և փրկուած չէ, կամ նորան ազատութիւնը տրուած չէ, նորանք պիտի պատժուին. նորանք պիտի չ՚մեռնին, որովհետև կնիկն ազատ չէր։ Եւ մարդն 21
իր յանցանքի պատարագը պիտի բերէ Եհովային ժողովքի խորանի դուռը, մի խոյ յանցանքի պատարագի համար։ Եւ քահա- 22
նան քաւութիւն անէ նորա համար յանցանքի պատարագի խոյովը Եհովայի առաջին նորա արած մեղքի համար. և նորա արած մեղքը ներուի նորան։
Եւ երբոր այն երկիրը մտնէք, 23

և ամեն տեսակ ծառեր տնկէք՝
ուտելու համար, այն ժամանակ
նորա պտուղը չ՚թլփատուած ան-
թլփատութիւն համարէք. ձեզ
համար երեք տարի անթլփատու-
24 թիւն լինի՝ պիտի չ՚ուտուի։ Եւ
չորրորդ տարին՝ նորա բոլոր պը-
տուղը Եհովային փառաւորելու
25 համար սուրբ պիտի լինի։ Եւ
հինգերորդ տարին ուտէք նորա
պտուղը, որ իր արդիւնքը ձեզ
համար աւելացնէ. ես եմ Եհո-
26 վան ձեր Աստուածը։ Մի՞ը ա-
րիւնովը չ՚ուտէք. չ՚հմայէք, և
27 գուշակութիւն չ՚անէք։ Ձեր
գլխների եզերքի մազերը կլոր չը
կտրէք և մօրուքիդ եզերքը չ՚ա-
28 պականես։ Եւ մէկի համար ձեր
մարմնի վերայ վէտեր չ՚շինէք, և
ձեր վերան կտկտած գիր չ՚շի-
նէք. ես եմ Եհովան։
29 Աղջիկդ պոռնիկ անելով մի
պղծիր, որ երկիրը պոռնկու-
թեան մէջ չ՚ընկնէ, և երկիրը
գարշութիւնով չ՚լցուի։
30 Իմ շաբաթները պահէք և իմ
սրբարանը յարգէք. ես եմ Եհո-
31 վան։ Վհուկներին մի նայէք, և
հմայողներից մի հարցնէք, որ նո-
րանցով չ՚պղծուիք. ես եմ Եհո-
վան՝ ձեր Աստուածը։
32 Մազը սպիտակածի առաջին
վեր կաց, և ծերին պատուիր, և
քո Աստուածանից վախիր. ես
եմ Եհովան։
33 Եւ եթէ մի օտարական ձեր
երկրի մէջ ձեզ մօտ պանդխտա-
34 նալու լինի, չ՚նեղէք նորան։ Ձեզ
մօտ պանդխտացող օտարականը
ձեր երկրի բնակի պէս լինի ձեզ
համար, և քո անձի պէս սիրես
նորան, որովհետև Եգիպտոսի եր-
կրի մէջ օտարական էիք. ես եմ
Եհովան ձեր Աստուածը։
35 Դատաստանի մէջ անիրաւու-
թիւն չ՚անէք. և ոչ կանգունի
մէջ՝ կշռքի մէջ և չափի մէջ։
36 Ձեր կշիռքն ուղիղ, ձեր կշռքի
քարն ուղիղ, ձեր արդուն ու-
ղիղ և հիմէնն ուղիղ լինի. ձեզ
Եգիպտոսի երկրիցը հանող Եհո-
37 վան ձեր Աստուածը ես եմ։ Եւ
իմ բոլոր կանոնները և իմ բոլոր
դատաստանները պահէք, և ա-
նէք նորանց. ես եմ Եհովան։

ԳԼ. Ի

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 1
հետ ասելով. Նաև Իսրայէլի որ- 2
դիներին ասես. Իսրայէլի որդի-
ներիցը և Իսրայէլի մէջ պանդխ-
տացող օտարականներից ով որ
իր զաւակներիցը Մողոքին տայ,
անպատճառ պիտի մեռցնուի.
այն երկրի ժողովուրդը քարերով
քարկոծեն նորան։ Եւ ես իմ ե- 3
րեսն այն մարդի վերայ պիտի
դարձնեմ, և նորան իր ժողովրդի
միջիցը պիտի կորցնեմ, որովհետև
նա իր զաւակներիցը Մողոքին է
տուել իմ սրբարանը պղծելու և
իմ սուրբ անունը անարգելու հա-
մար։ Եւ եթէ այն մարդն իր զա- 4
ւակներիցը Մողոքին տալիս այն
երկրի ժողովուրդը աչքերը խփէ,
որ նորան չ՚մեռցնեն, Այն ժա- 5
մանակ ես իմ երեսը պիտի դար-
ձնեմ այն մարդի վերայ և նորա
ընտանիքի վերայ, և պիտի կոր-
ցնեմ նորան և Մողոքի հետ
պոռնկութիւն անելու համար այն
մարդի ետևից բոլոր գնացողնե-
րին իրանց ժողովրդի միջիցը։ Եւ 6
այն անձն էլ որ վհուկների և
հմայողների դառնայ նորանցով
պոռնկանալու համար՝ իմ երեսը
պիտի նորա վերայ դարձնեմ, և
նորան կորցնեմ իր ժողովրդի մի-
ջիցը։ Ուրեմն սրբեցէք ձեր ան- 7
ձերը, ու սուրբ եղէք, ըստ որում
ես եմ Եհովան ձեր Աստուածը։
Եւ իմ կանոնները պահեցէք, ու 8
արէք նորանց. ես եմ Եհովան
որ ձեզ սրբում եմ։
Ով որ իր հօրը կամ իր մօրն 9
անիծէ, անպատճառ պիտի մեռ-
ցնուի. նա իր հօրը կամ իր մօ-
րը անիծել է, նորա արիւնը իր
վերայ լինի։ Եւ ով որ մի ուրիշ 10
մարդի կնոջ հետ շնութիւն ա-
նէ, իր դրացու կնոջ հետ շնու-
թիւն անողը անպատճառ պիտի
մեռցնուի. շնացող մարդն էլ՝
շնացեալ կնիկն էլ։ Եւ ով որ իր 11
հօր կնոջ հետ պառկէ, իր հօր

մերկութիւնը բացել է. անպատ-
ճառ երկուսն էլ պիտի մեռցնու-
ուին. նորանց արիւնը իրանց վե-
12 րայ լինի։ Եւ եթէ մի մարդ իր
հարսի հետ պառկէ, անպատ-
ճառ երկուսն էլ պիտի մեռցնու-
ուին. գարշութիւն են արել.
նորանց արիւնը իրանց վերայ լի-
13 նի։ Եւ եթէ մի մարդ կնկան
հետ պառկելու պէս մի արուի
հետ պառկէ, երկուսն էլ պղծ-
ութիւն արին. անպատճառ պի-
տի մեռցնուին. նորանց արիւնը
14 իրանց վերայ լինի։ Եւ եթէ մի
մարդ մի կնիկ և նորա մայրն էլ
առնէ, անօրէնութիւն է. նորան
էլ՝ նորանց էլ կրակով այրեն, որ
ձեր մէջը անօրէնութիւն չ՚լինի։
15 Եւ եթէ մի մարդ անասնի հետ
պառկէ՝ անպատճառ պիտի մեռ-
ցնուի, և անասունը սպանէք։
16 Եւ եթէ մի կնիկ որ և իցէ ա-
նասնի հետ զուգաւորուելու հա-
մար նորան մօտենայ, կնիկն էլ՝
անասունն էլ պիտի սպանես. նո-
րանք անպատճառ պիտի մեռ-
ցնուին. նորանց արիւնը իրանց
17 վերայ լինի։ Եւ եթէ մի մարդ
իր քրոջն առնէ՝ այսինքն իր հօր
աղջիկը կամ իր մօր աղջիկը, և
նորա մերկութիւնը տեսնէ, և
աղջիկն էլ նորա մերկութիւնը
տեսնէ. չարութիւն է. նորանք
իրանց ժողովրդի աչքի առջևից
պիտի կորչեն. նա իր քրոջ մեր-
կութիւնը բացաւ. իր անօրէնու-
18 թիւնը պիտի կրէ։ Եւ եթէ մի
մարդ մի կնկան հետ պառկէ որ
իր դաշտանումն է, և նորա մեր-
կութիւնը բանայ, նա նորա աղ-
բիւրը բացաւ, կնիկն էլ իր ար-
եան աղբիւրը բացաւ. երկուսն
էլ իրանց ժողովրդի միջիցը պի-
19 տի կորչեն։ Եւ քո մօր քրոջ
կամ քո հօր քրոջ մերկութիւ-
նը չ՚բանաս. որովհետև նա իր
ազգականի մերկութիւնն է բա-
նում, իրանց անօրէնութիւնը
20 պիտի կրեն։ Եւ եթէ մի մարդ
իր հօր եղբօր կնոջ հետ պառ-
կէ, իր հօր եղբօր մերկութիւնը
բացաւ. նորանք իրանց մեղքը
պիտի կրեն. անզաւակ պիտի
մեռնեն։ Եւ եթէ մի մարդ իր 21
եղբօր կինն առնէ, պղծութիւն
է նա. նա իր եղբօր մերկութիւ-
նը է բանում. անզաւակ պիտի
լինեն։
Եւ իմ բոլոր կանոնները և իմ 22
բոլոր դատաստանները պահէք,
և անէք նորանց որ դուրս չ՚փը-
խէ ձեզ այն երկիրն ուր որ ձեզ
պիտի տանեմ այնտեղ բնակուե-
լու։ Եւ չ՚գնաք այն ազգերի սո- 23
վորութիւններովը, որոնք ես ձեր
առաջիցը պիտի քշեմ. որովհե-
տև այս բոլոր բաներն արին նո-
րանք, և ես զզուեցի նորանցից.
Եւ ասեցի ձեզ. Նորանց երկիրը 24
դուք պիտի ժառանգէք, և ես
այն ձեզ պիտի տամ ստացուածք
լինելու համար՝ մի երկիր որ կաթ
և մեղր է բղխում. ես եմ Եհո-
վան ձեր Աստուածը, որ որոշեցի
ձեզ ազգերիցը։ Ուստի տարբե- 25
րութիւն արէք մաքուր և անմա-
քուր անասունների մէջտեղը՝ և
անմաքուր ու մաքուր թռչուն-
ների մէջտեղը, և ձեր անձե-
րը չ՚պղծէք անասուններով կամ
թռչուններով կամ գետնի վե-
րայի բոլոր սողուններով, որոնք
ես որոշեցի ձեզ համար իբրև
անմաքուր։ Եւ դուք սուրբ պի- 26
տի լինէք ինձ համար, որովհետև
ես Եհովաս սուրբ եմ և ձեզ ո-
րոշեցի ազգերիցը որ իմը լինէք։
Այր կամ կնիկ, որ վհուկ կամ 27
հմայող լինի՝, անպատճառ պի-
տի մեռցնուի. քարերով նորանց
քարկոծեն. նորանց արիւնը ի-
րանց վերայ լինի։

ԳԼ. ԻԱ

Եւ Եհովան ասեց Մովսէսին. 1
Խօսիր Ահարօնի որդիներին՝ քա-
հանաների հետ և ասիր նորանց.
Մի ժահանայ մի անձի համար ան-
մաքուր չ՚լինի իր ժողովրդի մէջ.
Բայց միայն իր մօտ ազգականի 2
համար, այսինքն իր մօր և իր
հօր և իր որդու և իր աղջկան և
իր եղբօր համար, Եւ իր կոյս 3
քրոջ համար որ մօտ է իրան՝
մարդի տրուած չէ, նորա համար

4 թող անմաքուր լինի։ Նա իր ժո-
ղովրդի մէջ գլխաւոր լինելով
անմաքուր պիտի չ'դառնայ իրան
5 պղծելով։ Իրանց գլխներին գեր-
ծելով կնտութիւն չ'անեն, և ի-
րանց մօրուքի եզերքը չ'ածիլեն,
և իրանց մարմնի վերայ վէտեր
6 չ'անեն. Սուրբ պիտի լինեն իրանց
Աստուծոյն. և իրանց Աստուծոյ
անունը չ'պղծեն. որովհետև Ե-
հովայի պատարագներն՝ իրանց
Աստուծոյ հացն են մատուցա-
7 նում. ուրեմն սուրբ լինեն։ Պոռ-
նիկ կամ պղծուած կնիկ չ'առ-
նեն, և իր մարդիցն արձակուած
կնիկ չ'առնեն. որովհետև ԵՀՈ-
8 ՎԱՆ սուրբ է իր Աստուծոյն։ Եւ
պիտի սրբես նորան. որովհետև
նա քո Աստուծոյ հացն է մա-
տուցանում. նա սուրբ պիտի լի-
նի քեզ համար, որովհետև ես
Եհովաս որ ձեզ սրբում եմ,
9 սուրբ եմ։ Եւ եթէ մի քահա-
նայի աղջիկը պոռնկութիւն ա-
նելով պղծուելու լինի, նա պղ-
ծում է իր հօրը. նա կրակով
պիտի այրուի։
10 Եւ իր եղբայրներիցը մեծ եղող
քահանան՝ որի գլխին թափուել
է օծման իւղը և ձեռքը լցուել է
որ զգեստները հագնէ, իր գլու-
խը պիտի չ'բանայ, և իր հան-
11 դերձները չ'պատառէ, Եւ մի
մեռած մարդի մօտ չ'գնայ, ոչ
էլ իր հօր կամ իր մօր համար
12 անմաքուր լինի։ Եւ սրբարանիցը
դուրս չ'գայ և իր Աստուծոյ սրբ-
բարանը չ'պղծէ. որովհետև իր
Աստուծոյ օծման իւղի պսակն իր
13 վերայ է. ես եմ Եհովան։ Եւ
նա մի կոյս պիտի կնիկ առնէ։
14 Որբևայրի կամ արձակուած կամ
պղծուած՝ բոզ՝ սորանցից չ'առ-
նէ. այլ իր ժողովրդից մի կոյս
15 առնէ կնիկ, Որ իր սերունդը չը
պղծէ իր ժողովրդի մէջ, որով-
հետև ես եմ Եհովան որ սրբում
եմ նորան։
16 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
17 հետ ասելով. Խօսիր Ահարօնին
և ասիր. Քո սերունդիցն իրանց
ազգերի մէջ ով որ իր վերայ ա-
րատ ունենայ, թող չ'մօտենայ
իր Աստուծոյ հացը մատուցանե-
լու. Որովհետև ոչ մի մարդ որ 18
արատ ունենայ, պիտի չ'մօտե-
նայ. կոյրը կամ կաղը՝ կամ կար-
ճունչը՝ կամ ականջատը, Կամ 19
ոտքը կոտրած կամ ձեռքը կոտ-
րած մարդը, Կամ սապատողը 20
կամ բարակացածը կամ աչքը
հատ ընկածը՝ կամ քոսոտը՝ կամ
որքինոտը կամ փոշտանակը. Ա- 21
հարօն քահանայի սերունդիցն ա-
րատ ունեցող մի մարդ չ'մօտե-
նայ Եհովայի պատարագները մա-
տուցանելու. նա արատաւոր է.
իր Աստուծոյ հացը մատուցանե-
լու չ'մօտենայ։ Նա իր Աստուծոյ 22
հացն ուտէ՝ ամենասուրբ բաներ-
իցը և սուրբ բաներիցը. Միայն 23
վարագոյրի մօտ չ'մտնէ և սեղա-
նին չ'մօտենայ, ըստ որում արատ
ունի. և իմ սուրբ բաները չ'պղ-
ծէ, որովհետև նորանց սրբող Ե-
հովան ես եմ։ Եւ Մովսէսը խօ- 24
սեց Ահարօնի հետ և նորա որ-
դիների հետ և Իսրայէլի բոլոր
որդիների հետ։

ԳԼ. ԻԲ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 1
հետ ասելով. Խօսիր Ահարօնի և 2
նորա որդիների հետ, որ Իսրայէ-
լի որդկանց սուրբ բաներիցը ըզ-
գոյշ կենան, և իմ սուրբ անու-
նը չ'պղծեն այն բաներով որ ինձ
համար սրբում են. ես եմ Եհո-
վան։ Ասիր նորանց. Ձեր բոլոր 3
սերունդիցը ձեր ազգերի մէջ՝ ով
որ իր անմաքրութիւնը իր վերայ
ունենալով մօտենայ այն սուրբ
բաներին, որ Իսրայէլի որդիքը
սրբում են Եհովայի համար, այն
անձն իմ առաջիցը պիտի կորչէ.
ես եմ Եհովան։ Ով որ Ահարօնի 4
ցեղիցը բորոտ լինի կամ ծորում
ունենայ, սուրբ բաներիցը պիտի
չ'ուտէ՝ մինչև որ մաքրուի. և
ով որ մեռելից պղծուած մի բա-
նի դպչէ, կամ մի մարդ որի զու-
գաւորութեան սերմն իրանից ե-
լած է, Կամ ով որ դպչէ որ և 5
իցէ սողունի, որով կարող էր
անմաքուր լինել, կամ մի մար-

դի, որից նա կարող էր անմա-
քուր լինել, որ և իցէ անմաք-
6 րութիւն որ նա ունենայ. Ս-
որանց դպչող մարդը մինչև իրի-
կուն անմաքուր լինի, և սուրբ
բաներիցը չ'ուտէ, այլ իր մար-
7 մինը ջրով լուանայ. Եւ երբ ա-
րեգակը մար մտնէ, մաքուր լի-
նի, և յետոյ սուրբ բաներիցն
ուտէ, որովհետև նա իր հացն է։
8 Մեռածը կամ դազանաբեկը չ'ու-
տէ, որ նորանով չ'պղծուի. ես
9 եմ Եհովան։ Եւ իմ կարգա-
դրութիւնը պիտի պահեն, որ նո-
րա համար մեղք չ'կրեն, և չ'մեռ-
նեն նորա համար որ պղծուել
են. ես եմ Եհովան որ նորանց
սրբում եմ։
10 Եւ ոչ մի օտարական չ'ուտէ
սուրբ բանիցը. քահանայի հիւրը
կամ վարձկանը սուրբ բանիցը
11 չ'ուտէ։ Բայց քահանայի իր փո-
ղովը ծախու առած անձը և իր
տանը ծնուածը նորանից ուտէ.
նորանք նորա կերակրիցը ուտեն։
12 Եթէ քահանայի աղջիկը մի օ-
տարականի հետ ամուսնանայ, այն
ամուսնացած աղջիկը նուիրուած
սուրբ բաներիցը պիտի չ'ուտէ։
13 Բայց եթէ քահանայի աղջիկը
որբևայրի կամ արձակուած լի-
նի՝ և զաւակ չ'ունենայ, և ետ
դառնայ իր հօր տունը, այն ժա-
մանակ իր աղջկութեան ժամա-
նակի պէս իր հօր հացիցն ուտէ.
սակայն ոչ մի օտարական նորա-
նից չ'ուտէ։
14 Եւ եթէ մի մարդ սխալմամբ
մի սուրբ բանից ուտէ, նորան
հինգերորդ մասը վերան աւելա-
ցընէ, և սուրբ բանը քահանային
15 տայ։ Եւ Իսրայէլի որդկանց Ե-
հովային նուիրած սուրբ բաները
16 չ'պղծեն. Եւ իրանց վերայ յան-
ցանքի անօրէնութիւն չ'բերեն,
նորանց սուրբ բաներն ուտելով.
որովհետև ես եմ Եհովան որ
սրբում եմ նորանց։
17 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
18 հետ ասելով. Խօսիր Ահարօնի և
նորա որդիների՝ և Իսրայէլի բո-
լոր որդիների հետ, և ասիր նո-
րանց. Իսրայէլի տանից՝ կամ Իս-
րայէլի մէջ եղող օտարականներ-
ից՝ ամեն մէկը, որ իր պատարա-
գը մատուցանում է իրանց որ և
իցէ ուխտերիցը և որ և իցէ կա-
մաւոր ընծաներիցը, որ մատու-
ցանում են Եհովային իբրև զոհ.
Որ ձեզ համար ընդունելի լինի, 19
պիտի անարատ և արու լինի,
արջառներից՝ ոչխարներից՝ կամ
այծերից։ Ոչ մի արատ ունեցող 20
պիտի չ'մատուցանէք, որովհետև
ձեզ համար ընդունելի չի լինիլ։
Եւ ով որ արջառներիցը կամ ոչ- 21
խարներիցը Եհովային խաղաղու-
թեան զոհ մատուցանելու լինի,
ուխտ կատարելու համար՝ կամ
կամաւոր ընծայի համար՝ անա-
րատ պիտի լինի, որ ընդունուի.
ոչ մի արատ պիտի չ'լինի նորա
վերայ։ Կոյրը՝ կամ կոտրածը՝ 22
կամ վիրաւորուածը՝ կամ խա-
ղաւարտ ունեցողը՝ կամ քոսո-
տը՝ կամ որքինոտը՝ այսպէսիները
Եհովային պիտի չ'մատուցանէք,
ոչ էլ սորանցից Եհովայի հա-
մար պատարագ պիտի դնէք սե-
ղանի վերայ։ Բայց ականջատ և 23
կրճատ զուարակը՝ կամ ոչխարը
կամաւոր ընծայի համար մատու-
ցանես. բայց ուխտի պատարագի
համար ընդունելի չէ։ Ամորձիքը 24
կրտածը կամ ճմլուածը կամ
պոկուածը կամ կտրուածը չ'մա-
տուցանէք Եհովային, և ձեր երկ-
րումը չ'անէք այս բաները։ Եւ օ- 25
տարականի ձեռքից էլ՝ այս ա-
մենիցը ձեր Աստուծոյն *պատա-
րագ չ'մատուցանէք, որովհետև
նորանց մէջ խեղութիւն և ա-
րատ կայ. նորանք ձեզ համար
ընդունելի չեն։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 26
հետ ասելով. Երբոր զուարակ 27
կամ ոչխար կամ այծ ծնուի,
եօթն օր իր մօր տակը մնայ. և
ութերորդ օրը՝ և նորանից յե-
տոյ Եհովային ընդունելի լինի
պատարագի նուէրի համար։ Եւ 28
կովը կամ ոչխարն իր ձագովը
մէկտեղ մէկ օրուայ մէջ չ'մոր-
թէք։

---

*Եբր. հաց։

29 Եւ երբոր գոհութեան զոհ
մատուցանէք Եհովային, այնպէս
մատուցանէք որ ձեզ համար ընդ-
30 ունելի լինի։ Նոյն օրը ուտուի.
մինչև առաւօտ չ՚թողէք նորա-
նից. ես եմ Եհովան։
31 Եւ իմ պատուիրանքները պա-
հէք և անէք նորանց. ես եմ Ե-
32 հովան։ Եւ իմ սուրբ անունը
չ՚պղծէք, որ ես սրբուիմ Իսրա-
յէլի որդկանց մէջ. ես եմ Եհո-
33 վան որ ձեզ սրբում եմ. Որ ձեզ
համար Աստուած լինելու հա-
մար՝ ձեզ Եգիպտոսի երկրիցը
հանեցի. ես եմ Եհովան։

ԳԼ. ԻԳ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Խօսիր Իսրայէլի որդ-
կանց հետ և ասիր նորանց. Եհո-
վայի տօները, որ դուք սուրբ
ժողով պիտի կոչէք, իմ տօները
3 սորանք են. Վեց օր գործ գոր-
ծուի, բայց եօթներորդ օրը հան-
գըստութեան շաբաթ է՝ սուրբ
ժողով է. ոչ մի գործ պիտի չը
գործէք. Եհովայի համար շա-
բաթ է նա ձեր բոլոր բնակու-
թիւններում։
4 Սորանք են Եհովայի տօները,
որ իրանց ժամանակի համեմատ
սուրբ ժողովներ պիտի հրատա-
5 րակէք։ Առաջի ամսուայ տասն-
ևչորսին իրիկուայ դէմ՝ զատիկ է
6 Եհովայի համար։ Եւ նոյն ամ-
սուայ տասնևհինգերորդ օրը բա-
ղարջակերաց տօնն է Եհովայի
համար. եօթն օր բաղարջ պիտի
7 ուտէք։ Առաջի օրը սուրբ ժո-
ղով լինի ձեզ համար. ոչ մի
ծառայութեան գործ չ՚գործէք։
8 Եւ եօթն օր Եհովային պատա-
րագ մատուցանէք. եօթներորդ
օրը սուրբ ժողով լինի. ոչ մի
ծառայութեան գործ չ՚գործէք։
9 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
10 հետ ասելով. Խօսիր Իսրայէլի
որդիների հետ և ասիր նորանց.
Երբ որ մտնէք այն երկիրը որ ձեզ
պիտի տամ, և հնձէք նորա
հունձքը։ ձեր հունձքիցը մի ե-
բախայրի որայ բերէք քահանայի
մօտ. Եւ նա Եհովայի առաջին 11
երերացնելով մատուցանէ որան,
որ ձեզ համար ընդունելի լինի.
քահանան շաբաթի հետևեալ օ-
րը երերացնելով մատուցանէ այն։
Եւ ձեր որան մատուցրած օրը 12
ողջակէզի համար մէկ տարեկան
անարատ գառն մատուցանէք Ե-
հովային. Եւ նորա հացի նուէրը 13
իւղով զանգուած երկու տասա-
նորդ բարակ ալիւր լինի. անու-
շահոտ պատարագ է Եհովայի
համար և նորա թափելու նուէ-
րը՝ հիմէնի չորրորդ մասը դինի
լինի։ Եւ մինչև այն օրը՝ որ ձեր 14
Աստուծոյն մատուցանէք ձեր պա-
տարագը, հաց՝ կամ հեղի՝ կամ
թարմ հասկեր չ՚ուտէք. ձեր
ազգերի մէջ ձեր բոլոր բնակա-
րաններումը սա յաւիտենական
կանոն լինի։
Եւ շաբաթի հետևեալ օրիցը՝ 15
որ դուք նուիրման որան բերիք,
կատարեալ եօթը շաբաթ հա-
մարեցէք ձեզ համար. Մինչև 16
եօթներորդ շաբաթի հետևեալ
օրը յիսուն օր համարէք և նոր
հացի նուէր մատուցանէք Եհո-
վային։ Ձեր բնակարաններիցը ե- 17
րերացնելու պատարագի համար՝
երկու հաց բերէք, որ երկու տա-
սանորդ բարակ ալիւրից լինեն
խմորուած եփուած. սա երախայ-
րի է Եհովայի համար։ Եւ այն 18
հացի հետ՝ եօթը հատ մէկ տա-
րեկան անարատ գառներ, և ար-
ջառներիցը մէկ զուարակ, և եր-
կու խոյ մատուցանէք Եհովային,
որ հացի նուէրների և թափելու
նուէրների հետ ողջակէզ՝ անու-
շահոտ պատարագ լինեն Եհովա-
յի համար։ Եւ մեղքի պատա- 19
րագի համար այծերիցը մէկ նո-
խազ, և խաղաղութեան զոհի
համար մէկ տարեկան երկու
գառներ մատուցանէք։ Եւ քա- 20
հանան երախայրի հացի հետ ե-
րերացնելու պատարագի համար՝
երկու գառները մատուցանէ Ե-
հովայի առաջին. նորանք սուրբ
լինեն Եհովայի համար, և քահա-
նայինն են։ Եւ հէնց այն օրը քա- 21
րոզէք, ձեզ համար սուրբ ժողով

լինի. ոչ մի ծառայութեան գործ
չ՚գործէք. սա յաւիտենական կա-
նոն լինի ձեր բոլոր բնակարան-
ներումը ձեր ազգերի մէջ։
22 Եւ երբոր ձեր երկրի հունձքը
հնձէք, հնձելիս քո արտի եզեր-
քը մինչև վերջը չ՚հնձես, և
հունձքից ընկած հասկերը չ՚ժո-
ղովես. նորանք աղքատին և օ-
տարականին թողես. ես եմ Ե-
հովան ձեր Աստուածը։
23 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
24 հետ ասելով. Խօսիր Իսրայէլի
որդիների հետ և ասիր. Եօթնե-
բորդ ամսուայ ամսի մէկին ձեզ
համար հանգստութեան օր՝ փող
հնչեցնելու յիշատակ՝ սուրբ ժո-
25 ղով լինի։ Ոչ մի ծառայութեան
գործ չ՚գործէք, այլ պատարագ
մատուցանէք Եհովային։
26 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
27 հետ ասելով. Նաև այս եօթնե-
բորդ ամսուայ տասնին քաւու-
թեան օրն է, սուրբ ժողով լինի
ձեզ համար. և պիտի խոնարհե-
ցընէք ձեր անձները և պատա-
28 րագ մատուցանէք Եհովային։ Եւ
այն օրումը ոչ մի գործ չ՚գոր-
ծէք, ըստ որում այդ քաւու-
թեան օր է, ձեզ համար ձեր
Եհովայ Աստուծոյ առաջին քա-
29 ւութիւն անելու համար։ Որով-
հետև ով որ այն օրումը չ՚խո-
նարհուի, նա իր ժողովրդի միջի-
30 ցը պիտի կորչէ. Եւ ով որ այն
օրումը մի որ և իցէ գործ գոր-
ծէ, այն անձը իր ժողովրդի մի-
31 ջիցը պիտի կորցնեմ։ Ոչ մի գործ
պիտի չ՚գործէք. սա ձեր ազգերի
մէջ ձեր բոլոր բնակարաններումը
32 յաւիտենական կանոն լինի։ Այս
ձեզ համար հանգստութեան շա-
բաթ լինի, ու ձեր անձները պի-
տի խոնարհեցնէք. ամսուայ իննի
իրիկունը ձեր շաբաթը պահէք՝
իրիկուանից մինչև իրիկուն։
33 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
34 հետ ասելով. Խօսիր Իսրայէլի
որդկանց հետ և ասիր. Այս եօթ-
ներորդ ամսուայ տասնևհինգե-
րորդ օրը եօթն օր տաղաւարա-
հարաց տօն է Եհովայի համար։
35 Առաջին օրը սուրբ ժողով պիտի
լինի. ոչ մի ծառայութեան գործ
պիտի չ՚գործէք։ Եօթն օր պա- 36
տարագ մատուցանէք Եհովային.
ութերորդ օրը սուրբ ժողով պի-
տի լինի ձեզ համար, և պատա-
րագ մատուցանէք Եհովային. տօ-
նախմբութեան օր է այն. ոչ մի
ծառայութեան գործ չ՚գործէք։
Սորանք են Եհովայի տօները 37
որոնց պիտի սուրբ ժողովներ կո-
չէք Եհովային պատարագ՝ ողջա-
կէզ և հացի նուէր զոհ և թա-
փելու նուէրներ մատուցանէք ա-
մեն օրուայ պէտք եղածը մա-
տուցանելու համար, Բացի Եհո- 38
վայի շաբաթներից, և բացի ձեր
ընծաներից, և բացի ձեր բոլոր
ուխտերից, և բացի ձեր բոլոր
կամաւոր ընծաներից որ Եհովա-
յին պիտի տաք։ Նաև եօթնե- 39
բորդ ամսուայ տասնևհինգերորդ
օրը, դուք երկրի արդիւնքը ժո-
ղովելիս, եօթն օր տօն պիտի
պահէք Եհովայի համար. առա-
ջին օրը հանգստութեան օր և
ութերորդ օրը հանգստութեան
օր լինի։ Եւ առաջին օրը ձեզ հա- 40
մար գեղեցիկ ծառերի պտուղ,
արմաւենու ոստեր՝ և տերևախիտ
ծառերի ոստեր՝ և ձորի ուռիներ
ի ոստեր առնէք, և ձեր Եհովայ
Աստուծոյ առաջին եօթն օր ու-
րախանաք։ Եւ այս տօնը կատա- 41
րեցէք Եհովայի համար. տարին
եօթն օր ձեր ազգերի մէջ յա-
ւիտենական կանոն լինի. եօթնե-
բորդ ամսումը կատարէք այն։
Եօթն օր տաղաւարներում պի- 42
տի բնակուէք. Իսրայէլի բոլոր
բնակները տաղաւարներում բը-
նակուեն։ Որպէս զի ձեր սե- 43
րունդները իմանան, թէ Իսրայէ-
լի որդիներին Եգիպտոսի երկրիցը
հանելիս տաղաւարներում բնա-
կեցրի նորանց. ես եմ Եհովան
ձեր Աստուածը։ Եւ Մովսէսն 44
Իսրայէլի որդիներին պատմեց Ե-
հովայի տօները։

ԳԼ. ԻԴ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 1
հետ ասելով. Պատուիրիր Իս- 2

բայէլի որդիներին՝ որ ծեծած մա-
քուր ձէթ բերեն քեզ մօտ լոյսի
համար, որ միշտ ճրագ վառուի։
3 Ժողովքի խորանի մէջ՝ վկայու-
թեան վարագոյրից դուրս միշտ
Ահարօնը պատրաստէ այն՝ իրիկ-
ուանից մինչև առաւօտ Եհովա-
յի առաջին. սա ձեր ազգերի մէջ
4 յաւիտենական կանոն լինի։ Ճը-
րագները մաքուր աշտանակի վե-
րայ Եհովայի առաջին միշտ պատ-
րաստէ։
5 Եւ բարակ ալիւր առնես, և
նորանով տասնևերկու շօթ թը-
խես. ամեն մէկ շօթը երկու տա-
6 սանորդից պիտի լինի։ Եւ նորանք
դնես Եհովայի առաջին մաքուր
սեղանի վերայ՝ երկու կարգով
7 դնես՝ կարգը վեց հատ։ Եւ ամեն
մի կարգի վերայ զուտ կնդրուկ
դնես, որ հացի վերայ պատարա-
գի յիշատակ լինի Եհովայի հա-
8 մար։ Ամեն շաբաթ օր նա պատ-
րաստէ նորան միշտ Եհովայի ա-
ռաջին Իսրայէլի որդիների կող-
մանէ յաւիտենական ուխտով։
9 Եւ նա Ահարօնինը և նորա որ-
դիներինը լինի, և սուրբ տեղը
ուտեն նորան. որովհետև նա ա-
մենասուրբ է նորա համար Եհո-
վայի պատարագներից յաւիտե-
նական կանոնով։
10 Եւ մի Իսրայէլացի կնկան որ-
դի դուրս գնաց, որի հայրը Ե-
գիպտացի էր Իսրայէլի որդիների
մէջ, և կռուեցին բանակումը
այն Իսրայէլացի կնկան որդին և
11 մի Իսրայէլացի մարդ։ Եւ այն
Իսրայէլացի կնկան որդին հայ-
հոյեց Եհովայի անուանը և անի-
ծեց. և Մովսէսի մօտ բերին նո-
րան. և նորա մօր անունը Սաղո-
միթ էր, Դանի ցեղիցը՝ Դաբրիի
12 աղջիկը։ Եւ բանտարկեցին նո-
րան, մինչև որ Եհովայի հրամա-
13 նը յայտնուի իրանց, Եւ Եհովան
խօսեց Մովսէսի հետ ասելով.
14 Այն հայհոյողին բանակիցը դուրս
հանիր, և բոլոր լսողներն իրանց
ձեռքերը դնեն նորա գլխին, և
բոլոր ժողովքը քարկոծեն նորան։
15 Եւ Իսրայէլի որդկանց հետ խօ-
սես ասելով. Ամեն ով որ իր
Աստուծոյն անիծէ, նա իրան
մեղքը պիտի կրէ։ Եւ Եհովայի 16
անունը հայհոյողը անպատճառ
պիտի մեռցնուի. բոլոր ժողովքն
անպատճառ քարկոծեն նորան.
ինչպէս օտարականը նոյնպէս և
երկրացին, Եհովայի անունը հայ-
հոյողը պիտի մեռցնուի։
Եւ այն մարդը, որ մարդ սպա- 17
նէ, անպատճառ պիտի մեռցնուի։
Եւ նա որ անասուն սպանէ, պի- 18
տի հատուցանէ նոյնի տեղ նոյ-
նը։ Եւ եթէ մի մարդ իր դրա- 19
ցուն մի խեղութիւն պատճառէ,
ինչպէս որ արել է՝ իրան էլ այն-
պէս անեն. Կոտրելու տեղ կոտ- 20
րել, աչքի տեղ աչք, ատամի
տեղ ատամ, ինչպէս որ նա այն
մարդին խեղութիւն է պատճա-
ռել, այնպէս էլ պիտի լինի ի-
րան։ Եւ անասուն սպանողը պի- 21
տի հատուցանէ այն. բայց մարդ
սպանողը պիտի մեռցնուի։ Օտա- 22
րականին էլ երկրացու պէս՝ ձեր
օրէնքը մէկ պիտի լինի. որովհե-
տև ես եմ Եհովան ձեր Աստ-
ուածը։
Եւ Մովսէսը խօսեց Իսրայէլի 23
որդկանց հետ. և այն անիծող
մարդին բանակիցը դուրս հանե-
ցին և քարերով քարկոծեցին
նորան. և Իսրայէլի որդիքն արին
ինչպէս որ Եհովան Մովսէսին
պատուիրել էր։

ԳԼ. ԻԵ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 1
հետ Սինա սարումն ասելով.
Խօսիր Իսրայէլի որդկանց հետ և 2
ասիր նորանց. Երբոր այն երկիրը
մտնէք՝ որ ես ձեզ պիտի տամ,
թող այն երկիրը՝ հանգստութեան
շաբաթ պահէ Եհովայի համար։
Վեց տարի քո արտը վարես, և 3
քո այգին վեց տարի յօտես, և
նորա արդիւնքը ժողովես. Բայց 4
եօթներորդ տարին երկրի հա-
մար հանգստութեան շաբաթ,
այսինքն Եհովայի համար շա-
բաթ լինի. քո արտը պիտի չ՚վա-
րես, և քո այգին չ՚յօտես։ Քո 5
հունձքի ինքնեկը պիտի չ՚հնձես,

և քո չ՚յօտած այգու խաղողնե-
րը չ՚ժողովես. հանգստութեան
տարի լինի այն երկրի համար։
6 Եւ երկրի շաբաթը ձեզ համար
կերակուր լինի, քեզ համար և
քո ծառայի համար և քո աղախ-
նի համար և քո վարձկանի հա-
մար, և քեզ մօտ պանդխտացող
7 օտարականի համար։ Եւ քո ա-
նասունների և քո երկրի մէջ ե-
ղած կենդանիների համար կե-
րակուր լինի նորա բոլոր ար-
դիւնքը։
8 Եւ դու քեզ համար տարիներ-
ի եօթը շաբաթ համարես, այ-
սինքն եօթն անգամ եօթը տա-
րի. և տարիների եօթը շաբաթ-
ների ժամանակը քառասունևինը
տարի պիտի լինեն քեզ համար։
9 Եւ փողի ձայն հնչեցնես եօթ-
ներորդ ամսուայ տասնին, քա-
ւութեան օրը ձեր բոլոր երկրու-
10 մը հնչեցնէք փողը։ Եւ յիսուն-
երորդ տարին սրբէք, և երկրի վե-
րայ նորա բոլոր բնակիչների հա-
մար ազատութիւն հրատարակե-
ցէք. սա ձեզ համար Յոբելեան
լինի և ձեզանից ամեն մէկն իր
ստացուածքին դառնայ, և ձե-
զանից ամեն մէկն իր ազգատոհ-
11 մին դառնայ։ Այս յիսուներորդ
տարին Յոբելեան տարի լինի ձեզ
համար. ոչ ցանէք ոչ էլ ինքնեկ
բուսածը յօտէք, և ձեր չ՚յօտա-
12 ծիցը չ՚ժողովէք։ Որովհետև Յո-
բելեան է. նա ձեզ համար սուրբ
լինի. արտիցը նորա արդիւնքը
13 ուտէք։ Այս Յոբելեան տարին
ձեզանից ամեն մէկը իր ստաց-
ուածքին դառնայ։
14 Եւ եթէ քո դրացուն մի բան
ծախելու լինես, կամ քո դրա-
ցու ձեռքիցը ծախու առնելու
լինես, ձեզանից մէկն իր ընկերին
15 անիրաւութիւն չ՚անէ։ Յոբելեա-
նից յետոյ եղած տարիների հա-
շիւովը ծախու առնես քո դրա-
ցուցը. արդիւնքի տարիների հա-
շիւովը պիտի ծախէ քեզ վերայ։
16 Տարիների շատութեան համե-
մատ պիտի աւելացնես նորա դի-
նը, և տարիների քիչութեան
համեմատ պիտի պակասեցնես
նորա դինը. որովհետև նա ար-
դիւնքի հաշիւովն է ծախում
քեզ վերայ։ Եւ իրար անիրա- 17
ւութիւն չ՚անէք, և քո Աստ-
ուածանից պիտի վախես. որով-
հետև ես եմ Եհովան ձեր Աստ-
ուածը։
Եւ իմ կանոնները անէք, և իմ 18
դատաստանները պահէք և անէք
նորանց. և այն երկրի մէջ ապա-
հովութեամբ կ՚բնակուէք։ Եւ 19
երկիրն իր արդիւնքը կ՚տայ, և
մինչև ձեր կշտանալը կ՚ուտէք. և
նորա մէջ ապահովութեամբ կը
բնակուէք։ Եւ եթէ ասէք. թէ 20
եօթներորդ տարին ի՞նչ կ՚ու-
տենք. ահա պիտի չ՚վարենք և
մեր արդիւնքները պիտի չ՚ժողո-
վենք. Սակայն ես կ՚հրամայեմ 21
իմ օրհնութեանը ձեզ համար
վեցերորդ տարին, և երեք տար-
ուայ արդիւնք կ՚տայ։ Եւ ութե- 22
րորդ տարին վար կ՚անէք, և հին
արդիւնքիցը կ՚ուտէք մինչև ին-
ներորդ տարին. մինչև նորա ար-
դիւնքի հասնելը՝ հինիցը կ՚ուտէք։
Եւ երկիրը պիտի չ՚ծախուի 23
մշտնջենապէս. որովհետև երկի-
րը իմն է, և դուք ինձ մօտ պան-
դուխտներ և հիւրեր էք։ Եւ ձեր 24
կալուածքի բոլոր երկրումը փըր-
կանք պիտի տաք երկրի համար։
Եթէ քո եղբայրն աղքատանայ՝ 25
և իր ստացուածքիցը ծախէ, և
նորա մօտիկ ազգականը նորա
մօտ գայ, նա իր եղբօր ծախածը
փրկէ։ Եւ եթէ մի մարդ փրկող 26
չ՚ունի, և իր ձեռքը չէ հասնում
որ նորան փրկէ, Այն ժամանակ 27
իր ծախելուցը հաշիւ անէ տա-
րիները, և աւելորդը ետ տայ այն
մարդին՝ որի վերայ ծախել էր,
և դարձեալ իր ստացուածքը լի-
նի։ Բայց եթէ ձեռքը չ՚հասնէ 28
նորան ետ տալու, այն ժամանակ
իր ծախած բանը ծախու առնո-
ղի ձեռին մնայ մինչև Յոբելեան
տարին, և Յոբելեանումը դուրս
գայ, և իր ստացուածքը դառնայ։
Եւ եթէ մէկը պարսպաւոր 29
քաղաքի մէջ մի բնակուելու
տուն ծախէ, նորան ծախելուցը
մինչև մի կատարեալ տարի լինի

նորա փրկելը. նորա փրկելը մէկ
30 տարուայ մէջ լինի։ Եւ եթէ այն
բոլոր տարուայ լրանալումբ նա
չ'փրկուի, այն ժամանակ պարբա-
պաքաղաքացւին եղած տունը միշտ
ծախու առնողինը պիտի մնայ իր
ազգերի մէջ, Յոբելեան տարին
31 պիտի եւ չ'դառնայ. Բայց շուր-
ջը պարսպաւոր չ'եղած գիւղա-
քաղաքների աները երկրի արուե-
րի պէս պիտի համարուին. նո-
րանց համար փրկուիլ լինի, և
Յոբելեան տարին եւս պիտի դառ-
32 նան։ Իսկ Ղեւտացիների քաղաք-
ների մէջ իրանց կալուածքի քա-
ղաքների աները Ղեւտացիները
33 միշտ կարող լինին փրկել։ Եւ
եթէ մէկը Ղեւտացիներից ծախու
առնելու լինի, այն ժամանակ
ծախուած տունը իր կալուածքը
եղող քաղաքի մէջ Յոբելեան
տարին պիտի եւս դառնայ. որով-
հետև Իսրայէլի որդիանց մէջ
Ղեւտացիների քաղաքների աներն
իրանց կալուածքն են։
34 Բայց իրանց քաղաքների ան-
դերի արտերը պիտի չ'ծախուին,
որովհետև նորանց յաւիտենա-
35 կան կալուածքն է այն։ Եւ եթէ
քո եղբայրը աղքատանայ՝ և նո-
րա ձեռքը քեզ մօտ տկարանայ,
նորան պիտի օգնես էջէ օտա-
րական և պանդուխտ, որ քեզ
36 մօտ ապրի։ Վաշխ և տոկոսիք
չ'առնես նորանից, այլ վախես
քո Աստուածանից, որ եղբայրդ
37 քեզ մօտ ապրի։ Փողդ վաշխով
պիտի չ'տաս նորան, և կերակու-
38 րդդ տոկոսիքով չ'տաս։ Ես եմ
Եհովան ձեր Աստուածը, որ ձեզ
Եգիպտոսի երկրիցը հանեցի՝ Քա-
նանի երկիրը ձեզ տալու հա-
մար, և ձեզ Աստուած լինելու
համար։
39 Եւ եթէ եղբայրդ քեզ մօտ
աղքատանայ, և իրան ծախէ
քեզ վերայ, նորան չ'ծառայեցը-
նես ծառայի ծառայութիւնով.
40 վարձկանի կամ պանդուխտի
պէս լինի նա քեզ մօտ. մինչև
Յոբելեան տարին ծառայէ քեզ։
41 Եւ յետոյ քո մօտիցը դուրս
գայ, ինքն և իր որդիքն իր հետ,
և իր ազգատոհմի մօտ եւս դառ-
նայ, և իր հայրերի կալուածքի
մօտ եւս դառնայ։ Որովհետև ն-
րանք իմ ծառաներն են, որ Ե-
գիպտոսի երկրիցը հանեցի. նո-
րանք ծառայի ծախուելու պէս
չ'ծախուին։ Խստութեամբ չ'իշ-
խես նորա վերայ, այլ քո Աստ-
ուածանից վախես։ Եւ քո ծա-
ռան և աղախինը, որ պիտի ու-
նենաս, ձեր շուրջը եղած ազգե-
րիցը լինեն. ծառայ և աղախին
նորանցից ծախու առէք։ Նաև
ձեզ մօտ բնակուող օտարական-
ների զաւակներից, նորանցից ծա-
խու առէք և ձեզ մօտ եղող նո-
րանց ընտանիքներիցը որ ձեր երկ-
րում ծնուած են, և ձեր սեպհ-
ականք լինեն. Եւ ձեզանից յե-
տոյ ձեր որդկանց ժառանգու-
թեան տացուածք լինելու հա-
մար թողէք նորանց, և միշտ
գործածեցէք իբրև ձեր ծառա-
ները. բայց ձեր եղբարց՝ Իսրայէ-
լի որդիների մասին՝ իրար վերայ
խստութեամբ պիտի չ'իշխեք։
Եւ եթէ քեզ մօտ եղող օտա-
րականը կամ պանդուխտը հա-
րըստանայ, բայց նորա մօտ եւս-ը
քո եղբայրը աղքատանայ՝ և ի-
րան ծախելու լինի քեզ մօտ
պանդխտացող օտարականի, կամ
այն օտարականի ընտանեաց ցե-
ղի ազգականի վերայ, Նորա ծախ-
ուելուց յետոյ նա կարող է փրկ-
ուիլ. իր եղբայրներիցը մէկը
փրկէ նորան, Կամ հօրեղբայրը
կամ հօրեղբօրորդին փրկէ նո-
րան, կամ իր ազգատոհմի մէջ
իր մօտիկ ազգականներից մէկը
փրկէ նորան. կամ եթէ նորա
ձեռքը հասնէ թող ինքն իրան
փրկէ։ Եւ հաշիւ անէ իրան ծա-
խու առնողի հետ՝ նորա վերայ
ծախուած տարուցը մինչև Յո-
բելեան տարին, և իրան փրկուե-
լու փողը տարիների հաշիւովը
լինի. նորա ժամանակը վարձկանի
ժամանակի պէս հաշուուի. եթէ
տակաւին շատ տարի կայ, նո-
րանց համեմատ իրան ծախուած
դնէցին իր փրկանքը տայ. Եւ ե-
թէ քիչ տարի է մնացել մինչև
Յոբելեան տարին նորա հետ հա-
շիւ անէ, և իր տարիների համե-
մատ իր փրկանքը տայ։ Տարեկան
վարձկանի պէս պիտի համարուի
նորա մօտ. խստութեամբ չ'իշխէ
նորա վերայ քո առաջին։ Եւ ե-
թէ այս կերպերով չ'փրկուի,
Յոբելեան տարում դուրս գայ
ինքը և իր որդիքը իր հետ. Որով-
հետև Իսրայէլի որդիքը իմ ծա-
ռաներն են. Եգիպտոսի երկրիցն
իմ հանած ծառաներն են նո-
րանք. ես եմ Եհովան ձեր Ա-
ստուածը։

ԳԼ. ԻԶ

1 Դուք ձեզ համար չաստուած-
ներ և կուռքեր չ'լինիք, և ձեզ
համար արձաններ չ'կանգնեցնէք,
և պատկերաւոր կոթող չ'դնէք՝
ձեր երկրի մէջ նորան երկրպա-
գութիւն անելու համար. որով-
հետև ես եմ Եհովան ձեր Ա-
ստուածը։
2 Իմ շաբաթներըը պահէք, և
իմ սրբարանը յարգէք. ես եմ
Եհովան։
3 Եթէ իմ կանոններովը գնաք,
և իմ պատուիրանքներըը պահէք
4 և նորանց գործ դնէք, ես էլ
ձեր անձրևները կ'տամ իրանց
ժամանակին, և երկիրն իր սե-
րդիւնքը կ'տայ, և դաշտի ծա-
5 ռերն իրանց պտուղը կ'տան. Եւ
ձեր կալը կ'հասնի մինչև այգե-
կութիւը, և այգեկութիւը մինչև
վարելու ժամանակը կ'հասնի. և
ձեր հացը կուշտ կ'ուտէք, և ձեր
երկրի մէջ ապահովութեամբ կը
6 բնակուէք, Եւ ես խաղաղու-
թիւն կ'տամ երկրին, և հան-
գիստ կ'պառկէք, և մի վախեցը-
նող չի լինիլ. և ես կ'վերջացը-
նեմ երկրիցը չար գազաններին,
և ձեր երկրիցը սուր չի անցնիլ.
7 Եւ ձեր թշնամիներին կ'հալա-
ծէք, և նորանք սրով կ'ընկնեն
8 ձեր առաջին, Եւ ձեզանից հին-
գը հարիւրին պիտի հալածէ, և
ձեզանից հարիւրը բիւրին պիտի
հալածէ, և ձեր թշնամիները
սրով պիտի ընկնեն ձեր առաջին։

Եւ ձեզ վերայ կ'նայեմ, և ձեզ 9
կ'աճեցնեմ և կ'շատացնեմ, և
ձեզ հետ կ'հաստատեմ իմ ուխ-
տը։ Եւ հին պաշար կ'ուտէք, և 10
հինը էլ նորի առջևից դուրս
կ'հանէք։ Եւ ես իմ խորանը ձեր 11
մէջ կ'դնեմ, և իմ հոգին ձե-
զանից չի զզուիլ. Եւ ձեր մէջը 12
մեն կ'գամ, և ձեզ համար Ա-
ստուած կ'լինեմ, և դուք ինձ
համար ժողովուրդ կ'լինէք։ Ես 13
եմ Եհովան ձեր Աստուածը, որ
ձեզ Եգիպտացիների երկրիցը հա-
նեցի, որ նորանց ծառայ չ'լինէք,
և ձեր լուծի կապերը փշրեցի, և
ձեզ բարձրագլուխ մեն ածեցի։
Բայց եթէ ինձ չ'լսէք և այս 14
բոլոր պատուիրանքները չ'կատա-
րէք, Եւ իմ կանոններն անար-
գէք, և ձեր հոգին իմ դատաս-
տաններիցը զզուի, որ իմ բոլոր
պատուիրանքները չ'անէք, և իմ
ուխտը գրժէք. Ես էլ սա կ'ա- 16
նեմ ձեզ, ձեր վերայ կ'ուղար-
կեմ տագնապ և ծխրատական ախ-
տ և տենդ՝ որ աչք են փչաց-
նում և հոգի մաշում, և ձեր
սերմը դատարկ տեղը կ'սերմէք.
որովհետև ձեր թշնամիները կ'ու- 17
տեն նորան, Եւ իմ երեսը ձեզ
վերայ կ'դարձնեմ, և ձեր թշն-
նամիների առաջին կ'սպանուիք.
և ձեզ ատողները կ'իշխեն ձեզ
վերայ, և կ'փախչէք առանց մէ-
կը ձեզ հալածելու։ Եւ եթէ 18
մինչև այսքանը ինձ չ'լսէք, այն
ժամանակ ձեր մեղքերի համար
ձեզ եօթնապատիկ կ'պատժեմ.
Եւ ձեր զօրութեան հպարտա- 19
թիւնը կ'կոտրեմ, և ձեր երկին-
քը երկաթի պէս՝ և ձեր երկիրը
պղնձի պէս կ'անեմ, Եւ ձեր ու- 20
ժը դատարկ տեղը կ'վերջանայ,
և ձեր երկիրն իր արդիւնքը չի
տալ, և երկրի ծառերն իրանց
պտուղը չեն տալ,
Եւ եթէ դուք ինձ հետ խո- 21
տորնակ վարուիք, և չ'ուզիք ինձ
լսել, այն ժամանակ ձեր մեղքե-
րի համեմատ եօթնապատիկ հար-
ուածք կ'աւելացնեմ ձեզ վերայ։
Եւ ձեզ վերայ կ'ուղարկեմ գազ- 22
ան գազանները, և ձեզ անզա-

ւակ կ'անեն, և ձեր անասուն-
ները կ'ջարդեն, և ձեզ կ'քիչա-
ցընեն. և ձեր ճանապարհները
23 անապատ կ'դառնան։ Եւ եթէ
սորանցով էլ չ'խրատուիք ինձա-
նից և ինձ հետ խոտորնակ վար-
24 ուիք, Այն ժամանակ ես էլ ձեզ
հետ խոտորնակ կ'վարուիմ, և
ես էլ ձեր մեղքերի համար եօթ-
25 նապատիկ կ'պատժեմ ձեզ։ Եւ
ձեզ վերայ կ'ուղարկեմ իմ ուխ-
տի վրէժն առնող սուրը, և ձեր
քաղաքների մէջ կ'ժողովուիք, և
ձեր մէջը ժանտախտ կ'ուղար-
կեմ, և թշնամու ձեռքը կ'մատ-
26 նուիք։ Ես ձեր հացի ցուպը կոտ-
րելիս՝ տասը կնիկ մէկ թոնիրում
կ'թխեն ձեր հացը, և ձեր հացը
կշռով ետ կ'տրուի ձեզ. և կ'ու-
տէք ու չէք կշտանալ։
27 Եւ եթէ սորանցով էլ ինձ չ'լը-
սէք, այլ խոտորնակ վարուիք ինձ
28 հետ, Այն ժամանակ ես էլ ձեզ
հետ բարկութեամբ խոտորնակ կը
վարուիմ, և ձեր մեղքերի համար
եօթնպատիկ կ'պատժեմ ձեզ.
29 Եւ ձեր որդիների միսը կ'ուտէք,
և ձեր աղջկանց միսը կ'ուտէք։
30 Եւ ձեր բարձր տեղերը կ'քան-
դեմ և ձեր արեգական կուռ-
քերը կ'փչացնեմ, և ձեր դիակ-
ները ձեր կուռքերի դիակների
վերայ կ'դնեմ, և իմ անձը ձե-
31 զանից պիտի զզուի։ Եւ ձեր քա-
ղաքները աւերակ՝ և ձեր սուրբ
տեղերը ամայի կ'անեմ, և ձեր
32 անոյշ հոտը չեմ հոտոտալ։ Եւ
երկիրը ամայի կ'անեմ, և այն-
տեղ ընակուող ձեր թշնամինե-
33 րը կ'զարմանան նորա վերայ։ Եւ
ձեզ ազգերի մէջ կ'ցրուեմ, և
ձեր ետքից սուր կ'քաշեմ, և
ձեր երկիրը ամայի կ'լինի, և ձեր
34 քաղաքները աւերակ կ'լինեն։ Այն
ժամանակ երկիրն իր ամայու-
թեան բոլոր օրերն իր շաբաթ-
ները կ'վայելէ, և դուք ձեր թշ-
նամիների երկրումը կ'լինիք. եր-
կիրն այն ժամանակ հանգիստ լի-
նելով՝ իր շաբաթները կ'աճեցնէ.
35 Իրան ամայութեան բոլոր օրերը
պիտի հանգստանայ. որովհետև
ձեր շաբաթներումը չէ հանգըս-
տացել, երբոր նորա վերայ ընակ-
վում էիք։ Եւ ձեզանից մնաց- 36
եալների սրտին դողում կ'բե-
րեմ իրանց թշնամիների երկիր-
ներումը, և [illegible] շարժուած
տերևից ձայնը պիտի հալածէ նո-
րանց, և սուրի [illegible] փախչելու
պէս՝ պիտի փախչեն նորանք, և
հալածող չ'եղած՝ պիտի ընկնեն։
Եւ սուրի երեսից [illegible] պէս 37
իրար վերայ պիտի ընկնեն՝ հալա-
ծող չ'եղած, և պիտի չ'կարողա-
նաք ձեր թշնամիների առաջին
կանգնել։ Եւ ազգերի մէջ պի- 38
տի կորչէք, և ձեր թշնամիների
երկիրը ձեզ պիտի ուտէ։ Եւ ձե- 39
զանից մնացեալներն իրանց անօ-
րէնութիւնովը պիտի հալուին
ձեր թշնամիների երկիրներումը.
նաև իրանց հայրերի անօրէնու-
թիւններովը մէկտեղ պիտի հալ-
ուին։
Եւ եթէ խոստովանեն իրանց 40
անօրէնութիւնը և իրանց հայրե-
րի անօրէնութիւնը՝ իրանց ինձ
դէմ գործած յանցանքների հա-
մար, և նաև թէ ինձ հետ խո-
տորնակ են վարուել, Որ նաև 41
ես նորանց հետ խոտորնակ վար-
ուեցի, և նորանց իրանց թշնա-
միների երկիրը տարի. եթէ այն
ժամանակ նորանց անթլփատ սիր-
տը խոնարհուի և իրանց անօրէ-
նութեանը պատժին յօժարուեն.
Այն ժամանակ կ'յիշեմ Յակոբի 42
հետ արած իմ ուխտը, նաև Ի-
սահակի հետ արած իմ ուխտը,
և Աբրահամի հետ արած իմ
ուխտը կ'յիշեմ, և այն երկիրն
էլ կ'յիշեմ։
Եւ այն երկիրը պիտի թողուի 43
նորանցից, և իր շաբաթները պի-
տի հաճեցնէ, նորանցից ամայի
մնալիս. և նորանք իրանց անօրէ-
նութեանը պատժին պիտի յօ-
ժարեն. հէնց բուն նորա համար
որ իմ դատաստաններն անարգե-
ցին, և նորանց հոգիներն իմ կա-
նոններիցը զզուեցին։ Բայց և այ- 44
սու ամենայնիւ երբոր իրանց թշ-
նամիների երկրումը լինեն, նո-
րանց չեմ մերժիլ, և նորանցից
չեմ զզուիլ նորանց բոլորովին

կորցնելու՝ և նորանց հետ արած
ուխտս ջնջելու չափ. որովհետև
ես եմ Եհովան նորանց Աստուա-
45 ծը։ Բայց նորանց համար պիտի
յիշեմ նախնիքի ուխտը, որոնց
Եգիպտոսի երկրիցը հանեցի՝ ազ-
գերի առաջին նորանց Աստուած
լինելու համար. ես եմ Եհովան։
46 Սորանք են այն կանոնները և
դատաստանները և օրէնքները՝ որ
Եհովան տուաւ իրան և Իսրա-
յէլի որդկանց մէջտեղը Սինա
սարումը Մովսէսի ձեռքով։

ԳԼ. ԻԷ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
2 հետ ասելով. Խօսիր Իսրայէլի
որդիներին հետ և ասիր նորանց.
Երբոր մէկն ուխտ անելու լինի,
անձինքը քո արժեցրածի պէս Ե-
3 հովայինը պիտի լինեն։ Եւ քո
գնահատելը [illegible] լինի. եթէ
արու է՝ քսան տարեկանից մին-
չև վաթսուն տարեկան՝ գնահա-
տութիւնդ սրբարանի սիկղի հա-
մեմատ՝ յիսուն սիկղ արծաթ
4 լինի։ Եւ եթէ էգ է՝ գնահատու-
5 թիւնդ երեսուն սիկղ լինի։ Եւ
եթէ հինգ տարեկանից մինչև
քսան տարեկան է, այն ժամա-
նակ արուի համար գնահատու-
թիւնդ քսան սիկղ՝ և էգի հա-
6 մար տասը սիկղ լինի։ Եւ եթէ
մէկ ամսականից մինչև հինգ տա-
րեկան լինի, այն ժամանակ ա-
րուի համար գնահատութիւնդ
հինգ սիկղ արծաթ, և էգի հա-
մար գնահատութիւնդ երեք սիկղ
7 արծաթ լինի։ Եւ եթէ վաթսուն
տարեկանից վեր լինի, արուի հա-
մար գնահատութիւնդ տասնև-
հինգ սիկղ՝ և էգի համար տասը
8 սիկղ լինի։ Եւ եթէ քո գնահա-
տութեանը նորա կարողութիւնը
չ'հասնէ, նորան քահանայի ա-
ռաջին կանգնեցնեն, և քահա-
նան նորան գնահատէ. քահանան
ուխտ անողի ձեռնհասութեան
համեմատ նորան գնահատէ։
9 Եւ եթէ անասուններից է Ե-
հովայի համար նորան մատուցա-
նելու զոհք, ինչ որ նորանից Ե-
հովային տայ, սուրբ պիտի լինի։
Պիտի չ'փոխէ այն, և լաւը վատի 10
հետ՝ կամ վատը լաւի հետ չը
փոխէ. և եթէ անասունը անա-
սունի հետ երբէք փոխելու լինի,
այն ժամանակ այն [illegible] և
նորա փոխանակը սուրբ պիտի լի-
նին։ Եւ եթէ մի որ և է անմա- 11
քուր անասուն է, որ նորանից
Եհովային զոհ չեն մատուցանիլ,
այն ժամանակ քահանայի առա-
ջին կանգնեցնէ այն անասունը.
Եւ քահանան նորա լաւութեան 12
կամ վատութեան համեմատ գը-
նահատէ նորան. քահանան ինչ
որ գնահատէ, այնպէս լինի։ Իսկ 13
եթէ նորան փրկելու լինի, այն
ժամանակ քո գնահատութեան
վերայ մի հինգերորդ մաս աւե-
լացնէ։
Եւ երբոր մի մարդ իր տունը 14
Եհովային սուրբ լինելու համար
ընծայէ, այն ժամանակ քահա-
նան նորա լաւութեան կամ վա-
տութեան համեմատ գնահատէ.
քահանան ինչ որ գնահատէ նո-
րան, այնպէս կենայ։ Եւ եթէ 15
ընծայողը իր տունը փրկելու լի-
նի, քո գնահատութեան փողի
վերայ մի հինգերորդ մաս աւե-
լացնէ, և [illegible] նորանը լինի։
Եւ եթէ մի մարդ իր կալուած- 16
քի արտիցը ընծայելու լինի Եհո-
վային, այն ժամանակ գնահա-
տութիւնդ նորա սերմի համե-
մատ լինի. մէկ քոռ գարու սեր-
մի համար՝ յիսուն սիկղ արծաթ
լինի։ Եթէ իր արտը Յոբելեան 17
տարուցը ընծայէ, քո գնահա-
տութեան պէս կենայ։ Եւ եթէ 18
իր արտը Յոբելեանից յետոյ ընծ-
այէ, քահանան նորա հետ փո-
ղը մինչև Յոբելեան տարին մնա-
ցած տարիների համեմատ հաշիւ
անէ, և քո գնահատութիւնիցը
վայր իջեցնէ. Իսկ եթէ արտը 19
ընծայողը փրկելու լինի նորան,
այն ժամանակ քո գնահատու-
թեան փողի վերայ մի հինգերորդ
մաս աւելացնէ, և այն [illegible] հաս-
տատուի նորա վերայ։ Եւ եթէ 20
արտը չ'փրկէ, կամ արտը մէկ
ուրիշի ծախած լինի, այլ ևս պի-

21 տէ չ՚փրկուի այն։ Այլ արար՝ Յոբելեան տարուամբ ազատուելիս, նուիրուած արարն պէս սուրբ պիտի լինի եհովայինն. նորա կալուածքը քահանայինը պիտի լինի։
22 Եւ եթէ մէկը եհովային ընծայէ իր ծախու առած արտը, որ իր կալուածքի արտիցը չէ,
23 Այն ժամանակ քահանան նորա հետ քո գնահատութեան համեմատ անէ մինչև Յոբելեան տարին, և այն օրը քո գնահատածը տայ. նա սուրբ է եհովայի համար։
24 Յոբելեան տարին արտը ծախողին՝ այսինքն որի որ պատկանում է գետնի կալուածքը,
25 նորան պիտի դառնայ։ Եւ քո բոլոր գնահատութիւնը սրբարանի սիկղի համեմատ պիտի լինի. սիկղը քսան կերաս լինի։
26 Միայն թէ անասուններուն առաջինները՝ առաջի ծնածը լինելու համար եհովայինը լինելով, ոչ մէկը պիտի չ՚ընծայէ այն. թէ արջառ թէ ոչխար, եհովայինն է։
27 Եւ եթէ անմաքուր անասուններից է, քո գնահատութեան համեմատ փրկէ նորան, և նորա վերայ մի հինգերորդ մաս աւելացնէ. և եթէ չի փրկուիլ, քո գնահատութեամբը, թող ծախուի։
28 Բայց որ և իցէ նուէր՝ որ մէկը եհովային է նուիրել բոլոր ունեցածիցը՝ մարդիկներիցը և անասուններիցը և իր կալուածքի արտիցը, չ՚ծախուի և չ՚փրկուի. ամեն նուէր ամենասուրբ է եհովային։
29 Մարդիկներից նուիրուած որ և իցէ մի նուէր պիտի չ՚փրկուի, անպատճառ պիտի մեռցընուի։
30 Եւ երկրի բոլոր տասանորդը՝ երկրի հունտերիցը և ծառերի պտուղիցը՝ եհովայինն է. նա սուրբ է եհովայի համար։
31 Եւ եթէ մի մարդ իր տասանորդներիցը փրկելու լինի, նորա վերայ մի հինգերորդ մաս պիտի աւելացնէ։
32 Եւ արջառների և ոչխարների ամեն տասանորդը՝ գաւազանի տակից ամեն անցնողի տասներորդը՝ սուրբ պիտի լինի եհովային։
33 Լաւի և վատի մէջ՝ տեղը տարբերութիւն պիտի չ՚անէ, և չ՚փոխէ այն. և եթէ փոխելու լինի, այն ժամանակ նա էլ նորա փոխանակն էլ սուրբ պիտի լինի, պիտի չ՚փրկուի։
34 Սորանք են եհովայի՝ Իսրայէլի որդիների համար Սինա սարումը Մովսէսի պատուիրած պատուիրանքները։

ԹՈՒՈՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ եհովան խօսեց Մովսէսի հետ Սինայի անապատումը ժողովքի խորանի մէջ նորանց եգիպտոսի երկրից դուրս գալու երկրորդ տարուայ երկրորդ ամսի
2 մէկին ասելով. Առէք Իսրայէլի որդիների բոլոր ժողովքի համարը իրանց ազգատոհմերի և իրանց հայրերի տների համեմատ՝ ամեն մէկ արուն իրանց անունների
3 թիւով՝ Իսրայէլի մէջ, բոլոր պատերազմի գնացողները, քսան տարեկանից վեր համարեցէք նոսա ամեն, Մանասէից՝ փաղատսուրի
4 որդի Գամալիէլը. Բենիամինից՝
5 Գեդէոնի որդի Աբիդանը. Դանից՝ Ամիսադայի որդի Աքիեզերը. Ասերից՝ Ենքրանի որդի Փագիէլը. Գադից՝ Դագուէլի որդի
6 Եղիասափը. Եփթաղիմից՝ Ամիհուդի որդի Ելիսամա. Մանասէից՝ Փադասուրի
7 որդի Գամալիէլը. Բենիամինից՝
8 Գեդէոնի որդի Աբիդանը. Դանից՝ Ամիսադայի որդի Աքիեզերը. Ասերից՝ Ենքրանի որդի Փագիէլը. Գադից՝ Դագուէլի որդի
9 Եղիասափը. Եփթաղիմից՝ Ելիսամա. Նաւեայ որդի Յեհոսուէ.
10 Բենիամինից՝ Աբիդանի որդի Գեդէոնի. Եփրեմից՝ Ամիուդի որդի Եղիսամա. Մանասէից՝ Գամալիէլի որդի Փադասուր.
11 Դանից՝ Ամիսադայի որդի Աքիեզեր.
12 Ասերից՝ Ենքրանի որդի Փագիէլ.
13 Գադից՝ Դագուէլի որդի Եղիասափ.
14 Նեփթաղիմից՝ Ենանի որդի Ահիրա.
15 Ամեն ժողովքի ընտրեալները՝ իրանց հայրերի ցեղերի իշխանները՝ Իսրայէլի հազարապետները։
16 Եւ Մովսէսն ու Ահարոնն առան այս մարդկանցը, որ անունների թիւով հիշուեցան.
17 Եւ երկրորդ ամսի մէկին բոլոր ժողովքը ժողովեցին և ազգագրուեցան իրանց տոհմերի և իրանց հայրերի տների համեմատ՝ քսան տարեկանից վեր՝ ամենքը համարուելով անունների թիւով։
18 Ինչպէս որ եհովան Մովսէսին պատուիրեց, և նա այնպէս համարեց նորանց Սինա անապատումը։
19 Եւ Իսրայէլի անդրանիկ որդի՝ Ռուբենի որդիքն իրանց սերունդով՝ իրանց տոհմերի և իրանց հայրերի տների համեմատ՝ քսան տարեկանից վեր բոլոր պատերազմի դուրս եկողները՝ ամեն մէկ արուն էրանց անունների թիւով։
20 Ռուբենի ցեղից համարուածները քառասունևվեց հազար հինգ հարիւր հոգի։
21 Շմաւոնի որդիքն իրանց սերունդով՝ իրանց տոհմերի և իրանց հայրերի տների համեմատ՝ քսան տարեկանից վեր բոլոր պատերազմի դուրս եկողները՝ ամեն մէկ արուն էրանց անունների թիւով՝ Շմաւոնի ցեղից համարուածները յիսունինգհազար եօթը հարիւր հոգի։
22 Գադի որդիքն իրանց սերունդով՝ իրանց տոհմերի և իրանց հայրերի տների համեմատ՝ քսան տարեկանից վեր բոլոր պատերազմի դուրս եկողներն էրանց անունների թիւով՝ Գադի ցեղից համարուածները քառասունհինգհազար վեց հարիւր հոգի։
23 Յուդայի որդիքն իրանց սերունդով՝ իրանց տոհմերի և իրանց հայրերի տների համեմատ՝ քսան տարեկանից վեր բոլոր պատերազմի դուրս եկողներն էրանց անունների թիւով՝ Յուդայի ցեղից համարուածները եօթանասունչորս հազար վեց հարիւր հոգի։
24 Իսաքարի որդիքն իրանց սերունդով՝ իրանց տոհմերի և իրանց հայրերի տների համեմատ՝ քսան տարեկանից վեր բոլոր պատերազմի դուրս եկողներն էրանց անունների թիւով՝ Իսաքարի ցեղից համարուածները յիսունչորս հազար չորս հարիւր հոգի։
25 Զաբուղոնի որդիքն իրանց սերունդով՝ իրանց տոհմերի և իրանց հայրերի տների համեմատ՝ քսան տարեկանից վեր բոլոր պատերազմելու կարող եղողներն էրանց անունների թիւով՝ Զաբուղոնի ցեղից համարուածները յիսունևեօթը հազար չորս հարիւր հոգի։
26 Յովսէփի որդիներից Եփրեմի որդիքն իրանց սերունդով՝ իրանց տոհմերի և իրանց հայրերի տների համեմատ՝ քսան տարեկանից վեր բոլոր պատերազմի դուրս եկողները՝ ամեն մէկ արուն էրանց անունների թիւով՝ Եփրեմի ցեղից համարուածները քառասուն հազար հինգ հարիւր հոգի։
27 Մանասէի որդիքն իրանց սերունդով՝ իրանց տոհմերի և իրանց հայրերի տների համեմատ՝ քսան տարեկանից վեր բոլոր պատերազմի դուրս եկողները՝ ամեն մէկ արուն էրանց անունների թիւով՝ Մանասէի ցեղից համարուածները երեսուներկու հազար երկու հարիւր հոգի։
28 Բենիամինի որդիքն իրանց սերունդով՝ իրանց տոհմերի և իրանց հայրերի տների համեմատ՝ քսան տարեկանից վեր բոլոր պատերազմի դուրս եկողները՝ ամեն մէկ արուն էրանց անունների թիւով՝ Բենիամինի ցեղից համարուածները երեսունհինգհազար չորս հարիւր հոգի։
29 Դանի որդիքն իրանց սերունդով՝ իրանց տոհմերի և իրանց հայրերի տների համեմատ՝ քսան

ասրեկանից վեր բոլոր պատերազմի դուրս եկողները էր-
39 թիւով, Դանի ցեղից համարուածները վաթսունեւեկու հազար եօթը հարիւր հոգի։
40 Աշերի որդիքն իրանց սերունդովը՝ իրանց տոհմերի և իրանց հայրերի աների համեմատ՝ քսան ասրեկանից վեր բոլոր պատերազմի դուրս եկողները՝ էր-
41 նունների թիւովը, Աշերի ցեղից համարուածները քառասունեւմէկ հազար հինգ հարիւր հոգի։
42 Նեփթաղիմի որդիքն իրանց սերունդովը՝ իրանց տոհմերի և իրանց հայրերի աների համեմատ՝ քսան ասրեկանից վեր բոլոր պատերազմի դուրս եկողները էր-
43 անունների թիւովը, Նեփթաղիմի ցեղից համարուածները յիսունեւերկու հազար չորս հարիւր հոգի։
44 Սորանք են այն համարուածները, որ համարեցին Մովսէսը և Ահարոնը և Իսրայէլի իշխանները, տասնեւերկու մարդիկ, ամեն մէկն իր հայրերի տան կողմից էին։
45 Եւ ամեն Իսրայէլի որդկանց ամենն իրանց հայրերի աների համեմատ Իսրայէլի մէջ քսան ասրեկանից վեր բոլոր պատերազմի դուրս եկողները համարուեցան.
46 եւ բոլոր համարուածները վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր յիսուն հոգի։
47 Բայց Ղեւտացիները իրանց հայրերի ցեղովը սորանց մէջ չհամարուեցան։
48 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ ասելով.
49 Միայն Ղեւտացիների ցեղը չհամարես և նորանց գումարը չառնես Իսրայէլի որդկանց հետ. Բայց դու Ղեւտացիներին կարգիր վկայութեան խորանի և նորա բոլոր կարասիների և նորա վերաբերեալ բոլոր բաների համար. նորանք վեր առնեն խորանը և նորա բոլոր կարասիները, և նորան սպասաւորութիւն անեն. և խորանի շուրջումը բանակ տան։
51 Եւ խորանը չուելիս՝ Ղեւտացիները իջեցնեն նորան, և խորանն իջեցնելիս՝ Ղեւտացիները կանգնեցնեն նորան. և ուրիշ մօտեցող օտարականը պիտի մեռցնուի։
52 Իսրայէլի որդիքն իրանց դունդերովն ամեն մէկն իր բանակի մօտ իջեան անեն, Բայց Ղեւտացիները վկայութեան խորանի շուրջումը բանակ տան, որ Իսրայէլի որդկանց ժողովքի վերայ բարկութիւն չլինի, և Ղեւտացիները վկայութեան խորանի պահպանութիւնն անեն։
54 Իսրայէլի որդիքը այն բոլորի պէս արին, որ Եհովան Մովսէսին պատուիրել էր, այնպէս արին։

ԳԼ. Բ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի և
2 Ահարոնի հետ ասելով. Իսրայէլի որդկանց ամեն մէկն իր դրօշակի մօտ իրանց հայրերի տան նշանովն իջեան անեն. ժողովքի խորանին չանդիման շուրջանակի իջեան անեն։
3 Եւ առաջի կողմում դէպի արեւելք իջեան անողները Յուդայի բանակի դրօշակը լինի իրանց դունդերովը. և Յուդայի որդկանց իշխան լինի Ամինադաբի որդի՝ Նահասոնը։
4 Եւ նորա զօրադունդը և համարուածները եօթանասունեւչորս հազար վեց հարիւր հոգի։
5 Եւ նորա մօտ իջեան անողները Իսաքարի ցեղը լինի. և Իսաքարի որդկանց իշխան լինի Սոգարի որդի՝ Նաթանայէլը։
6 Եւ նորա զօրադունդը և համարուածները յիսունեւչորս հազար չորս հարիւր հոգի։
7 Զաբուղոնի ցեղը. և Զաբուղոնի որդկանց իշխան լինի Փղդոնի որդի՝ Եղիաբը։
8 Եւ նորա զօրադունդը և համարուածները յիսունեւեօթը հազար չորս հարիւր հոգի։
9 Յուդայի բանակի մէջ համարուածների ամենն իրանց դունդերի համեմատ՝ հարիւր ութսունեւվեց հազար չորս հարիւր հոգի։ Առաջ սրանք չուեն։
10 Հարաւային կողմում Ռուբենի բանակի դրօշակը լինի իրանց դունդերովը. և Ռուբենի որդկանց իշխան՝ Սեդիւրի որդի Ե-
11 ղիասուրը լինի։ Եւ նորա զօրադունդը և համարուածները քառասունեւվեց հազար հինգ հարիւր հոգի։
12 Եւ նորա մօտ իջեան անողները Շմաւոնի ցեղը լինի և Շմաւոնի որդկանց իշխան՝ Սուրիադայի որդի՝ Սազամիէլը լինի։
13 Եւ նորա զօրադունդը և համարուածները յիսունեւ վեց հազար
14 երեք հարիւր հոգի։ Եւ Գադի ցեղը. և Գադի որդկանց իշխան՝ Դագուէլի որդի Եղիասափը լինի։
15 Եւ նորա զօրադունդը և համարուածները քառասունեւվեց հազար վեց հարիւր յիսուն հոգի։
16 Ռուբենի բանակի մէջ համարուածների ամենն իրանց դունդերի համեմատ՝ հարիւր յիսուն եւմէկ հազար չորս հարիւր յիսուն հոգի։ Եւ երկրորդը՝ առաջը չուեն։
17 Յետոյ չուէ ժողովքի խորանը՝ Ղեւտացիների բանակը, բանակների մէջտեղը. ինչպէս իջեան են անում՝ այնպէս էլ չուեն՝ ամեն մարդ իր տեղն իրանց դրօշակների համեմատ։
18 Արեւմտեան կողմում Եփրեմի բանակի դրօշակը լինի իրանց դունդերովը և Եփրեմի որդկանց իշխան՝ Ամիուդի որդի Եղիսաման
19 լինի։ Եւ նորա զօրադունդը և համարուածները քառասուն հազար հինգ հարիւր հոգի։
20 Եւ նորա մօտ Մանասէի ցեղը. և Մանասէի որդկանց իշխան՝ փադասուրի որդի Գամալիէլը լինի։ Եւ
21 նորա զօրադունդը և համարուածները երեսունեւերկու հազար երկու հարիւր հոգի։
22 Եւ Բենիամինի ցեղը. և Բենիամինի որդկանց իշխան՝ Գեդէոնիի որդի Աբիդանը լինի։ Եւ նորա զօրադունդը և համարուածները երեսունեւհինգ հազար չորս հարիւր
23 հոգի։ Եփրեմի բանակի մէջ համարուածների ամենն իրանց դունդերովը հարիւր ութը հազար հարիւր հոգի։ Եւ երրորդը առաջը չուեն։
25 Հիւսիսային կողմում Դանի բանակի դրօշակը լինի իրանց դունդերովը. և Դանի որդկանց

իշխան՝ Ամիսադայի որդի Աքիեզերը լինի։ Եւ նորա զօրադունդը և համարուածները վաթսունեւերկու հազար եօթը հարիւր հոգի։
27 Եւ նորա մօտ իջեան անողները Աշերի ցեղը լինի. և Աշերի որդկանց իշխան՝ Եքրանի որդի Փագիէլը լինի։ Եւ նորա զօրադունդը և համարուածները քառասունեւմէկ հազար հինգ հարիւր հոգի։
29 Եւ Նեփթաղիմի ցեղը. և Նեփթաղիմի որդկանց իշխան՝ Ենանի որդի Աքիրէն լինի։
30 Եւ նորա զօրադունդը և համարուածները յիսունեւերկու հազար չորս հարիւր հոգի։
31 Բանակի մէջ համարուածների ամենն հարիւր յիսունեւեօթը հազար վեց հարիւր հոգի։ Սորանք իրանց դրօշակներովն ամենի առաջից չուեն։

32 Սորանք են Իսրայէլի որդիներից իրանց հայրերի աներովը համարուածները. բանակների մէջ համարուածների ամենն իրանց դունդերովը վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր յիսուն հոգի էին։ Բայց Ղեւտացիները չհամարուեցան Իսրայէլի որդկանց հետ, ինչպէս որ Եհովան Մովսէսին պատուիրել էր։ Եւ Իսրայէլի որդիքն արին ինչպէս որ բոլորը Եհովան Մովսէսին պատուիրել էր՝ այսպէս իրանց դրօշակներովն իջեան էին անում, այսպէս նորանք ամեն մէկն իրանց տոհմերովն իրանց հայրերի աներովը չուում էին։

ԳԼ. Գ

1 Եւ Ահարոնի և Մովսէսի ազգաբանութիւնը սա է, այն օրն որ Եհովան Մովսէսի հետ խօսեց
2 Սինա սարումը։ Եւ Ահարոնի որդկանց անունները սորանք են. անդրանիկը Նադաբ և Աբիուդ, Եղիազար և Իթամար։
3 Սորանք էին Ահարոնի քահանայ օծուած որդիների անունները, որոնց ձեռքը լցրից քահանայութիւն անելու համար։ Եւ Նադաբն ու Աբիուդը Սինա անապատումը Եհո-
4

վայի առաջին օտար կրակ մատուցանելիս մեռան ենովայի առաջին, և նորանք որդի չ'ունեին. և եղիազարն ու իթամարն իրանց հայր Ահարոնի առաջին քահանայութիւն արին։

5 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
6 հետ ասելով. Ղևիի ցեղը մատեցրու, և նորանց կանգնեցրու Ահարոն քահանայի առաջին, որ նորան սպասաւորութիւն անեն։
7 Եւ պահեն նորա պահպանութիւնը՝ և բոլոր ժողովքի պահպանութիւնը ժողովքի խորանի առաջին խորանի պաշտօնն անելով։
8 Եւ պահեն ժողովքի խորանի բոլոր կարասիները՝ և իսրայէլի որդկանց պահպանութիւնը՝ խորանի պաշտօնն անելով։
9 Եւ Ղևտացիները Ահարոնին և նորա որդկանցը տուս, որովհետև բոլորովին նորան են տրուած իսրայէլի որդիներից։
10 Եւ Ահարոնն ու նորա որդիները կարգես իրանց քահանայական պաշտօնը կատարելու. և մօտեցող օտարականը մեռցնուի։
11 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
12 հետ ասելով. Եւ ես ահա իսրայէլի որդկանց միջից Ղևտացիներն առի, իսրայէլի որդկանց մէջ ամեն ռոք արգանդը բացող առաջինեկի տեղը, և Ղևտացիները իմ պիտի լինեն։
13 Որովհետև ամեն առաջինեկը իմն է. այն որ Եգիպտոսի երկրումը բոլոր առաջինեկները զարկեցի, իսրայէլի մէջ բոլոր առաջինեկները մարդից մինչև անասուն սրբեցի ինձ համար. նորանք իմ պիտի լինեն. ես եմ Եհովան։
14 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ Սինա անապատումն ասելով. Համարիր Ղևիի որդիքն իրանց հայրերի տների և իրանց ազգատոհմերի համեմատ. մէկ ամսականից վեր եղող ամեն արուն համարես։
15 Եւ Մովսէսը համարեց նորանց Եհովայի խօսքին համեմատ, ինչպէս որ իրան պատւէր եղաւ։
16 Եւ Ղևիի որդիքն իրանց անուններով սորանք էին։
17 Գերսոն և Կահաթ և Մերարի։
18 Գերսոն և Կահաթ և Մերարի։

Եւ Գերսոնի որդկանց անուններն իրանց տոհմերով սորանք են, Ղոբենի և Սեմէի։
19 Եւ Կահաթի որդիքն իրանց տոհմերով՝ Ամբրամ և Իսահառ, Քեբրոն և Ոզիել։
20 Եւ Մերարիի որդիքն իրանց տոհմերով՝ Մոողի և Մուսի. Ղևտացիների տոհմերն իրանց հայրերի տների համեմատ սորանք են։
21 Գերսոնից Ղոբենեանց տոհմը և Սեմէեանց տոհմն եղաւ. Գերսոնեանց տոհմերը սորանք են։
22 Նորանց համարուածները՝ մէկ ամսականից վեր եղող բոլոր արուների թիւին համեմատ համարուածները՝ եօթը հազար հինգ հարիւր հոգի։
23 Գերսոնեանց տոհմերը խորանի ետքի կողմը դէպի արևմուտք իջևան անեն։
24 Գերսոնեանց հօր տան իշխանը՝ Լայէլի որդի Եղիասափ լինի։
25 Եւ ժողովքի խորանի մէջ Գերսոնի որդկանց պահպանութիւնը՝ խորանը և վրանը, նորա ծածկոցը և ժողովքի խորանի դրան վարագոյրը,
26 խորանի և սեղանի չուրջը եղած սրահի առագաստները, և սրահի դրան սրահակը և նորա ամեն գործի համար եղած չուաններըը։
27 Եւ Կահաթից Ամբրամեանց տոհմը՝ և Իսահառեանց տոհմը՝ և Քեբրոնեանց տոհմը. և Ոզիելեանց տոհմը. Կահաթեանց տոհմերը սորանք են. Մէկ ամսականից վեր եղող բոլոր արուները էջոյ թիւին համեմատ՝ ութը հազար վեց հարիւր հոգի սրբարանի պահպանութիւնը պահպանող։
29 Կահաթի որդկանց տոհմերը խորանի հարաւային կողմումն իջևան անեն։
30 Եւ Կահաթեանց տոհմերի հօր տան իշխանը՝ Ոզիելի որդի Եղիսափանը լինի։
31 Եւ նորանց պահպանութիւնը լինի տապանակը՝ սեղանը՝ և աշտանակը և սեղանները՝ և սրբարանի գործիքները, որոնցմով պաշտօն են անում՝ և վարագոյրը և նորա վերաբերեալ ամեն բանները։
32 Եւ Ղևտացիների իշխանների իշխանը Ահարոն քահանայի որդի Եղիազարը լինի, որ սրբարանի պահպանութիւնն անողների վերայ վերակացու լինի։
33 Մերարիից Մոողեանց տոհմը և Մուսեանց տոհմը, սորանք են
34 Մերարիի տոհմերը՝ և նորանց համարուածները՝ մէկ ամսականից վեր եղող բոլոր արուները էջոյ թիւին համեմատ վեց հազար երկու հարիւր հոգի։
35 Աբիհայիլ որդի Սուրիէլը լինի. սորանք խորանի հիւսիսային կողմումն իջևան անեն։
36 Եւ Մերարիի որդկանց պահպանութեան յանձնուածները լինեն խորանի տախտակները՝ և նորա նիգերը և սիւները և խարխխները՝ և նորա բոլոր գործիքները՝ և նորա վերաբերեալ ամեն բանները,
37 Եւ շուրջանակի սրահի սիւները և նորանց խարխխները և ցիցերը և նորանց չուաններըը։
38 Եւ խորանի առաջի կողմումն այսինքն ժողովքի խորանի առաջին դէպի արևելք իջևան անողները՝ Մովսէսն ու Ահարոնը և նորա որդիքը լինեն, որ սրբարանի պահպանութիւնը իսրայէլի որդկանց պահպանութեան համար պահպանեն. և մօտեցող օտարականը պիտի մեռցնուի։
39 Ղևտացիների բոլոր համարուածները՝ որ Մովսէսն ու Ահարոնը համարեցին, իրանց տոհմերով Եհովայի խօսքին համեմատ՝ մէկ ամսականից վեր եղող բոլոր արուները քսանեւերկու հազար էին։
40 Եւ Եհովան ասեց Մովսէսին. Իսրայէլի որդկանց մէկ ամսականից վեր բոլոր առաջինեկ արուները համարիր, և նորանց անուններըը հանիր։
41 Եւ ինձ՝ Եհովային ասա. Ղևտացիներն առնես ինձ համար իսրայէլի որդկանց բոլոր առաջինեկներուն փոխարէն. ես եմ Եհովան. և Ղևտացիների անասուններըը՝ իսրայէլի որդկանց անասունների բոլոր առաջինեկների փոխարէն։
42 Եւ Մովսէսը համարեց իսրայէլի որդկանց բոլոր առաջինեկները՝ ինչպէս որ Եհովան իրան պատուիրեց։ Եւ բոլոր առաջինեկները՝ ինչ

ներն էջոյ անասունների թիւին համեմատ մէկ ամսականից վեր համարուածները՝ քսանեւերկու հազար երեք հարիւր եօթանասունեւերկու հոգի։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 44
հետ ասելով. Առ Ղևտացիներն 45
իսրայէլի որդկանց միջից անասունների փոխարէն, և Ղևտացիների անասունները՝ նորանց անասունների փոխարէն, որ Ղևտացիներն իմ լինեն. ես եմ Եհովան։ Եւ այն երկու հարիւր 46
եօթանասունեւերկերկի փրկանք լինելու համար, որ ասելացան Ղևտացիներից իսրայէլի որդիներից, իւրաքանչիւր մարդի համար 47
հինգ սիկղ առնես, սրբարանի սիկղի համեմատ առնես. մէկ սիկղը քսան կերա է։ Եւ նորանց մէջ ասելացածներն փրկանքի փողը Ահարոնին և նորա որդկանցը տուս։ Եւ Մովսէսը Ղևտացիներով փրկուածներն ասելացածներից փրկանքի փողն առաւ. իսրայէլի որդկանց առաջինեկներից հազար երեք հարիւր վեցտասունեւհինգ հինգ արծաթի առաւ սրբարանի սիկղի համեմատ։ Եւ Մովսէսը եհովայի խօսքի պէս 54
փրկուածների փողը Ահարոնին ու նորա որդկանցը տուաւ, ինչպէս որ Եհովան Մովսէսին պատուիրել էր։

ԳԼ. Դ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի և 1
Ահարոնի հետ ասելով. Առ Ղե- 2
ւիի որդկանց միջից Կահաթի որդկանց գումարն իրանց տոհմերի և իրանց հայրերի տների համեմատ. երեսուն տարեկանից վեր 3
մինչև հիսուն տարեկանը՝ ժողովքի խորանի մէջ ծառայութիւն անելու համար գունդի մէջ մտնողին համարելով։ Ժո- 4
ղովքի խորանի մէջ Կահաթի որդկանց պաշտօնը այս լինի՝ սրբութիւն սրբութեանցը։ Եւ բա- 5
նակը չուելիս գայ Ահարոնը և նորա որդիքը և իջևցնեն ծածկոցի սրահակը և նորանով վկայու-

6 թեան տապանակը ծածկեն։ Եւ
թէհաշի մորթերից շինուած ծած-
կոցը նորա վերայ դնեն, և նորա
վերայ մի բոլորովին կապուտակ
ձորձ տարածեն. և նորա ձողերն
7 անցկացնեն։ Եւ առաջաւորու-
թեան սեղանի վերայ մի կապու-
տակ ձորձ տարածեն և նորա վե-
րայ սկուտեղները և խնկամանն-
ները, սկաւառակները և թափելու
նուէր մատուցանելու բաժակնե-
րը դնեն, և հանապազօրեայ հա-
8 ցերը նորա վերայ լինեն. Եւ նո-
րա վերայ կրկնակի կարմիրից մի
ձորձ տարածեն, և թէհաշի մոր-
թերից մի ծածկոցով ծածկեն
այն. և նորա ձողերը անցկացնեն։
9 Եւ մի կապուտակ ձորձ առնեն
և ծածկեն լոյսի աշտանակը՝ և
նորա ճրագները և նորա ունելի-
ները և բազմակալները՝ և նորա
բոլոր իւղի ամանները՝ որոնցով
10 ծառայում են նորան. Եւ նորան
և նորա ամեն գործիքները թէ-
հաշի մորթերից շինուած մի ծած-
կոցի մէջ դնեն, և մի լծակի վե-
11 րայ դնեն այն։ Եւ ոսկի սեղանի
վերայ մի կապուտակ ձորձ տա-
րածեն, և թէհաշի մորթերից
ծածկոցով ծածկեն այն, և նորա
12 ձողերը անցկացնեն։ Եւ սրբարա-
նի մէջ պաշտօնի համար գոր-
ծածուած բոլոր գործիքներն առ-
նեն, և մի կապուտակ ձորձի մէջ
փաթաթեն, և թէհաշի մորթե-
րից մի ծածկոցով ծածկեն նորան
13 և մի լծակի վերայ դնեն։ Եւ սե-
ղանի մոխիրները կտրելով նորա
վերայ մի ծիրանեգոյն ձորձ տա-
14 րածեն. Եւ նորա վերայ դնեն
պաշտօնի համար գործածուած
նորա բոլոր գործիքները՝ այսինքն
կրակի ամանները՝ մսահանները՝ և
թիակները՝ և կոնքերը՝ հով բա-
նիւ սեղանի բոլոր գործիքները՝ և
նորա վերայ թէհաշի մորթերից
մի ծածկոց տարածեն, և նորա
15 ձողերն անցկացնեն։ Եւ վերջա-
ցընեն Ահարօնը և նորա որդիքը
սրբարանն և սրբարանի բոլոր կա-
բասիները ծածկելը՝ բանակը չու-
ելիս, և յետոյ Կահաթի որդիքը
գան վեր առնելու. բայց սուրբ
բաներին չ՚դպչեն որ չ՚մեռնեն.
Կահաթի որդկանց բեռները սո-
րանք լինեն ժողովքի խորանումը։
Եւ Ահարօն քահանայի որդի՝ 16
Եղիազարը լոյսի իւղի և անու-
շահոտ խունկի և հանապազօր-
եայ հացի ընծայի և օծման իւղի
վերայ վերակացու լինի. և բոլոր
խորանի և նորա միջի ամեն բա-
ների սրբարանի և նորա կարա-
սիների վերայ վերակացու լինի։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի և 17
Ահարօնի հետ ասելով. Ղևտացի- 18
ների միջից Կահաթեանց տոհմերի
ցեղը չ՚փչացնէք. Բայց նորանց 19
այսպէս արէք՝ որ ամենասուրբ
բաների մօտենալիս ողջ մնան և
չ՚մեռնեն. Ահարօնն ու իր որդի-
քը գան, և նորանց ամեն մէկին
նշանակեն իր պաշտօնի և իր բե-
ռի վերայ։ Եւ երբոր սուրբ բա- 20
ները ծածկում են, նորանց տես-
նելու համար ներս չ՚մտնեն՝ որ
չ՚մեռնեն։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 21
հետ ասելով. Նաև Գերսոնի որդ- 22
կանց գումարն առ՝ իրանց հայ-
րերի տների և իրանց տոհմերի
համեմատ։ Երեսուն տարեկանից 23
վեր մինչև յիսուն տարեկանը
համարես նորանց՝ ժողովքի խո-
րանի մէջ ծառայութիւն անելու
համար գունդի մէջ ամեն մըտ-
նողները։ Այս է Գերսոնեանց տոհ- 24
մերի ծառայելու և բեռ վեր առ-
նելու պաշտօնը. Սորանք վեր 25
առնեն խորանի վարագոյրները և
ժողովքի խորանը, նորա ծածկո-
ցը և նորա վերայի թէհաշի ծած-
կոցը, և ժողովքի խորանի դրան
վարագոյրը. Եւ խորանի ու սե- 26
ղանի շուրջը եղած սրահի առա-
գաստները՝ և սրահը մտնելու դը-
րան սրահակը և նորանց չուան-
ները՝ և նորանց պաշտօնի բոլոր
գործիքները և նորանց հարկաւոր
եղած բոլոր սպասաւորութիւն-
ներն անեն։ Ահարօնի և նորա 27
որդկանց խօսքովը լինի Գերսոն-
եանց որդկանց բոլոր պաշտօնը՝
իրանց ամեն բեռների և իրանց
ամեն պաշտօնների համար և նո-
րանց յանձնէք իրանց բոլոր բեռ-

ները պահպանութեան համար։
28 Այս է Գերսոնեանց որդկանց
տոհմերի պաշտօնը ժողովքի խո-
րանի մէջ. և նորանց պահպա-
նութիւնը Ահարօն քահանայի
որդի՝ Իթամարի ձեռքովը լինի։
29 Մերարիի որդիքը համարես ի-
րանց տոհմերի և իրանց հայրե-
30 րի տների համեմատ. Երեսուն
տարեկանից և վեր մինչև յիսուն
տարեկանը՝ ժողովքի խորանի ծա-
ռայութիւնն անելու համար գուն-
դի մէջ ամեն մտնողները համա-
31 րես։ Եւ այս է ժողովքի խորանի
մէջ նորանց ամեն պաշտօնների
համեմատ նորանց յանձնուած
բեռները՝ խորանի տախտակները,
և նորա նիգերը և նորա սիւները
32 և խարիսխները, Եւ շուրջանակի
սրահի սիւները և նորանց խա-
րիսխները և ցիցերը և չուաններ-
ը՝ նորանց ամեն գործիքներովը
և նորանց ամեն պաշտօնովը, նո-
րանց պահպանութեանը բեռնե-
րի եղած գործիքներն անուններ-
33 ով յանձնէք նորանց։ Այս է Մե-
րարիի որդկանց տոհմերի պաշ-
տօնը ժողովքի խորանի մէջ ի-
րանց բոլոր պաշտօնների համե-
մատ Ահարօն քահանայի որդի
Իթամարի ձեռքով։
34 Եւ Մովսէսն ու Ահարօնը և
ժողովքի իշխանները համարեցին
Կահաթեանց որդիներին նորանց
տոհմերի և նորանց հայրերի տնե-
35 րի համեմատ, Երեսուն տարե-
կանից վեր մինչև յիսուն տարե-
կանը՝ ժողովքի խորանի մէջ ծա-
ռայութիւն անելու համար գուն-
36 դի մէջ ամեն մտնողները. Եւ
նորանց համարուածներն իրանց
տոհմերովը երկու հազար եօթը
37 հարիւր յիսուն հոգի։ Սորանք են
ժողովքի խորանի բոլոր ծառա-
յութիւնն անող Կահաթեանց
տոհմերի համարուածները, որ
Մովսէսն ու Ահարօնը համարե-
ցին Եհովայի խօսքին համեմատ
որ Մովսէսի ձեռքով խօսուած էր։
38 Եւ Գերսոնի որդկանց համար-
ուածներն իրանց տոհմերի և ի-
րանց հայրերի տների համեմատ,
39 Երեսուն տարեկանից վեր մինչև
յիսուն տարեկանը՝ ժողովքի խո-
րանի մէջ ծառայութիւն անելու
համար գունդի մէջ ամեն մըտ-
նողները. Եւ նորանց համար- 40
ուածներն իրանց տոհմերի և ի-
րանց հայրերի տների համեմատ
երկու հազար վեց հարիւր երե-
սուն հոգի։ Սորանք են ժողովքի 41
խորանի մէջ բոլոր ծառայութիւն
անող Գերսոնի որդկանց տոհմե-
րից համարուածները, որ Մովսէսն
ու Ահարօնը համարեցին՝ Եհովա-
յի խօսքի պէս։
Եւ Մերարիի որդկանց տոհմե- 42
րի համարուածներն իրանց տոհ-
մերի և իրանց հայրերի տների
համեմատ, Երեսուն տարեկանից 43
վեր մինչև յիսուն տարեկանը՝
ժողովքի խորանի մէջ ծառայու-
թիւն անելու համար գունդի մէջ
ամեն մտնողները։ Եւ նորանց 44
համարուածներն իրանց տոհմե-
րովն երեք հազար երկու հարիւր
հոգի։ Սորանք են Մերարիի որդ- 45
կանց տոհմերի համարուածնե-
րը, որ Մովսէսն ու Ահարօնը
համարեցին՝ Եհովայի խօսքին հա-
մեմատ որ Մովսէսի ձեռքով
խօսուած էր։
Ղևտացիների բոլոր համար- 46
ուածները, որ Մովսէսն ու Ահա-
րօնը և Իսրայէլի իշխանները հա-
մարեցին իրանց տոհմերի և ի-
րանց հայրերի տների համեմատ,
Երեսուն տարեկանից վեր մինչև 47
յիսուն տարեկանը՝ ժողովքի խո-
րանի մէջ պաշտօն կատարելու
և բեռին ծառայելու ամեն մըտ-
նողները, Այսինքն նորանց հա- 48
մարուածները ութը հազար հինգ
հարիւր ութսուն հոգի. Նորանք 49
Եհովայի պատուիրածին պէս հա-
մարուեցան Մովսէսի ձեռքովը,
ամեն մէկն իր պաշտօնին և իր
բեռին նայելով. այսպէս հա-
մարուեցան նորանք ինչպէս որ
Եհովան պատուիրեց Մովսէսին։

ԳԼ. Ե

Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ 1
ասելով. Շրամայիր Իսրայէլի որդ- 2
կանցը, որ բանակից դուրս ա-

նեն ամեն բորոտին և ամեն ծո-
բում ունեցողին և մեռելից ա-
3 մեն անմաքուր եղողին. Արուն
էլ էգն էլ բանակիցը դուրս ա-
րէք նորանց, որ չ՚պղծեն իրանց
բանակները՝ որոնց մէջ ես բնակ-
4 վում եմ։ Եւ Իսրայէլի որդիքն
այնպէս արին, և բանակիցը դուրս
արին նորանց ինչպէս որ Եհովան
Մովսէսին հետ խօսել էր՝ այն-
պէս արին Իսրայէլի որդիքը։
5 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
6 հետ ասելով. Խօսիր Իսրայէլի
որդկանց հետ. Երբոր մի մարդ
կամ մի կնիկ մարդկանց որ և է
մեղքերից մէկը գործելով Եհո-
վայի դէմ մեղանչէ և այդ անձը
7 յանցաւոր լինի, Այն ժամանակ
նա իր արած մեղքը խոստովանէ
և իր արած վնասը նորա գումա-
բովը հատուցանէ, և նորա վերայ
հինգերորդ մասը աւելացնէ, և
8 վնասը քաշողին վճարէ։ Եւ եթէ
այն մարդի մէկ ազգականը չ՚լի-
նի, որին այս վնասը հատուցան-
ուի, թող եղած վնասը Եհովա-
յին հատուցանուելով՝ քահանա-
յինը լինի բացի քաւութեան
խոյիցը, որով նորա համար քա-
ւութիւն պիտի լինի։
9 Եւ Իսրայէլի որդկանց բոլոր
սուրբ բաների ամեն նուէրը որ
բերում են քահանային, նորանը
10 լինի։ Եւ ամեն մէկի սուրբ բա-
ները նորանը լինի. ամեն մարդ
ինչ որ տայ քահանային՝ նորա-
նը լինի։
11 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
12 հետ ասելով. Խօսիր Իսրայէլի
որդկանց և ասիր նորանց. Եթէ
մի մարդի կինը խոտորելու լինի
և նորան անհաւատարմութիւն
13 անէ, Եւ մէկը նորա հետ պառ-
կելով զուգաւորէ և նորա մար-
դի աչքիցը այդ գաղտուկ մնայ,
և գաղտուկ եղած լինի որ նա
պղծուել է, և վկայ չէ եղել, և
14 կնիկը չ՚բռնուի, Եւ մարդի վերայ
նախանձաւորութեան ոգի գա-
լով՝ իր կնոջ պղծուելու համար
նախանձէ, կամ մարդի վերայ նա-
խանձաւորութեան ոգի գայ՝ և
նախանձէ, բայց կինը պղծուած
չէ. Այն ժամանակ այն մարդն 15
իր կնոջը քահանայի մօտ բերէ,
և նորա մասին բերէ իր պատա-
րագը գարիի ալիւրից արդուի
տասներորդ բաժինը, իւղ չ՚թա-
փէ նորա վերայ, ոչ էլ կնդրուկ
դնէ վերան, որովհետև նախան-
ձաւորութեան նուէր է այն՝ յի-
շատակի նուէր, որ մեղք է յի-
շատակում։ Եւ քահանան կինը 16
մօտեցնէ և Եհովայի առաջին
կանգնեցնէ։ Եւ քահանան հողի 17
ամանով սուրբ ջուր առնէ, և
քահանան խորանի յատակի հո-
ղիցն առնէ և ջրի մէջը դնէ։
Եւ քահանան Եհովայի առաջին 18
կանգնեցնէ կինը, և կնոջ գլու-
խը բանայ, և յիշատակի նուէրը՝
նախանձաւորութեան նուէրը նո-
րա ձեռքին դնէ և անէծքի լեղի
ջուրը քահանան իր ձեռքին ու-
նենայ, Եւ քահանան նորան եր- 19
դում տայ և ասէ կնոջը. Եթէ
մի մարդ քեզ հետ չ՚պառկեց,
և եթէ չ՚պղծուեցար քո մար-
դին անհաւատարմութիւն անե-
լով, անէծքի այս լեղի ջուրը
քեզ վնաս չ՚անէ. Բայց եթէ քո 20
մարդին անհաւատարմութիւն ա-
նելով պղծուեցար, և բացի քո
մարդիցը ուրիշ մարդ քեզ հետ
պառկեց, (Այն ժամանակ քա- 21
հանան այն կնոջը անէծքի եր-
դում տայ, ու քահանան կնոջն
ասէ,) Եհովան քեզ քո ժողովբր-
դի մէջ անէծքի ու երդումի ա-
ռարկայ դնէ, Եհովան քո զիստը
փտեցնելով և քո փորը ուռեցը-
նելով. Եւ այս անէծքի ջուրը 22
քո աղիքների մէջ գնայ, որ փո-
րըդ ուռեցնէ, և զիստդ փտեցնէ.
և կնիկն ասէ. Ամէն՝ ամէն։ Եւ 23
քահանան այս անէծքները մի
գրքի մէջ գրէ, և այն լեղի ջրո-
վը ջնջէ։ Եւ անէծքի լեղի ջուրն 24
այն կնկանը խմեցնէ. և անէծքի
ջուրը նորա մէջը գնայ լեղի լի-
նելու համար։ Եւ քահանան այն 25
կնոջ ձեռքիցը նախանձաւորու-
թեան նուէրն առնէ և Եհովայի
առաջին երերացնէ նուէրը և սե-
ղանին մօտեցնէ այն։ Եւ քահա- 26
նան նուէրիցն իր ձեռքը լցնէ

յիշատակի համար, և սեղանի
վերայ այրէ այն, և յետոյ այն
27 ջուրը այն կնոջ խմեցնէ։ Եւ ջու-
րը նորան խմեցնելուց յետոյ՝ ե-
թէ նա պղծուած է և իր մար-
դին անհաւատարմութիւն արած
է, այն անէծքի ջուրը լեղի լինե-
լով մտնէ նորա մէջը և նորա փո-
րը ուռենայ, և նորա զիստը փտի,
և կնիկը իր ժողովրդի մէջ անիծ-
28 եալ պիտի լինի։ Իսկ եթէ կնի-
կը պղծուած չէ և մաքուր է,
պատիժ չի կրիլ, և զաւակ կը
29 ծնէ։ Այս է նախանձաւորու-
թեան օրէնքը։ երբոր մի կնիկ իր
մարդին անհաւատարմութիւն ա-
30 նէ և պղծուի, կամ երբոր մի
մարդի վերայ նախանձաւորու-
թեան ոգի գայ՝ և իր կնոջ վերայ
նախանձէ և Եհովայի առաջին
կանգնեցնէ կինը. և քահանան
կատարէ այս բոլոր օրէնքը նորա
31 վերայ. Եւ այն մարդը ազատ լի-
նի յանցանքիցը և կինն իր յան-
ցանքը կրէ։

ԳԼ. Զ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
2 հետ ասելով. Խօսիր Իսրայէլի
որդկանց հետ և ասիր նորանց.
Եթէ մի մարդ կամ մի կին ուխ-
տաւորի ուխտ անէ իր անձը Ե-
3 հովային ուխտելու համար, Նա
գինուց և ցքուց պիտի զգուշա-
նայ. գինու քացախ չ՚խմէ, և բը-
նաւ խաղողի օշարակ չ՚խմէ, և
4 խաղող կամ չամիչ չ՚ուտէ։ Իր
ուխտի բոլոր օրերը որթից եղած
ոչ մի բան չ՚ուտէ, կուտերից
5 մինչև կեղևը։ Նորան ուխտի բո-
լոր օրերը՝ նորա գլխին ածելի չը
դպչէ. մինչև իր անձը Եհովայի
նուիրած օրերի վերջանալը սուրբ
լինի. իր գլխի մազերի վարսքը
6 թող տայ որ աճէ։ Իր անձը Ե-
հովային նուիրած բոլոր օրերը՝
7 մեռած մարմնի չ՚մօտենայ. Իր
հօր համար կամ մօր համար՝ իր
եղբօր կամ քրոջ համար իրան
պիտի չ՚պղծէ նորանք մեռած
ժամանակը, որովհետև իր Ա-
ստուծոյ ուխտը իր գլխի վերայ է։
Իր ուխտի բոլոր օրերը նա սուրբ 8
է Եհովային։ Եւ եթէ իր մօտ 9
յանկարծ մի մարդ մեռնէ, և իր
ուխտուած գլուխը պղծուի նա
իր մաքրուելու օրը գլուխն ածի-
լէ. եօթներորդ օրն ածիլէ այն.
Եւ ութերորդ օրը ժողովքի խո- 10
րանի դուռը երկու տատրակ
կամ աղաւնու երկու ձագ բերէ
քահանայի մօտ։ Եւ քահանան 11
մէկը մեղքի պատարագ՝ և միւսը
ողջակէզ մատուցանէ, և մեռելի
պատճառով եղած մեղքի մասին
քաւութիւն անէ նորա համար,
և նոյն օրը սրբէ նորա գլուխը։
Եւ իր ուխտի օրերը Եհովային 12
նուիրէ, և յանցանքի պատարա-
գի համար մէկ տարեկան գառ
բերէ. և առաջի օրերը պիտի
դուրս ձգուին, որովհետև նորա
ուխտը պղծուեցաւ։
Եւ այս է ուխտաւորի օրէնքը. 13
նորա ուխտի օրերը լրացած օրը՝
նորան բերեն ժողովքի խորանի
դուռը. Եւ նա մատուցանէ իր 14
զոհը Եհովային, մէկ տարեկան
անարատ արու գառ ողջակէզի
համար, և մէկ տարեկան անա-
րատ էգ գառ մեղքի պատարա-
գի համար, և մէկ անարատ խոյ
խաղաղութեան զոհի համար. Եւ 15
մի սակառ բարակ ալիւրից իւ-
ղով զանգուած անխմոր շօթեր
և իւղով օծուած անխմոր լա-
ւաշներ, և նորանց հացի նուէրը
և թափելու նուէրը։ Եւ քահա- 16
նան մօտեցնէ Եհովայի առաջին,
և կատարէ նորա մեղքի պատա-
րագը և նորա ողջակէզը։ Եւ խոյը 17
խաղաղութեան զոհ մատուցանէ
Եհովայի համար անխմոր հացի
սակառովը. և քահանան նորա
հացի նուէրը և թափելու նուէ-
րը մատուցանէ։ Եւ ուխտաւորն 18
իր ուխտած գլուխն ածիլէ ժո-
ղովքի խորանի դրանը և իր ուխ-
տած գլխի մազն առնէ և խա-
ղաղութեան զոհի տակին եղած
կրակի մէջը դնէ։ Եւ քահանան 19
առնէ խոյիցը եփած բազուկը,
և սակառիցը մէկ անխմոր շօթ
և մէկ անխմոր լաւաշ և դնէ
ուխտաւորի ձեռքերի վերայ՝ իր

ուխտի մազերն ածիլուելուց յե-
20 տոյ։ Եւ քահանան երերացնելու
ընծայ երերացնէ նորանց Եհովա-
յի առաջին. սորանք երերացնե-
լու երբուծով՝ ու բարձրացնելու
զիստով՝ քահանայի համար սուրբ
են. և նորանից յետոյ ուխտաւո-
21 րը գինի խմէ։ Այս է ուխտաւո-
րի օրէնքը որ իր նուէրը խոստա-
նում է Եհովային իր ուխտի հա-
մար բացի իր կարողութիւնը հա-
սածից նա իր արած խոստմուն-
քի համեմատ անէ իր ուխտի օ-
րէնքովը։
22 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
23 հետ ասելով. Խօսիր Ահարօնի և
նորա որդկանց հետ և ասիր.
Այսպէս օրհնեցէք Իսրայէլի որ-
24 դիներին՝ ասելով նորանց. Եհո-
վան օրհնէ քեզ, և պահէ քեզ.
25 Եհովան պայծառացնէ իր երե-
սը քեզ վերայ և ողորմէ քեզ.
26 Եհովան բարձրացնէ իր երեսը
քեզ վերայ, և խաղաղութիւն
27 տայ քեզ։ Եւ իմ անունը Իս-
րայէլի որդկանց վերայ պիտի դը-
նեն, և ես կ՚օրհնեմ նորանց։

ԳԼ. Է

1 Եւ եղաւ այն օրը որ Մովսէսը
վերջացրեց խորանը կանգնեցնելը,
և օծեց նորան և սրբեց նորան և
նորա բոլոր անօթները, և սեղա-
նը և նորա բոլոր գործիքներն օ-
2 ծեց և նորանց սրբեց, Այն ժա-
մանակ ընծաներ մատուցրին Իս-
րայէլի իշխաններն իրանց հայրե-
րի տանը գլուխները՝ այսինքն հա-
մարուողների վերայ վերակացու
3 եղող ցեղերի իշխանները։ Եւ
բերին իրանց ընծաները Եհովայի
առաջին՝ վեց ծածկուած սայլեր
և տասնևերկու եզներ. երկու
իշխանները մէկ սայլ, և ամեն
մէկը մէկ եզ. և մօտեցրին նո-
4 րանց խորանի առաջին։ Եւ Եհո-
վան խօսեց Մովսէսի հետ ասե-
5 լով. Առ դորանցից որ ժողովքի
խորանի պաշտօնին ծառայեն, և
տուր նորանց Ղևտացիներին ա-
մեն մէկին իր պաշտօնին համե-
6 մատ։ Եւ Մովսէսն առաւ սայ-
լերն ու եզները և տուաւ նորանց
Ղևտացիներին։ Երկու սայլը և 7
չորս եզը Գերսոնի որդկանցը
տուաւ՝ նորանց պաշտօնի համե-
մատ. Եւ չորս սայլը և ութը ե- 8
զը Մերարիի որդկանցը տուաւ
նորանց պաշտօնի համեմատ Ա-
հարօն քահանայի որդի Իթամա-
րի ձեռքովը։ Բայց Կահաթի որդ- 9
կանցը չ՚տուաւ. որովհետև սրբ-
բարանի պաշտօնը նորանց վերայ
է, ուսերով են վեր առնում։
Եւ իշխանները սեղանի նաւա- 10
կատիքի ընծաները մատուցրին
սեղանի օծուած օրը. և իշխան-
ներն իրանց ընծաները սեղանի
առաջին մատուցրին։ Եւ Եհո- 11
վան ասեց Մովսէսին. Սեղանի
նաւակատիքի համար՝ ամեն մէկ
իշխան մէկ օր իրանց ընծաները
մատուցանեն։
Եւ առաջին օրն իր ընծան մա- 12
տուցանողը՝ Ամինադաբի որդի՝
Նաասոնն էր Յուդայի ցեղից։ Եւ 13
այս էր նորա ընծան՝ մէկ արծա-
թի սկուտեղ հարիւր երեսուն
սիկղից, մէկ արծաթի կոնք եօ-
թանասուն սիկղից սրբարանի սիկ-
ղի համեմատ՝ երկուսն էլ լիքը
հացի ընծայի համար իւղով զան-
գուած բարակ ալիւրով։ Տասը 14
-ԻԷ ոսկուց մէկ տուփ խունկով
լիքը. Մէկ զուարակ, մէկ խոյ, 15
մէկ տարեկան գառ ողջակէզի
համար, Այծերից մէկ նոխազ 16
մեղքի պատարագի համար, Եւ 17
խաղաղութեան զոհի համար եր-
կու արջառ՝ հինգ խոյ, հինգ նո-
խազ, հինգ հատ մէկ տարեկան
գառներ։ Ամինադաբի որդի Նա-
ասոնի մատուցրած ընծան այս էր։
Երկրորդ օրը մատուցրեց Իսա- 18
քարի իշխան՝ Սովգարի որդի Նա-
թանայէլը. Նորա մատուցրած ընծան 19
այս էր, մէկ արծաթի ըս-
կուտեղ եօթանասուն սիկղից,
մէկ արծաթի կոնք հարիւր երե-
սուն սիկղից սրբարանի սիկղին
համեմատ, երկուսն էլ լիքը հա-
ցի ընծայի համար իւղով զան-
գուած բարակ ալիւրով, Տասը 20
-ԻԷ ոսկուց մէկ տուփ խունկով
լիքը. Մէկ զուարակ, մէկ խոյ, 21

մէկ տարեկան գառ ողջակէզի
22 համար, Այծերից մէկ նոխազ
23 մեղքի պատարագի համար, Եւ
խաղաղութեան զոհի համար եր-
կու արջառ, հինգ խոյ, հինգ նո-
խազ, հինգ հատ մէկ տարեկան
գառներ։ Սովգարի որդի Նաթա-
նայէլի մատուցրած ընծան այս էր։
24 Երրորդ օրը՝ Զաբուղոնի որդ-
կանց իշխան Քեղոնի որդի Եղի-
25 աբը մատուցրեց։ Նորա ընծան
այս էր. մէկ արծաթի սկուտեղ
հարիւր երեսուն սիկղից. մէկ
արծաթի կոնք եօթանասուն սիկ-
ղից սրբարանի սիկղի համեմատ,
երկուսն էլ լիքը հացի ընծայի
համար իւղով զանգուած բա-
26 րակ ալիւրով, Տասը -ԻԷ ոսկուց
27 մէկ տուփ խունկով լիքը. Մէկ
զուարակ, մէկ խոյ, մէկ տարե-
կան գառ ողջակէզի համար,
28 Այծերից մէկ նոխազ մեղքի պա-
29 տարագի համար, Եւ խաղաղու-
թեան զոհի համար երկու ար-
ջառ, հինգ խոյ, հինգ նոխազ,
հինգ հատ մէկ տարեկան գառ-
ներ։ Քեղոնի որդի Եղիաբի մա-
տուցրած ընծան այս էր։
30 Չորրորդ օրը՝ Ռուբենի որդ-
կանց իշխան Սեդիուրի որդի Ե-
31 ղիսուրը մատուցրեց։ Նորա ընծան
այս էր. մէկ արծաթի սկու-
տեղ հարիւր երեսուն սիկղից,
մէկ արծաթի կոնք եօթանասուն
սիկղից սրբարանի սիկղի համե-
մատ, երկուսն էլ լիքը հացի ընծայի
համար իւղով զանգուած
32 բարակ ալիւրով, Տասը -ԻԷ ոս-
կուց մէկ տուփ խունկով լիքը,
33 Մէկ զուարակ, մէկ խոյ, մէկ
տարեկան գառ ողջակէզի հա-
34 մար, Այծերից մէկ նոխազ մեղ-
35 քի պատարագի համար, Եւ խա-
ղաղութեան զոհի համար երկու
արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ,
հինգ հատ մէկ տարեկան գառ-
ներ։ Սեդիուրի որդի Եղիսուրի
մատուցրած ընծան այս էր։
36 Հինգերորդ օրը՝ Շմաւոնի որդ-
կանց իշխան Սուրիսադայի որդի
37 Սաղամիէլը մատուցրեց։ Նորա
ընծան այս էր՝ մէկ արծաթի ըս-
կուտեղ հարիւր երեսուն սիկ-
ղից, մէկ արծաթի կոնք եօթա-
նասուն սիկղից սրբարանի սիկղի
համեմատ՝ երկուսն էլ լիքը հա-
ցի ընծայի համար իւղով զան-
գուած բարակ ալիւրով, Տասը 38
-ԻԷ ոսկուց մէկ տուփ խունկով
լիքը. Մէկ զուարակ, մէկ խոյ, 39
մէկ տարեկան գառ ողջակէզի
համար, Այծերից մէկ նոխազ 40
մեղքի պատարագի համար, Եւ 41
խաղաղութեան զոհի համար եր-
կու արջառ, հինգ խոյ, հինգ նո-
խազ, հինգ հատ մէկ տարեկան
գառներ։ Սուրիսադայի որդի
Սաղամիէլի մատուցրած ընծան
այս էր։
Վեցերորդ օրը՝ Գադի որդ- 42
կանց իշխան Դագուէլի որդի Ե-
ղիսափը մատուցրեց։ Նորա ընծան 43
այս էր. մէկ արծաթի սկու-
տեղ հարիւր երեսուն սիկղից,
մէկ արծաթի կոնք եօթանասուն
սիկղից սրբարանի սիկղի համե-
մատ՝ երկուսն էլ լիքը հացի ընծայի
համար իւղով զանգուած
բարակ ալիւրով, Տասը -ԻԷ ոս- 44
կուց մէկ տուփ խունկով լիքը.
Մէկ զուարակ, մէկ խոյ, մէկ 45
տարեկան գառ ողջակէզի հա-
մար, Այծերից մէկ նոխազ մեղ- 46
քի պատարագի համար, Եւ խա- 47
ղաղութեան զոհի համար եր-
կու արջառ, հինգ խոյ, հինգ
նոխազ, հինգ հատ մէկ տարե-
կան գառներ։ Դագուէլի որդի
Եղիասափի մատուցրած ընծան
այս էր։
Եօթներորդ օրը՝ Եփրեմի որդ- 48
կանց իշխան Ամիուդի որդի Եղի-
սաման մատուցրեց։ Նորա ընծան 49
այս էր. մէկ արծաթի սկուտեղ
հարիւր երեսուն սիկղից, մէկ
արծաթի կոնք եօթանասուն սիկ-
ղից սրբարանի սիկղի համեմատ՝
երկուսն էլ լիքը հացի ընծայի
համար իւղով զանգուած բարակ
ալիւրով, Տասը -ԻԷ ոսկուց մէկ 50
տուփ խունկով լիքը, Մէկ զուա- 51
րակ, մէկ խոյ, մէկ տարեկան
գառ ողջակէզի համար, Այծե- 52
րից մէկ նոխազ մեղքի պատա-
րագի համար, Եւ խաղաղութեան 53
զոհի համար երկու արջառ, հինգ

խոյ, հինգ նոխազ, հինգ հատ
մէկ տարեկան գառներ։ Ամիու-
դի որդի Եղիսամայի մատուցրած
ընծան այս էր։
54 Ութերորդ օրը՝ Մանասէի որդ-
կանց իշխան՝ Փադասուրի որդի
55 Գամաղիէլը մատուցրեց։ Նորա
ընծան այս էր. մէկ արծաթի
սկուտեղ հարիւր երեսուն սիկ-
ղից, մէկ արծաթի կոնք եօթա-
նասուն սիկղից, սրբարանի սիկղի
համեմատ, երկուսն էլ լիքը հա-
ցի ընծայի համար իւղով զան-
56 գուած բարակ ալիւրով, Տասը
ոսկուց մէկ տուփ խունկով
57 լիքը, Մէկ զուարակ, մէկ խոյ,
մէկ տարեկան գառ ողջակէզի
58 համար, Այծերից մէկ նոխազ
59 մեղքի պատարագի համար, Եւ
խաղաղութեան զոհի համար եր-
կու արջառ, հինգ խոյ, հինգ նո-
խազ, հինգ հատ մէկ տարեկան
գառներ։ Փադասուրի որդի Գա-
մաղիէլի մատուցրած ընծան այս
էր։
60 Իններորդ օրը՝ Բենիամինի որդ-
կանց իշխան՝ Գեդէօնիի որդի Ա-
61 բիդանը մատուցրեց։ Նորա ընծան
այս էր. մէկ արծաթի ըս-
կուտեղ հարիւր երեսուն սիկ-
ղից, մէկ արծաթի կոնք եօթա-
նասուն սիկղից սրբարանի սիկղի
համեմատ, երկուսն էլ լիքը հա-
ցի ընծայի համար իւղով զան-
62 գուած բարակ ալիւրով, Տասը
ոսկուց մէկ տուփ խունկով
63 լիքը, Մէկ զուարակ, մէկ խոյ,
մէկ տարեկան գառ ողջակէզի
64 համար, Այծերից մէկ նոխազ
65 մեղքի պատարագի համար, Եւ
խաղաղութեան զոհի համար եր-
կու արջառ, հինգ խոյ, հինգ նո-
խազ, հինգ հատ մէկ տարեկան
գառներ։ Գեդէօնիի որդի Աբի-
դանի մատուցրած ընծան այս էր։
66 Տասներորդ օրը՝ Դանի որդ-
կանց իշխան՝ Ամիսադայի որդի
67 Աքիեզերը մատուցրեց։ Նորա
ընծան այս էր. մէկ արծաթի ըս-
կուտեղ հարիւր երեսուն սիկ-
ղից, մէկ արծաթի կոնք եօթա-
նասուն սիկղից սրբարանի սիկղի
համեմատ, երկուսն էլ լիքը հա-
ցի ընծայի համար իւղով զան-
գուած բարակ ալիւրով, Տասը 68
ոսկուց մէկ տուփ խունկով
լիքը, Մէկ զուարակ, մէկ խոյ, 69
մէկ տարեկան գառ ողջակէզի
համար, Այծերից մէկ նոխազ 70
մեղքի պատարագի համար, Եւ 71
խաղաղութեան զոհի համար եր-
կու արջառ, հինգ խոյ, հինգ նո-
խազ, հինգ հատ մէկ տարեկան
գառներ։ Ամիսադայի որդի Աքի-
եզերի մատուցրած ընծան այս էր։
Տասնեւմէկերորդ օրը՝ Ասերի 72
որդկանց իշխան՝ Եքրանի որդի
Փագիէլը մատուցրեց։ Նորա ընծան 73
այս էր, մէկ արծաթի սկու-
տեղ հարիւր երեսուն սիկղից,
մէկ արծաթի կոնք եօթանասուն
սիկղից սրբարանի սիկղի համե-
մատ՝ երկուսն էլ լիքը հացի ընծայի
համար իւղով զանգուած
բարակ ալիւրով, Տասը ոսկուց 74
մէկ տուփ խունկով լիքը,
Մէկ զուարակ, մէկ խոյ, մէկ 75
տարեկան գառ ողջակէզի հա-
մար, Այծերից մէկ նոխազ մեղ- 76
քի պատարագի համար. Եւ խա- 77
ղաղութեան զոհի համար երկու
արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ,
հինգ հատ մէկ տարեկան գառ-
ներ։ Եքրանի որդի Փագիէլի մա-
տուցրած ընծան այս էր։
Տասնեւերկուերորդ օրը Նեփ- 78
թաղիմի որդկանց իշխան՝ Ենանի
որդի Աքիրէն մատուցրեց։ Նորա 79
ընծան այս էր. մէկ արծաթի ըս-
կուտեղ հարիւր երեսուն սիկ-
ղից, մէկ արծաթի կոնք եօթա-
նասուն սիկղից սրբարանի սիկղի
համեմատ. երկուսն էլ լիքը հա-
ցի ընծայի համար իւղով զան-
գուած բարակ ալիւրով, Տասը 80
ոսկուց մէկ տուփ խունկով
լիքը, Մէկ զուարակ, մէկ խոյ, 81
մէկ տարեկան գառ ողջակէզի
համար, Այծերից մէկ նոխազ 82
մեղքի պատարագի համար, Եւ 83
խաղաղութեան զոհի համար եր-
կու արջառ, հինգ խոյ, հինգ նո-
խազ, հինգ հատ մէկ տարեկան
գառներ։ Ենանի որդի Աքիրէի
մատուցրած ընծան այս էր։
Սեղանի օծուած օրը՝ նորա նա- 84

ւակատիքի համար Իսրայէլի իշ-
խաններից նուիրուածը սորանք է-
ին. տասնեւերկու արծաթի սկու-
տեղ՝ տասնեւերկու արծաթի կոնք,
85 տասնեւերկու ոսկի տուփ, Ամեն
մէկ արծաթի սկուտեղը հարիւր
երեսուն սիկղից և ամեն մէկ կոն-
քը եօթանասուն սիկղից, աման-
ների բոլոր արծաթը երկու հա-
զար չորս հարիւր սիկղ սրբարանի
86 սիկղի համեմատ. Տասնեւերկու
ոսկի տուփը խունկով լիքը, ա-
մեն մէկ խնկամանը սրբարանի
սիկղի համեմատ՝ տասը սիկղ տու-
փերի բոլոր ոսկին հարիւր քսան
87 սիկղ։ Ողջակէզի համար բոլոր
արջառները տասնեւերկու զուա-
րակ, խոյերը տասնեւերկու, մէկ
տարեկան գառները տասնեւեր-
կու, իրանց հացի նուէրովը, և
մեղքի պատարագի համար այծե-
88 րից նոխազները տասնեւերկու, Եւ
խաղաղութեան զոհի համար բո-
լոր արջառները քսանեւչորս զուա-
րակ, խոյերը վաթսուն, նոխազ-
ները վաթսուն, մէկ տարեկան
գառները վաթսուն։ Այս էր սե-
ղանի նաւակատիքը նորա օծ-
ուելուց յետոյ։
89 Եւ երբոր Մովսէսը ժողովքի
խորանն էր մտնում, նորա հետ
խօսելու, այն ժամանակ նա լը-
սում էր իր հետ խօսողի ձայնը
վկայութեան տապանակի վերայ
եղած քաւութիւնի վերայից՝ եր-
կու քերովբէների մէջտեղից և
ինքը Նորա հետ խօսում էր։

ԳԼ. Ը

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
2 հետ ասելով. Խօսիր Ահարօնի
հետ և ասիր նորան. Երբոր ճը-
րագները վառես, եօթը ճրագ-
ները աշտանակի առաջի կողմիցը
3 լոյս տան։ Եւ Ահարօնն այնպէս
արաւ. նորա ճրագները աշտա-
նակի առաջի կողմին վառեց, ինչ-
պէս որ Եհովան Մովսէսին պատ-
4 ուիրել էր։ Եւ աշտանակի շին-
ուածքն այսպէս էր. ճախարակ-
եայ ոսկի էր. նորա բունիցը մին-
չև նորա ծաղիկները ճախարակ-
եայ էր այն գաղափարի պէս որ
Եհովան Մովսէսին ցոյց էր տուել,
այնպէս շինեց աշտանակը։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ 5
ասելով. Առ Իսրայէլի որդկանց 6
միջից Ղեւտացիներին և մաքրիր
նորանց։ Եւ նորանց մաքրելու 7
համար այսպէս անես նորանց.
մեղսաքաւիչ ջուր սրսկես նո-
րանց վերայ, և ածելիով ածիլես
նորանց բոլոր մարմինները, և նո-
րանք իրանց հանդերձները լուան
և մաքրուին։ Յետոյ մի զուարակ 8
առնեն և նորա հացի նուէրի
համար իւղով զանգուած բարակ
ալիւր. և մի զուարակ առնես
մեղքի պատարագի համար։ Եւ 9
Ղեւտացիներին ժողովքի խորանի
առաջին մօտեցնես, և Իսրայէլի
որդկանց բոլոր ժողովքը ժողո-
վես։ Եւ Ղեւտացիներին Եհովայի 10
առաջին մօտեցնես, և Իսրայէլի
որդիքն իրանց ձեռքերը Ղեւտա-
ցիների վերայ դնեն։ Եւ Ահարօ- 11
նը Ղեւտացիներին Եհովայի առա-
ջին երերացնելու պատարագ մա-
տուցանէ Իսրայէլի որդկանց կող-
միցը՝ և նորանք Եհովայի պաշ-
տօնը կատարելու համար լինեն։
Եւ Ղեւտացիներն իրանց ձեռքե- 12
րը այն զուարակների գլխին դը-
նեն. և մէկը մեղքի պատարագ
մատուցրու Եհովային՝ և միւսը
ողջակէզ՝ Ղեւտացիների համար
քաւութիւն անելու։ Եւ Ղեւ- 13
տացիներին կանգնեցնես Ահարօ-
նի և նորա որդկանց առաջին և
նորանց երերացնելու պատարագ
մատուցանես Եհովային։ Այսպէս 14
բաժանես Ղեւտացիներին Իսրա-
յէլի որդկանց միջիցը, և Ղեւտա-
ցիները իմը լինեն։ Եւ նորանից 15
յետոյ Ղեւտացիները մտնեն ժո-
ղովքի խորանի գործն անելու։
Նորանց մաքրես և նորանց իբրև
երերացնելու պատարագ մատու-
ցանես։ Որովհետև նորանք բոլո- 16
րովին ինձ են տրուած Իսրայէլի
որդկանց միջիցը. Իսրայէլի որդ-
կանց մէջ մօր արգանդ բացող
բոլոր անդրանիկների փոխարէն
ինձ համար վեր առայ նորանց։
Իսրայէլի որդկանց բոլոր անդրա- 17

նիկները՝ թէ մարդի և թէ ա-
նասունի լինի՝ իմն են. Եգիպտո-
սի երկրումը բոլոր անդրանիկնե-
րին զարկած օրիցս նորանց որբե-
18 ցի ինձ համար։ Եւ Իսրայէլի
որդկանց բոլոր անդրանիկների
փոխարէն Ղեւտացիներին վեր ա-
19 ռայ։ Եւ Ղեւտացիներին բոլորո-
վին Ահարօնին և նորա որդկանցը
տուի Իսրայէլի որդկանց միջից,
որ ժողովքի խորանի մէջ Իսրա-
յէլի որդկանց պաշտօնն անեն,
և Իսրայէլի որդկանց համար քա-
ւութիւն անեն, որ Իսրայէլի
որդկանց վերայ հարուած չ'դայ՝
Իսրայէլի որդիքը որբարանին մօ-
տենալիս։
20 Եւ Մովսէսն ու Ահարօնը և
Իսրայէլի որդկանց բոլոր ժողով-
քը Ղեւտացիներին արին ինչպէս
որ Եհովան Մովսէսին բոլորը պա-
տուիրել էր Ղեւտացիների մասին.
Իսրայէլի որդիքն այնպէս արին
21 նորանց։ Եւ Ղեւտացիները մաք-
րուեցան, և իրանց հանդերձները
լուացին. և Ահարօնը երերացնե-
լու պատարագ մատուցրեց նո-
րանց Եհովայի առաջին. և Ահա-
րօնը նորանց համար քաւութիւն
22 արաւ, որ նորանց մաքրէ։ Եւ
նորանից յետոյ Ղեւտացիները ժո-
ղովքի խորանը մտան՝ Ահարօնի
և նորա որդկանց առաջին իրանց
պաշտօնն անելու համար. ինչ-
պէս որ Եհովան Մովսէսին պատ-
ուիրել էր Ղեւտացիների մասին,
այնպէս արին նորանց։
23 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
24 հետ ասելով. Սա լինի Ղեւտա-
ցիների կանոնը քսանեւհինգ տա-
րեկանից և վեր եղողները ժո-
ղովքի խորանի պաշտօնը անելու
25 գունդի մէջ մտնեն. Եւ յիսուն
տարեկան լինելուց յետոյ պաշ-
տօնի գունդիցը ետ քաշուեն, և
26 այլ ևս չ'ծառայեն. Սակայն ժո-
ղովքի խորանի մէջ պահպանու-
թիւնը պահելու օգնեն իրանց
եղբայրներին, բայց ծառայու-
թիւն չ'անեն. այսպէս անես
Ղեւտացիներին՝ իրանց պաշտօն-
ների մասին։

ԳԼ. Թ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 1
հետ Սինա անապատումը նորանց
Եգիպտոսի երկրից դուրս գալու
երկրորդ տարուայ առաջին ամ-
սումն ասելով. Իսրայէլի որդիքը 2
զատիկն անեն իր որոշուած ժա-
մանակին։ Այս ամսի տասնեւչոր- 3
սերորդ օրը իրիկուայ դէմ անէք
այն իր որոշուած ժամանակին.
նորա բոլոր կանոնների և նորա
բոլոր կարգադրութիւնների հա-
մեմատ անէք այն։ Եւ Մովսէսը 4
խօսեց Իսրայէլի որդկանց հետ
որ զատիկն անեն։ Եւ զատիկն 5
արին առաջի ամսի տասնեւչորսե-
րորդ օրը իրիկուայ դէմ Սինա
անապատումը բոլորն այնպէս ինչ-
պէս որ Եհովան Մովսէսին պատ-
ուիրել էր, Իսրայէլի որդիքն
այնպէս արին։
Եւ կային ոմանք՝ որ մեռած 6
մարդից պղծուած էին, և չ'կա-
րողացան այն օրը զատիկն անել.
և նորանք այն օրը Մովսէսի և
Ահարօնի առաջը եկան. Եւ այն 7
մարդիկն ասեցին նորան. Մենք
մեռած մարդից պղծուած ենք,
ի՞նչու համար մենք պիտի ար-
գելուինք որ Եհովայի պատարա-
գը իր որոշուած ժամանակին չը
մատուցանենք Իսրայէլի որդկանց
մէջ։ Եւ Մովսէսն ասեց նորանց. 8
Կացէք, Բողէ լսեմ թէ Եհովան
ինչ կ'պատուիրէ ձեր մասին։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 9
հետ ասելով. Խօսիր Իսրայէլի 10
որդկանց հետ և ասիր. Եթէ ձե-
զանից կամ ձեր սերունդից մէ-
կը մեռած մարմնից պղծուի, կամ
հեռաւոր ճանապարհորդութեան
մէջ լինի, նա անէ զատիկը Եհո-
վայի համար. Երկրորդ ամսի 11
տասնեւչորսերորդ օրը իրիկուայ
դէմ անեն այն. բաղարջով և լե-
ղի խոտերով ուտեն այն. Նորա- 12
նից մինչև առաւօտ մի բան չը
թողեն, և նորա մի ոսկորը չ'կոտ-
րեն, և զատկի բոլոր կանոնների
համեմատ անեն այն։ Բայց եթէ 13
մաքուր եղող և ճանապարհոր-
դութեան մէջ չ'եղող մարդը զա-

տիկ անելը զանց անէ, այն անձն
իր ժողովրդի միջիցը պիտի կոր-
չի. որովհետև Եհովայի պատա-
րագն իր որոշուած ժամանակին
չ'մատուցրեց. այն մարդն իր մեղ-
14 քը կրէ։ Եւ եթէ մի օտարական
ձեր մէջը պանդխտանայ, և զա-
տիկն անելու լինի Եհովայի հա-
մար, զատկի կանոնի և նորա
կարգադրութեանը համեմատ ա-
նէ. թէ օտարականի և թէ երկ-
րի բնակի համար մէկ կանոն ու-
նենաք։
15 Եւ այն օրը՝ որ խորանը կանգ-
նուեցաւ, ամպը վկայութեան վը-
րանի վերայովը ծածկեց խորանը.
և իրիկուանից մինչև առաւօտ
մնում էր խորանի վերայ կրակի
16 երևոյթով։ Միշտ այսպէս էր.
ցերեկն ամպն էր ծածկում նո-
րան, և գիշերը՝ կրակի երևոյթը։
17 Եւ երբոր ամպը խորանից վերա-
նում էր, այնուհետև Իսրայէլի
որդիքը չուում էին. և ուր որ
ամպը կենում էր, այնտեղ Իս-
րայէլի որդիքը իջևան էին ա-
18 նում։ Եհովայի հրամանովն Իս-
րայէլի որդիքը չուում և Եհո-
վայի հրամանովն իջևան էին ա-
նում, ամպը խորանի վերայ որ-
չափ ժամանակ որ կենում էր, նո-
րանք մնում էին բանակ տուած։
19 Եւ երբոր ամպը մնում էր շատ
օրեր խորանի վերայ՝ Իսրայէլի
որդիքը Եհովայի պահպանութիւ-
նը պահում էին, ու չէին չուում։
20 Եւ լինում էր որ երբոր ամպը
խորանի վերայ քիչ օր էր մնում,
Եհովայի հրամանի համեմատ չը-
21 ուում էին։ Նոյնպէս էլ լինում
էր, երբոր ամպը իրիկուանից մին-
չև առաւօտ էր մնում. առաւօ-
տանց ամպի վերանալիս չուում
էին. թէ ցերեկ լինէր և թէ գի-
շեր՝ ամպը վերանալիս չուում
22 էին։ Կամ երկու օր՝ կամ մէկ
ամիս՝ և կամ մէկ տարի, որ ամ-
պը խորանի վերայ կենալով մը-
նում էր, Իսրայէլի որդիքը իջև-
ան էին անում, և չէին չուում.
բայց նա վերանալիս չուում էին։
23 Եհովայի հրամանին համեմատ ի-
ջևան էին անում, և Եհովայի
հրամանին համեմատ չուում է-
ին, Եհովայի պահպանութիւնը
պահում էին՝ Եհովայի Մովսէսի
ձեռքով տրուած հրամանին հա-
մեմատ։

ԳԼ. Ժ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 1
հետ ասելով. Քեզ համար եր- 2
կու հատ արծաթի փող շինէ.
ճախարակեայ շինես նորանց, որ
ժողովքը կանչելու համար և բա-
նակների չուելու համար լինեն
քեզ համար։ Եւ երբոր նորանց 3
երկուսը հնչեցնեն, բոլոր ժողով-
քը քեզ մօտ ժողովուին ժողով-
քի խորանի դուռը։ Եւ եթէ մէ- 4
կը հնչեցնեն, իշխանները՝ Իսրա-
յէլի հազարապետները քեզ մօտ
պիտի ժողովուին։ Եւ երբոր ազ- 5
դարարութեան համար հնչեցը-
նէք, արևելքումն իջևան անող
բանակները չուեն։ Եւ երբոր 6
երկրորդ անգամ ազդարարու-
թիւն հնչեցնէք, հարաւային կող-
մումն իջևան անող բանակները
չուեն. նորանց չուելու համար
ազդարարութիւն հնչեցնեն։ Եւ 7
ժողովուրդը ժողովելիս պիտի հն-
չեցնէք, բայց ազդարարութիւն
չ'անէք։ Ահարօնի որդիքը՝ քա- 8
հանաները հնչեցնեն փողերը, և
սա ձեր ազգերի մէջ յաւիտե-
նական կանոն լինի ձեզ համար։
Եւ եթէ պատերազմի գնաք ձեր 9
երկրի մէջ ձեզ նեղութիւն տը-
ուող թշնամու դէմ, փողերով
ազդարարութիւն անէք, և դուք
կ'յիշուիք ձեր Եհովայ Աստուծոյ
առաջին, և ձեր թշնամիներիցը
կ'ազատուիք։ Եւ ձեր ուրախու- 10
թեան օրը՝ և ձեր տօների և ձեր
ամսագլուխների փողերը հնչեցը-
նէք ձեր ողջակէզների վերայ և
ձեր խաղաղութեան զոհերի վե-
րայ, որ ձեզ համար յիշատակ
լինեն ձեր Աստուծոյ առաջին.
ես եմ Եհովան ձեր Աստուածը։
Եւ եղաւ երկրորդ տարին երկ- 11
րորդ ամսի քսանին, որ վկայու-
թեան խորանի վերայից ամպը վե-
րացաւ։ Եւ Իսրայէլի որդիքն ի- 12

բանց գնացքի համեմատ չուե-
ցին Սինա անապատից. և ամպը
կանգնեց Փառանի անապատու-
13 մը։ Եւ առաջի անգամը չուեցին
Եհովայի հրամանին համեմատ որ
14 Մովսէսի ձեռքով տրուած էր։ Եւ
առաջ չուեց Յուդայի որդկանց
բանակի դրօշակն իրանց գուն-
դերովը և նորա գունդի վերայ
Ամինադաբի որդի Նաասոնն էր։
15 Եւ Իսաքարի որդկանց ցեղի
գունդի վերայ Սովգարի որդի
16 Նաթանայէլն էր։ Եւ Զաբուղո-
նի որդկանց ցեղի գունդի վերայ
17 Քեղոնի որդի Եղիաբն էր։ Եւ
խորանն իջեցրին, և չուեցին խո-
րանը վեր առնող Գերսոնի որ-
18 դիքը և Մերարիի որդիքը։ Եւ
չուեց Ռուբենի բանակի դրօշա-
կն իրանց գունդերովը, և նորա
գունդի վերայ Սեդիուրի որդի
19 Եղիսուրն էր։ Եւ Շմաւոնի որդ-
կանց ցեղի գունդի վերայ Սու-
րիսադայի որդի Սաղամիէլն էր։
20 Եւ Գադի որդկանց ցեղի գուն-
դի վերայ Դագուէլի որդի Եղի-
21 ասափն էր։ Եւ չուեցին սրբա-
րանը վեր առնող Կահաթեան-
ները և խորանը կանգնեցնում
22 էին մինչև նորանց գալը։ Եւ
չուեց Եփրեմի որդկանց բանակի
դրօշակն իրանց գունդերովը և
նորա գունդի վերայ Ամիուդի
23 որդի Եղիսաման էր։ Եւ Մանա-
սէի որդկանց ցեղի գունդի վե-
րայ Փադասուրի որդի Գամաղի-
24 էլն էր։ Եւ Բենիամինի որդկանց
ցեղի գունդի վերայ Գեդէօնիի
25 որդի Աբիդանն էր։ Եւ չուեց
Դանի որդկանց բանակի դրօշակն
իրանց գունդերովը բոլոր բանակ-
ների ետևից և նորա գունդի վե-
րայ Ամիսադայի որդի Աքիեզերն
26 էր։ Եւ Ասերի որդկանց ցեղի
գունդի վերայ Եքրանի որդի Փա-
27 գիէլն էր։ Եւ Նեփթաղիմի որդ-
կանց ցեղի գունդի վերայ Ենանի
28 որդի Աքիրէն էր։ Այս էր Իս-
րայէլի որդկանց չուելն իրանց
գունդերովը, և չուեցին։
29 Եւ Մովսէսն ասեց Յոբաբին
այսինքն Մադիանացի Ռագուէլի
որդուն, որ Մովսէսի աներն էր.
Մենք չուում ենք այն տեղ՝ որի
համար Եհովան ասեց թէ Ձեզ
եմ տալու այն. մեզ հետ եկ և
բարիք կ'անենք քեզ. որովհետև
Եհովան Իսրայէլի հետ բարիք
խօսեց։ Եւ նա ասեց նորան. Ձեմ 30
գալ, այլ կ'գնամ իմ երկիրը և
իմ ազգականների մօտ։ Եւ նա 31
ասեց. Խնդրեմ մեզ մի թողիր.
որովհետև անապատի մէջ մեր ի-
ջևան անելու տեղերը գիտես, և
մեզ համար աչք եղիր։ Եւ եթէ 32
մեզ հետ գնալու լինես, ինչ
բարութիւն որ Եհովան մեզ բա-
րիք անէ, մենք էլ քեզ նոյն
բարութիւնը կ'անենք։
Եւ նորանք Եհովայի սարիցը 33
երեք օրուայ ճանապարհ չուեցին.
և Եհովայի ուխտի տապանակն
երեք օրուայ ճանապարհ չուեց
նորանց առաջին նորանց համար
հանգստութեան տեղ գտնելու։
Եւ Եհովայի ամպը նորանց վե- 34
րայ էր ցերեկները՝ երբ բանակից
չուում էին։
Եւ տապանակը չուելիս Մով- 35
սէսն ասում էր. Վեր կաց, Ե-
հովայ, և ցրուեն քո թշնամի-
ները և փախչեն քեզ ատողները
քո առաջից։ Իսկ նա մնալիս՝ ա- 36
սում էր. Դարձիր, Եհովայ,
դէպի Իսրայէլի հազարների բիւ-
րաւորները։

ԳԼ. ԺԱ

Եւ ժողովուրդը չարաչար տըր- 1
տունջ էր անում Եհովայի ա-
կանջների առաջին, և Եհովան
լսեց, և բարկութիւնը բորբոք-
ուեց, և նորանց մէջ Եհովայի
կրակը վառուեցաւ, և բանակի
ծայրը փչացրեց։ Եւ ժողովուրդը 2
աղաղակեց դէպի Մովսէսը. և
Մովսէսն աղօթեց Եհովային, և
կրակը դադարեց։ Եւ այն տեղի 3
անունը *Տաբերա դրաւ, ըստ ո-
րում Եհովայի կրակն այրեց նո-
րանց մէջ։ Եւ նորանց միջի 4
խառնիճաղանճ բազմութիւնը
շատ ցանկացան. և Իսրայէլի որ-

*Այսինքն՝ հրկիզութիւն։

դիքն էլ դարձեալ լաց եղան, և
ասեցին. Ո՞վ միս կ'տայ մեզ ու-
5 տելու։ Մենք յիշում ենք Ե-
գիպտոսի մէջ մեր ձրի կերած
ձկները, վարունգները և սեխերը
և պրասները և սոխերը և սրխ-
6 տորները. Եւ հիմա մեր անձը
չորացել է. ամենևին մի բան չը
կայ. միայն այդ մանանայի վե-
7 րայ են մեր աչքերը։ Եւ մանա-
նան գինձի սերմի պէս՝ և նորա
գոյնը սուտակի գոյնի պէս էր։
8 Ժողովուրդը ման էր գալիս և
ժողովում էր, և աղում էին եր-
կանքով, կամ անգանի մէջ ծե-
ծում էին. և պտուկներում ե-
փում էին, և նորանից շօթեր
էին շինում. և նորա համը իւ-
ղոտ գաթաների համի պէս էր։
9 Եւ գիշերը բանակի վերայ ցօղ
իջնելիս, մանանան իջնում էր
նորա վերայ։
10 Եւ Մովսէսը լսեց որ ժողո-
վուրդը իրանց տոհմերովն ամեն
մէկն իր վրանի դրանը լաց էին
լինում, և Եհովայի բարկութիւ-
նը խիստ բորբոքուեց, և սա Մով-
11 սէսի աչքին վատ երևեցաւ։ Եւ
Մովսէսն ասեց Եհովային. Ի՞նչու
քո ծառային չարչարեցիր, և ի՞ն-
չու քո առաջին շնորհք չ'գտայ,
որ այս բոլոր ժողովրդի բեռն իմ
12 վերայ դրիր։ Մի՞թէ ես եմ յը-
ղացել այս բոլորը, կամ ե՞ս եմ
ծնել սորանց որ ինձ ասում ես.
Գիրկդ առ նորանց, ինչպէս որ
դայեակն է առնում կաթնակեր
տղային, մինչև այն երկիրը որ
նորանց հայրերին երդում արիր։
13 Ինձ ո՞ր տեղից է միսը, որ այս
բոլոր ժողովրդին տամ, որովհե-
տև ինձ դէմ լաց են լինում և
ասում. Միս տուր մեզ ուտենք։
14 Ես մենակ չեմ կարող կրել այս
բոլոր ժողովուրդը, սա ինձ հա-
15 մար շատ ծանր է։ Եւ եթէ ինձ
այսպէս պիտի անես, խնդրեմ
սպանիր մեռցրու ինձ, եթէ շը-
նորհք գտայ քո առաջին, որ իմ
16 չարիքը չ'տեսնեմ։ Եւ Եհովան
ասեց Մովսէսին. Ինձ համար Իս-
րայէլի ծերերից եօթանասուն հո-
գի ժողովիր, որոնք որ դու գի-
տես թէ ժողովրդի ծերերն ու
գլխաւորներն են, և նորանց վեր
առ ժողովքի խորանը բէր, և այն-
տեղ քեզ հետ կանգնեն։ Եւ ես 17
այնտեղ կ'իջնեմ և կ'խօսեմ քեզ
հետ. և քեզ վերայ եղած հո-
գուցը կ'առնեմ, և նորանց վե-
րայ կ'դնեմ և ժողովրդի բեռը
վեր կ'առնեն քեզ հետ, և դու
մենակ չես վեր առնիլ։ Եւ ասիր 18
ժողովրդին, էգուցուայ համար
սրբուեցէք որ միս էք ուտելու,
որովհետև Եհովայի ականջներին
լացիք՝ ասելով. Ո՞վ մեզ միս
կ'տայ ուտելու. որովհետև Ե-
գիպտոսում լաւ էր մեզ համար.
և Եհովան ձեզ միս կ'տայ, և
դուք կ'ուտէք։ Ոչ թէ մենակ 19
մէկ օր պիտի ուտէք, և ոչ եր-
կու օր՝ ոչ հինգ օր՝ ոչ տասը
օր՝ ոչ էլ քսան օր, Այլ մինչև 20
մէկ ամիս ժամանակ, մինչև որ
ձեր քթերից դուրս գայ և ձեզ
համար զզուանք լինի. որովհետև
ձեր մէջտեղը եղող Եհովային
արհամարհեցիք, և նորա առա-
ջին լացիք՝ ասելով. Ի՞նչու մենք
Եգիպտոսիցը դուրս եկանք։
Եւ Մովսէսն ասեց. Այս ժո- 21
ղովուրդը, որոնց մէջ ես կամ,
վեց հարիւր հազար հետևակ հո-
գի են, և դու ասեցիր. Ես նո-
րանց միս կ'տամ՝ որ մէկ ամիս
ժամանակ ուտեն. Միթէ նորանց 22
համար ոչխարներն ու արջառնե-
րը մորթուի՞ն որ բաւական լինեն
նորանց համար, կամ նորանց բա-
ւական լինելու համար ծովի բո-
լոր ձկները մէկտեղ հաւաքուի՞ն։
Եւ Եհովան ասեց Մովսէսին. Մի՞- 23
թէ կարճ է Եհովայի ձեռքը.
հիմա կ'տեսնես թէ քեզ ասա-
ծիս պէս կ'լինի՞, թէ ոչ։ Եւ 24
Մովսէսը վեր կացաւ և Եհովայի
խօսքերը խօսեց ժողովրդին. և
ժողովրդի ծերերից եօթանասուն
հոգի ժողովեց, և կանգնեցրեց
նորանց խորանի շուրջը։ Եւ Եհո- 25
վան իջաւ մի ամպով, և նորա
հետ խօսեց, և նորա վերայ ե-
ղած հոգուցն առաւ, և այն եօ-
թանասուն ծերերի վերայ դրաւ.
և եղաւ՝ հէնց որ Հոգին նորանց

վերայ հանգչեց՝ մարգարէութիւն
26 արին և չ՚դադարեցին։ Եւ երկու
հոգի մնացել էին բանակի մէջ՝
մէկի անունը Ելդադ և միւսի
անունը Մովդադ, և Հոգին հանգ-
չեց նորանց վերայ, և նորանք այն
գրուողներիցն էին, բայց խորանը
չէին եկել. և բանակումը մար-
27 գարէութիւն էին անում։ Եւ մի
պատանի վազեց և պատմեց Մով-
սէսին և ասեց. Ելդադը և Մով-
դադը մարգարէութիւն են ա-
28 նում բանակումը։ Եւ Նաւէի
որդի Յեսուն՝ Մովսէսի ընտրեալ
ծառան պատասխանեց և ասեց.
Տէր իմ Մովսէս, արգելիր նո-
29 րանց։ Եւ Մովսէսն ասեց նորան.
Ի՞նձ համար ես նախանձում. ե-
րանի՞ թէ Եհովայի բոլոր ժողո-
վուրդը մարգարէներ լինէին, և
Եհովան իր Հոգին նորանց վերայ
30 դնէր։ Եւ Մովսէսը բանակը քաշ-
ուեցաւ ինքը և Իսրայէլի ծե-
րերը։
31 Եւ Եհովայի կողմանէ մի հողմ
վեր կացաւ և ծովի կողմից լո-
րամարգիներ բերաւ և բանակի
վերայ մէկ օրուայ ճանապարհ
մէկ կողմից՝ և մէկ օրուայ ճա-
նապարհ միւս կողմից բանակի
շուրջը տարածեց, երկրի երեսի
վերայից երկու կանգունի չափ
32 բարձր։ Եւ ժողովուրդն այն բոլոր
օրը և բոլոր գիշերը և հետևեալ
բոլոր օրը վերկացաւ լորամար-
գիներ ժողովեցին. քիչ ժողովո-
ղը տասը քոռ ժողովեց. և իրանց
համար բանակի շուրջը փռեցին,
33 որ չորանայ։ Դեռ միսն իրանց
ատամների վերայ էր՝ տակաւին
չ՚ծամուած, որ Եհովայի բարկու-
թիւնը ժողովրդի վերայ բորբոք-
ուեց և Եհովան խիստ մեծ հար-
34 ուածով զարկեց ժողովրդին։ Եւ
այն տեղի անունը *Կիբրօթ-հաթ-
թաւայ դրուեցաւ, որովհետև
այնտեղ թաղեցին ցանկացող ժո-
35 ղովրդին։ Կիբրօթ-հաթթաւայից
Ասերովթ չուեց ժողովուրդը, և
Ասերովթի մէջ էին։

*ցանկութեան դերեզմաններ։

ԳԼ. ԺԲ

Եւ Մարիամն ու Ահարօնը Մով- 1
սէսի դէմ խօսեցին՝ նորա առած
Եթէոպացի կնոջ պատճառով,
ըստ որում Եթէոպացի կին էր
առել. Եւ ասեցին. Մի՞թէ Եհո- 2
վան միայն Մովսէսի ձեռքովը
խօսեց. չէ՞ որ մեր ձեռքովն էլ
խօսեց. և Եհովան լսեց։ Եւ Մով- 3
սէս մարդը շատ հեզ էր երկրի
վերայ եղած բոլոր մանդկանցից
աւելի։ Եւ իսկոյն Եհովան ասեց 4
Մովսէսին և Ահարօնին և Մա-
րիամին. Դուք երեքդ էլ դուրս
ելէք եկէք ժողովքի խորանը. և
երեքն էլ դուրս եկան։ Եւ Եհո- 5
վան իջաւ ամպի սիւնովն և խո-
րանի դրանը կանգնեց. և Ահա-
րօնին և Մարիամին կանչեց. և
երկուսն էլ դուրս եկան։ Եւ ա- 6
սեց. Հիմա իմ խօսքը լսեցէք, ե-
թէ ձեզանից մէկը մարգարէ լի-
նի, ես Եհովաս ինձ տեսիլքի մէջ
կ՚ճանաչացնեմ նորան, կամ երա-
զով կ՚խօսեմ նորա հետ։ Բայց 7
այնպէս չէ իմ ծառան Մովսէսը,
որ իմ բոլոր տան մէջ հաւա-
տարիմ է. Նորա հետ բերանէ 8
բերան եմ խօսում և յայտնա-
պէս, և ոչ թէ առակով, և նա
Եհովայի կերպարանքը տեսնում
է, ի՞նչու չ՚վախեցիք իմ ծառայ
Մովսէսի դէմ խօսելու։ Եւ Ե- 9
հովայի բարկութիւնը նորանց վե-
րայ բորբոքուեց և գնաց։ Եւ ամ- 10
պը վերացաւ խորանի վերայից, և
ահա Մարիամը ձիւնի պէս բո-
րոտ եղաւ. և Ահարօնը Մարիա-
մին նայեց, և ահա բորոտ էր։
Եւ Ահարօնն ասեց Մովսէսին. 11
Ոհ, տէր իմ, աղաչեմ մեր վե-
րայ մեղք մի դնիր. որովհետև
յիմարութիւն արինք, և մեղք
գործեցինք. Թող նա չ՚նմանուի 12
այն մեռածին, որ իր մօր ար-
գանդիցը դուրս գալիս՝ մարմնի
կէսը սպառուած է։ Եւ Մովսէսն 13
աղաղակեց Եհովային ասելով.
Խնդրեմ, ով Աստուած, խնդ-
րեմ՝ բժշկիր նորան։ Եւ Եհովան 14
ասեց Մովսէսին. Եթէ նորա հայ-
րը միայն նորա երեսին թքնելու

լինէր, մի՞թէ եօթն օր չէր ա-
մաչիլ. Թող եօթն օր բանակիցը
դուրս արգիլուած պահուի և
15 յետոյ ընդունուի։ Եւ Մարիամը
բանակից դուրս եօթն օր ար-
գիլուած մնաց. և ժողովուրդը
չ՚չուեց մինչև Մարիամի ընդ-
ունուիլը։

ԳԼ. ԺԳ

1 Եւ յետոյ ժողովուրդը Ասերով-
2 թից չուեցին, Եւ Փառանի ա-
3 անապատումը իջևան արին։ Եւ
Եհովան խօսեց Մովսէսի հետ ա-
սելով. Մարդիկ ուղարկիր որ
լրտեսեն Քանանի երկիրը, որ ես
Իսրայէլի որդկանցը պիտի տամ.
իրանց հայրերի ցեղի ամեն մէկի
համար մէկ մարդ ուղարկէք՝ ա-
մենն էլ իշխան լինեն նորանց մէջ։
4 Եւ Մովսէսը Եհովայի հրամանին
համեմատ նորանց ուղարկեց Փա-
ռանի անապատիցը. բոլոր այն
մարդիկը Իսրայէլի որդկանց գլ-
5 խաւորներն էին. Եւ այս է նո-
6 րանց անունները. Ռուբենի ցե-
ղից՝ Զաքուրի որդի Սամուան,
Շմաւոնի ցեղից՝ Քոռիի որդի Սա-
7 փատը, Յուդայի ցեղից՝ Յեփոնի
8 որդի Քաղէբը, Իսաքարի ցեղից՝
9 Յովսէփի որդի Իգազը, Եփրեմի
10 ցեղից՝ Նաւէի որդի Օսէսը, Բե-
նիամինի ցեղից՝ Ռափուի որդի
11 Փաղտին, Զաբուղոնի ցեղից՝ Սու-
12 դիի որդի Գեդդիէլը, Յովսէփի
ցեղից՝ այսինքն Մանասէի ցեղից՝
13 Սուսիի որդի Գադդին, Դանի
ցեղից՝ Գամաղիի որդի Ամիէլը,
14 Ասերի ցեղից՝ Միքայէլի որդի
15 Սաթուրը, Նեփթաղիմի ցեղից՝
16 Վափսիի որդի Նաբին, Գադի
ցեղից՝ Մաքքիի որդի Գուէլը։
17 Սորանք են այն մարդկանց ա-
նունները, որոնց Մովսէսն ուղար-
կեց այն երկիրը լրտեսելու. և
Մովսէսը Նաւէի որդի Օսէսի ա-
18 նունը Յեսու դրաւ։ Եւ Մովսէ-
սն ուղարկեց նորանց Քանանի
երկիրը լրտեսելու, և ասեց նո-
րանց. Այս հարաւային կողմից
դէպի վեր գնալով վեր գնացէք
19 սարը. Եւ տեսէք այն երկիրը թէ
ինչպէս է, և այնտեղ բնակուող
ժողովուրդը զօրաւո՞ր են թէ տը-
կար. քի՞չ են թէ շատ։ Եւ 20
ի՞նչպէս է այն երկիրը ուր որ նո-
րանք բնակվում են՝ լա՞ւ է թէ
վատ, և ի՞նչպէս են այն քաղաք-
ները ուր որ նորանք բնակվում
են, վրաններո՞ւմ են թէ բերդե-
րում են. Եւ թէ երկիրը ի՞նչ- 21
պէս է, պարա՞րտ է թէ տկար,
մէջը ծառեր կա՞ն թէ ոչ։ Եւ
ժիր եղէք, և այն երկրի պտու-
ղիցն առէք։ Եւ այն օրերը խա-
ղողի նոր դուրս եկած օրերն էին։
Եւ նորանք վեր գնացին և լրտե- 22
սեցին այն երկիրը Սին անապա-
տից դէպի Եմաթ մինչև Բոռբ։
Եւ հարաւային կողմից գնացին, 23
և եկան Քեբրոն և այնտեղ էին
Ենակի որդիքը՝ Աքիմանը, Սէսին
և Թոլմին, և Քեբրոնը Եգիպտո-
սի Տայանիս քաղաքից եօթը տա-
րի առաջ էր շինուել։ Եւ եկան 24
մինչև Եսքողի ձորը և այնտեղից
խաղողի մի ողկոյզ կտրեցին ու-
ռովը մէկտեղ և երկու հոգի լը-
ծակով վեր առան նորան, և
նռներից և թուզերից էլ։ Այն 25
ողկոյզի համար, որ Իսրայէլի որ-
դիքն այնտեղից կտրել էին, այն-
տեղի անունը Եսքողի ձոր դըր-
ուեցաւ։ Եւ այն երկիրը լրտեսե- 26
լուց ետ դարձան քառասուն օ-
րից յետոյ. Եւ եկան հասան 27
Մովսէսին և Ահարօնին և Իսրա-
յէլի որդկանց բոլոր ժողովքին՝
Փառանի անապատի մէջ Կադէ-
սում. և նորանց համար և բոլոր
ժողովքի համար լուր բերին. և
երկրի պտուղը ցոյց տուին նո-
րանց։ Եւ պատմեցին նորան և 28
ասեցին. Մեզ ուղարկած երկի-
րըդ գնացինք. և իրաւ որ կաթ
ու մեղր է բղխում նա, և նորա
պտուղը սա է։ Միայն թէ այն 29
երկրի մէջ բնակուող ժողովուր-
դը զօրաւոր է, և քաղաքները
պարսպաւոր և խիստ մեծ են.
նաև այնտեղ Ենակի որդկանցը
տեսանք։ Ամաղեկացիները բնակ- 30
վում են այն երկրի հարաւային
կողմումը, և Քետացիները և Յե-
բուսացիները և Ամօրհացիները

բնակվում են սարերումը, և Քա-
նանացիները բնակվում են ծովի
մոտ և Յորդանանի եզերքումը։
31 Եւ Քաղէբը լռեցրեց ժողովրդին
Մովսէսի առաջին, և ասեց. Ա-
ղէ՝ ելնենք, և ժառանգենք այն,
որովհետև մենք անպատճառ կա-
32 րող ենք նորան տիրել։ Բայց նո-
րա հետ ելնող մարդիկն ասեցին.
Մենք չենք կարող այն ժողովրդ-
ի վերայ ելնել, որովհետև նո-
33 րանք մեզանից զօրաւոր են։ Եւ
իրանց լրտեսած երկրի վատ լու-
րը բերին Իսրայէլի որդկանց հա-
մար ասելով. Այն երկիրը որի
միջովն անցանք՝ նորան լրտեսելու
համար, իր բնակիչներին ուտող
երկիր է. և նորա միջի բոլոր ժո-
ղովուրդը, որ մենք տեսանք, եր-
34 կայնահասակ մարդիկ են, Եւ
այնտեղ տեսանք հսկաներին՝ Ե-
նակի որդկանցը որ հսկաներիցն
են. այնպէս որ մենք մեր աչքին
մարախի պէս էինք, և այնպէս էլ
էինք նորանց աչքին։

ԳԼ. ԺԴ

1 Եւ բոլոր ժողովքը ձայնը բարձ-
բացրեց և աղաղակեց. և ժողո-
վուրդը լաց եղաւ այն գիշերը։
2 Եւ տրտնջացին Իսրայէլի բոլոր
որդիքը Մովսէսի և Ահարօնի
դէմ. և բոլոր ժողովքն ասեց նո-
րանց. Երանի՞ թէ Եգիպտոսի
երկրումը մեռած լինէինք. կամ
երանի թէ այս անապատի մէջ
3 մեռած լինէինք։ Եւ ի՞նչու հա-
մար Եհովան մեզ այս երկիրը
բերաւ, որ սրով ընկնենք, և մեր
կանայքն ու մեր որդիքը յափշ-
տակուին. լաւ չէ՞ մեզ համար
4 որ Եգիպտոս դառնանք։ Եւ ի-
րար ասեցին, Եկէք մէկ զօրա-
գլուխ ընտրենք և Եգիպտոս
5 դառնանք։ Եւ Մովսէսն ու Ա-
հարօնն իրանց երեսի վերայ ընկ-
ան Իսրայէլի որդկանց բոլոր
ժողովուած ժողովքի առաջը։
6 Եւ երկիրը լրտեսողներից Նաւէի
որդի Յեսուն և Յեփոնէի որդի
Քաղէբն իրանց հանդերձները պա-
7 տառեցին. Եւ Իսրայէլի որդկանց
բոլոր ժողովքի հետ խօսեցին ա-
սելով. Այն երկիրը, որի միջովը
անցանք նորան լրտեսելու հա-
մար, շատ շատ բարի երկիր է։
Եթէ Եհովան մեզ վերայ հաճէ, 8
նա մեզ այն երկիրը կ'տանէ և
այն մեզ կ'տայ, որ կաթ ու մեղր
բղխող երկիր է։ Միայն թէ Ե- 9
հովայի դէմ մի ապստամբիք, և
այն երկրի ժողովրդիցը մի վա-
խենաք, որովհետև նորանք մեր
կերակուրն են, նորանց պաշտպա-
նութիւնը գնացել է իրանց վե-
րայից, ու Եհովան մեզ հետ է.
նորանցից մի վախենաք։ Եւ բո- 10
լոր ժողովքը ասեցին թէ՝ Քարե-
րով քարկոծեն նորանց. բայց Ե-
հովայի փառքը ժողովքի խորա-
նումը բոլոր Իսրայէլի որդկանցը
երևեցաւ։ Եւ Եհովան ասեց 11
Մովսէսին. Այս ժողովուրդը մին-
չև ե՞րբ պիտի ինձ արհամարհէ,
ու մինչև ե՞րբ պիտի չ'հաւատան
ինձ՝ իրանց մէջ արած բոլոր հր-
բաշքներովս էլ։ Եւ թող զար- 12
կեմ նորանց ժանտախտով և կոր-
ցընեմ նորանց. և քեզ նորանցից
մեծ և զօրաւոր ազգ շինեմ։ Եւ 13
Մովսէսն ասեց Եհովային. Այն
ժամանակ Եգիպտացիները կ'լսեն.
(որովհետև դու քո կարողու-
թեամբն այս ժողովրդին հանե-
ցիր նորանց միջիցը.) Եւ կ'ասեն 14
այս երկրի բնակիչները. որովհե-
տև լսել են որ դու, ով Եհովայ,
այս ժողովրդի մէջ ես, որ դու,
ով Եհովայ, դէմ առ դէմ տես-
նվում ես, և որ քո ամպը նո-
րանց վերայ կանգնում է, և որ
ցերեկը ամպի սիւնով՝ և գիշերը
կրակի սիւնով գնում ես նորանց
առաջից։ Եւ եթէ այս ժողովրդ- 15
ին մէկ մարդի պէս մեռցնելու
լինես, քո համբաւը լսող ազգե-
րը կ'խօսեն՝ ասելով. Եհովան չը 16
կարողացաւ տանել նորանց այն
երդումով խոստացած երկիրը.
նորա համար անապատի մէջ մեռ-
ցրեց նորանց։ Եւ հիմա թող իմ 17
Տիրոջ կարողութիւնը մեծանայ,
ինչպէս որ խօսեցիր ասելով. Ե- 18
հովան երկայնամիտ է, և առատ
ողորմութիւնով, անօրէնութիւ-

նը և յանցանքը ներող. բայց
յանցաւորին ամենևին անպատիժ
չի թողիլ, հայրերի անօրէնու-
թիւնը որդիների վերայ՝ մինչև
երրորդ և չորրորդ ազգը հատու-
19 ցանելով։ Աղաչում եմ՝ ներիր
այս ժողովրդին քո մեծ ողոր-
մութեան համեմատ, ինչպէս որ
20 ներեցիր այս ժողովրդին Եգիպ-
տոսից մինչև այստեղ։ Եւ Եհո-
21 վան ասեց. Ներեցի քո խօսքի
պէս. Բայց կենդանի եմ ես, որ
22 բոլոր երկիրը Եհովայի փառքովը
պիտի լցուի. Որովհետև բոլոր
այն մարդիկը, որ Եգիպտոսումն
ու անապատումն իմ փառքը ու
իմ արած հրաշքները տեսան, և
ինձ ահա տասն անգամ փորձե-
23 ցին, և իմ խօսքին չ'լսեցին, Չեն
տեսնիլ այն երկիրը՝ որ իրանց
հայրերին երդում արի, և ինձ
արհամարհողների մէկն էլ չի
24 տեսնիլ այն. Բայց որովհետև իմ
ծառայ Քաղէբում ուրիշ հոգի
կար և բոլորովին հնազանդեց
ինձ, ես էլ նորան այն երկիրը
կ'տանեմ, ուր որ գնացել էր, և
նորա սերունդը կ'ժառանգէ այն։
25 Եւ Ամաղեկացիներն ու Քանա-
նացիները ձորերումն են բնակ-
վում. Էգուց դարձէք և դէպի
անապատը Կարմիր ծովի ճանա-
պարհովը չուեցէք։
26 Եւ Եհովան խօսեց Մովսէսի և
27 Ահարօնի հետ ասելով. Մինչև
ե՞րբ այս չար ժողովքին հ-մբ-
է-ր-է, որ ինձ դէմ տրտնջում են.
ես լսեցի Իսրայէլի որդկանց տրր-
տունջը՝ որ ինձ դէմ տրտնջում
28 են։ Ասիր նորանց. Ես կենդանի
եմ, ասում է Եհովան, որ ինչ-
պէս դուք իմ ականջների առա-
ջին խօսեցիք, այնպէս էլ կ'անեմ
29 ձեզ. Այս անապատի մէջ կ'ընկ-
նեն ձեր դիակները. և ձեր բոլոր
հաշուի համեմատ՝ ձեզանից ա-
մեն համարուածները քսան տա-
րեկանից վեր եղողները՝ որ դուք
30 ինձ դէմ տրտնջացիք, Բնաւ պի-
տի չ'մտնէք այն երկիրը, որի հա-
մար երդում արի ձեզ նորանում
բնակեցնելու, բացի Յեփոնէի որ-
դի Քաղէբից և Նաւէի որդի
Յեսուից։ Բայց ձեր որդիքը՝ ո- 31
րոնց համար ասեցիք, թէ պիտի
յափշտակուին, նորանց կ'տա-
նեմ, և նորանք ձեր չ'հաւանած
երկիրը կ'մտնեն։ Բայց ձեր դի- 32
ակները այս անապատումը կ'ընկ-
նեն։ Եւ ձեր որդիքը անապա- 33
տումը քառասուն տարի հովիւ
կ'լինեն և ձեր պոռնկութիւնն-
երը կ'կրեն մինչև որ ձեր դիակնե-
րը անապատումը սպառուին։ Այս 34
օրերի հաշուովը որ երկիրը քա-
ռասուն օր լրտեսեցիք, այնպէս
ամեն մէկ օրուայ տեղ մէկ տա-
րի՝ այսինքն քառասուն տարի կը
կրէք ձեր անօրէնութիւնները, և
կ'ճանաչէք իմ մերժումը։ Ես Ե- 35
հովաս ասեցի, որ անպատճառ
պիտի անեմ այս բաները այդ բո-
լոր չար ժողովքին, որ ժողովել
են ինձ դէմ. նորանք այս անա-
պատի մէջ պիտի վերջանան և
այստեղ մեռնեն։ Եւ այն մար- 36
դիկն՝ որ Մովսէսն ուղարկեց այն
երկիրը լրտեսելու, որոնք ետ
դարձան և այն երկրի վերայ վատ
լուր հանելով՝ բոլոր ժողովքը նո-
րա դէմ տրտնջացրին, Այն մար- 37
դիկն, որ այն երկրի վերայ վատ
լուր հանեցին, հարուածով մե-
ռան Եհովայի առաջին։ Բայց 38
Նաւէի որդի Յեսուն և Յեփոնէի
որդի Քաղէբը, որ երկիրը լրտե-
սելու գնացող մարդկանցից էին,
ողջ մնացին։ Եւ Մովսէսը խօսեց 39
այս խօսքերը Իսրայէլի ամեն որդ-
կանց հետ, և ժողովուրդը մեծ
սուգ արաւ։ Եւ առաւօտանց 40
կանուխ վեր ելան լեռան գլուխն
ասելով. Ահա մենք, եկէք վեր
ելնենք այն տեղը որ Եհովան ա-
սել է. որովհետև մեղք գործե-
ցինք։ Եւ Մովսէսն ասեց. Ի՞նչու 41
էք այդպէս Եհովայի հրամանից
դուրս գալիս. այդ բանը չի յա-
ջողուիլ։ Վեր մի ելնէք (որով- 42
հետև Եհովան ձեր միջումը չէ),
որպէս զի ձեր թշնամիների ա-
ռաջին չ'ջարդուիք. Որովհետև 43
Ամաղեկացիները և Քանանացիներ-
ը այնտեղ ձեր առաջին են, և
դուք սրով կ'ընկնէք, որովհետև
դուք Եհովայիցը ետ էք դարձել.

44 Եհովան ձեզ հետ չի լինիլ։ Բայց
նորանք յանդգնեցին լեռան գլու-
խը վեր ելնելու, սակայն Եհովա-
յի ուխտի տապանակը և Մով-
սէսը բանակի միջից չ՚բաժանուե-
45 ցան։ Այն ժամանակ այն սարին
վերայ բնակուող Ամաղեկացիներ-
ը և Քանանացիներն իջան և
զարկեցին նորանց և հալածեցին
մինչև Հորմա։

ԳԼ. ԺԵ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
հետ ասելով. Խօսիր Իսրայէլի
որդկանց հետ և ասիր նորանց.
2 Երբոր մտնէք ձեր բնակութեան
3 երկիրը, որն ես ձեզ կ՚տամ, Եւ
պատարագ մատուցանէք Եհովա-
յին ողջակէզ կամ զոհ մէկ
ուխտ կատարելու կամ կամաւոր
ընծայի համար կամ ձեր տօնե-
րին, որ Եհովային անոյշ հոտ
նուիրէք արջառներից կամ ոչ-
4 խարներից, Այն ժամանակ մա-
տուցանողը մատուցանէ իր պա-
տարագը Եհովային հացի նուէրի
համար հիմենի չորրորդ մասը իւ-
ղով զանգուած մէկ տասանորդ
5 բարակ ալիւր։ Եւ հիմենի չոր-
րորդ մասը գինի թափելու նուէր
անես ողջակէզի կամ զոհի հետ
6 մէկ գառի համար. Կամ մի խոյի
համար՝ հացի նուէր անես եր-
րորդ մասը իւղով զանգուած եր-
կու տասանորդ բարակ ալիւր.
7 Եւ թափելու նուէրի համար հի-
մենի երրորդ մասը գինի մատու-
ցանես անոյշ հոտ Եհովայի հա-
8 մար։ Եւ երբոր Եհովային զուա-
րակ մատուցանես իբրև ողջակէզ
կամ զոհ ուխտ կատարելու հա-
մար՝ կամ խաղաղութեան պա-
9 տարագի համար, Այն ժամանակ
զուարակի հետ կէս հիմէն իւ-
ղով զանգուած երեք տասանորդ
բարակ ալիւրից հացի նուէր մա-
10 տուցանես. Եւ գինի մատուցա-
նես թափելու նուէրի համար
կէս հիմէն. սա Եհովայի համար
11 անուշահոտ պատարագ է։ Ամեն
մէկ հատ զուարակի կամ խոյի
համար՝ կամ ոչխարի կամ այծի
համար այսպէս կ՚լինի։ Ձեր 12
պատրաստելու թիւին համեմատ
նորանց թիւին համեմատ ամեն
մէկն այնպէս անէք։ Երկրի ամեն 13
բնակը այս բաներն այսպէս անէ,
Եհովային անուշահոտ պատարագ
մատուցանելու համար։ Եւ եթէ 14
ձեզ մօտ պանդխտացած օտարա-
կանը՝ կամ ձեր ազգերի մէջ ձեր
մէջ բնակողը՝ Եհովայի համար ա-
նուշահոտ պատարագ անելու լի-
նի, ձեր արածի պէս նա էլ այս-
պէս անէ։ Ով ժողովք, ձեզ հա- 15
մար և պանդխտացած օտարա-
կանի համար մէկ կանոն լինի,
ձեր ազգերի մէջ յաւիտենական
կանոնով, ինչպէս դուք՝ այնպէս
լինի օտարականն էլ Եհովայի ա-
ռաջին։ Ձեզ համար և ձեզ մօտ 16
պանդխտացած օտարականի հա-
մար մէկ օրէնք մէկ կարգադրու-
թիւն լինի։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 17
հետ ասելով. Խօսիր Իսրայէլի 18
որդկանց հետ և ասիր նորանց.
Երբ որ այն երկիրը մտնէք, ուր
որ ես ձեզ կ՚տանեմ, Եւ լինի 19
որ երբ այն երկրի հացիցն ուտէք,
բարձրացնելու ընծայ մատուցա-
նէք Եհովային. Ձեր առաջին խը- 20
մորիցը մի շօթ բարձրացնելու
պատարագ մատուցանէք. կալի
բարձրացնելու պատարագի պէս
սա էլ բարձրացնէք։ Ձեր առա- 21
ջին խմորիցը բարձրացնելու պա-
տարագ մատուցանէք Եհովային
ձեր ազգերումը։
Իսկ եթէ սխալուիք և չ՚անէք 22
այս բոլոր պատուիրանքները՝ որ
Եհովան ասեց Մովսէսին, Որ ա- 23
մենը ձեզ պատուիրեց Եհովան
Մովսէսի ձեռքովը այն օրից որ
Եհովան պատուիրեց և այնուհե-
տև մինչև ձեր ազգերը. Եւ լինի 24
որ եթէ ժողովքը չ՚իմանալով
սխալմամբ յանցանք գործէ, այն
ժամանակ բոլոր ժողովքը Եհո-
վայի համար իբր անուշահոտ ող-
ջակէզ մէկ զուարակ մատու-
ցանէ և նորա հացի նուէրը և
թափելու նուէրը ըստ օրինի և
իբր մեղքի պատարագ այծերիցը
մէկ նոխազ։ Եւ քահանան քա- 25

ւութիւն անէ Իսրայէլի որդկանց
բոլոր ժողովքի համար, և թո-
ղութիւն լինի նորանց, որովհե-
հետև սխալմունք էր, և նորանք
իրանց պատարագը Եհովային պա-
տարագ բերեն և իրանց մեղքի
պատարագը Եհովայի առաջին,
26 իրանց սխալմունքի համար։ Եւ
Իսրայէլի որդկանց բոլոր ժողով-
քի և նորանց մէջը պանդխտացած
օտարականներին թողութիւն կը
լինի, որովհետև բոլոր ժողովրդի
համար սխալմունք էր։
27 Եւ եթէ մի անձ սխալմամբ
մեղք գործէ, այն ժամանակ մեղ-
քի պատարագի համար մէկ տա-
28 րեկան էգ այծ բերէ։ Եւ քա-
հանան քաւութիւն անէ սխալ-
մամբ մեղք գործող անձի հա-
մար, Եհովայի առաջին սխալմամբ
մեղք գործելիս նորա համար քա-
ւութիւն անէ և նորան թողու-
29 թիւն կ՚լինի։ Իսրայէլի որդկանց
միջի բնակի համար, և նորանց
մէջ պանդխտացած օտարականի
համար մէկ օրէնք ունենաք սխ-
ալմամբ մեղք գործողի համար։
30 Բայց այն անձը որ բարձրացած
ձեռքով ՀԵՂ գործէ՝ թէ երկրի
բնակը լինի թէ օտարական՝ նա
Եհովային է նախատում, այն
անձը իր ժողովրդի միջիցը պիտի
31 կորչէ։ Որովհետև Եհովայի խօս-
քը արհամարհեց և նորա պատ-
ուիրանքը զանց արաւ. այն անձը
անպատճառ պիտի կորչի. նորա
անօրէնութիւնը իր վերայ լինի։
32 Եւ երբ Իսրայէլի որդիքն ա-
նապատումն էին, մի մարդ գտան՝
33 շաբաթ օրը փայտ ժողովելիս։ Եւ
այն փայտ ժողովողին գտնողները
նորան բերին Մովսէսի և Ահա-
34 րօնի և բոլոր ժողովքի մօտ։ Եւ
բանտարկեցին նորան, որովհետև
վճռուած չէր, թէ ինչ պէտք է
35 անուէր նորան։ Եւ Եհովան ա-
սեց Մովսէսին. Այն մարդը ան-
պատճառ պիտի մեռցնուի, բոլոր
ժողովքը բանակիցը դուրս քա-
36 րերով քարկոծեն նորան։ Եւ
բոլոր ժողովքը բանակից դուրս
հանեցին նորան և քարերով քար-
կոծեցին նորան, և նա մեռաւ,
ինչպէս որ Եհովան Մովսէսին
պատուիրել էր։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 37
հետ ասելով. Խօսիր Իսրայէլի 38
որդկանց հետ և ասիր նորանց,
որ իրանց համար ծոպեր շինեն
իրանց հանդերձների քղանցքնե-
րի վերայ իրանց ազգերի մէջ. և
քղանցքի ծոպերի վերայ մի կա-
պոյտ ժապաւէն դնեն. Եւ այն 39
ձեզ համար ծոպ լինի, որ դուք
տեսնէք այն և Եհովայի բոլոր
պատուիրանքները ձեր միտքը բե-
րէք և անէք նորանց ու չ՚հետե-
ւէք ձեր սրտերին և ձեր աչքե-
րին, *որոնց ետևից դուք մոլոր-
վում էք. Որպէս զի ձեր միտքը 40
բերէք և անէք իմ բոլոր պատ-
ուիրանքները և սուրբ լինէք ձեր
Աստուծոյ համար։ Ես եմ ձեր Ե- 41
հովայ Աստուածը, որ ձեզ Եգիպ-
տոսի երկրիցը հանեցի, որ ձեզ
համար Աստուած լինեմ. ես եմ
Եհովան՝ ձեր Աստուածը։

ԳԼ. ԺԶ

Եւ առաւ Ղևիի որդի Կահա- 1
թի որդի Իսահառի որդի Կորխը՝
և Ռուբէնի որդիներից Եղիաբի
որդիք Դաթանը և Աբիրոնը՝ և
Փաղեթի որդի Օնը, Եւ կանգ- 2
նեցին Մովսէսի առաջին և Իս-
րայէլի որդիներից երկու հարիւր
յիսուն հոգի ժողովքի խորհըր-
դական գլխաւորներ՝ անուանի
մարդիկ. Եւ ժողովուեցան Մով- 3
սէսի և Ահարօնի վերայ, և ասե-
ցին նորանց. Էլ բաւական է ձեզ,
որովհետև բոլոր ժողովքը ամեն-
քն էլ սուրբ են, և Եհովան նո-
րանց մէջ է. և ի՞նչու էք ձեզ
բարձրացնում Եհովայի ժողովը-
րդի վերայ։ Եւ Մովսէսը լսեց և 4
իր երեսի վերայ վայր ընկաւ.
Եւ խօսեց Կորխի և նորա բոլոր 5
ժողովքի հետ ասելով. Էգուց
Եհովան ցոյց կ՚տայ թէ որն է ի-
րանը, և որն է սուրբը, և նորան
իրան կ՚մօտեցնէ, և որին որ ինքը
ընտրէ, իրան կ՚մօտեցնէ։ Այս 6

*Երբ. Պոռնկութիւն էք անում։

արէք. առէք ձեզ համար բուրվառներ, դու Կորխ և նորա բոլոր ժողովքը. 7 Եւ նոցանց մէջ կրակ դրէք, և եհովայի առաջին նոցանց վերայ խունկ դրէք ետուք. և լինի որ այն մարդը, որին որ Եհովան ընտրէ, նա է սուրբը. բաւական է ձեզ, ով 8 Ղևիի որդիք: Եւ Մովսէսն ասեց Կորխին. Լսեցէք, ով Ղևիի որդիք, 9 փո՞քր բան է երեւում ձեզ որ Իսրայէլի Աստուածը ձեզ իրան մօտեցնելու համար՝ Իսրայէլի ժողովքիցը բաժանեց ձեզ, որ Եհովայի խորանի պաշտօնը առնէք և ժողովքի առաջին կանգնէք՝ նոցանց սպասաւորութիւնը 10 անելու համար. Եւ քեզ, և քեզ հետ քո բոլոր եղբայրներին՝ Ղևիի որդկանցը էրաւ մօտեցրեց, և դուք քահանայութիւն էլ եք 11 ուզում; Ուրեմն դու և քո բոլոր ժողովքը Եհովայի դէմ եք ժողովուել, և Ահարոնն ո՞վ է՝ որ նորա դէմ արտասնչ եք ա- 12 նում: Եւ Մովսէս ուղարկեց Եղիաբի որդիք Դաթանին և Աբիրոնին կանչելու համար. Նոքա ասեցին. Մենք վեր չենք 13 գալ: փո՞քր բան է որ մեզ անապատիս մէջ մեռցնելու համար՝ կաթ ու մեղր բղխող երկրից մեզ հանեցիր, որ մեր վերայ տիրա- 14 պետել էլ ես ուզում; Եւ ապաքէն մեզ կաթ ու մեղր բղխող երկիր էլ չ'տարիր, և ոչ էլ մեզ արտի և այգիի ժառանգութիւն տուիր. այս մարդկանց աչքերը հանելո՞ւ ես. մենք վեր չենք 15 գալիս: Եւ Մովսէսը շատ բարկացաւ, և ասեց Եհովային. Մի նայիր նոցանց նուէրներին. Նոցանցից մի էշ էլ չեմ առել, և նոցանց մէկին չարիք չեմ արել: 16 Եւ Մովսէսն ասեց Կորխին. Դու և քո բոլոր ժողովուրդը էգուց Եհովայի առաջին ներկայանաք, 17 դու և նորանք և Ահարոնը. Եւ առէք ամեն մէկդ ձեր բուրվառները, և նորանց մէջ խունկ դրէք և մօտեցրէք Եհովայի առաջին ամեն մէկը իր բուրվառը, այսինքն երկու հարիւր յիսուն բուրվառներ, և դու էլ և Ահարոնը, ամեն մէկդ իր բուրվառը: 18 Եւ ամեն մէկն իր բուրվառն առաւ և նորանց մէջ կրակ դրին, և նորանց վերայ խունկ դրին և ժողովքի խորանի դռանը կանգնեցին և Մովսէսն ու Ահարոնն էլ: 19 Եւ Կորխ ժողովեց նորանց դէմ բոլոր ժողովքը ժողովքի խորանի դռանը. և Եհովայի փառքը բոլոր ժողովքին երեւեցաւ:

20 Եւ Եհովան խօսեց Մովսէսի և Ահարոնի հետ ասելով. 21 Աւյդ ժողովքի միջից բաժանուեցէք, որ իսկոյն սպառեմ դորանց: 22 Բայց նորանք իրանց երեսների վերայ ընկան և ասեցին. Ով Աստուած, ով բոլոր մարմնի հոգիների Աստուած, մէկ մարդ կ'մեղանչէ՝ և բոլոր ժողովքի՞ վերայ կ'բարկանաս:

23 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ ասելով. 24 Խօսիր այդ ժողովքի հետ և ասիր. Հեռացէք կորխի, Դաթանի և Աբիրոնի բնակութեան չորս կողմիցը: 25 Եւ Մովսէս էլաւ, և Դաթանի և Աբիրոնի մօտ գնաց, և Իսրայէլի ծերերը նորա հետիցը գնացին: 26 Եւ նա խօսեց ժողովքի հետ ասելով. Աւյդ չար մարդկանց վրաններից մօտից հետ քաշուեցէք, և նորանց մէկ բանին մի դպչիք, որ նորանց բոլոր մեղքերովը չ'կորչէք: 27 Այսպէս նորանք կորխի, Դաթանի և Աբիրոնի բնակութեան չորս կողմերիցը հեռացան. և Դաթանը և Աբիրոնը դուրս եկան կանգնեցին իրանց վրանների դռանը և նորանց կնիկները և նորանց որդիքը և ընտանիքը: 28 Եւ Մովսէսն ասեց. Սորանով կ'գիտենաք թէ Եհովան է ինձ ուղարկել բոլոր այս գործերն անելու, և ոչ թէ իմ անձիցն է. 29 Եթէ սորանք ամեն մարդի մեռնելու պէս մեռնեն, և եթէ ամեն մարդի պատժուածովը նորանք էլ պատժուին, այն ժամանակ ինձ Եհովան չէ ուղարկել: 30 Բայց եթէ Եհովան մի հրաշք անի, և երկիրն իր բերանը բանայ, և նորանց և նորանց բոլոր ունեցածը կուլ տայ և նորանք ողջ ողջ դժոխքն իջնեն, այն ժամանակ կ'գիտենաք որ այս մարդիկը 31 Եհովային անարգեցին: Եւ եղաւ հէնց որ այս բոլոր խօսքերը խօսելը վերջացրեց, խսկոյն գետինը պատռատռեցաւ, որ նորանց տակն էր. 32 Եւ երկիրն իր բերանը բաց արաւ և նորանց և նորանց անները և կորխի ունեցած բոլոր մարդկանցը և բոլոր ինչքը կուլ տուաւ: 33 Եւ նորանք և բոլոր ինչ որ նորանցն էր ողջ ողջ դժոխքը իջան, և երկիրը ծածկեց նորանց վերայով, և նորանք ժողովքի միջից կորան: 34 Եւ բոլոր Իսրայէլը, որ նորանց շուրջն էր, նորանց ձայնիցը փախան, որովհետև ասում էին մի գուցէ երկիրը մեզ կուլ տայ: 35 Եւ Եհովայից կրակ դուրս եկաւ, և խունկ մատուցանող երկու հարիւր յիսուն հոգիներին ապառեց:

36 Եւ Եհովան խօսեց Մովսէսի 37 հետ ասելով. Խօսիր Ահարոն քահանայի որդի Եղիազարի հետ, որ բուրվառներն այն այրուածքի միջիցը վեր առնէ, և դու կրակը դէն ցրուիր, որովհետև նորանք 38 սուրբ եղան: Աւյդ իրանց հոգիների դէմ մեղք գործողների բուրվառներիցը թիթեղներ շինեն՝ սեղանը պատելու համար. որովհետև նորանք Եհովայի առաջին մատուցանելով սուրբ են դառել և Իսրայէլի որդկանց 39 համար նշան լինեն: Եւ Եղիազար քահանան այն այրուած մարդկանց մատուցրած պղնձի բուրվառներն առաւ, և սեղանը պատելու համար թիթեղներ շի- 40 նեցին նորանց. (Իսրայէլի որդկանց համար յիշատակ՝ նորա համար որ Ահարոնի սերունդիցը չեղող մէկ օտարը Եհովայի առաջին խունկ մատուցանելու չը մօտենայ, և Կորխի և նորա ժողովքի պէս չ'լինի), ինչպէս որ Եհովան ասեց նորան Մովսէսի ձեռքովը:

41 Եւ հետևեալ օրը Իսրայէլի որդկանց բոլոր ժողովքը Մովսէսի դէմ և Ահարոնի դէմ տըրտունջ արին՝ ասելով. Դուք Եհովայի ժողովրդին մեռցրիք: 42 Եղաւ որ երբ ժողովքը Մովսէսի և Ահարոնի դէմ ժողովուած էին, դէպի ժողովքի խորանը նայեցին, և ահա ամպը ծածկեց նորան, ու Եհովայի փառքը երեւեցաւ: 43 Եւ Մովսէսն ու Ահարոնը ժողովքի խորանի առաջը եկան: 44 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ ասելով. 45 Միջիցը ելէք, որ իսկոյն սպառեմ նորանց. և նորանք իրանց երեսների վերայ ընկան: 46 Եւ Մովսէսն ասեց Ահարոնին. Բուրվառն առ և մէջը սեղանի վերայիցը կրակ դիր, և խունկ դիր, և շուտով ժողովքը գնա, և նորանց համար քաւութիւն արա. որովհետև Եհովայի կողմից բարկութիւն ելաւ. ժանտախտը սկսեց: 47 Եւ Ահարոնը առաւ Մովսէսի ասածի պէս՝ ու ժողովքի մէջը վազեց, և ահա ժանտախտը սկսել էր ժողովրդի մէջ, և խունկը դրաւ, և ժողովրդի համար քաւութիւն արաւ. 48 Եւ մեռելների և ողջերի մէջտեղումը կանգնեց, և ժանտախտը դադարեց: 49 Եւ ժանտախտով մեռածներն տասն եօթը հազար եօթը հարիւր հոգի էին, բացի Կորխի բանի համար մեռածներից: 50 Եւ Ահարոնը ետ դարձաւ դէպի Մովսէսը ժողովքի խորանի դռանն մօտ. և ժանտախտը դադարեց:

ԳԼ. ԺԷ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 1 հետ ասելով. 2 Խօսիր Իսրայէլի որդկանց հետ և առ նորանցից էրեց հայրերի անների համեմատ մէկ մէկ գաւազան՝ այսինքն իրանց հայրերի անների բոլոր իշխաններից տասնևերկու գաւազան. ամեն մարդի անունը իր գաւազանի վերայ գրիր: 3 Եւ Ահարոնի անունը գրիր Ղևիի գաւազանի վերայ. որովհետև նորանց հայրերի տան իշխանի համար մէկ գաւազան պիտի լինի. 4 Եւ նորանց դնես ժողովքի խո-

բանումը վկայութիւնի առաջին,
ուր որ ձեզ պիտի հանդիպեմ։
5 Եւ կ'լինի այն մարդի գաւազա-
նը, որին որ ես ընտրել եմ, կը
ծաղկէ, և ես կ'դադարեցնեմ
ինձանից Իսրայէլի որդկանց տրը-
տունջը, որոնք տրտնջում են
ձեզ վերայ։
6 Եւ Մովսէսը խօսեց Իսրայէլի
որդկանց հետ, և նորանց բոլոր
իշխաններն իրանց հայրերի տնե-
րի համեմատ՝ տասնևերկու գա-
ւազան տուին նորան, ամեն մէկ
իշխանի համար մէկ մէկ գաւա-
զան, և Ահարօնի գաւազանը նո-
րանց գաւազանների միջումն էր։
7 Եւ Մովսէսը դրաւ գաւազաննե-
րը Եհովայի առաջին վկայութեան
8 խորանումը։ Եւ եղաւ որ հետևե-
ալ օրը Մովսէսը վկայութեան
խորանը մտաւ. և ահա Ղևիի
տան կողմից [illegible] Ահարօնի
գաւազանը ծաղկել էր, և ծլեց
և ծաղկեց և նուշեր հասցրեց։
9 Եւ Մովսէսը բոլոր գաւազաննե-
րը Եհովայի առաջից դուրս հա-
նեց Իսրայէլի բոլոր որդկանց ա-
ռաջը և նորանք տեսան. և ամեն
10 մէկն իր գաւազանն առաւ։ Եւ
Եհովան ասեց Մովսէսին. ետ
դարձրու Ահարօնի գաւազանը
վկայութիւնի առաջին որ ապըս-
տամբների համար [illegible] նշան
պահուի, և նորանց տրտունջը
ինձանից վեր առնես որ չ'մեռ-
11 նեն։ Եւ Մովսէսն արաւ ինչպէս
որ Եհովան իրան պատուիրել էր,
12 այնպէս արաւ։ Եւ Իսրայէլի որ-
դիքը խօսեցին Մովսէսի հետ ա-
սելով. Ահա մեռնում ենք, կոր-
չում ենք. մենք ամենքս կոր-
13 չում ենք. Ամեն ով որ Եհովայի
խորանին մօտենայ՝ մեռնում է.
միթէ ամենքս ալ մեռնե՞նք։

ԳԼ. ԺԸ

1 Եւ Եհովան ասեց Ահարօնին.
Դու և քո որդիքը և քո հօր
տունը քեզ հետ սրբարանի ա-
նօրէնութիւնը պիտի կրէք. և
դու և քո որդիքը քեզ հետ ձեր
քահանայութեան անօրէնութիւ-
նը պիտի կրէք։ Եւ քո հօր ցե- 2
ղից այսինքն Ղևիի ցեղից եղող
քո եղբայրներին մօտեցնես, որ
քեզ հետ միանան, և քեզ ոպա-
սաւորութիւն անեն. և դու և
քո որդիքը քեզ հետ վկայու-
թեան խորանին առաջին պիտի
լինէք. Եւ նորանք պահեն քո 3
պահպանութիւնը և բոլոր խո-
րանի պահպանութիւնը, միայն
թէ սրբարանի անօթների և սե-
ղանին չ'մօտենան, որ ոչ նորանք
մեռնեն՝ և ոչ էլ դուք։ Եւ նո- 4
րանք քեզ հետ միանան, և ժո-
ղովքի խորանի պահպանութիւնը
պահեն՝ խորանի ամեն պաշտօնի
համեմատ. և մի օտար պիտի չը
մօտենայ ձեզ։ Եւ պահեցէք սրբ- 5
բարանի պահպանութիւնը և սե-
ղանի պահպանութիւնը, որ այլ
ևս Իսրայէլի որդկանց վերայ բար-
կութիւն չ'լինի։ Եւ ահա ես 6
Իսրայէլի որդկանց միջիցը ձեր եղ-
բայրներին՝ Ղևտացիներին առայ
իբրև ձեզ համար Եհովային պար-
գև տրուած, որ ժողովքի խորա-
նի պաշտօնն անեն։ Եւ դու և 7
քեզ հետ քո որդիքը պահեցէք
ձեր քահանայութիւնը սեղանի
բոլոր բաների համար և վարա-
գոյրի ներսի կողմի համար, և
պաշտօնը կատարեցէք. ձեր քա-
հանայութիւնը իբրև պարգև
պաշտօն տուի, և մօտեցող օտա-
րականը պիտի մեռցնուի։
Եւ Եհովան խօսեց Ահարօնի 8
հետ. Եւ ահա ես քեզ տուի
իմ ընծաների պահպանութիւնը
Իսրայէլի որդկանց բոլոր սուրբ
բաներիցը, նորանք քեզ տուի
օծման համար և քո որդկանցը՝
յաւիտենական կանոնով։ Սորանք 9
քոնը լինին ամենասուրբ բաների-
ցը՝ կրակիցը, նորանց ամեն հացի
նուէրների, նորանց ամեն մեղքի
պատարագների և նորանց ամեն
յանցանքի պատարագների բոլոր
պատարագները որ ինձ կ'հատու-
ցանեն, ամենասուրբ են քեզ և
քո որդկանց համար։ Ամենա- 10
սուրբ տեղումը ուտես այն, ա-
մեն արու ուտէ այն. նա սուրբ
է քեզ համար։ Այս էլ քոնը 11

լինի նորանց պարգևների բարձ-
րացնելու պատարագը Իսրայէլի
որդկանց բոլոր երերացնելու ընծ-
ներից. քեզ տուի նորանց և
քեզ հետ քո աղերանցը և քո
աղջկերանցը յաւիտենական կա-
նոնով, քո տան մէջ ամեն մա-
12 քուրն ուտէ այն։ Ամենից լաւ
իւղի և ամենից լաւ դինիի և ցո-
րենի բոլոր երախայրիները՝ որ Ե-
հովային են մատուցանում, քեզ
13 տուի։ Նորանց երկրի մէջ եղած
բոլորի երախայրիները՝ որ բերում
են Եհովայի համար, քոնը լինի.
քո տան մէջ ամեն մաքուրը ու-
14 տէ նորանից։ Իսրայէլի մէջ ամեն
15 նուիրուածը քոնը լինի։ Ամեն
մարմնի ամեն արգանդ բացողը,
որ մատուցանում են Եհովային,
թէ մարդ և թէ անասուն՝ քոնը
լինի. միայն թէ մարդի առաջի-
նեկը անպատճառ փրկես. և ան-
մաքուր անասունի առաջինեկն
16 էլ փրկես։ Եւ փրկուողին մէկ
ամսական փրկես, սրբարանի սիկ-
ղի համեմատ հինգ սիկղ արծա-
թի *դնով պիտի փրկես. [illegible]
17 քսան կերատ է։ Բայց կովի ա-
ռաջինեկը և ոչխարի առաջինեկը
կամ այծի առաջինեկը չ'փրկես.
նորանք սուրբ են. նորանց արիւ-
նը սեղանի վերայ սրսկես և նո-
րանց ճարպը այրես իբր անուշա-
հոտ պատարագ Եհովայի հա-
18 մար. Եւ նորանց միսը քոնը լինի
ինչպէս երերացնելու երբուծը և
19 աջ զիստը՝ քոնը լինի։ Սուրբ բա-
ներիցը ամեն բարձրացնելու պա-
տարագները, որ Իսրայէլի որդի-
քը Եհովային մատուցանում են,
քեզ և քեզ հետ քո աղերանցը
և աղջկերանցը տուի յաւիտենա-
կան կանոնով, նա քո սերունդի
համար աղի ուխտ է յաւիտեան
Եհովայի առաջին քեզ համար և
քեզ հետ քո սերունդի համար։
20 Եւ Եհովան ասեց Ահարօնին.
Նորանց երկրի մէջ դու ժառան-
գութիւն չ'ունենաս. և նորանց
մէջտեղը բաժին չ'ունենաս. ես
եմ քո բաժինը և ժառանգու-
թիւնը Իսրայէլի որդկանց մէջ։
Եւ ահա Իսրայէլի բոլոր տա- 21
սանորդը տուի Ղևիի որդկանց
ժառանգութեան համար՝ իրանց
այս պաշտօնի փոխարէն, որ պաշ-
տօնով ծառայում են ժողովքի
խորանին։ Եւ Իսրայէլի որդիքն 22
այլ ևս ժողովքի խորանին չ'մօ-
տենան, որ մեղք չ'կրեն և չ'մեռ-
նեն։ Եւ ժողովքի խորանի պաշ- 23
տօնը Ղևին անէ, և իրանց անօ-
րէնութիւնը իրանք կրեն. սա ձեր
ազգերի մէջ յաւիտենական կա-
նոն լինի. որ նորանք Իսրայէլի
որդկանց մէջ ժառանգութիւն
չ'ունենան։ Որովհետև Իսրայէլի 24
որդկանց տասանորդը՝ որոնք Ե-
հովային ընծայում են, Ղևտա-
ցիներին ժառանգութիւն տուի.
այս պատճառով նորանց համար
ասեցի, որ Իսրայէլի որդկանց մէջ
ժառանգութիւն չ'ունենան։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 25
հետ ասելով. Այսպէս խօսիր 26
Ղևտացիների հետ և ասիր նո-
րանց. Երբոր Իսրայէլի որդիներից
տասանորդը առնէք, որ նորանց
կողմանից ձեզ տուի ժառանգու-
թեան համար, այն ժամանակ
նորանից տասանորդի տասներոր-
դը բարձրացնելու պատարագ մա-
տուցանէք Եհովայի համար։ Եւ 27
ձեզ համար ձեր բարձրացնելու
պատարագը համարուի կալի ցո-
րենի պէս և հնձանի բերքի պէս։
Այսպէս դուք էլ բարձրացնելու 28
պատարագ մատուցանէք Եհովա-
յին այն բոլոր տասանորդներից,
որ դուք առնէք Իսրայէլի որդի-
ներից, և նորանցից Եհովայի բար-
ձրացնելու պատարագը Ահարօն
քահանային տաք։ Բոլոր ձեզ 29
[illegible] պատարագներից Եհովա-
յին մատուցանէք ամեն բարձրա-
ցընելու պատարագը բոլորովին
նորա ամենալաւիցը՝ նորա սուրբ
մասը մատուցանէք։ Եւ ասես նո- 30
րանց. Երբոր նորա ամենալաւը
մատուցանէք, այն ժամանակ [illegible]
[illegible] կալի արդիւնքի պէս և հնձ-
անի արդիւնքի պէս համարուի
Ղևտացիների համար։ Եւ ամեն 31
տեղ ուտէք այն, դուք և ձեր

*Եբր. արժեցրածովդ։

ընտանիքները. որովհետև ժողով-
քի խորանի մէջ ձեր պաշտօնի
32 փոխարէն ձեր վարձքը նա է։ Եւ
նորա համար մեղք չէք կրիլ նորա-
նից ամենալաւը մատուցանելուց
յետոյ և Իսրայէլի որդկանց սուրբ
բաները չ'պղծէք որ չ'մեռնէք։

ԳԼ. ԺԹ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի և
2 Ահարօնի հետ ասելով. Այս է
օրէնքի կանոնը որ Եհովան պատ-
ուիրեց ասելով. Խօսիր Իսրայէլի
որդկանց հետ, որ քեզ մօտ մի
կարմիր երինջ բերեն անարատ,
որ մի բիծ չ'ունենայ, որի վերայ
3 լուծ դրուած չ'լինի։ Եւ Եղիա-
զար քահանային տաք այն, և
նա բանակիցը դուրս հանէ նո-
րան, և նորա առաջին մորթեն
4 նորան։ Եւ Եղիազար քահանան
իր մատովը նորա արիւնիցը առ-
նէ և դէպի ժողովքի խորանի ա-
ռաջի կողմը եօթն անգամ սրբ-
5 սկէ նորա արիւնիցը։ Եւ իր աչքի
առաջին այրեն երինջը, նորա
մորթը և նորա միսը, և նորա
արիւնը աղբովը մէկտեղ այրեն։
6 Եւ քահանան առնէ եղևին
փայտ, զոպայ և կրկնակի կար-
միր, և երնջի այրուած կրակի
7 մէջ գցէ։ Եւ քահանան իր հան-
դերձները ջրով ողողէ և իր մարմի-
նը ջրով լուանայ, և յետոյ բա-
նակը մտնէ. և քահանան մինչև
8 իրիկուն անմաքուր լինի։ Եւ նո-
րան այրողն իր հանդերձները ջր-
ով ողողէ և իր մարմինը ջրով
լուանայ, և մինչև իրիկուն ան-
9 մաքուր լինի։ Եւ մի մաքուր
մարդ երնջի մոխիրը ժողովէ և
բանակից դուրս մի մաքուր տեղ
դնէ. և Իսրայէլի որդկանց ժո-
ղովքի համար պահուած մնայ,
մեղաց համար մաքրութեան ջուր
10 է նա։ Եւ երնջի մոխիրը ժողովո-
ղը իր հանդերձները ողողէ ջրով,
և մինչև իրիկուն անմաքուր լի-
նի, և սա Իսրայէլի որդկանց հա-
մար և նորանց մէջ պանդխտա-
ցող օտարականի համար յաւի-
տենական կանոն լինի։

Ով որ մեռած մարդի մարմնի 11
դպչէ, եօթը օր անմաքուր լինի։
Նա երրորդ օրը նորանով մաք- 12
րուի, և եօթներորդ օրը մաքուր
լինի, բայց եթէ չ'մաքրուի եր-
րորդ օրը, եօթներորդ օրն էլ
մաքուր չի լինիլ։ Ով որ մեռած 13
մարդի մարմնի դպչէ և չ'մաք-
րուի, նա Եհովայի խորանը պղ-
ծում է. և այն անձը Իսրայէլից
կորչի, որովհետև նորա վերայ
մաքրութեան ջուր չ'սրսկուեցաւ,
նա անմաքուր լինի. իր անմաք-
րութիւնը տակաւին իր վերայ է։
Այս է վրանի մէջ մեռնող մար- 14
դի համար օրէնքը. այն վրանի
մէջն ամեն մտնողը և այն վրա-
նումն ամեն եղողը եօթն օր ան-
մաքուր լինի։ Եւ ամեն բաց ա- 15
ման, որի վերան կապով խուփ չը
կայ, անմաքուր լինի։ Եւ ով որ 16
դպչէ դաշտի վերայ սրով սպան-
ուածի կամ մեռածի, կամ մար-
դի ոսկորի և կամ գերեզմանի,
եօթն օր անմաքուր լինի։ Եւ 17
առնեն անմաքուր եղողի համար՝
այն մեղաց համար այրուած երնջի
մոխրիցը և նորա վերայ կենդանի
ջուր ածեն մի ամանի մէջ. Եւ 18
մի մաքուր մարդ զոպայ առնէ,
և այն ջրովը թրչէ, և սրսկէ այն
վրանի վերայ և բոլոր ամանների
վերայ և այնտեղ եղած մարդ-
կանց վերայ, և ոսկորի և կամ
սպանուածի կամ մեռածի և կամ
գերեզմանի դպչողի վերայ։ Եւ 19
մաքուրը սրսկէ անմաքուրի վե-
րայ երրորդ օրը և եօթներորդ օ-
րը, և եօթներորդ օրը նորան
մաքրէ, և նա իր հանդերձները
ողողէ և ջրով լուացուի և իրի-
կունը մաքուր լինի։ Բայց այն 20
մարդը որ անմաքուր է և չէ
մաքրվում, այն անձը ժողովքի
միջիցը կորչի, որովհետև Եհովա-
յի սրբարանը պղծեց. նորա վե-
րայ մաքրութեան ջուրը չ'սրս-
կուեցաւ, նա անմաքուր է։ Եւ 21
նորանց համար յաւիտենական
կանոն լինի, որ մաքրութեան
ջուրը սրսկողն իր հանդերձները
ողողէ, և մաքրութեան ջրին
դպչողը մինչև իրիկուն անմաքուր

22 լինի։ Եւ անմաքուր անձը ամեն
ինչի որ դպչէ, նա էլ անմաքուր
լինի. և նորան դպչող մարդը մին-
չև իրիկուն անմաքուր լինի։

ԳԼ. Ի

1 Եւ Իսրայէլի որդկանց բոլոր
ժողովքը Սին անապատը եկան
առաջին ամսումը, և ժողուրդը
Կադէսի մէջ բանակ տուաւ. և
Մարիամը այնտեղ մեռաւ, և
2 այնտեղ թաղուեցաւ։ Եւ ժո-
ղովքը ջուր չ'ունէր, և Մովսէսի
և Ահարօնի վերայ հաւաքուե-
3 ցան, Եւ ժողովուրդը Մովսէսի
հետ վիճելով խօսեցին և ասե-
ցին. Երանի՞ թէ մենք էլ մեռ-
նէինք, երբ որ մեր եղբայրները
4 մեռան Եհովայի առաջին. Եւ
ի՞նչու բերիք Եհովայի ժողովը-
րդին այս անապատը, որ մենք և
մեր անասունները այս տեղ մեռ-
5 նենք։ Եւ ի՞նչու մեզ Եգիպտո-
սիցը հանեցիք՝ մեզ այս վատ
տեղը բերելու համար. ոչ սերմի
տեղ է, ոչ էլ թզենիների և այ-
գիների և նռնենիների, և խմե-
լու համար անգամ ջուր չ'կայ։
6 Եւ Մովսէսն ու Ահարօնը ժողով-
քի առաջիցը գնացին ժողովքի
խորանի դուռը և իրանց երեսի
վերայ ընկան. և Եհովայի փառ-
քը նորանց երևեցաւ։
7 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
8 հետ ասելով. Առ գաւազանը,
և ժողովքը ժողովիր, դու և քո
եղբայր՝ Ահարօնը և խօսեցէք ա-
պառաժին նորանց աչքերի ա-
ռաջին, և նա կ'տայ իր ջուրը, և
դու ապառաժիցը ջուր կ'հանես
նորանց համար և կ'խմեցնես ժո-
9 ղովքին և անասուններին։ Եւ
Մովսէսն Եհովայի առաջիցը ա-
ռաւ գաւազանը ինչպէս որ նա
10 իրան պատուիրեց։ Եւ Մովսէսն
ու Ահարօնը ժողովեցին ժողովքը
ապառաժի առաջին, և ասեց
նորանց. Լսեցէք հիմա, ով ա-
պըստամբներ, այս ապառաժից
11 ջուր հանե՞նք ձեզ համար։ Եւ
Մովսէսն իր ձեռքը բարձրացրեց,
և գաւազանովը երկու անգամ
ապառաժին զարկեց. և շատ
ջուր դուրս ելաւ, և ժողովքը և
նորանց անասունները խմեցին։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի և 12
Ահարօնի հետ. Որովհետև ինձ
չ'հաւատացիք՝ ինձ Իսրայէլի որդ-
կանց աչքերի առաջին *փառա-
ւորելու, նորա համար դուք այս
ժողովուրդը չէք տանիլ այն եր-
կիրը՝ որ նորանց տուի։ Մերիբա- 13
յի ջուրը սա է, որի վերայ Իս-
րայէլի որդիքը Եհովայի դէմ վի-
ճեցին, և Նա փառաւորուեցաւ
նորանց մէջ։
Եւ Մովսէսը Կադէսից դես- 14
պաններ ուղարկեց Եդովմի թա-
գաւորի մօտ, թէ Այսպէս է ա-
սում քո եղբայր Իսրայէլը. Գի-
տես մեզ պատահած բոլոր նե-
ղութիւնը. Որ մեր հայրերն ի- 15
ջան Եգիպտոս, և մենք բնակուե-
ցինք Եգիպտոսում շատ ժամա-
նակ, և Եգիպտացիները չարչա-
րեցին մեզ և մեր հայրերին։ Եւ 16
մենք դէպի Եհովան աղաղակե-
ցինք, և նա լսեց մեր ձայնը, և
հրեշտակ ուղարկեց, և մեզ Ե-
գիպտոսից հանեց. և ահա մենք
քո սահմանի ծայրի Կադէս քա-
ղաքումն ենք. Խնդրեմ թող 17
անցնենք քո երկրովը, մենք ար-
տով և այգիներով չենք անցնիլ,
և հորերից ջուր չենք խմիլ. ար-
քունի ճանապարհովը կ'գնանք,
աջ կամ ձախ կողմը չենք խոտո-
րիլ մինչև որ քո սահմանիցն անց-
նենք։ Եւ Եդովմն ասեց նորան. 18
Իմ միջովը չես անցնիլ, եթէ ոչ՝
սրով քեզ դէմ կ'գամ։ Եւ Իս- 19
րայէլի որդիքն ասեցին նորան.
Մենք մեծ ճանապարհովը կ'անց-
նենք, և եթէ ես և իմ անա-
սունները քո ջրիցը խմենք, նորա
գինը կ'հատուցանեմ. առանց մի
որ և է բանի՝ իմ ոտքերովը կ'անց-
նեմ։ Եւ նա ասեց. Չես անցնիլ. 20
և Եդովմը մեծ բազմութիւնով
և հզօր ձեռքով նորանց դէմ
դուրս եկաւ։ Այսպէս Եդովմն 21
արգիլեց իր սահմանից Իսրայէ-
լին ճանապարհ տալ. և Իսրայէ-
լը դարձաւ նորանից։

---

*Եբր. սրբելու

22 Եւ Կադէսից չուեցին, և Իս-
բայէլի որդկանց բոլոր ժողովքը
23 եկան Հովր սարը։ Եւ Եհովան
խօսեց Մովսէսի և Ահարօնի հետ
Հովր սարումը Եդովմի երկրի սահ-
24 մանի մօտ ասելով. Ահարօնն իր
ժողովրդի վերայ աւելանայ. ո-
րովհետև նա չի մտնելու այն եր-
կիրը որ Իսրայէլի որդկանց տուի՝
Մերիբայի ջրի մօտ իմ հրամանի
դէմ ձեր ապստամբութիւն ա-
25 նելու համար։ Վեր առ Ահարօ-
նին և նորա որդի Եղիազարին և
վեր հանիր նորանց Հովր սարը.
26 Եւ Ահարօնին իր զգեստներիցը
մերկացրու և նորա որդի Եղիա-
զարին հագցրու նորանց. և Ահա-
րօնն իր ժողովրդի վերայ կ'աւելա-
27 նայ, և այնտեղ կ'մեռնէ։ Եւ
Մովսէսը Եհովայի պատուիրածին
պէս արաւ. և բոլոր ժողովքի
աչքի առաջին վեր ելաւ Հովր
28 սարը։ Եւ Մովսէսը մերկացրեց
Ահարօնին նորա զգեստներիցը, և
նորա որդի Եղիազարին հագցրեց
նորանց. և Ահարօնը մեռաւ այն-
տեղ սարին գլխին. և Մովսէսը
29 և Եղիազարը սարիցն իջան։ Եւ
երբ բոլոր ժողովքը տեսան, որ
Ահարօնը մեռաւ, Իսրայէլի բո-
լոր տունը Ահարօնի համար ե-
րեսուն օր լաց եղան։

ԳԼ. ԻԱ

1 Եւ հարաւային կողմում բնակ-
ուող Քանանացի Արադի թա-
գաւորը լսեց, որ Իսրայէլն Աթա-
րիմի ճանապարհովը գալիս է, և
Իսրայէլի հետ պատերազմեց. և
2 նորանցից գերիներ առաւ։ Եւ
Իսրայէլն ուխտ արաւ Եհովային
և ասեց. Եթէ այս ժողովուրդն
իմ ձեռքը մատնես, նորանց քա-
3 ղաքները կ'նզովեմ։ Եւ Եհովան
Իսրայէլի ձայնը լսեց, և Քանա-
նացին նորա յեռքը տուաւ. և նա
նզովեց նորանց և նորանց քա-
ղաքները, և այն տեղի անունը
*Հօրմա դրաւ։

*Այսինքն՝ նզովք կամ խոպառ-
կործանում։

Եւ Հովր սարից Կարմիր ծովի 4
ճանապարհով չուեցին որ Եդով-
մի երկրովը պտոյտ տան. և ժո-
ղովրդի սիրտը նեղացաւ ճանա-
պարհին։ Եւ ժողովուրդը Աստու- 5
ծոյ դէմ և Մովսէսի դէմ խօ-
սեցին. Ինչու մեզ Եգիպտոսից
հանեցիք՝ որ անապատումը մեռ-
նենք. որովհետև հաց չ'կայ, ջուր
չ'կայ. և այս չնչին հացիցը մեր
սիրտը զզուել է։ Եւ Եհովան 6
ժողովրդի վերայ կիզող օձեր ու-
ղարկեց, և կծեցին ժողովրդին,
այնպէս որ Իսրայէլիցը շատ ժո-
ղովուրդ մեռաւ։ Եւ ժողովուր- 7
դը եկաւ Մովսէսի մօտ և ասե-
ցին. Մենք մեղանչեցինք Եհովայի
դէմ և քեզ դէմ խօսելով. ա-
ղօթք արա Եհովային որ մեր վե-
րայից օձերը վեր առնի. և Մով-
սէսն աղաչեց ժողովրդի համար։
Եւ Եհովան ասեց Մովսէսին. 8
Քեզ համար մի կիզող օձ շինիր
և նորան դիր մի ձողի վերայ. և
կ'լինի՝ ամեն ով որ կծուի, թող
նորան մտիկ տայ, և կ'ապրէ։ Եւ 9
Մովսէսը մի պղնձի օձ շինեց, և
ձողի վերայ դրաւ այն. և եղաւ
որ օձը երբոր մարդի կծում էր,
նա մտիկ էր անում պղնձի օ-
ձին, և առողջանում էր։

Եւ Իսրայէլի որդիքը չուեցին, 10
և Որովթի մէջ իջևան արին։ Եւ 11
Որովթից չուեցին, և Իյէ-աբա-
րիմի մէջ դէպի արևելեան կող-
մը Մովաբի դէմի անապատումը
իջևան արին։ Այն տեղից էլ չուե- 12
ցին, և Զարեդ ձորումը իջևան
արին։

Այնտեղից չուեցին, և իջևան 13
արին Առնոնի միւս կողմի այն
անապատումը, որ Ամօրհացիների
սահմանիցն է ելնում. որովհե-
տև Առնոնը Մովաբացիների սահ-
մանն է, Մովաբացիների և Ա-
մօրհացիների մէջտեղը։ Նորա 14
համար Եհովայի պատերազմների
գրքումը ասվում է.
Վահէպը Սուֆայումը,
Եւ Առնոնի գետերը,
Եւ գետերին յորձանքը.
Որ դառնում է դէպի Արի բնա- 15
կարանը.

Եւ թեքվում է դէպի Մովաբի
սահմանը։
16 Եւ այնտեղից եկան Ջրհորը.
սա այն ջրհորն է, որի համար
Եհովան ասել էր Մովսէսին. Ժո-
ղովրդին ժողովիր, և ես նորանց
17 ջուր կ'տամ։ Այն ժամանակ Իս-
րայէլն այս երգը երգեց.
Հոր, բղխիր. երգեցէք նորա հա-
մար.
18 Հորը, որ իշխանները փորեցին,
Ժողովրդի ազնուականները քան-
դեցին.
Գաւազանով և իրանց ցուպերովը։
19 Եւ անապատից Մաթանա, Եւ
Մաթանայից Նաալիէլ, և Նա-
20 ալիէլից Բամօթ, Եւ Բամօթից
Մովաբի դաշտը դէպի Եսիմոն
նայող Փասգայի գագաթի հո-
վիտը չուեցին։
21 Եւ Իսրայէլը դեսպաններ ու-
ղարկեց Ամօրհացիների Սեհոն
22 թագաւորին՝ ասելով. Քո երկ-
րովն անցնենք. արտի կամ այգիի
մէջ չենք խոտորիլ. հորի ջրից
չենք խմիլ. արքունական ճանա-
պարհովը կ'գնանք մինչև որ քո
23 սահմանիցն անցնենք։ Եւ Սեհոնն
իր սահմանովը ճանապարհ չը
տուաւ Իսրայէլին. այլ Սեհոնն
իր բոլոր ժողովրդին ժողովեց, և
դուրս եկաւ Իսրայէլին դէմ ա-
նապատը, և Յասսա եկաւ, և
24 Իսրայէլի հետ պատերազմեց։ Եւ
Իսրայէլը սուրի բերանից անց-
կացրեց նորան, և տիրեց նորա
երկրին՝ Առնոնից մինչև Յաբոկ՝
մինչև Ամմոնի որդկանց երկիրը.
որովհետև Ամմոնի որդկանց սահ-
25 մանը պինդ էր։ Եւ Իսրայէլն ա-
ռաւ այս բոլոր քաղաքները. և
Իսրայէլն Ամօրհացիների բոլոր
քաղաքներումը բնակուեց՝ Եսե-
բոնում և նորա բոլոր գեղերումը.
26 Որովհետև Եսեբոնը Ամօրհացի-
ների Սեհոն թագաւորի քաղաքն
էր. և նա Մովաբի առաջին թա-
գաւորի հետ պատերազմելով ա-
ռել էր նորա ձեռքից բոլոր
27 երկիրը մինչև Առնոն։ Նորա
համար առակախօսները ասում
են.
Եսեբոն եկէք,
Շինուի և պատրաստուի Սեհոնի
քաղաքը.
Որովհետև կրակ դուրս եկաւ 28
Եսեբոնից.
Բոց՝ Սեհոնի քաղաքից.
Այրեց Մովաբի Արը.
Առնոնի բարձր տեղերի տէրերը։
Վայ՛ քեզ, Մովաբ, 29
Կորար, ով Քամոսի ժողովուրդ.
Իր փախչած որդիքը, և աղջիկ-
ները,
Ամօրհացիների Սեհոն թագաւո-
րի համար գերի արաւ։
Բայց նետահարեցինք նորանց. 30
Եսեբոնը կորաւ մինչև Դեբոն.
Եւ աւերեցինք նորանց մինչև
Նոփա,
*Որ մինչև Մեդեբայ է։
Այսպէս Իսրայէլը Ամօրհացի- 31
ների երկրումը բնակուեց։ Եւ 32
Մովսէսը մարդ ուղարկեց Յազե-
րը լրտեսելու և նորա գեղերն ա-
ռին. և այնտեղի Ամօրհացիներին
դուրս արին։
Եւ դարձան և Բասանի ճանա- 33
պարհովը եկան. և Բասանի Ովգ
թագաւորը՝ ինքն ու իր բոլոր
ժողովուրդը դուրս եկան նորանց
դէմ Եդրայի պատերազմը։ Եւ 34
Եհովան ասեց Մովսէսին. Նորա-
նից մի վախենար. որովհետև քո
ձեռքը մատնեցի նորան և նորա
բոլոր ժողովրդին, և նորա երկի-
րը. և դու նորան կ'անես ինչպէս
որ արիր Եսեբոնում բնակուող
Ամօրհացիների Սեհոն թագաւո-
րին։ Այսպէս զարկեցին նորան 35
և նորա որդկանցը և նորա բոլոր
ժողովրդին՝ այնպէս որ մէկ մնա-
ցորդ էլ չ'թողեցին, և նորա
երկրին տիրեցին։

ԳԼ. ԻԲ

Եւ Իսրայէլի որդիքը չուեցին և 1
Մովաբի դաշտերի մէջ Յորդա-
նանի միւս կողմումը Երիքովի մօտ
իջևան արին։
Եւ Սեպփօրի որդի Բաղակը 2
տեսաւ այն ամենը, ինչ որ Իս-
րայէլն արաւ Ամօրհացիներին։

*Հրով մինչև Մեդեբայ

3 Եւ Մովաբը շատ վախեց ժողովրդիցը, որովհետեւ շատ էին. և Մովաբը տագնապում էր Իսրա-
4 յէլի որդկանց երեսիցը։ Եւ Մովաբը Մադիամի ծերերին ասեց. Հիմա այս ժողովուրդը լիզելու են մեր շուրջը եղած ամէնը, ինչ-պէս որ արջառը լիզում է դաշտի խոտը։ Եւ Սեպհորի որդի Բաղակը՝ Մովաբի թագաւորն էր
5 այն ժամանակ։ Եւ դեսպաններ ուղարկեց Փաթուրը Բէոր, որ Եփրատ գետի եզերքումն էր, Բէ-ովրի որդի Բաղաամի մօտ նորա ժողովրդի որդկանց երկիրը՝ նորան կանչելու և ասելու. Ահա եգիպտոսիցը մի ժողովուրդ է դուրս եկել, ահա երկրի երեսը ծածկել է, և նստել է իմ դի-
6 մացը. Եւ հիմա ազաչում եմ, եկ, ինձ համար անիծիր այս ժո-ղովրդին, որովհետեւ նա ինձանից զօրաւոր է. գուցէ կարող լինեմ նորան զարկել, և իմ երկրիցը դուրս քշեմ նորան. որովհետեւ դիտեմ որին որ դու օրհնես՝ օրհ-նուած է, և որին որ դու անի-ծես՝ անիծուած է։
7 Եւ Մովաբի ծերերն և Մադի-ամի ծերերը գնացին՝ իրանց հմու-յութեան վարձքերն իրանց ձեռ-քերին, և եկան Բաղաամի մօտ
8 ու Բաղակի խօսքերն ասեցին նո-րան։ Եւ նա ասեց նորանց. Այս գիշեր այստեղ մնացէք և ես պատասխան կ'տամ ձեզ՝ ինչպէս որ Տէրը ինձ հետ խօսելու լինի. և Մովաբի իշխանները Բաղաամի
9 մօտ մնացին։ Եւ Աստուած Բա-ղաամի մօտ եկաւ և ասեց. Ո՞վ
10 են այդ մարդիկը քեզ մօտ։ Եւ Բաղաամն ասեց Աստուծուն. Մո-վաբի թագաւորն Սեպհորեան Բաղակն է ուղարկել ինձ մօտ.
11 Թէ ահա եգիպտոսից դուրս ե-կած ժողովուրդը երկրի երեսը ծածկել է. հիմա եկ անիծիր նո-րան ինձ համար, գուցէ կարող լինեմ նորան յաղթել և նորան
12 դուրս անել։ Եւ Աստուած ա-սեց Բաղաամին. Դորանց հետ չը գնաս. ժողովրդին չ'անիծես. ո-
13 րովհետեւ նա օրհնուած է։ Եւ Բաղաամն առաւօտանց վեր կա-ցաւ և ասեց Բաղակի իշխաննե-րին. Գնացէք ձեր երկիրը, որով-հետեւ Եհովան ինձ արգելում է ձեզ հետ գնալու։ Եւ Մովաբի 14
իշխանները վեր կացան և Բաղա-կի մօտ եկան և ասեցին. Բաղա-ամը չ'ուզեց մեզ հետ գալ։
Եւ Բաղակը դարձեալ նորան- 15
ցից աւելի շատ և աւելի պատ-ուաւոր իշխաններ ուղարկեց։ Եւ 16
նորանք Բաղաամի մօտ եկան և ասեցին նորան. Սեպհորի որդի Բաղակը այսպէս է ասում՝ Ազա-չում եմ՝ ինձ մօտ գալուցդ մի հրաժարուիր. Որովհետեւ քեզ 17
շատ պատիւ կ'անեմ և ամէն ինչ որ ասես ինձ՝ կ'անեմ, և ա-զաչում եմ՝ եկ անիծիր այս ժո-ղովրդին ինձ համար։ Եւ Բաղա- 18
ամը պատասխանեց և ասեց Բա-ղակի ծառաներին. Եթէ Բաղակն իր տունը լիքն ինձ արծաթ ու ոսկի տայ, իմ Եհովայ Աստուծոյ խօսքիցը չեմ կարող անցկենալ՝ մի փոքր կամ մի մեծ բան անե-լու։ Եւ հիմա ազաչում եմ՝ այս 19
գիշեր դուք էլ այստեղ մնա-ցէք, որ գիտենամ, թէ Եհովան ուրիշ ինչ պիտի ասէ ինձ։ Եւ 20
Աստուած գիշերը Բաղաամի մօտ եկաւ և ասեց նորան. Եթէ մար-դիկը քեզ կանչելու գան, վեր կաց նորանց հետ գնա. բայց ինչ որ քեզ հետ խօսեմ՝ միայն այն անես։
Եւ Բաղաամն առաւօտանց վեր 21
կացաւ, և իր էշի համար դրաւ, և Մովաբի իշխանների հետ գը-նաց։ Եւ գնալու համար Աստու- 22
ծոյ բարկութիւնը բորբոքուեց, և Եհովայի հրեշտակը ճանապար-հի վերայ կանգնեց նորան հակա-ռակելու համար, և նա իր էշի վերայ հեծած էր և նորա երկու ծառաներն իր հետ։ Եւ էշը տե- 23
սաւ Եհովայի հրեշտակին, որ ճանապարհին կանգնած էր, և իր սուրը հանած ձեռքին. և էշը ճանապարհիցը ծռեց և գնաց արտը, և Բաղաամն էշին ծեծեց, որ նորան ճանապարհը դարձնէ։ 24
Եւ Եհովայի հրեշտակը այդ-

րի նեղ ճանապարհումը կանգ-նեց՝ այնպէս որ մէկ կողմից պատ
25 և միւս կողմից պատ կար։ Եւ երբոր էշը Եհովայի հրեշտակին տեսաւ, այն պատի մօտ քաշուե-ցաւ, և Բաղաամի ոտքը այն պա-տի մօտ ճմլեց. և նա դարձեալ
26 ծեծեց նորան։ Եւ Եհովայի հր-եշտակը դարձեալ առաջ գնաց և մի նեղ տեղ կանգնեց, ուր աջ կամ ձախ կողմը խոտորելու
27 ճանապարհ չ'կար։ Եւ երբոր է-շը Եհովայի հրեշտակին տեսաւ, Բաղաամի տակին նստեց, և Բա-ղաամի բարկութիւնը բորբոք-ուեց, և գաւազանով ծեծեց է-
28 շին։ Եւ Եհովան էշի բերանը բացաւ, և նա Բաղաամին ասեց. Ես ինչ եմ արել քեզ որ այս-պէս երեք անգամ ինձ ծեծեցիր։
29 Եւ Բաղաամն ասեց էշին. Ինձ ծաղր անելուդ համար. երա-նի թէ ձեռքս սուր լինէր որ
30 հիմա քեզ մեռցնէի։ Եւ էշն ա-սեց Բաղաամին. Ես այն քո էշը չէմ, որի վերայ հնծնում էիր վաղուց մինչև այսօր. միթէ իմ սովորութիւնն էր քեզ այսպէս
31 անել. և նա ասեց. Ոչ։ Այն ժամանակ Եհովան բացաւ Բա-ղաամի աչքերը. և նա տեսաւ Եհովայի հրեշտակին ճանապար-հին կանգնած և իր սուրը հա-նած ձեռքին, և իր երեսի վերայ բնկաւ և երկրպագութիւն արաւ։
32 Եւ Եհովայի հրեշտակն ասեց Նո-րան. Ինչու ծեծեցիր քո էշին այս երեք անգամ, ահա ես դուրս եկայ հակառակելու, որովհետեւ այդ ճանապարհը ուղիղ չէ իմ
33 առաջին։ Եւ էշն ինձ տեսաւ, և այս երեք անգամն է որ իմ ա-ռաջիցը քաշուեց. եթէ իմ ա-ռաջիցը չ'քաշուէր, հիմա ես քեզ մեռցրել էի և նորան ողջ թո-
34 ղել. Եւ Բաղաամն ասեց Եհո-վայի հրեշտակին. Մեղք գործե-ցի, քանզի չ'իմացայ որ դու էիր ճանապարհին ինձ դէմ կանգնել. և արդ եթէ սա վատ է երեսումդ քեզ, ես գառնամ,
35 Եւ Եհովայի հրեշտակն ասեց Բաղաամին. Գնա այդ մարդկանց հետ, բայց միայն այն խօսքը որ քեզ հետ կ'խօսեմ՝ այն կ'խօսես. և Բաղաամը գնաց Բաղակի իշ-խաններին հետ։
Եւ Բաղակը լսեց որ Բաղաամը 36
գալիս է, գնաց ելաւ նորան դի-մաւորելու գետի Մովաբացիների մէկ քաղաքը Առնոնի սահմանի մօտ և որ սահմանի ծայրումն էր։
Եւ Բաղակն ասեց Բաղաամին. 37
Միթէ քեզ կանչելու համար ես չ'ուզարկեցի, ինչու չ'եկար ինձ մօտ. իրաւ որ քեզ չէի կա-րող պատիւ անել։ Եւ Բաղաամն 38
ասեց Բաղակին. Ահա եկել եմ քեզ մօտ, բայց ես քնաւ զօրու-թիւն ունիմ մի բան ասելու. Աստուած իմ բերանս ինչ խօսք որ դնէ այն պիտի խօսեմ։ Եւ 39
Բաղաամը Բաղակի հետ գնաց, և եկան Կարիաթ-Հասովթ։ Եւ 40
Բաղակն արջառներ և ոչխարներ մորթեց և ուղարկեց Բաղաամի և նորա հետ եղող իշխանների համար։
Եւ երբոր առաւօտ եղաւ, 41
Բաղակն առաւ Բաղաամին և նո-րան Բահազի բարձր տեղերը հա-նեց, և նա այնտեղից տեսաւ ժողովրդի ծայրը։

ԳԼ. ԻԳ

Եւ Բաղաամն ասեց Բաղակին. 1
Աչքաղ ինձ համար եօթը սե-ղան շինիր և այստեղ ինձ համար եօթը զուարակ և եօթը խոյ պատրաստիր։ Եւ Բաղակը Բա- 2
ղաամի ասածին պէս արաւ. և Բաղակն ու Բաղաամն ամեն մէկ սեղանի վերայ մէկ զուարակ և մէկ խոյ մատուցրին։ Եւ Բաղա- 3
ամն ասեց Բաղակին. Դուս քո ողջակէզի մօտ կանգնիր, և ես գնամ, գուցէ Եհովան իմ առա-ջը գուրս գայ, և ինչ բան որ ինձ ցոյց տայ՝ քեզ կ'ասեմ. և գնաց բլրատափը։ Եւ Աստուած 4
Բաղաամին հանդիպեցաւ, և նա ա-սեց նորան. Եօթը սեղան պատ-րաստեցի, և ամեն մէկ սեղանի վերայ մէկ զուարակ և մէկ խոյ մատուցրի։ Եւ Եհովան Բաղաա- 5

մի բերանը խօսք դրաւ և ասեց.
Դարձիր Բաղակի մօտ և այսպէս
6 խօսիր։ Եւ նա դարձաւ նորա
մօտ. և ահա իր ողջակէզի մօտ
կանգնել էր՝ ինքը և Մովաբի
7 բոլոր իշխանները։ Եւ իր պատ-
գամն սկսեց և ասեց.
Արամից բերաւ ինձ Մովաբի
թագաւոր Բաղակը,
Արևելեան սարերից.
Թէ եկ անիծիր Յակոբին ինձ
համար,
Եւ եկ նզովիր Իսրայէլին։
8 Ի՞նչպէս անիծեմ, որ Աստուած
չէ անիծում,
Եւ ի՞նչպէս նզովեմ, որ Եհովան
չէ նզովում.
9 Որովհետև ապառաժների գլխից
տեսնում եմ նորան,
Եւ բլուրներից նայում եմ նորան։
Ահա այս ժողովուրդը առանձին
պիտի բնակուէ,
Եւ ազգերի հետ պիտի չ՚հաշուի։
10 Ո՞վ կ՚համարէ Յակոբի փոշին,
Եւ կ՚հաշուէ՞ Իսրայէլի քա-
ռորդը.
Իմ անձը արդարների մահովը
մեռնէ,
Եւ իմ վախճանը լինի նորանցի
պէս։
11 Եւ Բաղակն ասեց Բաղաամին.
Ի՞նչ ես անում ինձ, իմ թշնա-
միներին անիծելու համար բերի
քեզ և ահա դու բոլորովին օրհ-
12 նո՞ւմ ես։ Եւ նա պատասխանեց
և ասեց. Մի՞թէ չ՚զգուշանամ
այն խօսելու ինչ որ Եհովան իմ
բերանն է դնում։
13 Եւ Բաղակն ասեց նորան. Ա-
զաչում եմ՝ ինձ հետ մի ուրիշ
տեղ եկ որ այնտեղից տեսնես
նորանց, նորանց մէկ ծայրը կը
տեսնես, և նորանց ամենը չես
տեսնիլ. և այնտեղից անիծիր նո-
14 րանց ինձ համար։ Եւ տարաւ
նորան Փասգայի գլուխը Սոփիմի
արտը, և եօթը սեղան շինեց, և
ամեն մէկ սեղանի վերայ մէկ
զուարակ և մէկ խոյ մատուցրեց։
15 Եւ ասեց Բաղակին. Դու այս-
տեղ քո ողջակէզի մօտ կանգ-
նիր, և ես այնտեղ Եհովային դի-
16 մաւորեմ։ Եւ Եհովան Բաղաա-
մի առաջին դուրս եկաւ, և նա
նորա բերանը խօսք դրաւ և ա-
սեց. Բաղակի մօտ դարձիր և
այսպէս ասիր։ Եւ երբոր եկաւ 17
նորա մօտ, ահա նա իր ողջակէ-
զի մօտ կանգնել էր, և Մովաբի
իշխանները նորա հետ. և Բաղակն
ասեց նորան. Եհովան ի՞նչ խօ-
սեց։ Եւ նա իր պատգամն սկսեց 18
և ասեց.
Վեր կաց, ով Բաղակ, և լսիր.
Ինձ ականջ դիր, ով Սեպփօրի
որդի։
Աստուած մարդ չէ, որ սուտ 19
խօսէ,
Ոչ էլ մարդի որդի, որ զղջայ.
Մի՞թէ կ՚ասէ, և չի՞ անիլ
Կամ կ՚խօսէ, և չի՞ կանգնեցնիլ։
Ահա հրաման առայ օրհնելու, և 20
ինքը օրհնեց,
Եւ ես ետ չեմ դարձնիլ։
Յակոբի վերայ անօրէնութիւն չը 21
զննեց,
Ոչ էլ անզգամութիւն տեսաւ
Իսրայէլի վերայ.
Նորա Եհովայ Աստուածն իր հե-
տըն է.
Եւ նորա մէջ թագաւորի ցն-
ծութեան ձայն կայ։
Աստուած է Եգիպտոսից նորանց 22
հանողը.
Միեղջերուի պէս *զօրութիւն
ունի նա։
Դորա համար Յակոբի դէմ կա- 23
խարդութիւն չի լինիլ,
Եւ Իսրայէլի դէմ՝ դիւթութիւն.
Յակոբին և Իսրայէլին կ՚ասուի
ժամանակին,
Թէ Աստուած ինչե՞ր արաւ։
Ահա այս ժողովուրդը մատակ 24
առիւծի պէս պիտի վեր կե-
նայ,
Եւ առիւծի պէս պիտի բարձ-
րանայ.
Չի պառկիլ մինչև որ որսը ուտէ,
Եւ սպանուածների արիւնը խմէ։
Եւ Բաղակն ասեց Բաղաամին. 25
Ոչ անէծք տուր նորանց, ոչ էլ
օրհնութիւն։ Եւ Բաղաամը պա- 26
տասխանեց Բաղակին և ասեց.
Մի՞թէ ես քեզ հետ չ՚խօսեցի

Կամ արագութիւն

ասելով. Ինչ որ Եհովան խօ-
սէ՝ այն կ՚անեմ։
27 Եւ Բաղակն ասեց Բաղաամին.
Եկ մի ուրիշ տեղ տանեմ քեզ.
գուցէ Աստուած հաճէ որ այն-
տեղից անիծես նորանց ինձ հա-
28 մար։ Ուստի Բաղակը տարաւ
Բաղաամին Փոգովրի գագաթը,
որ դէպի Եսիմոն է մտիկ տալիս։
29 Եւ Բաղաամն ասեց Բաղակին.
Այստեղ ինձ համար եօթը սե-
ղան շինիր և այստեղ ինձ համար
եօթը զուարակ և եօթը խոյ
30 պատրաստիր։ Եւ Բաղակը Բա-
ղաամի ասածին պէս արաւ, և
ամեն մէկ սեղանի վերայ մէկ
զուարակ և մէկ խոյ մատուցրեց։

ԳԼ. ԻԴ

1 Եւ Բաղաամը տեսաւ որ Եհո-
վան հաճեց օրհնել Իսրայէլին,
միւս անգամների պէս հմայքներ
որոնելու չ՚գնաց, այլ իր երեսը
2 դէպի անապատը դարձրեց։ Եւ
Բաղաամն իր աչքերը բարձրացը-
րեց և տեսաւ Իսրայէլին իրանց
ցեղերովը բանակ տուած. և Աս-
տուծոյ Հոգին նորա վերայ եկաւ.
3 Եւ իր պատգամն սկսեց և ասեց.
Բէովրի որդի Բաղաամի խօսքը,
Եւ աչքը բաց մարդի խօսքը,
4 Աստուծոյ խօսքերը լսողի,
Եւ Ամենակարողի տեսիլքը տես-
նողի,
Գետինը ընկնողի,
Եւ աչքերը բաց եղողի խօսքը.
5 Ի՞նչ գեղեցիկ են քո վրանները,
ով Յակոբ.
Եւ քո խորանները, ով Իսրայէլ։
6 Չորերի պէս տարածուեցան.
Գետերի մօտ եղող պարտէզնե-
րի պէս,
Եհովայի տնկած հալուէի ծա-
ռերի՝
Ջրի եղերքում եղող եղևնիների
պէս են։
7 Նորա դոյլերիցը ջուր է վազում,
Եւ նորա սերմը առատ ջրերի մէջ է։
Նորա թագաւորը Ագագիցն ա-
ւելի կ՚բարձրանայ,
Եւ նորա թագաւորութիւնը
կ՚աճէ։
Աստուած է Եգիպտոսից նորան 8
հանողը.
Միեղջերուի պէս *զօրութիւն ու-
նի նա.
Իր թշնամի եղող ազգերին ու-
տում է,
Եւ նորանց ոսկորները կոտրում
է, և իր նետերովը զարկում
է նորանց։
Առիւծի պէս նստեց պառկեց, 9
և մատակ առիւծի պէս.
Ո՞վ կ՚զարթնեցնէ նորան։
Քեզ օրհնողները օրհնուած են,
Եւ քեզ անիծողները անիծուած։
Այն ժամանակ Բաղակը շատ 10
բարկացաւ Բաղաամի վերայ, և
ձեռքերն իրար խփեց. և Բաղա-
կըն ասեց Բաղաամին. Ես քեզ
կանչեցի իմ թշնամիներին անի-
ծելու. և ահա այս երեք անգամն
է որ օրհնեցիր։ Եւ հիմա փա- 11
խիր քո տեղը. ես ասեցի քեզ
շատ պատիւ անեմ, բայց ահա
Եհովան քեզ պատուից զրկեց։
Եւ Բաղաամն ասեց Բաղակին. 12
Մի՞թէ ես քո ուղարկած դես-
պանների հետ էլ չ՚խօսեցի ա-
սելով. Եթէ Բաղակը ինձ իր 13
տունը լիքն արծաթ և ոսկի տայ,
ես Եհովայի խօսքիցը չեմ կարող
անցնիլ, որ մի լաւ կամ վատ
բան անեմ ինձանից. Եհովան ինչ
որ ասէ՝ այն պիտի խօսեմ։ Եւ 14
ահա ես հիմա իմ հայրենիքն եմ
գնում. եկ քեզ հասկացնեմ
թէ այս ժողովուրդը ինչ է անե-
լու քո ժողովրդին ետքի օրերու-
մը. Եւ իր պատգամն սկսեց և 15
ասեց.
Բէովրի որդի Բաղաամի խօսքը,
Եւ աչքը բաց մարդի խօսքը,
Աստուծոյ խօսքերը լսողի, 16
Եւ Բարձրելոյն գիտութիւնը գի-
տեցողի,
Եւ Ամենակարողի տեսիլքը տես-
նողի,
Գետինը ընկնողի
Եւ աչքը բաց եղողի խօսքը.
Տեսնում եմ նորան, բայց ոչ 17
հիմա,
Զննում եմ նորան, բայց ոչ մօտից.

Կամ արագութիւն

Յակոբից մէկ Աստղ է ծագում,
Եւ Իսրայէլից մի գաւազան է
բարձրանում.
Եւ Մովաբի կողքերին զարկում,
Եւ Սեթի բոլոր որդիներին ընա-
ջինջ անում։
18 Նաև Եդոմը նորա նուաճութիւ-
նը կ'լինի
Իր թշնամիների երկիրը՝ Սէիրը նո-
րա նուաճութիւնը կ'լինի,
Եւ Իսրայէլը քաջութիւն կ'անէ.
19 Եւ Յակոբից եղողը կ'իշխէ,
Եւ քաղաքի մէջ մնացորդին կը
կորցնէ։
20 Եւ Ամաղեկին տեսաւ, և իր
պատգամն սկսեց և ասեց.
Ամաղեկն ազգերի գլուխն է,
Բայց նորան վերջը կորստեան է
տրուած։
21 Ու Կենեցուն տեսաւ և իր
պատգամն սկսեց և ասեց.
Քո նստած տեղն ամուր է,
Եւ ապառաժի վերայ ես դրել
քո բոյնը.
22 Բայց Կենեցին աւերակ պիտի
դառնայ.
Մինչև ե՞րբ Ասուրը քեզ գերի
պիտի տանէ։
23 Եւ իր պատգամն սկսեց և
ասեց.
Ոհ, ո՞վ ողջ կ'մնայ երբոր Աստ-
ուած անէ այս։
24 Ու նաւեր կ'գան Կիտացիների
եզերքներիցը
Եւ կ'չարչարեն Ասուրին, և կը
չարչարեն Եբերին.
Բայց նա էլ է նուիրուած կո-
րըստեան։
25 Յետոյ Բաղաամը վեր կացաւ
գնաց, և դարձաւ իր տեղը. և
Բաղակն էլ գնաց իր ճանապար-
հովը։

ԳԼ. ԻԵ

1 Եւ Իսրայէլը Սատիմումը բնակ-
ուեց, և ժողովուրդն սկսեց Մո-
վաբի աղջկերանց հետ պոռնկու-
2 թիւն անել։ Եւ նորանք ժողո-
վրդին հրաւիրեցին իրանց աստ-
ուածների զոհերին. և ժողովուր-
դը կերաւ և նորանց աստուած-
ներին երկրպագութիւն արաւ։
Եւ Իսրայէլը Բելփեգովրին յա- 3
րեց. Եհովայի բարկութիւնը Իս-
րայէլի վերայ բորբոքուեցաւ։ Եւ 4
Եհովան Մովսէսին ասեց. Առ
ժողովրդի բոլոր իշխաններին և
կախիր նորանց Եհովայի առաջին
արևի դէմ, որ Եհովայի սաստիկ
բարկութիւնը Իսրայէլիցը դառ-
նայ։ Եւ Մովսէսն ասեց Իսրայէլի 5
դատաւորներին. Մեռցրէք ամեն
մէկդ ձեր մարդկանցը, որ Բել-
փեգովրին յարեցին։ Եւ ահա Իս- 6
րայէլի որդիներից մի մարդ եկաւ
և իր եղբայրներին մի Մադիա-
նացի կնիկ բերաւ՝ Մովսէսի աչ-
քի առաջին և Իսրայէլի որդկանց
բոլոր ժողովքի աչքի առաջին,
երբոր նորանք ժողովքի խորանի
դռանը լալիս էին։ Եւ Ահարօն 7
քահանայի որդի Եղիազարի որ-
դին՝ Փենէհէսը տեսաւ այս, ժո-
ղովքի միջիցը վեր կացաւ և
ձեռքը մի գեղարդ առաւ, Եւ 8
այն Իսրայէլացի մարդի ետևից
սենեակը մտաւ, և երկուսին էլ
այսինքն Իսրայէլացի մարդին և
կնկան փորիցը խոցեց, և հար-
ուածը Իսրայէլի որդկանցիցը դա-
դարեց։ Եւ հարուածիցը մե- 9
ռածները քսանևչորս հազար հո-
գի էին։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 10
հետ ասելով. Ահարօն քահանա- 11
յի որդի Եղիազարի որդի Փենէ-
հէսն իմ բարկութիւնն Իսրայէլի
որդկանցիցը դարձրեց՝ ինձ հա-
մար նախանձ ունենալով նորանց
մէջ. և ես իմ նախանձովն Իս-
րայէլի որդկանցը բնաջինջ չ'արի։
Սորա համար ասիր, որ Ահա ես 12
նորան տալիս եմ իմ խաղաղու-
թեան ուխտը. Եւ նորա համար 13
և նորանից յետոյ նորա սերուն-
դի համար յաւիտենական քա-
հանայութեան ուխտ կ'լինի. ո-
րովհետև իր Աստուծոյ նախանձը
ունեցաւ և Իսրայէլի որդկանց
համար քաւութիւն արաւ։ Եւ 14
Մադիանացի կնկան հետ զար-
կուող Իսրայէլացի մարդի անու-
նը Զամբրի էր, Սալուի որդին, որ
Շմաւոնեանց մէկ տոհմի իշխանն
էր։ Եւ զարկուող Մադիանացի 15

կնկան անունը Քազբի էր՝ Սուրի
աղջիկը, որ Մադիամի մէջ ազ-
գատոհմի իշխան էր։
16 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
17 հետ ասելով. Մադիանացիներին
թշնամութիւն արէք և նորանց
18 զարկէք. Որովհետև նորանք ի-
րանց արած նենգութիւններովը
ձեզ թշնամութիւն արին Փոգով-
րի գործումը՝ իրանց քոյր Մա-
դիանացի իշխանի աղջիկ՝ Քազբիի
գործումը, որ հարուածի օրումը
սպաննուեցաւ Փոգովրի համար։

ԳԼ. ԻԶ

1 Եւ հարուածից յետոյ Եհովան
Մովսէսի և Ահարօնի որդի՝ Եղի-
ազար քահանայի հետ խօսեց ա-
2 սելով. Իսրայէլի որդկանց բոլոր
ժողովքի գումարն առէք՝ քսան
տարեկանից վեր եղողներին նո-
րանց հայրերի տների համեմատ,
այսինքն Իսրայէլի մէջ բոլոր պա-
3 տերազմի ելնողներին։ Եւ Մով-
սէսն ու Եղիազար քահանան խօ-
սեցին նորանց հետ Մովաբի դաշ-
տերումը Երիքովի դէմ Յորդանա-
4 նի մօտ ասելով. Քսան տարեկա-
նից վեր եղողներին համարեցէք,
ինչպէս որ Եհովան Մովսէսին և
Եդիպտոսի երկրից ելած Իսրա-
5 յէլի որդկանցը հրամայեց։ Ռու-
բէն Իսրայէլի անդրանիկը, և Ռու-
բենի որդիքը. Ենովքից Ենովք-
6 եանց տոհմը, Փաղղուսից՝ Փաղ-
ղուսեանց տոհմը, Եսրոնից Ես-
րոնեանց տոհմը, Քարմից Քարմ-
7 եանց տոհմը. Ռուբենեանց տոհ-
մերը սորանք են. և նորանց հա-
մարուածները քառասուն երեք
հազար եօթը հարիւր երեսուն
8 հոգի։ Եւ Փաղղուսի որդին Եղի-
9 աբն էր։ Եւ Եղիաբի որդիքը՝ Նա-
մուէլ, Դաթան և Աբիրոն էին.
այս Դաթանը և Աբիրոնը ժողով-
քի մէջ երևելիներ էին, որ Մով-
սէսին և Ահարօնին հակառակե-
ցին Եհովայի դէմ կենող Կորխի
10 ժողովքումը։ Եւ երկիրը բացաւ
իր բերանը և կուլ տուեց նո-
րանց և Կորխին էլ, այն ժողովքը
մեռնելիս՝ երբոր կրակը այն եր-
կու հարիւր յիսուն մարդկանցը
կերաւ, և նորանք օրինակ եղան։
Բայց Կորխի որդիքը չ'մեռան։ 11
Շմաւոնի որդիքն իրանց տոհ- 12
մերովը. Նամուէլից Նամուէլեանց
տոհմը, Յամինից Յամինեանց տոհ-
մը, Յաքինից Յաքինեանց տոհմը,
Զարայից Զարայեանց տոհմը, Սա- 13
ուղից Սաուղեանց տոհմը։ Շը- 14
մաւոնեանց տոհմերը սորանք են,
քսանևերկու հազար երկու հա-
րիւր հոգի։
Գադի որդիքն իրանց տոհմե- 15
րովը. Սափոնից Սափոնեանց տոհ-
մը, Անգիից Անգեանց տոհմը,
Սունիից Սունեանց տոհմը, Ազե- 16
նիից Ազենեանց տոհմը, Էրիից
Էրեանց տոհմը, Արօդիից Արօդ- 17
եանց տոհմը, Արելիից Արելեանց
տոհմը։ Գադի որդկանց տոհմե- 18
րը սորանք են, և նորանց հա-
մարուածները քառասուն հազար
հինգ հարիւր հոգի։
Յուդայի որդիքը՝ Էր և Օնան 19
էին, բայց Էր և Օնան Քանանի
երկրումը մեռան։ Եւ Յուդայի 20
որդիքն իրանց տոհմերովը սորանք
էին. Սելօմից Սելօմեանց տոհմը,
Փարեսից Փարեսեանց տոհմը, Զա-
րայից Զարայեանց տոհմը։ Եւ 21
Փարեսի որդիքը սորանք էին.
Եսրոնից Եսրոնեանց տոհմը, Յա-
մուլից Յամուլեանց տոհմը։ Յու- 22
դայի տոհմերը սորանք են. Նո-
րանց համարուածները եօթանա-
սունևվեց հազար հինգ հարիւր
հոգի։
Իսաքարի որդիքն իրանց տոհ- 23
մերովը. Թովղայից Թովղայեանց
տոհմը, Փուայից Փուայեանց տոհ-
մը, Յասուբից Յասուբեանց տոհ- 24
մը, Սամրօնից Սամրօնեանց տոհ-
մը։ Իսաքարի տոհմերը սորանք են. 25
նորանց համարուածները վաթ-
սունևչորս հազար երեք հարիւր
հոգի։
Զաբուղոնի որդիքն իրանց տոհ- 26
մերովը. Սարեդից Սարեդեանց
տոհմը, Ելօնից Ելօնեանց տոհմը,
Յաղելից Յաղելեանց տոհմը։ Զա- 27
բուղոնի տոհմերը սորանք են. Նո-
րանց համարուածները վաթսուն
հազար հինգ հարիւր հոգի։

28 Յովսէփի որդիքն իրանց տոհ-
մերովը Մանասէ և Եփրեմ էին։
29 Մանասէի որդիքը. Մաքիրից Մա-
քիրեանց տոհմը. և Մաքիր ծնաւ
Գաղաադին, Գաղաադից Գա-
30 ղաադեանց տոհմը։ Գաղաադի
որդիքը սորանք են. Իեզերից Իե-
31 զերեանց տոհմը, Քեղեգից Քե-
ղեգեանց տոհմը, և Ասրիելից
Ասրիելեանց տոհմը, և Սիւքեմից
32 Սիւքեմեանց տոհմը, Եւ Սեմի-
դայից Սեմիդայեանց տոհմը, և
33 Ոփերից Ոփերեանց տոհմը, Եւ
Ոփերի որդին Սալպաադը տղերք
չ՚ունէր այլ աղջիկներ. և Սալպա-
ադի աղջիկների անունները Մա-
ալա, Նուա, Էգղա, Մեղքա և
34 Թերսա էին։ Մանասէի տոհմերը
սորանք են, և նորանց համար-
ուածները յիսունևերկու հազար
եօթը հարիւր հոգի։
35 Եփրեմի որդիքն իրանց տոհմե-
րովը սորանք են. Սուտաղայից
Սուտաղայեանց տոհմը, Բոքորից
Բոքորեանց տոհմը, Թաանից Թա-
36 անեանց տոհմը։ Եւ Սուտաղայի
որդիքը սորանք են՝ Իրանից Ի-
37 րանեանց տոհմը։ Եփրեմի որդ-
կանց տոհմերը սորանք են. Նո-
րանց համարուածները երեսուն
երկու հազար հինգ հարիւր հոգի։
Յովսէփի որդիքն իրանց տոհմե-
րովը սորանք են։
38 Բենիամինի որդիքն իրանց տոհ-
մերովը. Բաղայից Բաղայեանց
տոհմը, Ասբելից Ասբելեանց տոհ-
մը, Աքիրամից Աքիրամեանց տոհ-
39 մը, Սուփամից Սուփամեանց տոհ-
մը, Ոփիմից Ոփիմեանց տոհմը։
40 Եւ Բաղայի որդիքը Արեդ և Նէ-
եման էին. Արեդից Արեդեանց
տոհմը, Նէեմանից Նէեմանեանց
41 տոհմը։ Բենիամինի որդիքն իրանց
տոհմերովը սորանք են, և նորանց
համարուածները քառասունև-
հինգ հազար վեց հարիւր հոգի։
42 Դանի որդիքն իրանց տոհմերո-
վը սորանք են. Սուհամից Սու-
համեանց տոհմը, Դանի տոհմերն
իրանց տոհմերովը սորանք են։
43 Սուհամեանց բոլոր տոհմերի հա-
մարուածները վաթսունևչորս հա-
զար չորս հարիւր հոգի։

Ասերի որդիքն իրանց տոհմե- 44
րովը, Յեմնայից Յեմնայեանց տոհ-
մը, Յեսույից Յեսույեանց տոհմը,
Բարիայից Բարիայեանց տոհմը։
Բարիայի որդիներից՝ Քաբերից 45
Քաբերեանց տոհմը, Մեղքիելից
Մեղքիելեանց տոհմը։ Եւ Ասերի 46
աղջկան անունը Սարա էր։ Ասե- 47
րի որդկանց տոհմերը սորանք են.
նորանց համարուածները յիսուն
երեք հազար չորս հարիւր հոգի։
Նեփթաղիմի որդիքն իրանց 48
տոհմերովը. Յասիելից Յասիել-
եանց տոհմը, Գունիից Գունեանց
տոհմը, Յասերից Յասերեանց 49
տոհմը, Սիլլեմից Սիլլեմեանց տոհ-
մը։ Նեփթաղիմի տոհմերն ի- 50
րանց տոհմերովը սորանք են. և
նորանց համարուածները քառա-
սուն հինգ հազար չորս հարիւր
հոգի։
Այս է Իսրայէլի որդկանց գու- 51
մարը, վեց հարիւր և մէկ հազար
եօթը հարիւր երեսուն հոգի։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 52
հետ ասելով. Սորանց պիտի բա- 53
ժանուի այն երկիրը ժառանգու-
թեան համար իրանց անունների
թիւին համեմատ։ Շատին ժա- 54
ռանգութիւնը շատ տաս, և քի-
չին ժառանգութիւնը քիչ տաս.
ամեն մէկին իր համարի համե-
մատ ժառանգութիւն տրուի։
Բայց երկիրը վիճակով բաժան- 55
ուի, և իրանց նահապետների ցե-
ղերի անունների համեմատ ժա-
ռանգեն։ Ժառանգութիւնը շա- 56
տի և քիչի մէջ վիճակով բա-
ժանուի։
Եւ Ղևտացիների համարուած- 57
ներն իրանց տոհմերովը սորանք
են. Գերսոնից Գերսոնեանց տոհ-
մը, Կահաթից Կահաթեանց տոհ-
մը, Մերարիից Մերարեանց տոհ-
մը։ Ղևտացիների տոհմերը սո- 58
րանք են՝ Ղոբենեանց տոհմը,
Քեբրոնեանց տոհմը, Մոողեանց
տոհմը, Մուսեանց տոհմը, Կորխ-
եանց տոհմը։ Եւ Կահաթ ծնեց 59
Ամրամին։ Եւ Ամրամի կնկայ ա-
նունը Յոքաբեթ էր Ղևիի աղջի-
կը, որին Եգիպտոսի մէջ ծնեց
Ղևիի համար, և նա Ամրամի

համար ծնեց Ահարօնին և Մով-
սէսին և նորանց քոյր Մարիա-
60 մին։ Եւ Ահարօնի համար ծնն-
ուեցան Նադաբը և Աբիուդը,
61 Եղիազարը և Իթամարը։ Բայց
Նադաբն և Աբիուդը Եհովայի
առաջին օտար կրակ մատուցա-
62 նելիս մեռան։ Եւ սորանց հա-
մարուածները քսան երեք հազար
հոգի էին մէկ ամսականից վեր
եղող բոլոր արուները. որովհետև
նորանք Իսրայէլի որդկանց հետ
չ՚համարուեցան, որովհետև Իս-
րայէլի որդկանց մէջ նորանց ժա-
ռանգութիւն չ՚տրուեցաւ։
63 Սորանք են Մովսէսի և Եղիա-
զար քահանայի համարները, որ
համարեցին Իսրայէլի որդկանց
Մովաբի դաշտերումը Երիքովի
64 դէմ Յորդանանի մօտ։ Եւ սորանց
մէջ բնաւ մէկ մարդ չ՚կար Իս-
րայէլի որդկանց այն համարուած-
ներիցը, որոնց Մովսէսն և Ահա-
րօն քահանան Սինայի անապա-
65 տումը համարեցին։ Որովհետև
Եհովան ասել էր նորանց. Ան-
պատճառ կ՚մեռնեն անապատու-
մը, և նորանցից մի մարդ չ՚մնաց,
բացի Յեփոնեան Քաղէբից և
Նաւեան Յեսուից։

ԳԼ. ԻԷ

1 Եւ Յովսէփի որդի Մանասէի
տոհմերից Մանասէի որդի Մա-
քիրի որդի Գաղաադի որդի Ո-
փերի որդի Սալպաադի աղջիկներ-
ը մօտեցան. և նորա աղջկերանց
անունները սորանք են. Մաալա,
Նուա, Էգղա, Մեղքա և Թեր-
2 սա. Սորանք Մովսէսի և Եղիա-
զար քահանայի և իշխանների և
բոլոր ժողովքի առաջը կանգնե-
ցին ժողովքի խորանի դռանը և
3 ասեցին. Մեր հայրը անապատու-
մը մեռաւ, և նա Եհովայի դէմ
ժողովուածների ժողովք՝ Կորխի
ժողովումը չէր, այլ նա իր մեղ-
քովը մեռաւ և տղերք չ՚ունէր։
4 Ինչու համար մեր հօրը անունը
իր տոհմի միջիցը վերանայ, որ
տղայ չ՚ունի. մեզ կալուածք
տուէք մեր հօր եղբայրների մէջ։

Եւ Մովսէսը նորանց դատը Եհո- 5
վայի առաջը տարաւ, Եւ Եհո- 6
վան խօսեց Մովսէսի հետ ասե-
լով. Ուղիղ են խօսում Սալպա- 7
ադի աղջկերքը. անպատճառ նո-
րանց ժառանգութեան կալուածք
տաս իրանց հօր եղբայրների մէջ
և նորանց հօր ժառանգութիւնը
դարձնես նորանց վերայ. Եւ Իս- 8
րայէլի որդկանց հետ խօսես և
ասես. Եթէ մի մարդ մեռնէ և
տղայ չ՚ունենայ, նորա ժառան-
գութիւնը նորա աղջկան վերայ
դարձնէք։ Եւ եթէ նա աղջիկ 9
էլ չ՚ունենայ, այն ժամանակ նո-
րա ժառանգութիւնը նորա եղ-
բայրներին տաք։ Եւ եթէ եղ- 10
բայրներ էլ չ՚ունենայ, այն ժա-
մանակ նորա ժառանգութիւնը
նորա հօր եղբայրներին տաք։ Եւ 11
եթէ հօր եղբայրներ էլ չ՚ունե-
նայ, նորա ժառանգութիւնը նո-
րա տոհմի մէջ նորան ամենից
մօտ ազգականին տաք, և նա լի-
նի նորա ժառանգը. և սա Իսրա-
յէլի որդկանց համար դատաս-
տանի կանոն լինի, ինչպէս որ Ե-
հովան Մովսէսին պատուիրեց։
Եւ Եհովան Մովսէսին ասեց. 12
Վեր ելիր այս Աբարիմի սարը,
և տես այն երկիրը որ Իսրայէլի
որդկանցը պիտի տամ. Եւ նո- 13
րան կ՚տեսնես, և յետոյ դու էլ
քո ժողովրդի հետ կ՚ժողովուիս
ինչպէս որ քո եղբայր Ահարօնը
ժողովուեցաւ. Որովհետև դուք 14
իմ հրամանի դէմ ապստամբու-
թիւն արիք Սին անապատումը
ժողովքի հակառակութիւն ա-
րած ժամանակը և նորանց առա-
ջին ինձ չ՚սրբեցիք այն ջրի մօտ։
(Այս է Կադեսի Մերիբայի ջու-
րը Սին անապատումը։)
Եւ Մովսէսը խօսեց Եհովայի 15
հետ և ասեց. Բոլոր մարմնի հո- 16
գիների Աստուածը Եհովան այս
ժողովրդի վերայ մի մարդ նշա-
նակէ. Որ նորանց առաջին դուրս 17
գայ և նորանց առաջին մտնէ, և
նորանց հանէ և նորանց մտցնէ,
և Եհովայի ժողովքը չ՚լինի ոչ-
խարների պէս որ հովիւ չ՚ունեն։
Եւ Եհովան ասեց Մովսէսին. 18

Առ քեզ մօտ Նաւէի որդի Յե-
սուին, որի վերայ Հոգի կայ, և
19 ձեռքդ նորա վերայ դիր. Եւ նո-
րան Եղիազար քահանայի և բո-
լոր ժողովքի առաջին կանգնե-
ցրու և նորանց աչքի առաջին
20 նորան պատուէր տուր. Եւ քո
փառքիցը դիր նորա վերայ որ-
պէս զի Իսրայէլի որդկանց բոլոր
ժողովքը նորան հնազանդութիւն
21 անեն։ Եւ նա կանգնէ Եղիազար
քահանայի առաջին որ Ուրիմի
կանոնովը նորան հարցնէ Եհովա-
յի առաջին. նորա խօսքովը դուրս
գան և նորա խօսքովը մտնեն,
ինքը և իր հետ բոլոր Իսրայէլի
22 որդիքը և բոլոր ժողովքը։ Եւ
Մովսէսն այնպէս արաւ, ինչպէս
որ Եհովան նորան պատուիրել
էր. առաւ Յեսուին և նորան
կանգնեցրեց Եղիազար քահանա-
յի և բոլոր ժողովքի առաջին։
23 Եւ իր ձեռքը նորա վերայ դրաւ
և նորան պատուէր տուաւ, ինչ-
պէս որ Եհովան Մովսէսի ձեռ-
քովը խօսել էր։

ԳԼ. ԻԸ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
2 հետ ասելով. Պատուիրիր Իսրա-
յէլի որդկանցը և նորանց ասիր,
Իմ պատարագները, իմ հացը,
իմ նուէրների համար իբրև իմ
անուշահոտ պատարագները ըզ-
գուշացէք որ ինձ մատուցանէք
3 իր ժամանակին։ Եւ նորանց ա-
սես. Այս է այն պատարագը որ
Եհովային պիտի մատուցանէք.
Օրը երկու հատ մէկ տարեկան
անարատ գառներ մշտնջենաւոր
4 ողջակէզի համար. Մէկ գառը
առաւօտանց մատուցանես և միւս
գառը իրիկուանը մատուցանես։
5 Եւ մէկ արդուի տասներորդ մա-
սը բարակ ալիւրով հացի նուէր
զանգուած հիմենի մի քառորդ
6 ծեծուած իւղով։ Սա Սինա սա-
րի վերայ անելիք մշտնջենաւոր
ողջակէզն է, Եհովայի համար
7 իբրև անուշահոտ պատարագ։ Եւ
նորա թափելու նուէրը մէկ գա-
ռի համար՝ հիմենի չորրորդ մա-
սը լինի. ցքին սուրբ տեղումը
թափելու նուէր անես Եհովայի
համար։ Եւ միւս գառը իրիկնա- 8
դէմին մատուցանես. իբրև առա-
ւօտեան հացի ընծայ և իբրև նո-
րա թափելու նուէրը մատուցա-
նես Եհովայի համար իբրև ա-
նուշահոտ պատարագ։
Բայց շաբաթ օրը՝ մէկ տարե- 9
կան երկու անարատ գառներ և
իւղով զանգուած երկու տասա-
նորդ բարակ ալիւր իբրև հացի
նուէր և նորա թափելու նուէրը։
Սա բացի մշտնջենաւոր ողջակէ- 10
զից և նորա թափելու նուէրից
ամեն շաբաթ օրուայ ողջակէզը
լինի։
Եւ ձեր ամսագլուխներումը Ե- 11
հովայի համար ողջակէզ մատու-
ցանէք երկու զուարակ, մէկ խոյ,
եօթը հատ մէկ տարեկան անա-
րատ գառներ. Եւ ամեն մէկ 12
զուարակի համար իւղով զան-
գուած երեք տասանորդ բարակ
ալիւր հացի նուէր, և մէկ խոյի
համար իւղով զանգուած երկու
տասանորդ բարակ ալիւր հացի
նուէր. Եւ ամեն մէկ գառի հա- 13
մար իւղով զանգուած մէկ մէկ
տասանորդ բարակ ալիւր հացի
նուէր, Եհովայի համար ողջակէզ
իբրև անուշահոտ պատարագ։ Եւ 14
նորանց թափելու նուէրները՝ ա-
մեն մէկ զուարակի համար կէս
հիմէն և մէկ խոյի համար հիմե-
նի երրորդ մասը և ամեն մէկ
գառի համար հիմենի չորրորդ
մասը գինի լինի. սա տարուայ ա-
միսների համար ամեն մէկ ամսի
ողջակէզն է. Եւ բացի մշտնջե- 15
նաւոր ողջակէզից իբրև մեղքի
պատարագ այծերիցը մի նոխազ
մատուցանուի Եհովային և իր
թափելու նուէրը մատուցանուի
Եհովային։
Եւ առաջին ամսի տասնևչոր- 16
սերորդ օրը զատիկ է Եհովայի
համար. Եւ այն ամսի տասնևհին- 17
գերորդ օրը տօն է. եօթն օր բա-
զարջ ուտուի։ Առաջին օրը սուրբ 18
ժողով լինի. ոչ մի ծառայական
գործ չ՛անէք. Եւ Եհովայի հա- 19
մար ողջակէզ պատարագ մատու-

ցանէք երկու զուարակ, մէկ խոյ
ու եօթը հատ մէկ տարեկան
գառներ, նորանք անարատ լինեն
20 ձեզ համար. Եւ նորանց հացի
նուէրը իւղով զանգուած բարակ
ալիւր լինի. ամեն մէկ զուարակի
համար երեք տասանորդ, և մէկ
խոյի համար երկու տասանորդ
21 մատուցանէք. Եօթը գառներից
ամեն մէկ գառի համար մէկ
22 տասանորդ մատուցանէք. Եւ
ձեզ համար քաւութիւն անելու
համար մէկ նոխազ մեղքի պա-
23 տարագ։ Սորանք մատուցրէք բա-
ցի մշտնջենաւոր ողջակէզ եղող
24 առաւօտեան ողջակէզից։ Այս-
պէս մատուցրէք այն եօթը օրե-
րի ամեն մէկ օրը Եհովայի հա-
մար անուշահոտ պատարագ՝ հաց.
բացի մշտնջենաւոր ողջակէզից
մատուցանուի այս և սորա թա-
25 փելու նուէրը։ Եւ եօթներորդ
օրը սուրբ ժողով լինի ձեզ հա-
մար, ոչ մի ծառայական գործ
չ՛անէք։
26 Եւ երախայրիների օրը՝ երբոր
ձեր շաբաթների համեմատ Եհո-
վային նոր հացի նուէր մատու-
ցանէք, սուրբ ժողով լինի ձեզ
համար. ոչ մի ծառայական գործ
27 չ՛անէք. Եւ Եհովայի համար իբ-
րև անուշահոտ ողջակէզ երկու
զուարակ, մէկ խոյ, մէկ տարե-
կան եօթը հատ գառներ մա-
28 տուցանէք. Եւ նորանց հացի
նուէրը ամեն մէկ զուարակի հա-
մար երեք տասանորդ, մէկ խոյի
29 համար երկու տասանորդ, Եօթը
գառներից ամեն մէկ գառի հա-
մար մէկ տասանորդ իւղով զան-
30 գուած բարակ ալիւր. Եւ ձեզ
համար քաւութիւն անելու հա-
31 մար այծերից մէկ նոխազ։ Բացի
մշտնջենաւոր ողջակէզից և նորա
հացի նուէրից մատուցանէք, ա-
նարատ լինեն ձեզ համար. և ի-
րանց թափելու նուէրները։

ԳԼ. ԻԹ

1 Եւ եօթներորդ ամսումն ամսի
մէկին սուրբ ժողով լինի ձեզ
համար. ոչ մի ծառայական գործ
չ՛անէք. փող հնչեցնելու օր լինի
ձեզ համար։ Եւ Եհովայի հա- 2
մար իբրև անուշահոտ ողջակէզ
մատուցրէք մէկ զուարակ, մէկ
խոյ, եօթը հատ մէկ տարեկան
անարատ գառներ. Եւ նորանց 3
հացի նուէրը իւղով զանգուած
բարակ ալիւր մէկ զուարակի հա-
մար երկու տասանորդ, Եւ եօ- 4
թը գառներից ամեն մէկ գառի
համար մէկ տասանորդ. Եւ ձեզ 5
համար քաւութիւն անելու հա-
մար այծերից մէկ նոխազ մեղքի
պատարագ. Բացի ամսամուտի ող- 6
ջակէզից և նորա հացի նուէրից,
և մշտնջենաւոր ողջակէզից և նո-
րա հացի նուէրից և իրանց թա-
փելու նուէրներից իրանց կանո-
նովը մատուցանէք անուշահոտ
պատարագ Եհովայի համար։
Եւ այս եօթներորդ ամսի տա- 7
սին սուրբ ժողով լինի ձեզ հա-
մար, և ձեր անձերը խոնարհեցը-
նէք, ոչ մի գործ չ՛անէք։ Եւ Ե- 8
հովային համար իբրև անուշա-
հոտ ողջակէզ մատուցրէք մէկ
զուարակ, մէկ խոյ, եօթը հատ
մէկ տարեկան գառներ. նորանք
ձեզ համար անարատ լինեն. Եւ 9
նորանց հացի նուէրը իւղով զան-
գուած բարակ ալիւր մէկ զուա-
րակի համար երեք տասանորդ,
մէկ խոյի համար երկու տասա-
նորդ, Եօթը գառներից ամեն 10
մէկ գառի համար մէկ տասա-
նորդ. Եւ այծերից մէկ նոխազ 11
մեղքի պատարագ բացի քաւու-
թեան մեղքի պատարագից և
մշտնջենաւոր ողջակէզից և նո-
րա հացի նուէրից և նորանց թա-
փելու նուէրներից։
Եւ եօթներորդ ամսի տասնև- 12
հինգերորդ օրը սուրբ ժողով լի-
նի ձեզ համար. ոչ մի ծառա-
յական գործ չ՛անէք. և եօթը
օր Եհովայի համար տօն կատա-
րէք։ Եւ Եհովայի համար ողջա- 13
կէզ անուշահոտ պատարագ մա-
տուցանէք տասներեք զուարակ,
երկու խոյ, մէկ տարեկան տասն-
ևչորս գառներ. անարատ լինեն։
Եւ նորանց հացի նուէրը իւղով 14
զանգուած բարակ ալիւր տասնև-

երեք զուարակներից ամեն մէկ զուարակի համար երեք տասանորդ, և երկու խոյերից ամեն մէկ խոյի համար երկու տասանորդ.
15 Եւ տասնեւչորս գառներից ամեն մէկ գառի համար մէկ տասա-
16 նորդ ։ Եւ այծերից մէկ նոխազ մեղքի պատարագ բացի միանգեւնաւոր ողջակէզից և նորա հացի նուէրից և թափելու նուէրից ։
17 Եւ երկրորդ օրը տասնեւերկու զուարակ, երկու խոյ, մէկ տա-
18 րեկան տասնեւչորս անարատ գառ-
ներ. Եւ նորանց հացի նուէրը և թափելու նուէրները՝ զուարակների, խոյերի և գառների համար, իրանց թիւին համեմատ
19 ըստ օրինի լինեն. Եւ այծերից մէկ նոխազ մեղքի պատարագ բացի միանգեւնաւոր ողջակէզից և նորա հացի նուէրից և թափելու նուէրներից ։
20 Եւ երրորդ օրը տասնեմէկ զուարակ, երկու խոյ, մէկ տարե-
21 կան տասնեւչորս անարատ գառներ. Եւ նորանց հացի ընծան և թափելու նուէրները՝ զուարակների, խոյերի և գառների համար, իրանց թիւին համեմատ
22 ըստ օրինի լինեն. Եւ մէկ նոխազ մեղքի պատարագ բացի միանգեւնաւոր ողջակէզից և նորա հացի նուէրից և թափելու նուէրից ։
23 Եւ չորրորդ օրը տասը զուարակ, երկու խոյ, մէկ տարեկան տասնեւչորս անարատ գառներ.
24 Նորանց հացի նուէրը և թափելու նուէրները՝ զուարակների, խոյերի և գառների համար, իրանց թիւին համեմատ
25 ըստ օրինի լինեն. Եւ այծերից մէկ նոխազ մեղքի պատարագ բացի միանգեւնաւոր ողջակէզից և նորա հացի նուէրից և նորա թափելու նուէրից ։
26 Եւ հինգերորդ օրը ինը զուարակ, երկու խոյ, մէկ տարեկան
27 տասնեւչորս անարատ գառներ. Եւ նորանց հացի նուէրը և թափելու նուէրները՝ զուարակների, խոյերի և գառների համար, իրանց թիւին համեմատ ըստ օրի-
նի լինեն. Եւ մէկ նոխազ մեղքի 28
պատարագ բացի միանգեւնաւոր ողջակէզից և նորա հացի նուէրից և նորա թափելու նուէրից ։
Եւ վեցերորդ օրը ութը զուա- 29
րակ, երկու խոյ, մէկ տարեկան տասնեւչորս անարատ գառներ.
Եւ նորանց հացի նուէրը և թա- 30
փելու նուէրները՝ զուարակների, խոյերի և գառների համար, իրանց թիւին համեմատ ըստ օրի-
նի լինեն. Եւ մէկ նոխազ մեղքի 31
պատարագ բացի միանգեւնաւոր ողջակէզից, նորա հացի նուէրից և նորա թափելու նուէրներից ։
Եւ եօթներորդ օրը եօթը զու- 32
արակ, երկու խոյ, մէկ տարեկան տասնեւչորս անարատ գառներ. Եւ նորանց հացի նուէրը և 33
թափելու նուէրները՝ զուարակների, խոյերի և գառների համար, իրանց թիւին համեմատ ըստ օրինի լինեն. Եւ մէկ նոխազ 34
մեղքի պատարագ բացի միանգեւնաւոր ողջակէզից, նորա հացի նուէրից և նորա թափելու նուէրից ։
Ութերորդ օրը ձեզ համար ա- 35
նասնախմբութիւն լինի, ոչ մի ծառայական գործ չանէք, Եւ եհո- 36
վայի համար մատուցանէք ողջակէզ իբրև անուշահոտ պատարագ մէկ զուարակ, մէկ խոյ, մէկ տարեկան եօթը անարատ գառներ. Եւ նորանց հացի նուէրը և 37
նորանց թափելու նուէրները՝ զուարակի, խոյի և գառների համար, իրանց թիւին համեմատ ըստ օրինի լինեն ։ Եւ մէկ նո- 38
խազ մեղքի պատարագ բացի միանգեւնաւոր ողջակէզից և նորա հացի նուէրից և նորա թափելու նուէրից ։
Այս մատուցանէք եհովային 39
ձեր տօներումը բացի ձեր ուխտերի և ձեր կամաւոր ընծաների ողջակէզներից, հացի նուէրներից և թափելու նուէրներից և խաղաղաթիւան զոհերից ։
Եւ Մովսէսն ասաց Իսրայէլի 40
որդիներին այն ամենը ինչ որ եհովան Մովսէսին պատուիրել էր ։

ԳԼ. Լ.

1 Եւ Մովսէսն Իսրայէլի որդիների իշխանների հետ խօսեց
2 ասելով. Այս է եհովայի պատուիրած բանը. Եթէ մէկ մարդ եհովային ուխտ անէ, կամ երդում անէ իր անձը կապելու համար, նա իր խօսքը դատարկ չանի. բոլոր իր բերանից դուրս եկածին պէս անէ ։
3 Եւ եթէ մէկ կին եհովային ուխտ անէ, և իր մանկութեան
4 ժամանակին իր հօր տանը ուխտով իրան կապէ, Եւ նորա հայրը լսէ նորա ուխտը և նորա իր անձի վերայ կապած կապը, և նորա հայրը լռէ նորա մասին, այն ժամանակ նորա բոլոր ուխտերը հաստատուին և նորա անձի վերայ կապած բոլոր կապերը
5 հաստատուին ։ Բայց եթէ նորա հայրը նորան արգիլէ իր լսած օրը, այն ժամանակ նորա բոլոր ուխտերը և նորա անձի վերայ կապած կապերը անվաւեր լինեն. և եհովան նորան թողութիւն կ'տայ. որովհետև նորա հայրը նորան արգիլեց ։
6 Եւ եթէ նա ամուսնացաւ, և իր ուխտն կամ այն իր շրթունքներից դուրս եկած իր անձը կապող անխորհուրդ խօսքն իր վե-
7 րայ լինի, Եւ նորա այրը լսէ, և լսած օրը լռէ նորա մասին, այն ժամանակ նորա ուխտերը հաստատուին, և իր անձի վերայ կապած կապերը հաստատ լինեն ։
8 Բայց եթէ նորա այրը իր լսած օրը նորան արգիլէ, նա այն ժամանակ նորա վերայ եղած ուխտը և նորա շրթունքներից դուրս եկած անխորհուրդ խօսքը, որով իր անձը կապել էր, անվաւեր է անում. և եհովան նորան թո-
9 ղութիւն կ'տայ ։
Բայց որևէայրի կամ արձակուած իւր ուխտը իր անձի վերայ կապած ամեն ինչ և իւր
10 կապը իր վերայ հաստատ մնայ ։
Եւ եթէ իր մարդի տանն է ուխտ
11 արել կամ երդումով իր անձի վերայ կապ կապել, Եւ նորա մարդը լսել է և լռել է նորա մասին և նորան չէ արգելել, այն ժամանակ նորա բոլոր ուխտերը հաստատուին և իր անձի վերայ կապած կապերը հաստատ լինեն,
12 Բայց եթէ նորա այրը իր լսած օրը նորանց խափանեց, այն ժամանակ նորա ուխտ անելու և իր անձը կապելու համար նորա բերանից դուրս եկած բոլոր խօսքերը անվաւեր լինեն. նորա այրը խափանեց նորանց և եհովան նորան
13 թողութիւն կ'տայ ։ Ինչ- ամեն ուխտը և անձը խոնարհեցնելու համար սրած կապող երդումը նորա այրը կարող է հաստատել, և նորա այրը կարող է խափանել ։ Եւ եթէ նորա այրը օրէցօր
14 լռել է նորա մասին, այն ժամանակ նորա ամեն ուխտերը և իր վերայ եղած ամեն կապերը հաստատում է. նա հաստատում է նորանց, քանի որում լռել է նորա մասին իր լսած օրը ։ Բայց ե-
15 թէ լռելուց յետոյ խափանէ նորանց, այն ժամանակ ինքը քաշէ նորա անօրէնութիւնը ։
Սորանք են այն կանոնները որ եհովան պատուիրեց Մովսէսին
16 մարդի և կնկայ մէջ, հօր և նորա մանկութեան ժամանակ իր հօր տանը ջուխտ աղջկան մէջ ։

ԳԼ. ԼԱ.

1 Եւ եհովան խօսեց Մովսէսի հետ ասելով.
2 Իսրայէլի որդիանց վրէժը առնես Մադիանացիներից և յետոյ ժողովես քո ժողովրդի հետ։
3 Եւ Մովսէսը խօսեց այն ժողովրդի հետ և ասեց. Զէզանից մարդիկ պատերազմեցէք պատերազմի համար, և գնան Մադիամի վերայ, որ Մադիամիցը
4 առնեն եհովայի վրէժը ։ Իսրայէլի բոլոր ցեղերի ամեն մէկից մէկ հազար մարդ պատերազմի ուղարկէք ։
5 Եւ Իսրայէլի հազարաւորներից ամեն մէկ ցեղից մէկ հազար մարդ ընտրուեցաւ՝ այսինքն տասներկու հազար հոգի պատերազմի համար պատրաստուած ։
6 Եւ Մովսէսը նորանց

պատերազմի ուղարկեց, ամեն
մէկ ցեղից մէկ հազար մարդ՝ նո-
րանց հետ և նորանց Եղիազար
քահանայի որդի Փենեհէսին պա-
տերազմի ուղարկեց, և սուրբ ա-
նօթներն ու ազդարարութեան
7 փողերը նորա ձեռքին։ Եւ Մա-
դիանացիների դէմ պատերազմե-
ցին, ինչպէս որ Եհովան Մովսէ-
սին պատուիրել էր, և բոլոր ա-
8 րուներին մեռցրին. Եւ նորանց
սպանուածների հետ Մադիամի
թագաւորներին էլ՝ Եւիին, Բո-
կոմին, Սուրին, Ուրին և Ռոբէ-
ին՝ Մադիամի հինգ թագաւոր-
ներին սպանեցին, և Բէովրի որդի
9 Բաղաամին սրով մեռցրին։ Եւ
Իսրայէլի որդիքը Մադիանացիներ-
ի կանայքը ու տղայքը գերի
առին, և նորանց բոլոր անասուն-
ները և հօտերը և ստացուածքը
10 աւար առին։ Եւ նորանց բոլոր
քաղաքները իրանց բնակարաններ-
ովը և բոլոր գիւղերը կրակով
11 այրեցին։ Եւ բոլոր աւարը և բո-
լոր կողոպուտը առին՝ թէ մարդ
12 և թէ անասուն։ Եւ գերիներին
և կողոպուտը և աւարը բերին
Մովսէսի, Եղիազար քահանայի
մօտ և Իսրայէլի որդկանց ժողով-
քին բանակը, որ Երիքովի դէմ
Յորդանանի մօտ՝ Մովաբի դաշ-
տերումն է։
13 Եւ Մովսէսը և Եղիազար քա-
հանան և ժողովքի բոլոր իշխան-
ները դուրս եկան բանակից նո-
14 րանց դիմաւորելու։ Եւ Մովսէսը
բարկացաւ զօրաց իշխանների հա-
զարապետների վերայ, որ պատե-
15 րազմիցը դալիս էին. Եւ Մովսէ-
սը նորանց ասեց. Մի՞թէ բոլոր
16 կանանցը ողջ թողեցիք։ Ահա
նորանք Բաղաամի խօսքովը պատ-
ճառ եղան Իսրայէլի որդկանց Փո-
քովրի գործումը Եհովայի դէմ
մեղանչելուն, և այն հարուածը
եկաւ Եհովայի ժողովքի վերայ։
17 Եւ հիմա երեխաներից ամեն ա-
րուին մեռցրէք, այն բոլոր կա-
նանցը, որ մարդ են դիտացել
արուի հետ պառկելով՝ մեռցրէք։
18 Եւ կանանցից այն բոլոր մանկա-
հասակ աղջիկներին, որոնք մարդ
չեն դիտացել արուի հետ պառ-
կելով՝ ձեզ համար ողջ թողե-
ցէք։ Եւ դուք եօթն օր բանա- 19
կից դուրս մնացէք. և ամեն ով
որ մարդ է մեռցրել և ամեն ով
որ մեռածի է դպել, երրորդ օ-
րը և եօթներորդ օրը մաքրուի՝
թէ դուք և թէ ձեր գերիները։
Եւ ամեն հանդերձ և ամեն մոր- 20
թի անօթ և այծի մազից շին-
ուած ամեն բան և ամեն փայտի
ման մաքրեցէք։
Եւ Եղիազար քահանան ասեց 21
պատերազմի գնացող զօրքերին.
Այս է այն օրէնքի կանոնը, որ
Եհովան Մովսէսին պատուիրեց։
Միայն ոսկին, արծաթը, պղին- 22
ձը, երկաթը, անագը և կապա-
րը, Ամեն կրակը մտնելու բանը 23
կրակիցը անցկացրէք, և նա մա-
քուր կ՛լինի, բայց մաքրութեան
ջրով մեղքից մաքրուի, սակայն
կրակը չ՛մտնող ամեն բան ջրից
անցկացնէք։ Եւ եօթներորդ օրը 24
ձեր հանդերձները լուանաք և
մաքրուիք, և յետոյ բանակը
մտնէք։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 25
հետ ասելով. Դու Եղիազար 26
քահանայի և ժողովքի նահա-
պետութիւնների իշխանների հետ
առնես առնուած կողոպուտի
գումարը՝ թէ մարդի և թէ ա-
նասունի. Եւ այն կողոպուտը 27
պատերազմի գնացող պատերազ-
մողներին և բոլոր ժողովքին հա-
ւասարապէս բաժանես։ Եւ պա- 28
տերազմի գնացող պատերազմող-
ներից Եհովայի հասը առնես,
հինգ հարիւրից մէկը՝ թէ մարդ-
կանցից, թէ արջառներից, թէ
էշերից և թէ ոչխարներից։ Նո- 29
րանց կէս բաժինիցը առնես, և
Եղիազար քահանային տաս իբրև
Եհովայի ընծայ։ Եւ Իսրայէլի 30
որդկանց կէս բաժինիցը յիսու-
նից մէկը առնես, թէ մարդկան-
ցից, թէ արջառներից, թէ էշե-
րից, թէ ոչխարներից և ամեն ա-
նասուններից, և նորանք Եհովա-
յի խորանին պահպանութիւնը
անող Ղևտացիներին տաս։ Եւ 31
արաւ Մովսէսը և Եղիազար քա-

հանան ինչպէս որ Եհովան Մով-
32 սէսին հրամայել էր։ Եւ կողո-
պուտը՝ այսինքն պատերազմող
զօրքի առած աւարի *գումարը
այս էր. վեց հարիւր եօթանա-
33 սունեւհինգ հազար ոչխար, Եօ-
թանասուն երկու հազար արջառ,
34 Եւ վաթսունեւմէկ հազար էշ.
35 Եւ կնիկներ, որ արուի հետ
պառկելով մարդ չեն դիտացել,
ամենը երեսուն երկու հազար
հոգի էին։
36 Եւ պատերազմի գնացողների
հաւասար բաժինը այս էր. ոչ-
խարների թիւը՝ երեք հարիւր ե-
րեսունեւեօթը հազար հինգ հա-
37 րիւր. Եւ ոչխարներից Եհովայի
հասը եղաւ՝ վեց հարիւր եօթա-
38 նասունեւհինգ. Եւ արջառները՝
երեսունեւվեց հազար, իսկ նո-
րանց հասը Եհովային եօթանա-
39 սունեւերկու. Եւ էշերը՝ երեսուն
հազար հինգ հարիւր, իսկ նո-
րանց հասը Եհովային վաթսուն
40 եւմէկ. Եւ մարդիկը տասնեւվեց
հազար հոգի, իսկ նորանց հասը
Եհովային երեսունեւերկու հոգի։
41 Եւ Մովսէսը Եհովային նուիր-
ուած հասը Եղիազար քահանա-
յին տուաւ, ինչպէս որ Եհովան
Մովսէսին պատուիրել էր։
42 Եւ Իսրայէլի որդկանց կէս բա-
ժինից էլ, որ Մովսէսը պատե-
րազմողներից բաժին էր առել,
43 (Եւ ժողովքի կէս բաժինը եղաւ
երեք հարիւր երեսունեւեօթը հա-
44 զար հինգ հարիւր ոչխար, Երե-
45 սունեւվեց հազար արջառ, Երե-
սուն հազար հինգ հարիւր էշ,
46 Եւ տասնեւվեց հազար հոգի։)
47 Եւ Մովսէսն առաւ Իսրայէլի
որդկանց կէս բաժինից՝ յիսունից
մէկը, թէ մարդից, թէ անա-
սունից, և նորանց տուաւ Եհո-
վայի խորանի պահպանութիւնն
անող Ղևտացիներին, ինչպէս որ
Եհովան՝ Մովսէսին պատուիրել
էր։
48 Եւ Մովսէսին մօտեցան զօրքի
հազարաւորների վերակացուն-
երը՝ այսինքն հազարապետները և
հարիւրապետները. Եւ Մովսէսին 49
ասեցին. Քո ծառաները մեր ձեռ-
քի տակ եղող պատերազմողների
գումարն առինք, և մեզանից մի
մարդ պակաս չէ։ Եւ մատուցա- 50
նենք Եհովայի ընծան՝ մեզանից
ամեն մէկը ինչ որ գտանք՝ ոսկի
զարդեր, շղթաներ, ապարանջան-
ներ, մատանիներ, օղեր և փողո-
շուկներ, որ Եհովայի առաջին
մեր հոգիների համար քաւու-
թիւն անենք։ Եւ Մովսէսն ու 51
Եղիազար քահանան նորանցից ա-
ռին ոսկին՝ ամենն էլ բանուած
զարդեր։ Եւ հազարապետներից 52
ու հարիւրապետներից Եհովայի
համար մատուցրուած ընծայի բո-
լոր ոսկին տասնեւվեց հազար եօ-
թը հարիւր յիսուն սիկղ էր։
Պատերազմողների ամեն մէկն իր 53
համար կողոպուտ էր առել։ Եւ 54
Մովսէսն ու Եղիազար քահանան
հազարապետներից և հարիւրա-
պետներից ոսկին առին և ժողով-
քի խորանը բերին, իբրև Իսրա-
յէլի որդկանց յիշատակ Եհովա-
յի առաջին։

ԳԼ. ԼԲ

Եւ Ռուբէնի որդիքը ու Գադի 1
որդիքը խիստ շատ անասուններ
ունէին. և տեսան Յազերի երկի-
րը և Գաղաադի երկիրը, որ ահա
այն տեղը անասունի տեղ էր.
Եւ Գադի որդիքը և Ռուբէնի 2
որդիքը գնացին և Մովսէսի, Ե-
ղիազար քահանայի և ժողովքի
իշխանների հետ խօսելով ասե-
ցին. Ադարովդ, Դեբոն, Յազեր, 3
Նամրա, Եսեբոն, Եղէաղէ, Սե-
բամա, Նաբաւ, և Բէան, Այ- 4
սինքն այն երկիրը որ Եհովան Իս-
րայէլի ժողովքի առաջին զարկեց
անասունի երկիր է, և քո ծա-
ռաները անասուններ ունեն. Եւ 5
ասեցին՝ Եթէ մենք քո առաջին
շնորհք գտանք, այս երկիրը քո
ծառաներին տրուի կալուածքի
համար. մեզ Յորդանանից մի
անցկացնիր։
Եւ Մովսէսը Գադի որդկանցը 6
և Ռուբէնի որդկանցը ասեց. Մի-

*Կամ մնացորդը

թէ ձեր եղբայրները պատերազ-
մի գնան և դուք այստեղ նըս-
7 տէք։ Եւ ինչու համար էք Իս-
րայէլի որդկանց սիրտը թուլա-
ցնում, որ չ՚անցնեն այն երկիրը,
որ Եհովան տուել է նորանց։
8 Ձեր հայրերն էլ այսպէս արին,
երբոր նորանց Կադես Բառնեայից
ուղարկեցի երկիրը լրտեսելու հա-
9 մար։ Որովհետև նորանք մինչև
Եսքողի ձորը վեր գնացին և եր-
կիրը տեսան, և Իսրայէլի որդ-
կանց սիրտը թուլացրին, որ չը
մտնեն այն երկիրը որը Եհովան
10 տուել էր նորանց։ Եւ այն օրը
Եհովայի բարկութիւնը բորբոք-
ուեցաւ և երդում արաւ ասե-
11 լով. Թէ Եգիպտոսից դուրս ե-
կած մարդիկը՝ քսան տարեկանից
և վեր եղողները չեն տեսնիլ այն
երկիրը, որի համար երդում արի
Աբրահամին, Իսահակին և Յա-
կոբին, որովհետև ինձ չ՚հետևե-
12 ցին. Բացի Կենեզեան Յեփոնէի
որդի Քաղէբից և Նաւէի որդի
Յեսուից, որոնք կատարելապէս
13 Եհովային հետևեցին։ Եւ Եհո-
վայի բարկութիւնը Իսրայէլի վե-
րայ բորբոքուեցաւ, և նորանց
ման ածեց անապատումը քառա-
սուն տարի, մինչև որ Եհովայի
աչքի առաջին չարութիւն անող
ազգը բոլորովին սպառուեցաւ։
14 Եւ ահա դուք ձեր հայրերի
տեղն էք կանգնել մեղաւոր
մարդկանց զաւակների պէս, որ
Եհովայի սաստիկ բարկութիւնը
Իսրայէլի վերայ կրկին աւելացը-
15 նէք։ Որովհետև եթէ դուք նո-
րանից խոտորուէք, նա էլ կրկին
այս ժողովրդին անապատումը կը
ձգէ և դուք այս բոլոր ժողովրդ-
ի կորստեանը պատճառ կ՚լի-
16 նէք։ Եւ նորանք մօտեցան նո-
րան և ասեցին. Թող մենք այս-
տեղ մեր անասունների համար
փարախներ և մեր ընտանիքների
17 համար քաղաքներ շինենք. Բայց
մենք շուտով պատրաստուինք
Իսրայէլի որդկանց առաջին, մին-
չև որ նորանց իրանց տեղերը տա-
նենք. և մեր ընտանիքները պա-
րըսպաւոր քաղաքներում բնակ-
ուեն այս երկրի բնակիչների դէմ։
Մենք մեր տները չ՚դառնանք, 18
մինչև որ Իսրայէլի որդկանց ամեն
մէկն իր ժառանգութիւնը ժա-
ռանգէ։ Որովհետև մենք Յորդա- 19
նանի այն կողմումը և էլ հեռու
նորանց հետ ժառանգել չենք ու-
զում, ըստ որում մեր ժառան-
գութիւնը Յորդանանի այս կող-
մումը դէպի արևելք է մեզ հա-
սել։ Եւ Մովսէսն ասեց նորանց. 20
Եթէ այս բանն անէք, եթէ Ե-
հովայի առաջին պատրաստուիք
պատերազմի համար, Եւ Եհովայի 21
առաջին դուք ամենքդ էլ պատ-
րաստուած Յորդանանովն անցնիք,
մինչև որ նա իր թշնամիներին իր
առաջիցը քշէ, Եւ այն երկիրը 22
Եհովայի առաջին նուաճուի և
յետոյ ետ դառնաք, այն ժամա-
նակ Եհովայի առաջին և Իսրա-
յէլի առաջին անմեղ էք, և այս
երկիրը Եհովայի առաջին ձեր
կալուածքը լինի։ Բայց եթէ այս- 23
պէս չ՚անէք, ահա Եհովայի դէմ
մեղք գործեցիք, և գիտացէք որ
ձեր մեղքը ձեզ կ՚գտնէ։ Ձեր 24
ընտանիքների համար քաղաքներ,
և ձեր հօտերի համար փարախ-
ներ շինեցէք, և ձեր բերանից
դուրս եկածն արէք։ Եւ Գադի 25
որդիքը և Ռուբէնի որդիքը խօ-
սեցին Մովսէսի հետ ասելով.
Ծառաներդ կ՚անեն ինչպէս որ
մեր Եհովան պատուիրում է։
Մեր զաւակները, մեր կանայքը, 26
հօտերը և մեր բոլոր անասուններ-
ը այստեղ կ՚լինեն Գաղաադի
քաղաքներումը. Բայց ծառաներդ 27
ամենքս պատրաստուած գունդով
կ՚անցնենք պատերազմի համար
ինչպէս որ մեր տէրն ասում է։
Եւ Մովսէսը նորանց մասին պատ- 28
ուիրեց Եղիազար քահանային և
Նաւէի որդի Յեսուին և Իսրա-
յէլի որդկանց ցեղերի նահապե-
տութիւնների իշխաններին. Եւ 29
Մովսէսն ասեց նորանց. Եթէ
Գադի որդիքը և Ռուբէնի որդի-
քը ամենքն էլ պատերազմի հա-
մար պատրաստուած՝ ձեզ հետ
Յորդանանովն անցնեն Եհովայի
առաջին և այն երկիրը ձեր ա-

ռաջին նուաճուի, այն ժամանակ
Գաղաադի երկիրը նորանց կալ-
30 ուածք տաք. Բայց եթէ պատ-
րաստուած ձեզ հետ չ՚անցնեն,
նորանք կալուածք ստանան ձեզ
31 հետ Քանանի երկրումը։ Իսկ
Գադի որդիքը և Ռուբէնի որդի-
քը պատասխանեցին և ասեցին.
Եհովան ինչպէս որ պատուիրեց
քո ծառաներին այնպէս կ՚անենք։
32 Մենք պատրաստուած Եհովայի
առաջին Քանանի երկիրը կ՚անց-
նենք. բայց մեր ժառանգութեան
կալուածքը Յորդանանի այս կող-
33 մումը կ՚լինի։ Եւ Մովսէսը նո-
րանց՝ այսինքն Գադի որդկանց և
Ռուբէնի որդկանցը և Յովսէփ-
եան Մանասէի կէս ցեղին, տուաւ
Ամօրհացիների Սեհոն թագաւո-
րի թագաւորութիւնը և Բասա-
նի Ովգ թագաւորի թագաւորու-
թիւնը, երկիրն իր քաղաքներո-
վը՝ երկրի քաղաքների շուրջը ե-
34 ղած սահմաններովը։ Եւ Գադի
որդիքը շինեցին Դեբոնը, Ադա-
35 րովդը և Աբոէրը, Եւ Ատրօթ-
սովփանը, Յազերը, և Յոգբէհան,
36 Եւ Բեթնամրան և Բեթարանը՝
պարսպաւոր քաղաքներ և հօտե-
37 րի փարախներ, Ռուբէնի որդիքն
էլ Եսեբոնը, Եղէաղէն և Կա-
38 րիաթեմը շինեցին. Եւ Նաբաւը
Բէէլմօնը (որոնց անունները փո-
խեցին.) և Սեբաման, և իրանց
շինած քաղաքներին անուններ
39 դրին։ Եւ Մանասեան Մաքիրին
որդիքը Գաղաադ գնացին և ա-
ռին նորան, և նորա միջի Ամօր-
40 հացիներին քշեցին։ Եւ Մովսէսը
Գաղաադը տուաւ Մանասեան
Մաքիրին, որ այնտեղ բնակուեց։
41 Եւ Մանասեան Յայիրը գնաց նո-
րանց գիւղաքաղաքներն առաւ և
նորանց Հաւօթ-յայիր անուանեց։
42 Եւ Նոբահը գնաց և Կանաթն և
նորա գիւղերն առաւ և նորան
իր անունովը Նոբահ կոչեց։

ԳԼ. ԼԳ

1 Սորանք են Իսրայէլի որդկանց
իշխանները, որ Մովսէսի և Ահա-
րօնի ձեռքովը Եգիպտոսի երկ-
րիցն իրանց զօրքերովը դուրս ե-
կան։ Եւ Մովսէսը գրեց Եհովա- 2
յի հրամանովը նորանց իջևաններ-
ի համեմատ նորանց գնացքներ-
ը. և սորանք են նորանց գնացք-
ների համեմատ նորանց իջևան-
ները։ Եւ չուեցին Ռամսեսից ա- 3
ռաջին ամսումը այսինքն առաջին
ամսի տասնեւհինգերորդ օրը՝ զատ-
կի հետևեալ օրը Իսրայէլի որ-
դիքը բարձր ձեռքով դուրս ե-
կան բոլոր Եգիպտացիների աչքի
առաջը. Եւ Եգիպտացիները թա- 4
ղում էին այն բոլոր անդրանիկ-
ներին, որ Եհովան նորանց մէջ
ջարդեց. և Եհովան նորանց աստ-
ուածների վերայ դատաստան ա-
րաւ։ Եւ Իսրայէլի որդիքը չուե- 5
ցին Ռամսեսից և իջևան արին
Սոկքովթում։ Եւ Սոկքովթից 6
չուեցին և իջևան արին անապա-
տի ծայրին եղած Ոթոմումը։ Եւ 7
Ոթոմից չուելով՝ դէպի Փիաիրօթ
դարձան, որ Բէեղսեփոնի դիմացն
է, և իջևան արին Մագդոզի ա-
ռաջին։ Եւ Փիաիրօթի առաջից 8
չուեցին և ծովի միջովն անցնելով՝
Եկան անապատը, և Ոթոմի անա-
պատումը երեք օրուայ ճանա-
պարհ գնացին և իջևան արին
Մեռայումը։ Եւ չուեցին Մեռա- 9
յից և եկան Եղիմ. և Եղիմում
տասնեւերկու ջրի աղբիւր և եօ-
թանասուն արմաւենի կային. և
այնտեղ իջևան արին։ Եւ չուե- 10
ցին Եղիմից և Կարմիր ծովի մօտ
իջևան արին։ Եւ Կարմիր ծովից 11
չուեցին և իջևան արին Սին ա-
նապատումը։ Եւ Սին անապատի- 12
ցը չուեցին և իջևան արին Դափ-
կայ։ Եւ Դափկայից չուեցին և 13
իջևան արին Եղուսում։ Եւ Եղու- 14
սից չուեցին և իջևան արին Ռա-
փիդիմում և այնտեղ ժողովրդի
համար խմելու ջուր չկար։ Եւ 15
Ռափիդիմից չուեցին և իջևան
արին Սինայ անապատումը։ Եւ 16
Սինայ անապատից չուեցին և ի-
ջևան արին Կիբրօթ-հաթթավա-
յում։ Եւ Կիբրօթ-հաթթավա- 17
յից չուեցին և իջևան արին Ա-
սերովթում։ Եւ Ասերովթից չը- 18
ուեցին և իջևան արին Ռաթա-

49 մայուժ։ Եւ Ռաթամայից չուեցին և իջևան արին Ռեմոն–փա-
20 րեսուժ։ Եւ Ռեմոն–փարեսից չուեցին և իջևան արին Լեբնա-
21 յուժ։ Եւ Լեբնայից չուեցին և
22 իջևան արին Ռեսսայուժ։ Եւ Ռեսսայից չուեցին և իջևան ա-
23 րին Կեհելաթայուժ։ Եւ Կեհելաթայից չուեցին և իջևան արին
24 Սեփար սարուժը։ Եւ Սեփար սարիցը չուեցին և իջևան արին Ռա-
25 բադայուժ։ Եւ Ռարադայից չուեցին և իջևան արին Մակելո-
26 թուժ։ Եւ Մակելոթից չուեցին
27 և իջևան արին Թաահաթուժ։ Եւ Թաահաթից չուեցին և իջևան ա-
28 րին Թարայուժ։ Եւ Թարայից չուեցին և իջևան արին Մաաե-
29 կայուժ։ Եւ Մաաեկայից չուեցին և իջևան արին Համոնայուժ։
30 Եւ Համոնայից չուեցին և իջե-
31 ւան արին Մոսերոթուժ։ Եւ Մո-
32 սերոթից չուեցին և իջևան արին Բանե–յականուժ։ Եւ Բանե–յա-
33 կանից չուեցին և իջևան արին Հորգադգադուժ։ Եւ Հորգադ-
34 գադից չուեցին և իջևան արին Եոտբաթայուժ։ Եւ Եոտբաթա-
35 յից չուեցին և իջևան արին Եբ-
36 բոնայուժ։ Եւ Եբրոնայից չուեցին և իջևան արին Գասիոն–գա-
37 բերուժ։ Եւ Գասիոն–գաբերից չուեցին և իջևան արին Սին ա-
նապատուժն այսինքն Կադեսուժ։
Եւ Կադեսից չուեցին և իջևան արին Հոր սարը վերջ եղեալ,
38 գոմշի երկրի ծայրումն է։ Եւ Ահարօն քահանայ Եհովայի հրա-
մանովը Հոր սարը վեր ելաւ, և այնտեղ մեռաւ, Իսրայելի որդիկանց Եգիպտոսի երկրից դուրս գալու քառասներորդ տարուայ
39 հինգերորդ ամսի մէկին։ Եւ Ահարօնը Հոր սարի վերայ մեռած ժամանակ հարիւր քսանևերեք տարեկան էր։
40 Եւ Քանանի երկրի հարաւային կողմումը բնակող Աբադի Քանանիս թագաւորը լսեց Իսրայելի
41 որդկանց գալը։ Եւ Հոր սարից չուեցին և իջևան արին Սելմո-
42 նայուժ։ Եւ Սելմոնայից չուեցին
43 և իջևան արին Փունոնուժ։ Եւ

Փունոնից չուեցին և իջևան արին Ովոթուժ։ Եւ Ովոթից չուե- 44
ցին և իջևան արին Մովաբի սահմաններուժն եղող Իյե–աբարիմուժն։ Եւ Իյե–աբարիմից չուե- 45
ցին և իջևան արին Դեբոնգադուժ։ Եւ Դեբոնգադից չուեցին 46
և իջևան արին Գելմոն–դեբլաթեմուժ։ Եւ Գելմոն–դեբլաթե- 47
մից չուեցին և իջևան արին Նաբաուի առաջի Աբարիմի սարերուժ։ Եւ Աբարիմի սարերից չուե- 48
ցին և իջևան արին Երիքովի դէմ Յորդանանի մօտ Մովաբի դաշտերուժը։ Եւ նորանք իջևան ա- 49
րին Յորդանանի մօտ Մովաբի դաշտերուժը, Բեթ–եսիմոթից մինչև Աբելսատիմ։

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 50
հետ Մովաբի դաշտերուժը Երիքովի դէմ Յորդանանի մօտ՝ ասելով։ Իսրայէլի որդկանց հետ խո- 51
սիր և նորանց ասիր։ Երբոր Յորդանանից Քանանացիների երկիրն անցնէք, Այն ժամանակ այն երկ- 52
րի բոլոր բնակիչներին ձեր առաջից քշէք և նորանց բոլոր պատկերաւոր խոշտէրը կործանէք և նորանց բոլոր թափծու կուռքերը կործանէք. և նորանց բոլոր բարձր տեղերը քանդէք։ Եւ այն 53
երկիրը ձեր իշխանութեանը տակ առնէք և նորա մէջ բնակուէք. որովհետև այն երկիրը ձեզ տուի, որ ժառանգէք նորան։ Եւ այն 54
երկիրը վիճակով ժառանգէք ձեր առհասերի համեմատ. շատին ժառանգութիւնը շատ տաք, և քիչին ժառանգութիւնը քիչ տաք, որ տեղ վիճակը որին որ դուրս գայ՝ նորանը լինի. ձեր հայրերի ցեղերի համեմատ ժառանգէք։ Բայց եթէ այն երկրի բնակիչներին ձեր առաջից չ'քշէք, այն 55
ժամանակ որին որ նորանցից ողջ էք թողել, ձեր աչքերի հասիր փուշեր և ձեր կողերի համար տատասկներ կ'լինեն և ձեզ կը նեղեն ձեր բնակած երկրումը։
Եւ անպատճառ ինչ որ մտածել 56
էի նորանց անելու՝ նոյնը ձեզ կ'անեմ։

ԳԼ. ԼԴ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
2 հետ ասելով. Իսրայէլի որդկանց պատուիրիր և նորանց ասիր. Երբոր դուք Քանանի երկիրը մտնէք, այս է այն երկիրը որ ձեզ ժառանգութիւն է ընկնելու, Քանանի երկիրն իր սահմաններովը. Եւ ձեր հարաւային սահմանը լինի Սին անապատից մինչև
3 Եդոմի այնպես որ ձեր հարաւային սահմանը լինի արևելքից Ադի
4 ծովի ծայրիցը. Եւ ձեր հարաւային սահմանը Ակրաբիմի բարձրավը պտոյտ տալով մինչև Սին հասնէ և –յ–ուժէշէ դուրս գալով Կադես–բառնեայի հարաւային կողմովը և դնայ Ասար–ադդար և
5 հասնի Ասեմոն. Եւ պտոյտ տայ Ասեմոնից դէպի Եգիպտոսի հեղեղատը մինչև որ դուրս գայ Ովը։
6 Եւ ձեր արևմտեան սահմանը Մեծ ծովը լինի. ձեզ համար արևմտեան սահման այս լինի։
7 Եւ ձեր հիւսիսային կողմի սահմանը այս լինի՝ Մեծ ծովից մինչև
8 Հովր սարը նշան անէք, Հովր սարիցը մինչև Եմաթ նշան անէք և այնտեղից դուրս դնայ մինչև Սեդադ. Եւ դուրս գայ մինչև Զեփրան և հասնի Ասար–Ենանի մէջ. ձեր հիւսիսային սահմանը սա լինի։
10 Եւ ձեր արևելեան սահմանը նշան անէք Ասար–Ենանից մինչև
11 Սեփամ. Եւ այս սահմանը Ասիրնի արևելեան կողմից՝ Սեփամից Ռեփղա իջնէ. և այս սահմանը արևելքի կողմից իջնելով Քինեռեթի ծովի եղերքովը քաշի. Եւ
12 այս սահմանը իջնէ Յորդանան և Աղի ծովի մէջ վերջանայ։ Երկիրը իր շրջակայ սահմաններովը ձեզ համար այս լինի։
13 Եւ Մովսէսն Իսրայէլի որդկանց պատուիրեց և ասեց. Սա է այն երկիրը որ դուք վիճակով պիտի ժառանգէք, ինչպես որ Եհովան պատուիրել է տալ ինն
14 ու կէս ցեղին. Որովհետև Ռուբինի որդկանց ցեղն իրանց Հայրերի տների համեմատ և Գադի որդկանց ցեղը իրանց հայրերի տների համեմատ և Մանասէի կէս ցեղը առին իրանց ժառանգութիւնը. Այս երկու ցեղերը 15
և կէս ցեղը առել են իրանց ժառանգութիւնը Երիքովի դէմ Յորդանանի այս կողմում դէպի արևելք։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 16
հետ ասելով. Սորանք են այն 17
մարդկանց անուննները, որոնք ձեր մէջ պիտի բաժանեն երկիրը ժառանգութեան համար. Եղիազար քահանան և Նաւէի որդի Յեսուան. Եւ ամեն մէկ ցեղից մէկ իշ- 18
խան առնէք, այն երկիրը ժառանգութեան բաժանելու։ Եւ այն 19
մարդկանց անուննները սորանք են. Յուդայի ցեղից Յեփոնէի որդի Քաղէբը, Շմաւոնի որդկանց ցե- 20
ղից Ամիուդի որդի Սամուէլը, Բենիամինի ցեղից Քասլոնի որդի 21
Եղիդադը, Դանի որդկանց ցեղիցը 22
իշխան՝ Եգղիի որդի Բոկկին, Յով- 23
սեփի որդիներից Մանասէի որդկանց ցեղից իշխան՝ Եփոտի որդի Անիելը, Եւ Եփրեմի որդկանց ցե- 24
ղից իշխան՝ Սափաթանի որդի Կամուելը, Եւ Զաբուղոնի որդ- 25
կանց ցեղից իշխան՝ Փառնակի որդի Եղիսափանը, Եւ Իսաքարի 26
որդկանց ցեղից իշխան՝ Ազանի որդի Փաղտիելը, Եւ Աշերի որդ- 27
կանց ցեղից իշխան՝ Սելոմիի որդի Աքիուդը, Եւ Նեփթաղիմի որդ- 28
կանց ցեղից իշխան՝ Ամիուդի որդի Փադայելը։ Սորանք են որոնց 29
Եհովան հրամայեց, որ Քանանի երկրումն Իսրայէլի որդկանցը ժառանգութիւն բաժանեն։

ԳԼ. ԼԵ

Եւ Եհովան Մովսէսի հետ Մո- 1
աբի դաշտերուժը Երիքովի դէմ Յորդանանի մօտ խօսեց Մովսէսի հետ ասելով. 2
Պատուիրիր Իսրայէլի որդկանցը որ իրանց ժառանգութեան կալուածքից Ղեւտացիներին բնակուելու քաղաքներ տան. Նաև քաղաքների բոլորքրումն եղած արուարձանները Ղեւտացիներին տաք։ Եւ 3
քաղաքները բնակութեան համար լինեն նորանց համար և արո-

ուարձանները նորանց արջառներ-
բի համար, նորանց հօտերի և նո-
4 բանց անասուններուն համար։ Եւ
քաղաքները արուարձանները, որ
Ղեւտացիներին էք տալու, քա-
ղաքի պարսպիցը դուրս շուրջա-
5 նակի հազար կանգուն լինեն։ Եւ
քաղաքի դուրսը նորանց չափէք,
արեւելեան կողմից երկու հազար
կանգուն, հարաւային կողմից եր-
կու հազար կանգուն, արեւմտե-
ան կողմից երկու հազար կան-
գուն, և հիւսիսային կողմից եր-
կու հազար կանգուն, և քաղա-
քը մէջտեղումը լինի, նորանց
քաղաքներուն արուարձանները սա
6 լինեն։ Եւ այն քաղաքներիցը որ
Ղեւտացիներին էք տալու՝ այն
վեց ապաստանի քաղաքները որո-
շէք, որ սպանողը այնտեղ փախչէ,
և բացի սորանցից քառասուներ-
7 երկու քաղաք տաք։ Բոլոր քա-
ղաքները որ Ղեւտացիներին էք
տալու՝ քառասուներեւերկու քաղաք
լինի. նորանք իրանց արուարձան-
8 ներովը։ Եւ այն քաղաքները
որ Իսրայէլի որդկանց կալուած-
քիցը պիտի տաք, շատիցը շատ
և քիչիցը քիչ առնէք. ամեն
մէկն իր առած ժառանգութեան
չափովը իր քաղաքներիցը Ղեւտա-
ցիներուն տայ։
9 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
10 հետ ասելով. Իսրայէլի որդկանց
հետ խօսիր և նորանց ասիր. եր-
բոր Յորդանանիցը փանանի եր-
11 կիրն անց կենաք, Ա՛յն ժամանակ
ձեզ համար քաղաքներ որոշէք,
որոնք ապաստանի քաղաքներ լի-
նեն ձեզ համար, որ այնտեղ
փախչէ սխալմամբ մարդ զարկող
12 սպանողը։ Եւ այն քաղաքները
ձեզ համար ապաստանարան լի-
նեն վրէժխնդիրիցը. և սպանողը՝
դատաստանի համար ժողովքի ա-
13 ռաջին չ'երևացած՝ չ'մեռնի։ Եւ
այն քաղաքները, որ պիտի տաք,
վեց ապաստանի քաղաքներ լինեն
14 ձեզ համար։ Քաղաքների երկրը
Յորդանանի այս կողմումը տաք,
և քաղաքներուն երկրը փանանի
երկրումը տաք, նորանք ապաս-
15 տանի քաղաքներ լինեն։ Ա՛յս վեց
քաղաքները Իսրայէլի որդկանց
համար և օտարականի և ձեր մի-
ջի պանդխտի համար ապաստա-
նարան լինեն, որ այնտեղ փախչէ
ամեն ով որ սխալմամբ մարդ
մեռցնէ։

16 Եւ եթէ մէկը երկաթի գոր-
ծիքով մէկին զարկէ որ մեռնէ,
նա մարդասպան է. մարդասպա-
նը անպատճառ պիտի մեռցնուի։
17 Կամ եթէ մէկը մի մահառիթ
բռնաբարով մէկին զարկէ որ
մեռնէ, նա մարդասպան է. մար-
դասպանը անպատճառ պիտի մեռ-
ցնուի։ Կամ եթէ մէկը ձեռ-
18 քով գործածուելու փայտէղէն
մահառիթ գործիքով զարկէ՝ որ
մեռնէ, նա մարդասպան է. մար-
դասպանը անպատճառ պիտի
մեռցնուի։ Արիւնի վրէժխնդիրը
19 մեռցնէ մարդասպանին, երբոր
նորան հանդիպէ՝ թող մեռցնէ
նորան։ Եւ եթէ նա թշնամու-
20 թեամբ հրէ նորան կամ նենգաու-
թեամբ նորա վերայ մի բան ձգե-
լով նորան մեռցնելու լինի, կամ
21 եթէ թշնամութեան պատճա-
ռով ձեռքովը զարկէ նորան, որ
մեռնէ. զարկողը անպատճառ
մեռցնուի, նա մարդասպան է.
արիւնի վրէժխնդիրը նորան մեռ-
ցընէ երբոր մարդասպանին հան-
դիպէ։

22 Բայց եթէ յանկարծ առանց
թշնամութեան հրէ նորան, կամ
թէ առանց նենգութեան նորա
23 վերայ մէկ գործիք ձգէ, կամ թէ
նորա վերայ մի ինչ որ մահառիթ
քար ձգէ առանց տեսնելու, որ
նա մեռնէ, և նա նորան թշնամի
չէ և նորա չարիքը չէր ուզում,
24 Ա՛յն ժամանակ ժողովքը սպանո-
ղին և արիւնի վրէժխնդրին մէջ-
տեղը այս օրէնքներուն համեմատ
դատաստան անէ. Եւ ժողովքը
25 ապատէ սպանողին արիւնի վրէժ-
խնդրի ձեռքից, և ժողովքը նո-
րան դարձնէ իր ապաւինած ա-
պաստանի քաղաքը, և նա այն-
տեղ բնակուէ, մինչև որ սուրբ
իւղով օծուած քահանայապետը
մեռնէ։ Բայց եթէ սպանողն իր
26 ապաւինած ապաստանի քաղաքի
սահմանից երբեք դուրս գայ,
27 Եւ արիւնի վրէժխնդիրը նորան
իր ապաստանի քաղաքի սահմա-
նիցը դուրս դանէ և արիւնի վր-
էժխնդիրը սպանողին մեռցնելու
լինի, մահապարտ չ'համարուի.
28 Որովհետև նա պէտք է իր ա-
պաստանի քաղաքումը նստէր
մինչև որ քահանայապետը մեռ-
նէր. և քահանայապետի մեռնե-
լուց յետոյ սպանողն իր կալ-
29 ուածքի երկիրը դառնայ։ Սորանք
ձեզ համար դատաստանի կա-
նոններ լինեն ձեր ազգերումը ձեր
բոլոր բնակութիւնների մէջ։
30 Ով որ մարդ մեռցնէ, սպանո-
ղը վկաների բերանով մեռցնուի,
բայց միայն մէկ մարդ չ'վկայէ մի
անձի դէմ նորան մեռցնելու հա-
31 մար։ Եւ մահապարտ սպանողի
կեանքի համար փրկանք չ'առ-
նէք. որովհետև նա անպատճառ
32 պիտի մեռցնուի։ Եւ ապաստանի
քաղաքը փախչողի համար փրը-
կանք չ'առնէք, որ նա դառ-
նայ իր քաղաքը և նստէ քահա-
33 նապետի մահիցն առաջ։ Եւ
ձեր բնակած երկիրը չ'պղծէք,
որովհետև արիւնը պղծում է
երկիրն և նորա մէջ թափուած
արիւնի համար երկրին քաւու-
թիւն չի լինիլ, բայց միայն նո-
34 րան թափողի արիւնով։ Ուրեմն
ձեր բնակած երկիրը չ'պղծէք,
որի մէջ ես պիտի բնակուիմ.
որովհետև ես Եհովա բնակվում
եմ Իսրայէլի որդկանց մէջ։

ԳԼ. Լ.Զ

1 Եւ Յովսէփի որդկանց տոհմե-
րից Մանասէի որդի Մաքիրի որ-
դի Գաղաադի որդկանց տոհմի
իշխանները մտան, և Մովսէսի
առաջին և Իսրայէլ որկանց նա-
2 խապետութիւնների իշխանների
առաջին խօսեցին, Եւ ասեցին,
Եհովան մեր տիրոջը հրամայեց,
որ երկիրը Իսրայէլի որդկանց վի-
ճակով ժառանգութիւն տայ, և
մեր տէրը Եհովայից հրաման ա-
ռաւ որ մեր եղբայր Սալպաադի
ժառանգութիւնը նորա աղջկե-
րանցը տայ. Եւ եթէ նորանք Իս- 3
րայէլի որդկանց մի ցեղի որդի-
ներին կին լինեն, նորանց ժա-
ռանգութիւնը մեր հայրերի ժա-
ռանգութիւնիցը պիտի վերանայ,
և այն ցեղի ժառանգութեան
վերայ պիտի աւելանայ որոնց որ
կին են դառել. Մեր ժառան- 4
գութեան վիճակիցը պիտի վե-
րանայ. Եւ Իսրայէլի որդկանց
Յոբելեանը գալիս՝ նորանց ժա-
ռանգութիւնը այն ցեղի ժա-
ռանգութեան վերայ պիտի ա-
ւելանայ, որոնց որ կին եղան, և
նորանց ժառանգութիւնը մեր
հայրերի ցեղի ժառանգութիւնի-
ցը կ'վերանայ։
Եւ Մովսէսը պատուիրեց Եհո- 5
վայի խօսքովը Իսրայէլի որդկան-
ցը և ասեց. Յովսէփի որդկանց
ցեղը ուղիղ են խօսում։ Սալ- 6
պաադի աղջկերանց մասին Եհո-
վայի հրամայած խօսքը սա է որ
ասեց. Որոնց որ կ'ուզին՝ թող
նորանց կին լինեն, միայն թէ ի-
րանց հօր ցեղից եղողներին կին
լինեն. Եւ Իսրայէլի որդկանց 7
ժառանգութիւնը մէկ ցեղից ու-
րիշ ցեղի չ'անցնի. որովհետև
Իսրայէլի որդկանց ամենքն էլ
իրանց հայրերի ցեղի ժառան-
գութեանը պիտի յարին։ Եւ ա- 8
մեն աղջիկ որ Իսրայէլի որդկանց
ցեղերի մէջ մէկ կալուածքի ժա-
ռանգ լինի, իր հօր ցեղից եղող
մէկին կին դառնայ, որ Իսրայէլի
որդկանց ամեն մէկն իր հայրերի
ժառանգութիւնը ժառանգէ։ Եւ 9
ժառանգութիւնը մէկ ցեղից ու-
րիշ ցեղի չ'անցնի, բայց Իսրայէլի
որդկանց ցեղերի ամեն մէկն իր
ժառանգութեանը յարի։
Ինչպես որ Եհովան Մովսէսին 10
պատուիրեց, Սալպաադի աղջիկ-
ներն այնպես արին. Որովհետև 11
Սալպաադի աղջիկները՝ Մաալա,
Թերսա, Եգդա, Մեղքա և Նուա
իրանց հօր եղբօրորդիների հետ
ամուսնացան։ Յովսէփեան Մա- 12
նասէի որդկանց տոհմերից եղող-
ներին կին եղան, և նորանց ժա-
ռանգութիւնը իրանց հօր ցեղի
ազգատոհմի մէջ մնաց։

13 Սորանք են այն պատուիրանք-
ներն և դատաստաններն, որ ե-
հովան պատուիրեց Մովսէսի ձեռ-
քովը Իսրայէլի որդւոցը Մովա-
բի դաշտերումը Երիքովի դէմ
Յորդանանի մօտ։

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ ԳԻՐՔԸ

ԳԼ. Ա.

1 Սորանք են այն խօսքերը որ
Մովսէսը բոլոր Իսրայէլին ասեց
Յորդանանի այս կողմումը անա-
պատի մէջ, որ Սուփի դիմացի
դաշտումը՝ Փառանի, Տոփելի,
Ղաբանի, Ասերովթի և Տիզահա-
բի մէջտեղումն է։ (Քորեբից մին-
չև Կադէս-բառնէայ տասնեմէկ
2 օր է Սէիր սարի ճանապարհովը։)
3 Եւ եղաւ քառասներորդ տար-
ւայ տասնեմէկերորդ ամսի մէ-
կին, որ Մովսէսն ասեց Իսրայէլի
որդւոցն՝ ինչպէս որ եհովան բո-
լորը նորան պատուիրել էր նո-
4 րանց համար, Եսբոնումը բնա-
կող Ամորհացիների Սիհոն թա-
գաւորին և Աստարովթի ու Եդ-
րայիումը բնակող Բասանի Ովգ
թագաւորին զարկելուց յետոյ.
5 Յորդանանի այս կողմումը Մովա-
բի երկրի մէջ Մովսէսը սկսեց
այս օրէնքը բացատրել, ասելով.
6 Մեր եհովայ Աստուածը խո-
սեց մեզ հետ Քորեբի վերայ և
ասեց. Հերիք է ձեզ՝ այս սարու-
7 մը մնալը. Դարձէք և չուեցէք
ու գնացէք դուք Ամորհացիների
սարը, և նորա բոլոր բնակողների
մօտ, դաշտումը, սարումը, ու
հովիտումը, և հարաւային կող-
մումը, և ծովեղերքումը, քանա-
նացիների երկրումը և Լիբանա-
նումը, մինչև մեծ գետ՝ Եփրատ
8 գետը։ Ահա այն երկիրը ձեզ եմ
տուել. գնացէք և ժառանգեց-
եք այն երկիրը, որը եհովան
ձեր հայրերին՝ Աբրահամին, Ի-
սահակին և Յակոբին երդուեր
տուաւ, որ տայ նորանց և նորան-
ցից յետոյ նորանց զաւակներին,
քովը Իսրայէլի որդկանցը Մովա-
բի դաշտերումը Երիքովի դէմ
Յորդանանի մօտ։

9 Եւ այն ժամանակը ես ձեզ
հետ խօսեցի և ասեցի. Ես միևնակ
չեմ կարող ձեզ տանել. Ձեր
10 եհովայ Աստուածը ձեզ շատաց-
րեց, և ահա դուք այսօր եր-
կնքի աստղերի չափ շատ էք։
11 (Ձեր հայրերի եհովայ Աստուա-
ծը աւելացնէ ձեզ վերայ հազա-
րապատիկ, և ձեզ օրհնէ ինչպէս
12 որ ձեզ ասել է։) Ես միևնակ
ինչպէս տանեմ ձեր նեղութիւ-
նը, ձեր բեռը և ձեր վէճը։
13 Դուք ձեր ցեղերից իմաստուն և
հանճարեղ և անուանի մարդիկ
տուէք, և ես նորանց ձեզ վերայ
14 իշխաններ դնեմ։ Իսկ դուք ինձ
պատասխանեցիք և ասեցիք. Լաւ
է անել այդ խօսքը որ ասեցիր։
15 Եւ ես առայ ձեր ցեղերի գլխա-
ւորներին՝ իմաստուն և անուանի
մարդիկ, և նորանց ձեզ վերայ
իշխաններ կարգեցի, հազարա-
պետներ, հարիւրապետներ, հի-
նգապետներ և տասնապետներ և
ատիկաններ ձեր ցեղերի հա-
մար։

16 Եւ այն ժամանակ պատուիրե-
ցի ձեր դատաւորներին ասելով.
Ձեր եղբայրների միջի գործերը լը-
սեցէք, և արդարութեամբ դա-
տեցէք ամեն մարդի դատը՝ թէ
իր եղբօր հետ և թէ օտարա-
17 կանի հետ։ Դատաստանի մէջ
աչառութիւն չ'անէք, փոքրին մե-
ծի պէս լսէք, բնաւ չ'վախենաք
մարդի երեսից. որովհետև դա-
տաստանը Աստուծունն է. և այն
բանը, որ ձեզ համար դժուար
լինի, ինձ ներկայացնէք, և ես
18 կ'լսեմ այն։ Եւ այն ժամանակը
ձեզ պատուիրեցի ձեր ամեն ա-
նելու բաները։

19 Յետոյ Քորեբից չուեցինք, և
գնացինք այն ձեր տեսած բոլոր
մեծ և ահագին անապատը, Ա-
մորհացիների սարի ճանապարհո-
վը ինչպէս որ մեր եհովայ Աստ-
ուածը մեզ պատուիրել էր, և
եկանք մինչև Կադէս-բառնէայ։
20 Եւ ձեզ ասեցի. Դուք Ամորհա-
ցիների սարը եկաք, որ մեր եհո-
վայ Աստուածը տալիս է մեզ։
21 Տես քո եհովայ Աստուածը այդ
երկիրը քեզ է տուել. վեր ե-
լիր, ժառանգիր, ինչպէս որ քո
հայրերի եհովայ Աստուածը քեզ
ասեց. Մի վախենար և մի զար-
հուրիր։
22 Եւ դուք ամենքդ ինձ մօտ
եկաք, և ինձ ասեցիք. Մեր ա-
ռաջից մարդիկ ուղարկենք, որ
երկիրը լրտեսեն մեզ համար, և
մեզ լուր բերեն այն ճանապար-
հի համար, որով պիտի վեր ել-
նենք, և այն քաղաքների հա-
մար, որոնց մէջ պիտի մտնենք։
23 Եւ այս խօսքը ինձ հաճոյ թուե-
ցաւ, և ձեզանից տասնեերկու
մարդ առայ, ամեն մէկ ցեղից
մէկ մարդ։ Եւ նորանք գնացին՝
վեր ելան սարը, և մինչև Եսքոզի
ձորը հասան, և այն երկիրը լրտ-
եսեցին։ Եւ այն երկրի պտղից
իրանց ձեռքն առան և մեզ մօտ
բերին, և մեզ լուր բերին ասե-
լով. Լաւ է այն երկիրը որ մեր
եհովայ Աստուածը տալիս է մեզ։
26 Բայց դուք չ'ուզեցիք վեր ելնել,
և ձեր եհովայ Աստուծոյ հրա-
մանին հակառակեցիք։ Եւ ձեր
վրաններուն մէջ տրտնջելով ասե-
ցիք. Եհովան մեզ ատելով ե-
գիպտոսի երկրից մեզ դուրս հա-
նեց, որ մեզ Ամորհացիների ձեռ-
քը մատնէ, մեզ կորցնելու հա-
մար։ Մենք ո՞ւր վեր ելնենք.
մեր եղբայրները մեր սիրտերը
թուլացրին, որովհետև ասեցին.
Նա մեզանից մեծ և բարձրահա-
սակ ազգ է, քաղաքները մեծ և
պարսպաւոր են մինչև երկինքը,
29 և նաև Ենակի որդիք տեսանք
այնտեղ։ Եւ ձեզ ասեցի. Մի
30 զարհուրիք և մի վախենաք նո-
րանցից. Ձեր եհովայ Աստուա-
ծը որ ձեր առաջից գնում է, նա
ձեզ համար կ'պատերազմէ, ինչ-
պէս որ եգիպտոսումը ձեր աչ-
քերի առաջ ձեզ արաւ։ Եւ ա- 31
նապատումն էլ որ տեսար, թէ
քեզ քո եհովայ Աստուածը տա-
րաւ ինչպէս մի մարդ իր զաւա-
կին տանում է, այն բոլոր ճա-
նապարհներումը, որ գնացիք մին-
չև ձեր այստեղ գալը։ Եւ ա- 32
րանով էլ ձեր եհովայ Աստու-
ծուն չ'հաւատացիք, Որ ձեր ա- 33
ռաջից գնում էր ձեր ճանապար-
հումը, որ ձեզ համար իջևանե-
լու տեղ որոնէ, գիշերը կրակի
մէջ՝ որ ձեր գնալու ճանապար-
հը ձեզ ցոյց տայ, և ցերեկն էլ
ամպի մէջ։ Եւ եհովան ձեր 34
խօսքերի ձայնը լսեց և բարկա-
ցաւ, և երդում արաւ ասելով.
Այս մարդկանցից՝ այս չար ազ- 35
գիցը ոչ մի մարդ պիտի չ'տեսնէ
այն բարի երկիրը, որ երդում
արի ձեր հայրերին տալու։ Բացի 36
Յեփոնէի որդի Քաղէբից, նա կը
տեսնէ այն, և նորան կ'տամ իր
կոխած երկիրը՝ և իր որդիներին,
որովհետև նա կատարէապէս հե-
տևեց եհովային։ Ինձ վերայ էլ 37
բարկացաւ եհովան ձեր պատ-
ճառով և ասեց. Դուս էլ պիտի
չ'մտնես այնտեղ. Նաւէի որդի 38
Յեսուն՝ քո առաջին կանգնողը՝
նա կ'մտնէ այնտեղ. զօրացրու
նորան. որովհետև նա պիտի ժա-
ռանգեցնէ Իսրայէլին։ Եւ այն 39
ձեր երեխաները, որոնց համար
ասում էիք թէ աւար կ'դառ-
նան, և այն ձեր որդիները որ
այսօր բարին և չարը չ'գիտեն,
նորանք կ'մտնեն այնտեղ. և նո-
րանց կ'տամ այն երկիրը, և նո-
րանք կ'ժառանգեն այն։ Բայց 40
դուք ետ դառէք, և չուեցէք
կարմիր ծովի ճանապարհովը դէ-
պի անապատը։

Եւ դուք պատասխանեցիք և 41
ասեցիք ինձ. Եհովայի առաջին
մեղք գործեցինք. մենք վեր էլ-
նենք պատերազմենք, ինչպէս որ
մեր եհովայ Աստուածը մեզ բո-
լորը պատուիրեց. և ամեն մեկն
իր պատերազմական զէնքն առ-

նելով, թևեւ ամենաւին թևամբ ու-
42 զեցիք սորը վեր ելնել, եւ Եհո-
վան ինձ ասեց. Ասիր նորանց.
Մի ելնէք, և մի պատերազմիք,
որովհետև ես ձեր միջումը չեմ.
մի գուցէ ձեր թշնամիների ա-
43 ռաջին ջարդուիք։ Ես էլ ձեզ
հետ խօսեցի, բայց դուք չլսե-
ցիք, այլ Եհովայի հրամանին
հակառակեցիք, և յամառաւա-
թիւն արիք ու սորը վեր եկաք։
44 Եւ այն սարումը բնակող Ամո-
հացիները ձեր դէմ գուրս և-
կան ու ձեզ հալածեցին ինչպէս
որ մեղուներն են անում, և Սէի-
րումը ձեզ զարկեցին մինչև Հոր-
45 մա։ Եւ ետ դառաք և Եհովայի
առաջին լաց եղաք, սակայն Ե-
հովան ձեր ձայնին չլսեց և ձեզ
46 ականջ չդրաւ։ Եւ կադեսի մէջ
շատ օրեր կեցաք, որչափ օրեր
որ կեցաք։

Գլ. Բ

1 Եւ ետ դառանք ու կարմիր
ծովի ճանապարհով դէպի անա-
պատը չուեցինք, ինչպէս որ Եհո-
վան ինձ ասել էր, և շատ օրեր
Սէիր սարին շուրջ պտոյտ առինք։
2 Եւ Եհովան ինձ հետ խօսեց և
3 ասեց. Հերիք է ձեզ այդ սարին
շուրջը պտոյտ տալը. դառեք
4 դէպի հիւսիսային կողմը։ Եւ ժո-
ղովրդին պատուիրիր և ասիր.
Դուք հիմա անց էք կենում Սէ-
իրումը բնակող ձեր եղբայրների
Եսաւի որդիկանց սահմանիցը. Նո-
րանք ձեզանից պիտի վախենան,
բայց դուք մեծապէս զգուշա-
5 ցէք. Նորանց հետ մի ծեծուիք.
որովհետև ես նորանց երկրիցը
մէկ ոտնաթաթ տեղ էլ ձեզ չեմ
տալու, որովհետև Սէիր սարը
Եսաւին եմ տուել իբրև ժա-
6 ռանգութիւն։ Կերակուրը փո-
ղով ծախու առնէք նորանցից և
ուտէք, և ջուրն էլ փողով ծա-
խու առնէք նորանցից և խմէք։
7 Որովհետև քո Եհովայ Աստուա-
ծը օրհնեց քեզ քո ձեռքի ա-
մէն գործքերի մէջ. Նա գիտէ
քո գնացքը այս մեծ անապա-
տումը, ահա քառասուն տարի
է քո Եհովայ Աստուածը քեզ
հետ է, և մի բանի պակասու-
թիւն չքաշեցիր։

8 Եւ մենք անցանք մեր եղբայր-
ների Եսաւի որդիկանց մօտովը,
որոնք Սէիրումը բնակվում էին,
դաշտի ճանապարհովը՝ Ելաթից
և Գասիոն-գաբերից. և դառնա-
լով Մովաբի անապատի ճանա-
պարհովը անցանք։ Եւ Եհովան
9 ինձ ասեց. Մովաբացիներին թշշ-
նամութիւն մի անիր, և նորանց
հետ պատերազմ մի անիր. որով-
հետև նորանց երկրիցը քեզ ժա-
ռանգութիւն չեմ տալու, որով-
հետև Աբր Ղովտի որդիկանց
տուի իբրև ժառանգութիւն։
10 (Էմիմները էին առաջուց այնտեղ
բնակվում, որոնք մեծ և բազ-
մութիւն և Ենակիմների պէս եր-
11 կայնահասակ ազգ էին։ Նորանք
էլ Ենակիմների պէս հսկաներ է-
ին համարվում. և Մովաբացի-
ները նորանց Էմիմ էին կոչում,
12 Եւ Սէիրում առաջուց Քոռեցի-
ները էին բնակվում, բայց Եսաւ
որդիքը նորանց քշեցին և ի-
րանց առաջիցը նորանց կորցրին,
և նորանց տեղը բնակուեցին.
ինչպէս որ Իսրայէլացիները արին
իրանց ժառանգութեան երկրին,
որ Եհովան տուաւ նորանց։) Հի-
13 մա վեր կացէք Զարեդ ձորովը
անցէք. և մենք անցանք Զարեդ
ձորովը։

14 Եւ այն օրերը՝ որ դնացինք Կա-
դես-բառնեայից մինչև որ Զա-
րեդ ձորովը անցանք՝ երեսունեւ-
ութը տարի է. մինչև որ բանա-
կի միջից պատերազմող մարդկանց
այն բոլոր ազգը վերջացաւ, ինչ-
պէս որ Եհովան նորանց երդուեց
15 էր սրել։ Եւ Եհովայի ձեռքն
էլ նորանց վերայ էր, նորանց
բանակի միջիցը բնջիջ անելու
համար՝ մինչև որ վերջանան։

16 Եւ երբոր բոլոր պատերազմող
մարդիկը ժողովրդի միջիցը մե-
17 ռան վերջացան, Եհովան խօսեց
18 ինձ հետ ասելով. Դու այսօր
Մովաբի սահմանի Արով անց ես
19 կենում, եւ մօտենում ես դէպի

Ամմնի որդիկանց. Նորանց հետ
թշնամութիւն մի անիր, և նո-
րանց հետ մի ծեծուիր. որովհե-
տև Ամմնի որդիկանց երկրիցը
քեզ ժառանգութիւն չեմ տա-
լու, որովհետև այն Ղովտի որ-
դիներին տուի իբրև ժառանգու-
20 թիւն, (Նա էլ էր հսկաների եր-
կիր համարվում. առաջուց այն-
տեղ հսկաներ էին բնակվում. և
21 Ամմնացիները նորանց Զամզում-
միմ էին կոչում. Ենակիմների
պէս մեծ և բազմութիւ և եր-
կայնահասակ ազգ էին. բայց Ե-
հովան նորանց բնջիջ արաւ
նորանց առաջին որ քշեցին նո-
րանց և նորանց տեղումը բնակ-
22 ուեցին. Ինչպէս որ Սէիրում բը-
նակող Եսաւի որդիկանց համար
արաւ, երբոր Քոռացիներին բնա-
ջինջ արաւ նորանց առաջին. և
նորանց քշեցին, և նորանց տեղը
23 բնակուեցին մինչև այս օրը։ Եւ
Աւացիները՝ որ մինչև Գազա գիւ-
ղաքաղաքներումը էին բնակվում
Կափթորից դուրս եկող Կափ-
թորացիները կորցրին նորանց, և
24 նորանց տեղը բնակուեցին.) Վեր
կացէք չուեցէք և Առնոն ձորովը
անցէք. ահա քո ձեռքը տուի
Եսբոնի թագաւոր՝ Ամորհացի
Սեհոնին և նորա երկիրը. սկսիր,
տիրիր, և նորա հետ պատերազմ
25 արա, Այսօր կ'սկսեմ քո վախը
և սոսկումը բոլոր երկրի տակ
եղող ազգերի վերայ դնել, որ
քո համբաւը լսելով քո երեսիցը
դողան և տագնապեն։
26 Եւ դեսպաններ ուղարկեցի Կա-
դեմոթի անապատից Եսբոնի
Սեհոն թագաւորի մօտ խաղա-
ղութեան խօսքերով ասելով.
27 Թող անցնեմ քո երկրովը. միշտ
ճանապարհով կ'գնամ, աջ կամ
28 ձախ կողմը չեմ խոտորուիլ։ Կե-
րակուրը փողով ծախիր ինձ որ
ուտեմ, և ջուրը փողով տուր
ինձ որ խմեմ. միայն թէ ոտքե-
29 րովս անցնեմ. Ինչպէս որ Սէի-
րումը բնակող Եսաւի որդիքը և
Արումը բնակող Մովաբացիները
ինձ արին. մինչև որ ես Յորդա-
նանովն անցնեմ դէպի այն երկի-
րը, որ մեր Եհովայ Աստուածը
տալիս է մեզ։ Բայց Եսբոնի 30
Սեհոն թագաւորը չուզեց, որ
մենք նորանով անցնենք. որովհե-
տև քո Եհովայ Աստուածը նորա
հոգին խստացրել և սիրտը կար-
ծրացրել էր, որ նորան քո ձեռ-
քը տայ, ինչպէս որ այսօր է։ Եւ 34
Եհովան ինձ ասեց. Ահա սկսեցի
քեզ տալ Սեհոնն և նորա երկի-
րը. սկսիր, տիրիր, որ նորա եր-
կիրը ժառանգես։
Եւ Սեհոնը՝ ինքը իր բոլոր ժո- 32
ղովրդովը Յասայի մէջ մեզ դէմ
դուրս եկաւ պատերազմի հա-
մար։ Եւ մեր Եհովայ Աստուածը 33
նորան մեր ձեռքը մատնեց, և
մենք նորան և նորա որդիներին
և նորա բոլոր ժողովրդին զար-
կեցինք. Եւ այն ժամանակը նո- 34
րա բոլոր քաղաքներն առանք, և
բոլոր քաղաքները, մարդկանցը,
կանանցը և տղայոցը *բնջինջ
արինք. մէկն էլ ողջ չթողե-
ցինք. Միայն անասուններն առ 35
առանք և մեր առած քաղաքնե-
րի կողոպուտը։ Առնոն ձորի ե- 36
զերքի Արոերից՝ և ձորի մէջ ե-
զած քաղաքից մինչև Գաղաադը
մի քաղաք չեզաւ որ մեզ դէմ
կենար. մեր Եհովայ Աստուածը
ամէնն էլ մեր ձեռքը մատնեց։
Միայն թէ չմտեցաք Ամմնի 37
որդիկանց երկրին, և բոլոր Յաբոկ
ձորի կողմերին և լեռնային քա-
ղաքներին, և այն ամէնին ինչ որ
մեր Եհովայ Աստուածը մեզ ար-
գելել էր։

Գլ. Գ

1 Եւ դարձանք և վեր ելանք Բա-
սանի ճանապարհովը, և Բասանի
Ովգ թագաւորը դուրս եկաւ
եդրէյ՝ ինքը և իր բոլոր ժողո-
վուրդը՝ մեզ դէմ պատերազմե-
2 լու։ Եւ Եհովան ինձ ասեց. Նո-
րանից մի վախենար, որովհետև
քո ձեռքն եմ յանձնել նորան
և նորա բոլոր ժողովրդին և եր-
կիրը. և նորան կ'անես, ինչպէս

*Ընդվեցինք

որ արիր Եսեբոնում բնակող Ա-
մօրհացիների Սեհոն թագաւո-
3 րին։ Եւ մեր Եհովայ Աստուածը
մեր ձեռքը տուաւ Բասանի Ովգ
թագաւորին էլ և նորա բոլոր
ժողովրդին և մենք զարկեցինք
նորանց, մինչև որ նորանցից մէկն
4 էլ ողջ չ'մնաց։ Եւ նոյն ժամա-
նակը նորա բոլոր քաղաքներն ա-
ռանք. քաղաք չ'մնաց, որ առած
չ'լինէինք նորանցից. վաթսուն
քաղաք՝ այսինքն բոլոր Արգովբի
գաւառը՝ Ովգի թագաւորութիւ-
5 նը Բասանի մէջ։ Սորանց ամենն
էլ բարձր պարիսպներով, դըռ-
ներով և դռնափակերով ամրա-
ցած քաղաքներ էին, բացի ան-
պարիսպ քաղաքներից, որ խիստ
6 շատ էին։ Եւ նորանց *ընաջինջ
արինք, ինչպէս որ Եսեբոնի Սե-
հոն թագաւորին արինք, ամեն
քաղաքներում մարդկանցը, կա-
նանցն ու տղերանցը փչացնելով.
7 Սակայն բոլոր անասուններն ու
քաղաքների աւարները մեզ հա-
8 մար առանք։ Եւ այն ժամանակը
Յորդանանի այն կողմում Ամօր-
հացիների երկու թագաւորների
ձեռքիցն առանք երկիրը՝ Առնոն
9 ձորիցը մինչև Հերմոն սարը։ (Սի-
դոնացիները Հերմոնին Սարիօն է-
ին կոչում, բայց Ամօրհացիները
10 նորան Սանիր էին կոչում.) Բո-
լոր դաշտի քաղաքները՝ բոլոր
Գաղաադը և բոլոր Բասանը մին-
չև Սելքա և Եդրայի, Բասանում
եղած Ովգի թագաւորութեան
11 քաղաքները։ Որովհետև հսկա-
ների մնացորդից միայն Բասանի
Ովգ թագաւորն էր մնացել. ահա
նորա մահիճը՝ երկաթի մահիճ
է. ահա նա Ամմոնի որդկանց
Ռափայումն է. երկայնութիւնը
ինը կանգուն է, և լայնութիւնը
չորս կանգուն է մարդի կան-
գունով։
12 Եւ նոյն ժամանակը այս երկի-
րը առանք՝ Առնոն ձորի վերայ
եղող Արոերից մինչև Գաղաադ
սարի կէսը. և նորա քաղաքները
Ռուբէնեաններին և Գադեաննե-
րին տուի։ Եւ Գաղաադի մնա- 13
ցորդը և բոլոր Բասանն՝ Ովգի
թագաւորութիւնը Մանասէի կէս
ցեղին տուի, Արգովբի բոլոր գա-
ւառը՝ բոլոր Բասանի հետ, որ
հսկաների երկիր էր կոչվում։
Մանասեան Յայիրը առաւ Ար- 14
գովբի բոլոր գաւառը մինչև Գե-
սուրացիների և Մաքաթացիների
սահմանը, և նորանց իր անունո-
վը մինչև այսօր Բասան-հաւօթ-
յայիր կոչեց։ Եւ Գաղաադը Մա- 15
քիրին տուի։ Եւ Ռուբէնեաննե- 16
րին և Գադեաններին տուի Գա-
ղաադից մինչև Առնոն ձորը, ձո-
րի մէջտեղը և սահմանը և մինչև
Յաբոկ ձորը, որ Ամմոնի որդկանց
սահմանն է, Նաև դաշտը և Յոր- 17
դանանը և սահմանը Քեներեթից
մինչև դաշտի ծովը, այսինքն մին-
չև Աղի ծովը, Աստեղովթ-փաս-
գայի տակ արևելեան կողմում։
Եւ այն ժամանակը ձեզ պատ- 18
ուիրեցի և ասեցի. Ձեր Եհովայ
Աստուածը այս երկիրը ձեզ տը-
ուաւ իբրև ժառանգութիւն.
պատրաստուած ձեր եղբայրներ
Իսրայէլի որդկանց առաջը դնա-
ցէք, ով բոլոր քաջերդ. Բայց 19
ձեր կանայքը, ձեր որդիները և
ձեր անասունները, (գիտեմ որ
ձեր անասունները շատ են) թող
մնան ձեր քաղաքներումը, որոնք
ես ձեզ տուի, Մինչև որ Եհո- 20
վան ձեր եղբայրներին էլ ձեզ
պէս հանգստացնէ, և մինչև որ
նորանք էլ ժառանգեն այն եր-
կիրը՝ որ ձեր Եհովայ Աստուածը
Յորդանանի այն կողմում նորանց
կ'տայ. և յետոյ ձեր ամեն մէկը
դառնայ իր ժառանգութեանը՝
որ ես ձեզ տուի։
Այն ժամանակ Յեսուին պատ- 21
ուիրեցի ասելով. Աչքերդ տե-
սան ինչ որ ձեր Եհովայ Աստ-
ուածը այս երկու թագաւորնե-
րին արաւ. այնպէս էլ անելու է
Եհովան այն ամեն թագաւորու-
թիւններին, որոնցով դու պիտի
անցնես. Նորանցից չ'վախենաք. 22
որովհետև ձեր Եհովայ Աստուա-
ծը ինքը կ'պատերազմէ ձեզ հա-
մար։ Եւ ես այն ժամանակ Եհո- 23

*Նզովեցինք

24 վային աղաչեցի և ասեցի. Ով
Տէր Եհովայ, դու սկսեցիր քո
մեծութիւնը և քո զօրաւոր ձեռ-
քը քո ծառային ցոյց տալու. ո-
րովհետև երկնքի մէջ կամ երկ-
րիս վերայ ո՞վ է այն աստուա-
ծը, որ քո գործքերի և քո զօ-
25 րութեան պէս անէ. Աղաչում
եմ՝ թող անցնեմ, և Յորդանա-
նի այն կողմի բարի երկիրը, այն
բարի սարը և Լիբանանը տես-
26 նեմ։ Բայց Եհովան բարկացաւ
ինձ վերայ ձեր պատճառովը և
ինձ չ'լսեց. և Եհովան ինձ ասեց.
Հերիք է քեզ. այլ ևս այդ բանը
27 ինձ չ'ասես. Վեր ելիր Փասգայի
գագաթը, և աչքերդ բարձրա-
ցրու դէպի արևմուտք, հիւսիս,
հարաւ և արևելք, և քո աչքե-
րովը տես. որովհետև դու այս
Յորդանանից չ'պիտի անց կենաս.
28 Եւ Յեսուին պատուիրիր և նո-
րան զօրացրու, և նորան սիրտ
տուր. որովհետև նա կ'անցնէ
այս ժողովրդի առաջը և կ'ժա-
ռանգեցնէ նորանց այն երկիրը որ
29 տեսնում ես։ Եւ մենք հովիտի
մէջ Բեթփեգովրի դէմ նստե-
ցինք։

ԳԼ. Դ

1 Եւ հիմա, ով Իսրայէլ, լսիր
այն կանոնները և դատաստան-
ները որ ես ձեզ սովորեցնում
եմ որ անէք, որպէս զի ողջ մը-
նաք, և մտնէք ժառանգէք այն
երկիրը որ ձեր հայրերի Եհովայ
2 Աստուածը տալիս է ձեզ։ Չ'ա-
ւելացնէք այն խօսքի վերայ, որ
ես ձեզ պատուիրում եմ և նո-
րանից չ'պակասեցնէք, որ ձեր
Եհովայ Աստուծոյ պատուիրանք-
ները պահէք, որոնք ես ձեզ պատ-
3 ուիրում եմ։ Ձեր աչքերը տե-
սան ինչ որ Եհովան Բելփեգով-
րին արաւ, որովհետև Բելփեգով-
րի ետևից գնացող բոլոր մարդ-
կանցը քո Եհովայ Աստուածը քո
4 միջիցը փչացրեց։ Բայց դուք, որ
ձեր Եհովայ Աստուծուն յարե-
ցաք, ամենքդ այսօր ողջ էք։
5 Ահա սովորեցրի ձեզ կանոններ
և դատաստաններ, ինչպէս որ իմ
Եհովայ Աստուածը պատուիրեց
ինձ, որ այնպէս անէք այն երկ-
րում, ուր որ պիտի մտնէք նո-
րան ժառանգելու համար։ Հիմա 6
պահեցէք և արէք. որովհետև
նա է ձեր իմաստութիւնը և հան-
ճարը ազգերի առաջին, որոնք
այս բոլոր կանոնները լսելով պի-
տի ասեն. Իրաւ այս մեծ ազգը
մի իմաստուն և հանճարեղ ժո-
ղովուրդ է։ Որովհետև ո՞րն է 7
այն մեծ ազգը, որ իր աստուած-
ները իր մօտ լինեն ինչպէս մեր
Եհովայ Աստուածը ամեն բա-
նում, որ նորանից խնդրում ենք։
Եւ ո՞րն է այն մեծ ազգը, որ ար- 8
դար կանոններ ու դատաստան-
ներ ունենայ իմ այսօր ձեր ա-
ռաջին դրած այս բոլոր օրէնքի
նման։ Միայն զգոյշ եղիր և քո 9
հոգիին շատ զգուշութիւն արա,
որ մի դուցէ մոռանաս այն բա-
ները որ քո աչքերը տեսան, և
մի դուցէ նորանք սրտիցդ դուրս
գան քո կենաց բոլոր օրերումը,
այլ քո որդիներին և որդկանցդ
որդիներին սովորեցնես։ Այն օրը 10
որ դու Քորեբումը կանգնել էիր
քո Եհովայ Աստուծոյ առաջին,
Եհովան ինձ ասեց. Ժողովրդին
ինձ մօտ ժողովիր, և ես իմ խօս-
քերը լսել տամ նորանց, որպէս
զի սովորեն ինձանից վախենալը
բոլոր այն օրերումը որ երկրի վե-
րայ կ'ապրեն, և իրանց որդինե-
րին էլ սովորեցնեն։ Եւ դուք 11
մօտեցաք և կանգնեցիք այն սա-
րի տակ. և սարը մինչև բուն եր-
կինքը կրակով բորբոքուել էր,
խաւարով, ամպով, և մառա-
խուղով։ Եւ Եհովան խօսեց ձեզ 12
հետ կրակի միջիցը. խօսքերի ձայ-
նը դուք լսեցիք. բայց մի նմա-
նութիւն չ'տեսաք, բայց միայն
ձայն։ Եւ իմացրեց ձեզ իր ուխ- 13
տը որ պատուիրեց ձեզ անել
տասը պատուիրանքները. և նո-
րանց գրեց երկու հատ քարի
տախտակների վերայ։ Եւ այն 14
ժամանակ Եհովան ինձ պատուի-
րեց, որ ձեզ կանոններ և դա-
տաստաններ սովորեցնեմ, որ

դուք նորանց գործադրէք այն
երկրումը, ուր որ կ'մտնէք նո-
րան ժառանգելու համար։
15 Եւ ձեր հոգիներին շատ զգու-
շութիւն արէք. որովհետև ոչ մի
նմանութիւն չ'տեսաք այն օրը որ
Եհովան Քորեբումը կրակի միջի-
16 ցը ձեզ հետ խօսեց, Մի դուցէ
անօրինանաք, և ձեզ համար
կուռք՝ մի որ և իցէ կերպարան-
քի պատկեր՝ արուի և կամ էգի
17 նմանութիւնը, Երկրի վերայ ե-
զող անասունի նմանութիւնը, օ-
դի մէջ թռչող թևաւոր թռչնի
18 նմանութիւնը, Երկրի վերայ սո-
ղացողի նմանութիւնը, կամ երկրի
տակ ջրերումը եղող ձկան նմա-
19 նութիւնը շինէք. Եւ մի դուցէ
աչքերդ դէպի երկինքը բարձրա-
ցընես, և տեսնես արեգակը կամ
լուսինը կամ աստղերը՝ երկնքի
բոլոր զարդը և խաբուես, և նո-
րանց երկրպագութիւն անես, և
նորանց պաշտես, որոնց քո Եհո-
վայ Աստուածը բոլոր երկնքի
տակումը եղող ազգերի համար
20 նշանակեց։ Բայց Եհովան ձեզ
առաւ, և ձեզ երկաթի հնոցի-
ցը՝ Եգիպտոսիցը հանեց, որ իր
*սեպհական ժողովուրդ լինէք,
այս օրուայ պէս։
21 Եւ Եհովան ձեր պատճառով
բարկացաւ ինձ վերայ և երդում
արաւ որ Յորդանանիցը չ'անցնեմ,
և չ'մտնեմ այն բարի երկիրը՝ որ
քո Եհովայ Աստուածը քեզ է
տալիս իբրև ժառանգութիւն.
22 Որովհետև ես այս երկրումը կը
մեռնեմ, և Յորդանանիցը չեմ
անցնիլ. բայց դուք կ'անցնէք և
այն բարի երկիրը կ'ժառանգէք։
23 Զգոյշ կացէք, մի դուցէ ձեր Ե-
հովայ Աստուծոյ ձեզ հետ ա-
րած ուխտը մոռանաք, և ձեզ
համար կուռք՝ մի որ և իցէ բա-
նի նմանութիւնը շինէք, որ քո
Եհովայ Աստուածը քեզ արգե-
24 լեց։ Որովհետև քո Եհովայ Ա-
ստուածը մաշող կրակ է. նա նա-
խանձոտ Աստուած է։
25 Երբոր դուք որդիներ և որդ-
կանց որդիներ ծնելու լինէք, և
այն երկրի մէջ բնակուելու լի-
նէք, և անօրինանաք, և կուռք՝
մի որ և իցէ բանի նմանութիւն
շինէք, և ձեր Եհովայ Աստուծոյ
առաջին այս չարութիւնը անէք
որ նորան բարկացնէք, Ահա այս 26
օր երկինքն ու երկիրը ձեզ հա-
մար վկայ եմ կանչում, որ դուք
անպատճառ շուտով բնաջինջ կը
լինէք այն երկրիցը, որ Յորդա-
նանովն անց կենալով ժառանգե-
լու էք. այնտեղ ձեր կեանքի օրե-
րը երկար չեն լինիլ, այլ բոլո-
րովին կ'փչանաք։ Եւ Եհովան 27
ձեզ կ'ցրուէ ազգերի մէջ, և
սակաւաթիւ կ'մնաք այն ազգե-
րի մէջ, ուր որ Եհովան ձեզ կը
քշէ։ Եւ այնտեղ աստուածներ 28
կ'պաշտէք, որ մարդի ձեռքի
գործք են՝ քար և փայտ, որոնք
ոչ տեսնում են, և ոչ լսում,
ոչ ուտում են և ոչ հոտոտում։
Եւ այնտեղից կ'որոնես քո Եհո- 29
վայ Աստուծուն. և կ'գտնես, ե-
թէ բոլոր սրտովդ և բոլոր հո-
գիովդ նորան խնդրես։ Երբոր 30
նեղութիւն ունենաս և այս բո-
լոր բաները վերջին օրերը քեզ
պատահեն, և դու քո Եհովայ
Աստուծուն դառնաս և նորա
ձայնին լսես, Ըստ որում քո Ե- 31
հովայ Աստուածը ողորմած Աստ-
ուած է, նա քեզ չի թողիլ, և
քեզ չի փչացնիլ. և քո հայրե-
րին երդում արած ուխտը չի մո-
ռանալ։
Ուրեմն հարցրու քեզանից ա- 32
ռաջ եղած առաջի օրերի մասին՝
այսինքն Աստուած մարդիս երկ-
րի վերայ ստեղծած օրից հետէ
երկնքի մէկ ծայրից մինչև միւս
ծայրը, թէ արդեօք սորա նման
մի մեծ բան եղե՞լ է, և սորա
նման մի բան լսուե՞լ է։ Արդ- 33
եօք մէկ ազգ լսե՞լ է Աստուծոյ
ձայն, որ խօսէ կրակի միջից ինչ-
պէս որ դու լսեցիր, և ողջ մնա-
ցած լինի. Կամ թէ Աստուած 34
փորձե՞լ է որ գայ մի ազգը մի
ազգի միջից իր համար առնէ
փորձերով, նշաններով, հրաշք-
ներով, պատերազմով, զօրաւոր

*Եբր. ժառանգութեան։

ձեռքով և բարձր բազուկով և
մեծ ահարկութիւններով, ինչ-
պէս որ ձեր Եհովայ Աստուածը
Եգիպտոսումը ձեզ համար այս
բոլոր բաներն արաւ ձեր աչքե-
35 րի առաջին։ Սա քեզ ցոյց տըր-
ուեցաւ, որ գիտենաս թէ Եհո-
վան է Աստուած. չ'կայ մի ու-
36 րիշը բացի նորանից։ Երկնքից
քեզ իր ձայնը լսել տուաւ, որ
քեզ խրատէ, և երկրի վերայ ի-
րան մեծ կրակը քեզ ցոյց տուաւ,
և նորա խօսքերը կրակի միջիցը
37 լսեցիր։ Եւ քո հայրերին սիրելու
համար նորանցից յետոյ նորանց
սերունդը ընտրեց, և իր երեսովը
մեծ զօրութիւնով քեզ Եգիպ-
38 տոսիցը հանեց. Որպէս զի քե-
զանից մեծ և զօրաւոր ազգեր
քո առաջիցը քշէ, և քեզ տա-
նէ՝ նորանց երկիրը քեզ ժա-
ռանգութիւն տալու համար, ինչ-
39 պէս որ այսօր։ Եւ այսօր իմացիր
և սրտիդ մէջը դիր, որ Եհովան
է Աստուած վերը երկնքի մէջ և
ցածը երկրիս վերայ. ուրիշը չը
40 կայ։ Եւ պահես նորա կանոնները
ու պատուիրանքները, որոնք ես
այսօր քեզ պատուիրում եմ, որ
քեզ համար և քեզանից յետոյ
քո որդկանց համար բարի լինի,
և քո օրերը երկար լինեն այն
երկրի վերայ՝ որ քո Եհովայ Ա-
ստուածը տալիս է քեզ ամեն
ժամանակի համար։
41 Այն ժամանակ Մովսէսը երեք
քաղաքը ջոկեց Յորդանանի այս
42 կողմումը դէպ արևելք. Որպէս
զի այնտեղ փախչէ մարդասպա-
նը, որը անգիտութեամբ սպանել
է իր դրացիին առանց նորա դէմ
երէկուանից և միւս օրուանից
ատելութիւն ունենալու. և այս
քաղաքների մէկի մէջ փախչէ և
43 ողջ մնայ։ Դաշտային երկրի վե-
րայ անապատի միջի Բոսորը Ռու-
բէնեաններին համար, և Գաղա-
ադի միջի Ռամովթը Գադեաննե-
րի համար, և Բասանի միջի Գով-
ղանը Մանասեանների համար։
44 Սա է այն օրէնքը որ Մովսէսն
Իսրայէլի որդկանց առաջը դրաւ։
45 Սորանք են այն վկայութիւնն-
ը, կանոնները և դատաստանն-
ը, որոնք Մովսէսն Իսրայէլի
որդկանց հետ խօսեց՝ նորանց Ե-
գիպտոսից դուրս գալու ժամա-
նակին, Յորդանանի այս կողմու- 46
մը Բեթփեգովրի դիմացի հովտի
մէջ, Եսեբոնումը բնակող Ամոր-
հացիների Սեհոն թագաւորի եր-
կրումը, որին Մովսէսը և Իսրա-
յէլի որդիքը զարկեցին իրանց Ե-
գիպտոսից դուրս գալու ժամա-
նակին։ Եւ առան նորա երկիրը 47
և Բասանի Ովգ թագաւորի եր-
կիրը՝ այսինքն Ամորհացիների եր-
կու թագաւորների երկիրը՝ որ
Յորդանանի այս արևելեան կող-
մումն էին, Առնոն ձորի եզերքի 48
Արոերից մինչև Սիոն սարը որ
Հերմոնն է, Եւ Յորդանանի այս 49
արևելեան կողմում եղած բոլոր
դաշտը մինչև դաշտի ծովը որ
Ասեդովթ-փասգայի ցածումն է։

ԳԼ. Ե

Եւ Մովսէսը կանչեց բոլոր Իս- 1
րայէլին և նորանց ասեց. Լսիր,
ով Իսրայէլ, այս կանոնները և
դատաստանները, որոնք ես այսօր
ձեր ականջներին ասում եմ. սո-
վորեցէք նորանք և զգուշու-
թեամբ գործադրեցէք։ Մեր Ե- 2
հովայ Աստուածը Քորեբի վերայ
մեզ հետ ուխտ արաւ։ Եհովան 3
այս ուխտը մեր հայրերի հետ
չ'արաւ, այլ մեզ հետ, որոնք
ամենքս այսօր այստեղ ողջ ենք։
Դէմ առ դէմ խօսեց Եհովան 4
ձեզ հետ սարումը կրակի միջի-
ցը. (Ես այն ժամանակ Եհովայի 5
և ձեր մէջը կանգնած էի, որ Ե-
հովայի խօսքերը ձեզ պատմեմ.
որովհետև դուք կրակիցը վախե-
նալով վեր չ'ելաք սարը) և ասեց.
Ես եմ Եհովան քո Աստուա- 6
ծը՝ որ քեզ Եգիպտոսի երկրիցը՝
ծառայութեան տանիցը հանեցի։
Ուրիշ աստուածներ չ'ունենաս 7
իմ առաջին։
Քեզ համար կուռք չ'շինես, 8
ոչ մի բանի նմանութիւն՝ վերե-
ւում երկնքի մէջ՝ կամ ցածը
երկրի վերայ՝ կամ երկրի տակի

9 ջրերի մէջ. Երկրպագութիւն
չ'անես նորանց, և նորանց չ'պաշ-
տես. որովհետև ես քո Եհովայ
Աստուածը՝ նախանձոտ Աստուած
եմ, որ կ'հատուցանեմ հայրերի
անօրէնութիւնը որդկանց վերայ՝
մինչև նորանց երրորդ և չորրորդ
10 ազգը՝ որ ատում են ինձ. Եւ ո-
ղորմութիւն կ'անեմ նորանց մին-
չև հազար ազգը՝ որ սիրում են
ինձ և պահում են իմ պատ-
ուիրանքները։
11 Քո Եհովայ Աստուծոյ անունը
զուր տեղը չ'յիշես, որովհետև
Եհովան անպատիժ չի թողիլ իր
անունը զուր տեղը յիշողին։
12 Զգուշացիր հանգստութեան օ-
րը սուրբ պահել, ինչպէս որ քո
Եհովայ Աստուածը քեզ պատ-
13 ուիրեց։ Վեց օր աշխատես և
14 բոլոր գործքդ անես. Բայց եօթ-
ներորոդ օրը՝ քո Եհովայ Աստու-
ծոյ հանգստութեան օրն է. ոչ
մի գործ չ'գործես, ոչ դու, ոչ
քո որդին, ոչ քո աղջիկը, ոչ
քո ծառան, ոչ քո աղախինը, ոչ
քո եզը, ոչ քո էշը, և ոչ քո
ամեն անասունը, և ոչ քո տան
եղած օտարականը, որ քո ծա-
ռան և աղախինն էլ քեզ պէս
15 հանգստանայ։ Եւ յիշիր որ դու
ծառայ էիր Եգիպտոսի երկրու-
մը, և քո Եհովայ Աստուածը
զօրաւոր ձեռքով և բարձր բա-
զուկով քեզ հանեց այնտեղից.
նորա համար քո Եհովայ Աստ-
ուածը քեզ պատուիրեց որ հան-
գըստութեան օրը պահես։
16 Պատուիր քո հօրը և քո մօրը,
ինչպէս որ քո Եհովայ Աստուածը
քեզ պատուիրեց, որ քո օրերը
երկար լինեն, և քեզ համար
բարի լինի այն երկրի վերայ՝ որ
քո Եհովայ Աստուածը քեզ տա-
լիս է։
17 Մի սպանիր։
18 Եւ մի շնանար։
19 Եւ մի գողանար։
20 Եւ քո դրացիի դէմ սուտ մի
վկայիր։
21 Եւ քո դրացիի կնկան մի ցան-
կանար։ Եւ մի ցանկանար քո
դրացիի տանը՝ ոչ նորա արտին՝
ոչ նորա ծառային՝ ոչ նորա ա-
ղախնին՝ ոչ նորա եղին՝ կամ նո-
րա էշին՝ և քո դրացիի ոչ մէկ
բանին։
Եհովան այս խօսքերը խօսեց 22
այն սարի վերայ, կրակի, ամպի և
մառախուղի միջիցը բարձր ձայ-
նով ձեր բոլոր ժողովքի հետ, և
ոչինչ չ'աւելացրեց. և երկու
հատ քարի տախտակների վերայ
գրեց նորանք, և ինձ տուաւ։ Եւ 23
եղաւ երբոր լսեցիք այն ձայնը
խաւարի միջիցը, սարը կրակով
վառուած ժամանակը, ինձ մօտ
եկաք դուք, այսինքն ձեր ցեղե-
րի բոլոր գլխաւորները և ձեր ծե-
րերը, և ասեցիք. Ահա մեր Եհո- 24
վայ Աստուածը մեզ ցոյց է տա-
լիս իր փառքը և մեծութիւնը,
և նորա ձայնը լսում ենք կրակի
միջիցը. այս օրը տեսանք որ Աս-
տուած մարդի հետ խօսեց, և
մարդը ողջ մնաց։ Եւ հիմա ինչու 25
մեռնենք. (որովհետև այս մեծ
կրակը մեզ սպառելու է.) եթէ
մենք մեր Եհովայ Աստուծոյ ձայ-
նը կրկին լսելու լինենք կ'մեռ-
նենք։ Որովհետև ամեն մարմնից 26
ո՞վ է նա որ կրակի միջից խօ-
սող կենդանի Աստուծոյ ձայնը
մեզ պէս լսեց և ողջ մնաց։ Դու 27
մօտ գնա և լսիր ամենը ինչ որ
մեր Եհովայ Աստուածն ասում
է, և դու ասիր մեզ ինչ որ մեր
Եհովայ Աստուածը քեզ հետ
խօսէ, մենք կ'լսենք և կ'կատա-
րենք։ Եւ Եհովան ձեր խօսքերի 28
ձայնը լսեց, երբոր դուք ինձ հետ
խօսում էիք, և Եհովան ինձ ա-
սեց. Այս ժողովրդի քեզ ասած
խօսքերի ձայնը լսեցի. նորանց ա-
մեն ասածը լաւ է։ Երանի թէ 29
նորանց սիրտն էլ այնպէս լինէր,
որ ինձանից վախենալով իմ բո-
լոր պատուիրանքները պահէին ա-
մեն ժամանակ, որպէս զի իրանց
համար բարի լինէր և իրանց որդ-
կանցն էլ՝ յաւիտեան։ Գնա նո- 30
րանց ասիր. Ետ դառէք դուք
ձեր վրանները։ Բայց դու այս- 31
տեղ ինձ հետ կանգնիր, և ա-
սեմ քեզ բոլոր պատուիրանքնե-
րը, կանոնները և դատաստաննե-

րը, որ պիտի սովորեցնես նորանց,
որ կատարեն այն երկրում՝ որ
ես նորանց տալիս եմ ժառան-
գութեան համար։
32 Եւ զգոյշ եղէք որ անէք ինչ-
պէս որ ձեր Եհովայ Աստուածը
ձեզ պատուիրել է, և աջ կամ
33 ձախ չ'խոտորուէք։ Ձեր Եհովայ
Աստուծոյ ձեզ պատուիրած բո-
լոր ճանապարհներովը գնացէք,
որպէս զի ապրէք, և ձեզ համար
բարի լինի, և ձեր ժառանգելու
երկրումը ձեր կեանքի օրերը եր-
կար լինեն։

ԳԼ. Զ

1 Եւ սորանք են այն պատուի-
րանքները, կանոնները և դատաս-
տանները, որ ձեր Եհովայ Աստ-
ուածը պատուիրեց՝ ձեզ սովո-
րեցնելու համար, որ անէք այն
երկրումը ուր որ մտնելու էք նո-
2 րան ժառանգելու համար, Որ-
պէս զի քո Եհովայ Աստուածա-
նից վախենաս, և պահես նորա
ամեն կանոնները ու պատուի-
րանքները՝ որ ես քեզ պատուի-
րում եմ՝ թէ դու, թէ քո որ-
դին և թէ քո որդիի որդին, քո
կեանքի բոլոր օրերումը, որ քո
3 օրերը երկար լինեն։ Արդ, ով
Իսրայէլ, լսիր, և զգուշութիւն
արա կատարելու, որ քեզ հա-
մար բարի լինի, և դուք շատ
բազմանաք կաթ ու մեղր բղխող
երկրումը, ինչպէս որ քո հայ-
րերի Եհովայ Աստուածը քեզ
խոստացաւ։
4 Լսիր, ով Իսրայէլ, մեր Եհո-
վայ Աստուածը՝ Եհովան մէկ է։
5 Եւ սիրիր քո Եհովայ Աստու-
ծուն բոլոր սրտովդ, բոլոր հո-
գիովդ և բոլոր զօրութիւնովդ։
6 Եւ այս խօսքերը, որ ես այսօր
քեզ պատուիրեցի, քո սրտի մէջ
7 լինեն։ Եւ կրկնիր նորանք քո
որդկանցը, խօսիր նորանց վերայ
քո տան մէջ նստած ժամանակդ
և ճանապարհ գնացած ժամա-
նակդ, և պառկելիս և վեր կե-
8 նալիս. Եւ նորանք կապիր նշանի
համար ձեռքիդ վերայ, նորանք
ճակատանոց լինեն աչքերիդ մէջ-
տեղում։ Նաև քո տան դրան- 9
գիքի վերայ և դռներիդ վերայ
գրիր նորանք։
Եւ երբոր քո Եհովայ Աստուա- 10
ծը քեզ տանէ այն երկիրը՝ որի
համար քո հայրերին՝ Աբրահա-
մին, Իսահակին և Յակոբին եր-
դում արաւ, որ քեզ տայ՝ մեծ
և գեղեցիկ քաղաքներ, որոնք
դու չես շինել, Եւ ամեն բա- 11
րիքներով լիքը տներ, որոնք դու
չես լցրել, և փորած ջրհորներ,
որոնք դու չես փորել, այգիներ
և ձիթենիներ, որոնք դու չես
տնկել. և երբոր ուտես և կըշ-
տանաս, Զգոյշ կաց, մի գուցէ 12
մոռանաս Եհովային, որ քեզ Ե-
գիպտոսի երկրից՝ ծառայութեան
տանիցը հանեց։ Քո Եհովայ Ա- 13
ստուածանից վախեցիր, և նորան
պաշտիր և նորա անունովը եր-
դում արա։ Չ'գնաք օտար աս- 14
տուածների՝ ձեր շուրջը եղող ժո-
ղովուրդների աստուածների ե-
տևից. Որովհետև նախանձոտ Ա- 15
ստուած է քո Աստուածը, որ քո
միջումն է. մի գուցէ Եհովայ
Աստուծոյ բարկութիւնը քեզ
վերայ բորբոքուէ, և քեզ երկրի
երեսից բնաջինջ անէ։
Ձեր Եհովայ Աստուծուն չը 16
փորձէք, ինչպէս որ Մասսայի մէջ
փորձեցիք։ Զգուշութեամբ պա- 17
հեցէք ձեր Եհովայ Աստուծոյ
պատուիրանքները, և նորա վը-
կայութիւնները և կանոնները որ
պատուիրել է ձեզ։ Եւ անես 18
ինչ որ Եհովայի առաջին ուղիղ
և հաճելի է, որ քեզ համար
բարի լինի, և մտնես ժառանգես
այն բարի երկիրը՝ որ Եհովան եր-
դում արաւ քո հայրերին, Որ 19
քո ամեն թշնամիներին քո ա-
ռաջիցը հալածես, ինչպէս որ
Եհովան ասեց։
Երբոր էգուց քո որդին քեզ 20
հարցնէ և ասէ՝ Ինչ են այս վը-
կայութիւնները, կանոնները և
դատաստանները, որոնք մեր Ե-
հովայ Աստուածը ձեզ պատուի-
րեց. Այն ժամանակ քո որդիին 21
ասես. Մենք Եգիպտոսումը փա-

բաւօնին ծառայ էինք, և Եհո-
վան մեզ զօրաւոր ձեռքով հա-
22 նեց. Նաև Եհովան մեծ և սոս-
կալի նշաններ և հրաշքներ ա-
րաւ Եգիպտոսի վերայ, Փարա-
ւօնի վերայ և նորա բոլոր տան
23 վերայ մեր աչքերի առաջին. Եւ
մեզ հանեց այնտեղից, որ մեզ
տանէ որ մեր հայրերին երդու-
մով խոստացած երկիրը տայ մեզ։
24 Եւ Եհովան մեզ պատուիրեց, որ
այս բոլոր կանոնները կատարենք,
և մեր Եհովայ Աստուածանից
վախենանք, որ մեզ համար բարի
լինի ամեն ժամանակ, որ մեզ
25 ողջ պահէ ինչպէս որ այսօր։ Եւ
մեզ համար արդարութիւն լինի,
եթէ մեր Եհովայ Աստուծոյ ա-
ռաջին այս բոլոր պատուիրանք-
ները կատարելու զգուշանանք
ինչպէս որ մեզ պատուիրեց։

ԳԼ. Է

1 Երբոր քո Եհովայ Աստուածը
տանէ քեզ այն երկիրը, ուր որ
գնում ես ժառանգելու համար,
և քո առաջիցը շատ ազգեր հա-
լածէ, այսինքն Քետացիներին,
Գերգեսացիներին, Ամօրհացիներ-
ին, Քանանացիներին, Փերեզա-
ցիներին, Խևացիներին, և Յեբու-
սացիներին, այս եօթը ազգերին
որոնք քեզանից բազմաթիւ և
2 զօրաւոր են, Եւ քո Եհովայ Ա-
ստուածը նորանց քո ձեռքը տայ,
և դու նորանց զարկես, այն ժա-
մանակ նորանց անպատճառ *բը-
նաջինջ անես. նորանց հետ ուխտ
3 չ'անես և նորանց չ'ողորմես. Եւ
նորանց հետ խնամութիւն չ'ա-
նես, աղջկանդ նորա տղին չ'տաս,
և նորա աղջկանը քո տղին չ'առ-
4 նես. Որովհետև քո որդկանցը
իմ ծառայութիւնից կ'դարձնեն,
և նորանք օտար աստուածների
կ'պաշտեն. և Եհովայի բարկու-
թիւնը ձեզ վերայ կ'բորբոքուէ
5 և ձեզ շուտով կ'փչացնէ։ Այլ
նորանց այսպէս արէք. նորանց
սեղանները կործանեցէք, նորանց
արձանները խորտակեցէք, նորանց
Աստարովթները կոտրեցէք, և
նորանց քանդակուած կուռքերը
կրակով այրեցէք։ Որովհետև դու 6
սուրբ ժողովուրդ ես քո Եհովայ
Աստուծոյ համար. քո Եհովայ
Աստուածը քեզ ընտրեց, որ դու
նորա համար սեպհական ժողո-
վուրդ լինես, երկրի երեսի վերայ
եղող բոլոր ազգերի միջից։ Ոչ 7
թէ ձեր ամեն ազգերից շատ լի-
նելուն համար Եհովան ձեզ սի-
րեց և ձեզ ընտրեց, որովհետև
դուք ամեն ազգերից քիչ էիք.
Այլ Եհովան ձեզ սիրելու հա- 8
մար և ձեր հայրերին արած եր-
դումը պահելու համար, Եհովան
ձեզ զօրաւոր ձեռքով ծառա-
յութեան տանիցը հանեց, Ե-
գիպտացիների Փարաւօն թագա-
ւորի ձեռքիցն ազատեց։ Եւ գի- 9
տացիր որ քո Եհովայ Աստուա-
ծը՝ է Աստուած, հաւատարիմ
Աստուածը, որ իրան սիրողների
և իր պատուիրանքները պահող-
ների համար մինչև հազար ազգը
ուխտ ու ողորմութիւն է պա-
հում։ Եւ պատժում է իրան 10
ատողներին իրանց երեսին՝ նո-
րանց կորցնելով. իրան ատողին
պատիժը չի ուշացնում՝ նորա ե-
րեսովն է տալիս։ Ուրեմն պահիր 11
այն պատուիրանքները, կանոնն-
երը և դատաստանները՝ որոնք ես
այսօր քեզ պատուիրում եմ, որ
նորանք անես։

Եւ կ'լինի նորա փոխանակ, որ 12
այս դատաստանները լսելով նո-
րանք պահես կատարես, քո Եհո-
վայ Աստուածն էլ քեզ համար
քո հայրերին երդում արած
ուխտը և ողորմութիւնը կ'պա-
հէ. Եւ քեզ կ'սիրէ և քեզ 13
կ'օրհնէ և քեզ կ'շատացնէ. և
կ'օրհնէ քո որովայնի պտուղը,
քո երկրի պտուղը, քո ցորենը,
քո գինին, քո իւղը, կովերիդ
ծնունդը և ոչխարներիդ հօտերը
այն երկրի վերայ՝ որ քո հայրե-
րին երդում արաւ քեզ տալու
համար։ Ամեն ազգերից աւելի 14
օրհնուած կ'լինես. և քո մէջը և
քո անասունների մէջ՝ արու և

*Նզովես

15 էգ ամուլ չի լինիլ։ Եւ Եհովան
վեր կ'առնէ քեզանից ամեն հի-
ւանդութիւնները. և Եգիպտա-
ցիների այն չար ցաւերը՝ որոնք
գիտես, քեզ վերայ չի բերիլ,
այլ նորանք քո բոլոր թշնամի-
16 ների վերայ կ'ուղարկէ։ Եւ դու
կ'փչացնես այն բոլոր ազգերին,
որոնց քո Եհովայ Աստուածը քո
ձեռքը կ'տայ. քո աչքը նո-
րանց չ'խնայէ, և նորանց աստ-
ուածներին չ'պաշտես, որովհե-
տև այն քեզ համար որոգայթ
17 կ'դառնայ։ Եթէ սրտումդ ա-
սես թէ՝ Այն ազգերը ինձանից
շատ են, ես ի՞նչպէս կարող եմ
18 նորանց հալածել. Նորանցից մի
վախենար. յիշելով յիշիր ինչ որ
քո Եհովայ Աստուածն արաւ
Փարաւօնին և բոլոր Եգիպտացի-
19 րին, Այն մեծամեծ փորձերը որ
քո աչքերը տեսան, եւ այն նը-
շաններն ու հրաշքները, և այն
զօրաւոր ձեռքը և բարձր բա-
զուկը, որոնցով քո Եհովայ Ա-
ստուածը քեզ հանեց. քո Եհովայ
Աստուածը այնպէս պիտի անէ
այն բոլոր ազգերին, որոնցից դու
20 վախենում ես։ Ու նաև քո Եհո-
վայ Աստուածը նորանց վերայ ի-
շամեղուն կ'ուղարկէ, որ մնա-
ցածները և քո երեսից թաք
21 կացածները կորչեն։ Մի սար-
սափիր նորանց երեսիցը. որով-
հետև քո Եհովայ Աստուածը՝
այն զօրաւոր և ահարկու Ա-
22 ստուածը ձեր միջումն է։ Եւ քո
Եհովայ Աստուածը կ'քշէ այն
ազգերին քո առաջիցը քիչ քիչ.
դու չես կարող նորանց շուտով
վերջացնել, որ մի գուցէ դաշտի
գազանները քեզ վերայ շատա-
23 նան։ Եւ քո Եհովայ Աստուածը
նորանց քո ձեռքը կ'մատնէ, և
նորանց մեծ կործանումով կը
կործանէ, մինչև որ բնաջինջ լի-
24 նեն։ Եւ նորանց թագաւորներին
քո ձեռքը կ'տայ, և նորանց ա-
նունները երկնքի տակից կ'ոչընչ-
ացնես. և ոչ մի մարդ չի կա-
րողանալ քեզ դէմ կենալ, մին-
չև որ նորանց բնաջինջ անես։
25 Նորանց աստուածների քանդա-
կուած կուռքերը կրակով այ-
րես. չ'ցանկանաս նորանց վերայ
եղած ոսկիին և արծաթին, և
չ'առնես քեզ համար որ նորա-
նով որոգայթի մէջ չ'բռնուես.
որովհետև նորանք քո Եհովայ
Աստուծոյ առաջին գարշելի են.
Եւ մի գարշելի բան տունդ մի 26
տանիր, որ դու էլ նորա պէս
նզովուած չ'լինես. բոլորովին զը-
զուիր նորանից, և շատ գարշելի
համարիր նորան, որովհետև նը-
զովուած է նա։

ԳԼ. Ը

Այն բոլոր պատուիրանքները որ 1
ես այսօր պատուիրում եմ քեզ՝
զգոյշ եղէք որ անէք, որպէս զի
ապրէք և շատանաք և մտնէք
ժառանգէք այն երկիրը, որ Եհո-
վան ձեր հայրերին երդումով
խոստացաւ։ Եւ յիշիր այն բոլոր 2
ճանապարհը, որ քո Եհովայ Ա-
ստուածը այս քառասուն տարիու-
մը քեզ ման ածեց անապատի
մէջ, որ քեզ խոնարհեցնէ, քեզ
փորձելու և սրտիդ միջինը իմա-
նալու համար, թէ արդեօք նո-
րա պատուիրանքները կ'պահես
թէ ոչ։ Եւ քեզ խոնարհեցրեց, 3
և սոված պահեց, և մանանայ
ուտեցրեց, որ ոչ դու էիր ճա-
նաչում, և ոչ քո հայրերը, որ
քեզ իմացնէ թէ ոչ միայն հա-
ցով կ'ապրէ մարդ, այլ մարդը
Եհովայի բերանից դուրս եկած
ամեն բանով կ'ապրէ։ Քո վերայ 4
հանդերձդ չ'հինացաւ, և ոտքե-
րըդ չ'ուռեցան այս քառասուն
տարումը։

Եւ իմացիր սրտիդ մէջ, որ 5
ինչպէս մի մարդ կ'խրատէ իր
որդիին, քո Եհովայ Աստուածն
է քեզ խրատում։ Ուրեմն քո 6
Եհովայ Աստուծոյ պատուիրանք-
ները պահես, որ նորա ճանա-
պարհներումը գնաս և նորանից
վախենաս։ Որովհետև քո Եհո- 7
վայ Աստուածը քեզ տանում է
մի լաւ երկիր, մի երկիր՝ առատ՝
դաշտերից և սարերից բղխող
գետերով, աղբիւրներով և խոր

8 ջրերով. Մի երկիր՝ ———՝ ցորե-
նով, գարիով, այգիներով, թը-
զենիներով և նռնենիներով. իւղ
տուող ձիթենիների և մեղրի եր-
9 կիր. Մի երկիր՝ որի մէջ չքաւո-
րութեամբ չես ուտիլ հացը, և
որի մէջ ընաւ մի բան պակաս
չես ունենալ. մի երկիր որի քա-
րերը երկաթ են և որի լեռներից
պղինձ կ'հանես։
10 Եւ երբոր ուտես և կշտանաս,
քո Եհովայ Աստուծուն օրհնես
այն լաւ երկրումը, որ նա քեզ
11 կ'տայ։ Քո անձին զգուշութիւն
արա, մի գուցէ քո Եհովայ Ա-
ստուծուն մոռանաս, որ չ'պահես
նորա պատուիրանքները, դատաս-
տանները և կանոնները, որոնք
ես այսօր քեզ պատուիրում եմ։
12 Մի գուցէ ուտես և կշտանաս,
և գեղեցիկ տներ շինես և բնա-
13 կուես, Եւ արջառներդ ու հօ-
տերդ շատանան, և արծաթդ ու
ոսկիդ շատանայ, և ամեն ունե-
14 ցածդ շատանայ, Եւ յետոյ սիր-
տըդ հպարտանայ, և քո Եհովայ
Աստուծուն մոռանաս, որ քեզ
հանեց Եգիպտացիների երկրիցը՝
15 ծառայութեան տանիցը, Որ քեզ
ման ածեց այն մեծ և ահագին,
և կիզող օձերով և կարիճներով
լիքը, չոր ու անջուր անապա-
տումը, և քեզ համար ապա-
16 ռաժ քարիցը ջուր հանեց. Որ
անապատումը քեզ մանանայ ու-
տեցրեց, որ քո հայրերը չէին
ճանաչում, որ քեզ խոնարհեցը-
նէ քեզ փորձելու համար, և
17 վերջը քեզ բարիք անէ. Եւ սրբ-
տումդ ասես՝ թէ Այս հարստու-
թիւնը իմ կարողութեամբը և
իմ ձեռքի ուժովը վաստակեցի.
18 Այլ յիշիր քո Եհովայ Աստու-
ծուն. որովհետև նա է հարըս-
տութիւն ստանալու համար քեզ
ոյժ տուողը, որ քո հայրերի հետ
իր երդումով արած ուխտը հաս-
տատէ, ինչպէս որ այսօր։
19 Եւ եթէ քո Եհովայ Աստու-
ծուն մոռանալով ուրիշ աստ-
ուածների ետևից գնաս, և նո-
րանց պաշտես և նորանց երկրը-
պագութիւն անես, ես այսօր ձեզ
վկայում եմ որ անպատճառ կը
կորչէք. Այն ազգերի պէս որ 20
Եհովան ձեր առաջից կորցնում
է, այնպէս կ'կորչէք, որովհետև
ձեր Եհովայ Աստուծոյ խօսքին
չ'լսեցիք։

ԳԼ. Թ

Լսիր, Իսրայէլ. Դու այսօր Յոր- 1
դանանովն անց ես կենում, որ
գնաս ժառանգես քեզանից մեծ
և զօրաւոր ազգեր, և մինչև եր-
կինքը պարսպաւոր մեծ քաղաք-
ներ, Այն մեծ և երկայնահասակ 2
ազգը Ենակիմների որդկանցը, ո-
րոնց դու ճանաչում ես, և լսել
ես թէ ո՞վ կ'դիմանայ Ենակի
որդկանցը։
Եւ այսօր իմացիր, որ քո Եհո- 3
վայ Աստուածը քո առաջին գը-
նացողն ԻԲՐԱ մաշող կրակ է. նո-
րանց կ'կորցնէ, և քո առաջիցը
նորանց կ'նուաճէ, և դու նո-
րանց կ'հալածես և շուտով բնա-
ջինջ կ'անես, ինչպէս որ Եհովան
քեզ ասեց։ Արտիդ մէջ չ'ասես, 4
երբոր քո Եհովայ Աստուածը նո-
րանց քո առաջիցը հալածէ, թէ
Եհովան իմ արդարութեան հա-
մար ինձ բերաւ որ այս երկիրը
ժառանգեմ. բայց Եհովան այս
ազգերի անօրէնութեան համար
է հալածում նորանց քո առա-
ջից։ Ոչ թէ քո արդարութեան 5
և քո սրտի ուղղութեան համար
ես մտնում դու նորանց երկիրը
ժառանգելու. այլ այն ազգերի
անօրէնութեան համար քո Եհո-
վայ Աստուածը նորանց քո ա-
ռաջիցը քշում է, և նորա հա-
մար որ հաստատէ այն խօսքը՝ որ
քո հայրերին՝ Աբրահամին, Իսա-
հակին և Յակոբին երդում ա-
րաւ։ Եւ իմացիր, որ քո արդա- 6
րութեան համար չէ որ քո Եհո-
վայ Աստուածը այս բարի երկի-
րը քեզ է տալիս, որ նորան ժա-
ռանգես. որովհետև դու մի խըս-
տապարանոց ժողովուրդ ես։
Յիշիր, մի մոռանար որ քո Ե- 7
հովայ Աստուծուն անապատումը
բարկացրիր. Եգիպտոսի երկրից

դուրս եկած օրիցդ մինչև այս-
տեղ դալդ անհնազանդ էիք Ե-
8 հովային։ Եւ Քորեբումն էլ բար-
կացրիք Եհովային. և Եհովան
9 բարկացաւ որ ձեզ կորցնէ։ Եր-
բոր ես վեր ելայ սարը, որ առ-
նեմ քարի տախտակները՝ տախ-
տակները այն ուխտին՝ որ Եհո-
վան արաւ ձեզ հետ, և սարու-
մը մնացի քառասուն օր և քա-
ռասուն գիշեր. ոչ հաց կերայ և
10 ոչ ջուր խմեցի. Եւ Եհովան
տուաւ ինձ այն երկու քարի
տախտակները Աստուծոյ մատովը
գրուած և նորանց վերայ ՀՐՍՏ
բոլոր այն խօսքերը, որ Եհովան
ասեց ձեզ սարումը կրակի միջի-
11 ցը ժողովքի օրը։ Եւ քառասուն
օրից և քառասուն գիշերից յե-
տոյ Եհովան տուաւ ինձ այն եր-
կու քարի տախտակները՝ ուխտի
12 տախտակները։ Եւ Եհովան ինձ
ասեց. Վեր կաց, շուտով իջիր
այստեղից, որովհետև ապական-
ուեցաւ քո ժողովուրդը՝ որ Ե-
գիպտոսի երկրից հանեցիր. շու-
տով խոտորուեցան այն ճանա-
պարհիցը, որ պատուիրեցի նո-
րանց. իրանց համար ձուլածոյ
13 կուռք շինեցին։ Ու նաև Եհո-
վան ինձ հետ խօսելով ասեց.
Ես տեսայ այս ժողովրդին, և ա-
հա մի խոտապարանոց ժողովուրդ
14 է նա։ Թող տուր ինձ որ նորանց
կորցնեմ, և նորանց անունը եր-
կընքի տակից բնաջինջ անեմ, և
քեզ նորանցից զօրաւոր և բազ-
մաթիւ ազգ շինեմ։
15 Եւ ես ետ դառայ, և ցած ի-
ջայ սարիցը. և սարը կրակով
այրվում էր. և ուխտի երկու
տախտակները իմ երկու ձեռ-
16 քերի վերայ էին։ Եւ նայեցի, և
ահա ձեր Եհովայ Աստուծոյ դէմ
մեղք էիք գործել՝ ձեզ համար
ձուլածոյ որթ էիք շինել, շու-
տով խոտորուել էիք այն ճա-
նապարհիցը որ Եհովան պատուի-
17 րել էր ձեզ. Եւ ես այն երկու
տախտակները բռնեցի, և գցեցի
իմ երկու ձեռքերի վերայից, և
կոտրատեցի նորանց ձեր աչքերի
18 առաջին։ Եւ առաջուայ պէս
վայր ընկայ Եհովայի առաջին
քառասուն օր և քառասուն գի-
շեր. ոչ հաց կերայ և ոչ ջուր
խմեցի ձեր գործած բոլոր մեղքի
համար, որ չարութիւն արիք Ե-
հովայի առաջին նորան բարկա-
ցընելու համար. Որովհետև վա- 19
խեցայ այն սոսկալի բարկութիւ-
նիցը՝ որով Եհովան ձեզ վերայ
բարկացաւ ձեզ կորցնելու հա-
մար. սակայն Եհովան այն ան-
գամին էլ լսեց ինձ։ Եւ Եհովան 20
Ահարօնի վերայ շատ բարկացաւ,
որ նորան կորցնէր. բայց Ահարօ-
նի համար էլ աղօթք արի։ Եւ 21
ձեր արած մեղքը՝ այսինքն այն
որթը առայ, և կրակով այրեցի
նորան. և ծեծելով լաւ փշրեցի
նորան, մինչև որ մանր փոշի ե-
ղաւ. և այն փոշին սարիցը իջ-
նող առուի մէջ գցեցի։
Նաև Տաբերայում, Մասսա- 22
յում և Կիբրօթ-հաթթավա-
յում Եհովային բարկացրիք։ Եւ 23
երբոր Եհովան ձեզ Կադէս-
Բառնեայից ուղարկեց, և ասեց.
Վեր ելէք և ժառանգեցէք այն
երկիրը, որ ես ձեզ տուի, այն
ժամանակ ձեր Եհովայ Աստու-
ծոյ հրամանին անհնազանդու-
թիւն արիք, և նորան չ'հաւա-
տացիք և նորա խօսքին մտիկ չ'ա-
րիք։ Դուք անհնազանդութիւն 24
էք անում Եհովային՝ ձեզ ճա-
նաչած օրիցս։
Եւ ես այն քառասուն օրը և 25
այն քառասուն գիշերը վայր ընկայ
Եհովայի առաջը և աղաչեցի,
որովհետև Եհովան ասեց որ ձեզ
կորցնէ։ Եւ ես Եհովային աղա- 26
չեցի և ասեցի. Ով Տէր Եհովայ,
մի կորցնիր քո ժողովրդին և ժա-
ռանգութիւնը, որ քո մեծու-
թեամբը ազատեցիր և զօրաւոր
ձեռքով Եգիպտոսից հանեցիր։
Յիշիր քո ծառաներին՝ Աբրահա- 27
մին, Իսահակին և Յակոբին, և
ուշ մի դարձնիր այս ժողովրդի
խստութեանը, անօրէնութեանը
ու մեղքին։ Մի գուցէ այն եր- 28
կիրը, որտեղից մեզ հանեցիր,
ասեն թէ Եհովան չ'կարողանա-
լով նորանց տանելու այն երկի-

ը, որ նորանց խոստացել էր,
կամ նորանց ատելով, հանեց
նորանց որ անապատումը մեռցնէ։
29 Եւ սակայն նորանք քո ժողո-
վուրդը և ժառանգութիւնն են,
որոնց դու քո մեծ զօրութեամբը
և բարձր բազուկովը հանեցիր։

ԳԼ. Ժ

1 Այն ժամանակ Եհովան ինձ
ասեց. Կոփիր քեզ համար ա-
ռաջինների պէս երկու հատ քա-
րի տախտակներ, և վեր ելիր սա-
րը ինձ մօտ, և քեզ համար մէկ
2 փայտէ տապանակ շինիր. Եւ ես
տախտակների վերայ գրեմ այն
խօսքերը, որ առաջին տախտակ-
ներիդ վերայ էին, որոնք դու
կոտրատեցիր, և նորանց դնես
3 տապանակի մէջը։ Եւ ես ստտիմի
փայտից մի տապանակ շինեցի, և
առաջինների պէս երկու հատ
քարի տախտակներ կոփեցի, և
վեր ելայ սարը այն երկու տախ-
4 տակները ձեռքիս։ Եւ այն տախ-
տակների վերայ առաջին գրը-
ուածքի պէս գրեց այն տասը խօս-
քերը, որոնք Եհովան ձեզ հետ
խօսեց սարի վերայ կրակի միջիցը
ժողովքի օրը, և Եհովան նորանց
5 ինձ տուաւ։ Եւ դառնալով սա-
րիցը իջայ, և տախտակները դրի
այն տապանակի մէջ, որ շինել
էի, և այնտեղ էին ինչպէս որ
Եհովան ինձ պատուիրել էր։
6 Եւ Իսրայէլի որդիքը Բերոթ-
բանէ-յականից Մոսէրա չուե-
ցին. այնտեղ մեռաւ Ահարօնը և
թաղուեցաւ այնտեղ, և նորա
որդի Եղիազարը նորա տեղը քա-
7 հանայ եղաւ։ Այնտեղից չուե-
ցին Գադգադ, և Գադգադից ջրի
առուների երկիրը՝ Ետեբաթա։
8 Այն ժամանակ Եհովան Ղևիի
ցեղին ջոկեց, որ Եհովայի ուխտի
տապանակը կրէ, Եհովայի առա-
ջին կանգնելու համար, որ նորան
ծառայութիւն անէ, և նորա ա-
նունովը օրհնէ մինչև այս օրը։
9 Այս պատճառով Ղևին իր եղ-
բայրների հետ բաժին ու ժա-
ռանգութիւն չ՚ունեցաւ. նորա
ժառանգութիւնը Եհովան է,
ինչպէս քո Եհովայ Աստուածը
նորան ասեց։
Եւ ես առաջի օրերի պէս մնա- 10
ցի սարումը քառասուն օր և քա-
ռասուն գիշեր, և Եհովան ինձ
լսեց այս անգամին էլ՝ չ՚ուզեց
քեզ կորցնել։ Եւ Եհովան ինձ 11
ասեց. Վեր կաց և ժողովրդի ա-
ռաջից չուիր, որ մտնեն և ժա-
ռանգեն այն երկիրը, որ նորանց
հայրերին երդում արի նորանց
տալու համար։
Եւ հիմա, ով Իսրայէլ, ի՞նչ է 12
պահանջում քեզանից քո Եհո-
վայ Աստուածը. բայց միայն որ
քո Եհովայ Աստուածանից վախե-
նաս, նորա ամեն ճանապարհնե-
րումը գնաս և նորան սիրես, և
պաշտես քո Եհովայ Աստուծուն
բոլոր սրտովդ և բոլոր հոգիովդ,
Որ Եհովայի պատուիրանքները և 13
կանոնները պահես, որոնք ես այ-
սօր քեզ պատուիրում եմ, որ
քեզ համար լաւ լինի։ Ահա քո 14
Եհովայ Աստուծունն է երկինքը
և երկնից երկինքը, երկիրը և
բոլոր նորա միջի եղածը։ Միայն 15
թէ Եհովան քո հայրերին հա-
ւանեց, որ նորանց սիրէ, և ընտ-
րեց նորանցից յետոյ ձեզ՝ նո-
րանց զաւակները բոլոր ազգերի-
ցը, ինչպէս որ այսօր է։ Ուրեմն 16
ձեր սրտերի անթլփատութիւնը
թլփատեցէք, և ձեր պարանոց-
ները այլ ևս մի խստացնէք. Որով- 17
հետև ձեր Եհովայ Աստուածը
աստուածների Աստուածն է և
տէրերի Տէրը, այն մեծ, հզօր և
ահեղ Աստուածն է, որ աչա-
ռութիւն չի անիլ և կաշառք
չի առնիլ. Որ որբին և որբևայ- 18
րին իրաւունք է անում, և պան-
դուխտին սիրում է՝ նորան հաց
և հանդերձ տալով։ Ուրեմն պան- 19
դուխտին սիրեցէք. ըստ որում
դուք Եգիպտացիների երկրումը
պանդուխտ էիք։ Քո Եհովայ Ա- 20
ստուածանից վախենաս, նորան
պաշտես, և նորան յարես, և նո-
րա անունովը երդում անես։ Քո 21
պարծանքը նա է, և քո Աստուա-
ծը նա է, որ քեզ համար այս

մեծ և սքանչելի բաներն արաւ,
22 որոնք քո աչքերը տեսան։ Քո
հայրերը եօթանասուն հոգիով
Եգիպտոս իջան. և հիմա քո Ե-
հովայ Աստուածը քեզ երկնքի
աստղերի պէս շատացրեց։

ԳԼ. ԺԱ

1 Ուրեմն սիրիր քո Եհովայ Ա-
ստուծուն և նորա պատուիրած
բաները, կանոնները, դատաս-
տանները և պատուիրանքները
2 պահիր ամեն ժամանակ։ Եւ այ-
սօր գիտացէք, որ ձեր որդկանց
հետ չէ իմ խօսքը, որոնք չեն գի-
տում և չեն տեսել ձեր Եհովայ
Աստուծոյ խրատը, նորա մեծու-
թիւնը, նորա զօրաւոր ձեռքը և
3 բարձր բազուկը, Եւ նորա նշան-
ները և նորա գործերը, որ Եգիպ-
տոսի մէջ՝ Եգիպտացիների Փա-
րաւօն թագաւորին և նորա բո-
4 լոր երկրի վերայ արաւ. Եւ ինչ
որ արաւ Եգիպտացիների զօրքե-
րին, նորա ձիերին և կառքերին,
Կարմիր ծովի ջրերը նորանց վե-
րայ թափեց, երբոր նորանք ձեզ
հալածում էին, և Եհովան նո-
5 րանց կորցրեց մինչև այս օրը. Եւ
ինչ որ արաւ ձեզ անապատու-
6 մը մինչև ձեր այստեղ գալը. Եւ
ինչ որ արաւ Ռուբէնեան Եղիա-
բի որդկանցը՝ Դաթանին և Աբի-
րոնին, որ երկիրը իր բերանը բաց
արաւ և կուլ տուաւ նորանց և
նորանց ընտանիքներին, նորանց
վրանները և ամեն ինչ որ կար
նորանց մօտ՝ բոլոր Իսրայէլի մի-
7 ջիցը։ Սակայն Եհովայի արած
բոլոր մեծ գործքերը ձեր աչքե-
8 րը տեսել են։ Ուրեմն պահեցէք
այն ամեն պատուիրանքները, որ
ես այսօր ձեզ պատուիրում եմ,
որպէս զի զօրանաք, և մտնէք
ժառանգէք այն երկիրը, ուր որ
գնում էք նորան ժառանգելու
9 համար. Եւ որ ձեր կեանքի օրերը
երկար լինեն այն երկրի վերայ,
որ Եհովան ձեր հայրերին եր-
դում արաւ՝ նորանց և նորանց
սերունդին տալու համար, մի եր-
կիր որ կաթ ու մեղր է բղխում։
Որովհետև այն երկիրը՝ ուր որ 10
դու գնում ես նորան ժառանգե-
լու համար, Եգիպտոսի երկրի
պէս չէ՝ որտեղից դուք դուրս ե-
կաք, որ սերմ էիր ցանում, և
յետոյ բանջարի պարտէզի պէս
ոտքովդ ջրում էիր. Այլ այն եր- 11
կիրը, որ գնում էք այնտեղ նո-
րան ժառանգելու, սարերի և հո-
վիտների երկիր է. նա երկնքի
անձրևի ջրովն է ջրվում. Այն- 12
պիսի երկիր՝ որ քո Եհովայ Ա-
ստուածն է դարմանում նորան,
քո Եհովայ Աստուծուդ աչքը
միշտ նորա վերայ է տարուայ
սկիզբիցը մինչև վերջը։ Եւ եթէ 13
լինի որ ուշադրութեամբ լսէք
իմ պատուիրանքներին, որ այսօր
ձեզ պատուիրում եմ, որ ձեր
Եհովայ Աստուծուն սիրէք, և
նորան պաշտէք ձեր բոլոր սրտո-
վը և բոլոր հոգիովը, Այն ժա- 14
մանակ ձեր երկրի անձրևը իր
ժամանակին կ՚տամ՝ առաջին և
վերջին անձրևը, և կ՚ժողովես քո
ցորենը, քո գինին ու քո իւղը։
Եւ քո արտի մէջ խոտ կ՚տամ 15
քո անասունների համար, որ ու-
տես և կշտանաս։ Զեր անձերին 16
զգուշութիւն արէք, մի գուցէ
ձեր սիրտը խաբուի, ու դուք
խոտորուելով օտար աստուածներ
պաշտէք և նորանց երկրպագու-
թիւն անէք. Եւ Եհովայի բար- 17
կութիւնը բորբոքուէ ձեզ դէմ,
և նա երկինքը փակէ որ անձրև
չ՚լինի և երկիրը իր պտուղը չը
տայ, և շուտով կորչէք այն բա-
րի երկրիցը, որ Եհովան տալիս
է ձեզ։
Եւ այս իմ խօսքերը ձեր սրտի 18
և հոգիի մէջ դրէք, և նորանց
նշանի համար ձեր ձեռքերի վե-
րայ կապեցէք, և նորանք ճակա-
տանոց լինեն ձեր աչքերի մէջ-
տեղումը. Եւ ձեր տղայոցը սովո- 19
րեցնէք նորանք, որ նորանցից խօ-
սես տանդ նստած ժամանակդ,
և ճանապարհ գնացած ժամանա-
կըդ և պառկելու և վեր կենա-
լու ժամանակդ. Եւ գրիր նորանց 20
քո տան դրանդիների վերայ և
դռներիդ վերայ. Որպէս զի շա- 21

տանան քո օրերը և քո որդկանց
օրերը այն երկրի վերայ, որ Եհո-
վան ձեր հայրերին երդում ա-
րաւ նորանց տալու համար, իբ-
րև երկնքի օրերը երկրի վերայ։
22 Որովհետև եթէ զգուշութեամբ
պահէք ու կատարէք այս բոլոր
պատուիրանքները որ ես պատ-
ուիրում եմ ձեզ անելու, և ձեր
Եհովայ Աստուծուն սիրելու, որ
նորա բոլոր ճանապարհներումը
23 գնաք և նորան յարէք, Եհովան
էլ այս ամեն ազգերը ձեր առա-
ջից կ'քշէ, և դուք կ'տիրէք ձե-
զանից մեծ և զօրաւոր ազգերի
24 վերայ։ Ձեր ոտքի ամեն կոխած
տեղը ձերը կ'լինի. ձեր սահմանը
անապատիցը և Լիբանանիցը, գե-
տիցը՝ այսինքն Եփրատ գետիցը
25 մինչև ետևի ծովը կ'լինի։ Ոչ մէ-
կը չի կանգնիլ ձեզ դէմ. ձեր
վախը և ձեր սոսկումը ձեր Եհո-
վայ Աստուածը կ'գցէ ձեր ամեն
կոխած երկրի վերայ, ինչպէս որ
ձեզ ասել է։
26 Ահա ես այսօր ձեր առաջին
դնում եմ օրհնութիւն և ա-
27 նէծք. Օրհնութիւնը՝ եթէ լսէք
ձեր Եհովայ Աստուծոյ պատուի-
րանքներին, որոնք ես այսօր ձեզ
28 պատուիրում եմ. Եւ անէծքը՝
եթէ չ'լսէք ձեր Եհովայ Աստու-
ծոյ պատուիրանքներին և խո-
տորուէք այն ճանապարհից որ ես
այսօր ձեզ պատուիրում եմ, և
գնաք օտար աստուածների ետե-
29 ւից, որոնք չէք ճանաչում։ Ուս-
տի երբոր քեզ տանէ քո Եհո-
վայ Աստուածը այն երկիրը, ուր
որ գնում ես նորան ժառանգե-
լու, այն ժամանակ տաս օրհնու-
թիւնը Գարիզին սարի վերայ, ու
30 անէծքը՝ Գեբաղ սարի վերայ. Ո՞չ
ապաքէն նորանք Յորդանանի այն
կողմումը արևմտեան ճանապարհի
վերայ հովիտի մէջ բնակող Քա-
նանացիների երկրումն են Գաղ-
գաղայի դէմ, Մօրէի կաղնիների
31 մօտ։ Որովհետև դուք Յորդա-
նանովն կ'անցնէք, որ մտնէք և
ժառանգէք այն երկիրը՝ որ ձեր
Եհովայ Աստուածը տալիս է ձեզ,
և կ'ժառանգէք նորան և նորա
մէջ կ'բնակուէք։ Ուրեմն զգու- 32
շացէք որ անէք այն ամեն կա-
նոնները և դատաստանները, ո-
րոնք ես այսօր ձեր առաջն եմ
դնում։

ԳԼ. ԺԲ

Սորանք են այն կանոնները և 1
դատաստանները, որոնք դուք
պիտի պահէք և անէք այն երկրի
վերայ, որ ձեր հայրերի Եհովայ
Աստուածը ձեզ կ'տայ ժառան-
գելու համար՝ բոլոր ժամանակը
որչափ որ երկրի վերայ ապրէք։
Բոլորովին կործանեցէք այն բո- 2
լոր տեղերը, ուր որ այն ազգերը՝
որոնց կ'նուաճէք՝ իրանց աստ-
ուածներին պաշտել են բարձր
սարերի վերայ, բլուրների վերայ
և ամեն տերևալից ծառերի տակ.
Նաև քանդեցէք նորանց սեղան- 3
ները, և կոտրատեցէք նորանց
արձանները, և նորանց Աստա-
րովթները կրակով այրեցէք, և
նորանց աստուածների կուռքե-
րը փշրեցէք, և այն տեղից ոչն-
չացրէք նորանց անունները։
Իսկ ձեր Եհովայ Աստուծուն 4
այսպէս չ'անէք. Այլ դուք որո- 5
նեցէք այն տեղը, որ ձեր Եհովայ
Աստուածը ձեր ամեն ցեղերի մի-
ջից կ'ընտրէ իր անունի բնակու-
թեան համար, և այնտեղ գնաս։
Եւ այնտեղ տանէք ձեր ողջա- 6
կէզները, ձեր զոհերը, ձեր տա-
սանորդները, և ձեր ձեռքի բար-
ձրացնելու պատարագները, ձեր
ուխտերը, ձեր կամաւոր ընծա-
ները և ձեր արջառների ու ոչ-
խարների առաջինեկները։ Եւ 7
այնտեղ ուտէք ձեր Եհովայ Ա-
ստուծոյ առաջին, և ձեր ամեն
ձեռնարկած բաների մէջ ուրա-
խանաք դուք և ձեր ընտանիքը,
որ քո Եհովայ Աստուածը քեզ
օրհնել է։
Մի անէք այն ամենի համե- 8
մատ, որ մենք այսօր անում ենք
այստեղ, այսինքն՝ ամեն ինչ որ
մարդի աչքերին հաճոյ է. Որով- 9
հետև մինչև հիմա չ'հասաք այն
հանգստութեանը և ժառանգու-

թեանը, որ ձեր Եհովայ Աստ-
10 ուածը տալիս է ձեզ։ Բայց դուք
Յորդանանը կ'անցնէք և կ'բնակ-
ուէք այն երկրումը, որ ձեր Եհո-
վայ Աստուածը ձեզ ժառանգել
կ'տայ. և ձեր բոլոր շրջակայ
թշնամիներից ձեզ կ'հանգստա-
ցընէ, և ապահովութեամբ կ'բը-
11 նակուէք։ Եւ կ'լինի այն տեղը,
որ ձեր Եհովայ Աստուածը կ'ընտ-
րէ որ իր անունը բնակուէ այն-
տեղ, այնտեղ տանէք բոլորը ինչ
որ ձեզ պատուիրում եմ՝ ձեր
ողջակէզները, ձեր զոհերը, ձեր
տասանորդները, ձեր ձեռքի բար-
ձրացնելու պատարագները և ձեր
բոլոր ուխտերի ընտիրը, որ կ'ուխ-
12 տէք Եհովային։ Եւ ձեր Եհովայ
Աստուծոյ առաջին ուրախութիւն
անէք, դուք՝ և ձեր տղերքն ու
աղջկերքը, ձեր ծառաները և ա-
ղախինները. և ձեր դռներումը
եղող Ղևտացին, որովհետև նա
ձեզ հետ բաժին և ժառանգու-
թիւն չ'ունի։
13 Զգուշացիր, մի գուցէ ողջա-
կէզներդ մատուցանես ամեն տեղ
14 որ տեսնես. Այլ այնտեղ մատու-
ցանես քո ողջակէզները, որ Եհո-
վան քո ցեղերի մէկումը կ'ընտ-
րէ, և այնտեղ կատարես ամեն
ինչ որ ես պատուիրում եմ քեզ։
15 Սակայն սրտիդ բոլոր ուզածին
պէս անասունները մորթիր, և միս
կեր, քո Եհովայ Աստուծոյ քեզ
տուած օրհնութեան համեմատ
քո ամեն դռներումը. անմաքու-
րը և մաքուրը ուտեն նորան այ-
16 ծեամի և եղջերուի պէս։ Բայց
արիւնը չ'ուտէք. ջրի պէս գե-
տինը թափէք նորան։
17 Բնաւ չ'ուտես քո դռներումը
ցորենիդ, գինիիդ և իւղիդ տա-
սանորդները, արջառներիդ և հօ-
տերիդ առաջինեկները, բոլոր
ուխտ արած ուխտերդ, և կա-
մաւոր ու բարձրացնելու պատա-
18 րագներդ. Այլ քո Եհովայ Ա-
ստուծոյ առաջին ուտես այն տե-
ղումը, որ քո Եհովայ Աստուա-
ծը կ'ընտրէ, դու և քո տղան և
քո աղջիկը, քո ծառան և քո
աղախինը, և քո դռներումը ե-
ղող Ղևտացին. և ուրախանաս
քո Եհովայ Աստուծոյ առաջին
քո բոլոր ձեռնարկած բաների վե-
րայ։ Զգուշացիր, մի գուցէ Ղև- 19
տացիին անտես անես, քո կեան-
քի բոլոր օրերումը երկրի վերայ։
Երբոր քո Եհովայ Աստուածը 20
քո սահմանը լայնացնէ ինչպէս որ
քեզ ասել է, և ասես՝ Միս ու-
տեմ, որովհետև սիրտդ ուզում
էր միս ուտել, որտիդ բոլոր ու-
զածի պէս միս կեր։ Եթէ քե- 21
զանից հեռու լինի այն տեղը, որ
քո Եհովայ Աստուածը կ'ընտրէ
իր անունը այնտեղ դնելու հա-
մար, այն ժամանակ քեզ պատ-
ուիրածիս պէս քո արջառներից և
ոչխարներից մորթես, որոնք Եհո-
վան քեզ կ'տայ, և սրտիդ բոլոր
ուզածին պէս քո դռներումն ու-
տես։ Եւ ինչպէս որ այծեամն ու 22
եղջերուն է ուտվում, նորանց էլ
այնպէս ուտես. անմաքուրն ու
մաքուրը միակերպ ուտեն։ Բայց 23
զգուշացիր, որ արիւնը չ'ուտես.
որովհետև արիւնը ոգին է, և ո-
գին մսի հետ չ'ուտես. Նորան 24
չ'ուտես, այլ ջրի պէս գետինը
թափես։ Նորան մի ուտիր, որ 25
քեզ համար և քեզանից յետոյ
քո որդկանց համար բարի լինի՝
Եհովայի առաջին ուղիղը անելո-
վըդ։ Բայց քո նուիրելու բաները 26
և ուխտերը վեր առնես և գնաս
այն տեղը, որ Եհովան կ'ընտրէ։
Եւ կատարես քո ողջակէզները՝ 27
միսը և արիւնը քո Եհովայ Ա-
ստուծոյ սեղանի վերայ. բայց քո
զոհերի արիւնը քո Եհովայ Ա-
ստուծոյ սեղանի վերայ թափուի,
և միսը ուտես։
Զգոյշ եղիր և լսիր այս բոլոր 28
խօսքերին, որոնք ես քեզ պատ-
ուիրում եմ, որպէս զի բարի լի-
նի քեզ համար և քեզանից յե-
տոյ քո որդկանց համար մինչև
յաւիտեան՝ քո Եհովայ Աստու-
ծոյ առաջին բարի և հաճոյ ե-
ղածը անելովդ։
Երբոր քո Եհովայ Աստուածը 29
քո առաջիցը ջարդէ այն ազգե-
րին, որոնց մօտ դու գնում ես
նորանց ժառանգելու, և երբոր

նորանց ժառանգես և նորանց
30 երկրումը բնակուես, Զգուշացիր,
մի գուցէ նորանց ետևիցը որո-
գայթի մէջ ընկնես նորանք քո
առաջից բնաջինջ լինելուց յետոյ,
և մի գուցէ նորանց աստուած-
ների վերայով հարցուփորձ ա-
նես, ասելով. Այս ազգերը ի՞նչ-
պէս էին իրանց աստուածներին
պաշտում. որ ես էլ այնպէս ա-
31 նեմ։ Դու քո Եհովայ Աստու-
ծուն այնպէս չ՚անես, որովհետև
նորանք Եհովայի համար ատելի
եղած բոլոր գարշելի բաներն ի-
րանց աստուածներին անում էին.
որովհետև նորանք իրանց աստ-
ուածների համար մինչև անգամ
իրանց աղայոց ու աղջկերանցը
32 կրակով այրում էին։ Ամեն ինչ
որ ես ձեզ պատուիրում եմ,
զգուշացիր այն անելու. նորա վե-
րայ մի բան չ՚աւելացնես, և նո-
րանից մի բան չ՚պակասեցնես։

ԳԼ. ԺԳ

1 Եթէ միջիցդ մէկ մարգարէ
կամ երազատես դուրս գայ, և
քեզ նշան կամ հրաշք տայ,
2 Եւ կատարուի քեզ ասած նշանը
կամ հրաշքը, և քեզ ասէ թէ
դնանք օտար աստուածներ պաշ-
տենք, որոնք դու չես ճանաչում.
3 Այն մարգարէի կամ երազատե-
սի խօսքին մի լսիր. որովհետև
Եհովայ Աստուածը ձեզ փորձում
է, որ հասկանայ թէ արդեօք
դուք ձեր Եհովայ Աստուծուն
ձեր բոլոր սրտովը և բոլոր հոգի-
4 ովը սիրում էք։ Ձեր Եհովայ Ա-
ստուծուն հետևէք, և նորանից
վախենաք, նորա պատուիրանք-
ները պահէք, և նորա ձայնին լը-
սէք, նորան պաշտէք և նորան
5 յարէք։ Եւ այն մարգարէն կամ
երազատեսը պիտի մեռցնուի, ո-
րովհետև ապստամբութիւն խօ-
սեց ձեր Եհովայ Աստուծոյ դէմ,
որ ձեզ Եգիպտոսի երկրիցը հա-
նեց և ձեզ ծառայութեան տա-
նից ազատեց, որ ձեզ խոտորեցնէ
այն ճանապարհից որ ձեր Եհո-
վայ Աստուածը ձեզ պատուիրեց
որ նորա մէջ դնաք. և չարու-
թիւնը ձեր միջիցը վերացնէք։
Եթէ մօրդ տղան քո եղբայրը, 6
կամ քո տղան կամ աղջիկը,
կամ ծոցիդ կինը, և կամ քո
բարեկամը, որ անձիդ պէս սիրում
ես, քեզ մոլորեցնել ուզենալով
ծածուկ ասէ. Գնանք և օտար
աստուածներ պաշտենք, որոնք
չես ճանաչել ոչ դու, ոչ քո
հայրերը, Ձեր շուրջը եղող ազ- 7
գերի աստուածներից՝ թէ քեզ
մօտիկ լինեն և թէ քեզանից հե-
ռու, երկրիս մէկ ծայրիցը մինչև
միւս ծայրը, Նորան հաւանու- 8
թիւն չ՚տաս, ոչ էլ նորան լսես.
և քո աչքը չ՚խնայէ նորան, ոչ
էլ նորա վերայ դութ ունենաս,
և ոչ պահես նորան. Այլ ան- 9
պատճառ մեռցնես. և նորան
մեռցնելու համար նախ քո ձեռ-
քը լինի նորա վերայ, և յետոյ
բոլոր ժողովրդի ձեռքը. Քարե- 10
րով քարկոծես նորան, և նա
մեռնէ, որովհետև ուզեց քեզ
ապստամբեցնել քո Եհովայ Աստ-
ուածանից, որ քեզ Եգիպտոսի
երկրից՝ ծառայութեան տանիցը
հանեց։ Եւ բոլոր Իսրայէլը լսելով 11
վախենայ, և այլևս ձեր միջումը
սորա նման չարութիւն չ՚անեն։
Եթէ քո այն քաղաքների մէ- 12
կումը լսես, որ քո Եհովայ Աստ-
ուածը՝ բնակութեան համար քեզ
կ՚տայ, որ ասեն թէ Ձեր միջից 13
մի քանի *անպիտան մարդիկ՝ են
դուրս եկել, և իրանց քաղաքի բը-
նակիչներին ապստամբեցնում են,
ասելով. Գնանք ձեր չ՚ճանաչած
օտար աստուածներին պաշտենք,
Այն ժամանակ քննես և լաւ 14
հարցուփորձ անես, և երբոր տես-
նես որ այն բանը ճշմարիտ ըս-
տոյգ է՝ այն գարշելի բանը քե-
զանում եղել է, Այն քաղաքի 15
բնակիչներին անպատճառ սուրի
բերանից անցկացնես, նորան և
նորա մէջ եղած բոլոր բաները
նզովելով. անասուններին էլ սու-
րի բերանից անցկացնես. Եւ նորա 16
բոլոր աւարը նորա հրապարակի

*Բելիարի որդիներ

մէջ ժողովես, և այն քաղաքը և
նորա բոլոր աւարը քո Եհովայ
Աստուծոյ համար բոլորովին կրա-
կով այրես. և նա յաւիտեան
աւերակի թումբ լինի, այլևս չը
17 շինուի։ Եւ այն նզովածից ձեռ-
քիդ մի բան չ՚փակչէ, որպէս զի
Եհովան իր սաստիկ բարկութիւ-
նիցը դառնայ և քեզ ողորմու-
թիւն ու գթութիւն անէ, և
քեզ շատացնէ, ինչպէս որ քո
18 հայրերին երդում արաւ, Եթէ
քո Եհովայ Աստուծոյ ձայնին լը-
սես նորա այն բոլոր պատուի-
րանքները պահելու, որոնք ես
այսօր քեզ պատուիրում եմ, և
Եհովայ Աստուծոյ առաջին ու-
ղիղ եղածը անես։

ԳԼ. ԺԴ

1 Դուք ձեր Եհովայ Աստուծոյ
որդիքն էք, մեռելի համար ձեր
մարմնի վերայ վէտեր չ՚շինէք, և
ձեր աչքերի մէջտեղի մազերը չը
2 քանդէք. Որովհետև դու քո Ե-
հովայ Աստուծոյ համար սուրբ
ժողովուրդ ես. և Եհովան քեզ
ընտրեց երկրի վերայ եղած բոլոր
ժողովուրդների միջիցը, որ իր
համար սեպհական ժողովուրդ
3 լինես։ Ոչ մի պիղծ բան չ՚ուտես։
4 Սորանք են ձեր ուտելու անա-
սունները, արջառը, ոչխարը և
5 այծը, Եղջերուն, այծեամը, վի-
թը, խարբուզը, այծքաղը, յա-
6 մոյրը և անալութը։ Եւ անա-
սուններից ամեն կճղակաւոր այ-
սինքն կճղակը երկու ճեղքուած,
և որոճող անասունն ուտէք.
7 Բայց որոճողներից կամ կճղակը
ճեղքուած եղողներից սորանց
չ՚ուտէք. ուղտը, նապաստակը և
ճագարը. որովհետև նորանք թէ-
պէտ և որոճում են, բայց նո-
րանց կճղակը ճեղքուած չէ. նո-
րանք ձեզ համար անմաքուր լի-
8 նեն։ Եւ խոզը՝ որ թէև կճղակը
ճեղքուած է, բայց չէ որոճում.
նա ձեզ համար անմաքուր լինի։
Նորանց մսիցը չ՚ուտէք, և նո-
րանց դիակներին չ՚դպչէք։
9 Ջրերումը բոլոր եղածներից սո-
րանց ուտէք. ամեն թև ու թեփ
ունեցողն ուտէք, Բայց ամեն թև 10
ու թեփ չ՚ունեցողը չ՚ուտէք. նա
ձեզ համար անմաքուր լինի։
Ամեն մաքուր թռչունն ուտէք։ 11
Եւ ձեր չ՚ուտելու թռչուններիցը սո- 12
րանք են. արծիւը, և պասկուճը,
և գետարծիւը, Եւ անգղը, և ցի- 13
նը, և ուրուրը իր տեսակին պէս,
Ու ամեն ագռաւն իր տեսակին 14
պէս, Եւ ջայլամը, և բուն, և ո- 15
րորը, և բազէն իր տեսակին պէս,
Եւ հաւպատիրը, և քաջահաւը 16
և կարապը, Եւ հաւալուսը, և 17
սև անգղը, և հողամաղը, Եւ ա- 18
րագիլը, ու քարագրը իր տեսա-
կին պէս, և յոպոպը, և չիղջը։
Եւ ամեն թռչող զեռունները 19
ձեզ համար պիղծ լինեն. նորանք
պիտի չ՚ուտուին։ Ամեն մաքուր 20
թռչուններն ուտէք։
Ինքն իրանից մեռածը բնաւ 21
չ՚ուտէք. քո դռներումը եղող
պանդուխտին տաս այն որ ուտէ,
կամ օտարազգիի վերայ ծախես.
որովհետև դու քո Եհովայ Աստու-
ծոյ համար սուրբ ժողովուրդ ես։
Ուլը իր մօր կաթի մէջ չ՚եփես։
Տարուց տարի քո ցանքի ար- 22
տիցը ելած ամեն արմտիքներից
անպատճառ տասանորդ տաս։
Եւ քո Եհովայ Աստուծոյ առա- 23
ջին ուտես քո ցորենի, գինիի և
իւղի տասանորդը, և քո արջառ-
ների և ոչխարների առաջինեկնե-
րը, այն տեղը, որ նա իր անունի
բնակութեան համար կ՚ընտրէ.
որպէս զի սովորես քո Եհովայ
Աստուծանից վախենալ ամեն ժա-
մանակ։ Եւ եթէ ճանապարհդ 24
քեզ համար հեռու լինի, և այն
տեղը՝ որ քո Եհովայ Աստուածը
կ՚ընտրէ իր անունը այնտեղ դնե-
լու համար՝ քեզանից հեռու լի-
նելով չ՚կարողանաս նորանց այն-
տեղ տանել, որովհետև քո Եհո-
վայ Աստուածը քեզ կ՚օրհնէ,
Այն ժամանակ նորանց փողով 25
փոխես, և փողը ծրարես ձեռքդ
և դնաս այն տեղը ուր որ քո Ե-
հովայ Աստուածը կ՚ընտրէ. Եւ 26
այն փողը տաս սրտիդ բոլոր ու-
զած բաներին, արջառների կամ

ոչխարներին, գինիի կամ ցքիի, և ամեն ինչ որ սիրտդ ուզէ. և այնտեղ քո Եհովայ Աստուածդ առաջին ուտես և ուրախանաս՝
27 դու և քո ընտանիքդ. եւ քո դռներուդ եղող Ղեւտացին էլ դանդ չանես. որովհետև նա քեզ հետ բաժին և ժառանգութիւն չունի։
28 Ամէն երեք տարուայ վերջին հանես քո նոյն տարուայ արմտիքներուդ բոլոր տասանորդը և պահես նորան քո դռներուդ.
29 եւ Ղեւտացին՝ որ քեզ հետ բաժին և ժառանգութիւն չունի, և քո դռներուդ եղող օտարականը, որբը և այրեւայրին գան և ուտեն կշտանան. որպէս զի քո Եհովայ Աստուածը քեզ օրհնէ քո ձեռքի արած ամեն գործքերի մէջ։

ԳԼ. ԺԵ

4 Եօթը տարուայ վերջին թողու-
2 թիւն անես։ Եւ թողութեան կանոնը այս է. Ամեն պարտատէր թող ինչ որ իր դրացիին փոխ է տուել, չպահանջէ իր դրացիիցը կամ եղբօրիցը, որովհետև թողութիւն են քարոզել Եհովայի
3 համար։ Օտարազգիից պահանջես, բայց ինչ որ ունենաս քո
4 եղբօր մօտ պիտի թողես. բայց՝ երբոր քեզ մօտ աղքատ չ'գտնուի. որովհետև Եհովան անպատճառ քեզ պիտի օրհնէ այն երկրումը, որ քո Եհովայ Աստուածը քեզ ժառանգութիւն կը
5 տայ, որ նորան տիրես։ Միայն եթէ քո Եհովայ Աստուածդ խօսքին ամեն կերպով լսես, և այս բոլոր պատուիրանքները որ ես այսօր քեզ պատուիրում եմ՝ բըզ-
6 դուշութեամբ կատարես, Որովհետև քո Եհովայ Աստուածը քեզ պիտի օրհնէ ինչպէս որ քեզ ասել է, և դու շատ ազգերի փոխ կ'տաս, բայց դու փոխ չես առնիլ, և դու շատ ազգերի վերայ կ'տիրես, բայց նորանք քեզ վերայ չեն տիրիլ։
7 Եթէ քո Եհովայ Աստուածդ քեզ տուած երկրումը քո քաղաքների մէկումը եղբայրներիդ մէկը աղքատ լինի, սիրտդ չ'խըստացնես և ձեռքդ չ'խփես քո աղքատ եղբօրիդը. Այլ անպատճառ ձեռքդ բաց անես նորա համար, և նորա կարօտութեան բաւական լինելու չափ փոխ տաս նորան։ Զգուշացիր, մի գուցէ սրտիդ մէջը չար խորհուրդ մըտնէ, ասելով. Եօթներորդ տարին՝ թողութեան տարին մօտ է, և աղքատ եղբօրդ վերայ չար աչքով նայես և նորան չ'տաս. և նա էլ քեզ դէմ Եհովային աղաղակէ, և դու յանցաւոր լինես։ Անպատճառ տաս նորան, և նորան տալիս սրտդ չ'նեղուի. որովհետև քո Եհովայ Աստուածդ այս բանի պատճառով կ'օրհնէ քեզ քո ամեն գործքերումը և քո ամեն ձեռնարկած բաներումը։ Որովհետև երկրի միջից աղքատ պակաս չի լինիլ, նորա համար քեզ պատուիրում եմ ու ասում. Ձեռքդ բաց քո երկրումն եղած աղքատ և չքաւոր եղբօրդ։
12 Եթէ քո եղբայրներիցը մի եբրայեցի մարդ կամ կին քեզ վերայ ծախուի, և նա վեց տարի քեզ ծառայութիւն անէ, այն ժամանակ եօթներորդ տարին նորան քո մօտիցը ազատ արձակես։
13 Եւ երբոր քո մօտիցն ազատ արձակելու լինես՝ նորան դատարկ չ'արձակես. Պարգեւատրես նորան
14 քո ոչխարներիցը, քո կալիցը և քո հնձանիցը. քո Եհովայ Աստուածը քեզ օրհնեց, տաս նորան։
15 Եւ յիշիր, որ դու էլ ծառայ էիր եգիպտոսի երկրումը, և քո Եհովայ Աստուածը քեզ փրկեց. այս պատճառով այսօր քեզ պատուիրում եմ այս բանը։
16 Բայց եթէ քեզ ասէ՝ Քո մօտիցը դուրս չեմ գալիս, քանի որում քեզ և քո տունը սիրել եմ, որովհետև նորա համար լաւ է քեզ մօտ,
17 Այն ժամանակ հէրիւնը առնես և նորա ականջը դռան վերայ ծակես, և նա քեզ յաւիտեան ծառայ լինի. ազախ-

18 նիդ էլ այսպէս անես։ Նորան քո մօտից ազատ արձակելը աչքիդ դժուար չ'երեւայ. որովհետև վեց տարի քեզ ծառայութիւն է արել, ոչ մի վարձկանի վարձի կրկնապատիկն է. և քո Եհովայ Աստուածը քո ամեն գործքերումը քեզ կ'օրհնէ։
19 Քո արջառներից և հօտերից ծնած ամեն արու առաջինները քո Եհովայ Աստուածուն նուիրես. արջառներիդ առաջինեկներով չը գործես, և առաջինեկ ոչխարներիդ բուրդը չ'խուզես։ Տարիից տարի քո Եհովայ Աստուածդ առաջին նորանց ուտես՝ դու և քո ընտանիքը այն տեղումը ուր որ
21 Եհովան կ'ընտրէ։ Բայց եթէ նորանցում արատ լինի, կաղ կամ կոյր լինին, որ և իցէ մի վատ արատ, նորանք քո Եհովայ Աստուածուն չ'զոհես. Քո դռներումը ուտես. անմաքուրը և մաքուրը հաւասար՝ քո այծեամի և
23 եղջերուի պէս։ Միայն նորա արիւնը չ'ուտես, ջրի պէս գետինը թափես այն։

ԳԼ. ԺԶ

4 Աբիբ ամսուան զգուշութեամբ պահես, և Զատիկն անես քո Եհովայ Աստուածդ համար. որովհետև քո Եհովայ Աստուածը Աբիբ ամսումը դիշերով հանեց
2 քեզ եգիպտոսից։ Զատկի համար քո Եհովայ Աստուածուն ոչխարներ ու արջառներ մորթես այն տեղումը՝ որ Եհովան կ'ընտրէ իր անունի բնակութեան համար.
3 Նորա հետ խմորուած հաց չ'ուտես. եօթն օր նեղութեան անխմոր հաց ուտես նորա հետ. որովհետև եգիպտոսի երկրից ապշանգով դուրս եկար. որպէս զի քո կեանքի բոլոր օրերումը եգիպտոսի երկրից դուրս եկած
4 օրդ յիշես։ Եւ քո բոլոր սահմաններումդ եօթն օր բնաւ խմոր չ'երեւայ քեզ մօտ. և առաջի օրուայ իրիկունը մորթած միսդ մինչև առաւօտը չ'մնայ։
5 Դու չես կարող քո Եհովայ Աստուածդ քեզ տուած դռներիդ մէկումը զատիկը մորթել. Այլ միայն այն տեղումը որ քո Եհովայ Աստուածը կ'ընտրէ իր անունի բնակութեան համար, այնտեղ մորթես զատիկը իրիկնադէմին՝ արեգակը մտնելիս, եգիպտոսից դուրս եկած ժամանակդ։
7 Եւ քո Եհովայ Աստուածդ բնաբան տեղը եփես և ուտես. և առաւօտեան ետ գառնաս՝ վրանդ գնաս։
8 Վեց օր բաղարջ ուտես. և եօթներորդ օրը քո Եհովայ Աստուածդ համար ատենախմբութեան օր լինի. գործ չ'անես։
9 Դու քեզ համար եօթը շաբաթ համարես, Հունձքի մէջ մանգաղը սկսելիս սկսիր համարել
10 եօթը շաբաթ։ Եւ քո Եհովայ Աստուածդ համար շաբաթներուն ատն անես, քո Եհովայ Աստուածուն քեզ տուած օրհնութեան համեմատ ձեռքիդ եկած կամաւոր նուէրը տաս. Եւ ուրա-
11 խութիւն անես քո Եհովայ Աստուածդ առաջին դու և քո տղան և աղջիկը, քո ծառան և աղախինը, և քո դռներումն եղող Ղեւտացին, և ձեր միջումը գըտնուած օտարականը, որբը և որբևայրին այն տեղը՝ որ քո Եհովայ Աստուածը կ'ընտրէ իր
12 անունի բնակութեան համար, Եւ յիշիր որ դու ծառայ էիր եգիպտոսումն, և այս կանոնները զգուշութեամբ կատարիր։
13 Եօթն օր տաղաւարահարաց ատենը պահես քո կալը և հնձանը ժողովելուդ յետոյ։ Եւ տօնիդ
14 մէջ ուրախութիւն անես՝ դու և քո տղան և աղջիկը, քո ծառան և աղախինը և դռներումդ եղող Ղեւտացին, օտարականը, որբը և որբևայրին։ Քո Եհովայ Աստուածդ համար եօթն օր տօն պահելով ուրախութիւն անես այն տեղումը, որ Եհովան կ'ընտրէ, որովհետև քո Եհովայ Աստուածը կ'օրհնէ քեզ քո բոլոր բերքերովը և ձեռքիդ բոլոր գործքերովը։
16 Տարին երեք անգամ՝ այսինքն բաղարջակերաց տօնին, շաբաթների տօնին և տաղաւարահարաց

տօնին՝ քո ամեն արուները քո
Եհովայ Աստուծոյ առաջին երե-
ւան այն տեղումը որ ինքը կ'ընտ-
րէ. և Ֆէլը Եհովայի առաջին
17 ձեռքը դարտակ չ'երևայ. Ամեն
մարդ ձեռքիցը եկածի չափ քո
Եհովայ Աստուծոյ քեզ տուած
օրհնութեան համեմատ տայ։
18 Քեզ համար դատաւորներ և
ոստիկաններ կարգես քո Եհովայ
Աստուծոյ քեզ տուած ամեն քա-
ղաքներումը քո ցեղերի համե-
մատ, և նորանք արդար դատաս-
19 տանով ժողովրդին դատեն։ Իրա-
ւունքը չ'ծռես, աչառութիւն
չ'անես, և կաշառք չ'առնես. ո-
րովհետև կաշառքը կուրացնում
է իմաստունների աչքերը և ար-
20 դարների բանը դարձնում է։ Ար-
դարութեան՝ արդարութեան հե-
տևես, որ ողջ մնաս և ժառան-
գես այն երկիրը, որ քո Եհովայ
Աստուածը տալու է քեզ։
21 Ոչ մի ծառից աստարօթ չը
տնկես քո Եհովայ Աստուծոյ սե-
ղանի մօտ, որ պիտի շինես քեզ
22 համար. Արձան էլ չ'կանգնեցնես
քեզ համար, որից քո Եհովայ
Աստուածը զզվում է։

ԳԼ. ԺԷ

1 Քո Եհովայ Աստուծոյ համար
չ'զոհես ոչ մի արջառ և ոչխար,
որի վերայ լինի արատ կամ որ և
իցէ վատ բան. որովհետև սա քո
Եհովայ Աստուծոյ համար պիղծ է։
2 Եթէ քո Եհովայ Աստուծոյ
քեզ տուած դռների մէկումը
ձեզանից գտնուի մի մարդ կամ
կին, որ քո Եհովայ Աստուծոյ ա-
ռաջին չարութիւն անէ և նորա
3 ուխտը չ'պահէ, Եւ երթայ պաշ-
տէ ուրիշ աստուածներ, և եր-
կրպագէ նորանց՝ այսինքն արե-
գակին կամ լուսնին և կամ եր-
կընքի որ և իցէ զօրքին, որ ես
4 չեմ հրամայած. Եւ այս բանը
քեզ պատմուի, և դու լսես և
լաւ քննութիւն անես, և տես-
նես որ բանը ստոյգ ճշմարիտ է,
որ Իսրայէլի մէջ այդ պղծու-
5 թիւնը եղել է. Այն ժամանակ
այն չար բանն անող մարդին կամ
կնկան քո դռները հանես, և այն
մարդին կամ կնկան քարերով
քարկոծես, և նա մեռնէ։ Մա- 6
հապարտը երկու կամ երեք վը-
կայի բերանով մեռնէ. մէկ վկա-
յի բերանով չ'մեռնէ։ Առաջ վը- 7
կաների ձեռքը նորա վերայ լինի
նորան մեռցնելու համար, և նո-
րանից յետոյ բոլոր ժողովրդի
ձեռքը. և չարութիւնը ձեր մի-
ջիցը վերացնես։ Եթէ մի բան 8
քեզ շատ դժուար երևայ դա-
տելու արիւնի և արիւնի մէջ,
դատի և դատի մէջ, վէրքի և
վէրքի մէջ՝ այսինքն վէճերի բա-
ները քո դռներումը, այն ժամա-
նակ վեր կենաս և գնաս քո Եհո-
վայ Աստուծոյ ընտրած տեղը, Եւ 9
գնաս Ղևտացի քահանաների մօտ
և այն ժամանակի դատաւորի մօտ
և հարցնես. և նորանք քեզ կ'ա-
սեն դատաստանի վճիռը։ Եւ ա- 10
նես այն վճռի համեմատ որ քեզ
ասեցին Եհովայի ընտրած տեղի-
ցը, և ամեն ինչ որ քեզ սովորե-
ցընեն՝ զգուշութեամբ կատարես.
Այն օրէնքի համեմատ որ նո- 11
րանք քեզ սովորեցրել են և այն
դատաստանի համեմատ որ քեզ
ասել են, կատարես. նորանց քեզ
յայտնած խօսքիցը աջ ու ձախ
չ'խոտորուես։ Բայց այն մարդը 12
որ յանդգնութիւն անելով չ'լսէ
այն քահանային, որ կանգնել է
քո Եհովայ Աստուծուն այնտեղ
պաշտելու, կամ դատաւորին,
այն մարդը մեռնէ, և չարութիւ-
նը Իսրայէլիցը վերացնես։ Եւ բո- 13
լոր ժողովուրդը լսելով վախե-
նայ, և այլ ևս յանդգնութիւն
չ'անեն։
Երբոր մտնես այն երկիրը որ քո 14
Եհովայ Աստուածը քեզ կ'տայ,
և նորան տիրես և նորանում բը-
նակուես, և ասես. Ինձ վերայ
թագաւոր դնեմ այն ամեն ազ-
գերի պէս որ իմ շուրջն են, Ան- 15
պատճառ քո Եհովայ Աստուծոյ
ընտրած մարդին քեզ վերայ թա-
գաւոր դնես. քո եղբայրներիցը
քեզ վերայ թագաւոր դնես. դու
չես կարող քեզ վերայ թագաւոր

դնել մի օտարականին որ քո եղ-
16 բայրը չէ։ Սակայն նա շատ ձիեր
չ'ունենայ, և ժողովրդին ետ չը
դարձնէ Եգիպտոս, շատ ձիեր
ժողովելու համար. որովհետև Ե-
հովան ձեզ ասեց, որ այն ճանա-
պարհովն այլ ևս ետ չ'դառնաք։
17 Նաև իր կանանցը չ'շատացնէ, որ
սիրտը չ'խոտորուէ. և իր համար
արծաթը և ոսկին շատ չ'շատա-
18 ցընէ։ Եւ լինի որ իր թագաւո-
րութեան աթոռի վերայ հէնց որ
նստեց, գրէ այս օրէնքների օրի-
նակը այն գրքիցը, որ Ղևտացի
19 քահանաների մօտ է։ Եւ այն իր
մօտ մնայ, և իր կեանքի բոլոր
օրերումը կարդայ. որպէս զի սո-
վորէ իր Եհովայ Աստուածանից
վախենալ, և այս օրէնքի բոլոր
խօսքերը պահել և այս կանոն-
ները զգուշութեամբ կատարել.
20 Որ իր սիրտը իր եղբայրների վե-
րայ չ'հպարտանայ, և այս պատ-
ուիրանքներից աջ ու ձախ չ'խո-
տորուէ. որ իր թագաւորութեան
վերայ երկար կեանք ունենայ Իս-
րայէլի մէջ՝ ինքը և իր որդիքը։

ԳԼ. ԺԸ

1 Ղևտացի քահանաները՝ Ղևիի
բոլոր ցեղը Իսրայէլի հետ բաժին
և ժառանգութիւն չ'ունենան.
Եհովայի պատարագները և նորա
2 ժառանգութիւնն ուտեն։ Եւ ի-
րանց եղբայրների մէջ ժառան-
գութիւն չ'ունենան. նորանց ժա-
ռանգութիւնը Եհովան ինքն է,
ինչպէս որ նորանց ասեց։
3 Եւ այս լինի քահանաների ի-
րաւունքը ժողովրդի կողմից և
մատուցրած զոհերի կողմից, թէ
արջառ լինի թէ ոչխար. և քա-
հանային տան երին, ծնօտները և
4 քաղիրթը։ Քո ցորենի, դինիի և
իւղի երախայրիները, և նաև քո
ոչխարների առաջին բուրդը նո-
5 րան տաս. Որովհետև քո Եհովայ
Աստուածը քո բոլոր ցեղերումը
նորան է ընտրել, որ կանգնէ Ե-
հովայի անունովը ծառայութիւն
անելու՝ ինքն և իր որդիքը ամեն
ժամանակ։
Եւ երբոր մի Ղևտացի քո դրռ- 6
ների մէկից այսինքն բոլոր Իսրա-
յէլի մէջ իր պանդխտացած տե-
ղիցը դուրս գայ, և իր սրտի բո-
լոր փափաքովը Եհովայի ընտրած
տեղը գայ. Այն ժամանակ իր 7
Եհովայ Աստուծոյ անունովը ծա-
ռայութիւն անէ իր բոլոր Ղև-
տացի եղբայրների պէս, որ այն-
տեղ կանգնել են Եհովայի ա-
ռաջում. Բաժինը իրանց կերա- 8
ծի բաժինի չափ լինի բացի իր հայ-
րենական [illegible] ծախելուց։
Երբոր քո Եհովայ Աստուծոյ 9
քեզ տուած երկիրը մտնես, այն
ազգերի գարշելի գործքերի պէս
անել չ'սովորես։ Ձեր մէջ չ'գրտ- 10
նուի իր տղային կամ աղջկան
կրակից անցկացնող, դիւթու-
թիւն դիւթող, գուշակող և հը-
մայող և կամ հաւահարց, Նաև 11
կախարդ, կամ վհուկ, կամ նը-
շանագէտ, կամ մեռելահարցուկ.
Որովհետև բոլոր այս բաներն ա- 12
նողը Եհովայի առաջին գարշելի
է. և այս գարշելի բաների պատ-
ճառով քո Եհովայ Աստուածը
հալածում է նորանց քո առաջի-
ցը։ Քո Եհովայ Աստուծոյ հետ 13
կատարեալ լինես. Որովհետև այն 14
ազգերը, որոնց դու կ'տիրես,
գուշակների և դիւթիչների էին
լսում. բայց քեզ քո Եհովայ
Աստուածը այսպէս անելու հրա-
ման չէ տալիս։
Քո Եհովայ Աստուածը քո մի- 15
ջիցը քո եղբայրներիցը ինձ պէս
մի մարգարէ վեր կ'կացնէ քեզ
համար. նորան լսեցէք. Բոլորովին 16
այնպէս ինչպէս որ Քորեբումը ժո-
ղովքի օրը քո Եհովայ Աստուա-
ծանից խնդրեցիր, ասելով. Իմ
Եհովայ Աստուծոյ ձայնը այլ ևս
չ'լսեմ, և այս մեծ կրակը այլ ևս
չ'տեսնեմ, որ չ'մեռնեմ։ Եւ Ե- 17
հովան ինձ ասեց. Լաւ է ինչ որ
ասում են. Քեզ պէս մի մարգա- 18
րէ վեր կ'կացնեմ նորանց համար
իրանց եղբայրների միջիցը, և իմ
խօսքերը նորա բերանումը կ'դը-
նեմ. և նա կ'ասէ նորանց ինչ որ
նորան պատուիրեմ։ Եւ լինի՝ այն 19
մարդը որ չ'լսէ իմ խօսքերին, որ

նա իմ անունովը կ'խօսէ, ես այն
մարդիցը կ'պահանջեմ։
20 Իսկ այն մարգարէն որ յան-
դգնէ իմ անունովը խօսք խօ-
սել, այն բանը որ ես չեմ պատ-
ուիրել և կամ օտար աստուած-
ների անունով մի բան խօսէ, այն
21 մարգարէն պիտի մեռնէ։ Եւ ե-
թէ քո սրտի մէջ ասես, թէ
Ի՞նչպէս գիտենանք այն խօսքը որ
22 Եհովան չէ խօսել. Եթէ այն
մարգարէն Եհովայի անունովը մի
բան ասէ, և այն բանը չ'կատար-
ուի, ահա այն է Եհովայի չ'ա-
սած խօսքը. մարգարէն յանդգ-
նութեամբ է խօսել այն. նորա-
նից չ'վախենաս։

ԳԼ. ԺԹ

1 Երբոր քո Եհովայ Աստուածը
բնաջինջ անէ այն ազգերին, ո-
րոնց երկիրը քո Եհովայ Աստ-
ուածը քեզ է տալիս, և դու
նորանց քշես և նորանց քաղաք-
ներումն ու տներումը բնակուես,
2 Քեզ համար երեք քաղաք ջոկես
քո երկրումը, որ քո Եհովայ Ա-
ստուածը քեզ կ'տայ ժառանգե-
3 լու. Քեզ համար ճանապարհ
պատրաստես, և երեքի բաժա-
նես քո երկրի սահմանը, որ քո
Եհովայ Աստուածը քեզ կ'տայ
ժառանգութեան համար. որպէս
զի ամեն մարդասպան այնտեղ
փախչէ։
4 Եւ այս է մարդասպանի կանոնը,
որ այնտեղ փախչէ և ողջ մնայ.
Նա որ զարկէ իր դրացիին անգի-
տութեամբ մեռցնէ՝ առանց նորա
հետ երէկուանից և միւս օրուա-
նից թշնամութիւն ունենալու.
5 Եւ որ մէկն իր դրացիի հետ ծմա-
կը գնայ փայտ կտրելու համար, և
փայտ կտրելու համար իր ձեռքը
կացինով բարձրացնելիս երկաթը
կոթիցը դուրս թռչէ և դրացիին
դպչէ և նա մեռնէ. նա այս քա-
ղաքներից մէկի մէջը փախչէ, որ
6 ապրէ, Որ արիւնի վրէժխնդիրը
մարդասպանի ետևից չ'ընկնէ, ըստ
որում սիրտը վառուել է, և ճա-
նապարհը շատ լինելով՝ նորան
հասնէ և նորան մեռցնէ, թէպէտ
և նորա համար մեռնելու առիթ
չ'կայ, որովհետև նորա դէմ թշ-
նամութիւն չ'ունէր երէկուանից
և միւս օրուանից։ Որա համար 7
ես քեզ պատուիրում եմ և ա-
սում, որ քեզ համար երեք քա-
ղաք ջոկես։
Եւ եթէ քո Եհովայ Աստուա- 8
ծը ընդարձակէ քո սահմանը ինչ-
պէս որ քո հայրերին երդում է
արել, և Եհովան քեզ տայ այն
բոլոր երկիրը, որ խոստացաւ քո
հայրերին տալ, Եթէ պահես այս 9
բոլոր պատուիրանքը որ ես այսօր
քեզ պատուիրում եմ, որ քո
Եհովայ Աստուծուն սիրես և նո-
րա ճանապարհներումը գնաս ա-
մեն ժամանակ, ապա այս երեք
քաղաքի վերայ ուրիշ երեք քա-
ղաք էլ աւելացնես. Եւ որ ան- 10
մեղ արիւն չ'թափուի քո երկրի
մէջ, որ քո Եհովայ Աստուածը
քեզ ժառանգութիւն կ'տայ. և
որ դու արիւնի պարտական չը
լինես։
Բայց եթէ մէկ մարդ իր դրա- 11
ցիին սխ ունենայ և նորան դա-
րանամուտ լինի, և վեր կենայ նո-
րա դէմ և նորան զարկէ, և նա
մեռնէ, և սա փախչէ այս քա-
ղաքների մէկի մէջը, Այն ժա- 12
մանակ նորա քաղաքի ծերերն
ուղարկեցէք, և նորանք վեր առ-
նեն նորան այնտեղից, և տան նո-
րան արիւնի վրէժխնդրի ձեռքը,
որ մեռնէ։ Քո աչքը նորան չ'խը- 13
նայէ, և Իսրայէլի միջից անմեղ
արիւնը վերացնես, որ քեզ հա-
մար բարի լինի։
Քո դրացիի սահմանը, որ նախ- 14
նիքները հաստատեցին, չ'փոխես
քո կալուածքի մէջ, որ քո Եհո-
վայ Աստուծոյ քեզ ժառանգու-
թիւն տուած երկրումը կ'ժա-
ռանգես։
Մէկ վկայ չ'կանգնէ մի մարդի 15
դէմ որ և իցէ անօրէնութեան և
մեղքի համար՝ ինչ և է մեղքի
մասին որ մեղանչել է. այլ երկու
կամ երեք վկաների բերանով
հաստատուի բանը։
Եթէ մէկ մարդի դէմ մի սուտ 16

վկայ վեր կենայ, և նորա վերա-
յով անօրէնութեան համար վը-
17 կայէ, Այն ժամանակ այն երկու
մարդիկը, որոնց մէջ այդ հակա-
ռակութիւնը կայ, կանգնեն Ե-
հովայի առաջին՝ այն ժամանակի
քահանաների և դատաւորների
18 առաջին. Եւ դատաւորները լաւ
քննեն. և եթէ տեսնեն որ այն
վկան սուտ վկայ է՝ իր եղբօրը
դէմ սուտ վկայութիւն է արել,
19 Այն ժամանակ նորան անէք ինչ-
պէս որ նա խորհեց իր եղբօրն
անելու, և չարութիւնը քո մի-
20 ջիցը վերացնես. Եւ մնացեալնե-
րը կ'լսեն և կ'վախենան, և այլ
ևս քո միջում այսպիսի չար բան
21 չեն անիլ։ Քո աչքը չ'խնայէ. ան-
ձի տեղ անձ, աչքի տեղ աչք,
ատամի տեղ ատամ, ձեռքի տեղ
ձեռք, և ոտքի տեղ ոտք։

ԳԼ. Ի

1 Երբոր քո թշնամիների դէմ
դուրս գաս պատերազմի և տես-
նես ձիեր և կառքեր՝ քեզանից
շատ մի ժողովուրդ, նորանցից չը
վախենաս. որովհետև քո Եհովայ
Աստուածը քեզ հետ է, որ քեզ
Եգիպտացիների երկրիցը հանեց։
2 Եւ երբոր պատերազմի մօտենաք,
թող քահանան մօտենայ և խօսէ
3 ժողովրդի հետ, Եւ նորանց ա-
սէ. Լսիր, Իսրայէլ, դուք այսօր
մօտեցել էք պատերազմի ձեր
թշնամիների դէմ. ձեր սրտերը
չ'թուլանան, մի վախենաք, մի
զարհուրիք, և նորանց երեսիցը
4 մի դողաք. Որովհետև ձեր Եհո-
վայ Աստուածը գնում է ձեզ
հետ, որ ձեզ համար ձեր թշ-
նամիների դէմ պատերազմէ և
ձեզ օգնէ։
5 Եւ ոստիկանները խօսեն ժողո-
վրդի հետ ասելով. Ով է այն
մարդը, որ նոր տուն է շինել և
նորա նաւակատիքը չէ արել,
թող ետ դառնայ գնայ իր տու-
նը. մի գուցէ պատերազմումը
մեռնէ, և մի ուրիշ մարդ անէ
6 նաւակատիքը. Եւ ով է այն
մարդը, որ այգի է տնկել և նո-
րան չէ վայելել, թող ետ դառ-
նայ գնայ իր տունը. մի գուցէ
պատերազմումը մեռնէ, և մի ու-
րիշ մարդ վայելէ նորան։ Եւ ով 7
է այն մարդը որ կնկայ է նշան-
ուել և նորան չէ առել, թող
ետ դառնայ գնայ իր տունը. մի
գուցէ պատերազմումը մեռնէ, և
մէկ ուրիշ մարդ առնէ նորան։
Եւ ոստիկանները շարունակեն ի- 8
րանց խօսքը և ասեն ժողովրդին.
Ով է այն մարդը որ վախկոտ և
թուլասիրտ է, թող ետ դառնայ
գնայ իր տունը, որ չ'թուլացնէ
իր եղբայրների սիրտն էլ իր սրբ-
տին պէս։ Եւ երբոր ոստիկան- 9
ները ժողովրդի առաջին իրանց
խօսքը վերջացնեն, այն ժամանակ
ժողովրդի վերայ զօրապետներ
կարգեն։
Երբոր մի քաղաքի մօտենաս 10
նորա հետ պատերազմելու, նո-
րան խաղաղութեան հրաւիրիր։
Եւ եթէ քեզ խաղաղութեան 11
պատասխան տայ, և դուռները քեզ
համար բաց անէ, այն ժամանակ
նորանում գտնուած բոլոր ժո-
ղովուրդը քեզ հարկատու լինեն,
և քեզ ծառայութիւն անեն։
Բայց եթէ չ'ուզէ քեզ հետ խա- 12
ղաղութիւն անել, և քեզ հետ
պատերազմ անէ, այն ժամանակ
նորան պաշարես. Եւ քո Եհովայ 13
Աստուածը նորան քո ձեռքը կը
մատնէ, և դու նորա բոլոր արու-
ներին սուրի բերանից անցկացնես.
Բայց կանայքը, տղայքը և անա- 14
սունները և ինչ որ կայ այն քա-
ղաքումը, նորա բոլոր աւարը առ-
նես քեզ համար. և ուտես քո
թշնամիների աւարը, որ քո Եհո-
վայ Աստուածը քեզ մատնել է։
Այսպէս անես այն ամեն քաղաք- 15
ներին, որ քեզանից շատ հեռու
են, որ այս ազգերի քաղաքների-
ցը չեն։ Սակայն այս ազգերի քա- 16
ղաքներիցը, որ քո Եհովայ Աստ-
ուածը քեզ ժառանգութիւն է
տալիս, ոչ մի շունչ ունեցողին
ողջ չ'թողես. Այլ *բնաջինջ ա- 17
նես Քետացիներին, Ամօրհացինե-

* Նզովելով նզովես

րին, Քանանացիներին, Փերեզա-
ցիներին, Խևացիներին և Յեբու-
սացիներին, ինչպէս որ քո Եհո-
վայ Աստուածդ քեզ պատուիրել
18 է. Որպէս զի ձեզ չ'սովորեցնեն
իրանց բոլոր դարշութիւնների
համեմատ անել, որ անում են ի-
րանց աստուածներին. և որ դուք
ձեր Եհովայ Աստուծոյ առաջին
մեղք չ'գործէք։
19 Երբոր մի քաղաք երկար ժա-
մանակ պաշարես նորա հետ պա-
տերազմելու և նորան առնելու
համար, նորա ծառերը չ'փչացնես
կացինով նորանց զարկելով, ո-
րովհետև նորանցից պիտի ուտես.
ուրեմն նորանց չ'կտորես. որով-
հետև մի՞թէ դաշտի ծառը մարդ
է որ քո երեսիցը պաշարման մէջ
20 մտնէ։ Բայց այն ծառերը, որոնք
ճանաչում ես թէ ուտուելու
պտուղ չեն բերում, նորանց փը-
չացնես և կտորես, և նորանցով
պատնէշ շինես քեզ հետ պա-
տերազմող քաղաքի դէմ, մինչև
որ նուաճուի։

ԳԼ. ԻԱ

1 Եթէ մի սպանուած գտնուի քո
Եհովայ Աստուծոյ քեզ ժառան-
գութիւն տուած երկրումը դաշ-
տի վերայ ընկած, և չ'իմացուի
2 թէ ով է նորան զարկողը, Այն
ժամանակ քո ծերերը և դատա-
ւորները դուրս գան և չափեն
մինչև այն քաղաքները, որ ըս-
3 պանուածի շրջակայքումն են. Եւ
սպանուածի մօտ եղող քաղաքի
ծերերն առնեն արջառներից մի
երինջ, որ չէ գործածուած՝ այ-
4 սինքն լուծի տակ չէ մտած, Եւ
այն քաղաքի ծերերը իջեցնեն ե-
րինջը մի չ'հերկուած և չ'ցան-
ուած ապառաժ ձոր, և այնտեղ
այն ձորումը երնջի վիզը կտրեն։
5 Եւ Ղևիի որդիքը՝ քահանաները
մօտենան. որովհետև քո Եհովայ
Աստուածը նորանց ընտրեց իրան
ծառայութիւն անելու և Եհո-
վայի անունովը օրհնելու համար.
և ամեն վէճ և ամեն վէրք նո-
6 րանց խօսքովը դատուի։ Եւ այն
քաղաքի բոլոր ծերերը, որ ըս-
պանուածից մօտիկ են, իրանց
ձեռքերը լուանան այն ձորումը
վիզը կտրած երնջի վերայ, Եւ 7
պատասխանեն և ասեն՝ Մեր ձեռ-
քերը չ'թափեցին այս արիւնը, և
մեր աչքերը չ'տեսան. Քաւիր քո 8
Իսրայէլ ժողովրդին որ դու փրը-
կեցիր, ով Եհովայ. և անմեղ
արիւն մի գցիր քո Իսրայէլ ժո-
ղովրդի վերայ, այսպէս այն արիւ-
նը կ'քաւուի նորանցից. Իսկ դու 9
անմեղ արիւնը քեզանից վերա-
ցընես Եհովայի առաջին ուղիղն
անելով։
Երբոր դուրս գաս պատերազմի 10
քո թշնամիների դէմ, և քո
Եհովայ Աստուածը նորանց քո
ձեռքը տայ, և նորանցից գերի-
ներ առնես, Եւ գերիների մէջ 11
գեղեցիկ տեսքով կնիկ տեսնես,
և նորան սիրես և քեզ համար
կին առնես, Նորան քո տունը 12
տանես, և նա իր գլուխը ածիլէ
և իր եղունգները կտրէ. Եւ իր 13
վերայից գերութեան հանդերձ-
ները հանէ և քո տանը նստէ, և
մի ամբողջ ամիս իր հօր և մօր
համար լայ. և նորանից յետոյ
նորան մօտենաս, և դու նորա
այրը լինես, և նա էլ քո կնիկը
լինի։ Եւ եթէ նորան չ'հաւանես, 14
նորան ազատ արձակես իր հա-
մար. բայց փողով բնաւ չ'ծախես
նորան, ոչ էլ ստրկացնես, որով-
հետև լլկեցիր նորան։
Եթէ մէկ մարդ երկու կնիկ 15
ունենայ, մէկը սիրելի և միւսը
ատելի. սիրելին էլ ատելին էլ
նորա համար զաւակներ ծնած են,
և եթէ անդրանիկ զաւակը ա-
տելի կնոջը լինի, Իր ստացուած- 16
քը որդիներին բաժանելու օրը
կարող չէ սիրելի կնկայ զաւակը
անդրանկացնելու, ատելիին անդ-
րանիկից առաջ գցելով. Այլ ա- 17
տելիին զաւակին անդրանիկ ճա-
նաչէ, և բոլոր իր մօտ գտնուածի-
ցը երկու բաժին տայ նորան. ո-
րովհետև նա է նորա զօրութեան
սկիզբը. անդրանկութեան իրա-
ւունքը նորանն է։
Եթէ մէկ մարդ մի անզգամ և 18

անհնազանդ տղայ ունենայ, որ
իր հօր և իր մօր խօսքին չէ լը-
սում, և երբոր նորան խրատում
19 են՝ նորանց մտիկ չէ անում. Այն
ժամանակ նորա հայրը և մայրը
նորան բռնեն և նորան դուրս
տանեն քաղաքի ծերերի մօտ և
20 նորա բնակած տեղի դուռը. Եւ
քաղաքի ծերերին ասեն՝ Մեր այս
տղան անզգամ և անհնազանդ
է, մեր ձայնին չէ լսում, լափող
21 և լակող է. Այն ժամանակ նո-
րա քաղաքի բոլոր մարդիկը քա-
րերով քարկոծեն նորան, որ մեռ-
նէ. և չարութիւնը քո միջիցը
վերացնես. և բոլոր Իսրայէլը լը-
սեն և վախենան։
22 Եւ երբոր մի մարդ մահի ար-
ժանի մեղք գործէ, նա մեռցնուի,
և դու նորան ծառից կախես,
23 Նորա մարմինը ծառի վերայ գի-
շերը չ'մնայ, այլ նոյն օրը ան-
պատճառ թաղես նորան. որով-
հետև կախուածը Աստուծոյ ա-
նիծածն է. և չ'պղծես այն քո
երկիրը՝ որ քո Եհովայ Աստուածը
քեզ կ'տայ ժառանգելու համար։

ԳԼ. ԻԲ

1 Երբոր տեսնես քո եղբօր եզը
կամ ոչխարը մոլորուած, նորանց
անտես չ'անես. անպատճառ քո
2 եղբօր մօտ դարձնես նորանց։ Բայց
եթէ քո եղբայրը քեզանից մօ-
տիկ չէ, կամ նորան չես ճանա-
չում, այն ժամանակ քո տունն
առնես նորան, և քեզ մօտ մնայ
մինչև քո եղբայրը նորան որոնէ.
3 յետոյ նա նորան դարձնես։ Եւ
այսպէս անես նորա էշին, և այս-
պէս էլ անես նորա զգեստին.
նաև եղբօրդ ամեն կորած բանին,
որ դու կ'գտնես, այսպէս անես.
նորանց չես կարող անտես անել։
4 Երբոր տեսնես քո եղբօր էշը
կամ եզը ճանապարհի վերայ ընկ-
ած, նորանց անտես չ'անես, ան-
պատճառ նորա հետ վեր կանգ-
նեցնես։
5 Մի կնկայ վերայ այր մարդի
հագուստ չ'լինի, և մարդը կնկայ
հագուստ չ'հագնէ. որովհետև
քո Եհովայ Աստուծոյ առաջին
պիղծ է ամեն ով որ այս բաներն
անէ։
Եթէ ճանապարհին մի ծառի 6
վերայ կամ գետնի վերայ ձագե-
րով կամ ձուերով թռչնի բոյն
հանդիպէ քո առաջին և մայրը
ձագերի կամ ձուերի վերայ նըս-
տած լինի, մօրն իր ձագերովը
մէկտեղ չ'առնես։ Անպատճառ 7
մօրն արձակես, և ձագերը առ-
նես քեզ համար. որպէս զի բա-
րի լինի քեզ համար, և կեանքդ
երկայն լինի։
Եթէ նոր տուն շինես, կտու- 8
րիդ շրջանակ շինիր, որ քո տան
վերայ արիւն չ'բերես, երբոր մէ-
կը այնտեղից վայր ընկնէ։
Այգիումդ այլ և այլ սերմեր 9
չ'ցանես, որ նզովք չ'անես ցա-
նած սերմիդ արդիւնքը և այգիիդ
բերքը։ Էշը և եզը մէկտեղ վա- 10
րելու չ'գործածես։
Բուրդով և քթանով գործուած 11
այլախառն հանդերձ չ'հագնես։
Հագած հանդերձիդ չորս ծայ- 12
րը ծոպեր շինես։
Եթէ մէկ մարդ կնիկ առնէ, 13
և նորա մօտ մտնէ և յետոյ նո-
րան ատէ, Եւ նորա վերայ զրր- 14
պարտութեան խօսքեր դնէ և նո-
րա վերայ վատ անուն հանէ, և
ասէ. Ես այս կնկան առայ, բայց
երբոր նորան մօտեցայ, նորա վե-
րայ կուսութիւն չ'գտայ, Այն 15
ժամանակ աղջկան հայրը և մայ-
րը աղջկան կուսութեան նշանը
առնեն և դուրս տանեն դուռը
քաղաքի ծերերի առաջը։ Եւ 16
աղջկան հայրը ծերերին ասէ. Իմ
աղջիկը այս մարդին կին տուի,
բայց նա ատում է նորան, Ահա 17
զրպարտութեան խօսքեր է դը-
նում ասելով. Թէ Ես քո աղջ-
կան վերայ կուսութիւն չ'գտայ.
բայց ահա իմ աղջկան կուսու-
թեան նշանը. և հանդերձը փը-
ռեն քաղաքի ծերերի առաջին։
Եւ այն քաղաքի ծերերն այն մար- 18
դին առնեն և նորան խրատեն,
Եւ նորա վերայ տուգանք դնեն 19
հարիւր սիկղ արծաթ և տան աղ-
ջիկան հօրը, որովհետև վատ ա-

նուն հանեց Իսրայէլացի կոյսի
վերայ. և նա նորա կին լինի. և
իր բոլոր օրերումը կարող չ՚լինի
20 նորան արձակելու։ Բայց եթէ
այս բանը ստոյգ լինի, և աղջկան
վերայ կուսութիւն չէ գտնուել,
21 Այն ժամանակ աղջկան դուրս
հանեն նորա հօր տան դուռը,
և նորա քաղաքի մարդիկը քա-
րերով քարկոծեն նորան, որ մեռ-
նէ. որովհետև Իսրայէլի մէջ ա-
նըզգամութիւն արաւ իր հօր
տանը պոռնկութիւն անելով. և
այս կերպով չարութիւնը քո մի-
ջիցը վերացնես։
22 Եթէ մէկը այր ունեցող մի
կնկայ հետ պառկած գտնուի,
այն ժամանակ երկուսն էլ մեռ-
նեն, այն կնկայ հետ պառկող
մարդը և այն կնիկը. և Իսրայէ-
լից չարութիւնը վերացնես։
23 Եթէ մէկ կոյս աղջիկ մի մար-
դի նշանուած լինի, և մէկ մարդ
գտնէ նորան քաղաքի մէջ և նո-
24 րա հետ պառկէ, Այն ժամանակ
երկուսին էլ դուրս հանէք այն
քաղաքի դուռը, և նորանց քա-
րերով քարկոծէք, որ մեռնեն.
աղջկանը նորա համար՝ որ չ՚ա-
ղաղակեց քաղաքումը. և մար-
դին նորա համար որ իր դրացիի
կնկան լլկեց. և չարութիւնը քո
միջիցը վերացնես։
25 Բայց եթէ մէկ մարդ մի նշանած
աղջիկ դաշտի մէջ գտնէ, և նորան
բռնադատելով նորա հետ պառ-
կէ, այն ժամանակ միայն նորա
26 հետ պառկող մարդը մեռնէ։ Եւ
աղջկանը մի բան չ՚անես. աղջկան
մօտ մահի յանցանք չ՚կայ. որով-
հետև ինչպէս որ մէկը իր դրա-
ցիի վերայ կ՚յարձակէ և կ՚մեռ-
ցընէ նորան, այս դիպուածն էլ
27 այնպէս է։ Որովհետև դաշտումը
գտաւ նորան. նշանուած աղջիկը
աղաղակել է, բայց նորան մէկ
ազատող չէ եղել։
28 Եթէ մէկ մարդ մի չ՚նշանուած
կոյս աղջիկ գտնէ, և նորան բռ-
նադատելով նորա հետ պառկէ,
29 և նորանք գտնուին. Այն ժամա-
նակ նորա հետ պառկող մարդը
աղջկան հօրը յիսուն սիկղ ար-
ծաթ տայ, և նա նորա կնիկը լի-
նի, որովհետև լլկեց նորան, իր
բոլոր օրերումը կարող չ՚լինի նո-
րան արձակելու։
Մէկ մարդ իր հօրը կնկան 30
չ՚առնէ, և իր հօր քղանցքը չը
բանայ։

ԳԼ. ԻԳ

Ամորձիքը ջարդուածը կամ ան- 1
դամը կրճատուածը Եհովայի ժո-
ղովքը չ՚մտնէ։
Պոռնկորդին Եհովայի ժողովքը 2
չ՚մտնէ, և նորա տասներորդ ազգն
էլ Եհովայի ժողովքը չ՚մտնէ։
Ամմոնացին և Մովաբացին Ե- 3
հովայի ժողովքը չ՚մտնէ, և նո-
րանց տասներորդ ազգն էլ Եհո-
վայի ժողովքը չ՚մտնէ յաւիտեան.
Նորա համար որ ձեզ չ՚դիմաւո- 4
րեցին հացով ու ջրով ճանա-
պարհումը, երբոր դուք Եգիպ-
տոսիցը դուրս էիք եկել, և որ
Միջագետի Փաթուրից Բէովրի
որդի Բաղաամին վարձքով բերել
տուաւ, որ քեզ անիծէ. Բայց 5
քո Եհովայ Աստուածը չ՚ուզեց
Բաղաամին լսել, այլ քո Եհո-
վայ Աստուածը անէծքը քեզ հա-
մար օրհնութեան դարձրեց, ո-
րովհետև քո Եհովայ Աստուածը
քեզ սիրեց։ Նորանց խաղաղու- 6
թիւնը և լաւութիւնը չ՚որոնես
քո բոլոր օրերումը յաւիտեան։
Եդովմայեցիին չ՚ատես, որով- 7
հետև նա քո եղբայրն է։ Եգիպ-
տացիին չ՚ատես, որովհետև նո-
րա երկրումը պանդուխտ էիր։
Նորանց համար ծնուած զաւակ- 8
ների երրորդ ազգը թող Եհովա-
յի ժողովքը մտնեն։
Երբոր բանակով գնաս թշնա- 9
միներիդ դէմ, ամեն չար բանից
զգուշանաս։ Եթէ քո միջումը 10
մէկ մարդ լինի, որ երազափոր-
ձութեան պատճառով մաքուր
չէ, թող բանակիցը դուրս գնայ,
և բանակի մէջ չ՚մտնէ. Եւ իրիկ- 11
նադէմին ջրով լուացուի, և ա-
րեգակը մտնելիս բանակը մտնէ։
Նաև բանակից դուրս մէկ կողմ 12
ունենաս, որ այնտեղ հարկաւորի

13 դուրս գնաս. Եւ քո գործիքնե-
րումը մի բահ ունենաս, որ եր-
բոր դուրսը հարկաւորի նստելու
լինես՝ նորանով փորես, և դար-
14 ձեալ քո աղբը ծածկես։ Որով-
հետև քո Եհովայ Աստուածը
ման է գալիս քո բանակի մէջ,
որ քեզ ազատէ և քո թշնամի-
ները քո ձեռքդ մատնէ. ուրեմն
քո բանակը մաքուր լինի, որ նա
քեզ վերայ մի աղտեղութիւն
տեսնելով քեզանից չ՚զզուէ։
15 Ծառային իր տիրոջ ձեռքը չը
մատնես, որ տիրոջիցը փախչելով
16 քեզ մօտ է ապաստանուել, թող
նա քեզ հետ բնակուէ իր հա-
ւանած տեղը քո դռների մէ-
կումն ուր որ իր համար լաւ կը
լինի. նորան չ՚նեղես։
17 Իսրայէլի աղջիկներիցը բոզ չը
լինի, և Իսրայէլի տղերքիցը ի-
18 գացեալ չ՚լինի։ Բոզի վարձքը
կամ շնացողի գինը քո Եհովայ
Աստուծոյ տունը չ՚տանես որ և
իցէ ուխտի համար. որովհետև
քո Եհովայ Աստուծոյ առաջին
երկուսն էլ պիղծ են։
19 Քո եղբօրիցը շահ չ՚առնես՝ փո-
ղի շահ կամ ուտելիքի շահ և
կամ որ և իցէ բանի, որ շահով
20 տրվում է. Օտարականիցը շահ
առնես, բայց քո եղբօրիցը շահ
չ՚առնես, որ քո Եհովայ Աստ-
ուածը քո ամեն ձեռնարկած
գործքերումը քեզ օրհնէ այն եր-
կրի վերայ, ուր որ կ՚մտնես նո-
րան ժառանգելու համար։
21 Երբոր քո Եհովայ Աստուծուն
մի ուխտ ուխտես, առանց ու-
շացնելու կատարես այն. որովհե-
տև քո Եհովայ Աստուածը ան-
պատճառ քեզանից կ՚պահանջէ
այն, և դու մեղքի տէր կ՚դառ-
22 նաս. Բայց եթէ ուխտ անել
չ՚ուզես, այդ քեզ համար մեղք
23 չի լինիլ։ Շրթունքիցդ դուրս ե-
կածը զգուշութեամբ կատարես
ինչպէս որ Եհովայ Աստուծուն
ազատ կամքով ուխտել ես՝ որ
ասել ես քո շրթունքովը։
24 Երբոր քո դրացիի այգին մըտ-
նես, ուզածիդ չափ խաղող ու-
տես և կշտանաս, բայց ամանիդ
մէջ չ՚դնես. Երբոր քո դրացիի 25
հունձքը մտնես, ձեռքովդ հաս-
կերը պոկես, բայց դրացիիդ
հունձքին մանգաղ չ՚զարկես։

ԳԼ. ԻԴ

Երբոր մէկը կնիկ առնէ և նո- 1
րա այրը դառնայ, և էթէ լինի որ
նորա վերայ մի անարգութեան
բան գտնէ և նա իր աչքին հաճոյ
չ՚լինի, այն ժամանակ նորա հա-
մար արձակման թուղթ գրէ և
նորա ձեռքը տայ, և նորան իր
տանիցն արձակէ։ Եւ երբոր նա 2
նորա տանիցը դուրս գայ, և գը-
նայ ուրիշ մարդի լինի, Եթէ այն 3
միւս այրն էլ նորան ատէ, թող
արձակման թուղթ գրէ, և նորա
ձեռքը տայ և իր տանիցը արձա-
կէ, կամ եթէ միւս այրը մեռ-
նէ, որ նորան իր համար կին ա-
ռաւ, Այն առաջին այրը, որ 4
նորան արձակել է, կարող չ՚լինի
նորան դարձեալ իր համար կին
առնել՝ նորա պղծուելուց յետոյ.
որովհետև Եհովայի առաջին պղ-
ծութիւն է այս բանը. և այսպէս
դու մեղքով չ՚լեցնես այն երկի-
րը, որ քո Եհովայ Աստուածը
քեզ կ՚տայ էբրև ժառանգու-
թիւն։ Նոր ամուսնացած մարդը 5
պատերազմի չ՚գնայ, և նորան ոչ
մի պաշտօն չ՚տրուի, մէկ տարի
իր տանը ազատ լինի, և ուրա-
խացնէ իր առած կնկան։
Ոչ ոք գրաւ չ՚առնէ աղօրիքը 6
կամ նորա վերի քարը. որով-
հետև կեանքն է գրաւ առած
լինում։
Եթէ մի մարդ գտնուի, որ իր 7
եղբայրների՝ այսինքն Իսրայէլի
որդկանց մէկին գողանալով՝ նո-
րան ծառայեցրել է կամ ծախել
է, այն գողը թող մեռնէ. և քո
միջիցը չարութիւնը վերացնես։
Բորոտութեան ախտի մասին 8
զգուշութիւն արէք, որ զգու-
շանաք և անէք այն բոլորի հա-
մեմատ ինչ որ Ղևտացի քահա-
նաները ձեզ սովորեցնեն. ինչպէս
որ ես նորանց պատուիրել եմ
զգուշացէք որ անէք։ Յիշիր ինչ 9

որ քո Եհովայ Աստուածը Մա-
րիամին արաւ ճանապարհին Ե-
գիպտոսիցը եկած ժամանակը։
10 Երբոր քո դրացիին մէկ բան
փոխ տաս, նորա տունը չ'մտնես
11 գրաւն առնելու համար. Դուրսը
կանգնես և փոխ առնող մարդը
ինքը գրաւը դուրս բերէ քեզ մօտ։
12 Եւ եթէ նա աղքատ մարդ է,
13 նորա գրաւովը չ'պառկես. Նորա
գրաւը անպատճառ ետ տաս ա-
րեգակը մտնելիս, որ նա իր հան-
դերձովը պառկէ և քեզ օրհնէ.
և քեզ համար արդարութիւն լի-
նի քո Եհովայ Աստուծոյ առաջին։
14 Աղքատ և կարօտ վարձկանին
զրկանք չ'անես, թէ քո եղբայր-
ներից՝ և թէ քո երկրի մէջ քո
դռներում գտնուող օտարական-
15 ներից լինի։ Նոյն օրը նորա վարձ-
քը հատուցանես արեգակը չ'մը-
տած որովհետև նա աղքատ է,
և նա սրտանց փափաքում է նո-
րան. չ'լինի որ քեզ համար Եհո-
վային բողոքէ, և դու մեղքի
տէր դառնաս։
16 Հայրերը չ'մեռցնուին որդկանց
պատճառով, և որդիքը չ'մեռ-
ցընուին հայրերի մասին. ամեն
մարդ իր յանցանքի համար մեռ-
ցընուի։
17 Օտարականի և որբի իրաւուն-
քը չ'ծռես, և որբևայրիի հան-
18 դերձը գրաւ չ'առնես։ Եւ յիշիր
որ Եգիպտոսումը ծառայ էիր, և
քո Եհովայ Աստուածը քեզ այն-
տեղից ազատեց. Նորա համար
ես քեզ պատուիրում եմ որ
այս բանն անես։
19 Երբոր քո արտի մէջ հունձքդ
հնձես, և արտի մէջ մէկ որայ
մոռացած լինես, ետ չ'դառնաս
նորան առնելու համար, օտարա-
կանի, որբի և որբևայրիի համար
թող լինի. որպէս զի քո Եհովայ
Աստուածը քեզ օրհնէ քո ձեռ-
20 քերի ամեն գործքումը։ Երբոր
ձիթենիդ թօթափես, մէկ մէկ
պտղաքաղ չ'անես յետոյ. օտա-
րականի, որբի և որբևայրիի հա-
21 մար թող լինի։ Երբոր այգիիդ
խաղողները ժողովես, յետոյ ճը-
ռաքաղ չ'անես. օտարականի, որ-
բի և որբևայրիի համար թող լի-
նի։ Եւ յիշիր որ Եգիպտոսի եր- 22
կրումը ծառայ էիր. Նորա հա-
մար ես քեզ պատուիրում եմ
որ այս բանն անես։

ԳԼ. ԻԵ

Երբոր մարդկանց մէջ վէճ լինի 1
և դատաստանի գնան. Նորանց
դատեն՝ արդարին արդարացնեն
և յանցաւորին յանցաւոր հանեն։
Եւ եթէ յանցաւորը ծեծի ար- 2
ժանի է, դատաւորը նորան վայր
դցել տայ, և նորա յանցանքի
համեմատ իր առաջին նորան
թուով ծեծել տայ. Քառասուն 3
անգամ զարկէ և չ'աւելացնէ, մի
դուցէ սորանից աւելի ծեծելով
եղբայրդ քո աչքի առաջին ա-
նարգուի։
Եզի դունչը չ'կապես կալ կա- 4
սելիս։
Երբոր եղբայրներ մէկտեղ բը- 5
նակուեն, և նորանցից մէկը ա-
ռանց զաւակի մեռնէ, մեռնողի
կինը դուրսը օտար մարդի չ'գնայ.
Նորա տագրը նորան մօտենայ և
նորան իր համար կին առնէ, և
տագրութեանպարտաւորութիւ-
նը նորան հատուցանէ. Եւ այն 6
առաջինեկը, որ նա ծնէ, նորա
մեռնող եղբօր անունովը կանգնէ,
և նորա անունը Իսրայէլից չ'ջընջ-
ջուի։ Եւ եթէ այն մարդը չ'հաճէ 7
իր հարսին առնել, այն ժամա-
նակ նորա հարսը դուրս գայ
դուռը ծերերի մօտ և ասէ. Իմ
տագրը հրաժարվում է Իսրայէլի
մէջ իր եղբօր անունը հաստա-
տելուց. տագրութեան պարտա-
ւորութիւնը չէ ուզում ինձ հա-
տուցանել։ Այն ժամանակ նորա 8
քաղաքի ծերերը նորան կանչեն,
և նորա հետ խօսեն. և եթէ նա
կանգնէ և ասէ. Ես չեմ ուզում
նորան առնել, Այն ժամանակ 9
հարսը նորա մօտ գայ ծերերի ա-
ռաջ, և նորա ոտքիցը կօշիկը
հանէ, և նորա երեսին թքէ, և
պատասխանելով ասէ. Այսպէս
անուի այն մարդին որ իր եղբօր
տունը չէ շինում։ Եւ նորա ա- 10

նունը Իսրայէլի մէջ՝ "Կօշիկը
հանուած մարդի տունը" ասուի։
11 Երբոր մարդիկ իրար հետ կըռ-
ուեն, և մէկի կինը մօտենայ իր
մարդին ազատելու նորան զար-
կողի ձեռքիցը, և ձեռքը երկա-
րացնելով նորա ամօթոյքը բռնէ,
12 Այն ժամանակ նորա ձեռքը կըտ-
րես, և աչքդ բնաւ չ'խնայէ։
13 Մախաղումդ տեսակ տեսակ
քարեր չ'լինի՝ մեծ և պզտիկ։
14 Տանդ տեսակ տեսակ արդուներ
15 չ'լինի՝ մեծ և պզտիկ։ Կշիռքիդ
քարը կատարեալ և արդար լի-
նի, արդուդ կատարեալ և ար-
դար լինի. որ օրերդ երկար լինեն
այն երկրի վերայ, որ քո Եհովայ
16 Աստուածը քեզ կ'տայ։ Որովհե-
տև քո Եհովայ Աստուծոյ առաջին
պիղծ է ամեն այս բաներն անողը՝
ամեն անիրաւութիւն անողը։
17 Յիշիր թէ ինչ արաւ քեզ Ամա-
ղէկը ճանապարհին երբոր դուք
Եգիպտոսիցը դուրս էիք եկել.
18 Որ ճանապարհին քեզ դիմաւո-
րեց, և քո ետևիցը Էլաղ բոլոր
տկարներին կոտորեց, երբոր դու
յոգնած և աշխատած էիր, և
19 Աստուածանից չ'վախեցաւ։ Եւ
երբոր քո Եհովայ Աստուածը քո
բոլոր շրջակայ թշնամիներիցը քեզ
հանգստացնէ այն երկրի մէջ, որ
քո Եհովայ Աստուածը քեզ կը
տայ իբրև ժառանգութիւն, որ
նորան տիրես, այն ժամանակ
ջնջես Ամաղէկի յիշատակը եր-
կընքի տակիցը. չ'մոռանաս։

ԳԼ. ԻԶ

1 Երբոր մտնես այն երկիրը, որ
քո Եհովայ Աստուածը քեզ կը
տայ իբրև ժառանգութիւն, և
նորան ժառանգես և այնտեղ բը-
2 նակուես, Այն ժամանակ երկրի
ամեն պտուղների երախայրիների-
ցըն առնես, որոնք կ'ժողովես քո
Եհովայ Աստուծոյ քեզ տուած
երկրիցը և դնես մէկ կողովի մէջ
և գնաս այն տեղը, որ քո Եհո-
վայ Աստուածը կ'ընտրէ իր ա-
նունը այնտեղ դնելու համար.
3 Եւ գնաս այն օրերը եղող քա-
հանայի մօտ և ասես. Ես այսօր
քո Եհովայ Աստուծուն յայտ-
նում եմ, որ ես մտայ այն երկի-
րը, որի համար Եհովան մեր հայ-
րերին երդում էր արել որ մեզ
տայ։ Եւ քահանան կողովը քո 4
ձեռքիցն առնէ և նորան քո Ե-
հովայ Աստուծոյ սեղանի առաջը
դնէ. Եւ դու պատասխան տաս 5
և ասես քո Եհովայ Աստուծոյ
առաջին. Իմ հայրս մի թափա-
ռող Ասորի էր, և իջաւ Եգիպ-
տոս, և այնտեղ քիչ հոգիներով
պանդխտութիւն արաւ և մէկ
մեծ, զօրաւոր և բազմաթիւ ազգ
դառաւ. Եւ Եգիպտացիները մեզ 6
չարչարեցին, մեզ նեղեցին և մեզ
վերայ ծանր ծառայութիւններ
դրին. Եւ մենք դէպի մեր հայ- 7
րերի Եհովայ Աստուածն աղա-
ղակեցինք. և Եհովան լսեց մեր
ձայնին և տեսաւ մեր նեղութիւ-
նը, աշխատութիւնը և մեր զըր-
կանքը. Եւ Եհովան մեզ հանեց 8
Եգիպտոսից զօրաւոր ձեռքով և
բարձր բազուկով, մեծ ահար-
կութիւններով, նշաններով և
հրաշքներով. Եւ մեզ այս տեղը 9
բերաւ, և մեզ տուաւ այս եր-
կիրը՝ կաթ ու մեղր բղխող երկի-
րը։ Եւ արդ ինձ տուած երկրիդ 10
պտուղների երախայրիները բե-
րում եմ, ով Եհովայ։ Եւ նո-
րանց քո Եհովայ Աստուծոյ ա-
ռաջը դնելով՝ Եհովայ Աստու-
ծուդ առաջին երկրպագութիւն
անես. Եւ քո Եհովայ Աստուծոյ 11
քեզ և քո տանը տուած բոլոր
բարիքներովը ուրախութիւն ա-
նես, դու և Ղևտացին և ձեր
մէջ եղող օտարականը։
Երբոր տասանորդի տարին՝ եր- 12
րորդ տարին՝ քո արդիւնքների
բոլոր տասանորդները տաս վեր-
ջացնես, և նորանց Ղևտացիին,
օտարականին, որբին և որբևայ-
րիին տաս, և նորանք քո դռնե-
րումը ուտեն և կշտանան, Այն 13
ժամանակ քո Եհովայ Աստուծոյ
առաջին ասես. Սուրբ եղած բա-
նը բոլորովին տանիցս հանեցի, և
քո բոլոր ինձ հրամայած պատ-
ուիրանքների համեմատ՝ Ղևտա-
ցիին, օտարականին, որբին և

որբևայրիին տուի, քո պատուի-
բանքները զանց չ'արի և չ'մո-
14 ռացայ. Սուգիս օրերումը նորա-
նից չ'կերայ, և անմաքուր բանի
չ'գործածեցի, և նորանից մեռելի
համար չ'տուի. իմ Եհովայ Ա-
ստուծոյ խօսքին լսեցի. բոլոր ինձ
պատուիրածիդ համեմատ արի։
15 Նայիր երկնքից՝ քո սուրբ բնա-
կարանիցը, և օրհնիր քո Իսրայէլ
ժողովրդին, և այն երկիրը որ
տուիր մեզ, ինչպէս որ մեր հայ-
րերին երդում էիր արել, մի եր-
կիր որ կաթ և մեղր է բղխում։
16 Այսօր քո Եհովայ Աստուածը
քեզ պատուիրում է, որ այս կա-
նոնները և դատաստանները կա-
տարես. և նորանց պահես և կա-
տարես բոլոր սրտովդ և բոլոր
17 հոգիովդ։ Դու այսօր Եհովային
խօսք ես տալիս, որ նա քեզ հա-
մար Աստուած լինի, և դու նո-
րա ճանապարհներումը գնաս, և
նորա կանոնները, պատուիրանք-
ները և դատաստանները պահես,
18 և նորա ձայնին լսես. Եհովան
էլ այսօր քեզ խօսք է տալիս,
որ դու իր համար սեպհական
ժողովուրդ լինես, ինչպէս որ քեզ
ասել է, որ նորա բոլոր պատուի-
19 րանքները պահես. Եւ նա քեզ
բոլոր իր ստեղծած ազգերիցը գե-
րազանց անէ գովութիւնով, համ-
բաւով և փառքով, որ սուրբ
ժողովուրդ լինես քո Եհովայ Ա-
ստուծոյ համար, ինչպէս որ ասել է։

ԳԼ. ԻԷ

1 Եւ Մովսէսն Իսրայէլի ծերերի
հետ պատուիրեց ժողովրդին ա-
սելով. Պահեցէք այն բոլոր պատ-
ուիրանքները, որոնք ես այսօր
2 պատուիրում եմ ձեզ։ Եւ այն
օրը երբոր Յորդանանից անց կե-
նաս քո Եհովայ Աստուծոյ քեզ
տուած երկիրը, քեզ համար մեծ
քարեր կանգնեցնես և նորանց
3 կիրով ծեփես. Եւ այս օրէնքի
բոլոր խօսքերը գրես նորանց վե-
րայ, երբոր անց կենաս որ մրտ-
նես այն երկիրը, որ քո Եհովայ
Աստուածը քեզ կ'տայ՝ մի երկիր
որ կաթ ու մեղր է բղխում, ինչ-
պէս որ քո հայրերի Եհովայ Ա-
ստուածը քեզ ասել է։ Ուրեմն 4
երբոր Յորդանանիցն անց կենաս,
այսօրուայ քեզ պատուիրածիս
պէս՝ այս քարերը Գեբաղ սարի
վերայ կանգնեցնես և նորանց կի-
րով ծեփես։ Եւ այնտեղ քո Ե- 5
հովայ Աստուծոյ համար մէկ սե-
ղան շինես՝ քարի սեղան նորանց
վերայ երկաթ չ'բարձրացնես.
Ամբողջ քարերից շինես քո Եհո- 6
վայ Աստուծոյ սեղանը, և նորա
վերայ ողջակէղներ մատուցանես
քո Եհովայ Աստուծուն. Եւ խա- 7
ղաղութեան զոհեր մատուցանես՝
և այնտեղ ուտես, և քո Եհո-
վայ Աստուծոյ առաջին ուրախա-
նաս. Եւ այս օրէնքի բոլոր խօս- 8
քերը գրես այն քարերի վերայ
լաւ փորագրուած։
Եւ Մովսէսը և Ղևտացի քա- 9
հանաները խօսեցին՝ բոլոր Իսրա-
յէլի հետ ասելով. Լուռ կաց և
լսիր, ով Իսրայէլ. Դու այսօր
քո Եհովայ Աստուծոյ համար ժո-
ղովուրդ եղար. Ուրեմն լսիր քո 10
Եհովայ Աստուծոյ ձայնին և կա-
տարիր նորա պատուիրանքները և
կանոնները, որոնք ես այսօր քեզ
պատուիրում եմ։
Եւ նոյն օրը Մովսէսը ժողովը- 11
րդին պատուիրեց ասելով. Երբոր 12
Յորդանանիցն անց կենաք, սո-
րանք կանգնեն Գարիզին սարի
վերայ ժողովուրդն օրհնելու՝ Շը-
մաւոն, Ղևի, Յուդա, Իսաքար,
Յովսէփ ու Բենիամին. Եւ սո- 13
րանք կանգնեն անէծքի համար
Գեբաղ սարի վերայ՝ Ռուբէն,
Գադ, Ասեր, Զաբուղոն, Դան և
Նեփթաղիմ։
Եւ Ղևտացիները պատասխա- 14
նեն և ասեն Իսրայէլի բոլոր մարդ-
կանցը հետ բարձր ձայնով.
Անիծեալ է այն մարդը, որ փոր- 15
ուած կամ ձուլածոյ կուռք շինէ
Եհովայի առաջին պիղծ արուես-
տաւորի ձեռագործ, և մի ծածուկ
տեղ դնէ. և բոլոր ժողովուրդը
պատասխանեն և ասեն. Ամէն։
Անիծեալ է իր հօրը կամ մօ- 16
րը անարգողը. և բոլոր ժողո-
վուրդն ասէ. Ամէն։

17 Անիծեալ է իր դրացիի սահ-
մանը փոխողը. և բոլոր ժողո-
վուրդն ասէ. Ամէն։
18 Անիծեալ է կոյրին ճանապար-
հից մոլորեցնողը. և բոլոր ժողո-
վուրդն ասէ. Ամէն։
19 Անիծեալ է պանդուխտի, որ-
բի և որբևայրիի իրաւունքը ծը-
ռողը. և բոլոր ժողովուրդն ա-
սէ. Ամէն։
20 Անիծեալ է իր հօր կնկայ հետ
պառկողը. որովհետև իր հօր քը-
ղանցքը բաց է անում, և բոլոր
ժողովուրդն ասէ. Ամէն։
21 Անիծեալ է որ և իցէ անա-
սունի հետ պառկողը. և բոլոր
ժողովուրդն ասէ. Ամէն։
22 Անիծեալ է իր հօր աղջիկը
կամ իր մօր աղջիկն եղող իր
քրոջ հետ պառկողը. և բոլոր
ժողովուրդն ասէ. Ամէն։
23 Անիծեալ է իր զոքանչի հետ
պառկողը. և բոլոր ժողովուրդն
ասէ. Ամէն։
24 Անիծեալ է իր դրացիին ծա-
ծուկ մեռցնողը. և բոլոր ժողո-
վուրդն ասէ. Ամէն։
25 Անիծեալ է անմեղ մարդ մեռ-
ցնելու համար կաշառք առնողը.
և բոլոր ժողովուրդն ասէ. Ամէն։
26 Անիծեալ է նա որ չ'կենայ այս
օրէնքի ամեն խօսքերի մէջ որ
նորանց կատարէ. և բոլոր ժողո-
վուրդն ասէ. Ամէն։

ԳԼ. ԻԸ

1 Եւ եթէ քո Եհովայ Աստուծոյ
ձայնին ուշադրութեամբ լսես որ
զգուշութեամբ կատարես նորա
բոլոր պատուիրանքները, որոնք
ես այսօր քեզ պատուիրում եմ,
քո Եհովայ Աստուածն էլ քեզ
երկրիս բոլոր ազգերիցը գերա-
2 զանց կ'անէ։ Եւ այս բոլոր օրհ-
նութիւնները քեզ վերայ կ'գան
քեզ կ'հասնեն, եթէ քո Եհո-
3 վայ Աստուծոյ ձայնին լսես։ Դու
քաղաքի մէջ օրհնեալ, և դաշ-
4 տի մէջ օրհնեալ կ'լինես. Օրհ-
նեալ կ'լինի քո որովայնի պատու-
ղը, և քո երկրի պատուղը, և քո
անասունների պատուղը, կովերիդ
ծնունդը և ոչխարներիդ հօտերը.
Օրհնեալ կ'լինի քո կողովը և քո 5
տաշտը. Դու օրհնեալ կ'լինես 6
մտնելիս և օրհնեալ կ'լինես դուրս
գալիս։ Եհովան քո առաջին ջար- 7
դել կ'տայ քեզ վերայ վեր կե-
նող թշնամիներիդ. նորանք քեզ
դէմ մէկ ճանապարհով դուրս
կ'գան, բայց քո առաջիցը եօթը
ճանապարհով կ'փախչեն։ Եհովան 8
օրհնութիւնը կ'ուղարկէ քեզ քո
շտեմարաններումը և քո ամեն
ձեռնարկելու բաներումը. և քեզ
կ'օրհնէ քո Եհովայ Աստուծոյ
քեզ տուած երկրումը։ Ինչպէս 9
որ քեզ երդում է արել, եթէ
քո Եհովայ Աստուծոյ հրաման-
ները պահես և նորա ճանապարհ-
ներումը գնաս, Եհովան քեզ իր
համար սուրբ ժողովուրդ կ'հաս-
տատէ. Եւ երկրիս ամեն ժողո- 10
վուրդները կ'տեսնեն, որ Եհովա-
յի անունը կոչուած է քեզ վե-
րայ, և քեզանից կ'վախենան։ Եւ 11
Եհովան քեզ առատութիւն կը
տայ քո բարութեան համար, քո
որովայնի պտուղը, քո անասուն-
ների պտուղը և քո երկրի պտու-
ղը շատացնելով այն երկրի վերայ,
որ Եհովան քո հայրերին երդում
արաւ քեզ տալու համար։ Եհո- 12
վան իր բարութեան գանձը՝ այ-
սինքն երկինքը քեզ համար կը
բանայ, որ քո երկրի անձրևը
տայ իր ժամանակին, և քո ձեռ-
քի ամեն գործը օրհնէ. և դու
շատ ազգերի փոխ կ'տաս, բայց
դու փոխ չես առնիլ։ Եւ Եհո- 13
վան գլուխ կ'անէ քեզ, և ոչ
թէ ագի. դու միշտ բարձրումը
կ'լինես, և ցածումը չես լինիլ,
եթէ քո Եհովայ Աստուծոյ պատ-
ուիրանքներին լսես, որոնք ես
այսօր քեզ պատուիրում եմ որ
պահես և կատարես, Եւ չ'խո- 14
տորուես այն բոլոր խօսքերիցը,
որոնք ես այսօր քեզ պատուի-
րում եմ, աջ կամ ձախ, օտար
աստուածների ետեւից գնալու
համար, որ նորանց ծառայու-
թիւն անես։
Բայց եթէ քո Եհովայ Աստու- 15
ծոյ խօսքին չ'լսես, և չ'պահես և

չ'անկա նորա բոլոր պատուիրանք-
ները և կանոնները, որոնք ես
այսօր քեզ պատուիրում եմ,
այն ժամանակ այս ամէն անէծք-
ները քեզ վերայ կ'գան և քեզ
16 կ'հասնեն։ Անիծեալ կ'լինես դու
քաղաքի մէջ, և անիծեալ դաշ-
17 տի մէջ. Անիծեալ կ'լինի քո կո-
18 ղովը և քո առաջը. Անիծեալ քո
որովայնի պտուղը, և քո երկրի
պտուղը, կովերիդ ծնունդը և
19 ոչխարներիդ հօտերը. Անիծեալ
կ'լինես մտած ժամանակդ և ա-
նիծեալ դուրս եկած ժամանա-
20 կդդ։ Եհովան անէծք, տառա-
պանք և յանդիմանութիւն կ'ու-
ղարկէ քեզ համար քո ամէն
ձեռնարկած գործքումդ որ ա-
նում ես, մինչև որ բնաջինջ լի-
նես, շուտով կորչես քո չար
գործքերի համար, որ ինձ ձգե-
21 ցիր։ Եհովան քեզ կ'կպցնէ ժան-
տախտը, մինչև որ քեզ վերջացնէ
այն երկրի երեսից, ուր որ դու
կ'մտնես նորան ժառանգելու։
22 Եհովան քեզ կ'զարկէ ծիւրա-
կան ախտով, հրատապնապ տեն-
դով, ջերմով և այրող տաքու-
թիւնով, երաշտութիւնով, և
խորշակահարութիւնով և բոյսե-
րի դալուկով. և քեզ կ'հալա-
23 ծեն մինչև որ կորչես։ Գլխիդ
վերայի երկինքը պղնձի, և տա-
կիդ երկիրը երկաթի կ'դառնայ։
24 Եհովան քո երկրի անձրևի տեղ
հող ու փոշի կ'տայ. նորանք եր-
կինքիցը քեզ վերայ կ'իջնեն մին-
25 չև որ բնաջինջ լինես։ Եհովան
քո թշնամիների առաջին քեզ
ջարդել կ'տայ. մէկ ճանապար-
հով դուրս կ'գաս նորանց դէմ,
և եօթը ճանապարհով կ'փախ-
չես նորանց առաջից. և երկրիս
բոլոր թագաւորութիւնների մէջ
26 թափառական կ'լինես. Եւ քո
մարմինը երկնքի բոլոր թռչուն-
ներին և երկրի գազաններին կե-
րակուր կ'լինի. և քշող չի լինի։
27 Եհովան Եգիպտոսի պալարներով,
թանչով, քոսառութիւնով և
եռքով կ'զարկէ քեզ, որ նո-
րանցից չ'կարողանաս բժշկուիլ։
28 Եհովան ապուշութիւնով և կու-

բութիւնով և սրտագողով կը
զարկէ քեզ. Եւ դու կէս օր-
ուայ ժամանակին կ'խարխափես
ինչպէս որ կոյրն է խաւարի մէջ
խարխափում, և չես յաջողիլ քո
ճանապարհներումդ. և միշտ ղբր-
կուած և յափշտակուած կ'լի-
նես, և ազատող չի լինիլ։ Դու
կնկան կ'նշանուես, և ուրիշը կը
պառկէ նորա հետ. տուն կ'շի-
նես, և նորա մէջ չես բնակուիլ.
այգի կ'տնկես, նորա խաղողը չես
ժողովիլ. եզդ աչքիդ առաջին
կ'մորթուի, բայց դու նորանից
չես ուտիլ. էշդ քո առաջիցը կը
յափշտակուի, և քեզ նա չի
տրուիլ. Հօտերդ քո թշնամինե-
րին կ'մատնուին, և քեզ համար
ազատող չի լինիլ։ Քո տղերքն
ու աղջկերքը մի ուրիշ ժողովրդի
կ'տրուին, և աչքերդ կ'տեսնեն,
և բոլոր օրը նորանց համար կը
նուաղեն. և քո ձեռքումդ ոյժ
չի լինիլ։ Քո երկրի արդիւնքը և
քո բոլոր աշխատութիւնը մի ժո-
ղովուրդ կ'ուտէ, որին դու չես
ճանաչում. և ամէն օր միայն
ղրկուած և ճնշուած կ'լինես.
Եւ կ'խելագարուես աչքերիդ տե-
սածիցը, որ պիտի տեսնես։ Եհո-
վան կ'զարկէ քո ծունկերին ու
սրունքներին չար պալարներով,
որ չ'կարողանաս բժշկուիլ
գտնել, ոտքիդ թաթիցը մինչև
գլխիդ գագաթը։ Եհովան կ'տա-
նէ քեզ և քո վերայ դրած թա-
գաւորիդ այն ազգին, որին ոչ
դու էիր ճանաչում, ոչ քո հայ-
րերը. և այնտեղ կ'ծառայես օ-
տար աստուածների՝ փայտի և
քարի։ Եւ դու զարմանքի և ա-
ռակի և կատակի կենթակայ կը
լինես այն բոլոր ժողովուրդների
մէջ, ուր որ Եհովան քեզ կ'տա-
նէ։ Աւրտիդ մէջ շատ սերմ կը
հանես, և քիչ կ'ժողովես. որով-
հետև մորեխները պիտի ուտեն
նորան։ Այգիներ կ'տնկես և կը
զարմանաս, բայց գինին չես խը-
միլ, և խաղող չես ժողովիլ. ո-
րովհետև որդերը պիտի ուտեն
նորան։ Քո ամէն սահմաններումդ
ձիթենիներ կ'ունենաս, բայց իւ-

ղով չես օծուիլ. որովհետև ձի-
թապտուղները պիտի թափուին։
41 Տղերք և աղջկերք կ'ծնես, բայց
քոնը չեն լինիլ. այլ գերութեան
42 կ'գնան։ Բոլոր ծառերդ ու երկ-
րիդ պտուղները խառնիճաղ կ'գը-
43 բաւէ։ Քո միջի օտարականը քե-
զանից գերազանց կ'լինի, և քե-
զանից շատ կ'բարձրանայ, բայց
44 դու ցած կ'իջնես. Նա
քեզ փոխ կ'տայ, բայց դու նո-
րան փոխ չես տալ. նա գլուխ կը
45 լինի և դու կ'լինես պոչ։ Եւ այս
բոլոր անէծքները քեզ վերայ կը
գան, քեզ կ'հալածեն, և քեզ
կ'հասնեն, մինչև որ բնաջինջ լի-
նես. որովհետև քո Եհովայ Ա-
ստուծոյ խօսքին չ'լսեցիր, որ քեզ
հրամայած պատուիրանքներն ու
46 կանոնները պահես։ Եւ նորանք
քեզ վերայ նշան և հրաշք կ'լի-
նեն և քո սերունդի վերայ յա-
47 ւիտեան։ Որովհետև քո Եհովայ
Աստուծոյ ծառայութիւն չա-
րիր ուրախութեամբ և յօժար
սրտով ամէն բանի առատու-
48 թեան համար, նորա համար դու
կ'ծառայես քո թշնամիներին, ո-
րոնց Եհովան քեզ վերայ կ'ու-
ղարկէ՝ սովով, ծարաւով, մեր-
կութիւնով և ամէն կարօտու-
թիւնով. և նա քո պարանոցի
վերայ երկաթէ լուծ կ'դնէ, մին-
49 չև որ բնաջինջ անէ քեզ։ Եհո-
վան քեզ վերայ հեռուից՝ երկ-
րիս ծայրերիցը արծուի թռչելու
պէս մի ազգ կ'բերէ, մի ազգ ո-
րի լեզուն դու չես հասկանալ,
50 Մի պինտերես ազգ, որ ծերերին
պատիւ չի անիլ, և տղայի վե-
51 րայ գութ չի ունենալ. Եւ նա
քո անասուններն պտուղը և երկ-
րիդ պտուղը կ'ուտէ, մինչև որ
դու բնաջինջ լինես. որովհետև
քեզ համար չի թողիլ ցորեն,
գինի, իւղ, կովերիդ ծնունդները
և ոչխարներիդ հօտերը, մինչև որ
52 քեզ բնաջինջ անէ. Եւ քեզ կը
պաշարէ քո բոլոր դռներումդ,
մինչև որ կործանուին քո բարձր
ու ամուր պարիսպները, որոնց
վերայ դու ապաւինում էս, քո
բոլոր երկրումդ. և քեզ կ'պա-
շարէ քո ամէն դռներումդ քո
բոլոր երկրի մէջ, որ քո Եհովայ
Աստուածը քեզ կ'տայ. Եւ պա- 53
շարման ժամանակին և քո թըշ-
նամին քեզ նեղը դցած ժամա-
նակին քո որովայնի պտուղը՝ քո
Եհովայ Աստուծոյ քեզ տուած
քո տղայոց և աղջկերանց միսը
կ'ուտես։ Քո միջի քնքուշ և 54
շատ փափուկ մարդը իր եղբօրը
և իր ծոցի կնկայ և իր ողջ թո-
ղած որդկանցը ծուռ աչքով պի-
տի նայէ, Որպէս զի նորանցից մէ- 55
կին չ'տայ իր որդկանց մսիցը,
որ ուտում է. քանի որում պաշար-
ման ժամանակին և քո թշնամին
ամէն դռներումդ քեզ նեղը դը-
ցած ժամանակին մի բան չի մնալ
նորան։ Քո միջի քնքուշ և փա- 56
փուկ կինը, որ իր փափկութիւ-
նից և քնքշութիւնից ոտքը
դետնի վերայ կոխելու սովորած
չէր, ծուռ աչքով պիտի նայէ իր
ծոցի մարդին, իր տղային, իր
աղջկանը, Եւ իր ոտքերի մէջտե- 57
ղից դուրս եկած տղայի ընկերին,
և իր ծնած զաւակներին. որով-
հետև պաշարման ժամանակին՝ և
քո թշնամիներին քո դռներումդ
քեզ նեղը դցած ժամանակին ա-
մէն բանի պակասելու համար
ծածկաբար պիտի ուտէ նորանց։
Եթէ այս գրքի մէջ գրուած 58
այս օրէնքի ամէն խօսքերը դո-
ւշութեամբ չ'կատարես, որ վա-
խենաս այն պատուական և ա-
հաւոր անունիցդ՝ ՔՈ ԵՀՈՎԱՅ
ԱՍՏՈՒԱԾԱՆԻՑԸ, Եհովան էլ 59
կ'զարկէ քեզ և քո սերունդին
անսովոր հարուածներով, մեծ և
երկարատև հարուածներով, չար
և երկայն հիւանդութիւններով.
Եւ քեզ վերայ կ'դարձնէ Եգիպ- 60
տոսի բոլոր հիւանդութիւնները,
որոնցից դու վախենում ես, և
նորանք քեզ կ'փակչեն, Նաև ա- 61
մէն հիւանդութիւն և ամէն հա-
րուած, որ այս օրէնքների գրքում
գրուած չէ, Եհովան քեզ վերայ
կ'բերէ, մինչև որ դու բնաջինջ
լինես. Եւ սակաւաթիւ մնաք 62
դուք, որ շատութեամբ երկնքի
աստղերի պէս էիք, քո Եհովայ

Աստուծոյ խօսքին չ'լսելուդ հա-
63 մար։ Եւ ինչպէս որ Եհովան ու-
բախացաւ ձեզ վերայ ձեզ բա-
րութիւն անելով և ձեզ շատա-
ցընելով, այնպէս էլ կ'ուրախա-
նայ Եհովան ձեզ վերայ ձեզ կոր-
ցընելով և բնաջինջ անելով, և
կ'ջնջուէք այն երկրի վերայից,
ուր որ հիմա գնում ես նորան
64 ժառանգելու։ Եւ Եհովան քեզ
պիտի ցրուէ բոլոր ազգերի մէջ
երկրիս մէկ ծայրիցը մինչև միւս
ծայրը, և այնտեղ ծառայութիւն
կ'անես օտար աստուածների՝ փայ-
տի և քարի, որոնք չէիր ճանա-
65 չել՝ ոչ դու, ոչ քո հայրերը. Եւ
այն ազգերի մէջ հանգստութիւն
չես գտնիլ, և ոտքիդ թաթին
հանգչելու տեղ չի լինիլ. և Ե-
հովան քեզ այնտեղ դողացող
սիրտ կ'տայ, աչքի նուաղում ու
66 հոգիի տրտմութիւն. Եւ կեան-
քըդ առաջումդ կախման մէջ կը
լինի, և գիշեր ցերեկ կ'վախենաս,
և կեանքումդ ապահով չես լի-
67 նիլ. Առաւօտը կ'ասես. Երանի
թէ իրիկուն լինէր, և իրիկունը
կ'ասես. Երանի թէ առաւօտ լի-
նէր, սրտիդ ահուդողիցը և աչ-
68 քերիդ տեսած բաներիցը։ Եւ Ե-
հովան քեզ ետ կ'դարձնէ նաւե-
րով Եգիպտոս այն ճանապարհո-
վը, որի համար քեզ ասեցի թէ
այլ ևս նորան չ'տեսնես. և կը
ծախուէք այնտեղ ծառաներ ու
աղախիններ լինելու ձեր թշնա-
միներին, և ծախու առնող չի
լինիլ։

ԳԼ. ԻԹ

1 Սորանք են այն ուխտի խօսքերը
որ Եհովան Մովսէսին հրամայեց
Իսրայէլի որդկանց հետ անելու
Մովաբի երկրումը, բացի այն
ուխտից, որ նորանց հետ Քորեբի
վերայ արաւ։
2 Եւ Մովսէսը բոլոր Իսրայէլին
կանչեց և նորանց ասեց. Դուք
տեսաք այն ամենը ինչ որ Եհո-
վան արաւ ձեր աչքերի առաջին
Եգիպտոսի երկրումը Փարաւօ-
նին, և նորա բոլոր ծառաներին,
և նորա բոլոր երկրին. Այսինքն 3
այն մեծ փորձութիւնները, որոնք
քո աչքերը տեսան՝ այն նշաններ-
ը և մեծ հրաշքները. Եւ Եհո- 4
վան չ'տուաւ ձեզ մի այնպիսի
սիրտ որ իմանաք, և աչքեր՝ որ
տեսնէք, և ականջներ՝ որ լսէք,
մինչև այսօր։ Եւ ես քառասուն 5
տարի անապատումը ձեզ ման ա-
ծեցի. ձեր վերայից չ'հինացան
ձեր հագուստները և ձեր ոտքե-
րի կօշիկները չ'մաշուեցան. Հաց 6
չ'կերաք և գինի ու ցքի չ'խմե-
ցիք, որ գիտենաք թէ ես ձեր
Եհովայ Աստուածն եմ։ Եւ եր- 7
բոր այստեղ եկաք, Եսեփոնի Սե-
հոն թագաւորը և Բասանի Ովգ
թագաւորը մեր առաջը դուրս
եկան մեզ հետ պատերազմելու,
և մենք զարկեցինք նորանց. Եւ 8
առանք նորանց երկիրը և ժա-
ռանգութիւն տուինք այն՝ Ռու-
բենեանների, Գադեանների և Մա-
նասէի կէս ցեղին։ Ուրեմն այս 9
ուխտի խօսքերը պահէք և կա-
տարէք, որ յաջողուիք ձեր ա-
մեն գործքի մէջ։
Այսօր դուք ամենքդ ձեր Ե- 10
հովայ Աստուծոյ առաջին կանգ-
նած էք. ձեր իշխանները, ձեր
ցեղերը, ձեր ծերերը, ձեր ոստի-
կանները՝ բոլոր Իսրայէլի մարդի-
կը, Ձեր տղերքը, ձեր կանայքը, 11
և քո բանակում եղող օտարա-
կանը, քո փայտ կտրողիցը մինչև
ջրկիրը. Որ մտնես քո Եհովայ 12
Աստուծոյ ուխտը և նորա երդու-
մը, որ այսօր քո Եհովայ Աստ-
ուածը քեզ հետ անում է. Որ- 13
պէս զի քեզ այսօր իրան համար
ժողովուրդ կանգնեցնէ, և ինքը
քեզ համար Աստուած լինի ինչ-
պէս որ քեզ ասեց, և ինչպէս որ
քո հայրերին՝ Աբրահամին, Իսա-
հակին և Յակոբին երդում ա-
րաւ։ Եւ ոչ միայն ձեզ հետ եմ 14
անում ես այս ուխտը և այս եր-
դումը, Այլ այսօր մեզ հետ մեր 15
Եհովայ Աստուծոյ առաջին այս-
տեղ կանգնողների հետ, և նո-
րանց հետ որ այսօր մեզ հետ
այստեղ չեն. Որովհետև դուք 16
գիտէք, թէ ինչպէս բնակուե-

ցինք Եգիպտոսի երկրումը, և
ինչպէս անցանք այն ազգերի մի-
17 ջիցն, որ դուք անցաք. Եւ տե-
սաք նորանց գարշելի բաները, և
նորանց փայտի, քարի, արծաթի
և ոսկիի կուռքերը, որ նորանց
18 մօտ էին։ Մի գուցէ ձեզանում
մի մարդ կամ մի կին կամ մի
ազգատոհմ կամ մի ցեղ գըտ-
նուի, որ իր սիրտն այսօր մեր Ե-
հովայ Աստուածանից խոտորեցը-
նէ, որ գնայ այն ազգերի աստ-
ուածներին ծառայութիւն անէ.
մի գուցէ ձեզանում մի արմատ
գտնուի, որ թոյն ու դառնու-
19 թիւն բերէ. Եւ երբոր այս ա-
նէծքի խօսքերը լսէ և իր սրտի
մէջ իրան օրհնելով ասէ. Ինձ
համար խաղաղութիւն կ'լինի, ե-
թէ իմ սրտի յամառութիւնովը
գնամ. որ ծարաւութեանը վե-
20 րայ գինովութիւն աւելացնէ։ Ե-
հովան չի հաճիլ նորան խնայե-
լու, այլ այն ժամանակ Եհովայի
բարկութիւնը և նախանձը կ'բոր-
բոքուի այն մարդի վերայ, և այս
գրքի մէջ գրուած ամեն անէծքը
կ'իջնէ նորա վերայ, և Եհովան
կ'ջնջէ նորա անունը երկնքի տա-
21 կիցը. Եւ Եհովան կ'բաժանէ նո-
րան Իսրայէլի բոլոր ցեղերիցը
չարիքի համար այս օրէնքի գրք-
ում գրուած ուխտի ամեն ա-
22 նէծքների համեմատ։ Եւ կ'ասէ
յետագայ ազգը՝ այսինքն ձեզա-
նից յետոյ ձեր վեր կենող զա-
ւակները, և հեռու երկրից ե-
կող օտարականը, երբոր տեսնեն
այն երկրի հարուածները և նո-
րա նեղութիւնները, որոնցով Ե-
23 հովան նորան պիտի նեղէ. Նորա
բոլոր երկիրը ծծումբ, աղ և այ-
րուած կ'լինի, ուր մի բան չի ցան-
ուիլ, և մի բան չի բուսնիլ, և
մի խոտ չի բարձրանալ. Սոդոմի,
Գոմորի, Ադմայի և Սեբոյիմի
խորտակման պէս, որ նորանց խոր-
տակեց Եհովան իր բարկութիւ-
24 նովը և սրտմտութիւնովը։ Նաև
ամեն ազգերը կ'ասեն. Ի՞նչու
համար Եհովան այս երկրին այս-
պէս արաւ. Ի՞նչ է այս մեծ
սրտմտութիւնն ու բարկութիւ-
նը։ Եւ կ'ասեն. Որովհետև նո- 25
րանք մերժեցին իրանց հայրերի
Եհովայ Աստուծոյ ուխտը, որ նո-
րանց հետ արել էր՝ նորանց Ե-
գիպտոսի երկրիցը հանած ժամա-
նակը, Եւ գնացին ծառայեցին 26
ուրիշ աստուածների, և նորանց
երկրպագութիւն արին, աստ-
ուածներ՝ որ բնաւ չէին ճանաչած,
և որ Եհովան չէր որոշել նորանց
համար։ Եւ Եհովայի բարկու- 27
թիւնը այն երկրի դէմ բորբոք-
ուեցաւ, որ այս գրքի մէջ գրը-
ուած ամեն անէծքները նորա վե-
րայ բերէ. Եւ Եհովան նորանց 28
արմատից խլեց իրանց երկրի վե-
րայից բարկութիւնով, սրտմտու-
թիւնով և մեծ զայրացումով և
գցեց մէկ ուրիշ երկիր՝ ինչպէս
որ այսօր։ Ծածուկ բաները մեր 29
Եհովայ Աստուծոյ համար է,
բայց յայտնուած բաները մեզ և
մեր որդկանց համար յաւիտեան,
որ այս օրէնքի ամեն խօսքերը
կատարենք։

ԳԼ. Լ

Եւ երբոր քեզ վերայ գան այս 1
բոլոր բաները՝ թէ անէծքը և թէ
օրհնութիւնը, որ քո առաջին
դրի, և դու քո սրտի մէջ դառ-
նաս այն բոլոր ազգերի մէջ, ուր
որ քո Եհովայ Աստուածը քեզ
կ'քշէ, Եւ քո Եհովայ Աստու- 2
ծուն դառնաս, և նորա խօսքը
լսես, բոլորովին ինչպէս որ ես
այսօր քեզ պատուիրեցի, դու և
քո որդիքը բոլոր սրտովդ և բո-
լոր հոգիովդ, Քո Եհովայ Աստ- 3
ուածն էլ քեզ գերութիւնից կը
դարձնէ և քեզ կ'ողորմէ և դար-
ձեալ կ'ժողովէ քեզ այն ամեն
ազգերիցը, ուր որ քո Եհովայ
Աստուածը քեզ ցրուել էր։ Եթէ 4
մինչև երկնքի ծայրը քշուած էլ
լինէիր, քո Եհովայ Աստուածը
քեզ այնտեղից էլ կ'ժողովէ, և
այնտեղ էլ կ'առնէ քեզ։ Եւ 5
քո Եհովայ Աստուածը կ'բերէ
քեզ քո հայրերի ժառանգած
երկիրը, և կ'ժառանգես նորան,
և քեզ բարութիւն կ'անէ և

քո հայրերիցն աւելի կ'շատացնէ
6 քեզ. Եւ քո Եհովայ Աստուածը
կ'թլփատէ քո սիրտը և քո որդ-
կանց սիրտը, որ բոլոր սրտովդ և
բոլոր հոգիովդ քո Եհովայ Ա-
7 ծուն սիրես, որ ապրես։ Եւ քո
Եհովայ Աստուածն այս բոլոր ա-
նէծքները կ'բերէ քո թշնամինե-
րի վերայ՝ քեզ ատողների և հա-
8 լածողների վերայ։ Եւ դու եա
կ'դառնաս և կ'լսես Եհովայի
խօսքը, կ'կատարես նորա բոլոր
պատուիրանքները, որոնք ես այս-
9 օր քեզ պատուիրում եմ։ Եւ
քո Եհովայ Աստուածը կ'առա-
տացնէ քո ձեռքի բոլոր գործքե-
րը, որովայնիդ պտուղը, անա-
սուններիդ պտուղը և երկրիդ
պտուղը բարիքի համար. որովհե-
տև Եհովան դարձեալ կ'ուրա-
խանայ քեզ վերայ բարիքի հա-
մար, ինչպես որ քո հայրերի վե-
10 րայ ուրախացաւ, երբոր դու քո
Եհովայ Աստուծոյ ձայնին հնա-
զանդես, և այս օրէնքի գրքի մէջ
գրուած Աստուծոյ պատուիրանք-
ները և կանոնները պահես, և
բոլոր սրտովդ և բոլոր հոգիովդ
քո Եհովայ Աստուծուն դառնաս։
11 Որովհետև այս պատուիրանքը,
որ ես այսօր քեզ պատուիրում
եմ, քեզ համար անիմանալի չէ,
12 և հեռու չէ։ Նա երկնքումը չէ
որ ասես Թէ Ո՞վ վեր կ'ելնէ
մեզ համար երկինքը, և կ'բերէ
նորան մեզ համար, որ լսենք նո-
13 րան և անենք։ Եւ ծովի այն կող-
մումն էլ չէ, որ ասես Թէ՝ Ո՞վ
կ'անցնէ մեզ համար ծովի այն
կողմը, և կ'բերէ մեզ համար,
14 որ լսենք նորան և անենք. Որով-
հետև խօսքը քեզանից շատ մօտ
է, բերանումդ ու սրտումդ է,
որ դու նորան կատարես։
15 Տես, ես այսօր քո առաջն եմ
դնում կեանքը և բարին, մահը
16 և չարը. Որ ես այսօր քեզ պատ-
ուիրում եմ, որ քո Եհովայ Ա-
ստուածուն սիրես, նորա ճանա-
պարհներումը գնաս, և նորա
պատուիրանքները, կանոնները և
դատաստանները պահես, որ ապ-
րես և շատանաս, և քո Եհովայ
Աստուածը քեզ օրհնէ այն երկ-
րումը, ուր որ գնում ես նորան
17 ժառանգելու համար։ Բայց եթէ
քո սիրտը ետ դառնայ, և չլսես,
այլ մոլորուելով ուրիշ աստ-
ուածների երկրպագութիւն անես
18 և նորանց պաշտես, ես ձեզ այսօր
յայտ եմ տալիս, որ անպատճառ
կ'կորչէք, երկար կեանք չէք ու-
նենալ այն երկրի վերայ, ուր որ
Յորդանանն անցնելով գնում ես
19 նորան ժառանգելու համար։ Այս-
օր երկինքն և երկիրը վկայ եմ
կանչում ձեզ վերայ, որ կեանքը
և մահը, օրհնութիւնը և անէծ-
քը ձեր առաջը դրի. ուրեմն
կեանքը ընտրիր որ ապրես՝ դու
20 և քո սերունդը. Որ քո Եհովայ
Աստուածուն սիրես՝ նորա ձայնին
լսես, և նորան յարես, որովհե-
տև նա է քո կեանքը և քո օրե-
րի երկայնութիւնը, որ բնակուես
այն երկրի վերայ, որ Եհովան քո
հայրերին՝ Աբրահամին, Իսահա-
կին և Յակոբին երդում արաւ
նորանց տալու համար։

ԳԼ. Լ.Ա

1 Եւ Մովսէսը գնաց և խօսեց այս
խօսքերը բոլոր Իսրայէլի հետ,
2 Եւ նորանց ասեց. Ես այսօր հա-
րիւր քսան տարեկան եմ, այլև
դուրս գալու և մտնելու կարո-
ղութիւն չունեմ. և Եհովան
ինձ ասեց. Դու այս Յորդանանո-
վը չես անց կենալ. Քո Եհովայ
3 Աստուածն ինքը քո առաջը կ'անց-
նէ, և նա կ'կորցնէ այս ազգերն
քո առաջից, և դու նորանց կը
տիրես. Յեսուն կ'անցնէ քո ա-
ռաջը ինչպես որ Եհովան ասել
4 է։ Եւ Եհովան նորանց այնպես
կ'անէ, ինչպես որ արաւ Ամոր-
հացիների Սեհոն և Ովգ թագա-
ւորներին և նորանց երկրին, որ
5 նորանց բնաջինջ արաւ։ Եւ Եհո-
վան նորանց ձեր ձեռքը կ'տայ,
և նորանց անէք այն ամեն պատ-
ուիրանքի պէս, որ ես ձեզ պատ-
ուիրեցի։ Ուժովացէք և քաջ է-
6 ղէք, մի վախենաք, և նորանց է-
րեսից մի զարհուրիք. որովհետև

քո Եհովայ Աստուածն ինքն է
քեզ հետ գնում. Նա քեզ չի
թողիլ և քեզ չի ձգիլ։
7 Եւ Մովսէսը Յեսուին կանչեց,
և ասեց նորան բոլոր Իսրայէլի
առաջին. Ուժովացիր և քաջ է-
ղիր. որովհետև դու այս ժողո-
վրդին տանելու ես այն երկիրը,
որ Եհովան նորանց հայրերին եր-
դում արաւ որ նորանց տայ. և
դու նորանց ժառանգութիւն ես
8 տալու։ Եւ քո առաջից գնացողը
նոյն ինքն Եհովան է, նա քեզ
հետ է լինելու, նա քեզ չի թո-
ղիլ և քեզ չի ձգիլ. մի վախե-
նար և մի զարհուրիր։
9 Եւ Մովսէսը գրեց այս օրէնքը,
և տուաւ Ղևիի որդի այն քա-
հանաներին, որ Եհովայի ուխտի
տապանակը վեր են առնում, և
10 Իսրայէլի բոլոր ծերերին։ Եւ
Մովսէսը նորանց պատուիրեց և
ասեց. Ամեն եօթներորդ տարին՝
թողութեան տարուայ ժամանա-
կին տաղաւարահարաց տօնին,
11 երբոր բոլոր Իսրայէլը կ'գայ քո
Եհովայ Աստուծոյ առաջին երե-
ւալու նորա ընտրած տեղը, այս
օրէնքը կարդաս բոլոր Իսրայէլի
12 առաջին, որ լսեն։ Ժողովիր ժո-
ղովուրդը՝ մարդիկը և կանայքը,
և տղերքը և քո օտարականը, որ
քո դռներումն է, որ լսեն, և որ
սովորեն և ձեր Եհովայ Աստուա-
ծանից վախենան, և այս օրէնքի
բոլոր խօսքերը պահեն և կատա-
13 րեն. Եւ նորանց տղերքը, որ չեն
գիտում, կ'լսեն և կ'սովորեն ձեր
Եհովայ Աստուածանից վախենա-
լը, բոլոր այն օրերումը որ կ'ապ-
րէք այն երկրի վերայ՝ որ Յորդա-
նանովն անցնում էք այնտեղ նո-
րան ժառանգելու։
14 Եւ Եհովան Մովսէսին ասեց.
Ահա օրերդ մօտեցել են որ մեռ-
նես. Յեսուին կանչիր, և ժողով-
քի խորանի մէջ ներկայացէք, որ
նորան պատուէր տամ։ Եւ Մով-
սէսը և Յեսուն գնացին և ժո-
ղովքի խորանի մէջ ներկայացան։
15 Եւ Եհովան ամպի սիւնով խո-
րանումը երեւեցաւ, և ամպի սիւ-
նը խորանի դռան վերայ կանգ-
նեց։ Եւ Եհովան Մովսէսին ա- 16
սեց. Ահա դու քո հայրերի հետ
կ'ննջես, և այս ժողովուրդը վեր
կ'կենայ և շնութիւն է անելու
օտար աստուածների հետից ուր
որ գնում է, և ինձ թողնելու է
և խափանելու է իր հետ արած
ուխտս։ Եւ այն օրը իմ բարկու- 17
թիւնը նորանց վերայ պիտի բոր-
բոքուի և ես պիտի ձգեմ նորանց
և երեսս ծածկեմ նորանցից, և
բնաջինջ են լինելու. և շատ չա-
րիքների և նեղութիւնների են
հանդիպելու և ասելու այն օրը.
Մի՞թէ մեր Աստուածը իմ մէջ
չլինելու համար չէ, որ այս չա- 18
րիքները ինձ հանդիպել են։ Եւ
այն օրը ես իմ երեսը բոլորովին
կ'ծածկեմ նորանց սրած բոլոր
չարութեան համար, որովհետև
դէպի ուրիշ աստուածների դա-
ռան։ Եւ հիմա այս երգը գրե- 19
ցէք ձեզ համար, և այն ասվորե-
ցրու Իսրայէլի որդիքանցը, նորանց
բերանում դիր այն, որպէս զի
այս երգը Իսրայէլի որդիքանց մէջ
ինձ համար վկայութիւն լինի։
Որովհետև նորանց պիտի տանեմ 20
այն կաթ և մեղր բղխող երկի-
րը, որի համար ես նորանց հայ-
րերին երդում արի. և նորանք
կ'ուտեն և կ'կշտանան և կ'գե-
բրանան, և դէպի ուրիշ աստ-
ուածների կ'դառնան և նորանց
ծառայութիւն կ'անեն և ինձ
կ'արհամարհեն և իմ ուխտը կը
խափանեն։ Իսկ երբոր նորանք 21
շատ չարիքների և նեղութիւն-
ների հանդիպեն, այս երգը նո-
րանց առաջին վկայութիւն տայ.
որովհետև պիտի չմոռացուի նո-
րանց զաւակների բերանից. ո-
րովհետև գիտեմ նորանց խոր-
հուրդը՝ որ այսօր անում են,
քանի որ դեռ չեմ տարել նորանց
իմ երդումով խոստացած երկի-
րը։ Եւ Մովսէսը նոյն օրը այս 22
երգը գրեց, և Իսրայէլի որդի-
կանցը սովորեցրեց այն։
Եւ նա Նաւէի որդի Յեսուին 23
պատուիրեց և ասեց. Զօրացիր
և քաջ եղիր. որովհետև դու պի-
տի տանես Իսրայէլի որդիքը այն

երկիրը, որի համար նորանց երդում արի. և ես քեզ հետ կը լինեմ,

24 Եւ երբոր Մովսէսն այս օրէնքի բոլոր խօսքերը մէկ գրքի մէջ գրեց վերջացրեց մինչև վերջը,

25 Մովսէսը պատուիրեց Եհովայի ուխտի տապանակը վար առնող

26 Ղեւտացիներին ասելով. Առէք այս օրէնքի գիրքը և դրէք նորան ձեր Եհովայ Աստուծոյ ուխտի տապանակի մօտ, որ նա քեզ գէմ վկայութիւն լինի այնտեղ.

27 Որովհետև ես քո ապստամբութիւնը և քո խիստ պարանոցը գիտեմ. ահա այսօր տակաւին ես ձեզ հետ ողջ եմ՝ դուք Եհովայի դէմ ապստամբութիւն էիք անում. և ո՛րչափ աւելի իմ

28 մեռնելուց յետոյ։ Ձեր ցեղերի բոլոր ծերերին և ձեր ատենականներին ժողովեցէք իմ առաջին որ նորանց ականջներին խօսեմ այս խօսքերը. և երկինքն ու երկիրը

29 վկայ կանչեմ նորանց վերայ. Որովհետև գիտեմ, որ իմ մեռնելուց յետոյ դուք անպատճառ անօրէնութիւն էք անելու, և խոտորուելու էք իմ ձեզ պատուիրած ճանապարհիցը, և ետքի օրերը չարիքներուն էք հանդիպելու. որովհետև Եհովայի առաջին չարութիւն էք անելու, և ձեր ձեռքերի գործքերովը նորան բար-

30 կացնելու։ Եւ Մովսէսն այս երգի խօսքերը խօսեց Իսրայէլի բոլոր ժողովքի ականջներին մինչև վերջը։

Գլ. ԼԲ

1 Ականջ դրէք, ով երկինք, որ խօսեմ.
Եւ երկիրը լսէ իմ բերանի խօսքերը։

2 Անձրևի պէս թող կաթի իմ խրատը.
Ցօղի պէս իջնէ իմ խօսքը՝
Ինչպէս անձրևը կանանչեղէնի վերայ,
Եւ ինչպէս առատ անձրևներ խոտի վերայ։

3 Որովհետև ես կանչում եմ Եհովայի անունը.
Գաւաթ տուէք մեր Աստուծուն։

4 *Աստուծոյ գործը կատարեալ է.
Որովհետև նորա ամեն ճանապարհները իրաւունք են.
Աստուած հաւատարիմ է և անիրաւութիւն չ'ունի.
Արդար և ուղիղ է նա։

5 Պատանութեան նորա դէմ. նորա որդիքը չէն. իրանցն է արատը.
Մեկ խոտորուած և ծուռ ազգ է։

6 Դո՞ւ ես ձեր Եհովային արած հատուցումը,
Ով յիմար և անմիտ ժողովուրդ։
Նա չէ՞ քո Հայրը, քեզ ստացողը.
Նա քեզ ստեղծեց և քեզ հաստատեց։

7 Յիշիր հին օրերը,
Մտածիր անցած դարերի տարիները.
Քո հօրդ հարցրու, և նա քեզ կ'պատմէ.
Եւ քո ծերերին, և նորանք քեզ կ'ասեն.

8 Երբոր Բարձրեալը ազգերին ժառանգութիւն բաժանեց,
Եւ տարածեց Ադամի որդիները,
Ազգերի սահմանները դրաւ
Իսրայէլի որդկանց թիւովը.

Որովհետև Եհովայի բաժինը իր ժողովուրդն է,
Յակոբը նորա ժառանգութեան վիճակն է։

10 Նորան անապի երկրի մէջ գտաւ,
Վայրի առնացող անապատումը.
Նորան շրջապատեց, նորան խրատեց,
Նորան պահպանեց իր աչքի բիբին պէս։

11 Ինչպէս որ արծիւը քրքրում է իր բոյնը,
Շուռ է գալիս իր ձագերի վերայ,
Տարածում է թևերը, վեր առնում նորանց,
Տանում նորանց իր թևերի վերայ,

12 Այնպէս Եհովան միայն մեն ա-ծեց նորան,
Եւ նորա հետ օտար աստուած չ'կար։

13 Նորան վեր հանեց երկրիս բարձր տեղերը,

*Վէմի

Որ ուտէ արտերի պտուղը.
Եւ նորան վէմից մեղր ծծել տուաւ,
Եւ ապառաժ ժայռից՝ իւղ.

14 Կովերի իւղ և ոչխարների կաթ,
Գառների և Բասանի խոյերի և նոխազների ճարպով,
Եւ ցորենի երիկամունքի ճարպով.
Եւ խաղողի արիւնը՝ խմեցիր գինի։

15 Եւ գիրացաւ Յեշուրունը և քացի տուաւ.
(Գիրացար, հաստացար, իւղ կապեցիր.)
Եւ թողեց իր Արարիչ Աստուծուն,
Եւ արհամարհեց իր փրկութեան վէմը։

16 Օտար աստուածներով նորան նախանձեցրին,
Գարշելի բաներով նորան բարկացրին։

17 Չոհեցին դեւերին, որ Աստուած չէն,
Աստուածների, որ չէին ճանաչում.
Նորք՝ որ մօտերից եկան.
Որոնցից ձեր Հայրերը չ'վախեցան.

18 Դու քեզ ծնող վէմը թողեցիր,
Եւ քեզ առեղծող Աստուծուն մոռացար։

19 Եւ Եհովան տեսաւ և զզուեց,
Բարկութիւնով իր տղերքից և աղջիկներից.

20 Եւ ասեց Երեսս ծածկեմ նորանցից,
Տեսնեմ նորանց վերջը ինչ կը լինի.
Որովհետև նորանք մի ծուռ ազգ են,
Որդիք՝ որոնց մէջ հաւատ չ'կայ։

21 Նորանք զրգռեցին իմ նախանձը չաստուածով,
Ինձ բարկացրին իրանց անոտի բաներովը.
Եւ ես էլ կ'զրգռեմ նորանց նախանձը մի չժողովուրդով,
Մի անմիտ ազգով կ'բարկացնեմ նորանց.

22 Որովհետև կրակ վառուեցաւ իմ բարկութիւնովը,
Եւ կ'այրէ մինչև դժոխքի ներքին տեղերը.
Եւ կ'ուտէ երկիրը և նորա արմտիքը,
Եւ կ'բորբոքեցնէ սարերի հիմունքը։

23 Նորանց վերայ չարիքներ կ'դիզեմ,
Իմ նետերը կ'վերջացնեմ նրանց վերայ։

24 Նորանք կ'մաշուին սովով,
Եւ կ'սպառուին տենդով և լեզի ժանտախտով,
Եւ գազանների ժանիք կ'ուղարկեմ նորանց վերայ
Գետնի վերայ սողացողների թոյնի հետ։

25 Դրսիցը սուրը անօրդի կ'անէ և սենեակներից երկիւղը.
Երիտասարդներին և կոյս աղջիկներին,
Կաթնկերին ալևոր ծերի հետ։

26 Ես ասեցի՝ Յեշուեմ նորանց,
Նորանց յիշատակը մարդկանց միջիցը վերացնեմ,

27 Միայն թէ թշնամիի բարկութիւնից վախեցայ.
Մի գուցէ նորանց հակառակորդները սխալանան.
Մի գուցէ ասեն՝ Մեր բարձր ձեռքն է,
Եւ ոչ թէ Եհովան որ արաւ այս բոլոր բաները։

28 Որովհետև նորանք մի խորհրդա-կորոյս ազգ են,
Եւ իմաստութիւն չ'կայ նորանց մէջ։

29 Երանի թէ իմաստուն լինէին, այս բանը հասկանային,
Իրանց վախճանը մտածէին։

30 Մեկ մարդն ինչպէս կ'հալածէր հազարին.
Եւ երկու մարդը ինչպէս կ'փախցընէր տասը հազարին,
Եթէ նորանց վէմը նորանց չը ծախէր,
Եւ Եհովան նորանց չ'մատներ։

31 Որովհետև մեր վէմի պէս չէ նորանց վէմը.
Եւ մեր թշնամիները թող դատաւոր լինեն։

32 Որովհետև Սոդոմի որթիցն է նորանց որթը,
Եւ Գոմորի արտիցը.
Նորանց խաղողները թունաւոր խաղողներ են,

Նորանց ողկոյզները դառն են.
33 Նորանց գինին վիշապների թոյն է
Եւ իժերին սատակող մահադեղն է։
34 Միթէ սա ծածկուած չէ՞ ինձ մօտ,
Կնքուած չէ՞ իմ շտեմարաններումը։
35 Իմն է վրէժխնդրութիւնը և հատուցումը.
Ժամանակին կ'գլորուի նորանց ոտքը,
Որովհետև մօտ է նորանց կորուստի օրը։
Եւ շտապում է նորանց համար պատրաստուածը։
36 Որովհետև Եհովան կ'դատէ իր ժողովրդին,
Եւ կ'գթայ իր ծառաների վրայ,
Որովհետև կ'տեսնէ որ նորանց ձեռքը տկար է,
Եւ չ'կայ կապուածը և ազատը.
37 Եւ կ'ասէ. Ո՞ւր են նորանց աստուածները.
Այն վէմը, որի վերայ յոյս էին դրել,
38 Որոնք նորանց զոհերի ճարպն ուտում էին,
Խմում էին նորանց թափելու նուէրների գինին.
Թող վեր կենան և ձեզ օգնեն,
Ձեզ վերայ պաշտպան լինեն։
39 Հիմա նայեցէք, որ Ես՝ ԵՍ ԵՄ,
Եւ ինձ հետ միասին է'լ աստուած չ'կայ.
Ես կ'մեռցնեմ և կ'ապրեցնեմ.
Եւ ես կ'զարկեմ և կ'բժշկեմ,
Եւ իմ ձեռքիցն ազատող չ'կայ։
40 Որովհետև իմ ձեռքը դէպի երկինքն եմ բարձրացնում
Եւ ասում՝ Ես յաւիտեան կենդանի եմ,
41 Եթէ կայծակի սուրս սրեմ,
Եւ ձեռքս դատաստանը բռնէ,
Իմ թշնամիներին վրէժխնդրութիւն կ'անեմ,
Եւ ինձ ատողներին հատուցում կ'անեմ։
42 Իմ նետերն արիւնով կ'արբեցընեմ,
Եւ իմ սուրը միս կ'ուտէ,
Սպանուածների և գերիների արիւնիցը,
Թշնամիների իշխանների գլխիցը։
43 *Ուրախացէք, ով ազգեր, նորա ժողովուրդը.
Որովհետև իր ծառաների արիւնի վրէժը խնդրում է.
Եւ իր թշնամիներից վրէժ է առնում,
Եւ քաւում է իր երկիրը — իր ժողովուրդը։
44 Եւ Մովսէսն եկաւ, և այս երգի բոլոր խօսքերը ժողովրդի ականջներին խօսեց, և Նաւէի որդի Յեսուն էլ։
45 Եւ երբոր Մովսէսն այս ամեն խօսքերը բոլոր Իսրայէլի հետ խօսեց վերջացրեց,
46 Նորանց ասեց. Ձեր ուշը դարձրէք այն ամեն խօսքերին, որոնք այսօր ձեզ համար վկայութիւն բերի, որ նորանք ձեր տղերանցը պատուիրէք, որ նորանք այս օրէնքի ամեն խօսքերը պահեն և կատարեն։
47 Որովհետև այս ձեզ համար դարտակ բան չէ. որովհետև ձեր կեանքն է, և այս բանովը երկայնակեաց կ'լինէք այն երկրի վերայ, որի համար Յորդանանովն անցնում էք նորան ժառանգելու համար։
48 Եւ Եհովան նոյն օրը խօսեց
49 Մովսէսի հետ ասելով. Վեր ելիր այդ Աբարիմ սարը՝ Նաբաւ սարը որ Մովաբի երկրումն է Երիքովի դիմացին, և տես Քանանի երկիրը, որ ես տալիս եմ Իսրայէլի որդկանցն ԻԲՐԽ կալուածք.
50 Եւ մեռիր քո վեր ելած սարի վերայ, և քո ժողովրդի վերայ աւելացիր, ինչպէս որ քո եղբայր Ահարօնը Հովր սարի վերայ մեռաւ և իր ժողովրդի վերայ աւելացաւ.
51 Որովհետև ինձ դէմ անհնազանդ եղաք Իսրայէլի որդկանց մէջ՝ Սին անապատումը Կադեսի հակառակութեան ջրերի վերայ. որովհետև Իսրայէլի որդկանց մէջ ինձ չ'սրբեցիք։
52 Ուրեմն այն երկիրը հեռուից կը տեսնես, բայց այնտեղ չես մըտնիլ, այն երկիրը որ ես Իսրայէլի որդկանցը կ'տամ։

*Կամ՝ Ով ազգեր, նորա ժողովրդին ուրախակից եղէք.

ԳԼ. ԼԳ

1 Եւ այս է այն օրհնութիւնը՝ որով օրհնեց Աստուծոյ մարդ՝ Մովսէսն Իսրայէլի որդկանց իր մեռնելուց առաջ.
2 Եւ ասեց.
Եհովան Սինայիցն եկաւ,
Եւ Սէիրիցն երևեցաւ նորանց,
Փայլեցաւ Փառան սարիցը,
Եւ եկաւ բիւրաւոր սուրբերով.
Նորա աջ ձեռքիցը օրէնքի կրակը նորանց համար։
3 Այս, նա սիրում է ժողովուրդներին.
Նորա բոլոր սուրբերը քո ձեռքին են.
Եւ նորանք նստում են քո ոտքերի մօտ
Քո խօսքերիցն ընդունելու համար։
4 Մովսէսը մեզ օրէնքը պատուիրեց.
Յակոբի ժողովքի ժառանգութիւնը։
5 Եւ Յեսուրունի մէջ թագաւոր եղաւ,
Ժողովրդի գլխաւորները ժողովուելիս
Իսրայէլի ցեղերի հետ մէկտեղ։
6 Ռուբէնը ապրէ և չ'մեռնէ,
Եւ նորա ժողովուրդը բազմաթիւ լինի։
7 Եւ սա՝ Յուդայի համար, և ասեց.
Լսիր, ով Եհովայ, Յուդայի ձայնը,
Եւ իր ժողովրդի մօտ տար նորան.
Նորա ձեռքերն իրան բաւական են,
Եւ նորա թշնամիների դէմ օգնական եղիր։
8 Եւ Ղևիի համար ասեց.
Թումիմդ ու Ուրիմդ քո սուրբ մարդին լինի,
Որին փորձեցիր Մասսայի մէջ,
Ե- Մերիբայի ջրի վերայ նորա հետ վիճեցիր։
9 Այն որ իր հօրն ու մօրը համար ասեց՝ Ես նորան չ'տեսայ,
Եւ իր եղբայրներին չ'ճանաչեց,
Եւ իր որդիներին չ'իմացաւ.
Որովհետև նորանք քո խօսքին զգուշութիւն արին,
Եւ քո ուխտը պահեցին։
10 Քո դատաստանները սովորեցնում են Յակոբին՝
Եւ քո օրէնքն՝ Իսրայէլին.
Քո առաջին խունկ կ'մատուցանեն,
Եւ քո սեղանի վերայ՝ ողջակէզ։
11 Եհովայ, օրհնիր նորա զօրութիւնը,
Եւ նորա ձեռքի գործքը ընդունիր.
Փշրիր նորա հակառակորդների մէջքը,
Եւ նորա ատողներին, որ այլ ևս վեր չ'կենան։
12 Բենիամինի համար ասեց.
Եհովայի սիրելին ապահով բնակուէ նորա մօտ.
Միշտ պաշտպանում է նորան,
Եւ նորա ուսերի մէջ է բնակվում։
13 Եւ Յովսէփի համար ասեց.
Նորա երկիրը Եհովայիցն օրհնուած լինի
Երկնքի ընտիր պարգևներովը, ցօղովը,
Եւ ցածումը պառկող անդունդներովը,
14 Եւ արեգակից առաջ եկած ընտիր բերքերովը,
Եւ ամիսների ընտիր արդիւնքներովը,
15 Եւ վաղեմի սարերի *ընտիր պըտուղներովը,
Եւ մշտնջենաւոր բլուրների ընտիր պարգևներովը,
16 Եւ երկրիս և նորա առատութեան ընտիր պարգևներովը,
Ու մորենումը բնակողի բարեհաճութիւնովը
Գան Յովսէփի գլխի վերայ,
Եւ իր եղբայրների մէջ երևելի եղողի գագաթի վերայ։
17 Իր ցուլի առաջինեկի պէս գեղեցկութիւն ունի նա,
Եւ նորա եղջիւրները միեղջերուի եղջիւրներ են,
Նորանցով կ'զարկէ ժողովուրդներին միասին,
Մինչև երկրի ծայրերը.
Եւ սորանք են Եփրեմի բիւրաւորները

*Եբր. գլխովը

Եւ Մանասէի հազարաւորները։
18 Եւ Զաբուղոնի համար ասեց.
Ուրախացիր, Զաբուղոն, քո դուրս
գալու ժամանակին,
Եւ դու, Իսաքար, քո վրան-
ներումը։
19 Ժողովուրդներին սարն են հրա-
ւիրում՝
Այնտեղ արդարութեան զոհեր
են մատուցանում։
Որովհետև նորանք կ'ծծեն ծովե-
րի առատութիւնը
Եւ աւազի ծածուկ գանձերը։
20 Եւ Գադի համար ասեց.
Օրհնուած է Գադին ընդարձա-
կողը.
Մատակ առիւծի պէս է նստել,
Եւ գիշատում է թևերը նաև
գլուխը.
21 Եւ տեսաւ առաջի մասն իրան
յարմար.
Որովհետև այնտեղ օրէնսդրի տը-
ուած բաժինը որոշուեցաւ,
Եւ ժողովրդի գլխաւորների հետ
եկաւ,
Եհովայի արդարութիւնը գործեց
Եւ նորա դատաստանները Իս-
րայէլի հետ։
22 Եւ Դանի համար ասեց.
Դանը առիւծի ձագ է.
Բասանիցն է դուրս թռչում։
23 Եւ Նեփթաղիմի համար ասեց.
Նեփթաղիմը շնորհքով կշտացած,
Եւ Եհովայի օրհնութիւնովը լցու-
ած,
Արևմուտքն ու հարաւը կ'ժա-
ռանգէ։
24 Եւ Ասերի համար ասեց.
Ասերը որդիներիցն օրհնուած է.
Նա իր եղբայրներին հաճոյ լինի.
Եւ ոտքը իւղի մէջ թաթախէ։
25 Քո *կօշիկները երկաթ և պղինձ
լինեն,
Եւ քո †ոյժը քո օրերի չափ լինի։
26 Յեսուրունի Աստուծոյ նմանը չը
կայ.
Որ նստած է երկնքումը քեզ օգ-
նութիւն անելու համար՝
Եւ իր մեծ վայելչութեամբը՝ ամ-
պերի վերայ։

*Կամ՝ փակերը
†Կամ՝ հանգստութիւնը

Յաւիտենական Աստուածը ա- 27
պաւէն է,
Եւ ցածումը այժ ունին նորա յա-
ւիտենական բազուկները.
Եւ նա կ'քշէ թշնամիներիդ քո
առաջիցը,
Եւ կ'ասէ՝ Փչացրու։
Եւ Իսրայէլն ապահովութեամբ 28
առանձին կ'բնակուէ.
Յակոբին աղբիւրը՝ առանձին
Յորենի և գինիի երկրումը,
Եւ նորա երկնքիցը ցօզ կ'կաթէ։
Երանի քեզ, Իսրայէլ, ով է 29
քեզ նման՝
Եհովայի ձեռքովը փրկուած ժո-
ղովուրդ.
Որ նա է քո օգնութեան ասպարը
Եւ քո յաղթութեան սուրը.
Եւ քո թշնամիները քեզ պիտի
շողոքորթեն,
Եւ նորանց բարձր տեղերը պիտի
կոխես։

ԳԼ. ԼԴ

Եւ Մովսէսը վեր գնաց Մովաբի 1
դաշտերիցը Նաբաւ սարը Երի-
քովի դէմ Փասգայի գագաթը.
և Եհովան նորան ցոյց տուաւ
բոլոր Գաղաադի երկիրը մինչև
Դան, Նաև բոլոր Նեփթաղիմը 2
և Եփրեմի և Մանասէի երկիրը,
և Յուդայի բոլոր երկիրը մինչև
արևմտեան ծովը, Եւ հարաւա- 3
յին կողմը և Երիքովի հովտի
դաշտը և Արմաւենեաց քաղաքը
մինչև Սեգովր։ Եւ Եհովան նո- 4
րան ասեց. Սա է այն երկիրը՝ ո-
րի համար Աբրահամին, Իսահա-
կին և Յակոբին երդում արի ա-
սելով. Քո սերունդին եմ տալու
այն. ահա քո աչքերովը քեզ
տեսնել տուի, բայց դու այն-
տեղ չես անցնիլ։
Եւ Եհովայի ծառան Մովսէսը 5
մեռաւ այնտեղ Մովաբի երկ-
րումը Տիրոջ խօսքին համեմատ.
Եւ նա նորան թաղեց Մովաբի 6
երկրի ձորումը Բեթփեդովրի դէմ,
և մի մարդ չ'իմացաւ նորա գե-
րեզմանը մինչև այսօր։ Եւ Մով- 7
սէսը հարիւր քսան տարեկան էր
մեռնելիս, նորա աչքը չ'տկարա-

8 ցաւ, և նորա ոյժը չ'գնաց։ Եւ
Իսրայէլի որդիքը Մովաբի դաշ-
տերումը Մովսէսի համար երե-
սուն օր լաց եղան. և Մովսէսի
համար սուգի լացի օրերը վեր-
ջացան։
9 Եւ Նաւէի որդի Յեսուն ի-
մաստութեան հոգիով լիքն էր,
որովհետև Մովսէսն իր ձեռքերը
նորա վերայ էր դրել. և Իսրա-
յէլի որդիքը նորան լսում էին,
և անում էին ինչպէս որ Եհո-
վան Մովսէսին պատուիրել էր։
Եւ այլ ևս վեր չ'կացաւ Իս- 10
րայէլումը մի մարդարէ Մովսէսի
պէս՝ որին Եհովան ճանաչէր ե-
րես առ երես. Այն բոլոր նշան- 11
ներովն ու հրաշքներովը, որ Ե-
հովան ուղարկեց նորան Եգիպ-
տոսի երկրումն անելու Փարաւօ-
նին և նորա ամեն ծառաներին
և նորա բոլոր երկրին, Եւ այն 12
բոլոր զօրաւոր ձեռքովը և բո-
լոր մեծ սոսկումովը, որ Մով-
սէսն արաւ բոլոր Իսրայէլի աչքի
առաջին։

ՅԵՍՈՒԻ ԳԻՐՔԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ եղաւ որ Տիրոջ ծառայ Մով-
սէսի մեռնելուց յետոյ Տէրը խօ-
սեց Մովսէսի սպասաւոր Նաւէի
2 որդի Յեսուի հետ ասելով. Իմ
ծառայ Մովսէսը մեռաւ. և հի-
մա վեր կաց անցիր այդ Յորդա-
նանովը դու և այս բոլոր ժողո-
վուրդը այն երկիրը, որ ես տա-
3 լիս եմ Իսրայէլի որդկանցը։ Բո-
լոր տեղերը, որ կոխեն ձեր ոտ-
քի թաթերը, ձեզ պիտի տամ,
ինչպէս որ Մովսէսին ասել եմ.
4 Անապատիցն և այս Լիբանանիցը
մինչև մեծ Գետը՝ այսինքն Եփ-
րատ գետը, Քետացիների բոլոր
երկիրը մինչև արևմտեան կողմի
մեծ ծովը ձեր սահմանը լինի։
5 Ոչ մի մարդ չ'կարողանայ քեզ
քո կեանքի բոլոր օրերումը դէմ
կանգնել. ինչպէս որ Մովսէսի
հետ էի, քեզ հետ կ'լինեմ. քեզ
չեմ թողիլ և քեզ անտես չեմ
6 անիլ։ Զօրացիր և քաջ եղիր.
որովհետև այս ժողովրդին դու
պիտի ժառանգեցնես այն երկի-
րը, որի համար սորանց հայրերին
երդում արի սորանց տալու հա-
7 մար։ Միայն թէ զօրացիր և շատ
քաջ եղիր, որ պահես և անես
այն ամեն օրէնքի պէս, որ իմ
ծառայ Մովսէսը քեզ պատուի-
րել է. նորանից չ'խոտորուես աջ
կամ ձախ, որ ամենումն էլ խե-
լամուտ լինես ուր որ գնում ես։
Այս օրէնքի գիրքը քո բերանիցը 8
չ'հեռանայ, այլ գիշեր և ցերեկ
նորա վերայ մտածես, որ պահես
և կատարես բոլոր նորա միջի
գրուածի պէս. որովհետև այն
ժամանակ ճանապարհները յաջո-
ղակ կ'անես, և այն ժամանակ
խելամուտ կ'լինես։ Ահա քեզ 9
պատուիրում եմ, զօրացիր և
քաջ եղիր, մի վախենար և մի
զարհուրիր. որովհետև քո Տէր
Աստուածը քեզ հետ է ամեն
տեղ ուր որ գնաս։
Եւ Յեսուն ժողովրդի ոստի- 10
կաններին պատուիրելով ասեց.
Բանակի միջովն անցկացէք, և 11
պատուիրեցէք ժողովրդին ասե-
լով. Ձեզ համար պաշար պատ-
րաստեցէք. որովհետև երեք օրից
յետոյ դուք այս Յորդանանովը
կ'անցնէք, որ գնաք ժառանգէք
այն երկիրը, որ ձեր Տէր Աստ-
ուածը ձեզ տալիս է իբրև ժա-
ռանգութիւն։
Եւ Յեսուն Ռուբէնեանների ու 12
Գադեանների և Մանասէի կէս
ցեղին հետ խօսեց և ասեց. Յի- 13
շեցէք այն խօսքը, որ Տիրոջ ծա-

ուայ Մովսէսը ձեզ պատուիրեց առնելով. Ձեր Տէր Աստուածը ձեզ հանգստացրեց, և այս երկիրը ձեզ տուաւ: Ձեր կնիկները, ձեր տղերքը և ձեր անասունները թող բնակուեն այն երկրում, որ Մովսէսը ձեզ տուաւ Յորդանանի այս կողմին. բայց դուք պատրաստուած ձեր եղբայրների առաջն անցէք՝ ամենքդ էլ զօրաւոր մարդիկ՝ և նորանց օգնութիւն արէք, Մինչև որ Տէրը ձեր եղբայրներին էլ ձեզ պէս հանգստացնէ, և նորանք էլ ժառանգեն այն երկիրը, որ ձեր Տէր Աստուածը կ'տայ նորանց, և ետ դառնէք ձեր ժառանգութեան երկիրը, և ժառանգեցէք այն, որ Տիրոջ ծառայ Մովսէսը ձեզ տուաւ Յորդանանի այս կողմին դէպի արևելք:

16 Եւ Յեսուին պատասխանեցին և ասեցին. Ամեն ինչ որ պատուիրեցիր՝ կ'անենք, և ուր որ մեզ ուղարկես՝ կ'գնանք: 17 Ինչպէս որ Մովսէսին էինք լսում, այնպէս էլ քեզ կ'լսենք. միայն թէ քո Տէր Աստուածը քեզ հետ լինի, ինչպէս որ Մեհսէսի հետ էր: 18 Ամեն ով որ քո հրամանին ընդդիմանայ և չլսէ քո ամեն խօսքերին, որ մեզ պատուիրես, պիտի սպանուի. միայն թէ զօրացիր և քաջ եղիր:

ԳԼ. Բ

1 Եւ Նաւէի որդի Յեսուն Սատիմից երկու մարդ ուղարկեց ծածկաբար երկիրը լրտեսելու համար, և ասեց. Գնացէք տեսէք այն երկիրը և Երիքովը. և նորանք գնացին և եկան Ռախաբ անունով մի պոռնիկ կնկայ տունը, և այնտեղ պառկեցին: 2 Եւ Երիքովի թագաւորինասուեցաւ թէ՝ Ահա այս գիշեր այստեղ մարդիկ են եկել Իսրայէլի որդիներից երկիրը լրտեսելու համար: 3 Եւ Երիքովի թագաւորը խրդ ուղարկեց Ռախաբի մօտ ասելով. Քեզ մօտ եկող և տունդ մտնող մարդիկը դուրս հանիր. որովհետև եկել են այս բոլոր երկիրը լրտեսելու համար: 4 Եւ կնիկն առաւ այն երկու մարդկանցը և թաքցրեց, և ասեց. Իրաւ այն մարդիկը եկան ինձ մօտ, բայց չիմացայ թէ որտեղից են նորանք. 5 եւ դռների փակելու ժամանակը մութն էր՝ այն մարդիկը դուրս եկան. և չգիտեմ ես այն մարդիկը ուր գնացին. շուտով նորանց հետիցը ընկէք, որ նորանց հասնէք: 6 Իսկ՝ ինքը նորանց վեր էր հանել կտուրը և թաքցրել քթանի եղէգներումը, որ իր կարի վերայ շարել էր. 7 եւ մարդիկը Յորդանանի ճանապարհովը մինչև անցքերը նորանց հետևից ընկան, և դուռը փակեցին՝ նորանց հետևից ընկողները դուրս գալուց յետոյ:

8 Եւ երբոր նորանք դեռ չէին պառկել, կնիկը վեր եկաւ կտուրը նորանց մօտ, 9 եւ ասեց այն մարդկանցը. Ես գիտեմ, որ Տէրը այս երկիրը ձեզ է տուել, և որ ձեր վախը մեր վերայ է ընկել, և որ ձեր պատճառով այս երկրի բոլոր բնակիչները հալուել են. 10 Որովհետև մենք լսեցինք, Թէ ինչպէս Տէրը կարմիր ծովի ջրերը ձեր առաջիցը ցամաքեցրեց ձեր Եգիպտոսիցը դուրս եկած ժամանակը. նաև ինչ որ դուք արիք Յորդանանի այն կողմին Ամորհացիների երկու թագաւորներին՝ Սեհոնին և Ովգին, որ *բնաջինջ արիք նորանց: 11 Եւ մենք լսել ենք, և մեր սիրտերը հալուել են, և ձեր երեսիցը մէկ մարդում համարձակութիւն չէ մնացել. որովհետև ձեր Եհովայ Աստուածն է Աստուած վերևում՝ երկնքի մէջ, և ներքևում՝ երկրիս վերայ: 12 Եւ հիմա աղաչում եմ, Տէրով երդուում արէք ինձ, որ ես ձեզ ողորմութիւն եմ արել, և դուք էլ ողորմութիւն կ'անէք իմ հօր տանը. և ինձ մի ճշմարիտ նշան տուէք, 13 Որ իմ հօրը, մօրը, իմ եղբայրներին, քոյրերին և բոլոր նորանց վերաբերեալներին ողջ կ'թողէք, և մեր անձը մահից կ'ազատէք:

14 Եւ այն մարդիկը նորան ասեցին. Եթէ այս մեր բանը չյայտանէք, այն ժամանակ թող ձեր տեղը մեր անձերը մեռնեն, և երբոր Տէրն այս երկիրը մեզ տայ, քեզ ողորմութիւն և հաւատարմութիւն կ'անենք: 15 Եւ նորանց մէկ չուանով պատուհանիցը ցած իջեցրեց. որովհետև նորա տունը բերդի պարսպի վերայ էր, և ինքը պարսպի վերայ էր բնակուած. 16 Եւ նորանց ասեց. Գնացէք սարը, մի գուցէ հալածողները ձեզ հանդիպեն. և այնտեղ երեք օր թաք կացէք, մինչև որ հալածողները ետ դառնան, և յետոյ ձեր ճանապարհը գնացէք: 17 Նապարհը գնացէք: Եւ այն մարդիկը նորան ասեցին. Մենք անպարտ կ'լինենք քո այդ երդումից որ մեզ տուել ես. 18 Երբոր մենք այս երկիրը մտնենք, դու այս կարմիր դերձանի չուանը այն պատուհանի վերայ կապես, որտեղից որ մեզ իջեցրիր. և քո հայրը, մայրը, եղբայրները և քո հօր բոլոր տունը քեզ մօտ այս տունը ժողովես. 19 Եւ ով որ քո տան դռնիցը դուրս գայ, նորա արիւնը իր գլխին. մենք անպարտ ենք. բայց քեզ մօտ այս տանը բոլոր եղողների արիւնը մեր գլխին, եթէ նորանց մէկ ձեռք դպչէ: 20 Եւ եթէ մեր այս բանը յայտնես, այն ժամանակ մենք անպարտ ենք քո մեզ տուած երդումիցը: 21 Եւ նա ասեց. Ձեր խօսքերի պէս լինի. և թողեց նորանց, և նորանք գնացին. և նա այն կարմիր չուանը կապեց պատուհանի վերայ:

22 Եւ նորանք գնացին և եկան դէպի սարը, և այնտեղ երեք օր նստեցին, մինչև որ հալածողները ետ դառան. և հալածողները նորանց որոնեցին ամեն ճանապարհ 23 Հուր, բայց չգտան: Այն ժամանակ այն երկու մարդիկը ետ դառան և ցած իջան սարիցը, և անցնելով Նաւէի որդի Յեսուի մօտ գնացին, և պատմեցին նորան բոլոր իրանց պատահած բանները. 24 Եւ Տէրն այն բոլոր երկիրը մեր ձեռքն է տուել, և այն երկրի բոլոր բնակիչները մեր երեսից հալուել են:

*կամ՝ նղովեցիք

ԳԼ. Գ

1 Եւ Յեսուն առաւօտանց վազ վեր կացաւ, և ինքը և բոլոր Իսրայէլի որդիքը չուեցին Սատիմից, և եկան մինչև Յորդանանը. և անցնելուց առաջ այնտեղ իջևան արին: 2 Եւ երեք օրից յետոյ ասպիկանները բանակի միջովն անցան: 3 Եւ ժողովրդին պատուիրեցին ասելով. Երբոր տեսնէք ձեր Տէր Աստուածոյ ուխտի տապանակը, և Ղևտացի քահանաներին նորան տանելիս, դուք ձեր տեղերիցը չուեցէք, և նորա ետևիցը գնացէք. 4 Բայց մի հեռաւորութիւն լինի ձեր և նորա մէջտեղում երկու հազար կանգուն չափ. նորան չմտնէք, որպէս զի իմանաք ձեր գնալու ճանապարհը. որովհետև այս ճանապարհովն անցած չէք երեկուանից և միւս օրուանից: 5 Եւ Յեսուն ասեց ժողովրդին. Սրբեցէք ձեր անձերը. որովհետև Տէրը գուցէ ձեր միջումը հրաշքներ է անելու: 6 Եւ Յեսուն ասեց քահանաներին. Թէ վեր առէք ուխտի տապանակը, և անցէք ժողովրդի առաջը: Եւ նորանք վեր առան ուխտի տապանակը. և գնացին ժողովրդի առաջիցը:

7 Եւ Տէրն ասեց Յեսուին. Այսօր կ'սկսեմ քեզ մեծացնել բոլոր Իսրայէլի աչքի առաջին, որ իմանան Թէ ինչպէս որ Մովսէսի հետ էի, քեզ հետ կ'լինեմ: 8 Եւ դու ուխտի տապանակը վեր առնող քահանաներին պատուիրիր ասելով. Երբոր Յորդանանի ջրի եզերքը հասնէք, Յորդանանումը կանգնեցէք:

9 Եւ Յեսուն ասեց Իսրայէլի որդիանցը. Մօտեցէք այստեղ, և ձեր Տէր Աստուածոյ խօսքերը լսեցէք: 10 Եւ Յեսուն ասեց. Սորանով կ'իմանաք, որ կենդանի Աստ-

ուածը ձեր մէջն է, և ձեր ա-
ռաջիցը հալածելով հալածելու
է Քանանացիներին, Քետացինե-
րին, Խևացիներին, Փերեզացինե-
րին, Գերգեսացիներին, Ամօրհա-
11 ցիներին և Յեբուսացիներին. Ահա
բոլոր երկրի Տիրոջ ուխտի տա-
պանակը ձեր առաջը կ'անցնէ'
12 Յորդանանի մէջ։ Եւ հիմա դուք
Իսրայէլի ցեղերիցը տասնևերկու
մարդ առէք, ամեն մէկ ցեղիցը
13 մէկ մարդ։ Եւ երբոր բոլոր երկ-
րի Տէր Եհովայի տապանակը վեր
առնող քահանաների ոտքերի
թաթերը Յորդանանի ջրի մէջ
մտնեն, Յորդանանի ջրերը կ'կըտ-
րուին, վերևիցն իջնող ջրերը
կարկառակոյտի պէս կ'կանգնեն։
14 Եւ երբոր ժողովուրդը Յորդա-
նանովն* անցնելու համար իրանց
վրաններիցը չուեցին, ուխտի տա-
պանակը վեր առնող քահանա-
15 ները ժողովրդի առաջին էին. Եւ
հէնց որ տապանակը վեր առնող-
ները մինչև Յորդանանը հասան
և տապանակը վեր առնող քա-
հանաների ոտքերը ջրի եզեր-
քի մէջ մխուեցան, (որովհետև
հունձքի բոլոր ժամանակը Յոր-
դանանը լիքն է լինում իր բոլոր
16 եզերքների վերայ,) Այն ժամա-
նակը վերևիցն իջնող ջրերը կանգ-
նեցին, և Սարդանի մօտ եղող
Ադամ քաղաքիցը շատ հեռու
մի կարկառակոյտի պէս բարձրա-
ցաւ. և դաշտի ծովը այսինքն
Աղի ծովը իջնող ջրերը վերջացան
կտրուեցան. և ժողովուրդը Երի-
17 քովի դէմ անցկացաւ։ Եւ Տիրոջ
ուխտի տապանակը վեր առնող
քահանաները Յորդանանի մէջ
ցամաքի վերայ հաստատ կանգ-
նեցին. և բոլոր Իսրայէլը ցամա-
քով անցկացաւ, մինչև որ բոլոր
ժողովուրդը Յորդանանովն անց-
նելը վերջացրեց։

ԳԼ. Դ

1 Եւ երբոր բոլոր ժողովուրդը
Յորդանանովն անցնելը վերջացրին,
Տէրը խօսեց Յեսուի հետ և ա-
2 սեց. Ժողովրդիցը դուք տասնև-
երկու մարդ առէք, ամեն մէկ
ցեղիցը մէկ մարդ, Եւ նորանց 3
պատուիրեցէք ասելով. Այստե-
ղից՝ Յորդանանի միջիցը՝ քահա-
նաների ոտքերի պինդ կացած տե-
ղիցը ձեզ համար տասնևերկու
քար վեր առէք, և ձեզ հետ
տարէք նորանց, և դրէք այն ի-
ջևանումը ուր որ այս գիշեր ի-
ջևան էք անելու։ Եւ Յեսուն 4
Իսրայէլի որդիներիցն իր որոշած
տասնևերկու մարդկանցը կանչեց,
ամեն մէկ ցեղիցը մէկ մարդ. Եւ 5
Յեսուն նորանց ասեց. Ձեր Տէր
Աստուծոյ տապանակի առաջին
անցէք Յոդանանի մէջ, և ամեն
մէկդ ձեր ուսերի վերայ մէկ
քար վեր առէք Իսրայէլի որդ-
կանց թիւին համեմատ. Որ սա 6
ձեր մէջ նշան լինի. որ երբոր է-
գուց ձեր որդիքը հարցնելու լի-
նեն և ասեն. Թէ Այս քարերը
ի՞նչ են ձեզ համար, Նորանց ա- 7
սէք. Որովհետև Տիրոջ ուխտի
տապանակի առաջիցը Յորդանա-
նի ջրերը կտրուեցան. երբոր նա
Յորդանանովն անցնում էր Յոր-
դանանի ջուրը կտրուեցաւ. և
այս քարերը Իսրայէլի որդկանց
մէջ յիշատակի համար լինեն յա-
ւիտեան։ Եւ Իսրայէլի որդիքն 8
այնպէս արին ինչպէս որ Յեսուն
պատուիրել էր. և Յորդանանի
միջիցը տասնևերկու քար վեր ա-
ռան, ինչպէս որ Տէրը Յեսուին
ասել էր Իսրայէլի որդկանց ցե-
ղերի թիւին համեմատ. և իրանց
հետ իջևանի տեղը տարին նո-
րանց և այնտեղ դրին։ Եւ Յե- 9
սուն ուրիշ տասնևերկու քարեր
կանգնեցրեց Յորդանանի մէջ,
ուխտի տապանակը վեր առնող
քահանաների ոտքերի կացած տե-
ղումը, և մինչև այս օրը այնտեղ
են։ Եւ տապանակը վեր առնող 10
քահանաները կանգնեցին Յորդա-
նանի մէջ մինչև որ վերջացաւ այն
բոլոր խօսքը, որ Տէրը Յեսուին
պատուիրեց ժողովրդին ասելու,
ինչպէս որ Մովսէսը բոլորը պատ-
ուիրել էր Յեսուին. և ժողովուր-
դը շտապելով անցաւ։ Եւ երբոր 11
բոլոր ժողովուրդը անցնելը վեր-

ջացրեց, այն ժամանակ Տիրոջ
տապանակը և քահանաները ժո-
ղովրդի առաջն անցան։
12 Եւ Ռուբենի որդիքը և Գադի
որդիքը և Մանասէի կէս ցեղը
սպառազինեալ Իսրայէլի որդ-
կանց առաջն անցան, ինչպէս որ
13 Մովսէսն ասել էր նորանց։ Քա-
ռասուն հազարի չափ պատրաս-
տուած զօրք Տիրոջ առաջն ան-
ցան պատերազմի համար Երիքո-
վի դաշտը։
14 Նոյն օրը Տէրը մեծացրեց Յե-
սուին Իսրայէլի աչքի առաջին,
և նորանից վախենում էին ինչ-
պէս վախեցել էին Մովսէսիցը,
նորա կեանքի բոլոր օրերումը։
15 Եւ Տէրը խօսեց Յեսուի հետ ա-
16 սելով. Պատուիրիր վկայութեան
տապանակը վեր առնող քահա-
նաներին, որ Յորդանանիցը դուրս
17 գան։ Եւ Յեսուն քահանաներին
հրամայեց և ասեց. Յորդանանի-
18 ցը վեր եկէք։ Եւ երբոր Տիրոջ
ուխտի տապանակը վեր առնող
քահանաները Յորդանանի միջիցը
վեր եկան, և քահանաների ոտ-
քերի թաթերը ցամաքի վերայ
կոխեցին, Յորդանանի ջրերը ի-
րանց տեղը դառան, և երէկուայ
ու միւս օրուայ պէս իրանց բո-
լոր եզերքների վերայ գնացին։
19 Եւ առաջին ամսի տասնին ժո-
ղովուրդը Յորդանանիցը դուրս
եկաւ, և բանակ տուաւ Գաղ-
գաղայի մէջ Երիքովի արևելեան
20 կողմում։ Եւ այն տասնևերկու
քարը որ վեր առան Յորդանանի-
ցը, Յեսուն Գաղգաղայի մէջ
21 կանգնեցրեց, Եւ ասեց Իսրայէլի
որդկանցը. Թէ Երբոր էգուց ձեր
որդիքն իրանց հայրերիցը հարցը-
նելու լինեն և ասեն. Այս ի՞նչ
22 քարեր են. Ձեր տղերանցը իմա-
ցընէք ասելով. Իսրայէլն այս Յոր-
դանանիցը ցամաքով անցկացաւ.
23 Որովհետև ձեր Տէր Աստուածը
ձեր առաջիցը Յորդանանի ջրերը
ցամաքեցրեց մինչև որ դուք ան-
ցաք, ինչպէս որ ձեր Տէր Աստ-
ուածը Կարմիր ծովումն էլ ա-
րաւ, որ ցամաքեցրեց մեր առա-
ջիցը մինչև որ մենք անցանք։
Որպէս զի երկրի բոլոր ազգերը 24
իմանան որ Տիրոջ ձեռքը զօրա-
ւոր է, և դուք ձեր Տէր Աստ-
ուածանիցը միշտ վախենաք։

ԳԼ. Ե

Եւ երբոր լսեցին Ամօրհացինե- 1
րի ամեն թագաւորները, որոնք
Յորդանանի այս արևմտեան կող-
մումն էին, և Քանանացիների ա-
մեն թագաւորները, որոնք ծո-
վեզերքի մօտ էին, թէ Տէրը ցա-
մաքեցրեց Յորդանանի ջրերը Իս-
րայէլի որդկանց առաջիցը մինչև
նորանց անցնելը, այն ժամանակ
նորանց սիրտը հալուեցաւ, և նո-
րանցում հոգի չ'մնաց Իսրայէլի
որդկանց առաջին։
Այն ժամանակ Տէրը Յեսուին 2
ասեց. Քեզ համար սուր դա-
նակներ շինիր, և դարձիր Իսրա-
յէլի որդկանցը կրկին թլփատիր։
Եւ Յեսուն իր համար սուր դա- 3
նակներ շինեց և Իսրայէլի որդ-
կանցը թլփատեց *Գիբաթհաա-
բալօթումը։ Եւ այս է պատճա- 4
ռը, որի համար Յեսուն թլփա-
տեց նորանց. Եգիպտոսիցը դուրս
եկած բոլոր ժողովրդի արուները՝
ամեն պատերազմող մարդիկը Ե-
գիպտոսիցը դուրս գալուց յետոյ
անապատումը ճանապարհին մե-
ռան։ Եւ բոլոր դուրս եկած ժո- 5
ղովուրդը թլփատուած էր. բայց
Եգիպտոսիցը դուրս գալուց յե-
տոյ անապատումը ճանապարհին
ծնուած բոլոր ժողովրդին չ'թլ-
փատեցին։ Որովհետև Իսրայէլի 6
որդիքը քառասուն տարի անա-
պատումը շրջեցին, մինչև որ բո-
լոր ազգը այսինքն Եգիպտոսիցը
դուրս եկած պատերազմական
մարդիկը սպառուեցան. որ Տիրոջ
խօսքին չէին լսել, որովհետև Տէ-
րը նորանց երդում արաւ, որ
նորանց բնաւ ցոյց չ'տայ այն եր-
կիրը, որ Տէրը նորանց հայրերին
երդում էր արել որ մեզ տայ մի
երկիր որ կաթ և մեղր է բըղ-
խում։ Եւ նորանց տեղումը նո- 7

*Անթլփատների բլուր։

բանց զաւակներին կանգնեցրեց. և Յեսուն թլփատեց նորանց. որովհետև անթլփատ էին, քանի որ ճանապարհին չէին թլփատել նորանց: Եւ երբոր բոլոր ժողովրդի թլփատութիւը վերջացաւ, մնացին բանակումն իրանց տեղը մինչև որ առողջացան: Եւ Տէրը Յեսուին ասեց. Այսօր *վեր առայ Եգիպտոսի նախատինքը ձեր վերայիցը և այն տեղի անունը մինչև այսօր Գաղգաղա կոչեցին: Եւ Իսրայէլի որդիքը բանակ արին Գաղգաղայում, և զատիկն արին ամսի տասնևչորսերորդ օրը իրիկնադէմին՝ Երիքովի դաշտերում: Եւ զաւակի հետևեալ օրն այն երկրի պտղիցը բաղարջ և հեղի կերան՝ հէնց նոյն օրը: Եւ հետևեալ օրը երբոր այն երկրի պտղիցը կերան, մանանան դադարեց, և նորանից յետոյ Իսրայէլի որդկանց համար այլ ևս մանանայ չկար. և այն տարին Քանանի երկրի արդիւնքիցը կերան:

Եւ երբոր Յեսուն Երիքով էր, իր աչքերը բարձրացրեց և տեսաւ, որ ահա իր դիմացը մէկ մարդ էր կանգնել, և նորա ձեռքին մի մերկ սուր. և Յեսուն նորան մօտեցաւ և նորան ասեց. Մե՞զանի՞ց ես դու, թէ մեր թշնամիներիցը: Եւ նա ասեց. Ոչ, այլ ես Տիրոջ զօրավարն եմ, և հիմա եկայ: Եւ Յեսուն իր երեսի վերայ գետինն բնկաւ և երկրպագութիւն արաւ, և նորան ասեց. Ի՞նչ է հրամայում իմ Տէրն իր ծառային: Եւ Տիրոջ զօրավարը Յեսուին ասեց. Ոտքերիդ կօշիկները դո՛ր հանիր, որովհետև քո կանգնած տեղը սուրբ է. և Յեսուն այնպէս արաւ:

Գլ. Զ

1 Եւ Երիքովը Իսրայէլի որդկանց առաջին ամուր կերպով փակուած էր. դուրս եկող և մտնող
2 չկար: Եւ Տէրը Յեսուին ասեց. Տես՝ ես քո ձեռքն եմ տուել

*Գլորեցի

Երիքովը և նորա թագաւորին՝ զօրաւոր քաջերին: Եւ դուք ամեն պատերազմական մարդիկդ քաղաքը շրջապատեցէք մէկ անգամ քաղաքի շուրջը պտոյտ տալով. վեց օր այպէս անես: Եւ եօթը քահանաներ եօթը Յոբելեան փողերն առնեն տապանակի առաջին. և եօթներորդ օրը քաղաքի շուրջը եօթն անգամ պտոյտ տաք, և քահանաները փողերը հնչեցնեն: Եւ երբոր Յոբելեան եղջիւրները հնչեցնեն, և դուք փողերի ձայնը լսէք, բոլոր ժողովուրդը մեծ աղաղակով աղաղակէ. և քաղաքի պարիսպները վայր կ'ընկնեն. և ժողովուրդը վեր գնայ ամեն մէկն ուղիղ իր առաջուն:

Եւ Նաւէի որդի Յեսուն քահանաներին կանչեց և նորանց ասեց. Վեր առէք ուխտի տապանակը, և եօթը քահանայ եօթը Յոբելեան փողեր առնեն Տիրոջ տապանակի առաջին: Եւ ժողովրդին ասեց. Անցէք և քաղաքը շրջապատեցէք, և զինուորները Տիրոջ տապանակի առաջն անցնեն: Եւ երբոր Յեսուն ժողովրդին ասեց, եօթը քահանաները որ եօթը Յոբելեան փողերն ուներին, Տիրոջ առաջն անցնելով փողերը հնչեցրին, և Տիրոջ ուխտի տապանակը գնում էր նորանց հետևից:

Եւ զինուորները գնում էին փողերը հնչեցնող քահանաների առաջիցը, իսկ վերջապահները տապանակի հետիցը. և գնում ու փողերը հնչեցնում էին: Եւ Յեսուն ժողովրդին պատուիրեց ասելով. Աղաղակ մի հանէք, և ձեր ձայնը չլսուի, և ձեր բերանիցը մի խօսք դուրս չգայ մինչև այն օրը որ ես ձեզ ասեմ. Թէ Աղաղակեցէք. այն ժամանակ աղաղակեցէք: Եւ Տիրոջ տապանակը քաղաքի բոլորքովը գնաց մէկ անգամ պտոյտ տալով, և եկան բանակը. և դիշերը բանակումն մնացին:

Եւ Յեսուն առաւօտանց կանուխ վեր կացաւ, և քահանաները

*Գլորեցին

րը վեր առան Տիրոջ տապանակը:
13 Եւ այն եօթը Յոբելեան փողերը կրող եօթը քահանաները գնում էին Տիրոջ տապանակի առաջում փողերը հնչեցնելով. և զինուորները գնում էին նորանց առաջիցը, և վերջապահներն էլ գնում էին Տիրոջ տապանակի հետիցը, ու փողերը հնչեցնում էին:
14 Եւ երկրորդ օրն էլ քաղաքի շուրջը մէկ անգամ պտոյտ տուին և ետ դառան բանակը. այսպէս արին վեց օր:
15 Եւ եօթներորդ օրը կանուխ վեր կացան արշալոյսը ծագելիս, և քաղաքի շուրջը եօթն անգամ պտոյտ տուին նոյն կերպով. միայն թէ այն օրը եօթն անգամ պտոյտ տուին քաղաքի շուրջը:
16 Եւ եօթներորդ անգամին եղաւ երբոր քահանաները փողերը հնչեցրին, Յեսուն ժողովրդին ասեց. Աղաղակեցէք. որովհետև Տէրն այս քաղաքը ձեզ է տուել:
17 Եւ քաղաքը և բոլոր նորանում եղածը Տիրոջ համար նզովուած լինի, միայն Ռախաբ պոռնիկը ողջ մնայ. ինքը և իր հետ իր տան մէջ բոլոր եղողները, որովհետև մեր ուղարկած լրտեսներին թաքցրեց:
18 Բայց դուք զգուշանաք նզովուածիցը. մի գուցե որ նզովք բերէք նզովուածիցը առնելով, և Իսրայէլի բանակը նզովքի մէջ դնէք և նորանց փորձանքի հանդիպեցնէք:
19 Եւ բոլոր արծաթն ու ոսկին և պղնձի ու երկաթի ամանները Տիրոջ համար սուրբ լինեն. Տիրոջ գանձը մտնեն:
20 Եւ ժողովուրդը աղաղակեց փողերը հնչեցնելիս. և երբոր ժողովուրդը փողերի ձայնը լսեց, և ժողովուրդը բարձրաձայն աղաղակեց, պարիսպները վայր ընկան. և ժողովուրդը վեր եկաւ քաղաքը ամեն մէկը ուղիղ իր առաջ
21 և քաղաքն առան. Եւ քաղաքումը եղող բոլոր թէ այր և թէ կին, երիտասարդ և ծեր, արջառ, ոչխար և էշ սուրի բերանով
22 նզովեցին *կատարտեցին: Եւ Յեսուն

*Կամ՝ նզովեցին

ասեց այն երկիրը լրտեսող երկու մարդկանցը. Գնացէք այն պոռնիկ կնկայ տունը և հանեցէք այնտեղից այն կնկան և նորա ամեն ունեցածը, ինչպես որ նորան երդում արիք: Եւ այն լրտես երիտասարդները գնացին, և հանեցին Ռախաբին և նորա հօրը և մօրը և եղբայրներին և նորա ամեն ունեցածը, և նորա բոլոր ազգատոհմն էլ հանեցին. և նորանց կանգնեցրին Իսրայէլի բանակիցը դուրս: Եւ քաղաքն այրեցին կրակով և բոլոր նորա մէջ եղածը միայն արծաթն ու ոսկին և պղնձի ու երկաթի ամանները Տիրոջ տան գանձի մէջ դրին:
25 Այսպէս Յեսուն ողջ պահեց պոռնիկ Ռախաբին և նորա հօր տունը և նորա ամեն ունեցածը, և նա Իսրայէլի մէջ բնակուեց մինչև այսօր. որովհետև նա թաքցրեց այն լրտեսներին, որոնց Յեսուն ուղարկել էր Երիքովը լրտեսելու համար:
26 Եւ Յեսուն երդում արաւ այն ժամանակ ասելով. Անիծեալ լինի Տիրոջ առաջին այն մարդը, որ վեր կենայ շինէ այս Երիքով քաղաքը. իր անդրանիկովը նորա հիմերը դնէ, և իր կրտսերովը նորա դռները կանգնեցնէ:
27 Եւ Տէրը Յեսուին հետ էր. և նորա համբաւը տարածուեցաւ բոլոր երկրի մէջ:

Գլ. Է

1 Բայց Իսրայէլի որդիքը յանցանք գործեցին նզովքի վերայ. որովհետև Յուդայի ցեղիցը Զարայի որդի Զաբդիի որդի Քարմիի որդի՝ Աքարը նզովածիցն առաւ. և Տիրոջ բարկութիւնը բորբոքուեցաւ Իսրայէլի որդկանց վերայ:
2 Եւ Յեսուն երիքովիցը մարդիկ ուղարկեց դէպի Գայի, որ Բեթաւանի մօտ է Բեթէլի արևելեան կողմին, և ասեց նորանց. Թէ վեր գնացէք և այն երկիրը լրտեսեցէք. և այն մարդիկը վեր գնացին և Գային լրտեսեցին: Եւ
3 ետ դառան Յեսուի մօտ և ասե-

ցին նորան. Բոլոր ժողովուրդը
վեր չ'գնայ. Փայն երկու կամ ե-
րեք հազար մարդի չափ վեր գը-
նան, և Գային կ'զարկեն. բոլոր
ժողովրդին մի աշխատեցնիր այն-
տեղ տանելով, որովհետև նո-
4 րանք քիչ են։ Եւ ժողովրդիցը
երեք հազարի չափ մարդ վեր
գնացին այնտեղ. բայց Գայիի
5 մարդկանց առաջիցը փախան։ Եւ
Գայիի մարդիկը նորանցից երե-
սունևվեց մարդի չափ զարկեցին,
և նորանց հալածեցին դռանը ա-
ռաջից մինչև Սեբարիմ, և զա-
ռիվայրի վերայ նորանց զարկե-
ցին. և ժողովրդի սիրտը հալուե-
ցաւ և ջուր դառաւ։
6 Եւ Յեսուն իր հանդերձները
պատառեց Տիրոջ տապանակի ա-
ռաջին և իր երեսի վերայ վայր
ընկաւ գետինը մինչև իրիկուն,
ինքը և Իսրայէլի ծերերը, և ի-
րանց գլխի վերայ հող ցանեցին։
7 Եւ Յեսուն ասեց. Ոհ, Տէր Եհո-
վայ, ի՞նչու համար այս ժողո-
վուրդը Յորդանանի այս կողմն
անցկացրիր, որ մեզ Ամօրհացի-
ների ձեռքը մատնես, և մեզ
կորցնես. երանի թէ Յորդանանի
այն կողմին գոհ լինելով մնայինք։
8 Աղաչում եմ, Տէր, ես ի՞նչ ա-
սեմ՝ Իսրայէլն իր թշնամիների
առաջին մէջք դարձնելուց յե-
9 տոյ։ Որովհետև Քանանացիները
և երկրի բոլոր բնակիչները լսե-
լով մեզ կ'պաշարեն, և մեր ա-
նունը երկրիս վերայից բոլորովին
կ'կտրեն. այն ժամանակ ի՞նչ պի-
տի անես քո մեծ անունը։
10 Եւ Տէրը Յեսուին ասեց. Վեր
կաց. ի՞նչու համար այսպէս երե-
11 սիդ վերայ ես ընկել։ Իսրայէլը
մեղք գործեց և զանց արին իմ
ուխտը որ պատուիրեցի նորանց,
որովհետև վեր են առել նզովա-
ծիցը, և գողացել են, և սուտ
են խօսել, ու նաև իրանց կա-
12 բասիքներումն են դրել։ Եւ Իս-
րայէլի որդիքը չեն կարող իրանց
թշնամիների առաջին կանգնել.
նորանք իրանց թշնամիների ա-
ռաջին մէջք կ'դարձնեն, որով-
հետև նզովք են եղել. և այլ ևս
ձեզ հետ չեմ լինիլ, եթէ դուք
նզովուածը ձեր միջիցը բնաջինջ
չ'անէք։ Վեր կաց ժողովրդին 13
սրբիր և ասիր. Էգուցվայ համար
սրբուեցէք. որովհետև Իսրայէլի
Տէր Աստուածն այսպէս է ասում.
Ով Իսրայէլ, ձեր մէջը նզովք
կայ. դու չես կարող կանգնիլ
քո թշնամիների առաջին, մինչև
որ նզովքը ձեր միջիցը վեր չ'առ-
նէք։ Եւ առաւօտանց ձեր ցե- 14
ղերովը մօտեցէք, և Տէրը ո'ր ցե-
ղին որ վիճակով բռնելու լինի, նա
մօտենայ իր ազգատոհմներովը. և
Տէրը ո'ր ազգատոհմին որ բռ-
նելու լինի, նա մօտենայ իր տու-
ներովը, և Տէրը ո'ր տունը որ
բռնելու լինի, նա մօտենայ իր
մարդիկներովը։ Եւ ով որ նզով- 15
քով բռնուի, նա կրակով պիտի
այրուի, ինքը և իր ամեն ունե-
ցածը. որովհետև նա Եհովայի
ուխտը զանց է արել և Իսրայէլի
մէջ անզգամութիւն է գործել։
Եւ Յեսուն առաւօտանց վաղ 16
վեր կացաւ, և Իսրայէլին մօտե-
ցրեց իր ցեղերովը. և Յուդայի
ցեղը բռնուեցաւ։ Եւ Յուդայի 17
ազգատոհմները մօտեցրեց, Զա-
րայեանց ազգատոհմը բռնուե-
ցաւ. և Զարայեանց տոհմն իր
մարդիկներովը մօտեցրեց, և Զաբ-
դին բռնուեցաւ. Եւ նորա տունն 18
իր մարդիկներովը մօտեցրեց, Յու-
դայի ցեղիցը Զարայի որդիի Զաբ-
դիի որդիի Քարմիի որդին Աքա-
րը բռնուեցաւ։ Եւ Յեսուն Աքա- 19
րին ասեց. Որդիս, հիմա Իսրա-
յէլի Տէր Աստուծուն փառք
տուր, և նորան խոստովանիր, և
քո արածը հիմա ինձ յայտնիր,
ինձանից մի ծածկիր։ Եւ Աքա- 20
րը պատասխանեց Յեսուին և ա-
սեց. Իրաւ՝ ես Իսրայէլի Տէր Ա-
ստուծոյ դէմ մեղք գործեցի, և
այսպէս ու այսպէս արի. Այսին- 21
քըն աւարի մէջ մէկ լաւ Սենէ-
արի վերարկու, և երկու հարիւր
սիկղ արծաթ, և յիսուն սիկղի
ծանրութեամբ մէկ ոսկի լեզու
տեսայ, և նորանց ցանկանալով
առայ. և ահա նորանք իմ վրանի
մէջ հողումը թաքցրուած են, և

22 արծաթը նորա տակին է։ Եւ
Յեսուն լրաբերներ ուղարկեց. և
նորանք վազեցին վրանը. և ահա
վրանի մէջ պահուած էր այն, և
23 արծաթը նորա տակին էր։ Եւ
նորանք վեր առան վրանի միջիցը
և բերին Յեսուի և բոլոր Իսրա-
յէլի որդկանց մօտ, և Տիրոջ
առաջին դրին նորանք։
24 Եւ Յեսուն առաւ Զարայեան
Աքարին և այն արծաթը և վե-
րարկուն և ոսկի լեզուն և նորա
տղերքը, աղջկերքը, նորա ար-
ջառները, էշերը, ոչխարները,
վրանը և նորա ամեն բանը, և
բոլոր Իսրայէլը նորա հետ և նո-
րանց գուրս հանեցին Աքովրի
25 ձորը։ Եւ Յեսուն ասեց. Ի՞նչու
համար դու մեզ փորձանքի մէջ
գցեցիր. Տէրը այսօր քեզ փոր-
ձանքի մէջ գցէ. և բոլոր Իսրա-
յէլը նորան քարերով քարկոծե-
ցին և նորանց քարերով քարկո-
ծելուց յետոյ կրակով այրեցին։
26 Եւ նորա վերայ մէկ մեծ քարա-
կոյտ դիզեցին, որ կայ մինչև այս
օրը։ Եւ Տէրն իր սաստիկ բար-
կութիւնիցը դագարեց. այս պատ-
ճառով այն տեղի անունը Աքովրի
ձոր ասուեցաւ մինչև այս օրը։

ԳԼ. Ը

1 Եւ Տէրը Յեսուին ասեց. Մի
վախենար և մի զարհուրիր. առ
բոլոր պատերազմող մարդկանցը
քեզ հետ և վեր կաց գնա վեր
դէպի Գայի. ահա Գայիի թա-
գաւորը և նորա ժողովուրդը և
նորա քաղաքը և նորա երկիրը
2 քո ձեռքը տուի։ Եւ Գայիին և
նորա թագաւորին այնպէս անես
ինչպէս որ արիր Երիքովին և նո-
րա թագաւորին, միայն թէ նո-
րա աւարը և անասունները ձեզ
համար առնէք։ Քաղաքի ետևի
կողմիցը դարաններ պատրաստես։
3 Եւ Յեսուն և բոլոր պատերազ-
մող մարդիկը վեր կացան, որ
Գայիի վերայ գնան, և Յեսուն
երեսուն հազար զօրաւոր մարդ
ընտրեց, և գիշերով ուղարկեց
4 նորանց։ Եւ նորանց պատուիրեց
ասելով. Նայեցէք դուք քաղա-
քի ետևիցն այն քաղաքի համար
դարանում պիտի նստէք. քա-
ղաքիցը շատ մի հեռանաք, և
ամենքդ պատրաստ կացէք. Եւ 5
ես և իմ հետ եղող բոլոր ժողո-
վուրդը քաղաքին կ'մօտենանք. և
երբոր նորանք առաջին անգամի
պէս մեզ դէմ դուրս գան, նո-
րանց առաջիցը պիտի փախչենք.
Եւ նորանք մեր ետևիցը դուրս 6
կ'գան, մինչև որ նորանց քաղա-
քիցը բաժանենք. որովհետև նո-
րանք ասելու են. Թէ Մեր ա-
ռաջիցը փախչում են առաջին
անգամի պէս. և մենք նորանց
առաջիցը փախչելու ենք։ Բայց 7
դուք դարանից դուրս եկէք և
քաղաքն առէք, որովհետև ձեր
Տէր Աստուածը նորան ձեր ձեռ-
քը կ'տայ։ Եւ երբոր քաղաքն 8
առնէք, քաղաքը կրակով այրէք.
Տիրոջ ասածին պէս անէք. ահա
ձեզ պատուիրեցի։ Եւ Յեսուն 9
նորանց ուղարկեց, և նորանք գը-
նացին դարանում նստեցին Բե-
թէլի և Գայիի մէջտեղում, Գա-
յիի արևմտեան կողմիցը. և Յե-
սուն այն գիշերը ժողովրդի մէջ
մնաց։
Եւ Յեսուն առաւօտանց վաղ 10
վեր կացաւ և ժողովրդին հան-
գէս արաւ, և ինքն Իսրայէլի ծե-
րերի հետ ժողովրդի առաջիցը
դէպի Գայի գնաց. Եւ նորա հետ 11
եղող բոլոր պատերազմական մար-
դիկն էլ վեր կացան և մօտենա-
լով գնացին քաղաքի առաջը և
բանակ տուին Գայիի հիւսիսային
կողմումը. և նորանց ու Գայիի
մէջտեղը մէկ ձոր կար։ Եւ հինգ 12
հազարի չափ մարդ առաւ, և
նորանց դարանի մէջ նստեցրեց
Բեթէլի և Գայիի մէջտեղումը՝
քաղաքի արևմտեան կողմին։ Եւ 13
ժողովուրդը քաղաքի հիւսիսա-
յին կողմումը դրին բոլոր բանա-
կը, և դարանը քաղաքի արևմտա-
եան կողմումը. և Յեսուն այն
գիշերը ձորի մէջը գնաց։
Եւ երբոր Գայիի թագաւորը 14
այս տեսաւ, շուտով կանուխ
վեր կացան և դուրս գնացին այն

քաղաքի մարդիկը, ինքը և իր
բոլոր ժողովուրդը որոշ ժամա-
նակով դաշտի վերայ պատերազ-
մելու Իսրայէլի դէմ, բայց ինքը
չ'գիտէր թէ քաղաքի եաևիցն իր
15 համար դարան կար։ Եւ Յեսուն
ու բոլոր Իսրայէլն իրանց նորանց
առաջին զարկուածի պէս ցոյց
առին և անապատի ճանապար-
16 հովը փախան։ Եւ քաղաքումն
եղող բոլոր ժողովուրդը ժողով-
ուեցաւ, որ նորանց հալածէն, և
Յեսուի եաևիցն ընկնելով քա-
17 ղաքիցը բաժանուեցան։ Եւ Գա-
յիում ու Բեթէլում մարդ չը
մնաց, որ Իսրայէլի եաևիցը դուրս
եկած չ'լինէր. և քաղաքը թող-
ցին բաց ու Իսրայէլին հալածեցին։
18 Եւ Տէրը Յեսուին ասեց. Զեռ-
քիդ նիզակը մեկնիր դէպի Գայի,
որովհետև ես քո ձեռքն եմ
տուել այն. և Յեսուն իր ձեռքի
նիզակը մեկնեց դէպի քաղաքը։
19 Եւ դարանակալները շուտով ի-
րանց տեղիցը վեր կացան. և հէնց
որ նա իր ձեռքը մեկնել էր, վա-
զեցին քաղաքը մտան և առան
նորան, և շուտով քաղաքը կրա-
20 կով վառեցին։ Եւ Գայիի բնա-
կիչները դէպի եաևէ դառան և
տեսան, որ ահա քաղաքի ծուխը
մինչև երկինքն էր վեր ելել. և
նորանք այս կամ այն կողմ փախ-
չելու կարողութիւն չ'ունեցին. և
դէպի անապատը փախչող ժողո-
վուրդն էլ հալածողների վերայ
21 դառաւ։ Եւ Յեսուն և բոլոր Ի-
սրայէլը երբոր տեսան, որ դարա-
նակալները քաղաքն առան, և
որ քաղաքի ծուխը վեր էր ելել,
իրանք էլ ետ դառան և Գայիի
22 մարդկանցը զարկեցին։ Եւ նո-
րանք էլ քաղաքիցը նորանց դէմ
դուրս եկան, և Իսրայէլի մէջ-
տեղումը մնացին՝ սորանք այս
կողմից և նորանք այն կողմից. և
նորանց զարկեցին մինչև որ նո-
րանցից մի մարդ ողջ չ'մնաց և
23 չ'ազատուեցաւ։ Եւ Գայիի թա-
գաւորին ողջ բռնեցին, և նորան
Յեսուի մօտ բերին։
24 Եւ երբոր Իսրայէլացիք Գայիի
բոլոր բնակիչներին որ հալածել
էին նորանց դաշտումը ու անա-
պատումը՝ ջարդեցին, և նորանց
ամենքը սուրի բերանով բնկան
մինչև որ վերջացան, բոլոր Ի-
սրայէլացիք ետ դառան Գայի և
նորան սուրի բերանով զարկեցին։
25 Եւ այն օրն բնկածների ամենը
թէ մարդ և թէ կին, տասնևեր-
կու հազար էր, այսինքն Գայիի
բոլոր մարդիկը։ 26 Եւ Յեսուն նե-
զակով մեկնած ձեռքը ետ չ'քա-
շեց, մինչև որ Գայիի բոլոր բնա-
կիչներին *բնաջինջ արաւ։ 27 Միայն
թէ Իսրայէլացիք անասուններն
ու քաղաքի աւարն իրանց հա-
մար առան Տիրոջ խօսքին համե-
մատ, որ պատուիրել էր Յե-
սուին։ 28 Եւ Յեսուն Գային այրեց,
և նորան մշտնջենաւոր աւերակ-
ների դէզ արաւ մինչև այս օրը։
29 Եւ Գայիի թագաւորին կախեց
ծառիցը մինչև իրիկուն. և արևը
մտնելիս Յեսուն հրամայեց, որ
նորա մեռած մարմինը ծառիցը
վայր իջեցնեն. քաղաքի դուռն
առաջը գցեցին նորան, և նորա
վերայ մի մեծ քարակոյտ դիզե-
ցին, որ մինչև այսօր կայ։

30 Այն ժամանակ Յեսուն Իսրա-
յէլի Տէր Աստուծոյ համար մի
սեղան շինեց Գեբաղ սարի վերայ,
31 ինչպէս որ Տիրոջ ծառայ Մով-
սէսը Իսրայէլի որդիկանցը պատ-
ուիրել էր Մովսէսի օրէնքի գրքի
մէջ գրուածին պէս այս սեղանը
ամբողջ քարերից էր, որոնց վե-
րայ երկաթ չէր դիպած, և նո-
րա վերայ Տիրոջ համար ողջա-
կէզները մատուցին ու խաղաղա-
32 թեան զոհեր զոհեցին։ Եւ այն-
տեղ այն քարերի վերայ գրեց
Մովսէսի օրէնքի օրինակը, որ
Իսրայէլի որդկանց առաջին գրեց։
33 Եւ բոլոր Իսրայէլը և նորանց ծե-
րերը և ոստիկանները և դատա-
ւորները կանգնել էին տապանա-
կի այս և այն կողմից Տիրոջ ու-
խտի տապանակը վեր առնող Ղե-
ւտացի քահանաների առաջին, թէ
օտարականը և թէ բնակը. կէսը
Գարիզին սարի կողմին և կէսը

*կամ՝ նղովեց։

Գեբաղ սարի կողմին՝ ինչպէս որ
Տիրոջ ծառայ Մովսէսը պատուի-
րել էր, որ առաջ Իսրայէլի ժո-
34 ղովրդին օրհնեն։ Եւ սորանից
յետոյ կարդաց օրէնքի բոլոր խօս-
քերը՝ օրհնութիւնները և ա-
նէծքները, ինչ որ գրուած էր օ-
35 րէնքի գրքի մէջ։ Մովսէսի բոլոր
պատուիրածներից բնաւ մի խօսք
չ'մնաց, որ Յեսուն չ'կարդար Ի-
սրայէլի բոլոր ժողովքի առաջին
և կանանց և տղերանց և նո-
րանց մէջ գնացող օտարականի
առաջին։

ԳԼ. Թ

1 Եւ երբոր Յորդանանի այս կող-
մի բոլոր թագաւորները, որ
սարի վերայ, դաշտի վերայ և
Մեծ ծովի բոլոր եղերքումն մին-
չև Լիբանանի դէմ [illegible] էին,
այսինքն Քետացիները, Ամորհա-
ցիները, Քանանացիները, Փերե-
զացիները, Եւեացիները ու Յե-
2 բուսացիները լսեցին, Միաբա-
նութեամբ ժողովուեցան, որ Յե-
սուի և Իսրայէլի դէմ պատե-
րազմեն։
3 Բայց Գաբաւօնի բնակիչները
լսեցին ինչ որ Յեսուն Երիքովին
4 և Գայիին արել էր, Եւ իրանք
էլ խորամանկութիւն բանեցրին.
գնացին պաշարներ պատրաստե-
ցին, և իրանց էշերի վերայ հին
քուրձեր և հին պատառոտած և
կարկատած գինի տիկեր դրին,
5 Եւ իրանց ոտքերին հինացած և
կարկատած տրեխներ, և հին շո-
րեր իրանց վերայ [illegible]. և նո-
6 րանց պաշարի բոլոր հացը չորա-
ցած բորբոսնած էր. Եւ գնացին
բանակը՝ Յեսուի մօտ Գաղգա-
ղայումը՝ և ասեցին նորան և Ի-
սրայէլի մարդկանցը. Մենք հեռու
երկրից ենք գալիս. ուստի հիմա
7 մեզ հետ դաշինք դրեք։ Այն
ժամանակ Իսրայէլի մարդիկն այն
Եւեացիներին ասեցին. Գուցե
դուք մեր մէջ բնակող էք, և
ձեզ հետ ի՞նչպէս դաշինք դնենք։
8 Բայց նորանք ասեցին Յեսուին.
Մենք քո ծառաներն ենք. և Յե-
սուն նորանց ասեց. Դուք ո՞վ էք,
և ո՞րտեղից էք գալիս։ Եւ նո- 9
րան ասեցին. Քո ծառաները շատ
հեռու երկրից ենք գալիս քո Ե-
հովայ Աստուծոյ անունի համար,
որովհետև նորա համբաւը և ե-
ղիպտոսի մէջ բոլոր արածները
լսեցինք։ Ու նաև ամեն ինչ որ 10
արաւ Յորդանանի այն կողմին
Ամորհացիների երկու թագաւոր-
ներին՝ Եսբոնի Սեհոն թագա-
ւորին և Աստարովթումը Բաս-
նի Ովգ թագաւորին. Եւ մեր ծե- 11
րերն ու մեր երկրի բոլոր բնա-
կիչները մեզ ասեցին, թէ ձեր
ձեռքը ճանապարհի համար պա-
շար առէք, և գնացէք նորանց
դիմաւորելու և նորանց ասեցէք.
Մենք ձեր ծառաներն ենք. Հիմա
մեզ հետ դաշինք դրէք։ Այս 12
մեր հացերը տաք էին, որ մենք
պաշար վեր առանք մեր տներիցն
այն օրը որ դուրս եկանք ձեզ
մօտ գալու, և ահա հիմա նո-
րանք չորացած և բորբոսնած են։
Եւ այս գինիի տիկերը նոր էին, 13
երբոր լցրինք, բայց ահա պա-
տառոտած են. և մեր այս հան-
դերձները և տրեխները ճանա-
պարհի շատ երկայնութեան հա-
մար հինացան։ Եւ մարդիկը վեր 14
առան նորանց այն պաշարի պատ-
ճառով, իսկ Տիրոջը չ'հարցրին։
Եւ Յեսուն նորանց հետ խաղա- 15
ղութիւն արաւ, և նորանց հետ
ուխտ դրաւ որ նորանց ողջ պա-
հէ. և ժողովքի իշխաններն էլ
երդուեցին նորանց։
Եւ նորանց հետ դաշինք դնե- 16
լուց երեք օր յետոյ լսեցին, որ
նորանք իրանց դրացիներն են, և
իրանց մէջ են բնակվում։ Եւ 17
Իսրայէլի որդիքը չուեցին և եր-
րորդ օրը նորանց քաղաքները ե-
կան, և նորանց քաղաքներն էին՝
Գաբաւօն, Կեփիրա, Բերովթ և
Կարիաթարիմ։ Եւ Իսրայէլի որ- 18
դիքը նորանց չ'զարկեցին, որով-
հետև ժողովքի իշխանները Ի-
սրայէլի Տէր Աստուծովը նորանց
երդուեցին. բայց բոլոր
ժողովքը արտնջեցին իշխանների
դէմ։

49 Եւ իշխանների ամենքը բոլոր ժողովքին ասեցին. Մենք խոստացեալ Տէր Աստուածով նորանց երդում արինք, և հիմա չենք կարող նորանց դպչել։ Նորանց այսպէս անենք՝ այսօրիկն նորանց ողջ թողնենք, որ մեզ վերայ բարկութիւն չ'գայ այն երդումի համար
21 որ մենք արինք նորանց։ Եւ իշխաններն ասեցին նորանց. Թող ողջ մնան, բայց բոլոր ժողովքի համար փայտ կտրողներ և ջրկիրներ լինեն. և ելան՝ ինչպէս որ իշխաններն ասեցին նորանց։
22 Եւ Յեսուն նորանց կանչեց, և նորանց հետ խոսեց ասելով. Ինչո՞ւ համար մեզ խաբեցիք և ասեցիք. Թէ Զեզանից շատ հեռու ենք. քանի որ դուք մեր մէջն էք
23 բնակվում։ Եւ հիմա դուք անիծեալ էք, և ձեզանից փայտ կտրող և ջրկիր ծառայ չ'պակասի իմ Աստուծոյ տանը։
24 Եւ նորանք Յեսուին պատասխանեցին և ասեցին. Որովհետև քո ծառաներդը առուգիւ իմացան, որ քո Տէր Աստուածն իր ծառայ Մովսէսին հրամայել է որ այս բոլոր երկիրը ձեզ տայ, և այս երկրի բոլոր բնակիչներին ձեր առաջից բնաջինջ անէ, ուստի մենք ձեր պատճառով մեր անձերի համար շատ վախեցանք և այս բանն արինք։
25 Եւ ահա հիմա քո ձեռքին ենք. ինչ հաճոյ և արդար երևայ, այն արա մեզ։
26 Եւ նորանց այնպէս արաւ, և նորանց Իսրայէլի որդկանց ձեռքից ազատեց, և նորանց չ'մեռցրին։
27 Եւ Յեսուն նոյն օրը փայտ կըտրող և ջրկիր արաւ նորանց ժողովքի և Տէրոջ սեղանի համար մինչև այս օրը այն տեղում, որ նա կ'ընտրէ։

ԳԼ. Ժ

1 Եւ երբոր Երուսաղէմի Ադոնիսեդեկ թագաւորը լսեց, Թէ Յեսուն Գայեին առաւ և նորան բոլորովին կործանեց, այնպէս ինչպէս որ Երիքովին և նորա թագաւորին էր արել, այնպէս էլ Գայեին և նորա թագաւորին արաւ, և Թէ Գաբաւոնի բնակիչները Իսրայէլացիների հետ հաշտութիւն արին և նորանց մէջ մնացին, Շատ վախեցան, որովհետև Գաբաւոնը մեծ քաղաք էր՝ թագաւորանիստ քաղաքներից մէկին պէս, և նա Գայիից մեծ էր, և նորա բոլոր մարդիկը զօրաւոր էին։ Սորա համար
3 Երուսաղէմի Ադոնիսեդեկ թագաւորը մարդ ուղարկեց Քերբոնի Հոհամ թագաւորին, Յերիմոթի Փիրամ թագաւորին, և Լաքիսի Յաբիէ թագաւորին, և Եգղոնի Դաբիր թագաւորին, ասելով.
4 Վեր եկէք ինձ մոտ և ինձ օգնեցէք, որ Գաբաւոնը զարկենք. որովհետև Յեսուի հետ և Իսրայէլի որդկանց հետ հաշտութիւն արաւ։
5 Եւ Ամորհացիների հինգ թագաւորները Երուսաղէմի թագաւորը, Քերբոնի թագաւորը, Յերիմոթի թագաւորը, Լաքիսի թագաւորը և Եգղոնի թագաւորը ժողովուեցան իրանք և իրանց բոլոր բանակները և վեր գնացին և Գաբաւոնի մոտ բանակ տուին և նորա դէմ պատերազմ արին։
6 Եւ Գաբաւոնի բնակիչները Յեսուի մոտ հարց ուղարկեցին Գաղգաղայի բանակը, ասելով. Քո ձեռքը եան մի քաշեր քո ծառաներից, շուտով մեզ մոտ վեր եկ և մեզ ազատիր ու մեզ օգնիր. որովհետև մեզ վերայ են ժողովուել Ամորհացիների բոլոր լեռնաբնակ թագաւորները։
7 Եւ Յեսուն վեր գնաց Գաղգաղայից ինքը և իր հետ բոլոր պատերազմական մարդիկը և զօրքի բոլոր զօրաւորները։
8 Եւ Տէրը Յեսուին ասեց. Նորանցից մի վախենար, որովհետև նորանց քո ձեռքն եմ տուել. նորանցից ոչ մէկը պիտի չ'կանգնէ քո առաջին։
9 Եւ Յեսուն Գաղգաղայից բոլոր գիշերը վեր գնալով յանկարծակի նորանց վերայ հասաւ։
10 Եւ Տէրը խռովեցրեց նորանց Իսրայէլի առաջին, և նորանց Գաբաւոնի մօտ մեծ կոտորածով կոտորեց, և նորանց հալածեց Բեթորոն վեր գնալու ճանապարհովը, և նորանց մինչև Ազեկա ու Մակեդա զարկեց։
11 Եւ երբոր նորանք Իսրայէլի առաջից փախչում էին, և Բեթորոնիջը վայր էին իջնում, Տէրը նորանց վերայ երկնքիցը մեծ քարեր գցեց մինչև Ազեկա, և մեռան. կարկտի քարերիցը մեռնողները աւելի շատ էին քան Թէ Իսրայէլի որդկանց սրով մեռցրածները։
12 Այն ժամանակ Յեսուն Տիրոջ հետ խոսեց այն օրը, որ Տէրը Ամորհացիներին Իսրայէլի որդկանց ձեռքը տուաւ, և Իսրայէլի առաջին ասեց. Արեգակ, Գաբաւոնում կանգնիր, և, Լուսին, Այժղոնի ձորում
13 [illegible]։ Եւ արեգակը կանգնեց, և լուսինը իր տեղը մնաց, մինչև որ ժողովուրդը իր թշնամիներից վրէժ առաւ։ Մի՞թէ սա Ուղիղի գրքում գրուած չէ։ և արեգակը երկնքի մէջտեղում կանգնեց և չ'շտապեց մինչև մէկ կատարեալ օրի չափ։
14 Նորա պէս օր չ'եղաւ ոչ առաջ և ոչ յետոյ, որ Տէրը մարդի ձայնին լսեց. որովհետև Տէրը պատերազմեց Իսրայէլի համար։
15 Եւ Յեսուն և նորա հետ բոլոր Իսրայէլը եան դառան բանակը
16 Գաղգաղա։ Եւ հինգ թագաւորները փախան, և Մակեդումը
17 պրին մէջ թաք կացան։ Եւ Յեսուին պատմեցաւ ասելով. Այն հինգ թագաւորները գտնուել են Մակեդումը պրի մէջ թաք կացած։
18 Եւ Յեսուն ասեց. Այրի բերանին մեծ քարեր գլորեցէք, և նորա վերայ մարդիկ նշանակեցէք, որ նորանց պահպանեն։
19 Բայց դուք մի կանգնէք, հալածեցէք ձեր թշնամիներին և կարկեցէք նորանց եանևիններին, և նորանց թող մի տաք որ իրանց քաղաքները մտնեն. որովհետև ձեր Տէր Աստուածը նորանց ձեր ձեռքը մատնեց։
20 Եւ երբոր Յեսուն Իսրայէլի որդկանց հետ նորանց շատ մեծ կոտորածով կոտորեց, մինչև որ նորանց սպառեցրեց վերջացրեց, և նորանց փախստականները պարսպաւոր քաղաքների մէջ մտան,
21 Այն ժամանակ բոլոր ժողովուրդը խաղաղութեամբ եան դառան Յեսուի մոտ բանակը Մակեդա. Իսրայէլի որդկանց դէմ բնաւ մէկն իր լեզուն չ'սրեց։
22 Եւ Յեսուն ասեց. Այրի բերանը բացէք, և այրիցը հանեցէք բերէք ինձ մոտ այն հինգ թագաւորներին։
23 Եւ այնպէս արին, և այրիցն այն հինգ թագաւորներին՝ այսինքն Երուսաղէմի թագաւորին, Քերբոնի թագաւորին, Յերիմոթի թագաւորին, Լաքիսի թագաւորին և Եգղոնի թագաւորին հանեցին նորա մոտ։
24 Եւ երբոր այս թագաւորներին Յեսուի մոտ հանեցին, Յեսուն Իսրայէլի բոլոր մարդկանցը կանչեց, և իր հետ պատերազմողներին գլխաւորներին ասեց. Մօտեցէք ձեր ոտքերը այս թագաւորների պարանոցների վերայ դրէք, և նորանք մօտեցան ու իրանց ոտքերը նորանց պարանոցների վերայ դրին։
25 Եւ Յեսուն ասեց նորանց. Մի վախենաք և մի զարհուրիք, ուժովացէք և քաջ եղէք. որովհետև Տէրը այսպէս կ'անէ ձեր ամեն թշնամիներին, որոնց հետ դուք պատերազմէք։
26 Եւ սորանից յետոյ Յեսուն նորանց զարկեց մեռցրեց, և նորանց հինգ ծառից կախեց, և ծառերի վերայ մինչև իրիկուն կախուած մնացին։
27 Եւ արեգակը մտնելու ժամանակին Յեսուն հրամայեց, և նորանց վայր բերին ծառերի վերայից, և նորանց գցեցին այն այրի մէջ ուր որ թաք էին կացել, և այրի բերանին մեծ քարեր դրին, որ մինչև այսօր [illegible]։
28 Եւ Յեսուն նոյն օրը Մակեդան էլ առաւ. և սուրի բերանով զարկեց նորան, և նորա թագաւորին և նորա մէջ գտնուած բոլոր հոգիներին *բնաջինջ արաւ. և մէկին ողջ չ'թողեց. և Մակեդայի թագաւորին էլ այնպէս արաւ ինչպէս որ Երիքովի թագաւորին էր արել։

*կամ՝ նզովեց.

29 Եւ Յեսուն և իր հետ բոլոր
Իսրայէլը Մակեդայից անցան
Լեբնա, և Լեբնայի հետ պա-
30 տերազմեցին։ Եւ Տէրը նորանց
էլ մատնեց նորա թագաւորովը
Իսրայէլի ձեռքը, և նորան և
նորա մէջ գտնուած բոլոր հոգի-
ներին սուրի բերանով զարկեց,
և մէկին ողջ չ'թողեց. և նորա
թագաւորին այնպէս արաւ ինչ-
պէս որ Երիքովի թագաւորին էր
արել։
31 Եւ Յեսուն և իր հետ բոլոր
Իսրայէլը Լեբնայից անցան Լա-
քիս, և նորա դէմ բանակ տա-
լով նորա հետ պատերազմեցին։
32 Եւ Տէրը Լաքիսը Իսրայէլի ձեռ-
քը մատնեց, և երկրորդ օրը նո-
րան առաւ և նորան ու նորա
մէջ գտնուած բոլոր հոգիներին
սուրի բերանով զարկեց բոլորովին
ինչպէս որ Լեբնային էին արել։
33 Այն ժամանակ Գազերի Հօ-
րամ թագաւորը վեր գնաց Լա-
քիսին օգնելու. և Յեսուն նորան
և նորա ժողովրդին կոտորեց այն-
պէս որ նորանցից մէկը ողջ չը
34 մնաց։ Եւ Յեսուն և իր հետ բո-
լոր Իսրայէլը Լաքիսիցն անցան
Էգղոն և նորա մօտ բանակ տա-
լով նորա դէմ պատերազմեցին.
35 Եւ նոյն օրը նորան առաւ և սու-
րի բերանով զարկեց, և նոյն օրը
նորա մէջ գտնուած բոլոր հոգի-
ներին բոլորովին *բնաջինջ արաւ
ինչպէս որ Լաքիսին էր արել։
36 Եւ Յեսուն և իր հետ բոլոր
Իսրայէլը Էգղոնից վեր գնացին
Քեբրոն, և նորա դէմ պատե-
37 րազմեցին. Եւ նորան առան և
սուրի բերանով զարկեցին նորան
և նորա թագաւորին և նորա բո-
լոր քաղաքներին և նորա մէջ
գտնուած բոլոր հոգիներին, և
մէկին ողջ չ'թողեցին, բոլորովին
ինչպէս որ Էգղոնին էին արել և
նորան ու նորա մէջ գտնուած
բոլոր հոգիներին *բնաջինջ արաւ։
38 Եւ Յեսուն և իր հետ բոլոր
Իսրայէլը ետ դառան Դաբիր, և
39 նորա հետ պատերազմեցին։ Եւ
առան նորան և նորա թագաւո-
րին և նորանց բոլոր քաղաքները
և նորանց սուրի բերանով զար-
կեցին. և նորա մէջ գտնուած
բոլոր հոգիներին †բնաջինջ արին
և մէկին ողջ չ'թողեցին. ինչպէս
որ Քեբրոնին էր արել, այնպէս
էլ Դաբիրին և նորա թագաւո-
րին արաւ և ինչպէս որ Լեբնային
և նորա թագաւորին էր արել։
40 Եւ Յեսուն զարկեց բոլոր լեռ-
նային, հարաւային, դաշտային
երկիրները և սարերի ստորոտնե-
րը և նորանց բոլոր թագաւորնե-
րին զարկեց, և մէկին ողջ չ'թո-
ղեց, այլ ամեն շնչաւորին մեռ-
ցրեց, ինչպէս որ Իսրայէլի Աստ-
ուածը Եհովան պատուիրել էր։
41 Եւ Յեսուն զարկեց նորանց Կա-
դէս-Բառնեայից մինչև Գազա և
բոլոր Գոսոմի երկիրը մինչև Գա-
42 բաւօն։ Եւ այս բոլոր թագա-
ւորներին և նորանց երկիրը Յե-
սուն առաւ մէկ անգամում. ո-
րովհետև Իսրայէլի համար Իս-
րայէլի Աստուածը Եհովան էր
43 պատերազմ անում։ Եւ Յեսուն
ու իր հետ բոլոր Իսրայէլը ետ
դառան բանակը Գաղգաղա։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ երբոր Հասորի Յաբին թա-
գաւորը լսեց, մարդ ուղարկեց
Մադոնի Յոբաբ թագաւորի մօտ
և Սամրոնի թագաւորի մօտ և
2 Աքսափի թագաւորի մօտ, Եւ
այն թագաւորներին մօտ որ հիւ-
սիսային սարերումը և Քէնէրէթի
հարաւային դաշտումն ու հովի-
տումն արևմտեան կողմում Դով-
3 րի գաւառներումն էին, Այսին-
քն արևելեան և արևմտեան
Քանանացիների, Ամօրհացիների,
Քետացիների, Փերեզացիների և
լեռնաբնակ Յեբուսացիների մօտ,
և Հերմոնի տակ Մասփայի երկ-
րումը եղող խևացիների մօտ։
4 Եւ նորանք դուրս եկան իրանց
բոլոր բանակներովը՝ շատ ժողո-
վրդով դուրս եկան ծովի եղեր-

*Կամ՝ նզովեց.

†Կամ՝ նզովեցին

քում եղող աւազի չափ բազ-
մաթիւ, և խիստ շատ ձիեր և
5 կառքեր։ Եւ այս բոլոր թագա-
ւորները միանալով գնացին բա-
նակ տուին Մառօնի ջրի մօտ որ
Իսրայէլի հետ պատերազմեն։
6 Եւ Տէրը Յեսուին ասեց. Նո-
րանց երեսիցը մի վախենար, ո-
րովհետև էգուց այս ժամանակ
ես նորանց ամենքին Իսրայէլի ա-
ռաջին ջարդել կ'տամ, նորանց
ձիերը ջլատես և նորանց կառ-
7 քերը կրակով այրես։ Եւ Յեսուն
և իր հետ բոլոր պատերազմական
ժողովուրդը յանկարծակի Մա-
ռօնի ջրի մօտ նորանց դէմ գնա-
ցին և նորանց վերայ յարձակ-
8 ուեցան։ Եւ Տէրը նորանց Իս-
րայէլի ձեռքը տուաւ, և նորանք
զարկեցին նորանց, և հալածեցին
նորանց մինչև մեծ Սիդոն և
Մասրեփօթ-մայիմ, և մինչև
Մասփայի հովիտը դէպի արևելք,
և նորանց զարկեցին մինչև որ
նորանցից մէկը չ'ազատուեցաւ։
9 Եւ Յեսուն նորանց այնպէս արաւ
ինչպէս Տէրն իրան ասել էր. նո-
րանց ձիերը ջլատեց և նորանց
կառքերը կրակով այրեց։
10 Եւ Յեսուն այն ժամանակ ետ
դառաւ, Հասորն առաւ և նորա
թագաւորին որով մեռցրեց, որով-
հետև Հասորն առաջուց այս բո-
լոր թագաւորութիւնների գլու-
11 խն էր։ Եւ նորա մէջ գտնուած
բոլոր հոգիներին սուրի բերանով
զարկեցին, *բնաջինջ արին. ոչ
մէկ շնչաւոր չ'մնաց. և Հասորը
12 կրակով այրեց։ Եւ այս թագա-
ւորների բոլոր քաղաքները և նո-
րանց բոլոր թագաւորներին ա-
ռաւ և նորանց սուրի բերանով
զարկելով †բնաջինջ արաւ ինչ-
պէս Տիրոջ ծառայ Մովսէսը
13 պատուիրել էր։ Բայց այն ամեն
քաղաքները, որոնք իրանց հողա-
բլուրներովը կենում էին, Իսրա-
յէլը չ'այրեց բացի միայն Հասո-
14 րիցը որ Յեսուն այրեց։ Եւ այս
քաղաքների բոլոր աւարը և ա-
նասուններն Իսրայէլի որդիքն ի-
րանց համար կողոպտեցին, բայց
բոլոր մարդկանցը սուրի բերա-
նով զարկեցին, մինչև որ նորանց
բնաջինջ արին, ոչ մէկ շնչաւոր
15 չ'թողեցին։ Ինչպէս Տէրն իր Մով-
սէս ծառային պատուիրել էր,
այնպէս Մովսէս Յեսուին պատ-
ուիրեց, և Յեսուն էլ այնպէս
արաւ, ոչ մի բան զանց չ'արաւ
այն ամենից ինչ որ Տէրը Մովսէ-
սին պատուիրել էր։
16 Եւ Յեսուն առաւ այս բոլոր
երկիրը, լեռնակողմը և բոլոր
հարաւային կողմը և բոլոր Գո-
սոմի երկիրը, հովիտն ու դաշ-
տը, և Իսրայէլի սարը և նորա
17 հովիտը, Սէիր վեր գնացող Քա-
լակ սարիցը մինչև Հերմոն սարի
տակի Լիբանանի հովտումը եղող
Բաաղգադ, և նորանց բոլոր թա-
գաւորներին բռնեց և նորանց
18 զարկեց մեռցրեց։ Յեսուն այս
բոլոր թագաւորների հետ շատ
19 օրեր պատերազմ արաւ։ Մի քա-
ղաք չ'կար, որ Իսրայէլի որդկանց
հետ հաշտութիւն արած լինէր
բացի Գաբաւօնի մէջ բնակող
խևացիներիցը. ամենն էլ պատե-
20 րազմով առան։ Որովհետև Տէ-
րիցն եղաւ նորանց սիրտը կարծ-
րացնելը, որ պատերազմով Իս-
րայէլի դէմ դնեն որ նորանց ո-
զորմութիւն չ'լինելով նորանց
‡կորցնէ, որպէս զի բնաջինջ անէ
նորանց ինչպէս որ Տէրը Մովսէ-
սին պատուիրել էր։
21 Եւ Յեսուն այն ժամանակ գը-
նաց, և կոտորեց Ենակիմներին
սարերիցը՝ Քեբրոնից, Դաբիրից,
Անաբից և Յուդայի բոլոր սարե-
րիցը, և Իսրայէլի բոլոր սարերի-
ցը. Յեսուն նորանց իրանց քա-
ղաքներովը մէկտեղ փչացրեց։
22 Իսրայէլի որդկանց երկրի մէջ
Ենակիմներ չ'մնաց, բայց միայն
Գազայի, Գեթի և Ասեդովթի
մէջ մնացին։
23 Եւ Յեսուն բոլոր երկիրն ա-
ռաւ, բոլորովին ինչպէս որ Տէրը
Մովսէսին պատուիրել էր, և Յե-

*Կամ՝ նզովեցին

†Կամ՝ նզովեց

‡Կամ՝ նզովէ

սուն Նորան տուաւ իսրայէլին իբր ժառանգութիւն Նորանց ցեղերի բաժիններուն համեմատ. և երկիրը պատերազմէ հանգըստացաւ։

Գլ. ԺԲ

1 Եւ սորանք են այն երկրի թագաւորները, որոնց զարկեցին իսրայէլի որդիքը և որոնց երկիրներն առան, Յորդանանի այն կողմանէ դէպի արևելք, Առնոն ձորից մինչև Հերմոն սարը և բոլոր դաշտը դէպի արևելեան կողմը։ 2 Սեհոնի թագաւորը Ամորհացիներուն, որ կը բնակուէր Եսեբոնի մէջ, որ տիրում էր Առնոն ձորի եզերքումն եղող Արոեերից, և ձորի մէջտեղին, և Գաղաադի կէսին մինչև Ամմոնի որդկանց սահմանումն եւ 3 դաշ Յաբոկ ձորը, Ղամաւոնին, մինչև Փենիելէթի ծովը դէպի արևելք և մինչև դաշտի ծովը այսինքն Աղի ծովը դէպի արևելք Բեթեսիմոթի ճանապարհը և հարաւային կողմից Աշեդոթփասգայի տակին. 4 Եւ Բասանի Ովգ թագաւորի սահմանին հրեակաների մնացորդիցը, որ բնակվում էր Աստարովթի և Եդրայիի մէջ, 5 Եւ տիրում էր Հերմոն սարին և Սելքային և բոլոր Բասանին մինչև Գեսուրացիների և Մաքաթացիների սահմանը. և Գաղաադի կէսին մինչև Եսեբոնի 6 Սեհոն թագաւորի սահմանը։ Տիրոջ ծառայ Մովսէսը իսրայէլի որդկանցը հետ զարկեց սորանց, և Տիրոջ ծառայ Մովսէսը տուաւ այն Ռուբէնեանների, Գադեանների և Մանասէի կէս ցեղին իբրև ժառանգութիւն։

7 Եւ սորանք են երկրի թագաւորները, որ Յեսուն և իսրայէլի որդիքը զարկեցին Յորդանանի այս կողմումը դէպի արևմուտք, Լիբանանի հովտումը եղող Բաալգադից մինչև Քալակ սարը, որ վեր է գնում Սէիր. և Յեսուն տուաւ Նորան իսրայէլի ցեղերին իբրև ժառանգութիւն իրանց վի-
8 ճակների համեմատ. Սարերի և հովիտների և դաշտերի մէջ և սարերի առոգանութեամբ և անապատում և հարաւային կողմը Քետացիները, Ամորհացիները, Քանանացիները, Փերեզացիները, Թևացիները և Յեբուսացիները. Երիքովի թագաւորը՝ մէկ, 9 Բեթէլի մօտ եղող Գայիի թագաւորը՝ մէկ, Երուսաղէմի թա- 10 գաւորը՝ մէկ, Քերոնի թագաւորը՝ մէկ, Յերմութի թագա- 11 ւորը՝ մէկ, Լաքիսի թագաւորը՝ 12 մէկ, Եգղոնի թագաւորը՝ մէկ, Գազերի թագաւորը՝ մէկ, Դա- 13 բիրի թագաւորը՝ մէկ, Գադերի 14 թագաւորը՝ մէկ, Հորմայի թագաւորը՝ մէկ, Արադի թագաւորը՝ մէկ, Լիբնայի թագաւորը՝ 15 մէկ, Ոդողոմի թագաւորը՝ մէկ, Մակեդայի թագաւորը՝ մէկ, Բե- 16 թէլի թագաւորը՝ մէկ, Թափուայի թագաւորը՝ մէկ, Ոփերի 17 18 թագաւորը՝ մէկ, Ափեկի թագաւորը՝ մէկ, Լասարոնի թագաւորը՝ մէկ, Մադոնի թագաւորը՝ 19 մէկ, Հասորի թագաւորը՝ մէկ, Սիմրոն մառոնի թագաւորը՝ մէկ, 20 Աքսափի թագաւորը՝ մէկ, Թա- 21 նաքի թագաւորը՝ մէկ, Մակեդոովի թագաւորը՝ մէկ, Կադեսի 22 թագաւորը՝ մէկ, Կարմէլի Յեկնամի թագաւորը՝ մէկ, Դովրի 23 գաւառում Դովրի թագաւորը՝ մէկ, Գաղգաղայի Գոյիմի թա- 24 գաւորը՝ մէկ, Թերսայի թագաւորը՝ մէկ. բոլորը երեսունևմէկ թագաւոր։

Գլ. ԺԳ

1 Եւ Յեսուն ծերացել էր և օրերն անցկացրել։ Եւ Տէրը Նորան ասեց. Դու ծերացել ես և օրերդ անցկացրել. և խիստ շատ երկիր է մնացել ժառանգելու։ 2 Մնացած երկիրը այս է. փղշտացիների ամեն սահմանները, և 3 բոլոր Գեսուրը. Եգիպտոսի դիմացի Սիովրիցը մինչև Ակկարոնի սահմանը հիւսիսային կողմին Քանանացիներինը համարուի, փղշտացիների հինգ նախարարութիւնները, այսինքն Գազացիները, Ազովտացիներինը, Աշկաղոնացիներինը, Գեթացիներինը և Ակկարոնացիներինը և Աւացիներինը. Հարաւային կողմից Քանանացիների բոլոր երկիրը և Միդոնացիների Մեարան մինչև Ափեկ մինչև Ամորհացիների սահմանը. 5 Եւ Գեբալացիների երկիրը և արևելքի բոլոր Լիբանանը Հերմոն սարի տակի Բաալգադից մինչև 6 Եմմաթի մուտքը, Բոլոր լեռնարբունակները՝ Լիբանանից մինչև Մասրեփոթ մայիմ, բոլոր Սիդոնացիները, Նորանց ես քշելու եմ Իսրայէլի որդկանց առաջից. միայն թէ դու իսրայէլին ժառանգութիւն բաժանիր այն ինչպէս որ քեզ պատուիրեցի։ 7 Եւ հիմա այս երկիրը ժառանգութիւն բաժանիր ինը ցեղին, 8 և Մանասէի կէս ցեղին. Ռուբէնեանները ու Գադեանները արդէն Նորա հետ առել են իրանց ժառանգութիւնը, որ Մովսէսը Յորդանանի այն կողմին դէպի արևելք Նորանց տուաւ, ինչպէս որ Տիրոջ ծառայ Մովսէսը տուել 9 է Նորանց. Առնոն ձորի եզերքի վերայ եղող Արոեերիցը և ձորի մէջ եղող քաղաքը և Մեդաբայի բոլոր դաշտը մինչև Դեբոն. 10 Եւ Եսեբոնի մէջ թագաւորող Ամորհացիների Սեհոն թագաւորի բոլոր քաղաքները մինչև Ամմոնի որդկանց սահմանը. Եւ Գաղաադը և Գեսուրացիների ու Մաքաթացիների սահմանը՝ և բոլոր Հերմոն սարը և բոլոր Բասա- 12 նը մինչև Սելքա. Բասանի մէջ Ովգի բոլոր թագաւորութիւնը, որ թագաւորում էր Աստարովթի ու Եդրայիի մէջ. նա էր մնացել հոկանների մնացորդիցը. բայց Մովսէսը Նորանց զարկեց և 13 քշեց։ Եւ իսրայէլի որդիքը Գեսուրացիներին և Մաքաթացիներին չ'հալածեցին. և Գեսուրացիներն ու Մաքաթացիները մինչև այսօր իսրայէլի մէջ բնակուեցան։ Միայն Ղևիի ցեղին 14 ժառանգութիւն չ'տուաւ. Իսրայէլի Տէրը Աստուծոյ պատարագներն են Նորա ժառանգութիւնը, ինչպես որ Նորան ասել էր։

Եւ Մովսէսը տուաւ Ռուբէնի 15 որդկանց ցեղին Նորանց ազգատոհմների համեմատ։ Եւ Նորանց 16 սահմանը եղաւ. Առնոն ձորի եզերքի վերայ եղող Արոեերից և ձորի մէջ եղող քաղաքը, Մեդաբայի մօտ եղած բոլոր դաշտը, Եսեբոնը և Նորա բոլոր դաշ- 17 տային քաղաքները, Դեբոն, Բամոթ–բաղ և Բեթբեղեղմոն, Եւ 18 Յասսա և Կադեմոթ, և Մեփաաթ, Եւ Կարիաթայիմ, և Սեբամա, և Սարեթ–սահառ հովտի սարի վերայ, Եւ Բեթփեղովր, 20 և Աշեդոթ–փասգա, և Բեթեսիմոթ, Եւ դաշտի ամեն քա- 21 ղաքները, և Եսեբոնում թագաւորող Ամորհացիների Սեհոն թագաւորի բոլոր թագաւորութիւնը, որին զարկեց Մովսէսը՝ և Մադիամի իշխաններին՝ Եւիին, Րոկոմին, Սուրին, Ուրին և Ռեբին այն երկրում բնակող Սեհոնի նախարարներին։ Եւ Բէաղրեան 22 Բաղաամ Հարցուկին էլ իսրայէլի որդիքը սրով մեռցրին Նորանց սպանուածների հետ։ Եւ Ռու- 23 բէնի որդկանց սահմանն էր Յորդանանը և Գերուզը. այս է Ռուբէնի որդկանց ազգատոհմների ժառանգութիւնը. այս քաղաքները և Նորանց գիւղերը։

Եւ Մովսէսը տուաւ Գադի ցե- 24 ղին, Գադի որդկանց իրանց ազգատոհմների համեմատ։ Եւ Նո- 25 րանց սահմանը եղաւ. Յազերը և բոլոր Գաղաադի քաղաքները, և Ամմոնի որդկանց երկրի կէսը՝ մինչև Արոեր, որ Ռաբբայի դիմացն է։ Եւ Եսեբոնից մինչև 26 Մասփայի Ռամովթը և Բատանիմ, և Մանայիմից մինչև Դաբիրի սահմանը. Եւ Հովիտի մէջ Բեթարամ և Բեթնամրա, Սոկքովթ և Սափոն՝ Եսեբոնի Սեհոն թագաւորի թագաւորութեան մնացորդը, Յորդանանը և սահմանը, մինչև Փենիելէթի ծովի եզերքը Յորդանանի այն կողմը դէպի արևելք։ Այս է Գադի որդկանց 28 ժառանգութիւնը իրանց ազգատո-

տոհմերի համեմատ, այս քա-
ղաքները և նորանց գիւղերը։
29 Եւ Մովսէսը տուաւ Մանասէի
կէս ցեղին, որ Մանասէի որդ-
կանց կէս ցեղինը եղաւ իրանց
30 ազգատոհմերի համեմատ։ Եւ
նորանց սահմանը այս եղաւ. Մա-
նայիմից՝ Բասանի Ովգ թագաւո-
րի բոլոր թագաւորութիւնը՝ բո-
լոր Բասանը, և Բասանի մէջ ե-
ղող Յայիրի բոլոր գիւղաքաղաք-
31 ները վաթսուն քաղաք. Եւ Գա-
ղաադի կէսը՝ և Աստարովթ և
Եդրայի՝ Բասանի մէջ Ովգի թա-
գաւորութեան քաղաքները Մա-
նասեան Մաքիրի որդկանցը ե-
ղաւ, այսինքն Մաքիրի որդկանց
կէսինը՝ իրանց ազգատոհմերի
համեմատ։
32 Սորանք են որ Մովսէսը ժա-
ռանգութիւն տուաւ Մովաբի
դաշտերումը Երիքովի դէմ Յոր-
դանանի այն կողմին դէպի արե-
33 ւելք։ Բայց Մովսէսը Ղևիի ցե-
ղին ժառանգութիւն չ՚տուաւ.
Իսրայէլի Տէր Աստուածն է նո-
րանց ժառանգութիւնը ինչպէս
որ նորանց ասեց։

ԳԼ. ԺԴ

1 Եւ սորանք են Քանանի երկրի
մէջ Իսրայէլի որդկանց ժառան-
գածը, որ Եղիազար քահանան
և Նաւեան Յեսուն և Իսրայէլի
որդկանց ցեղերի նահապետու-
թեան իշխանները ժառանգեցրին
2 նորանց։ Վիճակով եղաւ նո-
րանց ժառանգութիւնը, ինչպէս
որ Տէրը Մովսէսի ձեռքովը հրա-
մայել էր այն ինն և կէս ցեղե-
3 րին։ Որովհետև Մովսէսը երկու
և կէս ցեղերին ժառանգութիւն
տուել էր Յորդանանի այն կող-
մին. բայց Ղևտացիներին ժա-
ռանգութիւն չ՚տուաւ նորանց
4 մէջ. Որովհետև Յովսէփի որդի-
քը երկու ցեղ էին, Մանասէն և
Եփրեմը. և երկրի մէջ Ղևտա-
ցիներին բաժին չ՚տուին, այլ
քաղաքներ՝ բնակուելու համար,
և նորանց արուարձաններն իրանց
խաշինքների և ստացուածների
համար։ Ինչպէս որ Տէրը Մովսէ- 5
սին պատուիրել էր, Իսրայէլի
որդիքը այնպէս արին, և երկիրը
բաժանեցին։
Եւ Յուդայի որդիքը Գաղգա- 6
ղայումը Յեսուին մօտեցան, և
Կենեզեան Յեփոնէի որդի Քաղէ-
բը նորան ասեց. Դու գիտես այն
խօսքը, որ Տէրը Կադէս-բառ-
նեայումը խօսեց Աստուծոյ մարդ
Մովսէսի հետ իմ և քո մասին։
Ես քառասուն տարեկան էի եր- 7
բոր Տիրոջ ծառայ Մովսէսը ինձ
Կադէս բառնեայից ուղարկեց եր-
կիրը լրտեսելու համար, և ես
սրտիս մէջ եղածի պէս նորա
համար լուր բերի. Սակայն ինձ 8
հետ վեր գնացող եղբայրներս
ժողովրդի սիրտը թուլացրին.
բայց ես բոլորովին իմ Տէր Ա-
ստուծուն հետևեցի։ Եւ այն օրը 9
Մովսէսն երդում արաւ ասելով.
Անպատճառ այն երկիրը որ քո
ոտքը կոխել է քեզ և քո որդ-
կանցը լինի ժառանգութիւն յա-
ւիտեանս, որովհետև իմ Տէր
Աստուծուն բոլորովին հետևեցիր։
Արդ ահա Տէրը ինձ կենդանի է 10
պահել ինչպէս որ խօսել էր այս
քառասունևհինգ տարին, այն
ժամանակից ի վեր՝ որ Տէրը այս
խօսքը Մովսէսին ասեց. Երբոր
Իսրայէլը անապատումը ման էր
գալիս. և ահա ես այսօր ութ-
սունևհինգ տարեկան եմ. Եւ 11
այսօր տակաւին ուժով եմ, ինչ-
պէս որ էի այն օրը երբ Մովսէսն
ինձ ուղարկեց. այն ժամանակի
զօրութիւնս ինչպէս էր, այժմեան
զօրութիւնս էլ այնպէս է՝ պա-
տերազմելու, և դուրս գալու և
մտնելու կողմանէ։ Եւ հիմա 12
տուր ինձ այն սարը, որի համար
Տէրն այն օրը խօսեց. որովհետև
դու այն օրը լսեցիր, որ այնտեղ
կան Ենակիմները և մեծ պարըս-
պաւոր քաղաքներ, գուցէ Տէրն
ինձ հետ կ՚լինի և ես նորանց կը
հալածեմ, ինչպէս որ Տէրն ա-
սել է։ Եւ Յեսուն նորան օրհ- 13
նեց, Քեբրոնը Յեփոնեան Քաղէ-
բին տուաւ իբր ժառանգութիւն։
Սորա համար Քեբրոնը Կենեզեան 14

Յեփոնէի որդի Քաղէբինը եղաւ
իբրև ժառանգութիւն մինչև այս
օրը, որովհետև Իսրայէլի Տէր
Աստուծուն բոլորովին հետևեց։
15 Եւ Քեբրոնի անունը առաջուց
Կարիաթ-արբա էր, որ Ենակիմ-
ների մէջ մեծ մարդն էր։
Եւ երկիրը պատերազմից հան-
գըստացաւ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ Յուդայի որդկանց ցեղի վի-
ճակը եղաւ իրանց տոհմերի հա-
մեմատ մինչև Եդովմայեցիների
սահմանը. հարաւային կողմից
Սին անապատը հարաւային ծայ-
րումը։
2 Եւ նորանց հարաւային սահ-
մանը այս եղաւ, Աղի ծովի ծայ-
րիցն այսինքն հարաւակողմը նա-
յող ծոցիցը, Եւ հարաւային
կողմիցը դուրս է գալիս Ակրա-
բիմի զառիվերը և անցնում Սին,
և վեր ելնում հարաւային կող-
միցը դէպի Կադէս-բառնեայ անց-
նում Եսրոն, և վեր է ելնում
դէպի Ադդար և պտոյտ տալիս
4 դէպի Կարկայի կողմը. Եւ անց-
նում Ասեմոնից և դուրս գալիս
Եգիպտոսի հեղեղատը. և այս
սահմանը ծովի մէջն է հասնում.
սա կ՚լինի ձեր հարաւային սահ-
մանը։
5 Եւ արևելեան սահմանը Աղի
ծովն է մինչև Յորդանանի ծայրը։
Եւ հիւսիսային կողմի սահմա-
մանը Յորդանանի ծայրումը եղող
6 ծոցիցը. Եւ վեր է ելնում այս
սահմանը մինչև Բեթագղա, և
անցնում Բեթարաբայի հիւսի-
սային կողմիցը. և այս սահմանը
վեր է ելնում մինչև Ռուբէնեան
7 Բաանի վէմը. Եւ վեր է ելնում
այս սահմանը Աքովրի ձորիցը
Դաբիր, և հիւսիսային կողմիցը
դառնում դէպի Գաղգաղա, որ
այն ձորի հարաւակողմին եղող
Եդովմինի զառիվերի դիմացն է.
և անցնում է այս սահմանը Են-
սամիւսի ջրիցը, և հասնում Ռով-
8 գելի աղբիւրը. Եւ այս սահմա-
նը վեր է ելնում Ենովմի որդիի
ձորը՝ հարաւային կողմիցը Յե-
բուսի մօտ՝ այսինքն Երուսաղէմի
մօտ, և այս սահմանը վեր է ել-
նում մինչև այն սարի գլուխը,
որ արևմտեան կողմից Ենովմի
ձորի դիմացն է, և հիւսիսային
կողմիցը Ռափայնոց ձորի ծայրին
է։ Եւ այս սահմանը հասնում 9
է սարի գլխիցը մինչև Նափթո-
վայի ջրի աղբիւրը, և դուրս
է գալիս Եփրոն սարի քաղաքնե-
րը. և այս սահմանը հասնում է
մինչև Բաաղա այսինքն Կարիա-
թարիմ. Եւ այս սահմանը շուռ 10
է տալիս Բաաղայիցն արևմուտքի
կողմը դէպի Սէիր սարը, և հիւ-
սիսային կողմիցը Յարիմ սարի
մօտիցն անցնում, որ դա Քեսա-
ղօնն է. և իջնում է Բեթսա-
միւս, և անցնում Թամնա. Եւ 11
այս սահմանը դուրս է գալիս
Ակկարօնի մօտ դէպի հիւսիս, և
այս սահմանը հասնում է Սա-
քարօն և անցնում Բաաղա սա-
րիցը, և դուրս գալիս Յաբնէլ.
և այս սահմանը վերջանում է
ծովումը։
Եւ արևմտեան սահմանը մեծ 12
ծովի եզերքն է։ Այս է Յուդայի
որդկանց սահմանը շուրջանակի
իրանց տոհմերի համեմատ։
Եւ Յեփոնեան Քաղէբին բա- 13
ժին տուաւ Յուդայի որդկանց
մէջ Ենակի հօր Արբայի քաղա-
քը այսինքն Քեբրոնը, ինչպէս որ
Տէրը Յեսուին հրամայել էր։ Եւ 14
Քաղէբը հալածեց այնտեղից Ե-
նակի երեք որդիներին՝ Սէսիին և
Աքիմանին և Թոլմիին՝ Ենակի
որդկանցը. Եւ այնտեղից վեր ե- 15
լաւ գնաց Դաբիրի բնակիչների
վերայ. և Դաբիրի անունը առա-
ջուց Կարիաթ-սեփեր էր. Եւ 16
Քաղէբն ասեց. Ով որ Կարիաթ-
սեփերը զարկէ և առնէ, Աքսա
աղջիկս նորան կ՚տամ կնութեան։
Եւ Քաղէբի եղբայր Կենեզի որ- 17
դի Գօթոնիէլն առաւ այն. և
Քաղէբն իր Աքսա աղջիկը տուաւ
նորան կնութեան։ Եւ երբոր գը- 18
նում էր, յորդորեց նորան որ իր
հօրիցը մէկ ագարակ ուղէ. և
էշի վերայից վայր իջաւ. և Քա-

ղէբը նորան ասեց. Ի՞նչ կայ քեզ։
19 Եւ աղջիկն ասեց. Ինձ մի օրհ-
նութիւն տուր. որովհետև ինձ
մի հարաւային երկիր ես տուել,
ինձ ջրի աղբիւրներ էլ տուր, և
նա նորան տուաւ վերի աղբիւր-
ները և ցածի աղբիւրները։
20 Այս է Յուդայի որդկանց ցե-
ղի ժառանգութիւնը իրանց տոհ-
մերի համեմատ։
21 Եւ Եդովմի սահմանի մօտ հա-
րաւային կողմում Յուդայի որդ-
կանց ցեղի ծայրի քաղաքները
սորանք են. Կաբեսէէլ, Եդեր,
22 Յագուր, Կինա, Դէմօնա, Ադա-
23 դա, Կադէս, Հասոր, Յեթնան,
24 Զիփ, Տելէմ, Բաալօթ, (25) Հա-
սոր ադադա, Կարիօթ, Եսրոն
26 որ է Հասոր, Ամամ, Սամա, Մօ-
27 լադա, Ասերդադդա, Եսեմոն,
28 Բեթփաղէթ, Ասեր սուաղ, Բեր-
29 սաբէէ, Բազիօթիա, Բաաղա,
30 Իյիմ, Ասէմ, Էլթուղաթ, Քէ-
31 սիլ, Հօրմա, Սիկելակ, Մադ-
32 մաննա, Սանսաննա, Լաբաովթ,
Սելէմ, Ային և Ռեմօն. ամենը
քսանևինը քաղաք և նորանց
գիւղերը։
33 Դաշտավայրի մէջ Եսթաւուղ,
34 Սարաա, Ասնա, Զանով, Էնդա-
35 նիմ, Թափուա, Ենայիմ, Յերի-
մութ, Ոդողոմ, Սոքով, Ազե-
36 կա, Սագարիմ, Ատիթայիմ և
Գադերա (և Գադերօթայիմ.)
տասնևչորս քաղաք և նորանց
37 գիւղերը։ Սէննան, Ադասա,
38 Մագդաղգադ, Դաղաան, Մաս-
39 փա, Յեկթովէլ, Լաքիս, Բազ-
40 կաթ, Էգղոն, Քաբբօն, Լամաս,
41 Քիթլիս, Գադերօթ, Բեթդա-
գոն, Նաամա և Մակեդա. տասն-
ևվեց քաղաք և նորանց գիւ-
42 ղերը։ Լեբնա, Եթեր, Ասան,
43 Յեփթա, Ասնա, Նէսիբ, (44) Կէ-
իլա, Աքեզիբ և Մարեսա. ինը
45 քաղաք և նորանց գիւղերը։ Ակ-
կարոն իր գիւղաքաղաքներովը և
46 գիւղերովը. Ակկարոնից մինչև
ծովը, Ասեդովթի մօտ բոլորը ի-
47 րանց գիւղերովը. Ասեդովթ իր
գիւղաքաղաքներովը և գիւղերո-
վը, Գազա իր գիւղաքաղաքներ-
ովը և գիւղերովը մինչև Եգիպ-
տոսի հեղեղատը և Մեծ ծովը և
սահմանը։
Եւ լեռնավայրի վերայ Սա- 48
միր, Յաթիր, Սոքով, Դաննա, 49
Կարիաթ սաննա՝ այսինքն Դա-
բիր, Անաբ, Եսթեմով, Անիմ, 50
Գոսոմ, Քօղոն և Գեղոն. տասն- 51
ևմէկ քաղաք և նորանց գիւ-
ղերը։ Երեբ, Դումա, Եսան, 52
Յանում, Բեթթափուա, Ափե- 53
կա, Քամմատա, Կարիաթ-ար- 54
բա՝ Քեբրոն և Սիովր. ինը քա-
ղաք և նորանց գիւղերը։ Մաոն, 55
Կարմեղոս, Զիփ, Յետտա, Յեզ- 56
բայէլ, Յեկդաամ, Զանով, Կա- 57
յին, Գաբաա և Թամնա. տասը
քաղաք և նորանց գիւղերը։ Ա- 58
զուղ, Բեթսուր, Գեդովր, Մա- 59
արաթ, Բեթանովթ և Ելթեկոն.
վեց քաղաք և նորանց գիւղերը։
Կարիաթ-բաաղ՝ այսինքն Կարի- 60
աթարիմ և Ռաբբա. երկու քա-
ղաք և նորանց գիւղերը։ Անա- 61
պատի մէջ Բեթարաբա, Մադ-
դին, Սեքաքա, Նեբսան, Աղի 62
քաղաքը և Ենդադդի. վեց քա-
ղաք և նորանց գիւղերը։
Բայց Յուդայի որդիքը չ՚կարո- 63
ղացան Երուսաղէմի մէջ բնակող
Յեբուսաբիներին հալածել. և
Յեբուսացիները Յուդայի որդ-
կանց հետ բնակվում են Երու-
սաղէմում մինչև այս օրը։

ԳԼ. ԺԶ

Եւ Յովսէփի որդկանց վիճակը 1
ելաւ՝ Երիքովի դէմ Յորդանանիցն
Երիքովի ջրի արևելեան կողմից
դէպի անապատը, որ վեր է ել-
նում Երիքովիցը դէպի լեռնա- 2
կողմը՝ Բեթէլը, Եւ դուրս է
գալիս Բեթէլից Լուզ, և Աբքի-
ատարօթի սահմանիցն անցնում, 3
Եւ արևմտեան կողմից Յեփալ-
թիի սահմանը իջնում, մինչև
ցածի Բեթորոնի սահմանը մինչև 4
Գազեր, և հասնում է ծովը։ Եւ
Յովսէփի որդիքը՝ Մանասէն ու
Եփրեմը ժառանգութիւն առան։ 5
Եւ այս եղաւ Եփրեմի որդ-
կանց սահմանը իրանց տոհմերի
համեմատ. այսինքն նորանց ժա-

ռանգութեան սահմանը արևել-
եան կողմից էր Ատարօթ-ադար
6 մինչև վերի Բեթորոն։ Եւ այս
սահմանը դուրս է գալիս հիւսի-
սային կողմից դէպի Մաքմեթաթ
ծովը. և այս սահմանը պտոյտ է
տալիս արևելեան կողմից մինչև
Թէանաթսելով, և անցնում է
արևելեան կողմից դէպի Յանովէ,
7 Եւ Յանովէիցն իջնում է Ատա-
րովթ և Նաարա, և Երիքովին
դպչելով դուրս գալիս Յորդա-
8 նան. Այս սահմանը Թափուայի-
ցը գնում է Կանա հեղեղատը
արևմտեան կողմից, և հասնում
է ծովը։ Այս է Եփրեմի որդ-
կանց ցեղի ժառանգութիւնը ի-
9 րանց տոհմերի համեմատ. Նաև
Եփրեմի որդկանց համար ջոկ-
ուած քաղաքները Մանասէի որդ-
կանց ժառանգութեան մէջ են,
բոլոր քաղաքները իրանց գիւ-
ղերովը։
10 Եւ նորանք Գազերի մէջ բնա-
կող Քանանացիներին չ՚հալածե-
ցին. և Քանանացիները մինչև այս
օրը Եփրեմի մէջ բնակուելով
հարկատու ծառաներ եղան։

ԳԼ. ԺԷ

1 Եւ Մանասէի ցեղի վիճակը ե-
ղաւ սա, որ Յովսէփի անդրա-
նիկն էր. Մանասէի անդրանիկը
Մաքիր Գաղաադի հայրը՝ որով-
հետև մի պատերազմող մարդ
էր՝ Գաղաադն ու Բասանը նորա-
2 նը եղաւ։ Եւ Մանասէի միւս
որդկանցն Աբիեզերի որդկանցը,
Քեղեքի որդկանցը, Ասրիելի որդ-
կանցը, Սիւքեմի որդկանցը, Ո-
փերի որդկանցը, և Սեմիդայի
որդկանցն իրանց տոհմերի համե-
մատ ժառանգութիւն եղաւ։ Սո-
րանք էին Յովսէփեան Մանասէի
արու զաւակներն իրանց տոհմե-
3 րի համեմատ։ Եւ Մանասէի որ-
դիի Մաքիրի որդիի Գաղաադի
որդիի Ոփերի որդի Սալպաադը
տղերք չ՚ունէր, այլ միայն աղջ-
կերք, և նորա աղջկերանց ա-
նունները սորանք են. Մաալա,
Նուա, Էգղա, Մեղքա և Թեր-
սա։ Սորանք ներկայացան Եղիա- 4
զար քահանայի առաջը, Նաւ-
եան Յեսուի առաջը և իշխանն-
երի առաջը և ասեցին. Տէրը Մով-
սէսին հրամայեց որ մեր եղբայր-
ների միջում մեզ ժառանգու-
թիւն տայ։ Եւ Յեսուն Տիրոջ
հրամանովը նորանց հօրեղբայր-
ների միջում նորանց ժառան-
գութիւն տուաւ։ Եւ Մանասէի 5
համար Յորդանանի այն կողմին
տասը բաժին ընկաւ բացի Գա-
ղաադի և Բասանի երկրիցը. Ո- 6
րովհետև Մանասէի աղջկերքը
նորա որդկանց միջում ժառան-
գութիւն առան և Գաղաադի
երկիրը Մանասէի միւս որդկան-
ցն եղաւ։
Եւ Մանասէի սահմանը եղաւ. 7
Ասերիցը մինչև Մաքմեթաթ, որ
Սիւքեմի դիմացն է, և այս սահ-
մանը գնում է դէպի աջ կողմը
մինչև Թափուայի աղբիւրի բնա-
կողները։ Թափուայի երկիրը Մա- 8
նասէինը եղաւ, և Մանասէի
սահմանի վերայ եղող Թափուան
Եփրեմի որդկանցն եղաւ։ Եւ 9
այս սահմանը իջնում է Կանայ
հեղեղատը, դէպի հեղեղատի
հարաւային կողմը Մանասէի քա-
ղաքներն են. և Մանասէի սահ-
մանը հեղեղատի հիւսիսային կող-
մից գնալով ծովն է հասնում։
Հարաւային կողմը Եփրեմինը, և 10
հիւսիսային կողմը Մանասէինը
լինելով նորանց սահմանը ծովը
եղաւ. և հիւսիսային կողմիցը
դպչում էին Ասերին, և արևել-
եան կողմիցն՝ Իսաքարին։ Եւ Ի- 11
սաքարի ու Ասերի մէջ՝ Մանա-
սէինն էին Բեթսան և նորա գիւ-
ղաքաղաքները, և Յեբղաամ և
նորա գիւղաքաղաքները, և Դով-
րի բնակիչները և նորա գիւղա-
քաղաքները, և Ենդովրի բնա-
կիչները և նորա գիւղաքաղաք-
ները, և Թանաքի բնակիչները և
նորա գիւղաքաղաքները, Մա-
կեդդովի բնակիչները և նորա
գիւղաքաղաքները, այս երեք
գաւառը։ Եւ Մանասէի որդիքը 12
չ՚կարողացան հալածել այս քա-
ղաքներին. և Քանանացիները կա-

մակորութեամբ բնակուեցան այն
13 երկրի մէջ։ Եւ Իսրայէլի որդի-
քը երբոր ուժովացան, հարկա-
տու արին Քանանացիներին, բայց
նորանց բոլորովին չ՚հալածեցին։
14 Եւ Յովսէփի որդիքը Յեսուի
հետ խօսեցին և ասեցին. Ինչու
համար ինձ մէկ վիճակ և մէկ
բաժին ժառանգութիւն տուիր,
և ես մի բազմաթիւ ժողովուրդ
եմ. որովհետև Տէրն ինձ մինչև
15 այսչափ օրհնեց։ Եւ Յեսուն նո-
րանց ասեց. Եթէ դու բազմա-
թիւ ժողովուրդ ես վեր ելիր ան-
տառը և այնտեղ քեզ համար
տեղ շինիր, Փերեզացիների և
Ռափայնոց երկրումը, որովհետև
Եփրեմի սարը քեզ համար նեղ
16 է։ Եւ Յովսէփի որդիքն ասեցին.
Սարը մեզ համար չէ. և երկա-
թի կառքեր ունին բոլոր Քանա-
նացիները, որ բնակվում են հով-
տի երկրումը՝ Բեթսանի մէջ և
նորա գիւղաքաղաքների մէջ, և
17 Յեզրայէլի հովտի մէջ։ Եւ Յե-
սուն Յովսէփի տանը՝ այսինքն
Եփրեմի և Մանասէի հետ խօսեց
և ասեց. Դու մի բազմաթիւ ժո-
ղովուրդ ես, և շատ ոյժ ունես,
18 քեզ մէկ վիճակ չ՚լինի. Այլ
սարը քոնը լինի. որովհետև ան-
տառ է, նորան շինիր և քոնը լի-
նի մինչև ծայրը. որովհետև դու
Քանանացիներին այնտեղից պիտի
հալածես, թէև նորանք երկա-
թի կառքեր ունենան և զօրա-
ւոր լինեն։

ԳԼ. ԺԸ

1 Եւ Իսրայէլի որդկանց բոլոր ժո-
ղովքը Սելովումը ժողովուեցան,
և այնտեղ կանգնեցրին ժողովքի
խորանը, և երկիրը նորանց ա-
ռաջին նուաճուեցաւ։
2 Եւ Իսրայէլի որդկանց մէջ եօ-
թը ցեղ էր մնացել, որոնք ի-
րանց ժառանգութիւնը չէին ա-
3 ռել։ Եւ Յեսուն Իսրայէլի որդ-
կանցն ասեց. Մինչև ե՞րբ էք
դուք թուլութիւն անելու, որ
չէք գնում ժառանգէք այն եր-
կիրը որ ձեր հայրերի Տէր Աստ-
ուածը ձեզ է տուել։ Ամէն ցե- 4
ղից երեք մարդ բերէք, և ես
նորանց ուղարկեմ, որ վեր կե-
նան ման գան այն երկրի մէջ և
գրեն նորան իրանց ժառանգու-
թեան համեմատ և ինձ մօտ
դառնան։ Եւ նորան եօթը մա- 5
սերի բաժանեն. Յուդան կանգնէ
իր սահմանումը հարաւային կող-
մին, և Յովսէփի տունը իրանց
սահմաններումը կանգնեն հիւ-
սիսային կողմին։ Եւ դուք եր- 6
կիրը եօթը բաժին գրեցէք, և
ինձ մօտ բերէք այստեղ, և ես
ձեզ համար վիճակ գցեմ այս-
տեղ մեր Տէր Աստուծոյ առա-
ջին։ Որովհետև Ղևտացիները 7
ձեր միջում բաժին չ՚ունեն, որով-
հետև նորանց ժառանգութիւնը
Տիրոջ քահանայութիւնն է. և
Գադ ու Ռուբէն և Մանասէի
կէս ցեղը առան իրանց ժառան-
գութիւնները Յորդանանի այն
կողմում դէպի արևելք, որ Տիրոջ
ծառայ Մովսէսը տուաւ նորանց։
Եւ այն մարդիկը վեր կացան 8
գնացին. և Յեսուն հրամայեց
այն երկիրը գրելու գնացողներին
ասելով. Գնացէք և այն երկրու-
մը ման եկէք և նորան գրեցէք.
և ինձ մօտ դառէք, որ այստեղ
Սելովումը Տիրոջ առաջին ձեզ
համար վիճակ գցեմ։ Եւ այն 9
մարդիկը գնացին, և այն երկրի
մէջ ման եկան, և նորան իր քա-
ղաքներովը եօթը բաժին անելով
գրեցին մի գիրքի վերայ, և եկան
Յեսուի մօտ բանակը՝ Սելով։ Եւ 10
Յեսուն Սելովումը Տիրոջ առա-
ջին նորանց համար վիճակ գցեց.
և Յեսուն այնտեղ երկիրը բա-
ժանեց Իսրայէլի որդկանց վերայ
իրանց բաժինների համեմատ։
Եւ Բենիամինի որդկանց ցեղի 11
վիճակն ելաւ իրանց տոհմերի
համեմատ. և իրանց վիճակի
սահմանն ելաւ Յուդայի որդկանց
և Յովսէփի որդկանց մէջտեղը։
Եւ նորանց սահմանը եղաւ հիւ- 12
սիսային կողմումը Յորդանանից,
և այս սահմանը վեր է ելնում
հիւսիսային կողմիցն Երիքովի մօտ,
և բարձրանում դէպի սարը ա-

րևմուտքում, և վերջը հասնում
13 Բեթաւանի անապատը. Եւ անց-
նում է սահմանը այնտեղից Լուզ՝
դէպի Լուզ այսինքն Բեթէլի
մօտ հարաւային կողմիցը. և իջ-
նում է այս սահմանը Ատարօթ-
ադար այն սարի վերայ, որ ցածի
Բեթորոնի հարաւային կողմումն
14 է։ Եւ գնում է այս սահմանը և
պտոյտ տալիս արևմտեան կող-
մով դէպի հարաւ այն սարիցը,
որ հարաւային կողմիցը Բեթորո-
նի դիմացն է, և վերջը հասնում
է Կարիաթ-բաաղի, որ է Կարի-
աթարիմ Յուդայի որդկանց քա-
ղաքը։ Արևմտեան կողմը այս է։
15 Եւ հարաւային կողմը Կարիա-
թարիմի ծայրիցը ՝՝ Ուլ, սահ-
մանը դուրս է գալիս դէպի ա-
րևմուտք, ու գնում Նափթո-
16 վայի ջրի աղբիւրը։ Եւ իջնում
է այս սահմանը Ռափայնոց հո-
վիտի մէջ՝ հիւսիսային կողմում
եղող Ենովմի որդիի ձորի դիմա-
ցի սարի եզերքը, և Յեբուսի մօ-
տիցը դէպի հարաւ Ենովմի ձորն
17 է իջնում Ռովգելի աղբիւրը. Եւ
գնում է հիւսիսային կողմիցը
դուրս գալիս Ենսամիւս, և գը-
նում է ՝՝ Եդովմինի զա-
ռիվերի դէմ եղող Գալիլովթ, և
իջնում Ռուբէնեան Բաանի վէ-
18 մը, Եւ անցնում Արաբայի դի-
մացի կողմիցը դէպի հիւսիս և
19 իջնում Արաբաթ. Եւ անցնում
է այս սահմանը դէպի հիւսիս
Բեթագղայի մօտով և վերջը
հասնում է այս սահմանը Աղի
ծովի հիւսիսային ծոցը՝ Յորդա-
նանի հարաւային ծայրը։ Հարա-
20 ւային սահմանը այս է։ Եւ նորա
արևելեան կողմի սահմանը Յոր-
դանանն է։ Այս է Բենիամինի
որդկանց ժառանգութիւնը շուր-
ջանակի իր սահմաններովը նո-
21 րանց տոհմերի համեմատ։ Եւ
Բենիամինի որդկանց ցեղի քա-
ղաքներն իրանց տոհմերի համե-
մատ՝ Երիքով, Բեթագղա, Ե-
22 մեկկասիս, Բեթարաբա, Սեմա-
23 րիմ, Բեթէլ, Աւիմ, Փարա,
24 Եփրա, Քեփարամոննա, Հոփնի
և Գաբա. տասնևերկու քաղաք
և նորանց գիւղերը։ Գաբաւօն, 25
Ռամա, Բերովթ, Մասփա, Կե- 26
փիրա, Մոսա, Ռէկեմ, Յերփա- 27
յէլ, Թարաղա, Սելա, Էլէփ, 28
Յեբուս՝ այսինքն Երուսաղէմ,
Գաբաաթ, Կարիաթ. տասնևչորս
քաղաք և նորանց գիւղերը։ Այս
է Բենիամինի որդկանց ժառան-
գութիւնը իրանց տոհմերի հա-
մեմատ։

ԳԼ. ԺԹ

Եւ երկրորդ վիճակը դուրս ե- 1
կաւ Շմաւոնին, Շմաւոնի որդ-
կանց ցեղին իրանց տոհմերի հա-
մեմատ. և նորանց ժառանգու-
թիւնը եղաւ Յուդայի որդկանց
ժառանգութեան մէջ։ Եւ նո- 2
րանցը եղաւ իրանց ժառանգու-
թեան մէջ. Բերսաբէէ, (Սաբէէ)
Մօլադա, Ասեր-սուաղ, Բաղա, 3
Ասէմ, Էլթուղադ, Բաթուլ, 4
Հօրմա, Սիկելակ, Բեթմարքա- 5
բովթ, Ասեր-սուսա, Բեթլաբա- 6
ւովթ և Սարուհէն. տասնևերեք
քաղաք և նորանց գիւղերը։
Ային, Ռեմոն, Եթեր և Ասան. 7
չորս քաղաք և նորանց գիւղերը։
Եւ այս քաղաքների շուրջը ե- 8
ղած բոլոր գիւղերը՝ մինչև Բա-
աղէթ-բէէր, և հարաւային Ռա-
ման։ Այս է Շմաւոնի որդկանց
ցեղի ժառանգութիւնն իրանց
տոհմերի համեմատ։ Շմաւոնի 9
որդկանց ժառանգութիւնը Յու-
դայի որդկանց բաժինիցն եղաւ,
որովհետև Յուդայի որդկանց բա-
ժինը շատ էր իրանց համար, նո-
րա համար Շմաւոնի որդիքը նո-
րանց ժառանգութեան մէջ ժա-
ռանգութիւն առան։
Եւ երրորդ վիճակն ելաւ Զա- 10
բուղոնի որդկանցը իրանց տոհ-
մերի համեմատ. և նորանց ժա-
ռանգութեան սահմանը եղաւ
մինչև Սարիդ։ Եւ նորանց սահ- 11
մանը վեր է ելնում դէպի ծովը
և Մարաղա. և դպչում է Դա-
բասէթին, և հասնում է Յեկ-
նամի դէմ եղող ձորը, Եւ Սա- 12
րիդից դառնում է դէպի արև-
ելեան կողմը Քասղովթ-Թաբօ-

րի սահմանը, և դուրս է գալիս
Դաբարաթից և բարձրանում
43 Յափիէ, Եւ այնտեղից անցնում
է դէպի առաջի կողմը արևելք
Գեթքոփեր Իթագասին և դուրս
է գալիս Ռեմոն-մեթօար, Նուա.
44 Եւ պտոյտ է տալիս այս սահմանը
հիւսիսային կողմից Ենաթօնով,
և Յեփթայէլի ձորումը վերջա-
45 նում. Եւ Կատտաթ և Նաա-
զօլ, և Սամրօն ու Յադելա, և
Բեթլէհէմ տասնևերկու քաղաք
46 և նորանց գիւղերը։ Այս է Զա-
բուղոնի որդկանց ժառանգու-
թիւնը իրանց տոհմերի համե-
մատ. այս քաղաքները և նո-
րանց գիւղերը։
47 Չորրորդ վիճակն ելաւ Իսա-
քարին, Իսաքարի որդկանցն ի-
48 րանց տոհմերի համեմատ. Եւ
նորանց սահմանը եղաւ՝ Յեզրա-
49 յէլ, Քասելովթ, Սունամ, Ա-
20 փերեմ, Սիան, Անարէթ, Ռաբ-
21 բիդ, Կեսիօն, Աբէս, Ռամաթ,
Ենգանիմ, Ենքադդա և Բեթ-
22 փասես. Եւ այս սահմանը դըպ-
չում է Թաբօրին, Սասիմային և
Բեթսամիւսին, և նորանց սահ-
մանը վերջանում է Յորդանանու-
մը տասնևվեց քաղաք և նորանց
23 գիւղերը։ Այս է Իսաքարի որդ-
կանց ցեղի ժառանգութիւնը ի-
րանց տոհմերի համեմատ, այս
քաղաքները և նորանց գիւղերը։
24 Եւ հինգերորդ վիճակն ելաւ
Ասերի որդկանց ցեղին իրանց
25 տոհմերի համեմատ։ Եւ նորանց
սահմանը եղաւ. Քեղկաթ, Աղի,
26 Բետէն, Աքսափ, Ալամելէք, Ա-
մադ, և Մասաղ. և արևմտեան
կողմից հասնում է Կարմեղոսին
27 և Սիօր-լեբնաթին, Եւ արևել-
եան կողմիցը դառնում է դէպի
Բեթդագոն, և հիւսիսային կող-
միցը հասնում է Զաբուղոնին
Յեփթայէլի ձորումը, Բեթամէ-
կին և Նէիէլին, և դուրս է գա-
28 լիս ձախ կողմից Քաբօղ, Եւ
Եբրօն, Բոոբ, Համմոն, և Կանա,
29 մինչև մեծ Սիդոն. Եւ այս սահ-
մանը դառնում է Ռամա մինչև
Տիւրոս՝ ամուր քաղաքը, և այս
սահմանը դառնում է Ուսա և
ծովումը վերջանում Աքեզիբի
վիճակի մէջ. Եւ Ամմա, Ափէկ, 30
և Բոոբ. քսանևերկու քաղաքներ
և նորանց գիւղերը։ Այս է Ասե- 31
րի որդկանց ցեղի ժառանգու-
թիւնն իրանց տոհմերի համե-
մատ, այս քաղաքները և նորանց
գիւղերը։
Վեցերորդ վիճակն ելաւ Նեփ- 32
թաղիմի որդկանցը, այսինքն Նեփ-
թաղիմի որդկանցն իրանց տոհ-
մերի համեմատ։ Եւ նորանց սահ- 33
մանն եղաւ, Հելէփից, Ալօնից
մինչև Սանանիմ, և Ադամի-նա-
դեբ, և Յաբնէլ մինչև Լակում
և վերջանում է Յորդանանի մէջ։
Եւ այս սահմանը դառնում է 34
արևմտեան կողմիցը դէպի Ազա-
նօթ-թաբօր, և այնտեղից դուրս
գալիս Հուկօկ, և հասնում հա-
րաւային կողմից մինչև Զաբու-
ղոն, և արևմտեան կողմից մին-
չև Ասեր, և արևելեան կողմիցը
մինչև Յուդա և Յորդանան. Եւ 35
պարսպաւոր քաղաքները՝ Ասե-
դիմ, Սէր, Ամաթ, Ռեկկաթ,
Քեներեթ, Ադամա, Ռամա, Հա- 36
սոր, Կադէս, Եդրայի, Ենհասոր, 37
Յարօն, Մակդաղիէլ, Հարէմ, 38
Բեթանաթ, և Բեթսամիւս.
տասնևինը քաղաք և նորանց գիւ-
ղերը։ Այս է Նեփթաղիմի որդ- 39
կանց ցեղի ժառանգութիւնն ի-
րանց տոհմերի համեմատ, այս
քաղաքները և նորանց գիւղերը։
Եօթներորդ վիճակն ելաւ Դա- 40
նի որդկանց ցեղին իրանց տոհ-
մերի համեմատ։ Եւ նորանց ժա- 41
ռանգութեան սահմանը եղաւ
Սարաա, Եսթաւուղ, Իրսամէս,
Սաղաբին, Այեղոն, Յեթլա, 42
Ելօն, Թամնաթա, Ակկարոն, 43
Ելթեկէ, Քաբաթոն, Բաալօթ, 44
Եհուդ, Բանէ-բարակ, Գեթրե- 45
մոն, Մէարկոն, և Ռակկոն, Յոպ- 46
պէի դիմացի սահմանի հետ։ Եւ 47
Դանի որդկանց սահմանն իրանց
համար փոքր դուրս ելաւ. ուս-
տի Դանի որդիքը վեր կացան,
և Լեսեմի հետ պատերազմեցին,
և նորան առան և նորան սուրի
բերանով զարկեցին և նորան ժա-
ռանգեցին, և նորա մէջ բնակ-

ուեցան, և Լեսեմն իրանց հօր
Դանի անունովը Դան կոչեցին։
48 Այս է Դանի որդկանց ցեղի ժա-
ռանգութիւնը իրանց տոհմերի
համեմատ. այս քաղաքները և
նորանց գիւղերը։
49 Եւ երկիրն իր սահմաններովը
բաժանելը վերջացրին, և Իսրայէլի
որդիքը ժառանգութիւն տուին
Նաւեան Յեսուին իրանց մէջ.
50 Տիրոջ հրամանովը նորա ուզած
քաղաքը Թամնաթ-սարան իրան
տուին Եփրեմի սարի վերայ. և
նա շինեց քաղաքը և բնակուեց
նորանում։
51 Սորանք են այն ժառանգու-
թիւնները՝ որ Եղիազար քահանան
և Նաւեան Յեսուն և Իսրայէլի
որդկանց ցեղերի նահապետները
Սելովումը Տիրոջ առաջին՝ ժո-
ղովքի խորանի դռան մօտ վի-
ճակով բաժանեցին, և երկիրը
բաժանելը վերջացրին։

ԳԼ. Ի

1 Եւ Տէրը խօսեց Յեսուի հետ
2 ասելով. Խօսիր Իսրայէլի որդ-
կանց հետ և ասիր. Որոշեցէք
ձեզ համար այն ապաստանի քա-
ղաքները, որ Մովսէսի միջոցով
3 ձեզ ասել եմ. Որպէս զի այն-
տեղ փախչէ սխալմամբ առանց
դիտենալու մարդ զարկող սպա-
նողը. և նորանք ձեզ համար ա-
պաստանարան լինեն արիւնի վը-
4 րէժխնդրիցը. Եւ նա փախչէ այն
քաղաքների մէկի մէջը և քա-
ղաքի դռանը կանգնէ, և այն
քաղաքի ծերերի ականջներին ա-
սէ իր իրաւունքը. և նորանք նո-
րան իրանց մօտ քաղաքի մէջ
առնելով նորան տեղ տան, որ
5 իրանց հետ բնակուի։ Եւ երբոր
արիւնի վրէժխնդիրը նորա ետե-
ւիցն ընկնէ, նորանք սպանողին
նորա ձեռքը չ՚տան. որովհետև
նա իր դրացիին անգիտութեամբ
է մեռցրել, և նորա դէմ թշ-
նամութիւն չ՚ունէր երէկուանից
6 միւս օրից։ Եւ նա այն քաղա-
քումը բնակուի, մինչև որ դա-
տաստանի համար ժողովքի ա-
ռաջը կանգնէ և մինչև որ այն օ-
րերը եղող քահանայապետը մեռ-
նէ. այն ժամանակ սպանողը ետ
դառնայ, և գնայ իր քաղաքը և
իր տունը, այսինքն այն քաղա-
քը, որտեղից նա փախել էր։
Եւ Գալիլեայի մէջ Կադէսը ո- 7
րոշեցին Նեփթաղիմի լեռնակող-
մումը, Սիւքեմը՝ Եփրեմի լեռ-
նակողմումը, և Կարիաթ-արբան
այսինքն Քեբրոնը՝ Յուդայի լեռ-
նակողմումը։ Եւ Երիքովի դէմ 8
Յորդանանի այն կողմին դէպի ա-
րևելք որոշեցին Ռուբէնի ցեղիցն
անապատի դաշտումը Բոսորը, և
Գադի ցեղից՝ Գաղաադումը Ռա-
մովթը, և Մանասէի ցեղից՝ Բա-
սանումը Գովզանը։ Բոլոր Իսրա- 9
յէլի որդկանց համար և նորանց
մէջ բնակող օտարականի հա-
մար որոշուած քաղաքները սո-
րանք են, որ ամեն սխալմամբ
մարդ սպանողը այնտեղ փախչէ,
ու չ՚մեռնէ արիւնի վրէժխնդրի
ձեռքով, մինչև որ ժողովքի ա-
ռաջը կանգնէ։

ԳԼ. ԻԱ

Եւ Ղևտացիների նահապետնե- 1
րը մօտեցան Եղիազար քահանա-
յին, Նաւեան Յեսուին և Իսրա-
յէլի որդկանց ցեղերի նահապետ-
ներին, Եւ խօսեցին նորանց հետ 2
Քանանի երկրումը Սելովումը ա-
սելով. Տէրը Մովսէսի միջոցովը
հրամայեց բնակուելու համար
արուարձանները տալ մեզ։ Եւ 3
Իսրայէլի որդիքը Տիրոջ հրամա-
նովն իրանց ժառանգութիւնն-
երիցն այս քաղաքները և նորանց
արուարձանները տուին Ղևտա-
ցիներին։
Եւ վիճակը ելաւ Կահաթեանց 4
ազգատոհմներին. և Ղևտացիներ-
ից Ահարօն քահանայի որդիներ-
ին վիճակով տասնևերեք քա-
ղաք ելաւ, Յուդայի ցեղիցը,
Շմաւոնի ցեղիցը և Բենիամինի
ցեղիցը։ Եւ Կահաթի միւս որ- 5
դիներին Եփրեմի ցեղի ազգա-
տոհմներիցը և Դանի ցեղիցը, և
Մանասէի կէս ցեղիցը վիճակով

6 տասը քաղաք։ Եւ Գերսոնի որ-
դիներին՝ Իսաքարի ցեղի ազգա-
տոհմներիցը և Ասերի ցեղիցը և
Նեփթաղիմի ցեղիցը, և Բասա-
նի մէջ եղող Մանասէի կէս ցե-
ղիցը վիճակով տասնևերեք քա-
7 ղաք։ Մերարիի որդկանց համար
իրանց տոհմերի համեմատ՝ Ռու-
բէնի ցեղիցը Գադի ցեղիցը և
Զաբուղոնի ցեղիցը տասնևերկու
8 քաղաք։ Եւ Իսրայէլի որդիքը այս
քաղաքները և նորանց արուար-
ձանները վիճակով տուին Ղևտա-
ցիներին, ինչպէս որ Տէրը պատ-
ուիրել էր Մովսէսի միջոցովը։
9 Եւ Յուդայի որդկանց ցեղիցը
և Շմաւոնի որդկանց ցեղիցն այս
քաղաքները տուին, որ իրանց
10 անունովը յիշուած էին. Եւ Ա-
հարօնի որդիներինը եղան, որոնք
Ղևիի որդիներիցն եղող Կահաթ-
եանց ազգատոհմներիցն էին. ո-
րովհետև առաջի վիճակը նորան-
11 ցըն էր։ Եւ նորանց տուին Յու-
դայի սարի վերայ՝ Ենակի հօր
Արբայի քաղաքը՝ այսինքն Քեբ-
րոնը, նորա շրջակայ արուար-
12 ձաններովը. Եւ քաղաքի ագա-
րակներն ու դիւղերը Յեփոնեան
13 Քաղէբին կալուածք տուին։ Եւ
Ահարօն քահանայի որդիներին՝
սպանողի համար ապաստանի քա-
ղաք Քեբրոնը տուին իր արուար-
ձաններովը. նաև Լեբնան իր ար-
14 ուարձաններովը։ Եւ Յաթիրն իր
արուարձաններովը, և Եսթեմոն
15 իր արուարձաններովը, Եւ Քօ-
ղօնն իր արուարձաններովը, և
Դաբիրն իր արուարձաններովը,
16 Եւ Այինը իր արուարձաններո-
վը, և Յետտան իր արուարձան-
ներովը, և Բեթսամիւսն իր ար-
ուարձաններովը. այս երկու ցե-
17 ղիցը ինը քաղաք։ Եւ Բենիամի-
նի ցեղիցը Գաբաւօնն իր ար-
ուարձաններովը, Գաբան իր ար-
18 ուարձաններովը, Անաթովթն իր
արուարձաններովը, և Գաղմոնն
իր արուարձաններովը. չորս քա-
19 ղաք։ Ահարօնի որդիք՝ քահա-
նաների բոլոր քաղաքները տասն-
ևերեք քաղաք էին և նորանց
արուարձանները։

Եւ Կահաթի որդիներից մնա- 20
ցած Ղևտացի Կահաթեանց ազ-
գատոհմներն էլ Եփրեմի ցեղիցը
վիճակով քաղաքներ առան։ Եւ 21
նորանց տուին Եփրեմի լեռնա-
կողմումը՝ սպանողի համար ա-
պաստանի քաղաք Սիւքէմն իր
արուարձաններովը, և Գազէրն
իր արուարձաններովը, Եւ Կաբ- 22
սեմն իր արուարձաններովը, և
Բեթորոնն իր արուարձաններովը.
չորս քաղաք։ Եւ Դանի ցեղիցը՝ 23
Ելթեկէն իր արուարձաններովը,
Գաբաթոնն իր արուարձաններո-
վը, Այեղոնն իր արուարձաննե- 24
րովը, և Գեթրեմոնն իր արուար-
ձաններովը. չորս քաղաք։ Եւ 25
Մանասէի կէս ցեղիցը՝ Թանաքն
իր արուարձաններովը, և Գեթ-
րեմոնն իր արուարձաններովը. եր-
կու քաղաք։ Կահաթի որդինե- 26
րից մնացած ազգատոհմների բո-
լոր քաղաքները տասն էին և նո-
րանց արուարձանները։
Եւ Ղևտացիների ազգատոհմ- 27
ներից եղող Գերսոնի որդիներին
տուին Մանասէի կէս ցեղիցն ըս-
պանողի համար ապաստանի քա-
ղաք Բասանումը Գովղանն իր ար-
ուարձաններովը. նաև Բեեստա-
րան իր արուարձաններովը. եր-
կու քաղաք։ Եւ Իսաքարի ցե- 28
ղիցը՝ Կեսիօնն իր արուարձաննե-
րովը, Դաբարաթն իր արուար-
ձաններովը, Յերիմութն իր ար- 29
ուարձաններովը, Ենգանիմն իր
արուարձաններովը. չորս քաղաք։
Եւ Ասերի ցեղից՝ Մասաղն իր 30
արուարձաններովը, Աբդօնն իր
արուարձաններովը, Քեղկաթն իր 31
արուարձաններովը, և Բոսբն իր
արուարձաններովը. չորս քաղաք։
Եւ Նեփթաղիմի ցեղիցն սպանո- 32
ղի համար ապաստանի քաղաք
Գալիլեայում Կադէսն իր ար-
ուարձաններովը. նաև Եմաթ-
դովրն իր արուարձաններովը, և
Կարթանն իր արուարձաններովը.
երեք քաղաք։ Գերսոնեանց բո- 33
լոր քաղաքները նորանց ազգա-
տոհմների համեմատ տասնևերեք
քաղաք էին և նորանց արուար-
ձանները։

34 Եւ մնացած Ղևտացիներին՝
այսինքն Մերարիի որդկանց ազ-
գատոհմներին տուին Զաբուղոնի
ցեղիցը Յեկնամն իր արուարձան-
ներովը, Կարթան իր արուար-
35 ձաններովը, Դեմնան իր արուար-
ձաններովը, և Նաաղօլն իր ար-
ուարձաններովը. չորս քաղաք։
36 Եւ Ռուբէնի ցեղիցը Բոսորն իր
արուարձաններովը, Յասսան իր
37 արուարձաններովը, Կադեմօթն
իր արուարձաններովը, և Մե-
փայաթն իր արուարձաններովը.
38 չորս քաղաք։ Եւ Գադի ցեղիցն
սպանողի համար ապաստանի քա-
ղաք Գաղաադումը Ռամովթն իր
արուարձաններովը. նաև Մանա-
39 յիմն իր արուարձաններովը, Եսե-
բոնն իր արուարձաններովը, և
Յազերն իր արուարձաններովը.
40 ամենը չորս քաղաք։ Ղևտացի-
ների ազգատոհմներից մնացած
Մերարիի որդկանց բոլոր քաղաք-
ներն իրանց տոհմերի համեմատ
իրանց վիճակովը տասնևերկու
41 քաղաք եղաւ։ Իսրայէլի որդ-
կանց կալուածքների մէջ Ղևտա-
ցիների բոլոր քաղաքները քառա-
սունևութը քաղաք էին՝ և նո-
42 րանց արուարձանները։ Այս քա-
ղաքների ամեն մէկն իր շրջակայ
արուարձաններն ունէր, այս քա-
ղաքների ամենն էլ այնպէս էր։
43 Եւ Տէրը տուաւ Իսրայէլին այն
բոլոր երկիրը, որ երդում էր ա-
րել նորանց հայրերին տալու. և
նորան ժառանգեցին և նորանում
44 բնակուեցան. Եւ Տէրը նորանց
ամեն կողմից հանգստացրեց, ինչ-
պէս որ նորանց հայրերին երդում
էր արել. և նորանց բոլոր թշ-
նամիներիցը բնաւ մէկը չ՚կարո-
ղացաւ նորանց դէմ կենալ. Տէ-
րը նորանց ամեն թշնամիներին
45 նորանց ձեռքը տուաւ. Ոչ մի
բան չ՚պակասեց այն ամեն բարի
բաներիցը, որ Եհովան Իսրայէլի
տան համար խօսել էր. բոլորը
կատարուեցաւ։

ԳԼ. ԻԲ

1 Այն ժամանակ Յեսուն կանչեց
Ռուբէնեաններին, Գադեաններին
և Մանասէի կէս ցեղին, Եւ նո- 2
րանց ասեց. Դուք այն ամենը
պահեցիք ինչ որ Տիրոջ ծառայ
Մովսէսը ձեզ հրամայել էր. և
իմ խօսքին լսեցիք ամեն բանի
մէջ, որ ձեզ պատուիրեցի։ Այս- 3
չափ շատ օրեր մինչև այս օրը ձեր
եղբայրներին չ՚թողեցիք, և ձեր
Տէր Աստուծոյ պատուիրանքի
պահպանութիւնը պահեցիք։ Եւ 4
հիմա ձեր Տէր Աստուածը ձեր
եղբայրներին հանգստացրեց, ինչ-
պէս որ նորանց ասեց. ուրեմն
հիմա ետ դառէք, և գնացէք ձեր
վրանները դէպի ձեր կալուածքի
երկիրը, որ Տիրոջ ծառայ Մով-
սէսը Յորդանանի այն կողմումը
ձեզ տուաւ։ Միայն թէ շատ 5
զգուշութիւն արէք որ գործա-
դրէք այն պատուիրանքը և այն օ-
րէնքը, որ Տիրոջ ծառայ Մովսէ-
սը ձեզ պատուիրեց, որ ձեր Տէր
Աստուծուն սիրէք, և նորա ա-
մեն ճանապարհներումը գնաք,
և նորա պատուիրանքները պա-
հէք, և նորան յարիք, և նորան
պաշտէք ձեր բոլոր սրտովը և
ձեր բոլոր հոգիովը։ Եւ Յեսուն 6
օրհնեց նորանց և արձակեց. և
նորանք գնացին իրանց վրանները։
Եւ Մանասէի կէս ցեղին Մով- 7
սէսը տուել էր Բասանի մէջ, և
կէսին էլ Յեսուն նորանց եղբայր-
ների հետ Յորդանանի այս կող-
մումը տուաւ դէպի արևմուտք։
Եւ երբոր Յեսուն նորանց իրանց
վրաններն ուղարկեց, նորանց օրհ-
նեց. Եւ նորանց հետ խօսեց ասե- 8
լով. Շատ հարստութիւնով ետ
դառէք ձեր վրանները և խիստ
շատ անասուններով, արծաթով,
ոսկիով, պղնձով, երկաթով և
խիստ շատ հանդերձներով, և
ձեր թշնամիների աւարը ձեր եղ-
բայրների հետ բաժանեցէք։
Եւ ետ դառան գնացին Ռուբէ- 9
նի որդիքը, Գադի որդիքը և Մա-
նասէի կէս ցեղը Քանանի երկրումն
եղող Սելովումը Իսրայէլի որդինե-
րից, որ գնան իրանց ժառանգու-
թեան երկիրը՝ այսինքն Գաղաադի
երկիրը, որ Մովսէսի միջոցով ե-
ղած Տիրոջ հրամանովն առել էին։

10 Եւ եկան Յորդանանի կողմերը
որ Քանանի երկրումն է և Ռու-
բէնի որդիքը, Գադի որդիքը և
Մանասէի կէս ցեղը այնտեղ Յոր-
դանանի մօտ մէկ սեղան շինե-
ցին՝ մի մեծ սեղան երևութով։
11 Եւ Իսրայէլի որդիքը լսեցին թէ
ահա Ռուբէնի որդիքը, Գադի
որդիքը և Մանասէի կէս ցեղը
սեղանը շինել են Քանանի երկրի
դէմ Յորդանանի կողմին Իսրա-
12 յէլի որդկանց անցքի մօտ. Եւ
երբոր Իսրայէլի որդիքը լսեցին,
Իսրայէլի որդկանց բոլոր ժողով-
քը Սելովի մէջ ժողովուեցան, որ
նորանց վերայ գնան պատերազ-
13 մի։ Եւ Իսրայէլի որդիքը Ռու-
բէնեանց, Գադեանց և Մանասէի
կէս ցեղի մօտ Գաղաադի երկիրը
ուղարկեցին Եղիազարի որդի Փե-
14 նէհէս քահանային, Եւ նորա
հետ տասը իշխան, այսինքն Իս-
րայէլի ամեն ցեղերի ամեն մի
նահապետութիւնից մէկ իշխան,
որոնց ամեն մէկը Իսրայէլի հա-
զարաւորների մի նահապետու-
15 թեան իշխան էր։ Եւ նորանք
գնացին Ռուբէնի որդկանց, Գա-
դի որդկանց և Մանասէի կէս
ցեղի մօտ՝ Գաղաադ, և նորանց
16 հետ խօսեցին ասելով. Տիրոջ
բոլոր ժողովքը այսպէս են ա-
սում. Դա ի՞նչ մեղք է որ դուք
Իսրայէլի Աստուծոյ դէմ գործե-
ցիք՝ այսօր Տէրիցը խոտորուելով,
և այսօր Տիրոջ դէմ ապստամ-
բութիւն անելով ձեզ համար
17 սեղան շինեցիք։ Մի՞թէ Փոգով-
րի անօրէնութիւնը քիչ էր մեզ
համար, որից մինչև այս օրը չը
մաքրուեցանք, և Տիրոջ ժողով-
քի վերայ եկաւ այն հարուածը։
18 Եւ դուք այսօր Տէրիցը խոտոր-
ուեցաք, ուրեմն եթէ դուք այս-
օր Տէրիցն ապստամբուէք, նա էլ
էգուց Իսրայէլի բոլոր ժողովքի
19 վերայ կ'բարկանայ։ Սակայն ե-
թէ ձեր կալուածքի երկիրն ան-
մաքուր էք համարում, անց կա-
ցէք Տիրոջ կալուածքի երկիրը,
ուր կանգնած է Տիրոջ խորանը
և մեր միջում ժառանգութիւն
առէք. և Տիրոջ դէմ մի ապըս-
տամբիք և մեզ դէմ էլ մի ա-
պըստամբիք մեր Տէր Աստուծոյ
սեղանիցը ջոկ ձեզ համար սե-
ղան շինելով։ Չէ՞ որ Զարայեան 20
Աքարը նզովածիցն առնելով մեղք
գործեց, և բարկութիւնն Իսրա-
յէլի բոլոր ժողովքի վերայ եկաւ
և այն մարդը մինակ չ'մեռաւ իր
անօրէնութեան մէջ։
Եւ Ռուբէնի որդիքը, Գա- 21
դի որդիքը ու Մանասէի կէս
ցեղը պատասխանեցին և ասեցին
Իսրայէլի հազարապետներին. Ա- 22
ստուածների Աստուածը Եհովան,
աստուածների Աստուածը Եհո-
վան գիտէ. և Իսրայէլը թող գի-
տենայ. եթէ այս բանն ապստամ-
բութեամբ կամ Տիրոջ դէմ յան-
ցանք գործելով արիւնք՝ (մեզ այս-
օր *չ'փրկես,) Մեզ համար սե- 23
ղան շինեցինք Տէրիցը ետ դառ-
նալու համար, կամ նորա վերայ
ողջակէզ և հացի նուէր մատու-
ցանելու համար, և կամ նորա
վերայ խաղաղութեան զոհեր ա-
նելու համար, Տէրն ինքը քննու-
թիւն անէ։ Եթէ որ մենք այս 24
մեր վախիցը չ'շինեցինք, ասելով.
որ էգուց ձեր որդիքը մեր որդ-
կանցը կ'ասեն. Թէ Դուք Իսրա-
յէլի Եհովայ Աստուծոյ հետ ի՞նչ
ունիք. Ով Ռուբէնեանք և Գադ- 25
եանք, Եհովան մեր ու ձեր մէջ
Յորդանանը սահման դրաւ. դուք
Տէրիցը բաժին չ'ունէք. և ձեր
որդիքը մեր որդիներիցը Տիրոջ
երկիւղը կ'դադարեցնեն։ Այս 26
պատճառով ասեցինք. Մեզ հա-
մար մէկ սեղան շինենք, ոչ թէ
ողջակէզի համար, ոչ էլ զոհի
համար, Այլ որ վկայ լինի մեր 27
ու ձեր մէջ, և մեզանից յետոյ
մեր սերունդների մէջ, որ մեր
ողջակէզներովը, մեր պատարագ-
ներովը և մեր խաղաղութեան
զոհերովը Տիրոջ ծառայութիւնը՝
նորա առաջին անենք, և էգուց
ձեր որդիքը չ'ասեն մեր որդկան-
ցը՝ թէ Դուք բաժին չ'ունէք
Տէրիցը։ Եւ ասեցինք. Եթէ մեզ 28
կամ մեր սերունդին էգուց ա-

*չ'ապրեցնես։

սելու լինեն, մենք էլ կ'ասենք
թէ Տեսէք Եհովայի սեղանի օրի-
նակը որ մեր հայրերը շինեցին,
ոչ թէ ողջակէզի համար կամ
զոհի համար, այլ մեր և ձեր մէջ
վկայութիւն լինելու համար։
29 Քաւ լիցի մեզ որ մենք Տէրիցը
ապստամբուենք, և այսօր Տէրիցը
ետ դառնալով սեղան շինենք ող-
ջակէզի համար, հացի նուէրի
համար և զոհի համար բացի մեր
Տէր Աստուծոյ սեղանիցը որ խո-
րանի առաջին է։
30 Եւ Փենէհէս քահանան և նո-
րա հետ եղող ժողովքի իշխան-
ները և Իսրայէլի հազարապետ-
ները լսեցին այն խօսքերը, որ
Ռուբէնի որդիքը, Գադի որդիքը
և Մանասէի որդիքը խօսեցին, և
31 իրանց հաճոյ երևեցաւ. Եւ Ե-
ղիազարի որդի Փենէհէս քահա-
նան Ռուբէնի որդկանցը, Գադի
որդկանցը և Մանասէի որդկանցն
ասեց. Այսօր իմացանք որ Տէրը
մեր մէջն է, որովհետև դուք
Տիրոջ դէմ չ'գործեցիք այս յան-
ցանքը, և ազատեցիք Իսրայէլի
32 որդկանցը Տիրոջ ձեռքիցը։ Եւ
Եղիազարի որդի Փենէհէս քա-
հանան և իշխանները ետ դառան
Ռուբէնի որդկանց և Գադի որդ-
կանց մօտից Գաղաադի երկրիցը
Քանանի երկիրը Իսրայէլի որդ-
կանց մօտ և լուր բերին նորանց։
33 Եւ այս բանը Իսրայէլի որդկանցը
հաճոյ երևեցաւ, և Իսրայէլի որ-
դիքն օրհնեցին Աստուծուն, և
չ'ասեցին որ նորանց վերայ գնան
պատերազմելու, որ կործանեն
Ռուբէնի որդկանց և Գադի որդ-
34 կանց բնակած երկիրը։ Եւ Ռու-
բէնի որդիքը և Գադի որդիքը
այն սեղանին անունը Վկայութիւն
դրին, որովհետև նա մեր միջումը
վկայ է որ Եհովան է Աստուած։

ԳԼ. ԻԳ

1 Եւ շատ օրերից յետոյ, որ Տէ-
րը հանգստացրել էր Իսրայէլին
նորա շրջակայքում եղած ամեն
թշնամիներիցը, և Յեսուն ծերա-
ցել էր և օրերն անց կացրել,
2 Այն ժամանակ Յեսուն կանչեց
բոլոր Իսրայէլին՝ այսինքն նորա
ծերերին, իշխաններին, դատա-
ւորներին և ոստիկաններին, և
նորանց ասեց. Ես ծերացել եմ,
և օրերս անց եմ կացրել. Եւ 3
դուք տեսաք այն ամենը, ինչ որ
ձեր Տէր Աստուածը ձեր առա-
ջին արաւ այս բոլոր ազգերին.
որովհետև ձեր Տէր Աստուածը
ինքն էր ձեզ համար պատերազ-
մողը։ Նայեցէք, ես ձեզ համար 4
բաժանեցի այս մնացած ազգերը
վիճակով իբրև ժառանգութիւն
ձեր ցեղերի համեմատ, և այն
ամեն ազգերը որ ես ջարդեցի,
Յորդանանից մինչև Մեծ ծովը
դէպի արևմուտք։ Եւ ձեր Տէր 5
Աստուածն ինքը կ'հալածէ նո-
րանց ձեր առաջիցը և կ'քշէ, և
նորանց երկիրը դուք կ'ժառան-
գէք, ինչպէս որ ձեր Տէր Աստ-
ուածը ձեզ ասեց։ Ուրեմն շատ 6
ժիր եղիք, որ պահէք և անէք
բոլոր ինչ որ գրուած է Մովսէ-
սի օրէնքի գրքումը, որ նորանից
չ'խոտորուէք աջ կամ ձախ. Որ- 7
պէս զի ձեզ մօտ մնացած այս
ազգերի մէջ չ'մտնէք և նորանց
աստուածների անունները չ'յի-
շէք, և նորանցով երդում չ'ա-
նէք և նորանց երկրպագութիւն
չ'անէք. Այլ ձեր Տէր Աստու- 8
ծուն յարիք, ինչպէս որ մինչև
այս օրը արել էք։ Եւ Տէրը ձեր 9
առաջից մեծ և զօրաւոր ազգեր
քշեց. և մինչև այս օրը ոչ մէկը
ձեզ դէմ չ'կանգնեց։ Չեզանից 10
մէկ մարդ հազարը կ'հալածէ,
որովհետև ձեր Տէր Աստուածը
ինքն է ձեզ համար պատերազ-
մողը, ինչպէս որ ձեզ ասել է։
Ուրեմն ձեր անձերին շատ ըզ- 11
գուշութիւն անէք, որ ձեր Տէր
Աստուծուն սիրէք։ Բայց եթէ 12
նորանից ետ դառնաք, և ձեզ
մօտ մնացած այս ազգերի մնա-
ցորդին յարիք, և նորանց հետ
խնամութիւն անէք, և դուք
նորանց հետ խառնուիք և նորանք
էլ ձեզ հետ, Ստոյգ գիտացէք, 13
որ ձեր Տէր Աստուածը այլ ևս
այս ազգերին ձեր առաջից չի
հալածիլ. այլ նորանք ձեզ հա-

մար որոգայթ ու գայթակղու-
թիւն կ'դառնան, և ձեր կողերի
համար խթաններ, և ձեր աչքե-
րի համար փուշեր, մինչև որ բը-
նաջինջ լինէք այս բարի երկրի
վերայից, որ ձեր Տէր Աստուածը
14 ձեզ տուաւ։ Եւ ահա ես այսօր
գնում եմ ամեն երկրի ճանա-
պարհը, և դուք ձեր բոլոր սրբ-
տովը և բոլոր հոգիովը գիտէք,
որ ձեր Տէր Աստուածը ձեզ հա-
մար որչափ բարի խօսքեր որ ա-
սել էր, նորանցից մի բան չ'պա-
կասեց, ամենն էլ ձեզ վերայ
կատարուեցաւ. նորանցից ոչ մէկ
15 խօսք դետինը չ'ընկաւ։ Եւ ինչ-
պէս որ ձեզ վերայ եկաւ ձեր
Տէր Աստուծոյ ձեզ համար ա-
րած ամեն բարի խօսքերը, նոյն-
պէս էլ Տէրը կ'բերէ ձեզ վերայ
այն ամեն չար խօսքերը, մինչև
որ բնաջինջ անէ ձեզ այս բարի
երկրի վերայից, որ ձեր Տէր Ա-
16 ստուածը ձեզ տուաւ։ Եթէ ձեր
Տէր Աստուծոյ ձեզ պատուիրած
ուխտը զանց անէք, և գնաք օ-
տար աստուածներ պաշտէք. և
նորանց երկրպագութիւն անէք,
Տիրոջ բարկութիւնը ձեզ վերայ
կ'բորբոքուի, և այն ձեզ տրուած
բարի երկրի վերայից շուտով կը
կորչէք։

ԳԼ. ԻԴ

1 Եւ Յեսուն Իսրայէլի բոլոր ցե-
ղերը Սիւքէմի մէջ ժողովեց, և
Իսրայէլի ծերերին, իշխաններին,
դատաւորներին և ոստիկաններին
կանչեց, և նորանք կանգնեցին
2 Աստուծոյ առաջին։ Եւ Յեսուն
ասեց բոլոր ժողովրդին. Իսրայէ-
լի Տէր Աստուածն այսպէս է ա-
սում. Վաղուց ձեր հայրերը՝ Աբ-
րահամի հայրը և Նաքովրի հայ-
րը՝ Թարան դետի այն կողմումն
էին բնակվում, և օտար աստ-
3 ուածներ էին պաշտում. Եւ ես
առայ ձեր հայր Աբրահամին դե-
տի այն կողմիցը, և նորան Քա-
նանի բոլոր երկրի մէջ ման ածե-
ցի, և շատացրի նորա սերունդը,
4 և Իսահակը նորան տուի. Եւ Ի-
սահակին տուի Յակոբը և Եսա-
ւը, և Եսաւին տուի Սէիր սարը
իբրև ժառանգութիւն. և Յակո-
բը և նորա որդիքը իջան Եգիպ-
տոս։ Եւ ես ուղարկեցի Մովսէ-
սին և Ահարօնին, և զարկեցի Ե-
գիպտոսը, (ինչպէս որ նորա մէջ
արի,) և յետոյ ձեզ հանեցի։
Եւ ես ձեր հայրերին Եգիպտոսի-
ցը հանեցի, և դուք եկաք ծովը,
և Եգիպտացիները կառքերով և
ձիաւորներով մինչև Կարմիր ծո-
վը ձեր հայրերի ետևիցն ընկան։
Եւ նորանք Տիրոջն աղաղակեցին,
և նա ձեր ու Եգիպտացիների
մէջտեղը խաւար գցեց, և ծովը
նորանց վերայ բերաւ՝ նորանց
ծածկեց. և ձեր աչքերը տեսան
Եգիպտոսի մէջ արած բաներս,
և շատ ժամանակ բնակուեցաք
անապատում։ Եւ ես ձեզ բերի
Յորդանանի այն կողմում բնա-
կող Ամօրհացիների երկիրը, և
նորանք ձեզ հետ պատերազմ ա-
րին. և ես նորանց ձեր ձեռքը
տուի, և դուք ժառանգեցիք
նորանց երկիրը. և նորանց ձեր
առաջիցը բնաջինջ արի։ Եւ Մո-
վաբի Թագաւոր Սեպփօրեան Բա-
ղակը վեր կացաւ, և Իսրայէլի
դէմ պատերազմ արաւ, և մարդ
ուղարկեց Բէովրեան Բաղաամին
կանչելու, որ նա ձեզ անիծէ։
Բայց ես չ'ուզեցի Բաղաամին լը-
սել, և նա ձեզ բոլորովին օրհ-
նեց, և ես ձեզ ազատեցի նորա
ձեռքիցը։ Եւ Յորդանանիցը անց-
նելով եկաք Երիքով, և Երիքո-
վի բնակիչները, Ամօրհացիները,
Փերեզացիները, Քանանացիները,
Քետացիները, Գերգեսացիները,
Խևացիները ու Յեբուսացիները
ձեզ դէմ պատերազմ արին, և
ես նորանց ձեր ձեռքը տուի. Եւ
ձեր առաջից իշամեղուները ու-
ղարկեցի, որ նորանց այսինքն Ա-
մօրհացիների երկու Թագաւոր-
ներին ձեր առաջիցը քշեցին. ոչ
քո սրովը և ոչ քո աղեղովը. Եւ
ես ձեզ մէկ երկիր տուի, որի
մէջ դուք չ'աշխատեցիք, և քա-
ղաքներ՝ որ դուք չ'շինեցիք, և
նորանց մէջ բնակվում էք և ու-
տում էք այն այգիներից և ձի-

թենիներից, որ դուք չ'տնկեցիք։
14 Եւ հիմա դուք Տէրիցը վախե-
ցէք և նորան հաւատարմու-
թեամբ և ճշմարտութեամբ ծա-
ռայութիւն արէք, և դէն գցե-
ցէք այն աստուածները, որոնց
ձեր հայրերը Գետի այն կողմին
և Եգիպտոսի մէջ ծառայութիւն
15 արին, և Տիրոջը պաշտեցէք։ Բայց
եթէ Տիրոջը ծառայութիւն ա-
նելը ձեզ անհաճոյ է, ընտրեցէք
այսօր ձեզ համար, թէ ո՞րն էք
պաշտելու. Գետի այն կողմին ձեր
հայրերի պաշտած աստուածնե՞-
րը, թէ Ամօրհացիների աստուած-
ները, որոնց երկրի մէջ դուք
բնակվում էք. բայց ես և իմ
տունը Եհովային ենք պաշտելու։
16 Եւ ժողովուրդը պատասխանեց
և ասեց. Քաւ լիցի որ մենք Եհո-
վային թողենք և ուրիշ աստ-
17 ուածներ պաշտենք։ Որովհետև
Եհովան է մեր Աստուածը, նա է
մեզ և մեր հայրերին Եգիպտոսի
երկրից՝ ծառայութեան տանիցը
հանողը. և նա մեր աչքերի ա-
ռաջին արաւ այս մեծ նշանները,
և մեզ պահեց մեր ամեն գնա-
ցած ճանապարհի մէջ և ամեն
ազգերի մէջ, որոնց միջովն որ
18 անցանք։ Եհովան քշեց բոլոր ազ-
գերին և երկրիս մէջ բնակող Ա-
մօրհացիներին մեր առաջից. մենք
էլ Եհովային ենք պաշտելու, ո-
րովհետև մեր Աստուածը նա է։
19 Եւ Յեսուն ժողովրդին ասեց.
Դուք չէք կարող Եհովային պաշ-
տել. որովհետև նա սուրբ Աստ-
ուած է. նա նախանձոտ Աստ-
ուած է ձեր յանցանքներն ու
20 մեղքերը չի ներիլ։ Որովհետև
երբոր Եհովային թողէք և օտար
աստուածներ պաշտէք, այն ժա-
մանակ նա ետ կ'դառնայ, և ձեզ
բարիք անելուց յետոյ ձեզ չար-
չարելով բնաջինջ կ'անէ։
21 Եւ ժողովուրդը Յեսուին ա-
սեց. Ոչ. այլ մենք Եհովային կը
պաշտենք։
22 Եւ Յեսուն ժողովրդին ասեց.
Դուք ձեր վկաներն էք, որ դուք
ձեզ համար Եհովային էք ընտ-
րել նորան պաշտելու համար, և
նորանք ասեցին. Վկայ ենք։ Ու-
23 րեմն հիմա ձեր մէջ եղած օտար
աստուածները դէն գցեցէք, և
ձեր սիրտը Իսրայէլի Եհովայ Ա-
ստուծուն դարձրէք։ Եւ ժողո-
24 վուրդը Յեսուին ասեց. Մենք մեր
Եհովայ Աստուծուն կ'պաշտենք
և նորա խօսքին կ'լսենք։
Եւ նոյն օրը Յեսուն ժողովրդի
25 հետ ուխտ արաւ, և Սիւքէմի
մէջ նորա համար կանոն և դա-
տաստան դրաւ։ Եւ Յեսուն այս
26 խօսքերը գրեց Աստուծոյ օրէնքի
գրքումը և մէկ մեծ քար առաւ,
և նորան կանգնեցրեց Տիրոջ սրբ-
բարանի մօտ եղած բեւեկնիի
տակին։ Եւ Յեսուն բոլոր ժողո-
27 վրդին ասեց. Ահա այս քարը
մեզ վկայ լինի, որովհետև սա
լսեց Տիրոջ մեզ հետ խօսած բո-
լոր խօսքերը. ուրեմն սա ձեզ
համար վկայ լինի, որ մի գուցէ
ձեր Աստուծուն ուրանաք։ Յե-
28 տոյ Յեսուն ժողովրդին արձա-
կեց, ամեն մարդ դէպի իր ժա-
ռանգութիւնը։
Եւ այս բաներից յետոյ մեռաւ
29 Տիրոջ ծառայ Նաւեան Յեսուն,
հարիւրևտասը տարեկան. Եւ նո-
30 րան թաղեցին իր ժառանգու-
թեան սահմանի մէջ. Գաաս սա-
րի հիւսիսային կողմումը՝ Եփրեմի
սարի վերայ Թամնաթ-սարայումը։
Եւ Իսրայէլը Տիրոջը պաշտեց
31 Յեսուի բոլոր օրերումը և այն
ծերերի բոլոր օրերումը, որ Յե-
սուից յետոյ ողջ մնացին և որ
Իսրայէլի համար Տիրոջ արած
ամեն գործքերը գիտէին։
Եւ Յովսէփի ոսկորները՝ որ Ի-
32 սրայէլի որդիքը Եգիպտոսիցը հա-
նել էին, թաղեցին Սիւքէմի մէջ
ագարակի այն մասումը, որ Յա-
կոբը ծախու առել էր Սիւքէմի
հօր Եմովրի որդիներիցը հարիւր
*կէսիթայի. և նա Յովսէփի որդ-
կանց ժառանգութիւնը եղաւ։
Ահարօնի որդի Եղիազարն էլ
33 մեռաւ. և նորան թաղեցին Եփ-
րեմի սարումը նորա որդի Փենէ-
հէսին տրուած բլուրի վերայ։

---

*փողի անուն է

ԴԱՏԱՒՈՐԱՑ ԳԻՐՔԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ եղաւ որ Յեսուի մեռնելուց
յետոյ Իսրայէլի որդիքը Տիրոջը
հարցրին և ասեցին. Ո՞վ վեր կե-
նայ առաջ մեզ համար Քանա-
նացիների վերայ՝ նորանց հետ
2 պատերազմելու։ Եւ Տէրն ասեց.
Յուդան թող վեր կենայ. ահա
3 երկիրը նորա ձեռքը տուի։ Եւ
Յուդան իր եղբայր Շմաւոնին ա-
սեց. Ինձ հետ վեր կաց դէպի իմ
վիճակը, և Քանանացիների հետ
պատերազմենք, և ես էլ քեզ
հետ կ'գնամ քո վիճակը. և
4 Շմաւոնը գնաց նորա հետ։ Եւ
Յուդան ելաւ, և Տէրը Քանա-
նացիներին և Փերեզացիներին նո-
րանց ձեռքը տուաւ. և նորան-
ցից Բեզեկումը տասը հազար
5 մարդ կոտորեցին։ Եւ Բեզեկի
մէջ գտան Ադոնիբեզեկին, և նո-
րա հետ պատերազմեցին, և զար-
կեցին Քանանացիներին և Փերե-
6 զացիներին։ Եւ Ադոնիբեզեկը
փախաւ. բայց նորանք նորա ե-
տևից ընկնելով նորան բռնեցին,
և նորա ձեռքերի և ոտքերի մեծ
7 մատերը կտրեցին։ Եւ Ադոնիբե-
զեկն ասեց. Եօթանասուն թա-
գաւոր, որոնց ձեռքերի և ոտ-
քերի մեծ մատերը կտրուած էին,
իմ սեղանի տակ փշրանքներ էին
ժողովում. ես ինչպէս որ արի,
Աստուած էլ ինձ այնպէս հա-
տուցում արաւ։ Եւ նորան տա-
րան Երուսաղէմ, և նա այնտեղ
մեռաւ։
8 Եւ Յուդայի որդիքը Երուսա-
ղէմի հետ պատերազմ արին և
նորան առան և սուրի բերանով
զարկեցին և նորանց քաղաքը կը-
րակով այրեցին։
9 Եւ յետոյ Յուդայի որդիքը ի-
ջան, որ լեռնակողմումը և հա-
րաւային կողմումը և դաշտումը
բնակող Քանանացիների դէմ պա-
10 տերազմեն։ Եւ Յուդան գնաց
Քեբրոնումը բնակող Քանանացի-
ների վերայ (և Քեբրոնի անունը
առաջուց Կարիաթ-արբա էր.)
և զարկեցին Սէսին, Աքիմանին
և Թոլմիին։ Եւ այնտեղից գնաց 11
Դաբիրի բնակիչների վերայ. (և
Դաբիրի անունը առաջուց Կա-
րիաթ-սեփեր էր.) Եւ Քաղէբն 12
ասեց. Ով որ Կարիաթ-սեփերը
զարկէ և առնէ, իմ աղջիկ Աք-
սան նորան կ'տամ իբրև կին։ Եւ 13
Քաղէբի փոքր եղբօր Կենեզի որ-
դի Գոթոնիէլը առաւ նորան, և
Քաղէբն իր աղջիկ Աքսան նորան
տուաւ իբրև կին։ Եւ երբոր աղ- 14
ջիկը գնում էր, նորան յորդորեց
որ իր հօրիցը մի ագարակ ուզէ,
և նա էշիցը վայր իջաւ. և Քա-
ղէբն ասեց նորան. Ի՞նչ կայ քեզ։
Եւ աղջիկը նորան ասեց, Ինձ օրհ- 15
նութիւն տուր. որովհետև ինձ
մի հարաւային երկիր ես տուել,
ինձ ջրի աղբիւրներ էլ տուր։ Եւ
Քաղէբը նորան տուաւ վերի աղ-
բիւրները և ցածի աղբիւրները։
Եւ Մովսէսի աներ Կենեցիի որ- 16
դիքը վեր կացան Յուդայի որդ-
կանց հետ Արմաւենեաց քաղա-
քիցը Արադի հարաւային կողմին
եղող Յուդայի անապատումը, և
գնացին բնակուեցան ժողովրդի
հետ։
Եւ Յուդան իր եղբայր Շմա- 17
ւոնի հետ գնաց. և Սեփաթումը
բնակող Քանանացիներին զարկե-
ցին, և նորան նզովեցին. և այն
քաղաքի անունը Հորմա կոչեցին։
Եւ Յուդայեանք առան Գազան 18
և նորա սահմանը, և Ասկաղոնը
և նորա սահմանը, և Ակկարոնը
և նորա սահմանը։ Եւ Տէրը Յու- 19
դայի հետ էր, և նա տիրեց սա-
րին, բայց հովիտների բնակիչնե-
րին չ'կարողացաւ հալածել, ո-
րովհետև նորանք երկաթի կառ-
քեր ունէին։ Եւ Քեբրոնը Քա- 20
ղէբին տուին, ինչպէս որ Մով-
սէսն ասել էր. և նա այնտեղից
հալածեց Ենակի երեք որդի-
ներին։

21 Եւ Բենիամինի որդիքը չ'հա-
լածեցին Երուսաղէմումը բնակող
Յեբուսացիներին. և Յեբուսացի-
ները Բենիամինի որդկանց հետ
Երուսաղէմումը բնակուեցան մին-
չև այս օրը։
22 Եւ Յովսէփի տունն էլ Բեթէ-
լի վերայ վեր կացան, և Տէրը նո-
23 րանց հետ էր։ Եւ Յովսէփի տու-
նը լրտեսեցին Բեթէլը. (և այն
քաղաքի անունը առաջուց Լուզ
24 էր.) Եւ պահապանները մի մարդ
տեսան, որ այն քաղաքից դուրս
էր գալիս և նորան ասեցին. Ա-
ղաչում ենք, քաղաքը մտնելու
տեղը մեզ ցոյց տուր, և քեզ ո-
25 ղորմութիւն կ'անենք։ Եւ նա
քաղաքը մտնելու տեղը ցոյց տը-
ուաւ նորանց, և նորանք քաղա-
քը սուրի բերանով զարկեցին,
բայց այն մարդին և նորա բոլոր
26 ազգատոհմը թող տուին։ Եւ
այն մարդը Քետացիների երկիրը
գնաց, և մի մեծ քաղաք շինեց,
և նորա անունը Լուզ կոչեց. մին-
չև այս օրը նորա անունը այս է։
27 Եւ Մանասէն չ'հալածեց Բեթ-
սանը և նորա գիւղաքաղաքները,
Թանաքը և նորա գիւղաքաղաք-
ները, Դովրի բնակիչներին և նո-
րա գիւղաքաղաքները, Յեբղաա-
մի բնակիչներին և նորա գիւղա-
քաղաքները, Մակեդդովի բնա-
կիչներին և նորա գիւղաքաղաք-
ները. և Քանանացիները կամա-
կորութեամբ բնակուեցան այս
28 երկրում։ Եւ երբոր Իսրայէլն ու-
ժովացաւ՝ Քանանացիներին հար-
կատու արաւ, բայց նորանց բո-
լորովին չ'հալածեց։
29 Եւ Եփրեմը չ'հալածեց Գազե-
րումը բնակող Քանանացիներին.
և Քանանացիները նորա հետ Գա-
զերումը բնակուեցան։
30 Զաբուղոնը չ'հալածեց Կեդրո-
նի բնակիչներին և Նաաղօլի բը-
նակիչներին. և Քանանացիները
նորանց մէջ բնակուեցան և հար-
կատու եղան։
31 Ասերը չ'հալածեց Ակքովի բը-
նակիչներին, և Սիդոնի, Աքղա-
պի, Աքեզիբի, Ելփայի, Ափեկի և
32 Բոոբի բնակիչներին. Այլ Ասեր-
եանք այն երկրումը բնակող Քա-
նանացիների մէջ բնակուեցան.
որովհետև նորանց չ'հալածեցին։
Նեփթաղիմը չ'հալածեց Բեթ- 33
սամիւսի բնակիչներին, և Բեթա-
նաթի բնակիչներին, այլ այն երկ-
րումը բնակող Քանանացիների
մէջ բնակուեց. և Բեթսամիւսի
ու Բեթանաթի բնակիչները նո-
րան հարկատու եղան։ Եւ Ամօր- 34
հացիները Դանի որդիներին նե-
ղեցին սարի վերայ, որովհետև
նորանց թող չ'տուին որ իջնեն
հովիտները։ Եւ Ամօրհացիները 35
կամակորութեամբ բնակուեցան
Հարէս սարումը Այեղօնի և Սա-
ղաբինի մէջ. բայց երբոր Յովսէ-
փի տան ձեռքը ուժովացաւ, նո-
րանք հարկատու եղան։ Եւ Ա- 36
մօրհացիների սահմանը Ակրաբի-
մի զառիվերիցը՝ Վէմիցը և էլ
վեր էր։

ԳԼ. Բ

Եւ Տիրոջ հրեշտակը Գաղգա- 1
ղայիցը Բոքիմ ելաւ և ասեց. Զեզ
Եգիպտոսիցը հանեցի, և ձեզ այն
երկիրը բերի, որի համար ձեր
հայրերին երդում էի արել. և
ասեցի Զեզ հետ արած ուխտս
յաւիտեան չեմ դրժիլ։ Իսկ 2
դուք այս երկրի բնակիչների հետ
դաշնակցութիւն մի անէք, նո-
րանց սեղանները քանդեցէք. բայց
դուք իմ ձայնին հնազանդու-
թիւն չ'արիք. դուք այդ ի՞նչ էք
արել։ Ես էլ ասեցի. Նորանց 3
ձեր առաջիցը չեմ քշիլ, և նո-
րանք ձեզ համար թշնամի, և
նորանց աստուածներն էլ ձեզ
համար որոգայթ կ'լինեն։ Եւ 4
երբոր Տիրոջ հրեշտակը բոլոր Իս-
րայէլի որդկանց հետ այս խօսքե-
րը խօսեց, ժողովուրդը ձայնը
բարձրացնելով լաց եղաւ։ Եւ 5
այնտեղի անունը Բոքիմ կոչե-
ցին. և այնտեղ Տիրոջը զոհ մա-
տուցրին։
Եւ երբոր Յեսուն արձակեց ժո- 6
ղովրդին, Իսրայէլի որդիքը ամեն
մէկն իր կալուածքը գնաց երկի-
րը ժառանգելու համար։ Եւ ժո- 7

ղովուրդը Տիրոջը պաշտեց Յեսուի բոլոր օրերումը և Յեսուից յետոյ ողջ մնացող՝ և Իսրայէլի համար Տիրոջ արած ամեն մեծ գործքերը տեսնող ծերերի բոլոր
8 օրերումը։ Եւ Տիրոջ ծառայ Նաւեան Յեսուն մեռաւ հարիւր
9 եւտասը տարեկան, Եւ նորան թաղեցին իր ժառանգութեան սահմանումը Գաաս սարի հիւսիսային կողմին Եփրեմի սարի Թամ-
10 նաթ-հարեսումը։ Եւ այն դարի բոլոր մարդիկն իրանց հայրերի մօտ ժողովուեցան, և նորանցից յետոյ մէկ ուրիշ ազգ վեր կացաւ, որ չէր ճանաչում ոչ Տիրոջը և ոչ այն գործերը, որ նա արել էր Իսրայէլի համար։
11 Եւ Իսրայէլի որդիքը Տիրոջ առաջին չարութիւն արին և Բա-
12 հաղիմը պաշտեցին. Եւ թողեցին իրանց հայրերի Տէր Աստուծուն որ Եգիպտոսի երկրիցը հանել էր նորանց, և հետևեցին օտար աստուածներին, այսինքն իրանց շուրջը եղող ազգերի մի քանի աստուածներին, և նորանց երկրպագութիւն արին և բարկա-
13 ցրին Տիրոջը։ Եւ Տիրոջը թողեցին և պաշտեցին Բահաղը և Աս-
14 տարովթը։ Եւ Տիրոջ բարկութիւնը Իսրայէլի վերայ բորբոքուեց, և նա կողոպտիչների ձեռքը մատնեց նորանց, և նորանք կողոպտեցին նորանց. և շրջակայ թշնամիներին ծախեց, և այլ ևս չէին կարողանում իրանց թշնա-
15 միների առաջին կանգնել։ Ուր որ էլ գնում էին՝ Տիրոջ ձեռքը նորանց վերայ էր չարիքի համար, ինչպէս որ Տէրը ասել էր, և ինչպէս որ նորանց երդում էր արել. և նորանք շատ նեղութեան մէջ էին։
16 Եւ Տէրը դատաւորներ վերկացրեց, որոնք ազատեցին նորանց
17 կողոպտիչների ձեռքից։ Սակայն նորանք իրանց դատաւորներին էլ չ՛լսեցին, և օտար աստուածների հետևելով պոռնկութիւն արին, և նորանց երկրպագեցին. շուտով խոտորուեցան այն ճանապարհիցը, որ իրանց հայրերը Տիրոջը լսելու համար գնում էին. նորանց պէս չ՛արին։ Եւ երբոր Տէ- 18
րը նորանց համար դատաւորներ էր կանգնեցնում, Տէրը այն դատաւորի հետն էր լինում և այն դատաւորի բոլոր օրերումն իրանց թշնամիների ձեռքիցն ազատում էր նորանց, որովհետև Տէրը զղջում էր նորանց նեղութիւն տուողների և չարչարողների երեսից նորանց հեծութիւն-
ների համար։ Եւ երբոր այն դա- 19
տաւորը մեռնում էր, նորանք դարձեալ իրանց հայրերից աւելի էին անօրինանում օտար աստուածների հետևելով և նորանց պաշտելով և նորանց երկրպագութիւն անելով. իրանց գործքերիցն ու իրանց խստապարանոց գնացքիցը ետ չէին դառնում։
Եւ Տիրոջ բարկութիւնը Իսրա- 20
յէլի վերայ բորբոքուելով ասեց. Որովհետև այս ազգը զանց է անում այն ուխտը, որ իրանց հայրերին պատուիրեցի, և իմ ձայնին
չէ լսում, Ես էլ այսուհետև նո- 21
րանց առաջիցը ոչ մէկին չեմ հալածիլ այն ազգերիցը, որոնց
որ Յեսուն մեռնելիս թողեց. Որ- 22
պէս զի նորանցով Իսրայէլին փորձեմ, թէ արդեօք իրանց հայրերի պէս կ՛զգուշանան Տիրոջ ճա-
նապարհը գնալու թէ ոչ։ Եւ 23
Տէրն այս ազգերին թող տուաւ, և շուտով չ՛հալածեց և նորանց Յեսուի ձեռքը չ՛մատնեց։

ԳԼ. Գ

Եւ սորանք են այն ազգերը, որ 1
Տէրը նորանց թող տուաւ, որ նորանցով փորձէ Իսրայէլին այսինքն այն ամենին որ Քանանացիների բոլոր պատերազմները չէին
գիտում. (Միայն սորա համար 2
որ Իսրայէլի որդկանց սերունդը իմանան նորանց պատերազմ սովորեցնելը մանաւանդ առաջուց
չ՛գիտացողները.) Փղշտացիների 3
հինգ նախարարութիւնները, և բոլոր Քանանացիները, և Սիդոնացիները, Լիբանան սարումը բնակող Խևացիները՝ Բաաղհերմոն

սարիցը մինչև Եմաթի մուտքը։
4 Սորանցով պիտի փորձէր Իսրայէլին, որ իմանայ թէ արդեօք կ՛լսեն Տիրոջ պատուիրանքները, որոնք Մովսէսի ձեռքովը պատուիրեց նորանց հայրերին։
5 Եւ Իսրայէլի որդիքը բնակուեցան Քանանացիների, Քետացիների, Ամօրհացիների, Փերեզացիների, Խևացիների ու Յեբուսացի-
6 ների մէջ. Եւ նորանց աղջիկները իրանց համար կին առան, և իրանց աղջիկներին նորանց աղերանցը տուին, և նորանց աստ-
7 ուածներին պաշտեցին։ Եւ Իսրայէլի որդիքն արին այս չարութիւնը Տիրոջ առաջին, և իրանց Տէր Աստուծուն մոռացան և Բահաղիմը և Աստարովթը պաշտե-
8 ցին։ Եւ Տիրոջ բարկութիւնը Իսրայէլի վերայ բորբոքուեց, և նա նորանց Միջագետի Քուսարսաթեմ թագաւորի ձեռքը մատնեց. և Իսրայէլի որդիքը ութը տարի ծառայութիւն արին Քուսարսաթեմին։
9 Եւ Իսրայէլի որդիքը Տիրոջն աղաղակեցին. և Տէրը Իսրայէլի որդկանց համար մի փրկիչ կանգնեցրեց, Քաղէբի փոքր եղբայր Կենեզի որդի Գոթոնիէլին, որ ա-
10 զատեց նորանց։ Եւ Տիրոջ Հոգին եղաւ նորա վերայ, և Իսրայէլի մէջ դատաւորութիւն էր անում. և երբոր պատերազմի գնաց, Տէրը Միջագետի Քուսարսաթեմ թագաւորին նորա ձեռքը տուաւ, և նորա ձեռքը Քուսարսաթեմի
11 դէմ զօրացաւ։ Եւ երկիրը քառասուն տարի հանգստացաւ, և Կենեզեան Գոթոնիէլը մեռաւ։
12 Եւ Իսրայէլի որդիքը շարունակեցին Տիրոջ առաջին չարութիւն անելու. և Տէրը ուժովացրեց Մովաբի Էգղոն թագաւորին Իսրայէլի դէմ, որովհետև Տիրոջ ա-
13 ռաջին չարութիւն արին։ Եւ նա Ամմոնի և Ամաղէկի որդկանցն իր մօտ ժողովեց, և գնաց Իսրայէլին զարկեց և Արմաւենեաց քաղա-
14 քին տիրեց։ Եւ Իսրայէլի որդիքը ծառայութիւն արին Մովաբի Էգղոն թագաւորին տասնևութը տարի։ Եւ Իսրայէլի որդիքը Տի- 15
րոջն աղաղակեցին, և Տէրը նորանց համար մի փրկիչ կանգնեցրեց, Բենիամինեան Գերայի որդի Աւովդին որ ձախաձեռն էր. և Իսրայէլի որդիքը նորա ձեռքովը Մովաբի Էգղոն թագաւորին
ընծայ ուղարկեցին։ Եւ Աւովդ 16
մէկ կանգուն երկայնութեամբ երկսայրի սուր շինեց իր համար, և կապեց նորան իր հանդերձների տակից իր աջ ազդրի վերայ։
Եւ ընծան տարաւ Մովաբի Էգ- 17
ղոն թագաւորին (և Էգղոնը խիստ
գէր մարդ էր.) Եւ երբոր ընծան 18
տուաւ վերջացաւ, ընծան կրող
մարդկանցը ետ ուղարկեց. Եւ 19
ինքը Գաղգաղայումն եղած կուռքերի մօտիցը ետ դառաւ և ասեց. Ով թագաւոր, քեզ հետ մէկ ծածուկ խօսք ունեմ. և նա ասեց. Լուռ։ Եւ բոլոր նորա մօտ
եղողները դուրս ելան։ Եւ Աւով- 20
դը նորան մօտեցաւ, և նա նըստած էր իր յատկացեալ ամարանոցի վերնատանը, և Աւովդը նորան ասեց. Ես Աստուծոյ խօսք ունեմ քեզ համար. և նա աթոռի վերայիցը վեր կացաւ։ Եւ 21
Աւովդը իր ձախ ձեռքը մեկնեց՝ սուրը իր աջ ազդրի վերայից քաշեց և նորա փորը կոխեց, Եւ 22
սուրի ետևից կոթն էլ ներս մտաւ, և սուրը ճարպով ծածկուեցաւ, որովհետև սուրը նորա փորիցը չ՛հանեց, և աղբը դուրս
ելաւ։ Եւ Աւովդը դուրս եկաւ 23
սրահը և վերնատան դռները ետևիցը գոցեց և կողպեց. Եւ ին- 24
քը դուրս եկաւ գնաց։ Եւ նորա ծառաները գնացին նայեցին, որ ահա վերնատան դռները կողպուած էին. և ասեցին. Նա անտարակոյս իր ամարանոցի սենեակի մէջ հարկաւորութեան է
գնացել։ Եւ սպասեցին մինչև որ 25
ձանձրացան, բայց ահա վերնատան դռները չէր բաց անում, և բանալին առան բաց արին, և ահա իրանց տէրը գետնի վերայ
մեռած ընկած էր։ Եւ նորանք 26
քանի որ դեռ ուշանում էին, Աւովդը փախաւ, և կուռքերի

մօտովն անցնելով ողջ առողջ
Սէիրա հասաւ ։
27 Եւ երբոր հասաւ, Եփրեմի սա-
րի վերայ փող հնչեցրեց, և Իս-
րայէլի որդիքը նորա հետ այն
սարիցը ցած իջան, և ինքը նո-
28 րանց առաջին։ Եւ նորանց ասեց.
Իմ ետևիցն եկէք, որովհետև
Տէրը ձեր թշնամի Մովաբացինե-
րին ձեր ձեռքը տուաւ. և նորա
ետևիցն իջան և Մովաբի առա-
ջամ Յորդանանի անցքերը բռնե-
ցին, և թող չ'տուին որ մի մարդ
29 անցնէ ։ Եւ այն ժամանակ նո-
րանք Մովաբիցը տասը հազարի
չափ մարդ զարկեցին՝ ամենն էլ
յաղթանդամ և զօրաւոր մար-
30 դիկ, և մէկը չ'ազատուեցաւ։ Եւ
այն օրը Մովաբն Իսրայէլի ձեռ-
քի տակ նուաճուեցաւ. և երկի-
րը ութսուն տարի հանգստացաւ։
31 Եւ յետոյ Անաթի որդի Սա-
մեգարը եղաւ, և եղների խթա-
նով Փղշտացիներիցը վեց հարիւր
մարդ զարկեց. սա էլ Իսրայէլին
ազատեց ։

ԳԼ. Դ

1 Եւ Իսրայէլի որդիքը շարունա-
կեցին Տիրոջ առաջին չարութիւն
անելու, և Աւովդը մեռած էր ։
2 Եւ Տէրը մատնեց նորանց Քա-
նանացիների Յաբին թագաւորի
ձեռքը, որ թագաւորում էր Հա-
սորի մէջ, և նորա զօրագլուխը
Սիսարան էր, և բնակվում էր
3 ազգաց Արիսօթի մէջ։ Եւ Իս-
րայէլի որդիքը Տիրոջն աղաղակե-
ցին, որովհետև նա ինը հարիւր
երկաթի կառքեր ունէր, և քը-
սան տարի Իսրայէլի որդկանցը
սաստիկ նեղեց ։
4 Եւ Դեբօրա մարգարէուհին՝
Ղաբիդօթի կինը Իսրայէլի մէջ
դատաւորութիւն էր անում այն
5 ժամանակը ։ Եւ բնակվում էր
Եփրեմի սարի վերայ Ռամայի և
Բեթէլի մէջտեղը՝ Դեբօրայի ար-
մաւենիի տակ, և Իսրայէլի որ-
դիքը վեր էին գնում նորա մօտ
6 դատաստանի համար ։ Եւ նա
մարդ ուղարկեց, և կանչեց Նեփ-
թաղիմի Կադէսից Աբինոամի որ-
դի Բարակին և նորան ասեց.
Մի՞թէ Իսրայէլի Տէր Աստուածը
չ'հրամայեց թէ. Գնա վեր ելիր
Թաբօր սարը, և քեզ հետ Նեփ-
թաղիմի որդկանցից և Զաբուղո-
նի որդկանցից տասը հազար մարդ
վեր առ. Եւ ես կ'բերեմ քո դի- 7
մացը Յաբինի զօրագլուխ Սիսա-
րային և նորա կառքերը և բազ-
մութիւնը Կիսոն հեղեղատի մօտ
և նորան քո ձեռքը կ'մատնեմ։
Եւ Բարակը նորան ասեց. Եթէ 8
ինձ հետ գնաս կ'գնամ, բայց ե-
թէ ինձ հետ չ'գնաս, չեմ գնալ ։
Եւ նա ասեց. Անպատճառ ես 9
քեզ հետ կ'գնամ, սակայն փառ-
քը քոնը չի լինիլ քո գնացած
ճանապարհումը, որովհետև Տէ-
րը Սիսարային մէկ կնկայ ձեռքը
կ'մատնէ։ Եւ Դեբօրան վեր կա-
ցաւ Բարակի հետ գնաց Կադէս ։
Եւ Բարակը Զաբուղոնին և Նեփ- 10
թաղիմին ժողովեց Կադէսի մէջ,
և տասը հազար մարդ վեր կա-
ցաւ նորա ետևիցը. Դեբօրան էլ
նորա հետ վեր կացաւ ։
(Եւ Կենեցի Քաբերը բաժան- 11
ուել էր Մովսէսի աներ Յոբաբի
որդիք Կենեցիներիցը և իր վրանը
կանգնեցրել էր Կադէսի մօտ
Սանանիմի կաղնիի մօտ ։)
Եւ Սիսարային իմացրին, որ Ա- 12
բինոամի որդի Բարակը վեր է ե-
լել Թաբօր սարը ։ Եւ Սիսարան 13
իր բոլոր կառքերը՝ ինը հարիւր
երկաթի կառքերը՝ և իր հետ
եղող բոլոր զօրքը ազգաց Արիսօ-
թից ժողովեց Կիսոն հեղեղատը ։
Եւ Դեբօրան ասեց Բարակին. 14
Վեր կաց, որովհետև Տէրն այսօր
Սիսարային քո ձեռքը մատնեց.
մի՞թէ Տէրը չէ քո առաջ դուրս
գալիս ։ Եւ Բարակը Թաբօր սա-
րիցը իջաւ. և նորա հետ տասը
հազար մարդ կար ։ Եւ Տէրը 15
խորտակեց Սիսարային և բոլոր
կառքերը և բոլոր բանակը Բա-
րակի առաջին սուրի բերանով.
և Սիսարան կառքերիցը վայր ի-
ջաւ և ոտքով փախաւ։ Եւ Բա- 16
րակը հալածեց կառքերը և բա-
նակը մինչև ազգաց Արիսօթը, և

Սիսարայի բոլոր բանակը սուրի
բերանով ընկաւ, և մարդ չ'մնաց։
17 Եւ Սիսարան ոտքով փախաւ
Կենեցի Քաբերի կնկայ Յայէլի
վրանը, որովհետև Հասորի Յա-
բին թագաւորի և Կենեցի Քաբե-
րի տան մէջտեղ խաղաղութիւն
18 կար ։ Եւ Յայէլը Սիսարային դի-
մաւորելու դուրս եկաւ և նորան
ասեց. Տէր իմ, դարձիր, ինձ մօտ
դարձիր, մի վախենար ։ Եւ նա
դէպի վրանը դարձաւ նորա մօտ.
և կինը նորան ծածկեց գորգով ։
19 Եւ նա ասեց այն կնկան. Աղա-
չում եմ ինձ մի քիչ ջուր տուր
խմեմ, որովհետև ծարաւ եմ։
Նա էլ կաթի տիկը բացաւ, և
նորան խմեցրեց. և ծածկեց նո-
20 րան ։ Եւ նա ասեց այն կնկան.
Վրանի դռանը կանգնիր, և եթէ
մարդ գայ, քեզ հարցնէ և ասէ
թէ Այս տեղ մարդ կա՞յ. ասես
21 Չ'կայ ։ Եւ Քաբերի կինը Յայէլը
առաւ վրանի մէկ ցից, և ուռն
էլ բռնեց ձեռքին և կամաց գը-
նաց նորա մօտ, և ցիցը մխեց նո-
րա ծամելիքին և գետնին բևե-
ռեց և նա քնել էր և յոգնած
22 էր, և մեռաւ ։ Եւ ահա Բարա-
կը Սիսարայի ետևից էր ընկել,
և Յայէլը դուրս եկաւ նորան դի-
մաւորելու և նորան ասեց. Եկ
ցոյց տամ քեզ այն մարդը որ
դու պտրում ես. և նա այն
կնկայ հետ ներս մտաւ, և ահա
Սիսարան մեռած վայր ընկած էր
և ցիցը նորա ծամելիքի մէջ էր ։
23 Եւ Աստուած այն օր Քանա-
նացիների Յաբին թագաւորին կո-
րացրեց Իսրայէլի որդկանց առա-
24 ջին ։ Եւ Քանանացիների Յաբին
թագաւորի դէմ Իսրայէլի որդ-
կանց ձեռքը օրէցօր զօրանում
էր մինչև որ Քանանացիների Յա-
բին թագաւորին ընաջինջ արին ։

ԳԼ. Ե

1 Եւ այն օրը Դեբօրան և Աբի-
նոամի որդի Բարակը երգեցին և
ասեցին,
2 Իսրայէլի զօրավարներն առաջ-
նորդելով,
Ժողովուրդը յօժարակամ լինե-
լով,
Օրհնեցէք Տիրոջը ։
Լսեցէք, թագաւորներ, 3
Ականջ դրէք, նախարարներ.
Ես երգում եմ Տիրոջը.
Սաղմոս եմ ասում Իսրայէլի Տէր
Աստուծուն ։
Ով Տէր, դու Սէիրիցը դուրս 4
գալիս,
Դու Եդովմի դաշտից չուելիս,
Երկիրը շարժեց, երկինքը տեղաց,
Եւ ամպերը ջուր տեղացին ։
Սարերը հալուեցան Տիրոջ ե- 5
րեսիցը՝
Այս Սինան՝ Իսրայէլի Տէր Ա-
ստուծոյ երեսիցը ։
Անաթի որդի Սամեգարի օրե- 6
րումը,
Յայէլի օրերումը՝
Ուղիները դադարել էին,
Եւ ճանապարհորդները խոտոր-
նակ ուղիներով էին գնում։
Իսրայէլի մէջ զօրավարներ չ'մնա- 7
ցին, չ'մնացին.
Մինչև որ վեր կացայ ես՝ Դեբօրա,
Մինչև որ վեր կացայ ես՝ մայրս
Իսրայէլի մէջ ։
Ընտրեցին նոր աստուածներ. 8
Իսկոյն պատերազմ եղաւ դրա-
ներումը.
Արդե՞օք վահան կամ նիզակ ե-
րևեցաւ
Իսրայէլի քառասուն հազարի մէջ։
Իմ սիրտը դէպի Իսրայէլի իշ- 9
խաններն է.
Ով ժողովրդի անձնուէրներ,
Օրհնեցէք Տիրոջը ։
Սպիտակ էշերի վերայ հեծնողներ, 10
*Գորգի վերայ՝ նստողներ,
Եւ ճանապարհի վերայ գնացող-
ներ, †երգեցէք ։
Աղեղնաւորների ձայնից աղատուած 11
Ջուր հանելու տեղերի մէջ,
Այն տեղ գովաբանում են Տի-
րոջ արդարութիւնները
Նորա զօրավարների արդարու-
թիւնները՝ Իսրայէլի մէջ,
Երբոր Տիրոջ ժողովուրդը դրա-
ներն իջան ։

---

*Կամ՝ դատաստանի ատեանում
†խօսեցէք՝ կամ մտածեցէք ։

12 Արթնացիր, արթնացիր, Դե-
բօրա,
Արթնացիր, արթնացիր, երգ
ասիր,
Վեր կաց, Բարակ,
Գերութիւնդ գերի արա, ով
Աբինոամի որդի։
13 Այն ժամանակ փախստականներ-
ըն իջան
Ժողովրդի հզօրների մօտ.
Տէրն ինձ հետ իջաւ
Զօրաւորների հետ։
14 Եփրեմից Եկան նորանք, որոնց
արմատը Ամաղէկումն է.
Քո ետևիցը, Բենիամին, քո ժո-
ղովրդի մէջ
Մաքիրից իջան իշխաններ,
Եւ Զաբուղոնից՝ դպրի գրիչ
բռնողներ։
15 Եւ Իսաքարի իշխանները Դեբօ-
րայի հետ,
Եւ Իսաքարը Բարակի պէս
Հովիտը ուղարկուեցաւ նորա ե-
տևիցը.
Ռուբէնի հեղեղատների մէջ
Մեծ յուզմունք կար։
16 Ի՞նչու համար փարախների մէջ
նստեցիր,
Որ հօտերի մայելը լսես։
Ռուբէնի հեղեղատներումը
Մեծ տարակուսանք կար։
17 Գաղատագը Յորդանանի այն կող-
մին էր բնակվում,
Եւ Դանը ի՞նչու համար նաւե-
րումը պանդուխտ մնաց։
Ասերը ծովի եզերքումն է նըս-
տում,
Եւ իր նաւահանգիստների մօտ է
բնակվում։
18 Զաբուղոնը մի այնպիսի ժողո-
վուրդ է,
Որ իր կեանքն արհամարհում է
մինչև մահ,
Եւ Նեփթաղիմը դաշտի բարձր
տեղերումը՝ զինքը։
19 Թագաւորները եկան, պատե-
րազմեցին.
Այն ժամանակ պատերազմեցին
Քանանացիների թագաւոր-
ները
Թանաքի մէջ Մակեդդովի ջրի մօտ.
Փողի աւար չ՚առան։
20 Երկնքիցը պատերազմեցին.
Աստղերն իրանց շրջաններիցը
Սիսարայի դէմ պատերազմեցին։
Կիսոն հեղեղատը քշեց նորանց՝ 21
Այն հին հեղեղատը՝ Կիսոնի հե-
ղեղատը։
Ով իմ անձն, զօրութիւնը կոխիր։
Այն ժամանակ ձիերի սմբակները 22
կոտրատուեցան վազելուցը՝
Նորա զօրաւորների վազելուցը։
Անիծեցէք Մարովզը, ասեց Տի- 23
րոջ հրեշտակը,
Նորա բնակիչներին սաստիկ ա-
նիծեցէք,
Որովհետև Տիրոջ օգնութեանը
չ՚եկան,
Տիրոջ օգնութեանը՝ զօրաւորներ-
ի դէմ։
Օրհնեալ լինի կանանց մէջ Յայէլը՝ 24
Կենեցի Քաբերի կինը,
Վրանների մէջ կանայքներից օրհ-
նեալ լինի։
Ջուր ուզեց. կաթ տուաւ, 25
Իշխանաց ամանովը կոգի մա-
տուցրեց։
Իր ձեռքը ցիցին մեկնեց, 26
Եւ իր աջ ձեռքը՝ հիւսան ուռին,
Եւ Սիսարային զարկից գլուխը
ճեղքեց,
Եւ ջարդեց մխեց նորա ծամելիքը։
Նա կորացաւ, Յայէլի ոտքերի մէջ 27
ընկաւ փռուեցաւ,
Նորա ոտքերի մէջ կորացաւ ընկ-
աւ.
Ուր որ կորացաւ՝ այնտեղ ընկաւ
խոցուած։
Պատուհանիցը նայում և ա- 28
ղաղակում է
Սիսարայի մայրը վանդակի ետևից.
Ի՞նչու համար է ուշանում նորա
կառքը գալու,
Ի՞նչու են ետանում նորա կառ-
քերի քայլերը։
Նորա իմաստուն տիկինները պա- 29
տասխանում են նորան,
Հէնց ինքն էլ իր խօսքերի պա-
տասխանը տալիս է իրան.
Անշուշտ նորանք աւար են գտել, 30
բաժանում են,
Մէկ կամ երկու աղջիկ՝ իւրա-
քանչիւր հզօրի համար,
Իսկ Սիսարայի համար՝ գոյնզգոյն
աւար,
Գոյնզգոյն նկարագործ աւար։

Երկու կողմից հիւսկէն և պարա-
նոցի համար գոյնզգոյն աւար։
31 Այսպէս կորչեն քո բոլոր թըշ-
նամիները, ով Տէր,
Իսկ Նորան սիրողները լինեն ինչ-
պէս իր զօրութեամբը ծա-
գող արևը։

Եւ երկիրը հանգստացաւ քա-
ռասուն տարի։

ԳԼ. Զ

1 Եւ Իսրայէլի որդիքը Տիրոջ ա-
ռաջին չարութիւն արին, և Տէ-
րը նորանց եօթը տարի Մադիա-
2 նացիների ձեռքը մատնեց։ Եւ
Մադիանացիների ձեռքը Իսրա-
յէլի վերայ սաստկացաւ. Իսրա-
յէլի որդիքը Մադիանացիների
պատճառով իրանց համար սա-
րերի մէջ խոռոչներ, քարայրներ
3 և պատնէշներ շինեցին։ Եւ երբոր
Իսրայէլացիները սերմ էին ցա-
նում, Մադիանացիները նորանց
վերայ էին գալիս. և Ամաղեկա-
ցիները և արևելքի բնակիչներն
4 էլ էին նորանց վերայ գալիս. Եւ
նորանց դէմ բանակ կազմելով
փչացնում էին դետնի բերքը մին-
չև Գազա, և Իսրայէլի մէջ ապ-
րուստ չէին թողում, ոչ ոչխար,
5 ոչ արջառ և ոչ էշ։ Որովհետև
նորանք իրանց հօտերովը և վրան-
ներովը վեր էին կենում, և մա-
րախի պէս բազմութեամբ գալիս,
այնպէս որ նորանց և նորանց ուղ-
տերին թիւ չ՚կար, և երկիրն էին
6 գալիս որ նորան փչացնեն։ Եւ
Իսրայէլը Մադիանացիների պատ-
ճառով շատ աղքատացաւ. և
Իսրայէլի որդիքը Տիրոջն աղա-
ղակեցին։
7 Եւ երբոր Իսրայէլի որդիքը Տի-
րոջն աղաղակեցին Մադիանացի-
8 ների պատճառով, Տէրը Իսրայէ-
լի որդկանց համար մէկ մարգա-
րէ ուղարկեց. և նա ասեց նո-
րանց. Իսրայէլի Տէր Աստուածն
այսպէս է ասում. Ես ձեզ Ե-
գիպտոսիցը հանեցի, և ձեզ ծա-
ռայութեան տանիցը դուրս բե-
9 րի, Եւ ազատեցի ձեզ Եգիպտա-
ցիների ձեռքիցը, և բոլոր ձեզ
նեղութիւն տուողների ձեռքիցը,
և նորանց ձեր առաջից քշեցի,
և նորանց երկիրը ձեզ տուի. Եւ 10
ձեզ ասեցի. Ես եմ Եհովան ձեր
Աստուածը. մի վախենաք Ամօր-
հացիների աստուածներիցը, որոնց
երկրումը դուք բնակվում էք,
բայց դուք իմ խօսքին չ՚լսեցիք։
Եւ Տիրոջ հրեշտակն եկաւ, և 11
Աբիեզերեան Յովասի բևեկնիի
տակին նստեց, որ Եփրայի մէջ
էր, և նորա որդի Գեդէօնը կա-
լումը ցորեն էր ծեծում Մադի-
անացիների երեսիցը փախցնելու
համար։ Եւ Տիրոջ հրեշտակը նո- 12
րան երևեցաւ, և ասեց. Ով հզօր
զօրաւոր, Տէրը քեզ հետ։ Եւ 13
Գեդէօնը նորան ասեց. Ոհ, Տէր
իմ, եթէ Տէրը մեզ հետ է, ի՞ն-
չու համար այս բոլոր բաները
մեզ հասան. և ո՞ւր են նորա ա-
մեն հրաշքները, որոնք մեր հայ-
րերը մեզ պատմում են՝ ասելով.
թէ Տէրը մեզ Եգիպտոսիցը հա-
նեց. բայց հիմա Տէրը մեզ մեր-
ժել է, և մեզ Մադիանացիների
ձեռքն է մատնել։ Եւ Տէրը նո- 14
րան նայեց, և ասեց. Գնա քո
այդ զօրութիւնովը, և ազատիր
Իսրայէլին Մադիանացիների ձեռ-
քիցը. ահա ես եմ քեզ ուղար-
կում։ Եւ նա նորան ասեց. Ոհ, 15
Տէր իմ, ես ինչո՞վ ազատեմ Իս-
րայէլին, ահա իմ ազգատոհմը
Մանասէի մէջ ամենից աղքատն
է, և ես իմ հօր տան կրտսերն
եմ։ Եւ Տէրը նորան ասեց. Ես 16
քեզ հետ կ՚լինեմ, և դու Մա-
դիամին մէկ մարդի պէս կ՚զար-
կես։ Եւ նա նորան ասեց. Աղա- 17
չում եմ, եթէ ես քո աչքի ա-
ռաջին շնորհք գտայ, ինձ մի նը-
շան ցոյց տուր, թէ դու ես ինձ
հետ խօսողը։ Աղաչում եմ՝ այս 18
տեղից չ՚գնաս, մինչև որ ես քեզ
մօտ գամ, իմ նուէրը բերեմ և
քո առաջը դնեմ։ Եւ նա ասեց.
Ես կ՚մնամ մինչև քո ետ դառ-
նալը։ Եւ Գեդէօնը գնաց, այծե- 19
րից մի ուլ, և մէկ արդու ալիւ-
րից բաղարջ պատրաստեց. միսը
մի սակառի մէջ դրաւ, և ար-
գանակն էլ մի կճուճի մէջ ածեց,

և նորա առաջը հանեց այն բեւեկնիի տակ ու մատուցրեց։ Եւ Աստուածոյ հրեշտակը նորան ասեց. Միսն ու բաղարջն առ, և այս վէմի վերայ դիր, և արգանակը թափիր։ Եւ նա այնպէս արաւ։ Եւ Տիրոջ հրեշտակը իր ձեռքի գաւազանի ծայրը մեկնեց ու մնին և բաղարջին դպաւ, և վէմիցը կրակ դուրս եկաւ միսն ու բաղարջն այրեց, և Տիրոջ հրեշտակը նորա աչքերի առջիցը գնաց։ Եւ Գեդէոնը տեսաւ որ նա Տիրոջ հրեշտակն է և Գեդէոնն ասեց. Ո՜հ, Տէր Եհովայ, որ Տիրոջ հրեշտակին երես առ երես տեսայ։ Բայց Տէրը նորան ասեց. Խաղաղութիւն քեզ, մի վախենար, չես մեռնիլ։

Եւ Գեդէոնն այնտեղ Տիրոջ համար մի սեղան շինեց, և նորա անունը *Եհովայ-շալօմ կոչեց, որ մինչև այս օրը կայ Աբիեզերեանց Եփրայի մէջ։

Եւ այն գիշերը Տէրը նորան ասեց. Առ քո հօր զուարակը և եօթը տարեկան երկրորդ զուարակը, և քո հօր ունեցած Բահաղի սեղանը քանդիր, և նորա վերայի Աստարովթը կտրիր։ Եւ քո Տէր Աստուածոյ համար մի սեղան շինիր այս ապառաժ քարի գլխին կարգով, և երկրորդ զուարակն առ, և քո կտրած Աստարովթի փայտերովը ողջակէզ արա։ Եւ Գեդէոնն իր ծառաներիցը տասը մարդ առաւ, և Տիրոջ իրան ասածին պէս արաւ, և իր հօր տանիցը, և քաղաքի մարդկանցից վախեցաւ ցերեկը անելու, և գիշերն արաւ։

Եւ երբոր քաղաքի մարդիկն առաւօտը կանուխ վեր կացան, տեսան որ ահա Բահաղի սեղանը քանդուած, և նորա վերայի Աստարովթը կտրուած, և երկրորդ զուարակը՝ շինուած սեղանի վրայ ողջակէզ եղած էր։ Եւ իրար ասեցին. Այս բանն ո՞վ արաւ. և պտռտեցին և քննեցին. և տեսուեցաւ, թէ Այս բանը Յովասի որդի Գեդէոնն է արել։ Եւ քաղաքի մարդիկը Յովասին ասեցին. Որդիդ դուրս բեր որ մեռնի, որովհետև Բահաղի սեղանը քանդել է և նորա վերայի Աստարովթը կտրել է։ Եւ Յովաս իր վերայ եկող բոլոր մարդկանցն ասեց. Միթէ դո՞ւք էք Բահաղին իրաւունքը պաշտպանելու, կամ թէ դո՞ւք էք նորան ազատելու. ով որ նորա իրաւունքը պաշտպանէ թող մեռցնուի մինչև առաւօտը. եթէ նա աստուած է՝ թող ինքն իր իրաւունքը պաշտպանէ նորա դէմ, որովհետև նորա սեղանը քանդել է։

Եւ բոլոր Մադիանացիները, Ամաղեկացիները և արևելքի բնակիչները մէկտեղ ժողովուեցան, և Յորդանէն անցնելով Յեզրայելի հովիտում բանակ տուին։ Եւ Տիրոջ Հոգին հանգչեց Գեդէոնի վերայ, և նա փող հնչեցրեց, և Աբիեզերեանք նորա հետից ժողովուեցան։ Եւ բոլոր Մանասէին պատգամաւորներ ուղարկեց, նա էլ նորա հետից ժողովուեցաւ. և Ասերին, Զաբուղոնին և Նեփթաղիմին էլ պատգամաւորներ ուղարկեց, և նորանք գնացին նորանց դիմաւորելու։

Եւ Գեդէոնն Աստուծուն ասեց. Եթէ Իսրայէլին իմ ձեռքովն ազատելու ես ինչպէս որ ասել ես, Ահա ես կալումը բուրդի գդեմ կ'դնեմ. եթէ մինակ գդեմի վերայ ցօղ և բոլոր գետնի վերայ չորութիւն լինի, այն ժամանակ կ'իմանամ որ Իսրայէլին իմ ձեռքովն ազատելու ես ինչպէս որ ասել ես։ Եւ այնպէս եղաւ. որովհետև առաւօտը կանուխ վեր կացաւ, և գդեմը քամեց, և գդեմիցը ցօղը հանեց, որ մի կոնք լիքը ջուր եղաւ։ Եւ Գեդէոնն ասեց Աստուծուն. Քո բարկութիւնը ինձ վերայ չ'բորբոքուի, և մինակ այս անգամ էլ խօսեմ. միայն այս անգամ էլ գդեմովը փորձեմ. թող մինակ գդեմի վերայ չորութիւն, և բոլոր գետնի վերայ ցօղ լինի։ Եւ այն գիշերը Աստուած այնպէս արաւ. մինակ գդեմի վերայ չորութիւն, և բոլոր գետնի վերայ ցօղ եղաւ։

Գլ. Է

Եւ Յերոբաաղը, այսինքն Գեդէոնը՝ և նորա հետ եղող բոլոր ժողովուրդը կանուխ վեր կացան և բանակեցան Հարօդի աղբիւրի մօտ. և Մադիամի բանակը նորա հիւսիսային կողմերն էր դէպի Մօրէի բլուրը՝ հովիտի մէջ։

Եւ Տէրն ասեց Գեդէոնին. Քեզ հետ եղող ժողովուրդը շատ է, որ ես Մադիամը նորանց ձեռքը տամ, մի գուցե Իսրայէլն ինձ դէմ պարծենայ ասելով. Թէ իմ ձեռքն ինձ ազատեց։ Եւ հիմա քարոզ կարդալ տուր ժողովրդի ականջին և ասիր. Ով որ վախկոտ և վատասիրտ է՝ թող դառնայ և Գաղաադ սարիցը գընայ. և ժողովրդիցը քսանևերկու հազար հոգի ետ դառան և մնացին տասը հազար։ Եւ Տէրն ասեց Գեդէոնին. Ժողովուրդը տակաւին շատ է. ջրի մօտ իջեցրու նորանց և այնտեղ քեզ համար նորանց փորձեմ. և որի համար քեզ ասեմ թէ՝ Սա քեզ հետ գնայ՝ նա քեզ հետ թող գնայ. և որի համար քեզ ասեմ թէ՝ Դա քեզ հետ չ'գնայ՝ նա թող չ'գնայ։ Եւ նա ժողովրդին ջրի մօտ իջեցրեց. և Տէրը Գեդէոնին ասեց. Ով որ շան լակելու պէս ջուրը լեզուովը լակէ, նորան առանձին կանգնեցնես. և ով որ եւ խմելու համար իր ծնկների վերայ կրանայ։ Եւ ձեռքը բերանը տանելով լակողների թիւը երեք հարիւր հոգի էր, և բոլոր մնացած ժողովուրդն իրանց ծունկերի վերայ կոթացան ջուր խմելու համար։ Եւ Տէրն ասեց Գեդէոնին. Այն երեք հարիւր մարդիկներով որոնք ջուրը լակեցին, ձեզ պիտի ազատեմ, և Մադիամը քո ձեռքը պիտի մատնեմ. բայց բոլոր ժողովուրդը՝ մնն մարդ իր տեղը գնայ։ Եւ նորոյ ժողովուրդը պաշար առան իրանց ձեռքը և իրանց փողերն էլ։ Եւ Գեդէոնն Իսրայէլի բոլոր մարդկանց՝ ամեն մէկին իր վրանը ուղարկեց, բայց այն երեք հարիւր մարդկանցով պինդ կանգնեց, և Մադիամի բանակը նորա տակին՝ հովիտումն էր։

Եւ այն գիշերը եղաւ որ Տէրը նորան ասեց. Վեր կաց իջիր բանակը, որովհետև նորանց քո ձեռքը մատնեցի։ Եւ եթէ դու վախենում ես իջնելու, քո ծառայ Փուրայի հետ իջիր բանակը. Այն ժամանակ կ'լսես թէ նորանք ինչ են խօսում. և յետոյ ձեռքերդ կ'ուժովանան, և բանակը կ'իջնես։ Եւ նա իջաւ ինքը և իր ծառայ Փուրան բանակի մէջի գունդերի ծայրը։ Եւ Մադիամն և Ամաղեկը և բոլոր արևելացիները պառկել էին հովիտումը մարախների պէս բազմութեամբ, և նորանց ուղտերին թիւ չ'կար, ծովի եղերքին եղող աւազի չափ շատ էին։ Եւ Գեդէոնը գնաց, և ահա մէկ մարդ իր ընկերին երազ էր պատմում և ասում. Ես երազ տեսայ, և ահա մէկ գարեղէն հաց գլորվում էր դէպի Մադիամի բանակը, և եկաւ վրանին հասաւ և նորան այնպէս զարկեց որ վայր ընկաւ, և գլխիվայր գարձրեց. և վրանը վայր ընկաւ։ Եւ նորա ընկերը պատասխան տուաւ և ասեց. Դա ուրիշ բան չէ, բայց միայն Իսրայէլացի Յովասի որդի Գեդէոնի սուրը. Աստուած Մադիամը և բոլոր բանակը նորա ձեռքն է մատնել։

Եւ երբոր Գեդէոնը լսեց երազի պատմութիւնը և նորա մեկնութիւնը, Տիրոջը երկրպագութիւն արաւ, և ետ գառաւ բանակը Իսրայէլի մօտ և ասեց. Վեր կացէք, որովհետև Տէրը Մադիամի բանակը ձեր ձեռքն է տուել։ Եւ այն երեք հարիւր մարդը և-

*Տէրը խաղաղութիւն է։

բեք գունդի բաժանեց, և ամենի
ձեռքը փողեր և դարտակ սա-
փորներ տուաւ և սափորների մէջ
17 էլ ջահեր. Եւ նորանց ասեց. Ին-
ձանից տեսէք և այնպէս արէք.
և երբոր բանակի եզերքը հաս-
նեմ, ես ինչպէս որ անեմ, դուք
18 էլ այնպէս արէք։ Եւ երբոր ես
և բոլոր ինձ հետ եղողները փողը
հնչեցնենք, այն ժամանակ դուք
էլ բոլոր բանակի չորս կողմում
փողերը հնչեցրէք, և ասեցէք.
19 Տիրոջ և Գեդէօնի սուրը։ Եւ
Գեդէօնը և նորա հետ եղող հա-
րիւր մարդը կէս գիշերուայ պահի
սկզբին, բանակի եզերքը հասան,
և հէնց որ պահապաններին զարթ-
նեցրին, իսկոյն փողերը հնչեցնե-
լով իրանց ձեռքում եղած սա-
20 փորները կոտրատեցին։ Եւ այն
երեք գունդերն էլ փողերը հնչ-
եցրին և սափորները կոտրատե-
ցին, և ձախ ձեռքով ջահերը,
և աջ ձեռքով փողերը բռնած
հնչեցնելու համար աղաղակում
էին, Տիրոջ և Գեդէօնի սուրը։
21 Եւ ամեն մարդ իր տեղը կանգ-
նել էր բանակի շուրջը, և բոլոր
բանակը վազում և աղաղակում
22 ու փախչում էին։ Եւ երբոր այն
երեք հարիւր մարդը փողերը հնչ-
եցրին, Տէրը բոլոր բանակի մէջ
ամեն մարդի սուրը իր ընկերի
վերայ դարձրեց. և զօրքը մինչև
Բեթասետա դէպի Սարերա, մին-
չև Աբելմաուլայի սահմանը՝ Տա-
բէթ փախաւ։
23 Եւ Իսրայէլացիք Նեփթաղի-
մից, Ասերից և բոլոր Մանասէից
ժողովուեցան, և Մադիանացինե-
24 րին հալածեցին։ Եւ Գեդէօնն
Եփրեմի բոլոր լեռնակողմը պատ-
գամաւորներ ուղարկեց, ասելով.
Մադիանացիներին դիմաւորելու
իջէք, և նորանց առաջին ջրերը
բռնեցէք, մինչև Բեթբարա, նաև
Յորդանանը։ Եւ Եփրեմի բոլոր
մարդիկը ժողովուեցան և ջրերը
բռնեցին մինչև Բեթբարա, նաև
25 Յորդանանը։ Եւ Մադիամի եր-
կու իշխաններին Օրէբին և Զէ-
բին բռնեցին. Օրէբին սպանեցին
Օրէբի վէմի մօտ, և Զէբին ըս-
պանեցին Զէբի հնձանի մօտ. և
Մադիանացիներին հալածեցին, և
Օրէբի և Զէբի գլուխները Գե-
դէօնին բերին Յորդանանի այն
կողմիցը։

ԳԼ. Ը

Եւ Եփրեմեանք նորան ասեցին. 1
Այս ի՞նչ բան է որ մեզ արիր,
որ առանց մեզ կանչելու գնացիր
Մադիամի դէմ պատերազմելու.
և նորա հետ սաստիկ վէճ արին։
Եւ նա նորանց ասեց. Ես հիմա 2
ի՞նչ եմ արել ձեզ պէս, մի՞թէ
Եփրեմի ճռաքաղութիւնը Աբի-
եզերի այգեկութիցը լաւագոյն
չէ։ Աստուած Մադիամի իշխան- 3
ներին՝ Օրէբին և Զէբին ձեր ձեռ-
քը տուաւ. ես ի՞նչ կարողացայ
անել ձեզ պէս։ Իսկոյն նորանց
սիրտը հանդարտացաւ նորա վե-
րայ հէնց որ նա այս խօսքն ասեց։
Եւ Գեդէօնն եկաւ Յորդանան, 4
և անցաւ ինքը և իր հետը եղող
երեք հարիւր մարդիկը. թէև
նուաղած էին, բայց հալածում
էին։ Եւ նա ասեց Սոկքովթի 5
մարդկանցը. Աղաչում եմ, ե-
տևիցս եկող ժողովրդին հացի
նկանակներ տուէք, որովհետև
նուաղած են. և ես Մադիամի
թագաւորներին Զէբէէին և Սաղ-
մանային հալածում եմ։ Եւ 6
Սոկքովթի իշխաններն ասեցին.
Մի՞թէ Զէբէէի ու Սաղմանայի
ձեռքը արդէն քո ձեռքի մէջ
է, որ մենք քո զօրքին հաց տանք։
Եւ Գեդէօնն ասեց. Ուրեմն երբ 7
որ Տէրը Զէբէէին ու Սաղմանա-
յին իմ ձեռքը տայ, ձեր մար-
մինները անապատի փուշերովն ու
տատասկներովը պիտի ծեծեմ։
Եւ այնտեղից վեր գնաց Փանու- 8
էլ, և նորանց էլ այնպէս ասեց.
և Փանուէլի մարդիկը Սոկքովթի
մարդկանց տուած պատասխանի
պէս պատասխանեցին։ Եւ Փա- 9
նուէլի մարդկանցն էլ ասեց՝ թէ,
Երբոր խաղաղութեամբ ետ դառ-
նամ, այդ աշտարակը պիտի
քանդեմ։
Եւ Զէբէէն ու Սաղմանան Կար- 10

կարումն էին և նորանց հետ
նորանց բանակը արեւելքի բնա-
կիչների բոլոր բանակից մնա-
ցածը՝ ամենը տասնեւհինգ հա-
զարի չափ մարդ. և ընկած
մեռածները հարիւր քսան հա-
զար սուսերամերկ մարդիկ էին։
11 Եւ Գեդէօնը վեր ելաւ Նոբահի
և Յօգբէհայի արևելեան կողմից
վրանաբնակների ճանապարհովը
և բանակը զարկեց, որովհետև
12 բանակը անհոգ էր։ Եւ Զեբէէն
ու Սաղմանան փախան. և Գե-
դէօնը նորանց հալածեց և Մա-
դիամի երկու թագաւորներին՝
Զեբէէին և Սաղմանային բռնեց,
և բոլոր բանակը դղրդեցրեց։
13 Եւ Յովասի որդի Գեդէօնը պա-
տերազմից ետ դառաւ Աբե-
14 սի զառիվերիցը. Եւ Սոկքովթի
մարդկանցից մի երիտասարդ բռ-
նեց և նորան հարցրեց. և նա
գրեց նորա համար Սոկքովթի իշ-
խաններին և ծերերին եօթանա-
15 սունեւեօթը մարդ։ Եւ Գեդէօնը
Սոկքովթի բնակիչների մօտ եկաւ
և ասեց. Ահա Զեբէէն ու Սաղ-
մանան, որոնց համար ինձ նախա-
տեցիք՝ ասելով. Մի՞թէ Զեբէէի
ու Սաղմանայի ձեռքը արդէն քո
ձեռքի մէջ է, որ մենք քո նուա-
16 ղած մարդկանցը հաց տանք։ Եւ
նա քաղաքի ծերերին առաւ, և
անապատիցը՝ փուշեր և տատասկ-
ներ, և նորանցով Սոկքովթի
17 մարդկանցը պատժեց։ Եւ Փա-
նուէլի աշտարակը քանդեց և
քաղաքի մարդկանցը մեռցրեց։
18 Եւ Զեբէէին և Սաղմանային
ասեց. Ի՞նչպէս մարդիկ էին նո-
րանք, որոնց սպանեցիք Թաբօ-
րումը։ Եւ նորանք ասեցին. Ինչ-
պէս որ դու ես, նորանք էլ այն-
պէս էին. ամեն մէկը թագաւո-
19 րի որդիի էր նմանում։ Եւ նա
ասեց. Նորանք իմ եղբայրները՝
մօրս աղերքն էին։ Կենդանի է
Տէրը, եթէ դուք նորանց ողջ
թողէիք, ես ձեզ չէի մեռցնիլ։
20 Եւ իր անդրանիկ որդի Յեթերին
ասեց. Վեր կաց դորանց մեռ-
ցրու։ Բայց պատանին իր սուրը
չ՛քաշեց. նորա համար որ վախե-
ցաւ, որովհետև մանկահասակ էր։
Եւ Զեբէէն ու Սաղմանան ասե- 21
ցին. Դու վեր կաց և մեզ սպա-
նիր, որովհետև մարդիս ոյժը ի-
րան համեմատ կ՛լինի. և Գեդէ-
օնը վեր կացաւ և Զեբէէին և
Սաղմանային մեռցրեց. և նորանց
ուղտերի պարանոցի վերայ եղած
մահիկներն առաւ։
Եւ Իսրայէլի մարդիկը Գեդէօ- 22
նին ասեցին. Մեզ վերայ թա-
գաւորիր, դու էլ, քո որդին էլ,
քո որդիի որդին էլ, որովհետև
մեզ Մադիամի ձեռքիցն ազա-
տեցիր։ Եւ Գեդէօնը նորանց ա- 23
սեց. Ես ձեզ վերայ չեմ թագա-
ւորիլ, ոչ էլ իմ որդին ձեզ վե-
րայ կ՛թագաւորէ, Եհովան թա-
գաւորէ ձեզ վերայ։ Յետոյ Գե- 24
դէօնը նորանց ասեց. Ձեզանից
մի բան խնդրեմ. ամեն մարդ իր
աւարի օղերն ինձ տայ. (որով-
հետև նորանք Իսմայէլացի լինե-
լով ոսկի օղեր ունէին։) Եւ նո- 25
րանք ասեցին. Տալիս ենք. և մի
հանդերձ փռեցին. և ամեն մարդ
իր աւարի օղերը այնտեղ գցեց։
Եւ այն իր ուզած ոսկի օղերի 26
կշիռքը հազար եօթը հարիւր
սիկղ ոսկի եղաւ. բացի մահիկնե-
րից, գինտերից և Մադիամի թա-
գաւորների վերայի ծիրանի պատ-
մուճաններից և բացի նորանց
ուղտերի պարանոցի վերայ եղած
մանեակներից։ Եւ Գեդէօնը նո- 27
րանցով մի եփուդ շինեց, և իր
Եփրա քաղաքի մէջ դրաւ. և
բոլոր Իսրայէլը այնտեղ նորան
հետևելով պոռնկուեցաւ. և սա
Գեդէօնի և նորա տան համար
որոգայթ եղաւ։
Այսպէս Մադիամը Իսրայէլի 28
որդկանց առաջին նուաճուեցաւ,
և այլ ևս գլուխ չ՛բարձրացրեց.
և Գեդէօնի օրերումը երկիրը քա-
ռասուն տարի հանգստացաւ։
Եւ Յովասի որդի Յերոբաաղը 29
գնաց և նստեց իր տանը։ Եւ Գե- 30
դէօնը եօթանասուն որդի ունէր՝
իր երանքից ելած, որովհետև
շատ կանայք ունէր։ Եւ Սիւքէ- 31
մի մէջ ունեցած հարճն էլ նորա
համար մի որդի ծնեց. և նորա

32 անունը Աբիմելէք դրաւ։ Եւ Յովասի որդի Գեդէօնը բարի ծերութեամբ մեռաւ, և Աբիեզերեանց Եփրայի մէջ իր հօր Յովասի գերեզմանումը թաղուեցաւ։
33 Եւ եղաւ երբոր Գեդէօնը մեռաւ՝ Իսրայէլի որդիքը ետ դառան, և Բահաղիմին հետևելով պոռնկուեցան, և Բահաղ-բերի-
34 թըն իրանց աստուած արին։ Եւ Իսրայէլի որդիքը չ՚յիշեցին իրանց Տէր Աստուծուն, որ իրանց ազատել էր իրանց շրջակայ ամեն
35 թշնամիների ձեռքիցը։ Եւ Յերոբաաղի (այսինքն Գեդէօնի) տանը գթութիւն չ՚արին այն ամեն բարութեան համեմատ, որ նա արաւ Իսրայէլին։

ԳԼ. Թ

1 Եւ Յերոբաաղի որդի Աբիմելէքը գնաց Սիւքէմ՝ իր մօր եղբայրների մօտ. և խօսեց նորանց հետ և իր մօր հօր բոլոր ազգա-
2 տոհմի հետ, ասելով. Աղաչում եմ՝ Սիւքէմի բոլոր բնակիչների ականջներին ասեցէք թէ՝ Որն է լաւ ձեզ համար, Յերոբաաղին բոլոր որդկանց՝ եօթանասուն մարդկանց ձեզ վերայ թագաւորելը, թէ մէկ մարդի ձեզ վերայ թագաւորելը. և յիշեցէք, որ ես ձեր ոսկորն ու ձեր մարմինն եմ։
3 Եւ նորա մօր եղբայրները նորա մասին ամեն այս խօսքերը Սիւքէմի բոլոր բնակիչների ականջներին ասեցին. և նորանց սիրտը դարձաւ Աբիմելէքին, որովհետև ասեցին. Թէ Նա մեր եղբայրն է.
4 Եւ Բահաղ-բերիթի տանիցը եօթանասուն կտոր արծաթ տուին նորան. և Աբիմելէքը նորանցով դատարկակեաց և սրիկայ մարդիկ վարձքով բռնեց, և նորանք
5 նորա ետևիցը գնացին։ Եւ գնաց Եփրայ իր հօր տունը, և իր եղբայրներին՝ Յերոբաաղի որդկանցը՝ եօթանասուն հոգի մէկ քարի վերայ սպանեց. բայց Յերոբաաղի փոքր տղան Յովաթամը ողջ մնաց ըստ որում թաք էր
6 կացել։ Եւ բոլոր Սիւքէմի բնակիչները և Մելօնի բոլոր տունը մէկտեղ ժողովուեցան, և գնացին Աբիմելէքին թագաւոր արին արձանի կաղնիի մօտ որ Սիւքէմումն է։

Եւ այս բանը Յովաթամին իմա- 7
ցրին. և նա գնաց Գարիզին սարի գլխին կանգնեց, և ձայնը բարձրացնելով աղաղակեց և նորանց ասեց. Ով Սիւքէմի բնակիչներ, ինձ լսեցէք, և Աստուած ձեզ լսէ։ Ծառերը գնացին որ իրանց համար մի թագաւոր օծեն, և ձիթենիին ասեցին. Մեզ վերայ թագաւոր եղիր։ Բայց ձիթենին 9
նորանց ասեց. Իմ պարարտութիւնը թողեմ, որ ինձանով պատուվում են Աստուած ու մարդիկը, և գնամ ծառերի վերայ *իշխե՞մ։ Եւ ծառերը թզենիին 10
ասեցին. Դու եկ մեզ վերայ թագաւոր եղիր։ Եւ թզենին նորանց 11
ասեց. Իմ քաղցրութիւնը և իմ լաւ պտուղը թողեմ, և գնամ ծառերի վերայ *իշխե՞մ։ Այն 12
ժամանակ ծառերը որթին ասեցին. Դու եկ մեզ վերայ թագաւոր եղիր։ Որթն էլ նորանց ա- 13
սեց. Իմ Աստուած ու մարդիկ ուրախացնող գինին թողեմ, և գնամ ծառերի վերայ *իշխե՞մ։ Այն ժամանակ ամեն ծառերը 14
դժնկին ասեցին. Դու եկ մեզ վերայ թագաւոր եղիր։ Եւ դըժ- 15
նիկը ծառերին ասեց Եթէ դուք իրաւ ինձ ձեզ վերայ թագաւոր էք օծում, եկէք իմ հովանիի տակին նստեցէք, եթէ ոչ՝ դժնիկիցը կրակ դուրս գայ և Լիբանանի եղևիններն այրէ։ Եւ հիմա 16
եթէ դուք ճշմարտութեամբ և արդարութեամբ վարուեցիք, և Աբիմելէքին թագաւոր արիք, և եթէ Յերոբաաղին և նորա տանը բարութիւն արիք, և եթէ նորա ձեռքի գործքերի համեմատ նորան հատուցում արիք. (Որ իմ 17
հայրը ձեզ համար պատերազմ արաւ, և իր անձը չ՚խնայեց, և մեզ Մադիամի ձեռքիցն ազատեց. Իսկ դուք այսօր իմ հօր 18

*Եբր. երերա՞մ, կամ՝ թափառե՞մ։

տան դէմ էք կանգնել, և նորա որդիքը՝ եօթանասուն մարդ մէկ քարի վերայ սպանեցիք, և նորա աղախնի տղան Աբիմելէքը՝ Սիւքէմի բնակիչների վերայ թագաւոր արիք, ըստ որում ձեր եղ-
19 բայրն էր.) Եւ եթէ այսօր Յերոբաաղի և նորա տան հետ ճշմարտութեամբ և արդարութեամբ վարուեցիք, Աբիմելէքի վերայ ուրախացէք, նա էլ ձեզ վերայ թող
20 ուրախանայ. Ապա եթէ ոչ՝ թող Աբիմելէքիցը կրակ դուրս գայ և Սիւքէմի բնակիչներին և Մելօնի տունը այրէ. և Սիւքէմի բնակիչներիցը և Մելօնի տանիցը կրակ դուրս գայ և Աբիմելէքին
21 այրէ։ Եւ Յովաթամը փախաւ ազատուեցաւ, և գնաց Բէիր, և իր Աբիմելէք եղբօրից [illegible] այնտեղ բնակուեց։
22 Եւ Աբիմելէքը Իսրայէլի վերայ
23 երեք տարի իշխեց։ Եւ Աստուած Աբիմելէքի և Սիւքէմի բնակիչների մէջ չար ոգի ուղարկեց, և Սիւքէմի բնակիչները Աբիմելէքի հետ նենգութեամբ վարուեցան.
24 Որպէս զի Յերոբաաղի եօթանասուն որդկանց եղած անիրաւութիւնը գայ՝ և նորանց արիւնը նորանց եղբօր Աբիմելէքի վերայ հասնէ, որ նորանց սպանել էր, և Սիւքէմի բնակիչների վերայ՝ որոնք նորա ձեռքը զօրացրել էին
25 իր եղբայրներին սպանելու։ Եւ Սիւքէմի բնակիչները սարերի գլուխներին նորա համար դարաններ պատրաստեցին, և կողոպտում էին իրանց մօտով ամեն անցնողներին. և այս բանը իմա-
26 ցրին Աբիմելէքին։ Եւ Աբեդի որդի Գաաղը և նորա եղբայրները եկան՝ Սիւքէմի մէջը մտան, և Սիւքէմի բնակիչները նորան ա-
27 պաւինեցին. Եւ դուրս եկան դաշտը և իրանց այգիների խաղողները քաղեցին, և կոխելով ուրախութիւն արին, և իրանց Աստուծոյ տունը մտան, և կերան ու խմեցին՝ և Աբիմելէքին
28 անիծեցին։ Եւ Աբեդեան Գաաղն ասեց. Աբիմելէքն ո՞վ է, և Սիւքէմն ո՞վ է որ մենք նորան ծառայենք, չէ՞ որ Յերոբաաղի տղան է, և Զեբուղը՝ նորա փոխանորդը։ Դուք Սիւքէմի հօր՝ Եմովրի մարդկանցը ծառայութիւն արէք. և մենք ի՞նչու համար նորան ծառայենք։ Երանի թէ այս ժողո- 29
վուրդն իմ ձեռքն անցնէր. և ես Աբիմելէքին հեռացնէի. և Աբիմելէքին ասեց. Զօրքերդ շատացրու և դուրս եկ։
Եւ քաղաքի իշխան՝ Զեբուղը 30
երբոր լսեց Աբեդեան Գաաղի խօսքերը, բարկութիւնը բորբոքուեց։ Եւ խորամանկ կերպով Ա- 31
բիմելէքին պատգամաւորներ ուղարկեց, ասելով. Ահա Աբեդեան Գաաղը և իր եղբայրները եկել են Սիւքէմ, և ահա նորանք քաղաքը քեզ դէմ են հանում։ Եւ հիմա դու և քեզ հետ 32
լինող ժողովուրդը գիշերով վեր կաց, և դաշտումը դարան նըստիր. Եւ առաւօտը հէնց որ ա- 33
րեգակը ծագէ՝ կանուխ վեր կաց ու քաղաքի վերայ յարձակուիր, և ահա նա և նորա հետ եղող ժողովուրդը քեզ դէմ են դուրս գալու. այն ժամանակ ձեռքիցդ եկածը արա նորան։
Եւ Աբիմելէքը և նորա հետ 34
եղող բոլոր ժողովուրդը գիշերով վեր կացան, և չորս գունդով Սիւքէմի դէմ դարանի մէջ նըստեցին։ Եւ Աբեդեան Գաաղը 35
դուրս եկաւ և քաղաքի դռան առաջին կանգնեց. և Աբիմելէքը և իր հետն եղող ժողովուրդը դուրս եկան դարաններիցը։ Եւ 36
Գաաղը տեսաւ այն ժողովրդին և Զեբուղին ասեց. Ահա սարերի գլխիցը ժողովուրդ է իջնում։ Եւ Զեբուղը նորան ասեց. Դու սարերի շուքն ես տեսնում մարդկանց պէս։ Եւ Գաաղը շարու- 37
նակեց խօսքը և ասեց. Ահա երկրի բարձր տեղիցը ժողովուրդ է իջնում, և մէկ գունդ էլ է գալիս Մէօնէնիմի կաղնիի ճանապարհովը. Եւ Զեբուղը նորան ա- 38
սեց. Ո՞ւր է քո այն բերանը, որով ասում էիր թէ Աբիմելէքն ո՞վ է որ մենք նորան ծառայութիւն անենք. ահա սա այն ժո-

ղովուրդն են, որ դու արհամար-
հեցիր. հիմա վեր կաց նորա հետ
39 պատերազմիր։ Եւ Գաղաղը Սիւ-
քէմի բնակիչների առաջը դուրս
եկաւ և Աբիմելէքի հետ պատե-
40 րազմ արաւ։ Եւ Աբիմելէքը նո-
րան հալածեց և նա նորա առա-
ջիցը փախաւ, և շատերը մեռած
41 ընկան մինչև դռան առաջը։ Եւ
Աբիմելէքը Արումայի մէջ բնակ-
ուեց, և Զեբուղը՝ քշեց Գաղաղին
և նորա եղբայրներին որ Սիւքէ-
42 մում չ՚բնակուին։ Եւ հետևեալ
օրը ժողովուրդը դուրս եկաւ
դաշտը. և Աբիմելէքին իմացրին,
43 Եւ նա ժողովուրդն առաւ՝ երեք
գունդի բաժանեց, և դաշտի մէջ
դարանամուտ եղաւ. և տեսաւ
որ ահա ժողովուրդը քաղաքիցը
դուրս է գալիս, և նորանց վերայ
յարձակուելով նորանց զարկեց։
44 Եւ Աբիմելէքը և նորա հետ ե-
ղող գունդը յարձակուեցան՝ քա-
ղաքի դռան առաջին կանգնեցին,
և երկու գունդեր բոլոր դաշտի
մէջ եղողների վերայ յարձակ-
45 ուելով նորանց զարկեցին։ Եւ
Աբիմելէքն այն բոլոր օրը քաղա-
քի հետ պատերազմեց և քաղա-
քըն առաւ, և այն մարդիկը որ
մէջն էին՝ կոտորեց, և քաղաքը
46 քանդեց և աղ ցանեց։ Եւ Սիւ-
քէմի աշտարակի բոլոր բնակիչ-
ները երբոր լսեցին, Բերիթ աս-
47 տուծոյ տան բերդը մտան։ Եւ
Աբիմելէքին իմացրին, թէ Սիւ-
քէմի աշտարակի բոլոր բնակիչ-
48 ները ժողովուել են։ Եւ Աբիմե-
լէքը և իր հետ եղող բոլոր ժո-
ղովուրդը վեր ելան Սելմոն սարը.
և Աբիմելէքը տապարը ձեռքն
առաւ և մի ծառի ոստ կտրեց,
և նորան վեր առաւ իր ուսի վե-
րայ դրաւ, և իր հետ եղող ժո-
ղովրդին ասեց. Ահա տեսաք ինչ
որ ես արի, շուտով դուք էլ
49 ինձ պէս արէք։ Եւ ժողովրդի
ամենն էլ մէկ մէկ ոստ կտրե-
ցին. և Աբիմելէքի ետևից գնա-
ցին, և բերդի մօտ դրին, և նո-
րանցով բերդը կրակով այրեցին.
այսպէս Սիւքէմի աշտարակի բո-
լոր մարդիկն էլ՝ որոնք հաղա-
րի չափ մարդիկ և կանայք էին՝
մեռան։

Եւ Աբիմելէքը գնաց Թեբէս, 50
և Թեբէսը պաշարեց, և նորան
առաւ։ Եւ քաղաքի մէջտեղու- 51
մը մէկ պինդ աշտարակ կար. և
քաղաքի բոլոր բնակիչները՝ մար-
դիկը և կանայքը փախան այն-
տեղ, և դուռը ներսիցը կողպե-
ցին և վեր ելան աշտարակի կը-
տուրը։ Եւ Աբիմելէքը գնաց 52
մինչև աշտարակը և նորա հետ
պատերազմ արաւ, և աշտարա-
կի դռանը մօտեցաւ որ նորան
կրակով այրէ։ Եւ մի կին մի եր- 53
կանաքարի կտոր գցեց Աբիմելէ-
քի գլխին, և նորա գագաթը կոտ-
րեց։ Եւ նա շուտով կանչեց իր 54
զէնքերը կրող երիտասարդին և
նորան ասեց. Սուրդ քաշիր և ինձ
մեռցրու. մի գուցէ ինձ համար
ասեն թէ Մի կին սպանեց նորան։
Եւ երիտասարդը նորան խոցեց, և
նա մեռաւ։ Եւ Իսրայէլի մարդիկը 55
տեսան, որ Աբիմելէքը մեռաւ.
և ամեն մարդ իր տեղը գնաց։

Այսպէս Աստուած ետ դար- 5
ձրեց Աբիմելէքի չարութիւնը,
որ նա իր հօրն արել էր՝ իր եօ-
թանասուն եղբայրներին սպանե-
լով։ Եւ Սիւքէմի մարդկանց բո- 57
լոր չարութիւնը Աստուած նո-
րանց գլխին դարձրեց. և Յերո-
բաաղի որդի Յովաթամի անէծքը
նորանց վերայ եկաւ։

ԳԼ. Ժ

Եւ Աբիմելէքից յետոյ Իսրայէ- 1
լին ազատելու համար Իսաքար-
եան Դովդայի որդիի Փուայի որ-
դի Թովղան վեր կացաւ. և նա
Եփրեմի սարումը Սամիրի մէջ էր
բնակվում։ Եւ Իսրայէլի մէջ 2
քսանևերեք տարի դատաւորու-
թիւն արաւ, և մեռաւ և Սա-
միրի մէջ թաղուեցաւ։ 3

Եւ նորանից յետոյ Գաղաա-
դացի Յայիրը վեր կացաւ և Իս-
րայէլի մէջ քսանևերկու տարի
դատաւորութիւն արաւ։ Եւ նա 4
երեսուն որդի ունէր, որոնք հեծ-
նում էին երեսուն աւանակի վե-

րայ. և նորանք Գաղաադի երկ-
րումը երեսուն քաղաք ունէին
որոնք մինչև այս օրը ասվում են
5 Յայիրի գիւղաքաղաքները։ Եւ
Յայիրը մեռաւ և Կամոնի մէջ
թաղուեցաւ։
6 Եւ Իսրայէլի որդիքը շարունա-
կեցին Տիրոջ առաջին չարութիւն
անելու, և պաշտեցին Բահաղիմը
և Աստարովթը, և Ասորիների
աստուածները, և Սիդոնի աստ-
ուածները, և Մովաբի աստուած-
ները, և Ամմոնի որդկանց աստ-
ուածները, և Փղշտացիների աստ-
ուածները, և թողեցին Տիրոջը և
7 նորան ծառայութիւն չ՚արին։ Եւ
Տիրոջ բարկութիւնը Իսրայէլի
վերայ բորբոքուեց, և նորանց
մատնեց Փղշտացիների ձեռքը և
8 Ամմոնի որդկանց ձեռքը։ Եւ նո-
րանք նեղեցին և հարստահարե-
ցին Իսրայէլի որդիներին այն
տարուանից մինչև տասնևութ
տարի, այսինքն բոլոր Իսրայէլի
որդիներին որոնք Յորդանանի այն
կողմին Գաղաադումն էին Ամօր-
9 հացիների երկրի մէջ։ Նաև Ամ-
մոնի որդիքը Յորդանանիցն ան-
ցան, որ Յուդայի հետ, Բենիա-
մինի հետ և Եփրեմի տան հետ
պատերազմ անեն. և Իսրայէլը
շատ մեծ նեղութեան մէջ էր։
10 Եւ Իսրայէլի որդիքը Տիրոջն
աղաղակեցին և ասեցին. Քեզ
դէմ մեղք գործեցինք, որովհե-
տև մեր Աստուծուն թողեցինք
11 և Բահաղիմը պաշտեցինք։ Եւ
Տէրը Իսրայէլի որդկանցն ասեց.
Ահա չեզ ազատեցի Եգիպտացինե-
րիցը, Ամօրհացիներիցը, Ամմոնի
որդիներիցը և Փղշտացիներիցը։
12 Նաև Սիդոնացիները, Ամաղեկա-
ցիները և Մաոնացիները ձեզ նե-
ղում էին, և դուք ինձ աղաղա-
կեցիք, ես ձեզ նորանց ձեռքիցն
13 ազատեցի։ Բայց դուք ինձ թո-
ղեցիք և ուրիշ աստուածների
ծառայութիւն արիք. նորա հա-
մար ես այլևս ձեզ չեմ ազա-
14 տելու։ Գնացէք ձեր ընտրած
աստուածներին աղաղակեցէք. նո-
րանք ձեզ ազատեն ձեր նեղու-
15 թեան ժամանակին։ Եւ Իսրայէլի
որդիքը Տիրոջը ասեցին. Մենք
մեղք գործեցինք. քո աչքի ա-
ռաջին ինչ որ հաճելի է, այն
արա մեզ. բայց միայն աղաչում
ենք՝ ազատիր մեզ այսօր։ Եւ ի- 16
րանց միջիցը վեր առան օտար
աստուածներին և Տիրոջը ծառա-
յութիւն արին. և նորա սիրտն
իջաւ Իսրայէլի նեղութեան հա-
մար։

Եւ Ամմոնի որդիքը ժողովուե- 17
ցան, և Գաղաադի մէջ բանակ
տուին. Իսրայէլի որդիքն էլ ժո-
ղովուեցան և Մասփայի մէջ բա-
նակ տուին։ Եւ ժողովուրդը՝ Գա- 18
ղաադի իշխաններն իրար ասե-
ցին. Ո՞վ է այն մարդը որ սկսէ
Ամմոնի որդկանց հետ պատե-
րազմ անելու. նա Գաղաադի
բոլոր բնակիչների գլուխը լինի։

ԳԼ. ԺԱ

Եւ Գաղաադացի Յեփթայէն հը- 1
զօր զօրաւոր մարդ էր, և նա մի
պոռնիկ կնկայ զաւակ էր. և Յեփ-
թայէի հայրը Գաղաադն էր։ Եւ 2
Գաղաադի կինը նորա համար
զաւակներ ծնեց. և երբոր այն կընկայ
զաւակները մեծացան՝ Յեփ-
թայէին հալածեցին, և նորան ա-
սեցին. Դու մեր հօր տան մէջ
ժառանգութիւն պիտի չ՚ունե-
նաս, որովհետև դու մի օտար
կնկայ զաւակ ես։ Եւ Յեփթայէն 3
իր եղբայրների երեսիցը փախչե-
լով՝ Տովբի երկրումը բնակուեց.
և Յեփթայէի մօտ սրիկայ մար-
դիկ ժողովուեցան և ման էին
գալիս նորա հետ։

Եւ եղաւ որ մի ժամանակից 4
յետոյ Ամմոնի որդիքը Իսրայէլի
հետ պատերազմ արին։ Եւ երբոր 5
Ամմոնի որդիքը Իսրայէլի հետ
պատերազմ էին անում, Գաղա-
ադի ծերերը գնացին, որ Յեփ-
թայէին Տովբի երկրիցն առնեն։
Եւ Յեփթայէին ասեցին. Եկ՝ մեզ 6
զօրագլուխ եղիր որ Ամմոնի որդ-
կանց հետ պատերազմ անենք։
Եւ Յեփթայէն Գաղաադի ծերե- 7
րին ասեց. Չէ՞ որ դուք ինձ ա-
տեցիք և ինձ հալածեցիք իմ հօր

տանիքը, և հիմա ինչու համար
էք եկել ինձ մոտ, որ նեղու-
8 թեան մէջ էք։ Եւ Գաղաադի
ծերերը Եփթայէին ասեցին. Նո-
րա համար ենք հիմա քեզ դի-
մել, որ մեզ հետ գնաս և Ա-
մմոնի որդւոց դէմ պատերազմ
անես, և մեզ՝ Գաղաադի բոլոր
9 բնակիչներիս գլուխ լինես։ Եւ
Եփթայէն Գաղաադի ծերերին
ասեց. Եթէ դուք ինձ դարձնէք
Ամմոնի որդւոց դէմ պատե-
րազմ անելու համար, և Տէրը
նորանց իմ ձեռքը մատնէ, ես
10 ձեզ գլուխ լինեմ։ Եւ Գաղաա-
դի ծերերը Եփթայէին ասեցին.
Տէրը մեր մէջ լսէ, եթէ ասա-
11 ծիդ պէս չանենք։ Եւ Եփթա-
յէն Գաղաադի ծերերի հետ գը-
նաց, և ժողովուրդը նորան իրանց
վերայ գլուխ և զօրապետ դրին.
և Եփթայէն խօսեց Մասփայում
Տէրոջ առաջին իր բոլոր խօսքերը։
12 Եւ Եփթայէն Ամմոնի որդ-
կանց թագաւորին պատգամա-
ւորներ ուղարկեց, ասելով. Դու
ինձ հետ ինչ բան ունես, որ
13 ինձ մօտ եկար իմ երկրումը պա-
տերազմ անելու։ Եւ Ամմոնի
որդկանց թագաւորը Եփթայէի
պատգամաւորներին ասեց Թէ՝
Իսրայէլն եգիպտոսից դուրս գա-
լիս՝ Առնոնից մինչև Յաբոկ և
մինչև Յորդանան իմ երկիրն ա-
ռաւ, հիմա խաղաղութեամբ ետ
14 դարձրու այն։ Եւ Եփթայէն Ա-
մմոնի որդկանց թագաւորին կրկ-
կին պատգամաւորներ ուղարկեց,
15 Եւ նորան ասեց. Եփթայէն այս-
պէս է ասում. Իսրայէլը չառաւ
Մովաբի երկիրը և Ամմոնի որդ-
16 կանց երկիրը. Որովհետև եգիպ-
տոսից դուրս գալիս Իսրայէլը
մինչև կարմիր ծովը անապատով
17 գնաց, և եկաւ Կադէս. Եւ Իս-
րայէլը եդովմի թագաւորի մօտ
դեսպաններ ուղարկեց ասելով.
Աղաչում եմ՝ թող քո երկրումն
անցնեմ. բայց եդովմի թագա-
ւորը չլսեց, և Մովաբի թագա-
ւորի մօտ էլ ուղարկեց, նա էլ
թող չտուաւ. և Իսրայէլը մնաց
18 Կադէսի մէջ, եւ անապատով
գնաց, և եդովմի երկրովը և Մո-
վաբի երկրով պտոյտ տուաւ, և
Մովաբի երկրի արևելեան կողմից
գնալով Առնոնի այն կողմին
բանակ տուաւ. բայց Մովաբի
սահմանը չմտաւ, որովհետև Մո-
վաբի սահմանը Առնոնն էր։ 19
Իսրայէլը դեսպաններ ուղարկեց
Ամորհացիների Սեհոն թագաւո-
րի մօտ (որ Եսեբոնի թագաւորն
էր) և Իսրայէլը նորան ասեց.
Աղաչում եմ քո երկրումն անց-
նեմ մինչև իմ տեղը։ Բայց Սե-
հոնը Իսրայէլին հաւատալ չընծա-
յեց որ նա իր սահմանումն անց-
նէր. և Սեհոնը իր բոլոր ժողովըր-
դին ժողովեց, և բանակ տուին
Յասայի մէջ. և նա Իսրայէլի
դէմ պատերազմ արաւ։ 21
Եւ Իս-
րայէլի Տէր Աստուածը Սեհոնին
և նորա բոլոր ժողովրդին Իսրա-
յէլի ձեռքը մատնեց, և նորանք
զարկեցին նորանց և Իսրայէլը այն
երկրումը բնակող Ամորհացիների
բոլոր երկիրն առաւ։ 22
Եւ ժա-
ռանգեցին Ամորհացիների բոլոր
սահմանը՝ Առնոնից մինչև Յաբոկ,
և անապատիցը մինչև Յորդանան։
Եւ հիմա Իսրայէլի Տէր Աս- 23
տուածն է Ամորհացիներին իր Իս-
րայէլ ժողովրդի առաջից հալա-
ծել, դո՞ւ ժառանգես այն։ Չէ՞ 24
որ դու քո աստուծոյ՝ Քամոսի
քեզ ժառանգութիւն տուածը
կ'ժառանգես. մենք էլ ժառան-
գում ենք մեր Եհովայ Աստուածոյ
մեր առաջից հալածածը։ Եւ հի- 25
մա դու Մովաբի թագաւոր Սեպ-
փորեան Բաղակից աւելի լաւ
ե՞ս. միթէ նա վիճե՞ց Իսրայէլի
հետ կամ նորանց հետ պատե-
րազմ արա՞ւ։ 26
Իսրայէլը Եսեբո-
նում և նորա գիւղերումն, Արո-
երում և նորա գիւղերումն, և
Առնոնի եզերքի վերայ եղող բո-
լոր քաղաքներումն երեք հարիւր
տարի է որ բնակվում է. և ինչ-
ու համար այնքան ժամանակ
չազատեցիք։ 27
Եւ ես քեզ դէմ
յանցանք չեմ արած, և դու ինձ
հետ պատերազմ անելով ինձ
չարութիւն ես անում. այսօր
Իսրայէլի որդկանց և Ամմոնի որդ-

կանց մէջ դատաւոր եղող Եհո-
28 վան դատաստան անէ։ Բայց Ա-
մմոնի որդկանց թագաւորը Եփ-
թայէի ուղարկած խօսքերը չլսեց։
29 Եւ Տէրոջ Հոգին Եփթայէի
վերայ եղաւ. և նա Գաղաադիցն
ու Մանասէիցն անց կացաւ և
Գաղաադի Մասփայիցն էլ անց-
աւ, և Գաղաադի Մասփայիցն
Ամմոնի որդկանց վերայ գնաց։
30 Եւ Եփթայէն Տէրոջն ուխտ ա-
րաւ և ասեց. Եթէ Ամմոնի որ-
դիքը բոլորովին իմ ձեռքը մատ-
31 նես, Այն ժամանակ իմ առն
դառնիցն ինձ դիմաւորելու դուրս
եկողը, երբոր ես խաղաղութեամբ
ետ դառնամ Ամմոնի որդիներից,
Տէրոջը թող լինի, և նորան ող-
32 ջակէզ մատուցանեմ։ Եւ Եփ-
թայէն Ամմոնի որդկանց վերայ
գնաց նորանց հետ պատերազմե-
լու, և Տէրը նորանց մատնեց նո-
33 րա ձեռքը։ Եւ նա զարկեց Աро-
երից մինչև Միննիթ՝ քսան քա-
ղաք, և մինչև Աբէլքերամիմ
սաստիկ կոտորածով. և Ամմոնի
որդիքը Իսրայէլի որդկանց առա-
ջին նուաճուեցան։
34 Եւ Եփթայէն եկաւ Մասփա
իր տունը. և ահա նորա աղջիկը
դուրս էր գալիս թմբուկներով
և պարերով նորան դիմաւորե-
լու. և նա նորա մէկ հատ զա-
ւակն էր, և բացի նորանից տղայ
35 կամ աղջիկ չունէր։ Եւ երբոր
նորան տեսաւ, իր հանդերձը պա-
տառեց և ասեց. Ո՜հ, աղջիկս,
դու ինձ նկուճե արիր. և դու ինձ
փորձանքի մէջ գցեցիր, որովհե-
տև ես բերանս բացի Տէրոջը և
36 չեմ կարող ետ դարձնել։ Եւ
աղջիկը նորան ասեց. Հայր իմ,
բերանդ բացել ես Տէրոջը, արա
ինձ ինչպես որ դուրս է եկել
բերանիդից, քանի որում Տէրը քեզ
համար քո թշնամիներիցը Ամմո-
նի որդկանցիցը վրէժխնդրութիւն
37 արաւ։ Եւ իր հօրն ասեց. Միայն
այս բանն արա ինձ. ինձ երկու
ամիս թող տուր որ վեր գնամ
սարերը և իջնեմ. և իմ ընկեր-
ներովս իմ կուսութեան վերայ
38 լաց լինեմ, Եւ նա ասեց. Գնա.
Եւ նորան երկու ամիս թող
տուաւ. և նա իր ընկերներովը
գնաց, և սարերի վերայ իր կու-
սութիւնը լաց եղաւ։ Եւ երկու 39
ամիսը լրանալուց յետոյ իր հօր
մօտ դարձաւ, և նա իր արած
ուխտը նորա մասին կատարեց.
և նա այր չճանաչեց։ Եւ Իսրա- 40
յէլի մէջ սովորութիւն եղաւ, որ
ժամանակ ժամանակ Իսրայէլի
աղջիկները գնան և Գաղաադացի
Եփթայէի աղջկան համար տա-
րին չորս օր լաց լինեն։

ԳԼ. ԺԲ

Եւ Եփրեմի մարդիկը ժողովուե- 1
ցան, և դէպի Հիւսիսային կողմն
անցան. և Եփթայէին ասեցին.
Ինչու համար Ամմոնի որդկանց
հետ գնացիր պատերազմելու և
մեզ չկանչեցիր որ քեզ հետ
գնայինք. մենք քո տունը քեզ
վերայ կրակով այրելու ենք։ Եւ 2
Եփթայէն նորանց ասեց. Ես և
իմ ժողովուրդը Ամմոնի որդկանց
հետ մեծ կռիւներ ունեցանք. և
ես ձեզ կանչեցի. բայց դուք ինձ
նորանց ձեռքիցը չազատեցիք։
Ես էլ երբոր տեսայ որ դուք ինձ 3
չէք ազատում, հոգիս ձեռքիս
մէջ դրի և գնացի Ամմոնի որդ-
կանց վերայ, և Տէրը նորանց իմ
ձեռքը մատնեց. և ինչու հա-
մար դուք այսօր ինձ դէմ եկաք
պատերազմելու։ Եւ Եփթայէն 4
Գաղաադի բոլոր մարդկանցը ժո-
ղովեց Եփրեմի հետ պատերազմ
արաւ, և Գաղաադի մարդիկը
Եփրեմացիներին զարկեցին. որով-
հետև ասել էին Թէ՝ Դուք Գա-
ղաադացիներ Եփրեմի փախստա-
կաններ էք Եփրեմի մէջ և Մա-
նասէի մէջ, Եւ Գաղաադացինե- 5
րը Եփրեմի առաջին Յորդանանի
անցքերը բռնեցին. և երբոր Եփ-
րեմի մի փախստականը ասում
էր. Թող տուէք անցնեմ. այն
ժամանակ Գաղաադի մարդիկը
նորան ասում էին. Եփրեմացի՞ն
ես դու. Նա ասում էր՝ Ո՛չ. Եւ 6
նորան ասում էին. Ապա ասիր
Շիբբոլեթ, և նա ասում էր. Սի-

բօլէթի, (որովհետև չէր կարողացնում ուղիղ արտասանել) և նրան բռնում էին և Յորդանանի անցքերում սպանում էին, և այն ժամանակ Եփրեմիցը քառասունևերկու հազար մարդ բնկաւ։
7 Եւ Յեփթայէն Իսրայէլի մէջ վեց տարի դատաւորութիւն արաւ. և Գաղաադացի Յեփթայէն մեռաւ, և թաղուեցաւ Գաղաադի քաղաքների մէջ։
8 Եւ նորանից յետոյ Իսրայէլի մէջ Բեթլեհէմացի Աբեսսանը
9 դատաւորութիւն արաւ։ Եւ նա երեսուն աղջկայ ունէր, և երեսուն աղջիկ, որոնց դուրս մարդի տուաւ, և դրսից իր տղերանց համար երեսուն աղջիկ բերաւ, և ինքն Իսրայէլի մէջ եօթը տարի դատաւորութիւն արաւ։
10 Եւ Աբեսսանը մեռաւ և թաղուեցաւ Բեթլեհէմում։
11 Եւ նորանից յետոյ Զաբուղոնացի Եղոնը եղաւ Իսրայէլի դատաւոր, և Իսրայէլի մէջ տասը տարի դատաւորութիւն արաւ։
12 Եւ Զաբուղոնացի Եղոնը մեռաւ, և թաղուեցաւ Զաբուղոնի երկրում Այիղոնի մէջ։
13 Եւ նորանից յետոյ Փարաթոնացի Հէլլելի որդի Աբդոնը եղաւ
14 Իսրայէլի դատաւոր։ Եւ նա քառասուն տղայ և երեսուն թոռներ ունէր, որոնք հեծնում էին եօթանասուն ասանակների վերայ. և ինքը Իսրայէլի մէջ ութ տարի դատաւորութիւն արաւ։
15 Եւ Փարաթոնացի Հէլլելի որդին Աբդոնը մեռաւ, և թաղուեցաւ Ամաղեկացիների սարի վերայ Եփրեմի երկրում Փարաթոնի մէջ։

ԳԼ. ԺԳ

1 Եւ Իսրայէլի որդիքը չարութիւն անելով Տիրոջ առաջին չարութիւն անելու, և Տէրը նորանց քառասուն տարի փղշտացիների ձեռքը մատնեց։
2 Եւ մի Սարաացի մարդ կար Դանի ցեղից՝ Մանուէ անունով, և նորա կինիկը ամուլ էր և զաւակ չէր ծնում։ Եւ Տիրոջ հրեշտակը երևեցաւ այս կնկան և նորան ասեց. Ահա դու հիմա ամուլ ես և չես ծնում, բայց կը յղանաս և մի որդի կ'ծնես։ Հիմա զգոյշ կաց որ գինի կամ ցքի չխմես և ոչ անմաքուր բան ուտես։ Որովհետև ահա դու կ'յղանաս և մի որդի կ'ծնես, և նորա գլխի վերայ ածելի պիտի չդայ. նորա համար որ այն տղան արգանդից Աստուծոյ ուխտաւորը պիտի լինի, և նա սկսելու է իսրայէլին ազատել փղշտացիների ձեռքից։ Եւ կինիկը գնաց և իր մարդին պատմեց ասելով. Աստուծոյ մի մարդը ինձ մօտ եկաւ, և նորա դէմքը Աստուծոյ հրեշտակի դէմքի պէս ահարկու էր. և ես չհարցրի թէ որտեղից է նա, և նա էլ իր անունն ինձ չասեց. Բայց ինձ ասեց. Ահա դու կ'յղանաս և մի որդի կ'ծընես. հիմա գինի ու ցքի չխմես, և անմաքուր բան չուտես, որովհետև այն տղան արգանդից մինչև իր մահուան օրը Աստուծոյ ուխտաւորը պիտի լինի։
8 Եւ Մանուէն Տիրոջն աղաչեց և ասեց. Աղաչում եմ, ով Տէր իմ, այն Աստուծոյ մարդը որին դու ուղարկեցիր՝ թող դարձեալ մեզ մօտ գայ և մեզ սովորեցնէ, թէ այն ծնուելու տղային ի՞նչ անենք։ Եւ Աստուած Մանուէի ձայնը լսեց, և Աստուծոյ հրեշտակը դարձեալ այն կնկայ մօտ եկաւ՝ երբոր նա արտում նըստել էր. և նորա մարդը Մանուէն հետը չէր։ Եւ կինիկը շուտով վազեց. և իր մարդին պատմեց և նորան ասեց. Ահա այն օրն ինձ մօտ եկող մարդն ինձ երևացել է։ Եւ Մանուէն վեր կացաւ իր կնկայ ետևիցը գնաց, և նորան ասեց. Դո՞ւ ես այն մարդը որ այս կնկան հետ խօսել ես. և նա ասեց. Ես եմ։ Եւ Մանուէն ասեց. Երբոր քո խօսքերը կատարուին, ի՞նչ կերպ պէտք է անել տղային, և ի՞նչ է նորա բանը։
13 Եւ Տիրոջ հրեշտակը Մանուէին ասեց. Ամեն իմ ասածիցը թող

14 կինիկը զգուշանայ. Որթիցը դուրս եկած ոչ մի բան չուտէ, և գինի և ցքի չխմէ, և անմաքուր բան չուտէ, և իմ ամեն պատուիրածը պահէ։
15 Եւ Մանուէն Տիրոջ հրեշտակին ասեց. Աղաչում եմ թող քեզ պահենք, և այծերիցը մի ուլ պատրաստենք քո առաջին։
16 Եւ Տիրոջ հրեշտակը Մանուէին ասեց. Թէ և ինձ պահես էլ՝ քո հացիցը չեմ ուտիլ. բայց եթէ ողջակէզ անես, Տիրոջը զոհիր այն, որովհետև Մանուէն չգիմացաւ թէ նա Տիրոջ հրեշտակն է։
17 Եւ Մանուէն Տիրոջ հրեշտակին ասեց. Անունդ ինչ է, որպէս զի երբոր խօսքդ կատարուի՝ քեզ պատուենք։ Եւ Տիրոջ հրեշտակը նորան ասեց. Ա՛յս ինչու ես հարցնում իմ անունը, որովհետև նա սքանչելի է։ Եւ Մանուէն առաւ ուլն ու հացի նուէրը, և ապառաժի վերայ զոհեց Տիրոջը. և նա Մանուէի և նորա կնկայ աչքերի առաջին հրաշք արաւ։
20 Որովհետև երբոր բոցը բարձրանում էր սեղանիցը դէպի երկինք, Տիրոջ հրեշտակն էլ սեղանի բոցովը վեր ելաւ. և Մանուէն և իր կինիկը մինիկ էին անում, և
21 երեսի վերայ գետինը ընկան։ Եւ Տիրոջ հրեշտակը այլ ևս Մանուէին և նորա կնկան չերևեցաւ. այն ժամանակ Մանուէն հասկացաւ, որ նա Տիրոջ հրեշտակն էր։
22 Եւ Մանուէն ասեց իր կնկան. Անպատճառ պիտի մեռնենք, որովհետև Աստուծուն տեսանք. Եւ կինիկը նորան ասեց. Եթէ Տէրը ուզէր մեզ մեռցնել, մեր ձեռքիցը ողջակէզն ու հացի նուէրը չէր ընդունիլ. և այս բոլոր բաները մեզ չէր ցոյց տալ. և այս ժամանակին այսպիսի բաներ մեզ լսել չէր տալ։
24 Եւ կինիկը մի որդի ծնեց, և նորա անունը Սամփսոն կոչեց, և տղան մեծացաւ, և Տէրը օրհնեց նորան։ Եւ Տիրոջ Հոգին սկսեց նորա վերայ գալ Սարաայի և Եսթաւուղի մէջ տեղ Դանի բանակումը։

ԳԼ. ԺԴ

1 Եւ Սամփսոն իջաւ Թամնաթա և Թամնաթայում փղշտացիների աղջիկներիցը մի կին տեսաւ, եւ
2 վեր գնաց ու իր հօրը և մօրը պատմեց և ասեց. Թամնաթայում փղշտացիների աղջիկներիցը մի կին տեսայ. և հիմա ինձ համար կին առէք նորան։ Եւ նորա հայրն ու մայրը նորան ասեցին. Մի՞թէ քո եղբայրների աղջիկներում և իմ բոլոր ժողովրդի մէջ կին չկայ, որ դու գնաս անթլփատ փղշտացիներիցը կին առնես. բայց Սամփսոն իր հօրն ասեց. Նորան առ ինձ համար, որովհետև իմ աչքերին հաճելի է։
4 Եւ նորա հայրն ու մայրը չգիտէին, որ այս բանը Տէրիցն է, որովհետև նա փղշտացիներիցը մեկ առիթ էր որոնում. և այն ժամանակը փղշտացիներն իշխում էին Իսրայէլի վերայ։
5 Եւ Սամփսոն իր հօր ու մօր հետ Թամնաթա իջաւ. և եկան մինչև Թամնաթայի այգիները. և ահա մի առիւծի կորիւն մռնչելով նորան դիմաւորեց։ Եւ Տիրոջ Հոգին նորա վերայ եկաւ, և նա նորան պատառեց ինչպէս մի ուլ կ'պատառէն, և ձեռքումը մի բան չը կար. և իր հօրն ու մօրը չպատմեց ինչ որ արել էր։ Եւ իջաւ ու այն կնկան հետ խօսեց. և կինը Սամփսոնի աչքերին հաճելի էր։
8 Եւ մի ժամանակից յետոյ երբոր նա գնաւ կնկին առնելու, առիւծի դիակը տեսնելու համար ճանապարհից դուրս ծռուեց և մեղրի պատեր և մեղր կար նորա առիւծի դիակի մէջ։
9 Եւ նա ձեռքն առաւ այն և ուտելով գնում էր, և իր հօր ու մօր մօտ գնաց և նորանց էլ տուաւ, և նորանք կերան. բայց նորանց չասեց թէ մեղրը առիւծի դիակիցն է հանել։
10 Եւ նորա հայրն իջաւ այն կընկայ մօտ, և Սամփսոնը այնտեղ մի խնջոյք արաւ, որովհետև երիտասարդներն այսպէս էին անում։ Եւ երբոր նորան տեսան՝

երեսուն ընկեր բերին, որ նորա
12 հետ լինեն։ Եւ Սամփսոն ասեց
նորանց. Հիմա ձեզ մի հանելուկ
ասեմ, եթէ նորան այս խնջոյքի
եօթը օրուայ մէջ ինձ բացա-
տրէք և գտնէք, ես էլ ձեզ երե-
սուն շապիկ և երեսուն փոխելու
13 հանդերձ կ'տամ. Բայց եթէ չը
կարողանաք բացատրել ինձ հա-
մար, այն ժամանակ դուք ինձ
երեսուն շապիկ և երեսուն փո-
խելու հանդերձ տաք, և նորանք
ասեցին նորան. Հանելուկդ մեզ
14 ասիր որ լսենք։ Եւ նորանց ա-
սեց. Կերողիցը կերակուր դուրս
եկաւ և հզօրիցն անոյշ եղաւ։
Եւ նորանք այս հանելուկը երեք
օրուայ մէջ չ'կարողացան բա-
15 ցատրել, Եւ եօթներորդ օրը
Սամփսոնի կնկան ասեցին. Մար-
դիդ խաբէր որ հանելուկը մեզ
բացատրէ, որ մի գուցէ քեզ և
քո հօր տունը կրակով այրենք.
մեզ կողոպտելու համար կանչե-
16 ցիք. չէ՞։ Եւ Սամփսոնի կնիկը
լաց եղաւ նորա մօտ և ասեց.
Անպատճառ դուք ինձ ատում էս
և ինձ չէս սիրում. գուք իմ ժո-
ղովրդի որդկանցը մի հանելուկ
էս ասել. և ինձ չ'բացատրեցիր։
Եւ նա ասեց նորան. Ահա իմ
հօրն ու մօրը չ'յայտնեցի. և քե՞զ
17 պիտի յայտնէի։ Եւ նա իրանց
խնջոյքի եօթը օրերին նորա մօտ
լաց եղաւ. և նա եօթներորդ օ-
րը նորան բացատրեց, որովհետև
նորան նեղութիւն էր տալիս. Նա
էլ բացատրեց հանելուկը իր ժո-
18 ղովրդի որդկանցը։ Եւ քաղաքի
մարդիկը եօթներորդ օրը արե-
գակը մտնելուց առաջ նորան ա-
սեցին. Ինչ է անուշ մեղրիցը՝ և
ինչ զօրաւոր՝ առիւծիցը։ Եւ
նա ասեց նորանց. Եթէ դուք
իմ երինջովը չ'էիք հերկէիք, իմ հա-
19 նելուկը չէիք գտնիլ։ Եւ Տիրոջ
Հոգին նորա վերայ եկաւ, և նա
իջաւ Ասկաղոն և նորանցից երե-
սուն մարդ մեռցրեց, և նորանց
հանդերձներն առաւ և տուաւ
հանելուկը բացատրողներին, և
բարկութիւնը բորբոքուեց, և նա
20 վեր գնաց իր հօր տունը։ Եւ
Սամփսոնի կնիկը մարդի գնաց
նորա բարեկամը եղող ընկերին։

Գլ. ԺԵ

Եւ եղաւ որ մի ժամանակից յե- 1
տոյ ցորնի հունձի օրերին Սամփ-
սոնը այծերիցը մի ուլ առաւ և
գնաց իր կնկան այցելութեան և
ասեց. Ներքին սենեակը գնամ
կնկանս մօտ, բայց կնկայ հայրը
նորան չ'թողեց որ մտնէ։ Եւ նո- 2
րա հայրն ասեց. Իրաւ կարծեցի՛
որ դու նորան բոլորովին ատեցիր,
և նորան քո ընկերին տուի. ահա
նորա փոքր քոյրը նորանից գեղե-
ցիկ է. հիմա թող նորա տեղ նա
լինի քեզ։ Եւ Սամփսոնը նորանց 3
ասեց. Այս անգամ փղշտացինե-
րիցն անպատիժ եմ, եթէ նորանց
չարութիւն անեմ։ Եւ Սամփսո- 4
նը գնաց երեք հարիւր աղուէս
բռնեց, և ջահեր առաւ, և ագի
ագիի դարձրեց և երկու ագիներ-
ի մէջտեղը մէկ ջահ դրաւ։ Եւ 5
ջահերը կրակով վառեց, և նո-
րանց քշեց փղշտացիների հունձ-
քերի մէջ, և դիզուած և չ'կըտ-
րուած հունձքերը և մինչև ան-
գամ այգիները՝ ձիթենիները այ-
րեց։ Եւ փղշտացիները ասեցին. 6
Այս բանը ո՞վ արաւ։ Եւ ասե-
ցին. Թամնացիի փեսայ Սամփսո-
նը. որովհետև նա նորա կնիկն
առաւ և նորա ընկերին տուաւ։
Եւ փղշտացիները վեր կացան և
կնկան ու նորա հօրը կրակով այ-
րեցին։ Իսկ Սամփսոնը նորանց ա- 7
սեց. Թէև դուք այսպէս արիք,
բայց ես վրէժ եմ առնելու ձե-
զանից, և յետոյ կ'դադարեմ։
Եւ նորանց սրունքն ու երանքը 8
մեծ հարուածով ջարկեց. և ի-
ջաւ Ետամ՝ ապառաժի խառ-
նուրդը բնակուեց։
Եւ փղշտացիները վեր գնացին 9
ու Յուդայի մէջ բանակ տուին,
ու Լեքիի մէջ տարածուեցան։
Եւ Յուդայեանք ասեցին. Ինչու 10
համար էք մեզ վերայ եկել։ Նո-
րանք էլ ասեցին. Սամփսոնին կա-
պելու ենք վեր եկել, որ նորան
մեզ արածի պէս մենք էլ իրան
անենք։

11 Եւ Յուդայից երեք հազար
մարդ իջան Ետամ ապառաժի
խառնուրդը և Սամփսոնին ասեցին.
Չ'գիտե՞ս որ փղշտացիները մեզ
վերայ իշխում են. և այս ինչ ես
արել մեզ։ Եւ նա նորանց ասեց.
Նորանք ինձ ինչպէս որ արին,
ես էլ նորանց այնպէս եմ արել։
12 Եւ նորան ասեցին. Մենք իջել
ենք որ քեզ կապենք և փղշտա-
ցիների ձեռքը տանք։ Եւ Սամփ-
սոնը նորանց ասեց. Ինձ երդում
արէք որ դուք ինձ չէք մեռցնիլ։
13 Եւ նորանք նորա հետ խօսեցին
ասելով. Ոչ, բայց քեզ միայն
կապենք և նորանց ձեռքը տանք,
և քեզ բնաւ չենք մեռցնիլ, և
նորան երկու նոր չուանով կա-
պեցին և ապառաժիցը դուրս հա-
14 նեցին։ Նա եկաւ մինչև Լեքի,
և փղշտացիները աղաղակելով նո-
րան դիմաւորեցին. և Տիրոջ Հոգին
նորա վերայ եկաւ և նորա կրա-
նների վերայ եղող չուանները կը-
րակով այրուած քթանի պէս ե-
ղան, և կապերը ձեռքերիցը լու-
15 ծուեցան։ Եւ մէկ էշի ծնօտ գը-
տաւ որ դեռ չորացած չէր, և
ձեռքը մեկնեց առաւ այն և նո-
րանով հազար մարդ մեռցրեց։
16 Եւ Սամփսոն ասեց. Էշի ծնօտո-
վը մէկ խառնի՝ երկու խառնի՝ էշի
ծնօտով հազար մարդ մեռցրի։
17 Եւ երբոր իր խօսքը վերջացրեց՝
ծնօտը ձեռքիցը գցեց, և այն-
տեղի անունը Ռամմաթ–լէքի կո-
չեց։
18 Եւ խիստ շատ ծարաւեց և
Տիրոջն աղաղակեց և ասեց. Դուք
քո ծառայի ձեռքովը յաջողեցիր
այս մեծ փրկութիւնը, և հիմա
ծարաւովս մեռնեմ, և անթլփ-
19 փատների ձեռքն ընկնեմ։ Եւ
Աստուած Լեքիի մէջ եղած փո-
սը բացաւ, և նորանից ջուր ե-
լաւ. և նա խմեց, և ոգին իր մե-
ծր դառաւ, և կենդանացաւ,
նորա համար նորա անունը Են-
գօրէ տաուեցաւ, որ Լեքիի մէջ
է մինչև այս օրը։
20 Եւ նա փղշտացիների օրերին
Իսրայէլի մէջ քսան տարի դա-
տաւորութիւն արաւ։

Գլ. ԺԶ

Եւ Սամփսոնը գնաց Գազա, և 1
այնտեղ մի պոռնիկ կին տեսաւ,
և նորա մօտ մտաւ։ Եւ Գազա- 2
ցիներին ասեցին թէ Սամփսոնը
եկել է այստեղ։ Եւ պաշարեցին
և բոլոր գիշերը նորան դարանա-
կալ եղան քաղաքի դռան մօտ,
և բոլոր գիշերը լռեցին և ասե-
ցին. Առաւօտը կանուխ մեռց-
նենք նորան։ Եւ Սամփսոնը մինչև 3
կէս գիշեր քնեց, և կէս գիշերին
վեր կացաւ և քաղաքի դռան
փեղկերը երկու սեմերովը բռնեց
և նորանց նիգովը մէկտեղ հանեց
և ուսերի վերայ առնելով նո-
րանց փերբոնի դիմացի սարի գը-
լուխը տարաւ։
Եւ նորանից յետոյ մէկ կին 4
սիրեց Սորեկ հեղեղատի հոգ, ու
նորա անունը Դալիլա էր։ Եւ փը- 5
ղշտացիների նախարարները այն
կնկայ մօտ գնացին և նորան ա-
սեցին. Նորան խաբիր և տես, թէ
նորա մեծ զօրութիւնը ինչումն է,
թէ ինչով կ'կարողանանք նորան
յաղթել, որ նորան յաղթենք և
տկարացնենք, և մենք քեզ ամեն
մէկս հազար հարիւր արծաթ կը
տանք։ Եւ Դալիլան Սամփսոնին 6
ասեց. Աղաչում եմ՝ յայտնիր
ինձ, թէ քո մեծ զօրութիւնը ին-
չո՞ւմն է, և քեզ տկարացնելու հա-
մար ինչ բանով կապել պէտք է։
Եւ Սամփսոնը նորան ասեց. Եթէ 7
ինձ եօթը հատ չ'չորացած գալար
լիլերով կապեն, կ'տկարանամ և
մարդկանց մէկի պէս կ'դառնամ։
Եւ փղշտացիների նախարարները 8
նորա համար եօթը հատ չ'չորա-
ցած գալար լիլեր բերին, և նա
նորան կապեց նորանցով։ Եւ նո- 9
րա մօտ ներքին սենեակումը դա-
րանակալներ էին նստել։ Եւ կինը
նորան ասեց. Սամփսոն, փղշտա-
ցիները քեզ վերայ էլան. այն ժա-
մանակ նա լիլերը կտրատեց ինչ-
պէս կրակի հոտ առած խծուծից
լինած մի լար կ'կտրատեն. և նո-
րա ոյժը չ'հասկացուեցաւ։ Եւ 10
Դալիլան ասեց Սամփսոնին. Ահա

ինձ խաբեցիր և ինձ սուտ ասե-
ցիր. հիմա աղաչում եմ՝ յայտ-
նիր ինձ թէ ինչով կ'կապուես։
11 Եւ նա նորան ասեց. Եթէ ինձ
նոր և չ'գործածուած չուաններ-
ով պինդ կապեն՝ այն ժամանակ
կ'տկարանամ, և մարդկանց մէ-
12 կի պէս կ'դառնամ։ Եւ Դալիլան
նոր չուաններ առաւ և նորան-
ցով նորան կապեց, և նորան ա-
սեց. Սամփսոն, Փղշտացիները քեզ
վերայ եկան. (և դարանակալները
ներքին սենեակումը նստել էին.)
այն ժամանակ նա նորանց դեր-
ձանի պէս իր բազուկներիցը կըտ-
13 ըատեց։ Եւ Դալիլան ասեց Սամփ-
սոնին. Մինչև հիմա ինձ խաբե-
ցիր և ինձ սուտ ասեցիր. ասիր
ինձ թէ ինչով կ'կապուես։ Եւ
նա նորան ասեց. Եթէ գլխիս եօ-
թը բաժին մազերը ազբով հիւ-
14 սես։ Եւ նա ցիցովը պնդացրեց,
և նորան ասեց. Սամփսոն, Փղշ-
տացիները քեզ վերայ եկան։ Եւ
նա քնիցը զարթնեց, և ոստայնի
15 ցիցը և ազբը հանեց։ Այն ժա-
մանակ Դալիլան նորան ասեց. Ինչ-
պէս ես ասում թէ քեզ սիրում
եմ, քանի որ սիրտդ ինձ հետ
չէ. հիմա այս երեք անգամն է
որ ինձ խաբեցիր, և ինձ չ'ասե-
ցիր՝ թէ քո մեծ զօրութիւնը ին-
16 չում է։ Եւ որովհետև ամեն օր
իր խօսքերովը նորան նեղում էր
և նորան բռնադատում էր, այն
ժամանակ նորա սիրտը նեղացաւ
17 մինչև մահ, Եւ նա իր սրտի մէջ
բոլոր եղածը նորան յայտնեց և
ասեց նորան. Իմ գլխի վերայ ա-
ծելի չէ ելած, որովհետև իմ մօր
արգանդիցը ես Աստուծոյ ուխ-
տաւոր եմ. եթէ ածիլուեմ, իմ
ոյժն ինձանից կ'գնայ և ես կ'տը-
կարանամ, և ամեն մարդկանց
18 պէս կ'դառնամ։ Եւ երբոր Դա-
լիլան տեսաւ, որ նա իր սրտի մէջ
բոլոր եղածն իրան յայտնեց, Փղշ-
տացիների նախարարներին կան-
չել տուաւ և ասեց. Այս ան-
գամ վեր եկէք. որովհետև իր
սրտի մէջ բոլոր եղածն ինձ յայտ-
նել է։ Այն ժամանակ Փղշտա-
ցիների նախարարները նորա մօտ
վեր գնացին. և արծաթն էլ ի-
րանց ձեռքին բերին։ Եւ Դալիլան 19
նորան իր ծունկերի վերայ քնա-
ցրեց, և մի մարդ կանչեց, և նո-
րա գլխի եօթը բաժին մազերը
ածիլել տուաւ, և սկսեց նորան
տկարացնել. և նորա ոյժը իրա-
նից գնացել էր։ Եւ կինն ասեց. 20
Սամփսոն, Փղշտացիները քեզ վե-
րայ եկան. և նա քնիցը զարթնե-
լով՝ ասեց. Դուրս գամ և առա-
ջի անգամների պէս թօթափուիմ,
բայց չ'գիտէր որ Տէրն իրանից
գնացել էր։ Եւ Փղշտացիները նո- 21
րան բռնեցին և նորա աչքերը
հանեցին, և նորան տարին ցած՝
Գազա, և ոտնակապերով կապե-
ցին, և բանտումը աղում էր։
Եւ նորա գլխի մազը ածիլուե- 22
լուց յետոյ սկսեց բուսնել։ Եւ 23
Փղշտացիների նախարարները ժո-
ղովուեցան, որ իրանց աստուծուն՝
Դագոնին մեծ զոհ մատուցանեն,
և ուրախութիւն անեն. և ասե-
ցին. Մեր աստուածը մեր թշնա-
մի Սամփսոնին մեր ձեռքը մատ-
նեց։ Եւ ժողովուրդը նորան տես- 24
նելով՝ գովեցին իրանց աստու-
ծուն, որովհետև ասեցին. Մեր
աստուածը մեր թշնամիին՝ մեր
երկիրը քանդողին և մեր մեռել-
ները շատացնողին մեր ձեռքը
մատնեց։ Եւ երբոր նորանց սիր- 25
տըն ուրախ էր, ասեցին. Սամփ-
սոնին կանչեցէք, որ մեր առաջին
պար գայ։ Եւ Սամփսոնին կան-
չեցին բանտիցը, և նորանց ա-
ռաջին պար էր գալիս. և նորան
կանգնեցրին սիւների մէջ տեղը։
Եւ Սամփսոնն իր ձեռքից բռնող 26
պատանիին ասեց. Թող տուր ինձ,
որ այս տունը կրող սիւները շօ-
շափեմ, և նորանց վերայ կըռթ-
նեմ։ Եւ տունը լիքն էր մարդ- 27
կանցով և կանանցով. և Փղշ-
տացիների բոլոր նախարարները
այնտեղ էին. և տանիքի վերայ
երեք հազարի չափ մարդիկ և
կանայք կային, որոնք Սամփսոնի
պար գալուն մտիկ էին տալիս։
Եւ Սամփսոնն աղաղակեց Տիրոջը 28
և ասեց. Ով Տէր Եհովայ, աղա-
չում եմ յիշիր ինձ, ով Աստ-

ուած, և միայն այս անգամ էլ
ինձ ուժովացրու որ Փղշտացինե-
րից իմ երկու աչքերի վրէժը մէկ
29 անգամով առնեմ։ Եւ Սամփսոնն
այն տունը կրող միջի սիւները՝
մէկը աջ ձեռքովը և միւսը ձախ
ձեռքովը բռնեց և նորանց վե-
30 րայ կռթնեց. Եւ Սամփսոնն ա-
սեց. Իմ անձն էլ Փղշտացիների
հետ թող մեռնի. և ուժովը ծը-
ռեց, և տունը վայր ընկաւ նա-
խարարների վերայ և միջումն ե-
ղող բոլոր ժողովրդի վերայ. և
իր մեռնելովը մեռցրածները իր
կենդանութեան ժամանակ մեռ-
31 ցրածներիցն աւելի էին։ Եւ նո-
րա եղբայրները և նորա հօր բո-
լոր տունը իջան, և նորան վեր
առան և դուրս տարին և թա-
ղեցին նորան իր հօր Մանուէի
դերեզմանումը Սարասայի և Ես-
թաւուղի մէջտեղը։ Եւ նա Իս-
րայէլի միջումը քսան տարի դա-
տաւորութիւն արաւ։

ԳԼ. ԺԷ

1 Եւ Եփրեմի սարիցը մի մարդ
2 կար Միքա անունով. Եւ նա իր
մօրն ասեց. Այն հազար հարիւր
արծաթը՝ որ քեզանից վեր է առ-
նուել, որի համար անէծք տուիր
և իմ ականջին ասեցիր, ահա
այն արծաթը ինձ մօտ է, այն ես
եմ առել. և մայրը նորան ա-
սեց. Իմ որդեակն օրհնեալ լինի
3 Տէրիցը։ Եւ նա հազար հարիւր
կտոր արծաթը ետ դարձրեց իր
մօրը. բայց նորա մայրն ասեց.
Ես այն արծաթն իմ ձեռքիցը
Տիրոջը նուիրեցի իմ որդիի հա-
մար, նորանով քանդակած և
թափծու կուռք շինելու համար.
և հիմա ես այն քեզ եմ դարձ-
4 նում։ Իսկ նա այն արծաթը իր
մօրը դարձրեց. և մայրը երկու
հարիւր արծաթ առաւ. և ոս-
կերչին տուաւ նորանց. Նա էլ
նորանցից քանդակած և թափ-
ծու կուռք շինեց, և Միքայի
5 տանն էին լինում։ Եւ այդ Միքա
մարդը մի աստուածների տուն
ունեցաւ, և եփուդ և թերա-
փիմ շինեց, և իր տղերանց մէ-
կին օրհնեց և իր համար քահա-
նայ եղաւ։ Այն օրերն Իսրայէ- 6
լի մէջ թագաւոր չ'կար. ամեն
մարդ իր աչքերի հաճելի եղածն
անում էր։
Եւ Յուդայի ազգատոհմից՝ Յու- 7
դայի Բեթլեհէմիցը մի պատանի
կար, և նա Ղևտացի էր, և այն-
տեղ էր բնակվում պանդուխտի
պէս։ Եւ այս մարդը Յուդայի 8
Բեթլեհէմ քաղաքիցը դուրս ե-
կաւ որ պանդխտութիւն անէ,
ուր որ գտնէ, և ճանապարհոր-
դութիւն անելով եկաւ մինչև
Եփրեմի սարը մինչև Միքայի տու-
նը։ Եւ Միքան նորան ասեց. Որ- 9
տեղից ես գալիս։ Եւ նա նորան
ասեց. Ես Ղևտացի եմ Յուդա-
յի Բեթլեհէմիցը, և գնում եմ
պանդխտանալու ուր որ գտնեմ։
Եւ Միքան նորան ասեց. Ինձ հետ 10
բնակուիր, և ինձ համար հայր և
քահանայ եղիր. և ես քեզ տա-
րուց տարի տասը արծաթ և
հագնելու հանդերձ և քո ուտե-
լիքը կ'տամ։ Ղևտացին էլ գնաց։
Եւ Ղևտացին հաւանեց որ այն 11
մարդի հետ բնակուի. և այս պա-
տանին նորա որդկանց մէկին պէս
եղաւ նորա համար։ Եւ Միքան 12
Ղևտացիի ձեռքը լցրեց, և պա-
տանին նորա քահանան եղաւ, և
Միքայի տանն էր բնակվում։ Եւ 13
Միքան ասեց. Հիմա գիտեմ որ
Տէրն ինձ բարիք է անելու, որով-
հետև այս Ղևտացին իմ քահա-
նան դառաւ։

ԳԼ. ԺԸ

Այն օրերը Իսրայէլի մէջ թա- 1
գաւոր չ'կար. և այն օրերը Դանի
ցեղը իր համար ժառանգութիւն
էր որոնում բնակուելու համար,
որովհետև մինչև այն օրը Իսրա-
յէլի ցեղերի մէջ նորա համար
Բաստիան ժառանգութիւն չէր ընկել։ Եւ Դանի որդիքն իրանց 2
ազգատոհմներից՝ իրանց սահման-
ներիցը հինգ զօրաւոր մարդ ու-
ղարկեցին Սարասայից ու Եսթա-
ւուղից, որ երկիրը լրտեսեն և

քննեն, և նորանց ասեցին. Գնա-
ցէք երկիրը քննեցէք. և նորանք
գնացին Եփրեմի սարը մինչև Մի-
քայի տունը, և գիշերը այնտեղ
3 մնացին։ Եւ երբոր նորանք Մի-
քայի տան մօտ էին, այն Ղևտա-
ցի պատանիի ձայնը ճանաչեցին,
և մտան այնտեղ և ասեցին. Ո՞վ
քեզ այստեղ բերաւ, և դու
այստեղ ի՞նչ ես անում, և այս-
4 տեղ ի՞նչ ունես։ Եւ նա ասեց
նորանց. Միքան ինձ այսպէս և
այսպէս արաւ, և ինձ վարձքով
բռնեց, որ նորան քահանայ լի-
5 նեմ։ Եւ նորան ասեցին. Աղա-
չում ենք՝ Աստուծուն հարցրու,
որ իմանանք, թէ արդե՞օք մեր
գնացած ճանապարհը կ՚յաջող-
6 ուի։ Եւ քահանան նորանց ա-
սեց. Գնացէք խաղաղութեամբ,
ձեր գնացած ճանապարհը Տիրոջ
առաջին է։
7 Այն ժամանակ այն հինգ մար-
դիկը գնացին Լայիս մտան, և
նորանում բնակող ժողովուրդը
տեսան՝ որ Սիդոնացիների պէս
ապահովութեամբ հանգիստ և
ապահով բնակվում էին, և այն
երկրի մէջ մի վնաս տուող չը
կար՝ որ իշխանութիւն ունէր, և
Սիդոնացիները հեռու էին և ը-
նաւ մէկ մարդի հետ գործ չ՚ու-
8 նէին։ Եւ այն հինգ մարդը Սարաա
և Եսթաւուղ գնացին իրանց եղ-
բայրների մօտ, և նորանց եղ-
բայրները նորանց ասեցին. Դուք
9 ի՞նչ ունէք։ Եւ նորանք ասեցին.
Վեր կացէք նորանց վերայ գը-
նանք, որովհետև մենք երկիրը
տեսանք և ահա շատ լաւ է, և
դուք թոյլ նստե՞լ էք. անհո-
գութիւն մի անիք գնալու այն
երկիրը ժառանգելու համար։
10 Հէնց որ գնաք, մէկ անհոգ ժո-
ղովրդի և շատ ընդարձակ երկրի
մէջ կ՚մտնէք, որն որ Աստուած
ձեր ձեռքն է տուել, և մի այն-
պիսի տեղ, որ այնտեղ երկրի
վերայ եղող բաներից մէկը պա-
կաս չէ։
11 Եւ այնտեղից՝ Դանի ազգա-
տոհմից, այսինքն Սարաայից և
Եսթաւուղից վեց հարիւր սպա-
ռազինեալ մարդիկ գնացին։ Եւ 12
վեր ելան Յուդայի Կարիաթարի-
մումը բանակ տուին. Նորա հա-
մար այն տեղը մինչև այս օրը ասվում է Մահանէ-դան. ահա նա
Կարիաթարիմի ետևումն է։ Եւ 13
այնտեղից անցան Եփրեմի սարը
և եկան մինչև Միքայի տունը։
Եւ այն հինգ մարդը որ գնացել 14
էին Լայիսի երկիրը լրտեսելու,
պատասխանեցին և իրանց եղբայր-
ներին ասեցին. Գիտէ՞ք որ այս
տներումը եփուդ, թերափիմ, և
քանդակած ու թափծու կուռք
կայ. և հիմա իմացէք թէ ինչ
պիտի անէք։ Այն ժամանակ նո- 15
րանք դէպի այնտեղը դառնալով՝
գնացին այն Ղևտացի պատանիի
տունը՝ Միքայի տունը, և նորա
ողջութիւնը հարցրին։ Եւ Դանի 16
որդկանցից այն վեց հարիւր սպա-
ռազինեալ մարդիկը դռան մուտ-
քումը կանգնեցին։ Եւ երկիրը 17
լրտեսելու գնացող այն հինգ մար-
դիկը գնացին այնտեղ, և վեր ա-
ռան քանդակած կուռքը, ե-
փուդը, թերափիմը ու թափծու
կուռքը. և քահանան կանգնել
էր այն վեց հարիւր սպառազին-
եալ մարդկանց հետ դռան մուտ-
քումը։ Եւ երբոր նորանք Միքա- 18
յի տունը մտան, և քանդակած
կուռքը, եփուդը, թերափիմը ու
թափծու կուռքը վեր առան,
քահանան նորանց ասեց. Ի՞նչ էք
անում։ Եւ նորանք ասեցին նո- 19
րան. Լուռ կաց, ձեռքդ բերա-
նիդ վերայ դիր և մեզ հետ եկ.
և մեզ համար հայր ու քահա-
նայ եղիր. մի՞թէ լաւ է քեզ հա-
մար մէկ մարդի տանը քահանայ
լինել, թէ Իսրայէլի մէջ մէկ ցե-
ղի և մէկ ազգատոհմի քահանայ
լինելը։ Եւ քահանան սրտովն ու- 20
րախանալով՝ եփուդը, թերափիմը
և քանդակած կուռքն առաւ
և այն ժողովրդի մէջ մտաւ։ Եւ 21
նորանք ետ դառան գնացին, և
ընտանիքները և անասունները ու
թանկագին կարասիները իրանց
առաջը դրին։
Երբոր նորանք Միքայի տանիցը 22
հեռացան, Միքայի տան մօտ ե-

ղող տների մարդիկը ժողովուե-
ցան, և Դանի որդիներին հասան.
23 Եւ Դանի որդիներին կանչեցին.
և նորանք իրանց երեսը դարձրին
և Միքային ասեցին. Քեզ ի՞նչ
կայ, որ այսպէս ժողովուել ես։
24 Եւ նա ասեց. Իմ շինած աստ-
ուածները և քահանային առել
էք գնացել, և ինձ էլ ի՞նչ մնաց.
և ինձ ի՞նչու համար էք ասում
25 թէ Քեզ ի՞նչ կայ։ Եւ Դանի
որդիքը նորան ասեցին. Մեր մէջ
քո ձայնը չ՚լսուի. մի գուցէ բար-
կասիրտ մարդիկ ձեզ վերայ յար-
ձակուին, և քո կեանքը և քո
26 ընտանեաց կեանքը կորցնես։ Եւ
Դանի որդիքը իրանց ճանապար-
հովը գնացին. և Միքան տեսնելով
որ նորանք իրանից զօրաւոր են,
ետ դառաւ գնաց իր տունը։
27 Եւ նորանք Միքայի շինածնե-
րը և նորա քահանային վեր ա-
ռան և գնացին Լայիսի վերայ՝
այն հանգիստ և անհոգ ժողովը-
րդի վերայ, և նորանց սուրի բե-
րանով զարկեցին, և քաղաքը
28 կրակով այրեցին։ Եւ նորանք Սի-
դոնիցը հեռու լինելով և մի մար-
դի հետ գործ չ՚ունենալով, ա-
ղատող չ՚կար. և Բեթրոսբի հով-
տի մէջ էր. և քաղաքը շինեցին
29 և նորա մէջ բնակուեցին։ Եւ
քաղաքի անունը իրանց հօր Իս-
րայէլեան Դանի անունովը՝ Դան
կոչեցին, բայց քաղաքի անունը
30 առաջուց Լայիս էր։ Եւ Դանի որ-
դիքը քանդակած կուռքը կանգ-
նեցրին իրանց համար, և Մանա-
սէի որդիի Գերսոնի որդի Յովնա-
թանը՝ ինքը և իր որդիքը մինչև
երկրի գերութեան օրը Դանի ցե-
31 ղի քահանաներն էին։ Ուստի նո-
րանք Միքայի շինած կուռքն ի-
րանց համար պահեցին, որչափ
ժամանակ որ Աստուծոյ տունը
Սելովի մէջ էր։

ԳԼ. ԺԹ

1 Եւ եղաւ որ (այն օրերը որ Իս-
րայէլի մէջ թագաւոր չ՚կար.)
Եփրեմի սարի կողմերին մէկ պան-
դուխտ Ղևտացի էր բնակվում,
և նա Յուդայի Բեթլեհէմիցը մէկ
հարճ առաւ իր համար։ Եւ նո- 2
րա հարճը նորա դէմ շնութիւն
արաւ և գնաց նորա մօտիցն իր
հօր տունը՝ Յուդայի Բեթլեհէ-
մը, և չորս ամսի չափ այնտեղ
մնաց։ Եւ նորա մարդը վեր կացաւ 3
գնաց նորա ետևիցը, որ քաղց-
րութեամբ խօսէ նորա հետ և
նորան ետ բերէ. և իր հետ էին
իր ծառան և երկու մարդ էլ. և
նա նորան տարաւ իր հօր տունը.
և աղջկան հայրը երբոր նորան
տեսաւ՝ ուրախութեամբ նորան
դիմաւորեց։ Եւ աղջկան հայրը՝ 4
նորա աները նորան պահեց, և
նա երեք օր նորա մօտ մնաց. կե-
րան խմեցին և գիշերները այն-
տեղ մնացին։
Եւ չորրորդ օրը երբոր առա- 5
ւօտը կանուխ վեր կացան, նա վեր
կացաւ որ գնայ. բայց աղջկան
հայրն իր փեսային ասեց. Սիրտդ
մի կտոր հացով պնդացրու, և
յետոյ կ՚գնաք։ Եւ նստեցին և 6
երկուսը մէկտեղ կերան և խմե-
ցին, և աղջկան հայրն այն մար-
դին ասեց. Աղաչում եմ՝ այս
գիշեր էլ այստեղ կաց, որ սիր-
տըդ զուարճանայ։ Եւ այն մար- 7
դը վեր կացաւ որ գնայ, բայց
նորա աները նորան բռնադատեց,
և նա ետ դառաւ գիշերը այն-
տեղ մնաց։ Եւ հինգերորդ օրը 8
առաւօտը կանուխ վեր կացաւ
որ գնայ, և աղջկան հայրն ասեց.
Աղաչում եմ՝ սիրտդ պնդացրու.
և ուշացան մինչև օրուայ թեք-
ուիլը, և երկուսը կերան միասին։
Եւ այն մարդը վեր կացաւ ինքը, 9
իր հարճը և իր ծառան՝ որ գը-
նան. բայց նորա աները՝ աղջկան
հայրն ասեց նորան. Ահա օրն ի-
րիկուն է լինում. աղաչում եմ՝
գիշերը մնացէք. ահա օրը անցել
է, գիշերը այստեղ մնա, և սիր-
տըդ զուարճանայ, և էգուց կա-
նուխ ճանապարհ ընկէք, և գնա
քո վրանը։ Եւ այն մարդը գիշե- 10
րը մնալ չ՚ուզեց, և վեր կացաւ
գնաց, և եկաւ մինչև Յեբուսի՝
այսինքն Երուսաղէմի դիմացը. և
իր հետ երկու համետած էշ

ունէը, և իր հարճն էլ իր հետը էր։
11 Եւ երբոր Յերուսաղէմ մտեցան, օրը շատ անցել էր, ծառան իր տիրոջն ասեց. Եկ ճանապարհը ծռենք այս Յերուսացիների քաղաքը գնանք, և գիշերը անոնց 12 մեանք։ Բայց տէրը նորան ասեց. Ձանապարհը չենք ծռիր դէպի օտարազգիների քաղաքը, որ Իսրայէլի որդկանցը չէ, այլ անցնենք մինչև Գաբաա։ 13 Եւ իր ծառային ասեց. Եկ այնտեղերի մէկին մօտենանք, և գիշերը Գաբաայի կամ Ռամայի մէջ մնանք. 14 Եւ անցան գնացին, և երբոր Բենիամինի Գաբաային մօտեցան, 15 արեգակը մայր մտաւ։ Եւ այնտեղ դարձան որ մտնեն Գաբաա և իջևանեն, և գնաց քաղաքի հրապարակի մէջ նստեց, և մի մարդ չ'երաւ որ նորանց իր տունը առնէր՝ իջևանելու համար։
16 Եւ ահա իրիկունը ալտիքը մէկ ծեր մարդ էր գալիս իր դործիքը. և նա Եփրեմի սարիցն էր, և Գաբաայի մէջ պանդուխտ էր. իսկ այնտեղի բնակիչները Բենիամինեանք էին։ 17 Եւ երբոր նա աչքերը բարձրացուց և տեսաւ ճանապարհորդ մարդին քաղաքի հրապարակումը՝ ծեր մարդն ասեց. Ո՞ւր ես գնում, և ո՞րտեղից ես 18 գալիս։ Եւ նա ասեց նորան. Մենք Յուդայի Բեթլեհէմիցը մինչև Եփրեմի սարի կողմերն ենք անցնում. ես այնտեղացի եմ, և մինչև Յուդայի Բեթլեհէմը գնացի, և Տիրոջ տունն եմ գնում. և ինձ իր տունը ընդունող մարդ 19 չ'կայ. Բայց մեր էշերի համար յարդ և ճարակ կայ. և ինձ համար, քո աղախնի համար և քո ծառաների հետ եղող պատանիի համար հաց ու գինի ունեմ, ոչ 20 մէկ բան պակաս չէ։ Եւ այն ծեր մարդն ասեց. Խաղաղութիւն քեզ. քո ամեն պակասութիւնն ինձ վերայ. բայց գիշերը հրապարակումը մի մնար։ 21 Եւ նորան տարաւ իր տունը, և էշերին կերտուաւ. և նորանք իրանց ոտքերը լուանալուց յետոյ կերան և խմեցին։

22 Եւ երբոր նորանց սիրտը զուարճանում էր, ահա քաղաքի բնակիչներից չար զաւակներ տունը պաշարեցին՝ դուռն վերայ յարձակուելով, և այն տան տէր ծեր մարդի հետ խօսեցին և ասեցին. Տուր եկող մարդին հանիր, որ նորան դիտունանք։ 23 Եւ այն տան տէր մարդը նորանց մօտ դուրս գնաց, և նորանց ասեց. Ո՛, եղբայրներս, ազաչում եմ, չարութիւն մի անէք. այս մարդն իմ տունը մրտնելուց յետոյ այս անզգամութիւնը մի անիք։ 24 Ահա իմ կոյս աղջկանը, և այն մարդի հարճին թող դուրս բերեմ ձեզ մօտ, և նորանց լկեցէք, և ձեր ուզածն արէք նորանց, բայց այս մարդին այդ անզգամ գործը մի անիք։ 25 Բայց այն մարդիկը չ'ուզեցին նորա խօսքին լսել, և այն մարդն իր հարճին բռնեց դուրս հանեց նորանց մօտ, և նորանք նորան դիտացին, և բոլոր գիշերը նորան լկեցին մինչև առաւօտ, և երբոր արշալոյսը ծագեց, նորան թող տուին որ գնայ։ 26 Եւ այն կինը առաւօտուայ դէմ գնաց և բնակուեցաւ մինչև լոյսը այն մարդի տան դուռան առաջին ուր որ իր տէրն էր։ 27 Եւ նորա տէրը առաւօտը վեր կացաւ, տան դռները բացաւ, որ դուրս գայ գնայ իր ճանապարհը. և ահա կինիկը՝ իր հարճը, տան դուռան առաջին բնկած էր, և ձեռքերը սեմի վերայ էր։ 28 Եւ նորան ասեց. Վեր կաց գնանք. բայց պատասխան տուող չ'կար։ Այն ժամանակ նա նորան իր էշի վերայ դրաւ և մարդը վեր կացաւ 29 իր տեղը գնաց։ Եւ երբոր իր տունը հասաւ մի դանակ առաւ, և իր հարճը բռնեց և կտորեց նորան ոսկորներովը տասնեւերկու կտոր, և Իսրայէլի ամեն տէմներն ուղարկեց։ 30 Եւ ամեն տեսնողներն ասում էին. Թէ այսպիսի բան ոչ եղել է, ոչ էլ տեսնուել է Իսրայէլի որդկանց Եգիպտոսի երկրից ելած օրիցը մինչև այս օր, ասում վերայ մըտածեցէք, խորհուրդ արէք և խօսեցէք։

Գլ. Ի

1 Այն ժամանակ բոլոր Իսրայէլի բոդիքը դուրս եկան, և ժողովուեցաւ ժողովքը մէկ մարդի պէս Դանիցը մինչև Բերսաբէէ և Գաղաադի երկիրը՝ Մասփայի մէջ Տիրոջ առաջին։ 2 Եւ ներկայացան բոլոր ժողովրդի՝ Իսրայէլի բոլոր ցեղերի գլխաւոր մարդիկը՝ չորս հարիւր հազար սուր քաշող հետևակ զօրք Աստուծոյ ժողովրդի 3 ժողովքի մէջ։ Եւ Բենիամինի որդիքը լսեցին, որ Իսրայէլի որդիքը վեր են գնացել Մասփա։ Եւ Իսրայէլի որդիքն ասեցին. Պատմեցէք թէ այս չարութիւնն ինչպէս եղաւ։ 4 Եւ այն Ղևտացի մարդը՝ այն մեռցուած կնկայ մարդը պատասխանեց և ասեց. Ես ու իմ հարճը եկանք Բենիամինի Գաբաան, որ գիշերը մնանք։ 5 Եւ Գաբաայի բնակիչները ինձ դէմ վեր կացան, և գիշերով պաշարեցին տունը ինձ դէմ, և ինձ ուզում էին սպանել, և իմ հարճին լկեցին, և նա մեռաւ։ 6 Ես էլ իմ հարճն առայ և նորան կտորեցի, և Իսրայէլի ժառանգութեանը բոլոր երկրին ուղարկեցի. որովհետև նորանք Իսրայէլի մէջ մեծ յանցանք և անզգամութիւն արին։ 7 Ահա դուք ամենքդ Իսրայէլի որդիք էք, ձեր մէջ խօսեցէք և խորհուրդ արէք այստեղ։ 8 Եւ բոլոր ժողովուրդը մէկ մարդի պէս վեր կացաւ, և ասեց. Մեզանից ոչ մէկն իր վրանը չ'գնայ, և ոչ մէկն իր տունը չ'դառնայ։ 9 Եւ հիմա այս բանն անենք Գաբաային. նորա վերայ գնանք վիճակով. 10 Եւ առնենք Իսրայէլի ամեն ցեղերիցը՝ հարիւրիցը տասը, և հազարիցը հարիւր, և տասը հազարիցը հազար մարդ, որ ժողովրդի համար պաշար տանեն, որ Բենիամինի Գաբաան մտնելով նորան հատուցանեն Իսրայէլի մէջ նորա արած բոլոր 11 անզգամութեան պէս։ Եւ այն քաղաքի վերայ ժողովուեցան Իսրայէլի բոլոր մարդիկը մէկ մարդի պէս միաբանութեամբ։

12 Եւ Իսրայէլի ցեղերը Բենիամինի բոլոր ցեղին մարդիկ ուղարկեցին և ասեցին. Այս ինչ չարութիւն է որ ձեր մէջ եղաւ։ 13 Եւ հիմա Գաբաայի մէջ եղող այն չար զաւակ մարդիկը տուէք, որ նորանց մեռցնենք, և չարութիւնը Իսրայէլիցը վեր առնենք։ Բայց Բենիամինեանք չ'ուզեցին լսել իրանց եղբարց՝ Իսրայէլի որդկանց խօսքին։ 14 Եւ Բենիամինի որդիքը ժողովուեցան իրանց քաղաքներիցը Գաբաայի մէջ որ Իսրայէլի որդկանց դէմ պատերազմ անեն։ 15 Եւ այն օրն իրանց քաղաքներից հինգ Բենիամինի որդիքը համարուեցան քսանևվեց հազար սուր քաշող մարդ բացի Գաբաայի բնակիչներից՝ որոնք եօթը հարիւր ընտիր մարդիկ համարուեցան։ 16 Այս բոլոր ժողովրդի մէջ եօթը հարիւր ընտրուած ձախաձեռն մարդիկ կային, որոնց ամենն էլ պարսատիկով մազի վերայ քար էին գցում առանց սխալուելու։ 17 Եւ Իսրայէլի մարդիկն էլ համարուեցան՝ բացի Բենիամինից չորս հարիւր հազար սուր քաշող մարդ, որոնք ամենն էլ պատերազմող մարդիկ էին։

18 Եւ վեր կացան գնացին՝ Բեթէլ. և Իսրայէլի որդիքը Աստուծուն հարցրին և ասեցին. Բենիամինի հետ պատերազմելու համար ո՞վ լինի մեզ առաջնորդ. և Տէրն ասեց. Յուդան լինի առաջնորդ։ 19 Եւ Իսրայէլի որդիքը առաւօտը վեր կացան և Գաբաայի դէմ բանակ տուին։ 20 Եւ Իսրայէլացիք դուրս եկան Բենիամինի հետ պատերազմ անելու, և Իսրայէլացիք Գաբաայի մօտ նորանց դէմ շարուեցան պատերազմի համար։ 21 Եւ Բենիամինի որդիքը դուրս եկան Գաբաայիցը և այն օրը Իսրայէլիցը քսանևերկու հազար մարդ խորտակեցին գետինը։ 22 Եւ ժողովուրդը՝ այրիքն Իսրայէլացիք ուժովացան, և

միւս անգամ գնացին շարուեցան
նոյն տեղը պատերազմելու հա-
մար, ուր որ առաջին օրը շար-
23 ուել էին։ Եւ Իսրայէլի որդիքը
վեր գնացին, և Տիրոջ առաջին
մինչև իրիկուն լաց եղան, և Տի-
րոջը հարցրին ասելով, Մեր եղ-
բօրը՝ Բենիամինի հետ պատերազ-
մելու համար միւսանգամ վեր
գնա՞նք։ Եւ Տէրն ասեց. Նորա
24 դէմ վեր գնացէք։ Եւ երկրորդ
օրը Իսրայէլի որդիքը Բենիամինի
25 որդկանց մօտեցան։ Եւ երկրորդ
օրը Բենիամինեանք Գաբաայիցը
նորանց դէմ դուրս եկան, և Իս-
րայէլի որդկանցից կրկին տասն-
եւութը հազար մարդ խորտակե-
ցին գետինը. սորանց ամենն էլ
սուր քաշող մարդիկ էին։
26 Այն ժամանակ բոլոր Իսրայէլի
որդիքը՝ այսինքն բոլոր ժողովուր-
դը վեր գնացին Բեթէլ, և այն-
տեղ Տիրոջ առաջին նստեցին լաց
եղան, և այն օրը մինչև իրիկուն
ծոմ պահեցին, և Տիրոջ առա-
ջին ողջակէզներ և խաղաղու-
27 թեան զոհեր մատուցրին։ Եւ Իս-
րայէլի որդիքը Տիրոջ հարցրին.
(և այն օրերը Աստուծոյ ուխտի
28 տապանակն այնտեղ էր. Եւ այն
օրերը նորա առաջին Ահարօնեան
Եղիազարի որդի Փենէհէսն էր
կանգնում.) և ասեցին. Մեր եղ-
բօր Բենիամինի որդկանց հետ
պատերազմելու համար միւս ան-
գամ էլ վեր գնա՞նք, թէ դա-
դարենք։ Եւ Տէրն ասեց. Վեր
գնացէք, որովհետև էգուց ձեր
ձեռքը պիտի մատնեմ նորանց։
29 Եւ Իսրայէլացիք Գաբաայի շրջ-
ակայքումը դարանակալներ դը-
30 րին։ Եւ Իսրայէլի որդիքը երրորդ
օրը Բենիամինի որդկանց վերայ
գնացին, և միւս անգամների պէս
31 Գաբաայի դէմ շարուեցան։ Այն
ժամանակ Բենիամինի որդիքը ժո-
ղովրդին դիմաւորեցին, և քա-
ղաքիցը բաժանուեցան և առա-
ջին անգամների պէս սկսեցին ժո-
ղովուրդը զարկել, և երեսունի
չափ Իսրայէլացի մեռցրին այն
ճանապարհների մէջ՝ որոնց մէկը
Բեթէլ է գնում և միւսը դաշ-
տի Գաբաան։ Եւ Բենիամինի որ- 32
դիքն ասեցին. Ահա նորանք մեր
առաջն առաջի անգամների պէս
կոտորվում են։ Եւ Իսրայէլի որ-
դիքն ասեցին. Փախչենք և նո-
րանց քաղաքիցը դուրս հանենք
ճանապարհները։ Եւ Իսրայէլի 33
բոլոր մարդիկն իրանց տեղիցը վեր
կացան, և Բաալթամարի առա-
ջին շարուեցան։ Եւ Իսրայէլի դա-
րանակալները յանկարծ իրանց
տեղիցը՝ Գաբաայի դաշտիցը
դուրս եկան։ Եւ եկան Գաբաայի 34
առաջը բոլոր Իսրայէլիցը տասը
հազար ընտրուած մարդ, և պա-
տերազմը սաստկացաւ. և նորանք
չ՛գիտէին որ իրանց վերայ չարիք
է հասել։ Եւ Տէրը Իսրայէլի ա- 35
ռաջին Բենիամինին զարկեց, և
այն օրը Իսրայէլի որդիքը Բենիա-
մինից քսանեւհինգ հազար հա-
րիւր մարդ փչացրին. նորանց ա-
մենն էլ սուր քաշող էին։ Եւ 36
Բենիամինի որդիքը տեսան որ ի-
րանք յաղթուեցան, որովհետև
Իսրայէլացիները Գաբաայի շրջա-
կայքումը դրած դարանակալնե-
րին ապաւինելով Բենիամինեանց
տեղ տուին։ Եւ դարանակալնե- 37
րը շուտով Գաբաայի վերայ յար-
ձակուեցան, և դարանակալները
տարածուեցան, և բոլոր քաղա-
քը սուրի բերանով զարկեցին։
Եւ Իսրայէլացիները դարանակալ- 38
ների հետ ժամանակ էին որոշել,
որ քաղաքիցը մեծ կրակով ծուխ
հանեն։ Այն ժամանակ Իսրայէլի 39
մարդիկը պատերազմի մէջ փա-
խուստ ցոյց տուին. և Բենիամին-
եանք սկսեցին Իսրայէլացիներին
զարկել, և երեսուն մարդի չափ
մեռցրին. որովհետև ասեցին թէ
Անտարակոյս նորանք մեր առա-
ջում առաջին պատերազմի պէս 40
կոտորվում են։ Բայց երբոր քա-
ղաքիցը կրակի ծուխը սկսեց սիւ-
նի պէս բարձրանալ, Բենիամին-
եանք ետ դառան, և ահա քա-
ղաքի հրդեհը երկինքն էր բարձ- 41
րանում։ Եւ երբոր Իսրայէլացի-
ները ետ դառան, Բենիամինեանք
շուարեցան մնացին, որովհետև
տեսան որ չարիքը իրանց վերայ

42 հասել էր։ Եւ նորանք Իսրայէ-
լացիների առաջից դէպի անա-
պատի ճանապարհը դարձան, բայց
պատերազմը հասաւ նորանց. և
քաղաքներիցը դուրս եկողները
նորանց իրանց մէջ մեռցրին։
43 Այսպէս Բենիամինեաններին պա-
շարեցին, նորանց հալածեցին,
և նորանց դիւրութեամբ մինչև
Գաբաայի դէմ արևելեան կող-
44 մից զարկեցին։ Եւ Բենիամինիցը
տասնեւութը հազար մարդ ընկաւ.
նորանց ամենն էլ զօրաւոր մար-
45 դիկ էին։ Եւ մնացածները դար-
ձան դէպի անապատը և դէպի
Ռեմօնի վէմը փախան. նորանցից
ճանապարհներումը հինգ հազար
մարդ ճռաքաղ արին. և նորանց
մինչև Գեդոմ հալածելով նո-
րանցից երկու հազար մարդ զար-
46 կեցին։ Եւ Բենիամինիցն այն օրը
բոլոր ընկածները քսանեւհինգ հա-
զար սուր քաշող մարդ էր. նո-
րանց ամենն էլ զօրաւոր մարդիկ
47 էին։ Եւ վեց հարիւր մարդ դար-
ձան և դէպի անապատը Ռեմօնի
վէմը փախան, և Ռեմօնի վէմումը
48 չորս ամիս կացան։ Եւ Իսրայէ-
լացիները դէպի Բենիամինի որ-
դիները դառնալով՝ նորանց սուրի
բերանով զարկեցին, քաղաքների
միջի մարդկանցից մինչև անա-
սունները, և ինչ որ գտնուեցաւ,
և բոլոր գտնուած քաղաքներն
էլ կրակով այրեցին։

ԳԼ. ԻԱ.

1 Եւ Իսրայէլի մարդիկը Մաս-
փայումն երդում էին արել և
ասել. Թէ Մեզանից ոչ ով իր
աղջիկը Բենիամինցիի կին չ՛տայ։
2 Եւ ժողովուրդը գնաց Բեթէլ և
այնտեղ Աստուծոյ առաջին մին-
չև իրիկուն նստեցին, և իրանց
ձայնը բարձրացնելով՝ մեծ լացով
3 լաց եղան, Եւ ասեցին. Ով Իս-
րայէլի Տէր Աստուած, ի՞նչու հա-
մար պատահեց այս բանը Իսրա-
յէլի մէջ, որ այսօր Իսրայէլիցը
4 մէկ ցեղ պակաս է։ Եւ հետև-
եալ օրը ժողովուրդը կանուխ
վեր կացաւ, և այնտեղ սեղան
շինեցին, և ողջակէզներ և խա-
ղաղութեան զոհեր մատուցրին։
Եւ Իսրայէլի որդիքն ասեցին. 5
Ո՞վ է որ Իսրայէլի ամեն ցեղե-
րիցը վեր չ՛գնայ ժողովքի հետ
Տիրոջ առաջը. որովհետև Տիրոջ
առաջը Մասփա վեր չ՛գնացող
մարդի համար մեծ երդում էին
արել, ասելով թէ՝ Նա անպատ-
ճառ պիտի մեռնէ։ Այն ժամա- 6
նակ Իսրայէլի որդիքն իրանց եղ-
բօր Բենիամինի համար ցաւելով
ասեցին. Այսօր Իսրայէլիցը մէկ
ցեղ բնաջինջ եղաւ։ Այս մնա- 7
ցածներին ի՞նչ անենք կնիկների
մասին. որովհետև մենք Տիրոջ
անունովը երդում արինք որ մեր
աղջիկներից նորանց կին չ՛տանք։
Եւ ասեցին. Ո՞վ է որ Իսրայէլի 8
ցեղերից վեր չ՛գնաց Տիրոջ առա-
ջը Մասփա. և ահա Գաղաադի
Յաբիսիցը ոչ մի մարդ չէր եկած
բանակը և ժողովքը։ Եւ ժողո- 9
վուրդը հանդիսացաւ. և ահա
նորանց մէջ Գաղաադի Յաբիսի
բնակիչներիցը մարդ չ՛գտնուե-
ցաւ։ Այն ժամանակ ժողովքը 10
շատ զօրաւորներից տասնեւերկու
հազար մարդ ուղարկեցին այն-
տեղ, և նորանց պատուիրելով
ասեցին. Գնացէք, և Գաղաադի
Յաբիսի բնակիչներին սուրի բե-
րանով զարկեցէք, կանանցն էլ
տղերանցն էլ։ Եւ այս է ձեր ա- 11
նելիքը. Ամեն արու և արուի ան-
կողին գիտացող ամեն կին *փը-
չացրէք։ Եւ Գաղաադի Յաբիսի 12
բնակիչների մէջ չորս հարիւր կոյս
աղջիկներ գտան, որոնք արուի
հետ պառկած չէին, և արու չը
գիտէին, և նորանց Քանանի երկ-
րի մէջ Սելովի բանակը բերին։
Եւ բոլոր ժողովքը մարդ ուղար- 13
կելով Ռեմօնի վէմումն եղող Բե-
նիամինի որդկանց հետ խօսեցին
և նորանց խաղաղութեան հրա-
ւիրեցին։ Եւ այն ժամանակ Բե- 14
նիամինեանք ետ դառան. և այն
կանայքը տուին նորանց որ ողջ
էին թողել Գաղաադի Յաբիսի
կանանցից. բայց նորանց համար

*Կամ՝ նզովեցէք։

15 բաւական չ'եղան։ Եւ ժողովուր-
դը Բենիամինի համար ցաւեց.
որ Տէրը Իսրայէլի ցեղերի մէջ
խրամատութիւն արաւ։
16 Եւ ժողովքի ծերերն ասեցին.
Մնացածներին ի՞նչ անենք կա-
նանց մասին. որովհետև Բենիա-
17 մինի կանայքը կորան։ Եւ ասե-
ցին. Ողջ մնացող Բենիամինեանց
համար ժառանգութիւն թողմնայ.
որ Իսրայէլիցը մի ցեղ բնաջինջ
18 չ'լինի։ Եւ մենք մեր աղջկերքից
չենք կարող նորանց կին տալ.
որովհետև Իսրայէլի որդիքը եր-
դում արին ասելով. Բենիամինին
19 կին տուողը անիծեալ լինի։ Եւ
ասեցին. Ահա տարուց տարի Տի-
րոջ տօնախմբութիւն է լինում
Սելովի մէջ, որ Բեթէլի հիւսի-
սային կողմին, և Բեթէլից Սիւ-
քէմ վեր գնացող ճանապարհի
արևելեան կողմին, և Ղեբօնայի
20 հարաւային կողմին է։ Եւ Բե-
նիամինի որդկանցը պատուիրելով
ասեցին. Գնացէք, այգիներումը
21 թաք կացէք։ Եւ երբոր տեսնէք,
որ Սելովի աղջկերքը պար բռ-
նած դուրս են գալիս պարելու,
այն ժամանակ այգիներիցը դուրս
եկէք, և ձեր ամեն մէկն իր հա-
մար Սելովի աղջկերքիցը կին յա-
փշտակեցէք, և Բենիամինի եր-
կիրը գնացէք։ Եւ եթէ նորանց 22
հայրերը կամ եղբայրները գան
մեզ հետ կռուելու, նորանց
կ'ասենք թէ Նորանց մեզ շնոր-
հեցէք, որովհետև մենք պատե-
րազմումը նորանց ամենի համար
կին չ'պահեցինք. և հիմա որ
դուք չ'տաք նորանց յանցաւոր
կ'լինէք։ Եւ Բենիամինի որդիքը 23
այնպէս արին, և իրանց թիւին
չափ պար բռնածներիցը կանայք
յափշտակելով առան և գնացին
ետ դառան իրանց ժառանգու-
թիւնը, և քաղաքներ շինեցին և
նորանց մէջ բնակուեցան։ Եւ 24
այն ժամանակ Իսրայէլի որդիքն
այնտեղից ամեն մարդ իր ցեղի
ու իր ազգատոհմի մօտ գնաց. և
ամեն մարդ այնտեղից դուրս
գնաց դէպի իր ժառանգու-
թիւնը։ Այն օրերը Իսրայէլի 25
մէջ թագաւոր չ'կար. ամեն
մարդ իր աչքին հաճելի եղածն
էր անում։

ՀՌՈՒԹԻ ԳԻՐՔԸ

ԳԼՈՒԽ Ա.

1 Դատաւորների կառավարու-
թեան օրերին երկրումը սով ե-
ղաւ. և Յուդայի Բեթլեհէմիցը
մէկ մարդ իր կնկան և երկու որ-
դիների հետ գնաց Մովաբի եր-
2 կիրը պանդխտանալու։ Եւ այն
մարդի անունը Ելիմելէք, և կընկ-
ան անունը Նոեմի, և երկու
որդկանց անունները Մաալոն և
Քելլոն էին, Եփրաթացի՝ Յու-
դայի Բեթլեհէմիցը և գնացին
Մովաբի երկիրը և այնտեղ էին
3 լինում։ Եւ Նոեմիի մարդը՝ Ելի-
մելէքը մեռաւ, և նա մնաց իր
երկու որդիներովը, Որոնք իրանց 4
համար Մովաբացի կնիկներ ա-
ռան, մէկի անունը Որփա, և
միւսի անունը Հռութ. և նորանք
տասը տարիի չափ այնտեղ նը-
ստեցին։ Եւ Մաալոնն և Քելլոնը 5
երկուսն էլ մեռան, և այն կինը
իր երկու որդկանցիցն ու մար-
դիցը զուրկ մնաց։
Եւ նա իր երկու հարսերովը 6
վեր կացաւ, որ Մովաբի երկրիցը
ետ դառնայ, որովհետև Մովաբի
երկրումը լսել էր որ Տէրը իր
ժողովրդին այցելութիւն է արել
նորանց հաց տալով։ Եւ նա իր 7
եղած տեղիցը դուրս եկաւ իր

երկու հարսերի հետ, և ճանա-
պարհ ընկան Յուդայի երկիրը
8 ետ դառնալու համար։ Եւ Նոե-
մին իր երկու հարսերին ասեց.
Գնացէք և ձեզանից ամեն մէկը
ետ դառնայ իր մօր տունը։ Տէ-
րը ձեզ ողորմութիւն անէ, ինչ-
պէս որ դուք այն մեռածներին
9 և ինձ էք արել։ Տէրը տայ ձեզ
որ ամեն մէկդ իր մարդի տանը
հանգստութիւն գտնէք, և նո-
րանց համբուրեց, և նորանք ի-
րանց ձայները բարձրացնելով լաց
10 եղան. Եւ նորան ասեցին. Մենք
11 անպատճառ քեզ հետ քո ժո-
ղովրդին կ'դառնանք։ Բայց Նո-
եմին ասեց. Աղջիկներս, ետ դա-
ռէք. Ի՞նչու համար ինձ հետ
գնաք. մի՞թէ իմ արգանդումն
12 ուրիշ տղերք կան, որ ձեզ հա-
մար մարդիկ դառնան։ Ետ դա-
ռէք, աղջիկներս, գնացէք. որով-
հետև ես պառաւած եմ, այլևս
մարդի չեմ գնալ. եթէ ասէի որ
13 յոյս ունեմ հէնց այս գիշեր, և
որդիք էլ ծնեմ, Դուք մինչև
նորանց մեծանալը կ'սպասէի՞ք,
դուք սորա համար պիտի զըր-
կուէիք ամուսնանալուց. ոչ, աղ-
ջիկներս, որովհետև շատ ցա-
ւում եմ ձեզ համար, որովհե-
տև Տիրոջ ձեռքն ինձ հասաւ։
14 Եւ նորանք իրանց ձայները բար-
ձրացնելով դարձեալ լաց եղան։
Եւ Որփան իր սկեսրին համբու-
րեց. բայց Հռութը նորա մօտ
15 մնաց։ Սակայն Նոեմի ասեց. Ա-
հա քո ները ետ դառաւ իր ժո-
ղովրդին և իր աստուածներին.
16 դու էլ ետ դարձիր քո ների ե-
տևիցը։ Եւ Հռութն ասեց. Ինձ
մի ստիպիր որ քեզ թողեմ, և
քեզանից ետ դառնամ. որովհե-
տև ուր որ գնաս գնալու եմ, և
ուր որ մնաս՝ մնալու եմ. քո ժո-
ղովուրդն իմ ժողովուրդն է, և
քո Աստուածն իմ Աստուածն է։
17 Ուր որ մեռնես՝ ես էլ կ'մեռ-
նեմ և այնտեղ կ'թաղուիմ. Տէ-
րը ինձ այսպէս և սորանից աւե-
լի անէ, որ ինձ քեզանից մահը
18 պիտի բաժանէ։ Երբոր Նոեմին
տեսաւ որ նա հաստատ ուզում
է իր հետ գնալ, այլ ևս չ'խօ-
սեց նորա հետ։
Եւ երկուսը գնացին, մինչև որ 19
Բեթլեհէմ հասան. և երբոր
Բեթլեհէմ եկան, սորանց պատ-
ճառով բոլոր քաղաքը շարժուե-
ցաւ, և ասում էին. Սա՞ է Նոե-
մին։ Եւ նա նորանց ասեց. Ինձ 20
*Նոեմի մի կանչէք, ինձ †Մարա
կանչեցէք. որովհետև Ամենակա-
րողը դառնութեամբ լցրեց ինձ։
Ես գնացի լիքն, բայց Տէրն ինձ 21
դարտակ դարձրեց. Ի՞նչու էք
ինձ Նոեմի ասում, որովհետև
Տէրն ինձ խոնարհեցրեց և Ամե-
նակարողն ինձ վշտացրեց։ Այս- 22
պէս Նոեմին ետ դառաւ իր
հարս Մովաբացի Հռութի հետ
Մովաբի երկրիցը. և գարիի հնձի
սկզբումը հասան Բեթլեհէմ։

ԳԼ. Բ

Եւ Նոեմին իր մարդի կողմանէ 1
մէկ ազգական ունէր. նա շատ
հարուստ մարդ էր Ելիմելէքի ազ-
գատոհմիցը, և նորա անունը
Բոոս։ Եւ Մովաբացի Հռութը 2
Նոեմիին ասեց. Գնամ արտերը,
և որի աչքի առաջին ողորմու-
թիւն գտնեմ, նորա ետևից հաս-
կեր ժողովեմ։ Եւ նա ասեց նո-
րան. Գնա, աղջիկս։ Եւ նա գը- 3
նաց. և մի արտի մէջ մտնելով
հնձողների ետևից ժողովում էր.
և այնպէս պատահեց, որ նա
հանդիպեց Ելիմելէքի ազգատոհ-
միցն եղող Բոոսի արտին։
Եւ ահա Բոոսը Բեթլեհէմիցն 4
եկաւ, և հնձողներին ասեց. Տէ-
րը ձեզ հետ։ Եւ նորանք ասե-
ցին. Տէրը քեզ օրհնէ։ Եւ Բոոսը 5
հնձողների վերայ նշանակուած
պատանիին ասեց. Որի՞նն է այս
աղջիկը։ Եւ հնձողների վերակա- 6
ցու պատանին պատասխանեց և
ասեց. Նոեմիի հետ Մովաբի երկ-
րիցը դարձող Մովաբացի աղջիկն
է. Եւ ՔՂ ասեց. Աղաչում եմ, 7
որաների մէջ հնձողների ետևից

*հաճելի
†դառն

հաւ քաղեմ և ժողովեմ. և նա առաւօտանց կանուխ եկել է և մինչև հիմա ինացել. ւ-ՙ ԲՒ հիմա մի քիչ տանը նստեց։

8 Եւ Բոոսն ասեց ՀռուԹին. Ա՜հա, աղջիկս. հաւ ժողովելու համար ուրիշի արտը չ'գնաս, և այստեղից էլ չ'բաժանուիս, այլ այստեղ իմ աղջկերանց մօտ կե-
9 նաս։ Աչքերդ նորանց հնձած արտի վերայ լինի, և նորանց ետևիցը գնա. ահա պատանիներին պատուիրել եմ որ քեզ չը դիպչեն. և երբոր ծարաւես՝ անոթների մօտ գնա, և պատանիների քաշած ջուրը խմիր։ Եւ աղ-
10 ջիկը երեսը վերայ ընկաւ, և մինչև գետին երկրպագութիւն անելով նորան ասեց. Ինչից է որ ես քո առաջին շնորհք գտայ. և դու ինձ ճանաչում ես. քանի
11 որ ես մեկ օտար կին եմ։ Եւ Բոոսը պատասխանեց և նորան ասեց. Քո մարդը մեռնելուց յետոյ՝ դու ինչպես որ սկեսրիդ արել ես բոլորն էլ պատմել են ինձ, և թէ ինչպես քո հօրը և մօրը և ծնած երկիրդ թողեցիր, և եկար այն ժողովրդի մօտ, ո-
12 րին առաջ չէիր ճանաչում։ Քո գործքի փոխարէնը Տէրը հատուցանէ, և քո վարձքը Իսրայէլի Տէր Աստուծոյ կողմանէ առատապէս տրուի, որովհետև դու եկար որ նորա թևերի տակ ա-
13 պաստանարան գտնես։ Եւ նա ասեց. Տէր իմ, քո՛ աչքերի առաջին շնորհք գտնեմ, որովհետև դու ինձ մխիթարեցիր, և քո աղախնի հետ քաղցրութեամբ խօսեցիր, թէպէտ և ես քո աղախինների մէկի պէս էլ չեմ։
14 Եւ Բոոսը կերակուրի ժամանակ նորան ասեց. Մօտեցիր, և հացիցը կեր, և պատառդ քացախին թաթախիր։ Եւ նա հնձողների մօտ նստեց. նորան հէզի տուաւ. նա էլ կերաւ կշտացաւ, և ուշ-
15 լացածը պահեց։ Եւ երբոր վեր կացաւ հասկ ժողովելու, Բոոսն իր պատանիներին պատուիրեց ասելով, Թող որաների միջից էլ ժողովէ, և նորան մի ամաչեցնէք։
16 Եւ խուրձերից էլ նորա համար գետինը ձգեցէք, և Թող տուէք որ ժողովէ, և նորան մի յանդիմանէք։
17 Եւ նա մինչև իրիկուն այն արտի մէջ ժողովեց. և երբոր ժողովածը ծեծեց, մէկ արդուի չափ գարի եղաւ։
18 Եւ առաւ և քաղաքը մտաւ. և սկեսուրը նորա ժողովածը տեսաւ. և ՀռուԹը հանեց այն իր կշտացածից ուելցածը նորան տուաւ։
19 Եւ սկեսուրը նորան ասեց. Ո՞րտեղ ժողովեցիր այսօր, և ո՞ւր աշխատեցիր. քեզ ճանաչողը օրհնեալ լինի։ Այն ժամանակ նա նորան իր սկեսրին իմացրեց, Թէ որի մօտ է աշխատել, և ասեց. Այն մարդի անունը, որի մօտ ես այսօր աշխատեցի, Բոոս է։
20 Եւ Նոեմին իր հարսին ասեց. Նա Տէրից օրհնեալ լինի, որ կենդանիներից ու մեռածներից իր ողորմութիւնը չ'պակասեցրեց. և Նոեմին նորան ասեց. Այն մարդը մեր ազգատոհմից է. նա
21 մօտ ազգական է մեզ։ Եւ Մովաբացի ՀռուԹն ասեց. Նաև ինձ ասեց Թէ իմ պատանիների մօտիցը չ'բաժանուիս, մինչև որ նորանք իմ բոլոր հունձքը վերջացնեն։
22 Եւ Նոեմին իր հարս ՀռուԹին ասեց. Լաւ է, աղջիկս, որ դու նորա աղջկերանց հետ գնաս, և քեզ ուրիշ արտի մէջ չ'հանդիպին։
23 Եւ նա Բոոսի աղջկերքիցը չ'բաժանուեցաւ, և մինչև գարու հունձքի և ցորենի հունձքի վերջը հաւ ժողովեց, և իր սկեսրի մօտ էր բնակվում։

Գլ. Գ

1 Եւ նորա սկեսուր Նոեմին նորան ասեց. Աղջիկս, ես քեզ համար հանգստութիւն եմ ուզում, որ քեզ համար լաւ լինի։
2 Եւ ահա Բոոսը մեր ազգականներիցն է, որ դու նորա աղջկերանց մօտ էիր. ահա նա այս գիշեր կալումը գարի է կաւում։
3 Եւ դու լուացուիր և իւղով օծուիր, և հանդերձներդ հագիր և իջիր կալը, և այն մարդին մի յայտնուիր,
մինչև որ ուտէ և խմէ վերջացնէ։
4 Եւ երբոր քնանայ՝ նորա պառկած տեղն իմացիր, և գնա ծածկոցը նորա ոտքերի կողմից բաց և պառկիր, և նա քեզ կ'իմացնէ
5 Թէ ինչ պիտի անես։ Եւ ՀռուԹը նորան ասեց. Ամեն ինչ որ ինձ ասել ես՝ կ'անեմ։
6 Եւ նա իջաւ կալը, և իր սկեսրի ամեն պատուիրածի պէս արաւ։
7 Եւ Բոոսը կերաւ և խմեց և սիրտը զուարճացել էր, և գնաց դիզուած գարիի եզերքին պառկելու. և ՀռուԹը կամաց գնաց և ծածկոցը նորա ոտքերի կողմից
8 բացաւ և պառկեց։ Եւ կէս գիշերին մարդը վախեցաւ, և ծռեց դէռ ոչ ահա իր ոտքերի մօտ
9 մի կին է պառկել։ Եւ ասեց. Դու ո՞վ ես։ Եւ նա ասեց. Ես քո աղախին ՀռուԹն եմ. և քո քղանցքը տարածիր քո աղախնի վերայ, որովհետև դու իմ մօտ
10 ազգական ես։ Նա էլ ասեց. Օրհնեալ լինիս դու Տէրից, աղջիկս, քո երբի լաւութիւնը առաջինից մեծ է, որովհետև դու ոչ աղքատ և ոչ հարուստ երիտասարդների ետևից չ'գնացիր։
11 Եւ հիմա, աղջիկս, մի վախենար, դու ինձ ինչ որ ասես՝ քեզ համար կ'անեմ, որովհետև քաղաքիս բոլոր ժողովուրդը գիտէ որ
12 դու մի առաքինի կին ես։ Եւ հիմա իրաւ ես ւ-ՙ ազգականն եմ, բայց ինձանից աւելի մօտ
13 ուրիշ ազգական կայ։ Այս գիշեր այստեղ կաց, և եթէ առաւօտը նա իր ազգականութեան պարտաւորութիւնը հատուցանել ուզէ, լաւ, Թող հատուցանէ. բայց եթէ նա չ'ուզէ ազգականութեան պարտաւորութիւնը քեզ հատուցանել, այն ժամանակ ես կ'հատուցանեմ, կենդանի է Տէրը. մինչև առաւօտ պառկիր այստեղ։
14 Եւ նա պառկեց նորա ոտքերի մօտ մինչև առաւօտ, և վեր կացաւ, երբոր մարդիկ դեռ չէին կարող միկդմիկ ճանաչել. և Բոոսն ասեց. Մի մարդ չ'իմանայ որ կալը կին է եկել։ Նաև ասեց.

Վերայի ծածկոցդ բեր, և նորան բռնիր։ Եւ ՀռուԹը բռնեց նորան. և նա վեց չափ գարի չափեց և նորա ետևից առաւ. նա էլ գնաց քաղաքը։ Եւ ՀռուԹ իր
16 սկեսրի մօտ գարձաւ. և նա ասեց. Աղջիկս, ինչպես ես. և նա նորան պատմեց ինչ որ այն մարդն արել էր իրան. Եւ ասեց. Նա
17 այս վեց չափ գարին ինձ տուաւ և ասեց. Քո սկեսրի մօտ դատարկ չ'գնաս։ Եւ Նոեմին ասեց.
18 Աղջիկս, նստիր, մինչև որ իմանաս այս գործը ինչպես պիտի վերջանայ. որովհետև այն մարդը մինչև որ այս գործը այսօր չը վերջացնէ՝ չի հանգստանալ։

Գլ. Դ

1 Եւ Բոոսը վեր գնաց դուռը և այնտեղ նստեց. և ահա անց էր կենում այն ազգականը որ Բոոսն ասել էր, և Բոոսը նորան ասեց. Ով այստեղ նստիր, ով այսինչ մարդ. և նա գարձաւ ու նստեց։
2 Այն ժամանակ նա քաղաքի ծերերից տասը մարդ առաւ, և ասեց. Այստեղ նստեցէք. և նստեցան։
3 Եւ ասեց այն ազգականին. Մեր եղբայր Ելիմելէքի արտի բաժինը ծախում է Նոեմին, որ Մովաբի երկրից եկել է գաւել։
4 Եւ ես մտածեցի որ քեզ իմացնեմ և ասեմ. Այս նստողների առաջին և իմ ժողովրդի ծերերի առաջին ծախու առ. եթէ ուզես ազգականութեան իրաւունքով ծախու առնել, առ. բայց եթէ ծախու առնել չ'ուզես, ինձ իմացրու որ գիտենամ. որովհետև բացի քեզանից ազգականութեան իրաւունքը կատարող չ'կայ. և քեզանից յետոյ ես եմ։ Եւ նա ասեց. Ես
5 ազգականութեան իրաւունքը կը կատարեմ։ Եւ Բոոսն ասեց. Դու Նոեմիի ձեռքից արտը ծախու առած օրը՝ մեռնողի կնկանից՝ Մովաբացի ՀռուԹից էլ պիտի ծախու առնես, որ մեռնողի անունը պահես իր ժառանգութեան մէջ։
6 Եւ ազգականն ասեց.

Ես իմ ազգականութեան իրաւունքը չեմ կարող կատարել, մի գուցէ իմ ժառանգութիւնը խանգարեմ. իմ ունեցած ազգականութեան իրաւունքը դու կատարիր, որովհետև ես չեմ կա-
7 րող կատարել։ Եւ Իսրայէլի մէջ առաջուց այս էր ազգականութեան իրաւունք կատարելու ու ծախու առնելու գործքերի մէջ՝ որ ամեն բան հաստատուի, մարդ իր կօշիկը հանում էր և իր ընկերին տալիս. և այս Իսրայէլի
8 մէջ վկայութիւն էր լինում։ Եւ ազգականը Բոոսին ասեց. Դու ծախու առ. և իր կօշիկը հանեց։
9 Եւ Բոոսն ասեց ծերերին և բոլոր ժողովրդին. Դուք այսօր վկայ էք, որ ես Ելիմելէքի բոլոր ստացուածքը, և Քելլոնի ու Մաալոնի բոլոր ստացուածքը Նոե-
10 միի ձեռքիցը ծախու առայ։ Եւ Մաալոնի կինը՝ Մովաբացի Հռութին էլ ինձ համար կին առայ որ մեռնողի անունը պահեմ իր ժառանգութեան մէջ, և մեռնողի անունը չ'վերանայ իր եղբայրներիցը և իր ընակարանի դռնիցը. դուք այսօր վկայ էք։
11 Այն ժամանակ բոլոր ժողովուրդը որ դռանն էր և ծերերը ասեցին. Վկայ ենք. Տէրը քո տունը մտնող կնկան Ռաքէլի ու Լիայի պէս անէ, որ այդ երկուսը Իսրայէլի տունը շինեցին. և դու Եփրաթայի մէջ ուժովացիր, և Բեթլեհէմի մէջ անուն շահիր։
Եւ քո տունը Փարէսի տան պէս 12
լինի, որին Թամարը ծնեց Յուդայի համար այն սերունդով՝ որ Տէրը կ'տայ քեզ այս նորահասակ կնկանից։
Եւ Բոոսն առաւ Հռութին, որ 13
իր կինը եղաւ և նորա մօտ մտաւ. և Տէրը նորան յղութիւն շնորհեց, և նա որդի ծնեց։ Եւ 14
կնիկները Նոեմիին ասեցին. Օրհնեալ լինի Տէրը, որ քեզ առանց մօտ ազգականի չ'թողեց այսօր, որ նորա անունը Իսրայէլի մէջ յիշուի. Եւ այս լինի քո հոգիի 15
մխիթարութիւնը և ծերութեանդ խնամողութիւնը. որովհետև քեզ սիրող հարսդ ծնեց նորան, որ քեզ համար եօթը որդիից լաւ է։ Եւ Նոեմին առաւ տղան 16
իր գրկումը դրաւ և նորա դայեակը եղաւ։ Եւ դրացի կիները 17
նորան անուն դրին, ասելով. Նոեմիին մի որդի է ծնել, և նորա անունը Ովբէդ կոչեցին. սա Դաւիթի հօր Յեսսէի հայրն էր։
Եւ Փարէսի ծնունդները սո- 18
րանք են. Փարէսը ծնեց Եսրոնին, Եւ Եսրոնը ծնեց Արամին, և Ա- 19
րամը ծնեց Ամինադաբին, Եւ Ա- 20
մինադաբը ծնեց Նաասոնին, և Նաասոնը ծնեց Սաղմոնին, Եւ 21
Սաղմոնը ծնեց Բոոսին, և Բոոսը ծնեց Ովբէդին, և Ովբէթը ծնեց Յեսսէին, և Յեսսէն ծնեց Դաւիթին։

ԹԱԳԱՒՈՐԱՑ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

(ԿԱՄ՝ ՍԱՄՈՒԷԼԻ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ)

ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ մի մարդ կար Արիմաթեմ-
սոփիմից Եփրեմի սարից՝ անունը Եղկանա՝ Եփրաթացի Սուբիի որդիի Թովայի որդիի Եղիուսի որ-
դիի Յերոամի որդին։ Եւ նա երկու կին ունէր. մէկի անունը Աննա, և միւսի անունը Փենանա. և Փենանան զաւակներ ունէր, բայց Աննան զաւակ չ'ունէր։ Եւ այն մարդը տարուց 2 3

տարի իր քաղաքիցը վեր էր գընում, որ Սելովի մէջ Զօրաց Տիրոջը երկրպագութիւն և զոհ մատուցանէ, և Հեղիի երկու որդիքը՝ Ոփնի և Փենէհէս այնտեղ
4 Տիրոջ քահանաներն էին։ Եւ Եղկանան իր զոհ մատուցրած օրը իր կնկան Փենանային և նորա որդկանցը և աղջկերանցը բաժին-
5 ներ տուաւ. Իսկ Աննային կրկնապատիկ բաժին տուաւ, որովհետև Աննային սիրում էր. բայց Տէրը փակել էր նորա արգանդը։
6 Եւ նորա նախանձորդը Փենանան գրգռում էր նորան և վշտացնում. որովհետև Տէրը փակել էր
7 նորա արգանդը։ Եւ այնպէս էր անում տարուց տարի Տիրոջ տունը գնալիս. Փենանան էլ նոյնպէս վշտացնում էր. և նա լաց էր լի-
8 նում և չէր ուտում։ Եւ մարդը՝ Եղկանան նորան ասեց. Աննա, ի՞նչու ես լաց լինում, և ի՞նչու չես ուտում, և ի՞նչու համար սիրտդ այդպէս տրտում է. մի՞թէ ես քեզ համար տասը որդիից լաւ չեմ։
9 Եւ Աննան վեր կացաւ Սելովի մէջ ուտելուց և խմելուց յետոյ. (և Հեղի քահանան Տիրոջ տաճարի սեմի մօտ մի աթոռի վե-
10 րայ նստել էր.) Եւ նա աղօթք արաւ տրտմալից հոգիով դէպի
11 Տէրը և շատ լաց եղաւ։ Եւ ուխտ արաւ ու ասեց. Ով Զօրաց Տէր, եթէ քո աղախինի նեղութեանը նայես և ինձ յիշես, և քո աղախինին չ'մոռանալով՝ քո աղախինին արու զաւակ տաս, ես նորան Տիրոջը կ'նուիրեմ իր կեանքի բոլոր օրերումը. և նորա գըլ-
12 խին ածելի չի բարձրանալ։ Եւ երբոր նա իր աղօթելը Տիրոջ առաջին շատացրեց, Հեղին նայում
13 էր նորա բերանին։ Եւ Աննան իր սրտիցը խօսում էր. միայն նորա շրթունքները շարժում էին, բայց ձայնը չէր լսվում. նորա համար Հեղին նորան արբած կարծեց։
14 Եւ Հեղին նորան ասեց. Մինչև ե՞րբ պիտի արբածութիւն անես.
15 գինովութիւնդ թող։ Եւ Աննան պատասխանեց և ասեց. Ոչ, տէր իմ, ես վշտացած սրտով մի կին եմ, և գինի կամ ցքի խմած չեմ, այլ իմ սիրտը բացել եմ Տիրոջ առաջին։ Քո աղախինը չար 16
կին մի կարծիր, որովհետև իմ վիշտերի ու նեղութեան շատութեան համար մինչև հիմա խօսեցի։ Այն ժամանակ Հեղին պա- 17
տասխանեց և ասեց. Գնա խաղաղութեամբ, և Իսրայէլի Աստուածը տայ քո խնդրուածքը, ինչ որ նորանից խնդրեցիր։ Եւ նա 18
ասեց. Քո աղախինը թող քո առաջին շնորհք գտնէ. և կինը գնաց իր ճանապարհը և կերաւ, և երեսը այլ ևս տրտում չէր։
Եւ նորանք առաւօտը կանուխ 19
վեր կացան և Տիրոջ առաջին երկրպագութիւն արին և ետ դառան Ռամա և գնացին իրանց տունը։ Եւ Եղկանան մօտեցաւ իր Աննա կնկան. և Տէրը նորան յիշեց։ Եւ եղաւ որ տարին դառ- 20
նալիս Աննան յղացաւ և մի տղայ ծնեց, և նորա անունը *Սամուէլ կոչեց՝ ասելով, թէ Տէրի-
ցը խնդրեցի նորան։ Եւ նորա այ- 21
րը Եղկանան վեր գնաց իր բոլոր ընտանիքովը, որ տարեկան զոհը և իր ուխտը մատուցանէ Տիրոջ առաջին։ Բայց Աննան չ'գնաց, 22
որովհետև իր մարդին ասեց. Կը նստեմ մինչև տղայի կաթից կըտրուիլը. յետոյ կ'տանեմ նորան որ Տիրոջ առաջին երևայ, և միշտ այնտեղ կենայ։ Եւ նորա այրը՝ 23
Եղկանան նորան ասեց. Արա ինչ որ աչքերիդ հաճելի է, նստիր մինչև որ նորան կաթից կտրես. միայն թէ Տէրը հաստատէ իր խօսքը. և կինը նստեց, և մինչև իր տղան կաթից կտրելը նորան սնուցանում էր։
Եւ հէնց որ նորան կաթից կըտ- 24
րեց, իր հետն առաւ նորան, և երեք զուարակով, մէկ արդու ալիւրով և մէկ տիկ գինիով՝ տարաւ նորան Տիրոջ տունը՝ Սելով. և տղան փոքր էր։ Եւ զուարա- 25
կը մորթեցին, և տղան Հեղիի մօտ տարան։ Եւ Աննան ասեց. 26

*Աստուծոյ լսածը։

Ո՛հ, տէր իմ, քո անձը կենդա-
նի է. ես այն կինն եմ, որ այս-
տեղ քեզ մօտ կանգնեցի Տիրո-
27 ջը աղօթք անելու համար։ Ես
այս տղայի համար աղօթք արի,
և Տէրն իմ խնդրուածքն ինձ
տուաւ՝ ինչ որ նորանից խնդրե-
28 ցի։ Հիմա ես էլ նորան փոխ եմ
տալիս Տիրոջը. իր բոլոր կեանքի
մէջ Տիրոջը փոխ տրուած լինի.
և նա այնտեղ Տիրոջը երկրպա-
գութիւն արաւ։

ԳԼ. Բ

1 Եւ Աննան աղօթք արաւ և
ասեց.
Իմ սիրտն ուրախացաւ Տէրովը,
Իմ եղջիւրը բարձրացաւ Տէրով.
Բերանս իմ թշնամիների վերայ
լայնացաւ,
Որովհետև քո փրկութիւնովն ու-
րախացայ։
2 Տիրոջ պէս սուրբ չ՛կայ, որով-
հետև քեզանից ջոկը չ՛կայ,
Եւ մեր Աստուծոյ պէս վէմ չ՛կայ։
3 Այլ ևս հպարտութիւնով մի
պարծենաք,
Եւ ձեր բերանից մեծաբանու-
թիւն դուրս չ՛գայ,
Որովհետև Տէրը գիտութիւնների
Աստուածն է,
Եւ նա կշռում է գործքերը։
4 Զօրաւորների աղեղները կոտրը-
վում են,
Բայց տկարները ոյժ են հագնում։
5 Կուշտերը հացի համար վարձկան
եղան,
Բայց սովածները դադարեցին սո-
վելուց.
Քանի որ ամուլը եօթը [illegible]
ծնեց,
Բայց շատ զաւակ ունեցողը տը-
կարացաւ։
6 Տէրն է մեռցնողը և կենդանա-
ցնողը,
Գերեզման իջեցնողը և վեր հա-
նողը։
7 Տէրն է աղքատացնողը և հարս-
տացնողը,
Ցածացնողը և բարձրացնողը։
8 Նա կանգնեցնում է աղքատին
փոշիից,
Եւ աղբիւսից բարձրացնում է
կարօտին,
Որ իշխանների հետ նստեցնէ,
Եւ փառքի աթոռը նորանց ժա-
ռանգեցնէ,
Որովհետև երկրի հիմերը Տի-
րոջն են,
Եւ աշխարհը նորանց վերայ նա
հաստատեց։
Նա կ՛պահէ իր սուրբերի ոտքերը. 9
Բայց չարագործները մութի մէջ
կ՛պապանձուեն.
Որովհետև մարդը ուժովը յաղ-
թող չէ։
Տիրոջ դէմ հակառակողները կը 10
փշրուին.
Նա երկնքիցը նորանց վերայ կ՛ո-
րոտայ.
Տէրը կ՛դատէ երկրիս ծայրերը,
Եւ ոյժ կ՛տայ իր թագաւորին,
Եւ իր օծեալի եղջիւրը կ՛բարձ-
րացնէ։
Եւ Եղկանան գնաց Ռամա իր 11
տունը. և մանուկը Հեղի քահա-
նայի առաջին Տիրոջը ծառայու-
թիւն էր անում։ Եւ Հեղիի որ- 12
դիքը չար զաւակներ էին, Տիրո-
ջը չէին ճանաչում։ Եւ քահա- 13
նաների սովորութիւնը այս էր
ժողովրդի մասին, որ երբոր մէկը
զոհ մատուցանէր, միսը եփելիս՝
գալիս էր քահանայի սպասաւորը
երեքժանի մսահանը ձեռքին. Եւ 14
կոխում էր այն կաթսայի կամ
սանի կամ եփարանի կամ պտու-
կի մէջ, և մսահանը ինչ որ հա-
նէր, քահանան այն վեր էր առ-
նում իր համար։ Նորանք այս-
պէս էին անում Սելովումը բոլոր
այնտեղ եկող Իսրայէլացիներին։
Նաև ճարպը այրելուց առաջ՝ 15
քահանայի սպասաւորը գալիս էր,
և ասում զոհ անող մարդին,
խորովելու միս տուր քահանայի
համար, որովհետև նա քեզանից
եփած միս չի առնիլ, այլ հում։
Եւ այն մարդը երբոր ասէր թէ 16
թող հիմա ճարպն այրեն, և յե-
տոյ սրտիդ ուզածի չափ առ.
այն ժամանակ ասում էր. Ոչ,
հիմա տուր, եթէ ոչ բռնի կ՛առ-
նեմ։ Եւ այն երիտասարդների 17
մեղքը շատ մեծ էր Տիրոջ ա-

ռաջին. որովհետև այդ մարդիկը
արհամարհում էին Տիրոջ զոհը։
18 Եւ Սամուէլ մանուկը քթանի
եփուդ հագած ծառայութիւն էր
19 անում Տիրոջ առաջին։ Եւ նո-
րա մայրը տարուց տարի պզտիկ
պատմուճան էր շինում նորա
համար և բերում նորա համար,
երբոր իր մարդի հետ վեր էր գա-
20 լիս տարեկան զոհը անելու։ Եւ
Հեղին Եղկանային և նորա կնկան
օրհնելով ասեց. Տէրը քեզ այս
կնկանից զաւակներ տայ Տիրոջը
փոխ տրուածի փոխարէն. և նո-
21 րանք գնացին իրանց տեղը։ Եւ
Տէրը այցելութիւն արաւ Աննա-
յին, որ յղացաւ և երեք տղայ
և երկու աղջիկ ծնեց. Սամուէլ
մանուկն էլ մեծացաւ Տիրոջ ա-
ռաջին։
22 Եւ Հեղին շատ ծերացել էր.
և լսում էր այն ամենն ինչ որ
նորա որդիքն անում էին բոլոր
Իսրայէլին, և ինչպէս նորանք ժո-
ղովքի խորանի առաջին խումբե-
րով ժողովուած կանանց հետ քը-
23 նում էին։ Եւ նորանց ասեց.
Ի՞նչու համար էք անում այսպի-
սի բաները. որովհետև ես այս
բոլոր ժողովրդի բերանիցը ձեզ
համար չար խօսքեր եմ լսում։
24 Չէ, որդիքս, որովհետև լաւ չէ
այն լուրը որ ես լսում եմ ձեր
մասին. դուք Տիրոջ ժողովրդին
25 մոլորացնում էք։ Եթէ մարդ
մարդի դէմ մեղք գործէ, նորա
դատաստանը Աստուած կ՛կտրէ.
բայց եթէ մարդ Տիրոջ դէմ
մեղք գործէ, նորա համար ո՞վ
աղաչանք կ՛անէ։ Սակայն նորանք
իրանց հօր խօսքին մտիկ չէին ա-
նում, որովհետև Տէրը ուզում
26 էր նորանց մեռցնել։ Եւ Սամու-
էլ մանուկը օրէցօր մեծանում
էր, և հաճելի էր թէ Տիրոջը և
թէ մարդկանցը։
27 Եւ Աստուծոյ մէկ մարդը Հե-
ղիի մօտ եկաւ, և նորան ասեց.
Տէրը այսպէս է ասում. Ես
յայտնապէս երևեցայ քո հօր
տանը, երբոր նորանք Եգիպտո-
28 սումը Փարաւօնի տանն էին. Եւ
Իսրայէլի բոլոր ցեղերիցը նորան
ինձ համար քահանայ ընտրեցի
որ իմ սեղանի վերայ ելնէ, խունկ
ծխէ, և իմ առաջին եփուդ
հագնէ. և Իսրայէլի որդկանց բո-
լոր պատարագները տուի քո հօր
տանը։ Ի՞նչու էք անարգում իմ 29
զոհերը և ընծաները, որ ես պատ-
ուիրեցի իմ տան համար, և քո
որդիներին ինձանից աւելի ես
պատուում, որ ձեզ գիրացնէք
իմ ժողովուրդ Իսրայէլի ընտիր
զոհերովը։ Սորա համար Իսրայէլի 30
Տէր Աստուածն այսպէս է ասում.
Իրաւ ասել էի, որ քո տունը և
քո հօր տունը գնան իմ առաջին
յաւիտեան. բայց հիմա Տէրն ա-
սում է. Քաւ լիցի. որովհետև ես
ինձ փառաւորողներին կ՛փառա-
ւորեմ, և ինձ արհամարհողները
կ՛անարգուին։ Ահա օրեր կ՛գան, 31
որ կ՛կտրեմ քո բազուկը և քո
հօր տան բազուկը, որ քո տան
մէջ ծեր չ՛լինի։ Եւ դու տան 32
մէջ դժբաղդութիւն կ՛տեսնես՝
մինչդեռ Իսրայէլն ամեն տեսակ
բարութիւն կ՛վայելէ, և քո տան
մէջ բնաւ ծեր չի լինիլ։ Եւ քո 33
[illegible] մարդ չեմ կտրիլ իմ
սեղանիցը, քո աչքերը նուաղե-
ցնելու և քո սիրտը վշտացնելու
համար, և քո տան զարգացած-
ները բոլորը չափահաս կ՛մեռնեն։
Եւ այս քեզ նշան լինի՝ ինչ որ 34
պիտի գայ քո երկու որդկանց
Ոփնիի և Փենէհէսի վերայ՝ եր-
կուսն էլ մէկ օրում պիտի մեռ-
նեն։ Եւ ինձ համար մէկ հաւա- 35
տարիմ քահանայ պիտի հանեմ՝,
որ բոլոր իմ սրտի և հոգիի միջի
եղածը կատարէ, և նորա համար
հաւատարիմ տուն կ՛շինեմ. և
նա միշտ իմ օծեալի առաջին կը
գնայ։ Եւ քո տանիցն ով որ մը- 36
նայ, մի կտոր արծաթի համար
և մի նկանակ հացի համար կ՛գայ
նորան երկրպագութիւն կ՛անէ,
և կ՛ասէ. Աղաչում եմ, ինձ մէկ
քահանայական պաշտօնի վերայ
դիր որ մի պատառ հաց ուտեմ։

ԳԼ. Գ

Եւ Սամուէլ մանուկը Հեղիի ա- 1

ռաջին Տիրոջը ծառայութիւն էր
անում. և այն օրերը Տիրոջ խօս-
քը հազուագիւտ էր՝ յայտնի տե-
2 սիլք չ՚կար։ Եւ այն ժամանակը
եղաւ որ Հեղին իր տեղը պառ-
կած էր. (և նորա աչքերը սկսել
էին ծանրանալ՝ չէր կարողանում
3 տեսնել.) Եւ Աստուծոյ կանթե-
ղը տակաւին չէր հանգչել, և
Սամուէլը քնել էր Տիրոջ տա-
ճարումը, ուր որ Աստուծոյ տա-
4 պանակն էր։ Եւ Տէրը կանչեց
Սամուէլին. և նա ասեց. Ահա
5 ես. Եւ Հեղիի մօտ վազելով՝ ա-
սեց. Ահա ես, որովհետև ինձ
կանչեցիր։ Եւ նա ասեց. Ես չը
կանչեցի. դարձիր պառկիր։ Եւ
6 նա դարձաւ պառկեց։ Եւ Տէրը
դարձեալ կանչեց՝ Սամուէլ. և
Սամուէլը վեր կացաւ Հեղիի մօտ
գնաց և ասեց. Ահա ես, որով-
հետև ինձ կանչեցիր։ Եւ նա ա-
սեց. Ես չ՚կանչեցի, որդեակս,
7 դարձիր պառկիր։ Եւ Սամուէլը
Տիրոջը դեռ չէր ճանաչում, և
Տիրոջ խօսքը դեռ նորան յայտ-
8 նուած չէր։ Եւ դարձեալ երրորդ
անգամ Տէրը կանչեց, Սամուէլ.
և նա վեր կացաւ Հեղիի մօտ
գնաց, և ասեց. Ահա ես, որով-
հետև ինձ կանչեցիր։ Եւ Հեղին
իմացաւ որ Տէրն է կանչում մա-
9 նուկին։ Եւ Հեղին Սամուէլին ա-
սեց. Գնա պառկիր և եթէ քեզ
կանչէ, ասիր. Խօսիր, Տէր, որով-
հետև քո ծառան լսում է։ Եւ
Սամուէլը գնաց իր տեղը պառ-
10 կեց։ Եւ Տէրն եկաւ կանգնեց,
և առաջի անգամների պէս կան-
չեց, Սամուէլ՝ Սամուէլ. և Սա-
մուէլն ասեց. Խօսիր, որովհետև
11 քո ծառան լսում է։ Այն ժա-
մանակ Տէրը Սամուէլին ասեց.
Ահա ես Իսրայէլի մէջ մի բան
կ՚անեմ, որ ամեն նորան լսողի
երկու ականջները կ՚հնչեցնեն։
12 Այն օրը Հեղիի վերայ կ՚կատա-
րեմ ամեն ինչ որ նորա տան վե-
րայով խօսել եմ. կ՚սկսեմ և կը
13 վերջացնեմ։ Եւ իրան իմացրել
եմ, որ նորա տունը պիտի դա-
տեմ յաւիտեան որ գիտէր այն
անօրէնութիւնը, որ նորա որդի-
քը իրանց վերայ անէծք են բե-
րում, և նա չ՚յանդիմանեց նո-
րանց։ Ես սորա համար երդում 14
արի Հեղիի տան համար, որ Հե-
ղիի տան անօրէնութեանը՝ զո-
հերով և ընծաներով յաւիտեան
քաւութիւն չ՚լինի։
Եւ Սամուէլը մինչև առաւօտ 15
պառկեց, և յետոյ Տիրոջ տան
դռները բացաւ. և Սամուէլը վա-
խեցաւ այն տեսիլքը Հեղիին պատ-
մելուց։ Բայց Հեղին Սամուէլին 16
կանչեց և ասեց. Սամուէլ՝ որդ-
եակս. և նա ասեց. Ահա ես. Եւ 17
նա ասեց. Ի՞նչ է այն խօսքը, որ
քեզ ասեց. Ինձանից մի ծած-
կիր, Աստուած քեզ այսպէս և
սորանից աւելի անէ, եթէ ին-
ձանից ծածկես մի խօսք այն ա-
մեն խօսքերիցը որ նա քեզ հետ
խօսել է։ Եւ Սամուէլը բոլոր 18
խօսքերը նորան պատմեց, նորա-
նից չ՚ծածկեց։ Եւ Հեղին ասեց.
Նա Տէրն է, ինչ որ հաճոյ է իր
աչքերի առաջին՝ թող անէ։
Եւ Սամուէլը մեծացաւ, և Տէ- 19
րը նորա հետ էր, և իր բոլոր
խօսքերից մէկը դետինը չ՚գցեց։
Եւ Դանից մինչև Բերսաբէէ բո- 20
լոր Իսրայէլն իմացաւ, որ Սա-
մուէլը հաստատուած է Տիրոջ
համար մարգարէ։ Եւ Տէրը Սե- 21
լովումը դարձեալ երևեցաւ. ո-
րովհետև Տէրը Սելովումը Սա-
մուէլին յայտնվում էր Տիրոջ
խօսքովը։ Եւ բոլոր Իսրայէլի մէջ
տարածվում էր Սամուէլի խօսքը։

ԳԼ. Դ

Եւ Իսրայէլը դուրս եկաւ պա- 1
տերազմով Փղշտացիների դէմ, և
Աբենեզերի մօտ բանակ տուաւ,
և Փղշտացիները Ափեկի մէջ բա-
նակ տուին։ Եւ Փղշտացիները 2
Իսրայէլի դէմադէմ շարուեցան,
և պատերազմը տարածուեցաւ և
Իսրայէլը յաղթուեցաւ Փղշտա-
ցիների առաջին և պատերազմի
դաշտումը չորս հազար մարդ 3
զարկեցին։ Եւ ժողովուրդը եկաւ
բանակը. և Իսրայէլի ծերերն ա-
սեցին. Ի՞նչու համար Տէրը մեզ
այսօր Փղշտացիների առաջին կոտ-

րեց. Տիրոջ ուխտի տապանակը
Սելովից մեզ մօտ առնենք, և նա
մեր մէջը գայ և մեզ ազատէ մեր
4 թշնամիների ձեռքից։ Եւ ժողո-
վուրդը մարդ ուղարկեց Սելով,
և վեր առան այնտեղից քերով-
բէների վերայ նստող Զօրաց Տի-
րոջ ուխտի տապանակը. և Հեղիի
երկու որդիքը Ոփնին և Փենէհէ-
սը այնտեղ էին Աստուծոյ ուխ-
5 տի տապանակի հետ։ Եւ երբոր
Տիրոջ ուխտի տապանակը բանա-
կի մէջ մտաւ, բոլոր Իսրայէլը
մեծ ձայնով աղաղակեց, և գե-
6 տինը դղրդաց։ Եւ Փղշտացիները
այն աղաղակի ձայնը լսելով՝ ա-
սեցին. Այս ի՞նչ բարձրաձայն ա-
ղաղակ է Եբրայեցիների բանակի
մէջ. և իմացան որ Տիրոջ տա-
7 պանակն եկել է բանակը։ Եւ
Փղշտացիները վախեցան, որովհե-
տև ասում էին. Աստուած եկել
է բանակի մէջ. նաև ասեցին.
Վա՛յ մեզ, որովհետև մինչև հի-
մա այսպիսի բան չէր եղած։
8 Վա՛յ մեզ, այս զօրաւոր Աստ-
ուածների ձեռքիցն ո՞վ պիտի
ազատէ մեզ. սորանք այն Աստ-
ուածներն են որ Եգիպտոսին զար-
կեցին ամեն հարուածներով ա-
9 նապատի մէջ։ Ուժովացէք և
քաջ եղիք, ով Փղշտացիներ, մի
դուցէ Եբրայեցիներին ծառայ
դառնաք ինչպէս որ նորանք ձեզ
ծառայ եղան. ուստի քաջ եղիք
10 և պատերազմեցէք։ Եւ երբոր
Փղշտացիները պատերազմեցին,
Իսրայէլը յաղթուեցաւ և ամեն
մարդ փախաւ իր վրանը, և շատ
մեծ կոտորած եղաւ, և Իսրայէ-
լից երեսուն հազար հետևակ
11 զօրք ընկաւ։ Նաև Աստուծոյ
տապանակը առնուեցաւ. և Հե-
ղիի երկու որդիքը՝ Ոփնին և Փե-
նէհէսը մեռան։
12 Եւ Բենիամինեան մի մարդ բա-
նակիցը վազելով նոյն օրը հասաւ
Սելով, և նորա հանդերձները
պատառուած էին, և գլխին հող։
13 Եւ երբոր նա հասաւ, ահա Հե-
ղին նստել էր մի աթոռի վերայ
ճանապարհին և սպասում էր.
որովհետև Աստուծոյ տապանակի
համար սիրտը դողում էր։ Եւ
երբոր այն մարդն եկաւ որ քա-
ղաքին պատմէ, բոլոր քաղաքը
աղաղակեց։ Եւ Հեղին այն աղա- 14
ղակի ձայնը լսելով՝ ասեց. Այս
ի՞նչ աղմուկի ձայն է։ Եւ այն
մարդը շուտով վազեց եկաւ և
Հեղիին պատմեց։ Եւ Հեղին 15
իննսունևութը տարեկան էր, և
աչքերը դադարել էին որ չէր
կարողանում տեսնել։ Եւ այն 16
մարդը Հեղիին ասեց. Զօրքի մի-
ջից եկողը ես եմ, և ես փախայ
այսօր պատերազմիցը. և նա ա-
սեց. Որդեակս, բանը ի՞նչ եղաւ։
Եւ լրաբերը պատասխանեց և ա- 17
սեց. Իսրայէլը Փղշտացիների ա-
ռաջիցը փախաւ, և ժողովրդի
մէջ էլ մեծ կոտորած եղաւ,
և քո երկու որդիքը՝ Ոփնին և
Փենէհէսն էլ մեռան, և Աստու-
ծոյ տապանակը առնուեցաւ։ Ու 18
երբոր նա Աստուծոյ տապանակը
յիշեց, Հեղին աթոռիցը քամակի
վերայ վայր ընկաւ դռան մօտ,
և նորա վզի ոսկորը կոտրուեցաւ,
և նա մեռաւ, որովհետև ծեր և
ծանրացած մարդ էր. և նա Իս-
րայէլի մէջ քառասուն տարի
դատաւորութիւն էր արել։
Եւ նորա հարսը՝ Փենէհէսի կի- 19
նը յղի էր ծնելու մօտ, երբոր
Աստուծոյ տապանակի առնուե-
լու և իր սկեսրայրի և մարդի
մեռնելու լուրը լսեց, ծնկերը
թուլացան, և նա ծնեց, որովհե-
տև ցաւերը նորան բռնեցին։ Եւ 20
երբոր մեռնում էր, նորա մօտ
կանգնող կիները նորան ասեցին.
Մի վախենար, որովհետև տղայ
ես ծնել. բայց նա չ՚պատասխա-
նեց և ուշադրութիւն չ՚արաւ։
Եւ այն տղայի անունը *Իքաբօդ 21
կոչեց, ասելով թէ Իսրայէլիցը
փառքը վերացաւ. (որովհետև
Աստուծոյ տապանակը առնուե-
ցաւ, և նորա սկեսրայրն ու մար-
դը չ՚կան։) Նորա համար ասեց. 22
Աստուծոյ տապանակը առնուե-
լու համար Իսրայէլիցը փառքը
վերացաւ։

---

*Այսինքն՝ պատիւ չ՚կայ։

ԳԼ. Ե

1 Եւ Փղշտացիները առան Աստուծոյ տապանակը և տարան
2 նորան Աբենեզերից Ազովտոս։ Եւ Փղշտացիները Աստուծոյ տապանակն առան ու տարան նորան Դագոնի տունը և դրին Դագոնի
3 մօտ։ Եւ հետևեալ օրը Ազովտացիները առաւօտանց կանուխ վեր կացան տեսան որ Դագոնը Տիրոջ տապանակի առաջին երեսի վերայ գետինն է ընկել. և նորանք վեր առան Դագոնը և իր
4 տեղը դրին։ Եւ հետևեալ օրը՝ առաւօտանց կանուխ վեր կացան և տեսան որ Դագոնը Տիրոջ տապանակի առաջին երեսի վերայ գետինն է ընկել, և Դագոնի գլուխն ու ձեռքերի երկու թաթերը կոտրատուած՝ սեմի վերայ էին, միայն Դագոնի մարմինն էր
5 մնացել։ (Այս պատճառով Դագոնի քուրմերը և բոլոր Դագոնի տունը մտնողները՝ մինչև այսօր Ազովտոսումն եղող Դագոնի սե-
6 մի վերայ չեն կոխիլ։) Եւ Տիրոջ ձեռքը ծանրացաւ Ազովտացիների վերայ, և նորանց աւերակ արաւ, և նորանց զարկեց Ազովտոսի և նորա սահմանների մէջ թանչքի ուռեցքներով։
7 Եւ Ազովտոսի բնակիչները տեսան որ այսպէս է, և ասեցին. Իսրայէլի Աստուծոյ տապանակը մեզ մօտ չ՚կենայ. որովհետև նորա ձեռքը մեզ վերայ և մեր աստուած Դագոնի վերայ
8 ծանրացաւ։ Եւ մարդ ուղարկեցին, և Փղշտացիների բոլոր նախարարներին իրանց մօտ ժողովեցին, և ասեցին. Ի՞նչ անենք Իսրայէլի Աստուծոյ տապանակին. և ասեցին. Թող Իսրայէլի Աստուծոյ տապանակը Գէթ փոխադրեն. և Իսրայէլի Աստուծոյ տապանակը
9 փոխադրեցին։ Եւ եղաւ որ նորան փոխադրելուց յետոյ Տիրոջ ձեռքովն այն քաղաքի մէջ մեծ խռովութիւն եղաւ, և քաղաքի մարդկանցը պզտիկից մինչև մեծը զարկեց. և նորանց վերայ թանչքի ուռեցքներ երևեցան։

Եւ Աստուծոյ տապանակը Ակ- 10
կարոն ուղարկեցին. և հէնց որ Աստուծոյ տապանակը Ակկարոն մտաւ, Ակկարոնացիները աղաղակելով ասեցին. Իսրայէլի Աստուծոյ տապանակը մեզ մօտ բերին, որ մեզ և մեր ժողովրդին մեռցնեն։ Եւ մարդ ուղարկեցին՝ 11
Փղշտացիների բոլոր նախարարներին ժողովեցին, և ասեցին. Իսրայէլի Աստուծոյ տապանակը ուղարկեցէք և իր տեղը ետ դառնայ, որ մեզ և մեր ժողովրդին չ՚մեռցնէ. որովհետև բոլոր քաղաքի մէջ մահառիթ սոսկում կար, Աստուծոյ ձեռքը շատ ծանրացել էր այնտեղ։ Եւ չ՚մեռած 12
մարդիկը թանչքի ուռեցքներով զարկուեցան. և քաղաքի աղաղակը երկինքը վեր ելաւ։

ԳԼ. Զ

Եւ Տիրոջ տապանակը մնաց Փը- 1
ղշտացիների երկրումը եօթը ամիս։ Եւ Փղշտացիները կանչեցին 2
քուրմերին և դուշակողներին և ասեցին. Եհովայի տապանակին ի՞նչ անենք. մեզ իմացրէք թէ նորան ի՞նչով իր տեղն ուղարկենք։ Նորանք էլ ասեցին. Եթէ 3
Իսրայէլի Աստուծոյ տապանակը ուղարկէք. նորան դարտակ չ՚ուղարկէք, այլ անպատճառ յանցանքի պատարագ տուէք նորան, այն ժամանակ կ՚բժշկուիք, և ձեզ յայտնի կ՚լինի թէ ի՞նչու համար նորա ձեռքը ձեզանից չէ հեռանում։ Եւ նորանք ասեցին. 4
Ո՞րն է այն պատարագը որ նորան մատուցանենք։ Եւ նորանք ասեցին. Փղշտացիների նախարարների թիւովը հինգ ոսկեղէն թանչքի ուռեցքներ և հինգ ոսկի մուկ է. որովհետև մի և նոյնն էր հարուածը ձեր ամենի վերայ՝ 5
և ձեր նախարարների վերայ։ Եւ հիմա ձեր թանչքի ուռեցքների պատկերները, և ձեր երկիրն աւերող մուկերի պատկերները շինեցէք, և Իսրայէլի Աստուծուն փառք տուէք, կարելի է որ նա իր ձեռքը ձեր վերայից, ձեր աստ-

ուածների վերայից, և ձեր երկ-
6 րի վերայից թեթևացնէ։ Եւ ի՞նչու համար էք ձեր սիրտերը խըստացնում, ինչպէս որ Եգիպտացիները և Փարաւօնն իրանց սիրտերը խստացրին. չէ՞ որ Աստուած նորանց մէջ հրաշալի գործքեր անելուց յետոյ՝ նորանք թող
7 տուին նորանց որ գնան։ Հիմա մէկ նոր սայլ շինեցէք, և երկու հատ կաթնատու երինջ առէք, որոնց վերայ բնաւ լուծ դրուած չ՚լինի. և երինջները սայլին լծեցէք, և նորանց հորթերը նորանց
8 քամակիցը ետ տարէք տուն։ Եւ Եհովայի տապանակն առէք, և սայլի վերայ դրէք նորան, և այն ոսկեղէն անօթները, որ դուք յանցանքի համար նորան ընծայ պիտի տաք, մի պզտիկ արկղով նորա մէկ կողմին դրէք, և նորան
9 ճանապարհեցէք որ գնայ։ Եւ նայեցէք, եթէ իր սահմանի ճանապարհովը Բեթսամիւս է գընում, այս մեծ չարիքը մեզ անողը նա է. ապա եթէ ոչ, գիտենանք որ նորա ձեռքը չէ մեզ դպել. այս բանը դիպուածով է
10 պատահել մեզ։ Եւ այն մարդիկը այնպէս արին. երկու հատ կաթնատու երինջ առան, և նորանց լծեցին սայլին, և նորանց հորթերին տան մէջ փակեցին։
11 Եւ Տիրոջ տապանակը, և ոսկի մուկերի և իրանց թանչքի ուռեցքների պատկերների պզտիկ արկղը դրին այն սայլի վերայ։
12 Եւ երինջները ճանապարհ ընկան ուղիղ դէպի Բեթսամիւսի ճանապարհը, և մէկ շաւիղով գընալով բառաչում էին, և աջ կամ ձախ կողմը չ՚խոտորուեցան. և Փղշտացիների նախարարները գնում էին մինչև Բեթսամիւսի
13 սահմանը նորանց ետևից։ Եւ Բեթսամիւսացիները հովիտի մէջ ցորենի հունձ էին հնձում, և իրանց աչքերը բարձրացրին և տապանակը տեսան, և ուրախացան
14 որ տեսան։ Եւ սայլը Բեթսամիւսացի Յեսուի արտը մտաւ և այնտեղ կանգնեց, և այնտեղ մէկ մեծ քար կար. և սայլի փայ-

տերը ճեղքեցին և այն երինջներին ողջակէզ մատուցրին Տիրոջը։
Եւ Ղևտացիները իջեցրին Տիրոջ 15
տապանակը և նորա հետ եղող ոսկի անօթների պզտիկ արկղը և դրին այն մեծ քարի վերայ. և այն օրը Բեթսամիւսի մարդիկը ողջակէզներ և զոհեր մատուցրին Տիրոջը։ Եւ Փղշտացիների հինգ 16
նախարարները տեսան և ետ դառան նոյն օրը Ակկարոն։ Եւ այն 17
ոսկեղէն թանչքի ուռեցքները՝ որ Փղշտացիները իբրև յանցանքի ընծայ տուին Տիրոջը, սորանք էին. մէկ հատ Ազովտոսի համար, մէկ հատ Գազայի համար, մէկ հատ Ասկաղոնի համար, մէկ հատ Գէթի համար, մէկ հատ Ակկարոնի համար։ Եւ ոսկի մու- 18
կերը Փղշտացիների հինգ նախարարութիւնների բոլոր քաղաքների թիւովն էին, պարսպաւոր քաղաքից մինչև անպարիսպ գիւղը, և մինչև այն մեծ քարը՝ որի վերայ Տիրոջ տապանակը դրուեցաւ, որ կայ մինչև այս օր Բեթսամիւսացի Յեսուի արտումը։ Եւ 19
Տէրը Բեթսամիւսի մարդկանցը զարկեց, որովհետև նորանք նայեցին Տիրոջ տապանակի մէջ. և ժողովրդիցը յիսուն հազար եօթանասուն մարդ զարկեց, և ժողովուրդը սուգ բռնեց, որովհետև Տէրը ժողովրդի մէջ մեծ կոտորած արաւ։ Եւ Բեթսամիւսի 20
մարդիկն ասեցին. Ո՞վ կարող է կանգնել այս սուրբ Աստուած Եհովայի առաջին, և նա ո՞րի մօտ պիտի գնայ մեր մօտիցը։ Եւ 21
Կարիաթարիմի բնակիչների մօտ պատգամաւորներ ուղարկեցին՝ ասելով. Փղշտացիները Տիրոջ տապանակը ետ են բերել. իջէք վեր տարէք նորան ձեզ մօտ։

ԳԼ. Է

Եւ Կարիաթարիմի մարդիկը գը- 1
նացին և վեր տարան Տիրոջ տապանակը. և բերին նորան Աբինադարի տունը՝ բլուրի վերայ. և նորա որդի Եղիազարին որոշեցին որ Տիրոջ տապանակի պահ-

2 պանութիւնն անէ։ Եւ տապա-
նակը Կարիաթարիմ եկած օրից
յետոյ շատ օրեր անցան, և քսան
տարի եղաւ. և Իսրայէլի բոլոր
տունը հառաչեցին Տիրոջ ետևից։
3 Այն ժամանակ Սամուէլն Իս-
րայէլի բոլոր տան հետ խօսեց
ասելով. Եթէ դուք ձեր բոլոր
սրտովը դարձել էք Տիրոջը, ձեր
միջից հեռացրէք օտար աստ-
ուածները և Աստարովթը, և ձեր
սիրտերը պատրաստեցէք Տիրոջ
համար, և միայն նորան պաշտե-
ցէք. և նա կ'ազատէ ձեզ Փղշ-
4 տացիների ձեռքիցը։ Եւ Իսրա-
յէլի որդիքը հեռացրին Բահա-
ղիմն ու Աստարովթը և միայն
5 Տիրոջը պաշտեցին։ Եւ Սամուէլն
ասեց. Բոլոր Իսրայէլին Մասփայ
ժողովեցէք, և ձեզ համար ա-
6 ղօթք անեմ Տիրոջը։ Եւ Մաս-
փայ ժողովուեցան, և ջուր քա-
շեցին և Տիրոջ առաջը թափե-
ցին, և այն օրը ծոմ բռնեցին, և
այնտեղ ասեցին. Տիրոջ դէմ
մեղք գործեցինք։ Եւ Սամուէլը
Մասփայումը Իսրայէլի որդկանց
դատաւորութիւն արաւ։
7 Եւ երբոր Փղշտացիները լսե-
ցին որ Իսրայէլի որդիքը Մասփայ
են ժողովուել, Փղշտացիների
նախարարները վեր ելան Իսրայէ-
լի դէմ. և Իսրայէլի որդիքը լսե-
ցին՝ և Փղշտացիների երեսիցը
8 վախեցան։ Եւ Իսրայէլի որդիքը
Սամուէլին ասեցին. Անդադար
դէպի մեր Տէր Աստուծուն աղա-
ղակիր մեզ համար որ մեզ Փղշ-
9 տացիների ձեռքիցն ազատէ։ Եւ
Սամուէլը մէկ կաթնակեր գառ-
նուկ առաւ, և նորան բոլորովին
ողջակէզ արաւ Տիրոջ. և Սա-
մուէլն Իսրայէլի համար դէպի
Տիրոջն աղաղակեց, և Տէրը նո-
10 րան պատասխանեց։ Եւ երբոր
Սամուէլը մատուցանում էր ող-
ջակէզը, Փղշտացիները մօտեցան
որ Իսրայէլի դէմ պատերազմ
անեն. և Տէրը նոյն օրը Փղշտա-
ցիների վերայ մեծ ձայնով որո-
տաց, և նորանց խռովեցրեց. և
նորանք Իսրայէլի առաջին զար-
11 կուեցան։ Եւ Իսրայէլի մարդիկը
Մասփայից դուրս եկան և Փղշ-
տացիներին հալածեցին, և մինչև
Բեթքովրի տակ նորանց ջարդե-
ցին։ Եւ Սամուէլը մէկ քար ա- 12
ռաւ, և Մասփայի ու Սենի մէջ-
տեղումը կանգնեցրեց, և նորա
անունը *Աբենեզեր կոչեց, ասե-
լով. Տէրը մինչև այստեղը օգնեց
մեզ։ Եւ Փղշտացիները կորա- 13
գլուխ եղան, և այլ ևս չ'եկան
Իսրայէլի սահմանի մէջ. և Սա-
մուէլի բոլոր օրերումը Տիրոջ
ձեռքը Փղշտացիների վերայ էր։
Եւ նորանք Իսրայէլին ետ դար- 14
ձրին այն քաղաքները, որ Փղշ-
տացիները առել էին Ակկարոնից
մինչև Գէթ. և Իսրայէլը նորանց
սահմանները ազատեց Փղշտացի-
ների ձեռքիցը, և Իսրայէլի ու
Ամօրհացիների մէջտեղը խաղա-
ղութիւն էր։
Եւ Սամուէլն իր կեանքի բոլոր 15
օրերումն Իսրայէլի դատաւորն էր։
Եւ տարուց տարի գնում էր Բե- 16
թէլ, Գաղգաղա և Մասփա և
ման էր գալիս բոլոր այն տեղե-
րումը ու դատում Իսրայէլին։
Եւ ետ էր դառնում Ռամա, ո- 17
րովհետև իր տունը այնտեղ էր,
և այնտեղ դատում էր Իսրայէ-
լին. և այնտեղ սեղան շինեց
Տիրոջ համար։

ԳԼ. Ը

Եւ երբոր Սամուէլը ծերացաւ 1
իր որդիներին Իսրայէլի վերայ
դատաւոր դրաւ։ Եւ նորա անդ- 2
րանիկ որդիի անունը Յովէլ, և
երկրորդի անունը Աբիա էր, և
Բերսաբէէումը դատաւորութիւն
էին անում։ Եւ նորա որդիքը չը 3
գնացին նորա ճանապարհների
մէջ, այլ շահասիրութեան ե-
տևից ընկան և կաշառք էին
առնում, և իրաւունքը ծռում
էին։ Եւ Իսրայէլի բոլոր ծերերը 4
ժողովուեցան, և գնացին Ռամա
Սամուէլի մօտ, Եւ նորան ասե- 5
ցին. Ահա դու ծերացել ես, և
քո որդիքը չեն գնում քո ճա-
նապարհների մէջ. արդ մեզ վե-

*Այսինքն՝ Քար օգնութեան

րայ թագաւոր դիր, որ մեզ դա-
տէ ինչպէս որ ամեն ազգերը։
6 Եւ այս բանը Սամուէլի աչքին
վատ երևեցաւ, որ ասեցին թէ՝
մեզ թագաւոր տուր, որ մեզ
դատէ. և Սամուէլն աղօթք ա-
7 րաւ Տիրոջը։ Եւ Տէրը Սամուէ-
լին ասեց. Լսիր ժողովրդի խօս-
քին և այն ամենին որ քեզ ա-
սեցին. որովհետև նորանք ոչ թէ
քեզ են մերժում, այլ ինձ են
մերժում, որ նորանց վերայ չը
8 թագաւորեմ։ Բոլոր այն գործե-
րի պէս որ նորանք արին նորանց
Եգիպտոսից հանած օրիցս մինչև
այս օրը որ ինձ թող տալով
ուրիշ աստուածների ծառայու-
թիւն արին, այնպէս էլ քեզ են
9 անում։ Եւ հիմա դու նորանց
խօսքին լսիր. բայց նորանց յայտ-
նի վկայես և նորանց իմացնես
այն թագաւորի իրաւունքը որ
նորանց վերայ պիտի իշխէ։
10 Եւ Սամուէլը Տիրոջ բոլոր խօս-
քերն ասեց իրանից թագաւոր
11 ուզող ժողովրդին. Եւ ասեց.
Ձեզ վերայ իշխելու թագաւորի
իրաւունքը այս է լինելու. Ձեր
տղերքը կ'առնէ և կ'տանէ իր
համար իր կառքերի և ձիերի վե-
րայ կ'դնէ, որ վազեն իր կառքե-
12 րի առաջից. Եւ իր համար հա-
զարապետներ ու յիսնապետներ
շինէ, և որ նորանք իր արտերը
հերկեն և հունձերը հնձեն, և
նորա պատերազմական զէնքերն
ու կառքերի գործիքները շինեն։
13 Եւ կ'առնէ ձեր աղջկերքը իւղա-
գործ, խոհարար ու հացթուխ
14 կ'չինէ։ Եւ ձեր ընտիր արտերը՝
այգիները և ձիթենիները կ'առնէ
15 և իր ծառաներին կ'տայ։ Եւ ձեր
հունտերիցը և ձեր այգիներիցը
տասանորդ կ'առնէ և իր ներքի-
նիներին և ծառաներին կ'տայ։
16 Եւ ձեր ընտիր ծառաներն ու
աղախինները, և ձեր տղամար-
դերը, և ձեր էշերը կ'առնէ և
17 իր համար կ'գործածէ։ Ձեր հօ-
տերիցը տասանորդ կ'առնէ, և
դուք նորա ծառաները կ'լինէք։
18 Այն օրը դուք ձեր ընտրած թա-
գաւորի երեսիցը կ'աղաղակէք,
բայց Տէրը այն օրը ձեզ պատաս-
խան չի տալ։
Սակայն ժողովուրդը Սամուէլի 19
խօսքին լսել չ'ուզեց, և ասեցին.
Ոչ, անպատճառ մեզ վերայ թա-
գաւոր լինի. Եւ մենք էլ բոլոր 20
ազգերի պէս լինենք. և մեր թա-
գաւորը մեզ դատէ, և նա մեր
առաջին դուրս գայ, և նա պա-
տերազմէ մեր պատերազմները։
Եւ Սամուէլը ժողովրդի բոլոր 21
խօսքերը լսեց և ասեց Տիրոջ ա-
կանջին։ Եւ Տէրը Սամուէլին ա- 22
սեց. Նորանց ձայնին լսիր, և նո-
րանց վերայ թագաւոր դիր։ Այն
ժամանակ Սամուէլն Իսրայէլի
որդկանցն ասեց. Ամեն մարդ իր
քաղաքը գնայ։

ԳԼ. Թ

Եւ Բենիամինիցը մի զօրաւոր 1
մարդ կար անունը Կիս՝ Բենիա-
մինեան Աբիայի որդիի Բեքովրա-
թի որդիի Սերօրի որդիի Աբիէլի
որդին։ Եւ նա մի որդի ունէր, 2
անունը Սաւուղ. ... մի տղա-
մարդ էր և գեղեցիկ, և Իսրա-
յէլի որդկանց մէջ նորանից գե-
ղեցիկ մարդ չ'կար, ուսիցը վեր
բարձր էր նա բոլոր ժողովրդիցը։
Եւ Սաւուղի հօր՝ Կիսի էշերը 3
կորան, և Կիսն իր որդի Սաւու-
ղին ասեց. Երիտասարդների մէ-
կին հետդ առ, և վեր կաց գնա
էշերը որոնիր։ Նա էլ Եփրեմի 4
սարիցն անցաւ և Սաղիսա երկ-
րիցն էլ անցաւ, բայց չ'գտան. և
Սաղիմի երկրիցն անցան, բայց չը
կային. և Բենիամինեանց երկրիցն
անցաւ, բայց չ'գտան։ Երբոր 5
Սուփի երկիրն եկան, Սաւուղն
ասեց իր հետ եղող երիտասար-
դին. Եկ ետ դառնանք, մի գու-
ցէ իմ հայրը դադարէ էշերի մա-
սին և մեզ համար հոգս անէ։
Բայց նա նորան ասեց. Ահա այս 6
քաղաքումը Աստուծոյ մարդ կայ,
և նա մի պատուաւոր մարդ է,
ամեն ինչ որ ասէ՝ անպատճառ
կ'կատարուի. և հիմա այնտեղ
գնանք, գուցէ մեր գնալու ճա-
նապարհը մեզ իմացնէ։ Եւ Սա- 7

ւուղն իր երիտասարդին ասեց. Մենք որ գնում ենք, այն մարդին ինչ տանենք. որովհետև մեր ոտանաւորիցը հացը պակասել է, և մի բնծայ չունենք Աստուծոյ մարդին տանելու. ինչ ունենք
8 մեզ մնաց, եւ երիտասարդը դարձեալ Սաւուղին պատասխանեց և ասեց. Ահա ինձ մնաց մէկ քառորդ սիկղ արծաթ կայ. Աստուծոյ մարդին կ'տամ այն, որ նա մեր ճանապարհը մեզ իմացնէ։
9 (Առաջուց Իսրայէլի մէջ մէկ մարդ՝ երբոր Աստուծուն հարցընելու գնար, այսպէս էր ասում. Եկ տեսանողի մօտ գնանք. որովհետև այսօրուայ մարգարէն առաջուց տեսանող էր ասվում։)
10 Եւ Սաւուղն իր երիտասարդին ասեց. Լաւ ասեցիր, եկ գնանք. և գնացին Աստուծոյ մարդի բը-
11 նակած քաղաքը։ Նորանք քաղաքի զառիվերիցը վեր էին գնում և տեսան աղջկերք, որ դուրս էին եկել ջուր հանելու, և նորանց ասեցին. Տեսանողը այս-
12 տե՞ղ է։ Եւ աղջկերքը նորանց պատասխանելին և ասեցին. Այո, ահա առաջիդ է. հիմա շուտ արա, որովհետև նա այսօր քաղաքն է եկել, նորա համար որ ժողովուրդն այսօր այն բարձր
13 տեղի վերայ զոհ ունի։ Հէնց որ քաղաքը մտաք, իսկոյն նորան այնտեղ կ'գտնէք. քանի որ նա վեր չէ գնացել բարձր տեղը կերակուր ուտելու համար, որովհետև մինչև նորա գալը ժողովուրդը կերակուր չի ուտիլ. որովհետև նա է օրհնում զոհը. նորանից յետոյ հրաւիրուածները ուտում են. հիմա վեր եկէք, որովհետև հիմա կ'գտնէք նորան։
14 Եւ նորանք վեր գնացին քաղաքը. երբոր նորանք քաղաքն էին մտնում, ահա Սամուէլը նորանց դէմ դուրս եկաւ, որ բարձր տեղը գնար։
15 Եւ Տէրը Սամուէլին յայտնել էր Սաւուղի գալուց մի օր ա-
16 ռաջ, Ասելով թէ եղուց այս ժամանակ Բենիամինի երկրիցը քեզ մօտ մէկ մարդ եմ ուղարկելու, և դու նորան իշխան օծես իմ ժողովուրդ Իսրայէլի վերայ, որ իմ ժողովրդին փրկատցնէրի ձեռքիցն ազատէ. որովհետև ժողովրդին նայեցայ, նորա համար որ նորա աղաղակն ինձ հասաւ։ Եւ երբոր Սամուէլը Սաւուղին տեսաւ, Տէրը նորան ասեց. Ահա այն մարդը որի մասին քեզ ասեցի, նա պիտի իշխէ իմ ժողովրդի վերայ։
17
18 Եւ Սաւուղը դուռն մէջտեղը Սամուէլին մօտեցաւ և ասեց. Աղաչում եմ, ինձ ցոյց տուր ո՞ր է տեսանողի տունը։
19 Եւ Սամուէլը պատասխանեց Սաւուղին և ասեց. Տեսանողը ես եմ. վեր եկ առաջս բարձր տեղը, և այսօր ինձ հետ կերակուր կերէք. և էգուց քեզ ճանապարհ կ'դրնեմ, և բոլոր սրտումդ եղածը քեզ կ'պատմեմ։
20 Եւ քո երէկ օրից ի վեր կորած էշերի համար հոգս մի անիր. որովհետև նորանք գտնուել են. բայց Իսրայէլի բոլոր վայելչութիւնը որի՞նն է. չէ՞ որ քեզ և քո հօր բոլոր տան
21 համար է։ Եւ Սաւուղը պատասխանեց և ասեց. Մի թէ ես Իսրայէլի ցեղերի փոքրագունիցը Բենիամինեան չեմ, և իմ աղգատոհմը Բենիամինի ցեղի բոլոր աղգատոհմիների պզտիկը չէ՞. ինչու համար ես ինձ այդպիսի խօսք
22 ասում։ Եւ Սամուէլը առաւ Սաւուղին և նորա երիտասարդին և նորանց ասրաւ սրահը, և նորանց կոչնականների վերևում տեղ տուաւ, և նորանք երեսուն
23 մարդի չափ էին։ Եւ Սամուէլը ասեց խոհարարին. Տուր այն բաժինը, որ ես քեզ տուի, և քեզ ասեցի որ այն քեզ մօտ պահես։
24 Եւ խոհարարը վեր առաւ ազդրը և նորա վերայինը և դրաւ Սաւուղի առաջը։ Եւ Սամուէլը ասեց. Ահա մնացածը առաջդ դիր և կեր. որովհետև նոյն վայրկեանից, երբոր ասեցի թէ ժողովրդին հրաւիրել եմ, քեզ համար պահուած է. և այն օրը Սաւուղը կերաւ Սամուէլի հետ։
25 Եւ նորանք բարձր տեղիցն ի-

ջան քաղաքը, և նա կտուրի վե-
26 րայ խօսեց Սաւուղի հետ։ Եւ առաւօտը կանուխ վեր կացան, և հէնց որ լոյսը ծագեց, Սամուէլը Սաւուղին կանչեց կտուրը և ասեց. Վեր եկ որ քեզ ուղարկեմ։ Եւ Սաւուղը վեր գնաց, և
27 ինքը և Սամուէլը երկուսը մէկտեղ դուրս գնացին։ Երբոր նորանք քաղաքի ծայրն էին իջել, Սամուէլն ասեց Սաւուղին. Ասիր երիտասարդին որ մեզանից առաջ անցնէ. (և նա անցաւ.) և հիմա դու կանգնիր որ Աստուծոյ պատգամը քեզ իմացնեմ։

ԳԼ. Ժ

1 Եւ Սամուէլն առաւ իւղի շիշը, և նորա գլխի վերայ ածեց, և նորան համբուրեց և ասեց. Ահա Տէրը քեզ իր ժառանգութեան
2 վերայ իշխան օծեց։ Այսօր իմ մօտիցը գնալիս Բենիամինի սահմանի վերայ Սելսահի մէջ Ռաքէլի գերեզմանի մօտ երկու մարդ կ'գտնես, և նորանք քեզ կ'ասեն. Գտնուել են այն էշերը որ նորանց որոնելու գնացել էիր. և ահա հայրդ էշերի հոգը թողել է, և ձեզ համար է հոգս անում, և ասում. Տղայիս համար
3 ինչ անեմ։ Եւ երբոր այնտեղից գնաս և Թաբօրի կաղնիին հասնես, այնտեղ քեզ երեք մարդ կ'հանդիպեն որոնք գնում են Բեթէլ Աստուծոյ մօտ, որոնցից մէկը երեք ուլ, մէկը երեք հացի նկանակ և մէկը մի տիկ գինի
4 է տանում. և քո ողջոյնը կ'հարցնեն և քեզ երկու հաց կ'տան. դու էլ նորանց ձեռքիցն
5 առնես։ Նորանից յետոյ կ'գնաս Աստուծոյ բլուրը ուր որ փղշտացիների լերդապահ զօրքն է. և երբոր այնտեղ քաղաքը մտնես, բարձր տեղից իջնող մարգարէների մի դունդ կ'հանդիպես, որոնք իրանց առաջին տաւիղ, թմբուկ, սրինգ և քնար ունեն և որոնք մարգարէութիւն
6 են անում։ Եւ քեզ վերայ կ'գայ Տիրոջ հոգին, և նորանց հետ մարգարէութիւն կ'անես, և դու կ'փոխուիս ուրիշ մարդ։
7 Եւ երբոր այս նշանները քեզ վերայ գան՝ ձեռքիդ կ'կածն անես, որովհետև Աստուած քեզ հետ է։ Եւ ինձանից առաջ
8 գաղգաղա իջնես. և ահա ես քեզ մօտ պիտի իջնեմ ողջակէզներ և խաղաղութեան զոհեր մատուցանելու համար. եօթն օր սպասես մինչև որ ես քեզ մօտ գամ, և ես անելու գործը քեզ իմացնեմ։
9 Եւ երբոր նա իր մէջքը դարձրեց՝ Սամուէլի մօտիցը գնալու համար, Աստուած փոխեց նորան մէկ ուրիշ սիրտ։ Եւ նոյն օրը այս բոլոր նշանները կատարուեցան։ Եւ երբոր եկան այնտեղ
10 բլուրը, ահա մարգարէների մի գունդ նորա առաջը դուրս եկան. և Աստուծոյ Հոգին նորա վերայ եկաւ, և նորանց մէջ մարգարէութիւն արաւ։ Եւ այն ա-
11 մենքը որ նորան առաջուց ճանաչում էին, երբոր տեսան որ նա մարգարէների հետ մարգարէութիւն է անում, այն ժողովուրդն իրար ասեցին. Այս ինչ է եղել Կիսի որդիին. միթէ Սաւուղն էլ մարգարէների մէջ
12 է։ Եւ այնտեղ մարդկանցից մէկը պատասխանեց և ասեց. Ապա նորանց հայրը ո՞վ է։ Նորա համար սա մէկ առակ եղաւ, Միթէ Սաւուղն էլ մարգարէների
13 մէջ է։ Եւ երբոր մարգարէութիւն անելուց դադարեց, բարձր տեղը եկաւ։
14 Եւ Սաւուղի հօրեղբայրը նորան և նորա երիտասարդին ասեց. Ո՞ւր գնացիք։ Եւ նա ասեց. Էշերը որոնելու. և տեսանք որ չէ
15 կան, գնացինք Սամուէլի մօտ։ Եւ Սաւուղի հօրեղբայրն ասեց. Պատմիր ինձ, Սամուէլը ձեզ ինչ
16 ասեց։ Եւ Սաւուղն իր հօրեղբօրն ասեց. Նա մեզ յայտնապէս իմացրեց էշերի գտնուիլը։ Բայց թագաւորութեան մասին Սամուէլի
17 ասած խօսքը նորան չյայտնեց։ Եւ Սամուէլը ժողովրդին ժողովեց Մասփայի մէջ Տիրոջ ա-

18 առջին։ Եւ Իսրայէլի որդկանցն ասեց. Իսրայէլի Տէր Աստուածն այսպէս է ասում. Ես Իսրայէլին Եգիպտոսից հանեցի, և ձեզ Եգիպտացիների ձեռքիցը՝ և ձեզ նեղութիւն տուող բոլոր թագաւորների ձեռքիցն ազատեցի։
19 Եւ դուք այսօր մերժում էք ձեր Աստուծուն, որ ձեր ամէն չարիքներից ու նեղութիւններից ձեզ ազատեց և նորան ասում էք. Անպատճառ մեզ վերայ մէկ թագաւոր դիր։ Եւ հիմա կանգնեցէք ձեր ցեղերով և հազարաւորներով Տիրոջ առաջին։
20 Եւ Սամուէլն Իսրայէլի ամէն ցեղերը ներկայացրեց, և վիճակը Բենիամինի ցեղին ընկաւ։
21 Եւ Բենիամինի ցեղը ներկայացրեց իր ազգատոհմերովը, և վիճակը Մատրիի ազգատոհմին ընկաւ, և Կիսի որդի Սաուղին ընկաւ. և նորան որոնեցին՝ բայց չ'գըտան։
22 Նուեցաւ։ Եւ դարձեալ Տիրոջը հարցրին, թէ Աչդեօք այն մարդը այստեղ կ'գա՞յ. և Տէրն ասեց. Ահա նա թաք է կացել՝ կարասիների մէջ է։ Եւ վազեցին նորան առան այնտեղից, և նա կանգնեց ժողովրդի մէջտեղը։
23 և բարձր էր բոլոր ժողովրդիցը։
24 ուսիցը վեր։ Եւ Սամուէլը բոլոր ժողովրդին ասեց. Տեսա՞ք Տէրը որին է ընտրել. որ բոլոր ժողովրդի մէջ նորա պէսը չ'կայ։ Եւ բոլոր ժողովուրդը աղաղակեց և
25 ասեց. Կեցցէ՛ թագաւորը։ Եւ Սամուէլը թագաւորութեան իրաւունքն ասեց ժողովրդին և գրքի մէջ գրեց և Տիրոջ առաջը դրաւ. և Սամուէլը բոլոր ժողովրդին արձակեց՝ ամէն մարդին
26 իր տունը։ Սաուղն էլ գնաց իր տունը Գաբաա. և նորա հետ գնացին մի խումբ մարդիկ, որոնց սիրտը Աստուած գրգռեց։
27 Բայց չար մարդիկ ասեցին. Սա մեզ ի՞նչ կ'ազատե. և նորան անարգեցին, և նորա համար ընծայ չ'տարին. բայց նա լռեց։

Գլ. ԺԱ

1 Եւ Ամմոնացի Նաասը վեր գընաց, և գազաադի Յաբիսի դէմ բանակ առաւ. և Յաբիսի բոլոր բնակիչները Նաասին ասեցին. Մեզ հետ դաշինք դիր, և մենք քեզ ծառայենք։
2 Բայց Ամմոնացի Նաասը նորանց ասեց. Ձեզ հետ այս պայմանով դաշինք կը դնեմ, որ ձեր ամենի աջ աչքը փորեմ և այս բանը բոլոր Իսրայէլի վերայ նախատինք դնեմ։
3 Եւ Յաբիսի ծերերը նորան ասեցին. Մեզ եօթն օր ժամանակ տուր, որ Իսրայէլի բոլոր սահմանները պատգամաւորներ ուղարկենք, և եթէ մեզ ազատող չ'լինի՝ այն ժամանակ դուրս կը գանք քեզ մօտ։
4 Եւ պատգամաւորները գնացին Սաուղի Գաբաան և այս խօսքերը խօսեցին ժողովրդի ականջներին. և բոլոր ժողովուրդն իրանց ձայնը բարձրացրին և լաց եղան։
5 Եւ ահա Սաուղը գալիս էր եղների հետևից արտիցը. և Սաուղն ասեց. Ժողովրդին ինչ կայ որ լաց է լինում, և Յաբիսի բնակիչների խօսքերը պատմեցին նորան։
6 Եւ Աստուծոյ Հոգին Սաուղի վերայ եկաւ այս խօսքերը լսելիս, և նորա բարկութիւնը շատ բորբոքուեց։
7 Եւ մի զոյգ եղ առաւ և նորանց կտորեց, և պատգամաւորների ձեռքով Իսրայէլի բոլոր սահմաններն ուղարկեց ասելով. Ով որ Սաուղի հետևից և Սամուէլի հետևից չ'գայ, նորա եղներին այսպէս կ'անեն։ Եւ Տիրոջ սարսափն ընկաւ ժողովրդի վերայ, և ամենքը մէկ մարդի պէս դուրս եկան։
8 Եւ Բեզեկի մէջ հանդէս արաւ նորանց. և Իսրայէլի որդիքը երեք հարիւր հազար, և Յուդայի մարդիկը երեսուն հազար էին։
9 Եւ եկող պատգամաւորներին ասեցին. Գաղաադի Յաբիսի բնակիչներին այսպէս ասէք. Իգուց արեգակը տաքանալիս ձեզ համար ազատութիւն է լինելու։ Եւ պատգամաւորները գընացին և Յաբիսի բնակիչներին իմացրին, և նորանք ուրախացան։
10 Եւ Յաբիսի բնակիչներն ասեցին

Ամմոնացիներին. Իգուց ձեզ մօտ դուրս կ'գանք. և ձեր աչքերին ինչ որ հաճելի լինի այն արէք
11 մեզ։ Եւ հետևեալ օրը Սաուղը ժողովրդին երեք գունդի բաժանեց, և առաւօտան պահին բանակը մտան, և մինչև որ օրը տաքացաւ՝ Ամմոնացիներին զարկեցին. և մնացածները այնպէս ցրուեցան որ նորանցից երկու մարդ միասին չ'մնաց։
12 Եւ ժողովուրդն ասեց Սամուէլին. Ո՞վ էր այն ասողը թէ Սաուղը մեր վերայ թագաւոր լինի. տուէք այն մարդիկը որ մեռցնենք։
13 Եւ Սաուղն ասեց. Այսօր մի մարդ չ'մեռցնուի, որովհետև այսօր Տէրը Իսրայէլի համար փրկութիւն արաւ։
14 Եւ Սամուէլը ժողովրդին ասեց. Եկէք գնանք Գաղգաղա, և թագաւորութիւնը այնտեղ նորոգենք։
15 Եւ բոլոր ժողովուրդը Գաղգաղա գնացին, և այնտեղ Գաղգաղայում Տիրոջ առաջին Սաուղին թագաւոր արին, և այնտեղ խաղաղութեան զոհեր մատուցին. և Սաուղը և բոլոր Իսրայէլի մարդիկը այնտեղ մեծ ուրախութիւն արին։

Գլ. ԺԲ

1 Եւ Սամուէլը բոլոր Իսրայէլին ասեց. Ահա ես ձեր ձայնին լսեցի այն բոլոր բաներում որ դուք ինձ ասեցիք. ու ձեզ վերայ թագաւոր դրի։
2 Եւ ահա հիմա ձեր առաջից թագաւորը կ'գնայ. բայց ես ծերացել եմ և մազերս սպիտակել են. և ահա իմ որդիքը ձեզ հետ են. և ես իմ մանկութիւնից մինչև այս օրը ձեր առաջին գնացի։
3 Ահա ես. Տիրոջ առաջին և նորա օծեալի առաջին ինձ համար յայտնապես ասեցէք. Թէ ես որի՞ եզն եմ առել, ու որի՞ էշն եմ առել, և որի՞ն եմ զրկանք կամ անիրաւութիւն արել, և որի՞ ձեռքից կաշառք առել, և նորանով իմ աչքերը կուրացրել. ու ես ձեզ
4 դարձնեմ։ Եւ ասեցին. Մեզ զրկանք կամ անիրաւութիւն չես արել, և ոչ մի մարդի ձեռքից մի բան չես առել։
5 Եւ նա ասեց նորանց. Տէրը և նորա օծեալը ձեզ վկայ լինեն այս օրը, որ դուք իմ ձեռքումս մի բան չը գտաք։ Եւ ասեցին. Վկայ լինեն։
6 Եւ Սամուէլը ժողովրդին ասեց. Եհովան որ Մովսէսին և Ահարոնին ընտրեց, և ձեր հայրերին Եգիպտոսի երկրիցը հանեց վե՞ր է։
7 Եւ հիմա կանգնեցէք, և ես ձեզ հետ դատ տեսնեմ Տիրոջ առաջին այն բոլոր արդարութիւնների մասին՝ որ Տէրը ձեզ և ձեր հայրերին արաւ։
8 Երբոր Յակոբը գնաց Եգիպտոս, և ձեր հայրերը աղաղակեցին Տիրոջը, և Տէրը ուղարկեց Մովսէսին և Ահարոնին, որ ձեր հայրերը դուրս հանեցին Եգիպտոսիցը, և նորանց այստեղ բնակեցրին։
9 Բայց նորանք մոռացան իրանց Տէր Աստուածն. և նա էլ Հասորի զօրագլուխ՝ Սիսարայի ձեռքը և փղշտացիների ձեռքը և Մովաբի թագաւորի ձեռքը մատնեց նորանց, և նորանք պատերազմ արին նորանց հետ։
10 Եւ նորանք Տիրոջը աղաղակեցին և ասեցին. Մենք մեղք գործեցինք, որ Տիրոջը թողեցինք, և Բահաղիմին ու Աստարովթին ծառայութիւն արինք. և հիմա ազատիր մեզ մեր թշնամիների ձեռքիցը և քեզ կ'ծառայենք։
11 Եւ Տէրն ուղարկեց Յերոբաաղին, Բեդանին, Յեփթայէին և Սամուէլին, և ձեզ ազատեց ձեր շրջակայ թշնամիների ձեռքիցը և ապահով բնակեցաք։
12 Եւ երբոր տեսաք որ Ամմոնացիների թագաւորը՝ Նաասը ձեզ վերայ է գալիս, ինձ ասեցիք. Ոչ, անպատճառ մեզ վերայ մի թագաւոր լինի. թէև ձեր թագաւորը Եհովայ Աստուածն էր։
13 Եւ հիմա ահա այն թագաւորը, որ ընտրեցիք և ուղեցիք. և ահա Տէրը ձեզ վերայ մի թագաւոր դրաւ։
14 Եթէ Տէրից վախենաք և նորան ծառայութիւն անէք, և նորա ձայնին լսէք, և Տիրոջ խօսքի դէմ չ'կե-

նաք, այն ժամանակ թէ դուք
և թէ ձեր թագաւորը՝ որ թա-
գաւորում է ձեզ վերայ, ձեր
Տէր Աստուծոյ ետևից ապահով կը
15 լինէք։ Բայց եթէ Տիրոջ ձայնին
չ՚լսէք, և Տիրոջ հրամանի դէմ
կենաք, այն ժամանակ Տիրոջ
ձեռքը ձեզ վերայ և ձեր հայ-
16 րերի վերայ կ՚լինի։ Եւ հիմա
կանգնեցէք և տեսէք այն մեծ
բանը՝ որ Տէրն անում է ձեր աչ-
17 քերի առաջին։ Այսօր ցորենի
հունձի ժամանակը չէ՞. ես Տի-
րոջը կ՚աղաղակեմ, և նա որո-
տում և անձրև կ՚տայ, որ հաս-
կանաք և տեսնէք թէ մեծ է ձեր
չարութիւնը որ արիք Տիրոջ ա-
ռաջին ձեզ համար թագաւոր
ուզելով։
18 Այն ժամանակ Սամուէլը Տի-
րոջն աղաղակեց, և Տէրը նոյն օ-
րը որոտում և անձրև տուաւ.
և բոլոր ժողովուրդը շատ վախե-
19 ցաւ Տէրիցը և Սամուէլիցը։ Եւ
բոլոր ժողովուրդը Սամուէլին ա-
սեց. Քո Տէր Աստուծուն աղօթք
արա քո ծառաների համար որ
չ՚մեռնենք. որովհետև մեր ամեն
մեղքերի վերայ այս չարութիւնն
էլ աւելացրինք, որ մեզ համար
20 թագաւոր ուզեցինք։ Եւ Սա-
մուէլը ժողովրդին ասեց. Մի վա-
խենաք. դուք այս բոլոր չարու-
թիւնը արիք, սակայն Տէրիցը մի
խոտորուիք, և ձեր բոլոր սիր-
21 տովը Տիրոջը ծառայեցէք։ Եւ
մի խոտորուիք. որովհետև ոչինչ
բաների ետևից կ՚լինեք ֆնացած,
որոնք օգուտ չեն և չեն կարող
ազատել, որովհետև նորանք ոչ-
22 ինչ են։ Նորա համար որ Տէրը
իր մեծ անունի համար՝ իր ժողո-
վրդին չի թողիլ, որովհետև
Տէրն ուզեց որ ձեզ իր համար
23 ժողովուրդ անէ։ Բայց ես՝ քաւ
լիցի, որ Տիրոջ դէմ մեղք գոր-
ծեմ, ձեզ համար աղօթք անե-
լուց դադարելով, այլ ես ձեզ
կ՚սովորեցնեմ բարի և ուղիղ ճա-
24 նապարհը։ Միայն թէ Տէրիցը
վախեցէք, և ճշմարտութեամբ
— ձեր բոլոր սիրտովը նորան ծա-
ռայեցէք. որովհետև տեսաք որ
նա ձեզ համար ինչ մեծ բաներ
արաւ։ Իսկ եթէ չարութիւն ա- 25
նէք, դուք էլ ձեր թագաւորն
էլ կ՚կորչէք։

ԳԼ. ԺԳ

Սաւուղը մէկ տարուայ թագա- 1
ւոր էր. և երբոր Իսրայէլի վերայ
երկու տարի թագաւորութիւն
էր արել, Սաւուղն Իսրայէլից ե- 2
րեք հազար մարդ ընտրեց իր հա-
մար. երկու հազարը Սաւուղի
հետ Մաքմաս ու Բեթէլի սա-
րումն էին, և հազարը Յովնա-
թանի հետ Բենիամինի Գաբա-
այումն էր. և մնացած ժողովրդ-
ին ուղարկեց ամեն մարդին իր
վրանը։
Եւ Յովնաթանը զարկեց Գա- 3
բաայի մէջ եղող Փղշտացիների
պահապան զօրքերին. և Փղշտա-
ցիները լսեցին։ Եւ Սաւուղը բո-
լոր երկրի մէջ փող հնչեցնել
տուաւ, ասելով. Եբրայեցիները
թող լսեն։ Եւ բոլոր Իսրայէլը 4
լսեց, որ Սաւուղը Փղշտացիների
պահապան զօրքերին զարկեց, և
Իսրայէլը Փղշտացիների առաջին
ատելի եղաւ. և ժողովուրդը ժո-
ղովուեցան Գաղգաղայի մէջ Սա- 5
ւուղի մօտ։ Եւ Փղշտացիներն էլ
ժողովուեցան Իսրայէլի դէմ պա-
տերազմ անելու. երեսուն հա-
զար կառք և վեց հազար ձիա-
ւոր, և ժողովուրդը ծովի եզեր-
քի աւազի չափ շատ էր. և վեր
եկան՝ և Բեթաւանի արևելեան
կողմումը Մաքմասի մէջ բանակ 6
տուին։ Եւ Իսրայէլի որդիքը
տեսան որ նեղութեան մէջ էին,
և որ ժողովուրդը տագնապուած
է, և թաք կացան այրերում,
թուփերում, ժայռերում, աշ- 7
տարակներում և փոսերում։ Եւ
Եբրայեցիները Յորդանանովն ան-
ցան Գադի ու Գաղաադի երկի-
րը. բայց Սաւուղը դեռ Գաղ-
գաղայի մէջ էր. և բոլոր ժողո-
վուրդը դողալով նորան հետե-
ւում էին։
Եւ նա Սամուէլի որոշած ժա- 8
մանակի չափ եօթն օր սպասեց,

բայց Սամուէլը Գաղգաղա չ՚ե-
կաւ, և ժողովուրդը նորա մօտից
9 ցրուեցաւ։ Եւ Սաւուղն ասեց.
Ողջակէզը և խաղաղութեան զո-
հը ինձ մօտ բերէք. և ինքը մա-
10 տուցրեց ողջակէզը։ Եւ երբոր
նա ողջակէզը մատուցանելը վեր-
ջացրեց, այն ժամանակ Սամուէ-
լը եկաւ. և Սաւուղը դուրս ե-
կաւ նորան դիմաւորելու որ նո-
11 րան բարևէ։ Եւ Սամուէլն ա-
սեց. Ի՞նչ ես արել։ Եւ Սա-
ւուղն ասեց. Տեսայ որ ժողո-
վուրդն իմ մօտիցը ցրվում է, և
դու ոչ որոշած օրերիդ չ՚եկար.
և Փղշտացիները ժողովուած են
12 Մաքմասի մէջ։ Այն ժամանակ
ասեցի. Փղշտացիները հիմա ինձ
վերայ կ՚իջնեն Գաղգաղա, և ես
դեռ Տիրոջ առաջին աղօթք
չեմ արել. և ես ինձ ստիպելով
13 ողջակէզը մատուցրի։ Եւ Սա-
մուէլն ասեց Սաւուղին. Դու
յիմարութիւն արիր, չ՚պահեցիր
քո Տէր Աստուծոյ պատուիրանքը,
որ նա քեզ պատուիրել է. որով-
հետև հիմա Տէրը քո թագաւո-
րութիւնը Իսրայէլի վերայ մինչև
14 յաւիտեան կ՚հաստատէր։ Բայց
հիմա քո թագաւորութիւնը հաս-
տատ չէ լինելու։ Տէրն իր համար
իր սրտի համեմատ մի մարդ է
ուզում, որին իշխան նշանակէ
Տէրը իր ժողովրդի վերայ. որով-
հետև դու չ՚պահեցիր ինչ որ
Տէրը քեզ պատուիրել էր։
15 Եւ Սամուէլը վեր կացաւ, և
Գաղգաղայից Բենիամինի Գաբա-
ան գնաց։ Եւ Սաւուղն իր մօտ
գտնուող ժողովուրդը համարեց,
և վեց հարիւրի չափ մարդ էին։
16 Եւ Սաւուղը և նորա որդի Յով-
նաթանը և նորանց հետ գտնուող
մարդիկը Բենիամինի Գաբաայումն
էին բնակվում. և Փղշտացիների
բանակը Մաքմասի մէջ էր։
17 Եւ Փղշտացիների բանակից ե-
րեք գունդ աւարառու դուրս
եկաւ. գունդի մէկը դարձաւ
դէպի Եփրայի ճանապարհը Սաւ-
18 ուղի երկիրը. Եւ գունդի մէկը
դարձաւ դէպի Բեթորոնի ճանա-
պարհը, և գունդի մէկն էլ
դարձաւ դէպի անապատը, որ
դէպի Սեբոյիմի հովիտն է նայում
սահմանի ճանապարհին։
Եւ Իսրայէլի բոլոր երկրումը 19
մէկ դարբին չէր գտնվում, որով-
հետև Փղշտացիները ասել էին
թէ Մի գուցէ Եբրայեցիները
սուր ու նիզակ շինեն։ Եւ բոլոր 20
Իսրայէլացիները իջնում էին Փղ-
շտացիների մօտ՝ ամեն մէկն իր
բրիչը, խոփը, տապարը և բահը
սրելու համար։ Երբոր լինում էր 21
որ բրիչների, խոփերի, եռաժա-
նի գործիքների և տապարների
բերանը կոտրվում էր, խթաններ-
ը սրելու համար խարտոց ու-
նէին։ Եւ այնպէս եղաւ որ պա- 22
տերազմի օրը՝ Սաւուղի և Յովնա-
թանի հետ եղող բոլոր ժողովրդ-
ի ձեռքին սուր կամ նիզակ չէր
գտնվում. միայն Սաւուղի և նո-
րա որդի Յովնաթանի մօտ էր
գտնվում։
Եւ Փղշտացիների պահապան 23
զօրքը վեր գնացին Մաքմասի
կիրճը։

ԳԼ. ԺԴ

Եւ եղաւ որ մէկ օր Սաւուղի 1
որդի Յովնաթանն իր զէնքերը կը-
րող պատանիին ասեց. Եկ, անց-
նենք Փղշտացիների պահապան
զօրքի մօտ որ այն կողմին է. բայց
իր հօրը չ՚իմացրեց։ Եւ Սաւուղը 2
նստել էր Գաբաայի գլխին, Մագ-
րոնի մէջ եղող նռնենիի տակին,
և նորա հետ եղող ժողովուրդը
վեց հարիւր մարդի չափ էր։ Եւ 3
Հեղիի որդիի Փենէհէսի որդիի
Իքաբօդի եղբայր Աքիտովբի որ-
դի Աքիան Սելովումը Տիրոջ քա-
հանան էր, որ եփուդ էր հագ-
նում, և ժողովուրդը չ՚գիտէր
թէ Յովնաթանը գնաց։ Եւ այն 4
կիրճերումը, որոնցով Յովնա-
թանն ուզում էր Փղշտացիների
պահապան զօրքի մօտ անցնել,
մէկ կողմանէ քարաժայռ և միւս
կողմանէ մէկ ուրիշ քարաժայռ
կար, որոնց մէկի անունը Բազէս
և միւսի անունը Սենա էր։ Այս 5
քարաժայռները մէկը հիւսիսային

կողմին Մաքմասի դէմ ցցուած
էր. և միւսը հարաւային կողմին
6 Գաբաայի դէմ։ Եւ Յոնաթանն
իր զէնքերը կրող պատանիին ա-
սաց. Եկ այս անթլփատների պա-
հապան զօրքի մօտն անցնենք,
կարելի է Տէրը մեզ համար գ-
բաւ անէ. որովհետև Տիրոջ հա-
մար արգելք չ'կայ որ շատով
7 կամ քիչով ազատէ։ Եւ իր զէն-
քերը կրողը նորան ասաց. Ըստ
քո սրտի մէջ եղածն արա. ա-
ռաջ գնա. ահա ես քեզ հետ
8 եմ քո ուղածի պէս։ Եւ Յով-
նաթանն ասաց. Հիմա մենք անց-
նենք մեզ այն մարդկանց մօտ.
9 Թող նորանց երևանք։ Եթէ մեզ
այսպէս ասեն. Կանգնեցէք մին-
չև որ մենք ձեզ մօտ դանք, այն
ժամանակ մեր տեղը կանգնենք
և վեր չ'ելնենք նորանց մօտ։
10 Բայց եթէ այսպէս ասեն. Վեր
եկէք մեզ մօտ, այն ժամանակ
ելնենք, որովհետև Տէրը նորանց
մեր ձեռքն է տուել. և այս մեզ
11 համար նշան լինի։ Եւ երբոր նո-
րանք երկուսով փղշտացիների պա-
հապան զօրքին երևեցան, փղշ-
տացիները ասեցին. Ահա եբրա-
յեցիները դուրս են գալիս իրանց
12 թաք կացած ծակերիցը։ Եւ պա-
հապան զօրքերը Յոնաթանին և
նորա զէնքերը կրողին ասացին
խանեցին և ասեցին. Վեր եկէք
մեզ մօտ, և մենք ձեզ մի բան
իմացնենք. և Յոնաթանն իր
զէնքերը կրողին ասաց. Իմ ետե-
ւից վեր ելիր, որովհետև Տէրը
նորանց Իսրայէլի ձեռքն է տուել։
13 Եւ Յոնաթանը ձեռքերովը և
ոտքերովը վեր ելաւ, և նորա
զէնքերը կրողն էլ նորա ետևիցը.
և նորանք ընկնում էին Յոնա-
թանի առաջը. նորա զէնքերը
կրողն էլ նորա ետևից էր մեռ-
14 ցնում։ Եւ Յոնաթանն ու նորա
զէնքերը կրողը այս առաջին կո-
տորածի մէջ քսան մարդի չափ
մեռցրին կէս լծավարի չափ գետ-
15 նի վերայ։ Եւ բանակումը դաշ-
տի մէջ և բոլոր ժողովրդի մէջ
խռովութիւն եղաւ. պահապան
զօրքերը և աւարառուները էլ
զարհուրեցին, և երկիրը դողաց
և վախը Աստուածանից էր։
16 Եւ Սաուղի դէտերը Բենիա-
մինի Գաբաայից տեսան, որ ահա
այն բազմութիւնը հալվում էր,
17 և գնալով ցրվում էր։ Եւ Սա-
ուղն ասեց իր հետ եղող ժողո-
վրդին. Նայեցէք, և տեսէք,
ո՞վ է գնացել մեզանից. և նա-
յեցին, և ահա Յոնաթանն ու
նորա զէնքերը կրողը չ'կար։ Այն
18 ժամանակ Սաուղն Աքիային ա-
սաց. Աստուծոյ տապանակը մո-
տեցրու, որովհետև այն ժամա-
նակ Աստուծոյ տապանակը Իս-
րայէլի որդկանց հետ էր։
19 Երբոր Սաուղը դեռ քահանային
հետ խօսում էր, փղշտացիների
բանակի միջի աղմուկը գնալով
շատանում էր. և Սաուղն ա-
սաց քահանային. Ձեռքդ քա-
շիր։ Եւ Սաուղը և իր հետը ե-
20 ղող բոլոր ժողովուրդը մէկտեղ
ժողովուեցան և գնացին մինչև
պատերազմը, և ահա ամեն մար-
դի սուրը իր ընկերի դէմ էր, և
21 շատ մեծ խռովութիւն կար։ Եւ
այն եբրայեցիները որ առաջուց
փղշտացիների հետ էին, և որ
շրջակայ երկիրներիցը նորանց հետ
բանակ էին վեր եկել, նորանք
էլ Սաուղի և Յոնաթանի հետ
եղող Իսրայէլի հետ միացան։
22 Եւ Իսրայէլի բոլոր մարդիկը, որ
Եփրեմի սարումը թաք էին կա-
ցել, լսեցին փղշտացիների փախ-
չիլը, և նորանք էլ նորանց ետևի-
23 ցից պատերազմը մտան։ Եւ այն
օրը Տէրը ազատեց Իսրայէլին, և
պատերազմը անցաւ Բեթաւեան։
24 Եւ այն օրը Իսրայէլի մարդիկը
տաղնապուեցան, որովհետև Սա-
ուղը ժողովրդին երդում էր ա-
նել տուել ասելով. Անիծեալ
լինի այն մարդը որ մինչև իրիկուն
հաց ուտէ, որպէս զի իմ թշնա-
միներիցը վրէժ առնեմ. և բո-
լոր ժողովուրդը ընդհանրապէս
25 դրաւ։ Եւ բոլոր *ժողովուրդը
մի անտառի մէջ մտաւ, և գետ-
նի երեսի վերայ մեղր կար։ Եւ
26

*կամ՝ երկիրը

երբոր ժողովուրդն անտառը մը-
տաւ, ահա մեղր էր ծորում.
բայց ձեռքը բերանին մօտեցնող
չ'կար, որովհետև ժողովուրդը
27 երդումիցը վախեցաւ։ Բայց Յով-
նաթանը չէր լսել, երբոր իր հայ-
րը ժողովրդին երդում էր անել
տուել. և իր ձեռքի գաւազանի
ծայրը մեկնեց, մեղրի խորիսխի
մէջ կոխեց այն և իր ձեռքը բե-
րանը տարաւ, և նորա աչքերը
28 բացուեցան։ Այն ժամանակ ժո-
ղովրդից մէկը պատասխանեց և
ասեց. Հայրդ ժողովրդին մեծ եր-
դում անել տուաւ, ասելով.
Անիծեալ լինի այն մարդը որ
29 այսօր հաց ուտէ։ Եւ ժողովուր-
դը նուաղած էր։ Եւ Յոնաթանն
ասեց. Հայրս ժողովրդին նեղու-
թեան մէջ է գցել. նայեցէք,
աչքերս լոյս ստացան երբոր այս
30 մեղրիցը մի քիչ կերայ։ Բայց
որչափ աւելի՝ եթէ ժողո-
վուրդը ուտէր այսօր իր թշնամի-
ներից գտած աւարը, որովհետև
հիմա փղշտացիների մէջ մեծ կո-
31 տորած չ'եղաւ։ Եւ այն օրը փ-
ղշտացիներին զարկեցին Մաքմա-
սից մինչև Այեղոն. և ժողովուր-
32 դը նուաղեցաւ։ Եւ ժողովուրդը
աւարի վերայ յարձակուեցաւ, և
ոչխարները, արջառները և հոր-
թերը առան, և գետնի վերայ
մորթեցին, և ժողովուրդը արիւ-
33 նովը կերաւ։ Եւ Սաուղին ի-
մացրին և ասեցին. Ահա ժողո-
վուրդը Տիրոջ դէմ մեղանչում
է, որովհետև արիւնովն է ու-
տում։ Եւ նա ասեց. Անօրէնու-
թիւն արիք. հիմա ինձ համար
34 մէկ մեծ քար գլորեցէք։ Եւ Սա-
ուղն ասեց. Ժողովրդի մէջ ցըր-
ուեցէք և նորանց ասեցէք. Ամեն
մարդ իր արջառը և իր ոչխարը
ինձ մօտ բերէ, և այստեղ մոր-
թեցէք և կերէք, և արիւնով
ուտելով՝ Տիրոջ դէմ մեղք մի
գործէք։ Եւ բոլոր ժողովուրդը
ամեն մարդ այն գիշեր իր արջա-
ռը իր ձեռքովը մօտեցրեց և այն-
35 տեղ մորթեց։ Եւ Սաուղը Տի-
րոջ համար սեղան շինեց. այս էր
սկզբի սեղանը որ նա շինեց Տի-
րոջ համար։ Եւ Սաուղն ասեց. 36
Գիշերով փղշտացիների ետևից
իջնենք, և մինչև առաւօտը լոյս
անալը նորանց կողոպտենք և նո-
րանցից մի մարդ չ'թողնենք. և
նորանք ասացին. Ինչ որ հաճոյ է, այն արա։ Եւ քա-
հանան ասեց. Այստեղ Աստու-
ծուն մտածենք։ Եւ Սաուղն 37
Աստուծուն հարցրեց՝ թէ փղշ-
տացիների ետևից իջնե՞մ, նո-
րանց խորայէլի ձեռքը կ'տա՞ս։
Բայց նա այն օրը չ'պատասխանեց
նորան։ Այն ժամանակ Սաուղն 38
ասեց. Մօտեցէք այստեղ, ժո-
ղովրդի բոլոր իշխաններ, և հա-
կացէք և տեսէք թէ այսօր այս
մեղքը որիշն է։ Որովհետև Ի- 39
սրայէլն ազատող Տէրը կենդանի
է, որ թէև իմ որդի Յովնաթա-
նինն էլ լինի, անպատճառ պի-
տի մեռնէ. և բոլոր ժողովրդի
մէջ նորան պատասխանող չ'կար։
Այն ժամանակ բոլոր Իսրայէլին 40
ասեց. Դուք մէկ կողմը կանգ-
նեցէք, և ես ու իմ որդի Յովնա-
թանը միւս կողմը կանգնենք. և
ժողովուրդը Սաուղին ասեց.
Աչքերիդ հաճոյ եղածն արա։
Եւ Սաուղն Իսրայէլի Տէր Ա- 41
ստուծուն ասեց. Ցոյց տուր ճըշ-
մարիտը. և Յովնաթանն ու Սա-
ուղը բռնուեցան վիճակով, և ժո-
ղովուրդն ազատ մնաց։ Եւ Սա- 42
ուղն ասեց. Ինձ վերայ ու իմ
որդի Յովնաթանի վերայ վիճակ
գցեցէք, և Յովնաթանը բռնուե-
ցաւ։ Եւ Սաուղը Յովնաթանին 43
ասեց. Ինձ յայտնիր թէ ինչ ես
արել. և Յովնաթանը նորան
յայտնեց և ասեց. Ձեռքիս գա-
ւազանի ծայրովը մի քիչ մեղր
եմ կերել. ահա ես պէտք է
մեռնեմ։ Եւ Սաուղն ասեց. 44
Աստուած այսպէս և սորանից ա-
ւելի անէ՝ որ անպատճառ պիտի
մեռնես, Յովնաթան։ Բայց ժո- 45
ղովուրդը Սաուղին ասեց. Յով-
նաթանը մեռնէ, որ այսօր Իս-
րայէլի մէջ արաւ այս մեծ փըր-
կութիւնը. քաւ լինի. կենդանի
է Տէրը որ նորա գլխի մէկ մազը
գետինը պիտի չ'ընկնէ, որովհե-

տև այսօր Աստուծով գործեց։
Այսպէս ժողովուրդը Յովնաթա-
նին ազատեց, և նա չ՚մեռաւ։
46 Եւ Սաւուղը Փղշտացիներից ետ
դառաւ, և Փղշտացիները գնա-
ցին իրանց տեղը։
47 Եւ Սաւուղն սկսեց Իսրայէլի
վերայ թագաւորել. և բոլոր շրը-
ջակայ թշնամիների հետ՝ այսինքն
Մովաբի հետ և Ամմոնի որդկանց
հետ, Եդովմի հետ, Սուբայի
թագաւորների հետ, և Փղշտա-
ցիների հետ պատերազմ արաւ.
և ամեն ուր որ դառնում էր՝
48 յաղթութիւն էր անում։ Եւ
*քաջութիւն արաւ և Ամաղէկին
զարկեց, և ազատեց Իսրայէլին
իր կողոպտիչների ձեռքիցը։
49 Եւ Սաւուղի որդիքն էին Յով-
նաթան, Յեսուի և Մեղքիսաւէ,
և նորա երկու աղջկերանց ա-
նունները՝ առաջինի անունը Մե-
րովբ, և փոքրի անունը Մեղ-
50 քող էր։ Եւ Սաւուղի կնկայ ա-
նունը Աքինոամ էր՝ Աքիմասի
աղջիկը. և նորա զօրավարի ա-
նունը Աբեններ էր՝ Սաւուղի հօր-
51 եղբայր՝ Ների որդին։ Եւ Կիսը՝
Սաւուղի հայրը, և Աբենների
հայրը Ները՝ Աբիէլի որդիքն էին։
52 Եւ Սաւուղի բոլոր օրերումը Փը-
ղշտացիների դէմ սաստիկ պա-
տերազմ կար. և Սաւուղն ամեն
տեսած զօրաւոր մարդին և ա-
մեն ուժի տէր եղողին իր մօտն
էր ժողովում։

ԳԼ. ԺԵ

1 Եւ Սամուէլն ասեց Սաւուղին.
Տէրն ինձ ուղարկեց քեզ իր Իս-
րայէլ ժողովրդի վերայ թագա-
ւոր օծելու, և հիմա Տիրոջ խօս-
2 քերի ձայնը լսիր։ Զօրաց Տէրն
այսպէս է ասում. Ես յիշում
եմ ինչ որ Ամաղէկն արաւ Իս-
րայէլին, որ նորա ճանապարհը
կտրեց երբոր նա դուրս էր եկել
3 Եգիպտոսիցը։ Հիմա գնա և Ա-
մաղէկին զարկ, և նորա բոլոր
ունեցածը նզովեցէք, և նորան
չ՚խնայես. և մեռցնես մարդից
մինչև կինը, և երեխայից մինչև
կաթնակերը, արջառից մինչև ոչ-
խարը, և ուղտից մինչև էշը։
Եւ Սաւուղը ժողովրդին կան- 4
չեց, և Տեղայիմի մէջ նորանց
հանդէս արաւ, որ երկու հա-
րիւր հազար հետևակ զօրք էին,
և Յուդայեանք էլ տասը հազար։
Եւ Սաւուղը գնաց մինչև Ամա- 5
ղեկացիների մէկ քաղաքը, և
հեղեղատի մէջ դարանակալ ե-
ղաւ։ Եւ Սաւուղը Կենեցիներին 6
ասեց. Գնացէք, բաժանուեցէք
և Ամաղեկացիների միջիցն իջէք.
մի գուցէ ձեզ նորանց հետ մէկ-
տեղ փչացնեմ. որովհետև դուք
բոլոր Իսրայէլի որդկանց ողորմու-
թիւն արիք՝ երբոր նորանք Ե-
գիպտոսիցը դուրս էին գալիս։ Եւ
Կենեցիները Ամաղեկացիների մի- 7
ջից բաժանուեցան. Եւ Սաւու-
ղը զարկեց Ամաղէկին Եւիլայից
մինչև Եգիպտոսի դիմացի Սուրը։
Եւ Ամաղէկի թագաւոր՝ Ագա- 8
գին ողջ բռնեց, և բոլոր ժողո-
վրդին սուրի բերանով †բնաջինջ
արաւ։ Բայց Սաւուղը և ժողո- 9
վուրդը խնայեցին Ագագին, և
ոչխարներին և արջառների լաւե-
րին և գէրերին, և դառներին,
և ամեն պատուական բաներին,
և չ՚ուզեցին նորանց ‡բնաջինջ
անել, այլ ‖բնաջինջ արին բոլոր
անարգ և անպիտան անասունները։
Եւ Տիրոջ խօսքը Սամուէլին ե- 10
ղաւ՝ ասելով. Զղջացի որ Սա- 11
ւուղին թագաւոր եմ արել. ո-
րովհետև ինձանից ետ դառաւ,
և իմ խօսքերը չ՚կատարեց։ Եւ
Սամուէլը տրտմեց, ու բոլոր գի- 12
շերը Տիրոջն աղաղակեց։ Եւ
Սամուէլն առաւօտը կանուխ վեր
կացաւ, որ Սաւուղին դիմաւո-
րէ. և Սամուէլին իմացում տըր-
ուեցաւ ասելով՝ Սաւուղը եկել
է Կարմեղոս. և ահա իր համար
յաղթութեան կոթող կանգնե-
ցրեց, և այնտեղից դառնալով
անցաւ, և իջաւ Գաղգաղա։

*Կամ՝ զօրք ժողովեց

†Կամ՝ նզովեց։
‡Կամ՝ նզովել, ‖Կամ՝ նզովեցին

13 Եւ Սամուէլը Սաւուղի մօտ
գնաց. և Սաւուղը նորան ասեց.
Տէրիցն օրհնեալ լինես. Տիրոջ
14 խօսքը կատարեցի։ Եւ Սամուէլն
ասեց. Ապա այս ոչխարների ձայ-
նը ի՞նչ է որ գալիս է ականջիս,
և արջառների ձա՞յնը՝ որ ես լը-
15 սում եմ։ Եւ Սաւուղն ասեց.
Ամաղեկացիներիցը բերին նորանց,
որովհետև ժողովուրդը խնայեց
լաւ ոչխարներին և արջառներին,
որ նորանց քո Տէր Աստուծուն
զոհ մատուցանեն. իսկ միւսնե-
16 րին *փչացրինք։ Այն ժամանակ
Սամուէլն ասեց Սաւուղին. Ապա-
սիր որ պատմեմ ինչ որ Տէրը այս
գիշեր ինձ հետ խօսեց։ Եւ նա
17 նորան ասեց. Խօսիր։ Եւ Սա-
մուէլն ասեց. Ահա դու որ քո
աչքերին փոքր էիր երևում, Իս-
րայէլի որդկանց ցեղերին գլուխ
եղար, և Տէրը քեզ Իսրայէլի
18 վերայ թագաւոր օծեց։ Եւ Տէ-
րը քեզ մէկ ճանապարհով ու-
ղարկեց ասելով. Գնա, և այն
մեղաւոր Ամաղեկացիներին նզո-
վիր, և նորանց դէմ պատերազ-
միր, մինչև որ նորանց բնաջինջ
19 անես։ Եւ ի՞նչու համար չ՚լսեցիր
Տիրոջ ձայնին, և աւարի վերայ
յարձակուելով Տիրոջ առաջին
20 չարութիւն արիր։ Եւ Սաւուղն
ասեց Սամուէլին թէ Տիրոջ ձայ-
նին լսեցի, և Տէրն ինձ որ ճա-
նապարհովը որ ուղարկեց՝ այն
ճանապարհովը գնացի, և Ամա-
ղէկի թագաւոր Ագագին բերի,
և Ամաղէկին †բնաջինջ արի։
21 Սակայն ժողովուրդն այն աւա-
րից ոչխարներ ու արջառներ վեր
առաւ՝ նզովածներից շատ լաւե-
րը, որ Գաղգաղայումը քո Տէր
22 Աստուծուն զոհեն։ Եւ Սամու-
էլն ասեց. Մի՞թէ Տէրը այնքան
հաւանում է ողջակէզների և զո-
հերի ինչպէս Տիրոջ ձայնին լսե-
լուն. ահա հնազանդութիւնը՝
զոհից լաւ է, և ականջ դնե-
23 լը՝ խոյերի ճարպիցը։ Որովհետև
ապստամբութիւնը կախարդու-
թեան մեղքի պէս, և անհնա-
զանդութիւնը կռապաշտութեան
պէս է. որովհետև դու Տիրոջ
խօսքը մերժեցիր, նա էլ քեզ
մերժեց՝ որ թագաւոր չ՚լինես։
Եւ Սաւուղն ասեց Սամուէլին. 24
Մեղք գործեցի՝ որ Տիրոջ հրա-
մանները և քո խօսքերը զանց ա-
րի. որովհետև ժողովրդիցը վա-
խեցայ, և նորանց խօսքը լսեցի։
Եւ հիմա, աղաչում եմ, ներիր 25
իմ յանցանքը. և ինձ հետ ետ
դարձիր որ Տիրոջը երկրպագու-
թիւն անեմ։ Եւ Սամուէլն ա- 26
սեց Սաւուղին. Ես քեզ հետ ետ
չեմ դառնալ. որովհետև դու
Տիրոջ խօսքը մերժեցիր, Տէրն
էլ քեզ է մերժել, որ Իսրայէլի
վերայ թագաւոր չ՚լինես։ Եւ 27
Սամուէլն ետ չ՚դառաւ որ գնայ,
բայց նա նորա վերարկուի ծայրի-
ցը բռնեց, որ պատառուեցաւ։
Այն ժամանակ Սամուէլը նորան 28
ասեց. Տէրն այսօր քո վերայից
Իսրայէլի թագաւորութիւնը պա-
տառեց և տուաւ նորան քեզա-
նից լաւ ընկերիդ։ Նաև Իսրա- 29
յէլի Ապաւէնը սուտ չի խօսիլ և
չի զղջալ. որովհետև նա մարդ
չէ՝ որ զղջայ։ Եւ Սաւուղն ասեց. 30
Մեղք գործեցի. աղաչում եմ՝
հիմա ժողովրդի ծերերի առաջին
ու Իսրայէլի առաջին ինձ պատ-
ուիր, և ինձ հետ ետ դարձիր,
որ քո Տէր Աստուծուն երկրպա-
գութիւն անեմ։ Եւ Սամուէլը 31
Սաւուղի ետևից ետ դառաւ. և
Սաւուղը Տիրոջը երկրպագութիւն
արաւ։
Եւ Սամուէլն ասեց. Ամաղէկի 32
թագաւոր Ագագին ինձ մօտ բե-
րէք. և Ագագը քնքուշութեամբ
նորան մօտեցաւ, և Ագագն ա-
սեց. Անպատճառ մահուան դառ-
նութիւնը անցել է։ Բայց Սա- 33
մուէլն ասեց. Ինչպէս որ քո
սուրը կանանցը անզաւակ թո-
ղեց, նոյնպէս էլ քո մայրը կա-
նանց մէջ անզաւակ մնայ։ Եւ
Սամուէլը Գաղգաղայումը Տիրոջ
առաջին կտոր կտոր արաւ Ա-
գագին։
Եւ Սամուէլը գնաց Ռամա. և 34

*Կամ՝ նզովեցինք։
†Կամ՝ նզովեցի։

Սաւուղը վեր գնաց իր տունը
35 Սաւուղի Գաբաան։ Եւ Սամու-
էլը մինչև իր մահուան օրը այլ
ևս Սաւուղին չ'տեսաւ. որովհե-
տև Սամուէլը Սաւուղի համար
սուգ էր անում. և Տէրը զղջաց
որ Սաւուղին Իսրայէլի վերայ
թագաւոր էր շինել։

ԳԼ. ԺԶ

1 Եւ Տէրը Սամուէլին ասեց. Մին-
չև ե՞րբ պիտի Սաւուղի համար
սուգ անես. որովհետև ես նորան
մերժեցի որ Իսրայէլի վերայ չը
թագաւորէ. եղջիւրդ իւղով լը-
ցրու, և եկ քեզ ուղարկեմ
Բեթլեհէմացի Յեսսէի մօտ. ո-
րովհետև նորա որդկանց մէկին
ինձ համար թագաւոր տեսայ։
2 Եւ Սամուէլն ասեց. Ի՞նչպէս
գնամ. եթէ Սաւուղը լսէ՝ ինձ
կ'մեռցնէ. և Տէրն ասեց. Հետդ
մէկ երինջ առ և ասիր թէ ե-
3 կայ Տիրոջը զոհ անելու։ Եւ
Յեսսէին հրաւիրիր զոհին. և ես
քո անելու բանը քեզ կ'հասկա-
ցնեմ. և ինձ համար օծես նո-
րան՝ որին քեզ կ'ասեմ։
4 Եւ Սամուէլն արաւ Տիրոջ ա-
սածը, և գնաց Բեթլեհէմ։ Եւ
քաղաքի ծերերը դողալով դիմա-
ւորեցին նորան, և ասեցին. Խա-
5 ղաղութեա՞մբ է գալդ։ Եւ նա
ասեց. Խաղաղութեամբ. Տիրոջ
համար զոհ անելու եկայ. սրբ-
բուեցէք՝ և ինձ հետ զոհի եկէք.
և Յեսսէին և նորա որդիներին
սրբել տուաւ, և նորանց զոհի
6 հրաւիրեց։ Եւ երբոր նորանք ե-
կան, Եղիաբին տեսածին պէս ա-
սեց. Ահա Տիրոջ օծեալը իր ա-
7 ռաջին։ Բայց Տէրը Սամուէլին
ասեց. Նորա երևոյթին և հա-
սակի երկայնութեանը մի նայիր,
որովհետև նորան անարգեցի. այն
պատճառով որ այն չէ բանը որ
տեսնում է մարդը. որովհետև
մարդը տեսնում է աչքի առա-
ջինը, բայց Տէրը սրտին է նայում։
8 Եւ Յեսսէն Աբինադարին կան-
չեց, և նորան Սամուէլի առա-
ջովը անցկացրեց, և նա ասեց.
Տէրը սորան էլ չ'ընտրեց։ Եւ 9
Յեսսէն Սամային անցկացրեց. և
նա ասեց. Տէրը սորան էլ չ'ընտ-
րեց։ Եւ Յեսսէն Սամուէլի ա- 10
ռաջովը իր եօթը որդիներին անց-
կացրեց, և Սամուէլը Յեսսէին
ասեց. Տէրը սորանցից չ'ընտրեց։
Եւ Սամուէլը Յեսսէին ասեց. 11
Տղերքդ ամենն էլ սորա՞նք են։
Եւ նա ասեց. Տակաւին մնացել
է կրտսերը, և ահա նա ոչխար-
ները արածեցնում է։ Եւ Սա-
մուէլը Յեսսէին ասեց. Մ՞արդ ու-
ղարկիր և նորան բերել տուր.
որովհետև մենք -ի՞ն պիտի չը
նստենք, մինչև որ նա այստեղ
չ'գայ։ Եւ նա մ՞արդ ուղարկեց, 12
և նորան բերել տուաւ. և նա
կարմիր էր և գեղեցիկ աչքերով,
և դէմքով էլ գեղեցիկ։ Այն
ժամանակ Տէրն ասեց. Վեր կաց
օծիր դորան, որովհետև սա է։
Եւ Սամուէլը իւղի եղջիւրն ա- 13
ռաւ, և օծեց նորան իր եղբայր-
ների մէջ. և այն օրից յետոյ Տի-
րոջ Հոգին եկաւ Դաւիթի վե-
րայ. և Սամուէլը վեր կացաւ
գնաց Ռամա։
Եւ Տիրոջ Հոգին հեռացաւ 14
Սաւուղից. և Տիրոջ կողմանէ մի
չար ոգի նեղում էր նորան։ Եւ 15
Սաւուղի ծառաները նորան ասե-
ցին. Ահա Աստուծոյ կողմանէ մի
չար ոգի քեզ նեղում է. Մեր 16
տէրն իր առաջին եղող ծառա-
ներիդ ասի, որ մի լաւ քնարա-
հար որոնեն, որ երբոր Աստուծո
կողմանէ այն չար ոգին քեզ վե-
րայ գայ, նա իր ձեռքովը քնարն
ածէ, և դու լաւանաս։ Եւ Սա- 17
ւուղն իր ծառաներին ասեց. Հի-
մա ինձ համար մէկ լաւ քնարա-
հար գտէք, և նորան ինձ մօտ
բերէք։ Եւ ծառաների մէկը պա- 18
տասխանեց և ասեց. Ահա Բեթ-
լեհէմացի Յեսսէի մէկ տղան տե-
սայ, որ ֆ՞նար ածել գիտէ. և
քաջ, զօրաւոր, պատերազմող,
ճարտասան, և գեղեցիկ տեսքով
մարդ է. և Տէրը նորա հետ է։
Եւ Սաւուղը Յեսսէին պատգա- 19
մաւորներ ուղարկեց և ասեց. Քո
որդի Դաւիթին, որ ոչխարների

20 մօտն է, ինձ մօտ ուղարկիր։ Եւ
Յեսսէն մի էշի բեռն հաց, մի
տիկ գինի, և այծերից մի ուլ
առաւ, և իր որդի Դաւիթի
ձեռքովը Սաւուղին ուղարկեց։
21 Եւ Դաւիթը Սաւուղի մօտ ե-
կաւ, և նորա առաջին կանգնեց։
Եւ Ս՞ա՞ա՞ս՞ա՞ղը նորան շատ սիրեց, և
նա նորա կապարճակիրը դառաւ։
22 Եւ Սաւուղը Յեսսէին մ՞արդ ու-
ղարկեց ասելով. Դաւիթը թող
իմ առաջին կանգնէ, որովհետև
նա իմ առաջին շնորհք գտաւ։
23 Երբոր Աստուածանից այն ոգին
գալիս էր Սաւուղի վերայ, Դա-
ւիթը առնում էր քնարը և իր
ձեռքովը ածում. և Սաւուղը
հանգստանում և լաւանում էր,
և չար ոգին նորա վերայից գը-
նում էր։

ԳԼ. ԺԷ

1 Եւ Փղշտացիները իրանց զօրա-
գունդերը ժողովեցին պատերազ-
մելու համար, և Յուդայի Սոքո-
վի մէջ ժողովուեցան. և բանակ
տուին Սոքովի ու Ազեկայի մէջ-
2 տեղը Ափեսդոմմի։ Եւ Սաւուղը
և Իսրայէլի մարդիկը ժողովուե-
ցան, Էլայի հովտումը բանակ
տուին և կարգաւ շարուեցան
Փղշտացիների դէմ պատերազմ
3 անելու համար։ Եւ Փղշտացին-
ը կանգնել էին սարի վերայ մէկ
կողմանէ, և Իսրայէլացիները
կանգնել էին սարի վերայ միւս
կողմանէ, և հովիտը նորանց մէջ-
4 տեղը։ Եւ մի միջնամարտիկ էր
դուրս եկել Փղշտացիների բա-
նակից՝ անունը Գողիաթ՝ Գէթա-
ցի՝ բարձրութիւնը մէկ կանգուն
5 և մէկ թիզ։ Նորա գլխին կար
մի պղնձի սաղաւարտ. և նա մի
հիւսուած զրահ էր հագած. և
նորա զրահի ծանրութիւնը հինգ
6 հազար սիկղ պղինձ։ Եւ նորա
ոտքերի վերայ պղնձի սռնապան-
ներ, և ուսերի մէջ պղնձի գե-
7 ղարդ։ Նորա նիզակի բունը ոս-
տայնանկների գլանի պէս էր. և
նիզակի տէգը վեց հարիւր սիկղ
երկաթ. և նորա վահանը կրողը
գնում էր նորա առաջիցը։ Եւ 8
նա կանգնեց և կանչեց Իսրայէլի
գունդերին և նորանց ասեց. Ի՞ն-
չու համար էք դուրս եկել և
պատերազմի շարուել. մի՞թէ ես
Փղշտացի չեմ, և դուք՝ Սաւու-
ղի ծառանե՞րը. ձեր միջիցը մի
մարդ ընտրեցէք, որ իջնէ ինձ
մօտ։ Եթէ նա կարողանայ ինձ 9
հետ մենամարտել, և ինձ մեռ-
ցնէ, այն ժամանակ մենք ձեր
ծառաները լինենք. բայց եթէ
ես յաղթեմ և նորան մեռցնեմ,
այն ժամանակ դուք մեր ծառա-
ները լինէք և մեզ ծառայէք։
Եւ այն Փղշտացին ասեց. Ես 10
այսօր Իսրայէլի գունդերին նա-
խատեցի. ինձ մէկ մարդ տուէք,
որ իրար հետ մենամարտենք։ Եւ 11
երբոր Սաւուղն ու բոլոր Իսրա-
յէլը լսեցին Փղշտացիի այս խօս-
քերը, զարհուրեցին և շատ վա-
խեցան։
Բայց Դաւիթը այն Եփրաթա- 12
ցի՝ այսինքն Յուդայի Բեթլեհէ-
մացի Յեսսէ անունով մարդի որ-
դին էր, և նա ութը որդի ու-
նէր, և նա Սաւուղի ժամանակ-
ներին մարդկանց մէջ ծեր մարդ
էր համարվում։ Եւ Յեսսէի ե- 13
րեք մեծ որդիները դուրս էին ե-
կել՝ Սաւուղի ետևից պատերազ-
մի գնացել. և պատերազմի գը-
նացող երեք որդկանց անուններ-
ը՝ անդրանիկը Եղիաբ, երկրոր-
դինը Աբինադաբ, և երրոր-
դինը Սամաա էր։ Եւ Դաւիթը 14
կրտսերն էր. և երեք մեծերը
Սաւուղի ետևից գնացին. Բայց 15
Դաւիթը Սաւուղի մօտից դուրս
էր եկել ետ դառել Բեթլեհէմ,
որ իր հօր ոչխարները արածեցնէ։
Եւ այն Փղշտացին քառասուն օր 16
առաւօտ և իրիկուն մօտենում
էր և կանգնում։
Եւ Յեսսէն իր որդի Դաւիթին 17
ասեց, Քո եղբայրների համար
վեր առ այս մէկ արդու հեղին
և այս տասը հացը, և վազիր բա-
նակը եղբայրներիդ մօտ։ Եւ այս 18
տասը գլուխ կաթնապանիրը տար
հազարապետին, և տես եղբայր-
ներդ առո՞ղջ են, և նորանցից

49 ապահովութեան նշան բեր։ Եւ
Սաւուղը և նորանք և բոլոր Իս-
րայէլի մարդիկը Էլայի հովիտու-
մը Փղշտացիների հետ պատե-
րազմում էին։
20 Եւ Դաւիթն առաւօտը կա-
նուխ վեր կացաւ ոչխարները պա-
հապանին յանձնեց, և վեր ա-
ռաւ գնաց, ինչպէս որ Յեսսէն
նորան հրամայել էր։ Եւ երբոր
հասաւ կառքերի տեղը, զօրքե-
րը կարգաւ շարվում ու պատե-
րազմի համար բարձր ձայնով ա-
21 ղաղակում էին։ Եւ Իսրայէլն ու
Փղշտացիները շարուեցան ճակատ
22 առ ճակատ։ Եւ Դաւիթն իր
վերայից ամանները յանձնեց ա-
մանների պահապանի ձեռքը և
վազեց գունդը. և գնաց իր եղ-
բայրներին հարցրեց, թէ ո՞ղջ
23 են։ Եւ երբոր նա նորանց հետ
խօսում էր, ահա այն միջնա-
մարտիկը՝ Փղշտացի Գողիաթ ա-
նունով՝ որ Գէթիցն էր, Փղշտա-
ցի գունդերիցը դուրս եկաւ, և
այն խօսքերի պէս խօսեց. և Դա-
24 ւիթը լսեց։ Եւ Իսրայէլի բոլոր
մարդիկը երբոր այն մարդին տե-
սան, նորա երեսիցը փախան և
25 շատ վախեցան։ Եւ Իսրայէլի
մարդիկն ասեցին. Այս դուրս ե-
կած մարդը տեսա՞ք, որ դուրս
է եկել Իսրայէլին նախատելու.
ով որ նորան մեռցնէ, թագա-
ւորը մեծ հարստութիւնով հա-
րըստացնելու է նորան, և իր աղ-
ջիկը նորան է տալու և նորա հօր
տունը Իսրայէլի մէջ ազատ է ա-
26 նելու։ Եւ Դաւիթը խօսեց իր
մօտ եղող մարդկանց հետ և ա-
սեց. Ի՞նչ կ'անեն այն մարդին՝ որ
այս Փղշտացիին մեռցնէ և Իս-
րայէլիցը նախատինքը վեր առնէ.
որովհետև այս անթլփատ Փղշ-
տացին ո՞վ է՝ որ կենդանի Ա-
27 ստուծոյ զօրքերին նախատէ։ Եւ
ժողովուրդը նոյն խօսքերն ասեց
նորան թէ Այսպէս պիտի լինի
այն մարդին որ նորան մեռցնէ։
28 Եւ նորա մեծ եղբայր Եղիաբը,
երբոր լսեց նորա խօսելն այն
մարդկանց հետ, Դաւիթի վերայ
Եղիաբի բարկութիւնը բորբոք-
ուեց և ասեց. Դու ի՞նչու իջար
այստեղ, և այն մի քանի ոչխար-
ները անապատում որի՞ յանձնե-
ցիր. ես քո հպարտութիւնը և
քո սրտի չարութիւնը գիտեմ.
անտարակոյս դու իջել ես պա-
տերազմը տեսնելու։ Եւ Դաւիթն 29
ասեց. Հիմա ես ի՞նչ եմ արել.
այս բան չէ՞։ Եւ նորա մօտից մէկ 30
ուրիշ մարդի դարձաւ, և նոյն
խօսքերն ասեց, և ժողովուրդն
էլ առաջի խօսքերի պէս պատաս-
խանեցին նորան։ Եւ լսուեցան 31
այն խօսքերը որ Դաւիթը խօսել
էր. և երբոր Սաւուղի առաջին
պատմեցին, բերել տուաւ նորան։
Եւ Դաւիթը Սաւուղին ասեց. 32
Սորա պատճառով ոչ մի մարդի
սիրտը չ'թուլանայ. ծառադ կը
գնայ, և այն Փղշտացիի հետ կը
մարտնչէ։ Եւ Սաւուղը Դաւի- 33
թին ասեց. Դու չես կարող այն
Փղշտացիի վերայ գնալ և նորա
հետ մարտնչել, որովհետև դու
երիտասարդ ես, բայց նա իր ման-
կութիւնիցն ի վեր պատերազմի
մարդ է։ Եւ Դաւիթն ասեց Սա- 34
ւուղին. Ծառադ իր հօր ոչխար-
ները արածեցնում էր, և առիւ-
ծը կամ արջը գալիս էր, և հօ-
տերիցը ոչխար էր տանում։ Ես 35
նորա ետևիցը գնում էի՝ նորան
զարկում և նորա բերանիցը ա-
զատում էի. և երբոր նա վեր էր
կենում ինձ վերայ, մօրուքիցը
բռնում էի, զարկում և մեռ-
ցնում։ Ծառադ առիւծ էլ է 36
մեռցրել՝ արջ էլ. և այս անթլ-
փատ Փղշտացին էլ թող նորանց
մէկի պէս լինի, որովհետև կեն-
դանի Աստուծոյ զօրքերին նա-
խատեց։ Եւ Դաւիթն ասեց. Ե- 37
հովան որ առիւծի և արջի ձեռ-
քից ինձ ազատեց, այս Փղշտա-
ցիի ձեռքիցն էլ կ'ազատէ։ Եւ
Սաւուղը Դաւիթին ասեց. Գնա,
և Տէրը քեզ հետ լինի։ Եւ Սա- 38
ւուղն իր հանդերձները հագցրեց
Դաւիթին, և նորա գլխին մէկ
պղնձի սաղաւարտ դրաւ, և նո-
րան զրահ էլ հագցրեց։ Եւ Դա- 39
ւիթը նորա սուրը մէջքը կապեց
հանդերձների վերայից և սկսեց

ման գալ, որովհետև սովոր չէր.
և Դաւիթը Սաւուղին ասեց.
Սորանցով չեմ կարող ման գալ,
որովհետև սովոր չեմ. և Դաւի-
թը հանեց նորանք իր վերայից։
40 Եւ իր ցուպը ձեռքն առաւ, և
հեղեղատիցն իր համար հինգ
հատ գայլախազ քար ջոկեց, և
նորանց իր հովուական ամանի՝
այսինքն մախաղի մէջ դրաւ, և
պարսը ձեռքին՝ մօտեցաւ Փղշ-
41 տացիին։ Եւ Փղշտացին էլ եկաւ
և Դաւիթին մօտեցաւ, և նորա
վահանը կրող մարդը նորա ա-
42 ռաջին էր։ Եւ երբոր Փղշտացին
նայեց և Դաւիթին տեսաւ, ար-
համարհեց նորան, որովհետև նա
կարմիր գոյնով և գեղեցկադէմ
43 պատանի էր։ Եւ Փղշտացին ա-
սեց Դաւիթին. Մի՞թէ ես շուն
եմ՝ որ ինձ վերայ ցուպով ես
գալիս, և Փղշտացին նզովեց Դա-
44 ւիթին իր աստուածներովը։ Եւ
Փղշտացին ասեց Դաւիթին. Եկ
ինձ մօտ, և ես քո մարմինը եր-
կընքի թռչուններին և դաշտի
45 գազաններին տամ։ Եւ Դաւիթն
ասեց Փղշտացիին. Դու սրով,
նիզակով և գեղարդով ես գա-
լիս ինձ վերայ, բայց ես գալիս
եմ քեզ վերայ Զօրաց Տիրոջ
Իսրայէլի զօրքերի Աստուծոյ ա-
նունովը, որին դու նախատեցիր։
46 Այսօր Տէրը քեզ իմ ձեռքը կը
մատնէ. ու ես քեզ կ'մեռցնեմ,
և քո վերայից գլուխդ կ'առնեմ.
և Փղշտացիների բանակի դիակ-
ները այսօր երկնքի թռչուններին
և երկրի գազաններին կ'տամ.
որպէս զի բոլոր երկիրը իմանայ
47 որ Իսրայէլը Աստուած ունի. Եւ
այս բոլոր ժողովքը իմանան՝ որ
Տէրը սրով և նիզակով չէ ազա-
տում. որովհետև պատերազմը
Տիրոջն է, և նա ձեզ մեր ձեռ-
48 քը կ'մատնէ։ Եւ երբոր Փղշտա-
ցին վեր կացաւ և եկաւ դիմա-
ւորելով Դաւիթին մօտեցաւ,
Դաւիթն էլ շուտով վազեց պա-
տերազմի ասպարէզը Փղշտացիին
49 դիմաւորելու։ Եւ Դաւիթն իր
ձեռքը իր մախաղի մէջ կոխեց
և այն տեղից մի քար առաւ, և
պարսով շպռտեց և Փղշտացիի
ճակատին զարկեց. և քարը նո-
րա ճակատի մէջ փորուեցաւ, և
նա երեսի վերայ գետինն ընկաւ։
Այսպէս Դաւիթը պարսով և քա- 50
րով Փղշտացիին յաղթեց. և
զարկեց Փղշտացիին և մեռցրեց
նորան, բայց Դաւիթի ձեռքին
սուր չ'կար։ Եւ Դաւիթը վազեց 51
այն Փղշտացիի վերայ կանգնեց,
և նորա սուրն առաւ, պատեա-
նիցը հանեց, և նորան մեռցրեց՝
յետոյ գլուխը նորանով կտրեց։
Եւ երբոր Փղշտացիները իրանց
զօրաւոր մարդի մեռնելը տեսան,
փախան։ Այն ժամանակ Իսրա- 52
յէլի և Յուդայի մարդիկը վեր
կացան, և աղաղակներով հալա-
ծեցին Փղշտացիներին մինչև հո-
վիտը՝ և մինչև Ակկարոնի դրա-
ները՝ և Փղշտացիների սպան-
ուածները ընկան Սագարիմի ճա-
նապարհի վերայ և մինչև Գէթ
ու Ակկարոն։ Եւ Իսրայէլի որ- 53
դիքը Փղշտացիներին հալածելուց
յետոյ ետ դառան և նորանց
բանակը կողոպտեցին։ Եւ Դա- 54
ւիթը Փղշտացիի գլուխն առաւ,
և նորան տարաւ Երուսաղէմ.
բայց նորա զէնքերը դրաւ իր վը-
րանի մէջ։ Եւ երբոր Սաւուղը 55
Դաւիթին տեսաւ, որ դուրս է
գալիս Փղշտացիի դէմ, զօրավար
Աբեններին ասեց. Աբեններ, այս
պատանին որի՞ տղան է։ Եւ Ա-
բեններն ասեց. Կենդանի է քո
անձը, ով թագաւոր, *եթէ գի-
տեմ՝։ Եւ թագաւորն ասեց. 56
Հարցրու թէ այս պատանին որի՞
տղան է։ Եւ երբոր Դաւիթը 57
Փղշտացիին մեռցնելուց ետ դա-
ռաւ, Աբեններն առաւ նորան
և Սաւուղի առաջը տարաւ, և
Փղշտացիի գլուխը նորա ձեռքին
էր։ Եւ Սաւուղն ասեց նորան. 58
Ո՞ւմ տղան ես դու, պատանի։
Եւ Դաւիթն ասեց. Քո ծառայ
Բեթլեհէմացի Յեսսէի տղան եմ։

ԳԼ. ԺԸ

Եւ երբոր Սաւուղի հետ խօսեց 1

(*Այսինքն՝ չ'գիտեմ։)

և վերջացրեց, Յոնաթանի սիրտը կապուեցաւ Դաւիթի սրտի հետ. և Յոնաթանը նորան իր անձի պէս սիրեց։ 2 Եւ նոյն օրը Սաւուղը նորան առաւ և թոյլ չ'տուաւ որ ետ դառնայ իր հօր տունը։ 3 Եւ Յոնաթանը և Դաւիթը ուխտ արին, որովհետև նա իր անձի պէս սիրում էր նորան։ 4 Եւ Յոնաթանն իր վերարկուն հանեց և այն ու իր հանդերձները մինչև իր սուրը, իր աղեղը և գօտին Դաւիթին տուաւ. Եւ Դաւիթը գնում էր ամեն տեղ, ուր որ Սաւուղը նորան ուղարկում էր, և իմաստութեամբ էր վարվում. և Սաւուղը նորան պատերազմական մարդկանց վերայ դրաւ, և բոլոր ժողովրդին և Սաւուղի ծառաներին էլ հաճոյ եղաւ։

6 Եւ երբոր նորանք գալիս էին և Դաւիթը փղշտացին մեռցնելուց ետ էր դառնում, Իսրայէլի բոլոր քաղաքներից կանայք դուրս եկան երգելով և պար բռնելով Սաւուղ Թագաւորին դիմաւորելու թմբուկներով, ուրախութեամբ և ծնծղաներով։ 7 Եւ պար բռնող կանայքը պատասխան տալով երգում էին և ասում.

Սաւուղն իր հազարաւորներին զարկեց,
Եւ Դաւիթն իր բիւրաւորներին։

8 Եւ Սաւուղը շատ բարկացաւ, և այս խօսքի համար նեղացաւ, և ասեց. Բիւրաւորները Դաւիթին տուին, բայց ինձ տուին հազարաւորները. և հիմա մնում է նորա համար միայն թագաւորութիւնը։ 9 Եւ այն օրից ի վեր Սաւուղը ծուռ աչքով էր նայում Դաւիթին։

10 Եւ հետևեալ օրը Սաւուղի վերայ Աստուածանից չար ոգի եկաւ, և նա տան մէջ մարգարէութիւն արաւ և Դաւիթն ուրիշ ժամանակների պէս իր ձեռքովը փող էր ածում. և նիզակը 11 Սաւուղի ձեռքին էր։ Եւ Սաւուղը նիզակը շպռտեց՝ ասելով. Դաւիթին զարկեմ՝ պատին բէնէ՛ս. բայց Դաւիթը նորա երեսից երկու անգամ խոյս տուաւ։ 12 Եւ Սաւուղը Դաւիթի երեսից վախենում էր, որովհետև Տէրը նորա հետ էր. բայց Սաւուղից հեռացել էր։ 13 Եւ Սաւուղը նորան իր մօտից հեռացրեց, և նորան հազարապետ արաւ. և նա ժողովրդի առաջին դուրս էր գալիս և մտնում էր։ 14 Եւ Դաւիթն իր ամեն ճանապարհների մէջ իմաստութեամբ էր վարվում. և Տէրը նորա հետ էր։ 15 Եւ երբոր Սաւուղը տեսաւ, որ նա իմաստութեամբ է վարվում, նորա երեսից վախենում էր։ 16 Եւ բոլոր Իսրայէլն ու Յուդան Դաւիթին սիրում էին, որովհետև նորանց առաջին նա էր դուրս գալիս և մտնում։

17 Եւ Սաւուղը Դաւիթին ասեց. Ահա իմ մեծ աղջիկ Մերովբը քեզ կին կ'տամ. միայն թէ դուն ինձ համար զօրաւոր եղիր, և Տիրոջ պատերազմներն պատերազմիր, որովհետև Սաւուղն ասեց. իմ ձեռքը նորա վերայ չ'լինի, այլ փղշտացիների ձեռքը նորա վերայ լինի։ 18 Եւ Դաւիթը Սաւուղին ասեց. Ես ո՞վ եմ, և ի՞նչ է իմ կեանքը, իմ հօր ազգատոհմը՝ Իսրայէլի մէջ, որ թագաւորին փեսայ դառնամ։ 19 Եղաւ երբոր Սաւուղի աղջիկ Մերովբը պիտի Դաւիթին տրուէր՝ Մաուլացի Եդրիելին կին տրուեցաւ։

20 Եւ Սաւուղի Մեղքող աղջիկը սիրում էր Դաւիթին. և երբոր Սաւուղին իմացրին, այս բանը նորա աչքերին հաճոյ երևեցաւ։ 21 Եւ Սաւուղն ասեց. Ես աղջիկ նորան տամ՝ որ նորա համար որոգայթ դառնայ, և փղշտացիների ձեռքը նորա վերայ լինի։ Եւ Սաւուղը Դաւիթին ասեց. 22 Ինձ այս օր երկրորդովը փեսայ եղիր։ Եւ Սաւուղն իր ծառաներին հրամայեց, որ Դաւիթի հետ ծածկաբար խօսեն և ասեն. Ահա թագաւորը քեզ հաւանել է, ու նորա բոլոր ծառաները քեզ սիրում են. և հիմա թագաւորին փեսայ եղիր։ 23 Եւ Սաւուղի ծառաները այս խօսքերը Դաւիթի ականջներին ասեցին, և Դաւիթն ասեց. Թագաւորին փեսայ դառնալը ձեր աչքին փո՞քր բան է երևում, որովհետև ես մի աղքատ և աննշան մարդ եմ։ 24 Եւ Սաւուղի ծառաները նորան իմացրին և ասեցին. Դաւիթն այսպէս խօսեց. 25 Եւ Սաւուղն ասեց. Դաւիթին այսպէս ասացէք. Թագաւորը ուրիշ օժիտ չէ ուզում, բայց միայն փղշտացիների հարիւր անթլփատութիւն, որպէս զի թագաւորի թշնամիներից վրէժ առնուի. (բայց Սաւուղը խորհում էր Դաւիթին փղշտացիների ձեռքովը սպանել) 26 տալ.) Եւ երբոր նորա ծառաները այս խօսքերը Դաւիթին իմացրին, այս բանը Դաւիթի աչքերին լաւ երևեցաւ, որ թագաւորին փեսայ դառնայ։ 27 Եւ օրերը չէին լրացել, և Դաւիթը վեր կացաւ և իր մարդկանց հետ գնաց, և փղշտացիներից երկու հարիւր մարդ մեռցրեց. և Դաւիթը նորանց անթլփատութիւնները բերաւ, և լրիւ թագաւորին տուին, որ թագաւորին փեսայ դառնայ։ Եւ Սաւուղն իր աղջիկ Մեղքողը կին տուաւ նորան։ 28 Եւ Սաւուղը երբոր տեսաւ և հասկացաւ, որ Տէրը Դաւիթի հետ է, և Սաւուղի Մեղքող աղջիկը նորան սիրում է, 29 Սաւուղն առաւել ևս վախեցաւ Դաւիթից, և Սաւուղը միշտ Դաւիթին թշնամութիւն էր անում։ 30 Եւ փղշտացիների իշխանները դուրս էին գալիս պատերազմ. երբոր նորանք դուրս էին գալիս, Դաւիթը Սաւուղի բոլոր ծառաներից աւելի էր իմաստութեամբ վարվում. և նորա անունը շատ հռչակուեցաւ։

Գլ. ԺԹ

1 Եւ Սաւուղն իր որդի Յոնաթանին և իր ամեն ծառաներին ասեց, որ Դաւիթին մեռցնեն։ 2 Բայց Սաւուղի որդի Յոնաթանը շատ էր սիրում Դաւիթին. և Յոնաթանը Դաւիթին իմացրեց և ասեց. Իմ հայր Սաւուղը ուզում է քեզ մեռցնել. ուրեմն հիմա մինչև առաւօտ զգոյշ կաց, և մէկ ծածուկ տեղ նստիր և թաք կաց։ 3 Եւ ես դուրս կ'գամ և իմ հօր մօտ կ'կանգնեմ այն դաշտումը ուր որ դուն կ'լինես, և քեզ համար իմ հօր հետ կը խօսեմ, և ինչ որ իմանամ՝ քեզ կ'պատմեմ։ 4 Եւ Յոնաթանը Դաւիթի մասին լաւ խօսեց իր հայր Սաւուղի հետ, և նորան ասեց. Թող թագաւորը իր ծառայ Դաւիթի դէմ մեղք չ'գործէ. որովհետև նա քեզ դէմ մեղք չէ արել. և նորա գործքերը քեզ համար շատ լաւ են։ 5 Ըստ որում նա իր հոգին իր ձեռքի մէջ դրաւ և փղշտացին զարկեց. և Տէրը բոլոր Իսրայէլին մեծ փրկութիւն շնորհեց. դուն տեսար և ուրախացար, և ինչու համար անմեղ արիւնով մեղանչես՝ Դաւիթն առանց պատճառի մեռցնելով։ Եւ Սաւուղը Յոնաթանի խօսքին լսեց, և Սաւուղն երդում արաւ՝ թէ Տէրը կենդանի է որ նա պիտի չ'մեռցնուի։ 7 Եւ Յոնաթանը Դաւիթին կանչեց. և Յոնաթանը պատմեց նորան այս բոլոր խօսքերը. և Յոնաթանը Դաւիթին տարաւ Սաւուղի մօտ, և նա լինում էր նորա առաջին ինչպէս երեկ և միւս օրը։

8 Եւ դարձեալ պատերազմ եղաւ. և Դաւիթը դուրս եկաւ փղշտացիների հետ պատերազմ արաւ, և նորանց մէջ մեկ մեծ կոտորած արաւ. և նորանք նորա առաջինը փախան։ 9 Եւ Տէրից չար ոգի եկաւ Սաւուղի վերայ, և նա իր տանը նստած էր, և նիզակը ձեռքին. Դաւիթն էլ իր ձեռքովը ածում էր փողը։ 10 Եւ Սաւուղն ուզեց որ Դաւիթին նիզակով զարկէ՝ պատին բևեռէ. բայց նա Սաւուղի երեսից իրան շուռ տուաւ, և նիզակը պատին զարկեց. և Դաւիթը փախաւ և այն գիշերը պրծաւ։ 11 Բայց Սաւուղը Դաւիթի տունը մարդիկ ուղարկեց, որ նո-

բան պաշարեն և առաւօտը մեռ-
ցնեն։ Սակայն Դաւիթի կին Մեղ-
քողը նորան իմացրեց և ասեց.
Եթէ այս գիշեր քո անձը չ'ապ-
րեցնես, էգուց քեզ պիտի մեռ-
42 ցնեն։ Եւ Մեղքողը Դաւիթին
վայր իջեցրեց պատուհանիցը. և
նա գնաց՝ փախաւ և պրծաւ։
43 Եւ Մեղքողը մէկ արձան առաւ,
և նորան անկողինի մէջ դրաւ,
և նորա գլխի տակ այծի մազի
բարձ դրաւ և նորան ծածկոցով
44 ծածկեց։ Եւ երբոր Սաւուղը
մարդիկ ուղարկեց Դաւիթին
բռնելու համար, նա ասեց. Հի-
45 ւանդ է։ Եւ Սաւուղը մարդիկ
ուղարկեց Դաւիթին տեսնելու
համար, և ասեց. Նորան անկո-
ղինովը ինձ մօտ բերէք, որ մեռ-
46 ցնեմ։ Եւ այն մարդիկն եկան. և
ահա անկողինի մէջ մէկ արձան
կար. և գլխի տակ այծի մազի
47 բարձ։ Եւ Սաւուղը Մեղքողին
ասեց. Ի՞նչու համար այսպէս
խաբեցիր ինձ, և իմ թշնամիին
բաց թողեցիր, և նա էլ պրծ-
ծաւ։ Եւ Մեղքողը Սաւուղին
ասեց. Նա ինձ ասեց. Ինձ բաց
թող, ի՞նչու համար քեզ մեռ-
ցնեմ։
48 Այսպէս փախաւ Դաւիթը և
պրծաւ, և գնաց Ռամա Սամու-
էլի մօտ, և նորան պատմեց այն
ամենը որ Սաւուղն իրան արել
էր։ Յետոյ նա Սամուէլի հետ
գնաց, և Նաւաթի մէջ բնակ-
49 ուեցան։ Եւ Սաւուղին իմացրին
և ասեցին. Ահա Դաւիթը Ռա-
20 մայի Նաւաթումն է։ Այն ժա-
մանակ Սաւուղը մարդիկ ուղար-
կեց որ Դաւիթին բռնեն, և
երբոր նորանք տեսան մարգա-
րէութիւն անող մարգարէների
ժողովքը՝ և նորանց վերակացու
Սամուէլին կանգնած, Աստուծոյ
Հոգին Սաւուղի ուղարկած մարդ-
կանց վերայ եկաւ, և նորանք էլ
21 մարգարէութիւն արին։ Եւ երբ-
որ Սաւուղին իմացրին, նա ու-
րիշ մարդիկ ուղարկեց, և նո-
րանք էլ մարգարէութիւն արին։
Եւ Սաւուղը երրորդ անգամ
մարդիկ ուղարկեց, և նորանք էլ
մարգարէութիւն արին։ Այն ժա- 22
մանակ ինքն էլ գնաց Ռամա, և
մինչև Սոկքովի մեծ ջրհորը գալը՝
հարցրեց և ասեց. Ո՞ւր են Սա-
մուէլն ու Դաւիթը։ Եւ ասեցին.
Ահա նորանք Ռամայի Նաւա-
թումն են։ Գնաց և Ռամայի Նա- 23
ւաթը. և նորա վերայ էլ եկաւ
Աստուծոյ Հոգին, և մինչև Ռա-
մայի Նաւաթը հասնելը գնալով
մարգարէութիւն էր անում։ Եւ 24
նա էլ իր հանդերձները հանեց,
և Սամուէլի առաջին նա էլ էր
մարգարէութիւն անում. և այն
բոլոր օրը և բոլոր գիշերը մերկ
վայր ընկաւ գետինը. Նորա հա-
մար ասում են թէ՝ Սաւո՞ւղն էլ
է մարգարէների մէջ։

ԳԼ. Ի

Եւ Դաւիթը Ռամայի Նաւա- 1
թից փախաւ և գնաց Յովնաթա-
նի առաջին ասեց. Ես ի՞նչ եմ
արել, ի՞նչ է իմ յանցանքը, և
ի՞նչ մեղք եմ գործել քո հօր
առաջին, որ նա ինձ ուզում է
մեռցնել։ Եւ Յովնաթանն ասեց 2
նորան. Քաւ լիցի, դու պիտի չը
մեռնես. ահա իմ հայրը մեծ
կամ փոքր մի բան չէ անում ա-
ռանց ինձ յայտնելու. և իմ
հայրն ի՞նչու համար պիտի ծած-
կէ այդ բանը ինձանից. այդպիսի 3
բան չ'կայ։ Եւ Դաւիթն երդում
էլ արաւ և ասեց. Քո հայրը
լաւ գիտէ, որ ես քո առաջին
շնորհք եմ գտել. Նորա համար
ասում է թէ Յովնաթանն այս
բանը չ'իմանայ, մի գուցէ վըշ-
տանայ. բայց կենդանի է Տէրն
ու կենդանի է քո անձը, որ իմ
ու մահուան մէջտեղը միայն մէկ 4
քայլ կայ։ Եւ Յովնաթանն ա-
սեց Դաւիթին. Ինչ որ քո սիրտն 5
ինչ ասէ, ես քեզ կ'անեմ։ Եւ
Դաւիթն ասեց Յովնաթանին.
Ահա էգուց ամսագլուխ է. և
պէտք է որ ես նստէի թագաւո-
րի հետ կերակուր ուտելու, սա-
կայն ինձ թող տուր որ մինչև
երրորդ օրուայ իրիկունը դաշտի 6
մէջ թաք կենամ։ Եթէ հայրդ

ինձ որոնելու լինի, ասես որ՝ Դա-
ւիթն ինձ շատ աղաչեց որ շտա-
պէ իր քաղաքը Բեթլեհէմ. ո-
րովհետև այնտեղ բոլոր ազգա-
7 տոհմի տարեկան զոհն է։ Եթէ
այսպէս ասէ. Լաւ, այն ժամա-
նակ քո ծառայի համար խաղա-
ղութիւն է. բայց եթէ բարկա-
նայ, իմացիր որ նորանից որոշ-
8 ուած է այդ չարութիւնը։ Եւ
ծառայիդ ողորմութիւն արա. ո-
րովհետև դու քո ծառային քեզ
հետ Տիրոջ ուխտը մտցրիր. և
եթէ ինձ վերայ մէկ յանցանք
կայ, դու մեռցրու ինձ, և ի՞ն-
չու համար ինձ քո հօրը տանես։
9 Եւ Յովնաթանն ասեց. Քաւ լի-
ցի որ ես իմանալով թէ իմ հօր
կողմանէ քեզ համար չարիք է
որոշուած, և այն քեզ չ'իմացը-
10 նեմ։ Եւ Դաւիթն ասեց Յովնա-
թանին. Ո՞վ կ'իմացնէ ինձ, ե-
թէ քո հայրը քեզ խստութեամբ
11 պատասխանէ։ Եւ Յովնաթանն
ասեց Դաւիթին. Եկ դուրս գը-
նանք դաշտը. և երկուսն էլ
գնացին դաշտը։
12 Եւ Յովնաթանն ասեց Դաւի-
թին. Վկայ է Իսրայէլի Տէր Ա-
ստուածը. որ այս ժամանակ է-
գուց կամ միւս օր իմ հօրը քն-
նելով տեսնեմ թէ Դաւիթի հա-
մար լաւ է, և նոյն ժամանակ
մարդ չ'ուղարկեմ և քեզ չ'յայտ-
13 նեմ. Տէրը Յովնաթանին այսպէս
և սորանից աւելի անէ. բայց ե-
թէ իմ հայրը քեզ չարութիւն
անել ուզէ, քեզ կ'յայտնեմ,
և քեզ կ'արձակեմ, որ խաղա-
ղութեամբ գնաս, և Տէրը քեզ
հետ լինի, ինչպէս որ իմ հօր
14 հետ էր։ Եւ ոչ միայն դեռ իմ
կենդանութեան ժամանակին դու
ինձ Տիրոջ ողորմութիւնը անես,
15 դեռ ես չ'մեռած. Մանաւանդ
ոչ էլ այն ժամանակ քո ողոր-
մութիւնը իմ տանիցը չ'կտրես
յաւիտեան, երբոր Տէրը Դաւի-
թի բոլոր թշնամիներին երկրիս
16 վերայից ջնջէ։ Եւ Յովնաթանը
Դաւիթի տան հետ դաշնակցու-
թիւն արաւ և ասեց. Տէրը Դա-
ւիթի թշնամիներիցը վրէժ առնէ։
Եւ Յովնաթանը Դաւիթին կրկին 17
երդում անել տուաւ նորան սի-
րելու համար, որովհետև նորան
սիրում էր իր անձի պէս։ Եւ 18
Յովնաթանը նորան ասեց. Էգուց
ամսագլուխ է, և քեզ պիտի ո-
րոնեն, որովհետև քո տեղը դար-
տակ պիտի մնայ։ Եւ երրորդ օ- 19
րը շուտով իջնես, և գաս այն
տեղը՝ ուր որ այն բանի օրը թաք
կացար, և Եղելի քարի մօտ նը-
ստես։ Եւ ես նորա մօտ երեք նետ 20
կ'գցեմ նշան գցելու պէս։ Եւ 21
ահա տղան կ'ուղարկեմ՝ ասելով.
Գնա նետերը գտիր. և եթէ տը-
ղային ասեմ. Ահա նետերը քե-
զանից այս կողմն են, նորանց վեր
առ, այն ժամանակ գաս. որով-
հետև քեզ համար խաղաղու-
թիւն է, և մի բան չ'կայ՝ Տէրը
կենդանի է. Բայց եթէ տղային 22
այսպէս ասեմ. Ահա նետերը քե-
զանից այն կողմն են, այն ժամանակ
գնաս. որովհետև Տէրն է քեզ
ուղարկում։ Եւ այս խօսքի հա- 23
մար որ ես ու դու խօսեցինք՝ ա-
հա Տէրը իմ և քո մէջն է յա-
ւիտեան։
Եւ Դաւիթը դաշտումը թաք 24
կացաւ. և երբոր եղաւ ամսա-
գլխին թագաւորը հացի նստեց
կերակուր ուտելու. Եւ թագա- 25
ւորը իր սովորութեան պէս իր
աթոռի վերայ պատի աթոռի վե-
րայ նստեց. և Յովնաթանը կանգ-
նեց, և Աբենները նստել էր Սա-
ւուղի մօտ և Դաւիթի տեղը
դարտակ էր։ Եւ Սաւուղն այն 26
օրը մի բան չ'խօսեց. որովհետև
ասեց, Նորան մի բան է պատա-
հել. նա մաքուր չէ, անտարա-
կոյս մաքուր չէ։ Եւ հետևեալ 27
օրը՝ ամսի երկուսին էլ Դաւիթի
տեղը դարտակ էր. և Սաւուղն
իր որդի Յովնաթանին ասեց.
Յեսսէի որդին ի՞նչու համար ե-
րէկ ու այսօր հացի չ'եկաւ։ Եւ 28
Յովնաթանը Սաւուղին պատաս-
խանեց. Դաւիթն ինձանից հրա-
ման խնդրեց՝ որ Բեթլեհէմ գնաց։
Եւ ասեց. Աղաչում եմ՝ ինձ 29
արձակիր. որովհետև այն քաղա-
քումը մեր ազգատոհմը զոհ ու-

նի. և իմ եղբայրն ինձ պատուիրել է և ևթէ հիմա քո աչքերի առաջին շնորհք եմ գտել, աղաչում եմ՝ ինձ թող տուր գընամ և եղբայրներիս տեսնեմ. այս պատճառով թագաւորի սեղանին չ'ևկաս։ Եւ Սաւուղի բարկութիւնը բորբոքուեց Յովնաթանի դէմ, և նորան ասեց. Ով ապստամբ և չար կնկայ զաւակ, մ'թէ ես չ'գիտեմ որ դու Յեսսէի որդին ընտրել ես քո ամօթի և քո մօր ամօթի և խայտառակութեան համար։ Որովհետև քանի որ Յեսսէի որդին երկրիս վերայ ողջ է, դու չես հաստատուիլ, ոչ էլ քո թագաւորութիւնը. և հիմա ղրկիր ուղարկիր և նորան ինձ մօտ բեր, որովհետև նա մահապարտ է։ Եւ Յովնաթանն իր հօրը՝ Սաւուղին պատասխանեց և ասեց. Ինչու համար պիտի մեռցնուի, ի՞նչ է արել։ Եւ Սաւուղը նիզակը շպռտեց նորա վերայ, որ նորան զարկէ. այն ժամանակ Յովնաթանն իմացաւ որ իր հայրը որոշել է որ Դաւիթին մեռցնէ։ Եւ Յովնաթանը սեղանիցը վեր կացաւ բարկութիւնը բորբոքուած, և ամբի երկրորդ օրը կերակուր չ'կերաւ. որովհետև Դաւիթի համար տխրեց, որ իր հայրը նորան անարդեց։

Եւ երբոր առաւօտ եղաւ Յովնաթանը դուրս եկաւ դաշտը, Դաւիթին հետ որոշած ժամանակին, և իր հետ մի փոքր տղայ կար։ Եւ իր տղային ասեց. Վազիր գտիր այս նետերը որ ես գըցում եմ. և երբոր տղան վազում էր, նա նետը նորանից այն կողմը գցեց։ Եւ երբոր այն տղան Յովնաթանի գցած նետի տեղը գնաց, Յովնաթանը այն տղայի ետևից կանչեց և ասեց. Ա՛հա նետը քեզանից այն կողմն է։ Եւ Յովնաթանը այն տղայի ետևից կանչեց. Շուտ արա, շուտպիր, մի կանգնիր։ Եւ Յովնաթանի տղան նետերը ժողովեց, և եկաւ իր տիրոջ մօտ։ Բայց տղան մի բան չ'գիտէր. միայն Յովնաթանն ու Դաւիթը գիտէին այս բանը։ Եւ Յովնաթանն իր գործիքները տղային տուաւ և նորան ասեց. Գնա՝ քաղաքը տար։ Եւ տղան գնաց և Դաւիթը հարաւային կողմից դուրս եկաւ և գետինը ընկաւ երեսի վերայ և երեք անգամ երկրպագութիւն արաւ, և իրար համբուրեցին, ու իրար վերայ լաց եղան մինչև որ Դաւիթը շատ լաց եղաւ։ Եւ Յովնաթանը Դաւիթին ասեց. Գնա խաղաղութեամբ, ինչպէս որ մենք երկուս Տիրոջ անունովը երդում արինք և ասեցինք թէ Տէրը իմ ու քո մէջ՝ և իմ սերունդի ու քո սերունդի մէջ միշտ կայ։ Եւ Դաւիթը վեր կացաւ գնաց, Յովնաթանն էլ գնաց քաղաքը։

Գլ. ԻԱ

Եւ Դաւիթը գնաց Նոբ Ախիմելէք քահանայի մօտ. և Ախիմելէքը զարհուրելով Դաւիթին դիմաւորեց, և նորան ասեց. Ինչու համար մինակ ես և հետդ մարդ չ'կայ։ Եւ Դաւիթն Ախիմելէք քահանային ասեց. Թագաւորը ինձ մի բան է հրամայել և ինձ ասել. Ոչ մի մարդ չ'իմանայ այն բանը, որի համար քեզ ուղարկում եմ, և որ քեզ հրամայեցի. և ես երիտասարդներին այսինչ տեղն եմ որոշել։ Հիմա ինչ կայ ձեռքիդ տակ, ինձ հինգ հաց տուր, կամ ինչ որ կ'գտնուի։ Եւ քահանան Դաւիթին պատասխանեց և ասեց. Ձեռքիս տակ հասարակ հաց չը կայ, միայն սուրբ հաց կայ, երիտասարդները գոնե ևթէ կանանցից զգուշացել են՝ ըղ ՝՝ ՝՝ ։ Եւ Դաւիթը քահանային պատասխանեց և նորան ասեց. կանայք մեզանից հեռու են երեկուանից և միւս օրից երբոր ես դուրս եկայ. և երիտասարդների ամանները մաքուր են. և այս էլ հասարակի պէս է, մանաւանդ որ այսօր ամանների մէջ սրբագործուած է։ Եւ քահանան սուրբ հաց տուաւ նորան. որովհետև այնտեղ ուրիշ հաց չ'կար, բայց միայն առաջաւորութեան հացը, որ Տիրոջ առաջիցը վեր էր առնուած, և վեր առնուած օրը տաք հաց էր դրուած։ Եւ այն օրը Սաւուղի ծառաներից մէկը այնտեղ Տիրոջ առաջին արգիլուած էր, և նորա անունը Եդովմացի Դովէկ էր. նա Սաւուղի հովիւների գլխաւորն էր։ Եւ Դաւիթն Ախիմելէքին ասեց. Այստեղ ձեռքիդ տակ նիզակ կամ սուր չ'կա՞յ. որովհետև սուրս ու զէնքերս հետս չ'առայ, նորա համար որ թագաւորի գործը սոսկալական էր։ Եւ քահանան ասեց. Ա՛հա փղշտացի Գողիաթի սուրը՝ որ նորան Էլայի հովիտումը մեռցրիր, ա՛հա նա եփոդի ետև մի հագուստում փաթաթուած է. ևթէ նորան կ'առնես՝ առ. որովհետև այստեղ նորանից ուրիշը չ'կայ. և Դաւիթն ասեց. Նորա նմանը չը կայ. նորան ինձ տուր։

Եւ այն օրը Դաւիթը վեր կացաւ և Սաւուղի երեսից փախաւ, գնաց Գէթի Ակիսա թագաւորի մօտ։ Եւ Ակիսի ծառաները նորան ասեցին. Չէ՞ որ սա է երկրի թագաւորը՝ Դաւիթը, սորա համար չէ՞ր որ պար բռնողները պատասխանելով երգում էին և ասում.

Սաւուղն իր հազարաւորներին զարկեց,
Եւ Դաւիթ՝ իր բիւրաւորներին։

Եւ Դաւիթն այս խօսքերը դրաւ իր սրտի մէջ, և Գէթի թագաւորի Ակիսի երեսից շատ վախեցաւ։ Եւ նորանց առաջին իր կերպարանքը փոխեց նորանց ձեռքի տակ իրան խելագար ձևացրեց. դռների փեղկերի վերայ նշաններ էր գծում, և լորձունքները ծորեցնում էր իր մօրուքի վերայ։ Եւ Ակիսն իր ծառաներին ասեց. Ա՛հա տեսաք այս մարդը որ խելագար է, նորան ինչու համար ինձ մօտ բերիք։ Մ'թէ ես խելագարների կարօտ եմ, որ դուրան բերիք իմ առաջը գիժութիւն անելու համար. դա իմ տունս մտնէ։

Գլ. ԻԲ

Եւ Դաւիթն այնտեղից գնաց, և փախաւ Ոդողամի քարայրը հասաւ. և իր եղբայրները և իր հօր բոլոր տունը լսեցին, և իջան այնտեղ նորա մօտ։ Եւ նորա մօտ հաւաքուեցան ամեն հարատահարեալ մարդիկ, պարտք ունեցող մարդիկ և ամեն սիրտը վիրաւորուած մարդիկ, և նա նորանց վերայ զօրագլուխ եղաւ, և նորա հետ չորս հարիւրի չափ մարդ եղան։

Եւ Դաւիթն այնտեղից գնաց Մովաբի Մասփան, և Մովաբի թագաւորին ասեց. Աղաչում եմ՝ թող իմ հայրն ու մայրը ձեզ մօտ գան, մինչև որ իմանամ թէ Աստուած ինձ ինչ պիտի անէ։ Եւ նորանց Մովաբի թագաւորի առաջը բերել տուաւ. և նորանք նորա մօտ բնակուեցան՝ որչափ ժամանակ որ Դաւիթը բերդումն էր։

Եւ Գադ մարգարէն Դաւիթին ասեց. Բերդումը մի նստիր, և դուրս եկ գնա Յուդայի երկիրը։ Եւ Դաւիթը գնաց Հարեթի անտառը մտաւ։

Եւ Սաւուղը լսեց, որ Դաւիթը և նորա հետ եղող մարդիկը իմացուել են, և Սաւուղը Գաբաայի մէջ Ռամայի մշուճ ծառի տակին նստել էր, և նիզակը իր ձեռքին, և իր ամեն ծառաներն էլ կանգնել էին իր մօտ։ Եւ Սաւուղն ասեց իր մօտ կանգնող ծառաներին. Լսեցէք, ով Բենիամինի որդիք, Յեսսէի որդին ձեր ամենքիդ էլ արտեր և այգիներ պիտի տայ, ամենքիդ էլ հազարապետներ ու հարիւրապետներ պիտի անէ, Որ ամենքդ ինձ դէմ միաբանուել էք, և Յեսսէի որդիի իմ որդիի հետ սրած դաշնակցութիւնը իմ առջին ոսող չ'կայ. և ձեր մէջ մարդ չ'կայ որ ինձ համար ցաւէ, և ինձ յայտնէ թէ իմ որ-

դին՝ իմ ծառային ինձ դէմ է
վեր կացրել, որ դարանամուտ
լինի, ինչպէս որ այսօր է։
9 Եւ Սաւուղի ծառաների վե-
րակացու Եդովմացի Դովեկը
պատասխանեց և ասեց. Ես Յես-
սէի որդին տեսայ որ եկաւ
Նոբ Աքիտովբի որդի Աքիմելէքի
10 մօտ. Եւ նա նորա համար Տիրո-
ջը հարցրեց, և նորան պաշար
առաւ, և փղշտացի Գողիաթի
սուրը առաւ նորան։
11 Այն ժամանակ թագաւորը
մարդ ուղարկեց և Աքիտովբի որ-
դի Աքիմելէք քահանային և նո-
րա հօր բոլոր տունը՝ Նոբի մէջ
եղող քահանաներին կանչեց. և
ամենքն էլ եկան թագաւորի մօտ։
12 Եւ Սաւուղն ասեց. Լսիր, ով
Աքիտովբի որդի. և նա ասեց.
13 Ահա ես, տէր իմ։ Եւ Սաւու-
ղը նորան ասեց. Ինչու համար
ինձ դէմ մխաթանուեցաք դու և
Յեսսէի որդին, և դու նորան հաց
ու սուր տուիր, և նորա համար
Աստուծուն հարցրիր, որ նա ինձ
դէմ վեր կենայ դարանամուտ
14 լինի, ինչպէս որ այսօր է։ Եւ
Աքիմելէքը պատասխանեց թա-
գաւորին և ասեց. Ո՞ր բոլոր ծա-
ռաների մէջ ո՞վ կայ Դաւիթի
պէս հաւատարիմ, որ թագաւո-
րի փեսայ, հրամանելէր լսող, և
քո տան մէջ պատուաւոր է։
15 Միթէ ես այսօր եմ սկսել նո-
րա համար Աստուծուն հարցնել-
լու. քաւ լինի. թագաւորը իր
ծառայի վերայ իմ հօր բոլոր
տան վերայ մի բան չդնէ, որով-
հետև ծառադ այս բոլոր բանե-
րից մի պզտիկ կամ մեծ բան չը
16 գիտէր։ Եւ թագաւորն ասեց.
Ով Աքիմելէք, անպատճառ պի-
տի մեռնես, և քո հօր բոլոր
17 տունը։ Եւ թագաւորն իր մօտ
կանգնող սուրհանդակներին ա-
սեց. Նա դարձէք և Տիրոջ քա-
հանաներին մեռցրէք, որ նորանց
ձեռքն էլ Դաւիթի հետ է. ո-
րովհետև դիտէին նորա փախչե-
լը՝ և ինձ չյայտնեցին. բայց
թագաւորի ծառաները չուզեցին
իրանց ձեռքը ձգել Տիրոջ քա-
հանաներին զարկելու։ 18
Եւ թա-
գաւորը Դովեկին ասեց. Դու
դարձիր և քահանաներին զարկ։
Եւ Եդովմացի Դովեկն էս դա-
ռաւ և քահանաներին զարկեց,
և այն օրը նա ութսունևհինգ
մարդ մեռցրեց, որ քթանի ե-
փուդ էին հագնում։ 19
Եւ քահա-
նաների Նոբ քաղաքը սուրի բե-
րանով անցրեց, մարդից մինչև
կին, երեխայից մինչև կաթնա-
կեր մանուկը, և մինչև արջառը,
էշը և ոչխարը սուրի բերանով
անցրեց։
Եւ Աքիտովբեան Աքիմելէքի 20
մեկ որդին՝ որի անունը Աբիա-
թար էր, ազատուեցաւ և փա-
խաւ Դաւիթի ետևից։ Եւ Աբի- 21
աթարը Դաւիթին պատմեց թէ
Սաւուղը Տիրոջ քահանաներին
մեռցրեց։ Եւ Դաւիթն Աբիա- 22
թարին ասեց. Ես այն օրը իմա-
ցայ երբոր Եդովմացի Դովեկն
այնտեղ էր, թէ անպատճառ
Սաւուղին պատմելու է. քո հօր
ամեն բոլոր հոգիների յանցաւորը
ես եմ։ Ինձ մնա նատիր, մի վա-
խենար. որովհետև իմ հոգին ո-
րոնողը քո հոգին էլ է որնուտ.
բայց դու ապահով կս ինձ մօտ։

Գլ. ԻԳ

Եւ Դաւիթին իմացրին ասելով. 1
Ահա փղշտացիները Կէիլայի հետ
պատերազմ են անում, և կալե-
րը կողոպտում են։ Եւ Դաւի- 2
թը Տիրոջը հարցրեց. Գնամ այս
փղշտացիներին զարկե՞մ, և Տի-
րոջ Դաւիթին ասեց. Գնա փղշ-
տացիներին զարկ և Կէիլան ա-
զատիր։ Եւ Դաւիթի մարդիկը 3
նորան ասեցին. Ահա մենք այս-
տեղ Յուդայի մէջ վախենում
ենք. էլ ո՞րչափ աւելի եթէ Կէ-
իլա գնանք փղշտացիների գունդ-
երի դէմ։ Եւ Դաւիթը դար- 4
ձեալ Տիրոջը հարցրեց. և Տէրը
նորան պատասխանեց և ասեց.
Վեր կաց՝ Կէիլա իջիր. որովհե-
տև ես փղշտացիներին քո ձեռ-
քը կ'տամ։ Եւ Դաւիթն իր 5
մարդկանցովը Կէիլա գնաց և փշ-

ղշտացիների հետ պատերազմ
արաւ, և նորանց անասուններն
առաւ, և նորանց մեծ հարուա-
ծով զարկեց. և Դաւիթը Կէի-
6 լայի բնակիչներին ազատեց։ Եւ
Աքիմելէքի որդի Աբիաթարը
Դաւիթի մօտ Կէիլա փախչելիս
եփուդը ձեռքին իջաւ։
7 Եւ երբոր Սաւուղին իմացրին,
թէ Դաւիթը Կէիլա է եկել,
Սաւուղն ասեց. Աստուած նո-
րան իմ ձեռքն է մատնել. ո-
րովհետև մտել է դռներ և նի-
գեր ունեցող քաղաքի մէջ թագ-
8 կացել։ Եւ Սաւուղը բոլոր ժո-
ղովրդին պատերազմի հրաւիրեց,
որ կէիլա իջնէ և Դաւիթին և
9 նորա մարդկանցը պաշարէ։ Իսկ
Դաւիթն իմացաւ որ Սաւուղն
իր համար չարութիւն է հնա-
րում և Աբիաթար քահանային
10 ասեց. Եփուդը մօտեցրու։ Եւ
Դաւիթն ասեց. Ով Եհովայ Իս-
րայէլի Աստուած, քո ծառան
լսեց որ Սաւուղն ուզում է գալ
Կէիլայի վերայ, որ փչացնէ քա-
11 ղաքն իմ պատճառովը. Արդեօք
Կէիլայի բնակիչները ինձ նորա
ձեռքը կ'մատնե՞ն, ծառայիդ լը-
սածին պէս՝ Սաւուղը կ'իջնէ՞. ով
Եհովայ Իսրայէլի Աստուած, ա-
ղաչում եմ՝ ծառայիդ յայտնիր։
12 Եւ Տէրն ասեց. Կ'իջնէ։ Եւ
Դաւիթն ասեց. Կէիլայի բնա-
կիչները ինձ և իմ մարդկանցը
Սաւուղի ձեռքը կ'մատնե՞ն։ Եւ
13 Տէրն ասեց. Կ'մատնեն։ Եւ Դա-
ւիթն ու նորա մարդիկը վեր կա-
ցան վեց հարիւր մարդի չափ և
դուրս եկան Կէիլայիցը և գնա-
ցին ուր որ կարող էին գնալ. և
երբոր Սաւուղին իմացրին, թէ
Դաւիթը Կէիլայիցը փախել է,
գնալը ձգեց։
14 Եւ Դաւիթը բնակվում էր ա-
նապատի մէջ ամուր տեղեր, և
նստեց Զիփի անապատումը սարի
վերայ։ Եւ Սաւուղը նորան որո-
նում էր ամեն օր, բայց Աստ-
ուած նորա ձեռքը չմատնեց նո-
15 րան։ Եւ Դաւիթը տեսաւ որ
Սաւուղը դուրս է եկել իր ան-
ձը որոնելու. և Դաւիթը Զի-
փի անապատումը մի անտառի
մէջ էր։
Եւ Սաւուղի որդի Յովնաթանը 16
վեր կացաւ գնաց անտառը Դա-
ւիթի մօտ, և նորա ձեռքը Աս-
տուծով զօրացրեց. Եւ նորան 17
ասեց. Մի վախենար, որովհետև
իմ հօր Սաւուղի ձեռքը քեզ
պիտի չգտնէ, և դու Իսրայէլի
վերայ թագաւոր պիտի լինես, և
ես քո երկրորդը կ'լինեմ, և այս
բանը իմ հայր Սաւուղն էլ գի-
տէ։ Եւ նորանք երկուսն էլ Տի- 18
րոջ առաջին ուխտ արին. և
Դաւիթը մնաց անտառումը, բայց
Յովնաթանը գնաց իր տունը։
Եւ Զիփացիները վեր գնացին 19
Գաբաա Սաւուղի մօտ, և ասե-
ցին. Ահա Դաւիթը մեզ մօտ
թաք է կացել անտառի մէջ
պինդ տեղերում Եքեղա բլուրի
վերայ Եշիմոնի հարաւային կող-
մումը։ Հիմա, ով թագաւոր, 20
իջիր ինչպէս որ քո անձը ուզում
է բոլոր փափաքով իջնել, և նո-
րան թագաւորի ձեռքը մատնելը
մեր բանն է։ Եւ Սաւուղն ասեց. 21
Դուք Տէրից օրհնեալ լինէք,
որ ինձ ցաւակից եղաք։ Ուրեմն 22
գնացէք աւելի լաւ առուգեցէք,
և իմացէք ու տեսէք այնտեղ ուր
որ նորա ոտքը լինի, և ըէ ով է
նորան այնտեղ տեսել. որովհե-
տև ինձ ասել են թէ նա շատ
խորամանկ է։ Ուստի նայեցէք ու 23
իմացէք նորա բոլոր թաք կենալու
տեղերը, և առուգած ինձ մօտ
դարձէք, որ ձեզ հետ գնամ,
և եթէ նա այն երկրումն է, նո-
րան Յուդայի բոլոր հազարաւոր-
ների մէջ պիտի որոնեմ։ Եւ նո- 24
րանք վեր կացան և Սաւուղի ա-
ռաջիցը գնացին Զիփ, և Դա-
ւիթն իր մարդկանցովը Մաոնի
անապատումն էր դաշտի մէջ՝ Ե-
սիմոնի հարաւային կողմին։ Եւ 25
Սաւուղն իր մարդկանցովը գնաց
որոնելու. և երբոր Դաւիթին ի-
մացրին, վայր իջաւ վէմից և նս-
տեց Մաոնի անապատի մէջ. և
Սաւուղը լսեց, և Դաւիթին հա-
լածեց Մաոնի անապատումը։ Եւ 26
Սաւուղը սարի այս կողմովն էր

գնում, և Դաւիթն էլ իր մարդ-
կանցովը սարի այն կողմովը. և
Դաւիթը շտապում էր Սաւուղի
երեսից փախչել. բայց Սաւուղն
ու իր մարդիկը Դաւիթին ու նո-
րա մարդկանցը շրջապատեցին, որ
27 նորանց բռնեն: Եւ մի լրաբեր
եկաւ Սաւուղի մօտ և ասեց.
Շուտով եկ. որովհետև Փղշտա-
ցիները յարձակուել են երկրի
28 վերայ: Եւ Սաւուղը Դաւիթին
հալածելուց դարձաւ գնաց, որ
Փղշտացիների դէմ գնայ. նորա
համար այնտեղի անունը *Սէլա-
մահլէգօթ ասուեցաւ:

ԳԼ. ԻԴ

1 Եւ այնտեղից վեր ելաւ և Են-
գադդիի ամուր տեղերումը նը-
2 ստեց: Եւ երբոր Սաւուղը Փղշ-
տացիներիցը ետ դառաւ՝ նորան
իմացրին և ասեցին. Ահա Դա-
ւիթը Ենգադդիի անապատումն
3 է: Եւ Սաւուղը բոլոր Իսրայէլից
երեք հազար ընտիր մարդիկ ա-
ռաւ, և գնաց, որ Դաւիթին և
նորա մարդկանցը որոնէ Այծե-
4 մանց ժայռերի վերայ: Եւ եկաւ
ճանապարհի վերայ եղող ոչխար-
ների փարախները, և այնտեղ
մէկ քարայր կար. և Սաւուղը
հարկաւորութեան համար ներս
մտաւ. և Դաւիթն իր մարդկան-
ցովը այն քարայրի ներսումը նը-
5 ստել էր: Եւ Դաւիթի մարդիկը
նորան ասեցին. Ահա այս այն օրն
է, որի համար Տէրը քեզ ասել
է թէ Ահա, քո թշնամին քո
ձեռքը կ'մատնեմ, և քո աչքե-
րին հաճոյ երևեցածը արա նո-
րան: Եւ Դաւիթը վեր կացաւ
և Սաւուղի վերարկուի մի ծայրը
6 ծածուկ կտրեց: Եւ յետոյ Դա-
ւիթի սիրտը խղճաց, որ Սաւու-
7 ղի վերարկուի ծայրը կտրեց: Եւ
իր մարդկանց ասեց. Աստուած
չ'անէ որ Տիրոջ օծեալին՝ իմ տի-
րոջը այս բանը անեմ, որ իմ
ձեռքը նորա վերայ մեկնեմ. ո-
րովհետև նա Տիրոջ օծեալն է:

*Այսինքն՝ բաժանումների վէմ:

Եւ Դաւիթն այս խօսքերով իր 8
մարդկանցը զսպեց, և նորանց
թող չ'տուաւ որ Սաւուղի վե-
րայ յարձակուին: Եւ Սաւուղը
քարայրիցը դուրս եկաւ և իր
ճանապարհը գնաց:

Եւ յետոյ Դաւիթը վեր կա- 9
ցաւ այն քարայրիցը դուրս եկաւ
և Սաւուղի ետևից կանչելով ա-
սեց. Ով տէր իմ թագաւոր:
Եւ երբոր Սաւուղն ետ նայեց,
Դաւիթն երեսի վերայ ծռելով
խոնարհութիւն արաւ: Եւ Դա- 10
ւիթն ասեց Սաւուղին. Ի՞նչու
համար ես մարդկանց խօսքին ա-
կանջ դնում, որ ասում են թէ
Ահա Դաւիթը քո չարութիւնն
է ուզում: Ահա այսօր քո աչ- 11
քերը տեսնում են, որ Տէրը այս-
օր քարայրի մէջ քեզ իմ ձեռ-
քը մատնեց. և ասեցին որ քեզ
մեռցնեմ, բայց ես քեզ խնայե-
ցի, և ասեցի. Ես իմ ձեռքը
դէպի իմ տիրոջը չեմ մեկնիլ.
որովհետև նա Տիրոջ օծեալն է:
Եւ տես, հայր իմ, տես, քո 12
վերարկուի ծայրն իմ ձեռքին է.
և ես քո վերարկուի ծայրը կըտ-
րելով՝ քեզ չ'մեռցրի. հասկացիր
և տես, որ իմ ձեռքին չարու-
թիւն և անօրէնութիւն չ'կայ, և
քեզ դէմ մի յանցանք չեմ ա-
րել, բայց դու ուզում ես իմ
անձը մեռցնել: Տէրը դատաս- 13
տան անէ իմ ու քո մէջ, և Տէ-
րը իմ վրէժը քեզանից առնէ.
բայց իմ ձեռքը քեզ վերայ չի
լինիլ: Ինչպէս որ վաղեմի առակն 14
ասում է. Անօրէններիցը դուրս
կ'գայ անօրէնութիւն, բայց իմ
ձեռքը քեզ վերայ չի լինիլ: Ի- 15
սրայէլի թագաւորը որի՞ ետևից է
դուրս եկել, և դու որի՞ ետևից
ես ընկնում. մի մեռած շա՞ն ե-
տևից, մի լուի՞ ետևից: Եւ Տէ- 16
րը դատաւոր լինի, և իմ ու քո
մէջ դատաստան անէ. և տես-
նէ ու իմ դատը վարէ, և ինձ
քո ձեռքիցն ազատէ:

Եւ երբոր Դաւիթը վերջացրեց 17
այս խօսքերը Սաւուղին ասելը,
Սաւուղն ասեց. Այս քո ձա՞յնն
է, որդեակ իմ Դաւիթ. և Սա-

ւուղն իր ձայնը բարձրացրեց և
18 լաց եղաւ. Եւ Դաւիթին ասեց.
Դու ինձանից արդար ես. որով-
հետև դու ինձ բարիք հատու-
ցրիր, բայց ես քեզ չարիք հա-
19 տուցրի: Եւ դու այսօր քո ինձ
արած բարութիւնը յայտնեցիր,
որ Տէրը ինձ քո ձեռքն էր մատ-
նել, բայց դու ինձ չ'մեռցրիր:
20 Որովհետև երբ մէկ մարդ իր
թշնամին գտնելու լինի, թող
կ'տա՞յ որ նա խաղաղութեամբ
գնայ, և այսօր քո ինձ արածի
փոխարէնը Տէրը քեզ բարիք հա-
21 տուցանէ: Եւ հիմա ահա գի-
տեմ որ դու անշուշտ թագաւոր
պիտի դառնաս, և Իսրայէլի թա-
գաւորութիւնը քո ձեռքումը
22 պիտի հաստատուի: Եւ հիմա
Տէրովն ինձ երդում արա թէ
ինձանից յետոյ իմ սերունդին
չես մեռցնիլ, և իմ հօր տանիցն
իմ անունը բնաջինջ չես անիլ:
23 Եւ Դաւիթը Սաւուղին երդում
արաւ: Եւ Սաւուղը գնաց իր
տունը, և Դաւիթն իր մարդկան-
ցովը վեր ելաւ պինդ տեղը:

ԳԼ. ԻԵ

1 Եւ Սամուէլը մեռաւ, և բոլոր
Իսրայէլը ժողովուեցան և նորա
համար սուգ արին, և նորան
թաղեցին իր տանը Ռամայումը:
Եւ Դաւիթը վեր կացաւ իջաւ
Փառանի անապատը:

2 Եւ Մաոնի մէջ մի մարդ կար,
և նորա գործը Կարմեղոսի մէջ
էր. և նա շատ մեծ մարդ էր,
և երեք հազար ոչխար և հազար
այծ ունէր, և իր ոչխարները ա-
ռակտուր անելու համար Կարմե-
3 ղոսումն էր լինում: Եւ այն մար-
դի անունը Նաբաղ էր, և նորա
կնկայ անունը Աբիգեա. և այն
կինը խոհեմամիտ և գեղեցկադէմ
էր, բայց մարդը խստաբարոյ և
չարագործ էր, և նա Քաղեբ-
եան էր:

4 Եւ Դաւիթը լսեց անապատի
մէջ որ Նաբաղ իր ոչխարները
5 խուզում է: Եւ Դաւիթը տասը
երիտասարդ ուղարկեց, և Դա-
ւիթն այն երիտասարդներին ա-
սեց. Վեր գնացէք Կարմեղոս և
Նաբաղի մօտ գնացէք, և իմ ա-
նունովը նորա ողջութիւնը հար-
ցրէք: Եւ այսպէս ասեցէք. Ողջ 6
կաց. քեզ և քո տանը և քո
բոլոր ստացուածքին խաղաղու-
թիւն լինի: Եւ հիմա լսել եմ, 7
որ ոչխարներդ խուզում ես. հի-
մա քո հովիւները մեզ հետ էին,
նորանց վնաս չենք տուել, և նո-
րանց մէկ բանը չէ պակասել՝ որ-
չափ ժամանակ որ մնացել են
Կարմեղոսումը: Քո պատանիներ- 8
ին հարցրու, և թող նորանք
քեզ ասեն. և այս երիտասարդ-
ները թող քո աչքերի առաջին
շնորհք գտնեն, որովհետև բարի
օր եկանք. շնորհք արա՝ քո ծա-
ռաներին և քո որդի Դաւիթին
ձեռքիցդ եկածը տուր: Եւ Դա- 9
ւիթի երիտասարդները գնացին,
և այս բոլոր խօսքերի համեմատ
Դաւիթի անունովը խօսեցին Նա-
բաղի հետ և կանգնեցին: Եւ 10
Նաբաղը Դաւիթի ծառաներին
պատասխանեց և ասեց. Դաւիթն
ո՞վ է, և Յեսսէի որդին ո՞վ է.
այս օրերը իրանց տէրերի երեսից
փախչող ծառաները շատացել են:
Ես իմ հացը, իմ ջուրը և խու- 11
զողներիս համար մորթած անա-
սուններս առնեմ և այն մարդ-
կանց տա՞մ, որ չ'գիտեմ թէ որ-
տեղից են: Եւ Դաւիթի երիտա- 12
սարդներն իրանց ճանապարհը
դարձան, և գնացին այս բոլոր
խօսքերը նորան պատմեցին: Եւ 13
Դաւիթն իր մարդկանցն ասեց.
Ամեն մարդ իր սուրը մէջքը կա-
պէ. և ամեն մարդ իր սուրը
մէջքը կապեց, և Դաւիթն էլ
իր սուրը մէջքը կապեց. և Դա-
ւիթի ետևից չորս հարիւրի չափ
մարդ դուրս եկաւ. և երկու
հարիւր մարդ մնացին կարասի-
ների մօտ:

Եւ ծառաների մէկը Նաբաղի 14
կնկան Աբիգեային իմացրեց և ա-
սեց. Ահա Դաւիթն անապատից
մարդիկ է ուղարկել մեր տիրոջն
օրհնելու համար, բայց նա նո-
րանց դուրս արաւ: Բայց այն 15

մարդիկը մեզ հետ շատ լաւ էին,
և մեզ վնաս չ'տուին. և մեզա-
նից մի բան չ'կորաւ դաշտումը
որչափ ժամանակ որ նորանց հետ
46 ման եկանք։ Նորանք մեզ հա-
մար պարիսպ էին գիշերն էլ ցե-
րեկն էլ, որչափ ժամանակ որ
նորանց մօտ ոչխարները արածե-
47 ցնում էինք։ Եւ հիմա իմացիր
և տես՝ թէ ինչ ես անելու. ո-
րովհետև մեր տիրոջ վերայ և
նորա բոլոր տան վերայ չարիքը
հասել է. որովհետև նա մի այն-
պիսի չար մարդ է, որ նորա հետ
խօսել չի լինիլ։
48 Եւ Աբիգեան շուտով երկու
հարիւր հաց, և երկու տիկ գի-
նի, և հինգ պատրաստուած ոչ-
խար, և հինգ գրիւ հեղի ցորեն,
հարիւր ողկոյզ չամիչ, և երկու
հարիւր շարոց թուզ առաւ և
49 էշերի վերայ դրաւ նորանց. Եւ
իր ծառաներին ասեց. Առաջս
անցէք, ահա ես ձեր ետևիցը
գալիս եմ. բայց իր մարդին Նա-
20 բաղին չ'իմացրեց։ Եւ երբոր այն
կինը էշի վերայ հեծած՝ սարի
անխուլ տեղովը իջնում էր, ա-
հա Դաւիթը և նորա մարդիկը
նորա առաջն էին իջնում, և նա
21 նորանց հանդիպեց։ Եւ Դաւիթն
ասել էր. Ուրեմն զուր տեղն եմ
անապատի մէջ այս մարդի բոլոր
ունեցած բաները պահել, և նո-
րա բոլոր ունեցածիցը մի բան չը
կորաւ, բայց նա ինձ լաւու-
թեան փոխարէն վատութիւն է
22 անում։ Աստուած Դաւիթի թշ-
նամիներին այսպէս և սորանից
աւելի անէ, եթէ մինչև էգուց
առաւօտ նորա մարդկանցից մէկ
արու մարդ ողջ թողեմ։
23 Եւ Աբիգեան Դաւիթին հէնց
որ տեսաւ շուտով էշի վերայիցն
իջաւ, և Դաւիթի առաջին երե-
սի վերայ ընկաւ և մինչև գետի-
24 նը խոնարհութիւն արաւ։ Եւ
նորա ոտքն ընկաւ և ասեց. Ով
տէր իմ, յանցանքը ինձ վերայ
լինի. բայց հրաման տուր՝ որ ա-
ղախինդ քո առաջին խօսէ, և
25 քո աղախնի խօսքերը լսիր։ Աղա-
չում եմ՝ որ իմ տէրը այս չար
մարդ Նաբաղի մասին իր սրտի
մէջ մի բան չ'դնէ. որովհետև
ինչպէս որ անունն է՝ այնպէս էլ
ինքն է. նորա անունը *Նաբաղ
է, և անզգամութիւնը իր հետն
է. բայց ես քո աղախինն իմ տի-
րոջ ուղարկած երիտասարդներին
չ'տեսայ։ Եւ հիմա, ով տէր իմ, 26
Տէրը կենդանի է և քո անձն էլ
կենդանի է, որ Տէրը քեզ չ'թո-
ղեց որ արիւնի մէջ մտնես, և
քո վրէժը քո ձեռքովն առնես.
և հիմա քո թշնամիներն ու իմ
տիրոջը վատութիւն ուզողները
Նաբաղի պէս լինեն։ Եւ հիմա 27
այս ընծան որ քո աղախինը բե-
րաւ իմ տիրոջը, թող իմ տիրոջ
ետևից եկող երիտասարդներին
տրուի։ Աղաչում եմ՝ քո ա- 28
ղախնի յանցանքը ներիր. որով-
հետև Տէրը իմ տիրոջ համար
անպատճառ հաստատ տուն պի-
տի շինէ, որովհետև իմ տէրը
Տիրոջ պատերազմները պատերազ-
մեց, և քո օրերումը քեզ վերայ
մի չարութիւն չ'գտնուեցաւ։
Բայց թէև քեզ հալածելու ու 29
քո անձը որոնելու համար մէկ
մարդ վեր է կացել, իմ տիրոջ
հոգին քո Տէր Աստուծոյ առա-
ջին կեանքի ծրարի մէջ ծրար-
ուած պիտի լինի. բայց քո թշ-
նամիների հոգիները նա կ'շպռտէ
պարսատիկի միջից դուրս էկածի
պէս։ Եւ երբոր Տէրը բոլոր քեզ 30
համար ասած բարութիւնները
իմ տիրոջն անէ, և քեզ Իսրա-
յէլի վերայ թագաւոր նշանակէ,
Այս քեզ համար գայթակղու- 31
թիւն և իմ տիրոջ սրտի համար
խիղճ չ'լինի, թէ առանց պատ-
ճառի արիւն թափեցիր, կամ
իմ տէրն ինքն իրան օգնեց. և
երբոր Տէրը իմ տիրոջը բարու-
թիւն անէ, այն ժամանակ քո
աղախնին յիշես։
Եւ Դաւիթն ասեց Աբիգեային. 32
Օրհնեալ լինի Իսրայէլի Տէր Ա-
ստուածը, որ այսօր քեզ ուղար- 33
կեց ինձ դիմաւորելու. Եւ օրհ-
նեալ է քո խոհեմութիւնը. և

*Այսինքն՝ յիմար. անզգամ։

օրհնեալ ես դու որ այսօր ինձ
արգիլեցիր արիւնի մէջ մտնե-
լուց, և որ իմ ձեռքն ինձ օգ-
34 նէր։ Բայց կենդանի է Իսրայէլի
Տէր Աստուածը՝ որ ինձ արգիլեց
քեզ չարութիւն անելուց, որ
եթէ դու շուտով չ'գայիր և ա-
ռաջս չ'ելնէիր, մինչև էգուց ա-
ռաւօտ Նաբաղի մէկ արու մար-
35 դը չէր մնալ։ Եւ Դաւիթը նորա
ձեռքիցն առաւ ինչ որ բերել էր
նորա համար և նորան ասեց.
Խաղաղութիւնով տունդ գնա.
ահա խօսքիդ լսեցի և քո խնդ-
իրքն ընդունեցի։
36 Եւ Աբիգեան գնաց Նաբաղի
մօտ, և ահա նա իր տանը մէջ
թագաւորական խնջոյքի պէս խնջ-
ոյք ունէր. և Նաբաղի սիրտը
զուարթացել էր, և նա շատ ար-
բել էր. և կինը մինչև առա-
ւօտեան լոյսը մի պզտիկ կամ
37 մեծ բան չ'պատմեց նորան։ Եւ
առաւօտը երբոր Նաբաղը գի-
նիիցն սթափուեցաւ, նորա կինը
այս բաները պատմեց նորան. և
նորա սիրտն իր միջումը մեռաւ,
38 և քար դառաւ։ Եւ տասը օրի
չափ եղաւ՝ Տէրը զարկեց Նաբա-
ղին որ մեռաւ։
39 Եւ Դաւիթը Նաբաղի մեռնե-
լը լսեց՝ ասեց. Օրհնեալ է Տէ-
րը, որ Նաբաղի ձեռքից կրած
նախատինքիս դատաստանն ինքը
դատեց, և իր ծառային չարու-
թիւնից ետ պահեց. և Տէրը Նա-
բաղի չարութիւնը նորա գլխին
դարձրեց։ Եւ Դաւիթը մարդ ու-
ղարկեց՝ և Աբիգեայի հետ խօ-
սեց, որ նորան իր համար կին
40 առնէ։ Եւ Դաւիթի ծառաները
գնացին Կարմեղոս Աբիգեայի մօտ
և նորա հետ խօսեցին և ասեցին.
Դաւիթը մեզ քեզ մօտ ուղար-
կեց, որ քեզ իրան կին առնէ։
41 Եւ նա վեր կացաւ և երեսի վե-
րայ մինչև գետինը երկրպագու-
թիւն արաւ, և ասեց. Ահա քո
աղախինը թող սպասաւոր լինի
իմ տիրոջ ծառաների ոտքերը
42 լուանալու համար։ Եւ Աբիգեան
շուտով կանգնեց՝ էշը հեծաւ
ինքը և իրան հետևող հինգ աղ-
ջիկները, և Դաւիթի պատգա-
մաւորների ետևից գնաց, և նո-
րա կինը եղաւ։
Դաւիթը Յեզրայէլից Աքինոա- 43
մին էլ առաւ, և այս երկուսն
էլ նորա կանայքն եղան։ Բայց 44
Սաւուղն իր Մեղքող աղջիկը՝ որ
Դաւիթի կինն էր՝ Գաղղիմացի
Լայիսի որդի Փաղտիէլին տուաւ։

ԳԼ. ԻԶ

Եւ Զիփացիք գնացին Գաբաա 1
Սաւուղի մօտ և ասեցին. Ահա
Դաւիթը Եսեմոնի դէմ Եքեղայի
բլրի վերայ թաք է կացել։ Եւ 2
Սաւուղը վեր կացաւ և Իսրայէ-
լից երեք հազար ընտրուած
մարդկանց հետ իջաւ Զիփի ա-
նապատը, որ Զիփի անապատու-
մը Դաւիթին որոնէ։ Եւ Սաւու- 3
ղը Եսիմոնի դէմ Եքեղայի բլրի
վերայ ճանապարհին բանակ տը-
ւաւ։ Դաւիթն էլ նստած էր
անապատումը, և երբոր տեսաւ
որ Սաւուղն իր ետևիցը գալիս է
անապատը, Դաւիթը լրտեսներ 4
ուղարկեց, և իմացաւ որ Սա-
ւուղը ստոյգ եկել է։
Եւ Դաւիթը վեր կացաւ և ե- 5
կաւ Սաւուղի բանակ տուած
տեղը. և Դաւիթը տեսաւ Սա-
ւուղի և նորա զօրավար՝ Ներեան
Աբենների պառկած տեղը. բայց
Սաւուղը պառկել էր կառքերի
մէջտեղը, և ժողովուրդը բանակ
էին տուել նորա շուրջը։ Եւ 6
Դաւիթը պատասխանեց և Քետա-
ցի Աքիմելէքի ու Յովաբի եղբայր
Շարուհեան Աբեսային ասեց.
Ո՞վ ինձ հետ բանակը կ'իջնէ
Սաւուղի մօտ։ Եւ Աբեսան ա-
սեց. Ես քեզ հետ կ'իջնեմ։ Եւ 7
Դաւիթը Աբեսայի հետ գիշերը
ժողովրդի մէջ մտաւ, և ահա Սա-
ւուղը կառքերի մէջտեղ պառ-
կած քնած էր. նորա նիզակը
գլխի մօտ գետինը ցցուած էր,
և Աբենները ու ժողովուրդը նո-
րա շուրջը պառկել էին։ Եւ Ա- 8
բեսան Դաւիթին ասեց. Աստ-
ուած այսօր քո թշնամին քո
ձեռքը մատնեց. և հիմա թող

տուր որ նիզակով մէկ անգա-
մում գետինը զարկեմ նորան և
9 չ'կրկնեմ։ Բայց Դաւիթն Աբես-
սային ասեց. Մի մեռցնիր նորան.
որովհետև Տիրոջ օծեալին ո՞վ
կարող է ձեռքը մեկնել և ան-
40 պարտ լինիլ։ Եւ Դաւիթն ա-
սեց. Տէրը կենդանի է որ Տէրը
նորան կ'զարկէ կամ նորա օրը
կ'գայ կ'մեռնէ, կամ թէ պա-
տերազմի մէջ կ'մտնէ ու կ'մեռ-
41 նէ։ Տէրը չ'անէ որ ես ձեռքս
մեկնեմ Տիրոջ օծեալի դէմ. մի-
այն թէ հիմա նորա գլխի մօտի
նիզակը և ջրի կուժը առ և գը-
42 նանք։ Եւ Դաւիթը Սաւուղի
գլխի մօտից նիզակն ու ջրի կուժն
առաւ և գնացին, և տեսնող չը
կար, իմացող չ'կար և զարթնա-
ցող չ'կար. որովհետև ամենքը
քնել էին. նորա համար որ Տի-
րոջ կողմանէ նորանց վերայ խոր
քուն էր եկել։
43 Եւ Դաւիթն այն կողմն ան-
ցաւ, և վեր ելաւ սարի գլուխը՝
հեռուանց կանգնեց, և նորանց
44 մէջ շատ միջոց կար։ Դաւիթը
ժողովրդին և Ներեան Աբեննե-
րին կանչեց և ասեց. Ով Աբեն-
ներ, պատասխան չե՞ս տալիս. և
Աբեններ պատասխանեց և ասեց.
Դու ո՞վ ես որ կանչում ես թա-
45 գաւորին։ Եւ Դաւիթն Աբեննե-
րին ասեց. Դու տղամարդ չե՞ս,
և քեզ պէս ո՞վ կայ Իսրայէլի
մէջ, և ի՞նչու համար քո տէր
թագաւորին պահպանութիւն
չ'արիր. որովհետև ժողովրդից մէ-
կը եկաւ քո տէր թագաւորին
46 մեռցնելու։ Այդ բանը լաւ չէ
որ դու արիր. կենդանի է Տէրը
որ դուք մահապարտ էք. որով-
հետև Տիրոջ օծեալին՝ ձեր տիրո-
ջը պահպանութիւն չ'արիք. և
հիմա նայիր, թագաւորի նիզակը
և նորա գլխի մօտի ջրի կուժը
47 ո՞ւր է։ Այն ժամանակ Սաւուղը
Դաւիթի ձայնը ճանաչեց և ա-
սեց. Դա քո՞ ձայնն է, որդեակ
իմ Դաւիթ. և Դաւիթն ասեց.
Իմ ձայնն է, ով տէր իմ թա-
48 գաւոր։ Եւ նա ասեց. Ի՞նչու
համար իմ տէրը այդպէս իր ծա-
ռայի ետևիցն է ընկել. որովհե-
տև ի՞նչ արի, և իմ ձեռքումն
ի՞նչ չարութիւն կայ։ Եւ հիմա 49
իմ տէր թագաւորը իր ծառայի
խօսքերը թող լսէ. Եթէ Տէրն է
քեզ ինձ վերայ վեր կացրել,
թող դա զոհ լինի. բայց եթէ
մարդկանց որդիքը, թող նորանք
Տիրոջ առաջին անիծեալ լինեն,
որովհետև ինձ այսօր դուրս ա-
րին՝ որ Տիրոջ ժառանգութեան
հետ չ'միանամ, և ինչ ասեցին.
Գնա օտար աստուածների ծա-
ռայութիւն արա։ Եւ հիմա Տի- 20
րոջ առաջին իմ արիւնը գետինը
չ'ընկնի, որովհետև Իսրայէլի թա-
գաւորը դուրս է եկել մէկ լու
որոնելու, ինչպէս որ մէկը սարե-
րումը կաքաւ է հալածում։
Եւ Սաւուղն ասեց. Մեղք 21
գործեցի. դարձիր, որդեակ իմ
Դաւիթ. քեզ դէմ այլ ևս չարիք
չեմ գործիլ, որովհետև իմ հո-
գին այսօր քո աչքերին պատ-
ուական երևեցաւ. ահա յիմա-
րութիւն արի և մեծապէս սխալ-
ուեցայ։ Եւ Դաւիթը պատաս- 22
խանեց և ասեց. Ահա թագաւո-
րի նիզակը. թող երիտասարդնե-
րի մէկը գայ և առնէ այն։ Եւ 23
Տէրը ամեն մարդի իր արդարու-
թեան ու իր հաւատարմութեան
համեմատ հատուցանէ. որովհե-
տև Տէրը քեզ այսօր իմ ձեռքը
տուաւ, բայց ես չ'ուզեցի ձեռքս
մեկնել Տիրոջ օծեալին։ Եւ ա- 24
հա ինչպէս որ քո հոգին այսօր
իմ աչքերին պատուական երևե-
ցաւ, իմ հոգին էլ Տիրոջ առա-
ջին այնպէս պատուական երևայ,
և նա ինձ ամեն նեղութիւնից
ազատէ։ Եւ Սաւուղը Դաւիթին 25
ասեց. Օրհնեալ լինես դու, որ-
դեակ իմ Դաւիթ, դու գործ
ես գործելու և յաջողութիւն ես
գտնելու։ Եւ Դաւիթը գնաց իր
ճանապարհը, Սաւուղն էլ դար-
ձաւ իր տեղը։

ԳԼ. ԻԷ

Եւ Դաւիթն իր սրտումն ասեց. 1
Վերջապէս ես մէկ օր Սաւուղի
ձեռքովը կորչելու եմ. ինձ հա-

մար Փղշտացիների երկիրը փախ-
չելուց լաւը չ'կայ, որ Սաւուղը
ինձանից յոյսը կ'կտրի, և ինձ
այլ ևս Իսրայէլի բոլոր սահման-
ների մէջ չի որոնիլ. այսպէս նո-
2 րա ձեռքիցը կ'ազատուիմ։ Եւ
Դաւիթը վեր կացաւ իր հետ ե-
ղող վեց հարիւր մարդովը, և
անցաւ գնաց Գէթի թագաւոր՝
3 Մաովքի որդի Անքուսի մօտ։ Եւ
Դաւիթը բնակուեց ինքը և իր
մարդիկը՝ ամեն մարդ իր տնովը,
Դաւիթն էլ իր երկու կիներովը՝
Յեզրայէլացի Աքինոամի հետ ու
Կարմելացի Նաբաղի կին Աբիգ-
եայի հետ՝ Անքուսի մօտ Գէթու-
4 մը։ Եւ երբոր Սաւուղին իմա-
ցրին, թէ Դաւիթը փախել է
Գէթ, այլ ևս նորան չ'որոնեց։
5 Եւ Դաւիթը Անքուսին ասեց.
Աղաչում եմ, եթէ քո առաջին
շնորհք գտայ, թող գիւղաքա-
ղաքների մէկում ինձ տեղ տան,
որ այնտեղ նստեմ. որովհետև
ի՞նչու համար քո ծառան քեզ
հետ թագաւորանիստ քաղաքու-
6 մը նստէ։ Եւ այն օրը Անքուսը
Սիկելակը նորան տուաւ. այս
պատճառով Սիկելակը մինչև այս
օրը Յուդայի թագաւորներինը ե-
7 ղաւ։ Եւ այն օրերի թիւը, որ
Դաւիթը Փղշտացիների երկրումը
բնակուեց, մէկ տարի և չորս
ամիս եղաւ։
8 Եւ Դաւիթը և նորա մարդիկը
վեր ելան, և Գեսուրացիների,
Գազերացիների և Ամաղեկացիներ-
ի վերայ յարձակուեցան, որով-
հետև նորանք վաղուց ի վեր բը-
նակվում էին այն երկրումը, Սու-
րից մինչև Եգիպտոսի երկիրը։
9 Եւ Դաւիթն այն երկիրը զարկեց,
և ամենևին մարդ կամ կին ողջ
չ'թողեց, և ոչխարներ ու ար-
ջառներ և էշեր և ուղտեր ու
հանդերձներ առաւ, և դարձաւ
10 եկաւ Անքուսի մօտ։ Եւ Անքուսն
ասեց. Այսօր չէ՞ք յարձակուել.
և Դաւիթն ասեց. Դէպի Յու-
դայի հարաւային կողմը, Յերա-
մելացիների հարաւային կողմը,
և Կենեցիների հարաւային կող-
11 մը։ Եւ Դաւիթը մարդ կամ կին
ողջ չ'թողեց, որ լուր բերէ Գէթ,
որովհետև ասեց. Մի գուցէ մեզ
համար պատմեն և ասեն թէ
Դաւիթն այսպէս է անում։ Եւ
նորա սովորութիւնը այսպէս է
լինելու, քանի որ Փղշտացիների
երկրումը բնակուի։ Եւ Անքու- 12
սը Դաւիթին հաւատալով՝ ասեց.
Այս մարդը՝ իր ժողովրդի՝ Իսրա-
յէլի մօտ իրան գարշահոտ է ա-
րել. թող ինձ մօտ յաւիտեան
ծառայ լինի։

ԳԼ. ԻԸ

Եւ այն օրերում Փղշտացիները 1
իրանց զօրքերը ժողովեցին պա-
տերազմի, որ դուրս գան Իսրա-
յէլի հետ պատերազմեն. և Ան-
քուսը Դաւիթին ասեց. Գիտե-
նաս որ դու քո մարդկանցովը
ինձ հետ պիտի բանակը դուրս
գաս։ Եւ Դաւիթն Անքուսին ա- 2
սեց. Ուրեմն դու կ'իմանաս թէ
ծառադ ինչ կ'անէ, և Անքուսը
Դաւիթին ասեց. Նորա համար
քեզ միշտ ինձ անձնապահ եմ
անելու։
Իսկ Սամուէլը մեռած էր. և 3
բոլոր Իսրայէլը նորա համար սուգ
էին արել. և նորան թաղել էին
իր քաղաքումը Ռամայի մէջ։
Սաւուղն էլ վհուկներին և նշա-
նագէտներին՝ երկրիցը վեր էր ա-
ռել։ Եւ Փղշտացիները ժողով- 4
ուեցան և եկան Սունամումը բա-
նակ տուին. Սաւուղն էլ ժողո-
վեց բոլոր Իսրայէլին և բանակ
տուին Գեղբուէումը։ Եւ Սա- 5
ւուղը տեսաւ Փղշտացիների բա-
նակը՝ և վախեցաւ, և սիրտը շատ
դողաց։ Եւ Սաւուղը Տիրոջը հար- 6
ցրեց, բայց Տէրը չ'պատասխանեց
նորան՝ ոչ երազներով, ոչ ուրի-
մով, և ոչ մարգարէներով։ Այն 7
ժամանակ Սաւուղն իր ծառա-
ներին ասեց. Ինձ համար մէկ
վհուկ կին որոնեցէք, որ գնամ
նորան հարցնեմ։ Եւ ծառաները
նորան ասեցին. Ահա Ենդովրի
մէջ մէկ վհուկ կին կայ։
Եւ Սաւուղն իր հանդերձները 8
փոխեց և ուրիշ հանդերձներ

հագաւ, և իբ հետ եղող երկու մարդով գնաց, և նորանք գիշերով այն կնկայ մօտ հասան։ Եւ Սաաաուղ ասեց. Շնորհք արա, ինձ վհուկի ոգիով դիւթութիւն արա, և վեր հանիր ինձ համար 9 որին որ քեզ ասեմ։ Եւ կինը նորան ասեց. Ահա դու գիտես Սաուղի արած բանը, որ վհուկներին և նշանագէտներին երկրից բնաջինջ է արել. ուրեմն ինչու ինձ մեռցնելու համար իմ անձին որոգայթ ես պատրաս- 10 ում։ Եւ Սաուղը Տէրովը երդում արաւ նորան և ասեց. Տէրը կենդանի է որ այս բանից քեզ 11 մեկ փաս չի պատահիլ։ Այն ժամանակ կինն ասեց. Քեզ համար ո՞վ վեր հանեմ. և նա ասեց. Սամուէլին հանիր ինձ համար։

12 Եւ կինը Սամուէլին տեսնելով մեծ ձայնով աղաղակեց. և կինը Սաուղի հետ խօսեց և ասեց. Ինչու ինձ խաբեցիր, որովհետև 13 դու Սաուղն ես։ Եւ թագաւորը նորան ասեց. Մի վախենար, բայց ինչ տեսար։ Եւ կինը Սաուղին ասեց. Գետնից դուրս 14 երկու աստուածներ տեսայ։ Եւ Սաաաուղը նորան ասեց. Նորա կերպարանքը ինչպէս է։ Եւ կինն ասեց. Ահա մեկ ծեր մարդ է վեր գալիս, և մի վերարկու է հագած։ Եւ Սաուղը հասկացաւ որ նա Սամուէլն է. և երեսի վերայ գիտինը ծռուելով նո- 15 րան երկրպագութիւն արաւ։ Եւ Սամուէլն ասեց Սաուղին. Ինչու համար ինձ նեղութիւն տուիր և ինձ վեր հանեցիր։ Եւ Սաուղն ասեց. Ես մեծ նեղութեան մէջ եմ, որովհետև փղշտացիները ինձ հետ պատերազմ են անում, և Աստուած ինձանից հեռացել է, և ինձ չէ պատասխանում ոչ մարգարէների միջոցով և ոչ երազներով, նորա համար քեզ կանչեցի, որ ինձ իմացնես 16 թէ ինչ անեմ։ Եւ Սամուէլն ասեց. Ինչու համար ինձ ես հարցնում, հիմա որ Տէրը քեզանից հեռացել է ու քեզ թշնամի եղել։ Եւ Տէրն արաւ ինչպէս որ իմ ձեռովը խօսել էր, և Տէրը քո ձեռքիցը թագաւորութիւնը պատառեց, և քո ընկեր Դաւիթին տուաւ այն։ Որովհետև դու Տիրոջ խօսքին չլսեցիր և նորա սաստիկ բարկութիւնը Ամաղէկի վերայ գործ չդրիր, նորա համար այսօր Տէրը քեզ արաւ այս բանը։ Եւ Տէրը քեզ հետ Իսրայէլին էլ է մատնելու փղշտացիների ձեռքը. և եղուց դու և քո որդիքն ինձ մօտ կ'լինիք. Տէրը Իսրայէլի բանակին էլ է մատնելու փղշտացիների ձեռքը։

Այն ժամանակ Սաուղը շուտով վայր ընկաւ բոլոր հասակովը գետնի վերայ, և Սամուէլի խօսքերիցը շատ վախեցաւ, որ վերան այժ էլ չ'ինաց. որովհետև բոլոր օրը և բոլոր գիշերը հաց չէր կերել։ Եւ կինը Սաուղի մօտ գնաց, և տեսաւ նորա չափազանց սոսկումը և նորան ասեց. Ահա աղախինդ խօսքիդ լսեց. և հոգիս ձեռքիս մէջ դնելով ինձ ասած խօսքերիդ հնազանդեցի։ Եւ հիմա աղաչում եմ՝ դու էլ քո աղախնի խօսքին լսիր, և քո առաջին մի պատառ հաց դնեմ, և կեր՝ որ այժ առնես. որովհետև ճանապարհ ես գնալու։ Բայց նա չ'ուզեց, և ասեց. Չեմ ուտում. սակայն նորա ծառաները և կինն էլ բրնազատեցին նորան, և նորանց խօսքին լսեց. և գետնից վեր կացաւ անկողնի վերայ նստեց։ Եւ կինը տան մէջ սնուցած մի հորթ ունէր, շուտով նորան մորթեց, և ալիւր առաւ հունցեց, և նորանով բաղարջ թխեց. Եւ Սաուղի առաջը և նորա ծառաների առաջը դրաւ. և նորանք կերան և վեր կացան նոյն գիշերը գնացին։

Գլ. ԻԹ

1 Եւ փղշտացիները իրանց բոլոր բանակները ժողովեցին Ափեկ. և Իսրայէլացիները բանակ սուրն

2 Յեզրայելի աղբիւրի մօտ։ Եւ փղշտացիների նախարարները անց էին կենում հարիւրաւորներով և հազարաւորներով. և Դաւիթն և իր մարդիկը նորանց ետևիցը անց էին կենում Ակեսի հետ։

3 Եւ փղշտացիների իշխաններն ասեցին. Այս Եբրայեցիներն ինչ են, և Ակեսը փղշտացիների իշխաններին ասեց. Այս Իսրայէլի թագաւոր Սաուղի ծառայ Դաւիթը չէ՞, որ այսչափ օրերից՝ կամ մանաւանդ այսչափ տարիներից ի վեր ինձ մօտ է. և նորա հետ եկած անցած օրիցը մինչև այս օրը նորա վերայ ոչ մի բան չ'գտայ։

4 Եւ փղշտացիների իշխանները նորա վերայ բարկացան, և փղշտացիների իշխանները նորան ասեցին. Այդ մարդը ետ ուղարկիր, որ գնայ իր տեղը, ուր որ նորան դրիր, և մեզ հետ չ'իջնէ պատերազմի, մի գուցե պատերազմի մէջ մեզ թշնամի ինչ անէ. որովհետև նա ինչով պիտի հաշտուի իր տիրոջ հետ, չէ՞ որ այս մարդկանց գլուխներով։

5 Սա այն Դաւիթը չէ՞ որի համար կանայքը պար բռնելով և պատասխանելով ասում էին.

Սաուղն իր հազարաւորներին զարկեց,
Եւ Դաւիթն իր բիւրաւորներին։

6 Եւ Ակեսը Դաւիթին կանչեց և նորան ասեց. Տէրը կենդանի է որ դու ուղիղ մարդ ես, և ինձ հետ բանակի մէջ մտնելդ ու դուրս գալդ իմ աչքին բարի է երևում. որովհետև ինձ մօտ եկած օրիցդ մինչև այս օրը քեզ վերայ մի չարութիւն չ'գտայ. բայց նախարարների աչքին դու լաւ չես երևում. Եւ հիմա ետ դարձիր և խաղաղութեամբ գնա, և փղշտացիների նախարարների աչքին վատ երևեցածը մի անիր։

8 Եւ Դաւիթն Ակեսին ասեց. Ես ինչ եմ արել, և քո առաջիդ կանգնած օրից մինչև այս օրը ծառայիդ վերայ ինչ գտար, որ ես չգնամ և իմ տէր թագաւորի թշնամիների հետ պատերազմ չանեմ։ Եւ Ակեսը պատասխանեց և Դաւիթին ասեց. Գիտեմ որ դու իմ աչքերի առաջին Աստուծոյ հրեշտակի պես լաւ ես երևում, բայց փղշտացիների իշխաններն ասում են թէ՝ Նա մեզ հետ դուրս չ'գայ պատերազմի։ Եւ հիմա առաւօտը քո կանուխ վեր կաց՝ դու և քո տիրոջ ծառաները՝ որոնք եկան քեզ հետ, և առաւօտը կանուխ վեր կացած լուսածագին գնացէք։ Եւ Դաւիթն ինքը և իր մարդիկը առաւօտը կանուխ վեր կացան որ գնան, և փղշտացիների երկիրը դառնան, իսկ փղշտացիները վեր եկան Յեզրայել։

Գլ. Ի

1 Եւ երբոր Դաւիթը և իր մարդիկը երրորդ օրը Սիկեղակ, ահա Ամաղեկացիները յարձակուել էին հարաւային երկրի ու Սիկեղակի վերայ. և Սիկեղակը զարկելով նորան կրակով այրել էին. Եւ այնտեղի կանայքը գերի էին առել՝ պզտիկից մինչև մեծը մեկ մարդ չէին մեռցրել, այլ իրանց հետ տանելով՝ գնացել էին իրանց ճանապարհը։ Եւ 3 երբոր Դաւիթը և իր մարդիկը քաղաքը հասան, ահա կրակով այրուած էր նա. և իրանց կանայքը, տղերքը և աղջկերքը գերի էին տարուած։ Եւ Դաւիթը 4 և իր հետ եղող ժողովուրդն իրանց ձայները բարձրացրին և լաց եղան, մինչև որ նորանց վերայ այժ չ'մնաց լալու։ Եւ Դաւիթի 5 երկու կանայքը Յեզրայէլացի Աքինոամը և Կարմէլացի Նաբալի կինը՝ Աբիգեան էլ էր գերի տարուած։ Եւ Դաւիթը մեծ տագնապի մէջ էր, որովհետև ժողովուրդը նորան ուզում էր քարկոծել, նորա համար որ բոլոր ժողովրդից ամեն մեկի սիրտը կսկծում էր իր տղերանց ու աղջկանց համար. բայց Դաւիթը զօրացաւ իր Տէր Աստուծովը։ 7 Եւ Դաւիթը Աբիաթար քահանային որդի Աքիմելէքի ասեց.

Եփուդ մօտեցրու ինձ, և Աբի-
աթարը եփուդը Դաւիթին մօ-
8 տեցրեց։ Եւ Դաւիթը Տիրոջը
հարցրեց և ասեց. Այս գունդի
ետևից հալածե՞մ. նորանց կը
հասնե՞մ. և նա նորան ասեց.
Հալածիր, որովհետև անպատ-
ճառ կ'հասնես և բոլորովին կ'ա-
զատես։
9 Եւ Դաւիթը ինքը և իր հետ
եղող վեց հարիւր մարդիկը գը-
նացին, և եկան մինչև Բոսոր հե-
ղեղատը, և ետ մնացողները
10 կանգնեցին։ Եւ Դաւիթը չորս
հարիւր մարդով Ֆշնամին հալա-
ծեց. (սակայն երկու հարիւր
մարդիկը որ շատ յոգնած էին,
մնացին Բոսոր հեղեղատի այս
11 կողմին առանց անցնելու։) Եւ նո-
րանք դաշտի մէջ մի Եգիպտացի
մարդ գտան, և նորան բերին
Դաւիթի մօտ. և նորան հաց
տուին, ու կերաւ, և նորան
12 ջուր խմեցրին. Եւ նորան մի քիչ
չոր թուզ և երկու ողկոյզ չա-
միչ տուին, որ կերաւ և ոգին
վերան եկաւ. որովհետև երեք օր
և երեք գիշեր հաց չէր կերել
13 և ջուր չէր խմել։ Եւ Դաւիթը
նորան ասեց. Դու ո՞ւմ մարդն
ես, և ո՞ր տեղից ես։ Եւ նա ա-
սեց. Ես մի Եգիպտացի պատա-
նի եմ, մի Ամաղեկացի մարդի
ծառայ. և իմ տէրն ինձ ձգել
է, որովհետև հիմա երեք օր է
14 որ հիւանդ եմ։ Մենք Քերեթի
հարաւային կողմի Յուդայի կող-
մերի և Քաղէբի հարաւային կող-
մերի վերայ յարձակուեցանք, և
15 Սիկելակը կրակով այրեցինք։ Եւ
Դաւիթը նորան ասեց. Ինձ այն
գունդին մօտ կ'տանե՞ս։ Եւ նա
ասեց. Դու ինձ Աստուծով եր-
դում արա որ ինձ չես մեռցնիլ,
և ինձ իմ տիրոջ ձեռքը չես
տալ. ես էլ քեզ այն գունդին
կ'տանեմ։
16 Եւ նա նորան տարաւ. և ա-
հա նորանք բոլոր գետնի երեսի
վերայ ցրուած էին. ուտում էին
ու խմում էին, և Փղշտացիների
երկրից ու Յուդայի երկրից ա-
ռած այն բոլոր մեծ աւարի հա-
մար ուրախութիւն էին անում։
17 Եւ Դաւիթն արշալոյսից մինչև
հետևեալ օրուայ իրիկունը նո-
րանց զարկեց, և նորանցից ոչ մի
մարդ չ'ազատուեցաւ, բայց մի-
այն չորս հարիւր երիտասարդներ՝
որոնք ուղտերի վերայ հեծան և
փախան։ Եւ Դաւիթն Ամաղե-
18 կացիների առած բոլոր բաները
ազատեց. և Դաւիթն իր երկու
կանանցն էլ ազատեց։ Եւ ի-
19 րանց մէկ բանը պակաս չէր պըզ-
տիկից մինչև մեծը, թէ տղայ,
թէ աղջիկ, և թէ աւար, ինչ
որ նորանք առել տարել էին,
Դաւիթն ամենն էլ ետ բերաւ։
20 Եւ Դաւիթը բոլոր ոչխարներն ու
արջառներն առաւ, և նորանց
հօտերի առաջից տանում էին,
և ասում էին՝ Դաւիթի աւարն
է այս։
21 Եւ Դաւիթն այն երկու հա-
րիւր մարդկանց մօտ եկաւ, ո-
րոնք շատ յոգնած էին և չէին
կարողացել Դաւիթի ետևից գը-
նալ. և նա նորանց նստեցրել էր
Բոսոր հեղեղատի մօտ. և նորանք
դուրս եկան Դաւիթին և նորա
հետ եղող ժողովրդին դիմաւո-
րելու. և Դաւիթը երբոր ժողո-
վրդին մօտեցաւ, նորանց ող-
22 ջութիւնը հարցրեց։ Եւ Դաւի-
թի հետ գնացող մարդկանցից
բոլոր չար ու անզգամ մարդիկը
պատասխանեցին և ասեցին. Ըստ
որում սորանք մեզ հետ չեն գը-
նացել՝ մենք էլ նորանց մեր ա-
զատած աւարիցը չենք տալ. ա-
մեն մարդ միայն իր կինն ու որ-
23 դին առնէ ու գնայ։ Բայց Դա-
ւիթն ասեց. Այդպէս մի անիք,
եղբայրներս, որովհետև Տէրը մեզ
տուաւ այս, և ինքը մեզ պահեց
և մեր վերայ եկող գունդին մեր
24 ձեռքը մատնեց. Եւ այս բանի
մէջ ո՞վ ձեզ կ'լսէ. որովհետև
կարասիների մօտ նստողների բա-
ժինը պատերազմի գնացողների
բաժնի հետ հաւասար պիտի լի-
նի. հաւասարապէս պիտի բա-
25 ժանեն։ Եւ այն օրից ի վեր այս-
պէս է Իսրայէլի մէջ. նա կանոն
և օրէնք դրաւ այս մինչև այս օրը։

26 Եւ Դաւիթն եկաւ Սիկելակ,
և այն աւարիցն ուղարկեց Յու-
դայի ծերերին՝ իր բարեկամներին
ասելով. Ահա ձեզ համար Տի-
րոջ թշնամիների աւարիցը մէկ
27 ընծայ։ Այսինքն Բեթելում ե-
ղողներին, հարաւային Ռամով-
թում եղողներին, Յաթիրում
28 եղողներին, Արոերում եղողներ-
ին, Սեփամովթում եղողներին,
29 Եսթեմովում եղողներին, Բաքա-
լում եղողներին, Յերամելացի-
ների քաղաքներում եղողներին,
Կենեցիների քաղաքներում եղող-
30 ներին, Հորմայում եղողներին,
Քովրասանում եղողներին, Աթա-
31 քում եղողներին, Քեբրոնում
եղողներին, և այն ամեն տեղե-
րը ուր որ Դաւիթն իր մարդ-
կանցովը ման էր եկել։

ԳԼ. ԼԱ.

1 Եւ Փղշտացիները պատերազմ
էին անում Իսրայէլի հետ և Իս-
րայէլացի մարդիկը փախան Փղշ-
տացիների առաջից և սպանուած
վայր ընկան Գեղբուէ սարի վե-
2 րայ։ Եւ Փղշտացիները Սաւու-
ղին և նորա որդիներին հասան, և
Փղշտացիները զարկեցին Սաւու-
ղի որդկանց՝ Յովնաթանին, Աբի-
3 նադաբին և Մեղքիսաւէին։ Եւ
պատերազմը Սաւուղի դէմ սաստ-
կացաւ, և աղեղնաւորները նո-
րան գտան. և աղեղնաւորների-
4 ցը շատ վիրաւորուեցաւ։ Եւ
Սաւուղն ասեց իր կապարճակի-
րին. Սուրդ հանիր և նորանով
ինձ խոցիր. մի գուցէ այս անթըլ-
փատները գան և ինձ խոցեն,
և ինձ ծաղր անեն. բայց նորա
կապարճակիրը չ'ուզեց որովհե-
տև շատ վախեցաւ։ Եւ Սաւուղն
առաւ սուրը և ընկաւ նորա վե-
5 րայ։ Եւ երբոր նորա կապարճա-
կիրը տեսաւ որ Սաւուղը մեռաւ,
նա էլ իր սուրի վերայ ընկաւ, և
6 մեռաւ նորա հետ։ Եւ այսպէս
մեռան Սաւուղը և նորա երեք
որդիքը, և նորա կապարճակի-
րը, և նորա բոլոր մարդիկը նոյն
օրը մէկտեղ։
7 Եւ տեսան Իսրայէլի մարդիկը
որ հովիտի այն կողմին և Յորդա-
նանի այն կողմին էին, թէ Իս-
րայէլացիները փախան, և թէ մե-
ռան Սաւուղը և նորա որդիքը՝
այն ժամանակ թողեցին քաղաք-
ները և փախան. և Փղշտացիներ-
ը եկան ու նորանց մէջ բնակ-
ուեցան։
8 Եւ եղաւ հետևեալ օրը, որ
Փղշտացիները եկան մեռելները
մերկացնելու, և գտան Սաւու-
ղին և նորա երեք որդիներին Գեղ-
9 բուէ սարի վերայ ընկած։ Այն
ժամանակ նորա գլուխը կտրեցին,
և զէնքերը հանեցին. և Փղշտա-
ցիների երկրի շրջակայքը մարդ
ուղարկեցին որ իրանց կռատուն-
ներին ու ժողովրդին աւետիս տան։
10 Եւ նորա զէնքերը դրին Աստա-
րովթի տանը, և նորա մարմինը
կախեցին Բեթսանի պարիսպիցը։
11 Եւ երբոր Գաղաադի Յաբիսի
բնակիչները լսեցին ինչ որ Փղշ-
տացիները արել էին Սաւուղին,
12 Բոլոր քաջ մարդիկը վերկացան,
և բոլոր գիշերը գնացին, և վեր
առան Սաւուղի մարմինը և նո-
րա որդկանց մարմինները Բեթ-
սանի պարսպիցը, և եկան Յա-
բիս և նորանց այրեցին այնտեղ,
13 Եւ նորանց ոսկորներն առան, և
թաղեցին նորանց Յաբիսումն այն
ծառի տակ. և եօթն օր ծոմ
պահեցին։

ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔԸ

(ԿԱՄ՝ ՍԱՄՈՒԷԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔԸ)

ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ Սաւուղի մեռնելուց յետոյ՝
եղաւ որ երբոր Դաւիթը ետ դա-
ռաւ Ամաղեկացիներին զարկե-
լուց և երկու օր Սիկելակումը
2 մնաց. Երրորդ օրը եղաւ որ՝ ա-
հա բանակիցը՝ Սաւուղի մօտից
մէկն եկաւ, հանդերձները պա-
տառուած և գլխին հող. և երբ-
որ նա Դաւիթի մօտ եկաւ՝ գե-
տինն ընկաւ և երկրպագութիւն
3 արաւ. Եւ Դաւիթն ասեց նո-
րան. Ո՞ր տեղից ես գալիս. Եւ
նա ասեց նորան. Ես Իսրայէլի
4 բանակիցը փախայ. Եւ Դաւիթն
ասեց նորան. Բանը ի՞նչպէս ե-
ղաւ, պատմիր ինձ. Եւ նա ա-
սեց թէ ժողովուրդը պատերազ-
միցը փախաւ, և ժողովրդիցն էլ
շատ մարդիկ ընկան մեռան. Նաև
Սաւուղը և նորա որդի Յովնա-
5 թանը մեռան. Եւ Դաւիթն ի-
րան լուր բերող պատանիին ա-
սեց. Սաւուղի և նորա որդի Յով-
նաթանի մեռնելը ի՞նչպէս իմա-
6 ցար. Եւ նորան լուր բերող պա-
տանին ասեց. Դիպուածով Գեղ-
բուէ սարի վերայ պատահեցի, և
ահա Սաւուղը կռնած էր իր նի-
զակի վերայ, և կառքերն ու
ձիաւորները նորա վերայ էին հաս-
7 նում. Այն ժամանակ ետ դա-
ռաւ և տեսաւ ինձ, և ինձ կան-
չեց, ես էլ ասեցի. Ահա ես.
8 Եւ նա ինձ ասեց. Դու ո՞վ ես.
Ես էլ նորան ասեցի թէ Ամաղե-
9 կացի եմ. Եւ նա ինձ ասեց. Ա-
ղաչում եմ, ինձ վերայ կանգ-
նիր ու ինձ մեռցրու. որովհետև
թմրութիւնն ինձ կոխել է, բայց
10 հոգիս տակաւին վերաս է. Եւ
ես նորա վերայ կանգնեցի և նո-
րան մեռցրի. որովհետև ես հաս-
կացայ որ՝ նա իր ընկնելուցն յե-
տոյ՝ չի ապրիլ. և նորա գլխի վե-
րայի թագը և նորա բազուկի վե-
րայի ապարանջանը առայ և այս-
տեղ բերի նորանց իմ տիրոջ հա-
մար. Այն ժամանակ Դաւիթն 11
իր հանդերձները բռնեց և պա-
տառեց նորանց, նոյնպէս էլ նո-
րա հետ եղող բոլոր մարդիկը.
Եւ նորանք Սաւուղի համար, և 12
նորա որդի Յովնաթանի համար
և Տիրոջ ժողովրդի համար, և
Իսրայէլի տան համար սուգ բռ-
նեցին և լաց եղան, և մինչև ի-
րիկուն ծոմ պահեցին, որ նո-
րանք սրով ընկել էին.
Եւ Դաւիթն իրան լուր բերող 13
պատանիին ասեց. Դու ո՞ր տե-
ղացի ես. Եւ նա ասեց, Ես մէկ
պանդուխտ Ամաղեկացիի որդի
եմ. Եւ Դաւիթը նորան ասեց. 14
Ի՞նչպէս չ՛վախեցար՝ ձեռքդ մեկ-
նեցիր և Տիրոջ օծեալին մեռցրիր.
Եւ Դաւիթը երիտասարդների մէ- 15
կին կանչեց և ասեց. Մօտեցիր՝
սորան մեռցրու. և նա նորան
զարկեց, որ նա մեռաւ. Եւ Դա- 16
ւիթը նորան ասեց. Քո արիւնը
քո գլուխը. որովհետև քո բե-
րանը քեզ համար վկայութիւն
տուաւ՝ ասելով. Տիրոջ օծեալին
ես մեռցրի.
Եւ Դաւիթը Սաւուղի վերայ 17
և նորա որդի Յովնաթանի վերայ 18
այս ողբն ողբաց և ասեց. Աղեղը
Յուդայի որդկանցը սովորեցնեն.
ահա նա Ուղիղի գրքումը գըր-
ուած է.
Փառաւորութիւնը, ով Իս- 19
րայէլ,
Քո բարձր տեղերի վերայ խոց-
ուեցաւ.

Ի՞նչպէս վայր ընկան քաջերը.
20 Մի պատմէք Գէթի մէջ.
Աւետիս մի տաք Ասկաղոնի ճա-
նապարհներումը.
Մի գուցէ ուրախանան Փղշտա-
ցիների աղջկերքը,
Մի գուցէ հրճուին անթլփատ-
ների աղջկերքը.
21 Ով Գեղբուէի սարեր.
Ոչ ցող և ոչ անձրև լինի ձեզ
վերայ.
Ոչ էլ երախայրի ընծաների ան-
դաստաններ.
Որովհետև այնտեղ ձգուեցաւ
զօրաւորների վահանը,
Սաւուղի վահանը իբրև թէ իւ-
ղով չ՛օծուած.
22 Խոցուածների արիւնից՝ զօրա-
ւորների ճարպից՝
Յովնաթանի աղեղը ետ չ՛քաշ-
ուեցաւ,
Եւ Սաւուղի սուրը դարտակ ետ
չ՛դառաւ.
23 Սաւուղն ու Յովնաթանը,
Շատ սիրելի և հաճելի իրանց կեն-
դանութեան ժամանակին,
Իրանց մահուան ժամանակին էլ
իրարից չ՛բաժանուեցան.
Արծիւներից աւելի թեթևաշարժ՝
Եւ առիւծներից աւելի զօրաւոր.
24 Իսրայէլի աղջկերք, լացէք Սա-
ւուղի համար,
Որ ձեզ վայելուչ կարմիրներ էր
հագցնում,
Եւ ձեր հանդերձների վերայ ոս-
կի զարդեր էր դնում.
25 Ինչպէ՞ս վայր ընկան քաջերը
պատերազմում.
Յովնաթանը քո բարձր տեղերի
վերայ խոցուեցաւ.
26 Յաւում եմ քեզ համար, եղ-
բայրս Յովնաթան,
Դու ինձ խիստ սիրելի էիր.
Բարձր էր ինձ համար քո սէրը
կանանց սէրից.
27 Ինչպէ՞ս ընկան քաջերը.
Եւ կորա՞ն պատերազմի զէնքերը.

ԳԼ. Բ.

1 Եւ սորանից յետոյ եղաւ որ
Դաւիթը Տիրոջը հարցրեց և ա-
սեց. Վեր գնա՞մ Յուդայի քա-
ղաքների մէկը. Եւ Տէրը նորան
ասեց. Վեր գնա. Եւ Դաւիթն
ասեց. Ո՞ւր վեր գնամ. Եւ նա
ասեց. Քեբրոն. Եւ Դաւիթը իր 2
երկու կանայքը՝ Յեզրայէլացի Ա-
քինոամի հետ և Կարմելացի Նա-
բաղի կին Աբիգեայի հետ վեր
գնաց. Եւ Դաւիթն իր հետ ե- 3
ղող մարդկանցն էլ՝ ամեն մէկն
իր ընտանիքովը տարաւ. և Քեբ-
րոնի քաղաքներում բնակուե-
ցան. Եւ Յուդայի մարդիկն ե- 4
կան, և Դաւիթին այնտեղ Յու-
դայի տան վերայ թագաւոր օ-
ծեցին. Եւ Դաւիթին պատմե-
ցին և ասեցին թէ՝ Գաղաադի
Յաբիսի բնակիչները Սաւուղին
թաղեցին. Եւ Դաւիթը Գաղա- 5
ադի Յաբիսի բնակիչների մօտ
պատգամաւորներ ուղարկեց, և
նորանց ասեց. Դուք Տէրիցն օրհ-
նեալ լինէք որ ձեր տիրոջը՝ Սա-
ւուղին արիք այս ողորմութիւնը
և նորան թաղեցիք. Եւ հիմա 6
Տէրը ձեզ ողորմութիւն և ճըշ-
մարտութիւն անէ, և ես էլ ձեզ
կ՛հատուցանեմ այս լաւութիւ-
նը, որ դուք արիք այդ բանը.
Եւ հիմա ձեր ձեռքը ուժովա- 7
նայ. և զօրաւոր քաջեր եղիք.
որովհետև ձեր տէրը՝ Սաւուղը
մեռաւ, և Յուդայի տունը ինձ
իրանց վերայ թագաւոր օծեցին.
Իսկ Սաւուղի զօրավար Ներ- 8
եան Աբեններն առաւ Սաւուղի
որդի Յեբուսթէին և նորան տա-
րաւ Մանայիմ, Եւ նորան Գա- 9
ղաադի վերայ, Ասուրիի վերայ,
Յեզրայէլի վերայ, Եփրեմի վե-
րայ, Բենիամինի վերայ, և բոլոր
Իսրայէլի վերայ թագաւոր արաւ.
Երբոր Սաւուղի որդի Յեբուսթէն 10
Իսրայէլի վերայ թագաւոր եղաւ,
քառասուն տարեկան էր, և եր-
կու տարի թագաւորութիւն ա-
րաւ. միայն Յուդայի տունը
Դաւթին էր հետևում. Եւ Յու- 11
դայի տան վերայ Քեբրոնի մէջ
Դաւիթի թագաւորութիւն ա-
րած ժամանակը եօթը տարի և
վեց ամիս էր.
Եւ Ներեան Աբենները և Սա- 12
ւուղի որդի Յեբուսթէի ծառա-

ները Մանայիմից դուրս եկան
13 Գաբաւոն։ Եւ Շարուհեայի որ-
դի Յովաբը և Դաւիթի ծառա-
ները Քեբրոնից դուրս եկան, և
Գաբաւոնի աւազանի մօտ նորանց
հանդիպեցին. և սորանք աւա-
զանի մէկ կողմին և նորանք ա-
ւազանի միւս կողմին նստեցին,
14 Եւ Աբեններն ասեց Յովաբին.
Թող երիտասարդները վեր կենան
և մեր առաջին խաղան։ Եւ Յո-
15 վաբն ասեց. Վեր կենան։ Եւ
նորանք վեր կացան թիւով ան-
ցան Բենիամինից ու Սաւուղի որ-
դի Յեբուսթէի կողմից տասնևեր-
կու մարդ, և Դաւիթի ծառա-
16 ներից տասնևերկու մարդ։ Եւ
ամեն մէկն իր ընկերի գլխիցը
բռնեց, և իր սուրը իր ընկերի
կողը մխեց, և մէկտեղ ընկան.
և այնտեղի անունը *Քեղկաթ-
ասուրիմ ասուեցաւ, որ Գաբա-
ւոնի մէջ է։
17 Եւ այն օրը պատերազմը շատ
սաստիկ եղաւ. և Աբեններն Իս-
րայէլի մարդկանց հետ՝ Դաւիթի
ծառաների առաջին յաղթուե-
18 ցաւ։ Եւ Շարուհեայի երեք որ-
դիքը Յովաբը, Աբեսսան և Ա-
սայէլն այնտեղ էին. և Ասայէլը
դաշտի այծեամի պէս թեթև էր
19 ոտքով։ Եւ Ասայէլն Աբենների
ետևից հալածեց, և Աբենների
ետևից աջ կամ ձախ կողմը չը
20 խոտորուեց։ Եւ Աբեններն ետ
դառաւ և ասեց. Ասայէլ, դո՞ւ
21 ես։ Եւ նա ասեց. Ես եմ։ Եւ
Աբենները նորան ասեց. Դէպի
աջ կամ ձախ կողմդ խոտորիր,
և երիտասարդների մէկին բռնիր,
և նորա զէնքերն առ քեզ հա-
մար։ Բայց Ասայէլը նորա ետևից
22 հեռանալ չ՚ուզեց։ Եւ Աբենները
շարունակեց դարձեալ և Ա-
սայէլին ասեց. Ետևիցս դարձիր.
ի՞նչու համար քեզ գետինը զար-
կեմ. այն ժամանակ ես ի՞նչպէս
երեսս բարձրացնեմ դէպի քո եղ-
23 բայր Յովաբը։ Բայց նա չ՚ուզեց
ետ դառնալ։ Եւ Աբենները նի-
զակի ետևի ծայրովը սնակուշտի-
ցը զարկեց նորան, և նիզակը նո-
րա ետևիցը դուրս եկաւ. և նա
այնտեղ վայր ընկաւ և այնտեղ
մեռաւ. և ով որ գալիս էր՝ Ա-
սայէլի վայր ընկած և մեռած
տեղը կանգնում էր։ Եւ Յովաբը 24
և Աբեսսան Աբենների ետևից ընկ-
ած հալածում էին. և արեգա-
կը մայր մտաւ երբոր նորանք Գի-
այի Գաբաւոնի անապատի ճա-
նապարհին եղող Ամմայի բլուրը
եկան։
Եւ Բենիամինի որդիքն Աբեն- 25
ների ետևից ժողովուեցան, մի
գունդ եղան, և մէկ բլուրի գըլ-
խին կանգնեցին։ Եւ Աբենները 26
Յովաբին կանչեց և ասեց. Մի՞-
թէ սուրը յաւիտեան պիտի ու-
տէ. չ՚գիտե՞ս որ սորա վերջը
դառն կ՚լինի. և մինչև ե՞րբ չես
ասելու ժողովրդին, որ իրանց եղ-
բայրներին հալածելուց ետ դառ-
նան։ Եւ Յովաբն ասեց. Կեն- 27
դանի է Աստուած, եթէ դու
խօսած լինէիր, ժողովրդի ամենն
էլ առաւօտիցն էր ետ դառել
իր եղբայրների հալածելուցը։
Այն ժամանակ Յովաբը փող 28
հնչեցրեց. և բոլոր ժողովուրդը
կանգնեց, և այլ ևս Իսրայէլի ե-
տևից չ՚հալածեցին և այլ ևս
պատերազմ չ՚արին։ Եւ Աբեննե- 29
րը և նորա մարդիկը այն բոլոր
գիշերը դաշտի միջովը գնացին
և Յորդանանովն անցան, և բոլոր
Բեթրոնը գնալով եկան Մանա-
յիմ։ Եւ Յովաբը Աբեններից ետ 30
դառաւ, և բոլոր ժողովրդին ժո-
ղովեց, և Դաւիթի ծառաներից
պակաս էին տասնևինը մարդ և
Ասայէլը։ Բայց Դաւիթի ծառա- 31
ները Բենիամինից և Աբենների
մարդկանցից երեք հարիւր վաթ-
սուն մարդ զարկեցին որ մեռան։
Եւ Ասայէլին վեր առան, և նո- 32
րան Բեթլեհէմի մէջ իր հօր գե-
րեզմանումը թաղեցին։ Եւ Յովա-
բը և նորա մարդիկը բոլոր գիշե-
րը գնացին, և արշալոյսին հասան
Քեբրոն։

ԳԼ. Գ

Եւ երկայն պատերազմ եղաւ 1

*Այ-ինքն՝ սուրերի արտը։

Սաւուղի տան և Դաւիթի տան
մէջ. և Դաւիթը գնալով զօրա-
նում էր, և Սաւուղի տունը
գնալով տկարանում էր։
2 Եւ Քեբրոնում Դաւիթին որ-
դիներ ծնուեցան, և նորա անդ-
րանիկն էր Ամնոնը՝ Յեզրայէլացի
3 Աքինոամից, Եւ նորա երկրորդը
Կարմելացի Նաբաղի կին Աբիգ-
եայից Քիլաբն էր, և երրորդը
Գեսուրի թագաւորի Թոլմիի աղ-
ջիկ Մաաքայի որդի Աբիսողոմն
4 էր, Եւ չորրորդը Ագգիթի որդի
Ադոնիան էր, և հինգերորդը Ա-
5 բիտալի որդի Սափատիան էր, Եւ
վեցերորդը Դաւիթի կին Էդղա-
յից ծնուած Յեթրամն էր։ Քեբ-
րոնում Դաւիթին սորանք ծըն-
ուեցան։
6 Եւ քանի որ Սաւուղի տան և
Դաւիթի տան մէջ պատերազմ
կար, Աբենները Սաւուղի տան
7 համար թիկունք էր։ Եւ Սա-
ւուղը մէկ հարճ ունէր անունը
Ռեսփա, Այիայի աղջիկը։ Եւ
Յեբ-ոսթէն Աբեններին ասեց. Ի՞ն-
չու մօտեցար իմ հօր հարճին։
8 Եւ Աբենները շատ բարկացաւ
Յեբուսթէի խօսքերի համար և
ասեց. Մի՞թէ ես շան գլուխ եմ
որ Յուդայի դէմ՝ այսօր ողորմու-
թիւն եմ անում քո հօր Սա-
ւուղի տանը, նորա եղբայրներին
և բարեկամներին, և քեզ Դա-
ւիթի ձեռքը չ՚մատնեցի, և դու
այսօր այս կնկան համար ինձ մե-
9 ղադրո՞ւմ ես։ Աստուած Աբեն-
ներին այսպէս և սորանից աւելի
անէ, եթէ Դաւիթին չ՚անեմ,
10 ինչ որ Տէրը նորան երդում ա-
րաւ. Այսինքն թագաւորութիւ-
նը Սաւուղի տանիցը վեր առ-
նեմ, և Դաւիթի աթոռը Իսրա-
յէլի վերայ և Յուդայի վերայ
11 հաստատեմ՝ Դանից մինչև Բեր-
սաբէէ։ Եւ Յեբ-ոսթէն այլ ևս չը
կարողացաւ Աբեններին պատաս-
խան տալ՝ նորանից վախենալուցը։
12 Եւ Աբեններն իր կողմանէ Դա-
ւիթին պատգամաւորներ ուղար-
կեց ասելով. Այս երկիրը ո՞ւմն
է. և նա ասեց. Ինձ հետ դաշ-
նակցութիւն արա, և ահա իմ
ձեռքը քեզ հետ կ՚լինի բոլոր
Իսրայէլը դէպի քեզ դարձնելու
համար։ Եւ նա ասեց. Լաւ, ես 13
քեզ հետ դաշնակցութիւն կ՚ա-
նեմ. բայց քեզանից մէկ բան
եմ պահանջում, այսինքն որ իմ
երեսը չ՚տեսնես՝ եթէ առաջ Սա-
ւուղի աղջիկ Մեղքողին ինձ հա-
մար չ՚բերես, երբոր դաս իմ ե-
րեսը տեսնելու։ Եւ Դաւիթը 14
Սաւուղի որդի Յեբուսթէի մօտ
դեսպաններ ուղարկեց՝ ասելով.
Իմ կին Մեղքողը տուր ինձ, ո-
րին Փղշտացիների հարիւր ան-
թլփատութիւններովը առել եմ։
Եւ Յեբուսթէն մարդ ուղարկեց 15
և նորան առաւ նորա մարդ Լա-
յիսեան Փաղտիէլից։ Եւ նորա 16
մարդը գնաց լալով մինչև Բա-
ւուրիմ նորա ետևիցը։ Եւ Ա-
բենները նորան ասեց. Ետ դար-
ձիր գնա. և նա ետ դառաւ։
Եւ Աբենները խօսեց Իսրայէլի 17
ծերերի հետ և ասեց. Երէկ ու
միւս օր ուզում էիք որ Դաւի-
թը ձեզ վերայ թագաւոր լինի.
Եւ հիմա արէք. որովհետև Տէ- 18
րը Դաւիթի համար խօսեց ասե-
լով. Իմ ծառայ Դաւիթի ձեռ-
քովը պիտի ազատեմ՝ իմ ժողո-
վուրդ Իսրայէլին Փղշտացիների
ձեռքից ու նորա բոլոր թշնամի-
ների ձեռքից։ Նաև Աբենները 19
Բենիամինի հետ խօսեց. Նոյնպէս
գնաց Աբենները Քեբրոն, որ Դա-
ւիթին էլ պատմէ Իսրայէլի ու
Բենիամինի բոլոր տանը հաճոյ ե-
րևեցածը։ Եւ Աբեններն եկաւ 20
Քեբրոն Դաւիթի մօտ՝ հետը քը-
սան մարդ։ Եւ Դաւիթն Աբեն-
ներին և նորա հետ եղող մարդ-
կանցը խնճոյք արաւ։ Եւ Աբեն- 21
ները Դաւիթին ասեց. Վեր կե-
նամ գնամ, և բոլոր Իսրայէլը
ժողովեմ իմ տէր թագաւորի
մօտ, որ քեզ հետ դաշնակցու-
թիւն անեն, և դու սրտիդ բոլոր
ուզածի պէս թագաւորութիւն
անես։ Եւ Դաւիթն Աբեններին
ուղարկեց, և նա գնաց խաղա-
ղութեամբ։
Եւ ահա Դաւիթի ծառաները 22
և Յովաբը ասպատակութիւնից

ետ դառան, և իրանց հետ շատ
աւար բերին. իսկ Աբենները Դա-
ւիթի մօտ Քեբրոնումը չէր. ո-
րովհետև Դաւիթն ուղարկել էր
նորան, և նա գնացել էր խաղա-
23 ղութեամբ։ Եւ երբոր Յովաբը
և նորա հետ եղող բոլոր զօրքը
եկան, Յովաբին պատմեցին և ա-
սեցին. Ներեան Աբենները եկաւ
թագաւորի մօտ, նա էլ ուղար-
կեց նորան, և նա գնաց խաղա-
24 ղութեամբ։ Այն ժամանակ Յո-
վաբը թագաւորի մօտ գնաց և
ասեց. Ի՞նչ ես արել. ահա Ա-
բենները քեզ մօտ է եկել. ի՞ն-
չու համար նորան թող ես տուել,
25 և նա էլ գնացել է։ Դու գի-
տես, որ Ներեան Աբենները ե-
կել է քեզ խաբելու, և քո
դուրս գալն ու մտնելը հասկա-
նալու, և քո ամեն գործքն ի-
26 մանալու։ Եւ Յովաբը Դաւիթի
մօտից դուրս եկաւ, և Աբենն-
երի ետևիցը պատգամաւորներ ու-
ղարկեց և նորան Սիրայի ջրհորի-
ցը ետ դարձրին. բայց Դաւիթը
27 չ'գիտէր։ Եւ երբոր Աբենները
ետ դառաւ Քեբրոն, Յովաբը նո-
րան քաշեց դռան ներսի կողմը
նորա հետ ծածուկ խօսակցու-
թիւն անելու համար, և նորան
այնտեղ զարկեց նորա սնակուշ-
տին իր եղբայր Ասայէլի արիւնի
համար. և նա մեռաւ։
28 Եւ նորանից յետոյ Դաւիթը
լսեց և ասեց. Ես ու իմ թա-
գաւորութիւնը յաւիտեան ան-
պարտ ենք Տիրոջ առաջին Ներ-
29 եան Աբենների արիւնիցը։ Յովա-
բի գլխի վերայ, ու նորա հօր
բոլոր տան վերայ հասնի, և Յո-
վաբի տանիցը պակաս չ'լինի սեր-
մանակաթը, բորոտը, ցուպի կըռ-
թընողը, սրով ընկնողը և հացի
30 կարօտը։ Այսպէս Յովաբը և նո-
րա եղբայր Աբեսսան Աբեններին
մեռցրին. որովհետև նա նորանց
եղբայր Ասայէլին պատերազմի
ժամանակ Գաբաւոնի մէջ մեռ-
ցրել էր։
31 Եւ Դաւիթը Յովաբին և նորա
հետ եղող բոլոր ժողովրդին ա-
սեց. Ձեր հանդերձը պատառե-
ցէք, և քուրձեր հագէք, և Ա-
բենների առաջից լաց եղէք։ Եւ
Դաւիթ թագաւորը դագաղի ե-
տևիցը գնաց։ Եւ Աբեններին 32
թաղեցին Քեբրոնումը. և թա-
գաւորը ձայնը բարձրացրեց և Ա-
բենների գերեզմանի վերայ լաց
եղաւ. բոլոր ժողովուրդն էլ
լաց եղաւ։
Եւ թագաւորը Աբենների հա- 33
մար ողբաց և ասեց. Մի՞թէ
անզգամի մեռնելու պէս մեռաւ
Աբենները։ Քո ձեռքերը չէին 34
կապուած. և քո ոտքերը չէին
դրուած կապանքում. անօրէնն-
երի առաջ ընկնողների պէս ըն-
կար։ Եւ բոլոր ժողովուրդը դար-
ձեալ նորա վերայ լաց եղաւ։ Եւ 35
բոլոր ժողովուրդը եկաւ որ Դա-
ւիթին հաց ուտեցնեն, քանի որ
դեռ ցերեկ էր, բայց Դաւիթը
երդում արաւ և ասեց. Աստ-
ուած ինձ այսպէս և սորանից ա-
ւելի անէ, եթէ արեգակը մըտ-
նելուց առաջ հաց կամ ուրիշ
բան ճաշակեմ։ Եւ բոլոր ժողո- 36
վուրդը ուշադրութիւն արաւ. և
այս բանը իրանց աչքին հաճոյ ե-
րևեցաւ, ինչպէս որ թագաւորի
ամեն արածը բոլոր ժողովրդի աչ-
քերին հաճոյ էր երևում։ Եւ 37
այն օրը բոլոր ժողովուրդը և բո-
լոր Իսրայէլը հասկացաւ, որ Ներ-
եան Աբենների մեռցնուիլը թա-
գաւորիցը չէր։ Եւ թագաւորն 38
իր ծառաներին ասեց. Չ'գիտէ՞ք
որ այսօր Իսրայէլի մէջ մէկ զօ-
րավար և մեծաւոր ընկաւ։ Եւ 39
ես այսօր տկար եմ, թէպէտ և
թագաւոր եմ օծուած. և այս
մարդիկը՝ Շարուհեայի որդիքը
ինձանից ուժով են. Տէրը չարու-
թիւն անողին հատուցանէ՝ նորա
չարութեան համեմատ։

ԳԼ. Դ

Եւ երբոր Սաւուղի որդի Յեբուս- 1
թին լսեց Աբենների Քեբրոնի մէջ
մեռնելը, ձեռքերը թուլացան,
և բոլոր Իսրայէլը տագնապուե- 2
ցան։ Եւ Սաւուղի որդին երկու
գնդապետ ունէր, մէկի անունը

Բաանա՝ և միւսի անունը Ռեքաբ
էր. որոնք Բենիամինի ցեղից Բե-
րովթացի Ռեմօնի որդիքն էին.
(որովհետև Բերովթն էլ Բենիա-
3 մինեաններինն էր համարվում, Եւ
Բերովթացիները փախան Գեթ-
թայիմ. և մինչև այսօր պան-
դուխտի պէս այնտեղ են բնակ-
4 վում։) Եւ Սաւուղի որդի Յով-
նաթանը մի տղայ ունէր՝ ոտքերը
կաղ, երբոր Սաւուղի և Յովնա-
թանի լուրը Յեզրայէլից եկաւ,
նա հինգ տարեկան էր. և նորա
դայեակը նորան առաւ և փա-
խաւ. և երբոր շտապում էր
փախչելու, տղան վայր ընկաւ և
կաղ դառաւ, և նորա անունը
5 Մեմփիբոսթէ էր, Եւ Բերովթա-
ցի Ռեմօնի որդիքը՝ Ռեքաբը և
Բաանան գնացին և ցերեկուայ
տաք ժամանակին Յեբուսթէի
տունը մտան, և նա կէս օրուայ
ժամանակին անկողինում քնել
6 էր։ Եւ նորանք մինչև տան մէջ-
տեղը մտան իբրև թէ ցորեն առ-
նողներ են և նորան սնակուշտի-
ցը զարկեցին, և Ռեքաբը և նորա
7 եղբայրը Բաանան փախան։ Այս
կերպով նորանք տունը մտան,
երբոր նա ներսի սենեակում՝ իր
անկողինումը քնում էր, նորան
զարկեցին, մեռցրին, և նորա
գլուխը կտրեցին, և գլուխն ա-
ռան բոլոր գիշերը դաշտի ճանա-
8 պարհովը գնացին։ Եւ Յեբուս-
թէի գլուխը տարան Քեբրոն Դա-
ւիթի մօտ, և թագաւորին ա-
սեցին. Ահա քո թշնամիի՝ քո
կեանքդ որոնող Սաւուղի որդի
Յեբուսթէի գլուխը. և Տէրը
Սաւուղիցը և նորա սերունդիցն
այսօր վրէժխնդրութիւն տուաւ
9 մեր տէր թագաւորին։ Եւ Դա-
ւիթը պատասխանեց Բերովթացի
Ռեմօնի որդիք Ռեքաբին և նորա
եղբայր Բաանային և նորանց ա-
սեց. Իմ հոգին ամեն նեղու-
10 թիւնից ազատող Տէրը կենդանի
է, Որ նա որ ինձ պատմեց և ա-
սեց թէ Ահա Սաւուղը մեռաւ,
և ինքն իր աչքին աւետիս տուող
էր երևում, բայց ես նորան բըռ-
նեցի և Սիկելակի մէջ նորան
մեռցրի, փոխանակ որ ես նորան
աւետիսի վարձք տայի. Որչա՛փ 11
աւելի այն չար մարդկանցը, ո-
րոնք արդար մարդին մեռցրին իր
տանը մէջ իր անկողինի վերայ.
և հիմա նորա արիւնը անպատ-
ճառ ձեր ձեռքիցը պիտի պա-
հանջեմ և ձեզ երկրիցը պիտի
վերացնեմ։ Այն ժամանակ Դա- 12
ւիթը երիտասարդներին հրամա-
յեց, և նորանք մեռցրին. և նո-
րանց ձեռքերն ու ոտքերը կըտ-
րեցին, և Քեբրոնի աւազանի վե-
րայ կախեցին։ Իսկ Յեբուսթէի
գլուխն առան և թաղեցին Քեբ-
րոնի մէջ Աբենների գերեզմա-
նումը։

ԳԼ. Ե

Եւ Իսրայէլի բոլոր ցեղերը եկան 1
Քեբրոն Դաւիթի մօտ և ասեցին
թէ Ահա մենք քո ոսկորը և քո
մարմինն ենք։ Դեռ սորանից ա- 2
ռաջ *երբոր Սաւուղը մեզ վերայ
թագաւոր էր, դու էիր Իսրայէլի
դուրս հանողը և ներս բերողը.
և Տէրը քեզ ասեց. Դու հով-
ուես իմ ժողովուրդ Իսրայէլին,
և դու լինես իշխան Իսրայէլի վե-
րայ։ Եւ Իսրայէլի բոլոր ծերերը 3
եկան թագաւորի մօտը Քեբրոն,
և Դաւիթ թագաւորը նորանց
հետ դաշինք դրաւ Քեբրոնում
Տիրոջ առաջին, և նորանք Դա-
ւիթին թագաւոր օծեցին Իսրա-
յէլի վերայ։
Դաւիթը երեսուն տարեկան 4
էր՝ երբոր թագաւոր եղաւ և
թագաւորութիւն արաւ քառա-
սուն տարի։ Քեբրոնումը Յու- 5
դայի վերայ թագաւորութիւն ա-
րաւ եօթը տարի և վեց ամիս,
և Երուսաղէմումը թագաւորու-
թիւն արաւ բոլոր Իսրայէլի և
Յուդայի վերայ երեսունևերեք
տարի։
Եւ թագաւորը իր մարդիկնե- 6
րովը գնաց Երուսաղէմ՝ այն երկ-
րում բնակող Յեբուսացիների վե-
րայ. և Դաւիթի հետ խօսեցին

*երէկ էլ մէկէլ օրն էլ

ասելով թէ Այս տեղ չես մըտ-
նիլ, այլ հէնց կոյրերն ու կա-
ղերը քեզ կ'հեռացնեն. կարծե-
լով թէ Դաւիթը չի կարենալ
7 այնտեղ մտնել։ Բայց Դաւիթն
առաւ Սիօնի բերդը, (որ է Դա-
8 ւիթի քաղաքը։) Եւ Դաւիթն
այն օրն ասեց. Ով որ Յեբուսա-
ցիներին զարկէ և ջրանցքին հաս-
նէ և Դաւիթին ատելի եղող կա-
ղերին ու կոյրերին էլ — նորա հա-
մար ասում են՝ Կոյրն ու կաղը
9 տունը չ'մտնէ։ Եւ Դաւիթը բը-
նակուեց այն բերդում և նորան
Դաւիթի քաղաք անուանեց. և
Դաւիթը նորա շուրջը շինեց Մե-
10 լօնից դէպի ներս։ Եւ Դաւիթը
գնալով մեծանում էր, և զօրաց
Տէր Աստուածը նորա հետ էր։
11 Եւ Տիւրոսի Քիրամ թագաւո-
րը դեսպաններ ուղարկեց Դաւի-
թի մօտ, նաև եղևնափայտեր և
հիւսներ և որմնադիրներ՝ որոնք
Դաւիթի համար տուն շինեցին։
12 Եւ Դաւիթն իմացաւ որ Տէրն
իրան թագաւոր հաստատեց Իս-
րայէլի վերայ, և որ բարձրացրեց
նորա թագաւորութիւնը իր ժո-
13 ղովուրդ Իսրայէլի համար։ Եւ
Դաւիթը Քեբրոնից գալուց յե-
տոյ՝ Երուսաղէմից ուրիշ էլ հար-
ճեր և կնիկներ առաւ. և Դաւի-
թին ուրիշ էլ աղերք և աղջկերք
14 ծնուեցան։ Եւ սորանք են Երու-
սաղէմում նորան ծնուած տը-
ղերանց անունները. Սամաա,
15 Սովբաբ, Նաթան, Սողոմոն, Յե-
բաար, Եղիսուա, Նափեկ, Յա-
16 փիէ, Եղիսամա, Եղիադա ու
Եղիփաղէտ։
17 Եւ Փղշտացիները լսեցին, որ
Դաւիթին Իսրայէլի վերայ թա-
գաւոր են օծել, և բոլոր Փղշ-
տացիները վեր գնացին որ Դաւի-
թին որոնեն. երբոր Դաւիթն այս
18 լսեց՝ իջաւ բերդը։ Եւ Փղշտա-
ցիները եկան և տարածուեցան
19 Ռափայնոց հովիտումը։ Եւ Դա-
ւիթը Տիրոջը հարցրեց և ասեց.
Վեր գնա՞մ Փղշտացիների դէմ.
նորանց իմ ձեռքը կ'մատնե՞ս։
Եւ Տէրը Դաւիթին ասեց. Գնա.
որովհետև Փղշտացիներին ան-
պատճառ քո ձեռքը կ'մատնեմ։
Այն ժամանակ Դաւիթը Բաաղ- 20
փարասին գնաց. և Դաւիթը
զարկեց նորանց այն տեղում և
ասեց. Տէրն իմ թշնամիներին
իմ ձեռքովը պատառեց, ջրերի
պատառուածքի պէս. նորա հա-
մար այն տեղի անունը Բաաղփա-
բասին ասուեցաւ։ Եւ Փղշտացի- 21
ները այնտեղ ձգեցին իրանց կուռ-
քերը. և Դաւիթը և իր մար-
դիկն առան նորանց։
Եւ Փղշտացիները դարձեալ վեր 22
ելան, և Ռափայնոց հովիտումը
տարածուեցան։ Եւ Դաւիթը Տի- 23
րոջը հարցրեց, և նա ասեց. Վեր
չ'գնաս, այլ դէպի նորանց ետե-
ւի կողմը դարձիր, թթենիների
կողմից նորանց վերայ գնա։ Եւ 24
երբոր թթենիների գլխին գնաց-
քի ձայն լսես, այն ժամանակ
շարժիր. որովհետև այն ժամա-
նակ Տէրը քո առաջ պիտի դուրս
գայ որ Փղշտացիների բանակը
զարկէ։ Եւ Դաւիթն այնպէս ա- 25
րաւ, ինչպէս որ Տէրը հրամայեց
իրան. և Փղշտացիներին զարկեց
Գաբայից մինչև Գազեր։

ԳԼ. Զ

Եւ Դաւիթը դարձեալ ժողովեց 1
Իսրայէլի բոլոր ընտիրները՝ երե-
սուն հազար հոգի։ Եւ վեր կա- 2
ցաւ գնաց Դաւիթը և իր հետ
եղող բոլոր ժողովուրդը Յուդայի
Բաաղիցը, որ այնտեղից Աստու-
ծոյ տապանակը վեր բերէ, որի
վերայ կոչուած է քերովբէից վե-
րայ նստող Զօրաց Տիրոջ անու-
նը։ Եւ դրին Աստուծոյ տապա- 3
նակը մէկ նոր սայլի վերայ, և
նորան վեր առան Աբինադաբի
տանիցը, որ այն բլրի վերայ էր. և
Աբինադաբի որդիքը՝ Ողան ու Ա-
քիովը քշում էին այն նոր սայլը։
Եւ վեր առան նորան Աստուծոյ 4
տապանակի հետ Աբինադաբի
տանիցը, որ բլրի վերայ էր. և
Աքիովը գնում էր տապանակի
առաջից։ Եւ Դաւիթը և Իսրա- 5
յէլի բոլոր տունը խաղում էին
Տիրոջ առաջին ամեն տեսակ մայր

փայտերով, քնարներով, տաւիղ-
ներով, թմբուկներով, դափերով
6 և ծնծղաներով։ Եւ երբոր եկան
Նաքոնի կալը, Ողան ձեռքը մեկ-
նեց Աստուծոյ տապանակին և
բռնեց նորան. որովհետև եզները
7 ծռել էին նորան։ Եւ Տիրոջ
բարկութիւնը բորբոքուեց Ողայի
դէմ, և Աստուած զարկեց նո-
րան այնտեղ այս յանցանքի հա-
մար. և նա մեռաւ նոյն տեղը
8 Աստուծոյ տապանակի մօտ։ Եւ
Դաւիթը տրտմեց, որ Տէրը հար-
ուածով հարուածեց Ողային, և
այնտեղի անունը մինչև այս օրը
9 *Փարէզ-ողա է ասվում։ Եւ Դա-
ւիթը վախեցաւ այն օրը Տէրիցը,
և ասեց. Տիրոջ տապանակը ի՞նչ-
10 պէս մտնէ ինձ մօտ։ Եւ Դաւի-
թը չ'ուզեց Տիրոջ տապանակը
տանել իր մօտ Դաւիթի քաղա-
քը. և Դաւիթը ծռեց նորան
տարաւ Գէթացի Աբդեդօմի տու-
11 նը։ Եւ Տիրոջ տապանակը մնաց
երեք ամիս Գէթացի Աբդեդօմի
տանը, և Տէրը օրհնեց Աբդեդօ-
մին և նորա բոլոր տունը։
12 Եւ Դաւիթ թագաւորին պատ-
մեցին ասելով. Տէրը օրհնեց Աբ-
դեդօմի տունը և նորա ամեն ու-
նեցածը Աստուծոյ տապանակի
համար։ Եւ Դաւիթը գնաց և
վեր առաւ Աստուծոյ տապանա-
կը Աբդեդօմի տանիցն ուրախու-
13 թեամբ Դաւիթի քաղաքը։ Եւ
երբոր Տիրոջ տապանակը վեր
առնողները վեց քայլ առաջ գը-
նացին, նա արջառ ու պարարտ
14 զուարակ զոհեց։ Եւ Դաւիթը
Տիրոջ առաջին պարում էր բո-
լոր ուժովը. և Դաւիթը քթանի
15 եփուդ էր հագել։ Եւ Դաւիթը
և Իսրայէլի բոլոր տունը տանում
էին Տիրոջ տապանակը ուրախու-
թեամբ և փողերի ձայներով։
16 Եւ երբոր Տիրոջ տապանակը ե-
կաւ Դաւիթի քաղաքը, Սաւու-
ղի աղջիկը՝ Մեղքողը պատուհա-
նիցը նայելով՝ տեսաւ որ Դաւիթ
թագաւորը Տիրոջ առաջին կա-
քաւում և պարում էր, և նո-
րան անարգեց իր սրտումն։ Եւ 17
Տիրոջ տապանակը բերին, և նո-
րան իր տեղը դրին այն վրանի
մէջ՝ որ Դաւիթը նորա համար
կանգնեցրել էր. և Դաւիթը Տի-
րոջ առաջին ողջակէզներ և խա-
ղաղութեան զոհեր մատուցրեց։
Եւ Դաւիթը երբոր ողջակէզներն 18
և խաղաղութեան զոհերը մա-
տուցանելը վերջացրեց, օրհնեց
ժողովրդին զօրաց Տիրոջ անու-
նովը։ Եւ Իսրայէլի բոլոր բազ- 19
մութեանը՝ մարդից մինչև կինը,
բոլոր ժողովրդին ամեն մէկին՝
մէկ նկանակ, մի կտոր միս և մի
կարկանդակ բաշխեց. և բոլոր
ժողովուրդն ամեն մէկն իր տու-
նը գնաց։
Եւ Դաւիթը ետ դառաւ իր 20
տունը օրհնելու համար։ Եւ Սաւ-
ուղի աղջիկը՝ Մեղքողը դուրս
եկաւ Դաւիթին դիմաւորելու,
և ասեց. Իսրայէլի թագաւորը
այսօր ի՞նչ փառաւոր էր, որ
այսօր իր ծառաների աղախիններ-
ի առաջին ինքզինքը մերկացրեց,
ինչպէս որ դարտակ մարդկանցից
մէկն իրան մերկացնում է։ Եւ 21
Դաւիթը Մեղքողին ասեց. Այն
Տիրոջ առաջին, որ ինձ քո հօ-
րից և նորա բոլոր տանիցն աւելի
ընտրեց, և ինձ Տիրոջ ժողովրդի
Իսրայէլի վերայ իշխան դրաւ,
այս, ես այն Տիրոջ առաջին խա-
ղացի։ Եւ դեռ սորանից աւելի 22
ինձ անարգ երևեցնելով՝ իմ աչ-
քերի առաջին նուաստ պիտի լի-
նեմ. իսկ այն քո ասուած աղա-
խինների առաջին պիտի փառա-
ւորուեմ։ Եւ Սաւուղի աղջիկ 23
Մեղքողը մինչև իր մահուան օրը
զաւակ չ'ծնեց։

ԳԼ. Է

Եւ երբոր թագաւորը իր տանը 1
նստեց, և Տէրը նորան իր շուրջը
եղող ամեն թշնամիներիցը հան-
գըստացրեց, թագաւորը Նաթան 2
մարգարէին ասեց. Ահա ես բը-
նակվում եմ եղևնափայտի տան
մէջ, բայց Աստուծոյ տապանա-
կը վրանի մէջ է բնակվում։ Եւ 3

*Այսինքն՝ Ողայի պատառուածք։

Նաթանն ասեց Թագաւորին. Ամեն ինչ որ սրտիդ մէջ կայ, գնա արա, որովհետև Տէրը քեզ հետ է։
4 Եւ նոյն գիշերը եղաւ Տիրոջ
5 խօսքը Նաթանին ասելով. Գնա, իմ ծառայ Դաւիթին ասիր. Տէրը այսպէս է ասում. Դո՞ւ պիտի ինձ համար բնակուելու տուն
6 շինես։ Որովհետև Իսրայէլի որդիքը Եգիպտոսիցը հանած օրիցս մինչև այս օրը տան մէջ չ՚բնակուեցայ, այլ վրաններով ու խո-
7 բաններով էի ման գալիս. Որչափ տեղ որ ման եկայ Իսրայէլի որդկանց հետ, մի՞թէ մէկ բան խօսեցի Իսրայէլի ցեղերի մէկի հետ, որոնց հրաման եմ տուել իմ ժողովուրդ Իսրայէլին հովուելու, և ասեցի՞ թէ Ի՞նչու համար ինձ եղևնափայտի տուն չ՚շինեցիք։
8 Եւ հիմա իմ ծառայ Դաւիթին այսպէս ասես. Զօրաց Տէրը այսպէս է ասում. Ես քեզ առայ փարախիցը՝ ոչխարների ետևիցը, որ իմ Իսրայէլ ժողովրդի վերայ
9 առաջնորդ լինես. Եւ քեզ հետ էի ուր որ գնում էիր, և քո առաջիցը բոլոր թշնամիներիդ կոտորեցի, և երկրիս վերայ եղող մեծերի անունի պէս քո անունը
10 մեծացրի։ Եւ իմ ժողովուրդ Իսրայէլի համար էլ մէկ տեղ որոշեցի և նորան տնկեցի. և նա իր տեղը բնակվում է, և այլ ևս պիտի չ՚շարժուի, և անիրաւութեան որդիքը առաջուայ պէս
11 այլ ևս պիտի չ՚նեղեն նորան, ինչպէս որ եղաւ իմ ժողովուրդ Իսրայէլի վերայ դատաւորներ դրած օրից ի վեր. և քեզ պիտի հանգըստացնեմ քո ամեն թշնամիներիցը։ Եւ Տէրը քեզ իմացնում է որ Տէրն է քեզ համար տուն
12 շինելու։ Երբոր քո օրերը լրանան և դու քո հայրերի հետ ննջես, քեզանից յետոյ քո երանքիցը դուրս եկող զաւակիդ պիտի բարձրացնեմ, և նորա թա-
13 գաւորութիւնը հաստատեմ։ Նա է իմ անունի համար տուն շինելու, և ես նորա թագաւորութեան աթոռը կ՚հաստատեմ յաւիտեան։ Ես նորան հայր կ՚լի- 14
նեմ, և նա ինձ որդի կ՚լինի. եթէ նա անիրաւութիւն անէ, ես նորան կ՚պատժեմ մարդկանց գաւազանովը և մարդկանց որդիների հարուածներովը։ Բայց իմ ո- 15
ղորմութիւնը նորանից չի հեռանալ, ինչպէս որ Սաւուղից հեռացրի, որին քշեցի քո առաջիցը։ Եւ քո տունը և քո թագա- 16
ւորութիւնը քո առաջին յաւիտեան ապահով է, քո աթոռը հաստատ պիտի մնայ մինչև յաւիտեան։ Եւ Նաթանն այս բո- 17
լոր խօսքերը և այս բոլոր տեսիլքը մի ըստ միոջէ ասեց Դաւիթին։
Եւ Դաւիթ Թագաւորը գնաց 18
Տիրոջ առաջին նստեց, և ասեց. Ով Տէր Եհովայ, ես ո՞վ եմ. և ո՞վ է իմ տունը, որ ինձ մինչև այստեղ բերիր։ Սակայն այս էլ 19
դեռ քո աչքերին պզտիկ երևեցաւ, ով Տէր Եհովայ, և քո ծառայի տան վերայով հեռաւոր ժամանակի համար էլ խօսեցիր, և մարդի եղանակն ա՞յս է, ով Տէր Եհովայ։ Եւ Դաւիթն էլ 20
քեզ ի՞նչ ասէ. որովհետև դու, ով Տէր Եհովայ, քո ծառային ճանաչում ես։ Այս բոլոր մեծ 21
բաները քո խօսքի համար՝ և քո սրտի պէս արիր, որ ծառայիդ իմացնես։ Սորա համար մեծ ե- 22
րևեցար, ով Տէր Աստուած. որովհետև քեզ պէս մէկը չ՚կայ, և քեզանից ջոկ Աստուած չ՚կայ՝ մեր ականջներովը բոլոր մեր լըսածների համեմատ։ Եւ ո՞ր ազգն 23
է երկրիս վերայ քո մէկ հատ ժողովրդի՝ Իսրայէլի պէս, որի համար նոյն ինքն Աստուած եկաւ նորան փրկելու որ իր համար ժողովուրդ անէ, և իր համար անուն աշխատէ և (ձեզ համար) քո երկրի մէջ այս մեծ ու սոսկալի բաները անէ, քեզ համար Եգիպտոսից ազատուած ժողովրդիդ առաջից ազգեր և նորանց աստուածները քշելով։ Եւ քո ժո- 24
ղովուրդ Իսրայէլին յաւիտեան քեզ ժողովուրդ հաստատեցիր, և դու, ով Տէր, նորանց Աստուած եղար։ Եւ հիմա, ով Տէր 25

Աստուած, այս խօսքը, որ ասել ես քո ծառայի համար և նորա տան համար, յաւիտեան հաստատիր,
26 և ասածիդ պէս արա։ Եւ քո անունը յաւիտեան մեծ ճանաչուի, և ասեն թէ Զօրաց Տէրը Աստուած է Իսրայէլի վերայ. և քո ծառայ Դաւիթի տունը քո առաջին հաստատ մնայ։ Որովհետև դու, ով Զօրաց Տէր՝ Աստուած Իսրայէլի, քո ծառայի ականջներին յայտնեցիր և ասեցիր. Քեզ համար տուն պիտի շինեմ. սորա համար քո ծառան իրանում սիրտ առաւ որ այս աղօթքը քեզ անէ։ Եւ հիմա, ով
28 Տէր Եհովայ, այն Աստուածը դու ես, և քո խօսքերը ճշմարիտ են, և քո ծառային խոստացար այս բարիքը։ Ուստի հիմա կամք արա քո ծառայի տունը օրհնելու, որ յաւիտեան քո առաջին լինի. որովհետև, ով Տէր Եհովայ, դու ասեցիր և քո օրհնութեամբը ծառայիդ տունը յաւիտեան օրհնեալ լինի։

ԳԼ. Ը

1 Եւ նորանից յետոյ եղաւ որ Դաւիթը Փղշտացիներին զարկեց և նուաճեց նորանց. և Դաւիթն առաւ Փղշտացիների ձեռքից
2 Մեթեկամման. Նաև զարկեց Մովաբին և չափեց նորանց լարով գետինը պառկեցնելով նորանց, և երկու լարով չափեց մեռցնելու և մէկ ամբողջ լարով ապրեցնելու. և Մովաբացիները Դաւիթին հարկատու ծառաներ
3 եղան։ Եւ Դաւիթը զարկեց Սուբայի Թագաւոր Ռուբի որդի Ադրազարին, երբոր գնում էր Եփրատ գետի վերայ իր իշխանու-
4 թիւնը հաստատելու։ Եւ Դաւիթը նորանից հազար եօթը հարիւր ձիաւոր և քսան հազար հետևակ զօրք բռնեց, և Դաւիթը բոլոր կառքերի ձիերին ջլատեց, և նորանցից միայն հարիւր
5 կառքի ձի պահեց։ Եւ Դամասկոսի Ասորիներն եկան Սուբայի Թագաւոր Ադրազարին օգնութիւն անելու, և Դաւիթն Ասորիներից քսանևերկու հազար մարդ զարկեց։ Եւ Դաւիթը Դա- 6
մասկոսի Ասորիների մէջ բերդապահ զօրքեր դրաւ. և Ասորիները Դաւիթին հարկատու ծառայ եղան. և ուր որ Դաւիթը գնում էր՝ Տէրը նորան յաջողութիւն էր տալիս։ Եւ Դաւիթն Ադրա- 7
զարի ծառաների ոսկի վահաններն առաւ և Երուսաղէմ բերաւ նորանց։ Եւ Դաւիթ Թա- 8
գաւորը Ադրազարի քաղաքներից Բեթահից և Բերոթայից խիստ շատ պղինձ առաւ։
Եւ երբոր Եմաթի Թագաւորը՝ 9
Թովուն լսեց, որ Դաւիթն Ադրազարի բոլոր զօրքերին ջարդեց, Թովուն իր որդի Յովրամին Դա- 10
ւիթ Թագաւորի մօտ ուղարկեց, որ նորան բարևէ և նորան շնորհաւորէ, ըստ որում Ադրազարի դէմ պատերազմ էր արել և նորան զարկել էր. (որովհետև Ադրազարը Թովուի հետ պատերազմներ ունէր։) Եւ Յովրամի ձեռքին արծաթի անօթներ, ոսկի անօթներ և պղնձի անօթներ կային։ Դաւիթ Թագաւորը նո- 11
րանք էլ Տիրոջը նուիրեց, միւս նուիրած արծաթի ու ոսկիի հետ բոլոր իր յաղթած ազգերից՝ Ասորիներից, Մովաբից, Ամմոնի 12
որդիներից, Փղշտացիներից, Ամաղէկից, և Սուբայի Թագաւորի Ռուբի որդիի Ադրազարի աւարիցը։ Եւ երբոր Դաւիթն Աղի 13
ձորումը տասնևութը հազար Ասորիներին կոտորեց և ետ դառաւ, մէջ անուն հանեց։ Եւ 14
Եդովմի մէջ բերդապահ զօրքեր դրաւ, բոլոր Եդովմի մէջ բերդապահ զօրքեր դրաւ, և բոլոր Եդովմացիները Դաւիթին ծառայ եղան, և Տէրը յաջողութիւն էր տալիս Դաւիթին ուր որ էլ նա գնում էր։
Եւ Դաւիթը բոլոր Իսրայէլի 15
վերայ Թագաւորութիւն արաւ. և Դաւիթն իր բոլոր ժողովրդին իրաւունք և արդարութիւն էր անում։ Եւ Շարուհեայի որդի 16
Յովաբը զօրքերի վերայ էր. և

Ա.քիղուդի որդի Յովսափատ յի-
17 շատակաց դպիր էր. Եւ Ա.քի-
տովբի որդի Սադովկն ու Ա.բիա-
թարի որդի Ա.քիմելէքը քահա-
նաներ էին, և Սարայիան առե-
48 նագպիր էր. Եւ Յովհաթարի որ-
դի Բանեան փերեթիների ու փե-
լեթիների վերա էր. և Դաւիթի
որդիքը նախարարներ էին։

Գլ. Թ

1 Եւ Դաւիթն ասեց. Արդեօք
Սաւուղի տանիցը մնացած մարդ
կայ, որ նորան բարերարութիւն
անեմ Յովնաթանի սիրոյն հա-
2 մար։ Եւ Սաւուղի տանիցը Սի-
բա անունով մի ծառայ կար, և
նորան կանչեցին Դաւիթի մօտ,
և թագաւորը նորան ասեց. Սի-
բան դո՞ւ ես. և նա ասեց. Ծա-
3 ռադ եմ։ Եւ թագաւորն ասեց.
Սաւուղի տանիցը մնացած մարդ
չ'կա՞յ, որ նորան Աստուծոյ ո-
ղորմութիւնն անեմ։ Եւ Սիբան
ասեց թագաւորին. Յովնաթա-
նիցը ոտքերը կաղ մի որդի կայ
4 տակաւին։ Եւ թագաւորը նո-
րան ասեց. Նա ո՞ւր է։ Եւ Սի-
բան ասեց թագաւորին. Ա.հա նա
Լադաբարումը Ամիէլի որդի Մա-
5 քիրի տանն է։ Եւ Դաւիթ թա-
գաւորը հղդ ուղարկեց, և նո-
րան Լադաբարից Ամիէլի որդի
6 Մաքիրի տանիցն առաւ։ Եւ
Սաւուղի որդի Յովնաթանի որդի
Մեմփիբոսթէն Դաւիթի մօտ ե-
կաւ և երեսի վերայ ընկաւ ու
խոնարհութիւն արաւ։ Եւ Դա-
ւիթն ասեց. Ով Մեմփիբոսթէ.
7 և նա ասեց. Ա.հա ծառադ։ Եւ
Դաւիթը նորան ասեց. Մի վա-
խենար, որովհետև քո հօր Յով-
նաթանի սիրոյն համար քեզ ան-
պատճառ բարերարութիւն պի-
տի անեմ, և քո հօր Սաւուղի
բոլոր արտերը քեզ վերայ պիտի
դարձնեմ, և դու պիտի միշտ
իմ սեղանի վերայ հաց ուտես։
8 Եւ նա խոնարհութիւն արաւ և
ասեց. Ծառադ ո՞վ է որ ինձ
պես մի մեռած շան վերայ նայե-
9 ցիր։ Յետ Թագաւորը Սաւուղի
ծառայ Սիբային կանչեց, և նո-
րան ասեց. Սաւուղի և նորա տան
բոլոր ստացուածքը քո տիրոջ որ-
դիին տուի։ Եւ դու ու քո որ- 10
դիքը և ծառաներդ նորա համար
երկիրը դործեցէք, և դու՝ ո՞չ
մատ բերես, որ քո տիրոջ որդին
ուտելու հաց ունենայ. և քո
տիրոջ որդի Մեմփիբոսթէն պի-
տի միշտ իմ սեղանի վերայ հաց
ուտէ։ Եւ Սիբան տասնեւհինգ
որդի և քսան ծառայ ունէր։
Եւ Սիբան ասեց թագաւորին. 11
Իմ թագաւոր տէրս քո ծառա-
յին ինչ որ հրամայեց, ծառադ
այնպես պիտի անէ։ Բայց Մեմ-
փիբոսթէն, ասէր Դաւիթը, թա-
գաւորի որդկանց մէկի պէս իմ
սեղանի վերայ հաց պիտի ուտէ։
Եւ Մեմփիբոսթէն մի պզտիկ 12
տղայ ունէր, և նորա անունը
Միքա էր. և Սիբայի տան բոլոր
բնակողները Մեմփիբոսթէի ծա-
ռաներն էին։ Եւ Մեմփիբոսթէն 13
բնակվում էր Երուսաղէմում.
որովհետև միշտ թագաւորի սե-
ղանի վերայ հաց էր ուտում, և
նա իր երկու ոտքերովը կաղ էր։

Գլ. Ժ

Եւ նորանից յետոյ եղաւ որ 1
Ամմոնի որդկանց թագաւորը մե-
ռաւ. և նորա որդի Անոնը նորա
տեղ թագաւոր եղաւ։ Եւ Դա- 2
ւիթն ասեց. Նաասի որդի Անո-
նին մարդասիրութիւն անեմ.
ինչպես որ նորա հայրը ինձ մար-
դասիրութիւն արաւ. և Դաւիթն
իր ծառաներին նորա մօտ ու-
ղարկեց, որ նորան իր հօր մասին
մխիթարեն. և Դաւիթի ծառա-
ները գնացին Ամմոնի որդկանց 3
երկիրը։ Եւ Ամմոնի որդկանց իշ-
խաններն իրանց տէր Անոնին ա-
սեցին. Մի՞թէ Դաւիթը քո հօ-
րը քո առաջին մեծարելու հա-
մար քեզ մօտ մխիթարիչներ ու-
ղարկեց. չէ՞ որ Դաւիթն իր ծա-
ռաներին քեզ մօտ ուղարկեց,
որ քաղաքը աչքից անցնեն և
լրտեսեն որ նորան կործանէ։ Եւ
Անոնը Դաւիթի ծառաներին ա-

ռաւ և նորանց մերաւքի կէսը
ածիլել տուաւ, և նորանց հան-
դերձների էլ կէսը մինչև նստե-
լու տեղը կտրել տուաւ, և ետ
5 ուղարկեց նորանց։ Եւ ՚ի Դա-
ւիթին պատմեցին, Նա նո-
րանց դիմաւորելու մարդ ուղար-
կեց, որովհետև այն մարդիկը
շատ անարգուել էին, և Թա-
գաւորն ասեց. Նստեցէք Երիքո-
վումը մինչև որ ձեր մօրաւքը ա-
ճի, և յետոյ դարձէք։
6 Եւ երբոր Ամմոնի որդիքը տե-
սան, որ Դաւիթի հետ իրանց
բանը վատ է, Ամմոնի որդիքը
մարդ ուղարկեցին և Բեթրոսրի
Ասորիներից և Սուբայի Ասորի-
ներից քսան հազար հետևակ, և
Մաաքայի թագաւորից հազար
մարդ, և Իստովբից տասնեւերկու
հազար մարդ վարձքով բռնեցին։
7 Եւ երբոր Դաւիթն այս լսեց,
Յովաբին և բոլոր զօրաւոր զօր-
8 քերին ուղարկեց։ Եւ Ամմոնի
որդիքը դուրս եկան, և ՚ի դուռն
դան առաջին կարգաւ պատե-
րազմի շարուեցան, բայց Սուբա-
յի և Րոոբի Ասորիները և Իս-
տովբն ու Մաաքան դաշտի մէջ
9 ջոկ կանգնել էին։ Եւ Յովաբը
տեսաւ որ պատերազմը առաջիցն
ու ետևիցն իր վերայ է հասնում,
Իսրայէլի բոլոր ընտրեալ մարդ-
կանցից ընտրեց, և Ասորիների
10 դէմ պատերազմի շարեց. Եւ
մնացած զօրքը յանձնեց իր եղ-
բայր Աբեսային, որ Ամմոնի որդ-
11 կանց դիմացը շարէ. Եւ ասեց.
Եթէ Ասորիները ինձ յաղթելու
լինեն, ինձ օգնութեան հասնես.
և եթէ Ամմոնի որդիքը քեզ յաղ-
թելու լինեն, ես քեզ օգ-
12 նութեան կ'հասնեմ։ Քաջասիրտ
եղիր և քաջանանք մեր ժողովրդի
համար և մեր Աստուծոյ քա-
ղաքների համար, և Տէրն իր աչ-
քի հաճոյ երևեցածը թող անէ։
13 Եւ Յովաբն իր հետ եղող զօրքո-
վը Ասորիներին մօտեցաւ, որ նո-
րանց դէմ պատերազմ անէ, և
նորանք նորա առաջիցը փախան։
14 Եւ Ամմոնի որդիքը Ասորիների
փախչելը տեսնելով նորանք էլ
Աբեսայի առաջիցը փախան և
մտան քաղաքը։ Եւ Յովաբն Ա.մ
մոնի որդիներից ետ դարձաւ և
եկաւ Երուսաղէմ։
Երբոր Ասորիները տեսան, որ 15
իրանք Իսրայէլի առաջին կոտ-
բուեցան՝ ժողովուեցան մէկտեղ։
16 Եւ Ադրազարը հղդ ուղարկեց,
և Գետի այն կողմին եղող Աս-
որիներին ոտք հանեց, և եկան
Ելամ. և նորանց առաջից՝ Ադ-
րազարի զօրագլուխը Սովբակ։ Եւ 17
երբոր Դաւիթին պատմեցին, նա
բոլոր Իսրայէլին ժողովելով Յոր-
դանանից անցաւ և Ելամ հա-
սաւ. և Ասորիները Դաւիթի դէմ
դունդերով շարուեցան և նորա
հետ պատերազմ արին։ Եւ Աս- 18
որիները փախան Իսրայէլի առա-
ջից. և Դաւիթն Ասորիներից եօ-
թը հարիւր կառք և քառասուն
հազար ձիաւոր կոտորեց, և Նո-
րանց զօրագլուխ՝ Սովբակին զար-
կեց, որ այնտեղ մեռաւ։ Եւ 19
Ադրազարին հպատակ եղող բո-
լոր թագաւորները երբոր տեսան
որ Իսրայէլի առաջին յաղթուե-
ցան, Իսրայէլի հետ հաշտութիւն
արին, և նորան ծառայ եղան.
և Ասորիները վախենում էին
միւս անդամ Ամմոնի որդկանցը
օգնելու։

Գլ. ԺԱ

Եւ եղաւ հետևեալ տարին, որ 1
թագաւորները պատերազմի դուրս
գալու ժամանակին, Դաւիթը Յո-
վաբին և նորա հետ իր ծառաներ-
ին և բոլոր Իսրայէլին ուղար-
կեց, որոնք Ամմոնացիներին կո-
տորեցին, և Րաբբան պաշարե-
ցին. բայց Դաւիթը մնացել էր
Երուսաղէմ։ Եւ 2
Եւ եղաւ երեկոյան ժամանակ,
որ Դաւիթը ցերեկուայ քնից
վեր կացաւ և Յովնաթանի տան
տանիքի վերայ զբոսնում էր, և
տանիքի վերայից մի կին տեսաւ, որ
լուացվում էր, և այն կինը շատ
գեղեցիկ էր տեսքով։ Եւ Դաւի- 3
թը ղրկեց և հարցուփորձ արաւ այն կնկայ համար.

Ելիամի աղջիկը՝ Քետացի Ուրիա-
4 յի կինը։ Եւ Դաւիթը պատգա-
մաւորներ ուղարկեց և առաւ
նորան, և նա եկաւ նորա մօտ.
և Դաւիթը պառկեց նորա հետ.
և նա նոր էր մաքրուած իր ան-
մաքրութիւնիցը. և նա ետ դա-
5 ռաւ իր տունը։ Եւ կինը յղա-
ցաւ, և մարդ ուղարկեց և իմա-
ցրեց Դաւիթին ասելով. Ես յղի
6 եմ։ Եւ Դաւիթը մարդ ուղար-
կեց Յովաբին, Բէ Քետացի Ու-
րիային ինձ մօտ ուղարկիր։ Եւ
Յովաբը Ուրիային Դաւիթի մօտ
7 ուղարկեց։ Եւ Ուրիան եկաւ նո-
րա մօտ. և Դաւիթը հարցրեց
Յովաբի ողջութիւնը, և զօրքի
ողջութիւնը և պատերազմի վի-
8 ճակը։ Եւ Դաւիթն ասեց Ու-
րիային. Իջիր տունդ և ոտքերդ
լուա։ Եւ երբոր Ուրիան թա-
գաւորի պալատիցը դուրս գնաց,
նորա ետևից էլ թագաւորի պար-
9 գև գնաց։ Բայց Ուրիան թագա-
ւորի պալատի դռանը քնեց իր
տիրոջ բոլոր ծառաների հետ, և
10 չ'իջաւ իր տունը։ Եւ պատմե-
ցին Դաւիթին ասելով թէ Ու-
րիան չէ իջել իր տունը. և Դա-
ւիթն ասեց Ուրիային. Չէ՞ որ
ճանապարհից ես եկել դու. Ի՞ն-
չու համար չես իջել քո տունը։
11 Եւ Ուրիան ասեց Դաւիթին.
Տապանակը և Իսրայէլը և Յու-
դան վրաններում են բնակվում,
և իմ տէրը Յովաբը, և իմ տի-
րոջ ծառաները դաշտի երեսին
են բանակ տուել, և ես գնամ
իմ տո՞ւնը՝ ուտելու և խմելու
և կնկանս հետ պառկելու. քո
կեանքը և քո հոգիի կեանքը վկայ
է, որ այս բանը ես չեմ անիլ։
12 Եւ Դաւիթն ասեց Ուրիային.
Այսօր էլ այստեղ մնա, և է-
գուց քեզ կ'ճանապարհեմ։ Եւ
Ուրիան մնաց Երուսաղէմ այն օ-
13 րը և հետևեալ օրը։ Եւ Դաւի-
թը կանչեց նորան և նա կերաւ
նորա առաջին և խմեց. և Դա-
ւիթն արբեցրեց նորան. և նա ի-
րիկունը դուրս եկաւ որ իր ան-
կողինումը քնէ իր տիրոջ ծառա-
ների հետ, և չ'իջաւ իր տունը։

Եւ առաւօտը եղաւ, որ Դաւի- 14
թը մի նամակ գրեց Յովաբին և
ուղարկեց Ուրիայի ձեռքով։ Եւ 15
նամակի մէջ գրեց ասելով. Ու-
րիային դրէք սաստիկ պատերազ-
մի դիմացը, և դուք ետ քաշ-
ուեցէք նորա ետևից, որ նա
զարկուի և մեռնէ։ Եւ եղաւ 16
երբոր Յովաբը քաղաքը պաշարել
էր, Ուրիային դրաւ այնտեղը
ուր գիտէր որ զօրաւոր մարդիկ
կային։ Եւ այն քաղաքի մարդի- 17
կը դուրս եկան և Յովաբի հետ
պատերազմեցին. և ընկան զօր-
քիցը՝ Դաւիթի ծառաներիցը. և
Քետացի Ուրիան էլ մեռաւ։ Եւ 18
Յովաբը մարդ ուղարկեց և պատ-
մեց Դաւիթին պատերազմի բոլոր
բաները։ Եւ պատուիրեց պատ- 19
գամաւորին ասելով. Հէնց որ
պատերազմի բոլոր բաները թա-
գաւորին պատմես վերջացնես,
Իցէ թէ թագաւորի բարկութիւ- 20
նը բարձրանայ, և քեզ ասէ՝ Ի՞ն-
չու մօտեցաք քաղաքին պատե-
րազմելու. չ'գիտէի՞ք որ պարսպի
վերայից նետ կ'գցեն։ Ո՞վ մեռ- 21
ցրեց Յերոբեսէթի որդի Աբիմե-
լէքին. չէ՞ որ մի կին նորա վերայ
պարսպի վերայից մի երկանաքա-
րի կտոր գցեց, և նա մեռաւ
Թէբէսում. Ի՞նչու մօտեցաք պա-
րսպին. Դու էլ ասես. Քո ծա- 22
ռայ Քետացի Ուրիան էլ է մե-
ռել։ Եւ պատգամաւորը գնաց և
պատմեց Դաւիթին այն ամենը,
որի համար Յովաբը նորան ու-
ղարկել էր։ Եւ պատգամաւորն 23
ասեց Դաւիթին թէ Երբոր այն
մարդիկը ուժովացան մեզ վերայ
և դաշտը դուրս եկան մեզ դէմ,
մենք նորանց հալածեցինք մինչև
քաղաքի դուռը. Եւ աղեղնա- 24
ւորները նետեր գցեցին քո ծա-
ռաների վերայ պարսպի վերայից,
և մեռան թագաւորի ծառաներ-
իցը, և քո ծառայ Քետացի Ու-
րիան էլ է մեռել։ Եւ թա- 25
գաւորն ասեց պատգամաւորին.
Այսպէս ասես Յովաբին. Այդ
բանը քո աչքին չար չ'երևայ,
որովհետև սուրը այսպէս և այն-
պէս կ'ուտէ. սաստկացրու պա-

տերազմդ քաղաքի դէմ և քան-
դիր նորան. իսկ դու քաջալերիր
26 նորան։ Եւ Ուրիայի կինը լսեց,
որ նորա այրը Ուրիան մեռել է,
և իր մարդի վերայ սուգ արաւ։
27 Եւ երբոր սուգն անցաւ, Դաւի-
թը մարդ ուղարկեց և նորան ըն-
դունեց իր տունը. և նա նորան
կին եղաւ, և նորա համար որ-
դի ծնեց. բայց այս բանը, որ
Դաւիթն արաւ, չար երևեցաւ
Տիրոջ աչքին։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Տէրը Նաթանին ուղարկեց
Դաւիթի մօտ. և նա եկաւ նո-
րա մօտ և ասեց նորան. Երկու
մարդ կար մի քաղաքում, մէկը
2 հարուստ և միւսը աղքատ։ Հա-
րուստը խիստ շատ հօտեր և ար-
3 ջառներ ունէր։ Իսկ աղքատը
բնաւ ոչինչ չ'ունէր բացի մի էգ
գառնուկից, որ ծախու էր ա-
ռել և սնուցանում էր. նա մե-
ծացաւ նորա հետ և նորա որդ-
կանց հետ մէկտեղ. նորա պա-
տառիցն ուտում էր, և նորա
բաժակիցը խմում, և նորա ծո-
ցումը քնում էր և նորա համար
4 աղջկան պէս էր։ Եւ այն հա-
րուստ մարդին մի անցաւոր ե-
կաւ, բայց նա խնայեց իր հօտե-
րիցը և արջառներիցն առնելու,
որ իր մօտ եկած ճանապարհոր-
դի համար Կերակուր պատրաստէր,
և առաւ այն աղքատ մարդի
գառնը և Կերակուր պատրաստեց
իր մօտ եկած մարդի համար։
5 Եւ Դաւիթը շատ բարկացաւ
այն մարդի վերայ և ասեց Նա-
թանին. Կենդանի է Տէրը որ այդ
բանն անող մարդը մահի որդի է.
6 Եւ այն գառնը պէտք է չորեք-
պատիկ հատուցանէ, որովհետև
նա արել է այդ բանը, և որով-
7 հետև գութ չ'ունեցաւ։ Եւ Նա-
թանն ասեց Դաւիթին. Այն
մարդը դու ես. այսպէս է ասում
Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Ես
քեզ թագաւոր օծեցի Իսրայէլի
վերայ, և ես քեզ ազատեցի Սա-
8 ւուղի ձեռքիցը. Եւ քեզ տուի

քո տիրոջ տունը և քո ծոցը դրի
քո տիրոջ կանայքը, և քեզ
տուի Իսրայէլի և Յուդայի տու-
նը. և եթէ քիչ էր, այն ժա-
մանակ այս էլ այն էլ կ'աւելա-
ցնէի։ Ի՞նչու համար Տիրոջ խօս- 9
քն անարգեցիր՝ նորա աչքին այդ
չարութիւնը անելով. Քետացի
Ուրիային սրով մեռցրիր և նորա
կինը քեզ համար կին առար.
բայց նորան սպանեցիր Ամմոնի
որդկանց սրովը։ Եւ ահա սուրը 10
քո տանիցը չի հեռանալ մինչև
յաւիտեան, փոխանակ որ անար-
գեցիր ինձ և Քետացի Ուրիայի
կինը առար որ քեզ համար կին
լինի։ Այսպէս է ասում Տէրը. 11
Ահա ես քեզ վերայ չարիք եմ
յարուցանելու քո տանից, և
առնելու եմ քո կանայքը քո աչ-
քի առաջին և պիտի տամ քո
ընկերին, և նա պիտի պառկէ քո
կանանց հետ այս արեգակի աչ-
քի առաջին։ Որովհետև դու ծա- 12
ծուկ արիր, բայց ես այս բանը
պիտի անեմ բոլոր Իսրայէլի ա-
ռաջին և արեգակի առաջին։ Եւ 13
Դաւիթն ասեց Նաթանին. Մե-
զանչել եմ Տիրոջ դէմ։ Եւ Նա-
թանն ասեց Դաւիթին. Տէրն էլ
ներեց քո մեղքը. չես մեռնիլ։
Միայն որովհետև Տիրոջ թշնա- 14
միներին այս բանով առիթ տուիր
հայհոյութիւն անելու, ապա այն
որդին էլ որ պիտի ծնուի քեզ
համար պէտք է մեռնէ։
Եւ Նաթանը գնաց իր տունը։ 15
Եւ Տէրը զարկեց այն մանուկին
որ Ուրիայի կինը ծնեց Դաւիթի
համար, և նա հիւանդացաւ։
Եւ Դաւիթն աղաչեց Աստուծոյ 16
այն երեխայի համար. և Դաւի-
թը ծոմ պահեց, և գնաց գիշե-
րը անց կացրեց գետնի վերայ
պառկած։ Եւ նորա տան ծերերը 17
գնացին մօտը, որ նորան կանգ-
նեցնեն գետնիցը, բայց նա չ'ու-
զեց և նորանց հետ հաց չ'կե-
րաւ։ Եւ եօթներորդ օրը եղաւ 18
որ երեխան մեռաւ. և Դաւիթի
ծառաները վախենում էին նորան
իմացնելու թէ երեխան մեռել
է, որովհետև ասում էին թէ

Ահա քանի որ երեխան կենդանի
էր, մենք նորան ասեցինք, բայց
նա մեր ձայնը չ՚լսեց, և ի՞նչպէս
ասենք նորան՝ երեխան մեռել է,
19 որ մի վատ բան կ՚անէ։ Եւ Դա-
ւիթը տեսաւ որ իր ծառաները
շշնչում են իրար հետ, և Դա-
ւիթը հասկացաւ որ երեխան մե-
ռել է. և Դաւիթն ասեց իր
ծառաներին. Արդեօք մեռե՞լ է
երեխան. և նորանք ասեցին. Մե-
20 ռել է։ Եւ Դաւիթը վեր կացաւ
գետնիցը և լուացուեցաւ և օծ-
ուեցաւ և իր հանդերձները փո-
խեց և գնաց Տիրոջ տունը և
երկրպագութիւն արաւ. և գնաց
իր տունը, և ուզեց, և նորա
առաջին հաց դրին, և նա կե-
21 րաւ։ Եւ նորա ծառաներն ասե-
ցին նորան. Այս ի՞նչ բան է որ
արիր. քանի որ երեխան կենդա-
նի էր՝ ծոմ էիր պահում և լաց
էիր լինում. բայց երբոր մեռաւ
երեխան, վեր կացար և հաց կե-
22 րար։ Եւ նա ասեց. Քանի որ ե-
րեխան կենդանի էր, ծոմ էի
պահում և լաց էի լինում, ո-
րովհետև ասում էի. Ո՛վ գիտէ
գուցէ Տէրը կ՚գթայ ինձ և երե-
23 խան կ՚ապրի։ Բայց հիմա որ մե-
ռել է, ես էլ ի՞նչու համար
ծոմ պահեմ. կարո՞ղ եմ նորան
կրկին ետ դարձնել. ես ինքս եմ
նորա մօտ գնալու, բայց նա ինձ
մօտ ետ չի դառնալ։
24 Եւ Դաւիթը մխիթարեց իր
Բերսաբէ կնկան, և մտաւ նորա
մօտ և պառկեց նորա հետ, և
նա մի որդի ծնեց և նորա անու-
նը դրաւ Սողոմոն. և Տէրը սիրեց
25 նորան։ Եւ Նաթան մարգարէի
ձեռքովը հրաման ուղարկեց, և
նորա անունը Յեդիդեա դրաւ
Տիրոջ համար։
26 Եւ Յովաբը պատերազմ էր ա-
նում Ռաբբայում Ամմոնի որդ-
կանց հետ, և առաւ թագաւո-
27 րանիստ քաղաքը։ Եւ Յովաբը
պատգամաւորներ ուղարկեց Դա-
ւիթին և ասեց. Ռաբբայի հետ
պատերազմ եմ արել և ջրերի
28 քաղաքն էլ առել եմ։ Եւ հի-
մա ժողովրդի մնացորդը հաւա-
քիր, և բանակ տուր քաղաքի
դէմ և առ նորան, որպէս զի ես
չ՚առնեմ քաղաքը և իմ անունը
յիշուի նորա վերայ։ Եւ Դաւի- 29
թը հաւաքեց բոլոր ժողովրդին և
գնաց Ռաբբայ, և պատերազմեց
նորա հետ և առաւ նորան։ Եւ 30
նորանց թագաւորի թագն առաւ
նորա գլխիցը, որի ծանրութիւնը
մի տաղանդ ոսկի էր և պատուա-
կան ակունք, և Դաւիթի գլխին
դրուեցաւ. և խիստ շատ աւար
առաւ այն քաղաքից։ Եւ նո- 31
րանում եղած ժողովրդին դուրս
հանեց և դրաւ սղոցի և երկա-
թի կամնասայլերի և երկաթի
տապարների տակ և նորանց ա-
ղիւսի փուռով անցկացրեց։ Եւ
այսպէս արաւ Ամմոնի որդկանց
բոլոր քաղաքներին։ Եւ Դաւիթն
ու բոլոր ժողովուրդն ետ դառան
Երուսաղէմ։

ԳԼ. ԺԴ

Եւ սորանից յետոյ եղաւ որ 1
Դաւիթի որդի Աբիսողոմը մի գե-
ղեցիկ քոյր ունէր՝ անունը Թա-
մար. և Դաւիթի որդի Ամնոնը
սիրեց նորան։ Եւ Ամնոնը նեղ- 2
վում էր մինչև որ հիւանդացաւ
իր քոյր Թամարի պատճառով.
որովհետև նա կոյս էր. և դժ-
ուար էր երևում Ամնոնի աչքե-
րին նորան մի բան անել։ Բայց 3
Ամնոնը մի ընկեր ունէր, և նորա
անունը Յովնադաբ էր՝ Դաւիթի
եղբայր Սամայի որդի. և Յով-
նադաբը մի շատ խելօք մարդ էր։
Եւ նորան ասեց. Ի՞նչու ես դու 4
այդպէս օրէցօր մաշվում, ով
թագաւորի որդի. մի՞թէ ինձ չես
յայտնիլ։ Եւ Ամնոնն ասեց նո-
րան. Ես սիրում եմ իմ եղբայր
Աբիսողոմի քոյր Թամարին։ Եւ 5
Յովնադաբն ասեց նորան. Պառ-
կիր քո անկողինումը և քեզ հի-
ւանդ ձևացրու, և երբոր հայրդ
գայ քեզ տեսնելու, դու ասիր
նորան. Թող իմ քոյր Թամարը
գայ և ինձ հաց ուտեցնէ, և իմ
աչքի առաջին պատրաստէ կե-
րակուրը, որպէս զի տեսնեմ և

6 ուտեմ նորա ձեռքիցը։ Եւ Ամ-
նոնը պառկեց և իրան հիւանդ
ձևացրեց. և թագաւորը եկաւ
նորան տեսնելու. և Ամնոնն ա-
սեց թագաւորին. Թող իմ քոյր
Թամարը գայ և իմ աչքի առա-
ջին երկու բլիթ շինէ, և ես ու-
7 տեմ նորա ձեռքիցը։ Եւ Դա-
ւիթը տունը մարդ ուղարկեց Թա-
մարին ասելով. Գնա քո եղբայր
Ամնոնի տունը և շինիր նորա հա-
8 մար կերակուրը։ Եւ Թամարը
գնաց իր եղբայր Ամնոնի տունը
որ պառկել էր, և վեր առաւ
խմորը և թրեց և բլիթներ շինեց
նորա աչքի առաջին, և եփեց
9 բլիթները։ Եւ առաւ տապակը
և թափեց նորա առաջին բայց
նա չ՚ուզեց ուտել. և Ամնոնն
ասեց. Իմ մօտիցն ամեն մարդ
դուրս հանեցէք. և ամեն մարդ
10 դուրս եկաւ նորա մօտիցը։ Եւ
Ամնոնն ասեց Թամարին. Կերա-
կուրը բեր սենեակը, որ քո ձեռ-
քիցն ուտեմ. և Թամարն առաւ
իր շինած բլիթները և տարաւ
սենեակը իր եղբայր Ամնոնի մօտ։
11 Եւ մօտեցրեց նորան որ ուտէ.
բայց նա բռնեց նորան և ասեց
նորան. Եկ պառկիր ինձ հետ,
12 քոյրս։ Եւ նա ասեց նորան. Ոչ,
եղբայրս, ինձ մի բռնաբարիր.
որովհետև Իսրայէլի մէջ այսպէս
չեն անիլ. այդ անզգամութիւնը
13 մի անիր։ Եւ ես ուր տանեմ իմ
նախատինքը, և դու էլ Իսրայէ-
լի մէջ անզգամների մէկի պէս կը
լինես. և հիմա դու խօսիր թա-
գաւորի հետ, և նա ինձ չի ար-
14 գելիլ քեզանից։ Բայց նա չ՚ու-
զեց նորա ձայնին լսել և բռնեց
նորան և բռնաբարեց նորան և
15 պառկեց նորա հետ։ Յետոյ Ամ-
նոնը նորան ատեց շատ մեծ ա-
տելութեամբ, այնպէս որ աւելի
մեծ էր ատելութիւնը որով ա-
տում էր նորան այն սէրիցը, ո-
րով առաջ սիրում էր նորան։ Եւ
Ամնոնն ասեց նորան. Վեր կաց
16 գնա։ Եւ Թամարն ասեց նորան.
Մի լինիր պատճառ այս աւելի
մեծ չարութեանը քան թէ այն
միւսը որ արիր ինձ՝ դուրս անե-
լով ինձ. բայց նա չ՚ուզեց նորան
լսել։ Եւ նա իր սպասաւոր ե- 17
րիտասարդին կանչեց և ասեց.
Դուրս արա սորան իմ մօտիցը,
և կողպիր դուռը նորա ետևիցը։
Եւ Թամարի վերայ թևքերով 18
պատմուճան կար. որովհետև
թագաւորի կոյս աղջիկները այս-
պիսի պատմուճաններ էին հագ-
նում։ Եւ նորա սպասաւորը նո-
րան դուրս արաւ և դուռը կող-
պեց ետևիցը։ Եւ Թամարը մո- 19
խիր առաւ իր գլխին ածեց և թև-
քերով պատմուճանը որ իր վե-
րայ էր, պատառեց և իր ձեռ-
քը իր գլխին դրած գնում էր և
լաց լինում։ Եւ նորա եղբայր 20
Աբիսողոմն ասեց նորան. Արդեօ՞ք
քո եղբայր Ամնոնը քեզ հետ ե-
ղաւ. հիմա, քոյրս, լուռ կաց.
քո եղբայրն է նա. այս բանը
սրտիդ հոգս մի շինիր։ Եւ Թա-
մարը նստեց անմխիթար իր եղ-
բայր Աբիսողոմի տանը։ Եւ Դա- 21
ւիթ թագաւորը լսեց այս բոլոր
բաները և շատ բարկացաւ։ Եւ 22
Աբիսողոմը չէր խօսում Ամնոնի
հետ ոչ վատ և ոչ լաւ. որով-
հետև Աբիսողոմն ատում էր Ամ-
նոնին նորա համար որ իր քոյր
Թամարին բռնաբարել էր։
Եւ երկու տարի անցնելուց յե- 23
տոյ եղաւ որ Աբիսողոմի ոչխար-
ների ասրակտուրն էր Եփրեմի մօ-
տի Բաաղհասորումը. և Աբիսո-
ղոմը կանչեց թագաւորի բոլոր
որդիներին։ Եւ Աբիսողոմը եկաւ 24
թագաւորի մօտ և ասեց. Ահա
քո ծառան ասրակտուր ունի.
խնդրեմ՝ որ թագաւորը և իր
ծառաները ծառայիդ հետ գնան։
Եւ թագաւորն ասեց Աբիսողո- 25
մին. Ոչ, որդիս, չ՚գնանք ամենքս
և չ՚ծանրանանք քեզ վերայ. և
նա ստիպեց նորան, բայց նա չ՚ու-
զեց գնալ և օրհնեց նորան։ Եւ 26
Աբիսողոմն ասեց. Եթէ ոչ, թող
գոնէ իմ եղբայր Ամնոնը գայ մեզ
հետ. և թագաւորն ասեց նո-
րան. Ի՞նչու համար նա գնայ
քեզ հետ։ Բայց Աբիսողոմն ստի- 27
պեց նորան, և Դաւիթն ուղարկեց
նորա հետ Ամնոնին և թագաւո-

28 րի բոլոր որդիներին։ Եւ Աբիսողոմը հրամայեց իր երիտասարդներին ասելով. Մտիկ արէք երբոր Ամնոնի սիրտը գինիով զուարթանայ և ես ձեզ ասեմ՝ զարկէք Ամնոնին, մեռցրէք նորան, մի վախենաք, չէ՞ որ ես եմ ձեզ հրամայում. զօրացէք և քաջա-
29 սիրտ եղէք։ Եւ Աբիսողոմի երիտասարդներն արին Ամնոնին ինչպէս որ Աբիսողոմը հրամայել էր, և թագաւորի որդիքը վեր կացան հեծան ամեն մարդ իր ջորին
30 և փախան։ Եւ նորանք տակաւին ճանապարհին էին, որ լուր եկաւ Դաւիթին ասելով թէ Աբիսողոմը զարկեց թագաւորի բոլոր որդիներին, և նորանցից մէկն էլ
31 չէ մնացել։ Եւ թագաւորը վեր կացաւ և իր հանդերձները պատառեց և գետինը պառկեց, և նորա բոլոր ծառաները կանգնել էին՝ հանդերձները պատառած։
32 Եւ Դաւիթի եղբայր Սամայի որդին Յովնադաբը պատասխանեց ասելով. Իմ տէրը չ՚ասէ թէ բոլոր երիտասարդներին՝ թագաւորի որդիներին սպանեցին. որովհետև միայն Ամնոնն է մեռել. նորա համար որ սա Աբիսողոմի բերանովը որոշուած էր այն օրից որ նա բռնաբարեց նորա քոյր
33 Թամարին։ Եւ հիմա թող իմ տէր թագաւորը հոգս չ՚անէ այս բանի համար ասելով թէ թագաւորի բոլոր որդիքը մեռան. որովհետև միայն Ամնոնն է մե-
34 ռել։ Եւ Աբիսողոմը փախաւ։ Եւ երբոր դէտ երիտասարդը իր աչքերը բարձրացրեց և մտիկ տուաւ, ահա շատ ժողովուրդ էր գալիս ետևի ճանապարհովը
35 սարի կողքովը։ Եւ Յովնադաբն ասեց թագաւորին. Ահա գալիս են թագաւորի որդիքը. ինչպէս որ քո ծառայի խօսքն էր, այն-
36 պէս եղաւ։ Եւ եղաւ հէնց որ նա խօսքը վերջացրեց, ահա եկան թագաւորի որդիքը և բարձրացրին իրանց ձայները և լաց եղան, և թագաւորն էլ և նորա բոլոր ծառաները շատ մեծ լացով լաց եղան։

Եւ Աբիսողոմը փախաւ և գը- 37
նաց Գեսուրի թագաւոր Ամիհուդի որդի Թոլմիի մօտ. և Դաւիթը սուգ արաւ իր որդիի մասին ամեն օր։ Բայց Աբիսողոմը փախաւ 38
և գնաց Գեսուր, և այնտեղ երեք տարի մնաց։ Եւ Դաւիթ 39
թագաւորը փափաքում էր դուրս գնալ Աբիսողոմի մօտ. որովհետև մխիթարուել էր մեռնող Ամնոնի վերայ։

ԳԼ. ԺԴ

Եւ Շարուհեան Յովաբն իմացաւ 1
որ թագաւորի սիրտը Աբիսողոմի
վերայ էր։ Եւ Յովաբը մարդ ու- 2
ղարկեց Թեկուէ և այնտեղից մի խելօք կին առաւ և ասեց նորան. Խնդրեմ՝ քեզ սգաւոր ձեւացրու և սուգի հանդերձ հագիր, իւղով մի օծուիր, և եղիր մի այնպիսի կին որ շատ օրերից 'ի վեր սգաւոր է մեռելի համար։ Եւ գնա թագաւորի մօտ և 3
նորա հետ այս կերպ խօսքեր խօսիր. և Յովաբը խօսքերը նորա
բերանը դրաւ։ Եւ Թեկուացի 4
կինը խօսեց թագաւորի հետ և ընկաւ իր երեսի վերայ գետինը և երկրպագեց և ասեց. Օգնիր,
արքայ։ Եւ թագաւորն ասեց նո- 5
րան. Ի՞նչ ունես. և նա ասեց. Ո՜հ, ես մի որբևայրի կին եմ,
և իմ այրը մեռել է։ Եւ քո ա- 6
ղախինը երկու որդի ունէր. և երկուսը կռիւ արին դաշտումը, և նորանց մէջ հաշտեցնող չ՚կար, և մէկը զարկեց միւսին և մեռ-
ցրեց նորան։ Եւ ահա բոլոր ազ- 7
գատոհմը վեր է կացել քո աղախնի վերայ և ասում են՝ տուր այն իր եղբօրը զարկողին որ սպանենք նորան իր եղբօր անձի տեղ, որ նա սպանել է, և ժառանգն էլ կորցնենք, և հանգցնում են իմ այն կայծն էլ, որ մնացել է ինձ համար, չ՚թողելով իմ մարդի համար ոչ անուն և ոչ մնացորդ երկրի երեսին։ Եւ թագա- 8
ւորն ասեց կնկան. Գնա քո տունը և ես կ՚պատուիրեմ քո մասին։ Եւ Թեկուացի կինն ասեց 9

թագաւորին. Ինձ վերայ, ով տէր թագաւոր, լինի յանցանքը՝ իմ և իմ հօր տան վերայ, և թագաւորն ու նորա աթոռը ան-
10 պարտ լինի։ Եւ թագաւորն ասեց. Եթէ քեզ հետ խօսող լինի, նորան ինձ մօտ բեր, և այլ
11 ևս քեզ չի դպչիլ։ Եւ կինն ասեց. Թող թագաւորը յիշէ քո Տէր Աստուծուն, որ չ՚շատանան արիւնի վրէժխնդիրները ապականելու համար և իմ որդին չ՚մեռցնեն։ Եւ նա ասեց. Կենդանի է Տէրը որ քո որդիի մազիցը գե-
12 տինը չի ընկնիլ։ Եւ կինն ասեց. Թող աղախինդ մի խօսք խօսէ իմ տէր թագաւորի հետ. և նա ա-
13 սեց. Խօսիր։ Եւ կինն ասեց. Ապա ի՞նչու համար ես այսպիսի բան մտածում Աստուծոյ ժողովրդի վերայ. և թագաւորն այս բանը խօսելուց յանցաւորի նման է լինում, քանի որ թագաւորն իր աքսորածը ետ չ՚դարձնէ։
14 Որովհետև մենք անշուշտ պիտի մեռնենք, և գետինը թափուած ջրի նման ենք որ չի ժողովուիլ. և Աստուած հոգի չէ առնում, այլ խորհուրդներ է խորհում որ աքսորուածն իրանից աքսորուած
15 չ՚մնայ։ Եւ հիմա եկայ այս խօսքն իմ տէր թագաւորի հետ խօսելու. որովհետև ժողովուրդն ինձ վախեցնում է. և աղախինդ ասեց. Խօսեմ թագաւորի հետ, գուցէ թագաւորն անէ իր ա-
16 ղախնի խօսքը։ Որովհետև թագաւորը լսելու է, որ իր աղախնին ազատէ այն մարդի ձեռքից որ ուզում է կորցնել ինձ, և իմ որդիին մէկտեղ Աստուծոյ ժա-
17 ռանգութիւնիցը։ Եւ քո աղախինն ասեց. Թող իմ տէր թագաւորի խօսքը մխիթարութիւն լինի. որովհետև իմ տէր թագաւորը Աստուծոյ հրեշտակի պէս է՝ որ հասկանայ լաւը և չարը. և քո Տէր Աստուածը քեզ հետ լի-
18 նի։ Եւ թագաւորը պատասխանեց և ասեց այն կնկան. Ինձանից մի բան մի թաքցնիր, որ ես քեզանից հարցնում եմ. և կինն ասեց. Թող իմ տէր թագաւորն
ասէ։ Եւ թագաւորն ասեց. Յո- 19
վաբի ձեռքը քեզ հե՞տ է այս բոլոր բաներումը։ Եւ կինը պատասխանեց և ասեց. Կենդանի է քո անձը, ով տէր իմ թագաւոր, որ ոչ ոք չի խոտորիլ աջ կամ ձախ իմ տէր թագաւորի բոլոր ասածիցը. որովհետև ծառադ Յովաբն ինքն է ինձ պատուիրել, և նա է դրել այս բոլոր խօսքերը քո աղախնի բերանը։
Բանի կերպարանքը դարձնելու 20
նպատակաւ արաւ ծառադ Յովաբն այս բանը, և իմ տէրն իմաստուն է Աստուծոյ հրեշտակի իմաստութեան պէս, որ երկրիս վերայի բոլորն իմանայ։
Եւ թագաւորն ասեց Յովաբին. 21
Ահա այս բանը արի. ուրեմն գնա ետ դարձրու Աբիսողոմ պատանիին։ Եւ Յովաբն ընկաւ իր 22
երեսի վերայ գետինը և երկրպագեց և օրհնեց թագաւորին, և Յովաբն ասեց. Այսօր իմացաւ քո ծառան որ շնորհք եմ դտել քո աչքի առաջին, ով տէր իմ արքայ, որ թագաւորն իր ծառայի խօսքը կատարեց։ Եւ Յո- 23
վաբը վեր կացաւ գնաց Գեսուր և Աբիսողոմին բերաւ Երուսաղէմ։ Եւ թագաւորն ասեց. Թող 24
նա դառնայ իր տունը և իմ երեսը չ՚տեսնէ. և Աբիսողոմը դարձաւ իր տունը և թագաւորի երեսը չ՚տեսաւ։
Եւ Աբիսողոմի պէս գեղեցիկ 25
մարդ չ՚կար բոլոր Իսրայէլի մէջ. որին շատ գովում էին, ոտքի թաթիցը մինչև գագաթը նորանում
արատ չ՚կար։ Եւ նա իր գլուխը 26
խուզելիս (և լինում էր որ ժամանակից ժամանակ մազերը խուզում էր, որովհետև ծանր էր լինում նորա համար և նա խուզում էր), և նորա գլխի մազի ծանրութիւնը երկու հարիւր սիկղ էր թագաւորական կշիռ-
քով։ Եւ Աբիսողոմի համար ծըն- 27
ուեցան երեք որդի և մէկ աղջիկ՝ անունը Թամար, որ տեսքով գեղեցիկ կին էր։
Եւ Աբիսողոմը մնաց Երուսա- 28
ղէմ ամբողջ երկու տարի և թա-

29 գաւորի երեսը չ'տեսաւ։ Եւ Ա-
բիսողոմը մարդ ուղարկեց Յովա-
բին, որ նորան ուղարկէ թագա-
ւորի մօտ, բայց նա չ'ուզեց նո-
րա մօտ գնալ. և նա երկրորդ
անգամ ևս ուղարկեց, և նա
30 չ'ուզեց գալ։ Եւ ասեց իր ծա-
ռաներին. Տեսէք Յովաբի արտը
որ իմ ձեռքին է. և նա այնտեղ
գարի ունի. գնացէք կրակով այ-
րեցէք այն. և Աբիսողոմի ծա-
ռաներն արտը կրակով այրեցին։
31 Եւ վեր կացաւ Յովաբը ու գնաց
Աբիսողոմի մօտ՝ տունը, և ասեց
նորան. Ի՞նչու համար են քո ծա-
ռաները իմ արտը կրակով այ-
32 րել։ Եւ Աբիսողոմն ասեց Յովա-
բին. Ահա քեզ մօտ մարդ ու-
ղարկեցի ասելով, Այստեղ եկ
որ քեզ թագաւորի մօտ ուղար-
կեմ որ ասես թէ Ես ի՞նչու հա-
մար Գեսուրից եկայ. ինձ համար
լաւ կ'լինէր որ դեռ այնտեղ լի-
նէի. և արդ թող թագաւորի
երեսը տեսնեմ, և եթէ ինձ վե-
րայ յանցանք կայ, այն ժամա-
33 նակ ինձ մեռցրու։ Եւ Յովաբը
գնաց թագաւորի մօտ և նորան
պատմեց, և նա կանչեց Աբիսո-
ղոմին և նա եկաւ թագաւորի
մօտ, և երկրպագեց նորան մին-
չև գետինը թագաւորի առաջին.
և թագաւորը համբուրեց Աբի-
սողոմին։

ԳԼ. ԺԵ

1 Եւ եղաւ սորանից յետոյ որ
Աբիսողոմն իր համար կառքեր և
ձիեր և յիսուն մարդ սուրհան-
2 դակ շինեց։ Եւ Աբիսողոմը կա-
նուխ վեր էր կենում ու կանգ-
նում դռան ճանապարհի մօտ,
և ամեն մարդ որ դատ էր ունե-
նում որ գայ թագաւորի մօտ
դատաստանի՝ Աբիսողոմը նորան
կանչում էր իր մօտ և ասում.
Դու ո՞ր քաղաքից ես, և նա ա-
սում էր. Իսրայէլի ցեղերի մէ-
3 կիցն է ծառադ։ Եւ Աբիսողոմը
նորան ասում էր. Տես քո ճա-
նապարհները լաւ և ուղիղ են,
բայց դու լսող չ'ունես թագա-
ւորի կողմից։ Եւ Աբիսողոմն ա- 4
սում էր. Երանի՞ թէ ինձ դա-
տաւոր դնէին այս երկրումը, և
ինձ մօտ գար ամեն ով վէճ և
դատ ունենար, և ես կ'արդա-
րացնէի նորան։ Եւ երբոր մի 5
մարդ նորան մօտենում էր նորան
երկրպագելու, նա իր ձեռքը
մեկնում էր և նորան բռնում և
համբուրում նորան։ Եւ Աբիսո- 6
ղոմն այսպէս էր անում բոլոր Իս-
րայէլին, որ դատուելու համար
գալիս էին թագաւորի մօտ. և
Աբիսողոմը գողացաւ Իսրայէլի
մարդկանց սիրտերը։
Եւ *քառասուն տարի անցնե- 7
լուց յետոյ եղաւ որ Աբիսողոմն
ասեց թագաւորին. Թող գնամ
իմ ուխտերը կատարեմ Քեբրո-
նում որ արել եմ Տիրոջը հա-
մար։ Որովհետև ծառադ ուխտ 8
եմ արել, երբոր ես բնակվում
էի Ասորիների Գեսուրումն ասե-
լով. Եթէ Տէրն ինձ Երուսաղէմ
դարձնէ, ես Տիրոջն եմ ծառա-
յելու։ Եւ թագաւորն ասեց նո- 9
րան. Գնա խաղաղութեամբ. և
նա վեր կացաւ ու գնաց Քեբրոն։
Եւ Աբիսողոմը լրտեսներ ուղար- 10
կեց Իսրայէլի բոլոր ցեղերին ա-
սելով. Երբոր փողի ձայնը լսէք,
ասեցէք՝ Աբիսողոմը թագաւոր ե-
ղաւ Քեբրոնում։ Եւ Աբիսողոմի 11
հետ երկու հարիւր մարդ գնաց
Երուսաղէմից հրաւիրուած. և
նորանք գնացին միամտութեամբ,
և ոչինչ չ'գիտէին։ Եւ Աբիսո- 12
ղոմը զոհերը զոհելիս՝ մարդ ու-
ղարկեց Դաւիթի խորհրդակից
Գեղոնացի Աքիտոփելին ու Բերա-
նորան քաղաք՝ Գեղոնիցը։ Եւ
դաւաճանութիւնը զօրացաւ. և
ժողովուրդը գնալով շատանում
էր Աբիսողոմի հետ։
Եւ մէկ լրաբեր եկաւ Դաւի- 13
թի մօտ ասելով. Իսրայէլի մարդ-
կանց սիրտը Աբիսողոմի հետ է։
Եւ Դաւիթն ասեց իր բոլոր ծա- 14
ռաներին, որ իր հետ Երուսաղէ-
մումն էին. Վեր կացէք և փախ-
չենք. որովհետև մեզ համար ա-

*Ըստ ոմանց՝ չորս

զատութիւն չի լինիլ Աբիսողոմի
երեսից. շտապեցէք գնալու, մի
դուցէ նա շուտով մեզ հասնէ և
մեզ վերայ չարիք բերէ և քա-
ղաքը զարկէ սուրի բերանով։
15 Եւ թագաւորի ծառաներն ասե-
ցին թագաւորին. Ամեն ինչ որ
մեր տէր թագաւորը բարեհա-
ճէ, ահա մենք քո ծառաները։
16 Եւ դուրս ելաւ թագաւորը և
նորա բոլոր տունը նորա ետևից.
և թագաւորը տասը հարճ կին
թողեց տունը պահելու համար։
17 Եւ թագաւորը դուրս եկաւ և
բոլոր ժողովուրդը նորա ետևից և
կանգնեցին Բեթհամերհագում։
18 Եւ նորա կողմին անց էին կե-
նում նորա բոլոր ծառաները,
բոլոր Քերեթիները և բոլոր Փե-
լեթիները, և բոլոր Գէթացինե-
րը՝ վեց հարիւր մարդ որ եկել
էին նորա ետևից Գէթիցը անց-
նում էին թագաւորի առաջով։
19 Եւ թագաւորն ասեց Գէթացի
Եթթիին. Ի՞նչու համար ես դու
էլ գնում մեզ հետ. ետ դար-
ձիր և մնա թագաւորի մօտ. ո-
րովհետև դու օտարական և պան-
20 դուխտ ես քո տեղումը։ Քո գա-
լը երէկ էր, և այսօր քեզ խախ-
տե՞մ մեզ հետ գնալու. և ես
թող գնամ՝ ուր որ գնում եմ.
դու ետ դարձիր և քո եղբայր-
ներին էլ ետ դարձրու. քեզ
հետ լինի ողորմութիւն և ճըշ-
21 մարտութիւն։ Եւ Եթթին պա-
տասխանեց թագաւորին և ասեց.
Կենդանի է Տէրը և կենդանի է
իմ տէր թագաւորը, որ այնտեղ
ուր որ լինի իմ տէր թագաւորը
թէ մահուան մէջ թէ կենդա-
նութեան մէջ՝ ծառադ էլ պիտի
22 այնտեղ լինի։ Եւ Դաւիթն ա-
սեց Եթթիին. Եկ անցիր։ Եւ
Գէթացի Եթթին անցաւ իր հետ
եղող բոլոր մարդկանցով և բո-
23 լոր ընտանիքներովը։ Եւ բոլոր
երկիրը լաց էր լինում մեծ ձայ-
նով, և բոլոր ժողովուրդը անց
էր կենում, և թագաւորը անց
կացաւ Կեդրոն հեղեղատովը. և
բոլոր ժողովուրդը անց էր կենում
ճանապարհի առաջովը անապատը։

Եւ ահա Սադովկն էլ և բոլոր 24
Ղևտացիները նորա հետ տանում
էին Աստուծոյ ուխտի տապանա-
կը. և Աստուծոյ տապանակը
կանգնեցրին. և Աբիաթարը վեր
*գնաց մինչև որ բոլոր ժողովուր-
դը քաղաքիցը դուրս գալը վեր-
ջացրեց։ Եւ թագաւորն ասեց 25
Սադովկին. Աստուծոյ տապանա-
կը ետ դարձրու քաղաքը. եթէ
ես շնորհք եմ գտել Տիրոջ աչ-
քի առաջին, նա ինձ ետ կ'դար-
ձընէ և ինձ տեսնել կ'տայ իրան
և իր բնակարանը։ Բայց եթէ 26
Նա այսպէս ասէ թէ Ես քեզ
չեմ հաւանում, ահա ես, թող
ինձ անէ ինչպէս որ հաճելի է իր
աչքին։ Եւ թագաւորն ասեց Սա- 27
դովկ քահանային. Ով տեսանող,
ետ դարձիր քաղաքը խաղաղու-
թեամբ և քո որդի Աքիմաասը
և Աբիաթարի որդի Յովնաթանը
ձեր երկու որդիքը ձեզ հետ։
Տեսէք ես անապատի դաշտերու- 28
մը ուշանալու եմ, մինչև որ ձե-
զանից խօսք գայ որ ինձ իմացը-
նէք։ Եւ Սադովկն ու Աբիաթարն 29
Աստուծոյ տապանակը ետ դար-
ձրին Երուսաղէմ և իրանք մնա-
ցին այնտեղ։
Եւ Դաւիթը վեր էր գնում 30
Զիթենեաց զառիվերովը, և վեր
գնալով լաց էր լինում, և իր
գլուխը ծածկած և ոտքերը բո-
բիկ էր գնում. և նորա հետ ե-
ղող բոլոր ժողովուրդը՝ ամեն
մարդ իր գլուխը ծածկել էր և
վեր էին գնում լաց լինելով։ Եւ 31
Դաւիթին պատմեցին ասելով.
Աքիտոփելը ապստամբների հետ
Աբիսողոմի մօտ է։ Եւ Դաւիթն
ասեց. Յիմարացրու Աքիտոփելի
խորհուրդը, աղաչում եմ, ով
Տէր։ Եւ եղաւ երբոր Դաւիթն 32
եկաւ մինչև բլուրի գլուխը, ուր
նա երկրպագութիւն արաւ Ա-
ստուծոյ, ահա նորան դիմաւորեց
Արաքացի Քուսին՝ իր պատմու-
ճանը պատառած և հողը գլխին։
Եւ Դաւիթն ասեց նորան. Եթէ 33
ինձ հետ գաս, ինձ վերայ բեռ

*ողջակէզ մատուցրեց

34 կ'լինես։ Եւ եթէ ետ դառնաս
քաղաքը և Աբիսողոմին ասես.
Ես քեզ ծառայ դառնամ, ով
Թագաւոր. ես առաջուց քո հօր
ծառան էի, և հիմա էլ քո ծա-
ռան եմ. այն ժամանակ դու կը
ցրուես ինձ համար Աքիտոփէլի
35 խորհուրդը։ Եւ ահա այնտեղ
քեզ հետ կան Սադովկ և Աբի-
աթար քահանաները, և ամեն
ինչ որ Թագաւորի տանիցը լսես,
իմացրու Սադովկ և Աբիաթար
36 քահանաներին։ Ահա այնտեղ
նորանց հետ են նորանց երկու
որդիքը՝ Աքիմաաս Սադովկի և
Յովնաթան Աբիաթարի որդին. և
ինձ մօտ ուղարկեցէք նորանց
ձեռքովը ամեն ինչ բան որ լսէք։
37 Եւ Դաւիթի բարեկամ Քուսին
եկաւ քաղաքը. և Աբիսողոմն ե-
կաւ Երուսաղէմ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ Դաւիթը Բլուրի գլխից մի
քիչ անցել էր, և ահա նորան
դիմաւորեց Մեմփիբոսթէի ծա-
ռայ Սիբան երկու էշով, և նո-
րանց վերայ բեռնած երկու հա-
րիւր հաց, հարիւր ողկոյզ չա-
միչ, և հարիւր շարոց չոր թուզ
2 և մի տիկ գինի։ Եւ թագաւորն
ասեց Սիբային. Այս ի՞նչ ունես.
և Սիբան ասեց. Էշերը թագա-
ւորի տան համար են որ հեծնեն,
և հացն ու թուզը պատանիներ-
ին որ ուտեն, և գինին անա-
պատումը նուաղածների համար է
3 որ խմեն։ Եւ Դաւիթն ասեց.
Ո՞ւր է քո տիրոջ որդին։ Եւ
Սիբան ասեց թագաւորին. Ահա
մնացել է Երուսաղէմումը. որով-
հետև ասեց. Իսրայէլի տունը
այսօր իմ հօր թագաւորութիւ-
4 նը ինձ ետ կ'դարձնէ։ Եւ Թա-
գաւորն ասեց Սիբային. Ահա
քեզ լինի ամեն ինչ որ Մեմփի-
բոսթէինն է. և Սիբան ասեց.
*Շնորհակալ եմ, Թող շնորհք
գտնեմ քո աչքի առաջին, ով
տէր իմ Թագաւոր։

*Խոնարհութիւն եմ անում։

Եւ Դաւիթ Թագաւորն եկաւ 5
մինչև Բաւուրիմ, և ահա այն-
տեղից մի մարդ դուրս եկաւ՝
Սաւուղի ազգականներից՝ անունը
Սեմէի՝ Գերայի որդին. դուրս
գալով անիծում էր։ Եւ քարեր 6
էր գցում Դաւիթին և Դաւիթ
Թագաւորի բոլոր ծառաներին,
և բոլոր ժողովուրդն ու բոլոր զօ-
րաւորները նորա աջ և նորա ձախ
կողմին էին։ Եւ Սեմէին այսպէս 7
էր ասում իր անէծքումը. Դուրս
եկ, դուրս եկ, ով արիւնահեղ
մարդ, ով անօրէն մարդ։ Տէրը 8
քեզ վերայ դարձրեց Սաւուղի
տան բոլոր արիւնները, որի փո-
խարէն դու Թագաւոր եղար. և
Տէրը Թագաւորութիւնը տուաւ
քո որդի Աբիսողոմի ձեռքը. և
ահա դու քո չարիքի մէջ ես.
որովհետև դու մի արիւնահեղ
մարդ ես։ Եւ Շարուհեայի որդի 9
Աբեսսան ասեց Թագաւորին. Ի՞ն-
չու համար է անիծում այս սատ-
կած շունը իմ տէր Թագաւորին.
Թող անցնեմ ու գլուխը կտրեմ։
Եւ Թագաւորն ասեց. Դուք ինձ 10
հետ ի՞նչ բան ունէք, ով Շա-
րուհեայի որդիք. Թող անիծէ.
որովհետև Տէրն է ասել նորան՝
Անիծիր Դաւիթին. և ո՞վ կ'ասէ
նորան. Ի՞նչու համար ես այսպէս
անում։ Եւ Դաւիթն ասեց Աբես- 11
սային և իր բոլոր ծառաներին.
Ահա իմ որդին որ իմ երանքիցն
է դուրս եկել, որոնում է իմ
անձը, ո՞ւր մնաց հիմա Բենիա-
մինեանը. Թող տուէք նորան որ
անիծէ. որովհետև Տէրն է ասել
նորան։ Գուցէ Տէրը նայէ իմ նե- 12
զութեանը և Տէրն ինձ բարիք
հատուցանէ այսօր նորա անէծքի
փոխարէն։ Եւ Դաւիթն ու իր 13
մարդիկը գնացին ճանապարհովը.
բայց Սեմէին գնում էր սարի
կողքովը նորա մօտից, գնում էր
և անիծում, և քարեր էր գցում
նորա մօտից և հող էր ցանում
նորա վերայ։ Եւ եկաւ Թագաւո- 14
րը և նորա հետ եղող բոլոր ժո-
ղովուրդը յոգնած, և այնտեղ
հանգստացան։
Եւ Աբիսողոմն ու բոլոր ժողո- 15

վուրդը՝ ամեն Իսրայէլացիներն ե-
կան Երուսաղէմ, և Աքիտոփէլը
16 նորանց հետ։ Եւ եղաւ որ երբ
Արաքացի Քուսին՝ Դաւիթի բա-
րեկամը եկաւ Աբիսողոմի մօտ,
Քուսին ասեց Աբիսողոմին. Կեց-
17 ցէ՛ արքայ, կեցցէ՛ արքայ։ Եւ
Աբիսողոմն ասեց Քուսիին. Դա՞ է
քո բարեկամի վերայ ունեցած
սէրդ, ի՞նչու համար չես գնա-
18 ցել քո բարեկամի հետ։ Եւ
Քուսին ասեց Աբիսողոմին. Ոչ,
այլ որին որ հաւանէ Տէրը և այս
ժողովուրդը և Իսրայէլի բոլոր
մարդիկը, ես նորանը կ'լինեմ և
19 նորա հետ կ'մնամ։ Եւ երկ-
րորդ՝ ես ո՞ւմ պիտի ծառայեմ,
չէ՞ որ նորա որդիին, ինչպէս որ
ծառայել եմ քո հօր առաջին,
այնպէս կ'լինեմ և քո առաջին։
20 Եւ Աբիսողոմն ասեց Աքիտո-
փէլին. Խորհուրդ տուէք թէ
21 ինչ անենք։ Եւ Աքիտոփէլն ա-
սեց Աբիսողոմին. Մտիր քո հօր
հարճերի մօտ, որոնց նա Թողեց
տունը պահելու. և բոլոր Իսրա-
յէլը կ'լսէ որ քո հօրն ատելի ես,
և բոլոր քեզ հետ եղողների
22 ձեռքերը կ'ուժովանան։ Եւ Ա-
բիսողոմի համար վրան շինեցին
կտուրի վերայ, և Աբիսողոմը մը-
տաւ իր հօր հարճերի մօտ բոլոր
23 Իսրայէլի աչքի առաջին։ Եւ Ա-
քիտոփէլի խորհուրդը, որ այն օ-
րերը նա տալիս էր, նման էր նո-
րան որ մէկը Աստուծոյ խօսքը
հարցնէր. այսպէս էր Աքիտո-
փէլի ամեն խորհուրդը թէ Դա-
ւիթի թէ Աբիսողոմի համար։

ԳԼ. ԺԷ

1 Եւ Աքիտոփէլն ասեց Աբիսողո-
մին. Թող տասնևերկու հազար
մարդ ընտրեմ և վեր կենամ այս
2 գիշեր Դաւիթին հալածեմ։ Եւ
ես կ'յարձակուեմ նորա վերայ
քանի որ նա յոգնած և ձեռքե-
րը Թուլացած է, և նորան կը
վախեցնեմ, և նորա հետ եղող
բոլոր ժողովուրդը կ'փախչէ, և
կ'զարկեմ մինակ Թագաւորին։
3 Իսկ բոլոր ժողովուրդը կ'դարձը-
նեմ քեզ մօտ. բոլորի դարձա-
ծին պէս է այն մարդը որին դու
որոնում ես. բոլոր ժողովուրդը
հանդարտ կ'լինի։ Եւ այս խօսքը 4
ուղիղ երևեցաւ Աբիսողոմի աչ-
քին և Իսրայէլի բոլոր ծերերի
աչքին։
Եւ Աբիսողոմն ասեց. Արաքա- 5
ցի Քուսիին էլ կանչեցէք, որ
լսենք թէ նորա բերանումն ինչ
կայ։ Եւ Քուսին Աբիսողոմի մօտ 6
եկաւ, և Աբիսողոմն ասեց նորան
այսպէս թէ Այս բանի պէս է
ասել Աքիտոփէլը. նորա խօսքը
անենք թէ ոչ. դու խօսիր։ Եւ 7
Քուսին ասեց Աբիսողոմին. Աքի-
տոփէլի այս անգամ տուած խոր-
հուրդը լաւ չէ. Եւ Քուսին ա- 8
սեց. Դու գիտես քո հօրը և նո-
րա մարդկանցը որ զօրաւոր և
դառնոգի են՝ դաշտումը ձագերը
կորցրած արջի նման. և քո հայ-
րը պատերազմի մարդ է, և գի-
շերը չի մնալ ժողովրդի հետ։
Ահա նա հիմա Թաք է կացել 9
կամ փոսերի մէկում կամ մի
ուրիշ տեղ. և եթէ լինի որ սկզբ-
ում նորանցից ոմանք ընկնեն,
այն ժամանակ լսողը որ լսեց՝ ա-
սելու է թէ կոտորուել է Աբի-
սողոմի ետևից գնացող ժողո-
վուրդը։ Եւ ինքը քաջազունն էլ՝ 10
որի սիրտը առիւծի սրտի պէս է,
բոլորովին կ'թուլանայ. որովհե-
տև բոլոր Իսրայէլը գիտէ որ քո
հայրը զօրաւոր է և նորա հետ
եղողներն էլ ուժով մարդիկ են։
Բայց ես խորհուրդ եմ տալիս. 11
ժողովիր քեզ վերայ Դանից մին-
չև Բերսաբէէ՝ ինչպէս որ ծովի
եզերքի աւազը շատ է. և դու
էլ անձամբ նորանց մէջ գնաս։
Այն ժամանակ նորա վերայ կը 12
գնանք այն տեղերի մէկում, ուր
որ կ'գտնուի, և բանակ կ'տանք
նորա դէմ ինչպէս որ ցօղն իջ-
նում է երկրի վերայ. և նորա-
նից և նորա հետ եղող բոլոր
մարդկանցից մէկն էլ չի պրծնիլ։
Բայց եթէ նա մի քաղաքի մէջ 13
հաւաքուելու լինի, այն ժամա-
նակ բոլոր Իսրայէլն այն քաղաքի
վերայ չուաններ կ'տանի, և նո-

բան քաշ կ'տանք մինչև հեղեղատը մինչև որ այնտեղ մի քա-
44 րի կտոր էլ չ'գտնուի։ Եւ Աբիսողոմն և Իսրայէլի բոլոր մարդիկն ասեցին. Արաքացի Քուսիի խորհուրդը լաւ է քան թէ Աքիտոփէլի խորհուրդը։ Եւ Տէրը հրամայել էր, որ Աքիտոփէլի լաւ խորհուրդը ցրվուի, որպէս զի Տէրը Աբիսողոմի վերայ չարիք բերէ։
45 Եւ Քուսին ասեց Սադովկ և Աբիաթար քահանաներին թէ Այսպէս և այսպէս խորհուրդ տուաւ Աքիտոփէլն Աբիսողոմին և Իսրայէլի ծերերին, և ես էլ այսպէս և այսպէս խորհուրդ
46 տուի։ Եւ հիմա շուտով մարդ ուղարկեցէք և իմացրէք Դաւիթին, ասելով թէ Գիշերը անապատի դաշտերումը մի մնար, այլ անցիր գնա, որ կորուստ չ'լինի թագաւորի և նորա հետ եղող
47 բոլոր ժողովրդի համար։ Եւ Յովնաթանն ու Աքիմաասը կանգնել էին Ռովգելի աղբիւրի մօտ. և աղախինը գնաց և նորանց պատմեց, նորանք էլ գնացին և Դաւիթ թագաւորին պատմեցին. որովհետև չէին կարողանում երե-
48 ւալ որ քաղաքը մտնեն։ Եւ մի պատանի տեսաւ նորանց և պատմեց Աբիսողոմին. և նորանք երկուսը շուտով գնացին մտան մի Բաւուրիմցի մարդի տուն. և նա մի հոր ունէր իր դաւիթումը,
49 և նորանք այնտեղ իջան։ Եւ կինը ծածկոցն առաւ հորի բերանին փռեց և նորա վերայ ձաւար տարածեց, որ մի բան չ'իմացուե-
20 ցաւ։ Եւ Աբիսողոմի ծառաները գնացին այն կնկայ մօտ՝ նորա տունը և ասեցին. Ո՞ւր են Աքիմաասը և Յովնաթանը. և կինն ասեց նորանց. Անց կացան ջրի առուակովը. իսկ նորանք չ'գտան
21 և ետ դառան Երուսաղէմ։ Եւ եղաւ երբոր նորանք գնացել էին, սորանք դուրս եկան հորիցը ու գնացին և պատմեցին Դաւիթ թագաւորին, և ասեցին Դաւիթին. Վեր կացէք շուտով ջրովն անց կացէք, որովհետև Աքիտոփէլն այսպէս է խորհուրդ տուել ձեր
մասին։ Եւ վեր կացաւ Դաւիթը 22
և իր հետ եղող բոլոր ժողովուրդը և անց կացաւ Յորդանանովը. և մինչև առաւօտեան լոյսը մէկը չ'մնաց որ Յորդանանովն անցած չ'լինէր։
Եւ Աքիտոփէլը տեսաւ որ իր 23
խորհուրդը չ'կատարուեցաւ, էշը համետեց և վեր կացաւ ու գնաց իր տունը իր քաղաքը, և իր տան համար պատուէր տուաւ, ու իրան խեղդեց ու մեռաւ, և թաղուեցաւ իր հօր գերեզմանումը։
Իսկ Դաւիթը հասաւ Մանա- 24
յիմ։ Եւ Աբիսողոմն անցաւ Յորդանանովը ինքը և Իսրայէլի ամեն
մարդիկը նորա հետ։ Եւ Աբիսո- 25
ղոմն Ամեսայիին զօրքի վերայ դրաւ Յովաբի փոխանակ, բայց Ամեսային մի մարդի որդի էր որի անունն էր Յոթոր՝ *Իսրայէլացի, որն որ առել էր Յովաբի մայր՝ Շարուհեայի քոյր Նաասի աղջիկ
Աբիգեային։ Եւ Իսրայէլն ու Ա- 26
բիսողոմը բանակ տուին Գաղաադի երկրումը։
Եւ եղաւ հէնց որ Դաւիթը 27
հասաւ Մանայիմ, Նաասի որդի Սոբին Ամմոնի որդկանց Ռաբբայիցը և Ամիէլի որդի Մաքիրը Լադաբարիցը, և Գաղաադացի
Բերզելին Ռովգելիմիցը Անկողին- 28
ներ, կոնքեր, բրուտի ամաններ, ցորեն, գարի, ալիւր և հեղի, և
բակլայ, ոսպ և հեղի, Եւ մեղր 29
և կոգի և ոչխարներ և կովի պանիր բերին Դաւիթին և նորա հետ եղող ժողովրդին ուտելու. որովհետև ասում էին. Ժողովուրդը անապատումը սոված, յոգնած և ծարաւ կ'լինի։

ԳԼ. ԺԸ

Եւ Դաւիթը հանդէս արաւ իր 1
հետ եղող ժողովրդին և նորանց
վերայ հազարապետներ և հարիւ-
րապետներ դրաւ։ Եւ Դաւիթը 2
զօրքի երրորդ մասն ուղարկեց

*Իսմայէլացի. Տես ա Մն. բ. 17։

Յովաբի ձեռքովը, մի երրորդը Յովաբի եղբայր Շարուհեայի որդի Աբեսայի ձեռքովը, և մի երրորդը Գէթացի Եթթիի ձեռքովը. և թագաւորն ասեց զօրքին. Ես էլ դուրս գամ ձեզ
3 հետ։ Բայց զօրքն ասեց. Դու պիտի դուրս չ'գաս. որովհետև եթէ մենք փախչելու լինենք, նորանք մեզ համար հոգս չեն անիլ, և եթէ մեր կէսն էլ մեռնելու լինի, նորանք մեզ համար հոգս չեն անիլ. իսկ դու մեր տասը հազարի պէս ես. արդ լաւ կ'լինի որ դու մեզ օգնես քաղա-
4 քիցը։ Եւ թագաւորն ասեց նորանց. Ինչ որ հաճելի է ձեր աչքին՝ ես կ'անեմ. և թագաւորը մնաց [illegible] դռան մօտ, իսկ բոլոր զօրքը դուրս ելաւ հարիւր
5 հարիւր և հազար հազար։ Եւ թագաւորը պատուիրեց Յովաբին, Աբեսային և Եթթիին ասելով. Խնայեցէք ինձ համար Աբիսողոմ պատանիին. և բոլոր զօրքը լսեց որ թագաւորը զօրապետներին Աբիսողոմի մասին պատուէր էր տալիս։
6 Եւ ժողովուրդը դուրս եկաւ դաշտը Իսրայէլին դիմաւորելու. և պատերազմ եղաւ Եփրեմի ան-
7 տառումը։ Եւ այնտեղ կոտրուեցաւ Իսրայէլի զօրքը Դաւիթի ծառաների առաջին և այնտեղ շատ մեծ կոտորած եղաւ
8 այն օրը՝ քսան հազար հոգի։ Եւ պատերազմը այնտեղ տարածուեցաւ բոլոր երկրի երեսին. և անտառը այն օրը զօրքիցն աւելի մարդ փչացրեց քան թէ սուրը
9 փչացրեց։ Եւ Աբիսողոմը Դաւիթի ծառաների դիմացը հանդիպեց. և Աբիսողոմը ջորի էր հեծած. և ջորին մի մեծ կաղնիի թաւ ոստերի տակը մտաւ, և նորա գլուխը փաթաթուեցաւ կաղնիին, ու ինքը կախ ընկաւ երկնքի ու երկրի մէջտեղը, և
10 նորա տակի ջորին գնաց։ Եւ մի մարդ տեսել էր և ասեց Յովաբին. Ահա ես տեսայ Աբիսողո-
11 մին կաղնիիցը կախուած։ Եւ Յովաբն ասեց այդ իրան պատմող մարդին. Հիմա որ տեսար, ապա ինչու չ'զարկեցիր նորան այնտեղ գետինը [illegible]. և ես կ'տայի քեզ տասը [illegible] արծաթ
և մի գօտի։ Իսկ այն մարդն ա- 12
սեց Յովաբին. Եթէ ես իմ ձեռքին հազար [illegible] արծաթ կշռէի, իմ ձեռքը չէի մեկնիլ թագաւորի որդիի վերայ. որովհետև մեր ականջներին պատուիրեց թագաւորը քեզ, Աբեսային և Եթթիին ասելով. Խնայեցէք ինձ համար Աբիսողոմ պատանիին։
Եւ եթէ ես իմ անձի դէմ դա- 13
ւաճանութիւն անէի, և թագաւորիցն էլ ոչ մի բան ծածուկ չի մնալ, այն ժամանակ դու էլ
դէմ կ'կանգնէիր։ Եւ Յովաբն 14
ասեց. Ես այսպէս չեմ սպասիլ քո առաջին, և իր ձեռքը երեք գեղարդ վեր առաւ և կոխեց Աբիսողոմի սիրտը, քանի որ նա տակաւին կենդանի էր կաղնիի
մէջ։ Եւ Յովաբի զինակիրներից 15
տասը երիտասարդներ՝ շրջապատեցին և զարկեցին Աբիսողոմին
և մեռցրին նորան։ Եւ Յովաբը 16
փողը հնչեցրեց, և զօրքը ետ դառաւ Իսրայէլի ետևից հալածելուց. որովհետև Յովաբը զսպեց
զօրքին։ Եւ Աբիսողոմին առան, 17
և նորան անտառում մի մեծ փոսի մէջ գցեցին, և նորա վերայ մի շատ մեծ քարակոյտ դիզեցին. և բոլոր Իսրայէլը փախաւ՝ ամեն մարդ իր վրանը։
Եւ Աբիսողոմն իր կենդանու- 18
թեանը առել՝ իրան համար մի արձան էր կանգնեցրել թագաւորի հովիտումը. որովհետև ասում էր թէ որդի չ'ունեմ, որ իմ անունը յիշէ. և իր անունը դրել էր այն արձանին, և նորան ասում էին Աբիսողոմի կոթող մինչև այսօր։
Եւ Սադովկի որդի Աքիմաասն 19
ասեց. Թող վազեմ ու թագաւորին աւետիք տամ. որովհետև Տէրը նորան իրաւունք արաւ իր
թշնամիների ձեռքիցը։ Եւ Յո- 20
վաբն ասեց նորան. Դու այսօր աւետիքի մարդ չես, այլ մի ուրիշ օր աւետիք կ'տանես, և

այսօր աւետիք պիտի չ՚տանես,
որովհետև Թագաւորի որդին մե-
21 ռած է։ Եւ Յովաբն ասեց Քու-
սիին. Գնա պատմիր Թագաւորին
ինչ որ տեսար. և Քուսին եր-
կրպագութիւն արաւ Յովաբին
22 և վազեց։ Եւ Սադովկի որդի
Աքիմաասը շարունակեց և ասեց
Յովաբին. Ինչ և իցէ՝ Թող ես էլ
վազեմ Քուսիի ետևիցը. և Յո-
վաբն ասեց. Դու ի՞նչու համար
պիտի վազես, որդի, որ այս քեզ
համար օգուտ բերող աւետիք
23 չէ։ Ինչ որ իցէ՝ Թող վազեմ. և
նա ասեց. Վազիր. և Աքիմաա-
սը վազեց դաշտի ճանապարհովը
24 և անցաւ Քուսիից առաջ։ Եւ
Դաւիթը նստել էր երկու դրա-
ների մէջտեղը. և դէտը գնաց
դէպի դռան կտուրը՝ դէպի պա-
րիսպը և իր աչքերը բարձրացրեց
ու տեսաւ, որ ահա մի մարդ էր
25 վազում մինակ։ Եւ դէտը կան-
չեց և իմացրեց Թագաւորին. և
Թագաւորն ասեց. Եթէ նա մի-
նակ է, ուրեմն աւետիք կայ նո-
րա բերանումը. և նա քանի գա-
26 լիս էր՝ մօտենում էր։ Եւ դէտը
մի ուրիշ մարդ տեսաւ վազելիս,
և դէտը կանչեց դռնապանին և
ասեց. Ահա մի մարդ վազում է
մինակ. և Թագաւորն ասեց. Նա
27 էլ է աւետաւոր։ Եւ դէտն ա-
սեց. Ես տեսնում եմ առաջինի
վազելը իբրև Սադովկի որդի Ա-
քիմաասի վազելը. և Թագաւորն
ասեց. Դա բարի մարդ է, և բա-
28 րի լուրի համար է գալիս։ Եւ
Աքիմաասը կանչեց և ասեց Թա-
գաւորին. Խաղաղութիւն, և ե-
րեսի վերայ երկրպագեց Թագա-
ւորին [illegible] դետինը, և ասեց.
Օրհնեալ է քո Տէր Աստուածը
որ արգելեց իմ տէր Թագաւորի
վերայ իրանց ձեռքը բարձրացնող
29 մարդկանցը։ Եւ Թագաւորն ա-
սեց. Աբիսողոմ պատանին ո՞ղջ
է. և Աքիմաասն ասեց. Ես [illegible]
այն մեծ բազմութիւնը տեսայ,
երբոր Յովաբն ուղարկեց Թագա-
ւորի ծառային և [illegible] քո ծառա-
յին, բայց չ՚իմացայ թէ ինչ էր։
30 Եւ Թագաւորն ասեց. Դարձիր
այսպէս կանգնիր, և նա դար-
ձաւ կանգնեց։ Եւ ահա Քուսին 31
եկաւ և ասեց Քուսին. Իմ տէր
Թագաւորին աւետի՞ք. որովհե-
տև Տէրն այսօր քեզ իրաւունք
արաւ բոլոր քեզ վերայ վեր կե-
նողների ձեռքիցը. Եւ Թագա- 32
ւորն ասեց Քուսիին. Աբիսողոմ
պատանին ո՞ղջ է. և Քուսին ա-
սեց. Այդ պատանիի նման դառ-
նան իմ տէր Թագաւորի թշնա-
միները, և բոլոր չարիքի համար
քեզ վերայ վեր կենողները։ Եւ 33
Թագաւորը խռովեցաւ ու վեր
գնաց դռան վերնատունը և լաց
եղաւ, և այսպէս էր ասում
գնալով. Որդիս Աբիսողոմ, որ-
դիս, որդիս Աբիսողոմ. երանի
թէ ես մեռնէի քեզ տեղ, ով
Աբիսողոմ որդիս, որդիս։

ԳԼ. ԺԹ

Եւ Յովաբին պատմեցին [illegible] Ահա 1
Թագաւորը լաց է լինում և Աբի-
սողոմի վերայ սուգ է անում։
Եւ յաղթութիւնն այն օրը սու- 2
գի դարձաւ բոլոր ժողովրդի ա-
ռաջին. որովհետև ժողովուրդը
այն օրը լսել էր որ ասում էին
թէ Թագաւորը տրտմել է իր
որդիի մասին։ Եւ այն օրը զօր- 3
քը գողի պէս էր մտնում քաղա-
քը ինչպէս որ գողի պէս քաղա-
քը կ՚մտնէ պատերազմում փա-
խած ամօթահար զօրքը։ Եւ Թա- 4
գաւորը ծածկեց իր երեսը, և
մեծ ձայնով աղաղակեց Թագա-
ւորը. Որդիս Աբիսողոմ, Աբիսո-
ղոմ որդիս, որդիս։
Եւ Յովաբը [illegible] մտաւ Թա- 5
գաւորի մօտ սենեակը և ասեց.
Դու այսօր ամօթով արիր քո
բոլոր ծառաների երեսը, որ քո
անձը և քո որդկանց ու աղջկե-
րանց անձը, և քո կանանց անձն
և քո հարճերի անձը այսօր ա-
զատեցին։ Դու սիրում ես քեզ 6
ատողներին և ատում ես քեզ
սիրողներին, որովհետև այսօր ի-
մացրիր որ քեզ համար ոչինչ են
իշխանները և ծառաները. որով-
հետև ես այսօր հասկացայ որ

այսօր Աբիսողոմը կենդանի լինէր
և մենք այսօր ամենքս մեռած
լինէինք, այն ժամանակ հաճոյ
7 կ՚լինէր այս քո աչքին։ Եւ արդ
վեր կաց՝ դուրս եկ և քաղցրու-
թեամբ խօսիր ծառաներիդ հետ.
որովհետև երդում եմ անում
Տէրով, որ եթէ դուրս չ՚գաս,
այս գիշեր քեզ մօտ մարդ չի
մնալ, և այս քեզ համար աւելի
չար կ՚լինի քան թէ այն ամեն
չարիքները, որ քեզ վերայ եկել
են քո մանկութիւնից մինչև հի-
8 մա։ Եւ Թագաւորը վեր կացաւ
ու նստեց դռանը, և բոլոր ժո-
ղովրդին իմացրին ասելով. Ահա
Թագաւորը նստել է դռանը, և
բոլոր ժողովուրդն եկաւ Թագա-
ւորի առաջ, իսկ Իսրայէլը փա-
խել էր ամեն մարդ իր վրանը։
9 Եւ Իսրայէլի ամեն ցեղերում
բոլոր ժողովուրդը վիճում էին և
ասում. Թագաւորը մեզ փրկեց
մեր թշնամիների ձեռքիցը, և
նա ազատեց մեզ Փղշտացիների
ձեռքիցը, և հիմա փախել է
երկրիցը Աբիսողոմի պատճառով։
10 Իսկ Աբիսողոմը, որին մենք օծե-
ցինք մեզ վերայ, մեռաւ պա-
տերազմումը. և հիմա ի՞նչու հա-
մար էք լուռ կացել Թագաւո-
րին ետ բերելուց։
11 Եւ Դաւիթ Թագաւորը ու-
ղարկեց Սադովկ և Աբիաթար
քահանաների մօտ և ասեց. Խօ-
սեցէք Յուդայի ծերերի հետ ա-
սելով. Ի՞նչու համար դուք վեր-
ջինը լինէք Թագաւորն իր տունը
ետ բերելում. և բոլոր Իսրայէլի
խօսքը հասել էր Թագաւորին իր
12 տանը։ Դուք իմ եղբայրներն էք,
իմ ոսկրն ու մարմինն էք դուք,
և ի՞նչու համար դուք վերջինը
լինէք Թագաւորը ետ բերելում։
13 Եւ Ամեսայիին ասեցէք. Մի՞թէ
դու իմ ոսկրն ու մարմինը չես.
Աստուած ինձ այսպէս անէ, և
էլ աւելացնէ, թէ որ դու իմ
առաջին ամեն ժամանակ զօրա-
գլուխ չ՚լինես Յովաբի փոխարէն։
14 Եւ դարձրեց բոլոր Յուդայի
մարդկանց սիրտը մէկ մարդի սրտի
պէս. և նորանք [illegible]
ուղարկեցին Թագաւորի մօտ [illegible]
Ետ դարձիր դու և քո բոլոր ծա-
ռաները։ Եւ Թագաւորը ետ դա- 15
ռաւ և եկաւ մինչև Յորդանան.
և Յուդան եկաւ մինչև Գաղգա-
ղա, որ Թագաւորին դիմաւորեն
և Յորդանանովն անցկացնեն Թա-
գաւորին։
Եւ Բաւուրիմացի՝ Գերայի որ- 16
դի Բենիամինեան Սեմէին շուտով
եկաւ իջաւ Յուդայի մարդկանց
հետ Դաւիթ Թագաւորին դիմա-
ւորելու։ Եւ նորա հետ հազար 17
մարդ կար Բենիամինից. նաև Սա-
ւուղի տան ծառայ Սիբան և նո-
րա տասնեւ հինգ որդիները և քսան
ծառաները նորա հետ [illegible] և
հասան Յորդանան Թագաւորի ա-
ռաջը։ Եւ մի նաւակ անցաւ 18
Թագաւորի տունը անց կացնելու
և նորա աչքին հաճոյ երևեցածն
անելու համար. և Գերայի որդի
Սեմէին վայր ընկաւ Թագաւորի
առաջը, երբ նա անցնում էր
Յորդանանովը։ Եւ ասեց Թա- 19
գաւորին. Իմ տէրը յանցանք չը
համարէ ինձ, և մի յիշիր որ ծա-
ռադ անօրէնութիւն գործեց այն
օրը, որ իմ տէր Թագաւորը
դուրս էր եկել Երուսաղէմից.
Թագաւորը իր սրտումը չ՚դնէ
այն։ Որովհետև ծառադ գիտէ, 20
որ ես յանցանք եմ գործել և
ահա այսօր առաջինը ես եմ ե-
կել Յովսէփի բոլոր տանիցն իմ
տէր Թագաւորին դիմաւորելու
իջնելով։ Եւ Շարուհեայի որդի 21
Աբեսսան պատասխանեց և ասեց.
Մի՞թէ սորա փոխարէն չի պիտի
մեռնէ Սեմէին որ Տիրոջ օծեալին
անիծեց։ Եւ Դաւիթն ասեց. 22
Դուք ի՞նչ ունէք ինձ հետ, ով
Շարուհեայի որդիք, որ այսօր
ինձ համար ոսոխ էք դառնում.
մի՞թէ այսօր մարդ մեռնէ Իս-
րայէլի մէջ. որովհետև չ՚գիտե՞մ
որ ես այսօր Թագաւոր եմ Իս-
րայէլի վերայ։ Եւ Թագաւորն 23
ասեց Սեմէիին. Պիտի չ՚մեռնես.
և Թագաւորը նորան երդում ա-
րաւ։
Եւ Սաւուղի որդի Մեմփիբոս- 24
թէն իջաւ Թագաւորին դիմաւո-

բելու առանց իր ոտքերը պատ-
բաստելու և առանց իր մօրուքը
շինելու, և իր հանդերձները չէր
լուացել այն օրից հետէ, որ Թա-
գաւորը գնացել էր մինչև այն օ-
րը որ եկաւ խաղաղութեամբ։
25 Եւ եղաւ երբոր եկաւ Երուսա-
ղէմ Թագաւորին դիմաւորելու
այն ժամանակ Թագաւորն ասեց
նորան. Ի՞նչու համար չ՚եկար ինձ
26 հետ, Մեմփիբոսթէ։ Եւ նա ա-
սեց. Ով իմ տէր Թագաւոր,
ծառաս ինձ խաբեց. որովհետև
ծառադ ասեց. Ինձ համար հա-
մետեմ էշը և վերան հեծնեմ ու
գնամ Թագաւորի հետ, որով-
27 հետև ծառադ կաղ է։ Իսկ նա
բամբասել է քո ծառայիցը իմ
տէր Թագաւորին. բայց իմ տէր
Թագաւորը Աստուծոյ հրեշտակի
պէս է. ուրեմն արա ինչ որ հա-
28 ճելի է քո աչքին։ Որովհետև
իմ հօր բոլոր տունը մի ուրիշ
բան չէին բացի մահի արժանի
լինելուց իմ տէր Թագաւորի հա-
մար. սակայն ծառայիդ քո սե-
ղանի ուտողների հետ դրիր. և
ես այլ ևս ի՞նչ իրաւունք ունեմ
որ միւսանգամ աղաղակեմ դէպի
29 Թագաւորը։ Եւ Թագաւորն ա-
սեց նորան. Էլ ի՞նչու ես խօսում
այդ խօսքերը. ասել եմ՝ Դու և
30 Սիբան բաժանեցէք արտը։ Եւ
Մեմփիբոսթէն ասեց Թագաւո-
րին. Թող նա բոլորն էլ առնէ՝
իմ տէր Թագաւորը խաղաղու-
թեամբ իր տունը գալուց յետոյ։
31 Եւ Գաղաադացի Բերզելին ի-
ջաւ Ռովգելիմից և անցաւ Թա-
գաւորի հետ Յորդանանովը, որ
նորան Յորդանանովը ճանապարհ
32 դնէ։ Եւ Բերզելին շատ ծեր էր՝
ութսուն տարեկան. և նա կե-
րակրեց Թագաւորին քանի որ նա
Մանայիմի մէջ էր կենում. ո-
րովհետև նա մի շատ մեծ մարդ
33 էր։ Եւ Թագաւորն ասեց Բեր-
զելիին. Դու եկ ինձ հետ, և ես
քեզ կերակրեմ ինձ հետ Երու-
34 սաղէմում։ Եւ Բերզելին ասեց
Թագաւորին. Ո՞րքան են իմ
կեանքի տարիների օրերը, որ ես
Թագաւորի հետ վեր գնամ Ե-
35 րուսաղէմ։ Ես այսօր ութսուն
տարեկան մարդ եմ. մի՞թէ կա-
րող եմ լաւը վատիցը ջոկել.
կամ ծառադ կերածիս խմածիս
հա՞մը կ՚առնեմ. կամ էլ կ՚լսե՞մ
երգիչների և երգչուհիների ձայ-
նը, և էլ ի՞նչու համար ծառադ
իմ տէր Թագաւորին բեռ դառ-
36 նայ։ Մի քիչ անց է կենում ծա-
ռադ Յորդանանովը Թագաւորի
հետ, և ի՞նչու համար Թագա-
ւորն ինձ մի այսպիսի մեծ վարձք
37 հատուցանէ։ Ծառադ ետ դառ-
նամ ու մեռնեմ իմ քաղաքու-
մը իմ հօր ու իմ մօր գերեզմա-
նումը. ահա թող Քամաամ ծա-
ռադ անցնէ իմ տէր Թագաւորի
հետ. և նորան արա ինչ որ բա-
38 րի է քո աչքին։ Եւ Թագաւորն
ասեց. Թող Քամաամն անցնէ ինձ
հետ, և ես կ՚անեմ նորան ինչ
որ բարի է քո աչքին. և ամեն
ինչ որ դու ինձանից ուզես՝ կ՚ա-
39 նեմ քեզ։ Եւ բոլոր ժողովուրդն
անցաւ Յորդանանովը, և Թագա-
ւորն էլ անցաւ և Թագաւորը
համբուրեց Բերզելիին և օրհնեց
նորան, և նա ետ դառաւ իր տե-
40 ղը։ Եւ Թագաւորն անցաւ Գաղ-
գաղա, և Քամաամն անցաւ նո-
րա հետ. և Յուդայի բոլոր ժո-
ղովուրդը անց կացրեց Թագաւո-
րին, նոյնպէս և Իսրայէլի կէս
ժողովուրդը։
41 Եւ ահա ամեն Իսրայէլացի
մարդիկը գալիս էին Թագաւորի
մօտ և ասում էին Թագաւորին.
Ի՞նչու համար քեզ մեր Յուդայ-
եան եղբայրները գողացան և Թա-
գաւորին ու նորա տունը անցկա-
ցրին Յորդանանովը և Դաւիթի
ամեն մարդիկն իրան հետ։ Եւ
ամեն մի Յուդայեան պատասխա-
նում էր Իսրայէլացիին Թէ Թա-
գաւորը ինձ ա-ելի մօտ է, և դու
ի՞նչու համար ես այդպէս բար-
կանում այս բանի մասին. մի՞թէ
մենք Թագաւորիցը կերակրով
կերակրուեցանք կամ նա մեզ ընծ-
43 ծանե՞ր ընծայեց։ Եւ Իսրայէլա-
ցին պատասխանում էր Յուդայ-
եանին. Ես Թագաւորի վերայ
տասը բաժին ունեմ, և ես աւե-

լի մօտ եմ Դաւիթին քան թէ
դու. և ի՞նչու համար ինձ ա-
նարգեցիր և առաջ իմ խօսքը
չ՚եղաւ իմ Թագաւորին անց կա-
ցնելում, և յետոյ Յուդայեանի
խօսքը Իսրայէլացիի խօսքիցը ա-
ւելի խիստ էր լինում։

ԳԼ. Ի

1 Եւ այնտեղ մի անօրէն մարդ
պատահեց՝ անունը Սաբէէ Բոքո-
րի որդի՝ Բենիամինի ցեղից. և
նա փող հնչեցրեց և ասեց Մենք
Դաւիթի մօտ բաժին չ՚ունենք և
ոչ ժառանգութիւն՝ Յեսսէի որ-
դիի մօտ. ամեն մարդ իր վրա-
2 նը, ով Իսրայէլ։ Եւ բոլոր Իսրա-
յէլացիները ետ քաշուեցան Դա-
ւիթից և հետևեցին Բոքորի որ-
դի Սաբէէին. բայց Յուդայեան-
ները յարեցան իրանց Թագաւո-
րին Յորդանանիցը մինչև Երու-
սաղէմ։
3 Եւ Դաւիթն եկաւ իր տունը
Երուսաղէմ, և Թագաւորն ա-
ռաւ այն տասը հարճերն որ Թո-
ղել էր տունը պահելու ու դրաւ
մի պահեստի տան մէջ և նորանց
կերակրեց, և նորանց մօտ չ՚գը-
նաց. և նորանք պահուած մնա-
ցին մինչև իրանց մեռնելու օրը
իբրև որբևայրիներ ապրելով։
4 Եւ Թագաւորն Ամեսայիին ա-
սեց. Ինձ մօտ կանչիր Յուդայի
մարդկանցը երեք օրուայ մէջ և
դու էլ այստեղ ներկայացիր։
5 Եւ Ամեսային գնաց Յուդայեան-
ներին կանչելու, և ուշացաւ նո-
6 րա դրած ժամանակիցը։ Եւ Դա-
ւիթն ասեց Աբեսային. Հիմա
Բոքորի որդի Սաբէէն աւելի չար
եղաւ մեզ համար Աբիսողոմիցը.
առ դու քո տիրոջ ծառաները
և նորա ետևից ընկիր. մի գուցէ
իրան համար պարսպաւոր քա-
ղաքներ գտնէ և մեր աչքից
7 պրծնի։ Եւ նորա ետևից դուրս
ելան Յովաբի մարդիկը, և Քե-
րեթիներն ու Փելեթիները և բո-
լոր զօրաւորները. և դուրս եկան
Երուսաղէմից Բոքորի որդի Սա-
բէէին հալածելու՝ ետևիցը։
8 Երբոր նորանք Գաբաւոնումն
եղած մեծ քարի մօտն էին, Ամե-
սային նորանց դիմացը ելաւ. և
Յովաբը հագել էր իր զգեստը՝
իր հանդերձը, և նորա վերայից
գօտևորուած էր որով, որ կապ-
ուած էր մէջքին իր պատեանո-
վը, որ դուրս եկաւ և վայր ընկ-
9 կաւ։ Եւ Յովաբն ասեց Ամեսա-
յիին. Առո՞ղջ ես, եղբայրս, և
Յովաբն աջ ձեռքովը բռնեց Ա-
մեսայիի մօրուքից որ համբուրէ։
10 Բայց Ամեսային չ՚զգուշացաւ Յո-
վաբի ձեռքի սուրիցը, և նա նո-
րանով զարկեց նորա փորին և
թափեց փորոտիքը գետինը, և
չ՚կրկնեց, ու նա մեռաւ. իսկ
Յովաբը և նորա եղբայր Աբեսսան
ընկան Բոքորի որդի Սաբէէի ե-
11 տևից։ Եւ նորա վերայ Յովաբի
պատանիներից մէկը կանգնել էր
և ասում էր. Ով որ Յովաբին է
սիրում, և ով որ Դաւիթինն է,
12 Բոզ Յովաբի ետևից գնայ։ Իսկ
Ամեսային թաւալվում էր ճա-
նապարհումը արիւնի մէջ. և
երբոր այն մարդը տեսաւ որ բո-
լոր ժողովուրդը կանգնեց, Ամե-
սային ճանապարհիցը վեր ա-
ռաւ՝ արտը գցեց և նորա վերայ
մի շոր ծածկեց, երբոր տեսաւ
թէ ամեն եկողը նորա վերայ
13 կանգնում էր։ Հէնց որ նա ճա-
նապարհիցը վեր առնուեցաւ, ա-
մեն մարդ գնաց Յովաբի ետևից
Բոքորի որդի Սաբէէն հալածելու
14 համար։ Իսկ նա անցել էր Իս-
րայէլի բոլոր ցեղերովը մինչև Ա-
բէլ և Բէթմաաքա և բոլոր Բե-
րիմով. և նորանք ժողովուել էին
15 և ընկել էլ նորա ետևից։ Եւ
եկան ու պաշարեցին Աբէլում
Բէթմաաքան և հողաբլուր շինե-
ցին քաղաքի առաջին, որ կանգ-
նեց պարսպի դէմ. և բոլոր զօր-
քը, որ Յովաբի հետ էր, քան-
դում էին որ պարիսպը վայր գցեն։
16 Եւ այն քաղաքից մի իմաս-
տուն կին աղաղակեց. Լսեցէք,
լսեցէք, մէկ ասեցէք Յովաբին՝
Մօտեցիր մինչև այստեղ որ խօ-
17 սեմ քեզ հետ։ Նա էլ մօտե-
ցաւ նորան, և կինն ասեց. Յո-

վարը դո՞ւ ես. և նա ասեց. Ես
եմ. և նա ասեց նորան՝ Լսիր ա-
ղախնիդ խօսքերը. և նա ասեց.
18 Լսում եմ։ Եւ նա ասեց այս-
պէս՝ Առաջ այսպիսի խօսքեր էին
խօսում թէ Աբէլումը թող հար-
ցնեն և այնուհետև վերջացնեն։
19 Ես Իսրայէլի խաղաղարարներիցն
ու հաւատարիմներիցն եմ. դու
ուզում ես Իսրայէլի մէջ մի մայ-
րաքաղաք փչացնել. ի՞նչու հա-
մար բնաջինջ անես Տիրոջ ժա-
20 ռանգութիւնը։ Եւ Յովաբը պա-
տասխանեց և ասեց. Քաւ լիցի,
քաւ լիցի ինձ, եթէ ես բնաջինջ
21 անեմ կամ թէ քանդեմ։ Բանը
այդպէս չէ. այլ Եփրեմի սարիցը
մի մարդ՝ անունը Սաբէէ որդի
Բոքորի՝ իր ձեռքը բարձրացրել է
Դաւիթ թագաւորի դէմ. տուէք
միայն նորան և կ'գնամ այդ քա-
ղաքի վերայից. և այն կինն ասեց
Յովաբին. Ահա նորա գլուխը քեզ
մօտ կ'գցուի պարսպի այն կողմը։
22 Եւ այն կինը գնաց իր իմաստու-
թեամբը բոլոր ժողովրդի մօտ.
և կտրեցին Բոքորի որդի Սաբէէի
գլուխը և գցեցին Յովաբի մօտ.
և նա փողը հնչեցրեց, և այն
քաղաքի վերայից ցրուեցան ա-
մեն մարդ իր վրանը, իսկ Յովա-
բը ետ դառաւ Երուսաղէմ թա-
գաւորի մօտ։
23 Եւ Յովաբը Իսրայէլի բոլոր
զօրքերի վերայ էր. և Յովիա-
դայի որդի Բանեան՝ Քերեթինե-
24 րի և Փելեթիների վերայ։ Եւ
Ադորամը՝ հարկերի վերայ. և
Աքիլուդի որդի Յովսափատը յի-
25 շատակաց [illegible] էր։ Եւ
Սուան ատենադպիր և Սադովկը
ու Աբիաթարը քահանաներ էին.
և Յայիրացի Իրասն էլ Դաւի-
թին *նախարար էր։

ԳԼ. ԻԱ

1 Եւ Դաւիթի օրերումը սով ե-
ղաւ երեք տարի իրար ետևից.
և Դաւիթը խնդրեց Տիրոջ երե-
սը. և Տէրն ասեց. Այս Սաւու-
ղի և նորա արիւնահեղ տան հա-
մար է, որ Գաբաւոնացիներին
կոտորեց։ Եւ թագաւորը կան- 2
չեց Գաբաւոնացիներին և ասեց
նորանց. (բայց այս Գաբաւոնա-
ցիները Իսրայէլի որդիներիցը չեն,
այլ Ամօրհացիների մնացորդիցը.
և Իսրայէլի որդիքը նորանց եր-
դում էին արել. իսկ Սաւուղն
ուզում էր նորանց կոտորել Իս-
րայէլի և Յուդայի որդկանց հա-
մար նախանձելով։) Եւ Դաւիթն 3
ասեց Գաբաւոնացիներին. Ես
ձեզ ի՞նչ անեմ և ի՞նչով քա-
ւեմ, որ օրհնէք Տիրոջ ժառան-
գութիւնը։ Եւ Գաբաւոնացիներն 4
ասեցին նորան. Մենք արծաթ և
ոսկի չ'ունենք Սաւուղի և նորա
տան մօտ, և Իսրայէլում մի մարդ
չ'ունենք որ սպանուի. և նա ա-
սեց. Ապա ի՞նչ էք ասում որ
անեմ ձեզ։ Եւ նորանք ասեցին 5
թագաւորին. Այն մարդը որ մեզ
ջարդեց և նա որ մեզ համար մը-
տածեց որ բնաջինջ լինենք և
չ'գտնուինք ամենևին Իսրայէլի
սահմաններումը, Նորա որդինե- 6
րից մեզ եօթը մարդ տրուին, որ
նորանց կախենք Տիրոջ ընտրեալ
Սաւուղի Գաբաայումը Տիրոջ
համար։ Եւ թագաւորն ասեց.
Ես կ'տամ։
Իսկ թագաւորը խնայեց Մեմ- 7
փիբոսթէին՝ Սաւուղի որդի Յով-
նաթանի որդիին՝ Տիրոջ երդումի
համար, որ նորանց [illegible] Դա-
ւիթի և Սաւուղի որդի Յովնա-
թանի մէջ եղել էր։ Եւ թա- 8
գաւորը առաւ Այիայի աղջկան
Ռեսփայի երկու որդիներին, ո-
րոնց ծնել էր Սաւուղի համար,
Արմոնիին և Մեմփիբոսթէին, և
Սաւուղի աղջիկ Մեղքողի հինգ
որդիներին, որ նա ծնել էր Մա-
ուլացի Բերզելիի որդի Եդրիէլի
համար. Եւ տուաւ նորանց Գա- 9
բաւոնացիների ձեռքը. և նո-
րանք կախեցին նորանց սարի վե-
րայ Տիրոջ առաջին. և եօթն էլ
միասին ընկան. և նորանք մեռ-
ցուեցան հունձի առաջի օրերին
գարիի հունձի սկզբումը։
Եւ Այիայի աղջիկ Ռեսփան 10

*Եբր. քահանայ

առաւ քուրձը և նորան փռեց իր
համար ապառաժի վերայ հուն-
ձի սկիզբը մինչև նորանց վերայ
երկնքից անձրև գալը. և նորանց
վերայ ցերեկը երկնքի թռչուն-
ներին հանգչելու թող չէր տա-
լիս, և ոչ դաշտի կենդանինե-
11 րին՝ գիշերը։ Եւ Դաւիթին ի-
մացրին թէ ինչ է արել Սաւու-
ղի հարճ Այիայի աղջիկ Ռես-
12 փան։ Եւ Դաւիթը գնաց ու ա-
ռաւ Սաւուղի ոսկորները և նո-
րա որդի Յովնաթանի ոսկորները
Գաղաադի Յաբիսի բնակիչներից
որ Բեթսանի հրապարակիցը նո-
րանց գողացել էին, ուր Փղշտա-
ցիները կախել էին, երբոր Փղշ-
տացիները Գեղբուէի վերայ Սա-
13 ւուղին զարկել էին։ Եւ վեր ա-
ռաւ այնտեղից Սաւուղի ոսկոր-
ները և նորա որդի Յովնաթանի
ոսկորները, և հաւաքեցին այն
14 կախուածների էլ ոսկորները. Եւ
թաղեցին Սաւուղի և նորա որդի
Յովնաթանի ոսկորները Բենիամի-
նի երկրում իրանց հայր Կիսի
գերեզմանումը Սելայի մէջ, և
արին ամենը ինչ որ թագաւորն
հրամայել էր, և Աստուած նո-
րանից յետոյ ընդունեց երկրի
համար եղած աղօթքը։
15 Եւ Փղշտացիները տակաւին
պատերազմ ունէին Իսրայէլի հետ,
և Դաւիթն իջաւ և իր ծառա-
ներն իր հետ, և պատերազմեցին
Փղշտացիների հետ. և Դաւիթը
16 յոգնեց։ Եւ Եսբիբենոբը որ Ռա-
փայի որդիներիցն էր (նորա նի-
զակը երեք հարիւր պղնձի [illegible]
ծանր էր), և ինքը նոր [illegible] էր
կապել մէջքին և ուզում էր Դա-
17 ւիթին սպանել։ Բայց Շարուհ-
եան Աբեսսան նորան օգնեց և
զարկեց Փղշտացիին ու սպանեց
նորան։ Այն ժամանակ Դաւիթի
մարդիկը երդում արին նորան թէ
Այլ ևս պիտի մեզ հետ պատե-
րազմի դուրս չ'գաս. որ չ'հանգ-
ցընես Իսրայէլի ճրագը։
18 Եւ սորանից յետոյ եղաւ որ
Փղշտացիների հետ պատերազմ
եղաւ Գովբումը. այն ժամանակ
Ովսացի Սովբաքը սպանեց Սա-
փին որ Ռափայի որդիներիցն էր։
Եւ դարձեալ պատերազմ ե- 19
զաւ Գովբումը Փղշտացիների
հետ, և Բեթլեհէմցի Աբիէորդի-
մի որդի Էլէանան սպանեց *Գէ-
թացի Գողիաթին, որի նիզակի
բունը ոստայնանկների գլանի պէս
էր։
Եւ դարձեալ պատերազմ ե- 20
զաւ Գէթում. և մի երկայնա-
հասակ մարդ կար, և նորա ձեռ-
քերի ու ոտքերի մատերը վեց վեց
էին, քսանևչորս հատ մատ [illegible]
[illegible]. Նա էլ էր Ռափայից ծըն-
ուած. Եւ նա նախատեց Իսրա- 21
յէլին. բայց Դաւիթի եղբայր
Սամայի որդի Յովնաթանը սպա-
նեց նորան։ Այս չորսը ծնուել 22
էին Գէթումը Ռափայից, և սպան-
ուեցան Դաւիթի ձեռքովը և
Դաւիթի ծառաների ձեռքովը։

ԳԼ. ԻԲ

Եւ Դաւիթն ասեց Տիրոջը այս 1
երգի խօսքերն այն օրը, երբոր
Տէրը նորան ազատել էր իր բո-
լոր թշնամիների ձեռքից և Սա-
ւուղի ձեռքից։
Տէրը իմ վէմն ու իմ բերդն 2
ու իմ փրկիչն է։
Աստուած իմ ժայռն է. ես նո- 3
րան եմ յուսացած.
Իմ վահանը և իմ փրկութեան
եղջիւրը, իմ բարձրութիւնն
ու ապաստանը,
Իմ ազատիչը. դու անիրաւու-
թիւնից ազատում ես ինձ։
Օրհնեալն եմ կանչում՝ Եհո- 4
վան, և կ'ազատուիմ իմ
թշնամիներիցը։
Որովհետև մահուան ալիքներն 5
ինձ պաշարեցին,
Կորուստի վտակներն ինձ տագ-
նապեցրին։
Դժոխքի լարերը պատեցին ինձ. 6
Մահուան որոգայթներն իմ ա-
ռաջն առան.
Իմ նեղութեան մէջ Տիրոջը կան- 7
չեցի,
Եւ իմ Աստուծուն աղաղակեցի.

*Եղբօրը։ Տես ա Մն. ի. 5։

Եւ նա լսեց իր տաճարիցն իմ
ձայնը.
Եւ իմ աղաղակը նորա ականջին
հասաւ։
8 Այն ժամանակ երկիրը սասան-
ուեց ու դողաց,
Երկնքի հիմունքը սարսուեցան,
Եւ սասանուեցան, որովհետև նա
բարկացաւ։
9 Նորա քթիցը ծուխ ելաւ,
Եւ նորա բերանիցը մաշող կրակ.
Կայծակներ փայլատակուեցան նո-
րանից։
10 Եւ նա խոնարհեցրեց երկինքն,
և իջաւ.
Եւ մէգ կար նորա ոտների տակ։
11 Եւ նա հեծաւ քերովբէի վերայ
և թռաւ,
Եւ երևեցաւ հողմի թևերի վե-
րայ։
12 Խաւարն իր շուրջը վարագոյր
դրաւ՝
Թանձր ջրերը՝ օդեղէն ամպերը։
13 Նորա առաջի ճաճանչիցը
Կրակի կայծակներ բորբոքուե-
ցան։
14 Երկնքիցը որոտաց Տէրը,
Եւ Բարձրեալը տուաւ իր ձայնը։
15 Եւ նետեր ուղարկեց ու նորանց
ցրուեց,
Կայծակներ՝ ու նորանց խռովե-
ցրեց։
16 Եւ երևեցան ծովի յատակները,
Յայտնուեցան երկրի հիմունքը,
Տիրոջ յանդիմանութիւնովը,
Նորա բարկութեան հողմի փչե-
լուցը։
17 Բարձրիցն ուղարկեց՝ ինձ բռ-
նեց.
Ինձ դուրս քաշեց շատ ջրերից։
18 Ինձ ազատեց զօրաւոր թշնա-
միիցս,
Ինձ ատողներիցս՝ որ ինձանից ու-
ժեղ էին.
19 Իմ առաջն առան իմ դժբաղ-
դութեան օրը.
Բայց Տէրն ինձ նեցուկ եղաւ։
20 Եւ նա ինձ հանեց լայնարձակ
տեղ.
Ինձ փրկեց. որովհետև ինձ հա-
ւանեց։
21 Ինձ վարձատրեց Տէրն իմ ար-
դարութեան համեմատ,
Իմ ձեռքի մաքրութեան պէս
հատուցրեց ինձ։
Որովհետև ես պահեցի Տիրոջ 22
ճանապարհները,
Եւ իմ Աստուծոյ դէմ ամբարըշ-
տութիւն չ՚արի։
Որովհետև նորա բոլոր իրաւունք- 23
ներն իմ առաջին են.
Եւ նորա օրէնքներիցը չ՚հեռա-
ցայ։
Եւ նորա առաջին կատարեալ ե- 24
ղայ.
Ու զգուշացայ իմ անօրէնու-
թիւնիցը։
Եւ ինձ հատուցրեց Տէրն իմ ար- 25
դարութեան պէս,
Իմ մաքրութեան պէս՝ նորա աչ-
քերի առաջին։
Սուրբի հետ սուրբ ես, 26
Կատարեալ մարդի հետ կատար-
եալ ես.
Մաքուրի հետ մաքուր ես, 27
Եւ ծուռի հետ ծռվում ես։
Եւ դու վշտացած ժողովրդին 28
փրկում ես.
Եւ աչքերդ բարձրերի վերայ է
որ կործանես։
Որովհետև դու ես իմ ճրագը, 29
ով Տէր.
Եւ Տէրը լուսաւորելու է իմ խա-
ւարը։
Որովհետև քեզանով կ՚վազեմ 30
գունդի վերայ.
Իմ Աստուծով պարսպից կ՚անց-
նեմ։
Աստուծոյ ճանապարհը կատար- 31
եալ է.
Տիրոջ խօսքը զտուած է.
Նա վահան է բոլոր իրան յու-
սացողներին։
Որովհետև ո՞վ է Աստուած բացի 32
Եհովայից.
Ու ո՞վ է Վէմ բացի մեր Աստ-
ուածանից։
Աստուած է իմ զօրաւոր բերդը. 33
Ու կատարեալին տանում է իր
ճանապարհովը։
Նա հաստատեց իմ ոտքերն ինչ- 34
պէս եղջերուինը,
Եւ իմ բարձր տեղերի վերայ
կանգնեցրեց ինձ։
Նա սովորեցնում է ձեռքերս 35
պատերազմի,

Ու իմ բազուկները լարում են
պղնձի աղեղ։
36 Եւ դու տուիր ինձ քո փրկու-
թեան վահանը,
Ու քո պատասխանելը մեծացրեց
ինձ։
37 Լայնացրիր իմ գնացքն իմ ոտքի
տակին,
Ու իմ սրունքները չ՚դողդողացին։
38 Իմ թշնամիներին հալածեցի ու
փչացրի նորանց.
Ու ես ետ չ՚դառայ մինչև որ
վերջացան։
39 Ես ջնջեցի նորանց ու խորտակե-
ցի նորանց որ չ՚կանգնեն.
Նորանք վայր ընկան իմ ոտների
տակը։
40 Դու ինձ զօրութեամբ գօտևորե-
ցիր պատերազմի
Ու ինձ դէմ կանգնողներին իմ
տակը գցեցիր։
41 Իմ թշնամիների մէջքը դէպի ինձ
տուիր,
Ինձ ատողներին՝ որ ես ջարդեմ
նորանց։
42 Նայեցին, բայց փրկող չ՚կար.
Դէպի Տէրը, բայց չ՚պատասխա-
նեց նորանց։
43 Իսկ ես նորանց կ՚փշրեմ երկրի
փոշիի պէս.
Ճանապարհի ցեխի պէս կ՚ման-
րեմ՝ կոխ կ՚տամ նորանց։
44 Բայց դու ինձ ազատեցիր իմ
ժողովրդի հակառակութիւ-
նիցը.
Ինձ պահեցիր ազգերի գլուխ լի-
նելու.
Իմ չ՚ճանաչած ազգը ծառայում
է ինձ։
45 Օտարների որդիքն ինձ խոնար-
հութիւն արին.
Ականջով լսելով ինձ հնազան-
դեցին։
46 Օտարների որդիքը թուլացան.
Ու դողալով դուրս եկան իրանց
ապաստանարաններիցը։
47 Կենդանի է Եհովան, և օրհ-
նեալ է իմ Վէմը,
Եւ բարձրեալ լինի Աստուած՝
իմ փրկութեան Վէմը.
48 Այն Աստուածը, որ ինձ համար
վրէժխնդիր է լինում,
Ու ազգերն իմ տակն իջեցնում։
Եւ որ ինձ իմ թշնամիներիցը 49
պրծացնում է,
Եւ իմ հակառակորդներիցն ինձ
աւելի բարձր ես անում,
Բռնաւոր մարդիցն ինձ ազա-
տում ես։
Սորա համար, ով Տէր, քեզ 50
պիտի գովեմ ազգերի մէջ,
Եւ պիտի սաղմոս երգեմ քո ա-
նունին.
Որ իր թագաւորի համար փրկու- 51
թիւնները մեծացնում է,
Եւ ողորմութիւն է անում յա-
ւիտեան,
Իր օծեալին՝ Դաւիթին և նորա
զաւակին մինչև յաւիտեան։

ԳԼ. ԻԳ

Եւ սորանք են Դաւիթի վերջին 1
խօսքերը.
Յեսսէի որդի Դաւիթի խօսքը,
Եւ այն մարդի խօսքը, որ վեր
բարձրացաւ.
Յակոբի Աստուծոյ օծեալը,
Իսրայէլի վայելուչ երգերը շա-
րադրողն էր.
Տիրոջ Հոգին խօսեց ինձանով, 2
Եւ նորա խօսքն իմ լեզուի վե-
րայ էր։
Իսրայէլի Աստուածն ասեց. 3
Իսրայէլի Վէմը խօսեց ինձ հետ.
Թէ մարդկանց վերայ իշխողը
թող արդար լինի,
Աստուծոյ երկիւղովն իշխէ։
Նա նման է առաւօտեան լոյսին, 4
Երբոր արեգակը ծագում է,
Մի առաւօտ՝ որ ամպեր չ՚կան՝
Ճառագայթիցն՝ անձրևից յետոյ
Գետնից դալար է բուսնում։
Ապա իմ տունը այսպէս չէ՞ Աս- 5
տուծոյ մօտ.
Որովհետև յաւիտենական ուխտ
է արել ինձ հետ.
Հաստատուած ամեն բանի մէջ
և պահուած։
Ապա իմ բոլոր փրկութիւնն ու
բոլոր բաղձանքը նա չի՞ ծաղ-
կեցնիլ։
Իսկ բոլոր անօրէնները դուրս 6
գցուած փուշի պէս են.
Որը ձեռքով չեն բռնիլ։
Եւ նորանց դիպչող մարդը 7

Թող զինուորուի երկաթով և նիզակի փայտով։
Եւ վառած կրակով պիտի վառուին նոյն տեղը։
8 Սորանք են Դաւիթի զօրաւորների անունները, Յոսէբ-բասեբեթ Թահքեմոնացին՝ զօրաւորների գլխաւորը. նա է Ասոնացի Ադինօն, որ ութ հարիւր մարդ մէկ անգամ մեռցրեց։
9 Նորանից յետոյ Աքոյ քացիի որդի Դոդոյի որդի Եղիազարը, որ Դաւիթի հետ եղող երեք զօրավարներից էր, երբոր նախատեցին այնտեղ պատերազմի համար ժողովուած փղշտացիներին, և Իսրայէլի մարդիկը փախան։
10 Նա վեր կացաւ և զարկեց փղշտացիներին մինչև որ ձեռքը յոգնեց և ձեռքն իր սուրին փակաւ, և Տէրն այն օրը մեծ փրկութիւն արաւ, և ժողովուրդը նորանից դարձաւ, որ միայն կողոպուտան անէ։
11 Եւ նորանից յետոյ Աբարացի Ադէի որդի Սամման էր. երբոր փղշտացիները մի խումբ կազմեցին, և այնտեղ մի կտոր ադարակ կար ոսպով լիքը, և ժողովուրդը փղշտացիների երեսից փախաւ,
12 Ա՛ն ժամանակ նա դէմ կացաւ ադարակի մէջ ու նորան պաշտպանեց և զարկեց փղշտացիներին, և Տէրը մեծ փրկութիւն արաւ։
13 Եւ այն երեսուն զօրավարներից երեք գնացին հունձի ժամանակին Դաւիթի մօտ Ոդողամի քարայրը, և փղշտացիների մէկ գունդը բանակուել էր Ռափայնոց հովիտումը։
14 Եւ այն ժամանակ Դաւիթը բերդումն էր. և փղշտացիների մի զօրախումբը այն ժամանակ Բեթլեհէմումն էր։
15 Եւ Դաւիթը փափաքեց և ասեց. Ո՞վ կ'բերէ ինձ համար խմելու ջուր Բեթլեհէմի ջրհորիցը, որ դռան մօտ է։
16 Եւ այս երեք զօրաւորները փղշտացիների բանակը ճեղքեցին, և ջուր քաշեցին Բեթլեհէմի ջրհորիցը, որ դռան մօտ է, և բերին տուին Դաւիթին. Թ[illegible]
թափեց Տիրոջ համար։ Եւ ասեց. Փառ լիցի ինձ, ով Տէր, որ ես անեմ այս բանը. ես իրանց կեանքը վտանգի մէջ դնող մարդկանց արիւնը խմե՞մ. և չը կամեցաւ խմել այն. այս բանն արին այն երեք զօրաւորները։
18 Եւ Շարուհեան Յովաբի եղբայր Աբեսան այն երեքի գլխաւորն էր. և նա բարձրացրեց իր նիզակը երեք հարիւր սպանուածների վերայ. և նա անուանի էր այն երեքի մէջ։
19 Թէև այն երեքից աւելի պատուաւոր էր և նորանց գլխաւորն էր, բայց այն [illegible] երեքին նա չէր հասնիլ։
20 Եւ Յովիադայի որդի Բանեան՝ մի ժիր և գործունեայ մարդի որդի՝ Կաբսեելացի՝ զարկեց Մովաբի երկու զօրաւոր մարդկանց. և նա իջաւ ու զարկեց առիւծին գուբի մէջ ձիւնի ժամանակ։
21 Եւ նա զարկեց մի Եգիպտացի մարդ, որ տեսքով էր, և այդ Եգիպտացիի ձեռքին մի նիզակ կար. իսկ նա գնաց նորա վերայ մէկ ցուպով ու յափշտակեց նիզակը Եգիպտացիի ձեռքիցը և սպանեց նորան իր նիզակովը։
22 Այս բաները արաւ Յովիադայի որդի Բանեան. և նա անուանի էր այն երեք զօրաւորների մէջ։
23 Երեսունից աւելի պատուաւոր էր, բայց այն [illegible] երեքին չէր հասնիլ. և Դաւիթն նորան իր առաջին վերակացու դրաւ։
24 Յովաբի եղբայր Ասայէլն երեսունից էր. Նա՝ Ելհանանը Դովդոյի որդին՝ Բեթլեհէմացին,
25 Շամմոթացի Սամմոն, Հարոդացի Եղիկան.
26 Փելլտացի Հեղղէսը, Թեկուացի Եկդեսի որդի Իրասը.
27 Անաթովթացի Աբիեզերը, Ովսացի Մեբունան.
28 Ա՛քոքացի Սելմոնը, Նետոփաթացի Մաասրան,
29 Նետոփաթացի Բանեայի որդի Ալասը. Բենիամինի որդկանց Գաբայից Ռիփայի որդի Եթթին.
30 Փարաթոնացի Բանեան, Գաասի ձորերից Ադդային.
31 Աբիէլբոնը, Բարումացի Ազմաթը.
32 Սաղաբիացի Եղիաբան, Յաշենի որդիներից Յովնաթանը.
33 Հարարացի Սամման, Աբարացի
34 Սարարի որդի Ա՛քիամը. Մաաքաթիի որդիի Ա՛հասբայի որդի Եղիփաղէտը, Գեղոնացի Ա՛քիտոփելի որդի Եղիամը.
35 Կարմելացի
36 Ա՛սբէն, Աբբացի Փաարան. Սոբացի Նաթանի որդի Իգալը,
37 Գադացի Բանին. Ամմոնացի Սելեկը, Շարուհեան Յովաբի կապարճակիր Բերովթացի Նահարան.
38 Յեթերացի Իրասը, Յեթերացի
39 Փարերը. Փեսացի Ուրիան. ամենը երեսունևեօթը։

Գլ. ԻԴ

1 Եւ դարձեալ բորբոքուեց Տիրոջ բարկութիւնը Իսրայէլի վերայ. և Դաւիթին գրգռեց նորանց դէմ՝ ասելով. Գնա հաշուիր Իսրայէլն և Յուդան,
2 և թագաւորն ասեց Յովաբին՝ իր հետ եղող զօրագլխին. Շրջիր Իսրայէլի բոլոր ցեղերի մէջ Դանից մինչև Բերսաբէէ և համարեցէք ժողովուրդը որ ժողովրդի թիւն իմանամ։
3 Եւ Յովաբն ասեց թագաւորին. Քո Տէր Աստուածը աւելցնէ ժողովրդի վերայ այսչափ և այսչափ հարիւրապատիկ, և իմ տէր թագաւորի աչքերը տեսնեն. բայց իմ տէր թագաւորը ինչու համար է փափաքում այդ բանը։
4 Սակայն թագաւորի խօսքը աստակացաւ Յովաբի և զօրավարների վերայ, և Յովաբը և զօրավարները դուրս գնացին թագաւորի առաջից Իսրայէլ ժողովուրդը համարելու։
5 Եւ անց կացան Յորդանանով և բանակ տուին Աբսերում՝ Գադ ձորում եղող քաղաքի աջ կողմին ու դէպի Յազէր։
6 Եւ եկան Գաղաադ և Թահթիմհադսիէ երկիրը, յետոյ եկան Դանաեանան
7 և Սիդոնի շրջակայքը, և յետոյ եկան Տիրոսի ամրոցը ու Խևացիների և Քանանացիների բոլոր քաղաքները. յետոյ դուրս եկան դէպի Յուդայի հարաւը՝ Բերսաբէէ։
8 Եւ շրջեցին բոլոր երկիրը. և ինը ամսից ու քսան օրից յետոյ եկան Երուսաղէմ։
9 Եւ Յովաբը ժողովրդի համարանքի թիւը տուաւ թագաւորին, և Իսրայէլն էր ութը հարիւր հազար պատերազմի սուր քաշող մարդ, բայց Յուդայեանները՝ հինգ հարիւր հազար մարդ։

10 Եւ Դաւիթի խղճմտանքը իրան ծակեց, երբոր ժողովուրդը համարել էր. և Դաւիթն ասեց Տիրոջը. Շատ մեղանչեցի որ այս արի. հիմա, ով Տէր, աղաչում եմ՝ ներիր ծառայիդ մեղքին. որովհետև շատ յիմարութիւն արի։
11 Եւ Դաւիթն առաւօտը վեր էր կացել. և Տիրոջ խօսքը եղաւ Գադ մարգարէին՝ Դաւիթի տեսանողին ասելով.
12 Գնա և ասիր Դաւիթին. Այսպէս է ասում Տէրը՝ երեք բան եմ դնում քո առաջին, ընտրիր քեզ համար նորանցից մէկը որ քեզ համար անեմ։
13 Եւ Գադը եկաւ Դաւիթի մօտ և պատմեց նորան և ասեց նորան. Ա՛րդեօք քո երկրի մէջ եօթը տարի սով գայ, կամ երեք ամիս դու փախչես քո թշնամիների առաջից և նորանք քեզ հալածե՞ն, կամ թէ երեք օր ժանտախտ լինի՝ քո երկրումը. հիմա իմացիր ու տես՝ ինչ խօսք տանեմ ինձ ուղարկողին։
14 Եւ Դաւիթն ասեց Գադին. Ես շատ նեղութեան մէջ եմ, թող Տիրոջ ձեռքն ընկնենք, որովհետև շատ է նորա ողորմութիւնը. և մարդի ձեռք թող չընկնեմ։
15 Եւ Տէրը ժանտախտ ուղարկեց Իսրայէլի մէջ առաւօտից մինչև որոշեալ ժամանակը. և ժողովրդիցը մեռաւ Դանից մինչև Բերսաբէէ եօթանասուն հազար մարդ։
16 Եւ հրեշտակն իր ձեռքը մեկնեց Երուսաղէմի վերայ որ փչացնէ նորան, և Տէրը ապրեցաւ այս չարիքի վերայ, և ասեց հրեշտակին որ փչացնում էր ժողովրդին՝ բաւական է. հիմա ձեռքդ ետ քաշիր։ Եւ Տիրոջ հրեշտակը Յեբուսացի Ոռնայի կալի մօտ էր։
17 Եւ Դաւիթն ասեց Տիրոջը, երբոր տեսաւ որ հրեշտակը կոտորում է ժողովրդին, Ա՛հա ես եմ մեղանչել և

ես եմ յանցանք գործել, իսկ այս ոչխարներն ինչ են արել. աղաչեմ եմ թող ձեռքդ ինձ վերայ և իմ հօր տան վերայ լինի։

18 Եւ նոյն օրը Գադը գնաց Դաւիթի մօտ և ասեց նորան. վեր գնա, Տիրոջ համար սեղան շինիր Յեբուսացի Ռաւնայի կալուածը։
19 Եւ Դաւիթը գնաց Գադի խօսքի համեմատ, ինչպէս որ Տէրը հրամայել էր։ 20 Եւ Ռաւնան նայեց ու տեսաւ թագաւորին և նորա ծառաներին, որ գալիս էին իր մօտը. և Ռաւնան դուրս ելաւ ու երկրպագեց թագաւորին իր երեսի վերայ մինչև գետինը։ 21 Եւ Ռաւնան ասեց. Ինչու համար է եկել իմ տէր թագաւորը իր ծառայի մօտ. և Դաւիթն ասեց. Որ կալը քեզանից ծախու առնեմ որ Տիրոջ համար սեղան շինեմ, որ հարուածը դադարէ ժողովրդից։ 22 Եւ Ռաւնան ասեց Դաւիթին. Թող թագաւորը վեր առնէ և զոհ մատուցանէ ինչ որ հաճոյ է իր աչքին. ահա եղնիները ողջակէզի համար, և կամեցաւորները վառելիքի համար, և ցորենը պղպեղի համար, և եղնիների գործիքը փայտի համար։ 23 Ահա բոլորը Ռաւնան թագաւորին տուաւ թագաւորաբար. և Ռաւնան ասեց թագաւորին. Քո Տէր Աստուածը քեզ ընդունէ։ 24 Եւ թագաւորն ասեց Ռաւնային. Ոչ, այլ քեզանից պիտի ծախու առնեմ, և ես ձրի զոհ պիտի չմատուցանեմ Տէր Աստուծուն. և Դաւիթը ծախու առաւ կալը և եղնիները հիսուն արծաթ սիկղի։ 25 Եւ Դաւիթն այնտեղ սեղան շինեց Տիրոջ համար և ողջակէզ ու խաղաղութեան զոհեր մատուցեց. և Տէրը աղօթքը լսեց երկրի մասին, և հարուածը դադարեց Իսրայէլից։

փ. 1945 Ձեռ. օր. Քննչ.
մ. Ասեղծո / Դեկտեմբեր Ամիսի

ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔԸ

(ԿԱՄ՝ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ)

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ Դաւիթ թագաւորը ծերացել ու օրերը անց էր կացրել. և նորան հանդերձներով ծածկում էին, բայց չէր տաքանում։ 2 Եւ նորա ծառաները ասեցին նորան. Թող մեր տէր թագաւորի համար մի կոյս աղջիկ որոնեն, որ կանգնէ թագաւորի առաջին, և հոգ տանէ նորան, ու քո ծոցումը պառկէ, որ մեր տէր թագաւորը տաքանայ։ 3 Եւ մի գեղեցիկ աղջիկ որոնեցին Իսրայէլի բոլոր սահմանումը և գտան Սունամացի Աբիսակը, և նորան բերին թագաւորի մօտ։ 4 Եւ աղջիկը շատ գեղեցիկ էր. և թագաւորին հոգ տանում ու ծառայում էր. և թագաւորը նորան չդիտաց։

5 Եւ Ադգիթի որդի Ադոնիան հպարտացաւ ասելով. Ես թագաւոր լինեմ. և իր համար կառքեր և ձիաւորներ պատրաստեց և հիսուն մարդ սուրհանդակ իր առաջին։ 6 Եւ նորա հայրը նորան իր օրերումը չէր յանդիմանել ասելով՝ Ա՛յդ ինչու ես այդպէս անում. և նա էլ տեսքով շատ գեղեցիկ էր, որ ծնուել էր Աբիսաղամից յետոյ։ 7 Եւ նա խօսք կապեց Շարուհեան Յովաբի և Աբիաթար քահանայի հետ, որ նորանք Ադոնիային հետևելով օգնական էին նորան։ 8 Բայց Սադովկ քահանան և Յովիադայի որդի Բանեան և Նաթան մարգարէն և Սեմէի ու Ռէի և Դաւիթի զօրաւորները Ադոնիայի հետ չէին։ 9 Եւ Ադոնիան ոչխարներ ու եզներ և գէր անասուններ մօրթեց Զոհղեղթի քարի մօտ, որ Ռովգելի աղբիւրի կշտին է, և կանչեց իր ամեն եղբայրներին՝ թագաւորի որդիանցը և Յուդայի ամեն մարդկանցը որ թագաւորի 10 ծառաներն էին։ Բայց Նաթան մարգարէին և Բանեային և զօրաւորներին և իր եղբայր Սողոմոնին չկանչեց։

11 Եւ Նաթանն ասեց Բերսաբէին՝ Սողոմոնի մօրը՝ Թէ Չե՞ս լսել որ Ադգիթի որդի Ադոնիան թագաւոր է դառել, և մեր տէր 12 րը՝ Դաւիթը չդիտէ։ Եւ արդ՝ եկ քեզ մի խրատ տամ, որ ազատես քո կեանքը և քո որդի Սողոմոնի կեանքը։ 13 Գնա մտիր Դաւիթ թագաւորի մօտ և ասիր նորան. Չէ՞ որ դու ինքդ, իմ տէր թագաւոր, երդում արիր քո աղախնին ասելով թէ Քո որդի Սողոմոնը պիտի թագաւոր լինի ինձանից յետոյ, և նա պիտի նստի իմ աթոռի վերայ. ապա ինչու համար է Ադոնիան թագաւոր եղել։ 14 Ահա դու տակաւին հոն թագաւորի հետ տակաւին խօսելիս՝ ես էլ ներս կ'մտնեմ քո ետևից և կ'հաստատեմ քո խօսքը։

15 Եւ Բերսաբէն գնաց թագաւորի մօտ նորա սենեակը. և թագաւորը շատ ծեր էր, և Սունամցի Աբիսակը ծառայում էր 16 թագաւորին։ Եւ Բերսաբէն գլուխ տալով երկրպագեց թագաւորին. և թագաւորն ասեց. Ինչ 17 ուներս։ Եւ նա ասեց նորան. Ով տէր իմ, դու քո Տէր Աստուծովը երդում արիր քո աղախնին, ասելով թէ Քո որդի Սողոմոնը պիտի թագաւոր լինի ինձանից յետոյ, և նա պիտի նստի իմ աթոռի վերայ։ 18 Իսկ հիմա, ահա Ադոնիան է թագաւոր դառել. և դու, ով իմ տէր թագաւոր, չդիտես։ 19 Եւ շատ արջառներ ու գէր ոչխարներ է մորթել և կանչել թագաւորի ամեն որդիանցը և Աբիաթար քահանային և զօրագլուխ Յովաբին, բայց քո ծառայ Սողոմոնին չէ կանչել։ 20 Եւ արդ, ով իմ տէր թագաւոր, բոլոր Իսրայէլի աչքերը քեզ վերայ է, որ իմացնես նորանց, թէ ո՞վ պիտի իմ տէր թագաւորի աթոռի վերայ նստի իրանից յետոյ։ 21 Եւ անպատճառ հէնց որ իմ տէր թագաւորը ննջեց իր հայրերի հետ, այն ժամանակ ես և իմ որդի Սողոմոնը յանցաւոր ենք լինելու։

22 Եւ նա տակաւին թագաւորի հետ խօսելիս, Նաթան մարգարէն ներս մտաւ։ 23 Եւ թագաւորին պատմեցին ասելով՝ Ահա Նաթան մարգարէն. և նա եկաւ թագաւորի առաջը և երկրպագեց թագաւորին իր երեսի վերայ մինչև գետինը։ 24 Եւ Նաթանն ասեց. Ով իմ տէր արքայ. դո՞ւ ասել ես թէ Ադոնիան պիտի թագաւոր լինի ինձանից յետոյ, և նա պիտի նստի իմ աթոռի վերայ։ 25 Որովհետև նա այսօր իջել շատ արջառներ ու գէր ոչխարներ է մորթել և կանչել է թագաւորի ամեն որդիանցը և զօրավարներին և Աբիաթար քահանային, և ահա ուտում ու խմում են նորա առաջին և ասում կեցցէ Ադոնիա արքայ։ 26 Եւ ինձ՝ քո ծառային՝ և Սադովկ քահանային և Յովիադայի որդի Բանեային և քո ծառայ Սողոմոնին չէ կանչել։ 27 Արդեօք այս բանը իմ տէր թագաւորից է եղել, բայց դու քո ծառային չես իմացրել, թէ ո՞վ պիտի նստի իմ տէր թագաւորի աթոռի վերայ նորանից յետոյ։

28 Եւ Դաւիթ թագաւորը պատասխանեց և ասեց. Ինձ մօտ կանչեցէք Բերսաբէին. և նա եկաւ թագաւորի առաջը և կանգնեց թագաւորի առաջին։ 29 Եւ թագաւորը երդում արաւ և ասեց. Կենդանի է Տէրը որ իմ

կեանքն ազատեց ամեն նեղու-
30 թիւնից. Որ ինչպէս որ քեզ եր-
դում եմ արել Իսրայէլի Աստ-
ուած Եհովայով, ասելով որ Քո
որդի Սողոմոնը պիտի թագաւոր
լինի ինձանից յետոյ և նա պիտի
նստի իմ աթոռի վերայ իմ տեղ.
31 ահա այսօր պիտի անեմ։ Եւ
Բերսաբէն գլուխ տուաւ երեսը
մինչև գետինը և երկրպագեց թա-
գաւորին և ասեց. Կեցցէ իմ տէր
արքայ Դաւիթը յաւիտեան։
32 Եւ Դաւիթ թագաւորն ասեց.
Կանչեցէք ինձ մօտ Սադովկ քա-
հանային և Նաթան մարգարէին
և Յովիադայի որդի Բանեային.
և նորանք եկան թագաւորի ա-
33 ռաջը։ Եւ թագաւորն ասեց նո-
րանց. Առէք ձեզ հետ ձեր տի-
րոջ ծառաներին և հեծացրէք
իմ որդի Սողոմոնին իմ ջորիի
վերայ և իջեցրէք նորան Գեհոն։
34 Եւ այնտեղ նորան Իսրայէլի վե-
րայ թագաւոր օծեն Սադովկ
քահանան և Նաթան մարգա-
րէն. և փողը հնչեցրէք ու ասե-
35 ցէք. Կեցցէ Սողոմոն արքայ։ Եւ
նորա ետևից վեր եկէք, և նա
գայ ու նստի իմ աթոռի վերայ
և նա թագաւոր լինի իմ տեղ.
և ես հրաման տուի նորան, որ
իշխան լինի Իսրայէլի և Յուդայի
36 վերայ։ Եւ Յովիադայի որդի
Բանեան թագաւորին պատասխա-
նեց և ասեց. Ամէն, այսպէս ա-
սէ իմ տէր թագաւորի Տէր Ա-
37 ստուածը։ Ինչպէս որ Տէրը եղել
է իմ տէր թագաւորի հետ, այն-
պէս լինի նաև Սողոմոնի հետ, և
մեծացնէ նորա աթոռը իմ տէր
թագաւորի Դաւիթի աթոռից։
38 Եւ Սադովկ քահանան և Նա-
թան մարգարէն և Յովիադայի
որդի Բանեան և Քերեթիները ու
Փելեթիները իջան և հեծացրին
Սողոմոնին Դաւիթ թագաւորի
ջորիի վերայ, և տարին նորան
39 Գեհոն։ Եւ Սադովկ քահանան
առաւ իւղի եղջիւրը խորանիցը
և օծեց Սողոմոնին, և փողը հն-
չեցրին ու բոլոր ժողովուրդն ա-
սեցին. Կեցցէ Սողոմոն արքայ։
40 Եւ բոլոր ժողովուրդը վեր էին
գալիս նորա ետևիցը և ժողո-
վուրդը որինգներ հնչեցնելով մեծ
ուրախութեամբ ուրախանում է-
ին. և երկիրը դղրդում էր նո-
րանց ձայնովը։
Եւ լսեց Ադոնիան և նորա բո- 41
լոր բազմականները. Նորանք կե-
րել վերջացել էին, և Յովաբը
լսեց փողի ձայնը և ասեց. Ինչու
է լինում այդ դղրդման ձայնը
քաղաքում։ Նա տակաւին խօ- 42
սում էր և ահա Աբիաթար քա-
հանայի որդի Յովնաթանը եկաւ,
և Ադոնիան ասեց. Եկ, որովհե-
տև դու մի զօրաւոր և լաւ ա-
ւետաւոր մարդ ես։ Եւ Յովնա- 43
թանը պատասխանեց և ասեց Ա-
դոնիային. Ապաքէն մեր տէր
թագաւոր Դաւիթը թագաւոր
արաւ Սողոմոնին։ Եւ թագաւո- 44
րը նորա հետ ուղարկեց Սադովկ
քահանային և Նաթան մարգա-
րէին և Յովիադայի որդի Բան-
եային և Քերեթիներին ու Փե-
լեթիներին և նորան հեծացրին
թագաւորի ջորիի վերայ։ Եւ 45
Սադովկ քահանան ու Նաթան
մարգարէն նորան թագաւոր օ-
ծեցին Գեհոնում և այնտեղից
վեր գնացին ուրախանալով, և
քաղաքը դղրդաց. այս այն ձայնն
է որ լսեցիք։ Նաև Սողոմոնը 46
նստեց թագաւորութեան աթո-
ռի վերայ։ Եւ թագաւորի ծա- 47
ռաներն էլ եկան օրհնելու մեր
տէր թագաւոր Դաւիթին ասե-
լով. Քո Աստուածը Սողոմոնի
անունը քո անունից աւելի մե-
ծացնէ և նորա աթոռը քո ա-
թոռիցն աւելի բարձրացնէ. և
թագաւորը երկրպագութիւն ա-
րաւ իր անկողինի մէջ։ Ու նաև 48
այսպէս ասեց թագաւորը. Օրհ-
նեալ է Իսրայէլի Տէր Աստուա-
ծը. որ այսօր իմ աթոռի վերայ
մէկին նստել տուաւ որին իմ
աչքերը տեսնում են։ Եւ Ադո- 49
նիայի բոլոր կոչնականները զար-
հուրեցին և վեր կացան և ամեն
մարդ գնաց իր ճանապարհը։
Բայց Ադոնիան վախենում էր 50
Սողոմոնի երեսից. վասն որոյ վեր
կացաւ ու գնաց և բռնեց սեղա-

51 նի եղջիւրներիցը։ Եւ Սողոմոնին
իմացրին ասելով. Ահա Ադոնիան
վախենում է Սողոմոն թագաւո-
րիցը, և ահա բռնել է սեղանի
եղջիւրներիցն ասելով. Թող հէնց
այսօր երդում անէ ինձ Սողոմոն
թագաւորը, որ իր ծառային որ-
52 ով չի սպանիլ։ Եւ Սողոմոնն
ասեց. Եթէ առաքինի լինի նո-
րա մազից մէկը վայր չի ընկնիլ
գետինը, իսկ եթէ չարութիւն
գտնուի նորա վերայ, այն ժա-
53 մանակ պիտի մեռնի։ Եւ Սողո-
մոն թագաւորը մարդ ուղարկեց
և նորան վայր իջեցրին սեղանի-
ցը, և եկաւ ու երկրպագեց Սո-
ղոմոն թագաւորին. և Սողոմոնն
ասեց նորան. Գնա քո տունը։

ԳԼ. Բ

1 Եւ Դաւիթի մեռնելու օրերը
մօտեցան, և նա պատուիրեց իր
2 Սողոմոն որդիին ասելով. Ես գը-
նում եմ ամեն երկրի ճանապար-
հը. բայց դու քաջացիր և արի
3 եղիր։ Եւ պահիր քո Տէր Ա-
ստուծոյ պահպանութիւնը որ գը-
նաս նորա ճանապարհներովը, որ
պահես նորա պատուիրանքները,
հրամանները, իրաւունքները և
վկայութիւնները, ինչպէս որ գրը-
ուած է Մովսէսի օրէնքումը,
որպէս զի յաջողուես ամեն ա-
րած բանումդ և ամեն ուր որ
4 դառնաս։ Որպէս զի Տէրը հաս-
տատէ այն խօսքը որ ասեց իմ
մասին ասելով. Եթէ քո որդի-
քը պահեն իրանց ճանապարհնե-
րը, որ իմ առաջին գնան հա-
ւատարմութեամբ իրանց բոլոր
սրտովը ու բոլոր հոգիովը, ասեց.
Պակաս չի լինիլ քեզանից մի
մարդ Իսրայէլի աթոռի վերայ։
5 Ու նաև գիտես դու Շարուհեան
Յովաբի ինձ արածը, որ արաւ
Իսրայէլի երկու զօրագլուխներին՝
Ներեան Աբեններին և Յեթեր-
եան Ամեսային, որ նորանց սպա-
նեց, և պատերազմի արիւն թա-
փեց խաղաղ ժամանակում. և
պատերազմի արիւն ածեց իր մէջ-
քի գօտիի և իր ոտքի կօշիկի
վերայ։ Եւ դու քո իմաստու- 6
թեան համեմատ անես որ նորա
ալևորութիւնը խաղաղութեամբ
գերեզման չ՚իջեցնես։ Բայց Գա- 7
զաադացի Բերզելիի որդկանցը ո-
ղորմութիւն անես, որ քո սե-
ղանի վերայ ուտողների հետ լի-
նեն, որովհետև ինձ այնպէս մօ-
տեցան քո եղբայր Աբիսողոմի ե-
րեսից փախչելիս։ Եւ ահա Բա- 8
ւուրիմացի Բենիամինեան Գերա-
յի որդի Սեմէին քեզ մօտ է.
նա ինձ սաստիկ անէծքով անի-
ծել է, երբոր ես Մանայիմ էի
գնում, և նա իջաւ Յորդանան
ինձ դիմաւորելու ու ես երդում
արի նորան Տէրով, թէ Քեզ
սրով չեմ սպանիլ։ Եւ հիմա 9
դու նորան անմեղ չ՚համարես,
որովհետև դու իմաստուն մարդ
ես և գիտես թէ նորան ինչ պի-
տի անես, որ նորա ալևորու-
թիւնը արիւնով գերեզման ի-
ջեցնես։
Եւ Դաւիթը ննջեց իր հայրե- 10
րի հետ և թաղուեցաւ Դաւիթի
քաղաքումը։ Եւ Դաւիթի Իս- 11
րայէլի վերայ թագաւորութիւն
արած օրերը քառասուն տարի
էին. Քեբրոնումը թագաւորու-
թիւն էր արել եօթը տարի և Ե-
րուսաղէմումը թագաւորութիւն
արաւ երեսունևերեք տարի։
Եւ Սողոմոնը նստեց իր հօր 12
Դաւիթի աթոռի վերայ, և նո-
րա թագաւորութիւնը շատ հաս-
տատուեցաւ։
Եւ Ագգիթի որդի Ադոնիան 13
եկաւ Սողոմոնի մօր Բերսաբէի
մօտ, և նա ասեց՝ Խաղաղու-
թեամբ է քո գալուստը. Նա էլ
ասեց՝ Խաղաղութեամբ։ Եւ ա- 14
սեց. Ես մի խօսք ունեմ քեզ,
և Բերսաբէն ասեց՝ Ասիր։ Նա էլ 15
ասեց. Դու գիտես որ թագաւո-
րութիւնը իմն էր դառել, և բո-
լոր Իսրայէլն իրանց երեսը դէպի
ինձ էին դարձրել որ ես թագա-
ւորեմ, բայց թագաւորութիւնը
շուռ տուաւ և դառաւ իմ եղ-
բօրը. որովհետև Տէրիցը եղաւ
նորան։ Եւ հիմա ես քեզանից 16
միայն մէկ խնդիրք եմ խնդրում.

ինձ անտես մի անիր. և նա ա-
17 սեց նորան՝ Ասիր։ Եւ Ադոնիան
ասեց. Ասիր Սողոմոն թագաւո-
րին՝ ըստ որում նա քեզ անտես
չի անիլ, որ նա ինձ կին տայ
18 Սունամացի Աբիսակը։ Եւ Բեր-
սաբէն ասեց. Լաւ, ես կ'խօսեմ
քո մասին թագաւորի հետ։
19 Եւ Բերսաբէն գնաց Սողոմոն
թագաւորի մօտ Ադոնիայի մասին
նորա հետ խօսելու, և թագաւո-
րը վեր կացաւ նորան դիմաւորե-
լու և երկրպագեց նորան և նըս-
տեց իր աթոռի վերայ, և թա-
գաւորի մօր համար աթոռ դրին,
20 և նա նստեց աջ կողմին։ Եւ
Բերսաբէն ասեց. Ես քեզանից մի
փոքր խնդիրք եմ խնդրում, ինձ
անտես մի անիր. և թագաւորն
ասեց նորան. Խնդրիր, մայր իմ,
որովհետև ես քեզ անտես չեմ
21 անիլ։ Բերսաբէն էլ ասեց. Թող
Սունամացի Աբիսակը տրուի քո
եղբայր Ադոնիային կին լինելու։
22 Եւ Սողոմոն թագաւորը պատաս-
խանեց և ասեց իր մօրը. Էլ ի՞ն-
չու համար ես միայն Սունամացի
Աբիսակը խնդրում Ադոնիայի
համար, ուրեմն նորա համար
թագաւորութիւնն էլ խնդրիր.
որովհետև նա իմ եղբայրն է՝ ին-
ձանից մեծ, նորա համար և Ա-
բիաթար քահանայի համար և
23 Շարուհեան Յովաբի համար։ Եւ
Սողոմոն թագաւորը երդում ա-
րաւ Տէրովը՝ թէ Աստուած ինձ
այսպէս անէ և էլ աւելի անէ,
որ Ադոնիան այդ խօսքը իր կեան-
24 քի դէմ է խօսել։ Եւ արդ կեն-
դանի է Տէրը, որ ինձ հաստա-
տեց ու նստեցրեց իմ հօր՝ Դա-
ւիթի աթոռի վերայ և որ ինձ
համար տուն շինեց ինչպէս որ
ասել էր, որ այսօր պիտի մեռնի
25 Ադոնիան։ Եւ Սողոմոն թագա-
ւորը ուղարկեց Յովիադայի որդի
Բանեային, որ զարկեց նորան, և
նա մեռաւ։
26 Եւ Աբիաթար քահանային ա-
սեց թագաւորը. Գնա Անաթովթ
քո արտերը. որովհետև մահ-
ուան արժանի ես դու, և ես
այսօր քեզ չեմ մեռցնիլ, որով-
հետև իմ հօր՝ Դաւիթի առաջին
կրել ես Տէր Եհովայի տապանա-
կը, և որովհետև դու էլ նեղու-
թիւն քաշեցիր այն ամեն բանի
մէջ, ուր որ իմ հայրը նեղու-
թիւն քաշեց։ Եւ Սողոմոնը 27
դուրս արաւ Աբիաթարին Տիրոջ
քահանայութիւնից, որպէս զի
կատարուի Տիրոջ խօսքը, որ ա-
սել էր Հեղիի տան վերայ Սելո-
վումը։
Եւ այս լուրը հասաւ Յովա- 28
բին. թէև Յովաբը հետևել էր
Ադոնիային, բայց Աբիսողոմին չէր
հետևել. և Յովաբը փախաւ Տի-
րոջ վրանը և բռնեց սեղանի եղ-
ջիւրներիցը։ Եւ Սողոմոն թագա- 29
ւորին պատմեցին թէ Յովաբը
փախել է Տիրոջ վրանը, և ահա
սեղանի կշտին է։ Եւ Սողոմոնը
Յովիադայի որդի Բանեային ու-
ղարկեց ասելով. Գնա նորան
սպանիր։ Եւ Բանեան Տիրոջ վը- 30
րանը եկաւ և ասեց նորան. Այս-
պէս է ասում թագաւորը՝ դուրս
եկ. իսկ նա ասեց՝ Ոչ, ես այս-
տեղ եմ մեռնելու. և Բանեան
ետ դարձրեց այս խօսքը թագա-
ւորին՝ ասելով թէ Յովաբն այս-
պէս ասեց և ինձ այսպէս պա-
տասխանեց։ Եւ թագաւորն ա- 31
սեց նորան՝ Արա ինչպէս որ ա-
սել է, և սպանիր նորան ու թա-
ղիր. և հեռացրու ինձանից և
իմ հօր տանից այն անմեղ արիւ-
նը որ Յովաբը թափել է։ Եւ 32
Տէրը նորա արիւնը նորա գլխին
դարձնէ, որ իրանից արդար և
լաւ մարդկանց զարկեց ու սպա-
նեց սրով առանց իմ հօր գի-
տութեան՝ այսինքն Իսրայէլի զօ-
րագլուխ Ներեան Աբեններին և
Յուդայի զօրագլուխ Յեթերեան
Ամեսայիին։ Եւ նորանց արիւնը 33
դառնայ Յովաբի գլխին և նորա
սերունդի գլխին յաւիտեան. իսկ
Դաւիթին ու նորա սերունդին և
նորա տանն ու աթոռին խաղա-
ղութիւն լինի Տէրիցը յաւիտ-
եան։ Եւ Յովիադայի որդի Բան- 34
եան վեր գնաց ու զարկեց նորան
սպանեց, և նա թաղուեցաւ իր
տանը՝ անապատումը։ Եւ Յո- 35

վիադայի որդի Բանեային նորա
տեղը զօրքի վերայ կարգեց, և
թագաւորը Սադովկ քահանային
Աբիաթարի տեղը դրաւ։
36 Եւ թագաւորը մարդ ուղար-
կեց ու կանչեց Սեմէիին և ասեց
նորան. Քեզ համար Երուսաղէ-
մումը մի տուն շինիր և այնտեղ
բնակուիր. և այնտեղից դուրս
37 չ'գաս այս կամ այն կողմ։ Եւ
այն օրը որ դուրս եկար և Կեդ-
րոն հեղեղատովն անցար, հաս-
տատ իմանաս, որ անպատճառ
պիտի մեռնես, քո արիւնը քո
38 գլուխը լինի։ Եւ Սեմէին ա-
սեց թագաւորին. Այդ խօսքը
բարի է. ինչպէս որ ասեց իմ
տէր թագաւորը, այնպէս պիտի
անէ ծառադ. և Սեմէին շատ
ժամանակ բնակուեց Երուսա-
ղէմում։
39 Եւ եղաւ որ երեք տարիից
յետոյ Սեմէիի երկու ծառաները
փախան Գէթի թագաւոր Մաա-
քայի որդի Անքուսի մօտ. և Սե-
մէիին իմացրին թէ Ահա քո ծա-
40 ռաները Գէթումն են։ Եւ Սե-
մէին վեր կացաւ և համետեց իր
էշը և գնաց Գէթ՝ Անքուսի մօտ
իր ծառաները որոնելու. և Սե-
մէին գնաց ու իր ծառաներին
41 բերաւ Գէթիցը։ Եւ Սողոմոնին
իմացրին թէ Սեմէին Երուսաղէ-
մից գնացել է Գէթ և ետ դա-
42 ռել։ Եւ թագաւորը մարդ ու-
ղարկեց ու կանչեց Սեմէիին և
ասեց նորան. Չէ՞ որ քեզ եր-
դում տուի Տէրով և վկայեցի
քեզ ասելով թէ Այն օրը որ
դուրս եկար և այս կամ այն
կողմը գնացիր, իմանաս որ ան-
պատճառ պիտի մեռնես. և դու
ինձ ասեցիր Այդ խօսքը բարի է
43 որ լսեցի։ Ապա ի՞նչու համար
չ'պահեցիր Տիրոջ երդումը և այն
պատուէրը, որ ես քեզ պատ-
44 ուիրեցի։ Եւ թագաւորն ասեց
Սեմէիին. Հիմա գիտենաս, որ
քո սրտի իմացած բոլոր չարու-
թիւնը, որ իմ հօր Դաւիթին
արել ես, Տէրը քո չարութիւնը
45 քո գլխին է դարձնում։ Եւ օրհ-
նեալ է Սողոմոն թագաւորը, և
Դաւիթի աթոռը հաստատ է
Տիրոջ առաջին յաւիտեան։ Եւ 46
թագաւորը հրամայեց Յովիադայի
որդի Բանեային, և նա գնաց ու
զարկեց նորան, և նա մեռաւ.
և թագաւորութիւնը հաստատ-
ուեցաւ Սողոմոնի ձեռքումը։

ԳԼ. Գ

Եւ Սողոմոնը խնամութիւն ա- 1
րաւ Եգիպտոսի փարաւօն թա-
գաւորի հետ, և առաւ փարա-
ւօնի աղջիկը ու բերաւ նորան
Դաւիթի քաղաքը մինչև որ շի-
նեց վերջացրեց իր տունը և Տի-
րոջ տունը և Երուսաղէմի պա-
րիսպը շուրջանակի։ Միայն թէ 2
ժողովուրդը զոհում էր բարձր
տեղերի վերայ. որովհետև մին-
չև այն օրերը Տիրոջ անունի հա-
մար տուն չէր շինուած։
Եւ Սողոմոնը սիրեց Տիրոջը, 3
որ գնայ իր հայր Դաւիթի պատ-
ուէրներովը, միայն թէ զոհում
և խնկարկում էր բարձր տեղերի
վերայ։ Եւ թագաւորը գնաց 4
Գաբաւոն, որ այնտեղ զոհ մա-
տուցանէ. որովհետև նա էր մեծ
բարձր տեղը. Սողոմոնը այն սե-
ղանի վերայ հազար ողջակէզ զո-
հեց։ Գաբաւոնի մէջ Տէրը երե- 5
ւեցաւ Սողոմոնին գիշերը երա-
զում, և Աստուած ասեց. Խնդրիր
թէ քեզ ինչ տամ։ Եւ Սողո- 6
մոնն ասեց. Դու մեծ ողորմու-
թիւն արիր իմ հայր Դաւիթին՝
քո ծառային, ինչպէս որ նա գը-
նաց քո առաջին հաւատարմու-
թեամբ և արդարութեամբ և
սրտի ուղղութեամբ քեզ հետ.
և նորա համար պահեցիր այդ
մեծ ողորմութիւնը և նորան մի
որդի տուիր որ նստում է նորա
աթոռի վերայ ինչպէս այսօր։
Եւ արդ, ով Տէր իմ Աստուած, 7
դու թագաւորեցրիր ծառայիդ
իմ հայր Դաւիթի տեղ, բայց
ես մի փոքր տղայ եմ չ'գիտեմ
ելնել ու մտնելը։ Եւ ծառադ 8
քո ընտրած ժողովրդի մէջ է՝ մի
մեծ ժողովրդի որ շատութիւնից
չի հաշվուիլ և չի համարուիլ։

9 Ուրեմն տուր քո ծառային *ի-
մաստուն սիրտ քո ժողովրդին
դատելու բարիի ու չարի մէջ-
տեղը ջոկելու. որովհետև ո՞վ է
կարող քո այս մեծ ժողովրդին
10 դատել։ Եւ այս խօսքը, որ Սո-
ղոմոնն այս բանը խնդրեց, հա-
11 ճոյ երևեցաւ Տիրոջ աչքին։ Եւ
Աստուած ասեց նորան. Որովհե-
տև դու այդ բանը խնդրեցիր և
քեզ համար չ'խնդրեցիր շատ օ-
րեր, և քեզ համար չ'խնդրեցիր
հարստութիւն և չ'խնդրեցիր քո
թշնամիների կեանքը, այլ քեզ
համար դատ լսելու իմաստու-
12 թիւն խնդրեցիր, Ահա քո խօս-
քի պէս պիտի անեմ, ահա ես
քեզ իմաստուն և հանճարեղ
սիրտ տուի, որ քեզանից առաջ
քեզ նմանը եղած չէ, և քեզա-
նից յետոյ էլ քեզ նմանը վեր
13 չի կենալ։ Ու նաև քո չ'ուզածն
էլ տուի քեզ, հարստութիւն
էլ, փառք էլ, որ քեզ նման
մի մարդ չի լինիլ թագաւորների
14 մէջ քո բոլոր օրերումը։ Եւ ե-
թէ գնաս իմ ճանապարհներու-
մը, որ իմ պատուիրանքներն ու
հրամանները պահես ինչպէս որ
գնաց քո հայր Դաւիթը, այն
ժամանակ քո օրերը կ'երկայնա-
15 ցնեմ։ Եւ Սողոմոնը զարթնեց, և
ահա երազ էր. և եկաւ Երու-
սաղէմ և կանգնեց Տիրոջ ուխ-
տի տապանակի առաջին, և ող-
ջակէզներ մատուցրեց և խաղա-
ղութեան զոհեր արաւ. և իր
բոլոր ծառաների համար կոչունք
արաւ։
16 Այն ժամանակ երկու պոռնիկ
կնիկներ եկան թագաւորի մօտ
և կանգնեցին նորա երեսի առա-
17 ջին։ Եւ կնիկներից մէկն ասեց.
Ոհ տէր իմ, ես և այս կնիկը մէկ
տան ենք բնակվում. և ես նորա
18 մօտ որդի ծնեցի այն տանը։ Եւ
եղաւ իմ ծնանելու երրորդ օրը,
որ այս կնիկն էլ ծնեց. և մենք
մէկտեղ էինք, այն տանը օտար
չ'կայ մեզ հետ. մինակ մենք
19 երկուսս ենք այն տան մէջ։ Եւ
այս կնկայ որդին մեռնում է
գիշերը. որովհետև սա նորա վե-
րայ պառկած է լինում։ Եւ սա 20
կէս գիշերին վեր է կենում առ-
նում իմ որդիին իմ կշտիցը, և
աղախինդ քնած է լինում, և
նորան պառկեցնում է իր ծոցու-
մը, իսկ այն իր մեռած տղան
պառկեցնում է իմ ծոցումը։ Եւ 21
ես առաւօտը վեր եմ կենում որ
տղայիս ծիծ տամ, և ահա մե-
ռած էր, և ցերեկին նորա վերայ
մտադրութեամբ նայեցի, և ա-
հա նա իմ ծնած տղան չէր։ Եւ 22
այն միւս կնիկը ասում էր. Ոչ,
այլ թէ կենդանին է իմ տղան,
և քո տղան մեռածն է. և միւսն
էլ ասում էր. Ոչ, այլ քո տը-
ղան մեռածն է, և իմ տղան
կենդանին է. և այսպէս խօսում
էին թագաւորի առաջին։ Եւ 23
թագաւորն ասեց. Սա ասում է.
Այս ողջը իմ տղան է, և քո
տղան մեռածն է. իսկ նա ասում
է. Ոչ, այլ քո տղան մեռածն է
ու իմ տղան ողջն է։ Եւ թա- 24
գաւորն ասեց. Սուր բերէք ինձ
մօտ. և սուրը բերին թագաւո-
րի առաջը։ Եւ թագաւորն ա- 25
սեց. Կտրեցէք այդ ողջ երեխա-
յին երկու կտոր որէք. և տուէք
կէսը մէկին և կէսը միւսին։ Եւ 26
այն կնիկը որ կենդանի տղան նո-
րանն էր, պատասխանեց թագա-
ւորին, որովհետև նորա աղիքը
գալարուեցան իր տղայի վերայ,
և ասեց. Ո՜հ, տէր իմ, ողջ ե-
րեխային նորան տուէք բայց մի
սպանէք նորան. իսկ միւսն ա-
սում էր. Ոչ ինձ լինի, ոչ քեզ,
կտրեցէք։ Եւ թագաւորը պա- 27
տասխանեց և ասեց. Նորան
տուէք ողջ երեխան, և մի սպա-
նէք նորան. նա նորա մայրն է։
Եւ բոլոր Իսրայէլը լսեցին դա- 28
տաստանը որ վճռեց թագաւո-
րը, և թագաւորի երեսից վախե-
ցան. որովհետև տեսան որ նորա-
նում Աստուծոյ իմաստութիւնը
կար դատաստան անելու համար։

ԳԼ. Դ

Եւ Սողոմոն թագաւորը թա- 1

*Եբր.՝ լսող, ականջը բաց։

գաւոր էր բոլոր Իսրայէլի վերայ։
2 Եւ սորանք են նորա իշխանները.
Սադովկի որդի Ազարիան՝ քա-
3 հանայ. Սիսայի որդիքը՝ Ելիքո-
րէփը և Աքիան՝ ատենադպիր-
ներ. Աքիլուդի որդի Յովսափա-
4 տը՝ յիշատակաց դպիր. Յովիա-
դայի որդի Բանեան՝ զօրագլուխ.
և Սադովկն ու Աբիաթարը՝ քա-
5 հանաներ. Եւ Նաթանի որդի
Ազարիան՝ գործակալների վերա-
կացու. և Նաթանի որդի Զա-
բուդը՝ *նախարար և թագաւորի
6 բարեկամ. Եւ Աքիսարը՝ պալա-
տի հրամանատար, և Աբդայի որ-
դի Ադոնիրամը՝ հարկերի տեսուչ։
7 Եւ Սողոմոնը տասնևերկու գոր-
ծակալներ ունէր բոլոր Իսրայէլի
վերայ, որոնք կերակուր էին տա-
լիս թագաւորին և նորա տանը.
տարին մէկ ամիս մէկինն էր լի-
8 նում կերակուր տալը։ Եւ սո-
րանք են նորանց անունները,
9 Եփրեմի սարումը Բենովրը։ Մա-
քասում և Սաղաբիմում և Բեթ-
սամիւսում, և Ելօն-բեթանա-
10 նում՝ Բենդակիրը։ Արարովթում՝
Բենհեսեդը. նորանն էր Սոքովը
11 և բոլոր Ոփերի երկիրը։ Բոլոր
Դովրի դաւառում՝ Բենարինա-
դաբը. Սողոմոնի աղջիկ Տափա-
12 տը սորա կինն էր։ Աքիլուդի որ-
դի Բաանան՝ Թանաքը և Մա-
կեդդովը և բոլոր Բեթսանը որ
Սարթանի մօտ է Յեզրայէլի տա-
կին, Բեթսանից մինչև Աբէլմա-
ուլայ մինչև Յեկմամի միւս կող-
13 մը։ Բենգաբերը՝ Ռամովթ-գա-
ղաադում. նորանն էին Գաղաա-
դում եղող Մանասեան Յայերի
գիւղաքաղաքները. նորանն էին
Բասանում եղող Արգովբի դա-
ւառը՝ վաթսուն մեծ պարսպա-
ւոր և պղնձանիգ քաղաքները։
14 Ադդովի որդի Աքինադաբը՝ Մա-
15 նայիմը։ Աքիմասը՝ Նեփթաղի-
մը. սա էլ կին էր առել իր հա-
մար Սողոմոնի աղջիկ Բասեմա-
16 թին։ Քուսիի որդի Բաանան՝ Ա-
17 սերի և Բաալօթի մէջ։ Փարուա-
յի որդի Յովսափատը՝ Իսաքարի
մէջ։ Էլայի որդի Սեմէին՝ Բենի- 18
ամինի մէջ։ Ուրիի որդի Գաբե- 19
րը՝ Գաղաադի երկրում՝ Ամօր-
հացիների Սեհօն թագաւորի և
Բասանի Ովգ թագաւորի երկ-
րումը. և մէկ գործակալ էր այդ
երկրում լինողը։
Եւ Յուդան ու Իսրայէլը շատ 20
էին ինչպէս որ ծովի եզերքի շատ
աւազը. և ուտում ու խմում
և ուրախանում էին։ Եւ Սողո- †21
մոնն իշխում էր բոլոր թագա-
ւորութիւններին վերայ, Եփրատ
գետից մինչև Փղշտացիների եր-
կիրը, և Եգիպտոսի սահմանը.
[illegible] ընծաներ էին բերում և
ծառայում Սողոմոնին նորա կեան-
քի բոլոր օրերումը։
Եւ Սողոմոնի մէկ օրուայ ռո- 22
ճիկն էր երեսուն քոռ նաշիհ և
վաթսուն քոռ ալիւր։ Տասը գէր 23
արջառ և քսան արօտական ար-
ջառ և հարիւր ոչխար բացի եղ-
ջերուներից, այծեամներից և վի-
թերից և գիրացրած հաւերից։
Որովհետև նա իշխում էր Գետի 24
այս կողմի բոլորին՝ Թափսայից
մինչև Գազա, Գետի այս կողմի
բոլոր թագաւորների վերայ, և
խաղաղութիւն ունէր բոլոր իր
շուրջը եղող ծառաներիցը։ Եւ 25
Յուդան և Իսրայէլը ապահով
բնակվում էին ամեն մարդ իր
որթի և իր թզենիի տակ՝ Դանից
մինչև Բերսաբէէ Սողոմոնի բոլոր
օրերումը։
Եւ Սողոմոնը քառասուն հա- 26
զար ախոռ ունէր իր կառքի
ձիերի համար, և տասնևերկու
հազար ձիաւոր։ Եւ այս գոր- 27
ծակալները կերակուր էին տալիս
Սողոմոն թագաւորին և Սողոմոն
թագաւորի սեղանին ամեն մօտե-
ցողներին՝ իւրաքանչիւրն իր ամ-
սին առանց մի բան պակասեցնե-
լու։ Եւ գարին ու դարմանը ձի- 28
երի և երիվարների համար բե-
րում էին նորանց եղած տեղը
իւրաքանչիւրն իր կանոնովը։
Եւ Աստուած Սողոմոնին իմաս- 29
տութիւն և խիստ շատ հանճար

*Եբր.՝ քահանայ

[†Եբր. բնագրում՝ Գլ. Ե. 1։]

տուաւ և սրտի լայնութիւն ծո-
30 վի եզերքի աւազին պէս։ Եւ Սո-
ղոմոնի իմաստութիւնը բոլոր ա-
րևելցիների իմաստութիւնից և
բոլոր Եգիպտոսի իմաստութիւ-
31 նից շատ էր։ Եւ նա ամեն մար-
դից իմաստուն էր, Եզրահեցի
Եթանից, Մաւուլի որդիք՝ Եմա-
նից, Քալքոլից և Դարդայից. և
նորա անունը դուրս եկաւ բոլոր
32 շրջակայ ազգերի մէջ։ Եւ նա
երեք հազար առակ խօսեց, և
նորա երգերն էին հազար ու հինգ։
33 Եւ խօսեց ծառերի վերայ՝ Լի-
բանանի եղևինից մինչև պատի
վերայ բուսնող զոպան, նաև խօ-
սեց կենդանիների և թռչուններ-
ի և զեռունների ու ձկների վե-
34 րայ։ Եւ ամեն ազգերից գալիս
էին Սողոմոնի իմաստութիւնը լը-
սելու, երկրիս ամեն թագաւոր-
ներիցը, որ լսում էին նորա ի-
մաստութիւնը։

ԳԼ. *Ե

1 Եւ Տիւրոսի Քիրամ թագաւորն
ուղարկեց իր ծառաները Սողոմո-
նի մօտ. որովհետև Քիրամն ա-
մեն ժամանակ սիրում էր Դաւի-
2 թին։ Եւ Սողոմոնը մարդ ուղար-
3 կեց Քիրամին ասելով. Դու գի-
տես, որ իմ հայր Դաւիթը չը
կարողացաւ իր Տէր Աստուծոյ
անունին մի տուն շինել այն պա-
տերազմների պատճառով, որ նո-
րան պատել էին, մինչև որ Տէրը
նորանց դրաւ նորա ոտքի թա-
4 թերի տակը։ Եւ հիմա իմ Տէր
Աստուածն ինձ հանգստութիւն
է տուել իմ շրջակայքից. ոչ
հակառակորդ կայ և ոչ ձախորդ
5 պատահար կայ։ Եւ ահա ես ա-
սում եմ, որ մի տուն շինեմ իմ
Տէր Աստուծոյ անունի համար,
ինչպէս որ Տէրը խօսել է իմ
հայր Դաւիթի հետ ասելով. Քո
այն որդին, որին ես կ'նստեցնեմ
քո տեղը քո աթոռի վերայ, նա
կ'շինէ տունը իմ անունի հա-
6 մար։ Արդ հրաման տուր, որ
Լիբանանից եղևիններ կտրեն ինձ
համար, և իմ ծառաները քո
ծառաների հետ լինեն, և քո ծա-
ռաների վարձքը քեզ կ'տամ բո-
լորովին քո ասածի պէս. որով-
հետև դու գիտես, որ մեզա-
նում մարդ չ'կայ, որ Սիդոնացի-
ների պէս փայտ կտրել իմանայ։
Եւ եղաւ երբոր Քիրամը Սո- 7
ղոմոնի խօսքերը լսեց՝ շատ ուրա-
խացաւ և ասեց. Օրհնեալ է
այսօր Տէրը, որ Դաւիթին մի ի-
մաստուն որդի տուաւ այս շատ
ժողովրդի վերայ։ Եւ Քիրամը 8
մարդ ուղարկեց Սողոմոնի մօտ
ասելով. Լսեցի որ մարդ ես ու-
ղարկել ինձ մօտ. ես բոլոր քեզ
հաճոյ եղածը կ'անեմ եղևնա-
փայտի և մայր փայտի մասին։
Իմ ծառաները Լիբանանից իջե- 9
ցնեն ծովը, և ես լաստեր կ'շի-
նեմ նորանց ծովի մէջ, և կ'ու-
ղարկեմ այն տեղը որ ինձ ցոյց
կ'տաս, և ես այնտեղ կ'քանդեմ
նորանց, և դու վեր կ'առնես.
իսկ դու կատարես իմ կամքը,
որ իմ տանը հաց տաս։ Եւ Քի- 10
րամը Սողոմոնին եղևնափայտեր
ու մայրի փայտեր էր տալիս բո-
լորովին նորա կամքի պէս։ Եւ 11
Սողոմոնը Քիրամին տուաւ քսան
հազար քոռ ցորեն նորա տան
համար պաշար և քսան քոռ
ծեծուած իւղ. այսպէս Սողոմո-
նը տալիս էր Քիրամին տարուց
տարի։ Եւ Տէրը իմաստութիւն 12
տուաւ Սողոմոնին, ինչպէս որ
ասել էր նորան. և խաղաղու-
թիւն էր Քիրամի և Սողոմոնի
մէջտեղ, և նոքա երկուսը դա-
շինք կապեցին։
Եւ Սողոմոն թագաւորը բոլոր 13
Իսրայէլից մարդահարկ առաւ, և
մարդահարկը եղաւ երեսուն հա-
զար մարդ։ Եւ նորանց յաջոր- 14
դաբար ուղարկեց Լիբանան ա-
միսը տասը հազար. մէկ ամիս
լինում էին Լիբանան՝ երկու ա-
միս տանը. և Ադոնիրամը այդ
հարկի վերայ էր։ Եւ Սողոմոնը 15
եօթանասուն հազար բեռնակիր
ունէր. և սարումը ութսուն հա-
զար փայտ կտրող։ Բացի գործա- 16

[*Եբր. բնագրում՝ Գլ. Ե. 15։]

կալների իշխաններից, որ Սողո-
մոնից դրուած էին գործի վերայ,
երեք հազար երեք հարիւր, որ
գործն անող ժողովրդի վերայ էին։
17 Եւ թագաւորը հրամայեց որ մեծ
քարեր կտրեն՝ պատուական քա-
րեր տանը հիմը տաշած քարե-
18 րով դնելու համար։ Եւ Սողոմո-
նի վարպետները և Քիրամի վար-
պետները և Գեբաղացիները տա-
շում և պատրաստում էին փայ-
տերը և քարերը տան շինու-
թեան համար։

ԳԼ. Զ

1 Եւ եղաւ Իսրայէլի որդկանց
Եգիպտոսի երկրից դուրս գալու
չորս հարիւր ութսուներորդ տա-
րին, Սողոմոնի Իսրայէլի վերայ
թագաւորելու չորրորդ տարին
Զիւ ամսի՝ այսինքն երկրորդ ամ-
սի մէջ նա հիմնարկեց Տիրոջ
տունը։
2 Եւ Սողոմոն թագաւորի՝ Տիրոջ
համար շինած տան երկայնու-
թիւնը վաթսուն կանգուն և լայ-
նութիւնը քսան և բարձրութիւ-
3 նը երեսուն կանգուն էր։ Եւ
տան տաճարի առաջի սրահը
քսան կանգուն երկայն էր տան
լայնութեան համեմատ. տասը
կանգուն լայն էր տան համե-
4 մատ։ Եւ տանը կամարաւոր վան-
դակապատ պատուհաններ շինեց.
5 Եւ տան պատի վերայ պատուար
շինեց շուրջանակի, տան պատե-
րի վերայ շուրջանակի, տաճա-
րին էլ դաբիրին էլ. և խուցեր
6 շինեց շուրջանակի։ Նեքևի պատ-
ուարի լայնութիւնը հինգ կան-
գուն, և միջինի լայնութիւնը վեց
կանգուն, և երրորդինի լայնու-
թիւնը եօթը կանգուն. որովհե-
տև տան համար միջոցներ թո-
ղեց շուրջանակի դուրսիցը, որ-
պէս զի տանը պատերին չ'դիպ-
7 չեն։ Եւ տունը շինուելիս քա-
րահանքի սրբատաշ քարերովն էր
շինվում, և տանը մէջ նորա
շինուելու ժամանակին ոչ մուր-
ճի ոչ տապարի և բնաւ ոչ մի
երկաթի գործիքի ձայն չէր լը-
սվում։ Միջին կարգի խուցերի 8
դուռը դէպի տան աջ կողմն էր,
և ոլորուն սանդուղքով վեր էին
գնում միջին կարգը. և միջինից
երրորդը։ Եւ նա տունը շինեց 9
ու վերջացրեց նորան. և տան
ձեղունը ծածկեց տախտակամա-
ծով և յարկերը եղևնափայտով։
Եւ պատուարը շինեց բոլոր տան 10
վերայով հինգ կանգուն բար-
ձրութեամբ, և շաղկապեց տան
հետ եղևնափայտերով։
Եւ Տիրոջ խօսքը եղաւ Սողո- 11
մոնին ասելով. Այս տունը դու 12
շինում ես. եթէ դու գնաս իմ
պատուիրանքներովը և իմ իրա-
ւունքը կատարես և պահես իմ
ամեն հրամանները որ նորանցում
գնաս, այն ժամանակ ես կ'հաս-
տատեմ իմ խօսքը քեզ հետ,
որ քո հայր Դաւիթի հետ խօ-
սել եմ։ Եւ կ'բնակուեմ Իս- 13
րայէլի որդկանց մէջ, և իմ Իս-
րայէլ ժողովուրդս չեմ թողիլ։
Եւ Սողոմոնը շինեց տունը և 14
վերջացրեց նորան։ Եւ տան պա- 15
տերը ներսևանց եղևնափայտի
տախտակներով շինեց տան յա-
տակիցը մինչև ձեղունի պատերը
ծածկեց ներսևանց փայտով. և
տան յատակը ծածկեց մայրի
տախտակներով։ Եւ տան ետևի 16
կողմից քսան կանգունը շինեց ե-
ղևնափայտի տախտակներով յա-
տակիցը մինչև պատերը, և նո-
րան շինեց ներսևանց իբրև դա-
բիր այսինքն իբրև սրբութիւն
սրբութեանց։ Եւ տունը քա- 17
ռասուն կանգուն էր, այսինքն
առաջի տաճարը։ Եւ տաճարի 18
միջի եղևնափայտերը կոճակների
և բացուող ծաղիկների պէս դը-
րօշուած էին. բոլորը եղևնափայտ
էր. բնաւ քար չէր երևում։ Եւ 19
դաբիրը պատրաստեց տանը մէջ
ներսևանց, որ այնտեղ դնէ Տի-
րոջ ուխտի տապանակը։ Եւ դա- 20
բիրը՝ առաջը քսան կանգուն եր-
կայն և քսան կանգուն լայն և
քսան կանգուն բարձր էր. և նո-
րան ձուլեց մաքուր ոսկիով, և
սեղանը պատեց եղևնափայտով։
Եւ Սողոմոնը պատեց տունը ներ- 21

սևանց մաքուր ոսկիով, և ոսկի
շղթաներ անցկացրեց դաբիրի ա-
ռաջով, և նորանց ոսկիով պա-
22 տեց։ Եւ բոլոր տունը պատեց
ոսկիով մինչև որ բոլոր տունը
վերջացաւ և բոլոր սեղանը, որ
դաբիրումն էր, պատեց ոսկիով։
23 Եւ դաբիրումը երկու քերով-
բէներ շինեց ձիթափայտից՝ բար-
24 ձրութիւնը տասը կանգուն. Եւ
մէկ քերովբէի թևը հինգ կան-
գուն, և միւս քերովբէի թևը
հինգ կանգուն, սորա թևերի
ծայրերից մինչև նորա թևերի
25 ծայրերը տասը կանգուն։ Եւ
երկրորդ քերովբէն տասը կան-
գուն էր. երկու քերովբէների
26 չափը և ձևը մէկ էր։ Մէկ քերով-
բէի բարձրութիւնը տասը կան-
գուն էր. նոյնպէս էր և երկրորդ
27 քերովբէն։ Եւ քերովբէները դը-
րաւ ներսի տան մէջ, և քերով-
բէների թևերը տարածեցին, և
մէկի թևը դիպչում էր մէկ պա-
տին, և երկրորդ քերովբէի թևն
էլ դիպչում էր միւս պատին, և
նորանց տան միջի թևերը դիպ-
28 չում էին թև թևի։ Եւ քերով-
բէներին պատեց ոսկիով։
29 Եւ տան բոլոր պատերի վերայ
շուրջանակի դրօշեց քանդակա-
գործ դրօշուած քերովբէներ և
արմաւենիներ և բացուող ծա-
ղիկներ ներսևանց ու դրսևանց։
30 Եւ տան յատակը պատեց ոսկիով
ներսևանց և դրսևանց։
31 Եւ դաբիրի դռանը ձիթափայ-
տի փեղկեր շինեց՝ դրանդիների
շրջանակներովը պատի մէկ հին-
32 գերորդ մասը։ Եւ դռան երկու
փեղկերը ձիթափայտից, և դրօ-
շեց նորանց վերայ դրօշուած քե-
րովբէներ և արմաւենիներ և բաց-
ուող ծաղիկներ, և պատեց ոս-
կիով. և տարածեց ոսկին քերով-
բէների և արմաւենիների վերայ։
33 Եւ այսպէս արաւ տաճարի
դրանդիքը ձիթափայտից՝ պատի
34 չորրորդ մասնից։ Եւ երկու փեղ-
կերը մայր փայտից. դռան եր-
կու տախտակները ծալուող էին,
և միւս դռան երկու տախտակ-
35 ները ծալուող էին։ Եւ դրօշեց
քերովբէներով և արմաւենիներ-
ով և բացուող ծաղիկներով.
և հարթեցրած ոսկիով պատեց
յօրինուածի վերայով։
Եւ շինեց ներսի դաւիթը ե- 36
րեք կարգ սրբատաշ քարով և
մէկ կարգ եղևնափայտի կոճ-
ղերով։
Տիրոջ տան հիմը դրուեցաւ 37
չորրորդ տարուայ Զիւ ամսումը։
Եւ տասնևմէկերորդ տարուայ 38
ութերորդ ամսումն այսինքն Բուլ
ամսումը վերջացաւ տաճարը իր
բոլոր բաներովը և բոլոր պատ-
շաճութեամբը. և նորան շինե-
ցին եօթը տարիում։

ԳԼ. Է

Եւ Սողոմոն իր տունը շինեց 1
տասնևերեք տարիում ու վեր-
ջացրեց բոլորովին։
Եւ շինեց նաև Լիբանանի ան- 2
տառի տունը. հարիւր կանգուն
երկայն, և յիսուն կանգուն լայն
և երեսուն կանգուն բարձր, չորս
կարգ եղևնափայտ սիւների վե-
րայ, և եղևնափայտի կոճղեր
սիւների վերայ։ Եւ վերևից քա- 3
ռասունևհինգ սիւների վերայ ե-
ղող սենեակների վերայով ծած-
կուած էր եղևնափայտով, տասն-
ևհինգ սիւնը մէկ կարգ։ Եւ ե- 4
րեք կարգ կամարներ կային, և
պատուհան պատուհանի դէմ ե-
րեք անգամ։ Եւ բոլոր դռները 5
և դրանդիքը քառակուսի էին
կամարակապ. և մի պատուհան
միւս պատուհանի դէմ ու դէմ
երեք անգամ։
Եւ սիւների սրահը շինեց, եր- 6
կայնութիւնը յիսուն կանգուն և
երեսուն կանգուն լայնութիւնը,
և (մի) սրահ նորանց առաջին՝ և
սիւներ և մի սեամ նորանց ա- 7
ռաջին։ Նաև աթոռի սրահը շի-
նեց ուր որ դատաստան էր ա-
նում, ատեանի սրահը. և նա
ծածկուած էր եղևնափայտով
յատակիցը մինչև յատակ։
Եւ նորա տունը, ուր որ նա 8
բնակվում էր միւս դաւիթում՝
սրահի ներսումը, այս շէնքի նը-

ման էր. և այս սրահի պէս մի
տուն շինեց Փարաւօնի աղջկան
համար որին Սողոմոնն առել էր։
9 Սորանք ամենքը պատուական
քարերից էին չինուած, որոնք չա-
փով տաշուած՝ սղոցով սղոց-
ուած ներսևանց և դրսևանց հիմ-
նիցը մինչև առաստաղը և դրսի-
10 ցը մինչև մեծ դաւիթը։ Եւ հի-
մը պատուական քարերից՝ մեծ
մեծ քարերից էր, տասը կան-
գուն քարերից և ութ կանգուն
11 քարերից։ Եւ նորա վերևից պատ-
ուական քարեր տաշած քարերի
12 չափովը՝ և եղևնափայտ։ Եւ մեծ
դաւիթը շուրջանակի երեք կարգ
տաշած քարերից էր, և մէկ
կարգ եղևնափայտի կոճղեր. նոյն-
պէս և էր Տիրոջ տան ներսի
դաւիթը և տան սրահը։
13 Եւ Սողոմոն թագաւորը մարդ
ուղարկեց ու Քիրամին բերաւ
14 Տիւրոսից։ Նա Նեփթաղիմի ցե-
ղից մի որբևայրի կնկայ որդի էր,
և նորա հայրը մի Տիւրացի պղն-
ձագործ էր. և նա լիքն էր իմաս-
տութիւնով և հանճարով և գի-
տութիւնով պղնձի ամեն տեսակ
գործքերը գործելու համար. և
նա եկաւ Սողոմոն թագաւորի
մօտ և կատարեց նորա բոլոր գոր-
15 ծերը։ Եւ նա ձուլեց այն երկու
պղնձի սիւները. մէկ սիւնի բար-
ձրութիւնը տասնևութը կան-
գուն. և մի տասնևերկու կան-
գունանոց թել շրջապատում էր
16 միւս սիւնը. Եւ երկու խոյակ
շինեց սիւների գլխին դնելու հա-
մար՝ ձուլածոյ պղնձից. մէկ խո-
յակի բարձրութիւնը հինգ կան-
գուն, և միւս խոյակի բարձրու-
17 թիւնը հինգ կանգուն։ Ցանցա-
կերպ ցանցեր և շղթայագործ
հիւսուածքներ շինեց սիւների գլ-
խին եղող խոյակների համար.
եօթը մէկ խոյակի համար, և
18 եօթը միւս խոյակի համար։ Եւ
շինեց սիւները, և երկու կար-
գերը շուրջանակի մէկ ցանցի վե-
րայ որ ծածկէ խոյակները որ
նռների վերայ էին. նոյնպէս էլ
19 արաւ միւս խոյակին։ Եւ խոյակ-
ները, որ սիւների գլխին էին,
շուշանագործ էին՝ սրահումը՝ չորս
կանգուն։ Եւ երկու սիւների վե- 20
րայի խոյակները ճիշդ վերը ցրց-
ուածքի վերայ էին որ ցանցի մօտ
էր. և շուրջանակի երկու հա-
րիւր կարգ նռներ միւս սիւնի
վերայ։ Եւ սիւները կանգնեցրեց 21
տաճարի սրահումը. և կանգնե-
ցրեց աջի սիւնը, և նորա անու-
նը դրաւ *Յաքին. և կանգնեցրեց
ձախի սիւնը, և նորա անունը
դրաւ †Բոոզ։ Եւ սիւների գլուխ- 22
ների վերայ շուշանաձև գործ
կար. այսպէս վերջացաւ սիւնե-
րի գործը։
Նոյնպէս շինեց ձուլածոյ ծովը՝ 23
տասը կանգուն այս շրթունքից
մինչև միւս շրթունքը՝ բոլորաձև
շուրջանակի. և հինգ կանգուն
բարձրութիւնը, և մի երեսուն
կանգունանոց դերձան նորան շրը-
ջապատում էր շուրջանակի։ Եւ 24
շուրջանակի նորա շրթունքի տա-
կովը պատում էին նորան կո-
ճակներ՝ տասը՝ մէկ կանգունում,
որ շուրջանակի պատում էին ծո-
վը, երկու կարգ կոճակներ ձուլ-
ուած նորա ձուլուելու ժամա-
նակ։ Նա կենում էր տասնևեր- 25
կու եզների վերայ՝ երեքը նայում
էին հիւսիս, և երեքը նայում
էին արևմուտք, և երեքը նայում
էին հարաւ և երեքը նայում էին
դէպի արևելք. և ծովը վերևիցը
նորանց վերայ էր. և նորանց ա-
մենի ետևի կողմերը դէպի ներս
էր։ Եւ նորա հաստութիւնը ձեռ- 26
քի չափ, և նորա շրթունքը բա-
ժակի շրթունքի գործ էր իբրև
շուշան ծաղիկ։ Երկու հազար
մար էր տանում։
Եւ տասը պղնձի մեքենովթնե- 27
րը շինեց, չորս կանգուն իւրա-
քանչիւր մեքենովթի երկարու-
թիւնը և չորս կանգուն լայնու-
թիւնը, և երեք կանգուն բար-
ձրութիւնը։ Եւ այս էր մեքե- 28
նովթի գործը, նորանք սպառ-
ուածներ ունէին, և սպառուած-
ները անկիւնների յօդուածների

*Այսինքն՝ Նա հաստատում է։
†Այսինքն՝ Առոյգ։

29 մէջտեղն էին. Եւ անկիւնների
յօդուածների մէջտեղը եղող ըս-
պառուածների վերայ առիւծներ,
եղներ և քերովբէներ կային.
անկիւնների յօդուածների վերայ
էլ նոյնպէս վերևիցը, և առիւծ-
ների և եղների տակից կախուած
30 պսակներ։ Եւ իւրաքանչիւր մե-
քենովթ չորս պղնձի անիւ և
պղնձի առանցքներ ունէր. և
չորս անկիւններին ուսեր ունէին.
աւազանի տակին ուսերը ձուլա-
ծոյ էին իւրաքանչիւր կախուած
31 ՚ԼՐԴԻ կշտին։ Եւ նորա բերանը
խոյակի նման և դէպի վեր մէկ
կանգուն, և նորա բերանը բոլո-
րակ էր խարիսխի գործ, մէկ ու
կէս կանգուն. նոյնպէս էլ բե-
րանքի վերայ քանդակուածներ և
սպառուածներ քառակուսի և
ոչ բոլորակաձև։
32 Եւ չորս անիւները սպառուած-
ների տակին, և անիւների ա-
ռանցքները մեքենովթումն էին.
և իւրաքանչիւր անիւի բարձրու-
թիւնը մէկ ու կէս կանգուն էր։
33 Եւ անիւների գործը կառքի ա-
նիւի գործ էր. նորանց առանցք-
ները, պարանոցները, շառաւիղ-
ները և գունտերը բոլորը ձուլա-
34 ծոյ էին։ Եւ իւրաքանչիւր մե-
քենովթի չորս անկիւնի վերայ
չորս ուսեր, ուսերը մեքենովթի-
35 ցը։ Եւ մեքենովթի գլխին կէս
կանգուն բարձրութեամբ բոլո-
րակ կար շուրջանակի. և մեքե-
նովթի գլխի վերայ նորա ունկե-
րը և սպառուածները իրանից էին։
36 Եւ նորա ունկերի տախտակների
վերայ և նորա սպառուածների
վերայ քերովբէներ, առիւծներ
և արմաւենիներ քանդակեց իւ-
րաքանչիւրի յարմարութեամբը,
և շուրջանակի կախուած ՚ԼՐԴԻՐ։
37 Այսպէս շինեց այն տասը մեքե-
նովթները. ամենի ձուլուածքը,
չափը, ձևը մէկ էր։
38 Եւ տասը հատ պղնձի աւա-
զաններ շինեց. իւրաքանչիւր ա-
ւազան քառասուն մար էր տա-
նում, իւրաքանչիւր աւազանը
չորս կանգուն էր. ամեն մի ա-
ւազան մէկ մեքենովթի վերայ
էր. այն տասը մեքենովթների
վերայ։ Եւ հինգ մեքենովթը դը- 39
րաւ տաճարի աջ կողմի ծայրին,
և հինգը ձախ կողմի ծայրին, և
ծովը դրաւ տաճարի աջ կողմին
արևելքում դէպի հարաւ։
Եւ Քիրամը շինեց աւազաններ- 40
ը և թիակները և կոնքերը. և
Քիրամը վերջացրեց այն բոլոր
գործերը որ արաւ Սողոմոն թա-
գաւորի համար Տիրոջ տանը։
Այսինքն երկու սիւները, և գունտ 41
խոյակները, որ այն երկու սիւ-
ների գլուխներին էին, և սիւնե-
րի գլխին եղող երկու գունտ
խոյակները ծածկելու համար շին-
ՀԻՆ երկու ցանցերը։ Եւ չորս 42
հարիւր նռները այն երկու ցան-
ցերի համար՝ երկու կարգ նռ-
ներ մէկ ցանցի համար, որ ծած-
կէր այն երկու գունտ խոյակնե-
րը, որ սիւների դէմ են. Եւ 43
տասը մեքենովթները և տասը ա-
ւազանները մեքենովթների վե-
րայ։ Եւ մէկ ծովը, և տասնև- 44
երկու եղները ծովի տակին։ Եւ 45
սաները և թիակները և կոնքերը
և այս բոլոր կարասիները, որ
Քիրամը շինեց Սողոմոն թագա-
ւորի համար Տիրոջ տանը փայ-
լուն պղնձից։ Յորդանանի դաշ- 46
տումը թանձր հողի վերայ նո-
րանց ձուլել տուաւ թագաւորը
Սոկքովթի և Սարթանի մէջտեղ։
Եւ Սողոմոնը տեղաւորեց այս 47
բոլոր կարասիները. խիստ շատ
շատութեան համար պղնձի չա-
փը չ՚որոշուեցաւ։
Եւ Սողոմոնը շինեց բոլոր այն 48
կարասիները, որ Տիրոջ տանն
էին, այսինքն ոսկի սեղանը և այն
սեղանը որի վերայ լինում էին
առաջաւորութեան հացը՝ ոս-
կիից։ Եւ ճրագակալները՝ հին- 49
գը աջ կողմից և հինգը ձախ կող-
մից դաբիրի առաջին՝ մաքուր
ոսկիից, և ծաղիկները և ճրագ-
ները և ունելիները՝ ոսկիից։ Եւ 50
գաւաթները, բազմակալները,
կոնքերը, խնկամանները և բուր-
վառները մաքուր ոսկիից, և ներ-
քին տան՝ այսինքն սրբութեանց
սրբութիւնի դռների, տանը՝

այսինքն տաճարի դռների, ոսկի
ծղխնիները։
51 Եւ այսպէս կատարուեցաւ ա-
մեն գործ, որ Սողոմոն թագա-
ւորն արաւ Տիրոջ տանը. և Սո-
ղոմոնը տարաւ իր հայր Դաւի-
թի նուիրած արծաթը, ոսկին և
կարասիները դրաւ Տիրոջ տան
գանձարանումը։

ԳԼ. Ը

1 Այն ժամանակ Սողոմոնը ժո-
ղովեց բոլոր Իսրայէլի ծերերին և
ցեղերի ամեն գլխաւորներին, Իս-
րայէլի որդկանց նահապետներին
Սողոմոն թագաւորի մօտ Երու-
սաղէմ, որ Տիրոջ ուխտի տա-
պանակը վեր տանեն Դաւիթի
2 քաղաքիցը որ է Սիօն։ Եւ Սողո-
մոն թագաւորի մօտ ժողովուե-
ցան բոլոր Իսրայէլացիներն եօթ-
ներորդ ամսի այսինքն Անթանի
3 ամսի տօնին։ Եւ Իսրայէլի բոլոր
ծերերն եկան, և քահանաները
4 վեր առան տապանակը։ Եւ տա-
րին Տիրոջ տապանակը և վկա-
յութեան խորանը և խորանում
եղած բոլոր սուրբ կարասիները,
և վեր տարին նորանց քահանա-
5 ները և Ղևտացիները։ Եւ Սո-
ղոմոն թագաւորը և Իսրայէլի
բոլոր ժողովքը որ ժողովուել
էին նորա մօտ, նորա հետ տա-
պանակի առաջն էին և անթիւ
և անհամար շատ ոչխարներ ու
6 եղներ էին զոհում։ Եւ քահա-
նաները բերին Տիրոջ ուխտի տա-
պանակը իր տեղը տան դաբիրը
սրբութեանց սրբութիւնի մէջ
7 քերովբէների թևերի տակ։ Որով-
հետև քերովբէները իրանց թե-
ւերը տարածում էին տապանա-
կի տեղի վերայ, և քերովբէները
ծածկում էին տապանակը և նո-
8 րա ձողերը վերևից։ Եւ ձողերը
երկարացրին, և երևեցան ձողե-
րի գլուխները սրբութիւնիցը դա-
բիրի առաջին, բայց դուրսը չէին
երևում. և նորանք այնտեղ են
9 մինչև այսօր։ Տապանակումը ու-
րիշ բան չ՚կար բացի երկու քա-
րեղէն տախտակներից, որ Մով-
սէսն այնտեղ դրաւ Քորեբումը,
որ Տէրը ուխտեց Իսրայէլի որդ-
կանց հետ նորանց Եգիպտոսի
երկրիցը դուրս գալու ժամանա-
կը։ Եւ եղաւ երբոր քահանա- 10
ները սրբարանիցը դուրս եկան,
ամպը լցրեց Տիրոջ տունը։ Եւ 11
քահանաները ամպի պատճառո-
վը չ՚կարողացան կանգնել ծա-
ռայելու. որովհետև Տիրոջ փառ-
քը լցրել էր Տիրոջ տունը։
Այն ժամանակ Սողոմոնն ա- 12
սեց. Տէրն ասել է թէ մառա-
խուղում է բնակվում։ Ես քեզ 13
համար բնակուելու տուն շինե-
ցի, մի տեղ՝ որ դու յաւիտեան
բնակուես։ Եւ թագաւորն իր 14
երեսը դարձրեց և օրհնեց Իս-
րայէլի բոլոր ժողովքին. և Իս-
րայէլի բոլոր ժողովքը կանգնել
էր։ Եւ նա ասեց. Օրհնեալ լինի 15
Իսրայէլի Տէր Աստուածը, որ իր
բերանովը խօսեց իմ հայր Դա-
ւիթի հետ, և իր ձեռքովը կա-
տարեց ասելով. Այն օրիցն ի վեր 16
որ իմ ժողովուրդ Իսրայէլին Ե-
գիպտոսից հանեցի՝ Իսրայէլի բո-
լոր ցեղերից մի քաղաք չ՚ընտրե-
ցի տուն շինելու համար, որ իմ
անունը այնտեղ լինի, այլ հա-
ւանեցի Դաւիթին որ իմ Իսրա-
յէլ ժողովրդի վերայ լինի։ Եւ 17
իմ հայր Դաւիթը սրտումը դրել
էր Իսրայէլի Տէր Աստուծոյ ա-
նունի համար տուն շինելու. Եւ 18
Տէրն ասեց իմ հայր Դաւիթին.
Որովհետև դու քո սրտումը դր-
ել էիր իմ անունի համար մի
տուն շինելու, լաւ ես արել որ
այս բանը դրել ես սրտումդ։
Միայն թէ դու չես շինիլ տու- 19
նը իմ անունի համար, այլ քո
երանքից դուրս եկող որդիդ՝ նա
տուն կ՚շինէ իմ անունի համար։
Եւ Տէրը հաստատեց իր ասած 20
խօսքը. և ես կանգնեցի իմ հայր
Դաւիթի տեղ և նստեցի Իսրա-
յէլի աթոռի վերայ, ինչպէս որ
Տէրն ասեց. և ես շինեցի տունը
Իսրայէլի Տէր Աստուծոյ անունի
համար։ Եւ այնտեղ տապանակի 21
համար մէկ տեղ պատրաստեցի,
ուր որ Տիրոջ ուխտն է, որ նա

կապեց մեր Հայրերի հետ երբոր նորանց դուրս հանեց Եգիպտա-
սի երկրիցը ։
22 Եւ Սողոմոնը կանգնեց Տիրոջ
սեղանի առաջին Իսրայէլի բոլոր
ժողովքի դիմացը և իր ձեռքերը
23 տարածեց դէպի երկինք. Եւ ա-
սեց. Ով Տէր Իսրայէլի Աստուած,
քեզ պէս Աստուած չ'կայ վերև
երկինքումը, և ցածը երկրի վերայ,
որ ուխտ և ողորմութիւն ես պա-
հումդ քո առաջին բոլոր սրտանց
24 գնացող ծառաներիդ համար. Որ
պահեցիր ծառայիդ իմ Հայր
Դաւիթի համար այն, որ նորան
ասեցիր. որ ասել էիր քո բերա-
նովը և քո ձեռքովը կատարե-
25 ցիր՝ ինչպէս այսօր։ Եւ հիմա ով
Իսրայէլի Տէր Աստուածը, պա-
հիր քո ծառայ իմ Հայր Դաւի-
թի համար այն ինչ որ նորա
հետ խօսեցիր ասելով. Քեզ հա-
մար մարդ չի պակասիլ իմ ա-
ռաջին Իսրայէլի աթոռի վերայ
նստող. միայն եթէ քո որդիքը
պահեն իրանց ճանապարհը, որ իմ
առաջին գնան, ինչպէս որ դու
26 գնացիր ։ Եւ արդ, ով Իսրայէլի
Աստուած, թող հաստատուի
քո խօսքը, որ ծառայիդ՝ իմ
Հայր Դաւիթի հետ խօսեցիր ։
27 Բայց երա՞ Աստուած կ'բնակ-
ուէ երկրիս վերայ. ահա երկինք
և երկինքների երկինքը չեն
կարող քեզ պարունակել, ո՛ւր
28 մնաց իմ այս շինած տունը։ Սա-
կայն, ով Տէր իմ Աստուած,
նայիր քո ծառայի աղօթքին և
նորա աղերսանքին, որ լսես այս
պաղատանքը և աղօթքը, որ ծա-
ռադ այսօր քո առաջին մատու-
29 ցանում է. Որ քո աչքերը այս
տան վերայ բաց լինեն՝ գիշեր ու
ցերեկ այստեղի վերայ, որի հա-
մար ասեցիր թէ իմ անունը այն-
տեղ պիտի լինի, որ լսես այն ա-
ղօթքը, որ ծառադ այստեղ ա-
30 ղօթում է ։ Եւ լսես ծառայիդ
և քո Իսրայէլ ժողովրդի աղեր-
սանքին, որ մատուցանում են
այստեղ. և դուք լսիր դուք քո
բնակուելու տեղից երկնքից, և
լսելով ներիր ։

Երբոր մէկը իր ընկերի դէմ 31
մեղանչէ, և նորան երդումով
առաջարկէ նորան երդմնեցնելու
համար, և երդումը գայ քո սե-
ղանի առաջ այս տունը ։ Ա՛յն 32
ժամանակ դու լսիր երկնքումը և
կատարիր, և դատիր քո ծառա-
ներին՝ դատապարտելիին դատա-
պարտես, որ նորա ճանապարհը
նորա գլուխը բերես, և արդարին
արդարացնես, որ նորան հատու-
ցանես իր արդարութեան հա-
մեմատ ։

Եթէ քո ժողովուրդ Իսրայէլը 33
քեզ դէմ մեղանչելուն համար ի-
րանց թշնամիների առաջին յաղ-
թուին, և դէպի քեզ դառնան
և քո անունին փառք տան, և
աղօթեն և աղերսեն դէպի քեզ
այս տանը, Ա՛յն ժամանակ դու 34
լսիր երկնքումը և ներիր քո Ի-
սրայէլ ժողովրդի մեղքը և եա
դարձրու նորանց այն երկիրը, որ
տուել ես նորանց Հայրերին ։

Եթէ երկինքը փակուի և անձ- 35
րեւ չ'լինի նորանց քեզ դէմ մե-
ղանչելուն համար, և աղօթք ա-
նեն այստեղ և փառք տան քո
անունին և եա դառնան իրանց
մեղքերիցը քո նորանց նեղելու
պատճառովը, Ա՛յն ժամանակ 36
դու լսիր երկնքումը և ներիր քո
ծառաների և քո ժողովուրդ Ի-
սրայէլի մեղքը, որ նորանց ու-
սուցանես իրանց դնալու բարի
ճանապարհը, և անձրեւ տաս քո
երկրի վերայ, որ տուել ես քո
ժողովրդին իբրեւ ժառանգու-
թիւն ։

Երբոր երկրի վերայ սով լինի, 37
ժանտախտ լինի, կամ խորշակա-
հարութիւն, կամ դալարուկ, մա-
րախ, թրթուր, կամ նորանց
թշնամիները նորանց նեղեն ի-
րանց դռների երկրումը, կամ
որ և է հարուած կամ հիւան-
դութիւն լինի, քո բոլոր Իսրա- 38
յէլ ժողովրդից մի որ և է մարդ
ինչ և է աղօթք և աղերսանք
[illegible] լինի, և ամեն մարդ,
որ իր սրտի ցաւը դիտէ, իր ձեռ-
քերը տարածէ դէպի այս տու-
նը, Ա՛յն ժամանակ դու լսիր 39

երկնքումը՝ քո բնակուելու տե-
ղումը և ներիր, և կատարիր, և
տուր այն մարդին իր բոլոր ճա-
նապարհների համեմատ, որ գի-
տես նորա սիրտը. որովհետև դու
միայն դիտես բոլոր մարդկանց
40 որդիների սիրտը. Որպէս զի քե-
զանից վախենան իրանց բոլոր օ-
րերումը այն երկրի վերայ որ
տուել ես մեր Հայրերին ։
41 Եւ նաև օտարականը, որ քո
Իսրայէլ ժողովրդիցը չէ, եթէ
նա դայ հեռու երկրից քո ա-
42 նունի համար. Որովհետև լսելու
են քո մեծ անունը և քո հզոր
ձեռքը և երկայնացրած բազու-
կը, եթէ նա դայ և աղօթք ա-
43 նէ այս տանը, Ա՛յն ժամանակ
դու լսիր երկնքումը՝ քո բնակ-
ուելու տեղումը և արա այն օ-
տարականի դէպի քեզ կանչածի
բոլորին համեմատ, որպէս զի երկ-
րի բոլոր ազգերն իմանան քո ա-
նունը, որ քեզանից վախենան քո
Իսրայէլ ժողովրդի պէս, որ ի-
մանան քո անունը կանչուել է
այս տան վերայ որ ես շինեցի ։
44 Երբոր քո ժողովուրդը պատե-
րազմի գնայ իր թշնամիի վերայ
այն ճանապարհով որով դու նո-
րանց կ'ուղարկես, և նորանք ա-
ղօթք անեն Տիրոջը քո ընտրած
քաղաքի և այս իմ քո անունի
համար շինած տան ճանապար-
45 հով, Ա՛յն ժամանակ լսիր եր-
կընքումը նորանց աղօթքը, և
նորանց աղերսանքը և նորանց ի-
րաւունքը արա ։
46 Երբոր քեզ դէմ մեղանչեն,
որովհետև մարդ չ'կայ որ չ'մե-
ղանչէ, և դու նորանց վերայ
բարկանաս, և նորանց մատնես
թշնամիի առաջին, և նորանց գե-
րեվարները նորանց գերի տանեն
թշնամիի հեռու կամ մօտ եր-
47 կիրը, Եթէ ղէնան իրանց սրտա-
վը այն երկրումը ուր գերի են
տարուել, և եա դառնան ու
դէպի քեզ աղերսեն իրանց գե-
րութեան երկրումն ասելով.
Մեղք գործեցինք, անօրէնու-
թիւն և անիրաւութիւն արինք.
48 Եւ դէպի քեզ դառնան իրանց
բոլոր սրտովը և իրանց բոլոր հո-
գիովն իրանց թշնամիների երկ-
րումը, ուր որ գերի են տարել
նորանց, և դէպի քեզ աղօթք
անեն այն երկրի ճանապարհովը,
որ դու նորանց Հայրերին տուիր,
և դէպի այն քաղաքը որին դու
հաւանեցիր և դէպի այս տունը
որ ես շինեցի քո անունի համար,
49 Ա՛յն ժամանակ լսիր երկնքումը՝
քո բնակուելու տեղումը նո-
րանց աղօթքը և աղերսանքը և
նորանց իրաւունքը կատարիր ։
50 Եւ ներիր քո քեզ դէմ մեղան-
չած ժողովրդին և նորանց քեզ
դէմ արած յանցանքները ներէ։
և այնպէս անես որ նորանց գե-
րեվարները նորանց վերայ գթան
և նորանց ողորմութիւն անեն ։
51 Որովհետև նորանք քո ժողովուր-
դը և քո ժառանգութիւնն են ։
որ եգիպտոսից՝ երկաթի փուռ
միջից հանեցիր ։ Եւ քո աչքերը
52 բաց լինեն քո ծառայի աղերսան-
քի և քո Իսրայէլ ժողովրդի ա-
ղերսանքի վերայ, որ նորանց ա-
մեն դէպի քեզ աղաղակելու
ժամանակ նորանց լսես ։ Որով- 53
հետև դու նորանց քեզ համար
ժառանգութիւն ջոկեցիր երկրի
ամեն ազգերից, ինչպէս որ ասե-
ցիր քո Մովսէս ծառայի ձեռա-
վը, երբոր դու, ով Տէր Եհո-
վայ, եգիպտոսից մեր Հայրերին
դուրս բերիր ։
Եւ եղաւ երբոր Սողոմոնը վեր- 54
ջացրեց այս բոլոր աղօթքը և ա-
ղերսանքը՝ Տիրոջը աղօթելը, վեր
կացաւ Տիրոջ սեղանի առաջից
ուր որ ծունկերը կրկնել և ձեռ-
քերը դէպի երկինքը տարածել
էր. Ա՛յն ժամանակ կանգնեց և 55
օրհնեց նա Իսրայէլի բոլոր ժո-
ղովրդին մեծ ձայնով և ասեց.
Օրհնեալ լինի Տէրը որ հանգըս- 56
տութիւն է տուել իր Իսրայէլ
ժողովրդին բոլոր իր ասածի պէս.
բնաւ մի բան չէ պակասել այն
ամեն բարի բաներից, որ իր ծա-
ռայ Մովսէսի ձեռովը խօսել է ։
Մեր Տէր Աստուածը մեզ հետ 57
լինի ինչպէս որ մեր Հայրերի հետ
էր. մեզ չ'թողէ և մեզ անտես

58 չ'անէ. Եւ մեր սիրտը դէպի ի-
րան դարձնէ, որ գնանք նորա
բոլոր ճանապարհներումը և պա-
հենք նորա պատուէրները և հրա-
մաններն ու իրաւունքները, որ
59 հրամայեց մեր հայրերին։ Եւ իմ
այս խօսքերը, որ ես պաղատեցի
Տիրոջ առաջին, դիշեր ու ցերեկ
մօտենան մեր Տէր Աստուծուն,
որ իրաւունք անէ իր ծառային
և իր Իսրայէլ ժողովրդին օր ըստ
60 օրէ. Որպէս զի երկրի բոլոր ազ-
գերը իմանան որ Եհովան է Աս-
61 տուած և ուրիշը չ'կայ։ Եւ ձեր
սիրտը մեր Տէր Աստուծոյ հետ
ուղիղ լինի, որ գնաք նորա օ-
րէնքներումը և պահէք նորա
հրամանները՝ ինչպէս որ այսօր։
62 Եւ Թագաւորը և բոլոր Իս-
րայէլը միասին Տիրոջ առաջին
63 զոհեր էին մատուցանում։ Եւ
Սողոմոնը զոհ արաւ Տիրոջը ա-
րած խաղաղութեան զոհը՝ քսան-
և երկու հազար արջառ և հա-
րիւր քսան հազար ոչխար. և
Թագաւորն ու բոլոր Իսրայէլի
որդիքը Տիրոջ տան նաւակատիքն
64 արին։ Այն օրը Թագաւորը սրբ-
եց Տիրոջ տան առաջի գաւիթի
մէջտեղը. որովհետև այնտեղ մա-
տուցրեց ողջակէզները, հացի
նուէրը, և խաղաղութեան զո-
հերի ճարպը, որովհետև պղնձի
սեղանը, որ Տիրոջ առաջին է,
ողջակէզները և հացի նուէրն ու
խաղաղութեան զոհերի ճարպը
պարունակելու համար փոքր էր։
65 Եւ այն ժամանակ Սողոմոնը ու
բոլոր Իսրայէլը նորա հետ կա-
տարեցին տօնը մեծ ժողովքով՝
Եմաթից մինչև Եգիպտոսի հե-
ղեղատը մեր Տէր Աստուծոյ ա-
ռաջին եօթն օր և դարձեալ եօթն
66 օր՝ այսինքն տասնևչորս օր։ Ու-
թերորդ օրը ժողովրդին արձա-
կեց, և նորանք օրհնեցին Թա-
գաւորին և գնացին իրանց վրան-
ները ուրախանալով ու զուարթ
սրտով այն բոլոր բարիքների հա-
մար որ Տէրն արել էր իր Դա-
ւիթ ծառային և իր Իսրայէլ
ժողովրդին։

ԳԼ. Թ

Եւ եղաւ երբոր Սողոմոնը շի- 1
նեց վերջացրեց Տիրոջ տունը և
Թագաւորի տունը և Սողոմոնի
ուզածը, որ փափաքեց անելու,
Այն ժամանակ Տէրը երկրորդ 2
անգամ երևեցաւ Սողոմոնին ինչ-
պէս որ նորան երևեցել էր Գա-
բաւոնումը, Եւ Տէրն ասեց նո- 3
րան. Լսեցի քո իմ առաջին ա-
րած աղօթքն ու աղաչանքը,
սրբեցի այս տունը որ դու շինե-
ցիր իմ անունը յաւիտեան այն-
տեղ դնելու համար, և իմ աչ-
քերն ու իմ սիրտը այնտեղ պի-
տի լինեն ամեն ժամանակ։ Եւ 4
արդ եթէ իմ առաջին գնաս,
ինչպէս որ գնաց քո հայր Դա-
ւիթը, կատարեալ սրտով և
ուղղութիւնով որ բոլոր իմ քեզ
հրամայածները կատարես և իմ
պատուիրանքներն ու իրաւունք-
ները պահես, Այն ժամանակ կը 5
հաստատեմ քո Թագաւորու-
թեան աթոռը Իսրայէլի վերայ
յաւիտեան ինչպէս որ ասել եմ
քո հայր Դաւիթին թէ քեզ
համար մարդ պակաս չի լինիլ
Իսրայէլի աթոռի վերայից։ Եթէ 6
դուք կամ ձեր որդիքը ինձ հե-
տևելուց ետ դառնաք, և չ'պա-
հէք իմ հրամաններն ու պատ-
ուիրանքները, որ ես դրել եմ
ձեր առաջը և գնաք ծառայէք
ուրիշ աստուածների և նորանց
երկրպագութիւն անէք, Այն 7
ժամանակ ես բնաջինջ կ'անեմ
Իսրայէլին այն երկրի երեսիցը,
որ ես տուել եմ նորանց, և այս
տունը, որ սրբեցի իմ անունի
համար, իմ երեսիցը կ'դցեմ և
Իսրայէլը բոլոր ազգերի մէջ ա-
ռակ և կատակ կ'լինի։ Եւ այս 8
բարձր եղող տան մօտով ամեն
անցնողը պիտի զարմանայ և սու-
լէ և պիտի ասեն. Ի՞նչու համար
է Տէրն այսպէս արել այս երկ- 9
րին և այս տանը։ Եւ պիտի ա-
սեն. Որովհետև Թողեցին իրանց
Տէր Աստուածը, որ իրանց հայ-
րերին հանել էր Եգիպտոսի երկ-
րիցը, և յարեցան ուրիշ աստ-

ուածների, և երկրպագութիւն
արին նորանց ու ծառայեցին նո-
րանց. նորա համար Տէրը նորանց
վերայ բերաւ այս բոլոր չարիքը։
10 Եւ եղաւ երբոր Սողոմոնը քը-
սան տարուայ միջոցում այն եր-
կու տուները, այսինքն Տիրոջ
տունը և Թագաւորի տունը շի-
11 նել էր, Տիւրոսի Քիրամ Թա-
գաւորը Սողոմոնին եղևնափայ-
տեր և մայր փայտեր և ոսկի ու
ամեն նորա փափաքածը նորան
ընծայելու փոխարէն, այն ժամա-
նակ Սողոմոն Թագաւորը Քիրա-
մին քսան քաղաք տուաւ Գա-
12 լիլեայի երկրումը։ Եւ Քիրամը
դուրս ելաւ Տիւրոսից Սողոմոնի
նորան տուած քաղաքները տես-
նելու, բայց հաճոյ չ'երևեցան
13 նորա աչքին։ Եւ նա ասեց. Այս
ի՞նչ քաղաքներ են որ տուել
ես ինձ, եղբայրս. և նորանց ա-
նունը դրաւ *Քաբօղ երկիր, ինչ-
14 պէս որ է մինչև այսօր։ Եւ Քի-
րամը Թագաւորի համար հա-
րիւր և քսան տաղանդ ոսկի ու-
ղարկեց։
15 Եւ այս էր Սողոմոն Թագաւո-
րի դրած հարկի պատճառը, որ
շինէ Տիրոջ տունը և իր տունը
ու Մելօնը և Երուսաղէմի պա-
րիսպը, Հասորը, Մակեդդովը և
16 Գազերը։ Եգիպտոսի Փարաւօն
Թագաւորը վեր էր գնացել և
առել Գազերը և նորան կրակով
այրել, և այն քաղաքում բնա-
կող Քանանացիներին սպանել և
նորան իբրև օժիտ տուել իր
աղջկան, որ Սողոմոնի կինն էր։
17 Եւ Սողոմոնը շինեց Գազերը և
18 ցածի Բեթորոնը։ Նաև Բաաղե-
թը և Թագմորը անապատումը
19 երկրի մէջ, Եւ Սողոմոնի բոլոր
շտեմարանների քաղաքները, և
կառքերի քաղաքները և ձիա-
ւորների քաղաքները, և Սողոմո-
նի բոլոր ուզածները, որ ուզեց
շինել Երուսաղէմումը և Լիբա-
նանումը և նորա բոլոր Թագա-
ւորութեան երկրումը։
20 Այն բոլոր ժողովուրդները, որ
մնացել էին Ամօրհացիներից, Քե-
տացիներից, Փերեզացիներից, Խե-
ւացիներից և Յեբուսացիներից,
և Իսրայէլի որդիներիցը չէին,
Այսինքն նորանց որդիքը, որ նո- 21
րանցից յետոյ մնացել էին այն
երկրում, որոնց չէին կարողացել
Իսրայէլի որդիքը †բնաջինջ անել,
Սողոմոնը նորանց հարկատու ծա-
ռայ արաւ մինչև այսօր։ Բայց 22
Իսրայէլի որդիներիցը Սողոմոնը
ծառայ չ'շինեց. որովհետև նո-
րանք պատերազմի մարդիկ էին,
և նորա ծառաները, նորա իշ-
խանները նորա զօրավարները, և
նորա կառքերի ու ձիաւորների
վերակացուներն էին լինում։ Սո- 23
րանք են Սողոմոնի գործի վերայ
եղող վերակացուների գլխաւոր-
ները՝ հինգ հարիւր յիսուն, ո-
րոնք իշխում էին գործը կատա-
րող ժողովրդի վերայ։
Եւ Փարաւօնի աղջիկը վեր գը- 24
նաց Դաւիթի քաղաքիցն այն
տունը որ Սողոմոնը շինեց նորա
համար Մելօնը շինելիս։
Եւ Սողոմոնը տարին երեք ան- 25
գամ ողջակէզներ և խաղաղու-
թեան զոհեր էր մատուցանում
Տիրոջ համար շինած սեղանի վե-
րայ, և խունկ էր ծխում նորա
մօտ Տիրոջ առաջին. և տունը
վերջացրեց։
Եւ Սողոմոն Թագաւորը նաւեր 26
շինեց Եդովմի երկրում Կարմիր
ծովի եզերքին Ելաթի մօտ եղող
Գասիոնգաբերում։ Եւ Քիրամն 27
իր ծառաներին, որ նաւավար
մարդիկ և ծովի հմուտ էին, նա-
ւով ուղարկեց Սողոմոնի ծառա-
ների հետ։ Եւ նորանք գնացին 28
Ոփիր, և այնտեղից վեր առան
չորս հարիւր քսան տաղանդ ոս-
կի և բերին Սողոմոն Թագաւո-
րի մօտ։

ԳԼ. Ժ

Եւ Սաբայի Թագուհին Սողոմո- 1
նի համբաւը Տիրոջ անունի մա-
սին լսելով, եկաւ որ նորան խըր-

*Այսինքն՝ անհաճոյ

†Կամ՝ նզովել

թին հարցմունքներով փորձէ։
2 Եւ եկաւ Երուսաղէմ շատ մեծ
փառքով՝ խունկեր և խիստ շատ
ոսկի և պատուական քարեր բեռ-
նած ուղտերով, և գնաց Սողո-
մոնի մօտ և խօսեց նորա հետ իր
սրտումը եղած բոլոր բաները։
3 Եւ Սողոմոնը մեկնեց նորա հա-
մար նորա ամեն խօսքերը. Թա-
գաւորի համար մէկ գաղտնի բան
չ՚կար, որ նա չմեկնէր նորան։
4 Եւ Սաբայի Թագուհին տեսաւ
Սողոմոնի բոլոր իմաստութիւնը
5 և նորա շինած տունը. Նորա
սեղանի կերակուրը, և նորա ծա-
ռաների նստելը և նորա սպասա-
ւորների վեր կենալը, և նորանց
հագուստները և նորա մատըռ-
ուակները և նորա այն սանդուխ-
քը, որով վեր էր գնում Տիրոջ
տունը. և էլ ուշ չ՚մնաց նորա-
6 նում։ Եւ ասեց Թագաւորին.
Ճշմարիտ է եղել այն խօսքը, որ
ես լսել եմ իմ երկրումը քո
խօսքերի և քո իմաստութեան
7 համար։ Եւ ես չէի հաւատում
այն խօսքերին մինչև որ եկայ և
իմ աչքերը տեսան, և ահա ինձ
կէսը չեն պատմել. դու իմ լսած
համբաւիցը աւելի իմաստութիւն
8 և բարիք ունես։ Երանի քո այս
մարդկանցը, քո այս ծառաներ-
ին, որ միշտ քո առաջին կանգ-
նած են, և լսում են քո իմաս-
9 տութիւնը։ Քո Եհովայ Աստ-
ուածը օրհնեալ լինի, որ քեզ
հաւանեց՝ քեզ Իսրայէլի աթոռի
վերայ դնելու. Եհովան Իսրայէ-
լին յաւիտեան սիրելով քեզ
Թագաւոր է դրել որ իրաւունք
10 և արդարութիւն անես։ Եւ Թա-
գաւորին հարիւր քսան տաղանդ
ոսկի և խիստ շատ խունկ և պատ-
ուական քարեր տուաւ. այնչափ
շատ խունկ՝ որչափ որ Սաբայի
Թագուհին տուաւ Սողոմոնին,
այլ ևս չ՚եկաւ։
11 Եւ Քիրամի նաւերը որ Ոփի-
րից ոսկի էին բերում, Ոփիրից
խիստ շատ ալմուգ փայտեր էլ
բերին, և պատուական քարեր
12 էլ։ Եւ Թագաւորը ալմուգ փայ-
տերիցը յենարաններ շինեց Տի-
րոջ տան համար և Թագաւորի
տան համար, և քնարներ ու
տաւիղներ երգեցողների համար.
այսպիսի ալմուգ փայտեր էլ չ՚ե-
կան և չ՚տեսնուեցաւ մինչև
այսօր։
13 Եւ Սողոմոն Թագաւորը Սա-
բայի Թագուհիին տուաւ բոլոր
նորա փափաքածը որ ուզեց, բացի
այն որ Սողոմոն Թագաւորն ինքն
իր ձեռքովը տուաւ. և նա ետ
դառաւ գնաց իր երկիրը ինքը և
իր ծառաները։
14 Եւ մէկ տարուայ միջոցին Սո-
ղոմոնի համար եկած ոսկիի կշիռն
էր վեց հարիւր վաթսունևվեց
15 տաղանդ ոսկի, բացի վաճառա-
կաններից և առուտուրականներ-
ից և *Արաբիայի Թագաւորներ-
ից և երկրի նախարարներից Ե-
կաթիցը։
16 Եւ Սողոմոն Թագաւորը երկու
հարիւր վահան շինեց կռածոյ
ոսկիից. վեց հարիւր սիկղ ոսկի
գնաց իւրաքանչիւր վահանի հա-
մար։ Եւ երեք հարիւր ասպար
17 կռածոյ ոսկիից. իւրաքանչիւր
ասպարին երեք ման ոսկի գնաց.
և Թագաւորը դորանց դրաւ Լի-
բանանի անտառի տանը։
18 Եւ Թագաւորը մի փղոսկրեայ
մեծ աթոռ շինեց և մաքուր ոս-
կիով պատեց նորան։ Աթոռը
19 վեց աստիճան ունէր, և աթոռի
գլուխը բոլորակ էր ետևիցը. և
նստելու տեղը այս կողմից և այն
կողմից յենարաններ ունէր. և
երկու առիւծներ կային այդ յե-
նարանների մօտը։ Եւ տասնևեր-
20 կու առիւծներ էին կանգնած
այն վեց աստիճանների վերայ այս
կողմից և այն կողմից. այսպիսի
բան չէր շինուած ոչ մի Թագա-
ւորութիւնում։
21 Եւ Սողոմոն Թագաւորի բոլոր
խմելիքի անօթները ոսկի էին, և
Լիբանանի անտառի տան բոլոր
անօթները մաքուր ոսկիից էին,
արծաթից չէին. Սողոմոնի օրե-
րումը նա մի բան չէր համար-
22 վում։ Որովհետև Թագաւորը

*Կամ՝ խառն ժողովուրդների

Թարսիսի նաւեր ունէր ծովումը
Քիրամի նաւերի հետ. երեք տա-
րին մէկ անգամ գալիս էին Թար-
սիսի նաւերը բեռնած ոսկիով և
արծաթով, փղոսկրով և կա-
պիկներով ու սիրամարգներով։
23 Եւ մեծացաւ Սողոմոն Թագա-
ւորը երկրի բոլոր Թագաւորներից
հարստութիւնով և իմաստու-
24 թիւնով։ Եւ բոլոր երկիրը փա-
փաքում էր Սողոմոնի երեսին,
որ լսէ նորա այն իմաստութիւ-
նը, որ Աստուած տուել էր նո-
25 րա սրտին։ Եւ նորանց ամեն մէ-
կը բերում էր իր ընծան՝ արծա-
թի անօթներ և ոսկի անօթներ,
հանդերձներ, զէնքեր, խնկեղէն-
ներ, ձիեր և ջորիներ տարուց
տարի։
26 Եւ Սողոմոնը կառքեր և ձիա-
ւորներ ժողովեց և ունէր հազար
չորս հարիւր կառք և տասնևեր-
կու հազար ձիաւոր. և նորանց
տեղաւորեց կառքերի քաղաք-
ներումը և Երուսաղէմ՝ Թագա-
27 ւորի մօտ։ Եւ Թագաւորը ար-
ծաթը Երուսաղէմում քարի նը-
ման հասարակ բան շինեց, և եղև-
նափայտը դաշտի մոլաթզենինե-
28 րի պէս շատ արաւ։ Եւ Սողոմո-
նի համար ձիերը բերում էին
Եգիպտոսից, և Թագաւորի վա-
ճառականների կարաւանը ՝ՏԻԵՐԸ
երամակով էին ծախու առնում։
29 Եւ Եգիպտոսից մի կառքը վեր
էր գալիս և դուրս ելնում վեց
հարիւր արծաթով, իսկ ձին՝ հա-
րիւր յիսունով. և այսպէս հա-
նում էին բոլոր Քետացիների
Թագաւորների և Ասորիների Թա-
գաւորների համար նորանց ձեռ-
քովը։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ Սողոմոն Թագաւորը շատ օ-
տարազգի կանայք սիրեց, *բացի
Փարաւօնի աղջկանից՝, այսինքն
Մովաբացիներ, Ամմոնացիներ, Ե-
դովմացիներ, Սիդոնացիներ, Քե-
2 տացիներ. Այն ազգերից որոնց

*Կամ՝ նաև Փարաւօնի աղջկանը,

համար Տէրն ասել էր Իսրայէլի
որդկանց թէ նորանց մօտ մի
մտնէք, և նորանք էլ ձեզ մօտ
չ՚մտնեն, որ ձեր սիրտերը չ՚դար-
ձընեն իրանց աստուածների ե-
տևից։ Սողոմոնը սիրով նորանց
յարեցաւ։ Եւ եօթը հարիւր 3
տիկին կանայք և երեք հարիւր
հարճ ունէր, և իր կանայքը նո-
րա սիրտը դարձրին։ Եւ եղաւ 4
Սողոմոնի ծերութեան ժամանա-
կին որ նորա կանայքը դարձրին
նորա սիրտը ուրիշ աստուածնե-
րի ետևից, և նորա սիրտը ուղիղ
չէր իր Տէր Աստուծոյ հետ ինչ-
պէս իր հայր Դաւիթի սիրտը։
Եւ Սողոմոնը գնաց Սիդոնացիներ- 5
ի Աստարովթ աստուծոյ ետևից
և Ամմոնացիների գարշելի Մեղ-
քոմի ետևից։ Եւ Սողոմոնը չա- 6
րութիւն արաւ Տիրոջ առաջին
և չ՚հետևեց Տիրոջը իր հայր Դա-
ւիթի պէս։ Այն ժամանակ Սո- 7
ղոմոնը մի բարձրաւանդակ շինեց
Մովաբացիների գարշելի Քամով-
սի համար Երուսաղէմի դիմացի
սարի վերայ, նոյնպէս և Ամմոնի
որդկանց գարշելի Մողոքի հա-
մար։ Եւ այսպէս էլ արաւ իր 8
բոլոր օտարազգի կանանց համար
որ իրանց աստուածներին խունկ
էին ծխում և զոհ մատուցանում։
Եւ Տէրը բարկացաւ Սողոմոնի 9
վերայ, որ իր սիրտը ծռեց Իս-
րայէլի Տէր Աստուածանից, որ
երկու անգամ իրան երևեցել էր։
Եւ նորան այս բանի համար պատ- 10
ուիրել էր որ ուրիշ աստուած-
ների ետևից չ՚գնայ. բայց նա չը
պահեց ինչ որ Տէրը նորան հրա-
մայել էր։ Եւ Տէրն ասեց Սողո- 11
մոնին. Որովհետև այս բաները
լինում են քեզ մօտ, և դու չը
պահեցիր իմ ուխտը և իմ քեզ
հրամայած պատուէրները, ես
անշուշտ պիտի քեզանից պատա-
ռեմ Թագաւորութիւնը, և քո
ծառային պիտի տամ այն։ Մի- 12
այն թէ քո օրերումը չեմ անե-
լու քո հայր Դաւիթի պատճա-
ռով, քո որդիի ձեռիցն եմ նո-
րան պատառելու։ Սակայն բո- 13
լոր Թագաւորութիւնը չեմ պա-

տառելու, մէկ ցեղը պիտի տամ քո որդիին իմ ծառայ Դաւիթի պատճառով, և իմ ընտրած Երուսաղէմի պատճառով։
14 Եւ Տէրը Սողոմոնի համար մի հակառակորդ վերկացրեց, այսինքն Եդովմի թագաւորի սերունդից Եդովմացի Ադադին։ 15 Որովհետև Դաւիթը Եդովմում եղած ժամանակը, երբոր Յովաբ զօրագլուխը վեր գնաց, որ սպանուածներին թաղէ և Եդովմում կոտորեց բոլոր արուներին, 16 Որովհետև Յովաբը և բոլոր Իսրայէլը վեց ամիս բնակուեցան այնտեղ մինչև որ Եդովմում բոլոր արուներին բնաջինջ արաւ։ 17 Այն ժամանակ Ադադն ինքը և իր հօր ծառաներից Եդովմացի մարդիկ իր հետ փախան գնացին Եգիպտոս. և Ադադը փոքր երեխայ էր։ 18 Եւ նորանք Մադիամից վեր կացան ու եկան Փառան, և իրանց հետ մարդիկ վեր առան Փառանից ու գնացին Եգիպտոս Եգիպտոսի թագաւոր Փարաւոնի մօտ. և նա նորան տուն և հաց տուաւ, և նորան երկիր շնորհեց։ 19 Եւ Ադադը շատ շնորհք գտաւ Փարաւոնի աչքի առաջին, և նա իր կնկան քոյրը նորան կին տուաւ՝ Թահփենէս թագուհիի քոյրը։ 20 Եւ Թահփենէսի քոյրը նորա համար ծնեց Գանեբաթին, և Թահփենէսը նորան մեծացրեց Փարաւոնի տանը. և Գանեբաթը լինում էր Փարաւոնի տանը Փարաւոնի որդիների մէջ։ 21 Եւ Ադադը լսեց Եգիպտոսում, թէ Դաւիթը ննջել է իր հայրերի հետ, և թէ Յովաբ զօրագլուխը մեռել է, և Ադադն ասեց Փարաւոնին. Ինձ արձակիր որ իմ երկիրը գնամ։ 22 Եւ Փարաւոնն ասեց նորան. Ինչդ է պակաս ինձ մօտ, որ հիմա ուզում ես քո երկիրը գնալ. բայց նա ասեց. Ոչ, այլ ինձ անպատճառ արձակիր։
23 Եւ Աստուած նորա դէմ մի ուրիշ հակառակորդ վեր կացրեց՝ Եղիադայի որդի Ռազոնին, որ փախել էր իր տիրոջից՝ Սուբայի 24 Ադրազար թագաւորից։ Եւ նա իր մօտ մարդիկ հաւաքեց և գընդապետ եղաւ. և երբոր Դաւիթը նորանց կոտորեց, գնացին Դամասկոս և բնակուեցան այնտեղ և Դամասկոսում թագաւորեցին։ 25 Եւ նա իսրայէլին հակառակորդ էր Սողոմոնի բոլոր օրերում. բացի Ադադի արած չարութիւնից, նա նեղում էր Իսրայէլին. և թագաւորեց Ասորիների վերայ։
26 Եւ Սողոմոնի ծառայ Սարեդայից Եփրաթացի Նաբատի որդի Յերոբովամը, որի մօր անունը Սարուա էր՝ մի որբևայրի կին, սա էլ ձեռք բարձրացրեց թագաւորի դէմ։ 27 Եւ սա է նորա թագաւորի վերայ ձեռք բարձրացնելու պատմութիւնը. Սողոմոնը Մելլոնը շինել էր և իր հայր Դաւիթի քաղաքի քանգուածը պնդացրեց. 28 Եւ Յերոբովամը մի քաջ զուն մարդ էր. և երբոր Սողոմոնը նկատեց, որ նա մի դործունեայ տղամարդ է, նորան վերակացու դրաւ Յովսէփի տան բոլոր բեռների վերայ։ 29 Եւ եղաւ երբոր Յերոբովամը դուրս եկաւ Երուսաղէմից, այն ժամանակ նորան դտաւ Ճանապարհին Սիլոնացի Աքիա մարգարէն, և նա մի նոր վերարկու էր հագել. և նորանք երկուսն էլ միայակ էին դաշտում։ 30 Եւ Աքիան նորա վերայի նոր վերարկուից բռնեց և ճղռատեց տասներկու կտոր արաւ նորան։ 31 Եւ Յերոբովամին ասեց. Քեզ համար տասը կտորը վեր առ, որովհետև այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. Ահա ես պիտի պատառեմ թագաւորութիւնը Սողոմոնի ձեռիցը և քեզ տամ տասը ցեղը. 32 իսկ մէկ ցեղը նորան կ'լինի իմ ծառայ Դաւիթի պատճառով և Իսրայէլի բոլոր ցեղերից իմ ընտրած Երուսաղէմ քաղաքի պատճառով։ 33 Որովհետև ինձ թողեցին և երկրպագութիւն արին Սիդոնացիների Աստարովթ աստուածուն և Մովաբի Քամովս աստուածուն, և Ամմոնի որդկանց Մելքոմ աստուածուն, և չ'գնացին իմ ճանապարհներովը, որ իմ աչքի առաջին ուղիղը և իմ պատուէրները ու իրաւունքները կատարէին ինչպես նորա հայր Դաւիթը։ 34 Բայց բոլոր թագաւորութիւնը չեմ առնելու նորա ձեռից. որովհետև նորան իշխան կ'դնեմ նորա կեանքի բոլոր օրերում իմ ծառայ Դաւիթի պատճառով, որին ես ընտրել եմ, որ իմ հրամաններն ու իմ պատուէրները պահել է։ 35 Սակայն պիտի առնեմ թագաւորութիւնը նորա որդիի ձեռիցը և քեզ տամ այն, այսինքն տասը ցեղերը։ 36 Եւ նորա որդիին պիտի տամ մէկ ցեղը, որ իմ ծառայ Դաւիթը միշտ մէկ ճրագ ունենայ իմ առաջին երուսաղէմում՝ այն քաղաքում որը ես ընտրել եմ որ 37 իմ անունը դնեմ այնտեղ։ Եւ ես քեզ վեր եմ առնում, և դու կ'թագաւորես բոլոր սրտիդ ուզածին պէս և թագաւոր պիտի լինես Իսրայէլի վերայ։ 38 Եւ կ'լինի որ եթէ լսես բոլոր իմ քեզ հրամայածին և գնաս իմ ճանապարհներումը և անես իմ աչքի առաջին ուղիղը, որ պահես իմ պատուէրները և հրամաններըը ինչպես որ անում էր իմ Դաւիթ ծառան, այն ժամանակ ես քեզ հետ կ'լինեմ և քեզ համար հաստատուն տուն կ'շինեմ ինչպես որ շինել եմ Դաւիթի համար, և Իսրայէլը քեզ 39 կ'տամ։ Եւ պիտի խոնարհեցնեմ Դաւիթի սերունդը այս պատճառով, բայց ոչ թէ միշտ։ 40 Եւ Սողոմոն աշխատում էր որ Յերոբովամին սպանէ. բայց Յերոբովամը վեր կացաւ և փախաւ Եգիպտոս՝ Եգիպտոսի թագաւոր Սիսակի մօտ, և մնաց Եգիպտոսում մինչև Սողոմոնի մեռնելը։
41 Եւ Սողոմոնի գործքերի մնացորդը, և նորա բոլոր արածը և նորա իմաստութիւնը, ահա նորանք գրուած են Սողոմոնի գործքերի 42 քերի գրքումը։ Եւ Սողոմոնի բոլոր Իսրայէլի վերայ երուսաղէմումն արած թագաւորութեան ժամանակն էր քառասուն տարի։ 43 Եւ Սողոմոնը ննջեց իր հայրերի հետ և թաղուեցաւ իր հայր Դաւիթի քաղաքում, և նորա որդի Ռոբովամը թագաւորեց նորա տեղ։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Ռոբովամը գնաց Սիւքեմ, որովհետև բոլոր Իսրայէլը գնացել էր Սիւքեմ նորան թագաւոր անելու համար։ 2 Եւ եղաւ երբոր Նափատեան Յերոբովամը, որ Սողոմոն թագաւորի երեսից փախել էր և տակաւին Եգիպտոսումն էր, (որովհետև Յերոբովամը Եգիպտոսումն էր,) այս լսեց, և հարդ ուղարկեցին ու նորան կանչեցին, և եկան Յերոբովամը և Իսրայէլի բոլոր ժողովքը և խօսեցին Ռոբովամի հետ 3 ասելով. Հայրդ մեր լուծը ծանր արաւ էր. բայց դու հիմա թեթևացրու քո հօր խիստ ծառայութիւնը և նորա մեր վերայ դրած ծանր լուծը, այն ժամանակ քեզ ծառայութիւն կ'անենք։ 4 Եւ նա նորանց ասեց. Գնացէք և երեք օրից յետոյ դարձեալ ինձ մօտ եկէք, և ժողովուրդը գնաց։
5 Եւ Ռոբովամ թագաւորը խորհուրդ արաւ այն ծերերի հետ, որ կանգնում էին նորա հայր Սողոմոնի առաջին նորա կենդանութեանը, և ասեց. Դուք ինձ ինչպես եք խորհուրդ տալիս, որ ես այս ժողովրդին պատասխան տամ։ 6 Եւ նորանք ասեցին նորան այս խօսքը. Եթէ դու այսօր այս ժողովրդին ծառայ լինես և նորանց ծառայես, և նորանց պատասխան տաս ու նորանց քաղցր խօսքեր ասես, այն ժամանակ նորանք միշտ քո ծառաները կ'լինեն։ 7 Իսկ նա մերժեց ծերերի խրատը որ նորան տուին. և խորհուրդ հարցրեց այն երիտասարդներից, որ իր հետ էին մեծացել և նորա առաջին կանգնած էին։ 8 Եւ ասեց նորանց. Դո՞ւք ինչ խորհուրդ էք տալիս որ այս ժողովրդին պատասխան տամ, որ

ինձ հետ խօսեցին ասելով թէ
Այն լուծը թեթևացրու որ քո
10 հայրը մեզ վերայ է դրել։ Եւ
նորա հետ մեծացած երիտա-
սարդները խօսեցին նորա հետ
ասելով. Այսպէս ասիր այն ժո-
ղովրդին, որ քեզ հետ խօսել են
ասելով. Քո հայրը մեր լուծը
ծանրացրել էր, իսկ դու թե-
թևացրու մեր վերայից. այսպէս
խօսիր նորանց հետ. Իմ ճկոյթը
11 հաստ է իմ հօր մէջքիցը. Եւ
արդ իմ հայրը ձեզ վերայ ծանր
լուծ էր դրել, բայց ես աւելա-
ցնելու եմ ձեր լուծի վերայ. Իմ
հայրը ձեզ խարազաններով էր
խրատում, բայց ես ձեզ կարիճ-
ներով եմ խրատելու։
12 Եւ Յերոբովամն ու բոլոր ժո-
ղովուրդը եկան Ռոբովամի մօտ
երրորդ օրը, ինչպէս որ Թագա-
ւորը խօսել էր ասելով. Երրորդ
օրը դարձեալ ինձ մօտ եկէք։
13 Եւ Թագաւորը խիստ պատաս-
խանեց ժողովրդին, և մերժեց
ծերերի խորհուրդը, որ տուել
14 էին իրան։ Եւ նորանց հետ խօ-
սեց այն երիտասարդների խոր-
հրդի պէս ասելով. Իմ հայրը
ձեր լուծը ծանրացրել էր, բայց
ես աւելացնելու եմ ձեր լուծի
վերայ. Իմ հայրը ձեզ խարա-
զաններով էր խրատում, բայց
ես ձեզ կարիճներով եմ խրա-
15 տելու։ Եւ Թագաւորը ժողովրդ-
ին չ'լսեց, որովհետև Տիրոջ կող-
մից այսպէս էր դարձուած, որ-
պէս զի հաստատէ իր այն խօսքը
որ Տէրն ասել էր Սիլօնացի Ա-
քիայի ձեռովը Նափատեան Յե-
16 րոբովամին։ Եւ երբոր բոլոր Իս-
րայէլը տեսաւ, որ Թագաւորը
նորանց չ'լսեց, այն ժամանակ ժո-
ղովուրդը պատասխանեց Թագա-
ւորին ասելով. Մենք ի՞նչ բա-
ժին ունենք Դաւիթի մօտ. և
Յեսսէի որդիի մօտ ժառանգու-
թիւն չ'ունենք. քո վրանները
գնա, ով Իսրայէլ. հիմա դու
հոգա քո տունը, ով Դաւիթ.
և Իսրայէլը գնաց իր վրանները։
17 Եւ Իսրայէլի որդկանց վերայ որ
բնակվում էին Յուդայի քաղաք-
ներումը, Թագաւոր եղաւ Ռոբո-
վամը։ Եւ Ռոբովամ Թագաւորը 18
հարկերի տեսուչ Ադորամին ու-
ղարկեց, բայց բոլոր Իսրայէլը
նորան քարկոծեցին քարերով, և
նա մեռաւ. և Ռոբովամ Թա-
գաւորը շտապեց, որ կառքը
հեծնէ և փախչէ Երուսաղէմ։
Այսպէս Իսրայէլը ապստամբուեց 19
Դաւիթի տանիցը մինչև այսօր։
Եւ երբոր լսեց բոլոր Իսրայէ- 20
լը, որ Յերոբովամը ետ է դա-
ռել, այն ժամանակ մարդ ուղար-
կեցին և նորան կանչեցին ժողով-
քը ու նորան Թագաւոր արին
բոլոր Իսրայէլի վերայ, և Դաւի-
թի տան հետևող չ'կար բացի
մէկ Յուդայի ցեղը։ Եւ Ռոբո- 21
վամն եկաւ Երուսաղէմ և ժո-
ղովեց բոլոր Յուդայի տունը և
Բենիամինի ցեղը՝ հարիւր ութ-
սուն հազար ընտիր պատերազ-
մողներ, որ Իսրայէլի տան հետ
պատերազմէ, Թագաւորութիւ-
նը Սողոմոնի որդի Ռոբովամին
դարձնելու համար։
Եւ Աստուծոյ խօսքը եղաւ Ա- 22
ստուծոյ մարդ Սեմայիային ասե-
լով. Ասիր Յուդայի Թագաւոր 23
Սողոմոնեան Ռոբովամին և բոլոր
Յուդայի և Բենիամինի տանը և
ժողովրդի մնացորդին ասելով.
Այսպէս է ասում Տէրը. Վեր 24
մի գնաք և պատերազմ մի անէք
ձեր եղբայրների՝ Իսրայէլի որդ-
կանց հետ. ետ դառէք ամեն
մարդ իր տունը. որովհետև ին-
ձանից է եղած այս բանը։ Եւ
նորանք լսեցին Տիրոջ խօսքին և
ետ դառան գնացին Տիրոջ խօս-
քի համեմատ։
Եւ Յերոբովամը Եփրեմի սարի 25
վերայ շինեց Սիւքէմը և բնակ-
ուեց այնտեղ. և այնտեղից դուրս
եկաւ ու շինեց Փանուէլը։ Եւ 26
Յերոբովամն ասեց իր սրտումը.
Հիմա պիտի Թագաւորութիւնը
ետ դառնայ Դաւիթի տանը։
Եթէ այս ժողովուրդը վեր գնայ 27
Երուսաղէմ Տիրոջ տանը զոհ
մատուցանելու համար, այն ժա-
մանակ այս ժողովրդի սիրտը պի-
տի դառնայ դէպի իրանց տէրը՝

Յուդայի Թագաւոր Ռոբովամը,
և ինձ պիտի սպանեն ու ետ դառ-
նան Յուդայի Թագաւոր Ռոբո-
28 վամին։ Եւ Թագաւորը խորհուրդ
արաւ, և երկու ոսկի որթ շինեց
և ասեց նորանց. Բաւական է
ձեզ Երուսաղէմ գնալը. ահա
քո աստուածները, ով Իսրայէլ,
որ քեզ վեր հանեցին Եգիպտո-
29 սի երկրիցը։ Եւ մէկը դրաւ Բե-
30 թէլ և մէկը դրաւ Դան։ Եւ
այս բանը մեղքի պատճառ դա-
ռաւ, և ժողովուրդը գնում էր
31 մէկի առաջը մինչև Դան։ Նաև
շինեց բարձրաւանդակների տու-
նը, և քահանաներ շինեց ժողո-
վրդի *այն մասերից՝ որ Ղևիի
որդիներից չէին։
32 Եւ Յերոբովամը տօն կատարեց
ութերորդ ամսի տասնևհինգին
Յուդայումն եղող տօնի պէս, և
վեր ելաւ սեղանը. այսպէս ա-
րաւ Բեթէլումը, որ զոհէ իր
շինած որթերին. և Բեթէլումը
դրաւ իր շինած բարձրաւանդակ-
33 ների քահանաները։ Եւ վեր ե-
լաւ իր Բեթէլում շինած սեղա-
նի վերայ, իր մտքի հնարած
ամսի այսինքն ութերորդ ամսի
տասնևհինգին, և տօն սահմա-
նեց Իսրայէլի որդկանց համար,
և վեր ելաւ սեղանի վերայ և
խունկ ծխեց։

ԳԼ. ԺԳ

1 Եւ ահա մի Աստուծոյ մարդ
եկաւ Յուդայից Տիրոջ խօսքովը
դէպի Բեթէլ, և Յերոբովամը
կանգնած էր սեղանի վերայ խունկ
2 ծխելու համար։ Եւ կանչեց Տի-
րոջ խօսքովը դէպի սեղանը և
ասեց. Ով սեղան, սեղան, Տէրն
այսպէս է ասում. Ահա մի որդի
կ'ծնուի Դաւիթի տան համար
անունը Յովսիա, և նա քեզ վե-
րայ կ'զոհէ բարձրաւանդակների
քահանաներին, որ քեզ վերայ
խունկ են ծխում, և մարդի ոս-
3 կորներ կ'այրեն քեզ վերայ։ Եւ
այն օրը մի նշան տուաւ ասե-
լով. Այս է այն նշանը, որ ա-
սել է. Ահա սեղանը կ'պատառ-
ուի, և նորա վերայի մոխիրը կը
թափուի։
Եւ եղաւ երբոր Թագաւորը 4
լսեց Աստուծոյ մարդի այն խօս-
քը, որ կանչեց Բեթէլում եղած
սեղանի վերայ, այն ժամանակ
Յերոբովամը մեկնեց իր ձեռքը
սեղանի վերայից ասելով. Բռնե-
ցէք դորան. բայց չորացաւ նորա
ձեռքը, որ մեկնել էր նորա վե-
րայ, և չ'կարողացաւ նորան ետ
քաշել դէպի իրան։ Եւ սեղանը 5
պատառուեցաւ և մոխիրը թափ-
ուեցաւ սեղանիցը իբրև նշան,
որ Աստուծոյ մարդը Տիրոջ խօս-
քովը տուել էր։ Եւ Թագաւորը 6
պատասխանեց և ասեց Աստու-
ծոյ մարդին. Քո Տէր Աստուծուն
աղօթք արա և խնդրիր ինձ հա-
մար, որ իմ ձեռքը ետ դառնայ
դէպի ինձ. և Աստուծոյ մարդը
Տիրոջն աղօթք արաւ, և Թա-
գաւորի ձեռքը ետ դառաւ դէ-
պի իրան և առաջուայ պէս ե-
ղաւ։ Եւ Թագաւորն ասեց Ա- 7
ստուծոյ մարդին. Ինձ հետ եկ
տուն, և ճաշիր, և ես քեզ պար-
գևներ տամ։ Բայց Աստուծոյ 8
մարդն ասեց Թագաւորին. Եթէ
ինձ քո տան կէսն էլ տալու լի-
նես, քեզ հետ չեմ ուտիլ և
ջուր չեմ խմիլ այս տեղում։
Որովհետև ինձ այսպէս հրամայ- 9
ուեցաւ Տիրոջ խօսքովը թէ Հաց
չ'ուտես և ջուր չ'խմես և այն
ճանապարհով ետ չ'դառնաս ո-
րով գնացիր։ Եւ նա ուրիշ ճա- 10
նապարհով գնաց, և ետ չ'դա-
ռաւ այն ճանապարհովը, որով
գնացել էր Բեթէլ։
Եւ մի ծեր մարգարէ էր բնակ- 11
վում Բեթէլումը. և նորա որ-
դին եկաւ և իրան պատմեց այն
բոլոր բաները, որ Աստուծոյ
մարդն այն օրը արել էր Բեթէ-
լումը, և այն խօսքերը, որ ա-
սել էր Թագաւորին, պատմեցին
իրանց հօրը։ Եւ իրանց հայրն 12
ասեց նորանց. Ո՞ր ճանապարհով
գնաց։ Եւ ցոյց տուին որդիքը
այն ճանապարհը, որով այն Ա-

*Կամ՝ ստորին մարդկանցից

տուծոյ մարդը գնացել էր, որ
13 եկաւ Յուդայից, եւ նա ասեց
իր որդիներին. Իշը պատրաստեցէք ինձ համար. և էշը պատրաստեցին նորա համար, և նա
14 հեծաւ նորա վերայ: Եւ գնաց Աստուծոյ մարդի հետից և գտաւ նորան մի բևեկնիի տակին նստած, և ասեց նորան. Դո՞ւ ես այն Աստուծոյ մարդը, որ եկար Յուդայից, և նա ասեց. Ես եմ:
15 Եւ նորան ասեց. Ինձ հետ եկ
16 իմ տունը և հաց կեր: Եւ նա ասեց. Չեմ կարող քեզ հետ ետ դառնալ և քեզ հետ գնալ և հաց չեմ ուտիլ ու ջուր չեմ
17 խմիլ քեզ հետ այստեղ: Որովհետև Տիրոջ խօսքովն ինձ խօսք եղաւ թէ Այնտեղ հաց չուտես և ջուր չխմես. ետ չդառնաս գնալու այն ճանապարհովը, ո-
18 րով դու գնացիր: Եւ նա ասեց նորան. Ես էլ մարդարէ եմ քեզ պէս, և մի հրեշտակ խօսեց ինձ հետ Տիրոջ խօսքովն ասելով. Նորան ետ դարձրու քեզ հետ քո տունը և թող հաց ուտէ և ջուր խմէ. բայց սուտ ասեց նորան:
19 Եւ նա ետ դառաւ նորա հետ և հաց կերաւ նորա տանը և
20 ջուր խմեց: Եւ նորանք սեղան նստած էին, և Տիրոջ խօսքն եղաւ նորան դարձնող մարգարէին.
21 Եւ նա կանչեց Յուդայից եկած Աստուծոյ մարդին՝ ասելով. Այսպէս է ասում Տէրը. Որովհետև դու անհնազանդեցիր արիր Տիրոջ խօսքին և չպահեցիր քո Տէր Աստուծոյ քեզ պատուի-
22 րած պատուէրը. Եւ ետ դառար և հաց կերար ու ջուր խմեցիր այն տեղը, որի համար քեզ ասեց թէ Հաց չուտես և ջուր չը խմես. այնա քո դիակը չմտնէ քո հայրերի գերեզմանը:
23 Եւ երբոր նա հաց էր կերել և ըմպէ էր խմել, նա պատրաստեց այն իր ետ դարձած մար-
24 գարէի էշը: Եւ նա գնաց. բայց ճանապարհին մի առիւծ գտաւ նորան և մեռցրեց նորան, և նորա դիակն ընկած էր ճանապարհումը և էշը կշտին կանգնած. և առիւծն էլ կանգնել էր դիակի կշտին: Եւ ահա այն ճանապարհորդները անցնողներ կային, որ տեսան դիակը ճանապարհումն ընկած և առիւծը կանգնած դիակի կշտին, և եկան ու ասեցին քաղաքումը, ուր որ այն ծեր մարգարէն բնակվում էր: Եւ սա լսեց նորան իր ճանապարհիցը ետ դարձնող մարգարէն և ասեց. Նա այն Աստուծոյ մարդն է, որ Տիրոջ խօսքին անհնազանդեցաւ: Եւ Տէրը նորան մատնել է առիւծին, որ նորան պատառել է և մեռցրել՝ Տիրոջ նորան ասած խօսքի պէս: Եւ իր
27 որդկանցը հետ խօսեց ասելով. Իշը պատրաստեցէք ինձ համար. և նորանք պատրաստեցին նորան:
28 Եւ նա գնաց ու գտաւ նորա դիակը ճանապարհումը ընկած, և էշն ու առիւծը կանգնած դիակի կշտին. առիւծը չէր կերել դիակը և չէր պատառել էշին:
29 Եւ մարգարէն վեր առաւ Աստուծոյ մարդի դիակը և դրաւ էշի վերայ և ետ բերաւ նորան. և ծեր մարգարէն մտաւ քաղաքը, որ սուգ անէ և նորան թաղէ:
30 Եւ նորա դիակը դրաւ իր
31 դերեզմանի մէջ և սուգ արաւ նորա վերայ. Վա՛յ եղբայր: Եւ եղաւ որ նորան թաղելուց յետոյ, խօսեց իր որդկանց հետ ասելով. Ես մեռած ժամանակս՝ ինձ այն գերեզմանումը թաղեցէք, որի մէջ թաղուած է այդ Աստուծոյ մարդը, նորա ոսկորների կշտին դրէք իմ ոսկորները:
32 Որովհետև անպատճառ պիտի կատարուի այն խօսքը որ Տիրոջ խօսքովը խօսեց Բեթէլումը եղող սեղանի և այն բարձրաւանդակների ամեն տների վերայ որ Սամարիայի քաղաքներումն են:
33 Այս բանից յետոյ էլ Յերոբովամը ետ չդառաւ իր չար ճանապարհիցը, և դարձեալ ժողովրդի *մասերից բարձրաւանդակների համար քահանաներ շի-

*Կամ՝ ստորին մարդկանցից

նեց, ուզողին՝ *ձեռքերը լցնում էր, և նորանք բարձրաւանդակների քահանաներ էին լինում:
34 Եւ այս բանովը մեղք եղաւ Յերոբովամի տան մեղք անելուն, որ կորչի և բնաջինջ լինի երկրիս երեսիցը:

ԳԼ. ԺԴ

1 Ա յդ ժամանակին հիւանդացաւ
2 Յերոբովամի որդի Աբիան: Եւ Յերոբովամն ասեց իր կնկան. Վեր կաց, կերպարանքդ փոխիր որ քեզ չ'ճանաչեն թէ դու Յերոբովամի կինն ես, և գնա Սիլով. ահա Աքիա մարգարէն այնտեղ է, նա ինձ համար ասել է թէ
3 թագաւոր կ'լինեմ այս ժողովրդի վերայ: Եւ տասը հաց, բլիթներ և մի փարչ մեղր ձեռքդ առ և դնա նորա մօտ, և նա քեզ կ'իմացնէ թէ ինչ պիտի
4 լինի երեխային: Եւ Յերոբովամի կինը այսպէս արաւ, և վեր կացաւ գնաց Սիլով ու մտաւ Աքիայի տունը. բայց Աքիան չէր կարողանում տեսնել. որովհետև աչքերը դադարել էին ծերութիւնից:
5 Եւ Տէրն ասեց Աքիային. Ահա Յերոբովամի կինը եկել է քեզանից բան հարցնելու իր որդիի համար, որ ահա հիւանդ է. այսպէս և այսպէս ասես նորան. և ինչ եկած ժամանակ իրան օ-
6 տար է ձևացնելու: Եւ եղաւ հենց որ Աքիան լսեց նորա ոտքերի ձայնը, որ դռնովը մտնում էր, ասեց. Եկ, ով Յերոբովամի կին, ինչու համար ես քեզ օտար ձևացնում. և ես
7 ուղարկուեցայ քեզ խիստ բանի համար: Գնա, Յերոբովամին ասիր. Այսպէս է ասում Իսրայելի Տէր Աստուածը. Որովհետև ես քեզ բարձրացրի ժողովրդի մէջից և քեզ իմ ժողովրդի Իս-
8 րայելի վերայ իշխան դրի. Եւ պատառեցի թագաւորութիւնը Դաւիթի տնից և քեզ տուի,

*ձեռնադրում էր,

և դու իմ Դաւիթ ծառայի պէս չ'եղար որ պահում էր իմ պատուիրանքները և բոլոր սրտով ինձ հետևում որ միայն իմ աչքին ուղիղ էր եղած անե. Եւ քեզանից առաջ եղածներից աւելի չարութիւն գործեցիր, և գնացիր քեզ համար ուրիշ աստուածներ և կուռքեր շինեցիր ինձ բարկացնելու համար, և ինձ քո հետը դնեցիր: Ահա ես էլ
10 չարիք պիտի բերեմ Յերոբովամի տան վերայ և պիտի բնաջինջ անեմ Յերոբովամի համար ամեն արու մարդը, իսրայելի մէջ կապուածը և արձակուածը, և պիտի աւելեմ Յերոբովամի տան հետևիցը, ինչպէս որ աղբն են աւելում մինչև որ վերջանայ:
11 Յերոբովամից քաղաքումը մեռնողին շուներն պիտի ուտեն, և դաշտի մէջ մեռածին երկնքի թռչունները պիտի ուտեն. որովհետև
12 Տէրն է ասում: Եւ դու վեր կաց գնա քո տունը. քո ոտքերը քաղաքը մտնելիս երեխան պիտի
13 մեռնի: Եւ բոլոր Իսրայէլը նորա համար սուգ կ'անէ, և կ'թաղեն նորան. որովհետև Յերոբովամից միայն նա է մնալու գերեզման, որովհետև Յերոբովամի տանը գո-
14 ւած նորա վերայ մի բարի բան գտնուեցաւ Իսրայէլի Տէր Աստուծոյ առաջին: Եւ Տէրն իր համար Իսրայէլի վերայ մէկ թագաւոր վեր կ'կացնէ որ բնաջինջ կ'անէ Յերոբովամի տունը նոյն
15 օրը, և այն էլ՝ ինչ որ ։։ հիմա: Եւ Տէրը պիտի զարկէ Իսրայէլին ինչպես որ եղէգը շարժվում է ջրերի մէջ, և պիտի խլէ Իսրայէլին այս բարի երկրիցը, որ տուել է իրանց հայրերին, և պիտի ցրուէ նորանց Գետի միւս
16 կողմումը, որովհետև իրանց համար կուռքի անտառներ շինեցին Տիրոջը բարկացնելով: Եւ Իսրայէլին պիտի մատնէ, այն մեղքերի համար որ Յերոբովամն արաւ, և որ Իսրայէլին մեղանչել տուաւ:
17 Եւ Յերոբովամի կինը վեր կացաւ և գնաց հասաւ Թերսա. և

նա տան շէմքովը ներս էր մըտնում, որ ահա երեխան մեռաւ։
18 Եւ Նորան Թագէցին, և բոլոր Իսրայէլը սուգ արաւ Նորա վերայ Տիրոջ խօսքին համեմատ, որ խօսեց իր ծառայ Ակիա մարգարէի ձեռովը։
19 Եւ Ցերոբովամի գործքերի մնացորդը, թէ պատերազմելը և թէ թագաւորելը, ահա նորանք գրուած են Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գրքումը։
20 Եւ Ցերոբովամի թագաւորութիւն արած օրերը քսանևերկու տարի էր. և նա ննջեց իր հայրերի հետ. և Նորա որդի Նադաբը թագաւորեց նորա տեղ։
21 Եւ Սողոմոնի որդի Ռոբովամը թագաւորեց Յուդայի մէջ. Ռոբովամը քառասունևմէկ տարեկան էր երբոր թագաւոր եղաւ և տասնևեօթը տարի թագաւորութիւն արաւ Երուսաղէմում՝ այն քաղաքումը, որ Տէրը ընտրել էր Իսրայէլի բոլոր ցեղերից իր անունը այնտեղ դնելու համար. և նորա մոր անունն էր
22 Նաամա՝ Ամմոնացի։ Եւ Յուդայեանները չարութիւն արին Տիրոջ աչքի առաջին և նորան աւելի բարկացրին իրանց արած մեղքերովը քան թէ իրանց հայրերը։
23 Նորանք էլ իրանց համար բարձրաւանդակներ և արձաններ և անտառի ծառեր շինեցին ամեն բարձր բլուրների վերայ և ամեն
24 կանաչ ծառի տակ։ Եւ իգացողներ էլ կային այն երկրումը, որ այն ազգերի բոլոր գարշելութիւնների պէս էին անում, որոնց քշել էր Տէրը Իսրայէլի որդեկանց առաջից։
25 Եւ Ռոբովամ թագաւորի հինգերորդ տարին եղաւ որ Եգիպտոսի Սիսակ թագաւորն եկաւ
26 Երուսաղէմի վերայ։ Եւ վեր առաւ Տիրոջ տան գանձերը և թագաւորի տան գանձերը և բոլորը վեր առաւ, և վեր առաւ բոլոր ոսկի վահանները որ Սողոմոնը շինել էր։
27 Եւ Ռոբովամ թագաւորը նորանց փոխարէն պղընձի վահաններ շինեց և յանձնեց սուբհանդակների գլխաւորների ձեռքը, որ թագաւորի տան պահպանութիւնն անում էին։
28 Եւ երբոր թագաւորը Տիրոջ տունն էր գնում, սուբհանդակները նորանց տանում և ետ էին բերում սուբհանդակների խուցը։
29 Եւ Ռոբովամի գործքերի մնացորդը և նորա բոլոր արածը, ահա նորանք գրուած են Յուդայի թագաւորների յիշատակաց գրքումը։
30 Եւ միշտ պատերազմ կար Ռոբովամի և Ցերոբովամի
31 մէջ։ Եւ Ռոբովամը ննջեց իր հայրերի հետ և թաղուեցաւ իր հայրերի հետ Դաւիթի քաղաքումը, և նորա մոր անունն էր Նաամա Ամմոնացի. և նորա *Աբիամ որդին թագաւորեց նորա տեղ։

Գլ. ԺԵ

1 Եւ Նաբատեան Ցերոբովամի թագաւորութեան տասնևութերորդ տարին Աբիամ թագաւորեց Յուդայի վերայ։
2 Երեք տարի Թագաւորութիւն արաւ Երուսաղէմումը, և նորա մոր անունն էր Մաաքա՝ դուստր Աբիսողոմի։
3 Եւ նա գնաց իր հօր բոլոր մեղքերումը, որ արել էր իրանից առաջ, և նորա սիրտը ուղիղ չէր իր Տէր Աստուծոյ առաջին ինչպէս իր հայր Դաւիթի սիրտը։
4 Որովհետև Դաւիթի համար նորա Տէր Աստուածն իրան մէկ ճրագ էր տուել Երուսաղէմումը, որ նորա որդին հաստատէ իրանից յետոյ և հաստատ պահէ Երուսաղէմումը։
5 Որովհետև Դաւիթն ուղղութիւն արաւ Տիրոջ առաջին և չխոտորուեց իր կեանքի բոլոր օրերումը այն ամենից որ իրան պատուիրած էր բացի Ուրիայի Բահնումը։
6 Եւ պատերազմ կար Ռոբովամի և Ցերոբովամի մէջ նորա կեանքի բոլոր օրերումը։
7 Եւ Աբիամի գործքերի մնացորդը և նորա բոլոր արածը, ահա նորանք գրուած են Յուդայի թագաւորների յիշատակաց գրքումը. և պատերազմ կար Աբիամի և Ցերոբովամի մէջ։
8 Եւ Աբիամը ննջեց իր հայրերի հետ, և նորան Թագէցին Դաւիթի քաղաքումը. և նորա որդի Ասան թագաւորեց նորա տեղ։
9 Եւ Իսրայէլի Ցերոբովամ թագաւորի քսաներորդ տարին Թագաւոր եղաւ Ասան Յուդայի վերայ,
10 և քառասունևմէկ տարի թագաւորեց Երուսաղէմումը, և նորա մոր անունն էր Մաաքա՝
11 դուստր Աբիսողոմի։ Եւ Ասան ուղղութիւն արաւ Տիրոջ աչքի առաջին ինչպէս իր հայր Դաւիթը,
12 և դուրս արաւ իգացողներին այն երկրից և հեռացրեց իր հայրերի շինած ամեն կուռքերը։
13 Եւ իր մայր Մաաքային էլ հեռացրեց տիկնութիւնից. որովհետև նա անտառի գարշելութիւն էր շինել. և Ասան բնաջինջ արաւ նորա գարշելութիւնը և այրեց կեդրոն հեղեղատումը,
14 բայց բարձրաւանդակները վեր չառնուեցան, սակայն Ասայի սիրտը ուղիղ էր Տիրոջ հետ իր բոլոր օրերումը։
15 Եւ իր հօր նուիրածները և իր նուիրածները՝ արծաթը, ոսկին և անօթները բերաւ Տիրոջ տունը։
16 Եւ պատերազմ կար Ասայի և Իսրայէլի Բահաս թագաւորի մէջ
17 նորանց բոլոր օրերումը։ Եւ Իսրայէլի Բահաս թագաւորը վեր գնաց Յուդայի վերայ և շինեց Ռաման, որ ելք և մուտք չտայ
18 Յուդայի Ասա թագաւորին։ Եւ Ասան վեր առաւ Տիրոջ տան գանձուումը և թագաւորի տան գանձուումը մնացած բոլոր արծաթը և ոսկին և տուաւ իր ծառաների ձեռքը, և Ասա թագաւորը ուղարկեց նորանց Դամասկոսում բնակող Ասորիների թագաւորին՝ Էղիոնի որդի Տաբրեմոնի որդի Բենհադադին ասելով.
19 Դաշինք կայ իմ մէջ և քո մէջ, իմ հօր մէջ և քո հօր մէջ. ահա քեզ համար արծաթ ու ոսկի ուղարկեցի ընծայ, գնա դիր քո դաշինքը Իսրայէլի Բահասա թագաւորի հետ, որ նա գնայ ինձանից։ Եւ Բենհադադը լսեց Ասա թագաւորին, և իր զօրքերի իշխաններին ուղարկեց Իսրայէլի քաղաքների վերայ և զարկեց Իյոնը, Դանը, Աբել-բեթ-Մաաքան և բոլոր Քինեբեթը ու բոլոր Նեփթաղիմի երկիրը։ Եւ երբոր Բահասան լսեց այդ բանը, դադրեց Ռաման շինելուց և քնակուեց Թերսայում։ Եւ Ասա թագաւորը լսեր տուաւ բոլոր Յուդայեաններին առանց բացառութեան, և նորանք վեր առան Ռամայի քարերը և փայտերը, որ շինել էր Բահասան, և Ասա թագաւորը նորանցով շինեց Բենիամինի Գաբան և Մասփան։
20 Եւ Ասայի բոլոր գործքերի մնացորդը և նորա բոլոր զօրութիւնը և նորա բոլոր արածը և նորա շինած քաղաքները, ահա նորանք գրուած են Յուդայի թագաւորների յիշատակաց գրքումը. միայն թէ իր ծերութեան ժամանակ ոտները ցաւում էին։
21 Եւ Ասան ննջեց իր հայրերի հետ և թաղուեցաւ իր հայրերի հետ իր հայր Դաւիթի քաղաքումը. և նորա Յովսափատ որդին թագաւորեց նորա տեղ։
22 Եւ Ցերոբովամի որդի Նադաբը թագաւոր եղաւ Իսրայէլի վերայ Յուդայի թագաւոր Ասայի երկրորդ տարիումը, և թագաւորեց Իսրայէլի վերայ երկու տարի։
23 Եւ նա չարութիւն արաւ Տիրոջ աչքի առաջին և գնաց իր հօր ճանապարհովը և նորա մեղքերովը, որոնցով մեղանչել տուաւ Իսրայէլին։
24 Եւ նորա դէմ դաւաճանութիւն արաւ Իսաքարցի Ախիայի որդի Բահասան, և Բահասան նորան կարդեց Փղշտացիների Գաբաթոն անումը, երբոր Նադաբը և բոլոր Իսրայէլը պաշարել էին Գաբաթոնը։
25 Եւ Բահասան մեռցրեց նորան Յուդայի Ասա թագաւորի երրորդ տարիումը, և ինքը թագաւորեց նորա տեղ։
26 Եւ հէնց որ թագաւոր եղաւ, ջարդեց Ցերոբովամի բոլոր

*Աբիա

տունը, բնաւ մի շնչաւոր չ'թո-
ղեց Յերոբովամի համար մինչև որ
նորան բնաջինջ արաւ Տիրոջ այն
խօսքի համեմատ, որ իր ծառայ
Սիլօնացի Աքիա մարգարէի ձե-
30 ռովը խօսել էր, Յերոբովամի
արած և Իսրայէլին մեղանչել
տուած մեղքերի համար նորա
այն բարկութեան համար, որով
բարկացրել էր Իսրայէլի Տէր
Աստուծուն։
31 Եւ Նադաբի գործքերի մնա-
ցորդը և նորա բոլոր արածը, ա-
հա նորանք գրուած են Իսրայէ-
լի թագաւորների յիշատակաց
32 գրքումը։ Եւ պատերազմ կար
Ասայի և Իսրայէլի Բաասա թա-
գաւորի մէջ նորանց բոլոր օրե-
րումը։
33 Յուդայի Ասա թագաւորի եր-
բորդ տարիումը Աքիայի որդի
Բաասան թագաւոր եղաւ բոլոր
Իսրայէլի վերայ Թերսայում, և
34 Բաքաւորեց քսանևչորս տարի. Եւ
չարութիւն արաւ Տիրոջ աչքի
առաջին և գնաց Յերոբովամի
ճանապարհովը և նորա մեղքովը,
որով մեղանչել տուաւ Իսրայէլին։

ԳԼ. ԺԶ

1 Եւ Տիրոջ խօսքն եղաւ Անանիի
որդի Յէուին Բաասայի վերայով
2 ասելով. Որովհետև ես բարձրա-
ցրի քեզ փոշիիցը և քեզ իմ
Իսրայէլ ժողովրդի վերայ իշխան
դրի, բայց դու Յերոբովամի ճա-
նապարհովը գնացիր և իմ Իսրա-
յէլ ժողովրդին մեղանչել տուիր,
նորանց մեղքերովն ինձ բարկա-
3 ցնելու համար, Ահա ես պիտի
աւելեմ Բաասայի ետևից և նո-
րա տան ետևից, և քո տունը
պիտի շինեմ Նաբատեան Յերո-
4 բովամի տան պէս։ Բաասայից
քաղաքում մեռնողին շուները
պիտի ուտեն, և նորա դաշտում
մեռնողին երկնքի թռչունները
պիտի ուտեն։
5 Եւ Բաասայի գործերի մնա-
ցորդը և նորա արածը և նորա
զօրութիւնը, ահա նորանք գրը-
ուած են Իսրայէլի թագաւորնե-
րի յիշատակաց գրքումը։ Եւ 6
Բաասան ննջեց իր հայրերի հետ
և թաղուեցաւ Թերսայում, և
նորա որդի Էլան թագաւոր եղաւ
նորա տեղ։ Նաև Անանիի որդի 7
Յէու մարգարէի ձեռովն եղաւ
Տիրոջ խօսքը Բաասային և նորա
տանը և այն բոլոր չարութեան
համար, որ արաւ Տիրոջ աչքի
առաջին նորան իր ձեռքերի գոր-
ծովը բարկացնելու համար, որ
Յերոբովամի տան նման դառնայ,
և որովհետև նորան սպանել էր։
Յուդայի Ասա թագաւորի քը- 8
սանևվեց տարիումը թագաւորեց
Բաասայի որդի Էլան Իսրայէլի
վերայ Թերսայում՝ երկու տարի
Բաքաւորելով։ Եւ նորա դէմ դա- 9
ւաճանութիւն արաւ նորա ծա-
ռայ Զամրին՝ կառքերի կէսի վե-
րայ իշխանը, երբոր նա խմել
արբել էր Թերսայում՝ Արսայի
տանը, որ Թերսայի տան վերա-
կացուն էր։ Այն ժամանակ ե- 10
կաւ Զամրին և զարկեց նորան
սպանեց Յուդայի Ասա թագա-
ւորի քսանևեօթը տարիումը, և
ինքը թագաւոր եղաւ նորա տեղ։
Եւ երբոր թագաւոր եղաւ և իր 11
աթոռի վերայ նստեց, իսկոյն
ջարդեց Բաասայի բոլոր տունը և
նորա համար մէկ արու մարդ չը
թողեց՝ թէ նորա ազգականները
թէ նորա բարեկամները։ Եւ 12
Զամրին բնաջինջ արաւ Բաասա-
յի բոլոր տունը Տիրոջ այն խօս-
քի համեմատ, որ խօսել էր Բա-
ասայի վերայով Յէու մարգարէի
ձեռով, Բաասայի բոլոր մեղքե- 13
րի և նորա որդի Էլայի մեղքերի
մասին, որ մեղանչեցին և մեղան-
չել տուին Իսրայէլին, որ Իսրա-
յէլի Աստուծուն բարկացնեն ի-
րանց սնոտիապաշտութիւնն-
երովը։
Եւ Էլայի գործերի մնացորդը 14
և նորա բոլոր արածը, ահա նո-
րանք գրուած են Իսրայէլի թա-
գաւորների յիշատակաց գրքումը։
Յուդայի Ասա թագաւորի քը- 15
սանևեօթներորդ տարին Զամրին
Թերսայում եօթն օր թագաւո-
րեց, երբոր ժողովուրդը պաշա-

րել էր Փղշտացիների Գաբաթո-
16 նը։ Եւ պաշարող ժողովուրդը
լսեց որ ասում էին թէ Զամրին
դաւաճանութիւն է արել և
թագաւորին էլ սպանել. և բո-
լոր Իսրայէլը այն օրը բանակումը
Ամրի զօրավարին Իսրայէլի վե-
17 րայ թագաւոր շինեց։ Եւ Ամրին
վեր գնաց Գաբաթոնից և բոլոր
Իսրայէլը նորա հետ, և պաշարե-
18 ցին Թերսան։ Եւ երբոր Զամրին
տեսաւ որ քաղաքը առնուեցաւ,
մտաւ թագաւորի տան սենեակը
և իր վերայ կրակի տուաւ թա-
19 գաւորի տունը և մեռաւ, իր
արած մեղքերի համար, որ չա-
րութիւն էր արել Տիրոջ աչքի
առաջին Յերոբովամի ճանապար-
հովը, և նորա Իսրայէլին մեղան-
չել տուած մեղքերովը գնալովը։
20 Եւ Զամրիի գործերի մնացոր-
դը և նորա արած դաւաճանու-
թիւնը, ահա նորանք գրուած
են Իսրայէլի թագաւորների յի-
շատակաց գրքումը։
21 Այն ժամանակ Իսրայէլի ժո-
ղովուրդը երկու մասերի բաժան-
ուեցաւ. ժողովրդի մի կէսը գը-
նաց Գինաթի որդի Թաբնիի ե-
տևից որ նորան թագաւոր անեն,
22 և միւս կէսը Ամրիի ետևից։ Եւ
Ամրիի ետևից գնացող ժողովուր-
դը աւելի զօրացաւ Գինաթի որ-
դի Թաբնիի ետևից գնացող ժո-
ղովրդից. և Թաբնին մեռաւ և
23 թագաւորեց Ամրին։ Յուդայի
Ասա թագաւորի երեսունևմէկ
տարին թագաւոր եղաւ Ամրին
Իսրայէլի վերայ՝ տասնևերկու
տարի Բաքաւորելով. Թերսայում
24 թագաւորեց վեց տարի։ Եւ նա
առաւ *Սամարիա սարը Սամերից
երկու տաղանդ արծաթով և
Քաղաք շինեց սարի վերայ, և այն
իր շինած քաղաքի անունը *Սա-
մարիա սարի տիրոջ Սամերի ա-
նունովը կոչեց։
25 Եւ Ամրին Տիրոջ աչքի առա-
ջին չարութիւն գործեց, և իրա-
նից առաջ եղողների ամենից ա-
26 ւելի չարը եղաւ։ Եւ գնաց Նա-
բատեան Յերոբովամի բոլոր ճա-
նապարհներովը և նորա Իսրայէ-
լին մեղանչել տուած մեղքերովը
որ Իսրայէլի Տէր Աստուծուն ի-
րանց սնոտիապաշտութիւններո-
վը բարկացնեն։
Եւ Ամրիի արած գործերի մնա- 27
ցորդը, և նորա արած զօրու-
թիւնը, ահա նորանք գրուած
են Իսրայէլի թագաւորների յի-
շատակաց գրքումը։ Եւ Ամրին 28
ննջեց իր հայրերի հետ և թաղ-
ուեցաւ Սամարիայում, և նորա
որդի Աքաաբը թագաւորեց նո-
րա տեղ։
Եւ Ամրիի որդի Աքաաբը թա- 29
գաւոր եղաւ Իսրայէլի վերայ
Յուդայի Ասա թագաւորի երե-
սունևութերորդ տարիում. Եւ
Ամրիի որդի Աքաաբը Իսրայէլի
վերայ Սամարիայում քսանևեր-
կու տարի թագաւորեց։ Եւ Ամ- 30
րիի որդի Աքաաբը չարութիւն
արաւ Տիրոջ աչքի առաջին ի-
րանից առաջ բոլոր եղածներիցն
աւելի։ Եւ այդ դեռ քիչ էր որ 31
նա գնում էր Նաբատեան Յերո-
բովամի մեղքերովը. Սիդոնացի-
ների թագաւոր Եթբաաղի աղջիկ
Յեզաբէլին էլ իր համար կին ա-
ռաւ և գնաց ու պաշտեց Բա-
հաղին և երկրպագութիւն ա-
րաւ նորան։ Եւ Բահաղի համար 32
մի սեղան շինեց իր Սամարիայում
շինած Բահաղի տանը։ Եւ Աքա- 33
աբը մի անտառի կուռք շինեց,
և Աքաաբը շարունակեց այնպէս
անել, որ իրանից առաջ եղած
Իսրայէլի բոլոր թագաւորներից
աւելի բարկացրեց Իսրայէլի Տէր
Աստուծուն։
Նորա օրերում Բեթէլացի Յի- 34
էլը շինեց Երիքովը. իր Աբիրոն
անդրանիկ որդիովը նորա հիմը
դրաւ և իր Սեգուբ կրտսեր որ-
դիովը կանգնեցրեց նորա դռները
Տիրոջ խօսքին համեմատ որ խօ-
սեց Նաւեան Յեսուի ձեռովը։

ԳԼ. ԺԷ

Եւ Գաղաադի բնակիչներից 1
Թեզբացի Եղիան ասեց Աքաա-

*ԵԲՐ. Սամորոն

բին. Կենդանի է Իսրայէլի Տէր
Աստուածը, որի առաջին կանգ-
նում եմ, որ այս տարիներին
ցօղ և անձրև պիտի չ'լինի, բայց
եթէ իմ խօսքովը։
2 Եւ Տիրոջ խօսքը եղաւ նորան
3 ասելով. Գնա այստեղից և դար-
ձիր դէպի արևելք և թաք կաց
Քերիթ հեղեղատի մօտ որ Յոր-
4 դանանի դէմ է։ Եւ այն հեղե-
ղատիցը կ'խմես, և ես ագռաւ-
ներին հրամայել եմ որ քեզ կե-
5 րակրեն այնտեղ։ Եւ նա գնաց
և արաւ Տիրոջ խօսքի համե-
մատ, և գնաց ու բնակուեց Քե-
րիթ հեղեղատի մօտ որ Յորդա-
6 նանի դիմացն է։ Եւ ագռաւնե-
րը նորա համար հաց և միս էին
բերում առաւօտը, և հաց ու
միս՝ իրիկունը, և նա խմում էր
7 հեղեղատիցը։ Եւ եղաւ որ մի
քանի ժամանակից յետոյ չորա-
ցաւ հեղեղատը, որովհետև երկ-
րումն անձրև չ'կար։
8 Եւ Տիրոջ խօսքն եղաւ նորան
9 ասելով. Վեր կաց գնա Սիդո-
նացիների Սարեփթան և այնտեղ
նստիր. ահա ես այնտեղ մի որբ-
ևայրի կնկայ հրամայել եմ որ
10 քեզ կերակրէ։ Եւ նա վեր կա-
ցաւ գնաց Սարեփթա և հասաւ
քաղաքի դուռը, և ահա այն-
տեղ մի որբևայրի կին փայտ էր
ժողովում. և նա կանչեց նորան
և ասեց. Խնդրեմ ինձ համար մի
քիչ ջուր բեր մի ամանում որ
11 խմեմ։ Եւ երբոր նա գնաց բե-
րելու, նորան կանչեց և ասեց.
Խնդրեմ ինձ համար մի պատառ
12 էլ հաց բեր ձեռքիդ։ Եւ նա
ասեց. Կենդանի է քո Տէր Ա-
ստուածը, որ ես մի նկանակ չ'ու-
նեմ, բացի մի բուռ ալիւր սա-
փորումը և մի քիչ իւղ կուժու-
մը, և ահա մի երկու փայտ եմ
ժողովում, որ գնամ և պատ-
բաստեմ այն ինձ համար և իմ
որդիի համար, որ այն ուտենք և
13 մեռնենք։ Եւ Եղիան ասեց նո-
րան. Մի վախենար, գնա արա
քո խօսքի պէս, միայն թէ ա-
ռաջ ինձ համար մի փոքր շօթ
շինիր նորանից և բեր ինձ հա-
մար, և յետոյ քեզ և քո որդիի
համար կ'շինես։ Որովհետև այս- 14
պէս է ասում Իսրայէլի Տէր Ա-
ստուածը. Սափորումը ալիւրը պի-
տի չ'վերջանայ, և կուժիցը իւղը
չ'պակասէ, մինչև այն օրը որ Տէ-
րը անձրև տայ երկրի երեսին։
Եւ նա գնաց և արաւ Եղիայի 15
խօսքի պէս, և նա և կինը և իր
տունը կերան բաւական ժամա-
նակ։ Եւ սափորիցն ալիւրը չէր 16
վերջանում, և կուժիցը իւղը չէր
պակասում Տիրոջ այն խօսքի
պէս, որ ասեց Եղիայի ձե-
ռովը։
Եւ այս բաներից յետոյ եղաւ 17
որ այն տան տիկին կնկայ աղան
հիւանդացաւ, և նորա հիւան-
դութիւնը շատ սաստիկ էր մին-
չև որ նորանում շունչ չէր մնա-
ցել։ Եւ կինն ասեց Եղիային. Դու 18
ի՞նչ բան ունես ինձ հետ. ով
մարդ Աստուծոյ, ինձ մօտ եկար
որ իմ մեղքը յիշեցնես և իմ
որդին մեռցնես։ Եւ նա ասեց 19
կնկան. Ինձ տուր տղադ. և ա-
ռաւ նորան նորա գրկիցը և վեր
տարաւ նորան վերնատունը ուր
որ ինքը բնակվում էր, և պառ-
կեցրեց նորան իր անկողնի վերայ։
Եւ աղաղակեց Տիրոջը և ասեց. 20
Ով իմ Տէր Աստուածը, մի՞թէ
այս որբևայրիին էլ, որի մօտ ես
պանդուխտ եմ, չարիք կ'անես
որ նորա որդին մեռցնես։ Եւ ե- 21
րեք անգամ իր երկայնութեամ-
բը ընկաւ երեխայի վերայ, և
կանչեց Տիրոջը և ասեց. Ով Տէր
իմ Աստուած, աղաչում եմ այս
երեխայի շունչն իրան մէջը դար-
ձրու։ Եւ Տէրը լսեց Եղիայի 22
ձայնին, և երեխայի շունչը նորա
մէջը դարձաւ և նա կենդանա-
ցաւ։ Եւ Եղիան առաւ երեխա- 23
յին և վայր իջեցրեց վերնատա-
նիցը տուն, և նորան տուաւ իր
մօրը, և Եղիան ասեց. Տես որ-
դիդ կենդանի է։ Եւ կինն ա- 24
սեց Եղիային. Ահա հիմա գի-
տեմ որ դու Աստուծոյ մարդ
ես, և բերանիդ միջի Աստուծոյ
խօսքը ճշմարիտ է։

ԳԼ. ԺԸ

1 Եւ շատ ժամանակ անցնելուց
յետոյ Տիրոջ խօսքն եղաւ Եղիա-
յին՝ երրորդ տարին ասելով.
Գնա երևեցիր Աքաաբին, և ես
անձրև պիտի տամ երկրի երե-
2 սին։ Եւ Եղիան գնաց Աքաա-
բին երևելու համար. և սովը
սաստիկ էր Սամարիայում։
3 Եւ Աքաաբը կանչեց իր տան
վերակացու Աբդիային, և Աբ-
դիան Տէրիցը շատ վախենում էր,
4 Եւ երբոր Յեզաբէլը կոտորում
էր Տիրոջ մարգարէներին, այն
ժամանակ Աբդիան հարիւր մար-
գարէ առաւ և նորանցից յիսուն
յիսուն մարդ առաւ քարայրնե-
րի մէջ թաքցրեց և նորանց կե-
5 րակրեց հացով ու ջրով։ Եւ
Աքաաբն ասեց Աբդիային. Գնա
այս երկրի բոլոր ջրի աղբիւրների
և բոլոր հեղեղատների մօտ, գու-
ցէ խոտ գտնենք և մեր ձիանքն
ու ջորիքն ապրեցնենք և չ'զբր-
6 կուինք անասուններից։ Եւ եր-
կիրը բաժանեցին իրանց մէջ, նո-
րա մէջ շրջելու համար. Աքա-
աբն մէկ ճանապարհով գնաց ա-
ռանձին, և Աբդիան մէկ ճա-
նապարհով գնաց առանձին։
7 Եւ երբոր Աբդիան ճանապար-
հին էր, ահա Եղիան հանդիպեց
նորան, և նա ճանաչեց նորան և
ընկաւ իր երեսի վերայ և ասեց.
Սա դո՞ւ ես, տէր իմ Եղիա։
8 Եւ նա ասեց. Ես եմ. գնա ա-
սիր քո տիրոջը թէ Ահա Եղիան։
9 Եւ նա ասեց. Ես ի՞նչ եմ մե-
ղանչել, որ դու ծառայիդ Ա-
քաաբի ձեռքն ես տալիս որ ինձ
10 մեռցնէ։ Կենդանի է Եհովան՝ քո
Աստուածը, որ չ'կայ մի ազգ և
թագաւորութիւն ուր որ իմ
տէրը մարդ ուղարկած չ'լինի քեզ
որոնելու, բայց ասում են՝ Չը
կայ. և այն ազգին և այն թա-
գաւորութեանը երդում է տուել
11 թէ քեզ չեն գտել։ Եւ հիմա
դու ասում ես. Գնա ասիր քո
12 տիրոջը թէ Ահա Եղիան։ Եւ կը
լինի որ ես քո մօտիցը գնամ և
Տիրոջ հոգին քեզ վեր առնէ
տանէ մի տեղ, որ ես չ'գիտեմ,
և ես գնամ Աքաաբին իմացնեմ,
և նա քեզ չ'գտնէ, այն ժամա-
նակ նա ինձ կ'սպանէ. բայց ծա-
ռադ Տէրիցը երկիւղած եմ իմ
մանկութիւնից։ Մի՞թէ չեն ի- 13
մացրել իմ տիրոջը այն որ արի՝
Յեզաբէլը Տիրոջ մարգարէներին
սպանելիս, որ թաքցրի Տիրոջ
մարգարէներից հարիւր մարդ՝ յի-
սուն յիսուն՝ քարայրներում և
նորանց կերակրեցի հացով ու
ջրով։ Եւ հիմա դու ինչ ասում 14
ես. Գնա ասիր քո տիրոջը թէ
Ահա Եղիան, որ ինձ սպանէ։
Եւ Եղիան ասեց. Կենդանի է 15
Զօրաց Տէրը, որի առաջին կանգ-
նած եմ, որ այսօր պիտի երևեմ
նորան։
Եւ Աբդիան գնաց ու Աքաաբին 16
դիմաւորեց և նորան պատմեց,
և Աքաաբը գնաց Եղիային դի-
մաւորելու։ Եւ հէնց որ Աքաա- 17
բը Եղիային տեսաւ, իսկոյն ա-
սեց Աքաաբը նորան. Սա դո՞ւ
ես, ով Իսրայէլի խանգարողը։
Եւ նա ասեց. Ես չեմ խանգա- 18
րել Իսրայէլին, այլ դու և քո
հօր տունը, որ թողելով Տիրոջ
պատուէրները գնում ես Բա-
հաղների ետևից։ Եւ հիմա մարդ 19
ուղարկիր հաւաքիր բոլոր Իսրա-
յէլին ինձ մօտ Կարմեղոս սարի
վերայ. և Բահաղի չորս հարիւր
յիսուն մարգարէներին, և Ա-
ստարովթի չորս հարիւր մարգա-
րէներին, որ ուտում են Յեզա-
բէլի սեղանից։ Եւ Աքաաբը 20
մարդ ուղարկեց Իսրայէլի բոլոր
որդիներին և հաւաքեց մարգա-
րէներին Կարմեղոս սարի վերայ։
Եւ Եղիան մօտեցաւ բոլոր ժո- 21
ղովրդին և ասեց. Մինչև ե՞րբ
պիտի դուք կաղաք երկու կողմի
վերայ. եթէ Եհովան է Աստ-
ուածը, նորա ետևից գնացէք,
և եթէ Բահաղն է, նորա ետևից
գնացէք. և ժողովուրդը նորան
մի բան պատասխան չ'տուաւ։
Եւ Եղիան ասեց ժողովրդին. Մի- 22
նակ ես եմ մնացել Եհովայի
մարգարէ. իսկ Բահաղի մարգա-
րէները չորս հարիւր յիսուն մարդ

23 են։ Արդ թող մեզ երկու զուա-
րակ տան. և նորանք իրանց հա-
մար ընտրեն մէկ զուարակը, նո-
րան կտորեն և դնեն փայտերի
վերայ, բայց կրակ չ'դնեն. և ես
էլ անեմ միւս զուարակը և դը-
նեմ փայտերի վերայ, և կրակ
24 չ'դնեմ։ Յետոյ դուք կանչեցէք
ձեր աստուծոյ անունը, իսկ ես
կ'կանչեմ Եհովայի անունը. և
կ'լինի՝ այն աստուածը, որ կրա-
կով պատասխան կ'տայ, նա է
Աստուածը. և բոլոր ժողովուրդը
պատասխանեց՝ և ասեցին. Լաւ
խօսք է։
25 Եւ Եղիան ասեց Բահաղի մար-
գարէներին. Ընտրեցէք ձեզ հա-
մար մէկ զուարակը, և սկիզբը
դուք արէք. որովհետև դուք
շատ էք, և կանչեցէք ձեր աս-
տուծոյ անունը, բայց կրակ մի
26 դնէք։ Եւ նորանք առան իրանց
տրուած զուարակը և արին և
կանչեցին Բահաղի անունը առա-
ւօտից մինչև կէսօր ասելով. Ով
Բահաղ, պատասխան տուր մեզ.
բայց ոչ ձայն կար, ոչ պատաս-
խանող. և ոստոստում էին ի-
27 րանց շինած սեղանի մօտ։ Եւ
կէսօր էր դառել, և Եղիան նո-
րանց ծաղր անելով ասեց. Բարձր
ձայնով կանչեցէք. որովհետև նա
աստուած է, գուցէ խոր մտա-
ծութեան մէջ է, կամ զբաղ-
ուած է, և կամ ճանապարհոր-
դութիւն է անում, գուցէ նա
28 քնած է և զարթնանայ։ Եւ նո-
րանք բարձր ձայնով կանչեցին,
և իրանց օրէնքի պէս, կտրտում
էին իրանց մարմինները սուրերով
և գեղարդներով, մինչև որ ա-
րիւնը թափվում էր նորանց վե-
29 րայից։ Եւ երբոր կէսօրն անցաւ,
նորանք դեռ *մարգարէանում
էին մինչև երեկոյեան զոհի ժա-
մանակը, բայց ոչ ձայն կար, ոչ
պատասխան տուող և ոչ լսող։
30 Այն ժամանակ Եղիան ասեց
բոլոր ժողովրդին. Ինձ մօտ ե-
կէք. և բոլոր ժողովուրդն եկաւ
նորա մօտ, և նա նորոգեց Տի-
րոջ սեղանը, որ քանդուած էր։
31 Եւ Եղիան վեր առաւ տասնևեր-
կու քարեր Յակոբի որդկանց
թիւին չափ, որ Տիրոջ խօսքը ե-
ղաւ նորան ԻՒ Իսրայէլ լինի քո
32 անունը։ Եւ այն քարերիցը մի
սեղան շինեց Տիրոջ անունովը,
և սեղանի շուրջը մէկ փոս շինեց,
որ երկու դրիւ սերմ կ'առնէր։
33 Եւ փայտերը շարեց և կտորեց
զուարակը և դրաւ փայտերի վե-
34 րայ. Եւ ասեց. Չորս սափոր ջուր
լցրէք և ածեցէք ողջակէզի և
փայտերի վերայ. և ասեց. Կրկին
արէք. և կրկին արին. և ասեց.
Երրորդ անգամ արէք. և եր-
35 րորդ անգամ արին։ Եւ ջուրե-
րը գնում էին սեղանի շուրջովը,
և փոսն էլ լցուեցաւ ջրով։
36 Եւ երեկոյեան զոհի ժամա-
նակն էր, երբոր Եղիա մարգա-
րէն մօտեցաւ և ասեց. Ով Եհո-
վայ՝ Աբրահամի, Իսահակի և
Իսրայէլի Աստուածը. Թող այս-
օր իմացուի, որ դու ես Աստ-
ուած Իսրայէլի մէջ, և ես քո
ծառան եմ, և թէ ես քո խօս-
քովն եմ արել այս բոլոր բաներ-
37 ը։ Պատասխան տուր ինձ, ով
Տէր, պատասխան տուր ինձ որ
այս ժողովուրդն իմանայ, որ դու
Եհովադ ես Աստուած. և դու
ետ կ'դարձնես նորանց սիրտերը։
38 Եւ Եհովայի կրակը վայր իջաւ
և կերաւ ողջակէզը և փայտերը
և քարերը և հողը, և փոսի մի-
39 ջի ջուրն էլ լափեց։ Եւ բոլոր
ժողովուրդը տեսաւ և վայր ընկ-
ան իրանց երեսների վերայ և
ասեցին. Եհովան է Աստուած,
Եհովան է Աստուած։
40 Եւ Եղիան ասեց նորանց. Բռ-
նեցէք Բահաղի մարգարէներին,
որ նորանցից մէկ մարդ չ'պրծնի,
և նորանց բռնեցին. և Եղիան
վայր իջեցրեց նորանց Կիսոն հե-
ղեղատի մօտ, և նորանց սպա-
նեց այնտեղ։
41 Եւ Եղիան ասեց Աքաաբին.
Վեր գնա կեր ու խմիր. որով-
հետև անձրևի սաստիկ ձայն կայ։
42 Եւ Աքաաբը վեր գնաց ուտելու
և խմելու. բայց Եղիան վեր ելաւ

*Կամ՝ եռացած խօսում էին

Կարմեղոսի գլուխը, և ծռուե-
ցաւ մինչև գետինը և երեսը դը-
43 րաւ իր ծունկերի մէջտեղը, Եւ
ասեց իր պատանիին. Վեր գնա
մտիկ արա դէպի ծովակողմը. և
նա վեր գնաց և մտիկ արաւ և
ասեց. Մի բան չ'կայ. և Եղիան
ասեց. Դարձեալ գնա. եօթն
44 անգամ։ Եւ եօթներորդ անգա-
մին ասեց. Ահա մի փոքր ամպ՝
մարդի ձեռի չափ՝ բարձրանում
է ծովիցը. և նա ասեց. Վեր
գնա ասիր Աքաաբին. Լծիր և
իջիր որ անձրևը քեզ չ'բռնէ։
45 Եւ մինչև այս կողմը այն կողմը
դառնալը՝ երկինքը մթնեց ամպե-
րով և հողմով. և մեծ անձրև
եղաւ. և Աքաաբը հեծաւ և
46 գնաց Յեզրայէլ։ Եւ Տիրոջ ձեռ-
քը Եղիայի հետ էր. և նա իր
մէջքը պնդեց և վազեց Աքաա-
բի առաջից մինչև Յեզրայէլ։

ԳԼ. ԺԹ

1 Եւ Աքաաբը պատմեց Յեզաբէ-
լին բոլոր ինչ որ Եղիան արել էր,
և այն բոլորը որ ամեն մարգա-
2 րէներին սրով սպանել էր։ Եւ
Յեզաբէլը պատգամաւոր ուղար-
կեց Եղիայի մօտ ասելով. Աստ-
ուածները այսպէս անեն և սորա-
նից էլ աւելի անեն, եթէ որ է-
գուց այս ժամանակին քո անձը
նորանցից մէկի անձի տեղ չ'դնեմ։
3 Եւ այս բանը տեսնելով վեր
կացաւ գնաց իր անձը ազատելու
համար, և հասաւ Յուդայի Բեր-
սաբէէն. և իր պատանիին թո-
4 ղեց այնտեղ։ Բայց ինքը մէկ օր-
ուայ ճանապարհ գնաց անապա-
տումը և եկաւ մի գիհիի տակին
նստեց և որտանց ուզեց որ մեռ-
նէ և ասեց. Արդէն բաւական է,
ով Տէր, իմ հոգին առ. որով-
հետև ես իմ հայրերիցը լաւ չեմ։
5 Եւ պառկեց և քնեց մի գիհիի
տակին. և ահա մէկ հրեշտակ
նորան դիպաւ և ասեց նորան.
6 Վեր կաց կեր։ Եւ Եղիան մտիկ
տուաւ և ահա նորա գլխի կող-
մին մի քարի վերայ թխած նկա-
նակ և մի կուժ ջուր կար. և
նա կերաւ և խմեց, և դարձեալ
քնեց։ Եւ Տիրոջ հրեշտակը դար-
7 ձեալ եկաւ և նորան դիպաւ և
ասեց. Վեր կաց կեր, որովհետև
ճանապարհդ շատ է քեզ հա-
մար։ Եւ նա վեր կացաւ և կե-
8 րաւ ու խմեց և այն կերակուրի
զօրութիւնովը գնաց քառասուն
օր և քառասուն գիշեր մինչև
Աստուծոյ Քորեբ սարը։
9 Եւ այնտեղ մտաւ մի քարայ-
րի մէջ և այնտեղ օթևանեց, և
ահա Տիրոջ խօսքն եղաւ իրան և
նորան ասեց. Ինչ ունես այս-
տեղ, Եղիա։ Եւ նա ասեց. Ես
10 մեծ նախանձաւորութիւն ունե-
ցայ Զօրաց Տէր Աստուծոյ հա-
մար, որ Իսրայէլի որդիքը քո
ուխտը թողել են, քո սեղաններ-
ը քանդել են, և քո մարգարէ-
ներին սրով սպանել են. և մի-
նակ ես եմ մնացել, և իմ հո-
գին որոնում են սպանելու։ Եւ
11 նա ասեց. Դուրս եկ և կանգնիր
սարի վերայ Տիրոջ առաջին։ Եւ
ահա Տէրը անց էր կենում. և
մի մեծ և զօրաւոր հողմ պա-
տառեց սարերը և կոտրատեց ա-
պառաժները Տիրոջ առաջին.
բայց Տէրն այն հողմի մէջ չէր։
Եւ հողմից յետոյ երկրաշարժ
եղաւ, բայց Տէրը երկրաշարժի
12 մէջ չէր։ Եւ երկրաշարժից յե-
տոյ կրակ, բայց Տէրը կրակի մէջ
չէր. և կրակից յետոյ մի մեղմ
13 ու բարակ ձայն։ Եւ եղաւ երբ-
որ Եղիան լսեց այն, իր երեսը
ծածկեց իր վերարկուովը և դուրս
եկաւ ու կանգնեց քարայրի դը-
ռանը, և ահա մի ձայն եկաւ նո-
րան և ասեց. Այստեղ ինչ ու-
14 նես, Եղիա։ Եւ նա ասեց. Մեծ
նախանձաւորութիւն ունեցայ
Զօրաց Տէր Աստուծոյ համար,
որ Իսրայէլի որդիքը քո ուխտը
թողել են, քո սեղանները քան-
դել են, և քո մարգարէներին
սրով սպանել են, և մինակ ես
եմ մնացել, և իմ հոգին էլ ո-
15 րոնում են սպանելու։ Եւ Տէրն
ասեց նորան. Ետ դարձիր գնա
քո ճանապարհովը անապատով
Դամասկոս, և երբոր դաս՝ Ազա-

Յեղեն Ասորիների վերայ Թագաւոր
16 ուր օծիր։ Եւ Նամեսիի որդի Յեհուն էլ Թագաւոր օծիր Իսրայէլի վերայ, և Աբելմաուլացի Սափատի որդի Եղիսէին էլ մարգարէ օծիր քո տեղը։ Եւ կ'լինի
17 որ Ազգելի սուրին ազատուողին Յեհուն կ'մեռցնէ, և Յեհուի սուրին ազատուողին Եղիսէն կը
18 մեռցնէ։ Եւ ինձ համար Թողել եմ Իսրայէլի մէջ եօթը հազար հոգի բոլորն էլ այնպիսի մարդիկ որ ծունկ չ'ծռեցին Բահաղին և բոլորն էլ բերանով նորան չը համբուրեցին։
19 Եւ այն տեղից գնաց և գտաւ Սափատի որդի Եղիսէին, և նա վար էր անում իր առաջին տասնևերկու լուծ եզ, և ինքը տասնևերկուերորդի հետ էր. և Եղիան անցաւ նորա մօտ և իր վերարկուն դրեց նորա վերայ,
20 Եւ նա թողեց եղները և վազեց Եղիայի ետևից և ասէց. Թող համբուրեմ հօրս և մօրս և յետոյ քեզ հետևեմ. և նա ասէց նորան. Գնա՝ ետ դարձիր. ո-
21 րովհետև ես քեզ ինչ արի։ Եւ նա ետ դառաւ նորա ետևից և մի լուծ եզն առաւ և նորան զոհեց, և եղների գործիքներովը եփեց նորանց միսը, և տուաւ ժողովրդին և նորանք կերան այն. և վեր կացաւ ու գնաց Եղիայի ետևից, և ծառայում էր նորան։

Գլ. Ի

1 Եւ Ասորիների Թագաւոր Բենհադադը ժողովեց իր բոլոր զօրքերը, և երեսունևերկու Թագաւոր իրան հետ, ձիերով և կառքերով, և վեր գնաց ու պատերազմ Սամարիան և պատերազմի
2 արաւ նորա հետ։ Եւ պատգամաւորներ ուղարկեց քաղաքը Իսրայէլի Թագաւոր Աքաաբի մօտ,
3 Եւ ասէց նորան. Այսպէս է ասում Բենհադադը, Քո արծաթը և քո ոսկին իմն է, և քո կանայքը և քո գեղեցիկ որդիները իմն
4 են։ Եւ Իսրայէլի Թագաւորը պատասխանեց և ասէց. Քո ասածի պէս լինի, ով իմ տէր Թագաւոր, ես և իմ բոլորը ունեցածը քոնն ենք։

Եւ պատգամաւորները նա դարձան և ասէցին. Այսպէս է ասում Բենհադադն ասելով Թէ
5 Ես քեզ մօտ հրէշտ ուղարկեցի և ասեցի՝ քո արծաթը և ոսկին, քո կանայքը և քո որդիները ինձ տուր։ Ուրևիւն էդուց իմ
6 ծառաներին քեզ մօտ կ'ուղարկեմ, որ նորանք պտրտեն քո տունը և քո ծառաների տուները, և ինչ որ քո աչքին հաճելի բան լինի, նորանք պիտի իրանց ձեռքն առնեն։ Եւ Իսրայէլի
7 Թագաւորը կանչեց երկրի բոլոր ծերերին և ասէց. Խնդրեմ իմացէք և տեսէք, որ նա ամէն չարութիւն է ուզում. որովհետև նա մարդ է ուղարկել ինձ մօտ իմ կանանց և որդկանց և իմ
8 արծաթի ու իմ ոսկիի համար, և ես նորան չ'մերժեցի։ Եւ բոլոր ծերերը և բոլոր ժողովուրդը
9 ասէցին նորան. Մի լսիր և չհանձրդ մի առնիր։ Եւ նա ասէց Բենհադադի պատգամաւորներին. Ասեցէք իմ տէր Թագաւորին՝ ինչ համար որ հրէշտ էիր ուղարկել ծառայիդ մօտ առաջին անգամ, այն կ'անեմ, բայց այս բանը չեմ կարող անել. և պատգամաւորները գնացին և պատասխանը ետ տարին։

10 Եւ Բենհադադը նորա մօտ հրէշտ ուղարկեց և ասէց. Աստուածները ինձ այսպէս անեն, և սորանից աւելի անեն, եթէ Սամարիայի հողը բաւականանայ իմ հետևից եկող բոլոր զօրքերի ափերին։
11 Եւ Իսրայէլի Թագաւորը պատասխանեց և ասէց. Ասեցէք. Թող չ'պարծենայ զօտին կապողը իրրև լուծողը։
12 Եւ եղաւ հէնց որ նա լսեց այս խօսքը, երբոր ինքը և Թագաւորները խըմում էին վրաններում, իսկոյն ասէց իր ծառաներին. Շարուեցէք. և նորանք շարուեցան քաղաքի դէմ։
13 Եւ ահա մէկ մարգարէ մօտեցաւ Իսրայէլի Աքաաբ Թագաւորին և ասէց. Այսպէս է ասում Տէրը. Բոլոր այս մեծ ամբոխը տեսար. ահա ես նորան ձեռքդ եմ յանձնելու այսօր, որ իմանաս Թէ ես եմ Տէրը։
14 Եւ Աքաաբն ասէց. Որի՞ ձեռքով. և նա ասէց. Գաւառաց իշխանների պատանիների ձեռքով. և ասէց. Ո՞վ պիտի սկսէ պատերազմը. նա էլ ասէց. Դու։
15 Եւ նա համարեց գաւառաց իշխանների պատանիներին, և նորանք երկու հարիւր երեսունևերկու էին, և նորանցից յետոյ համարեց ժողովրդին՝ բոլոր Իսրայէլի որդիներին՝ եօթը հազար։
16 Եւ նորանք դուրս եկան կէսօրին. բայց Բենհադադը խմած արբած էր վրաններում ինքը և իրան օգնող երեսունևերկու Թագաւորները։
17 Եւ գաւառաց իշխանների պատանիները առաջ դուրս եկան. և Բենհադադը հրէշտ ուղարկեց, և նորան իմացրին ասելով. Սամարիայից մարդիկ են
18 դուրս գալիս։ Նա էլ ասէց. Եթէ խաղաղութեան համար են դուրս եկել, նորանց ողջ ողջ բռնեցէք. և եթէ պատերազմի համար են դուրս եկել, էլի ողջ
19 բռնեցէք նորանց։ Եւ սորանք դուրս եկան քաղաքիցը՝ գաւառաց իշխանների պատանիները և այն զօրքը որ նորանց հետևին էր.
20 Եւ ամէն մարդ զարկեց իր *դիմացինին. և Ասորիները փախան. և Իսրայէլը հալածեց նորանց. և Ասորիների Թագաւոր Բենհադադը պրծաւ ձիան վերայ և ձիաւորներով։
21 Եւ Իսրայէլի Թագաւորը դուրս եկաւ ու զարկեց ձիերն էլ կառքերն էլ. և Ասորիների մէջ մեծ կոտորած արաւ։
22 Եւ մարգարէն մօտեցաւ Իսրայէլի Թագաւորին և ասէց նորան. Գնա ուժովացիր, և իմացիր և տես Թէ ինչ պիտի անես, որովհետև եկող տարի Ասորիների Թագաւորը վեր է գալու քեզ վերայ։
23 Եւ Ասորիների Թագաւորի ծառաներն ասեցին նորան. Նորանց աստուածները սարերի աստուածներ են, նորա համար մեզ յաղթեցին. բայց եթէ նորանց հետ պատերազմենք դաշտի մէջ, անշուշտ մենք նորանց կ'յաղթենք։
24 Եւ այս բանն արա. Թագաւորների ամէն մէկին հեռացրու իր տեղիցը, և նախարարներ դիր նորանց տեղ։
25 Եւ †ժողովիր քեզ համար զրքան որ քեզանից կորաւ, և ձիերի չափ ձիեր և կառքերի չափ կառքեր, և մենք պատերազմենք նորանց հետ դաշտում, և մենք անշուշտ կ'յաղթենք նորանց. և նա լսեց նորանց խօսքին և այնպէս արաւ։
26 Եւ եղաւ որ եկող տարին Բենհադադը Ասորիներին հանդես արաւ և վեր գնաց Աֆեկ որ Իսրայէլի հետ պատերազմէ։
27 Եւ Իսրայէլի որդիքն էլ հանդես արին, և պաշար առան ու գնացին նորանց առաջը. և Իսրայէլի որդիքը բանակ կազմեցին նորանց դիմացը այծերի երկու երամակների պէս. բայց Ասորիները լցրել էին երկիրը։
28 Եւ Աստուծոյ մարդը մօտեցաւ և ասէց Իսրայէլի Թագաւորին Թէ Այսպէս է ասում Տէրը. որովհետև Ասորիներն ասում են Թէ Եհովան սարերի Աստուած է և ոչ Թէ հովիտների Աստուած է նա. վասն որոյ այս մեծ ամբոխը քո ձեռքն եմ մատնելու, որ դուք գիտենաք Թէ Եհովան ես եմ։
29 Եւ եօթն օր իրար դէմ բանակ տուած կացան. և եօթներորդ օրը պատերազմ եղաւ. և Իսրայէլի որդիքը ջարդեցին Ասորիներից հարիւր հազար հետևակ զօրք մէկ օրում։
30 Եւ մնացորդները փախան Աֆեկ քաղաքը. և պարիսպը ընկաւ մնացած քսանևեօթը հազար մարդկանց վերայ. և Բենհադադը փախաւ և մտաւ քաղաքումը մի տան խոր սենեակը։
31 Եւ նորա ծառաներն ասեցին իրան. Ահա մենք լսել ենք, որ

*Եբր. մարդին.

†Եբր. համարիր

Իսրայէլի տան Թագաւորները ո-
ղջունած Թագաւորներ են. Թող
մեր մէջքերին քուրձեր և մեր
գլուխներուն չուաններ դնենք, և
գնանք դուրս Իսրայէլի Թագա-
ւորի մօտ. գուցէ նա քու անձը
32 ողջ Թողէ: Եւ նորանք մէջքե-
րին քուրձեր և իրանց գլուխնե-
րին չուաններ կապեցին և գնա-
ցին Իսրայէլի Թագաւորի մօտ և
ասեցին. Ծառադ Բինադադն
ասում է. Թող իմ անձն ապրէ:
Եւ նա ասեց. Մի՞թէ նա դեռ
33 ողջ է. նա իմ եղբայրն է: Եւ
նորա մարդիկը այս յաջողութիւն
համարեցին, և չտապելով տե-
ղեկացան Թէ նորանից է արդ-
եօք, և ասեցին. Ահա քո եղ-
բայրը Բինադադ. և նա ասեց.
Գնացէք նորան բերէք: Եւ Բի-
նադադը դուրս ելաւ նորա մօտ,
և նա նորան վեր բարձրացրեց
34 կառքի մէջը. Եւ ասեց նորան.
Այն քաղաքները որոնք իմ Հայրն
առաւ քո Հօրից ես ետ կ'դար-
ձնեմ, և դու քեզ համար հրա-
պարակներ ունեցիր Դամասկո-
սում ինչպես իմ Հայրն ունէր
Սամարիայում: Իսկ ես, ասէ
Աստուած, դաշինքով կ'արձակեմ
քեզ: Եւ նա դաշինք դրաւ նո-
րա հետ, և նա էլ արձակեց
նորան:

35 Եւ մարգարէների որդիներից
մէկ մարդ ասեց Տիրոջ խօսքով
իր ընկերին. Խնդրեմ՝ ինձ զար-
կիր, բայց այն մարդը չ'ուզեց
36 նորան զարկել: Նա էլ ասեց
նորան. Որովհետև դու չ'լսեցիր
Տիրոջ խօսքին, ահա ինձանից
գնալիս առիւծը պիտի քեզ զար-
կէ. և նա գնաց նորա կշտիցը.
և մի առիւծ գտաւ նորան և
37 զարկեց նորան: Եւ մէկ ուրիշ
մարդ գտաւ և ասեց նորան.
Խնդրեմ՝ ինձ զարկիր. և այն
մարդը զարկեց նորան ասասիկ և
38 վիրաւորեց: Եւ մարգարէն գնաց
և կանգնեց Թագաւորի ճանա-
պարհին և աչքերի վերայ մի
ծածկոց դնելով իրան ծածկեց:
39 Եւ Թագաւորն անց կենալիս նա
կանչեց Թագաւորին և ասեց.
Ծառադ գնացել էր պատերազմի
մէջը. և ահա մի եռ քաշուող
մարդ բնձ մօտ մի մարդ բերաւ
և ասեց. Պահպանիր այս մարդը.
եթէ նա կորչելու լինի, քո անձը
պիտի լինի նորա անձի տեղ, կամ
մի տաղանդ արծաթ պիտի վճար-
ես: Եւ երբոր ծառադ այսինչ 40
և այնինչ բանը անում էր, և նա
չ'կար: Եւ Իսրայէլի Թագաւորն
ասեց նորան. Քո դատաստանն
էլ այդպես. դու ինքդ վճռե-
ցիր: Եւ նա չուտով հեռացրեց 41
ծածկոցը աչքերի վերայից. և
Իսրայէլի Թագաւորը ճանաչեց
նորան որ նա մարգարէներիցն էր:
Եւ նա ասեց նորան. Այսպէս է 42
ասում Տէրը. որովհետև դու իմ
նզոված մարդին արձակեցիր ձեռ-
քից, ուրեմն քո անձը պիտի լի-
նի նորա անձի տեղ, և քո ժո-
ղովուրդը նորա ժողովրդի տեղ:
Եւ Իսրայէլի Թագաւորը դնաց 43
իր տունը տխուր և բարկացած,
և եկաւ Սամարիա:

Գլ. ԻԱ

Եւ այս բաներից յետոյ Յեզրա- 1
յէլացի Նաբովթը մէկ այգի ու-
նէր Յեզրայէլում Սամարիայի
Թագաւոր Աքաաբի պալատի
մօտ: Եւ Աքաաբը խօսեց Նա- 2
բովթի հետ և ասեց. Տուր ինձ
քո այգին, որ ինձ համար կանա-
չեղէնի պարտէզ լինի, որովհե-
տև նա մօտիկ է իմ տան կշտին,
և ես քեզ մի այգի տամ նորա
տեղ նորանից լաւ. եթէ հա- 3
ճելի է քո աչքին, քեզ նորա
դինը արծաթ տամ: Եւ Նա-
բովթն ասեց Աքաաբին. Փառ-
լինի ինձ Տէրից որ ես իմ Հայրե-
րի ժառանգութիւնը քեզ տամ: 4

Եւ Աքաաբը գնաց իր տունը
տխուր և բարկացած Յեզրայէլա-
ցի Նաբովթի իրան ասած խօսքի
համար, որ ասեց Թէ իմ Հայրե-
րի ժառանգութիւնը քեզ չեմ
տալ. և պառկեց իր անկողնի
վերայ և երեսը դարձրեց ու Հաց 5
չ'կերաւ: Եւ նորա մօտ եկաւ
նորա կին Յեզաբէլը և ասեց նո-

րան. Ա՛յս ի՞նչու սիրտդ տխուր
6 է, և Հաց չես ուտում: Եւ
Աստուած ասեց նորան Թէ Ես խո-
սեցի Յեզրայէլացի Նաբովթի հետ
և ասեցի նորան՝ Ա՛յդիդ փոդով
տուր ինձ, կամ եթէ դու հա-
ճես՝ ես քեզ նորա տեղ մի այգի
տամ. բայց նա ասեց. Ես իմ
7 այգին քեզ չեմ տալ: Եւ նորա
կին Յեզաբէլն ասեց նորան. Դու
հիմա այդպէ՞ս ես Թագաւորու-
թիւն անում Իսրայէլի վերայ.
վեր կաց Հաց կեր և սիրտդ
զուարճանայ. ես քեզ կ'տամ
Յեզրայէլացի Նաբովթի այգին:
8 Եւ Աքաաբի անունով նամակ-
ներ գրեց և կնքեց նորանց նորա
կնիքովը, և նամակները ուղար-
կեց նորա քաղաքում Նաբովթի
հետ միասին բնակող ծերերին և
9 ազնուականներին: Եւ գրեց այն
նամակներում Թէ Ջոմ քարո-
զեցէք և Նաբովթին դրէք ժո-
10 ղովրդի դլխաւոր: Եւ նորա դի-
մացը երկու անօրէն մարդ նըս-
տեցրէք, որոնք նորա դէմ վկա-
յութիւն անեն ասելով Թէ Դուս
Հայհոյութիւն արիր Աստուծոյ
և Թագաւորի դէմ. յետոյ նո-
րան դուրս հանեցէք և քարկո-
ծեցէք որ մեռնի:
11 Եւ նորա քաղաքի մարդիկը՝
այն ծերերը և ազատականները,
որ նորա քաղաքում բնակվում
էին, արին այնպես ինչպես որ
Յեզաբէլը նորանց հրամայ էր ու-
ղարկել, ինչպես որ գրել էր իր
նորանց ուղարկած նամակներու-
12 մը: Ջոմ քարոզեցին և Նաբով-
Թին նստեցրին ժողովրդի դլխա-
13 ւոր. Եւ երկու անօրէն մարդիկ
եկան ու նստեցին նորա դէմ.
և այն երկու անօրէն մարդիկը
վկայութիւն տուին Նաբովթի
դէմ ժողովրդի առաջին ասելով.
Նաբովթը Աստուծուն և Թա-
գաւորին հայհոյեց. և նորանք
դուրս հանեցին նորան քաղաքի-
ցը և քարերով քարկոծեցին, և
14 նա մեռաւ: Եւ մարդ ուղարկե-
ցին Յեզաբէլի մօտ ասելով. Նա-
բովթը քարկոծուեցաւ և մեռաւ:
15 Եւ հենց որ Յեզաբէլը լսեց,
որ Նաբովթը քարկոծուել և մե-
ռնել է, ասեց Յեզաբէլն Աքաա-
բին. Վեր կաց ժառանգիր Յեզ-
րայէլացի Նաբովթի այգին, որ
չէր ուզում փողով քեզ տալ.
որովհետև Նաբովթը կենդանի
չէ, այլ մեռաւ: Եւ հենց որ 16
Աքաաբը լսեց Թէ Նաբովթը մե-
ռած է, վեր կացաւ Աքաաբը, որ
իջնէ Յեզրայէլացի Նաբովթի այ-
գին նորան ժառանգելու համար:
Եւ Տիրոջ խօսքն եղաւ Թեզ- 17
բացի Եղիային Թէ վեր կաց ի- 18
ջիր ընդ առաջ Իսրայէլի Աքաաբ Թա-
գաւորի դէմ որ Սամարիայումն
է. ահա նա Նաբովթի այգումն
է, ուր որ իջել է նորան ժառան-
գելու համար: Եւ նորա հետ 19
խօսիր և ասիր. Այսպէս է ա-
ռում Տէրը. Սպանեցիր, և ժա-
ռանգե՞լ էլ ես. և ասիր նորան
Թէ այսպէս է ասում Տէրը. Ա՛յն
տեղը ուր որ շուները լակեցին
Նաբովթի արիւնը, շուները քո
արիւնն էլ պիտի լակեն: Եւ 20
Աքաաբն ասեց Եղիային. Ինձ
դտա՞ր, ով իմ թշնամի. և նա
ասեց. Գտայ, որովհետև դու
քեզ ծախել ես, որ Տիրոջ աչ-
քի առաջին չարութիւն անես:
Ահա ես քեզ վերայ չարիք եմ 21
բերելու և աւերելու եմ քո ե-
տևից և բնաջինջ եմ անելու
Աքաաբի ամեն արու մարդին և
Իսրայէլի մէջ կապուածին և ար-
ձակուածին: Եւ քո տունը պի- 22
տի շինեմ Նաբատեան Յերոբո-
վամի տան պէս և Աքիայի որդի
Բաասայի տան պէս այն բարկու-
թեան համար, որով բարկացրիր
Տիրոջը, և մեղանչել տուիր Իս-
րայէլին: Նաև Յեզաբէլի համար 23
խօսեց Տէրն ասելով. Շուները
պիտի ուտեն Յեզաբէլին Յեզրա-
յէլի պարսպի մօտ: Աքաաբից 24
քաղաքում մեռնողին շուները
պիտի ուտեն, և դաշտում մեռ-
նողին երկնքի թռչունները պիտի
ուտեն:
Բնաւ չէ եղել Աքաաբի պէս 25
որ իրան ծախած լիներ Տի-
րոջ աչքի առաջին չարութիւն
անելու համար, որ նորան մղո-

26 բեցրեց իր Ցեղաբել կինը։ Եւ նա շատ գարշելի եղաւ կուռքերի եւ ինչից գնալով բոլորովին այն Ամօրհացիների սրածին պէս, որոնց Տէրը քշեց Իսրայէլի որդիկանց առաջից։

27 Եւ հէնց որ Աքաաբը լսեց այս խօսքերը, պատառեց իր հանդերձները եւ իր մարմնի վերայ քուրձ հագաւ եւ ծոմ պահեց, եւ քունքով էր քնում եւ կամաց

28 շրջում։ Եւ Տիրոջ խօսքն եղաւ

29 Թեզբացի Եղիային ասելով. Տեսնո՞ւմ ես որ Աքաաբն իրան խոնարհեցրեց իմ առաջին. որովհետեւ նա իրան խոնարհեցրեց իմ առաջին՝ ես այն չարիքը չեմ բերիլ նորա օրերումը, այլ նորա որդիի օրերումը կ'բերեմ չարիքը նորա տան վերայ։

Գլ. ԻԲ

1 Եւ երեք տարի կացան, որ պատերազմ չկար Ասորիների եւ Իսրայէլի մէջ։ Եւ երրորդ տարին եղաւ, որ Յուդայի Յովասափատ Թագաւորն իջաւ Իսրայէլի Թագաւորի մօտ։ Եւ Իսրայէլի Թագաւորն ասեց իր ծառաներին. Գիտէ՞ք որ Ռամովթ-գաղաադը մերն է. իսկ մենք հոգ չենք տանում նորան Ասորիների Թագաւորի ձեռքիցն առնելու համար։

4 Եւ ասեց Յովասափատին. Ինձ հետ կ'գնա՞ս պատերազմի Ռամովթ-գաղաադի վերայ. եւ Յովասափատն ասեց Իսրայէլի Թագաւորին. Ինչպէս դու՝ այնպէս էլ ես. ինչպէս քո ժողովուրդը՝ այնպէս էլ իմ ժողովուրդը. ինչպէս քո ձիանքը՝ այնպէս էլ իմ ձիանքը։

5 Եւ Յովասափատն ասեց Իսրայէլի Թագաւորին. Խնդրեմ հիմա Տիրոջ խօսքը հարցրու։ Եւ

6 Իսրայէլի Թագաւորը ժողովեց մարգարէներին չորս հարիւր մարդ չափ և ասեց նորանց. Ռամովթ-գաղաադ գնա՞մ պատերազմի, թէ չգնամ։ Եւ նորանք ասեցին. Գնա, և Տէրը Թագաւորի ձեռքը պիտի տայ։

7 Եւ Յովասափատն ասեց. Այստեղ էլ Տիրոջ մարգարէ չկա՞յ, որ նորանից հարցնէինք։

8 Եւ Իսրայէլի Թագաւորն ասեց Յովասափատին. Մէկ մարդ էլ կայ որով Տիրոջը իմանալի է հարցնել. բայց ես ատում եմ նորան. որովհետեւ ինձ համար բարի չէ մարգարէանում, այլ չար՝ Յեհոյի որդի Միքիան. և Յովասափատն ասեց. Թագաւորը թող այդպէս չխօսէ։

9 Եւ Իսրայէլի Թագաւորը մի ներքինի կանչեց և ասեց. Շուտով բեր Յեհոյի որդի Միքիային։

10 Եւ Իսրայէլի Թագաւորն ու Յուդայի Յովասափատ Թագաւորը նստել էին իւրաքանչիւրն իր աթոռի վերայ զգեստներ հագած, Սամարիայի դռան առաջի կալումը. և բոլոր մարգարէները մարգարէանում էին նորանց առաջին։

11 Եւ Քանանայի որդի Սեդեկիան իր համար երկաթի եղջիւրներ շինեց, և ասեց. Այսպէս է ասում Տէրը. Սորանցով կ'հրես Ասորիներին մինչև որ նորանց բնաջինջ անես։

12 Եւ բոլոր մարգարէներն այնպէս մարգարէանում էին ասելով. Գնա Ռամովթ-գաղաադ և կ'յաջողուի. և Տէրը կ'տայ Թագաւորի ձեռքը։

13 Եւ այն պատգամաւորը, որ գընացել էր Միքիային կանչելու, նորան այսպէս ասեց. Ահա մարգարէները միաբերան բարի են խօսում Թագաւորի համար. Թող քո խօսքերն էլ նորանցից մէկինի պէս լինեն, և բարի խօսիր։

14 Բայց Միքիան ասեց. Կենդանի է Տէրը որ ինչ որ ինձ ասէ Տէրը, այն եմ խօսելու։

15 Եւ նա եկաւ Թագաւորի մօտ. և Թագաւորն ասեց նորան. Միքիա, Ռամովթ-գաղաադ պատերազմի գնա՞նք թէ չգնանք. և նա ասեց. Գնա, և կ'յաջողուի, և Տէրը կ'տայ Թագաւորի ձեռքը։

16 Եւ Թագաւորը նորան ասեց. Քանի՞ անգամ ես քեզ երդուում տամ որ Տիրոջ անունով ինձ լոկ ճշմարտութիւն խօսես։

17 Այն ժամանակ նա ասեց. Ես տեսայ բոլոր Իսրայէլը սարերի վերայ իբրև ոչխարներ որ հովիւ չ'ունեն. և Տէրն ասեց. Սորանք տէրեր չ'ունեն. ամեն մարդ իր տունը դառնայ խաղաղութեամբ։

18 Եւ Իսրայէլի Թագաւորն ասեց Յովասափատին. Քեզ չ'ասեցի՞ որ ինձ համար բարի չի մարգարէանալ, այլ չար։

19 Եւ նա ասեց. Ուրեմն Տիրոջ խօսքը լսիր. Ես տեսայ Տէրը նստած իր աթոռի վերայ և երկնքի բոլոր զօրքերը կանգնած նորա առաջին նորա աջ և նորա ձախ կողմին։

20 Եւ Տէրն ասեց. Ո՞վ կ'խաբէ Աքաաբին, որ վեր գնայ Ռամովթ-գաղաադի վերայ և կորչի. և մէկը այսպէս և միւսն այնպէս էր ասում։

21 Եւ մի ոգի դուրս եկաւ և կանգնեց Տիրոջ առաջին և ասեց. Ես նորան կ'խաբեմ. և

22 Տէրը նորան ասեց. Ինչով. Նա էլ ասեց. Ես դուրս կ'գնամ և նորա բոլոր մարգարէների բերանումը սուտ ոգի կ'լինեմ. և Տէրն ասեց. Դու կ'խաբես և կարող էլ ես. գնա և այդպէս արա։

23 Եւ արդ Տէրը սուտ ոգի է դրել այս բոլոր մարգարէների բերանում, բայց Տէրը քեզ համար չարիք է խօսել։

24 Այն ժամանակ Քանանայի որդի Սեդեկիան մօտեցաւ և ապտակ տուաւ Միքիային՝ նորա ծնօտին և ասեց. Ինչպէս է անցկացել Տիրոջ հոգին ինձանից որ քեզ հետ խօսէ։ Միքիան էլ ասեց Նորան. Ահա կ'տեսնես այն օրը որ սենեակից սենեակ կ'մտնես թաքնուելու համար։

26 Եւ Իսրայէլի Թագաւորն ասեց. Առ Միքիային և տար քաղաքապետ Ամմոնի և Թագաւորի

27 որդի Յովասի մօտ, և ասիր. Այսպէս է ասում Թագաւորը. Սորան գրէք բանտը, և նորան կերակրեցէք նեղութեան հացով և նեղութեան ջրով մինչև իմ

28 խաղաղութեամբ գալը։ Եւ Միքիան ասեց. Եթէ դու խաղաղութեամբ ետ դառնար եկար, ուրեմն Տէրն ինձանով չէ խօսել. նաև ասեց. Լսեցէք, ով ամեն ժողովուրդներ։

29 Եւ Իսրայէլի Թագաւորն ու Յուդայի Յովսափատ Թագաւորը վեր գնացին Ռամովթ-գաղաադ։

30 Եւ Իսրայէլի Թագաւորն ասեց Յովսափատին. Ինձ պէտք է կերպարանափոխուիլ և յետոյ պատերազմի գնալ, բայց դու հագիր քո հանդերձները. և Իսրայէլի Թագաւորը կերպարանափոխուեցաւ և գնաց պատերազմի։

31 Եւ Ասորիների Թագաւորը հրամայեց իր երեսունևերկու կառապետներին ասելով. Չպատերազմէք ոչ փոքրի և ոչ մեծի հետ, այլ միայն Իսրայէլի Թագաւորի հետ։

32 Եւ հէնց որ կառապետները Յովսափատին տեսան, ասեցին. Իրաւի նա է Իսրայէլի Թագաւորը, և դարձան դէպի նորան որ նորա հետ պատերազմեն. և Յովսափատն աղաղակեց։

33 Եւ եղաւ երբոր տեսան կառապետները, որ նա Իսրայէլի Թագաւորը չէր, այն ժամանակ ետ դառան նորա հետից։

34 Եւ մի մարդ *անմեզութեամբ քաշեց իր աղեղը և զարկեց Իսրայէլի Թագաւորին յօգուտածնէրի և զրահի միջովը. և նա ասեց իր կառավարին. Ձեռքդ դարձրա և ինձ դուրս տար բանակիցը, որովհետեւ վիրաւորուեցայ։

35 Եւ պատերազմը բարձրացաւ այն օրը, և Թագաւորը մնաց իր կառքումը Ասորիների դէմ, և իրիկունը մեռաւ. և վէրքիցն արիւնը գնաց կառքի մէջ։

36 Եւ արեգակը մայր մտնելիս մանեակը ման եկաւ բանակի մէջ ասելով. Ամեն մարդ իր քաղաքը և ամեն մարդ իր երկիրը գնա՛յ։

37 Եւ Թագաւորը մեռաւ և բերաւեցաւ Սամարիա. և Թագաւորին թաղեցին Սամարիայում։

38 Եւ կառքը լուացին Սամարիայի աւազանի մօտ, և շուներն լակեցին նորա արիւնը. (և բոզերը ՙի-ՙեղ լուացուեցան) Տիրոջ խօսած խօսքի համեմատ։

39 Եւ Աքաաբի գործերի մնացորդը և նորա բոլոր արածները, և նորա փղոսկրով շինած տունը և

*Կամ՝ աւժոլը

նորա շինած բոլոր քաղաքները,
ահա նորանք գրուած են Իսրա-
յէլի Թագաւորների յիշատակաց
40 գրքումը։ Եւ Աքաաբը ննջեց իր
հայրերի հետ. և նորա որդի Ո-
քոզիան Թագաւորեց նորա տեղ։
41 Եւ Ասայի որդի Յովսափատը
Թագաւոր եղաւ Յուդայի վերայ
Իսրայէլի Աքաաբ Թագաւորի
42 չորրորդ տարին։ Եւ Յովսափա-
տը երեսունեւհինգ տարեկան էր
երբոր Թագաւոր եղաւ, և քը-
սանեւհինգ տարի Թագաւորեց Ե-
րուսաղէմումը, և նորա մօր ա-
նունն էր Ազուբա դուստր Սա-
43 զիի։ Եւ նա գնաց բոլորովին իր
հայր Ասայի ճանապարհումը,
նորանից չ՚խոտորուեց, և արաւ
Տիրոջ աչքի առաջին ուղիղ ե-
44 ղածը։ Բայց բարձրաւանդակնե-
րը չ՚վերացան. ժողովուրդը տա-
կաւին զոհում և խունկ էր մա-
տուցանում բարձրաւանդակնե-
45 րի վերայ։ Եւ Յովսափատը խա-
ղաղութիւն արաւ Իսրայէլի Թա-
գաւորի հետ։
46 Յովսափատի գործերի մնացոր-
դը և նորա արած քաջութիւնը
և պատերազմը, ահա նորանք
գրուած են Յուդայի Թագաւոր-
47 ների յիշատակաց գրքումը։ Եւ
այն մնացած իգացողներին, որ
մնացել էին իր հայր Ասայի օրե-
րումը, բնաջինջ արաւ երկրիցը։
Եւ այն ժամանակ Եդովմումը Թա- 48
գաւոր չ՚կար, մի փոխարքայ կար։
Յովսափատը Թարսիսի նաւեր 49
շինեց որ գնան Ոփիր ոսկիի հա-
մար, բայց չ՚գնաց. որովհետև
նաւերը կոտրատուեցան Գասիոն-
գաբերում։ Այն ժամանակ Ա- 50
քաաբի որդի Ոքոզիան ասեց Յով-
սափատին. Թող իմ ծառաները
քո ծառաների հետ նաւերով
գնան, բայց Յովսափատը չ՚ու-
զեց։ Եւ Յովսափատը ննջեց իր 51
հայրերի հետ և Թաղուեցաւ իր
հայրերի հետ իր հայր Դաւիթի
քաղաքումը. և նորա որդի Յով-
սամը Թագաւորեց նորա տեղ։
Աքաաբի որդի Ոքոզիան Թա- 52
գաւոր եղաւ Իսրայէլի վերայ
Սամարիայումը Յուդայի Թագա-
ւոր Յովսափատի տասնեւեօթնե-
րորդ տարիում, և Թագաւորեց
Իսրայէլի վերայ երկու տարի։
Եւ նա չարութիւն արաւ Տիրոջ 53
աչքի առաջին և գնաց իր հօր
ճանապարհովը, իր մօր ճանա-
պարհովը և Իսրայէլին մեղանչել
տուող Նաբատեան Յերոբովամի
ճանապարհովը։ Եւ պաշտեց Բա- 54
հաղին և երկրպագութիւն ա-
րաւ նորան, և բարկացրեց Իս-
րայէլի Տէր Աստուծուն բոլորո-
վին իր հօր արածին պէս։

ԹԱԳԱՒՈՐԱՑ ՁՈՐՐՈՐԴ ԳԻՐՔԸ

(ԿԱՄ՝ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔԸ)

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ Աքաաբի մեռնելուց յետոյ
Մովաբը ապստամբուեց Իսրայէ-
լի դէմ։
2 Եւ Ոքոզիան իր վերնատան
վանդակապատից վայր ընկաւ
Սամարիայումը և հիւանդացաւ,
և պատգամաւորներ ուղարկեց,
և նորանց ասեց. Գնացէք հար-
ցրէք Ակկարոնի *Բահաղ-ճան-
ճիկ աստուծուն, թէ արդեօք
կ՚առողջանա՞մ այս հիւանդու-
թիւնից։ Եւ Տիրոջ հրեշտակն 3

*Բէեղզեբուղ

ասեց Թեզբացի Եղիային. Վեր
կաց գնա Սամարիայի Թագաւո-
րի պատգամաւորների դիմացը և
ասիր նորանց. Մի՞թէ Իսրայէլի
մէջ Աստուած չ՚կայ, որ գնում
էք Ակկարոնի Բահաղ-ճանճիկ
4 աստուծուն հարցնելու։ Վասն
որոյ Տէրն այսպէս է ասում.
Վերան ելած անկողնիցդ վայր
պիտի չ՚իջնես, այլ անպատճառ
պիտի մեռնես. և Եղիան գնաց։
5 Եւ պատգամաւորները ետ դա-
ռան նորա մօտ. և նա նորանց
ասեց. Այդ ի՞նչու համար ետ
6 դառաք։ Եւ նորան ասեցին. Մի
մարդ դուրս եկաւ մեր դիմացը
և մեզ ասեց. Գնացէք ետ դա-
ռէք ձեզ ուղարկող Թագաւորի
մօտ և ասեցէք նորան. Այսպէս
է ասում Տէրը. Մի՞թէ Իսրա-
յէլումն Աստուած չ՚կայ, որ դու
մարդ ես ուղարկում Ակկարո-
նի Բահաղ-ճանճիկ աստուծուն
հարցնելու. դորա համար վերան
ելած անկողնիցդ վայր պիտի
չ՚իջնես, այլ անպատճառ պիտի
7 մեռնես։ Եւ նա ասեց նորանց.
Ի՞նչ կերպարանք ունէր այն մար-
դը, որ ձեր դիմացն ելաւ և ձեզ
8 ասեց այդ խօսքերը։ Նորանք էլ
ասեցին. Նա մէկ մազոտ մարդ
էր, և մի կաշի գօտի մէջքին կա-
պած. և նա ասեց. Նա Թեզբա-
ցի Եղիան է։
9 Եւ նա մի յիսնապետ ուղար-
կեց իր յիսուն մարդովը. և երբ-
որ նա Եղիայի մօտ գնաց, ահա
նստել էր սարի գլխին. և ասեց
նորան. Ով մարդ Աստուծոյ,
Թագաւորն ասում է. Վայր ի-
10 ջիր։ Եւ Եղիան պատասխանեց
և ասեց յիսնապետին. Եթէ ես
Աստուծոյ մարդ եմ, Թող եր-
կընքից կրակ իջնէ և ուտէ քեզ
և քո յիսուն մարդկանցը. և
երկնքից կրակ իջաւ, և լափեց
նորան և նորա յիսուն մարդ-
կանցը։
11 Իսկ նա դարձեալ մի ուրիշ
յիսնապետ իր յիսուն մարդկան-
ցովն ուղարկեց. և նա պատաս-
խանեց և ասեց նորան. Ով մարդ
Աստուծոյ, Թագաւորն այսպէս
է ասում. Շուտով վայր իջիր։
Եւ Եղիան պատասխանեց և ա- 12
սեց նորանց. Եթէ ես Աստուծոյ
մարդ եմ, Թող երկնքից կրակ
իջնէ և ուտէ քեզ և քո յիսուն
մարդկանցը. և Աստուծոյ կրակ
իջաւ երկնքից, և լափեց նորան
և նորա յիսուն մարդկանցը։
Բայց նա դարձեալ մի երրորդ 13
յիսնապետ ուղարկեց իր յիսուն
մարդկանցով. բայց այդ երրորդ
յիսնապետը վեր ելաւ գնաց և
Եղիայի առաջին ծունկը կրկնեց
և աղաչեց նորան և ասեց նորան.
Ով մարդ Աստուծոյ, Թող իմ
հոգին և այս յիսուն ծառաներ-
իդ հոգին քո աչքին պատուա-
կան համարուին։ Ահա երկնքից 14
կրակ իջաւ և լափեց այն առա-
ջի երկու յիսնապետներին և նո-
րանց յիսուն մարդկանցը. բայց
հիմա Թող իմ անձը պատուա-
կան համարուի քո աչքին։
Եւ Տիրոջ հրեշտակն ասեց Ե- 15
ղիային. Վայր իջիր նորա հետ,
նորա երեսիցը մի վախենար։ Եւ
նա վեր կացաւ և վայր իջաւ նո-
րա հետ Թագաւորի մօտը։ Եւ 16
ասեց նորան. Տէրն այսպէս է ա-
սում. Որովհետև դու պատգա-
մաւորներ ուղարկեցիր Ակկարո-
նի Բահաղ-ճանճիկ աստուծուն
հարցնելու իբր Թէ Իսրայէլումն
Աստուած չ՚լինէր, որ նորանից
բան հարցնէիր, նորա համար վե-
րան ելած անկողնիցդ վայր պի-
տի չ՚իջնես, այլ անպատճառ
պիտի մեռնես։
Եւ նա մեռաւ Տիրոջ խօսքի 17
համեմատ, որը ասել էր Եղիան,
և նորա տեղը Թագաւոր եղաւ
Յովրամը Յուդայի Յովսափատեան
Յովրամ Թագաւորի երկրորդ տա-
րիումը, որովհետև նա որդի
չ՚ունէր։ Եւ Ոքոզիայի գործերի 18
մնացորդը, ահա նորանք գրուած
են Իսրայէլի Թագաւորների յի-
շատակաց գրքումը։

ԳԼ. Բ

Եւ եղաւ որ Տէրը Եղիային 1
մրրիկով երկինքը վեր բարձրա-

ցնելու ժամանակին, Եղիան և
Եղիսէն գնացին Գաղգաղայից։
2 Եւ Եղիան ասեց Եղիսէին. Դու
այստեղ մնա, որովհետև Տէրն
ինձ մինչև Բեթէլ է ուղարկել.
և Եղիսէն ասեց. Կենդանի է
Տէրը և կենդանի է քո հոգին,
եթէ ես քեզ թողեմ. և գնացին
3 Բեթէլ։ Եւ Բեթէլումն եղող
մարգարէների որդիքը դուրս ե-
կան Եղիսէի մօտ և նորան ասե-
ցին, Գիտե՞ս արդեօք որ այսօր
Տէրը վեր է առնելու քո տիրոջը
գլխիցդ. և նա ասեց. Ես էլ
4 գիտեմ, լռեցէք։ Եւ Եղիան ա-
սեց նորան. Այստեղ մնա, Եղի-
սէ, որովհետև Տէրն ինձ Երիքով
է ուղարկել. և նա ասեց. Կեն-
դանի է Տէրը և կենդանի է քո
հոգին, եթէ ես քեզ թողեմ.
5 և գնացին Երիքով։ Եւ Երիքո-
վումը լինող մարգարէների որ-
դիքը մօտեցան Եղիսէին և ասե-
ցին նորան. Գիտե՞ս արդեօք որ
այսօր Տէրը վեր է առնելու քո
տիրոջը գլխիցդ. և նա ասեց.
6 Ես էլ գիտեմ, լռեցէք։ Եւ
Եղիան ասեց նորան. Այստեղ
մնա, որովհետև Տէրն ինձ Յոր-
դանան է ուղարկել. և նա ա-
սեց. Կենդանի է Տէրը և կենդա-
նի է քո հոգին, եթէ ես քեզ
թողեմ. և երկուսն էլ գնացին։
7 Եւ մարգարէների որդկանցից յի-
սուն մարդ գնացին և հեռուանց
կանգնեցին դիմացը. իսկ նորանք
երկուսը կանգնել էին Յորդա-
8 նանի մօտ։ Եւ Եղիան առաւ իր
վերարկուն, ծալեց և զարկեց
ջրին, և ջուրը բաժանուեց այս
կողմը և այն կողմը. և երկուսն
էլ անցան ցամաքով։
9 Եւ եղաւ երբոր նորանք անց-
նում էին, Եղիան ասեց Եղիսէ-
ին. Խնդրիր՝ ի՞նչ անեմ քեզ,
քանի որ քեզանից չեմ վեր առ-
նուած։ Եւ Եղիսէն ասեց. Թող
քո ոգին կրկնապատիկ լինի ինձ
10 վերայ։ Եւ նա ասեց. Դժուար
բան խնդրեցիր. եթէ ես քեզա-
նից վեր առնուելիս դու ինձ տե-
սար, քեզ կ՛լինի այնպէս. բայց
եթէ ոչ, չի լինիլ։

Եւ եղաւ երբոր նորանք գը- 11
նում էին և գնալով խօսում
էին, ահա մի հրեղէն կառք և
հրեղէն ձիանք, որ նորանց եր-
կուսին բաժանեցին. և Եղիան
մրրիկով վեր ելաւ երկինքը։ Իսկ 12
Եղիսէն մտիկ էր տալիս և կան-
չում. Հայր իմ, հայր իմ, Իս-
րայէլի կառքը և նորա ձիաւոր-
ները. և նորան այլ ևս չ՛տեսաւ,
և բռնեց նորա հանդերձներիցը
և պատառեց նորանց երկու պա-
տառ արաւ։ Եւ վեր առաւ Ե- 13
ղիայի վերարկուն որ ընկել էր
նորա վերայից, և ետ դառաւ ու
կանգնեց Յորդանանի ափին։ Եւ 14
առաւ Եղիայի վերարկուն, որ
ընկել էր նորա վերայից և զար-
կեց ջրին ու ասեց. Ո՞ւր է Եղի-
այի Տէր Աստուածը՝ նա ինքը.
և զարկեց ջրին, և ջրերը բա-
ժանուեցան այս կողմը և այն
կողմը, և Եղիսէն անց կացաւ։
Եւ նորան տեսնում էին մար- 15
գարէների որդիքը, որ դիմացը՝
Երիքովումն էին, և ասում էին.
Եղիայի ոգին հանգչել է Եղիսէի
վերայ. և եկան նորան դիմաւոր-
ելու և խոնարհութիւն արին
նորա առաջին մինչև գետինը.
Եւ ասեցին նորան. Ահա ծառա- 16
ներիդ հետ յիսուն զօրաւոր մար-
դիկ կան, թող գնան և որոնեն
քո տիրոջը, գուցէ Տիրոջ հոգին
նորան վեր է առել և մէկ սա-
րի վերայ կամ հովիտների մէկի
մէջ գցել. և նա ասեց. Մի ու-
ղարկէք։ Եւ նորանք բռնադա- 17
տեցին նորան մինչև որ ամաչեց
և ասեց. Ուղարկեցէք. և նո-
րանք յիսուն մարդ ուղարկեցին,
և նորանք որոնեցին երեք օր,
բայց նորան չ՛գտան. Եւ ետ դա- 18
ռան նորա մօտ, և նա նստած
էր Երիքով, և նորանց ասեց. Ես
ձեզ չ՛ասեցի՞ թէ Մի գնաք։
Եւ այն քաղաքի մարդիկն ա- 19
սեցին Եղիսէին. Ահա քաղաքիս
դիրքը լաւ է ինչպէս որ տէրս
տեսնում է, բայց ջուրը վատ է
և երկիրը՝ անպտուղ։ Եւ նա ա- 20
սեց. Ինձ մի նոր կուժ բերէք և
մէջը աղ դրէք. և բերին նորա

21 մօտ։ Եւ նա գնաց ջուրերի աղ-
բիւրի մօտ և աղ գցեց այնտեղ,
և ասեց. Այսպէս է ասում Տէ-
րը. Ես բժշկեցի այս ջուրերը.
այսուհետև այդտեղից այլ ևս
մահ և անպտղութիւն չ՛լինի։
22 Եւ այն ջուրերը բժշկուեցան
մինչև այսօր՝ Եղիսէի խօսած խօս-
քին պէս։
23 Եւ նա այնտեղից գնաց Բե-
թէլ. և նա ճանապարհովը վեր
էր գնում և փոքր աղերք դուրս
եկան քաղաքիցը և ծաղր անե-
լով ասում էին նորան. Վեր եկ,
24 կնդակ, վեր եկ, կնդակ։ Եւ նա
ետ դառաւ, և նորանց տեսաւ
և անիծեց նորանց Տիրոջ անու-
նովը. և անտառիցն երկու արջ
դուրս եկան և նորանցից քա-
ռասունևերկու երեխայ պատա-
25 ռեցին։ Եւ այնտեղից գնաց
Կարմեղոս սարը, և այնտեղից
ետ եկաւ Սամարիա։

ԳԼ. Գ

1 Եւ Աքաաբի որդի Յովրամը
թագաւոր եղաւ Իսրայէլի վերայ
Յուդայի Յովսափատ թագաւորի
տասնևութերորդ տարիումը, և
թագաւորեց տասնևերկու տարի։
2 Եւ չարութիւն արաւ Տիրոջ աչ-
քի առաջին, միայն ոչ թէ իր
հօրը և մօրը պէս, և հեռացրեց
իր հօր շինած Բահաղի արձանը։
3 Սակայն Նաբատեան Յերոբովա-
մի այն մեղքին հետևեց, որով
նա Իսրայէլին մեղանչել տուաւ.
նորանից չ՛հեռացաւ։
4 Եւ Մովաբացիների Մեսա թա-
գաւորը հարուստ էր հօտերով,
և նա տալիս էր Իսրայէլի թա-
գաւորին հարիւր հազար գառն
և հարիւր հազար գեղմնաւոր
5 խոյեր. Եւ երբոր Աքաաբ թա-
գաւորը մեռաւ, Մովաբի թա-
գաւորը ապստամբուեց Իսրայէլի
6 թագաւորի դէմ։ Եւ այն ժա-
մանակ Յովրամը դուրս եկաւ
Սամարիայից և հանդէս արաւ
7 բոլոր Իսրայէլին։ Եւ գնաց մարդ
ուղարկեց Յուդայի Յովսափատ
թագաւորին ասելով. Մովաբա-
ցիների թագաւորը ապստամ-
բուել է ինձ դէմ. ինձ հետ պա-
տերազմելու կ՛գնա՞ս Մովաբի վե-
րայ. և նա ասեց. Կ՛գնամ. ինչ-
պէս որ դու՝ այնպէս էլ ես, ինչ-
պէս որ քո ժողովուրդը՝ այնպէս
էլ իմ ժողովուրդը, ինչպէս որ
քո ձիանքն՝ այնպէս էլ իմ ձի-
անքը։ Եւ նա ասեց. Ո՞ր ճանա- 8
պարհով գնանք. նա էլ ասեց.
Եդովմի անապատի ճանապարհո-
վը։ Եւ գնացին Իսրայէլի թա- 9
գաւորը, Յուդայի թագաւորը և
Եդովմի թագաւորը և եօթն օր
պտոյտ տուին, և ջուր չ՛կար ոչ
բանակի համար և ոչ էլ նորանց
հետ եղող անասունների համար։
Եւ Իսրայէլի թագաւորն ա- 10
սեց. Ափսո՛ս որ Տէրը կանչել է
երեք թագաւորներիս, որ Մովա-
բի թագաւորի ձեռքը մատնէ։
Եւ Յովսափատն ասեց. Այստեղ 11
Տիրոջ մարգարէ չ՛կա՞յ, որ Տի-
րոջ խօսքը հարցնենք նորանից.
և Իսրայէլի թագաւորի ծառա-
ներից մէկը պատասխանեց և ա-
սեց. Այստեղ է Սափատի որդի
Եղիսէն, որ ջուր էր ածում Ե-
ղիայի ձեռքերին։ Եւ Յովսա- 12
փատն ասեց. Տիրոջ խօսքը կայ
նորա մօտ։ Եւ վայր իջան նորա
մօտ Իսրայէլի թագաւորը և Յով-
սափատը և Եդովմի թագաւորը։
Եւ Եղիսէն ասեց Իսրայէլի թա- 13
գաւորին. Դու ի՞նչ բան ունես
ինձ հետ. գնա քո հօր մարգա-
րէների մօտ և քո մօր մարգարէ-
ների մօտ։ Եւ Իսրայէլի թագա-
ւորն ասեց. Ոչ, որովհետև Տէրն
այս երեք թագաւորին կանչել
է, որ նորանց տայ Մովաբի թա-
գաւորի ձեռքը։ Եւ Եղիսէն ա- 14
սեց. Կենդանի է Զօրաց Տէրը ո-
րի առաջին կանգնած եմ, եթէ
ես չ՛յարգէի Յուդայի Յովսա-
փատ թագաւորին, քեզ մտիկ
չէի տալ և քեզ չէի տեսնիլ։
Բայց հիմա ինձ համար մի 15
նուագածու բերէք. և երբոր
նուագածուն նուագեց, այն ժա-
մանակ նորա վերայ եղաւ
Տիրոջ ձեռքը. Եւ նա ասեց. 16
Այսպէս է ասում Տէրը. Այս

17 հեղեղատը փոս փոս արէք։ Որով-
հետև Տէրն այսպէս է ասում.
Քամի չէք տեսնիլ, և անձրև չէք
տեսնիլ, բայց այս հեղեղատը
ջրով կ'լցուի և կ'խմէք դուք և
ձեր հօտերը և ձեր անասուննե-
18 րը։ Բայց այս թեթև բան է Տի-
րոջ աչքի առաջին, նա Մովաբն
էլ պիտի յանձնէ ձեր ձեռքը։
19 Եւ դուք պիտի ջարդէք ամեն
պարսպաւոր քաղաքները, և ա-
մեն ընտիր քաղաքները և բոլոր
ազնիւ ծառերը պիտի կտորէք,
և բոլոր ջրի աղբիւրները պիտի
խցկէք, և բոլոր ընտիր արտերը
20 քարերով պիտի փչացնէք։ Եւ
առաւօտեան զոհը մատուցանե-
լիս, ահա ջուրեր էին գալիս Ե-
դովմի կողմից, և երկիրը լցուե-
ցաւ ջրով։
21 Եւ բոլոր Մովաբացիները լսե-
ցին, որ թագաւորներն եկել են
նորանց հետ պատերազմելու, և
բոլոր գօտի կապողները և նորան-
ցից էլ մեծերը ժողովուեցան և
22 կանգնեցին սահմանի վերայ։ Եւ
առաւօտը կանուխ վեր կացան,
և երբոր արեգակը ծագեց ջրերի
վերայ, այն ժամանակ Մովաբա-
ցիները հեռուանց մտիկ արին
կարմիր ջրերին իբրև արիւնի։
23 Եւ ասում էին. Այս արիւն է.
թագաւորները կռուել են իրար
հետ և իրար ջարդել. և արդ,
ով Մովաբացիներ, աւարի՛ գը-
24 նանք։ Եւ եկան Իսրայէլի բա-
նակը, բայց Իսրայէլացիները վեր
կացան ու ջարդեցին Մովաբացի-
ներին, և նորանք փախան նորանց
առաջից. բայց նորանք մտան նո-
րա մէջը (այսինքն Մովաբացիներ-
ի երկիրը) և ջարդեցին Մովա-
25 բացիներին. Եւ քաղաքները քան-
դեցին, և ամեն մարդ իր քարը
ամեն լաւ արտի մէջ գցեց և
նորան լցրին և խցկեցին բոլոր ջրի
աղբիւրները, և կտորեցին ա-
մեն ազնիւ ծառերը, այնպէս
որ Կիրհարէսէթում միայն քա-
րերը մնացին. և պարսաւորները
պաշարեցին նորան և ջարդեցին։
26 Եւ երբոր Մովաբի թագաւորը
տեսաւ, որ պատերազմը իր վե-
րայ սաստկացաւ, եօթը հարիւր
սուսերամերկ զօրք առաւ իր հե-
տը, որ ճղեն ունցնէն մինչև Եդով-
մի թագաւորը, բայց չ'կարողա-
ցան։ Եւ նա վեր առաւ իր անդ- 27
րանիկ որդին, որ պիտի թագա-
ւորէր իր տեղը, և նորան ողջա-
կէզ մատուցրեց պարսպի վերայ.
և Իսրայէլացիների դէմ մեծ
բարկութիւն եղաւ. և նորանք
ետ քաշուեցան նորանից և ետ
դառան իրանց երկիրը։

ԳԼ. Դ

Եւ մարդարէների որդկանց կը- 1
նիկներից մէկն աղաղակեց դէպի
Եղիսէն ասելով. Ծառադ՝ իմ
մարդը մեռել է. և դու գիտես
որ ծառադ երկիւղած էր Տէրի-
ցը. բայց պարտատէրը եկել է
որ իմ երկու երեխերքին իրան
համար ծառաներ անէ։ Եւ Եղի- 2
սէն ասեց նորան. Ես քեզ ի՞նչ
անեմ. ասիր ինձ. ի՞նչ ունես
տանդ։ Եւ նա ասեց. Աղախինդ
իր տանը ամենևին ոչինչ չ'ունի,
բացի մի իւղի ամանն։ Եւ նա ա- 3
սեց. Գնա դրսիցը՝ քո բոլոր դրա-
ցիներիցը դարտակ ամաններ ու-
զիր. քիչ չ'հաւաքես։ Եւ տունդ 4
մտիր ու դուռը քո ետևից և քո
որդկանց ետևից կողպիր, և իւղը
ածիր այն բոլոր ամանների մէջ.
և լցուածները վեր առ։ Եւ կինը 5
գնաց նորա կշտիցը, և դուռը
կողպեց իր ետևից և իր որդկանց
ետևից։ Նորանք իրան ամաններ
էին տալիս, և նա ածում էր։
Եւ երբոր ամանները լցուեցան, 6
ասեց իր տղային. Էլ ամանն
տուր ինձ, և նորան ասեց. Էլ
ամանն չ'կայ. և իւղը դադարեց։
Եւ կինը եկաւ ու պատմեց Ա- 7
ստուծոյ մարդին. Նա էլ ասեց.
Գնա իւղը ծախիր և պարտքդ
վճարիր, և մնացածովը ապրիր
դու և տղերքդ։
Եւ մէկ օր Եղիսէն անց էր 8
կենում Սունամով, և այնտեղ մի
հարուստ կին կար. և նա նորան
ստիպեց հաց ուտելու. և քանի
անգամ որ այնտեղով անց էր կե-

նում, գնում էր այնտեղ հաց
9 ուտելու։ Եւ նա ասեց իր մար-
դին. Ահա գիտեմ որ այդ Ա-
ստուծոյ մարդը սուրբ է, որը
միշտ անցնում է մեր մօտովը։
10 Թող մի փոքր վերնատուն շինենք
պատի վերայ, և նորա համար
այնտեղ անկողին, սեղան, աթոռ
և աշտանակ դնենք որ մեզ մօտ
11 գալիս այնտեղ գնայ։ Եւ եղաւ
մէկ օր որ նա եկաւ այնտեղ և
գնաց վերնատունը և այնտեղ
12 պառկեց։ Եւ իր ծառայ Գէե-
զիին ասեց. Այդ Սունամացի
կնկան կանչիր. և նա նորան կան-
չեց. և կինը կանգնեց նորա ա-
13 ռաջին։ Եւ ծառային ասեց. Ասիր
նորան, ահա մեզ համար այս
բոլոր աշխատանքը քաշեցիր, հի-
մա ի՞նչ պէտք է անել քեզ.
թագաւորի մօտ մի բան ունե՞ս,
կամ զօրագլխի՞ մօտ. բայց կինն
ասեց. Ես իմ ժողովրդի մէջ եմ
14 բնակվում։ Եւ նա ասեց. Ու-
րեմն ի՞նչ պէտք է նորա համար
անել. և Գէեզին ասեց. Ցիրա-
ւի՝ ինքը որդի չ'ունի, և մարդն
15 էլ ծեր է։ Եւ ասեց. Կանչիր
նորան. և նա կանչեց նորան. և
16 կինը կանգնեց դռանը։ Եւ Եղի-
սէն ասեց. Եկող տարի հէնց այս
ժամանակին մի որդի կ'դրկես։
Եւ կինն ասեց. Ոչ, ով իմ տէր՝
մարդ Աստուծոյ, աղախինդ
17 սուտ մի ասիր։ Սակայն կինը
յղացաւ և մի որդի ծնեց յա-
ջորդ տարուայ նոյն ժամանակին,
որ նորան ասել էր Եղիսէն։
18 Եւ երեխան մեծացաւ, և մէկ
օր գնաց հնձողներին իր հօր մօտ։
19 Եւ ասեց իր հօրը. Գլո՛ւխս,
գլո՛ւխս. և նա ծառային ա-
20 սեց. Նորան տար իր մօրը։ Եւ
նա նորան վեր առաւ տարաւ
նորա մօրը, և նա մնաց նորա
ծնկերի վերայ մինչև կէս օր և
21 մեռաւ։ Եւ նա վեր գնաց և նո-
րան պառկեցրեց Աստուծոյ մար-
դի անկողինի վերայ և ետևիցը
22 կողպեց ու գնաց։ Եւ իր մար-
դին կանչեց և ասեց. Ծառաներ-
ից մէկին ինձ մօտ ուղարկիր և
էշերից՝ մէկը, որ շուտով գնամ
մինչև Աստուծոյ մարդին և ետ
դառնամ։ Եւ մարդն ասեց. Ի՞ն- 23
չու համար ես դու այսօր նորա
մօտ գնում, ոչ ամսագլուխ է,
ոչ շաբաթ. նա էլ ասեց. Հան-
գիստ եղիր։ Եւ նա էշը պատ- 24
րաստեց և ասեց ծառային. Քշիր
և գնա. և չ'կանգնեցնես մինչև
որ քեզ ասեմ։ Եւ նա գնաց ու 25
հասաւ Աստուծոյ մարդին Կար-
մեղոս սարի վերայ. և երբոր Ա-
ստուծոյ մարդը նորան տեսաւ իր
դիմացին, այն ժամանակ ասեց իր
ծառայ Գէեզիին. Ահա սա այն
Սունամացի կինն է։ Արդ վազիր 26
նորան դիմաւորիր և ասիր նորան.
Ողջ առո՞ղջ ես, ողջ առո՞ղջ է
մարդդ, ողջ առո՞ղջ է երեխադ.
և նա ասեց. Ողջ առողջ։ Եւ 27
կինը գնաց սարը Աստուծոյ մար-
դի մօտը և բռնեց նորա ոտքերը.
և Գէեզին մօտեցաւ որ նորան
ետ քաշէ. բայց Աստուծոյ մարդն
ասեց. Թող տուր դորան. որով-
հետև սիրտը ցաւած է, և Տէրը
ծածկել է ինձանից և ինձ չէ ի-
մացրել։ Եւ նա ասեց. Ես իմ 28
տէրից որդի խնդրեցի՞. չ'ասեցի՞
թէ ինձ մի խաբիր։ Եւ նա Գէ- 29
եզիին ասեց. Մէջքդ գօտի կա-
պիր և առ իմ գաւազանը ձեռ-
քըդ և գնա. եթէ մի մարդի
հանդիպես, նորան բարև մի տար.
և եթէ քեզ մէկը բարև տայ,
նորան պատասխան մի տար. և
իմ գաւազանը տար դիր երեխայի
երեսին։ Բայց երեխայի մայրն 30
ասեց. Կենդանի է Տէրը և կեն-
դանի է քո հոգին, եթէ ես քեզ
թողեմ. և նա վեր կացաւ գնաց
այն կնկայ ետևից։ Եւ Գէեզին 31
գնացել էր նորանց առաջից, և
գաւազանը երեխայի երեսին դը-
րել, բայց ոչ ձայն կար, ոչ էլ
լսել. և ետ դառաւ նորան դի-
մաւորեց և նորան պատմեց ա-
սելով թէ Երեխան չ'զարթնեց։
Եւ Եղիսէն մտաւ տունը, և ա- 32
հա տղան մեռած նորա անկողի-
նի վերայ պառկած էր։ Եւ նա 33
ներս մտաւ և դուռը կողպեց ի-
րանց երկուսի ետևից և աղօթք
արաւ Տիրոջը։ Եւ վեր կացաւ 34

պառկեց երեխայի վերայ, և դը-
բաւ իր բերանը նորա բերանի
վերայ, և իր աչքերը նորա աչ-
քերի վերայ և իր թաթերը նո-
րա թաթերի վերայ և կռացաւ
նորա վերայ. և երեխայի մարմի-
35 նը տաքացաւ։ Եւ ետ դառաւ
տան մէջը մէկ այս կողմը մէկ
այն կողմը գնաց, և վեր կացաւ
կռացաւ նորա վերայ, և երե-
խան եօթն անգամ փռշտաց. և
36 երեխան իր աչքերը բացաւ։ Եւ
նա կանչեց Գէեզիին. Կանչիր
այդ Սունամացի կնկան. և նա
նորան կանչեց. և [illegible] էլ եկաւ
նորա մօտ. և նա ասեց. Առ ե-
37 րեխադ։ Եւ [illegible] եկաւ ու ընկաւ
նորա ոտքերը և մինչև եր-
կիրը խոնարհութիւն արաւ, և
իր որդին առաւ և գնաց։
38 Եւ Եղիսէն ետ դառաւ Գաղ-
գաղա։ Եւ այն երկրումը սով
կար. և մարգարէների որդիքը
նորա առաջին նստել էին. և նա
ասեց իր ծառային. Մեծ կաթ-
սան դիր և ապուր եփիր մար-
39 գարէների որդկանց համար։ Եւ
[illegible] մէկը դուրս եկաւ դաշ-
տը կանաչեղէն ժողովելու, և
վայրի որթ գտաւ և նորանից
վայրի վարունկ քաղեց շալակը
լիքը. և եկաւ ու փրթեց ապու-
րի կաթսայի մէջը, որովհետև
40 չ'գիտէին։ Եւ ածեցին մարդ-
կանց համար որ ուտեն. և երբ-
որ այն ապուրիցը կերան, գոռա-
լով ասեցին. Կաթսայումը մահ
կայ, ով մարդ Աստուծոյ. և չը
41 կարողացան ուտել։ Եւ նա ա-
սեց. Այլիւր բերէք. և [illegible]
կաթսան գցեց, և ասեց. Ածիր
մարդկանց համար, թող ուտեն.
և կաթսայումն [illegible] վատ բան
չ'կար։
42 Եւ մի մարդ եկաւ Բահաղ-
սաղիսայից և բերաւ Աստուծոյ
մարդի համար երախայրիների
հաց՝ քսան հատ գարեղէն հաց
և թարմ հասկեր իր պարկումը,
և ասեց. Տուր ժողովրդիդ որ
43 ուտեն։ Եւ նորա ծառան ասեց.
Ի՞նչ դնեմ այս հարիւր մարդ-
կանց առաջին. բայց նա ասեց.
Տուր մարդկանցը որ ուտեն. ո-
րովհետև այսպէս է ասում Տէ-
րը. Կ'ուտեն և կ'աւելանայ [illegible]։
Եւ նա դրաւ նորանց առաջին, 44
և նորանք կերան, և աւելացաւ
էլ Տիրոջ խօսքի համեմատ։

ԳԼ. Ե

Եւ Ասորիների թագաւորի զօ- 1
բագլուխ Նէեմանը մի մեծ և
յարգելի մարդ էր իր տիրոջ ա-
ռաջին. որովհետև Տէրը նորա
միջոցով փրկութիւն էր տուել
Ասորիներին. և այս մարդը քաջ
զօրաւոր էր, [illegible] բորոտ էր։
Ասորիները [illegible] գունդերով 2
էին եկել և Իսրայէլի երկրից մի
փոքր աղջիկ գերի տարել, որ
Նէեմանի կնկայ առաջին էր լի-
նում։ Եւ սա ասեց իր տիկնոջը. 3
Երանի թէ իմ տէրը Սամարիա-
յումն եղող մարգարէի առաջին
լինէր, այն ժամանակ նա նորան
կ'բժշկէր իր բորոտութիւնիցը։
Եւ Նէեմանը գնաց և պատմեց իր 4
տիրոջն ասելով. Այսպէս և այս-
պէս է խօսել այն Իսրայէլի երկ-
րից եղող աղջիկը։ Եւ Ասորիներ- 5
ի թագաւորն ասեց. Ճանապար-
հուիր գնա. և ես նամակ կ'ու-
ղարկեմ Իսրայէլի թագաւորին։
Եւ նա գնաց և իր հետը վեր ա-
ռաւ տասը տաղանդ արծաթ և
վեց հազար ոսկի, և տասը փոխ-
նորդ հանդերձներ։ Եւ նամակը 6
բերաւ [illegible] Իսրայէլի թագա-
ւորին ասելով. Եւ արդ այս նա-
մակը հէնց որ քեզ հասաւ ահա
ուղարկում եմ քեզ մօտ իմ
Նէեմանն ծառային, որ դու բժշ-
կես նորան իր բորոտութիւնիցը։
Եւ երբոր Իսրայէլի թագաւորը 7
կարդաց նամակը, պատառեց իր
հանդերձները և ասեց. Մի՞թէ
ես Աստուած եմ որ մեռցնեմ
կամ ապրեցնեմ, որ սա ինձ մօտ
է ուղարկում մարդին իր բորո-
տութիւնիցը բժշկելու. սակայն
դուք իմացէք և տեսէք որ նա
պատճառ է որոնում ինձանից։
Եւ երբոր Աստուծոյ մարդը՝ 8
Եղիսէն լսեց, որ Իսրայէլի թա-

գաւորը պատառել է իր հան-
դերձը, այն ժամանակ [illegible] ու-
ղարկեց թագաւորին ասելով.
Ի՞նչու համար պատառեցիր հան-
դերձդ. թող նա ինձ մօտ գայ
և իմանայ որ մարգարէ կայ Իս-
9 րայէլի մէջ։ Եւ Նէեմանը գնաց
իր ձիերովն ու կառքովը և կանգ-
նեց Եղիսէի տան դռան մօտ։
10 Եւ Եղիսէն պատգամաւոր ու-
ղարկեց նորա մօտ ասելով, Գնա
և եօթն անգամ լուացուիր Յոր-
դանանումը, և մարմինդ քեզ
մօտ կ'դառնայ և կ'մաքրուիս։
11 Բայց Նէեմանը բարկացաւ և գը-
նաց՝ ասելով. Ահա ես կարծում
էի թէ անպատճառ ինձ մօտ
դուրս կ'գայ և կ'կանգնէ ու իր
Եհովայ Աստուծոյ անունը կ'կան-
չէ, և ձեռքը կ'դնէ այն տեղի
վերայ, և այն ժամանակ բորո-
12 տութիւնը կ'բժշկէ։ Մի՞թէ Դա-
մասկոսի Աբանա և Փարփար գե-
տերը Իսրայէլի բոլոր ջրերիցը
լաւ չեն. մի՞թէ նորանցում չէի
լուացուիլ և մաքրուիլ։ Եւ նա
ետ դառաւ գնաց բարկութեամբ։
13 Բայց նորա ծառաները մօտեցան
և խօսեցին նորա հետ և ասեցին.
Ով հայր, [illegible] մարգարէն քեզ
մի մեծ բան ասած լինէր, չէի՞ր
անիլ. ո՞ւր մնաց որ քեզ ասեց.
14 Լուացուիր և կ'մաքրուիս։ Եւ
նա վայր իջաւ և եօթն անգամ
թաղուեցաւ Յորդանանի մէջ
Աստուծոյ մարդի խօսքին համե-
մատ. և նորա մարմինը ետ դա-
ռաւ իբրև մի փոքր տղայի մար-
մին, և նա մաքրուեցաւ։
15 Եւ նա ետ դառաւ իր բոլոր
բանակովը Աստուծոյ մարդի մօտ
և եկաւ կանգնեց նորա առաջին
և ասեց. Ահա իմացայ որ բոլոր
երկրիս վերայ Աստուած չ'կայ
բայց միայն Իսրայէլումը. և հի-
մա խնդրեմ՝ ծառայիցդ մի ընծ-
16 ծայ ընդունիր։ Բայց նա ասեց.
Կենդանի է Տէրը, որի առաջին
ես կանգնած եմ, եթէ ընդու-
նեմ. և նա ստիպեց նորան, բայց
17 նա մերժեց։ Եւ Նէեմանն ա-
սեց. Հիմա որ ոչ, թող ծառա-
յիդ երկու ջորիի բեռ հող տըր-
ուի. որովհետև ծառադ այլ ևս
բացի Եհովայից ուրիշ աստուած-
ների ողջակէզ կամ զոհ չի ա-
նելու։ Այս բանը [illegible] թող ներ- 18
է Եհովան քո ծառային, [illegible]
երբոր իմ տէրը Ռեմօնի տունը
մտնէ այնտեղ երկրպագութիւն
անելու համար, և նա կռնէ իմ
ձեռքին և ես կռանամ Ռեմօնի
տանը, այն ժամանակ այս բանի
համար՝ այսինքն Ռեմօնի տանը
իմ կռանալու համար՝ թող Տէ-
րը ներէ քո ծառային։ Եւ նա 19
ասեց նորան. Գնա խաղաղու-
թեամբ. և նա գնաց նորա մօ-
տից բաւական տեղ։
Եւ Գէեզին՝ Աստուծոյ մարդ 20
Եղիսէի ծառան՝ ասեց. Ահա իմ
տէրը խնայեց այս Ասորի Նէեմա-
նին նորա բերածը ձեռքիցը առ-
նելու. կենդանի է Տէրը, եթէ
ես չ'վազեմ նորա ետևից և նո-
րանից մի բան չ'առնեմ։ Եւ Գէ- 21
եզին վազեց Նէեմանի ետևիցը.
և Նէեմանը տեսաւ մէկը ետևի-
ցը վազ էր տալիս. և նա վայր
թռաւ կառքիցը նորան դիմա-
ւորելու և ասեց. Խաղաղութի՞ւն
է. և նա ասեց. Խաղաղութիւն. 22
իմ տէրն ինձ ուղարկեց թէ Ահա
հիմա ինձ մօտ երկու պատանի-
ներ են եկել Եփրեմի սարից մար-
գարէների որդկանցիցը. խնդրեմ
նորանց համար մի տաղանդ ար-
ծաթ և երկու փոխնորդ հան-
դերձ տուր։ Եւ Նէեմանն ասեց. 23
Բարեհաճիր՝ երկու տաղանդ առ,
և ստիպեց նորան, և ծրարեց եր-
կու տաղանդ արծաթը երկու
պարկի մէջ և երկու փոխնորդ
հանդերձը և տուաւ իր երկու
ծառաներին, որ տարին նորա ա-
ռաջիցը։ Եւ երբոր բլրին հա- 24
սան, առաւ նորանց ձեռքիցը և
թաքցրեց տան մէջ. բայց մարդ-
կանցը ճանապարհ դրաւ, և նո-
րանք գնացին։ Իսկ ինքն եկաւ 25
ու կանգնեց իր տիրոջ առաջին.
և Եղիսէն ասեց նորան. Ո՞րտե-
ղից, Գէեզի. և նա ասեց. Ծա-
ռադ այս կամ այն կողմը չէ գը-
նացել։ Եւ Եղիսէն նորան ասեց. 26
Չէ՞ որ իմ հոգին գնացել էր

երբոր մարդը ետ դառաւ իր
կառքիցը քեզ դիմաւորելու.
ժամանա՞կն է արծաթ առնելու
և հանդերձներ, ձիթենիներ, այ-
գիներ, հօտեր, արջառներ և
ծառաներ ու աղախիններ առնե-
27 լու։ Ուստի Նէեմանի բորոտու-
թիւնը քեզ և քո սերունդին
փակչի յաւիտեան. և նա դուրս
եկաւ նորա առաջիցը ձիւնի պէս
բորոտ։

ԳԼ. Զ

1 Եւ մարգարէի որդիքն ասեցին
Եղիսէին. Ահա այս տեղը՝ ուր որ
մենք բնակվում ենք քո առաջին,
2 մեզ համար նեղ է։ Թող գնանք
մինչև Յորդանան, և ամեն մէկս
վեր առնենք այնտեղից մէկ գե-
րան, և այնտեղ մեզ համար
տեղ շինենք այնտեղ բնակուե-
3 լու. և նա ասեց. Գնացէք։ Եւ
նորանցից մէկն ասեց. Բարեհա-
ճիր, դու էլ գնա ծառաներիդ
հետ. և նա ասեց. Ես կ'գամ։
4 Եւ գնաց նորանց հետ, և եկան
Յորդանան և ծառերը կտրում
5 էին։ Եւ մէկը գերանը կտրելիս
տապարի երկաթն ընկաւ ջուրը,
և նա գոչելով ասեց. Վա՛յ, տէր
6 իմ, նաև փոխ առուած էր։ Եւ
Աստուծոյ մարդն ասեց. Ո՞ւր
ընկաւ. և նա տեղը նորան ցոյց
տուաւ. նա էլ մի փայտ կտրեց
և գցեց այնտեղ, և երկաթին
7 լողալ տուաւ։ Եւ ասեց. Այդ
վեր առ. նա էլ ձեռքը մեկնեց
ու վեր առաւ նորան։
8 Եւ Ասորիների թագաւորը պա-
տերազմում էր Իսրայէլի դէմ,
և իր ծառաների հետ խորհուրդ
արաւ ասելով. Այսինչ կամ
9 այնինչ տեղը բանակ դնեմ։ Բայց
Աստուծոյ մարդը Իսրայէլի թա-
գաւորին լուր ուղարկեց ասելով.
Զգուշացիր այստեղով անցկենա-
լուց. որովհետև Ասորիները այն-
10 տեղ բանակ են տուել։ Եւ Իս-
րայէլի թագաւորը մարդ էր ու-
ղարկում այնտեղը որի համար
Աստուծոյ մարդն ասում էր և
նորան զգուշացնում. և նա ըզ-
գուշացաւ այն տեղիցը ոչ թէ
մէկ և ոչ թէ երկու անգամ։
Եւ Ասորիների թագաւորի սիր- 11
տը շփոթուեցաւ այս բանի վե-
րայ և իր ծառաներին կանչեց ու
ասեց նորանց. Չէ՞ք իմացնիլ ինձ
թէ մեր մարդկանցից ով է Իսրա-
յէլի թագաւորի հետ։ Եւ նորա 12
ծառաներից մէկն ասեց. Ոչ, ով
իմ տէր թագաւոր, այլ Իսրա-
յէլումն եղող Եղիսէ մարգարէն
է իմացնում Իսրայէլի թագա-
ւորին այն բաները, որ դու խօ-
սում ես քո անկողնի սենեակու-
մը։ Եւ նա ասեց. Գնացէք և 13
տեսէք, նա ուր է, որ ես մարդ
ուղարկեմ ու բռնել տամ. և
նորան իմացրին ասելով. Ահա
Դօթայիմումն է։
Եւ այնտեղ ձիեր և կառքեր 14
և մեծ զօրք ուղարկեց, և սո-
րանք գիշերը եկան ու քաղաքը
պաշարեցին։ Եւ Աստուծոյ մար- 15
դի ծառան առաւօտանց կանուխ
վեր կացաւ և դուրսը եկաւ, և
ահա զօրքը պատել էր քաղաքը՝
նաև ձիերն ու կառքերը. և նո-
րա ծառան ասեց նորան. Վա՛յ,
տէր իմ, ի՞նչ անենք։ Նա էլ 16
ասեց. Մի վախենար. որովհետև
մեզ հետ եղողները շատ են քան
թէ նորանց հետ եղողները։ Եւ 17
Եղիսէն աղօթք արաւ և ասեց.
Ով Տէր, բաց նորա աչքերը որ
տեսնէ. և Տէրը բացաւ ծառայի
աչքերը և նա տեսաւ, և ահա
սարը լիքն էր հրեղէն ձիերով
և կառքերով Եղիսէի շուրջը։
Եւ նորանք իջան նորա մօտ. բայց 18
Եղիսէն աղօթք արաւ Տիրոջը և
ասեց. Աղաչում եմ՝ զարկիր
այս ժողովրդին կուրութեամբ։
Եւ նորանց զարկեց կուրու-
թեամբ Եղիսէի խօսքին համե-
մատ։ Եւ Եղիսէն ասեց նորանց. 19
Ճանապարհը այս չէ. և քաղաքը
այս չէ. իմ ետևիցը եկէք և ձեզ
կ'տանեմ այն մարդի մօտ, որին
դուք որոնում էք. և նա նո-
րանց տարաւ Սամարիա։ Եւ 20
երբոր եկան Սամարիա, այն ժա-
մանակ Եղիսէն ասեց. Ով Տէր,
սորանց աչքերը բաց որ տեսնեն.

և Տէրը բացաւ նորանց աչքերը
և նորանք տեսան, և ահա Սա-
21 մարիայի մէջ էին։ Եւ Իսրայէլի
թագաւորն ասեց Եղիսէին՝ երբ-
որ նորանց տեսաւ. Զարկե՞մ,
22 զարկե՞մ, հայր իմ։ Եւ նա ա-
սեց. Մի զարկիր. մի՞թէ դու
սպանում ես նորանց որ քո սու-
րովը և աղեղովը գերի արիր.
հաց ու ջուր դիր նորանց առա-
ջին որ ուտեն և խմեն և յետոյ
23 գնան իրանց տիրոջ մօտ։ Եւ
նորանց համար մի մեծ հացկե-
րոյթ պատրաստեց, և նորանք
կերան ու խմեցին. և յետոյ նո-
րանց արձակեց և նորանք գնա-
ցին իրանց տիրոջ մօտ, և Ասո-
րիների գունդերը այլ ևս չ'եկան
Իսրայէլի երկիրը։
24 Եւ սորանից յետոյ ժողովեց
Ասորիների Բենադադ թագաւորն
իր բոլոր բանակը և վեր գնաց ու
25 պաշարեց Սամարիան։ Եւ մեծ
սով եղաւ Սամարիայումը. որով-
հետև պաշարել էին նորան, մին-
չև որ մէկ էշի գլուխը ութսուն
սիկղ արծաթ և մէկ կապճի չոր-
բորդ մաս *աղաւնիի աղբը հինգ
26 սիկղ արծաթ եղաւ։ Եւ երբոր
Իսրայէլի թագաւորը պարսպի
վերայից անցնում էր, մի կին
դէպի նորան գոռաց ասելով.
Օգնիր ինձ, ով իմ տէր թագա-
27 ւոր։ Եւ նա ասեց. Եթէ Տէրը
քեզ չ'օգնէ, ես ո՞րտեղից օգ-
նեմ քեզ. կալի՞ցը թէ հնձա-
28 նիցը։ Եւ թագաւորը նորան ա-
սեց. Ի՞նչ ունես. նա էլ ասեց.
Այս կինը ինձ ասեց՝ Տուր տղադ
այսօր ուտենք, իմ տղան էլ է-
29 գուց կ'ուտենք։ Մենք էլ եփե-
ցինք տղաս և կերանք նորան, և
ես ասում եմ իրան միւս օրը.
Տուր տղադ որ ուտենք, բայց
30 դա թաքցրել է իր տղային։ Եւ
երբոր թագաւորը լսեց այն կընկ-
կայ խօսքերը, պատառեց հան-
դերձը պարսպի վերայով գնալիս,
և ժողովուրդը տեսաւ որ ահա
ներսևանց քուրձը նորա մարմնի
31 վերայ էր։ Եւ նա ասեց. Աստ-
ուած ինձ այսպէս անէ և սորա-
նից աւելի անէ, եթէ Սափատ-
եան Եղիսէի գլուխը այսօր նորա
վերայ մնալու լինի։ Եւ Եղիսէն 32
նստել էր իր տանը և ծերերն էլ
նստել էին նորա հետ. և թագա-
ւորը մարդ ուղարկեց իր առա-
ջից. բայց պատգամաւորը դեռ
չէր եկել նորա մօտ, որ նա ա-
սեց ծերերին. Տեսնո՞ւմ էք որ
այս մարդասպանի որդին մարդ է
ուղարկել իմ գլուխը կտրելու.
տեսէք, հէնց որ պատգամաւորը
եկաւ՝ դուռը կողպեցէք և նո-
րան սեղմեցէք դռանը. չէ՞ որ
նորա տիրոջ ոտքերի ձայնը նորա
ետևիցը գալիս է։ Նա տակաւին 33
նորանց հետ խօսելիս ահա պատ-
գամաւորն իջաւ նորա մօտ և ա-
սեց. Ահա այս չարիք է Տիրոջ
կողմիցը, այլ ևս ի՞նչ սպասեմ
Տէրիցը։

ԳԼ. Է

Եւ Եղիսէն ասեց. Լսեցէք Տի- 1
րոջ խօսքը, այսպէս է ասում
Տէրը. Էգուց այս ժամանակ մէկ
գրիւ շարմաղ ալիւրը մէկ սիկղ,
և երկու գրիւ գարին մէկ սիկղ
կ'լինի Սամարիայի դռանը։ Եւ 2
պատասխանեց այն նախարարը,
որի ձեռքի վերայ կռնում էր
թագաւորը, Աստուծոյ մարդին
և ասեց. Ահա եթէ Տէրը եր-
կընքումը պատուհաններ էլ շի-
նէր, կ'լինի՞ այդ բանը. բայց
նա ասեց. Ահա կ'տեսնես քո
աչքերովը, սակայն ինքդ նորա-
նից չես ուտիլ։
Եւ քաղաքի դռանը չորս բո- 3
րոտ մարդ կար, և նորանք իրար
ասեցին. Մենք ի՞նչ ենք այստեղ
նստում մինչև որ մեռնենք։ Եթէ 4
ասենք՝ գնանք քաղաքը, սով
կայ քաղաքումը և այնտեղ կը
մեռնենք. և եթէ այստեղ մը-
նանք, կ'մեռնենք. ուրեմն հիմա
եկէք ընկնենք Ասորիների բանա-
կը. եթէ մեզ ողջ թողեցին,
կ'ապրենք. բայց եթէ մեզ մեռ-
ցրին, կ'մեռնենք։ Եւ մութ ժա- 5
մանակին վեր կացան որ գնան

*Մի տեսակ ուտելիք։

Ասորիներէն բանակը, և եկան մինչև Ասորիներէն բանակին ծայրը. և ահա այնտեղ մարդ չը
6 կար. Որովհետև Տէրը Ասորիներէն բանակի մէջ կառքերի ձայն և ձիերի ձայն և մեծ զօրքի ձայն էր լսել տուել, որ իրար ասէին. Ահա Իսրայէլի Թագաւորը փեսացիներէն Թագաւորներին ու Եգիպտոսի Թագաւորներին վարձել է մեզ դէմ, որ գան մեզ
7 վերայ: Եւ վեր կացան ու փախան մութ ժամանակին, և թողեցին իրանց վրաններըը, իրանց ձիերը և իրանց էշերն ու բանակը, ինչպէս որ էր, և փախան
8 իրանց անձինքը պրծեցնելով: Եւ այն բորոտներըը եկան մինչև բանակի ծայրը և մտան մի վրանի մէջ և կերան ու խմեցին և արծաթ ու ոսկի ու հանդերձներ առան գնացին և թաքցրին. և եւ դառան ու մտան մի ուրիշ վրանի մէջ, և այնտեղից էլ վեր ա-
9 ռան ու գնացին թաքցրին: Եւ իրար ասեցին. Մենք այսպէս չենինք անելու. այս օրը աւետիքի օր է, և մենք լռել ենք և մնում ենք մինչև առաւօտեան լոյսը, այն ժամանակ մենք յանցաւոր կ'գտնուինք. և արդ եկէք գընանք և յայտնենք Թագաւորի
10 տանը: Եւ նորանք եկան և կանչեցին քաղաքի դռնապանին և պատմեցին նորանց ասելով. Մենք գնացինք Ասորիների բանակը, և ահա այնտեղ ոչ մարդ կայ և ոչ մարդի ձայն, այլ կապած ձիեր և կապած էշեր և վրան-
11 ներըը ինչպես որ կան: Եւ դռնապանները կանչեցին ու յայտնեցին Թագաւորի տանը՝ ներսումը:
12 Եւ Թագաւորը վեր կացաւ գիշերը և ասեց իր ծառաներին. Թողէք ձեզ պատմեմ Ասորիներէն մեզ արածը. Նորանք գիտեն որ մենք սոված ենք, և դուրս են գնացել բանակիցը դաշտումը թաքնուելու ասելով Թէ երբոր քաղաքիցը դուրս գան, մենք նորանց ողջ ողջ կ'բռնենք,
13 և քաղաքը կ'մտնենք: Բայց նո-

բա ծառաներից մէկը պատասխան տուաւ և ասեց. Նորանում ⁻ᵧᵢᵏᵏ ᵗᵥᵣᵗᵢᵣ՝ մնացած ձիերից հինգը թող առնեն (ահա ինչպես որ է բոլոր Իսրայէլի բազմութիւնը որ նորանում մնացել է, ահա նոյնպէս է և բոլոր Իսրայէլի բազմութիւնը որ փչացել է) թողէք ուղարկենք և տեսնենք: Եւ երկու կառքեր առան ձիերովը. և Թագաւորը ՛ᵢᵣᵣ ուղարկեց Ասորիների բանակի ետևից ասելով. Գնացէք և տեսէք: Եւ նորանք գնացին նորանց ետևից մինչև Յորդանան, և ահա բոլոր ճանապարհը լիքն էր հանդերձներով և անօթներով որ Ասորիները շտապելով դէն էին գցել, և պատգամաւորները ետ դառան ու պատմեցին Թագաւորին:

Եւ ժողովուրդը դուրս գնաց, և կողոպտեցին Ասորիների բանակը. և մէկ գրիւ շարմաղ ալիւրը դառաւ մէկ սիկղ և երկու գրիւ գարին մէկ սիկղ՝ Տիրոջ խօսքին համեմատ: Եւ Թագաւորը դռան վերակացու դրաւ այն նախարարին, որի ձեռքի վրայ կռնում էր, և ժողովուրդը նորան կոխ տուաւ դռան մէջ և նա մեռաւ, ինչպէս Աստուծոյ մարդը խօսել էր որ ասեց Թագաւորը նորա մօտ իջնելիս: Եւ երբոր Աստուծոյ մարդը Թագաւորի հետ խօսեց ասելով. Երկու գրիւ գարին մէկ սիկղ և մէկ գրիւ շարմաղ ալիւրը մէկ սիկղ կ'դառնայ էգուց այս ժամանակ Սամարիայի դռանը, Եւ այն նախարարը պատասխանել էր Աստուծոյ մարդին և ասել. Ահա եթէ Տէրը երկնքումը պատուհաններ էլ շինէր, կ'լինի՞ այդ բանը. Նա էլ ասել էր ահա կը տեսնես քո աչքերովը, սակայն ինքդ նորանից չես ուտիլ: Եւ նորան այնպէս էլ եղաւ. և ժողովուրդը նորան կոխ տուաւ դռան մէջ, և նա մեռաւ:

Գլ. Ը

Եւ Եղիսէն խօսեց այն կնկայ

հետ որի որդին ողջացրել էր, Թէ վեր կաց և գնա դու և քո տունը և պանդուխտ եղիր ուր որ կարող ես. որովհետև Տէրը կանչել է սով, և նա էլ գալու
2 է այս երկիրը եօթը տարի: Եւ վեր կացաւ այն կինը և արաւ Աստուծոյ մարդի խօսքին պէս, և գնաց նա և իր տունը և պանդուխտ եղաւ փղշտացիների երկրումը եօթը տարի:
3 Եւ եօթը տարի անցնելուց յետոյ այն կինը ետ դառաւ Փղշտացիների երկրիցը և գնաց իր տան և իր արտի համար Թագաւորին բողոքելու:
4 Եւ Թագաւորը խօսում էր Աստուծոյ մարդի ծառայ Գէեզիի հետ ասելով. Ինձ պատմիր այն ամեն մեծամեծ բաները որ
5 Եղիսէն արել է. Եւ երբոր նա Թագաւորին պատմում էր, Թէ ինչպես ողջացրեց մեռելին, ահա այն կինը որի որդին ողջացրել էր, բողոքում էր Թագաւորին իր տան և իր արտի համար. և Գէեզին ասեց. Ով իմ տէր Թագաւոր, սա այն կինն է և սա նորա որդին է, որին ողջացրեց
6 Եղիսէն: Եւ Թագաւորը հարցրեց այն կնկան, նա էլ պատմեց նորան. և Թագաւորը նորան մի ներքինի տուաւ ասելով. Ետ դարձրու դորա բոլոր ստացուածքը և արտի բոլոր արդիւնքը նորա այս երկիրը Թողած օրիցը մինչև հիմա:
7 Եւ Եղիսէն գնաց Դամասկոս. և Ասորիների Բենադադ Թագաւորը հիւանդ էր և նորան իմացրին, Թէ Աստուծոյ մարդը ե-
8 կել է մինչև այստեղ: Եւ Թագաւորն ասեց Ազայէլին. Ձեռքդ ընծայ առ և գնա Աստուծոյ մարդին դիմաւորելու, և նորանով հարցրու Եհովային ասելով Թէ Արդեօք պիտի առողջանամ
9 այս հիւանդութիւնից: Եւ Ազայէլը գնաց, նորան դիմաւորեց, և իր ձեռքը ընծայ առաւ, և Դամասկոսի բոլոր բարիքներիցը քառասուն ուղտի բեռ, և եկաւ ու կանգնեց նորա առաջին և ասեց. Քո որդին Ասորիների Բենադադ Թագաւորը՝ ինձ քեզ մօտ ուղարկեց ասելով Թէ Արդեօք պիտի առողջանամ այս հիւանդութիւնից: Եւ Եղիսէն
10 ասեց նորան. Գնա ասիր նորան Թէ առողջանալու ես. բայց Տէրը ինձ ցոյց տուաւ որ նա պիտի մեռնի: Եւ նա երեսը դարձրեց
11 նորան ու կանգնեց շատ երկար, և Աստուծոյ մարդը լաց եղաւ:
12 Եւ Ազայէլն ասեց. Ինչու համար է իմ տէրը լաց լինում. Նա էլ ասեց. Որովհետև գիտեմ Թէ դու ինչ չարիք պիտի անես Իսրայէլի որդկանցը, նորանց բերդերը կրակով պիտի այրես, և նորանց տղամարդկերին սրով պիտի սպանես, և նորանց մանուկներին քարովը պիտի տաս, և նորանց յղիներին պիտի ճղես:
13 Եւ Ազայէլն ասեց. Ինչ է քո ծառան՝ այս շունը, որ այս մեծ բանն անէ. բայց Եղիսէն ասեց նորան. Տէրը քեզ ցոյց տուաւ ինձ իբրև Ասորիների վերայ Թագաւոր:
14 Եւ նա գնաց Եղիսէի մօտիցը և եկաւ իր տիրոջ մօտ, և նա ասեց նորան. Եղիսէն քեզ ինչ է ասել. և նա ասեց. Ասել է Թէ առողջանալու ես:
15 Եւ հետևեալ օրը առաւ վերմակը և կոխեց ջուրը, և ձգեց նորա երեսի վերայ և նա մեռաւ. և Ազայէլը Թագաւոր եղաւ նորա տեղը:
16 Եւ Իսրայէլի Թագաւոր Աքաաբեան Յովրամի հինգերորդ տարիումը – որ Յովսափատ Յուդայի վերայ Թագաւորում էր – Յուդայի Թագաւոր Յովսափատի որդի Յովրամը Թագաւորեց:
17 Երեսունևերկու տարեկան էր երբոր Թագաւոր եղաւ, և ութ տարի Թագաւորեց Երուսաղէմում:
18 Եւ գնաց Իսրայէլի Թագաւորների ճանապարհովը, ինչպես որ արել էր Աքաաբի տունը. որովհետև Աքաաբի աղջիկը նորա կինն էր, և նա չարութիւն արաւ Տիրոջ
19 աչքի առաջին: Եւ Տէրը չուզեց ջնջել Յուդային իր Դաւիթ ծառայի համար, ինչպես որ ասել էր նորան Թէ մի ճրագ պիտի

տայ նորան նորա որդկանցում
ամեն ժամանակ ։
20 Նորա օրերում ապստամբուեց
Եդովմը Յուդայից, և իրանց վե-
21 րայ մի թագաւոր դրին ։ Եւ
Յովրամն անցաւ Սայիր և բոլոր
կառքերն իր հետը ։ Եւ եղաւ
որ նա գիշերը վեր կացաւ և ջար-
դեց Եդովմացիներին, որ իրան
պաշարել էին, և կառքերի իշ-
խաններին, և ժողովուրդը փա-
22 խաւ իր վրանները ։ Բայց Եդովմն
ապստամբ մնաց Յուդային մինչև
այսօր ։ Այն ժամանակ Լեբնան
էլ ապստամբուեց ։
23 Եւ Յովրամի գործերի մնացոր-
դը և նորա բոլոր արածը, ահա
նորանք գրուած են Յուդայի
թագաւորների յիշատակաց գրը-
24 քումը ։ Եւ Յովրամը ննջեց իր
հայրերի հետ և թաղուեցաւ իր
հայրերի հետ Դաւիթի քաղա-
քումը, և նորա որդի *Ոքոզիան
թագաւոր եղաւ նորա տեղը ։
25 Իսրայէլի թագաւոր Աքաաբ-
եան Յովրամի տասնևերկուերորդ
տարիումը թագաւոր եղաւ Յու-
դայի վերայ Յովրամի որդի Ոքո-
26 զիան ։ Քսանևերկու տարեկան էր
Ոքոզիան երբոր թագաւոր եղաւ
և մէկ տարի թագաւորեց Երու-
սաղէմումը, և նորա մօր անունն
էր Գոթոզիա՝ Իսրայէլի Ամրի
27 թագաւորի դուստրը ։ Եւ նա
գնաց Աքաաբի տան ճանապար-
հովը և չարութիւն արաւ Տիրոջ
աչքի առաջին Աքաաբի տան
պէս. որովհետև Աքաաբի տան
28 փեսան էր ։ Եւ Աքաաբեան Յով-
րամի հետ գնաց Ռամովթ-գա-
ղաադ Ասորիների թագաւոր Ա-
զայէլի հետ պատերազմելու.
բայց Ասորիները վիրաւորեցին
29 Յովրամին ։ Եւ Յովրամ թագա-
ւորը ետ դառաւ որ Յեզրայէ-
լումը բժշկուի այն վէրքերիցը,
որ Ասորիները տուել էին նորան
Ռամովթի մէջ Ասորիների Ազա-
յէլ թագաւորի հետ պատե-
րազմ անելու ժամանակ ։ Եւ
Յուդայի թագաւոր Յովրամեան
Ոքոզիան իջաւ Յեզրայէլ Աքա-
աբեան Յովրամին տեսնելու, ո-
րովհետև հիւանդ էր ։

ԳԼ. Թ

Եւ Եղիսէ մարգարէն կանչեց 1
մարգարէների որդիներից մէկին
և ասեց նորան. Գօտիդ մէջքդ
կապիր և այս իւղի ամանը ձեռ-
քըդ առ և գնա Ռամովթ-գա-
ղաադ ։ Եւ երբոր այնտեղ հա- 2
սար, աչք ածիր այնտեղ Նամես-
սեան Յովսափատի որդի Յէուին,
և գնա ու վեր առ նորան իր եղ-
բայրների միջիցը և նորան տար
մի ներսի սենեակ ։ Եւ իւղի ա- 3
մանը առ և ածիր նորա գլխին և
ասիր. Այսպէս է ասում Տէրը.
Ես քեզ թագաւոր օծեցի Իսրա-
յէլի վերայ. յետոյ դուռը բաց
ու փախիր և մի սպասիր ։ Եւ 4
այն երիտասարդը՝ մարգարէի ծա-
ռան Ռամովթ-գաղաադ գնաց ։
Եւ եկաւ. և ահա զօրքի իշխան- 5
ները նստել էին. և նա ասեց.
Ես մի խօսք ունեմ քեզ հետ,
ով զօրագլուխ. և Յէուն ասեց.
Մեր ամենիցը որի՞ հետ. և նա
ասեց. Քեզ հետ, ով զօրա-
գլուխ ։ Նա էլ վեր կացաւ գը- 6
նաց տունը. և նա իւղը թափեց
նորա գլխին և նորան ասեց. Այս-
պէս է ասում Իսրայէլի Տէր Ա-
ստուածը. Ես քեզ թագաւոր օ-
ծեցի Տիրոջ ժողովրդի՝ Իսրայէլի
վերայ ։ Եւ դու ջարդիր քո տի- 7
րոջ Աքաաբի տունը, որ Յեզա-
բէլի ձեռքից առնեմ իմ մար-
գարէ ծառաների և Տիրոջ ամեն
ծառաների արիւնների վրէժը ։
Եւ Աքաաբի բոլոր տունը պիտի
փչանայ, և պիտի ջնջեմ Աքա-
աբի համար ամեն արու մարդին
և կապուածին ու արձակուա-
ծին Իսրայէլի մէջ ։ Եւ Աքաաբի 9
տունը պիտի Նաբատեան Յերո-
բովամի տան պէս և Աքիայի որ-
դի Բաասայի տան պէս անեմ ։
Եւ Յեզաբէլին էլ պիտի շուներն 10
ուտեն Յեզրայէլի ագարակումը,
և թաղող պիտի չ՛լինի ։ Եւ
դուռը բացաւ ու փախաւ ։

*Ազարիա

11 Եւ Յէուն գուրս եկաւ գնաց
իր տիրոջ ծառաների մօտ. և
նորան ասեցին. Խաղաղութի՞ւն
է. ի՞նչու համար էր եկել այդ
ցնորուածը քեզ մօտ. և նա ա-
սեց նորանց. Դուք ճանաչում
էք այն մարդին էլ նորա խօսքն
12 էլ ։ Բայց նորանք ասեցին. Սխալ
է, մեզ պատմիր. և նա ասեց.
Այսպէս և այսպէս ասեց ինձ
ասելով թէ Եհովան այսպէս է
ասում. Ես քեզ թագաւոր օ-
13 ծեցի Իսրայէլի վերայ ։ Եւ նո-
րանք շուտով ամեն մէկն իր հան-
դերձներն առան և գցեցին նորա
տակը բուն աստիճանների վերայ
և փողը հնչեցրին ու ասեցին.
14 Յէուն է թագաւոր ։ Եւ Նա-
մեսսեան Յովսափատի որդի Յէ-
ուն դաւաճանութիւն արաւ Յով-
րամի դէմ ։ (Բայց Յովրամը պահ-
պանութիւն էր անում Ռամովթ-
գաղաադում ինքը և բոլոր Իս-
րայէլը Ասորիների Ազայէլ թա-
15 գաւորի երեսից ։ Եւ Յովրամ
թագաւորը ետ էր դառել, որ
առողջանայ Յեզրայէլում Ասորի-
ների նորան տուած վէրքերիցը,
երբոր նա պատերազմ ունէր
Ասորիների Ազայէլ թագաւորի
հետ ։) Եւ Յէուն ասեց. Եթէ
հաճութիւն ունէք, մի փախըս-
տական դուրս չ՛գայ այս քաղա-
քից, որ գնայ և իմացնէ Յեզ-
րայէլում ։
16 Եւ Յէուն հեծաւ և գնաց
Յեզրայէլ, որովհետև Յովրամն
այնտեղ պառկած էր, և Յու-
դայի Ոքոզիա թագաւորն իջել
էր այնտեղ որ Յովրամին տեսնէ ։
17 Եւ դէտը կանգնել էր Յեզրայէ-
լի աշտարակի վերայ, և տեսաւ
Յէուի բազմութիւնը գալիս, և
ասեց. Մի բազմութիւն եմ տես-
նում գալիս. և Յովրամն ասեց.
Մի ձիաւոր առ և ուղարկիր նո-
րանց դէմ, որ ասէ՝ Խաղաղու-
18 թի՞ւն է ։ Եւ ձիաւորը գնաց նո-
րան դիմաւորելու, և ասեց.
Այսպէս է ասում թագաւորը՝
Խաղաղութի՞ւն է ։ Եւ Յէուն
ասեց նորան. Դու ի՞նչ բան ու-
նես խաղաղութեան հետ, ետևս
անցիր ։ Եւ դէտը պատմեց և ա-
սեց. Պատգամաւորը գնաց մին-
չև նորանց և ետ չ՛դառաւ ։ Եւ 19
մի երկրորդ ձիաւոր ուղարկեց,
և նա գնաց նորանց մօտ, և ա-
սեց. Այսպէս է ասում թագա-
ւորը. Խաղաղութի՞ւն է ։ Եւ
Յէուն ասեց նորան. Դու ի՞նչ
բան ունես խաղաղութեան հետ.
ետևս անցիր ։ Եւ դէտը պատ- 20
մեց և ասեց. Գնաց մինչև նո-
րանց և ետ չ՛դառաւ. և ընթաց-
քը Նամեսսեան Յէուի ընթաց-
քին նման է. որովհետև կատա-
ղաբար է քշում ։
Եւ Յովրամն ասեց. Լծեցէք. 21
և նորանք լծեցին նորա կառքը,
և դուրս եկաւ Իսրայէլի Յովրամ
թագաւորը և Յուդայի Ոքոզիա
թագաւորը ամեն մէկն իր կառ-
քովը Յէուին դիմաւորելու, և
նորան գտան Յեզրայէլացի Նա-
բովթի ագարակումը ։ Եւ եղաւ 22
երբոր Յովրամը Յէուին տեսաւ,
ասեց. Խաղաղութի՞ւն է, Յէ՛ու.
և նա ասեց. Ի՞նչ է խաղաղու-
թիւնը, մինչև որ էն քո մօր՝
Յեզաբէլի պոռնկութիւնները և
նորա շատ կախարդութիւնները ։
Եւ Յովրամը դարձրեց իր ձեռ- 23
քերը ու փախաւ. և Ոքոզիային
ասեց. Դաւաճանութիւն է, Ո-
քոզիա ։ Եւ Յէուն պինդ քաշեց 24
աղեղը և զարկեց Յովրամին նո-
րա ուսերի մէջտեղից, և նետը
անցաւ սրտի միջովը, և նա կըծ-
կուեցաւ իր կառքումը ։ Եւ Յէ- 25
ուն ասեց իր զօրագլուխ Բադե-
կարին. Վեր առ գցիր դորան
Յեզրայէլացի Նաբովթի կալուած-
քի ագարակը. որովհետև յիշիր,
երբոր ես և դու նորա հայր Ա-
քաաբի ետևից հեծած զոյգ գը-
նում էինք, Տէրը այդ վճիռը
տուաւ դորան ։ Իրաւի տեսայ 26
երէկ Նաբովթի արիւնը և նորա
որդկանց արիւնը, ասում է Տէ-
րը, և պիտի հատուցանեմ քեզ
այս ագարակումը, ասում է Տէ-
րը. և արդ՝ վեր առ գցիր դո-
րան ագարակը՝ Տիրոջ խօսքին
համեմատ ։
Եւ երբոր Յուդայի թագաւոր 27

Ոքոզիան տեսաւ, փախաւ պար-
տէզի տան ճանապարհովը. և
Յէուն հալածեց նորան և ասեց.
Դորան էլ սպանեցէք այդ կառ-
քի վերայ. և [illegible] նորան
Յեբղաամի մօտ եղող Գուր բլու-
րի վերայ. Նա էլ փախաւ Մա-
28 կեդդով, և մեռաւ այնտեղ։ Եւ
նորա ծառաները նորան կառքով
տարին Երուսաղէմ և թաղեցին
նորան իր գերեզմանումը իր հայ-
րերի հետ Դաւիթի քաղաքումը։
29 Եւ Ոքոզիան թագաւոր եղաւ
Յուդայի վերայ Աքաաբի որդի
Յովրամի տասնեւ մէկերորդ տարին։
30 Եւ Յէուն եկաւ Յեզրայէլ։
Եւ երբոր Յեզաբէլը լսեց, ծա-
բոյր դրաւ աչքերին և զարդա-
բեց իր գլուխը և պատուհանովը
31 դուրս էր նայում։ Եւ Յէուն
մտաւ քաղաքի դուռը. և Յե-
զաբէլն ասեց. Մի՞թէ խաղաղու-
թիւն [illegible] իր տիրոջն սպանող
32 Զամբրին։ Իսկ նա իր երեսը վեր
բարձրացրեց դէպի պատուհանը
և ասեց. Ո՞վ է ինձ հետ, ո՞վ.
և երկու երեք ներքինիներ մտիկ
33 տուին իրան։ Եւ ասեց. Դորան
վայր գցեցէք. և նորանք վայր
գցեցին նորան. և նորա արիւնը
պատովը և ձիերովը տուաւ. և
34 նորան կոխ տուին։ Յետոյ նա
եկաւ և կերաւ ու խմեց և ա-
սեց. Գտէք այդ անիծուածին և
թաղեցէք դորան. որովհետև
35 թագաւորի աղջիկ է։ Եւ գնա-
ցին նորան թաղելու, բայց նո-
րա վերայ բան չ'գտան բացի գա-
գաթից և ոտներից և ձեռքերի
36 թաթերից։ Եւ ետ դառան նո-
րան իմացրին. և նա ասեց. Այդ
Տիրոջ խօսքն է որ խօսել է իր
ծառայ Թեզբացի Եղիայի ձեռով
ասելով. Յեզրայէլի ագարակու-
մը շուները պիտի ուտեն Յեզա-
37 բէլի միսը. Եւ Յեզաբէլի դիակը
աղբի պէս պիտի լինի Յեզրայէլի
ագարակի վերայ այնպէս որ չ'ա-
սեն թէ Սա Յեզաբէլն է։

ԳԼ. Ժ

1 Եւ Աքաաբը եօթանասուն որ-
դի ունէր Սամարիայում։ Եւ
Յէուն նամակներ գրեց ու Սամա-
րիա ուղարկեց Յեզրայէլի իշխան-
ներին և ծերերին և Աքաաբի
որդկանց հոգաբարձուներին, ա-
սելով. Արդ՝ երբոր այս նամակը 2
ձեզ հասնէ, և դուք, որ ձեզ
մօտ են ձեր տիրոջ որդիքը և
ձեզ մօտ են կառքերը և ձիե-
րը, և պարսպաւոր քաղաքն ու
զէնքերը, Տեսէք թէ ո՞րն է ձեր 3
տիրոջ որդիներից լաւը և յար-
մարը, և նորան դրէք իր հօր ա-
թոռի վերայ, և ձեր տիրոջ տան
համար պատերազմ արէք։ Բայց 4
նորանք շատ ու շատ վախեցան
և ասեցին. Ահա երկու թագա-
ւորներ նորա առաջին չ'կանգնե-
ցին, ուրեմն մե՞նք ինչպէս պիտի
կանգնենք։ Եւ պալատի տեսու- 5
չը և քաղաքապետն ու ծերերը
և հոգաբարձուները [illegible] ուղար-
կեցին Յէուի մօտ ասելով. Մենք
քո ծառաներն ենք, և ամեն ինչ
որ մեզ ասես՝ կ'անենք. մենք ոչ
մէկին թագաւոր չենք դնիլ. ինչ
որ քո աչքին հաճելի է, արա։
Եւ նորանց մի երկրորդ նա- 6
մակ գրեց ասելով. Եթէ դուք
իմ [illegible] էք ու իմ խօսքին լը-
սում էք, վեր առէք ձեր տի-
րոջ որդիների մարդկանց գլուխ-
ները և էգուց այս ժամանակին
եկէք Յեզրայէլ. և թագաւորի
որդիները եօթանասուն հոգի էին
քաղաքի մեծամեծների մօտ որ
նորանց մեծացնում էին։ Եւ 7
երբոր նամակը հասաւ նորանց,
առան թագաւորի որդկանցը և
կոտորեցին այն եօթանասուն հո-
գիներին, և նորանց գլուխները
դրին կողովների մէջ և ուղար-
կեցին նորա մօտ Յեզրայէլ։ Եւ 8
պատգամաւորն եկաւ նորա մօտ
և ասեց. Թագաւորի որդկանց
գլուխները բերել են. Նա էլ
ասեց. Դորանցից երկու դէզ [illegible]
[illegible] դրէք քաղաքի դռան մուտ-
քի մօտ մինչև առաւօտ։ Եւ 9
երբոր առաւօտ եղաւ, նա դուրս
եկաւ ու կանգնեց և ասեց բո-
լոր ժողովրդին. Դուք արդար
էք, ահա ես ապստամբուեցի

իմ տիրոջ դէմ և նորան սպա-
նեցի, բայց ո՞վ կոտորեց այս ա-
10 մենին։ Արդ իմացէք, որ Տիրոջ
խօսքիցը [illegible] գետինը չի ընկ-
նիլ, որ Տէրը խօսել է Աքաաբի
տան մասին, և Տէրը արաւ, ինչ
որ ասել էր իր Եղիա ծառայի
11 ձեռովը։ Եւ Յէուն կոտորեց
Աքաաբի տան բոլոր մնացորդը
Յեզրայէլում, և նորա բոլոր մե-
ծամեծներին, նորա ծանօթներին
և քահանաներին, մինչև որ մէկ
պրծնող չ'մնաց։
12 Եւ նա վերկացաւ եկաւ հա-
սաւ Սամարիա. Ճանապարհին
հովիւների Բեթակադումն էր.
13 Եւ [illegible] Յէուն գտաւ Յուդա-
յի Ոքոզիա թագաւորի եղբայր-
ներին, և ասեց. Դուք ո՞վ էք.
և նորանք ասեցին. Մենք Ոքո-
զիայի եղբայրներն ենք, և իջ-
նում ենք թագաւորի որդիներին
և թագուհիի որդիներին բարե-
14 ւելու։ Եւ նա ասեց. Ողջ բռ-
նեցէք դորանց. և նորանց ողջ
բռնեցին. և սպանեցին նորանց
Բեթակադի ջրհորի մօտ՝ քառա-
սունեւերկու հոգի. և նորանցից
մէկ հոգի չ'թողեց։
15 Եւ այնտեղից գնաց ու գտաւ
Ռեքաբի որդի Յովնադաբին իր
դիմացը և նորան բարև տուաւ
ու ասեց նորան. Սիրտդ ուղի՞ղ
է, ինչպէս որ իմ սիրտը քո սրտի
հետ. և Յովնադաբն ասեց. Այս։
Թէ որ այս, ուրեմն ձեռքդ
տուր. և նա ձեռքը տուաւ. և
նա նորան վեր հանեց կառքը իր
16 մօտ։ Եւ ասեց. Եկ ինձ հետ
և տես իմ նախանձաւորութիւ-
նը Տիրոջ համար. և նորան հե-
17 ծացրին նորա կառքը։ Եւ նա
եկաւ Սամարիա և կոտորեց Ա-
քաաբի բոլոր մնացածներին Սա-
մարիայումը, մինչև որ բնաջինջ
արաւ նորան Տիրոջ խօսքին հա-
մեմատ, որ խօսել էր Եղիայի
հետ։
18 Եւ Յէուն ժողովեց բոլոր ժո-
ղովրդին և ասեց նորանց. Աքա-
աբը քիչ է ծառայել Բահաղին,
Յէուն նորան շատ պիտի ծառայէ։
19 Եւ արդ՝ ինձ մօտ կանչեցէք Բա-
հաղի բոլոր մարգարէներին, նո-
րա բոլոր պաշտօնեաներին և նո-
րա բոլոր քահանաներին, մէկ
մարդ պակաս չ'լինի. որովհետև
ես մեծ զոհ ունեմ Բահաղի հա-
մար. ով որ չ'գտնուի, պիտի ողջ
չ'մնայ. բայց Յէուն խորաման-
գութեամբ արաւ որպէս զի Բա-
հաղի պաշտօնեաներին փչացնէ։
Եւ Յէուն ասեց. Սուրբ տօնա- 20
խմբութիւն որոշեցէք Բահաղի
համար. և նորանք ծանուցում
արին։ Եւ Յէուն [illegible] ուղար- 21
կեց բոլոր Իսրայէլին, և Բահաղի
բոլոր պաշտօնեաներն եկան, և
մէկ մարդ չ'մնաց չ'եկած. և գնա-
ցին Բահաղի տունը, և Բահաղի
տունը լցուեցաւ ծայրէ ի ծայր։
Եւ Յէուն ասեց հանդերձարա- 22
նապետին. Հանդերձ հանիր Բա-
հաղի բոլոր ծառաների համար.
և նորանց համար հանդերձը հա-
նեց։ Եւ Յէուն ու Ռեքաբի որ- 23
դի Յովնադաբն եկան Բահաղի
տունը, և նա ասեց Բահաղի պաշ-
տօնեաներին. Որոնեցէք ու տե-
սէք, մի գուցէ Եհովայի ծառա-
ներից մէկը լինի այստեղ ձեզ
հետ, այլ լինեն միմիայն Բահա-
ղի պաշտօնեաները։ Եւ եկան 24
զոհեր և ողջակէզներ մատուցա-
նելու. և Յէուն իր համար դրը-
սումը ութսուն մարդ դրաւ և
ասեց. Այն մարդը, [illegible]
որ ազատուի այս իմ ձեր ձեռ-
քը տրուած մարդկանցից մէկը,
նորա անձը պէտք է լինի այն
[illegible] անձի տեղ։ Եւ երբոր նո- 25
րանք վերջացրել էին ողջակէզը,
այն ժամանակ Յէուն ասեց սուր-
հանդակներին և զօրապետներին.
Գնացէք նորանց ջարդեցէք, մի
մարդ դուրս չ'գայ. և նորանք
ջարդեցին նորանց սուրի բերա-
նով, և սուրհանդակներն ու զօ-
րապետները նորանց դէն գցեցին,
և գնացին մինչև Բահաղի տան
քաղաքը։ Եւ դուրս հանեցին 26
Բահաղի տան արձանները և այ-
րեցին նորանց։ Եւ քանդեցին 27
Բահաղի արձանը, և կործանե-
ցին Բահաղի տունը և աղբանոց
շինեցին նորան մինչև այսօր։ Եւ 28

Յեւուն Բահաղին ընաջինջ արաւ
29 Իսրայէլիցը։ Միայն թէ Նաբատ-
եան Յերոբովամի մեղքը, որ Իս-
րայէլին մեղանչել տուաւ, այս-
ինքն Բեթէլում և Դանում լի-
նող ոսկի որթերի ետևից Յեւուն
չ'հեռացաւ։
30 Եւ Տէրն ասեց Յեւուին. Որով-
հետև դու լաւ արիր որ իմ աչ-
քին հաճելի եղածը բոլորովին իմ
սրտի մէջ եղածի պէս կատարե-
ցիր Աքաաբի տանը, քո որդիքը
մինչեւ չորրորդ սերունդը պիտի
նստեն Իսրայէլի աթոռի վերայ։
31 Բայց Յեւուն չ'զգուշացաւ որ Իս-
րայէլի Տէր Աստուծոյ օրէնքի մէջ
գնար իր բոլոր սրտովը. նա չ'հե-
ռացաւ Յերոբովամի մեղքիցը,
որ Իսրայէլին մեղանչել տուաւ։
32 Այն ժամանակները Տէրը սկսեց
Իսրայէլից կտորներ կտորել. և Ա-
զայէլը զարկեց նորանց Իսրայէլի
33 բոլոր սահմաններումը, Յորդանա-
նից արեւելեան կողմում Գա-
ղաադի բոլոր երկիրը, Գադեան-
ներին, Ռուբենեաններին և Մա-
նասեաններին Առնոն ձորի վերայ
եղող Արոերից մինչև Գաղաադ
և Բասան։
34 Եւ Յեւուի գործերի մնացորդը
և նորա բոլոր արածը և նորա բո-
լոր զօրութիւնը, ահա նորանք
գրուած են Իսրայէլի թագաւոր-
35 ների յիշատակաց գրքումը։ Եւ
Յեւուն ննջեց իր հայրերի հետ,
և նորան թաղեցին Սամարիա-
յում. և նորա որդի Յովաքազը
36 թագաւոր եղաւ նորա տեղ։ Եւ
Յեւուի Իսրայէլի վերայ արած թա-
գաւորութեան ժամանակն էր
քսանեւութ տարի Սամարիայում։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ երբոր Ոքոզիայի մայրը Գո-
թոզիան տեսաւ, որ իր որդին
մեռաւ, վեր կացաւ բոլոր թա-
գաւորական սերունդը ընաջինջ
2 արաւ։ Բայց Յովրամ թագաւո-
րի աղջիկը՝ Ոքոզիայի քոյր Յով-
սաբէէն՝ առաւ Ոքոզիայի որդի
Յովասին և գողացաւ նորան թա-
գաւորի սպանուած որդկանց մի-
ջիցը և նորա դայեակին անկո-
ղինների սենեակումը, և նորան
թաքցրին Գոթոզիայի երեսիցը,
և նա չ'մեռցուեցաւ։ Եւ նա 3
թաքցուած էր նորա հետ Տիրոջ
տանը վեց տարի. և Գոթոզիան
թագաւորում էր երկրի վե-
րայ։
Եւ եօթներորդ տարին Յովիա- 4
դան մարդ ուղարկեց և առաւ
թիկնապահների և սուրհանդակ-
ների հարիւրապետներին, և նո-
րանց տարաւ իր մօտ Տիրոջ տու-
նը, և նորանց հետ դաշինք կա-
պեց և նորանց երդում տուաւ
Տիրոջ տանը, և նորանց ցոյց
տուաւ թագաւորի որդիին։ Եւ 5
նորանց պատուիրեց ասելով. Այս
է ձեր անելու բանը. ձեր երրորդ
մասը, որ գալիս են շաբաթ օրը որ
թագաւորի պալատի պահապա-
նութիւնն անեն. Եւ երրորդ մա- 6
սը՝ սուրի դռանը, և երրորդ
մասը՝ սուրհանդակների ետեւի
դռանը. այսպէս տանը պահապա-
նութիւնը արէք փոփոխակի։ Եւ 7
ձեզանից երկու դունդ՝ ամենքը
որ շաբաթ օրը պիտի դուրս գան,
Տիրոջ տան պահապանութիւնն ա-
նեն թագաւորի համար։ Եւ թա- 8
գաւորին շրջապատեցէք շուրջա-
նակի ամեն մարդ զէնքը ձեռքին.
և կարգերի մէջը մտնողը սպան-
ուի. և թագաւորի հետը լինէք՝
նա դուրս գալիս և մտնելիս։
Եւ հարիւրապետները արին 9
ամեն ինչ որ Յովիադա քա-
հանան պատուիրել էր, և իւ-
րաքանչիւրն առաւ իր մարդ-
կանցը, որ գալիս են շաբաթ
օրը, շաբաթ օրուայ գնացողնե-
րի հետ և եկան Յովիադա քա-
հանայի մօտ։ Եւ քահանան 10
տուաւ հարիւրապետներին Դա-
ւիթ թագաւորի նիզակները և
վահանները, որ Տիրոջ տանն էին։
Եւ սուրհանդակները՝ իւրաքան- 11
չիւրն իր զէնքերը ձեռքին կանգ-
նեցին տան աջ կողմիցը մինչև
տան ձախ կողմը սեղանի մօտ և
տան մօտ թագաւորի շուրջը։ Յե- 12
տոյ նա դուրս հանեց թագաւո-
րի որդիին, և նորա վերայ դրաւ

թագը և վկայութիւնը, և նորան
թագաւոր շինեցին և օծեցին նո-
րան, և ծափ տուին և ասեցին.
Կեցցէ՛ արքայ։
13 Եւ Գոթոզիան լսեց վազող
ժողովրդի ձայնը և գնաց դէպի
14 ժողովուրդը՝ Տիրոջ տունը։ Եւ
մտիկ տուաւ, որ ահա թագա-
ւորը կանգնած էր սիւնի մօտ
սովորութեան պէս, և զօրապետ-
ներն ու փողերը թագաւորի մօտ,
և երկրի բոլոր ժողովուրդը ու-
րախանում էր և փողերը հնչեց-
նում. և Գոթոզիան պատառեց
իր հանդերձները և աղաղակեց.
Դաւաճանութի՛ւն դաւաճանու-
15 թի՛ւն։ Եւ Յովիադա քահանան
հրամայեց հարիւրապետներին,
որ նշանակուած էին զօրքերի վե-
րայ և ասեց նորանց. Նորան
դուրս հանեցէք կարգերի միջից,
և նորա ետևից գնացողին սրով
սպանեցէք. որովհետև քահա-
նան ասել էր, որ Տիրոջ տան
16 մէջ չ'սպանուի։ Եւ իրանց ձեռ-
քերը ձգեցին նորա վերայ. և
երբոր նա թագաւորի պալատը
մտնող ձիերի ճանապարհովը գը-
նում էր, այնտեղ սպանուեցաւ։
17 Եւ Յովիադան ուխտ դրաւ Տի-
րոջ և թագաւորի մէջ և ժո-
ղովրդի մէջ, որ Տիրոջ ժողո-
վուրդը լինեն. նաև թագաւորի
18 և ժողովրդի մէջ։ Եւ երկրի բո-
լոր ժողովուրդը եկաւ Բահաղի
տունը և քանդեցին նորա սե-
ղանները և նորա պատկերները
լաւ փշրեցին, և Բահաղի քուրմ
Մատթանին սպանեցին սեղան-
ների առաջին և քահանան ոս-
տիկաններ դրաւ Տիրոջ տան վե-
19 րայ։ Եւ վեր առաւ հարիւրա-
պետներին և թիկնապահներին ու
սուրհանդակներին և երկրի բո-
լոր ժողովրդին, և իջեցրին թա-
գաւորին Տիրոջ տանիցը և սուր-
հանդակների դռնովն եկան թա-
գաւորի պալատը. և նա նստեց
թագաւորական աթոռի վերայ։
20 Եւ երկրի ամէն ժողովուրդն ու-
րախացաւ, և քաղաքը խաղաղե-
ցաւ։ Եւ Գոթոզիային սրով սպա-
21 նեցին թագաւորի տանը։ Եւ Յո-
վասը եօթը տարեկան էր երբոր
թագաւոր եղաւ։

ԳԼ. ԺԲ

Յեւուի եօթներորդ տարին Յո- 1
վասը թագաւոր եղաւ, և քա-
ռասուն տարի թագաւորեց Ե-
րուսաղէմումը և նորա մօր ա-
նունն էր Սաբիա՝ Բերսաբէէից։
Եւ Յովասն ուղղութիւն արաւ 2
Տիրոջ աչքի առաջին իր բոլոր օ-
րերումը, քանի որ Յովիադա քա-
հանան նորան սովորեցնում էր։
Միայն թէ բարձրաւանդակները 3
չ'հեռացան. ժողովուրդը տակա-
ւին զոհում և խունկ էր ծխում
բարձրաւանդակների վերայ։
Եւ Յովասն ասեց քահանաներ- 4
ին. Նուէրքի բոլոր փողը որ բեր-
վում է Տիրոջ տունը՝ անց կե-
նող փողը, իւրաքանչիւր մարդի
անձանց գնահատութեան փողը՝
այն ամեն փողը, որ ամեն մարդ
իր յօժար կամքովը նուիրում է
որ Տիրոջ տունը բերէ, թող քա- 5
հանաներն իրանց համար վեր առ-
նեն ամեն մարդ իր ծանօթիցը և
նորանով նորոգեն տան վնասուած
տեղերը ուր որ էլ մի վնաս գըտ-
նուի։
Եւ եղաւ Յովաս թագաւորի 6
քսանեւերեքերորդ տարին, որ քա-
հանաները տան վնասուած տե-
ղերը չէին նորոգել։ Եւ Յովաս 7
թագաւորը կանչեց Յովիադա
քահանային և քահանաներին և
ասեց նորանց. Ինչո՞ւ համար չէք
նորոգում տան վնասուած տե-
ղերը, ուրեմն հիմա էլ փող չ'առ-
նէք ձեր ծանօթներից, այլ տան
վնասուածի համար տուէք այն։
Եւ հաճութիւն տուին քահա- 8
նաները, որ ժողովրդիցը փող
չ'առնեն, և տան վնասուածը չ'նո-
րոգեն։ Եւ Յովիադա քահանան 9
մի արկղ առաւ և նորա խուփի
վերայ մի ծակ փորեց, և նորան
դրաւ սեղանի կշտին Տիրոջ տու-
նը եկող մարդկանց աջ կողմին.
և դռան պահպանութիւնն անող
քահանաները այնտեղ էին գը-
ցում ամեն փող, որ բերվում էր
Տիրոջ տունը։

40 Եւ եղաւ երբոր տեսնուէր էին որ արկղուէն փողը շատ էր, այն ժամանակ դպիս էր Թագաւորի դրագիրը և քահանայապետը և ծերաւորք էին և համարուէր Տիրոջ տանը դտնուած փողը։ Եւ
41 Հաշուած փողը տային էին Տիրոջ տան վերայ նշանակուած գործաւորներուն ձեռքը. և նորանք վճարուէր էին հիւսներուն և Տիրոջ տանը շինող գործաւորներուն,
42 բին, եւ որմնադիրներուն ու քարակոփներուն. և որ փայտեր և տաշած քարեր առնեն Տիրոջ տան վերաւսելու, և այն ամեն բանի համար, որ ծախք կ'ելնի տունը նորոգելու
43 համար։ Միայն թէ չ'շինուեցաւ Տիրոջ տան համար արծաթի բաժակներ, բաղմակաշներ, կանքեր, փողեր և ամեն ոսկի անօթներ և արծաթի անօթներ Տիրոջ տան մէջ եկած փողիցը։
44 Այլ տային էին գործաւորներին և նորանով նորոգուէր էին Տի-
45 րոջ տունը։ Եւ հաշիւ չէին ուզուէր այն մարդկանցից, որոնց ձեռքն էր տրվուէր փողը, որ գործաւորներին տային, որովհետեւ հաւատարմութեամբ էին
46 աշխատուէր։ Յանցանքի փողը և մեղքի փողը Տիրոջ տունը չէր բերվուէր, քահանաներինն էր լինուէր։
47 Այն ժամանակ վեր եկաւ Ասորիների Ազայէլ Թագաւորը և պատերազմեց Գէթի դէմ և յաղթեց նորան. և Ազայէլը դարձրեց իր երեսը, որ վեր դնայ Երուսա-
48 ղէմ։ Եւ Յուդայի Յովաս Թագաւորն առաւ բոլոր նուէրները, որ նուիրել էին նորա հայրերը՝ Յովսափատը և Յովրամը և Ոքոզիան՝ Յուդայի Թագաւորները, և իր նուէրները և Թագաւորի տան և Տիրոջ տան գանձարանները։ Եւ գտնուող բոլոր ոսկին և ուղարկեց Ասորիների Ազայէլ Թագաւորին, և նա գնաց երուսաղէմի վերայից։
49 Եւ Յովասի գործերի մնացորդը և նորա բոլոր արածը, ահա նորանք գրուած են Յուդայի Թագաւորների յիշատակաց գրքուէր մէջ։ Եւ նորա ծառաները վեր կացան և դաւաճանութիւն արին և սպանեցին Յովասին Մելլոնի տան մէջ Սիլլայի գառիվայրումը։ Եւ
21 Յովզաքարը՝ Սամեթի որդին և Յովզաբադը՝ Սոմերի որդին՝ նորա ծառաները, զարկեցին նորան, և նա մեռաւ. և նորան թաղեցին իր հայրերի հետ Դաւիթի քաղաքումը, և նորա տեղը թագաւոր եղաւ նորա որդի Ամասիան։

Գլ. ԺԴ

1 Յուդայի Թագաւոր՝ Ոքոզիայի որդի Յովասի քսաներեքերորդ տարին Թագաւոր եղաւ Իսրայէլի վերայ Ցեհուի որդի Յովաքազը Սամարիայում տասնեւեօթը տարի։
2 Եւ նա չարութիւն արաւ Տիրոջ աչքի առաջին, և գնաց Նաբատեան Ցերոբովամի մեղքի ետևից, որ Իսրայէլին մեղանչել տուաւ. նորանից չ'հեռացաւ։
3 Եւ Տիրոջ բարկութիւնը բորբոքուեց Իսրայէլի դէմ, և նորանց մատնեց Ասորիների Թագաւոր Ազայէլի և Ազայէլի որդի Բենադադի ձեռքը շարունակ։
4 Եւ Յովաքազն աղօթք արաւ դէպի Տիրոջ երեսը, և Տէրը լսեց նորան. որովհետև տեսաւ Իսրայէլի նեղութիւնը, որով Ասորիների Թագաւորը նորանց նեղացնում էր։
5 Եւ Տէրը Իսրայէլին մէկ փրկիչ տուաւ, և նորանք դուրս եկան Ասորիների ձեռքի տակից, և Իսրայէլի որդիքը բնակվում էին իրանց վրաններում ինչպէս երէկ և միւս օրը։
6 Միայն թէ չ'հեռացան Ցերոբովամի տան մեղքիցը, որ մեղանչել տուաւ Իսրայէլին. նորանով գնացին. նաև կուռքը անտառը կենում էր Սամարիայում։
7 Որովհետև նա Յովաքազի համար զօրք չ'թողեց բացի յիսուն ձիաւոր և տասը կառք և տասը հազար հեւակ զօրք, որովհետև Ասորիների Թագաւորը

դարանց բնաջինջ էր արել, և նորանց չինել էր իբրև կոխ տուեալու հող։
8 Եւ Յովաքազի գործերի մնացորդը և նորա բոլոր արածը և նորա զօրութիւնը, ահա նորանք գրուած են Իսրայէլի Թագաւորների յիշատակաց գրքուէր մէջ։
9 Եւ Յովաքազը ննջեց իր հայրերի հետ և նորան թաղեցին Սամարիայում, և նորա տեղ Թագաւոր եղաւ նորա որդի Յովաս։
10 Յուդայի Յովաս Թագաւորի երեսունեւեօթներորդ տարին Թագաւոր եղաւ Իսրայէլի վերայ Յովաքազի որդի Յովասը Սամարիայում՝ տասնեւվեց տարի թ-
11 ֊֊֊ւէլ֊և։ Եւ նա չարութիւն արաւ Տիրոջ աչքի առաջին. չը հեռացաւ Նաբատեան Ցերոբովամի բոլոր մեղքերիցը, որ Իսրայէլին մեղանչել տուաւ. նորանով գնաց։
12 Եւ Յովասի գործերի մնացորդը և նորա բոլոր արածը և նորա զօրութիւնը, որ Յուդայի Ամասիա Թագաւորի հետ պատերազմ արաւ, ահա նորանք գրուած են Իսրայէլի Թագաւորների յիշատակաց գրքուէր մէջ։
13 Եւ Յովասը ննջեց իր հայրերի հետ, և նորա աթոռի վերայ նստեց Ցերոբովամը. և Յովասը Թագաւորեցաւ Իսրայէլի Թագաւորների հետ Սամարիայում։
14 Եւ Եղիսէն հիւանդացաւ իր հիւանդութիւնովը, որով և մեռաւ. և Իսրայէլի Յովաս Թագաւորը իջաւ նորա մօտ և լաց եղաւ նորա երեսին և ասեց. Հայր իմ, հայր իմ, Իսրայէլի կառքը և նորա ձիաւորները։
15 Եւ Եղիսէն ասեց նորան. Վէր առ մի աղեղ և նետեր. և նա
16 մի աղեղ և նետեր առաւ։ Եւ նա ասեց Իսրայէլի Թագաւորին. Ձեռքդ պնդացրու աղեղիդ վերայ, և նա ձեռքը պնդացրեց. և Եղիսէն իր ձեռքը Թագաւորի ձեռքի վերայ դրաւ։ Եւ
17 ասեց. Բաց արա պատուհանը դէպի արևելք. և նա բաց արաւ. և Եղիսէն ասեց. Նետը ձգիր, և նա ձգեց. Եւ-ն էլ ասեց. Տիրոջ փրկութեան նետը, և Ասորիների դէմ փրկութեան նետը. և դու պիտի յաղթես Ասորիներին Ափեկումը մինչև որ վերջանան։ Եւ ասեց. Առ նե-
18 տերը. և նա առաւ. և ասեց Իսրայէլի Թագաւորին. Գետինը զարկիր. և նա զարկեց երեք անգամ ու կանգնեց։ Եւ Աստուծոյ մարդը բարկացաւ նորա վերայ և ասեց. Հինգ կամ վեց անդամ պէտք էր զարկել, այն ժամանակ կ'զարկէիր Ասորիներին մինչև որ վերջանային, բայց հիմա միայն երեք անգամ ես զարկելու։
19 Եւ Եղիսէն մեռաւ և նորան թաղեցին. և Մովաբացիների գունդերը միւս տարին եկան երկրի վերայ։ Եւ նորանք մի մարդ
20 էին թաղում, և ահա տեսան մի գունդ, և այն մարդը գցեցին Եղիսէի գերեզմանի մէջ. և մարդը գնաց դիպաւ Եղիսէի ոսկորներին, և կենդանացաւ իր ոտքերի վերայ կանգնեց։
21 Եւ Ասորիների Ազայէլ Թագաւորը նեղում էր Իսրայէլին
22 Յովաքազի բոլոր օրերում։ Բայց
23 Տէրը նորանց ողորմեց և գթաց նորանց և դէպի նորանց դարձաւ Աբրահամի, Իսահակի և Յակոբի հետ ունեցած ուխտի համար. և չ'ուզեց նորանց կորցնել, և նորանց չ'ձգեց իր երեսիցը մինչև հիմա։
24 Եւ Ասորիների Ազայէլ Թագաւորը մեռաւ, և նորա որդի Բենադադը Թագաւորեց նորա
25 տեղը։ Եւ Յովաքազի որդի Յովասը դարձեալ ետ առաւ Ազայէլի որդի Բենադադի ձեռքից այն քաղաքները որ առել էր նա իր հայր Յովաքազի ձեռքից պատերազմի մէջ. երեք անգամ Յովասը յաղթեց նորան, և ետ դարձրեց Իսրայէլի քաղաքները։

Գլ. ԺԴ

1 Իսրայէլի Յովաքազի որդի Յովաս Թագաւորի երկրորդ տարին

Թագաւորեց Յուդայի Յովաս
Թագաւորի որդի Ամասիան։
2 Քսանեւհինգ տարեկան էր երբոր
Թագաւոր եղաւ, և քսանեւինը
տարի Թագաւորեց Երուսաղէ-
մում. և նորա մօր անունն էր
3 Յովադան՝ Երուսաղէմից։ Եւ նա
ուղղութիւն արաւ Տիրոջ աչքի
առաջին բայց ոչ թէ իր հօր՝
Դաւիթի պէս. բոլոր իր հօր՝ Յո-
վասի արածին պէս արաւ նա։
4 Միայն թէ բարձրաւանդակները
չ՚հեռացան. ժողովուրդը տա-
կաւին զոհում և խունկ էր ծը-
խում բարձրաւանդակների վե-
5 րայ։ Եւ երբոր Թագաւորութիւ-
նը հաստատուեցաւ նորա ձեռ-
քումը, սպանեց իր ծառաներին
որ իր հօրը՝ Թագաւորին սպա-
6 նել էին։ Բայց սպանողների որդ-
կանցը չ՚մեռցրեց, ինչպէս որ
գրուած է Մովսէսի օրէնքի գրը-
քումը, որ Տէրը հրամայեց ասե-
լով. Հայրերը որդկանց տեղ
չ՚մեռցնուին, և որդիքը հայրերի
տեղ չ՚մեռցնուին, այլ ամեն
մարդ իր յանցանքի համար մեռ-
7 ցնուի։ Սա զարկեց Եդովմացի-
ներին Աղի ձորումը տասը հազար
հոգի, և վէմն առաւ պատերազ-
մով. և անունը Յեկթովէլ դը-
բաւ մինչև այսօր։
8 Այն ժամանակ Ամասիան պատ-
գամաւորներ ուղարկեց Յէուի
որդիի Յովաքազի որդի՝ Իսրայէլի
Թագաւոր Յովասի մօտ ասելով.
Եկ՝ մէկ իրար երես տեսնենք։
9 Բայց Իսրայէլի Յովաս Թագաւորը
մարդ ուղարկեց Յուդայի Ամա-
սիա Թագաւորին ասելով. Լի-
բանանի փուշը լաւ ուղարկեց
Լիբանանի եղեւնափայտին ասե-
լով. Աղջիկդ իմ որդիին կին
տուր, բայց Լիբանանի վայրի
գազանը անցկացաւ և փուշը կոխ
10 տուաւ։ Արդարև դու յաղթե-
ցիր Եդովմին, բայց սիրտդ քեզ
հպարտացրել է. ծանր կաց և
տանդ նստիր. և ի՞նչու համար
ես գրգռվում չարութիւնով, որ
ընկնես դու և Յուդան էլ քեզ
11 հետ։ Բայց Ամասիան չ՚լսեց. և
Իսրայէլի Յովաս Թագաւորը վեր
գնաց և իրար երես տեսան՝ նա
և Յուդայի Ամասիա Թագաւորը
Յուդայի Բեթսամիւսում։ Բայց 12
Յուդան յաղթուեցաւ Իսրայէլի
առաջին, և ամեն մարդ փախաւ
իր վրանը։ Եւ Ոքոզիայի որդիի 13
Յովասի որդի՝ Յուդայի Թագա-
ւոր Ամասիային բռնեց Իսրայէլի
Յովաս Թագաւորը Բեթսամիւ-
սում, և եկաւ Երուսաղէմ և
քանդեց Երուսաղէմի պարիսպը
Եփրեմի դռնից մինչև Անկեան
դուռը չորս հարիւր կանգուն։
Եւ վեր առաւ բոլոր ոսկին և ար- 14
ծաթը և այն բոլոր անօթները,
որ գտնվում էին Տիրոջ տանը և
Թագաւորի տան գանձարաններ-
ումը և պատանդներ՝ ու ետ դա-
ռաւ Սամարիա։
Եւ Յովասի գործերի մնացոր- 15
դը, որ նա արաւ, և նորա զօ-
րութիւնը և նորա պատերազմը,
որ արաւ Յուդայի Ամասիա Թա-
գաւորի հետ, ահա նորանք գրը-
ուած են Իսրայէլի Թագաւորնե-
րի յիշատակաց գրքումը։ Եւ 16
Յովասը ննջեց իր հայրերի հետ
և Թաղուեցաւ Սամարիայում
Իսրայէլի Թագաւորների հետ, և
նորա որդի Յերոբովամը Թագա-
ւորեց նորա տեղ։
Եւ Յուդայի Յովասեան Ամա- 17
սիա Թագաւորը Իսրայէլի Թա-
գաւոր Յովաքազեան Յովասի մեռ-
նելուց յետոյ ապրեց տասնեւհինգ
տարի։ Եւ Ամասիայի գործերի 18
մնացորդը, ահա նորանք գրուած
են Յուդայի Թագաւորների յի-
շատակաց գրքումը։ Եւ նորա 19
դէմ ապստամբութիւն արին Ե-
րուսաղէմում, և նա փախաւ
Լաքիս. և մարդ ուղարկեցին նո-
րա ետևից և նորան մեռցրին
այնտեղ։ Եւ նորան բերին ձիե- 20
րով, և նա Թաղուեցաւ Երու-
սաղէմում իր հայրերի հետ Դա-
ւիթի քաղաքումը։ Եւ Յուդայի 21
բոլոր ժողովուրդն առաւ *Ազա-
րիային տասնեւվեց տարեկան, և
նորան Թագաւոր շինեցին իր

*Կամ՝ Ոզիային. Տես Գլ. ժե. 13։ բ Մն. իզ. 1։

22 հայր Ամասիայի տեղ։ Սա շի-
նեց Ելաթը, և Թագաւորը իր
հայրերի հետ ննջելուց յետոյ
ետ դարձրեց նորան Յուդային։
23 Յուդայի Թագաւոր Յովասեան
Ամասիայի տասնեւհինգերորդ տա-
րին Թագաւոր եղաւ Իսրայէլի
Թագաւոր Յովասի որդի Յերոբո-
վամը Սամարիայում քառասուն-
24 եւմէկ տարի թագաւորելով։ Եւ նա
չարութիւն արաւ Տիրոջ աչքի
առաջին. Նաբատեան Յերոբո-
վամի մեղքիցը, որ նա Իսրայէլին
մեղանչել տուաւ, չ՚հեռացաւ։
25 Նա ետ դարձրեց Իսրայէլի սահ-
մանը Եմաթից սկսած մինչև դաշ-
տի ծովը Իսրայէլի Տէր Աստու-
ծոյ խօսքին համեմատ, որ խօ-
սել էր իր ծառայ Գեթքոփերա-
ցի Ամաթեան Յովնան մարգարէի
26 ձեռովը։ Որովհետև Տէրը տեսաւ
Իսրայէլի շատ դառն տառապան-
քը, որ ոչ կապուած կար և ոչ
արձակուած կար. և Իսրայէլին
27 օգնող չ՚կար։ Եւ Տէրը չէր խօ-
սել Իսրայէլի անունը երկնքի տա-
կից ջնջելու համար. և նորանց
փրկեց Յովասի որդի Յերոբովամի
ձեռքովը։
28 Եւ Յերոբովամի գործերի մնա-
ցորդը, և նորա բոլոր արածը և
նորա զօրութիւնը, որ պատե-
րազմեց, եւ որ ետ դարձրեց Դա-
մասկոսը և Եմաթը Յուդային
Իսրայէլով, ահա նորանք գրուած
են Իսրայէլի Թագաւորների յի-
29 շատակաց գրքումը։ Եւ Յերոբո-
վամը ննջեց իր հայրերի հետ՝ Ի-
սրայէլի Թագաւորների հետ. և
նորա որդի Զաքարիան Թագա-
ւոր եղաւ նորա տեղ։

ԳԼ. ԺԵ

1 Իսրայէլի Թագաւոր Յերոբովամի
քսանեւեօթներորդ տարին Թա-
գաւոր եղաւ Յուդայի Թագաւոր
2 Ամասիայի որդի Ազարիան։ Տասն-
եւվեց տարեկան էր երբոր Թա-
գաւոր եղաւ, և յիսունեւերկու
տարի Թագաւորեց Երուսաղէ-
մում, և նորա մօր անունն էր
3 Յեքէլիա՝ Երուսաղէմից։ Եւ նա
ուղղութիւն արաւ Տիրոջ առա-
ջին բոլորովին այնպէս, ինչպէս
որ արաւ իր հայրը՝ Ամասիան։
Միայն թէ բարձրաւանդակները 4
չ՚հեռացան. ժողովուրդը տակա-
ւին զոհում և խունկ էր ծխում
բարձրաւանդակների վերայ։ Եւ 5
Տէրը զարկեց Թագաւորին, և նա
բորոտ էր մինչև իր մահուան
օրը, և նա հիւանդանոցումն էր
կենում. իսկ Թագաւորի որդի
Յովաթամը՝ տան վերատեսուչը՝
դատում էր երկրի ժողովրդին։
Եւ Ազարիայի գործերի մնա- 6
ցորդը և նորա բոլոր արածը, ա-
հա նորանք գրուած են Յուդայի
Թագաւորների յիշատակաց գրը-
քումը։ Եւ Ազարիան ննջեց իր 7
հայրերի հետ, և նորան Թաղե-
ցին իր հայրերի հետ Դաւիթի
քաղաքումը. և նորա որդի Յո-
վաթամը Թագաւոր եղաւ նորա
տեղ։
Յուդայի Թագաւոր Ազարիայի 8
երեսունեւութերորդ տարին Թա-
գաւորեց Իսրայէլի վերայ Յերո-
բովամի որդի Զաքարիան՝ Սամա-
րիայում վեց ամիս թագաւորելով։ 9
Եւ նա չարութիւն արաւ Տիրոջ
աչքի առաջին ինչպէս որ իր հայ-
րերն էին արել. չ՚հեռացաւ Նա-
բատեան Յերոբովամի մեղքիցը,
որ Իսրայէլին մեղանչել տուաւ։
Եւ նորա դէմ ապստամբուեց Յա- 10
բիսի որդի Սեղղումը, և նորան
զարկեց ժողովրդի առաջին և
սպանեց նորան, և Թագաւոր
եղաւ նորա տեղ։
Եւ Զաքարիայի գործերի մնա- 11
ցորդը, ահա գրուած են Իսրայէ-
լի Թագաւորների յիշատակաց
գրքումը։ Այս Տիրոջ այն խօսքն 12
է, որ խօսեց Յէուի հետ ասելով.
Քո որդիքը մինչև չորրորդ սե-
րունդը կ՚նստեն Իսրայէլի աթո-
ռի վերայ. և այնպէս եղաւ։
Յաբիսի որդի Սեղղումը Թա- 13
գաւոր եղաւ Յուդայի Ոզիա Թա-
գաւորի երեսունեւիններորդ տա-
րին, և Թագաւորութիւն արաւ
մէկ ամիս ժամանակ Սամարիա-
յում։ Եւ վեր եկաւ Գադդիի 14
որդի Մանայեմը Թերսայից. և ե-

կաւ Սամարիա և սարկեց Յաբիսի
որդի Սեղղումին Սամարիայում
և սպանեց նորան ու թագաւո-
րեց նորա տեղ։
45 Եւ Սեղղումի գործերի մնա-
ցորդը, և նորա արած ապստամ-
բութիւնը, ահա նորանք գրուած
են Իսրայէլի թագաւորների յի-
46 շատակաց գրքումը։ Այն ժամա-
նակ զարկեց Մանայեմը Թափ-
սան և բոլոր նորանում եղողնե-
րին և նորա սահմանները Թեր-
սայից սկսած, որովհետև իր դը-
ները չ'բացաւ. նա էլ ջարդեց,
նորա բոլոր յղիներին ճղոտեց։
47 Յուդայի թագաւոր Ազարիայի
երեսունեւիններորդ տարին թա-
գաւոր եղաւ Գադդիի որդի Մա-
նայեմը Իսրայէլի վերայ տասը տա-
րի Սամարիայումը թագաւորելով։
48 Եւ նա չարութիւն արաւ Տիրոջ
աչքի առաջին. Նաբատեան Յե-
րոբովամի մեղքերիցը, որ Իսրա-
յէլին մեղանչել տուաւ, չ'հե-
ռացաւ իր բոլոր օրերումը։
49 Երկրի վերայ եկաւ Ասորես-
տանի թագաւոր Փուղը, և Մա-
նայեմը Փուղին հազար տաղանդ
արծաթ տուաւ որ նորա ձեռ-
քերը իր հետը լինեն, որ թագա-
ւորութիւնը հաստատէ իր ձեռ-
20 քին։ Եւ Մանայեմը հարկ դրաւ
այս արծաթը Իսրայէլի բոլոր հա-
րուստների վերայ Ասորեստանի
թագաւորին տալու համար՝ իւ-
րաքանչիւր անձին քառասուն
սիկզ արծաթ. և Ասորեստանի
թագաւորը ետ դառաւ և այն-
տեղ այն երկրում չ'մնաց։
21 Եւ Մանայեմի գործերի մնա-
ցորդը և նորա բոլոր արածը, ա-
հա նորանք գրուած են Իսրայէլի
թագաւորների յիշատակաց գրք-
22 քումը. Եւ Մանայեմը ննջեց իր
հայրերի հետ, և նորա որդի
Փակէիան թագաւոր եղաւ նո-
րա տեղ։
23 Յուդայի Ազարիա թագաւորի
յիսուներորդ տարին թագաւոր
եղաւ Մանայեմի որդի Փակէիան
Իսրայէլի վերայ Սամարիայումն
24 երկու տարի թագաւորելով։ Եւ
նա չարութիւն արաւ Տիրոջ աչ-
քի առաջին. չ'հեռացաւ Նա-
փատեան Յերոբովամի մեղքերիցը
որ Իսրայէլին մեղանչել տուաւ։
Եւ նորա դէմ դաւաճանութիւն 25
արաւ իր զօրապետ՝ Ռովմելայի
որդի Փակէէն և զարկեց նորան
Սամարիայումը թագաւորի պա-
լատի դահլիճումը Արգովբի և Ա-
րիէի հետ, և նորա հետ կային
Գաղաադացիներից յիսուն հո-
գի. և նորան սպանեց և թագա-
ւոր եղաւ նորա տեղը։
Եւ Փակէիայի գործերի մնա- 26
ցորդը և նորա բոլոր արածը, ա-
հա նորանք գրուած են Իսրայէլի
թագաւորների յիշատակաց գրք-
քումը։ Յուդայի Ազարիա թա- 27
գաւորի յիսունեւերկուերորդ տա-
րին, թագաւոր եղաւ Ռովմելայի
որդի Փակէէն Իսրայէլի վերայ
Սամարիայումը քսան տարի թա-
գաւորելով։ Եւ նա չարութիւն 28
արաւ Տիրոջ աչքի առաջին.
չ'հեռացաւ Նաբատեան Յերոբո-
վամի մեղքերից, որ Իսրայէլին
մեղանչել տուաւ։ Իսրայէլի թա- 29
գաւոր Փակէէի օրերումն եկաւ
Ասորեստանի Թագղաթ-փաղա-
սար թագաւորը և առաւ Իյոնը,
Աբէլ-բեթմաաքան, Յանովէն,
Կադէսը, Հասորը, Գաղաադը և
Գալիլեան՝ Նեփթաղիմի բոլոր
երկիրը, և նորանց գերի տարաւ
Ասորեստան։ Եւ Ելայի որդի Ով- 30
սէէն դաւաճանութիւն արաւ
Ռովմելայի որդի Փակէէի դէմ,
և զարկեց նորան ու սպանեց և
թագաւոր եղաւ նորա տեղ Ո-
զիայի որդի Յովաթամի քսաներ-
որդ տարին։
Եւ Փակէէի գործերի մնացոր- 31
դը և նորա բոլոր արածը, ահա
նորանք գրուած են Իսրայէլի թա-
գաւորների յիշատակաց գրքումը։
Իսրայէլի թագաւոր Ռովմելա- 32
յի որդի Փակէէի երկրորդ տարին
թագաւոր եղաւ Յովաթամը՝ Յու-
դայի թագաւոր Ոզիայի որդին։
Քսանեւհինգ տարեկան էր, երբոր 33
թագաւոր եղաւ, և տասնեւվեց
տարի թագաւորեց Երուսաղէ-
մում, և նորա մօր անունն էր
Յերուսա՝ դուստր Սադովկի։ Եւ 34

Տիրոջ աչքի առաջին ուղղու-
թիւն արաւ, բոլորովին իր հայր
Ոզիայի արածին պէս արաւ.
35 Միայն թէ բարձրաւանդակները
չ'հեռացան. ժողովուրդը տակա-
ւին զոհում և խունկ էր ծխում
բարձրաւանդակների վերայ. նա
շինեց Տիրոջ տան բարձր դուռը։
36 Եւ Յովաթամի գործերի մնա-
ցորդը և նորա բոլոր արածը, ա-
հա նորանք գրուած են Յուդայի
թագաւորների յիշատակաց գրք-
37 քումը։ Այն օրերումը Տէրը սկսեց
Յուդայի վերայ ուղարկել Ասո-
րիների Ռասին թագաւորին և
38 Ռովմելայի որդի Փակէէին։ Եւ
Յովաթամը ննջեց իր հայրերի
հետ և թաղուեցաւ իր հայրերի
հետ իր հայր Դաւիթի քաղա-
քումը, և նորա որդի Աքազը
թագաւոր եղաւ նորա տեղ։

ԳԼ. ԺԶ

1 Ռովմելայի որդի Փակէէի տասն-
եւեօթներորդ տարին թագաւոր
եղաւ Աքազը՝ Յուդայի Յովա-
2 թամ թագաւորի որդին։ Աքազը
քսան տարեկան էր երբոր թա-
գաւոր եղաւ և տասնեւվեց տա-
րի թագաւորեց Երուսաղէմումը.
և նա ուղղութիւն չ'արաւ իր
հայր Դաւիթի պէս Տէր Աստու-
3 ծոյ աչքի առաջին։ Եւ դնաց
Իսրայէլի թագաւորների ճանա-
պարհովը, նաև իր որդին անց-
կացրեց կրակով այն ազգերի
դարշելութեան պէս, որոնց Տէրը
քշեց Իսրայէլի որդկանց առա-
4 ջից։ Եւ զոհեր էր մատուցանում
և խունկ էր ծխում բարձրա-
ւանդակների և բլուրների վերայ
և ամեն կանաչ ծառի տակ։
5 Այն ժամանակ վեր եկան Ա-
սորիների Ռասին թագաւորը և
Իսրայէլի թագաւորը՝ Ռովմելայի
որդի Փակէէն Երուսաղէմի վե-
րայ պատերազմի, և պաշարեցին
Աքազին բայց չ'կարողացան նո-
6 րան յաղթել։ Այն ժամանակ
Ասորիների Ռասին թագաւորը ետ
դարձրեց Ելաթը Ասորիներին՝ և
Յուդայեաններին դուրս արաւ
Ելաթից. և *Ասորիներն եկան Ե-
լաթ և բնակուեցան այնտեղ մին-
չև այսօր։ Եւ Աքազը պատգա- 7
մաւորներ ուղարկեց Ասորեստա-
նի Թագղաթ-փաղասար թագա-
ւորի մօտ ասելով. Ես քո ծա-
ռան և քո որդին եմ, եկ և ինձ
ազատիր Ասորիների թագաւորի
ձեռքից և Իսրայէլի թագաւորի
ձեռքից, որ վեր են կացել ինձ
վերայ։ Եւ Աքազը վեր առաւ 8
այն արծաթը և այն ոսկին, որ
գտնվում էր Տիրոջ տանը և թա-
գաւորի տան գանձարաններումը,
և ընծայ ուղարկեց Ասորեստանի
թագաւորի համար։ Եւ Ասորես- 9
տանի թագաւորը նորան լսեց, և
Ասորեստանի թագաւորը վեր գը-
նաց Դամասկոսի վերայ, և նորան
առաւ և նորան գերի տարաւ
Կիր, և Ռասինին մեռցրեց։
Եւ Աքազ թագաւորը գնաց 10
Թագղաթ-փաղասարին դիմաւո-
րելու Դամասկոս և տեսաւ Դա-
մասկոսի սեղանը. և Աքազ թա-
գաւորը սեղանի օրինակը և նորա
ձեւը նորա բոլոր շինուածքին հա-
մեմատ ուղարկեց Ուրիա քահա-
նային։ Եւ Ուրիա քահանան շի- 11
նեց սեղանը բոլորովին Աքազ
թագաւորի Դամասկոսից ուղար-
կածին պէս, այնպէս շինեց Ու-
րիա քահանան մինչեւ Աքազ
թագաւորի Դամասկոսից գալը։
Եւ թագաւորն եկաւ Դամասկո- 12
սից, և թագաւորը տեսաւ սե-
ղանը, և թագաւորը մօտեցաւ
սեղանին, և նորա վերայ ողջա-
կէզ մատուցրեց։ Եւ այրեց իր 13
ողջակէզը և իր նուէրը, և թա-
փեց իր թափելու նուէրը, և
սրսկեց իր խաղաղութեան զոհի
արիւնը սեղանի վերայ։ Եւ այն 14
պղնձի սեղանը որ Տիրոջ առա-
ջին է, տեղափոխեց տան առա-
ջիցը նոր սեղանի և Տիրոջ տան
մէջտեղիցը, և նորան դրաւ նոր
սեղանի մօտ դէպի հիւսիս։ Եւ 15
Աքազ թագաւորը հրամայեց Ու-
րիա քահանային ասելով. Այդ
մեծ սեղանի վերայ այրիր առա-

*Կամ՝ Եդովմացիք

ւօտեան ողջակէզները և երեկոյ-
եան զոհը և Թագաւորի ողջա-
կէզը և նորա զոհը. և երկրի բո-
լոր ժողովրդի ողջակէզը և նո-
րանց զոհը, և նորանց թափելու
նուէրը, և ողջակէզների բոլոր
արիւնը և զոհերի բոլոր արիւնը
նորա վերայ սրսկիր, իսկ այն
պղնձի սեղանը ինձ համար լինի,
16 որ այնտեղ հարցնեմ։ Եւ Ուրիա
քահանան բոլորովին այնպէս ա-
րաւ ինչպէս որ Աքազ Թագա-
17 ւորը հրամայեց։ Եւ Աքազ Թա-
գաւորը կոտրատեց մեքենովթ-
ների սպառուածները և վեր ա-
ռաւ նորանց վերայից աւազան-
ները, և վայր առաւ ծովը պղնձի
եզների վերայից որ նորա տակին
էին և դրաւ նորան մի քարայա-
18 տակի վերայ։ Եւ շաբաթի ծած-
կոցաւոր ճանապարհը, որ շինել
էին տաճարի համար, և Թագա-
ւորի դուրսի ճանապարհը դար-
ձրեց դէպի Տիրոջ տունը Ասո-
րեստանի Թագաւորի պատճա-
ռովը։
19 Եւ Աքազի գործերի մնացոր-
դը որ արել է, ահա նորանք գրը-
ուած են Յուդայի Թագաւորն-
20 երի յիշատակաց գրքումը։ Եւ
Աքազը ննջեց իր հայրերի հետ
և Թաղուեցաւ իր հայրերի հետ
Դաւիթի քաղաքումը, և նորա
տեղ Թագաւոր եղաւ նորա որ-
դի Եզեկիան։

ԳԼ. ԺԷ

1 Յուդայի Թագաւոր Աքազի
տասնևերկուերորդ տարին Թա-
գաւոր եղաւ Էլայի որդի Ովսէէն
Սամարիայումը Իսրայէլի վերայ
2 ինը տարի թագաւորելով։ Եւ նա
չարութիւն արաւ Տիրոջ աչքի
առաջին, միայն թէ Իսրայէլի
այն Թագաւորներին պէս չէ, որ
3 իրանից առաջ կային։ Նորա դէմ
վեր եկաւ Ասորեստանի Սաղմա-
նասար Թագաւորը, և Ովսէէն
նորան ծառայ եղաւ. և նորան
4 հարկ էր տալիս։ Եւ Ասորես-
տանի Թագաւորը Ովսէէի վերայ
նենգութիւն գտաւ, որ նա դես-
պաններ էր ուղարկել Եգիպտո-
սի Սովա Թագաւորի մօտ, և ա-
մեն տարուան պէս հարկ չէր ու-
ղարկել Ասորեստանի Թագաւո-
րին. և Ասորեստանի Թագաւորը
բռնեց նորան և բանտարկեց նո-
րան։ Եւ Ասորեստանի Թագա- 5
ւորը գնաց բոլոր երկրովն ու ե-
կաւ Սամարիա և պաշարեց նո-
րան երեք տարի։
Ովսէէի իններորդ տարին Ասո- 6
րեստանի Թագաւորն առաւ Սա-
մարիան, և Իսրայէլին գերի տա-
րաւ Ասորեստան, և նորանց բը-
նակեցրեց Քաղայում և Քաբով-
րում, Գովզան գետի մօտ, և
Մարաց քաղաքներումը։ Որով- 7
հետև Իսրայէլի որդիքը մեղան-
չեցին իրանց Տէր Աստուծոյ դէմ,
որ նորանց հանել էր Եգիպտոսի
երկրիցը Եգիպտոսի Փարաւօն
Թագաւորի ձեռքի տակից, և
վախեցան ուրիշ աստուածներից.
Եւ գնացին այն ազգերի կանոն- 8
ներովը, որոնց Տէրը քշել էր Իս-
րայէլի որդկանց առաջից, և Իս-
րայէլի Թագաւորների շինած կա-
նոններովը։ Եւ Իսրայէլի որդիքը 9
գործեր գործեցին գաղտնի, որ
ուղիղ չէր իրանց Տէր Աստուծոյ
մօտ. և իրանց համար բաձրա-
ւանդակներ շինեցին իրանց ամեն
քաղաքներումը՝ պահապանաց աշ-
տարակիցը մինչև պարսպաւոր
քաղաքը։ Եւ իրանց համար ար- 10
ձաններ դրին և կուռքի անտառ-
ներ՝ ամեն բարձր բլուրի վերայ
և ամեն կանաչ ծառի տակ։ Եւ 11
այնտեղ խունկ ծխեցին ամեն
բարձրաւանդակների վերայ այն
ազգերի պէս, որոնց Տէրն իրանց
առաջից դուրս էր արել և չար
բաներ արին Տիրոջը բարկացնելու
համար։ Եւ ծառայեցին կուռ- 12
քերին, որոնց մասին Տէրն ասել
էր իրանց թէ Այդ բանը չ՚անէք։
Այն ժամանակ Տէրը վկայու- 13
թիւն էր տուել Իսրայէլի և Յու-
դայի դէմ իր բոլոր մարգարէնե-
րի և բոլոր տեսանողների ձեռովն
ասելով. Ետ դարձէք ձեր չար
ճանապարհներիցը և պահեցէք
իմ հրամանները և իմ կանոննե-

ումը, որ Իսրայէլի Ովսէէ Թա-
գաւորի իններորդ տարին էր.
այն ժամանակ Սամարիան առնուե-
11 ցաւ։ Եւ Ասորեստանի Թագա-
ւորը Իսրայէլին փոխադրեց Ասո-
րեստան, և նորանց դրաւ Քա-
ղայում և Քաբովրում, Գովզան
գետի մօտ, և Մարաց քաղաք-
12 ներումը։ Նորա համար որ չէին
լսել իրանց Տէր Աստուծոյ ձայ-
նին, և զանց էին արել նորա
ուխտը՝ այն ամենը ինչ որ Տիրոջ
ծառայ Մովսէսը հրամայել էր.
ոչ լսեցին և ոչ արին։
13 Եւ Եզեկիա Թագաւորի տասն-
ևչորսերորդ տարին եկաւ Ասո-
րեստանի Սենեքերիմ Թագաւո-
րը Յուդայի բոլոր պարսպաւոր
քաղաքների վերայ և առաւ նո-
14 րանց։ Եւ Յուդայի Եզեկիա Թա-
գաւորը մարդ ուղարկեց Լաքիս
Ասորեստանի Թագաւորի մօտ ա-
սելով. Ցանցանք եմ արել, իմ
վերայիցը ետ դարձիր. ինչ որ ինձ
վերայ դնես՝ կ՚հատուցանեմ։ Եւ
Ասորեստանի Թագաւորը Յու-
դայի Եզեկիա Թագաւորի վերայ
երեք հարիւր տաղանդ արծաթ
և երեսուն տաղանդ ոսկի հարկ
15 դրաւ։ Եւ Եզեկիան Տիրոջ տա-
նը և Թագաւորի տան գանձե-
րումը գտնուած բոլոր արծա-
16 թը տուաւ։ Այն ժամանակ Ե-
զեկիան քանդեց Տիրոջ տաճա-
րի դռների և դրանդիների ոս-
կին, որ ինքը Յուդայի Եզեկիա
Թագաւորը նորանց պատել էր,
և տուաւ Ասորեստանի Թագա-
ւորին։
17 Եւ Ասորեստանի Թագաւորն
Տարաթանին, Ռաբսարիսին և
Ռաբսակին Լաքիսից շատ զօր-
քով Երուսաղէմ ուղարկեց Ե-
զեկիա Թագաւորի մօտ. և նո-
րանք վեր գալով եկան Երուսա-
ղէմ և այնտեղ հասնելով եկան
կանգնեցին Թափիչի ագարակի
ճանապարհին եղող վերի աւա-
18 զանի ջրմուղին վերայ, Եւ Թա-
գաւորին կանչեցին. և նորանց
մօտ դուրս եկան Քեղկեայի որդի
Եղիակիմը՝ պալատի հազարապե-
տը և Սեբնա ատենադպիրը և
յիշատակաց դպիր Ասափի որդի
Յովաքը։
Եւ Ռաբսակը նորանց ասեց. 19
Եզեկիային ասեցէք. Այսպէս է
ասում մեծ Թագաւորը՝ Ասորես-
տանի Թագաւորը. Այդ ի՞նչ յոյս
է որի վերայ դու ապաւինել ես.
Դու միայն շրթունքի խօսքեր ես 20
խօսում, թէ խորհուրդ ու զօրու-
թիւն ունեմ պատերազմի համար.
հիմա ո՞ւմ ապաւինեցիր, որ ին-
ձանից ապստամբուեցար։ Ահա 21
դու հիմա ապաւինել ես այն
ջախջախուած եղէգի ցուպին՝ Ե-
գիպտոսին, որ եթէ մի մարդ նո-
րա վերայ կռնէ, ձեռքը կ՚մտնէ
և նորան կ՚ծակէ. այսպէս է Ե-
գիպտոսի Փարաւօն Թագաւորը
բոլոր իրան ապաւինողների հա-
մար։ Բայց եթէ ինձ ասէք թէ 22
Մենք մեր Եհովայ Աստուծուն
ենք ապաւինել. մի՞թէ դա այն
չէ որի բարձրաւանդակները և
սեղանները Եզեկիան վերցրեց, և
Յուդային և Երուսաղէմին ասեց.
Միայն այս սեղանի առաջին Ե-
րուսաղէմումն երկրպագութիւն
արէք։ Արդ՝ ուրեմն *դաշինք դիր՝ 23
իմ տիրոջ՝ Ասորեստանի Թագա-
ւորի հետ. և ես քեզ երկու հա-
զար ձի տամ, եթէ դու կարող ես
նորանց վերայ հեծնողներ դնել.
Ապա ի՞նչպէս կարող ես դէմ կե- 24
նալ իմ տիրոջ փոքրիկ ծառա-
ներից մէկ կուսակային, որ դու
կառքերի և ձիերի համար Ե-
գիպտոսին ես ապաւինում։ Չի- 25
մա ես առանց Եհովայի՞ն եմ ե-
կել արդեօք այս երկրի վերայ որ
նորան աւերեմ. Եհովան ինձ ա-
սեց. Գնա այն երկրի վերայ և նո-
րան աւերիր։
Եւ Քեղկեայի որդի Եղիակիմը 26
և Սեբնան ու Յովաքը ասեցին
Ռաբսակին. Խնդրում ենք՝ ծա-
ռաներիդ հետ †Ասորերէն խօ-
սիր, որովհետև մենք հասկանում
ենք, և մեզ հետ Եբրայեցերէն
մի խօսիր պարսպի վերայ եղող
ժողովրդի ականջի առաջին։ Բայց 27

*Կամ՝ մրցիր. Ոմանք՝ պատանդ տուր
†Կամ՝ Քաղդէարէն

Ռաբսակէն ասեց Նոքանց. Մի՞թէ քո տիրոջ և քեզ մեռ է ուղարկել ինձ իմ առնը այս խօսքերը խօսելու համար. չէ՞ որ այս մարդկանց համար, որոնք պարսպի վերայ նստած են որ ձեզ հետ պիտի իրանց աղբն ուտեն և իրանց մզգը խմեն։

28 Եւ Ռաբսակը կանգնեց և մեծ ձայնով աղաղակեց երբայեցերէն և խօսեց ասելով. Լսեցէք մեծ թագաւորի՝ Ասորեստանի թա-
29 գաւորի խօսքը. Թագաւորը այսպէս է ասում. Եզեկիան ձեզ չ'խաբէ. որովհետև նա չի կարող ձեզ նորա ձեռքից ազատել,
30 և Եզեկիան ձեզ Եհովային չ'յուսացնէ՝ ասելով. Եհովան մեզ անպատճառ ազատելու է, և այս քաղաքը պիտի չ'տրուի Ասորեստանի թագաւորի ձեռքը։
31 Եզեկիային մի լսէք. որովհետև Ասորեստանի թագաւորը այսպէս է ասում. Ինձ հետ հաշտութիւն արէք, և ինձ մօտ դուրս եկէք. և ամէն մարդ իր որթիցը և ամէն մարդ իր թզենիցն ուտէ, և ամէն մարդ իր
32 ջրհորի ջրիցը խմէ, Մինչև որ ես գամ և ձեզ տանեմ ձեր երկրի պէս մի երկիր, ցորենի և դինիի երկիր, հացի և այգիների երկիր, իւղ տուող ձիթենիների և մեղրի երկիր, որ ապրէք և չ'մեռնէք. և Եզեկիային մի լսէք, որովհետև ձեզ խաբում է ասելով թէ Ե-
33 հովան մեզ ազատելու է։ Մի՞թէ փրկեցին այն ազգերի աստուածներն՝ ամէն մէկն իր երկիրը Ասորեստանի թագաւորի ձեռքից
34 ցը։ Ո՞ւր են Եմաթի և Արփադի աստուածները, ո՞ւր են Սեփարուիմի, Անայի և Աւայի աստուածները, որ ազատեին Սամարիան իմ ձեռքից։ Ո՞րն է այդ
35 երկիրների բոլոր աստուածներից, որ ազատած լինի իրանց երկիրը իմ ձեռքից, որ Եհովան կիրը իմ ձեռքից, որ Եհովան էլ ազատէր Երուսաղէմը իմ ձեռքից։
36 Եւ ժողովուրդը լռեց և նորան ոչինչ պատասխան չ'տուին. որովհետև թագաւորը հրաման էր տուել ասելով. Նորան չ'պատասխանէք։
37 Եւ Քեղկեայի որդի Եղիակիմ՝ պալատի հազարապետը, և Սեբնա տաճնադպիրը և Ասափի որդի Յովաք՝ յիշատակաց դպիրը գնացին հանդերձները պատռտելով Եզեկիայի մօտ և նորան պատմեցին Ռաբսակի խօսքերը։

Գ.Լ. ԺԹ

1 Եւ երբոր Եզեկիա թագաւորը լսեց, պատռեց իր հանդերձները և քուրձ հագաւ և գնաց Տիրոջ տունը։ 2 Եւ պալատի հազարապետ Եղիակիմին և տաճնադպիր Սեբնային և քահանաների ծերերին քուրձեր հագած ուղարկեց Ամովսի որդի Եսայիա մարգարէի մօտ։ 3 Եւ նորանք ասեցին նորան. Այսպէս է ասում Եզեկիան. Նեղութեան և կըշտամբանքի և նախատանքի օր է այս օրը. որովհետև երեխաները հասել են ծննդեան կէտին, բայց ոյժ չ'կայ ծնելու։ 4 Թերևս լսէ քո Տէր Աստուածը Ռաբսակի բոլոր խօսքերը, որին իր տէրը՝ Ասորեստանի թագաւորը ուղարկեց կենդանի Աստուածուն նախատելու և այնպիսի խօսքերով կշտամբելու, որոնք լսել է քո Տէր Աստուածը։ Ուրեմն աղօթք արա գըտնուող մնացորդի համար։ 5 Եւ Եզեկիա թագաւորի ծառաները եկան Եսայիայի մօտ։ 6 Եւ Եսայիան ասեց նորանց. Այսպէս ասեցէք ձեր տիրոջը. Տէրը այսպէս է ասում. Մի վախենար այն խօսքերիցը, որ լսեցիր, որով հայհոյեցին ինձ Ասորեստանի թագաւորի ծառաները։ 7 Ահա ես նորա վերայ մի ոգի կ'ուղարկեմ, և նա մի լուր կ'լսէ, և դառնայ իր երկիրը, և սրով կ'ընկնէ իր երկրում։

8 Եւ Ռաբսակը դառաւ և գտաւ Ասորեստանի թագաւորին Լիբնայի հետ պատերազմելիս, որովհետև լսել էր թէ չուել է Լաքիսից։ 9 Եւ նա լուր լսեց Եթովպացիների թագաւոր Թարակայի մասին ասելով. Ահա գալիս է քեզ հետ պատերազմելու. և դարձեալ դեսպանները ուղարկեց Եզեկիայի մօտ ասելով.
10 Այսպէս ասեցէք Եզեկիային Յուդայի թագաւորին ասելով. Թող քո Աստուածը քեզ չ'խաբէ որին դու ապաւինել ես ասելով. Երուսաղէմը պիտի չ'տրուի Ասորեստանի թագաւորի ձեռքը։
11 Ահա դու լսեցիր, թէ ինչ են արել Ասորեստանի թագաւորները բոլոր երկիրներին՝ նորանց բնաջինջ անելով. և դու պի-
12 տի ազատուի՞ս։ Մի՞թէ ազգերի աստուածները ազատեցին նորանց, որոնց փչացրին իմ հայրերը՝ Գովզանը, Խառանը, Ռեսեփը և Թելասարում եղող Ե-
13 դեմի որդիները։ Ո՞ւր է Եմաթի թագաւորը, Արփադի թագաւորը, Սեփարուիմ քաղաքի, Անայի և Աւայի թագաւորը։
14 Եւ Եզեկիան առաւ նամակները դեսպանների ձեռքիցը և կարդաց նորանց, և վեր գնաց Տիրոջ տունը. և Եզեկիան տարածեց նորանց Տիրոջ առաջին։
15 Եւ Եզեկիան աղաչեց Տիրոջ առաջին և ասեց. Ով Տէր Աստուած Իսրայէլի, որ նստած ես քերովբէների վերայ, դու ես միայն Աստուած երկրի բոլոր թագաւորութիւնների համար. դու ես ստեղծել երկինքն ու
16 երկիրը։ Ով Տէր, խոնարհեցրու քո ականջը և լսիր. ով Տէր, բաց քո աչքերը և տես և լսիր Սենեքերիմի խօսքերը, որ ուղարկեց կենդանի Աստուածուն նախատե-
17 լու։ Արդարև, ով Տէր, աւերել են Ասորեստանի թագաւորները այն ազգերին և նորանց երկիրները. 18 և այրել են նորանց աստուածները կրակով, որովհետև նորանք աստուածներ չեն, այլ մարդի ձեռքի գործ՝ փայտ և քար. ուրեմն նորանց փչացրին
19 էլ։ Բայց արդ, ով Տէր մեր Աստուած, մեզ ազատիր նորա ձեռքիցը, որ երկրի ամէն թագաւորութիւնները իմանան, որ դու Եհովա ես միայն Աստուած։

Եւ Ամովսի որդի Եսայիան մարգարէ 20
ուղարկեց Եզեկիայի մօտ ասելով.
Այսպէս է ասում Իսրայէլի Տէր
Աստուածը. Այն որ ազաչեցիր
ինձ Ասորեստանի Սենեքերիմ թա-
գաւորի մասին, լսեցի։ Այս այն 21
խօսքն է որ Տէրն ասում է նորա
մասին.
Քեզ անարգեց, քեզ ծաղրեց
Սիոնի կոյս աղջիկը.
Քո եռեից գլուխը շարժեց Երու-
սաղէմի աղջիկը։
Ո՞ւմ նախատեցիր և հայհոյեցիր. 22
Եւ ո՞ւմ վերայ ձայն բարձրացրիր,
Եւ աչքերդ վեր հանեցիր. Իս-
րայէլի Սուրբի վերայ։
Քո դեսպանների ձեռովը նախա- 23
տեցիր Տիրոջը և ասեցիր.
Իմ կառքերի շատութիւնովը վեր
գնացի սարերի բարձրու-
թեան վերայ
Լիբանանի կողմերը.
Եւ ես կտրում եմ նորա բարձր
եղևիններն,
Եւ նորա բնտիր մայրերը.
Եւ մտնում եմ նորա ծայրի օ-
թեւանը
Նորա կարմրատոսի անտառը։
Եւ ես փորեցի և օտար ջրերը 24
խմեցի,
Եւ իմ ոտքերի թաթերովը կ'չո-
րացնեմ
Եգիպտոսի բոլոր գետերը։
Մի՞թէ դու չես լսել, որ ես եմ 25
վաղուց արել այդ,
Եւ հին օրերից դորան ձևակեր-
պեցի.
Հիմա բերի այդ,
Որ աւերակների հողակոյտների
դարձնես պարսպաւոր քա-
ղաքները։
Եւ նորանց բնակիչների ձեռքը 26
կարճ է,
Վհատ ու ջարհուրեցին և ամա-
չեցին,
Եղան դաշտի խոտ
Եւ կանաչ բանջար
Տանիքի խոտ
Եւ հասկը քշելուց առաջ խոր-
շակահար եղած արտ,
Բայց ես գիտեմ քո բնակութիւ- 27
նը, քո ելքն ու քո մուտքը,
Եւ քո բարկութիւնը ինձ դէմ։

28 Քո ինձ դէմ ունեցած բարկու-
թեան համար ,
Եւ ըստ որում քո ամբարտաւա-
նութիւնը հասել է իմ ա-
կանջներին .
Ես էլ դնում եմ իմ կարթը
քո քթին
Եւ իմ սանձը՝ քո բերանին,
Եւ քեզ ետ եմ դարձնում քո
եկած ճանապարհովը ։
29 Եւ այս լինի քեզ նշանը .
Կերէք այս տարի թափուածից
բուսածը ,
Եւ երկրորդ տարին՝ ինքնիրան
բուսածը ,
Իսկ երրորդ տարին սերմեցէք ու
հնձեցէք ,
Եւ այգիներ տնկեցէք ու նորանց
պտուղը կերէք ։
30 Եւ Յուդայի տան ազատուած
մնացորդը
Կրկին արմատ կ'արձակէ դէպի
ցած ,
Եւ պտուղ կ'տայ վերևումը ։
31 Որովհետև Երուսաղէմից դուրս
կ'գայ մնացորդ ,
Եւ փրկուածներ՝ Սիօն սարիցը ։
Այս Զօրաց Տիրոջ նախանձն է
անելու ։
32 Սորա համար այսպէս է ա-
սում Տէրը
Ասորեստանի թագաւորի մասին.
Նա չի մտնիլ այս քաղաքը ,
Եւ այնտեղ մի նետ չի գցիլ .
Եւ վահանով նորա առաջը չի
գալ ,
Եւ նորա դէմ պատնէշ չի կանգ-
նեցնիլ ։
33 Իր եկած ճանապարհովը ետ կը
դառնայ .
Եւ այս քաղաքի մէջ չի մտնիլ .
Ասում է Տէրը ։
34 Եւ ես կ'պաշտպանեմ այդ քա-
ղաքը , որ ազատեմ՝
Ինձ համար և իմ ծառայ Դա-
ւիթի համար ։
35 Եւ եղաւ որ այն գիշերը
դուրս եկաւ Տիրոջ հրեշտակը և
զարկեց Ասորեստանցիների բա-
նակումը հարիւր ութսունևհինգ
հազար . և երբոր առաւօտը վեր
կացան , և ահա բոլորը մեռած
36 դիակներ էին ։ Եւ Ասորեստանի
Սենեքերիմ թագաւորը չուեց
գնաց դարձեալ , ու նստեց Նին-
ուէ ։ Եւ երբոր նա երկրպա- 37
գում էր իր աստուծուն՝ Նես-
րաքի տանը , նորա որդիքը Ադ-
րամելէք և Սարասար նորան սրով
սպանեցին և իրանք փախան Ա-
բարատի երկիրը . և նորա որդի
Ասորդանը թագաւոր եղաւ նո-
րա տեղ ։

ԳԼ. Ի

Այն օրերը Եզեկիան մերձ 'ի 1
մահ հիւանդացաւ . և Ամովսի
որդի Եսայիա մարգարէն եկաւ
նորա մօտ և նորան ասեց . Այս-
պէս է ասում Տէրը . Կտակ ա-
րա քո տան մասին . որովհետև
դու պիտի մեռնես ու չ'ապրես ։
Եւ նա իր երեսը դարձրեց դէպի 2
պատը և աղօթք արաւ Տիրոջն
ասելով . Աղաչում եմ , ով Տէր, 3
յիշիր հիմա որ քո առաջին հա-
ւատարմութեամբ ու կատարեալ
սրտով գնացի , որ քո աչքերին
հաճելի եղածն արի ։ Եւ Եզե-
կիան մեծ լացով լաց եղաւ ։
Եւ Եսայիան դեռ չէր դուրս 4
եկել միջի քաղաքիցը , և ահա
Տիրոջ խօսքն եղաւ նորան ասե-
լով . Ետ դարձիր և ասիր իմ 5
ժողովրդի իշխան Եզեկիային .
Այսպէս է ասում Տէրը՝ քո հայր
Դաւիթի Աստուածը . Լսեցի քո
աղօթքը , տեսայ քո արտասու-
քը . ահա ես քեզ կ'բժշկեմ և
երրորդ օրը վեր կ'դնաս Տիրոջ
տունը ։ Եւ ես կ'աւելացնեմ քո 6
օրերի վերայ տասնևհինգ տարի .
և կ'ազատեմ քեզ և այս քա-
ղաքը Ասորեստանի թագաւորի
ձեռքից . և այս քաղաքը կը
պաշտպանեմ ինձ համար և իմ
ծառայ Դաւիթի համար ։ Եւ 7
Եսայիան ասեց . Զորացրած թուզ
առէք . և առան ու դրին վէրքի
վերայ , և նա առողջացաւ ։
Եւ Եզեկիան ասեց Եսայիային . 8
Ո՞րն է նշանը թէ Տէրը ինձ բը-
ժշկելու է , և որ ես երրորդ օրը
գնալու եմ Տիրոջ տունը ։ Եւ 9
Եսայիան ասեց . Այս քեզ նշան

լինի Տէրիցը , որ Տէրը անելու է
իր ասած խօսքը . Ստուերը տասը
աստիճան առա՞ջ գնայ կամ թէ
տասը աստիճան ե՞տ դառնայ ։
10 Եւ Եզեկիան ասեց . Թեթև է
ստուերի համար տասը աստիճան
առաջ գնալը . ոչ , այլ ստուերը
տասը աստիճան դէպի ետ դառ-
11 նայ ։ Եւ Եսայիա մարգարէն Տի-
րոջն աղաղակեց և ստուերը ետ
դարձրեց տասը աստիճան այն
աստիճաններով , որ իջել էր Ա-
քազի աստիճաններովը ։
12 Այն ժամանակ Բաղադանի որ-
դի *Մարովդաք-բաղադան՝ Բա-
բիլոնի թագաւորը նամակներ և
ընծայ ուղարկեց Եզեկիայի մօտ .
որովհետև լսել էր թէ հիւան-
13 դացել է Եզեկիան ։ Եւ Եզեկի-
ան լսեց նորանց , և ցոյց տուաւ
նորանց իր թանգագին բաների
տունը , արծաթը , ոսկին և խուն-
կերը և պատուական իւղը , և իր
զէնքերի բոլոր տունը և բոլորը
ինչ որ գտնվում էր իր գանձա-
րաններումը . մի բան չ'կար որ
Եզեկիան նորանց ցոյց տուած
չ'լինէր իր տանը և իր բոլոր տէ-
րութեան մէջ ։
14 Եւ Եսայիա մարգարէն եկաւ
Եզեկիա թագաւորի մօտ և ա-
սեց նորան . Ի՞նչ ասեցին այս
մարդիկը , և ո՞րտեղից են եկել
քեզ մօտ ։ Եւ Եզեկիան ասեց .
Հեռու երկրից են եկել՝ Բաբիլո-
15 նից ։ Եւ ասեց . Ի՞նչ են տեսել
քո տանը . և Եզեկիան ասեց .
Ամեն ինչ որ կայ իմ տանը՝ տե-
սել են . մի բան չ'կար որ ես ցոյց
տուած չ'լինիմ նորանց իմ գան-
16 ձարաններումը ։ Եւ Եսայիան ա-
17 սեց Եզեկիային . Լսիր Տիրոջ
խօսքը . Ահա օրեր են գալիս , որ
ամեն ինչ որ կայ քո տանը և
ինչ որ էլ քո հայրերը հաւա-
քել են մինչև այս օրը , կ'տար-
ուի Բաբիլոն . մէկ բան չի մնալ ,
18 ասում է Տէրը ։ Եւ քո որդիներ-
ից , որ պիտի քեզանից յառաջ
գան , որ դու կ'ծնես , կ'առնեն ,
և նորանք Բաբիլոնի թագաւորի
պալատումը ներքինիներ կ'լինին ։
Եւ Եզեկիան ասեց Եսայիային . 19
Բարի է Տիրոջ խօսքը որ դու ա-
սեցիր . և նա ասեց . Չէ՞ որ , ե-
թէ իմ օրերին խաղաղութիւն և
ապահովութիւն կ'լինի ։
Եւ Եզեկիայի գործերի մնա- 20
ցորդը և նորա բոլոր զօրութիւ-
նը , և նորա շինած աւազանը և
ջրմուղը , և որ ջուրը քաղաքը
բերաւ , ահա նորանք գրուած
են Յուդայի թագաւորների յի-
շատակաց գրքումը ։ Եւ Եզեկիան 21
ննջեց իր հայրերի հետ , և նորա
որդի Մանասէն թագաւոր եղաւ
նորա տեղ ։

ԳԼ. ԻԱ

Տասնևերկու տարեկան էր Մա- 1
նասէն երբոր թագաւոր եղաւ ,
ու յիսունևհինգ տարի թագա-
ւորեց Երուսաղէմումը . և նորա
մօր անունն էր Էփսիբայ ։ Եւ նա 2
չարութիւն արաւ Տիրոջ աչքի
առաջին այն ազգերի գարշու-
թիւնների պէս , որոնց Տէրը քը-
շեց Իսրայէլի որդկանց առաջից ։
Նա կրկին շինեց այն բարձրա- 3
ւանդակները որոնք քանդել էր
իր հայր Եզեկիան , և Բահաղի
համար սեղաններ կանգնեցրեց ,
և [illegible] անտառներ շինեց ինչ-
պէս որ շինել էր Իսրայէլի Ա-
քաաբ թագաւորը , և երկրպա-
գութիւն արաւ երկնքի ամեն
զօրքերին և ծառայեց նորանց ։
Եւ Տիրոջ տանը սեղաններ շի- 4
նեց , որի համար Տէրն ասել էր ,
Երուսաղէմումը պիտի դնեմ իմ
անունը ։ Եւ սեղաններ շինեց 5
երկնքի բոլոր զօրքերի համար Տի-
րոջ տան երկու գաւիթներումը ։
Եւ իր որդիին կրակով անցկա- 6
ցրեց , և գուշակութիւն և հմա-
յութիւն էր անում . և շինեց
մեռելահարցուկներ և նշանա-
գէտներ . նա շատ չարութիւն
արաւ Տիրոջ աչքի առաջին որ
բարկացնէ ։ Եւ իր շինած անտա- 7
ռի կուռքը դրաւ այն տանը ,
որի համար Տէրն ասել էր Դա-
ւիթին և նորա որդի Սողոմոնին .

*Եբր. Բարովդաք

Ա.յս տանը և երուսաղէմաւմբ, որ
ես ընտրել եմ Իսրայէլի բոլոր
ցեղերիցը, իմ անունը պիտի դը-
8 նեմ յաւիտեան։ Եւ Իսրայէլի
որը այլ ևս պիտի չ'շարժեցնեմ
այն երկրիցը որ տուել եմ ի-
րանց հայրերին, միայն եթէ զգու-
շանան անելու բոլոր իմ իրանց
պատուիրածին պէս և այն բոլոր
օրէնքին պէս որ իմ ծառան՝
Մովսէսը իրանց հրամայել է։
9 Բայց նորանք չ'լսեցին, և Մա-
նասէն նորանց մոլորեցրեց, որ
այն ազգերիցն աւելի չարութիւն
գործեն, որոնց Տէրը փշացրեց
Իսրայէլի առաջից։
10 Եւ Տէրը խօսել էր իր ծառա-
ների՝ մարգարէների ձեռովը ա-
11 սելով. Որովհետև Յուդայի Մա-
նասէ թագաւորն արել է այդ
գարշութիւնները, իրանից ա-
ռաջ եղող Ամորհացիների բոլոր
արածներից աւելի չարութիւն է
գործել և Յուդային էլ մեղան-
12 չել տուել իր կուռքերովը. Ն-
րա համար այսպէս է ասում
Իսրայէլի Տէր Աստուածը. Ա.ս
ես չարիք պիտի բերեմ Երուսա-
ղէմի և Յուդայի վերայ, որ ա-
մեն ով լսէ այն, նորա երկու
13 ականջները հնչեն։ Եւ պիտի ձը-
գեմ Երուսաղէմի վերայ Սամա-
րիայի լարը և Աքաաբի տան
գնաւակը, և պիտի սրբեմ Երու-
սաղէմը ինչպէս որ ամանն են
սրբում, և սրբում ու դարձնում
14 են նորա երեսի վերայ։ Եւ պի-
տի մերժեմ իմ ժառանգութեան
մնացորդը և տամ նորանց իրանց
թշնամիների ձեռքը, և նորանք
պիտի աւար և յափշտակութիւն
լինին իրանց բոլոր թշնամիների
15 համար։ Որովհետև իմ աչքի ա-
ռաջին չարութիւն արին և ինձ
բարկացրին այն օրիցը որ իրանց
հայրերը դուրս եկան Եգիպտա-
16 ցից մինչև այս օրը։ Նաև ան-
մեղ արիւն թափեց Մանասէն
այնքան խիստ շատ, որ լցրեց
Երուսաղէմը ծայրէ ի ծայր բացի
իր մեղքից, որ Յուդային մե-
ղանչել տուաւ Տիրոջ աչքի ա-
ռաջին չարութիւն գործելու։

17 Եւ Մանասէի գործերի մնա-
ցորդը և նորա բոլոր արածը և
նորա գործած մեղքը, ահա նո-
րանք գրուած են Յուդայի թա-
գաւորների յիշատակաց գրքում
18 մը։ Եւ Մանասէն ննջեց իր հայ-
րերի հետ և թաղուեցաւ իր
տան պարտէզումը՝ Ոզայի պար-
տէզումը. և նորա որդի Ամմոնը
թագաւոր եղաւ նորա տեղ։

19 Ամմոնը քսան և երկու տարեկան
էր, երբոր թագաւոր եղաւ, և
երկու տարի թագաւորեց Երու-
սաղէմումը, և նորա մօր անունն
էր Մեսոզոմիթ՝ դուստր Եահ-
20 բայի Արուսի։ Եւ նա չարու-
թիւն արաւ Տիրոջ աչքի առա-
ջին, ինչպէս որ արել էր իր հայ-
21 րը՝ Մանասէն։ Եւ բոլորովին այն
ճանապարհովը գնաց, որով գը-
նացել էր իր հայրը, և ծառա-
յեց այն կուռքերին որոնց ծա-
ռայել էր իր հայրը և երկրպա-
22 գեց նորանց։ Եւ թողեց իր հայ-
րերի Տէր Աստուածն, և չ'գնաց
Տիրոջ ճանապարհովը։

23 Եւ Ամմնի ծառաները դաւա-
ճանութիւն արին նորա դէմ և
սպանեցին թագաւորին իր տանը։
24 Բայց երկրի ժողովուրդը ջար-
դեց Ամմն թագաւորի դէմ բո-
լոր դաւաճանողներին, և երկրի
ժողովուրդը թագաւոր արաւ նո-
րա որդի Յովսիային նորա տեղ։
25 Եւ Ամմնի գործերի մնացորդը,
որ արաւ, ահա նորանք գրուած
են Յուդայի թագաւորների յի-
շատակաց գրքումը։ Եւ նորան
26 թաղեցին իր գերեզմանումը Ո-
զայի պարտէզումը. և նորա որ-
դի Յովսիան թագաւոր եղաւ նո-
րա տեղ։

Գլ. ԻԲ

1 Ութ տարեկան էր Յովսիան երբ-
որ թագաւոր եղաւ, և երեսունե-
մեկ տարի թագաւորեց Երու-
սաղէմումը, և նորա մօր անունն
էր Յեդիդա՝ դուստր Բազկադա-
2 ցի Ադայիայի։ Եւ Տիրոջ աչքի
առաջին ուղղութիւն արաւ, և
գնաց իր հայր Դաւիթի բոլոր

ճանապարհովը և չ'խոտորեց աջ
կամ ձախ։
3 Եւ Յովսիա թագաւորի տասն-
եւութերորդ տարին թագաւորը
ուղարկեց Մեսուլամի որդի Ե-
սելիայի որդիին Սափան դպրին
4 Տիրոջ տունը՝ ասելով. Գնա քեզ-
կիա քահանայապետի մօտ, որ
նա հանէ Տիրոջ տան ներս եկած
արծաթը որ դուռան պահապան-
ները ժողովեցին ժողովրդից,
5 Եւ յանձնեն գործաւորների ձեռ-
քը, որ Տիրոջ տան վերայ նշա-
նակուած են, և յանձնեն գործը
անդներին, որ Տիրոջ տանն են,
տան վերաւուածը նորոգելու հա-
6 մար, Հիւսերին, շինողներին և
որմնադիրներին, նաև փայտ ու
տաշած քարեր առնեն տունը
7 նորոգելու համար։ Բայց հաշիւ
չ'ուղեն նորանց ձեռքը տրուած
արծաթի համար, որովհետև նո-
րանք հաւատարմութեամբ գոր-
8 ծողներ են։ Եւ քեզկիա քահա-
նայապետն ասաց Սափան դպրին.
Մի օրէնքի գիրք եմ գտել Տի-
րոջ տանը. և քեզկիան այն
գիրքը տուաւ Սափանին, և նա
9 կարդաց նորան։ Եւ Սափան դը-
պիրն եկաւ թագաւորի մօտը և
պատասխան բերաւ թագաւորի
համար և ասեց. Ծառաներդ
Թափեցին տանը գտնուած ար-
ծաթը և տուին գործաւորների
ձեռքը, որ նշանակուած են Տի-
10 րոջ տանը։ Եւ Սափան դպիրը
պատմեց թագաւորին ասելով
Թէ քեզկիա քահանան ինձ մի
գիրք է տուել։ և Սափանը կար-
դաց նորան թագաւորի առաջին։
11 Եւ երբոր թագաւորը լսեց օրէն-
քի գրքի խօսքերը, պատառեց
12 իր հանդերձները։ Եւ թագաւո-
րը հրամայեց քեզկիա քահանային
և Սափանի որդի Ահիկամին և
Միքայէլ որդի Աքբորին և Սա-
փան դպրին և թագաւորի ծա-
13 ռայ Ասայիային ասելով. Գնա-
ցէք հարցրէք Տիրոջը ինձ հա-
մար, ժողովրդի համար և բոլոր
Յուդայի համար այս գտնուած
գրքի խօսքերին համեմատ, որով-
հետև մեծ է Տիրոջ բարկութիւ-
նը որ բորբոքուել է մեզ դէմ,
նորա համար որ մեր հայրերը չէն
լսել այս գրքի խօսքերը, որ կատա-
րեն բոլոր մեր մասին գրուածը։
14 Եւ քեզկիա քահանան, և Ա-
հիկամը և Աքբորը և Սափանն
ու Ասայիան գնացին Ուրսի որ-
դի Թեկուայի որդի Սեղուամ
հանդերձապահի կնոջ՝ Ողդա
մարգարէուհիի մօտ, որ բնակ-
վում էր Երուսաղէմում Մաս-
նայի մէջ և խօսեցին նորա հետ։
15 Նա էլ ասեց նորանց. Ա.յսպէս է
ասում Իսրայէլի Տէր Աստուա-
ծը. Ասեցէք այն մարդին, որ ձեզ
16 ինձ մօտ ուղարկեց. Ա.յսպէս է
ասում Տէրը. Ահա ես չարիք պի-
տի բերեմ այստեղի վերայ և նո-
րա բնակիչների վերայ այն գրքի
բոլոր խօսքերը, որ կարդացել է
17 Յուդայի թագաւորը. Նորա հա-
մար որ ինձ թողել են և խունկ
ծխել ուրիշ աստուածների՝ ինձ
բարկացնելու համար իրանց ձեռ-
քերի բոլոր գործքերովը. և իմ
բարկութիւնը պիտի բորբոքուի
այստեղի վերայ և չ'հանգչի։ Եւ
18 Յուդայի թագաւորին, որ ձեզ
ուղարկել է Տիրոջը հարցնելու
համար, այսպէս ասեցէք նորան.
Ա.յսպէս է ասում Իսրայէլի Տէր
Աստուածը այն խօսքերի համար,
19 որ լսել ես. Որովհետև քո սիրտ
տկարեց և դու խոնարհուե-
ցար Տիրոջ առաջին լսելով այն,
ինչ որ ես ասել եմ այս տեղի
համար և նորա բնակիչների հա-
մար, թէ պիտի աւերում և ա-
նէծք լինի, և պատառեցիր քո
հանդերձները և լացիր իմ առա-
ջը. ես էլ լսեցի, ասում է Տէրը։
20 Ա.յդ պատճառով ահա ես քեզ
կ'ժողովեմ քո հայրերի հետ, և
դու կ'դրուիս խաղաղութեամբ
քո գերեզմանի մէջ, և քո աչ-
քերը չեն տեսնիլ այն ամեն չա-
րիքը որ ես բերելու եմ այս ե-
կրի վերայ։ Եւ նորանք պատաս-
խանը տարին թագաւորին։

Գլ. ԻԳ

1 Եւ թագաւորը հրեայ ուղար-

կեց, և նորա մօտ ժողովեցին Յուդայի և Երուսաղէմի բոլոր
2 ծերերին։ Եւ Թագաւորը վեր գնաց Տիրոջ տունը և նորա հետ Երուսաղէմի բոլոր բնակիչները և քահանաները և մարգարէները և բոլոր ժողովուրդը փոքրիցը մինչև մեծը, և կարդաց նորանց ականջին ուխտի դրքի բոլոր խօսքերը, որ գտնուել էր Տիրոջ
3 տանը։ Եւ Թագաւորը կանգնել էր սիւնի մօտ և ուխտ արաւ Տիրոջ առաջին Տիրոջը հետեւել, և նորա հրամանները և վկայութիւնները ու կանոնները բոլոր սրտով և բոլոր հոգիով պահելու, որ հաստատէ այս ուխտի խօսքերը որ գրուած են այս գրքում. և բոլոր ժողովուրդը
4 կանգնեց ուխտի մէջ։ Եւ Թագաւորը հրամայեց Փեղկիա քահանայապետին և երկրորդ քահանաներին և դուռն պահապաններին, որ դուրս հանեն Տիրոջ տաճարիցը Բահաղի և Աստարովթի համար և երկնքի բոլոր զօրքերի համար շինուած բոլոր գործիքները, և նորանց այրեց Երուսաղէմից դուրս Կեդրոնի դաշտամասերում, և նորանց մա-
5 խիրը տարաւ Բեթէլ։ Եւ դադարեցրեց այն քուրմերին, որոնց դրել էին Յուդայի Թագաւորները և որ խունկ էին ծխում Յուդայի քաղաքներում և Երուսաղէմի շուրջի բարձրաւանդակների վերայ, և որ խունկ էին ծխում Բահաղին, արեգակին ու լուսնին և աստեղատներին և երկնքի բոլոր զօրքերին։
6 Եւ հանեց Աստարովթը Տիրոջ տանիցը սա փայա Երուսաղէմից դուրս Կեդրոնի հեղեղատի մօտ և այրեց նորան Կեդրոնի հեղեղատի մօտ, և փշրեց մինչև ա-
րաւ և ցանեց նորա մինչիրը ժո-
ղովրդի որդիանց գերեզմանների
7 վերայ։ Եւ քանդեց իգացողների տները, որ Տիրոջ տան մէջ էին, ուր որ կանայք Աստարովթի հա-
8 մար վրաններ էին գործում։ Եւ տարաւ բոլոր քահանաներին Յուդայի քաղաքներիցը, և պղծեց այն բարձրաւանդակները, ուր որ քահանաները խունկ էին ծխում Գաբայից մինչև Բերսաբէէ, և քանդեց դռների բարձրաւանդակները, որ քաղաքի իշխան Յեսուէի դռան մուտքի մօտ են, որ քաղաքի դռան աջ կողմին է։ 9
Միայն Թէ բարձրաւանդակների քահանաները Երուսաղէմումն եղաղ Տիրոջ սեղանի վերայ չէին վեր գնում, բայց բաղարջներն ուտում էին իրանց եղբայրների մէջ։ Եւ նա պղծեց Տոփեթը որ 10
Ենոմի որդիի ձորումն է, որ աչք իր որդիին կամ իր աղջկանը կրակով չանցկացնէ Մողոքի համար։ Եւ դադարեցրեց այն ձիերը, 11
որ Յուդայի Թագաւորները նուիրել էին արեգակին Տիրոջ տան մուտքիցը որ Նաթանմելէք ներքինի սենեակի մօտ էին, փարուրիմում, և արեգակի կառքերը այրեց կրակով։ Եւ այն սե- 12
ղանները, որ Աքազի վերնատան տանիքի վերայ էին, որ շինել էին Յուդայի Թագաւորները, և Մանասէի Տիրոջ տան երկու դատխներուն շինած սեղանները քանդեց և այնտեղից բնաջինջ արաւ և նորանց փոշին Թափեց Կեդրոնի հեղեղատը։ Եւ այն բարձ- 13
րաւանդակները, որ Երուսաղէմի դիմացը Ապականութեան սարի աջ կողմին էին, որ շինեց Իսրայէլի Թագաւոր Սողոմոնը Սիդոնացիների գարշելի Աստարովթին և Մովաբացիների գարշելի Քամոսին և Ամմոնի որդւոց պիղծ Մեղքոմին, Թագաւորը պղծեց։ 14
Եւ արձանները փշրեց և [illegible] անտառները կտրատեց և նորանց տեղերը լցրեց մարդի ոսկորներով։
Նաև այն սեղանը որ Բեթէ- 15
լումն է [illegible] այն բարձրաւանդակը որ շինել էր Նաբատեան Յերոբովամը, որ Իսրայէլին մեղանչել տուաւ, այն սեղանն ու բարձրաւանդակն էլ քանդեց և բարձրաւանդակը այրեց, մանրեց փոշի արաւ և Աստարովթն էլ այրեց։ Եւ Յոսիան գարձրեց 16
երեսը և տեսաւ այն գերեզման-

ները, որ այնտեղ սարի վերայ էին, և [illegible] ուղարկեց ու առաւ այն ոսկորները գերեզմաններից և այրեց սեղանի վերայ ու պղծեց նորան Տիրոջ այն խօսքին համեմատ, որ ազաղակեց Աստուծոյ մարդը այն խօսքերը ազաղակելով կեղծաւորդ, որ այնտեղ 17
[illegible] ասեց. Այ [illegible] կոթող է, որ ես տեսնում եմ. և այն քաղաքի մարդիկն ասացին. Դա այն Աստուծոյ մարդի գերեզմանն է, որ Յուդայից եկաւ ու ազաղակեց Բեթէլի սեղանի վերայ այն խօսքերը որ 18
դու արիր։ Եւ [illegible] ասեց. Չանգիստ թողեցէք նորան, ոչ ոք նորա ոսկորները չշարժեցնէ. և պահեցին նորա ոսկորները Սամարիայից եկող մարգարէի ոս- 19
կորների հետ։ Եւ Սամարիայի քաղաքների միջի բարձրաւանդակների տներն էլ, որ Իսրայէլի թագաւորները շինել էին Տիրոջ բարկացնելու համար, վերցրեց Յոսիան, և նորանց էլ արաւ ըստ այն արածների պէս, որ արաւ Բեթէլում։ Եւ այն- 20
տեղի բարձրաւանդակների բոլոր քահանաներին մորթեց այն սեղանների վերայ և մարդի ոսկորներ այրեց նորանց վերայ և եկաւ դարձաւ Երուսաղէմ։
Եւ Թագաւորը հրամայեց բո- 21
լոր ժողովրդին ասելով. Զերդ Տէր Աստուծոյ համար զատիկ կատարեցէք ինչպէս որ գրուած է այս ուխտի գրքումը։ Որովհետև 22
այս զատիկը պէս չէր կատարուած Իսրայէլին դատաւորների օրերից հետէ, և Իսրայէլի թագաւորների և Յուդայի թագաւորների օրերում։ Այլ 23
Յոսիա Թագաւորի տասնեւութերորդ տարին կատարուեցաւ այս զատիկը Տիրոջ համար Երուսաղէմում։
Նաև վհուկներին ու նշանա- 24
գէտներին, Թերափիմներին և կուռքերին և բոլոր գարշելիքներին, որ երևում էին Յուդայի երկրումը և Երուսաղէմում, ատելից Յոսիան, որպէս գի հաստատէ այն գրքի մէջ
գրուած օրէնքի խօսքերը, որ գտել կիա քահանան գտել էր Տիրոջ տանը։ Եւ նորանից առաջ նա- 25
բան պէս Թագաւոր չէր եղած, որ բոլոր սրտով և բոլոր հոգիով և բոլոր զօրութիւնով Տիրոջ դարձած լիներ Մովսէսի բոլոր օրէնքին համեմատ, և նորանից յետոյ նորան նմանը վեր չկացաւ։ Սակայն Տէրը եաս չդար- 26
ձաւ իր մեծ բորբոքուած բարկութիւնից, որ բորբոքել էր Յուդայի դէմ այն բոլոր պատճառած բարկութիւնների համար, որ Մանասէն նորան բարկացրել էր։ Եւ Տէրն ասեց. 27
Յուդային էլ պիտի մերժեմ իմ երեսիցը, ինչպես որ մերժեցի Իսրայէլին, և պիտի դէն գցեմ այս քաղաքը, իմ ընտրած Երուսաղէմը, և այս տունը, որի մասին ասեցի Թէ իմ անունը պիտի լինի այնտեղ։
Եւ Յովսիայի գործերի մնացոր- 28
դը և նորա բոլոր արածը, ահա նորանք գրուած են Յուդայի Թագաւորների ժամանակագրքումը։
Նորա օրերին գնաց Եգիպտո- 29
սի Նեքաւով փարաւոն Թագաւորը Ասորեստանի Եփրատ գետը վերայ. և Յովսիա Թագաւորը գնաց նորա առաջը. բայց նա մեռցրեց Յովսիային Մակեդովնում, հէնց որ նորան տեսաւ։
Եւ նորա ծառաները նորան մե- 30
ռած գրին կառքի մէջը և բերին նորան Երուսաղէմ և թաղեցին իր գերեզմանումը. և երկրի ժողովուրդն առաւ Յովսիայի որդի Յովաքազին և նորան օծեցին ու Թագաւոր արին իր հօր տեղ։
Քառասներեք տարեկան էր Յո- 31
վաքազը երբոր Թագաւոր եղաւ, և երեք ամիս Թագաւորեց Երուսաղէմումը. և նորա մոր անունն էր Ամիտաղ դուստր Լեբնացի Երեմիայի։ Եւ նա Տիրոջ աչքի 32
առաջին չարութիւն արաւ բոլորովին իր հայրերի արածին պէս։
Եւ Նեքաւով փարաւոնը նորան 33
բանտարկեց Եմաթի երկրումն Ռեբղայի մէջ որ չթագաւորէ

Երուսաղէմումը, և երկրի վերայ
տուգանք դրաւ Հարիւր տաղանդ
արծաթի և մի տաղանդ ոսկի։
34 Եւ Նեքաւով փարաւօնը Յովա-
սիայի որդիին Եղիակիմին Թա-
գաւոր դրաւ նորա Հայր Յով-
սիայի տեղ և նորա անունը փո-
խեց Յովակիմ, իսկ Յովաքազին
առաւ ու տարաւ Եգիպտոս, և
35 նա մեռաւ այնտեղ։ Եւ Յովա-
կիմը տուաւ արծաթին ու ոսկին
փարաւօնին, բայց Հարկ դրաւ
երկրի վերայ որ փարաւօնի խօս-
քին պէս տայ արծաթը. իւրա-
քանչիւր մարդից իր բաժնի չափ
պահանջեց արծաթը և ոսկին
երկրի ժողովրդից Նեքաւով փա-
րաւօնին տալու համար։
36 Քսանևհինգ տարեկան էր Յո-
վակիմը, երբոր Թագաւոր եղաւ
և տասնևմէկ տարի Թագաւո-
րեց Երուսաղէմումը, և նորա մօր
37 անունն էր Զաբիդա՝ դուստր
Ռումայի Փադայիայի։ Եւ նա
չարութիւն արաւ Տիրոջ աչքի
առաջին բոլորովին իր Հայրերի
արածին պէս։

Գլ. ԻԴ

1 Նորա օրերումը Բաբիլոնի Նա-
բուգոդոնոսոր Թագաւորը վեր ե-
կաւ. և Յովակիմը ծառայ եղաւ
նորան երեք տարի, և դարձեալ
2 նորանից ապստամբուեց։ Եւ Տէ-
րը նորա վերայ ուղարկեց Քաղ-
դէացիների գունդերը, և Ասո-
րիների գունդերը, և Մովաբա-
ցիների գունդերը և Ամմոնի որդ-
կանց գունդերը, և նորանց ու-
ղարկեց Յուդայի վերայ, որ նո-
րան փչացնէ Տիրոջ այն խօսքին
համեմատ, որ խօսել էր իր ծա-
ռաներին՝ մարգարէների ձեռով։
3 Սակայն սա Տիրոջ պատուէրի
համեմատ եղաւ Յուդայի դէմ,
որ նորան մերժէ իր առջեւից
Մանասէի մեղքերի համար՝ այն
բոլորի համար, որ արել էր։
4 Նաև անմեղ արիւն էր թափել
և Երուսաղէմը լցրել էր անմեղ
արիւնով. և Տէրը չ'ուզեց ներել։
5 Եւ Յովակիմի գործերի մնա-
ցորդը և նորա բոլոր արածը, ա-
հա նորանք բոլորը գրուած են
Յուդայի Թագաւորների յիշա-
տակաց գրքումը։ Եւ Յովակիմը 6
ննջեց իր հայրերի հետ, և նորա
որդի *Յովաքինը Թագաւոր եղաւ
նորա տեղ։
Եգիպտոսի Թագաւորը այլևս 7
դուրս չ'եկաւ իր երկրիցը. որով-
հետև Բաբիլոնի Թագաւորը ե-
գիպտոսի հեղեղատիցը մինչև Եփ-
րատ գետը առաւ բոլորը ինչ որ
Եգիպտոսի Թագաւորինն էր։
Տասնևութ տարեկան էր Յո- 8
վաքինը, երբոր Թագաւոր եղաւ
և երեք ամիս Թագաւորեց Ե-
րուսաղէմումը, և նորա մօր ա-
նունն էր Ներհուսթա՝ դուստր
Երուսաղէմացի Եղնաթանի։ Եւ 9
նա չարութիւն արաւ Տիրոջ աչ-
քի առաջին բոլորովին իր հօր
արածին պէս։
Այն ժամանակը Բաբիլոնի Նա- 10
բուգոդոնոսոր Թագաւորի ծա-
ռաները վեր եկան Երուսաղէմ,
և քաղաքը պաշարման մէջ ըն-
կաւ։ Եւ Բաբիլոնի Նաբուգո- 11
դոնոսոր Թագաւորը եկաւ քա-
ղաքի վերայ, և նորա ծառանե-
րը նորան պաշարել էին։ Եւ 12
Յուդայի Յովաքին Թագաւորը
դուրս եկաւ Բաբիլոնի Թագա-
ւորի դէմ՝ իր մօր և իր ծառա-
ների և իշխանների և իր ներքի-
նիների հետ, և նորան բռնեց
Բաբիլոնի Թագաւորը իր Թագա-
ւորութեան ութերորդ տարին։
Եւ այնտեղից հանեց Տիրոջ տան 13
բոլոր գանձերը և Թագաւորի
տան գանձերը, և կոտրատեց
այն բոլոր ոսկի անօթները, որ
Իսրայէլի Սողոմոն Թագաւորը շի-
նել էր Տիրոջ տաճարումը, ինչ-
պէս որ Տէրը ասել էր։ Եւ գե- 14
րի փոխադրեց բոլոր Երուսաղէ-
մին և բոլոր իշխաններին և բոլոր
քաջազուններին՝ տասը հազար
գերի և բոլոր հիւսներին և դար-
բիններին. [illegible] չ'մնաց բացի ժո-
ղովրդի աղքատներից։ Եւ գերի 15

*ա Մն. գ. 16՝ կոչուած է "Յե-
քոնիա։"

փոխադրեց Յովաքինին Բաբիլոն,
և Թագաւորի մօրը և Թագաւո-
րի կիներին և նորա ներքինի-
ներին և երկրի զօրաւորներին
գերի տարաւ Երուսաղէմից Բա-
16 բիլոն։ Եւ բոլոր զինաւորներին՝
եօթը հազար, և հիւսերին և
դարբիններին՝ հազար, բոլոր քա-
ջերին, պատերազմ անողներին
Բաբիլոնի Թագաւորը գերի տա-
17 րաւ Բաբիլոն։ Եւ Բաբիլոնի
Թագաւորը նորա հօրեղբօրը՝ Մա-
թանիային Թագաւոր շինեց նո-
րա տեղ, և նորա անունը փո-
խեց Սեդեկիա։
18 Քսանևմէկ տարեկան էր Սե-
դեկիան, երբոր Թագաւոր եղաւ
և տասնևմէկ տարի Թագաւորեց
Երուսաղէմումը, և նորա մօր ա-
նունն էր Ամիտաղ՝ դուստր Լեբ-
19 նացի Երեմիայի։ Եւ նա չարու-
թիւն արաւ Տիրոջ աչքի առա-
ջին բոլորովին Յովակիմի արածին
20 պէս։ Որովհետև Տիրոջ բարկու-
թիւնը Երուսաղէմի և Յուդայի
դէմ էր, մինչև որ նորանց մեր-
ժէ իր երեսի առաջից։ Եւ ա-
պստամբուեց Սեդեկիան Բաբի-
լոնի Թագաւորի դէմ։

Գլ. ԻԵ

1 Եւ իր Թագաւորութեան իննե-
րորդ տարուայ տասներորդ ամսի
տասնին եկաւ Բաբիլոնի Թագա-
ւորը՝ Նաբուգոդոնոսորն ինքը և
իր բոլոր զօրքը Երուսաղէմի վե-
րայ, և բանակ տուաւ նորա
դէմ՝ պատնէշներ շինեց շուր-
2 ջանակի։ Եւ քաղաքը մնաւ
պաշարման մէջ մինչև Սեդեկիա
Թագաւորի տասնևմէկերորդ տա-
3 րին։ Եւ ամսի իննին սով սաստ-
կացաւ քաղաքումը, և հաց չը
կար երկրի ժողովրդի համար։
4 Եւ քաղաքը խրամատուեցաւ. և
բոլոր պատերազմողները [illegible]
գիշերը դուռն ճանապարհով եր-
կու պարիսպների միջովը, որ
դէպի Թագաւորի պարտէզն է.
բայց Քաղդէացիք քաղաքը շուր-
ջապատել էին. և [illegible]
նաց անապատի ճանապարհով։
5 Եւ Քաղդէացիների զօրքերն ըն-
կան Թագաւորի հետից և հա-
սան նորան Երիքովի դաշտերում,
և նորա բոլոր զօրքը փախաւ
նորա մօտիցը։ Եւ բռնեցին Թա- 6
գաւորին և նորան վեր տարին
Բաբիլոնի Թագաւորի մօտ Ռեբ-
ղա. և նորա դատաստանն արին։
Եւ Սեդեկիայի որդկանցը մեր- 7
թեցին նորա աչքի առաջին, և
Սեդեկիայի աչքերը կուրացրին,
և պղնձի շղթաներով կապեցին
և տարին նորան Բաբիլոն։
Եւ Բաբիլոնի Թագաւոր՝ Նա- 8
բուգոդոնոսոր Թագաւորի տասն-
եւիններորդ տարուայ հինգերորդ
ամսի եօթին եկաւ Բաբիլոնի Թա-
գաւորի ծառայ Նաբուզարդան
դահճապետը Երուսաղէմ, և 9
այրեց Տիրոջ տունը և Թագա-
ւորի տունը և Երուսաղէմի բո-
լոր տուներըը և ամեն մի մեծ
տուն այրեց կրակով։ Եւ Քաղ- 10
դէացիների բոլոր զօրքերը, որ
դահճապետի հետ էին քանդե-
ցին Երուսաղէմի պարիսպը շուր-
ջանակի։ Եւ քաղաքումը մնա- 11
ցած ժողովրդի մնացորդին և փա-
խստականներին, որ անձնատուր
եղան Բաբիլոնի Թագաւորին և
մնացած բազմութիւնը գերի տա-
րաւ Նաբուզարդան դահճապե-
տը։ Բայց երկրի աղքատներիցը 12
թողեց դահճապետը որ մնան
իբրև այգեգործներ և երկրա-
գործներ։
Եւ Տիրոջ տան եղած պղնձի 13
սիւները և մեքենովթները և պը-
ղնձի ծովը, որ Տիրոջ տանն էր,
Քաղդէացիք կոտրատեցին և նո-
րանց պղինձը տարին Բաբիլոն։
Եւ թաղարները, թիակները և 14
բազմակաղները և տուփերը և բո-
լոր պղնձի անօթները, որոնցով
պաշտօն էին կատարում, առան։
Եւ բուրվառներն ու կոնքերը, 15
որը ոսկի էր՝ ոսկին, և որը ար-
ծաթի էր՝ արծաթին առաւ
դահճապետը։ Այն սիւները՝ եր- 16
կու, ծովը՝ մէկ և մեքենովթնե-
րը որ Սողոմոնը շինել էր Տիրոջ
տան համար, այս բոլոր անօթ-
ների պղնձին կշիռը չ'կար։

17 Տասնեւութը կանգուն բարձր էր
մէկ սիւնը. և նորա վերայ մի
պղնձի խոյակ. և խոյակի բարձ-
րութիւնը երեք կանգուն, և ցան-
ցեր ու նռներ խոյակի վերայ
շուրջանակի՝ բոլորը պղնձի. և
սորանց նման էր միւս սիւնը ցան-
ցերի նկատմամբ։
18 Եւ դահճապետն առաւ ա-
ռաջին քահանայ Սարայիային և
և երկրորդ քահանայ Սոփոնիա-
յին և երեք դռնապաններին.
19 Եւ քաղաքիցը մի ներքինի ա-
ռաւ, որ պատերազմող մարդ-
կանց վերակացու էր, և հինգ
մարդ թագաւորի առաջին կանգ-
նողներից, որ գտնվում էին քա-
ղաքումը, և դպրապետ զօրա-
գլուխը որ երկրի ժողովրդին զին-
ուորագրողն էր և երկրի ժողո-
վրդից, որ գտնվում էին քա-
20 ղաքում, վաթսուն մարդ. Եւ
առաւ նորանց Նաբուզարդան
դահճապետը և ուղարկեց նո-
րանց Ռեբղա Բաբիլոնի թագա-
21 ւորի մօտ։ Եւ Բաբիլոնի թա-
գաւորը զարկեց ու սպանեց նո-
րանց Եմաթի երկրումը Ռեբղա-
յում։ Եւ Յուդայեանք գերի
22 գնացին իրանց երկրիցը։ Եւ այն
ժողովրդի վերայ, որ մնացել էր
Յուդայի երկրումը, որին թողել
էր Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր
թագաւորը, նշանակեց Սափան-
եան Աքիկամի որդի Գոդողիային։
23 Եւ զօրաց բոլոր իշխանները և
նորանց մարդիկը երբոր լսեցին,
որ Բաբիլոնի թագաւորը Գոդո-
ղիային իշխան նշանակեց, եկան
Մասփա Գոդողիայի մօտ՝ այսինքն
Նաթանիայի որդի Իսմայէլը, Կա-
րէի որդի Յօհանանը, և Թան-
հումեթի որդի Նետոփաթացի
Սարայիան, և Մաքաթիի որդի
Յեզոնիան, նորանք և նորանց
մարդիկը։ Եւ Գոդողիան երդում 24
արաւ նորանց և նորանց մարդ-
կանցը և ասեց նորանց. Մի վա-
խենաք Քաղդէացիներին ծառա-
ներ լինելոյ. կացէք այս երկ-
րումը և ծառայեցէք Բաբիլոնի
թագաւորին, և ձեզ համար լաւ
կ՚լինի։
Եւ եօթներորդ ամիսը եղաւ, 25
որ եկաւ թագաւորազն Եղիսա-
մայի որդի Նաթանիայի որդի
Իսմայէլը և տասը մարդ իր հե-
տը և զարկեցին Գոդողիային, և
նա մեռաւ. Նոյնպէս էլ այն
Հրէաներին և Քաղդէացիներին,
որ նորա հետ Մասփայումն էին։
Եւ բոլոր ժողովուրդը մեծից մին- 26
չև փոքրը և զօրաց իշխանները
վեր կացան գնացին Եգիպտոս,
որովհետև վախեցան Քաղդէացի-
ների երեսիցը։
Եւ եղաւ Յուդայի թագաւոր 27
Յովաքինի գերութեան երեսուն-
և եօթներորդ տարուայ տասնև-
երկուերորդ ամսի քսանև եօթին
Բաբիլոնի Իլմարովդաք թագա-
ւորը իր թագաւոր եղած տարին
բարձրացրեց Յուդայի Յովաքին
թագաւորի գլուխը՝ նորան բան-
տից հանելով։ Եւ նորա հետ 28
քաղցրութեամբ խօսեց, և նորա
աթոռը դրաւ այն թագաւորներ-
ի աթոռից վեր, որ նորա հետ
Բաբիլոնումն էին։ Եւ նորա բան- 29
տի հանդերձները փոխեց, և միշտ
նորա առաջին էր հաց ուտում
իր կեանքի բոլոր օրերումը։ Եւ 30
նորա ռոճիկը մշտական ռոճիկ
լինելով թագաւորի կողմանէ օր
ըստ օրէ տրվում էր նորան՝ նո-
րա կեանքի բոլոր օրերումը։

ԱՌԱՋԻՆ ՄՆԱՑՈՐԴԱՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Ադամ, Սէթ, Ենովս, (2) Կայ-
3 նան, Մաղաղիէլ, Յարեդ, Ենովք,
4 Մաթուսաղայ, Ղամէք, Նոյ,
5 Սէմ, Քամ և Յաբեթ։ Յա-
բեթի որդիքը՝ Գոմեր, Մագոգ,
Մադայ, Յաւան, Թոբէլ, Մոսոք
6 և Թիրաս։ Եւ Գոմերի որդիքը՝
Աշքանաս, Ռիփաթ և Թորգոմա։
7 Եւ Յաւանի որդիքը՝ Եղիսայ,
Թարսիս, Կիտացիք և Ռոդացիք։
8 Քամի որդիքը՝ Քուշ և Մեստ-
9 րեմ, Փուդ և Քանան։ Եւ Քու-
շի որդիքը՝ Սաբա, Եւիլա, Սա-
բաթա, Ռեգմա և Սեբեթաքա.
և Ռեգմայի որդիքը՝ Սաբա և
10 Դեդան։ Եւ Քուշը ծնեց Նեբ-
րովթին. սա սկսեց զօրաւոր լի-
11 նել երկրի վերայ։ Եւ Մեստրե-
մը ծնեց Լուդացիներին, Անա-
մացիներին, Լաբացիներին, Նեփ-
12 թուքացիներին, Պաթուրեսացի-
ներին և Քասլուքացիներին (որ-
տեղից որ դուրս եկան Փղշտա-
13 ցիք) և Կափթորացիներին։ Եւ
Քանանը ծնեց իր անդրանիկ Սի-
14 դոնին և Քետին, Յեբուսացիին,
Ամօրհացիին և Գերգեսացիին,
15 Խևացիին, Արուկեցիին, Ասենա-
16 ցիին, Արուադացիին, Սամարա-
ցիին և Ամաթացիին։
17 Սեմի որդիքը՝ Ելամ, Ասուր,
Արփաքսադ, Ղուդ, Արամ,
Հուս, Հուլ, Գաթեր և Մոսոք։
18 Եւ Արփաքսադը ծնեց Սաղային,
19 և Սաղան ծնեց Եբերին։ Եւ Ե-
բերին ծնուեցան երկու որդիք՝
մէկի անունը Փաղէկ, որովհետև
նորա օրերումը երկիրը բաժան-
ուեցաւ, իսկ նորա եղբօր անու-
20 նը Յեկտան։ Եւ Յեկտանը ծնեց
Ելմոդադին և Սաղափին և Ա-
21 սարմովթին և Յարաքին, Եւ Յա-
դորամին, Ուզոլին, Դեկլային,
22 Եւ Գեբաղին, Աբիմիէլին և Սա-
23 բային, Եւ Ոփիրին, Եւիլային և
Յոբաբին. սորանք ամենը Յեկ-
տանի որդիքն են։
Սէմ, Արփաքսադ, Սաղայ, 24
(25) Եբեր, Փաղէկ, Ռաքաւ, Սե- 26
րուգ, Նաքովր, Թարայ, Աբ- 27
բամ, որ նա ինքն է Աբրահամ։
Աբրահամի որդիքը՝ Իսահակ և 28
Իսմայէլ։ Սորանք են նորանց ծը- 29
նունդները. Իսմայէլի անդրանիկը
Նաբէօթ, և Կեդար, և Ադբե-
էլ, Մաբսամ, Մասմա, Դումա, 30
Մասսէ, Քոդադ, Թեմա, Յե- 31
տուր, Նափէս և Կեդմա. սո-
րանք Իսմայէլի որդիքն են։
Եւ Աբրահամի հարճի Քետու- 32
բայի որդիքը. նա ծնեց Զեմրա-
նին, Յեկսանին, Մադանին, Մա-
դիանին, Յեսբոկին և Սովէին։ Եւ
Յեկսանի որդիքը՝ Սափա և Դե-
դան։ Եւ Մադիանի որդիքը՝ Գե- 33
փա, Ափէր, Ենովք, Աբիդա և
Ելդադա. սորանք ամենքը Քե-
տուրայի որդիքն են։
Եւ Աբրահամը ծնեց Իսահա- 34
կին։ Իսահակի որդիքը՝ Եսաւ և
Իսրայէլ։ Եսաւի որդիքը՝ Եղի- 35
փազ, Ռագուէլ, Յեուս, Յեգ-
ղօմ և Կորխ։ Եւ Եղիփազի որ- 36
դիքը՝ Թեման, Օմար, Սեփո, Գո-
թամ, Կենէզ, Թամնա և Ամա-
ղէկ։ Ռագուէլի որդիքը՝ Նահաթ, 37
Զարա, Սամմա և Մեզա։ Եւ Սէ- 38
իրի որդիքը՝ Ղոտան, Սոբաղ,
Սեբեկօն, Անա, Դիսօն, Եսեր և
Դիսան։ Եւ Ղոտանի որդիքը՝ Քո- 39
ռի և Հեմամ. և Ղոտանի քոյրը՝
Թամնա։ Սոբաղի որդիքը՝ Գաղ- 40
ուան, Մանաքաթ, Գեբաղ, Սե-
փո և Օնամ։ Եւ Սեբեգօնի որ-
դիքը՝ Այիա և Անա։ Անայի որ- 41
դին՝ Դիսօն. և Դիսօնի որդիքը՝
Ամրան, Եսբան, Յեթրան և Քա-
ռան։ Եսերի որդիքը՝ Բաղղան, 42
Զաաւան և Յաական։ Դիսանի
որդիքը՝ Հուս և Առան։
Եւ սորանք են այն թագաւոր- 43
ները, որ թագաւորեցին Եդովմի

երկրումը Իսրայէլի որդկանց վերայ մի թագաւոր թագաւորելուց առաջ. Բէովրի որդին Բաղա. և նորա քաղաքի անունն էր
44 Դենհաբա։ Եւ Բաղան մեռաւ, և նորա տեղը թագաւոր եղաւ Բոսրացի Զարայի որդի Յոբաբը։
45 Եւ Յոբաբը մեռաւ, և նորա տեղը թագաւոր եղաւ Թեմանացիների
46 երկրից Հուսամը։ Եւ Հուսամը մեռաւ, և նորա տեղը թագաւոր եղաւ Բադադի որդի Ադադը, որ Մովաբի դաշտումը կոտորեց Մադիանացիներին, և նորա քաղաքի անունն էր Աւիթ։
47 Եւ Ադադը մեռաւ, և նորա տեղը թագաւոր եղաւ Մասրեկացի
48 Սամաղան։ Եւ Սամաղան մեռաւ, և նորա տեղը թագաւոր եղաւ
49 Գետի Ռոբովթացի Սաւուղը։ Եւ Սաւուղը մեռաւ, և նորա տեղը թագաւոր եղաւ Աքբորի որդի
50 Բաաղանանը։ Եւ Բաաղանան մեռաւ, և նորա տեղը թագաւոր եղաւ Ադադը և նորա քաղաքի անունն էր Փոքով, և նորա կնկայ անունն էր Մետաբեէլ՝ դուստր Մեզաաբի աղջիկ Մատրեթի։
51 Եւ Ադադը մեռաւ։ Եւ Եդովմի իշխաններն էին՝ Թամնա իշխան, Գաղուա իշխան, Յեթաթ
52 իշխան. Ողիբամա իշխան. Էլա իշ-
53 խան, Փինօն իշխան, Կենէզ իշխան, Թեման իշխան, Մաբզար իշխան, Մագեդիէլ իշխան, Իրամ իշխան։ Սորանք են Եդովմի իշխանները։

ԳԼ. Բ

1 Սորանք են Իսրայէլի որդիքը. Ռուբէն, Շմաւոն, Ղևի, Յուդա,
2 Իսաքար, Զաբուղոն, Դան, Յովսէփ, Բենիամին, Նեփթաղիմ, Գադ և Ասեր։
3 Յուդայի որդիքը՝ Էր, Օնան և Սելօմ. այս երեքը ծնուեցան նորա համար Շաւայի աղջկիցը՝ Քանանացիիցը. և Յուդայի անդրանիկը՝ Էրը չար էր Տիրոջ աչքի առաջին, և նա նորան մեռցրեց։
4 Եւ նորա հարս Թամարը ծնեց նորա համար Փարէսին և Զարային. Յուդայի բոլոր որդիքը հինգ էին։
Փարէսի որդիքը՝ Եսրոն և Հա- 5
մուլ։ Զարայի որդիքը՝ Զամբրի, 6
Եթան, Եման, Քալքօլ և Դարա. բոլորը հինգ։ Եւ Քարմիի որդին՝ 7
Աքար՝ Իսրայէլին խանգարիչը, որ անօրէնութիւն գործեց նզովածով։ Եւ Եթանի որդին՝ Ազարիա։ 8
Եւ Եսրոնի որդիքը, որ ծնուեցան 9
նորա համար, Յերամել, Արամ և Քեղուբայ։
Եւ Արամը ծնեց Ամինադաբին, 10
և Ամինադաբը ծնեց Նաասոնին՝ Յուդայի որդկանց իշխանին։ Եւ 11
Նաասոնը ծնեց Սաղմոնին, և Սաղմոնը ծնեց Բոոսին։ Եւ Բոոսը ծը- 12
նեց Ովբէդին, և Ովբէդը ծնեց Յեսսէին։ Եւ Յեսսէն ծնեց իր 13
անդրանիկը Եղիաբին, և երկրորդը՝ Աբինադաբին և երրորդը Սամայիին, Չորրորդը՝ Նաթանայէ- 14
լին, հինգերորդը՝ Հռադային, Վեցերորդը՝ Ասոմին և եօթներորդը՝ 15
Դաւիթին. Եւ նորանց քոյրերը՝ 16
Շարուհեային և Աբիգեային։ Եւ Շարուհեայի որդիքը՝ Աբեսսա, Յովաբ և Ասայէլ՝ այս երեքը։ Եւ 17
Աբիգեան ծնեց Ամեսայիին. և Ամեսայիի հայրը Իսմայէլացի Յեթերն էր։
Եւ Եսրոնի որդի Քաղէբը որ- 18
դիներ ծնեց իր կինը Ազուբայից և Յերիօթից, և սորանք են նորա որդիքը՝ Յասեր, Սովբաբ և Արդօն։ Եւ Ազուբան մեռաւ. և 19
Քաղէբն իր համար առաւ Եփրաթին, որ նորա համար ծնեց Ովրին։ Եւ Ովրը ծնեց Ուրիին, և 20
Ուրին ծնեց Բեսելիէլին։
Եւ յետոյ Եսրոնը մտաւ Գա- 21
ղաադի հայր Մաքիրի աղջկան մօտ. և նա առաւ նորան. և ինքը վաթսուն տարեկան էր. և նա ծնեց նորա համար Սեգուբին, Եւ 22
Սեգուբը ծնեց Յայերին. և նա Գաղաադի երկրումը քսանևերեք քաղաք ունէր։ Եւ առաւ Գե- 23
սուր և Արամ՝ Յայերի գիւղաքաղաքները նորանցից, Կանաթը և նորա գիւղերը վաթսուն քաղաք. այս ամենը Գաղաադի հայր Մաքիրի որդիներինն էր։ Եւ Ես- 24

րոն Քաղէբ-եփրաթայում մեռնելուց յետոյ, Եսրոնի կինը Աբիա ծնեց նորա համար Թեկուէի հայր՝ Ասքուրին։
25 Եւ Եսրոնի անդրանիկ Յերամելի որդիքն էին՝ անդրանիկը Հռամ, Բունա, Օրէն, Ասոմ, և
26 Աքիա։ Եւ Յերամելը մի ուրիշ կին ունէր, և նորա անունը Ատարա էր. նա Օնամի մայրն էր։
27 Եւ Յերամելի անդրանիկը՝ Հռամի որդիքն էին՝ Մաաս, Յամին և
28 Ակոր։ Եւ Օնամի որդիքն էին՝ Սամայի և Յադայ. և Սամայիի
29 որդիքը՝ Նադաբ և Աբիսուր։ Եւ Աբիսուրի կնկան անունն էր Աբիհայիլ, և ծնեց նորա համար
30 Աքբանին և Մովղիդին։ Եւ Նադաբի որդիքը՝ Սաղադ և Ափփիմ. և Սաղադ մեռաւ անորդի։
31 Եւ Ափփիմի որդին՝ Յեսսի. և Յեսսիի որդին՝ Սեսան. և Սեսա-
32 նի որդին՝ Աղայի։ Եւ Սամայիի եղբայր Յադայի որդիքը՝ Յեթեր և Յովնաթան. և Յեթեր մեռաւ
33 անորդի։ Եւ Յովնաթանի որդիքը՝ Փաղէթ և Զազա. սորանք Յերամելի որդիքն էին։
34 Եւ Սեսան որդիք չ՚ունէր, այլ միայն աղջիկներ. և Սեսան մի Եգիպտացի ծառայ ունէր՝ անու-
35 նը Յարքա։ Եւ Սեսան իր աղջիկը կին տուաւ իր Յարքա ծառային. և նա ծնեց նորա համար Եթթի-
36 ին։ Եւ Եթթին ծնեց Նաթանին.
37 և Նաթանը ծնեց Զաբադին։ Եւ Զաբադը ծնեց Ոփղաղին. և Ոփ-
38 ղաղը ծնեց Ովբէդին։ Եւ Ովբէդը ծնեց Յէուին. և Յէուն ծնեց Ա-
39 զարիային։ Եւ Ազարիան ծնեց Քեղեսին. և Քեղեսը ծնեց Եղ-
40 եասային։ Եւ Եղեասան ծնեց Սոսոմէին. և Սոսոմէն ծնեց Սեղ-
41 ղումին։ Եւ Սեղղումը ծնեց Յեկամիային. և Յեկամիան ծնեց Եղիսամային։
42 Եւ Յերամելի եղբայր Քաղէբի որդիքը՝ նորա անդրանիկը Մեսա, որ Զիփի և Քեբրոնի հայրը և Մարեսայի որդկանց հայրն է։
43 Եւ Քեբրոնի որդիքը՝ Կորխ, Թա-
44 փուա, Ռոկոմ և Սեմայի։ Եւ Սեմային ծնեց Հռաամին՝ Յարկաամի հօրը. և Ռոկոմը ծնեց Սամայիին։ Եւ Սամայիի որդին էր 45
Մասն. և Մասնը Բեթսուրի հայրն էր։ Եւ Քաղէբի հարճը Գեփան 46
ծնեց Առանին, Մոսանին, և Գազէզին. և Առան ծնեց Գազէզին։ Եւ Յադայիի որդիքը՝ Հռագեմ, 47
Յովաթամ, Գեսան, Փաղէտ, Գեփա և Սագափ։ Եւ Քաղէբի հարճը 48
Մաաքան ծնեց Սեբերին և Թարանային։ Եւ ծնեց Մադմանայի 49
հայր Սագափին, Մաքաբենայի հայր և Գաբասայի հայր Շավային. և Քաղէբի աղջիկն էր Աքսա։
Եփրաթի անդրանիկը՝ Ովրի որ- 50
դիի Քաղէբի որդիքը՝ Կարիաթարիմի հայրը Սոփաղ, Բեթլէհէմի 51
հայրը Սաղմոն, Բեթկագերի հայրը Նարեփ։ Եւ Կարիաթարիմի 52
հօր՝ Սոբաղի որդիքը՝ Հարօէ, Ասի-համենուքովթ։ Եւ Կարիա- 53
թարիմի տոհմերը՝ Յեթերացիք, Փութացիք, Սամաթացիք և Մասարացիք։ Սորանցից դուրս եկան Սարաացիք և Եսթաւուղացիք։
Սաղմոնի որդիքը՝ Բեթլէհէմ, Նե- 54
տոփաթացիք, Ատարովթ, Յովաբի տունը, և Ասի-համենաքթացիք՝ Սարացիք։ Եւ Գաբէսի 55
մէջ բնակող դպիրների տոհմերը՝ Թարգաթացիք, Սամաթացիք, Սովկաթացիք. սորանք Ռեքաբի տան հօրից՝ Եմաթիցն յառաջ եկող Կենեցիքն էին։

ԳԼ. Գ

Եւ սորանք էին Դաւիթի որդի- 1
քը, որոնք ծնուեցան նորա համար Քեբրոնում, անդրանիկը Ամնոն՝ Յեզրայէլացի Աքինոամից, երկրորդը՝ Դանիէլ՝ Կարմելացի Աբիգեայից. Երրորդը՝ Աբիսողոմ՝ 2
Գեսուրի թագաւոր Թոլմիի աղջիկ Մաաքայի որդին. չորրորդը՝ Ադոնիա՝ Ագգիթի որդին։ Հինգերորդը՝ Սափատիա՝ Աբիտալից, վեցերորդը՝ Յեթրամ՝ իր Եգլա կնոջից։ Այս վեցը ծնուեցան նո- 3
րա համար Քեբրոնում. և այնտեղ թագաւորութիւն արաւ եօթը տարի և վեց ամիս. և երեսունևերեք տարի թագաւորեց Երուսաղէմում։

5 Եւ սորանք ծնուեցան նորա
համար Երուսաղէմում՝ Սամաա,
Սովբաբ, Նաթան և Սողոմոն.
այս չորսը Ամիէլի աղջիկ Բերսա-
6 բէէից։ Եւ Յաբաար, Եղիսամա
7 ու Եղիփաղէտ։ Եւ Նոգա, Նա-
8 փեկ և Յափիէ։ Եւ Եղիսամա,
Եղիադա և Եղիփաղէտ. այս ինը։
9 Ամենքը Դաւիթի որդիքն էին
բացի հարճերի որդիներից և նո-
րանց քոյր Թամարից։
10 Եւ Սողոմոնի որդին՝ Ռոբովամ.
նորա որդին՝ Աբիա. նորա որ-
դին՝ Ասա, նորա որդին՝ Յովսա-
11 փատ. Նորա որդին՝ Յովրամ,
նորա որդին՝ Ոքոզիա, նորա որ-
12 դին՝ Յովաս, Նորա որդին՝ Ամա-
սիա, նորա որդին՝ Ազարիա, նո-
13 րա որդին՝ Յովաթամ, Նորա որ-
դին՝ Աքազ, նորա որդին՝ Եզե-
14 կիա, նորա որդին՝ Մանասէ, Նո-
րա որդին՝ Ամոն, նորա որդին՝
15 Յովսիա, Եւ Յովսիայի որդիքը՝
անդրանիկը Յոհանան, երկրորդը
Յովակիմ, երրորդը Սեդեկիա,
16 չորրորդը Սեղղում։ Եւ Յովակի-
մի որդիքը՝ նորա որդին՝ Յեքո-
17 նիա, նորա որդին՝ Սեդեկիա։ Եւ
Յեքոնիայի որդիքը՝ Ասիր, նորա
18 որդին՝ Սաղաթիէլ, Մաղքիրամ,
Փադայիա, Սանէսար, Յեկամիա,
19 Ովսամա և Նադարիա։ Եւ Փա-
դայիայի որդիքը՝ Զօրաբաբէլ և
Սեմէի. և Զօրաբաբէլի որդիքը՝
Մեսուղամ և Անանիա, և նո-
20 րանց քոյրը Սաղոմիթ։ Եւ Ա-
սուբա և Ոհող, Բարաքիա, Ա-
սադիա, Յովսաբհեսեդ. այս հին-
21 գը։ Եւ Անանիայի որդիքը՝ Փա-
ղատիա և Եսայիա. Հռափայիա-
յի որդիքը, Ռանայի որդիքը,
Աբդիայի որդիքը, Սեքենիայի որ-
22 դիքը. Եւ Սեքենիայի որդիքը՝
Սեմայիա, և Սեմայիայի որդիքը
Քեատուս և Իգաղ և Բերիա և
Նաարիա ու Սափատ, այս վեցը։
23 Եւ Նաարիայի որդիքը՝ Եղիովէ-
նայի, Եզեկիա, Եզրիկամ, այս
24 երեքը։ Եւ Եղիովէնայիի որդիքը՝
Ովդուիա, Եղիասիբ, Փաղայիա,
Ակկուբ, Յոհանան, Դաղայիա
և Անանի, այս եօթը։

ԳԼ. Դ

Յուդայի որդիքը՝ Փարէս, Ես- 1
րոն, Քարմի, Ովր և Սոբաղ։ Եւ 2
Սոբաղի որդին Ռէայիան ծնեց
Յեթին. և Յեթը ծնեց Աքիմային
և Ղաադին. սորանք են Սարաա-
ցիների տոհմերը։ Սորանք են Ա- 3
բիեթամինը՝ Յեզրայէլ. Յեսմա
և Յեդբաս. և նորանց քրոջ ա-
նունը Եսելելփոն։ Եւ Գեդովրի 4
հայրը Փանուէլ, և Ովսայի հայ-
րը Եզեր. սորանք են Բեթլէհէ-
մի հայր Եփրաթի անդրանիկի՝
Ովրի որդիքը։
Եւ Թեկուէի հայր Ասքուրը 5
երկու կնիկ ունէր՝ Եղաա և Նա-
արա։ Եւ Նաարան ծնեց նորա 6
համար Ոքոզամին, Ոփերին, Թե-
մանին և Ահասթարիին. սորանք
են Նաարայի որդիքը։ Եւ Եղա- 7
այի որդիքը՝ Սարեթ, Սահառ և
Եթնան։ Եւ Կովսը ծնեց Ենով- 8
բին և Սօբեբային և Հարումի
որդի Ահարհելի տոհմերը։
Եւ Գաբէսը փառաւոր էր իր 9
եղբայրներից, և նորա մայրը նո-
րա անունը Գաբէս դրաւ, ասե-
լով թէ Յաւով ծնեցի։ Եւ Գա- 10
բէսը կանչեց Իսրայէլի Աստու-
ծուն ասելով. Ոհ եթէ ինձ օրհ-
նէիր և իմ սահմանը մեծացնէիր
և ձեռքդ ինձ հետ լինէր, և ինչ
չարիցն ազատէիր, որ ինձ տրտ-
մութիւն չ՛լինէր։ Եւ Աստուած
բերաւ նորա վերայ նորա խնդրածը։
Եւ Սոհայի եղբայր Քեղուրը 11
ծնեց Մաքիրին որ Եսթօնի հայրն
էր։ Եւ Եսթօնը ծնեց Բեթռա- 12
փային, Փասէին և Իրնասի հօ-
րը՝ Թանային. սորանք են Հռե-
քայի մարդիկը։ Եւ Կենեզի որ- 13
դիքը՝ Գոթոնիէլ և Սարայիա.
և Գոթոնիէլի որդին՝ Աթաթ.
Եւ Մասնաթայի ծնեց Եփրանին 14
և Սարայիա ծնեց *Գէ-քարսիմի
հօրը՝ Յովաբին. որովհետև հիւ-
սեր էին։ Եւ Յեփոնեան Քաղէ- 15
բի որդիքը՝ Իրու, Էլա և Նաամ.
և Էլայի որդին՝ Կենեզ։ Եւ Յա- 16
լելէլի որդիքը՝ Զիփ, Զիփա, Թի-

*Այսինքն՝ Հիւսերի հովիտ.

17 րիա և Ասարէլ։ Եւ Եզրայի որ-
դիքը՝ Յեթեր, Մօրադ, Ափէր և
Յաղօն. և նա ծնեց Մարիամին,
Սամայիին և Եսեթովմի հօրը՝
18 Յեսբանին։ Եւ նորա կինը Յու-
դիան ծնեց Գեդովրի հօրը Յա-
րեդին, Սոքովի հօրը Քաբերին և
Զանովի հօրը Յեքթիէլին. և Մօ-
րադի առած Փարաւօնի աղջկան՝
19 Բեթիայի որդիքը սորանք են։ Եւ
Նայեմի քրոջ՝ Ովդիայի կնկայ
որդիքը՝ Գարմին Կէիլայի հայրը,
20 և Մաքաթացի Եսթեմովը։ Եւ
Սիմոնի որդիքը՝ Ամնոն, Հռինա,
Բենանան և Թիղոն. և Յեսսիի
որդիքը՝ Զօհէթ և Բենզօհէթ։
21 Եւ Յուդայի որդիի Սելոմի որ-
դիքը՝ Ղեքայի հայրը Էր, Մարե-
սայի հայրը Ղաագա և Ասբէայի
տան բեհեզագործների տան տոհ-
22 մերը։ Նաև Յովակիմ և Քուզե-
բայի մարդիկը և Յովաս ու Սա-
րափ, որ Մովաբում ստացուածք
ունէին, և Յասուբի-լեհէմ։ Բայց
23 այս բաները հին են։ Սորանք
բրուտներ էին և բնակվում էին
Նէթայիմում և Գադերայում.
Թագաւորի հետ նորա գործե-
րումն էին բնակվում այնտեղ։
24 Շմաւոնի որդիքը՝ Նամուէլ,
Յամին, Յարիբ, Զարա, Սաւուղ.
25 Նորա որդին՝ Սեղղում, նորա որ-
դին՝ Մաբսամ, նորա որդին՝ Մաս-
26 մա։ Եւ Մասմայի որդիքը. նորա
որդին՝ Ամուէլ, նորա որդին՝ Զա-
27 քուր, նորա որդին՝ Սեմէի։ Եւ
Սեմէի տասնևվեց տղայ և վեց
աղջիկ ունէր. բայց նորա եղբայր-
ները շատ տղերք չ՛ունէին. և
նորանց բոլոր տոհմը Յուդայի
28 որդկանց չափ չ՛շատացան։ Եւ
նորանք բնակվում էին Բերսա-
բէէում, Մոլագայում, Ասար-
29 սուաղում, Բաղայում, Ասե-
30 մում, Թուղադում, Բաթուէ-
լում, Հորմայում, Սիկելակում,
31 Բեթմարքաբովթում, Ասեր-սու-
սիմում, Բեթբարէիում, և Սա-
գարիմում. սորանք էին նորանց
քաղաքները մինչև Դաւիթի թա-
32 գաւորելը։ Եւ նորանց գիւղերը՝
Եթամ, Ային, Ռեմոն, Թոքան
33 և Ասան, հինգ քաղաք։ Եւ նո-
րանց բոլոր գիւղերը, որ այս
քաղաքների շուրջն են մինչև
Բաաղ։ Սորանք են նորանց բնա-
կութիւնները և ազգաբանու-
թիւնները։ Եւ Մասոբաբ, Յամ- 34
լէք, և Ամասիայի որդի Յովսան.
Եւ Յովէլ և Ասիէլի որդիի Սա- 35
րայիայի որդիի Յոսաբիայի որդի
Յեուն. Եւ Եղիովէնայի, Յեկե- 36
բայ, Յասուիա, Ասայիա, Ադի-
էլ, Յեսիմիէլ և Բանեա, Եւ 37
Սեմայիայի որդիի Սամարիի որդիի
Յեդայիայի որդիի Աղոնի որդիի
Սեփէիի որդի Զիզան։ Այս ի- 38
րանց անուններովը յիշուածները
իշխաններ էին իրանց տոհմերու-
մը, և նորանց հայրերի տուները
շատ տարածվում էին։ Եւ գնա- 39
ցին մինչև Գեդովրի մուտքը մին-
չև ձորի արևելքի կողմը իրանց
խաշինքներին արօտ որոնելու հա-
մար. Եւ առատ ու լաւ արօտ 40
գտան. և այն երկիրը ընդարձակ
էր խաղաղ և հանդարտ. որով-
հետև առաջ այնտեղ Քամից ե-
զողներն էին բնակվում։ Եւ այս 41
իրանց անուններովը գրուածները
գնացին Յուդայի Եզեկիա թա-
գաւորի օրերումը և ջարդեցին
նորանց վրանները և նորանց այն-
տեղ գտնուած բնակարանները
և նորանց *բնաջինջ արին մինչև
այսօր և բնակուեցին նորանց
տեղ. որովհետև այնտեղ արօտ
կար նորանց խաշինքների համար։
Եւ նորանցից այսինքն Շմաւոնի 42
որդիներից հինգ հարիւր մարդ
գնացին Սէիր սարը. և Յեսսիի
որդիքը՝ Փաղատիա, Նաարիա,
Հռափայիա և Ոզիէլ նորանց գլ-
խաւորներն էին։ Եւ ջարդեցին 43
Ամաղէկի մնացորդ փախստական-
ներին, և այնտեղ բնակուեցին
մինչև այսօր։

ԳԼ. Ե

Եւ Իսրայէլի անդրանիկը Ռու- 1
բէնի որդիքը. (որովհետև անդ-
րանիկը նա էր, բայց իր հօր ան-
կողինը պղծելուն համար նորա

*Կամ՝ նզովեցին

անդրանկութիւնը Իսրայէլի որ-
դի Յովսէփի որդկանցը տրուե-
ցաւ. և իբրև անդրանիկ չ՛գըր-
2 ուեցաւ ազգահամարի մէջ։ Բայց
Յուդան զօրաւոր եղաւ իր եղ-
բայրների մէջ և իշխանը նորա-
նից էր լինում, և անդրանկու-
3 թիւնը Յովսէփինը եղաւ։) Եւ
Իսրայէլի անդրանիկը Ռուբէնի
որդիքը՝ Ենովք, Փաղղուս, Ես-
4 րոն և Քարմի։ Յովելի որդիքը՝
նորա որդին Սեմայիա, նորա որ-
դին Գոգ, նորա որդին Սեմէի,
5 Նորա որդին Միքա, նորա որդին
Ռէայիա, նորա որդին Բաաղ։
6 Նորա որդին Բէերա, որին գերի
տարաւ Ասորեստանի Թագղաթ-
փաղասար Թագաւորը. Նա իշ-
7 խան էր Ռուբենեանց։ Եւ նորա
եղբայրներն իրանց տոհմերովը
ազգահամարի մէջ գրուելիս՝ գլ-
խաւորն էր Յէիէլ և Զաքարիա,
8 Եւ Յովելի որդիի Սեմայի որդիի
Ազազի որդի Բաղան. սա բնակ-
վում էր Արոէրում և մինչև
9 Նաբաւ և Բէէլմոն։ Եւ նա ա-
րևելեան կողմում բնակուեց Եփ-
րատ գետիցը մինչև անապատը.
որովհետև նորանց անասունները
շատացել էին Գաղաադի երկ-
10 րումը։ Եւ Սաւուղի օրերումը
նորանք պատերազմ արին Հա-
գարացիների հետ, որոնք իրանց
ձեռքն ընկան. և բնակուեցին
նորանց վրաններումը Գաղաադի
բոլոր արևելեան կողմերումը։
11 Եւ Գադի որդիքը բնակուեցին
սորանց առաջակողմին Բասանի
12 երկրումը մինչև Սելքա. Գլխա-
ւորը Յովել, և երկրորդը Սա-
փամ, և Յանայի և Սափատ՝ Բա-
13 սանումը։ Եւ նորանց եղբայրներն
իրանց ազգատոհմերի համեմատ՝
Միքայէլ, Մեսուղամ, Սաբէէ,
Յովրէ, Յաքան, Զիա և Եբեր.
14 այս եօթը։ Սորանք Բուզի որդիի
Յաքդովի որդիի Յեսիսայի որդիի
Միքայէլի որդիի Գաղաադի որ-
դիի Յարոայի որդիի Հուրիի որդի
15 Աբիքելի որդիքն էին։ Գունիի որ-
դիի Աբդիէլի որդին Աքի նորանց
16 ազգատոհմի գլխաւորն էր։ Եւ
նորանք բնակուեցին Գաղաադու-
մը, Բասանումը և նորա գիւղա-
քաղաքներումը և Սարոնի ար-
ուարձաններումը մինչև նորանց
սահմանները։ Սորանք ամենքը ազ- 17
գահամարի մէջ գրուեցան Յու-
դայի Յովաթամ Թագաւորի օրե-
րին և Իսրայէլի Յերոբովամ Թա-
գաւորի օրերին։
Ռուբէնի որդիքը և Գադեանք 18
և Մանասէի կէս ցեղը զօրաւոր,
վահան ու սուր կրող, և աղեղ
լարող, և պատերազմ սովորած
պատերազմի գնացող քառասուն-
և չորս հազար եօթը հարիւր վաթ-
սուն մարդիկ էին։ Եւ նորանք 19
պատերազմ արին Հագարացինե-
րի, Յետուրացիների, Նափեսա-
ցիների և Նոդաբացիների հետ,
Եւ նորանց յաղթեցին. և Հագա- 20
րացիները և բոլոր նորանց հետ
եղողները նորանց ձեռքը տրուե-
ցան. որովհետև նորանք պատե-
րազմի մէջ Աստուծուն աղաղա-
կեցին, և նորանց աղօթքը լսեց,
որ նորան էին ապաւինել. Եւ 21
գերի արին նորանց անասունները՝
նորանց ուղտերը յիսուն հազար,
ոչխար երկու հարիւր յիսուն հա-
զար, և էշ երկու հազար, և մար-
դիկ հարիւր հազար հոգի։ Որով- 22
հետև շատերը մեռած ընկան.
որովհետև այս պատերազմը Աս-
տուածանից էր. և նորանց տեղ
բնակուեցին մինչև գերութիւնը։
Եւ Մանասէի որդկանց կէս ցե- 23
ղը բնակուեցին այն երկրումը Բա-
սանից մինչև Բաաղհերմոն, Սա-
նիր և Հերմոն սարում. սորանք
շատոնք էին։ Եւ սորանք էին նո- 24
րանց ազգատոհմերի իշխանները՝
Ափէր, Յեսսի, Եղիէլ, Եզրիէլ,
Երեմիա, Ովդուիա և Յաքդիէլ,
որ քաջազուն և անուանի մար-
դիկ էին իրանց ազգատոհմերի
գլխաւորներ։
Եւ ապստամբուեցին իրանց 25
հայրերի Աստուծուն դէմ, և այն
երկրի ազգերի աստուածներին
հետևելով պոռնկութիւն արին,
որոնց բնաջինջ էր արել Աստուած
նորանց առաջից։ Եւ Իսրայէլի 26
Աստուածը գրգռեց Ասորեստանի
Փուղ Թագաւորի հոգին և Ասո-

րեստանի Թագղաթ-փաղասար
Թագաւորի հոգին, և նա գերի
տարաւ Ռուբենեաններին, Գադ-
եաններին և Մանասէի կէս ցե-
ղին և տարաւ նորանց Քաղա,
Քաբովր և Հարա ու Գովզան գե-
տը մինչև այս օրը։

ԳԼ. Զ

1 Ղևիի որդիքը՝ Գերսոն, Կահաթ
2 և Մերարի։ Եւ Կահաթի որդի-
քը՝ Ամրամ, Իսահառ, Քեբրոն
3 և Ոզիէլ։ Եւ Ամրամի որդիքը՝ Ա-
հարօն և Մովսէս, և Մարիամ։
Եւ Ահարօնի որդիքը՝ Նադաբ,
Աբիուդ, Եղիազար և Իթամար։
4 Եղիազարը ծնեց Փենեհէսին. Փե-
5 նեհէսը ծնեց Աբիսուային։ Եւ
Աբիսուան ծնեց Բոկկիին, և Բոկ-
6 կին ծնեց Ոզիին։ Եւ Ոզին ծնեց
Զարիային, և Զարիան ծնեց Մա-
7 րիօթին։ Մարիօթը ծնեց Ամա-
րիային, և Ամարիան ծնեց Աքի-
8 տովբին. Եւ Աքիտովբը ծնեց Սա-
դովկին, և Սադովկը ծնեց Աքի-
9 մասին։ Եւ Աքիմասը ծնեց Ա-
զարիային, և Ազարիան ծնեց Յօ-
10 հանանին։ Եւ Յօհանանը ծնեց
Ազարիային, սա այն է որ քա-
հանայութիւն արաւ Սողոմոնի
11 Երուսաղէմում շինած տանը։ Եւ
Ազարիան ծնեց Ամարիային, և
12 Ամարիան ծնեց Աքիտովբին։ Եւ
Աքիտովբը ծնեց Սադովկին, և
13 Սադովկը ծնեց Սեղղումին։ Եւ
Սեղղումը ծնեց Քեղկիային, և
14 Քեղկիան ծնեց Ազարիային։ Եւ
Ազարիան ծնեց Սարայիային, և
15 Սարայիան ծնեց Յովսեդեկին։ Եւ
Յովսեդեկը գնաց գերի, երբոր
Տէրը Յուդան և Երուսաղէմը գե-
րի փոխադրեց Նաբուգոդոնոսորի
ձեռովը։
16 Ղևիի որդիքը՝ Գերսոն, Կա-
17 հաթ և Մերարի։ Եւ սորանք էին
Գերսոնի որդկանց անունները՝
18 Ղոբենի և Սեմէի։ Եւ Կահաթի
որդիքը՝ Ամրամ, Իսահառ, Քեբ-
19 րոն և Ոզիէլ։ Մերարիի որդիքը՝
Մոողի և Մուսի. և սորանք են
Ղևտացիների տոհմերը իրանց
հայրերի համեմատ։
Գերսոնինը՝ Ղոբենի, նորա որ- 20
դին Յեթ, նորա որդին Զամմա,
Նորա որդին Յովաք, նորա որդին 21
Ադդով, նորա որդին Զարա, նո-
րա որդին Յաթրի։
Կահաթի որդիքը՝ Ամինադաբ, 22
նորա որդին Կորխ, նորա որդին
Ասիր, Նորա որդին Եղկանա, նո- 23
րա որդին Աբիասափ, նորա որդին
Ասիր. Նորա որդին Թաաթ, նո- 24
րա որդին Ուրիէլ, նորա որդին
Ոզիա և նորա որդին Սաւուղ։ Եւ 25
Եղկանայի որդիքը՝ Ամեսայի, Ա-
քիմօթ և Եղկանա. Եղկանայի 26
որդիքը՝ նորա որդին Սուփի, նո-
րա որդին Նահաթ, Նորա որդին 27
Եղիաբ, նորա որդին Յերոամ,
նորա որդին Եղկանա։ Եւ Սամու- 28
էլի որդիքը՝ նորա անդրանիկը Յո-
վել և երկրորդը Աբիա։
Մերարիի որդիքը՝ Մոողի, նո- 29
րա որդին Ղոբենի, նորա որդին
Սեմէի, նորա որդին Ոզա. Նորա 30
որդին Սամաա, նորա որդին Ան-
գիա, նորա որդին Ասայիա։
Եւ սորանք են, որոնց Դաւիթը 31
երգեցողութեան վերայ դրաւ Տի-
րոջ տանը տապանակը նորանում
դնելուց յետոյ։ Եւ նորանք ծա- 32
ռայում էին ժողովքի խորանի
առաջին երգեցողութեամբ մինչև
որ Սողոմոնը շինեց Տիրոջ տունը
Երուսաղէմում, և իրանց կար-
գին համեմատ կենում էին իրանց
պաշտօնումը։ Եւ սորանք են կե- 33
նողները և նորանց որդիքը՝ Կա-
հաթեաններից երգիչ Եմանը՝ որ-
դի Յովելի, որդի Սամուէլի, Որ- 34
դի Եղկանայի, որդի Յերոամի,
որդի Եղիէլի, որդի Թովայի, Որ- 35
դի Սուփիի, որդի Եղկանայի, որ-
դի Մաաթի, որդի Ամեսայիի,
Որդի Եղկանայի, որդի Յովելի, 36
որդի Ազարիայի, որդի Սոփոնիայի,
Որդի Թաաթի, որդի Ասիրի, որ- 37
դի Աբիասափի, որդի Կորխի, Որ- 38
դի Իսահառի, որդի Կահաթի,
որդի Ղևիի, որդի Իսրայէլի։ Եւ 39
նորա եղբայրն Ասափ նորա աջ
կողմին կանգնողն էր. Ասափ որ-
դի Բարաքիայի, որդի Սամայի,
Որդի Միքայէլի, որդի Բաասիայի, 40
որդի Մեղքիայի, Որդի Աթանիի, 41

որդի Զարայի, որդի Ադայիայի,
42 Որդի Եթանի, որդի Զամմայի,
43 որդի Սեմէիի, Որդի Յեթի, որդի
44 Գերսոնի, որդի Ղևիի։ Եւ նո-
րանց եղբայրները՝ Մերարիի որ-
դիքը ձախ կողմին՝ Եթան, որդի
Կիսիի, որդի Աբդիի, որդի Մա-
45 լուքի, Որդի Ասաբիայի, որդի Ա-
46 մասիայի, որդի Քեղկիայի, Որդի
Ամասիի, որդի Բանիի, որդի Սա-
47 մերի, Որդի Մոոզիի, որդի Մու-
սիի, որդի Մերարիի, որդի Ղե-
48 ւիի։ Եւ նորանց եղբայրները՝
Ղևտացիք նուիրուած էին Ա-
ստուծոյ տան ամեն ծառայու-
թեանը։
49 Բայց Ահարօնը և նորա որդիքը
այրում էին ողջակէզի սեղանի
վերայ և խունկի սեղանի վերայ,
սրբութեանց սրբութիւնի ամեն
գործի համար և Իսրայէլին այն
ամենի համեմատ քաւելու հա-
մար, որ հրամայել էր Աստուծոյ
50 ծառայ Մովսէսը։ Եւ Ահարօնի
որդիքը սորանք են. նորա որդին
Եղիազար, նորա որդին Փենէհէս,
51 նորա որդին Աբիսուա. Նորա որ-
դին Բոկկի, նորա որդին Ոզի, նո-
52 րա որդին Զարիա. Նորա որդին
Մարիօթ, նորա որդին Ամարիա,
53 նորա որդին Աքիտովբ, Նորա որ-
դին Սադովկ, նորա որդին Աքի-
մաաս։
54 Եւ սորանք են նորանց բնակու-
թիւններն իրանց գիւղերովը ի-
րանց սահմաններումը. Ահարօնի
որդիներին՝ Կահաթի տոհմին, ո-
րովհետև վիճակը նորանց ընկաւ,
55 Քեբրոնը նորանց տուին Յուդայի
երկրումը, և նորա արուարձան-
56 ները նորա շրջակայքումը։ Բայց
այն քաղաքի արտերը և նորա
գիւղերը տուին Յեփոնեան Քա-
57 ղէբին։ Եւ Ահարօնի որդկանցը
տուին ապաստանի քաղաքներ՝
Քեբրոնը, Լեբնան և նորա ար-
ուարձանները, և Յաթիրը և Ես-
թեմովը իր արուարձաններովը։
58 Եւ Քիլէնը իր արուարձաններովը
և Դաբիրը իր արուարձաններովը,
59 Եւ Ասանը իր արուարձաններովը,
և Բեթսամիւսը իր արուարձան-
60 ներովը. Եւ Բենիամինի ցեղից
Գաբան իր արուարձաններովը, և
Գաղեմէթը իր արուարձաններո-
վը, և Անաթովթը իր արուար-
ձաններովը. նորանց բոլոր քաղաք-
ները տասնևերեք քաղաք էին ի-
րանց տոհմերումը։
Եւ Կահաթի որդկանցը՝ այս 61
ցեղի մնացածներին տրուեցաւ Մա-
նասէի կէս ցեղի բաժնիցը վիճա-
կով տասը քաղաք։
Եւ Գերսոնի որդկանցը իրանց 62
ցեղերի համեմատ Իսաքարի ցե-
ղիցը և Ասերի ցեղիցը և Նեփթա-
ղիմի ցեղիցը և Մանասէի ցեղիցը
որ Բասանումն է տրուեցաւ տասն-
ևերեք քաղաք։
Մերարիի որդկանցը իրանց տոհ- 63
մերի համեմատ Ռուբէնի ցեղիցը
և Գադի ցեղիցը և Զաբուղոնի
ցեղիցը վիճակով տասնևերկու
քաղաք տրուեցաւ։
Եւ Իսրայէլի որդիքը Ղևտացի- 64
ներին տուին այս քաղաքները և
նորանց արուարձանները։ Եւ վի- 65
ճակով տուին Յուդայի որդկանց
ցեղիցը և Շմաւոնի որդկանց ցեղի-
ցը և Բենիամինի որդկանց ցեղիցը
այս քաղաքները, որոնց յիշեցին
անուններով։ Եւ Կահաթի որդ- 66
կանց մի տանիսի բաժինի քաղաքնե-
րը Եփրեմի ցեղիցն էին, Եւ տուին 67
նորանց ապաստանի քաղաքներից
Սիւքէմը և նորա արուարձաններ-
ը Եփրեմի սարի վերայ, և Գա-
զերը իր արուարձաններովը. Եւ 68
Յեկմամը իր արուարձաններովը,
և Բեթորոնը իր արուարձաններ-
ովը. Եւ Այեղոնը իր արուար- 69
ձաններովը, և Գեթրեմոնը իր ար-
ուարձաններովը, Եւ Մանասէի 70
կէս ցեղիցը Անէրը իր արուար-
ձաններովը և Յեբղաամը իր ար-
ուարձաններովը տուին Կահաթի
որդկանց մնացած տոհմին։
Գերսոնի որդկանցը տուին Մա- 71
նասէի կէս ցեղի տոհմիցը Բասա-
նի միջի Գովղանը իր արուարձան-
ներովը և Աստարովթը իր ար-
ուարձաններովը. Եւ Իսաքարի ցե- 72
ղիցը Կադէսը իր արուարձաններ-
ովը, Դաբարաթը իր արուար-
ձաններովը, Եւ Ռամովթը իր ար- 73
ուարձաններովը և Անամը իր ար-

74 ուարձաններովը. Եւ Ասերի ցե-
ղիցը Մասաղը իր արուարձաններ-
ովը, և Աբդոնը իր արուարձան-
75 ներովը, Եւ Հուկոկը իր արուար-
ձաններովը և Բոսբը իր արուար-
76 ձաններովը. Եւ Նեփթաղիմի ցե-
ղիցը Գալիլեայի միջի Կադէսը իր
արուարձաններովը, և Համմոնը իր
արուարձաններովը և Կարիաթե-
մը իր արուարձաններովը։
77 Մնացածներին՝ այսինքն Մերա-
րիի որդկանցը տուին Զաբուղոնի
ցեղիցը Ռեմոնը իր արուարձան-
ներովը, Թաբորը իր արուարձան-
78 ներովը, Յորդանանի այն կողմին
Երիքովի մօտ Յորդանանից դէպի
արևելք Ռուբէնի ցեղիցը անա-
պատի միջի Բոսորը իր արուար-
ձաններովը և Յասսան իր ար-
79 ուարձաններովը, Եւ Կադէմօթը
իր արուարձաններովը, և Մեփա-
80 յաթը իր արուարձաններովը. Եւ
Գադի ցեղիցը Գաղաադի միջի
Ռամովթը իր արուարձաններովը,
և Մանայիմը իր արուարձաննե-
81 րովը, Եւ Եսբոնը իր արուարձան-
ներովը, և Յազերը իր արուար-
ձաններովը։

ԳԼ. Է

1 Եւ Իսաքարի որդիքը՝ Թովղա,
Փուա, Յասուբ և Սամրոն, այս
2 չորսը։ Եւ Թովղայի որդիքը՝ Ոզի,
Հռեփայիա, Յերիէլ, Յեմայի,
Յեբսամ և Սամուէլ՝ իրանց հայր
Թովղայի տան գլխաւորները և ի-
րանց ազգի քաջազունները. նո-
րանց թիւը Դաւիթի օրերում
քսանևերկու հազար վեց հարիւր
3 էր։ Եւ Ոզիի որդիքը՝ Յեզերիա,
և Յեզերիայի որդիքը՝ Միքայէլ,
Աբդիա, Յովէլ և Յեսիա, այս
հինգը բոլորն էլ գլխաւորներ
4 էին։ Եւ նորանց հետ իրանց հայ-
րերի տոհմերիցն իրանց ազգումը
պատերազմի զօրքի գունդեր կազ-
մող կային երեսունեւվեց հա-
զար. որովհետև շատ էին նորանց
5 կանայքը և որդիքը։ Եւ նորանց
եղբայրները Իսաքարի բոլոր ցե-
ղերումը քաջազուններ լինելով
ութսունևեօթը հազար էին ա-
մենքը իրանց ազգահամարովը։
Բենիամինի որդիքը՝ Բաղա, Բո- 6
քոր և Յեդիէլ, այս երեքը։ Եւ 7
Բաղայի որդիքը՝ Եսբոն, Ոզի, Ո-
զիէլ, Յերիմովթ և Իրի, այս հին-
գը իրանց ազգատոհմի գլխաւոր-
ներն և քաջազունները, և նո-
րանց ազգահամարը քսանևերկու
հազար երեսունևչորս։ Եւ Բոքո- 8
րի որդիքը՝ Զամիրա, Յովաս, Ե-
զիազար, Եղիովէնայի, Ամրի, Յե-
րիմովթ, Աբիա, Անաթովթ և
Գաղամէթ. սորանք ամենքը Բո-
քորի որդիքն էին. Եւ իրանց ազ- 9
գատոհմերովը իրանց ազգահա-
մարում իրանց ցեղերի մէջ գլ-
խաւորներ էին քաջազուններ քը-
սան հազար երկու հարիւր։ Եւ 10
Յեդիէլի որդի Բաղղան, և Բաղ-
ղանի որդիքը՝ Յեուս, Բենիամին,
Աւովթ, Քանանա, Զեթան, Թար-
սիս և Աքիսար. Սորանք ամենքը 11
Յեդիէլի որդիքն էին իրանց տոհ-
մերի գլխաւորները քաջազուն-
ներ՝ տասնևեօթը հազար երկու
հարիւր պատերազմի դուրս ե-
կող մարդիկ։ Եւ Սուփիմ և Ո- 12
փիմ՝ Իրիի որդիքն էին, Հուսիմ՝
Աքերի որդին։
Նեփթաղիմի որդիքը՝ Յասիէլ, 13
Գունի, Յասեր և Սեղղում՝ Բաղ-
ղայի որդիքը։
Մանասէի որդիքը՝ Ասրիէլ, ո- 14
րին ծնեց նորա հարճը, նա ծնեց
նաև Գաղաադի հօրը՝ Մաքիրին։
Եւ Մաքիրը կին առաւ Ոփիմի և 15
Սուփիմի քրոջը, և նորանց քրոջ
անունն էր Մաաքա, և երկրոր-
դը Սալպաադ. և Սալպաադին ե-
ղան միայն աղջիկներ։ Եւ Մաքի- 16
րի կինը Մաաքա մի որդի ծնեց,
և նորա անունը կոչեց Փարէս, և
նորա եղբօր անունը Սարէս. և
նորա որդիները Ուղամ և Բոկամ։
Եւ Ուղամի որդին էր Բեդան. 17
սորանք էին Մանասէի որդիի Մա-
քիրի որդիի Գաղաադի որդիքը։
Եւ նորա քոյրը Մողեքէթ ծնեց 18
Եսուդին, Աբիեզերին և Մաա-
լային։ Եւ Սեմիդայի որդիքն էին 19
Աքիան, Սիւքէմ, Ղակէի և Ա-
նիամ։
Եւ Եփրեմի որդիքը՝ Սուտա- 20

ղա, և նորա որդին Բարադ, և
նորա որդին Թաաթ, և նորա որ-
դին Եղիադա, և նորա որդին
21 Թաաթ։ Եւ նորա որդին Զա-
բադ, և նորա որդին Սուտաղա,
և Եզեր ու Եղիադ։ Եւ նորանց
սպանեցին այն երկրում ծնուած
Գէթացիք. որովհետև իջան նո-
22 րանց անասուններն առնելու։ Եւ
նորանց հայրը Եփրեմը շատ օ-
րեր սուգ արաւ, և նորա եղ-
բայրները եկան նորան մխիթա-
23 րելու։ Եւ նա մտաւ իր կնոջ
մօտ, և նա յղանալով ծնեց մի
որդի, և նորա անունը կոչեց
*Բարիա. որովհետև նորա տանը
24 չարիք էր եղել։ Եւ նորա աղջի-
կը Սէէրան էր, և սա շինեց ցա-
ծի և վերի Բեթորոնը և Ոզան-
25 Սէէրան։ Եւ նորա որդին Հռափէ
և Հռասէփ, նորա որդին Թաան,
26 Նորա որդին Ղաադան, նորա որ-
դին Ամիուդ, նորա որդին Եղի-
27 սամա, Նորա որդին Նաւէ, նո-
28 րա որդին Յեսու։ Եւ նորանց
կալուածքն ու բնակութիւնները՝
Բեթէլ իր գիւղերովը, և արե-
ւելեան կողմից Նաարան, և ա-
րևմտեան կողմից Գազեր իր գիւ-
ղերովը, և Սիւքէմը իր գիւղե-
րովը մինչև Գազա և նորա գիւ-
29 ղերը։ Եւ Մանասէի որդկանց
կողմերին բնակվում էին Բեթսան
իր գիւղերովը, Թանաք իր գիւ-
ղերովը, Մակեդդով իր գիւղե-
րովը, Դովր իր գիւղերովը. սո-
րանցում էին բնակվում Իսրա-
յէլի որդի Յովսէփի որդիքը։
30 Ասերի որդիքը՝ Յեմնա, Յե-
սուա, Յեսուի և Բարիա, և նո-
31 րանց քոյրը Սարա։ Եւ Բարիայի
որդիքը՝ Փաբեր և Մեղքիէլ, որ
32 Բարսայիթի հայրն էր։ Եւ Փա-
բերը ծնեց Յափաղէթին, Սով-
մերին և Փովթամին, և նորանց
33 քոյրը Սովղանին։ Եւ Յափաղէ-
թի որդիքը՝ Փասաք, Բամայէլ
և Ասուաթ. սորանք են Յափա-
34 ղէթի որդիքը։ Եւ Սովմերի որդի-
քը՝ Աքի, Հռաոդա, Ոբա և Ա-
35 բամ։ Եւ նորա եղբայր Հելեմի

*Աշխինքն՝ չարիքի մէջ.

որդիքը՝ Սովփա, Յամանա, Սէ-
լէս և Ամաղ։ Սովփայի որդիքը՝ 36
Սուա, Առնափար, Սուաղ, Բա-
րի, Յեմրա, Բասար, Ովդ, Սամ- 37
մա, Սաղիսա, Յեթրան և Բէ-
երա։ Եւ Յեթերի որդիքը՝ Յե- 38
փոնէ, Փասփառ և Արա, Եւ Ով- 39
ղայի որդիքը՝ Արահ, Անիէլ և
Հռասիա։ Սորանք ամենը Ասերի 40
որդիքն էին՝ ազգատոհմերի գլխ-
աւորներ ընտիր քաջազուններ
և գլխաւոր իշխաններ. և նորանց
ազգահամարը պատերազմի զօրքի
մէջ նորանց թուովը քսանևվեց
հազար մարդ։

ԳԼ. Ը

Եւ Բենիամինը ծնեց Բաղային՝ 1
իր անդրանիկը, երկրորդ՝ Ասբէ-
լին, երրորդ՝ Ատրային, Չորրորդ՝ 2
Նովային և հինգերորդ՝ Ռափա-
յին։ Եւ Բաղայի որդիքը՝ Ադար, 3
Գերա, և Աբիուդ, Աբիսուա, 4
Նէեման, Աքուք, Գերա, Սու- 5
փան և Փիրամ։ Եւ սորանք են 6
Աքուդի որդիքը՝ որոնք ազգա-
տոհմերի գլխաւորներ էին Գա-
բայի բնակիչների համար, և նո-
րանց փոխադրեցին Մանաքաթ։
Եւ Նէեման ու Աքիա և Գերա 7
որ նորանց փոխադրեց, և ծնեց
Ոզային և Աքիուդին։ Եւ Սաա- 8
րիմ որդիք ծնեց Մովաբի դաշտու-
մը նորանց ուղարկելուց յետոյ.
Հուսիմ և Բաարա նորա կա-
նայքն էին։ Եւ իր կինը Գոդէ- 9
սից ծնեց Յոբաբին, Սաբիային,
Մեսային, Մեղքամին, Յէուսին, 10
Սեքիային և Մարմային. սորանք
են նորա ազգատոհմերի գլխաւոր
որդիները։ Եւ Հուսիմից ծնեց 11
Աբիտովբին և Եղբաաղին։ Եւ 12
Եղբաաղի որդիքը՝ Եբեր, Միսա-
ամ և Սամեր, որ շինեց Ովնովը,
Ղովդը և նորա գիւղերը. Եւ 13
Բարիա ու Սեմա, սորանք ազ-
գատոհմերի գլխաւորներ էին Ա-
յեղոնում բնակողների համար,
սորանք քշեցին Գէթի բնակիչ-
ներին։ Եւ Աքիով, Սովսեկ, Յե- 14
րիմովթ, Զաբադիա, Արադ, Ե- 15
դեր, Միքայէլ, Յեսփա և Յով- 16

17 քա Բարիայի որդիքը։ Եւ Զա-
բադիա, Մեսուղամ, Ազակի,
18 Փաբեր, Յեսամարի, Յեզղիա և
19 Յոբաբ Եղբաաղի որդիքը։ Եւ
20 Յակիմ, Զեքրի, Զաբթի, Եղիէ-
21 նայի, Սաղթի, Եղիէլ, Ադայիա,
Բարեա և Սամարաթ՝ Սեմէիի
22 որդիքը։ Եւ Յեսփան, Եբեր, Ե-
23 ղիէլ, Աբդոն, Զեքրի, Անան,
24 Անանիա, Եղամ, Անաթովթիա,
25 Յեփադիա և Փանուէլ՝ Սովսեկի
26 որդիքը։ Եւ Սամսարի, Սատրիա,
27 Գոթոզիա, Յարասիա, Եղիա և
28 Զեքրի՝ Յերսամի որդիքը։ Սո-
րանք ազգատոհմերի գլխաւորներ
էին՝ իրանց ցեղերի առաջիններ-
ը. սորանք բնակվում էին Երու-
սաղէմում։
29 Եւ Գաբաւոնում բնակվում
էին՝ Գաբաւոնի հայրը, և նորա
30 կնկայ անունը Մաաքա էր. Եւ
նորա անդրանիկ որդին Աբդօն,
և Սուր, Կիս, Բաաղ, Նադաբ,
31 Գեդովր, Աքիով և Զաքար։
32 Եւ Մակեղօթը ծնեց Սամասային,
և հէնց դորանք էլ բնակուեցին
իրանց եղբայրների դիմացը Երու-
սաղէմում, իրանց եղբայրների
հետ։
33 Եւ Ները ծնեց Կիսին, և Կի-
սը ծնեց Սաւուղին, և Սաւուղը
ծնեց Յովնաթանին, Մեղքիսա-
ւէին, Աբինադաբին և Եսբաա-
34 ղին։ Եւ Յովնաթանի որդին՝
Մերիբաաղ. և Մերիբաաղը ծնեց
35 Միքային։ Եւ Միքայի որդիքը՝
Փիթոն, Մելէք, Թարէ և Աքազ։
36 Եւ Աքազը ծնեց Յովադային, և
Յովադան ծնեց Գաղեմեթին, Ա-
զամօթին և Զամբրիին. և Զամբ-
37 րին ծնեց Մոսային. Եւ Մոսան
ծնեց Բանասային, նորա որդին
Ռափա, նորա որդին Եղեասա,
38 նորա որդին Եսէլ էր։ Եւ Եսելը
վեց որդի ունէր, և սորանք են
անունները՝ Եզրիկամ, Բոքերու,
Իսմայէլ, Սատրիա, Աբդիա և
Անան. սորանք ամենը Եսելի որ-
39 դիքն էին. Եւ նորա եղբայր Ե-
սեկի որդիքը՝ անդրանիկը Ու-
ղամ, երկրորդը Յէուս և երրոր-
40 դը Եղիփաղէտ։ Եւ Ուղամի որ-
դիքը քաջազուն մարդիկ էին ա-

ղեղնաւոր, և նորանք շատ որդիք
և որդկանց որդիք ունէին՝ հա-
րիւր յիսուն. սորանք ամենքը
Բենիամինի որդկանցիցն են։

ԳԼ. Թ

Եւ բոլոր Իսրայէլը արձանագ- 1
րուեցան, և ահա նորանք գրը-
ուած են Իսրայէլի և Յուդայի
թագաւորների գրքումը. իրանց
անօրէնութեանը համար գերի
տարուեցան Բաբիլոն։
Եւ առաջի բնակիչները՝ որ 2
բնակվում էին իրանց կալուածք-
ների միջի իրանց քաղաքներու-
մը. էին Իսրայէլացիք, քահա-
նաներ, Ղևտացիներ և Նաթա-
նայիմներ։ Եւ Երուսաղէմումը 3
բնակվում էին Յուդայի որդկան-
ցից, Բենիամինի որդկանցից, Եփ-
րեմի և Մանասէի որդկանցից.
Եւ Յուդայի որդի Փարէսի որ- 4
դիներից Բանիի որդիի Իմրիի որ-
դիի Ամրիի որդիի Ամիուդի որ-
դի Ութային։ Եւ Սելօնեաններ- 5
ից՝ նորա անդրանիկը Ասայիա և
նորա որդիքը։ Եւ Զարայի որ- 6
դիներից՝ Յէիէլ և նորանց եղ-
բայրները վեց հարիւր իննսուն։
Եւ Բենիամինի որդիներից՝ Ասա- 7
նուայի որդիի Ովդուիայի որդիի
Մեսուղամի որդի Սալլուն։ Եւ 8
Յերսամի որդի Յեբնիան, և Մաք-
րիի որդիի Ոզիի որդի Էլան, Յեբ-
նիայի որդիի Ռագուէլի որդիի Սա-
փատիայի որդի Մեսուղամը. Եւ 9
նորանց եղբայրներն իրանց ցեղե-
րին համեմատ՝ ինը հարիւր յի-
սունևվեց մարդ. այս բոլոր մար-
դիկը իրանց տոհմերի գլխաւոր-
ներն էին։
Եւ քահանաներից Յեդայիա, 10
Յովարիբ և Յաքին. Եւ Աստու- 11
ծոյ տան վերակացու Աքիտովբի
որդիի Մարիօթի որդիի Սադովկի
որդիի Մեսուղամի որդիի Քեղ-
կիայի որդի Ազարիան. Եւ Մեղ- 12
քիայի որդիի Փասուրի որդիի
Յերսամի որդի Ադայիան, և Եմ-
մերի որդիի Մեսեղամօթի որդիի
Մեսուղամի որդիի Եզերայի որ-
դիի Ադիէլի որդի Մասէն։ Եւ 13

նորանց եղբայրներն իրանց ազ-
գատոհմերի գլխաւորներն էին.
հազար եօթը հարիւր վաթսուն
քաջազուններ Աստուծոյ տան
ծառայութեան գործումը։
44 Եւ Ղևտացիներից՝ Մերարիի
որդկանցից Ասաբիայի որդիի Եզ-
րիկամի որդիի Ասուբի որդի Սե-
45 մայիան, Եւ Բակբակար, Արէս,
Գաղաղ, և Ասափի որդիի Զեք-
րիի որդիի Միքիայի որդի Մա-
46 թանիան, Եւ Եդիթունի որդիի
Գաղաղի որդիի Սեմայիայի որդի
Աբդիան, և Եղկանայի որդիի
Ասայի որդի Բարաքիան, որ բը-
նակվում էր Նետոփաթացիների
47 դիւղերումը։ Եւ դռնապանները՝
Սեղղում, Ակկուբ, Տեղմոն և
Աքիման և նորանց եղբայրները.
48 Սեղղումը գլխաւորն էր։ Եւ մին-
չև հիմա թագաւորի դռան վե-
րայ դէպի արևելք նորանք են
դռնապանները Ղևիի որդկանց
49 բանակներիցը. Եւ Կորխի որդիի
Աբիասափի որդի Կովրէի որդի
Սեղղումը և նորա եղբայրները՝ իր
հօր տանից Կորխեանները՝ ծա-
ռայութեան գործի վերայ խորա-
նի դռան պահապաններն էին. և
նորանց հայրերը Տիրոջ բանա-
կումը մուտքի պահապաններ էին։
20 Եւ Եղիազարի որդի Փենէհէսը
առաջ նորանց վերայ իշխան էր,
21 և Տէրը նորա հետ էր։ Մասե-
ղամիայի որդի Զաքարիան խորա-
նի դռան մուտքի դռնապանն էր։
22 Դռների համար դռնապաններ
ընտրուածների ամենքը երկու
հարիւր տասնևերկու հոգի էին.
սորանք իրանց դիւղերովը ազգա-
համարի մէջ գրուեցան. Դաւի-
թը և Սամուէլ տեսանողը նո-
րանց հաստատեցին իրանց պաշ-
23 տօնումը։ Եւ նորանք ու նորանց
որդիքը Տիրոջ տան այսինքն խո-
րանի տան դռների պահապանու-
24 թիւնումն էին։ Դռնապանները
չորս կողմին էին լինում՝ դէպի
արևելք, արևմուտք, հիւսիս և
25 հարաւ։ Եւ նորանց դիւղերի
եղբայրները եօթը օրուան համար
ժամանակ ժամանակ գալիս էին
26 սորանց հետ. Որովհետև նորանք
այն չորս զօրաւոր Ղևտացիքն ի-
րանց հաւատացուած պաշտօնի
մէջ էին և Աստուծոյ տան սեն-
եակների ու գանձերի վերայ էին։
Եւ գիշերը կենում էին Աստու- 27
ծոյ տան շուրջը, որովհետև պա-
հապանութիւնը նորանց վերայ
էր, և նորանք էին դուռը բա-
նում ամեն առաւօտ։ Եւ նո- 28
րանցից սմանք պաշտօնի անօթնե-
րի վերայ էին լինում, որովհետև
թիւով նորանց ներս էին տա-
նում և թիւով նորանց դուրս
էին բերում։ Եւ նորանցից էին 29
որոնք նշանակուած էին ֆաս ա-
նօթների և որբարանի անօթնե-
րի և նաշիհի և դինիի և իւղի և
կնդրուկի և համեմների վերայ։
Եւ քահանաների որդկանցիցն էին 30
խնկեղէնների բաղադրութիւնքը
բաղադրողները։ Եւ Ղևտացինե- 31
րից Մատաթիան, որ Կորխացի
Սեղղումի անդրանիկն էր, տա-
պակի գործքի վերայ էր։ Եւ նո- 32
րանց եղբայրներից՝ Կահաթեան-
ներից էին առաջաւորութեան
հացի վերակացու, որ պատրաս-
տեն ամեն շաբաթ։
Բայց երգիչները, որ Ղևտա- 33
ցիների ազգատոհմերումը գլխա-
ւորներ էին, սենեակներումն էին
լինում ազատ. որովհետև ցերեկ
ու գիշեր նորանք պիտի իրանց
գործումը լինէին։ Սորանք են 34
Ղևտացիների ազգատոհմերի գլխ-
խաւորները, որ իրանց ցեղերու-
մը գլխաւորներ էին. սորանք բը-
նակվում էին Երուսաղէմում։
Եւ Գաբաւոնում բնակվում 35
էին Գաբաւոնի հայրը՝ Յէիէլ, և
նորա կնկայ անունը Մաաքա էր.
Եւ նորա անդրանիկ որդին Աբ- 36
դոն, և Սուր, Կիս, Բաաղ, Ներ,
Նադաբ, Գեդովր, Աքիով, Զա- 37
քարիա և Մակեղօթ։ Եւ Մա- 38
կեղօթը ծնեց Սամաամին. և սո-
րանք հէնց իրանց եղբայրների
դիմացին էին բնակվում Երուսա-
ղէմում իրանց եղբայրների հետ։
Եւ Ները ծնեց Կիսին, և Կիսը 39
ծնեց Սաւուղին, և Սաւուղը ծը-
նեց Յովնաթանին, Մեղքիսա-
ւէին, Աբինադաբին և Եսբաա-

40 ղին։ Յովնաթանի որդին Մերի-
բաաղ էր, և Մերիբաաղը ծնեց
41 Միքային։ Եւ Միքայի որդիքը՝
Փիթոն, Մելէք, Թարէ և Ա[illegible]։
42 Եւ Աքազը ծնեց Յովարային, և
Յովարան ծնեց Գաղեմէթին, Ա-
զամօթին և Զամբրիին, և Զամբ-
43 րին ծնեց Մոսային. Եւ Մոսան
ծնեց Բանային, նորա որդին
Ռափայիա, նորա որդին Եղեա-
44 սա, նորա որդին Եսէլ էր։ Եւ
Եսէլ վեց որդի ունէր, որոնց ա-
նունները սորանք են, Եզրիկամ,
Բոքերու, Իսմայէլ, Սաարիա,
Աբդիա և Անան. սորանք էին
Եսէլի որդիքը։

ԳԼ. Ժ

1 Եւ Փղշտացիք պատերազմեցին
Իսրայէլի հետ, և Իսրայէլի մար-
դիկը փախան Փղշտացիների ա-
ռաջից, և սպանուած վայր ըն-
2 կան Գեղբուէի սարի վերայ։ Եւ
Փղշտացիք հասան Սաւուղին և
նորա որդիներին, և Փղշտացիք
զարկեցին Սաւուղի որդիք՝ Յով-
նաթանին, Աբինադաբին և Մեղ-
3 քիսաւէին։ Եւ պատերազմը
սաստկացաւ Սաւուղի վերայ, և
աղեղնաւոր մարդիկը գտան նո-
րան, և վիրաւորուեցաւ աղեղ-
4 նաւորներից։ Եւ Սաւուղն ասեց
իր կապարճակիրին. Սուրդ հա-
նիր և նորանով ինձ խոցիր. մի
գուցէ այս անթլփատները գան և
ինձ ծաղր անեն. բայց նորա կա-
պարճակիրը չ՚ուզեց, որովհետև
շատ վախեցաւ։ Եւ Սաւուղն
առաւ սուրը և ընկաւ նորա վե-
5 րայ։ Եւ երբոր նորա կապարճա-
կիրը տեսաւ, որ Սաւուղը մե-
ռաւ, նա էլ իր սուրի վերայ
6 ընկաւ և մեռաւ։ Այսպէս մե-
ռաւ Սաւուղը, և նորա երեք
որդիքը, և նորա բոլոր տունը
միասին մեռան։
7 Եւ երբոր տեսան բոլոր Իսրա-
յէլացիները որ հովտումն էին,
որ նորանք փախան, և որ Սա-
ւուղը և նորա որդիքը մեռան,
այն ժամանակ թողեցին իրանց
քաղաքները և փախան, և Փղշ-
տացիները եկան և բնակուեցին
նորանցում։
Եւ եղաւ հետևեալ օրը, որ 8
Փղշտացիները եկան մեռելները
մերկացնելու, և գտան Սաւու-
ղին և նորա որդկանցը ընկած
Գեղբուէի սարի վերայ։ Եւ նո- 9
րան մերկացրին և վեր առան
նորա գլուխը և նորա զէնքերը,
և մարդ ուղարկեցին շուրջանակի
Փղշտացիների երկիրը, որ իրանց
կռատներին և ժողովրդին աւե-
տիս տան։ Եւ նորա զէնքերը 10
դրին իրանց աստուծոյ տանը, և
նորա գագաթը կախեցին Դագո-
նի տանը։
Եւ երբոր լսեցին Գաղաադի 11
Յաբիսի բոլոր բնակիչները այն ա-
մենը, որ Փղշտացիները արել էին
Սաւուղին, Բոլոր քաջ մարդիկը 12
վեր կացան և վեր առան Սա-
ւուղի դիակը և նորա որդկանց
դիակը և բերին նորանց Յաբիս,
և թաղեցին նորանց ոսկորները
Յաբիսում բևեկնիի տակին, և
եօթն օր ծոմ պահեցին։
Այսպէս մեռաւ Սաւուղն իր 13
այն ապստամբութեան համար,
որ ապստամբուեց Տիրոջ դէմ
Տիրոջ խօսքի պատճառովը, որ
չ՚պահեց, և վհուկ ուզեց որ բան
հարցնէ։ Բայց Տիրոջը չ՚հարցրեց, 14
և նա նորան մեռցրեց և թագա-
ւորութիւնը դարձրեց Յեսսէի
որդի Դաւիթին։

ԳԼ. ԺԱ

Եւ բոլոր Իսրայէլը ժողովուե- 1
ցան Դաւիթի մօտ Քեբրոն ասե-
լով. Ահա մենք քո ոսկորը և քո
մարմինն ենք. Դեռ սորանից ա- 2
ռաջ երբոր Սաւուղը մեզ վերայ
թագաւոր էր՝ դու էիր Իսրայէ-
լին դուրս հանում և ներս բե-
րում։ Եւ քո Տէր Աստուածն ա-
սեց քեզ. Դու հովուես իմ ժո-
ղովուրդ Իսրայէլին և դու լինիս
իշխան իմ ժողովուրդ Իսրայէլի
վերայ։ Եւ Իսրայէլի բոլոր ծերերն 3
եկան թագաւորի մօտը Քեբրոն.
և Դաւիթը նորանց հետ դաշինք
դրաւ Քեբրոնում Տիրոջ առա-

ջին, և նորանք Դաւիթին թա-
գաւոր օծեցին Իսրայէլի վերայ
Տիրոջ խօսքին համեմատ որ խօսեց
Սամուէլի ձեռովը։
4 Եւ Դաւիթը գնաց բոլոր Իս-
րայէլի հետ Երուսաղէմ, որ է
Յեբուս, և այնտեղ էին Յեբու-
սացիք՝ այն երկրի բնակիչները։
5 Եւ Յեբուսի բնակիչներն ասեցին
Դաւիթին. Այստեղ պիտի չ՚մըտ-
նես. բայց Դաւիթն առաւ Սիօնի
բերդը, որ է Դաւիթի քաղաքը։
6 Եւ Դաւիթն ասեց. Ով որ Յե-
բուսացիներին առաջ զարկէ, նա
կ՚լինի գլխաւոր և զօրապետ. և
առաջ Շարուհեայի որդի Յովա-
բը վեր ելաւ. և նա զօրագլուխ
7 եղաւ։ Եւ Դաւիթը բնակուեց
այն բերդում. նորա համար նո-
րան Դաւիթի քաղաք են կոչում։
8 Եւ քաղաքը շինեց շուրջանակի
Մելօնից մինչև նորա շրջակայքը.
և Յովաբը նորոգեց քաղաքի մնա-
9 ցորդը։ Եւ Դաւիթը գնալով մե-
ծանում էր, և Զօրաց Տէրը նո-
րա հետ էր։
10 Եւ սորանք են Դաւիթի քա-
ջերի գլխաւորները, որոնք նորան
օգնեցին նորա թագաւորութիւ-
նում բոլոր Իսրայէլի հետ, որ
նորան թագաւոր անեն, Տիրոջ
Իսրայէլի վերայ ասաց խօսքին հա-
11 մեմատ։ Եւ սա է Դաւիթի քա-
ջերի թիւը. Հաքեմոնիի որդին
Յեսբաամ՝ երեսունի գլխաւորը.
սա իր նիզակը վեր խաղացրեց ե-
րեք հարիւր մարդկանց վերայ
մէկ անգամում մեռցնելով։
12 Եւ նորանից յետոյ Աքուքացի
Դովդայի որդի Եղիազարը, սա
այն երեք զօրաւորների հետ էր։
13 Սա Դաւիթի հետ էր Աբեսդոմ-
մինում, և այնտեղ ժողովուել
էին Փղշտացիները պատերազմե-
լու համար, և այնտեղ արտի մէկ
մասը լիքն էր գարիով, և ժողո-
վուրդը փախաւ Փղշտացիների ա-
14 ռաջից։ Իսկ սորանք կանգնեցին
ագարակի մէջ, և նորան ազա-
տեցին, և զարկեցին Փղշտացի-
ներին. և Տէրը փրկեց մեծ փըր-
կութիւնով։
15 Եւ այն երեսուն զօրավարնե-
րից երեքն իջան վէմը Դաւիթի
մօտ, Ոդողոմի քարայրը, և Փղշ-
տացիների բանակը բանակ էր
տուել Ռափայնոց հովտի մէջ։
Եւ այն ժամանակ Դաւիթը բեր- 16
դումն էր, և Փղշտացիներից մի
զօրագունդ Բեթլէհէմումն էր։
Եւ Դաւիթը փափաքելով ա- 17
սեց. Ո՞վ կ՚բերէ ինձ համար խմե-
լու ջուր Բեթլէհէմի ջրհորիցը,
որ դռան մօտ է։ Եւ այն երեքը 18
ճեղքեցին Փղշտացիների բանա-
կը և ջուր քաշեցին Բեթլէհէմի
ջրհորիցը, որ դռան մօտ է, և
բերին տուին Դաւիթին, իսկ
Դաւիթը չ՚ուզեց խմել այն և
թափեց նորան Տիրոջ համար։
Եւ ասեց. Քաւ լիցի ինձ, ով իմ 19
Աստուած, որ անեմ այս բանը.
այս մարդկանց արիւնը խմե՞մ ես
իրանց կեանքի տեղ. որովհետև
իրանց կեանքը վտանգի դնելով բե-
րին այն. և չ՚ուզեց խմել նո-
րան։ Այս բաներն արին այն ե-
րեք զօրաւորները։
Եւ Յովաբի եղբայր Աբեսսան 20
այն երեքի գլխաւորն էր. և նա
խաղացրեց իր նիզակը երեք հա-
րիւրի վերայ նորանց սպանելով.
և նա այն երեքի մօտ անուանի
էր։ Այն երեքից երկուսի մօտ 21
յարգուած էր, և նորանց իշխան
եղաւ, բայց այն փոս երեքին
չէր հասնիլ։
Եւ Յովիադայի որդի Բանեան՝ 22
մի ժիր և գործունեայ մարդի
որդի Կաբեսէլացի՝ զարկեց Մո-
վաբի երկու զօրաւոր մարդկանցը
և նա իջաւ ու զարկեց առիւծին
գուբի մէջ ձիւնի ժամանակ։ Եւ 23
նա զարկեց այն Եգիպտացի մար-
դին՝ այն հինգ կանգուն երկար
մարդին. և Եգիպտացիի ձեռին
մի նիզակ կար ոստայնանկների
գլանին չափ. և նա իջաւ նորա
մօտ մի ցուպով և յափշտակեց
նիզակը Եգիպտացիի ձեռքից և
սպանեց նորան իր նիզակովը։
Այս բաներն արաւ Յովիադայի 24
որդի Բանեան՝ և նա անուանի
էր այն երեք զօրաւորների մէջ։
Ահա նա այն երեսունիցն աւե- 25
լի պատուաւոր էր, բայց այն ե-

րեքին չէր հասնիլ. և Դաւիթը
նորան իր ատեանին վերակացու
դրաւ։
26 Եւ քաջազունք. Յովաբի եղ-
բայր Ասայէլը, Բեթլէհէմացի
27 Դովդայի որդի Ելէանան, Հարօ-
դացի Սամմա, Փելօնացի Քեղ-
28 ղէս, Թեկուացի Եկգեսի որդի
Իրասը, Անաթովթացի Աբիեզեր,
29 Ովսացի Սովբաք, Աքուքացի Եղի,
30 Նետոփաթացի Մաարայ, Նետո-
փաթացի Բաանայի որդի Ալա-
31 դը, Բենիամինի որդկանց Գա-
բայից Ռիբայի որդի Եթթին,
32 Փարաթոնացի Բանեա, Գաասի
ձորերից Հուրայ, Արաբաթացի
33 Աբիէլ, Բարումացի Ազամօթ,
34 Սաղաբինացի Եղիաբա, Գեզոնա-
ցի Հասեմի որդիները՝ Արարացի
35 Սագէի որդի Յովնաթանը, Արա-
բացի Սաքարի որդի Աքիամը,
36 Ովրի որդի Եղիփաղը, Մեքուրա-
թացի Ոփեր, Փելօնացի Աքիա,
37 Կարմելացի Ասարէ, Ազբիայի որ-
38 դի Նաարան, Նաթանի եղբայր
Յովէլը, Ագարայի որդի Մաբա-
39 րը, Ամմոնացի Սելեկ, Շարուհ-
եան Յովաբի կապարճակիր Բե-
40 րովթացի Նաարան, Յեթերացի
41 Իրաս, Յեթերացի Գարեբ, Քե-
տացի Ուրիա, Աղայիի որդի Զա-
42 բադը, Ռուբենեանց գլուխը Ռու-
բենեան Սիզայի որդի Ադինան,
որ նորա հետ երեսուն մարդ
43 կար, Մաաքայի որդի Անանը,
44 Մաթանացի Յովսափատ, Աստա-
րովթացի Ոզիա, Արոերացի Քով-
թամի որդիքը՝ Սամա և Յէիէլ,
45 Սամարիի որդի Յեդիէլը, և նո-
րա եղբայր Թիսացի Յովքան,
46 Մահաւացի Եղիէլ, Եղնաամի
որդիքը՝ Յարիբայի և Յօսաւիա,
47 Մովաբացի Յեթեմա, Եղիէլ,
Ովբէդ, և Մեսօբացի Յեսիէլ։

ԳԼ. ԺԲ

1 Եւ սորանք են որ եկան Դաւի-
թի մօտ Սիկելակ, քանի որ նա
դեռ Կիսեան Սաւուղի երեսից
թաքնվում էր, և սորանք քաջեր
էին՝ պատերազմում օգնողներ։
2 Աղեղնաւորներ էին, պարսով քա-
րեր էին գցում աջով և ձախով
և աղեղով նետեր, Սաւուղի եղ-
բայրներից Բենիամինից։ Գլխաւո- 3
րը՝ Աքիեզեր, յետոյ Յովաս՝ Գա-
բաացի Սամասայի որդիքը. և Յե-
զիէլ ու Փաղէտ Ազամօթի որ-
դիքը, և Բարաքա ու Անաթով-
թացի Յեհու. Եւ Գաբաւոնացի 4
Իսմայիան՝ այն երեսունից մէկ
զօրաւոր և այն երեսունի վերայ,
և Երեմիա, Յազիէլ, Յօհանան և
Գադերացի Յովզաբադ, Եղիոզայ, 5
Յերիմովթ, Բաաղիա, Սամարիա
և Յարուփացի Սափատիա, Եղ- 6
կանա, Յեսիա, Ազարիէլ, Յովե-
զեր և Յեսբաամ՝ Կորխացիք, Եւ 7
Գեդովրացի Յերոամի որդիքը՝ Յո-
վելա և Զաբադիա։
Եւ Գադեաններից բաժանուե- 8
ցան գնացին Դաւիթի մօտ անա-
պատի միջի բերդը քաջազուն
մարդիկ, պատերազմի զինուոր-
ներ, վահան և նիզակ գործածող,
նորանց երեսը առիւծի երես էր
և սարերի վերայի այծեամների
պէս արագաշարժ էին։ Գլխաւո- 9
րը Եզեր, երկրորդը Աբդիա, եր-
րորդը Եղիաբ, Չորրորդը Մասմա- 10
նա, հինգերորդը Երեմիա, Վե- 11
ցերորդը Եթթի, եօթներորդը Ե-
զիէլ, Ութերորդը Յօհանան, ին- 12
ներորդը Եղզաբադ, Տասներորդը 13
Երեմիա, տասնեմէկերորդը Մա-
քաբանայ։ Սորանք Գադի որդ- 14
կանցից զօրքի գլխաւորներ էին.
մէկ փոքրը հարիւրի վերայ, իսկ
մեծը հազարի վերայ։ Սորանք են, 15
որ Յորդանանովն անց կացան ա-
ռաջի ամսումը, երբոր նա ջրով
լցրել էր իր բոլոր ափերը և բո-
լոր հովիտներում բնակողներին
փախցրին դէպի արևելք և դէպի
արևմուտք։
Եւ Բենիամինի որդկանցից և 16
Յուդայից էլ եկան բերդը Դա-
ւիթի մօտ։ Եւ Դաւիթը նորանց 17
առաջը դուրս եկաւ և պատաս-
խան տուաւ ու ասեց նորանց.
Եթէ խաղաղութեամբ էք եկել
ինձ մօտ ինձ օգնելու, իմ սիրտը
ձեզ հետ մէկ կ՚լինի. բայց ե-
թէ խաբէութեամբ որ ինձ իմ
թշնամիներին մատնէք, իմ ձեռ-

քերումը անօրէնութիւն չ՚լինե-
լով, այն ժամանակ մեր հայրե-
րի Աստուածը տեսնէ և յանդի-
48 մանէ։ Եւ Հոդին պատեց իշխան-
ների գլուխ Ամեսայիին, և նա
ասեց.
Մենք քոնն ենք, ով Դաւիթ, և
քեզ հետ՝ ով Յեսսէի որդի,
Խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն
քեզ, և խաղաղութի՛ւն քո
օգնականներին.
Որովհետև քո օգնականը քո Ա-
ստուածն է։
Եւ Դաւիթը նորանց ընդունեց
և նորանց գունդի գլխաւորներ
դրաւ։
49 Մանասէից էլ անցան Դաւի-
թի մօտ, երբոր նա Փղշտացիներ-
ի հետ Սաւուղի վերայ գնաց
պատերազմելու, բայց նորանց
չ՚օգնեցին, որովհետև Փղշտացի-
ների իշխանները խորհրդով նո-
րանց ետ ուղարկեցին ասելով.
Մեր գլխաւորների հետ իր Տի-
րոջ Սաւուղի կողմը կ՚անցնէ։
20 Նա Սիկելակ գնալիս նորա կողմն
անցան Մանասէից Մանասէի հա-
զարապետները՝ Եդնա, Յովզա-
բադ, Յեդիէլ, Միքայէլ, Յով-
21 զաբադ, Եղիուս և Սաղթի։ Եւ
սորանք օգնեցին Դաւիթին՝ գուն-
դերի դէմ. որովհետև ամենքն
էլ քաջազուններ էին և զօրքին
22 գլխաւորներ եղան։ Որովհետև
այն ժամանակ օր ըստ օրէ գա-
լիս էին Դաւիթի մօտ նորան օգ-
նելու, մինչև որ նորանք մի մեծ
բանակ եղան Աստուծոյ բանա-
կին պէս։
23 Եւ սորանք են այն սպառա-
զինեալների գլուխների թիւը, ո-
րոնք եկան Քեբրոն Դաւիթի մօտ,
որ Սաւուղի թագաւորութիւնը
նորան դարձնեն Տիրոջ խօսքին
24 համեմատ։ Յուդայի որդկանցից
վահան և նիզակ կրող վեց հա-
զար ութը հարիւր սպառազին-
25 եալ զօրքեր։ Շմաւոնի որդկան-
ցից քաջազուն զօրքեր եօթը հա-
26 զար հարիւր։ Ղևիի որդկանցից
27 չորս հազար վեց հարիւր։ Եւ Յո-
վիադան Ահարօնեանների առաջ-
նորդ, և նորա հետ երեք հազար
եօթը հարիւր։ Եւ տղամարդ 28
քաջազունը Սադովկ, և նորա
հօր տանից քսանևերկու իշխան-
ներ։ Եւ Բենիամինի որդկանցից՝ 29
Սաւուղի եղբայրներից երեք հա-
զար. և մինչև այն ժամանակ նո-
րանցից շատերը Սաւուղի տան
պահապանութիւնն էին անում։
Եւ Եփրեմի որդիներից քսան հա- 30
զար ութը հարիւր քաջազունք
իրանց ազգատոհմերում անուա-
նի։ Եւ Մանասէի կէս ցեղից 31
տասնևութը հազար՝ որ իրանց
անուններովը որոշուած էին, որ
գնան Դաւիթին թագաւոր ա-
նեն։ Եւ Իսաքարի որդկանցից, 32
որ ժամանակի գիտութիւնը ու-
նէին և հասկանում էին թէ Իս-
րայէլը ինչ պէտք է անէ, նորանց
երկու հարիւր գլխաւորները, և
նորանց բոլոր եղբայրները նո-
րանց հետ համաձայն էին։ Զա- 33
բուղոնից զինուոր դուրս եկող
պատերազմական ամեն գործիք-
ներով պատերազմ անողներ յի-
սուն հազար մարդիկ որ պատե-
րազմում էին առանց այլևայլ
սրտերի։ Եւ Նեփթաղիմից հա- 34
զար իշխաններ, և նորանց հետ
երեսունևեօթը հազար վահանա-
ւոր և նիզակաւոր։ Եւ Դանից 35
պատերազմ անող քսանևութը
հազար վեց հարիւր։ Եւ Ասերից 36
զինուոր դուրս եկող և պատե-
րազմ անող քառասուն հազար։
Եւ Յորդանանի այն կողմից՝ 37
Ռուբենից, Գադից և Մանասէի
կէս ցեղիցը պատերազմի զօրքերի
բոլոր գործիքներովը հարիւր քը-
սան հազար։ Սորանք ամենքը 38
պատերազմի մարդիկ էին ուղիղ
սրտով ճակատամարտ կազմող,
եկան Քեբրոն Դաւիթին բոլոր
Իսրայէլի վերայ թագաւոր անե-
լու. նաև բոլոր մնացած Իսրայէ-
լացիք համամիտ էին Դաւիթին
թագաւոր անելուն։ Եւ այնտեղ 39
ուտում և խմում էին Դաւիթի
հետ երեք օր. որովհետև իրանց
եղբայրները պատրաստել էին ի-
րանց համար։ Նաև նորանցից մօ- 40
տիկ եղողները, մինչև Իսաքար,
Զաբուղոն և Նեփթաղիմ հաց

բերին էշերով, ուղտերով, ջո-
րիներով և եղներով և ուտելե-
ղէնի համար՝ ալիւր, չոր թուզ,
չամիչ, գինի, իւղ, արջառներ
և ոչխարներ շատութեամբ. ո-
րովհետև ուրախութիւն կար Իս-
րայէլումը։

ԳԼ. ԺԳ

1 Եւ Դաւիթը խորհուրդ արաւ
հազարապետների և հարիւրա-
պետների և բոլոր իշխանների
2 հետ։ Եւ Դաւիթն ասեց բոլոր
Իսրայէլի ժողովքին. Եթէ ձեզ
հաճոյ է, և այս բանը մեր Տէր
Աստուածանից է, ընդհանրապէս
մարդիկ ուղարկենք Իսրայէլի բո-
լոր երկիրներում մնացած մեր
եղբայրներին և նորանց հետ քա-
հանաներին և Ղևտացիներին ի-
րանց քաղաքները և արուար-
ձանները, որ մեզ մօտ ժողով-
3 ուին։ Եւ մեր Աստուծոյ տապա-
նակը մեզ մօտ փոխադրենք. ո-
րովհետև Սաւուղի օրերովը նո-
4 րան չ՚ուզեցինք։ Եւ բոլոր ժո-
ղովքն ասեց, որ այնպէս անեն,
որովհետև այս խօսքը բոլոր ժո-
ղովրդի աչքին ուղիղ երևեցաւ։
5 Եւ Դաւիթը բոլոր Իսրայէլին ժո-
ղովեց Եգիպտոսի Սիովրից մինչև
Եմաթի մուտքը, Աստուծոյ տա-
պանակը Կարիաթարիմից բերե-
6 լու համար։ Եւ Դաւիթը վեր
գնաց բոլոր Իսրայէլի հետ Բաաղ
այսինքն Յուդայի Կարիաթարի-
մը, որ այնտեղից վեր բերէ քե-
րովբէների վերայ նստող Եհովայ
Աստուծոյ տապանակը, որի ա-
7 նունը կանչվում է։ Եւ Աստու-
ծոյ տապանակը դրին մի նոր
սայլի վերայ Աբինադարի տու-
նիցը. և Ոզան ու Աքիովը քը-
8 շում էին սայլը։ Եւ Դաւիթն ու
բոլոր Իսրայէլը խաղում էին բո-
լոր ուժով Աստուծոյ առաջին
օրհնութիւններով, քնարներով,
տաւիղներով, թմբուկներով,
ծնծղաներով և փողերով։
9 Եւ եկան մինչև Քիդոնի կալը. և
Ոզան իր ձեռքը մեկնեց որ տապա-
նակը բռնէ. որովհետև եղները
ծռել էին։ Եւ Տիրոջ բարկու- 10
թիւնը բորբոքուեց Ոզայի դէմ.
և զարկեց նորան, որովհետև
ձեռքը մեկնել էր տապանակին.
և նա մեռաւ այնտեղ Աստու-
ծոյ առաջին։ Եւ Դաւիթը տըրտ- 11
մեց, որովհետև Տէրը հարուա-
ծով հարուածեց Ոզային. և այն-
տեղի անունը մինչև այսօր *Փա-
րէս-ոզա է ասվում։ Եւ Դաւի- 12
թը վախեցաւ այն օրը Աստուա-
ծանից ասելով. Ես ի՞նչպէս տա-
նեմ Աստուծոյ տապանակը ինձ
մօտ։ Եւ Դաւիթը չ՚տարաւ տա- 13
պանակն իր մօտ Դաւիթի քա-
ղաքը, և ծռեց տարաւ Գէթացի
Աբդեդոմի տունը։ Եւ Աստու- 14
ծոյ տապանակը մնաց Աբդեդոմի
ընտանիքի հետ նորա տանը երեք
ամիս. և Տէրը օրհնեց Աբդեդոմի
տունը և նորա բոլոր ունեցածը։

ԳԼ. ԺԴ

Եւ Տիւրոսի Քիրամ թագաւո- 1
րը դեսպաններ ուղարկեց Դաւի-
թի մօտ, և եղևնափայտեր և
որմնադիրներ և հիւսեր, որ նո-
րա համար տուն շինեն։ Եւ Դա- 2
ւիթն իմացաւ, որ Տէրը նորան
թագաւոր հաստատեց Իսրայէլի
վերայ. որովհետև նորա թագա-
ւորութիւնը բարձրացաւ իր ժո-
ղովրդի Իսրայէլի պատճառով։
Եւ Դաւիթն ուրիշ կանայք 3
էլ առաւ Երուսաղէմում. և
Դաւիթը՝ էլ տղերք և աղջկերք
ծնեց։ Եւ սորանք են Երուսա- 4
ղէմում նորան ծնած տղերց ա-
նունները. Սամաա, Սովբաբ,
Նաթան, Սողոմոն, Յեբաար, Ե- 5
ղիսուա, Եղիփաղէտ, Նոգա, 6
Նափեկ, Յափիէ, Եղիսամա, 7
Բաղիադա և Եղիփաղէտ։
Եւ Փղշտացիները լսեցին, որ 8
Դաւիթը թագաւոր է օծուել
բոլոր Իսրայէլի վերայ, և բոլոր
Փղշտացիները վեր գնացին որ Դա-
ւիթին որոնեն, և Դաւիթը լսեց
ու դուրս եկաւ նորանց առաջը։
Եւ Փղշտացիները եկան և փըռ- 9

*Այսինքն՝ Ոզայի պատառուածք։

ուեցան Ռափայնոց հովտումը։
10 Եւ Դաւիթը հարցրեց Աստու-
ծուն թէ Վեր գնա՞մ Փղշտացի-
ների վերայ, և դու նորանց իմ
ձեռքը կ'մատնե՞ս։ Եւ Տէրն ա-
սեց նորան. Գնա, և ես նորանց
11 քո ձեռքը կ'մատնեմ։ Այն ժա-
մանակ գնացին Բաաղփարասին.
և Դաւիթը նորանց այնտեղ յաղ-
թեց, և Դաւիթն ասեց. Աստ-
ուած իմ թշնամիներին իր ձեռ-
քովը պատառեց ջրերի պատառ-
ուածքի պէս. նորա համար այն
տեղի անունը Բաաղփարասին ա-
12 ուեցաւ։ Եւ նորանք այնտեղ
ձգեցին իրանց աստուածները. և
Դաւիթը հրամայեց, և նորանք
այրեցին կրակով։
13 Եւ Փղշտացիները դարձեալ ե-
կան և փռուեցան հովտումը։
14 Եւ Դաւիթը դարձեալ հարցրեց
Աստուծուն, և Աստուած ասեց
նորան. Վեր մի' գնար նորանց ե-
տևից, դարձիր նորանց ետևից,
և նորանց վերայ գնա թթենինե-
15 րի կողմից։ Եւ երբոր թթենի-
ների գլխին գնացքի ձայնը լսես,
այն ժամանակ դուրս եկ պատե-
րազմի. որովհետև Աստուած պի-
տի դուրս գայ քո առաջից Փղշ-
տացիների բանակը զարկելու հա-
16 մար։ Եւ Դաւիթն այնպէս ա-
րաւ ինչպէս որ Տէրը հրամայեց
իրան, և զարկեցին Փղշտացինե-
րի բանակը Գաբաւոնից մինչև
17 Գազեր։ Եւ Դաւիթի անունը
հռչակուեցաւ ամեն երկիրնե-
րում, և Տէրը նորա վախը գցեց
ամեն ազգերի վերայ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ նա իր համար Դաւիթի քա-
ղաքումը տներ շինեց, և Աստու-
ծոյ տապանակի համար տեղ
պատրաստեց, և նորա համար մի
2 վրան գցեց։ Այն ժամանակ Դա-
ւիթն ասեց. Ուրիշ վեր չ'առնէ
Աստուծոյ տապանակը բացի Ղև-
տացիներից. որովհետև Տէրը նո-
րանց ընտրեց որ կրեն Աստուծոյ
տապանակը և նորան ծառայեն
յաւիտեան։

Եւ Դաւիթը ժողովեց բոլոր 3
Իսրայէլը Երուսաղէմ, որ Տի-
րոջ տապանակը վեր տանեն իր
տեղը, որ նորա համար պատ-
րաստեց։ Եւ Դաւիթը ժողովեց 4
Ահարոնի որդիներին և Ղևտա-
ցիներին. Կահաթի որդկանցից՝ 5
Ուրիէլ իշխանին և նորա եղբայր-
ներին հարիւր քսան։ Մերարիի 6
որդկանցից՝ Ասայիա իշխանին և
նորա եղբայրներին երկու հարիւր
քսան։ Գերսոնի որդկանցից՝ Յո- 7
վէլ իշխանին և նորա եղբայրնե-
րին հարիւր երեսուն։ Եղիսա- 8
փանի որդկանցից՝ Սեմայիա իշ-
խանին և նորա եղբայրներին եր-
կու հարիւր։ Քերրոնի որդկան- 9
ցից՝ Եղիէլ իշխանին և նորա եղ-
բայրներին ութսուն։ Ողիէլի որդ- 10
կանցից՝ Ամինադաբ իշխանին և
նորա եղբայրներին հարիւր տասն-
և երկու։
Եւ Դաւիթը կանչեց Սադովկ 11
և Աբիաթար քահանաներին և
Ղևտացիներից՝ Ուրիէլին, Ասա-
յիային, Յովէլին, Սեմայիային,
Եղիէլին և Ամինադաբին, Եւ նո- 12
րանց ասեց. Դուք էք Ղևտացի-
ների տոհմերի գլխաւորները. որ-
բեցէք ձեր անձերը դուք և ձեր
եղբարքը, որ Իսրայէլի Տէր Ա-
ստուծոյ տապանակը վեր տանէք
նորա համար իմ պատրաստած
տեղը։ Որովհետև սկզբումը դուք 13
չ'լինելու համար՝ մեր Տէր Աստ-
ուածը մեզ հարուած տուաւ,
որովհետև նորան չ'խնդրեցինք
ինչպէս որ կարգն է։ Եւ քահա- 14
նաներն և Ղևտացիներն որբեցին
իրանց անձերը Իսրայէլի Տէր Ա-
ստուծոյ տապանակը վեր տանե-
լու համար։ Եւ Ղևտացիների 15
որդիները վեր առան Աստուծոյ
տապանակը՝ ինչպէս որ Մովսէսը
Տիրոջ խօսքին համեմատ հրա-
մայել էր՝ իրանց ուսերի վերայ
ձողերով նորանց վերայ։
Եւ Դաւիթը պատուիրեց Ղև- 16
տացիների իշխաններին, որ իրանց
եղբայրներից կանգնեցնեն երգիչ-
ներ երգեցողութեան գործիքնե-
րով՝ տաւիղներով, քնարներով
և ծնծղաներով, որ բարձր ձայ-

նով երգեն ուրախութեան հա-
17 մար։ Եւ Ղևտացիները կանգ-
նեցրին Յովելի որդի Եմանին, և
նորա եղբայրներից Բարաքիայի
որդի Ասափին, և նորանց եղ-
բարք՝ Մերարիի որդկանցից Կիս-
18 եայի որդի Եթանին։ Եւ նորանց
հետ նորանց երկրորդ դասակար-
դի եղբայրներին՝ Զաքարիային,
Բենին, Յազիէլին, Սեմիրամով-
թին, Յեքիէլին, Ուննիին, Եղիա-
բին, Բանեային, Մաասիային,
Մատաթիային, Եղիփաղէին,
Մակենիային, Աբդեդոմին և Յէ-
19 իէլին որ դռնապաններ էին։ Եւ
Եման, Ասափ և Եթան երգիչնե-
րը՝ պղնձի ծնծղաները հնչեցնե-
20 լու համար. Եւ Զաքարիա, Ա-
զիէլ, Սեմիրամովթ, Յեքիէլ,
Ուննի, Եղիաբ, Մաասիա և Բան-
եա Ալամօթի վերայ տաւիղնե-
21 րով նուագելու համար։ Եւ Մա-
տաթիա, Եղիփաղէ, Մակենիա,
Աբդեդոմ, Յէիէլ և Ազազիա
քնարներով Շէմինիթով առաջ-
22 նորդելով։ Եւ Ղևտացիների *եր-
գեցողութեան իշխան Քոնոնիան
սովորեցնում էր †երգելը, որով-
23 հետև նա հանճարեղ էր։ Եւ
Բարաքիան և Եղկանան տապա-
24 նակի դռնապաններն էին։ Եւ
Սաբանիա, Յովսափատ, Նաթա-
նայէլ, Ամեսայի, Զաքարիա,
Բանեա և Եղիազար քահանաներ-
ը փողերը հնչեցնում էին Ա-
ստուծոյ տապանակի առաջը. և
Աբդեդոմ ու Յէիա տապանակի
դռնապաններն էին։
25 Այսպէս Դաւիթը և Իսրայէլի
ծերերը և հազարապետները գը-
նացին Տիրոջ ուխտի տապանակը
Աբդեդոմի տանիցն ուրախու-
26 թեամբ վեր տանելու։ Եւ երբոր
Աստուած Տիրոջ ուխտի տապա-
նակը կրող Ղևտացիներին օգ-
նեց, այն ժամանակ եօթը զուա-
27 րակ և եօթը խոյ զոհ արին։ Եւ
Դաւիթը բեհեզի պատմուճան էր
հագել, նոյնպէս և բոլոր Ղևտ-
ացիները որ կրում էին տապա-

*Կամ՝ բեռնակիրների
†Կամ՝ կրելը

նակը, և երգիչները, և ‡երգիչ-
ների գլխաւորը Քոնոնիա երգիչ-
ների հետ. և Դաւիթի վերայ
քթանի եփուդ կար։ Եւ բոլոր 28
Իսրայէլը վեր էր տանում Տիրոջ
ուխտի տապանակը ուրախու-
թեան աղաղակներով, շեփորի
ձայնով, փողերով և հնչեցնող
ծնծղաներով, տաւիղներով և
քնարներով։ Եւ երբոր Տիրոջ 29
ուխտի տապանակն եկաւ մինչև
Դաւիթի քաղաքը, այն ժամա-
նակ Սաւուղի աղջիկ Մեղքողը
մտիկ տուաւ պատուհանիցը ու
տեսաւ որ Դաւիթ թագաւորը
կաքաւում և զուարճանում էր,
և նա անարգեց նորան իր սրբ-
տումը։

ԳԼ. ԺԶ

Եւ Աստուծոյ տապանակը բե- 1
րին, և նորան դրին այն վրանի
մէջ, որ Դաւիթը կանգնեցրել
էր նորա համար. և ողջակէզներ
ու խաղաղութեան զոհեր մա-
տուցրին Աստուծոյ առաջը։ Եւ 2
երբոր Դաւիթը վերջացրեց ողջա-
կէզները և խաղաղութեան զո-
հերը մատուցանելը, այն ժամա-
նակ օրհնեց ժողովրդին Եհովայի
անունովը։ Եւ բաշխեց Իսրայէլի 3
բոլոր մարդկանցը՝ մարդից մինչև
կինը իւրաքանչիւրին մէկ նկա-
նակ հաց և մի կտոր միս և մէկ
կարկանդակ։
Եւ Տիրոջ տապանակի առաջը 4
Ղևտացիներիցը պաշտօնեաներ
դրաւ Իսրայէլի Տէր Աստուծուն
յիշելու, օրհնելու և փառաւո-
րելու համար։ Գլխաւորը Ասափ, 5
և նորա երկրորդը Զաքարիա, Յէ-
իէլ, Սեմիրամովթ, Յեքիէլ, Մա-
տաթիա, Եղիաբ, Բանեա, Աբ-
դեդոմ և Յէիէլ տաւիղների և
քնարների նուագարաններով. և
Ասափը հնչեցնող ծնծղաներով։
Եւ Բանեա ու Յազիէլ քահա- 6
նաները մշտական փողերով Ա-
ստուծոյ ուխտի տապանակի ա-
ռաջը։

‡Կամ՝ բեռնակիրների

7 Այն ժամանակ առաջին ան-
գամ Դաւիթը Տիրոջը օրհնելու
յանձնարարութիւնը արաւ Ասա-
փին և նորա եղբայրներին.
8 Գոհացէք Տէրիցը, կանչեցէք
նորա անունը.
Իմացրէք ժողովուրդների մէջ
նորա գործքերը։
9 Երգեցէք նորան, սաղմոսեցէք
նորան,
Մտածեցէք նորա ամեն սքան-
չելեաց վերայ։
10 Պարծեցէք նորա սուրբ անու-
նովը.
Տիրոջը խնդրողների սիրտն ու-
րախանայ։
11 Տիրոջը խնդրեցէք և նորա զօրու-
թիւնը.
Միշտ նորա երեսը որոնեցէք։
12 Յիշեցէք նորա հրաշքները որ ա-
րաւ,
Նորա նշանները և նորա բերանի
իրաւունքը։
13 Ով նորա Իսրայէլ ծառայի զա-
ւակներ,
Նորա ընտրեալք՝ Յակոբի որդիք.
14 Ինքը Եհովան է մեր Աստուածը,
Նորա իրաւունքները ամեն երկ-
րում կան։
15 Յիշեցէք յաւիտեան նորա ուխտը,
Իր պատուիրած խօսքը մինչև հա-
զար ազգ,
16 Այն որ ուխտեց Աբրահամի հետ,
Եւ իր երդումը՝ Իսահակի հետ.
17 Եւ հաստատեց, որ Յակոբի հա-
մար օրէնք՝
Եւ Իսրայէլի համար յաւիտե-
նական ուխտ լինի.
18 Ասելով. Քեզ կ'տամ Քանանի
երկիրը,
Ձեր ժառանգութեան վիճակը.
19 Երբոր դուք սակաւաթիւ էիք
Եւ քիչ ու պանդուխտ՝ նորա-
նում,
20 Եւ ազգից ազգ էին գնում,
Եւ մէկ թագաւորութիւնից ու-
րիշ ժողովրդի մօտ.
21 Նա մի մարդի թոյլ չ'տուաւ,
որ նորանց նեղացնեն,
Եւ թագաւորներ պատժեց նո-
րանց համար,
22 Թէ Մի մօտենաք իմ օծեալներ-
ին,
Եւ իմ մարգարէներին չար բան
մի անէք։
Երգեցէք Տիրոջը, ով բոլոր 23
երկիր,
Քարոզեցէք օրից օր նորա փրկու-
թիւնը.
Պատմեցէք ազգերի մէջ նորա 24
փառքը,
Ամեն ժողովուրդների մէջ՝ նորա
հրաշքները։
Որովհետև Տէրը մեծ է և շատ 25
օրհնուած,
Եւ ահաւոր է նա ամեն աստ-
ուածների վերայ։
Որովհետև ազգերի բոլոր աստ- 26
ուածները կուռքեր են,
Բայց Եհովան արաւ երկինքը։
Փառք և մեծութիւն կայ նորա 27
առաջը,
Զօրութիւն և ուրախութիւն՝ նո-
րա բնակարանումը.
Տիրոջը տուէք, ով ազգերի ցե- 28
ղեր,
Տիրոջը տուէք փառք և զօրու-
թիւն։
Տիրոջը տուէք նորա անուան փառ- 29
քը,
Ընծայ բերէք և մտէք նորա ա-
ռաջը,
Երկրպագեցէք Տիրոջը սուրբ զար-
դարանքով։
Վախեցէք նորա երեսիցը, ով ա- 30
մեն երկիրներ,
Եւ աշխարհքը հաստատ է ա-
ռանց սասանման։
Երկինքը թող ուրախանայ և եր- 31
կիրը ցնծայ,
Եւ ասեն ազգերի մէջ, թէ Տէրը
թագաւոր է.
Ծովը գոռգոռայ իր լիութիւնովը, 32
Ուրախանայ դաշտը և բոլոր նո-
րա մէջ եղողը։
Այն ժամանակ ցնծան անտառի 33
ծառերը
Տիրոջ առաջը, որովհետև գալիս
է երկիրը դատելու։
Գոհացէք Տէրիցը որ բարի է, 34
Որ նորա ողորմութիւնը յաւիտ-
եան է։
Եւ ասեցէք. Փրկիր մեզ, ով 35
մեր փրկութեան Աստուածը,
Եւ մեզ ժողովիր և մեզ ազա-
տիր ազգերիցը,

Որ գոհանանք քո սուրբ անունից,
Եւ պարծենանք քո օրհնութիւ-
նովը։
36 Օրհնեալ է Եհովան Իսրայէլի
Աստուածը
Յաւիտենից մինչև յաւիտեան։
Եւ բոլոր ժողովուրդն ասեց՝
Ամէն, և օրհնեց Տիրոջը։
37 Եւ այնտեղ Տիրոջ ուխտի տա-
պանակի առաջը թողեց Ասափին
և նորա եղբայրներին միշտ տա-
պանակի առաջը պաշտօն կա-
38 տարելու օր ըստ օրէ, Եւ Աբ-
դեդօմին և նորա եղբայրներին
վաթսունևութ հոգի, և Իդի-
թունի որդի Աբդեդօմին և Ու-
39 սային՝ դռնապաններ արաւ։ Եւ
Սադովկ քահանային և նորա եղ-
բայրներին՝ քահանաներ Տիրոջ
բնակարանի առաջը Գաբաւո-
40 նում եղող բարձր տեղումը. Որ
Տիրոջը ողջակէզներ մատուցանեն
ողջակէզի սեղանի վերայ միշտ
առաւօտ և իրիկուն, և կատարեն
Տիրոջ օրէնքումը գրուած այն
ամենը, որ հրամայեց Իսրայէ-
41 լին։ Եւ նորանց հետ Եմանին և
Իդիթունին և մնացեալ ընտ-
րուածներին, որ անուանի էին,
որ Տէրիցը գոհանան. որովհետև
նորա ողորմութիւնը յաւիտեան
42 է։ Եւ նորանց հետ Եմանը և
Իդիթունը՝ փողերով և ծնծղա-
ներով հնչեցնելու համար, և Ա-
ստուծոյ նուագարաններովը. իսկ
Իդիթունի որդկանցը դրաւ դռան
43 վերայ։ Եւ բոլոր ժողովուրդը
գնաց ամեն մէկն իր տունը. և
Դաւիթը ետ դառաւ իր տունն
օրհնելու։

ԳԼ. ԺԷ

1 Եւ երբոր Դաւիթը բնակուեց
իր տանը, այն ժամանակ Դաւիթն
ասեց Նաթան մարգարէին. Ա-
հա ես բնակվում եմ եղևնա-
փայտի տան մէջ և Տիրոջ ուխ-
տի տապանակը վրանի տակ է։
2 Եւ Նաթանն ասեց Դաւիթին.
Բոլոր սրտումդ եղածը արա, ո-
րովհետև Աստուած քեզ հետ է։
3 Եւ նոյն գիշերը եղաւ Տիրոջ խօս-
քը Նաթանին՝ ասելով. Գնա և 4
ասիր իմ Դաւիթ ծառային. Տէրն
այսպէս է ասում. Դու չես շի-
նիլ ինձ համար բնակուելու տուն.
Որովհետև Իսրայէլի որդիքը Ե- 5
գիպտոսիցը հանած օրիցս մինչև
այս օրը տան մէջ չ'բնակուեցի,
այլ գնացել եմ վրանից վրան և
խորանից խորան։ Որչափ տեղ որ 6
ման եկայ Իսրայէլի բոլոր որդ-
կանց հետ՝ մի՞թէ մէկ բան խօ-
սեցի Իսրայէլի դատաւորների մէ-
կի հետ, որոնց հրամայել եմ իմ
ժողովուրդ Իսրայէլին հովուել,
ասելով թէ Ի՞նչու համար ինձ
եղևնափայտի տուն չ'շինեցիք։
Եւ հիմա այսպէս ասիր իմ ծա- 7
ռայ Դաւիթին. Այսպէս է ա-
սում Զօրաց Տէրը. Ես քեզ առի
փարախիցը, ոչխարների ետևիցը
որ իմ Իսրայէլ ժողովրդի վերայ
առաջնորդ լինիս։ Եւ քեզ հետ 8
էի ուր որ գնում էիր, և քո ա-
ռաջիցը բոլոր թշնամիներիդ կո-
տորեցի, և երկրիս վերայ եղող
մեծերի անուան պէս քո անունը
մեծացրի։ Եւ իմ Իսրայէլ ժո- 9
ղովրդի համար մի տեղ որոշեցի
և նորան տնկեցի, և իր տեղը բը-
նակվում է, և այլ ևս պիտի
չ'շարժուի. և անիրաւութեան
որդիքը առաջուայ պէս այլ ևս
պիտի չ'տանջեն. Ինչպէս որ Ե- 10
ղաւ իմ ժողովուրդ Իսրայէլի վե-
րայ դատաւորներ դրած օրիցս
ի վեր. և ես նուաճելու եմ քո
բոլոր թշնամիներին, և քեզ ի-
մացնում եմ, թէ Տէրն է քեզ
համար տուն շինելու։ Եւ երբոր 11
քո օրերը կ'լրանան որ գնաս քո
հայրերի հետ, այն ժամանակ
քեզանից յետոյ քո սերունդին
որ քո որդիներիցը կ'լինի՝ կ'բարձ-
րացնեմ և կ'հաստատեմ նորա
թագաւորութիւնը։ Նա կ'շինէ 12
ինձ համար տուն, և ես նորա ա-
թոռը պիտի հաստատեմ մինչև
յաւիտեան։ Ես նորան հայր կ'լի- 13
նիմ, և նա ինձ որդի կ'լինի. և
իմ ողորմութիւնը ետ չեմ քա-
շիլ նորանից, ինչպէս որ նորա-
նից ետ քաշեցի որ քեզանից ա-
ռաջ էր։ Եւ նորան պիտի հաս- 14

տատեմ իմ տանը և իմ թագա-
ւորութեան մէջ մինչև յաւիտ-
եան. և նորա աթոռը յաւիտ-
15 եան պիտի լինի։ Եւ Նաթանն
այս բոլոր խօսքերը և բոլոր այս
տեսիլքը այսպէս ասեց Դաւի-
թին։
16 Եւ Դաւիթ թագաւորը գնաց՝
Տիրոջ առաջը նստեց և ասեց.
Ես ո՞վ եմ, ով Տէր Աստուած,
և ո՞վ է իմ տունը, որ ինձ բե-
17 րիր մինչև այստեղ։ Սակայն այս
էլ պզտիկ երևեցաւ քո աչքե-
րին, ով Աստուած, և քո ծա-
ռայի տան վերայով հեռաւոր
ժամանակի համար խօսեցիր. և
ինձ մտիկ տուիր՝ բարձրաստի-
ճան մարդի եղանակով, ով Տէր
18 Աստուած։ Էլ ի՞նչ աւելացնէ
Դաւիթը քեզ՝ ծառադ պատուե-
լուդ համար. և դու ճանաչում
19 ես քո ծառային։ Ով Տէր, այս
բոլոր մեծ բաները քո ծառայի
համար և քո սրտի համեմատ ա-
րիր, որ իմացնես այս բոլոր մե-
20 ծամեծ բաները։ Ով Տէր, չ՛կայ
քեզ նման Ֆէլը, և քեզանից ջոկ
Աստուած չ՛կայ՝ մեր ականջնե-
21 րովը բոլոր մեր լսածին պէս։ Եւ
ո՞ր ազգն է երկրիս վերայ քո
մէկ հատ ժողովուրդ Իսրայէլին
պէս, որի համար ինքն Աստուած
գնաց իր համար ժողովուրդ փրը-
կելու, որ քեզ համար մեծամեծ
և զարհուրելի գործքերով անուն
հաստատես՝ քո ժողովրդի առա-
ջից ազգեր քշելով, որին դու
22 փրկեցիր Եգիպտոսից։ Եւ քո ժո-
ղովուրդ Իսրայէլին քեզ համար
ժողովուրդ շինեցիր յաւիտեան.
և դու, ով Տէր, նորանց Աստ-
23 ուած եղար։ Եւ հիմա, ով Տէր,
թող այս խօսքը, որ ասել ես քո
ծառայի համար և նորա տան
համար, հաստատուի յաւիտեան.
24 և արա ինչպէս որ ասել ես։ Որ
քո անունը հաստատ և մեծ լինի
յաւիտեան, որ ասեն. Զօրաց
Տէրը Իսրայէլի Աստուածը Իս-
րայէլին Աստուած է, և քո ծա-
ռայի՝ Դաւիթի տունը մնայ քո
25 առաջին։ Որովհետև դու, ով
Աստուած, քո ծառայի ականջին
յայտնեցիր, թէ իր համար տուն
պիտի շինես, սորա համար քո
ծառան սիրտ արաւ այս աղօթքը
քեզ անելու։ Եւ հիմա, ով Տէր, 26
դու ես այն Աստուածը, որ խօ-
սեցիր քո ծառայի համար այս
բարիքը։ Եւ հիմա բարեհաճիր 27
քո ծառայի տունը օրհնելու, որ
յաւիտեան քո առաջին լինի. ո-
րովհետև դու օրհնեցիր, ով Տէր,
և նա օրհնեալ է յաւիտեան։

ԳԼ. ԺԸ

Եւ նորանից յետոյ եղաւ որ Դա- 1
ւիթը զարկեց Փղշտացիներին և
նուաճեց նորանց և առաւ Փղշ-
տացիների ձեռքից Գէթը և նո-
րա գիւղերը։ Նաև զարկեց Մո- 2
վաբին. և Մովաբացիները հար-
կատու ծառաներ եղան Դաւի-
թին։ Նաև զարկեց Դաւիթը 3
Սուբայի թագաւոր Ադրազարին
Եմաթում, երբոր գնում էր իր
իշխանութիւնը Եփրատ գետի վե-
րայ հաստատելու։ Եւ Դաւիթը 4
նորանից հազար կառք և եօթը
հազար ձիաւոր և քսան հազար
հետևակ զօրք բռնեց. և Դաւի-
թը ջարդեց բոլոր կառքերը, և
նորանցից թողեց հարիւր կառք։
Եւ Դամասկոսի Ասորիները եկան 5
Սուբայի թագաւոր Ադրազարին
օգնութիւն անելու. և Դաւիթն
Ասորիներից քսանևերկու հազար
մարդ զարկեց։ Եւ Դաւիթը պա- 6
հապաններ դրաւ Դամասկոսի Ասո-
րիքում, և Ասորիքը Դաւիթին
եղաւ իբրև հարկատու ծառա-
ներ. և Տէրը օգնում էր Դաւի-
թին, ամեն ուր որ նա գնար։
Եւ Դաւիթն առաւ Ադրազարի 7
ծառաների վերայ եղած ոսկի վա-
հանները և Երուսաղէմ բերաւ
նորանց։ Եւ Ադրազարի քաղաք- 8
ներից՝ Տեբաթից և Քունից Դա-
ւիթը խիստ շատ պղինձ առաւ.
որից Սողոմոնը պղնձի ծովը, և
սիւները և պղնձի անօթները շի-
նեց։
Եւ երբոր Եմաթի թագաւոր 9
Թովուն լսեց, թէ Դաւիթը ջար-
դեց Սուբայի թագաւոր Ադրա-

10 զարի բոլոր զօրքերին, Այն ժա-
մանակ նա իր որդի Ադորամին
Դաւիթ թագաւորի մօտ ուղար-
կեց, որ նորա առողջութիւնը
հարցնէ և նորան շնորհաւորէ,
որ Ադրազարի հետ պատերազ-
մեց և նորան յաղթեց. որովհե-
տև Ադրազարի հետ պատերազմ-
ներ էր ունեցել Թովուն. և ա-
մեն տեսակ ոսկիի, արծաթի և
11 պղնձի անօթներ ուղարկեց։ Դա-
ւիթ թագաւորը սորանց էլ նուի-
րեց Տիրոջը այն արծաթի և ոս-
կիի հետ որ առել էր բոլոր ազ-
գերիցը՝ Եդովմից, Մովաբից, Ամ-
մոնի որդկանցից, Փղշտացիներից
12 և Ամաղէկից։ Եւ Շարուհեայի
որդի Աբեսսան Աղի ձորումը
տասնևութը հազար մարդ ջար-
դեց Եդովմացիներից։
13 Եւ Եդովմի մէջ պահապաններ
դրաւ, և բոլոր Եդովմացիները
Դաւիթին ծառայ եղան։ Եւ Տէ-
րը օգնում էր Դաւիթին, ամեն
ուր որ նա գնար։
14 Եւ Դաւիթը թագաւորութիւն
արաւ բոլոր Իսրայէլի վերայ. և
իրաւունք ու արդարութիւն էր
15 անում իր բոլոր ժողովրդին։ Եւ
Շարուհեան Յովաբը զօրքերի վե-
րայ էր, և Աքիղուդի որդի Յով-
սափատը յիշատակաց դպիր էր։
16 Եւ Աքիտովբի որդի Սադովկը և
Աբիաթարի որդի Աբիմելէքը քա-
հանաներ էին, և Սուսան ատե-
17 նագպիր էր. Եւ Յովիադայի որ-
դի Բանեան Քերեթիների և Փե-
լեթիների վերայ էր. և Դաւիթի
որդիքը նախարարներ էին թա-
գաւորի կշտին։

ԳԼ. ԺԹ

1 Եւ նորանից յետոյ եղաւ որ
Ամմոնի որդկանց թագաւոր Նա-
ասը մեռաւ, և նորա որդին թա-
2 գաւոր եղաւ նորա տեղ։ Եւ
Դաւիթն ասեց. Նաասի որդի
Անոնին մարդասիրութիւն անեմ,
որովհետև նորա հայրն ինձ մար-
դասիրութիւն արաւ. և Դաւի-
թը դեսպաններ ուղարկեց որ
նորան մխիթարեն իր հօր մասին.
և Դաւիթի ծառաները գնացին
Ամմոնի որդկանց երկիրը Անոնի
մօտ նորան մխիթարելու։ Եւ 3
Ամմոնի որդկանց իշխաններն ա-
սեցին Անոնին. Մի՞թէ Դաւիթը
մեծարում է քո հօրը քո աչքի
առաջին, որ քեզ համար մխի-
թարիչներ է ուղարկել. չէ՞ որ
Դաւիթն իր ծառաներին քեզ
մօտ ուղարկեց այս երկիրը քըն-
նելու, տակն ի վերայ անելու և
լրտեսելու։ Եւ Անոնն առաւ 4
Դաւիթի ծառաներին և նորանց
ածիլեց և կտրեց նորանց հան-
դերձների կէսը մինչև նստելա-
տեղը, և արձակեց նորանց։ Եւ 5
գնացին ու պատմեցին Դաւիթին
այն մարդկանց մասին, և նա
մարդ ուղարկեց նորանց դիմաւո-
րելու. որովհետև այն մարդիկը
շատ անարգուել էին. և թա-
գաւորն ասեց. Մնացէք Երիքով
մինչև որ ձեր մօրուքը աճէ, և
յետոյ դարձէք։
Եւ Ամմոնի որդիքը տեսան, որ 6
Դաւիթի հետ իրանց բանը վատ
է. և Անոնն ու Ամմոնի որդիքը
հազար տաղանդ արծաթ ուղար-
կեցին Միջագետաց Ասորիներից
և Մաաքայի Ասորիներից և Սու-
բայից կառքեր և ձիաւորներ
վարձելու։ Եւ նորանք իրանց 7
համար վարձեցին երեսունևերկու
հազար կառք և Մաաքայի թա-
գաւորին ու նորա ժողովրդին, և
եկան բանակ տուին Մեդաբայի
առաջին. և Ամմոնի որդիքն էլ
իրանց քաղաքներիցը ժողովուե-
ցան և եկան պատերազմի։
Եւ երբոր Դաւիթը լսեց, Յո- 8
վաբին և բոլոր քաջազուն զօր-
քերին ուղարկեց։ Ամմոնի որ- 9
դիքն էլ դուրս եկան և քաղա-
քի մուտքին մօտ պատերազմի
շարուեցան. իսկ այն եկող թա-
գաւորները առանձին էին դաշ-
տումը։ Եւ Յովաբը տեսաւ որ 10
պատերազմը առաջիցն ու ետևի-
ցը իր վերայ է հասնում, Իսրա-
յէլի ընտիրներիցը ընտրեց և Ա-
սորիների դէմ պատերազմի շա-
րեց։ Իսկ մնացած զօրքը իր եղ- 11
բօրը՝ Աբեսսային յանձնեց. և նո-

բանք շարուեցան Ամմոնի որդ-
12 կանց դէմ. Եւ ասեց. Եթէ
Ասորիները ինձ յաղթելու լինին,
ինձ օգնութեան հասնես. իսկ
եթէ Ամմոնի որդիքը քեզ յաղ-
թելու լինին, ես քեզ կ'օգնեմ։
13 Քաջասիրտ եղիր և քաջանանք
մեր ժողովրդի համար և մեր Ա-
ստուծոյ քաղաքների համար. իսկ
Տէրն անէ իր աչքին հաճոյ ե-
14 ղածը։ Եւ Յովաբն իր հետ ե-
ղող զօրքովն Ասորիներին մօտե-
ցաւ պատերազմով, և նորանք
15 փախան նորա առաջիցը։ Եւ
երբոր Ամմոնի որդիքը տեսան, որ
Ասորիները փախան, նորանք էլ
փախան նորա եղբօր Աբեսայի
առաջիցը և մտան քաղաքը։ Եւ
Յովաբն եկաւ Երուսաղէմ։
16 Եւ երբոր Ասորիները տեսան,
որ իրանք Իսրայէլի առաջին կո-
տորուեցան, դեսպաններ ուղար-
կեցին և Գետի այն կողմին եղող
Ասորիներին ոտք հանեցին, և նո-
րանց առաջիցը Ադրազարի զօ-
17 րագլուխը՝ Սովբակ։ Եւ երբոր
Դաւիթին պատմեցին, այն ժա-
մանակ ժողովեց բոլոր Իսրայէլին,
Յորդանանիցն անցաւ, եկաւ նո-
րանց հասաւ և շարուեցան նո-
րանց դէմ. և Դաւիթն Ասորի-
ների դէմ պատերազմ կազմեց
և պատերազմեց նորանց հետ։
18 Եւ Ասորիները փախան Իսրայէլի
առաջիցը. և Դաւիթը փչացրեց
Ասորիներից եօթը հազար կառ-
քեր և քառասուն հազար հե-
տեւակ զօրք. և զօրագլուխ Սով-
19 բակին սպանեց։ Եւ երբոր Ադ-
րազարի ծառաները տեսան, որ
կոտորուեցան Իսրայէլի առաջին,
այն ժամանակ խաղաղութիւն ա-
րին Դաւիթի հետ և նորան ծա-
ռայ եղան։ Եւ Ասորիները չ'ու-
զեցին Ամմոնի որդկանց այլ ևս
օգնել։

ԳԼ. Ի

1 Եւ եղաւ հետեւեալ տարին, որ
թագաւորները պատերազմի դուրս
գալու ժամանակին, Յովաբը
դուրս հանեց զինուորաց զօրքը
և աւերակ արաւ Ամմոնի որդ-
կանց երկիրը, և եկաւ պաշարեց
Ռաբբան. Դաւիթն էլ բնակվում
էր Երուսաղէմում։ Եւ Յովաբը
զարկեց Ռաբբան և նորան կոր-
ծանեց։ Եւ Դաւիթն առաւ նո- 2
րանց թագաւորի թագը նորա
գլխիցը, և գտաւ որ ծանրու-
թեամբ մի տաղանդ ոսկի էր նա,
և նորանում պատուական ակունք
կային, և դա դրուեցաւ Դաւի-
թի գլխին. և նա խիստ շատ ա-
ւար առաւ այն քաղաքից։ Եւ նո- 3
րանում եղած ժողովրդին դուրս
հանեց և սղոցեց սղոցով, երկա-
թի կամնասայլերով և տապար-
ներով. և Դաւիթն այսպէս ա-
րաւ Ամմոնի որդկանց բոլոր քա-
ղաքներին։ Եւ Դաւիթն ու բոլոր
ժողովուրդը բնակուեցին Երու-
սաղէմում։
Եւ սորանից յետոյ եղաւ որ 4
պատերազմ եղաւ Գազերում
Փղշտացիների հետ. այն ժամա-
նակ Ովսացի Սովբաքը զարկեց
Ռափայի որդկանցից եղող Սե-
փիային և նորանց նուաճեց։
Եւ կրկին պատերազմ եղաւ 5
Փղշտացիների հետ. և Յայիրի
որդի Ելէանանը զարկեց Գէթա-
ցի Գողիաթի եղբօր Ղէեմիին,
որի նիզակի բունը ոստայնանկաց
գլանին պէս էր։
Եւ կրկին պատերազմ եղաւ 6
Գէթում, ու մի երկայնահասակ
մարդ կար, որի մատերը վեց վեց
լինելով՝ քսանեւչորս էին, նա էլ
էր Ռափայի ծնունդիցը։ Եւ նա 7
նախատեց Իսրայէլին, բայց նո-
րան զարկեց Դաւիթի եղբօր Սա-
մայի որդի Յովնաթանը։ Սորանք 8
ծնուել էին Ռափայից Գէթու-
մը, և վայր ընկան Դաւիթի և
նորա ծառաների ձեռովը։

ԳԼ. ԻԱ

Եւ սատանան Իսրայէլի դէմ 1
կանգնեց և գրգռեց Դաւիթին,
որ Իսրայէլին համարէ։ Եւ Դա- 2
ւիթն ասեց Յովաբին և ժողովրդի
իշխաններին. Գնացէք համարե-
ցէք Իսրայէլացիներին Բերսաբէ-

էից մինչև Դան, և հաշիւն ինձ
մօտ բերէք որ իմանամ նորանց
3 թիւը։ Եւ Յովաբն ասեց. Տէրն
աւելացնէ իր ժողովրդի վերայ
նորանց չափ հարիւրապատիկ.
չէ՞ որ, ով տէր իմ թագաւոր,
նորանք ամենը իմ տիրոջ ծա-
ռաներն են. ի՞նչու համար է իմ
տէրը փափաքում դորան, ի՞նչու
համար այս բանը Իսրայէլի հա-
4 մար յանցանք դառնայ։ Սակայն
թագաւորի խօսքը սաստկացաւ
Յովաբի վերայ. և Յովաբը դուրս
գնաց և ման եկաւ բոլոր Իսրա-
յէլի մէջ և եկաւ Երուսաղէմ։
5 Եւ Յովաբը ժողովրդի համա-
րանքի թիւը տուաւ Դաւիթին.
և բոլոր Իսրայէլն էր հազար ան-
դամ հազար և հարիւր հազար
սուր քաշող մարդ. և Յուդան
չորս հարիւր եօթանասուն հա-
6 զար սուր քաշող մարդ. Եւ Ղև-
տացիներին ու Բենիամինեաններ-
ին չէր համարել նորանց մէջ.
որովհետև թագաւորի այս հրա-
մանը զզուելի էր Յովաբին։
7 Եւ այս բանը վատ երևեցաւ
Աստուծոյ աչքին, և նա պա-
8 տուհասեց Իսրայէլին։ Եւ Դա-
ւիթն ասեց Աստուծուն. Ես շատ
մեղանչեցի որ այս բանն արի. և
հիմա աղաչում եմ ներիր քո
ծառայի յանցանքը. որովհետև
մեծ յիմարութիւն արի։
9 Եւ Տէրը խօսեց Դաւիթի տե-
10 սանող՝ Գադի հետ ասելով. Գնա
խօսիր Դաւիթի հետ ասելով.
Այսպէս է ասում Տէրը. Երեք
բան եմ դնում առաջիդ, ընտ-
րիր քեզ համար նորանցից մէկը,
11 որ քեզ համար անեմ։ Եւ Գա-
դը եկաւ Դաւիթի մօտ և ասեց
նորան. Այսպէս է ասում Տէրը.
12 Ընտրիր քեզ համար, կամ երեք
տարի սով, կամ երեք ամիս թշ-
նամիներիդ առաջին ջարդուիլ,
և քո թշնամիների սուրը քեզ
հասնէ, և կամ երեք ամիս Տի-
րոջ սուրը՝ այսինքն ժանտախտ
երկրի մէջ, որ Տիրոջ հրեշտակը
փչացնէ Իսրայէլի բոլոր սահման-
ներումը, և հիմա տես, թէ ինչ
պատասխան տանեմ ինձ ուղար-
կողին։ Եւ Դաւիթն ասեց Գա- 13
դին. Ես շատ նեղութեան մէջ
եմ. թող Տիրոջ ձեռքն ընկնեմ.
որովհետև նորա ողորմութիւնը
խիստ շատ է. և ես մարդի ձեռք
չեմ ընկնիլ։ Եւ Տէրը ժանտախտ 14
ուղարկեց Իսրայէլի մէջ, և Իս-
րայէլիցն եօթանասուն հազար
մարդ ընկաւ։ Եւ Աստուած մի 15
հրեշտակ ուղարկեց Երուսաղէմ,
նորան փչացնելու համար. և նա
փչացնելիս՝ Տէրը տեսաւ և ստրջա-
ցաւ այս չարիքի վերայ և կոտո-
րած անող հրեշտակին ասեց.
Բաւական է՝ հիմա ձեռքդ ետ
քաշիր։ Եւ Տիրոջ հրեշտակը
կանգնել էր Յեբուսացի Ռնայի
կալին մօտ։ Եւ Դաւիթը բարձ- 16
րացրեց իր աչքերը և տեսաւ Տի-
րոջ հրեշտակին կանգնած երկրի
և երկնքի մէջտեղը և իր սուրը
քաշած իր ձեռին մեկնած Երու-
սաղէմի վերայ. այն ժամանակ
վայր ընկան իրանց երեսի վերայ
Դաւիթը և ծերերը քուրձ հա-
գած։ Եւ Դաւիթն ասեց Աստու- 17
ծուն. Ահա ես եմ հրամայել,
որ ժողովուրդը համարեն, և ես
եմ որ մեղանչեցի և չարութիւն
գործեցի. իսկ այս ոչխարները
ի՞նչ են արել. աղաչում եմ,
թող ձեռքդ ինձ վերայ և իմ
հօր տան վերայ լինի. և ոչ թէ
քո ժողովրդի վերայ նորան ընա-
ջինջ անելու։
Եւ Տիրոջ հրեշտակն ասեց Գա- 18
դին, որ Դաւիթին ասէ. Որպէս
զի նա վեր գնայ և Տիրոջ համար
մի սեղան կանգնեցնէ Յեբուսացի
Ռնայի կալումը։ Եւ Դաւիթը 19
վեր գնաց Գադի խօսքովը, որ նա
խօսեց Տիրոջ անունովը։ Եւ Ռ- 20
նան ետ դառաւ և տեսաւ հրեշ-
տակը. բայց նորա չորս որդիքը
նորա հետ թաք կացան. և Ռ-
նան կալումը ցորեն էր կասում։
Եւ Դաւիթն եկաւ Ռնայի մօտ, 21
և Ռնան նայեց ու տեսաւ Դա-
ւիթին և դուրս եկաւ կալիցը և
երկրպագեց թագաւորին իր ե-
րեսի վերայ մինչև գետինը։ Եւ 22
Դաւիթն ասեց Ռնային. Այս
կալի տեղը ինձ տուր, որ նորա-

նում մի սեղան շինեմ Տիրոջ հա-
մար. լիքը գնով տուր ինձ այն.
և հարուածը կ'դադարէ ժողո-
23 վրդիցը։ Եւ Ռանան ասեց Դա-
ւիթին. Վեր առ քեզ համար,
և թող իմ տէր թագաւորը անէ
իր աչքին հաճելին. ահա տուի
եզները ողջակէզի համար և կամ-
նասայլերը փայտի համար և ցո-
րենը հացի նուէրի համար, բո-
24 լորն էլ տուի։ Բայց Դաւիթ թա-
գաւորն ասեց Ռանային. Ոչ՝ այլ
լիքը գնով ծախու պիտի առնեմ.
որովհետև ես քո ստացուածքը
Տիրոջը չեմ մատուցանիլ և ձրի
25 ողջակէզ չեմ մատուցանիլ։ Եւ
Դաւիթը այն տեղի համար Ռա-
նային կշիռքով վեց հարիւր
26 սիկղ ոսկի տուաւ։ Եւ Դաւիթն
այնտեղ սեղան շինեց Տիրոջ հա-
մար և ողջակէզ ու խաղաղու-
թեան զոհեր մատուցրեց, և
կանչեց Տիրոջը, և նա նորան
պատասխան տուաւ երկնքիցը ող-
ջակէզի սեղանի վերայ ուղար-
27 կած կրակով։ Եւ Տէրն ասեց
հրեշտակին, և հրեշտակն ետ դար-
ձրեց իր սուրը պատեանի մէջը։
28 Այն ժամանակ երբոր Դաւի-
թը տեսաւ, որ Տէրը նորան պա-
տասխան տուաւ Յեբուսացի Ռա-
նայի կալումը, այնտեղ զոհ մա-
29 տուցրեց։ Բայց Տիրոջ խորանը,
որ Մովսէսը շինել էր անապա-
տումը, և ողջակէզի սեղանը Գա-
բաւոնի բարձրաւանդակումն էին։
30 Սակայն Դաւիթը չ'կարողացաւ
գնալ նորա առաջը Աստուծուն
հարցնելու համար. որովհետև
զարհուրում էր Տիրոջ հրեշտա-
կի սուրի երեսիցը։

ԳԼ. ԻԲ

1 Եւ Դաւիթն ասեց. Սա է Տէր
Աստուծոյ տունը, և սա է Իս-
րայէլի համար ողջակէզի սեղանը։
2 Եւ Դաւիթը հրամայեց ժողո-
վել այն օտարազգիներին, որ Իս-
րայէլի երկրումն էին. և քարա-
հատներ դրաւ տաշած քարեր
կտրելու որ Աստուծոյ տունը շի-
3 նեն։ Եւ Դաւիթը շատ երկաթ
պատրաստեց դռների փեղկերի
բևեռների համար և ճանկերի
համար, և շատ պղինձ՝ որ կշիռ
չ'ունէր։ Եւ եղևնափայտեր որ 4
թիւ չ'ունէին. որովհետև Սիդո-
նացիք և Տիւրացիք Դաւիթի հա-
մար շատ եղևնափայտեր էին բե-
րում։
Եւ Դաւիթն ասեց. Իմ որդի 5
Սողոմոնը երեխայ է և փափուկ
է. և այն տունը, որ պէտք է շի-
նել Տիրոջ համար, պիտի մեծա-
ցնել մինչև բարձրը որ անուանի
և փառաւոր լինի ամեն երկիրնե-
րի մէջ. հիմա ես նորա համար
նիւթեր պատրաստեմ. և Դաւի-
թը շատ նիւթեր պատրաստեց իր
մեռնելուց առաջ։ Եւ կանչեց 6
իր որդի Սողոմոնին և պատուի-
րեց նորան որ մի տուն շինէ Իս-
րայէլի Տէր Աստուծուն համար։
Եւ Դաւիթն ասեց Սողոմոնին. 7
Որդեակ իմ, ես որտումս դրել
էի որ մի տուն շինեմ իմ Տէր
Աստուծոյ անուան համար։ Բայց 8
Տիրոջ խօսքն եղաւ ինձ ասելով.
Դու շատ արիւն ես թափել և
մեծ մեծ պատերազմներ ես ա-
րել, դու պիտի տուն չ'շինես իմ
անուան համար. որովհետև դու
շատ արիւններ ես թափել դե-
տինը իմ առաջը։ Ահա քեզ մի 9
որդի կ'ծնուի, նա հանգստու-
թեան մարդ կ'լինի, և ես նորան
կ'հանգստացնեմ իր բոլոր թշնա-
միներիցը շուրջանակի. որովհետև
նորա անունը *Սողոմոն կ'լինի, և
ես խաղաղութիւն և հանդար-
տութիւն պիտի տամ Իսրայէլին
նորա օրերումը։ Նա կ'շինէ մէկ 10
տուն իմ անուան համար, և նա
ինձ համար որդի կ'լինի, և ես
կ'հաստատեմ նորա աթոռը Իս-
րայէլի վերայ մինչև յաւիտեան։
Հիմա, իմ որդեակ, Տէրը քեզ 11
հետ լինի, և դու յաջողութիւն
գտնես և շինես քո Տէր Աստու-
ծոյ տունը, ինչպէս որ նա ասել
է քեզ համար։ Միայն թէ Տէրը 12
քեզ հանճար և իմաստութիւն
տայ, և քեզ հաստատէ Իսրա էլի

*Այսինքն՝ խաղաղարար

վերայ, որ դու պահես քո Տէր
13 Աստուծոյ օրէնքը։ Այն ժամա-
նակ յաջողութիւն կ'գտնես, ե-
թէ զգուշանաս պահել այն կա-
նոններն ու իրաւունքները, որ
Տէրը պատուիրել է Մովսէսին
Իսրայէլի համար. քաջ եղիր և
զօրացիր, մի վախենար և մի զար-
14 հուրիր։ Եւ ահա իմ նեղու-
թիւնովը Տիրոջ տան համար հա-
րիւր հազար տաղանդ ոսկի, և
հազար անգամ հազար տաղանդ
արծաթ եմ պատրաստել, իսկ
պղնձին ու երկաթին կշիռ չ'կայ
որովհետև շատ է. նաև փայտեր
և քարեր եմ պատրաստել. բայց
դու աւելացրու նորանց վերայ։
15 Եւ քեզ մօտ շատ գործաւոր-
ներ, քարահատներ, որմնադիր-
ներ, հիւսեր և ամեն տեսակ գոր-
ծի համար ամեն տեսակ ճարտար
16 մարդիկ կան։ Ոսկիին, արծաթին,
պղնձին և երկաթին թիւ չ'կայ.
վեր կաց և արա. և Տէրը քեզ
հետ է լինելու։
17 Եւ Դաւիթը հրաման արաւ
Իսրայէլի բոլոր իշխաններին, որ
18 օգնեն իր որդի Սողոմոնին։ Ե-
ասեց. Ահա ձեր Տէր Աստուածը
ձեզ հետ է. և նա ձեզ հանգըս-
տացրել է շուրջանակի. որով-
հետև իմ ձեռքը մատնեց այս
երկրի բնակիչներին. և երկիրը
նուաճուեցաւ Տիրոջ առաջին և
19 նորա ժողովրդի առաջին։ Հիմա
ձեր սիրտն ու ձեր հոգին այդ-
բանին տուէք, որ ձեր Տէր Աստ-
ուածը որոնէք. և վեր կացէք ու
շինեցէք Տէր Աստուծոյ սրբարա-
նը, որ Տիրոջ ուխտի տապանա-
կը և Աստուծոյ սուրբ անօթնե-
րը տանէք Տիրոջ անուան համար
շինուած տունը։

ԳԼ. ԻԳ

1 Եւ Դաւիթը ծերացել ու օրե-
րով կշտացել էր, և իր որդի
Սողոմոնին թագաւոր արաւ Իս-
2 րայէլի վերայ։ Եւ ժողովեց Իս-
րայէլի բոլոր իշխաններին և քա-
հանաներին և Ղևտացիներին։
3 Եւ համարուեցան Ղևտացիք
այսինքն երեսուն տարեկանից և
վեր լինողները, և նորանց թիւը
եղաւ ամեն մարդ իր գլխովը՝ ե-
րեսունևութ հազար հոգի։ Սո- 4
րանցից Տիրոջ տան գործին ա-
ռաջնորդելու համար՝ քսանևչորս
հազար, իսկ ոստիկաններ և դա-
տաւորներ վեց հազար, Եւ չորս 5
հազարը՝ դռնապաններ, և չորս
հազարը՝ Տիրոջը օրհնեն այն գոր-
ծիքներովը, որ ես շինել եմ օրհ-
նելու համար։ Եւ Դաւիթը բա- 6
ժանեց նորանց դասակարգների
Ղևիի որդկանցը՝ Գերսոնին, Կա-
հաթին և Մերարիին։
Գերսոնեաններից Ղադան և 7
Սեմէի. Ղադանի որդիքը՝ գլ- 8
խաւորը՝ Յեքիէլ, Զեթամ և Յո-
վէլ, երեք։ Սեմէիի որդիքը՝ Սա- 9
ղոմոթ, Ազիէլ ու Արան, երեք.
սորանք են Ղադանի տոհմերի
գլխաւորները։ Եւ Սեմէիի որդի- 10
քը՝ Յեթ, Զիզա, Յեուս և Բա-
րիա. սորանք են Սեմէիի որդի-
քը, չորս։ Եւ գլխաւորը Յեթն 11
էր, իսկ երկրորդը Զիզա. իսկ
Յեուսը և Բարիան շատ որդիք
չ'ունէին և հաշվուելիս մէկ հատ
տոհմ կազմեցին։
Կահաթի որդիքը՝ Ամրամ, Ի- 12
սահառ, Քեբրոն և Ոզիէլ, չորս։
Ամրամի որդիքը՝ Ահարօն և Մով- 13
սէս. և Ահարօնը որոշուեցաւ որ
նորան սրբեն սրբութեանց սրբ-
բութիւնի համար՝ ինքը և իր որ-
դիքը մինչև յաւիտեան, Տիրոջ
առաջին խունկ ծխելու, նորան
ծառայելու և նորա անունովն
օրհնելու մինչև յաւիտեան։ Եւ 14
Աստուծոյ մարդ՝ Մովսէսի որդի-
քը Ղևիի ցեղի հետ համարուե-
ցան։ Մովսէսի որդիքը՝ Գերսոմ 15
և Եղիազար։ Գերսոմի որդիքը՝ 16
առաջինը Սուբայէլ. Եւ Եղիա- 17
զարի որդիքը՝ առաջինը Հռաբիա.
և Եղիազար ուրիշ որդիք չ'ու-
նէր, բայց Հռաբիայի որդիքը
խիստ շատացան։ Իսահառի որ- 18
դիքը՝ առաջինը Սաղօմոթ, Քեբ- 19
րոնի որդիքը՝ առաջինը Յերիա,
երկրորդը Ամարիա, երրորդը Յա-
զիէլ, չորրորդը Յեկամամ։ Ոզի- 20
էլի որդիքը՝ առաջինը Միքա,
երկրորդը Յեսիա։

21 Մերարիի որդիքը՝ Մոողի և
Մուսի. Մոողիի որդիքը՝ Եղիա-
22 զար և Կիս։ Եւ Եղիազարը մե-
ռաւ, բայց որդիք չ՚ունէր այլ
աղջիկներ. և նորանց առան ի-
րանց եղբարքը՝ Կիսի որդիքը։
23 Մուսիի որդիքը՝ Մոողի, Եդեր
ու Յերիմովթ, երեք։
24 Սորանք են Ղևիի որդիքն ի-
րանց ազգատոհմերի համեմատ
տոհմերի գլխաւորները իրանց հա-
մարանքի համեմատ, իւրաքան-
չիւր գլուխ իր անուան թիւովը,
որ գործ էին կատարում Տիրոջ
տան պաշտօնի համեմատ քսան
25 տարեկանից և վեր։ Որովհետև
Դաւիթն ասել էր թէ Իսրայէլի
Տէր Աստուածը հանգստութիւն
է տալու իր ժողովրդին, և Երու-
սաղէմումն է բնակուելու մինչև
26 յաւիտեան. Եւ Ղևտացիներն
էլ պիտի չ՚կրեն խորանը և նորա
բոլոր անօթները որ նորան պաշ-
27 տօն մատուցանեն։ Որովհետև
Դաւիթի վերջին խօսքին համե-
մատ, նորանք էին Ղևիի որդ-
կանց թիւը այսինքն քսան տա-
28 րեկանից և վերը. Որովհետև նո-
րանց պաշտօնը կ՚լինի Ահարօնի
որդկանց ձեռքին, որ Տիրոջ տա-
նը ծառայեն գաւիթների վերայ
և սենեակների վերայ և բոլոր
սուրբ բաների մաքրութեան վե-
րայ լինելով, և Աստուծոյ տան
29 պաշտօնը կատարելը, Եւ առա-
ջաւորութեան հացի, և հացի
նուէրի նաշիհի և անխմոր լա-
ւաշների, և տապակի մէջ եփա-
ծի և տապկուածի և ամեն խոր
ու երկար չափերի վերայ լինին,
30 Եւ ամեն առաւօտ վեր կենան
Տիրոջը գովելու և օրհնելու,
31 նմանապէս և իրիկունը։ Եւ շա-
բաթ օրերը, ամսագլուխներին և
տօն օրերին Տիրոջը մատուցանեն
բոլոր ողջակէզները նորանց թի-
ւովը և կանոնովը միշտ Տիրոջ
32 առաջին. Եւ պահեն ժողովքի
խորանի պահապանութիւնը և
սրբարանի պահապանութիւնը և
իրանց եղբայրների Ահարօնի որդ-
կանց պահապանութիւնը Տիրոջ
տան պաշտօնի համար։

ԳԼ. ԻԴ

Եւ սորանք են Ահարօնի որդ- 1
կանց դասակարգութիւնները. Ա-
հարօնի որդիքը՝ Նադաբ, Աբի-
ուդ, Եղիազար և Իթամար։ Եւ 2
Նադաբն ու Աբիուդը մեռան ի-
րանց հօրից առաջ և որդիք չ՚ու-
նեցան. և քահանայութիւն էին
անում Եղիազարը և Իթամարը։
Եւ Դաւիթը, և Եղիազարի որդ- 3
կանցից Սադովկը և Իթամարի
որդկանցից Աքիմելէքը դասա-
կարգեցին նորանց իրանց համա-
րանքներովը իրանց պաշտօնում։
Եւ գտնուեցաւ, որ Եղիազարի 4
որդկանց գլխաւոր մարդիկը ա-
ւելի շատ էին Իթամարի որդ-
կանցից. և նորանց դասակարգե-
ցին՝ Եղիազարի որդկանց համար
ազգատոհմերի իշխաններ տասն-
ևվեց. և Իթամարի որդկանց հա-
մար իրանց ազգատոհմերի համե-
մատ ութ իշխան։ Եւ նորանց 5
դասակարգեցին վիճակով միմ-
եանց հետ, որովհետև սրբարա-
նի իշխանները և Աստուծոյ իշ-
խանները Եղիազարի որդկանցից
և Իթամարի որդկանցից էին։
Եւ նորանց գրեց Նաթանայէլի 6
որդի Սեմայիա դպիրը Ղևտա-
ցին՝ թագաւորի և իշխանների,
Սադովկ քահանայի և Աբիաթա-
րի որդի Աքիմելէքի և քահա-
նաների և Ղևտացիների տոհմե-
րի գլխաւորների առաջը. մէկ
ազգատոհմը վիճակով առնվում էր
Եղիազարի տեղիցը և յետոյ առ-
նվում էր կարգաւ Իթամարի
տեղիցը։
Եւ առաջին վիճակը Յովարի- 7
բին դուրս եկաւ, երկրորդը Յե-
դայիային. Երրորդը Յարիմին, 8
չորրորդը Սէուրինին. Հինգերոր- 9
դը Մեղքիային, վեցերորդը Մի-
ամինին. Եօթներորդը Ակկուսին, 10
ութերորդը Աբիային. Իններոր- 11
դը Յեսուին, տասներորդը Սեքե-
նիային. Տասնևմէկերորդը Եղիա- 12
սիբին, տասնևերկուերորդը Յա-
կիմին. Տասնևերեքերորդը Ոփ- 13
փային, տասնևչորսերորդը Յես-
բէաբին, Տասնևհինգերորդը Բեղ- 14

գային, տասնևվեցերորդը Եմմե-
15 րին, Տասնևեօթներորդը Եզի-
րին, տասնևութերորդը Ափեսե-
16 սին. Տասնևիններորդը Փեթայի-
ային, քսաներորդը Եզեկիէլին.
17 Քսանևմէկերորդը Յաքինին, քը-
18 սանևերկուերորդը Գամուլին. Քը-
սանևերեքերորդը Դաղայիային,
քսանևչորսերորդը Մաազիային։
19 Այս է նորանց համարը նորանց
պաշտամանց համեմատ Տիրոջ
տունը մտնելու համար իրանց
կանոնովը, որ տրուած էր նո-
րանց իրանց հայր Ահարօնի ձե-
ռովը, ինչպէս որ Իսրայէլի Տէր
Աստուածը նորան հրամայել էր։
20 Եւ Ղևիի որդկանց մնացածնե-
րը. Ամրամի որդիներից՝ Սուբա-
յէլ. Սուբայէլի որդիներից՝ Յա-
21 դայիա. Հռաբիայից՝ Հռաբիայի
22 որդիներից առաջինը Յեսիա. Ի-
սահառի որդիներից՝ Սաղօմօթ.
23 Սաղօմօթի որդիներից՝ Յեթ. Եւ
Փեբրոնի որդիներից՝ Յերիա, երկ-
րորդը՝ Ամարիա, երրորդը՝ Յա-
24 զիէլ, չորրորդը՝ Յեկամամ. Ոզի-
էլի որդիներից՝ Միքա. Միքայի
25 որդիներից՝ Սամիր։ Միքայի եղ-
բայրը Յեսիա. Յեսիայի որդինե-
26 րից՝ Զաքարիա։ Մերարիի որդի-
ները՝ Մոողի և Մուսի. Յազիայի
27 որդին՝ Բենով. Մերարիի որդի-
ները Յազիայից Բենով, Սօհամ,
28 Զաքուր և Եբրի։ Մոողիից՝ Եղի-
ազար. իսկ սա որդիք չ՚ունե-
29 ցաւ։ Կիսից՝ Կիսի որդիներից՝
30 Յերամէլ։ Մուսիի որդիները՝ Մո-
ողի, Եդեր և Յերիմովթ։ Սորանք
են Ղևտացիների որդիքը իրանց
31 ազգատոհմերովը։ Սորանք էլ վի-
ճակ գցեցին իրանց եղբայրների՝
Ահարօնի որդկանց հաւասար Դա-
ւիթ թագաւորի, Սադովկի, Ա-
քիմելէքի և քահանայից և Ղև-
տացոց ազգատոհմերի գլխաւոր-
ների առաջին՝ տոհմապետները ի-
րանց փոքր եղբօր հաւասար։

ԳԼ. ԻԵ

1 Եւ Դաւիթն ու զօրքի իշխան-
ները որոշեցին պաշտաման համար
Ասափի, Եմանի և Իդիթունի
որդկանցը, որ մարգարէանում
էին քնարներով, տաւիղներով և
ծնծղաներով. և այս պաշտօնը
կատարող մարդկանց թիւը իրանց
պաշտամունքի համեմատ սա էր.
Ասափի որդիներից՝ Զաքուր, Յով- 2
սէփ, Նաթանիա և Ասարէլա՝
Ասափի որդիքը, որ լինում էին
թագաւորի մօտ մարգարէացող
Ասափի մօտ. Իդիթունից՝ Իդի- 3
թունի որդիքը Գոդոզիա, Եզրի,
Եսայի, Սիմէի, Ասարիա ու Մա-
տաթիա, վեց. իրանց հօր Իդի-
թունի մօտ էին, որ քնարով
մարգարէանում էր Տիրոջը գո-
հութիւն և օրհնութիւն երգե-
լով։ Եմանից՝ Եմանի որդիքը՝ 4
Բոկքիա, Մաթանիա, Ոզիէլ,
Սուբայէլ, Յերիմովթ, Անանիա,
Անանի, Եղիաթա, Գեդոզաթի,
Ռոմամթիեզեր, Յեսբակասա,
Մեղեթի, Յօթիր, Մազիովթ։
Սորանք ամենքը Եմանի որդիքն 5
էին, որ թագաւորի տեսանողն
էր Աստուծոյ խօսքումը՝ եղջիւր
բարձրացնելու համար. և Աստ-
ուած Եմանին տասնևչորս աղայ
և երեք աղջիկ էր տուել։ Սո- 6
րանք ամենքը իրանց հօր ձեռքի
տակին էին Տիրոջ տան երգերը
ծնծղաներով, տաւիղներով և
քնարներով երգելով Աստուծոյ
տանը. Ասափ, Իդիթուն և Ե-
ման թագաւորի ձեռքի տակին
էին։ Եւ նորանց թիւը իրանց 7
եղբայրների հետ որ երգ էին սո-
վորած Տիրոջ համար՝ բոլոր բա-
նիմացները երկու հարիւր ութ-
սունևութը։
Եւ վիճակ գցեցին պաշտաման 8
կարգի համար փոքրին ու մեծին
և վարպետին ու աշակերտին հա-
ւասարապէս։ Եւ առաջին վի- 9
ճակն ելաւ Ասափին Յովսէփի
համար, երկրորդը Գոդոզիային.
սա ինքը՝ և իր եղբայրներն ու իր
որդիները տասնևերկու հոգի։
Երրորդը Զաքուրին, իր որդի- 10
ներն ու եղբայրները տասնևեր-
կու հոգի։ Չորրորդը Եզրիին, իր 11
որդիներն ու եղբայրները տասն-
ևերկու հոգի։ Հինգերորդը Նա- 12
թանիային, իր որդիներն ու եղ-

բայրները տասնևերկու հոգի։
13 Վեցերորդը Բոկքիային, իր որ-
դիներն ու եղբայրները տասնև-
14 երկու հոգի։ Եօթներորդը Յե-
սարէլային, իր որդիներն ու եղ-
15 բայրները տասնևերկու հոգի։ Ու-
թերորդը Եսային, իր որդիներն
ու եղբայրները տասնևերկու հո-
16 գի։ Իններորդը Մաթանիային,
իր որդիներն ու եղբայրները
17 տասնևերկու հոգի։ Տասներորդը
Սեմէիին, իր որդիներն ու եղբայր-
18 ները տասնևերկու հոգի։ Տասնև-
մէկերորդը Ազարիէլին, իր որ-
դիներն ու եղբայրները տասնևեր-
19 կու հոգի։ Տասնևերկուերորդը
Ասաբիային, իր որդիներն ու եղ-
բայրները տասնևերկու հոգի։
20 Տասնևերեքերորդը Սուբայէլին,
իր որդիներն ու եղբայրները
21 տասնևերկու հոգի։ Տասնևչոր-
սերորդը Մատաթիային, իր որ-
դիներն ու եղբայրները տասնևեր-
22 կու հոգի։ Տասնևհինգերորդը
Յերիմովթին, իր որդիներն ու
եղբայրները տասնևերկու հոգի։
23 Տասնևվեցերորդը Անանիային, իր
որդիներն ու եղբայրները տասնև-
24 երկու հոգի։ Տասնևեօթներորդը
Յեսբակասային, իր որդիներն ու
եղբայրները տասնևերկու հոգի։
25 Տասնևութերորդը Անանիին, իր
որդիներն ու եղբայրները տասն-
26 ևերկու հոգի։ Տասնևիններորդը
Մեղեթիին, իր որդիներն ու եղ-
բայրները տասնևերկու հոգի։
27 Քսաներորդը Եղիաթային, իր որ-
դիներն ու եղբայրները տասնևեր-
28 կու հոգի։ Քսանևմէկերորդը Յօ-
թերին, իր որդիներն ու եղբայր-
29 ները տասնևերկու հոգի։ Քսան-
ևերկուերորդը Գեդողաթիին, իր
որդիներն ու եղբայրները տասն-
30 ևերկու հոգի։ Քսանևերեքերոր-
դը Մազիովթին, իր որդիներն ու
եղբայրները տասնևերկու հոգի։
31 Քսանևչորսերորդը Ռօմամթիեզե-
րին, իր որդիներն ու եղբայրնե-
րը տասնևերկու հոգի։

ԳԼ. ԻԶ

1 Դռնապանների դասակարգու-
թիւնները. Կորխեաններից՝ Կով-
բէի որդի՝ Մասեղամիան Ասափի
որդիներից։ Եւ Մասեղամիայի 2
որդիքը՝ անդրանիկը Զաքարիա,
երկրորդը Յեդիէլ, երրորդը Զա-
բադիա, չորրորդը Յաթնիէլ, Հին- 3
գերորդը Եղամ, վեցերորդը Յօ-
հանան, եօթներորդը Եղիովէնա-
յի։ Եւ Աբդեդօմի որդիքը՝ անդ- 4
րանիկը Սեմայիա, երկրորդը Յով-
զաբադ, երրորդը Յովաք, չոր-
րորդը Սաքար, հինգերորդը Նա-
թանայէլ, Վեցերորդը Ամիէլ, 5
եօթներորդը Իսաքար, ութերոր-
դը Փեղաթի. որովհետև Աստ-
ուած նորան օրհնել էր։ Եւ նո- 6
րա որդի Սեմայիային որդիք ծըն-
ուեցան, որոնք իշխաններ եղան
իրանց հօր տանը. որովհետև նո-
րանք զօրաւոր մարդիկ էին։ Սե- 7
մայիայի որդիքը՝ Ոթնի, Ռափա-
յէլ, Ովբէդ, Եղզաբաթ, Աքի-
ով, Բենհայիլ, Եղիուս և Սա-
մաքիա։ Սորանք ամենքը Աբդե- 8
դօմի որդիներիցն էին. իրանք,
իրանց որդիքը և իրանց եղբարքը
ուժով զօրաւոր մարդիկ էին ծա-
ռայութեան համար. Աբդեդօ-
մից վաթսունևերկու հոգի։ Եւ 9
Մասեղամիա տասնևութը զօրա-
ւոր որդիներ և եղբայրներ ու-
նէր։ Եւ Մերարիի որդիներից 10
Ուսան որդիներ ունէր. գլխաւո-
րը Սամարի էր. որովհետև թէև
նա անդրանիկ չէր, բայց նորա
հայրը նորան գլխաւոր դրաւ։
Երկրորդը Քեղկիա, երրորդը Տա- 11
բաղիա, չորրորդը Զաքարիա. Ու-
սայի բոլոր որդիներն ու եղբայր-
ները տասնևերեք էին։ Սորանցն 12
էին դռնապանների դասակար-
գութիւնները իբրեւ գլխաւոր
մարդկանց, ծառայութիւնով հա-
ւասար իրանց եղբարցը Տիրոջ
տանը ծառայելու համար։ Եւ 13
փոքրն ու մեծը հաւասար վի-
ճակ գցեցին իրանց հայրերի տնե-
րի համեմատ իւրաքանչիւր դը-
ռան համար։ Եւ արևելեան կող- 14
մի վիճակը ընկաւ Սեղեմիային,
և նորա խելօք խորհրդատու որ-
դի Զաքարիայի համար վիճակ
գցեցին, և նորա վիճակը դուրս

15 եկաւ հիւսիս։ Աբդեդօմին՝ հա-
րաւային կողմը, և նորա որդի-
16 ներին՝ շտեմարանները։ Սուփի-
մին և Ուսային՝ արևմտեան կող-
մը Սալեքադի դռան մօտ վեր գը-
նացող ճանապարհի վերայ. մի պա-
հապանութիւն միւս պահապա-
17 նութեան դէմուդէմ։ Արևելեան
կողմին Ղևտացիներից վեց, հիւ-
սիսում օրը չորս, հարաւում օրը
չորս. իսկ շտեմարանների վերայ
18 երկու երկու։ Փարպարի կողմին
դէպի արևմուտքը չորսը ճանա-
պարհին, և երկուսը Փարպարի
19 համար։ Սորանք են Կորխեանց
և Մերարիի որդկանց դռնապան-
ների դասակարգութիւնները։
20 Եւ Ղևտացիներից՝ Աքիան Ա-
ստուծոյ տան գանձերի և նուի-
21 րական գանձերի վերայ էր։ Գեր-
սոնացի Ղադանի ազգատոհմերի
իշխաններից՝ Գերսոնացի Ղադա-
22 նի որդկանցից՝ Յեքիէլ։ Յեքիէլի
որդիքը՝ Զեթամ և նորա եղբայ-
րը Յովէլ Տիրոջ տան գանձերի
23 վերայ էին։ Ամրամեաններից, Ի-
սահառեաններից, Քեբրոնեաննե-
24 րից, Ոզիէլեաններից Սուբայէլն
էլ՝ Մովսէսի որդի Գերսոմի որ-
25 դին՝ գանձերի իշխանն էր։ Եւ նո-
րա եղբայրները Եղիազարի որդի-
քը. նորա որդին Հռաբիա, նորա
որդին Եսայի, նորա որդին Յով-
րամ, նորա որդին Զեքրի և նո-
26 րա որդին Սաղօմօթ։ Այս Սա-
ղօմօթը և նորա եղբայրները այն
բոլոր նուիրած գանձերի վերայ
էին, որ նուիրել էին Դաւիթ
թագաւորը, տոհմապետները,
հազարապետները և հարիւրա-
պետները և զօրաց իշխանները,
27 Որ նուիրել էին պատերազմներիցը
և աւարիցը Տիրոջ տունը հաս-
28 տատելու համար, Եւ ամեն ինչ որ
նուիրել էին Սամուէլ տեսանո-
ղը, Կիսեան Սաւուղը, Ներեան
Աբենները և Շարուհեան Յովաբը.
բոլոր նուէրները Սաղօմօթի և
նորա եղբայրների ձեռքին էր։
29 Իսահառեաններից՝ Քոնոնիա և
նորա եղբայրները դրսի գործերի
համար Իսրայէլի վերայ ոստի-
կաններ և դատաւորներ էին։
Քեբրոնեաններից՝ Ասաբիա և նո- 30
րա եղբայրները հազար եօթը հա-
րիւր քաջ մարդիկ Իսրայէլի վե-
րայ վերակացու էին Յորդանանի
այս կողմին դէպի արևմուտք Տի-
րոջ բոլոր գործքի համար և թա-
գաւորի ծառայութեան համար։
Քեբրոնեաններից՝ գլխաւորը Յե- 31
րիա Քեբրոնեանների սերունդնե-
րում և տոհմերում. սորանք հա-
մարուեցան Դաւիթի թագաւո-
րութեան քառասուներորդ տա-
րին, և Գաղատդի Յազերում նո-
րանցից քաջ մարդիկ գտնուե-
ցան։ Եւ նորա եղբայրները երկու 32
հազար եօթը հարիւր քաջ մար-
դիկ էին՝ տոհմապետներ։ Եւ
Դաւիթ թագաւորը նորանց նշա-
նակեց Ռուբենեանց, Գադեանց
և Մանասեանց կէս ցեղի վերայ
Աստուծոյ և թագաւորի ամեն
գործքի համար։

ԳԼ. ԻԷ

Եւ Իսրայէլի որդիքն իրանց հա- 1
մարանքովը տոհմապետներ, հա-
զարապետներ և հարիւրապետ-
ներ ունէին. և նորանց ոստիկան-
ները ծառայում էին թագաւո-
րին դասակարգութեան ամեն
գործումը. և տարուայ ամեն ա-
միսներին ամիս ամիս մտնողների
և ելնողների ամեն մէկ դասը
քսանևչորս հազար մարդ։ Առա- 2
ջին դասակարգութեան համար
առաջին ամիսը Զաբդիէլի որդի
Յեսբաամը, և նորա դասակար-
գումը կար քսանևչորս հազար
մարդ. Նա Փարէսի որդիներիցն 3
էր՝ գլխաւոր ամեն զօրավարների
համար առաջին ամիսը։ Եւ երկ- 4
րորդ ամսի դասակարգի վերայ
էր Աքուքացի Դովդան. և Մա-
կեղօթը նորա դասակարգի իշ-
խանը. և նորա դասակարգումը
քսանևչորս հազար մարդ։ Երրորդ 5
զօրավարը երրորդ ամսի համար
էր Յովիադա քահանայի որդի
Բանեան՝ գլխաւորը. և նորա դա-
սակարգումը քսանևչորս հազար
մարդ։ Այս Բանեան այն երեսու- 6
նի զօրաւորն էր և երեսունի վե-
րան էր. և նորա դասակարգումն

7 էր իր որդի Ամիզաբադը։ Չոր-
բորդ ամսի համար չորրորդ ՝
ՀՐԱՊԵՏԸ Յովաբի եղբայր Ասայէլը.
և նորանից յետոյ նորա որդի
Զաբադիան. և նորա դասակար-
գումը քսանևչորս հազար մարդ։
8 Հինգերորդ ամսի համար հինգե-
րորդ ՝ՀՐԱՊԵՏԸ Յեզրացի Սամա-
ովթը. և նորա դասակարգումը
9 քսանևչորս հազար մարդ։ Վեցե-
րորդ ամսի համար վեցերորդ ՝
ՀՐԱՊԵՏԸ Թեկուացի Եկգեսի որդի
Իրասը. և նորա դասակարգումը
10 քսանևչորս հազար մարդ։ Եօթ-
ներորդ ամսի համար եօթներորդ
՝ՀՐԱՊԵՏԸ Փելօնացի Քեղղէսը Եփ-
բեմի որդիներից. և նորա դա-
սակարգումը քսանևչորս հազար
11 մարդ։ Ութերորդ ամսի համար
ութերորդ ՝ՀՐԱՊԵՏԸ Զարայեանց
Ովսացի Սոբաքը. և նորա դա-
սակարգումը քսանևչորս հազար
12 մարդ։ Իններորդ ամսի համար
իններորդ ՝ՀՐԱՊԵՏԸ Անաթովթա-
ցի Աբիեզերը Բենիամինեաննե-
րից. և նորա դասակարգումը
13 քսանևչորս հազար մարդ։ Տասնե-
րորդ ամսի համար տասներորդ
՝ՀՐԱՊԵՏԸ Զարայեանց Նետոփա-
թացի Մաարան. և նորա դա-
սակարգումը քսանևչորս հազար
14 մարդ։ Տասնևմէկերորդ ամսի հա-
մար տասնևմէկերորդ ՝ՀՐԱՊԵՏԸ
Փարաթոնացի Բանեան Եփրեմի
որդիներից. և նորա դասակար-
գումը քսանևչորս հազար մարդ։
15 Տասնևերկուերորդ ամսի համար
տասնևերկուերորդ ՝ՀՐԱՊԵՏԸ Գո-
թոնիէլեան Նետոփաթացի Ալա-
դը. և նորա դասակարգումը քս-
սանևչորս հազար մարդ։
16 Եւ Իսրայէլի ցեղերի վերայ էին.
Ռուբենեանների իշխան՝ Զեքրիի
որդի Եղիազարը. Շմաւոնեաննե-
րինը՝ Մաաքայի որդի Սափատի-
17 ան. Ղևիեաններինը՝ Կամուէլի
որդի Ասաբիան, Ահարօնեանցի-
18 նը՝ Սադովկը. Յուդայինը՝ Դաւի-
թի եղբայրներից *Եղիուսը, Ի-
սաքարինը՝ Միքայէլի որդի Ամրին.
19 Զաբուղոնինը՝ Աբդիայի որդի Իս-
մայիա, Նեփթաղիմինը՝ Եզրիէլի
20 որդի Յերիմովթ. Եփրեմի որդի-
ներինը՝ Ազազիայի որդի Ովսէէն,
Մանասէի կէս ցեղինը՝ Փադա-
21 յիայի որդի Յովէլը. Գաղաադի
Մանասէի կէսինը՝ Զաքարիայի
որդի Յեդդովը. Բենիամինինը՝ Ա-
22 բենների որդի Յեսիէլը. Դանինը՝
Յերոամի որդի Ազարիէլը։ Սորանք
էին Իսրայէլի ցեղերի իշխանները։
23 Եւ Դաւիթը նորանց համա-
րանքը չ՛առաւ, որ քսան տարե-
կանից և ցած էին. որովհետև
Տէրն ասել էր, որ կ՛շատացնէ Իս-
րայէլին երկնքի աստղերի չափ։
24 Շարուհեայի որդի Յովաբն սկսեց
համարել բայց չ՛վերջացրեց, և
նորա համար բարկութիւն եկաւ
Իսրայէլի վերայ. և այն համարան-
քը չ՛մտաւ Դաւիթ թագաւորի
յիշատակաց պատմութեան մէջ։
25 Եւ թագաւորի գանձերի վե-
րան էր Ադիէլի որդի Ազամաթը.
և դաշտումը քաղաքներում և
գիւղերում ու աշտարակներում
եղող գանձերի վերան էր Ոզիայի
26 որդի Յովնաթանը։ Եւ դաշտումը
երկրագործութեամբ զբաղուած-
ների վերայ՝ Քեղուբի որդի Եզրի.
27 Եւ այգիների վերայ՝ Արիմաթա-
ցի Սեմէին. և այգիներումը ե-
ղածների և գինիի շտեմարանն-
ի վերայ՝ Սեփամացի Զաբդին.
28 Եւ հովտումը եղող ձիթենիների
և մոլաթզենիների վերայ՝ Գադե-
րացի Բաաղանանը. և իւղի շտե-
29 մարանների վերայ՝ Յովասը. Եւ
Սարօնում արածող արջառների
վերայ՝ Սետրան. և ձորերումն ե-
ղող արջառների վերայ՝ Ադղիի
30 որդի Սափատը. Եւ ուղտերի վե-
րայ՝ Իսմայէլացի Որիլը. և էշերի
վերայ՝ Մերոնոթացի Յագայիան.
31 Եւ հօտերի վերայ՝ Հագարացի
Յազիզը. սորանք ամենքը Դաւիթ
թագաւորի ստացուածքի վերա-
կացուներն էին։
32 Եւ Դաւիթի հօրեղբայրը՝ Յով-
նաթանը խորհրդական էր. նա
բանիմաց և գրագէտ մարդ էր.
և Յաքեմոնի որդի Յեքիէլը թա-
33 գաւորի որդկանց հետ էր։ Եւ
Աքիտոփէլը թագաւորի խորհրդ-

*Կամ՝ Եղիաբ. ա Թագ. ժզ. 6։

դականն էր. և Արաքացի Քու-
34 սին՝ թագաւորի բարեկամը. Եւ
Աքիտոփէլից յետոյ Բանեայի որ-
դի Յովիադան և Աբիաթարն էին.
և թագաւորի զօրագլուխը Յո-
վաբն էր։

ԳԼ. ԻԸ

1 Եւ Դաւիթը ժողովեց Իսրայէլի
բոլոր իշխաններին, ցեղերի իշ-
խաններին և թագաւորին ծա-
ռայութիւն անող դասակարգե-
րի իշխաններին, և հազարապետ-
ներին ու հարիւրապետներին, և
թագաւորի ու նորա որդկանց
բոլոր ստացուածոց ու ընչից վե-
րակացուներին, ներքինիներին,
զօրաւորներին և բոլոր քաջա-
2 զուններին Երուսաղէմ։ Եւ Դա-
ւիթ թագաւորը ոտքի վերայ
կանգնեց և ասեց. Լսեցէք ինձ,
ով իմ եղբայրներ և իմ ժողո-
վուրդ. ես իմ սրտումը դրել էի
որ մի հանգստանալու տուն շի-
նեմ Տիրոջ ուխտի տապանակի և
մեր Աստուծոյ ոտքի պատուան-
դանի համար. և պատրաստու-
3 թիւն արի շինելու. Բայց Աստ-
ուած ինձ ասեց. Դու տուն չես
շինելու իմ անուան համար. ո-
րովհետև դու պատերազմների
մարդ ես և արիւններ ես թա-
4 փել։ Եւ Իսրայէլի Տէր Աստուա-
ծը իմ հօր բոլոր տանիցն ինձ
ընտրեց, որ յաւիտեան Իսրայէլի
վերայ թագաւոր լինիմ. որով-
հետև Յուդայից ընտրեց առաջ-
նորդը, և Յուդայի տանիցն իմ
հօր տունը, և իմ հօր որդինե-
րից ինձ հաւանեց, որ ինձ թա-
գաւոր անէ բոլոր Իսրայէլի վե-
5 րայ։ Եւ իմ բոլոր որդիներից
(որովհետև շատ են այն որդինե-
րը որ Տէրը ինձ տուել է) իմ
որդի Սողոմոնին ընտրեց, որ Տի-
րոջ թագաւորութեան աթոռի
վերայ նստէ Իսրայէլի վերայ։
6 Եւ նա ինձ ասեց թէ Քո Սողո-
մոն որդին ինքն է շինելու իմ
տունը և սրահները. որովհետև
ես նորան ընտրել եմ ինձ որդի,
և ես էլ նորան հայր եմ լինելու.
7 Եւ ես կ՛հաստատեմ նորա թա-
գաւորութիւնը մինչև յաւիտ-
եան, եթէ նա հաստատ կենայ
որ իմ պատուէրներն ու իմ ի-
րաւունքները կատարէ ինչպէս
այսօր։ Եւ հիմա բոլոր Իսրայէլի՝ 8
Տիրոջ ժողովքի աչքի առաջին և
իր Աստուծոյ ականջի առաջին
ասում եմ. Պահեցէք և քննեցէք
ձեր Տէր Աստուծոյ բոլոր պատ-
ուէրները, որպէս զի ժառանգէք
այս բարի երկիրը, և ժառանգե-
ցնէք ձեր որդկանցը ձեզանից յե-
տոյ մինչև յաւիտեան։
Եւ դու, որդեակ իմ Սողոմոն, 9
ճանաչիր քո հօր Աստուծուն և
ծառայիր նորան կատարեալ սըր-
տով և յօժար կամքով. որով-
հետև Տէրը քննում է բոլոր
սրտերը և գիտէ խորհուրդների
բոլոր միտքը. եթէ նորան որո-
նես, նա կ՛գտնուի քեզանից,
իսկ եթէ նորան թողես, նա էլ
քեզ կ՛թողէ յաւիտեան։ Հիմա 10
տես որ Տէրը քեզ ընտրեց սըր-
բարանի համար տուն շինելու.
զօրացիր և կատարիր։
Եւ Դաւիթը իր որդի Սողոմո- 11
նին տուաւ սրահի և նորա սեն-
եակների և նորա գանձարանների
և նորա վերնատունների և նորա
ներքին շտեմարանների և քաւու-
թեան գաղափարը, Եւ այն ա- 12
մենի գաղափարը, որ նա ունէր
իր մտքումը՝ Տիրոջ տան գաւիթ-
ների համար և բոլոր սենեակնե-
րի համար շուրջանակի, Աստու-
ծոյ տան շտեմարանների և նը-
ւէրների շտեմարանների համար.
Նաև հրաման տուաւ քահանանե- 13
րի և Ղևտացիների դասակար-
գութիւնների համար և Տիրոջ
տան պաշտաման բոլոր գործի հա-
մար և Տիրոջ տան պաշտաման
բոլոր անօթների համար. Ամեն 14
պաշտօնների ամեն ոսկի անօթ-
ների կշիռը, ամեն արծաթի ա-
նօթների կշիռը և ամեն պաշ-
տօնների անօթներինն էլ. Ոսկի 15
աշտանակների և նորանց ոսկի
ճրագների կշիռը, և իւրաքան-
չիւր աշտանակների և նորանց ոս-
կի ճրագների կշիռը. Նոյնպէս և
արծաթի աշտանակների՝ աշտա-

նակի և նորա ծրագրերի կշիռը իւրաքանչիւր աշտանակի պաշտօն
16 նի համեմատ. Եւ առաջաւորաթեան սեղանների սակին կշռով՝ իւրաքանչիւր սեղանի համար. և արծաթի՝ արծաթի սեղանների
17 համար. Եւ մաքուր ոսկիից մսուհանների և կոնքերի և բաժակների և ոսկի տաշտերի համար իւրաքանչիւր տաշտի կշիռը. և արծաթի տաշտերի համար իւրաքանչիւր տաշտի կշի-
18 ռը. Եւ խունկի սեղանի համար մաքուր ոսկի կշռով. և էքեր-ի-ե-էլ տարածող և Տիրոջ ուխտի տապանակը ծածկող քերովբէների կառքի գաղափարը. Այս
19 ամենը այս գաղափարի բոլոր գործքերը ինձ հասկացրեց Տէրը էր ձեռքի գրովը, ես-ե-էլ.
20 Եւ Դաւիթն ասեց իր որդի Սողոմոնին. Զօրացիր, քաջասիրտ եղիր և կատարիր. մի վախենար և մի ղարհուրիր, որովհետև իմ Աստուած՝ Եհովայ Աստուածը քեզ հետ է. նա քեզ չի թողիլ և քեզ չի ձգիլ, մինչև Տիրոջ տան ծառայութեան բոլոր գոր-
21 ծերը լրացնես. Եւ ահա քահանայից և Ղեւտացիների դասակարգերը Աստուծոյ տան բոլոր ծառայութեան համար. և քեզ մեզ կան ամեն գործի համար բոլոր յօժարութեամբ ամեն ծառայութեան մէջ հանճարեղ մարդիկ. և իշխաններն ու բոլոր ժողովուրդը քո ամեն հրամաններին կ'հնազանդին.

Գլ. Իթ

1 Եւ Դաւիթ թագաւորն ասեց բոլոր ժողովքին. Իմ որդի Սողոմոնը որին միայն ընտրեց Աստուած, երեխայ է և փափուկ է. իսկ այդ գործը մեծ է. որովհետև այս պալատը մարդի համար
2 չէ այլ Աստուծոյ, Եւ ես բոլոր կարողութեամբս պատրաստել եմ Աստուծոյ տան համար ոսկեղէնների համար ոսկի, արծաթեղէնների համար արծաթ, պղնձեղէնների համար պղինձ, երկաթեղէնների համար երկաթ և փայ-
տեղէնների համար փայտ, եղընդնաքարեր և ընդելուզանելու
3 բեր, գեղեցիկ և գոյնզգոյն քարեր, և ամեն տեսակ պատուական քարեր և մարմարիոն քարեր առատօրէն. Եւ դեռ Աստուծոյս տանը վերայ իմ ունեցած սիրոյ համար այն իմ ունեցած ոսկիի և արծաթի գանձը
4 ես տալիս եմ Աստուծոյ տան համար բացի այն ամենից, որ պրպարանի տան համար պատրաստել եմ, երեք հազար տաղանդ ոսկի Ոփիրի ոսկիից և եօթը հա-
5 զար տաղանդ մաքուր արծաթ՝ տաները պատելու համար. Ամեն մէկ ոսկեղէն և ամեն մէկ արծաթեղէն բանի համար և ամեն տեսակ արուեստական ձեռագործի համար. Եւ էլ
6 ո՞վ է յօժար այսօր Տիրոջը նուէր մատուցանելու.
7 Ա՛յն ժամանակ յ ժարուեցին ընդ-յե-ը տոհմերի իշխանները, Իսրայէլի ցեղերի իշխանները և հազարապետներն ու հարիւրապետները և թագաւորի գործի
8 իշխանները. Եւ Աստուծոյ տան ծառայութեան համար տուին հինգ հազար տաղանդ ոսկի և տասը հազար դահեկան, և տասը հազար տաղանդ արծաթ և տասնևուվեց հազար տաղանդ պղինձ և հարիւր հազար տաղանդ երկաթ. Եւ որի մօտ քարեր էր գտնվում, տուին Տիրոջ տան
9 գանձանակին Գերսոնացի Յեքիէլի ձեռքը. Եւ ժողովուրդն ուրախացաւ նորանց յօժար կամքով ընծայելու վերայ. որովհետև կատարեալ սրտով կամաւոր ընծաները տուին Տիրոջը. և Դաւիթ թագաւորն էլ մեծաւ ուրախութեամբ ուրախացաւ.
10 Եւ Դաւիթն օրհնեց Տիրոջը բոլոր ժողովքի աչքի առաջին, և Դաւիթն ասեց. Օրհնեալ ես դու, ով մեր Հայր Իսրայէլի Տէր
11 Աստուածը, յաւիտենից մինչև յաւիտեան. քոնն է, ով Տէր, մեծութիւնը և զօրութիւնը և փառքը և յաղթութիւնը և պայծառութիւնը, և բոլոր երկնքում ու երկրումն է. քոնն է, ով Տէր, թագաւորութիւնը, և դու բարձրացեալ ես ամենից վեր իբրև գերիշխան.
12 Եւ հարստութիւնն ու պատիւը քո երեսից է, և դու ես ամենի վերայ տիրողը, և քո ձեռին է զօրութիւնն ու կարողութիւնը. և քո ձեռին է ամենի մեծացնելը և ուժովացնելը.
13 Եւ հիմա, ով մեր Աստուած, մենք փառաբանում ենք քեզ և օրհներգում ենք քո փառաւորեալ անունը.
14 Որովհետև ես ո՞վ եմ, և ո՞վ է իմ ժողովուրդը, որ կարողութիւն ունենանք այսպէս ընծայ մատուցանելու. որովհետև ամեն բան քեզանից է, և քո ձեռիցն ես-ո-ե՝ տուինք քեզ.
15 Որովհետև մենք պանդուխտներ ենք քո առաջին և նժդեհներ մեր բոլոր հայրերի պէս. աստուերի նման են մեր օրերը երկրիս վերայ. և չ'կայ
16 հաստատութիւն. Ով Տէր մեր Աստուած, բոլոր այս առատութիւնը որ մենք պատրաստեցինք քեզ մի տուն շինելու քո սուրբ անուան համար, քո ձեռիցն է
17 գա, և բոլորը քոնն է. Եւ գիտեմ, ով իմ Աստուած, որ դու փորձում ես սիրտը և սիրում ես ուղղութիւն. ես իմ սրտի ուղղութեամբը ընծայեցի այս ամենը, և հիմա ուրախութեամբ տեսայ քո այստեղ գտնուող ժողովուրդը որ քեզ կամաւոր ընծայ
18 մատուցեց. Ով Տէր՝ մեր Հայրերի Աբրահամի, Իսահակի և Իսրայէլի Աստուածը, պահիր սա յաւիտեան՝ քո ժողովրդի սրտի խորհուրդների այս միտքը, և նորանց սիրտը հաստատիր քեզ վե-
19 րայ, Եւ իմ որդի Սողոմոնին կատարեալ սիրտ տուր, որ պահէ քո պատուիրանքները, քո վկայութիւնները և քո կանոնները, և որ այս բոլորը կատարէ և շինէ այն պալատը, որի պատրաստութիւնը ես արել եմ.
20 Եւ Դաւիթն ասեց բոլոր ժողովքին. Հիմա օրհնեցէք ձեր Տէր Աստուածին. և բոլոր ժողովքն օրհնեցին իրանց հայրերի Տէր Աստուածն, և խոնարհուելով երկրպագութիւն արին Տիրոջը և թագաւորին. Եւ զոհեր ու ողջա-
21 կէզներ մատուցրին Տիրոջն այն օրուայ հետևեալ օրը հազար զուարակ, հազար խոյ, հազար գառն, և նորանց թափելու նուէրները, և շատ զոհեր բոլոր Իսրայէլի համար. Եւ այն օրը կերան և խմեցին Տիրոջ առաջը մեծաւ ուրախութեամբ. և երկրորդ անգամ
22 թագաւոր արին Դաւիթի որդի Սողոմոնին և Տիրոջ համար թագաւոր օծեցին, և Սադոկին՝ քահանայ.
23 Եւ Սողոմոնը Տիրոջ աթոռի վերայ թագաւոր նստեց իր հայր Դաւիթի տեղը, և յաջողութիւն գտաւ. և բոլոր Իսրա-
24 յէլը լսում էր նորան. Եւ ամեն իշխաններն ու զօրաւորները, նաև Դաւիթ թագաւորի բոլոր որդիները հպատակութեան Սողոմոն
25 թագաւորին. Եւ Տէրը մեծացրեց Սողոմոնին շատ բարձր բոլոր Իսրայէլի աչքի առաջին, և նորա վերայ մի թագաւորութեան փառք դրաւ, որ նորանից առաջ Իսրայէլի վերայ եղող ոչ մի թա-
26 գաւոր չէր ունեցել.
27 Այսպէս Յեսսէի որդի Դաւիթը թագաւորեց բոլոր Իսրայէլի վերայ. Եւ Իսրայէլի վերայ նորա տած թագաւորութեան օրերը քառասուն տարի էին. Քերրոնում թագաւորեց եօթը տարի, իսկ Երուսաղէմում թագաւորեց երեսունևերեք տարի. Եւ մեռաւ
28 բարի ծերութեամբ, կշտացած օրերով, հարստութիւնով և փառքով. և նորա որդի Սողոմոնը թագաւորեց նորա տեղ. Եւ
29 Դաւիթ թագաւորի առաջին և վերջին գործերը, ահա նորանք գրուած են տեսանող Սամուէլի մատենագրի մէջ և Նաթան մարգարէի մատենագրի մէջ և Գադ տեսանողի մատենագրի մէջ,
30 Նորա բոլոր թագաւորութեան և զօրութեան հետ. նաև այն ժամանակները որ անց կացան նորա վերայ և Իսրայէլի վերայ և երկրի բոլոր թագաւորութիւնների վերայ.

ԵՐԿՐՈՐԴ ՄՆԱՑՈՐԴԱՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ Դաւիթի որդի Սողոմոնը զօրացաւ իր թագաւորութիւնութիւնը. և իր Տէր Աստուածը իր հետ էր, և նորան մեծացրեց բարձրացնելով։ 2 Եւ Սողոմոնը խօսեց բոլոր Իսրայէլի հետ՝ հազարապետների, հարիւրապետների, դատաւորների և բոլոր Իսրայէլի մեծ տոհմապետների հետ։ 3 Եւ Սողոմոնը և բոլոր ժողովքը նորա հետ գնացին Գաբաւոնի բարձրաւանդակը. որովհետև Աստուծոյ ժողովքի խորանը, որ Տիրոջ ծառան Մովսէսը շինել էր անապատումը, այնտեղ էր։ 4 Միայն Թէ Դաւիթը վեր էր տարել Աստուծոյ տապանակը Կարիաթարիմից նորա համար պատրաստած տեղը. որովհետև նորա համար երուսաղէմումը մի վրան էր 5 կանգնեցրել։ Եւ այն պղնձի սեղանը, որ շինել էր Ուրեան Ուրիի որդի Բեսելիէլը, այնտեղ էր Տիրոջ խորանի առաջը. և նորան այցելեցին Սողոմոնը և ժողովքը։ 6 Եւ Սողոմոնը վեր էլաւ այնտեղ պղնձի սեղանի վերայ Տիրոջ առաջը, որ ժողովքի խորանումն էր, և նորա վերայ հազար ողջակէզ մատուցրեց։

7 Այն գիշերը Աստուած երևեցաւ Սողոմոնին և նորան ասեց. Խնդրիր Թէ քեզ ինչ տամ։ 8 Եւ Սողոմոն ասեց Աստուածուն. Դու մեծ ողորմութիւն արիր իմ Հայր Դաւիթին, և ինձ թագաւոր արիր նորա տեղը։ 9 Արդ, ով Տէր Աստուած, թող հաստատ մնայ իմ Հօրը քո խօսքդ, որովհետև դու ինձ թագաւոր արիր երկրիս հողին չափ մի ժողովրդի վերայ։ 10 Ուրեմն ինձ իմաստութիւն և գիտութիւն տուր, որ այս ժողովրդի առաջը դուրս գամ և մտնեմ. որովհետև ո՞վ պիտի դատէ քո այս մեծ ժողովուրդը։ 11 Աստուած ասեց Սողոմոնին. Որովհետև սա եղաւ քո սրտումը, և չխնդրեցիր հարստութիւն, ստացուածք և փառք, և քո թշնամիների կեանքը, նաև երկար օրեր չխնդրեցիր, այլ քեզ համար խնդրեցիր իմաստութիւն և գիտութիւն, որ դատես իմ ժողովուրդը, որի վերայ ես քեզ թագաւոր արի, 12 Քեզ իմաստութիւն և գիտութիւն է տրվում, բայց հարստութիւն և ստացուածք և փառք էլ պիտի տամ քեզ, այնպես որ քեզանից առաջ եղած թագաւորներին նորա նմանը չէ եղած և քեզանից յետոյ էլ նմանը չի լինիլ։ 13 Եւ Սողոմոնը գնաց Գաբաւոնի բարձրաւանդակից՝ ժողովքի խորանի առաջից երուսաղէմ, և թագաւորեց Իսրայէլի վերայ։

14 Եւ Սողոմոնը կառքեր և ձիաւորներ ժողովեց. և նա հազար չորս հարիւր կառք և տասներկու հազար ձիաւորներ ունէր, և նորանց դրաւ կառքի քաղաքներումը և թագաւորի մօտ երուսաղէմումը։ 15 Եւ թագաւորը արծաթին ու ոսկին երուսաղէմումը քարերի պէս արաւ, և եղևնափայտերը դաշտի մէջի մեծ թզենիների չափ արաւ շատութեամբ։ 16 Եւ Սողոմոնի ձիերը բերվում էին Եգիպտոսից. և թագաւորի վաճառականների կարաւանը երամակով բերում էին ծախու։ 17 Եւ Եգիպտոսից վեր էին բերում և դուրս հանում մէկ կառքը վեց հարիւր արծաթով, իսկ ձին՝ հարիւր և հիսուն արծաթով. և հիտտացիների բոլոր թագաւորների համար, և Ասորիների բոլոր թագաւորների համար. այսպէս նորանց ձեռամբ էին դուրս բերում։

Գլ. Բ

1 Եւ Սողոմոնը հրամայեց, որ Տիրոջ անուան համար մի տուն շինեն և մի տուն՝ իր թագաւորութեան համար։ 2 Եւ Սողոմոնը եօթանասուն հազար բեռնակիր և ութսուն հազար քար կրող մարդ համարեց սարումը, և նորանց վերայ վերակացուներ՝ երեք հազար վեց հարիւր։

3 Եւ Սողոմոնը խրկեց ուղարկեց Տիւրոսի թագաւոր Քիրամին թէ ինչպէս որ արիր իմ Հայր Դաւիթի հետ և նորա համար եղևնափայտեր ուղարկեցիր, որ մի տուն շինէ նորանում կենալու համար, 4 Ահա ես մի տուն եմ շինում իմ Տէր Աստուծոյ անուան համար որ նորան նուիրեմ, նորա առաջին անուշահոտ խունկ ծխելու, միշտ առաջաւորութեան հացը դրուելու համար, և որ առաւօտ ու իրիկուն, շաբաթներին ու ամսագլուխներին և մեր Տէր Աստուծոյ տօներին ողջակէզներ մատուցանուի. սա յաւիտեան պարտ է Իսրայէլի վերայ։ 5 Եւ այն տունը, որ ես շինում եմ, մեծ է. որովհետև մեծ է մեր Աստուածը ամեն աստուածներից։ 6 Եւ ո՞վ է կարող նորա համար տուն շինել, որովհետև երկինքն ու երկինքների երկինքը նորան չեն պարունակիլ. և ո՞վ եմ ես, որ նորա համար տուն շինեմ, բայց միայն մի խունկ ծխելու փէշ նորա առաջը։ 7 Ըղ։ Եւ արդ ինձ համար մէկ իմաստուն մարդ ուղարկիր որ գործէ ոսկիով, արծաթով, պղնձով, երկաթով, ծիրանագոյնով և կարմիր ու կապուտակով, և իմանայ քանդակներ քանդակել այն իմաստունների հետ, որոնք ինձ մօտ են Յուդայի Եւրոսում և Երուսաղէմում, որոնց իմ Հայրը 8 Դաւիթ պատրաստել է։ Եւ ինձ համար եղևնափայտեր և մայր փայտեր և ալմուգ փայտեր ուղարկիր Լիբանանից. որովհետև ես գիտեմ որ քո ծառաները Լիբանանի փայտերը կտրելը գիտեն. և ահա իմ ծառաները քո ծառաների հետ թող լինին, 9 ինձ համար շատ փայտ պատրաստեն. որովհետև այն տունը որ ես շինում եմ, մեծ է և հրաշալի։ 10 Եւ ահա այն փայտ կտրող փայտահարներին, քո ծառաներին՝ տալիս եմ երեսուն հազար կոր քաղաքացի գարի և քսան հազար կոր գարի քսան հազար կոր, և գինի քսան հազար մար, և իւղ քսան հազար մար։

11 Եւ Տիւրոսի թագաւոր Քիրամը նամակով պատասխանեց և նորան ուղարկեց Սողոմոնին. Տէրը իր ժողովուրդը սիրելով քեզ նորանց վերայ թագաւոր է դրել։ 12 Քիրամն ասեց. Օրհնեալ է Իսրայէլի Տէր Աստուածը, որ ըստեղծել է երկինքը և երկիրը, որ Դաւիթ թագաւորին մի իմաստուն որդի է տուել, որ գիտէ հանճար և գիտութիւն, որ պիտի մի տուն շինէ Տիրոջ համար և մի տուն՝ իր թագաւորութեան համար։ 13 Եւ արդ մէկ իմաստուն մարդ ուղարկեցի հանճար գիտացող Քիրամ-Աբիին։ 14 Նա Դանի աղջիկներից եղող մի կնկայ տղայ էր, և նորա Հայրը մի Տիւրացի էր, որ գիտէր գործել ոսկով, արծաթով, պղնձով, երկաթով, քարերով և փայտերով, ծիրանագոյնով, կապուտակով, բեհեզով և կարմիրով, և ամեն տեսակ քանդակներ քանդակել, և մտածել ամեն մտածմունք, որ իրան կ'յանձնուի, քո իմաստուններին հետ և քո Հայր Դաւիթի իմ տիրոջ իմաստուններին հետ։ 15 Եւ հիմա այն ցորենը, գարին, իւղը և գինին, որ իմ տէրն ասել է, թող ուղարկէ իր ծառաներին, 16 Իսկ մենք կ'կտրենք Լիբանանից բոլոր քեզ պէտք եղող փայտերը, և լաստերով նորանց կ'բերենք քեզ համար ծովով Յոպպէ. և դու վեր տար նորանց Երուսաղէմ։

17 Եւ Սողոմոնը համարեց Իսրայէլի երկրումն եղող բոլոր օտարազգի մարդկանցը այն համարելուց յետոյ, որ նորա Հայր Դա-

ւիթը համարել էր, և գտնուեցան հարիւր յիսուն երեք հազար
18 վեց հարիւր մարդ։ Եւ նորանցից եօթանասուն հազարը բեռնակիր արաւ, և ութսուն հազարը սարումը [illegible] կտրող, և վեց հազարը վերակացուներ, որ ժողովուրդը բանեցնեն։

ԳԼ. Գ

1 Եւ Սողոմոնն սկսեց շինել Տիրոջ տունը Երուսաղէմում Մօրիա սարի վերայ, ուր որ երևեցաւ նորա հայր Դաւիթին այն տեղի վերայ որ Դաւիթը պատրաստել էր Յեբուսացի Ոռնայի
2 կալումը։ Եւ նա սկսեց շինել իր թագաւորութեան չորրորդ տարուայ երկրորդ ամսի երկուսին։
3 Եւ այս է Սողոմոնի [illegible] հիմը Աստուծոյ տունը շինելու համար. երկայնութիւնը նախնի չափով վաթսուն կանգուն, և լայ-
4 նութիւնը քսան կանգուն։ Եւ առաջի սրահի երկայնութիւնը տան լայնութեան համեմատ քսան կանգուն էր, և բարձրութիւնը՝ հարիւրեւ քսան. և նորան պատեց ներսիցը մաքուր ոսկիով։
5 Եւ մեծ տունը ծածկեց մայր փայտերով, և նորան պատեց լաւ ոսկիով, և նորա վերայ հանեց
6 արմաւենիներ և շղթաներ։ Եւ տունը պատեց պատուական ակունքներով շքեղութեան համար. և ոսկին Փարուիմի ոսկի
7 էր։ Եւ տան գերանները, սեմերը, նորա պատերը և նորա դռները ոսկիով պատեց, և պատերի վերայ քերովբէներ քանդակեց։
8 Եւ սրբութեանց սրբութիւնի տունը շինեց. նորա երկայնութիւնը տան լայնութեան համեմատ՝ քսան կանգուն, և նորա լայնութիւնը՝ քսան կանգուն. և նորան պատեց վեց հարիւր տա-
9 ղանդ մաքուր ոսկիով։ Եւ բեւեռների կշիռը մինչև յիսուն սիկղ ոսկի էր. և վերնատուններ-
10 ը պատեց ոսկիով։ Եւ սրբութեանց սրբութիւնում երկու քանդակագործ քերովբէներ շինեց, և նորանց պատեց ոսկիով։
11 Եւ քերովբէների թևերի երկայնութիւնը քսան կանգուն էր. մէկ թևը հինգ կանգուն էր որ դպչում էր տան պատին. և միւս թևը հինգ կանգուն էր որ դպչում էր միւս քերովբէի թևին։
12 Եւ [illegible] քերովբէի մէկ թևը հինգ կանգուն էր, որ դպչում էր տան պատին, և միւս թևը՝ հինգ կանգուն որ կցուած էր միւս քերովբէի թևին։
13 Այս քերովբէների տարածուած թևերը քսան կանգուն էին, որ կանգնած էին իրանց ոտքերի վերայ, և նորանց երեսը դէպի տունն էր։
14 Եւ վարագոյրը շինեց կապուտակից, ծիրանեգոյնից, կարմիրից և բեհեզից, նորա վերայ քերովբէներ գործեց։
15 Եւ տան առաջին երկու սիւն շինեց՝ երեսունեւհինգ կանգուն երկայնութեամբ, և ամեն մէկի
16 գլխի խոյակը հինգ կանգուն։ Եւ դաբիրի միջի [illegible] շղթաներ շինեց և դրաւ սիւների գլխներին, և հարիւր նուռ շինեց և անցրեց
17 շղթաներին. Եւ սիւները կանգնեցրեց տաճարի առաջը՝ մէկը աջ կողմին միւսը ձախ կողմին, և աջի անունը դրաւ Յաքին և ձախի անունը Բոոզ։

ԳԼ. Դ

1 Եւ մի պղնձի սեղան շինեց, երկայնութիւնը քսան կանգուն և լայնութիւնը քսան կանգուն և բարձրութիւնը տասը կանգուն։
2 Եւ ձուլածոյ ծովը շինեց, նորա մէկ շրթունքից մինչև միւս շրթունքը տասը կանգուն էր, բոլորաձև էր շուրջանակի, և հինգ կանգուն բարձրութիւնը, և մի երեսուն կանգունանոց դերձան շրջապատում էր նորան շուրջա-
3 նակի. Եւ *եզների նմանութիւններ կային նորա տակին, որ շուրջանակի նորան շրջապատում էին, և [illegible] տասը՝ մէկ կանգու-

*գ Թագ. է. 24՝ կոճակներ։

նում պատում էին ծովը շուրջանակի. երկու կարգ *եզներ ձուլուած նորա ձուլուելու ժա-
4 մանակ։ Նա կանգնած էր տասնեւերկու եզների վերայ՝ երեքը նայում էին հիւսիս, և երեքը նայում էին արևմուտք, երեքը նայում էին հարաւ և երեքը նայում էին դէպի արևելք, և ծովը վերևից նորանց վերայ էր. և նորանց ամենի ետևի կողմերը
5 դէպի ներս էր։ Եւ նորա հաստութիւնը ձեռքի չափ էր, և նորա շրթունքը բաժակի շրթունքի գործ էր իբրև շուշան ծաղիկ։ Պարունակութիւնը երեք հազար մար էր տանում։
6 Եւ տասը աւազան շինեց, և հինգը դրաւ աջ կողմին և հինգը ձախ կողմին նորանց մէջ լուացուելու համար. ողջակէզի բաները նորանցում էին լուանում. իսկ ծովը որ քահանաները լուացուէին նորանում։
7 Եւ տասը ոսկի աշտանակը շինեց իրան գաղափարին համեմատ և դրաւ տաճարումը՝ հինգը աջ կողմին և հինգը ձախ կողմին։
8 Եւ տասը սեղան շինեց և դրաւ տաճարումը՝ հինգը աջ կողմին և հինգը ձախ կողմին. և հարիւր ոսկի կոնքեր շինեց։
9 Եւ շինեց քահանաների սրահը, մեծ սրահը և սրահի դռները. և նորանց դռները պատեց
10 պղնձով։ Եւ ծովը դրաւ աջ կողմին դէպի արևելք հարաւի կողմումը։
11 Եւ (Քիրամը) շինեց կաթսաները, թիակները և կոնքերը։ Եւ Քիրամը վերջացրեց այն բոլոր գործը, որ արաւ Սողոմոն թագաւորի համար Աստուծոյ տանը.
12 Երկու սիւները, և գունտ խոյակները այն երկու սիւների գլխներին, և երկու ցանցերը այն երկու գունտ խոյակները, որ սիւների գլխներին էին, ծածկե-
13 լու համար, Եւ չորս հարիւր նռները այն երկու ցանցերի համար՝ երկու կարգ նռներ մէկ ցանցի համար, որ ծածկէ այն երկու գունտ խոյակները, որ սիւ-
14 ների դէմ են. Եւ շինեց մեքենովթները, և †շինեց աւազանները մեքենովթների վերայ։
15 Մէկ ծովը, և տասնեւերկու եզները նորա տակին. Եւ կաթսաները,
16 թիակները և մսահանները, և նորանց բոլոր գործիքները շինեց Քիրամ-Աբին Սողոմոն թագաւորի համար Տիրոջ տան համար
17 փայլուն պղնձից։ Յորդանանի դաշտումը թանձր հողի վերայ նորանց ձուլել տուաւ թագաւորը Սոկքովթի և Սարեդայի
18 մէջտեղը։ Եւ Սողոմոնը շինեց այս բոլոր գործիքները խիստ շատ, այնպէս որ չ՚որոշուեցաւ պղնձի
19 կշիռը։ Եւ Սողոմոնը շինեց Աստուծոյ տան բոլոր գործիքները, ոսկի սեղանը և սեղանները, որոնց վերայ [illegible] էին առաջաւորութեան հացը. Եւ աշտա-
20 նակները ու նորանց ճրագները, որ նորանց վառեն ըստ կարգին դաբիրի առաջը՝ մաքուր ոսկիից.
21 Նաև ծաղիկները և ճրագները և ունելիները՝ ոսկիից՝ բոլորովին ոս-
22 կիից. Եւ բազմակալները, տաշտերը, տուփերը և բուրվառները՝ մաքուր ոսկիից. և տան դռները՝ սրբութեանց սրբութիւնի ներսի դռան փեղկերը և տաճարի տան դռները՝ ոսկիից։

ԳԼ. Ե

1 Եւ այսպէս վերջացաւ այն ամեն գործը, որ Սողոմոնն արաւ Տիրոջ տան համար. և Սողոմոնը բերաւ իր հայր Դաւիթի նուէրները՝ արծաթը, ոսկին և բոլոր գործիքները դրաւ Աստուծոյ տան գանձերի մէջ։
2 Այն ժամանակ Սողոմոնը ժողովեց Իսրայէլի ծերերին, ցեղերի բոլոր իշխաններին, Իսրայէլի որդկանց տոհմապետներին Երուսաղէմ, որ Տիրոջ ուխտի տապանակը վեր տանեն Դաւիթի
3 քաղաքիցը, որ է Սիօն։ Եւ ժո-

†տասը. գ Թագ. է. 43։

զովուեցան թագաւորի մօտ բո-
լոր Իսրայէլացիք տօնին, որ է
4 եօթներորդ ամիսը։ Եւ Իսրայէլի
բոլոր ծերերն եկան և Ղևտացի-
5 ները վեր առան տապանակը։ Եւ
տապանակը և ժողովքի խորանը
և խորանում եղած բոլոր սուրբ
կարասիքը վեր տարին. քահա-
նաները և Ղևտացիները վեր տա-
6 րին նորանց։ Եւ Սողոմոն թագա-
ւորը և Իսրայէլի բոլոր ժողով-
քը, որ ժողովուել էին նորա
մօտ, տապանակի առաջը անթիւ
և անհամար շատ ոչխարներ ու
7 եզներ էին զոհում։ Եւ քահա-
նաները բերին Տիրոջ ուխտի տա-
պանակը իր տեղը տան դաբիրը
սրբութեանց սրբութիւնի մէջը
8 քերովբէների թևերի տակ։ Եւ
քերովբէներն իրանց թևերը տա-
րածում էին տապանակի տեղի
վերայ, և քերովբէները ծած-
կում էին տապանակը և նորա
9 ձողերը վերևից։ Եւ ձողերը եր-
կարացրին, և երևեցան ձողերի
գլուխները *տապանակիցը դա-
բիրի առաջը, բայց դրսումը չէին
երևում. և նորանք այնտեղ են
10 մինչև այսօր։ Տապանակումը մի
բան չ'կար բացի երկու քարե-
ղէն տախտակներիցը, որ Մովսէսը
տուաւ Քորեբումը, որ Տէրը ուխ-
տեց Իսրայէլի որդկանց հետ՝ նո-
րանք Եգիպտոսից դուրս գալիս։
11 Եւ եղաւ երբոր քահանաները
սրբարանիցը դուրս եկան, որով-
հետև բոլոր գտնուած քահա-
նաները իրանց սրբել էին առանց
իրանց դասակարգութիւնը պա-
12 հելու. Եւ երգիչ Ղևտացիների
ամենը՝ Ասափը, Եմանը, Իդի-
թունը և նորանց որդիներն ու
նորանց եղբայրները բեհեզներ
հագած ծնծղաներով, տաւիղ-
ներով և քնարներով կանգնած
էին սեղանի արևելեան կողմին,
և նորանց հետ հարիւր քսան
քահանայ փողեր էին հնչեցնում.
13 Եւ էր ինչպէս մէկ՝ փող հնչե-
ցնողները և երգողները՝ մէկ ձայն
էր լսվում Տիրոջը օրհնելիս և

*սրբութիւնիցը. Տես գ Թագ. ը. 8։

գովելիս. և հէնց, որ փողերի և
ծնծղաների և նուագարանների
ձայնը բարձրացրին Տիրոջը օրհ-
նելով, որովհետև բարի է, որով-
հետև նորա ողորմութիւնը յա-
ւիտեան է. այն ժամանակ Տիրոջ
տունը լցրեց ամպը. Եւ քահա- 14
նաները չ'կարողացան կանգնել
ծառայելու ամպի պատճառովը,
որովհետև Տիրոջ փառքը լցրել
էր Աստուծոյ տունը։

ԳԼ. Զ.

Այն ժամանակ Սողոմոնն ասեց. 1
Տէրն ասեց թէ մառախուղում է
բնակվում. Եւ ես քեզ համար 2
բնակուելու տուն շինեցի, այս-
ինքն մի տեղ որ դու յաւիտեան
բնակուես։ Եւ թագաւորն իր ե- 3
րեսը դարձրեց և օրհնեց Իսրա-
յէլի բոլոր ժողովքը. և Իսրայէլի
բոլոր ժողովքը կանգնել էր։ Եւ 4
նա ասեց. Օրհնեալ լինի Իսրա-
յէլի Տէր Աստուածը, որ իր բե-
րանովը խօսեց իմ հայր Դաւիթի
հետ, և իր ձեռքովը կատարեց,
ասելով. Այն օրիցն 'ի վեր որ իմ 5
ժողովուրդն Եգիպտոսից հանե-
ցի, Իսրայէլի բոլոր ցեղերից մի
քաղաք չ'ընտրեցի տուն շինելու
համար որ իմ անունն այնտեղ լի-
նի, և մի մարդի չ'հաւանեցի, որ
իմ Իսրայէլ ժողովրդի վերայ ա-
ռաջնորդ լինի։ Այլ Երուսաղէմն 6
ընտրեցի, որ իմ անունն այնտեղ
լինի, և Դաւիթին հաւանեցի,
որ իմ Իսրայէլ ժողովրդի վերայ
լինի։ Եւ իմ հայր Դաւիթը սըր- 7
տումը դրել էր որ Իսրայէլի Տէր
Աստուծոյ անուան համար տուն
շինէ։ Եւ Տէրն ասեց իմ հայր 8
Դաւիթին. Որովհետև դու քո
սրտումը դրել էիր, որ իմ անուան
համար մի տուն շինես. լաւ ես
արել որ այս բանը դրել ես սըր-
տումդ. Միայն թէ դու պիտի 9
չ'շինես տունը, այլ քո երանքից
դուրս եկող որդիդ՝ նա պիտի
տուն շինէ իմ անուան համար։
Եւ Տէրը հաստատեց իր ասած 10
խօսքը, և ես կանգնեցի իմ հայր
Դաւիթի տեղ և նստեցի Իսրա-

յէլի աթոռի վերայ ինչպէս որ
Տէրն ասեց, և ես շինեցի տունը
Իսրայէլի Տէր Աստուծոյ անուան
11 համար։ Եւ այնտեղ դրի տա-
պանակը, ուր որ է Տիրոջ ուխ-
տը, որ նա ուխտեց Իսրայէլի
որդկանց հետ։
12 Եւ նա կանգնեց Տիրոջ սեղա-
նի առաջը բոլոր Իսրայէլի ժո-
ղովքի դիմացը. և իր ձեռքերը
13 տարածեց. (Որովհետև Սողոմո-
նը մի պղնձի ամբիոն էր շինել և
նորան դրել գաւիթի մէջտեղը.
նորա երկայնութիւնը հինգ կան-
գուն, և հինգ կանգուն նորա
լայնութիւնը և երեք կանգուն
նորա բարձրութիւնը. և ինքը
կանգնեց նորա վերայ, և իր
ծունկերը կրկնեց Իսրայէլի բոլոր
ժողովքի առաջը, և իր ձեռքե-
րը տարածեց դէպի երկինք.)
14 Եւ ասեց. Ով Տէր Աստուած
Իսրայէլի, քեզ պէս Աստուած
չ'կայ երկնքումը և երկրումս, որ
ուխտ և ողորմութիւն ես պա-
հում քո առաջին բոլոր որտանց
15 գնացող ծառաներիդ համար. Որ
պահեցիր ծառայիդ՝ իմ հայր
Դաւիթի համար այն որ նորան
ասեցիր. որ ասել էիր քո բերա-
նովը՝ և քո ձեռքովը կատարե-
16 ցիր, ինչպէս այսօր։ Եւ հիմա,
ով Իսրայէլի Տէր Աստուած, պա-
հիր ծառադ իմ հայր Դաւիթի
համար այն, ինչ որ նորա հետ
խօսեցիր ասելով. Քեզանից մարդ
չի պակասիլ իմ առաջին Իսրա-
յէլի աթոռի վերայ նստող, մի-
այն եթէ քո որդիքը պահեն ի-
րանց ճանապարհը, որ իմ օրէն-
քովը գնան, ինչպէս որ դու գը-
17 նացիր իմ առաջին։ Եւ արդ,
ով Իսրայէլի Տէր Աստուած,
թող հաստատուի քո խօսքը, որ
քո ծառայ իմ հայր Դաւիթի
հետ խօսեցիր։
18 Բայց իրա՞ւ Աստուած կ'բը-
նակուէ մարդկանց հետ երկրիս
վերայ. ահա երկինքն ու երկինք-
ների երկինքը չեն կարող քեզ
պարունակել, ո՞ւր մնաց իմ այս
19 շինած տունը։ Սակայն նայիր քո
ծառայի աղօթքին և նորա ա-

ղերսանքին, ով իմ Տէր Աստ-
ուած, որ լսես այս պաղատանքը
և այս աղօթքը, որ ծառադ ա-
ղօթում է քո առաջին. Որ քո 20
աչքերը բաց լինին այս տան վե-
րայ՝ գիշեր և ցերեկ այս տեղի
վերայ, որի համար ասեցիր թէ
քո անունը այնտեղ պիտի լինի.
որ լսես այն աղօթքը որ ծառադ
աղօթում է այս տեղը. Որ լսես 21
ծառայիդ և քո Իսրայէլ ժողո-
վրդի աղերսանքը, որ մատու-
ցանում են այս տեղը. և արդ
լսիր դու քո բնակուելու տեղից՝
երկնքիցը, և լսելով ներիր։
Եթէ մէկը իր ընկերի դէմ մե- 22
ղանչէ, և նա նորան երդում ա-
ռաջարկէ նորան երդմնեցնելու
համար, և երդումը գայ քո սե-
ղանի առաջին այս տունը, Այն 23
ժամանակ դու լսիր երկնքիցը և
կատարիր, և դատիր քո ծառա-
ներին, որ չարին հատուցումը
տաս և նորա ճանապարհը նորա
գլուխը բերես, և արդարին ար-
դարացնես, որ նորան հատու-
ցանես իր արդարութեան հա-
մեմատ։
Եւ եթէ քո ժողովուրդն Իս- 24
րայէլը քեզ դէմ մեղանչելուն
համար իր թշնամիի առաջին յաղ-
թուի, և դէպի քեզ դառնան և
քո անուանը փառք տան և ա-
ղօթեն ու աղերսեն քո առաջին
այս տանը, Այն ժամանակ դու 25
լսիր երկնքիցը և ներիր քո Իս-
րայէլ ժողովրդի մեղքը, և նո-
րանց ետ դարձրու այն երկիրը,
որ տուել ես նորանց՝ և նորանց
հայրերին։
Եւ երբոր երկինքը գոցուի և 26
անձրև չ'լինի նորանց քեզ դէմ
մեղանչելուն համար, և նորանք
աղօթք անեն այստեղ և փառք
տան քո անուանը, և ետ դառ-
նան իրանց մեղքերիցը քո նորանց
նեղելու պատճառով, Այն ժա- 27
մանակ դու լսիր երկնքումը և
ներիր քո ծառաների և քո ժո-
ղովուրդ Իսրայէլի մեղքը, որ նո-
րանց ուսուցանես իրանց գնալու
բարի ճանապարհը, և անձրև
տաս քո երկրի վերայ, որ տուել

ես քո ժողովրդին իբրև ժառան-
գութիւն ։
28 Երբոր երկրի վերայ սով լինի,
ժանտախտ լինի, կամ խորշակա-
հարութիւն, կամ դալուկ, մա-
րախ կամ թրթուր, կամ երբոր
նորանց թշնամիները նորանց նե-
ղեն իրանց դռների երկրումը,
կամ որ և է հարուած կամ հի-
29 ւանդութիւն լինի, Քո բոլոր Իս-
րայէլ ժողովրդից մի որ և է մարդ
ինչ և է աղօթք և աղերսանք
մատուցանելու լինի, և ամեն մարդ
որ իր ցաւը և ախտը գիտէ և իր
ձեռքերը տարածէ դէպի այս
30 տունը, Այն ժամանակ դու լսիր
երկնքիցը՝ քո բնակուելու տեղիցը
և ներիր. և տուր այն մարդին
իր բոլոր ճանապարհների համե-
մատ, որ գիտացել ես նորա սիր-
տը, որովհետև դու միայն գի-
տես մարդկանց որդիների սիրտը ։
31 Որպէս զի քեզանից վախենան որ
գնան քո ճանապարհներումը բո-
լոր այն օրերը, որ նորանք կ'ապ-
րեն այս երկրի երեսին, որ դու
տուիր մեր հայրերին ։
32 Եւ օտարականն էլ, որ քո Իս-
րայէլ ժողովրդիցը չէ, որ հե-
ռու երկրից գայ քո մեծ անուան
և քո զօրաւոր ձեռքի և քո մեկ-
նած բազուկի համար, և գայ և
33 աղօթք անէ այս տանը. Այն ժա-
մանակ դու լսիր երկնքիցը՝ քո
բնակուելու տեղիցը, և արա այն
օտարականի դէպի քեզ կանչա-
ծի բոլորին համեմատ, որպէս զի
իմանան երկրի բոլոր ազգերը քո
անունը և քեզանից վախենան քո
Իսրայէլ ժողովրդի պէս, որ ի-
մանան թէ քո անունը կանչուել
է այս տան վերայ, որ ես շինեցի ։
34 Երբոր քո ժողովուրդը պատե-
րազմի գնայ իր թշնամիների դէմ
այն ճանապարհով որով դու նո-
րանց կ'ուղարկես, և նորանք ա-
ղօթք անեն դէպի քեզ այս քո
ընտրած քաղաքի և իմ քո ան-
ուան համար շինած տան ճանա-
35 պարհովը, Այն ժամանակ լսիր
երկնքիցը նորանց աղօթքը և նո-
րանց աղերսանքը և նորանց իրա-
ւունք արա ։

Երբոր քեզ դէմ մեղանչեն, 36
(որովհետև չ'կայ մարդ որ չ'մե-
ղանչէ.) և դու նորանց վերայ
բարկանաս և նորանց մատնես
թշնամիի ձեռքը, և նորանց գե-
րեվարները նորանց հեռու կամ
մօտ երկիր գերի տանեն, Եւ 37
զղջան իրանց սրտովը այն երկ-
րումը, ուր որ գերի են տար-
ուել, և դարձի գան և դէպի
քեզ աղերսեն իրանց գերու-
թեան երկրումն ասելով՝ Մեղք
գործեցինք, անօրէնութիւն և
անիրաւութիւն արինք, Եւ դէպի 38
քեզ դառնան իրանց բոլոր սրտո-
վը և իրանց բոլոր հոգովը իրանց
գերութեան երկրումը, ուր որ
նորանց գերի են տարել, և նո-
րանք աղօթք անեն այն երկրի
ճանապարհովը որ դու տուել ես
նորանց հայրերին, և դէպի այն
քաղաքը, որին դու հաւանեցիր,
և դէպի այս տունը որ ես շինե-
ցի քո անուան համար, Այն ժա- 39
մանակ լսիր երկնքիցը՝ քո բնակ-
ուելու տեղիցը նորանց աղօթքը
և նորանց աղերսանքը և նորանց
իրաւունք արա, և ներիր քո ժո-
ղովրդին որ քեզ դէմ մեղանչել
է ։ Հիմա, ով իմ Աստուած, 40
թող քո աչքերը բաց լինին և
քո ականջները մտիկ անեն այս
տեղի աղօթքին ։ Եւ արդ, ով 41
Տէր Աստուած, վեր գնա քո
հանգստեան տեղը, դու և քո
զօրութեան տապանակը. քո քա-
հանաները, ով Տէր Աստուած,
փրկութիւն հագնեն, և քո սուր-
բերն ուրախանան բարութիւնով ։
Ով Տէր Աստուած, քո օծեալի 42
երեսը մի մերժիր. յիշիր քո ծա-
ռայ Դաւիթին խոստացած ողոր-
մութիւններդ ։

ԳԼ. Է

Եւ երբոր Սողոմոնը վերջացրեց 1
աղօթքը, կրակն իջաւ երկնքից
և սպառեց ողջակէզներն ու զո-
հերը. և Տիրոջ փառքը լցրեց
տունը ։ Եւ քահանաները չ'կա- 2
րողացան մտնել Տիրոջ տունը,
որովհետև Տիրոջ փառքը լցրել
էր Տիրոջ տունը ։ Եւ բոլոր Իս- 3

բայէլի որդիքը տեսնում էին կը-
րակն իջնելիս, և Տիրոջ փառքը
տան վերայ էր. և ընկան երեսի
վերայ գետինը քարայատակի վե-
րայ և երկրպագութիւն արին՝
Տիրոջը օրհնելով, թէ բարի է,
թէ նորա ողորմութիւնը յաւիտ-
4 եան է ։ Եւ թագաւորն ու բո-
լոր ժողովուրդը զոհեր էին մա-
5 տուցանում Տիրոջ առաջին ։ Եւ
Սողոմոն թագաւորը քսանևեր-
կու հազար արջառ և հարիւր
քսան հազար ոչխար զոհ արաւ,
այսպէս թագաւորն ու բոլոր ժո-
ղովուրդն Աստուծոյ տան նա-
6 ւակատիքն արին ։ Եւ քահանա-
ները կանգնած էին իրանց պաշ-
տօնումը, և Ղևտացիները՝ Տի-
րոջ նուագարաններովը, որ Դա-
ւիթ թագաւորը շինել էր Տի-
րոջը գովելու, որ նորա ողորմու-
թիւնը յաւիտեան է, Դաւիթի
օրհներգութիւնը նորանց ձեռ-
քովը լինելով, և քահանաները
փողերը հնչեցնում էին նորանց
առաջին. և բոլոր Իսրայէլը կանգ-
նած էր ։
7 Եւ Սողոմոնը սրբեց Տիրոջ տան
առաջին գաւիթի մէջտեղը, ո-
րովհետև այնտեղ մատուցրեց
ողջակէզները և խաղաղութեան
զոհերի ճարպը, որովհետև պղնձի
սեղանը, որ Սողոմոնը շինել էր,
չ'կարողացաւ պարունակել ող-
ջակէզները և հացի նուէրը և
8 ճարպը ։ Եւ այն ժամանակ Սո-
ղոմոնը և բոլոր Իսրայէլը նորա
հետ տօնը եօթը օր կատարեցին
շատ մեծ ժողովքով Եմաթից
9 մինչև Եգիպտոսի հեղեղատը ։ Եւ
ութերորդ օրը մեծ ժողովք ա-
րին, որովհետև եօթն օր սեղանի
նաւակատիքն արին և եօթն օր՝
10 տօնը ։ Եւ եօթներորդ ամսի քը-
սանևերեքերորդին Սողոմոնն ար-
ձակեց ժողովրդին իրանց վրան-
ները՝ ուրախացած և զուարթ
սրտով այն բարիքների համար,
որ Տէրն արել էր Դաւիթին, Սո-
ղոմոնին և իր Իսրայէլ ժողովրդին ։
11 Եւ Սողոմոնը վերջացրեց Տիրոջ
տունը և թագաւորի տունը, և
ամեն ինչ որ եկել էր Սողոմոնի
սիրտը, որ անէր Տիրոջ տանը և
իր տանը՝ յաջողուեց ։
Եւ Տէրը երևեցաւ գիշերը Սո- 12
ղոմոնին և ասեց նորան. Քո ա-
ղօթքը լսեցի և այս տեղը ընտ-
րեցի ինձ համար իբրև զոհի տուն ։
Եթէ ես կապեմ երկինքը և անձ- 13
րև չ'լինի, և եթէ մարախին պատ-
ուիրեմ որ երկիրն ուտէ, և եթէ
ժանտախտ ուղարկեմ իմ ժողո-
վրդի մէջ, Եւ իմ ժողովուրդը, 14
որի վերայ կոչուած է իմ անու-
նը, խոնարհուին և աղօթք ա-
նեն և իմ երեսը խնդրեն և ի-
րանց չար ճանապարհներիցը ետ
դառնան, այն ժամանակ ես կը
լսեմ երկնքիցը և կ'ներեմ նո-
րանց մեղքը և կ'բժշկեմ նորանց
երկիրը ։ Արդ իմ աչքերը բաց և 15
իմ ականջները մտիկ անող պի-
տի լինին այս տեղի աղօթքին ։
Արդ ես ընտրեցի և սրբեցի այս 16
տունը, որ իմ անունը յաւիտեան
այնտեղ լինի. և իմ աչքերն ու
իմ սիրտն ամեն ժամանակ այն-
տեղ լինին ։ Եւ դու էլ՝ եթէ իմ 17
առաջին գնաս ինչպէս որ գնաց
քո հայր Դաւիթը և բոլոր քեզ
պատուիրածիս պէս անես և իմ
կանոններն ու իրաւունքները պա-
հես, Այն ժամանակ քո թագա- 18
ւորութեան աթոռը հաստատ կը
պահեմ, ինչպէս որ ուխտեցի քո
հայր Դաւիթին ասելով. Քեզա-
նից մարդ չի պակասիլ Իսրայէլի
վերայ իշխող ։ Բայց եթէ դուք 19
ետ դառնաք և թողէք իմ կա-
նոններն ու պատուէրները որ ես
տուել եմ ձեր առաջին և գնաք
ուրիշ աստուածներ պաշտէք և
նորանց երկրպագութիւն անէք,
Այն ժամանակ ես նորանց (Իս- 20
րայէլացիներին) պիտի պոկեմ այն
երկրիցը, որ ես տուել եմ իրանց,
և այս տունը որ ես սրբել եմ
իմ անուան համար պիտի դէն
գցեմ և նորան պիտի առակ ու
խայտառակ անեմ բոլոր ազգերի
մէջ ։ Եւ այս բարձր տան մասին 21
պիտի ամեն նորա մօտով անցնո-
ղը զարմանայ և ասէ. Ինչու հա-
մար Տէրը այս երկրին և այս տա-
նը այսպէս արաւ. Եւ պիտի ա- 22

սեն. Որովհետև թողեցին իրանց հայրերի Տէր Աստուծուն, որ նորանց հանել էր Եգիպտոսի երկրից և ուրիշ աստուածներ բռնեցին և երկրպագութիւն արին նորանց և ծառայեցին նորանց. նորա համար նա այս բոլոր չարիքը բերաւ նորանց վերայ։

ԳԼ. Ը

1 Եւ եղաւ որ քսան տարուց յետոյ, որ Սողոմոնը շինեց Տիրոջ
2 տունը և իր տունը, Եւ այն քաղաքներն էլ, որ Քիրամը տուել էր Սողոմոնին, շինեց նորանց Սողոմոնը և այնտեղ բնակեցրեց
3 Իսրայէլի որդիներին. Գնաց Սողոմոնը Սուբայի Եմաթը, և տի-
4 րեց նորան։ Եւ շինեց անապատի միջի Թադմորը. և այն բոլոր շտեմարանների քաղաքները որ շինեց
5 Եմաթումը. Եւ վերի Բեթորոնը և ցածի Բեթորոնը շինեց՝ պարիսպներով, դռներով ու նիգե-
6 րով ամրացրած քաղաքներ։ Եւ Բաաղեթը և Սողոմոնի բոլոր շտեմարանների քաղաքները, և կառքերի բոլոր քաղաքները և ձիաւորների քաղաքները և Սողոմոնի բոլոր փափաքածը, որ փափաքեց շինելու Երուսաղէմում և Լիբանանում և իր տէրութեան բոլոր երկրումը։
7 Այն բոլոր ժողովուրդները որ մնացել էին Քետացիներից, Ամորհացիներից, Փերեզացիներից, Խևացիներից և Յեբուսացիներից,
8 որոնք Իսրայէլիցը չեն. Այսինքն նորանց որդիներիցը, որ մնացել էին նորանցից յետոյ այն երկրումը, որոնց Իսրայէլի որդիքը չէին փչացրել, Սողոմոնը նորանց հար-
9 կատու արաւ մինչև այսօր։ Բայց նորանք որ Իսրայէլի որդիներիցն էին՝ Սողոմոնը ծառաներ չ՛շինեց իր գործի համար. որովհետև նորանք պատերազմի մարդիկ էին, և նորա զօրավարների իշխանները և նորա կառքերի ու նորա ձի-
10 աւորների իշխաններն էին։ Եւ սորանք էին Սողոմոնի գլխաւոր իշխանները երկու հարիւր յի-

սուն՝ որոնք իշխում էին ժողովրդի վերայ։
Եւ Սողոմոնը վեր տարաւ Փա- 11
րաւօնի աղջկանը Դաւիթի քաղաքից՝ այն տունը որ շինել էր նորա համար. որովհետև ասեց. *Մի կին՝ պէտք է չ՛բնակուէ ինձ մօտ Իսրայէլի թագաւոր Դաւիթի տանը. որովհետև նորանք սուրբ են, ուր որ մտել էր Տիրոջ տապանակը։
Այն ժամանակ Սողոմոնը Տի- 12
րոջը ողջակէզներ մատուցրեց Տիրոջ սեղանի վերայ որ շինել էր սրահի առաջը, Որ իւրաքանչիւր 13
օրուայ համար ողջակէզ մատուցրուի Մովսէսի պատուիրածին համեմատ շաբաթներին, ամսագլուխներին և հանդիսաւոր տօներին տարին երեք անգամ՝ բաղարջակերաց տօնին, շաբաթների տօնին և տաղաւարահարաց տօնին։ Եւ նա դրաւ իր հայր Դա- 14
ւիթի կանոնովը քահանաների դասակարգերը իրանց պաշտամունքի վերայ, և Ղևտացիներին իրանց պահապանութիւնների վերայ, որ օրհներգեն և ծառայեն քահանաների առաջին իւրաքանչիւր օրուայ բանին չափ, և դրռնապաններին իրանց դասակարգերովը ամեն մէկ դռան, որովհետև այսպէս էր Աստուծոյ մարդ Դաւիթի հրամանը։ Եւ չը 15
խոտորեցին թագաւորի հրամանիցը, որ տուել էր քահանաների և Ղևտացիների նկատմամբ, ոչ մի բանի մասին և ոչ դանձարանների մասին։ Եւ այսպէս պատրաստուեցաւ Սողոմոնի բոլոր գործքը մինչև այսօր՝ Տիրոջ տան հիմը դնելուց մինչև նորա վերջացնելը. Տիրոջ տունը կատարուեցաւ։
Այն ժամանակ Սողոմոնը գը- 17
նաց Գասիոնգաբեր և Ելաթ ծովի եզրին Եդովմի երկրումը։ Եւ 18
Քիրամը նորա համար իր ծառաների ձեռքով նաւեր և ծովագէտ ծառաներ ուղարկեց, և նորանք գնացին Սողոմոնի ծառա-

*Կամ՝ իմ կինը

ների հետ Ոփիր, և այնտեղից չորս հարիւր յիսուն տաղանդ ոսկի առան և բերին Սողոմոն թագաւորի համար։

ԳԼ. Թ

1 Եւ Սաբայի թագուհին Սողոմոնի համբաւը լսելով՝ նորան խրթին հարցմունքներով փորձելու համար Երուսաղէմ եկաւ խիստ մեծ հանդէսով՝ խունկեր և շատ ոսկի և պատուական քարեր բեռնած ուղտերով, և գընաց Սողոմոնի մօտ, և նորա հետ խօսեց իր սրտումը եղած բոլոր
2 բաները։ Եւ Սողոմոնը մեկնեց նորա համար նորա ամեն խօսքերը. և Սողոմոնի համար մէկ գաղտնի բան չ՛կար, որ նա չը
3 մեկնէր նորա համար։ Եւ Սաբայի թագուհին տեսաւ Սողոմոնի իմաստութիւնը և նորա շինած
4 տունը. Եւ նորա սեղանի կերակուրը, նորա ծառաների նստելը և նորա սպասաւորների վեր կենալը, և նորանց հագուստները և նորա մատռուակները, և նորանց հագուստները, և նորա այն սանդուխքը, որով վեր էր գընում Տիրոջ տունը, և ուշը գըլ-
5 խիցը գնաց։ Եւ ասեց թագաւորին. Ճշմարիտ է այն խօսքը որ լսել եմ իմ երկրումը քո խօսքերի և քո իմաստութեան հա-
6 մար։ Եւ չէի հաւատում նորանց խօսքերին, մինչև որ եկայ և իմ աչքերը տեսան. և ահա ինձ չէ պատմուել քո շատ իմաստութեան կէսը. դու գերազանց ես այն համբաւիցը, որ ես
7 լսել եմ։ Երանի քո այս մարդկանցը և երանի քո այս ծառաներին, որ միշտ քո առաջին կանգնած են և լսում են քո ի-
8 մաստութիւնը։ Քո Եհովայ Աստուածը օրհնեալ լինի, որ քեզ հաւանեց, որ քեզ թագաւոր դնէ իր աթոռի վերայ քո Եհովայ Աստուծոյ համար. քո Աստուածը Իսրայէլին սիրեց որ նորան յաւիտեան հաստատէ, և քեզ նորանց վերայ թագաւոր

դրաւ իրաւունք և արդարութիւն անելու։ Եւ նա թագա- 9
ւորին հարիւր քսան տաղանդ ոսկի և խիստ շատ խունկ և պատուական քարեր տուաւ. և այնպիսի խունկ՝ որ Սաբայի թագուհին տուաւ Սողոմոն թագաւորին, չէ եղած։
Եւ Քիրամի ծառաները և Սո- 10
ղոմոնի ծառաներն էլ, որ Ոփիրից ոսկի էին բերում, ալմուգ փայտեր և պատուական քարեր էլ բերին։ Եւ թագաւորն այն 11
ալմուգ փայտերից Տիրոջ տան համար և թագաւորի տան համար աստիճաններ շինեց, և երգիչների համար քնարներ և տաւիղներ, և նորանց պէս նորանից առաջ չէր տեսնուած Յուդայի երկրումը։
Եւ Սողոմոն թագաւորը տուաւ 12
Սաբայի թագուհիին բոլոր նորա փափաքածը, որ ուզեց բացի այն որ ինքը բերել էր թագաւորի համար. և նա ետ դառաւ գնաց իր երկիրը ինքը և իր ծառաները։
Եւ մէկ տարուայ միջոցին Սո- 13
ղոմոնի համար եկած ոսկիի կըշիռն էր վեց հարիւր վաթսունևվեց տաղանդ ոսկի։ Բացի այն 14
որ առևտուր անողները և վաճառականները բերում էին, և բացի այն ոսկիից և արծաթից որ Արաբացիների թագաւորները և երկրի նախարարները բերում էին Սողոմոնի համար։
Եւ Սողոմոն թագաւորը եր- 15
կու հարիւր վահան շինեց կռածոյ ոսկիից. վեց հարիւր սիկղ կռածոյ ոսկի գնաց իւրաքանչիւր վահանի համար։ Եւ երեք հա- 16
րիւր ասպար կռածոյ ոսկիից. երեք հարիւր սիկղ ոսկի գնաց իւրաքանչիւր ասպարի համար. և թագաւորը դրաւ դորանց Լիբանանի անտառի տանը։
Եւ թագաւորը մի փղոսկրեայ 17
մեծ աթոռ շինեց և նորան մաքուր ոսկիով պատեց։ Եւ այն 18
աթոռը վեց աստիճան և մէկ ոսկի պատուանդան ունէր աթոռին կցուած. և նստելու տեղը այս և այն կողմից յենարաններ

ունէր. և երկու առիւծներ կա-
19 յին այդ յենարանների մօտ։ Եւ
տասնեւերկու առիւծներ էին
կանգնած այնտեղ վեց աստի-
ճանների վերայ այս և այն կող-
մից. այսպիսի բան չէր շինուած
ոչ մի թագաւորութիւնում։
20 Եւ Սողոմոն թագաւորի բոլոր
խմելիքի անօթները և Լիբանանի
անտառի տան անօթները մաքուր
ոսկիից էին, արծաթից չէին, Սո-
ղոմոնի օրերին նա մի բան չէր
21 համարվում։ Որովհետև թագա-
ւորը նաւեր ունէր, որ Քիրամի
ծառաների հետ գնում էին Թար-
սիս. երեք տարին մէկ անգամ
գալիս էին Թարսիսի նաւերը՝ բեռ-
նուած ոսկիով և արծաթով,
փղոսկրով, կապիկներով և սի-
րամարգներով։
22 Եւ մեծացաւ Սողոմոն թագա-
ւորը երկրի բոլոր թագաւորնե-
րից հարստութիւնով և իմաս-
23 տութիւնով։ Եւ երկրի բոլոր
թագաւորները փափաքում էին
Սողոմոնի երեսին, որ լսեն նորա
այն իմաստութիւնը որ Աստուած
24 տուել էր նորա սրտին։ Եւ նո-
րանց ամեն մէկը բերում էր իր
ընծան՝ արծաթի անօթներ և
ոսկի անօթներ, հանդերձներ,
զէնք և խնկեղէններ, ձիեր և
ջորիներ տարուց տարի։
25 Եւ Սողոմոնը ձիերի և կառ-
քերի համար չորս հազար ախոռ
ունէր, և տասնեւերկու հազար
ձիաւոր. և նա նորանց դրաւ
կառքերի քաղաքներում և թա-
26 գաւորի մօտ Երուսաղէմում։ Եւ
նա թագաւորում էր բոլոր թա-
գաւորների վերայ Եփրատ գետի-
ցը մինչև Փղշտացիների երկիրը,
և մինչև Եգիպտոսի սահմանը։
27 Եւ թագաւորը արծաթը Երու-
սաղէմում քարի նման հասարակ
բան շինեց, և եղևնափայտը դաշ-
տի մոլաթզենիի պէս շատ արաւ։
28 Եւ Սողոմոնի համար ձիեր էին
բերում Եգիպտոսից և ամեն եր-
կիրներից։
29 Եւ Սողոմոնի առաջին ու վեր-
ջին գործերի մնացորդը, ահա նո-
րանք գրուած են Նաթան մար-
գարէի պատմութիւնումը, և Սի-
լօնացի Աքիայի մարգարէութիւ-
նումը, և Աղդով տեսանողի Նա-
բատեան Յերոբովամի վերայ գը-
րած տեսիլքներումը։ Եւ Սողոմո- 30
նը թագաւորութիւն արաւ Ե-
րուսաղէմում բոլոր Իսրայէլի վե-
րայ քառասուն տարի։ Եւ Սողո- 31
մոնը ննջեց իր հայրերի հետ, և
նորան թաղեցին իր հայր Դաւի-
թի քաղաքումը. և նորա որդի
Ռոբովամը թագաւոր եղաւ նորա
տեղ։

ԳԼ. Ժ

Եւ Ռոբովամը գնաց Սիւքէմ, 1
որովհետև բոլոր Իսրայէլը գնա-
ցել էր այնտեղ նորան թագա-
ւոր անելու համար։ Եւ եղաւ 2
երբոր Նաբատեան Յերոբովամը,
որ Սողոմոն թագաւորի երեսից
փախած Եգիպտոսումն էր լսեց,
այն ժամանակ ետ դառաւ Յե-
րոբովամը Եգիպտոսից. Եւ մարդ 3
ուղարկեցին ու նորան կանչեցին,
և եկաւ Յերոբովամը և բոլոր Իս-
րայէլը և խօսեցին Ռոբովամի հետ
ասելով. Հայրդ մեր լուծը ծան- 4
րացրել էր, բայց դու հիմա թե-
թևացրու քո հօր խիստ ծառա-
յութիւնը և նորա մեր վերայ դը-
րած ծանր լուծը, այն ժամանակ
քեզ ծառայութիւն կ՚անենք։
Եւ նա նորանց ասեց. Գնացէք և 5
երեք օրից յետոյ դարձեալ ինձ
մօտ եկէք. և ժողովուրդը գնաց։
Եւ Ռոբովամ թագաւորը խոր- 6
հուրդ արաւ այն ծերերի հետ,
որ կանգնում էին նորա հայր Սո-
ղոմոնի առաջին նորա կենդանու-
թեանը, և ասեց. Ի՞նչպէս էք
դուք ինձ խորհուրդ տալիս, որ
ես այս ժողովրդին պատասխան
տամ։ Եւ նորանք նորա հետ խօ- 7
սեցին ասելով. Եթէ դու այս
ժողովրդին քաղցր լինիս և նո-
րանց հաճոյանաս, և նորանց հետ
բարի խօսքեր խօսես, այն ժամա-
նակ նորանք միշտ քո ծառաները
կ՚լինին։ Իսկ նա մերժեց ծերերի 8
խրատը, որ նորան տուին, և
խորհուրդ հարցրեց այն երիտա-

սարդներից, որ իր հետ էին մե-
ծացել և նորա առաջին կանգ-
9 նել էին։ Եւ նորանց ասեց. Դո՞ւք
ինչ խորհուրդ էք տալիս որ այս
ժողովրդին պատասխան տամ, որ
ինձ հետ խօսեցին ասելով թէ
Այն լուծը թեթևացրու, որ քո
10 հայրը դրել է մեր վերայ։ Եւ
նորա հետ մեծացած երիտա-
սարդները խօսեցին նորա հետ
ասելով. Այսպէս ասիր այն ժո-
ղովրդին որ քեզ հետ խօսել և
ասել է թէ քո հայրը մեր լու-
ծը ծանրացրել էր, իսկ դու թե-
թևացրու մեր վերայից. այսպէս
խօսիր նորանց հետ. Իմ ճկոյթը
11 հաստ է իմ հօր մէջքիցը։ Եւ
արդ՝ իմ հայրը ձեզ վերայ ծանր
լուծ էր դրել, բայց ես աւելա-
ցնելու եմ ձեր լուծի վերայ. իմ
հայրը ձեզ խարազաններով էր
խրատում, իսկ ես՝ կարիճներով։
12 Եւ Յերոբովամը ու բոլոր ժողո-
վուրդը եկան Ռոբովամի մօտ եր-
րորդ օրը ինչպէս որ թագաւորը
խօսել էր ասելով. Երրորդ օրը
13 դարձեալ ինձ մօտ եկէք։ Եւ
թագաւորը խիստ պատասխանեց
ժողովրդին, և մերժեց ծերերի
14 խորհուրդը։ Եւ նորանց հետ
խօսեց այն երիտասարդների խոր-
հրդի յարմար ասելով. Իմ հայ-
րը ձեր լուծը ծանրացրել էր,
բայց ես աւելացնելու եմ նորա
վերայ. իմ հայրը ձեզ խարա-
զաններով էր խրատում, բայց
15 ես՝ կարիճներով։ Եւ թագաւո-
րը չ՚լսեց ժողովրդին, որովհետև
Աստուծոյ կողմից այսպէս էր
դարձուած, որպէս զի Տէրը հաս-
տատէ իր այն խօսքը, որ խօսել
էր Սիլօնացի Աքիայի ձեռովը
Նաբատեան Յերոբովամի մասին։
16 Եւ երբոր բոլոր Իսրայէլը տեսաւ
որ թագաւորը չ՚լսեց նորանց,
այն ժամանակ ժողովուրդը պա-
տասխանեց թագաւորին ասելով.
Մենք ի՞նչ բաժին ունինք Դա-
ւիթի մօտ, և մենք Յեսսէի որ-
դիի մօտ ժառանգութիւն չ՚ու-
նինք. ամեն մարդ իր վրանը թող
գնայ, ով Իսրայէլացիք. հիմա
դու քո տունը հոգա, ով Դա-
ւիթ. և բոլոր Իսրայէլը գնաց իր
վրանները։ Եւ Իսրայէլի որդ- 17
կանց վերայ, որ բնակվում էին
Յուդայի քաղաքներումը, թա-
գաւոր եղաւ Ռոբովամը։ Եւ Ռո- 18
բովամ թագաւորը հարկերի տե-
սուչ Ադորամին ուղարկեց, բայց
բոլոր Իսրայէլը նորան քարկոծե-
ցին քարերով, և նա մեռաւ. և
Ռոբովամ թագաւորը շտապեց,
որ կառքը հեծնէ ու փախչէ
Երուսաղէմ։ Այսպէս Իսրայէլը 19
ապստամբուեց Դաւիթի տունի-
ցը մինչև այսօր։

ԳԼ. ԺԱ

Եւ Ռոբովամն եկաւ Երուսա- 1
ղէմ և ժողովեց Յուդայի և Բե-
նիամինի տանիցը հարիւր ութ-
սուն հազար ընտիր պատերազ-
մողներ, որ Իսրայէլի հետ պա-
տերազմ անեն և թագաւորու-
թիւնը ետ դարձնեն Ռոբովամին։
Եւ Տիրոջ խօսքն եղաւ Աստու- 2
ծոյ մարդ Սեմայիային, ասելով.
Ասիր Յուդայի թագաւոր Սողո- 3
մոնեան Ռոբովամին և Յուդայի
ու Բենիամինի մէջ եղող բոլոր
Իսրայէլացիներին, ասելով. Այս- 4
պէս է ասում Տէրը. Վեր մի
գնաք, և պատերազմ մի անէք
ձեր եղբայրների հետ, ետ դար-
ձէք ամեն մարդ իր տունը. որով-
հետև ինձանից է եղած այս բա-
նը։ Եւ նորանք լսեցին Տիրոջ
խօսքին և ետ քաշուեցան Յերո-
բովամի վերայ գնալուց։
Եւ Ռոբովամը բնակուեց Երու- 5
սաղէմում, և պարսպաւոր քա-
ղաքներ շինեց Յուդայի մէջ։
Այսինքն շինեց Բեթլէհէմը, Ե- 6
տամը, Թեկուէն. Բեթսուրը, 7
Սոքովը, Ոդողոմը, Գէթը, Մա- 8
բեսան, Զիփը, Ադորայիմը, Լա- 9
քիսը, Ազեկան, Սաարան, Այե- 10
ղոնը և Քեբրոնը, որոնք Յուդա-
յի և Բենիամինի մէջ պարսպա-
ւոր քաղաքներ էին։ Եւ պա- 11
րիսպներն ամրացրեց և նորանց
մէջ զօրապետներ դրաւ, և կե-
րակուրի ու իւղի և գինիի շտե-
մարաններ. Եւ իւրաքանչիւր քա- 12

ղաքում վահաններ և նիզակներ. և նորանց խիստ շատ ամրացրեց. և Յուդան ու Բենիամինը նորանը եղան։
13 Եւ բոլոր Իսրայէլի մէջ եղող քահանաներն ու Ղևտացիները ժողովուեցան նորա մօտ բոլոր
14 սահմաններից. Որովհետև Ղևտացիները թողում էին իրանց արուարձանները և իրանց կալուածքները և գնում էին Յուդա և Երուսաղէմ, որովհետև Յերոբովամը և նորա որդիքը նորանց դուրս էին անում Տիրոջ քահա-
15 նայութիւնիցը։ Եւ իրան համար քահանաներ դրաւ բարձրաւանդակների և դևերի համար և
16 իր շինած որթերի համար։ Եւ նորանցից յետոյ Իսրայէլի բոլոր ցեղերիցն իրանց սիրտերը Իսրայէլի Տէր Աստուծուն խնդրելու տուող մարդիկը եկան Երուսաղէմ իրանց հայրերի Տէր Աստու-
17 ծուն զոհ անելու համար։ Եւ ուժովացրին Յուդայի թագաւորութիւնը, և զօրացրին Սողոմոնեան Ռոբովամին երեք տարի. որովհետև գնում էին Դաւիթի և Սողոմոնի ճանապարհովը այդ երեք տարին։
18 Եւ Ռոբովամն իրան համար կին առաւ Դաւիթի որդի Յերիմովթի աղջիկ Մայէլէթին, և Յեսսէի որդի Եղիաբի աղջիկ Աբիքէ-
19 լին. Եւ նորա համար որդիք ծընեց՝ Յէուսին՝ Սամարիային և
20 Զաամին։ Եւ նորանից յետոյ առաւ Աբիսողոմի աղջիկ Մաաքային, որ նորա համար ծնեց Աբիային, Եթթիին, Զիզային և
21 Սաղօմիթին։ Եւ Ռոբովամն Աբիսողոմի աղջիկ Մաաքային աւելի էր սիրում իր բոլոր կնիկներից և հարճերից. (որովհետև նա ունէր տասնևութը կին և վաթսուն հարճ, և ծնեց քսանևութը տղայ և վաթսուն աղ-
22 ջիկ)։ Եւ Ռոբովամը գլխաւոր դրաւ Մաաքայի որդի Աբիային իրրև իշխան իր եղբայրների մէջ, որովհետև ուզում էր նորան թա-
23 գաւոր անել։ Եւ նա խելօքութիւն արաւ և իր որդիներին Յուդայի և Բենիամինի ամեն երկիրների մէջ ցրուեց ամեն պարըսպաւոր քաղաքներում. և նորանց առատ ապրուստ տուաւ. և շատ կանայք ուզեց։

ԳԼ. ԺԲ

Եւ եղաւ երբոր Ռոբովամի թա- 1
գաւորութիւնը հաստատուեցաւ և ինքը զօրացաւ, այն ժամանակ թողեց Տիրոջ օրէնքը և բոլոր Իսրայէլը նորա հետ։
Եւ եղաւ Ռոբովամ թագաւո- 2
րի հինգերորդ տարին որ Եգիպտոսի Սիսակ թագաւորը եկաւ Երուսաղէմի վերայ. որովհետև ապստամբուել էին Տիրոջ դէմ, Հազար երկու հարիւր կառքով 3
և վաթսուն հազար ձիաւորով. և նորա հետ Եգիպտոսից եկած ժողովրդին թիւ չ՚կար՝ Լիբէացիք, Սովկիացիք և Եթովպացիք։
Եւ նա առաւ Յուդայի պարըս- 4
պաւոր քաղաքները, և եկաւ մինչև Երուսաղէմ։ Եւ Սեմայիա 5
մարգարէն եկաւ Ռոբովամի և Յուդայի իշխանների մօտ, որոնք Սիսակի երեսից ժողովուել էին Երուսաղէմ, և ասեց նորանց. Այսպէս է ասում Տէրը. Դուք ինձ թողեցիք, ուրեմն ես էլ թողեցի ձեզ Սիսակի ձեռքին։
Եւ խոնարհեցին Իսրայէլի իշ- 6
խանները և թագաւորը, և ասե- 7
ցին. Տէրը արդար է։ Եւ երբոր Տէրը տեսաւ նորանց խոնարհելը, Տիրոջ խօսքը եղաւ Սեմայիային ասելով. Նորանք խոնարհեցին. ես նորանց չեմ կորցնիլ, և նորանց շուտով ազատութիւն կը տամ, և իմ բարկութիւնը չի թափուիլ Երուսաղէմի վերայ Սիսակի ձեռքով։ Բայց նորան 8
ծառաներ կ՚լինին, և կ՚հասկանան իմ ծառայութիւնը և երկրաւոր թագաւորների ծառայութիւնը։ Եւ Եգիպտոսի Սիսակ 9
թագաւորը եկաւ Երուսաղէմի վերայ և առաւ Տիրոջ տան գանձերը և թագաւորի տան գանձերը՝ բոլորը առաւ. Սողոմոնի շինած ոսկի ասպարներն էլ առաւ։ Եւ Ռոբովամ թագաւորը 10

նորանց փոխարէն պղնձի ասպարներ շինեց, և յանձնեց թագաւորի տան մուտքը պահպանող սուրհանդակների գլխաւորներին։
11 Եւ երբոր թագաւորը Տիրոջ տունն էր մտնում, գալիս էին սուրհանդակները և կրում էին նորանց, և դարձեալ տանում էին նորանց սուրհանդակների տունը։
12 Եւ հէնց որ նա խոնարհեց, Տիրոջ բարկութիւնը ետ դառաւ նորանից, և նա նորան բոլորովին չ՚կորցրեց. և Յուդայի մէջ լաւ բաներ էլ կային։
13 Եւ Ռոբովամ թագաւորը զօրացաւ Երուսաղէմում և թագաւորութիւն էր անում. արդէն քառասունևմէկ տարեկան էր Ռոբովամը երբոր թագաւոր եղաւ, և տասնևեօթը տարի թագաւորութիւն արաւ Երուսաղէմում, այսինքն այն քաղաքում որ Տէրը ընտրեց նորան Իսրայէլի բոլոր ցեղերիցը իր անունը այնտեղ դնելու համար։ Եւ նորա մօր անունն էր Նաամա՝
14 Ամմոնացի։ Եւ նա չարութիւն արաւ, որովհետև իր սիրտը չ՚ուղ-
15 ղեց. որ Տիրոջը խնդրէր։ Եւ Ռոբովամի առաջին և վերջին գործերը, ահա նորանք գրուած են Սեմայիա մարգարէի պատմութիւնների մէջ և Ադդով տեսանողի ազգաբանութիւնների մէջ։ Եւ Ռոբովամն ու Յերոբովամը ամեն ժամանակ պատերազմներ ու-
16 նեցան։ Եւ Ռոբովամը ննջեց իր հայրերի հետ և թաղուեցաւ Դաւիթի քաղաքումը, և նորա որդի Աբիան թագաւոր եղաւ նորա տեղ։

ԳԼ. ԺԳ

1 Յերոբովամ թագաւորի տասնևութերորդ տարին թագաւոր եղաւ Աբիան Յուդայի վերայ։
2 Երեք տարի թագաւորեց Երուսաղէմում, և նորա մօր անունն էր Միքայիա՝ Գաբաացի Ուրիէլի դուստր։ Եւ պատերազմ կար
3 Աբիայի և Յերոբովամի մէջ։ Եւ Աբիան պատերազմ կազմեց զօրաւոր և պատերազմող մարդիկներով՝ չորս հարիւր հազար ընտիր մարդով. և Յերոբովամը պատերազմ սարքեց նորա հետ ութը հարիւր հազար ընտիր քաջազուն մարդիկներով։
Եւ Աբիան կանգնեց Սեմարիմ 4
սարի վերայ, որ Եփրեմի լեռնակողմին էր, և ասեց. Ինձ լսեցէք, ով Յերոբովամ և բոլոր Իս-
րայէլ։ Մի՞թէ ձեզ յայտնի չէ 5
որ Իսրայէլի Տէր Աստուածը Իսրայէլի վերայ թագաւորելը տուել է Դաւիթին յաւիտեան՝ նորան և նորա որդկանցը աղի ուխ-
տով։ Եւ Դաւիթի որդի Սողո- 6
մոնի ծառան Նաբատեան Յերոբովամը կանգնեց և ապստամբուեց իր տիրոջ դէմ։ Եւ նորա մօտ 7
ժողովուեցան դարտակ և անօրէն մարդիկ և ընդդիմացան Սողոմոնեան Ռոբովամի դէմ, բայց Ռոբովամը երեխայ և փափկասիրտ էր, և նորանց դէմ չ՚կանգ-
նեց։ Եւ հիմա դուք կարծո՞ւմ 8
էք թէ դէմ կ՚կենաք Տիրոջ թագաւորութեան առաջին, որ Դաւիթի ձեռին էր. որովհետև դուք մեծ բազմութիւն էք և ձեզ հետ են ոսկի որթերը, որ Յերոբովամը ձեզ համար աստ-
ուածներ է շինել։ Մի՞թէ դուք 9
դուրս չ՚արիք Տիրոջ քահանաներին՝ Ահարօնի որդկանցը և Ղևտացիներին և ձեզ համար քահանաներ շինեցիք ուրէշ երկիրների ժողովուրդների պէս։ Զեռքը լցուելու համար ամեն մէկը որ գալիս էր մէկ զուարակով և եօթը խոյերով՝ քահանայ էր լինում չաստուածների համար։
Բայց մեր Աստուածը Եհովան է, 10
և մենք նորան չ՚թողեցինք. և Տիրոջը ծառայող քահանաներն Ահարօնի որդիքն են, և Ղևտա-
ցիները՝ իրանց գործումը։ Եւ Տի- 11
րոջ ողջակէզներ են զոհում ամեն առաւօտ և ամեն իրիկուն, և անուշահոտ խունկ են ծխում, և մաքուր սեղանի վերայ շարում առաջաւորութեան հացը, և պատրաստում ոսկի աշտանակը և նորա ճրագները ամեն իրիկուն

վառելու համար. որովհետև մինչ պահում ենք մեր Տէր Աստուծոյ պահապանութիւնը, իսկ դուք
12 նորա թողել էք, եւ ահա Աստուած մեզ հետ է իբրև գլխաւոր. և նորա քահանաները և ազդարարութեան փողերը, որ ազդարարեն ձեզ դէմ. Իսրայէլի որդիք, մի պատերազմիք ձեր հայրերի Տէր Աստուծոյ հետ, որովհետեւ յաջողութիւն չէք դանիլ։
13 Բայց Ցերոբովամ դարձրեց դարանակալներին, որ գան նորանց հետից. և իրանք լինին Յուդայեանների առաջից, իսկ դարանակալները նորանց հետից։
14 Եւ Յուդայեանք մտիկ տուին, և ահա պատերազմը առաջից և հետից էր, և աղաղակեցին Տիրոջը, և քահանաները հնչեցրին փողերը։
15 Եւ Յուդայի մարդիկը աղաղակեցին. և եղաւ որ Յուդայեանք աղաղակելիս, Աստուած հարաւած տուաւ Ցերոբովամին և բոլոր Իսրայէլին Աբիայի և Յուդայի առաջին։
16 Եւ Իսրայէլի որդիքը փախան Յուդայի առաջից, և Աստուած նորանց մատնեց նորանց ձեռքը։
17 Եւ Աբիան ու նորա ժողովուրդը մեծ կոտորած արին նորանց մէջ. և Իսրայէլից հինգ հարիւր հազար ընտիր մարդիկ կոտորուած։
18 Այն ժամանակ նուաճուեցան Իսրայէլի որդիքը, և Յուդայի որդիքը զօրացան, որովհետև ապաւինեցին իրանց հայրերի Տէր Աստուծոյ վերայ։
19 Եւ Աբիան հալածեց Ցերոբովամին և նորանից քաղաքներ առաւ՝ Բեթէլը և նորա գիւղերը, Յեսանան և նորա գիւղերը, և Եփրոնն ու նորա գիւղերը։
20 Եւ Ցերոբովամն այլ ևս այժ չ'դառաւ Աբիայի օրերում. և Տէրը նորան զարկեց, և նա մեռաւ։
21 Եւ Աբիան ուժովացաւ, և իրան համար տասնևչորս կին առաւ, և ծնեց քսանևերկու որդի և տասնևվեց աղիկ։
22 Եւ Աբիայի մնացորդ պատմութիւնը, և նորա ընթացքն ու խօսքերը գրուած են Ադդով մարգարէի յիշատակարանի մէջ։

Գլ. ԺԳ

1 Եւ Աբիան ննջեց իր հայրերի հետ, և նորան թաղեցին Դաւիթի քաղաքում. և նորա որդի Ասան թագաւոր եղաւ նորա տեղ։ Նորա օրերին երկիրը տասը տարի հանգստացաւ։
2 Ասան բարութիւն և ուղղութիւն արաւ իր Տէր Աստուծոյ աչքի առաջին։
3 Եւ վերցրեց օտար սեղանները և բարձրաւանդակները, և կոտրատեց արձանները, և Աստարովթները կոտրեց։
4 Եւ հրամայեց Յուդային որ իրանց հայրերի Տէր Աստուծուն խնդրեն, և որ օրէնքն ու պատուիրանքը կատարեն։
5 Եւ վերցրեց Յուդայի բոլոր քաղաքներից բարձրաւանդակները և արեգական կուռքերը, և թագաւորութիւնը հանգըստացաւ նորա առաջին։
6 Եւ Յուդայի մէջ պարսպաւոր քաղաքներ շինեց. որովհետև երկիրը հանդիստ էր, և նորա հետ պատերազմ չ'կար այն տարիները. որովհետև Տէրը նորան հանգըստութիւն տուաւ։
7 Եւ Ասան Յուդային ասեց. Այս քաղաքները շինենք, և նորանց շրջապատենք պարիսպներով, աշտարակներով, դռներով և նիգերով, քանի որ երկիրը մեր առաջն է, որովհետև մենք խնդրեցինք մեր Տէր Աստուծուն, մենք խնդրեցինք, և նա մեզ հանգստութիւն տուաւ շուրջանակի. և շինեցին ու յաջողուեցան։
8 Եւ Ասան Յուդայից վահան և նիզակ կրող երեք հարիւր հազար զօրք ունէր, և Բենիամինից ասպար կրող ու աղեղ քաշող երկու հարիւր ութսուն հազար. սորանք ամենքը քաջ զօրաւորներ էին։
9 Եւ Եթովպացի Զարան հազար անգամ հազար զօրքով և երեք հարիւր կառքով դուրս եկաւ նորանց վերայ, և եկաւ մինչև Մարեսա։
10 Եւ Ասան նորա առաջը դուրս եկաւ, և պատերազմ

կազմեցին Մարեսայի Սեփաթա ձորումը։
11 Եւ Ասան աղաղակեց իր Տէր Աստուծուն և ասեց. Ով Տէր, քեզ համար մի բան չէ թէ շատին թէ սակաւին օգնելը. մեզ օգնիր, ով մեր Տէր Աստուածը. որովհետև մենք քեզ ենք ապաւինել, և քո անունովն ենք եկել այս բազմութեան վերայ, ով Տէր, դու ես մեր Աստուածը, թող մարդը քեզանից
12 զօրաւոր չլինի։ Եւ Տէրը զարկեց Եթովպացիներին Ասայի և Յուդայի առաջը, և Եթովպացիները փախան։
13 Եւ Ասան ու նորա հետ եղող ժողովուրդը հալածեցին նորանց մինչև Գերարա. և ընկան Եթովպացիներից մինչև որ նորանցից կենդանի ճարտ չ'եղաւ. որովհետև Տիրոջ առաջին և նորա բանակի առաջին ջարդուեցան, և շատ մեծ աւար արին։
14 Եւ նա զարկեց Գերարայի շուրջի քաղաքները. որովհետև Տիրոջ վախը նորանց վերայ էր, և բոլոր քաղաքները կողոպտեցին, որովհետև շատ աւար կար նորանց
15 մէջ։ Հովիւների վրաններն էլ զարկեցին, և շատ ոչխար և ուղտ քշեցին, և դարձան Երուսաղէմ։

Գլ. ԺԵ

1 Եւ Աստուծոյ Հոգին եկաւ Ովդեդի որդի Ազարիայի վերայ.
2 եւ նա դուրս գնաց Ասայի առաջը և նորան ասեց. Լսեցէք ինձ, ով Ասա և բոլոր Յուդա և Բենիամին. Տէրը ձեզ հետ կ'լինի, քանի որ դուք նորա հետ էք. և եթէ դուք նորան որոնէք, կ'գտնէք նորան, իսկ եթէ նորան ձդէք, նա էլ ձեզ կ'ձդէ։
3 Եւ շատ օրեր Իսրայէլը առանց ճշմարիտ Աստուծոյ, առանց ուսուցանող քահանայի, և առանց
4 օրէնքի էր ։ Բայց երբոր նա իր ձեղութեան մէջ դարձաւ դէպի Իսրայէլի Տէր Աստուածուն և նորան որոնեց, այն ժամանակ
5 գտաւ նորան։ Եւ այն ժամանակներում ելնողի ու մտնողի համար ապահովութիւն չ'կար. որովհետև երկրի բոլոր բնակիչների մէջ շատ խռովութիւններ կային։ Եւ զարկվում էին ազգ ազգի հետ և քաղաք քաղաքի հետ. որովհետև Աստուած ամեն նեղութիւնով զարհուրեցրեց նորանց։ Բայց դուք զօրացէք, և ձեր ձեռքերը չ'թուլանան. որովհետև վարձք կայ ձեր գործին։
8 Եւ Ասա ՈՎԴԵԴԻ ՈՐԴՈՅ ԱԶԱՐԻԱՅԻ այս խօսքերը և մարգարէութիւնը լսելով, զօրացաւ և դէն ածեց պղծութիւնները Յուդայի և Բենիամինի բոլոր երկրիցը և Եփրեմի սարիցն՝ իր առած քաղաքներից, և Տիրոջ սեղանը, որ Տիրոջ սրահի առաջ էր, նորոգեց։
9 Եւ նա ժողովեց բոլոր Յուդան և Բենիամինը և նորանց հետ եղող պանդուխտներին Եփրեմից, Մանասէից և Շմաւունից. որովհետև իսրայէլից շատ հոգի անցան նորա կողմը, տեսնելով որ նորա Տէր Աստուածը նորա հետ էր։
10 Եւ նորանք երուսաղէմ ժողովուեցան Ասայի թագաւորութեան տասնևհինգերորդ տարուայ երրորդ ամսում։
11 Եւ այն օրը զոհ արին Տիրոջ համար իրանց բերած աւարիցը եօթը հարիւր արջառ և եօթը հազար ոչխար։
12 Եւ ուխտ արին որ իրանց հայրերի Տէր Աստուծուն բոլոր սրտով և բոլոր հոգով խնդրեն։
13 Եւ ամեն ով որ չ'խնդրէ Իսրայէլի Տէր Աստուծուն՝ մեռցնուի՝ փոքրիցը մինչև մեծը, թէ այր թէ կին։
14 Եւ երդուեցան Տիրոջը բարձր ձայնով և աղաղակով, փողերով և շեփորներով։
15 Եւ բոլոր Յուդան ուրախացաւ այն երդումի վերայ, որովհետև իրանց բոլոր սրտովը երդուեցան, և իրանց բոլոր յօժարութեամբը խնդրեցին նորան, և գտան նորան. և Տէրը հանգըստութիւն տուաւ նորանց ամեն կողմանէ։
16 Եւ Ասան թագաւորի մայր Մաաքային էլ հեռացրեց տիկնութիւնից, որովհետև անտառի

կուռք էր շինել նա. և Ասան
կոտրատեց նորա կուռքը և փըշ-
րեց և այրեց Կեդրոն հեղեղա-
17 տումը։ Սակայն բարձրաւանդակ-
ները չ'հեռացան Իսրայէլից, մի-
այն թէ Ասայի սիրտն ուղիղ էր
18 իր բոլոր օրերումը։ Եւ իր հօր
նուէրները և իր նուէրները՝ ար-
ծաթը, ոսկին և անօթները տա-
րաւ Աստուծոյ տունը։
19 Եւ պատերազմ չ'եղաւ մինչև
Ասայի թագաւորութեան երե-
սունևհինգերորդ տարին։

ԳԼ. ԺԶ

1 Ասայի թագաւորութեան երե-
սունևվեցերորդ տարին Իսրայէլի
Բաասա թագաւորն եկաւ Յու-
դայի վերայ և շինեց Ռաման որ
դուրս եկող ու մտնող չ'թողէ
Յուդայի Ասա թագաւորի հա-
2 մար։ Եւ Ասան արծաթ և ոսկի
հանեց Տիրոջ տան և թագաւո-
րի տան գանձերից և ուղարկեց
Ասորիների Բենադադ թագաւո-
րին, որ բնակվում էր Դամասկո-
3 սում, ասելով. Դաշինք կայ իմ
ու քո մէջ, և իմ հօր ու քո
հօր մէջ, ահա քեզ համար ար-
ծաթ և ոսկի եմ ուղարկում.
եկ քանդիր Իսրայէլի թագաւոր
Բաասայի հետ քո դաշինքը, որ
4 իմ վերայից ետ քաշուի։ Եւ
Բենադադը լսեց Ասա թագաւո-
րին, և ուղարկեց իր զօրքերի
իշխաններին Իսրայէլի քաղաք-
ները, և նորանք զարկեցին Իյօ-
նը, Դանը, Աբէլմայիմը և Նեփ-
թաղիմի բոլոր շտեմարանի քա-
5 ղաքները։ Եւ եղաւ երբոր Բա-
ասան լսեց, դադարեց Ռաման
շինելուց, և իր գործը ձգեց։
6 Եւ Ասա թագաւորն առաւ բո-
լոր Յուդան, և վեր առան Բա-
ասայի շինած Ռամայի քարերը և
նորա փայտերը, և նորանցով շի-
նեց Գաբաան և Մասփան։
7 Եւ այն ժամանակ եկաւ Անա-
նի տեսանողը Յուդայի թագա-
ւոր Ասայի մօտ և ասեց նորան.
Որովհետև դու ապաւինեցիր Ա-
սորիների թագաւորին, և չ'ա-
պաւինեցիր քո Տէր Աստուծուն,
նորա համար Ասորիների թագա-
ւորի զօրքը ազատուեցաւ քո ձե-
ռիցը։ Մի՞թէ Եթովպացիք և 8
Լիբէացիք խիստ շատ կառքերով
և ձիաւորներով բազմաթիւ զօրք
չէին. բայց որովհետև դու Տի-
րոջն ապաւինեցիր, նորանց քո
ձեռքը մատնեց։ Որովհետև Տի- 9
րոջ աչքերը դիտում են բոլոր
երկիրը, որ զօրացնէ նորանց, ո-
րոնց սիրտը ուղիղ է նորա հետ.
դու անմտութիւն արիր սորա-
նում. որովհետև սորանից յե-
տոյ պատերազմներ ես ունենա-
լու։ Եւ Ասան բարկացաւ այս 10
տեսանողի վերայ, և նորան բան-
տը դրաւ. որովհետև այս բանի
համար նորա վերայ զայրացաւ.
և այն ժամանակ Ասան ժողովրդ-
ից մի քանիսին հարստահարեց։
Եւ Ասայի առաջին ու վերջին 11
պատմութիւնը, ահա նորանք
գրուած են Յուդայի և Իսրայէլի
թագաւորների գրքումը։ Եւ Ա- 12
սան հիւանդացաւ իր թագաւո-
րութեան երեսունևիններորդ տա-
րին իր ոտքերովը. մինչև բարձրը
հասաւ նորա հիւանդութիւնը.
բայց իր հիւանդութիւնումն էլ
չ'խնդրեց Տիրոջը, այլ բժիշկներ
սաղեց։ Եւ Ասան ննջեց իր հայ- 13
րերի հետ և մեռաւ իր թագա-
ւորութեան քառասունեւմէկե-
րորդ տարին։ Եւ նորան թաղե- 14
ցին Դաւիթի քաղաքումն այն
գերեզմանի մէջ, որ ինքը փորել
էր. և նորան պառկեցրին մի ան-
կողնի վերայ որ լցրել էին խուն-
կերով և զանազան արուեստա-
գործ բաղադրութիւններով, և
նորա համար մի շատ մեծ այրելի
(խունկ) այրեցին։

ԳԼ. ԺԷ

Եւ նորա որդի Յովսափատը թա- 1
գաւոր եղաւ նորա տեղ. և զօ-
րացաւ Իսրայէլի դէմ։ Եւ Յու- 2
դայի ամեն պարսպաւոր քա-
ղաքներումը զօրքեր դրաւ, և պա-
հապան զօրքեր դրաւ Յուդայի
երկրումը և Եփրեմի քաղաքնե-

րումը, որ նորա հայր Ասան ա-
3 ռել էր։ Եւ Տէրը Յովսափատի
հետ էր, որովհետև իր հայր Դա-
ւիթի առաջի ճանապարհներումն
էր գնում, և Բահաղներ չ'որո-
4 նեց։ Այլ իր հօր Աստուծուն
խնդրեց և նորա պատուիրանք-
ներումը վարուեցաւ, և ոչ թէ
5 Իսրայէլի արածին պէս։ Եւ Տէրը
հաստատեց թագաւորութիւնը
նորա ձեռքումը. և բոլոր Յու-
դան ընծաներ էր տալիս Յովսա-
փատին և նորա հարստութիւնն
6 ու փառքը շատացաւ։ Եւ նորա
սիրտը բարձրացաւ Տիրոջ ճա-
նապարհներումը, և նա վերցրեց
Յուդայից բարձրաւանդակները և
Աստարովթի կուռքերը։
7 Եւ իր թագաւորութեան եր-
րորդ տարիումն ուղարկեց իր իշ-
խաններին՝ Բենհայիլին, Աբդիա-
յին, Զաքարիային, Նաթանայէ-
լին և Միքիային, որ Յուդայի
8 քաղաքներում սովորեցնեն։ Եւ
նորանց հետ էին Ղևտացիները՝
Սեմայիա, Նաթանիա, Զաբա-
դիա, Ասայէլ, Սեմիրամովթ,
Յովնաթան, Ադոնիա, Տուբիա
և Տոբադոնիա Ղևտացիները, և
նորանց հետ էին Եղիսամա և
9 Յովրամ քահանաները։ Եւ սո-
վորեցնում էին Յուդայում, և
նորանց հետ Տիրոջ օրէնքի մէկ
գիրքը կար. և շրջեցին Յուդայի
բոլոր քաղաքները. և սովորե-
ցնում էին ժողովրդին։
10 Եւ Տիրոջ վախը եղաւ Յու-
դայի շրջակայքում եղող բոլոր
երկիրների թագաւորութիւնն-
ի վերայ, և Յովսափատի հետ
11 պատերազմ չ'արին։ Եւ Փղշտա-
ցիներից էլ ընծաներ և հարկի
փող էին բերում Յովսափատի
համար. Արաբացիներն էլ էին
բերում նորա համար հօտերից՝
եօթը հազար եօթը հարիւր խոյ
և եօթը հազար եօթը հարիւր
12 նոխազ։ Եւ Յովսափատը գնալով
մեծացաւ՝ շատ բարձր. և Յու-
դայի մէջ բերդեր և շտեմարան-
13 ների քաղաքներ շինեց։ Եւ նա
շատ գործքեր ունէր Յուդայի
քաղաքներումը. և Երուսաղէմի
մէջ քաջ զօրաւորներ՝ պատե-
րազմող մարդիկ սանէր։ Եւ սա 14
է նորանց համարը իրանց ազգա-
տոհմերի համեմատ. Յուդայի
հազարապետները՝ Եդնա իշխան,
և նորա հետ երեք հարիւր հա-
զար քաջ զօրաւորներ։ Եւ նո- 15
րանից յետոյ՝ Յոհանան իշխան,
և նորա հետ երկու հարիւր ութ-
սուն հազար։ Եւ նորանից յե- 16
տոյ՝ Զեքրիի որդի Ամասիան որ
իրան ուխտել էր Տիրոջը, և նո-
րա հետ երկու հարիւր հազար
քաջ զօրաւորներ։ Եւ Բենիամի- 17
նից քաջ զօրաւոր Եղիադան, և
նորա հետ երկու հարիւր հազար
աղեղնաւոր և ասպարաւոր մար-
դիկ։ Եւ նորանից յետոյ Յովզա- 18
բադ, և նորա հետ հարիւր ութ-
սուն հազար սպառազինեալներ։
Սորանք էին թագաւորին ծառա- 19
յութիւն անողները բացի նորան-
ցից, որոնց թագաւորը դրաւ պա-
րըսպաւոր քաղաքներումը բոլոր
Յուդայի մէջ։

ԳԼ. ԺԸ

Եւ Յովսափատը խիստ շատ 1
փառք և հարստութիւն ունէր.
և խնամութիւն արաւ Աքաաբի
հետ։ Եւ մի քանի տարուց յե- 2
տոյ իջաւ Սամարիա Աքաաբի
մօտ. և Աքաաբը նորա համար և
նորա հետ եղող ժողովրդի հա-
մար շատ ոչխարներ և արջառներ
մորթեց, և նորան համոզեց որ
վեր գնայ Ռամովթ-գաղաադ։
Եւ Իսրայէլի Աքաաբ թագաւորն 3
ասեց Յուդայի թագաւոր Յովսա-
փատին. Ինձ հետ կ'գնա՞ս Ռա-
մովթ-գաղաադ. և նա նորան ա-
սեց. Ինչպէս դու՝ այնպէս էլ ես,
և ինչպէս քո ժողովուրդը՝ այն-
պէս էլ իմ ժողովուրդը. և քեզ
հետ կ'գնամ պատերազմի։
Եւ Յովսափատն ասեց Իսրա- 4
յէլի թագաւորին. Բայց հիմա
եկ Տիրոջ խօսքը խնդրիր։ Եւ Իս- 5
րայէլի թագաւորը ժողովեց մար-
գարէներին՝ չորս հարիւր հոգի.
և նորանց ասեց. Ռամովթ-գա-
ղաադի վերայ պատերազմի գը-

նանք թէ ետ կենամ. և նորանք
ասեցին. Գնա վերան. և Տէրը
թագաւորի ձեռքն է տալու։
6 Եւ Յովսափատ ասեց. Այստեղ
էլ ուրիշ մարգարէ չ'կայ Տիրո-
7 ջը, նորանից հարցնէինք։ Եւ Իս-
րայէլի թագաւորն ասեց Յովսա-
փատին. Դեռ մէկ ուրիշ մարդ
էլ կայ, նորա միջոցով Տիրոջը
հարցնելու. բայց ես նորան ա-
տում եմ, որովհետև ինձ հա-
մար մարգարէութիւն չէ անում
դէպի բարին, այլ ամեն ժամա-
նակ դէպի չարը. դա Գեմղայի
որդի Միքիան է։ Եւ Յովսափատն
ասեց. Թող թագաւորն այդպես
չ'խօսէ։
8 Եւ Իսրայէլի թագաւորը մի
ներքինի կանչեց և ասեց. Շու-
տով բեր Գեմղայի որդի Միքի-
9 ային։ Եւ Իսրայէլի թագաւորը
և Յուդայի Յովսափատ թագա-
ւորը նստել էին, իւրաքանչիւրն
իր աթոռի վերայ, զգեստներ հա-
գած նստած՝ կալուածի Սամարի-
այի դռան առաջին. և բոլոր մար-
գարէները մարգարէանում էին
10 նորանց առաջին։ Եւ Քանանայի
որդի Սեդեկիան իրան համար
երկաթի եղջիւրներ շինեց և ա-
սեց. Այսպէս է ասում Տէրը.
Սորանցով կ'տրես Ասորիներին
մինչև որ նորանց բնաջինջ անես։
11 Եւ բոլոր մարգարէները այնպէս
էին մարգարէանում ասելով.
Գնա Ռամոթ–գաղաադ և կ'յա-
ջողուես. և Տէրը կ'տայ թագա-
ւորի ձեռքը։
12 Եւ այն պատգամաւորը, որ
գնացել էր Միքիային կանչելու,
նորան ասեց. Ահա մարգարէնե-
րը միաբերան բարի են խօսում
թագաւորի համար, ուրեմն թող
քո խօսքն էլ նորանցից մէկի պէս
13 լինի, և բարի խօսիր։ Բայց Մի-
քիան ասեց. Կենդանի է Տէրը,
որ իմ Աստուածն ինչ որ ինձ ա-
սէ, այն եմ խօսելու։
14 Եւ եկաւ թագաւորի մօտ, և
թագաւորն ասեց նորան. Միքիա,
Ռամոթ–գաղաադ գնա՞նք պա-
տերազմի, թէ ետ կենամ. և նա
ասեց. Գնացէք և կ'յաջողուէք,
և նորանք ձեր ձեռքը կ'տրուին։
15 Եւ թագաւորը նորան ասեց.
Քանի՞ անգամ ես քեզ երդուում
տամ որ Տիրոջ անունով ինձ
բացի ճշմարտութիւնից ոչինչ չ'ա-
սես։ Ա՛յն ժամանակ նա ասեց.
16 Ես տեսայ բոլոր Իսրայէլը ցրուած
սարերի վրայ իբրև ոչխարներ որ
հովիւ չ'ունին, և Տէրն ասեց.
Սորանք տէր չ'ունին. ամեն մարդ
իր տունը դառնայ խաղաղու-
թեամբ։
17 Եւ Իսրայէլի թագա-
ւորն ասեց Յովսափատին. Քեզ
չ'ասեցի՞, որ ինձ համար բարի
բան չի մարգարէանալ, այլ չար։
18 Եւ նա ասեց. Ուրեմն լսեցէք Տի-
րոջ խօսքը, ես տեսայ Տիրոջը
նստած իր աթոռի վերայ և բո-
լոր երկնքի բոլոր զօրքերը կանգնած
նորա աջ և նորա ձախ կողմին։
19 Եւ Տէրն ասեց. Ո՞վ կ'խաբէ Ի-
րայէլի Աքաաբ թագաւորին, որ
վեր գնայ Ռամոթ–գաղաադի
վերայ և կորչի. և մէկն այսպէս
էր ասում, և մէւսն այնպէս էր
ասում։ Եւ մի ոգի դուրս եկաւ
20 և կանգնեց Տիրոջ առաջին և ա-
սեց. Ես նորան կ'խաբեմ. և Տէրը
21 նորան ասեց. Ինչով։ Նա էլ ա-
սեց. Ես դուրս կ'գնամ և նորա
բոլոր մարգարէների բերանումը
սուտ ոգի կ'լինիմ. և Տէրն ա-
սեց. Դու կ'խաբես, և կարող էլ
22 ես. գնա և այդպէս արա։ Եւ
արդ՝ Տէրը սուտ ոգի է դրել քո
այդ մարգարէների բերանումը.
բայց Տէրը քեզ համար չարիք է
խօսել։
23 Ա՛յն ժամանակ Քանանայի որ-
դի Սեդեկիան մօտեցաւ և զար-
կեց Միքիայի ծնօտին և ասեց.
Ո՞ր ճանապարհով է անցկացել
Տիրոջ Հոգին ինձանից, որ քեզ
24 հետ խօսէ։ Միքիան էլ ա-
սեց. Ահա կ'տեսնես այն օրը որ
սենեակից սենեակ կ'մտնես թաք-
նուելու համար։
25 Եւ Իսրայէլի թագաւորն ա-
սեց. Առէք Միքիային և տարէք
քաղաքապետ Ամմոնի և թագա-
ւորի որդի Յովասի մօտ. Եւ ա-
26 սեցէք. Այսպէս է ասում Թա-
գաւորը. Սորան բանտը դրէք, և
նորան կերակրեցէք նեղութեան
հացով և նեղութեան ջրով մին-
չև իմ խաղաղութեամբ գալը։
27 Եւ Միքիան ասեց. Եթէ դու
խաղաղութեամբ ետ դարձար ե-
կար, Տէրն ինձանով չէ խօսել։
Նաև ասեց. լսեցէք, ով ամեն
ժողովուրդներ։
28 Եւ Իսրայէլի թագաւորն ու
Յուդայի Յովսափատ թագաւորը
գնացին Ռամոթ–գաղաադի վե-
29 րայ։ Եւ Իսրայէլի թագաւորն
ասեց Յովսափատին. Պէտք է
կերպարանափոխուել և մեռայ
պատերազմի գնալ. բայց դու
հագիր քո հանդերձները. և Իս-
րայէլի թագաւորը կերպարանա-
փոխուեցաւ և գնաց պատերազ-
մի։ 30 Եւ Ասորիների թագաւորն
իր հետ եղող կառապետներին
ասեց. Չ'պատերազմէք ոչ փոքրի
և ոչ մեծի հետ, այլ միայն Իս-
31 րայէլի թագաւորի հետ։ Եւ եղաւ
երբոր կառապետները տե-
սան Յովսափատին, նորանք ասե-
ցին. Իսրայէլի թագաւորը նա է,
և դարձան դէպի նորան որ նորա
հետ պատերազմին. և Յովսա-
փատն աղաղակեց, և Տէրը նո-
րան օգնութիւն արաւ. և Աստ-
ուած նորանց ետ քաշեց նորա-
32 նից։ Եւ երբոր կառապետները
տեսան, որ նա Իսրայէլի թագա-
ւորը չէ, այն ժամանակ ետ դա-
33 ռան նորանից։ Եւ մի մարդ *իր
անմեղութեամբը քաշեց աղեղը
և զարկեց Իսրայէլի թագաւորին
յօդուածների և զրահի միջովը.
և նա ասեց կառավարին. Ձեռքդ
դարձրու և ինձ դուրս տար բա-
նակիցը. որովհետև վիրաւորուե-
34 ցայ։ Եւ պատերազմը բարձրա-
ցաւ այն օրը. և Իսրայէլի թա-
գաւորը կանգնած էր կառքումը
Ասորիների դէմ, և մեռաւ արե-
գակը մար մտնելու ժամանակին։

Գլ. ԺԹ

1 Եւ Յուդայի Յովսափատ թագա-
ւորը խաղաղութեամբ ետ դա-

*կամ՝ իր ուժովը

ռաւ իր տունը Երուսաղէմ, և 2
Անանիի որդի Ցեհու տեսանողը
դուրս եկաւ նորա առաջին և ա-
սեց Յովսափատ թագաւորին.
Պէտք էր չարին օգնէիր և որ Տի-
րոջը ատողներին սիրէիր. և սորա
համար քեզ վերայ բարկութիւն 3
կայ Տիրոջ երեսից։ Բայց քեզ վե-
րայ բարի բաներ են գտնվում.
որովհետև բնաջինջ արիր Աստա-
րովթի կուռքերը երկրից, և սիր-
եցիր պատրաստեցիր Աստուածն
խնդրելու։
Եւ Յովսափատը բնակվում էր 4
Երուսաղէմում. և դարձեալ
դուրս եկաւ ժողովրդի մէջ Բեր-
սաբէէից մինչև Եփրեմի սարը, և
նորանց դարձրեց իրանց Հայրերի
Տէր Աստուածուն, Եւ դատաւոր- 5
ներ դրաւ երկրումը ցուդայի բո-
լոր պարսպաւոր քաղաքներում
ամեն մէկ քաղաքի մէջ։ Եւ դա- 6
տաւորներին ասեց. Տեսէք թէ
դուք ինչ էք անում. որովհետև
դուք մարդի համար չէք տես-
նում դատաստանը, այլ Տիրոջ
համար, և նա ձեզ հետ է դա-
տաստանի գործումը։ Ուրեմն Տի- 7
րոջ վախը ձեզ վերայ լինի, զգու-
շութեամբ գործեցէք. որովհետև
մեր Տէր Աստուծոյ մօտ անիրա-
ւութիւն, աչառութիւն և կա-
շառք առնել չ'կայ։
Եւ Յովսափատը երուսաղէմում 8
էլ դրաւ Ղեւտացիներից և
քահանաներից և Իսրայէլի տոհ-
մապետներից Տիրոջ իրաւունքի
համար և դատելու համար, երբ-
որ ետ էին դարձել Երուսաղէմ։
Եւ նորանց պատուիրեց ասելով. 9
Այսպէս արէք Տիրոջ վախով հա-
ւատարմութեամբ և կատարեալ
սրտով. Եւ ամեն մի դատ, որ 10
դայ ձեզ մօտ ձեր եղբայրներից
որ բնակվում են իրանց քաղաք-
ներում՝ թէ արիւնների համար
թէ օրէնքի, թէ պատուիրանքի,
թէ կանոնների և թէ իրաւունք-
ների համար լինի, նորանց լուսա-
ւորեցէք որ Տիրոջ դէմ յանցանք
չ'գործեն, և որ բարկութիւն չը
գայ ձեզ վերայ և ձեր եղբայր-
ների վերայ. այսպէս արէք, և

11 յանցաւոր չէք լինիլ։ Եւ ահա Ամարիա մեծ քահանան ձեզ վերայ է Տիրոջ ամեն գործքուքը, իսկ Յուդայի տան իշխան՝ Իսմայէլի որդի Ջաբադիան՝ թագաւորի ամեն գործքուքը. և ոստիկանները՝ Ղևտացիներն ձեր առաջից. զօրացէք և գործեցէք, և Տէրը բարի հետ կ'լինի։

ԳԼ. Ի

1 Եւ եղաւ ասրանից յետոյ, որ Մովաբի որդիքը և Ամմոնի որդիքը և նորանց հետ Մաոնացիներից էլ եկան Յովսափատի վերայ պատերազմելու։ Եւ 2 եկան ու Յովսափատին պատմեցին և ասեցին. Քեզ վերայ մեծ բազմութիւն է գալիս ծովի այն կողմից Ասորիների միջից. և ահա նորանք Ասասանթամարուքն են, որ է Ենդադի։ Եւ Յովսափատը վախեցաւ և երեսն ուղղեց Տիրոջը խնդրելու, և ծոմապահութիւն քարոզեց բոլոր 4 Յուդայի մէջ։ Եւ Յուդայեանք ժողովուեցան Տէրից օգնութիւն 5 խնդրելու։ Եւ Յովսափատը կանգնեց Յուդայի և Երուսաղէմի ժողովքի մէջ Տիրոջ տանը 6 նոր սրահի առաջին. Եւ ասեց. Ով մեր հայրերի Տէր Աստուածը, դու չէ՞ս այն երկնքում բնակող Աստուածը և ազգերի բոլոր թագաւորութիւնների վերայ տիրողը, և քո ձեռին է զօրութիւնը և ոյժը և մեկը չէ կա- 7 րող քեզ դէմ կենալ։ Չէ՞ որ դու, ով մեր Աստուած, քշեցիր այս երկրի բնակիչներին քո ինբայել ժողովրդի առաջից և տուիր այն յաւիտեան քո սիրելի Աբ- 8 րահամի սերունդին։ Եւ նորանք բնակուեցին այնտեղ և նորա նուէմ քո անուան համար սրբա- 9 րան շինեցին և ասեցին. Եթէ մեզ վերայ չարիք, սուր, պատուհաս, և ժանտախտ կամ սով գայ, մենք կանգնենք այս տան առաջը քո դիմացը, որովհետև քո անունը այս տան վերայ է, և դէպի քեզ աղաղակենք մեր նեղութեան միջից, այն ժամանակ լսես և ազատես. Եւ հիմա՝ ահա 10 Ամմոնի և Մովաբի որդիքը և Սէիր սարի բնակիչները, որոնց մէջը մըտնելու հրաման չտուիր իսրայելացիներին երբոր նորանք դուրս էին եկել եգիպտոսից. այլ նորանցից քաշուեցան, և նորանց չփչացրին. Բայց ահա նորանք 11 հատուցանում են ինձ մեր վերայ գալով, որ մեզ դուրս անեն քո ժառանգութիւնիցը, որ մեզ ժառանգութիւն տուիր։ Ով մեր 12 Աստուած, մի՞թէ նորանց չես դատիլ. որովհետև մենք զօրութիւն չունինք այս մեծ բազմութեան դէմ, որ եկել է մեզ վերայ, և մենք չգիտենք թէ ինչ անենք. որովհետև մեր աչքերը քեզ վերայ է։ Եւ բոլոր Յուդան 13 կանգնած էր Տիրոջ առաջը, նաև նորանց երեխայքը. նորանց կանայքը և որդիքը։

Եւ Ասափի որդիներից Ղևտացի Մաթանիայի որդի Յեհիէլի որդի Բանեայի որդի Ջաքարիայի որդի Յազիէլի վերայ եկաւ Տիրոջ հոգին ժողովքի մի- 14 ջումը։ Եւ նա ասեց. Ականջ 15 դրէք, ով բոլոր Յուդա և Երուսաղէմի բնակիչներ և ով Յովսափատ թագաւոր, Տէրը ձեզ այսպէս է ասում. Դուք մի վախեցնաք և մի պարհաւրիք այս մեծ բազմութեան երեսից. որովհետև պատերազմը ձերը չէ այլ Աստուծուն է։ Էգուց իջէք նորանց 16 վերայ. ահա նորանք վեր են գընում Ասիսի զառիվերովը, և դուք նորանց կ'գտնէք հեղեղատի ծայրումը Յերուէլի անապատի առաջին։ Դուք չէք պատե- 17 րազմելու այս անգամ. դուք կացէք, կանգնեցէք և կ'տեսնէք Տիրոջ փրկութիւնը ձեզ հետ, ով Յուդա և Երուսաղէմ. մի վախենաք և մի զարհուրիք. էգուց նորանց դիմացը դուրս եկէք, և Տէրը ձեզ հետ է լինելու։ Եւ Յովսափատը խոնար- 18 հուեցաւ երեսովը մինչև գետինը, և բոլոր Յուդան և Երուսաղէմի բնակիչները երկան Տիրոջ

առաջը, որ Տիրոջը երկրպագունը կուտային Օրհնութեան հովիտ 27
մինչև այսօր։ Եւ ետ դառան բոլոր Յուդայի և Երուսաղէմի մարդիկը և Յովսափատ իրանց նորանց պարագլուխ, որ ետ դառնան Երուսաղէմ ուրախութեամբ, որովհետև Տէրը նորանց ուրախացրել էր իրանց թշնամիներիցն։ Եւ նորանք 28
մտան Երուսաղէմ տաւիղներով, քնարներով և փողերով Տիրոջ տունը։ Եւ Աստուծոյ երկիւղն 29
եղաւ երկրի թագաւորութիւնների վերայ լսելով թէ Տէրը պատերազմեց Իսրայէլի թշնամիների հետ։ Եւ Յովսափատի թա- 30
գաւորութիւնը հանգստացաւ, և Աստուած նորան հանդարտութիւն տուաւ շուրջանակի։

Եւ Յովսափատը թագաւորեց 31
Յուդայի վերայ. երեսուներկու հինգ տարեկան էր թագաւոր դառնալիս և քսանհինգ տարի թագաւորեց Երուսաղէմում և նորա մօր անունն էր Ազուբա՝ գուստր Սալհի։ Եւ գնաց իր հայր Ասայի 32
ճանապարհումը, և նորանից չէ-տարուեց, որ ուղղութիւն էր առնում Տիրոջ աչքի ---։ Միայն 33
թէ բարձրաւանդակները վեր չառնուեցան, և ժողովուրդն էլ տակաւին չէր պատրաստել իր սիրտը դէպի իրանց հայրերի Աստուածը։ Եւ Յովսափատի գործե- 34
րի մնացորդը առաջիններն և վերջինները, ահա նորանք գրուած են Անանիի որդի Յեհուի պատմութիւնների մէջ, որոնք անցել են Իսրայէլի թագաւորների գրքի մէջ։

Եւ ասրանից յետոյ ընկերացաւ 35
Յուդայի Յովսափատ թագաւորը Իսրայէլի Աքազիա թագաւորի հետ, որ չարութիւն էր գործում. Եւ նորա հետ ընկերացաւ, որ 36
նաւեր շինեն Թարսիս գնալու համար. և նաւեր շինեցին Գասիոն-գաբերում։ Եւ Մարեսացի Դո- 37
դաւերուամ։ Եւ Մարեսացի Դոդաւիայի որդի Եղիազերը մարգարէացաւ Յովսափատի մասին ասելով. Որովհետև դու Աքազիայի հետ ընկերացար, Տէրը քանդել

առաջը, որ Տիրոջը երկրպագունը կուտային Օրհնութեան Հովիտ 27
մինչև այսօր։ Եւ ետ դառան բոլոր Յուդայի և Երուսաղէմի մարդիկը և Յովսափատ իրանց նորանց պարագլուխ, որ ետ դառնան Երուսաղէմ ուրախութեամբ, որովհետև Տէրը նորանց ուրախացրել էր իրանց թշնամիներիցն։ Եւ նորանք 28
մտան Երուսաղէմ տաւիղներով, քնարներով և փողերով Տիրոջ տունը։ Եւ Աստուծոյ երկիւղն 29
եղաւ երկրի թագաւորութիւնների վերայ լսելով թէ Տէրը պատերազմեց Իսրայէլի թշնամիների հետ։ Եւ Յովսափատի թա- 30
գաւորութիւնը հանգստացաւ, և Աստուած նորան հանդարտութիւն տուաւ շուրջանակի։

Եւ Յովսափատը թագաւորեց 31
Յուդայի վերայ. երեսուներկու հինգ տարեկան էր թագաւոր դառնալիս և քսանհինգ տարի թագաւորեց Երուսաղէմում և նորա մօր անունն էր Ազուբա՝ գուստր Սալհի։ Եւ գնաց իր հայր Ասայի 32
ճանապարհումը, և նորանից չէ-տարուեց, որ ուղղութիւն էր առնում Տիրոջ աչքի ---։ Միայն 33
թէ բարձրաւանդակները վեր չառնուեցան, և ժողովուրդն էլ տակաւին չէր պատրաստել իր սիրտը դէպի իրանց հայրերի Աստուածը։ Եւ Յովսափատի գործե- 34
րի մնացորդը առաջիններն և վերջինները, ահա նորանք գրուած են Անանիի որդի Յեհուի պատմութիւնների մէջ, որոնք անցել են Իսրայէլի թագաւորների գրքի մէջ։

Եւ ասրանից յետոյ ընկերացաւ 35
Յուդայի Յովսափատ թագաւորը Իսրայէլի Աքազիա թագաւորի հետ, որ չարութիւն էր գործում. Եւ նորա հետ ընկերացաւ, որ 36
նաւեր շինեն Թարսիս գնալու համար. և նաւեր շինեցին Գասիոն-գաբերում։ Եւ Մարեսացի Դո- 37
դաւերուամ։ Եւ Մարեսացի Դոդաւիայի որդի Եղիազերը մարգարէացաւ Յովսափատի մասին ասելով. Որովհետև դու Աքազիայի հետ ընկերացար, Տէրը քանդել

է քո գործքը։ Եւ նաւերը կոտրատուեցան և չ՚կարողացան թարսիս գնալ։

ԳԼ. ԻԱ

1 Եւ Յովսափատը ննջեց իր հայրերի հետ և թաղուեցաւ իր
հայրերի հետ Դաւիթի քաղա-
քումը. և նորա որդի Յովրամը
2 թագաւոր եղաւ նորա տեղ։ Եւ
նորա եղբայրները՝ Յովսափատի
որդիքը՝ Ազարիա, Յեքիէլ, Զա-
քարիա, Ազարիու, Միքայէլ և
Սափատիա էին. սորանք ամենքը
Իսրայէլի թագաւոր Յովսափատի
3 որդիքն էին։ Եւ նորանց հայրը
տուաւ նորանց շատ պարգևներ՝
ոսկի և արծաթ և պատուական
բաներ Յուդայի միջի պարսպա-
ւոր քաղաքներով մէկտեղ. բայց
թագաւորութիւնը տուաւ Յով-
րամին, որովհետև նա էր անդ-
4 րանիկը։ Եւ երբոր Յովրամը մը-
տաւ իր հօր թագաւորութիւնը
և հաստատուեցաւ, այն ժամա-
նակ սրով սպանեց իր բոլոր եղ-
բայրներին, նաև Իսրայէլի իշ-
խաններից ոմանց։
5 Յովրամը երեսունևերկու տա-
րեկան էր երբոր թագաւոր ե-
ղաւ, և ութ տարի թագաւո-
րութիւն արաւ Երուսաղէմում։
6 Եւ գնաց Իսրայէլի թագաւոր-
ների ճանապարհովը, ինչպէս որ
Աքաաբի տունն էր անում. ո-
րովհետև Աքաաբի աղջիկը նորա
կինն էր, և չարութիւն արաւ
7 Տիրոջ առաջին։ Բայց Տէրը չ՚ու-
զեց Դաւիթի տունը կորցնել
այն ուխտի համար, որ արել էր
Դաւիթի հետ, և ինչպէս որ նո-
րան խոստացել էր նորան և նո-
րա որդկանցը մէկ ճրագ տալ ա-
մեն ժամանակ։
8 Նորա օրերին ապստամբուեց
Եդովմը Յուդայի ձեռքի տակից,
և իրանց վերայ մէկ թագաւոր
9 դրին։ Եւ Յովրամը գնաց իր իշ-
խաններովը և բոլոր կառքերովը,
և գիշերը վեր կացաւ զարկեց Ե-
դովմացիներին, որ իրան շրջապա-
տում էին, և կառքերի իշխան-
ներին։ Եւ Եդովմացիներն ապըս- 10
տամբուեցին Յուդայի ձեռքի
տակից մինչև այս օրը. այն ժա-
մանակ Լեբնան էլ ապստամբուեց
նորա ձեռքի տակից, որովհետև
թողեց իրան հայրերի Տէր Ա-
ստուծուն։ Նա բարձրաւանդակ- 11
ներ էլ շինեց Յուդայի սարերի
վերայ, և Երուսաղէմի բնակիչ-
ներին պոռնկութիւն անել տը-
ւաւ և մոլորեցրեց Յուդային։
Եւ նորան թուղթ եկաւ Եղիա 12
մարգարէիցն ասելով. Այսպէս է
ասում քո հայր Դաւիթի Տէր
Աստուածը. Որովհետև չ՚գնացիր
քո հայր Յովսափատի ճանապարհ-
ներովը և Յուդայի Ասա թագա-
ւորի ճանապարհներովը, Այլ գը- 13
նացիր Իսրայէլի թագաւորների
ճանապարհովը և պոռնկութիւն
անել տուիր Յուդային և Երու-
սաղէմի բնակիչներին Աքաաբի
տան պոռնկութիւնների պէս,
նաև քո հօր տան եղբայրներիդ՝
որ քեզանից լաւ էին, սպանեցիր,
Ահա Տէրը մեծ հարուածով պի- 14
տի հարուածէ քո ժողովրդին,
քո որդիներին, քո կնիկներին և
քո բոլոր ստացուածքին. Եւ քեզ՝ 15
մեծ հիւանդութիւններով՝ փորի
հիւանդութիւնով, մինչև որ քո
փորոտիքը դուրս թափուի հի-
ւանդութիւնիցն օրից օր։
Եւ Տէրը գրգռեց Յովրամի դէմ 16
Փղշտացիների և Արաբացիների
ոգին, որ բնակվում էին Եթով-
պացիների կողմերին. Եւ նորանք 17
գնացին Յուդայի վերայ և ճեղ-
քեցին նորան և գերի արին թա-
գաւորի տանը գտնուած բոլոր
ստացուածքը. նաև նորա որդի-
ներին և նորա կիներին. և նորա
համար մի որդի չ՚մնաց միայն
թէ նորա որդիներից ամենափոք-
րը՝ Յովաքազը։
Եւ այս ամենից յետոյ Տէրը 18
զարկեց նորան փորոտիքի հիւան-
դութիւնով որ անբուժելի էր։
Եւ մի քանի ժամանակներից յե- 19
տոյ, երբոր երկու տարուայ չափ
ժամանակ էր անցել վերջացել,
նորա փորոտիքը թափուեցան իր
հիւանդութիւնիցը, և նա մե-

ռաւ չարաչար հիւանդութիւ-
նով։ Եւ նորա ժողովուրդը նորա
համար խունկիր չ՚ծխեցին ինչպէս
որ նորա հայրերի վերայ ծխել
20 էին։ Նա երեսունևերկու տարե-
կան էր երբոր թագաւոր եղաւ,
և ութը տարի թագաւորեց Ե-
րուսաղէմում, և գնաց առանց
փափաքուած լինելու, և նորան
թաղեցին Դաւիթի քաղաքումը,
բայց ոչ թէ թագաւորների գե-
րեզմաններումը։

ԳԼ. ԻԲ

1 Եւ Երուսաղէմի բնակիչները
թագաւոր արին նորա տեղ նորա
փոքր որդի Ոքոզիային. որովհետև
բոլոր մեծերին սպանել էին այն
գունդերը, որ բանակն էին եկել
Արաբացիների հետ։ Եւ թագա-
ւոր եղաւ Յուդայի Յովրամ թա-
2 գաւորի որդի Ոքոզիան։ Ոքոզիան
քառասունևերկու տարեկան էր
երբոր թագաւոր եղաւ և մէկ
տարի թագաւորեց Երուսաղէ-
մումը, և նորա մօր անունն էր
3 Գոթոզիա՝ դուստր Ամրիի։ Սա
էլ գնաց Աքաաբի տան ճանա-
պարհներովը. որովհետև նորա
մայրը նորան խրատում էր չա-
4 րութիւն անելու։ Եւ նա չարու-
թիւն արաւ Տիրոջ աչքի առաջին
Աքաաբի տան պէս. որովհետև
նորանք էին նորա խրատ տուող-
ները իր հօր մահից յետոյ նո-
5 րան փչացնելու համար։ Նաև
նորանց խորհուրդներովն էր գը-
նում, և Իսրայէլի թագաւոր
Աքաաբի որդի Յովրամի հետ գը-
նաց պատերազմ Ասորիների թա-
գաւոր Ազայէլի վերայ Ռամովթ-
գաղտագ։ Բայց Ասորիները յաղ-
6 թեցին Յովրամին։ Եւ նա ետ
դառաւ, որ բժշկուի Յեզրայէ-
լում այն վէրքերից, որ նորան
տուին Ռամայում, երբոր պա-
տերազմում էր Ասորիների Ազա-
յէլ թագաւորի հետ։ Եւ Յու-
դայի թագաւոր Յովրամեան *Ա-
զարիան իջաւ Յեզրայէլ Աքաա-
բի որդի Յովրամին տեսնելու որ
հիւանդ էր։ Եւ Աստուածանից 7
էր Ոքոզիայի կործանումը, որ
Յովրամի մօտ գնար. որովհետև
երբոր եկաւ Յովրամի հետ՝ դուրս
եկաւ Նամեսսեան Յէուին առա-
ջը, որին օծել էր Տէրը Աքաաբի
տունը բնաջինջ անելու համար։
Եւ եղաւ երբոր Յէուն Աքաաբի 8
տան վերայ դատաստանը գործ
էր դնում, այն ժամանակ գը-
տաւ, որ Յուդայի իշխանները և
Ոքոզիայի եղբօրորդիները ծառա-
յում էին Ոքոզիային, և նա նո-
րանց սպանեց։ Եւ որոնեց Ոքո- 9
զիային, և նորան բռնեցին երբոր
նա թաք էր կացել Սամարիայու-
մը, և նորան բերին Յէուի մօտ,
և նորան սպանեց. և նորան թա-
ղեցին. որովհետև ասեցին. Սա
այն Յովսափատի որդին է որ Տի-
րոջը խնդրում էր իր բոլոր սըր-
տովը։ Եւ Ոքոզիայի տանը մէկը չը
կար որ կարողանար թագաւորել։
Բայց Ոքոզիայի մայր Գոթո- 10
զիան, երբոր տեսաւ թէ որդին
մեռաւ, վեր կացաւ և փչացրեց
Յուդայի տան բոլոր թագաւո-
րական սերունդը։ Բայց թագա- 11
ւորի աղջիկը Յօսաբէէն առաւ
Ոքոզիայի որդի Յովասին և նո-
րան գողացաւ թագաւորի սպա-
նուած որդկանց միջիցը, և նո-
րան դրաւ նորա դայեակի հետ
անկողինների սենեակումը, և
այսպէս Յովրամ թագաւորի աղ-
ջիկ Յօսաբէէն՝ Յովիադա քահա-
նայի կինը՝ որովհետև Ոքոզիայի
քոյրն էր, նորան թաքցրեց Գո-
թոզիայի երեսիցը, որ նորան
չ՚սպանեց։ Եւ վեց տարի Ա- 12
ստուծոյ տանը թաք կացած մնաց
նորանց հետ, և Գոթոզիան թա-
գաւորութիւն էր անում երկրի
վերայ։

ԳԼ. ԻԳ

Եւ եօթներորդ տարին զօրացաւ 1
Յովիադան և իրան հետ դաշինքի
մէջ առաւ հարիւրապետ Յերո-
ամի որդի Ազարիային, Յօհանանի
որդի Իսմայէլին, Ովբեդի որդի

*Կամ՝ Ոքոզիա

Ազարիային, Ադայիայի որդի
Մաասիային և Զեքրիի որդի Ե-
2 զիսափատին։ Եւ նորանք շրջե-
ցին Յուդայի մէջ և ժողովեցին
Ղեւտացիներին Յուդայի ամեն
քաղաքներիցը և Իսրայէլի տոհ-
մապետներին, և եկան Երուսա-
3 ղէմ։ Եւ բոլոր ժողովքը դաշինք
արաւ թագաւորի հետ Աստու-
ծոյ տանը. և Յովիադան ասեց
նորանց. Ահա թագաւորի որդին
պիտի թագաւորէ, ինչպէս որ
Տէրն ասել է Դաւիթի որդինե-
4 րի մասին։ Սա է ձեր անելու
բանը, ձեր երրորդ մասը որ գա-
լիս են շաբաթ օրը՝ քահանաներ-
ից և Ղեւտացիներից դռների
5 դռնապաններ լինին. Եւ մէկ եր-
րորդը լինի թագաւորի տանը, և
երրորդ մասը Եսոդի դռանը լի-
նի. իսկ բոլոր ժողովուրդը Տի-
6 րոջ տան գաւիթում։ Եւ ոչ ով
չ՚մտնէ Տիրոջ տունը բացի քա-
հանաներից և Ղեւտացի ծառա-
յողներից, նորանք մտնեն, որով-
հետև նորանք սուրբ են. և բո-
լոր ժողովուրդը պահէ Տիրոջ
7 պահապանութիւնը։ Եւ Ղեւտա-
ցիները շուրջանակի շրջապատեն
թագաւորին ամեն մարդ իր զէն-
քերը ձեռքին. և տունը մտնողը
մեռցնուի. և թագաւորի հետ
լինիք նորա մտած և դուրս եկած
8 ժամանակը։ Եւ Ղեւտացիները և
բոլոր Յուդան բոլորովին Յովիադա
քահանայի պատուիրածին պէս
արին. և ամեն մարդ առաւ իր
մարդկանցը որ գալիս էին շա-
բաթ օրը. որովհետև Յովիադա
քահանան չ՚արձակեց դասակար-
9 գութիւնները։ Եւ Յովիադա քա-
հանան տուաւ հարիւրապետներ-
ին Դաւիթ թագաւորի նիզակ-
ները, ասպարները և վահաննե-
10 րը, որ Աստուծոյ տանն էին։ Եւ
կանգնեցրեց բոլոր ժողովրդին՝ ա-
մեն մէկին իր զէնքը ձեռքին տան
աջ կողմից մինչև տան ձախ կող-
մը սեղանի և տան մօտ թագա-
11 ւորի շուրջը. Եւ դուրս հանե-
ցին թագաւորի որդիին, և նորա
վերայ դրին թագը և վկայու-
թիւնը, և նորան թագաւոր շի-
նեցին. և Յովիադան և նորա որ-
դիքը նորան օծեցին. և ասեցին.
Կեցցէ՛ արքայ։
12 Եւ Գոթոզիան լսեց վազող և
թագաւորին շնորհաւորող ժողո-
վրդի ձայնը և գնաց ժողովրդի
13 մօտ Տիրոջ տունը. Եւ մտիկ
տուաւ, և ահա թագաւորը
կանգնած էր իր սիւնի մօտ մուտ-
քի կշտին, և զօրապետներն ու
փողերը՝ թագաւորի մօտ. և եր-
կրի բոլոր ժողովուրդն ուրախա-
նում և փողերը հնչեցնում էին,
և երգիչները և երաժիշտները
նուագարաններով օրհներգում,
այն ժամանակ Գոթոզիան պա-
տառեց իր հանդերձները և ա-
սեց. Դաւաճանութի՛ւն, դա-
14 ւաճանութի՛ւն։ Եւ Յովիադա
քահանան հրամայեց հարիւրա-
պետներին, որ նշանակուած էին
զօրքի վերայ և ասեց նորանց.
Դուրս հանեցէք դորան կարգերի
միջից, և նորա ետևից գնացողը
որով սպանուի, որովհետև քա-
հանան ասել էր թէ Նորան չ՚ըս-
15 պանէք Տիրոջ տանը։ Եւ նորանք
իրանց ձեռքերը ձգեցին նորա
վերայ. և երբոր նա թագաւորի
պալատը մտնող ձիերի դռան
մուտքն էր մտել, այնտեղ նո-
րան սպանեցին։
16 Եւ Յովիադան ուխտ դրաւ իր
մէջ և բոլոր ժողովրդի մէջ և
թագաւորի մէջ, որ Տիրոջ ժո-
17 ղովուրդը լինին։ Եւ բոլոր ժողո-
վուրդը գնաց Բահաղի տունը և
քանդեցին նորան, նորա սեղան-
ները և պատկերները փշրեցին, և
Բահաղի քուրմ Մատթանին ըս-
պանեցին սեղանների առաջին։
18 Եւ Յովիադան ոստիկաններ դրաւ
Տիրոջ տան վերայ այն Ղեւտացի
քահանաների ձեռովը, որոնց ո-
րոշել էր Դաւիթը Տիրոջ տան
համար որ Տիրոջը ողջակէզներ
մատուցանեն, ինչպէս գրուած
է Մովսէսի օրէնքումը՝ ուրա-
խութիւնով և երգով Դաւիթի
19 սահմանածին համեմատ։ Եւ
դռնապաններին դրաւ Տիրոջ տան
դռների վերայ, որ ոչ մի բանում
20 անմաքուր եղողը չ՚մտնէ։ Եւ վեր

առաւ հարիւրապետներին և ազ-
նուականներին և ժողովրդի իշ-
խաններին և երկրի բոլոր ժողո-
վրդին, և թագաւորին Տիրոջ
տանիցը իջեցրեց, և վերի դռան
մէջովը մտան թագաւորի տունը,
և թագաւորին նստեցրին թա-
գաւորութեան աթոռի վերայ։
21 Եւ երկրի ամեն ժողովուրդն ու-
րախացաւ, և քաղաքը խաղաղե-
ցաւ։ Իսկ Գոթոզիային սրով
սպանեցին։

ԳԼ. ԻԴ

1 Յովասը եօթը տարեկան էր երբ-
որ թագաւոր եղաւ. և քառա-
սուն տարի թագաւորութիւն ա-
րաւ Երուսաղէմում. և նորա մօր
անունն էր Սաբիա՝ Բերսաբէէցի։
2 Եւ Յովասն ուղղութիւն արաւ
Տիրոջ աչքի առաջին Յովիադա
3 քահանայի բոլոր օրերին։ Եւ Յո-
վիադան նորա համար երկու կին
առաւ, և նա որդիներ և աղջիկ-
ներ ծնեց։
4 Եւ սորանից յետոյ Յովասի
սիրտն ուզեց, որ Տիրոջ տունը
5 նորոգէ։ Եւ ժողովեց քահանա-
ներին և Ղեւտացիներին և ասեց
նորանց. Դուրս եկէք գնացէք
Յուդայի քաղաքները և բոլոր Իս-
րայէլից տարուց տարի փող հա-
ւաքեցէք ձեր Աստուծոյ տունը
նորոգելու, և դուք շուտով ա-
րէք այս գործը. սակայն Ղեւտա-
6 ցիները շուտով չ՚արին։ Եւ թա-
գաւորը կանչեց Յովիադա իշխա-
նին և ասեց նորան. Ինչու հա-
մար չես պահանջում Ղեւտացի-
ներից, որ բերեն Յուդայից և Ե-
րուսաղէմից Տիրոջ ծառայ Մով-
սէսի և Իսրայէլի ժողովքի դրած
տուրքը վկայութեան խորանի
7 համար։ Որովհետև անօրէն Գո-
թոզիան և նորա որդիքը քան-
դել են Աստուծոյ տունը և Տի-
րոջ տան բոլոր նուէրները գործ
8 են ածել Բահաղիմի համար։ Եւ
թագաւորը հրամայեց և մէկ
արկղ շինեցին և դրին նորան Տի-
9 րոջ տան դռանը դուրսում։ Եւ
մունետիկ կանչել տուին Յուդա-
յում և Երուսաղէմում, որ բե-
րեն Տիրոջ համար Աստուծոյ ծա-
ռայ Մովսէսի Իսրայէլի վերայ ա-
նապատումը դրած տուրքը։ Եւ 10
բոլոր իշխանները և բոլոր ժողո-
վուրդը ուրախացան, և բերում
ու գցում էին արկղի մէջ մինչև
որ լցուեցաւ։ Եւ այն ժամանակ 11
երբոր բերում էին արկղը Ղեւտա-
ցիների ձեռովը թագաւորի վե-
րակացուի մօտ, և երբոր տես-
նում էին, որ փողը շատացել է,
այն ժամանակ գալիս էր թագա-
ւորի դրագիրը և քահանայապե-
տի վերակացուն, և դարտակում
էին արկղը, յետոյ տանում ետ
էին դարձնում իր տեղը. այսպէս
էին անում օր ըստ օրէ. և շատ
փող հաւաքեցին։ Եւ թագաւորն 12
ու Յովիադան տալիս էին այն փողը
Տիրոջ տան ծառայութեան գործն
անողներին. և նորանք քարահատ-
ներ և հիւսեր էին վարձում Տի-
րոջ տունը նորոգելու համար,
նաև տալիս էին երկաթագործնե-
րին և պղնձագործներին Տիրոջ
տունը ամրացնելու համար։ Եւ 13
գործաւորները գործում էին, և
նորոգութեան գործը կատարուե-
ցաւ նորանց ձեռովը. և Աստու-
ծոյ տունը վերականգնեցին իր
չափովը և նորան պնդացրին։ Եւ 14
գործը վերջանալուց յետոյ փողի
մնացածը բերում էին թագաւո-
րի և Յովիադայի առաջին. և նո-
րանք Տիրոջ տան համար անօթ-
ներ էին շինում, պաշտաման և
ողջակէզների համար անօթներ և
խնկատուփեր և ոսկիի ու արծա-
թի ամաններ. և ողջակէզներ էին
մատուցանում միշտ Տիրոջ տանը
Յովիադայի բոլոր օրերումը։
Եւ Յովիադան ծերացաւ և օ- 15
րերով կշտացաւ, և մեռաւ, և
մեռնելիս հարիւր երեսուն տա-
րեկան էր։ Եւ նորան թաղեցին 16
Դաւիթի քաղաքումը թագա-
ւորների հետ. որովհետև նա Իս-
րայէլում բարութիւն արաւ Աս-
տուծոյ և նորա տան համար։
Եւ Յովիադայի մեռնելուց յե- 17
տոյ եկան Յուդայի իշխանները
և խոնարհութիւն արին թագա-

ւորին. այն ժամանակը թագա-
18 ւորը նորանց լսում էր։ Եւ թո-
ղեցին իրանց հայրերի Տէր Ա-
ստուծոյ տունը, և ծառայեցին
Աստարովթների և կուռքերի.
և Յուդայի ու Երուսաղէմի վե-
րայ բարկութիւն եկաւ նորանց
19 այս յանցանքի համար։ Եւ նա
նորանց մօտ մարգարէներ էր ու-
ղարկում, որ նորանց դարձնեն
դէպի Տէրը. և նորանք վկայու-
թիւն արին նորանց դէմ. բայց
նորանք ականջ չ'դրին։
20 Եւ Աստուծոյ հոգին եկաւ Յո-
վիադա քահանայի որդի Զաքա-
րիայի վերայ, և նա կանգնեց ժո-
ղովրդի առաջին մի բարձր տեղ
և նորանց ասեց. Այսպէս է ա-
սում Աստուած. Ի՞նչու համար
էք դուք անցնում Տիրոջ պատ-
ուիրանքովը. ուրեմն յաջողու-
թիւն չէք ունենալ, որովհետև
դուք թողել էք Տիրոջը, նա էլ
21 կ'թողէ ձեզ։ Եւ նորանք յար-
ձակուեցան նորա վերայ և նորան
քարկոծ արին թագաւորի հրա-
մանովը Տիրոջ տան սրահումը։
22 Եւ Յովաս թագաւորը չ'յիշեց
այն ողորմութիւնը, որ նորա հայ-
րը Յովիադան արել էր նորան,
և սպանեց նորա որդիին. և նա
մեռնելիս ասեց. Տէրը տեսնէ և
պահանջէ։
23 Եւ հետևեալ տարին եկաւ նո-
րա վերայ Ասորիների զօրքը, և
եկան Յուդայի և Երուսաղէմի
վերայ և փչացրին ժողովրդիցը
ժողովրդի բոլոր իշխաններին և
նորանց բոլոր աւարը ուղարկե-
ցին Դամասկոս՝ թագաւորին։
24 Թէև քիչ մարդկանցով եկան Ա-
սորիների զօրքերը, բայց Տէրը մի
շատ մեծ զօրք նորանց ձեռքը
մատնեց, որովհետև թողել էին
իրանց հայրերի Տէր Աստուծուն։
Եւ այսպէս Յովասի դատաստանն
25 արին։ Եւ երբոր նորանք գնացին
այնտեղից, նորան մեծ հիւան-
դութիւնների մէջ թողելով, նո-
րա դէմ դաւաճանութիւն ա-
րին նորա ծառաները Յովիադա
քահանայի որդկանց արեան հա-
մար, և նորան սպանեցին իր ան-
կողնի վերայ. և նա մեռաւ. և
նորան թաղեցին Դաւիթի քա-
ղաքումը, բայց չ'թաղեցին թա-
գաւորների գերեզմանատանը։ Եւ 26
սորանք են նորա դէմ դաւաճա-
նութիւն անողները՝ Ամմոնացի
կնկայ Սամեթի որդի Զաբադը,
և Մովաբացի կնկայ Սամարիթի
որդի Յովզաբադը։ Եւ նորա որդ- 27
կանց համար, և նորա դէմ ե-
ղած շատ պատգամների մասին,
և Աստուծոյ տան շինութեան
մասին, ահա դորանք գրուած են
թագաւորաց գրքի յիշատակա-
րանումը։ Եւ նորա որդի Ամա-
սիան թագաւոր եղաւ նորա տեղ։

ԳԼ. ԻԵ

Ամասիան քսանևհինգ տարեկան 1
էր երբոր թագաւոր եղաւ, և քը-
սանևինը տարի թագաւորեց Ե-
րուսաղէմում, և նորա մօր ա-
նունն էր Յովադան՝ Երուսաղէ-
մացի։ Եւ նա ուղղութիւն արաւ 2
Տիրոջ աչքի առաջին, միայն ոչ
կատարեալ սրտով։
Եւ երբոր թագաւորութիւնը 3
նորա վերայ հաստատուեցաւ, ըս-
պանեց իր թագաւոր հօրը զար-
կող ծառաներին։ Բայց նորանց 4
որդիներին չ'սպանեց, որովհե-
տև Մովսէսի գրքումը՝ օրէնքումը
գրուած է, որ Տէրը պատուի-
րում է ասելով թէ Հայրերը որ-
դիների պատճառով, և որդիքը
հայրերի պատճառով չ'մեռ-
ցնուին, այլ ամեն մարդ իր յան-
ցանքի համար մեռնի։
Եւ Ամասիան ժողովեց Յուդա- 5
յին և նորանց դրաւ ազգատոհ-
մերի համեմատ հազարապետնե-
րի և հարիւրապետների տակ՝ բո-
լոր Յուդային և Բենիամինին. և
նորանց համարեց քսան տարե-
կանից և վեր եղողներին, և նո-
րանց գտաւ երեք հարիւր հա-
զար ընտիր պատերազմի գնացող
և նիզակ ու վահան կրող մարդ։
Եւ Իսրայէլից հարիւր հազար 6
քաջ զօրքեր վարձեց հարիւր
տաղանդ արծաթով։ Եւ մի Ա- 7
ստուծոյ մարդ եկաւ նորա մօտ և

ասեց. Ով թագաւոր, Իսրայէլի
զօրքը քեզ հետ չ'գնայ. որով-
հետև Տէրը Իսրայէլի հետ չէ,
այսինքն բոլոր Եփրեմի որդկանց
8 հետ չէ։ Այլ դու ինքդ գնա,
գործիր, զօրացիր պատերազմում.
ապա թէ ոչ, Աստուած քեզ կը
կործանէ թշնամիի առաջին. ո-
րովհետև Աստուած զօրաւոր է
9 օգնելու և կործանելու։ Եւ Ա-
մասիան ասեց Աստուծոյ մար-
դին. Բայց այն հարիւր տաղան-
դը ի՞նչպէս անեմ, որ տուել
եմ Իսրայէլի գունդերին։ Եւ
Աստուծոյ մարդն ասեց. Տէրը
կարող է քեզ նորանից աւելի
10 տալ։ Եւ Ամասիան ջոկեց Եփ-
րեմից իր մօտ եկող գունդերը,
որ գնան իրանց տեղը. բայց նո-
րանց բարկութիւնը շատ բոր-
բոքուեց Յուդայի դէմ, և ետ
դառան իրանց տեղը բորբոքուած
բարկութիւնով։
11 Եւ Ամասիան ուժովացաւ, և
իր զօրքը հանեց և գնաց Աղի
ձորը, և կոտորեց Սէիրի որդի-
12 ներից տասը հազար մարդ. Եւ
տասը հազար կենդանի մարդ-
կանց դերի արին Յուդայի որդի-
քը և տարին նորանց քարաժայ-
ռի գլուխը, և նորանց վայր գցե-
ցին քարաժայռի գլխիցը, և նո-
րանք ամենքն էլ կտոր կտոր ե-
ղան։
13 Բայց այն գունդերի մարդիկը,
որոնց Ամասիան ետ ուղարկեց,
որ նորա հետ պատերազմի չ'գը-
նան, Յուդայի քաղաքների վե-
րայ յարձակուեցան Սամարիայից
մինչև Բեթորոն, և նորանցից ե-
րեք հազար զարկեցին, և մեծ
աւար արին։
14 Եւ երբոր Ամասիան ետ էր
դառել Եդովմացիներին ջարդե-
լուցը, բերաւ Սէիրի որդկանց
աստուածները և նորանց կանգ-
նեցրեց իրան համար աստուած-
ներ լինելու, և երկրպագութիւն
էր անում և նորանց խունկ ծը-
15 խում։ Եւ Տիրոջ բարկութիւնը
բորբոքուեց Ամասիայի դէմ և
նորա մօտ մի մարգարէ ուղար-
կեց, և նա ասեց նորան. Ի՞նչու
համար ես դու այն ազգի աստ-
ուածները խնդրում, որոնք չ'կա-
րողացան իրանց ժողովուրդը ա-
զատել քո ձեռքիցը։ Եւ եղաւ 16
որ նա այս բանը նորան խօսելիս,
թագաւորն ասեց նորան. Մի՞թէ
քեզ խորհրդական են դրել թա-
գաւորին. լռիր, որ քեզ չ'սպա-
նեն։ Եւ մարգարէն լռեց, բայց
ասեց. Գիտեմ որ Աստուած ո-
րոշել է որ քեզ փչացնէ, որով-
հետև այս բանն արիր և չ'լսեցիր
իմ խրատին։
Եւ Յուդայի Ամասիա թագա- 17
ւորը խորհուրդ արաւ և մարդ ու-
ղարկեց Յէուի որդի Յովաքազի
որդի՝ Իսրայէլի թագաւոր Յովա-
սի մօտ՝ ասելով. Եկ՝ մէկ իրար
երես տեսնենք։ Բայց Իսրայէլի 18
Յովաս թագաւորը մարդ ուղար-
կեց Յուդայի Ամասիա թագա-
ւորին ասելով. Լիբանանի փուշը
լուր ուղարկեց Լիբանանի եղև-
նափայտին ասելով. Աղջիկդ իմ
որդիին կին տուր. բայց Լիբա-
նանի վայրի գազանն անց կացաւ
և կոխ տուաւ փուշին։ Դու ա- 19
սում ես. Ահա ես յաղթեցի Ե-
դովմին, և քո սիրտը բարձրա-
ցել է հպարտութեամբ. հիմա
տանդ նստիր. Ի՞նչու համար ես
գրգռվում չարութիւնով, որ
ընկնես դու և Յուդան էլ քեզ
հետ։ Բայց Ամասիան չ'լսեց. ո- 20
րովհետև Աստուածանից էր, որ
նորան մատնէ թշնամի ձեռքը, ո-
րովհետև խնդրել էին Եդովմի
աստուածները։ Եւ Իսրայէլի Յո- 21
վաս թագաւորը վեր գնաց, և ի-
րար երես տեսան, նաև Յուդայի
Ամասիա թագաւորը Յուդայի
Բեթսամիւսում։ Բայց Յուդան 22
յաղթուեցաւ Իսրայէլի առաջին
և ամեն մարդ փախաւ իր վրանը։
Եւ Իսրայէլի Յովաս թագաւորը 23
բռնեց Բեթսամիւսում Յովաքա-
զի որդի Յովասի որդի՝ Յուդայի
թագաւոր Ամասիային, և նորան
տարաւ Երուսաղէմ, և քանդեց
Երուսաղէմի պարիսպիցը Եփրե-
մի դռնից մինչև Անկեան դուռը
չորս հարիւր կանգուն։ Եւ բոլոր 24
ոսկին և արծաթը և Աստուծոյ

տանը գտնուած Աբդեդոմի մեռի
բոլոր ամանները և թագաւորի
տան գանձերը, և պատանդներ
—, և ետ դառաւ Սամարիա։
25 Յուդայի թագաւորը՝ Յովա-
սի որդի Ամասիան ապրեց Ի-
սրայէլի թագաւոր Յովաքազի որ-
դի Յովասի մեռնելուց յետոյ
26 տասնեհինգ տարի։ Եւ Ամասի-
այի մնացորդ պատմութիւնը՝ ա-
ռաջիններն և վերջիններն, ահա
դորանք գրուած են Յուդայի և
Իսրայէլի թագաւորների դրքու-
27 մը։ Եւ այն ժամանակից, որ Ա-
մասիան խոտորուեց Տիրոջը հե-
տեւելուց, նորա դէմ դաւաճա-
նութիւն հնարեցին Երուսաղէ-
մում, և նա փախաւ Լաքիս,
բայց նորա ետևից մարդիկ ուղար-
կեցին Լաքիս, և նորան այնտեղ
28 մեռցրին։ Եւ նորան ձիերի վերայ
բերին, և թաղեցին նորան իր
հայրերի հետ Յուդայի մար-
զաքաղաքում։

Գլ. ԻԲ

1 Եւ Յուդայի բոլոր ժողովուրդը
առաւ Ոզիային որ — ամաե-
տասնեվեց տարեկան էր, և թա-
գաւոր արին նորան իր հայր Ա-
2 մասիայի տեղ։ Սա շինեց Ելա-
թը, և նորան ետ դարձրեց Յու-
դային երբոր թագաւորը իր հայ-
3 րերի հետ ննջել էր արդէն։ Ո-
զիան տասնեվեց տարեկան էր
երբոր թագաւոր եղաւ, և յի-
սունևերկու տարի թագաւորեց
Երուսաղէմում. և նորա մօր ա-
նունն էր Յեքելիա՝ Երուսաղէ-
4 մից։ Եւ նա ուղղութիւն արաւ
Տիրոջ աչքի —, բոլորովին
ինչպէս որ իր հայր Ամասիան ա-
5 րել էր։ Եւ խնդրում էր Ա-
ստուծուն Զաքարիայի օրերում,
որ Աստուծոյ տեսիլքներին հը-
մուտ էր. և քանի ժամանակ որ
նա խնդրում էր Տիրոջը, Աստ-
ուած նորան յաջողութիւն էր
6 տալիս։ Եւ նա դուրս եկաւ փղշ-
տացիների հետ պատերազմ տ-
րաւ և քանդեց Գէթի պարիս-
պը, Յաբնէի պարիսպը. և Ա-
զովատի ու փղշտացիների երկ-
րում քաղաքներ շինեց։ Եւ Աստ-
ուած նորան օգնեց փղշտացինե-
րի դէմ, Գուր-բահաղում բնա-
կող Արաբացիների դէմ և Մաա-
նացիների դէմ։ Եւ Ամմնացիք
ընծաներ էին տալիս Ոզիային, և
նորա անունը տարածուեցաւ մին-
չև Եգիպտոսի մուտքը, որովհետև
նա շատ ուժովացաւ։ Եւ Ոզիան
աշտարակներ շինեց Երուսաղէ-
մում Անկեան դռան վերայ, և
Ձորի դռան վերայ և անկիւնում,
և նորանց ամրացրեց։ Եւ աշ-
տարակներ շինեց անապատում,
և շատ ջրհորներ փորեց, որովհե-
տև շատ անասուններ ուներ հո-
վիտում և դաշտում. երկրա-
գործներ և այգեգործներ՝ սարե-
րում և կարմելացում, որովհե-
տև երկրագործութիւն սիրող էր։
Եւ Ոզիան զէնքերով պատե-
րազմի դուրս եկող պատերազմ
անող զօրքեր ուներ՝ ցիւրաքան-
չիւրի թուի համեմատ՝ թագաւորի իշխաններից
ձեռքով չինուած համարանքի թիւին
համեմատ՝ թագաւորի իշխաններից
Անանիայի ձեռքին տակ։ Բո-
լոր քաջազէն տոհմապետների
թիւը երկու հազար վեց հարիւր
էր։ Եւ նորանց ձեռքի տակ ե-
րեք հարիւր եօթը հազար հինգ
հարիւր զինուոր կար՝ զինուորի
զօրութեամբ պատերազմողներ,
որ թագաւորին օգնում էին թըշ-
նամիի դէմ։ Եւ Ոզիան այն ա-
մէն զօրքի համար վահաններ,
նիզակներ, սաղաւարտներ, զէ-
րահներ, աղեղներ և քարերի
պարեր պատրաստեց։ Եւ երու-
սաղէմում արուեստաւոր ճար-
տարութեամբ չինուած մեքենա-
ներ շինեց, որ աշտարակների և
անկիւնների վերայ կենան նետեր
և մեծ մեծ քարեր դնելու հա-
մար. և նորա համբաւը մինչև
հեռու տեղերը գնաց, որովհետև
զարմանալի կերպով օգնութիւն
գտաւ մինչև որ ուժովացաւ։
Բայց երբոր զօրացաւ, այն ժ-
ամանակ սիրտը հպարտացաւ մին-
չև չարութիւն գործելու, և յան-
ցանք գործեց իր Տէր Աստուծոյ
դէմ, և մտաւ Տիրոջ տաճարը
որ խունկի սեղանի վերայ խունկ
17 ծխէ։ Եւ նորա ետևից Ազարիա
քահանան մտաւ, և նորա հետ
Տիրոջ ութսուն քահանաները որ
18 զօրաւոր մարդիկ էին։ Եւ նո-
քանք Ոզիա թագաւորին դէմ
կանգնեցին և ասացին նորան. Ձս
գործը չէ, օվ Ոզիա, որ Տիրոջը
խունկ ծխես, այլ Ահարոնի որ-
դիք քահանաներին որոնք սրբ-
բուած են խունկ ծխելու. գուրս
ել սրբարանիցը, որովհետև յան-
ցանք գործեցիր և սա քեզ հա-
մար պատիւ չէ Տէր Աստուծմ-
19 ից։ Եւ Ոզիան բարկացաւ, և ձեռ-
քին էր բուրվառը որ խունկ ծխէ.
և նա քահանաների վերայ բար-
կանալիս՝ բորոտութիւնը երևե-
ցաւ նորա ճակատին քահանա-
ների առաջին Տիրոջ տանը խունկ
20 ծխելու սեղանի մօտ։ Եւ ետ դա-
ռան դէպի նորան Ազարիա քա-
հանայապետը և բոլոր քահանա-
ները, և ահա նա բորոտուած էր
իր ճակատումը, և նորան շու-
տով այնտեղից գուրս հանեցին.
և ինքն էլ շտապում էր
21 դուրս գալու, որովհետև Տէրը
նորան պարկել էր։ Եւ Ոզիա թա-
գաւորը բորոտ էր մինչև իր մահ-
ուան օրը, և մի առանձին տան
էր բնակվում բորոտուած. որով-
հետև արգիլուած էր Տիրոջ տա-
նից. իսկ նորա որդին՝ Յովաթա-
մը որ թագաւորի տան վերայ էր,
դատում էր երկրի ժողովրդին։
22 Եւ Ոզիայի մնացորդ պատմու-
թիւնը՝ առաջինը և վերջինը՝ գր-
եց Ամովսի որդի Եսայիա մար-
23 գարէն, և Ոզիան ննջեց իր
հայրերի հետ, և նորան թաղե-
ցին նորա հայրերի հետ թագա-
ւորների դերեզմաններում գաշտու-
մը. որովհետև ասացին, Թէ նա
բորոտ է։ Եւ նորա որդի Յովա-
թամը թագաւորեց նորա տեղ։

Գլ. ԻԳ

1 Յովաթամը քսանևհինգ տարե-
կան էր երբոր թագաւոր եղաւ,
և տասնեվեց տարի թագաւո-

րեց Երուսաղէմում. և նորա
մօր անունն էր Յերուսա՝ գուրսը
2 Սադովկի։ Եւ նա ուղղութիւն
արաւ Տիրոջ աչքի —ին բոլո-
րովին ինչպէս որ արել էր իր
հայրը՝ Ոզիան. միայն որ Տիրոջ
տաճարը չմտաւ. բայց ժողո-
վուրդը տակաւին ապականուած
էր։ Դա շինեց Տիրոջ տան վերի
3 դուռը, և Ոփղի պարսպի վե-
րայ շատ բան շինեց։ Եւ քա-
ղաքներ շինեց Յուդայի սարու-
մը, և անտառներում բերդեր
5 և աշտարակներ շինեց։ Եւ նա
պատերազմ արաւ Ամմնի որդ-
կանց թագաւորի հետ, և յաղ-
թեց նորանց. և Ամմնի որդիքն
այն տարին նորան հարիւր տա-
ղանդ արծաթ, և տասը հազար
քոռ ցորեն, և տասը հազար քո-
րի գարի տուին. այսպես արին նո-
րան Ամմնի որդիքը երկրորդ
6 տարին էլ և երրորդին էլ։ Եւ
Յովաթամը զօրացաւ. որովհե-
տև ուղղեց իր ճանապարհները
իր Տէր Աստուծոյ առաջին։
7 Եւ Յովաթամի մնացորդ պատ-
մութիւնը, և նորա բոլոր պա-
տերազմները և նորա ճանապարհ-
ները, ահա գրուած են Իսրայէ-
լի և Յուդայի յիշատակաց գըր-
քումը։ Քսանևհինգ տարեկան
8 էր նա երբոր թագաւոր եղաւ
և տասնեվեց տարի թագաւորեց
9 Երուսաղէմում։ Եւ Յովաթամը
ննջեց իր հայրերի հետ. և նո-
րան թաղեցին Դաւթի քաղա-
քում, և նորա որդի Ահազը
թագաւորեց նորա տեղ։

Գլ. ԻԴ

1 Ահազ քսան տարեկան էր,
երբոր թագաւոր եղաւ, և տասն-
եվեց տարի թագաւորեց Երու-
սաղէմում. և ուղղութիւն չար-
2 բաւ Տիրոջ աչքի առաջին ինչ-
պես իր հայր Դաւիթը, Եւ գը-
նաց Իսրայէլի թագաւորների ճա-
նապարհներով, և բահաղիմնե-
րի համար ձուլածոյ կուռքեր էլ
3 շինեց։ Եւ նա խունկ էր ծխում

դիներին կրակով այրեց այն ազ-
գերի գարշութիւնների պէս, ո-
րոնց Տէրը Իսրայէլի որդկանց ա-
4 ռաջից քշել էր։ Եւ զոհ էր
մատուցանում և խունկ ծխում
բարձրաւանդակների վերայ և
բլուրների վերայ և ամեն կանաչ
ծառի տակ։
5 Եւ նորա Տէր Աստուածը նո-
րան մատնեց Ասորիների թագա-
ւորի ձեռքը. և նորանք զարկե-
ցին նորան, և նորանից շատ գե-
րիներ առան, և տարին Դամաս-
կոս. նաև Իսրայէլի թագաւորի
ձեռքն ընկաւ, և նա սորան մեծ
6 հարուածով զարկեց։ Եւ Ռով-
մելայի որդի Փակէէն մէկ օր-
ուան մէջ Յուդայում հարիւր
քսան հազար մարդ սպանեց՝ ա-
մենքն էլ քաջ զօրաւորներ, ո-
րովհետև Թողեցին իրանց հայ-
7 րերի Տէր Աստուծուն։ Եւ Եփ-
րեմի զօրաւորը Զեքրին սպանեց
Թագաւորի որդի Մաասիային,
և պալատի հազարապետ Եզրի-
կամին, և Թագաւորի փոխանորդ
8 Եղկանային։ Եւ Իսրայէլի որ-
դիքն իրանց եղբայրներից երկու
հարիւր հազար կին, տղայ և
աղջիկ գերի արին, նաև շատ ա-
ւար յափշտակեցին նորանցից, և
աւարը բերին Սամարիա։
9 Եւ այնտեղ Տիրոջ մէկ մար-
գարէն կար Ովդեդ անունով, որ
դուրս եկաւ Սամարիա մտնող
զօրքի առաջը և նորանց ասեց.
Ահա ձեր հայրերի Տէր Աստուա-
ծը Յուդայի վերայ բարկանալով
նորանց ձեր ձեռքը մատնեց, և
դուք նորանց սպանեցիք մի բար-
կութիւնով, որ մինչև երկինքը
10 հասաւ։ Եւ հիմա մտածում էք
որ Յուդայի և Երուսաղէմի որդ-
կանցը ձեզ համար ծառաներ և
աղախիններ անէք։ Մի՞թէ հէնց
միայն ձեզ վերայ յանցանքներ
չ՛կան Տէր Աստուծոյ առաջին։
11 Եւ հիմա ինձ լսեցէք և ետ դար-
ձրէք այդ գերիներին, որոնց դուք
գերի էք արել ձեր եղբայրներից,
որովհետև Տիրոջ սաստիկ բար-
12 կութիւնը ձեզ վերայ է։ Եւ Եփ-
րեմի որդկանց իշխաններից վեր
կացան այս մարդիկը՝ Յօհանանի
որդի Ազարիան, Մեսեղամօթի
որդի Բարաքիան, Սեղղումի որ-
դի Եզեկիան և Ադղիայի որդի
Ամեսային պատերազմից եկողնե-
րի դէմ. Եւ ասեցին նորանց. Այդ 13
գերիներին այստեղ մի բերէք.
որովհետև դուք մտածում էք,
որ Տիրոջ առաջին մենք յանցա-
ւոր լինելով, մեր մեղքերի և
յանցանքների վերայ աւելացնէք,
որովհետև մեր յանցանքը շատ է
և սաստիկ բարկութիւն կայ Իս-
րայէլի վերայ։ Այն ժամանակ 14
զինուորականները գերիներին և
աւարը բաց Թողեցին իշխանների
և բոլոր ժողովքի առաջին։ Եւ 15
այն մարդիկը վեր կացան որոնք
անունով յիշուած էին, և առան
գերիներին և նորանց բոլոր մեր-
կերին հագցրին աւարիցը, և նո-
րանց հանդերձներ և կօշիկներ
հագցրին, և նորանց կերակրեցին
և խմեցրին և իւղով օծեցին նո-
րանց, և նորանց բոլոր տկարնե-
րին հեծցրին էշերի վերայ և տա-
րին Երիքով Արմաւենեաց քա-
ղաքը նորանց եղբայրների մօտ.
և ետ դառան Սամարիա։
Այն ժամանակ Աքազ Թա- 16
գաւորը պատգամ ուղարկեց Ասո-
րեստանի Թագաւորներին, որ ի-
րան օգնեն։ Որովհետև Եդովմա- 17
ցիք դարձեալ եկել էին, և Յու-
դային զարկել և գերիներ էին
գերի արել։ Եւ Փղշտացիներ էլ 18
յարձակուեցան դաշտի և Յու-
դայի հարաւակողմի քաղաքների
վերայ և առան Բեթսամիւսը,
Այեղոնը, Գադերօթը, Սոքովը
և նորա գիւղերը և Թամնան և
նորա գիւղերը, և Գամզովը և
նորա գիւղերը, և բնակվում էին
այնտեղ։ Որովհետև Տէրը նկուն 19
արաւ Յուդային Իսրայէլի Թա-
գաւոր Աքազի պատճառով, ո-
րովհետև նա անօրէնացաւ Յու-
դայի մէջ և ապստամբուեց Տի-
րոջ դէմ։ Եւ նորա վերայ եկաւ 20
Ասորեստանի Թագղաթ-փաղա-
սար Թագաւորը, և նորան նեղեց
և ոչ թէ օգնութիւն արաւ։
Որովհետև Թէև Աքազը կողոպ- 21

տեց Տիրոջ տունը և Թագաւորի
տունը և իշխաններին և տուաւ
Ասորեստանի Թագաւորին, բայց
նա նորան օգնութիւն չ՛արաւ։
22 Եւ այն ժամանակ էլ որ նե-
ղութեան մէջ էր, շարունակ
մեղք էր գործում Տիրոջ դէմ
23 դա՝ այդ Աքազ Թագաւորը։ Եւ
զոհեր էր մատուցանում Դամաս-
կոսի աստուածներին որ իրան
ջարդել էին, և ասում էր Թէ
Ասորիների Թագաւորների աստ-
ուածներն օգնում են իրանց. ես
նորանց զոհեր մատուցանեմ որ
ինձ օգնեն. բայց նորանք իրան
և բոլոր Իսրայէլին անկման պատ-
24 ճառ եղան։ Եւ Աքազը ժողո-
վեց Աստուծոյ տան անօթները,
և կոտրատեց Աստուծոյ տան
անօթները, և գոցեց Տիրոջ տան
դուռը. և Երուսաղէմի բոլոր
անկիւններումը սեղաններ շինեց։
25 Եւ Յուդայի ամեն մէկ քաղաքի
մէջ բարձրաւանդակներ շինեց
ուրիշ աստուածների խունկ ծը-
խելու համար. և բարկացրեց ի-
րան հայրերի Տէր Աստուծուն։
26 Եւ նորա մնացորդ գործերը և
նորա բոլոր ճանապարհները՝ ա-
ռաջինները և վերջինները, ահա
նորանք գրուած են Յուդայի և
Իսրայէլի Թագաւորների գրքու-
27 մը։ Եւ Աքազը ննջեց իր հայրե-
րի հետ, և նորան Թաղեցին Ե-
րուսաղէմ քաղաքումը. բայց նո-
րան չ՛տարին Իսրայէլի Թագա-
ւորների գերեզմանները. և նորա
որդի Եզեկիան Թագաւոր եղաւ
նորա տեղ։

ԳԼ. ԻԹ

1 Եզեկիան Թագաւոր եղաւ քը-
սանևհինգ տարեկան, և քսանև-
ինը տարի Թագաւորեց Երուսա-
ղէմումը. և նորա մօր անունն էր
2 Աբիա՝ դուստր Զաքարիայի։ Եւ
նա ուղղութիւն արաւ Տիրոջ
աչքի առաջին բոլորովին ինչպէս
որ արել էր նորա հայր Դաւիթը։
3 Սա իր Թագաւորութեան ա-
ռաջին տարուայ առաջին ամիսը
Տիրոջ տան դռները բացաւ, և
նորոգեց նորանց։ Եւ բերաւ քա- 4
հանաներին և Ղևտացիներին, և
նորանց ժողովեց արևելեան հրա-
պարակումը։ Եւ նորանց ասեց. 5
Ինձ լսեցէք, ով Ղևտացիներ,
հիմա սրբուեցէք, և սրբեցէք ձեր
հայրերի Տէր Աստուծոյ տունը,
և սրբարանիցը դուրս հանեցէք
պղծութիւնը։ Որովհետև մեր 6
հայրերը ապստամբուեցին և չա-
րութիւն արին մեր Տէր Աստու-
ծոյ աչքի առաջին, և նորան Թո-
ղեցին, և շրջեցին իրանց երեսը
Տիրոջ խորանիցը և արհամարհե-
ցին։ Սրահի դռներն էլ գոցեցին, 7
ճրագները հանգցրին, և խունկ
չ՛ծխեցին, և սրբարանումը ողջա-
կէզ չ՛մատուցրին Իսրայէլի Աս-
տուծուն։ Տիրոջ բարկութիւնն 8
էլ եկաւ Յուդայի և Երուսաղէ-
մի վերայ. և նա նորանց մատնեց
խռովութեան, աւերման և խայ-
տառակութեան, ինչպէս որ դուք
տեսնում էք ձեր աչքերովը։ Եւ 9
սորա համար մեր հայրերը սրով
ընկան, և մեր տղերքն ու մեր
աղջկերքը և կնիկները գերու-
թեան մէջ են։ Հիմա իմ սրտինը 10
սա է, որ ուխտ անենք Իսրայէլի
Տէր Աստուծոյ հետ, որպէս զի
նորա բարկութեան բորբոքումը
ետ դառնայ մեզանից։ Արդ, որ- 11
դեակներս, անհոգութիւն մի ա-
նէք. որովհետև Տէրը ձեզ ընտ-
րեց, որ նորա առաջը կանգնէք
նորան ծառայելու համար և նո-
րան սպասաւորներ լինէք և խունկ
ծխէք։
Եւ վեր կացան Ղևտացիները՝ 12
Ամեսայիի որդի Մաաթը, Ազա-
րիայի որդի Յովէլը, Կահաթեան-
ները, և Մերարեան Աբգիի որ-
դի Կիսը և Յալելէլի որդի Ազա-
րիան, և Գերսոնեան Զամմայի որ-
դի Յովաքը և Յովաքի որդի Ե-
դէնը, Եւ Եղիսափանեան Սամա- 13
րին և Յէիէլը, և Ասափեան Զա-
քարիան և Մաթանիան, Եւ Ե- 14
մանեան Յեքիէլը և Սեմէին, և
Իդիթունեան Սեմայիան և Ողի-
էլը, Եւ ժողովեցին իրանց եղբայր- 15
ներին և սրբուեցան, և Թագա-
ւորի հրամանին համեմատ Տիրոջ

խօսքովը գնացին Տիրոջ տունը
16 մաքրելու համար։ Եւ քահանա-
ները մտան Տիրոջ տան ներսի
կողմը որ մաքրեն նորան, և դուրս
հանեցին բոլոր պղծութիւնը, որ
գտան Տիրոջ տաճարումը, Տի-
րոջ տան գաւիթումը. և Ղև-
տացիները վեր առան, որ տանեն
17 դուրս Կեդրոն հեղեղատը։ Եւ
սկսեցին սրբել առաջի ամսի մէ-
կին, և ամսի ութերորդ օրն ե-
կան Տիրոջ սրահը. և Տիրոջ տու-
նը սրբեցին ութ օրում. և ա-
ռաջին ամսի տասնևվեցերորդ օ-
18 րը վերջացրին։ Եւ ներս գնացին
Եզեկիա թագաւորի մօտ և նո-
րան ասեցին. Սրբել ենք Տիրոջ
բոլոր տունը, և ողջակէզի սեղա-
նը, և նորա բոլոր անօթները, և
առաջաւորութեան հացերի սե-
ղանը և նորա բոլոր անօթները։
19 Եւ այն բոլոր անօթները, որոնք
Աքազ թագաւորը իր թագաւո-
րութեան և ապստամբութեան
ժամանակին պղծել էր, պատ-
րաստեցինք և սրբեցինք. և ահա
նորանք Տիրոջ սեղանի առաջին
են։
20 Եւ Եզեկիա թագաւորն առա-
ւօտը կանուխ վեր կացաւ և ժո-
ղովեց քաղաքի իշխաններին և
21 գնաց Տիրոջ տունը։ Եւ եօթը
զուարակ, եօթը խոյ, եօթը գառն
և եօթը նոխազ իբրև մեղքի
պատարագ բերին թագաւորու-
թեան և սրբարանի և Յուդայի
համար. և ասեց Ահարօնի որդի-
ներին՝ քահանաներին, որ ողջա-
կէզ մատուցանեն Տիրոջ սեղանի
22 վերայ։ Եւ նորանք մորթեցին
զուարակները, և քահանաները
վեր առան արիւնը և սրսկեցին
դէպի սեղանը, և խոյերն էլ մոր-
թեցին և արիւնը սրսկեցին դէպի
սեղանը, և գառներն էլ մորթե-
ցին և արիւնը սրսկեցին դէպի
23 սեղանը։ Իսկ մեղքի պատարագի
նոխազները մօտ բերին թագա-
ւորի և ժողովքի առաջը. և նո-
րանք իրանց ձեռքերը նորանց
24 վերայ դրին։ Եւ քահանաները
մորթեցին նորանց և նորանց ար-
իւնը սրսկեցին իբրև մեղքի պա-
տարագ դէպի սեղանը բոլոր Իս-
րայէլին քաւելու համար. որով-
հետև թագաւորն ասել էր որ
ողջակէզը և մեղքի պատարագը
բոլոր Իսրայէլի համար է։ Եւ 25
Ղևտացիներին կանգնեցրեց Տի-
րոջ տանը ծնծղաներով, տաւիղ-
ներով, քնարներով Դաւիթի և
թագաւորի տեսանող Գադի և
Նաթան մարգարէի պատուէրին
պէս. որովհետև Տիրոջ կողմից էր
այս պատուէրը իր մարգարէների
ձեռովը։ Եւ Ղևտացիները կանգ- 26
նեցին Դաւիթի գործիքներովը, և
քահանաները՝ փողերով։ Եւ Ե- 27
զեկիան հրամայեց որ ողջակէզը
մատուցանեն սեղանի վերայ. և
ողջակէզը սկսելիս սկսեց Տիրոջ
երգը և փողերը և նոտաֆելը Իս-
րայէլի թագաւոր Դաւիթի գոր-
ծիքներովը։ Եւ բոլոր ժողովը եր- 28
կրպագութիւն էր անում, և
երգը երգում, և փողերը հնչե-
ցնում էին, բոլորը մինչև որ ող-
ջակէզը վերջացրին. Թագաւորը 29
և բոլոր նորա հետ գտնուողները
ծռելով երկրպագութիւն արին։
Եւ Եզեկիա թագաւորը և իշխան- 30
ներն ասեցին Ղևտացիներին որ
օրհներգեն Տիրոջը՝ Դաւիթի և
Ասափ տեսանողի խօսքերովը. և
նորանք երգեցին ուրախութեամբ.
և խոնարհուելով երկրպագու-
թիւն արին։
Եւ Եզեկիան պատասխան տը- 31
ւաւ և ասեց. Հիմա լցրէք ձեր
ձեռքերը Տիրոջ համար, մօտե-
ցէք և զոհեր և օրհնութեան ընծ-
ծաներ բերէք Տիրոջ տունը։ Եւ
ժողովքը զոհեր և օրհնութեան
ընծաներ բերաւ, և յօժարու-
թիւն ունեցողը՝ ողջակէզներ։
Եւ ժողովքի բերած ողջակէզնե- 32
րի թիւն էր՝ եօթանասուն ար-
ջառ, հարիւր խոյ, երկու հա-
րիւր գառ. այս բոլորը իբրև
ողջակէզ Տիրոջ համար։ Եւ 33
նուէրները՝ վեց հարիւր արջառ
և երեք հազար ոչխար։ Միայն 34
թէ քիչ էին քահանաները և չը
կարողացան բոլոր ողջակէզների
մորթերը մաշկել. և նորանց օգ-
նեցին իրանց Ղևտացի եղբայր-

ները մինչև որ գործը վերջացաւ
և մինչև որ քահանաները սրբ-
բուեցան. որովհետև Ղևտացի-
ներն աւելի յօժարամիտ էին սրբ-
բուելու քան թէ քահանաներ-
35 ը։ Եւ ողջակէզներն էլ շատ
էին խաղաղութեան զոհերի ճար-
պովը և ողջակէզների թափելու
նուէրներովը մէկտեղ։ Եւ այս-
պէս վերահաստատուեցաւ Տիրոջ
36 տան պաշտօնը։ Եւ ուրախացան
Եզեկիան և բոլոր ժողովուրդը
նորա վերայ, ինչ որ Աստուած
պատրաստել էր ժողովրդի հա-
մար, որովհետև յանկարծ եղաւ
այս բանը։

ԳԼ. Լ

1 Եւ Եզեկիան մարդ ուղարկեց
բոլոր Իսրայէլին և Յուդային, և
նամակներ էլ գրեց Եփրեմին և
Մանասէին որ գան Երուսաղէմ
Տիրոջ տունը Իսրայէլի Տէր Ա-
ստուծոյ համար զատիկ անելու
2 համար։ Եւ թագաւորը և նորա
իշխանները և բոլոր ժողովքը խոր-
հուրդ արին Երուսաղէմում որ
զատիկը երկրորդ ամսումն անեն։
3 Որովհետև չէին կարող այն ժա-
մանակին անել. նորա համար որ
բաւական քահանաներ չէին սրբ-
բուած, և ժողովուրդը չէր ժո-
4 ղովուած Երուսաղէմ։ Եւ այս
բանը հաճոյ երևեցաւ թագա-
ւորի աչքին և բոլոր ժողովքի
5 աչքին։ Եւ նորանք որոշեցին, որ
լուր ուղարկեն բոլոր Իսրայէլի
մէջ Բերսաբէէից մինչև Դան, որ
գան զատիկ անեն Իսրայէլի Տէր
Աստուծուն Երուսաղէմում. ո-
րովհետև շատուց չէին արել
ինչպէս որ գրուած էր։
6 Եւ սուրհանդակները գնացին
թագաւորի և իշխանների նա-
մակներովը բոլոր Իսրայէլի և
Յուդայի մէջ, և թագաւորի
հրամանին համեմատ ասեցին.
Ով Իսրայէլի որդիք, դարձէք Ե-
հովային՝ Աբրահամի, Իսահակի
և Իսրայէլի Տէր Աստուծուն, և
նա էլ կ'դառնայ այն ազատ-
ուածներին, որ մնացել էք Ասո-
րեստանի թագաւորների ձեռքի-
ցը։ Եւ ձեր հայրերի և ձեր եղ- 7
բայրների նման մի լինիք, որ ի-
րանց հայրերի Տէր Աստուծոյ
դէմ ապստամբուեցին. որոնց նա
մատնել է աւերման, ինչպէս որ
դուք տեսնում էք։ Արդ մի 8
խստացնէք ձեր պարանոցը ձեր
հայրերի պէս. Տիրոջը ձեռք
տուէք և եկէք նորա սրբարանը,
որ սրբել է յաւիտեան, և ծա-
ռայեցէք ձեր Տէր Աստուծուն,
և նորա բորբոքած բարկութիւնը
կ'դառնայ ձեզանից։ Որովհետև 9
եթէ դուք դառնաք Տիրոջը, ձեր
եղբայրներն ու ձեր որդիքը գը-
թութիւն կ'գտնեն իրանց գե-
րեվարների առաջին, և այս եր-
կիրը կ'դառնան. որովհետև ձեր
Տէր Աստուածը ողորմած և գը-
թած է, և ձեզանից իր երեսը չի
դարձնիլ, եթէ դառնաք նորան։
Եւ սուրհանդակները քաղա- 10
քից քաղաք էին անցնում Եփ-
րեմի և Մանասէի երկրումը մին-
չեւ Զաբուղոն. բայց նորանք
ծաղր էին անում նորանց վերայ
և արհամարհում էին նորանց։
Միայն Ասերից, Մանասէից և 11
Զաբուղոնից խոնարհուեցան ո-
մանք և եկան Երուսաղէմ։ Յու- 12
դայի վերայ էլ էր Աստուծոյ
ձեռքը՝ նորանց միասիրտ անելու
համար, որ թագաւորի և իշ-
խանների պատուէրը Տիրոջ բա-
նի մէջ կատարեն։
Եւ բազմաթիւ ժողովուրդ հա- 13
ւաքուեցաւ Երուսաղէմ՝ երկ-
րորդ ամսումը բաղարջակերաց
տօնը կատարելու. խիստ մեծ
ժողովք էր։ Եւ վեր կացան ու 14
հեռացրին Երուսաղէմի միջի սե-
ղանները, և բոլոր խունկի սե-
ղանները հեռացրին, և գցեցին
Կեդրոնի հեղեղատը։ Եւ զատի- 15
կը մորթեցին երկրորդ ամսի
տասնևչորսին. և քահանաներն
ու Ղևտացիներն ամաչեցին ու
սրբուեցան և ողջակէզներ մա-
տուցրին Տիրոջ տանը։ Եւ կանգ- 16
նեցին իրանց տեղը իրանց կար-
գին Աստուծոյ մարդ՝ Մովսէսի
օրէնքին համեմատ. քահանա-

ներբը սրսկուամ էին արիւնը Ղևտացիների ձեռքից ՙՌԵՒԵՎ, Ոբովհետև շատերը կային ժողովքի մէջ, որ չէին սրբուած, նրա համար Ղևտացիներն էին մորթուամ զատկի գառները ամեն մի անմաքուրի համար, որ սրբեն Տիրոջ համար։ Որովհետև ժողովրդից շատերը՝ Եփրեմից, Մանասէից, Իսաքարից և Զաբուղոնից էի-ՉԷՒՏ շատերը չէին մաքրուել. այլ զատիկը կերան գրուածին անհամաձայն. բայց Եզեկիան աղօթք արաւ նորանց համար ասելով. Բարերար Տէրը ներէ այն ամենին Որ իր սիրտը պատրաստեց իր Հայրերի Աստուած՝ Տէր Աստուածուն խնդրելու, թէև չ'մաքրուած՝ սրբութիւնի համեմատ։ Եւ Տէրը լսեց Եզեկիային, և ժողովրդին ՙներեց։

Եւ երբոր սուրհանդակները բոլոր Իսրայէլացիների դէպի Յուդայի քաղաքները, և կատարեցին արձանները, և Աստարովթները կոտրեցին, և քանդեցին բարձրաւանդակները և սեղանները բոլոր Յուդայից, Բենիամինից, Եփրեմից ու Մանասէից մինչև որ վերջացրին։ Եւ Իսրայէլի բոլոր որդիքը եւս դառան ամեն մէկն իր կալուածքը իրանց քաղաքները։

Եւ Եզեկիան հաստատեց քահանաների և Ղևտացիների դասակարգերի համեմատ ամեն մէկին իր պաշտօնին համեմատ, թէ քահանաներին թէ Ղևտացիներին ողջակէզների և խաղաղութեան զոհերի համար, որ Տիրոջ բանակի դռներում ծառայեն, գոհանան և օրհնարանեն։ Եւ ՙՒՐԼԷՅ թագաւորի բաժինը իր ստացուածքից ողջակէզների համար՝ առաւօտեան և երեկոյեան ողջակէզների համար, և շաբաթների, ամիսների և տոների ողջակէզների համար, ինչպես որ գրուած է Տիրոջ օրէնքումը։ Եւ հրամայեց Երուսաղէմում բնակող ժողովրդին, որ քահանաների և Ղևտացիների բաժինը տան, որպէս զի հաստատ մնան Տիրոջ օրէնքումը։ Եւ երբոր այս բանը տարածուեցաւ, այն ժամանակ Իսրայէլի որդիքը առատօրէն բերին ցորենի, գինիի, իւղի, մեղրի և բոլոր անդաստանների բերքերի

*ԵՒՒ. բժշկեց

երախայրիքը, և ամեն բանի տասանորդը առատութեամբ տարին։ Եւ Յուդայի քաղաքներում բնակող Իսրայէլի և Յուդայի որդիքը նորանք էլ արջառների և ոչխարների տասանորդները և իրանց Տէր Աստուածուն նուիրած սուրբ բաների տասանորդները բերին և կուտակ կուտակ արին։ Երբորդ ամսումը սկսեցին դնել կուտակները և եօթներորդ ամսումը վերջացրին։ Եւ Եզեկիան և այն իշխանները եկան և տեսան կուտակները, և օրհնեցին Տիրոջը և նորա ԻՍՐԱՅԷԼ ժողովրդին։ Եւ Եզեկիան հարցրեց քահանաներից և Ղևտացիներից կուտակների մասին։ Եւ Ազարիա նորան պատասխանեց և ասեց. Ա՛յն ժամանակից որ սկսել են ընծաները բերել Տիրոջ տունը, կերել և կշտացել ենք, և խիստ շատ ա՛ւելացել է, որովհետև Տէրը օրհնել է իր ժողովրդին. և ա՛ւելորդը այս առատութիւնն է։ Եւ Եզեկիա հրամայեց Տիրոջ տանը շտեմարաններ պատրաստել. և նորանք պատրաստեցին։ Եւ ՙՒՐԼԷ բերին ընծան, տասանորդը և նուէրները ճշտութեամբ. և նորանց վերակացուն Ղևտացի Քոնանիան էր, և նորա եղբայրը Սեմէի՝ փոխանորդ։ Եւ Յեքիէլը, Ազազիան, Նահաթը, Ասայէլը, Երիմոթը, Յովզաբադը, Եղիէլը, Յեսմաքիան, Մահաթը և Բանեան վերակացուներ էին՝ Քոնանիայի և նորա եղբայր Սեմէիի ձեռքի տակ՝ Եզեկիա թագաւորի և Աստուծոյ տան առաջնորդ Ազարիայի հրամանով։ Եւ Ղևտացի Յեմնայի որդի Կովրէն արևելեան կողմի դռնապանն էր Աստուծոյ կամաւոր ընծաների վերայ, որ Տիրոջ բարձրացնելու ընծան և ամենասուրբ բաները տար։ Եւ նորա մօտ էին Եդէնը, Մինիամինը, Յեսուն, Սեմայիան, Ամարիան և Սեքենիան քահանաների քաղաքներումը հաւատարմութեամբ բժշկելու,

որ տային իրանց եղբայրներին կարգին համեմատ թէ մեծին թէ փոքրին. Բացի ազգահամարում գրուած երեք տարեկանից և վեր եղող արուներից, ՙՒՐԼԷ այն բոլորից որ գալիս են Տիրոջ տունը ամենօրեայ գործով իրանց պաշտօնի համար, իրանց ծառայութիւններով իրանց դասակարգութիւնների համեմատ. Եւ ազգահամարում գրուած քահանաներին իրանց ազգատոհմերի համեմատ և քսան տարեկանից և վեր եղող Ղևտացիներին իրանց պահապանութիւնների և դասակարգութիւնների համեմատ. Եւ ազգահամարում գրուած նորանց ամեն ընտանիքներին՝ կանանցը, աղեքանցը և աղջկերանցը՝ բոլոր ժողովքին. որովհետև իրանց հաւատարմութեամբը սրբուեցան սրբութեան համար։ Եւ նորանց քաղաքների արուարձանների արտերումն եղող Ահարօնի որդիք քահանաների համար ամեն մէկ քաղաքներում իրանց անուններովը յիշուած մարդիկ էին ՆՇԱՒՈՒԹ, որ բաժիններ տային քահանաների մէջ արուներին և Ղևտացիների ազգահամարում գրուածներին։ Եւ այսպէս արաւ Եզեկիան բոլոր Յուդայումը. և իր Տէր Աստուծոյ առաջին բարի, ուղիղ և ճշմարիտ եղածն արաւ։

Եւ իր ամեն գործերումը, որ սկսեց, թէ Աստուծոյ տան ծառայութեան վերաբերմամբ, և թէ օրէնքի և պատուիրանքի նկատմամբ, իր Աստուծուն խնդրելով իր բոլոր սրտովն արաւ և յաջողուեց։

ԳԼ. ԼՐ

Այս գործերից և հաւատարմութիւնից յետոյ եկաւ Աստրեստանի Սենեքերիմ թագաւորը և մտաւ Յուդայի երկիրը, և բանակ տուաւ պարսպաւոր քաղաքների վերայ և մտածում էր որ առնէ նորանց։ Եւ երբոր Եզեկիան տեսաւ որ Սենեքերիմը եկել

է և դիտաւորութիւնն է պատե-
3 բազմել Երուսաղէմի հետ, Ա՛ն
ժամանակ խորհուրդ արաւ իր
իշխանների և զօրաւարների հետ,
որ փակէ քաղաքի դրաւմը ե-
ղող աղբիւրների ջրերը. և նա-
4 բանք օգնեցին նորան։ Եւ շատ
ժողովուրդ ժողովուեցաւ, և փա-
կեցին բոլոր աղբիւրները և երկրի
միջովն անցնող հեղեղատը, ա-
սելով. Ի՞նչու համար գան Ա՛ս-
րեհաստանի թագաւորները և շատ
5 ջուր գտնեն։ Եւ ուժովացաւ Ե-
զեկիա, և շինեց բոլոր քանդուած
պարիսպները և աշտարակները
բարձրացրեց, և դրսիցը մէկ ու-
րիշ պարիսպ չինեց և նորոգեց
Դաւիթի քաղաքում եղող Մե-
լօնը. և շատ զէնքեր և ասպար-
6 ներ շինեց։ Եւ պատերազմի զօ-
րապետներ դրաւ ժողովրդի վե-
րայ, և նորանց ժողովեց քաղաքի
դուռան հրապարակին իր մօտ և
քաջալերութեամբ խօսեց նորանց
7 հետ ասելով. Զօրացէք և քա-
ջացէք, մի վախենաք և մի զար-
հուրիք Ա՛սրեհաստանի թագաւորի
երեսից և նորա հետ եղող բո-
լոր բազմութեան երեսից, ո-
րովհետև մեզ հետ եղողները ա-
ւելի շատ են նորա հետ եղողնե-
8 րից։ Նորա հետ կայ մարմնեղէն
բազուկ, իսկ մեզ հետ է մեր
Աստուածը՝ Եհովան որ մեզ օգ-
նէ և մեր պատերազմները պա-
տերազմէ. և ժողովուրդը վստա-
հացաւ Յուդայի թագաւոր Ե-
զեկիայի խօսքերի վերայ։
9 Սորանից յետոյ Ա՛սրեհաստանի
թագաւորը՝ Սենեքերիմն իր ծա-
ռաներին Երուսաղէմ ուղար-
կեց, երբոր ինքը և իր բոլոր զօրքն
իրան հետ Լաքիսի դիմացն էր,
Յուդայի եզեկիա թագաւորի և
Երուսաղէմում եղող բոլոր Յու-
10 դայի մօտ ասելով. Ա՛յսպէս է
ասում Ա՛սրեհաստանի Սենեքերիմ
թագաւորը. Դուք ինչի՞ էք ա-
պաւինել և նստել Երուսաղէմ
11 բերդումը, Չ՛ որ Եզեկիան ձեզ
մոլորեցնում է, որ ձեզ սովի և
ծարաւութեան մահի մատնէ ա-
սելով թէ Մեր Աստուածը ե-
հովան մեզ ազատելու է Ա՛ս-
րեհաստանի թագաւորի ձեռքից։
12 Չէ՞ որ նա ինքը Եզեկիան հեռաց-
րեց նորա բարձրաւանդակները
և սեղանները և ասեց Յուդային
ու Երուսաղէմին թէ Մէկ սե-
ղանի առաջին երկրպագութիւն
արէք, և նորա վերայ խունկ ծը-
խեցէք։
13 Դուք գիտէք թէ ինչ
արինք ես և իմ հայրերը երկիր-
ների ժողովուրդներին. մի՞թէ
կարողացան այն երկիրների ազ-
գերի աստուածները նորանց եր-
կիրն ազատել իմ ձեռքից։
14 Իմ հայրերի բնաջինջ արած ազգերի
բոլոր աստուածների մէ՞ն է որ
կարողացաւ իր ժողովուրդն ա-
զատել իմ ձեռքից, որ ձեր Աստ-
ուածը կարողանայ ձեզ ազատել
15 իմ ձեռքից։ Ապա ուրեմն թող
Եզեկիան ձեզ չ՛խաբէ և ձեզ
չ՛մոլորեցնէ այդպէս. և նորան մի
հաւատաք, որովհետև ոչ մի ազ-
գի և թագաւորութեան ոչ մի
աստուածը չէ կարող իր ժողո-
վուրդն ազատել իմ ձեռքից և
իմ հայրերի ձեռքից, ուր մնաց
ձեր Աստուածն, որ ձեզ չի ա-
զատիլ իմ ձեռքից։
16 Եւ դեռ
աւելի խօսեցին նորա ծառաները
Տէր Աստուծոյ մասին և նորա
ծառայ Եզեկիայի մասին։
17 Սենեքերիմ նամակներ գրեց խոր-
ժելի Տէր Աստուծուն հայհոյե-
լով և ասելով նորա մասին այս-
պէս. Ինչպէս որ երկիրների ազ-
գերի աստուածները իրանց ժո-
ղովուրդը չ՛ազատեցին իմ ձեռ-
քից, այսպէս էլ Եզեկիայի Աստ-
ուածը չի ազատիլ իր ժողովրդին
18 իմ ձեռքից։ Եւ մեծ ձայնով
կանչեցին երուսաղեմերէն դէպի Ե-
րուսաղէմի ժողովուրդը, որ պա-
րսպի վերայ էր, նորանց վախե-
ցնելու և չխոխեցնելու համար,
19 որ քաղաքն առնեն։ Եւ երու-
սաղէմի Աստուծոյ վերայ խօսե-
ցին ինչպէս երկրի ժողովուրդնե-
րի աստուածների մասին, որոնք
մարդի ձեռքի գործ են։
20 Եւ Եզեկիա թագաւորը և Ա-
մովսի որդի Եսայիա մարգարէն
աղօթք արին այս բանի համար և

21 ազազակեցին դէպի երկինք։ Եւ
Եհովան մի հրեշտակ ուղարկեց
և բնաջինջ արաւ ամեն քաջ զօ-
րաւորին, զօրավարին և իշխանին
Ա՛սրեհաստանի թագաւորի բանա-
կումը. և նա ամօթով հետ դա-
ռաւ իր երկիրը. և մնաւ իր ա-
ստուածոյ տունը. և նորա երանքից
դուրս եկած որդիքը նորան այն-
22 տեղ սրով սպանեցին։ Եհովան
այսպէս ազատեց Եզեկիային և
Երուսաղէմի բնակիչներին Ա՛ս-
րեհաստանի Սենեքերիմ թագաւորի
և բոլորի ձեռքից, և նորանց
23 պաշտպանեց ամեն կողմանէ։ Եւ
շատերը բնծաներ էին բերում
Երուսաղէմ Տիրոջ համար, և
պատուական բաներ Յուդայի ե-
զեկիա թագաւորի համար. և
նա բարձրացաւ բոլոր ազգերի
աչքում որանից յետոյ։
24 Ա՛յն ժամանակները Եզեկիան
հիւանդացաւ մերձ ի մահ, և ա-
ղօթք արաւ Տիրոջը. և նա խո-
սեց նորա հետ և մի նշան տուաւ
25 նորան։ Բայց Եզեկիան իր վերայ
եղած բարերարութեան համե-
մատ չ՛հատուցրեց, որովհետև
սիրտը հպարտացաւ, և բարկու-
թիւն եկաւ նորա վերայ, Յու-
26 դայի և Երուսաղէմի վերայ։ Սա-
կայն խոնարհեցաւ Եզեկիան իր
սրտի հպարտութեան համար՝ ին-
քը և Երուսաղէմի բնակիչները.
վասն որոյ և Տիրոջ բարկութիւ-
նը չ՛եկաւ նորանց վերայ Եզեկի-
այի օրերում։
27 Եւ Եզեկիան խիստ շատ հա-
րստութիւն և փառք ունեցաւ,
և իր համար գանձարաններ շի-
նեց արծաթի, ոսկիի, պատուա-
կան քարերի, խնկեղէնների, ա-
պարանների և ամեն տեսակ ցան-
28 կալի անօթների համար։ Եւ շտե-
մարաններ ցորենի, գինիի և իւղի
բերքերի համար, և ախոռներ
ամեն տեսակ անասունների հա-
մար, և փարախներ հօտերի հա-
29 մար։ Եւ իր համար քաղաքներ
շինեց, և շատ ոչխարներ ու ա-
ջառներ ունեցաւ. որովհետև
Աստուած նորան խիստ շատ ը-
30 ստացուածք էր տուել։ Եւ այս
Եզեկիան խցկեց Գեհոնի վերի
ջրանցքը, և նորան ուղղեց դէպի
Դաւիթի քաղաքի արևմտեան
31 կողմը։ Եւ Եզեկիան յաջո-
ղութիւն գտաւ իր բոլոր գործ-
քում։
Եւ այսպէս Բաբիլոնի իշխան-
ների դեսպանների մօտ, որ ու-
ղարկել էին նորա մօտ այն նշանի
համար հարցնելու որ երկրի մէջ
եղել էր, Աստուած նորան թող
տուաւ նորան փորձելու համար,
որ նորա սրտինը բոլորն իմանայ։
32 Եւ Եզեկիայի գործերի մնացոր-
դը և նորա առաքինութիւնները,
ահա գրուած են Ամովսի որդի
Եսայիա մարգարէի տեսիլքների
գրքում, և Յուդայի և Իսրայէլի
33 թագաւորների դրքում։ Եւ Ե-
զեկիան ննջեց իր հայրերի հետ
և նորան թաղեցին Դաւիթի որդ-
կանց գերեզմաններում. և պա-
տիւ արին նորան նորա մահուան
ժամանակին բոլոր Յուդան և Ե-
րուսաղէմի բնակիչները։ Եւ նո-
րա որդի Մանասէն թագաւոր
եղաւ նորա տեղ։

ԳԼ. Լ.Գ

1 Մանասէն տասներկու տարե-
կան էր երբոր թագաւոր եղաւ,
և յիսունհինգ տարի թագա-
2 ւորեց Երուսաղէմում։ Եւ նա
չարութիւն արաւ Տիրոջ աչքի
առաջ՝ այն ազգերի գարշելիու-
թիւնների պէս, որոնց քշել էր Եհո-
վան Իսրայէլի որդիների առաջից։
3 Եւ դարձեալ շինեց այն բարձ-
րաւանդակները, որ քանդել էր
նորա հայր Եզեկիան. և Բահա-
զիմի համար սեղաններ կանգնե-
ցրեց, և Աստարովթներ շինեց, և
երկնքի բոլոր զօրքերին երկրպա-
գութիւն արաւ, և նորանց ծա-
4 ռայեց։ Եւ սեղաններ շինեց Տի-
րոջ տանը, որի համար Տէրն ա-
սել էր թէ Իմ անունը Երուսա-
5 ղէմում լինի յաւիտեան։ Եւ սե-
ղաններ շինեց երկնքի բոլոր զօր-
քերի համար Տիրոջ տան երկու
6 գաւիթներում։ Եւ նա իր որ-
դիներին անցկացրեց կրակով Ե-

նովմի որդիի ձորումը, և գուշակութիւն, հմայութիւն և դիւթութիւն էր անում, և մեռելահարցուկներ և նշանագէտներ չինէց. նա շատ չարութիւն արաւ Տիրոջ աչքի առաջ, և նորան բարկացրեց։ 7 Եւ իր շինած քանդակած կուռքը դրաւ Աստուծոյ տանը, որի համար Աստուած ասել էր Դաւիթին և նրա որդի Սողոմոնին. Այս տանը և Երուսաղէմում, որ ես ընտրել եմ Իսրայէլի բոլոր ցեղերից, իմ անունը պիտի դնեմ յաւիտեան։ 8 Եւ Իսրայէլի ոտը այլ ևս պիտի չշարժեցնեմ այն երկրից, որի մէջ հաստատեցի ձեր հայրերին, միայն եթէ զգուշանան անելու բոլոր իմ հրամանը՝ այն բոլոր օրէնքը և պատուիրանքը և իրաւունքները՝ Մովսէսի ձեռքով։ 9 Եւ Մանասէն մոլորեցրեց Յուդային և Երուսաղէմի բնակիչներին, որ այն ազգերից աւելի չարութիւն անեն, որոնց փշացրեց Տէրը Իսրայէլի որդկանց առաջին։ 10 Եւ Տէրը խօսեց Մանասէի և նորա ժողովրդի հետ. բայց նորանք ականջ չդրին։

11 Եւ Տէրը նորանց վերայ բերաւ Ասորեստանի թագաւորի զօրագլուխներին, և նորանք բռնեցին Մանասէին կարթերով, և նորան կապեցին զոյգ ոտնակապերով և 12 տարին Բաբիլոն։ Եւ երբոր նեղութեան մէջ էր, խնդրեց իր Տէր Աստուծոյ երեսը, և շատ խոնարհուեցաւ իր հայրերի Աս- 13 տուծոյ առաջը։ Եւ աղօթք արաւ նորան, և նա նորա աղօթքը ընդունեց և նորա աղաչանքը լսեց, և նորան նա դարձրեց Երուսաղէմ իր թագաւորութեան մէջ. և Մանասէն իմացաւ, որ 14 Եհովան է Աստուած։ Եւ նորանից յետոյ մի պարիսպ շինեց Դաւիթի քաղաքից դուրս Գիհոնի արևմտեան կողմում հեղեղատումը և մինչև Ձկանց դուռն մտաքը, և Ոփղը շրջապատեց[1] նորան շատ բարձրացրեց. և Յուդայի բոլոր պարսպաւոր քաղաքներում զօրքի իշխաններ դրեց։ 15 Եւ Տիրոջ տանից հեռացրեց օտար աստուածները և կուռքը, և բոլոր այն սեղանները. որ ինքը շինել էր Տիրոջ տան սարի վերայ և Երուսաղէմում և քաղաքիցը դուրս դցեց նորանց։ 16 Եւ շինեց Տիրոջ սեղանը և նորա վերայ զոհեց խաղաղութեան և շնորհակալութեան զոհեր. և պատուիրեց Յուդային, որ Իսրայէլի Տէր Աստուծուն ծառայեն։ 17 Սակայն ժողովուրդը տակաւին զոհում էր բարձրաւանդակների վերայ Թէև իրանց Տէր Աստուծոյ համար։

18 Եւ Մանասէի գործերի մնացորդը և նորա աղօթքը դէպի Աստուած, և Իսրայէլի Տէր Աստուծոյ անունով նորա հետ խօսող տեսանողների խօսքերը, ահա նորանք Իսրայէլի թագաւորների պատմութեան մէջ են։ 19 Եւ նորա աղօթքը, և նորա ընդունելութիւը, և նորա բոլոր մեղքը և անօրէնութիւնը, և այն տեղերը, ուր որ բարձրաւանդակներ էր շինել և Աստարովթներ ու կուռքեր կանգնեցրել իր խոնարհուելուցն առաջ, ահա դորանք գրուած են Հոզայի յիշատակարանումը։ Եւ Մանասէն ննջեց իր 20 հայրերի հետ, և նորան թաղեցին իր տանը, և նորա որդի Ամմոնը թագաւոր եղաւ նորա տեղ։

21 Ամմոն քսանևերկու տարեկան էր երբոր թագաւոր եղաւ, և երկու տարի թագաւորեց Երուսաղէմում։ 22 Եւ նա չարութիւն արաւ Տիրոջ աչքի առաջին, ինչպէս որ արել էր իր հայր Մանասէն, և այն ամեն կուռքերին, որոնք իր հայր Մանասէն շինել էր, Ամմոն զոհեր մատուցրեց և նորանց ծառայեց։ 23 Եւ չխոնարհուեցաւ Տիրոջ առաջին, ինչպէս որ իր հայր Մանասէն էր խոնարհուել, այլ այս Ամմոն յանցանքը աւելացրեց։ 24 Եւ նորա ծառաները դաւաճանութիւն արին նորա դէմ և նորան սպաննեցին իր տանը։ 25 Եւ երկրի ժողովուրդը զարկեց Ամմոն թագաւորի դէմ դաւաճանողներին, և երկրի ժողովուրդը թագաւոր արաւ նորա որդի Յովսիային նորա տեղ։

ԳԼ. ԼԴ

1 Ութ տարեկան էր Յովսիան երբոր թագաւոր եղաւ, և երեսունևմէկ տարի թագաւորեց Երուսաղէմում։ 2 Եւ նա Տիրոջ աչքի առաջ ուղղութիւն արաւ, և գնաց իր հայր Դաւիթի ճանապարհներով, և չխոտորուեց աջ կամ ձախ։

3 Եւ իր թագաւորութեան ութերորդ տարին, որ ինքը դեռ պատանի էր, սկսեց խնդրել իր հայր Դաւիթի Աստուծուն, և տասներկուերորդ տարին սկսեց նա մաքրել Յուդան և Երուսաղէմը բարձրաւանդակներից, Աստարովթի կուռքերից և քանդակած ու ձուլածոյ կուռքերից։ 4 Եւ քանդեցին նորա առաջին Բահաղիմի սեղանները, և նա նորանց վերայի արեգական կուռքերը կոտրատեց, և Աստարովթի կուռքերն ու ձուլածոյ կուռքերը փշրեց և մանրեց, և ցրուեց նորանց զոհողների գերեզմանների վերայ։ 5 Եւ քահանաների ոսկորներն այրեց նորանց սեղանների վերայ, և մաքրեց Յուդան և Երուսաղէմը։ 6 Եւ Մանասէի, Եփրեմի և Շմաւոնի քաղաքներումը, և մինչև Նեփթաղիմ շրջապանակի նորանց աւերակներումը՝ կործանեց սեղանները և Աստարովթի կուռքերը, և քանդակած կուռքերը փշրեց և մանրեց, և բոլոր արեգական կուռքերը կոտրատեց Իսրայէլի բոլոր երկրումը, և նա դառաւ Երուսաղէմ։

8 Եւ իր թագաւորութեան տասնևութերորդ տարին, երբոր երկիրը և տունը մաքրեց՝ ուղարկեց Եսելիայի որդի Սափանին, և քաղաքի իշխան Մասեիային և Յովաքազի որդի Յովախ յիշատակագրին, որ իր Տէր Աստուծոյ տունը նորոգեն։ 9 Եւ նորանք եկան Քեղկիա քահանայապետի մօտ և տուին այն փողը որ եկել էր Աստուծոյ տունը, այն որ ժողովել էին դռան պահապան Ղեւտացիները Մանասէից և Եփրեմի ձեռքից և Իսրայէլի բոլոր մնացորդից և բոլոր Յուդայից և Բենիամինից և Երուսաղէմի բնակիչներից։ 10 Եւ նորանք տուին այն գործաւորների ձեռքը որ նշանակուած էին Տիրոջ տան վերայ, և նորանք էլ տուին այն գործաւորների ձեռքը, որ գործում էին Տիրոջ տունը՝ տունը նորոգելու և շինելու համար։ 11 Եւ տուին հիւսերին և շինողներին, որ տաշած քարեր և դերանների համար փայտեր առնեն այն տների համար, որոնց քանդել էին Յուդայի թագաւորները։ 12 Եւ այն մարդիկը հաւատարմութեամբ գործում էին գործը, և նորանց վերայ նշանակուած էին՝ Մերարիի որդիներից Ղեւտացի Յեհաթ և Աբդիան, և Կահաթեանց որդիներից Զաքարիան և Մեսուղամ իրարև վերակացուներ. և Ղեւտացիներն ամեն մի նուագարանով երգել հասկացողը։ 13 Բեռնակիրների վերայ էլ, ամեն տեսակ գործերը կատարողների վերայ էլ վերակացուներ էին. նոյնպես Ղեւտացիներից էին դպիրները, ատեաններն և դռնապանները։

14 Եւ երբոր Տիրոջ տունը բերուած փողը հանում էին, Քեղկիա քահանան գտաւ Մովսէսի ձեռքով եղած Տիրոջ օրէնքի գիրքը։ 15 Եւ Քեղկիան պատասխանեց և ասեց Սափան դպիրին. Օրէնքի գիրքը գտայ Տիրոջ տունը. և Քեղկիան այն գիրքը տուաւ Սափան դպիրին։ 16 Եւ Սափանն այն գիրքը բերաւ թագաւորին, և պատասխան բերաւ թագաւորին ասելով. Ամեն ինչ որ յանձնուել է քո ծառաների ձեռքը՝ նորանք կատարում են։ 17 Եւ Տիրոջ տան մէջ գտնուած փողը թափեցին և տուին նորան վերակացուների ձեռքը և գործաւորների ձեռքը։ 18 Եւ Սափան դպիրը պատմեց

Թագաւորին ասելով. Քեզկիա
քահանան ինձ մէկ գիրք է տը-
ւել. և Սափանը նորա միջիցը
կարդաց Թագաւորի առաջին։
19 Եւ Թագաւորը լսելով օրէնքի
խօսքերը՝ պատառեց իր հան-
20 դերձները։ Եւ Թագաւորը հրա-
մայեց Քեզկիային, և Սափանի
որդի Աքիկամին, և Միքիայի որ-
դի Աբդօնին և Սափան դպիրին
և Թագաւորի ծառայ Ասայիա-
21 յին, և ասեց. Գնացէք ինձ հա-
մար և Իսրայէլի ու Յուդայի մը-
նացորդների համար այս գտնը-
ւած գրքի խօսքերի մասին հար-
ցրէք Տիրոջը. որովհետև մեծ է
Տիրոջ մեզ վերայ թափուած
բարկութիւնը, որովհետև մեր
հայրերը չ՚պահեցին Տիրոջ խօս-
քը որ անէին բոլոր այս գրքումը
22 գրուածին համեմատ։ Եւ Քեզկի-
ան և Թագաւորի մարդիկը գնա-
ցին Ասրայի որդի Թեկուայի որ-
դի Սեղղում հանդերձապետի
կնկայ Ողդա մարգարէուհիի մօտ,
և նա բնակվում էր Երուսաղէ-
մում Մասենայում. և նորա հետ
այնպէս խօսեցին։
23 Եւ նա ասեց նորանց. Այսպէս
է ասում Իսրայէլի Տէր Աստ-
ուածը. Ասեցէք այն մարդին, որ
24 ձեզ ինձ մօտ է ուղարկել. Տէ-
րը այսպէս է ասում. Ահա ես այս
տեղի և նորա բնակիչների վերայ
չարիք եմ բերելու՝ այն բոլոր ա-
նէծքները որ գրուած են այն գրք-
քի մէջ որ կարդացել են Յու-
25 դայի Թագաւորի առաջին։ Նո-
րա համար որ ինձ թողած ու-
րիշ աստուածների խունկ ծխե-
ցին, որ բարկացնեն իրանց ձեռ-
քերի բոլոր գործքերովը. և իմ
բարկութիւնը պիտի թափուի
այս տեղի վերայ և պիտի չ՚հանգ-
26 չէ։ Եւ Յուդայի Թագաւորին,
որ ձեզ ուղարկել է Տիրոջը հար-
ցնելու, այսպէս ասեցէք նորան.
Այսպէս է ասում Իսրայէլի Տէր
Աստուածը այն քո լսած խօս-
27 քերի համար. Որովհետև քո սիր-
տը կակղացաւ և խոնարհուեցար
Աստուծոյ առաջը այս տեղի և
նորա բնակիչների մասին եղած
խօսքերը լսելով, և խոնարհուե-
ցար իմ առաջը, և պատառեցիր
քո հանդերձները, և լաց եղար
իմ առաջը, ուրեմն ես էլ քեզ
լսեցի, ասում է Եհովան։ Ահա 28
ես քեզ կ՚ժողովեմ քո հայրերի
մօտ, և դու կ՚դրուիս քո գերեզ-
մանների մէջ խաղաղութեամբ,
և քո աչքերը չեն տեսնիլ այն
բոլոր չարիքը, որ ես պիտի բե-
րեմ այս տեղի վերայ և նորա
բնակիչների վերայ։ Եւ նորանք
պատասխանը բերին Թագաւորին։
Եւ Թագաւորը մարդ ուղար- 29
կեց և ժողովեց Յուդայի և Ե-
րուսաղէմի բոլոր ծերերին։ Եւ 30
Թագաւորը և Յուդայի բոլոր
մարդիկը և Երուսաղէմի բնակիչ-
ները և քահանաներն ու Ղևտա-
ցիները և բոլոր ժողովուրդը մե-
ծից մինչև փոքրը վեր գնացին
Տիրոջ տունը, և նորանց ական-
ջին կարդացին Տիրոջ տանը գտ-
նուած ուխտի գրքի բոլոր խօս-
քերը։ Եւ Թագաւորը կանգնած 31
էր իր տեղը, և ուխտ արաւ Տիրոջ
առաջին, որ գնայ Տիրոջ ետևից
և պահէ նորա պատուէրները,
վկայութիւնները և կանոնները
իր բոլոր սրտովը և իր բոլոր հո-
գովը, որ կատարէ այս գրքի մէջ
գրուած ուխտի խօսքերը։ Եւ նա 32
կանգնեցրեց բոլոր Երուսաղէ-
մում և Բենիամինում գտնուող-
ներին. և Երուսաղէմի բնակիչներն
արին Աստուծոյ՝ իրանց հայրերի
Աստուծոյ ուխտին համեմատ։ Եւ 33
Յովսիան հեռացրեց բոլոր գար-
շութիւնները Իսրայէլի որդկանց
բոլոր երկիրներիցը. և Իսրայէլի
մէջ բոլոր գտնուողներին ծա-
ռայութիւն անել տուաւ իրանց
Տէր Աստուծոյ ծառայութիւնը.
և նորանք նորա բոլոր օրերումը
չ՚խոտորուեցին իրանց հայրերի
Տէր Աստուծոյ ետևից։

ԳԼ. ԼԵ

Եւ Յովսիան Երուսաղէմումը 1
զատիկ արաւ Տիրոջ համար. և
զատիկը մորթեցին առաջին ամսի
տասնևչորսին։ Եւ նա կանգնե- 2

ցրեց քահանաներին իրանց պա-
հապանութիւնների վերայ, և նո-
րանց քաջալերեց Տիրոջ տան
3 ծառայութիւնն անելու։ Եւ ա-
սեց բոլոր Իսրայէլին սովորեցնող՝
Տիրոջը նուիրուած Ղևտացինե-
րին. Սուրբ տապանակը դրէք
այն տանը, որ շինեց Իսրայէլի
Թագաւոր՝ Դաւիթի որդի Սո-
ղոմոնը. ձեզ պէտք չէ, որ նա
ուսի վերայ բեռ լինի. հիմա դուք
ծառայեցէք ձեր Տէր Աստուծուն
4 և նորա Իսրայէլ ժողովրդին. Եւ
պատրաստ եղէք ձեր ազգատոհ-
մերովը ձեր դասակարգութիւն-
ների համեմատ Իսրայէլի Թա-
գաւոր Դաւիթի գրածին և նո-
րա որդի Սողոմոնի գրածին պէս.
5 Եւ կանգնեցէք սրբարանումը
ազգատոհմերի բաժանմունքների
համեմատ ձեր եղբայրների՝ ժո-
ղովրդի որդկանց համար և Ղև-
տացիների ազգատոհմերի դա-
6 սակարգների համեմատ. Եւ մոր-
թեցէք զատիկը և սրբուեցէք, և
պատրաստեցէք ձեր եղբայրների
համար, որ Մովսէսի ձեռքով
խօսուած Աստուծոյ խօսքին պէս
7 անէք։ Եւ Յովսիան պարգևեց
բոլոր այնտեղ գտնուող ժողո-
վրդի որդիներին համարով հօ-
տերից երեսուն հազար գառն և
այծի ձագ՝ բոլորը զատկի հա-
մար, և երեք հազար արջառ.
սորանք Թագաւորի ստացուած-
8 քիցն էին։ Եւ իր իշխանները
պարգևեցին յօժարութեամբ ժո-
ղովրդին, քահանաներին և Ղև-
տացիներին. Աստուծոյ տան իշ-
խանները՝ Քեզկիան, Զաքարիան
և Յեքիէլը տուին քահանաներին
զատկի համար երկու հազար վեց
հարիւր գառն և երեք հարիւր
9 արջառ։ Եւ Քոնոնիան ու նորա
եղբայրները Սեմայիան և Նաթա-
նայէլը և Ղևտացիների իշխան-
ները՝ Ասաբիան, Յէիէլը և Յով-
զաբադը պարգևեցին Ղևտացի-
ներին զատկի համար հինգ հա-
զար գառն, և հինգ հարիւր ար-
ջառ։
10 Եւ պաշտօնը պատրաստուե-
ցաւ. և քահանաները կանգնե-
ցին իրանց կանգնելու տեղը և
Ղևտացիներն իրանց դասակար-
գութիւնների համեմատ՝ Թագա-
ւորի պատուէրին պէս։ Եւ մոր- 11
թեցին զատիկը, և քահանաները
սրսկում էին նորանց ձեռքիցը,
իսկ Ղևտացիները մաշկում էին։
Եւ ջոկում էին ողջակէզացուն- 12
երը, որ տան՝ ժողովրդի որդկանցը
ազգատոհմերի բաժանմունքների
համեմատ Տիրոջը մատուցանելու
համար՝ ինչպէս որ գրուած է
Մովսէսի գրքումը. և այսպէս էլ
արջառներին։ Եւ զատիկը խորո- 13
վեցին կրակով կանոնին համե-
մատ, բայց նուէրներն եփեցին
կաթսաներում, սաներում և տա-
պակներում, և շուտով հասցրին
ժողովրդի բոլոր որդկանցը։ Եւ 14
յետոյ պատրաստեցին իրանց հա-
մար և քահանաների համար, ո-
րովհետև Ահարօնի որդիքը քա-
հանաները մինչև գիշերը ողջա-
կէզներն ու ճարպերն էին մա-
տուցանում. իսկ Ղևտացիները
պատրաստեցին իրանց համար և
Ահարօնի որդկանց՝ քահանանե-
րի համար։ Եւ Ասափի որդկանց 15
երգեցողները կանգնել էին իրանց
կանգնելու տեղը Դաւիթի, Ա-
սափի, Եմանի և Թագաւորական
տեսանող Իդիթունի պատուէրին
համեմատ, և դռնապաններն էլ
ամեն մէկ դռան վերայ. նորանց
պէտք չէր որ իրանց պաշտօնիցը
հեռանային, որովհետև իրանց
եղբայրները Ղևտացիները պատ-
րաստում էին նորանց համար։
Այսպէս պատրաստուեցաւ այն 16
օրը Տիրոջ բոլոր պաշտօնը որ զա-
տիկը կատարեն և ողջակէզներ
մատուցանեն Տիրոջ սեղանի վե-
րայ՝ Յովսիա Թագաւորի պատ-
ուէրին պէս։ Եւ այնտեղ գտնուող 17
Իսրայէլի որդիքն այն ժամանակ
կատարեցին զատիկը և բաղար-
ջակերաց տօնը եօթն օր։ Եւ Իս- 18
րայէլումը նորա նման զատիկ չէր
կատարուել Սամուել մարգարէի
օրերից հետէ. և Իսրայէլի բոլոր
Թագաւորներն այնպիսի զատիկ
չէին արել, ինչպէս արին Յովսի-
ան՝, և քահանաները, Ղևտացի-

ներբը և բոլոր ախթէչ գանուող
Յուդան և Իսրայէլը և երուսա-
19 ղէմի բնակիչները, Յովսիայի թա-
գաւորութեան տասնեւթերորդ
տարին կատարուեցաւ այս գա-
թիկը։
20 Այս ամենից յետոյ որ Յովսի-
ան կարգադրեց Աստուծոյ տաճ-
նը, վեր եկաւ Եգիպտոսի Նե-
քաւով թագաւորը Եփրատի մօտ
եղող Քարքամիսի դէմ պատե-
րազմելու. և Յովսիան դուրս ե-
21 կաւ նորա դէմ, բայց նա պատ-
գամաւորներ ուղարկեց նորա
մօտ ասելով. Դու ինձ հետ ի՞նչ
գործ ունիս, ով Յուդայի թա-
գաւոր. ես այսօր քեզ դէմ չեմ,
այլ ինձ հետ պատերազմողի տան
դէմ. և Աստուած հրամայել է
ինձ որ շտապեմ. ետ քաշուիր
ինձ հետ եղող Աստուածանից,
22 որ քեզ չ'փչացնէ։ Սակայն Յով-
սիան երեսը նորանից չ'շրջեց, այլ
նորա հետ պատերազմելու հա-
մար հագուստը փոխեց, և չ'լսեց
Աստուծոյ բերանից գոյ-ե եվ-
նեքաւովի խօսքին, և գնաց Մա-
կեդդովի հովիտը որ պատերազ-
23 մէ։ Եւ աղեղնաւորները նետով
զարկեցին Յովսիա թագաւորին.
և թագաւորն ասեց իր ծառա-
ներին. Ինձ տարէք, որովհետև
24 սաստիկ վիրաւորուած եմ։ Եւ
նորա ծառաները նորան տա-
րին կառքից և նորան հե-
ծեցրին նորա երկրորդ կառքի
վերայ և նորան բերին Երուսա-
ղէմ, և նա մեռաւ և թաղուե-
ցաւ իր հայրերի դերեզմանա-
տան. և բոլոր Յուդան և Երու-
սաղէմը սուգ արին Յովսիայի վե-
25 րայ։ Եւ Երեմիան ողբ ասեց Յով-
սիայի վերայ. և բոլոր երգիչներն
ու երգչուհիները յիշում են
Յովսիային իրանց ողբերումը մին-
չև այսօր. և նորանից սովորու-
թիւն շինեցին Իսրայէլի համար.
և ահա նորանք գրուած են ող-
բերումը։
26 Եւ Յովսիայի մնացորդ պատ-
թիւնը և նորա բարեգործութիւն-
ները, որ արա՝ Տիրոջ օրէնքումը
27 գրուածին համեմատ, և նորա
առաջին և վերջին պատմութիւ-
նը, ահա գրուած են Իսրայէլի
և Յուդայի թագաւորների գըր-
քումը։

ԳԼ. ԼԶ

Եւ երկրի ժողովուրդն առան 1
Յովսիայի որդի Յովաքազին և նո-
րան թագաւոր արին իր հօր տեղ
Երուսաղէմումը։ Քսանեւերեք տա- 2
րեկան էր Յովաքազը՝ երբոր թա-
գաւոր եղաւ, և երեք ամիս
թագաւորեց Երուսաղէմումը։ Եւ 3
նորան հեռացրեց Ե՝ո՝ւ Եգիպ-
տոսի թագաւորը Երուսաղէմու-
մը, և երկրի վերայ հարկեր տա-
ղանդ արծաթ և մէկ տաղանդ
ոսկի հարկ դրաւ։ Եւ Եգիպտա- 4
ցի թագաւորը նորա եղբայր Ե-
ղիակիմին թագաւոր դրաւ Յու-
դայի և Երուսաղէմի վերայ, և
նորա անունը փոխեց Յովակիմ.
իսկ նորա եղբայր Յովաքազին ա-
ռաւ Նեքաւովը և տարաւ Եգիպ-
տոս։
Յովակիմը քսանեհինգ տարե- 5
կան էր՝ երբոր թագաւոր եղաւ
և տասնեւմէկ տարի թագաւորեց
Երուսաղէմումը. և չարութիւն
արաւ իր Տէր Աստուծոյ աչքի
առաջին։ Նորա վերայ եկաւ Բա- 6
բելոնի Նաբուգոդոնոսոր թագա-
ւորը և նորան կապեց կրկնակի
առնակապերով, որ նորան տանէ
Բաբելոն։ Եւ Նաբուգոդոնոսորը 7
Տիրոջ տան անօթներիցը տարաւ
Բաբելոն և դրաւ նորանց Բաբի-
լոնում իր տաճարի մէջ։ Եւ Յո- 8
վակիմի մնացորդ պատմութիւնը
և նորա արած գարշութիւնները
և նորա վերայ գտնուածը, ահա
նորանք գրուած են Իսրայէլի և
Յուդայի թագաւորների գրքում-
ը. և նորա որդի Յովաքինը թա-
գաւոր եղաւ նորա տեղ։
Տ՝ո՝ւթը տարեկան էր Յո- 9
վաքինը՝ երբոր թագաւոր եղաւ,
և երեք ամիս ու տասն օր թա-
գաւորեց Երուսաղէմումը, և չա-
րութիւն արաւ Տիրոջ աչքի ա-
՝ո՝ւջին։ Եւ հետևեալ տարին Նա- 10
բուգոդոնոսոր թագաւորը ղրկե-

ուզարկեց, և նորան տանել տը-
ւաւ Տիրոջ տան պատուական
անօթներովը Մեկաեղ Բաբիլոն.
և նորա հէր եղբայր Սեդեկիային
թագաւոր դրաւ Յուդայի և Ե-
րուսաղէմի վերայ։
Քսանեմէկ տարեկան էր Սեդե- 11
կիան՝ երբոր թագաւոր եղաւ,
և տասնեմէկ տարի թագաւորեց
Երուսաղէմումը։ Եւ չարութիւն 12
արաւ իր Տէր Աստուծոյ աչքի
՝ո՝ւջին՝ Տիրոջ բերանից Ե՝ո՝ւ-
ղեմիա մարգարէի առաջին չ'խո-
նարհեցաւ։ Եւ Նաբուգոդո- 13
նոսոր թագաւորի դէմ էլ ա-
պըստամբուեց որ իրան երդում
էր տուել Աստուծով, և իր պա-
րանոցը խստացրեց, և իր սիրտը
պնդացրեց, որ Իսրայէլի Տէր Ա- 14
ստուծուն չ'դառնայ։ Քահանա-
ներն բոլոր իշխաններն ու ժողո-
վուրդն էլ խիստ շատ անօրէ-
նութիւններ արին ՝ըէւ ազգերի
բոլոր գարշութիւնների պէս, և
պղծեցին Տիրոջ տունը, որ նա
սրբել էր Երուսաղէմումը։ Եւ 15
նորանց հայրերի Տէր Աստուածն
ուղարկում էր նորանց իր պատ-
գամաւորների ձեռքով առաւօ-
տանց կանուխ էր ղ-ղ-ո՝ո՝ւէը.
որովհետև խնայում էր իր ժո-
ղովրդին ու իր բնակարանին. Բայց 16
նորանք անարգում էին Աստու-
ծոյ պատգամաւորներին, և ար-
համարհում էին նորա խօսքերը և
ծաղրում էին նորա մարգարէնե-
րին, մինչև որ բարձրացաւ Տի-
րոջ բարկութիւնն իր ժողովրդի
վերայ այնպէս որ բժշկութիւն
չ'մնաց։ Եւ նորանց վերայ բերաւ 17
Քաղդէացիների թագաւորին, որ
նա էլ սրով սպանեց նորանց ե-
բիտասարդներին իրանց սրբարա-
նի տանը, և չ'խնայեց երիտա-
սարդին, կոյսին, ծերին և ալե-
ւորին. բոլորը նորա ձեռքը մատ-
նեց։ Եւ Աստուծոյ տան բոլոր 18
անօթները՝ մեծերը և փոքրերը և
Տիրոջ տան գանձերը և թագա-
ւորի և նորա իշխանների գանձե-
րը՝ բոլորը տարաւ Բաբիլոն. Եւ 19
այրեցին Աստուծոյ տունը, և
քանդեցին Երուսաղէմի պարիս-
պը, և նորա ամեն պալատները
կրակով այրեցին, և նորա բոլոր
ազնիւ բաները փչացրին։ Իսկ ում- 20
րից մնացածներին գերի տարաւ
Բաբիլոն, և նորանք նորա ու նո-
րա որդկանցը ծառաներ եղան
մինչ՝ Պարսից թագաւորութեան
թագաւորելը, Որպէս դի Երեմի- 21
այի բերանով ՝՝՝՝՝ Տիրոջ խօս-
քը կատարւի, մինչև որ երկիրը
վայելէ իր շաբաթները. աւերման
բոլոր օրերը նա շաբաթ պահեց,
մինչև եօթանասուն տարին լրա-
նալը։
Եւ Պարսից Կիւրոս թագաւորի 22
առաջին տարին, Երեմիայի բե-
րանով ՝՝՝՝՝ Տիրոջ խօսքը կա-
տարուելով, Տէրը զարթնեցրեց
Պարսից Կիւրոս թագաւորի հո-
գին, և նա իր բոլոր թագաւո-
րութեան մէջ մունետիկ կանչել
տուաւ, նաև գրուածով հ՝ո՝ա-
՝ւ՝ե՝ ասելով.
Այսպէս է ասում Պարսից Կիւ- 23
րոս թագաւորը. Երկնքի Եհովայ
Աստուածը տուել է ինձ երկրի
բոլոր թագաւորութիւնները, և
նա ինձ պատուիրել է նորա հա-
մար մի տուն շինել Երուսաղէ-
մումը որ Յուդայումն է։ Ձեզա-
նից ամեն ով որ նորա ժողովր-
դից է, նորա Եհովայ Աստուածն
իր հետ լինի, և թող գնայ։

ԵԶՐԱՍԻ ԳԻՐՔԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ Պարսից Կիւրոս թագաւորի առաջին տարին՝ Երեմիայի բերանով ——→ Տիրոջ խօսքը կատարուելու համար, Տէրը զարթնեցրեց Պարսից Կիւրոս թագաւորի հոգին, և նա պատուէր ուղարկեց իր բոլոր թագաւորութեան մէջ՝ նաև հրովարտակով հրատարակեց ասելով.

2 Այսպէս է ասում Պարսից Կիւրոս թագաւորը. Երկրի բոլոր թագաւորութիւններն ինձ է տուել երկնից Աստուածը՝ Եհովան, և նա ինձ պատուիրեց, որ Յուդայի Երուսաղէմումը նորա
3 համար մի տուն շինեմ. Ամեն ով որ ձեզանից նորա ժողովրդիցն է, իր Աստուածն իր հետը լինի, թող վեր գնայ Երուսաղէմ որ Յուդայումն է, և շինէ Իսրայէլի Աստուծոյ՝ Եհովայի տունը. նա է Աստուած, որ Ե-
4 րուսաղէմումն է. Եւ ամեն մնացորդը՝ իրանց ամեն տեղերիցը, ուր որ էլ պանդուխտ լինէ նա, նորան օգնեն նորա տեղի մարդիկն արծաթով և ոսկիով և ստացուածքով և անասուններով՝ Երուսաղէմումն եղող Աստուծոյ տան համար կամաւոր ընծաների հետ.

5 Այն ժամանակ վեր կացան Յուդայի և Բենիամինի տոհմապետները և քահանաները և Ղեւտացիները՝ ամենքը որի հոգին զարթնեցրեց Աստուած, որ վեր գնայ շինէ Երուսաղէմում եղող Ա-
6 ստուծոյ տունը. Եւ նորանց շուրջը եղողների բոլորն օգնեցին նորանց արծաթի անօթներով, ոսկիով, ստացուածքով և անասուններով և թանկագին բաներով բացի այն բոլորից որ կամաւ ընծայեցին.

7 Եւ Կիւրոս թագաւորը դուրս հանեց Տիրոջ տան անօթները, որ Նաբուգոդոնոսորը դուրս էր տարել Երուսաղէմից և դրել էր նորանց իր աստուծոյ տանը. Եւ 8
Պարսից Կիւրոս թագաւորը դուրս հանեց նորանց Միթրիդատ գանձապետի ձեռովը, և համարեց նորանց և յանձնեց Յուդայի իշխան Սասբասարին. Եւ սա է նորանց 9
թիւը. երեսուն ոսկի կոնք, հազար արծաթի կոնք, քսանևինը դանակ. Երեսուն ոսկի տաշտ, 10
չորս հարիւր տասը արծաթի տաշտ երկրորդ կարգից, և հազար ուրիշ անօթներ. Բոլոր ոսկի 11
և արծաթի անօթները հինգ հազար չորս հարիւր էին. Սասբասարը բոլորը վեր տարաւ գերիներին Բաբիլոնից Երուսաղէմ վեր տանելիս.

ԳԼ. Բ

Եւ սորանք են Յուդայի գաւա- 1
ռացիները, որոնք ետ դառան տարած գերութիւնից, որոնց Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը Բաբիլոն էր տարել և որոնք ետ դառան Երուսաղէմ և Յուդա՝ ամեն մարդ իր քաղաքը. Ո- 2
րոնք եկան Զօրաբաբէլի, Յեսուի, Նէեմիայի, Սարայիայի, Հռէէղիայի, Մուրթքէի, Բաղասանի, Մասփարի, Բագուէի, Հռէումի, Բաանայի հետ. Իսրայէլի ժողո- 3
վրդի մարդկանց թիւը՝ Փարոսի որդիքը երկու հազար հարիւր եօթանասունևերկու. Սափատի- 4
այի որդիքը երեք հարիւր եօթանասունևերկու. Արահի որդիքը 5
եօթը հարիւր եօթանասունևհինգ. Փաաթ-մովաբի որդիքը՝ 6
Յեսուի և Յովաբի որդիներից, երկու հազար ութ հարիւր տասնևերկու. Եղամի որդիքը հազար 7
երկու հարիւր յիսունևչորս. Զա- 8
թուի որդիքը ինը հարիւր քա-

9 ռասունևհինգ. Զաքքայի որդի-
10 քը եօթը հարիւր վաթսուն. Բա-
նիի որդիքը վեց հարիւր քառա-
11 սունևերկու. Բեբայիի որդիքը
12 վեց հարիւր քսանևերեք. Ազ-
գադի որդիքը հազար երկու հար-
13 իւր քսանևերկու. Ադոնիկամի
որդիքը վեց հարիւր վաթսունև-
14 վեց. Բագուէի որդիքը երկու
15 հազար յիսունևվեց. Ադինի որ-
դիքը չորս հարիւր յիսունևչորս.
16 Ատերի որդիքը Եզեկիայից ինը-
17 սունևութը. Բեսէէի որդիքը ե-
18 րեք հարիւր քսանևերեք. Յօրա-
յի որդիքը հարիւր տասնևերկու.
19 Հասումի որդիքը երկու հարիւր
20 քսանևերեք. Գաբերի որդիքը
21 իննսունևհինգ. Բեթլէհեմի որ-
22 դիքը հարիւր քսանևերեք. Նե-
տոփայի մարդիկը յիսունևվեց.
23 Անաթովթի մարդիկը հարիւր
24 քսանևութը. Ազամօթի որդիքը
25 քառասունևերկու. Կարիաթա-
րիմի, Կեփիրայի ու Բերովթի որ-
դիքը եօթը հարիւր քառասուն-
26 ևերեք. Ռամայի և Գաբայի որ-
դիքը վեց հարիւր քսանևմէկ.
27 Մաքմասի մարդիկը հարիւր քսան-
28 ևերկու. Բեթէլի և Գայիի մար-
դիկը երկու հարիւր քսանևերեք.
29 Նաբաւի որդիքը յիսունևերկու.
30 Մակեբիսի որդիքը հարիւր յի-
31 սունևվեց. Միւս Եղամի որդի-
քը հազար երկու հարիւր յի-
32 սունևչորս. Հարիմի որդիքը ե-
33 րեք հարիւր քսան. Ղովդի,
Ադիդի ու Ովնովի որդիքը եօթը
34 հարիւր քսանևհինգ. Երիքովի
որդիքը երեք հարիւր քառա-
35 սունևհինգ. Սենաայի որդիքը ե-
րեք հազար վեց հարիւր երեսուն.
36 Քահանաները՝ Յեսուի տանի-
ցը Յեդայիայի որդիքը ինը հար-
37 իւր եօթանասունևերեք. Եմմերի
որդիքը հազար յիսունևերկու.
38 Փասուրի որդիքը հազար երկու
39 հարիւր քառասունևեօթը. Հա-
րիմի որդիքը հազար տասնևեօթը.
40 Ղեւտացիները՝ Ովդուիայի որ-
դիներից՝ Յեսուի և Կադմիէլի
որդիքը եօթանասունևչորս.
41 Երգեցողները՝ Ասափի որդիքը
հարիւր քսանևութը.

Դռնապանների որդիքը՝ Սեղ- 42
ղումի որդիքը, Ատերի որդիքը,
Տեղմոնի որդիքը, Ակկուբի որդի-
քը, Ատիտայի որդիքը, Սուբայի
որդիքը, ամենը հարիւր երեսուն-
ևինը.

Նաթանայիմները՝ Սիայի որդի- 43
քը, Ասուփայի որդիքը, Տաբա-
ովթի որդիքը, Կերոսի որդիքը, 44
Սիահայի որդիքը, Փագօնի որ-
դիքը, Ղաբանայի որդիքը, Ա- 45
գաբայի որդիքը, Ակկուբի որդի-
քը, Ագաբի որդիքը, Սաղամէի 46
որդիքը, Անանի որդիքը, Գեդ- 47
դելի որդիքը, Գաարի որդիքը,
Ռէայիայի որդիքը, Ռասինի որ- 48
դիքը, Նեկոդայի որդիքը, Գա-
զամի որդիքը, Ոզայի որդիքը, 49
Փասէի որդիքը, Բասիի որդիքը,
Ասենայի որդիքը, Մովանիմի որ- 50
դիքը, Նեփուսիմի որդիքը, Բակ- 51
բոկի որդիքը, Ակուփայի որդի-
քը, Արուրի որդիքը, Բասաղօ- 52
թի որդիքը, Մէիդայի որդիքը,
Արսայի որդիքը, Բարկոսի որդի- 53
քը, Սիսարայի որդիքը, Թամա-
յի որդիքը, Նեսիայի որդիքը, 54
Ատեփայի որդիքը, Սողոմոնի 55
ծառաների որդիքը՝ Սոտէի որդի-
քը, Սոփերաթի որդիքը, Փա-
րեդայի որդիքը, Յեղայի որդի- 56
քը, Դերկոնի որդիքը, Գեդդե-
լի որդիքը, Սափատիայի որդիքը, 57
Ատտիլի որդիքը, Փաքարաթ-ա-
սեբայիմի որդիքը, Ամիի որդիքը,
Բոլոր Նաթանայիմները և Սողո- 58
մոնի ծառաների որդիքը երեք
հարիւր իննսունևերկու.

Եւ սորանք էին, որ վեր գնա- 59
ցին Թեղմեղայից, Թեղարսայից,
Քերուբից, Ադդանից, Եմմերից,
և չկարողացան ցոյց տալ իրանց
հայրերի տունը և իրանց սերունդը, թէ Իսրայէլիցն են իրանք.
Դաղայիայի որդիքը, Տուբիայի 60
որդիքը, Նեկոդայի որդիքը՝ վեց
հարիւր յիսունևերկու մարդ. Եւ 61
քահանաների որդիներից Աբաի-
այի որդիքը. Ակկուսի որդիքը,
Բերզելիի որդիքը, որ Գաղաա-
դացի Բերզելիի աղջիկներից կին
առնելով նորանց անունովը կոչ-
ուեցան. Սորանք որոնեցին ի- 62

բանց տգիտութեան գիրքը, քայց չ'գտան. վասն որոյ նորանց լուծեցին քահանայութիւնից։
63 Եւ *Աթարաթան ասեց նորանց. Ամենասուրբ բաներիցը չ'ուտեն մինչև որ մի քահանայ վեր կենայ Ուրիմով և Թումիմով։
64 Բոլոր ժողովուրդը մեկտեղ քառասուներկու հազար երկք
65 հարիւր վաթսուն էին. Բացի նորանց ծառաներից և աղախիններից, որոնք եօթը հազար երկք հարիւր երեսունեւեօթն էին. և նորանց հետ երկու հարիւր երգիչներ և երգչուհիներ կային։
66 Նորանց ձիերը՝ եօթը հարիւր երեսունվեց. նորանց ջորիքը՝ երկու հարիւր քառասունեհինգ.
67 Նորանց ուղտերը՝ չորս հարիւր երեսունեհինգ. էշերը՝ վեց հազար եօթը հարիւր քսան։
68 Եւ տոհմապետներից մի քանի, երբոր երուսաղէմում լինող Տիրոջ տունը գնացին, կամաւոր ընծաներ տուին Աստուծոյ տանը նորան իր տեղումը վերականգնելու համար։
69 Իրանց կարողութեան չափ տուին գործի գանձին՝ վաթսունեմէկ հազար ոսկի, և հինգ հազար մնաս արծաթ, և հարիւր քահանայական պատմուճան։
70 Եւ յետոյ քնակուեցին քահանաները և Ղեւտացին, երգիչները և դռնապանները ու նաթանայիմներն իրանց քաղաքներումը, և բոլոր Իսրայէլն իրանց քաղաքներումը։

ԳԼ. Գ

1 Եւ երբոր եօթներորդ ամիսը հասաւ և Իսրայէլի որդիքն էլ քաղաքներումն էին, ժողովուրդը ժողովուեցաւ երուսաղէմ մեկ
2 մարդի պէս։ Այն ժամանակ վեր կացաւ Յովսեդեկեան Յեսուն և նորա քահանայ եղբայրները, Սաղաթիէլեան Զօրաբաբէլը և նորա եղբայրները, և շինեցին Իսրայէլի Աստուծոյ սեղանը, նորա վերայ ողջակէզներ մատուցանելու համար, ինչպէս որ գրուած է Աստուծոյ մարդ Մովսէսի գրքումը։ 3
Եւ սեղանը վերականգնեցին իր տեղը. որովհետև վախենում էին այն երկիրների ժողովուրդներից, և նորա վերայ ողջակէզներ մատուցին Տիրոջը՝ առաւօտեան և երեկոյեան ողջակէզները։ 4
Եւ կատարեցին տաղաւարահարաց տօնը գրուածի պէս. և ամեն օրուան ողջակէզները իր թիւովը կանոնին համեմատ օր քան օրէ հրամայուածը. Եւ ապրանից յետոյ մշտնջենաւոր ողջակէզը և ամսագլուխներինը և Տիրոջ ամեն սուրբ տօներինը, և Տիրոջ բոլոր կամաւոր ընծայ ընծայողինը։ 5
Եօթներորդ ամսի առաջին օրից սկսեցին ողջակէզներ մատուցանել Տիրոջը. բայց Տիրոջ տաճարի հիմը չէր դրուած։ 6
Եւ փող տուին քարահատներին և հիւսներին, և ուտելիք ու խմելիք և իւղ՝ Սիդոնացիներին և Տիրացիներին, որ Լիբանանից ծովով եղևնափայտեր բերեն Յոպպէ ինչպէս որ Պարսից կիւրոս թագաւորը արտօնութիւն էր տուել նորանց։ 7

Եւ նորանց երուսաղէմ՝ Աստուծոյ տունը գալու երկրորդ տարուայ երկրորդ ամսումը սկսեցին Շէալթիէլեան Զօրաբաբէլը և Յովսեդեկեան Յեսուն և նորանց միւս եղբայրները՝ քահանաները և Ղեւտացիները և դերութիւնից երուսաղէմ եկողներն ամենը, և քսան տարեկանից վեր եղող Ղեւտացիներին վերակացու դրին Տիրոջ տան գործքի վերայ։ 8
Եւ Յեսուն, նորա որդիքն ու եղբայրները, Կադմիէլն ու նորա որդիքը՝ Յուդայի որդիքը վեր կացան մեկ հոգի պէս իրենք վերակացու Աստուծոյ տան գործը աներու համար, Հէնդադադի որդիքը, նորանց որդիքը, և նորանց եղբայրները՝ Ղեւտացիները։ 9
Եւ երբոր ճարտարապետները 10

*Աթթա՝ կուսականը. տես Նէեմ. ը. 9։

Տիրոջ տաճարի հիմը դրին, այն ժամանակ կանգնեցրին քահանաներին զգեստաւորուած՝ փողերով, և Ղեւտացիներին՝ Ասափի որդկանցը ձնծղաներով Տիրոջն օրհնելու համար Իսրայէլի Դաւիթ թագաւորի կարգադրութեան համեմատ. Եւ փոխոխակի երգում էին Տիրոջը օրհնելով և գովելով թէ բարի է, թէ նորա ողորմութիւնը յաւիտեան է Իսրայէլի վերայ. և բոլոր ժողովուրդը մեծաձայն աղաղակում էին Տիրոջն օրհնելով Տիրոջ տան հիմը դրուելուն համար։ 11
Եւ քահանաներից և Ղեւտացիներից ու տոհմապետներից ու ծերերից շատերը, որոնք տեսել էին այն առաջի տունը, այս տունը նորանց աչքի առաջին հիմնարկութիւնը՝ բարձր ձայնով լացէին լինում, իսկ շատերը ուրախանալով ձայն էին բարձրացնում աղաղակելով, Եւ ժողովուրդը չէր կարողանում որոշել ուրախութեան աղաղակի ձայնը ժողովրդի լացի ձայնից. որովհետև ժողովուրդը մեծ աղաղակ էր բարձրացրել և ձայնը հեռուից էր լսվում։ 12 13

ԳԼ. Դ

1 Եւ երբոր Յուդայի և Բենիամինի թշնամիները լսեցին, որ գերութիւնից եկողներն Իսրայէլի Տէր Աստուծոյ համար տաճար
2 են շինում, Մօտեցան Զօրաբաբելին և տոհմապետներին և ասեցին նորանց. Մենք էլ ձեզ հետ շինենք, որովհետև մենք էլ ձեզ պէս ձեր Աստուծոյն ենք խընդրում, և նորան ենք զոհ մատուցանում Ասորեստանի Ասորդան թագաւորի օրերից՝ ի վեր, որ
3 մեզ այստեղ բերաւ. Եւ նորանց ասեցին Զօրաբաբելը և Յեսուն և Իսրայէլի միւս տոհմապետները. Ձեզ և մեզ չի վայելիլ դուք շինել մեր Աստուծոյ տունը, այլ մենք մինակ պիտի շինենք Իսրայէլի Տէր Աստուծոյ համար, ինչպէս որ մեզ պատուիրել է Պարսից թագաւորը՝ Կիւրոս թագաւորը։ 4
Եւ այն երկրի ժողովուրդը թուլացնում էր Յուդայի ժողովրդի ձեռքերը և խափանում էր նորանց շինելուց։ 5
Եւ նորանց դէմ խորհրդականներ էին վարձում նորանց խորհուրդը խափանելու համար Պարսից կիւրոս թագաւորի բոլոր օրերումը և մինչև Պարսից Դարեհ թագաւորի թագաւորելը։
Եւ Աստերոսի թագաւորութեան 6
ժամանակին՝ նորա թագաւորութեան սկզբումը ամբաստանութեան գիր գրեցին Յուդայի և երուսաղէմի բնակիչների դէմ։
Եւ Արտաշէսի օրերումը Բեսլեդամը, Միթրիդատը, Տաբէէլը և միւս ընկերները գրեցին Պարսից Արտաշէս թագաւորին, և նամակի գիրը Ասորերէն և մեկնութեամն էլ Ասորերէն էր։ 7 8
Խորհրդապետը և Սամսայ ատենադպիրը մեկ թուղթ գրեցին Արտաշէս թագաւորին երուսաղէմի դէմ այս կերպով։
Այն ժամանակ Ռեհում ատեաչէն Հէդեւմ խորհրդապետը և Սամսայ ատենադպիրը և նորանց միւս ընկերները՝ Դինացիք, Ափարսաթաքացիք, Տարփազեցիք, Ափերսացիք, Արքուեցիք, Բաբիլոնացիք, Շուշանացիք. Դաւեցիք, Եղամացիք, Եւ մեացած ազգերը որոնց փոխադրեց մեծ և պատուական Ասենափարը և բնակեցրեց Սամարիայի քաղաքումը, և միւսները որ գետի այս կողմին են և այլն. Ահա այն նամակի պատճէնը որ ուղարկեցին նորան։ 9 10 11
Արտաշէս թագաւորիդ, քո ծառաները՝ գետի այս կողմի մարդիկս և այլն. Թագաւորիդ յայտնի լինի, որ այն Հրէաները որ քո մօտիցը դուրս եկան, եկել են մեզ մօտ երուսաղէմ, շինում են այդ ապստամբ և զազեալի քաղաքը և նորա պարիսպները նորոգում են, և հիմերը դրել են։ 12
Հիմա յայտնի լինի թագաւորիդ, որ եթէ քաղաքը շինուի և նորա պարիսպները նորոգուին, նորանք հարկ, տուրք և մաքս չեն տալ, 13

և վերջը վնաս կ'բերէ թագա-
14 ւորներին։ Արդ որովհետև ա-
մենքս պալատիցն ենք ստանում
մեր *ապրուստը, և մեզ չի վա-
յելիլ թագաւորիդ վնասը տես-
նել, վասն որոյ ուղարկում և
15 յայտնում ենք թագաւորիդ, Որ
որոնեն քո հայրերի յիշատակաց
գրքերումը և դու կ'իմանաս որ
այս քաղաքը մի ապստամբ քա-
ղաք է եղել՝ և թագաւորին ու
գաւառներին վնասակար, և գա-
ւաճանութիւն է եղած նորա-
նում հին ժամանակներից, և
դորա համար այդ քաղաքը ա-
16 ւերակ է դարձել։ Մենք իմա-
ցնում ենք թագաւորիդ, որ եթէ
այս քաղաքը շինուի և նորա պա-
րիսպները նորոգուին, այս պատ-
ճառով քեզ բաժին չի լինիլ Գե-
տի այս կողմին։
17 Թագաւորը պատգամ ուղար-
կեց Հռէում խորհրդապետին և
Սամսայ ատենադպրին և նորանց
միւս ընկերներին որ բնակվում
էին Սամարիայում, և Գետի այն
կողմի եղող մնացածներին.
18 Ողջոյն և այլն. Նամակը, որ
մեզ ուղարկել էիք, յայտնա-
պէս կարգացուեցաւ իմ առա-
19 ջին. Եւ ես հրաման արի, և ո-
րոնեցին և գտան, որ այդ քա-
ղաքը հին ժամանակներից թա-
գաւորների դէմ է կացել, և դո-
րա մէջ ապստամբութիւն և գա-
20 ւաճանութիւն է եղել. Եւ զօ-
րաւոր թագաւորներ են եղել
Երուսաղէմում, որ տիրել են
Գետի բոլոր այդ կողմին. և հարկ,
տուրք և մաքս է տրուել նորանց։
21 Հիմա հրաման արէք, որ այն
մարդկանցն արգելեն, և այդ
քաղաքը չ'շինուի մինչև որ իմ
22 կողմանէ հրաման տրուի։ Եւ
զգոյշ եղիք որ այս մասին անհոգ
չ'լինիք։ Ի՞նչու չարիքը մեծանայ
թագաւորներին վնասելու հա-
մար։
23 Երբոր Արտաշէս թագաւորի
նամակի պատճէնը կարգացուե-
ցաւ Հռէումի և Սամսայ ատե-
նադպրի և նորանց ընկերների ա-
ռաջին, իսկոյն շտապելով գնա-
ցին Երուսաղէմ Հրէաների մօտ
և խափանեցին նորանց բռնու-
թեամբ և ուժով։ Այն ժամա- 24
նակ խափանուեցաւ Երուսաղէ-
մում եղող Աստուծոյ տան գոր-
ծը, և խափանումը մնաց մինչև
Պարսից Դարեհ թագաւորի թա-
գաւորութեան երկրորդ տարին։

ԳԼ. Ե

Եւ Անգէ մարգարէն ու Ադ- 1
դովի որդի Զաքարիա՝ մարգարէ-
ները մարգարէութիւն արին Հրէ-
աստանում և Երուսաղէմում ե-
ղող Հրէաներին, Իսրայէլի Ա-
ստուծոյ անունովը։ Այն ժամա- 2
նակ վեր կացան Սաղաթիէլեան
Զօրաբաբէլը և Յովսեդեկեան Յե-
սուն և սկսեցին շինել Երուսա-
ղէմումն եղող Աստուծոյ տունը,
և Աստուծոյ մարգարէները նո-
րանց հետ օգնում էին նորանց։
Այն ժամանակ եկան նորանց 3
մօտ Գետի այս կողմի իշխան Թա-
թանային և Սաթրաբուզանը և
նորանց ընկերները և այսպէս ա-
սեցին նորանց. Ո՞վ է ձեզ հր-
աման տուել այս տունը շինե-
լու և այս պարիսպները նորոգե-
լու։ Այն ժամանակ այսպէս ա- 4
սեցինք նորանց, թէ որոնք են այն
մարդկանց անունները որ շինում
են այս տունը։ Եւ իրանց Ա- 5
ստուծոյ աչքը Հրէաների ծերերի
վերայ էր, և նորանց չ'արգիլե-
ցին մինչև որ բանը հասնէ Դա-
րեհին, և նորանք այն ժամանակ
սորա համար հրաման տան։
Ահա այն նամակի պատճէնը, 6
որ ուղարկեցին Գետի այս կողմի
իշխանը Թաթանային և Սաթրա-
բուզանը և Գետի այս կողմի ե-
ղող նորանց ընկերները Ափարսա-
քացիք՝ Դարեհ թագաւորին։ Այն 7
պատգամը որ ուղարկեցին նորան,
և այսպէս էր գրուած նորանում.
Դարեհ թագաւորին՝ շատ խա- 8
ղաղութիւն. Թագաւորիդ յայտ-
նի լինի, որ գնացինք Հրէաստանի
գաւառը մեծ Աստուծոյ տունը.

*Քաղդ.՝ աղը

և նորան շինում են մեծ քարե-
րով, և փայտ են դնում պատե-
րումը, և այս գործը արագու-
թեամբ շինվում է և նորանց
9 ձեռքին յաջողվում է։ Յետոյ
մենք հարցրինք այն ծերերիցը՝
նորանց այսպէս ասելով Թէ Ձեզ
ո՞վ է հրաման տուել այս տու-
նը շինելու և այս պարիսպները
10 նորոգելու։ Նաև նորանց անուն-
ները հարցրինք նորանցից, քեզ ի-
մացնելու համար, որ գրենք այն
մարդկանց անունները, որ նո-
11 րանց գլխաւորներն են։ Եւ նո-
րանք այսպէս պատասխանեցին
մեզ ասելով. Մենք երկնքի և
երկրի Աստուծոյ ծառաներն ենք,
և շինում ենք այն տունը որ
շինուած էր շատ տարիներից ա-
ռաջ, որ Իսրայէլի մի մեծ թագա-
12 ւորը շինել և լրացրել էր։ Բայց
որովհետև մեր հայրերը բարկա-
ցրին երկնքի Աստուծուն, նա նո-
րանց մատնեց Բաբիլոնի Քաղ-
դէացի Նաբուգոդոնոսոր թագա-
ւորի ձեռքը. և նա քանդեց այս
տունը և ժողովուրդը գերի տա-
13 րաւ Բաբիլոն։ Բայց Բաբիլոնի
Կիւրոս թագաւորի առաջին տա-
րին Կիւրոս թագաւորը հրաման
տուաւ շինել այս Աստուծոյ տու-
14 նը։ Նաև այն Աստուծոյ տան ա-
նօթները՝ ոսկեղէն և արծաթե-
ղէն, որ Նաբուգոդոնոսորը հա-
նել էր Երուսաղէմի տաճարիցը
և տարել նորանց Բաբիլոնի տա-
ճարը, նորանց հանեց Կիւրոս
թագաւորը Բաբիլոնի տաճարիցը
և տուաւ Սասբասար անունով
անձին, որին նախարար դրաւ,
15 Եւ նորան ասեց. Առ այս ա-
նօթները, գնա, տար նորանց Ե-
րուսաղէմի տաճարը, և Աստու-
16 ծոյ տունը շինուի իր տեղը։ Այն
ժամանակ այս Սասբասարն եկաւ
և ձգեց Երուսաղէմում եղող
Աստուծոյ տան հիմը. և այն ժա-
մանակից մինչև հիմա շինվում է,
17 և չէ վերջացել։ Եւ արդ եթէ
թագաւորին հաճելի է, թող ո-
րոնեն այդտեղ Բաբիլոնի թա-
գաւորական գանձարանումը, թէ
արդե՞օք Կիւրոս թագաւորից հր-
աման է տրուել որ շինուի այս
Աստուծոյ տունը Երուսաղէմու-
մը. և թագաւորի կամքն այս
բանի մասին թող ուղարկեն մեզ։

ԳԼ. Զ

Այն ժամանակ Դարեհ թագա- 1
ւորը հրաման արաւ, և որոնեցին
դիւանատանը, ուր որ գանձերը
դնում էին Բաբիլոնում։ Եւ գըտ- 2
նուեցաւ Մարաց գաւառի *Եկ-
բատանայում, պալատումը մէկ
տոմս, և այսպէս էր գրուած նո-
րանում՝ յիշատակարան.
Կիւրոս թագաւորի առաջին 3
տարին Կիւրոս թագաւորը հրա-
ման արաւ Երուսաղէմումն եղող
Աստուծոյ տան մասին. այն տունը
շինուի իբրև տեղի ուր որ զոհեր
են մատուցանում, և նորա հի-
մերը հաստատուին. նորա բար-
ձրութիւնը վաթսուն կանգուն,
նորա լայնութիւնը վաթսուն կան-
գուն. Մեծ քարերից՝ երեք կարգ, 4
և նոր փայտից՝ մէկ կարգ. և
ծախքը արքունիքից տրուի։ Նաև 5
Աստուծոյ տան ոսկեղէն և ար-
ծաթեղէն անօթները, որ Նաբու-
գոդոնոսորը հանել էր Երուսա-
ղէմումն եղող տաճարից և բե-
րել Բաբիլոն, ետ տրուին և գը-
նան Երուսաղէմի տաճարը՝ իրանց
տեղը, և դրուին Աստուծոյ տանը։
Ուրեմն Գետի այն կողմի իշ- 6
խան Թաթանայի, Սադրաբու-
զան, և Գետի այն կողմի եղող
նորանց ընկերները Ափարսաքա-
ցիք, հեռանան այդ տեղից. Թոյլ 7
տուէք այդ Աստուծոյ տան գոր-
ծը. Հրէաների նախարարը և Հր-
էաների ծերերը շինեն այդ Ա- 8
ստուծոյ տունը իր տեղը։ Եւ ին-
ձանից հրաման է տրվում, թէ
ինչ պէտք է անէք Հրէաների ծե-
րերին այդ Աստուծոյ տունը շի-
նելիս, այսինքն արքունի կալուած-
քից՝ Գետի այն կողմի տուրքից
շուտով տրուին ծախքերն այն
մարդկանցը, որ արգելք չ'լինի։
Եւ ինչ որ պէտք է թէ զուա- 9

*Քաղդ.՝ Ախմէթա

բակներ թէ խոյեր և թէ գառ-
ներ երկնքի Աստուծուն ողջակէ-
զի համար, նաև ցորեն, աղ, գի-
նի և իւղ, ինչպէս որ ասեն Ե-
րուսաղէմումն եղող քահանա-
ները, նորանց տրուի օր ըստ օրէ
10 անպակաս։ Որ երկնքի Աստու-
ծուն անուշահոտ զոհեր մատու-
ցանեն, և աղօթեն թագաւորի
և նորա որդկանց կեանքի հա-
11 մար։ Եւ ինձանից հրաման է
տրվում, թէ ով որ փոխէ այս
պատգամը, նորա տանիցը մի
փայտ հանեն, և նա վեր հան-
ուելով նորա վերայ բևեռուի, և
նորա տունը այդ պատճառով
12 ազբանոց շինուի։ Եւ այն Աստ-
ուածը որի անունը բնակվում է
այնտեղ, կործանէ այն ամեն
թագաւորին և ժողովրդին որոնք
իրանց ձեռքը մեկնեն փոխելու
որ այս Աստուծոյ տունը աւե-
րեն որ Երուսաղէմումն է։ Ես
Դարեհս տուի այս հրամանը. շու-
տով կատարուի։
13 Այն ժամանակ Գետի այս կող-
մի իշխանը Թաթանային, Սաթ-
բաբուզանը և նորանց ընկերնե-
րը՝ ինչպէս որ Դարեհ թագաւո-
րը հրաման էր ուղարկել, շուտով
14 այնպէս արին։ Եւ Հրէաների ծե-
րերը շինում էին և յաջողվում
Անգէ մարգարէի և Ագգովի որ-
դի Զաքարիայի մարգարէութիւ-
նովը, և շինեցին ու վերջացրին
Իսրայէլի Աստուծոյ հրամանովը
և Պարսից Կիւրոս, Դարեհ և Ար-
տաշէս թագաւորի հրամանովը։
15 Եւ լրացաւ այս տունը Ադար ամ-
սուայ երրորդ օրը, որ Դարեհ
թագաւորի թագաւորութեան
վեցերորդ տարին էր։
16 Եւ Իսրայէլի որդիքը՝ քահա-
նաները և Ղևտացիները և միւս
գերութիւնից եկողները այս Ա-
ստուծոյ տան նաւակատիքն ա-
17 րին ուրախութիւնով։ Եւ Ա-
ստուծոյ տան նաւակատիքի հա-
մար զոհեցին հարիւր զուարակ,
երկու հարիւր խոյ, չորս հարիւր
գառն և բոլոր Իսրայէլի համար
իբրև մեղքի պատարագ Իսրայէլի
ցեղերի թիւովը այծերից տասն-
ևերկու նոխազ։ Եւ քահանաներ-
ին իրանց կարգերովը և Ղևտա-
ցիներին իրանց դասերովը դրին
Երուսաղէմումն եղող Աստուծոյ
տան պաշտօնի վերայ ինչպէս որ
գրուած է Մովսէսի գրքումը։
Եւ գերութիւնից եկողները
զատիկը կատարեցին առաջին ամ-
սուայ տասնևչորսին, Որովհետև
քահանաներն ու Ղևտացիները
միասին սրբուեցան՝ ամենքը մա-
քուր էին, և մորթեցին զատիկը
բոլոր գերութիւնից եկողների
համար և իրանց եղբայրների հա-
մար՝ քահանաների և իրանց հա-
մար։ Եւ գերութիւնից ետ դա-
ռած Իսրայէլացիք և այն երկրի
ազգերի պղծութիւնից ամեն ով
որ բաժանուել էլէլ էր նորանց
մօտ Իսրայէլի Տէր Աստուծուն
խնդրելու համար, կերան։ Եւ
եօթն օր բաղարջակերաց տօնը
կատարեցին ուրախութիւններով,
որովհետև Տէրը նորանց ուրա-
խացրել էր. և Ասորեստանի թա-
գաւորի սիրտը դարձրեց դէպի
նորանց՝ նորանց ձեռքը Աստու-
ծոյ տան գործքումը ուժովացնե-
լու համար։

ԳԼ. Է

Եւ այս բաներից յետոյ Պար-
սից թագաւոր Արտաշէսի թա-
գաւորութեան ժամանակին Եզ-
րասը՝ որդի Սարայիայի, որդի Ա-
զարիայի, որդի Քեզկիայի, Որ-
դի Սեղղումի, որդի Սադովկի,
որդի Աքիտովբի, Որդի Ամարի-
այի, որդի Ազարիայի, որդի Մա-
րիօթի, Որդի Զարիայի, որդի
Ոզիի, որդի Բոկկիի, Որդի Աբի-
սուայի, որդի Փենէհեսի, որդի
Եղիազարի, որդի քահանայա-
պետ Ահարօնի. Այս Եզրասը վեր
եկաւ Բաբիլոնից, և նա ժիր դը-
պիր էր Մովսէսի օրէնքումը որ
Իսրայէլի Տէր Աստուածը տուել
էր. և իր Տէր Աստուծու ձեռ-
քը նորա վերայ լինելուն համար՝
թագաւորը տուել էր նորան նո-
րա բոլոր խնդրածը։ Եւ Իսրա-
յէլի որդկանցից և քահանանե-

րից և Ղևտացիներից և երգիչ-
ներից և դռնապաններից և Նա-
թանայիմներից սմանդ վեր գնա-
ցին Երուսաղէմ Արտաշէս թա-
8 գաւորի եօթներորդ տարին։ Եւ
նա Երուսաղէմ եկաւ հինգե-
րորդ ամսումը, թագաւորի եօթ-
9 ներորդ տարումը։ Որովհետև ա-
ռաջին ամսի մէկին սկսեց Բաբի-
լոնից ետ դառնալը, և հինգե-
րորդ ամսի մէկին եկաւ Երու-
սաղէմ. որովհետև իր Աստուծոյ
10 բարի ձեռքն իր հետն էր։ Նո-
րա համար որ Եզրասը պատրաս-
տել էր իր սիրտը որ Տիրոջ օ-
րէնքը խնդրէ և կատարէ, և Իս-
րայէլի մէջ սովորեցնէ օրէնք և
դատաստան։
11 Եւ ահա այն նամակի պատ-
ճէնը, որ Արտաշէս թագաւորը
տուաւ Եզրաս քահանայ դըպ-
րին, որ դպիր էր Տիրոջ Իսրա-
յէլի մասին պատուիրանք-
ներումը և նորա օրէնքումը։
12 Թագաւորների թագաւոր Ար-
տաշէսը՝ Եզրաս քահանային եր-
կընքի Աստուծոյ օրէնքի կատար-
13 եալ դպրին, և այլն. Ինձանից
հրաման է տրվում, որ իմ թա-
գաւորութիւնում եղող Իսրա-
յէլի ժողովրդիցը և նորա քա-
հանաներիցը և Ղևտացիներիցն
ամեն ով որ հաճէ Երուսաղէմ
14 գնալ՝ քեզ հետ գնայ։ Որովհե-
տև դու ուղարկվում ես թա-
գաւորի և նորա եօթը խորհրդ-
ականների կողմից, որ քննես
Յուդան և Երուսաղէմը քո Ա-
ստուծոյ օրէնքովը որ քո ձեռքին
15 է։ Եւ տանես այն արծաթն ու
ոսկին որ յօժարակամ տուին
թագաւորը և նորա խորհրդա-
կանները Իսրայէլի Աստուծուն ո-
րի բնակութիւնը Երուսաղէմու-
16 մն է, Եւ այն ամեն արծաթն
ու ոսկին որ գտար Բաբիլոնի բո-
լոր գաւառումը, այն կամաւոր
ընծաների հետ որ ժողովուրդն
ու քահանաները նուիրում են
իրանց Աստուծոյ տան համար որ
17 Երուսաղէմումն է. Որպէս զի շու-
տով այն փողովը զուարակներ,
խոյեր, գառներ, և նորանց հա-
ցի նուէրները և թափելու նուէր-
ները ծախու առնես, և նորանց
մատուցանես ձեր Աստուծոյ տան
սեղանի վերայ որ Երուսաղէմու-
մն է։ Եւ ինչ որ քեզ և քո եղ-
բայրներին հաճելի լինի, մնացած
արծաթովն ու ոսկիովն անել՝ ձեր
Աստուծոյ կամացն համեմատ ա-
րէք։ Եւ այն անօթները որ քեզ
տրուեցան քո Աստուծոյ տան
պաշտօնի համար, յանձնիր Ե-
րուսաղէմումն Աստուծոյ առա-
ջը։ Եւ ուրիշ ինչ որ քո Ա-
ստուծոյ տան համար պէտք լինի,
որ քեզ վայել է տալ, տուր
թագաւորի գանձատունիցը։ Եւ
ինձանից՝ Արտաշէս թագաւորի-
ցըս հրաման է տրվում բոլոր
գանձապետներիդ որ Գետի այդ
կողմին էք, որ ամեն ինչ որ Եզ-
րաս քահանան՝ երկնքի Աստու-
ծոյ օրէնքի դպիրը ձեզանից ու-
զէ, շուտով կատարուի. Մին-
չև հարիւր տաղանդ արծաթ,
մինչև հարիւր քոռ ցորեն, և մին-
չև հարիւր մար իւղ, և աղ՝ ա-
ռանց գրելու։ Ամեն ինչ որ եր-
կընքի Աստուածը հրամայել է,
ճիշդ կատարուի երկնքի Աստու-
ծոյ տան համար, որ բարկու-
թիւնը չ՚գայ թագաւորութեա-
նը, թագաւորի և նորա որդինե-
րի վերայ։ Եւ ձեզ իմացնում
ենք, որ քահանաներից և Ղև-
տացիներից, երգեցողներից, դռ-
նապաններից, Նաթանայիմներից
և այս Աստուծոյ տան սպասա-
ւորներից ոչ մէկի վերայ իրա-
ւունք չ՚կայ որ հարկ, տուրք և
մաքս դնէ։ Եւ դու, ով Եզրաս,
քո Աստուծոյ իմաստութեամբը,
որ քեզանում է, դատաւորներ
և իշխաններ դիր, որ դատեն Գե-
տի այն կողմին եղող ժողովրդ-
ին, այսինքն քո Աստուծոյ օ-
րէնքը գիտացողներին. և ով որ
չ՚գիտէ, նորան սովորեցրէք։ Բայց
ամեն ով որ չէ կատարում քո
Աստուծոյ օրէնքը և թագաւորի
օրէնքը, իսկոյն նորան դատաս-
տան անուի կամ մահով, կամ
աքսորով, կամ տուգանքով և
կամ բանտարկութեամբ։

27 Օրհնեալ լինի մեր հայրերի Տէր
Աստուածը, որ այսպիսի միտք
դրաւ թագաւորի սրտումը Երու-
սաղէմումն եղող Տիրոջ տունը
28 փառաւորելու. Եւ ինձ վերայ
դարձրեց թագաւորի և նորա խոր-
հրդականների և թագաւորի բո-
լոր զօրաւոր իշխանների շնորհքը։
29 Եւ ես զօրացայ, որովհետև իմ
Տէր Աստուծոյ ձեռքը ինձ վե-
րայ էր, եւ Իսրայէլից իշխաններ
հաւաքեցի ինձ հետ գնալու հա-
մար։

ԳԼ. Ը

1 Եւ սորանք են նորանց տոհմա-
պետները և նորանց ազգահամա-
րը, որ վեր եկան ինձ հետ Բա-
բիլոնի Արտաշէս թագաւորի թա-
2 գաւորութեան ժամանակին. Փե-
նէհեսի որդիներից՝ Գերսոնը, Ի-
թամարի որդիներից Դանիէլը,
Դաւիթի որդիներից Քետտուսը.
3 Սեքենիայի որդիներից՝ Փարոսի
որդիներից Զաքարիան և նորա
հետ հարիւր յիսուն մարդ հա-
4 մարուեցան. Փաաթ-մովաբի որ-
դիներից՝ Զարիայի որդի Եղի-
ովէնային, և նորա հետ երկու
5 հարիւր մարդ. Սեքենիայի որ-
դիներից՝ Յազիէլի որդի և նորա
6 հետ երեք հարիւր մարդ. Եւ Ադի-
նի որդիներից՝ Յովնաթանի որդի
Աբեդը և նորա հետ յիսուն մարդ.
7 Եւ Եղամի որդիներից՝ Գոթոզի-
այի որդի Եսայիան և նորա հետ
8 եօթանասուն մարդ. Եւ Սափա-
տիայի որդիներից՝ Միքայէլի որ-
դի Զաբադիան և նորա հետ
9 ութսուն մարդ. Յովաբի որդի-
ներից Յեքիէլի որդի Աբդիան և
նորա հետ երկու հարիւր տասն-
10 եւութը մարդ. Եւ Սաղօմիթի
որդիներից Յօսէփիայի որդին, և
նորա հետ հարիւր վաթսուն
11 մարդ. Եւ Բեբայիի որդիներից՝
Բեբայիի որդի Զաքարիան, և նո-
12 րա հետ քսանեւութը մարդ. Եւ
Ազգադի որդիներից՝ Ակատանի
որդի Յօհանանը և նորա հետ հար-
13 իւր տասը մարդ. Եւ Ադոնիկա-
մի որդիներից՝ վերջինները, որոնց
անունները սորանք են՝ Եղիփա-
ղէտ, Յէիէլ ու Սեմայիա, և նո-
րանց հետ վաթսուն մարդ. Եւ 14
Բագուէի որդիներից Ութային և
Զաբուդը, և նորանց հետ եօ-
թանասուն մարդ։
Եւ ես սորանց հաւաքեցի Ա- 15
հավա գնացող գետի եզերքը,
և այնտեղ մնացինք երեք օր. և
մտիկ տուի ժողովրդին և քահա-
նաներին, բայց Ղևիի որդկան-
ցից մարդ չ՛գտայ։ Եւ կանչեցի 16
Եղիազար, Արիէլ, Սեմայիա,
Եղնաթան, Յարիբ, Եղնաթան,
Նաթան, Զաքարիա և Մեսու-
ղամ իշխաններին, և Յովարիբ ու
Եղնաթան իմաստուններին, Եւ 17
նորանց պատուէր տուի որ գնան
Ադդով իշխանի մօտ՝ Քասիփիա
կոչուած տեղը, և նորանց բերա-
նը խօսքեր դրի որ ասեն Ադդո-
վին և նորա եղբայր Նաթանա-
յիմներին Քասիփիա տեղումը, որ
մեզ համար պաշտօնեաներ բե-
րեն մեր Աստուծոյ տան համար։
Եւ մեր Աստուծոյ բարի ձեռքը 18
մեզ վերայ լինելու համար բե-
րին մեզ մօտ Իսրայէլեան Ղևիի
որդի Մոողիի որդիներից մի հան-
ճարեղ մարդ՝ այսինքն Սարափի-
ային և նորա որդկանցն ու նորա
եղբարցը տասնեւութը մարդ. Եւ 19
Ասարիային և նորա հետ Մերա-
րիի որդիներից Եսայիային և նո-
րա եղբարցը և նորանց որդկանցը
քսան մարդ. Եւ Նաթանայիմնե- 20
րից, որոնց Դաւիթը և իշխաննե-
րը տուել էին Ղևտացիների ծա-
ռայութեան համար՝ երկու հար-
իւր քսան Նաթանայիմներ՝ ա-
մենքը անունով յիշուած։
Եւ ես այնտեղ Ահավայի գե- 21
տի մօտ ծոմապահութիւն քա-
րոզեցի մեր Աստուծոյ առաջին
խոնարհուելու համար, որ նորա-
նից յաջող ճանապարհորդու-
թիւն խնդրենք մեզ և մեր ընտ-
անեաց և մեր բոլոր ստացուած-
քի համար։ Որովհետև ամաչում 22
էի թագաւորից՝ որ մեզ ճանա-
պարհին թշնամիից օգնելու հա-
մար զօրք և ձիաւորներ ուղեմ,
որովհետև թագաւորին ասել է-

ինք թէ մեր Աստուծոյ ձեռքը
բոլոր նորան խնդրողների վերան է
բարութեան համար, իսկ նորա
զօրութիւնը և բարկութիւնը այն
ամենի վերայ, որ թողում են նո-
23 րան։ Եւ մենք ծոմ պահեցինք և
խնդրեցինք այս մասին մեր Ա-
ստուծոյն, և նա ընդունեց մեր
խնդրուածքը։
24 Եւ քահանաների իշխաններից
տասնեւերկու մարդ ջոկեցի՝ Սա-
բաբիային, Ասաբիային և նորանց
հետ իրանց եղբայրներիցը տասը
25 մարդ. Եւ կշռեցի տուի նորանց
այն արծաթն ու ոսկին և անօթ-
ներն իբրև մեր Աստուծոյ տան
համար ընծայ, որ ընծայել էին
թագաւորը և նորա խորհրդա-
կանները և նորա իշխանները և
այնտեղ գտնուող բոլոր Իսրայէ-
26 լացիները։ Եւ կշռեցի տուի նո-
րանց ձեռքը վեց հարիւր յիսուն
տաղանդ արծաթ և հարիւր տա-
ղանդ արծաթի անօթներ, հա-
27 րիւր տաղանդ ոսկի. Եւ քսան
ոսկի տաշտ՝ մէկը հազար դրամ,
և երկու հատ մաքուր և փայ-
լուն պղնձի անօթ՝ ոսկիի պէս
28 պատուական. Եւ նորանց ասեցի.
Դուք նուիրուած էք Տիրոջը,
այս անօթներն էլ են նուիրուած,
և արծաթն ու ոսկին կամաւոր
ընծայ է ձեր հայրերի Տէր Ա-
29 ստուծոյ համար։ Արթուն կացէք
և պահպանեցէք մինչև որ կշռէք
տուք քահանաների և Ղևտացի-
ների իշխաններին և Իսրայէլի
տոհմապետներին Երուսաղէմումը
30 Տիրոջ տան սենեակներումը։ Եւ
քահանաներն ու Ղևտացիներն
ընդունեցին կշռով արծաթն ու
ոսկին և անօթները, որ տա-
նեն Երուսաղէմ մեր Աստուծոյ
տունը։
31 Եւ ճանապարհուեցանք Ահա-
վայի գետից առաջին ամսի տասն-
եւերկուսին որ գնանք Երուսա-
ղէմ, և մեր Աստուծոյ ձեռքը
մեզ հետ էր, և նա մեզ ազա-
տեց ճանապարհին թշնամիի և
32 դարանակալի ձեռքիցը։ Եւ ե-
կանք Երուսաղէմ, և այնտեղ
33 նստեցինք երեք օր։ Եւ չորրորդ
օրը կշռեցինք արծաթն ու ոսկին
և անօթները մեր Աստուծոյ տա-
նը և տուինք Ուրիա քահանայի
որդի Մերամօթի ձեռքը, և նո-
րա հետ էր Փենէհեսի որդի Ե-
ղիազարը, և նորանց հետ Յեսուի
որդի Յովզաբադը և Բանուիի որ-
դի Նովադիա Ղևտացիները. Ա- 34
մենը թուով և կշռով. և բոլոր
կշիռը գրուեցաւ նոյն ժամանակը։
Եւ գերութիւնից եկած գերի- 35
ները Իսրայէլի Աստուծոյն ողջա-
կէզներ մատուցրին՝ բոլոր Իսրա-
յէլի համար տասնեւերկու զուա-
րակ, իննսունեւվեց խոյ, եօթա-
նասունեւեօթը գառն, մեղքի պա-
տարագի համար տասնեւերկու նո-
խազ. բոլորը ողջակէզ՝ Տիրոջ
համար։ Եւ թագաւորի հրամա- 36
նագիրերը տուին թագաւորի կու-
սակալներին և Գետի այն կողմի
իշխաններին. և նորանք օգնում է-
ին ժողովրդին և Աստուծոյ տանը։

ԳԼ. Թ

Եւ երբոր սորանք վերջացան, 1
իշխաններն ինձ մօտեցան և ասե-
ցին. Իսրայէլի ժողովուրդը և քա-
հանաները և Ղևտացիները չեն
ջոկուել այս երկիրների ազգե-
րիցը, այլ Քանանացիների, Քե-
տացիների, Փերեզացիների, Յե-
բուսացիների, Ամմոնացիների,
Մովաբացիների, Եգիպտացիների
և Ամօրհացիների պղծութիւնն-
ի պէս են անում. Որովհետև 2
նորանց աղջիկներիցն առել են
իրանց համար և իրանց որդկանց
համար, և սուրբ սերունդը խառ-
նուել է այս երկիրների ժողո-
վուրդների հետ. նաև իշխաններն
ու ոստիկաններն այս անօրէնու-
թեան մէջ առաջինն էին։ Եւ 3
հէնց որ ես լսեցի այս բանը, պա-
տառեցի իմ հանդերձը և վե-
րարկուն, և փետեցի գլխիս և մօ-
րուքիս մազերը և ապշած նստե-
ցի։ Եւ ինձ մօտ ժողովուեցան 4
Իսրայէլի Աստուծոյ խօսքից վա-
խեցողների ամենքը գերութիւ-
նից դառածների յանցանքի մա-
սին, իսկ ես ապշած նստած էի

5 մինչև երեկոյեան զոհը։ Եւ երեկոյեան զոհին վեր կացայ իմ տառապանքիցը և իմ պատառուած հանդերձովն ու վերարկուովը ծունկի վերայ իջայ և ձեռքերս տարածեցի դէպի իմ Տէր Աստուածը. Եւ ասեցի. Ով իմ Աստուած, ես ամաչում եմ և չեմ համարձակվում երեսս դէպի քեզ բարձրացնելու, ով իմ Աստուած, որովհետև մեր անօրէնութիւնները մեր գլխիցը վեր բարձրացան, և մեր յանցանքը մեծ է 7 մինչև երկինքը։ Մեր հայրերի օրերիցն ի վեր մենք մեծ մեղքի մէջ ենք մինչև այսօր. և մեր անօրէնութիւնների համար մենք, մեր թագաւորները, մեր քահանաները մատնուեցանք երկիրների թագաւորների, սուրի, գերութեան, յափշտակութեան եւ սևերեսութեան ձեռքը ինչպէս 8 որ այսօր կայ։ Եւ արդ մի փոքր վայրկեան ողորմութիւն եղաւ մեր Տէր Աստուածանից, որ մեզ համար փրկուածներ են մնացել, և մեզ հաստատել տուաւ իր սրբութեան տեղումը, որ մեր աչքերը լուսաւորել է մեր Աստուածը, և մեզ մի փոքր կենդանութիւն է տուել մեր ծառայութեան մէջ։ Որովհետև մենք 9 ծառաներ ենք, բայց մեր ծառայութեան մէջ էլ չ'ձգեց մեզ մեր Աստուածը, և Պարսից թագաւորների շնորհքը մեզ վերայ դարձրեց, որ մեզ հանգստութիւն տան մեր Աստուծոյ տունը կանգնեցնելու և նորա աւերակները վերականգնեցնելու և Յուդայում ու Երուսաղէմում մեզ մի պարսպաւոր տեղ տալու համար։ Եւ արդ՝ ի՞նչ ասենք, ով մեր Աստուած, այս բաներից յետոյ, որ մենք թողել 11 ենք քո պատուիրանքները, Որ քո ծառայ մարգարէների ձեռովը պատուիրեցիր ասելով. Այն երկիրը, ուր որ գնում էք նորան ժառանգելու համար, գարշելի երկիր է՝ երկիրների ազգերի գարշութիւններովը և նորանց պղծութիւններովը, որոնցով լցրել են նորան ծայրէ ի ծայր իրանց անմաքրութիւնովը։ Ուրեմն ձեր 12 աղջկերքը չ'տաք նորանց որդկանցը, և նորանց աղջկերքը չ'առնէք ձեր որդկանց համար, և նորանց խաղաղութիւնը և բարութիւնը չ'ուզէք յաւիտեան, որպէս զի զօրանաք և ուտէք երկրի բարիքը, և ձեր որդկանց համար յաւիտեան ժառանգութիւն թողէք նորան։ Եւ այս բոլորը մեր 13 չար գործքերի և մեր մեծ յանցանքի պատճառով մեզ վերայ գալուց յետոյ (թէպէտ և դու, ով մեր Աստուած, մեզ խնայել ես մեր անօրէնութիւնից շատ և մեզ այսպէս փրկուածներ ես տուել). Արդե՞օք կրկին քո պատ- 14 ուիրանքները զանց անենք, և այս գարշելի ազգերի հետ խնամութիւն անենք. մի՞թէ չես բարկանալ մեզ վերայ, որ մեզ սպառես մինչև որ մնացորդ և փրկուած չ'լինի։ Ով Տէր Աստուած 15 Իսրայէլի, դու արդար ես. որովհետև մենք մինչև այսօր փրկուած մնացինք. ահա մենք քո առաջին ենք մեր յանցանքովը, թէև այս պատճառով քո առաջին կանգնել չի լինիլ։

ԳԼ. Ժ

Երբոր Եզրասը լացով և Ա- 1 ստուծոյ տան առաջը ընկած աղօթք էր անում և խոստովանվում, նորա մօտ ժողովուեցան Իսրայէլից մի շատ մեծ բազմութիւն՝ մարդիկ և կանայք և երեխայք. որովհետև ժողովուրդն էլ էր շատ լաց լինում։ Եւ Եղամի որդիներից՝ Յեքիէլի որդին Սեքենիան 2 պատասխան տուաւ Եզրասին և ասեց. Մենք մեղք գործեցինք մեր Աստուծոյ դէմ երկրիս ժողովուրդներիցն օտար կիներ առնելով. բայց և այնպէս յոյս կայ Իսրայէլի համար այս բանի մէջ։ Արդ ուխտ անենք մեր Աստուծոյ առաջին, որ դուրս անենք բոլոր կիները և նորանցից ծնուածները՝ իմ տիրոջ և մեր Աստուծոյ պատուիրանքներից վախեցողների խորհրդովը. և թող օրէն- 4 քին պէս կատարուի։ Վեր կաց. որովհետև այս գործը քեզ վերայ է, և մենք էլ քեզ հետ ենք. զօրացիր և արա։

5 Եւ Եզրասը վեր կացաւ և երդում տուաւ քահանաների և Ղևտացիների գլխաւորներին և բոլոր Իսրայէլին, թէ այս բանի պէս կ'անեն. և նորանք երդում 6 արին։ Եւ Եզրասը վեր կացաւ Աստուծոյ տան առաջից և գնաց Եղիասիրի որդի Յօհանանի սենեակը, և այնտեղ գնալով հաց չ'կերաւ և ջուր չ'խմեց, որովհետև տրտմած էր գերութիւնից դարձածների անօրէնութեան վե- 7 րայ։ Եւ մունետիկ կանչել տուին Յուդայի և Երուսաղէմի մէջ բոլոր գերեդարձներին որ ժողով- 8 ուին Երուսաղէմ. Եւ ամեն ով որ իշխանների և ծերերի խորհրդին համեմատ երեք օրում չ'գայ, նորա բոլոր ստացուածքը պէտք է նզովուի և նա պէտք է ջոկուի 9 գերեդարձների ժողովքիցը։ Եւ Յուդայի ու Բենիամինի բոլոր մարդիկը ժողովուեցան Երուսաղէմ երեք օրում՝ այսինքն իններորդ ամսում և ամսի քսանին, և բոլոր ժողովուրդը նստեց Աստուծոյ տան հրապարակումը դողալով այն բանի մասին և անձ- 10 րևներիցը։ Եւ վեր կացաւ Եզրաս քահանան և ասեց նորանց. Դուք անօրէնութիւն էք գործել և օտար կիներ էք առել Իսրայէլի յանցանքը աւելացնելու համար։ Բայց հիմա խոստո- 11 վանուեցէք ձեր հայրերի Տէր Աստուծոյ առաջին և նորան հաճելին արէք, և ջոկուեցէք երկրիս ազգերիցը և օտար կնիկներիցը։

12 Եւ բոլոր ժողովքը պատասխանեց և ասեցին մեծ ձայնով. Այդպէս, քո խօսքին համեմատ մեր 13 պարտքն է անել։ Միայն ժողովուրդը շատ է և ժամանակս էլ անձրևային, և կարելի չէ դրսումը կանգնել, և այդ գործը մէկ օրուայ և երկու օրուայ բան չէ, որովհետև շատերս յանցաւոր 14 ենք այդ բանում։ Հիմա մեր իշխանները կանգնեն բոլոր ժողովքի տեղ, և ամեն ով որ մեր քաղաքներումը օտար կիներ է առել թող որոշեալ ժամանակներին գայ, և նորանց հետ իւրաքանչիւր քաղաքի ծերերը և նորա դատաւորները, մինչև որ մեր Աստուծոյ բարկութեան բորբոքումը մեզանից ետ դարձնեն այս բանի մասին։

Միայն Ասայէլի որդի Յովնա- 15 թանը և Թեկուայի որդի Յազիան կանգնեցին սորա վերայ, և Մեսուղամը ու Ղևտացի Սաբեթան նորանց օգնեցին։ Եւ գե- 16 րեդարձներն այնպէս արին. և ընտրուեցան Եզրաս քահանան և տոհմապետ մարդիկ իրանց տոհմերին համեմատ (և ամենքն էլ անուանի էին). և նիստ ունեցան տասներորդ ամսուայ առաջին օրն այս բանը քննելու համար. Եւ 17 վերջացրին բոլոր մարդկանց բաները որ օտար կիներ էին առել մինչև առաջին ամսուայ առաջին օրը։

Եւ քահանաների որդիներից 18 սորանք գտնուեցան որոնք օտար կանայք էին առել, Յովսեդեկեան Յեսուի որդիներից և եղբայրներից՝ Մաասիան, Եղիազարը, Յարիբը և Գոդոզիան. Եւ ի- 19 րանց ձեռքը տուին որ իրանց կանանցը արձակեն, և իրանց յանցանքի համար մէկ խոյ յանցանքի զոհ մատուցրին։ Եւ Եմմերի 20 որդկանցից՝ Անանին և Զաբադիան, Եւ Հարիմի որդկանցից՝ Մա- 21 ասիան, Եղիան, Սեմայիան, Յեքիէլը և Ոզիան. Եւ Փասուրի 22 որդկանցից՝ Եղիովէնային, Մաասիան, Իսմայէլը, Նաթանայէլը, Յովզաբադը, և Եղեասան. Եւ 23 Ղևտացիներից՝ Յովզաբադը, Սեմէին, Կովզիան, այսինքն Կովզիտան, Փեթայիան, Յուդան և Եղիազարը. Եւ երգեցողներից՝ Եղիասիբը. և դռնապաններից՝ Սեղղումը, Տէլէմը և Ուրին. Եւ Իս- 25 րայէլից՝ Փարոսի որդկանցից՝ Ռամիան, Յեզիան, Մեղքիան, Միամինը, Եղիազարը, Մեղքիան և Բանեան. Եւ Եղամի որդիներից՝ 26

Մաթանիան, Զաքարիան, Յեքե-
լիը, Աբդին, Յերիմովթը և Եղի-
27 ան. Եւ Զաթուէ որդկանցից՝ Եղի-
ովէնային, Եղիասիբը, Մաթանի-
ան, Յերիմովթը, Զաբադը և Ա-
28 զիզան. Եւ Բեբայի որդկանցից՝
Յօհանանը, Անանիան, Զաբբան,
29 Աթլային. Եւ Բանիի որդկան-
ցից՝ Մեեռուլամը, Մալուքը, Ա-
դայիան, Յասուբը, Սաղը և
30 Իամովթը. Եւ Փաահ – Մովաբի
որդկանցից՝ Եդնան, Քաղէլը,
Բանեան, Մաասիան, Մաթանի-
ան, Բեսելիէլը, Բանուին և Մա-
31 նասէն. Եւ Հարիմի որդկանցից՝
Եղիազարը, Յեսիան, Մելգիան,
32 Սեմայիան, Շմաւոնը, Բենհամինը,
33 Մալուքը, Եւ Սամարիան. Հասու-
մի որդկանցից՝ Մաթանան, Զա-
բադը, Եղիփաղէտը, Յերեմին,
Մանասէն Եւ Սեմէին. Բանիի 34
որդկանցից՝ Մաադան, Ամրամը,
Ուէլը, Բանեան, Բադայիան, Քե- 35
ղուհան, Ուանիան, Մեռամոթը, 36
Եղիասիբը, Մաթանիան, Մաթա- 37
նան, Յասաուն, Բանին, Բանուին, 38
Սեմէին, Սեղեմիան, Նաթանը, 39
Ադայիան, Մաքնադբան, Սասան, 40
Սարան, Ազարէլը, Սեղեմիան, 41
Սամարիան, Սեզոնամը, Ամոբի- 42
ան Եւ Յովսէփը. Նաբաւի որդ- 43
կանցից՝ Յեիէլը, Մատաթիան,
Զաբադը, Զերինան, Յադային,
Յովէլը Եւ Բանեան, Սարանը ա- 44
մէնքը օտար կիներ էին առել.
և Նորանցից կային այնպիսի կա-
նայք, որ զաւակներ էին բերել,

ՆԷՀԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Աքաղիայի որդի Նէհեմիայի խօս-
քերը։

Եւ եղաւ Քասղև ամսուն Ա-
րտաշէս Բ-ի-րդ թագաւորի քսաներորդ տա-
րին, որ ես Շուշան միրաքաղա-
2 քումն էի, եւ իմ եղբայրներից
մէկը՝ Անանին և Յուդայից մի
քանի մարդիկ եկան. և ես նո-
րանց հարցրի այն ազատուած Հր-
էակաների մասին, որ մնացել էին
գերութիւնից, և Երուսաղէմի
3 մասին։ Եւ նորանք ինձ ասացին.
Այն մնացորդները, որ մնացին գե-
րութիւնից, այնտեղ գաւառու-
մը մեծ նեղութեան և անարգու-
թեան մէջ են, և Երուսաղէմի
պարիսպները քանդուած և նորա
դռնները կրակով այրուած են։
4 Եւ երբոր ես այս խօսքերը լսե-
ցի նստեցի և լացի և սուգ արի
մի քանի օր. և ծոմ պահեցի ու
աղօթք էի անում երկնքի Ա-
ստուծոյ առաջին. Եւ ասում էի. 5
Ով Տէր՝ երկնքի Աստուած, մեծ
և ահեղ Աստուած, որ ուխտ և
ողորմութիւն ես պահում քեզ
սիրողներին և քո պատուիրանք- 6
ները պահողներին. Ազաչում եմ՝
ականջ դիր և աչքերդ բաց լի-
նին քո ծառայի աղօթքը լսելու,
որ ես հիմա աղօթում եմ քո
առաջին ցերեկ և գիշեր քո Իս-
րայէլի որդի՝ ծառաներիդ հա-
մար, և խոստովանում եմ Իս-
րայէլի որդկանց մեղքերը որ քեզ
դէմ մեղանչեցինք. ես էլ և իմ
հօր տունն էլ մեղանչել ենք։ Ի- 7
րաւ չանցաւոր ենք քեզ դէմ,
և չենք պահել այն պատուի-
րանքները և կանոնները ու իրա-
ւունքները, որ դու պատուիրե-
ցիր քո Մովսէս ծառային։ Սա- 8
կայն յիշիր այն խօսքը որ պատ-
ուիրեցիր Մովսէս ծառայիդ ա-
սելով. Եթէ դուք յանցանք գոր-
ծէք, ես ձեզ կ'ցրուեմ ազգերի
9 մէջ, Եւ Իրէ ես դառնաք դէպի
ինձ և պահէք իմ պատուիրանք-
ները և կատարէք նորանց, թէ որ
ձեր աքսորուածները երկնքի ծայ-
րումն էլ լինին, այնտեղից կ'ժո-
ղովեմ և նորանց կ'բերեմ այն
տեղը որ ես ընտրել եմ իմ ա-
10 նունն այնտեղ բնակեցնելու։ Եւ
ահա նորանք քո ծառաներն ու
քո ժողովուրդն են, որ ազատե-
ցիր քո մեծ ուժովը և քո զօրա-
11 ւոր բազուկովը։ Ո՛Տէր, ականջ
դիր ծառայիդ աղօթքին և ծա-
ռաներիդ աղօթքին, որ սիրում
են քո անունից վախենալը. և
յաջողութիւն տուր այսօր քո
ծառային, և ինձ ողորմութիւն
գտնել տուր այս մարդի առաջին։
Եւ ես թագաւորի մատառուկն
էի։

ԳԼ. Բ

1 Եւ եղաւ Նիսան ամսուն՝ Ար-
տաշէս թագաւորի քսաներորդ
տարին, որ գինի կար նորա առա-
ջին. և ես առայ գինին և տուի
թագաւորին. և ես նորա առա-
2 ջին տրտում եղած չէի։ Եւ թա-
գաւորն ասեց ինձ. Ինչու հա-
մար է երեսդ տրտում, քանի որ
դու հիւանդ չես. սա ուրիշ ոչինչ
չէ եթէ ոչ սրտի ցաւ. և ես խիա
չատ վախեցայ։ Եւ ասեցի թա-
գաւորին. Արքայ, յաւիտեան
կաց. Ինչու համար չ'տրտմի իմ
երեսը, որ իմ հայրերի գերեզ-
մանատան քաղաքը աւերակ է և
նորա դռնները կրակով այրուել
4 են, Եւ թագաւորն ինձ ասեց.
Ինչ է քո ուզածը. և ես աղօթք
5 արի երկնքի Աստուծուն, Եւ ես
ասեցի թագաւորին. Եթէ թա-
գաւորին հաճելի է, և եթէ ծա-
ռադ հաճելի է քո առաջին,
ինձ ուղարկիր Հրէաստան իմ
հայրերի գերեզմանատան քաղա-
6 քը, որ ես շինեմ նորան։ Եւ ինձ
ասեց թագաւորը (և թագուհին
նստել էր նորա կողքին), մինչև
ե՞րբ կ'տևէ քո գնալը, և ե՞րբ
կ'դառնաս։ Եւ հաճելի եղաւ
թագաւորի առաջին որ ինձ ու-
ղարկէ, և ես նորան ժամանակ
որոշեցի։ Եւ ասեցի թագաւորին. 7
Եթէ հաճելի է թագաւորին,
թող ինձ նամակներ տրուին գե-
տի այն կողմի իշխանների վերայ,
որ ինձ անցկացնեն մինչև որ հաս-
նեմ Հրէաստան. Եւ մի նամակ 8
թագաւորական պարտէզի տե-
սուչ Ասափի վերայ, որ ինձ փայտ
տայ Ապռանոյ տան աշտարակի
դռները և քաղաքի պարիսպների
դռները ծածկելու համար և այն
տան համար ուր որ ես պիտի
գնամ. և թագաւորը տուաւ
ինձ, որովհետև Աստուծոյ բարի
ձեռքն ինձ վերայ էր։

Եւ ես եկայ գետի այս կողմի 9
իշխանների մօտ և թագաւորի
նամակները նորանց տուի. և թա-
գաւորն ինձ հետ զօրապետներ և
ձիաւորներ ուղարկեց։ Եւ երբոր 10
Սանաբաղատ Որանացին և Ամմո-
նացի ծառայ Տոբիան լսեցին,
խիստ շատ նեղացան, որ մի մարդ
է եկել Իսրայէլի որդկանց բա- 11
րիքը ուզելու։ Եւ ես եկայ Ե-
րուսաղէմ, և երեք օր այնտեղ
մնացի։

Եւ ես վեր կացայ գիշերը և մի 12
քիչ մարդիկ ինձ հետ, և ոչ մի
մարդի չ'պատմեցի թէ իմ Աստ-
ուածն ինչ է դրել իմ սրտումը
որ Երուսաղէմին անեմ, և մէկ
անասուն չ'կար ինձ հետ բացի
իմ հեծած անասունից։ Եւ ես 13
դուրս եկայ Զորի դռնովը գիշե-
րով և ջրաղբի դէպի վիշապի աղ-
բիւրը և դէպի Աղրի դուռը, և
զննեցի Երուսաղէմի քանդուած
պարիսպները և նորա կրակով այ-
րուած դռները։ Եւ անցկացայ 14
Աղբիւրի դուռը և թագաւորի
ուղեանը. և տակիս անասունի
համար տեղ չ'կար անցնելու։ Եւ 15
գիշերը վեր գնացի հեղեղատովը
և զննեցի պարիսպը. և ես դա-
ռնայ ու մտայ Զորի դռնովը և
ետ դառայ։ Եւ ոստիկանները 16
չ'իմացան թէ ուր գնացի և թէ
ես ինչ եմ անում. և Հրէաներ-
ին և քահանաներին ու ազնուա-
րին և քահանաներին ու ոստի-
կաններին և
միւս գործը կատարողներին մին-

չև այն ժամանակ չէի իմացրել։
17 Եւ ես նորանց ասեցի. Գուք տեսնում էք այս թշուառութիւնը, որի մէջ մենք կանք, որ Երուսաղէմն աւերակ և նորա դռները կրակով այրուած են. եկէք Երուսաղէմի պարիսպը շինենք, որ այլ ևս նախատինք չլինինք։
18 Նրանք ես նորանց պատմեցի որ իմ Աստուծոյ ձեռքը բնաւ վերայ բարեյաջող է, և մանաւանդ թագաւորի խօսքերը որ ինձ ասել էր. և նորանք ասեցին. Վեր կենանք և շինենք. և իրանց ձեռքերն ուժովացրին այս բարի գործի համար։
19 Եւ Որոնացի Սանաբաղատը ու Ամմոնացի ծառայ Տուբիան և Արաբացի Գեսամը այս լսելով մեզ ծաղր արին և մեզ արհամարհեցին և ասեցին. Սա ինչ բան է որ անում էք. մի՞թէ ապստամբվում էք թագաւորի դէմ։ Բայց ես նորանց պատասխան տուի և ասեցի նորանց. Երկնքի Աստուածն ինքը մեզ յաջողութիւն է տալու, և մենք նորա ծառաներս վեր ենք կենալու որ շինենք. իսկ դուք բաժին, իրաւունք և յիշատակ չունիք Երուսաղէմում։

Գլ. Գ

1 Եւ վեր կացան Եղիասիբ մեծ քահանան և նորա եղբարք քահանաները և շինեցին Ոչխարաց դուռը, նորանք նուիրեցին նորան և նորա դռները կանգնեցրին և նուիրեցին մինչև Մէային աշտարակը՝ մինչև Անանէլի աշտարակը։
2 Եւ նորա մօտ շինեցին Երիքովի մարդիկը, և նորա մօտ
3 շինեց Իմրիի որդի Զաքուրը։ Եւ Ձկանց դուռը շինեցին Սենասայի որդիքը, նորանք ծածկեցին նորան և կանգնեցրին նորա դռները, կղպանքները և նիգերը։
4 Եւ նորանց մօտ նորոգեց Ակկուսի որդիի Ուրիայի որդի Մերամոթը, և նորանց մօտ նորոգեց Մաոսիզբեելի որդիի Բարաքիայի որդի Մեսուղամը. և նորանց մօտ նորոգեց Բաանայի որդի Սադովկը։
5 Եւ նորանց մօտ նորոգեցին Թեկուացիք. բայց նորանց երևելիներն իրանց վզերը չ'տուին իրանց Տիրոջ ծառայութեանը։
6 Եւ Հին դուռը նորոգեցին Փասէի որդի Յովիադան և Բեսոդիայի որդի Մեսուղամը. նորանք ծածկեցին նորան և կանգնեցրին նորա դռները, կղպանքները և նիգերը։
7 Եւ նորանց մօտ նորոգեցին Գաբաւոնացի Մելատիան և Մերոնոթացի Յադոնը և Գաբաւոնի ու Մասփայի մարդիկը մինչև Գահի այս կողմի իշխանի աթոռը։
8 Նորա մօտ նորոգեց ոսկերիչներից Հարհայիայի որդի Ոզիէլը, և նորա մօտ նորոգեց դեղագործների որդի Անանիան, և Երուսաղէմը ետ թողեցին մինչեւ լայն պարիսպը։
9 Եւ նորանց մօտ նորոգեց Ովրի որդի Հուրափայիան Երուսաղէմի կէս բաժնի իշխանը։
10 Եւ նորանց մօտ նորոգեց Հարումափի որդի Յեդայիան նաև իր տան դիմացը. և նորա մօտ նորոգեց Ասաբանէիայի որդի Հաստուսը։
11 Միւս մասը նորոգեցին Հարիմի որդի Մելքիան և Փահաթ–Մովաբի որդի Ասուբը՝ նաև փուռերի աշտարակը։
12 Եւ նորա մօտ նորոգեցին Աղոեսի որդի Սեղղումը՝ Երուսաղէմի կէս բաժնի իշխանը՝ ինքը և իր աղջիկները։
13 Զորի դուռը նորոգեցին Անոնը և Զանովի բնակիչները, նորանք շինեցին նորան և նորա դռները կանգնեցրին և նուիրեցին մինչև Մէային աշտարակը՝ մինչև Անանէլի աշտարակը։
14 Եւ Աղբից դուռը նորոգեց Բեթհաքարմայի բաժնի իշխան Ռեքաբի որդի Մելքիան. նա շինեց նորան և կանգնեցրեց նորա դռները, կղպանքները և նիգերը։
15 Եւ Աղբիւրի դուռը նորոգեց Մասփայի բաժնի իշխան Քոլոզէի որդի Սեղղունը, նա շինեց նորան և ծածկեց, և կանգնեցրեց նորա դռները, կղպանքները և նիգերը, նաև Սելովայի աւազանի պարիսպը Թագաւորի պարտէզի մօտից մինչև Դաւթի քաղաքից իջնող աստիճանները։ Նորանից յետոյ նորոգեց Եմմերի որդի Սադովկը իր տան դիմացը. և նորանից յետոյ նորոգեց Սեքենիայի որդի Սեմայիան արևելեան դռան պահապանը։ Նորանից յետոյ նորոգեցին Սեղեմիայի որդի Անանիան և Սեղեփի վեցերորդ որդի Անոնը միւս մասը. նորանից յետոյ նորոգեց Բարաքիայի որդի Մեսուղամը իր սենեակի դիմացը։
31 Նորանից յետոյ նորոգեց ոսկերչի որդի Մելքիան մինչև Նաթանայիմների և վաճառականների տունը մինչև Մափկադի դռան դիմացը և մինչև անկեան վերնատունը։
32 Եւ անկեան վերնատան ու Ոչխարաց դռան մէջտեղը նորոգեցին ոսկերիչները և վաճառականները։

Գլ. Դ

1 Եւ երբոր Սանաբաղատը լսեց որ մենք պարիսպը շինում ենք, բարկացաւ և շատ զայրացաւ և ծաղր արաւ Հրեաներին.
2 Եւ ասեց իր եղբարցը Սամարիայի զօրքի առաջին և խօսեց Թէ ինչ են շինում այս թշուառ Հրեաները. մի՞թէ թոյլ կ'տան նորանց. մի՞թէ զոհ են մատուցանելու. մի՞թէ այսօր վերջացնելու են. մի՞թէ կենդանացնելու են քարերը փոշիի դէզերից քանի որ նորանք այրուած են։
3 Եւ Ամմոնացի Տուբիան նորա կողմն էր և ասեց. Եթէ նորանց շինածի վերայ մի աղուէս էլ վեր երնէ, նորանց քարի պարիսպն կ'քանդէ։
4 Լսիր, ով մեր Աստուած, որ նախատուեցանք, և նորանց նախատինքը դարձրու նորանց գլխին և նորանց մասնիր աւար լինելու դերութեան երկրում։
5 Եւ մի ծածկիր նորանց անօրէնութիւնը, և նորանց մեղքը չ'ընջուի քո առաջին, որովհետև բարկացրին շինողների առաջին։
6 Եւ պարիսպը շինեցինք, և բոլոր պարիսպը շրջափակուեցաւ մինչև կէսը. և ժողովուրդը սիրտ արաւ գործելու։
7 Եւ երբոր լսեցին Սանաբաղատ

տը և Տուբիան և Արաբացիք և
Ամմոնացիք և Ազովտացիք, որ Ե-
րուսաղէմի պարիսպները վերա-
նորոգվում են և քանդուած տե-
ղերը սկսուել են կարկատուիլ,
8 շատ բարկացան։ Եւ ամենքը մի-
աբանուեցան միասին, որ գան Ե-
րուսաղէմի դէմ պատերազմեն և
9 նորան վնաս տան։ Բայց մենք ա-
ղօթք արինք մեր Աստուծուն, և
պահապաններ դրինք նորանց
պատճառով նորանց դէմ ցերեկ
10 և գիշեր։ Եւ Հրէաներն ասեցին.
Բեռնակիրների ոյժը թուլացել
է, և հողը շատ է. և մենք չենք
կարողանում պարիսպը շինել։
11 Բայց մեր թշնամիքն ասում էին
Թէ Չ'իմանան և չ'տեսնեն մինչև
որ մտնենք նորանց մէջ և նորանց
12 սպանենք և գործը խափանենք։ Եւ
երբոր նորանց մօտակայքումը բը-
նակող Հրէաները մեզ մօտ եկան
և տասն անգամ մեզ ասեցին ա-
մեն տեղերից, Թէ Ետ դարձէք
13 Եկէք մեզ մօտ, Այն ժամանակ
ես ցած տեղերումը պարսպի ետ-
քին չոր տեղերը դրի, այսինքն
կանգնեցրի ժողովուրդը տոհմե-
րի համեմատ իրանց սուրերովը,
14 նիզակներովը և աղեղներովը։ Եւ
նայեցի ու վեր կացայ և ասեցի
իշխաններին և ոստիկաններին ու
մնացած ժողովրդին. Նորանց ե-
րեսիցը մի վախենաք, յիշեցէք
մեծ և ահեղ Տիրոջը, և պատե-
րազմեցէք ձեր եղբայրների, ձեր
որդկանց ու ձեր աղջկանց, ձեր
կանանց և ձեր տների համար։
15 Եւ երբոր մեր թշնամիքը լսե-
ցին, որ մենք իմացել ենք, և Թէ
Աստուած ցրուել է նորանց խոր-
հուրդը, մենք ամենքս ետ դա-
ռանք դէպի պարիսպն ամեն մարդ
16 իր գործին։ Եւ այն օրիցն ի վեր
իմ մարդկանց կէսը գործն էր
գործում, և նորանց կէսը նի-
զակներն ու ասպարներն ու ա-
ղեղները և զրահներն էին բռ-
նում. և իշխանները Յուդայի բո-
17 լոր տան ետևին կանգնել էին։ Պա-
րիսպը շինողները և բեռնակիր-
ները, որ բեռն իրանց վերայ էին
բեռնում, մէկ ձեռքովը գործն
էին գործում, իսկ միւս ձեռքը
զէնքն էր բռնած։ Եւ շինողների 18
ամեն մէկը սուրը մէջքին կա-
պած բան էր անում, և փողա-
հարն իմ կշտին էր։ Եւ ես ա- 19
սեցի իշխաններին և ոստիկաննե-
րին ու մնացած ժողովրդին. Այս
գործը մեծ և ընդարձակ է. և
մենք ցրուած ենք պարսպի վերայ
միմիանցից հեռու։ Որտեղ որ տեղ 20
որ լսէք փողի ձայնը, այնտեղ
ժողովուեցէք մեզ մօտ, մեր Աստ-
ուածը պատերազմելու է մեզ
համար։ Եւ այսպէս մենք գործը 21
գործում էինք. և կէսը նիզակ-
ներն էին բռնած արշալոյսը ծա-
գելուց մինչև աստղերի երևալը։
Այն ժամանակ ասա էլ ասեցի ժո- 22
ղովրդին. Որ ամեն մարդ իր ծա-
ռայի հետ գիշերը Երուսաղէ-
մումը մնայ, որ գիշերները մեզ
համար պահապանութիւն անեն
և ցերեկը գործեն։ Եւ ես ու իմ 23
եղբայրները և իմ ծառաները և
իմ ետևից եկող պահապան մար-
դիկը՝ ամենքս մեր հանդերձները
չէինք հանում, բացի ամեն մարդ
ջուրը ուղարկելուց։

ԳԼ. Ե

Եւ ժողովրդի ու նորանց կա- 1
նանց աղաղակը մեծ էր իրանց
Հրէայ եղբայրների դէմ։ Եւ կա- 2
յին ասողներ Թէ Մենք մեր տը-
ղերքովն ու աղջկերքովը շատ ենք,
և ուտելիք ծախու կ'առնենք և
կ'ուտենք ու կ'ապրենք։ Եւ ա- 3
սողներ էլ կային Թէ Մեր ար-
տերը, այգիները և տները գրաւ
ենք դնում որ ուտելիք առնենք
սովի ժամանակ։ Եւ ասողներ էլ 4
կային Թէ Մենք փող ենք պարտք
անում Թագաւորի հարկի հա-
մար մեր արտերովը և մեր այ-
գիներովը։ Եւ արդ մեր մարմինը 5
մեր եղբարց մարմնի պէս է, մեր
որդիքը նորանց որդկանց պէս, և
ահա մենք մեր որդիքն ու աղջ-
կերքը ծառայութեան ենք հպա-
տակացնում, և մեր աղջիկներից
ոմանք հպատակուած են. և մեր
ձեռքին կարողութիւն չ'կայ, ո-

րովհետև մեր արտերն ու այգի-
ներն ուրիշներինն են։
6 Եւ ես շատ նեղացայ, երբոր
նորանց աղաղակը և այս խօսքե-
7 րը լսեցի. Եւ իմ սրտումը խոր-
հեցի և յանդիմանեցի իշխաննե-
րին և ոստիկաններին և ասեցի
նորանց. Դուք ամեն մէկդ վաշխ
էք առնում ձեր եղբայրներից. և
նորանց դէմ մեծ ժողովք կազ-
8 մեցի. Եւ նորանց ասեցի. Մենք
ծախու առել ենք մեր Հրէայ
եղբայրներին, որ ծախուած էին
հեթանոսներին, որքան որ կա-
րող էինք, բայց դուք ծախում
էք ձեր եղբայրներին. և նորանք
մեզ վերայ ծախուի՞ն։ Իսկ նո-
րանք լռեցին և պատասխան չը
9 գտան։ Եւ ես ասեցի. Լաւ չէ
այս բանը որ դուք անում էք.
մի՞թէ պիտի մեր Աստուծոյ եր-
կիւղովը չ'գնաք, որ մեր թշնամի
ազգերի առաջին խայտառակ չը
10 լինինք։ Եւ ես էլ, եղբայրներս
ու ծառաներս էլ նորանց փող
և ցորեն ենք փոխ տուել. եկէք
այս պարտքը նորանց շնորհենք։
11 Խնդրում եմ, այսօր նորանց ար-
տերն իրանց ետ դարձրէք, նո-
րանց այգիները, ձիթենիներն ու
տները, և հարիւրից մէկը նո-
րանցից ձեզ հասնելի արծաթը,
12 ցորենը, գինին և իւղն էլ։ Եւ
նորանք ասեցին. Ետ ենք դար-
ձնում, նորանցից չենք ուզիլ.
այնպէս կ'անենք ինչպէս որ դու
ասում ես։ Եւ ես կանչեցի քա-
հանաներին, և նորանց երդում
13 տալ տուի որ այսպէս անեն։ Եւ
ես թափ տուի իմ ծոցը և ա-
սեցի. Աստուած այսպէս թափ
տայ ամեն մարդին իր տանիցն ու
իր աշխատանքիցը, ով որ այս
խօսքը չ'պահէ, և նա այսպէս
թափ տրուած և դարտակ լինի։
Եւ բոլոր ժողովքն ասեցին. Ա-
մէն. և օրհնեցին Տիրոջը. և ժո-
ղովուրդն այսպէս արաւ։
14 Նաև այն օրիցը, որ ինձ հրա-
մայեց Թագաւորը որ նորանց իշ-
խանը լինիմ Հրէաստանում Ար-
տաշէս Թագաւորի քսաներորդ
տարիից մինչև երեսունևերկրորդ
տարին՝ տասնևերկու տարի ես և
իմ եղբարքը իշխանական հացը
չ'կերանք։ Եւ նախորդ իշխաննե- 15
րը, որոնք ինձանից առաջ եղել
էին, ժողովրդին ծանրութիւն է-
ին տուել, և նորանցից հաց և
գինի էին առնում բացի քառա-
սուն սիկղ արծաթից. Նաև նո-
րանց ծառաները տիրում էին ժո-
ղովրդի վերայ. բայց ես այդպէս
չ'արի Աստուածանից վախենալով։
Նաև այս պարսպի գործումը ես 16
ջանացի. և արտ ծախու չ'առինք,
և իմ ամեն ծառաները ժողով-
ուած էին այնտեղ այն գործի
վերայ։ Եւ հարիւր յիսուն Հրէայ 17
և ոստիկան և մեր շրջակայքում
եղող ազգերից մեզ մօտ եկող-
ներ լինում էին իմ սեղանի վե-
րայ։ Եւ ահա ինչ էր պատրաստ- 18
վում մէկ օրը՝ մէկ արջառ, վեց
ընտիր ոչխար, և թռչուններ էին
պատրաստվում ինձ համար. և
տասն օրուայ մէջ ամեն տեսակ
գինի առատութեամբ. և այսու ա-
մենայնիւ իշխանական հացը չ'ու-
զեցի. որովհետև ծառայութիւնը
ծանր էր այս ժողովրդի վերայ։
Յիշիր ինձ ի բարին, ով իմ Աստ- 19
ուած, ամեն ինչ որ արի այս ժո-
ղովրդի համար։

ԳԼ. Զ

Եւ երբոր Սանաբաղատը, Տու- 1
բիան և Արաբացի Գեսամը և մեր
միւս թշնամիքը լսեցին, որ ես
պարիսպը շինեցի, և նորանում
քանդուած տեղ չէ մնացել (Թէև
մինչև այն ժամանակ դռների
փեղկերը չէի կանգնեցրել), Այն 2
ժամանակ Սանաբաղատը և Գե-
սամը մարդ ուղարկեցին ինձ մօտ
և ասեցին. Եկ միասին տեսակ-
ցուինք Ովնովի դաշտումը՝ գիւ-
ղերումը. բայց նորանք մտածում
էին որ ինձ չարութիւն անեն։
Եւ ես նորանց մօտ պատգամա- 3
ւորներ ուղարկեցի ասելով. Ես
մեծ գործով զբաղուած եմ, և
չեմ կարող իջնել. ի՞նչու համար
գործը դադարէ, երբոր ես ձգեմ
նորան և իջնեմ ձեզ մօտ։ Բայց 4

Նորանք այս բանովը չորս անգամ ինձ մատ ուղարկեցին, և ես նորանց նոյն խօսքը պատասխանեցի, և Սանաբաղատան այս բանովը հինգերորդ անգամ իր ծառային ինձ մատ ուղարկեց, և մի բաց նամակ նորա ձեռքին, նորանում գրուած էր Աղդերի մէջ լավում է և գեսամն ասում է, որ դու և Հրէաները խորհում էք ապստամբուել. դու նորա համար ես պարիսպը շինում. և դու ուզում ես որ նորանց թագաւորը լինիս. այսպիսի խօսքերի պէս։ Նաև մարգարէներ ես դրել որ քո մասին քարոզեն Երուսաղէմում ասելով. Թագաւոր Հրէաստանում. և արդ այսպիսի խօսքեր պիտի հասանեն թագաւորին. ուրեմն եկ միասին տեսակցութիւն։ և ես ղրկ ուղարկեցի նորա մատ և ասեցի. Այդպիսի բաներ չկան, որ դու ասում ես. այլ դու քո սրտիցն ես հնարել դորան։ Որովհետև նորանք ամենքը մեզ վախեցնում էին, ասելով նորանց ձեռքերը կ'թուլանայ այդ գործիքը և չի կատարուիլ։ Բայց դու, -Ե Ա-ր-ա-ք-ա-մ, զօրացրու իմ ձեռքերը։

Եւ ես եկայ Մեհաբէլի որդիի Դաղալիայի որդի Սեմայիայի տունը, որ ֆրէլ կողպուել էր. և նա ասեց. Գնանք միասին Աստուծոյ տունը՝ տաճարը և տաճարի դռները գոցենք. որովհետև գալիս են որ քեզ սպանեն, և գիշերով գալու են որ քեզ սպանեն։ Եւ նեն։ Եւ ես ասեցի. Մի՞թէ ինձ նման մարդը կ'փախչի. և ինձ նման ո՞րը կ'գնայ տաճարը որ ողջ մնայ. ես չեմ գնալ։ Եւ ես դիտեցի, որ ահա Աստուած չէր նորան ուղարկել. այլ այս մարգարէութիւնը խօսեց ինձ վերայ նորա համար որ Տոբիան և Սանաբաղատը նորան վարձել էին, նորա համար էր նա վարձուել, որպէս զի ես վախենամ, և այնպէս անեմ ու յանցաւոր լինիմ. և սա նորանց համար -ՒՒ լինի իմ անունը վատաբանելու որ ինձ նախատեն։ Յիշիր, ով իմ Աստուած, Տոբիային և Սանաբաղատին իրանց այս գործերի համեմատ. նաև Նովադիա մարգարէուհիին և միւս մարգարէներին որ ինձ վախեցնում էին։

Եւ պարիսպը լրացաւ Իլուլի քսաներհինգին՝ հիսուն երկու օրուայ մէջ։ Եւ երբոր մեր բոլոր թշնամիքը լսեցին, վախեցան մեր շուրջը գտնուող բոլոր ազգերը. և շատ ցածացան իրանց աչքերի առաջին և իմացան, որ մեր Աստուածանից եղաւ այս բանը։

Նաև այն օրերը Յուդայի ազնուականները շատ նամակներ էին գրում, որ գնում էին Տոբիային. և Տոբիայինները գալիս էին նորանց։ Որովհետև շատերը էին Յուդայում որ նորա հետ երդումով կապուած էին, որովհետև նա Արահի որդի Սեքենիայի փեսան էր. և նորա որդի Յօհանան առել էր Բարաքիայի որդի Մեսուղամի աղջիկը։ Նաև նորա լաւութիւնները ասում էին իմ առաջին, և իմ խօսքերը ասում էին նորան. Տոբիան նամակներ էր ուղարկում ինձ վախեցնելու։

ԳԼ. Ե

Եւ եղաւ երբոր պարիսպը շինուեցաւ, և ես դռնները կանգնեցրի, և դռնապաններ ու երգեցողներ և Ղեւտացիներ դրուեցան, իմ եղբայր Անանիին և աշտարակի իշխան Անանիային, որ Հաւատարիմ մարդ է և Աստուածանից երկիւղած աւելի քան թէ շատերը, պատուիրեցի Երուսաղէմի մասին, և ասեցի նորանց. Երուսաղէմի դռները չբացուին մինչև արեգակի տաքանալը, և դեռ իրանք -ՒՒՒՒ կանգնած. դռները գոցեն և կողպեն. և պահապանները դնեն Երուսաղէմի բնակիչներին ամեն մարդ իր պահապանութիւնով և ամեն մարդ իր տան դիմացը։

Եւ քաղաքը ընդարձակ և մեծ էր, բայց մէջի ժողովուրդը քիչ էր. և տուներ չհնուած չէր, և իմ Աստուածն իմ սիրտը դրեց, որ ժողովեմ իշխաններին, ոստիկաններին և ժողովրդին որ արձանագրուին, և մի ազգաբանութեան գիրք գտայ առաջին անգամ ՒՒՒ-Ի եկողների մասին, և նորանում գրուած գտայ.

Սրանք են գաւառի բնակիչները որ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորի տարած գերութիւնից ելել են, և ետ են դառել Երուսաղէմ և Հրէաստան՝ ամեն մարդ իր քաղաքը։ Որ եկան Զօրաբաբելի, Յեսուի, Նեհեմիայի, Ազարիայի, Ռաամիայի, Նահմանիի, Մուրթքէի, Բաղաւանի, Մասիսարաթի, Բագուէի, Նաւումի և Բաանայի հետ։ Իսրայէլի ժողովրդի մարդկանց թիւը։ Փարոսի որդիքը երկու հազար հարիւր եօթանասունևերկու։ Սափատիայի որդիքը երեք հարիւր եօթանասունևերկու։ Արահի որդիքը վեց հարիւր յիսունևերկու։ Փահաթ-Մովաբի որդիքը՝ Յեսուի և Յովաբի որդիներից երկու հազար ութը հարիւր տասներկու։ Ելամի որդիքը հազար երկու հարիւր յիսունևչորս։ Զաթուի որդիքը ութը հարիւր քառասունևհինգ։ Զաքքայի որդիքը եօթը հարիւր վաթսունև։ Բանուիի որդիքը վեց հարիւր քառասունևութը։ Բեբայիի որդիքը վեց հարիւր քսանևութը։ Ազգադի որդիքը երկու հազար երեք հարիւր քսանևերկու։ Ադոնիկամի որդիքը վեց հարիւր վաթսունևեօթը։ Բագուէի որդիքը երկու հազար եօթանասունևհինգ։ Ադինի որդիքը վեց հարիւր հիսունևչորս։ Ատերի որդիքը՝ Եզեկիայից իննսունևութը։ Հասումի որդիքը երեք հարիւր քսանևութը։ Բեսէի որդիքը երեք հարիւր քսանևչորս։ Աբիփի որդիքը հարիւր տասնևերկու։ Գաբաւոնի որդիքը իննսունևհինգ։ Հինգ։ Բեթլեհէմի ու Նետոփացի մարդիկը հարիւր ութսունևութը։ Անաթոթիի մարդիկը հարիւր քսանևութը։ Ազմաթի տան մարդիկը քառասունևերկու։ Կարիաթարիմի, Քեփիրայի ու Բեերոթի մարդիկը եօթը հարիւր քառասունևերեք։ Յամայի եւ Գաբայի մարդիկը վեց հարիւր քսանևմէկ։ Մաքմասի մարդիկը հարիւր քսանևերկու։ Բեթէլի և Գայիի մարդիկը հարիւր քսանևերեք։ Միւս Նաբաւի մարդիկը հիսունևերկու։ Միւս Եղամի մարդիկը հազար երկու հարիւր յիսունևչորս։ Հարիմի որդիքը երեք հարիւր քսան։ Երիքովի որդիքը երեք հարիւր քառասունևհինգ։ Ղովդի, Ադիդի և Ովնովի որդիքը եօթը հարիւր քսանևմէկ։ Սենաայի որդիքը երեք հազար ինը հարիւր երեսուն։

Քահանաները՝ Յեսուի տունից՝ Յեդայիայի որդիքը ինը հարիւր եօթանասունևերեք։ Իմմերի որդիքը հազար հիսունևերկու։ Փասուրի որդիքը հազար երկու հարիւր քառասունևեօթը։ Հարիմի որդիքը հազար տասնևեօթը։

Ղևտացիները՝ Ովդուհայի որդիքանցից Յեսուի և Կադմիելի որդիքը եօթանասունևչորս։

Երգեցողները՝ Ասափի որդիքը հարիւր քառասունևութը։

Դռնապանները՝ Սելղումի որդիքը, Ատերի որդիքը, Տելմանի որդիքը, Ակկուբի որդիքը, Ամատայի որդիքը, Սուբայի որդիքը հարիւր երեսունևութը։

Նաթանայիմները՝ Սիհայի որդիքը, Ասուպեի որդիքը, Տաբաոթի որդիքը, Կերոսի որդիքը, Սիհայի որդիքը, Փադոնի որդիքը, Ղեբանայի որդիքը, Ագաբայի որդիքը, Սաղամէի որդիքը, Անանի որդիքը, Գեդդելի որդիքը, Գաասրի որդիքը, Ռեհայիայի որդիքը, Ռասինի որդիքը, Նեկոդայի որդիքը, Գազամի որդիքը, Ոզազայի որդիքը, Փասեի որդիքը, Բասիի որդիքը, Մաւնիմի որդիքը, Բակբուկ որդիքը, Նեփուսիմի որդիքը, Բակբուկ որդիքը, Ակուբայի որդիքը, Ասրուրի որդիքը, Բասղոթի որդիքը, Մեհիդայի որդիքը, Ասրայի որդիքը, Բարկոսի որդիքը, Սիսարայի որդիքը, Թամայի որդիքը, Նեհսայի որդիքը, Ատեփայի որդիքը, Սողոմոնի ծառաների որդիքը։

դիքը՝ Սաուէի որդիքը, Սոփերաթի որդիքը, փարեդայի որդիքը.
38 Յեղայի որդիքը, Դերկոնի որդի-
59 քը, Գեդդելի որդիքը, Սափատիայի որդիքը, Ատտիլի որդիքը, փաքարաթ-սեբայիմի որդիքը, Ամմոնի որդիքը։ Բոլոր Նաթանայիմները և Սողոմոնի ծառաների որդիքը երեք հարիւր հինգսունեւերկու։
61 Եւ սորանք են Թելմելայից, Թելարսայից, Քերուբից, Ադդոնից և Եմմերից դուրս եկողները, և չկարողացան ցոյց տալ իրանց հայրերի տունը և իրանց սերունդը թէ Իսրայէլից են իրանք.
62 Դաղայիայի որդիքը, Տուբիայի որդիքը, Նեկոդայի որդիքը վեց հարիւր քառասունևերկու հոգի։
63 Եւ քահանաներից՝ Աբայիայի որդիքը, Ակկուսի որդիքը, Բերզելլի որդիքը, որ Գաղաադացի Բերզելլի աղջիկներից կին առնելով նորանց անունով կոչուեցաւ։ Սորանք որոնեցին իրանց տոմարագրութեան դիրքը, բայց չգտան. վասն որոյ և նորանց լուծեցին
65 քահանայութիւնից։ Եւ Աթարսաթան ասեց նորանց. որ ամենասուրբ բաներից չուտեն մինչև որ մի քահանայ վեր կենայ Ուրիմով և Թումմիմով։
66 Բոլոր ժողովքը մէկտեղ քառասունևերկու հազար երեք հարիւր վաթսուն հոգի էր։ Բացի նորանց ծառաներից և աղախիններից, որոնք եօթը հազար երեք հարիւր երեսունևեօթը հոգի էին. և նորանց հետ երկու հարիւր քառասունևհինգ երգիչներ և
68 երգչուհիներ կային։ Նորանց ձիերը՝ եօթը հարիւր երեսունևվեց. նորանց ջորիները՝ երկու հարիւր
69 քառասունևհինգ. Նորանց ուղտերը՝ չորս հարիւր երեսունևհինգ. էշերը վեց հազար եօթը հարիւր քսան էին։
70 Եւ բոլոր տոհմապետներից ոմանք գործի համար տուին. Աթարսաթան գանձին տուաւ հազար ոսկի դրամ, Յիսուն սկաւառակ, հինգ հարիւր երեսուն քահանայական պատմուճան։ Եւ տոհմապետներից ոմանք գործի գանձին տուին՝ քսան հազար ոսկի դրամ, երկու հազար երկու հարիւր մնաս արծաթ։ Եւ մնացած ժողովրդի տուածը՝ քսան հազար ոսկի դրամ և երկու հազար մնաս արծաթ, և վաթսունևեօթը քահանայական պատմուճան։ Եւ քահանաները, Ղեւտացիները, դռնապանները, երգեցողները, և ոմանք ժողովրդից, ու Նաթանայիմները և բոլոր Իսրայէլը բնակվում էին իրանց քաղաքներումը. և երբոր եօթներորդ ամիսը հասաւ, Իսրայէլի որդիքն իրանց քաղաքներումն էին։

Գլ. Ը

1 Եւ բոլոր ժողովուրդը ժողովուեցաւ մէկ մարդի պէս այն հրապարակը որ Ջրի դռան առաջին է, և ասեցին Եզրաս դպրին, որ Մովսէսի օրէնքի դիրքը բերէ, որ Տէրը հրամայեց Իսրայէլին։
2 Եւ Եզրաս քահանան բերաւ օրէնքը ժողովքի առաջին, որ բաղկացած էր մարդից մինչև կին և ամեն հասկանալու կարողութիւն ունեցողներից՝ եօթներորդ ամսուայ առաջին օրը։
3 Եւ կարդաց նորանից այն հրապարակում որ Ջրի դռան առաջին է, առաւօտից մինչև կէսօր մարդկանց, կանանց և հասկացողների առաջին. և բոլոր ժողովրդի ականջը դէպ
4 էր օրէնքի դրքին։ Եւ Եզրաս դպիրը կանգնած էր մի փայտի բեմի վերայ, որ շինել էին այս բանի համար և նորա մօտ կանգնել էին Մատաթիան, Սեմման, Անանիան, Ուրիան, Քեղկիան և Մասէիան աջ կողմին. և նորա ձախ կողմին՝ Փադայիան, Միսայէլը, Մեղքիան, Հասսումը, Աբդանան, Զաքարիան և Մեսուղամը։
5 Եւ Եզրասը բացաւ գիրքը բոլոր ժողովրդի աչքի առաջին, որովհետև ինքը բոլոր ժողովրդից վեր էր, և երբոր բացաւ, բոլոր
6 ժողովուրդը կանգնեց։ Եւ Եզ-

*Կամ՝ կուսակալը. Գլ. ը. 9։

րասն օրհնեց Եհովայ մեծ Աստուծուն. և բոլոր ժողովուրդը պատասխանեցին. Ամէն, Ամէն, իրանց ձեռքերը բարձրացնելով, և խոնարհուելով երեսի վերայ մինչև գետինը երկրպագութիւն
7 արին Տիրոջը։ Եւ Յեսուն, Բանին, Սարաբիան, Յամինը, Ակկուբը, Սաբեթան, Ոդդիան, Մասեիան, Կոլիտան, Ազարիան, Յովզաբադը, Անանը, Բաղայիան և Ղեւտացիք օրէնքը հասկացնում էին ժողովրդին. և ժողովուրդը
8 կանգնած էր իր տեղը։ Եւ կարդում էին Աստուծոյ օրէնքի գրքումը յստակ, և բացատրութիւն տալով հասկացնում էին կարդացածը։
9 Եւ Նէեմիան, որ է Աթարսաթան, և Եզրաս քահանան և դպիրը՝ և Ղեւտացիք որ ժողովրդին հասկացնում էին, ասեցին բոլոր ժողովրդին. Այս օրը սուրբ է ձեր Տէր Աստուծոյ համար, սուգ մի անէք և մի լաք, որովհետև բոլոր ժողովուրդը լաց էին լինում երբոր լսում էին օրէնքի
10 խօսքերը։ Եւ նորանց ասեց. Գնացէք՝ պարարտ բաներ կերէք և անոյշ բաներ խմեցէք, և բաժիններ ուղարկեցէք պատրաստութիւն չունեցողին. որովհետև այս օր սուրբ է մեր Տիրոջ համար. և մի տրտմիք, որովհետև Տիրոջ ուրախութիւնը ձեր զո-
11 րութիւնն է։ Եւ Ղեւտացիք լռեցրին բոլոր ժողովրդին՝ ասելով. Լռեցէք, որովհետև այս օր
12 սուրբ է, և մի տրտմիք։ Եւ բոլոր ժողովուրդը գնաց ուտելու, խմելու և բաժիններ ուղարկելու, և մեծ ուրախութիւն անելու, որովհետև հասկանում էին այն խօսքերը որ նորանց իմացնում էին։
13 Եւ երկրորդ օրը բոլոր ժողովրդի տոհմապետները, քահանաները և Ղեւտացիները ժողովուեցան Եզրաս դպրի մօտ, օրէնքի խօսքերը էլի հասկանալու համար։
14 Եւ գտան օրէնքումը գրուած, որ Տէրը պատուիրել էր Մովսէսի ձեռովը, թէ Իսրայէլի որդիքը եօթներորդ ամսին տաղաւարներում պիտի բնակուեն.
15 Եւ լուր տան և մանեակիկ կանչել տան նորանց բոլոր քաղաքներումը և Երուսաղէմումն ասելով. Ել էք սարը, և բերէք ձիթենիի ոստեր, և իւղի ծառի ոստեր, և մրտենիի ոստեր և արմաւենիների ոստեր և տերեւախիտ ծառերի ոստեր բերէք որ տաղաւարներ շինէք ինչպէս որ գրուած է։
16 Եւ գնացին ու իրանց համար տաղաւարներ շինեցին ամեն մարդ իր կտուրի վերայ և իրանց դաւիթներումը և Աստուծոյ տան գաւիթներումը, և Ջրի դռան հրապարակումը և Եփրեմի դռան հրապարակումը։
17 Եւ գերեվարութիւնից եկած ժողովքը տաղաւարներ շինեցին և տաղաւարներումը բնակուեցին. որովհետև Իսրայէլի որդիքը Նաւեան Յեսուի օրերից մինչև այն օրը այնպես չէին արել. և շատ մեծ
18 ուրախութիւն եղաւ։ Եւ կարդում էին Աստուծոյ օրէնքի գրքումը ամեն օր՝ առաջին օրից մինչև վերջին օրը, և եօթը օր տօն կատարեցին, և ութերորդ օրը հանդիսաւոր ժողով էր ըստ կանոնին։

Գլ. Թ

1 Եւ այս ամեն քսանևչորսերորդ օրը ժողովուեցան Իսրայէլի որդիքը ծոմով, քուրձերով և իրանց վերայ հող. Եւ Ջոկուեցան
2 Իսրայէլի սերունդ եղբայրները օտարազգիներից, և կանգնած խոստովանում էին իրանց մեղքերը և իրանց հայրերի անօրէնութիւնները. Եւ կանգնել էին
3 իրանց տեղը, և կարդացին իրանց Եհովայ Աստուծոյ օրէնքի գրքիցը օրեւայ քառորդը, և մի քառորդը խոստովանելում և երկրպագութիւն էին անում իրանց Տէր Աստուծուն։
4 Եւ բարձր տեղի վերայ կանգնել էին Յեսուն, Բանին, Կադմիելը, Սաբանիան, Բունին, Սա-

*Այլ՝ կուսակալը։

բաբէան, Բանին և Քենանին Ղևտացիները, և մեծ ձայնով աղաղակեմ դէպի իրանց Տէր Աստուածը։ Եւ Յեսուն, Կադմիէլը, Բանին, Ասաբանիան, Սաբաբիան, Ովդիան, Սաբանիան և Փեթահիան Ղևտացիները ասեցին. Վեր կացէք օրհնեցէք ձեր Տէր Աստուածն յաւիտեանս յաւիտենից։

Օրհնեալ լինի քո փառաւորեալ անունը, որ ամեն օրհնութիւնից և փառաբանութիւնից բարձրեալ է։ Դու՝ միայն դու ես Եհովայ. դու ստեղծեցիր երկինքը, երկինքների երկինքը և երկրի բոլոր զօրքերը, և բոլոր նորա վերայ եղածը, ծովերը և բոլոր նրանց մէջ եղածը և դու ես նրանց բոլորին կենդանութիւն տուողը, և երկնքի զօրքերը քեզ երկրպագութիւն են անում։ Դու ես Եհովայ Աստուածը, որ ընտրեցիր Աբրամին և նրան հանեցիր Քաղդէացիների Ուրից և նորա անունը Աբրահամ դրիր, Եւ նորա սիրտը հաւատարիմ գտար քո առաջին, և նորա հետ ուխտ արիր, որ տաս նորա սերունդին Քանանացիների, Քետացիների, Ամորհացիների, Փերեզացիների, Յեբուսացիների և Գերգեսացիների երկիրը. և քո խօսքը հաստատուցիր. որովհետև դու արդար ես։

Եւ տեսար մեր հայրերի նեղութիւնը Եգիպտոսում, և նրանց աղաղակը լսեցիր Կարմիր ծովի մօտ։ Եւ նշաններ ու հրաշքներ արիր Փարաւոնի վերայ և նորա բոլոր ծառաների և նորա երկրի բոլոր ժողովրդի վերայ. որովհետև գիտացիր որ ամբարտաւան եղան նրանց դէմ, և քեզ համար անուն հանեցիր՝ ինչպես որ այսօր կայ։ Եւ ծովը ճեղքեցիր նրանց առաջին, և նրանք անց կացան ծովի միջով ցամաքի վրայով, և նրանց հալածողներին խորտակեցիր՝ ինչպես քար՝ մեծ ջրերի մէջ։ Եւ ամպի սիւնով առաջնորդեցիր նրանց, և կրակի սիւնով գիշերը՝ որ լուսաւորէիր նրանց գնալու ճանապարհը։

Եւ վայր իջար Սինա սարի վերայ և խօսեցիր նրանց հետ երկնքիցը, և նրանց տուիր ուղիղ իրաւունքներ և ճշմարիտ օրէնքներ, բարի կանոններ և պատուիրանքներ։ Եւ քո սուրբ շաբաթը հռչակեցիր նրանց, և նրանց կանոններ և օրէնք պատուիրեցիր Մովսէս ծառայիդ ձեռովը։ Եւ երկնքիցը հաց տուիր նրանց՝ նրանք սովածանալիս, և նրանց համար ջուր հանեցիր ապառաժիցը՝ նրանք ծարաւելիս. և նրանց ասեցիր որ մտնեն և ժառանգեն այն երկիրը, որը նրանց տալու համար ձեռք բարձրացրել էիր։

Բայց նրանք և մեր հայրերը ամբարտաւանացան և խստացրին իրանց պարանոցը և չլսեցին քո պատուիրանքներին։ Եւ չուզեցին լսել և չյիշեցին քո հրաշքները, որ արել էիր նրանց մէջ, և խստացրին իրանց պարանոցը. և իրանց ապստամբութեամբը դէպի նշանակեցին որ ետ դառնան իրանց ծառայութեան մէջ. բայց դու ներող, ողորմած, գթած, երկայնամիտ և բազմողորմ Աստուած էիր և նրանց չլքեցիր. Մանաւանդ երբոր իրանց համար ձուլածոյ սրճի շինեցին և ասեցին. Սա է քո աստուածը, որ քեզ Եգիպտոսից հանել է. և մեծ անարգանք գործեցին։ Եւ դու քո մեծ ողորմութեամբը նրանց չլքեցիր անապատումը. ամպի սիւնը չհեռացաւ նրանց վերայից ցերեկը նրանց առաջնորդելով ճանապարհին, և կրակի սիւնը՝ գիշերը որ նրանց լոյս տայ և [illegible] այն ճանապարհը որ գնում էին։ Եւ քո բարի հոգին տուիր նրանց իմաստուն անելու համար. և քո մանանան չպարգևեցիր նրանց բերանիցը, և ջուր տուիր նրանց՝ նրանք ծարաւելիս։ Եւ քառասուն տարի նրանց կերակրեցիր անապատումը. նրանք պակասութիւն չունեցան, նրանց հագուստները չմաշուեցան, և ոտները չուռեցան։

Եւ նրանց տուիր թագաւորութիւններ և ազգեր, և նրանց բաժիններ տուիր սահմաններով, և նրանք ժառանգեցին Սեհոնի երկիրը և Եսբոն թագաւորի երկիրը, և Բասանի Ովգ թագաւորի երկիրը։ Եւ նրանց որդիքը շատացրիր երկնքի աստղերի չափ և նրանց բերիր այս երկիրը, որի համար ասել էիր նրանց հայրերին որ գան և ժառանգեն։ Եւ նրանց որդիքը եկան և ժառանգեցին այս երկիրը, և դու նուաճեցրիր նրանց առաջին այս երկրի բնակիչներին՝ քանանացիներին, և նրանց ձեռքը մատնեցիր նրանց, և նրանց թագաւորներին և երկրի ազգերին, որ իրանց հաճութեան պէս անէին նրանց։ Եւ նրանք ամուր քաղաքներ և պարարտ երկիր յաղթեցին, և ժառանգեցին ամեն բարիքով լիքը տներ, փորուած ջրհորներ, այգիներ, ձիթենիներ, և պաղաբեր ծառեր առատօրէն. և նրանք կերան, կըշտացան և պարարտացան, և զուարճացան քո մեծամեծ բարիքներովը։

Սակայն նրանք անհնազանդութիւն արին և ապստամբուեցան քեզ դէմ, և քո օրէնքն իրանց ետևը գցեցին, և սպանեցին քո մարգարէներին որ նրանց դէմ վկայում էին, որ դէպի քեզ դառնան. և մեծամեծ անարգանքներ արին։ Եւ դու նրանց մատնեցիր իրանց թշնամիների ձեռքը, և նրանք նեղացրին նրանց. և իրանց նեղութեան ժամանակին դէպի քեզ աղաղակեցին, և դու լսեցիր երկնքիցը, և դու քո շատ ողորմութեան համեմատ նրանց ազատիչներ տուիր, և նրանք ազատեցին նրանց իրանց թշնամիների ձեռքիցը։ Բայց երբոր նրանք հանգստութիւն ունեցան, դարձեալ չարութիւն արին քո առաջին, և դու նրանց թողեցիր իրանց թշնամիների ձեռքին, և նրանք տիրեցին նրանց վերայ. և դարձեալ դէպի քեզ աղաղակեցին, և դու երկնքից լսեցիր և նրանց ազատեցիր շատ անգամ քո ողորմութեան համեմատ, Եւ դու նրանց վկայեցիր, որ նրանց դարձնես դէպի քո օրէնքը, բայց նրանք ամբարտաւանացան և չլսեցին քո պատուէրներին և քո իրաւունքների դէմ մեղանչեցին, որոնց կատարող մարդը նրանցով կ'ապրէ. և իրանց ուսերը անհնազանդեցրին և իրանց վիզը խստացրին, և չլսեցին։ Եւ դու շատ տարիներ երկայնամիտ եղար նրանց վերայ, և վկայեցիր նրանց դէմ քո հոգուվը մարգարէների ձեռովը, բայց նրանք ականջ չդրին. և դու մատնեցիր նրանց երկիրների ազգերի ձեռքը։ Սակայն դու քո առատ ողորմութեամբը նրանց վերջ չարիր և նրանց չմոռացիր, որովհետև դու գթած և ողորմած Աստուած ես։

Եւ արդ, ով մեր Աստուած, մեծ, զօրաւոր և ահեղ ուխտ ու ողորմութիւն պահող Աստուած, թող քո առաջին քիչ չերևնան այն ամեն նեղութիւնները, որ պատահեցին մեզ, մեր թագաւորներին, մեր իշխաններին, մեր քահանաներին, մեր մարգարէներին, մեր հայրերին և քո բոլոր ժողովրդին Ասորեստանի թագաւորի ժամանակից մինչև այսօր, բայց դու արդար ես մեզ վերայ եկած բոլոր բաներուն, որովհետև դու ճշմարտութեամբ արիր, և մենք անօրէնութիւն արինք։ Եւ մեր թագաւորները, մեր իշխանները և մեր հայրերը չարին քո օրէնքը և ականջ չդրին քո պատուիրաններին և քո վկայութիւններին, որ նրանց դէմ վկայեցիր։ Եւ նրանք իրանց թագաւորելու ժամանակում, և քո նրանց շատ բարիքներ արած ժամանակում և այն բնդարձակ և պարարտ երկրում, որ տուել էիր նրանց, քեզ չծառայեցին և ետ չդարձան իրանց չար գործերիցը։ Ահա մենք

այսօր ծառաներ ենք, և ահա այն
երկրումը, որ տուիր մեր հայրե-
րին նորա պտուղը և բարիքը վա-
յելելու, մենք ծառաներ ենք։
37 Եւ նորա առատ արդիւնքը այն
թագաւորներինն է, որոնց դրել
ես մեզ վերայ մեր մեղքերի պատ-
ճառովը. և նորանք տիրում են
մեր մարմինների վերայ և մեր ա-
նասունների վերայ իրանց հա-
ճութեան պէս. և մենք մեծ ն-
38 եղութեան մէջ ենք։ Եւ այս ա-
մենի համար հաստատ ուխտե-
ցինք և գրեցինք, և կնքուածի
վերայ էին մեր իշխանները, Ղև-
տացիները և քահանաները։

ԳԼ. Ժ

1 Եւ կնքողներն էին՝ Աքաղիայի
որդի Նէեմիա *Աթարսաթան,
2 Սեդեկիան, Սարայիան, Ազարիան,
3 Երեմիան, Փասուրը, Ամարիան,
4 Մեղքիան, Քետտուսը, Սաբանի-
5 ան, Մալուքը, Հարիմը, Մերամօ-
6 թը, Աբդիան, Դանիէլը, Կանաթօ-
7 նը, Բարուքը, Մեսուղամը, Աբի-
8 ան, Միամինը, Մաազիան, Բեղ-
գան և Սեմայիան. սորանք քահա-
9 նաներն էին։ Եւ Ղևտացիք՝ Ազա-
նիայի որդի Յեսուն, Բանուն և Ե-
նադադի որդիներից Կադմիէլը.
10 Եւ նորանց եղբայրները Սաբանի-
ան, Ովդիան, Կովզիտան, Փաղա-
11 յիան, Անանը, Միքան, Բոսբը,
12 Ասաբիան, Զաքուրը, Սարաբիան,
13 Սաբանիան, Ովդիան, Բանին և
14 Բանինուն, Ժողովրդի գլխաւորնե-
րը՝ Փարոսը, Փաաթ-մովաբը, Ե-
15 ղամը, Զաթուն, Բանին, Բունին,
16 Ազգադը, Բեբային, Ադոնիան,
17 Բագուէն, Ադինը, Ատերը, Եզե-
18 կիան, Ազուրը, Ովդիան, Հասումը,
19 Բեսէին, Արիփը, Անաթովթը,
20 Նովբան, Մագփիասը, Մեսուղա-
21 մը, Եզիրը, Մասիզեբելը, Սադով-
22 կը, Յադդուան, Փաղատիան,
23 Անանը, Անանիան, Ովսէէն, Անա-
24 նիան, Ասուբը, Ալօէսը, Պիլան,
25 Սօբէկը, Հռէումը, Ասաբանան,
26 Մաասիան, Աքիան, Անանը,

*Կամ՝ կուսակալը

Օնանը, Մալուքը, Հարիմը և 27
Բաանան։
Եւ մնացած ժողովուրդը՝ քա- 28
հանաները, Ղևտացիները, դրռ-
նապանները, երգեցողները, Նա-
թանայիմները, և այն ամենքը որ
ջոկուել էին այն երկիրների ժո-
ղովուրդներից դէպի Աստուծոյ
օրէնքը, նորանց կանայքը, որդի-
քը և աղջկերքը՝ ամեն հասկանալ
կարողացողը, Միացան իրանց զօ- 29
րաւոր եղբայրների հետ և անէծ-
քով երդում արին, որ գնան Ա-
ստուծոյ օրէնքովը, որ նա տուաւ
Աստուծոյ ծառայ Մովսէսի ձե-
ռովը, և որ պահեն ու կատարեն
մեր Տիրոջ՝ Եհովայի բոլոր պատ-
ուէրները, իրաւունքները և կա-
նոնները. Եւ որ չ՛տանք մեր աղ- 30
ջիկները երկրի ազգերին, և նո-
րանց աղջիկները չ՛առնենք մեր
որդկանց համար. Եւ երկրի ժո- 31
ղովուրդներից, որոնք ապրանքներ
և ամեն տեսակ ուտելիք են բե-
րում շաբաթ օրը ծախելու, չ՛առ-
նենք շաբաթ և սուրբ օրը. և
եօթներորդ տարին երկիրը և ա-
մեն ձեռաց պարտքերը թողենք։
Եւ մեզ վերայ պատուէր դրինք՝ 32
որ մեզ վերայ պարտք համարենք
տարին մի երրորդ սիկղ վճարել
մեր Աստուծոյ տան պաշտօնի հա-
մար, Առաջաւորութեան հացի 33
համար, մշտնջենաւոր հացի ընծ-
այի համար, մշտնջենաւոր ող-
ջակէզի համար, շաբաթներին,
ամսագլուխներին, տօներին, և
սուրբ բաների համար և Իսրա-
յէլի քաւութեան մասին մեղքի
պատարագների համար, և մեր
Աստուծոյ տան բոլոր գործի հա-
մար։ Եւ վիճակ գցեցինք փայտի 34
ընծայի մասին՝ քահանաները,
Ղևտացիները և ժողովուրդը, որ
բերենք մեր Աստուծոյ տունը մեր
տոհմերին համեմատ իր որոշեալ
ժամանակներին տարուց տարի,
մեր Տէր Աստուծոյ սեղանի վե-
րայ վառելու համար ինչպէս որ
գրուած է օրէնքումը։ Եւ որ 35
տանենք մեր երկրի երախայրիքը
և ամեն պտղատու ծառի երա-
խայրիքը տարուց տարի Տիրոջ

36 տունը։ Եւ մեր որդկանց անդ-
րանիկները և մեր անասունների-
նը՝ ինչպէս որ գրուած է օրէն-
քումը, և մեր արջառների և ոչ-
խարների անդրանիկները տանենք
մեր Աստուծոյ տունը քահանա-
ներին, որ ծառայում են մեր
37 Աստուծոյ տանը. Եւ մեր խմոր-
ների երախայրիները, և մեր ընծ-
ծաները և ամեն ծառի պտուղը՝
գինին ու ձէթը տանենք քահա-
նաներին մեր Աստուծոյ տան
սենեակները, և մեր երկրի տա-
սանորդը Ղևտացիներին տանք, և
Ղևտացիք իրանք մեզանից տասա-
նորդ առնեն մեր ծառայութեան
38 բոլոր քաղաքներումը։ Եւ Ահա-
րօնի որդի քահանան՝ Ղևտացի-
ների հետ լինի Ղևտացիք տա-
սանորդը առնելիս. և Ղևտացիք
տասանորդի տասանորդը վեր տա-
նեն մեր Աստուծոյ տունը գան-
39 ձատան սենեակները. Որովհե-
տև այն սենեակները պիտի տա-
նեն Իսրայէլի որդիքը և Ղևիի
որդիքը ցորենի, գինիի և ձէթի
ընծաները, ուր որ են սրբարանի
անօթները, և պաշտօնեայ քա-
հանաներն ու դռնապանները և
երգեցողները. և մեր Աստուծոյ
տունը չ՛ձգենք։

ԳԼ. ԺԱ

1 Եւ բնակուեցին ժողովրդի իշ-
խանները Երուսաղէմումը. իսկ
մնացած ժողովուրդը վիճակ գը-
ցեցին, որ ժողովրդի մի տասնե-
րորդը բերեն Երուսաղէմ սուրբ
քաղաքումը բնակուելու, բայց
մնացեալ ինը մասը Թողէն քա-
2 ղաքներումը։ Եւ ժողովուրդն օրհ-
նեց այն ամեն մարդկանց, որ յօ-
ժարութեամբ համաձայնեցին բը-
3 նակուել Երուսաղէմումը։ Եւ սո-
րանք են այն գաւառի գլխաւոր-
ները, որ բնակուեցին Երուսաղէ-
մումը. բայց Յուդայի քաղաք-
ներում բնակվում էր ամեն մարդ
իր ստացուածքում իրանց քա-
ղաքներումը՝ Իսրայէլացիները,
քահանաները, Ղևտացիները,
Նաթանայիմները և Սողոմոնի ծա-
ռաների որդիները. Եւ Երուսա- 4
ղէմումը բնակուեցին Յուդայի
որդկանցից և Բենիամինի որդ-
կանցից՝
Յուդայեանք՝ Աթայիան՝ որդի
Ոզիայի, որդի Զաքարիայի, որդի
Ամարիայի, որդի Սափատիայի,
որդի Մաղազիէլի, Փարէսի որդ-
կանցից։ Եւ Մաասիան՝ որդի Բա- 5
րուքի, որդի Քոլոզէի, որդի Ա-
զայիայի, որդի Ադայիայի, որդի
Յովարիբի, որդի Զաքարիայի, որ-
դի Սիլօնիի։ Փարէսի որդկանցից 6
Երուսաղէմում բնակողների բո-
լորը չորս հարիւր վաթսունեւութը
քաջ մարդիկ էին։
Եւ սորանք են Բենիամինեան- 7
ները՝ Սալլուն որդի Մեսուղամի,
որդի Յովազի, որդի Փագայիայի,
որդի Կովզիայի, որդի Մաասիայի,
որդի Իթիէլի, որդի Եսայիայի.
Եւ նորանից յետոյ Գեբէին, Սե- 8
լէին, և այլն՝ ինը հարիւր քսան-
եւութը հոգի։ Եւ նորանց վերայ 9
իշխան էր Զեքրիի որդի Յովէլը.
և Սենուայի որդի Յուդան քա-
ղաքի վերայ տեղակալ էր։
Քահանաներից՝ Յովարիբի որդի 10
Յեդայիան, Յաքինը, Սարայիան՝ 11
որդի Քեզկիայի, որդի Մեսուղա-
մի, որդի Սագովկի, որդի Մարի-
օթի, որդի Աքիտովբի, Աստու-
ծոյ տան վերակացուն. Եւ նո- 12
րանց եղբայրները, որ տաճարի
գործը կատարում էին, ութը
հարիւր քսանեւերկու էին։ Եւ
Ադայիան՝ որդի Յերսամի, որդի
Փաղազիայի, որդի Ամասիի, որ-
դի Զաքարիայի, որդի Փասուրի,
որդի Մեղքիայի, Եւ նորա եղ- 13
բայրները՝ տոհմապետներ՝ երկու
հարիւր քառասունեւերկու էին։
Եւ Ամեսային՝ որդի Ազարիէլի,
որդի Ահզայի, որդի Մեսաղամօ-
թի, որդի Եմմերի, Եւ նորանց 14
եղբայրները՝ քաջազուններ՝ հար-
իւր քսանեւութը էին. և նորանց
վերայ իշխան Ագեդողեմի որդի
Զաբդիէլն էր։
Եւ Ղևտացիներից՝ Սեմայիան՝ 15
որդի Ասուբի, որդի Եզրիկամի,
որդի Ասաբիայի, որդի Բունիի,
Նաև Սաբեթան և Յովզաբադը 16

Ղևտացիների գլխաւորներից, որ Աստուծոյ տան արուեստին գործի
17 վերայ էին։ Եւ Մաթանիան՝ որդի Միքայէլի, որդի Զաբդիի, որդի Ասափի՝ գլխաւոր առաջնորդը օրհնաբանութեան աղօթքի ժամանակին. և Բակբուկիան երկրորդն էր իր եղբայրներից. և Աբդան՝ որդի Սամաւայէի, որդի
18 Գաղալի, որդի Իդիթունի, Բալը Ղևտացիները սուրբ քաղաքում երկու հարիւր ութսունևչորս էին։
19 Եւ դռնապանները Ակկուբը, Տեղմանը և նորանց եղբայրները որ պահպանում էին դռները, հարիւր եօթանասունևերկու էին։
20 Եւ մնացեալ Իսրայէլացիք՝ քահանաները և Ղևտացիները Յուդայի բոլոր քաղաքներումն էին ամեն մարդ իր ժառանգութեան
21 նում։ Բայց Նաթանայիմները բնակվում էին Ոփազում, և Սիհան ու Գիսպան Նաթանայիմ
22 Ների վերայ էին, և Երուսաղէմի Ղևտացիների իշխանն էր Ոզին՝ որդի Բանիի, որդի Ասաբիայի, որդի Մաթանիայի, որդի Միքայի, Ասափի որդիկանցից երգեցողներից, որ Աստուծոյ տան
23 գործի վերայ էին։ Որովհետև թագաւորը նորանց համար հրաման էր տուել, և ուշիկ նշանակ էր երգեցողներին իւրաքանչիւր
24 օրուայ համար։ Եւ Յուդայեան Զարայի որդկանցից Մասիզեբէլի որդի Փեթահիան թագաւորի *գործակալն էր ժողովրդի բոլոր գործերի մասին։
25 Եւ գիւղի գաւառների ու նորանց դաշտերի նկատմամբ՝ Յուդայի որդկանցից բնակվում էին Կարիաթ-արբայում և նորա գիւղերում, Դիբոնում և նորա գիւղերում, Կաբսեէլում և նորա
26 գաշտերում. Եւ Յեսուայում, Մօլադայում և Բեթ-փաղեթում,
27 Ասեր-սաւալում, Բերսաբէէում
28 և նորա գիւղերում, Սիկկլագում, Մեքոնայում և նորա գիւ-
29 ղերում, Ենոհմնում, Սարաս-

*Եբր. կշռին

30 յում, Յերիմութում, Զանովհում, Ոդողոմում և նորանց գիւղերում, Լաքիսում և նորա արաերում, Ազեկայում և նորա գիւղերում, և տեղաւորուեցան Բերսաբէէից մինչև Ենովմի ձորը։
31 Եւ Բենիամինի որդիքը՝ Գաբայից Մաքմաս, Այիա, Բեթէլ և նորա գիւղերը, Անաթովթ, Նոբ,
32 Անանիա, Հասոր, Ռամա, Գեթ-
33 թայիմ, Հադիդ, Սեբոյիմ, Նե-
34 բաղատ, Ղոդ, Ովնով և Գե-
35 քարաշիմ։
36 Եւ Ղևտացիներից՝ Յուդայի բաժիններից՝ Բենիամինում էին Յերուսաղէմ։

ԳԼ. ԺԲ

1 Եւ սորանք են այն քահանաները և Ղևտացիները որ Սաղաթիէլեան Զօրաբաբէլի և Յեսուի հետ դարձան եկան՝ Սարայիան, Ե-
2 րեմիան, Եզրասը, Ամարիան, Մա-
3 լուքը, Փեւտաւրը. Սեքենիան,
4 Հառեւմը, Մերամոթը, Ադդո-
5 վը, Կանաթոնը, Աբիան, Միա-
6 մինը, Մաովադիան, Բելգան, Սեմմայիան, Յոյարիբը, Յեդայիան,
7 Սալլուն, Ամոկը, Փելկիան, Յեդայիան. սորանք էին քահանաների գլխաւորներն իրանց եղբայրներով Յեսուի օրերին։
8 Եւ Ղևտացիները՝ Յեսուն, Բանուին, Կադմիելը, Սարաբիան, Յուդան, Մաթանիան. սա օրհնութիւնների վերայ էր իր եղ-
9 բայրներով։ Եւ նորանց եղբայրը Բակբուկիան և Ունին՝ նորանց առաջին իրանց կարգովը։
10 Եւ Յեսուն ծնեց Յովակիմին, և Յովակիմը ծնեց Եղիասիբին, և Եղիասիբը ծնեց Յովիադային,
11 և Յովիադան ծնեց Յոնաթանին, և Յոնաթանը ծնեց Յադդուային։
12 Եւ Յովակիմի օրերին տոհմապետ քահանաներն էին՝ Սարայիայից՝ Մարայիան, Երեմիայից՝ Անանիան, Եզրասից՝ Մեսուղամը,
13 Ամարիայից՝ Յոհանանը, Մալուքից՝ Յոնաթանը, Սեքանիայից՝
14 Յովսեփը, Հարիմից՝ Եղնան, Մա-
15 Յովսեփը, Հարիմից՝ Եղնան, Մա-

16 րիոթից՝ Բեղկան, Ադդովից՝ Զաքարիան, Կանաթոնից՝ Մեսուլամ,
17 ղամը, Աբիայից՝ Զիքրին, Մինիամինից՝ Մովադիայից՝ Փալտին,
18 Բելգայից՝ Սամուան, Սեմայիայից՝
19 յից՝ Յոնաթանը, Յովարիբից՝ Մաթանան, Յեդայիայից՝ Ոզին,
20 Սալլայից՝ Կալան, Ամոկից՝ Ե-
21 բերը, Փելկիայից՝ Ասաբիան, Յեդայիայից՝ Նաթանայէլը։
22 Ղևտացիները՝ տոհմապետները գրուեցան Եղիասիբի, Յովիադայի, Յոհանանի և Յադդուայի օրերին, և քահանաները Պարսից
23 Դարեհի Խ-ի-Ն-Ի-Ա-Ն-Ի Ղևտացի տոհմապետները գրուեցան ժամանակագրութեան գրքում մինչև Եղիասիբի որդի Յոհանա-
24 նի օրերը։ Եւ Ղևտացիների իշխաններն Ասաբիան, Սարաբիան և Կադմիելի որդի Յեսուն էին. և նորանց եղբայրները նորանց առաջին, որ օրհնեն և գովեն Աստուծոյ մարդ Դաւիթի հրամանին համեմատ դաս դասի դէմ։
25 Մաթանիան, Բակբուկիան, Աբդիան, Մեսուղամը, Տեղմանը և Ակկուբը դրան չտեմարանների վերայ պահապանութիւն էին ա-
26 նում։ Սորանք էին Յովսեդեկեան Յեսուի որդի Յովակիմի օրերում, և Ներեմիա կուսակալի և եղբայր քահանայ դպրի օրերում։
27 Եւ Երուսաղէմի պարսպի նաւակատիքին՝ որոնեցին Ղևտացիներին իրանց բոլոր տեղերից, որ նորանց բերեն Երուսաղէմ գոհութիւններով, երգով, ծնծղաներով, տաւիղներով և քնարներով նաւակատիք և ուրախու-
28 թիւն անելու համար։ Եւ ժողովուեցան երգեցողների որդիքը Երուսաղէմի շրջակայ կողմերից և Նետոփաթացիների գիւղերից,
29 ը, Եւ Բեթգադգաղից և Գաբայի և Ազմաւթի գաւառներից. որովհետև երգեցողներն իրանց համար գիւղեր էին շինել Երու-
30 սաղէմի շրջակայքում։ Եւ քահանաներն ու Ղևտացիները սրբեցին և դռները և պարիսպը։

Եւ ես Յուդայի իշխաններին 31
պարսպի վերայ հանեցի և երկու մեծ դաս գոհութիւն երգողներ կարգեցի. Դէպ պարսպի վերայ աջ կողմին Աղբից դռան մօտ.
Եւ նորա ետևից գնում էին Ով- 32
սէան և Յուդայի իշխանները կէսը, Եւ Ազարիան, Եզրասը, 33
Մեսուղամը, Յուդան, Բենիամին 34
և Սեմայիան և Երեմիան. Եւ 35
քահանաների որդիներից փող-
րով Զաքարիան՝ որդի Յոնաթանի, որդի Սեմայիայի, որդի Մաթանիայի, որդի Միքայիայի, որդի Զաքուրի, որդի Ասափի. Եւ 36
նորա եղբայրները Սեմայիան, Ազարիէլը, Միլալան, Գիլալան, Մաան, Նաթանայէլը, Յուդան և Անանին Աստուծոյ մարդ Դաւիթի նուագարաններով. և Եզ-
րաս գպիրը նորանց առաջին, Եւ 37
Աղբիւրի դռնովը, և նորանց դիմացը, վեր ելան Դաւիթի քաղաքի աստիճանների վերայ պարսպի աստիճանով վեր դէպի Դաւիթի տունը մինչև Ջրի դուռը դէպի արևելք, Եւ միւս երգողնե- 38
րի դասը գնում էին դէմ ու դէմ, և ես նորա ետևից, և ժողովրդի կէսը պարսպի վերայ փուռերի աշտարակից վեր մինչև լայն
պարիսպը, Եւ Եփրեմի դռան վե- 39
րից Հին դռան մօտով և Ձկան դռան մօտով, և Անանէլի աշտարակի և Մէայի աշտարակի մօտով մինչև Ոչխարաց դուռը, և կանգնեցին բանտի դռան, Եւ տող երգողների երկու 40
դասերը կանգնեցին Աստուծոյ տանը, ես էլ և ասպիկանների կէսը ինձ հետ, Եւ քահանաք 41
Եղիակիմը, Մասեիան, Մինիամինը, Միքիան, Եղիովենայիը, Զաքարիան, Անանիան փողերով, Եւ 42
Մասեիան, Սեմայիան, Եղիազարը, Ոզին, Յոհանանը, Մեղքիան, Եղամը և Եզերը, և երգեցողները երգեցին. և Յեզերը մեծաձայն երգեցին. և Յեզե- 43
րիան վերակացուն էր։ Եւ այն օրը մեծամեծ զոհեր մատուցին և ուրախացան, որովհետև Աստուած ուրախացրեց նորանց մեծ ուրախութեամբ, նաև կիներն

ու երեխաներն էլ էին ուրախա-
նում. և Երուսաղէմի ուրախու-
թիւնը հեռուից էր լսվում։
44 Եւ այն օրը մարդիկ որոշուե-
ցան շտեմարանների սենեակների
վերայ ընծաների, երախայրիների
և տասանորդների համար, որ նո-
րանց մէջ ժողովեն քաղաքների
ագարակներից քահանաների և
Ղևտացիների օրինաւոր բաժին-
ները, որովհետև Յուդան ուրա-
խութիւն ունէր քահանաների և
Ղևտացիների վերայ որ կանգնել
45 էին։ Եւ պահում էին իրանց
Աստուծոյ պահապանութիւնը և
մաքուրպահապանութիւնը, նոյն-
պէս և երգեցողները և դռնա-
պանները Դաւիթի հրամանին պէս
46 որի որդին է Սողոմոնը։ Որովհե-
տև վաղուց Դաւիթի և Ասափի
օրերին երգեցողների գլխաւոր
կար և Աստուծուն օրհնելու և
47 գովելու երգեր. Եւ բոլոր Իսրա-
յէլը Զօրաբաբէլի օրերին և Նէ-
եմիայի օրերին տալիս էին երգե-
ցողների և դռնապանների ամեն
օրուայ բաժինները. և սուրբ բա-
ները տալիս էին Ղևտացիներին, և
Ղևտացիներն էլ սուրբ բաները
տալիս էին Ահարօնի որդկանցը։

ԳԼ. ԺԳ

1 Այն օրը կարդացուեցաւ Մով-
սէսի գրքիցը ժողովրդի ականջ-
ներին, և նորանում գրուած գըտ-
նուեցաւ, որ յաւիտեան պիտի
Ամմոնացի և Մովաբացի չ'մտնէ
2 Աստուծոյ ժողովքի մէջ. Որով-
հետև չ'դիմաւորեցին Իսրայէլի
որդկանցը հացով և ջրով. այլ
Բաղաամին վարձեցին նորա դէմ
որ նորան անիծէ, բայց մեր Աստ-
ուածը անէծքը դարձրեց օրհ-
3 նութեան։ Եւ երբոր նորանք լը-
սեցին օէնքը, Իսրայէլից ամեն
խառնուրդը բաժանեցին։
4 Եւ սորանից առաջ մեր Աս-
տուծոյ տան սենեակի վերակա-
ցու Եղիասիբ քահանան՝ Տուբի-
5 այի ազգականը, Նորա համար մի
մեծ սենեակ էր շինել, ուր որ
առաջ դնում էին հացի նուէր-
ները, կնդրուկը և անօթները, և
ցորենի, գինիի և ձէթի տասա-
նորդները՝ Ղևտացիների, երգե-
ցողների և դռնապանների բաժի-
նը, նաև քահանաների ընծաներ-
ը։ Այս ամենի ժամանակին ես Ե- 6
րուսաղէմումը չէի, որովհետև ես
Բաբիլոնի Արտաշէս թագաւորի
երեսունևերկրոդ տարին գնացել
էի թագաւորի մօտ, և մի քանի
ժամանակից յետոյ կրկին հրաման
առայ թագաւորից, Եւ եկայ Ե- 7
րուսաղէմ ու իմացայ Եղիասիբի
արած չարութիւնը Տուբիայի նը-
կատմամբ, որ նորա համար մի սեն-
եակ էր շինել Աստուծոյ տան գա-
ւիթումը. Եւ ես շատ զայրացայ, 8
և դուրս տուի Տուբիայի տան
բոլոր կարասիքը այն սենեակից,
Եւ հրամայեցի որ մաքրեն սեն- 9
եակները, և դարձեալ այնտեղ
տարի Աստուծոյ տան անօթները
և հացի ընծան ու կնդրուկը։
Նաև իմացայ, որ Ղևտացիների 10
բաժինները չէին տրուել, և որ
Ղևտացիները և սպասաւորու-
թիւնն անող երգեցողները փա-
խել էին իրանց ագարակները։ Եւ 11
ես վիճեցի ոստիկանների հետ և
ասեցի. Ի՞նչու է Աստուծոյ տու-
նը թողուած. և ես Ղևտացիներին
ժողովեցի և նորանց հաստատեցի
իրանց տեղը։ Եւ բոլոր Յուդան 12
բերաւ ցորենի, գինիի և ձէթի
տասանորդը գանձատուն։ Եւ 13
ես գանձատունների վերայ գան-
ձապետ նշանակեցի Սեղեմիա քա-
հանային և Սադովկ դպրին և
Ղևտացիներից Փադայիային, և
նորանց օգնական՝ Մաթանիայի
որդիի Զաքուրի որդի Անանին.
որովհետև նորանք հաւատարիմ
էին համարվում, և նորանց գործն
էր որ իրանց եղբայրներին բաժին
տան։ Ով Աստուած իմ, յիշիր 14
ինձ սորա համար, և մի ջնջիր իմ
բարեգործութիւնները որ արի իմ
Աստուծոյ տանը և նորա ծառա-
յութիւնումը։
Այն օրերը տեսայ որ Հրէաս- 15
տանում շաբաթ օրը խաղող էին
կոխում և խուրձերը բերում է-
շերին բեռնում էին, նաև գինի,

խաղող և թուզ և ամեն տեսակ
բեռ, և բերում էին Երուսաղէմ
շաբաթ օրը. և ես յանդիմանե-
ցի նորանց իրանց ուտելիք ծախած
46 օրը։ Եւ նորա մէջ բնակող Տիւ-
րացիները ձուկ և ամեն տեսակ
ապրանք էին բերում և շաբաթ
օրը ծախում Յուդայի որդիներին
47 և Երուսաղէմումը։ Եւ ես կռիւ
արի Յուդայի ազնուականների
հետ և ասեցի նորանց. Սա ի՞նչ
չար բան է, որ դուք անում էք
48 և շաբաթ օրը պղծում էք։ Չէ՞
որ ձեր հայրերն էլ այդպէս ա-
րին, և մեր Աստուածը մեզ վե-
րայ և այս քաղաքի վերայ բե-
րաւ այս բոլոր չարիքը, և դուք
բարկութիւն էք աւելացնում Իս-
րայէլի վերայ շաբաթը պղծելով։
49 Եւ երբոր մթնում էր Երուսա-
ղէմի դռներումը՝ շաբաթից ա-
ռաջ, այն ժամանակ հրամայե-
ցի, որ դռները գոցեն, և հրա-
մայեցի որ նորանց չ'բանան մին-
չև շաբաթ օրուայ վերջը. և իմ
ծառաներից դրի դռների վերայ,
որ բեռ ներս չ'մտնէ շաբաթ օրը։
20 Եւ վաճառականները և ամեն տե-
սակ ապրանք ծախողները մէկ և
երկու անգամ գիշերը Երուսա-
21 ղէմի դրսումը մնացին։ Եւ ես նո-
րանց յանդիմանեցի ասելով.
Դուք ի՞նչու համար էք գիշերը
պարսպի առաջին մնում. եթէ
մէկ անգամ էլ այդպէս անէք,
ես ձեռք կը բարձրացնեմ ձեզ
վերայ. այն ժամանակից հետ
22 այլ ևս չ'եկան շաբաթ օրը։ Եւ
Ղևտացիներին հրամայեցի որ սըր-
բուին ու գան դռներումը պա-
հապանութիւն անեն, շաբաթ
օրը սրբելու համար. սա էլ յի-
շիր ինձ համար, ով իմ Աստ-
ուած, և ինձ ողորմիր քո մեծ
ողորմութեան համեմատ։

Նաև այն օրերը տեսայ որ Հր- 23
էաները Ազովտացի, Ամմոնացի,
Մովաբացի կիներ էին առել. Եւ 24
նորանց որդկանցից կէսը խօսում
էր Ազովտացիների լեզուն, բայց
Հրէարէն խօսել չ'գիտէին. և խօ-
սում էին այս և այն ազգի լեզուո-
վը։ Եւ ես նորանց հետ կռիւ արի 25
և նորանց նզովեցի, և նորանցից
մի քանի մարդկանց էլ ծեծեցի
և նորանց մազերը փետեցի, և նո-
րանց երդում տուի Աստուծով,
թէ Ձեր աղջիկները նորանց որդ-
կանցը չ'տաք, և նորանց աղջիկ-
ներից չ'առնէք ձեր որդկանց հա-
մար և ձեզ համար։ Չէ՞ որ սորա- 26
նով մեղանչեց Իսրայէլի Սողոմոն
թագաւորը, թէև շատ ազգերում
նորա նման թագաւոր չ'կար, և
սիրելի էր իր Աստուծուն, և Աստ-
ուած նորան բոլոր Իսրայէլի վե-
րայ թագաւոր էր շինել, սակայն
օտարազգի կիները նորան էլ մե-
ղանչել տուին։ Եւ ձեզ նկատ- 27
մամբ սա լսուելու բան է՞, որ այս
մեծ չարութիւնը անէք և Աս-
տուծոյ դէմ ապստամբուէք օ-
տարազգի կիներ առնելով։ Եւ 28
մեծ քահանայ Եղիասիբի որդի
Յովիադայի որդկանցից մէկը Որո-
նացի Սանաբաղատի փեսան էր.
և նորան դուրս արի իմ կշտից։
Ով իմ Աստուած, նորանց յի- 29
շիր, որ պղծեցին քահանայու-
թիւնը և քահանայութեան և
Ղևտացիների ուխտը։ Եւ այսպէս 30
նորանց մաքրեցի բոլոր օտարազ-
գիներից, և քահանաների ու Ղև-
տացիների համար պաշտօնները
նշանակեցի՝ ամեն մարդի համար
իր գործը. Նաև փայտի ընծան 31
էր որոշուած ժամանակներին և
երախայրիքը։ Ով Աստուած իմ,
յիշիր ինձ ի բարին։

ԵՍԹԵՐԻ ԳԻՐՔԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ Ասուերոսի՝ այսինքն Հընդ-
կաստանից մինչև Եթովպիոյ հար-
իւր քսանևեօթը դաւառի վերայ
թագաւորող Ասուերոսի, օրե-
2 րումն եղաւ, Որ այն օրերումը
երբոր Ասուերոս թագաւորը նըս-
տած էր իր աթոռի վերայ, որ Շու-
3 շան մայրաքաղաքումն է, Իր թա-
գաւորութեան երրորդ տարին
խնջոյք արաւ իր իշխանների և ծա-
ռաների համար, երբոր Պարսից
և Մարաց զօրքը, նախարարները
և դաւառների իշխանները նորա
4 առաջին էին, Ցոյց տալով իր
թագաւորութեան մեծ հարըս-
տութիւնը և իր մեծութեան փա-
ռաւոր շքեղութիւնը շատ օրեր՝
այսինքն հարիւր ութսուն օր։
5 Եւ երբոր այն օրերը լրացան,
այն ժամանակ թագաւորը Շու-
շան մայրաքաղաքում գտնուող
բոլոր ժողովրդի համար մեծից
մինչև փոքրի համար խնջոյք ա-
րաւ եօթն օր թագաւորական
պալատի պարտէզի դաւիթումը.
6 Սպիտակ բեհեզներից և կերպա-
սից ու կապուտակից վարագոյրներ՝
որ պնդացրած էին բարակ քը-
թանի և ծիրանեդոյնի լարերով,
արծաթի օղակներով մարմարիոնի
սիւներից, ոսկի և արծաթի նստա-
րաններ կային զմրխտաքարի և սպի-
տակ մարմարիոնի, աղաբաստրի և
սև մարմարիոնի սալայատակի վե-
7 րայ։ Եւ խմելիքները տրվում էին
ոսկի անօթներով, և անօթները
միմիանցից տարբեր էին. և թա-
գաւորի դինին առատ էր ինչպէս
8 որ թագաւորին կ'վայելէ։ Եւ խմե-
լը կանոնաւոր էր, բռնադատող
չ'կար. որովհետև թագաւորն
այսպէս էր հրամայել իր տան
բոլոր վերակացուներին, որ նո-
րանք ամեն մէկի ուզածին պէս
9 անեն։ Վաշթի թագուհին էլ
կանանց խնջոյք արաւ Ասուերոս
թագաւորի պալատումը։
Եօթներորդ օրը՝ երբոր թա- 10
գաւորի սիրտը գինիով զուար-
թացել էր, ասեց այն եօթը ներ-
քինիներին՝ Մէհումանին, Բիզ-
թային, Արբոնային, Բիգթային,
Աբագթային, Զեթարին և Քար-
քասին, որ ծառայում էին Ա-
ուերոս թագաւորի առաջին, Որ 11
բերեն Վաշթի թագուհիին ար-
քայական թագով թագաւորի
առաջը, որ ժողովուրդներն ու իշ-
խանները տեսնեն նորա գեղեց-
կութիւնը, որովհետև տեսքով
գեղեցիկ էր։ Բայց Վաշթի թա- 12
գուհին մերժեց գնալ թագաւո-
րի խօսքովը, որ ներքինիների ձե-
ռով ասել էր. և թագաւորը շատ
բարկացաւ, և նորա բորբոքումը
վառուեցաւ նորանում։
Եւ թագաւորն ասեց ժամա- 13
նակագէտ իմաստուններին. (ո-
րովհետև այսպէս են թագաւորի
գործերը, որ բերում էր ամեն օ-
րէնք և իրաւունք գիտացողների
առաջը. Եւ նորա մերձաւորներն 14
էին Կարսենան, Սեթարը, Ադմա-
թան, Թարսիսը, Մերեսը, Մար-
սենան և Մեմուքանը, Պարսից և
Մարաց եօթն իշխանները, որոնք
տեսնում էին թագաւորի երեսը
և նստում էին թագաւորութեան
առաջին աստիճանում.) Օրէն- 15
քին համեմատ ի՞նչ պէտք է ա-
նել Վաշթի թագուհիին, որով-
հետև Ասուերոս թագաւորի հը-
րամանը չ'կատարեց, որ ուղարկել
էր ներքինիների ձեռով։
Եւ Մեմուքանն ասեց թագա- 16
ւորի և իշխանների առաջին. Վաշ-
թի թագուհին ոչ թէ միայն
թագաւորի դէմ է յանցանք գոր-
ծել, այլ բոլոր իշխանների և այն
բոլոր ազգերի դէմ, որ Ասուե-
րոս թագաւորի բոլոր դաւառնե-
րումն են։ Որովհետև թագուհիի 17

արարքը տարածուելու է բոլոր
կանանց մէջ, և նորանք անար-
գելու են իրանց մարդկանցն՝ ա-
սելով թէ Ասուերոս թագաւորը
հրամայեց Վաշթի թագուհիին
բերել իր առաջը, բայց նա չ'գը-
18 նաց։ Եւ այսօր Պարսից և Մա-
րաց տիկինները, որ լսեն թագու-
հիի արարքը, նոյնը պիտի ասեն
թագաւորի ամեն իշխաններին. և
շատ անարգանք և խռովութիւն
19 պիտի լինի։ Եթէ թագաւորին
հաճելի է, թող նորա կողմից
հրովարտակ հրատարակուի և
գրուի Պարսից և Մարաց օրէն-
քումը որ ետ չ'դառնայ, թէ
Վաշթին Ասուերոս թագաւորի
առաջը չ'գայ, և թագաւորը նո-
րա թագուհութիւնը նորանից մի
20 առաւել լաւին տայ։ Եւ երբոր
լսուի թագաւորի պատգամը, որ
հրամայուած է նորա ընդարձակ
բոլոր թագաւորութեան մէջ,
այն ժամանակ բոլոր կնիկները
պատիւ կ'տան իրանց մարդկանցը
մեծիցը մինչև փոքրը։
21 Եւ այս խօսքը հաճելի երևե-
ցաւ թագաւորին և իշխաններին,
և թագաւորը Մեմուքանի խօս-
22 քին համեմատ արաւ։ Եւ թա-
գաւորը նամակներ ուղարկեց բո-
լոր դաւառներին՝ ամեն մէկ դա-
ւառին իր գրովը և ամեն մէկ ազ-
գին իր լեզուովը, որ ամեն մարդ
իր տան մէջ տէր լինի, և իր ժո-
ղովրդի լեզուովը խօսի։

ԳԼ. Բ

1 Այս բաներից յետոյ, երբոր
Ասուերոս թագաւորի բարկու-
թիւնը նստել էր, յիշեց Վաշ-
թիին և նորա արածը և նորա
2 դէմ եղած վճիռը։ Եւ թագա-
ւորին սպասաւորող ծառաներն
ասեցին. Թագաւորի համար գե-
ղեցկագէմ կոյս աղջիկներ թող
3 որոնեն. Եւ թագաւորը թող իր
թագաւորութեան բոլոր դաւառ-
ներումը վերակացուներ դնէ, որ
ամեն գեղեցկագէմ կոյս աղջիկ
բերեն Շուշան մայրաքաղաքը կա-
նանց պալատը կանանց պահա-
պան թագաւորի ներքինի Հեգէի
ձեռքի տակ ժողովեն, և տան
նորանց մաքրութիւնների պիտոյ-
ները։ Եւ այն աղջիկը, որ թագա- 4
ւորի աչքին հաճելի լինի, թա-
գուհի դառնայ Վաշթիի տեղը։
Եւ այս բանը հաճելի երևեցաւ
թագաւորին, և նա այնպէս արաւ։
Մէկ Հրէայ մարդ կար Շու- 5
շան մայրաքաղաքում, և նորա
անունն էր Մուրթքէ՝ որդի Յա-
յիրի, որդի Սեմէիի, որդի Բենի-
ամինեան Կիսի. Որ գերի էր տար- 6
ուած Երուսաղէմից այն գերինե-
րի հետ, որ Յուդայի Յեքոնիա
թագաւորի հետ գերի տարուե-
ցան, որոնց գերի տարաւ Բաբի-
լոնի Նաբուգոդոնոսոր թագաւո-
րը։ Եւ նա սնուցանում էր իր 7
հօրեղբօր աղջիկ Ադասային այս-
ինքն Եսթերին. որովհետև սա
հայր և մայր չ'ունէր. և այդ աղ-
ջիկը գեղեցիկ էր կերպարանքով և
գեղեցիկ դէմքով. և երբոր նորա
հայրն ու մայրը մեռան՝ Մուրթ-
քէն նորան աղջիկ էր առել իր
համար։
Եւ երբոր թագաւորի հրամա- 8
նը և հրովարտակը լսուեցաւ, և
շատ աղջիկներ էին ժողովվում
Շուշան մայրաքաղաքը Հեգէիի
ձեռքի տակ, Եսթերն էլ տար-
ուեցաւ թագաւորի պալատը կա-
նանց պահապան Հեգէիի ձեռքի
տակ։ Եւ աղջիկը հաճելի եղաւ 9
նորա աչքին և շնորհք գտաւ նորա
առաջին, և նա շուտով տուաւ
նորան մաքրութիւնների պիտոյտը
և նորա ռոճիկը և այն եօթն ա-
ղախիններին, որ նշանակուած էին
նորան տրուելու թագաւորական
պալատից. և փոխադրեց նորան
և նորա աղախիններին կանանց
պալատի լաւագոյն տեղը։ Եսթե- 10
րը չ'յայտնեց իր ազգը և իր ծը-
նունդը. որովհետև Մուրթքէն
նորա պատուիրել էր թէ չ'յայտ-
նէ։ Եւ ամեն օր Մուրթքէն ման 11
էր գալիս կանանց պալատի դա-
ւիթի առաջին, որ իմանար Ես-
թերի առողջութիւնը, և թէ նո-
րան ինչ է լինելու։
Եւ երբոր իւրաքանչիւր աղջկան 12

կարգը գալիս էր Ասուերոս թա-
գաւորի մօտ գնալու համար կա-
նանց սովորութեան պէս տասն-
ևերկու ամիսը լրանալուց յետոյ,
(որովհետև այսպէս էին լրանում
նորանց մաքրութիւնները՝ վեց ա-
միս զմռսի իւղով, և վեց ամիս
անուշահոտ խունկերով և կա-
նանց մաքրութիւնների պիտոյքնե-
13 րովը.) Այն ժամանակ աղջիկը գը-
նում էր թագաւորի մօտ. ամեն
ինչ որ նա պահանջէր, տրվում
էր նորան որ նորա հետ գնար
կանանց պալատիցը թագաւորի
14 պալատը։ Իրիկունը գնում էր և
առաւօտը ետ էր դառնում կա-
նանց միւս տունը թագաւորի
ներքինի՝ և հարճերի պահապան
Սաասգազի ձեռքի տակ. նա
միւսանգամ թագաւորի մօտ չէր
գալ, բայց միայն եթէ թագա-
ւորը նորան հաւանէր և նորան
անունով կանչէր։
15 Եւ երբոր կարգն եկաւ Մուրթ-
քէի հօրեղբայր Աբիքէլի աղջիկ
Եսթերին, որին Մուրթքէն իրան
աղջիկ էր վեր առել, որ գնար
թագաւորի մօտ, ոչինչ չ'պա-
հանջեց բացի նորանից որ ասեց
թագաւորի ներքինի կանանց պա-
հապանը՝ Հեգէին. և Եսթերը
շնորհք գտաւ բոլոր իրան տես-
16 նողների առաջին։ Եւ Եսթերն
տարուեցաւ Ասուերոս թագա-
ւորի մօտ նորա թագաւորու-
թեան տունը տասներորդ ամսի
այսինքն Թէբէթ ամսումը՝ նորա
թագաւորութեան եօթներորդ
17 տարիումը։ Եւ թագաւորը Ես-
թերին՝ բոլոր կնիկներից աւելի
սիրեց, և նա բոլոր աղջիկներից
աւելի սէր և շնորհք գտաւ նո-
րա առաջին, և թագաւորական
թագը դրաւ նորա գլխին, և նո-
րան թագուհի շինեց Վաշթիի
18 տեղ։ Եւ թագաւորը մեծ խըն-
ջոյք արաւ իր բոլոր իշխաններին
և ծառաներին այսինքն Եսթերի
խնջոյքը, և հանգստութիւն շը-
նորհեց գաւառներին և թագա-
ւորի վայելուչ պարգևներ տը-
ւաւ։
19 Եւ երբոր երկրորդ անգամ աղ-
ջիկներ ժողովեցին, այն ժամանակ
Մուրթքէն նստում էր թագաւո-
րի դռան։ Եսթերը չէր յայտնել 20
իր ծնունդը և իր ազգը ինչպէս
որ Մուրթքէն նորան պատուիրել
էր. և Եսթերն անում էր Մուրթ-
քէի հրամանը այնպէս ինչպէս նո-
րա մօտ սնանելու ժամանակին։
Այն օրերը երբոր Մուրթքէն 21
թագաւորի դռանը կենում էր,
չարացան Բիգթան և Թարէս՝
թագաւորի երկու ներքինիները,
որ դռան պահապաններիցն էին,
որ ձեռք երկարացնեն Ասուերոս
թագաւորի դէմ։ Եւ այս բանը 22
յայտնի եղաւ Մուրթքէին և նա
իմացրեց Եսթեր թագուհիին.
և Եսթերն ասեց թագաւորին
Մուրթքէի անունովը։ Եւ այս 23
բանը քննուեցաւ ու ստուգուե-
ցաւ. և նորանք երկուսը կախ-
ուեցան փայտից. և — գրուե-
ցաւ ժամանակագրութեան գրը-
քումը թագաւորի առաջին։

ԳԼ. Գ.

Այս բաներից յետոյ Ասուե- 1
րոս թագաւորը մեծացրեց Ագա-
գացի Ամադաթայի որդի Համա-
նին և բարձրացրեց նորան, և նո-
րա աթոռն իր հետ եղող բոլոր
իշխաններից վեր դրաւ։ Եւ թա- 2
գաւորի բոլոր ծառաները, որ
թագաւորի դռանն էին, խոնարհ-
վում և երկրպագում էին Հա-
մանին, որովհետև թագաւորը
այսպէս էր պատուիրել նորա մա-
սին, բայց Մուրթքէն նորա ա-
ռաջին չ'խոնարհուեցաւ և չ'եր-
կրպագեց նորան։ Եւ թագաւո- 3
րի դռան եղող թագաւորի ծա-
ռաներն ասեցին նորան. Դու ի՞ն-
չու համար ես զանց անում թա-
գաւորի պատուէրը։ Եւ երբոր 4
նորանք ամեն օր ասում էին նո-
րան, և նա նորանց չէր լսում,
այն ժամանակ յայտնեցին Հա-
մանին, որ տեսնեն թէ Մուրթ-
քէին խօսքերը կ'հաստատուի՞ն.
որովհետև նա նորանց ասել էր
թէ Հրէայ է։ Եւ երբոր Համանը 5
տեսաւ որ Մուրթքէն չէ ծրա-

վում նորան երկրպագում, այն
ժամանակ Համանը շատ բարկա-
6 ցաւ։ Եւ մի նուաստ բան երևե-
ցաւ նորա աչքին որ ձեռք եր-
կարացնէր մինակ Մուրթքէի
դէմ, որովհետև յայտնել էին
նորան Մուրթքէի ազգը. վասն-
որոյ խորհեց Համանը կորցնել
Մուրթքէի ազգը՝ բոլոր Հրէա-
ներին որ Ասուերոսի բոլոր թա-
գաւորութեան մէջ կային։
7 Առաջին ամսին՝ այսինքն Նի-
սան ամսին, Ասուերոս թագա-
ւորի տասնևերկուերորդ տարին
Փուր՝ այսինքն վիճակ գցեցին
Համանի առաջին օրէ ցօր և ամ-
սէ ցամիս այսինքն մինչև Ադար
ամսի տասնևերկուսը։
8 Եւ Համանն ասեց Ասուերոս
թագաւորին. Մէկ ազգ կայ ցըր-
ուած և տարածուած ազգերի
մէջ քո թագաւորութեան բոլոր
գաւառներումը. և նորանց օրէն-
քը ամեն ժողովուրդներիցը տար-
բեր է, և թագաւորի օրէնքը
չեն կատարում, և թագաւորին
չէ վայելում նորանց թոյլ տալ։
9 Եթէ թագաւորին հաճելի է,
թող հրաման գրուի որ նորանց
փչացնեն. և ես տասը հազար
տաղանդ արծաթ կշռած կ'տամ
գործակատարների ձեռով, որ
տանեն արքունի գանձարանը։
10 Եւ թագաւորը հանեց մատանին
իր ձեռից և նորան յանձնեց Հը-
րէաների թշնամի Ագագացի Ա-
11 մադաթայի որդի Համանին. Եւ
թագաւորն ասեց Համանին. Ար-
ծաթը քեզ է տրվում և ժողո-
վուրդն էլ, որ ինչ որ հաճելի է
քո աչքին՝ անես։
12 Եւ առաջին ամսի տասնևերեք-
երորդ օրը կանչուեցան թագա-
ւորի գրագիրները, և գրուեցաւ
բոլորովին այնպէս, ինչպէս որ
Համանը պատուիրեց, թագաւո-
րի նախարարներին, և ամեն գա-
ւառների վերայ եղող կուսակալ-
ներին, և իւրաքանչիւր գաւառի
և իւրաքանչիւր ազգի իշխաննե-
րին իրանց գրովը, և իւրաքան-
չիւր ազգի իր լեզուովը. Ասուե-
րոս թագաւորի անունովը գրը-
ուեցաւ և կնքուեցաւ թագաւո-
րի կնիքովը։ Եւ հրովարտակներ 13
ուղարկուեցան սուրհանդակների
ձեռքով թագաւորի բոլոր գա-
ւառները, որ կորցնեն, սպանեն
և փչացնեն բոլոր Հրէաներին ե-
րեխայիցը մինչև ծերը՝ աղերանցը
և կանանցը մէկ օրում՝ տասնև-
երկուերորդ ամսի այսինքն Ադար
ամսի տասնևերեքին, և նորանց
աւարը յափշտակեն։ Այս գրի 14
պատճէնը պէտք էր տրուէր իւ-
րաքանչիւր գաւառում իբրև օ-
րէնք՝ ամեն ազգերի հրատարակ-
ուած որ նոյն օրուայ համար
պատրաստ լինին։ Սուրհանդակ- 15
ները դուրս եկան շտապելով թա-
գաւորի խօսքովը. և հրամանը
տրուեցաւ Շուշան մայրաքաղա-
քումը։ Եւ թագաւորն ու Հա-
մանը նստեցին խմելու, և Շուշան
քաղաքը շփոթուած էր։

ԳԼ. Դ.

Եւ Մուրթքէն իմացաւ այս բո- 1
լոր եղածները, և Մուրթքէն պա-
տառեց իր հանդերձները և քուրձ
հագաւ ու մոխիր ցանեց իր վերայ
և գնաց քաղաքի մէջ և մեծ ու
ողբալի ձայնով աղաղակեց. Եւ 2
եկաւ մինչև թագաւորի դռան
մուտքը. որովհետև իրաւունք
չ'կար թագաւորի դռան լինել
քուրձ հագած։ Եւ ամեն գա- 3
ւառներում ամեն տեղ, ուր որ
թագաւորի խօսքը և հրամանը
հասնում էր, Հրէաները մեծ սուգ
էին ունենում, և ծոմ էին պա-
հում, և լաց ու ողբ անում. և
շատերը պառկում էին քուրձով
և մոխրի վերայ։
Եւ Եսթերի աղախինները և 4
ներքինիներն եկան և պատմեցին
նորան, և թագուհին շատ այ-
լայլուեցաւ, և հանդերձներ ու-
ղարկեց Մուրթքէին հագցնելու
համար և նորա քուրձը նորանից
վեր առնելու համար. բայց նա
չ'ընդունեց։ Եւ Եսթերը կանչեց 5
Հաթաքին որ թագաւորի ներքի-
նիներիցն էր, որին թագաւորը տը-
ւել էր նորան, և նորան հրամա-

յեց Մուրթքէի մասին որ իմա-
նայ, թէ սա ի՞նչ է և ի՞նչու
6 համար է սա. Եւ Հաթաքը գը-
նաց Մուրթքէի մօտ քաղաքի
հրապարակը, որ թագաւորի դը-
7 ռան դիմացին էր։ Եւ Մուրթ-
քէն պատմեց նորան ամեն ինչ որ
նորան պատահել էր և այն որոշ
գումար արծաթը, որ Համանն
ասել էր թէ կշռով պիտի տար
թագաւորի գանձարանին Հրէա-
ների համար որ նորանց փչացնէ։
8 Եւ այն հրովարտակի պատճէնը,
որ Շուշանում տրուել էր նո-
րանց փչացնելու համար, տուաւ
նորան, որ Եսթերին ցոյց տայ և
նորան իմացնէ և նորան պատուի-
րէ, որ թագաւորի մօտը գնայ և
նորան աղաչէ և նորա առաջին
խնդրուածք մատուցանէ իր ազ-
9 գի համար։ Եւ Հաթաքը գնաց
և Մուրթքէի խօսքերը պատմեց
Եսթերին։
10 Եւ Եսթերն ասեց Հաթաքին
և նորան պատուիրեց Մուրթքէի
11 մօտ գնալ և ասել. Թագաւորի
բոլոր ծառաները և թագաւորի
գաւառների ժողովուրդը գիտեն,
որ ամեն մարդ կամ կին, որ չը
կանչուած մտնէ թագաւորի մօտ
ներքին գաւիթը, մէկ հատ օ-
րէնք կայ որ նորան կ'սպանեն՝
բացի նորանից, որին որ թագա-
ւորը մեկնէ ոսկի գաւազանը, նա
կ'ապրէ. բայց ես՝ ահա երեսուն
օր է՝ չեմ կանչուել որ թագա-
12 ւորի մօտ գնամ։ Եւ Մուրթքէ-
ին պատմեցին Եսթերի խօսքերը։
13 Եւ Մուրթքէն պատասխան ետ
ուղարկեց Եսթերին ասելով. Մի
խորհիր քո մտքումը թէ դու
կ'ազատուիս թագաւորի տանը՝
14 բոլոր Հրէաներիցը։ Եւ եթէ դու
այս միջոցին լռես, մի ուրիշ տե-
ղից Հրէաների համար ազատու-
թիւն և փրկութիւն վեր կ'կե-
նայ, բայց դու և քո հօր տունը
կ'կորչէք, և ո՞վ գիտէ դուցէ մի
այսպիսի ժամանակի համար ես
դու թագուհութեան հասել։
15 Եւ Եսթերը պատասխան ու-
ղարկեց Մուրթքէին ասելով.
16 Գնա ժողովիր Շուշանում գըտ-
նուող բոլոր Հրէաներին, և ծոմ
պահեցէք ինձ համար, և երեք
օր գիշեր և ցերեկ ոչ կերէք և
ոչ խմեցէք. ես էլ իմ աղախին-
ների հետ այդպէս ծոմ եմ պա-
հելու, և այնուհետև թագաւո-
րի մօտ պիտի գնամ թէև օրէնք
չէ, և եթէ կ'մեռնեմ թող մեռ-
նեմ։ Այն ժամանակ Մուրթքէն 17
գնաց և այն ամենին համեմատ
արաւ որ Եսթերն իրան պատ-
ուիրել էր։

ԳԼ. Ե

Եւ եղաւ որ երրորդ օրը Եսթե- 1
րը հագուեցաւ թագուհիի կեր-
պով և կանգնեց թագաւորի տան
ներքին գաւիթումը թագաւորի
պալատի դիմացը, և թագաւորը
նստել էր իր թագաւորական ա-
թոռի վերայ թագաւորի պալա-
տումը՝ պալատի դռան դիմացը։
Եւ երբոր թագաւորը տեսաւ Ես- 2
թեր թագուհիին գաւիթումը
կանգնած, նա շնորհք գտաւ նո-
րա աչքի առաջին, և թագաւորը
մեկնեց դէպի Եսթերն իր ձեռ-
քի ոսկի գաւազանը. և Եսթերը
մօտեցաւ և դպաւ գաւազանի
ծայրին։ Եւ թագաւորն ասեց 3
նորան. Ի՞նչ ունիս, ով Եսթեր
թագուհի, և ի՞նչ է ուզածդ.
մինչև իմ թագաւորութեան կէսն
էլ քեզ տրուի։ Եւ Եսթերն ա- 4
սեց. Եթէ հաճելի է թագաւո-
րին, դայ թագաւորը Համանի հետ
այսօր այն խնջոյքին, որ պատ-
րաստել եմ իր համար։ Եւ թա- 5
գաւորն ասեց. Շուտով բերէք
Համանին, որ Եսթերի ասածը կա-
տարէ. և թագաւորը գնաց Հա-
մանի հետ Եսթերի արած խնջ-
ոյքին։
Եւ թագաւորն ասեց Եսթերին 6
գինին խմելիս. Ի՞նչ է քո խնդ-
իրքը, քեզ պիտի տրուի. և ի՞նչ
է քո ուզածը մինչև թագաւո-
րութեան կէսը, պիտի կատար-
ուի։ Եւ Եսթերը պատասխանեց 7
և ասեց. Իմ խնդիրքը և իմ ու- 8
զածը, եթէ ես շնորհք եմ գտել
թագաւորի աչքի առաջին և ե-

թէ հաճելի է թագաւորին իմ
խնդիրքը տալու և իմ ուզածը
կատարելու, թող գայ թագա-
ւորը Համանի հետ այն խնջոյքին
որ ես անելու եմ, և էգուց կ'ա-
նեմ թագաւորի խօսքին համե-
մատ։
9 Եւ Համանն այն օրը գուրս ե-
կաւ ուրախ և սրտով զուարթ։
Բայց երբոր Համանը տեսաւ
Մուրթքէին թագաւորի դռանը,
որ ոչ վեր կացաւ և ոչ նորանից
դողաց, Համանը Մուրթքէի վե-
րայ բարկութիւնով լցուեցաւ։
10 Սակայն Համանն իրան զսպեց և
գնաց իր տունը, և մարդ ուղար-
կեց բերել տուաւ իր բարեկամ-
11 ներին և իր կնոջ Զերէսին։ Եւ
Համանը պատմեց նորանց իր հա-
րըստութեան շատութիւնը և
որդկանցը բազմութիւնը, և այն
ամենը որ թագաւորը նորան մե-
ծացրել է և որ նորան բարձրա-
ցրել է թագաւորի ծառայ իշ-
12 խաններից։ Եւ ասեց Համանը.
Ապաքէն Եսթեր թագուհին մէկ
ուրիշին ներս չ'տարաւ թագա-
ւորի հետ իր արած խնջոյքին
բացի ինձանից. և նոյն իսկ էգուց
հրաւիրուած եմ ես նորա մօտ
13 թագաւորի հետ։ Բայց այս ա-
մենից դոհ չեմ՝ քանի որ ամեն
ժամանակ Հրէայ Մուրթքէին
տեսնում եմ թագաւորի դռանը
14 նստած։ Եւ ասեց նորան նորա
կինը Զերէսը և նորա բոլոր բա-
րեկամները. Թող մի բարձր փայտ
շինեն յիսուն կանգուն, և ա-
ռաւօտն ասիր թագաւորին, որ
Մուրթքէին կախեն նորա վերայ,
յետոյ ուրախանալով խնջոյքին
գնա թագաւորի հետ։ Եւ այս
խօսքը հաճելի եղաւ Համանին,
և նա փայտը շինեց։

ԳԼ. Զ

1 Այն գիշերը թագաւորի քունը
փախաւ և հրամայեց որ ժամանա-
կագրութեան յիշատակաց մատ-
եանը բերեն. և թագաւորի ա-
2 ռաջին կարդացուեցաւ։ Եւ գրը-
ուած գտնուեցաւ, որ Մուրթ-
քէն իմացրել էր թագաւորի եր-
կու ներքինի՝ Բիգթանի և Թա-
րեսի մասին, որ դռան պահա-
պաններիցն էին, որոնք ուզել է-
ին Ասուերոս թագաւորի վերայ
ձեռք երկարացնել։ Եւ թագա- 3
ւորն ասեց. Ի՞նչ փառք կամ մե-
ծութիւն տրուեցաւ Մուրթքէին
սորա փոխարէն. և թագաւորի
սպասաւոր ծառաներն ասեցին.
Նորան մէկ բան չեն արել։ Եւ 4
թագաւորն ասեց. Ո՞վ կայ գա-
ւիթում. և Համանը եկել էր
թագաւորի պալատի դրսի գա-
ւիթը թագաւորին ասելու որ
Մուրթքէին կախէին այն փայտի
վերայ որ պատրաստել էր նորա
համար։ Եւ թագաւորի ծառա- 5
ներն ասեցին նորան. Ահա Հա-
մանը կանգնած է գաւիթումը.
և թագաւորն ասեց. Ներս գայ։
Եւ Համանը ներս մտաւ, և 6
թագաւորը նորան ասեց. Ի՞նչ
պէտք է անել այն մարդին, որին
թագաւորը բարեհաճէ պատ-
ուել։ Եւ Համանը ասում էր իր
սրտումը. Թագաւորը որի՞ն պիտի
բարեհաճէր պատիւ անել բացի
ինձանից։ Եւ Համանն ասեց թա- 7
գաւորին. Այն մարդին որին թա-
գաւորը բարեհաճում է պատ-
ուել, թող բերեն թագաւորի 8
հագած թագաւորական զգեստը,
և թագաւորի հեծած ձին, և այն
թագաւորական թագը որ դըր-
վում է նորա գլխին. Եւ այն 9
զգեստը և ձին տրուի թագաւո-
րի պատուաւոր իշխանների մէկի
ձեռքը, և հագցնեն այն մարդին,
որին թագաւորը բարեհաճել է
պատուելու, և նորան հեծցնեն
այն ձիան վերայ քաղաքի հրա-
պարակումը և կանչեն նորա ա-
ռաջիցը. Այսպէս է լինում այն
մարդին որին թագաւորը բարե-
հաճէ պատուել։ Եւ թագաւորն 10
ասեց Համանին. Շուտով վեր առ
զգեստն ու ձին ինչպէս որ ասե-
ցիր և այդպէս արա Մուրթքէ
Հրէային, որ նստում է թագա-
ւորի դռանը, մէկ բան չ'պակա-
սի քո բոլոր ասածիցը։
Եւ Համանն առաւ զգեստը և 11

ձին և հագցրեց Մուրթքէին, և
հեծցրեց քաղաքի հրապարակու-
մը և կանչեց նորա առաջիցը.
Այսպէս է լինում այն մարդին ո-
րին թագաւորը բարեհաճէ պատ-
12 ուել։ Եւ Մուրթքէն ետ դա-
ռաւ թագաւորի դուռը. բայց
Համանը շտապեց իր տունը տըր-
13 տում և գլուխը ծռած։ Եւ Հա-
մանը պատմեց իր կնոջ՝ Զերէսին
և իր բոլոր բարեկամներին ամեն
ինչ որ պատահել էր իրան. և
նորա իմաստունները և նորա կի-
նը՝ Զերէսը ասեցին նորան. Եթէ
Մուրթքէն Հրէաների սերունդի-
ցն է, որի առաջին սկսել ես
խոնարհուիլ, դու նորան չես
կարող Ձ! Բ ան անել, այլ բոլո-
րովին վայր ես ընկնելու նորա ա-
14 ռաջին։ Նորանք տակաւին խօ-
սում էին նորա հետ, որ թա-
գաւորի ներքինիները հասան նո-
րան, որ շուտով նորան տանեն
Եսթերի շինած խնջոյքին։

ԳԼ. Է

1 Եւ թագաւորը Համանի հետ
խնջոյքի գնաց Եսթեր թագու-
2 հիի մօտ։ Եւ թագաւորն ասեց
Եսթերին երկրորդ օրն էլ գինին
խմելիս. Ի՞նչ է, Եսթեր թագու-
հի, քո խնդիրքը, և պիտի տրուի
քեզ. և ի՞նչ է քո ուղածը, թէև
մինչև թագաւորութեան կէսը,
և պիտի կատարուի։
3 Եւ Եսթեր թագուհին պա-
տասխանեց և ասեց. Եթէ շնորհք
եմ գտել քո աչքի առաջին, ով
թագաւոր, և եթէ հաճելի է
թագաւորին, թող իմ խնդիր-
քովն իմ անձը և իմ աղաչան-
4 քովն իմ ազգն ինձ տրուի։ Որով-
հետև ես և իմ ազգը ծախուել
ենք փչացնուելու, սպանուելու և
կորչելու. եթէ իբրև ծառաներ և
աղախիններ ծախուէինք, կ'լռէի.
որովհետև թշնամին արժէք չ'ու-
նի թագաւորի վնասին չափ։
5 Եւ Ասուերոս թագաւորը խօ-
սեց, և Եսթեր թագուհիին ա-
սեց. Ո՞վ է նա և ո՞ւր է նա որ
համարձակուել է այդպէս անել։
Եւ Եսթերն ասեց. Այն հակա- 6
ռակորդը և թշնամին այս չար
Համանն է. բայց Համանը դողում
էր թագաւորի և թագուհիի ա-
ռաջին։
Եւ թագաւորը վեր կացաւ գի- 7
նի խմելուց իր բարկութեամբը
և գնաց պալատի պարտէզը. բայց
Համանը մնաց, որ իր անձի հա-
մար աղաչէ Եսթեր թագուհիին.
որովհետև տեսաւ որ թագաւո-
րիցը չարիքը հասել էր իր վերայ։
Եւ թագաւորը ետ դառաւ 8
պալատի պարտէզից գինիի խն-
ջոյքի սենեակը, և Համանն ընկ-
կել էր Եսթերի բազմոցի վերայ.
և թագաւորն ասեց. Մի՞թէ թա-
գուհիին էլ բռնաբարէ ինձ մօտ՝
պալատումը. և խօսքը դուրս էր
եկել թագաւորի բերանիցը, և
խոյն ծածկեցին Համանի երեսը։
Այն ժամանակ ասեց թագաւո- 9
րի առաջին եղող ներքինիներից
մէկը՝ Արբոնա. Ահա այն յիսուն
կանգունանոց փայտն էլ, որ Հա-
մանը պատրաստել է Մուրթքէի
համար որ բարի է խօսել թա-
գաւորի մասին, Համանի տանը
տնկուած է։ Եւ թագաւորն ա-
սեց. Նորան կախեցէք նորա վե-
րայ։ Եւ Համանին կախեցին այն 10
փայտի վերայ, որ նա պատրաս-
տել էր Մուրթքէի համար. և
թագաւորի բարկութիւնն իջաւ։

ԳԼ. Ը

Այն ժամանակ Ասուերոս թա- 1
գաւորը Եսթեր թագուհիին տը-
ւաւ Հրէաների թշնամի Հա-
մանի տունը, և Մուրթքէն ե-
կաւ թագաւորի առաջին, որով-
հետև Եսթերը նորան իմացրել
էր, թէ նա նորան ինչն էր։ Եւ 2
թագաւորն առաւ իր մատանին,
որ հանել էր Համանիցը, և նո-
րան տուաւ Մուրթքէին. և Ես-
թերը Մուրթքէին դրաւ Համա-
նի տան վերայ։
Եւ Եսթերը դարձեալ խօսեց 3
թագաւորի առաջին և ընկաւ նո-
րա ոտքի առաջը, և լացաւ ու
աղաչեց նորան, որ Ագագացի

Համանի չարութիւնը և այն հը-
նարքը, որ հնարել էր Հրէանե-
4 րի դէմ, խափանէ։ Եւ թագա-
ւորը մեկնեց դէպի Եսթերին ոս-
կի գաւազանը. և Եսթերը վեր
կացաւ կանգնեց թագաւորի ա-
5 ռաջին. Եւ ասեց. եթէ հաճելի
է թագաւորին, և եթէ ես շը-
նորհք եմ գտել նորա առաջին,
և եթէ այս բանն ուղիղ է թա-
գաւորի առաջին և ես հաճելի
եմ նորա աչքին, թող հրաման
գրուի, որ ետ դարձնեն Ագագա-
ցի Ամադաթայի որդի Համանի
հնարքի գրութիւնները, որ գը-
րել է թագաւորի բոլոր գա-
ւառներումն եղող Հրէաներին
6 փչացնելու համար։ Որովհետև
ի՞նչպէս կարող եմ տեսնել իմ
ազգին պատահող չարիքը, և
ի՞նչպէս կարող եմ տեսնել իմ
ազգականների կորուստը։
7 Եւ Ասուերոս թագաւորն ա-
սեց Եսթեր թագուհիին և Հը-
րէայ Մուրթքէին. Ահա ես Հա-
մանի տունը տուի Եսթերին, և
նորան կախեցին փայտի վերայ
նորա համար որ իր ձեռքը եր-
կարացրել էր Հրէաների վերայ։
8 Դուք էլ գրեցէք Հրէաների մա-
սին ինչ որ հաճելի է ձեր աչ-
քին՝ թագաւորի անունովը, և
կնքեցէք թագաւորի կնիքովը. ո-
րովհետև այն գիրը, որ գրուե-
ցաւ թագաւորի անունովը և կն-
քուեցաւ թագաւորի կնիքովը,
ետ չեն դարձնիլ։
9 Եւ այն ժամանակ թագաւորի
գրագիրները կանչուեցան երրորդ
ամսի այսինքն Սիվան ամսի քը-
սանևերեքին, և գրուեցաւ բոլո-
րովին այնպէս ինչպէս որ պատ-
ուիրեց Մուրթքէն, և ուղարկուե-
ցան Հրէաներին և նախարարնե-
րին ու կուսակալներին և գաւա-
ռապետներին Հնդկաստանից մին-
չև Եթովպիա՝ հարիւր քսանև-
եօթը գաւառների իւրաքանչիւր
գաւառին իր գրովը և ամեն մէկ
ազգին իր լեզուովը և Հրէաներ-
ին իրանց գրովն ու իրանց լեզ-
10 ուովը։ Եւ գրեց Ասուերոս թա-
գաւորի անունովը և կնքեց թա-
գաւորի կնիքովը և հրովարտակ-
ներն ուղարկեց ձիաւոր սուրհան-
դակներով որ հեծած էին *ար-
քունի նժոյգների ձիաքուռակ-
ների՝ վերայ, Թէ թագաւորը հը- 11
րամանն է տուել ամեն մէկ քաղա-
քում եղող Հրէաներին, որ հա-
ւաքուեն և դէմ կենան իրանց
անձերի համար, որ փչացնեն, ըս-
պանեն և կոտորեն ժողովրդի և
գաւառի զօրաւորներին, որ թշ-
նամութիւն կ'անեն նորանց, նո-
րանց որդկանցը և կանանցը, և
նորանց աւարը յափշտակեն Մէկ 12
օրում Ասուերոս թագաւորի բո-
լոր գաւառներումը տասնևերկու-
երորդ ամսի՝ այսինքն Ադար ամ-
սի տասնևերեքին։ Այս գրի պատ- 13
ճէնը պէտք էր տրուէր իբրև օ-
րէնք իւրաքանչիւր գաւառում
ամեն ազգերի հրատարակուած,
որ Հրէաները նոյն օրուայ հա-
մար պատրաստ լինին իրանց վը-
րէժն իրանց թշնամիներիցն առ-
նելու համար. Թագաւորական 14
նժոյգների՝ ձիաքուռակների հե-
ծած սուրհանդակները, որ թա-
գաւորի խօսքովը ստիպուելով
շտապում էին դուրս գնացին. և
այս օրէնքը հրատարակուեցաւ
Շուշան մայրաքաղաքումը։
Եւ Մուրթքէն դուրս եկաւ 15
թագաւորի առաջից թագաւո-
րական կապուտակ և սպիտակ
հագուստով և մեծ ոսկի թա-
գով, և բեհեզեայ ու ծիրանի
պատմուճանով. և Շուշան քա-
ղաքը ցնծաց և ուրախացաւ։ Հը- 16
րէաները լոյս և ուրախութիւն,
ցնծութիւն և պատիւ ունեցան։
Եւ բոլոր գաւառներումն ու բո- 17
լոր քաղաքներումը, որտեղ որ
հասնում էր թագաւորի խօսքը
և հրամանը, ուրախութիւն և
ցնծութիւն էր լինում Հրէաներ-
ի համար, խնջոյքի և տօնախմ-
բութեան օր. և այն երկրի ժո-
ղովրդից շատերը Հրէայ էին դառ-
նում. որովհետև Հրէաների վա-
խն ընկել էր նորանց վերայ։

---

*Կամ՝ ձիերի, նժոյգների և մա-
տակ ձիերի քուռակ ջորիների

ԳԼ. Թ

1 Եւ տասնեւերկուերորդ ամսի,
այսինքն Ադար ամսի տասնեւ-
երեքերորդ օրը, երբոր հասաւ թա-
գաւորի խօսքը և հրամանը, որ
կատարուէր, այն օրը որ Հրէաների
թշնամիները յոյս ունէին նորանց
վերայ տիրելու, ներհակը պա-
տահեց, որ Հրէաներն իրանք տի-
րեցին իրանց ատողների վերայ։
2 Ասուերոս թագաւորի բոլոր գա-
ւառներումը Հրէաները ժողով-
ուեցան իրանց քաղաքներումը,
որ ձեռք երկարացնեն իրանց չա-
րիքն ուզողների վերայ. և նո-
րանց առաջին ոչ ով չէր դիմա-
նում. որովհետև նորանց վախն
ընկել էր բոլոր ազգերի վերայ։
3 Եւ բոլոր գաւառապետները, կու-
սակալները, և իշխաններն ու
թագաւորի գործակալներն օգ-
նում էին Հրէաներին, որովհետև
Մուրթքէի վախն ընկել էր նո-
4 րանց վերայ։ Նորա համար որ
Մուրթքէն մեծ էր թագաւորի
պալատումը, և նորա համբաւը
տարածուել էր ամեն գաւառ-
ներում. որովհետև այդ Մուրթ-
քէ մարդը գնալով մեծանում
5 էր։ Եւ Հրէաները ջարդ տուին
իրանց բոլոր թշնամիներին որով
ջարդելով, սպանելով և փչա-
ցնելով, և իրանց ատողներին ի-
6 րանց ուզածին պէս արին։ Եւ
Հրէաները Շուշան մայրաքաղա-
քումը հինգ հարիւր մարդ ըս-
7 պանեցին փչացրին։ Նաև Փար-
սանդաթային, Դաղփոնին, Ասփ-
8 թային, Փորաթային, Ադալի-
9 ային, Արիդաթային, Փարմաթա-
ային, Արիսային, Արիդային, և Վա-
10 յեզաթային. Հրէաների թշնամի՝
Ամադաթայի որդի Համանի տասը
որդկանցը սպանեցին, բայց աւա-
11 րին ձեռք չ՚երկարացրին։ Այն
օրը Շուշան մայրաքաղաքումն
սպանուածների թիւը եկաւ թա-
գաւորի առաջը։
12 Եւ թագաւորն ասեց Եսթեր
թագուհիին. Շուշան մայրաքա-
ղաքումը Հրէաները սպանել և
փչացրել են հինգ հարիւր մարդ և
Համանի տասը որդկանցը. ապա
թագաւորի միւս գաւառներու-
մն ինչե՛ր են արել. դարձեալ
ի՞նչ է քո խնդիրքը, եւ պիտի
տրուի քեզ, և դեռ ի՞նչ է քո
ուզածը, պիտի կատարուի։ Եւ 13
Եսթերն ասեց. Եթէ հաճոյ է
թագաւորին, թող էգուց էլ
Շուշանումն եղող Հրէաներին
տրուի որ այսօրուայ օրէնքի հա-
մեմատ անեն՝ Համանի տասը որդ-
կանցը կախեն փայտից. Եւ թա- 14
գաւորն ասեց որ այնպէս կա-
տարուի, և հրամանը հրատա-
րակուեցաւ Շուշանումը, և Հա-
մանի տասը որդկանցը կախեցին։
Եւ Շուշանումն եղող Հրէաները 15
Ադար ամսի տասնեւչորսերորդ օրն
էլ ժողովուեցան և Շուշանում
երեք հարիւր մարդ սպանեցին,
բայց աւարին ձեռք չ՚երկարացրին։
Եւ թագաւորի գաւառներումն 16
եղող մնացեալ Հրէաները ժողով-
ուեցան և դէմ կացին իրանց ան-
ձերի համար և հանգստացան ի-
րանց թշնամիներիցը և սպանե-
ցին իրանց ատողներիցը եօթա-
նասունեւհինգ հազար մարդ, բայց
աւարին ձեռք չ՚երկարացրին։ Ա- 17
դար ամսի տասնեւերեքին Իզա-
ա-յ, և նոյն ամսի տասնեւչորսին
հանգստացան, և նորան խնջոյքի
և ուրախութեան օր արին։ Եւ 18
Շուշանումն եղող Հրէաները ժո-
ղովուեցան այն ամսի տասնեւերե-
քին և տասնեւչորսին և հանգըս-
տացան տասնեւհինգին, և նորան
խնջոյքի ու ուրախութեան օր
արին։ Սորա համար գիւղացի Հր- 19
էաները որ բնակվում են դաշ-
տաքաղաքներում, տօնում են Ա-
դար ամսի տասնեւչորսերորդ օրը
ուրախութեամբ և խնջոյքով տօ-
նախմբութեան օր, և իրար ընդ-
ծաներ են ուղարկում։
Եւ Մուրթքէն գրեց այս բա- 20
ները և նամակներ ուղարկեց Ա-
սուերոս թագաւորի բոլոր գա-
ւառներումն եղող մօտ և հեռու
Հրէաներին, Որ իրանց վերայ դը- 21
նեն՝ որ Ադար ամսի տասնեւչորսե-
րորդ օրը և տասնեւհինգերորդ օ-
րը տօնեն տարուէ տարի։ Իբրև 22

այնպիսի օրեր որոնցում Հրէաներ-
ը հանգստացան իրանց թշնամի-
ներից և իբրև այնպիսի ամիս որ
նորանց համար արտմութիւնը ու-
րախութեան և սուգը տօնախմբ-
ութեան փոխուեցաւ. որ նո-
րանց տօնեն իրրև խնջոյքի և ու-
րախութեան օրեր և իրար ընդ-
ծաներ ուղարկեն և աղքատնե-
23 րին պարգևներ. Եւ Հրէաներն
ընդունեցին ինչ որ սկսել էին
անել և ինչ որ Մուրթքէն նո-
24 րանց գրել էր. Որովհետև բոլոր
Հրէաների թշնամի Ադագացի Ա-
մադաթայի որդի Համանը խոր-
հեց որ Հրէաներին կորցնէ և
Փուր՝ այսինքն վիճակ էր գցել
որ նորանց բնաջինջ անէ և կոր-
25 ցնէ։ Բայց երբոր Եսթերը գնաց
թագաւորի առաջին, թագաւորը
հրամայեց հրովարտակով, որ Հա-
մանի չար հնարքը, որ հնարել էր
Հրէաների մասին, նորա գլխին
դառնայ. և նորան և նորա որդ-
կանցը կախեցին փայտի վերայ։
26 Սորա համար այս օրերին Փու-
րիմ են ասում՝ Փուրի անուան
պատճառով. սորա համար այս
թղթի բոլոր խօսքերի պատճա-
ռովը և ինչ որ իրանք տեսան սո-
րան վերաբերմամբ և ինչ որ ի-
27 րանց պատահեց. Հրէաները որո-
շեցին և ընդունեցին իրանց վե-
րայ և իրանց զաւակների վերայ
և բոլոր իրանց հետ միացողների
վերայ որ զանց չ՚անեն այս եր-
կու օրը տօնել նորանց գրուած-
քին և նորանց ժամանակին հա-
28 մեմատ իւրաքանչիւր տարի։ Եւ
այս օրերը պէտք է յիշուին և
տօնուին ամեն դարերում, ամեն
ազգատոհմերում, ամեն գաւառ-
ներում և ամեն քաղաքներում.
և այս Փուրիմ օրերը Հրէաների
միջիցը պակաս չ՚լինին և նորանց
յիշատակը չ՚վերանայ նորանց սե-
րունդիցը։
Եւ Աբիքէլի աղջիկ Եսթեր թա- 29
գուհին և Հրէայ Մուրթքէն բո-
լոր սաստկութեամբ գրեցին այս
երկրորդ թուղթը Փուրիմը հաս-
տատելու համար. Եւ նա նա- 30
մակներ ուղարկեց բոլոր Հրէա-
ներին, Ասուերոսի թագաւորու-
թեան հարիւր քսանեւեօթը գա-
ւառները խաղաղութեան և ճըշ-
մարտութեան խօսքերով. Որ պա- 31
հեն այս Փուրիմի օրերն իրանց
ժամանակներին ինչպէս որ նո-
րանց վերայ գրին Հրէայ Մուրթ-
քէն և Եսթեր թագուհին, և
ինչպէս որ նորանք գրին իրանց
անձերի վերայ և իրանց սերուն-
դի վերայ ծոմապահութեան և
իրանց աղաղակի մասին։ Եւ Ես- 32
թերի հրամանը հաստատեց այս
Փուրիմի բաները, և գրուեցաւ
գրքի մէջ։

ԳԼ. Ժ

Եւ Ասուերոս թագաւորը հարկ 1
դրաւ երկրի վերայ և ծովի կըղ-
զիների վերայ։ Եւ նորա զօրու- 2
թեան և ոյժի բոլոր գործերը, և
Մուրթքէի մեծութեան մանրա-
մասն պատմութիւնը, որով թա-
գաւորը նորան մեծացրեց, ահա
նորանք գրուած են Մարաց և
Պարսից թագաւորների ժամանա-
կագրութեան գրքումը։ Որովհե- 3
տև Հրէայ Մուրթքէն Ասուերոս
թագաւորի երկրորդն էր, և Հր-
էաների մէջ մեծ և իր եղբայր-
ների շատերին սիրելի էր, իր ազ-
գի համար բարիք էր որոնում,
և խաղաղութիւն էր խօսում իր
բոլոր սերունդի համար։

ՅՈԲԻ ԳԻՐՔԸ

ԳԼՈՒԽ Ա.

1 Մ Էկ մարդ կար Հուս երկրումը՝ անունը Յոբ. և այն մարդը կատարեալ և ուղիղ և աստուածավախ էր, և հեռանում էր չա-
2 րութիւնից։ Եւ նորա համար եօթը որդիք և երեք աղջիկ ծնուե-
3 ցան։ Եւ նորա խաշինքն էին՝ եօթը հազար ոչխար, երեք հազար ուղտ, հինգ հարիւր լուծ եզ և հինգ հարիւր մատակ էշ և խիստ շատ ծառաներ. և այդ մարդը բոլոր արևելցիներից մեծ էր։
4 Եւ նորա որդիքը գնում և խրնջոյք էին անում տանը՝ ամեն մէկն իր օրին. և հրաւէր էին ուղարկում և կանչում իրանց եր-
5 եք քոյրերին, որ իրանց հետ ուտեն և խմեն։ Եւ երբոր խնջոյքի օրերը լրանում էին, այն ժամանակ Յոբն ուղարկում՝ նորանց սրբում էր. և առաւօտեան վեր էր կենում և ողջակէզներ էր մատուցանում նորանց ամենի թիւ-
ւով. որովհետև Յոբն ասում էր. Գուցէ որդիքս մեղանչել են և Աստուծուն Հոգում իրանց սրտումը. Յոբն այսպէս էր անում ամեն ժամանակ։
6 Եւ եղաւ մէկ օր, որ Աստուծոյ որդիքն եկան Տիրոջ առաջին կանգնելու. և սատանան էլ ե-
7 կաւ նորանց միջումը։ Եւ Տէրն ասեց սատանային. Ո՞րտեղից ես գալիս. և սատանան պատասխանեց Տիրոջը և ասեց. Երկրի վրայ շրջելուց և նորանում մտն
8 գալուց։ Եւ Տէրն ասեց սատանային. Ուշադրութիւնդ դարձրի՞ր իմ ծառայ Յոբի վերայ, որ նորա նմանը չկայ երկրի վերայ՝ կատարեալ և ուղիղ մարդ, աստուածավախ և չարութիւնից հե-
9 ռացող։ Եւ սատանան պատասխանեց Տիրոջը և ասեց. Մի՞թէ
10 Յոբը ձրի է աստուածավախ. Չէ՞ որ դու նորան, նորա տունը և նորա բոլոր ստացուածքը ցանկով շրջապատել ես, նորա ձեռքի գործը օրհնել ես, և նորա հոտերը տարածուել են երկրի վրայ։ Բայց հիմա մեկնիր ձեռքդ
11 և դպցրու նորա ամեն ստացուածքին. և թէ թէ որ քո երեսին քեզ չհայհոյէ։ Եւ Տէրն ասեց
12 սատանային. Ահա նորա բոլոր ստացուածքը քո ձեռքին լինէ, միայն թէ նորա վերայ չերկա-
բացնես ձեռքդ։ Եւ սատանան դուրս եկաւ Տիրոջ երեսի առա-
ջից։

13 Եւ եղաւ որ մի օր նորա որդիքն ու նորա աղջկերքը ուտում էին և գինի խմում իրանց անդրանիկ եղբօր տանը։ Եւ մէկ
14 պատգամաբեր եկաւ Յոբի մօտ և ասեց. Եզները հերկելիս և մատակ էշերը նորանց կշտին արա-
15 ծելիս, Սաբայեցիք յարձակուեցան և նորանց առան և ծառաներին զարկեցին սուրի բերանով. և մինակ ես եմ ազատուել որ
16 քեզ իմացնեմ։ Սա դեռ խօսում էր, որ ահա մէկ եկաւ և ասեց. Աստուծոյ կրակը թափուեցաւ երկնքից և այրեց հօտերին ու ծառաներին և նորանց ապառեց. ու
17 մինակ ես եմ ազատուել որ քեզ իմացնեմ։ Սա դեռ խօսում էր, որ ահա մէկ եկաւ և ասեց. Քաղդէացիք երեք գունդ շինած՝ յարձակուեցան ուղտերի վերայ և նորանց առան և ծառաներին զարկեցին սուրի բերա-
նով, և մինակ ես եմ ազատուել որ քեզ իմացնեմ։ Սա
18 դեռ խօսում էր, որ ահա մէկ եկաւ և ասեց. Որդիքդ և աղջկերքդ ուտում էին և գինի խըմում իրանց անդրանիկ եղբօր
19 տանը. Եւ ահա մի մեծ հողմ եկաւ անապատի այն կողմից և դիպաւ տան չորս անկեանը, և

տունը վայր ընկաւ տղոց վերայ, և նորանք մեռան. և մինակ ես եմ ազատուել որ քեզ իմացնեմ։
20 Եւ Յոբը վեր կացաւ և պատառեց իր վերարկուն և խուզեց իր գլուխը, և ընկաւ գետնի վերայ և երկրպագութիւն արաւ,
21 և ասեց. Մերկ դուրս եկայ իմ մոր արգանդիցը, և մերկ պիտի դառնամ այնտեղ։ Տէրը տուաւ և Տէրն առաւ. Տիրոջ անունը
22 օրհնեալ լինի։ Ամա սրանի մէջ Յոբը չմեղանչեց և Աստուծուն անզգամութիւն չտուաւ։

ԳԼ. Բ

1 Եւ մի օր եղաւ, որ Աստուծոյ որդիքն եկան Տիրոջ առաջին կանգնելու, և սատանան էլ եկաւ նորանց միջումը Տիրոջ ա-
2 ռաջին կանգնելու։ Եւ Տէրն ասեց սատանային. Որտեղից ես գալիս. և սատանան պատասխանեց Տիրոջը և ասեց. Երկրի վերայ շրջելուց և նորանում մտն
3 գալուց։ Եւ Տէրն ասեց սատանային. Ուշադրութիւն դարձրի՞ր իմ ծառայ Յոբի վերայ, որ նորա նմանը չկայ երկրի վերայ՝ կատարեալ և ուղիղ մարդ, աստուածավախ և չարութիւնից հեռացող, և տակաւին բռնած է իր կատարելութիւնը, թէպէտ և ինձ համոզում էիր, նորան
4 զուր տեղը կորցնելու։ Եւ սատանան պատասխանեց Տիրոջը և ասեց. Մորթի տեղ մորթ, նաև մարդս իր բոլոր ստացուածքն
5 իր անձի տեղ կ'տայ։ Բայց հիմա մեկնիր ձեռքդ և դպցրու նորա ոսկորին և նորա մարմնին, և թէ թէ որ քո երեսին քեզ չհայհոյէ։
6 Տէրն ասեց սատանային. Ահա նա քո ձեռքին լինէ, միայն թէ նորա կեանքը պահիր։
7 Եւ սատանան դուրս եկաւ Տիրոջ երեսի առաջիցը և զարկեց Յոբին չարաչար պալարներով նորա ոտքի թաթից մինչև նորա գա-
8 գաթը։ Եւ նա մի խեցի առած քերվում էր նորանով, և նստած էր մոխրի մէջ։

9 Եւ նորա կինն ասեց նորան. Դեռ բռնո՞ւած ես քո կատարելութիւնը։ Հայհոյիր Աստուծուն և մեռիր։ Եւ նա նորան ասեց.
10 Ցիմար կանանց մէկի խօսածի պէս ես խօսում. ուրեմն միայն բարիք ընդունենք Աստուածանից, և չարիքը չընդունենք։ Ամա սրանի մէջ Յոբը չմեղանչեց իր շրթունքովը։

11 Եւ Յոբի երեք բարեկամները լսեցին այս բոլոր չարիքը, որ եկել էր նորա վերայ. և եկան ամեն մէկն իր տեղիցը՝ Եղիփազ Թեմանացին, Բաղդատ Սաբեցին և Սոփար Նաամացին. և համաձայնեցան միասին, որ գնան նորան ցաւակից լինեն և նորան մխիթարեն։ Եւ հեռուանց բարձրացրին 12
իրանց աչքերը և նորան չճանաչեցին, և իրանց ձայնը բարձրացնելով լացին. և ամեն մէկն իր պատմուճանը պատառելով՝ հող ցանեցին իրանց գլխներին դէպի երկինքը։ Եւ նորա հետ նստեցին 13
հողի վերայ եօթն օր և եօթը գիշեր, և նորա հետ մի խօսք չէին խօսում. որովհետև տեսան որ ցաւը շատ սաստիկ էր։

ԳԼ. Գ

1 Նորանից յետոյ Յոբը բացաւ իր
բերանը և անիծեց իր օրը։
2 Եւ Յոբը պատասխանելով ասեց.
3 Կորչի այն օրը որ ես ծնուեցի, և այն գիշերը որ ասեց Թէ՝ Արու զաւակ գոյացաւ։
4 Այն օրը խաւար լինի, Աստուած նորան չհոգնէ վերևից, և նորա վերայ լոյս չծագէ։
5 Խաւարն ու մահուան սոսկութիւնը նորան սեփհականեն. ամպը նստի նորա վերայ. օրուան մեգը
նորան զարհուրեցնէ։
6 Այն գիշերը մառախուղը տանէ նորան. չուրախանայ նա տարուայ օրերի հետ. ամիսների թիւի մէջը չմտնէ։
7 Ահա այն գիշերը ամայի մնայ. ուրախութիւն չմտնէ նորա մէջը։
8 Նորան անիծեն օրն անիծողնե-

ը, որոնք պատրաստ են Լևիա-
թանին զարթեցնելու։
9 Նորա արշալոյսի աստղերը խա-
ւարուին, լուսի սպասէ, և չ'լինի.
և արևագալի թարթիչները չը-
տեսնէ.
10 Որ չ'գոցեց իմ ծնողի արգան-
դի դռները, և չ'ծածկեց տառա-
պանքն իմ աչքերից։
11 Ի՞նչու համար ծնողիս արգան-
դումը չ'մեռայ. որովայնից ելած
չ'վախճանուեցայ։
12 Ի՞նչու համար ծունկերն ինձ
դիմաւորեցին, և ի՞նչու ստինքը,
որ ես ծծեմ։
13 Որովհետև հիմա պառկած էի
և կ'հանգչէի, կ'քնանայի. ու-
րեմն հանգիստ կ'լինէի,
14 Թագաւորների և երկրի խորհըր-
դականների հետ, որոնք աւե-
րակներ շինեցին իրանց համար.
15 Կամ ոսկի ունեցող իշխանն-
երի հետ. որոնք իրանց տները լը-
ցրին արծաթով.
16 Կամ թաղուած վիժածի նման՝
որ չէի լինիլ. այն մանուկների նը-
ման, որոնք լոյս չ'տեսան։
17 Այնտեղ ամբարիշտները դա-
դարում են չարանալուց, և այն-
տեղ հանգչում են ուժից ըն-
կածները.
18 Կապուածները հանգստանում
են միասին, հարկահանի ձայնը
չեն լսում.
19 Փոքրը և մեծը այնտեղ են, ծա-
ռան էլ ազատ է իր տիրոջից։
20 Նա ի՞նչու համար է թշուառին
լոյս տալիս, և դառնահոգիներին՝
կեանք.
21 Որոնք սպասում են մահուան,
և նա չէ գալիս. և նորան գան-
ձերից աւելի են որոնում։
22 Որոնք ուրախանում են հրճ-
ուանքով, և զուարճանում են,
որ գերեզման են գտել.
23 Այնպիսի մարդի, որի ճանա-
պարհը կապուած է, և Աստ-
ուած փակել է նորա շրջա-
պատը։
24 Որովհետև *հացիս փոխարէն՝
հառաչանք է գալիս, և ջրերի
պէս հոսում են հեծեծանքս։
25 Որովհետև այն երկիւղալի բա-
նից որ վախենում էի, ինձ հան-
դիպեց, և ինչից որ սարսում էի,
հասաւ ինձ։
26 Ոչ խաղաղութիւն ունիմ, ոչ
հանգստութիւն, և ոչ հանդար-
տութիւն. և վրդովումն է եկել։

ԳԼ. Դ

1 Այն ժամանակ Եղիփազ Թեմա-
նացին պատասխանելով ասեց.
2 Թէ որ փորձենք քեզ մէկ խօսք
ասելու, կ'դժուարանա՞ս. և ո՞վ
է կարող ինքն իրան զսպել որ
չ'խօսէ։
3 Ահա դու շատերին ես խրատել,
և տկար ձեռքերը՝ զօրացրել։
4 Սասանողին կանգնեցրել են քո
խօսքերը, և ծռած ծունկերը
դուն կազդուրել ես։
5 Բայց հիմա որ քեզ է պատա-
հել, դժուարանում ես. քեզ
դիպաւ, և դու վրդովում ես։
6 Մի՞թէ քո երկիւղածութիւնը
չէ քո յոյսը, և քո ճանապարհ-
ների կատարելութիւնը՝ քո ա-
կընկալութիւնը։
7 Յիշիր, թէ ո՞ր անմեղն է կո-
րել. և ո՞րտեղ են արդարները
բնաջինջ եղել։
8 Ինչպէս որ տեսայ՝ անօրէնու-
թիւն հերկողները և անիրաւու-
թիւն սերմանողները նոյնն են հըն-
ձում։
9 Աստուծոյ շունչիցը կորչում են,
և նորա բարկութեան ոգուցը՝
փչանում։
10 Առիւծին մռնչիւնը և գոռա-
ցող առիւծի ձայնը կորուեցաւ, և
կորիւնների ատամները կորան։
11 Առիւծը կորչում է առանց որ-
սի, և մատակ առիւծի կորիւն-
ները ցրվում են։
12 Եւ գաղտուգողի մէկ խօսք ասա-
ուեցաւ ինձ, և իմ ականջը նո-
րանից մի շշունչ առաւ.
13 Գիշերուայ երևակայութիւն-
ների մտայուզութիւնների ժա-
մանակին, մարդկանց վերայ խոր
քուն ընկնելիս.
14 Երկիւղ պատահեց ինձ և դո-

*Կամ՝ հացիցս առաջ

ղում, և շարժեց իմ բոլոր ոս-
կերքը.
15 Առաջովս մի ոգի էլ անցաւ,
մարմնիս մազերը քստմնեցան։
16 Նա կանգնեց, և ես չ'ճանաչե-
ցի նորա կերպարանքը, մի երե-
ւոյթ կար աչքիս առաջին, սօ-
սափիւն եղաւ և ես մի ձայն լսե-
ցի, ԵՒ
17 Մի՞թէ մարդը Աստուածանից
արդար է, կամ մի այր՝ իր Ա-
րարչիցը մաքո՞ւր։
18 Ահա, Նա իր ծառաներին չէ
հաւատում, և իր հրեշտակնե-
րի վերայ պակասութիւն է գըտ-
նում.
19 Ո՞ւր մնացին կաւեղէն տնե-
րում բնակողները, որոնց հիմուն-
քը փոշիի մէջ է, և որոնք ջար-
դվում են ցեցի նման։
20 Առաւօտից մինչև երեկոյ փշրը-
վում են, առանց մէկի ուշադ-
րութեան կորչում են յաւիտ-
եան։
21 Ահա նորանց *լարը կ'կտրուի՝,
և նորանք կ'մեռնեն, այն էլ ոչ
իմաստութեամբ։

ԳԼ. Ե

1 Աղէ կանչիր, արդեօք քեզ պա-
տասխանող կա՞յ. և սուրբերից
դէպի որի՞ն պիտի դառնաս։
2 Իրաւ՝ յիմարին սպանում է
բարկութիւնը. և նախանձը մեռ-
ցնում է անմիտին.
3 Ես տեսել եմ որ յիմարն ար-
մատացած էր, բայց շուտով ա-
նիծել եմ նորա բնակութիւնը։
4 Հեռու էին նորա որդիքը փըր-
կութիւնից, և ջարդուեցան դը-
ռան մէջ, ու փրկող չ'կար.
5 Որի հունձքը սովածն է ու-
տում, և փուշերի միջիցն էլ
յափշտակում նորան, ու †ծա-
րաւները կուլ են՝ տալիս նորանց
ստացուածքը։
6 Որովհետև հողից չարիք չի դուրս
գալ, և գետնից թշուառութիւն
չի բղխիլ։
7 Ապա մարդս թշուառութեան
համար է ծնուած, ինչպէս որ կը-
րակի կայծերը բարձրանում են
թռչելով։
8 Սակայն ես Աստուծոյ մօտ կը
դառնայի, և Աստուծուն կ'յանձ-
նէի իմ գործը,
9 Որ մեծամեծ բաներ է գործում
և անքննելի սքանչելիքներ, որոնց
թիւ չ'կայ։
10 Նա անձրև է տալիս երկրի ե-
րեսին, ու դաշտերի վերայ՝ ջու-
րեր ուղարկում,
11 Ցածերին բարձրութեան մէջ
դնելու համար, որպէս զի սգա-
ւորները բարձրանան ազատուեն։
12 Նա խափանում է խորամանգ-
ների հնարները, և նորանց ձեռ-
քերը մի յաջողակ բան չեն անում։
13 Նա բռնում է իմաստուններին
իրանց խորագիտութիւններում, և
նենգաւորների խորհուրդն շտա-
պելով խափանվում է։
14 Ցերեկով մութի են հանդի-
պում, և ինչպէս թէ գիշերով
խարխափում են կէսօրին։
15 Նա ազատում է աղքատին՝
սուրից, նորանց բերանիցը և հզօ-
րի ձեռքիցը։
16 Եւ այսպէս խեղճի համար յոյս
է լինում. և անօրէնութիւնը
խփում է իր բերանը։
17 Ահա երանելի է այն մարդը,
որին Աստուած խրատում է, ու-
րեմն Ամենակարողի խրատը մի
մերժիր։
18 Որովհետև նա խոցում է, և
փաթաթում էլ է. նա զարկում
է, և նորա ձեռքը բժշկում էլ է։
19 Նա վեց նեղութիւններից քեզ
կ'ազատէ, և եօթներորդում քեզ
չարիք չի դպչիլ։
20 Սովի ժամանակին նա քեզ կ'ա-
զատէ մահից, և պատերազմի մէջ՝
սուրի ձեռքիցը։
21 Լեզուի խարազանից կ'ծած-
կուիս, և չես վախենալ այն կոր-
ծանումից, որ գալու է։
22 Կործանման ու սովի վերայ կը
ծիծաղես, և երկրի գազաններիցը
չես վախենալ։

*Կամ՝ վրանի պարանը կ'խլուի,
կամ՝ փառաւորութիւնը կ'վեր-
ցուի,
†Կամ՝ աւարառուն կուլ է

23 Որովհետև դաշտի քարերի հետ
կ'լինի քո դաշինքը, և դաշտի
գազանները կ'խաղաղանան քեզ
համար։
24 Եւ դու կ'իմանաս որ խաղա-
ղութիւնը քո վրանն է, և կ'այ-
ցելես քո բնակարանը, և պակա-
սութիւն չես գտնիլ։
25 Եւ կ'գիտենաս որ քո զաւակ-
ները շատ են, և քո սերունդը՝
երկրի խոտերին պէս։
26 Ալևորած կ'գնաս գերեզմանը,
ինչպէս որ խուրձը դիզվում է իր
ժամանակին։
27 Ահա այս քննել ենք, այսպէս
է. մտիկ արա սորան, և ինքդ
հասկացիր քեզ համար։

ԳԼ. Զ

1 Եւ Յոբը պատասխանելով ասեց.
2 Ո՜հ եթէ կշռով կշռուէր իմ
տրտմութիւնը, և իմ ցաւերը
միանգամայն կշռքի մէջ դըր-
ուէին։
3 Որովհետև հիմա ծովերի աւա-
զիցը ծանր է. նորա համար իմ
խօսքերը բարբանջանք են.
4 Որովհետև Ամենակարողի նե-
տերն ինձանում են, նորանց
թոյնը ծծում է իմ հոգիին, Աս-
տուծոյ արհաւիրքները շարուել
են ինձ դէմ։
5 Մի՞թէ ցիռը կ'զռայ խոտի կըշ-
տին. կամ եզը կ'բառաչէ՞ իր կե-
րակրի մօտին։
6 Մի՞թէ անհամ բանը կ'ուտուի
առանց աղի, կամ հա՞մ կայ
ձուի սպիտակուցի մէջ։
7 Այն որ սիրտս չէր ուզում
դիպչել, նա է եղել իմ զզուե-
լի ուտելիքը։
8 Երանի թէ ուզածս կատար-
ուէ՜ր. և իմ ակնկալածը տա՜ր
Աստուած.
9 Եւ հաւանէ՜ր Աստուած ինձ
ջարդելու, և ձեռքն արձակէ՜ր
ու ինձ կտրէր։
10 Այն ժամանակ դեռ մխիթա-
րութիւն կ'ունենայի, և կ'ոս-
տոստէի անխնայ ցաւի մէջ, որ
չեմ ուրացել Սուրբի խօսքերը։
11 Ի՞նչ է իմ ոյժը որ դիմանամ.
և ի՜նչ է իմ վերջը, որ երկայ-
նամիտ լինիմ։
12 Կամ քարերի՞ զօրութիւնն է
իմ զօրութիւնը. կամ իմ մար-
մինը պղի՞նձ է։
13 Կամ չէ՞ որ մօտիս օգնութիւն
չ'կայ. և յաջողութիւնը հեռա-
ցած է ինձանից։
14 Հալումաշ եղողին ողորմու-
թիւն է պէտք իր բարեկամիցը,
թէև նա Ամենակարողի վախն էլ
թողած լինէր։
15 Իմ եղբայրները խաբում են
հեղեղատի պէս, ձորի պէս, որով
հեղեղներ են անցել։
16 Որոնք պղտորած են սառից,
նորանցում ձիւն է ծածկուած.
17 Տաքանալիս՝ դադարում են,
շոգ ժամանակին իրանց տեղերի-
ցը ցամաքում են։
18 Նորանց ճանապարհների գը-
նացքը պտոյտ է տալիս, հաս-
նում են անապատին և կորչում
են։
19 Թեմայի կարաւանները նայե-
ցին, Սաբայի ճանապարհորդները
նորանց յուսացին.
20 Ամաչեցին, որ յուսացել էին,
մինչև այնտեղ դնացին, և ամօ-
թահար եղան։
21 Այսպէս հիմա դուք ոչինչ էք.
տեսաք սոսկալի բան և սարսա-
փեցիք։
22 Արդեօք ասե՞լ եմ, թէ ինձ հա-
մար բերէք, և ձեր ստացուած-
քիցը ընծայ տուէք ինձ համար.
23 Եւ ինձ ազատեցէք իմ թըշ-
նամիի ձեռքիցը, և բռնաւորնե-
րի ձեռքից ինձ փրկեցէք։
24 Դուք սովորեցրէք ինձ և ես կը
լռեմ. և ինչ որ սխալուել եմ
հասկացրէք ինձ։
25 Ի՜նչ թափանցիկ են ուղիղ
խօսքերը. բայց ի՞նչ է յանդիմա-
նում ձեզանից եկած յանդիմա-
նութիւնը։
26 Արդեօք մտածո՞ւմ էք խօսքեր
յանդիմանել. յուսահատի խօս-
քերը քամիի խօսքեր են։
27 Նոյն իսկ որբի վերայ վիճակ կը
գցէիք. և ձեր բարեկամին կ'վա-
ճառէիք։
28 Բայց հիմա հաճեցէք ինձ նա-

յելու, և ես մի՞թէ ձեր երեսին
սուտ կ'ասեմ.
29 Դարձէք խնդրեմ, որ անիրա-
ւութիւն չ'լինի. այս, դարձէք,
տեսէք որ իմ արդարութիւնը նո-
րանում է։
30 Մի՞թէ իմ լեզուի վերայ ա-
նիրաւութիւն կայ. մի՞թէ իմ
քիմքը չէ զանազանում չար բա-
ները։

ԳԼ. Է

1 Չէ՞ որ մարդս զինուորութիւն
ունի երկրիս վերայ. և նորա օրե-
րը վարձկանի օրերի պէս են։
2 Ինչպէս որ ծառան է շուքի ծա-
րաւում, և ինչպէս վարձկանն է
իր վարձին սպասում,
3 Այսպէս էլ իմ բաժինը եղան
ունայնութեան ամիսներ. և թըշ-
ուառութեան գիշերներ սրոշուե-
ցան ինձ համար։
4 Պառկելիս ասում եմ թէ Ե՞րբ
եմ վեր կենալու, և իրիկունը
երկարանում է, և ես կշտացած
եմ լինում մինչև առաւօտ պա-
րան պարան անելուց։
5 Մարմինս որդեր՝ և հողի կոշ-
տեր է հագել, մորթս ճեղք-
վում է և հալվում։
6 Օրերս մագոգից շուտ են վա-
զում, և վերջանում են առանց
յոյսի։
7 Յիշիր որ կեանքս քամի է, աչքս
միւսանգամ բարիք չէ տեսնելու։
8 Ինձ տեսնողի աչքը այլևս ինձ
չէ տեսնելու, աչքդ ինձ մտիկ
կ'տայ, և ես այլ ևս չ'կամ։
9 Ամպը անցնում է գնում, այն-
պէս էլ *գերեզման իջնողը վեր չի
գալ.
10 Միւսանգամ ետ չի դառնալ
իր տունը, և նորան չի ճանաչիլ
նորա տեղը։
11 Ես էլ չեմ զսպելու իմ բե-
րանը, խօսելու եմ հոգուս նե-
ղութեան ժամանակին, գանգա-
տելու եմ սրտիս դառնութեան
ժամանակին։

*Կամ՝ մեռելների բնակարանն. Գրաբար՝ դժոխք

12 Ծո՞վ եմ ես միթէ, կամ
վիշա՞պ, որ դու վերաս պահա-
պան ես դրել։
13 Երբոր ասում եմ, թէ անկո-
ղինս ինձ մխիթարելու է, մա-
հիճս կ'տանէ իմ գանգատը.
14 Այն ժամանակ դու ինձ վա-
խեցնում ես երազներով, և ցը-
նորքներով զարհուրեցնում ես
ինձ.
15 Որ իմ հոգին ընտրում է խեղ-
դուիլը, և մահը՝ քան թէ այս
ոսկորներս։
16 Ես ձանձրացել եմ, յաւիտ-
եան չեմ ապրելու, հեռացիր ին-
ձանից, որովհետև օրերս ունայ-
նութիւն են։
17 Ի՜նչ է մարդը, որ դու նորան
մեծարես. և որ ուշադրութիւնդ
նորան դարձնես։
18 Եւ նորան այցելես ամեն ա-
ռաւօտ, ամեն վայրկեան նորան
փորձես։
19 Մինչև ե՞րբ չես ետ կենալու
ինձանից. չե՞ս թող տալու որ
թուքս կուլ տամ։
20 Մեղանչել եմ. ի՞նչ եմ արել
քեզ, ով մարդիկ Դիտող. ի՞ն-
չու ես ինձ քեզ համար նշան
դրել, որ ես ինձ վերայ բեռ եմ
դառել։
21 Եւ ի՞նչու չես ներում իմ մեղ-
քը, և իմ անօրէնութիւնը չես
թողում. որովհետև հիմա պիտի
հողումը պառկեմ, վաղը կ'որո-
նես ինձ, և ես չ'կամ։

ԳԼ. Ը

1 Այն ժամանակ Բաղդատ Սօքե-
ցին պատասխանելով ասեց.
2 Մինչև ե՞րբ պիտի այդ խօ-
սես. մինչդեռ մեծ քամի են քո
բերանի խօսքերը։
3 Մ՞իթէ Աստուած կ'դարձնէ
դատաստանը, կամ Ամենակարո-
ղը արդարութի՞ւնը կ'դարձնէ։
4 Եթէ որդիքդ նորա դէմ մե-
ղանչել են, նա էլ նորանց մատ-
նել է իրանց յանցանքի ձեռքը։
5 Եթէ դու կանուխ դէպի Աստ-
ուած դառնաս, և Ամենակարո-
ղին աղաչես,

6 Եթէ դու մաքուր և ուղիղ լի-
նիս, նա այն ժամանակ անպատ-
ճառ կ'զարթնէ քեզ համար, և
կ'ապահովացնէ քո արդարու-
թեան բնակարանը.
7 Թէպէտև քո սկիզբը պզտիկ
լինի, քո վերջը շատ կ'մեծանայ։
8 Բայց ա՛ղէ հարցրու առաջի
սերունդից, և ուշ դարձրու նո-
րանց հայրերի քննութեանը,
9 Որովհետև մենք երէկուանն
ենք և չենք հասկանում, որով-
հետև ստուեր են մեր օրերը եր-
կրի վերայ.
10 Ահա նորանք քեզ կ'սովորե-
ցնեն և քեզ կ'ասեն, և իրանց
սրտիցը խօսքեր կ'արտասանեն։
11 Մի՞թէ պրտուն կ'բուսնի ա-
ռանց տիղմի. կնիւնը կ'աճէ՞ ա-
ռանց ջրի.
12 Նա դեռ իր դալարութեան
մէջ՝ չ'կտրուած՝ ամեն խոտից ա-
ռաջ կ'չորանայ։
13 Այսպէս են բոլոր Աստուծուն
մոռացողների ճանապարհները. և
կեղծաւորի յոյսը պիտի կորչի։
14 Որովհետև նորա վստահութիւ-
նը պիտի կտրուի, և նորա յոյսը
սարդի *ոստայն է։
15 Նա կ'կռնէ իր տանը վերայ,
և նա չի դիմանալ, նա կ'բռնէ
նորանից, բայց նա չի կենալ։
16 Նա դալար է արեգակից ա-
ռաջ, և նորա ճիւղերը նորա
պարտէզիցը վեր.
17 Նորա արմատները քարակոյ-
տին են փաթաթվում, քարերի
դէզի մէջն է մտնում։
18 Բայց երբոր նորան խլում են
իր տեղիցը, տեղը ուրանում է
նորան, թէ Քեզ չեմ տեսել։
19 Ահա սա է նորա ուրախ ճա-
նապարհը, և հողիցը ուրիշներն
են բուսնում։
20 Տես՝ Աստուած չէ մերժում
արդարին, և չէ բռնում չարերի
ձեռքիցը.
21 Մինչև որ բերանդ լցնէ ծիծա-
ղով, և շրթունքներդ՝ ցնծու-
թեան ձայնով։
22 Քեզ ատողներն ամօթով պի-
տի ծածկուին, և ամբարիշտների
վրանը կ'չքանայ։

ԳԼ. Թ

Եւ Յորը պատասխանելով ասեց. 1
Իրաւ դիտեմ որ այդպէս է, 2
և մարդս ի՞նչպէս կ'արդարանայ
Աստուծոյ մօտ։
Եթէ նա ուզէ նորա հետ վի- 3
ճել, հազարիցը մէկին չէ կարող
պատասխան տալ.
Նա սրտով իմաստուն և ու- 4
ժով զօրեղ է. ո՞վ է դէմ կա-
ցել նորան, և ողջ մնացել։
Նա որ տեղափոխում է լեռ- 5
ները, և նորանք չ'գիտեն, որ նո-
րանց տապալում է իր բարկու-
թեան ժամանակին.
Նա որ շարժում է երկիրն իր 6
տեղիցը, և նորա սիւները դող-
դողում են.
Որ արևին հրամայում է, և 7
նա չէ ծագում, և աստղերը կընքում է.
Որ երկինքը տարածում է մի- 8
նակ, և գնում է ծովի կուտակ-
ների վերայ.
Որ արաւ Արջը, Հայկը և Բազմ- 9
աստեղը, և Հարաւի շտեմարան-
ները.
Որ մեծամեծ բաներ է անում՝ 10
անքննելի, և սքանչելիքներ՝ ան-
թիւ։
Տես՝ նա իմ մօտովը կ'անցնէ, 11
և ես չեմ տեսնիլ. և անց կ'կե-
նայ՝ և ես չեմ իմանալ։
Տես՝ եթէ նա յափշտակէ, ո՞վ 12
նորան ետ կ'պահէ. ո՞վ կ'ասէ
նորան թէ Ի՞նչ ես անում։
Աստուած իր բարկութիւնը ետ 13
չի դարձնիլ, նորա տակին կ'խո-
նարհուին †Ռաքաբի օգնական-
ները։
Ապա ո՞ւր մնաց որ ես նորան 14
պատասխանեմ. և խօսքերս ընտ-
րեմ նորա հետ վիճելու։
Որովհետև արդար էլ լինիմ, 15
պատասխան չեմ տալ. իմ Դա-
տաւորին պիտի աղաչեմ.
Եթէ ես կանչէի, և նա պա- 16

*Եբր. տուն

†Կամ՝ հպարտ

տասխանէ՞ր. չեմ հաւատալ, թէ
նա իմ ձայնս կ'լսէ.
17 Նա որ ինձ փոթորիկով կ'փրշ-
րէ, և զուր տեղը կ'շատացնէ իմ
վէրքերը.
18 Թող չի տալ ինձ որ շունչ առ-
նեմ. որովհետև ինձ դառնու-
թիւններով կ'կշտացնէ։
19 Եթէ բանը զօրաւորի ուժումն
է, ահա նա. իսկ եթէ իրաւուն-
քում, ո՞վ կ'կանչէ ինձ։
20 Եթէ ես արդար լինիմ, բե-
րանս ինձ կ'դատապարտէ. եթէ
ես կատարեալ լինիմ, նա ինձ
յանցաւոր կ'անէ։
21 Եթէ ես կատարեալ լինիմ,
իմ անձը չեմ ճանաչիլ, կեանքս
կ'արհամարհեմ։
22 Մէկ է. նորա համար ասում
եմ թէ նա կորցնում է կատար-
եալին և ամբարշտին։
23 Եթէ հարուածը յանկարծ մեռ-
ցնէ, նա կ'ծիծաղէ անմեղի փոր-
ձանքի վերայ։
24 Երկիրը չարագործի ձեռքն է
յանձնուել. նորա դատաւորնե-
րի երեսը ծածկում է նա, եթէ
ոչ, ապա ո՞վ է այն անողը։
25 Եւ իմ օրերը փախան սուր-
հանդակից արագ. վազեցին՝ բա-
րիք չ'տեսան։
26 Անցան սէզից շինուած նաւերի
պէս, որսի վերայ յարձակուող
արծիւի պէս։
27 Եթէ ասելու լինիմ՝ Մոռա-
նամ գանգատս, երեսիս փխրա-
թիւնը թողեմ և զուարթանամ,
28 Այն ժամանակ սարսափում
եմ բոլոր ցաւերիցս. դիտեմ որ
ինձ անմեղ չես համարիլ։
29 Ես պիտի ամբարիշտ լինիմ,
ուրեմն ի՞նչու համար զուր տեղը
տանջուիմ։
30 Եթէ ձիւնի ջրի մէջ լուա-
ցուիմ, և մոխրաջրով մաքրեմ
ձեռքերս,
31 Այն ժամանակ էլ ինձ փոսի
մէջ կ'կոխէիր, և իմ հանդերձը
կ'զզուէին ինձանից։
32 Որովհետև նա ինձ նման մարդ
չէ, որ պատասխանէի իրան, մի-
ասին դատաստան գնայինք։
33 Մեր մէջտեղը միջնորդ դատա-
ւոր չի լինիլ, որ ձեռքը մեր եր-
կուսի վերայ դնէր։
Թող հեռացնէ իմ վերայից իր 34
գաւազանը, և նորա սարսափն
ինձ չ'զարհուրեցնէ.
Այն ժամանակ կ'խօսէի, և ի- 35
րանից չէի վախենալ. որովհետև
այսպէս՝ ես իմը չեմ։

ԳԼ. Ժ

Հոգիս կեանքիցս զզուել է. բաց 1
թողեմ ինձ համար գանգատս.
խօսեմ հոգուս դառնութեան
ժամանակին.
Ասեմ Աստուծուն. Ինձ մի 2
դատապարտիր. յայտնիր ինձ թէ
ինչի համար ես վիճում ինձ հետ։
Մի՞թէ քեզ հաճելի է, որ 3
հարստահարես, որ արհամարհես
քո ձեռքի աշխատանքը, և չա-
րերի խորհրդին լոյս տաս։
Մի՞թէ քո աչքերը մարմնաւոր 4
են. կամ թէ մարդի տեսածի՞ն
պէս կ'տեսնես.
Մի՞թէ մարդի օրերի պէս են 5
քո օրերը. կամ թէ քո տարի-
ները՝ մարդի՝ օրերի պէս.
Որ իմ յանցանքն ես որոնում, 6
և իմ մեղքը՝ քննում։
Քեզ յայտնի է որ յանցաւոր 7
չեմ. բայց քո ձեռքից փրկող
չ'կայ։
Քո ձեռքերն են ինձ կազմել 8
և ստեղծել բոլորովին շուրջանա-
կի, և դու ինձ խորտակո՞ւմ ես։
Մէկ յիշիր որ ինձ կաւի պէս 9
շինեցիր. և ինձ հո՞ղ ես դար-
ձնելու։
Դու չ'թափեցի՞ր ինձ կաթի 10
պէս, և պանրի պէս թանձրացրիր։
Դու մորթով և մսով հագ- 11
ցրիր ինձ, և ոսկորներով ու ջի-
ղերով հինեցիր ինձ։
Կեանք և ողորմութիւն շնոր- 12
հեցիր ինձ, և քո խնամքը պա-
հեց իմ հոգուն։
Եւ սորանց պահեցիր քո սըր- 13
տումը. դիտեմ որ սորանք քեզ
մօտ էին.
Որ եթէ մեղանչեմ, դու ինձ 14
դիտես, և իմ մեղքիցը ինձ չ'ար-
դարացնես։

15 Եթէ ամբարշտութիւն անեմ, վա՛յ ինձ. արդար էլ լինիմ գլուխս չեմ կարող բարձրացնել. լցուած եմ անարգանօք. և տես թշուառութիւնս։
16 Բարձրանայ էլ, առիւծի պէս ինձ կ'որսաս, և դարձեալ կ'յաղթահարես ինձ.
17 Վկաներդ կ'նորոգես իմ առաջին, և բարկութիւնդ ինձ դէմ կ'շատացնես. փոփոխութիւններ և պատերազմ է հետս։
18 Ուրեմն ի՞նչու համար ինձ հանեցիր արգանդից. երանի՜ թէ մեռած լինէի և աչք ինձ չ'տեսնէր,
19 Որ չ'եղածի պէս լինէի, մօրս արգանդիցը գերեզմանը տարուէի։
20 Քիչ չե՞ն իմ օրերը. դադարիր և ետ կաց ինձանից, որ մի քիչ հանգչեմ։
21 Այնտեղ գնալուցս առաջ, որ ետ չեմ դառնալու, խաւարի և մահուան ստուերի երկիրը.
22 Մառախուղի երկիրը, որ մահուան ստուերի խաւարին է նման, և կարգ չ'կայ, և լոյսը մթին խաւարի նման է։

ԳԼ. ԺԱ

1 Այն ժամանակ Սոփար Նաամացին պատասխանելով ասեց.
2 Մի՞թէ շատ խօսքերին պատասխան չի լինիլ, կամ լեզուանի մարդը պիտի արդա՞ր դուրս գայ.
3 Քո բարբանջանքնե՞րը պիտի մարդկանց լռեցնեն, և դուծաղրես, և յանդիմանող չ'լինի՞։
4 Որ ասում ես. Իմ խրատը մաքուր է. և իստակ եմ քո աչքի առաջին։
5 Սակայն երանի՜ թէ Աստուած խօսէր, և իր շրթունքը բանար քեզ հետ.
6 Եւ քեզ իմաստութեան գաղտնիքը յայտնէր, որ կրկնապատիկ էր վայելուչը. ուրեմն իմացիր որ Աստուած մոռանում է քո անօրէնութեան մէկ մասը։
7 Կարո՞ղ ես Աստուծոյ խորհուրդը գտնել. կամ Ամենակարողի էութեանը հասնի՞լ։
8 Նա երկնքի բարձրութիւնն ունի, ի՞նչ կ'անես դու. դժոխքից խոր է նա, ի՞նչ կ'հասկանաս։
9 Նորա չափը երկրից երկայն է, և լայն է ծովիցը։
10 Եթէ նա անց կենայ և բռնէ, և դատի ժողովէ, ո՞վ նորան ետ կ'պահէ.
11 Որովհետև նա ճանաչում է խաբեբայ մարդկանց, և տեսնում է անօրէնութիւն, և ուշը չէ դարձնում։
12 Բայց փուճ մարդը մտածում է մեծամեծ, և մի վայրի էշի ձագն էլ է իբրև մարդ ծնվում։
13 Եթէ դու ուղղես քո սիրտը, և ձեռքերդ դէպի նորան տարածես,
14 Թէ որ ձեռքումդ անօրէնութիւն կայ, նորան հեռացրու, և քո վրաններումը անզգամութիւն թող չ'բնակուէ։
15 Ահա այն ժամանակ կ'բարձրացնես երեսդ անարատ և հաստատ կ'լինիս և չես վախենալ։
16 Որովհետև թշուառութիւնը կ'մոռանաս, անցած ջրերի պէս միտքդ կ'գայ.
17 Եւ կեանքը կէսօրից պայծառ կը կանգնէ, խաւարուի էլ՝ առաւօտեան պէս պիտի լինի։
18 Եւ դու ապահով կ'լինիս, որովհետև յոյս կայ. և խորը կը մտնես՝ ապահով կ'քնես.
19 Եւ կ'պառկես, ու վախեցնող չի լինիլ. և շատերը քեզ կ'աղաչեն։
20 Բայց ամբարիշտների աչքերը պիտի նուաղին, և ապաստանը պիտի կորչէ նորանցից, և նորանց յոյսը հոգեվարքի է։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Յոբը պատասխանելով ասեց.
2 Արդարև դուք էք միայն ժողովուրդ, և ձեզ հետ մեռնելու է իմաստութիւնը։
3 Ես էլ ձեզ պէս խելք ունիմ, ես ձեզանից պակաս չեմ. և այսպիսի բաներ ո՞վ չ'դիտէ։

4 Իր բարեկամից ծաղր եղող եմ դառել ես, որ Աստուծուն կանչեցի, և նա պատասխանեց. ծաղրվում է արդարը՝ կատարեալը։
5 Թշուառին արհամարհանք է վայելում ապահովի կարծիքի համեմատ, որ պատրաստ է ոտքը սահողի համար։
6 Ապահով են աւազակների վրանները, և հանդարտ՝ Աստուծուն բարկացնողներինը, որ կարծես թէ Աստուծուն տանում է իր ձեռքին։
7 Բայց ա՛ղէ հարցրու անասուններին, որ քեզ սովորեցնեն, և երկնքի թռչուններին, որ քեզ իմացնեն։
8 Կամ խօսիր երկրի հետ, և նա քեզ կ'սովորեցնէ, և քեզ կը պատմեն ծովի ձկները։
9 Ո՞վ չի հասկանալ այս բոլոր բաներովը, որ Տիրոջ ձեռքն է արել այս բաները,
10 Որ նորա ձեռքին է բոլոր կենդանիի կեանքը, և բոլոր մարդկային մարմնի հոգին։
11 Մի՞թէ ականջը չէ որոշում խօսքերը, և ուտող քիմքը՝ համն առնում։
12 Ալևորներումն է իմաստութիւնը, և երկայն օրերում՝ գիտութիւնը։
13 Նորանում է իմաստութիւնը և զօրութիւնը. խորհուրդը և գիտութիւնը նորանն է։
14 Տես՝ նա կ'քանդէ, ու չի շինուիլ. մէկի վերայ կ'կողպէ, ու չի բացուիլ։
15 Տես՝ նա կապում է ջուրերը, և նորանք չորանում են, և բաց է թողում նորանց, ու երկիրը տակն ու վերայ են անում։
16 Զօրութիւնն ու հանճարը նորա մօտ է, նորանն են մոլորեցընողն ու մոլորեալը։
17 Նա ման է ածում խորհրդականներին կողոպտուած, և դատաւորներին՝ յիմարացած։
18 Նա է թագաւորների կապերը լուծում, և նա է նորանց մէջքին գօտի կապում։
19 Նա ման է ածում քահանաներին կողոպտուած, և զօրաւորներին կործանում է։
20 Անձնապաստաններից առնում է նա լեզուանիութիւնը, և ծերերի խելքը՝ խլում։
21 Ազնուականների վերայ անարգանք է թափում, և զօրաւորների կապը թուլացնում է։
22 Պարզում է խորերը խաւարից, և մահուան ստուերը դուրս է բերում լոյսի մէջ։
23 Ազգերին *յաջողութիւն է տալիս՝, և նորանց կորցնում է. փռում է ազգերը և նորանց՝ հաւաքում։
24 Առնում է երկրի ժողովուրդների գլխաւորների խելքը, և մոլորեցնում է նորանց անճանապարհ անապատում։
25 Նորանք խարխափում են խաւարում, և լոյս չ'ունին. և նա նորանց մոլորեցնում է արբածների պէս։

ԳԼ. ԺԳ

1 Տես՝ այդ ամենը տեսել է իմ աչքը, ականջս լսել է և հասկացել է։
2 Ձեր գիտեցածի չափ ես էլ գիտեմ, ես ձեզանից պակաս չեմ։
3 Բայց ես կ'սաղէի Ամենակարողի հետ խօսել, և կ'փափաքէի Աստուծոյ մօտ դատ վարել։
4 Սակայն դուք սուտեր հնարողներ էք, փուճ բժիշկներ էք դուք ամենքդ։
5 Երանի՜ թէ բոլորովին լռէիք, և դա ձեզ համար իմաստութիւն կ'լինէր։
6 Լսեցէք՝ խնդրեմ՝ իմ խրատը, և իմ շրթունքների փաստերին ականջ դրէք։
7 Աստուծո՞յ համար էք անիրաւութիւն խօսում, և նորա՞ համար՝ նենգութիւն խօսում։
8 Մի՞թէ նորան էք երեսպաշտութիւն անում, կամ Աստուծո՞յ համար էք փաստաբանում։
9 Լա՞ւ է որ նա ձեզ քննէ, կամ նորան խաբելո՞ւ էք ինչպէս մարդը խաբում են։

*Կամ՝ բազմացնում է,

10 Անպատճառ նա ձեզ կ'յան-
դիմանէ, եթէ ծածուկ էլ երես-
պաշտութիւն անէք։
11 Մի՞թէ նորա վեհութիւնը ձեզ
չի զարհուրեցնելու և նորա եր-
կիւղը՝ ձեզ վերայ ընկնելու։
12 Ձեր յիշատակութիւնները մոխ-
րի առակներ են. ցեխի պատնէշ-
ներ՝ ձեր պատնէշները։
13 Լռեցէք ինձ մօտ, որ խօսեմ
ես, և ինձ վերայ թող գայ ինչ
որ լինի։
14 Ի՞նչու համար մարմինս ատամ-
ներովս կրեմ, և հոգիս՝ ափիս
մէջը դնեմ.
15 Տես՝ թէ որ ինձ սպանէ, ես
նորան եմ յուսալու, միայն իմ
ճանապարհները նորա առաջին
պաշտպանեմ։
16 Նաև նա է իմ փրկութիւնը,
որ կեղծաւորը նորա առաջին չի
գալ։
17 Լաւ լսեցէք իմ խօսքը, և իմ
բացատրութիւնը ձեր ականջնե-
րին հասնէ։
18 Ահա ես դատս կարգի եմ դը-
րել, գիտեմ, որ արդար եմ լի-
նելու։
19 Ո՞վ է որ ինձ հետ վիճէ, որ
հիմա լռէի և մեռնէի։
20 Միայն այս երկու բանը մի ա-
նիր ինձ, այն ժամանակ չեմ
թաքչուիլ քո երեսիցը.
21 Ձեռքդ ինձանից հեռացրու,
և քո երկիւղն ինձ չ'զարհուրե-
ցնէ։
22 Ցետոյ կանչիր, և ես պատաս-
խանեմ, կամ ես խօսեմ, և դու
պատասխան տուր։
23 Ո՞րչափ են իմ անօրէնութիւն-
ներն ու մեղքերը, իմ յանցան-
քըն ու մեղքը իմացրու ինձ։
24 Ի՞նչու համար ես երեսդ ծած-
կում, և ինձ՝ թշնամի համա-
րում քեզ։
25 Մի՞թէ տերեւից քշուած տերե-
ւին ես վախեցնում, կամ թէ
չոր մղեղին ես հալածում։
26 Որովհետև դու ինձ դառնու-
թեան վճիռ ես տալիս, և ինձ
ժառանգութիւն ես տալիս իմ
երիտասարդութեան անօրէնու-
թիւնները։

Եւ ոտքերս դնում ես կոճ- 27
ղում, և դիտում ես իմ բոլոր
ճանապարհները, ոտքիս շաւիղ-
ներին գծեր ես փորում։
Որ փտածի պէս վայր է ընկ- 28
նում, ինչպէս ցեց կերած հա-
գուստ է։

ԳԼ. ԺԴ

Կնկանից ծնուած մարդը կարճ 1
կեանք ունի և լիքն է ցաւով։
Ծաղկի պէս ծլում է և թօթա- 2
փում է, և փախչում է ստուե-
րի պէս՝ չէ կանգնում.
Մանաւանդ մի այսպիսու վե- 3
րայ էլ բանում ես աչքերդ, և
ինձ տանում ես դատաստան քեզ
հետ։
*Երանի՞ թէ մէկ մաքուրը յա- 4
ռաջ գար անմաքուրից՝. բայց
ոչ մէկն էլ չ'կայ։
Որովհետև նորա օրերը որոշ- 5
ուած են, նորա ամիսների թիւը
քեզ մօտ է, սահման ես դրել
նորա համար, և նա չի անցնիլ.
Ուրեմն երեսդ դարձրու նորա- 6
նից որ հանգչէ, մինչև որ վարձ-
կանի պէս լրացնէ իր օրը։
Որովհետև ծառն էլ տակա- 7
ւին յոյս ունի. եթէ կտրուի,
դարձեալ կ'ծլի, և նորա ճիւղե-
րը չեն պակասիլ։
Թէև նորա արմատը հողումը 8
ծերացած լինի, և նորա բունը
մեռած լինի փոշիի մէջ.
Եւ ջրի հոտիցը էլի կ'ծաղկի և 9
ճիւղեր կ'արձակէ նոր տնկուա-
ծի պէս։
Բայց մարդս մեռնում է ընկ- 10
նում, և մարդս վախճանվում է,
և ո՞ւր է։
Ջուրերը ծովակիցը հոսում են, 11
և գետը ցամաքում չորանում է.
Այնպէս էլ մարդս պառկում 12
է և վեր չէ կենում. մինչև եր-
կինքն՝ էլ չ'լինի, վեր չեն կենալ,
և իրանց քնիցը չեն զարթնել։
Երանի՞ թէ ինձ դժոխքումը 13
ծածկէիր, թաքցնէիր մինչև քո

*Կամ՝ Անմաքուրից ո՞վ է կարող
մաքուրը հանել.

բարկութեան անցնելը, ինձ սահ-
ման որոշէիր և յետոյ ինձ յի-
շէիր։
14 Եթէ մարդս մեռաւ, մի՞թէ
կ'կենդանանայ. պատերազմիս բո-
լոր օրերը սպասելու եմ, մինչև
որ իմ նորոգուիլը գայ։
15 Դու մէկ կանչէիր, և ես քեզ
պատասխան տայի, և դու կ'հա-
ճէիր քո ձեռքի գործին։
16 Որովհետև դու հիմա հաշվում
ես իմ քայլերը. իմ մեղքը չե՞ս
ղննում։
17 Կնքուած է ծրարի մէջ իմ
մեղքը, և դու աւելացրել ես
մեղք իմ մեղքի վերայ։
18 Եւ մինչև անգամ սարը ընկ-
նում փշրվում է, և ապառաժը
փոխվում է իր տեղիցը.
19 Ջուրերը մաշեցնում են քա-
րերը. նորա հոսանքները ողողում
են երկրի հողը. բայց դու մար-
դիս յոյսը փչացնում ես։
20 Դու նորան յաղթահարում ես
իսպառ. և նա գնում է, նորա
դէմքը փոխելով, բաց ես թո-
ղում նորան։
21 Նորա որդիքը պատիւ ունին՝
նա չ'գիտէ. կամ անարգ են՝ նա
նորանց չէ տեսնում։
22 Միայն նորա վերայի մարմինն
է ցաւում, և նորա հոգին՝ նո-
րանում տրտմում։

ԳԼ. ԺԵ

1 Այն ժամանակ Եղիփազ Թե-
մանացին պատասխանելով ասեց.
2 Մի՞թէ մէկ իմաստուն օդանը-
ման գիտութիւն կ'պատասխանէ,
և իր փորը արևելեան քամիով
կ'լեցնէ.
3 Անպիտան բաներով փաստա-
բանելով. և անօգուտ խօսքերով։
4 Մանաւանդ որ երկիւղածու-
թիւնը խափանում ես, և ար-
գելում ես աղօթքն առ Աստ-
ուած։
5 Որովհետև անօրէնութիւնդ
այդպէս է սովորեցնում բերանիդ,
և դու ընտրեցիր նենգաւորների
լեզուն։
6 Քեզ քո բերանն է դատա-
պարտում, և ոչ թէ ես. և քո
շրթունքը վկայում են քեզ դէմ։
Դո՞ւ ես ծնուել իբրև առա- 7
ջին մարդը, և բլուրներից առա՞ջ
ես ստեղծուել։
Աստուծոյ խորհրդո՞ւմն էիր ա- 8
կանջ դնում, թէ իմաստութիւ-
նը քեզ մօտ ես հաւաքել։
Ի՞նչ գիտես դու, որ մենք չը 9
գիտենք. դու ի՞նչ ես հասկա-
նում, որ մենք չ'ունենայինք։
Մեզ մօտ ծեր էլ կայ՝ ալեւոր 10
էլ, որ քո հայրերից տարօք են։
Մի՞թէ քեզ քիչ են երևում 11
Աստուծոյ մխիթարութիւնները,
և քեզ հետ խոսուած մեղմ խօս-
քերը։
Ո՞ւր է տանում քեզ քո սիր- 12
տը, և ի՞նչ են ակնարկում քո
աչքերը.
Որ հոգիդ Աստուծոյ դէմ ես 13
դարձրել, և այդպէսի խօսքեր ես
հանում բերանիցդ։
Մարդս ի՞նչ է՝ որ մաքուր լի- 14
նի, և կնկանից ծնուածը՝ որ ար-
դարանայ։
Ահա՝ Նա իր սրբերին էլ չէ 15
հաւատում, և երկինքն էլ մա-
քուր չէ նորա աչքի առաջին։
Բայց մանաւանդ գարշելի ու 16
պիղծ է մարդս, որ անօրէնու-
թիւնը ջրի պէս է խմում։
Ես քեզ իմացնեմ, ինձ լսիր. 17
և իմ տեսածը քեզ պատմեմ.
Ինչ որ իմաստունները յայտ- 18
նեցին, և չ'ծածկեցին իրանց հայ-
րերից տուածը։
Երկիրը մինակ նորանց տրուե- 19
ցաւ, և նորանց մէջ մէկ օտա-
րական չ'անցաւ, թէ
Չարը տանջվում է իր բոլոր օ- 20
րերումը, և քիչ տարիք են պահ-
ուած բռնաւորի համար։
Սարսափների ձայն կայ նորա 21
ականջներումը. խաղաղութեան
ժամանակին աւերիչը գալիս է նո-
րա վերայ։
Նա չէ հաւատում թէ խա- 22
ւարիցը կ'ազատուի, և նա պահ-
ուած է սուրի համար։
Նա թափառում է հացի հա- 23
մար ասելով ո՞ւր է. գիտէ որ խա-
ւար օրը կշտին պատրաստ է։

24 Նորան զարհուրեցնում են նեղութիւնն ու տառապանքը. նորանք յաղթահարում են նորան պատերազմի պատրաստ թագաւորի պէս,
25 Որովհետև նա իր ձեռքը մեկնեց Աստուծոյ դէմ, և Ամենակարողի դէմ հպարտացաւ.
26 Յարձակուեցաւ նորա վերայ՝ բարձրապարանոց իր ասպարների թանձր գմբէթներովը,
27 Որովհետև նա ծածկեց իր երեսը ճարպովը, և իւղ կապեց երիկամունքների վերայ,
28 Եւ նա բնակուեց աւերակ քաղաքներում այնպիսի տներում, որոնց մէջ բնակող չ'կայ, որ պատրաստուած են քարակոյտներ դառնալու.
29 Նա պիտի չ'հարստանայ, և նորա առաջուածքը հաստատ պիտի չ'մնայ, և նորանց ապրանքը պիտի չ'տարածուի երկրիս վերայ.
30 Մութիքը չի հեռանալ նա, նորա ճիւղերը կ'չորացնէ բոցը, և նա պիտի աչնչանայ իր բերանի շունչովը.
31 Թող ունայնութեան չ'հաւատայ, ինքն իրան է խաբում. որովհետև ունայնութիւնն է նորա վարձքը.
32 Դեռ օրը չէ, նա վախճանվում է. և նորա ոստերը չեն կանաչիլ.
33 Նա դէն է գցում ինչպէս որթն իր ազխը, կամ ինչպէս ձիթենին թօթափում է իր ծաղիկները.
34 Որովհետև կեղծաւորների ժողովքը ամայի պիտի լինի, և կրբակը պիտի լափէ կաշառ առնողների վրաններըը.
35 Նորանք թշնամութիւնով յղի են և անօրէնութիւն կ'ծնանեն և նորանց ներսը խաբէութիւն է պատրաստում։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Յոբը պատասխանելով ասեց.
2 Իս սորանց նման շատ բաներ եմ լսել, դուք ամենքդ ձանձրացուցիչ մխիթարողներ էք.
3 Մի՞թէ վերջ կայ դարատակ խօսքերին, կամ թէ քեզ ինչ է դրդում որ պատասխանես։
4 Ես էլ ձեզ նման կ'խօսէի, եթէ ձեր հոգին իմ հոգիի տեղը լինէր. ձեզ դէմ խօսքեր կ'շարադրէի, և գլուխս կ'շարժէի ձեզ վերայ.
5 Զեզ կ'քաջալերէի իմ բերանովը, և իմ շրթունքների շարժուածքը կ'սփոփէր։
6 Թէ խօսեմ էլ՝ ցաւս չի փարատուիլ. և լռեմ էլ՝ ինչ կը գնայ ինձանից։
7 Բայց հիմա նա ինձ հոգնեցրել է. դու ամայի ես արել իմ բոլոր ընտանիքը։
8 Դու ինձ խորշոմացրել ես, — վկայութիւն է դառել. և իմ նիհարութիւնն ինձ դէմ վեր է կացել, երեսիս յանդիմանում է ինձ։
9 Նորա բարկութիւնը պատառում է և թշնամանում ինձ դէմ. նա կրճտում է ինձ վերայ իր առամներովը, իբրև իմ թշնամի սրել է աչքերը ինձ դէմ,
10 Իրանց բերանը բացել են ինձ վերայ. նախատինքով խփում են ծնօտներիս, մէկտեղ ժողովուել են ինձ դէմ,
11 Աստուած ինձ մատնել է անզգամին, և ինձ գցել է չարերի ձեռքը։
12 Հանգիստ էի ես, բայց նա ինձ փշուր փշուր արաւ, և բռնեց վիզս ու ջախջախեց ինձ, և ինձ նշան շինեց իրան համար։
13 Ինձ շրջապատեցին նորա աղեղնաւորները, նա ճղատում է իմ երիկամունքները ու չէ խնայում. լեղիս գետինն է թափում։
14 Նա ինձ պատառում՝ պատառ պատառ է անում. քաջազուներ պէս ինձ վերայ է յարձակվում։
15 Փուրձ փակցրի ես իմ մորթի վերայ, և իմ եղջիւրը հողով աղտոտեցի։
16 Երեսս կարմրատել է լալուցս. և արտևանունքիս վերայ մահուան ստուերը կայ,
17 Թէև ձեռքերումս անօրէնութիւն չ'կայ, և աղօթքս մաքուր է։

18 Երկի՛ր, մի ծածկիր իմ արիւնը, և թող տեղ չ'լինի իմ աղաղակին.
19 Հէնց հիմա էլ ահա երկնքումն է իմ վկան, և իմ փաստաբանը բարձրերումն է,
20 Ինձ ծաղր անողներն իմ բարեկամներն են. իմ աչքն արտասուում է դէպի Աստուած.
21 Որ վճռէր մարդիս համար Աստուծոյ դէմ, և մարդի որդիին՝ իր ընկերի դէմ,
22 Որովհետև այս մի քանի տարիները կ'վերջանան, և ես կ'գնամ այն ճանապարհը, որով ետ չեմ դառնալ։

ԳԼ. ԺԷ

1 Շունչս նուաղել է, օրերս հանգչում են. գերեզմաններն պատրաստ են ինձ համար։
2 Չէ՞ որ ծաղրածուներն ինձ մօտ են, և իմ աչքը անգադար փնռում է նորանց հակառակութիւններն։
3 Ապահովիր, դու իմ երաշխաւորը եղիր քեզ մօտ. ո՞վ կայ որ ձեռ քիցս բռնէ,
4 Որովհետև դու ծածկեցիր իմաստութիւնը նորանց սրտիցը, դորա համար դու չես բարձրացնել նորանց։
5 Ով որ կողոպտուելու մատնէ իր ընկերներին, նորա որդկանց աչքերը պիտի նուաղին։
6 Եւ նա ինձ առակ է շինել ժողովուրդներին, և ես զզուանք եմ դառել նորանց առաջին։
7 Նաև պղտորել է աչքս տրտմութիւնից, և բոլոր անդամներս ստուերի պէս են։
8 Ուղիղները սոսկում են սորա վերայ, և անմեղը դրդովում է կեղծաւորի պատճառով։
9 Իսկ արդարը պինդ կ'բռնէ իր ճանապարհը, և մաքուր ձեռք ունեցողը քանի գնայ կ'զօրանայ։
10 Բայց դուք ամենքդ էլ դարձեալ եկէք, և ես ձեզանում իմաստուն չեմ գտնում։
11 Օրերս անց են կացել, խափանուել են իմ դիտաւորութիւնները՝ իմ սրտի խորհուրդները։
12 Գիշերը փոխում են ցերեկի, [Բան
Գլ-ք.՝ գժոխքի
†կ՝ աւարառուն կ'յաղթէ նո-
և լոյսը մօտ է՝ խաւարի առաջին։
13 Թէև սպասեմ, դժոխքն է իմ տունը. խաւարումը պիտի ձգեմ իմ անկողինը։
14 Ապականութեանը կանչեցի՝ Դու իմ հայրն ես. որդերին՝ իմ մայրն ու քոյրն է։
15 Ես հիմա ո՞ւր է իմ յոյսը. և իմ յոյսը ո՞վ է տեսնելու։
16 *Գերեզմանի նիգերի մօտ պիտի իջնէ, երբոր միասին կ'հանգըստանանք հողի վերայ։

ԳԼ. ԺԸ

1 Եւ Բաղդատ Սաբեցին պատասխանելով ասեց.
2 Երբ պիտի վերջ տաք այդ խօսքերին, հասկացէք, և նորանից յետոյ խօսեցէք։
3 Ինչու համար անասնի պէս համարուինք, և յիմար լինինք ձեր աչքի առաջին։
4 Ով իր անձն իրան բարկութեամբ պատառող, մի՞թէ քո պատճառով պիտի երկիրը ձգուի, և ապառաժը փոխադրուի իր տեղից։
5 Անշուշտ պիտի հանգչի ամբարշտի լոյսը, և նորա կրակի բոցը լոյս պիտի չ'տայ։
6 Լոյսը պիտի խաւարէ նորա վրանումը, և նորա ճրագը պիտի հանգչի նորա վերայ։
7 Նորա զօրութեան քայլերը պիտի նեղուին, և նորան պիտի ձգէ իր խորհուրդը։
8 Որովհետև նա իր ոտքերովը ընկել է ուռկանը, և ցանցի վերայ է գնում։
9 Վարսը կ'բռնէ նորա գարշապարը, †լարը կ'զօրանայ նորա վերայ։
10 Նորա թակարդը թաքցրուած է հողումը, և նորա որոգայթը՝ ճանապարհի վերայ։
11 Շուրջանակի զարհուրեցնում

*կամ՝ մեռելների բնակարանի.

են նորան արհաւիրքը, և նորան ստոնանգական են անուամ նորա քայլափոխներուամբ։
12 Նորա զրոսութիւնը պիտի սուվածանայ, և կորուստը պատրաստ է նորա կշտին։
13 Ուստ նորա մորթի կապերը, նորա կապերը մահուան անդրանիկն ուտէ։
14 Պիտի կորուի նորա վրանից իր վստահութիւնը, և սա նորան պիտի քշէ զարհուրանքի թագաւորի մօտ։
15 Նորա վրանումը չէ՛ոնչ պիտի բնակուէ, որովհետև նորանը չէ, նորա բնակարանի վրայ ծծումբ պիտի սերմանի։
16 Տակիցը պիտի չորանան նորա արմատները, և վերևիցը պիտի թառամին նորա ճիւղերը։
17 Նորա յիշատակը պիտի կորչէ երկրիցը, և նորա անունը պիտի չ'լինի հրապարակների վերայ։
18 Նորան պիտի լուսիցը խաւարի մէջ քշեն, և աշխարհքիցը պիտի հալածեն նորան։
19 Ոչ զաւակ՝ ոչ թոռն պիտի լինի նորա համար իր ազգումը, և ոչ մի մնացորդ պիտի չ'լինի նորա բնակարաններումը։
20 Նորա օրեան վերայ պիտի զարմանան եետինները, և առաջիններըը պիտի դողով բռնուին։
21 Իրաւ որ սա պիտի լինի ամբարշտի բնակարանները, և սա է Աստուծուն չ'ճանաչողի տեղը։

Գլ. ԺԹ

1 Եւ Յոբը պատասխանելով ասեց.
2 Մինչև ե՞րբ պիտի վշտացնէք իմ հոգին, և ինձ փշրէք խօսքերով,
3 Ահա տասն անգամ ինձ մեղադրեցիք. չէ՞ք ամչնում՝ ինձ ապշեցնում էք։
4 Եւ եթէ ես իրաւ սխալուել եմ, ինձ մնա կ'մնայ իմ սխալմունքը։
5 Կամ յիրաւի ուզում էք ամբարտաւանել ինձ վերայ, և յանդիմանում էք ինձ իմ մի յանցանքի համար։
6 Իմացէք աւրեայն որ Աստուած է ինձ կործանել, և իր ցանցովը ինձ պատել։
7 Ահա ես աղաղակում եմ՝ զբռկանք, և պատասխան չեմ բառնում, բողոքում եմ, բայց իրաւունք չ'կայ։
8 Ճանապարհս կապել է նա, և չեմ կարողանում անցնել, և իմ շաւիղներըի վերայ խաւար է դրել։
9 Փառքս հանել է ինձանից, և թագը վեր առել գլխիցս։
10 Ինձ քանդել է շուրջանակի, որ ես գնամ, և ծառի նման պակել է իմ յոյսը։
11 Նա վառել է իր բարկութիւնն ինձ դէմ, և ինձ իր թշնամիներին նման է համարում։
12 Նորա գունդերը միասին եկան, և իրանց ճանապարհներըը կազմեցին ինձ դէմ, և բանակուեցան իմ վրանի շուրջը։
13 Իմ եղբայրներին հեռացրել է ինձանից, և իմ ծանօթներն էլ օտարացել են ինձանից։
14 Ինձ ձգել են իմ ազգականներըը, և իմ ճանաչներըը մոռացել են ինձ։
15 Իմ տան բնակողներն ու իմ աղախիններն օտար համարեցին ինձ. ես մի օտարական եմ դառել նորանց աչքին։
16 Ծառային կանչում եմ, և նա չէ պատասխանում. իմ բերանովս պիտի աղաչեմ նորան։
17 Շունչս ընդդէմ է գալիս իմ կնոջը, և իմ խնդիրքը՝ իմ որովայնի որդկանցը։
18 Փոքր աղերքն անգամ անարգում են ինձ. ես վեր կենալիս նորանք խօսում են վերաս։
19 Ինձանից զզուում են իմ մտերիմ բարեկամներըը, և իմ սիրածներըը ընդդիմանում են ինձ։
20 Մորթիս և մարմնիս են փակել ոսկորներս, և ջուռ տառամներովս կաշիովս եմ պրծել։
21 Ողորմեցէք ինձ, ողորմեցէք ինձ, ով իմ բարեկամներ. որովհետև Աստուծոյ ձեռքը դպել է ինձ։
22 Ինչու՞ եք ինձ հալածում դուք եւ Աստուծոյ նման, և չէ՞ք կըշտանում իմ մարմնիցը։
23 Ո՜հ երանի՛ թէ գրուէին խօսքերս, երանի՛ թէ քանդակուէին մի գրքի մէջ,
24 Երկաթի գրիչով և կապարով, փորագրուէին քարի վերայ յաւիտեան։
25 Իսկ ես գիտեմ որ փրկիչս կենդանի է, և նա վերջը պիտի կանգնէ հողի վերայ։
26 Եւ իմ մորթը այսպէս թափուելուց յետոյ, այն ժամանակ իմ մարմնիցը տեսնելու եմ Աստուածուն։
27 Որին որ ես ինքս եմ տեսնելու, և իմ աչքերն են մտիկ տալու նորան, և ոչ թէ ուրիշը. իմ երիկամունքներըը հալվում են իմ ներսումը։
28 Որ պիտի ասէիք. Ինչ ենք հալածում նորան. և ինձ վերայ է գտնվում բանի արմատը։
29 Վախեցէք դուք սուրի երեսիցը. որովհետև անիրաւութիւնների դէմ բարկացող է սուրը որ իմանաք թէ դատաստան կայ։

Գլ. Ի

1 Եւ Սոփար Նաամացին պատասխանելով ասեց.
2 Սորա համար իմ խորհրդածութիւններըը ինձ պատասխանել են տալիս, և այդ պատճառով շտապում եմ ինձանում։
3 Ինձ խայտառակող խրատ եմ լսում, բայց հոգին իմ դիտաւորութիւնից ինձ պատասխանել է տալիս։
4 Սա գիտե՞ս դուս, որ յաւիտենից ի վեր է, երկրիս վերայ մարդ դրուելուց ի վեր,
5 Որ անպատիների ցնծութիւնը կարճ կ'լինի, և կեղծաւորի ուրախութիւնը՝ մէկ վայրկեան։
6 Թէև նորա փառքը մինչև երկինքը բարձրանայ, և նորա գլուխը դպչէ ամպին.
7 Իր աղբին պէս պիտի յաւիտեան ոչնչանայ. նորան տեսնողները պիտի ասեն. Ո՞ւր է նա։
8 Երազի պէս պիտի թռչի, և չի գտնուիլ. և պիտի քշուի դիշերուան ցնորքի պէս։
9 Նորան տեսնող աչքը այլ եւս նորան չի տեսնիլ, և նորա տեղը նորան չի նայիլ միւսանգամ։
10 Նորա որդիքը պիտի աղքատներիցը խնդրեն, և նորա ձեռքերը եւս պիտի տան նորա կորոզութիւնը։
11 Նորա ոսկորներըը լիքը էլ լինին երիտասարդութեամբը, դաբձեալ նորա հետ միասին պիտի հողումը պառկեն։
12 Եթէ չարութիւնը քաղցը է նորա բերանումը, երբ նա թաքցրեց իր լեզուի տակին,
13 Երբ նորան խնայեց և թողչ չ'տուաւ, և իր քիմքումը եւս պահեց նորան,
14 Կերակուրը կ'փոխուի նորա աղիքներումը, քարերի լեզի կայ նորա ներսումը։
15 Նա հարստութիւն կուլ տուած էլ լինի, պիտի եւս փսխէ, նորա փորիցը Աստուած դուրս պիտի հանէ այն։
16 Նա քարերի թոյնը պիտի ծծէ, իժի լեզուն պիտի սպանէ նորան։
17 Նա պիտի չ'տեսնէ վտակներըը, մեղրի ու կագիի հեղեղներըի գետերը։
18 Աշխատածը նա եւս պիտի դարձնէ, և պիտի կուլ չ'տայ. հարստութեանը չափ կ'լինի նորա վճարածը, և չի ուրախանալ։
19 Որովհետև ճնշեց թողեց աղքատներին, տուներ յափշտակեց. բայց պիտի չ'շինէ նորան։
20 Որովհետև նա իր ներսումը խաղաղութիւնը չէր ճանաչում, ոչ էլ իր ցանկացածովը պիտի չ'ազատուի։
21 Նորա ուտելուցը բան չ'պրծաւ, դորա համար նորա առաջուածքը պիտի չ'տևէ։
22 Աստուածութեան լիքը ժամանակը նա պիտի նեղուի, ամէն թշուառի ձեռքը նորա վերայ պիտի գայ։
23 Պիտի լինի որ նա իր փորը կըշտացրած ժամանակը՝ նա իր բարկութիւնը կ'ուղարկէ նորա վերայ, և անձրևի պէս կ'թափէ նորա վերայ՝ նա ուտելիս։

24 Նա կ'փախչէ երկաթի զէն-
քից, Բայց պղնձի աղեղը նորան
կ'խոցէ։
25 Կ'քաշէ աղեղը, և դուրս կ'գայ
նորա մարմնիցը, և փայլուն տէգը
նորա մաղձիցը. նա պիտի գնայ,
արհաւիրքը նորա վերայ։
26 Ամեն խաւար թաքցրուած է
նորա խորերումը, կրակը պիտի
լափէ նորան առանց փչուելու,
չարիք պիտի հասնէ նորա վրա-
նումը մնացողին։
27 Երկինքը պիտի նորա յանցան-
քը յայտնէ, և երկիրն էլ պիտի
ընդդիմանայ նորան։
28 Նորա տան եկամուտը պիտի
գերի գնայ. նա թափուող ջրերի
պէս պիտի լինի Նորա բարկու-
թեան օրերումը։
29 Սա է ամբարիշտ մարդի բա-
ժինն իր Աստուածանից, և այն
ժառանգութիւնը՝ որ Աստուա-
ծանից որոշուած է նորան։

ԳԼ. ԻԱ.

1 Եւ Յոբը պատասխանելով ասեց.
2 Ականջ դրէք, լսեցէք խօսքս,
և սա լինի ձեր մխիթարութիւնը.
3 Ինձ համբերեցէք, որ ես խօ-
սեմ, և իմ խօսելուց յետոյ, ծաղ-
րիր։
4 Ես որ կամ՝ մի՞թէ մարդի հետ
է իմ վէճը, և ի՞նչու համար սիր-
տըս չ՚նեղանայ։
5 Ինձ մտիկ արէք, և ապշեցէք, և
ձեռքներդ դրէք բերաններիդ։
6 Եւ հէնց որ յիշում եմ՝ զար-
հուրում եմ, և դողը բռնում
է մարմինս։
7 Ի՞նչու են ապրում ամբարիշտ-
ները, ծերանում և զօրանում
ոյժով։
8 Նորանց սերունդը հաստատ է
նորանց հետ նորանց առաջին, և
նորանց զաւակունքը՝ նորանց աչ-
քի դէմ։
9 Նորանց տունը ապահով է եր-
կիւղից, և Աստուծոյ գաւազա-
նը նորանց վերայ չէ։
10 Նորա եզը զուգաւորվում է, և
դուրսը չի գցում. նորա կովը
ծնում է և չէ վիժում։
11 Նորանք իրանց մանուկներին
ոչխարի հօտի պէս են դուրս հա-
նում, և նորանց տղերքը ոստոս-
տում են։
12 Զայները բարձրացնում են թըմ-
բուկով և քնարով, և ուրախա-
նում են սրնգի ձայնովը։
13 Նորանք իրանց օրերը զուար-
ճութիւնով են անցկացնում. և
մէկ վայրկեանում *գերեզմանը
կ'իջնեն։
14 Սակայն Աստուծուն ասում
են. Քաշուիր մեզանից, և քո ճա-
նապարհների գիտութիւնը չենք
ուզում։
15 Ի՞նչ է Ամենակարողը, որ նո-
րան ծառայենք, և ի՞նչ է մեր
օգուտը, որ նորան դիմենք։
16 Տես՝ նորանց բարիքն իրանց
ձեռքին չէ. ամբարիշտների խոր-
հուրդը հեռու լինի ինձանից։
17 Ամբարիշտների ճրագը քանի՛
անգամ կ'հանգչի, և նորանց վե-
րայ կ'գայ իրանց տառապանքը.
նորանց համար Նա ցաւեր կ'բա-
ժանէ իր բարկութեամբը։
18 Նորանք կ'դառնան ինչպէս
յարդ քամիի առաջին, և ինչպէս
մղեղ, որին յափշտակել է մըր-
րիկը։
19 Ասում ես՝ Աստուած նորա
յանցանքը պահում է նորա որդ-
կանցը համար. թող նորան իրան
հատուցանէ, որ նա հասկանայ։
20 Թող իր աչքերը տեսնեն իր
կորուստը, և թող նա խմէ Ա-
մենակարողի բարկութիւնիցը.
21 Որովհետև նա ի՞նչ պիտի զը-
ւարճանայ իր տունովն իրանից
յետոյ, երբոր նորա ամիսների թի-
ւը կտրուած է։
22 Մի՞թէ կարելի է Աստուծուն
գիտութիւն ուսուցանել, որ նա
բարձրերին դատում է։
23 Մէկը մեռնում է իր կատա-
րելութեան մէջտեղը, բոլորովին
հանդարտ և հանգիստ.
24 Նորա անօթները լիքն են կա-
թով, և նորա ոսկորների ծուծը
հիւթալի է։

---

*Կամ՝ մեռելների բնակարանը. Գրաբ.՝ դժոխքը

25 Իսկ միւսը մեռնում է դառն
հոգով, և բարիք չէ ճաշակել։
26 Բայց մէկտեղ են պառկում
հողին վերայ, և որդերը ծած-
կում են նորանց։
27 Ահա գիտեմ ձեր խորհուրդ-
ները. և այն նենգութիւնները՝ որ
հնարել էք ինձ դէմ։
28 Որ ասում էք. Ո՞ւր է ազնուա-
կանի տունը. և ո՞ւր է ամբարիշտ-
ների բնակութիւնների վրանը։
29 Չէ՞ք հարցրել ճանապարհորդ-
ներին, և նորանց նշանները չէ՞ք
հասկանում.
30 Թէ կորստեան օրը չարը պահ-
պանվում է, բարկութեան օրը
նորանք դէն են քշվում։
31 Ո՞վ կ'իմացնէ նորա երեսին նո-
րա ճանապարհը, և նա անելիս՝
ո՞վ կ'հատուցանէ նորան։
32 Եւ նա տարվում է գերեզմա-
նանոցը, և նորա տապանի վերայ
պահապան են դնում։
33 Քաղցր են նորա համար հովտի
կոշտերը, և նորա ետևից հետե-
ւում են բոլոր մարդիկը, և նո-
րանից առաջիններին թիւ չ'կայ։
34 Եւ ինձ ի՞նչպէս էք մխիթա-
րում փուճ բանով, և ձեր պա-
տասխաններումը մնում է ստու-
թիւն։

ԳԼ. ԻԲ

1 Եւ Եղիփազ Թեմանացին պա-
տասխանելով ասեց.
2 Մի՞թէ մարդս Աստուծոյ հա-
մար օգտակար է. այլ միայն ի-
րան է օգտակար խելացին։
3 Ամենակարողին հաճութի՞ւն
կ'լինի, եթէ արդար լինիս. կամ
մէկ շա՞հ, եթէ քո ճանապարհ-
ներն ուղիղ անես։
4 Մի՞թէ քո վախիցը քեզ հետ
կ'վիճէ, և քեզ հետ դատաստանի
կ'գնա՞յ։
5 Չէ՞ որ քո չարութիւնը շատ
է. և քո անօրէնութիւններին
վերջ չ'կայ։
6 Որովհետև դու քո եղբօրիցը
գրաւ էիր առնում զուր տեղը,
և մերկերի հանդերձները յա-
փշտակում էիր։
7 Ջուր չէիր խմեցնում ծարաւին.
և սովածիցը խնայում էիր հացը։
8 Եւ այն մարդը որ զօրաւոր բա-
զուկ ունէր, երկիրը նորանն էր.
և պատուաւորը բնակվում էր
նորանում։
9 Որբևայրիներին դարտակ ճա-
նապարհ էիր դնում. և որբերի
բազուկները փշրվում էին։
10 Դորա համար քո շուրջը որո-
գայթներն են պատել, և յանկար-
ծահաս վախը քեզ զարհուրե-
ցրել է։
11 Կամ թէ խաւարիցը չես տես-
նում, և ջրերի շատութիւնը քեզ
ծածկել է։
12 Մի՞թէ Աստուած երկնքի բար-
ձրումը չէ. և մտիկ տուր աստ-
ղերի բարձրութեանը, թէ ինչ
բարձր են։
13 Բայց դու ասում ես. Ի՞նչ գի-
տէ Աստուած, մառախուղի ե-
տևի՞ցը պիտի դատէ։
14 Ամպերը նորա համար ծածկոց
են, որ նա չի տեսնիլ. և նա եր-
կընքի կամարի վերայ է շրջում։
15 Մի՞թէ վաղեմի ճանապարհն
ես պահում, որով գնացին անօ-
րէն մարդիկը։
16 Որոնք ժամանակից առաջ յա-
փշտակուեցան, գետի պէս հո-
սեցին նորանց հիմերը։
17 Որ ասում էին Աստուծուն.
Հեռացիր մեզանից, և թէ Ամե-
նակարողը նորանց ի՞նչ է անելու։
18 Սակայն Նա նորանց տները լցրել
էր բարիքով. անզգամների խոր-
հուրդը հեռու լինի ինձանից։
19 Արդարները պիտի տեսնեն և
ուրախանան, և անմեղները նո-
րանց ծաղր պիտի անեն։
20 Ճշմարիտ որ կորել է մեր թըշ-
նամին. և նորանց մնացորդը կը-
րակն է լափել։
21 Աղէ բարեկամացիր նորա հետ
և խաղաղութիւն արա, դորա-
նով բարիք կ'գայ քեզ մօտ։
22 Ընդունիր նորա բերանիցն օրէն-
քը, և նորա խօսքերը դիր սրտիդ
մէջ։
23 Եթէ Ամենակարողին դառնաս,
կ'շինուիս. եթէ անօրէնութիւնը
հեռացնես քո վրանիցը։

24 Եւ ոսկիի կտորը դիր հողի վերայ, և Ոփիրի ոսկին հեղեղատների քարերի վերայ.
25 Այն ժամանակ Ամենակարողը կ'լինի քո ոսկիի կտորը, և քո փայլուն արծաթը։
26 Որովհետև այն ժամանակ Ամենակարողովը կ'ցնծաս, և երեսդ կ'բարձրացնես դէպի Աստուած։
27 Դու նորան կ'աղաչես, և Նա քեզ կ'լսէ. և քո ուխտերը կը կատարես.
28 Եւ դիտաւորութիւն կ'ունենաս, և կ'յաջողուի քեզ համար. և քո ճանապարհների վերայ լոյս կ'ծագէ։
29 Երբոր Ֆկին ցածացնեն, այն ժամանակ դու կ'ասես. Բարձրութի՛ւն. և աչքերով խոնարհին նա կ'ազատէ։
30 Նա կ'ազատէ անմեղ չ'եղողին էլ, և նա կ'ազատուի քո ձեռքերի մաքրութիւնովը։

ԳԼ. ԻԳ

1 Եւ Յոբը պատասխանելով ասեց.
2 Այսօր էլ դառն է գանդատս, հարուածս ծանր է իմ հառաչանքիցը։
3 Երանի՛ թէ դիտենայի թէ նորան ինչպէս գտնեմ. կ'գնայի մինչև նորա աթոռը։
4 Կ'տարածէի նորա առաջին իմ դատը, և բերանս փաստերով կը լցնէի։
5 Կ'գիտենայի այն խօսքերը որ պիտի պատասխանէր. և կ'իմանայի թէ ինձ ինչ կ'ասէր։
6 Մի՞թէ ոյժի շատութեամբը կը վիճէր ինձ հետ. ոչ. այլ Նա ինձ ուշադրութիւն կ'անէր։
7 Այնտեղ ուղիղը վիճաբանում է նորա հետ. և ես յաւիտեան կ'ազատուէի իմ Դատաւորիցը։
8 Ահա գնում եմ դէպի արևելք, և նա չ'կայ. և դէպի արևմուտք՝ և նորան չեմ նշմարում։
9 Դէպի հիւսիս իր գործողութիւնումը, և չեմ գիտում. հարաւումն է ծածկվում, և ես նորան չեմ տեսնում։
10 Սակայն նա դիտէ իմ ճանապարհը. ինձ փորձելիս՝ ես ոսկիի նման դուրս կ'գամ։
11 Նորա քայլումը պինդ է իմ ոտքը, նորա ճանապարհը պահել եմ և չեմ մոլորուել։
12 Նորա շրթունքների պատուիրանքներից չեմ շեղուել, իմ կանոնիցն աւելի պահեցի նորա բերանի խօսքերը։
13 Բայց նա մէկ մտքի վերայ է, ո՞վ նորան կ'դարձնէ. և սրտին ուզածն անում է։
14 Այսպէս նա կ'կատարէ ինձ համար սահմանուածը. և սորանց նման շատ բաներ կան նորա մօտ։
15 Նորա համար նորա ներկայութիւնիցը զարհուրում եմ, մտածելիս վախենում եմ նորանից։
16 Եւ Աստուած թուլացնում է սիրտս, և Ամենակարողը զարհուրեցնում է ինձ։
17 Որովհետև ես չ'փչացայ խաւարիցն առաջ, և իմ առաջին չը ծածկեց մութը։

ԳԼ. ԻԴ

1 Ի՞նչու համար ժամանակները Ամենակարողից ծածկուած չ'լինելով, նորան ճանաչողները չեն տեսնում նորա օրերը։
2 Սահմանները փոխում են, հօտեր են յափշտակում և արածեցնում։
3 Որբերի էշը քշում են տանում, որբևայրիի եզը գրաւ են առնում։
4 Մոլորեցնում են աղքատներին ճանապարհիցը, մէկտեղ թաք են կենում երկրի թշուառները։
5 Ահա նորանք վայրի էշերի պէս դուրս են գալիս իրանց գործին, որս ման գալու առաւօտանց, անապատը հաց է տալիս նորանց տղայոց համար։
6 Իրանցը չ'եղած արտը հնձում են, և ամբարշտի այգին են քաղում։
7 Մերկ անց են կացնում գիշերը առանց հանդերձի, և առանց զգեստի են ցրտումը։
8 Լեռների սաստիկ անձրևներիցը թրջվում են, և ապաստան

չ'ունենալով ժայռին են կպչում։
9 Պոկում են ստինքից որբին. և աղքատիցը գրաւ են առնում։
10 Մերկ ման են գալիս առանց հագուստի, և անօթի սոված խուրձ են կրում։
11 Իրանց պատերի մէջտեղը իւղ են հանում, հնձաններ են կոխում, բայց ծարաւ մնում։
12 Քաղաքիցը մարդիկ հեծում են, և վիրաւորուածների հոգին աղաղակում է, և Աստուած ոչ անզգամութիւն չէ համարում։
13 Նորանք լոյսի հակառակորդներ են, նորա ճանապարհները չեն ճանաչում, և չեն կենում նորա շաւիղներումը։
14 Արշալուսին է վեր կենում մարդասպանը, սպանում է աղքատին և տնանկին, և գիշերը գողի նման է դառնում։
15 Շնացողի աչքն էլ սպասում է երեկոյին ասելով՝ ինձ աչք չի տեսնիլ, և երեսին ծածկոց է դնում։
16 Մութով ծակում են այն տները, որոնց ցերեկով նշան են արել. նորանք լոյս չ'դիտեն։
17 Որովհետև նորանց ամենի համար առաւօտը մահու ստուեր է. որովհետև նորանք ճանաչում են մահու ստուերի սոսկումները։
18 Նա թեթև է ջրի երեսին, նորանց բաժինը անիծեալ է երկրի վերայ. չէ դառնում դէպի այգիների ճանապարհը։
19 Երաշտութիւնն ու տաքութիւնը յափշտակում են ձիւնի ջուրերը, *դերեզմանն էլ՝ մեղք գործողներին։
20 Որովայնը մոռանա՛ր նորան, որդերը ճաշէի՛ն նորան, նա այլևս չ'յիշուի՛, և փշրուի՛ նորա ամբարշտութիւնը ծառի նման.
21 Որ չարչարում է չբերք ամուլին, և որբևայրիին բարիք չէ անում։
22 Եւ քաշում է զօրաւորներին էլ իր ուժովը. Նա վեր կենալիս՝ ոչ ով ապահով չէ իր կեանքի մասին։

*Կամ՝ մեռելների բնակարանն. Գրաբ.՝ դժոխքն

23 Բայց նա տալիս է նորան ապահովութեամբ, որ նորան վստահէ, իսկ նորա աչքերը նորանց ճանապարհների վերայ է։
24 Մի քիչ բարձրացան, բայց ոչընչացան. գլորուեցան ամենքի պէս և խորտակուեցան, և հասկի գլխի պէս կտրուեցան։
25 Եթէ այսպէս չէ. ո՞վ է իմ սուտը հանում, և իմ խօսքը ոչընչացնում։

ԳԼ. ԻԵ

1 Եւ Բաղդատ Սօքեցին պատասխանելով ասեց.
2 Իշխանութիւնն ու վախը նորա մօտն է. նա խաղաղութիւն է անում իր բարձրերումը։
3 Մի՞թէ թիւ կայ նորա դունդերին, և որի՞ վերայ չէ ծագում նորա լոյսը։
4 Եւ ի՞նչպէս կ'արդարանայ մարդ Աստուծոյ մօտ, կամ ի՞նչ մաքուր կ'լինի կնկանից ծնուածը։
5 Տես՝ մինչև անգամ լուսինն էլ լուսաւոր չէ, և աստղերը մաքուր չեն նորա աչքի առաջին։
6 Ո՞ւր մնաց մարդը, որ մի որդ է, և մարդի որդին՝ որ մի ճճի է։

ԳԼ. ԻԶ

1 Եւ Յոբը պատասխանելով ասեց.
2 Ի՞նչ օգնեցիր տկարին. զօրացրի՛ր ոյժ չ'ունեցողի բազուկը։
3 Ի՞նչ խրատ տուիր իմաստուն չ'եղողին, և մե՛ծ իմաստութիւն սովորեցրիր։
4 Ո՞ւմ ասեցիր այդ խօսքերը, և որի՞ շունչը դուրս եկաւ քեզանից։
5 Ուրուականք բռնվում են երկունքից, տակի ջրերն և նորանց բնակիչներն էլ։
6 Մերկ է դժոխքը Նորա առաջին, և կորուստը ծածկոց չ'ունի։
7 Նա տարածում է հիւսիսը պարապի վերայ, և երկիրը կախում է ոչնչի վերայ.
8 Ծրարում է ջրերը ամպերի մէջ. և ամպը չէ պատառվում նորանց տակին։
9 Նա բռնել է իր աթոռի երեսը,

իր ամպը տարածել նորա վերայ։
10 Սահման է դծել ջրերի երեսին
մինչև լոյսի ծայրը խաւարի հետ։
11 Երկնքի սիւները սասանում են,
և սարսափում են նորա սպառնա-
լիքիցը։
12 Իր զօրութեամբը շփոթում է
ծովը և իր գիտութեամբը ջար-
դում է ամբարտաւանին։
13 Նորա հոգիովը երկինքը զար-
դարանք է, նորա ձեռքը կազմել
է փախչող Վիշապին։
14 Ահա սորանք են նորա ճանա-
պարհների ծայրերը, և ի՞նչ չնչին
բան է նորա վերայ լսուածը, և
ո՞վ կարող է իմանալ նորա զօ-
րութեան որոտումը։

ԳԼ. ԻԷ

1 Եւ Յոբը շարունակեց իր առա-
կը յառաջ տանել և ասեց.
2 Կենդանի է իմ իրաւունքը մեր-
ժող Աստուածը, և իմ հոգին
դառնացնող Ամենակարողը.
3 Որ քանի որ տակաւին շունչս
ինձանում է, և Աստուծոյ հո-
գին կայ իմ ռնգացը մէջ,
4 Իմ շրթունքները անիրաւու-
թիւն պիտի չ՚խօսեն, և լեզուս
պիտի նենգութիւն չ՚խորհէ։
5 Քաւ լիցի ինձ որ ձեզ արդա-
րացնեմ, մինչև մեռնելս չեմ ձը-
գելու ինձանից իմ ուղղութիւնը։
6 Արդարութիւնս բռնել եմ
պինդ, և բաց չեմ թողուլ, իմ
խիղճն ինչ չէ տանջում օրերիցս
մէկին համար էլ։
7 Ամբարշտի պէս լինի իմ թըշ-
նամին, և իմ հակառակորդը ան-
զգամի պէս։
8 Վասն զի ի՞նչ է կեղծաւորի
յոյսը, (թէև հարուստ էլ լինի,)
երբոր Աստուած հանէ նորա հո-
գին։
9 Մի՞թէ նորա աղաղակը կ՚լսէ
Աստուած, երբոր նորա վերայ
նեղութիւն գայ։
10 Կամ թէ նա Ամենակարողովը
ուրախանալո՞ւ է. ամեն ժամա-
նակ կարո՞ղ է կանչել Աստու-
ծուն։
11 Սովորեցնեմ ձեզ Աստուծոյ
ձեռքինը. Ամենակարողի մօտ ե-
ղածը չեմ ծածկելու։
12 Ահա դուք ամենքդ էլ տե-
սաք, և ի՞նչու այդպէս ունայն ու-
նայնաբանութիւն էք անում։
13 Ահաւասիկ անզգամ մարդի
բաժինը Աստուծոյ մօտ, և բռ-
նաւորների ժառանգութիւնը, որ
առնում են Ամենակարողից։
14 Եթէ շատանում են նորա որդի-
քը, սուրի համար է. և նորա զաւա-
կունքը պիտի չ՚կշտանան հացով։
15 Նորա մնացորդները մահի մէջ
պիտի թաղուին, և նորա որբե-
ւայրիները չի պիտի լան։
16 Եթէ նա հողի պէս արծաթ
դիզելու լինի, և ցեխին չափ հան-
դերձ պատրաստէ,
17 Նա կ՚պատրաստէ, բայց ար-
դարը կ՚հագնէ, և անմեղը պիտի
ստանայ արծաթը իբրև բաժին։
18 Նա ցեցի պէս շինում է իր
տունը, և այն խրճիթի նման, որ
այգէի պահապանն է շինում։
19 Հարուստ կ՚պառկէ, բայց*միւս-
անգամ չի անիլ. աչքերը կ՚բա-
նայ, և էլ նա չէ։
20 Արհաւիրքը ջրերի պէս կ՚հաս-
նէ նորան. գիշերը փոթորիկը պի-
տի գողանայ նորան։
21 Արևելեան քամին նորան վեր
կ՚առնէ, որ նա գնայ. և փոթո-
րիկով նորան կ՚թռցնէ իր տե-
ղիցը։
22 Կ՚գցէ նորա վերայ և նորան չի
խնայիլ Աստուած. նորա ձեռքիցը
նա կ՚փախչէ այստեղ այնտեղ։
23 Նորա վերայ ծափ կ՚տան, և
կ՚սուլեն նորան իր տեղիցը։

ԳԼ. ԻԸ

1 Արդարև արծաթը երակ ունի.
և ոսկին՝ տեղ, ուր որ նորան զը-
տում են.
2 Երկաթը հողիցն է առնվում, և
քարը հալվում է պղինձ դառնում։
3 Մարդը վախճան է դնում խա-
ւարին, և նա բոլորովին կատա-
րելապէս քննում է քարը խա-
ւարումը և մահի ստուերումը։

*Ոմանք՝ չի ամփոփուիլ

4 Քանդում է հորը բնակողի կըշ-
տին, ոտքից մոռացուած տեղե-
րը. կախ են ընկնում մարդկան-
ցից օրօրվում։
5 Երկիրը՝ որից դուրս է գալիս
հաց, իսկ նորա տակը իբր թէ
կրակով է քանդուած.
6 Նորա քարերը շափիւղայի տեղն
է, և ոսկիի աւազ կայ նորա-
նում։
7 Նորա ճանապարհը չ՚գիտէ յա-
փշտակող թռչունը, և անգղի
աչքը նորան չէ տեսել։
8 Նորան չեն կոխ տուել խրոխտ
գազանները. առիւծը չէ անց կա-
ցել նորա վերայ։
9 Նա ապառաժին է ձեռնամուխ
լինում, սարերն՝ արմատիցը տա-
պալում.
10 Ժայռերումը ջրմուղներ է ճը-
զոտում, և նորա աչքը տես-
նում է ամեն թանկագին բան։
11 Գետերին արգելում է ծորե-
լուց, և գաղտուկը հանում է
լոյս աշխարհ։
12 Բայց իմաստութիւնը ո՞րտեղ
է գտնվում, և ո՞րն է հանճարի
տեղը։
13 Մարդս չ՚գիտէ նորա արժէքը,
և նա չի գտնուիլ կենդանեաց
երկրումը։
14 Անդունդն ասում է. Նա ին-
ձանում չէ. և ծովն ասում է.
Ինձ մօտ չ՚կայ։
15 Նորա փոխարէն ամենամաքուր
ոսկին չի տրուիլ. և արծաթը չի
վճարուիլ իբրև նորա գինը։
16 Նա Ոփիրի ոսկիով չի գնա-
հատուիլ, և ոչ պատուական ե-
ղընգնաքարով ու շափիւղայով։
17 Նորան չ՚արժեն ոսկի ու ակն-
վանի, և նա չի փոխուիլ ոսկե-
կուռ անօթների հետ։
18 Բուստն ու բիւրեղը չեն էլ
յիշուիլ. և իմաստութեան ըս-
տացուածքը մարգարիտներից ա-
ռաւել է։
19 Նորան չ՚արժէ Եթէովպայի տը-
պազիոնը. մաքուր ոսկիով նա չի
գնահատուիլ։
20 Ուրեմն իմաստութիւնը ո՞ր տե-
ղից է գալիս, և ո՞րն է հանճարի
տեղը։
21 Նա ծածկուած է բոլոր կեն-
դանիների աչքերից էլ, և երկրի
թռչուններիցն էլ թաքցրուած է։
22 Կորուստն ու մահն ասում են,
մենք միայն նորա համբաւն ենք
լսել ականջներովս։
23 Աստուած գիտէ նորա ճանա-
պարհը, և նա է ճանաչում նո-
րա տեղը։
24 Որովհետև նա է մինչև երկրի
ծայրերը նայում. բոլոր երկնքի
տակը տեսնում է։
25 Քամիին կշիռ դնելիս, և ջու-
րերը չափով չափելիս,
26 Անձրևի համար օրէնք շինելիս,
և ճանապարհ՝ որոտալից կայծա-
կի համար.
27 Այն ժամանակ նա տեսել ու
*համարել է նորան, պատրաս-
տել և քննել էլ է նորան.
28 Եւ մարդին ասել է. Ահա Տի-
րոջ երկիւղն է իմաստութիւնը,
և չարութիւնից հեռանալը հան-
ճար է։

ԳԼ. ԻԹ

1 Եւ Յոբը շարունակեց իր առակն
առաջ տանիլ և ասեց.
2 Երանի՞ թէ առաջի ամիսների
պէս և այն օրերի պէս լինէի, որ
Աստուած ինձ պահում էր.
3 Երբոր նորա ճրագը լոյս էր
տալիս իմ գլխի վերայ, նորա լու-
սովը գնում էի խաւարում։
4 Երբոր ես իմ աշնան օրերումն
էի, և Աստուծոյ մտերմութիւնը
իմ վրանի վերայ էր։
5 Երբոր Ամենակարողը տակաւին
ինձ հետ էր. և իմ աղերքը իմ
շուրջն էին։
6 Երբոր իմ գնացքը կոգիով էր
ծփծփում, և ապառաժը մօտիս
իւղի աղբիւրներ էր բղխում.
7 Երբոր դռնիցը դուրս էի գալիս
քաղաքը, հրապարակումը գնում
էի իմ աթոռը.
8 Ինձ տեսնում էին երիտասարդ-
ները և թաք կենում, և ալևոր-
ները վեր էին կենում կանգնում.
9 Իշխանները դէմ էին ընկնում

*Կամ՝ յայտնել

խօսելիս, և ձեռները դնում էին
իրանց բերաններին.
10 Աղնուականների ձայնը կտրը-
վում էր, և նորանց լեզուն իրանց
քիմքին էր կպչում։
11 Որովհետև մի ականջ որ լսում
էր, ինձ երանի էր տալիս, և այն
աչքը որ տեսնում էր, վկայու-
թիւն էր տալիս ինձ.
12 Որովհետև ես ազատում էի
աղաղակող տնանկին, նաև որ-
բին և անօգնականին։
13 Կորածի օրհնութիւնը ինձ վե-
րայ էր գալիս, և որբևայրիի սիր-
տը ուրախացնում էի.
14 Արդարութիւն էի հագած և
հագնում էի, պատմուճան և խոյր
էր իմ դատաստանը։
15 Ես աչքեր էի կոյրին, և ես ոտ-
քեր էի կաղին։
16 Եւ հայր էի աղքատներին, և
ինձ անծանօթի դատը քննում էի.
17 Եւ փշրում էի անիրաւի ժա-
նիքը. և նորա ատամներիցը որոը
խլում էի.
18 Եւ ասում էի. Բոյնիս կշտին
կ'մեռնեմ, և աւազի չափ կ'շա-
տացնեմ օրերս.
19 Արմատներս ջրին կ'բացուին, և
ցօղը կ'օթևանէ իմ ոստերի վերայ.
20 Փառքս նոր կ'մնայ ինձ հետ,
և աղեղս ձեռքիս կ'նորոգուի։
21 Ինձ ականջ էին դնում և սպա-
սում, և իմ խորհուրդին լռում
էին։
22 Իմ խօսելուց յետոյ չէին կրկ-
նում, և նորանց վերայ կաթում
էր իմ ասածը։
23 Ինձ սպասում էին ինչպէս անձ-
րևի, և բերանները բանում էին
իբր ետքի անձրևի համար։
24 Եթէ ես ծիծաղէի նորանց վե-
րայ, չէին հաւատալ. և իմ երե-
սի լոյսը նորանք չէին նսեմացնել։
25 Ընտրում էի նորանց ճանա-
պարհը և գլխաւոր էի նստում,
և բնակվում էի ինչպէս թագա-
ւորը զօրքի մէջ, իբրև մէջը որ
սգաւորներ է մխիթարում։

ԳԼ. Լ.

1 Բայց հիմա ինձ ծաղր են անում
հասակով ինձանից փոքրերը, ո-
րոնց հայրերին ես չէի ուզիլ դը-
նել իմ խաշանց շների հետ։
2 Եւ ինձ ի՞նչ պէտք էր նորանց
ձեռքերի զօրութիւնն էլ, որոնց
առոյգութիւնը կորած էր։
3 Չքաւորութիւնից և սովածու-
թիւնից ցամաքած՝ փախչում էին
անապատը՝ մթին աւերակ և ա-
մայի տեղերը.
4 Մացառի վերայի մոլոշն էին
քաղում, և դիհիի արմատը՝ իբ-
րև իրանց հաց.
5 Որոնք ընկերութիւնից դուրս
են արվում, և որոնց վերայ իբրև
գողի վերայ գոչում են։
6 Սոսկալի ձորերում էին բնակ-
վում, գետնի և ապառաժների
ծերպերում.
7 Մացառների մէջ բղաւում էին,
եղինջների տակին վայր էին թափ-
վում.
8 Յիմարների որդիք և աննշան-
ների որդիք լինելով՝ դուրս էին
քշվում երկրիցը։
9 Բայց հիմա ես նորանց խաղն
եմ դառել, և առակ եմ եղել
նորանց համար։
10 Ինձանից զզվում, և հեռանում
են ինձանից, և երեսիցս թուքը
չեն խնայում։
11 Որովհետև իմ կապը լուծել և
ինձ նեղել է, նորանք էլ երա-
սանակը բաց են թողել առաջիս։
12 Աջ կողմից լակոտներն են կանգ-
նում ոտքերս քաշում, և ինձ հա-
մար պատրաստում իրանց կորըս-
տեան ճանապարհները։
13 Նորանք քանդում են իմ շա-
ւիղները, և աշխատում են իմ
կործանման համար, որ իրանք օգ-
նող չ'ունին։
14 Գալիս են իբրև թէ լայն խրա-
մատով, գղրդոցով գլորուելով
են գալիս։
15 Արհաւիրքները ինձ վերայ դար-
ձան, քամիի պէս հալածում են
իմ մեծութիւնը, և ամպի պէս
անցաւ իմ ազատութիւնը։
16 Եւ հիմա հոգիս թափվում է
իմ ներսումը, ինձ բռնել են
տրտմութեան օրերը։
17 Գիշերը ոսկերքս են ծակոտում

ինձ վերայ և կրծողներս չեն հան-
գըստանում։
18 Մեծ դժուարութեամբ են փո-
խում իմ հանդերձը, պատմու-
ճանիս օձիքին պէս պատում է
ինձ։
19 Նա ինձ գցել է ցեխը, և ես
նման եմ եղել հողի և մոխիրի։
20 Ես քեզ աղաղակում եմ, և
դու ինձ չես պատասխանում,
կանգնում եմ, և դու ինձ չես
մտիկ անում։
21 Դու ինձ համար անգութ ես
դառել, ձեռքիդ զօրութեամբը
ինձ հետ թշնամութիւն ես ա-
նում։
22 Դու ինձ բարձրացրել և ինձ
քամիին ես հեծցրել, և փչա-
ցնում ես մրրիկով։
23 Ստոյգ գիտեմ, ինձ մահուան
ես տանելու, և բոլոր կենդանի-
ների համար սահմանուած տու-
նը։
24 *Արդարև աղաչանք չ'կայ՝ նա
էր ձեռքը երկարացնելիս, և ա-
ղաղակ նորանց համար՝ նա կոր-
ցնելիս։
25 Մի՞թէ ես չեմ լացել օրը դժ-
ուարութեամբ անցկացնողի հա-
մար, հոգիս չէ՞ նեղացել աղքա-
տի համար։
26 Երբոր ես բարիքի էի սպասում,
և չարիք եկաւ. և ակնկալում
էի լոյսի, և եկաւ խաւար։
27 Աղիքներս եռացին և չ'հան-
դարտեցին, տրտմութեան օրերը
առաջս կտրեցին։
28 Սևացած եմ ման գալիս, բայց
ոչ թէ արևից, կանգնում եմ
ժողովքի մէջ աղաղակում։
29 Չագալներին եղբայր եմ դա-
ռել, և ջայլամներին ընկեր։
30 Կաշիս սևացել է ինձ վերայ, և
ոսկերքս վառուել են տաքու-
թիւնից։
31 Եւ սուգի է փոխուել իմ քը-
նարը, և իմ սրինգը՝ լալկանների
ձայնի։

*Կամ՝ Բայց նա աւերմունքի վե-
րայ չ'պիտի ձեռք երկարացնէ,
եթէ կորստեան ժամանակ նո-
րանք աղաչեն։

ԳԼ. ԼԱ.

Ուխտ արի աչքերիս հետ, որ 1
կոյսի վերայ չ'մտածեմ։
Եւ ի՞նչ բաժին կայ Աստուա- 2
ծանից վերևից, և ժառանգու-
թիւն Ամենակարողից բարձրե-
րիցը։
Չէ՞ որ ամբարշտի համար կո- 3
րուստ կայ. և չարիք՝ անօրէնու-
թիւն գործողների համար։
Չէ՞ որ նա տեսնում է իմ ճա- 4
նապարհները, և համարում՝ իմ
բոլոր քայլերը։
Եթէ ես ստութեամբ եմ շրը- 5
ջել, և իմ ոտքը շտապել է նեն-
գութեան,
Թող կշռէ ինձ արդարութեան 6
կշռով, և իմանայ Աստուած իմ
կատարելութիւնը։
Եթէ իմ ոտքը խոտորել է ճա- 7
նապարհիցը, և իմ որտին հե-
տևել իմ աչքը, և իմ ձեռքե-
րին կպել մի արատ,
Թող ես սերմեմ, և ուրիշն ու- 8
տէ, և իմ շառաւիղները արմա-
տից խլուին։
Եթէ սիրտս մոլորուել է մի 9
կնոջ մասին, և ես դարանամուտ
եմ եղել իմ դրացիի դռան,
Իմ կինը ուրիշի համար աղօ- 10
րիքը դարձնէ, և նորա վերայ ծը-
ռեն ուրիշները։
Որովհետև դա պղծագործու- 11
թիւն է, և դատաւորների դատելի
անօրէնութիւն։
Որովհետև դա մի կրակ է՝ մին- 12
չեւ տարտարոսը լափող, որ իմ
բոլոր արդիւնքն արմատիցը կը
խլէ։
Եթէ ես արհամարհել եմ իմ 13
ծառայի կամ աղախնի իրաւուն-
քը, նորանք ինձ հետ վէճ ունե-
ցած ժամանակին,
Այն ժամանակ ես ի՞նչ կ'ա- 14
նեմ, երբոր Աստուած վեր կե-
նայ. և երբոր նա քննէ, ես ի՞նչ
պատասխան կ'տամ.
Չէ՞ որ ինձ որովայնում ըս- 15
տեղծողն է նորան ստեղծել, և
մեզ արգանդում պատրաստողը
մէկն է։
Եթէ աղքատի ուզածը մեր- 16

ժել եմ, և որբևայրին աչքերը հանգցրել եմ,
17 Եթէ պատառս մինակ եմ կերել, և որբը նորանից չէ կերել,
18 (Որովհետև նա իմ մանկութիւնից ի վեր ինձ մեծացաւ իբրև հօր մօտ, և մօրս արգանդիցը նորան պիտացել եմ,)
19 Եթէ ես մէկ կորած եմ տեսել առանց հագուստի, կամ *թէ որ ծածկոց չունի աղքատը՝
20 Եթէ ինձ չեն օրհնել նորա երանքները, և նա չէ տաքացել իմ ոչխարների բրդիցը,
21 Եթէ իմ ձեռքը բարձրացրել եմ որբի վերայ, երբոր ես դատաւոր մէջ տեսայ իմ օգնութիւնը,
22 Թող իմ թևը իմ ուսիցը վայր ընկնէ, և բազուկս արմունկիցս կոտրուի,
23 Որովհետև Աստուծոյ կորցնելը վախ էր ինձ վերայ. և նորա մեծափառութիւնիցը չէի կարող պրծնել,
24 Եթէ ես ոսկին-շինել եմ իմ յոյսը, կամ մաքուր ոսկիին ասել եմ. իմ վստահութիւն,
25 Եթէ ես ուրախացել եմ, թէ առատութիւնս շատ է, և ձեռքս առատութիւն է գտել.
26 Կամ եթէ նայել եմ արևին, երբոր փայլում էր, և լուսնին, երբոր պայծառութեամբ գնում էր,
27 Կամ սիրտս խաբուել է ծածուկ, և ձեռքս պագել է բերանս.
28 Որ դա էլ դատաւորների դէմ անօրէնութիւն է. որովհետև ուրացած պիտի լինէի Աստուածն ի վերուստ.
29 Եթէ ուրախացել եմ առողիս կորուստով, կամ զուարճացել եմ որ նորան չարիք է հանդիպել.
30 Այլ նըյն իսկ թող չեմ տուել կոկորդիս մեղանչելու նորա անձի համար անէծք փափաքելով.
31 Եթէ իմ վրանի մարդիկն առած չլինին. ՈՀ ԹԷ չ'կշտանայինք նորա մսիցը.

*Կ՚՝ աղքատ առանց ծածկոցի,

(Պանդուխտը չէր օթևանում դրսում, դռներս բանում էի ճանապարհորդին.)
33 Եթէ յանցանքս ծածկել եմ †Ադամի պէս, որ պահէի ծոցումս իմ անօրէնութիւնը,
34 Որովհետև վախեցած լինիմ շատ բազմութիւնից, և ցեղերի անարգանքը զարհուրեցրած լինի, և ես լռած և դուռիցը դուրս ելած չլինիմ.
35 Երանի՜ ինձ, թէ մէկը ինձ լսեր. (ահա իմ փափաքը՝ որ Ամենակարողն ինձ պատասխաներ,) և մի գիրք գրեր իմ ջատագովը,
36 Անշուշտ նորան ուսիս վերայ կ'առնէի, և պսակի պէս կ'կապէի ինձ վերայ.
37 Քայլերիս համարանքը նորան կ'իմացնէի, իշխանի պէս կ'մօտենայի նորան.
38 Եթէ ինձ դէմ աղաղակել է իմ երկիրը, և նորա համոյն ակօսները լացել են,
39 Եթէ նորա արդիւնքը կերել եմ առանց փողի, և նորա տիրոջ հոգին հանգցրել եմ,
40 Թող ցորենի տեղ փուշ դուրս գայ, և գարիի տեղ որոմ.
Յոբի խօսքերը վերջացան.

ԳԼ· ԼԲ

1 Եւ այս երեք մարդիկը դադարեցին Յոբին պատասխան տալուց, որովհետև նա իր աչքին արդար էր։
2 Եւ Բուամ ցեղից Բուզացի Բարաքիէլի որդի՝ Եղիուսի բարկութիւնը բորբոքուեց. նորա բարկութիւնը բորբոքուեց Յոբի վերայ՝ իր անձն Աստուածանից արդարացնելու համար։
3 Եւ իր երեք ընկերների դէմ էլ բորբոքուեց նորա բարկութիւնը, նորա համար որ պատասխան չ'գտան, և Յոբին յանցաւոր էին անում։
4 Եւ Եղիուսն սպասել էր Յոբի խօսելուն, որովհետև նորանք հասակով նորանից ծեր էին։
5 Բայց երբոր Եղիուսը տեսաւ, որ այն երեք մարդկանց բերանում պատասխան չ'կար, այն ժամանակ բորբոքուեց նորա բարկութիւնը։
6 Եւ Բուզացի Բարաքիէլի որդի Եղիուսը պատասխանելով ասեց. Ես հասակով փոքր եմ, իսկ դուք ալեւորներ էք. նորա համար ես ետ կացի և վախեցի իմ գիտութիւնը ձեզ յայտնելու։
7 Ասեցի. Թող տարիքը խօսին, և տարիների շատութիւնը իմաստութիւն հասկացնեն։
8 Բայց մարդիս մէջինը հոգին է, և Ամենակարողի շունչն է նորանց հանճար տալիս։
9 Մեծերը չեն իմաստունը, և ծերերը չեն դատաստան հասկացողը։
10 Նորա համար ասեցի. Ինձ մի՛տիկ արա, որ դիտեցածս ես էլ պատմեմ։
11 Ահա ես սպասել եմ ձեր խօսքերին, ականջ եմ դրել ձեր հասկացողութեանը, մինչև որ քննեցիք խօսքերը։
12 Եւ երբոր ուշադրութեամբ ձեզ մտիկ էի անում, ահա ցորին յանդիմանող չ'կար ձեզանից, որ պատասխաներ նորա ասածներին։
13 Միայն թէ չ'ասէք՝ Թէ իմաստութիւն գտանք. Աստուած կը յաղթէ նորան, ոչ թէ մարդ։
14 Եւ նա ինձ դէմ չ'շարեց իր խօսքերը, ես էլ ձեր խօսքերովը չեմ պատասխանելու իրան։
15 Նորանք ապշեցին, այլևս չը պատասխանեցին, խօսքերը հեռացան նորանցից։
16 Եւ ես սպասել եմ մինչև որ էլ չեն խօսում, մինչև որ կանգնել են և էլ չեն պատասխանում։
17 Ես էլ եմ խօսելու իմ բաժինը, դիտեցածս ես էլ ասեմ։
18 Որովհետև լիքն եմ խօսքերով, ներսիս հոգին նեղում է ինձ։
19 Ահա որովայնս չ'բացուած գինիի նման է. նոր տակերի պէս, որ տրաքում են։
20 Ասեմ որ հանգստանամ. շրթունքներս բանամ և պատասխանեմ.
21 Ոչ ոքի երեսպաշտութիւն չ'անեմ, և ոչ մէկի չ'շողոքորթեմ.
22 Որովհետև ես շողոքորթել չը

գիտեմ. շուտով կ'վերացներ ինձ իմ Արարիչը։

ԳԼ· ԼԳ

1 Բայց սակայն մէկ լսիր իմ խօսքը, ով Յոբ, և իմ բոլոր ասածներին ականջ դիր։
2 Ահա հիմա բացել եմ բերանս, թող լեզուս խօսէ քիմքումս։
3 Սրտիս ուղղութեամբն են խօսքերս. և շրթունքներիս գիտութիւնը մաքուր խօսում են։
4 Աստուծոյ հոգին է ստեղծել ինձ, և Ամենակարողի շունչը ինձ կեանք տուել։
5 Եթէ կարող ես, պատասխան տուր ինձ. պատրաստուիր առաջիս կանգնիր։
6 Ահա ես ասածիդ պէս Աստուծոյ համար լինիմ. ես էլ եմ ցեխից կազմուած։
7 Ահա թող իմ երկիւղը քեզ չ'զարհուրեցնէ, և իմ ճնշումը քեզ վերայ չ'ծանրանայ։
8 Արդարև ասել ես ականջիս, և ես լսեցի խօսքերի ձայնը.
9 Թէ մաքուր եմ ես՝ առանց յանցանքի. անարատ եմ ես, անօրէնութիւն չ'ունիմ։
10 Ահա նա պատճառանքե գըտնում ինձ վերայ, ինձ թշնամի է համարում իրան,
11 Ոտքերս դրել է կոճղում, դիտում է բոլոր շաւիղներս։
12 Ահա դու այս բանում արդար չես. ես քեզ պատասխանեմ. որովհետև Աստուած մարդիցը մեծ է։
13 Ինչու համար ես վիճում նորա հետ, որ իր բոլոր գործքերի համար պատասխան չի տալ։
14 Սակայն մէկ *անգամ կ'խօսէ Աստուած, և միւսանգամ. բայց մարդս ուշադրութիւն չէ անում։
15 Երազում՝ գիշերի տեսիլքում, մարդկանց վերայ խոր քուն ընկնելիս, անկողնի վերայ քնելիս։
16 Այն ժամանակ նա բանում է մարդկանց ականջը, և նորանց խրատելով կնքում է,
17 Որ մարդիս հեռացնէ վատ գոր-

*Կ՚՝ կերպով

ծից, և ամբարտաւանութիւնը
ծածկէ մարդից։
18 Որ ետ պահէ նորա հոգին կո-
րուստից, և նորա կեանքը՝ սրով
անցնելուց։
19 Նա խրատվում էլ է ցաւով իր
անկողնի վերայ, և նորա ոսկոր-
ների կռիւը սաստիկ է լինում։
20 Եւ նորա կեանքը զզվում է հա-
ցից, և նորա հոգին՝ ցանկալի կե-
րակուրից։
21 Նա վերջացնում է նորա միսը,
որ էլ չէ երևում. և դուրս են
ցցվում նորա ոսկորները, որ ա-
ռաջ չէին երևում։
22 Եւ նորա անձը մօտենում է
կորստեան, և նորա կեանքը՝ ըս-
պանողներին։
23 Եթէ նորա համար կայ մի միջ-
նորդող հրեշտակ, հազարից գե-
րազանցող մէկը, որ իմացնէ մար-
դիս նորա ուղղութիւնը.
24 Այն ժամանակ նա ողորմում
է նորան և ասում. Ազատիր նո-
րան *կորուստն իջնելուց. ես քա-
ւութիւն եմ գտել։
25 Այն ժամանակ նորա մարմինը
փափուկ կ'լինի երեխայի մարմնից,
նա ետ կ'դառնայ իր մանկու-
թեան օրերին։
26 Աստուծուն կ'աղօթէ, և նա
նորան կ'ընդունէ, և նա կ'տես-
նէ նորա երեսը ուրախութեամբ.
և այսպէս նա ետ է տալիս մար-
դիս նորա արդարութիւնը։
27 Նա նայում է մարդկանց վե-
րայ. և եթէ նա ասէ. Մեղք
գործեցի, և ուղիղը ծռեցի, և
նա ինձ հատուցում չ'արաւ.
28 Նա ազատել է իմ հոգին *կո-
րուստն իջնելուց, և իմ կեանքը
լոյսով կ'զուարճանայ։
29 Ահա այս ամենը Աստուած ա-
նում է մարդիս հետ երկու և ե-
րեք անգամ։
30 Որ նորա հոգին ետ դարձնէ
†կորուստից կեանքի լոյսովը լոյսի
մէջ։
31 Ականջ դիր, Յոբ, լսիր ինձ.
լուռ կաց, և ես խօսեմ։

Եթէ խօսք կայ, պատասխա- 32
նիր ինձ. ասիր, որ փափաքում
եմ քեզ արդարացնել։
Եթէ չ'կայ, լսիր ինձ. լռիր 33
և ես քեզ իմաստութիւն սովո-
րեցնեմ։

ԳԼ. ԼԴ

Եւ Եղիուսը պատասխանելով ա- 1
սեց.
Լսեցէք իմ խօսքը, ով իմաս- 2
տուններ, և ով գիտուններ, ա-
կանջ դրէք ինձ։
Որովհետև ականջը կ'որոշէ խօս- 3
քերը, և քիմքը կ'առնէ կերա-
կուրի համը։
Իրաւունք ընտրենք մեզ հա- 4
մար. իմանանք մեր մէջ, թէ ի՞նչն
է բարի։
Որովհետև Յոբն ասեց. Արդար 5
եմ. բայց Աստուած մերժեց իմ
իրաւունքը։
Իրաւունքիս դէմ ստե՞մ. ան- 6
բուժելի է իմ ‡վէրքը՝ առանց
յանցանքի։
Ո՞ր մարդը կայ Յոբի նման, որ 7
հայհոյութիւնը խմում է ջրի
պէս։
Եւ գնում է ընկերանում չա- 8
րագործների հետ, և ման գալիս
ամբարիշտ մարդկանց հետ.
Որովհետև ասեց. Օգուտ չ'ու- 9
նի մարդս, Աստուծոյ հաճու-
թեան մէջ լինելով։
Սորա համար, ով իմաստուն 10
մարդիկ, ինձ լսեցէք, քաւ լիցի
որ Աստուած չարութիւն անէ և
Ամենակարողը՝ անօրէնութիւն։
Որովհետև մարդս անում է, և 11
Աստուած վճարում է նորան. և
մարդիս ճանապարհին համեմատ
գտնել է տալիս նորան։
Բայց յիրաւի Աստուած անօ- 12
րէնութիւն չի անիլ, և Ամենա-
կարողը չի ծռիլ իրաւունքը։
Ո՞վ յանձնեց նորան երկիրը, և 13
ո՞վ կարգի դրաւ բոլոր աշխարհքը։
Եթէ նա իրան վերայ դարձնէ 14
իր սիրտը, իր հոգին և իր շունչը
ժողովէ իրան մօտ.

*Կամ՝ գերեզմանն
†Կամ՝ գերեզմանից

‡ԵԲՐ. նետը՝

15 Ամեն մարմին միասին կ'մեռնի,
և մարդս հողը կ'դառնայ։
16 Եւ եթէ խելք ունիս, լսիր այս
բաները. ականջ դիր իմ խօսքերի
ձայնին։
17 Մի՞թէ արդարութիւն ատողը
կարող է իշխել. և կամ թէ ար-
դար Հզօրին կարո՞ղ ես յանցա-
ւոր անել.
18 *Նա որ թագաւորին ասում
է՝. Ով անպիտան. ազնուական-
ներին՝ Ով չար։
19 Նա որ իշխաններին աչառու-
թիւն չի անիլ, և հարուստին ա-
ւելի ուշադրութիւն չի անիլ աղ-
քատիցը, որովհետև ամենքն էլ
նորա ձեռքի գործն են։
20 Մէկ վայրկեանում կ'մեռնեն,
և մի կէս գիշերում մի ժողո-
վուրդ շփոթվում անցնում է, և
զօրաւորներն անց են կենում՝
առանց ձեռք դպչելու։
21 Որովհետև նորա աչքերը մար-
դիս ճանապարհների վերան են.
և նորա բոլոր քայլերը նա տես-
նում է։
22 Ոչ խաւար կայ, և ոչ մահ-
ուան ստուեր, որ այնտեղ թաք-
չուէին չարագործները։
23 Որովհետև մարդիս էլ չէ սահ-
պում, որ դատի համար Աստու-
ծոյ մօտ գնայ։
24 Նա փշրում է մեծամեծներին
առանց քննութեան, և ուրիշ-
ներին՝ գնում նորանց տեղը։
25 Եւ այսպէս տեղեակ է նորանց
գործերիցը, և տապալում է գի-
շերը, և նորանք ջարդվում են։
26 Որովհետև անզգամ մարդիկ
են. ծեծում է նորանց հանդի-
սատեսների տեղումը.
27 Նորա համար որ նորան հետե-
ւելուցը հեռացան, և նորա բո-
լոր ճանապարհներին խելամուտ
չ'եղան։
28 Այնպէս որ նորա մօտ գնաց
աղքատի աղաղակը. և նա զըր-
կեալների աղաղակը լսեց։
29 Եւ եթէ նա հանգստացնէ, ո՞վ
է կարող նեղել, և եթէ նա ե-
րեսը ծածկէ, ո՞վ է կարող նո-
րան տեսնել. թէ մի ազգի հա-
մար, թէ մէկ մարդի համար՝
մէկ է.
Որպէսզի չ'թագաւորէ կեղ- 30
ծաւորը, և ժողովրդի որոգայթ
չ'լինի։
Որովհետև պէտք է ասել Ա- 31
ստուծոյ, թէ †ինձ բարձրացրի՝.
էլ չարութիւն չեմ անիլ.
Այն որ չեմ տեսնում, ինձ ա- 32
ղորեցրու. եթէ ամբարշտութիւն
եմ գործել, էլ չեմ անիլ։
Մի՞թէ քո գաղափարի պէս է 33
հատուցանելու, որ դու հակա-
ռակում ես. ուրեմն դու պիտի
ընտրես և ոչ թէ ես. ինչ որ գի-
տես՝ ասիր։
Իմաստուններն ինձ կ'ասեն, 34
նոյնպէս և գիտուն մարդը՝ որ
ինձ լսում է։
Թէ Յոբը գիտութիւնով չէ 35
խօսել, և նորա խօսքերը իմաս-
տութեամբ չեն.
Ոհ եթէ Յոբը փորձուէր իս- 36
պառ, ամբարիշտ մարդկանց պէս
տուած պատասխանների համար։
Որովհետև մեղքի վերայ յան- 37
ցանք աւելացրեց. մեր միջում
ծափ է տալիս, և շատացնում է
իր խօսքերը Աստուծոյ դէմ։

ԳԼ. ԼԵ

Եւ Եղիուսը պատասխանելով 1
ասեց.
Սա դու իրաւո՞ւնք ես համա- 2
րում, որ ասում ես. Իմ արդա-
րութիւնն աւելի է Աստուածա-
նից։
Որովհետև ասեցիր. Թէ Քեզ 3
ի՞նչ օգուտ ունի, և ի՞նչ աւելի
շահ կայ սորանից քան թէ մե-
ղանչելուց.
Ես քեզ խօսք կ'պատասխա- 4
նեմ, և քո ընկերներին քեզ հետ։
Նայիր երկնքին և տես, և դի- 5
տիր ամպերը որ քեզանից բարձր
են.
Եթէ դու մեղանչես, նորա 6
դէմ ի՞նչ արած կ'լինիս. և քո

*Կամ՝ Կարելի՞ է ասել թագաւորին. Տես Ել. իբ. 28։

†Կամ՝ Պատիժ կրեցի.

անօրէնութիւնները որ շատա-
նան, նորան ի՞նչ կ'անես։
7 Կամ եթէ արդար լինիս, ի՞նչ
կ'տաս նորան. կամ նա ի՞նչ կ'առ-
նէ քո ձեռքիցը։
8 Քեզ նման մարդին կ'ներգործէ
քո ամբարշտութիւնը, և մարդի
զաւակին՝ քո արդարութիւնը։
9 Հարստահարութիւնների շա-
տութիւնից կ'աղաղակեն, կ'բո-
ղոքեն մեծամեծների բազուկիցը։
10 Բայց մէկը չէ ասում. Ո՞ւր է
ինձ ստեղծող Աստուածը, նա որ
գիշերը երգեր է տալիս.
11 Որ մեզ երկրի անասուններից
աւելի գիտուն և երկնքի թռ-
չուններից աւելի իմաստուն է ա-
նում։
12 Այնտեղ աղաղակում են, բայց
նա չէ պատասխանում՝ չարերի
հպարտութեան պատճառով։
13 Յիրաւի Աստուած ունայնու-
թեան չի լսիլ, և Ամենակարողը
նորան մտիկ չի անիլ։
14 Թէպէտև դու ասում ես, թէ
Նորան չես տեսնում. սակայն
դատաստան կայ նորա առաջին,
յուսա Նորան։
15 Բայց հիմա որ նորա բարկու-
թիւնը մի չնչին բան է արել, և
չէ իմացել շատ անօրէնութիւնը,
16 Յորը դարձեալ զուր տեղն է
բանում իր բերանը. առանց հաս-
կացողութեան խօսքեր է շատա-
ցնում։

ԳԼ. ԼԶ

1 Եւ Եղիուսը շարունակելով ա-
սեց.
2 Մի փոքր համբերիր, որ քեզ
սովորեցնեմ, որովհետև դեռ էլ
խօսք կայ Աստուծոյ համար։
3 Ես իմ գիտութիւնը հեռուից
պիտի սկսեմ, և իմ Արարչին պի-
տի արդարութիւն ընծայեմ։
4 Որովհետև իմ խօսքը սուտ չէ.
քեզ մօտ մէկ գիտութեամբ կա-
տարեալը կայ։
5 Ահա Աստուած հզօր է, բայց
չի արհամարհիլ. հզօր է սրտին
զօրութեամբը։
6 Նա ամբարշտին չի ապրեցնիլ,
և նեղեալներին իրաւունքը կը
տայ։
7 Նա ետ չի քաշիլ արդարից իր
աչքերը, այլ թագաւորների հետ
նորանց աթոռի վերայ էլ կ'դնէ
յաւիտեան, և նորանք կ'բարձրա-
նան։
8 Եւ եթէ նորանք շղթաներով
կապուած լինին, և բռնուին թշ-
ուառութեան լարերով,
9 Այն ժամանակ կ'յայտնէ նո-
րանց իրանց գործքը, և իրանց
յանցանքը, որ իրանց բարձրա-
ցրել էին։
10 Եւ նա կ'բանայ նորանց ական-
ջը խրատի, և կ'պատուիրէ որ
դառնան իրանց ամբարշտութիւ-
նիցը։
11 Եթէ լսեն և հնազանդեն, ի-
րանց օրերը բարիքով կ'վերջա-
ցնեն, և իրանց տարիները՝ զուար-
ճութիւնով։
12 Բայց եթէ չ'լսեն, որով կ'ան-
ցնեն, և կ'մեռնեն առանց հաս-
կացողութեան։
13 Եւ սրտով կեղծաւորները բար-
կութիւն կ'դիզեն. չեն աղաղա-
կիլ, երբոր նորանց կապէ։
14 Նորանց անձը կ'վախճանուի ե-
րիտասարդութիւնում, և նորանց
կեանքը՝ իգացողների հետ։
15 Իսկ նա աղքատին կ'ազատէ իր
թշուառութիւնումը, և բռնու-
թեան միջոցով կ'բանայ նորանց
ականջը։
16 Քեզ էլ կ'հանէր նեղութեան
երախիցը մի ընդարձակ տեղ, ուր
որ նեղութիւն չ'կայ, և քո սե-
ղանի վերայ դրուածը պարար-
տալի կ'լինէր։
17 Բայց դու լիքն ես անզգամնե-
րի դատողութեամբը. դատաս-
տանն ու իրաւունքը բռնելու են
քեզ։
18 Որ մի գուցէ բարկութիւնը
քեզ հրապուրէ ծաղրելու. այն
ժամանակ մեծ փրկանքը քեզ չի
ազատիլ։
19 Մի՞թէ նա մի բանի տեղ կը
դնէ քո հարստութիւնը, ոչ ոս-
կին և ոչ մի զօրաւոր ոյժը։
20 Մի փափաքիր այն գիշերին, որ
ժողովուրդներին կ'տեղահանէ։

21 Զգուշացիր, որ չ'դառնաս դէպի
ամբարշտութիւն, որովհետև դու
սորան աւելի ընտրեցիր նեղուե-
լուց։
22 Տես՝ Աստուած բարձր է իր զօ-
րութիւնովը. ո՞վ կայ նորան պէս
սովորեցնող։
23 Ո՞վ որոշեց նորա համար նորա
ճանապարհը, և ո՞վ կ'համարձակուէ
ասել. Անիրաւութիւն արիր։
24 Միտք արա, որ մեծարես նո-
րա գործքը, որոնք մարդիկ օրհ-
ներգել են։
25 Ամեն մարդ նորանով հիանում
է, մարդս հեռուանց է նկատում.
26 Ահա Աստուած մեծ է, և մենք
չ'գիտենք, նորա տարիների թիւը
անքննելի է։
27 Որովհետև նա քաշում է ջու-
րի կաթիլները. նորանք էլ անձ-
րև են թափում մռայլիցը.
28 Որ տեղում են ամպերը, առա-
տօրէն ածում մարդկանց վերայ։
29 Մանաւանդ եթէ մէկը հաս-
կանայ ամպերի տարածուիլը, նո-
րա վրանների ճարճատմունքը։
30 Ահա տարածում է իր վերայ
լոյսը, և ծովի արմատներովը
ծածկում է։
31 Որովհետև դորանցով է դա-
տում ազգերին և կերակուր շը-
նորհում՝ առատօրէն։
32 Նա իր ձեռքերումը ծածկում
է *կայծակը, և պատուիրում է
նորան դէպի նշանը։
33 Նորա մասին լուր է տալիս նո-
րա շառաչիւնը. խաշինքն անգամ
նորա վեր կենալը գիտէն։

ԳԼ. ԼԷ

1 Եւ հէնց սորա համար դողում է
սիրտս, և երերում է իր տեղիցը։
2 Մէկ լսեցէք, նորա ձայնի ո-
րոտմունքը, և նորա բերանից ե-
լած շառաչիւնը։
3 Բոլոր երկնքի տակ արձակում
է նորան, և նորա լոյսը՝ մինչև
երկրի ծայրերը։
4 Նորա ետևիցը մի գոռոց է վեր
կենում, նա որոտում է իր վե-
հափառութեան ձայնովը, և չէ
ուշացնում երբոր լսվում է ձայնը։
5 Զարմանալի որոտում է Աստ-
ուած իր ձայնովը, մեծամեծ բա-
ներ է անում, և մենք չ'գիտենք։
6 Որովհետև նա ձիւնին ասում
է. Եղիր երկրի վերայ. նաև ու-
ժեղ անձրևին և իր զօրութեան
ուժեղ տարափին։
7 Ամեն մարդի ձեռք կնքում է.
որ հասկանան նորա ստեղծագոր-
ծութեան բոլոր մարդիկը։
8 Եւ գազանները մտնում են որ-
ջերը, և բնակվում են իրանց այ-
րերումը։
9 †Հարաւիցը գալիս է փոթորի-
կը, և հիւսիսիցը՝ ցուրտը։
10 Աստուծոյ շնչելիցը սառնամա-
նիք են գոյանում, և ջրերի տա-
րածութիւնը սեղմվում է։
11 Նաև բեռնում է թումպը իր
թացութիւնով, և փռում է իր
լուսաւոր ամպերը։
12 Եւ նորանք շուռ գալով տե-
ղափոխվում են նորա խորհուրդ-
ներովը, որ անեն նորա բոլոր ի-
րանց հրամայածը երկրի երեսի
վերայ։
13 Մերթ խրատի համար, մերթ
երկրի համար, մերթ շնորհքի հա-
մար բերում է նա նորանց։
14 Ով Յոբ, լսիր այս բաները,
կանգնիր և հասկացիր Աստուծոյ
սքանչելիքը։
15 Գիտե՞ս արդեօք, թէ Աստ-
ուած ինչպէս է բեռնում նորանց,
և փայլեցնում՝ իր ամպի լոյսը։
16 Գիտե՞ս արդեօք ամպերի հաւա-
սարակշռութիւնը, գիտութեամբ՝
կատարեալի հրաշալիքները։
17 Որ հանդերձներդ տաքանում
են՝ երկիրը հարաւից հանգստա-
նալիս,
18 Նորա հետ մէկտեղ տարածե-
ցի՞ր երկինքը, որ ամուր է ինչ-
պէս ձուլած հայելի։
19 Սովորեցրու մեզ, թէ ինչ ա-
սենք նորան. չենք կարողանում
դիրան կարգադրել խաւարի պատ-
ճառով։
20 Նորան կ'պատմուի՞ արդեօք,

*ԵԲՐ. լոյսը։

†Կամ Ներքնասենեակիցը

երբոր ես խօսեմ. եթէ մէկ մարդ
ասէ, իսկոյն կուլ կ'դնայ։
21 Եւ հիմա չեն տեսնում լոյսը,
որ ճառագայթում է երկնքի վե-
րայ. բայց քամին անցնում է վե-
րայովը և պայծառացնում նո-
րանց։
22 Հիւսիսից ոսկի է բերվում,
Աստուծոյ մօտ ահեղ փառաւո-
րութիւն կայ։
23 Նա Ամենակարող է. մենք չենք
հասնիլ նորան. նա զօրութեամբ
բարձրացեալ է, և իրաւունքն ու
արդարութեան շատութիւնը չի
ծռիլ։
24 Նորա համար մարդիկ վախե-
նում են նորանից. նա մտիկ չի
անիլ ոչ մի ինքն իրանում իմաս-
տուն եղողին։

ԳԼ. ԼԸ

1 Այն ժամանակ Եհովան պա-
տասխանեց Յոբին փոթորկի մի-
ջիցը և ասեց.
2 Ո՞վ է դա, որ խորհուրդը նը-
սեմացնում է անիմաստ խօսքե-
րով։
3 Մէկ գօտևորիր մէջքդ տղա-
մարդի պէս, և ես քեզ հարցը-
նեմ, ու դու ինձ հասկացրու։
4 Ո՞ւր էիր՝ ես երկրի հիմունքը
դնելիս. իմացրու ինձ, եթէ ի-
մաստութիւն գիտես։
5 Ո՞վ դրաւ նորա չափերը, ե-
թէ գիտես, կամ թէ ո՞վ քաշեց
լարը նորա վերայ։
6 Ինչի՞ վերայ են խրուած նորա
խարիսխները. կամ ո՞վ է ձգել
նորա անկեան քարը.
7 Առաւօտեան աստղերը միասին
ցնծալիս, և Աստուծոյ բոլոր որ-
դիքը երբոր գովաբանում էին։
8 Եւ ո՞վ կապեց ծովը դռներով,
երբոր նա յորդահոսելով ելաւ
արգանդից.
9 Երբոր ես ամպը նորա համար
հանդերձ դրի, և մէգը՝ խանձա-
րուր.
10 Եւ իմ սահմանը հաստատեցի
նորա համար, և փականք ու
դռներ դրի.
11 Եւ ասեցի. Մինչև այստեղ
գաս, և էլ չ'անցնես. այստեղ
կ'դադարեն քո փառահեղ ալիք-
ները։
12 Քո օրերումը երբէք մէկ առա-
ւօտի հրամայե՞լ ես, ցոյց տուե՞լ
ես արշալուսին իր տեղը,
13 Որ բռնէ երկրի ծայրերը. և թօ-
թափուին անզգամները նորանից։
14 Որ նա փոխուի ինչպէս կնիքի
կաւը, և բոները ներկայանան իբ-
րև զգեստաւորուած.
15 Եւ ամբարիշտներիցն արգել-
ուի իրանց լոյսը և բարձր բա-
զուկը կոտրուի։
16 Արդեօք գնացե՞լ ես մինչև ծո-
վի աղբիւրները, և անդունդի
խորքումը ման եկե՞լ ես.
17 Արդեօք բացուե՞լ են քո առա-
ջին մահուան դռները, և մահ-
ուան ստուերի մէջ դռները տե-
սե՞լ ես։
18 Արդեօք հասկացե՞լ ես մինչև
երկրի լայնքերը. ասիր, եթէ գի-
տես ամենը։
19 Ո՞րն է այնտեղի ճանապարհը,
ուր բնակվում է լոյսը, և ո՞րն է
խաւարի տեղը.
20 Որ դու նորան տանէիր իր սահ-
մանը, և գիտենայիր նորա տան
շաւիղները։
21 Դու գիտե՞ս, որովհետև այն
ժամանակին ծնուեցիր, և քո օ-
րերի թիւը շա՞տ է։
22 Արդեօք գնացե՞լ ես ձիւնի շտե-
մարանները, և կարկուտի շտե-
մարանները տեսե՞լ ես.
23 Որ ես պահել եմ նեղութեան
ժամանակի համար, կռիւի և պա-
տերազմի օրուան համար։
24 Այն ո՞ր ճանապարհն է, որով
լոյսը բաժանվում է, տարած-
վում է արևելեան քամին՝ երկրի
վերայ։
25 Ո՞վ է հեղեղների համար անցք
բանում, և ճանապարհ՝ որոտ-
մանց փայլակի համար.
26 Որ անձրև դայ անմարդաբնակ
երկրի վերայ, անապատումը՝ ուր
որ մարդ չ'կայ,
27 Որ ամայի և ամայացուած տե-
ղերը կշտացնէ, և որ դալար խոտ
բուսցնէ։
28 Անձրևը հայր ունի՞ արդեօք,

կամ ո՞վ է ցօղի կաթիլները ծը-
նողը։
29 Որի՞ արգանդիցն է դուրս գա-
լիս սառը, և երկնքի եղեամի ծը-
նողն ո՞վ է։
30 Ջուրերը պնդանում են քարի
պէս, և անդունդի երեսը սառ-
չում է։
31 Կարո՞ղ ես Բազմաստեղի կա-
պերը կապել, կամ Հայկի կըշ-
կուռները՝ բանալ։
32 Կ'հանե՞ս Կենդանակերպներն
իրանց ժամանակին, և Արջն իր
զաւակների հետ կ'առաջնորդե՞ս.
33 Գիտե՞ս երկնքի կանոնները,
կամ դո՞ւ ես դնում նորա իշխա-
նութիւնը երկրի վերայ։
34 Կարո՞ղ ես ձայնդ բարձրացնել
ամպերին, որ մի ջրհեղեղ քեզ
ծածկէ.
35 Կայծակներ ուղարկել որ գը-
նան, և քեզ ասեն. Ահա այս-
տեղ ենք։
36 Ո՞վ դրաւ երիկամունքներում
իմաստութիւն, կամ սրտին ո՞վ
տուաւ հանճար։
37 Ո՞վ է համարում ամպերն ի-
մաստութեամբ, և երկնքի տի-
կերն ո՞վ է պառկեցնում,
38 Երբոր փոշին ձուլածոյ է ձուլ-
վում, և հողի կոշտերը իրար են
կպչում։
39 Կարո՞ղ ես առիւծի համար
աւար որսալ, և կորիւնների ա-
խորժակը կշտացնել,
40 Երբոր նորանք կուճ են գալիս
այրերումը և դարան նստում որ-
ջերումը։
41 Ո՞վ է ագռաւի համար նորա
որսը պատրաստում, երբոր նորա
ձագերն աղաղակում են առ Աստ-
ուած, և թափառում առանց
ուտեստի։

ԳԼ. ԼԹ

1 Գիտե՞ս ժայռի այծերի ծնելու
ժամանակը, եղնիկների ծնելը գի-
տե՞լ ես։
2 Համարո՞ւմ ես նորանց լրա-
ցրած ամիսները, և գիտե՞ս նորա
ծնելու ժամանակը,
3 Որ ծռվում ծնում են իրանց
ձագերը, և ձգում են իրանց ցա-
ւերը։
4 Նորանց ձագերը զօրանում են
և մեծանում դաշտումը, գնում
են դուրս, և ետ չեն դառնում
նորանց մօտ։
5 Ո՞վ է ազատ բաց թողել ցի-
ռը, և վայրի էշի կապերն ո՞վ է
արձակել,
6 Որի տունը շինեցի անապատը,
և աղադաշտը նորա բնակարան-
ները.
7 Որ ծիծաղում է քաղաքի աղ-
մուկի վերայ, ստիպողի աղաղակը
չէ լսում.
8 Ման է գալիս սարերումը իր
արօտումը, և ամեն տեսակ խոտե-
րը որոնում է։
9 Միեղջերուն կ'ուզէ՞ քեզ ծա-
ռայել, կամ թէ կ'օթևանէ՞ քո
մսուրի մօտ.
10 Կարո՞ղ ես միեղջերուին ակօ-
սումը կապել չուանովը, կամ թէ
քո ետևից կ'տափանէ՞ խորտ ու
բորտերը։
11 Կ'վստահե՞ս նորան, որովհետև
ոյժը շատ է. և գործդ նորան կը
յանձնե՞ս։
12 Կ'հաւատա՞ս նորան թէ քո
ցանածը կ'բերէ, և քո կալը կը
ժողովէ։
13 Ջայլամի թևը ուրախ ուրախ
ծածանվում է. մի՞թէ արագիլի
թևն ու փետուրն է դա։
14 Ոչ, նա թողում է երկրին իր
ձուերը, և հողի վերայ տաքա-
ցնում է նորանց։
15 Եւ մոռանում է որ մի ոտք կը
կոտրէ նորանց, և դաշտի գազան-
ները նորանց ոտնակոխ կ'անեն։
16 Նա անգութ է իր ձագերին,
իբր թէ իրանը չեն, իր աշխատան-
քը դարտակ լինելուն վախ չու-
նի։
17 Որովհետև Աստուած զրկել է
նորան իմաստութիւնից, և գի-
տութիւնից նորան բաժին չէ
տուել։
18 Իսկ երբոր նա վեր է բարձրա-
նում, ծիծաղում է ձիան և ձի-
աւորի վերայ։
19 Ձիանը դո՞ւ ես ոյժ տուել,
նորա պարանոցը՝ հագցրել բաշը։

20 Դո՞ւ ես նորան թռչել տալիս
մարախի նման. նորա փառաւոր
վրնջելը երկիւղալի՛ է։
21 Սմբակովը քանդում է հովտու-
մը և զուարճանում է ոյժովը.
նա դուրս է գալիս սպառազէնը
դիմադրաւելու։
22 Ծիծաղում է երկիւղի վերայ,
և չէ սոսկում, և ետ չէ դառ-
նում սուրի առաջից։
23 Նորա վերայ ճարճատում է
կապարճը, պսպղուն նիզակը և
գեղարդը։
24 Յասումով ու կատաղութեամբ
կուլ է տալիս հողիցը, և չէ դի-
մանում՝ երբոր լսում է շեփորի
ձայնը։
25 Շեփորը հնչեցնելիս ասում է.
Ո՛հ, և հեռուանց առնում է
պատերազմի հոտը, զօրավարների
որոտալը և դղրդիւնը։
26 Բազէն քո՞ գիտութիւնիցն է
թռչում, և իր թռիչները դէպի
հարաւ տարածում։
27 Կամ քո՞ խօսքովն է սլանում
արծիւը, ու բարձրերումը դնում
իր բոյնը։
28 Նա ժայռի վերայ է բնակվում
և բոյն դնում ժայռի ժանիքի և
ապառաժի վերայ։
29 Այնտեղից է նա որոնում կե-
րակուրը, հեռուանց են տեսնում
նորա աչքերը։
30 Նորա ձագերն էլ արիւն են
ծծում. և ուր որ դիակներ են
լինում, նա այնտեղ է։

ԳԼ. Խ

1 Եւ Եհովան Յոբին պատասխա-
նելով ասեց.
2 Ամենակարողի հետ վիճողը պի-
տի կարողանա՞յ խրատել նորան.
Աստուծուն յանդիմանողը թող
պատասխանէ։
3 Եւ Յոբը պատասխանեց Եհո-
վային և ասեց.
4 Ահա ես նուաստ եմ, ի՞նչ պա-
տասխանեմ. ձեռքս բերանիս եմ
դնում։
5 Մէկ խօսել եմ, այլ ևս չեմ
պատասխանիլ. և միւսանգամ
էլ, և չեմ կրկնիլ։
Եւ Եհովան պատասխան տուաւ 6
փոթորկից Յոբին և ասեց.
Հիմա մէջքդ գօտեպնդիր քա- 7
ջազունի պէս, որ քեզ հարցնեմ,
և դու ինձ իմացրու,
Յիրաւի պիտի խափանե՞ս իմ 8
դատաստանը, ինձ յանցաւո՞ր ա-
նես, որպէս զի դու արդարա-
նաս։
Կամ թէ բազո՞ւկ ունիս Ա- 9
ստուծոյ նման, և կարո՞ղ ես ձայ-
նովդ նորա պէս որոտալ։
Մէկ զարդարուիր փառքով ու 10
մեծութիւնով, և պայծառու-
թիւն ու շքեղութիւն հագիր.
Թափիր բարկութեանդ եռան- 11
դը, և մտիկ տուր ամեն հպար-
տին, և խոնարհեցրու նորան.
Մտիկ տուր ամեն հպարտին, 12
նուաճիր նորան, և խորտակիր
ամբարիշտներին իրանց տեղը.
Թաղիր նորանց միասին հողի 13
մէջը, և նորանց երեսները կապիր
ծածկոցով.
Այն ժամանակ ես էլ քեզ կը 14
գովեմ, որ քո աջ ձեռքը քեզ
օգնում է։
Ահա *Բեհեմովթը, որին ես 15
քեզ հետ ստեղծեցի, խոտը ար-
ջառի պէս է ուտում.
Ահա նորա ոյժը իր մէջքումն 16
է, և նորա զօրութիւնը իր փորի
մկանունքումն է։
Նա ծռում է իր ագին եղևինի 17
նման, նորա ազդրերի ջիղերը
հիւսուած են։
Նորա ոսկորները պղնձի խողո- 18
վակներ են, նորա ոսկորները եր-
կաթի նիգեր են։
Նա Աստուծոյ †գործերի գլխա- 19
ւորն է. նորա Արարիչը կ'մօտեցնէ
նորան իր սուրը։
Որովհետև սարերը նորա հա- 20
մար կերակուր են բերում, և
դաշտի բոլոր գազանները խա-
ղում են այնտեղ.
Ստուերախիտ ծառերի տակին 21
է նա պառկում՝ եղէգների շու-
քումը և ճահիճներում.
Նորան ծածկում են ստուերա- 22

*Կամ՝ ձիագետին
†Կամ՝ ճանապարհների

խիտ ծառերի հովանիները, նորան
պատում են հեղեզատների ու-
ռիները։
23 Ահա գետը վարարելիս նա չէ
վրդովվում. ապահով է նա եթէ
Յորդանանն էլ յորդէ դէպի նո-
րա բերանը։
24 Նորա աչքի առաջին նա կը
բռնուի՞, որոգայթի լարերով կա-
րելի՞ է ծակել նորա քիթը։

ԳԼ. ԽԱ

1 Կարո՞ղ ես կարթով բռնել Լե-
ւիաթանին, և նորա լեզուն չը-
ւանով քաշել։
2 Կարո՞ղ ես նորա քթովը եղէգ
անցկացնել, և նորա ծնօտը մա-
խաթով ծակել։
3 Մի՞թէ քեզ շատ աղաչանք-
ներ կ'անէ նա, կամ կակուղ խօս-
քեր կ'խօսէ՞ քեզ հետ։
4 Մի՞թէ նա քեզ հետ դաշինք
կ'դնէ. կարո՞ղ ես նորան մըշ-
տակայ ծառայ շինել։
5 Մի՞թէ կարող ես նորա հետ
խաղալ ինչպէս թռչնիկի հետ,
և նորան կապել քո աղջկերանց
համար։
6 Ձկնորսների ընկերները կարո՞ղ
են նորանով առևտուր անել, և
նորան բաժանել՝ վաճառական-
ների մէջտեղը։
7 Կարո՞ղ ես լցնել նորա մորթին
ոլաքներով, և ձկնորսի տէգե-
րով նորա գլուխը։
8 Ձեռքդ դիր վերան, և իսկոյն
յիշիր պատերազմ. միւսանգամ
չես անիլ։
9 Տես՝ մարդիս յոյսը դարտակ է
մնում, արդէն միայն նորա տես-
քովը կործանվում է։
10 Մի այնպիսի յանդուգն չ'կայ,
որ նորան գրգռէ. ուրեմն ո՞վ է
նա որ իմ առաջին կանգնէ.
11 Ո՞վ է առաջ ինձ մի բան տը-
ւել, որ ես նորան վճարեմ, բո-
լոր երկնքի տակինը իմն է։
12 Ես չեմ լռիլ նորա անդամների
մասին, նաև նորա զօրութեան
ու գեղեցիկ կարգաւորութեան
մասին։
13 Ո՞վ է կարող բանալ նորա ըզ-
գեստի երեսը, նորա զոյգ կզակ-
ների մէջն ո՞վ կ'մտնէ։
Նորա երեսի դռները ո՞վ է 14
կարող բանալ. նորա ակռաների
շուրջը երկիւղ կայ։
Նորա վահանների ամրութիւ- 15
նը իր խրոխտութիւնն է. կըպ-
ուած են՝ պինդ կնքուած.
Այնպէս փակած է մէկը միւ- 16
սին, որ քամի էլ չի անցնիլ նո-
րանց միջովը.
Մէկզմէկու կցուած են, իրար 17
բռնած են և իրարից չեն բա-
ժանուիլ։
Նորա փռշտալը փայլում է լոյ- 18
սի պէս, նորա աչքերը արշալոյ-
սի արտևանանց նման են։
Նորա երախիցը ջահեր են 19
դուրս գալիս, կրակի կայծեր են
թռչոտում։
Քթածակերիցը ծուխ է դուրս 20
գալիս, ինչպէս եռացող սան և
կաթսայ։
Նորա շունչը կայծերն է վա- 21
ռում, և բոց է քլքլում նորա
բերանիցը։
Նորա պարանոցումը ոյժ է բը- 22
նակվում, և նորա առաջից փախ-
չում է երկիւղը։
Նորա ծալծալոտուած մսերը 23
փակած են, ձուլուած են նորա
վերայ անշարժ։
Սիրտը ձուլուած է քարի նը- 24
ման, և կարծես թէ տակի ջա-
ղացաքարի պէս ձուլուած է։
Նա վեր կենալիս թողում են 25
զօրաւորները, սարսափից շփոթ-
վում են։
Նորան հասնող սուրը չի դիմա- 26
նալ, նիզակը, գեղարդը, զրահն
էլ։
Երկաթը նա յարդ է համա- 27
րում. պղինձը՝ փտած փայտի պէս։
Աղեղնաւորը նորան չի փախցը- 28
նիլ, պարսաքարերը նորա համար
մղեղ են դառնում։
Թակը դարմանի պէս է համա- 29
րում. ծաղր է անում տէգի ճօ-
ճալի վերայ.
Նորա տակին սրածայր խեցի- 30
ներ կան. կամնասայլ է փռում
ցեխի վերայ։
Անդունդը եռացնում է սանի 31

պէս, և ծովը եփող սպեղանիքի
է դարձնում։
32 Ետևիցը ճանապարհը լոյսի է
տալիս, անդունդը սպիտակած
մազի պէս է երևում։
33 Երկրիս վերայ նորա նմանը չը
կայ, նա աներկիւղ է ստեղծուել։
34 Նա նայում է բոլոր բարձրու-
թեան վերայ. նա բոլոր հպար-
տութեան որդկանց վերայ թա-
գաւոր է։

ԳԼ. ԽԲ

1 Եւ Յոբը պատասխանեց Եհովա-
յին ու ասեց.
2 Գիտեմ որ ամեն բան կարող ես.
և քո դիտաւորութիւնը չի ար-
գիլուիլ.
3 Ո՞վ է նա որ խորհուրդը նսե-
մացնէ անիմաստ խօսքերով։ Ի-
րաւ՝ խօսել եմ, բայց չեմ հաս-
կացել, ինձ համար անիմանալի
են եղել, և ես չ'գիտէի։
4 Աղաչում եմ, լսիր որ խօսեմ,
քեզ հարցնում եմ, և ինձ ի-
մացրու.
5 Ականջի լսելով ես լսել էի քո
մասին, բայց հիմա աչքս տես-
նում է քեզ։
6 Վասնորոյ նուաստանում եմ
և զղջում հողի և մոխիրի վերայ։
7 Եւ երբոր Եհովան այս խօսքե-
րը Յոբին ասել էր, յետոյ Եհո-
վան ասեց Եղիփազ Թեմանացի-
ին. Իմ բարկութիւնը բորբոք-
ուել է քեզ դէմ ու քո երկու
ընկերների վերայ, որովհետև իմ
մասին ուղիղ չ'խօսեցիք իմ ծա-
8 ռայ Յոբի նման։ Ուրեմն հիմա
ձեզ համար եօթը զուարակ ու
եօթը խոյ առէք ու գնացէք իմ
ծառայ Յոբի մօտ, և ողջակէզ
մատուցրէք ձեզ համար, ու իմ
ծառայ Յոբը աղօթք անէ ձեզ
համար. որովհետև նորան եմ ընդ-
դունում, որպէսզի չ'հատուցնուի
ձեզ չէր յիմարութիւնը. որով-
հետև իմ մասին ուղիղ չ'խօսե-
ցիք իմ ծառայ Յոբի նման։
9 Այն ժամանակ Եղիփազ Թե-
մանացին, Բաղդատ Սօքեցին ու
Սոփար Նաամացին գնացին ու
արին ինչպէս որ Եհովան ասել
էր իրանց. և Եհովան ընդունեց
Յոբին։
10 Եւ Եհովան ետ դարձրեց Յո-
բի գերութիւնը, երբոր նա իր
ընկերների համար աղօթեց. նա-
և Եհովան կրկնապատիկ աւե-
լացրեց Յոբի բոլոր ստացուածքը։
11 Այն ժամանակ նորա մօտ եկան
բոլոր նորա եղբայրներն ու քոյ-
րերը և նորա բոլոր ճանաչները
ու նորա հետ հաց կերան նորա
տանը, և նորան ցաւակցելով մը-
խիթարում էին նորան այն ամեն
փորձանքների համար, որ Եհո-
վան բերել էր նորա վերայ. և
իւրաքանչիւրը նորան մի կեսի-
թա և մի ոսկի օղ տուին։ Եւ
12 Եհովան օրհնեց Յոբի վերջը նո-
րա սկզբիցն աւելի. և նա ունե-
ցաւ տասնեւչորս հազար ոչխար,
և վեց հազար ուղտ, և հազար
լուծ եզ, և հազար մատակ էշ։
13 Եւ նորան եղան եօթը որդիք և
14 երեք աղջիկ։ Եւ մէկ աղջկան
անունը Եմիմա, և երկրորդի ա-
նունը Կասիա, և երրորդի անու-
15 նը Կերեն-հափուք դրաւ։ Եւ Յո-
բի աղջիկների պէս գեղեցիկ կա-
նայք չէր գտնուիլ այն երկրու-
մը. և նորանց հայրը նորանց ժա-
ռանգութիւն տուաւ իրանց եղ-
բայրների մէջ։
16 Եւ Յոբը սորանից յետոյ հար-
իւր քառասուն տարի ապրեց և
տեսաւ իր որդիքը ու որդկանցը
որդիքը՝ չորս սերունդ։
17 Եւ Յոբը մեռաւ ծերացած և
օրերիցը կշտացած։

*ՍԱՂՄՈՍՆԵՐ

ՍԱՂՄՈՍ Ա

1 Երանելի է այն մարդը, որ ամ-
բարիշտների խորհրդի մէջ չէ
գնում, և մեղաւորների ճանա-
պարհի մէջ չէ կանգնում, և
ծաղր անողների աթոռի վերայ
չէ նստում.
2 Այլ նորա կամքը Տիրոջ օրէն-
քի մէջ է, և ցերեկ ու գիշեր
նորա օրէնքի վերայ է մտածում։
3 Եւ նա ջրերի գնացքումը տըն-
կուած ծառերի պէս է, որ իր
պտուղը տալիս է իրան ժամա-
նակին, և նորա տերևը չէ թափ-
վում, և ամեն ինչ որ անում է
յաջողվում է նորան։
4 Այսպէս չեն ամբարիշտները,
այլ ինչպէս դարմանի մղեղ, որ
քամին ցրիւ է տալիս։
5 Սորա համար ամբարիշտները
չեն կանգնիլ դատաստանի մէջ,
և ոչ մեղաւորները՝ արդարների
ժողովի մէջ։
6 Որովհետև Տէրը ճանաչում է
արդարների ճանապարհը. բայց
ամբարիշտների ճանապարհը կը
կորչի։

ՍԱՂ. Բ

1 Ի՞նչու համար են խռովութիւն
անում հեթանոսները, և ազգե-
րը՝ ունայն մտածում։
2 Երկրի թագաւորները վեր են
կենում, և իշխաններն իրար հետ
խորհուրդ են անում Տիրոջ դէմ
և նորա Օծեալի դէմ Բէ
3 Կոտրենք նորանց կապանքները,
և դէն գցենք նորանց չուանները
մեզանից։
4 Երկնքումը բնակողը ծիծաղում
է, Տէրը ծաղրում է նորանց։
5 Այն ժամանակ նա կ'խօսի նո-
րանց հետ իրան բարկութիւնո-
վը, և իրան սրտմտութիւնովը կը
շփոթեցնէ նորանց։
6 Ես օծեցի իմ թագաւորին իմ
սուրբ Սիօն սարի վերայ։
7 Կ'պատմեմ հրամանը. Տէրն ա-
սեց ինձ. Դու իմ որդին ես, ես
այսօր ծնեցի քեզ.
8 Խնդրիր ինձանից, և ես հեթա-
նոսները քեզ ժառանգութիւն
կ'տամ, և երկրի ծայրերը՝ քեզ
ստացուածք։
9 Երկաթի դաւազանով կ'ջար-
դես նորանց, և բրուտի ամանի
պէս կ'փշրես նորանց։
10 Եւ հիմա, ով թագաւորներ,
խոհեմացէք, և խրատուեցէք, ով
երկրի դատաւորներ։
11 Վախով ծառայեցէք Տիրոջը, և
դողալով ցնծացէք։
12 Որդիին համբուրեցէք, որ չը
բարկանայ, և դուք չ'կորչիք ճա-
նապարհումը. որովհետև նորա
բարկութիւնը շուտով կ'վառուի.
երանի այն ամենին որ նորան են
յուսացած։

ՍԱՂ. Գ

Դաւիթի Սաղմոս †իր Աբիսողոմ
որդիի երեսիցը փախչելիս։

1 Ով Տէր, ո՞րքան շատացան իմ
թշնամիները. շատերը վեր են կե-
նում ինձ վերայ։
2 Շատերն ասում են իմ անձի
համար, թէ Սորա համար փըր-
կութիւն չ'կայ Աստուծոյ մօտ։
(Սէլա։)
3 Բայց դու, Տէր, իմ ասպարն
ես, իմ փառքը և իմ գլուխը
բարձրացնողը։
4 Իմ ձայնովն աղաղակում եմ

*Ղուկ. ի. 42։ իդ. 44։ Գոր. ա. 20։

†Բ Թագ. ժե. ժգ. ժէ. ժը։

դէպի Տէրը, և նա պատասխա-
նում է ինձ իրան սուրբ սարիցը։
(Սէլա։)
5 Ես պառկեցի և քնեցի, և
զարթնեցի, որովհետև Տէրը պահ-
պանում է ինձ։
6 Ես չեմ վախիլ բիւրաւոր ժողո-
վրդից, որ չորս կողմովս պատել
են։
7 Վեր կաց, Տէր, փրկիր ինձ,
ով իմ Աստուած. որովհետև
դու իմ ամեն թշնամիների թու-
շին խփում ես, և ամբարիշտնե-
րի ատամները փշրում ես։
8 Տիրոջն է փրկութիւնը. քո ժո-
ղովրդի վերայ լինի քո օրհնու-
թիւնը։ (Սէլա։)

ՍԱՂ. Դ

*Երգողների գլխաւորին. Նիկի-
նօթով։ Դաւիթի Սաղմոս։

1 Երբոր կանչեմ, լսիր ինձ, ով
իմ արդարութեան Աստուած.
դու որ նեղութեան մէջ ազա-
տեցիր ինձ, ողորմիր ինձ ու լսիր
իմ աղօթքը։
2 Ով մարդկանց որդիք, մինչև ե՞րբ
պիտի իմ փառքը ամօթ դառնայ,
և ունայն բան պիտի սիրէք և ստու-
թիւն պիտի խնդրէք։ (Սէլա։)
3 Բայց ճանաչեցէք, որ Տէրն ընտ-
րել է իր սուրբին. Տէրը լսում
է, երբոր կանչում եմ նորան։
4 Դողացէք և մի մեղանչէք. խօ-
սեցէք ձեր սրտերի հետ ձեր ան-
կողիններումը և լուռ կացէք։
(Սէլա։)
5 Արդարութեան զոհեր ընծա-
յեցէք, և Տիրոջը յուսացէք։
6 Շատերն ասում են թէ Բարին
ո՞վ ցոյց կ'տայ մեզ. բարձրացրու
մեզ վերայ քո երեսի լոյսը, Տէր։
7 Դու ուրախութիւն տուիր իմ
սրտին՝ նորանց ցորենի և գինիի
շատանալու ժամանակիցն աւելի։
8 Ես խաղաղութիւնով կ'պառ-
կիմ և կ'քնեմ. որովհետև դու
ես միայն, ով Տէր, ինձ ապահո-
վութեամբ բնակեցնում։

*Ամբ. գ. 19։

ՍԱՂ. Ե

Երգողների գլխաւորին։ Նխիլօթի
վերայ։ Դաւիթի Սաղմոս։

1 Տէր, ականջ դիր իմ խօսքերին,
և միտքդ առ իմ աղաղակը։
2 Միտքդ դիր իմ աղաղակի ձայ-
նին, ով իմ Թագաւոր և իմ
Աստուած. որովհետև դէպի քե-
զի եմ աղաչում։
3 Տէր, առաւօտանց լսիր իմ ձայ-
նը, առաւօտանց պատրաստ կ'լի-
նիմ քեզ համար ու կ'սպասեմ։
4 Որովհետև դու անօրէնութեան
հաճութիւն տուող Աստուած
չես. չարը չի բնակուիլ քեզ մօտ։
5 Ամբարտաւանները չեն կենալ
քո աչքի առաջին. դու ատում
ես բոլոր անօրէնութիւն գործող-
ներին։
6 Դու կ'կորցնես սուտ խօսողնե-
րին. Տէրն արիւն թափող և նեն-
գաւոր մարդիցը զզվում է։
7 Բայց ես քո շատ ողորմութիւ-
նովը կ'մտնեմ քո տունը, և դէպի
քո սուրբ տաճարը երկրպագու-
թիւն կ'անեմ քո երկիւղովը։
8 Տէր, առաջնորդիր ինձ քո ար-
դարութիւնովն իմ թշնամիների
պատճառով. շիտակ արա քո ճա-
նապարհն իմ առաջին։
9 Որովհետև †նորանց բերանումը
ճշմարտութիւն չ'կայ. նորանց
ներսը չարութիւնով լիքն է, նո-
րանց կոկորդը բաց գերեզման է.
և իրանց լեզուովը նենգութիւն
են անում։
10 Դատիր նորանց, ով Աստուած,
թող վայր ընկնին իրանց խոր-
հուրդներովը. իրանց շատ ամ-
բարշտութիւնների համար դէն
գցիր նորանց, որովհետև խռո-
վութիւն են անում քեզ դէմ։
11 Բայց թող ուրախ լինին բոլոր
քեզ յուսացողները. թող յա-
ւիտեան ցնծան. որովհետև դու
պահպանում ես նորանց. թող
քեզանով զուարճանան քո ա-
նունը սիրողները։
12 Որովհետև դու օրհնում ես

†Կամ՝ նորա

արդարին, ով Տէր, դու հաճու-
թիւնով պատում ես նորան ինչ-
պէս վահանով։

ՍԱՂ. Զ

Երգողների գլխաւորին։ Նկինօ-
թով. ութերորդին վերայ։ Դա-
ւիթի Սաղմոս։

1 Ով Տէր, մի յանդիմանիր ինձ
քո բարկութիւնովը. և մի խրա-
տիր ինձ քո սրտմտութիւնովը։
2 Ողորմիր ինձ, Տէր, որովհետև
տկար եմ ես. բժշկիր ինձ, Տէր,
որովհետև իմ ոսկերքը սարսա-
փում են։
3 Եւ իմ անձը շատ սարսափած
է. և դու, ով Տէր, մինչև ե՞րբ։
4 Դարձիր, Տէր, փրկիր իմ ան-
ձը. ապրեցրու ինձ քո ողորմու-
թեան համար։
5 Որովհետև մահի մէջ քեզ յի-
շել չ'կայ. գերեզմանումը ո՞վ
կ'փառաւորէ քեզ։
6 Ես վաստակած եմ իմ հառա-
չանքներովը. բոլոր գիշերը լուա-
նում եմ իմ անկողինը, և ար-
տասուքներովս թրջում եմ իմ
մահիճը։
7 Տրտմութիւնից մաշուեցաւ իմ
աչքը, հնացաւ իմ նեղացնողնե-
րի պատճառովը։
8 Հեռացէք ինձանից, ով բոլոր
անօրէնութիւն գործողներ. ո-
րովհետև Տէրն իմ լացի ձայնը
լսել է։
9 Տէրը լսեց իմ աղաչանքը. Տէրն
ընդունում է իմ աղօթքը։
10 Թող ամաչեն ու շատ զարհու-
րին իմ ամեն թշնամիները. յետ
դառնան և ամաչեն շուտով։

ՍԱՂ. Է

Դաւիթի *Շիկկայօն, որ Տիրո-
ջը երգեց †Բենիամինեան Քուշի
խօսքերի համար։

1 Ով Տէր՝ իմ Աստուած, ես քեզ
վերայ եմ դրել իմ յոյսը. փրկիր
ինձ իմ ամեն հալածողներիցը և
ազատիր ինձ,
2 Որ իմ անձը առիւծի պէս չը
յափշտակէ և պատառէ, և ա-
զատող չ'լինի։
3 Ով Տէր՝ իմ Աստուած, եթէ
այս բանը արել եմ, եթէ անի-
րաւութիւն կայ իմ ձեռքերումը.
4 Եթէ չար եմ հատուցրել ինձ
հետ խաղաղ լինողին, և կողոպտել
եմ՝ ինձ զուր տեղը նեղացնողին.
5 Ապա թող թշնամին հալածէ
իմ անձը և հասնէ նորան. և նա
իմ կեանքը կոխ տայ գետնի վե-
րայ, և իմ փառքը հողի մէջ
բնակեցնէ։ (Սէլա։)
6 Վեր կաց, ո՞վ Տէր, քո բար-
կութիւնովը, բարձրացիր իմ նե-
ղացնողների կատաղութեան հա-
մար, և արթնացիր ինձ համար
դու՝ որ իրաւունք պատուիրեցիր։
7 Եւ ազգերի ժողովքը թող շրը-
ջապատէ քեզ, և նորանց վերայ
դարձիր դէպի բարձր տեղերը։
8 Տէրը դատաստան է անում ազ-
գերի վերայ. դատիր ինձ, Տէր,
իմ արդարութեան պէս և իմ
անմեղութեան պէս, որ ինձա-
նում կայ։
9 Թող վերջանայ ամբարիշտների
չարութիւնը, և հաստատիր ար-
դարին. որովհետև դու սրտեր ու
երիկամունքներ քննող ես, ով
արդար Աստուած։
10 Իմ ասպարն Աստուած է, որ
փրկում է սրտով ուղիղներին։
11 Աստուած արդար դատաւոր է,
և Աստուած ամեն օր բարկա-
նում է ամբարշտի վերայ։
12 Եթէ ետ չ'դառնայ, նա իր սու-
րը կ'սրէ, իր աղեղը լարել և պատ-
րաստել է.
13 Եւ մահի գործիքներ է պատ-
րաստել նորա համար, և իր նե-
տերը բորբոքուած արաւ։
14 Ահա նա անօրէնութեան եր-
կունք է քաշում. յղացած է
չարութիւնով և ծնում է խա-
բէութիւն։
15 Հոր փորեց ու խորացրեց, բայց
ինքն ընկաւ այն խորի մէջ՝ որ շի-
նեց։

*Ամբ. գ. 1։
†Բ Թագ. ժզ։

46 Նորա չարութիւնը կ'դառնայ նորա գլխի վերայ. և նորա անիրաւութիւնը վայր կ'դայ իր գագաթի վերայ։

47 Ես կ'գոհանամ Տէրիցը իր արդարութեան համար և սաղմոս կ'ասեմ Բարձրեալ Տիրոջ անունին։

ՍԱՂ. Ը

Երգողների գլխաւորին։ *Կիթթիթով։ Դաւիթի Սաղմոս։

1 Ով Տէր՝ մեր Տէրը, ի՜նչ հրաշալի է քո անունը բոլոր երկրի վերայ, որ քո փառաւորութիւնը բարձրացնում ես երկնքից վեր։

2 Երեխաների և կաթնակերների բերանից զօրութիւն պատրաստեցիր քո թշնամիների պատճառով, որ լռացնես թշնամին և վրէժխնդրութիւն անողին։

3 Երբոր տեսնում եմ քո երկինքը, քո մատների գործը՝ լուսինն ու աստղերը, որ դու հաստատեցիր,

4 ի՜նչ է մարդը որ դու յիշում ես նորան, և մարդի որդին, որ դու խնամք ես տանում նորա համար։

5 Եւ մին քիչ ցածացրիր նորան հրեշտակներից, բայց փառքով ու պատուով պսակեցիր նորան։

6 Դու իշխան կարգեցիր նորան քո ձեռքի գործքերի վերայ. ամեն բան նորա ոտքի տակ դրիր.

7 Ամեն ոչխարներն ու եղներն և վայրի գազաններն էլ.

8 Երկնքի թռչունները ու ծովի ձկները, և ի՜նչ որ մանե գալիս ծովի ճանապարհներում։

9 Ով Տէր՝ մեր Տէրը, ի՜նչ հրաշալի է քո անունը բոլոր երկրի վերայ։

ՍԱՂ. Թ

Երգողների գլխաւորին, Մութլաբբէնի վերայ։ Դաւիթի Սաղմոս։

1 Ես կ'գոհանամ †եղծէ, Տէր,

*Սաղ. ձա. ձգ. վերնագիրը։

իմ բոլոր սրտովը. կ'պատմեմ քո ամեն հրաշքները։

2 Ուրախ կ'լինիմ ու կ'ցնծամ քեզանով. սաղմոս կ'ասեմ քո անունին, ով Բարձրեալ։

3 Իմ թշնամիները ետ դառնալիս՝ կործանվում և քո երեսիցը կորչում են։

4 Որովհետև դու արիր իմ դատաստանը և իրաւունքը. դու աթոռի վերայ նստեցիր, ով արդար դատաւոր։

5 Դու սաստեցիր հեթանոսներին և կորցրիր ամբարշտին. նրանց անունը ջնջեցիր յաւիտեանս յաւիտենից։

6 †Թշնամիները վերջացան բոլորովին՝ յաւիտենական աւերակներ դարձան, և դու նորանց քաղաքները քանդեցիր, նորանց յիշատակը նորանց հետ կորաւ։

7 Բայց Տէրը յաւիտեան կայ. նա իր աթոռը պատրաստեց դատաստանի համար։

8 Եւ նա աշխարհքս արդարութիւնով կ'դատէ, և ազգերին ուղղութիւնով իրաւունք կ'անէ։

9 Եւ Տէրը ապաւէն է աղքատին, ապաւէն՝ նեղութեան ժամանակներում։

10 Եւ քեզ կ'յուսան քո անունը ճանաչողները. որովհետև դու չես ձգում քեզ խնդրողներին, Տէր։

11 Սաղմոս ասեցէք Տիրոջը, որ բնակվում է Սիօնում. պատմեցէք նորա գործքերը ժողովուրդների մէջ։

12 Որովհետև արեան վրէժխնդիրը յիշեց նորանց. նա չ'մոռացաւ նեղուածների աղաղակը։

13 Ողորմիր ինձ, Տէր, և տես իմ նեղութիւնը, որ իմ ատողներիցն է. դու՝ որ մահի դուռներիցը բարձրացնում ես ինձ.

14 Որ քո ամեն օրհնութիւնները պատմեմ Սիօնի աղջկան դռներում, և քո փրկութիւնովը ցընծամ։

15 Հեթանոսները կաւ գնացին այն հորի մէջ որ չինեցին. և նորա բանց ոտները փաթաթուեցան այն վարմի մէջ, որ թագցրին։

16 Տէրը յայտնի եղաւ, նա դատաստան արաւ. ամբարիշտն իր ձեռքի գործքերումը բռնուեցաւ։ (Հիկկայոն. Սէլա։)

17 Ամբարիշտները դժոխքի մէջ պիտի ետ դառնան, և ամեն ազգերը, որ մոռանում են Աստուծուն։

18 Որովհետև աղքատն իսպառ չի մոռացուիլ, և խեղճի յոյսը յաւիտեան չի կորչիլ։

19 Վեր կաց, Տէր, որ մարդը չը զօրանայ. թող հեթանոսները դատուին քո առաջին։

20 Տէր, աչ ու վախ դիր նորանց վերայ. թող հեթանոսներն իմանան որ մարդիկ են, (Սէլա։)

ՍԱՂ. *Ժ

1 Ով Տէր, ի՜նչու ես հեռու կենում, և թագցնում քեզ նեղութեան ժամանակներումը։

2 Ամբարշտի ամբարտաւանութիւնովը այրվում է աղքատը. թող բռնուին այն չար խորհուրդներովը, որ հնարեցին։

3 Որովհետև ամբարիշտը պարծենում է իր սրտի ցանկութիւնովը, և ագահն անիծում և նաներգում է Տիրոջը։

4 Ամբարիշտն իր երեսի ամբարտաւանութիւնովը ---՛ է. երբեք չի խնդրում, Աստուած չը կայ. նորա բոլոր խորհուրդները -- է։

5 Նորա ճանապարհները խիտ են ամեն ժամանակ. քո դատաստանները բարձր են նորա երեսից. նա իր ամեն թշնամիների վերայ փքվում է։

6 Նա ասում է իր սրտումը. Ես ազգից ազգ չեմ շարժուիլ, չար բան չի գալ ինչ էլ էրնայ։

7 Նորա բերանը լիքն է անէծքով, նենգութիւնով և խաբէութիւնով. նորա լեզուի տակին ցաւ և անօրէնութիւն կայ։

8 Նա գիւղերի դարանն է մտնում, ծածուկ տեղը սպանում է անմեղին. նորա աչքերը ծածուկ նայում են խեղճի վերայ։

9 Թագուն տեղը դարանամուտ է լինում ինչպես առիւծ իր որջին մէջ. դարան է մտնում, որ աղքատին յափշտակէ, և յափշտակում է աղքատին՝ նորան իր որոգայթին մէջ գցելով։

10 Եւ կուչ է գալիս պառկում. և խեղճերը ընկնում են նորա ճանկերի տակ։

11 Նա իր սրտումն ասում է. Աստուած մոռացաւ, իր երեսը թագցրեց, նա չի տեսնիլ իսպառ։

12 Վեր կաց, Տէր՝ ով Աստուած, բարձրացրու քո ձեռքը. մի մոռանար նեղուածներին։

13 Ամբարիշտն ինչու՞ Աստուծուն, և իր սրտումն ասէ՝ Թէ դու չես խնդրում։

14 Դու տեսնում ես. որովհետև դու մարիկ ես անեծքն ու նեղութեանը, որ քո ձեռքովը հատուցանես. աղքատն իրան քեզ է յանձնում. դու ես որբի օգնականը։

15 Կոտրիր ամբարշտի և չարի բազուկը, որ նորա չարութիւնը խնդրես և էլ չ'գտնես։

16 Տէրն է թագաւոր յաւիտեանս յաւիտենից, հեթանոսները կորչել են նորա երկրիցը։

17 Դու լսում ես աղքատների ցանկութիւնը. Տէր, հաստատիր նորանց սիրտը, և ականջ դիր,

18 Որ դատաստան անես որբին և խեղճին, որ երկրից էլ՛ մարդը այլ ևս չ'ճալածէ։

ՍԱՂ. ԺԱ

Երգողների գլխաւորին, Դաւիթի (Սաղմոս։)

1 Տիրոջը յուսացայ, էլ ի՜նչպես էք ասում իմ անձին՝ Թէ փախիր ձեր սարերը իւղտէ թռչուն։

2 Որովհետև ահա ամբարիշտ-

*Գբ-բ-ր ի-ր-ե-ն-ե-ն-ե-ն-ո-մ Ս-ը ժ. փ-ց-ե-ի-լ-ե Թ-է հէ՛ Ս-ը ԺԱ. -յ-ն-ե-ի ժ. ե յ-ի-ը-ե-ի և -յ-ն-ե- լ-ր-ո-ն-ի-ո-ե-ի-ն-ե Ս-ը ձ-ի-ն. Տ-ո ձ-ի-ն. ն-ո-ր-ե-ն-ի-ն-ը։

†կա՛ Ով Թշնամի, աւերուածները վերջացան բոլորովին

Ներն ազեղ են լարուած, և իրանց նետերը պատրաստուած են չուանի վերայ, որ խաւարումը դցեն նորանց որ ուղիղ են սրտով։
3 Թէ որ հիմնարկը քանդուին, արդարն ի՞նչ անէ։
4 Տէրն իր սուրբ տաճարումն է. Տիրոջ աթոռը երկնքումն է. նորա աչքերը տեսնում են. նորա արտեւանունքները քննում են մարդկանց որդիներին։
5 Տէրը քննում է արդարին, բայց ամբարշտին և անիրաւութիւն սիրողին ատում է նորա անձը։
6 Նա ամբարիշտների վերայ ուրագչիներ՝ կրակ և ծծումբ կը տեղայ, և նորանց բաժակի բաժինը այրող մրրիկ կ'լինի։
7 Որովհետև Տէրն արդար է և արդարութիւն է սիրում. ուղիղները կ'տեսնեն նորա երեսը։

ՍԱՂ. ԺԲ

Երգողների գլխաւորին, *Ութէ-բորդի վերայ, Դաւթի Սաղմոս։

1 Փրկիր, Տէր, որովհետև սուրբերը պակասուեցան. որովհետև հաւատացեալները քիչացան մարդկանց որդիների միջից։
2 Ամեն մարդ զուր բան է խօսում իր ընկերի հետ. նենգաւոր շրթունքներով և կեղծ սրտով են խօսում։
3 Տէրը կ'կարէ ամեն նենգաւոր շրթունքները, և մեծ բաներ խօսող լեզուն,
4 Որ ասում են՝ թէ Մեր լեզուներովը զօրաւոր ենք, մեր շրթունքները մեզ հետ են. ո՞վ է տէր մեզ համար։
5 Խեղճերի նեղութեան և աղքատների հառաչելու համար հիմա վեր կ'կենամ, ասում է Տէրը. փրկութեան մէջը կ'դնեմ նորան որ փափաքում է նորան։
6 Տիրոջ խօսքերը մաքուր խօսքեր են, ինչպէս արծաթի որ բովի մէջ երկրի վերայ սրբուած և եօթն անգամ պարզուած է։
7 Դու, Տէր, կ'պահես նորանց, և կ'ապրեցնես նորանց այս ազգիցը մինչև յաւիտեան։
8 Ամբարիշտներն ամեն կողմովման են գալիս՝ երբոր անպիտանները բարձրանում են մարդկանց որդիների մէջ։

ՍԱՂ. ԺԳ

Երգողների գլխաւորին, Դաւթի Սաղմոս։

1 Ո՞վ Տէր, մինչև ե՞րբ կ'մոռնաս ինձ խապտ. մինչև ե՞րբ կ'թագցնես քո երեսն ինձանից։
2 Մինչև ե՞րբ պիտի հոգս անեմ իմ անձումը, և տրտմութիւն ունենամ օրերով իմ սրտումը. մինչև ե՞րբ պիտի իմ վերայ բարձրանայ իմ թշնամին։
3 Նայիր, պատասխան տուր ինձ, ով Տէր իմ Աստուած. լուսաւորիր իմ աչքերը, որ մահի մէջ չքնջեմ.
4 Որ իմ թշնամին չասէ թէ ես յաղթեցի նորան. և իմ նեղացնողները չգնծան, որ տեղից շարժուեցայ։
5 Բայց ես քո ողորմութեանն եմ յուսացած. թող իմ սիրտը ցընծայ քո փրկութեունովը. թող ես Տիրոջն երգեմ, որ բարի տրաւ ինձ։

ՍԱՂ. ԺԴ

Երգողների գլխաւորին, Դաւթի Ս-ը։

1 Անզգամն ասեց իր սրտումը՝ Ես Աստուած չկայ. նորանք ապականուեցան և գարշելի եղան իրանց գործքերովը. ոչ ով չկայ որ բարի գործէ։
2 Տէրը երկնքիցը մարդկանց որդիների վերայ, որ տեսնէ, թէ կ'լինի՞ արդեօք մէկ իմաստուն, որ Աստուծուն խնդրէ։
3 Ամենքը խոտորուեցան, և միասին անպիտանացան, բարի գործող չկայ, մէկն էլ չկայ։
4 Միթէ չեն իմանում ամեն անօրէնութիւն գործողները, որ իմ ժողովուրդն ուտում են ինչպէս որ հացը կ'ուտեն, և Տիրոջը չեն կանչում։
5 Անհնարէ վախենում են վախով. որովհետև Տէրը արդարների ցեղի մէջ է։
6 Խեղճի խորհուրդը ամօթ էք անում, որ Տէրը նորա յոյսն է։
7 Ո՛հ թէ Սիօնից գար Իսրայէլի փրկութիւնը. երբոր Տէրն իր ժողովրդի գերութիւնը դարձնէ, Յակոբը կ'ցնծայ և Իսրայէլն ուրախ կ'լինի։

ՍԱՂ. ԺԵ

Դաւթի Սաղմոս։

1 Տէր, ո՞վ կ'կենայ քո խորանումը, և ո՞վ կ'բնակուի քո սուրբ սարումը։
2 Ուղիղ գնացողը և արդարութիւն գործողը, և իր սրտումը ճշմարտութիւն խօսողը։
3 Նա որ իր լեզուովը չէ բամբասում և իր ընկերին չար չէ անում, և իր դրացին վերայ նախատինք չէ դցում։
4 Որ նորա աչքերի առաջին անարգուած է չարագործը. բայց Տէրից վախեցողներին պատիւ է տալիս, որ ընկերին երդում է անում և չէ փոփոխում.
5 Որ իր արծաթը վարձով չէ տալիս, և անմեղի դէմ կաշառք չէ առնում. ով որ այս անէ, չի շարժուիլ յաւիտեան։

ՍԱՂ. ԺԶ

Դաւթի Աղօթք։

1 Ո՞վ Տէր, լսիր արդարութեան. մտիկ տուր աղաղակիս, և ականջ դիր իմ աղօթքին, որ սուտ շրթունքներից չէ։
2 Թող քո երեսիցը դուրս դայ իմ դատաստանը. թող քո աչքերը նային ուղղութեան վերայ։
3 Դու փորձեցիր իմ սիրտը և գիշերում քննեցիր. դու կրակով հալեցրիր ինձ և անիրաւութիւն չը գտար ինձանում. ես միտքս դէ-

*Սաղմ. ղ. վերնագիրը։

օտար Աստծոյ հետից են վազում. ես չեմ մասուցանել նրանց բնծաները, որ արիւնից են. և նորանց անունները իմ շրթունքների վերայ չեմ առնիլ։
5 Տէրն է իմ ժառանգութեան և իմ բաժակի բաժինը. դու հաստատ պահում ես իմ ժառանգութիւնը։
6 Ինձ վիճակ ընկաւ ցանկալի տեղամասը, և այս ժառանգութիւնը շատ է ինձ։
7 Ես կ'օրհնեմ Տիրոջը, որ ինձ խրատ է տալիս. և գիշերն էլ իմ երիկամունքները յորդորում են ինձ։
8 Ես Տիրոջը դրի իմ առաջին ամեն ժամանակ. որովհետև նա իմ աջ կողմն է. ես չեմ սասանուիլ։
9 Սորա համար իմ սիրտն ուրախ է, և իմ փառքը ցնծում է. և մարմինս էլ յուսով կ'բնակուի։
10 Որովհետև իմ անձը չես թողիլ *գերեզմանում, և քո սրբին ապականութիւն տեսնիլ չես տալ։
11 Դու ինձ ճանապարհ կ'ցուցնես կեանքի ճանապարհը. քո երեսի առաջին ուրախութիւնների լիութիւն կայ, և քո աջ կողմը քաղցրութիւններ յաւիտեան։

ՍԱՂ. ԺԷ

Դաւթի Աղօթք։

1 Ո՞վ Տէր, լսիր արդարութեան. մտիկ տուր աղաղակիս, և ականջ դիր իմ աղօթքին, որ սուտ շրթունքներից չէ։
2 Թող քո երեսիցը դուրս դայ իմ դատաստանը. թող քո աչքերը նային ուղղութեան վերայ։
3 Դու փորձեցիր իմ սիրտը և գիշերում քննեցիր. դու կրակով հալեցրիր ինձ և անիրաւութիւն չը գտար ինձանում. ես միտքս դէ-

*Կամ՝ մեռելների բնակարանում։ Գ.ԲԻ.՝ գժոխքում։

րել եմ՝ որ իմ բերանը պատուի-
բանազանց չ՛լինի։
4 Մարդկանց գործերի նկատ-
մամբ՝ քո շրթանց խօսքի պէս
զգոյշ եմ կենում բռնաւոր ճա-
նապարհներից։
5 Հաստատիր իմ գնացքը քո ճա-
նապարհումը, որ ոտքերս չ՛գլոր-
ուին։
6 Ես կանչում եմ քեզ, որ դու
լսես ինձ, ով Աստուած. ականջդ
ինձ մօտ դարձրու, լսիր իմ խօս-
քերը։
7 Փառաւոր արա քո ողորմու-
թիւնը, ով դու որ յուսացող-
ներին փրկում ես նորանցից՝ որ
քո աջ ձեռին հակառակ են կե-
նում։
8 Պահիր ինձ ինչպէս աչքի բիբ,
և քո թևերի շուքի տակ ծած-
կիր ինձ։
9 Այն ամբարիշտներից՝ որ քան-
դում են ինձ. իմ անձի թշնամի-
ներից, որ չորս կողմովս պաշա-
րում են ինձ։
10 Նորանք փակում են իրանց պա-
րարտ սիրտը, և իրանց բերանո-
վը ամբարտաւանութիւն են խօ-
սում։
11 Հիմա մեր գնացքի չորս կողմո-
վը պատում են մեզ. և իրանց
աչքերը դրած են, որ մեզ գետ-
նի վերայ գցեն։
12 Նորանք նման են առիւծի, որ
ցանկանում է գիշատել. և առիւ-
ծի ձագին, որ ծածուկ տեղե-
րումը նստած է։
13 Վեր կաց, Տէր, առ նորան ա-
ռաջը. նորան գետնի վերայ գցիր.
և իմ անձը ապրեցրու ամբարիշտ-
ների ձեռքից քո սրովն։
14 Քո ձեռքովն, ով Տէր, ապրեցրու
մարդկանցից՝ այս աշխարհքի
մարդկանցից, որ նորանց բաժի-
նը այս կեանքումն է. և լցնում
ես նորանց փորը քո գանձերովը,
որ նորանց որդիներն էլ կշտա-
ցած են, և մնացածը թողում են
իրանց երեխաներին։
15 Բայց ես արդարութիւնով կը
տեսնեմ քո երեսը, և երբոր արթ-
նանամ, կ՛կշտանամ քո նմանու-
թիւնովը։

ՍԱՂ. ԺԸ

Երգողների գլխաւորին։ *Տիրոջ
ծառայ Դաւիթի Սաղմոս, †որ այս
երգի խօսքերն ասեց Տիրոջը այն
օրումը, որ Տէրը նորան փրկել
էր իր բոլոր թշնամիների ձեռ-
քից և Սաւուղի ձեռքից. և
ասեց.

Սրտանց սիրում եմ քեզ, ով 1
Տէր՝ իմ զօրութիւնը։
Տէր, իմ վէմ, և իմ բերդ և 2
իմ ազատիչ. իմ Աստուած, իմ
ամրութիւն, որին ես յուսացած
եմ. Ով իմ ասպար և իմ փրկ-
ութեան եղջիւր, նա իմ բարձր
աշտարակն է.
Ես օրհնեալ Տիրոջը կանչեցի, 3
և իմ թշնամիներից կ՛փրկուիմ։
Մահի լարերը շրջապատեցին 4
ինձ, և կորստեան վտակները
վախեցրին ինձ,
‡Գերեզմանի ցաւերը պատե- 5
ցին ինձ, մահի որոգայթները հա-
սան ինձ վերայ։
Ես իմ նեղութիւնումը կան- 6
չեցի դէպի Տէրը, և դէպի իմ
Աստուածն աղաղակեցի. նա լսեց
իմ ձայնը իր տաճարից. և իմ
աղաղակը նորա առաջը հասաւ՝
նորա ականջներին։
Այն ժամանակ երկիրը դողաց 7
ու շարժուեցաւ, և սարերի հի-
մունքները սարսափեցան և դո-
ղացին. որովհետև նա բարկա-
ցաւ։
Ծուխ դուրս եկաւ նորա ‖քը- 8
թից, և փչացնող կրակ՝ նորա
բերանից. կայծակներ փայլա-
տակեցին նորանից։
Նա խոնարհեցրեց երկինքը և 9
վայր եկաւ, և մառախուղ կար
նորա ոտների տակ։
Նա հեծաւ քերովբէի վերայ 10
և թռաւ. և սլացաւ քամիի թե-
ւերի վերայ։
Նա խաւարը ծածկոյթ դրաւ 11

*Սաղ. լզ. վերնագիրը։
†բ Թագ. իբ։
‡Կամ՝ դժոխքի
‖Կամ՝ բարկութիւնից

իր վերայ. խորան եղան նորան
չորս կողմովը խաւարային ջուրե-
րը և երկնքի ամպերը։
12 Նորա առաջին փայլող լոյսից
նորա ամպերն անցան, կարկուտ
և կրակի կայծակներ դառան։
13 Եւ Տէրը որոտաց երկնքումը,
և Բարձրեալն իր ձայնը տուաւ
կարկուտով և կրակի կայծակ-
ներով։
14 Եւ նա իր նետերն ուղարկեց և
ցրուեց նորանց, և կայծակները
գցեց և շփոթեցրեց նորանց.
15 Եւ երևեցան ջրերի անդունդ-
քը, և երկրի հիմունքը յայտ-
նուեցան քո սաստելուցը, Տէր.
քո բարկութեան հողմի փչելուցը։
16 Նա վերևիցն ուղարկեց և բռ-
նեց ինձ. նա շատ ջրերից հանեց
ինձ։
17 Նա ազատեց ինձ իմ զօրաւոր
թշնամիից, և իմ ատողներից,
որ ինձանից զօրաւոր էին։
18 Նորանք իմ նեղութեան օրու-
մը առաջս առան. բայց Տէրը նե-
ցուկ եղաւ ինձ համար։
19 Եւ ինձ հանեց լայնարձակ տեղ
և ինձ փրկեց. որովհետև հաւա-
նեց ինձ։
20 Տէրը բարի է անում ինձ իմ
արդարութեան պէս, և ինձ հա-
տուցանում է իմ ձեռքի մաք-
րութեան պէս։
21 Որովհետև ես պահեցի Տիրոջ
ճանապարհները և իմ Աստուա-
ծանից ամբարշտութիւնով չ՛հե-
ռացայ։
22 Որովհետև նորա ամեն իրա-
ւունքներն իմ առաջն են, և ես
նորա պատուիրանքներն ինձանից
չեմ հեռացնում։
23 Ես անարատ եմ նորա առա-
ջին, և զգուշանում եմ իմ անօ-
րէնութիւնից։
24 Ուստի Տէրը հատուցանում է
ինձ իմ արդարութեան պէս. իմ
ձեռքի մաքրութեան պէս՝ նորա
աչքի առաջին։
25 Ողորմածի հետ ողորմած ես. և
անարատի հետ անարատ ես.
26 Իստակի հետ իստակ ես. և
ծուռի հետ՝ ծուռ։
27 Որովհետև դու աղքատ ժողո-
վրդին ապրեցնում ես. և բարձր
աչքերը խոնարհեցնում ես։
Որովհետև դու լուսաւորում 28
ես իմ ճրագը. Տէր Աստուածը
լուսաւոր է անում իմ խաւարը.
Որովհետև քեզանով վազում 29
եմ զօրքի վերայ. և իմ Աստու-
ծովն անց եմ կենում պարսպի վե-
րայից։
Աստուծոյ ճանապարհը կա- 30
տարեալ է. Տիրոջ խօսքը կրակով
մաքրուած է. նա պահապան է
ամեն իրան յուսացողների հա-
մար.
Որովհետև ո՞վ է Աստուած 31
բացի Տէրից. և ո՞վ է վէմ մեր
Աստուածանից ջոկ.
Այն Աստուածը, որ զօրութիւն 32
է հագցնում ինձ. և իմ ճանա-
պարհն անարատ անում.
Նա որ իմ ոտներն եղջերուների 33
ոտների նման է շինում, և ինձ՝
բարձր տեղերումը կանգնեցնում.
Նա իմ ձեռքը վարժեցնում է 34
պատերազմ անելու, որ իմ բա-
զուկը պղնձի աղեղը լարեն։
Եւ տալիս ես ինձ քո փրկու- 35
թեան վահանը, և քո աջը հաս-
տատում է ինձ, և քո քաղցրու-
թիւնը մեծացնում է ինձ։
Դու լայնարձակ ես անում իմ 36
գնացքը իմ տակ, և իմ որունք-
ները չեն դողում։
Ես կ՛հալածեմ իմ թշնամիները 37
և նորանց կ՛հասնեմ. և ետ չեմ
դառնալ մինչև որ փչանան։
Ես կ՛զարկեմ նորանց, որ չ՛կա- 38
րողանան վեր կենալ. նորանք իմ
ոտների տակ կ՛ընկնեն։
Դու ինձ զօրութիւն ես հագ- 39
ցնում պատերազմի համար. և ինձ
դէմ վեր կացածներին իմ տակն
ես գցում.
Դու իմ թշնամիներին հալա- 40
ծական ես անում. և ես ինձ ա-
տողներին կ՛փչացնեմ։
Նորանք կանչում են, բայց փրկ- 41
ող չ՛կայ. դէպի Տէրը՝ բայց նա
նորանց չէ պատասխանում։
Ես կ՛փշրեմ նորանց ինչպէս փո- 42
շի քամիի առաջին. դուրս կ՛թա-
փեմ նորանց ինչպէս փողոցի ցե-
խը։

43 Դու ազատում ես ինձ ժողովրդի հակառակութիւնիցը, ինձ հեթանոսների վերայ գլուխ ես դնում. այն ժողովուրդը, որ ես նորան չէի ճանաչում, ծառայում է ինձ։
44 Հենց ականջով լսելով հնազանդուեցան ինձ. օտարների որդիքը ինձ շողոքորթեցին։
45 Օտարների որդիքը թուլացան, և սարսափում էին իրանց ապաստարաններիցը։
46 Կենդանի է Տէրը. և օրհնեալ է իմ Վէմը. և բարձրացած լինի իմ փրկութեան Աստուածը.
47 Այն Աստուածը՝ որ վրէժս առնում է, և ժողովուրդները հնազանդեցնում է իմ ներքևը.
48 Որ փրկում է ինձ իմ թշնամիներիցը. և բարձրացնում է ինձ նորանցից, որ ինձ դէմ վեր կացան. դու ազատում ես ինձ անիրաւ մարդիցը։
49 Սորա համար հեթանոսների մէջ կ'գոհանամ քեզանից, ով Տէր. և քո անունին սաղմոս կ'ասեմ։
50 Նա մեծացնում է իր փրկութիւնը իր թագաւորի համար. և ողորմութիւն է անում իր օծեալ Դաւիթին և նորա զաւակին մինչև յաւիտեան։

ՍԱՂ. ԺԹ

Երգողների գլխաւորին։ Դաւիթի Սաղմոս։

1 Երկինքները պատմում են Աստուծոյ փառքը, և հաստատութիւնը իմացնում է նորա ձեռքի գործքերը։
2 Օրը օրին խօսք է բղխում. և գիշերը գիշերին դիտութիւն է ցոյց տալիս։
3 Լեզու չ'կայ և խօսք չ'կայ. նորանց ձայնը լսելի չէ.
4 Բայց նորանց բարբառը դուրս է գալիս ամեն երկիր, և նորանց խօսքը մինչև աշխարհքի ծայրերը. արեգակի համար խորան դրաւ նորանց միջումը։
5 Եւ նա փեսայի նման դուրս է գալիս իր առագաստիցը, և զուարճանում է ինչպէս հսկայ որ իր ճանապարհը գնայ։
6 Նորա ելքը երկնքի մի ծայրիցը, և նորա գնացքը մինչև նորա միւս ծայրը. և ոչինչ չէ ծածկվում նորա տաքութիւնիցը։
7 Տիրոջ օրէնքը անարատ է, հանգստացնում է հոգիին. Տիրոջ վկայութիւնը ճշմարիտ է, իմաստուն է անում պարզամիտին։
8 Տիրոջ պատուիրանքները ուղիղ են, ուրախացնում են սիրտը. Տիրոջ հրամանները մաքուր են, լուսաւորում են աչքերը։
9 Տիրոջ վախը սուրբ է, մնում է յաւիտեան. Տիրոջ դատաստանները ճշմարիտ են, բոլորովին արդար։
10 Նորանք աւելի ցանկալի են քան թէ ոսկի և քան թէ շատ մաքրուած ոսկի. էլ աւելի քաղցր են քան թէ մեղր և մեղրահաց։
11 Քո ծառան էլ նորանցով լուսաւորվում է. նորանց պահպանութիւնումը շատ հատուցում կայ։
12 Մ՞վ է իմանում իր սխալմունքները. ծածուկ սխալմունքներիցս էլ սուրբ արա ինձ։
13 Եւ պահիր քո ծառային ամբարտաւաններից, որ իշխանութիւն չ'անեն ինձ վերայ. այն ժամանակ անարատ կ'լինիմ և մեծ անօրէնութիւնից սուրբ կ'լինիմ։
14 Թող հաճոյ լինին քեզ իմ բերանի խօսքերը. և որտիս խորհուրդը՝ քո առաջին, ով Տէր, իմ վէմ և իմ Փրկիչ։

ՍԱՂ. Ի

Երգողների գլխաւորին։ Դաւիթի Սաղմոս։

1 Տէրը լսէ քեզ նեղութեան օրումը, և Յակոբի Աստուծոյ անունը պաշտպանէ քեզ։
2 Նա քեզ օգնութիւն ուղարկէ սուրբ տեղիցը, և զօրացնէ քեզ Սիօնի միջիցը։
3 Նա յիշէ քո ամեն պատարագները, և քո ողջակէզներն ընդունէ. (Սէլա։)
4 Նա տայ քեզ քո որտի ուղարկի պէս, և կատարէ քո ամեն խորհուրդները։
5 Թող ցնծանք քո փրկութիւնովը. և դրօշակ բարձրացնենք մեր Աստուծոյ անունովը. Տէրը կատարէ քո ամեն խնդրուածները։
6 Հիմա իմացայ, որ Տէրը փրկում է իր օծեալին, և լսում է նորան իր սուրբ երկնքիցը՝ նորա աջի փրկութեան զօրութիւնովը։
7 Ոմանք կառքերով և ոմանք ձիերով են պարծենում. բայց մենք մեր Տէր Աստուծոյ անունը կ'յիշենք։
8 Նորանք թեքուեցան և վայր ընկան. բայց մենք վեր կացանք և կանգնեցինք։
9 Տէր, ապրեցրու թագաւորին, և լսիր մեզ մեր կանչելու օրը։

ՍԱՂ. ԻԱ

Երգողների գլխաւորին։ Դաւիթի Սաղմոս։

1 Ով Տէր, քո զօրութիւնովն ուրախ է թագաւորը, և ո՞րքան ցնծում է նա քո փրկութիւնովը։
2 Դու տուիր նորան իր որտի ուզածը, և նորա շրթունքների խնդիրքը չ'արգելեցիր նորանից։ (Սէլա։)
3 Որովհետև դու բարի օրհնութիւններ ես բերում նորա առաջը, և մաքուր ոսկի պսակ ես դնում նորա գլխի վերայ։
4 Նա կեանք խնդրեց քեզանից, և դու նորան երկար օրեր տուիր յաւիտեանս յաւիտենից։
5 Մեծ է նորա փառքը քո փրկութիւնովը. պատիւ և փառք ես դնում նորա վերայ։
6 Որովհետև դու նորան օրհնութիւն ես շինում յաւիտեան. դու ուրախացնում ես նորան ուրախութիւնով քո երեսի առաջին։
7 Որովհետև թագաւորը Տիրոջն է յուսացած, և Բարձրելոյ ողորմութիւնովը չի սասանիլ։
8 Քո ձեռքը կ'գտնէ քո ամեն թշնամիներին. և քո աջը կ'գտնէ քեզ ատողներին։
9 Դու վառուած փռան նման կ'անես նորանց՝ երբոր բարկանաս. Տէրն իր բարկութիւնովը կ'կորցնէ նորանց, և կրակը կ'ուտէ նորանց։
10 Նորանց պտուղը կ'կորցնես երկրիցը, և նորանց սերունդը մարդկանց որդիներիցը։
11 Ինչու որ նորանք չարութիւն պատրաստեցին քեզ դէմ, խորհուրդ հնարեցին և ոչինչ չ'կարողացան։
12 Որովհետև դու նորանց թիկունքը կ'դարձնես, և քո աղեղի լարերը կ'քաշես նորանց երեսի վերայ։
13 Ով Տէր, բարձրացիր զօրութիւնովդ. և մենք կ'օրհնենք և սաղմոս կ'ասենք քո կարողութեանը։

ՍԱՂ. ԻԲ

Երգողների գլխաւորին։ Այէլէթ-հաշահարի վերայ։ Դաւիթի Սաղմոս։

1 Իմ Աստուած, իմ Աստուած, ի՞նչի համար ես թողել ինձ. հեռու ես իմ փրկութիւնիցը և իմ հառաչանքի խօսքերիցը։
2 Ով իմ Աստուած, ես կանչում եմ ցերեկը, բայց դու չես պատասխանում. գիշերն էլ՝ բայց հանգստութիւն չ'կայ ինձ համար։
3 Բայց դու սուրբ ես, ով Իսրայէլի գովութիւնների մէջ բնակողդ։
4 Քեզ յուսացան մեր հայրերը. նորանք յուսացան և դու փրկեցիր նորանց։
5 Դէպի քեզ աղաղակեցին, և ազատուեցան. քեզ յոյս դրին և չ'ամաչեցին։
6 Իսկ ես որդ եմ և չէ թէ մարդ. մարդկանց նախատինք և ժողովրդի անարգանք։
7 Ամեն ինձ տեսնողները ծաղր են անում ինձ. իրանց շրթունքնե-

ը բաց են անում և գլուխ շար-
ժում։
8 Նա Տիրոջը յուսացաւ, թող
ազատէ դորան. թող փրկէ դո-
րան՝ եթէ հաւանել է դորան։
9 Իրաւի՝ դու ես որ հանեցիր
ինձ իմ մօր արգանդիցը. դու ե-
ղար իմ յոյսը՝ իմ մօր ծծի վե-
րայ։
10 Ես իմ մօր արգանդիցը քեզ վե-
րայ եմ գցուած. իմ մօր փորիցը
դու ես իմ Աստուածը։
11 Մի հեռանար ինձանից, որով-
հետև նեղութիւնը մօտ է, որով-
հետև օգնութիւն անող չ'կայ։
12 Իմ չորս կողմը շատ զուարակ-
ներ պատեցին, և Բասանի զօրեղ
եզները պաշարեցին ինձ։
13 Իրանց բերանը բաց արին ինձ
վերայ, ինչպէս գոռող և յա-
փշտակող առիւծ։
14 Ես ջուրի պէս թափուեցայ, և
իմ ամեն ոսկորները լուծուեցան.
սիրտս որովայնումս հալած մոմի
պէս եղաւ։
15 Զօրութիւնս չորացաւ խեցիի
պէս, և լեզուս քիմքիս է կպած.
և դու մահի հողի մէջ դրիր ինձ։
16 Որովհետև շուները պատեցին
ինձ, և չարերի ժողովքը շրջա-
պատեցին ինձ. իմ ձեռքերն ու
ոտքերը ծակեցին։
17 Ես համարում եմ իմ ամեն ոս-
կորները, բայց նորանք նայում և
դիտում են ինձ։
18 Շորերս բաժանում են իրանց
մէջ, և պատմուճանիս վերայ
վիճակ են գցում։
19 Բայց դու, ով իմ Տէր, մի հե-
ռանար. ով իմ զօրութիւն, ինձ
օգնութեան շտապիր։
20 Փրկիր իմ անձը սուրիցը, և իմ
կեանքը՝ շան ձեռքիցը։
21 Ազատիր ինձ առիւծի բերա-
նիցը], և պատասխանիր ինձ *գո-
մէշի եղջիւրներիցն ազատելով։
22 Ես քո անունը կ'պատմեմ իմ
եղբայրներին. ժողովրդի մէջ
կ'օրհնեմ քեզ։
23 Ով Տէրիցը վախեցողներ, օրհ-
նեցէք նորան. ով Յակոբի ամեն
զաւակները, փառաւորեցէք նո-
րան. և վախեցէք նորանից, ով
Իսրայէլի բոլոր զաւակները։
24 Որովհետև նա չ'անարգեց և
չ'արհամարհեց խեղճի խղճու-
թիւնը, և չ'ծածկեց նորանից իր
երեսը. բայց երբոր նա աղաղա-
կեց դէպի նորան՝ նա ականջ
դրաւ։
25 Քեզ օրհնութիւն կ'տամ մեծ
ժողովրդում. իմ ուխտը կ'կա-
տարեմ նորանից վախեցողների ա-
ռաջին։
26 Թող խեղճերն ուտեն և կշտա-
նան. թող օրհնեն Տիրոջը նորան
խնդրողները. ձեր սիրտը թող ապ-
րի յաւիտեան։
27 Երկրի ամեն ծայրերը կ'յիշեն
և Տիրոջ մօտ կ'դառնան. հեթա-
նոսների ամեն ազգերը քո առա-
ջին երկրպագութիւն կ'անեն։
28 Որովհետև Տիրոջն է թագաւո-
րութիւնը, և նա իշխանութիւն
է անում հեթանոսների մէջ։
29 Երկրի ամեն պարարտները կ'ու-
տեն և երկրպագութիւն կ'անեն.
նորա առաջին վայր կ'ընկնեն ա-
մեն հողը իջնողները, որ իրանց
անձը չեն ապրեցնում։
30 Սերունդը կ'ծառայէ նորան.
†նա Տիրոջը ազգ կ'համարուի։
31 Կ'գան և նորա արդարութիւնը
կ'պատմեն այն ծնուելու ժողո-
վրդին. թէ Այս ամենը նա արաւ։

ՍԱՂ. ԻԳ

Դաւիթի Սաղմոս։

1 Տէրն է իմ հովիւը. և կարօտու-
թիւն չեմ ունենալ։
2 Նա կանաչ տեղերում հան-
գըստացնում է ինձ, և հանգարտ
ջրերի մօտ՝ տանում է ինձ.
3 Իմ անձին հանգիստ է տալիս.
ինձ առաջնորդում է արդարու-
թեան շաւիղներումը իր անունի
համար։
4 Թէ և գնամ մահի շուքի ձո-
րումը՝ չար բանից չեմ վախենալ.

*Կամ՝ վայրի ցուլի

†Կամ՝ կ'պատմուի Տիրոջ մասին
եկող դարին։

որովհետև դու ինձ հետ ես. քո
գաւազանն ու քո ցուպը՝ նորանք
մխիթարում են ինձ։
5 Դու իմ առաջին սեղան ես
պատրաստում իմ թշնամիների
դիմաց. դու իմ գլուխն օծում
ես իւղով. իմ բաժակը խիստ
լիքն է։
6 Հէնց բարիք և ողորմութիւն
կ'գան իմ ետևիցն իմ կեանքի բո-
լոր օրերումը. և Տիրոջ տանը կը
բնակուիմ շատ երկար ժամանակ։

ՍԱՂ. ԻԴ

Դաւիթի Սաղմոս։

1 Տիրոջն է երկիրը և նորա լիու-
թիւնը. աշխարհը և նորա բնա-
կիչները։
2 Որովհետև նա ինքը ծովերի վե-
րայ հիմնեց նորան, և նորան գե-
տերի վերայ հաստատեց։
3 Ո՞վ վեր կ'գնայ Տիրոջ սարը,
և ո՞վ կ'կանգնի նորա սրբու-
թեան տեղումը։
4 Նա, որ սուրբ է ձեռքով և
անարատ սրտով. որ իր անձը
անիրաւութեան չէ տալիս, և
երդում չէ անում նենգութիւ-
նով։
5 Նա օրհնութիւն կ'ստանայ Տէ-
րիցը և արդարութիւն՝ իր փըր-
կութեան Աստուածանից։
6 Այս այն ազգն է որ խնդրում
է նորան, որ խնդրում է քո ե-
րեսը, ով Յակոբի Աստուած։
(Սէլա։)
7 Ով դռներ, բարձրացրէք ձեր
գլուխները. և բարձրացրէք, ով
յաւիտենական դռներ, որ փա-
ռաց թագաւորը մտնէ։
8 Ո՞վ է այդ փառաց թագա-
ւորը. Տէրը՝ զօրաւոր և ուժեղ.
Տէրը՝ ուժեղ պատերազմի մէջ։
9 Ով դռներ, բարձրացրէք ձեր
գլուխները, և բարձրացրէք, ով
յաւիտենական դռներ, որ փա-
ռաց թագաւորը մտնէ։
10 Ո՞վ է այդ փառաց թագաւո-
րը։ Զօրաց Տէրը՝ նա է փառաց
թագաւորը։ (Սէլա։)

ՍԱՂ. ԻԵ

Դաւիթի Սաղմոս։

1 Ով Տէր, դէպի քեզ եմ բար-
ձրացնում իմ անձը։
2 Իմ Աստուած, քեզ եմ յու-
սացած, թող չ'ամաչեմ. թող
իմ թշնամիները չ'ուրախանան
ինձ վերայ։
3 Եւ ամեն քեզ սպասողները չեն
ամաչիլ. բայց պիտի ամաչեն զուր
տեղը անօրէնութիւն գործող-
ները։
4 Ցոյց տուր ինձ, ով Տէր, քո
ճանապարհները, սովորեցրու ինձ
քո գնալու ճանապարհները։
5 Առաջնորդիր ինձ քո ճշմար-
տութիւնումը, և սովորեցրու ինձ,
թէ դու ես իմ փրկութեան Աստ-
ուածը. քեզ եմ յոյս դրել ա-
մեն օր։
6 Յիշիր, ով Տէր, քո ողորմու-
թիւնները ու քո քաղցրութիւն-
ները, որովհետև նորանք յաւիտ-
եան կան։
7 Մի յիշիր իմ մանկութեան
մեղքերը և իմ յանցանքները.
այլ քո ողորմութեան պէս յիշիր
ինձ քո բարութեան համար, ով
Տէր։
8 Բարի և ուղիղ է Տէրը. սորա
համար մեղաւորներին սովորե-
ցնում է ճանապարհը։
9 Նա առաջնորդում է հեզա-
հոգիներին իրաւունքի մէջ. և
սովորեցնում է հեզահոգիներին
իր ճանապարհը։
10 Տիրոջ բոլոր ճանապարհները ո-
ղորմութիւն են և ճշմարտու-
թիւն՝ նորա ուխտն ու վկայու-
թիւնը պահողների համար։
11 Ով Տէր, քո անունի համար
քաւիր իմ անօրէնութիւնը, որ
շատ է։
12 Ո՞վ է այն մարդը՝ որ վախենում
է Տէրիցը. ահա կ'սովորեցնէ նո-
րան այն ճանապարհը, որընտրել է։
13 Նորա անձը բարութեան մէջ
կ'բնակուի. և նորա սերունդը
երկիրը կ'ժառանգէ։
14 Տիրոջ մտերմութիւնը նորանց
հետ է, որ վախենում են նորա-

նից. և իր ուխտը սովորեցնում է
նորանց։
15 Իմ աչքերը միշտ դէպի Տէրն
են, որովհետև նա կ'հանէ իմ ոտ-
քերը որոգայթից։
16 Ինձ մտիկ արա և ողորմիր ինձ,
որ մինակ և խեղճ եմ ես։
17 Սրտիս նեղութիւնները շատ
են. հանիր ինձ իմ վիշտերիցը։
18 Մտիկ արա իմ խղճութեանը և
իմ ցաւին, և ներիր իմ ամեն
մեղքերը։
19 Մտիկ արա իմ թշնամիներին,
որ շատ են. և անիրաւ ատելու-
թիւնով ատում են ինձ։
20 Պահիր իմ անձը և փրկիր ինձ.
թող չ'ամաչեմ. որովհետև քեզ
եմ յուսացած։
21 Թող անարատութիւնն ու ուղ-
ղութիւնը պահեն ինձ. որովհե-
տև քեզ եմ սպասում։
22 Ով Աստուած, փրկիր Իսրա-
յէլին իր ամեն նեղութիւնն-
երիցը։

ՍԱՂ. ԻԶ

Դաւիթի (Սաղմոս)։

1 Ով Տէր, իրաւունք արա ինձ,
որովհետև ես անարատութիւ-
նով գնացի, և Տիրոջը յուսա-
ցայ. ես չեմ սասանիլ։
2 Փորձիր ինձ, Տէր, և քննիր
ինձ. փորձիր իմ երիկամունքնե-
րը և իմ սիրտը։
3 Որովհետև քո ողորմութիւնն
իմ աչքի առաջին է, և ես քո
ճշմարտութիւնումն եմ գնում։
4 Ես ունայն մարդկանց հետ
չեմ նստում, և կեղծաւորների
հետ չեմ գնում։
5 Ես ատում եմ չարերի ժողով-
քը. և ամբարիշտների հետ չեմ
նստում։
6 Լուանում եմ ձեռքերս անմե-
ղութիւնով. և քո սեղանի չորս
կողմովը պտոյտ եմ տալիս, ով
Տէր։
7 Որ օրհնութեան ձայնը հնչե-
ցնեմ. և քո ամեն սքանչելիք-
ները պատմեմ։
8 Ով Տէր, ես սիրում եմ քո
տան բնակութիւնը. և քո փառ-
քի բնակուելու տեղը։
9 Մի կորցնիր իմ անձը մեղա-
ւորների հետ. և իմ կեանքն արի-
ւն թափող մարդկանց հետ.
10 Որ նորանց ձեռքումն անիրա-
ւութիւն կայ, և նորանց աջը
լցուած է կաշառքով։
11 Բայց ես գնում եմ անարատու-
թիւնով, փրկի՛ր ինձ և ողորմի՛ր
ինձ։
12 Իմ ոտը կանգնած է ուղղու-
թիւնում, և կ'օրհնեմ Տիրոջը
ժողովուրդների մէջ։

ՍԱՂ. ԻԷ

Դաւիթի (Սաղմոս)

1 Տէրն է իմ լոյսը և իմ փրկու-
թիւնը, ես ումի՞ց պիտի վախե-
նամ. Տէրն է իմ կեանքի զօրու-
թիւնը, ես ումի՞ց պիտի սարսա-
փիմ։
2 Չարերն ինձ վերայ են գալիս որ
իմ մարմինն ուտեն. իմ նեղացնող-
ներն ու թշնամիները սահում են
և վայր ընկնում։
3 Թէև զօրաբանակ էլ ինձ դէմ
բանակ տայ, իմ սիրտը չի վախե-
նալ. թէև պատերազմ էլ վեր
կենայ ինձ դէմ, ես դարձեալ
կ'յուսամ։
4 Մէկ բան եմ խնդրում Տէրիցը.
և այն շատ կ'փափաքէի, որ Տի-
րոջ տանը բնակուիմ իմ կեանքի
բոլոր օրերը, որ Տիրոջ գեղեցիկ
փառքը տեսնեմ և նորա տաճա-
րին զննելով մտիկ տամ։
5 Որովհետև չար օրումը՝ նա
ծածկում է ինձ իր խորանի մէջ.
նա թագցնում է ինձ իր խորանի
ծածուկ տեղումը, և բարձրա-
ցնում է ինձ վէմի վերայ։
6 Եւ հիմա իմ գլուխը կ'բարձ-
րանայ իմ թշնամիների վերայ,
որ իմ չորս կողմովը կան. և նորա
խորանի մէջ գոհութեան պա-
տարագներ կ'մատուցանեմ, կ'եր-
գեմ և սաղմոս կ'ասեմ Տիրոջը։
7 Լսիր, Տէր, իմ ձայնը՝ երբոր
կանչեմ, և ողորմիր ինձ, և պա-
տասխան տուր ինձ։

8 Իմ սիրտն ասում է քեզ ԻՍ-
ԽՕՏԷ՝ թէ խնդրեցէք իմ երեսը.
ահա, Տէր, ես էլ խնդրում եմ քո
երեսը։
9 Մի ծածկիր ինձանից քո երե-
սը, մի մերժիր ծառայիդ քո բար-
կութիւնովը. դու ես իմ օգնու-
թիւնը. մի հեռացնիր ինձ և մի
թողուր ինձ, ով իմ փրկութեան
Աստուած։
10 Թէև հայրս ու մայրս թողեն
ինձ, բայց Տէրն ընդունում է
ինձ։
11 Սովորեցրու ինձ, Տէր, քո ճա-
նապարհը, և առաջնորդիր ինձ
ուղիղ ճանապարհում իմ թշ-
նամիների պատճառով։
12 Մի մատնիր ինձ իմ նեղացնող-
ների կամքին. որովհետև սուտ
վկաներ են կանգնում ինձ դէմ՝
որ անօրէնութիւն են փչում։
13 Իսկ թէ որ ես հաստատ չ'հա-
ւատայի՝ թէ Տիրոջ բարութիւ-
նը կ'տեսնեմ կենդանեաց երկ-
րումը։ . . .
14 Սպասիր Տիրոջը, թող սիրտդ
պինդ և զօրաւոր լինի. և սպա-
սիր Տիրոջը։

ՍԱՂ. ԻԸ

Դաւիթի (Սաղմոս)։

1 Տէր, դէպի քեզ եմ կանչում.
իմ Վէմ, լուռ մի կենար ինձա-
նից. որ չ'լինի թէ դու ինձանից
լուռ կենաս, և ես գերեզմանի
մէջ մանողներին նմանիմ։
2 Լսիր իմ աղաչանքի ձայնը՝ ես
դէպի քեզ աղաղակելիս, երբոր
իմ ձեռքը բարձրացնեմ դէպի քո
սուրբ խորանը։
3 Մի կորցնիր ինձ ամբարիշտների
հետ և անօրէնութիւն գործող-
ների հետ, որ իրանց ընկերների
հետ խաղաղութիւն են խօսում,
բայց նորանց սրտերումը չարու-
թիւն կայ։
4 Տուր նորանց իրանց գործքերի
պէս և իրանց վարքերի չարու-
թեան պէս՝ իրանց ձեռքի գործ-
քերի պէս տուր նորանց. իրանց
հատուցումը դարձրու նորանց։
5 Որովհետև միտք չեն դնում
Տիրոջ գործքերին, և ոչ նորա
ձեռքի գործքերին. նա կ'կործա-
նէ նորանց և էլ չի շինիլ։
6 Օրհնեալ է Տէրը, որ լսում է
իմ աղաչանքի ձայնին։
7 Տէրն է իմ զօրութիւնը և իմ
վահանը. իմ սիրտը նորան է յու-
սացել, և նա ինձ օգնութիւն ե-
ղաւ. իմ սիրտը ցնծում է և ես
իմ օրհնութիւնովը փառաբա-
նում եմ նորան։
8 Տէրն իր *ժողովրդի զօրու-
թիւնն է. նա է փրկութեան զօ-
րութիւնը իր օծեալին համար։
9 Փրկիր քո ժողովուրդը, և օրհ-
նիր քո ժառանգութիւնը, և ա-
րածացրու նորանց, և բարձրացրու
նորանց մինչև յաւիտեան։

ՍԱՂ. ԻԹ

Դաւիթի Սաղմոս։

1 Տուէք Տիրոջը, ով Աստուծոյ
որդիք, տուէք Տիրոջը փառք և
զօրութիւն։
2 Տուէք Տիրոջը իր անունի փառ-
քը. երկրպագութիւն տուէք Տի-
րոջը սրբութեան զարդարանքով։
3 Տիրոջ ձայնը ջրերի վերայ է.
փառաց Աստուածը որոտում է.
Տէրը շատ ջրերի վերայ է։
4 Տիրոջ ձայնը զօրութիւնով է.
Տիրոջ ձայնը մեծ վեհափառու-
թիւնով է։
5 Տիրոջ ձայնը փշրում է մայրե-
րը, և Տէրը փշրում է Լիբանանի
մայրերը։
6 Եւ նորանց վեր վեր է վազել
տալիս հորթերի նման, Լիբանա-
նին և Սարիօնին ինչպէս †գոմէշի
հորթ։
7 Տիրոջ ձայնը կրակի բոցեր է
ճեղքում։
8 Տիրոջ ձայնը դողացնում է ա-
նապատը. Տէրը դողացնում է
Կադէս անապատը։
9 Տիրոջ ձայնը եղնիկներին ծնել
է տալիս և ծմակները մերկա-

*Կամ՝ նորանց
†Կամ՝ վայրի ցուլի

ցնում. և իր տաճարումն ամեն
մէկը փառք է ասում նորան։
10 Տէրը նստում է ջրհեղեղի վե-
րայ. և Տէրը թագաւոր կ'նստի
յաւիտեան։
11 Տէրը զօրութիւն կ'տայ իր ժո-
ղովրդին. Տէրը կ'օրհնէ իր ժողո-
վուրդը խաղաղութիւնով։

ՍԱՂ. Լ

Սաղմոս. Տան *նաւակատիքի երգ.
Դաւիթի։

1 Ես բարձրացնում եմ քեզ. ով
Տէր, որ ազատեցիր ինձ, և իմ
թշնամիներին չ'ուրախացրիր ինձ
վերայ։
2 Ով Տէր՝ իմ Աստուած, ես
դէպի քեզ աղաղակեցի, և դու
բժշկեցիր ինձ։
3 Տէր, դու իմ անձը հանեցիր
†գերեզմանիցը, և ինձ կենդանի
պահեցիր փոսի մէջ մտնողնե-
րիցը։
4 Սաղմոս ասեցէք Տիրոջը, ով
նորա սուրբեր, և փառաբանեցէք
նորա սրբութեան յիշատակը։
5 Որովհետև նորա բարկութիւ-
նը ակնթարթի չափ է, բայց նո-
րա քաղցրութիւնը բոլոր կեան-
քումը. իրիկունը լաց է գալիս,
իսկ առաւօտը ցնծութիւն։
6 Ես ասեցի իմ յաջողութիւ-
նումը՝ թէ տեղիցս չեմ շար-
ժուիլ յաւիտեան։
7 Տէր, քո հաճութիւնովն իմ
սարը զօրաւոր արիր, բայց երբ-
որ երեսդ թագցրիր՝ ես շփոթ-
ուեցի։
8 Տէր, դէպի քեզ եմ աղաղա-
կում. և Տիրոջն եմ աղաչում։
9 Ի՞նչ օգուտ կայ իմ արիւնի-
ցը՝ որ ես կորուստն ընկնեմ. մի՞-
թէ հողը կ'գոհանայ քեզանից և
քո ճշմարտութիւնը կ'պատմէ՞։
10 Լսիր, Տէր, և ողորմիր ինձ.
Տէր, օգնական եղիր ինձ։
11 Դու իմ սուգը ցնծութեան
փոխեցիր. իմ քուրձը հանեցիր
ինձանից և ուրախութիւն հագ-
ցրիր ինձ։
Սորա համար թող փառքս 12
սաղմոս ասէ քեզ և լուռ չ'կե-
նայ. ով Տէր՝ իմ Աստուած, յա-
ւիտեան կ'գոհանամ քեզանից։

ՍԱՂ. ԼԱ

Երգողների գլխաւորին։ Դաւիթի
Սաղմոս։

Ով Տէր, ես քեզ եմ յուսա- 1
ցած, թող չ'ամաչեմ յաւիտ-
եան. քո արդարութիւնովը փրր-
կիր ինձ։
Խոնարհեցրու քո ականջը ինձ 2
մօտ. շուտով փրկիր ինձ. ինձ հա-
մար զօրաւոր վէմ եղիր և ամուր
տուն՝ որ փրկես ինձ։
Որովհետև դու ես իմ վէմը և 3
բերդը, և քո անունի համար ա-
ռաջնորդիր ինձ և կառավարիր
ինձ։
Հանիր ինձ որոգայթիցը, որ 4
գաղտուկ լարեցին ինձ համար.
որովհետև դու ես իմ զօրութիւ-
նը։
Քո ձեռքն եմ յանձնում իմ 5
հոգին. դու փրկեցիր ինձ, ով Ե-
հովայ, ճշմարիտ Աստուած։
Ատում եմ նորանց որ ունայն 6
կուռքեր են պաշտում. բայց ես
Տիրոջն եմ յուսացած։
Կ'ցնծամ և ուրախ կ'լինիմ քո 7
ողորմութիւնովը. որ իմ խեղճու-
թիւնը տեսար և իմ անձի նե-
ղութիւնը ճանաչեցիր.
Եւ ինձ թշնամիի ձեռքը չը 8
մատնեցիր. բայց իմ ոտները լայն-
արձակ տեղ կանգնեցրիր։
Ողորմիր ինձ, Տէր, որ նեղուած 9
եմ. արտմութիւնով մաշուեցաւ
իմ աչքը, իմ անձը և իմ փորը.
Որովհետև իմ կեանքը վերջա- 10
ցաւ տխրութիւնով, և իմ տա-
րիքը՝ հառաչանքով. իմ զօրու-
թիւնը տկարացաւ իմ թշուա-
ռութիւնովը, և իմ ոսկորները
մաշուեցան։
Իմ ամեն թշնամիների առա- 11
ջին շատ նախատինք եղայ, մա-
նաւանդ իմ դրացիների առա-

*Բ Օր. ի. 5։ Բ Թագ. ե. 11։ զ. 20։
†Կամ՝ դժոխքիցը

ջին. և ահ ու վախ եղայ իմ բա-
րեկամների համար. փողոցներու-
մը ինձ տեսնողները փախչում
են ինձանից՝
12 Մեռածի պէս մոռացուած ե-
ղայ սրտից. կորած ամանի նման
եմ դառել։
13 Որովհետև շատերի բամբա-
սանքը լսեցի. իմ չորս կողմովը
ահ կայ. իրար հետ ժողովուե-
լիս ինձ համար են խորհուրդ ա-
նում որ կեանքս վեր առնեն։
14 Բայց ես քեզ եմ յոյս դրած,
ով Տէր. ասում եմ թէ Դու
ես իմ Աստուածը։
15 Իմ ժամանակը քո ձեռքին է.
փրկիր ինձ իմ թշնամիների
ձեռքիցը և իմ հալածողներիցը։
16 Երեսդ փայլեցրու քո ծառայի
վերայ. փրկիր ինձ քո ողորմու-
թիւնովը։
17 Տէր, թող չ'ամաչեմ. որովհե-
տև դէպի քեզ եմ կանչում.
թող ամբարիշտներն ամաչեն և
լռեն *գերեզմանումը.
18 Թող պապանձուին սուտ շրբ-
թունքները՝ որ արդարին հակա-
ռակ անամօթութիւն են խօ-
սում գոռողութիւնով և անար-
գութիւնով։
19 Քանի՛ մեծ է քո բարութիւ-
նը, որ պահեցիր քեզանից վա-
խեցողների համար, և որ անում
ես քեզ յուսացողներին. մարդ-
կանց որդկանց առաջին։
20 Դու ծածկում ես նորանց քո
երեսի ծածկոյթովը մարդի դա-
ւաճանութիւնիցը. դու թագցը-
նում ես նորանց քո խորանի մէջ
լեզուների հակառակութիւնից։
21 Օրհնեալ է Տէրը, որ փառա-
ւոր արաւ իր ողորմութիւնը ինձ
վերայ մի ամուր քաղաքի մէջ։
22 Իսկ ես իմ շփոթութեան մէջ
ասեցի թէ Ես դէն գցուեցայ քո
աչքերի առաջիցը. բայց դարձ-
եալ լսեցիր աղաղակիս ձայնին՝
երբոր ես դէպի քեզ աղաղակե-
ցի։
23 Սիրեցէք Տիրոջը, ով նորա ա-
մեն սուրբեր. Տէրը պահում է
հաւատացեալներին. և աւելու-
թիւնով հատուցանում է նո-
րան, որ ամբարտաւանութիւն է
գործում։
Քաջացէք և ձեր սրտերը թող 24
զօրանան, դուք ամենքդ՝ որ Տի-
րոջն էք յոյս դրել։

ՍԱՂ. ԼԲ

Դաւիթի Երգ։

Երանի նորան՝ որի անօրէնու- 1
թիւնը թողուեցաւ, և որի մեղ-
քը ծածկուեցաւ։
Երանի այն մարդին, որ Տէրն 2
անօրէնութիւն չէ համարում նո-
րան՝ և նենգութիւն չ'կայ նորա
հոգիի մէջ։
Երբոր ես լուռ կացայ՝ ոսկոր- 3
ներս մաշուեցան իմ ամեն օր հա-
ռաչելովը։
Որովհետև ցերեկ և գիշեր քո 4
ձեռքը ծանրանում էր ինձ վե-
րայ. իմ թացութիւնը ամառ-
ուան չորութիւն դառաւ։ (Սէ-
լա։)
Ես մեղքս յայտնեցի քեզ և 5
անօրէնութիւնս չ'ծածկեցի. ա-
սեցի թէ՝ Անօրէնութիւնս խոս-
տովանիմ Տիրոջը. և դու թողե-
ցիր իմ մեղքի անօրէնութիւնը։
(Սէլա։)
Սորա համար ամեն բարեպաշտ 6
աղօթք կ'անէ քեզ՝ քեզ գտնե-
լու ժամանակումը. իրաւի շատ
ջուրերի հեղեղները վեր կենա-
լիս՝ չեն հասնիլ նորանց վե-
րայ։
Դու ես իմ ապաստանը. նե- 7
ղութիւնից կ'պահես ինձ. փրր-
կութեան երգերով կ'պատես
ինձ։ (Սէլա։)
Իմաստուն կ'անեմ քեզ, և կը 8
սովորեցնեմ քեզ այն ճանապար-
հը, որ նորանում պիտի գնաս.
կ'խրատեմ քեզ՝ իմ աչքը քեզ
վերայ կ'լինի։
Մի լինիք ինչպէս ձի և ջորի որ 9
միտք չ'ունին, որ նորանց կզակի
մէջ սանձ և պախուրձ պէտք է
դնել՝ որ չ'մօտենան քեզ։
Շատ ցաւ կայ ամբարշտի հա- 10

*Կամ՝ դժոխքումը.

մոր, բայց նա որ Տիրոջն է յուսացած՝ աղօրմութիւն կ'գտնէ նորան։

11 Ուրախացէք Տէրով և ցնծացէք, ով արդարներ, և ցնծութեամբ աղաղակեցէք ամենքդ որ ուղիղ էք սրտով։

ՍԱՂ. Լ.Գ

1 Ցնծացէք Տէրով, ով արդարներ. ուղիղներին վայելուչ է օրհնութիւն։

2 Գոհացէք Տէրոջը քնարով. տասը թելանոց սաղմոսարանով սաղմոս երգեցէք նորան։

3 Նոր երգ երգեցէք նորան. փառը լաւ ածեցէք ցնծութեան բարձր աղաղակով։

4 Որովհետև ուղիղ է Տիրոջ խօսքը, և նորա ամեն գործերը հաւատարմութիւնով են։

5 Նա արդարութիւն և իրաւունք է սիրում. երկիրը լիքն է Տիրոջ աղօրմութիւնովը։

6 Տիրոջ խօսքովը երկինքն առեղծուեցաւ, և նորա բերանի հոգովը նորա բոլոր զօրքերը։

7 Նա ժողովում է ծովի ջուրերը ինչպես դէզ, և անդունդները դնում է ամբարներում։

8 Թող Տէրոջը վախենան ամեն երկիր. թող նորանից սարսափեն աշխարհքի ամեն բնակիչները։

9 Որովհետև նա ասեց և եղաւ. նա հրամայեց և հաստատուեցաւ։

10 Տէրը աննչացնում է հեթանոսների խորհուրդները, և փչացնում է ժողովուրդների մտածմունքները։

11 Բայց Տիրոջ խորհուրդը յաւիտեան է յաւիտեան. նորա սրտի մտածմունքները՝ ազգից մինչև ազգ։

12 Երանի այն ազգին՝ որ նորա Աստուածը Տէրն է, և այն ժողովրդին՝ որ նա իր համար ժառանգութիւն ընտրեց նորան։

13 Տէրը մեծ է անում երկնքից. տեսնում է մարդկանց ամեն որդիքը։

14 Իրան բնակութեան վայրից նայում է երկրի ամեն բնակիչների վերայ,

15 Նորանց ամենի սիրտը առեղծողը, նորանց ամեն գործքերը տեսնողը։

16 Թագաւորը չէ փրկվում զօրքի շատութիւնով, և հսկան չէ պրծնում շատ զօրութիւնով։

17 Սուտ է ձին փրկութեան համար. և իր շատ զօրութիւնովը չէ ազատում։

18 Ահա Տիրոջը աչքը նորանից վախեցողների վերայ է և նորանց վերայ՝ որ նորա ողորմութեանն են սպասում.

19 Որ փրկէ նորանց անձերը մահից, և սովի ժամանակին նորանց կեռակրէ։

20 Մեր անձը մեկ է տալիս Տիրոջը. նա է մեր օգնութիւնն ու պահապանը։

21 Որովհետև նորանով է ուրախանում մեր սիրտը. որ մենք նորա սուրբ անունին ենք յուսացած։

22 Տէր, քո ողորմութիւնը լինի մեզ վերայ՝ ինչպես որ սպասում ենք քեզ։

ՍԱՂ. Լ.Դ

Դաւիթի (Սաղմոս). Երբոր իր կերպարանքը փոխեց Աբիմելէքի առաջին, և նա դուրս գնեց նորան, և նա գնաց։

1 Տիրոջը կ'օրհնեմ ամեն ժամանակ. նորա փառաբանութիւնը միշտ իմ բերանումը պիտի լինի։

2 Թող իմ անձը Տէրովը պարծենայ. խեղճերը թող լսեն և ուրախանան։

3 Մեծացրէք ինձ հետ Տիրոջը, թող իրար հետ բարձրացնենք նորա անունը։

4 Ես խնդրեցի Տիրոջը, և նա պատասխան տուաւ ինձ, և իմ ամեն ահ ու վախից ազատեց ինձ։

5 Նորան են մեկ տալիս և լուսաւորվում. և նորանց երեսը չի ամաչիլ։

6 Այս խեղճը կանչեց, և Տէրը

լսեց. և իր ամեն նեղութիւններից փրկեց նորան։

7 Տիրոջը հրեշտակը բանակ է շինում նորանից վախեցողների չորս կողմովը և փրկում է նորանց։

8 Ճաշակեցէք և տեսէք, որ Տէրը քաղցր է. երանելի է այն մարդը՝ որ յուսացած է նորան։

9 Վախեցէք Տէրոջը, ով նորա սուրբեր, որովհետև նորանից վախեցողների համար պակասութիւն չկայ։

10 Առիւծի կորիւնները կարօտում են և սոված են. բայց Տիրոջը խնդրողները ոչ մի բարիքի պակասութիւն չունին։

11 Եկէք, որդիք, լսեցէք ինձ. ես Տիրոջը երկիւղը սովորեցնեմ ձեզ։

12 Ով մարդ, որ կեանք ես ուզում և լաւ օրեր սիրում, բարութիւն տեսնելու համար,

13 Պահիր քո լեզուն չարութիւնից, և քո շրթունքները՝ որ նենգութիւն չխօսեն։

14 Հեռացիր չարիքը և գործիր բարին. խնդրիր խաղաղութիւն և նորա հետևիցը գնա։

15 Տիրոջ աչքերը արդարների վերայ են, և նորա ականջները նորանց աղաղակի վերայ։

16 Տիրոջ երեսը չարագործների վերայ է, որ նորանց յիշատակը երկրիցը ջնջէ։

17 Արդարները աղաղակում են և Տէրը լսում է. և իրանց ամեն նեղութիւններիցը փրկում է նորանց։

18 Տէրը մօտիկ է սրտով կորուածներին, և փրկում է հոգով փշրուածներին։

19 Շատ են արդարին նեղութիւնները, բայց Տէրն այն ամենից փրկում է նորան։

20 Տէրը պահում է նորա ամեն ոսկորները որ նորանցից ոչ մէկն էլ չկոտրուի։

21 Չարութիւնը սմբարշային կը սպանէ, և արդարին ատողները կը դատապարտուին։

22 Տէրը փրկում է իր ծառաների անձը, և բոլոր նորան յուսացողները չեն դատապարտուիլ։

ՍԱՂ. Լ.Ե

Դաւիթի (Սաղմոս)։

Հակառակիր, Տէր, ինձ հակառակողների հետ, և կռուիր ինձ հետ կռուողների հետ։

2 Վէր առ զէնքն ու վահանը, և վեր կաց ինձ օգնելու համար։

3 Հանիր գեղարդը և փակիր ճանապարհը իմ հալածողների դէմ. ասիր իմ անձին՝ ես փրկութիւնը եմ քո։

4 Թող ամաչեն և ամօթ լինին իմ անձը որոնողները. թող յետ դառնան և ամօթ լինին ինձ դէմ չար խորհողները։

5 Նորանք քամիի առաջի մղեղի պէս լինին. և Տիրոջը հրեշտակը հալածէ նորանց։

6 Նորանց ճանապարհը խաւար և գայթակղութիւն լինի. և Տիրոջ հրեշտակը նեղէ նորանց։

7 Որովհետև զուր տեղը փոս՝ որոգայթի չինեցին ինձ բռնելու համար. զուր տեղը հոգ փորեցին իմ անձի համար։

8 Թող աւերում հասնէ նորան յանկարծակի. նորա լարած որոգայթը իրան բռնէ. աւերումով նորա մէջ ընկնէ։

9 Բայց իմ անձը պիտի ցնծայ Տէրովը, և ուրախանայ նորա փրկութիւնովը։

10 Իմ ամեն ոսկորները պիտի ասեն. Տէր, ո՞վ է քեզ նման՝ որ փրկում ես խեղճին իրանից զօրաւորիցը, և տնանկին ու ազքատին իրան յափշտակողից։

11 Սուտ վկաներ են վեր կենում, իմ չգիտացած բաները հարցնում են ինձանից։

12 Չար են հատուցանում ինձ բարիի տեղ՝ իմ անձն անժառանգ անելով։

13 Բայց ես քուրձ էի հագնում՝ նորանք հիւանդանային. իմ անձը ծոմով չարչարում էի. բայց իմ աղօթքը իմ ծոցն է դառնում։

14 Ես նորանց հետ վարվում էի ինչպես իմ բարեկամի և իմ եղբօր հետ. և սրտմտութեամբ ցա-

ծանում էի իր մօր համար սուգ
անողի նման։
15 Սակայն ես սխալուելիս՝ նո-
րանք ուրախանում են և ժողով-
վում. ժողովվում ինձ վերայ, որ
խոցեն ինձ, և ես չ'գիտէի. հայ-
հոյում են և չեն դադարում։
16 Խնջոյքի նուաստ ծաղրածու-
ների հետ իրանց ատամները կըր-
ճըտացնում են ինձ վերայ։
17 Տէր, մինչև ե՞րբ ես մտիկ տա-
լու. ապրեցրու իմ անձը նո-
րանց կորստիցը, իմ կեանքն՝ առ-
իւծի կորիւններիցը։
18 Կ'գոհանամ քեզանից, Տէր,
մեծ ժողովրդի մէջ, և կ'փառա-
բանեմ քեզ շատ ժողովքի մէջ։
19 Թող չ'ուրախանան ինձ վերայ
զուր տեղը ինձ թշնամութիւն
անողները, և աչքով չ'անեն՝ ինձ
առանց պատճառի ատողները։
20 Որովհետև նորանք խաղաղու-
թիւն չեն խօսում. բայց նենգա-
ւոր բաներ են մտածում երկրի
վերայ հանդիստ լինողների դէմ։
21 Եւ իրանց բերանը բաց են ա-
նում լայնարձակ ինձ վերայ և
ասում. Վա՛հ վա՛հ, հիմա մեր
աչքերը տեսան։
22 Դու տեսար, Տէր, լուռ մի
կենար. Տէր, մի հեռանար ին-
ձանից։
23 Զարթիր և վեր կաց՝ ինձ իրա-
ւունք անելու համար, ով իմ
Աստուած և իմ Տէր, ինձ դա-
տաստան անելու համար։
24 Դատաստան արա ինձ քո ար-
դարութեան պէս, ով Տէր՝ իմ
Աստուած, և թող չ'ուրախա-
նան ինձ վերայ։
25 Թող չ'ասեն իրանց սրտումը՝
Ո՛հ, մեր փափաքը կատարուեց.
թող չ'ասեն՝ Մենք կուլ տուինք
նորան։
26 Թող իրար հետ ամաչեն և ա-
մօթ լինին իմ նեղութեան պատ-
ճառով ուրախացողները. թող
ամօթ և անարգանք հագնեն ինձ
վերայ պարծենցողները.
27 Թող ցնծան և ուրախ լինին
նորանք, որ հաւանում են իմ
արդարութեանը, և միշտ ասեն՝
Տէրը փառաւորուի, որ կամե-
նում է իր ծառայի խաղաղու-
թիւնը։
28 Եւ իմ լեզուն թող պատմէ
քո արդարութիւնը, և ամեն օր
քո գովասանքը։

ՍԱՂ. ԼԶ

Երգողների գլխաւորին։ Տիրոջ
ծառայ՝ Դաւիթի (Սաղմոս)։

1 Անօրէնութեան խօսքը ամբա-
րիշտի համար իմ սրտումը ոտ է
Բէ Աստուծոյ վախը չ'կայ նորա
աչքի առաջին։
2 Որովհետև քաղցր է թւում
նա իր աչքումը, որ իր անօրէնու-
թիւնը գտնէ և ատելութիւն
գործէ։
3 Նորա բերանի խօսքերը անօրէ-
նութիւն և նենգութիւն են։ Նա
դադարել է իմաստուն լինելուց
և բարի գործելուց։
4 Անօրէնութիւն է մտածում իր
անկողնումը. կանգնած է այն ճա-
նապարհի վերայ՝ որ բարի չէ. և
չար գործելուցը չէ զզվում։
5 Տէր, քո ողորմութիւնը եր-
կընքումն է, և քո ճշմարտու-
թիւնը հասնում է մինչև ամպերը։
6 Քո արդարութիւնը ինչպէս
Աստուծոյ սարերն է. և քո իրա-
ւունքը ինչպէս մեծ անդունդ.
դու ես փրկում մարդկանց և ա-
նասուններին, Տէր։
7 Ինչ պատուական է քո ողոր-
մութիւնը, ով Աստուած, և
մարդկանց որդիքը քո թևերի շու-
քի տակն են ապաւինած։
8 Նորանք լիանում են քո տան
պարարտութիւնիցը. և քո հա-
ճութեանց գետիցը խմել ես տա-
լիս նորանց։
9 Որովհետև կեանքի աղբիւրը
քեզ մօտ է. և քո լոյսովն ենք
տեսնում լոյս։
10 Շարունակիր քո ողորմութիւ-
նը քեզ ճանաչողների վերայ, և
քո արդարութիւնը՝ սրտով ու-
ղիղների վերայ։
11 Թող ամբարտաւանի ոտքը իմ
վերայ չ'գայ. և ամբարշտի ձեռքն
ինձ չ'շարժէ տեղիցս։

12 Այնտեղ վայր կ'ընկնեն անօ-
րէնութիւն գործողները. դէն կը
գցուին և էլ չեն կարողանալ
վեր կենալ։

ՍԱՂ. ԼԷ

Դաւիթի (Սաղմոս)

1 Մի բարկանար չարերի վերայ.
մի նախանձիր անօրէնութիւն
գործողներին։
2 Որովհետև նորանք խոտի պէս
շուտով կ'կտրուին, և կանաչ
խոտի պէս կ'թառամին։
3 Տիրոջը յուսա և բարի արա.
բնակուիր երկրումը և հետևիր
ճշմարտութեանը։
4 Ցնծացիր Տէրով, և նա կ'տայ
քեզ քո սրտի ուղածները։
5 Տիրոջը յանձնիր քո ճանապար-
հը՝ և նորան յուսա. և նա կ'կա-
տարէ։
6 Եւ քո արդարութիւնը դուրս
կ'հանէ լոյսի պէս, և քո իրա-
ւունքը՝ կէս օրուան պէս։
7 Համբերիր Տիրոջը և սպասիր
նորան. մի բարկանար այն մարդի
ճանապարհը յաջողուելիս՝ որ իր
չար խորհուրդները կատարում է։
8 Դադարիր բարկութիւնից, և
թող տուր սրտմտութիւնը. մի
բարկանար՝ որ չար գործես։
9 Որովհետև չարերը կ'սատկեն,
բայց Տիրոջն սպասողները երկիրը
կ'ժառանգեն։
10 Դեռ մի քիչ ժամանակ էլ, և
ամբարիշտը չ'կայ. և երբոր նո-
րա տեղին մտիկ տաս՝ նա չ'կայ։
11 Բայց խոնարհները երկիրը կը
ժառանգեն և կ'ուրախանան խա-
ղաղութեան առատութիւնովը։
12 Ամբարիշտը չար է մտածում
արդարի դէմ. և իր ատամները
կրճտեցնում է նորա վերայ։
13 Տէրը ծիծաղում է նորա վե-
րայ. որովհետև տեսնում է՝ որ
նորա օրը եկել է։
14 Սուրը հանում են ամբարիշտ-
ները և իրանց աղեղները լարում,
որ խեղճին ու ազքատին վայր
գցեն և սպանեն ճանապարհով
ուղիղներին։
15 Բայց նորանց սուրն իրանց սրտի
մէջ կ'մտնէ, և նորանց աղեղ-
ները կ'փշրուին։
16 Արդարի քիչ բանը լաւ է քան
թէ շատ ամբարիշտների ճոխու-
թիւնը։
17 Որովհետև ամբարիշտների բա-
զուկները կ'փշրուին, իսկ արդար-
ներին հաստատում է Տէրը։
18 Տէրը ճանաչում է արդարների
օրերը, և նորանց ժառանգութիւ-
նը յաւիտեան կ'լինի։
19 Նորանք չեն ամաչիլ չար ժա-
մանակում, և սովի օրերումը կը
կշտանան։
20 Որովհետև ամբարիշտները կը
կորչեն, և Տիրոջ թշնամիները
կ'ոչնչանան ինչպէս արտերի պա-
րարտութիւնը, կ'փչանան ծուխի
պէս։
21 Ամբարիշտը փոխ է առնում և
չէ վճարում, բայց արդարը ո-
ղորմած է և տալիս է։
22 Որովհետև նորա օրհնուածնե-
րը երկիրը կ'ժառանգեն, բայց
նորա անիծուածները կ'սատկեն։
23 Տիրովն է հաստատվում մար-
դիս գնացքը, և նա հաւանում
է նորա ճանապարհին։
24 Թէև վայր ընկնի՝ չի կործան-
ուիլ, որովհետև Տէրը նորա ձեռ-
քիցը բռնում է։
25 Ես երեխայ էի և ծերացայ՝ և
չ'տեսայ արդարին երեսից թող-
ուած, և ոչ նորա զաւակին, որ
հաց մուրանայ։
26 Արդարը ամեն օր ողորմած է և
փոխ է տալիս, և նորա զաւակը
օրհնուած է։
27 Ցետ քաշուիր չարիցը և բա-
րիք արա, և յաւիտեան կ'մնաս։
28 Որովհետև Տէրն իրաւունք է
սիրում և իր սուրբերին չէ թո-
ղում. նորանք յաւիտեան պահ-
պանվում են, բայց ամբարիշտ-
ների զաւակը կ'սատկի։
29 Արդարները երկիրը կ'ժառան-
գեն, և յաւիտեան կ'բնակուին
նորանում։
30 Արդարի բերանը իմաստութիւն
է խօսում. և նորա լեզուն իրա-
ւունք է զրուցում։
31 Իր Աստուծոյ օրէնքն իր սըր-

տումն է. նորա քայլերը չեն տա-
տանուիլ։
32 Ամբարիշտը դիտում է արդա-
րին, և ման է գալիս՝ որ սպանէ
նորան։
33 Բայց Տէրը նորան չի թողիլ
նորա ձեռքին, և չի դատապար-
տիլ նորան՝ երբոր նա դատուի։
34 Սպասիր Տիրոջը և պահիր նո-
րա ճանապարհը, և նա կ'բար-
ձրացնէ քեզ՝ որ երկիրը ժառան-
գես. և կ'տեսնես ամբարիշտները
սատակելիս։
35 Ես ամբարիշտը տեսայ գոռոզ
և տեղը հաստատ ինչպէս լայնա-
տարած դալար ծառ.
36 Բայց դի էլ անցնելիս, ահա չը
կար նա. ման եկայ նորան, և չը
գտնուեցաւ։
37 Իսկ արդարին մտիկ արա և ու-
ղիղին տես. այսպիսի մարդի վեր-
ջը խաղաղութիւն է։
38 Բայց անիրաւներն իրար հետ
մէկտեղ կ'սատակեն. ամբարիշտ-
ների վերջը կորուստ է։
39 Եւ արդարների փրկութիւնը
Տէրիցն է. նա նորանց զօրու-
թիւնն է նեղութեան ժամանա-
կում։
40 Եւ Տէրը կ'օգնէ նորանց և կ'ա-
զատէ նորանց. կ'ազատէ նորանց
ամբարիշտներիցը և կ'փրկէ նո-
րանց, որովհետև նորան են յու-
սացած։

ՍԱՂ. ԼԸ

Դաւիթի Սաղմոս. յիշատակի
համար։

1 Ով Տէր, մի յանդիմանիր ինձ
քո բարկութիւնովը, և մի խրա-
տիր ինձ քո սրտմտութիւնովը։
2 Որովհետև քո նետերը խրուե-
ցան իմ մէջը, և քո ձեռքը
ծանրացաւ ինձ վերայ։
3 Չ'կայ իմ մարմնումը առող-
ջութիւն քո բարկութեան պատ-
ճառով. իմ ոսկորներումը խա-
ղաղութիւն չ'կայ իմ մեղքի հա-
մար։
4 Որովհետև իմ անօրէնութիւն-
ները գլխիցս վեր բարձրացան.
ինչպէս մեծ ծանր բեռ ծանր են
ինձ վերայ։
5 Խոցերս հոտում և փտում են՝
իմ յիմարութեան համար։
6 Ես կեռացած և խիստ ցած ընկ-
ած եմ, և ամեն օր ման եմ
գալիս սգաւոր։
7 Որովհետև իմ երիկամունքներ-
ը լիքն են բորբոքումով, և ա-
ռողջութիւն չ'կայ իմ մարմնու-
մը։
8 Ես թուլացած և շատ սաստիկ
փշրուած եմ. հոգոց եմ հանում
իմ սրտի հառաչելուցը։
9 Ով Տէր, քո առաջին է իմ բո-
լոր փափաքը. և իմ հառաչանքը
քեզանից ծածուկ չէ։
10 Սիրտս դողում է. զօրութիւնս
թողել է ինձ. և իմ աչքի լոյսն
էլ ինձ մօտ չէ։
11 Իմ սիրելիներն ու ընկերները
կանգնած են իմ խոցի դէմ. և
իմ ազգականները կանգնած են
հեռուանց։
12 Եւ իմ անձը խնդրողները որս-
գայթ են լարում, և ինձ չար
ուղողներն անօրէնութիւն են խօ-
սում, և ամեն օր նենգութիւն-
ներ են հնարում։
13 Բայց ես խուլի պէս չեմ լսում,
և համրի պէս՝ որ իր բերանը չէ
բաց անում։
14 Եւ ես եղայ ինչպէս մարդ՝ որ
չէ լսում, և որ նորա բերանումը
փաստ չ'կայ։
15 Որովհետև ես քեզ եմ ապա-
ւինում, Տէր. դու պատասխան
կ'տաս, ով Տէր՝ իմ Աստուած։
16 Որովհետև ես ասեցի՝ թող ինձ
վերայ չ'ուրախանան, որ իմ ոտ-
քը սահելիս՝ ինձ վերայ պարծե-
նան։
17 Որովհետև ես պատրաստ եմ
ընկնելու համար. և իմ ցաւը
միշտ առաջս է։
18 Որովհետև ես պատմում եմ
իմ անօրէնութիւնը. և տրբա-
մում եմ իմ մեղքի համար։
19 Բայց իմ թշնամիները կենդա-
նի և զօրաւոր են. և ինձ զուր
ատողները շատ են։
20 Եւ բարիի տեղ ինձ չար հա-
տուցանողները հակառակում են

ինձ, նորա փոխարէն որ ես հե-
տևում եմ բարի բանի։
21 Մի թողիր ինձ, ով Տէր՝ իմ
Աստուած, մի հեռանար ինձա-
նից։
22 Շուտ արա՝ որ ինձ օգնես, ով
Տէր՝ իմ Փրկիչ։

ՍԱՂ. ԼԹ

Երգողների գլխաւորին. *Իդի-
թունին։ Դաւիթի Սաղմոս։

1 Ես ասեցի՝ թէ իմ ճանապարհ-
ները պահեմ լեզուովս մեղան-
չելից. իմ բերանին սանձ դնեմ՝
դեռ քանի որ ամբարիշտն իմ
առաջին է։
2 Բերանս փակեցի պապանձուե-
լով. բարի բանից էլ լուռ կա-
ցայ, և ցաւս շատ գրգռուեցաւ։
3 Սիրտս ինձանում տաքացաւ.
ես մտածելիս կրակ էր վառվում.
խօսեցի իմ լեզուովը։
4 Տէր, ցոյց տուր ինձ իմ վերջը
և իմ օրերի չափը թէ որքան է,
թող իմանամ թէ քանի՛ անցա-
ւոր եմ ես։
5 Ահա թիզի չափով կարգեցիր
իմ օրերը, և իմ կեանքի ժա-
մանակը ոչինչի պէս է քո առա-
ջին. բոլորովին ունայն է ամեն
մարդ՝ որքան հաստատ էլ լինի։
(Սէլա։)
6 Միայն պատկերի պէս է ման
գալիս մարդը. միայն զուր տեղն
է հոգս քաշում. հաւաքում է և
չ'գիտէ թէ ով պիտի առնէ այն։
7 Եւ հիմա ինչ բանի սպասեմ,
ով Տէր. իմ յոյսը քեզ վերայ է։
8 Իմ ամեն անօրէնութիւնների-
ցը փրկիր ինձ. ինձ յիմարի նա-
խատինքը մի շինիր։
9 Ես լուռ եմ կենում, իմ բե-
րանը չեմ բանում, որովհետև
դու արիր։
10 Քո պատուհասը հեռացրու
ինձանից. ես քո ձեռքի զարնե-
լովը փչացայ։
11 Երբոր յանդիմանութիւնով խը-
րատում ես մարդին իր անօրէ-
նութիւնների համար. ապա նո-
րա գեղեցկութիւնը ոչնչացնում
ես ինչպէս ցեցից. իրաւի որ ու-
նայն է ամեն մարդ։ (Սէլա։)
12 Տէր, լսիր իմ աղօթքը, և իմ
աղաղակին միտք դիր. իմ ար-
տասուքին լուռ մի կենար. ո-
րովհետև ես քո առաջին պան-
դուխտ եմ և հիւր ինչպէս որ
իմ ամեն հայրերը։
13 Թոյլ տուր ինձ զուարթանամ,
որ տակաւին չեմ գնացել և ո-
չընչացել։

ՍԱՂ. Խ

Երգողների գլխաւորին։ Դաւիթի
Սաղմոս։

1 Սպասելով սպասեցի Տիրոջը, և
նա դէպի ինձ նայեց և աղաղակս
լսեց։
2 Եւ ինձ հանեց կորստի հորիցը՝
տիղմոտ ցեխիցը, և վէմի վերայ
կանգնացրեց ոտներս, և գնացքս
հաստատեց։
3 Եւ նոր երգ դրաւ իմ բերա-
նումը մեր Աստուծոյ օրհնու-
թիւնը. շատերը կ'տեսնեն և կը
վախենան և Տիրոջը կ'յուսան։
4 Երանի այն մարդին որ նա իր
յոյսը Տէրն է շինում, և ամբար-
տաւաններին ու ստութեան հե-
տևողներին չէ դառնում։
5 Շատ են քո հրաշքները՝ որ դու
արիր, ով Տէր Աստուածս. և
քո խորհուրդները մեզ վերայ
են. ոչ ով քեզ հաւասար չէ.
կ'պատմէի և կ'խօսէի նորանց,
բայց համարից շատ են։
6 Պատարագի և ընծայի չ'հաւա-
նեցիր, բայց ականջներս բաց ա-
րիր. ողջակէզ ու մեղքի համար
պատարագ չ'պահանջեցիր.
7 Ապա ասեցի. Ահա ես գալիս
եմ. գրքի տոմսումը գրուած է
ինձ համար.
8 Քո կամքը կատարել կամեցայ,
ով Աստուածս. և քո օրէնքն
իմ սրտի մէջ է։
9 Ես արդարութիւն եմ քարո-
զում մեծ ժողովրդի մէջ. ահա

*ա Մն. ժզ. 41։ իե. 1։ Սաղ.
կբ. հէ. վերնագիրերը։

իմ շրթունքները չեմ արգելում. Տէր, դու գիտես.
10 Քո արդարութիւնը չեմ թագցնում սրտիս մէջ. քո ճշմարտութիւնն ու փրկութիւնը պատմեցի. քո ողորմութիւնն ու հաւատարմութիւնը չեմ ծածկում մեծ ժողովքի առաջին։
11 Բայց դու, Տէր, մի հեռացընիր ինձանից քո գթութիւնը. քո ողորմութիւնն ու հաւատարմութիւնը թող միշտ պաշտպանեն ինձ։
12 Որովհետև անթիւ չարիք պատեցին ինձ. իմ անօրէնութիւնները հասան ինձ վերայ՝ որ չեմ կարող տեսնել. աւելի շատ են իմ գլխի մազերիցը. և իմ սիրտը թողեց ինձ։
13 Տէր, հաճիր ինձ փրկելու. Տէր, շուտ արա՝ ինձ օգնիր։
14 Թող իրար հետ ամաչեն և ամօթ լինին իմ անձը կորցնել խնդրողները. թող ետ դառնան և խայտառակ լինին իմ չարն ուզողները։
15 Իրանց ամօթի պատճառովը պիտի զարհուրին նորանք, որ ինձ ասում են Վահ վահ։
16 Թող ցնծան և ուրախանան քեզանով ամեն քեզ խնդրողները. թող քո փրկութիւնը սիրողները միշտ ասեն՝ Տէրը փառաւորուի։
17 Բայց ես խեղճ եմ և աղքատ. Տէրը հոգս է անում ինձ համար. իմ օգնութիւնն ու փրկութիւնը դու ես, ով իմ Աստուած, մի ուշանար։

ՍԱՂ. ԽԱ

Երգողների գլխաւորին։ Դաւիթի Սաղմոս։

1 Երանի նորան՝ որ հոգս է անում աղքատի համար. նեղութեան օրումը Տէրը կ'փրկէ նորան։
2 Տէրը կ'պահէ նորան և կ'ապրեցնէ նորան. նա երանելի կ'լինի երկրի վերայ. իր թշնամիների ցանկութեանը դու չես մատնիլ նորան։
3 Տէրը կ'մխիթարէ նորան տկարութեան անկողնում. դու նորա բոլոր անկողինը կ'փոխես իր հիւանդութեան ժամանակումը։
4 Ես ասեցի. Տէր, ողորմիր ինձ և բժշկիր իմ անձը. որովհետև քո առաջին մեղանչեցի։
5 Իմ թշնամիները չար են խօսում ինձ վերայ, ասելով, Նա ե՞րբ կ'մեռնի և անունը՝ կ'կորչի.
6 Եւ եթէ մինը ինձ տեսնելու է գալիս՝ ունայնութիւն է խօսում. նորա սիրտն անօրէնութիւն է հաւաքում իրանում, և դուրս է գնում ու ասում սարիչին։
7 Ինձ ատողները միասին փսփըսում են ինձ վերայ, և չարութիւն են հնարում ինձ դէմ։
8 Անօրէնութեան բան հասաւ նորա վերայ, և որ վայր ընկնի այլ ևս վեր չի կենալ։
9 Իմ յատուկ բարեկամ մարդն էլ՝ որ նորան յուսացայ, որ իմ հացս ուտում էր, ոտը բարձրացրեց ինձ վերայ։
10 Բայց դու, Տէր, ողորմիր ինձ և կանգնեցրու ինձ, և ես կ'հատուցանեմ նորանց։
11 Սորանով ճանաչում եմ որ դու ինձ հաճութիւն ունիս, որ թշնամիս չ'պարծենայ ինձ վերայ։
12 Բայց դու ինձ կ'պահպանես իմ անարատութեան մէջ. և ինձ քո երեսի առաջին կ'կանգնեցնես յաւիտեան։
13 Օրհնեալ լինի Տէրը՝ Իսրայէլի Աստուածը յաւիտենից մինչև յաւիտեանս. ամէն և ամէն։

ՍԱՂ. ԽԲ

Երգողների գլխաւորին. Կորխի որդկանցը համար Երգ։

1 Ինչպէս որ եղջերուն փափաքում է ջրերի առուների, այնպէս էլ իմ անձը փափաքում է քեզ, ով Աստուած։
2 Իմ անձը ծարաւ է Աստուծուն՝ կենդանի Աստուծուն. ե՞րբ կ'գամ և նորա երեսի առաջին կ'երևամ։
3 Իմ արտասունքն ինձ հաց եղաւ ցերեկ և գիշեր, որ ինձ ամեն օր ասում են. Ո՞ւր է քո Աստուածը։
4 Ես այս բաները յիշում և իմ հոգին թափում եմ ինձանում. որ բազմութեան հետ անց կենամ գնամ նորանց հետ մինչև Աստուծոյ տունը տօնախմբող ամբոխի հետ օրհնութեան և գովասանութեան ձայնովը։
5 Ի՞նչու ես տրտում, ով իմ անձը, և շփոթուած ես ինձանում. Աստուծուն յուսացիր, որովհետև էլ կ'գոհանամ նորանից, որ իմ երեսի փրկութիւնն է։
6 Ով իմ Աստուած, իմ անձը տրտում է ինձանում. սորա համար յիշում եմ քեզ Յորդանանի երկրիցը և Հերմոնիցը և *Փոքր սարիցը։
7 Անդունդն անդունդին կանչում է քո յորձանքների ձայնովը. քո ամեն կոհակները և ալիքները անց են կենում ինձ վերայ։
8 Ցերեկը Տէրը պատուիրում է իր ողորմութիւնը, և գիշերը օրհնութիւնը ինձ հետ կ'լինի. աղօթքս դէպի կենաց Աստուածն է։
9 Ասում եմ Աստուծուն. Ով իմ Վէմ, ի՞նչու մոռացար ինձ. ի՞նչու սգաւոր գնամ ես թշնամիի նեղացնելու համար։
10 Իմ ոսկորները փշրուելիս իմ թշնամիներն ինձ դեռ նախատինք էլ են տալիս և ամեն օր ինձ ասում. թէ Ո՞ւր է քո Աստուածը։
11 Ի՞նչու ես տրտում, ով իմ անձը, ի՞նչու ես շփոթուած ինձանում. Աստուծուն յուսացիր. որովհետև էլ կ'գոհանամ նորանից, որ իմ երեսի փրկութիւնն և իմ Աստուածն է։

ՍԱՂ. ԽԳ

1 Դատաստան արա ինձ, ով Աստուած, և իմ իրաւունքը հաստատիր անսուրբ ազգի դէմ. նենգաւոր և անիրաւ մարդիցը փրկիր ինձ։
2 Որովհետև դու ես իմ զօրութեան Աստուածը. ի՞նչու ես ինձ դէն գցում. ի՞նչու սգաւոր գընամ ես թշնամիի նեղացնելու համար։
3 Ուղարկիր քո լոյսը և քո ճշմարտութիւնը. նորանք առաջնորդեն ինձ և տանեն ինձ դէպի քո սուրբ սարը և դէպի քո բնակարանները։
4 Եւ ես մտնեմ դէպի Աստուծոյ սեղանը իմ ուրախութեան և ցնծութեան Աստուծուն մօտ, և գոհանամ քեզանից քնարով, ով Աստուած՝ իմ Աստուածը։
5 Ի՞նչու ես տրտում, ով իմ անձը, և ի՞նչու ես շփոթուած ինձանում. Աստուծուն յուսացիր. որովհետև էլ կ'գոհանամ նորանից՝ որ իմ երեսի փրկութիւնը և իմ Աստուածն է։

ՍԱՂ. ԽԴ

Երգողների գլխաւորին. Կորխի որդկանց Երգ։

1 Ով Աստուած, մեր ականջներովը լսեցինք. մեր հայրերը պատմեցին մեզ այն գործը, որ դու գործեցիր նորանց օրերումը՝ այն առաջի ժամանակներումը։
2 Դու քո ձեռքովը հեթանոսներին դուրս հանեցիր և նորանց տնկեցիր. չարչարեցիր ազգերը և նորանց փռեցիր։
3 Որովհետև ոչ թէ իրանց սրովը ժառանգեցին երկիրը, և ոչ իրանց բազուկը փրկեց իրանց. այլ քո աջը և քո բազուկը և քո երեսի լոյսը. որովհետև հաւանեցիր նորանց։
4 Դու ես իմ թագաւորը, ով Աստուած. հրամայեցիր Յակոբի փրկութիւնների համար։
5 Քեզանով գետինը գցեցինք մեր թշնամիներին. քո անունովը կոխ տուինք մեզ դէմ վեր կենողներին։
6 Որովհետև ես իմ աղեղին չեմ յուսացել, և իմ սուրը չէ փրկում ինձ։
7 Այլ դու ես փրկում մեզ մեր

*Եբր. Միսար

թշնամիներիցը, և ամօթ ես ա-
նում մեզ ատողներին։
8 Աստուծով կ'պարծենանք ա-
մեն օր, և քո անունիցը կ'գոհա-
նանք յաւիտեան։ (Սէլա։)
9 Բայց հիմա դէն գցեցիր և ա-
մօթ արիր մեզ, և չես դուրս
գալիս մեր զօրքի հետ։
10 Դու մեզ ետ ես դարձնում
թշնամիիցը, և մեզ ատողները
յափշտակում են մեզ իրանց
համար։
11 Դու արիր մեզ՝ որ ոչխարի պէս
կերակուր լինինք, և ցրուեցիր
մեզ հեթանոսների մէջ։
12 Ծախեցիր քո ժողովուրդը ոչ-
ինչ փողով, և չ'հարստացար նո-
րանց գնովը։
13 Դու մեզ նախատինք ես դնում
մեր հարևանների առաջին, ծաղր
և խայտառակութիւն մեր չորս
կողմում լինողների առաջին։
14 Դու մեզ առակ ես դնում
հեթանոսների մէջ, և գլուխ
շարժելու պատճառ՝ ազգերի մէջ։
15 Ամեն օր իմ նախատինքը իմ
առաջին է. և իմ երեսի ամօթը
ծածկում է ինձ,
16 Նախատողի և հայհոյողի ձայ-
նիցը, թշնամիին և վրէժխնդրի
երեսիցը։
17 Այս ամենը եկաւ մեզ վերայ,
և քեզ չ'մոռացանք, և քո ուխ-
տը չ'քանդեցինք։
18 Մեր սիրտը ետ չ'դարձաւ, և
մեր գնացքը չ'ծռուեցաւ քո ճա-
նապարհիցը.
19 Թէև փշրեցիր մեզ չագալնե-
րի տեղումը, և ծածկեցիր մեզ
մահի շուքովը։
20 Եթէ մոռացած լինէինք մեր
Աստուծոյ անունը, և մեր ձեռ-
քերը մեկնած լինէինք դէպի օ-
տար Աստուած.
21 Չէ՞ որ Աստուած կ'քննէր այս
բանը. որովհետև նա գիտէ սըր-
տի գաղտնիքները։
22 Բայց ամեն օր սպանվում ենք
քեզ համար, և մորթուելու ոչ-
խարի պէս ենք համարվում։
23 Զարթնիր, ինչու ես քնած,
ով Տէր. վեր կաց, դէն մի գցիր
իսպառ։

Ինչու ես թագցնում քո երե- 24
սը, և մոռանում մեր խեղճու-
թիւնը և նեղութիւնը։
Որովհետև մեր անձը խոնարհ- 25
ուեց հողի մէջ, և մեր փորը երկ-
րին կպաւ։
Վեր կաց մեզ օգնութեան, 26
և փրկիր մեզ քո ողորմութեան
համար։

ՍԱՂ. ԽԵ

Երգողների գլխաւորին. *Շօշա-
նիմով. Կորխի որդկանց. քեր-
թուած. սէրի երգ։

Սիրտս բարի խօսք է բղխում. 1
ես ասում եմ՝ թէ իմ քերթուա-
ծը թագաւորի համար է. իմ լե-
զուն ճարտար դպրի գրիչն է։
Դու մարդկանց որդիներիցը գե- 2
ղեցկագոյն ես. շնորհք է թափ-
ուած քո շրթունքների վերայ.
սորա համար Աստուած օրհնեց
քեզ յաւիտեան։
Սուրդ մէջքդ կապիր ով Հզօր. 3
նա է քո պատիւը և քո փառքը։
Եւ քո փառքովը յաջողուիր, 4
և ձի հեծիր ճշմարտութեան, և
հեզութեան, և արդարութեան
համար. և քո աջ ձեռքը թող
ահաւոր բաներ սովորեցնէ քեզ։
Քո նետերը սրուած են. ազգե- 5
րը քո տակն են ընկնում. նորանք
թագաւորի թշնամիների սիրտն
են մտնում։
Ով Աստուած, քո աթոռը յա- 6
ւիտեանս յաւիտենից կայ. քո
թագաւորութեան գաւազանը
ուղիղ գաւազան է։
Դու սիրում ես արդարութիւ- 7
նը և ատում ես անօրէնութիւնը.
սորա համար, ով Աստուած, օ-
ծեց քեզ քո Աստուածը ուրա-
խութեան իւղովը աւելի քան քո
ընկերներին։
Քո հանդերձները իսպառ զմուռ 8
և հալուէ և կասիա են. փը-
ղոսկրեայ պալատներիցը ուրա-
խացնում են քեզ նուագարա-
նով.

*Սաղ. կթ. և ձ. վերնագիրը։

9 Թագաւորների աղջիկները քո
պատուականների մէջ են. Թա-
գուհին կանգնած է քո աջ կող-
մը Ոփիրի ազնիւ ոսկիովը։
10 Լսիր, աղջիկ, և տես, խոնար-
հեցրու քո ականջը. և մոռացիր
քո ժողովուրդը և քո հօր տու-
նը։
11 Եւ ապա թագաւորը կ'ցան-
կանայ քո գեղեցկութեանը. ո-
րովհետև նա է քո տէրը, երկրը-
պագութիւն արա նորան։
12 Եւ Տիւրոսի աղջիկը ընծայով
կ'ներկայանայ. կ'խնդրեն քո երեսը
ժողովրդի հարուստները։
13 Թագաւորի աղջիկը իսպառ
փառաւոր է ներսումը. նորա
հանդերձը ոսկեհուռ է.
14 Պաճուճեալ զարդարանքով
ներս կ'տարուի թագաւորի մօտ.
նորա ետևիցը եկող աղջիկ ընկ-
երները ներս կ'տարուին քեզ
մօտ։
15 Ներս կ'տարուին ուրախու-
թիւնով և ցնծութիւնով. և
թագաւորի պալատը կ'մտնեն։
16 Քո հայրերի տեղ քո որդիքը
կ'լինին, և իշխաններ կ'դնես նո-
րանց ամեն երկրի վերայ։
17 Ես կ'յիշեմ քո անունը ազգից
մինչև ազգ. սորա համար ժողո-
վուրդները կ'փառաւորեն քեզ
յաւիտեանս յաւիտենից։

ՍԱՂ. ԽԶ

Երգողների գլխաւորին. Կորխի
որդկանց. *Ալամօթով երգ։

1 Աստուած մեզ համար ապաւէն
է և զօրութիւն՝ նեղութիւնների
մէջ նա շատ օգնական գտնուե-
ցաւ։
2 Սորա համար չենք վախենալ՝
թէև երկիրն անցնի, և սարերը
ծովին մէջ տեղը գցուին։
3 Թող դոռան և եռան նորա ջու-
րերը. թող սարերը դողդողան
նորա ուռենալովը։ (Սէլա։)
4 Բայց գետն իր առուներովը կ'ու-
րախացնէ Աստուծոյ քաղաքը՝
Բարձրելոյն սուրբ բնակարանները։
Աստուած նորա մէջ է. նա չի 5
շարժուիլ. Աստուած օգնութիւն
կ'անէ նորան առաւօտանց կա-
նուխ։
Հեթանոսները խռովուեցան և 6
թագաւորութիւնները շարժուե-
ցան. նա իր ձայնը տուաւ և եր-
կիրը հալուեցաւ։
Զօրաց Տէրը մեզ հետ է. Յա- 7
կոբի Աստուածը մեզ համար ա-
պաստան է։ (Սէլա։)
Եկէք և տեսէք Տիրոջ գործե- 8
րը, որ աւերմունքներ է անում
երկրի վերայ,
Որ դադարեցնում է պատե- 9
րազմները մինչև երկրի ծայրերը.
փշրում է աղեղները, կոտրա-
տում է նիզակները, և կառքե-
րը այրում է կրակով։
Դադարեցէք և ճանաչեցէք, որ 10
ես եմ Աստուած. բարձր կ'լի-
նիմ հեթանոսների մէջ. բարձր
կ'լինիմ երկրի վերայ։
Զօրաց Տէրը մեզ հետ է. Յա- 11
կոբի Աստուածը մեզ համար ա-
պաստան է։ (Սէլա։)

ՍԱՂ. ԽԷ

Երգողների գլխաւորին. Կորխի
որդկանց Սաղմոս։

Ծափ տուէք, ամեն ժողովուրդ- 1
ներ. ցնծութեան ձայնով դէպի
Աստուած աղաղակեցէք։
Որովհետև Տէրը Բարձրեալ և 2
Ահաւոր է. մեծ թագաւոր է ա-
մեն երկրի վերայ,
Նա ժողովուրդներին մեր տակն 3
է գցում, և ազգերին մեր ոտ-
ների ներքևը։
Նա մեզ համար ընտրում է 4
մեր ժառանգութիւնը՝ Յակոբի
փառաւորութիւնը, որ նորան սի-
րում է։ (Սէլա։)
Աստուած բարձրանում է ցն- 5
ծութեան օրհնութիւնով. Տէրը՝
փողի ձայնով։
Սաղմոս ասեցէք Աստուծուն, 6
սաղմոս ասեցէք մեր թագաւո-
րին, սաղմոս ասեցէք։
Որովհետև Աստուած ամեն 7

*ա Մն. ժե. 20։

երկրի թագաւորն է. իմաստու-
թեան երգ սաղմոսեցէք։
8 Աստուած թագաւոր է հեթա-
նոսների վերայ, Աստուած նըս-
տում է իր սրբութեան աթոռի
վերայ։
9 Ժողովուրդների իշխանները հա-
ւաքվում են՝ Աբրահամի Ա-
ստուծոյ ժողովուրդը. որովհետև
երկրի վահանները Աստուծունն
են. նա շատ բարձրացաւ։

ՍԱՂ. ԽԸ

Երգ. Կորխի որդկանց Սաղմոս։

1 Մեծ է Տէրը և շատ օրհնեալ.
մեր Աստուծոյ քաղաքումը՝ իր
սուրբ սարի վերայ։
2 Գեղեցիկ բարձրութիւն՝ բոլոր
երկրի ուրախութիւնն է Սիօն
սարը, հիւսիսի կողմումն, մեծ
թագաւորի քաղաքը։
3 Աստուած յայտնի է նորա պա-
լատներումն իբրև ապաւէն։
4 Որովհետև ահա թագաւորնե-
րը ժողովուեցան և իրար հետ
անց կացան։
5 Նորանք տեսան և զարմացան,
շփոթուեցան և շուտով փա-
խան։
6 Դողայը բռնեց նորանց այնտեղ
և սաստիկ ցաւ՝ ինչպէս ծննդա-
կանի։
7 Դու արևելեան հողմով փըշ-
րում ես Թարսիսի նաւերը։
8 Ինչպէս որ լսեցինք այնպէս էլ
տեսանք Զօրաց Տիրոջ քաղա-
քումը՝ մեր Աստուծոյ քաղա-
քումը. Աստուած հաստատում
է նորան մինչև յաւիտեան։ (Սէ-
լա։)
9 Ով Աստուած, մենք մտածում
ենք քո ողորմութեան վերայ,
քո տաճարի մէջ։
10 Ինչպէս քո անունը, ով Աստ-
ուած, այնպէս էլ քո գովու-
թիւնն է մինչև երկրի ծայրերը.
արդարութիւնով լիքն է քո աջը։
11 Թող ուրախ լինի Սիօն սարը.
և Յուդայի աղջիկները ցնծան քո
դատաստաններովը։
12 Գնացէք Սիօնի չորս կողմովը,
և նորան շրջապատեցէք. համա-
րեցէք նորա աշտարակները։
13 Ուշադրութիւն արէք նորա
բերդերին. քննեցէք նորա պա-
լատները, որ պատմէք գալու ազ-
գին.
14 Թէ այս Աստուածն է մեր Աստ-
ուածը միշտ և յաւիտեան. սա
կ'առաջնորդէ մեզ մինչև ի մահ։

ՍԱՂ. ԽԹ

Երգողների գլխաւորին. Կորխի
որդկանց Սաղմոս։

1 Լսեցէք այս, ով ամեն ժողո-
վուրդներ, և ականջ դրէք, ով
աշխարհքի բոլոր բնակիչներ.
2 Հասարակ ու մեծ մարդիկ,
հարուստ և աղքատ՝ ամենեքեան։
3 Իմ բերանը պիտի իմաստու-
թիւն խօսի, և իմ սրտի խորհուր-
դը՝ իմացողութիւն։
4 Ես իմ ականջը կ'խոնարհեցնեմ
դէպի առակ, և քնարով կ'բա-
նամ իմ խրթին խօսքը։
5 Ի՞նչու վախենամ ես չար օրե-
րումը, թէ իմ խորամանկ թշնա-
միի անօրէնութիւնը պատում է
ինձ.
6 Որ նորանք իրանց ապրանքնե-
րին են յուսացած, և իրանց մեծ
հարստութիւնովն են պարծե-
նում։
7 Մարդ չէ կարող իր եղբօրը
փրկել, և ոչ նորա փրկանքը տալ
Աստուծուն.
8 Որովհետև թանգ է նորանց
անձերի փրկանքը, և յաւիտեան
կ'դադարի.
9 Թէև յաւիտեան ապրի և ապա-
կանութիւն չ'տեսնէ։
Որովհետև տեսնում է որ ի-
մաստունները մեռնում են ինչ-
պէս որ յիմարներն ու անմիտնե-
րը են կորչում՝ և իրանց հարըս-
տութիւնը ուրիշներին թողում։
11 Նորանց միտքը սա է՝ թէ իրանց
տունը յաւիտեան է, իրանց բը-
նակութիւնը՝ ազգից մինչև ազգ.
նոքա իրանց անունովը կ'կանչուին
երկիրներումը։
12 Բայց մարդս պատուի մէջ չէ

մնում. նման է անասուններին որ
կորչում են։
13 Սա է նորանց ճանապարհը որ
յիմար են, և նորանց հետևող-
ները հաւանում են նորանց խօս-
քին։ (Սէլա։)
14 Ոչխարների պէս *գերեզմանի
մէջ են մատնվում. մահը նո-
րանց հովիւն է. և ուղիղները ա-
ռաւօտանց կ'տիրապետեն նո-
րանց. և նորանց կերպարանքը կը
մաշուի †գերեզմանումը իրանց
բնակարաններիցը դուրս։
15 Բայց Տէրն իմ անձը կ'փրկէ
*գերեզմանի ձեռքիցը. որովհե-
տև նա ընդունում է ինձ։ (Սէ-
լա։)
16 Մի վախենար երբոր մարդ հա-
րըստանայ, երբոր նորա տան փառ-
քը շատանայ։
17 Որովհետև նա իր մեռնելու
ժամանակ ոչ մի բան վեր չի առ-
նիլ իր հետ. նորա փառքը չի
գնալ նորա ետևից։
18 Թէև նա իր անձը օրհնում է
իր կեանքումը, բայց քեզ կ'գո-
վեն, որ բարի ես անում քեզ։
19 Նա կ'մտնէ իր հայրերի ազգի
մօտ, որ մինչև յաւիտեան լոյս
չեն տեսնիլ։
20 Մարդս՝ որ պատուի մէջ է և
իմաստուն չէ, նման է անասուն-
ներին որ կորչում են։

ՍԱՂ. Ծ

Ասափի Սաղմոս։

1 Աստուածների Աստուածը՝ Եհո-
վան խօսում է. և կանչում է
երկրին արևելքիցը մինչև արև-
մուտքը։
2 Սիօնի միջիցը՝ գեղեցկութեան
կատարելութիւնիցը Աստուած
փայլում է.
3 Մեր Աստուածը կ'գայ և լուռ
չի կենալ. նորա առաջին փչացը-
նող կրակ և նորա չորս կողմովը
սաստիկ մրրիկ կայ։
4 Նա կանչում է երկնքին վերե-
ւիցը, և երկրիս՝ որ իր ժողովրդին
դատէ։
5 Ժողովեցէք ինձ մօտ իմ սրբե-
րին, որ ինձ հետ ուխտ դրին զո-
հով։
6 Եւ երկինքը կ'պատմէ նորա
արդարութիւնը. որովհետև Աստ-
ուած դատաւոր է։ (Սէլա։)
7 Լսիր, իմ ժողովուրդ, և ես
խօսիմ. ով Իսրայէլ, և ես վը-
կայութիւն տամ քեզ. ես եմ
Աստուած, քո Աստուածը։
8 Քո պատարագների համար քեզ
չեմ յանդիմանում, և քո ող-
ջակէզները միշտ իմ առաջին են։
9 Քո տանիցն արջառ չեմ առ-
նում, և ոչ այծեր՝ քո փարախ-
ներիցը։
10 Որովհետև իմն են անտառի ա-
մեն գազանները և հազարաւոր
սարերի անասունները։
11 Ես գիտեմ սարերի բոլոր թըռ-
չունները, և վայրի գազաններն
իմ առաջին են։
12 Եթէ սովածանամ, քեզ չեմ
ասիլ, որովհետև իմն է աշխարհ-
քը և նորա լիութիւնը։
13 Մի՞թէ ես արջառների միս
կ'ուտեմ և այծերի արիւն կ'խը-
մեմ։
14 Պատարագիր Աստուծուն գո-
հութիւն, և վճարիր Բարձրելոյն
քո ուխտերը։
15 Եւ կանչիր ինձ նեղութեան օ-
րումը. և ես կ'ազատեմ քեզ, և
դու կ'փառաբանես ինձ։
16 Բայց ամբարշտին ասում է
Աստուած. Քե՞զ ինչ որ դու իմ
հրամանները պատմում ես և իմ
ուխտը բերանդ ես առնում։
17 Եւ խրատն ատում ես և իմ
խօսքը քո յետի կողմն ես գը-
ցում։
18 Եթէ գող ես տեսնում, նո-
րա հետ ես գնում. և քո բա-
ժինը շնացողների հետ է։
19 Բերանդ չարութեան ես տա-
լիս, և լեզուդ նենգութիւն է
հնարում։
20 Նստում ես և եղբօրդ դէմ
հակառակ խօսում. քո մօր որ-
դիի վերայ բամբասանք ես ա-
նում։

*Կամ՝ դժոխքի
†Կամ՝ դժոխքումը

21 Ահա բաներն արիր դու և ես լուռ կացի. կարծեցիր թէ ես էլ քեզ նման եմ. բայց կ'յանդիմանեմ քեզ և քո աչքի առաջին կ'դնեմ,

22 Մի՛տք արէք այս, ով Աստուածն մոռացողներ, մի գուցէ ես յափշտակեմ, և ոչ ոք չ'լինի որ փրկէ,

23 Գոհութիւն պատարագ մատուցանողը փառաւորում է ինձ. և ով որ իր ճանապարհին զգուշանայ, նորան ցոյց կ'տամ Աստուծոյ փրկութիւնը։

ՍԱՂ. ՃԱ

Երգողների գլխաւորին. Դաւիթի Սաղմոս. երբոր *Նաթան մարգարէն նորա մօտ եկաւ՝ երբոր նա Բերսաբէի մօտ էր մտել։

1 Ողորմիր ինձ, Աստուած, քո ողորմութեան պէս. և քո մեծ ողորմութեան պէս ջնջիր իմ անօրէնութիւնները,

2 Լուացա՛ լուա՛ ինձ իմ անօրէնութիւնից, և սրբիր ինձ իմ մեղքից,

3 Որովհետև ես ճանաչում եմ իմ անօրէնութիւնները, և իմ մեղքն ամեն ժամանակ իմ առաջին է,

4 Միմիայն քեզ դէմ մեղանչեցի, և չարը քո աչքի առաջին գործեցի. որ դու արդար լինիս քո խօսքերումդ, և մաքուր լինիս քո դատաստանումդ։

5 Ահա ես անօրէնութիւնով եմ ծնուել, և մեղքով յղացաւ ինձ իմ մայրը։

6 Ահա դու սիրում ես ճշմարտութիւնը երիկամանքներում. և ծածուկ տեղը իմաստութիւն կ'սովորեցնես ինձ։

7 Սրբիր ինձ զոպայով՝ և ես մաքուր կ'լինիմ. լուա՛ ինձ՝ և ձիւնից սպիտակ կ'լինիմ։

8 Լսել տուր ինձ ցնծութիւն և ուրախութիւն. թող ցնծան այն ոսկորները որ կոտրատեցիր։

9 Երեսդ թագցրու իմ մեղքերիցը, և իմ բոլոր անօրէնութիւնները ջնջիր։

10 Սուրբ սիրտ ստեղծիր ինձա՛ նում, ով Աստուած, և ուղիղ հոգի նորոգիր իմ ներսումը։

11 Դէն մի գցիր ինձ քո երեսիցը, և քո սուրբ հոգին մի վեր առնիր ինձանից։

12 Դարձեալ տուր ինձ քո փրկութեան ուրախութիւնը, և կամաւոր հոգով հաստատիր ինձ։

13 Այս անօրէններին կ'սովորեցնեմ քո ճանապարհները. և մեղաւորները ետ կ'դառնան քեզ մօտ։

14 Փրկիր ինձ արիւնիցը, ով Աստուած՝ իմ փրկութեան Աստուածը. և իմ լեզուն կ'փառաբանէ քո արդարութիւնը։

15 Տէր, բաց արա իմ շրթունքները. և իմ բերանը կ'պատմէ քո գովութիւնը։

16 Որովհետև դու պատարագ չես ուզում. էրէ՝ ես կ'տայի քեզ. և ողջակէզներին չես հաւանում։

17 Աստուծոյ ընդունելի պատարագները կոտրուած հոգին է. կոտրուած ու փշրուած սիրտը դու չես անարգիլ, ով Աստուած։

18 Բարի արա Սիօնին քո քաղցրութիւնովը. երուսաղէմի պարիսպները շինիր։

19 Այն ժամանակ հաճոյ կ'լինին քեզ արդարութեան պատարագները՝ ողջակէզներն ու մատաղները. այն ժամանակ արջառներ կ'մատուցանեն քո սեղանի վերայ։

ՍԱՂ. ՃԲ

Երգողների գլխաւորին. Դաւիթի երգ։ երբոր †Դաւիթ եդովմացին եկաւ և Սաւուղին պատմեց և նորան ասեց թէ Դաւիթն Աբիմելէքի տունն եկաւ։

1 Ի՞նչ ես պարծենում չարութիւնով, ով բռնաւոր. Աստուծոյ ողորմութիւնը ամեն օր կայ։

2 Քո լեզուն չարութիւն է հնարում, ինչպէս սուր ածելի նենգութիւն է գործում։

3 Դու չարն աւելի ես սիրում քան թէ բարին, սուտը՝ աւելի քան թէ ճշմարտութիւն խօսելը։ (Սէլա)

4 Դու ամեն կորուստ բերող խօսքը և նենգաւոր լեզուն ես սիրում։

5 Աստուած էլ կ'կործանէ քեզ յաւիտեան. կ'խլէ և կ'հանէ քեզ քո բնակարանիցը. և քո արմատը կենդանեաց երկրիցը. (Սէլա)

6 Եւ արդարները կ'տեսնեն և կ'վախենան, և նորա վերայ կ'ծիծաղեն,

7 Ահա այն մարդը՝ որ Աստուծուն իրան զօրութիւն չ'արաւ, այլ իր մեծ հարստութեանը յուսացաւ և իր չարութիւնովը զօրացաւ։

8 Բայց ես կանաչացած ձիթենիի նման եմ Աստուծոյ տանը. ես Աստուծոյ ողորմութեանն եմ յուսացած յաւիտեանս յաւիտենից,

9 Ես քեզ պիտի գովեմ յաւիտեան, որ դու այս արիր. և քո անունիդ սպասեմ. որովհետև բարի է քո սրբերի առաջին։

ՍԱՂ. ՃԳ

Երգողների գլխաւորին. Մախալաթի վերայ. Դաւիթի երգ։

1 Անզգամն ասեց իր սրտումը՝ Չ'կայ Աստուած չ'կայ. նորանք ապականուեցան և գարշելի անօրէնութիւն արին. ոչ ով չ'կայ որ բարին անէ։

2 Աստուած երկնքիցը մարդկանց որդիների վերայ նայեցաւ, որ տեսնէ թէ կ'լինի արդեօք մէկ իմաստուն՝ որ Աստուծուն խնդրէ։

3 Ամենքը ետ քաշուեցան և միասին անպիտանացան, բարի գործող չ'կայ, մէկն էլ չ'կայ։

4 Մի՞թէ չեն իմանում անօրէնութիւն գործողները, որ իմ ժողովուրդն ուտում են ինչպէս որ հացը կ'ուտեն, և Աստուծուն չեն կանչում։

5 Անտեղ վախենում են վախով, որովհետև Աստուած քեզ պատռողների ոսկորները ցրուում է. դու ամօթ ես անում նորանց. որովհետև Աստուած դէն է գցում նորանց։

6 Ո՜հ թէ Սիօնիցը գար Իսրայէլի փրկութիւնը. երբոր Աստուած իր ժողովրդի գերութիւնը դարձնէ, այն ժամանակ Յակոբը կը ցնծայ ու Իսրայէլն ուրախ կ'լինի։

ՍԱՂ. ՃԴ

Երգողների գլխաւորին. Նկինոթով. Դաւիթի երգ, երբոր *Զիփացիք եկան և Սաւուղին ասեցին. Ահա Դաւիթը թաք է կացել մեզ մօտ։

1 Ով Աստուած, քո անունովն ազատիր ինձ. և քո զօրութիւնովն իրաւունք արա ինձ։

2 Ով Աստուած, լսիր իմ աղօթքը. ականջ դիր իմ բերնի խօսքերին։

3 Որովհետև օտարները վեր կացան ինձ վերայ, և զօրաւորները խնդրում են իմ անձը, նորանք Աստուծուն չեն դնում իրանց աչքի առաջին. (Սէլա)

4 Ահա Աստուած իմ օգնականն է. Տէրը պահպանում է իմ անձը։

5 Նա չարը կ'դարձնէ իմ թշնամիների վերայ. քո ճշմարտութիւնովը կորցրու նորանց։

6 Ես յօժար կամքով պատարագ կ'մատուցանեմ քեզ և քո անունը կ'գովեմ, ով Տէր, որովհետև բարի է,

7 Որովհետև դու ամեն նեղութիւնից փրկում ես ինձ. և իմ աչքը ուրախութիւնով նայում է իմ թշնամիների վերայ։

ՍԱՂ. ՃԵ

Երգողների գլխաւորին. Նկինոթով. Դաւիթի երգ։

1 Ով Աստուած, ականջ դիր իմ

*բ Թագ. ժբ. 1։ ժա. 1–4։

†ա Թագ. իգ. 9։

*ա Թագ. իգ. 19։ իզ. 1։

աղօթքին, և քեզ մի թագցնիր
իմ աղաչանքիցը։
2 Մտիկ արա ինձ վերայ և լսիր
ինձ, որ մոլորուած եմ իմ տրրա-
մութիւնումը և սուգ եմ ա-
նում.
3 Թշնամիի ձայնիցը և ամբարշ-
տի նեղացնելուցը. որովհետև ա-
նօրէնութիւն են գցում ինձ վե-
րայ, և բարկութիւնով հալա-
ծում են ինձ։
4 Իմ սիրտը դողաց ինձանում, և
մահի սարսափը ընկաւ ինձ վերայ.
5 Վախ ու դող եկաւ ինձ վե-
րայ, և սոսկում ծածկեց ինձ։
6 Եւ ես ասեցի. Ոհ թէ թև ու-
նենայի աղաւնիի պէս, որ թռ-
չէի և հանգչէի։
7 Ահա կ'փախչէի, կ'հեռանայի,
անապատումը կ'կենայի։ (Սէլա։)
8 Կ'շտապէի որ ինձ համար ա-
պաստան գտնէմ փոթորկալից քա-
միիցը և մրրկիցը։
9 Ով Տէր, կործանիր՝ բաժանիր
նորանց լեզուն. որովհետև անի-
րաւութիւն և հակառակութիւն
տեսայ քաղաքումը։
10 Ցերեկ և գիշեր շրջապատում
են նորա չորս կողմովը նորա պա-
րիսպների վերայ. անօրէնութիւն
և չարագործութիւն կայ նորա
մէջ։
11 Անիրաւութիւն կայ նորա մէջ.
և խաբէութիւն և զրկողութիւն
չէ պակասում նորա փողոցնե-
րիցը։
12 Որովհետև եթէ թշնամին ինձ
նախատինք տար՝ կ'համբերէի. և
եթէ ինձ ատողը պարծենար ինձ
վերայ՝ կ'թագչէի նորանից։
13 Բայց դու ինձ հաւասար մարդ
ես՝ իմ սրտակիցը և իմ բարե-
կամը.
14 Որ մենք իրար հետ քաղցրու-
թիւնով խորհուրդ էինք անում
և Աստուծոյ տունն էինք գնում
ամբոխի հետ։
15 Թող մահ հասնէ նորանց վե-
րայ, և կենդանի կենդանի խոր-
տակուին դժոխքի մէջ. որովհե-
տև չարութիւններ կան նորանց
բնակարաններումը՝ նորանց ներ-
սումը։

Բայց ես դէպի Աստուած կը 16
կանչեմ. և Տէրը կ'փրկէ ինձ։
Իրիկունն ու առաւօտը և կէս 17
օրին ողբում եմ և հառաչում.
և նա կ'լսէ իմ ձայնը։
Նա խաղաղութիւնով կ'փրկէ 18
իմ անձը այն կռուիցը որ ինձ
դէմ է. որովհետև շատ են նո-
րանք՝ որ ինձ հետ են։
Աստուած կ'լսէ, և կ'նեղացնէ 19
նորանց, նա՝ որ վաղուց կայ. (Սէ-
լա։) որովհետև նորանք չեն փոխ-
վում և Աստուածանից չեն վա-
խենում։
Իր ձեռքերը գցում է իր խա- 20
ղաղ ընկերների վերայ, իր դա-
շինքը դրժում է։
Նորա բերանը իւղիցը աւելի 21
կակուղ է, բայց կռիւ կայ նո-
րա սրտումը. նորա խօսքերը ձէ-
թիցն աւելի կակուղ են, բայց
սրած թուր են։
Քո հոգսն Աստուծոյ վերայ գը- 22
ցիր, և նա խնամք կ'անէ քեզ.
նա թող չի տալ որ արդարը
յաւիտեան շարժուի տեղիցը։
Եւ դու, ով Աստուած, վայր 23
կ'գցես նորանց ապականութեան
հորի մէջ. արիւն թափող ու
նենգաւոր մարդիկը իրանց օրերը
մինչև կէսը չեն հասցնիլ. բայց
ես քեզ եմ յուսացած։

ՍԱՂ. ԾԶ

Երգողների գլխաւորին. Համբ ա-
ղաւնիի հեռաւորութեանց եղա-
նակովը. Դաւիթի Երգ։ *Երբոր
Փղշտացիք բռնեցին նորան
Գէթումը։

Ով Աստուած, ողորմիր ինձ. ո- 1
րովհետև մարդն ինձ ուզում է
կուլ տալ. ամեն օր պատերազ-
մելով նեղացնում է ինձ։
Թշնամիքս ամեն օր կամենում 2
են կուլ տալ ինձ. որովհետև շատ
են ինձ հետ ամբարտաւանութիւ-
նով կռիւ անողները։
Ինչ օր որ վախենամ՝ քեզ կը 3
յուսամ։

*ա. Թագ. իա. 10, 11։

4 Աստուծով կ'գովեմ նորա խօս-
քը. Աստուծուն եմ յուսացած՝
չեմ վախենալ. ի՞նչ կ'անէ ինձ
մարմինը։
5 Ամեն օր ծռում են խօսքերս.
նորանց ինձ վերայ արած բոլոր
խորհուրդները դէպի չարութիւնն
են։
6 Նորանք հաւաքվում են և
թաք կենում. իմ ոտների հետ-
քերին մտիկ են տալիս. որովհե-
տև *սպասում են իմ անձին։
7 Մի՞թէ անօրէնութիւնով փըր-
կութիւն կ'լինի նորանց. բարկու-
թիւնով վայր գցիր ժողովուրդ-
ները, ով Աստուած։
8 Իմ թափառիլը դու համա-
րում ես. իմ արտասուքները
դիր քո տկի մէջ. ահա նորանք
քո գրքումն են։
9 Այն ժամանակ իմ թշնամիքը
ետ կ'դառնան քեզ կանչած օրս.
այս ես գիտեմ որ Աստուած ինձ
հետ է։
10 Աստուծով կ'գովեմ նորա խօս-
քը. Տէրով կ'գովեմ նորա խօսքը։
11 Ես Աստուծուն եմ յուսացած՝
չեմ վախենալ. ի՞նչ կ'անէ ինձ
մարդը։
12 Ով Աստուած, քո ուխտերն
ինձ վերայ են. գոհութեան պա-
տարագներ կ'մատուցանեմ քեզ։
13 Որովհետև դու իմ անձը փըր-
կեցիր մահիցը. այս, ոտներս՝ գայ-
թակղելուցը, որ Աստուծոյ ա-
ռաջին ման դամ կենդանեաց
լոյսի մէջ։

ՍԱՂ. ԾԷ

Երգողների գլխաւորին. Մի ա-
պականիր եղանակով. Դաւիթի
Երգ. †Երբոր նա Սաւուղի երե-
սիցը փախել՝ քարայրումն էր։

1 Ողորմիր ինձ, ով Աստուած, ո-
ղորմիր ինձ. որովհետև քեզ է
յուսացած իմ անձը. և ես քո
թևերի շուքին կ'յուսամ մինչև
որ չարիքն անցնին։
Ես Բարձրեալ Աստուծուն եմ 2
կանչում. այն Աստուծուն որ
ինձ բարի է անում։
Նա կ'ուղարկէ երկնքիցը և կը 3
փրկէ ինձ. նա ամօթ կ'անէ նո-
րան որ ուզում է ինձ կուլ տալ։
(Սէլա։) Աստուած ուղարկում է
իր ողորմութիւնն ու ճշմարտու-
թիւնը։
Իմ անձը առիւծների մէջ է. 4
ես ընկած եմ բոց փչող մարդ-
կանց որդիների մէջ. նորանց ա-
տամները նիզակ ու նետ են, և
նորանց լեզուները՝ սրած թուր։
Բարձրացիր, ով Աստուած, եր- 5
կընքի վերայ. քո փառքն ամեն
երկրի վերայ լինի։
Որոգայթ պատրաստեցին իմ 6
քայլերի համար. իմ անձը խո-
նարհուած էր. փոս փորեցին իմ
առաջին, և իրանք ընկան մէջը։
(Սէլա։)
Սիրտս պատրաստ է, ով Աստ- 7
ուած, սիրտս պատրաստ է. եր-
գով կ'օրհնեմ և սաղմոս կ'ա-
սեմ։
Զարթնիր, իմ փառք. զարթ- 8
նիր, սաղմոսարան և քնար. ես
կ'զարթնանամ կանուխ առաւօ-
տանց։
Կ'գոհանամ քեզանից, Տէր, 9
ժողովուրդների մէջ. սաղմոս կ'ա-
սեմ քեզ ազգերի մէջ։
Որովհետև քո ողորմութիւնը 10
մեծ է մինչև երկինքը, և քո ճշ-
մարտութիւնը՝ մինչև ամպերը։
Բարձրացիր, ով Աստուած, 11
երկնքի վերայ. քո փառքը ամեն
երկրի վերայ։

ՍԱՂ. ԾԸ

Երգողների գլխաւորին. ‡Մի ա-
պականիր եղանակով. Դաւիթի
Երգ։

Իրաւի՞ մունջ արդարութիւն 1
կ'խօսիք, ուղիղ դատաստան ա-
րէք, ով մարդկանց որդիք։

*Այսինքն՝ կամենում են իմ ան-
ձը սպանել։
†ա Թագ. իբ. 1։ իգ. 3։ Սաղ.
ճխբ. վերնագիրը։

‡Սաղ. ծէ. վերնագիրը։

2 Ընդհակառակը՝ սրտով անօրէնութիւն էք գործում. ձեր ձեռքի անիրաւութիւնը կշռով բաժանում էք երկրի մէջ։
3 Ամբարիշտները մօր արգանդից ծուռ են. որովայնից մոլորուած են սուտ խօսողները։
4 Նրանց թոյնը նման է օձի թոյնի. ինչպէս խուլ իժ, որ իր ականջը խփում է,
5 Որ չլսէ կախարդների ձայնին՝ այն թովչին որ վարպետութեամբ թովում է։
6 Ով Աստուած, փշրիր նրանց առաջները իրանց բերանում. և առիւծների մեծ ակռաները ջարդիր, ով Տէր։
7 Հալուին նորանք ինչպէս ջուր որ անդադար գնում է, և երբոր նետ գցեն՝ թող լինին իբր բեթացած։
8 Խխունջի պէս լինին որ հալւում է գնալիս. կնոջ վիժածի պէս՝ որ արեւը չտեսնան։
9 Գուցե ձեր կաթսաները չոճ փուշի տաքութիւնը չիմացած՝ թէ հում թէ սիրուածը, մրրկիցը տարուին։
10 Արդարն ուրախ կ'լինի երբոր վրէժխնդրութիւնը կ'տեսնէ. իր ոտները կ'լուանայ ամբարշտի արիւնով։
11 Եւ մարդիկ կ'ասեն. Իրաւի որ *վարձք կայ արդարի համար, իրաւի որ կայ Աստուած՝ դատաւոր երկրի վերայ։

ՍԱՂ. ԾԹ

Երգողների գլխաւորին. Մի ապականիր Եղե՛լէ. Դաւիթի Երգ։ †Երբոր Սաւուղն ուղարկեց և նորա տունը պահել սրեւաւ որ սպանէ նորան։

1 Փրկիր ինձ իմ թշնամիներիցը, իմ Աստուած. ապրեցրու ինձ նորանցից որ վեր կացան ինձ վերայ։
2 Փրկիր ինձ անօրէնութիւն գործողներիցը, և արիւնահեղ մարդկանցիցը ապրեցրու ինձ։
3 Որովհետև սոցա թաղուն սպասում են՝ որ իմ անձը բռնեն. զօրեղները ժողովւում են ինձ վերայ առանց իմ անօրէնութեան և առանց իմ մեղքի, ով Տէր։
4 Առանց իմ անօրէնութեան վազում են և պատրաստւում. զարթնիր՝ որ առաջս գաս, և տես։
5 Իակ դուս, ով Տէր՝ Զօրաց Աստուած՝ Իսրայէլի Աստուածը, վեր կաց որ ամեն հեթանոսներին սյցելես. մի ողորմիր ոչ մի անօրէնութիւն գործողի։ (Սէլա)
6 Իրիկունը եւս են դառնում և ոռնում ինչպէս շուն, և քաղաքում շուռ են գալիս։
7 Ահա վայրաշաչ խօսում են իրանց բերանով. սրեր իւ իրանց շրթունքներում՝ որովհետև — — —

ՍԱՂ. ԿԲ

Երգողների գլխաւորին. *Իդիթունի վերայ. Դաւիթի Սաղմոս.

1 Իրաւի որ իմ անձը լուռ ու
մունջ սպասում է Աստուծուն,
նորանից է իմ փրկութիւնը։
2 Իրաւի որ նա է իմ վէմը և իմ
փրկութիւնը, իմ ապաւէնը որ
խիստ չ'շարժուիմ։
3 Մինչև ե՞րբ էք յարձակվում
մարդի վերայ, որ ամենքդ սպա-
նէք նորան, ինչպէս ծռուած պատ
և խախուտ պարիսպ։
4 Իրաւի խորհուրդ են անում՝
որ իր բարձրութիւնիցը վայր դը-
ցեն նորան. հաւանում են ստու-
թեան. իրանց բերանովն օրհնում
են, բայց իրանց սրտումն անի-
ծում։ (Սէլա։)
5 Ով իմ անձը, մինակ լուռ մը-
տիկ տուր Աստուծուն. որովհե-
տև նորանից է իմ յոյսը։
6 Իրաւի որ նա է իմ վէմը, իմ
փրկութիւնը, իմ ապաւէնը. ես
չեմ շարժուիլ։
7 Աստուծոյ մօտ է իմ փրկու-
թիւնը և փառքը. իմ զօրութեան
վէմն ու իմ ապաւէնը Աստու-
ծոյ մօտ է։
8 Յուսացէք նորան ամեն ժամա-
նակ, ով ժողովուրդներ, թափեցէք
ձեր սրտերը նորա առաջին. Աստ-
ուած մեր ապաւէնն է։ (Սէլա։)
9 Իրաւի որ հասարակ մարդիկն
ունայն են և մեծամեծ մարդի-
կը՝ սուտ. երբոր կշռի մէջ դըր-
ուին՝ նորանք ամեն ունայնութիւ-
նից աւելի թեթև են։
10 Մի յուսաք հարստահարու-
թեան, և զուր յոյս մի դնէք
յափշտակութեան վերայ. եթէ
հարստութիւնը շատանայ՝ սիրտ
մի դնէք նորա վերայ։
11 Աստուած մի անգամ խօսեց.
ես երկու անգամ լսեցի այս. թէ
զօրութիւնն Աստուծուն է։
12 Եւ քոնն է ողորմութիւնը, Տէր,
որովհետև դու մարդին հատու-
ցում կ'տաս նորա գործերի պէս։

*ա Մն. իե. 1, 3.

ՍԱՂ. ԿԳ

Դաւիթի Սաղմոս. †երբոր նա
Յուդայի անապատումն էր։

Ով Աստուած, դու ես իմ Աստ- 1
ուածը. առաւօտանց քեզ եմ
ման գալիս. հոգիս ծարաւ է քեզ
համար. մարմինս քեզ է ցանկա-
նում ցամաք և ծարաւ երկրում,
ուր որ ջուր չ'կայ։
Այնպէս սրբութեան տեղումը 2
նայեցի քեզ, որ քո զօրութիւնն
ու փառքը տեսնեմ։
Որովհետև քո ողորմութիւնը 3
լաւ է քան թէ կեանքը. իմ շըր-
թունքներս պիտի գովեն քեզ։
Այսպէս կ'օրհնեմ քեզ իմ 4
կեանքումը. քո անունովը կը
բարձրացնեմ իմ ձեռքերը։
Իմ կեանքը կ'կշտանայ ինչ- 5
պէս ճարպով և պարարտութիւ-
նով, և իմ բերանը կ'օրհնէ քեզ
ուրախ շրթունքներով։
Երբոր քեզ յիշում եմ ան- 6
կողնումս գիշերուան պահերու-
մը քեզ վերայ եմ մտածում։
Որովհետև դու ինձ օգնու- 7
թիւն եղար. և ես քո թևերի
հովանաւորութեան տակ կ'ցընծ-
ամ։
Իմ անձը պինդ քո ետևիցն է 8
ընկնում. քո աջը հաստատ պա-
հում է ինձ։
Բայց նորանք իմ անձի կորուս- 9
տըն են ուզում. վայր կ'ընկնեն
երկրի խորերի մէջ.
Սրի ձեռը կ'մատնուին. չա- 10
գալների բաժին կ'լինին։
Բայց թագաւորն Աստուծով 11
կ'ուրախանայ. կ'պարծենան բո-
լոր նորանով երդում անողները,
որովհետև կ'խփուի սուտ խօսող-
ների բերանը։

ՍԱՂ. ԿԴ

Երգողների գլխաւորին. Դաւի-
թի Սաղմոս։

Ով Աստուած, լսիր իմ ձայնը՝ 1

†ա Թագ. իբ. 5. իգ. 14–16.

ես գանգատելիս. պահիր իմ կեան-
քը թշնամիի ահիցը։
2 Ծածկիր ինձ չարերի ժողովքի-
ցը՝ անօրէնութիւն գործողների
ամբոխիցը.
3 Որ իրանց լեզուները սրում են
թուրի նման, և պատրաստում
են իրանց նետը՝ այսինքն դառն
խօսքը.
4 Որ թագուն դցեն անմեղի վե-
րայ. յանկարծակի դցում են և
չեն վախենում։
5 Չար բանը զօրաւոր են անում
իրանց համար. խորհրդակցում
են որ թագուն որոգայթներ դը-
նեն, և ասում են. Ո՞վ կ'տես-
նէ նորանց։
6 Նորանք անօրէնութիւններ են
խորհում՝ ասում՝ կատարեցինք.
հնարը հնարուած է. մարդիս
ներսը և սիրտը խոր է։
7 Բայց Աստուած նետ կ'դցէ նո-
րանց վերայ յանկարծ, խոց կ'լի-
նի նորանց։
8 Եւ նորանց լեզուն վեր կ'դցէ
իրանց՝ մէկը միւսին վերայ. ա-
մենքը՝ որ կ'տեսնեն նորանց՝ կը
փախչեն։
9 Եւ ամեն մարդիկ կ'վախենան
և Աստուծոյ գործքերը կ'պատ-
մեն, և նորա արածը միտք կ'առ-
նեն։
10 Արդարն ուրախ կ'լինի Տէրով
և նորան կ'յուսայ, և կ'պարծե-
նան ամեն սրտով ուղիղները։

ՍԱՂ. ԿԵ

Երգողների գլխաւորին. Դաւիթի
Սաղմոս. երգ։

1 Ով Աստուած, քեզ սպասում
է հանգստութիւնով օրհնաբա-
նութիւն Սիօնի մէջ. և քեզ
ուխտ են հատուցանում։
2 Դու լսում ես աղօթք. ամեն
մարմին քեզ մօտ է գալիս։
3 Անօրէնութիւնները զօրացան
ինձ վերայ, մեր ամբարշտութիւն-
ները դու քաւում ես։
4 Երանի նորան՝ որ դու ընտրում
ես և ընդունում, որ քո սրա-
հումը բնակուի. թող կշտանանք
քո տան՝ սուրբ տաճարի բարիք-
ներովը։
Զարհուրելի կերպով՝ արդարու- 5
թիւնով կ'պատասխանես մեզ,
ով մեր փրկութեան Աստուած,
որ երկրի ամեն ծայրերի և ծովի
հեռաւոր տեղերում բնակողների
յոյսն ես։
Որ սարերը հաստատում է իր 6
կարողութիւնովը, և զօրութիւն
է հագած։
Որ ծովի ձայնը ցածացնում է՝ 7
նորա ալիքների ձայնը և ազգերի
խռովութիւնը։
Որ քո նշաններիցը վախենան 8
երկրի ծայրերումը բնակողները,
որ ուրախացնում ես առաւօտեան
և իրիկուան ելքը։
Դու տես ես գալիս երկրին և 9
խմեցնում ես նորան. շատ հարըս-
տացնում ես նորան. Աստուծոյ
գետը լիքն է ջրով. ցորեն ես պատ-
րաստում նորանց համար. որով-
հետև այսպէս պատրաստեցիր նո-
րան։
Դու խմեցնում ես նորա ակօս- 10
ներին. ցածացնում ես նորա վա-
րածը. անձրևով կակղացնում ես
նորան և օրհնում ես նորա բու-
սածը։
Դու պսակում ես տարին քո 11
բարիքներովը, և քո հետքերը
պարարտութիւն են կաթեցնում։
Պարարտ են անապատի դաշ- 12
տերը. և բլուրները ցնծութիւն
են հագած։
Արօտները հագուած են ոչխար- 13
ներով, և հովիտները ծածկուած
են ցորենով. աղաղակում են ցընծ-
ութիւնով և երգում։

ՍԱՂ. ԿԶ

Երգողների գլխաւորին. Սաղմոս.
երգ։

Ցնծութիւնով աղաղակեցէք դէ- 1
պի Աստուած, ով ամեն երկիր-
ներ։
Սաղմոս ասեցէք նորա անունի 2
փառքին. փառաւոր արէք նորա
գովութիւնը։
Ասեցէք Աստուծուն. Ի՞նչ զար- 3

մանալի են քո գործքերը. քո մեծ
զօրութեան համար քո թշնա-
միները կ'շողոքորթեն քեզ։
4 Ամեն երկիր քեզ երկրպագու-
թիւն պիտի տայ և սաղմոս ա-
սէ քեզ. սաղմոս ասէ քո անու-
նին։ (Սէլա։)
5 Եկէք և տեսէք Աստուծոյ գոր-
ծերը. նա ահաւոր է իր գործքե-
րովը մարդկանց որդկանց վերայ։
6 Ծովը ցամաքի փոխեց. գետի
միջովն անց կացան ոտով. այն-
տեղ մենք ուրախ եղանք նորա-
նով։
7 Նա տիրապետում է իր ոյժովը
յաւիտեան, նորա աչքերը նա-
յում են հեթանոսների վերայ.
ապստամբուածները թող չ'բարձ-
րանան։ (Սէլա։)
8 Ով ժողովուրդներ, օրհնեցէք
մեր Աստուծուն. և լսել տուէք
նորա գովութեան ձայնը։
9 Նա մեր անձինքը պահում է
կեանքի մէջ. և թող չէ տալիս
որ մեր ոտները սասանին։
10 Որովհետև դու փորձեցիր մեզ,
ով Աստուած. քննեցիր մեզ ինչ-
պէս որ արծաթը քննվում է։
11 Դու մտցրիր մեզ որոգայթի
մէջ. ծանր բեռ դրիր մեր մէջ-
քի վերայ։
12 Մարդիկ հեծցրիր մեր գլխի վե-
րայ. կրակի և ջրի մէջ մտանք.
և դու հանեցիր մեզ առատու-
թեան տեղ։
13 Ես ողջակէզներով քո տունը
կ'մտնեմ. կ'հատուցանեմ քեզ
իմ ուխտերը,
14 Որ իմ շրթունքները խոստա-
ցան, և իմ բերանը խօսեց իմ
նեղութեան ժամանակ։
15 Պարարտ ողջակէզներ կ'մա-
տուցանեմ քեզ խոյերի զոհի
բուրմունքով. պատարագ կ'բե-
րեմ արջառներ նոխազների հետ։
(Սէլա։)
16 Եկէք լսեցէք, ամենքդ՝ որ
Աստուածանից վախենում էք, և
պատմեմ ձեզ ինչ որ արաւ նա
իմ անձի համար։
17 Ես կանչեցի դէպի նա իմ բե-
րանովը և փառաբանութիւն կար
իմ լեզուի տակ։

Եթէ ես անօրէնութիւն տես- 18
նէի իմ սրտումը, Տէրը չէր լսիլ
ինձ։
Սակայն Աստուած լսեց, և իմ 19
աղօթքի ձայնին մտիկ արաւ։
Օրհնեալ է Աստուած, որ իմ 20
աղօթքը դէն չէ գցում. և իր ո-
ղորմութիւնը ինձանից չէ դարձը-
նում։

ՍԱՂ. ԿԷ

Երգողների գլխաւորին. Նկինօ-
թով. Սաղմոս. երգ։

Աստուած ողորմէ մեզ և օրհ- 1
նէ մեզ. նա փայլեցնէ իր երեսը
մեզ վերայ. (Սէլա։)
Որ քո ճանապարհը ճանաչուի 2
երկրումս, և քո փրկութիւնը՝ ա-
մեն ազգերի մէջ։
Թող ժողովուրդները գոհանան 3
քեզանից, ով Աստուած. թող
ամեն ժողովուրդները գոհանան
քեզանից։
Թող ժողովուրդներն ուրախա- 4
նան և ցնծան. որովհետև դու
ժողովուրդներին դատում ես ուղ-
ղութիւնով, և ազգերին առաջ-
նորդում ես երկրի վերայ։ (Սէ-
լա։)
Թող ժողովուրդները գովեն 5
քեզ, ով Աստուած. թող ա-
մեն ժողովուրդները գովեն քեզ։
Երկիրն իր պտուղը տուաւ. 6
թող օրհնէ մեզ Աստուած՝ մեր
Աստուածը։
Թող օրհնէ մեզ Աստուած, և 7
նորանից վախենան երկրի ամեն
ծայրերը։

ՍԱՂ. ԿԸ

Երգողների գլխաւորին. Դաւի-
թի Սաղմոս. երգ։

Թող Աստուած վեր կենայ. նո- 1
րա թշնամիները ցրուին, և նորա
երեսիցը փախչեն նորան ատող-
ները։
Ինչպէս որ ծուխը փչանում է՝ 2
փչացրու նորանց. ինչպէս որ մոմը
հալվում է կրակի առաջին, թող

ամբարիշտները կորչեն Աստուծոյ
երեսիցը։
3 Բայց արդարները պիտի ուրա-
խանան և ցնծան Աստուծոյ ա-
ռաջին, և զուարճանան ուրախու-
թիւնով։
4 Երգեցէք Աստուծուն. սաղմոս
ասեցէք նորա անունին. ճանա-
պարհ պատրաստեցէք անապատի
միջովը հեծած եկողին. Եահ է
նորա անունը. և ցնծացէք նորա
առաջին։
5 Որբերի հայր և որբևայրիների
դատաւոր է Աստուած իր սրբ-
բութեան տեղումը։
6 Աստուած մինակներին բնակե-
ցնում է տան մէջ, գերիներին
հանում է յաջողութեան մէջ.
բայց ապստամբուածները բնակ-
վում են չոր տեղում։
7 Ով Աստուած, դու քո ժողո-
վրդի առաջից գնալիս, անապա-
տի մէջ անց կենալիս, (Սէլա։)
8 Երկիրը դողաց և երկինքը շաղ
թափեց Աստուծոյ երեսիցը. այն
Սինա սարն էլ դողաց Աստուծոյ՝
Իսրայէլի Աստուծոյ երեսիցը։
9 Առատութիւնների անձրև տե-
ղացիր, ով Աստուած. քո ժա-
ռանգութիւնը՝ որ յոգնած էր՝
դու զօրացրիր։
10 Քո ժողովուրդը բնակուեց այն-
տեղ. քո քաղցրութիւնովը կե-
րակուր պատրաստեցիր խեղճի հա-
մար, ով Աստուած։
11 Տէրը տալիս է խօսքը. աւետա-
րանողները մեծ բազմութիւն են։
12 Զօրութիւնների թագաւորնե-
րը կ'փախչոտեն, բայց տան մէջ
բնակող կինը կ'բաժանէ աւարը։
13 Երբոր մակաղների մէջտեղերու-
մը հանգստանում էք, աղաւնիի
թևերը փայլում են արծաթով
պատած, և նորանց փետուրնե-
րը՝ դեղին ոսկիով։
14 Ամենակարողը թագաւորներին
այն երկրումը ցրուելու ժամանակ,
փայլուն եղաւ ինչպէս ձիւն Սաղ-
մոնումը։
15 Ով Աստուծոյ սար, Բասան,
ով բարձր և պարարտ սար.
16 Ով բարձր սարեր, ի՞նչու էք
նախանձով նայում. սա այն սարն է

որ Աստուած նորան հաւանեց նո-
րա վերայ բնակուելու համար.
Տէրը յաւիտեան կ'բնակուի նո-
րանում։
Աստուծոյ կառքերը երկու բիւր 17
են՝ հազարապատիկ. Տէրը նորան-
ցում է՝ Սինայումը՝ սրբութեան
տեղումը։
Վեր ելար բարձր տեղերը, գե- 18
րի արիր գերութիւնը. պարգևներ
առիր մարդկանց համար և ա-
պըստամբուածների համար էլ,
որ Աստուած այնտեղ բնակուի։
Օրհնեալ է Տէրը օրէ ցօր. եթէ 19
բեռ դնելու լինին մեզ վերայ,
Աստուած է մեր փրկութիւնը։
(Սէլա։)
Աստուած մեզ համար փրկու- 20
թեան Աստուած է, և Տէր Եհո-
վան ազատում է մահից։
Սակայն Աստուած կ'փշրէ իր 21
թշնամիների գլուխը և նորանց
մազոտ գագաթը որ գնում են
իրանց անօրէնութիւնների մէջ։
Տէրն ասեց. Բասանիցը ետ կը 22
դարձնեմ նորանց՝ ծովի անդուն-
դիցը ետ կ'դարձնեմ։
Որ քո ոտը արիւնով թրջես և 23
քո շների լեզուն թշնամիներիցն
իր բաժինը առնէ։
Տեսան քո գնացքը, ով Աստ- 24
ուած. իմ Աստուծոյ՝ իմ թա-
գաւորի գնացքը սրբութեան մէջ։
Առաջ երգեցողները գնացին, 25
յետոյ նուագածուները՝ թմբուկ
ածող կոյս աղջիկների մէջտեղը։
Ժողովուրդների մէջ օրհնեցէք 26
Տէր Աստուծուն, դուք որ Իս-
րայէլի աղբիւրիցն էք։
Այնտեղ է փոքր Բենիամինը՝ 27
նորանց տիրապետողը. Յուդայի
իշխաններն՝ իրանց խումբովը. Զա-
բուղօնի իշխաններն, Նեփթաղի-
մի իշխանները։
Քո Աստուածը հաստատեց քո 28
զօրութիւնը. զօրացրու նորան,
ով Աստուած, որ մեզ համար
արիր։
Քո տաճարի համար Երուսա- 29
ղէմումը թագաւորներն ընծայ կը
բերեն քեզ։
Սաստիր եղէգի գազանին, ար- 30
ջառների ժողովքի՝ ազգերի ե-

ընկնեն արծաթի կտորներովը. ցրուիր այն ազգերը որ կռիւ են կամենում։
31 Իշխաններ կ'դան Եգիպտոսիցը. Եթոպացիքն իրանց ձեռքերը կը մեկնեն դէպի Աստուած։
32 Ով երկրի թագաւորութիւններ, երգեցէք Աստուծուն, սաղմոս ասեցէք Տիրոջը. (Սելա։)
33 Նորան՝ որ յաւիտենից նստում է երկինքների երկնքի վերայ. ահա իր ձայնովը զօրաւոր ձայն կը տայ։
34 Զօրութիւն տուէք Աստուծուն. նորա մեծ փառաւորութիւնը Իսրայէլի վերայ, և նորա զօրութիւնը ամպերի մէջ է։
35 Զարմանալի ես քո սրբութեան տեղումը, ով Աստուած՝ Իսրայէլի Աստուածը. նա զօրութիւն և կարողութիւն է տալիս ժողովրդին. օրհնեալ է Աստուած։

ՍԱՂ. ԿԹ

Երգողների գլխաւորին. *Շօշանիմի վերայ. Դաւիթի Սաղմոս։

1 Ապրեցրու ինձ, ով Աստուած, որովհետև ջուրերն մինչև իմ անձը հասան։
2 Խրուեցայ ցեխի մէջ որ յատակ չ'ունի. ջրերի խոր տեղը մտայ, և պտոյտները ինձ կուլ են տալիս։
3 Ցոգնած եմ իմ աղաղակելովը. կոկորդս ցամաքեց, աչքերս նուաղեցան՝ Աստուծուն մտիկ տալով։
4 Իմ գլխի մազերիցը շատացան ինձ զուր տեղը ատողները. զօրաւոր են ինձ կորցնել ուզող թշնամիներս. ինչ որ չեմ յափշտակել՝ նա պէտք է վճարեմ։
5 Ով Աստուած, դու գիտես իմ յիմարութիւնը. և իմ յանցանքները քեզանից ծածկուած չեն։
6 Թող ինձ համար չ'ամաչեն նորանք՝ որ քեզ սպասում են, ով Տէր՝ Զօրաց Տէր. Թող ինձ համար ամօթ չ'լինին քեզ խնդրողները, ով Իսրայէլի Աստուած։
7 Որովհետև ես քեզ համար համբերում եմ նախատինքի. ամօթը ծածկում է իմ երեսը։
8 Օտար եղայ իմ եղբայրներին և անճանաչ՝ իմ մօր որդկանցը։
9 Որովհետև քո տան նախանձը կերաւ ինձ, և քեզ նախատինք տուողների նախատինքներն ինձ վերայ ընկան։
10 Լաց եմ լինում, իմ անձը ծոմ է պահում. և նախատինք է լինում ինձ։
11 Ես իմ հանդերձը քուրձ շինեցի, առակ եղայ նորանց։
12 Դռներումը նստողները զրոյց են անում ինձ վերայ. և արբեցնող խմիչքներ խմողների խաղն եմ դառել։
13 Բայց ես աղօթք եմ անում քեզ, ով Տէր, ընդունելի ժամանակում. ով Աստուած, քո առատ ողորմութեան համար լսիր ինձ քո փրկութեան ճշմարտութիւնովը։
14 Ապրեցրու ինձ ցեխիցը որ չը թաղուիմ. Թող փրկուիմ ինձ ատողներիցը և խոր ջրերիցը։
15 Թող ջրերի պտոյտները չ'յափշտակեն ինձ, և անդունդը կուլ չ'տայ ինձ. և հորն իր բերանը չը խփէ ինձ վերայ։
16 Լսիր ինձ, Տէր, որովհետև լաւ է քո քաղցրութիւնը. քո շատ ողորմութեան պէս նայիր ինձ վերայ։
17 Եւ քո երեսը ետ մի դարձնիր քո ծառայիցը. որովհետև նեղութեան մէջ եմ ես. շուտով լսիր ինձ։
18 Մօտեցիր իմ անձին, փրկիր նորան. իմ թշնամիների համար ապրեցրու ինձ։
19 Դու գիտես իմ նախատինքը և իմ ամօթը և իմ խայտառակութիւնը. իմ ամեն նեղացնողներն քո առաջին են։
20 Նախատինքը կոտրեց իմ սիրտը՝ և ես հիւանդ եղայ. ցաւակցութեան սպասեցի՝ բայց չ'կար. մխիթարիչների՝ բայց չեմ գտնում։

*Սաղ. խե. վերնագիրը։

21 Եւ կերակուրիս մէջ թոյն են դնում. և ծարաւութեանս մէջ քացախ են խմեցնում ինձ։
22 Նորանց սեղանը իրանց առաջին՝ որոգայթ, և յաջողութեան տեղ վարմ դառնայ.
23 Նորանց աչքերը խաւարուին որ չ'տեսնեն. և նորանց մէջքը միշտ դողացրու։
24 Թափիր նորանց վերայ քո զարհուրանքը, և քո բարկութեան կրակը հասնէ նորանց վերայ։
25 Նորանց բնակարանն աւերակ լինի, և նորանց տներումը բնակող չ'լինի։
26 Որովհետև հալածում են նորան որ դու զարկեցիր. և քո խոցուածների ցաւերի համար պատմութիւն են անում։
27 Մեղք դիր նորանց մեղքի վերայ, որ քո արդարութեանը չը հասնեն։
28 *Կենաց գրքիցը ջնջուին նորանք, և արդարների հետ չը գրուին։
29 Բայց ես աղքատ և ցաւով լիքն եմ. ով Աստուած, Թող քո փրկութիւնը պաշտպանէ ինձ։
30 Ես կ'գովեմ Աստուծոյ անունը երգով. և կ'փառաբանեմ նորան գովաբանութիւնով,
31 Եւ այս աւելի հաճոյ կ'լինի Տիրոջը քան պարարտ եղը՝ եղջիւրաւորը և կճղակաւորը։
32 Խեղճերը կ'տեսնեն՝ կ'ուրախանան. ով Աստուծուն խնդրողներ, ձեր սիրտը կենդանանայ։
33 Որովհետև Տէրը լսում է խեղճերին, և իր գերիներին չէ անարգում։
34 Թող գովեն նորան երկինքն ու երկիրը. ծովերը և նորանց մէջ բոլոր զեռացողները։
35 Որովհետև Տէրը կ'փրկէ Սիօնը և Յուդայի քաղաքները կ'շինէ. և կ'բնակուեն այնտեղ և կ'ժառանգեն նորան։
36 Եւ ծառաների զաւակները կը վայելեն նորան, և նորա անունը սիրողները կ'բնակուեն նորանում։

*Կամ՝ կենդանեաց

ՍԱՂ. Հ

Երգողների գլխաւորին. Դաւիթի (Սաղմոս) †յիշատակի համար։

1 Ով Աստուած, շուտ արա որ ինձ փրկես, Տէր, որ ինձ օգնես։
2 Թող ամաչեն և ամօթ լինին իմ անձը խնդրողները. Թող ետ դառնան և ամօթ լինին ինձ չար ուզողները։
3 Թող իրանց ամօթովը ետ դառնան նորանք, որ ինձ ասում են՝ Վահ վահ։
4 Թող ցնծան և ուրախանան քեզանով բոլոր քեզ խնդրողները, և քո փրկութիւնը սիրողները միշտ ասեն. Աստուած մեծանայ։
5 Բայց ես աղքատ եմ և տնանկ, ով Աստուած, շուտով հասիր ինձ մօտ. դու ես իմ օգնականն ու փրկիչը, Տէր, մի ուշանար։

ՍԱՂ. ՀԱ

1 Ով Տէր, ես քեզ եմ յուսացած՝ Թող չ'ամաչեմ յաւիտեան։
2 Քո արդարութիւնովն ապրեցրու և ազատիր ինձ. խոնարհեցրու քո ականջները ինձ մօտ՝ և փրկիր ինձ։
3 Ապաւինութեան վէմ եղիր ինձ համար, որ միշտ քեզ մօտ գամ. դու հրամայեցիր որ փրկես ինձ, որովհետև իմ վէմը և իմ բերդը դու ես։
4 Աստուած իմ, փրկիր ինձ ամբարշտի ձեռքիցը՝ անօրէն և բռնաւոր մարդի ձեռքիցը։
5 Որովհետև դու ես իմ ապաւէնը, ով Տէր Եհովայ, իմ յոյսը իմ մանկութիւնիցը դու ես։
6 Ես քեզ վերայ հաստատուեցայ արգանդիցը. դու ես իմ պահապանն իմ մօր փորիցը. իմ օրհնութիւնը միշտ քեզ համար է։
7 Ես հրաշքի պէս եղայ շատերի համար. բայց դու ես իմ զօրաւոր ապաւէնը։
8 Թող իմ բերանը լցուի քո գո-

†Սաղ. լը. վերնագիրը։

վասանքովը. ամեն օր քո փառա-
բանութիւնովը։
9 Իմ ծերութեան ժամանակումը
դէն մի գցիր ինձ. զօրութիւնս
պակասուելիս մի թողիր ինձ։
10 Որովհետև թշնամիներս խօ-
սում են ինձ դէմ. և իմ անձին
սպասողները իրար հետ խորհուրդ
են անում.
11 Եւ ասում. Աստուած թողեց
նորան, հալածեցէք և բռնեցէք
նորան. որովհետև ոչ ով չ'կայ,
որ փրկէ նորան։
12 Ով Աստուած, մի հեռանար
ինձանից. ով Աստուածս, շու-
տով օգնիր ինձ։
13 Թող ամաչեն ու կորչեն իմ ան-
ձի հակառակողները. թող նա-
խատինքով և ամօթով ծածկուին
ինձ չար ուզողները։
14 Բայց ես միշտ կ'սպասեմ, և
քո ամեն փառաբանութիւնների
վերայ [illegible] կ'աւելա-
ցնեմ։
15 Թող իմ բերանը պատմէ քո
արդարութիւնը, ամեն օր քո
փրկութիւնը, որովհետև ես չը
գիտեմ նորանց համրանքը։
16 Ես կ'գամ Տէր Աստուծոյ զօ-
րութիւնովը. ես կ'յիշեմ մինակ
քո արդարութիւնը։
17 Ով Աստուած, դու սովորեցը-
րիր ինձ իմ մանկութիւնիցը, և
մինչև հիմա պատմում եմ քո հը-
րաշքները։
18 Եւ հիմա մինչև իմ ծերութիւ-
նը և ալևորութիւնը մի թողիր
ինձ, ով Աստուած. մինչև որ քո
բազուկը պատմեմ յաջորդ սե-
րունդին և քո զօրութիւնը բո-
լոր եկողներին։
19 Եւ քո արդարութիւնը, ով
Աստուած, մինչև բարձրն է որ
դու մեծամեծ բաներ արիր. ով
Աստուած, ո՞վ է քեզ նման։
20 Դու որ նեղութիւններ և չար-
չարանք ցոյց տուիր ինձ. դարձ-
եալ կենդանի ես անում ինձ՝ և
երկրի անդունդիցը դարձեալ հա-
նում ես ինձ։
21 Դու շատացնում ես իմ մեծու-
թիւնը, և դարձեալ մխիթա-
րում ես ինձ։

22 Ես կ'գոհանամ քեզանից, ով
Աստուած, նուագարանով քո
ճշմարտութեանը համար. սաղ-
մոս կ'ասեմ քեզ քնարով, ով
Իսրայէլի Սուրբդ։
23 Իմ շրթունքները կ'ցնծան՝ երբ-
որ սաղմոս ասեմ քեզ. և իմ
անձը՝ որ դու փրկեցիր։
24 Եւ իմ լեզուն էլ ամեն օր կը
խօսի քո արդարութեանը հա-
մար, որովհետև ամաչեցին և ա-
մօթ եղան ինձ չար ուզողները։

ՍԱՂ. ՀԲ

*Սողոմոնի (Սաղմոս)։

1 Ով Աստուած, քո իրաւունք-
ները թագաւորին տուր, և քո
արդարութիւնը թագաւորի որ-
դիին։
2 Նա քո ժողովրդին դատէ ար-
դարութիւնով. և քո խեղճերին
իրաւունքով։
3 Սարերը խաղաղութիւն բու-
սացնեն ժողովրդի համար և բը-
լուրները՝ արդարութիւնով լեց-
ուին։
4 Նա իրաւունք անէ ժողովրդի
աղքատներին. խեղճերի որդիքը
փրկէ և զրկողներին ջարդէ.
5 Վախենան քեզանից քանի որ
արեգակը կայ, և լուսնի առաջին՝
ազգից մինչև ազգ։
6 Վայր դայ ինչպէս անձրև հըն-
ձած խոտի վերայ. ինչպէս շաղ՝
որ ոռոգում է երկիրը։
7 Նորա օրերումը ծաղկի արդա-
րը. և շատ խաղաղութիւն՝ մին-
չև որ լուսին էլ չ'լինի։
8 Եւ նա տիրապետէ ծովիցը մին-
չև ծովը. և Գետիցը մինչև երկ-
րի ծայրերը։
9 Նորա առաջին խոնարհուին ա-
նապատում բնակողները, և նորա
թշնամիները փոշի լիզեն։
10 Թարսիսի և կղզիների թագա-
ւորներն ընծայ մատուցանեն. Շա-
բայի և Սաբայի թագաւորներն
պարգև բերեն։
11 Եւ ամեն թագաւորները եր-

*Սաղ. ճիէ. վերնագիրը։

կրպագութիւն տան նորան. ա-
մեն ազգերը ծառայեն նորան։
12 Որովհետև նա կ'փրկէ խեղճին
որ աղաղակում է, և աղքատին՝
որ օգնական չ'ունի։
13 Նա կ'խղճայ տկարին և խեղ-
ճին, և խեղճերի անձերը կ'ապ-
րեցնէ։
14 Նենգութիւնից և բռնութիւ-
նից կ'փրկէ նորանց անձերը. և
նորանց արիւնը պատուական կը
լինի նորա առաջին։
15 Եւ նա կ'ապրի և կ'տան նո-
րան Շաբայի ոսկիիցը. և աղօթք
կ'անեն նորա համար ամեն ժա-
մանակ. ամեն օր կ'օրհնեն նորան։
16 Յորենի առատութիւն կ'լինի
երկրի մէջ սարերի գլուխների
վերայ. նորա պտուղը կ'շարժուի
ինչպէս Լիբանանը. և քաղաքիցը
կ'ծաղկեն ինչպէս երկրի խոտը։
17 Նորա անունը կ'լինի յաւիտ-
եան. դեռ քանի որ արեգակը
կ'կենայ. նորա անունը կ'մնայ, և
կ'օրհնուին նորանով. ամեն հե-
թանոսները երանի կ'տան նորան։
18 Օրհնեալ է Տէր Աստուած՝ Իս-
րայէլի Աստուածը. որ մինակ
նա է հրաշք անող։
19 Եւ օրհնեալ է նորա փառաւոր
անունը յաւիտեան. և թող ամեն
երկիր լցուի նորա փառքովը. ա-
մէն և ամէն։
20 Վերջացան Յեսսէի որդի՝ Դա-
ւիթի աղօթքները։

ՍԱՂ. ՀԳ

*Ասափի Սաղմոս։

1 Իրաւի որ Աստուած բարի է Իս-
րայէլի համար՝ սրտով ուղիղնե-
րի համար։
2 Եւ քիչ էր մնացել որ ոտներս
ծռուէին, և բան չէր մնացել որ
դնացքս սահէր.
3 Որովհետև նախանձով լցուե-
ցայ հպարտների վերայ՝ ամբա-
րիշտների խաղաղութիւնը տես-
նելիս։
4 Որովհետև նորանք ցաւ չ'ու-

*Սաղ. ծ. վերնագիրը։

նին մինչև իրանց մահը. և նո-
րանց մարմինը փափուկ է։
5 Նորանք մարդի նեղութեան
մէջ չեն, և ուրիշ մարդկանց հետ
չեն տանջվում։
6 Սորա համար ամբարտաւանու-
թիւնը վզանոցի պէս պատում է
նորանց. և բռնութիւնը զարդա-
րանքի պէս ծածկում է նորանց։
7 Նորանց աչքերը պարարտու-
թիւնից դուրս են գալիս, իրանց
սրտի խորհուրդների պէս են կեն-
ցաղավարվում։
8 Ծիծաղում են և չարութիւ-
նով բռնութիւն խօսում. բարձ-
րից են խօսում։
9 Իրանց բերանը երկնքումն են
դնում. բայց նորանց լեզուն երկրի
մէջ է ման գալիս։
10 Սորա համար նորա ժողովուր-
դը այստեղ է դառնում, և լի-
ութիւնով ջուր են քամում ի-
րանց համար։
11 Եւ ասում են. Աստուած ինչ-
պէս գիտէ, և գիտութիւն կայ
Բարձրելոյն մօտ։
12 Ահա սորանք են ամբարիշտները
որ յաջողակ են աշխարհքումս, և
աւելացնում են հարստութիւնը։
13 Իրաւի որ իմ սիրտն զուր տե-
ղն եմ սրբում և իմ ձեռքերը
սրբութիւնով լուանում։
14 Եւ ամեն օր տանջվում եմ և
խրատվում՝ ամեն առաւօտ։
15 Եթէ ասէի թէ ես էլ նորանց
նման կ'խօսիմ. ահա քո որդկանց
ազգին նենգութիւն կ'անէի։
16 Եւ ես միտք արի որ իմանամ
այս. սակայն դժուար էր իմ աչ-
քերի առաջին.
17 Մինչև որ Աստուծոյ սրբու-
թեան տեղը մտայ և նորանց
վերջն իմացայ։
18 Իրաւի որ դու նորանց հեշտ սա-
հելու տեղ ես դնում, կործան-
ուելու մէջ ես գցում նորանց։
19 Ինչպէս յանկարծակի փչա-
նում՝ սատակվում՝ կորչում են
զարհուրանքով։
20 Ինչպէս երազն է զարթնելուց
յետոյ. այնպէս դու, Տէր, զարթ-
նելիս կ'անարգես նորանց պատ-
կերը։

21 Երբոր դառն ցաւեցաւ իմ սիրտը, և իմ երիկամունքներիցը խոցուեցայ.
22 Այն ժամանակ ես յիմար եղայ և չ'իմացայ. ինչպէս անասուն եղայ քո առաջին։
23 Բայց միշտ քեզ հետ եմ. դու իմ աջ ձեռքիցը բռնեցիր։
24 Դու առաջնորդում ես ինձ քո խորհրդովը, և վերջը փառքով կ'ընդունես ինձ։
25 Ո՞վ ունիմ ես երկնքումը, և քեզանից ջոկ բան չեմ ուզում երկրի վերայ։
26 Թէև մարմինս ու սիրտս մաշուին. Աստուած յաւիտեան իմ սրտի ոյժն ու իմ բաժինն է։
27 Որովհետև ահա քեզանից հեռացողները կ'կորչեն. դու կը սատկեցնես բոլոր քեզ դէմ շընացողին։
28 Բայց ինձ համար բարի է որ մօտենամ Աստուծուն. իմ յոյսը Տէր Աստուծոյ վերայ եմ դնում, որ քո ամեն գործքերը պատմեմ։

ՍԱՂ. ՀԴ

Ասափի Երգ։

1 Ով Աստուած, ի՞նչու ես մեզ բոլորովին մերժում. քո բարկութիւնը բորբոքվում է քո արօտի ոչխարների վերայ։
2 Յիշիր քո ժողովրդին որ ստացար սկզբիցը. փրկեցիր, որ քեզ ժառանգութեան վիճակ լինի, այս Սիօնի սարը որ նորանում բնակուած ես։
3 Բարձրացրու քո քայլերը մշտական աւերմունքների վերայ. թշնամին բոլորն ապականեց սրբութեան տեղումը։
4 Քո հակառակորդները գոռում են ժողովարանիդ մէջ. իրանց նշանները՝ նշանների տեղ են դընում։
5 Նա երևում է ինչպէս մի կացին բարձրացնող անտառի ծառերի վերայ։
6 Եւ հիմա նորա ամեն քանդակագործ զարդարանքը կոտրատեցին կացիններով և մուրճերով։
7 Կրակ գցեցին քո որբարանի մէջ, դետնի տալով պղծեցին քո անունի բնակարանը։
8 Իրանց սրտերումն ասեցին. Սորանց ամենը միասին կորցնենք. այրեցին Աստուծոյ ամեն ժողովարանները երկրի մէջ։
9 Մեր նշանները չենք տեսնում. էլ մարգարէ չ'կայ. և մեզ մօտ մէկ գիտացող չ'կայ. մինչև ե՞րբ։
10 Ով Աստուած, մինչև ե՞րբ է նախատելու նեղացնողը. մի՞թէ թշնամին պիտի բոլորովին անարգէ քո անունը։
11 Ի՞նչու ես ետ դարձնում ձեռքդ և աջդ. հանիր ծոցիցդ, կորցրու նորանց։
12 Բայց Աստուած է իմ թագաւորը սկզբիցը որ փրկութիւններ արաւ երկրի մէջ։
13 Դու ծովը պատառեցիր քո զօրութիւնովը, վիշապների գլուխները փշրեցիր ջրերի մէջ։
14 Դու ջարդեցիր Լևիաթանի գլուխները. նորան կերակուր տուիր ժողովրդին անապատումը։
15 Դու աղբիւրներ և առուներ բղխեցրիր. դու սաստիկ գետեր ցամաքեցրիր։
16 Քոնն է ցերեկը և քոնն է գիշերը. դու պատրաստեցիր լուսաւորները և արեգակը։
17 Դու հաստատեցիր երկրի ամեն սահմանները. դու ստեղծեցիր ամառը և ձմեռը։
18 Ապա միտքդ բեր այս՝ որ թշնամին նախատինք է տալիս Տիրոջը. և յիմար ազգը անարգում է քո անունը։
19 Քո տատրակի անձը մի մատնիր գազանին. քո աղքատների կեանքը մի մոռանար խոպառ։
20 Նայիր քո ուխտի վերայ, որովհետև երկրի խաւար տեղերը անօրէնութեան բնակարաններով լցուած են։
21 Թող խեղճը ետ չ'դառնայ ամօթով. թող խեղճը և աղքատը օրհնեն քո անունը։
22 Վեր կաց, ով Աստուած, դատիր քո դատաստանը. յիշիր այն նախատինքը, որ յիմարն ամեն օր քեզ վերայ է դնում։

23 Մի մոռանար քո թշնամիների ձայնը և քեզ դէմ վեր կացածների խռովութիւնը, որ ամեն ժամանակ բարձրանում է։

ՍԱՂ. ՀԵ

Երգողների գլխաւորին. *Մի ապականիր եղանակով. Ասափի Սաղմոս. երգ։

1 Գոհանում ենք քեզանից, ով Աստուած, գոհանում ենք, և քո անունը մօտ է. քո հրաշքները պատմում են։
2 Երբոր պատշաճ ժամանակ կ'ունենամ, ուղիղ կ'դատեմ ես։
3 Երկիրը և նորա ամեն բնակիչները մաշուեցան. ես նորա սիւները կ'հաստատեմ։ (Սէլա։)
4 Ասեցի յիմարներին. Յիմարութիւն մի գործէք. և ամբարիշտներին. Եղջիւր մի բարձրացնէք։
5 Ձեր եղջիւրը դէպի բարձրը մի բարձրացնէք. հաստ վզով մի խօսիք։
Որովհետև բարձրանալը ոչ արևելքիցն է և ոչ արևմտքիցը՝ և ոչ անապատիցը։
7 Բայց Աստուած է դատաւոր. սորան խոնարհեցնում է և նորան բարձրացնում։
8 Որովհետև բաժակ կայ Տիրոջ ձեռքումը. և գինին պղտորութիւնով լցուած եփում է. և նա թափում է նորանից. բայց իրաւի երկրի ամեն ամբարիշտները նորա մրուրները պիտի քամեն՝ խմեն։
9 Բայց ես յաւիտեան կ'պատմեմ. սաղմոս կ'ասեմ Յակոբի Աստուծուն։
10 Եւ ամբարիշտների ամեն եղջիւրները կ'փշրեմ. արդարների եղջիւրները կ'բարձրանան։

ՍԱՂ. ՀԶ

Երգողների գլխաւորին. Նկինօթով. Ասափի Սաղմոս. երգ։

1 Աստուած յայտնի է Յուդայի մէջ. նորա անունը մեծ է Իսրայէլի մէջ։
2 Եւ Սաղէմի մէջ է նորա խորանը. և նորա բնակարանը՝ Սիօնի մէջ.
3 Այնտեղ փշրեց աղեղի թռչող նետերը՝ վահանը, սուրը և կռիւը։ (Սէլա։)
4 Դու լուսաւոր ես՝ աւելի փառաւոր քան յափշտակութեան սարերը։
5 Սրտով զօրաւորները աւար եղան. ննջեցին իրանց քնովը. և զօրութեան ամեն մարդիկը չը գտան իրանց ձեռքերը։
6 Ով Յակոբի Աստուած, քո սաստելուցը քնով թմրեցան կառքերը և ձիանքը։
7 Դու ահաւոր ես, ով Տէր, ո՞վ կ'կանգնի քո առաջին քո բարկութեան ժամանակին։
8 Դու երկնքիցը լսել ես տալիս դատաստանը. երկիրը վախենում է և լուռ կենում,
9 Երբոր Աստուած վեր է կենում դատաստան անելու որ երկրի ամեն խեղճերը փրկէ։ (Սէլա։)
10 Որովհետև մարդկանց բարկութիւնը քեզ համար փառք կը դառնայ. աւելորդ բարկութիւնը գօտիի պէս կ'կապես։
11 Ուխտ դրէք և կատարեցէք ձեր Տէր Աստուծուն. ամենքը՝ որ նորա չորս կողմովն են, թող ընծայ բերեն Ահաւորին։
12 Որ նա կոտրում է իշխանների հոգին. և ահաւոր է երկրի թագաւորների վերայ։

ՍԱՂ. ՀԷ

Երգողների գլխաւորին. †Իդիթունի վերայ. Ասափի Սաղմոս։

1 Իմ ձայնը դէպի Աստուած է, և ես կանչում եմ. և իմ ձայնը դէպի Աստուած է, և նա կ'լսէ ինձ։
2 Իմ նեղութեան օրումը Տիրոջն եմ խնդրում. իմ ձեռքը գիշերումը մեկնած է և չէ թուլա-

*Սաղ. ծէ. վերնագիրը։

†Սաղ. լթ. կբ. վերնագիրը։

նում. իմ անձը չէ կամենում
մխիթարուիլ։
3 Յիշում եմ Տիրոջը և անհան-
գիստ եմ. միտք եմ անում և
հոգիս նուաղում է. (Սէլա։)
4 Իմ աչքերի արտևանունքը ար-
թուն ես պահում. խռովուած եմ
և չեմ կարող խօսիլ։
5 Մտածում եմ առաջուան օրե-
րը՝ յաւիտենից եղած տարիները։
6 Յիշում եմ գիշերումը իմ եր-
գելը. խօսում եմ իմ սրտի հետ
և հոգիս քննութիւն է անում։
7 Մի՞թէ Տէրը յաւիտեան դէն
կ'գցէ, և այլևս քաղցրութիւն
չի՞ ցոյց տալ։
8 Մի՞թէ յաւիտեան կ'վերջա-
նայ նորա ողորմութիւնը, և նորա
խօսքը կ'պակասի՞ ազգից մինչև
ազգ։
9 Մի՞թէ մոռացաւ Աստուած
շնորհք ցոյց տալ. մի՞թէ բար-
կութիւնով արգիլեց իր ողոր-
մութիւնը։ (Սէլա։)
10 Բայց ես ասում եմ՝ սա իմ
ցաւն է. փոխելը Բարձրելոյն ձեռ-
քին է։
11 Յիշում եմ Տիրոջ գործերը.
որովհետև յիշում եմ քո հրաշք-
ները յաւիտենից։
12 Եւ քննում եմ քո ամեն գոր-
ծերը, և միտք եմ առնում քո
արածները։
13 Ով Աստուած, քո ճանապար-
հը սրբութեան մէջ է. ո՞ր աստ-
ուած է մեծ ինչպէս Աստուած։
14 Դու ես Աստուած որ հրաշք ես
անում. դու ցոյց տուիր քո զօ-
րութիւնը ժողովուրդների մէջ։
15 Դու քո բազկովը փրկեցիր քո
ժողովրդին՝ Յակոբի և Յովսէփի
որդկանցը։ (Սէլա։)
16 Տեսան քեզ ջուրերը, ով Աստ-
ուած, տեսան քեզ ջուրերը և
դողացին. և անդունդները սար-
սափեցան։
17 Ամպերը ջուր թափեցին, եր-
կինքները ձայն հանեցին և քո
նետերը գնացին։
18 Քո որոտմունքի գոռոցը *եր-
կընքի պտոյտներումն՝ էր. փայ-
լատակմունքը լուսաւորեցին աշ-
խարհքը. երկիրը դղրդաց և դո-
ղաց։
19 Քո ճանապարհը ծովումն էր,
և քո շաւիղները շատ ջրերի մէջ,
և քո հետքերը չ'յայտնուեցան։
20 Ոչխարի հօտի պէս առաջնոր-
դեցիր քո ժողովրդին Մովսէսի և
Ահարօնի ձեռովը։

ՍԱՂ. ՀԸ

†Ասափի Երգ։

1 Ականջ դիր իմ օրէնքին, ով իմ
ժողովուրդ, և ձեր ականջները
խոնարհեցրէք դէպի իմ բերանի
խօսքերը։
2 Ես առակով կ'բանամ բերանս,
դուրս կ'բղխեմ խրթին բաներ
հին ժամանակիցը.
3 Այն որ լսեցինք ու ճանաչե-
ցինք, և մեր հայրերը պատմեցին
մեզ։
4 Մենք նորանց չենք թագցնում
որդիներիցը. եկող սերունդին
պատմում ենք Տիրոջ գովասան-
քը, և նորա զօրութիւնքն ու հր-
աշքները որ արաւ։
5 Նա վկայութիւն հաստատեց
Յակոբի մէջ և օրէնք դրաւ Իս-
րայէլի մէջ. այն որ պատուիրեց
մեր հայրերին որ սովորեցնեն ի-
րանց որդկանցը։
6 Որպէս զի իմանայ նոր սերուն-
դը՝ այն որդիքը որ կ'ծնուին, վեր
կենան և իրանց որդկանցը պատ-
մեն։
7 Որ նորանք իրանց յոյսը Աս-
տուծոյ վերայ դնեն, և չ'մոռա-
նան Աստուծոյ գործերը, և նո-
րա պատուիրանքները պահեն։
8 Եւ իրանց հայրերի նման չ'լի-
նին խստավիզ և դառնացնող
ազգ, ազգ՝ որ իր սիրտը չ'պատ-
րաստեց, և նորա հոգին հաւա-
տարիմ չէ Աստուծոյ վերայ։
9 Եփրեմի որդիքը՝ որ զէնք հա-
գած աղեղնաւորներ էին, ետ դա-
ռան պատերազմի օրումը։
10 Աստուծոյ ուխտը չ'պահեցին

*Կամ՝ մրրիկում

†Սաղ. հդ. վերնագիրը։

և մերժեցին նորա օրէնքի մէջ
գնալը։
11 Եւ մոռացան նորա գործերը
և նորա հրաշքները, որ ցոյց էր
տուել նորանց։
12 Նորանց հայրերի առաջին հր-
աշք արաւ Եգիպտոսի երկրումը՝
Տայանիսի դաշտումը։
13 Նա ծովը պատառեց և անց
կացրեց նորանց, և ջուրերը պա-
րըսպի պէս կանգնեցրեց։
14 Յերեկը առաջնորդեց նորանց
ամպով. և ամեն գիշեր՝ կրակի
լուսով։
15 Վէմերը պատառեց անապա-
տումը, և խմեցրեց նորանց ինչ-
պէս շատ հեղեղներ։
16 Առուներ հանեց վէմիցը և ջու-
րեր վայր բերաւ գետերի պէս։
17 Բայց և այնպէս դարձեալ մե-
ղանչեցին նորա դէմ, և դառնա-
ցրին Բարձրելոյն՝ անապատումը։
18 Եւ փորձեցին Աստուծուն ի-
րանց սրտերումը՝ կերակուր խնդ-
րելով իրանց անձերի համար։
19 Եւ Աստուծոյ դէմ խօսեցին և
ասեցին. Մի՞թէ կարող է Աստ-
ուած սեղան պատրաստել անա-
պատումը։
20 Ահա վէմին զարկեց և ջուրեր
բղխեցին և առուներ դուրս թափ-
ուեցան. մի՞թէ հաց էլ կարող է
տալ. մի՞թէ միս կ'պատրաստէ
իր ժողովրդի համար։
21 Սորա համար լսեց Տէրը և խիստ
բարկացաւ, և կրակ բորբոքուե-
ցաւ Յակոբի մէջ և բարկու-
թիւն վեր կացաւ Իսրայէլի վե-
րայ.
22 Որ չ'հաւատացին Աստուծուն և
չ'յուսացան նորա փրկութեանը։
23 Եւ նա վերևիցը հրաման տուաւ
ամպերին և երկնքի դռները բաց
արաւ։
24 Եւ անձրևի պէս մանանայ տե-
ղաց նորանց վերայ կերակուրի
տեղ. և երկնքի ցորենը տուաւ
նորանց։
25 Մարդ՝ *հրեշտակների հաց կե-
րաւ. նա կերակուր ուղարկեց
նորանց առատութիւնով։
26 Նա երկնքումը վեր կացրեց ա-
րևելեան քամին. և իր զօրու-
թիւնովը մօտ քշեց հարաւային
քամին։
27 Եւ միս թափեց նորանց վերայ
ինչպէս փոշի, և թևաւոր թռ-
չուններ՝ ինչպէս ծովի աւազ։
28 Եւ նորա բանակի մէջ գցեց՝
նորա բնակարանների չորս կող-
մովը։
29 Եւ կերան և խիստ կշտացան.
և իրանց ցանկութիւնը տուաւ
նորանց։
30 Իրանց ցանկութիւնիցը չէին
դադարել. դեռ իրանց կերակու-
րը բերաններումն էր։
31 Աստուծոյ բարկութիւնը դուրս
եկաւ նորանց վերայ, և սպանեց
նորանց պարարաներիցը, և գետ-
նով զարկեց Իսրայէլի երիտա-
սարդներին։
32 Այսու ամենայնիւ էլի մեղան-
չեցին ու չ'հաւատացին նորա հր-
աշքներին։
33 Եւ նա պակասեցրեց նորանց օ-
րերը ունայնութեան մէջ. և նո-
րանց տարիները՝ ահ ու վախով։
34 Երբոր սպանում էր նորանց՝
խնդրում էին նորան, ետ էին
դառնում, և առաւօտանց Աս-
տուծուն էին խնդրում։
35 Եւ յիշում էին, թէ Աստուած
իրանց վէմն է, և Բարձրեալ Աստ-
ուածն իրանց փրկիչն է։
36 Կեղծաւորութիւն էին անում
նորան իրանց բերանովը, և իրանց
լեզուովը սուտ էին ասում նո-
րան։
37 Եւ նորանց սիրտը ուղիղ չէր
նորա հետ. և հաւատարիմ չէին
նորա ուխտումը։
38 Բայց նա ողորմած էր. քա-
ւում էր անօրէնութիւնը և չէր
ապականում. և շատ անգամ
դարձնում էր իր բարկութիւնը,
և չէր վեր կացնում իր բոլոր
սրտմտութիւնը։
39 Նա յիշում էր որ նորանք
մարմին են, քամի՝ որ գնում է
և ետ չէ դառնում։
40 Քանի՝ անգամ դառնացրին նո-
րան անապատումը, և բարկացրին
նորան անջուր տեղումը։

*Կամ՝ զօրաւորների

41 Կրկին և կրկին փորձեցին Աստուածն, և խորտկեցին Սուրբին Իսրայէլի։
42 Չյիշեցին նորա ձեռքն այն օրուայն, որ փրկեց նոցա թշնամիից,
43 Որ իր նշաններն արաւ Եգիպտոսում, և իր հրաշքները Տանեայ դաշտում։
44 Եւ արիւնի փոխեց նոցա գետերը և առուները, որ չկարացին խմել։
45 Շանաճանճեր ուղարկեց նոցա վերայ, որ նոցա ուտեն, և գորտեր՝ որ ապականեն նոցա։
46 Եւ նոցա պտուղները թրթուրին տուաւ, և նոցա վաստակ՝ մարախին։
47 Նոցա որթերը փշացրեց կարկտով, և նոցա թզի ծառերը եղեամով։
48 Նոցա անասուններն մատնեց կարկտին, և նոցա հօտերը՝ կրակի կայծակներին։
49 Իր բարկութեան բոցն ուղարկեց նոցա վերայ՝ սրտմտութիւն, բարկութիւն և նեղութիւն՝ չար հրեշտակներ ուղարկելով։
50 Ճանապարհ պատրաստեց իր բարկութեան համար. նոցա անձները չ'պահեց մահից և նոցա կեանքը մատնեց ժանտամահին,
51 Եւ բոլոր առաջինեկ որդիները սպանեց Եգիպտոսում, զօրութեան առաջին պտուղները՝ Քամի բնակարաններում։
52 Եւ ժողովրդին հանեց ինչպէս ոչխարներ, և հօտի պէս տարաւ նոցանց անապատում։
53 Եւ առաջնորդեց նոցանց ապահով և նոցանք չ'վախեցան. և ծովը ծածկեց նոցանց թշնամիներին։
54 Եւ նոցանց տարաւ իր սրբութեան սահմանը՝ այն սարը, որ նոցա ազ ձեռն առացաւ։
55 Եւ ազգեր դէն գցեց նոցանց առաջին և վիճակով ժառանգութիւն բաժանեց նոցանց. և Իսրայէլի ցեղերը բնակեցրեց նոցանց բնակարաններում։
56 Բայց նոքանք փորձեցին և դառնացրին Բարձրեալ Աստուածն, և չ'պահեցին նորա վկայութիւնները։
57 Եւ ետ դառան և նենգութիւն արին՝ ինչպէս իրանց հայրերը. ետ դառան խաբեբայ աղեղի պէս։
58 Եւ նորան բարկացրին իրանց բարձրաւանդակներով, և իրանց կուռքերի պատկերներով նախանձի շարժեցին նորան։
59 Աստուած լսեց և բարկացաւ և շատ անարգեց Իսրայէլին։
60 Երեսից գցեց Սելովի բնակարանը՝ այն խորանը, որ բնակվում էր նոցանում մարդկանց մէջ,
61 Եւ գերութեան մատնեց նորա զօրութիւնը, և նորա փառքը նեղիչների ձեռը։
62 Եւ իր ժողովրդին մատնեց սրի, և իր ժառանգութեան համար խիստ բարկացաւ։
63 Կրակը կերաւ նորա երիտասարդներին, և նորա աղջիկների վերայ երգ չ'երգեցին։
64 Նորա քահանաները սրով ընկան, և նորա որբևայրիները չ'կարացին սուգ անել,
65 Բայց Տէրը զարթնեց ինչպէս քնից. ինչպէս զօրաւոր մարդ որ գինիից *զաւրթանում է,
66 Եւ իր թշնամիները զարկեց ետ կողմիցը. յաւիտեան նախատինք արաւ նոցանց։
67 Եւ Յովսէփի բնակարանը ապարգեց. և Եփրեմի ցեղը չ'ընտրեց,
68 Բայց Յուդայի ցեղն ընտրեց, Սիոնի սարը որ նորան սիրեց։
69 Եւ իր սրբարանը շինեց ինչպէս բարձր տեղերը. ինչպէս երկիրը որ նորան հաստատեց յաւիտեան։
70 Եւ իր ծառայ Դաւիթին ընտրեց, և առաւ նորան ոչխարների փարախից։
71 Ծիծ տուող ոչխարների մտիցը տարաւ նորան, որ իր Յակոբ ժողովրդից և իր Իսրայէլ ժառանգութիւնը կառավարէ։

*կ՚ս՚ սթափուում

72 Եւ նա արածեցնում էր նոցանց սուրբը սրտով. և իմաստուն ձեռքով առաջնորդում էր նոցանց։

ՍԱՂ. ՀԹ

Ասափի Սաղմոս։

1 Ով Աստուած, հեթանոսները մտան քո ժառանգութեան մէջ. պղծեցին քո սուրբ տաճարը. երուսաղէմն աւերակ արին։
2 Նոքանք քո ծառաների դիակները կերակուր տուին երկնքի թռչուններին, և քո սուրբների մարմինը երկրի գազաններին։
3 Նոցանց արիւնը թափեցին ինչպէս ջուր երուսաղէմի չորս կողմից. և թաղող չ'կար։
4 Մենք նախատինք եղանք մեր դրացիներին, ծաղր և անարգանք մեր չորս կողմից եղողների առաջին։
5 Մինչև ե՞րբ, Տէր. կ'բարկանա՞ իսպառ, և քո նախանձը կրակի պէս կ'բորբոքի՞։
6 Թափիր քո բարկութիւնը այն ազգերի վերայ որ քեզ չեն ճանաչում, և այն թագաւորութիւնների վերայ որ քո անունը չեն կանչում։
7 Որովհետև նոքանք Յակոբին կերան և նորա բնակութիւնը աւերեցին։
8 Մի յիշիր մեզ դէմ առաջի անօրէնութիւնները, թող շուտով հասնի մեզ քո ողորմութիւնը. որովհետև մենք շատ ակարացանք։
9 Օգնիր մեզ, ով մեր փրկութեան Աստուած, քո անուան փառքի համար, և փրկիր մեզ և քաւիր մեր մեղքերը քո անունի համար։
10 Ինչու՞ ասեն հեթանոսները՝ թէ Ո՞ր տեղ է նոցանց Աստուածը. թող հեթանոսների մէջ մեր աչքի առաջին յայտնուի այն քո ծառաների թափուած արեան վրէժը։
11 Թող գերիների հառաչանքը քո առաջը մտնէ. քո բազուկի մեծութեան պէս ապրեցրու մահի որդկանցը։
12 Եօթնապատիկ հատուցում արա մեր դրացիներին իրանց ծոցի մէջ՝ իրանց այն նախատինքը, որով քեզ անարգեցին, ով Տէր։
13 Բայց մենք քո ժողովուրդը և քո արօտի հօտն ենք. յաւիտեան կ'գոհանանք քեզանից, և քո գովասանքը կ'պատմենք ազգից մինչև ազգ։

ՍԱՂ. Ջ

Երգողների գլխաւորին. *Շօշանիմ Եդութով. Ասափի Սաղմոս։

1 Ով Իսրայէլի հովիւ, ականջ դիր, դու՝ որ Յովսէփին առաջնորդում ես հօտի պէս, որ նրստում ես քերովբէների վերայ՝ փայլիր։
2 Եփրեմի և Բենիամինի և Մանասէի առաջին զարթնացրու քո զօրութիւնը. եկ մեզ ապրեցնելու համար։
3 Ով Աստուած, եւ դարձրու մեզ, և փայլեցրու քո երեսը և կ'ապրինք։
4 Տէր՝ Զօրաց Աստուած, մինչև ե՞րբ կ'բարկանաս քո ժողովրդի աղօթքի վերայ։
5 Արտասուքի հաց ես ուտեցնում նոցանց, և արտասուք ես խմեցնում նոցանց մեծ չափով։
6 Մեզ կատաղ պատճառ ես դնում մեր դրացիների համար, և մեր թշնամիները ծաղր են անում †մեր վերայ։
7 Ով Զօրաց Աստուած, եւ դարձրու մեզ, և փայլեցրու քո երեսը և կ'ապրինք։
8 Մի որթ փոխադրեցիր Եգիպտոսից, ազգեր գուբս հանեցիր և նոցան տնկեցիր։
9 Ճանապարհ պատրաստեցիր նորա առաջին, և նորա արմատները հաստատեցիր և նա լցրեց երկիրը։
10 Սարերը ծածկուեցան նորա շուքով, և նորա ճիւղերը Աստուծոյ մայրի ծառերի պէս։
11 Իր ճիւղերը տարածեց մինչև ծովը, և նորա ոստերը մինչև գետը։
12 Ինչու՞ քանդեցիր նորա պատերը, և ամէն անցաւոր քաղում է նորանից։
13 Անտառի խոզը աւերում է նորան, և վայրի գազանները ուտում են նորան։
14 Դարձի՛ր, Աստուած զաւրութեանց, նայի՛ր երկնքից և տե՛ս, և այցելի՛ր այս որթին,
15 Եւ պահի՛ր նորան, որ քո աջ ձեռքը տնկեց, և քո որդուն, որ քեզ համար զաւրացրիր։
16 Հրով այրուեցաւ և կտրուեցաւ, քո երեսի սպառնալիքից կորչեցին։
17 Քո աջ ձեռքը թող լինի քո ծառայ մարդու վերայ, և քո զաւրացրած որդու վերայ։
18 Եւ մենք քեզանից չենք հեռանայ, կենդանացրո՛ւ մեզ, և քո անունը կ'կանչենք։
19 Տէր Աստուած զաւրութեանց, դարձրո՛ւ մեզ, և փայլեցրո՛ւ քո երեսը և կ'ապրինք։

*Սաղ. խե. կթ. վերնագիրը։
†կ՚ս՚ իրանց մէջ։

քովը, և Աստուծոյ մայրերի պէս
են նորա ճիւղերը։
11 Նորա ոստերը երկարացրիր մին-
չև ծովը, և նորա ճիւղերը մինչև
Գետը։
12 Ի՞նչու քանդեցիր հիմ նորա
պատը, որ բոլոր ճանապարհովը
անցնողները քաղեն նորան։
13 Անտառի խոզը ապականում է
նորան, և վայրի գազանը արա-
ծում է նորանում։
14 Ով Զօրաց Աստուած, դարձիր
երկնքիցը նայիր և տես, և տես
եկ այս որթին.
15 Եւ նոր բուսած ճիւղին, որ քո
աջը տնկեց նորան, և այն որդիին
որ նորան զօրացրիր քեզ հա-
մար։
16 Այրուած է՝ կրակով կտրուած.
քո երեսի սաստելուցը կորչում
են։
17 Թող ձեռքդ քո աջի մարդի
վերայ լինի, մարդի որդիի վերայ՝
որ նորան զօրացրիր քեզ համար։
18 Ապա ետ չենք քաշուիլ քե-
զանից. կենդանացրու մեզ, և
քո անունովը կ'կանչենք։
19 Տէր՝ Զօրաց Աստուած, ետ
դարձրու մեզ, փայլեցրու քո ե-
րեսը և կ'ապրինք։

ՍԱՂ. ՁԱ

Երգողների գլխաւորին. *Կիթ-
թիթի վերայ. Ասափի (Սաղմոս)։

1 Յնծացէք Աստուծոյ առաջին,
որ մեր զօրութիւնն է. ուրախու-
թիւնով աղաղակեցէք դէպի Յա-
կոբի Աստուածը։
2 Երգը բարձրացրէք, թմբուկը
տուէք, քաղցր քնարը սաղմոսա-
րանի հետ։
3 Փող փչեցէք ամսի գլխումը. լը-
րացած լուսնի ժամանակին, մեր
տօնի օրումը։
4 Որովհետև այս հրաման է Իս-
րայէլին, և Յակոբի Աստուծուն
իրաւունք։
5 Վկայութիւն դրաւ Յովսէփի
մէջ՝ երբոր նա դուրս էր գալիս
Եգիպտոսի երկրի դէմ. լեզու էի
լսում, որ չ'գիտէի։
Եւ նորա թիկունքը հեռացրի 6
բեռնիցը, և նորա ձեռքերը պըր-
ծան քթոցիցը։
Դու նեղութիւնումը կանչե- 7
ցիր, և փրկեցի քեզ. լսեցի քեզ
որոտմունքի ծածկոցումը. փորձե-
ցի քեզ Մերիբայի ջրերի մօտ։
(Սէլա։)
Լսիր, իմ ժողովուրդ, և կը 8
վկայեմ քեզ. ով Իսրայէլ, ե-
րանի՛ թէ լսէիր ինձ։
Օտար Աստուած չ'լինի քո մի- 9
ջումը. և երկրպագութիւն չ'ա-
նես օտար Աստուծոյ։
Ես եմ քո Տէր Աստուածը, որ 10
հանեցի քեզ Եգիպտոսի երկրի-
ցը. լայն բաց արա քո բերանը՝
և ես կ'լեցնեմ դորան։
Բայց իմ ժողովուրդը չ'լսեց 11
իմ ձայնը, և Իսրայէլը չ'հաւա-
նեց ինձ։
Ա՞ն նորանց թողի իրանց սրր- 12
տերի կամքին, որ գնան իրանց
խորհուրդներումը։
Եթէ՝ իմ ժողովուրդը ինձ լը- 13
սէր, և Իսրայէլն իմ ճանապար-
հումը գնար,
Շուտով կ'խոնարհեցնէի նո- 14
րանց թշնամիները և իմ ձեռքը
կ'դարձնէի նորանց նեղացնողների
դէմ։
Տիրոջն ատողները կ'խոնարհ- 15
ուէին նորա առաջին, իսկ նորա
ժամանակը յաւիտեան կ'լինէր։
Նա կ'կերակրէր նորան պա- 16
բարտ ցորենով, և վէմիցը կ'կըշ-
տացնէի քեզ մեղրով։

ՍԱՂ. ՁԲ

Ասափի Սաղմոս։

Աստուած կանգնում է Աստու- 1
ծոյ ժողովրդի մէջ. նա աստուած-
ների միջումը դատում է։
Մինչև ե՞րբ էք դատելու անի- 2
րաւութիւնով, և ամբարիշտնե-
րին երես տեսնելու։ (Սէլա։)
Իրաւունք արէք աղքատին և 3
որբին. արդարացրէք խեղճին և
աղքատին։

*Սաղ. ը. վերնագիրը։

4 Փրկեցէք աղքատին և խեղճին.
ազատեցէք ամբարիշտների ձեռ-
քիցը։
5 Բայց չեն իմանում և միտք
չեն առնում. խաւարի մէջ են
գնում. երկրի ամեն սիւները
շարժուած են։
6 Ես ասեցի. Դուք աստուած-
ներ էք և ամենքդ Բարձրելոյ որ-
դիք։
7 Սակայն մարդկանց նման կը
մեռնիք, և ինչպէս իշխաններից
մէկը, վայր կ'ընկնէք։
8 Վեր կաց, ով Աստուած, դա-
տիր երկիրը. որովհետև դու պի-
տի ժառանգես ամեն հեթանոս-
ները։

ՍԱՂ. ՁԳ

Երգ. Ասափի Սաղմոս։

1 Ով Աստուած, լուռ մի կենար.
անձայն մի լինիր, և մի դադա-
րիր, ով Աստուած։
2 Ահա քո թշնամիները դոռում
են, և քեզ ատողները բարձրա-
ցրին իրանց գլուխները։
3 Խորամանկ հնարք են շինում
քո ժողովրդի դէմ. և խորհուրդ
են անում քո պահպանածների
վերայ։
4 Ասում են՝ Եկէք կորցնենք,
որ ազգ չ'լինին. և էլ չ'յիշուի
Իսրայէլ անունը։
5 Միաբան սրտով խորհուրդ ա-
րին, քեզ դէմ դաշինք հաս-
տատեցին։
6 Եդովմի բնակարանները և Իս-
մայէլացիք, Մովաբ և Հագարա-
ցիք.
7 Գեբաղ և Ամոն և Ամաղէկ,
Փղշտացիք Տիւրոսի բնակիչների
հետ։
8 Ասուրն էլ միաւորուեցաւ նո-
րանց հետ. օգնում են Ղովտի
որդկանցը։ (Սէլա։)
9 Արա նորանց ինչպէս Մադիա-
մին՝ ինչպէս Սիսերային՝ ինչպէս
Յաբինին Կիսոն հեղեղատի մօտ։
10 Որ նորանք Ենդովրի մօտ սատ-
կեցին. աղբ եղան երկրի վերայ։
11 Արա նորանց իշխաներին Օրէ-
բի և Զէբի նման. և նորանց ա-
մեն մեծաւորներին Զէբէէի և
Սաղմանայի նման։
Որ նորանք ասում են. Տիրա- 12
պետենք մեզ համար Աստուծոյ
բնակարաններին։
Աստուած իմ, արա նորանց 13
ինչպէս փոշի և ինչպէս դարման
քամիի առաջին։
Ինչպէս որ կրակն այրում է 14
անտառը, և ինչպէս որ բոցը խան-
ձում է սարերը.
Այնպէս հալածիր նորանց քո 15
մրրիկովը, և զարհուրեցրու նո-
րանց քո փոթորիկովը։
Լցրու նորանց երեսներն անար- 16
գանքով, որ քո անունը խնդրեն,
ով Տէր։
Թող ամաչեն և շփոթուին յա- 17
ւիտեանս յաւիտենից, և ամօթ
լինին ու կորչեն.
Եւ իմանան, որ դու կաս, քո 18
անունը Եհովայ է. դու մինակ
Բարձրեալ ես բոլոր երկրի վե-
րայ։

ՍԱՂ. ՁԴ

Երգողների գլխաւորին. *Կիթթի-
թի վերայ. Կորխի որդկանց
Սաղմոս։

Քանի՛ սիրելի են քո բնակա- 1
րանները, ով Զօրաց Տէր։
Իմ անձը ցանկանում է և փա- 2
փաքում Տիրոջ սրահներին, իմ
սիրտը և իմ մարմինը ցնծում են
կենդանի Աստուծով։
Ծիտն էլ տուն գտաւ և ծի- 3
ծեռնակը բուն՝ իրան համար, որ
իր ձագերը դնէ նորանում, այ-
ինքն քո սեղանները, ով Զօրաց
Տէր՝ իմ Թագաւոր և իմ Աստ-
ուած։
Երանի քո տան բնակողներին. 4
նորանք յաւիտեան կ'օրհնեն
քեզ։ (Սէլա։)
Երանի այն մարդկանց որ նո- 5
րանց զօրութիւնը քեզանից է,
որ նորանց սրտերումը պատրաս-
տուած ճանապարհներ կան։

*Սաղ. ը. վերնագիրը։

6 Արտասուքի ձորովն անցնելով
նորան աղբիւրի պէս են շինում.
և աշունի անձրևը ծածկում է
օրհնութիւնով։
7 Նորանք զօրութիւնից զօրու-
թիւն են գնում, և Աստուծուն
երևում՝ Սիօնի մէջ։
8 Ով Տէր՝ Զօրաց Աստուած,
լսիր իմ աղօթքն. ականջ դիր,
ով Յակոբի Աստուած։ (Սէլա։)
9 Ով մեր վահանը՝ Աստուած,
տես, և քո օծեալի երեսին նա-
յիր։
10 Որովհետև լաւ է մէկ օր քո
սրահներումը քան հազարներ.
աւելի ուզում եմ դուռը պահ-
պանել իմ Աստուծոյ տանը քան
բնակիլ ամբարշտութեան տնե-
րումը։
11 Որովհետև Տէր Աստուածն ա-
րև և վահան է. Տէրը շնորհք և
փառք է տալիս. նա ոչ մի բա-
րիք չէ խնայում անարատու-
թիւնով գնացողներից։
12 Ով Զօրաց Տէր, երանի այն
մարդին որ քեզ է յուսացած։

ՍԱՂ. ՁԵ

Երգողների գլխաւորին. *Կորխի
որդկանց Սաղմոս։

1 Տէր, դու հաւանեցիր քո երկ-
րին. դարձրիր Յակոբի գերու-
թիւնը։
2 Քո ժողովրդի անօրէնութիւնը
ներեցիր, և նորանց ամեն մեղ-
քերը ծածկեցիր։ (Սէլա։)
3 Հեռի արիր քո ամեն սրտմը-
տութիւնը. ետ դարձար քո բար-
կութեան բորբոքուելուցը։
4 Դարձրու մեզ, ով մեր փրկ-
ութեան Աստուած, և դադա-
րիր քո բարկութիւնիցը որ մեզ
վերայ է։
5 Մի՞թէ յաւիտեան կ'բարկա-
նաս մեզ վերայ. քո բարկու-
թիւնը կ'երկարացնե՞ս ազգից մին-
չև ազգ։
6 Մի՞թէ ետ չես դառնալ որ
մեզ կենդանացնես, և քո ժո-
ղովուրդը ուրախ լինի քեզանով։
7 Ցոյց տուր մեզ, Տէր, քո ո-
ղորմութիւնը. և տուր մեզ քո
փրկութիւնը։
8 Թող լսեմ՝ թէ ինչ կ'խօսի Տէր
Աստուածը, նա խաղաղութիւն
կ'խօսի իր ժողովրդի և իր սուր-
բերի հետ, և նորանք ետ չեն
դառնալ յիմարութեան մէջ.
9 Իրաւի որ նորա փրկութիւնը
մօտիկ է նորանից վախեցողներին,
որ փառք բնակուի մեր երկրումը։
10 Ողորմութիւն և ճշմարտու-
թիւն իրար կ'հանդիպեն. արդա-
րութիւն և խաղաղութիւն իրար
կ'համբուրեն։
11 Ճշմարտութիւն կ'բուսնի եր-
կրից, և արդարութիւն վայր կը
նայի երկնքիցը։
12 Տէրը բարիք էլ կ'տայ, և մեր
երկիրը կ'տայ իր պտուղը։
13 Արդարութիւնը նորա առաջից
կ'գնայ, և նա իր քայլերը կ'դնէ
նորա ճանապարհի վերայ։

ՍԱՂ. ՁԶ

Դաւիթի Աղօթք։

1 Տէր, խոնարհեցրու քո ականջը
և պատասխանիր ինձ. որովհետև
աղքատ եմ ես և խեղճ։
2 Պահիր իմ անձը, որ ես մա-
քուր եմ. փրկիր, ով իմ Աստ-
ուած, քո ծառային, որ քեզ է
յուսացած։
3 Ողորմիր ինձ, Տէր, որ դէպի
քեզ եմ կանչում ամեն օր։
4 Ուրախ արա քո ծառայի ան-
ձը. որ դէպի քեզ եմ բարձրա-
ցնում իմ անձը, ով Տէր։
5 Որովհետև դու, Տէր, բարի ես
և ներող, և ողորմութիւնով հա-
րուստ բոլոր քեզ կանչողներին։
6 Ականջ դիր իմ աղօթքին, ով
Տէր. և մտիկ արա իմ աղաչան-
քի ձայնին։
7 Իմ նեղութեան օրը դէպի քեզ
եմ կանչում. որովհետև դու
լսում ես ինձ։
8 Քեզ նմանը չ'կայ աստուած-
ների մէջ, Տէր, և չ'կայ քո գործ-
քերի պէս։

*Տես Սաղ. խբ. վերնագիրը։

9 Ամեն ազգերն, որ արիր, կը
գան և երկրպագութիւն կ'անեն
քո առաջին, Տէր. և քո անու-
նին փառք կ'տան։
10 Որովհետև դու մեծ ես և հը-
րաշք գործող. դու ես միայն
Աստուած։
11 Տէր, ցոյց տուր ինձ քո ճանա-
պարհը, որ գնամ քո ճշմարտու-
թեան մէջ. միացրու իմ սիրտը
որ քո անունիցը վախենայ։
12 Կ'գոհանամ քեզանից, Տէր՝ իմ
Աստուած, բոլոր սրտով. և յա-
ւիտեան կ'փառաւորեմ քո ա-
նունը։
13 Որովհետև քո ողորմութիւնը
մեծ է ինձ վերայ. և դու փրկե-
ցիր իմ անձը ներքևի դժոխքիցը։
14 Ով Աստուած, ամբարտաւան-
ները վեր կացան ինձ դէմ և բրդ-
նաւորների ժողովքը ուզում է
իմ անձը. և քեզ չեն դնում ի-
րանց առաջին։
15 Բայց դու, ով Տէր, գթած
Աստուած ես և ողորմած, եր-
կայնամիտ ես և հարուստ քաղ-
ցրութիւնով և ճշմարտութիւ-
նով։
16 Նայիր ինձ վերայ և ողորմիր
ինձ. քո զօրութիւնը տուր քո
ծառային, և փրկիր քո աղախնի
որդիին։
17 Նշան արա ինձ վերայ բարու-
թեան համար, որ ինձ ատողները
տեսնեն և ամաչեն. նորա համար
դու, Տէր, օգնեցիր և մխիթա-
րեցիր ինձ։

ՍԱՂ. ՁԷ

Կորխի որդկանցը. Սաղմոս. երգ։

1 Նորա հիմունքը սուրբ սարերի
վերայ են։
2 Տէրը սիրում է Սիօնի դռները
աւելի քան Յակոբի բնակարան-
ները։
3 Փառաւոր բաներ են պատմը-
վում քեզանից, ով Աստուծոյ
քաղաք։ (Սէլա։)
4 Ռահաբին և Բաբիլոնին կ'յի-
շեմ նորանց մէջ որ ճանաչում
են ինձ. ահա Փղշտացիք և Տիւ-
րոսը Քուշի հետ. սա այնտեղ է
ծնուած։
5 Եւ Սիօնի համար կ'ասուի՝ այս
մարդը և այն մարդը նորանում է
ծնուած. և ինքը Բարձրեալը նո-
րա հիմունքը հաստատեց։
6 Տէրն ազգերին գրելիս կ'պատ-
մէ՝ սա այնտեղ է ծնուած։ (Սէ-
լա։)
7 Եւ երգիչները՝ ինչպէս որ պար
բռնողները կ'ասեն՝ իմ ամեն աղ-
բիւրները քեզանում են։

ՍԱՂ. ՁԸ

Երգ. Կորխի որդկանց Սաղմոս.
երգողների գլխաւորին Մախա-
լաթ լէանօթի վերայ. *Եզրա-
հեցի Եմանի երգ։

1 Ով Տէր՝ իմ փրկութեան Աստ-
ուած, ցերեկը կանչում եմ, և
գիշերը քո առաջին եմ։
2 Թող իմ աղօթքը քո առաջը
գայ. խոնարհեցրու քո ականջը
դէպի իմ աղաղակը։
3 Որովհետև իմ անձը լցուեցաւ
չարիքներով, և կեանքս մօտե-
ցաւ †դժոխքին։
4 Ես գերեզմանի մէջ իջնողների
հետ համարուեցայ. եղայ ինչպէս
մի մարդ որ ոյժ չ'ունի։
5 Մեռելների մէջ թուլացածի
պէս եմ. ինչպէս խոցուածներ, որ
գերեզմանումը ընկած են, որ նո-
րանց այլ ևս չես յիշում, և ե-
րեսից գցուած են քո ձեռքիցը։
6 Դու ինձ ներքի փոսի մէջ դը-
րիր՝ խաւար և խոր տեղերի մէջ։
7 Քո սրտմտութիւնը հաստատ-
ուեցաւ ինձ վերայ, և քո ալիք-
ներովը նեղեցիր ինձ։ (Սէլա։)
8 Իմ ճանաչներին հեռացրիր ին-
ձանից և ինձ գարշելի արիր նո-
րանց համար. փակուած եմ և
չեմ դուրս գալիս։
9 Աչքս մաշուեցաւ խեղճութեան
պատճառով. կանչում եմ դէպի
քեզ, Տէր, բոլոր օրը. մեկնում
եմ իմ ձեռքը դէպի քեզ։

*գ Թագ. դ. 31։ ա Մն. բ. 6։
†Կամ՝ գերեզմանին։

40 Մի՞թէ մեռելների վերայ ես
հրաշք անելու. մի՞թէ մահա-
ցածները վեր կ'կենան և քեզա-
նից կ'գոհանան։ (Սէլա։)
41 Մի՞թէ գերեզմանումը կ'պատ-
մեն քո ողորմութիւնը, և քո
ճշմարտութիւնը կորստի մէջ։
42 Մի՞թէ խաւարի մէջ կ'ճա-
նաչուին քո հրաշքները, և ար-
դարութիւնը մոռացութեան եր-
կրումը։
43 Բայց ես դէպի քեզ եմ աղա-
ղակում, Տէր. և իմ աղօթքը
կանուխ առաւօտանց գալիս է
քեզ մօտ։
44 Տէր, ի՞նչու ես իմ անձը երե-
սից գցում. երեսդ թագցնո՞ւմ
ես ինձանից։
45 Ես աղքատ եմ և մեռնում
եմ իմ մանկութիւնիցը. քո զար-
հուրանքը քաշեցի, և յոյսս կըտ-
րուած է։
46 Քո սրտմտութիւնը հասաւ ինձ
վերայ, քո զարհուրանքները կոր-
ցնում են ինձ։
47 Նորանք ամեն օր ջրի նման պա-
տում են ինձ. պատում են ինձ
մէկտեղ։
48 Դու հեռացրիր ինձանից բա-
րեկամիս և մօտաւորիս. իմ ճա-
նաչները խաւարի մէջ են։

ՍԱՂ. ՁԹ

*Եզրահեցի Եթանի Երգ։

1 Յաւիտեան կ'օրհնեմ Տիրոջ ո-
ղորմութիւնը. ազգից ազգ կը
պատմեմ իմ բերանովը քո ճշ-
մարտութիւնը։
2 Որովհետև ես ասեցի՝ Ողոր-
մութիւնը յաւիտեան հիմնուած
է, դու երկնքումը հաստատում
ես քո ճշմարտութիւնը։
3 Ես ուխտ դրի իմ ընտրուածի
հետ. երդում արի իմ Դաւիթ
ծառայի համար։
4 Մինչև յաւիտեան կ'հաստա-
տեմ քո զաւակը, և ազգից ազգ
կ'հիմնեմ քո աթոռը։ (Սէլա։)
5 Եւ երկինքը կ'փառաւորեն քո
հրաշքները, Տէր. և սուրբերի ժո-
ղովքումը՝ քո ճշմարտութիւնը։
6 Որովհետև ո՞վ կայ երկնքու-
մը՝ որ հաւասար լինի Տիրոջը, և
աստուածների որդկանց մէջ, որ
նման լինի Տիրոջը։
7 Աստուած զարհուրելի է սուր-
բերի ժողովքումը, և ահաւոր
ամեն նորան շրջապատողների մօտ։
8 Ով Եհովայ՝ Զօրաց Աստուած,
ո՞վ է քեզ պէս զօրաւոր Տէր.
և քո ճշմարտութիւնը քո չորս
կողմովն է։
9 Դու տիրապետում ես ծովի զօ-
րութեան վերայ. երբոր բարձրա-
նում են նորա կոհակները՝ դու
խոնարհեցնում ես նորանց։
10 Դու փշրեցիր Ռահարին խոց-
ուածի նման, քո բազուկի զօ-
րութիւնովը ցրուեցիր քո թշ-
նամիներին։
11 Քո են երկինքը, քո է նաև
երկիրը. դու հիմնեցիր աշխարհ-
քը և նորա լիութիւնը։
12 Դու արիր հիւսիսը և հարաւը.
Թափօրն ու Հերմոնը ցնծում են
քո անունովը։
13 Քո է ուժեղ բազուկը. քո
ձեռքը զօրաւոր է և քո աջը բար-
ձրը։
14 Արդարութիւն և իրաւունք են
քո աթոռի հաստատութիւնը,
ողորմութիւն և ճշմարտութիւն
գնում են քո երեսի առաջից.
15 Երանի այն ժողովրդին, որ գի-
տէ փողերի ձայնը. ով Տէր, նո-
րանք քո երեսի լուսովը կ'գնան։
16 Քո անունովն ամեն օր կ'ցն-
ծան, և քո արդարութիւնովը կը
բարձրանան։
17 Որովհետև դու ես նորանց զօ-
րութեան փառքը. և քո հաճու-
թիւնովը կ'բարձրանայ մեր եղ-
ջիւրը։
18 Որովհետև Տէրը մեր վահանն
է և Իսրայէլի սուրբը՝ մեր թա-
գաւորը։
19 Այն ժամանակը տեսիլքով
խօսեցիր քո սուրբի հետ. և ա-
սեցիր՝ Օգնութիւն դրի զօրաւո-
րի վերայ. բարձրացրի ընտրուա-
ծին ժողովրդի միջիցը։
20 Իմ Դաւիթ ծառային գտայ,
իմ սուրբ իւղովն օծեցի նորան.
21 Որ իմ ձեռքը կ'հաստատէ նո-
րան, և բազուկս կ'զօրացնէ նո-
րան։
22 Թշնամին չի նեղացնիլ նորան,
և անօրէնութեան որդին չի չար-
չարիլ նորան։
23 Բայց ես կ'փշրեմ նորա թշ-
նամիներին նորա երեսի առա-
ջին, և կ'զարկեմ նորա ատողնե-
րին։
24 Եւ իմ ճշմարտութիւնն ու
իմ ողորմութիւնը նորա հետ կը
լինի, և իմ անունովը կ'բարձրա-
նայ նորա եղջիւրը։
25 Եւ նորա ձեռքը կ'դնեմ ծովի
մէջ, և նորա աջ ձեռքը գետե-
րի մէջ։
26 Նա դէպի ինձ կ'կանչէ, Դու
ես իմ Հայրը, ով իմ Աստուած
և իմ փրկութեան Վէմ։
27 Եւ ես առաջինեկ կ'դնեմ նո-
րան՝ երկրի թագաւորների վե-
րայ բարձրացած.
28 Յաւիտեան կ'պահեմ նորա
համար իմ ողորմութիւնը. և իմ
ուխտը հաւատարիմ կ'լինի նորա
հետ։
29 Եւ ես յաւիտեան կ'հաստա-
տեմ նորա զաւակին. և նորա ա-
թոռը ինչպէս երկնքի օրերը։
30 Եթէ նորա որդիքն իմ օրէնքը
թողեն, և իմ իրաւունքի մէջ
չ'գնան,
31 Եթէ նորանք իմ հրամաններն
անարգեն, և իմ պատուիրանք-
ները չ'պահեն.
32 Ապա գաւազանով կ'պատժեմ
նորանց անօրէնութիւնը, և ծե-
ծելով նորանց անիրաւութիւ-
նը։
33 Բայց իմ ողորմութիւնը չեմ
կարիլ նորանից, և իմ հաւա-
տարմութիւնը չեմ դրժիլ։
34 Իմ ուխտը չեմ անարգիլ և
իմ շրթունքներիցը դուրս եկածը
չեմ փոխիլ։
35 Մէկ անգամ երդում եմ ա-
րել իմ սրբութիւնովը, թէ սուտ
չեմ ասիլ Դաւիթին։
36 Նորա զաւակը յաւիտեան պի-
տի լինի, և նորա աթոռը ինչպէս
արեգակն իմ առաջին։
37 Ինչպէս լուսինը յաւիտեան
հաստատ պիտի լինի, և ինչպէս
վկան ամպերումը՝ հաւատարիմ։
(Սէլա։)
38 Բայց հիմա երեսից գցեցիր և
անարգեցիր, բարկացար քո օծ-
եալին վերայ։
39 Քո ծառայի ուխտը փչացրիր.
նորա պսակը գետնի տալով պըղ-
ծեցիր։
40 Նորա ամեն պարիսպները քան-
դեցիր, նորա ամուր տեղերն ա-
ւերակ արիր։
41 Բոլոր ճանապարհովը անցնող-
ները կողոպտում են նորան. նա
նախատինք եղաւ իր հարևանն-
երի առաջին։
42 Նորա նեղացնողների աջ ձեռ-
քը բարձրացրիր. նորա ամեն թշ-
նամիներին ուրախացրիր։
43 Նաև նորա սրի բերանը ետ
դարձրիր, և պատերազմի մէջ չը
հաստատեցիր նորան։
44 Նորա փառաւորութիւնը հան-
դեցրիր, և նորա աթոռը գետի-
նը գցեցիր։
45 Նորա երիտասարդութեան օ-
րերը կարճեցրիր, ամօթով ծած-
կեցիր նորան։ (Սէլա։)
46 Տէր, մինչև ե՞րբ կ'թագցնես
քո անձը, և քո սրտմտութիւնը
կրակի պէս կ'բորբոքուի՞։
47 Յիշիր թէ ի՞նչ անցաւոր եմ, և
քանի՞ ունայն ստեղծեցիր մարդ-
կանց ամեն որդիքը։
48 Ո՞վ է այն մարդը որ ապրի և
մահ չ'տեսնէ. և իր անձը դժոխ-
քի ձեռիցը փրկէ։ (Սէլա։)
49 Ո՞ւր է քո առաջի ողորմութիւ-
նը, Տէր. որ երդում արիր Դա-
ւիթին քո ճշմարտութիւնովը։
50 Յիշիր, Տէր, քո ծառաների նա-
խատինքը, որ իմ ծոցումը քա-
շում եմ ամեն զօրաւոր ազգե-
րիցը.
51 Որ նորանով քո թշնամիներն
անարգում են, Տէր, որ նորա-
նով անարգում են քո օծեալի
քայլերը։
52 Օրհնեալ է Տէրը յաւիտեան։
Ամէն և ամէն։

*գ. Թագ. դ. 31։ ա Մն. բ. 6։

ՍԱՂ. Ղ.

*Աստուծոյ մարդ Մովսէսի Աղօթք։

1 Ով Տէր, դու մեզ համար ապաւէն ես ազգից մինչև ազգ։
2 Դեռ որ սարերը չէին ծնուած, և երկիրս ու աշխարհքս չէիր ըստեղծել. յաւիտենից մինչև յաւիտեան դու ես Աստուած։
3 Դու մարդին փոշի ես դարձնում և ասում՝ Ետ դարձէք, մարդկանց որդիք։
4 Որովհետև հազար տարին քո առաջին ինչպէս երէկուան օրն է, որ անց կացաւ. և ինչպէս մին պահ դիշերումը։
5 Ջրհեղեղով ողողում ես նորանց, և նորանք քուն են լինում. ինչպէս խոտ, որ առաւօտանց †կանանչանում է։
6 Առաւօտանց ծաղկում է և անցնում. իրիկունը կտրվում է և չորանում։
7 Որովհետև մաշուեցանք քո բարկութիւնովը, և քո սրտմտութիւնովը շփոթուեցանք։
8 Մեր անօրէնութիւնները դրիր քո առաջին, մեր ծածուկ մեղքերը քո երեսի լուսի մէջ.
9 Որովհետև մեր բոլոր օրերը փչանում են քո բարկութիւնովը. մեր տարիներն անց ենք կացնում ինչպէս ափեղցփեղ խօսք։
10 Մեր տարիների օրերը եօթանասուն տարի են, և եթէ զօրութիւնով ութսուն տարի էլ լինին, նորանց փառքն աշխատանք է և ցաւ. որովհետև շուտով է անց կենում, և մենք թռչում ենք։
11 Ո՞վ գիտէ քո բարկութեան զօրութիւնը, և քո սրտմտութիւնը՝ քո վախի պէս։
12 Սովորեցրու մեզ, որ այնպէս համարենք մեր օրերը, որ իմաստուն սիրտ ընդունենք։
13 Դարձիր, Տէր, մինչև ե՞րբ. խղճացիր քո ծառաների վերայ։
14 Կշտացրու մեզ առաւօտանց քո ողորմութիւնովը որ ցնծանք և ուրախ լինինք մեր ամեն օրերումը։
15 Ուրախացրու մեզ այն օրերի չափովը, որ տրտմացրիր մեզ. այն տարիների չափովը, որ նեղութիւն տեսանք։
16 Թող երևի քո ծառաներին քո գործը, և քո փառքը նորանց որդկանցը։
17 Եւ մեր Աստուծոյ վայելչութիւնը լինի մեզ վերայ. և մեր ձեռքի գործերը հաստատիր մեզանում, և մեր ձեռքի գործը հաստատիր։

ՍԱՂ. ՂԱ

1 Բարձրեալի ծածկոցի տակ բընակողը Ամենակարողի շուքի տակ է հանգստանում։
2 Ես կ'ասեմ Տիրոջը. Իմ ապաւէն և իմ ամրոց, իմ Աստուած, որին ես յուսացած եմ։
3 Որովհետև նա կ'փրկէ քեզ որսողի որոգայթիցը, չար ժանտամահիցը։
4 Նա կ'ծածկէ քեզ իր փետուրներովը, նորա թևերի տակ ապահով կ'լինիս. նորա ճշմարտութիւնը ասպար է և զրահ։
5 Դու չես վախենալ դիշերի զարհուրանքից. այն նետիցը որ թռչում է ցերեկը։
6 Այն ժանտախտիցը, որ խաւարումը շուռ է գալիս. այն հարուածիցը, որ սատկեցնում է կէս օրումը։
7 Հազար հոգի քո կողմիցը կ'ընկնեն, և տասն հազար՝ քո աջ կողմիցը. բայց քեզ չի մօտենալ։
8 Միայն քո աչքերովը կ'նայիս, և ամբարիշտների հատուցումը կ'տեսնես։
9 Որովհետև դու ես, Տէր, իմ յոյսը. դու Բարձրեալին քեզ ապաւէն արիր.
10 Քեզ չար բան չի հասնիլ. և նեղութիւն չի մօտենալ քո բնակարանին։
11 Որովհետև իր հրեշտակներին հրամայել է քեզ համար, որ

*Բ Օր. լգ. 1։
†Կամ անց է կենում։

պահեն քեզ քո բոլոր ճանապարհներումը։
12 Նորանք ձեռների վերայ կ'առնեն քեզ, որ քո ոտը քարի չը դպցնես։
13 Առիւծների և իժերի վերայ կը գնաս. առիւծի կորիւններին և վիշապին ոտով կոխ կ'տաս։
14 Որովհետև նա ինձ ցանկացաւ՝ և ես կ'փրկեմ նորան. ես բարձր կ'անեմ նորան, որ նա ճանաչում է իմ անունը։
15 Նա կ'կանչէ դէպի ինձ՝ և ես կը լսեմ նորան. ես նորա հետ կ'լինիմ նեղութեան մէջ. կ'ապրեցնեմ նորան և փառաւոր կ'անեմ նորան։
16 Երկայն օրերով կ'կշտացնեմ նորան. և իմ փրկութիւնը ցոյց կ'տամ նորան։

ՍԱՂ. ՂԲ

Սաղմոս. երգ. Շաբաթ օրուայ համար։

1 Բարի է գոհանալ Տէրիցը, և սաղմոս ասել քո անունին, ով Բարձրեալ։
2 Առաւօտանց պատմել քո ողորմութիւնը, և դիշերը քո ճշմարտութիւնը.
3 Տասնաղեայ նուագարանով և սաղմոսարանով. օրհնութեան ձայնով քնարի հետ։
4 Որովհետև դու, Տէր, ուրախացրիր ինձ քո գործերովը. քո ձեռքի գործերովը ցնծում եմ։
5 Ով Տէր, քանի՞ մեծ են քո գործերը. շատ խո՞ր են քո խորհուրդները։
6 Յիմար մարդը չէ իմանում, և անմիտը չէ հասկանում այս։
7 Ամբարիշտները խոտի պէս բուսնելիս՝ ծաղկում են բոլոր անօրէնութիւն գործողները, որ սատկեն յաւիտեանս յաւիտենից։
8 Բայց դու, Տէր, բարձր ես յաւիտեան։
9 Որովհետև ահա քո թշնամիները, Տէր, ահա քո թշնամիները կ'կորչեն. և կ'ցրուին բոլոր անօրէնութիւն գործողները։
10 Բայց իմ եղջիւրը կ'բարձրացնես ինչպէս միեղջերուինը. ես օծուած եմ նոր իւղով։
11 Եւ իմ աչքը կ'նայի իմ թշնամիների վերայ. և ականջս կը լսէ այն չարագործների մասին, որ վեր կացան ինձ վերայ։
12 Արդարը արմաւենիի պէս կը բուսնի. Լիբանանի մայրին պէս կ'մեծանայ։
13 Տիրոջ տան մէջ տնկուածները մեր Աստուծոյ սրահներումը կ'բուսնեն։
14 Ծերութեան մէջ էլ պտուղ կ'բերեն. պարարտ և դալար կը լինին.
15 Որ պատմեն, թէ ուղիղ է Տէրը՝ իմ վէմը, և անիրաւութիւն չ'կայ նորանում։

ՍԱՂ. ՂԳ

1 Տէրը թագաւոր է. նա մեծափառութիւն է հագած. Տէրը զօրութիւն է հագած և իր մէջքը կապած է. սորա համար աշխարհքը հաստատ է և չէ շարժվում։
2 Հաստատ է քո աթոռը սկզբիցը. յաւիտենից ես դու։
3 Գետերը բարձրացնում են, Տէր, գետերը բարձրացնում են իրանց ձայնը, գետերը բարձրացնում են իրանց գոռոցը։
4 Շատ ջրերի ձայնիցը աւելի զօրաւոր են ծովի ալիքները. աւելի զօրաւոր է Տէրը բարձրութեան մէջ։
5 Քո վկայութիւնները շատ հաւատարիմ են. քո տանը վայելուչ է սրբութիւն, ով Տէր, երկայն օրերով։

ՍԱՂ. ՂԴ

1 Ով Տէր՝ վրէժխնդրութեան Աստուած, ով վրէժխնդրութեան Աստուած, յայտնուիր։
2 Բարձրացիր, ով երկրի Դատաւոր, հատուցում տուր ամբարտաւաններին։
3 Ով Տէր, ամբարիշտները՝ մինչև ե՞րբ, ամբարիշտները մինչև ե՞րբ կ'պարծենան։

4 Նորանք բղխում և խօսում են
գոռող բանէր. բոլոր անօրէնու-
թիւն գործողները պարծենում
են։
5 Տէր, նորանք կոխ են տալիս քո
ժողովուրդը. և նեղացնում են
քո ժառանգութիւնը։
6 Սպանում են որբևայրիին և
պանդուխտին. և որբերին կոտո-
րում են.
7 Եւ ասում. Տէրը չէ տեսնում,
և Յակոբի Աստուածը չէ իմա-
նում։
8 Իմացէք, ով յիմարներ ժողո-
վրդի մէջ. և դուք, ո՞վ ան-
միտներ, ե՞րբ կ'հասկնաք։
9 Մի՞թէ ականջը տնկողը չի լսիլ.
կամ թէ աչքը ստեղծողը չի՞
տեսնիլ։
10 Մի՞թէ ազգերը խրատողը չի
յանդիմանիլ. Նա որ մարդիս
գիտութիւն է սովորեցնում։
11 Տէրը ճանաչում է մարդկանց
խորհուրդները, որ ունայն են։
12 Երանի այն մարդին որ դու
խրատում ես նորան, ով Տէր.
և քո օրէնքիցը սովորեցնում ես
նորան.
13 Որ հանգստացնես նորան չա-
րութեան օրերիցը. մինչև որ հոր
փորուի ամբարշտի համար։
14 Որովհետև Տէրը երեսից չէ գը-
ցում իր ժողովուրդը, և չէ թո-
ղում իր ժառանգութիւնը։
15 Որ դատաստանը դէպի արդա-
րութիւն դառնայ. և նորա ե-
տևից կ'գնան բոլոր սրտով ուղիղ-
ները։
16 Ո՞վ վեր կ'կենայ ինձ հետ չա-
րերի դէմ. ո՞վ ինձ հետ կ'կանգ-
նի նորանց դէմ որ անօրէնու-
թիւն են գործում։
17 Եթէ Տէրն օգնութիւն չ'լինէր
ինձ, քիչ կ'մնար որ իմ անձը
լռութեան մէջ բնակուէր։
18 Եթէ ասում եմ. Ոտս դողդո-
ղում է. Տէր, քո ողորմութիւնը
հաստատում է ինձ։
19 Իմ հոգերն իմ սրտումը շա-
տանալիս՝ քո մխիթարութիւն-
ներն ուրախացնում են ինձ։
20 Մի՞թէ անօրէնութեան աթո-
ռը քեզ հետ հաղորդակից է, որ
չարիք է շինում հրամանի դէմ։
Նորանք ժողովվում են արդա- 21
րի անձի դէմ, և անմեղի արիւնը
դատապարտում։
Բայց Տէրն ինձ ապաւէն է, և 22
իմ Աստուածն է իմ յոյսի վէմը։
Եւ նա նորանց կ'հատուցանէ 23
իրանց անօրէնութեան պէս. և ի-
րանց չարութիւնովը կ'ջնջէ նո-
րանց. մեր Տէր Աստուածը կ'ջնջէ
նորանց։

ՍԱՂ. ՂԵ

Եկէք ցնծանք Տէրովը. աղաղա- 1
կենք դէպի մեր փրկութեան Վէ-
մը։
Թող գոհութիւն տալով դանք 2
նորա երեսի առաջը, սաղմոսնե-
րով աղաղակենք դէպի նա։
Որովհետև Տէրը մեծ Աստուած 3
է, և մեծ թագաւոր՝ ամեն աստ-
ուածների վերայ։
Որ նորա ձեռքին են երկրի 4
խորքերը. և սարերի բարձրու-
թիւնները նորանն են։
Որ նորանն է ծովը, և նա ա- 5
րաւ նորան. և նորա ձեռքերն
ստեղծեցին ցամաքը։
Եկէք երկրպագութիւն անենք 6
և երեսի վերայ ընկնենք. ծունը
դնենք մեզ ստեղծող Տիրոջ ա-
ռաջին.
Որովհետև նա է մեր Աստուա- 7
ծը, և մենք նորա արօտի ժողո-
վուրդը և նորա ձեռքի ոչխար-
ներն ենք. այսօր եթէ նորա ձայ-
նը լսէք։
Մի պնդացնէք ձեր սրտերը 8
ինչպէս Մերիբայումը, ինչպէս
փորձութեան օրումը անապատի
մէջ։
Ուր որ ձեր հայրերը փորձեցին 9
ինձ. քննեցին ինձ թէև իմ գոր-
ծերը տեսան։
Քառասուն տարի զզուեցայ այն 10
ազգիցը. և ասեցի՝ նորանք այն-
պիսի ժողովուրդ են որ մոլորուած
են սրտով. նորանք չեն ճանաչում
իմ ճանապարհները.
Որ երդում արի իմ բարկու- 11
թիւնումը, թէ նորանք չեն մըտ-
նիլ իմ հանգստութիւնը։

ՍԱՂ. ՂԶ

1 Տիրոջը նոր երգ երգեցէք. եր-
գեցէք Տիրոջը ամեն երկիր։
2 Երգեցէք Տիրոջը. օրհնեցէք նո-
րա անունը. քարոզեցէք օրէ ցօր
նորա փրկութիւնը։
3 Պատմեցէք հեթանոսների մէջ
նորա փառքը, ամեն ազգերի մէջ
նորա հրաշքները։
4 Որովհետև Տէրը մեծ է և շատ
օրհնուած. ահաւոր է նա ամեն
աստուածների վերայ։
5 Որովհետև ազգերի բոլոր աստ-
ուածները կուռքեր են, բայց
Տէրն արաւ երկինքը։
6 Փառք և մեծութիւն կայ նո-
րա առաջին. զօրութիւն և գե-
ղեցկութիւն նորա սրբութեան
մէջ։
7 Տուէք Տիրոջը, ով ազգերի ցե-
ղեր, տուէք Տիրոջը փառք և զօ-
րութիւն։
8 Տուէք Տիրոջը նորա անունի
փառքը. ընծայ բերէք, և մտէք
նորա սրահները։
9 Երկրպագութիւն արէք Տիրոջը
սուրբ զարդարանքով. վախեցէք
նորա երեսիցը, ով ամեն երկիր։
10 Ասեցէք հեթանոսների մէջ՝
Տէրն է թագաւոր. սորա հա-
մար աշխարհքը հաստատ է, չէ
շարժվում. նա ժողովուրդները
կ'դատէ ուղղութիւնով։
11 Երկինքը թող ուրախ լինի և
երկիրը ցնծայ. ծովը գոռգոռայ
իր լիութիւնովը։
12 Դաշտն ուրախանայ և ամենն
որ նորանում կայ. թող ցնծան
անտառի ամեն ծառերը.
13 Տիրոջը առաջին, որ նա գալիս
է՝ գալիս է որ երկիրը դատէ. նա
աշխարհքը կ'դատէ արդարու-
թիւնով, և իր ժողովուրդներին
իր ճշմարտութիւնովը։

ՍԱՂ. ՂԷ

1 Տէրն է թագաւոր, թող երկի-
րը ցնծայ և շատ կղզիներն ու-
րախ լինին։
2 Ամպ և մառախուղ կայ նորա
չորս կողմովը. արդարութիւն և
իրաւունք նորա աթոռի հիմունքն
են։
Կրակ է գնում նորա առջևից. 3
և չորս կողմովը այրում է նորա
թշնամիներին։
Նորա փայլակները լուսաւո- 4
րում են աշխարհքը. երկիրը տես-
նում է և դողում։
Սարերը մոմի պէս հալվում են 5
Տիրոջ երեսիցը, ամեն երկիր՝ Տի-
րոջ երեսիցը։
Երկինքներն պատմում են նորա 6
արդարութիւնը. և բոլոր ժողո-
վուրդները տեսնում են նորա
փառքը։
Թող ամաչեն բոլոր կուռքերի 7
ծառայողները, որ պարծենում են
փուչ կուռքերով. բոլոր աստ-
ուածները նորան երկրպագու-
թիւն անեն։
Սիօնը լսում է և ուրախանում 8
է և Յուդայի աղջիկները ցնծում
են, քո իրաւունքի համար, Տէր։
Որովհետև դու, ով Տէր, բար- 9
ձրեալ ես բոլոր երկրի վերայ,
շատ բարձրացար բոլոր աստուած-
ների վերայ։
Ով Տիրոջը սիրողներ, ատեցէք 10
չարը. նա պահում է իր սուր-
բերին անձերը. ամբարիշտների
ձեռքիցը կ'փրկէ նորանց։
Լոյս է *ծագում արդարին, և 11
ուրախութիւն՝ սրտով ուղիղնե-
րին։
Ուրախացէք Տէրովը, ով ար- 12
դարներ, և օրհնեցէք նորա սուրբ
յիշատակը։

ՍԱՂ. ՂԸ

Սաղմոս։

Տիրոջը նոր երգ երգեցէք. որ նա 1
հրաշքներ արաւ. փրկեց նորան
նորա աջ ձեռքը և նորա սուրբ
բազուկը։
Տէրը ճանաչեցրեց իր փրկու- 2
թիւնը. և ազգերի աչքի առա-
ջին յայտնեց իր արդարութիւնը։
Նա յիշեց իր ողորմութիւնը և 3
իր ճշմարտութիւնը Իսրայէլի

*Եբր. ցանում

ման վերայ. երկրի ամեն ծայրերը տեսան մեր Աստուծոյ փրկութիւնը։
4 Ցնծացէք Տիրոջ առաջին, ով ամեն երկիր. օրհնեցէք, և երգեցէք, և սաղմոս ասեցէք։
5 Սաղմոս ասեցէք Տիրոջը քնարով. քնարով և սաղմոսների ձայնով։
6 Փողով և շեփորի ձայնով ցընծացէք Եհովայ թագաւորի առաջին։
7 Թող գոռայ ծովը և նորա լիութիւնը. աշխարհքը և նորա նուագ բնակողները։
8 Գետերը ծափ տան ձեռքով. սարերը միասին ցնծան,
9 Տիրոջ առաջին. որ նա գալիս է երկիրը դատելու, նա կ'դատէ աշխարհքը արդարութիւնով, և ժողովուրդներին՝ ուղղութիւնով։

ՍԱՂ. Ղ

1 Տէրն է թագաւոր. ժողովուրդները թող շփոթուին. նա նըստած է քերովբէների վերայ՝ թող երկիրը շարժուի։
2 Տէրը մեծ է Սիօնում. և նա բարձր է ամեն ժողովուրդների վերայ։
3 Թող օրհնեն քո մեծ և ահաւոր անունը. որ սուրբ է։
4 Եւ թագաւորի զօրութիւնը իրաւունք է սիրում. դու հաստատեցիր ուղիղ կարգը. դու իրաւունք և արդարութիւն արիր Յակոբի մէջ։
5 Բարձր արէք մեր Տէր Աստուծուն. և երկրպագութիւն արէք նորա ոտների պատուանդանի առաջին. նա սուրբ է։
6 Մովսէսը և Ահարոնը նորա քահանաների մէջ, և Սամուէլը նորա անունը կանչողների մէջ, դէպի Տէրը կանչեցին և նա լսեց նորանց։
7 Ամպի սիւնում նա խօսում էր նորանց հետ. նորանք պահում էին նորա վկայութիւնները և օրէնքը որ տուաւ նորանց։
8 Ով Տէր՝ մեր Աստուածը, դու որ լսում էիր նորանց. դու նորանց համար Ներող Աստուած էիր, թէև վրէժ խնդրող նորանց գործերի համար։
9 Բարձր արէք մեր Տէր Աստուածուն և երկրպագութիւն արէք դէպի նորա սուրբ սարը, որ մեր Տէր Աստուածը սուրբ է։

ՍԱՂ. Ճ

Գոհութեան համար Սաղմոս։

1 Աղաղակեցէք դէպի Տէրը, ով ամեն երկիր։
2 Ծառայեցէք Տիրոջն ուրախութիւնով. եկէք նորա երեսի առաջը ցնծութիւնով։
3 Ճանաչեցէք որ Տէրն է Աստուած. նա արաւ մեզ, և ոչ թէ մենք, որ մենք նորա ժողովուրդը և նորա արօտի ոչխարներն ենք։
4 Մտէք նորա դռները գոհութիւնով. նորա սրահները փառաբանութիւնով. գոհացէք նորանից և օրհնեցէք նորա անունը։
5 Որովհետև Տէրը բարի է և նորա ողորմութիւնը յաւիտեան. և նորա ճշմարտութիւնը ազգից մինչև ազգ։

ՍԱՂ. ՃԱ

Դաւթի Սաղմոս։

1 Ողորմութիւն և իրաւունք երգեմ. քեզ, ով Տէր, սաղմոս ասեմ։
2 Խոհեմութիւնով կ'գնամ կատարելութեան ճանապարհում. ե՞րբ կ'գաս ինձ մօտ. իմ սրտի անմեղութիւնովը կ'գնամ իմ տան մէջ։
3 Իմ աչքի առաջին չար բան չեմ դնիլ. անօրէնութիւն գործողին ատում եմ. նա ինձ չ'մօտենայ։
4 Ծուռ սիրտը պիտք է հեռանայ ինձանից. չարին չեմ ճանաչիլ։
5 Նա որ ծածուկ բամբասում է իր ընկերի դէմ, նորան կ'ջնջեմ. նա որ ամբարտաւան է աչքերով և հպարտ սրտով, նորան չեմ կարող համբերել։

6 Իմ աչքերը երկրի հաւատարիմների վերայ է, որ ինձ հետ բնակուեն. անմեղ ճանապարհ գնացողը կ'ծառայէ ինձ։
7 Ներգործութիւն անողը չի բնակուիլ իմ տան մէջ. նա որ սուտ է խօսում՝ հաստատ չի մնալ իմ աչքի առաջին։
8 Առաւօտանց կ'ջնջեմ երկրի ամեն ամբարիշտներին, որ Տիրոջ քաղաքիցը ատակեցնեմ բոլոր անօրէնութիւն գործողներին։

ՍԱՂ. ՃԲ

Աղքատի աղօթքը, *երբոր մաշուում և Տիրոջ առաջին թափում է իր ցաւը։

1 Ով Տէր, լսիր իմ աղօթքը, և իմ աղաղակը թող քեզ մօտ գայ։
2 Մի թագցնիր երեսդ ինձանից իմ նեղութեան օրը, խոնարհեցրու ականջդ ինձ մօտ. այն օրը որ կանչեմ՝ շուտով պատասխան տուր ինձ։
3 Որովհետև իմ օրերը ծուխի պէս վերջացան և իմ ոսկորները չոր խոտի պէս սպրուեցան։
4 Սիրտս կտրուեցաւ և ցամաքեց խոտի նման. որ հաց ուտելս էլ մոռացայ։
5 Հառաչանքիս ձայնիցը ոսկորս իմ մարմնիս կպաւ։
6 Ես նմանեցայ անապատի հաւալուսին, աւերակների բուին պէս եղայ։
7 Անքուն մնացի և նման եղայ կտուրի վերայ մինակ ծտի։
8 Ամեն օր նախատում են ինձ իմ թշնամիները, ինձ դէմ կատաղածները երդում են անում ինձանով։
9 Որովհետև մոխիրը ուտում եմ հացի պէս ու խմիչքս արտասուքի հետ եմ խառնում,
10 Քո բարկութեան և սրտմտութեան համար, որ դու ինձ վեր առար և դէն գցեցիր։
11 Իմ օրերը երկարացած շուքի պէս են, և ես խոտի պէս չորացայ։
12 Բայց դու, Տէր, յաւիտեան կաս, և քո յիշատակը ազգից մինչև ազգ։
13 Դու վեր կ'կենաս, Սիօնին կ'ողորմես. որովհետև ժամանակ է նորան ողորմելու. որովհետև որոշուած ժամանակը հասաւ։
14 Որովհետև քո ծառաները հաւանեցին նորա քարերին, և նորա փոշին խղճ են գալիս։
15 Ապա հեթանոսները կ'վախենան Տիրոջ անունից, և երկրի բոլոր թագաւորները քո փառքից։
16 Որ Տէրը շինեց Սիօնը, երեւեցաւ իր փառքով։
17 Նա մտիկ է տալիս խղճերի աղօթքին, և չէ անարգում նորանց աղօթքը։
18 Սա պիտի գրուի եկող ազգի համար. և ստեղծուելու ժողովուրդը Տիրոջը կ'գովէ։
19 Որ նա իր սրբութեան բարձրութիւնից մտիկ է տալիս. Տէրը երկնքիցը նայում է երկրի վերայ։
20 Որ լսէ կապուածի հառաչանքը, և արձակէ մահի որդիները։
21 Որ պատմեն Սիօնում Տիրոջ անունը, և նորա գովաբանքը Երուսաղէմում։
22 Երբոր մէկտեղ կ'ժողովուին ժողովուրդները և թագաւորութիւնները՝ Տիրոջը ծառայելու համար։
23 Նա թուլացրեց ճանապարհումը իմ զօրութիւնը. և կարճացրեց իմ օրերը։
24 Ես ասեցի. Ով Աստուած իմ վեր մի առներ ինձ իմ օրերի կէսում. քո տարիները ազգից մինչև ազգ են։
25 Առաջուց երկրի հիմունքը հաստատեցիր, և քո ձեռքի գործն է երկինքը։
26 Նորանք կ'կորչեն, բայց դու կ'մնաս. և նորանք ամենը շորի պէս կ'մաշուին. հագուստի պէս կ'փոխես նորանց, և նորանք կը փոխուեն.
27 Բայց դու նոյնն ես. և քո տարիները չեն վերջանալ։

*Սաղ. կա. 2, ճխբ. 2։

28 Քո ծառաներդ որդիքդ կ'բնակուեն. և նորանց սերունդը հաստատ կ'մնայ քո առաջին։

ՍԱՂ. ՃԴ

Դաւիթի Սաղմոս։

1 Օրհնիր Տիրոջը, ով իմ անձը, և բոլոր իմ ներքինքս նորա սուրբ անունը։

2 Օրհնիր Տիրոջը, ով իմ անձը, և մի մոռանար նորա բոլոր բարիքները։

3 Որ ներում է քո բոլոր մեղքերը, բժշկում է քո ամեն ցաւերը։

4 Որ փրկում է քո կեանքն ապականութիւնից, որ պսակում է քեզ շնորհքով և ողորմութիւնով։

5 Որ կշռացնում է քո սիրտը բարութիւնով. և քո մանկութիւնը նորոգվում է արծուի պէս։

6 Արդարութիւն է անում Տէրը, և իրաւունք բոլոր զրկեալներին։

7 Նա իմաց արաւ իր ճանապարհները Մովսէսին, Իսրայէլի որդկանցն իր գործերը։

8 Բարեգութ և ողորմած է Տէրը. երկայնամիտ և բազմագութ։

9 Նա խպատ չի բարկանալ, և ոխ չի պահիլ յաւիտեան։

10 Նա չէ անում մեզ մեր մեղքերի համեմատ. և չէ հատուցանում մեզ մեր անօրէնութիւնների համեմատ։

11 Այլ որքան որ բարձր է երկինքը երկրիս վերայ, այնքան զօրաւոր է նորա գութը իրանից վախեցողների վերայ։

12 Որքան որ արևելքը հեռու է արևմուտքից, այնքան նա հեռացրեց մեզանից մեր յանցանքները։

13 Ինչպէս որ հայրը կ'գթայ որդիներին, այնպէս գթած է Տէրը իրանից վախեցողներին։

14 Որովհետև նա գիտէ մեր կազմուածքը. յիշում է որ հող ենք մենք։

15 Մարդիս օրերը խոտի նման են. ինչպէս դաշտի ծաղիկը՝ այնպէս ծաղկում է։

16 Երբոր քամին անցնում է նորա վերայ, նա էլ չկայ. և նորա տեղը այլ ևս չէ ճանաչում նորան։

17 Բայց Տիրոջ ողորմութիւնը յաւիտենից մինչև յաւիտեան իրանից վախեցողների վերայ է, և նորա արդարութիւնը որդկանց որդիների վերայ,

18 Նորա ուխտը պահողների վերայ, և նորանց վերայ որ յիշում են նորա պատուիրանքները նորանց կատարելու համար։

19 Տէրը երկնքում հաստատեց իր աթոռը, և նորա թագաւորութիւնը տիրում է բոլորին։

20 Օրհնեցէք Տիրոջը, ով նորա հրեշտակներ՝ հզօր զօրութեամբ, որ կատարում էք նորա խօսքը. նորա խօսքի ձայնը լսելով։

21 Օրհնեցէք Տիրոջը, ով նորա բոլոր զօրքեր՝ նորա պաշտօնեաներ, որ կատարում էք նորա կամքը։

22 Օրհնեցէք Տիրոջը, ով նորա բոլոր արարածներ, նորա տէրութեան ամեն տեղերում. օրհնիր Տիրոջը, ով իմ անձը։

ՍԱՂ. ՃԴ

1 Օրհնիր Տիրոջը, ով իմ անձը. ով Տէր՝ իմ Աստուած, դու շատ մեծ ես. գեղեցկութիւն և փառք հագած ես։

2 Լոյս ես հագնում ինչպէս հանդերձ. երկինքը տարածում ես ինչպէս վարագոյր։

3 Նա իր վերնատունները ջրերի վերայ է շինում՝ ամպերը շինում է իրան կառք. քամիի թևերի վերայ է գնում՝

4 Իր հրեշտակները քամիներ է շինում՝ իր պաշտօնեաները սրբող կրակ։

5 Նա հաստատեց երկիրն իր հիմունքի վերայ, որ տեղիցը չ'շարժուի բնաւ և յաւիտեան։

6 Անդունդովը ծածկեցիր նորան ինչպէս հանդերձով. ջուրերը կանգնում են սարերի վերայ։

7 Քո սաստելուցը փախչում են նորանք, քո որոտմանքի ձայնից սարսափելով ետ են գնում։

8 Սարերը բարձրանում են, ձորերը իջնում՝ այնտեղ ուր որ հաստատեցիր նորանց համար։

9 Դու սահման դրիր, նորանով չեն անց կենալ. յետ չեն դառնալ, որ երկիրը ծածկեն։

10 Դու աղբիւրներ ես բղխեցնում ձորերումը. սարերի միջովը գնում են նորանք։

11 Նորանք խմեցնում են բոլոր վայրի գազաններին, և վայրի էշերը կուրծում են իրանց ծարաւը։

12 Նորանց վերայ երկնքի թռչուններն են բնակվում. ճիւղերի միջից ձայն են տալիս։

13 Նա խմեցնում է սարերին իր վերնատներիցը. քո գործերի պտուղներովը կշտացնում ես երկիրը։

14 Խոտ է բուսցնում անասուններին համար. և բանջար մարդի օգտի համար. որ հաց հանես երկրիցը։

15 Եւ գինի, որ ուրախացնում է մարդի սիրտը, նորա երեսը փայլեցնում է իւղից. և հաց, որ հաստատում է մարդի սիրտը։

16 Կշտանում են Տիրոջ ծառերը՝ Լիբանանի մայրերը, որ նա տնկեց։

17 Որ այնտեղ թռչուններըը բոյն են դնում, և արագիլը եղևնիների վերայ չինում է իր տունը։

18 Բարձր սարերը վայրի այծերի համար ապաւէն են, և վէմերը՝ ճագարների։

19 Նա շինեց լուսինը ժամանակների համար, արեգակը ճանաչում է իր մտնելը։

20 Խաւար ես դնում՝ և գիշեր է լինում. նորանում են գալիս անտառի ամեն գազանները։

21 Առիւծների կորիւնները մռնչում են յափշտակելու, և Աստուածմանից խնդրում են իրանց կերակուրը։

22 Երբոր արեգակը դուրս է գալիս՝ ետ են քաշվում, և իրանց որջերումը պառկում։

Մարդը դուրս է գնում իր գործին և իր ծառայութեանը մինչև իրիկուն։

Որքան մեծ են քո գործերը, ով Տէր. նորանց բոլորն իմաստութիւնով ես արել. երկիրը լիքն է քո առեղծուածներով։

Այս մեծ և լայն ծովն է. այնտեղ սողացողները անթիւ են. փոքր կենդանիներ մեծերի հետ։

Այնտեղ նաւերը գնում են գալիս. այն լեւիաթանը դու ստեղծեցիր, որ խաղայ նորանում։

Սորանք ամենքը քեզ են սպասում, որ նորանց կերակուր տաս իրանց ժամանակին։

Դու տալիս ես նորանց, և նորանք հաւաքում են. դու բաց ես անում քո ձեռքը և կշտանում են բարիքով։

Երբոր ծածկում ես քո երեսը՝ սարսափում են. Երբոր վեր ես առնում նորանց հոգին՝ մեռնում են, և իրանց հողին են դառնում։

Հոգիդ ուղարկում ես՝ ստեղծվում են. և դու նորոգում ես երկրի երեսը։

Տիրոջ փառքը յաւիտեան լինի. Տէրն ուրախ լինի իր գործերովը։

Նա նայում է երկրի վերայ, և դողում է. նա դպչում է սարերին, և նորանք ծխում են։

Ես կ'օրհնեմ Տիրոջն իմ կեանքումը, սաղմոս կ'ասեմ իմ Աստուածուն քանի որ կամ։

Քաղցր պիտի լինի իմ մտածութիւնը նորա վերայ. ես ուրախ կ'լինիմ Տէրով։

Մեղաւորները կ'պակասեն երկրիցը, և ամբարիշտներն էլ չեն լինիլ. օրհնիր Տիրոջը, ով իմ անձը։ *Ալէլուիա։

ՍԱՂ. ՃԵ

1 Գոհացէք Տէրիցը, կանչեցէք նորա անունը. պատմեցէք ազգերի մէջ նորա գործերը։

2 Օրհնեցէք նորան. սաղմոս ա-

*Այլ՝ Օրհնեցէք Տիրոջը։

ասեցէք Նորան. խօսեցէք Նորա ամէն հրաշքները։
3 Պարծենցէք Նորա սուրբ անունովը. ուրախ լինի Տիրոջը խնդրողների սիրտը։
4 Խնդրեցէք Տիրոջը և Նորա զօրութիւնը. խնդրեցէք Նորա երեսը ամէն ժամանակ։
5 Յիշեցէք Նորա հրաշքները որ արաւ. Նորա նշանները և Նորա բերանի իրաւունքը։
6 Ով Նորա Աբրահամ ծառայի զաւակներ, Նորա ընտրեալ Յակոբի որդիք։
7 Ինքը ԵՀովան է մեր Աստուածը. Նորա իրաւունքներն ամէն երկրի մէջ են։
8 Նա յիշում է յաւիտեան իր ուխտը. այն խօսքը որ պատուիրեց մինչև հազար ազգ.
9 Ա՛յն որ Աբրահամի հետ գրաւ. և իր երդումը՝ Իսահակի հետ։
10 Եւ հաստատեց, որ Յակոբի համար օրէնք և Իսրայէլի համար յաւիտենական ուխտ լինէ.
11 Ասելով. Քեզ կ՚տամ Քանանի երկիրը, որ ձեզ ժառանգութեան երկիր լինի.
12 երբ նորանք սակաւաթիւ էին, քիչ և պանդխտ՝ նորանում.
13 եւ ազգից ազգ էին գնում, թագաւորութիւնից՝ ուրիշ ժողովրդի մէջ։
14 Նա թոյլ չ՚տուաւ մարդկանց որ նեղացնեն նորանց. և թագաւորներ պատժեց նորանց համար.
15 Մի դպչիք իմ օծեալներին, և իմ մարգարէներին չար մի անէք։
16 Եւ սով կանչեց երկրի վերայ, և հացի ամէն զօրութիւնը կոտրեց։
17 Նորանց առաջից մարդ ուղարկեց. Յովսէփը ծառայութեան մէջ ծախուեցաւ։
18 Չարչարեցին Նորա ոտները կապանքի մէջ. Նորա անձը երկաթի մէջ մտաւ։
19 Մինչև այն ժամանակ որ Նորա խօսքն եկաւ. Տիրոջ խօսքը փորձեց Նորան։
20 Թագաւորն ուղարկեց և արձակեց Նորան. Նա որ ազգերի տուաւ էր ժողովուրդներին՝ ազատեց Նորան։
21 Նա տէր դրաւ Նորան իր տան վերայ, և իշխան իր ամէն ստացուածքի վերայ.
22 Որ իշխաններին կապէ իր կամքի պէս, և ծերերին իմաստուն անէ։
23 Եւ Իսրայէլն եկաւ Եգիպտոս. և Յակոբը պանդխտեաց երկաւ Քամի երկրում։
24 Եւ Նա խիստ շատացրեց իր ժողովուրդը, և Նորան զօրեղացրեց իր թշնամիներից։
25 Փոխեց Նորանց սիրտերը, որ ատեն իր ժողովուրդը, որ նենգութիւն անեն իր ծառաների դէմ։
26 Իր ծառայ Մովսէսին ուղարկեց, Ահարոնին՝ որ ընտրել էր։
27 Նորանք ցոյց տուին Նորանց մէջ Նորա նշանների գործերը, և հրաշքներ Քամի երկրում։
28 Խաւար ուղարկեց և խաւարեցրեց, և Նորա խօսքին չ՚հակառակուեցան։
29 Նորանց ջուրերը փոխեց արիւն, և Նորանց ձկներն սպանեց։
30 Նորանց երկիրը գորտեր դուրս տուաւ, թագաւորի ներսի սենեակներում էլ։
31 Ասեց՝ և շանճանճէն եկաւ. մժեղներ էլ Նորանց բոլոր սահմանների մէջ։
32 Անձրևի տեղ կարկտաւ տուաւ Նորանց, և կրակի բոց՝ Նորանց երկրում։
33 Նորանց որթերն ու թզենիները զարկեց, և Նորանց սահմանների ծառերը փշրեց։
34 Ասեց՝ և մարախ ու թրթուրն եկաւ, որ թիւ չ՚կար.
35 Որ կերաւ բոլոր խոտը Նորանց երկրում. և Նորանց արտերի պտուղը կերաւ։
36 Եւ զարկեց Նորանց երկրում ամէն անդրանիկներին՝ և Նորանց զօրութեան ամէն առջիններին։
37 Եւ Նորանց հանեց արծաթով և ոսկով, և Նորանց ցեղերում տկար մարդ չ՚կար։
38 Եգիպտոսն ուրախացաւ Նորանց դուրս գալու վերայ, որ սոքանց սարսափն ընկել էր Նորանց վերայ։
39 Ամպ տարածեց որ հովանի լինի, և կրակ՝ որ գիշերը լոյս տայ։
40 Խնդրեցին և Նա լորամարգիներ բերաւ. և երկնքի հացով կշտացրեց Նորանց։
41 Վէմը պատառեց և ջուրը բղխեցին. գետեր գնացին անջուր տեղերում։
42 Որովհետև Նա յիշեց իր սուրբ խօսքը, և իր Աբրահամ ծառային։
43 Եւ հանեց իր ժողովրդին ցնծութեամբ, և իր ընտրեալներին ուրախութիւնով։
44 Եւ հեթանոսների երկիրները տուաւ Նորանց, և ազգերի վաստակները ժառանգեցին Նորանք.
45 Որ Նորա պատուիրանքները պահեն և Նորա օրէնքները կատարեն։ Ալէլուիա։

ՍԱՂ. ՃԶ

1 Ալէլուիա։ Գոհացէք Տէրից որ բարի է. որ Նորա ողորմութիւնը յաւիտեան է։
2 Ո՞վ կ՚պատմէ Տիրոջ զօրութիւնը. ո՞վ կ՚իմացնէ Նորա բոլոր գովասանքը։
3 Երանի իրաւունք պահողներին և ամէն ժամանակ արդարութիւն անողներին։
4 Յիշիր ինձ, Տէր, քո ժողովրդի Էբէյ ըՒէյտ համաձայնութեանդ պէս, այցելութիւն արա ինձ քո փրկութիւնովը։
5 Որ տեսնեմ քո ընտրեալների յաջողութիւնը. ուրախանամ քո ազգի ուրախութիւնովը. պարծենամ քո ժառանգութիւնովը։
6 Մենք մեղանչեցինք մեր հայրերի հետ. անօրէնութիւն արինք և ամբարշտութիւն գործեցինք։
7 Մեր հայրերը Եգիպտոսում չ՚հասկացան քո հրաշքները. չը յիշեցին քո մեծ ողորմութիւնը և հակառակ կացան ծովի մօտ՝ կարմիր ծովի մօտ։
8 Բայց Նա փրկեց Նորանց իր անունի համար, որ հասկացնէ իր զօրութիւնը։
9 Եւ կարմիր ծովին սաստեց՝ և նա ցամաքեց, և Նորանց գնալ տուաւ անդունդի միջովը ինչպէս անապատում։
10 Եւ Նորանց փրկեց ատողի ձեռքիցը. և Նորանց ազատեց թշնամիի ձեռքիցը։
11 Եւ ջուրերը ծածկեցին Նորան նեղացնողներին, որ Նորանցից մէկն էլ չ՚մնաց։
12 Եւ հաւատացին Նորա խօսքերին, օրհնեցին Նորա օրհնութիւնը։
13 Բայց շուտով մոռացան Նորա գործերը, և չ՚սպասեցին Նորա խորհուրդներին։
14 Եւ ցանկացան ցանկութիւնով անապատում, և փորձեցին Աստուծուն անջուր տեղում։
15 Եւ Նա Նորանց տուաւ իրանց ուզածը. և վատութիւն ուղարկեց Նորանց անձերին։
16 Եւ Նորանք նախանձեցին Մովսէսի դէմ բանակում, և Տիրոջ սուրբ Ահարոնի դէմ։
17 Երկիրը բացուեցաւ և կուլ տուաւ Դաթանին. և ծածկեց Աբիրոնի ժողովքին։
18 Կրակ բորբոքուեցաւ Նորանց ժողովքում. բոց մաշեց ամբարիշտներին։
19 Հորէբ շինեցին գորեղութիւն տուին ձուլածոյ պատկերին։
20 Եւ իրանց փառքը փոխեցին խոտաճարակ հորթի նմանութեան։
21 Մոռացան իրանց փրկիչ Աստուծուն, որ մեծամեծ գործեր արաւ Եգիպտոսում։
22 Հրաշքներ գործի երկրում, սաւոր բաներ կարմիր ծովի վերայ։
23 Եւ ասեց որ ոչնչացնէ Նորանց, եթե Նորա ընտրեալ Մովսէսը կանգնած չ՚լիներ *մէջտեղը Նորա առաջին որ նա դարձնէ Նորա բարկութիւնը ոչնչացնելուց։
24 Եւ Նորանք անարգեցին այն ցանկալի երկիրը. չ՚հաւատացին Նորա խօսքին։
25 Տրտնջեցին իրանց վրաններում, Տիրոջ ձայնին չ՚լսեցին։
26 Եւ Նա բարձրացրեց իր ձեռ-

*Եբր.՝ պատառուածքում

քը նորանց վերայ, որ նորանց
վայր դցէ անապատումը.
27 Եւ նորանց զաւակը հեթանոս-
ների մէջ դցէ, և նորանց ցրուէ
երկիրների մէջ։
28 Բայց նորանք Բել-Փեգովրին կը-
պան, և մեռելների զոհերը կե-
րան։
29 Եւ բարկացրին Աստուծուն ի-
րանց գործերովը, և ժանտամա-
հը հասաւ նորանց վերայ։
30 Ապա Փենեհէսը վեր կացաւ և
դատաստան արաւ, և մահն ար-
գիլուեցաւ։
31 Եւ սա համարուեցաւ նորան
արդարութիւն ազգից մինչև ազգ
յաւիտեան։
32 Եւ բարկացրին նորան Մերի-
բայի ջրերի վերայ, և Մովսէսին
չար եղաւ նորանց պատճառովը։
33 Որովհետև դառնացրին նորա
հոգին, և նա մեղանչեց իր շըր-
թունքներովը։
34 Նորանք չ՚կորցրին այն ազգե-
րին, որ Տէրն ասեց նորանց.
35 Այլ խառնուեցան հեթանոս-
ների հետ և սովորեցին նորանց
գործերը։
36 Եւ ծառայեցին նորանց կուռ-
քերին. նորանք էլ որոգայթ եղան
նորանց համար։
37 Եւ նորանք մատաղ արին ի-
րանց որդիքը և իրանց աղջիկնե-
րը դևերին։
38 Եւ անմեղ արիւն թափեցին՝
իրանց որդկանց և իրանց աղջը-
կանց արիւնը, որ նորանց մատաղ
արին Քանանի կուռքերին. և եր-
կիրը պղծուեցաւ արիւնով։
39 Եւ նորանք պղծուեցան իրանց
գործերովը, և պոռնկութիւն ա-
րին իրանց արարմունքներովը։
40 Եւ Տիրոջ բարկութիւնը բոր-
բոքուեց իր ժողովրդի վերայ, և
նա զզուեց իր ժառանգութիւ-
նիցը։
41 Եւ նորանց մատնեց հեթանոս-
ների ձեռքը. և նորանց ատող-
ները տիրապետեցին նորանց վե-
րայ։
42 Եւ նորանց թշնամիները նեղա-
ցրին նորանց, և նորանք խոնարհ-
ուեցան նորանց ձեռքի տակ։

43 Նա շատ անգամ փրկեց նո-
րանց, բայց նորանք դառնացրին
նորան իրանց խորհուրդներովը, և
փչացան իրանց անօրէնութիւն-
ների պատճառով։
44 Եւ նա նայեց նորանց նեղու-
թեանը, երբոր նորանց աղաղա-
կը լսեց։
45 Եւ իր ուխտը յիշեց նորանց
համար, և զղջաց իր մեծ ողոր-
մութեան պէս։
46 Եւ նորանց ողորմութիւն գըտ-
նել տուաւ այն ամենի առաջին,
որ գերի արին նորանց։
47 Փրկիր մեզ, ով Տէր՝ մեր Աստ-
ուածը, և ժողովիր մեզ հեթա-
նոսների միջից, որ գոհանանք քո
սուրբ անունիցը և օրհնութիւ-
նովդ պարծենանք։
48 Օրհնեալ է Եհովան՝ Իսրայէլի
Աստուածը յաւիտենից մինչև
յաւիտեանս. և բոլոր ժողովուրդն
ասէ. Ամէն։ Ալէլուիա։

ՍԱՂ. ՃԷ

1 Գոհացէք Տէրիցը, որ բարի է.
որ յաւիտեան է նորա ողորմու-
թիւնը։
2 Տիրոջ փրկուածներն ասեն, որ
նորանց փրկեց թշնամիի ձեռ-
քիցը։
3 Որ նորանց ժողովեց երկիրնե-
րիցը՝ արևելքից և արևմուտքից,
հիւսիսից և *ծովից.
4 Որ նորանք մոլորուած էին անա-
պատումը՝ անջուր ճանապարհու-
մը, որ բնակուելու քաղաք չը
գտան։
5 Սոված և ծարաւ էին, և նո-
րանց անձերը թուլացան իրան-
ցում.
6 Եւ նորանք դէպի Տէրն աղա-
ղակեցին իրանց նեղութիւնումը,
և նա փրկեց նորանց իրանց վիշ-
տերիցը.
7 Եւ առաջնորդեց նորանց ու-
ղիղ ճանապարհով որ բնակուե-
լու քաղաք գնան։
8 Թող գոհանան Տէրիցը նորա
ողորմութեան համար, և նորա

*Կամ՝ հարաւից

հրաշքների համար որ արա մարդ-
կանց որդիներին.
9 Որ նա կշտացնում է կարօտած
անձին, և լցնում է սոված անձը
բարութիւնով։
10 Նորանք որ նստում էին խա-
ւարի և մահի շուքումը նեղու-
թիւնով և երկաթով կապուած.
11 Որովհետև Աստուծոյ խօսքե-
րին հակառակ կացան. և Բար-
ձրեալի խորհուրդներն անարգե-
ցին.
12 Եւ նա նորանց սիրտը խոնար-
հեցրեց նեղութիւնով, որ տկա-
րացան, և ոչ ով չ՚կար որ օգ-
նէր.
13 Եւ դէպի Տէրն աղաղակեցին
իրանց նեղութիւնումը, և նո-
րանց փրկեց իրանց վիշտերիցը.
14 Նորանց հանեց խաւարիցը և
մահուան շուքիցը և նորանց կա-
պանքները կոտրատեց.
15 Թող գոհանան Տէրիցը նորա
ողորմութեան համար, և նորա
հրաշքների համար որ արա մարդ-
կանց որդիներին։
16 Որովհետև նա պղնձի դռները
փշրեց և երկաթի նիգերը կոտ-
րատեց.
17 Յիմարներն իրանց անօրէնու-
թեան ճանապարհի համար, և
իրանց անիրաւութիւնների հա-
մար նեղութիւն քաշեցին.
18 Նորանց անձերը ամեն կերակ-
կրից զզուեցին, և մինչև մահի
դռները մօտեցան.
19 Եւ դէպի Տէրն աղաղակեցին
իրանց նեղութիւնումը, և նա նո-
րանց փրկեց իրանց վիշտերիցը.
20 Իր խօսքն ուղարկեց և նորանց
բժշկեց, և նորանց ազատեց ի-
րանց կորուստիցը։
21 Թող գոհանան Տէրիցը նորա
ողորմութեան համար և նորա
հրաշքների համար որ արա մարդ-
կանց որդիներին.
22 Եւ գոհութեան պատարագ-
ներ մատուցանեն, և նորա գոր-
ծերը պատմեն ցնծութիւնով։
23 Նորանք որ ծովն են իջնում
նաւերով, և գործ կատարում
շատ ջրերում.
24 Նորանք տեսան Տիրոջ գործե-
րը և նորա հրաշքները անդուն-
դում։
25 Նա ասեց՝ և մրրիկ քամի վեր
կացաւ. նորա ալիքները բարձրա-
ցրեց.
26 Վեր ելան երկինքը, վայր իջան
անդունդը. և նորանց անձերը
մաշուեցան նեղութիւնով.
27 Շփոթուեցան և տատանուե-
ցան ինչպէս արբած մարդ. և նո-
րանց ամեն իմաստութիւնը կո-
րաւ։
28 Եւ դէպի Տէրն աղաղակեցին
իրանց նեղութիւնումը, և նա նո-
րանց փրկեց իրանց վիշտերիցը։
29 Մրրիկ քամին հանդարտու-
թեան դարձրեց. և նորա ալիք-
ները հանդստացան.
30 Եւ նորանք ուրախացան որ դա-
դարեց. և նա առաջնորդեց նո-
րանց դէպի նաւահանդիստ, որ
ցանկանում էին նորան.
31 Թող գոհանան Տէրիցը նորա
ողորմութեան համար, և նորա
հրաշքների համար որ արա մարդ-
կանց որդիներին։
32 Եւ բարձր անեն նորան ժողո-
վրդի ժողովքումը, և ծերերի
ատեանումն օրհնեն նորան։
33 Նա գետերն անապատ է դար-
ձնում և ջրերի գնացքները՝ ծա-
րաւ երկիր.
34 Պաղաբեր երկիրն աղի հող՝ նո-
րա մէջ բնակողների չարութեան
համար։
35 Անապատը ջրերի լիճ է փո-
խում, և ծարաւ երկիրը՝ ջրերի
գնացք.
36 Եւ այնտեղ բնակեցնում է
սովածներին, և նորանք քաղաք
են հաստատում բնակուելու հա-
մար։
37 Եւ արտեր են ցանում, և այ-
գիներ տնկում, որ արմտիքների
պտուղ բերեն։
38 Եւ նա օրհնում է նորանց որ
շատ շատանան. և նորանց անա-
սունները չէ պակասեցնում.
39 Դարձեալ պակասվում են և
ցածանում չարիքների նեղու-
թիւնից և արտմութիւնից։
40 Նա անարգանք է թափում իշ-
խանների վերայ և նորանց մոլո-

բեցնուամ է անճանապարհ անապատումը.
41 Բայց բարձրացնուամ է աղքատին խեղճութիւնից, և նորա ցեղը ոչխարների հօտի պէս է շինում;
42 Ուղիղները այս կ'տեսնեն և ուրախ կ'լինեն. և ամեն անօրէնութիւն կ'խփէ իր բերանը։
43 Ո՞վ է իմաստուն որ այս բաները պահէ. և նա կ'հասկանայ Տիրոջ ողորմութիւնները։

ՍԱՂ. ՃԸ

Երգ. Դաւիթի Սաղմոս։

1 Իմ սիրտը պատրաստ է, ով Աստուած, ես կ'երգեմ և սաղմոս կ'տամ՝ նաև իմ փառքովը։
2 Զարթնիր սաղմոսարան և քընար. և ես զարթնեմ առաւօտանց։
3 Գոհանամ քեզանից, Տէր, ժողովուրդների մէջ. և սաղմոս սաւմ քեզ ազգերի մէջ։
4 Որովհետև մեծ է քո ողորմութիւնը երկնքի վերայ, և քո ճշմարտութիւնը՝ մինչև ամպերը։
5 Բարձրացիր, ով Աստուած, երկնքի վերայ, և քո փառքը բոլոր երկրի վերայ։
6 Որ քո սիրելիքն ազատուին. թող քո աջը փրկէ, և պատասխան տուր ինձ։
7 Աստուած խօսեց իր սրբարանութեամբ. ես կ'ցնծամ. Սիւքեմը կ'բաժանեմ և Սոկքովթի հովիտը կ'չափեմ։
8 Իմն է Գաղաադը և իմն է Մանասէն. Եփրեմն իմ գլխի զօրութիւնը, Յուդան իմ գաւազանն է.
9 Մովաբն իմ լուանալու ամանն է. իմ կօշիկը եդովմի վերայ կը գցեմ. Փղշտացիների երկրի վերայ կ'ցնծամ։
10 Ո՞վ կ'տանի ինձ ամուր քաղաքը. ո՞վ կ'առաջնորդէ ինձ մինչև եդովմը։
11 Ո՞չ ապաքէն դու, ով Աստուած, որ դէն գցեցիր մեզ, և չես գուրս գալիս մեր զօրքի հետ, ով Աստուած։
12 Տուր մեզ օգնութիւն նեղութեան մէջ. որովհետև մարդի փրկութիւնը փուչ է։
13 Մենք Աստուծով զօրութիւն կ'գործենք. և նա կոխ կ'տայ մեր թշնամիներին։

ՍԱՂ. ՃԹ

Երգողների գլխաւորին. Դաւիթի Սաղմոս։

1 Ով իմ փառքի Աստուած, լուռ մի կենար։
2 Որովհետև ամբարշտի բերանը և նենգաւորի բերանը բացուեցան ինձ վերայ. սուտ լեզուով խօսում են ինձ դէմ։
3 Եւատելութեան խօսքերով պատում են ինձ, և զուր տեղը կռւում են ինձ դէմ։
4 Իմ սիրոյ փոխարէն հակառակում են ինձ, բայց ես աղօթք եմ անում։
5 Եւ փոխանակ բարիի չար են հատուցանում ինձ, և իմ սիրոյ փոխարէն՝ ատելութիւն։
6 Մէկ ամբարիշտ դիր նորա վերայ, և սատանան թող կանգնի՝ նորա աջ կողմին։
7 Երբոր նա դատուի թող դատապարտուած դուրս գայ, և նորա աղօթքը մեղքի փոխուի։
8 Նորա օրերը պակասին. և նորա պաշտօնն ուրիշը առնէ։
9 Նորա որդիքը որբ լինեն, և նորա կինն այրի լինի.
10 Եւ նորա որդիքն աստանդական թափառեն և մուրան, և հաց ուզեն իրանց աւերակ բնակարանների միջից։
11 Փոխ առուողն առնէ նորա բոլոր ունեցածը, և օտարները յափշտակեն նորա վաստակը։
12 Մէկը չլինի որ նորան գթութիւն ցոյց տայ. և մէկն էլ չողորմէ նորա որբերի վերայ։
13 Նորա զաւակները աստակեն. նորանց անունը ջնջուի երկրորդ սերունդի մէջ։
14 Նորա հայրերի անօրէնութիւնը յիշուի Տիրոջ առաջին, և նորա մեր մեղքը չջնջուի։

15 Ամեն ժամանակ Տիրոջ առաջին լինի. և նա ջնջէ երկրիցը նորա յիշատակը։
16 Նորա համար որ չյիշեց ողորմութիւն անելը. այլ խեղճ և աղքատ և սրտով մաշուած մարդին հալածեց որ սպանէ։
17 Անէծք սիրեց, և նա կ'հասնէ նորան. և օրհնութիւն չկամեցաւ, և նա հեռու կ'լինի նորանից։
18 Անէծքը հագաւ ինչպէս հանդերձ. և նա ջրի պէս կ'մտնէ նորա փորը, և ձէթի պէս նորա ոսկորների մէջ։
19 Նորան այնպէս լինի ինչպէս իր հագնելիս հանդերձը՝ և ինչպէս իր միշտ կապելիս գօտին։
20 Սա վարձք լինի Տիրոջ կողմից իմ հակառակորդներին՝ և իմ անձի համար չար խօսողներին։
21 Բայց դու, Տէր Եհովայ, արա ինձ քո անուանի համեմատ, որովհետև քո ողորմութիւնը բարի է. փրկիր ինձ։
22 Որովհետև ես խեղճ եմ և աղքատ, և իմ սիրտը խոցուած է իմ ներսումը։
23 Ես անց եմ կենում ինչպէս երկարացած շուք, վռայ եմ թափվում ինչպէս մարեխ։
24 Իմ ծունկերը տկարացան ծոմից և մարմինս մաշուեցաւ էջ պարարտութիւնից։
25 Ես նախատինք եղայ նորանց առաջին, ինձ տեսնում և շարժում են իրանց գլուխները։
26 Օգնիր ինձ, Տէր իմ Աստուած. փրկիր ինձ քո ողորմութեան պէս,
27 Որ իմանան որ սա քո ձեռքն է, որ դու Տէրդ արիր սրա։
28 Նորանք անիծում են, բայց դու օրհնիր. նորանք վեր են կենում ինձ դէմ ու կ'ամաչեն, բայց քո ծառան ուրախ կ'լինի։
29 Թող ամօթ հագնեն իմ հակառակողները և իրանց ամօթը վերարկուի պէս իրանց վերայ առնեն։
30 Ես շատ գոհանամ Տէրից իմ բերանովը. և շատերի մէջ օրհնեմ նորան։
31 Որովհետև նա կանգնում է աղքատի աջ կողմին, որ նորան փրկէ նորանցից որ դատապարտում են նորա անձը։

ՍԱՂ. ՃԺ

Դաւիթի Սաղմոս։

1 Տէրն ասեց իմ Տիրոջը, իմ աջ կողմը նստիր մինչև քո թշնամիները քո ոտների կոխելիք դնեմ։
2 Տէրը Սիոնից կ'ուղարկէ քո զօրութեան գաւազանը. տիրապետիր քո թշնամիների մէջ։
3 Քո ժողովուրդը զօրութեանդ օրը յօժար կամքով պատրաստ կ'լինի սրբութեան զարդարանքով. արշալուսի արգանդիցը քեզ համար քո մանկութիւնը ցօղի պէս կ'լինին։
4 Տէրը երդում արաւ և չի զղջալ. դու քահանայ ես յաւիտեան Մելքիսեդեկի կարգին պէս։
5 Տէրը քո աջ կողմն է. նա կը ջարդէ թագաւորներին իր բարկութեան օրում։
6 Նա կ'դատէ հեթանոսների մէջ. կ'լեցնէ մեռելներով. գլուխը կ'ջարդէ շատ երկիրների մէջ։
7 Գետիցը կ'խմէ ճանապարհում. սորա համար գլուխը կ'բարձրացնէ։

ՍԱՂ. ՃԺԱ

Ալէլուիա, Տէրիցը կ'գոհանամ բոլոր սրտով ուղիղների ժողովքում ու ժողովրդի մէջ։
2 Մեծ են Տիրոջ գործերը, ցանկալի են այն ամենին, որ սիրում են նորանց։
3 Փառք և գեղեցկութիւն են նորա գործերը, և նորա արդարութիւնը մնում է յաւիտեան։
4 Յիշատակ չինեց իր հրաշքների համար, ողորմած և գթած է Տէրը։
5 Կերակուր տուաւ իրանից վախեցողներին. նա յաւիտեան յիշում է իր ուխտը։
6 Իր գործերի զօրութիւնը ցոյց տուաւ իր ժողովրդին՝ հեթանոս-

ների ժառանգութիւնը նորանց
տալով։
7 Նորա ձեռքի գործերը ճշմար-
տութիւն և իրաւունք են. նորա
բոլոր պատուիրանքները հաւա-
տարիմ են։
8 Հաստատուած են յաւիտեանս
յաւիտենից. և շինուած են ճշ-
մարտութիւնով և ուղղութիւ-
նով։
9 Նա փրկութիւն ուղարկեց իր
ժողովրդին. իր ուխտը պատուի-
րեց յաւիտեան. սուրբ և ահա-
ւոր է նորա անունը։
10 Իմաստութեան սկիզբը Տիրոջ
երկիւղն է. բարի խոհեմութիւն
է ամենի համար որ անում են
նորան. նորա օրհնութիւնը մնում
է յաւիտեան։

ՍԱՂ. ՃԺԲ

1 Ալէլուիա։ Երանելի է այն մար-
դը որ Տէրիցը վախենում է, և
նորա պատուիրանքներին շատ
հաւանում է։
2 Նորա զաւակը զօրաւոր կ'լինի
երկրի վերայ. ուղիղների ցեղը
կ'օրհնուի։
3 Ապրանք և հարստութիւն կ'լի-
նի նորա տանը. և նորա արդա-
րութիւնը կ'մնայ յաւիտեան։
4 Խաւարի մէջ լոյս է ծագում
ուղիղների համար. ողորմած, գը-
թած և արդար է։
5 Երանի այն մարդին որ ողոր-
մած է և փոխ է տալիս, և իր
բանը շինում է իրաւունքով.
6 Որովհետև նա տեղիցը յա-
ւիտեան չի շարժուիլ. յաւիտե-
նական յիշատակի համար կ'լինի
արդարը։
7 Չար համբաւից չի վախենալ.
նորա սիրտը պատրաստ է, որ Տի-
րոջը յուսայ։
8 Նորա սիրտը հաստատուած է
և չի վախենալ, մինչև որ նայի
իր նեղիչների վերայ։
9 Նա փռեց և աղքատներին տը-
ւաւ. նորա արդարութիւնը կը
մնայ յաւիտեան. նորա եղջիւրը
կ'բարձրանայ փառքով։
10 Ամբարիշտը կ'տեսնէ և կ'բար-
կանայ. իր ատամները կ'կրճտե-
ցնէ և կ'հալուի. ամբարիշտների
ցանկութիւնը կ'կորչի։

ՍԱՂ. ՃԺԳ

Ալէլուիա։ Օրհնեցէք, ով Տի- 1
րոջ ծառաները, օրհնեցէք Տիրոջ
անունը։
Տիրոջ անունը օրհնեալ լինի 2
այսուհետև մինչև յաւիտեան։
Արևելքից մինչև արևմուտքը 3
օրհնեալ լինի Տիրոջ անունը։
Տէրը բարձր է ամեն ազգերի 4
վերայ, և նորա փառքը երկնքի
վերայ։
Ո՞վ է մեր Տէր Աստուծոյ նը- 5
ման, որ բնակուած է բարձուն-
քումը։
Որ խոնարհվում է տեսնելու 6
երկնքումն ու երկրումս եղածները։
Որ աղքատին փոշիցը վեր է 7
կացնում, և խեղճին բարձրացը-
նում է ազբիցը։
Որ նստեցնում է իր իշխանների 8
հետ, իր ժողովրդի իշխանների
հետ։
Որ ամուլ կինը բնակեցնում է 9
տան մէջ, որ որդկանց մայր լի-
նի ուրախ։ Ալէլուիա։

ՍԱՂ. ՃԺԴ

Երբոր Իսրայէլը Եգիպտոսից 1
դուրս էր գալիս՝ Յակոբի տունը
խուժադուժ ժողովրդի միջիցը,
Յուդան եղաւ նորա սրբու- 2
թիւն՝ Իսրայէլը նորա իշխանու-
թիւն։
Ծովը տեսաւ և փախաւ, Յոր- 3
դանանը յետ դառաւ։
Սարերը խոյերի պէս վեր վեր 4
խաղացին. և բլուրները դառնե-
րի պէս։
Ի՞նչ եղաւ քեզ, ով ծով, որ 5
փախչում էիր, և ով Յորդանան,
որ ետ էիր դառնում։
Դուք, ով սարեր, խոյերի պէս 6
վեր վեր խաղացիք. ով բլուրներ,
դառների պէս։
Տիրոջ երեսիցը սարսափիր, ով 7
երկիր, Յակոբի Աստուծոյ երե-
սիցը։

8 Որ նա վէմը ջրերի լիճ է դար-
ձնում. և քարքարուտը՝ ջրերի
աղբիւր։

ՍԱՂ. ՃԺԵ

1 Ոչ թէ մեզ, Տէր, ոչ թէ մեզ.
այլ՝ քո անունին փառք տուր
քո ողորմութեան համար և քո
ճշմարտութեան համար։
2 Ի՞նչու համար հեթանոսներն
ասեն. թէ Ո՞ւր է նորանց Աստ-
ուածը։
3 Բայց մեր Աստուածը երկնք-
ումն է, նա ամեն ինչ որ կա-
մենում է՝ անում է։
4 Նորանց կուռքերն արծաթ ու
ոսկի են. մարդի ձեռքի գործեր.
5 Բերան ունին և չեն խօսում,
աչքեր ունին և չեն տեսնում.
6 Ականջներ ունին և չեն լսում.
քիթ ունին և հոտ չեն առ-
նում.
7 Ձեռքեր ունին և չեն շօշա-
փում. ոտքեր ունին և չեն գը-
նում. և իրանց կոկորդովը ձայն
չեն հանում։
8 Նորանց շինողներն էլ նորանց
նման են, և այն ամենքը, որ յոյս
են դնում նորանց վերայ։
9 Ով Իսրայէլ, յուսա Տիրոջը,
նորանց օգնութիւնը և վահանը
նա է։
10 Ով Ահարօնի տուն, յուսա-
ցէք Տիրոջը, նորանց օգնութիւ-
նը և վահանը նա է։
11 Ով Տէրից վախեցողներ, յու-
սացէք Տիրոջը. նորանց օգնու-
թիւնը և վահանը նա է։
12 Տէրը յիշում է մեզ. նա կ'օրհ-
նէ՝ նա կ'օրհնէ Իսրայէլի տունը,
նա կ'օրհնէ Ահարօնի տունը։
13 Նա կ'օրհնէ Տէրից վախեցող-
ներին՝ փոքրերին մեծերի հետ։
14 Տէրը օրհնութիւն կ'շատացնէ
ձեզ վերայ. ձեզ վերայ և ձեր
որդկանց վերայ։
15 Օրհնեալ էք դուք Տէրիցը, որ
երկինքն ու երկիրը ստեղծեց։
16 Երկինքների երկինքը Տիրոջն է,
և նա երկիրը մարդկանց որդի-
ներին տուաւ։
17 Ոչ թէ մեռելները կ'օրհնեն
Տիրոջը. և ոչ էլ *լռութեան
մէջ՝ իջնողները։
Բայց մենք պիտի օրհնենք Տի- 18
րոջը այսուհետև մինչև յաւիտ-
եան։ Ալէլուիա։

ՍԱՂ. ՃԺԶ

Ես ուրախ եմ, որ Տէրը լսեց 1
իմ աղաչանքի ձայնին։
Որ նա իր ականջը խոնարհե- 2
ցրեց դէպի ինձ. և ես իմ օրե-
րումը կ'կանչեմ նորան։
Մահի լարերը պատեցին ինձ, 3
և դժոխքի վիշտերը գտան ինձ.
նեղութիւն և տրտմութիւն գը-
տայ ես։
Բայց ես Տիրոջ անունը կան- 4
չեցի. Տէր, փրկիր իմ անձը։
Ողորմած է Տէրը և արդար. և 5
մեր Աստուածը գթած է։
Տէրը պահում է պարզամիտ- 6
ներին. ես խեղճ եղայ, և նա ապ-
րեցրեց ինձ։
Ով իմ անձը, ետ դարձիր դէ- 7
պի քո հանգստութիւնը, որով-
հետև Տէրը բարի արաւ քեզ։
Որովհետև դու փրկեցիր իմ 8
անձը մահից, իմ աչքն արտա-
սուքից, և իմ ոտները գայթակ-
ղութիւնից։
Ես ման կ'գամ Տիրոջ առա- 9
ջին կենդանեաց երկրումը։
Ես հաւատացի՝ նորա համար 10
խօսեցի. ես շատ չարչարուեցայ։
Ես ասեցի իմ շփոթութիւնու- 11
մը՝ թէ ամեն մարդ սուտ է։
Ի՞նչ հատուցանեմ Տիրոջը նո- 12
րա բոլոր բարութեան համար, որ
ինձ արաւ։
Փրկութեան բաժակը կ'առ- 13
նեմ և Տիրոջ անունը կ'կանչեմ։
Իմ ուխտերը Տիրոջը կ'վճա- 14
րեմ՝ նորա բոլոր ժողովրդի ա-
ռաջին։
Պատուական է Տիրոջ առաջին 15
նորա սուրբերի մահը։
Ոհ Տէր, ես քո ծառան եմ. 16
ես քո ծառան եմ և քո աղախ-
նի որդին. դու իմ կապանքներն
արձակեցիր։

---

*Աջոինքն՝ գերեզմանը.

17 Քեզ գոհութեան պատարագ կ'մատուցանեմ. և Տիրոջ անունը կ'կանչեմ։
18 Իմ ուխտերը Տիրոջը կ'վճարեմ՝ նորա բոլոր ժողովրդի առաջին,
19 Տիրոջ տան սրահներումը, քո միջումը, Երուսաղէմ։ Ալէլուիա։

ՍԱՂ. ՃԺԵ

1 Օրհնեցէք Տիրոջը, ով ամեն ազգեր. գովեցէք նորան, ով ամեն ժողովուրդներ։
2 Որովհետև նորա ողորմութիւնը զօրաւոր է մեզ վերայ. և Տիրոջ ճշմարտութիւնը յաւիտեան է։ Ալէլուիա։

ՍԱՂ. ՃԺԶ

1 Գոհացէք Տիրոջը. որ բարի է, որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
2 Թող Իսրայէլն ասէ Թէ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
3 Ահարոնի տունն ասէ Թէ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
4 Տէրիցը վախեցողներն ասեն Թէ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
5 Նեղութեան միջից Տիրոջը կանչեցի. Տէրը լսեց ինձ և լայնարձակ տեղ հանեց։
6 Տէրն ինձ հետ է, ես չեմ վախենալ. մարդն ինձ ինչ կ'անէ։
7 Տէրն իմ օգնականներումն ինձ հետ է. և ես իմ թշնամիների վերայ կ'նայեմ։
8 Լաւ է Տիրոջը յուսալ քան Թէ մարդկանց ապաւինել։
9 Լաւ է Տիրոջը յուսալ քան Թէ իշխաններին ապաւինել։
10 Բոլոր հեթանոսները պաշարեցին ինձ, բայց ես Տիրոջ անունովը կ'ջարդեմ նորանց։
11 Ամեն կողմով պաշարեցին ինձ, բայց ես Տիրոջ անունովը կ'ջարդեմ նորանց։
12 Պաշարեցին ինձ ինչպես մեղուներ. հանգեցան ինչպես փուշերի կրակ. բայց Տիրոջ անունովը կը ջարդեմ նորանց։
13 Զարկկուով զարկեցիր ինձ որ վայր ընկնիմ, բայց Տէրն օգնեց ինձ։
14 Տէրն իմ զօրութիւնը և աղաղմանն է. նա եղաւ ինձ համար փրկութիւն։
15 Ցնծութեան և փրկութեան ձայն կայ արդարների բնակարաններումը. Տիրոջ աջը զօրութիւն է գործում,
16 Տիրոջ աջը բարձր է, Տիրոջ աջը զօրութիւն է գործում։
17 Ես չեմ մեռնիլ՝ կ'ապրիմ. և Տիրոջ գործերը կ'պատմեմ։
18 Խրատելով խրատեց ինձ Տէրը, բայց մահին չ'մատնեց ինձ։
19 Բացէք ինձ համար արդարութեան դռնները, որ նորանց միջ մտնեմ և Տէրիցը գոհանամ.
20 Այս դուռը Տիրոջն է. արդարները կ'մտնեն սորանով։
21 Գոհանում եմ քեզանից, որ ինձ լսեցիր և ինձ համար փրկութիւն եղար։
22 Այն քարը որ շինողներն անարգեցին՝ նա եղաւ անկիւնի գլուխ։
23 Տէրից եղաւ այս բանը, և զարմանալի է մեր աչքերի առաջին։
24 Սա այն օրն է որ Տէրն արաւ, Թող ցնծանք և ուրախ լինինք սորանումն։
25 Ո՜հ Տէր, փրկիր. ո՜հ Տէր, յաջողիր։
26 Օրհնեալ է նա, որ գալիս է Տիրոջ անունովը. օրհնում ենք ձեզ Տիրոջ տանից։
27 Եհովան է Աստուած, և լոյս է երևացնում մեզ. մատաղները կապեցէք չուաններով մինչև սեղանի եղջիւրները։
28 Դու ես իմ Աստուածը, և ես գոհանում եմ քեզանից. ով իմ Աստուած, ես բարձր կ'անեմ քեզ։
29 Գոհացէք Տէրիցը որ բարի է, որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։

ՍԱՂ. ՃԺԹ

ԱԼԻՖ

1 Երանելի են ճանապարհով ան-
մեղները, որ գնում են Տիրոջ օրէնքումը։
2 Երանելի են նորա վկայութիւնները պահողները, որ բոլոր սրտով խնդրում են նորան։
3 Որովհետև նորանք անօրէնութիւն չեն գործում, այլ գնում են նորա ճանապարհներով։
4 Դու պատուիրեցիր պինդ պահել քո պատուիրանքները։
5 Երանի թէ իմ ճանապարհները յաջողուէին, որ պահեմ քո պատուիրանքները։
6 Ապա չեմ ամչիլ, երբոր քո բոլոր հրամաններին մտիկ կ'տամ։
7 Ես կ'գոհանամ քեզանից սրտի ուղղութիւնով. երբոր քո արդարութեան իրաւունքները կը սովորեմ։
8 Քո հրամանները կ'պահեմ. մի թողիր ինձ իսպառ։

ԲԷԹ

9 Երիտասարդն ինչով իստակ կ'անէ իր ճանապարհը. քո խօսքի պէս ղդուշանալով։
10 Իմ բոլոր սրտովը խնդրեցի քեզ. Թող մի սար որ քո պատուիրանքներիցը մոլորուիմ։
11 Իմ սրտումը Թագցրի քո խօսքերը, որ չ'մեղանչեմ քեզ դէմ։
12 Օրհնեալ ես դու, Տէր, սովորեցրու ինձ քո հրամանները։
13 Իմ շրթունքներովը պատմում եմ քո բերանի բոլոր իրաւունքները։
14 Քո վկայութիւնների ճանապարհովը ուրախանում եմ, ինչպես ամեն կերպ հարստութիւնով։
15 Քո պատուիրանքների վերայ կը մտածեմ. և քո ճանապարհին մտիկ կ'տամ։
16 Քո հրամաններովը կ'ուրախանամ. և քո խօսքը չեմ մոռանալ։

ԳԻՄԻԼ

17 Բարի արա քո ծառային, որ ապրիմ և քո խօսքը պահեմ։
18 Բաց արա իմ աչքերը, որ քո օրէնքի հրաշքները տեսնեմ։
19 Ես պանդուխտ եմ երկրիս վրայ. մի թագցնիր ինձանից քո պատուիրանքները։
20 Իմ անձը մաշուած է ամեն ժամանակ ցանկանալով քո իրաւունքներին։
21 Դու սաստեցիր անիծուած ամբարտաւաններին, որ քո պատուիրանքներիցը մոլորուեցան։
22 Նախատինքը և անարգանքը վեր առ ինձանից, որ քո վկայութիւնները պահում եմ։
23 Իշխաններ էլ նստում են ինձ դէմ խօսում. քո ծառան քո հրամանների վերայ է մտածում։
24 Իրաւի որ քո վկայութիւնները իմ ուրախութիւնն են և իմ խորհրդականները։

ԴԱԼԻԹ

25 Իմ անձը կպաւ հողի հետ. ապրեցրու ինձ քո խօսքի պէս։
26 Ես իմ ճանապարհները պատմում եմ և դու լսում ես ինձ. սովորեցրու ինձ քո հրամանները։
27 Պատուիրանքներիդ ճանապարհը ինձ իմացրու, և ես կ'մտածեմ քո սքանչելիքների վերայ։
28 Իմ անձը հալուեցաւ սրտմութիւնից. հաստատիր ինձ քո խօսքին պէս։
29 Սուտութեան ճանապարհը հեռացրու ինձանից, և քո օրէնքը շնորհիր ինձ։
30 Ես ճշմարտութեան ճանապարհը ընտրեցի. քո իրաւունքները իմ առաջին դրի։
31 Քո վկայութիւններին մնացեալ. Տէր, ամեն մի անիծ ինձ։
32 Քո պատուիրանքների ճանապարհովը կ'վազեմ. որ դու իմ սիրտը լայնացրիր։

ՀԷ

33 Տէր, ցոյց տուր ինձ քո հրամանների ճանապարհը, որ մինչև վերջը պահեմ նորան։
34 Խնամատուն արա ինձ, որ քո օրէնքը պահեմ և նորան կատարեմ բոլոր սրտով։

35 Առաջնորդիր ինձ քո պատուիրանքներուդ շաւիղներուն, որ նրանց հաւանիմ։
36 Խոնարհեցրու իմ սիրտը դէպի քո վկայութիւնները, և ոչ թէ դէպի ագահութիւնը։
37 Եւ դարձրու իմ աչքերը որ ունայն բան չտեսնեն. բայց ապրեցրու ինձ քո ճանապարհներուն մէջ։
38 Հաստատիր քո խօսքը քո ծառայի համար, որ քեզանից վախենամ է։
39 Եւ դարձրու ինձանից իմ նախատինքը, որ նրանից վախեցայ, որովհետև քո իրաւունքները բարի են։
40 Ահա ցանկանում եմ քո պատուիրանքներին. քո արդարութիւնովը ապրեցրու ինձ։

ՎԱՎ

41 Տէր, թող քո ողորմութիւնը գայ ինձ վերայ, և քո փրկութիւնը քո խօսքին պէս։
42 Ապա ես կ'պատասխանեմ ինձ խօսքով նախատողներին. որովհետև քո խօսքին եմ յուսացած։
43 Եւ քո ճշմարտութեան խօսքը ամենևին մի հեռացնիր իմ բերանիցը. որովհետև քո իրաւունքին եմ յուսացած։
44 Ապա քո օրէնքը կ'պահեմ ամեն ժամանակ՝ յաւիտեան յաւիտենից,
45 Եւ լայնարձակ կ'գնամ. որովհետև քո պատուիրանքները խնդրեցի։
46 Եւ քո վկայութիւնների համար կ'խօսեմ թագաւորների առաջին, և չեմ ամաչիլ,
47 Եւ քո պատուիրանքներովը կ'ուրախանամ, որ նրանց սիրում եմ։
48 Եւ իմ ձեռքը կ'բարձրացնեմ դէպի քո պատուիրանքները որ սիրում եմ. և քո հրամանների վերայ կ'մտածեմ։

ԶԱՅԻՆ

49 Յիշիր քո ծառայի վերայ եղած խօսքը, որ ինձ նորան յուսալ տուիր։
50 Իմ նեղութիւնումն այն է իմ մխիթարութիւնը՝ որ քո խօսքն ապրեցնում է ինձ։
51 Ամբարտաւաններն ինձ վերայ շատ ծաղր են անում. բայց ես քո օրէնքիցը չեմ ծռվում։
52 Տէր, յիշում եմ քո իրաւունքները յաւիտենից, և մխիթարվում եմ։
53 Բարկութիւն բռնեց ինձ ամբարիշտների մասին, որ քո օրէնքը թողում են։
54 Քո հրամանները ինձ համար երգ են՝ իմ պանդխտութեան տան մէջ։
55 Տէր, դիշերը յիշում եմ քո անունը, և պահում եմ քո օրէնքը։
56 Այս եղաւ ինձ, որ քո հրամանները պահեմ։

ԽԷԹ

57 Իմ բաժինը դու ես, Տէր. ես ասեցի՝ թէ քո խօսքերը պահեմ։
58 Աղաչում եմ քո առաջին բոլոր սրտով, ողորմիր ինձ քո խոստի պէս։
59 Ես մտածում եմ քո ճանապարհների վերայ. և իմ ոտները դարձնում եմ քո վկայութիւններին։
60 Շտապում եմ և չեմ ուշանում, որ քո պատուիրանքները պահեմ։
61 Ամբարիշտների չուանները պատեցին ինձ. ես քո օրէնքը չեմ մոռանում։
62 Կէս գիշերին վեր եմ կենում, որ քեզանից գոհանամ քո արդար իրաւունքների համար։
63 Ես ընկեր եմ այն ամենի որ վախենում են քեզանից՝ և քո պատուիրանքները պահում են։
64 Տէր, երկիրը լիքն է քո ողորմութիւնովը. քո հրամանները սովորեցրու ինձ։

ԹԷԹ

65 Բարի արիր, Տէր, քո ծառային, քո խոստի պէս։

66 Բարի խմաստութիւն և դիտութիւն սովորեցրու ինձ, որովհետև հաւատում եմ քո պատուիրանքներին։
67 Դեռ որ խոնարհուած չէի, սխալվում էի, բայց հիմա քո խօսքը պահում եմ։
68 Բարի ես դու, և բարի անող. սովորեցրու ինձ քո հրամանները։
69 Ամբարտաւանները սուտ են հնարում ինձ վերայ. ես բոլոր սրտով կ'պահեմ քո պատուիրանքները։
70 Նրանց սիրտը պարարտ է ինչպէս ճարպ. ես ուրախանում եմ քո օրէնքովը։
71 Լաւ է ինձ համար որ խոնարհուեցայ, որ քո հրամանները սովորիմ։
72 Բարի է ինձ համար քո բերանի օրէնքը, աւելի քան թէ հազարաւոր ոսկի ու արծաթ։

ԵՕԹ

73 Քո ձեռքերը չինեցին ինձ և հաստատեցին ինձ. խմաստուն արա ինձ որ քո պատուիրանքները սովորիմ։
74 Քեզանից վախեցողները կ'տեսնեն ինձ և ուրախ կ'լինին, որովհետև քո խօսքերին յուսացայ։
75 Գիտեմ, Տէր, որ քո դատաստանները արդարութիւնով են, և իրաւունքով խոնարհեցրիր ինձ։
76 Թող քո ողորմութիւնը լինի ինձ մխիթարելու համար, քո ծառային տուած խօսքիդ պէս։
77 Թող քո բարեդթութիւնն ինձ վերայ գայ որ ապրիմ, որովհետև քո օրէնքն է իմ ուրախութիւնը։
78 Ամբարտաւանները թող ամօթ լինին, որովհետև զուր անիրաւութիւն գործեցին ինձ վերայ. բայց ես քո պատուիրանքների վերայ եմ մտածում։
79 Թող ինձ մօտ դառնան քեզանից վախեցողները և քո վկայութիւնները ճանաչողները։
80 Թող իմ սիրտն անմեղ լինի քո հրամանների մէջ, որպես զի չամաչեմ։

ԿԱՖ

81 Իմ անձը մաշուեցաւ քո փրկութեանը սպասելով. բայց ես քո խօսքին յուսացայ։
82 Իմ աչքերը մաշուեցան քո խօսքին ցանկանալով. ես ասում եմ՝ ե՞րբ կ'մխիթարես ինձ։
83 Որովհետև ես ծխի մէջ եղայ. բայց քո հրամանները չեմ մոռանում։
84 Քանի՞ են քո ծառայի օրերը. ե՞րբ դատաստան կ'անես իմ հալածողներին։
85 Ամբարտաւանները հորեր փորեցին ինձ համար, որ քո օրէնքի պէս չեն։
86 Քո բոլոր պատուիրանքները ճշմարիտ են. զուր են հալածում ինձ. օգնիր ինձ։
87 Քիչ էր մնացել որ ինձ կորցնէին երկրի մէջ. ես քո պատուիրանքները չեմ թողում։
88 Քո ողորմութեան պէս ապրեցրու ինձ. և ես քո բերանի վկայութիւնները կ'պահեմ։

ԼԱՄԷԴ

89 Ով Տէր, քո խօսքը յաւիտեան հաստատ է երկնքումը։
90 Քո ճշմարտութիւնը մնում է ազգից մինչև ազգ. դու երկիրը հաստատեցիր և նա կենում է։
91 Քո հրամանների պէս կենում են այսօր, որովհետև ամենքը քո ծառաներն են։
92 Եթէ քո օրէնքն իմ ուրախութիւնը չլինէր, ես վաղուց կորած կ'լինէի իմ խեղճութիւնումը.
93 Յաւիտեան չեմ մոռանալ քո պատուիրանքները, որովհետև նրանցով ապրեցրիր ինձ։
94 Քոնն եմ ես. փրկիր ինձ. որովհետև քո պատուիրանքները խնդրում եմ։
95 Ամբարիշտները սպասում են ինձ որ կորցնեն ինձ. և ես քո վկայութիւնները միտքս եմ բերում։
96 Ամեն կատարեալ բանի վերջը տեսայ. քո պատուիրանքը շատ լայնարձակ է։

ՄԷՄ

97 Ո՛րքան եմ սիրում քո օրէն-
քը. ամեն օր նա է իմ մտած-
մունքը։
98 Քո պատուիրանքներն ինձ ի-
մաստուն են անում իմ թշնա-
միներիցը. որովհետև նորանք յա-
ւիտեան իմս են։
99 Աւելի իմաստուն եղայ քան
թէ իմ ամեն վարժապետները.
որովհետև քո վկայութիւններն
են իմ մտածմունքը։
100 Աւելի խելացի եղայ քան թէ
ծերերը, որովհետև քո պատուի-
րանքները պահում եմ։
101 Ամեն չար ճանապարհից իմ
ոտները ետ եմ քաշում, որ քո
խօսքը պահեմ։
102 Քո իրաւունքիցը չեմ հեռա-
նում. որովհետև դու սովորե-
ցնում ես ինձ։
103 Ո՛րքան քաղցր է քո խօսքն
իմ քիմքին. մեղրիցն էլ աւելի
է իմ բերանին։
104 Քո պատուիրանքներովն ես ի-
մաստուն եղայ. սորա համար ա-
տում եմ ստութեան ամեն ճա-
նապարհը։

ՆՈՒՆ

105 Քո խօսքը ճրագ է իմ ոտների
համար, և լոյս իմ ճանապարհի
համար։
106 Ես երդում արի և կ'կատա-
րեմ, թէ քո արդարութեան ի-
րաւունքը կ'պահեմ։
107 Ես շատ խոնարհուեցայ. Տէր,
ապրեցրու ինձ քո խօսքի պէս։
108 Իմ բերանի կամաւոր զոհերն
ընդունիր, Տէր. և քո իրաւունք-
ները սովորեցրու ինձ։
109 Իմ անձն ամեն ժամանակ ձեռ-
քումս է, և քո օրէնքը չեմ մո-
ռանում։
110 Ամբարիշտները որոգայթ դրին
ինձ համար. բայց ես քո պատ-
ուիրանքներիցը չեմ մոլորվում։
111 Ես քո վկայութիւնները ժա-
ռանգեցի մինչև յաւիտեան. ո-
րովհետև նորանք իմ սրտի ցն-
ծութիւնն են։
112 Ես խոնարհեցրի իմ սիրտը որ
քո հրամաններն անեմ յաւիտ-
եան մինչև վերջը։

ՍԱՄԷԽ

113 Ես երկմիտներին ատում եմ,
բայց քո օրէնքը սիրեցի։
114 Հովանիս և պահապանս դու
ես. ես քո խօսքին յուսացի։
115 Հեռու կացէք ինձանից, ով
չարեր. որ ես պահեմ իմ Ա-
ստուծոյ պատուիրանքները։
116 Պահպանիր ինձ քո խօսքին պէս
որ ապրիմ. և ամօթ մի անիր
ինձ իմ յոյսի համար։
117 Օգնիր ինձ և ես կ'ապրեմ.
և ամեն ժամանակ հրամաններ-
իդ մտիկ կ'տամ։
118 Դու անարգում ես այն ամե-
նին որ հրամաններիցդ հեռա-
նում են. որովհետև նորանց
նենգութիւնը սուտ է։
119 Դու կղկղանք ես համարում
երկրի բոլոր ամբարիշտներին.
սորա համար ես սիրում եմ քո
վկայութիւնները։
120 Մարմինս դողում է քո ահի-
ցը, և քո դատաստաններիցը
վախենում եմ։

ԱՅԻՆ

121 Ես իրաւունք և արդարու-
թիւն եմ անում. մի մատնիր
ինձ իմ նեղացնողների ձեռ-
քը։
122 Երաշխաւորիր ծառայիդ որ
բարի լինի նորան. որ ամբարտա-
ւանները չ'նեղացնեն ինձ։
123 Աչքերս մաշուեցան քո փրկ-
ութեանը, և քո արդարու-
թեան խօսքին ոդասիլով։
124 Քո ծառայի հետ արա քո ո-
ղորմութեան պէս. և քո հրա-
մանները սովորեցրու ինձ։
125 Ես քո ծառան եմ. իմաստուն
արա ինձ, որ քո վկայութիւն-
ները ճանաչեմ։
126 Ժամանակ է որ Տէրն անէ
այս. որովհետև նորանք քո օրէն-
քը խափանեցին։
127 Սորա համար ես սիրում եմ

քո պատուիրանքները ոսկիից և
աղնիւ ոսկիից աւելի։
128 Սորա համար բոլոր պատուի-
րանքները բոլորովին ուղիղ պա-
հում եմ. ստութեան ամեն ճա-
նապարհն ատում եմ։

ՓԷ

129 Քո վկայութիւնները զարմա-
նալի են. սորա համար իմ անձը
պահում է նորանց։
130 Խօսքերիդ յայտնութիւնը լոյս
է տալիս, և իմաստուն է անում
պարզամիտներին։
131 Իմ բերանը բաց եմ անում և
շունչ առնում, որովհետև քո պատ-
ուիրանքներին ցանկանում եմ։
132 Նայիր ինձ վերայ և ողորմիր
ինձ. ինչպէս որ դու սովոր ես ա-
նելու քո անունը սիրողներին։
133 Իմ գնացքը հաստատիր քո
խօսքի մէջ, և անօրէնութիւն չը
տիրէ ինձ վերայ։
134 Փրկիր ինձ մարդկանց բռնու-
թիւնիցը, և ես կ'պահեմ քո
պատուիրանքները։
135 Երեսդ լուսաւորիր քո ծառա-
յի վերայ. և սովորեցրու ինձ քո
հրամանները։
136 Ջրերի առուներ են վայր գա-
լիս իմ աչքերիցը, որովհետև քո
օրէնքը չեն պահում։

ՑԱԴԷ

137 Դու արդար ես, Տէր. և քո
դատաստաններն ուղիղ են։
138 Քո վկայութիւնների արդա-
րութիւնը պատուիրեցիր, և նո-
րանք շատ ճշմարիտ են։
139 Նախանձս ինձ մաշեց, որովհե-
տև թշնամիքս մոռանում են քո
խօսքը։
140 Քո խօսքը շատ մաքրուած է,
և քո ծառան սիրում է նորան։
141 Ես ցած և անարգուած եմ,
բայց չեմ մոռանում քո պատ-
ուիրանքները։
142 Քո արդարութիւնը յաւիտե-
նական արդարութիւն է. և քո
օրէնքը՝ ճշմարիտ։
143 Նեղութիւն և ցաւ գտաւ ինձ.
քո պատուիրանքներն իմ ու-
րախութիւնն են։
144 Քո վկայութիւնների արդա-
րութիւնը յաւիտեան է. իմաս-
տուն արա ինձ և կ'ապրեմ։

ՔՕՖ

145 Բոլոր սրտով կանչում եմ.
լսիր ինձ, Տէր, որ հրամաններդ
պահեմ։
146 Դէպի քեզ եմ կանչում,
փրկիր ինձ. և քո վկայութիւն-
ները կ'պահեմ։
147 Կանուխ գալիս եմ արշալու-
սին և աղաղակում. ես քո խօս-
քին յուսացի։
148 Գիշերուայ պահերիցն առաջ
են զարթնում իմ աչքերը, որ
խօսքիդ վերայ մտածեմ։
149 Իմ ձայնին լսիր քո ողորմու-
թեան պէս, Տէր, քո իրաւուն-
քի պէս ապրեցրու ինձ։
150 Անօրէնութեան հետևողները
մօտեցան. նորանք քո օրէնքիցը
հեռացան։
151 Տէր, դու մօտիկ ես. և քո բո-
լոր պատուիրանքները ճշմար-
տութիւն են։
152 Առաջուց իմացայ քո վկայու-
թիւններիցը, որ դու հաստա-
տեցիր նորանց յաւիտեան։

ՐԷՇ

153 Տես իմ խեղճութիւնը և փրկ-
իր ինձ. որովհետև քո օրէնքը
չեմ մոռանում։
154 Ինձ իրաւունք արա և ազա-
տիր ինձ. քո խօսքի պէս ապրե-
ցրու ինձ։
155 Փրկութիւնը հեռու է ամբա-
րիշտներիցը, որովհետև քո հրա-
մանները չեն խնդրում։
156 Տէր, քո բարեգթութիւնը
շատ է. քո իրաւունքին պէս ապ-
րեցրու ինձ։
157 Շատ են ինձ հալածողներն
ու նեղացնողները. քո օրէնքիցը
դուրս չեմ գալիս։
158 Ես տեսնում եմ ապստամբ-
ուածներին և զզվում եմ, նորա
համար որ խօսքդ չեն պահում։

159 Տես որ քո պատուիրանքները սիրում եմ. Տէր, քո ողորմութեան պէս ապրեցրու ինձ։
160 Քո խօսքի սկիզբը ճշմարտութիւն է. և քո արդարութեան բոլոր իրաւունքները յաւիտեան։

ՇԻՆ

161 Իշխանները զուր տեղը հալածում են ինձ. բայց իմ սիրտը վախենում է քո խօսքերիցը։
162 Ես ցնծում եմ քո խօսքովը, ինչպէս մէկ շատ աւար գտնող։
163 Ստութիւնն ատում եմ և գարշելի համարում. բայց քո օրէնքը սիրում եմ։
164 Օրը եօթն անգամ օրհնում եմ քեզ քո արդարութեան իրաւունքների համար։
165 Շատ խաղաղութիւն կայ քո օրէնքը սիրողների համար. և գայթակղութիւն չ'կայ նորանց համար։
166 Տէր, ես քո փրկութեանն եմ սպասում, և պատուիրանքներդ կատարում։
167 Իմ անձը պահում է քո վկայութիւնները. և ես շատ սիրում եմ նորանց։
168 Ես պահում եմ քո պատուիրանքներն ու վկայութիւնները. որովհետև բոլոր ճանապարհներս քո առաջին են։

ԹԱՎ

169 Տէր, թող իմ աղաղակը մատենայ քո առաջին. քո խօսքի պէս իմաստուն արա ինձ։
170 Թող իմ աղաչանքը մտնէ քո առաջը. քո խօսքի պէս փրկիր ինձ։
171 Իմ շրթունքները օրհնութիւն են բղխում, որ հրամաններդ սովորեցնես ինձ։
172 Թող իմ լեզուն խօսի քո խօսքի համար. որովհետև քո բոլոր պատուիրանքներն արդարութիւն են։
173 Թող ձեռքդ ինձ օգնական լինի. որովհետև ես ընտրում եմ քո պատուիրանքներն։
174 Տէր, ես ցանկանում եմ քո փրկութեանը. և քո օրէնքն է իմ ուրախութիւնը։
175 Թող իմ անձն ապրի և քեզ օրհնէ. և քո իրաւունքներն օգնեն ինձ։
176 Ես մոլորուեցայ ինչպէս կորած ոչխար. մտն եկ քո ծառային. որովհետև քո պատուիրանքները ես չ'մոռացայ։

ՍԱՂ. ՃԻ

Աստիճանների երգ։

1 Իմ նեղութիւնումը դէպի Տէրը կանչեցի. և նա լսեց ինձ։
2 Տէր, փրկիր իմ անձը սուտ շրթունքներիցը՝ նենգաւոր լեզուիցը։
3 Ինչ կ'տայ քեզ, և էլ ինչ կ'աւելցնէ քեզ, ով նենգաւոր լեզու։
4 Զօրաւոր մարդի նետերը սուր են՝ գիհիների կայծերով որոտաց։
5 Վայ ինձ որ պանդուխտ եմ Մեսեքի մէջ. և բնակվում եմ Կեդարի վրաններումը։
6 Շատ երկարացաւ իմ անձի համար նորանց հետ բնակուիլ, որ ատում են խաղաղութիւնը։
7 Ես խաղաղութեան մարդ եմ. բայց երբոր խօսում եմ, նորանք կռիւ են անում։

ՍԱՂ. ՃԻԱ

Աստիճանների երգ։

1 Ես բարձրացնում եմ իմ աչքերը դէպի սարերը. ո՞րտեղից կը գայ իմ օգնութիւնը։
2 Իմ օգնութիւնը Տէրիցն է, որ երկինքն ու երկիրս արաւ։
3 Նա քո ոտքին սահել չի տալ, քո պահապանը չի քնիլ։
4 Ահա Իսրայէլի պահապանը չի ննջիլ և չի քնանալ։
5 Տէրը քո պահապանն է. Տէրը քեզ հովանի է քո աջ ձեռքի վերայ։
6 Յերեկը արեգակը չի զարկիլ քեզ. ոչ լուսինը՝ գիշերը։

7 Տէրը կ'պահպանէ քեզ ամեն չարից, նա կ'պահպանէ քո անձը։
8 Տէրը կ'պահպանէ քո դուրս գալն ու մտնելը՝ այսուհետև մինչև յաւիտեան։

ՍԱՂ. ՃԻԲ

Աստիճանների երգ։ Դաւիթի (Սաղմոս)։

1 Ես ուրախ եղայ երբոր ասեցին ինձ, թէ Տիրոջ տունը գնանք։
2 Մեր ոտները կ'կանգնեն քո դռներումը, ով Երուսաղէմ։
3 Երուսաղէմը շինուած է ինչպէս քաղաք՝ որ ինքն իրան հետ միաւորուած է։
4 Որ այնտեղ վեր են գնում ցեղերը՝ Տիրոջ ցեղերը Իսրայէլի վկայութեան պէս, որ Տիրոջ անունիցը գոհանան։
5 Որովհետև այնտեղ են դրուած դատաստանի աթոռները՝ Դաւիթի տան աթոռները։
6 Խաղաղութիւն խնդրեցէք Երուսաղէմի համար. թող յաջողուեն քեզ սիրողները։
7 Թող խաղաղութիւն լինի քո պարիսպներումը, յաջողութիւն քո պալատներումը։
8 Իմ եղբայրների և իմ ընկերների համար ասում եմ ես՝ խաղաղութիւն լինի քեզանում։
9 Մեր Տէր Աստուծոյ տան համար բարի եմ ուզում քեզ։

ՍԱՂ. ՃԻԳ

Աստիճանների երգ։

1 Դէպի քեզ եմ բարձրացնում իմ աչքերը, ով երկնքումը բնակող։
2 Ահա ինչպէս ծառաների աչքերը իրանց տէրերի ձեռքին են նայում, ինչպէս որ աղախնի աչքերն իր տիկնոջ ձեռքին, այնպէս էլ մեր աչքերը մեր Տէր Աստուծուն՝ մինչև որ ողորմէ մեզ։
3 Ողորմիր մեզ, Տէր, ողորմիր մեզ. որ շատ լցուեցանք անարգանքով։
4 Շատ լցուած է մեր անձը գոռոզների նախատինքովը և ամբարտաւանների անարգանքովը։

ՍԱՂ. ՃԻԴ

Աստիճանների երգ։ Դաւիթի (Սաղմոս)։

1 Եթէ Տէրը մեզ հետ չ'լինէր. թող ասէ Իսրայէլը.
2 Եթէ Տէրը մեզ հետ չ'լինէր՝ մարդիկ մեզ վերայ վեր կենալիս,
3 Ապա կենդանի կենդանի կուլ կ'տային մեզ՝ նորանց բարկութիւնը մեզ վերայ բորբոքուելիս.
4 Ապա ջուրերը կ'թաղէին մեզ, հեղեղը մեր անձերի վերայ անց կ'կենար։
5 Ապա գոռոզ ջուրերն անց կը կենային մեր անձերի վերայ։
6 Օրհնեալ լինի Տէրը որ մեզ որս չ'տուաւ նորանց ատամներին։
7 Մեր անձինքը ինչպէս ծիտ՝ պրծան որսորդների որոգայթիցը. որոգայթը փշրուեցաւ և մենք պրծանք։
8 Մեր օգնութիւնը Տիրոջ անունովն է, որ արաւ երկինքն ու երկիրս։

ՍԱՂ. ՃԻԵ

Աստիճանների երգ։

1 Տիրոջը յուսացողները Սիօն սարի պէս են, որ չէ շարժվում և կենում է յաւիտեան։
2 Երուսաղէմի չորս կողմովը սարեր կան. այնպէս էլ Տէրն իր ժողովրդի չորս կողմովն է այսուհետև մինչև յաւիտեան։
3 Որովհետև ամբարիշտների գաւազանը չի մնալ արդարների վիճակի վերայ, որ արդարներն իրանց ձեռքերը չ'ձգեն դէպի անօրէնութիւն։
4 Տէր, բարի արա նորանց, որ բարի են և իրանց սիրտերովն ուղիղ։
5 Բայց դէպի իրանց ծուռ ճանապարհը ծռուողներին Տէրը կը տանի նորանց հետ, որ անօրէ-

նութիւն են գործում. խաղաղութիւն լինի Իսրայէլի վերայ։

ՍԱՂ. ՃԻԶ

Աստիճանների երգ։

1 Երբոր Տէրը Սիօնի գերութիւնը դարձնէ, երազ տեսնողների պէս կ'լինինք։
2 Այն ժամանակ մեր բերանը կը լեցուի ծիծաղով և մեր լեզուն ցնծութիւնով. այն ժամանակ կ'ասեն հեթանոսների մէջ. Տէրը մեծ բաներ արաւ նորանց վերայ։
3 Տէրը մեծ բաներ արաւ մեզ վերայ և մենք ուրախացանք։
4 Ով Տէր, դարձրու մեր գերութիւնը ինչպէս առուները հարաւի երկրումը։
5 Արտասուքով ցանողները ցնծութիւնով կ'հնձեն։
6 Այն որ գնում է և լաց լինում՝ ցանելու սերմը տանելով, գալով կ'գայ ցնծութիւնով՝ իր ցորենի խուրձերը բերելով։

ՍԱՂ. ՃԻԷ

Աստիճանների երգ. Սողոմոնի (Սաղմոս)։

1 Եթէ Տէրը չ'շինէ տունը՝ զուր են աշխատում նորա շինողները. եթէ Տէրը չ'պահպանէ քաղաքը՝ զուր է անքուն լինում պահապանը։
2 Զուր է ձեզ համար կանուխ վեր կենալը՝ ուշ հանգստանալը, դուք որ հացը ցաւով էք ուտում. ինչու որ նա իր սիրելիին քուն է տալիս։
3 Ահա որդիքը Տիրոջ ժառանգութիւնն են. և որովայնի պտուղը՝ նորա վարձքը։
4 Ինչպէս որ նետերը զօրեղ մարդի ձեռքումը, այնպէս են երիտասարդ որդիքը։
5 Երանի այն մարդին որ իր կապարճը նորանցով լցրեց. նորանք չեն ամաչիլ երբոր թշնամիների հետ կ'խօսեն դռան մէջ։

ՍԱՂ. ՃԻԸ

Աստիճանների երգ։

1 Երանի՛ այն ամենին, որ Տէրիցը վախենում են և նորա ճանապարհներումը գնում.
2 Ձեռքի աշխատանքը ի հարկէ կ'ուտես. երանի քեզ. և բանդ լաւ է քեզ համար։
3 Կինդ պտղաբեր որթի պէս է քո տան ներսերումը. որդիքդ տնկուած ձիթենիների պէս քո սեղանի չորս կողմովը։
4 Ահա հէնց այսպէս է օրհնվում այն մարդը, որ վախենում է Տէրիցը։
5 Տէրը կ'օրհնէ քեզ Սիօնիցը, և Երուսաղէմի բարութիւնը կը տեսնես քո կեանքի բոլոր օրերումը։
6 Եւ քո որդկանցն որդիքը կը տեսնես. խաղաղութիւն լինի Իսրայէլի վերայ։

ՍԱՂ. ՃԻԹ

Աստիճանների երգ։

1 Շատ անգամ նեղացրին ինձ իմ մանկութիւնիցը. թող ասէ Իսրայէլը.
2 Շատ անգամ նեղացրին ինձ իմ մանկութիւնիցը, բայց չ'յաղթեցին ինձ։
3 Հերկողները իմ թիկունքի վերայ հերկեցին և իրանց ակօսները երկար արին։
4 Տէրն արդար է. նա ամբարիշտների չուանները կտորեց։
5 Ամօթ պիտի լինին և ետ դառնան այն ամենքը, որ ատում են Սիօնը։
6 Կտուրի խոտի պէս պիտի լինին, որ դեռ չ'հնձած չորանում է։
7 Որ նորանից չէ լցնում հնձողն իր ձեռքը, և ոչ խուրձ կապողն իր գիրկը։
8 Եւ անցնողներն էլ չեն ասում. Տիրոջ օրհնութիւնը ձեզ վերայ. օրհնում ենք ձեզ Տիրոջ անունովը։

ՍԱՂ. ՃԼ

Աստիճանների երգ։

1 Ով Տէր, խոր տեղերից դէպի քեզ եմ կանչում։
2 Ով Տէր, լսիր իմ ձայնին. թող ականջներդ մտիկ անեն իմ աղօթքի ձայնին։
3 Տէր, եթէ դու անօրէնութիւնները համարես, ո՞վ կ'կենայ, Տէր։
4 Որովհետև քեզ մօտ է թողութիւնը, որ քեզանից վախենան։
5 Ես սպասում եմ Տիրոջը, իմ անձը սպասում է, և ես նորա խօսքին եմ յուսացած։
6 Իմ անձը սպասում է Տիրոջը աւելի քան թէ առաւօտուայ սպասողները՝ առաւօտուայ սպասողները։
7 Իսրայէլը թող յուսայ Տիրոջը. որովհետև Տիրոջ մօտ կայ ողորմութիւն, և նորա մօտ կայ շատ փրկութիւն։
8 Եւ նա կ'փրկէ Իսրայէլին նորա ամեն անօրէնութիւններիցը։

ՍԱՂ. ՃԼԱ

Աստիճանների երգ. Դաւիթի (Սաղմոս)։

1 Տէր, իմ սիրտը չէ գոռողանում և իմ աչքերը չեն բարձրանում. և ես չեմ գնում մեծամեծ բաների մէջ, և ոչ այն բաների մէջ որ ինձանից բարձր են։
2 Իրաւի իմ անձը հանդարտացրի և հանգստացրի իր մօր կաթից կտրուածի պէս. իմ անձը կաթից կտրուածի նման է։
3 Իսրայէլը Տիրոջը կ'յուսայ այսուհետև մինչև յաւիտեան։

ՍԱՂ. ՃԼԲ

Աստիճանների երգ։

1 Տէր, յիշիր Դաւիթին և նորա բոլոր նեղութիւնները.
2 Որ երդուաւ Տիրոջը և ուխտ դրաւ Յակոբի Զօրաւորին,
3 Թէ տանս յարկի տակը չեմ մտնիլ, և իմ գցած անկողնի վերայ չեմ ելնիլ.
4 Թէ աչքերիս քուն չեմ տալ, և ոչ իմ արտևանունքներին՝ նընջել,
5 Մինչև որ տեղ գտնեմ Տիրոջ համար, և բնակարան՝ Յակոբի Զօրաւորի համար։
6 Ահա լսեցինք նորա համար Եփրաթայումը, գտանք նորան անտառի դաշտումը։
7 Թող մտնենք նորա բնակարանները, երկրպագենք նորա պատուանդանի դէմ։
8 Վեր կաց, Տէր, դէպի քո հանգստութիւնը, դու և քո զօրութեան տապանակը։
9 Քո քահանաները թող արդարութիւն հագնեն. և քո սուրբերը ցնծան։
10 Քո ծառայ Դաւիթի համար մի դարձնիր քո օծեալի երեսը։
11 Տէրը ճշմարտութիւնով երդում արաւ Դաւիթին, նա ետ չի դառնալ նորանից, թէ Քո որովայնի պտղիցը կ'նստեցնեմ քո աթոռի վերայ։
12 Եթէ քո որդիքն իմ ուխտն ու վկայութիւնը պահեն, որ կը սովորեցնեմ նորանց. ապա նորանց որդիքը յաւիտեանս յաւիտենից կ'նստեն քո աթոռի վերայ։
13 Որովհետև Տէրը Սիօնին ընտրեց, հաւանեց նորան իրան բնակարան լինելու համար.
14 Այս է յաւիտեան իմ հանգիստը, այստեղ կ'բնակուեմ. որովհետև սորան հաւանեցի։
15 Նորա կերակուրն օրհնելով կ'օրհնեմ, և նորա աղքատները կ'կշտացնեմ հացով։
16 Եւ նորա քահանաներին փրկութիւն կ'հագցնեմ, և նորա սուրբերը ցնծալով կ'ցնծան։
17 Այնտեղ Դաւիթի համար եղջիւր կ'բուսցնեմ. և ճրագ կը պատրաստեմ իմ օծեալի համար։
18 Նորա թշնամիներին ամօթ կը հագցնեմ, բայց նորա վերայ նորա պսակը կ'ծաղկի։

ՍԱՂ. ՃԼԳ

Աստիճանների երգ։ Դաւիթի (Սաղմոս)։

1 Տես ի՞նչքան բարի և ի՞նչքան
ցանկալի է, որ եղբարք իրար
հետ մէկտեղ բնակուեն։
2 Այն ազնիւ իւղի պէս է գլխի
վերայ, որ թափվում է մօրուքի,
այսինքն Ահարօնի մօրուքի
վերայ, և իջնում է մինչև նորա
հանդերձների ծայրը։
3 Հերմոնի շաղի պէս է, որ վայր
է գալիս Սիօնի սարերի վերայ. ո-
րովհետև Տէրն այնտեղ պատ-
րաստեց օրհնութիւն և կեանք
մինչև յաւիտեան։

ՍԱՂ. ՃԼԴ

Աստիճանների երգ։

1 Աղէ օրհնեցէք Տիրոջը, ով Տի-
րոջ բոլոր ծառաները, որ Տիրոջ
տանը կանգնում էք գիշերները։
2 Ձեր ձեռքերը բարձրացրէք դէ-
պի սրբութիւնը և օրհնեցէք Տի-
րոջը։
3 Տէրը օրհնէ քեզ Սիօնիցը, նա՝
որ երկինքն ու երկիրս արաւ։

ՍԱՂ. ՃԼԵ

Ալէլուիա։

1 Օրհնեցէք Տիրոջ անունը. օրհ-
նեցէք, ով Տիրոջ ծառաները.
2 Որ կանգնում էք Տիրոջ տա-
նը՝ մեր Աստուծոյ տան սրահ-
ներումը։
3 Օրհնեցէք Տիրոջը, որովհետև
Տէրը բարի է. սաղմոս ասեցէք նո-
րա անունին, որովհետև քաղցր է։
4 Որովհետև Տէրը Յակոբին ընտ-
րեց իրան համար, և Իսրայէլին՝
իր ժառանգութեան համար։
5 Որովհետև ես իմացայ որ Տէրը
մեծ է. և մեր Տէրն աւելի մեծ
է քան ամեն աստուածները։
6 Տէրն իր բոլոր կամեցածն ա-
նում է երկնքումն ու երկրումս,
ծովերումը և ամեն խոր տեղե-
րումը։
7 Որ նա ամպերը բարձրացնում
է երկրի ծայրիցը՝ կայծակներն
անձրև է շինում. քամին հա-
նում է իր շտեմարաններիցը։
8 Որ Եգիպտոսի անդրանիկներն
սպանեց մարդիցը մինչև անա-
սունները։
9 Որ նշաններ և հրաշքներ ու-
ղարկեց քո մէջը, ով Եգիպտոս,
Փարաւօնի և նորա բոլոր ծառա-
ների վերայ։
10 Որ շատ ազգեր զարկեց, և զօ-
րեղ թագաւորներ սպանեց.
11 Ամօրհացիների Սեհօն թագա-
ւորին, Բասանի Ովգ թագաւո-
րին, և Քանանացիների բոլոր թա-
գաւորութիւնները։
12 Եւ նորանց երկիրը տուաւ ժա-
ռանգութիւն, ժառանգութիւն՝
իր Իսրայէլ ժողովրդի համար։
13 Տէր, քո անունը մինչև յա-
ւիտեան է. Տէր, քո յիշատակը
ազգից մինչև ազգ։
14 Որովհետև Տէրն իր ժողովրդին
կ՚դատէ, և իր ծառաներին կ՚ո-
ղորմէ։
15 Հեթանոսների կուռքերը ար-
ծաթ և ոսկի են, մարդկանց ձեռ-
քի գործեր։
16 Բերան ունին և չեն խօսում.
աչքեր ունին և չեն տեսնում.
17 Ականջներ ունին և չեն լսում,
և ինաւ շունչ չ՚կայ նորանց բե-
րանումը։
18 Նորանց նման են նորանց շինող-
ները, և բոլոր նորանց յուսա-
ցողները։
19 Ով Իսրայէլի տունը, օրհնեցէք
Տիրոջը. ով Ահարօնի տունը,
օրհնեցէք Տիրոջը։
20 Ով Ղևիի տունը, օրհնեցէք
Տիրոջը. ով Տէրից վախեցողներ,
օրհնեցէք Տիրոջը։
21 Օրհնեալ լինի Տէրը Սիօնի մի-
ջիցը, նա՝ որ բնակուած է Երու-
սաղէմումը։ Ալէլուիա։

ՍԱՂ. ՃԼԶ

1 Գոհացէք Տէրիցը, որ բարի է.
որ յաւիտեան է նորա ողորմու-
թիւնը։

2 Գոհացէք աստուածների Աստ-
ուածիցը, որ յաւիտեան է նո-
րա ողորմութիւնը։
3 Գոհացէք տէրերի Տէրիցը, որ
յաւիտեան է նորա ողորմութիւ-
նը։
4 Որ նա է մինակ մեծամեծ հր-
աշքներ անում, որ յաւիտեան
է նորա ողորմութիւնը։
5 Որ երկինքն արաւ իմաստու-
թիւնով. որ յաւիտեան է նորա
ողորմութիւնը։
6 Որ երկիրը ջրերի վերայ տա-
րածեց, որ յաւիտեան է նորա
ողորմութիւնը։
7 Որ արաւ մեծամեծ լուսաւոր-
ներ, որ յաւիտեան է նորա ո-
ղորմութիւնը։
8 Արեգակը՝ որ ցերեկի վերայ
իշխէ, որ յաւիտեան է նորա ո-
ղորմութիւնը։
9 Լուսինն ու աստղերը՝ որ գի-
շերի վերայ իշխեն, որ յաւիտ-
եան է նորա ողորմութիւնը։
10 Որ Եգիպտոսին զարկեց նորա
առաջինեկներովը, որ յաւիտեան
է նորա ողորմութիւնը։
11 Եւ Իսրայէլին հանեց նորանց
միջիցը, որ յաւիտեան է նորա
ողորմութիւնը։
12 Զօրեղ ձեռքով և երկար մեկ-
նած բազուկով, որ յաւիտեան
է նորա ողորմութիւնը։
13 Կարմիր ծովը երկու բաժին ա-
րաւ, որ յաւիտեան է նորա ո-
ղորմութիւնը։
14 Եւ Իսրայէլին անց կացրեց նո-
րա միջովը, որ յաւիտեան է նո-
րա ողորմութիւնը։
15 Եւ Փարաւօնին և նորա զօր-
քին Կարմիր ծովի մէջ թափեց.
որ յաւիտեան է նորա ողորմու-
թիւնը։
16 Եւ իր ժողովրդին անապատի
միջովը տարաւ, որ յաւիտեան է
նորա ողորմութիւնը։
17 Որ մեծամեծ թագաւորներ
զարկեց, որ յաւիտեան է նորա
ողորմութիւնը։
18 Եւ զօրեղ թագաւորներ սպա-
նեց, որ յաւիտեան է նորա ո-
ղորմութիւնը։
19 Ամօրհացիների Սեհօն թագա-
ւորին, որ յաւիտեան է նորա ո-
ղորմութիւնը։
20 Եւ Բասանի Ովգ թագաւորին,
որ յաւիտեան է նորա ողորմու-
թիւնը։
21 Եւ նորանց երկիրը ժառան-
գութիւն տուաւ, որ յաւիտեան
է նորա ողորմութիւնը։
22 Ժառանգութիւն իր Իսրայէլ
ծառայի համար, որ յաւիտեան
է նորա ողորմութիւնը։
23 Որ մեր խոնարհութիւնումը յի-
շեց մեզ, որ յաւիտեան է նորա
ողորմութիւնը։
24 Եւ փրկեց մեզ մեր թշնամի-
ներիցը, որ յաւիտեան է նորա
ողորմութիւնը.
25 Որ հաց է տալիս ամեն մարմնի, որ
յաւիտեան է նորա ողորմութիւնը։
26 Գոհացէք երկնքի Աստուածա-
նից, որ յաւիտեան է նորա ողոր-
մութիւնը։

ՍԱՂ. ՃԼԷ

1 Բաբիլոնի գետերի մօտ՝ այնտեղ
նստում էինք և լաց լինում Սիօնը
յիշելիս։
2 Նորա միջի ուռիներիցը կախ
էինք տալիս մեր քնարները։
3 Որովհետև մեզ գերի անողները
մեզանից օրհներգութեան խօսք
էին պահանջում այնտեղը և մեզ
գերի տանողները՝ ուրախութիւն.
թէ Սիօնի երգերիցը երգեցէք մեզ
համար։
4 Տիրոջ օրհնութիւնը ի՞նչպէս
երգենք օտար երկրումը։
5 Եթէ քեզ մոռանամ, Երու-
սաղէմ, իմ աջ ձեռքը մոռա-
ցուած լինի։
6 Իմ լեզուն թող քիմքիս կպչի,
եթէ քեզ չ՚յիշեմ. եթէ Երու-
սաղէմն իմ ուրախութիւնիցը վեր
չի դասեմ։
7 Յիշիր, Տէր, Եդովմի որդկանցը
Երուսաղէմի օրումը. որ ասում
էին. Քանդեցէք, քանդեցէք մին-
չև նորա հիմունքը։
8 Ով Բաբիլոնի աղջիկ, ով քան-
դուած. երանի նորան որ քո հա-
տուցումը կ՚տայ. այն հատու-
ցումը, որ հատուցրիր մեզ։

9 Երանի նորան, որ քո երեխերքը կ'առնէ և քարերին կ'զարկէ։

ՍԱՂ. ՃԼԵ.

Դաւիթի (Սաղմոս)։

1 Կ'գոհանամ քեզանից բոլոր սրտովս. աստուածների առաջին քեզ սաղմոս կ'ասեմ։

2 Երկրպագութիւն կ'անեմ քո սուրբ տաճարի առաջին և կ'գոհանամ քո անունիցը քո ողորմութեան համար և քո ճշմարտութեան համար. որ բոլոր անուանից բարձր մեծացրիր քո խօսքը։

3 Այն օրը որ կանչեցի քեզ պատասխանեցիր ինձ. դու ինձ զօրութիւնով աւժանացուցիր իմ անձումը։

4 Տէր, երկրի բոլոր թագաւորները կ'գոհանան քեզանից, որ քո բերանի խօսքերը լսեցին։

5 Եւ Տիրոջ ճանապարհներումը օրհնութիւն կ'ասեն, թէ Տիրոջ փառքը մեծ է։

6 Որովհետև Տէրը բարձր է և տեսնում է ցածը. և նա հեռուանց ճանաչում է բարձրամտին։

7 Եթէ նեղութեան մէջ գնամ՝ կ'պահեցնես ինձ, իմ թշնամիների բարկութեան վերայ քո ձեռքը կ'մեկնես և քո աջը կ'փրկէ ինձ։

8 Տէրը կ'կատարէ ինձ տեղ. Տէր, քո ողորմութիւնը յաւիտեան է. քո ձեռքի գործերը երեսիդ մի ձգիր։

ՍԱՂ. ՃԼԹ

Երգողների գլխաւորին. Դաւիթի Սաղմոս։

1 Տէր, դու քննում ես ինձ և ճանաչում ես ինձ։

2 Դու գիտես իմ նստիլն ու վեր կենալը, հեռուանց իմանում ես իմ մտածմունքները։

3 Իմ գնալն ու պառկելը քննում ես. և իմ բոլոր ճանապարհները գիտես։

4 Որովհետև դեռ բնաւ խօսք չը կայ իմ լեզուի վերայ. ահա, ով Տէր, դու ամենը գիտում ես։

5 Իմ եւ առջիցը պատում ես ինձ, և քո ձեռքը գրել ես ինձ վերայ։

6 Այս գիտութիւնը ինձ համար շատ զարմանալի է, բարձր է, չեմ կարող հասնել նորան։

7 Ո՞ւր գնամ քո Հոգիիցը. և քո երեսիցն ո՞ւր փախչեմ։

8 Եթէ վերանամ երկինքը՝ դու այնտեղ ես. և եթէ դժոխքը փռեմ, ահա դու այնտեղ ես։

9 Եթէ արշալուսի թևերն առնեմ և ծովի վերջին ծայրերումը բնակուեմ,

10 Այնտեղ էլ քո ձեռքը կ'առաջնորդէ ինձ, և քո աջը կ'պահէ ինձ։

11 Եւ եթէ ասեմ. Թող խաւարն ինձ ծածկէ. և գիշերն էլ լոյս կ'լինի իմ շուրջը։

12 Մութն էլ քեզ համար խաւար չէ, գիշերն էլ ցերեկի պէս լոյս է. խաւարն էլ լոյսի պէս է քեզ համար։

13 Որովհետև դու ստեղծեցիր իմ երիկամունքները, և ծածկեցիր ինձ իմ մոր որովայնումը։

14 Գոհանում եմ քեզանից, որ սքանչելապէս և զարմանալի կերպով ստեղծուեցայ. զարմանալի են քո գործերը, և իմ անձը լաւ հասկացել է։

15 Իմ ոսկորները չ'ծածկուեցան քեզանից, երբոր ես ստեղծուեցայ ծածուկ տեղը. և երկրի խորութիւններումը ճարտարութիւնով կազմուեցայ։

16 Քո աչքերը տեսան իմ կերպարանքը՝ դեռ անպատրաստ. և քո դրքումը գրուած էին այն բոլոր օրերը որ լինելու էին՝ երբոր նրանցից մէկը դեռ չ'կար։

17 Քանի՜ պատուական են ինձ համար քո խորհուրդները, ով Աստուած. քանի՜ մեծ է նորանց թիւը։

18 Եթէ համարեմ նորանց՝ աւազից շատ են. զարթնեցի, և դեռ քեզ հետ եմ։

19 Երանի թէ ամբարիշտներն սպանէիր, ով Աստուած. և դուք, ով արիւնահեղ մարդիկ, հեռացէք ինձանից։

20 Նորանք քեզ հակառակ են խօսում նենգութիւնով. և քո թշնամիքը սուտ երդում են անում։

21 Ես չէ՞մ ատում քեզ ատողներին, ով Տէր. և քեզ դեմ ապստամբողներից չէ՞մ զզւում։

22 Կատարեալ ատելութիւնով ատում եմ նորանց. նորանք ինձ թշնամի են դառել։

23 Փորձիր ինձ, ով Աստուած, և ճանաչիր իմ սիրտը. քննիր ինձ և ճանաչիր իմ մտածմունքները։

24 Եւ տես, թէ որ չար ճանապարհում լինեմ, և առաջնորդիր ինձ դէպի յաւիտենական ճանապարհը։

ՍԱՂ. ՃԽ

Երգողների գլխաւորին. Դաւիթի Սաղմոս։

1 Տէր, ապրեցրու ինձ չար մարդիցը. պահիր ինձ բռնաւոր մարդիցը,

2 Որ չար բաներ են մտածում սրտով, և ամեն օր կռիւներ են յարուցանում։

3 Իրանց լեզուները սրում են օձի նման. իժ օձի թոյն կայ նորանց շրթունքների տակ։ (Սէլա)

4 Տէր, պահիր ինձ ամբարշտի ձեռքիցը, պահիր ինձ բռնաւոր մարդկանից, որ հնարում են իմ ոտքերը սայթաքեցնելու համար։

5 Ամբարտաւանները ինձ համար որոգայթ և չուաններ թագցրին, որոգայթ լարեցին իմ ճանապարհումը. վարմեր դրին ինձ համար։ (Սէլա)

6 Ես ասեցի Տիրոջը, Դու ես իմ Աստուածը. Տէր, լսիր իմ աղաչանքների ձայնին։

7 Ով Եհովայ Տէր, իմ փրկութեան զօրութիւնը. դու հովանի ես իմ գլխին կռուի օրումը։

8 Տէր, մի տար ամբարիշտին նորա ցանկութիւնը, մի յաջողեցնիր նորա չար խորհուրդը. նորանք կ'բարձրանան։ (Սէլա)

9 Ինձ պաշարողների գլուխը, թող նորանց շրթունքների վատութիւնը պատի ծածկէ։

10 Թող ոչխրող ածուխներ ընկնեն նորանց վերայ. թող նա կրակը գցե նորանց՝ խոր տեղերը՝ որ բնաւ չ'կանգնեն։

11 Զարախօս մարդը չի հաստատուիլ երկրի վերայ. չարիքը կ'որսայ բռնաւոր մարդին, մինչև որ կործանուի։

12 Գիտեմ որ Տէրը դատաստան կ'անէ խեղճի համար, և իրաւունք՝ աղքատի համար։

13 Իրաւի որ արդարները կ'գոհանան քո անունիցը, և ուղիղները կ'բնակուին քո երեսի առաջին։

ՍԱՂ. ՃԽԱ

Դաւիթի Սաղմոս։

1 Տէր, ես կանչում եմ դեպի քեզ. շուտ արա դեպի ինձ. առկանչ դիր իմ ձայնին՝ ես դեպի քեզ կանչելիս։

2 Իմ աղօթքը թող բնդունելի լինի ինչպես խունկ քո առաջին. իմ ձեռքերի բարձրանալը՝ երեկուայ պատարագի պէս։

3 Տէր, պահապան դիր իմ բերանին, իմ շրթունքների դուռը պահպանիր։

4 Սիրտս մի դարձնիր չար բանի վերայ, որ չարութիւնով վատ գործեր չ'գործեմ անօրէնութիւն անողների հետ. և նորանց ախորժալի կերակրիցը չ'ուտեմ։

5 Արդարը թող *խրատէ ինձ, նա քաղցրութիւն է, և թող յանդիմանէ ինձ, նա գլխի իւղ է. իմ գլուխը չի մերժիլ. որովհետև իմ աղօթքը լինում է նորանց չարագործութիւնների ժամանակին էլ։

6 Նորանց դատաւորները քարերի վերայ ընկան. և նորանք իմ խօսքերը կ'լսեն որ քաղցր են։

*Եբր. զարնէ

7 Ինչպէս որ վարնորդն ու ակօս
ճեղքողը ցանում է հողի մէջ,
այնպէս ցրուած են մեր ոսկոր-
ները գերեզմանի բերանումը։
8 Բայց, Տէր Եհովայ, իմ աչքե-
րը դէպի քեզ են նայում. ես
քեզ եմ յուսացած. իմ անձը
երեսից մի ձգիր։
9 Պահիր ինձ այն որոգայթիցն
որ լարեցին ինձ համար, և չա-
բագործների վարմիցը։
10 Ամբարիշտները իրանց ցանցե-
րի մէջ պիտի ընկնեն, մինչդեռ
ես բոլորովին անց կ'կենամ։

ՍԱՂ. ՃԽԲ

Դաւիթի երգ. *երբոր քարայ
բումն էր. աղօթք։

1 Ես իմ ձայնով դէպի Տէրն եմ
աղաղակում. իմ ձայնովը Տի-
րոջն եմ աղաչում։
2 Իմ հառաչանքը թափում եմ
նորա առաջին. իմ նեղութիւ-
նը պատմում եմ նորա առա-
ջին։
3 Երբոր հոգիս մաշվում է ին-
ձանում, դու ճանաչում ես այն
ժամանակ իմ գնացքը. այն ճա-
նապարհումը, որ գնում եմ, ո-
րոգայթ լարեցին ինձ համար։
4 Նայիր աջ կողմին և տես. մէ-
կը չ'կայ որ ինձ ճանաչէ. ապաս-
տանը կորաւ ինձանից. մէկը չը
կայ որ իմ անձի համար հոգս
անէ։
5 Տէր, դէպի քեզ եմ աղաղա-
կում և ասում. Դու ես իմ յոյ-
սը՝ իմ բաժինը կենդանեաց երկ-
րումը։
6 Նայիր դէպի իմ աղաղակը,
որ շատ խեղճ եմ. փրկիր ինձ իմ
հալածիչներիցը որ ինձանից զօ-
րաւոր են։
7 Իմ անձը հանիր բանտիցը որ
գոհանամ քո անունիցը. արդար-
ները կ'պատեն ինձ, երբոր ինձ
բարութիւն անես։

*ա Թագ. իբ. 1, իդ. 3։

ՍԱՂ. ՃԽԳ

Դաւիթի Սաղմոս։

Ով Տէր, լսիր իմ աղօթքը. ա- 1
կանջ դիր իմ աղաչանքին. պա-
տասխանիր ինձ քո ճշմարտու-
թիւնովը և քո արդարութիւ-
նովը։
Եւ դատաստանի մի մտնիր քո 2
ծառայի հետ. որովհետև ոչ մէկ
կենդանի չի արդարանալ քո ա-
ռաջին։
Որովհետև թշնամին հալա- 3
ծում է իմ անձը, նա կեանքս վայր
է գցում գետինը և ինձ նստեցը-
նում է խաւարի մէջ ինչպէս որ
առաջուց մեռածները։
Եւ իմ հոգին մաշուած է ին- 4
ձանում, իմ սիրտն աւերուած է
ինձանում։
Ես յիշում եմ առաջի օրերը. 5
մտածում եմ քո բոլոր գործերի
վերայ. խորհում եմ քո ձեռքե-
րի գործքի վերայ։
Ձեռքերս տարածում եմ դէ- 6
պի քեզ. իմ անձը չոր երկրի պէս
ծարաւ է քեզ։ (Սէլա։)
Շուտ արա, լսիր ինձ, Տէր. 7
հոգիս մաշվում է. երեսդ մի ծած-
կիր ինձանից, որ գերեզմանի մէջ
իջնողներին չ'նմանիմ։
Առաւօտը լսել տուր ինձ քո 8
ողորմութիւնը. որ քեզ եմ յու-
սացել. ինձ ցոյց տուր այն ճա-
նապարհը որ պիտի գնամ նորա-
նում, որովհետև դէպի քեզ եմ
բարձրացնում իմ անձը։
Տէր, փրկիր ինձ իմ թշնամի- 9
ներիցը. ես քեզ եմ ապաւինել։
Սովորեցրու ինձ կատարել քո 10
կամքը, որովհետև դու ես իմ
Աստուածը. քո բարի հոգին թող
առաջնորդէ ինձ դէպի ուղիղ
երկիր։
Տէր, քո անունի համար ապ- 11
րեցրու ինձ. քո արդարութեան
համար հանիր իմ անձը նեղու-
թիւնից։
Եւ քո ողորմութիւնովը ստա- 12
կեցրու իմ թշնամիներին և կոր-
ցրու իմ անձի բոլոր նեղիչներին.
որովհետև ես քո ծառան եմ։

ՍԱՂ. ՃԽԴ

Դաւիթի (Սաղմոս։)

1 Օրհնեալ է Տէրը՝ իմ Վէմը, որ
սովորեցնում է իմ ձեռքերը կը-
ռիւ անելու և իմ մատները պա-
տերազմելու։
2 Ով իմ ողորմութիւն և ապա-
ւէն, իմ օգնական և փրկիչ. իմ
պահապան, որին ես յուսացած
եմ, որ հնազանդեցնում է իմ
ժողովուրդն իմ ՀԵՐԻ տակ։
3 Տէր, ինչ է մարդը որ նորան
ճանաչես. և մարդի որդին որ
ուշ դնես նորան։
4 Մարդը նման է ունայնութեան,
նորա օրերը անցնող շուքի պէս
են։
5 Տէր, խոնարհեցրու երկինքդ և
իջիր. մօտեցիր սարերին՝ և նո-
րանք կ'ծխեն։
6 Փայլատակիր փայլատակով և
ցրուիր նորանց. ուղարկիր նե-
տերդ և շփոթեցրու նորանց։
7 Ձեռքդ մեկնիր բարձրիցը և ա-
զատիր ինձ. և փրկիր ինձ շատ ջը-
րերիցը՝ օտար որդկանց ձեռքիցը.
8 Որ նորանց բերանը ունայն բան
է խօսում, և նորանց աջը ստու-
թեան աջ է։
9 Ով Աստուած, նոր օրհնու-
թիւն կ'երգեմ քեզ. տասնաղ-
եայ տաւիղով սաղմոս կ'ասեմ
քեզ։
10 Որ փրկութիւն է տալիս թա-
գաւորներին, և իր Դաւիթ ծա-
ռային փրկում է չար սուրիցը։
11 Ազատիր ինձ և փրկիր ինձ օ-
տար որդկանց ձեռքիցը, որ նո-
րանց բերանը ունայն բան է խօ-
սում, և նորանց աջը ստութեան
աջ է.
12 Որ մեր որդիքը մեծանան տը-
ղայութիւնից ինչպէս նորատունկ
ծառեր, և մեր աղջիկներն՝ ինչ-
պէս անկիւնի սիւներ՝ պալատ-
ների ձևով քանդակուած։
13 Որ մեր շտեմարանները լիքը լի-
նին և զանազան կերակուր բըղ-
խեն, մեր ոչխարները հազարներ
ու տասը հազարներ լինին մեր
արտերումը։
Որ մեր եզերը պարարտ լինին, 14
և ախտ ու կորուստ չ'լինի, և ոչ ա-
ղաղակ՝ մեր հրապարակներումը։
Երանի այն ժողովրդին, որ նո- 15
րա վիճակը այսպէս է. երանի այն
ժողովրդին, որ նորա Աստուածը
Եհովան է։

ՍԱՂ. ՃԽԵ

Դաւիթի օրհնաբանութիւն։

Բարձր կ'անեմ քեզ, ով իմ 1
Աստուած, ով Թագաւոր. և
կ'օրհնեմ քո անունը յաւիտ-
եանս յաւիտենից։
Ամեն օր կ'օրհնեմ քեզ. և քո 2
անունը կ'գովեմ յաւիտեանս յա-
ւիտենից։
Մեծ է Տէրը և շատ օրհնեալ. 3
և նորա մեծութեանը չափ չ'կայ։
Ազգ ազգի կ'գովէ քո գործե- 4
րը. և կ'պատմեն քո զօրութիւն-
ները։
Քո փառաւոր մեծութեան գե- 5
ղեցկութեան վերայ, և քո հրա-
շալի գործերի վերայ կ'մտածեմ։
Քո ահաւոր զօրութեան մա- 6
սին կ'խօսեն. և ես քո մեծու-
թիւնը կ'պատմեմ։
Քո շատ քաղցրութեան յիշա- 7
տակը կ'հրատարակեն. և ցնծու-
թիւնով կ'պատմեն քո մեծու-
թիւնը։
Ողորմած և գթած է Տէրը. եր- 8
կայնամիտ և բազումողորմ։
Բարի է Տէրը ամենի համար. 9
և նորա ողորմութիւնը իր բոլոր
գործերի վերայ է։
Տէր, քո բոլոր գործերը պի- 10
տի գոհանան քեզանից, և քո
սուրբերը պիտի օրհնեն քեզ։
Քո թագաւորութեան փառ- 11
քը պիտի խօսին. և քո զօրու-
թիւնները պիտի պատմեն։
Որ իմացնեն մարդկանց որդի- 12
ներին նորա զօրութիւնները, և
նորա թագաւորութեան փառա-
ւոր մեծութիւնը։
Քո թագաւորութիւնը ամե- 13
նայաւէտ թագաւորութիւն է,
և քո իշխանութիւնը՝ միշտ ազ-
գից մինչև ազգ։

44 Տէրը հաստատուած է ընկածներին, և կանգնեցնում է ամեն կռացածներին։
45 Ամենի աչքերը քեզ են սպասում, և դու տալիս ես նորանց կերակուրը իրանց ժամանակին։
46 Դու բաց ես անում քո ձեռքը, և կշտացնում ես ամեն կենդանին հաճութիւնով։
47 Տէրն արդար է իր բոլոր ճանապարհներումը. և ողորմած՝ իր բոլոր գործերումը։
48 Տէրը մօտիկ է բոլոր դէպի իրան կանչողներին, այն ամենին՝ որ կանչում են նորան ճշմարտութիւնով։
49 Իրանից վախեցողների կամքը անում է նա. և նորանց աղաղակին լսում և նորանց փրկում է։
20 Տէրը պահում է բոլոր իրան սիրողներին. բայց բոլոր ամբարիշտներին կ'կորցնէ։
21 Իմ բերանը Տիրոջ օրհնութիւնը կ'խօսի, և ամեն մարմին նորա սուրբ անունը կ'օրհնէ յաւիտեան յաւիտենից։

ՍԱՂ. ՁԽԲ

1 Ալէլուիա։ Օրհնիր Տիրոջը, ով իմ անձը։
2 Տիրոջը կ'օրհնեմ ես իմ կեանքումը. իմ Աստուծուն սաղմոս կ'ասեմ քանի որ կամ։
3 Մի յուսայք իշխաններին՝ մարդի որդիին, որի մօտ փրկութիւն չ'կայ,
4 Նորա հոգին դուրս կ'գայ, նա դէպի իր հողը կ'դառնայ, նոյն օրը կ'կորչեն նորա խորհուրդները։
5 Երանի նորան, որի օգնականը Յակոբի Աստուածն է. որ նորա յոյսն իր Եհովայ Աստուծուն վրայ է,
6 Որ ստեղծեց երկինքն ու երկիրը, ծովը ու նորանց մէջ ամեն եղածը. որ հաւատարմութիւն է պահում յաւիտեան.
7 Որ իրաւունք է անում ղրկուածներին. և հաց տալիս՝ սովածներին. Տէրը արձակում է կապուածներին։
8 Տէրը բանում է կոյրերի աչքերը. Տէրը կանգնեցնում է ընկածներին. Տէրը սիրում է արդարներին։
9 Տէրը պահում է պանդուխտներին. նա ընդունում է որբերին և որբևայրիներին. բայց ամբարիշտների ճանապարհը ծռեցնում է։
10 Տէրը կ'թագաւորէ յաւիտեան. քո Աստուածը, ով Սիօն, ազգից ազգ։ Ալէլուիա։

ՍԱՂ. ՁԽԷ

1 Օրհնեցէք Տիրոջը. որովհետև բարի է մեր Աստուածուն սաղմոս ասել, որովհետև քաղցր և գեղեցիկ է օրհնաբանութիւնը։
2 Տէրը շինում է Երուսաղէմը, և ժողովում է Իսրայէլի ցրուածներին։
3 Նա բժշկում է սրտով կոտրուածներին և փաթաթում՝ նորանց խոցերը։
4 Նա համրում է աստղերի թիւը, և կանչում՝ նորանց ամենը անուններով։
5 Մեծ է մեր Տէրը և շատ զօրաւոր. նորա իմաստութեանը չափ չ'կայ,
6 Տէրը հաստատում է խեղճերին, բայց խոնարհեցնում է ամբարիշտներին մինչև հող։
7 Երգեցէք Տիրոջը գոհութիւնով. մեր Աստուածուն սաղմոս երգեցէք քնարով,
8 Որ ծածկում է երկինքը ամպերով. անձրև է պատրաստում երկրիս համար, և սարերին խոտ է բուսցնել տալիս,
9 Որ նա անասուններին տալիս է իրանց կերակուրը, ագռաւի ձագերին՝ որ կանչում են իրան։
10 Նա հաճութիւն չ'ունի ձիան զօրութեանը, զօրեղ մարդի սրբունքներին չէ հաւանում։
11 Տէրը հաւանում է իրանից վախեցողներին, որ իր ողորմութեանն են յուսացած։
12 *Ով Երուսաղէմ, գովիր Տիրո-

*Եբրայերէնէ և Գրաբար Բուբէր-

ջը. օրհնիր քո Աստուածուն, ով Սիօն։
13 Որովհետև նա պնդացնում է քո դռնների նիգերը, և օրհնում է քո որդկացը քեզանում։
14 Նա խաղաղութիւն է տալիս քո սահմաններին, և կշտացնում է քեզ պարարտ ցորենով։
15 Նա ուղարկում է իր խօսքը երկրի մէջ. և նորա խօսքը վազում է շատ շատ։
16 Նա բուրդի պէս ձիւն է տալիս. և եղեամն է ցանում փոշի մոխրի պէս։
17 Նա իր սառուցն ուղարկում է կտորների պէս. նորա ցրտի առաջին ո՞վ կ'կենայ։
18 Նա ուղարկում է իր խօսքը և հալում նորանց. իր քամին փչել է տալիս, և ջուրերը են վազում։
19 Նա պատմում է իր խօսքը Յակոբին, իր հրամաններն ու իրաւունքները՝ Իսրայէլին։
20 Ոչ մի ազգի այսպէս չ'արաւ. և նորանք չեն ճանաչում նորա դատաստանները. Ալէլուիա։

ՍԱՂ. ՁԽՐ

Ալէլուիա։

1 Օրհնեցէք Տիրոջը երկնքիցը. օրհնեցէք նորան բարձունքներումը։
2 Օրհնեցէք նորան, ով նորա ամեն հրեշտակներ. օրհնեցէք նորան, ով բոլոր զօրքեր։
3 Օրհնեցէք նորան, ով արեգակն ու լուսին. օրհնեցէք նորան, ով ամեն լուսաւոր աստղեր։
4 Օրհնեցէք նորան, ով երկնից երկինք. և ջուրեր որ երկնքի վերայ էք։
5 Թող Տիրոջ անունը օրհնեն. որովհետև նա հրամայեց և նորանք ստեղծուեցան։
6 Եւ նորանց կանգնեցրեց մինչև յաւիտեան յաւիտենից. կանոն դրաւ, որ չի խափանուիլ։
7 Օրհնեցէք Տիրոջը երկրիցս, ով

նաբերէնէ Սղ. ձխէ տողիցէն է սկսած, Տես Սղ. ժ. նօթագրութիւնը։

վիշապներ և ամեն անդունդներ։
Կրակ և կարկտա, ձիւն և ծուխ և մրրիկ քամի, որ նորա խօսքը կատարում էք։
Սարեր և ամեն բլուրներ, պտղաբեր ծառեր և ամեն մայրի ծառեր։
Կենդանիներ և ամեն անասուններ, սողացողներ և թեւաւոր թռչուններ։
Երկրի թագաւորներ և ամեն ազգեր. իշխաններ և երկրի ամեն դատաւորները։
Երիտասարդներ և աղջիկներ. ծերեր տղաներով միասին։
Օրհնեն Տիրոջ անունը. որովհետև միայն նորա անունը բարձր է. նորա փառքը երկնքից և երկրից վեր է։
Եւ նա բարձրացրեց իր ժողովրդի եղջիւրը. իր ամեն սրբերի՝ Իսրայէլի որդկանց՝ իր մօտ ժողովրդի օրհնութիւնը. Ալէլուիա։

ՍԱՂ. ՁԽԹ

Ալէլուիա։

1 Տիրոջը նոր երգ երգեցէք՝ նորա օրհնութիւնը սրբերի ժողովրդումը։
2 Թող Իսրայէլն ուրախ լինի իր Ստեղծողովը. Սիօնի որդիքը ցընծան իրանց Թագաւորովը։
3 Թող նորա անունը օրհնեն ցընծութիւնով. թմբուկով ու քնարով սաղմոս ասեն նորան։
4 Որովհետև Տէրը հաւանում է իր ժողովրդին. խեղճերին փառաւորում է փրկութիւնով։
5 Թող սուրբերն ուրախանան փառքով, ցնծան իրանց անկողնումը։
6 Աստուծոյ գովասանքը նորանց բերանումը լինի. և երկասայրի սուր նորանց ձեռքումը։
7 Որ վրէժխնդրութիւն անեն հեթանոսների մէջ, և պատիժ՝ ազգերի մէջ։
8 Որ նորանց թագաւորներին կապանքներով, և նորանց իշխաններին՝ երկաթի առնակապերով։

9 Որ նորանց վերայ կատարեն նորան նորա մեծ փառաւորութեանը համեմատ։

Օրհնեցէք նորան շեփորի ձայնով. օրհնեցէք նորան տաւիղով և քնարով։ 3

Օրհնեցէք նորան թմբուկով և պարով. օրհնեցէք նորան թելաւոր նուագարաններով և սրինգով։ 4

Օրհնեցէք նորան ձայնաւոր ծնծղաներով. օրհնեցէք նորան մեծաձայն ծնծղաներով։ 5

Ամեն շունչ ունեցողը թող օրհնէ Տիրոջը։ Ալէլուիա։ 6

ՍԱՂՄՈՍ ՃԽ

Ալէլուիա։

1 Օրհնեցէք Աստուծուն նորա սրբարանութեանը. օրհնեցէք նորան նորա զօրաւոր երկնքի հաստատութեանը։

2 Օրհնեցէք նորան նորա զօրաւոր գործերի համար. օրհնեցէք նորան նորա մեծ փառաւորութեանը համեմատ։

ԱՌԱԿԱՑ ԳԻՐՔԸ

ԳԼՈՒԽ Ա.

1 Իսրայէլի թագաւոր՝ Դաւիթի որդի Սողոմոնի առակները։

2 Իմաստութիւն և խրատ գիտենալու համար, հանճարի խօսքերը հասկանալու համար։

3 Իմաստութեան խրատն ընդունելու համար, պայմանքն արդարութիւն, իրաւունք և ուղղութիւն.

4 Պարզամիտներին խորագիտութիւն տալու համար, երիտասարդին՝ գիտութիւն և խորհրդածութիւն.

5 Թող լսէ իմաստունը և աւելացնէ ուսումը, և բանիմացը վարժութիւն առնայ,

6 Որ հասկանայ առակ և այլաբանութիւն, իմաստուններուն խօսքերը և խրթնաբանութիւնները։

7 Իմաստութեան սկիզբը Տիրոջ վախն է. միայն յիմարները կ'անարգեն իմաստութիւնը և խրատը։

8 Լսէր, որդեակս, քո հօր խրատը, և մի մերժէր քո մօր հրահանգը։

9 Որովհետև դրանք շնորհքի պսակ են քո գլխին, և մանեակներ՝ քո պարանոցին։

10 Որդեակս, եթէ քեզ հրապուրեն մեղաւորները, դու հաճութիւն չ'առնուս։

11 Եթէ ըսեն. Եկ մեզ հետ՝ արեան դարանամուտ լինինք, թաք կենանք անմեղի դէմ զուր տեղը.

12 Դժոխքի պէս նորանց ողջ ողջ կուլ տանք, և ամբողջ ամբողջ՝ գուբն իջնողներին պէս.

13 Ամեն տեսակ պատուական բաներ գտնենք, լցնենք մեր տները աւարով.

14 Վիճակդ գցիր մեր մէջը, մեր ամենի քսակը մէկ լինի.

15 Որդեակս, նորանց հետ ճանապարհ մի դնար. ոտքդ հետ պահիր նորանց շաւիղներէն.

16 Որովհետև նորանց ոտները չարութեան են վազում, և շտապում են արիւն թափելու։

17 Ընդա հասար որ ի զուր է վարմի տարածուիլը ամեն որևիցե թռչունի աչքի առաջին.

18 Բայց նորանք դարանամուտ են լինում իրանց արեանը, թագչըվում են իրանց անձերի համար։

19 Այսպէս են ամեն արծաթասիրութեան մոլի հաւտէ շաւիղները. որ առնում է իրան անձնատուր եղողին հոգին։

20 Իմաստութիւնը աղաղակում է դրսում, հրապարակներում տալիս է ձայնը։

21 Նա կանչում է աղմկալից տեղերի գլխին, դռների մուտքերում, և քաղաքում խօսում է իր խօսքերը։

22 Մինչև ե՞րբ պիտի, ով անմիտներ, անմտութիւն սիրէք, և մինչև ե՞րբ պիտի ծաղր անելը հաճելի լինի ծաղր անողներին. և յիմարները՝ ատեն գիտութիւնը։

23 Եա դարձէք դէպի իմ յանդիմանութիւնը. ահա ես իմ հոգին կ'թափեմ ձեզ վերայ, իմ խօսքերը կ'հասկացնեմ ձեզ։

24 Որովհետև ես կանչեցի, և դուք չ'ուզեցիք. ձեռքս մեկնեցի, և ուշադրող չ'կար,

25 Եւ դուք մերժեցիք իմ բոլոր խորհուրդը, և իմ յանդիմանութիւնը չ'ուզեցիք.

26 Ես էլ կ'ծիծաղեմ ձեր թշուառութեանովը, և ծաղր կ'անեմ ձեր վախը հասնելիս,

27 Երբոր ձեր վախը կործանման պէս կ'գայ, և ձեր թշուառութիւնը մրրկի նման կ'հասնի, երբոր ձեզ վերայ նեղութիւն և տառապանք կ'գայ.

28 Այն ժամանակ ինձ կ'կանչեն, բայց ես չեմ պատասխանիլ, առաւօտանց կանուխ ինձ կ'որոնեն, բայց ինձ չեն գտնիլ.

29 Որովհետև գիտութիւնն ատեցին, և Տիրոջ վախը չ'ընտրեցին.

30 Իմ խորհուրդը չ'ուզեցին, իմ բոլոր յանդիմանութիւնն անարգեցին։

31 Ուրեմն նորանք իրանց ճանապարհի պտղին ուտեն, և իրանց խորհուրդներիցը կշտանան։

32 Որովհետև անմիտների խոտորութիւնը նորանց պիտի սպանէ, և յիմարներուն անհոգութիւնը պիտի կորցնէ նորանց։

33 Բայց ինձ լսողը ապահով կը բնակուի, և հանգարտ կ'լինի չարիքի վախից։

ԳԼ. Բ

1 Որդեակս, եթէ իմ խօսքերն ընդունես, և իմ պատուէրները պահես քեզ մօտ.

2 Որ ականջ դնես իմաստութեանը, և սիրտդ ուղղես հանճարին,

3 Երբոր հասկացողութիւնը կանչես, և ձայն տաս հանճարին,

4 Եթէ դու նորան որոնես ինչպէս արծաթը, և գանձերի նման նորան պարտես,

5 Այն ժամանակ կ'հասկանաս Տիրոջ երկիւղը, և Աստուծոյ գիտութիւնը կ'գտնես։

6 Որովհետև Տէրն է տալիս իմաստութիւնը, նորա բերանից է գիտութիւն ու հանճարը։

7 Նա ուղիղների համար յաջողութիւն է պահում, նա վահան է անարատութեամբ գնացողների համար.

8 Որ իրաւունքի ճանապարհները պահպանէ. նա պահում է իր բարեպաշտների ճանապարհը։

9 Այն ժամանակ կ'հասկանաս արդարութիւնն ու իրաւունքը, ուղղութիւնը և ամեն բարի ուղին։

10 Որովհետև իմաստութիւնը կը մտնէ քո սիրտը, և գիտութիւնը ախորժելի կ'լինի քո հոգիին.

11 Խոհեմութիւնը քեզ կ'պահէ, հանճարը քեզ կ'պաշտպանէ.

12 Որ քեզ ազատէ չար ճանապարհից, և նենգութիւններ խօսող մարդից,

13 Որ ուղղութեան ճանապարհները թողում են, որպէս զի խաւարի ճանապարհներով գնան.

14 Որ ուրախանում են չարութիւն անելով, և զուարճանում են չար նենգութիւնով.

15 Որոնց շաւիղները ծուռ են, և որոնք խոտորում են իրանց ուղիներով։

46 Որ քեզ ազատէ օտար կնկա-
նից, օտար կնկանից որ կակուղ
խօսքեր է տալիս.
47 Նա որ ձգել է իր երիտասար-
դութեան բարեկամին, և մոռա-
ցել իր Աստուծոյ ուխտը։
48 Որովհետև նորա տունը խոր-
տակում է դէպի մահ, և նորա
ուղիները՝ դէպի ուրուականները։
49 Նորա մօտ գնացողները այլ ևս
ետ չեն դառնալ, և կեանքի ճա-
նապարհներին չեն հասնիլ։
20 Որպէս զի դու բարիների ճա-
նապարհովը գնաս, և արդարնե-
րի ճանապարհները պահես։
21 Որովհետև ուղիղները կ'բնակ-
ուեն երկրի վերայ, և կատար-
եալները կ'մնան նորանում։
22 Իսկ անզգամները բնաջինջ կը
լինին երկրիցը, և նենգաւորները
կ'խլուին նորանից։

ԳԼ. Գ

1 Որդեակս, իմ օրէնքը մի մոռա-
նար, և թող պահէ քո սիրտը
իմ պատուէրները.
2 Որովհետև նորանք երկայն օ-
րեր և կենդանութեան տարի-
ներ, և խաղաղութիւն կ'շատա-
ցնեն քեզ համար.
3 Շնորհքն ու ճշմարտութիւնը
քեզ չեն ձգիլ. նորանց պնդա-
ցրու քո պարանոցի վերայ, նո-
րանց գրիր քո սրտի տախտակի
վերայ։
4 Այսպէս դու շնորհք և հաճու-
թիւն կ'գտնես Աստուծոյ և մարդ-
կանց առաջին։
5 Տիրոջն ապաւինիր քո բոլոր
սրտովը, և քո հասկացողութեա-
նը մի վստահիր։
6 Քո բոլոր ճանապարհներումը
ճանաչիր նորան, և նա կ'ուղ-
ղէ քո ճանապարհները։
7 Դու քո աչքի առաջին իմաս-
տուն մի լինիր, վախիր Տէրիցը և
հեռացիր չարից։
8 Սա առողջութիւն կ'լինի քո
*մարմնի համար, և պարարտու-
թիւն՝ քո ոսկորներին։

*Կամ պորտի

Պատուիր Տիրոջը քո ստաց- 9
ուածքիցը, և քո բոլոր բերքերի
երախայրիներիցը.
Այն ժամանակ կ'լցուին քո 10
շտեմարաններն առատութիւնով,
և քո հնձանները պիտի զեղա-
նեն նոր գինիով։
Որդեակս, մի անարգիր Տիրոջ 11
խրատը, և նորա յանդիմանու-
թիւնիցը մի ձանձրանար.
Որովհետև Տէրը որին որ սի- 12
րում է՝ յանդիմանում է, և ինչ-
պէս մէկ հայր որ իր որդիին սի-
րում է։
Երանի այն մարդին որ իմաս- 13
տութիւն է գտել, և այն մար-
դին որ հանճար է ստանում։
Որովհետև նորա շահը լաւ է 14
արծաթի շահիցը, և նորա ար-
դիւնքը՝ մաքուր ոսկիից։
Նա պատուական է †գոհար- 15
ներից, և քո բոլոր ցանկալի բա-
ները նորան չ'արժեն։
Նորա աջ ձեռքին օրերի եր- 16
կայնութիւն կայ, նորա ձախ ձեռ-
քին՝ հարստութիւն և փառք։
Նորա ճանապարհները հաճելի 17
ճանապարհներ են, և նորա բո-
լոր շաւիղները խաղաղութիւն են։
Նա կենաց ծառ է նորանց հա- 18
մար որ բռնել են նորան, և նա
իրան պինդ բռնողին երջանիկ
կ'անէ։
Տէրը իմաստութիւնով հիմնեց 19
երկիրը, հանճարով հաստատեց
երկինքը։
Նորա գիտութիւնովն անդունդ- 20
ները յորդեցին, և ամպերը ցօղ
ցանեցին։
Որդեակս, սորանք չ'գնան քո 21
աչքի առաջից, պինդ պահիր խո-
հեմութիւնն ու խորհուրդը։
Եւ նորանք քո հոգիի համար 22
կեանք լինին, և շնորհք՝ քո պա-
րանոցի համար։
Այն ժամանակ ապահով կը 23
գնաս քո ճանապարհովը, և ոտքդ
չի գայթիլ։
Եթէ պառկես, չես վախենալ. 24
և կ'պառկես և քունդ քաղցր
կ'լինի։

†Կամ՝ բուստերից

25 Ցանկարծահաս երկիւղիցը չես
վախենալ, և ամբարիշտների փո-
թորիկիցը, երբոր գայ։
26 Որովհետև Տէրը կ'լինի քո յոյ-
սը, և նա կ'պահէ քո ոտքը, որ
չ'բռնուի։
27 Բարութիւնը մի խնայիր որին
որ կ'վայելէ, երբոր ձեռքումդ
զօրութիւն կայ անելու.
28 Մի ասիր քո ընկերին. Գնա՝
միւս անգամ եկ, և էգուց կը
տամ. քանի որ քեզ մօտ կայ։
29 Քո ընկերի դէմ չարութիւն
մի մտածիր, քանի որ նա վստա-
հաբար կենում է քեզ մօտ։
30 Մարդի հետ զուր տեղը մի
վիճիր, եթէ նա քեզ չարութիւն
չէ արել։
31 Բռնաւոր մարդին մի նախան-
ձիր, և նորա բոլոր ճանապարհ-
ներին մի հաւանիր.
32 Որովհետև խոտորնակ մարդը
զզուելի է Տիրոջը, բայց Նորա
մտերմութիւնը ուղիղների հետն
է։
33 Ամբարշտի տանը Տիրոջ անէծ-
քը կայ, բայց արդարների բնակա-
րանը նա օրհնում է։
34 Իրաւ նա ծաղր անողներին
ծաղրում է, իսկ խոնարհներին
շնորհք է տալիս։
35 Փառք պիտի ժառանգեն ի-
մաստունները, բայց յիմարները
կ'բարձրանան անարգանքով։

ԳԼ. Դ

1 Որդիք, լսեցէք հօր խրատը. և
ականջ դրէք որ իմաստութիւնն
իմանաք.
2 Որովհետև ես ձեզ բարի ու-
սում եմ տալիս, իմ օրէնքը մի
ձգէք.
3 Որովհետև ես իմ հօր որդին
էի, փափուկ և *միամօր էի։
4 Նա ինձ սովորեցնում էր և ա-
սում ինձ. Թող քո սիրտը բռնէ
իմ խօսքերը, պահիր իմ պատ-
ուէրները, և կ'ապրես։
5 Իմաստութիւն ստացիր, հան-
ճար ստացիր. մի մոռանար, և

*Կամ՝ սիրելի իմ մօր առաջին։

մի խոտորիր իմ բերանի խօսքե-
րիցը։
Մի թողիր նորան, և նա քեզ 6
կ'պահէ. նորան սիրիր, և նա քեզ
կ'պաշտպանէ։
†Իմաստութեան սկիզբն է՝, 7
"Իմաստութիւն ստացիր". և քո
ամեն ստացուածքի հետ հանճար
ստացիր։
Դու նորան մեծարիր, և նա 8
քեզ կ'բարձրացնէ. նա քեզ կը
պատուէ, երբոր նորան գրկես։
Նա քեզ գեղեցիկ պսակ կ'տայ 9
քո գլխի համար, և փառքի
թագ կ'պարգևէ քեզ։
Լսիր, որդեակս, և ընդունիր 10
իմ խօսքերը, և կ'շատանան քո
կեանքի տարիները։
Իմաստութեան ճանապարհը 11
քեզ սովորեցրի, քեզ առաջնոր-
դեցի ուղղութեան շաւիղներու-
մը։
Դու գնալիս՝ քո քայլերը պիտի 12
չ'նեղուին, և վազելիս չես գայ-
թակղուիլ։
Պինդ բռնիր խրատը, մի ձգիր. 13
նորան պահիր, որ նա քո կեան-
քն է։
Անզգամների ճանապարհը մի 14
մտնիր. և մի մտն դար չարերի
ճանապարհումը։
Թող տուր նորան, նորա վերայ 15
մի գնար, նորանից խոտորիր և
անցիր։
Որովհետև նորանք չեն քնիլ, 16
մինչև որ չարութիւն չ'անեն. և
քնից կ'զրկուին, եթէ չ'կործա-
նեն։
Նորա համար որ նորանք ամ- 17
բարշտութեան հացն են ուտում
և անիրաւութեան գինին խը-
մում։
Բայց արդարների ճանապարհը 18
ծագող լոյսի պէս է. որ գնալով
լուսաւորվում է, մինչև որ կա-
տարեալ օր է դառնում։
Ամբարիշտների ճանապարհը 19
խաւարի նման է, նորանք չ'գիտեն
թէ ինչով են գայթակղում։
Որդեակս, ուշադիր եղիր իմ 20

†Կամ՝ Աւին բանի գլուխը իմաս-
տութիւնն է։

խօսքերին, և ականջդ տուր իմ
ասածներիս.
21 Թող նորանք չ'գնան քո աչքի
առջևից, պահիր նորանց քո սրտի
մէջ.
22 Որ նորանք կեանք են նորանց
գտնողներին, և նորանց բոլոր
մարմնին՝ բժշկութիւն.
23 Ամէն զգուշութիւնից առաւել զգուշացիր քո սրտին, որ
նորանից է կեանքի ելքը.
24 Չեռացրու քեզանից բերանի
ծուռութիւնը, և նենգաւոր շրթունքները թող հեռու լինին
քեզանից.
25 Թող քո աչքերն ուղիղ նային, և քո արեւանունքները
ուղղաւած լինին դէպի քո առաջը.
26 Շիտակ արա քո ոտների շաւիղը, և քո բոլոր ճանապարհները կ'հաստատուին.
27 Մի խոտորիր աջ և ձախ, ոտքդ
հեռացրու չարիքը։

Գլ. Ե

1 Որդեակս, մտիկ տուր իմ իմաստութեանը, և ականջ դիր իմ
հանճարին,
2 Որ խոհեմութիւն պահես, և
քո շրթունքները գիտութիւն
պահեն,
3 Որովհետև օտար կնկայ շրթունքները մեղրի խորիսխ են կաթեցնում, և նորա քիմքը իւղից
կակուղ է.
4 Բայց նորա վախճանը դառն է
օշինդրի պես, սուր է երկսայրի
սուրի պես։
5 Նորա ոտները իջնում են մահը, դժոխքին են հասնում նորա
քայլերը,
6 Կեանքի ճանապարհով նա բնաւ չի գնալ, նորա ճանապարհները փոփոխական են. դու չ'գիտես։
7 Եւ հիմա, որդեակք, լսեցէք, և մի հեռանաք իմ բերանի
խօսքերիցը։
8 Այն կնկանից հեռու պահիր
քո ճանապարհը, և չ'մօտենաս
նորա տան դուռը.
9 Որ մի գուցէ քո փառքն ուրիշներին տաս, և քո տարիներն անողորմին։
10 Որ մի գուցէ օտարները կըշտանան քո զօրութիւնից, և քո
վաստակը օտարի տունը գնաց.
11 Եւ դու քո վերջնում հառաչես, երբոր միսդ ու մարմինդ կը
մաշուին.
12 Եւ ասես. Ի՜նչպէս ես խրատը
ատեցի, և սիրտս անարգեց յանդիմանութիւնը.
13 Եւ չ'լսեցի ինձ խրատողի ձայնը, և իմ ականջները չ'տուի իմ
ուսուցիչներին։
14 Փիչ է մնացել որ ամեն մի
չարութեան մէջ լինիմ, ժողովքի և ժողովրդի մէջ լինելով։
15 Դու քո ջրակոյտիցը ջուր խմիր, և քո ջրհորի մէջիցը հոսող
ջուրերը։
16 Քո աղբիւրները տարածուին
դրսում, հրապարակներում՝ ջրերի վտակները.
17 Միայնակ քոնը լինին, և ոչ թէ
օտարներինը և քոնը։
18 Թող քո աղբիւրը օրհնեալ լինի, և ուրախացիր քո երիտասարդութեան կնոջ հետ.
19 Նա սիրելի եղնիկի և շնորհալի այծեամի պէս լինի, նորա
ոտինքները թող քեզ կշատացնեն
ամեն ժամանակ, նորա սիրովը
միշտ զմայլիս։
20 Եւ ի՞նչու համար, որդեակս,
օտարի հետ զմայլիս, և օտար
կնկայ ծոցը գրկես։
21 Որովհետև Տիրոջ աչքի առաջին են մարդու ճանապարհները,
և նա ուղղում է նորա բոլոր շաւիղները։
22 Զարագործին պիտի բռնեն նորա անօրէնութիւնները, և նա
պիտի բռնուի իր մեղքի չուաններովը։
23 Նա պիտի մեռնի առանց խրատի, և պիտի մոլորուի իր մեծ
մոլորութեան շատութիւնովը։

Գլ. Զ

1 Որդեակս, եթէ դու երաշխաւոր եղար քո ընկերի համար, և
ձեռքդ տուիր օտարի համար.
2 Դու բռնուել ես քո բերանի
խօսքովը, և քեզ բռնել ես տուել
քո բերանի ասածներովը։
3 Ա՛ա այսպէս արա, որդեակս,
և ազատիր քեզ, որովհետև քո
ընկերի ձեռքն ընկար. գնա խոնարհուիր և թախանձիր քո ընկերին։
4 Քունն մի տար աչքերիդ, և
նինջ՝ արեւանունքիդ.
5 Փրկ ձեռքիցը ազատիր այծեամի պէս, կամ հաւուրսի ձեռքից ազատուող թռչունի պէս։
6 Գնա մրջիւնին մօտ, ով ծոյլ,
նորա ճանապարհները տես և իմաստուն եղիր.
7 Որ իշխան, ոստիկան և տիրող չ'ունի.
8 Բայց իր կերակուրը պատրաստում է ամառը, և իր ուտելիքը
հունձի ժամանակին է ժողովում։
9 Մինչև ե՞րբ ես պառկելու, ով
ծոյլ, երբ՞ ես զարթնելու քնիցդ։
10 Մի քիչ քուն, մի քիչ ննջել,
մի քիչ էլ ձեռք ձեռքի դնել
պառկել.
11 Այն ժամանակ քո աղքատութիւնը ճանապարհորդի պէս կը
գայ, և քո կարօտութիւնը զօրաւոր ոգնական մարդի պէս։
12 Անպիտան մարդը՝ անօրէն մարդը ծուռ բերանով է ման գալիս,
13 Նա ակնարկում է աչքերովը,
ոտներովը խօսում է, մատներովը՝ բան սովորեցնում.
14 Նենգութիւն կայ նորա սրտում, նա միշտ չարութիւն է
հնարում, կռիւները տարածում։
15 Սորա համար յանկարծ կ'գայ
նորա կորուստը, նա յանկարծ
պիտի կտորուի, և ողջութիւն պիտի չ'գտնէ։
16 Վէց բան կայ որ Տէրն ատում է, և եօթը՝ զզուելի են նորա
հոգիի առաջին.
17 Ամբարտաւան աչքեր, ստախօս
լեզու, և անմեղ արիւն թափող
ձեռքեր.
18 Չար խորհուրդներ հնարող
սիրտ, չարութեան համար վազելու շտապող ոտքեր.
19 Սուտեր փչող անիրաւ վկայ, և
եղբայրների մէջ կռիւներ գցող։
20 Որդեակս, պահիր քո հօր պատուիրանքը, և քո մոր օրէնքը մի
մերժիր։
21 Կապիր քո սրտի վերայ, քո վզին փաթաթիր
նորանց։
22 Թող գնալու ժամանակդ քեզ առաջնորդեն, քնած ժամանակդ քեզ պահպանեն, և երբոր զարթնես, թող քեզ հետ խօսակցեն։
23 Որովհետև պատուիրանքը ճրագ է և օրէնքը՝ լոյս, և խրատի
յանդիմանութիւնները՝ կեանքի
ճանապարհ։
24 Որ քեզ պահէ չար կնկանիցը,
օտար կնկայ շողոքորթող լեզուիցը։
25 Մի ցանկանար նորա գեղեցկութեանը քո սրտումը, և թող
նա քեզ չ'յափշտակէ իր արտեւանունքներովը։
26 Որովհետև մի պառնիկ կնկայ
պատճառով ուղտուհի մինչև մի նկանակ հացի. և ընդունայնակինը պատուական հոգին
կ'որսայ։
27 Չնաշ է որ մի մարդ կրակ կրե
իր ծոցումը, և նորա հանդերձները չ'այրուին։
28 Կամ կարելի է որ մի մարդ
կայծերի վերայ ման գայ, և նորա ոտները չ'խանձուին։
29 Այսպէս է նաև իր դրացիի
կնկայ մօտ գնացողը. ամեն նորան դիպչողը անմեղ չէ։
30 Այն գողին չեն արհամարհիլ,
որ գողացել է իր սովը կշտացնելու համար, որովհետև սոված
եր։
31 Սակայն եթէ բռնուի, եօթանապատիկ պիտի վճարէ, իր տան
բոլոր ստացուածքը պիտի տայ։
32 Բայց կին պզծողն անմիտ է. իր
հոգին է փչացնում, ով որ անէ
այս։
33 Նա վէրք և անարգանք կ'գըտնէ, և նորա նախատինքը չի ջնջուիլ։
34 Որովհետև նախանձը մարդիս
կատաղութիւն է, և նա չի խնայիլ վրէժխնդրութեան օրը։

35 Նա ոչ մի փրկանքի երեսին
մտիկ չի անիլ, և նա չի հաճիլ,
որքան էլ շատացնես դու կա-
շառքը։

ԳԼ. Ի

1 Որդեակս, պահիր իմ խօսքերը,
և իմ պատուիրանքները թագ-
ցրու քեզ մօտ։
2 Պահիր իմ պատուիրանքները
որ ապրես, և իմ օրէնքը՝ քո աչ-
քի բիբին պէս։
3 Կո մատներին կապիր նորանց,
նորանց գրիր քո սրտի տախտա-
կի վերայ։
4 Իմաստութեանն ասիր. "Իմ
քոյրն ես." և հանճարին "Ծա-
նօթ" կանչիր։
5 Որ քեզ պահէ օտար կնկա-
նից, այն օտար կնկանից, որի
խօսքերը շողոքորթուած են։
6 Որովհետև իմ տան պատու-
հանիցը, իմ վանդակի միջովը
մտիկ էի տալիս։
7 Եւ տեսայ անմիտների մէջ և
նկատեցի երիտասարդ պատանի-
ների մէջ մէկ պակասամիտին,
8 Որ անց էր կենում փողոցում
այն կնկայ կողքովը, և նորա տան
ճանապարհը բռնեց,
9 Օրը երեկոյեան մթնած ժա-
մանակը, երբոր դիշերուայ խա-
ւարը կոխել էր։
10 Եւ ահա մի կին նորան դիմա-
ւորեց, պոռնկի ծածկոցով և նեն-
դաւոր սրտով.
11 Նա աղաղակող էր և ամնձա-
կոտոր. Նորա ոտները չէին կենում
իր տանը,
12 Երբեմն դուրսը, երբեմն հրա-
պարակներումը, և ամեն անկիւ-
նի մօտ դարանամուտ էր լինում։
13 Եւ սա բռնեց նորան և համ-
բուրեց նորան, երեսը պնդացրեց
և ասեց նորան.
14 Ես խաղաղութեան զոհեր պի-
տի անեի, այսօր կատարել եմ
իմ ուխտերը.
15 Նորա համար դուրս եկայ քո
դիմացը, քո երեսը խնդրելու և
գտայ քեզ.
16 Անկողինս փափուկ բարձերով
ամրքել եմ, Եգիպտոսի երփնե-
րանգ հիւսուածքով.
17 Ննջարանիս մէջ զմուռս, հալ-
ուե և կինամոն եմ խնկել։
18 Եկ առփանքով զուարճանանք
մինչև առաւօտ և զմայլինք սի-
րով.
19 Որովհետև մարդս տանը չէ,
հեռու ճանապարհ է գնացել.
20 Փողի քսակն առել է իր մա-
տը. լուսնի լրման օրն է տուն
գալու։
21 Այդպէս իր շատ խօսքերովը հր-
բապուրեց նորան, իր շրթունք-
ների շողոքորթութիւնովը քշեց
տարաւ նորան.
22 Նա էլ իսկոյն գնաց նորա ե-
տևիցը, ինչպէս որ արջառը կը
գնայ սպանդանոցը, և ինչպէս դի-
ժը՝ գեպի շղթայով պատժուե-
լը։
23 Մինչև որ նետը ճեղքէ նորա
լեարդը, ինչպէս որ թռչունը
շտապում է դեպի ծուղակը, և
չ'գիտէ որ նա իր հոգին հա-
մար է։
24 Եւ հիմա, որդեակներ, լսեցէք
ինձ, և ուշադրութիւն արէք իմ
բերանի խօսքերին։
25 Թող սիրտդ չխոտորուի դեպի
նորա ճանապարհները, և մի մո-
լորուիլ նորա շաւիղներումը։
26 Որովհետև նա շատերին է խո-
տոռտել ու վայր գցել, և ամեն
նորա սպանածները զօրաւոր էին։
27 Դժոխքի ճանապարհներն է նո-
րա տունը, որ իջնում են մահ-
ուան սենեակները։

ԳԼ. Ը

1 Ահա իմաստութիւնը կանչում
է, և հանճարը ձայն է տալիս.
2 Բարձրերի գլխին, փողոցների
վերայ, շաւիղների մէջտեղ կանգ-
նած է.
3 Դռների մօտ, քաղաքի մուտ-
քումը դռների մտնելու տեղը ա-
ղաղակում է.
4 Ձեզ եմ կանչում, ով մարդիկ, և իմ ձայնը դեպի մարդ-
կանց որդիներին է։
5 Ով անմիտներ, իմաստութիւն
հասկացէք, և ով յիմարներ,
խելք հասկացէք։
6 Լսեցէք, որովհետև ազնիւ բա-
ներ եմ խօսելու, և իմ շրթ-
թունքներըը պիտի բանամ ուղիղ
բաներով։
7 Որ իմ քիմքը ճշմարտութիւն
է խօսելու, և իմ շրթունքների
համար պիղծ է անզգամութիւ-
նը։
8 Բերանիս բոլոր խօսքերը արդա-
րութեամբ են, նորանց մէջ դա-
ձաւած ու ծռած բան չ'կայ։
9 Նորանք ամենքն էլ ուղիղ են
հասկացողին, և շիտակ են գի-
տութիւն գտնողներին։
10 Առէք իմ խրատը և ոչ թէ
արծաթ, և գիտութիւնը ընտիր
ոսկիից աւելի է։
11 Որովհետև իմաստութիւնը գո-
հարներիցը լաւ է, և բոլոր ցան-
կալի բաները չ'արժէն նորան։
12 Ես՝ իմաստութիւնս բնակվում
եմ խորագիտութեան հետ, և
խորհուրդների գիտութիւնը գը-
տել եմ։
13 Տիրոջ երկիւղը չարն ատել է,
հպարտութիւնն ու ամբարտա-
ւանութիւնը և չար գնացքը և
նենգաւոր բերանը ես ատում եմ։
14 Իմն է խորհուրդը և յաջողու-
թիւնը. ես եմ հանճարը, զո-
րութիւնը իմն է։
15 Ինձանով են թագաւորները
թագաւորում, և նախարարները
արդարութեան կանոններ դը-
նում։
16 Ինձանով են իշխում իշխան-
ները, նաև ազնուականներն —
աշխարհքի բոլոր դատաւորները։
17 Ես ինձ սիրողներին կ'սիրեմ, և
ինձ կանուխ որոնողները կ'գտնեն
ինձ։
18 Հարստութիւն և փառք կայ
ինձ մօտ, ընտիր ստացուածք և
արդարութիւն։
19 Լաւ է իմ պտուղը ընտիր և
մաքուր ոսկիից, և իմ արդիւնք
ընտիր արծաթից։
20 Ես ման եմ գալիս արդարու-
թեան ճանապարհումը, իրա-
ւունքի շաւիղների միջումը,
21 Որ ինձ սիրողներին հարկան բա-

րիք ժառանգեցնեմ, և նորանց
շտեմարանները լցնեմ։
22 Տէրն ինձ ունէր իր ճանապար-
հի սկզբումը, իր վաղեմի գործ-
քերիցն առաջ։
23 Ես օծուել եմ յաւիտենից
հետէ, ի սկզբանէ երկրիս յա-
ռաջ գալուցն առաջ։
24 Ես անդունդները չ'եղած եմ
ծնուել, ջրառատ աղբիւրները
չ'եղած։
25 Տակաւին սարերը չ'ձգուած,
բլուրներիցն առաջ եմ ես ծըն-
ուել։
26 Երբոր նա տակաւին չէր ստեղ-
ծել երկիրը և դաշտերը և աշ-
խարհքի սկզբնական շամանդաղ-
ները։
27 Նա երկինքները պատրաստե-
լիս՝ ես այնտեղ էի, երբոր նա
անդունդների վերայ կամար էր
գծում։
28 Երբոր նա պնդացնում էր վերի
ամպերը, հաստատում էր ան-
դունդների աղբիւրները։
29 Երբոր ծովի համար դնում էր
նորա կանոնը, որ ջուրերն իրանց
եղերքիցը դուրս չ'անցնեին, երբոր
գցում էր երկրի հիմունքը։
30 Ա՛յն ժամանակ ես նորա կըշ-
ռին ճարտարապետ էի, և նորա
ուրախութիւնն էի ամեն օր՝ զուա-
րճանալով նորա առաջին ամեն
ժամանակ։
31 Ուրախանում էի նորա երկրի
աշխարհքումը, և իմ զուարճու-
թիւնը մարդկանց որդիների հետ
էր։
32 Եւ հիմա, որդեակներ, լսեցէք
ինձ. և երանի՛ նորանց, որ պա-
հում են իմ ճանապարհները։
33 Խրատս լսեցէք և իմաստուն ե-
ղէք, և մի մերժէք։
34 Երանի՛ այն մարդին որ ինձ
մտիկ է անում, որ ամեն օր հըս-
կում է իմ դռներիս մօտ, և իմ
դրանդիքի մուտքերը պահում է։
35 Որովհետև ինձ գտնողը կեանք
է գտել, և Տէրիցը շնորհք կը
առանայ։
36 Բայց ինձ դէմ մեղանչողը կը

*Ի՛մ՝ հաստատուել եմ

վնասէ իր հոգիին, բոլոր ինձ ա-
տողները մահն են սիրում։

ԳԼ. Թ

1 Իմաստութիւնը շինեց իր տունը,
տաշեց նորա եօթը սիւները.
2 Մորթեց իր մսացուները, խառ-
նեց իր գինին, նաև պատրաստեց
իր սեղանը.
3 Նա ուղարկեց իր աղախիններ-
ին, կանչում է քաղաքի բարձր
տեղերի գլխին.
4 Ով որ պարզամիտ է, թող
այստեղ քաշուի. և պակասա-
միտին ասում է.
5 Եկէք կերէք իմ հացիցը, և
խմեցէք իմ խառնած գինիիցը։
6 Թողեցէք յիմարութիւնը, և
ապրեցէք. և վարուեցէք խոհե-
մութեան ճանապարհումը։
7 Ծաղր անողին խրատողը իր վե-
րայ անարգանք է առնում, և
ամբարշտին յանդիմանողը՝ իր ա-
րատը։
8 Ծաղր անողին մի յանդիմա-
նիր, որ քեզ չ՚ատէ, յանդիմա-
նիր իմաստունին, և նա քեզ կը
սիրէ։
9 Գիտութիւն տուր իմաստունին,
և էլ աւելի իմաստուն կ՚դառ-
նայ. արդար մարդին սովորեցրու,
և նա կ՚աւելացնէ ուսումը։
10 Իմաստութեան սկիզբը Տիրոջ
երկիւղն է, և Ամենասուրբին
ճանաչելը հանճար.
11 Որովհետև քո օրերն ինձանով
կ՚շատանան, և քո կեանքի տա-
րիները կ՚աւելացնես։
12 Եթէ իմաստուն ես, քեզ հա-
մար ես իմաստուն. եթէ ծաղր
անող ես, միայն դու ես ՝ՇՄՈՒ
քաշելու։
13 Յիմարութիւնը աղաղակող
կնկայ պէս կ՚լինի, անմիտ է և
մի բան չ՚գիտէ.
14 Եւ նստում է իր տան մուտ-
քումը քաղաքի բարձր տեղերի
աթոռի վերայ.
15 Աղաղակելով ճանապարհի անց-
ուդարձողներին, որ ուղիղ գը-
նում են իրանց ճանապարհները.
16 Ով որ պարզամիտ է, թող
այստեղ քաշուի, և պակասա-
միտին ասում է,
17 Գողացուած ջուրերը քաղցր են
լինում, և ծածուկ հացը՝ ախոր-
ժելի։
18 Բայց նա չ՚գիտէ որ այնտեղ
մահացեալներ կան, դժոխքի ան-
դունդներումն են նորա հրաւիր-
ուածները։

ԳԼ. Ժ

Սողոմոնի առակները։

1 Իմաստուն որդին կ՚ուրախացնէ
իր հօրը, և յիմար որդին իր մօր
տրտմութիւնն է։
2 Անօրէնութեան գանձերը օ-
գուտ չ՚ունին, բայց արդարու-
թիւնը ազատում է մահից։
3 Տէրը չի թողիլ որ արդարի հո-
գին սովէ, բայց խափանում է ամ-
բարիշտների բաղձանքը։
4 Ծոյլ ձեռքով բանողը աղքատ
է լինում. իսկ ժիրերի ձեռքը
հարստացնում է։
5 Ամառը ժողովողը խոհեմ որդի
է, հունձքին քնողը ամօթ բերող
որդի է։
6 Օրհնութիւններ կան արդարի
գլխին, և բռնութիւնը կ՚խցկէ
ամբարիշտների բերանը։
7 Արդարների յիշատակը օրհ-
նուած կ՚լինի, բայց ամբարիշտ-
ների անունը կ՚փտի.
8 Իմաստուն սիրտ ունեցողը կ՚ընդ-
դունէ պատուէրը. բայց յիմար
շրթունք ունեցողը կ՚կործանուի։
9 Կատարելութեամբ վարուողը
ապահով կ՚գնայ. բայց իր ճա-
նապարհները ծռողը կ՚ճանաչ-
ուի։
10 Աչքով ակնարկողը նեղութիւն
է տալիս, և յիմար շրթունք ու-
նեցողը կ՚կործանուի։
11 Կեանքի աղբիւր է արդարի բե-
րանը, բայց բռնութիւնը կ՚խցկէ
ամբարիշտների բերանը։
12 Ատելութիւնը կռիւներ կը
քրքրէ, բայց սէրը ամեն յան-
ցանքները կ՚ծածկէ։
13 Հանճարեղի շրթունքի վերայ
իմաստութիւն կ՚գտնուի, և գա-

ւազան կայ անմիտի մէջքի հա-
մար։
14 Իմաստունները գանձում են
գիտութիւնը, բայց յիմարի բե-
րանը մօտ է կործանման։
15 Հարուստի ճոխութիւնն իր զօ-
րութեան քաղաքն է, իսկ աղ-
քատների չքաւորութիւնն իրանց
կործանումն է։
16 Արդարի գործողութիւնը կեան-
քի համար է. ամբարշտի ար-
դիւնքը մեղքի համար։
17 Խրատ՝ պահելը ճանապարհ է
դէպի կեանք, բայց յանդիմա-
նութիւնը ձգողը մոլորում է։
18 Ատելութիւն ծածկողը ստախօս
է, և բամբասանք հնարողը ան-
միտ է։
19 Շատախօսութեան մէջ յան-
ցանք պակաս չի լինիլ, բայց իր
շրթունքները զսպողը խելացի է։
20 Ընտիր արծաթ է արդարի լե-
զուն. իսկ ամբարիշտների սիրտը
չնչին բանի պէս է։
21 Արդարի շրթունքները շատե-
րին են առաջնորդում, բայց յի-
մարները մեռնում են պակասա-
մտութեան մէջ։
22 Տիրոջ օրհնութիւնն է հարբս-
տացնում, և չարչարուիլը մի բան
չէ աւելացնում նորա վերայ։
23 Յիմարի համար չարութիւն ա-
նելը զբօսանքի պէս է, բայց ի-
մաստութիւնը՝ հանճարեղ մար-
դինը։
24 Չար մարդի վախեցած բանը գա-
լիս է նորա վերայ. բայց արդար-
ների փափաքը տրվում է։
25 Երբոր մրրիկը անց է կենում,
ամբարիշտը բնաջինջ է լինում,
բայց արդարը յաւիտեան հաս-
տատահիմն է։
26 Ինչպէս որ քացախն է ատամ-
ներին. և ծուխն աչքերին. նոյն-
պէս է ծոյլը իր ուղարկողի հա-
մար։
27 Տիրոջ երկիւղը կ՚աւելացնէ օ-
րերը, և ամբարիշտների օրերը կը
կարճանան։
28 Արդարների յոյսն ուրախու-
թիւն է, բայց ամբարիշտների
ակնկալութիւնը կ՚կորչի։
29 Զօրութիւն է Տիրոջ ճանա-
պարհը կատարեալի համար, բայց
կործանում՝ անօրէնութիւն գոր-
ծողների համար։
30 Արդարը յաւիտեան չի սասա-
նիլ, բայց անզգամները չեն բը-
նակուիլ երկրի վերայ։
31 Արդարի բերանը իմաստութիւն
է բղխում, բայց նենգաւոր լե-
զուն պիտի կտրուի։
32 Արդարի շրթունքը դիտեն հա-
ճելի բանը, բայց ամբարիշտների
բերանը՝ նենգութիւն։

ԳԼ. ԺԱ

1 Խարդախ կշիռքը զզուանք է Տի-
րոջ համար. բայց ուղիղ քարը
նորան հաճելի է։
2 Հպարտութիւնն եկաւ, անար-
գութիւն էլ կ՚գայ. բայց խո-
նարհների հետ իմաստութիւն
կայ։
3 Ուղիղների ճշմարտութիւնը
նորանց կ՚առաջնորդէ, բայց նեն-
գաւորների ծռութիւնը նորանց
կ՚փչացնէ։
4 Օգուտ չ՚ունի հարստութիւնը
բարկութեան օրը, բայց արդա-
րութիւնը կ՚ազատէ մահից։
5 Կատարեալների արդարութիւ-
նը կ՚ուղղէ նորանց ճանապարհը,
բայց անզգամը կ՚ընկնի իր անզգ-
ամութեամբը։
6 Ուղիղների արդարութիւնը նո-
րանց կ՚ազատէ. բայց նենգաւոր-
ները ցանկութեան մէջ կ՚բռ-
նուին։
7 Չարը մեռնելիս ակնկալութիւ-
նը կ՚փչանայ, և անօրէնների յոյ-
սը կ՚կորչի։
8 Արդարը կ՚ազատուի նեղու-
թիւնից, բայց ամբարիշտը կ՚գայ
նորա տեղը։
9 Կեղծաւորն իր բերանովը կը
փչացնէ իր հարևանին, բայց ար-
դարները կ՚ազատուին գիտու-
թիւնով։
10 Արդարների յաջողակութիւ-
նովը քաղաքը կ՚ուրախանայ, և
չարերի կորած ժամանակը ցն-
ծութեան ձայն կ՚լինի։
11 Ուղիղների օրհնութիւնովը քա-
ղաքը կ՚բարձրանայ, բայց ամբա-

բիշտների բերանովը կ'կործանուի։
12 Իր հարևանին արհամարհողը
պակասամիտ է, բայց խոհեմ
մարդը կ'լռէ։
13 Բանսարկութեան ման եկողը
գաղտնիքը կ'յայտնէ, բայց հա-
ւատարիմ հոգի ունեցողը կ'ծած-
կէ բանը։
14 Առաջնորդութիւն չ'լինելիս ժո-
ղովուրդը կ'ընկնի, բայց խորհը-
դատուների շատութիւնովը փը-
րկութիւն կ'լինի։
15 Անշուշտ չարիքի կ'հանդիպէ
ով որ օտարին երաշխաւոր դառ-
նայ, բայց երաշխաւորութիւնն
ատողը ապահով է։
16 Շնորհալի կինը պատիւ կ'ստա-
նայ. և ուժեղները հարստու-
թիւն կ'յափշտակեն։
17 Ողորմած մարդն իր անձին լա-
ւութիւն կ'անէ, բայց անգութ
մարդը կ'տանջէ իր մարմինը։
18 Անզգամը սնոտի գործ է գոր-
ծում, իսկ արդարութիւն սեր-
մողը՝ ճշմարիտ վարձք։
19 Ինչպէս որ արդարութիւնը հա-
ռնում է կեանքին, նոյնպէս և չա-
րութեան հետևողը՝ իր մահ-
ուանը։
20 Զզուելի են Տիրոջ առաջին
ծուռ սիրտ ունեցողները, բայց
նորան հաճելի են կատարեալ
ճանապարհի տէրերը։
21 *Անշո՛ւշտ որ անպատիժ չի մը-
նալ չարը, բայց արդարների սե-
րունդը կ'ազատուի։
22 Ինչ որ է մի ոսկի օղակը խոզի
քթին, այն է մի գեղեցիկ կին որ
խոհեմութիւն չ'ունի։
23 Արդարների ցանկացածը միայն
բարութիւն է, բայց ամբարիշտ-
ների ակնկալածը բարկութիւն է։
24 Կայ որ ցրվում է, և էլ է ա-
ւելանում. բայց չափիցը դուրս
խնայողը կայ, սակայն կարօտու-
թեան է հասնում։
25 Օրհնութիւն տուող անձը կը
գիրանայ, և ոռոգողը ինքն էլ
կ'ոռոգուի։
26 Ցորենը ետ պահողին կ'անիծէ
ժողովուրդը, բայց օրհնութիւն
կ'տայ ծախողի գլխին։
27 Բարութիւն որոնողը ուզում է
հաճելի լինել. բայց չարութիւն
ուզողը կ'հանդիպէ նորան։
28 Իր հարստութեան յուսացողը
վայր կ'ընկնի, բայց արդարները
կ'ծաղկեն դալարի պէս։
29 Իր տունը տանջողը քամի կը
ժառանգէ, և յիմարը կ'ծառայէ
իմաստուն սիրտ ունեցողին։
30 Արդարի պտուղը կեանքի ծառ
է, և հոգիներ շահողը իմաստուն։
31 Ահա արդարը ստանում է երկ-
րիս վերայ իր հատուցումը. ա-
պա ո՞ւր մնաց որ անզգամը և մե-
ղաւորը։

ԳԼ. ԺԲ

1 Խրատ սիրողը գիտութիւն է սի-
րում, բայց յանդիմանութիւն
ատողը անխելք է։
2 Բարին Տէրիցը շնորհք կ'ստա-
նայ, բայց նենգաւոր մարդին նա
կ'դատապարտէ։
3 Մարդս չի հաստատուիլ ամ-
բարշտութիւնով, իսկ արդար-
ների արմատը չի սասանիլ։
4 Առաքինի կինը իր մարդի
պսակն է. բայց նորա ոսկորների
մէջ փտութեան պէս է նախա-
տինք բերողը։
5 Արդարների մտածողութիւն-
ները իրաւունք են. իսկ ամբա-
րիշտների խորհուրդները՝ նեն-
գութիւն։
6 Ամբարիշտների խօսքը արիւնի
դարանամուտ լինել է, բայց ու-
ղիղների բերանն իրանց կ'ազատէ։
7 Ամբարիշտները կ'կործանուին
ու կ'չքանան. բայց արդարների
տունը կ'մնայ։
8 Իր խոհեմութեան չափ կ'գով-
ուի մարդս. բայց ծուռ սիրտ ու-
նեցողը կ'անարգուի։
9 Լաւ է աննշան լինող՝ բայց ծա-
ռայ ունեցողը, քան թէ ինքն ի-
րան մեծացնող ու հացի կարօտ
եղողը։
10 Արդարը գիտէ իր անասունի
հոգսը, բայց ամբարիշտների ա-
ղիքները անգութ են։

*Կամ՝ թէև չարը ձեռք ձեռքի
դիպանի՝ անպատիժ չի մնալ,

11 Իր երկիրը գործողը կ'կշտանայ
հացով, բայց դարտակներին հե-
տևողը պակասամիտ է։
12 Ամբարիշտը փափաքում է չա-
րերի աւարին, բայց արդարների
արմատը ճիւղէր կ'տայ։
13 Շրթունքների խորամանկու-
թեան մէջ չար որոգայթ կայ. բայց
արդարը նեղութիւնից դուրս է
գալիս։
14 Մարդս իր բերանի պտուղնե-
րիցը կ'կշտանայ բարիքներով, և
մարդի ձեռքի արարքը ետ կը
դառնայ իրան։
15 Յիմարի ճանապարհն ուղիղ է
իր աչքի առաջին, բայց խրատ
լսողն իմաստուն է։
16 Յիմարի բարկութիւնը նոյն օրը
կ'իմացուի. բայց խորագէտը ա-
նարգանքը ծածկող է։
17 Ճշմարտութիւն խօսողը արդա-
րութիւն կ'յայտնէ. բայց սուտ
վկան՝ խաբեբայութիւն։
18 Շատախօս է լինում, որ սուրի
պէս խոցոտում է. բայց իմաս-
տունների լեզուն բժշկութիւն է։
19 Ճշմարտախօս շրթունքը յա-
ւիտեան կ'մնայ. բայց վայրկեա-
նական է ստախօս շրթունքը։
20 Նենգութիւն կայ չարութիւն
խորհողների սրտումը. բայց խա-
ղաղութիւն խորհուրդ տուող-
ների համար՝ ուրախութիւն։
21 Արդարին ոչ մի չարիք չի հան-
դիպիլ, բայց ամբարիշտները լիքն
են չարիքներով։
22 Զզուելի են Տիրոջ համար ստա-
խօս շրթունքները, բայց հաւա-
տարմութիւն անողները հաճելի
են նորան։
23 Խորագէտ մարդը գիտեցածը
ծածկող է, բայց յիմարների
սիրտը տխմարութիւն կ'հրատա-
րակէ։
24 Աշխատասէրների ձեռքը կ'իշ-
խէ, բայց ծոյլը հարկատու կը
լինի։
25 Մարդիս սրտին վիշտը կ'ճնշէ
նորան, բայց բարի խօսքը նորան
կ'ուրախացնէ։
26 Արդարը *ճանապարհ է ցոյց
տալիս իր ընկերին՝, բայց ամբա-
րիշտների ճանապարհը իրանց կը
մոլորեցնէ։
27 Թոյլը չի խորովիլ իր որսը, բայց
մարդիս պատուական ստացուած-
քը աշխատասիրութիւնն է։
28 Արդարութեան ճանապարհու-
մը կեանք կայ, և նորա շաւիղ-
ների ճանապարհումը մահ չ'կայ։

ԳԼ. ԺԳ

1 Իմաստուն որդին կ'լսէ իր հօր
խրատը, բայց ծաղր անողը չի լսիլ
կշտամբելը։
2 Մարդս բերանին պտղիցը բա-
րիքներ կ'ուտէ, բայց անօրէնների
հոգին՝ բռնութիւն։
3 Իր բերանը զսպողը կ'պահէ իր
հոգին. իր շրթունքները լայն բաց
անողը կործանում է իրան հա-
մար։
4 Ծոյլի հոգին փափաքում է և
չ'ունի. բայց աշխատասէրների հո-
գին կ'պարարտանայ։
5 Արդարը ատում է սուտ խօս-
քը, բայց ամբարիշտը այպանում
ու խայտառակում է իրան։
6 Արդարութիւնը կ'պահէ կա-
տարեալ վարքը, բայց անզգա-
մութիւնը կ'կործանէ մեղաւո-
րին։
7 Կան որ իրանց հարուստ են
ձևացնում և ոչինչ չ'ունին. ի-
րանց աղքատ ձևացնողներ էլ՝ որ
շատ ստացուածք ունին։
8 Մարդիս կեանքի փրկանքը իր
հարստութիւնն է, բայց աղքա-
տը յանդիմանութիւն չի լսիլ։
9 Արդարների լոյսը պիտի զուար-
թանայ, բայց ամբարիշտների ճը-
րագը կ'հանգչի։
10 Միմիայն կռիւ կ'ծագէ ամբար-
տաւանութիւնից, բայց խրատ-
ուածների մօտ իմաստութիւն
կայ։
11 Ունայնութեամբ ժողովուած ըս-
տացուածքը կ'պակասուի, բայց
քիչ քիչ ժողովողը կ'շատացնէ։
12 Ուշացած յոյսը սիրտը կ'հի-
ւանդացնէ, բայց կատարուած
փափաքը կենաց ծառ է։
13 Խօսքն արհամարհողն իրան է

*Կամ՝ գերազանց է իր ընկերից,

վնասում, իսկ պատուիրանքից
վախեցողը կ'վարձատրուի։
44 Իմաստունին օրէնքը կենաց աղ-
բիւր է, մահուան որոգայթնե-
րիցը խոյս տալու համար։
45 Բարի իմաստութիւնը շնորհք
կ'տայ, բայց խորամանկների ճա-
նապարհը կոշտ է։
46 Ամեն խորագէտ իմաստութիւ-
նով կ'գործէ, բայց անմիտը յի-
մարութիւն կ'տարածէ։
47 Անզգամ պատգամաւորը չա-
րիքի մէջ կ'ընկնի, բայց մի հաւա-
տարիմ դեսպան բժշկութիւն է։
48 Աղքատութիւն և նախատինք
կայ խրատը մերժողի համար,
իսկ յանդիմանութիւնը պահո-
ղը կ'պատվուի։
49 Կատարուած փափաքը ախոր-
ժելի է հոգիին, բայց յիմարնե-
րի համար զզուելի է չարութիւ-
նից հեռանալը։
20 Իմաստունների հետ վարուողը
իմաստուն կ'դառնայ. բայց տբխ-
մարների հետ ընկերացողը կ'չա-
բանայ։
21 Մեղաւորի ետևից կ'գնայ չա-
րիքը, բայց արդարներին բարիք
կ'հատուցուի.
22 Բարին ժառանգութիւն կ'թո-
ղէ որդկանց որդիների համար,
բայց արդարի համար է պահ-
ուած մեղաւորի կայքը։
23 Աղքատների խրամհատումը շատ
ուտելիք է լինում. բայց կայ որ
կորչում է անիրաւութիւնից։
24 Գաւազանը խնայողը ատում
է իր որդիին. բայց նորան սիրողը
կանուխ կ'խրատէ նորան։
25 Արդարը կ'ուտէ մինչև իր ան-
ձը կ'կշտանայ. բայց ամբարիշտ-
ների փորը կարօտ կ'մնայ։

ԳԼ. ԺԴ

1 Կնիկների իմաստունը շինում է
իր տունը, բայց յիմարը իր ձեռ-
քովը քանդում է նորան։
2 Իր ուղղութեան մէջ վարուո-
ղը վախենում է Տէրիցը, բայց
իր ճանապարհները ծռածը ա-
նարգում է նորան։
3 Յիմարի բերանումը գոռոզու-
թեան գաւազան կայ, բայց ի-
մաստունների շրթունքները պա-
հում են նորանց։
Արջառ չ'լինելիս մսուրը մաքուր 4
է, բայց արդիւնքի առատու-
թիւնը եզի ոյժովն է։
Ճշմարտութեան վկան սուտ 5
չի խօսիլ, բայց սուտեր կ'փչէ
ստախօս վկան։
Իմաստութիւն է որոնում ծա- 6
ղրը անողը, և չ'կայ. բայց գի-
տութիւնը դիւրին է բանիմացի
համար։
Յիմար մարդի առաջով գնա, 7
և բնաւ չես իմանալ թէ գիտու-
թեան շրթունքներ ունի.
Խորագէտի իմաստութիւնը իր 8
ճանապարհը հասկանալն է. բայց
յիմարների անմտութիւնը խար-
դախութիւն է։
Յիմարները ծաղրում են յան- 9
ցանքը, բայց ուղիղների մէջ հա-
ճութիւն կայ։
Սիրտն է զգում իր հոգիի 10
ցաւը, և նորա ուրախութեանը
օտարը չի խառնուիլ։
Ամբարիշտների տունը կ'կոր- 11
ծանուի, բայց ուղիղների վրանը
կ'ծաղկի։
Կայ ճանապարհ որ ուղիղ է 12
մարդիս առաջին, բայց նորա վեր-
ջը մահուան ճանապարհներ են։
Ծիծաղելիս էլ սիրտը կ'տրամի, 13
և նորա՝ այսինքն ուրախութեան
վերջը սուգ է։
Խոտորած սիրտը կ'կշտանայ իր 14
ճանապարհներիցը, բայց բարի
մարդն՝ ինքն իրանից։
Պարզամիտը հաւատում է ա- 15
մեն խօսքի, բայց խորագէտը քն-
նում է իր քայլերը։
Իմաստունը վախենում է և հե- 16
ռանում չարիցը, բայց յիմարը
վրդովվում է և յանձնապաստան
լինում։
Բարկասիրտը յիմարութիւն կը 17
գործէ, և նենգամիտը կ'ատուի։
Անմիտները յիմարութիւն կը 18
ժառանգեն, իսկ խորագէտները
գիտութեամբ կ'պսակուին։
Կ'խոնարհուին չարերը բարինե- 19
րի առաջ, և ամբարիշտները ար-
դարի դռներին։

20 Աղքատն իր ընկերին էլ է ա-
տելի, բայց հարուստին սիրող-
ները շատ են։
21 Իր ընկերին անարգողը մեղան-
չում է, բայց ով որ աղքատ-
ներին ողորմէ՝ երանի՝ նորան։
22 Չէ՞ որ պիտի մոլորուին չա-
րութիւն խորհողները. բայց ո-
ղորմութիւն ու ճշմարտութիւն
կայ բարութիւն մտածողների
համար։
23 Ամեն աշխատութեան մէջ շահ
կայ. բայց դատարկաբանութիւ-
նը միայն դէպի կարօտութեան է
տանում։
24 Իմաստունների հարստութիւ-
նը իրանց պսակն է, բայց յիմար-
ների տխմարութիւնը տխմարու-
թիւն կ'մնայ։
25 Հոգիներ ազատող է հաւա-
տարիմ վկան, բայց խարդախը
սուտեր կ'փչէ։
26 Տիրոջ վախումը զօրեղ վստա-
հութիւն կայ. և նորա որդկանց
համար ապաւէն պիտի լինի։
27 Տիրոջ երկիւղը կենաց աղ-
բիւր է մահուան որոգայթների-
ցը խոյս տալու համար։
28 Ժողովրդի բազմութեան մէջ է
թագաւորի պատիւը, բայց ժո-
ղովրդի նուազութիւնը իշխանի
կործանումն է։
29 Երկայնամիտ մարդը շատ խո-
հեմ է, բայց կարճամիտը յի-
մարութիւն է հանում։
30 Մարմնին կեանք է մի հան-
դարտ սիրտը, բայց նախանձը
փտութիւն ոսկորներին։
31 Աղքատին նեղողը նորա Արար-
չին է անարգում. բայց Նորան
պատուողը անանկին կ'ողորմէ։
32 Ամբարիշտը դուրս կ'անուի իր
չարութեան համար. բայց ար-
դարը ապաւէն ունի իր մահու-
մը։
33 Խոհեմի սրտումը իմաստու-
թիւն կայ, բայց յիմարների սրբ-
տինը կ'իմացուի։
34 Արդարութիւնը կ'բարձրացնէ
մի ազգ. բայց մեղքը անարգանք
է ժողովուրդներին։
35 Թագաւորի հաճութիւնը խո-
հեմ ծառայի վերան է. և նո-
րա բարկութիւնը կ'լինի նախա-
տինք բերողի վերայ։

ԳԼ. ԺԵ

Մեղմ պատասխանը կ'հանգըս- 1
տացնէ բարկութիւնը, բայց վի-
րաւորիչ խօսքը բարկութիւն կը
գրգռէ։
Իմաստունների լեզուն գիտու- 2
թիւն է ճարտարախօսում, բայց
յիմարների բերանը տխմարու-
թիւն է բղխում։
Տիրոջ աչքերը ամեն տեղ են, 3
քննում են չարերին և բարինե-
րին։
Բուժող լեզուն կենաց ծառ է. 4
բայց լեզուի վերայի նենգութիւ-
նը հոգիի վերք է։
Յիմարը կ'անարգէ իր հօր խը- 5
րատը, բայց յանդիմանութիւն
պահողը խելացի է։
Արդարի տանը շատ գանձ կայ, 6
բայց ամբարիշտների եկամուտ-
ներումը՝ աւերմունք։
Իմաստունների շրթունքները 7
գիտութիւն են տարածում, բայց
յիմարների սիրտը *այսպէս չէ՝։
Անզգամների զոհը զզուանք է 8
Տիրոջ համար, բայց ուղիղների
աղօթքը նորան հաճելի է։
Զզուելի է Տիրոջ համար ամ- 9
բարշտի ճանապարհը, բայց ար-
դարութեան հետևողին սիրում
է նա։
Չար պատիժ կայ ճանապար- 10
հից ծռուողի համար, յանդի-
մանութիւն ատողը կ'մեռնի։
Դժոխքն ու կորուստը Տիրոջ 11
առաջին են. էլ ո՞ւր մնաց որ
մարդկանց որդիների սիրտերը։
Ծաղր անողը չի սիրիլ իր յան- 12
դիմանիչին, նա չի գնալ իմաս-
տունների մօտ։
Ուրախ սիրտը կ'զուարթացնէ 13
երեսը, բայց սիրտը վշտանալիս
հոգին կ'ճնշուի։
Խոհեմ սիրտը գիտութիւն կ'ո- 14
րոնէ, բայց յիմարների բերանը
յիմարութիւնով է սնանում։
Թշուառի բոլոր օրերը վատ են, 15

*Կամ՝ հաստատ չէ

բայց ուրախ սիրտը մշտական
խնջոյք է։
46 Լաւ է քիչը Տիրոջ երկիւղով,
քան թէ մեծ գանձը՝ խռովու-
թիւնով։
47 Լաւ է խոտեղէն կերակուր, և
հետը սէր, քան թէ գէր զուա-
րակը՝ ատելութիւնով։
48 Բարկացոտ մարդը կռիւ կը
դրդռէ, բայց երկայնամիտը վէճ
կ'հանգստացնէ։
49 Ծոյլի ճանապարհը փշեղէն
ցանկի նման է, բայց ուղիղների
ճանապարհը հարթուած է։
20 Իմաստուն որդին կ'ուրախացնէ
իր հօրը. բայց յիմար մարդը կ'ա-
նարգէ իր մօրը։
21 Յիմարութիւնը ուրախութիւն
է պակասամիտի համար. բայց
խոհեմ մարդը կ'ուղղէ իր ընթ-
ացքը։
22 Դիտաւորութիւնները խան-
գարվում են խորհուրդ չ'լինե-
լիս, բայց խորհրդականների շա-
տութիւնովը հաստատվում են։
23 Ուրախութիւն է մարդիս հա-
մար իր բերանի յարմար պատաս-
խանը. և խօսքն իր ժամանակին
ի՜նչ լաւ է։
24 Կենաց ճանապարհը դէպի վեր
է իմաստունի համար, որ խոյս
տայ ցածումը դժոխքից։
25 Հպարտների տունը Տէրը քան-
դում է, բայց հաստատում է
որբևայրիի սահմանը։
26 Տիրոջը զզուելի են չար մտած-
մունքները, բայց մաքուր են
պարկեշտ խօսքերը։
27 Իր տունը քանդում է ով որ
ագահութեան մոլի է. բայց կա-
շառքներն ատողը կ'ապրի։
28 Արդարի սիրտը մտածում է թէ
ինչ պատասխանէ, բայց անզգամի
բերանը չարութիւններ է բղխում։
29 Հեռու է Տէրը ամբարիշտնե-
րից, բայց լսում է արդարների
աղօթքը։
30 Աչքի զուարթութիւնը ուրա-
խացնում է սիրտը. բարի լուրը
պարարտացնում է ոսկորները։
31 Կեանքի յանդիմանութիւն լը-
սող ականջը իմաստունների մէջ
է բնակվում։

Խրատ մերժողն իր անձն է ա- 32
նարգում, բայց յանդիմանու-
թիւն լսողը խելք կ'շահէ։
Տիրոջ երկիւղն է իմաստու- 33
թեան խրատը, և փառքի առա-
ջին խոնարհութիւն է գնում։

ԳԼ. ԺԶ

Մարդինն են սրտի տրամադրու- 1
թիւնները, բայց Տէրիցն է լեզուի
պատասխանը։
Մարդիս բոլոր ճանապարհնե- 2
րը մաքուր են իր աչքի առաջին.
բայց Տէրն է հոգիները կշռողը։
Գցիր Տիրոջ վերայ քո գործե- 3
րը, և կ'հաստատուին քո խոր-
հուրդները։
Տէրն ստեղծել է ամենը իր 4
նշանակութեան համար. բայց ամ-
բարշտին էլ՝ չար օրուայ հա-
մար։
Տիրոջը զզուելի են ամեն գո- 5
ռողամիտները. *անշո՛ւշտ որ՝ նո-
րանք անմեղ չեն համարուելու։
Ողորմութեամբ և ճշմարտու- 6
թեամբ կ'քաւուի անօրէնութիւ-
նը, և Տիրոջ վախովը մարդ կը
հեռանայ չարիցը։
Եթէ Տիրոջը հաճելի են մար- 7
դիս ճանապարհները, նաև նորա
թշնամիներին կ'հաշտեցնէ նորա
հետ։
Լաւ է քիչը արդարութիւնով, 8
քան թէ շատ եկամուտներ՝ ա-
ռանց իրաւունքի։
Մարդիս սիրտը խորհում է իր 9
ճանապարհը. բայց նորա քայլերը
Տէրն է հաստատում։
Պատգամ կայ թագաւորի շրթ- 10
ունքների վերայ, թող չ'սխալ-
ուի նորա բերանը դատաստա-
նում։
Իրաւացի կշռորդն ու կշիռը 11
Տիրոջն է, նորա գործն են մախա-
ղի բոլոր կշռաքարերը։
Թագաւորներին զզուելի է չա- 12
րագործութիւնը, որովհետև ա-
թոռը արդարութիւնով կ'հաս-
տատուի։
Թագաւորներին հաճելի են ար- 13

*Կամ՝ ԹԷՆ ձեռք ձեռքի փաբանին՝

դար շրթունքները, և ճշմարտա-
խօսին նորանք կ'սիրեն։
44 Թագաւորի բարկութիւնը մահ-
ուան հրեշտակ է. բայց իմաս-
տուն մարդը նորան կ'մեղմացնէ։
45 Թագաւորի երեսի զուարթու-
թիւնը կեանք է, և նորա հա-
ճութիւնը՝ վերջի անձրևի ամպին
նման։
46 Իմաստութիւն շահելը ո՛րչափ
լաւ է ոսկիից, և հանճար շա-
հելը արծաթից ընտիր է։
47 Ուղիղների պողոտան չարու-
թիւնից հեռանալն է, իր հոգին
պահպանողը իր ճանապարհին
զգոյշ կ'լինի։
48 Կորուստից առաջ գնում է գո-
ռողութիւնը, և կործանումից
առաջ՝ ամբարտաւան հոգին։
49 Լաւ է խոնարհամիտ լինել խո-
նարհների հետ, քան թէ աւար
բաժանել հպարտների հետ։
20 Խօսքի մասին խելօք վարուողը
բարիք կ'գտնէ, և նա որ Տիրոջն
է ապաւինում՝ երանի՛ նորան։
21 Իմաստուն սիրտ ունեցողը խո-
հեմ կ'կոչուի. և շրթունքի քաղ-
ցրութիւնը ուսումը կ'աւելացնէ։
22 Կենաց աղբիւր է խոհեմու-
թիւնը՝ իր ունեցողի համար, բայց
յիմարների խրատը յիմարութիւն
է։
23 Իմաստունի սիրտն իմաստուն
է անում նորա բերանը, և նորա
շրթունքների վերայ ուսում է
աւելացնում։
24 Մեղրի խորիսխ է վայելուչ խօս-
քը, քաղցր է հոգիին, և բժշկու-
թիւն՝ ոսկորներին։
25 Կայ ճանապարհ, որ ուղիղ է
մարդիս առաջին, բայց նորա
վախճանը մահուան ճանապարհ-
ներ են։
26 Աշխատող անձն իրան համար
է աշխատում. որովհետև բերա-
նը պահանջում է նորանից։
27 Անպիտան մարդը չարութիւն
կ'փորէ. և նորա շրթունքների
վերայ կարծես այրող կրակ կայ։
28 Խոտորնակ մարդը կռիւ կ'հնա-
րէ, և քսուն մտերիմներին կ'բա-
ժանէ։
29 Անօրէն մարդը կ'խաբէ իր ըն-
կերին, և նորան կ'տանէ չար ճա-
նապարհով։
Կ'խփէ աչքերը, որ ծուռ բաներ 30
մտածէ, կծոտում է իր շրթունք-
ները՝ չարութիւն կատարում։
Փառաց պսակ է ալևորութիւ- 31
նը. արդարութեան ճանապար-
հում կ'գտնուի։
Երկայնամիտը զօրաւորիցը լաւ 32
է, և իր ոգին զսպողը՝ քաղաք
առնողիցը։
Ծոցն է գցվում վիճակը, բայց 33
Տէրիցն է դալիս նորա բոլոր վճիռը։

ԳԼ. ԺԷ

Լաւ է մի չոր պատառը՝ խաղա- 1
ղութիւնով, քան թէ մի տուն
լիքը մորթուած ոչխար՝ կռիւով։
Իմաստուն ծառան կ'տիրէ նա- 2
խատինք բերող որդիի վերայ. և
եղբայրների մէջ ժառանգու-
թեան բաժին կ'առնէ։
Արծաթի համար հալոց կայ և 3
ոսկիի համար՝ քուրայ, բայց սիր-
տերը քննողը Տէրն է։
Չարագործը ականջ է դնում 4
անիրաւ շրթունքների, ստախօսը
լսում է կորստական լեզուին։
Աղքատին ծաղր անողը նորա 5
Արարչին է անարգում, ձա-
խորդութեան վերայ ուրախացո-
ղը անպատիժ չի մնալ։
Ծերերի պսակը որդկանց որ- 6
դիքն են, և որդկանց պարծան-
քը՝ իրանց հայրերը։
Տխմարին չի վայելիլ բարձրա- 7
խօս շրթունքները, ո՞ւր մնաց որ
ազնուականին՝ ստախօս շրթունքը։
Ընծան պատուական քար է 8
ունեցողին համար. ուր որ էլ
դառնայ՝ յաջողվում է։
Յանցանքը ծածկողը բարեկա- 9
մութիւն ուզող է, բայց խօսքը
կրկնողը մտերիմ բարեկամներին
կ'բաժանէ։
Յանդիմանութիւնը աւելի է 10
ազդում խոհեմին, քան թէ հար-
իւր հարուածը՝ յիմարին։
Միշտ ապստամբութիւն է ու- 11
զում չարը, բայց մի անգութ
պատգամաւոր կ'ուղարկուի նո-
րան։

12 Լ֊֊ե մարդիս մի ձագերը կոր-
ցրած արջ պատահէ, և ոչ թէ յի-
մարն իր յիմարութեան ժամանակ։
13 Լաւութեան փոխարէն ով որ
չարութիւն հատուցանէ՝ նորա
տանիքը չարիքը չի հեռանալ։
14 Ջրի արձակման նման է կռիւի
սկիզբը. բայց վէճը չ'բորբոքուած
դաս ետ քաշուիր։
15 Անղգամին արդարացնողը, և
արդարին անղգամ անողը, եր-
կուսան էլ զզուելի են Տիրոջը։
16 Ինչ պէտք է յիմարի ձեռքին
իմաստութիւն առնելու գինը,
քանի որ *խելք չ'ունի։
17 Ամեն ժամանակ սիրող է բա-
րեկամը, և եղբայրը նեղ ըլլա-
համար է ծնուած։
18 Պակասամիտ մարդը ձեռքը ե-
րաշխաւորութեան կ'տայ, և գը-
բաւ կ'լինի իր ընկերի առաջին։
19 Ցանցոտքը սիրող է կռիւ սի-
րողը, իր դուռը բարձրացնողը
կործանման է մեն գալու։
20 Ծուռ սրտի տէրը բարութիւն
չի գտնիլ, և լեզուն ծռողը չա-
րութեան մէջ կ'ընկնի։
21 Յիմարը տրամութիւն է իր ծը-
նողի համար, և յիմարի հայրը
չի ուրախանալ։
22 Ուրախ սիրտը օգտակար է
ինչպէս դեղ, բայց կոտրած սիր-
տը ոսկորները կ'չորացնէ։
23 Ամբարիշտը կաշառքը ծոցին
առնում է, որ ծռէ իրաւունքի
ճանապարհները։
24 Իմաստութիւնը հասկցողի ա-
ռաջին է, բայց յիմարի աչքերի
համար՝ աշխարհքի ծայրումն։
25 Յիմար որդին տրամութիւն է
իր հօր համար, և դառնութիւն
իր ծնողի համար։
26 Արդարի վերայ էլ տուգանք
դնել լաւ չէ, նաև իշխաններին
ծեծել՝ ուղղութեան համար։
27 Իր խօսքերը զսպողը գիտու-
թիւն դիտէ. և ծանրաբարոյ
մարդը խոհեմ է։
28 Յիմարն էլ լռելով իմաստուն
կ'համարուի, և իր շրթունքը խո-
փողը՝ հանճարեղ։

*Կամ՝ սիրտ

ԳԼ. ԺԸ

1 Ինքնահաճոյ մարդը ցանկու-
թիւն է որոնում. ամեն յաջողա-
կութեան դէմ բորբոքուում է։
2 Յիմարը չի ախորժիլ խոհեմու-
թիւնից, այլ իր սրտինը կ'յայտ-
նէ։
3 Ամբարիշտը գալիս՝ անարգան-
քն էլ կ'գայ, և նախատինքի
հետ՝ խայտառակութիւնը։
4 Խոր ջուրեր են մարդիս բերա-
նի խօսքերը, բղխող գետ է ի-
մաստութեան աղբիւրը։
5 Լաւ չէ ամբարշտին աչառու-
թիւն անել արդարին դատաս-
տանում ծռելու համար։
6 Յիմարի շրթունքը կռիւի մէջ
կ'մտնեն, և նորա բերանը ծեծ է
կանչում։
7 Յիմարի բերանը կործանում է
իրան համար, և նորա շրթունք-
ները որոգայթ իր անձի համար։
8 Փառաբանի մարդկանց խօսքերը քաղ-
ցրը պատառների պէս են, նո-
րանք էլ են իջնում փորի ներ-
սերը։
9 Իր գործում թմրած լինողն էլ
փչացնողի եղբայրն է։
10 Ամուր աշտարակ է Տիրոջ ա-
նունը, նորա մէջ է փախչում
արդարը և ապահան դառնում։
11 Հարուստի ստացուածքն իր ա-
մուր քաղաքն է, և բարձր պա-
րսպալի նման է նորա երևակայու-
թիւնում։
12 Կործանումից առաջ հպար-
տանում է մարդիս սիրտը, բայց
փառքից առաջ խոնարհ է խանար-
հութիւնը։
13 Ով որ բանը չ'լսած պատաս-
խան տայ, սա նորա համար յի-
մարութիւն է և ամօթ։
14 Մարդիս հոգին ուժում է իր
հիւանդութիւնը, բայց կոտրած
սիրտն ո՞վ կարող է տանել։
15 Խոհեմ սիրտը գիտութիւն կը
շահէ. և իմաստունների ականջը
գիտութիւն կ'որոնէ։
16 Մարդիս ընծան տեղ է բա-
նում նորա համար, և նորան
առնում է մեծամեծների առա-
ջին։

17 Արդար է երևում դատն ա-
ռաջ սկսողը, բայց ասօքը գալիս
է և քննում նորան։
18 Վիճակը դադարեցնում է վէ-
ճերը, և զօրաւորներին բաժա-
նում է։
19 Վիրաւորուած եղբայրը ամուր
քաղաքից պինդ է. և վէճերը
բերդի նիգերին են նման։
20 Մարդիս բերանի պտղիցը կը
կշտանայ նորա փորը. նա կ'կըշ-
տանայ իր շրթունքների արդիւնք-
քիցը։
21 Մահն ու կեանքը լեզուի ձեռ-
քին է, և նորան սիրողը կ'ուտէ
նորա պտուղը։
22 Ամուսնուհի գտնողը բարիք է
գտել և Տէրիցը շնորհք ստացել։
23 Աղաչանքներով է խօսում աղ-
քատը, բայց հարուստը կոշտ է
պատասխանում։
24 Բարեկամներ ունեցող մարդը
*ինքս կ'քաշէ, բայց բարեկամ
կայ որ եղբօրից աւելի հաստատ է։

ԳԼ. ԺԹ

1 Լաւ է իր ուղղութեանով գը-
նացող աղքատը, քան թէ նեն-
գաւոր շրթունք ունեցողը որ
նաև յիմար է։
2 Առանց գիտութեան հոգին
էլ չէ լաւ, և ոտքերովը շտա-
պողը կը սայի։
3 Մարդիս յիմարութիւնը ուղ-
ղում է նորա ճանապարհը, և նո-
րա սիրտը տրանջում է Տիրոջ
դէմ։
4 Ստացուածքը շատ բարեկամ-
ներ կ'աւելացնէ, բայց աղքատը
կ'բաժանուի իր ընկերից։
5 Սատիսս վկան անպատիժ չի
մնայ, և սուտեր փչողը չի պրծնիլ։
6 Շատերն են խնդրում իշխանի
երեսը, և ամենը բարեկամ են
բնծայ տուողին։
7 Աղքատի բոլոր եղբայրները ղղջում են նորանից, ո՛ւր մնաց
որ նորանից չ'հեռանան նորա բա-
րեկամները. նա վազում է խօս-
քերի ետևից որ ոչինչ են։

*Կամ՝ բարեկամութիւն անելու է,

8 Խելք աշխատողը իր հոգին է
սիրում, խոհեմութիւնը պահողը
բարիք կ'գտնէ։
9 Սատիսս վկան անպատիժ չի
մնայ, և սուտեր փչողը կ'կորչի։
10 Յիմարին չի վայելիլ փափկու-
թիւն, ո՛ւր մնաց մի ծառայի իշ-
խանների վերայ իշխել։
11 Մարդիս իմաստութիւնը նո-
րան երկայնամիտ կ'անէ, և նորա
փառքը յանցանք ներելն է։
12 Առիւծի մռնչիւնին է նման
թագաւորի բարկութիւնը, իսկ
նորա հաճութիւնը խոտի վերայի
ցօղին պէս է։
13 Յիմար ազան տրամութիւն է
իր հօր համար, և կնոջ վէճերը
շարունակուող կաթկթոց է։
14 Տունը և ստացուածքը ժառան-
գութիւն է հայրերից, բայց ի-
մաստուն կինը՝ Տէրից է։
15 Ծուլութիւնը կ'գցէ մարմի
մէջ, և թոյլ անձը կ'տուժածանայ։
16 Պատուիրանքը պահողն իր հո-
գին է պահում. նորա ճանա-
պարհները անարգողը կ'մեռնի։
17 Աղքատին ողորմողը Տիրոջն է
փոխ տալիս, և նա կ'հատուցանէ
նորա վարձը։
18 Խրատիր որդիդ քանի որ յոյս
կայ, և ուշդ մի դարձներ նորա
աղաղակին։
19 Շատ բարկասիրտը ինսս կ'կրէ,
որովհետև եթէ ազատես, էլի
պիտի շարունակես։
20 Խորհուրդ լսիր և խրատ ընդու-
նիր, որ յետի ժամանակուդ ի-
մաստուն լինես։
21 Շատ դիտաւորութիւններ կան
մարդիս սրտումը, բայց Տիրոջ
խորհուրդը կ'մնայ հաստատ։
22 Մարդիս զուարճանքն իր ողոր-
մածութիւնն է, և աղքատը լաւ
է ստոխօս մարդիցը։
23 Տիրոջ երկիւղը դէպի կեանք
է տանում. և մարդս նորանով կուշտ
կ'պառկի առանց չարիքի հան-
դիպելու։
24 Ծոյլը իր ձեռքը կ'կոխէ ամա-
նի մէջը, բայց դէպի բերանն էլ
չի դարձնիլ։
25 Պազր անողին ծեծիր, և միա-
միտը կ'խոհեմանայ. և եթէ բանի-

մացին յանդիմանեա՝ նա գիտու-
թիւն կ'սովորէ։
26 Հօրը կողոպտողը ու մօրը դուրս
անողը ամօթ և խայտառակու-
թիւն բերող տղայ է։
27 Զգիր, որդեակս, այն խրատը
լսելը, որ քեզ կ'մոլորեցնէ գի-
տութեան խօսքերիցը։
28 Անպիտան վկան ծաղրում է
արդարութիւնը, և ամբարիշտնե-
րի բերանը անիրաւութիւն կուլ
կ'տայ։
29 Պատրաստ են ծաղր անողների
համար դատաստաններ, և ծե-
ծեր՝ յիմարների մէջքի համար։

ԳԼ. Ի

1 Ծաղրող է գինին, խռովարար՝
ցքին. և ամեն ով որ դորանցով
մոլորուի՝ իմաստուն չի լինիլ։
2 Թագաւորի սպառնալը առիւ-
ծի մռնչիւնին է նման. նորան
գրգռողը մեղանչում է իր անձի
դէմ։
3 Պատիւ է մարդիս համար կը-
ռիւից քաշուիլը, բայց ամեն յի-
մար կռուասէր է։
4 Ձմեռուայ պատճառով ծոյլը
չի հերկիլ, հունձքին կ'մուրայ
և չի ունենալ։
5 Խոր ջուրեր է մարդիս սրտի
խորհուրդը, բայց խելօք մարդը
նորան կ'հանէ։
6 Շատ մարդ հրատարակում է
մարդիս բարերարութիւնը, բայց
հաւատարիմ մարդին ո՞վ կը
գտնէ։
7 Ով որ իր ուղղութիւնովը գը-
նում է՝ արդար է. երանի՛ նո-
րանից յետոյ նորա որդկանցը։
8 Թագաւորը դատաստանի ա-
թոռի վերայ նստելիս իր աչքե-
րովը ցրիւ է տալիս ամեն չա-
րութիւնը։
9 Ո՞վ կարող է ասել թէ Սիրտս
սրբել եմ, մաքուր եմ իմ մեղ-
քիցը։
10 Տեսակ տեսակ կշռաքարեր՝ և
տեսակ տեսակ չափեր՝ երկուսն
էլ զզուելի են Տիրոջը։
11 Մի երեխան անգամ ճանաչ-
վում է իր արարքիցը՝ թէ մա-
քուր և թէ ուղիղ է նորա գործ-
քը։
Լսող ականջն ու տեսնող աչ- 12
քը՝ երկուսն էլ Տէրն է անում։
Մի սիրիր քունը որ մի գուցէ 13
աղքատանաս, աչքերդ բաց՝ հա-
ցով կշտացիր։
Վատ է՝ վատ է՝ կ'ասէ առ- 14
նողը. բայց երբոր կ'գնայ, այն
ժամանակ կ'գովէ։
Կայ ոսկի և շատ գոհարեղէն. 15
բայց պատուական գործիք են
գիտուն շրթունքները։
Առ նորա հանդերձը, որ ե- 16
րաշխաւոր է դառել օտարին. և
գրաւ պահիր նորան օտարների
փոխարէն։
Քաղցը է մարդիս համար ստու- 17
թեան հացը, բայց յետոյ բե-
րանը լցվում է խիճով։
Դիտաւորութիւնը հաստատ- 18
վում է խորհրդով. և խոհեմու-
թեամբ արա պատերազմը։
Գաղտնիքը յայտնում է բան- 19
սարկութեամբ ման եկողը, ու-
րեմն շրթունքը լայն բացողի հետ
մի հաղորդակցիր։
Ով որ իր հօրն ու մօրն անի- 20
ծէ, նորա ճրագը կ'հանգչի մթին
խաւարի մէջ։
Մի ժառանգութիւն, որ սկզ- 21
բումը շտապելով է ստացուել,
նորա վախճանն էլ չի օրհնուիլ։
Մի ասիր. Չարութեան փոխա- 22
րէնը հատուցանեմ. Տիրոջը յու-
սացիր, և նա քեզ կ'ազատէ։
Երկու տեսակ կշռաքարերը 23
զզուելի են Տիրոջը, և խարդախ
կշիռքը լաւ չէ։
Տէրիցն է մարդիս քայլերի յա- 24
ջողութիւնը, ուրեմն մարդս ի՞նչ է
հասկանում իր ճանապարհը։
Որոգայթ է մարդիս համար ան- 25
խորհրդաբար ասել, Նուէր. և
ուխտելուց յետոյ կշռագատել։
Ամբարիշտներ ցրուող է իմաս- 26
տուն թագաւորը, և նորանց վե-
րայ դարձնում է անիւը։
Մարդիս հոգին Տիրոջ ճրագն 27
է. նա քննում է սրտի բոլոր ներ-
սերը։
Ողորմութիւնը և ճշմարտու- 28
թիւնը պահում են թագաւորին,

և նա ողորմութիւնով կ'պահ-
պանէ իր աթոռը։
29 Երիտասարդների զարդը իրանց
ոյժն է, և ծերերի փառքը՝ ալե-
ւորութիւնը։
30 Հարուածի վէրքերը մաքրում
են չարութիւնը, և ծեծելը՝ որ
ազդում է մինչև սրտի ներսերը։

ԳԼ. ԻԱ

1 Թագաւորների սիրտը ջրի վր-
տակների պէս է Տիրոջ ձեռքին,
դէպի ուր որ էլ ուղենայ՝ կ'դար-
ձնէ։
2 Մարդիս ամեն ճանապարհը
ուղիղ է իր աչքի առաջին. բայց
սիրտերը կշռողը Տէրն է։
3 Արդարութիւն և իրաւունք
գործելը Տիրոջ հաճելի է քան
թէ զոհը։
4 Աչքերի ամբարտաւանութիւ-
նը և սրտի հպարտութիւնը, որ
ամբարիշտների լոյսն է, մեղք է։
5 Աշխատասէրի մտածողութիւն-
ները միայն դէպի առատութիւն
են. բայց ամեն աճապարող՝ մի-
այն դէպի կարօտութիւն է դի-
մում։
6 Ստախօս լեզուով գանձեր շի-
նելը մահը որոնողների փախստա-
կան ունայնութիւնն է։
7 Ամբարիշտների բռնութիւնը
քարշ կ'տայ իրանց. որովհետև
չեն ուզում իրաւունք անել։
8 Ծռմռած է յանցաւոր մարդի
ճանապարհը, բայց մաքուրի գոր-
ծն ուղիղ է։
9 Լաւ է կտուրի մի անկիւնու-
մը բնակուել, քան թէ կռուա-
սէր կնոջ հետ ընկերովի՝ տան
մէջ։
10 Անզգամի հոգին չարութիւն
է ցանկանում, նորա ընկերը նո-
րա աչքի առաջին շնորհք չի
գտնիլ։
11 Ծաղրողը տուժելիս միամիտը
կ'իմաստնանայ, և իմաստունը
կրթուելիս՝ գիտութիւն կ'ստա-
նայ։
12 *Արդար Աստուածը դիտում է
ամբարշտի տան վերայ, նա գը-
ցում է ամբարիշտներին չարիքի
մէջ՝։
Ով որ խցկէ աղքատի աղաղա- 13
կի դէմ իր ականջը, ինքն էլ կը
կանչէ, և պատասխան չի գտնիլ։
Գաղտնի ընծան բարկութիւ- 14
նը կ'հանգցնէ, և ծոցի պարգևը՝
սաստիկ ցասումը։
Ուրախութիւն է արդարի հա- 15
մար իրաւունք անելը, բայց սոս-
կում՝ չարագործների համար։
Մարդ որ մոլորվում է խոհե- 16
մութեան ճանապարհից, ուրուա-
կանների ժողովքի մէջ կ'իջնէ։
Կարօտութիւն կ'ունենայ այն 17
մարդը որ ուրախութիւն է սի-
րում, գինի ու իւղ սիրողը չի
հարստանալ։
Արդարի համար անզգամը փբր- 18
կանք կ'դառնայ, և ուղիղների
փոխարէն՝ անօրէնը։
Լաւ է բնակուել ամայի երկ- 19
րում, քան թէ կռուասէր և
բարկացոտ կնոջ հետ։
Ցանկալի գանձ և իւղ կ'գըտ- 20
նուի իմաստունի բնակարանումը,
բայց յիմարը կուլ կ'տայ նորան։
Արդարութեան և ողորմածու- 21
թեան հետևողը կ'գտնէ կեանք,
արդարութիւն և պատիւ։
Իմաստունը վեր կ'ելնէ զօրա- 22
ւորների քաղաքը, և կ'կործանէ
նորանց ապաւինած ամրութիւնը։
× Ով որ զսպէ իր բերանն ու լե- 23
զուն, իր հոգին նեղութիւնն-
երից կ'պահէ։ ×
Ամբարտաւան լիրբի անունը 24
Ծաղրող է, որ յանդգնութեամբ
լրբութիւն է անում։
Ծոյլի ցանկութիւնը սպանում 25
է նորան. որովհետև նորա ձեռ-
քերը չեն ուզում գործել։
Նա ամեն օր սաստիկ ցանկա- 26
նում է, բայց արդարը տալիս է
և չէ խնայում։
Ամբարիշտների զոհը պիղծ է. 27
մանաւանդ երբոր չար խորհրդով
մատուցանեն։

---

*Կամ՝ Արդարը դիտում է ամ-
բարշտի տան վերայ, ամբարիշտ-
ները չարութեան համար կոր-
ծանուելիս։

28 Ստախօս վկան պիտի կորչի, բայց նա, որ ինքը լսել է, միշտ կ'խօսէ։
29 Անզգամ մարդը պնդացնում է իր երեսը, բայց նա՝ որ ուղիղ է, քննում է իր ճանապարհը։
30 Չ'կայ իմաստութիւն, չ'կայ հանճար, չ'կայ նաև մի խորհուրդ Տիրոջ դէմ։
31 Չի է պատրաստվում պատերազմի օրուայ համար. բայց փրկութիւնը Տէրիցն է։

ԳԼ. ԻԲ

1 Անունը աւելի ընտիր է շատ հարստութիւնից. արծաթից ու ոսկիից շնորհքն է լաւ։
2 Հարուստը և աղքատը հանդիպում են իրար. նորանց ամենքի անողը Տէրն է։
3 Խորագէտը տեսնում է չարիքը և իրան պահում, բայց պարզամիտները անց են կենում և վնասվում։
4 Խոնարհութեան և Տիրոջ երկիւղի վարձքն է հարստութիւն, և պատիւ ու կեանք։
5 Փուշեր, որոգայթներ կանծուռ մարդի ճանապարհումը. իր հոգին կ'պահպանէ ով որ նորանցից հեռանայ։
6 Կրթիր երեխային իր ճանապարհին համեմատ, որ ծերացած էլ՝ չի հեռանալ նորանից։
7 Հարուստը աղքատներին կ'տիրէ, և փոխ առնողը ծառայ կ'լինի փոխ տուողին։
8 Չարութիւն ցանողը անօրէնութիւն կ'հնձէ, և նորա բարկութեան գաւազանը պիտի կորչէ։
9 Բարի աչք ունեցողը օրհնուած կ'լինի, որովհետև իր հացիցը տալիս է աղքատին։
10 Դուրս արա ծաղրողին, և կռիւը դուրս կ'գնայ, և վէճն ու անարգանքը կ'դադարէ։
11 Սրտի մաքութիւն սիրողին, որ շնորհք ունի իր շրթունքի վերայ, թագաւորը բարեկամ է։
12 Տիրոջ աչքերը պահում են գիտութիւնը, և նա աւերում է անօրէնի խօսքերը։

Ծոյլն ասում է. Առիւծ կայ դրսումը. հրապարակների մէջ կ'սպանուիմ։ 13
Խոր փոս է օտար կնիկների բերանը. որի վերայ որ Տէրը բարկացած է՝ նա այնտեղ կ'ընկնի։ 14
Յիմարութիւնը կապուած է երեխայի սրտին. խրատի գաւազանը նորան կ'հեռացնէ նորանից։ 15
Ով որ աղքատին զրկէ՝ իրանը շատացնելու համար է. ով որ հարուստին է տալիս՝ դա միայն կորուստի համար է։ 16
Ծռիր ականջդ և լսիր իմաստունների խօսքերը, և սիրադ տուր իմ գիտութեանը։ 17
Որովհետև հաճելի է եթէ նորանց պահես սրտումդ. նորանք բոլորը միատեղ հաստատուին քո շրթունքի վերայ։ 18
Որպէս զի քո ապաւինութիւնը Տիրոջ վերայ լինի, հէնց քեզ սովորեցրի այսօր։ 19
Չէ՞ որ քեզ համար գրեցի եռապատիկ խրատներով և գիտութեամբ. 20
Որ քեզ սովորեցնեմ ճշմարտութեան խօսքերի ստուգութիւնը, որ քեզ *հարցնողներին ճշմարտութեան խօսքեր պատասխանես։ 21
Մի կողոպտիր աղքատին որովհետև աղքատ է և տնանկին մի կոխիր †դատարանումը. 22
Որովհետև Տէրն է վարում նորանց դատը, և նա կ'կողոպտէ՝ նորանց հոգին կողոպտողներին։ 23
Մի ընկերանար բարկութեան տէր մարդի հետ, և բորբոքուող մարդի հետ մի գնար։ 24
Որ մի գուցէ սովորես նորա ճանապարհները, և որոգայթ ըստանաս քո հոգիի համար։ 25
Մի լինիր ձեռքը ԷՐԱՆԻ պէս տուողներից, որ պարտքի համար երաշխաւոր են լինում. 26
Եթէ դու չ'ունենաս վճարելու, ի՞նչու համար անկողինդ տակիցդ առնեն։ 27
Մի շարժիր տեղիցը վաղեմի սահմանանշանները, որ շինել են քո հայրերը։ 28

*ԵԲՐ.՝ ուղարկողներին
†ԵԲՐ.՝ դռանը.

29 Տեսե՞լ ես մի մարդ որ շուտափոյթ է իր գործումը. նա թագաւորների առաջին է կանգնելու, աննշան մարդկանց առաջին չի կանգնիլ։

ԳԼ. ԻԳ

1 Երբոր մի իշխանի հետ հաց ուտելու նստես, լաւ ուշադրութիւն արա թէ ինչ կայ առաջիդ,
2 Եւ դանակ դիր կոկորդիդ վերայ, եթէ մեծ ախորժակի տէր ես։
3 Նորա կերակուրներին մի ցանկանար, որովհետև նորանք խաբէութեան հաց են։
4 Մի աշխատիր հարստանալու. քո այդ հասկացողութիւնիցը դադարիր։
5 Մի՞թէ աչքդ պիտի դնես այն բանին որ ոչինչ է. որ իրան համար անշուշտ թևեր կ'շինէ, արծիւի պէս երկինքը կ'թռչի։
6 Մի ուտիր չարաչք մարդի հացը, և նորա կերակուրներին մի ցանկանար։
7 Որովհետև նա ինչպէս որ իր սրտումը հաշիւներ անողն է՝ այնպէս է. քեզ կ'ասէ. Կեր և խըմիր, բայց սիրտը քեզ հետ չէ։
8 Այն պատառդ, որ կերել ես՝ կ'փսխես, և դու կորցրել ես այն անոյշ խօսքերդ։
9 Յիմարի ականջներին բան մի ասիր. որովհետև նա կ'անարգէ քո խօսքերի իմաստութիւնը։
10 Մի շարժիր տեղիցը վաղեմի սահմանանշանները, և որբի արտերի մէջը մի մտնիր։
11 Որովհետև նորանց վրէժխնդիրը զօրաւոր է. Նա կ'վարէ նորանց դատը քեզ հետ։
12 Սիրադ տուր խրատի, և ականջներդ՝ գիտութեան խօսքերի։
13 Երեխայից մի խնայիր խրատը, որովհետև եթէ նորան գաւազանով ծեծես՝ չի մեռնիլ։
14 Դու նորան գաւազանով կը ծեծես, բայց հոգին կ'ազատես դժոխքիցը։

Որդեակս, եթէ սիրադ իմաստուն լինի, իմ սիրտն էլ կ'ուրախանայ, 15
Եւ իմ երիկամունքները կ'ցընծան, քո շրթունքները ուղիղ բաներ խօսելիս։ 16
Թող սիրադ չ'նախանձէ մեղաւորներին. այլ Տիրոջ վախի մէջ եղիր ամեն օր։ 17
Յիրաւի մի վախճան կայ, և քո ապաւինելը պիտի չ'կտրուի։ 18
Լսիր դու, որդեակս, և իմաստուն եղիր, և ուղղիր ճանապարհիդ մէջ քո սիրտը։ 19
Գինեմոլների մէջ մի լինիր, և ոչ էլ որկրամոլութիւնով միս ուտողների հետ։ 20
Որովհետև գինեմոլն ու որկրամոլը պիտի աղքատանան, և քնափութիւնը պատառոտած հանդերձներ կ'հագցնէ։ 21
Լսիր քո ծնող հօրը, և մի անարգիր քո մօրը, երբոր պառաւ է։ 22
Ճշմարտութիւնը շահիր՝ և մի ծախիր. նաև իմաստութիւն, խրատ և հանճար։ 23
Արդարի հայրը անշուշտ պիտի ցնծայ, իմաստունի ծնողը նորանով պիտի ուրախանայ։ 24
Թող ուրախանայ հայրդ ու մայրդ, և ցնծայ քո ծնողը։ 25
Սիրադ ինձ տուր, որդեակս, և թող աչքերիդ հաճելի լինին իմ ճանապարհները։ 26
Որովհետև պոռնիկը խոր փոս է, և օտար կինը նեղ ջրհոր. 27
Իրաւ նա աւազակի պէս դարան է մտնում և մարդկանց մէջ շատացնում է անհաւատարիմները։ 28
Ո՞ւմն է վա՛յը, ո՞ւմն է վո՛ւյը, ո՞ւմն են կռիւները, ո՞ւմն են տրտունջները, ո՞ւմն են ի զուր ստացուած վէրքերը, ո՞ւմն են կարմրոտած աչքերը։ 29
Նորանցը, որ ուշանում են գինիի մօտ, նորանցը, որ գնում են խառնած գինին քննելու։ 30
Մի նայիր գինիին, որ կարմրի է տալիս, որ բաժակի մէջ աչքով է անում, որ ուղիղ ուղիղ ինքն իրան գնում է. 31

32 Նա վերջը օձի պէս կ'կծէ, և
իժի պէս կ'ծակէ։
33 Աչքերդ օտար կնիկների կ'նա-
յեն և սիրտդ ծուռումուռ բա-
ներ կ'խօսէ։
34 Եւ ծովի միջումը քնողի նման
կ'լինես, և կայմի վերայ քնողի
նման։
35 Կ'ասես. Ինձ ծեծել են, բայց
չեմ զգացել, ինձ զարկել են, բայց
չեմ իմացել. ե՞րբ եմ սթափուե-
լու. նորան դարձեալ պիտի որո-
նեմ։

ԳԼ. ԻԴ

1 Մի նախանձիր չար մարդկանցը,
և մի ցանկանար նորանց հետ լի-
նելը։
2 Որովհետև նորանց սիրտը բըռ-
նութիւն է խորհում, և տան-
ջանք են խօսում նորանց շրբ-
թունքները։
3 Տունը կ'շինուի իմաստութիւ-
նով, և հանճարով կ'հաստատ-
ուի։
4 Գիտութիւնով կ'լցուին շտե-
մարանները և կ'ստացուին ամեն
պատուական ստացուածք և վա-
յելչութիւնք։
5 Իմաստուն մարդը զօրաւոր կը
լինի, և գիտուն մարդը իր ոյժը
կ'աւելացնէ։
6 Որովհետև պատերազմդ խոհե-
մութեամբ կ'անես, և յաջողա-
կութիւնը խորհրդականների շա-
տութիւնովը կ'լինի։
7 Խիստ բարձր է յիմարի հա-
մար իմաստութիւնը, նա դռան
մէջ չի բանալ իր բերանը։
8 Ով որ մտածում է վնասել,
նորան նենգամիտ մարդ կ'ասեն։
9 Յիմարութիւն մտածելը մեղք
է, և ծաղրողը զզուելի է մարդ-
կանց համար։
10 Եթէ նեղութեան օրը թուլա-
ցար, ոյժդ նեղ կ'լինի։
11 Աղատիր մահուան տարուող-
ներին, և դէպի սպանուելու
դողդոջացողներին [illegible]
մի խնայիր։
12 Եթէ ասես թէ Մենք չ'գի-
տենք. ահա սիրտերը կշռողը
գիտէ, և հոգիդ պահողը իմա-
նում է, նա որ մարդիս հատու-
ցանում է իր գործին համեմատ։
13 Մեղր կեր, որդեակս, որ լաւ
է, և մեղրախորիսխ, որ քաղցր է
քո քիմքի համար.
14 Այդպէս է իմաստութեան գի-
տութիւնը քո հոգիի համար, ե-
թէ նորան գտել ես, և մի վախ-
ճան կայ, որ քո յոյսը չի կոտ-
րուիլ։
15 Դարանակալ մի լինիր, ով
անզգամ, արդարի բնակարանին.
մի աւերիր նորա հանգստութեան
տեղը։
16 Որովհետև եօթն անգամ վայր
կ'ընկնէ արդարը և կ'կանգնէ,
բայց անզգամները չարիքի մէջ
կ'կործանուին։
17 Թշնամիդ վայր ընկնելիս մի ու-
րախանար, և նա կործանուելիս
սիրտդ չ'ցնծայ։
18 Մի դուցէ Տէրը տեսնէ, և նո-
րա աչքին անհաճոյ երևայ. և
իր բարկութիւնը ետ դարձնէ
նորանից։
19 Մի վառուիր չարերի պատճա-
ռովը. մի նախանձիր անզգամնե-
րին։
20 Որովհետև վերջ չ'ունի չարը,
ամբարիշտների ճրագը պիտի
հանգչի։
21 Որդեակս, վախիր Տէրիցը և
թագաւորիցը. և յեղափոխական-
ների հետ մի ընկերանար.
22 Որովհետև նորանց կործանու-
մը յանկարծ վեր կ'կենայ. և այն
երկուսի էլ պատուհասը ո՞վ գի-
տէ։
23 Սորանք էլ են իմաստունների-
նը՝ դատաստանում աչառութիւն
անելը լաւ չէ։
24 Ով որ անզգամին ասէ՝ Արդար
ես, ազգերը նորան կ'անիծեն.
ժողովուրդները նորան կ'անար-
գեն։
25 Բայց յանդիմանողներին բա-
րիք կ'լինի, և նորանց վերայ բա-
րի օրհնութիւն կ'գայ։
26 Շրթունքներ է համբուրում
նա, որ յարմար պատասխան է
տալիս։
27 Պատրաստիր դրսի գործքդ, և

բանդ կարգադրիր դաշտումը,
յետոյ էլ շինիր տունդ։
28 Քո ընկերի դէմ զուր վկայու-
թիւն մի տար, և մի խաբիր քո
շրթունքներովը։
29 Մի ասիր. Ինչպէս որ ինձ ա-
րաւ, ես էլ իրան այնպէս եմ
անելու, այն մարդին հատուցա-
նելու եմ նորա գործքին համե-
մատ։
30 Ծոյլ մարդի արտի մօտովն անց
կացայ, և պակասամիտ մարդի
այգիի մօտովը.
31 Եւ ահա բոլորը փուշեր էին
դուրս եկել, նորանց երեսը ծած-
կել էին եղինճներ, և նորա քարի
պատը փուլ էր եկած։
32 Եւ երբոր տեսայ՝ դրի մտքիս
մէջ, մտիկ արի և խրատ վեր ա-
ռայ։
33 Մի քիչ քուն, մի քիչ ննջել,
մի քիչ էլ ձեռք ձեռքի տալ
պառկել.
34 Այն ժամանակ քո աղքատու-
թիւնը կ'գայ [illegible] ճանապար-
հորդ, և քո կարօտութիւնը՝
սպառազինեալ մարդի պէս։

ԳԼ. ԻԵ

1 Սորանք էլ են Սողոմոնի առակ-
ները, որ Յուդայի Եզեկիա թա-
գաւորի մարդիկը օրինակեցին։
2 Աստուծոյ փառքն է բանը ծած-
կելը. բայց թագաւորների փառքն
է բանը քննելը։
3 Երկինքը բարձրութիւնով, և
երկիրը խորութիւնով, և թա-
գաւորների սիրտը չի քննուիլ։
4 Հանիր կղկղանքը արծաթից, և
ոսկերչի համար անօթ դուրս կը
գայ։
5 Դուրս արա թագաւորի առա-
ջից ամբարշտին, և նորա աթոռը
կ'հաստատուի արդարութեամբ։
6 Մի պարծենար թագաւորի ա-
ռաջին, և մեծամեծների տեղը
մի կանգնիր։
7 Որովհետև լաւ է որ քեզ ա-
սեն. Վեր բարձրացիր այստեղ,
քան թէ քեզ խոնարհեցնեն այն
իշխանի առաջին, որին տեսնում
են քո աչքերը։
8 Շուտով կռուի մի գնար, մի
դուցէ չ'իմանաս թէ վերջումը ինչ
պիտի անես, երբոր ընկերդ քեզ
ամաչեցնէ։
9 Դատդ վարիր ընկերիդ հետ,
բայց գաղտնիքը ուրիշին մի յայտ-
նիր։
10 Որ մի դուցէ լսողը քեզ ա-
նարգէ, և վատ անունդ միւս ան-
գամ չ'գնայ։
11 Մէկ յարմար ժամանակին խօս-
ուած խօսքը ոսկի խնձորներ են
արծաթի զարդերի մէջ։
12 Ոսկի օղ և գոհարեղէն ման-
եակ է իմաստունի խրատը՝ լսող
ականջի համար։
13 Ինչպէս է ձիւնի պաղութիւնը
հունձքի ժամանակին, նոյնն է
հաւատարիմ դեսպանն իրան ու-
ղարկողի համար. նա զուարթա-
ցնում է իր Տիրոջ հոգին։
14 Ամպեր և քամի՝ բայց առանց
անձրևի՝ այն մարդն է որ պար-
ծենում է դարտակ պարգևնե-
րով։
15 Երկայնմտութեամբ կ'համող-
ուի իշխանը, և կակուղ լեզուն
ոսկոր կ'կոտրէ։
16 Եթէ մեղր գտնես՝ կեր պէտ-
քիդ չափ. մի դուցէ նորանից
կշտանաս և փսխես նորան։
17 Ոտքդ սակաւ յաճախէ ընկե-
րիդ տունը, մի դուցէ քեզանից
կշտանայ և զզուէ քեզանից։
18 Ուռ և սուր և սրած նետ է
այն մարդը, որ սուտ վկայու-
թիւն է տալիս իր ընկերի դէմ։
19 Կոտրած ատամ և դիւրագլոր
ոտք է նեղ օրը անհաւատարիմ
մարդի վերայ ապաւինելը։
20 Ցուրտ օրին զգեստը հանել,
կամ բորակի վերայ քացախ ածել
է երգեր երգելը տրտում մար-
դի առաջին։
21 Եթէ թշնամիդ սոված է՝ հաց
տուր նորան, և եթէ ծարաւ է՝
ջուր խմեցրու նորան.
22 Որովհետև այսպէս անելով նորա
գլխի վերայ կրակի կայծեր կ'դի-
զես. և Տէրը քեզ կ'հատուցանէ։
23 Հիւսիսային քամին անձրև է
բերում, և խոժոռ դէմքը՝ դաղ-
տախօս լեզու։

24 Լաւ է բնակուել մի կտուրի
անկիւնում, քան թէ կռուասէր
կնոջ հետ մեծ տան մէջ։
25 Պաղ ջուր է ծարաւած սրտի
համար բարի լուրը հեռու երկ-
րից։
26 Պղտորած ակնի և քանդուած
աղբիւրի նման է ամբարշտի ա-
ռաջին ընկճուող արդարը։
27 Շատ մեղր ուտելը լաւ չէ, իր
պատիւը որոնելը պատիւ չէ։
28 Քանդուած անպարիսպ քա-
ղաք է այն մարդը, որ չէ զսպում
իր ոգին։

ԳԼ. ԻԶ

1 Ինչպէս ձիւնը ամառը, և անձ-
րևը հունձին՝ այնպէս էլ յիմա-
րին պատիւ չի վայելիլ։
2 Ինչպէս որ ճնճղուկը թռթը-
ռում և ծիծեռնակը թռչում
է, այնպէս էլ զուր անէծքը չի
կատարուիլ։
3 Խարազանը ձիու համար, և
սանձը՝ էշի, և գաւազանը յի-
մարների մէջքի համար է։
4 Մի պատասխանիր յիմարին նո-
րա տխմարութեան համեմատ,
մի գուցէ դու էլ նորան նմա-
նես։
5 Պատասխանիր յիմարին նորա
տխմարութեան համեմատ, մի
գուցէ իր աչքին իմաստուն ե-
րևայ։
6 Իր ոտները կտրող և վնաս կրող
է ով որ յիմարի ձեռքով խօսք
ապսպրէ։
7 Ինչպէս որ սասանում են կաղի
ոտները, այնպէս էլ առակը յի-
մարների բերանումը։
8 Ինչպէս որ քարն են ծրարում
և պարսատիկի մէջ չպատում,
այնպէս է և յիմարին պատիւ
տուողը։
9 Արբածի ձեռքը մտաւ փուշը,
և առակը՝ յիմարների բերանը։
10 Մեծ է ամեն բան ստեղծողը,
վարձք է տալիս յիմարին էլ,
վարձք է տալիս յանցաւորներին
էլ։
11 Ինչպէս որ շունը ետ է դառ-
նում դէպի իր փսխածը, այնպէս
է իր յիմարութիւնը կրկնող յի-
մարը։
12 Տեսել ես մէկ ինքն իր աչքին
իմաստուն երևացող. յիմարիցն
աւելի յոյս կայ քան թէ նորա-
նից։
13 Ծոյլն ասում է. Ճանապարհին
առիւծ կայ, հրապարակների մէջ՝
առիւծ։
14 Դուռը շուռ է տալիս իր
ծղխնիի վերայ, ծոյլն էլ՝ իր ան-
կողնի վերայ։
15 Ծոյլը իր ձեռքը կ'կոխէ ամա-
նի մէջը, և նորա համար դժուար
է նորան ետ տանել իր բերանը։
16 Ծոյլը իմաստուն է երևում իր
աչքին եօթը խելօք պատասխան
տուողից աւելի։
17 Շունը ականջներիցը բռնում
է այն անցաւորը, որ գրգռվում
է իրանը չ'եղած դատի համար։
18 Ինչպէս մի դիժ որ կրակի կայ-
ծեր, նետեր և մահ է ցանում,
19 Այնպէս է այն մարդը որ իր
ընկերին խաբում է, և ասում.
Ահա կատակ եմ անում։
20 Փայտ չ'լինելիս կրակը կ'հանգ-
չի. և քսու չ'լինելիս կռիւը կը
դադարէ։
21 Ինչպէս ածուխը կայծերին, և
փայտը կրակին, նոյնպէս է կըռ-
ուարար մարդը վէճ վառելու։
22 Քսու մարդի խօսքերը քաղցր
պատառների պէս են. նորանք էլ
են իջնում փորի ներսերը։
23 Կղկղանքի արծաթով պատած
հողի ամանի պէս են սիրաբորբոք
շրթունքը ու չար սիրտը միասին։
24 Ատեցողը կեղծում է իր շրթ-
թունքներովը, և սրտումը նեն-
գութիւն է դնում։
25 Երբոր նա անուշացնէ ձայնը
նորան չ'հաւատաս. որովհետև
եօթը գարշելի բան կայ նորա
սրտումը։
26 Թէկուզ՝ ատելութիւնը ծած-
կուի նենգութեամբ, նորա չա-
րութիւնը կ'յայտնուի ժողովքի
մէջ։
27 Ով որ փոս փորէ՝ նորա մէջը
կ'ընկնի. և ով որ քար գլորէ՝ նա
նորա վերայ կ'դառնայ։
28 Ստախօս լեզուն ատում է իր

ծեծածներին, և շողոքորթող բե-
րանը կորուստ է պատճառում։

ԳԼ. ԻԷ

1 Մի պարծենար վաղուայ օրովը.
որովհետև չ'գիտես թէ օրը ինչ
կ'ծնէ։
2 Թող քեզ ուրիշը գովէ, և ոչ
թէ քո բերանը, օտարը՝ և ոչ
թէ քո շրթունքները։
3 Ծանր է քարը և բեռ ոտնի ա-
ւազը, բայց յիմարի բարկու-
թիւնը երկուսիցն էլ ծանր է։
4 Բարկութիւնը անգութ է և
ցասումը հեղեղասաստ. բայց ո՞վ
կարող է կանգնել նախանձի ա-
ռաջին։
5 Լաւ է յայտնի յանդիմանու-
թիւնը, քան թէ ծածուկ սէրը։
6 Անկեղծ են բարեկամի տուրի
վերքերը. բայց առատ են ատողի
համբոյրները։
7 Կուշտ անձը կոխ է տալիս
մեղրախորիսխը. բայց սոված ան-
ձի համար ամեն լեղի բանը քաղ-
ցրը է։
8 Ինչպէս որ իր բոյնիցն թափա-
ռական եղած թռչունն է, այն-
պէս է իր տեղիցը թափառական
եղող մարդը։
9 Իւղն ու խունկը ուրախացը-
նում են սիրտը, նաև ընկերի
քաղցր խօսքը մտերիմ խրատով։
10 Քո բարեկամին և հօրդ բա-
րեկամին մի ձգիր, և եղբօրդ
տունը մի դնար քո նեղութեան
օրը. լաւ է մօտիկ հարևանը քան
թէ հեռու եղբայրը։
11 Որդեակս, իմաստուն եղիր և
սիրտս ուրախացրու, որ ես կա-
րողանամ պատասխան տալ ինձ
անարգողին։
12 Խորագէտը տեսնում է չարի-
քը և իրան պահում, բայց պար-
զամիտները անց են կենում՝ վը-
նասվում։
13 Առ նորա հանդերձը որ երաշ-
խաւոր է դառել օտարին, և
գրաւ պահիր նորան օտարի փո-
խարէն։
14 Ով որ առաւօտանց կանուխ
իր դրացիին բարձր ձայնով օրհ-
նէ, սա նորա համար անէծք կը
համարուի։
15 Անդադար ծլծլոցը, անձրևոտ
օրը և կռուասէր կինը, իրար նը-
ման են։
16 Ով որ նորան ծածկէ՝ քամի է
ծածկում, և նորա աջ ձեռքի
իւղը ձայն կ'տայ։
17 Երկաթը երկաթով է սրվում,
և մարդս սրում է իր ընկերի ե-
րեսը։
18 Թզենին պահողը կ'ուտէ նորա
պտուղը, և իր տիրոջ պահպանո-
ղը կ'պատվուի։
19 Ինչպէս ջրումը երեսն է երե-
սի դէմ. այնպէս է սրտի մէջ
մարդս մարդի դէմ։
20 Դժոխքը և կորուստը չեն կըշ-
տանալ, նոյնպէս չեն կշտանալ
և մարդիս աչքերը։
21 Հալոցը արծաթն է փորձում, և
քուրան ոսկին, նոյնպէս էլ մար-
դը՝ իրան գովասանող բերանը
թող փորձէ։
22 Եթէ յիմարին թակովը ծեծես
կորկոտի հետ սանդի մէջ, նորա
յիմարութիւնը նորանից չի հե-
ռանալ։
23 Լաւ հոգ տար քո ոչխարներին,
ուշ դարձրու քո հօտերին։
24 Որովհետև հարստութիւնը
մշտնջենաւոր չէ. և թագը տե-
ւո՞ղ է դարէ ցդար։
25 Կանաչը կ'բուսնի և խոտը կ'ե-
րևայ, և կ'ժողովուին սարերի
խոտերը։
26 Գառները հագուստիդ համար
են, և դաշտի դինն են նոխազ-
ները։
27 Եւ բաւական այծի կաթ կ'լի-
նի քեզ կերակրելու և տունդ
կերակրելու համար, նոյնպէս և
ապրուստ քո աղախինների հա-
մար։

ԳԼ. ԻԸ

1 Ամբարիշտը փախչում է առանց
մէկի հալածելու, բայց արդար-
ները առիւծի պէս ապահով են։
2 Երկրի յանցանքի պատճառո-
վը շատ կ'լինեն նորա իշխաննե-
րը. բայց իմաստուն և բանիբուն

մարդի միջոցովը նա երկար կ'դիմանայ։
3 Մի մարդ որ չքաւոր է և նեղում է աղքատներին՝ նա հեղեղակոծ անձրև է, որ հաց չ'ունի։
4 Օրէնքը ձգողները կ'գովեն ամբարիշտներին, բայց օրէնքը պահողները կ'զայրանան նորանց։
5 Չար մարդիկն իրաւունքը չեն հասկանալ, բայց Տիրոջը խնդրողները բոլոր բաները կ'հասկանան։
6 Լաւ է իր ուղղութեան մէջ գնացող աղքատը քան թէ ծուռ ճանապարհների տէր մարդը թէ-և հարուստ լինի։
7 Օրէնքը պահողը իմաստուն որդի է, բայց շռայլների բարեկամը կ'ամաչեցնէ իր հօրը։
8 Իր ստացուածքը տոկոսիքով ու վաշխով շատացնողը, աղքատներին ողորմողի համար է ժողովում նորան։
9 Ով որ մերժէ իր ականջը օրէնք լսելուց, նորա աղօթքն անգամ դարշելի է։
10 Ով որ մոլորեցնէ ուղիղներին չար ճանապարհում, ինքը մէջ կ'ընկնի. բայց արդարները բարիք պիտի ժառանգեն։
11 Հարուստ մարդը իմաստուն է երևում իր աչքին, բայց գիտուն աղքատը նորան կ'քննէ.
12 Արդարները ուրախանալիս փառքը մեծ կ'լինի. բայց անզգամները բարձրանալիս մարդ կ'թագչուի։
13 Իր յանցանքը ծածկողը չի յաջողուիլ, բայց խոստովանող ու թողողը ողորմութիւն կ'գտնէ։
14 Երանի՛ այն մարդին որ միշտ երկիւղ ունի. բայց իր սիրտը խստացնողը չարիքի մէջ կ'ընկնի։
15 Մռնչող առիւծ և սոված արջ է աղքատ ժողովրդի վերայ իշխող ամբարիշտը։
16 Խոհեմութիւնը պակաս իշխանի զրկանքը շատ կ'լինի. իսկ ագահութիւնն ատողը օրերը կ'երկարացնէ։
17 Մարդասպանութեան համար տանջուող մարդը մինչև գուբը կ'փախչի. թող նորան չ'բռնեն։
18 Կատարելութեամբ վարուողը կ'փրկուի, բայց ծուռ ճանապարհներով գնացողը մէկումը վայր կ'ընկնի։
19 Ով որ իր երկիրը գործէ հացով կ'կշտանայ, և դատարկ մարդկանց հետևողը կ'կշտանայ աղքատութիւնով։
20 Հաւատարիմ մարդի օրհնութիւնները շատ են, բայց հարրստանալու շտապողը անպատիժ չի մնալ։
21 Երեսպաշտութիւնը լաւ չէ, բայց մի պատառ հացի համար յանցանք է գործում մարդ։
22 Հարստանալու է շտապում չարաչք մարդը, բայց չ'գիտէ թէ կարօտութիւն պիտի դայ իր վերայ։
23 Մարդ յանդիմանողը վերջը շնորհք կ'գտնէ աւելի քան թէ լեզուովը շողոքորթողը։
24 Ով որ իր հօրն ու մօրը կողոպտէ ասելով թէ Մեղք չէ, նա ապականիչ մարդի ընկերն է։
25 Հպարտ սիրտ ունեցողը կռիւ կ'գրգռէ, բայց Տիրոջն ապաւինողը կ'պարարտանայ։
26 Իր սրտին ապաւինողը յիմար է, բայց իմաստութեան մէջ վարուողը կ'պրծնի։
27 Ով որ աղքատին տայ՝ կարօտ չի լինիլ. բայց ով որ աչքերը թագցնէ՝ շատ անէծքներ կան նորա համար։
28 Ամբարիշտները բարձրանալիս մարդ կ'թագչուի, և երբոր նորանք փչանան, արդարները կը շատանան։

ԳԼ. ԻԹ

1 Յանդիմանութիւններ ստացող մարդը՝ եթէ իր պարանոցը խըստացնէ, յանկարծ կ'ջարդուի և բժշկութիւն չի գտնիլ։
2 Արդարները շատանալիս ժողովուրդը կ'ուրախանայ, բայց երբոր ամբարիշտը իշխէ, ժողովուրդը կ'հեծէ։
3 Իմաստութիւն սիրող մարդը կ'ուրախացնէ իր հօրը, բայց պոռնիկների ընկեր եղողը ստացուածքը կ'փչացնէ։

4 Թագաւորը արդարութեամբ կ'հաստատէ երկիրը, բայց կաշառակեր մարդը նորան կ'քանդէ։
5 Իր ընկերին շողոքորթող մարդը որոգայթ է լարում նորա քայլերի համար։
6 Չար մարդի յանցանքումը որոգայթ կայ, բայց արդարը ցընծում է և ուրախանում։
7 Արդարը գիտէ աղքատների դատը, բայց անզգամ մարդը գիտութիւն չ'ունի։
8 Ծաղր անող մարդիկը քաղաք տակն ու վերայ կ'անեն, բայց իմաստունները բարկութիւնը կը հանգստացնեն։
9 Իմաստուն մարդը յիմարի հետ վիճելիս, թէ բարկանայ թէ ծիծաղի՝ հանգիստ չի լինիլ։
10 Արիւնահեղ մարդիկը կ'ատեն կատարեալին, բայց ուղիղները նորան կ'որոնեն։
11 Յիմարն իր սրտինը բոլորը դուրս կ'տայ, բայց իմաստունը նորան ետ է պահում։
12 Մէկ իշխան որ սուտ խօսքերի ականջ է դնում, նորա բոլոր սպասաւորները չար կ'լինեն։
13 Աղքատը և բռնաւորը հանդիպում են իրար. բայց երկուսին էլ աչքի լոյսը տուողը Տէրն է։
14 Այն թագաւորը որ աղքատներին դատում է արդարութեամբ, նորա աթոռը յաւիտեան կ'մնայ։
15 Գաւազանը և յանդիմանութիւնը իմաստութիւն կ'տայ, բայց բաց ընկած տղան անարգանք կ'բերէ իր մօր համար։
16 Անզգամները շատանալիս յանցանքը կ'շատանայ, բայց արդարները կ'տեսնեն նորանց վայր ընկնելը։
17 Խրատիր որդիիդ, և նա էլ քեզ կ'հանգստացնէ. և սփոփանք կ'պատճառէ քո հոգիին։
18 Առանց մարդարէութեան ժողովուրդը կ'վայրենանայ. բայց ով որ օրէնքը պահէ՝ երանի՛ նորան։
19 Խօսքերով չի խրատուիլ այն ծառան, որ հասկանում է բայց չէ պատասխանում։
20 Իր խօսքերի մէջ շտապող մարդ տեսա՞ր. յիմարիցն աւելի յոյս կայ քան թէ նորանից։
21 Ով որ իր ծառային մանկութիւնիցը փափուկ պահէ, այն ծառան յետոյ որդի կ'դառնայ։
22 Բարկացող մարդը կռիւ կ'հնարէ, և ցասկոտ մարդը շատ յանցանք կ'ունենայ։
23 Մարդիս ամբարտաւանութիւնը նորան կ'կործանէ, բայց հեզահոգին փառք կ'ստանայ։
24 Գողի հետ վարուողը իր անձն է ատում. նա երդումը անելուց յետոյ էլ բան չի յայտնիլ։
25 Մարդի վախը որոգայթի մէջ կ'գցէ, բայց Տիրոջն ապաւինողը կ'ապաստանուի։
26 Շատերը կ'որոնեն իշխանի երեսը, բայց մարդիս իրաւունքը Տէրիցն է։
27 Անօրէն մարդը զզուելի է արդարներին, բայց ամբարշտի համար զզուելի է ուղիղ վարուողը։

ԳԼ. Լ

1 Յակէեան Ագուրի խօսքերը. այսինքն այն մարգարէական պատգամը, որ նա ասեց Իթիէլին, Իթիէլին և Ուքալին։
2 Յիրաւի ես ամէն մարդից աւելի թանձրամիտ եմ, և մարդկային խոհեմութիւն չ'ունիմ.
3 Եւ իմաստութիւն չեմ սովորել, և Ամենասուրբի գիտութիւնը չ'գիտեմ։
4 Ո՞վ վեր ելաւ երկինքը և իջաւ, ո՞վ ժողովեց քամին իր բուռերի մէջ. ո՞վ ծրարեց ջուրը հանդերձումը, ո՞վ հաստատեց երկրիս բոլոր ծայրերը. ի՞նչ է նորա անունը, և ի՞նչ է նորա որդիի անունը. արդեօք գիտե՞ս։
5 Աստուծոյ ամեն խօսքերը մաքրուած են. նա ասպար է իրան ապաւինողների համար։
6 Չ'աւելացնես նորա խօսքերի վերայ, որ մի գուցէ քեզ յանդիմանէ, և դու ստախօս երևաս։
7 Քեզանից երկու բան եմ խընդրում, ինձանից մի արգիլեր ես դեռ չ'մեռած.

8 Ունայն և սուտ խօսքը հեռա-
ցրու ինձանից, աղքատութիւն
կամ հարստութիւն ինձ մի տար,
ինձ համար որոշուած հացովը
կերակրիր ինձ։
9 Չ՛լինի որ կշտանամ և ՀԵՂ ու-
բանամ, և ասեմ՝ Ո՞վ է Տէրը.
և չ՛լինի որ չքաւորանամ և գո-
ղանամ, և զուր յիշեմ իմ Ա-
ստուծոյ անունը։
10 Մի ծառայից իր տիրոջ մօտ
մի՛ բամբասիր, որ քեզ չ՛անիծէ
և դու յանցաւոր գտնուիս։
11 Ազգ կայ որ անիծում է իր
հօրը, և իր մօրը չէ օրհնում։
12 Ազգ կայ որ իր աչքին մաքուր
է երևում, բայց իր աղբիցը չէ
մաքրուած։
13 Ազգ կայ որ աչքերը շատ բարձր
են, և նորա արտևանունքները
վեր վեր են գնում։
14 Ազգ կայ, որի ատամները սու-
բեր են, որի ժանիքները դանակ-
ներ են, որ աղքատներին ուտէ
երկրիս վերայից, և անանկներին՝
մարդկանց միջիցը։
15 Տզրուկը երկու աղջիկ ունի,
որոնք են՝ տուր տուր. նոյնպէս և
երեք են որ չեն կշտանում, և
չորս են որ չեն ասիլ Հերիք է.
16 Գերեզմանը և ամուլ արգան-
դը, երկիրը որ ջրով չի կշտա-
նալ, և կրակը որ չի ասիլ Հերիք։
17 Այն աչքը որ իր հօրը կ՛ծաղ-
րէ և կ՛անարգէ իր մօրը հնա-
զանդել, նորան պիտի փորեն ձո-
րի ագռաւները, և նորան պիտի
ուտեն արծիւի ձագերը։
18 Երեք բան կայ որ ինձ համար
զարմանալի են, և չորսը՝ որոնց
չեմ հասկանում.
19 Արծիւի ճանապարհը երկնքի
երեսին, օձի ճանապարհը ապա-
ռաժի վերայ, ծովի մէջ նաւի
ճանապարհը, և մարդիս ճանա-
պարհը աղջկայ մօտ։
20 Այնպէս է շնացող կնոջ ճա-
նապարհը. ուտում է և բերանը
սրբում, և ասում. Չար բան
չեմ արել։
21 Երեք բանի տակին դողում
է երկիրը, և չորս բան կայ, ո-
րոնց նա չէ կարող տանել.
22 Ծառան՝ երբոր թագաւորէ, և
յիմարը՝ երբոր հացով կշտանայ.
23 Ատելի կինը՝ երբոր ամուսնա-
նայ, և աղախինը՝ երբոր իր տիկ-
նոջը ժառանգ դառնայ։
24 Չորս բան կայ, որ երկրի փոք-
րերն են, բայց իմաստուններից ի-
մաստուն են.
25 Մրջիւնները որ մի զօրաւոր
ժողովուրդ չեն, բայց իրանց հա-
ցը ամառն են պատրաստում։
26 Ճագարները որ մի ուժեղ ժո-
ղովուրդ չեն, բայց իրանց տունը
ապառաժումն են շինում։
27 Մարախները թագաւոր չ՛ու-
նին, բայց գունդ գունդ դուրս
են գալիս ամենքը։
28 Մողէսը կպչում է ձեռքերովը
պատերին, բայց թագաւորական
պալատներումն է նա։
29 Երեք են որ գեղեցիկ են գը-
նում, և չորս են, որ գեղեցիկ
ընթացք ունին.
30 Առիւծը որ գազաններից զօ-
րաւորն է, և ոչ մի բանի երե-
սից ետ չի դառնալ։
31 *Միջապինդը, և նոխազը, և
թագաւորը որի զօրքը իր հետն է։
32 Եթէ յիմարութիւն արիր հը-
պարտանալովդ, կամ եթէ մի
չար բան մտածեցիր՝ ձեռքդ դիր
բերանիդ.
33 Որովհետև կաթի ծեծելուց
կոգի դուրս կ՛գայ, և քիթը ծե-
ծելուց արիւն դուրս կ՛գայ. և
բարկութիւնը գրգռելուց կռիւ
դուրս կ՛գայ։

ԳԼ. ԼԱ.

1 Լեմուէլ թագաւորի խօսքերը,
այն պատգամը որով նորան խը-
րատեց իր մայրը.
2 Ի՞նչ ասէմ, որդիս. Ի՞նչ, ով
հարազատ որդիս. Ի՞նչ, ով իմ
ուխտերի որդին.
3 Քո զօրութիւնը մի տար կնիկ-
ներին, ոչ էլ քո ճանապարհնե-
րը այն կանանցը, որ փչացնում
են թագաւորներին։
4 Ով Լեմուէլ, թագաւորների

*Կամ՝ երիվարը, և կամ՝ եղնիկը.

բանը չէ՝ թագաւորների բանը չէ
գինի խմելը, և ոչ էլ իշխաններ-
ինը՝ թէ ո՞ւր է օղին։
5 Եթէ ոչ՝ կ՛խմէ և կ՛մոռանայ
օրէնքը, և կ՛ծռէ ամեն տա-
ռապեալի դատը։
6 Օղին կորչողին տուէք, և գինին՝
դառնահոգիներին.
7 Թող խմէ և մոռանայ իր աղ-
քատութիւնը, և իր տառապան-
քը այլ ևս չ՛յիշէ։
8 Դու բերանդ բաց համրի հա-
մար, և ամեն անխնամների դա-
տի համար։
9 Բաց բերանդ, դատիր արդա-
րութեամբ, և տես աղքատի և
անանկի դատը։
10 Առաքինի կին ո՞վ կարող է
գտնել. նորա գինը աւելի է քան
թէ գոհարները։
11 Նորա վերայ վստահ է իր մար-
դի սիրտը, և շահի կարօտու-
թիւն չի լինիլ։
12 Նա նորան բարիք կ՛հատու-
ցանէ և ոչ թէ չարիք, իր կեան-
քի բոլոր օրերումը։
13 Նա կ՛որոնէ բուրդ և քթան,
և կ՛գործէ իր ձեռքի յօժարու-
թեամբը.
14 Նա վաճառականի նաւերին
կ՛նմանուի, հեռուից կ՛գայ նո-
րա հացը։
15 Նա դեռ գիշերն է վեր կե-
նում և իր տան կերակուրը տա-
լիս, և իր աղախիններին՝ բաժինը։
16 Արտի վերայ է մտածում և
նորան ծախու առնում, իր ձեռ-
քի արդիւնքիցը այգի է տնկում։
17 Իր մէջքը պնդացնում է զօ-
րութիւնով, և զօրացնում է իր
բազուկները։
18 Նա ճաշակում է, որ իր աշ-
խատանքը լաւ է. նորա ճրա-
գը գիշերը չէ հանգչում։
19 Նա իր ձեռքը մեկնում է ի-
լիկին, և իր ափովը՝ ճախարակը
բռնում։
20 Նա իր ձեռքը տարածում է
դէպի աղքատը, և ձեռքը մեկ-
նում է անանկին։
21 Նա չէ վախենում ձիւնից իր
տան համար, որովհետև բոլոր
ընտանիքը կրկնահանդերձ են հա-
գած։
22 Նա ծածկոցներ է շինում իր
համար, նորա հանդերձները բե-
հեզ է և ծիրանի։
23 Նորա մարդը յայտնի է դռնե-
րումը, երբոր նստում է երկրի
ծերերի հետ։
24 Նա կտաւ է շինում և ծա-
խում, և գօտի է տալիս վաճա-
ռականին.
25 Փառք և պատիւ է նորա հան-
դերձը, և ուրախ է ապագայ օր-
ուայ համար։
26 Նա իր բերանը բանում է ի-
մաստութիւնով, և նորա լեզուի
վերայ շնորհալի օրէնք կայ։
27 Նա մտիկ է անում իր տան
ընթացքին, և ծոյլ ծոյլ չէ ու-
տում հացը։
28 Նորա որդիքը կանգնում են և
նորան երանի տալիս, նորա մարդը
կանգնում է և գովասանում նո-
րան.
29 Շատ աղջիկներ են առաքինու-
թիւն գործել, բայց դու նորանց
ամենիցն էլ գերազանց եղար.
30 Սուտ է վայելչութիւնը, և ու-
նայն՝ գեղեցկութիւնը. այն կինը
որ վախենում է Տէրիցը՝ նա կը
գովուի։
31 Տուէք նորան իր ձեռքի ար-
դիւնքիցը, և նորա գործերը գո-
վեն նորան դռներումը։

ԺՈՂՈՎՈՂ

ԳԼՈՒԽ Ա

1 Երուսաղէմում թագաւոր՝ Դաւիթի որդի Ժողովողի խօսքերը.
2 Ունայնութիւն ունայնութեանց՝ ասեց Ժողովողը, ունայնութիւն ունայնութեանց, բոլորը ունայն է։
3 Ինչ օգուտ ունի մարդս իր բոլոր տառապանքիցը, որ քաշում է արեգակի տակին։
4 Մի ազգ գնում է, և մի ազգ գալիս է, բայց երկիրը յաւիտեան կանգնած կայ։
5 Եւ արեգակը ծագում է և արեգակը մար մտնում, և դէպի իր տեղը շտապում՝ և այնտեղ էլի ծագում։
6 Քամին գնում է դէպի հարաւ և դառնում դէպի հիւսիս, դառնում դառնում գնում է, և իր դարձուածքներովը դարձեալ ետ է գալիս քամին։
7 Ամեն գետերը գնում են ծովը, բայց ծովը չէ լցվում. այնտեղը ուր որ գնում են գետերը, կրկին այնտեղ են դառնում որ գնան։
8 Ամեն խօսքերը տկար են, մարդ չէ կարող ասել. աչքը չէ կըշտանում տեսնելուց, և ականջը չէ լցվում լսելուց։
9 Ինչ որ եղել էր, նա էլ կ'լինի. և ինչ որ արուած էր, նա էլ կ'անուի. և արեգակի տակին բնաւ մի նոր բան չ'կայ։
10 Կա՞յ արդեօք մի այնպիսի բան, որի համար ասուի թէ սա նոր է. արդէն հին դարերից եղած է նա, որ մեզանից առաջ եղել են։
11 Առաջինների յիշատակը չ'կայ. նաև այն յետինների համար էլ, որ գալու են՝ յիշատակ չէ լինելու նորանց մօտ, որ յետոյ են գալու։
12 Ես Ժողովողս թագաւոր էի Իսրայէլի վերայ Երուսաղէմումը։
13 Եւ իմ սիրտը տուի, որ որոնեմ և քննեմ իմաստութեամբ ամեն ինչ որ գործվում է երկնքի տակ. սա մի չարաչար զբաղմունք է, որ Աստուած տուել է մարդկանց որդիներին, որ նորանով զբաղուին։
14 Ես տեսայ այն բոլոր գործերը՝ երկնքի տակ գործուած. և ահա բոլորն ունայն էր, *քամիի աշխատանք՝ էր։
15 Ծուռը կարող չէ ուղղուիլ, և պակասնորդը կարող չէ հաշուիլ։
16 Ես խօսեցի իմ սրտի հետ և ասեցի. Ահա ես մեծ եմ և իմաստութիւնով աւելի հարստոտ՝ քան թէ Երուսաղէմումն ինձանից առաջ բոլոր եղածները. և իմ սիրտը շատ իմաստութիւն և գիտութիւն է տեսել։
17 Ես իմ սիրտը տուի իմաստութիւն հասկանալու, և գիժութիւնն ու յիմարութիւնն հասկանալու. հասկացի որ սա էլ է եղել քամիի աշխատանք։
18 Որովհետև շատ իմաստութեան հետ շատ տրտմութիւն կայ, և գիտութիւն աւելացնողը վիշտն էլ է աւելացնում։

ԳԼ. Բ

1 Ես սրտումս ասեցի. Մի եկ քեզ փորձեմ ուրախութիւնով, և բարիք էլ վայելիր. բայց ահա սա էլ էր ունայն։
2 Ծիծաղին ասեցի. Դու յիմար ես. և ուրախութեանը՝ Դա ի՞նչ ես անում։
3 Սրտիս մէջ մտածեցի, որ մարմինս գինիով զուարթացնեմ, և՝ սիրտս իմաստութեամբ վարուելով՝ յիմարութիւնն էլ բռնեմ,

*Կամ՝ հոգիի տանջանք

մինչև որ տեսնեմ թէ ինչ է մարդկանց որդիների բարին, որ անում են երկնքի տակին իրանց կեանքի *քիչ օրերումը։
4 Ես մեծացրի իմ գործերը՝ ինձ համար տուներ շինեցի, ինձ համար այդիներ տնկեցի.
5 Այդիներ և դրախտներ շինեցի, և նորանց մէջ ամեն տեսակ պտղաբեր ծառեր տնկեցի.
6 Ինձ համար ջրի աւազաններ շինեցի, որ նորանցից ոռոգուի ծառաստանի անտառը։
7 Ծառաներ և աղախիններ ստացի, նաև ընդոծիններ ունեցայ, և շատ արջառներ և հօտեր ունեցայ, ինձանից առաջ Երուսաղէմումն եղածների ամենից աւելի։
8 Ինձ համար գանձեցի արծաթ և ոսկի, և թագաւորական ու գաւառական սեփականութիւններ. ինձ համար երգիչներ և երգչուհիներ դրի, և մարդկանց որդիների զուարճութիւնները, †դշխոյ և դշխոներ։
9 Եւ մեծացի ու բարգաւաճեցի ինձանից առաջ Երուսաղէմումն եղածների ամենից աւելի. նաև իմաստութիւնս կար ինձ մօտ։
10 Եւ ամեն ինչ որ աչքերս պահանջում էին՝ նորանցից չ'արգիլեցի, սիրտս չ'զրկեցի ոչ մի ուրախութիւնից, որովհետև սիրտս ուրախացաւ իմ բոլոր աշխատանքներիցը, և սա էր իմ բաժինը իմ աշխատանքիցը։
11 Եւ ես նայեցի իմ ձեռքերի արած բոլոր գործերին, և այն աշխատանքիս, որ աշխատելով արել էի. և ահա բոլորն ունայն էր և քամիի աշխատանք. և արեգակի տակին մի օգուտ չ'կայ։
12 Եւ ես ուշս դարձրի իմաստութիւնը տեսնելու, նաև յիմարութիւնը և անմտութիւնը. որովհետև ի՞նչ է այն մարդը, որ թագաւորից յետոյ գալու է, նա արդէն արել է սորա անելիքը։
13 Եւ ես տեսայ որ իմաստութիւնը աւելի օգուտ ունի յիմարութիւնից. որքան որ լոյսը աւելի օգուտ ունի խաւարիցը։
14 Իմաստունի աչքերը իր գլխին են. բայց յիմարը խաւարումն է գնում. և ես էլ իմացի, որ ինչ որ մէկին է պատահում, պատահում է ամենքին։
15 Եւ ես ասեցի իմ սրտումը. ինչպէս որ յիմարին է պատահում, ինձ էլ է պատահելու. ուրեմն էլ ի՞նչու համար ես իմաստուն եղայ։ Եւ իմ սրտումն ասեցի թէ Սա էլ է ունայն։
16 Նորա համար որ յաւիտեան չեն յիշում իմաստունին էլ յիմարին պէս. որովհետև ապագայ օրերումն արդէն բոլորը մոռացուած կ'լինի. և ո՞հ իմաստունը մեռնում է յիմարի հետ։
17 Եւ ես ատեցի կեանքը, որովհետև զզուելի էին ինձ համար արեգակի տակին եղած գործերը. որովհետև ամենը ունայն է և քամիի աշխատանք։
18 Եւ ես ատեցի արեգակի տակին աշխատած աշխատանքս, որ թողելու եմ ինձանից յետոյ եկող մարդի համար։
19 Եւ ո՞վ գիտէ, թէ նա իմաստուն կ'լինի թէ յիմար. սակայն նա տիրելու է իմ բոլոր աշխատանքին, որ աշխատեցի և որի մէջ իմաստութիւն ցոյց տուի արեգակի տակին. սա էլ է ունայն։
20 Եւ ես ետ դարձայ, որ սրտիս յոյսը կտրեմ արեգակի տակին աշխատած բոլոր աշխատանքիցս։
21 Որովհետև մարդ կայ արեգակի տակին, որի գործքը իմաստութեամբ, գիտութեամբ և յաջողութեամբ է, բայց նա այս բաները պիտի իբրև բաժին տայ սորանցում չ'աշխատող մարդին։ Սա էլ է ունայն և մի մեծ չարիք։
22 Որովհետև ի՞նչ է մնում մարդիս համար իր բոլոր աշխատանքիցը, և իր սրտի տանջանքիցը, որ նա աշխատեց արեգակի տակին։
23 Որովհետև նորա բոլոր օրերը վիշտեր՝ և նորա գործքը տրտմու-

*Կամ՝ բոլոր. Եբր.՝ օրերի թուումը։
†Կամ՝ ամեն տեսակ շքեղութիւն

թիւն են. Նորա սիրտը դիշերն էլ չէ հանգիստ. սա էլ է ունայն։

24 Սորանից լաւ բան չ'կայ մարդու համար, որ ուտէ և խմէ, և իր աշխատանքովը սիրտը զուարճացնէ. բայց ես սա էլ տեսայ, որ այդ բանը Աստուծոյ ձեռքից է լինում։

25 Որովհետև ո՞վ է կարող ուտել և ո՞վ է կարող վայելել *սանից նորան։

26 Որովհետև այն մարդին, որ հաճելի է նորա առաջին, նա տալիս է իմաստութիւն, գիտութիւն և ուրախութիւն. բայց մեղաւորին տալիս է զբաղմունք, որ նա ժողովէ և գանձէ, և տայ Աստուծոյ առաջին հաճելի եղողին։ Սա էլ է ունայն և քամիի աշխատանք։

Գլ. Գ

1 Ամեն բանի ժամանակ կայ. և ժամանակ՝ երկնքի տակի բոլոր ձեռնարկութեան։

2 Ծնելու ժամանակ, և մեռնելու ժամանակ. տնկելու ժամանակ, և տնկածը պոկելու ժամանակ.

3 Սպանելու ժամանակ, և բժշկելու ժամանակ. քանդելու ժամանակ, և շինելու ժամանակ.

4 Լալու ժամանակ, և ծիծաղելու ժամանակ. սգալու ժամանակ, և պարելու ժամանակ.

5 Քարեր դէն գցելու ժամանակ, և քարեր ժողովելու ժամանակ. գրկելու ժամանակ, և գրկելուց հեռանալու ժամանակ.

6 Որոնելու ժամանակ, և կորցնելու ժամանակ. պահելու ժամանակ, և դէն գցելու ժամանակ.

7 Պատառելու ժամանակ, և կարելու ժամանակ. լռելու ժամանակ, և խօսելու ժամանակ.

8 Սիրելու ժամանակ, և ատելու ժամանակ. պատերազմի ժամանակ, և խաղաղութեան ժամանակ։

9 Ինչ օգուտ ունի նա, որ գործում է, իր քաշած աշխատանքից։

10 Տեսայ այն զբաղմունքը որ Աստուած տուել է մարդկանց որդիներին, որ նորանով զբաղուին։

11 Նա ամեն բան արել է վայելուչ իր ժամանակին, նաև յաւիտենականութիւնը դրել է նորանց սրտումը. բայց այնպէս որ մարդս չէ կարող բմբռնել Աստուծոյ արած գործքը գլխիցը մինչև ծայրը։

12 Իմացել եմ, որ նորանցում մի աւելի լաւ բան չ'կայ քան թէ լաւութիւն անելը իր կեանքում։

13 Ու նաև որ ամեն մարդ ուտում խմում է և իր բոլոր աշխատանքը վայելում. դա Աստուծոյ պարգեւն է։

14 Իմացել եմ, որ ամեն ինչ որ Աստուած անում է, այն յաւիտենական է, նորա վերայ չի աւելացնուիլ, և նորանից չի պակասացնուիլ, և Աստուած արել է որ վախենան նորա երեսից։

15 Ինչ որ կայ, այն արդէն կար. և ինչ որ լինելու է, այն արդէն եղած է, և Աստուած կ'որոնէ անցկացածը։

16 Եւ էլի տեսայ արեգակի տակին դատի տեղը, որ անզգամութիւն կար այնտեղ. և արդարութեան տեղը՝ որ այնտեղ անզգամութիւն կար։

17 Ես ասեցի իմ սրտումը. Արդարին և ամբարշտին Աստուած է դատում. որովհետև ամեն ձեռնարկութեան ժամանակ կայ, և ամեն բանի համար՝ որ լինում է այնտեղ։

18 Ես ասեցի իմ սրտումը. Սա մարդկանց որդիների համար է, որ Աստուած փորձէ նորանց, որ տեսնեն թէ իրանք անասուններ են ինքն ըստ ինքեան։

19 Նորա համար որ մարդկանց որդիների պատահածը և անասուններին պատահածը, նորանց պատահածը մէկ է։ Ինչպէս սա է մեռնում, նոյնպէս էլ մեռնում է նա. և ամենքի շունչը մէկ է. և մարդս անասունից մի առաւելութիւն չ'ունի. որովհետև ամենն էլ ունայն է։

20 Ամենը գնում է մէկ տեղ, ամենը հողից է եղել և ամենը հող է դառնալու։

21 Ո՞վ գիտէ թէ մարդկանց որդիների հոգին վերև է գնում, և անասունի ոգին ցած է գնում գետինը,

22 Եւ ես տեսայ որ Նորանից աւելի լաւութիւն չ'կայ, որ մարդ ուրախանայ իր գործքովը, որովհետև նորա բաժինը դա է. որովհետև ո՞վ պիտի տանէ նորան որ տեսնէ, թէ իրանից յետոյ ինչ է լինելու։

Գլ. Դ

1 Եւ ես դարձայ և տեսայ արեգակի տակին եղած բոլոր զրկանքները. և ահա զրկուածների արտասուք կար, բայց մխիթարող չ'ունէին. և նորանց զրկողների ձեռքից բռնութիւն կար, բայց իրանք մխիթարող չ'ունէին։

2 Եւ ես գովեցի այն մեռածներին, որ արդէն մեռել էին, աւելի քան թէ այն ապրողներին որ հիմա դեռ ապրում են։

3 Բայց այն երկուսից էլ լաւագոյն է նա որ չէ եղել, որ չէ տեսել արեգակի տակին գործուող չարութիւնը։

4 Եւ ես տեսայ բոլոր աշխատութիւնը և բոլոր յաջող գործքը, որի համար մարդս նախանձում է իր բնկերին։ Սա էլ է ունայն և քամիի աշխատանք։

5 Անմիտը իր ձեռքերը գրկում է և իր միսն ուտում։

6 Աւելի լաւ է մի բուռ լիքը հանգստութիւնով քան թէ երկու ափերը լիքը՝ աշխատութիւնով և չարաչար հոգսերով։

7 Եւ ես էլ դարձայ ու տեսայ արեգակի տակին ունայնութիւնը։

8 Մէկը կայ որ մի երկրորդ չ'ունի, ոչ որդի ունի և ոչ եղբայր. բայց նորա զրաղմունքը վերջ չ'ունի. նաև աչքը չէ կշտանում հարստութիւնով, և չէ ասում՝ ում համար եմ ես աշխատում և զրկում իմ հոգին բարիքից. սա էլ է ունայն, և չար տանջանք։

9 Երկուսը լաւ է քան թէ մէկը. որ նորանք վարձք ունին իրանց աշխատանքից։

10 Որովհետև եթէ վայր ընկնեն, մէկը միւսին վեր կ'կացնէ. բայց վա՛յ մէկին որ ընկնի, և մի երկրորդ չ'կայ որ նորան կանգնեցնէ։

11 Եւ երբոր երկուսը միասին քնանեն կ'տաքանան. բայց մէկը ինչպէս կ'տաքանայ։

12 Եւ եթէ մէկը նորան բռնութիւն անէ, երկուսը նորա դէմ կ'կանգնեն. և երեքպատիկ թելը շուտով չի կարուիլ։

13 Լաւ է մի աղքատ և խմաստուն երեխան քան թէ ծեր և անմիտ թագաւորը, որ այլ ևս չ'գիտէ լուսաւորուիլ։

14 Որովհետև նա կալանաւորների տնից դուրս է գալիս որ թագաւորէ, իսկ — իր թագաւորութիւնումն անգամ ծնուած՝ աղքատ է.

15 Ես տեսայ արեգակի տակին ման եկող բոլոր ապրողներին այն երեխայի, որ յետինքն այն երկրորդի հետ, որ պիտի կանգնէ նորա տեղը։

16 Վերջը չ'կայ այն բոլոր ժողովրդին՝ այն ամենին, որ նորանցից առաջ էին, նորանցից ետիններն էլ նորանով չեն ուրախանալու. սա էլ է ունայն և քամիի աշխատանք։

Գլ. Ե

1 Զգոյշ եղիր ոտքիդ համար, երբոր գնաս Աստուծոյ տունը. և մօտենալը աւելի լաւ է քան թէ մատուցանելու յիմարների զոհը. որովհետև նորանք չ'գիտեն որ չարութիւն են անում։

2 Մի շտապիր լեզուովդ, և սիրտդ շուտով բան չ'արտասանէ Աստուծոյ առաջին, որովհետև Աստուած երկնքումն է և դու երկրի վերայ. սորա համար թող խօսքերդ քիչ լինին։

*Կամ՝ ինձանից աւելի

3 Որովհետև երազը գալիս է
զբաղմունքի շատութիւնից, և
յիմարի ձայնը՝ շատախօսութիւ-
նից։
4 Երբոր Աստուծուն ուխտ ես
ուխտում, մի ուշացնիր նորան
հատուցանելու. որովհետև նա
յիմարներին չէ հաճում. ինչ որ
ուխտում ես՝ կատարիր։
5 Լաւ է որ չ'ուխտես, քան թէ
ուխտես և չ'կատարես։
6 Թող մի տար բերանիդ որ
մարմնիդ մեղանչել տայ. և Ա-
ստուծոյ պատգամաւորի առաջին
մի ասիր թէ Սխալմունք եղաւ.
ի՞նչու համար Աստուած բար-
կանայ քո խօսքի համար, և քո
ձեռքի գործերն աւերէ։
7 Որովհետև շատ երազներումը
և շատ խօսքերումը շատ էլ ու-
նայնութիւններ կան. բայց դու
վախեցիր Աստուածանից։
8 Եթէ մի աղքատի զրկանքը և
արդարութեան ու իրաւունքի
յափշտակուիլը տեսնես մի գա-
ւառում, մի զարմանար այդ բա-
նին. որովհետև բարձրիցը մէկ
աւելի բարձրը նայում է, և
բարձրեր կան նորանց վերայ։
9 Եւ երկրի օգուտը *ամեն բա-
նում այն է, որ թագաւորը երկ-
րին նուիրուած է՝։
10 Արծաթ սիրողը արծաթից չի
կշտանալ, և ոչ էլ հարստու-
թիւն սիրողը՝ եկամուտից. սա
էլ է ունայն։
11 Բարիքները շատանալիս՝ շատա-
նում են նորա ուտողները, ու-
րեմն նորա տէրերի համար ի՞նչ
շահ կայ բացի իրանց աչքովը
տեսնելուց։
12 Քաղցր է գործաւորի քունը
թէ քիչ ուտէ նա, թէկուզ
շատ, բայց հարուստի կուշտու-
թիւնը նորան թող չի տալ որ
հանգիստ քնէ։
13 Տեսայ որ մի վատ ցաւ կայ
արեգակի տակին, այսինքն այն
հարստութիւնը, որ պահվում է
իր տիրոջ ձախորդութեան հա-
մար։
14 Եւ այն հարստութիւնը մի չար
պատուհասով կ'կորչի. և նա որ-
դի է ծնել, բայց ձեռքին մի
բան չ'կայ։
15 Ինչպէս որ նա ելաւ իր մօր ո-
րովայնիցը, մերկ էլ ետ կ'դառ-
նայ, կ'գնայ ինչպէս եկել էր. և
մի բան վեր չի առնիլ իր աշխա-
տանքիցը որ կարող էր տանել
իր ձեռքին։
16 Սա էլ է մի վատ ցաւ, որ բո-
լորովին ինչպէս որ եկաւ այնպէս
էլ գնալու է, և նորան ի՞նչ օ-
գուտ կայ, որ աշխատեց քամիի
համար։
17 Նա իր բոլոր օրերը խաւարու-
մը կ'ուտէ, մեծ վիշտով և ցա-
ւով և բարկութիւնով։
18 Ահա այս իմ տեսածը լաւ է,
որ վայելուչ է ուտել և խմել և
բարիք վայելել արեգակի տակին
իր քաշած տանջանքովն Աստու-
ծոյ իր տուած կեանքի քիչ օրե-
րումը. որովհետև դա է նորա
բաժինը։
19 Նաև ամեն մարդ, որին Աստ-
ուած տուել է հարստութիւն և
կայք, և նորան իշխանութիւն է
տալիս նորանից ուտելու և բա-
ժինն առնելու. և իր աշխատան-
քովն ուրախանալու. սա Աստու-
ծոյ պարգևն է։
20 Որովհետև նա իր կեանքի օրե-
րը շատ չէ յիշելու, որովհետև
Աստուած պատասխանում է նո-
րա սրտի ուրախութեամբը։

ԳԼ. Զ.

1 Մի չարիք կայ, որ տեսել եմ
արեգակի տակին, և նորանից շատ
կայ մարդկանց մէջ.
2 Մի մարդ, որին Աստուած տը-
ւել է հարստութիւն, ստաց-
ուածք և փառք, որ ոչինչ պա-
կասութիւն չ'ունի իր հոգիի ցան-
կացած բաներից. բայց Աստուած
նորան իշխանութիւն չէ տալիս
նորանից վայելելու, այլ մի օտար
մարդ է ուտում այն. սա ունայ-
նութիւն է և վատ ցաւ։

*Կամ՝ ամենի համար է. Թագա-
ւորին էլ երկրից ծառայութիւն
է լինում։

3 Եթէ մի մարդ հարիւր որդի
ծնի, և շատ տարիներ ապրէ, և
նորա տարիները շատ լինին, և
նորա հոգին չ'կշտանայ բարիքի-
ցը, և նա թաղում չ'ունենայ,
ես ասում եմ՝ որ վիժածը նո-
րանից լաւ է։
4 Որովհետև նա ունայնութեամբ
գալիս է, և խաւարով գնում,
և խաւարում ծածկվում է նո-
րա անունը։
5 Արեգակն էլ նորան չէ տեսել
և չէ ճանաչել. նա նորանից
հանգիստ կ'լինի։
6 Եւ եթէ նա ապրէ հազար
տարի կրկին անգամ, և մի լա-
ւութիւն չ'տեսնէ. չէ՞ որ ամենքն
էլ մէկ տեղ են գնում։
7 Մարդիս բոլոր աշխատանքը իր
բերանի համար է, սակայն հո-
գին չի կշտանալ։
8 Որովհետև իմաստունը ի՞նչ գե-
րազանցութիւն ունի յիմարից,
և ի՞նչ՝ այն ապրել գիտացող
աղքատը ապրողների առաջին։
9 Լաւ է աչքով տեսնել քան
թէ մտքով զբաղուիլ. սա էլ է
ունայն և քամիի աշխատանք։
10 Ինչ որ եղել է, նորա անունը
արդէն դրուած է, և յայտնի է,
որ մարդ է. և որ նա չէ կարող
վիճել իրանից Զօրաւորի հետ։
11 Որովհետև շատ խօսքեր կան,
որ ունայնութիւնը շատացնում
են. մարդիս ի՞նչ օգուտ։
12 Որովհետև ո՞վ գիտէ թէ ինչն
է լաւ մարդիս համար կեանքի
մէջ, նա իր կեանքի սակաւա-
թիւ օրերումն ունայն է լինում,
և նորանց շուքի պէս անց կաց-
նում. և ո՞վ էլ պիտի մարդիս
իմացնէ, թէ ի՞նչ կ'լինի նորանից
յետոյ արեգակի տակին։

ԳԼ. Է

1 Բարի անունը լաւ է հոտաւէտ
իւղից. և մահուան օրը նորա
ծննդեան օրիցը։
2 Լաւ է գնալ սուգի տունը,
քան թէ գնալ խնջոյքի տունը,
որովհետև մահը ամեն մարդի
վերջն է. և ապրողը կ'պահէ այդ
իր սրտումը։
3 Լաւ է տրտմութիւնը քան թէ
ուրախանալը, որովհետև երեսը
տխրելիս սիրտը կ'ուրախանայ։
4 Իմաստունների սիրտը սուգի
տանն է, բայց յիմարների սիր-
տը՝ ուրախութեան տանը։
5 Լաւ է լսել իմաստունների
կշտամբումը, քան թէ յիմարնե-
րի երգը։
6 Որովհետև ինչպէս որ փուշերի
ձայնն է կաթսայի տակին, այն-
պէս է յիմարի ծիծաղելը. սա էլ
է ունայն։
7 Որովհետև բռնութիւնը կ'յի-
մարացնէ իմաստունին, և պար-
գևը փչացնում է սիրտը։
8 Մի բանի վախճանը լաւ է նո-
րա սկզբիցը. լաւ է երկայնամի-
տը բարձրամիտ մարդիցը։
9 Մի շտապիր հոգովդ բարկա-
նալու, որովհետև բարկութիւնը
յիմարների ծոցումն է հանգ-
չում։
10 Մի ասիր թէ ի՞նչ է որ առա-
ջի օրերը սորանից լաւ էին, որով-
հետև իմաստութիւնից չես հար-
ցնում այս բանը։
11 Իմաստութիւնը լաւ է ժա-
ռանգութեան հետ, և շահաւէտ
է արեգակը տեսնողների համար։
12 Որովհետև իմաստութեան հո-
վանիի տակ — արծաթի հովա-
նիի տակ՝ մէկ է. բայց գիտու-
թեան շահը սա է, որ իմաստու-
թիւնը կ'ապրեցնէ իր տիրոջը։
13 Տես Աստուծոյ գործքը, որով-
հետև ո՞վ կարող է ուղղել նո-
րա ծռածը։
14 Լաւ օրը լաւութեամբ անցկա-
ցրու, և վատ օրը զգուշութիւն
արա. սորան էլ Աստուած նորա
կշտին ստեղծեց, որ մարդս իրա-
նից յետոյ մի բան չ'գտնէ։
15 Բոլորը տեսայ իմ ունայնու-
թեան օրերումը. արդար կայ որ
կորչում է իր արդարութեան
մէջ. և ամբարիշտ էլ կայ, որ
երկարացնում է կեանքը իր ամ-
բարշտութեան մէջ։
16 Խիստ շատ արդար մի լինիր.
և քեզ չափազանց իմաստուն մի

կարծիր. Ի՞նչու համար քեզ կոր-
ցնես։
17 Խիստ ամբարիշտ մի լինիր, և
յիմար մի լինիր. Ի՞նչու համար
տարաժամ մեռնես։
18 Լաւ է որ մէկին բռնես և
միւսիցն էլ ձեռքդ չ՛քաշես, ո-
րովհետև Աստուածանից վախե-
ցողը ամենը կ՛կատարէ։
19 Իմաստութիւնն աւելի ոյժ կը
տայ իմաստունին, քան թէ տա-
սը իշխաններ, որ այն քաղա-
քումը լինին։
20 Իրաւ որ երկրի վերայ արդար
մարդ չ՛կայ, որ բարի գործէ և
չ՛մեղանչէ։
21 Ամեն խօսած խօսքերի էլ սիր-
տըդ մի տար, որ չ՛լսես ծառադ
քեզ անիծելիս։
22 Որովհետև քո սիրտն էլ իմա-
ցել է շատ անգամ, որ դու էլ
ես անիծել ուրիշներին։
23 Այս ամենը փորձեցի իմաս-
տութիւնով, ասեցի թէ Ես ի-
մաստուն դառնամ, բայց նա ին-
ձանից հեռու էր։
24 Հեռու է այն ինչ որ եղել է.
և խորը՝ խոր. ո՞վ կարող է հաս-
նել նորան։
25 Ես իմ սրտովը շուռ տուի,
որ գիտենամ և քննեմ և որո-
նեմ իմաստութիւն և հանճար.
և գիտենամ թէ յիմարութիւ-
նը չարութիւն է, և անմտու-
թիւնը՝ գիժութիւն։
26 Եւ ես գտայ մահից աւելի
դառն այն կինը, որի սիրտը
ցանցեր և ուռկաններ են, և ո-
րի ձեռքերը՝ կապանքներ։ Աս-
տուծոյ առաջին հաճելի եղողը
կ՛ազատուի նորանից, իսկ մեղա-
ւորը կ՛բռնուի նորա մէջ։
27 Ահա գտել եմ այս բանը, ա-
սում է Ժողովողը, մէկ մէկ պէտ
է համարել հաշիւը գտնելու հա-
մար։
28 Որ հոգիս տակաւին որոնում
է, և ես չեմ գտել. մէկ մարդ
եմ գտել հազարիցը, բայց սո-
րանց ամենի մէջ մի կին չ՛գը-
տայ։
29 Սակայն ահա սա գտել եմ,
որ Աստուած մարդիս ուղիղ է
ստեղծել, բայց նորանք շատ
հնարքներ են որոնել։

ԳԼ. Ը

Ո՞վ կայ իմաստունին պէս, և 1
ո՞վ է բանի մեկնութիւնը իմացո-
ղը. մարդիս իմաստութիւնը փայ-
լեցնում է նորա երեսը. և նորա
երեսի պնդութիւնը կ՛փոխուի։
Ես ասում եմ. Պահիր թագա- 2
ւորի խօսքը, մանաւանդ Աստու-
ծոյ երդումի պատճառովը.
Մի շտապիր նորա երեսի առա- 3
ջից գնալու, մի կանգնիր չար
գործի մէջ. որովհետև ամեն ինչ
որ ուզէ կ՛անէ.
Ըստ որում թագաւորի խօս- 4
քը հզօր է, և ո՞վ կարող է ա-
սել նորան, թէ Ի՞նչ ես անում։
Պատուիրանքը պահողը չարիք 5
չէ ճանաչում, այլ ժամանակն
ու իրաւունքը ճանաչում է ի-
մաստունի սիրտը։
Որովհետև ամեն ձեռնարկու- 6
թեան համար կայ ժամանակ և
իրաւունք. բայց մարդիս վերայ
մեծ չարիք կայ։
Որովհետև նա չ՛գիտէ թէ ինչ 7
է լինելու. և թէ Ի՞նչպէս է լի-
նելու, ո՞վ է կարող իմացնել
նորան։
Մարդ չ՛կայ որ *քամիին վե- 8
րայ իշխէ որ †քամին արգելէ. և
իշխող էլ չ՛կայ մահուան օրուայ
վերայ, և արձակում չ՛կայ այն
պատերազմի մէջ. և ամբարիշ-
տութիւնը չի պրծացնիլ իր տի-
րոջը։
Այս բոլորը տեսայ, և արե- 9
գակի տակին եղած բոլոր գոր-
ծերին ուշ դարձրի. ժամանակ
կայ որ մարդ մարդի վերայ իշ-
խում է իր վնասի համար։
Եւ յետոյ տեսայ, որ անըզ- 10
գամները թաղվում էին գնում.
և սուրբ տեղիցը գնացին և մո-
ռացուեցան այն քաղաքումը,
ուր որ այսպէս արել էին. սա
էլ է ունայն։

*Կամ՝ հոգիին
†Կամ՝ հոգին

11 Որովհետև չար գործի վճիռը
շուտով չէ կատարվում, սորա
համար էլ մարդկանց որդիների
սիրտը համարձակվում է չարու-
թիւն անելու։
12 Թէև մեղաւորը հարիւր ան-
գամ մեղք անէ, և նա երկարա-
տև էլ լինի. այնու ամենայնիւ
գիտեմ ես, որ բարիք կ՛լինի
Աստուածանից վախեցողներին,
որ վախենում են նորա երեսիցը։
13 Բայց ամբարշտին բարութիւն
չի լինիլ. և իր օրերը չի երկա-
րացնիլ ինչպէս որ ստուերը. որ
չեն վախենում Աստուծոյ երե-
սիցը։
14 Մի ունայնութիւն կայ, որ լի-
նում է երկրի վերայ, որ ար-
դարներ կան, որոնց պատահում
է ամբարիշտների գործքին պէս.
և կան ամբարիշտներ, որոնց պա-
տահում է արդարների գործքին
պէս. ես ասեցի, որ սա էլ ու-
նայնութիւն է։
15 Եւ ես գովեցի ուրախութիւ-
նը, որ մարդիս համար արեգակի
տակին մի լաւ բան չ՛կայ, բացի
միայն ուտել ու խմել և ուրա-
խանալը. և սա է նորա հետ գը-
նում իր աշխատութեան մէջ իր
կեանքի օրերումը, որ Աստուած
նորան տուել է արեգակի տա-
կին։
16 Երբոր ես ուշս դարձրի իմաս-
տութիւնը գիտենալու և այն
զբաղմունքը տեսնելու, որ լինում
է երկրիս վերայ. (որովհետև թէ
ցերեկը և թէ գիշերը նորա աչ-
քերը քուն չեն տեսնում,)
17 Այն ժամանակ տեսայ Աստու-
ծոյ բոլոր գործերը, որ մարդս
կարող չէ հասնել այն գործին,
որ լինում է արեգակի տակին.
որքան էլ մարդս աշխատէ որո-
նելու՝ չի հասնիլ. և մինչև ան-
գամ եթէ իմաստունն էլ ասէ
թէ Գիտեմ, դարձեալ չէ կա-
րող հասնել։

ԳԼ. Թ

1 Որովհետև ես այս բոլորը դրի
իմ սրտումը, որ այս բոլորն էլ
քննեմ, որ արդարները և իմաս-
տուններն ու նորանց գործերը
Աստուծոյ ձեռքին են. սէրն էլ
ատելութիւնն էլ չ՛գիտէ մարդս.
բոլորն էլ իրանց առաջին են։
Ամենը իբրև թէ ամենքի հա- 2
մար է. միևնոյնը պատահում է
արդարին և ամբարշտին, բարի
և մաքուր մարդին և անմաքու-
րին, զոհողին և զոհ չ՛անողին,
ինչպէս է բարին՝ այնպէս է մե-
ղաւորը. երդում անողը՝ այնպէս
և երդումից վախեցողը։
Սա վատ է արեգակի տակին ե- 3
ղած բոլոր գործերումը, որ ամեն-
քին էլ միևնոյնն է պատահում։
Ու նաև մարդկանց որդիների սիր-
տը լիքն է չարութիւնով, և խեն-
դութիւն կայ նորանց սրտումը
իրանց կեանքի մէջ. իսկ վերջը
էջնում են մեռելների մօտը։
Որովհետև ով որ ընկեր է միւս 4
ապրողներին՝ յոյս կայ նորանից.
որովհետև ողջ շունը լաւ է մե-
ռած առիւծից։
Նորա համար որ կենդանիներ- 5
ը գիտեն որ մեռնելու են, բայց
մեռելները մի բան չ՛գիտեն և
վարձք էլ չ՛ունին, որովհետև
նորանց յիշատակը մոռացուել է։
Նորանց սէրն էլ, նորանց ա- 6
տելութիւնն էլ, նորանց նա-
խանձն էլ վաղուց է փչացել. և
նորանց համար այլ ևս յաւիտ-
եան բաժին չ՛կայ, արեգակի տա-
կին եղած բոլոր բաների մէջ։
Գնա ուրախութեամբ կեր հա- 7
ցըդ, և զուարթ սրտով խմիր
գինիդ, որովհետև վաղուց հա-
ւանել է Աստուած քո գործքին։
Հանդերձներդ միշտ սպիտակ 8
լինին, և գլխիդ իւղը չ՛պակասէ։
Կեանք վայելիր քո սիրած կը- 9
նոջ հետ քո ունայն կեանքի բո-
լոր օրերումը, որ քեզ տուել է
արեգակի տակ քո բոլոր ունայն
օրերումը, որովհետև նա է քո
բաժինը ապրողների մէջ, և արե-
գակի տակին քո քաշած աշխա-
տանքի մէջ։
Ամեն ինչ որ ձեռքդ գտնէ 10
անելու՝ ուժովդ արա, որ գործք,
խորհուրդ, գիտութիւն և իմաս-

տաւթիւն չ'կայ միւս աշխարհքումը, ուր որ դու պիտի գնաս։

44 Դարձեալ տեսայ արեգակի տակին որ ընթացքը վազողներինը չէ. և ոչ էլ պատերազմը քաջերինը, և ոչ էլ հացը իմաստուններինը, և ոչ էլ հարբատւթիւնը հասկացողներինը, և ոչ էլ շնորհքը գիտուններինը. որովհետև ժամանակ և դիպուած է պատահում ամենքին։

42 Ընդա համար որ մարդս էլ չը գիտէ իր ժամանակը. ինչպէս որ ձուկերը բռնվում են չար ուռկանով, և ինչպէս որ թռչունները բռնվում են ծուղակի մէջ. նոյնց նման էլ բռնվում են մարդկանց որդիները որոգայթի մէջ մի չար ժամանակում, երբոր յանկարծ ընկնում է նոցա վերայ։

43 Արեգակի տակին այս իմաստւթիւնն էլ տեսայ, և նա ինձ համար մեծ էր։

44 Մի փոքր քաղաք, և մէջն քիչ ժողովուրդ. և նորա վերայ եկաւ մի մեծ թագաւոր, և նորան պաշարեց, և նորա դէմ մեծամեծ պատնէշներ շինեց.

45 Բայց նորանում մի աղքատ իմաստուն գտնուեցաւ, և նա իր իմաստութիւնովը ազատեց քաղաքը. բայց ոչ մի մարդ չ'յիշեց այն աղքատ մարդին։

46 Եւ ես ասեցի. իմաստութիւնը լաւ է ուժից. թէև աղքատի իմաստութիւնը անարգուած լինի, և նորա խօսքին չ'լսեն։

47 Իմաստունների խօսքերը՝ մեղմութեամբ լսուած, լաւ է յիմարների վերայ իշխողի աղաղակից։

48 Իմաստութիւնը լաւ է պատերազմական գործիքներից, բայց մէկ մեղաւորը շատ բարիքներ կ'փչացնէ։

Գլ. Ժ

1 Մեռած ճանճերը գարշահոտ են անում եւ ացնում իւղագործի իւղը, նոյնպէս և մի քիչ յիմարութիւնը աւելի ծանր է լինում իմաստութիւնից և փառքից։

2 Իմաստունի սիրտն իր աջ կողմին է, և յիմարի սիրտն իր ձախ կողմին։

3 Որ ճանապարհով էլ որ գնայ յիմարը՝ պակասամիտ է. և ամենին կ'ասէ, թէ ինքը յիմար է։

4 Եթէ իշխանի բարկութիւնը վեր կենայ քեզ դէմ, քո տեղը չ'ձգես. որովհետև մեղմութիւնը մեծ յանցանքները կ'դադարեցնէ։

5 Կայ մի չարիք էլ, որ տեսայ արեգակի տակին, այն սխալմանքի նման, որ դուրս է գալիս իշխանի առաջից։

6 Յիմարութիւնը դրվում է շատ բարձրերում, իսկ հարուստները ցածումն են նստում։

7 Տեսայ ծառաներ՝ ձիերի վերայ. և իշխաններ՝ ծառաների պէս ման գալիս երկրի վերայ։

8 Ով որ փոս փորէ, մէջը կ'ընկնի. և ով որ ցանկը քանդէ, օձը կ'կծի նորան։

9 Ով որ քարեր տեղահանէ, նորանցով կ'վնասուի. փայտ կտրողը վտանգի է ենթարկուած նորանից։

10 Եթէ կացինը բթացել է, և նա չ'սրէ նորա բերանը, այն ժամանակ նա պէտք է ոյժը զօրացնէ, և յաջողութեան շահն իմաստութիւնն է։

11 Եթէ օձը խայթէ առանց թովչութեան ունեցողի համար, ուրեմն օգուտ չ'կայ թովչութիւն ունեցողի համար։

12 Իմաստունի բերանի խօսքերը շնորհք են, բայց անմտի շրթունքներն իրան կուլ կ'տան։

13 Նորա բերանի խօսքերի սկիզբը յիմարութիւն է. և նորա բերանի վերջը չար խենդութիւն։

14 Եւ յիմարը կ'շատացնէ խօսքերը. մարդս չ'գիտէ թէ ինչ է լինելու. և թէ նորանից յետոյ ինչ է լինելու, ով կարող է իմացնել նորան։

15 Յիմարի աշխատութիւնն իրան կ'յոգնեցնէ, որ չ'գիտէ քաղաքը գնալը։

16 Վա՛յ քեզ, երկիր, որ թագաւորդ տղայ է, և որ իշխաններդ առաւօտանց կանուխ ուտում են։

17 Երանի՛ քեզ, երկիր, որ թագաւորդ ազնուազարմ է, և որ իշխաններդ իր ժամանակին են ուտում ոյժի համար և ոչ թէ խնջոյքի համար։

18 Շէնքը ծուլութիւններով փուլ կ'գայ, և ձեռքերը կախելով՝ տունը կ'կաթէ։

19 Հացկերոյթը ուրախանալու համար կ'անեն, և գինին կ'զուարթացնէ կեանքը, և արծաթը պատասխան է տալիս ամենին։

20 Քո մտքումն անգամ մի անիծիր թագաւորին, և քո անկողնատանումը մի անիծիր հարուստին. որովհետև երկնքի թռչունը ձայն կ'տանէ. և թևաւորը խօսքը կ'պատմէ։

Գլ. ԺԱ

1 Հացդ թողu տուր ջրերի երեսին, որովհետև շատ օրերից յետոյ նորան կ'գտնես։

2 Բաժին տուր եօթնին և ութին էլ, որովհետև չ'գիտես թէ ինչ չարիք պիտի լինի երկրի վերայ։

3 Եթէ ամպերը լցուին՝ երկրի վերայ անձրև կ'տեղան, և եթէ մի ծառ դէպի հարաւ ընկնի կամ դէպի հիւսիս, այնտեղը, ուր որ ծառը ընկել է, կ'մնայ։

4 Քամին մտիկ անողը սերմ չի ցանիլ, և ամպերին նայողը չի հնձիլ։

5 Ինչպէս որ չ'գիտես, թէ որն է քամուի ճանապարհը, ինչպէս են չէ՞ոսկորները յղի կնոջ արդանդումը, նոյնպէս և չ'գիտես ամենատեղծ Աստուծոյ գործքը։

6 Առաւօտանց ցանիր քո սերմը, և իրիկունը թող չ'դադարէ քո ձեռքը, որովհետև չ'գիտես, թէ որն է յաջողուելու՝ սա թէ նա, կամ թէ երկուսն էլ միասին են լաւ լինելու։

7 Եւ քաղցր է լոյսը, և ախորժելի է աչքին տեսնել արևը։

8 Իրաւ եթէ մարդս շատ տարիներ էլ ապրէ, նորանցում թող ուրախանայ. բայց թող յիշէ խաւարի օրերը, որ շատ են լինելու. ամեն ինչ որ պիտի գայ՝ ունայն է։

9 Ուրախացիր, երիտասարդ, քո մանկութիւնումը, և թող զուարճացնէ քեզ քո սիրտը երիտասարդութեանդ օրերումը. և գնա քո սրտի ճանապարհովը և աչքերիդ նայուածքովը. և իմացիր որ ասրանց ամենի համար Աստուած քեզ դատաստանի է բերելու։

10 Եւ տրտմութիւնը հեռացրու սրտից, և դէն տար չարութիւնը մարմնից. որովհետև մանկութիւնը և երիտասարդութիւնը ունայն է։

Գլ. ԺԲ

1 Եւ յիշիր քո ստեղծողին քո երիտասարդութեան օրերումը, քանի որ չեն եկել թշուառութեան օրերը, և չեն հասել այն տարիները, որ ասես թէ նորանց չեմ հաւանում։

2 Քանի որ չէ խաւարել արեգակն ու լոյսը, լուսինը և աստղերը, և չեն գարձել ամպերը անձրևի եռելիքը։

3 Այն օրը, որ կ'դողդողան տան պահապանները, և կ'կորանան զօրաւոր մարդիկը, և կ'դադարեն աղացողները քիչ լինելու համար. և պատուհաններից նայողները կ'մթնեն։

4 Եւ դրսի դռները կ'կապուեն՝ աղօրիքի ձայնը տկարանալով. և նա վեր կ'կենայ թռչունի ձայնովը, և բոլոր երգեցող աղջկերքը նկուն կ'լինին։

5 Մի բարձր տեղից մինչև անգամ կ'վախենան, և վախվախելով կ'ճանապարհ, և նշենին կ'ծաղկի, և մարախը կ'ծանրանայ, և *ախորժակը կ'դադարէ. որովհետև մարդս գնում է իր յաւիտենական տունը. և դերասանը շրջապատում են լացողները։

---

*կամ կապարը

6 Քանի որ չէ կտրուել արծա-
թի թելը, չէ կոտրել ոսկի բա-
ժակը, և չէ փշրուել սափորը
աղբիւրի մօտ, և չէ կոտրել ա-
նիւը ջրհորի վերայ,
7 Եւ հողը ետ չէ դարձել երկ-
րին ինչպէս որ էր, և հոգին ետ
չէ դարձել Աստուծոյ մօտ, որ
տուել էր։
8 Ունայնութիւն ունայնութեանց
ասեց ժողովողը, ամեն բան ու-
նայն է։
9 Եւ բացի դորանից որ ժողովո-
ղը իմաստուն էր, նա դեռ ժո-
ղովրդին գիտութիւն սովորեցը-
րեց. և կշռեց ու քննեց շատ
առակներ շարադրեց։
10 Ժողովողը ջանք արաւ վայելուչ
խօսքեր գտնելու. և գրուա-
ծը ուղիղ ճշմարիտ խօսքեր են։
Իմաստունների խօսքերը խթան- 11
ների պէս են, և ինչպէս խրուած
բևեռներ ժողովածուների տէրե-
րի [illegible] արուած են մէկ հո-
վիւից։
Եւ վերջապէս, որդեակս, նո- 12
րանցով լուսաւորուիր. շատ գրը-
քեր շինելը ծայր չ'ունի. և շատ
կարդալը կ'յոգնեցնէ մարմինը։
Բոլոր խօսքի վախճանը լսենք. 13
Աստուածանից վախեցիր և նորա
պատուիրանքները պահիր. որով-
հետև սա է ամեն բան մարդիս
համար։
Որովհետև Աստուած ամեն 14
գործքը բերելու է դատաստան,
ամեն ծածուկ բանի հետ՝ թէ
բարի թէ չար։

ԵՐԳ ԵՐԳՈՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Սողոմոնի երգ երգոցը։
2 Թող ինձ համբուրէ իր բերա-
նի համբոյրներովը. որովհետև
քո սէրը գինիից լաւ է։
3 Ախորժելի են հոտոտելիքին քո
իւղերը. թափուած իւղ է քո
անունը. նորա համար սիրում
են քեզ օրիորդները։
4 Քաշիր ինձ, ետևիցդ կ'վազենք.
թագաւորն ինձ տարաւ իր սեն-
եակները. ցնծանք և ուրախա-
նանք քեզ հետ. քո սէրն աւելի
յիշենք քան թէ գինին. ուղղու-
թեամբ սիրում եմ քեզ։
5 Սև եմ ես, բայց գեղեցիկ,
ով Երուսաղէմի աղջկունք, Կե-
դարի վրանների նման, Սողոմո-
նի վարագոյրների նման։
6 Մի նայիք որ ես սևացած եմ,
որովհետև արևն ինձ խանձել է.
մօրս որդիքը բարկացել էին ինձ
վերայ, ինձ պահապանուհի էին
դրել այգիներին. բայց ես իմ
սեփական այգին չէի պահապա-
նում։
Ասիր ինձ, ով հոգիիս սիրածը, 7
ո՞րտեղ ես արածեցնում. ո՞ր-
տեղ ես [illegible] իջեցնում կէս
օրին. ապա ես ի՞նչու համար
թափառականի պէս լինիմ քո
ընկերների հօտերի մօտ։
Եթէ դու չ'գիտես, ով կա- 8
նանց գեղեցկագոյնը, դուրս եկ
հօտի ետևիցը, և արածեցրու ու-
լերիդ՝ հովիւների վրանների կըշ-
տին։
Փարաւօնի կառքին լծուած 9
ձիերիս նմանեցրի քեզ, ով ընկ-
երուհիս։
Այտերդ գեղեցիկ են գինդե- 10
րովը, պարանոցդ՝ մանեակներովը։
Ոսկի գինդեր շինենք քեզ հա- 11
մար արծաթի կիտուածքով։
Քանի որ թագաւորը իր սե- 12
ղանի վերայ էր, իմ նարդոսը իր
հոտը բուրեց։

13 Ստաշխի ծրար է իմ սիրակա-
նը ինձ համար. ստինքներիս մէջ
է անցկացնելու գիշերը։
14 Հինայի ողկոյզ է իմ սիրակա-
նը ինձ համար, Ենգադդիի այ-
գեստանումը։
15 Ահա գեղեցիկ ես դու, ով
ընկերուհիս. ահա գեղեցիկ ես.
աչքերդ աղաւնիների [illegible] են։
16 Ահա գեղեցիկ ես դու, ով
իմ սիրական, նաև հաճելի, նա-
և մեր անկողինը դալար է։
17 Մեր աների գերանները եղև-
նափայտ են, մեր առիքները՝ մայր
փայտ։

ԳԼ. Բ

1 Ես Սարօնի ծաղիկն եմ. հո-
վիտների շուշանն եմ։
2 Ինչպէս շուշանն է փուշերի
մէջ, նոյնպէս է իմ ընկերուհին
աղջկերանց մէջ։
3 Ինչպէս խնձորենին է անտառի
ծառերի մէջ, այնպէս է իմ սի-
րականը աղերանց մէջ։ Նորա հո-
վանիին հաւանեցի և նստեցի, և
նորա պտուղը քաղցր է իմ քիմ-
քին։
4 Ինձ տարաւ *խնջոյքի տունը,
և նորա դրօշն ինձ վերայ սէր է։
5 Զօրացրէք ինձ կարկանդակնե-
րով, ուժովացրէք ինձ խնձորնե-
րով. որովհետև սիրոյ հիւանդ
եմ ես։
6 Նորա ձախ ձեռքը գլխիս տա-
կին, և աջը ինձ գրկէ։
7 Երդում եմ տալիս ձեզ, ով
Երուսաղէմի աղջկերք, դաշտի
այծեամներովը կամ եղնիկներո-
վը. մի զարթնեցնէք և վեր մի
կացնէք սիրուհիին, մինչև որ ին-
քը բարեհաճէ։
8 Իմ սիրականի ձայնն է. ահա
նա գալիս է, թռչտելով սարե-
րերի վերայ, ոստոստելով բլուր-
ների վերայ։
9 Իմ սիրականը նման է այծեա-
մի կամ եղնիկի ձագին. ահա
նա կանգնած է մեր պատի ետև-
ւին, դիտում է պատուհաննե-
րիցը, զննում է վանդակներից։
Իմ սիրականը պատասխանեց և 10
ասեց ինձ. Վեր կաց, ով ընկերու-
հիս, ով գեղեցիկս, ու արի եկ։
Որովհետև ահա ձմեռն անցել 11
է, անձրևը անցել գնացել է։
Ծաղիկները երևում են տափի 12
վերայ. †երգելու ժամանակը հա-
սել է. տատրակի ձայնը լսվում
է մեր երկրումը։
Թզենին հասցնում է իր պը- 13
տուղները. և ծաղկած որթերը
հոտ են բուրում. վեր կաց, ով
ընկերուհիս, ով գեղեցիկս, ու
արի եկ։
Ով աղաւնիս, որ վէմի խոռոչ- 14
ներումն ես, որ ապառաժի ծած-
կոցի տակին ես. ցոյց տուր ինձ
քո երեսը, ձայնդ ինձ լսել տուր.
որովհետև ձայնդ քաղցր և դէմ-
քըդ հաճելի է։
Բռնեցէք մեզ համար աղուէս- 15
ները, այգիներն աւերող պզտիկ
աղուէսները. որովհետև մեր այ-
գիքը ծաղկել են։
Իմ սիրականն իմս է, և ես նո- 16
րանը. նա արածեցնում է շու-
շանների մէջ։
Քանի որ օրուայ քամին փչում 17
է, և ստուերները փախչում են.
ետ դարձիր, ով իմ սիրական,
նմանիր այծեամին, կամ եղնիկի
ձագին, որ ‡պատառոտուած սա-
րերի վերայ են։

ԳԼ. Գ

Իմ անկողնի մէջ գիշերը ես ո- 1
րոնեցի իմ հոգիի սիրածին, ես
որոնեցի նորան, բայց չ'գտայ։
Վեր կենամ, շուռ գամ քա- 2
ղաքումը, փողոցներումն ու հրա-
պարակներումը որոնեմ իմ հո-
գիի սիրածին. նորան որոնեցի
բայց չ'գտայ։
Քաղաքի մէջ շուռ եկող պա- 3
հապաններն ինձ գտան. իմ հո-
գիի սիրածին տեսե՞լ էք։
Հազիւ թէ անց էի կացել նո- 4
րանցից, որ գտայ իմ հոգիի սի-

*Եբր՝ գինիի

†Կամ՝ յօտելու
‡Կամ՝ Բեթերի

բածին. նորան բռնեցի և բաց չը
թողեցի, մինչև որ նորան տարի
իմ մօր տունը և ինձ ծնողի սեն-
եակը։
5 Երդում եմ տալիս ձեզ, ով
Երուսաղէմի աղջկունք, այծեամ-
ներովը կամ դաշտի եղնիկներո-
վը, մի զարթնեցնէք և վեր մի
կացնէք սիրականին, մինչև որ ին-
քը բարեհաճէ։
6 Ո՞վ է սա որ վեր է գալիս ա-
նապատիցը, ծուխի սիւներին նը-
ման. խնկուած զմուռսով ու
կնդրուկով բուրավաճառի ա-
մեն տեսակ փոշիներով։
7 Ահա Սողոմոնի անկողինը՝ վաթ-
սուն զօրաւորներ կան նորա շուր-
ջը Իսրայէլի զօրաւորներից։
8 Նորանք ամենքը սուսերաւոր
են, պատերազմի վարժուած, իւ-
րաքանչիւրի սուրը իր ազդրի վե-
րայ՝ գիշերների վախի պատճա-
ռովը։
9 Սողոմոն թագաւորն իրան հա-
մար մի դահաւորակ է շինել Լի-
բանանի փայտերիցը։
10 Նորա սիւներն արծաթից է
շինել, յենարանները՝ ոսկիից.
բազմոցը՝ ծիրանիից. նորա ներսը
զարդարուած է Երուսաղէմի
աղջկերանց սիրովը։
11 Դուրս եկէք ու տեսէք մէկ,
ով Սիօնի աղջկերք. Սողոմոն թա-
գաւորին, այն թագովը որով
պսակեց նորան նորա մայրը՝ նա
փեսայանալիս, նորա սրտի ուրա-
խութեան օրը։

ԳԼ. Դ

1 Ահա դու գեղեցիկ ես, ով ընկերուհիս. գեղեցիկ. աչքերդ ա-
ղաւնիի աչքերի նման են ծամերիդ
ետևիցը. մազերդ Գաղաադի *սա-
րումը պառկող այծերի հօտին
են նման։
2 Ատամներդ լուացարանից դուրս
եկող խուզած հօտի նման են.
որոնք ամենքը երկուորեակ ծնող-
ներ են, և ամուլը չ՚կայ նորանց
մէջ։

*Կամ՝ սարիցը երևացող

3 Որդան կարմրի թելի նման են
քո շրթունքները, և բերանդ վա-
յելուչ է. կիսած նռնի նման՝ այ-
տերդ ծամերիդ տակին։
4 Պարանոցդ նման է Դաւիթի
աշտարակին՝ զինարանի համար
շինուած. ուր հազար ասպար կան
կախուած, բոլորն էլ քաջազուն-
ների վահաններ։
5 Զոյգ ստինքդ նման է մի զոյգ
ուլերի, երկուորեակ այծեամի, որ
արածում են շուշանների մէջ։
6 Քանի որ փչում է օրուայ
քամին, և փախչում են նորա
ստուերները, գնամ ես զմուռսի
սարովը և կնդրուկի բլուրովը։
7 Բոլորովին գեղեցիկ ես, ով ընկերուհիս. և քեզ վերայ չ՚կայ
մի արատ։
8 Արի ինձ հետ Լիբանանիցը, ով
հարս, ինձ հետ Լիբանանիցը.
մտիկ տուր Ամանայի գագաթից,
Սանիրի և Հերմոնի գագաթից.
առիւծների բանակատեղից, ին-
ձերի սարերիցը։
9 Սիրտս յափշտակել ես, ով իմ
քոյր հարս. սիրտս յափշտակել
ես նայուածքներիդ մէկովը, պա-
րանոցիդ մանեակների մէկովը։
10 Ի՞նչ գեղեցիկ է քո սէրը, ով
իմ քոյր հարս, ինչ լաւ է քո
սէրը գինիից, և քո իւղերի բուր-
մունքը՝ ամեն խունկերից։
11 Մեղրախորիսխ է կաթում շրթ-
թունքներիցդ, ով հարս. մեղր
ու կաթ կայ լեզուիդ տակին. և
հանդերձներիդ հոտը Լիբանանի
հոտին նման է։
12 Փակուած այգի է իմ քոյր
հարսը, փակուած ակն է, կընքուած աղբիւր է։
13 Քո ոստերը նռնենիների դրախտ
է պատուական պտուղներով, հի-
նաներով ու նարդոսներով։
14 Նարդոս և քրքում, եղէգն ու
կինամոն, ամեն խնկաբեր ծա-
ռով, զմուռսով և հալուէով.
բոլոր գլխաւոր բուրմունքներով.
15 Պարտէզների աղբիւր, կենդա-
նի ջրի ջրհոր, և Լիբանանից հո-
սած վտակներ։
16 Զարթնիր, ով հիւսիս, և եկ,
ով հարաւ, փչիր իմ պարտէզին,

թող փռուին նորա բուրմունքը։
Թող իմ սիրականը իր պարտէզը
գայ, և ուտէ նորա պատուական
պտուղները։

ԳԼ. Ե

1 Ես եկայ իմ պարտէզը, ով իմ
քոյր հարս. քաղեցի իմ զմուռսն
իմ բուրմունքի հետ. կերայ իմ
խորիսխը իմ մեղրի հետ. խմեցի
իմ գինին իմ կաթի հետ. կե-
րէք, ով բարեկամներ, խմեցէք
ու զուարթացէք, ով սիրելիներ։
2 Ես քնում եմ, բայց սիրտս
արթուն է. սիրականիս ձայնն է,
դուռը թակում է. Բաց ինձ հա-
մար, ով քոյրս, ընկերուհիս, ա-
ղաւնիս, կատարեալս. որովհետև
գլուխս լիքն է ցօղով, վարսերս՝
գիշերուայ շաղերով։
3 Իմ պատմուճանը ես հանել
եմ. ես ի՞նչպէս հագնեմ նորան.
ոտներս լուացել եմ, ես ի՞նչ-
պէս աղտոտեմ նորանց։
4 Սիրականս ձեռքը մեկնեց ծա-
կովը. և աղիքս դալարուեցան նո-
րա համար.
5 Ես վեր կացայ որ բանամ սի-
րականիս համար. և ձեռքերիցս
զմուռս կաթեց, և մատերիցս
հեղուկ զմուռս փականքի բըռ-
նետղի վերայ։
6 Ես բացի սիրականիս համար,
բայց իմ սիրականը դարձել ան-
ցել էր. սիրտս գնացել էր՝ նա
խօսելիս, որոնեցի նորան բայց չը
գտայ. կանչեցի, բայց չ՚պատաս-
խանեց։
7 Ինձ գտան քաղաքումը շուռ
եկող պահապանները, խփեցին
վիրաւորեցին ինձ. վեր առան
քօղս վերայիցս պարիսպների պա-
հապանները։
8 Երդում եմ տալիս ձեզ, ով
Երուսաղէմի աղջկերք, եթէ գըտ-
նէք իմ սիրականին, ի՞նչ էք ա-
սելու նորան. ասեցէք թէ Սիրով
հիւանդ եմ ես։
9 Ի՞նչ աւելի է քո սիրականը
ուրիշ սիրականից, ով կանանց
գեղեցիկդ, ի՞նչ աւելի է քո սի-
րականը ուրիշ սիրականից, որ
մեզ այդպէս երդում ես տալիս։
10 Իմ սիրականը սպիտակ ու
կարմիր է, բիւրերից գերազանց
է։
11 Նորա գլուխը ոսկի է մաքուր,
նորա գէսերը ծածանվում են,
սև են ագռաւի պէս։
12 Նորա աչքերը ջրի վտակների
մօտ եղող աղաւնիներին նման
են. կաթի մէջ են լողում, ընդ-
ելուզուած ակունքի պէս նըս-
տած են։
13 Նորա այտերը բալասանի ա-
ծուի պէս են, ծաղկանց բուրաս-
տաններ, շրթունքները հեղուկ
զմուռս կաթող շուշաններ են։
14 Ձեռքերը ոսկի գլաններ են,
Թարսիսի քարերով լիքը, նորա
որովայնը փղոսկրեայ բանուածք
է, շափիւղաներով պատուած։
15 Նորա սրունքները մարմարեայ
սիւներ են, հաստատուած մա-
քուր ոսկիի խարիսխների վերայ.
կերպարանքը՝ Լիբանանի պէս,
ընտիր՝ եղևինների նման։
16 Նորա քիմքը քաղցրեղէններ է,
և նա ինքը բոլորովին ցանկալիք
է. ահա իմ սիրականը, և ահա
իմ ընկերը, ով Երուսաղէմի աղ-
ջկերք։

ԳԼ. Զ

1 Ո՞ւր է գնացել քո սիրականը,
ով կանանց գեղեցիկդ. ո՞ւր է
դիմել քո սիրականը, որ նորան
որոնենք քեզ հետ։
2 Իմ սիրականն իջել է իր պար-
տէզը, բալասանի ածուի մօտ. որ
արածեցնէ պարտէզներումը, և
շուշաններ քաղէ։
3 Ես իմ սիրականինն եմ, և իմ
սիրականը իմն է, որ արածեցը-
նում է շուշանների մէջ։
4 Գեղեցիկ ես դու, ով ընկե-
րուհիս, Թերսայի պէս, հաճելի
ես Երուսաղէմի պէս. երկիւղա-
լի՝ դրօշակիր զօրքերի պէս։
5 Դարձրու աչքերդ իմ առա-
ջից, որ յարձակվում են ինձ վե-
րայ. մազերդ *Գաղաադում

*Կամ՝ Գաղաադից երևացող

պառկող այծերի հօտին նման
են։
6 Ատամներդ լուացարանից դուրս
եկող մաքիների հօտին նման են.
որոնք ամենքը երկուորեակ են
ծնում, և մի ամուլը չ'կայ նո-
րանցում։
7 Կիսած նռնի նման են այտերդ
ծամերիդ տակին։
8 Վաթսուն են թագուհիները,
և ութսուն՝ հարճերը, և օրի-
որդներին թիւ չ'կայ։
9 Մէկ հատիկ է իմ աղաւնին,
իմ կատարեալը, նա միամօր է,
նա ընտրուած է իր մօր համար.
աղջիկները տեսան նորան և նո-
րան երանեցին, թագուհիներն
ու հարճերն էլ գովասանեցին
նորան։
10 Ո՞վ է այդ որ նայում է ար-
շալոյսի պէս, գեղեցիկ է լուսնի
նման, մաքուր՝ արեգակի պէս,
ահարկու՝ դրօշակիր զօրքերի պէս։
11 Ես ընկոյզների պարտէզն իջայ
որ հովտի կանաչները տեսնեմ,
տեսնեմ թէ ծլե՞լ է որթը արդ-
եօք, թէ ծաղկե՞լ են նռնենիներ-
ը։
12 Ես չ'գիտէի, իմ հոգիս դրել
էր ինձ *իմ ազնուական ազգի՞
կառքերումը։
13 Դարձիր, դարձիր, ով Սուլա-
միթ, դարձիր, դարձիր, որ քեզ
տեսնենք։ Ի՞նչ պիտի տեսնէք
Սուլամիթի վերայ. ինչպէս Մա-
նայէմի պարախումը։

ԳԼ. Է

1 Ի՞նչ գեղեցիկ են քո քայլերը
կօշիկներով, ով իշխանի դուստր.
քո բարձերի դարձուածքը նման
են արուեստագործի՝ արուեստա-
պետի ձեռքով շինուած։
2 Քո պորտը բոլորակ բաժակ է՝
անպակաս ըմպելիքից. քո փորը
ցորենի շեղջ՝ շուշանով պատ-
ուած։
3 Զոյգ ստինքդ նման են մի զոյգ
ուլերի, մի այծեամի երկուոր-
եակ ծնածը։

*Կամ՝ Ամինադիբի

Պարանոցդ փղոսկրեայ աշտա- 4
րակի պէս. աչքերդ Եսեբոնի
Բաթ-բաբբիմի դռան մօտ աւա-
զանների պէս. քիթդ Լիբանանի
աշտարակի նման որ դէպի Դա-
մասկոս է նայում։
Քո գլուխը քեզ վերայ Կար- 5
մեղոսին է նման, և գլխիդ վերայ
ծածանուողը՝ ծիրանիի նման.
թագաւորը բռնուած է քո ոլո-
րուն մազերովը։
Ի՞նչ գեղեցիկ ես, և ի՞նչ վա- 6
յելուչ ես, ով իմ ցանկալիքնե-
րի սիրուհին։
Այդ քո հասակը նման է ար- 7
մաւենիի և ստինքներդ՝ ողկոյզ-
ների։
Ասեցի՝ Արմաւենիի վերայ ել- 8
նեմ, բռնեմ նորա ճիւղերը. և
քո ստինքները լինէին որթի ող-
կոյզի պէս, և ռնգացդ հոտը՝
խնձորների հոտին պէս։
Եւ քիմքդ ազնիւ գինիի պէս 9
է, որ հոսում է ուղիղ իմ սի-
րականի համար, որ †կաթում է
քնողների շրթունքների վերայ։
Ես իմ սիրականինն եմ, և նա 10
էլ ինձ է ցանկանում։
Արի, սիրականս, դուրս գանք 11
դաշտը, օթևանենք գիւղերումը։
Առաւօտը կանուխ այգիները 12
գնանք, տեսնենք թէ որթը ծլե՞լ
է, կոկոնը ծաղկե՞լ է. ծաղկե՞լ
են նռնենիները. այնտեղ սէրս
քեզ եմ տալու։
Մանրագորները հոտ են բու- 13
րում, և մեր դռներումը կան
ամեն պատուական պտուղները՝
թէ նոր թէ հին. ով իմ սիրա-
կան, քեզ եմ պահել։

ԳԼ. Ը

Երանի թէ ինձ եղբայր լինէիր՝ 1
մօրս ստինքը ծծած, քեզ դուր-
ս գտնէի համբուրէի. ինձ չէին
էլ անարգիլ։
Քեզ կ'տանէի կ'մտցնէի իմ 2
մօր տունը, դու ինձ կ'սովորե-
ցնէիր. քեզ կ'խմեցնէի իմ հո-

†Կամ՝ խօսեցնում է քնողների
շրթունքները։

տաւէտ գինիիցը իմ նռան օշա-
րակից։
3 Նորա ձախ ձեռքը գլխիս տա-
կին, և աջը կ'գրկէր ինձ։
4 Երդում եմ տալիս ձեզ, ով
Երուսաղէմի աղջկերք, մի զար-
թեցնէք և մի վեր կացնէք իմ
սիրուհիին, մինչև որ ինքը բա-
րեհաճէ։
5 Սա ո՞վ է որ վեր է գալիս ա-
նապատիցը. կռնած իր սիրոդի
վերայ։ Քեզ խնձորենիի տակին
զարթեցրի. այնտեղ էր ծնել
քեզ քո մայրը. այնտեղ էր ծը-
նել քեզ քո ծնողը։
6 Ինձ կնիքի պէս դիր սրտիդ վե-
րայ, կնիքի պէս՝ քո բազուկի
վերայ. որովհետև մահուան պէս
զօրաւոր է սէրը. դժոխքի պէս
ամուր է նախանձը. նորա կայ-
ծերը բոցավառ կրակի կայծերի
պէս են։
7 Շատ ջուրերը չեն կարող
հանգցնել սէրը, և գետերը նո-
րան չեն ընկղմիլ. եթէ մի մարդ
իր տան բոլոր կայքը տայ սիրոյ
տեղ, անարգելով կ'անարգեն նո-
րան։
8 Մենք մի փոքր քոյր ունինք, որ
ստինք չ'ունի. ի՞նչ անենք մեր
քրոջը, նորա համար խօսուած
օրը։
Եթէ նա պարիսպ է, նորա վե- 9
րայ մի արծաթի աշտարակ շի-
նենք. և եթէ նա մի դուռ է,
նորան պատենք եղևնափայտի
տախտակով։
Ես պարիսպ եմ. և իմ ստինք- 10
ները աշտարակների նման են. ու-
րեմն նորա աչքի առաջին կ'լինիմ
խաղաղութիւն գտածի պէս։
Սողոմոնը մի այգի ունէր Բաա- 11
ղամոնի մէջ. այն այգին տուաւ
պահապաններին. ամեն մէկն իր
պտուղովը հազար արծաթ էր
բերում։
Իմ այգին իմ առաջին է. հա- 12
զարը քեզ, ով Սողոմոն, և եր-
կու հարիւրը նորա պտուղը պա-
հողների համար։
Ով պարտէզների մէջ նստող, 13
ընկերներդ լսում են ձայնդ,
թոյլ տուր ինձ լսել։
Վազիր, ով իմ սիրական, նը- 14
ման եղիր այծեամին կամ եղնիկ-
ների ձագին բուրալի սարերի վե-
րայ։

ԵՍԱՅԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Ամովսի որդի Եսայիայի տեսիլ-
քը որ տեսաւ Յուդայի և Երուսա-
ղէմի վերայ Յուդայի թագաւոր-
ների՝ Ոզիայի, Յովաթամի, Աքա-
զի և Եզեկիայի օրերումը։
2 Լսեցէք, ով երկինք, և ականջ
դիր, ով երկիր. որովհետև Եհո-
վան է խօսում. ես զաւակներ
մեծացրի և բարձրացրի, բայց
նորանք ապստամբուեցին ինձ
դէմ։ Եզը ճանաչում է իր տի- 3
րոջը, և էշը՝ իր տիրոջ մսուրը,
Բայց Իսրայէլը չէ ճանաչում,
իմ ժողովուրդը չէ իմանում։
Վա՛յ մեղաւոր ազգին. անօ- 4
րէնութիւնով ծանրացած ժողո-
վուրդ, չարագործների սերունդ,
ապականիչ զաւակներ. թող
տուին Տիրոջը, անարգեցին Իս-
րայէլի Սուրբին, ետ քաշուե-
ցին։ Ձեր էլ ո՞ր տեղին կարելի է 5
զարկել. որ ապստամբութիւնը

աւելացնում էք. բոլոր գլուխը
հիւանդ է, և բոլոր սիրտը նուա-
6 ղել է։ Ոտքի թաթից մինչև
գլուխը ողջ տեղ չ'կայ նորա վե-
րայ. հարուածներ և վէրքեր և
շարաւալի խոցեր, չեն մաքրը-
վում և չեն կապվում և իւղով
7 չեն կակղացնվում։ Ձեր երկի-
րը աւերուած, ձեր քաղաքները
կրակով այրուած են. ձեր արտե-
րը ձեր առաջին օտարներն են
ուտում. և խոպանացած են օ-
տարների տակնուվերայ արածի
8 պէս։ Եւ Սիօնի աղջիկը մնացել
է այգիի միջի մի խրճիթի պէս,
և ինչպէս մի հիւղ վարունգի
արտում, մի պաշարուած քա-
9 ղաքի նման։ Եթէ որ Զօրաց Տէ-
րը մեզ համար մի քիչ մնացորդ
չ'թողէր, Սոդոմի պէս կ'լինէինք,
Գոմորին կ'նմանէինք։
10 Լսեցէք Տիրոջ խօսքը, ով Սո-
դոմի իշխաններ, ականջ դրէք
մեր Աստուծոյ օրէնքին, ով Գո-
11 մորի ժողովուրդ։ Ի՞նչ պէտք է
ինձ ձեր զոհերի շատութիւնը,
ասում է Տէրը. ես կշտացել եմ
խոյերի ողջակէզներիցը, և պա-
բարտների ճարպիցը. և զուա-
րակների ու ոչխարների ու նո-
խազների արիւնը չեմ ախոր-
12 ժում։ Երբոր գալիս էք, իմ ե-
րեսը տեսնելու. դա ո՞վ է պա-
հանջում ձեր ձեռքից՝ կոխա-
13 տել իմ սրահները։ Այլ ևս ու-
նայն ընծաներ մի բերէք, ՝Ի՞ր
խունկը ինձ համար պիղծ է. ամ-
սագլուխներին և շաբաթներին
— ժողովներ գումարուելուն չեմ
տանիլ. անօրէնութիւն և տօ-
14 նախմբութի՛ւն։ Ձեր ամսագը-
լուխներից և տօներից զզուել է
հոգիս, նորանք ինձ վերայ բեռ
15 են. յոգնել եմ տանելուց։ Եւ
դուք ձեր ձեռքերը տարածելիս՝
ես աչքերս ծածկում եմ ձեզա-
նից. նաև երբոր աղօթքը շատա-
ցնում էք, ես չեմ լսում. ձեր
ձեռքերը լիքն են արիւնով։
16 Լուացուեցէք, մաքրուեցէք,
հեռացրէք ձեր գործերի չարու-
թիւնը իմ աչքերի առաջից, դա-
դարեցէք չարութիւն գործելուց։
Սովորեցէք բարութիւն անել, ո- 17
րոնեցէք իրաւունք, ուղղութիւն
ցուցէք զրկուածին, որբի դատը
տեսէք, որբևայրիի դատը պաշտ-
պանեցէք։
Հիմա եկէք ու վիճաբանենք, 18
ասում է Տէրը, եթէ ձեր մեղ-
քերը կրկնակի կարմիրի պէս լի-
նին, ձիւնի պէս պիտի սպիտա-
կանան. եթէ նորանք որդան կար-
միրի պէս լինին, ասրի պէս սպի-
տակ պիտի դառնան։ Եթէ յօ- 19
ժարէք և լսէք, երկրի բարիքը
կ'ուտէք։ Բայց եթէ մերժէք և 20
ապստամբուէք, սուրը պիտի ձեզ
ուտէ. որովհետև Տիրոջ բերանը
խօսեց։
Ի՞նչպէս պոռնկացաւ հաւա- 21
տարիմ քաղաքը. նա լիքն էր ի-
րաւունքով, արդարութիւն էր
օթևանում նորանում. բայց հի՞-
մա, մարդասպաններ։ Արծաթդ 22
կղկղանք է դարձել. գինիդ ջը-
րով խառնուած է։ Իշխաններդ 23
ապստամբներ և գողերի ընկեր-
ներ են, ամենքն էլ կաշառ են
սիրում և վարձի ետևից են ընկ-
կել. որբի դատը չեն նայում, և
որբևայրիի դատը չի գալիս նո-
րանց առաջը։
Նորա համար Զօրաց Եհովայ 24
Տէր՝ Իսրայէլի Հզօրի խօսքը սա
է. Ահա՛ ես ինձ կ'հանգստացը-
նեմ իմ նեղիչներիցը, և վրէժս
կ'առնեմ իմ թշնամիներիցը։ Եւ 25
ես կ'դարձնեմ իմ ձեռքը դէպի
քեզ, և կ'մաքրեմ քո կղկղան-
քը ինչպէս թէ բորակով, և կը
հեռացնեմ քո բոլոր անագը։ Եւ 26
ետ կ'բերեմ քո դատաւորներին՝
ինչպէս որ առաջ էր, և քո խոր-
հրդականներին՝ ինչպէս որ ըս-
կըզբումը։ Այնուհետև քեզ կ'ա-
սեն՝ Արդարութեան քաղաք,
Հաւատարիմ աւան։ Սիօնը իրա- 27
ւունքով պիտի փրկուի և նորա
ետ դարձողները՝ արդարութիւ-
նով։ Բայց անօրէնների ու մե- 28
զաւորների կործանումը միասին
կ'լինի, և որոնք որ թողում են
Տիրոջը, պիտի փչանան։ Որովհե- 29
տև նորանք պիտի ամաչեն ձեր
ախորժած բևեկնիներից, և պի-

տի ամօթով մնաք այն պարտեզ-
30 ներից որ հաւանել էք։ Որով-
հետև դուք պիտի լինէք տերև-
ները թառամած բևեկնիի պէս,
և միջումը ջուր չ'եղող պարտէ-
31 զի պէս։ Եւ զօրաւորը կ'լինի որ-
պէս խծուծ, և նորա գործքը՝
կայծ. և երկուսը կ'այրուին մէկ-
տեղ և հանգցնող չի լինիլ։

ԳԼ. Բ

1 Այն խօսքը որ տեսաւ Ամովսի
որդի Եսայիան Յուդայի և Ե-
րուսաղէմի վերայ։
2 Եւ կ'լինի օրերի վերջին, որ
հաստատ կ'լինի Տիրոջ տան սա-
րը՝ սարերի գլխին, և կ'բարձրա-
նայ բլուրներիցը. և յորդելով
նորա մօտ կ'գնան բոլոր ազգերը։
3 Եւ շատ ժողովուրդներ կ'գնան
և կ'ասեն. Եկէք վեր գնանք Ե-
հովայի սարը, Յակոբի Աստուծոյ
տունը. և նա կ'սովորեցնէ մեզ
իր ճանապարհներիցը, և մենք կը
գնանք նորա շաւիղներումը. ո-
րովհետև Սիօնիցը դուրս է գա-
լու օրէնքը, և Տիրոջ խօսքը՝ Ե-
4 րուսաղէմիցը։ Եւ նա պիտի դա-
տէ հեթանոսների մէջ, և խրա-
տէ շատ ազգերին. և նորանք կը
ձուլեն իրանց սուրերը խոփեր, և
իրանց նիզակները՝ յօտացներ.
ազգ ազգի վերայ սուր չի բարձ-
րացնիլ, և այլևս պատերազմի
չեն վարժուիլ։
5 Ով Յակոբի տուն, եկէք և գը-
6 նանք Տիրոջ լուսովը։ Որովհետև
դու ձգել ես քո ժողովուրդ՝
Յակոբի տունը, որ նորանք լցո-
ւած են արևելցիութիւնով, և
հմայութիւն են անում Փղշտա-
ցիների պէս, և օտարների որդ-
7 կանց հետ համամիտ են։ Եւ եր-
կիրը լցուած է արծաթով ու
ոսկիով, և նորա գանձերին ծայր
չ'կայ, և երկիրը լցուած է ձիե-
րով, ու վախճան չ'կայ նորա
8 կառքերին։ Եւ երկիրը լցուած է
կուռքերով. նորանք ձեռքի
գործքի են երկրպագութիւն ա-
նում, նորան որ իրանց մատե-
9 րը շինեցին։ Եւ խոնարհում է
ռամիկ մարդն ու վայր է ընկ-
նում տղամարդը. և դու չես ներ-
իլ նորանց։
Մտիր ժայռի մէջը և հողումը 10
թաք կացիր Տիրոջ ահաւորու-
թեան երեսիցը և նորա վեհափա-
ռութեան մեծութիւնիցը։ Մար- 11
դիս ամբարտաւան աչքերը պի-
տի խոնարհին, և պիտի իջնէ
մարդկանց հպարտութիւնը. և
միայն Տէրը կ'բարձրանայ այն օրը։
Որովհետև Զօրաց Տէրը մէկ օր 12
ունի ամեն ամբարտաւանու-
թեան ու բարձրութեան դէմ
և ամեն հպարտացածների դէմ,
և նորանք պիտի ցածանան։ Եւ 13
Լիբանանի բոլոր եղևինների դէմ,
որ բարձրացած ու վեր ելած են,
և Բասանի բոլոր կաղնիների դէմ,
Եւ բոլոր բարձր սարերի դէմ, 14
և բոլոր վեր ելած բլուրների
դէմ, Եւ բոլոր բարձր աշ- 15
տարակի դէմ և ամեն ամուր
պարսպի դէմ, Եւ Թարսիսի բո- 16
լոր նաւերի դէմ, և բոլոր ցան-
կալի տեսարան ունեցողների դէմ.
Եւ մարդիս ամբարտաւանութիւ- 17
նը պիտի խոնարհուի, և պիտի
իջնէ մարդկանց բարձրութիւնը.
և միայն Տէրը բարձր կ'լինի այն
օրը։ Եւ կուռքերը բոլորովին 18
բնաջինջ պիտի լինեն։ Եւ պիտի 19
մտնեն ժայռերի այրերի մէջ, և
երկրի խոռոչները Տիրոջ ահաւո-
րութեան առաջից և նորա վե-
հափառութեան մեծութիւնից,
երբոր նա վեր կենայ երկիրը սար-
սեցնելու։
Այն օրը մարդ կ'գցէ իր ար- 20
ծաթի կուռքերը ու ոսկի կուռ-
քերը, որ շինել են նորա համար
որ երկրպագութիւն անեն, խը-
լուրդների մօտ և չղջիկների մօտ.
Որ մտնէ ապառաժների ծակերը 21
և վէմերի ծերպերը Տիրոջ վախի
երեսից և նորա վեհափառու-
թեան մեծութիւնից։ Դադարե- 22
ցէք մարդի վերայ յուսալուց, որի
շունչը նորա ռնգացը մէջ է. ո-
րովհետև ի՞նչ է համարվում
նա։

ԳԼ. Գ

1 Որովհետև ահա Զօրաց Եհովայ
Տէրը հեռացնելու է Երուսաղէ-
մից և Յուդայից գաւազանն ու
ցուպը, հացի բոլոր նեցուկը, և
2 ջրի բոլոր նեցուկը, Քաջին և
պատերազմական մարդին, դա-
տաւորին ու մարգարէին, և գու-
3 շակողին ու ծերին, Յիսնապետին
ու պատուաւորին, և խորհրդա-
կանին ու իմաստուն ճարտարա-
պետին և գիտուն կախարդին։
4 Եւ ես նորանց վերայ երիտա-
սարդներ պիտի իշխան դնեմ, և
մանուկները պիտի իշխեն նորանց
5 վերայ։ Եւ պիտի հարստահարուի
ժողովուրդն իրարից, և ամեն
մէկն իր ընկերիցը. և երեխաները
պիտի գոռոզանան ծերերի դէմ,
և անարգները՝ պատուաւորների
6 դէմ։ Այն ժամանակ մարդ կը
բռնէ իր եղբօրը իր հօր տանը
մէջ ասելով. Դու հանդերձ ու-
նիս, մեզ վերայ իշխան եղիր, և
այս աւերակը քո ձեռքի տակին
7 լինի։ Իսկ նա բարձրաձայն կ'ասէ
այն օրը. Ես բժշկող չեմ լինիլ,
և տանս հաց չ'կայ և հանդերձ
չ'կայ. ինձ իշխան մի դնէք ժո-
8 ղովրդի վերայ։ Որովհետև Երու-
սաղէմը սասանուել է և Յուդան՝
ընկել. որովհետև նորանց լեզու-
ներն ու գործերը Տիրոջ դէմ է,
որ հակառակեն նորա փառաց
9 աչքերին։ Նորանց երեսի տեսքը
վկայում է իրանց դէմ. և ի-
րանց մեղքերը հրատարակում
են Սոդոմի պէս, չեն ծածկում.
վա՛յ նորանց անձին, որ իրանց
չարիք են հատուցանում։
10 Ասեցէք արդարին, որ նորա բանը
լաւ է. որովհետև իրանց գործե-
11 րի պտուղն են ուտելու։ Վա՛յ ան-
զգամին, նորա բանը չար է, որով-
հետև իր ձեռքի գործերի հատու-
12 ցումը պիտի լինի իրան։ Իմ ժողո-
վրդի վերայ բռնացողները երեխա-
ներ են, և կնիկներ են իշխում
նորա վերայ. ով իմ ժողովուրդ,
քո առաջնորդները մոլորեցու-
ցիչներ են, և նորանք քո շաւիղ-
ների ճանապարհը խանգարել են։

Տէրը վեր է կացել որ դատէ. 13
և կանգնել է՝ ժողովուրդներին
դատելու համար։ Տէրը դատի է 14
մտնում իր ժողովրդի ծերերի և
նորա իշխանների հետ. որ դուք
այրել էք այգին. աղքատից կո-
ղոպտուածը ձեր տներումն է։
Ի՞նչ է եղել ձեզ, որ փշրում 15
էք իմ ժողովրդին, և տնանկնե-
րի երեսը ջարդում, ասում է
Զօրաց Եհովայ Տէրը։
Եւ Տէրն ասեց. որովհետև 16
հպարտացել են Սիօնի աղջիկնե-
րը, և վեր բարձրացած պարանո-
ցով են ման գալիս, և անհա-
մեստ աչքերով ակնարկում են.
գնալիս կաքաւելով են գնում,
և իրանց ոտքերովը խշխշոց են
հանում. Եւ Տէրն էլ կ'կնտացնէ 17
Սիօնի աղջկերանց գագաթը, և
Տէրը կ'մերկացնէ նորանց ամօ-
թոյքը։ Այն օրը Տէրը կ'հեռա- 18
ցնէ ոտնապարանջանների փառ-
քը, ցանցակերպ ճակատանոցնե-
րը և մահիկները, Գինդերը, ա- 19
պարանջանները և շղաշատեռնե-
րը, Ապարօշները, ոտքի շղթայիկ- 20
ները և գօտիները, բուրալից տու-
փերը, հմայեակները, Մատանի- 21
ները և քթի օղակները, Պատմու- 22
ճանները և կշտապանակները, վե-
րարկուները և քսակները. Հայե- 23
լիները և բեհեղները, խոյրերը և
քօղերը։ Եւ խնկեղէնների փոխա- 24
րէն կ'լինի փտութիւն, և գօտիի
տեղ՝ չուան, և հիւսուած խո-
պոպիկի տեղ՝ կնտութիւն. և
լանջագեղ կամարի տեղ՝ քրձեայ
գօտի, գեղեցկութեան տեղ՝ խա-
րան։ Քո մարդիկը սրով պիտի 25
ընկնեն, և քո քաջերը՝ պատե-
րազմով։ Եւ նորա դռները պի- 26
տի ողբան ու սուգ բռնեն, և նա
ամայացած պիտի նստէ տափին։

ԳԼ. Դ

Եւ այն օրը եօթը կին պիտի մէկ 1
մարդ բռնեն և ասեն. Մեր հացն
ուտենք և մեր հագուստը հագ-
նենք, միայն թէ քո անունը կո-
չուի մեզ վերայ. մեր նախատին-
քը վեր առ։

2 Այն օր Տիրոջ շառաւիղը կը
լինի զարդի և փառքի համար.
և երկրի պտուղը պարծանք ու
պատիւ կ'լինի Իսրայէլի փրր-
3 կուածների համար։ Եւ այնպէս
պիտի լինի որ Սիօնի մնացածը և
Երուսաղէմի մնացորդը սուրբ պի-
տի կոչուին. ամենքը որ գրուած
են կեանքի համար Երուսաղէ-
4 մումը։ Երբոր Տէրը լուացած կը
լինի Սիօնի աղջկերանց աղտը, և
Երուսաղէմի արիւնները նորա մի-
ջիցը մաքրած կ'լինի, իրաւունքի
5 հոգով և այրող հոգով։ Եւ Տէ-
րը կ'շինէ Սիօն սարի ամեն տե-
ղերի վերայ և նորա ժողովքների
վերայ՝ ցերեկով ամպ և մէգ,
իսկ գիշերը փայլուն կրակի բոց.
որովհետև ամեն փառքի վերայ
6 հովանի պիտի լինի։ Եւ նա վրան
կ'դառնայ ցերեկը հովանի տա-
լու համար տաքութեան դէմ,
և ապաստանարան ու ծածկոց՝
մրրիկի և անձրևի դէմ։

ԳԼ. Ե

1 Աղէ երգեմ իմ սիրելիի հա-
մար իմ սիրականի երգը իր այ-
գիի մասին։ Իմ սիրելին մի այ-
գի ունէր մի պարարտ լեռնա-
2 ծայրին։ Եւ նա ցանգով պատեց
նորան, քարերը հանեց միջիցը,
և նորանում ընտիր որթեր տըն-
կեց, և մի հնձան էլ փորեց նո-
րանում, և սպասեց որ խաղող
բերէ, բայց նա ազոխ բերաւ։
3 Եւ հիմա, ով Երուսաղէմի
բնակիչ և Յուդայի մարդ, մէկ
դատեցէք իմ ու իմ այգիի մէջ։
4 Էլ ի՞նչ կար անելու իմ այգի-
ին, որ ես չեմ արել նորան. ի՞ն-
չու համար սպասեցի, որ խաղող
5 բերէր. և նա ազոխ բերաւ։ Եւ
հիմա ձեզ իմացնեմ թէ ի՞նչ
եմ անելու իմ այգիին, ես քան-
դելու եմ նորա ցանգը, որ լինի
արօտատեղ. ես քարուքանդ եմ
անելու նորա պատերը, որ ոտ-
6 նահար դառնայ։ Ես խոպանա-
ցած եմ թողելու նորան, նա
պիտի չ'յօտուի և չ'բրուի, և պի-
տի ցախ ու փուշ բուսնէ. և ամ-
պերին պատուիրելու եմ, որ նո-
րա վերայ անձրև չ'տեղան։ Որով- 7
հետև Զօրաց Տիրոջ այգին Իս-
րայէլի տունն է, և Յուդայի
տունը՝ նորա ախորժելի տունկը.
և նա սպասում էր իրաւունքի,
և ահա արիւնհեղութիւն, ար-
դարութեան՝ և ահա աղաղակ։
Վա՛յ նորանց որ տունը տան 8
են կպցնում, արտը արտին են
մօտեցնում մինչև որ այլևս տեղ
չէ լինում, որ դուք մինակ բնակ-
ուէք երկրիս մէջ։ Իմ ականջ- 9
ներին ասեց Զօրաց Տէրը, Ան-
շուշտ շատ տներ աւերակ են
դառնալու, մեծ ու գեղեցիկ
տներ՝ առանց բնակչի։ Որովհե- 10
տև տասը լծավար այգին մէկ
մար պիտի տայ, և մէկ քոռ
սերմը մէկ արդու պիտի տայ։
Վա՛յ նորանց որ առաւօտանց 11
կանուխ վեր են կենում և ցքիի
ետևից վազում. ուշանում են
իրիկունը, որ գինին նորանց տա-
քացրել է։ Եւ լինում է քնար 12
ու տաւիղ, թմբուկ ու սրինգ և
գինի նորանց խնջոյքներումը. բայց
Տիրոջ արածներին մտիկ չեն տա-
լիս, և նորա ձեռքի գործերը չեն
տեսնում։ Նորա համար իմ ժո- 13
ղովուրդը տգիտութիւնիցը գե-
րի է գնում, և նորա փառաւոր-
ները սովատանջ մարդիկ են լի-
նում. և նորա բազմութիւնը տա-
ջորվում է ծարաւութիւնից։
Նորա համար դժոխքը կ'լայ- 14
նացնէ իրան, և իր բերանը ան-
չափ կ'բանայ, և նորա մէջ կ'իջ-
նէ նորա պարծանքն ու բազմու-
թիւնը, և նորա աղաղակն ու
զուարճութիւնը։ Եւ ռամիկ 15
մարդը կ'խոնարհուի, և տղա-
մարդը վայր կ'ընկնի, և ամբար-
տաւանների աչքերը կ'ցածանան։
Եւ Զօրաց Տէրը կ'բարձրանայ ի- 16
րաւունքով, և սուրբ Աստուա-
ծը կ'սրբուի արդարութիւնով։
Եւ սչխարները կ'արածեն իրանց 17
արօտումը, և հարուստներից մնա-
ցած աւերակները օտարները կ'ու-
տեն։
Վա՛յ նորանց որ քաշում են 18
անօրէնութիւնը ունայնութեան

չուաններով, և մեղքը՝ իբր թէ
49 սայլի թոկերով. Որոնք ասում են.
Թող շտապէ, շուտով անէ իր
գործը, որ տեսնենք, և թող մօ-
տենայ ու գայ Իսրայէլի Սուրբի
20 խորհուրդը, որ գիտենանք։ Վա՛յ
նորանց, որ չարին ասում են բա-
րի, և բարիին՝ չար. որ խաւարը
շինում են լոյս, և լոյսը՝ խաւար.
որ դառնը քաղցր են շինում, և
21 քաղցրը՝ դառն։ Վա՛յ նորանց որ
իրանց աչքին իմաստուն են, և
իրանց առաջը՝ գիտուն։
22 Վա՛յ նորանց որ քաջ են գի-
նի խմելում և զօրաւոր են ցքին
23 խառնելում. Որ արդարացնում
են ամբարշտին կաշառքի հա-
մար, բայց արդարների արդա-
րութիւնը հեռանում է նորան-
ցից։
24 Նորա համար ինչպէս որ կրա-
կի բոցը ուտում է մղեղը, և
խոտը անցնում է բոցի մէջ, նո-
րանց արմատն էլ փտածի պէս
պիտի լինի, և նորանց ծաղիկը
փոշիի պէս պիտի վեր ելնէ. ո-
րովհետև նորանք անարգեցին Զօ-
րաց Տիրոջ օրէնքը, և Իսրայէլի
25 Սուրբի խօսքը մերժեցին։ Նորա
համար բորբոքուել է Տիրոջ
բարկութիւնը իր ժողովրդի դէմ,
և նա երկարացրել է իր ձեռքը
նորա վերայ ու նորան զարկել,
որ սարերը դողում են. և նո-
րանց դիերը աղբի պէս եղան փո-
ղոցներումը. այսու ամենայնիւ
նորա բարկութիւնը ետ չէ դա-
ռել, և նորա ձեռքը դեռ մեկ-
նած է։
26 Եւ նա դրօշակ է բարձրացնե-
լու հեռու ազգերի համար, և
սուլելու է նորանց երկրի ծայրի-
ցը, և ահա նորանք շուտով հեշ-
27 տութեամբ գալիս են։ Յոգնածը
չ՚կայ, և սահողը չ՚կայ նորան-
ցում. մէկը չէ ննջում և չէ
քնում, և մէկի մէջքի գօտին չէ
բացվում, և ոչ մէկի կօշիկի կա-
28 պը չէ կտրվում։ Որի նետերը
սրուած են, և բոլոր աղեղները՝
լարուած, ձիանցը սմբակները
համարեա թէ գայլախազ են, և
29 անիւները՝ մրրկի նման։ Նորա
մունչիւնը առիւծի նման է. գո-
ռում է կորիւնների պէս. և բը-
ղավում ու յափշտակում է կո-
ղոպուտը, և փախցնում, և ա-
ղատող չ՚կայ։ Եւ այն օրը պիտի 30
գոռան նորա վերայ ծովի գոռա-
լուն պէս. և նա դէպի երկիրը
մտիկ կ՚տայ, և ահա խաւար է
և տագնապ. բայց լոյսը խաւա-
րել է նորա երկնքի վերայ։

ԳԼ. Զ

Ոզիա թագաւորի մեռած տա- 1
րին տեսայ Տիրոջը բարձր և վե-
րացած աթոռի վերայ նստած,
և նորա քղանցքը լցրել էր տա-
ճարը։ Սերովբէները կանգնած է- 2
ին նորանից վերև, որոնց ամեն մէ-
կը վեց թև ունէր. երկուսով
ծածկում էր իր երեսը և երկու-
սով ծածկում էր իր ոտները և
երկուսով թռչում էր։ Եւ մէ- 3
կը կանչում էր միւսին և ասում.
Սուրբ, Սուրբ. Սուրբ է Զօրաց
Տէրը. բոլոր երկիրը լիքն է նորա
փառքովը։ Եւ դրանդիքի հիմե- 4
րը երերացին աղաղակողի ձայնի-
ցը, և տունը ծուխով լցուեցաւ։
Եւ ես ասեցի. Վա՛յ ինձ, որով- 5
հետև կորած եմ. որովհետև ես
պիղծ շրթունքով մարդ եմ, և
ես պիղծ շրթունքով ժողովրդի
մէջ եմ բնակվում, և իմ աչ-
քերը տեսան Զօրաց Տէր թա-
գաւորին։ Եւ սերովբէների մէկը 6
թռաւ ինձ մօտ՝ ձեռքին մի կրա-
կի կայծ, որ ունելիքով առել
էր սեղանի վերայից. Եւ նորա- 7
նով դպաւ իմ բերանին և ասեց.
Ահա սա դպաւ քո շրթունքնե-
րին, և քո անօրէնութիւնը հե-
ռացաւ, և քո մեղքը քաւուե-
ցաւ։
Եւ ես լսեցի Տիրոջ ձայնը, որ 8
ասում էր. Որի՞ն ուղարկեմ, և
ո՞վ կ՚գնայ մեզ համար. և ես
ասեցի. Ահա ես, ինձ ուղար-
կիր։ Եւ նա ասեց. Գնա և ասիր 9
այս ժողովրդին. Լսելով կ՚լսէք,
բայց չէք հասկանալ, և տեսնե-
լով կ՚տեսնէք, բայց չէք իմա-
նալ։ Թանձրացրու այս ժողովրդ- 10

դի սիրտը, և նորա ականջները
ծանրացրու և նորա աչքերը ծե-
փիր. որ չ՚տեսնէ աչքերովը, և
ականջներովը չ՚լսէ, որ սիրտն ի-
մանար, ու դարձի գար, և բժշ-
11 կուէր։ Եւ ես ասեցի. Մինչև
ե՞րբ, Տէր իմ, և նա ասեց. Մին-
չև որ ամայանան քաղաքները
բնակիչ չ՚լինելով, և տուները՝
մարդ չ՚ունենալով. և երկիրը ա-
ւերուած լինելով անապատ դառ-
12 նայ։ Եւ Տէրը հեռացնէ մարդ-
կանցը, և ձգած թողածը շա-
13 տանայ երկրի մէջ։ Եւ եթէ նո-
րանում դեռ մի տասներորդ մա-
սը լինի, նա էլ դարձեալ աւե-
րակ դառնայ. ինչպէս որ բևեկ-
նին ու կաղնին, որ կտրուելիս մի
բուն է լինում նորանցում, նոյն-
պէս այն սուրբ սերունդն է նորա
բունը։

ԳԼ. Է

1 Եւ եղաւ Յուդայի թագաւոր՝ Ո-
զիայի որդի Յովաթամի որդի Ա-
քազի օրերումը, որ Ասորիների
Ռասին թագաւորը և Իսրայէլի
թագաւոր՝ Ռովմելայի որդի Փա-
կէէն վեր եկան Երուսաղէմ նո-
րա հետ պատերազմելու. բայց
չ՚կարողացան նորա հետ պատե-
2 րազմ անել։ Եւ Դաւիթի տանը
լուր տրուեցաւ ասելով թէ Ա-
սորին բանակ է կազմել Եփրեմի
հետ. այն ժամանակ դողաց նո-
րա սիրտը և նորա ժողովրդի սիր-
տը ինչպէս որ անտառի ծառերը
3 դողում են քամիիցը։ Եւ Տէրն
ասեց Եսայիային. Գնա մէկ Ա-
քազին դիմաւորելու՝ դու և քո
որդին *Սէար-յասուբը՝ վերի ա-
ւազանի ջրմուղի ծայրը, թափի-
չի ագարակի ճանապարհի վերայ.
4 Եւ ասիր նորան. Զգոյշ եղիր որ
հանդարտ լինիս, մի վախենար և
սիրտդ չ՚թուլանայ այս երկու
ծուխ անող կիսայրեաց խանձող-
ներից, բարկութիւնը բորբոք-
ուած Ռասինից և Ասորեցիներից
5 և Ռովմելայի որդիիցը։ Որովհետև
Ասորին քո մասին չար խորհուրդ
է արել, նաև Եփրեմն ու Ռով-
մելայի որդին, ասելով.
Վեր գնանք Յուդայի վերայ և 6
ահաբեկ անենք նորան և նուա-
ճենք նորան մեզ համար, և նո-
րա մէջ թագաւոր դնենք Տաբէ-
ելի որդիին։ Այսպէս է ասում 7
Եհովայ Տէրը. Պիտի չ՚հաստատ-
ուի և չ՚կատարուի այդ։ Որով- 8
հետև Ասորիների գլուխը Դա-
մասկոսն է, և Դամասկոսի գլու-
խը՝ Ռասինը. և դեռ մինչև վաթ-
սունևհինգ տարին Եփրեմը կը
ջնջուի ազգ լինելուց։ Եւ Եփրե- 9
մի գլուխն է Սամարիան, և Սա-
մարիայի գլուխը՝ Ռովմելայի որ-
դին. եթէ չ՚հաւատաք, յիրաւի
չէք մնալ։
Եւ Տէրը դարձեալ խօսեց Ա- 10
քազի հետ ասելով. Մի նշան 11
խնդրիր քեզ համար քո Եհովայ
Աստուածանից, կամ խոր անդուն-
դումը, կամ վեր բարձունքումը։
Բայց Աքազն ասեց. Չեմ խընդ- 12
րիլ. և Տիրոջը չեմ փորձիլ։ Նա 13
էլ ասեց. Հիմա լսեցէք, ով Դա-
ւիթի տունը, սա քի՞չ բան է
ձեզ համար որ մարդկանց աշ-
խատութիւն էք տալիս, որ Ա-
ստուծուն էլ էք աշխատութիւն
տալիս. Սորա համար Տէրն ինքը 14
ձեզ նշան կ՚տայ. ահա կոյսը կը
յղանայ և կ՚ծնէ մի որդի, և նո-
րա անունը կ՚կանչէ Էմմանուէլ։
Նա կոգի և մեղր կ՚ուտէ մինչև 15
որ գիտենայ չարը մերժել և լա-
ւը ընտրել։ Որովհետև մանուկը 16
չարը մերժելը և բարին ընտրելը
գիտենալուց առաջ կ՚թողուի այն
երկիրը որոնց երկու թագաւոր-
ների առաջը դու վախենում ես։
Տէրը քեզ վերայ և քո ժողովրդ- 17
ի վերայ և քո հօր տանը վերայ
այնպիսի օրեր է բերելու, որ չեն
եկած Եփրեմը Յուդայից հեռա-
նալու օրից հետէ. այսինքն Ասո-
րեստանի թագաւորին։ Եւ կ՚լի- 18
նի այն օրը, որ Տէրը կ՚սուլէ այն
ճանճերին, որ Եգիպտոսի գետի
եզերքումն են. և այն մեղուն-
երին որ Ասորեստանի երկրումն են.
Եւ ամենքը կ՚գան և կ՚հանգչեն 19

*Այսինքն՝ Մնացորդը կ՚դառնայ.

ամայի ձորերուն և վէմերի խո-
ռոչներուն, և ամեն թռչուն-
20 բուր և ամեն արօտներուն։ Անոնց
օրը Տէրը վտձած ածելիով գե-
տի այն կողմի Ասորեստանի թա-
գաւորով կ'ածիլէ գլուխը և ոտ-
քերի մազը, ու նաև մօրուքը կը
21 սափրէ։ Եւ այն օրը կ'լինի որ
մէկ մարդ մէկ երինջ և երկու
22 ոչխար կ'պահէ, Եւ կ'լինի որ կա-
թը շատ չինելուց կոգի կ'ուտէ.
որովհետև կոգի և մեղր կ'ուտեն
ամենքը որ մնացած կ'լինին երկ-
23 րի մէջ։ Եւ այն օրը կ'լինի, որ
ամեն մի տեղ ուր որ կար հա-
զար որթի հազար արծաթի, ցախ
24 և փուշ դարձած կ'լինի։ Նետե-
րով ու աղեղներով կ'գնան այն-
տեղ, որովհետև բոլոր երկիրը
25 ցախեր ու փուշեր դարձած կ'լի-
նի։ Եւ բոլոր սարերը, որ բրի-
չով փորվում էին, չես կարողա-
նալ գնալ այնտեղ՝ ցախի ու
փուշի երկիւղի պատճառով. և
արջառների արօտ և խաշինքնե-
րի կոխան կ'դառնայ։

Գլ. Ը

1 Եւ Տէրն ինձ ասեց. Առ քեզ
համար մի մեծ տոմս, և գրիր նո-
րա վերայ մարդի գրչով Մահեր
2 -շալալ հաշ-բազէ մնահին։ Եւ ես
ինձ համար հաւատարիմ վկա-
ներ եմ բռնելու Ուրիա քահա-
նային և Բարաքիայի որդի Զա-
3 քարիային։ Եւ ես մտեցայ մար-
գարէուհին, և նա յղացաւ և
մի որդի ծնեց։ և Տէրն ինձ ա-
սեց. Նորա անունը կոչիր *Մա-
4 հեր-շալալ հաշ-բազէ։ Որովհե-
տև մանուկը Հայրս ու մայրս
կանչելը սովորելուց առաջ վեր
կ'առնուի Դամասկոսի հարստու-
թիւնը և Սամարիայի աւարը Ի
դէմս Ասորեստանի թագաւորի
առաջը։
5 Եւ Տէրը դարձեալ խօսեց ինձ
6 հետ և ասեց. Որովհետև այս ժո-
ղովուրդը արհամարհում է Սիլո-

*Այսինքն՝ շտապիր աւարի, շու-
տով յափշտակիր կողոպուտ։

վայի հանդարտ հոսող ջուրերը,
և ղուարճանում է Ռասինով և
Ռեմալեայի որդիովը, Ուրեմն նո-
րա համար Տէրը նորանց վերայ
կ'հանէ Գետի զօրաւոր և առատ
ջուրերը, այսինքն Ասորեստանի
թագաւորին և նորա բոլոր զո-
րութիւնը. և նա վեր կ'բարձրա-
նայ իր բոլոր յատակներիցը, և
կ'անցնի իր բոլոր եզերքներիցը։
8 Եւ կ'յորդե Յուդայի մէջ, կ'ա-
ղողէ կ'անցնի և մինչև պարա-
նոցը կ'հասնի. և նորա թևերի
տարածութիւնը լցնելու է քո
երկրի լայնութիւնը, ով Էմմա-
նուէլ։
9 Ջարացէք, ով ազգեր, բայց
պիտի սարսափէք. և ականջ դը-
րէք, ով երկրի հեռու տեղերը.
պատրաստուեցէք, բայց պիտի
սարսափէք. պատրաստուեցէք,
բայց պիտի սարսափէք։ Խորհուրդ
10 հնարեցէք, բայց պիտի խափան-
ուի. խօսեցէք խօսք, բայց պիտի
չ'հաստատուի. որովհետև Աստ-
11 ուած մեզ հետ է։ Որա համար
այսպէս ասեց ինձ Տէրը իր ձեռ-
քի զօրութեամբը, և ինձ խրատ-
եց չ'գնալ այս ժողովրդի ճա-
12 նապարհովը, ասելով. Մի ասէք
Դաշնակցութիւն այն բոլորին,
որին այս ժողովուրդը դաշնակ-
ցութիւն է ասում. և նորա վա-
խովը մի վախենաք և մի զար-
13 հուրեք։ Զօրաց Տիրոջը՝ այս նո-
քան սրբեցէք. և նա լինի ձեր եր-
14 կիւղը և ձեր զարհուրանքը։ Եւ
նա չէ հմար սրբարան կ'լինի. իսկ
գայթակղութեան քար և գլոր-
ման վէմ Իսրայէլի երկու տների
համար, և թակարդ ու որոգայթ
պիտի լինի Երուսաղէմի բնակիչ-
15 ների համար։ Եւ նորանցմէ շա-
տերը կ'գլորուեն. և վայր կ'ընկ-
նեն և կ'փշրուեն, և որոգայթը
16 կ'ընկնեն ու կ'բռնուեն։ Կապիր
վկայութիւնը, կնքիր օրէնքը իմ
աշակերտների մէջ։
17 Եւ ես սպասում եմ Տիրոջը,
որ ծածկել է իր երեսը Յակոբի
տնից, և յոյս ունիմ նորան։
18 Ահա ես և այն զաւակները, որ
Տէրը տուաւ ինձ, որ նշաններ և

սքանչելիքներ լինին Իսրայէլում
Զօրաց Տիրոջ կողմանէ, որ բնակ-
19 ում է Սիոն սարի վերայ։
Եւ երբոր ձեզ ասեն. Հարցրէք
մեռելահարցուկներին և վհուկ-
ներին, և փսփսաղներին ու քրքջ-
մընջողներին, Ո՞չ Ե՞ր Ժողով-
չէ՞։ Ջե՞ որ ժողովուրդը պէտք է
իր Աստուծուն հարցնէ. կենդա-
նիների համար մեռածներին չէ-
20 ՞։ Օրէնքին ու վկայութեանը
դէմ։ Եթէ նորանք չ'խօսեն
այս խօսքի համեմատ, նորանք
21 արշալոյս չ'ունին։ Եւ անցնում
են նորանում վշտացած և սո-
ված. և երբոր նա սովածանում
է՝ բարկանում է, և անիծում
է իր թագաւորին և իր Աստու-
ծուն, և դառնում է դէպի վեր,
22 Եւ երկրին է մռիկ տալիս, և ա-
հա վիշտ ու խաւար, նեղու-
թեան մէգ, և մթութեան մէջ
քշուած. որովհետև մթին չի
մնալ ուր որ նեղութիւն կայ։

Գլ. Թ

1 Առաջի ժամանակը անարգեց
Զաբուղոնի երկիրը և Նեփթա-
ղիմի երկիրը, բայց վերջումը յար-
գելու է. ծովի ճանապարհը,
Յորդանանի միւս կողմի, Հեթա-
2 նոսների գաւիլեան, խաւարումը
գնացող ժողովուրդը մեծ լոյս
տեսաւ. մահուան տաւերի երկ-
րում բնակողների վերայ լոյս
3 ծագեց։ Դու շատացրիր ազգը,
մեծացրիր նորա ուրախութիւնը.
նորանք ուրախանում են քո
առաջին՝ հունձի ժամանակի ու-
րախութեան պէս. ինչպէս որ
ցնծում են աւար բաժանելիս։
4 Որովհետև նորա ծանրաբեռնուածը
և նորա մէջքի գաւազանը, նորա
վերայ բռնացողի ցուպը կոտրե-
5 ցիր՝ Մադիամի օրուայ պէս։ Որով-
հետև ճակատամարտի մէջ զին-
ուորականների բոլոր զէնքերը և ա-
րիւնաթաթախ հագուստները պի-
տի այրուին և հրոյ ճարակ լինին։
6 Որովհետև մեզ համար մի մա-
նուկ ծնուեցաւ, մեզ մի որդի
արուեցաւ, և իշխանութիւնը կը
լինի նորա ուսի վերայ, և նորա
անունը կ'կոչուի Քաջանչելի, Խոր-
հրդական, Հզոր Աստուած, Յա-
ւիտենականութեան Հայր, Խա-
ղաղութեան Իշխան։ Իշխանու- 7
թիւնը շատացնելուն և խաղա-
ղութեանը վերջ չ'կայ, Դաւիթի
աթոռի վերայ և նորա թագա-
ւորութեան վերայ, որ նորան
հաստատէ և պնդացնէ նորան ի-
րաւունքով և արդարութիւնով
հիմայուանից մինչև յաւիտեան։
Զօրաց Տիրոջ նախանձը պիտի ա-
նէ այս։
Տէրը պատգամ ուղարկեց Յա- 8
կոբին, և նա իջաւ Իսրայէլի վե-
րայ։ Եւ ժողովուրդը Եփրեմը և Սամարիա- 9
յի բնակիչները, որոնք ամբար-
տաւանութեամբ և սրտի հպար-
տութեամբ ասում են. Աղիւս- 10
ները ընկան, բայց մենք սրբա-
տաշ քարերով կ'շինենք, մոլա-
թզենիքը կտրուեցան, բայց մենք
նորանց տեղ եղևիններ կ'դնենք։
Սակայն Տէրը պիտի յարուցանէ 11
Ռասինի հակառակորդներին նո-
րա վերայ, և նորա թշնամինե-
րին՝ դրդռէ։ Ասորիքն առաջից, 12
և փղշտացիքն ետևիցը, և պիտի
ուտեն Իսրայէլին լիքը բերանով։
Այսու ամենայնիւ նորա բարկու-
թիւնը ետ չէ դարձել, և նորա
ձեռքը դեռ մեկնած է։
Բայց ժողովուրդը ետ չէ դառ- 13
նում դէպի իրան զարկողին, և
Զօրաց Տիրոջը չեն խնդրում։ Եւ 14
Տէրը կտրելու է Իսրայէլից գլուխ
և ապին, արմաւենիի ոստ
և կնիւնը մէկ օրում։ Ծերը և 15
պատուաւորը գլուխն է, իսկ մար-
գարէն որ ստութիւն է սովորե-
ցնում՝ ապին է։ Եւ այս ժողո- 16
վրդի առաջնորդները մոլորե-
ցնում են, և նորանցից առաջ-
նորդուողները պիտի կուլ գնան։
Այս պատճառով Տէրը չի ու- 17
րախանալ նորա երիտասարդների
վերայ, և նորա որբերին ու որ-
բևայրիներին չի ողորմիլ։ Որով-
հետև ամենքը կեղծաւոր ու չա-
րագործ եղան, և ամեն բերան
յիմարութիւն է խօսում։ Այ-

սուս ամենայնիւ նորա բարկութիւնը ետ չէ դարձել և նորա ձեռքը դեռ մեկնած է։

48 Որովհետև կրակի պէս այրում է անօրէնութիւնը, ցախերն ու փուշերը լափում է և վառում է անտառի ծմակները և վեր են քքլլում բարձր ծխասիւներով։

49 Ջօրաց Տիրոջ բարկութիւնից երկիրը այրուելու է, և ժողովուրդը կրակի ճարակի պէս է լինելու, մարդ իր եղբօրը չէ խնայելու։

20 Եւ կտրելու են աջ կողմից, բայց սոված են մնալու, և ձախ կողմից ուտելու են, բայց չեն կշտանալու. ամեն մարդ իր բազուկների միսն է ուտելու։

21 Մանասէն՝ Եփրեմին, և Եփրեմ՝ Մանասէին, և նորանք մեկտեղ Յուդայի վերայ։ Այսու ամենայնիւ նորա բարկութիւնը ետ չէ դարձել և նորա ձեռքը դեռ մեկնած է։

Գլ. Ժ.

1 Վա՛յ անօրէն կանանները դնողներին, և այն դպիրներին, որ անիրաւութիւն են գրում.

2 Աղքատների դատաստանը ծռելու համար, և իմ ժողովրդի տնանկների իրաւունքը յափշտակելու, որպէսզի այրիները նորանց աւարը լինելու համար և որ որբերին կողոպտեն։

3 Եւ ի՞նչ էք անելու այցելութեան օրը, և այն կործանման ժամանակին՝ որ գալիս է հեռուանց. դէպի ո՞ւմ էք վազելու օգնութեան համար, և ո՞ւր էք ձգելու ձեր փառքը։

4 Թէ ոչ՝ գերիների մէջ ծռուին, և սպանուածների մէջ ընկնեն։ Այսու ամենայնիւ նորա բարկութիւնը ետ չէ դարձել և նորա ձեռքը դեռ մեկնած է։

5 Վա՛յ Ասորեստանին՝ իմ բարկութեան գաւազանին, որի ձեռքի գաւազանը իմ ցասումն է։

6 Մի կեղծաւոր ազգի դէմ եմ ուղարկելու նորան, և իմ բարկացած ժողովրդի վերայ նշանակելու եմ նորան, աւար աւարելու և կողոպուտ կողոպտելու համար, և որ նորան անանհար անէ ինչպէս փողոցների ցեխը։

7 Բայց նա այնպէս չէ մտածելու, և նորա սիրտը այնպէս չէ խորհելու, այլ նորա սրբումները փչացնել է, և շատ ազգեր բնաջինջ անել է։

8 Որովհետև նա ասում է. Միթէ իմ իշխաններն ամենքն էլ թագաւորներ չեն։

9 Միթէ Քարքամիսի պէս չէ Քաղանէն, կամ թէ Արփադի պէս չէ Եմաթը, կամ թէ Դամասկոսի պէս՝ Սամարիան։

10 Ինչպէս որ իմ ձեռքը հասաւ կուռքերի թագաւորութիւններին, և նորանց քանդակածոյները շատ էին Երուսաղէմինից ու Սամարիայինից։

11 Միթէ ինչպէս որ արել եմ Սամարիային և նորա կուռքերին, նոյնպէս չե՞մ անելու նաև Երուսաղէմին և նորա կուռքերին։

12 Եւ կ'լինի որ երբ Տէրը կ'կատարէ իր բոլոր գործքը Սիօն սարի վերայ և Երուսաղէմումը, կ'քննեմ Ասորեստանի թագաւորի հպարտ սրտի պտուղը և նորա սմբատաւան աչքերի փառքը։

13 Որովհետև նա ասում է, իմ ձեռքի ուժովն արի և իմ իմաստութեամբը, որովհետև ես խելօք եմ, և ազգերի սահմանները վերցրի, և նորանց պաշարները յափշտակեցի, և նուաճեցի զօրաւորի պէս նորանց գահակալներին։

14 Եւ իմ ձեռքը հասաւ ազգերի ստացուածքին ինչպէս մի բոյնի, և թողուած ձուաձ ձուեր հաւաքելու պէս ես հաւաքեցի բոլոր երկիրը. և չ'կար մի թև շարժող, կամ բերան բացող և ճիւ հանող։

15 Միթէ կացինը կ'պարծենայ իրանով կարողի դէմ, կամ սղոցը կ'գռռոզանա՞յ իրանով քաշողի դէմ. իբր թէ գաւազանը շարժէր իրան վեր առնողին, իբր թէ ցո՛ւպը բարձրացնում լինէր՝ փայտ չ'լինելով։

16 Նորա համար Տէրը՝ Զօրաց Տէրը նորա պարարանների դէմ նիհարութիւն պիտի ուղարկէ, և նորա փառքի տակին պիտի հրդեհուի հրդեհ՝ ինչպէս բոցավառ հրդեհութիւն։

17 Եւ Իսրայէլի Լոյսը հուր պիտի դառնայ և նորա Սուրբը՝ բոց, և այրէ ու սպառէ նորա փուշն ու ցախը մէկ օրում։

18 Եւ նորա անտառի և նորա բերքերը ագարակի փառքը պիտի փչացնէ՝ հոգին էլ մարմինն էլ. և նա հաշղ մշղոի պէս կ'լինի։

19 Նի՛, եւ նորա անտառի ծառերի մնացորդը սակաւաթիւ կ'լինի, և մի երեխայ կարող էր նորանց գրել։

20 Եւ այն օրը կ'լինի, որ Իսրայէլի մնացորդը և Յակոբի տան ազատուածները այլ ևս պիտի չ'ապաւինեն իրանց ղարկողին, այլ պիտի ապաւինեն Եհովայ՝ Իսրայէլի Սուրբին՝ ճշմարտութեամբ։

21 Մնացորդը պիտի դառնայ, Յակոբի մնացորդը՝ դէպի Հզօր Աստուածն պէտ գ-ռ-ռ-յ։

22 Որովհետև եթէ քո ժողովուրդը, ով Իսրայէլ, ծովի աւազին չափ լինի, նորանցից մէկ մնացորդ է ետ դառնալու. աւերումը որոշուած է, յորդում է արդարութիւն։

23 Որովհետև աւերումը և որոշումը անում է Տէրը՝ Զօրաց Տէրը բոլոր երկրի մէջ։

24 Նո՛ր համար Զօրաց Եհովայ Տէրը այսպէս է ասում. Ով իմ ժողովուրդ, որ բնակվում ես Սիօնումը, Ասորեստանից մի վախենար. նա քեզ ղարկում է գաւազանով, և իր մահակը բարձրացնում է քեզ վերայ եգիպտոսին պէս։

25 Որովհետև շատ փոքրիկ ժամանակ էլ կայ, որ յետոյ ցասումը կ'վերջանայ, և իմ բարկութիւնը կ'լինի նորանց փչացնելու համար։

26 Եւ Զօրաց Տէրը կ'բարձրացնէ նորա վերայ խարազանը Օրէբ վէմի մօտ Մադիամի հարուածին նման. և իր գաւազանը ծովի վերայ է, և նա կ'բարձրացնէ նորան ինչպէս որ եգիպտոսի վերայ։

27 Եւ այն օրը կ'լինի որ նորա բեռը վեր կ'առնուի քո ուսից, և նորա լուծը՝ քո պարանոցի վերայից, և լուծը պիտի կոտրուի ճարպի պատճառով։

28 Գալիս է Անդէն, անցնում է Մագրոնը, Մաքմասումը ուղարկորում է իր կահ կարասիքը։

Անցնում են անցքովը, Գաբայէն՝ 29
Աման սարսափում է, Սաուղի Գաբաան փախչում։ Ձայնիդ բղաւիր, ով 30
Գաղղիմի աղջիկ, ականջ դիր,
Լայիս. խե՛ղճ Անաթովթ. Տա- 31
բրագրուեցաւ Մադմենան, Գեբիմի բնակիչները շտապում են պըճնելու. Այսօր էլ Նոբումը 32
պիտի կենայ և ձեռքը շարժէ Սիօնի աղջկան սարի վերայ Երուսաղէմի բլուրի վերայ։

Ահա Զօրաց Եհովայ Տէրը կ- 33
տորելու է ճիւղերը սոսկալով զօրութեամբ, և հասակով բարձրերը պիտի կրճատուին, և բարձրացածները պիտի ցածանան. Եւ 34
նա պիտի կոբէ անտառի ծմակները կացինով, և Լիբանանը վէմը պիտի ընկնի Հզօրի միջոցով։

Գլ. Ժ.

Եւ ցեսէի բունիցը մի շառաւիղ է դուրս գալու, և մի բնձիւղ է բուսնելու նորա արմատներիցը. 1
Եւ նորա վերայ կ'հանգչէ Տիրոջ հոգին, իմաստութեան 2
և հանճարի հոգին, խորհրդի և զօրութեան հոգին, գիտութեան և Տիրոջ երկիւղի հոգին։ Եւ նո- 3
րա ախորժանքը Տիրոջ երկիւղն է, և նա իր աչքի տեսածին պէս չի դատիլ, և ոչ իր ականջների լսածին պէս կ'յանդիմանէ։ Այլ 4
արդարութեամբ կ'դատէ աղքատներին, և ուղղութեամբ կը յանդիմանէ երկրի խոնարհների մասին. և երկրին կ'զարկէ իր բերանի գաւազանովը, և իր շրթունքների հոգովը կ'մեռցնէ ամբարշտին։ Եւ արդարութիւնը 5
նորա մէջքի գօտին կ'լինի, և ճշմարտութիւնը՝ նորա երանքի գօտին։ Եւ գայլը կ'բնակուէ գա- 6
ռի հետ, և ինձը ուլի հետ կը պառկէ. և արջն ու առիւծը և պարարտ զուարակը մեկտեղ կը լինին, և մի փոքր երեխայ կ'քշէ նորանց։ Եւ կովն ու արջը կ'ա- 7
րածեն, մեկտեղ կ'պառկեն նորանց ձագերը, և առիւծը արջառի պէս յարդ կ'ուտէ։ Եւ կաթ- 8

նակեր տղան իժի ծակի վերայ
կ'խաղայ, և կաթից կտրուածը
ձեռքը քարբի բոյնի վերայ կը
9 դնէ։ Նորանք չեն վնասիլ և չեն
ապականիլ իմ բոլոր սուրբ սա-
րի վերայ. որովհետև երկիրը լիքն
է լինելու Տիրոջ գիտութիւնո-
վը, ինչպէս որ ջուրերը ծածկում
10 են ծովը։ Եւ այն օրը կ'լինի, որ
Յեսսէի արմատը ազգերի համար
դրօշակ կ'կանգնէ, և ազգերը նո-
րան կ'խնդրեն. և նորա հանգիս-
11 տը փառք կ'լինի։ Եւ այն օրը
կ'լինի, որ Տէրը կրկին անգամ
իր ձեռքը կ'մեկնէ, որ իր ժողո-
վրդի մնացորդը առնէ, որ մնա-
ցել է, Ասորեստանիցը, Եգիպտո-
սիցը, Պաթուրեսիցը, Եթովպիա-
յիցը, Եղամիցը, Սենաարիցը, Ե-
12 մաթիցը և ծովի կղզիներիցը։ Եւ
նա դրօշակ կ'բարձրացնէ ազգե-
րի համար, և կ'ժողովէ Իսրայէ-
լի տարագրեալներին, և Յուդա-
յի ցրուեալներին կ'հաւաքէ երկ-
13 րի չորս անկիւններիցը։ Եւ կ'վե-
րանայ Եփրեմի նախանձը, և Յու-
դայի նեղիչները բնաջինջ կ'լի-
նին, Եփրեմը Յուդային չի նա-
խանձիլ, և Յուդան Եփրեմին չի
14 նեղիլ։ Այլ նորանք Փղշտացի-
ների ուսի վերայ դէպի ծովը կը
թռչեն, միասին կ'կողոպտեն
արևելցիներին, Եդոմի ու Մո-
վաբի վերայ կ'երկարացնեն ի-
րանց ձեռքը, և Ամմոնի որդիքը
15 պէտք է հնազանդին նորանց։ Եւ
Տէրը պիտի *կործանէ Եգիպտո-
սի ծովի լեզուն և իր ձեռքը պի-
տի շարժէ Գետի վերայ քամիի
սաստկութեամբը և նորան պիտի
զարկէ եօթը առուների բաժանէ,
և կօշիկով գնալ պիտի տայ։
16 Եւ մի պողոտայ պիտի լինի իր
ժողովրդի մնացորդի համար, որ
կ'մնայ Ասորեստանից, ինչպէս որ
եղաւ Իսրայէլին Եգիպտոսից
դուրս գալիս օրը։

ԳԼ. ԺԲ

1 Եւ այն օրը կ'ասես. Ով Տէր,
ես գովում եմ քեզ. որ ինձ վե-
րայ բարկացար. բարկութիւնդ
ետ դառաւ, և ինձ մխիթարե-
ցիր։ Ահա Աստուած է իմ փրր- 2
կութիւնը. ես յոյս ունիմ և չեմ
վախենալ. որովհետև իմ զօրու-
թիւնն ու գովասանքը Տէր Եհո-
վան է, և նա ինձ փրկութիւն
եղաւ։ Եւ դուք ուրախութեամբ 3
ջուր կ'քաշէք փրկութեան աղ-
բիւրներիցը։ Եւ այն օրը կ'ասէք. 4
Գովեցէք Տիրոջը, կանչեցէք նո-
րա անունը, պատմեցէք ազգերի
մէջ նորա գործերը. յիշեցէք որ
բարձր է նորա անունը։ Օրհներ- 5
գեցէք Տիրոջը, որ մեծամեծ բա-
ներ է արել, սորանք իմացուած
են բոլոր երկրումը։ Աղաղակիր 6
և ցնծացիր, ով Սիօնի բնակչու-
հի, որովհետև մեծ է քո միջու-
մը Իսրայէլի Սուրբը։

ԳԼ. ԺԳ

Բաբիլոնի պատգամը որ տեսաւ 1
Ամովսի որդի Եսայիան։
Դաշտացած սարի վերայ դրօ- 2
շակ տնկեցէք, ձայն բարձրացրէք
դէպի նորանց, ձեռք երերացրէք,
որ իշխանները դան դռները։ Ես 3
եմ իմ սրբեալներին պատուի-
րել, իմ զօրաւորներին էլ կան-
չել եմ իմ բարկութեան հա-
մար՝ իմ վեհափառութիւնովը
խրոխտացողներին։ Բազմութեան 4
ձայն կայ սարերի վերայ մեծ ժո-
ղովրդի նմանութիւնով. ժողով-
ուած ազգերի թագաւորութիւն-
ների աղմուկի ձայնը. Զօրաց Տէ-
րը հանդէս է անում պատերազ-
մի զօրքին, Որ եկել են հեռու 5
երկրից՝ երկնքի ծայրիցը. Տէրը և
նորա բարկութեան գործիքները՝
բոլոր երկիրը աւերելու համար։
Ողբացէք, որովհետև մօտ է Տի- 6
րոջ օրը, իբրև զօրաւոր աւե-
րում գալիս է Ամենազօրաւորի-
ցը։ Նորա համար թուլացել են 7
ամեն ձեռքեր, և ամեն մարդի
սիրտը հալվում է։ Սոսկում են, 8
անձկութիւններ և ցաւեր են
բռնում նորանց, ծննդականի
պէս երկունք են քաշում, ամեն

մարդ ապշած է մնում դէպի
իր ընկերը, բոցավառ երեսներ
են նորանց երեսները։
9 Ահա գալիս է Տիրոջ օրը՝ ան-
գթութիւն, ցասումն և բար-
կութեան բորբոքումն. որ երկիրն
աւերակ անէ, և նորա մեղաւոր-
ներին բնաջինջ անէ նորանից։
10 Որովհետև երկնքի աստղերը և
նորա աստեղատները իրանց լոյ-
սը չեն տալու. արեգակը դուրս
գալիս խաւար է լինելու, և լու-
11 սինը չի ցոլացնելու իր լոյսը։ Եւ
ես պիտի պատժեմ աշխարհքը
չարութեան համար, և ամբա-
րիշտներին՝ իրանց անօրէնու-
թեան համար, և պիտի դադա-
րեցնեմ հպարտների ամբարտա-
ւանութիւնը, և բռնաւորների
գոռոզութիւնը պիտի ցածացնեմ։
12 Ես մարդին մաքուր ոսկիից աւե-
լի պատուական պիտի անեմ և
13 հողեղէնին՝ Ոփիրի գանձիցը։ Սո-
րա համար սարսեցնելու եմ եր-
կինքը, և երկիրը սասանելու է
իր տեղիցը. Զօրաց Տիրոջ բար-
կութիւնովը և նորա բորբոքեալ
14 բարկութեան օրը։ Եւ պիտի լի-
նի ինչպէս մի հալածուած այծ-
եամն, և ինչպէս ոչխարներ, ո-
րոնք հաւաքող չ'ունին, ամեն
մարդ իր ժողովրդին է դառնա-
լու, ամեն մարդ փախչելու է իր
15 երկիրը։ Ամեն ով որ գտնուի՝
պիտի խոցուի, և ամեն ով որ
16 բռնուի՝ սրով պիտի ընկնի։ Եւ
նորանց մանուկները պիտի ջար-
դուին իրանց աչքի առաջին,
նորանց տները պիտի կողոպ-
տուին և նորանց կանայքը պիտի
17 պղծուին։ Ահա ես վեր կ'կացը-
նեմ նորանց վերայ Մարաց ազգը,
որոնք արծաթը մի բան չեն հա-
մարում, և ոսկիին չեն հաւա-
18 նում։ Եւ աղեղները երիտասարդ-
ներին են խոցում, և որովայնի
պտուղին չեն ողորմում, և երե-
խաներին չէ խնայում նորանց
19 աչքը։ Եւ Բաբիլոնը՝ թագաւո-
րութիւնների զարդը, Քաղդէա-
ցիների փառաւորութեան պար-
ծանքը պիտի դառնայ Աստու-
ծոյ Սոդոմին և Գոմորին կործա-
նելուն պէս։ Նա երբէք չէ շէնա- 20
նալու, և չէ բնակուելու ազգէ
ազգ. և Արաբացին այնտեղ պի-
տի չ'կանգնեցնէ վրանը, և հո-
վիւներն այնտեղ պիտի չ'նստե-
ցնեն իրանց խաչինքը. Այլ այնտեղ 21
վայրի գազաններն են մակաղ
տալու. և բուերն են լցնելու նո-
րանց տները, և այնտեղ ջայլամ-
ներն են բնակուելու, և յուշկա-
պարիկներն են այնտեղ պար գա-
լու։ Եւ չագալներն են ոռնալու 22
նորա պալատներումը, և վայրի
շները նորա զբօսանքի տներումը,
և մօտ է, որ գայ նորա ժամա-
նակը, և նորա օրերը չեն ուշա-
նալու։

ԳԼ. ԺԴ

Որովհետև Տէրը ողորմելու է 1
Յակոբին, և միւսանգամ ընտ-
րելու է Իսրայէլին, և նորանց
հանգստացնելու է իրանց երկրի
վերայ, և օտարազգիք պիտի յա-
րեն նորանց և միանան Յակոբի
տան հետ։ Եւ ժողովուրդներն 2
առնելու են նորանց և տանելու
են իրանց տեղը. և Իսրայէլի տու-
նը պիտի ժառանգէ նորանց Տի-
րոջ հողի վերայ. իբրև ծառա-
ներ և աղախիններ, և նորանք
գերի պիտի անեն իրանց գերե-
վարներին, և տիրեն իրանց վե-
րայ բռնացողներին։
Եւ լինելու է, որ երբ Տէրը 3
քեզ կ'հանգստացնէ քո աշխա-
տութիւնիցը, քո տանջանքիցը,
և այն ծանր ծառայութիւնիցը,
որով դու ծառայ էիր եղած,
Այն ժամանակ այս առակը խօ- 4
սես Բաբիլոնի թագաւորի մա-
սին և ասես. Ինչպէս է դադա-
րել բռնաւորը, դադարե՛ց տան-
ջարանը։ Տէրը կստրել է ամբա- 5
րիշտների գաւազանը, իշխանա-
ւորների մահակը. Որ սրտմտու- 6
թեամբ զարկում էր ազգերին
անդադար հարուածներով, որ
բռնանում էր բարկութեամբ
ժողովուրդների վերայ անզուսպ
հալածանքով։ Հանգստացել հան- 7
դարտել է բոլոր երկիրը. նորանք

*Կամ՝ չորացնէ

8 գոչում են ցնծութեամբ։ Մայրերն էլ են ուրախանում քեզ
համար Ե Լիբանանի եղևիններն էլ. քանի որ դու պառկել ես՝
փայտ կտրողը վեր չէ եկել մեզ
9 վերայ։ Դժոխքը տակիցը դղրդաց քեզ համար քո գալուստը
դիմաւորելու. նա քեզնից քեզ համար ուրուականներին՝ երկրի
բոլոր իշխաններին, վեր կանգնեցրեց իրանց աթոռներիցը ազգե-
10 րի բոլոր թագաւորներին՝ ամենքը քեզ պատասխանում են և ասում. Դո՞ւ էլ
11 տկարացար մեզ նման, մեզ նման եղա՞ր։ Դժոխքն իջաւ քո փառքը՝ քո տաւիղների հընչմունքները. տակիդ տարածուած են ճճիներ, և քո ծածկոցը որ-
12 դերն են։ Ինչպես վայր ընկար երկնքից, ով առաւօտը ծագող Աբեւսեակ. կտրուեցա՛ր գետինն
13 ընդ։, ով ազգեր նկուն առնդ։ Բայց ինքդ ասել էիր քո սրտումդ. Վեր կ'ելնեմ երկինքը, Աստուծոյ աստղերից բարձր կ'դնեմ իմ աթոռը, կ'նստեմ
14 բայ հիւսիսի ծայրերումը։ Վեր կ'ելնեմ ամպերի բարձրութիւնների վերայ, բարձրելոյն կ'նմանուեմ։ Բայց դու դժոխքն ես ի-
15 16 ջել, դուրսի խորխորատները։ Քեզ տեսնողները հիանալու են քեզ վերայ և դնդղելու. Ա՞յն մարդը սա՞ է, որ սարսեցնում էր երկիրը, դողացնում էր թագաւորու-
17 թիւնները. Աշխարհքս անապատ էր դարձնում, և նրա քաղաքները աւերա՞կ էր անում. Ե՞ նրա գերիներին չէր արձակում
18 տուն ։։։

40 այդեկութի աղաղակը, եւ ուրախութիւնն ու ցնծութիւնը պիտի վերանայ պարարտ արտերէն, և այդիներուն մէջ երգել ցընծալ չէ լինելու, հնձանի մէջ գինի կոխողը չէ կոխելու. ազա-
41 զակը դադրեցրի։ Դուրս համալ իմ ազիքը քնարի պէս հընչեալ է Մոաբայ մասին, և ներսս՝
42 կիր-Հարեսեթի համար։ Եւ ան-պատճառ պիտի երևայ, թէ Մոաբը յոգնած է բարձրաւանդակի վերայ, և մտնալ է իր սրբարանը աղօթելու. բայց չէ յաջողեալու։
43 Սա այն խօսքն է, որ Տէրը վաղուց խօսել է Մոաբի վերայ։
44 Բայց հիմա Տէրը խօսած է և ասած։ Երեք տարիէ, ինչպէս որ վարձկանի տարիներն են, Մոաբի փառքը պիտի անարգուի, այն բոլոր մեծ բազմութիւնովը, և փոքր մնացորդը պզտիկ չնչին պիտի լինի։

ԳԼ. ԺԶ

4 Դամասկոսի պատգամը։

Ահա Դամասկոսը դադրած է քաղաք լինելուց, և պիտի
2 դառնայ փլատակների շեղջ։ Թողուած են Արոերի քաղաքները. նորանք հօտերին են դառնալու, որ նորանք մակաղ-
3 ատն և վախեցնող չ'լինի։ Եւ նա վեր է առնուած Եփրեմից պարիսպը, և թագաւորութիւնը՝ Դամասկոսից և Ասորիների մնացորդից։ Իսրայէլի որդկանց փառքի պէս պիտի լինեն, ասում է
4 Զօրաց Տէրը։ Եւ այն օրը կ'լինի, որ պիտի պակասէ Յակոբի փառքը, և նրա մարմնի պարարտու-
5 թիւնը պիտի նիհարանայ։ Եւ կը լինի ինչպէս որ հնձողը ցորենը հնձում է, և նորա բազուկը հընձում է հասկերը. և հասկեր ժողովելու պէս է լինելու Ռա-
6 փայնոց հովիտումը։ Բայց նորա վերայ ճիւռեր պիտի մնան, ինչպէս որ ձիթենին թափում են, ոչ երկու երեք հատ լինում է ճիւղի ծայրին, մի չորս ու հինգը՝ պտղաբեր ասած վերայ, ասում է Իսրայէլի Եհովայ Աստուածը։

7 Այն օրը մարդս մտիկ պիտի անայ իր Արարչին, և աչքերը պիտի տեսնեն Իսրայէլի Սուրբին։
8 Եւ նա չի նայիլ իր ձեռքի գործ սեղաններին. և չի տեսնիլ այն որ իր մատերը չինել են Աստարովթի կուռքերը և արեգակի կուռքերը։
9 Այն օրը նորա սմբոր քաղաքներն անտառների և լեռնագագաթների ուերակներ պիտի լինեն, որ Թողեցին Իսրայէլի որդկանց առաջին և անապատ է դառնալու։ Որովհետև դու մոռացել ես քո փրկութեան Աստուածն. և քո զօրութեան վէմին չես յիշել. նորա համար հաճելի տունկեր էիր տնկում, և օտար որթի ճիւղեր էիր տնկում։
11 Տնկած օրդ նոյն ցանկապատեցիր, և առաւօտանց բուսցրիր քո ցանածը. *դա մի հունձքի դէզ է վերքի օրում, և սաստիկ ցաւ։
12 Վա՛յ շատ ժողովուրդների բազմութեանը, որ գոռում են ծովերի գոռալու պէս, և ժողովուրդների աղմուկին, որ աղմուկ են հանում սաստիկ ջրերի աղմուկի պէս։
13 Ազգերը շատ ջրերի աղմուկի պէս աղմուկ են հանում, բայց նա նորան յանդիմանելու է, որ նա էլ հեռու փախչէ, և հալածուի սարերի մղեղին պէս քամիի առաջից, և ինչպէս փոշին մրրկի առաջից։
14 Իրիկնալոյ ժամանակին, ահա խռովութիւն, և առաւօտից առաջ, չիք են դառնալ։ Սա է մեզ կողոպտողների բաժինը, և մեզ յափշտակողների վիճակը։

ԳԼ. ԺԷ

1 Ով թևաւոր շառաչողների երկիր, որ Եթովպիայի գետերի
2 այն կողմին է. Որ դեսպաններ է ուղարկում ծովով պրոտեղէն նաւակներում ջրի երեսին, Գնացէք, ով արագընթաց դեսպաններ, այն ազգի մօտ, որ երկայնահասակ և կոկուած է. ակզբից մինչև հիմա ահեղ ժողովրդի մօտ, մի ազգ որ տալիս է հրաման ու հրաման և առնակոխում, որի երկիրը գետերը բաժին են անում։ Ով աշխարհի բոլոր բնակիչներդ, երկրի բնակողներդ, երբոր դրօշակը բարձրանայ սարերի վերայ, նայեցէք, և երբոր փողը հնչուի, լսեցէք։
4 Կանչ դրեց Որովհետև Տէրն ինձ այսպէս է ասել. Ես հանգիստ եմ լինելու և նայելու եմ իմ բնակարանում, ինչպէս պայծառ տաքութիւնը արևի ժամանակին, և ցօղաքար ամպը՝ հունձքի
5 տաքում։ Որովհետև հունձքից առաջ՝ բնձիւղը մեծանալիս, և ածելով ազուի կ'դառնայ խաղտի ծաղիկը. այն ժամանակ ճիւղերը կտրելու է յօտացով, և ուռերը հեռացնելու և կտրատելու է։
6 Նորանք մեկտեղ պիտի թողուին սարերի գիշատիչ թռչուններին և երկրի գազաններին. և գիշատիչ թռչուններն ամառը նորանց վերայ կ'անցնեն, և երկրի բոլոր գազանները նորա վերայ կ'ձմեռեն։ Այն ժամանակ բնծայ է
7 բերուելու Զօրաց Տիրոջը երկայնահասակ և կոկուած ազգիցը, և սկզբից մինչև հիմա ահեղ ժողովրդիցը, հրաման ու հրաման տալիս ու առնակոխ ազգիցը, որի երկիրը բաժին են անում գետերը՝ Զօրաց Տիրոջ անուան տեղը՝ Սիոնի սարը։

ԳԼ. ԺԸ

1 Եգիպտոսի պատգամը։

Ահա Տէրը հեծել է թեթև ամպի վերայ, և գալիս է Եգիպտոս. և Եգիպտոսի կուռքերը սարսում են նորա երեսից, և Եգիպտոսի սիրտը հալում է իր մի-
2 ջումը։ Եւ ես պիտի Եգիպտոսը գրգռեմ՝ Եգիպտոսի դէմ, և պիտի պատերազմեն ամեն մարդ իր եղբօր հետ, և ամեն մարդ իր ընկերի հետ, քաղաք քաղաքի հետ, և թագաւորութիւն թագաւորութեան հետ։
3 Եւ պիտի նուաղէ Եգիպտոսի սիրտը իր միջումը, և ես նորա խորհուրդը պիտի խորտակեմ, և նորանք խընդրելու են կուռքերին և կախարդներին, և վհուկներին և նշանագէտներին։
4 Եւ ես պիտի մատնեմ Եգիպտոսը մի խիստ սիրտ ձեռքի, և մի բռնաւոր թագաւոր պիտի իշխէ նորանց վերայ. ասում է Հօրաց Եհովայ Տէրը։
5 Եւ ջրերը պիտի քաշուին ծովիցը, և գետը պիտի չորանայ և ցամաքէ։
6 Եւ պիտի հոտին գետերը, և պիտի բարակին և չորանան *Մասորի վտակները, եղէգն ու պըրտուն պիտի թառամեն։
7 Եղեգնի մօտ և եղեգնի եղերքի մօտ եղող մարգագետինները, և եղեգնի բոլոր վարուցանը պիտի չբանայ, փուլ գայ և չքանայ։
8 Եւ ձկնորսները պիտի հեծծան, և ողբան եղեգնի մէջ կարթ ձգողների բոլորը. և ջրի երեսի վերայ ուռկան փռողները պիտի սրթրթին։
9 Եւ պիտի ամաչեն բարակ քթան գործողները, և բամպակի կատուեղէն հինողները։
10 Բոլոր սիւները պիտի կոտրատուած լինեն, և բոլոր վարձքով գործողների սիրտը կատած պիտի լինի։
11 Անշուշտ յիմարներ են Տոյանեայ իշխանները. փարաւոնի խորհրդատու իմաստուններուն խորհուրդը յիմարական է. դուք ինչպէս էք ասում փարաւոնին. Ես իմաստունների որդի եմ, վաղեմի թագաւորների որդի։
12 Չիմա ո՞ւր են քո իմաստունները որ քեզ պատմեն, և իմացնեն, թէ ինչ է վճռել Զօրաց Տէրը Եգիպտոսի վերայ։
13 Տոյանեայ իշխանները յիմարացել են, Մեմփիսի իշխանները խաբուած են, և Եգիպտոսին մոլորեցրել են նորա ցեղերի դլխաւորները։
14 Տէրը նորա մէջ խառնեց մոլորութեան հոգի, և նորանք մոլորեցրել են Եգիպտոսին նորա բոլոր գործերումը, ինչպէս որ արբածն է մտ-

*Ա՛յ-ւե՛ն՝ Եգիպտոսի

15 լորեամ փախելիս ։ եգիպտասուրը
գօրձք պիտի չլինի , որ գործէ
գլուխը և ագին, արմաւենիի ոս-
16 ը և կնիւնը ։ Այն օրը եգիպ-
տասը կնիկների պէս է լինելու ,
և պիտի դողայ և զարհուրի Զօ-
բաց Տիրոջ ձեռքի շարժելուց ,
17 որ նա շարժելու է նորա վերայ։
Եւ Յուդայի երկիրը եգիպտասի
համար արհաւիրք է դառնալու,
ամեն ով որ նորան յիշէ, պիտի
վախենայ, Զօբաց Տիրոջ խորհըր-
դի պատճառով, որ նա նո-
18 րա վերայ որոշել է ։ Այն օրը
հինգ քաղաք է լինելու եգիպտա-
ցի երկրումը գանանի լեզուն խո-
սող և Զօբաց Տիրոջ անունով
երդուող . մէկին Աերգակի քա-
19 ղաք են ասելու։ Այն օրը Տի-
րոջ համար մի սեղան է լինելու
եգիպտասի երկրի մէջ . և նորա
սահմանի կշտին մի կոթող Տի-
20 րոջ համար։ Եւ նա նշան ու վը-
կայութիւն է լինելու Զօբաց Տի-
րոջ համար եգիպտասի երկրում-
ը. որովհետև նորանք դէպի Տէրն
են աղաղակելու բռնաւորների
երեսից , և նա մի փրկիչ և մի
մեծ է ուղարկելու նորանց մէա
21 և նորանց փրկելու է ։ Եւ Տէրը
ճանաչուած պիտի լինի եգիպ-
տասումը, և եգիպտացիք այն օ-
րը պիտի ճանաչեն Տիրոջը և զո-
հեր ու պատարագներ պիտի մա-
տուցանեն, և ուխտ պիտի ուխ-
22 տեն Տիրոջը և կատարեն։ Եւ Տէ-
րը պիտի հարուածէ եգիպտա-
ցիներին, պիտի հարուածէ և պի-
տի բժշկէ, և նորանք պիտի դար-
նան Տիրոջը մօտ , և նորանք պի-
տի ընդունուին, և նա պիտի բը-
23 ժշկէ նորանց։ Այն օրը մի պա-
տուոյ է լինելու եգիպտասից դէ-
պի Ասորեստան , և Ասորեստան-
ցիք գալու են եգիպտաս , և ե-
գիպտացիք Ասորեստան , և ե-
գիպտացիք Ասորեստանցիների
24 հետ ծառայելու են Տէրո՛ջ։ Այն
օրը Իսրայէլը երրորդը պիտի լի-
նի եգիպտասի և Ասորեստանի
մէջ , և օրհնութիւն կ՚լինի երկ-
25 րի մէջ, Որին օրհնելու է Զօբաց
Տէրը ասելով. Օրհնեալ լինի իմ
ժողովուրդը՝ եգիպտաս . և իմ
ձեռքի գործը՝ Ասորեստան , և
իմ բաժինը՝ Իսրայէլ։

Գլ. Ի

Այն տարին, որ Տարթանը Սար-
գոնի թագաւորից ուղարկուելով
եկաւ Ազովտոս , և Ազովտոսի
հետ պատերազմեց ու նորան
2 յաղթեց, Այն ժամանակ Տէրը խօ-
սեց Ամովսի որդի Եսայիայի ձե-
ռաւոլ ասելով. Գնա հանիր քուրձը
քո մէջքիցը , և կօշիկներդ
հանիր քո ոտներիցը. և նա այն-
պէս արաւ, և շրջուեմ էր մերկ
3 և բոկոտն։ Եւ Տէրն ասեց. Ինչ-
պէս որ իմ ծառայ Եսայիան շըր-
ջեցաւ մերկ և բոկոտն, որ երեք
տարուայ նշան և ցոյց լինի Ե-
գիպտասի և Եթովպիայի համար,
4 Այնպէս էլ Ասորեստանի թա-
գաւորը գերի է քշելու Եգիպտա-
սին և Եթովպիայի գերեվարներին
երիտասարդներին և ծերերին՝
մերկ և բոկոտն և ծածկերիք-
քը բաց Եգիպտասի նախատինքի
5 համար։ Եւ պիտի զարհուրեն և
ամաչեն Եթովպիայից իրանց յոյ-
սիցը, և Եգիպտասից իրանց փառ-
6 քիցը։ Եւ այն օրը այս ծովեզեր-
եայ երկրի բնակիչը ասելու է .
Ահա սա է մեր ապաստանարա-
նը, ուր որ փախել էինք օգնու-
թեան համար , որ փրկուէինք
Ասորեստանի թագաւորի երեսից.
ուրեմն մենք ինչպէս ենք ազատ-
ուելու։

Գլ. ԻԱ.

Ծովի անապատի պատգամ։

Հարաւից յարձակուող մրրիկ-
ների պէս անապատից է գալիս՝
սոսկալի երկրիցը։ Մի խիստ տե-
սիլք է ինձ յայտնուել. յափշտա-
կողը յափշտակում և կործանո-
ղը կործանում է ։ Վեր կաց , ե-
ղամ. պաշարիր, ով Մարաց ազգ,
նորա բոլոր հառաչանքը դադա-
րեցրել եմ։ Սորա համար երանքս
լիքն են ցաւերով , ծննդականի
ցաւերի պէս ցաւեր են բռնել
ինձ. գալարվում եմ, չեմ լսում.
վրդովուած եմ, չեմ տեսնում;
4 Սիրտս չփոթուել է, արհաւիրքն
ինձ զարհուրեցրել է , նա իմ
ցանկալի գիշերն ինձ համար սըր-
տատրոփ դարձրեց,
5 Սեղանը գցում են, դէսը դի-
տում է . ուտե՛լ , խմե՛լ ։ վեր
կացէք , ով իշխաններ , օծեցէք
6 վահանները։ Որովհետև Տէրն ինձ
այսպէս է ասել. Գնա դէսին
կանգնեցրու, որ տեսածը յայտա-
7 նէ ։ Եւ նա ձիաւորներ տեսաւ՝
զոյգ հեծեալներ, էշի վերայ հեծ-
եալներ, ուղտի վերայ հեծեալ-
ներ , և մեծ ուշադրութեամբ
8 ուշագրութիւն արաւ։ Եւ առ-
իածօրէն աղաղակեց . Ով Տէր ,
ես միշտ ցերեկը կանգնած եմ
դիտաշտի վերայ, և իմ պահ-
պանութեան տեղը ես բոլոր գի-
9 շերը կանգնած եմ, Եւ ահա գա-
լիս են ձիաւորներ , զոյգ հեծ-
եալներ. և պատասխանեց ու ա-
սեց. Ընկաւ, ընկաւ Բաբիլոնը ,
և նորա աստուածների բոլոր ար-
ձանները փշրեց դետնովը ասելով։
10 Ով իմ կատաւածներս, և իմ կա-
լած պատուղ, ինչ որ լսել եմ Զօ-
բաց Տէր՝ Իսրայէլի Աստուածա-
նից, այն իմացրել եմ ձեզ ։
11 *Եդոմի պատգամը։

Դէպի ինձ ձայն է գալիս Սէե-
րից. պահապան, ինչ կայ գիշե-
րիցը. պահապան , ինչ կայ գի-
12 շերիցը։ Պահապանն ասում է. Ա-
ռաւօտը եկած էլ լինի, էլի գի-
շեր է. եթէ հարցնում էք՝ հար-
ցրէք, եւս դարձէք, եկէք։
13 Արաբիայի պատգամը։

Արաբիայի անտառումը պիտի
օթևանէք, ով Դեդանականց կա-
14 րաւաններ ։ Ծարաւին դիմաւո-
րելու գնացէք ջրով, ով Թեմա-
յի երկրի բնակիչներ . նորա հա-
ցովը փախստականի առաջը ե-
15 կէք , Որովհետև նորանք փախ-
չում են սուրերի երեսից, քա-
շած սուրի առաջից , և լարած
աղեղի առաջից , և պատերազմի
16 սաստկութեան առաջից ։ Որով-

*Եբր. Դումայի այսինքն լռութեան

հետև Տէրն ինձ այսպէս է ասել.
Դեռ մէկ տարի էլ կայ՝ վարձ-
կանի տարի, որ պիտի վերջանայ
17 կեդարի բոլոր փառքը ։ Եւ կե-
դարի որդիանց զօրաւոր աղեղ-
նաւորաց մնացորդների թիւը քիչ
է լինելու . որովհետև Իսրայէլի
Աստուած Եհովան է խօսել։

Գլ. ԻԲ

Տեսիլքի ձորի պատգամը։

Չիմա քեզ ինչ եղաւ, որ ա-
մենքդ վեր էք գնացել կտուբ-
ները . Ով խռովութեամբ լըց-
ուած , աղմկալից քաղաք , զբօ-
սատեր քաղաք. քո սպանուած-
ները սուրի սպանած չեն և ոչ
պատերազմի մեռելներ. Բոլոր իշ-
խանները փախան, առանց
աղեղի կապուեցան, բոլոր քեզ
մօտ գտնուողները միասին կապ-
ուեցան, որ հեռու էին փախել ։
Նորա համար ասում եմ . Ուշ
դարձրէք ինձանից , դառնապէս
լաց եմ լինելու. մի բռնադատէք
ինձ մխիթարելու իմ ժողովրդի
աղջկայ աւերակի համար, Որով-
հետև խռովութեան , ոտնահա-
րութեան և շփոթութեան օր է
տեսիլքի ձորումը Զօբաց Եհովայ
Տիրոջ համար . պարիսպը քան-
դում են. և դիրքացը հառնո՞ւմ է
սարը : Եւ Եղամը կրում է կա-
պարճը, կառքի հետ մարդկանց
և ձիաւորներին . և Կիրը բաց է
անում վահանը : Եւ քո բնաիր
հովիտները կառքերով լիքն են
լինելու, և ձիաւորները շարքով
շարուելու են դէպի դուռները։ Եւ
նա կ՚բանայ Յուդայի ծածկոցը,
և դու կ՚նայես այն օր անտառի
տան զէնքերին. Եւ կ՚տեսնէք Դա-
ւիթի քաղաքի ճեղքերը, որ շատ
կ՚լինեն, և կ՚ժողովէք ցածի ա-
ւազանի ջրերը։ Եւ կ՚համարէք
երուսաղէմի տները, և տները կը
քանդէք պարիսպը պինդացնելու
համար . Եւ մի ջրակոյս կ՚շինէք
երկու պարսպի մէջտեղ հին ա-
ւազանի ջրերի համար. բայց չէք
նայում այս բանն անողին, և այս
բանը վաղուց չենողին չէք տես-

12 նում։ Եւ Զօրաց Եհովայ Տէրը
կանչեց այն օրը լաց լինելու և
սգալու համար, գլուխ կնտացը-
նելու և քուրձ հագնելու հա-
13 մար։ Եւ ահա ցնծութիւն և ու-
րախութիւն, արջառներ սպա-
նել և ոչխարներ մորթել, միս
ուտել և գինի խմել, ասելով
ուտենք և խմենք, որովհետև է-
14 գուց մեռնելու ենք։ Բայց Զօ-
րաց Տէրը յայտնել է իմ ականջ-
ներին, անշուշտ պիտի չ'քաւուի
ձեր այս անօրէնութիւնը մինչև
որ մեռնիք, ասում է Զօրաց Ե-
հովայ Տէրը։
15 Այսպէս է ասում Զօրաց Ե-
հովայ Տէրը. Գնա մտիր այդ պա-
լատական Սեբնայի մօտ, որ պա-
լատի վերակացու է, և ասէր.
16 Ինչ ունիս այստեղ, և ո՞վ ու-
նիս այստեղ, որ այստեղ քեզ
համար դերեզման ես փորել. փո-
րել է բարձրումն իր դերեզմանը,
քանդել է վէմի մէջ իրան հա-
17 մար բնակարանը։ Ահա Տէրը քեզ
թաւալեցնելու է՝ ուժով մարդի
թաւալեցնելու պէս, և քեզ բո-
18 լորովին ծածկելու է։ Քեզ կծի-
կի պէս կծկելու կծիկ է շինե-
լու՝ գնտակի պէս շարժելու է
լայնարձակ երկրի վերայ. դու
այնտեղ պիտի մեռնես, և այն-
տեղ լինելու են քո փառաց կառ-
քերը, դու, ով քո տիրոջ տան
19 անարգանքը։ Եւ ես քեզ մեր-
ժեցի քո պաշտօնիցը. և նա պի-
տի քեզ խորտակէ քո կանգնած
20 տեղիցը։ Եւ այն օրը կ'լինի, որ
կ'կանչեմ իմ ծառային՝ Քեզ-
21 կիայի որդի Եղիակիմին։ Եւ նո-
րան կ'հագցնեմ քո պատմուճա-
նը, և քո գօտին նորան կ'կա-
պեմ, և քո իշխանութիւնը կը
տամ նորա ձեռքը և նա հայր կը
դառնայ Երուսաղէմի բնակիչնե-
22 րի և Յուդայի տան համար։ Եւ
Դաւիթի տան բանալին կ'դնեմ
նորա ուսին, որ նա բանայ, և ոչ
ով չ'գոցէ. և գոցէ, ու ոչ ով
23 չ'բանայ։ Եւ նորան կ'պնդացը-
նեմ բևեռի պէս մի հաստատ
տեղ, և նա փառաց աթոռի
պէս կ'լինի իր հօր տան համար։

Եւ նորանից կ'կախուին իր հօր 24
տան բոլոր փառաւոր բաները,
ոստերը և շառաւիղները, բոլոր
նուաստ անօթները՝ սկաւառակ-
ների տեսակ անօթներից սկսած
մինչև ամեն տեսակ սափորները։
Այն օրը, ասում է Զօրաց Տէրը, 25
պիտի շարժուի այն հաստատ
տեղում պնդացրուած բևեռը, և
կոտրուի ու վայր ընկնի, և այն բե-
ռը պիտի կոտրատուի որ նորա վե-
րայ էր. որովհետև Տէրն է խօսել։

ԳԼ. ԻԳ

Տիւրոսի պատգամը։ 1
Ողբացէք, ով Թարսիսի նաւեր,
որովհետև աւերակ է դառել՝ ոչ
տուն կայ ոչ մուտք. Կիտացի-
ների երկրիցը յայտնուեցաւ նո-
րանց։ Լռեցէք, ով ծովեզրեայ 2
բնակիչներ, Սիդոնի ծովագնաց
վաճառականները քեզ լցրել էին։
Շատ ջրերի միջի Սիովրի սերմը՝ 3
Նեղոսի հունձքը նորա եկամուտն
էր. և նա եղել էր ազգերի վաճա-
ռանոցը։ Ամօ՞թ քեզ, ով Սիդոն, 4
որովհետև ծովը խօսում է, ծովի
զօրութիւնն ասում է, ես ծննդա-
կանի ցաւ չեմ քաշել և չեմ ծնել,
և երիտասարդներ չեմ մեծացրել
և կոյսեր չեմ բարձրացրել։ Եր- 5
բոր լուրը Եգիպտոս հասնէ, պի-
տի ոլորուին Տիւրոսի լուրի հա-
մար։ Անց կացէք Թարսիս, ող- 6
բացէք, ով ծովեզրեայ բնակիչ-
ներ։ Սա՞ է ձեր զուարճացեալ 7
փաղաքը, որի հնութիւնը հին ժա-
մանակից է. նորա ոտները պիտի
քշեն նորան հեռու տեղ պան-
դուխտ լինելու։ Ո՞վ արաւ այս 8
խորհուրդը Տիւրոսի մասին, որ
պսակներ էր բաժանում, որի վա-
ճառականներն իշխաններ էին, ո-
րի առուտուր անողները՝ երկրի
պատուաւորները։ Զօրաց Տէրն է 9
արել այս խորհուրդը, որ խայ-
տառակէ ամեն զարդի բարձրու-
թիւնը, որ անարգէ երկրի բոլոր
պատուաւորներին։
Հեղեղիր քո երկիրը Նեղոսի 10
պէս, ով Թարսիսի աղջիկ, այլ

11 ևս *արգելք չ'կայ։ Նա իր ձեռ-
քը մեկնել է ծովի վերայ, սար-
սեցրել է տէրութիւններին. Ե-
հովան պատուիրել է Քանանա-
ցիների մասին, որ նորա բերդերը
12 քանդեն։ Եւ ասում է. Դու այլ
ևս պիտի չ'ուրախանաս, ով դու
Սիդոնի պղծուած կուսական աղ-
ջիկ. դէպի Կիտիմ, վեր կաց,
անցիր, բայց այնտեղ էլ պիտի
13 հանգիստ չ'լինես։ Ահա Քաղ-
դէացիների երկիրը, այս ազգը,
որ չէր եղած, Ասորեստանը հիմ-
նեց դորան անապատում բնա-
կողների համար. նորանք կանգ-
նեցրին նորա աշտարակները, քան-
դեցին նորա պալատները, նորան
14 աւերակ արին։ Ողբացէք, ով
Թարսիսի նաւեր, որ ձեր ամրու-
թիւնը քարուքանդ եղաւ։
15 Եւ այն օրը կ'լինի որ Տիւրոսը
կ'մոռացուի եօթանասուն տարի,
մէկ թագաւորի օրերի չափ. եօ-
թանասուն տարուց յետոյ կ'լի-
նի Տիւրոսին՝ այն պոռնկի երգին
16 համեմատ. Առ քնարը, շրջիր
քաղաքը, ով մոռացուած պոռ-
նիկ. լաւ ածիր, շատ երգ երգիր,
17 որ քեզ յիշեն։ Եւ եօթանասուն
տարուց յետոյ կ'լինի, որ Տէրը
այցելութիւն կ'անէ Տիւրոսին,
և նա ետ կ'դառնայ դէպի պոռ-
նիկական վարձքը և կ'պոռնի-
կանայ աշխարհի երեսին եղող
բոլոր երկրի թագաւորութիւն-
18 ների հետ։ Եւ նորա աշխատանքն
ու վարձանքը պիտի նուիրուի Տի-
րոջը. նա չ'պիտի դանձարանը
մտնէ, և չ'պիտի շտեմարանումը
պահուի, այլ Տիրոջ առաջին
բնակողներինը պիտի լինի նորա
աշխատանքը. որ ուտեն կշտանան,
և պատուական զգեստներ հագ-
նեն։

ԳԼ. ԻԴ

1 Ահա Տէրը դարտակելու է եր-
կիրը և նորան քարուքանդ է ա-
նելու, և փոխելու է նորա կեր-
պարանքը և ցրուելու է նորա

*Կամ՝ գօտի

բնակիչներին։ Եւ կ'լինի, ինչպէս 2
որ ժողովրդին նոյնպէս էլ քա-
հանային, ինչպէս ծառային այն-
պէս էլ նորա Տիրոջը, ինչպէս ա-
ղախնին այնպէս էլ նորա տիկ-
նոջը, ինչպէս ծախու առնողին
այնպէս էլ ծախողին, ինչպէս փոխ
տուողին, այնպէս էլ փոխ առ-
նողին, ինչպէս պարտատիրոջն այն-
պէս էլ պարտականին։ Երկիրը 3
դարտակուելու դատարկ է լի-
նելու, և կողոպտուելով կողո-
պուտ է դառնալու, որովհետև
Տէրն է խօսել այս խօսքը։ Տխրե- 4
լու տրտմելու է երկիրը, նուա-
ղելու ու տրտմելու է աշխարհը,
նուաղելու են երկրի ժողովուրդ-
ների մեծամեծները։ Եւ երկիրը 5
պղծուած է լինելու իր բնակիչ-
ների տակին, որովհետև օրէնք-
ները զանց են արել, պատուի-
րանքը՝ փոխել, յաւիտենական
ուխտը՝ խափանել։ Դորա համար 6
անէծքը թափել է երկիրը, և
բնակիչները նորանով պատիժ
կրեցին. այս պատճառով երկրի
բնակիչներն այրուեցան, և քիչ
մարդիկ մնացին։ Նոր գինին սուգ 7
է անում, նուաղում է որթը,
հառաչում են բոլոր ուրախա-
սիրտները։ Դադարել է թմբուկ- 8
ների զուարճութիւնը. կտրել է
ուրախացողների աղաղակը. դա-
դարել է քնարի զուարճութիւ-
նը։ Գինին երգով չեն խմելու, 9
դառնանալու է ցքին իր խմողնե-
րի համար։ Ջարդուել է դատարկ 10
քաղաքը, կղպուել է ամեն տուն՝
մտնել չ'կայ։ Լաց կայ գինիի հա- 11
մար փողոցներումը, մթնել է ա-
մեն ուրախութիւն, վերացել է
երկրի ցնծութիւնը։ Ամայութիւն 12
է մնացել քաղաքումը, և փշ-
րուել աւերակ է դառել։ Որով- 13
հետև այսպէս պիտի լինի երկրի
մէջ՝ ժողովուրդների միջումը,
այսինքն ինչպէս թափած ձիթե-
նի, ինչպէս ճռաքաղ այգեկու-
թը վերջանալուց յետոյ։ Եւ նո- 14
րանք կ'բարձրացնեն իրանց ձայ-
նը, կ'ցնծան. Տիրոջ փառաւո-
րութեամբը կ'աղաղակեն ծովի
կողմիցը։ Սորա համար արևել- 15

քումը փառաւորեցէք Տիրոջը,
ծովի կղզիներումը՝ Իսրայէլի Տէր
46 Աստուծոյ անունը։ Երկրի ծայ-
րիցը երգեր լսեցինք, Փա՛ռք Ար-
դարին։ Բայց ես ասեցի. Մաշ-
ուած եմ, վա՛յ ինձ. յափշտա-
կողները յափշտակում են, յա-
փշտակողները յափշտակելով
47 յափշտակում են. Վախ ու վիհ
ու վարմ կայ քեզ համար, ով
48 երկրի բնակիչ։ Եւ ով որ փախ-
չելու լինի վախի ձայնիցը՝ վիհն
է ընկնելու, և վիհի միջիցը դուրս
եկողը՝ վարմի մէջ է բռնուելու.
որովհետև վերևից բաց են պա-
տուհանները, և երկրի հիմունքը
49 պիտի սարսեն։ Ճեղքվում ճեղ-
քոտվում է երկիրը, պատառ-
վում պատառ պատառ է լի-
նում երկիրը, դողում է, դող-
20 դողում է երկիրը. Երերվում
տրորվում է երկիրը արբածի
նման, և ճօճում է հիւղի նման,
և նորա մեղքը ծանրացել է նո-
րա վերայ, և նա վայր է ընկնե-
լու, և այլ ևս վեր չի կենալ։
21 Եւ այն օրը լինելու է, որ Տէրը
կ՛այցելէ բարձանց մէջ բարձանց
զօրքերին, և երկրի վերայ երկրի
22 թագաւորներին։ Եւ պիտի հա-
ւաքուին մէկ հաւաքուած դառ-
նան, ա՛ կապուին գուրի մէջ,
և պիտի բանտարկուին բանտի
մէջ. և շատ օրերից յետոյ պի-
23 տի այցելութիւն ունենան։ Եւ
պիտի ամաչէ լուսինը, ու արե-
գակը պատկառէ, երբոր թագա-
ւորէ Զօրաց Տէրը Սիօն սարի վե-
րայ և Երուսաղէմում, և պա-
տիւ կ՛լինի իր ծերերի առաջը։

ԳԼ. ԻԵ

4 Եհովայ, դու իմ Աստուածն ես.
ես քեզ բարձրացնում եմ, գո-
վում եմ քո անունը. որովհե-
տև դու սքանչելիք արիր, վա-
ղեմի խորհուրդներ, հաւատար-
2 մութիւն և ճշմարտութիւն։ Ո-
րովհետև քաղաքիցը հողակոյտ
շինեցիր, պարսպաւոր քաղաքը՝
փլատակ. քաղաքը՝ օտարների
պալատ, յաւիտեան չէ շինուե-
լու։ Նորա համար քեզ պիտի 3
պատուէ զօրաւոր ժողովուրդը,
ահարկու ազգերի քաղաքը պի-
տի վախենայ քեզանից։ Որ դու 4
ապաստան եղար աղքատին, ա-
պաստան՝ չքաւորին նորա նեղու-
թեան մէջ, ապաւէն՝ փոթորի-
կից, հովանի՝ տաքութիւնից. ո-
րովհետև զօրաւորների կատա-
ղութիւնը պատ ֆանդող փոթորի-
կի նման է։ Օտարների աղմուկը 5
տաքութեան պէս է չոր տեղում,
որ դու խոնարհեցրիր. տաքու-
թիւնը ամպի հովանիով անցնելու-
պէս բռնաւորների երգը պիտի
իջնէ։
Եւ Զօրաց Տէրը բոլոր ազգերի 6
համար այս սարի վերայ խնջոյք է
անելու պարարտ բաներով, հին
գինիներով, ծուծով լիքը պա-
րարտ բաներով, հին և մաք-
րուած գինիներով։ Եւ բնաջինջ 7
է անելու այս սարի վերայ երեսի
ծածկոցը, որ ծածկում է բոլոր
ժողովուրդներին, և այն վարա-
գոյրը որ վարագուրուած է բոլոր
ազգերի վերայ։ Նա պիտի կլանէ 8
մահին յաւիտեան, և Եհովայ
Տէրը պիտի ջնջէ արտասուքը ա-
մեն երեսից, և իր ազգի ամօթը
պիտի հեռացնէ բոլոր երկրի վե-
րայից, որովհետև Տէրն է ասում։
Եւ այն օրն ասելու են, ահա 9
մեր Աստուածը, որին մենք յու-
սացել ենք, և նա մեզ փրկեց.
Եհովան է սա, որին յուսացել
ենք, ուրախանալու և ցնծալու
ենք նորա փրկութիւնովը։ Որով- 10
հետև Տիրոջ ձեռքը հանգչելու
է այս սարի վերայ. և Մովաբը
ջարդուելու է նորա տակին, ինչ-
պէս որ խոզանը կոխ է տրվում
աղբահարումը։ Եւ նա տարա- 11
ծելու է իր ձեռքերը նորա մէջ,
ինչպէս որ տարածում է լողա-
ցողը լողանալիս, բայց նա պիտի
ցածացնէ նորա հպարտութիւնը
նորա ձեռքերի հնարքների հետ։
Եւ քո պարիսպների բարձր ամ- 12
րութիւնը նա պիտի խոնարհե-
ցնէ, ցածացնէ, մինչև փոշին գետ-
նովը տայ։

ԳԼ. ԻԶ

1 Այն օրը այս երգն է երգուե-
լու Յուդայի երկրումը.
Մենք մի զօրաւոր քաղաք ու-
նինք, նա փրկութիւնը դնում է
2 իբրև պարիսպ ու պատնէշ։ Բա-
ցէք դռները, որ մտնէ արդար և
հաւատարմութիւն պահող ժո-
3 ղովուրդը։ Հաստատ միտքը պա-
հում ես խաղաղ խաղաղութիւ-
նով, որովհետև քեզ է յուսա-
4 ցած։ Յաւիտեան Տիրոջը յուսա-
ցէք, որովհետև Տէր Եհովան յա-
5 ւիտենական վէմ է։ Որովհետև
նա խոնարհեցնում է բարձր բնա-
կողներին, բարձր բերդը. նա նո-
րան ցածացնում է, ցած է քա-
շում նորան մինչև գետինը, նա
նորան նկուն է անում մինչև փո-
6 շին։ Ոտքը նորան պիտի կոխէ՝
աղքատի ոտքը՝ չքաւորների կո-
7 խելը։ Արդարի ճանապարհը ու-
ղիղ է. դու ուղիղդ, հարթում
8 ես արդարի շաւիղը։ Հէնց քո
դատաստանների ճանապարհին
սպասել ենք քեզ, ով Տէր, քո
անունին ու քո յիշատակին էր
9 ցանկանում մեր հոգին։ Հոգովս
քեզ եմ փափաքում գիշերը,
հէնց իմ ներսի հոգովը ես քեզ
եմ բաղձանում. որովհետև եր-
բոր քո դատաստանները հասնում
են երկրին, աշխարհի բնակիչնե-
րը արդարութիւն են սովորում։
10 Ամբարշտին ողորմութիւն է լի-
նում, բայց նա արդարութիւն չէ
սովորում, նա ուղղութեան երկ-
րումը ծռութիւն է անում և
չէ տեսնում Տիրոջ մեծափա-
11 ռութիւնը։ Ով Տէր, նորանք քո
ձեռքի բարձրութիւնը չեն տես-
նում, կ՛տեսնեն ամաչելով քո
ժողովրդի վերայ ունեցած նա-
խանձը, կրակն է սպառելու քո
12 թշնամիներին։ Ով Տէր, դու կը
հաստատես մեզ համար խաղա-
ղութիւնը. որովհետև մեր ամեն
գործերն էլ դու գործեցիր մեզ
13 համար։ Ով Տէր մեր Աստուած,
քեզանից ջոկ ուրիշ տէրեր տի-
րեցին մեզ վերայ, բայց միայն
քեզանով պիտի յիշենք քո ա-
նունը։ Մեռածները չեն կենդա- 14
նանալ, ուրուականները չեն
կանգնիլ, այնպէս ես դու նորանց
այցելել, և փչացրել, և բնաջինջ
ես արել նորանց բոլոր յիշա-
տակը։ Դու աւելացրիր այս ազ- 15
գը, ով Տէր, դու աւելացրիր
այս ազգը և փառաւորուեցար.
երկրի ամեն ծայրերը ընդարձա-
կեցիր։ Ով Տէր, նեղութեան մէջ 16
քեզ որոնեցին, հառաչանք թա-
փեցին դու նորանց խրատելիս։
Ինչպէս որ յղին ծնելու մօտենա- 17
լով երկունքի մէջ տանջվում և
աղաղակում է, մենք էլ նոյն-
պէս ենք դառել քո առաջին,
ով Տէր։ Յղացանք, երկունք քա- 18
շեցինք, կարծես թէ քամի ծնե-
ցինք, մենք փրկութիւն չ՛գործե-
ցինք երկրի համար, և աշխարհի
բնակիչները չ՛ընկան։ Քո մեռել- 19
ները պիտի կենդանանան, իմ մե-
ռելների դիակները պիտի կանգ-
նեն. վեր կացէք և ցնծացէք, ով
հողի բնակիչներ. որովհետև լոյ-
սերի ցօղ է քո ցօղը. քո երկիրը
դուրս պիտի գցէ ուրուականնե-
րին։
Գնա, ով իմ ժողովուրդ, մը- 20
տիր քո սենեակները, և գոցիր
քո դռները ետևիցդ. ծածկուիր
մի փոքրիկ վայրկեան մինչև որ
բարկութիւնն անցնէ։ Որովհե- 21
տև ահա Տէրը դուրս է գալիս
իր տեղիցը, որ երկրի բնակիչնե-
րին այցելէ նորանց անօրէնու-
թեան մասին, և երկիրը պիտի
յայտնէ իր ընդունած արիւնները
և պիտի չ՛ծածկէ այլ ևս իր
սպանուածներին։

ԳԼ. ԻԷ

Այն օրը Տէրը պիտի այցելէ իր 1
ամուր ու մեծ և զօրաւոր սրովը
լևիաթան փախչող օձին, և լե-
ւիաթան ոլորուն օձին, և պիտի
սպանէ ծովի միջի վիշապին։ Այն 2
օրը *գինիի այգի կ՛լինի. նորա
համար երգեցէք։ Ես Տէրս եմ 3
նորա պահապանը, ամեն վայր-

*Ոմանք՝ վայելուչ

կեան առաջաւմ եմ Նորան. որպէս զի Նորան ոչ ով չ'վնասէ,
գեշերը և ցերեկ ես Նորան պահպանում եմ, ես բարկութիւն
չ'ունիմ. երանի թէ ցախեր՝ փուշերը լինէին, պատերազմով Նորանց
վերայ կ'յարձակուէի. ամենը միասին կ'այրէի, կամ թէ իմ զօրութիւնիցը բռնեն, ինձ հետ խաղաղութիւն անեն. խաղաղութիւն անեն ինձ հետ։
Ապագայում Յակոբը պիտի արմատանայ, Իսրայէլը ծաղկի և
ընձիւղէ. և պիտի լցնեն աշխարհը երեսը պտուղով։ Մի թէ Նորա զարկողի զարկածին պէս է զարկել Նորան, կամ Նա Նորա
սպանուելու սպանման նման սպանուեցա՞։ Չափաւորութեամբ
վիճեցիր Նորա հետ Նորան արձակելիս, Նորան դուրս արաւ
սաստիկ քամիով արևելեան քամի օրը։ Ուրեմն սորանով կը
քաւուի Յակոբի անօրէնութիւնը, և սա է Նորա մեղքի հեռացնելու բոլոր պտուղը. երբոր սեղանի քարերը փշրուած կրաքարերի պէս կ'անէ, վեր չեն կենալ սաստրովթներ և արեգական կուռքերը։ Որովհետև պարսպաւոր քաղաքը միայնացած՝ ձրդուած և թողուած բնակարան պիտի լինի անապատի պէս. այնտեղ զուարակն է արածելու, և այնտեղ մնակելու, և նորա ճիւղերը վերջացնելու է։ Նորա ճիւղերը չորանալով պիտի կոտրատուին, կնիկները պիտի գան, վառեն Նորան, որովհետև Նա իմաստուն ժողովուրդ չէ, վասն որոյ Նորան չէ ողորմելու Նորա Արարիչը, և Նորա ստեղծողը Նորան չէ գթալու։ Եւ այն օրը կը լինի, որ Տէրը կ'թօթափէ գետի յորձանքիցը մինչև Եգիպտոսի հեղեղատը, և դուք կ'հաւաքուիք մէկ մէկ, ով իսրայէլի որդիք։
Եւ այն օրը փչուելու է մեծ փողով, և գալու են Ասորեստանի երկրում կորածները, և Եգիպտոսի երկրի մէջ աքսորուածները, և երկրպագելու են Տիրոջը՝ սուրբ սարի վերայ Երուսաղէմում։

ԳԼ. ԻԷ

Վա՛յ Եփրեմի սրբեցողների հպարտութեան պսակին, և Նորա
փառաց ջարդի թառամեալ ծաղկին, որ գլխաւորների պարարտ
հովտի գլխին է, Ահա Տէրն ունի քաջ և զօրաւոր մէկին, կարկտի փոթորկի նման՝ մի ապականիչ մրրիկ. նա յորդող առատ
ջրերի հեղեղի պէս թափելու է երկրի վերայ հզօր ձեռքով։ Ոտքով կոխ են տալու Եփրեմի սրբեցողների հպարտութեան պսակը, Եւ մի թառամեալ ծաղիկ պիտի դառնայ Նորա փառաց պսակը, որ պարարտ հովտի գլխին է. ինչպես հունձքից առաջ վաղահաս թուզը, որ Նորան տեսնողը՝ հաղիւ թէ ձեռքն է առել՝ կուլ է տալիս։ Ահա օրը Ջօրաց Տէրն է լինելու զարդի պսակ, և շքեղ թագ՝ իր ժողովրդի մնացորդի համար. Եւ իրաւունքի հոգի՝ իրաւունքի համար նստողին, և ոյժ՝ պատերազմը դէպի դուռը ետ դարձնողներին, Բայց սրանք էլ են գինիով մոլորուած, և խառորում են ցքիով. քահանան և մարգարէն մոլորուած են ցքիով կուլ են գնացել գինիի մէջ, ցքիով խառորել են. մոլորուած են տեսիլքի մէջ, դանդաղում են դատաստանում։ Որովհետև բոլոր սեղանները լիքն են պիղծ փսխուածքով՝ այլ ևս տեղ չէ մնացել։
Ո՞ւմ է Նա գիտութիւն սովորեցնում, և ո՞ւմ՝ քարոզ հասկացնում. կաթից կտրուածների՞, առնիքից քաշուածների՞։ Որ հրաման հրամանի վերայ՝ հրաման հրամանի վերայ, խրատ խրատի վերայ՝ խրատ խրատի վերայ. մի քիչ այստեղ, մի քիչ այնտեղ։ Այո՛, նա մի քիչ այնտեղ, մի քիչ այստեղ, ով խրատի՛ր մի քիչ այն տեղ։ Խրատ թոթովախօս շրթունքով և օտար լեզուով պիտի խօսէ նա այս ժողովրդի հետ։ Նա որ Նորանց ասեց՝ Սա է ձեր յոգնածին հանգստացնելու հանգստութիւնը, և սա է մխիթարութիւնը. բայց Նորանք չ'ուզեցին լսել։ Եւ Տիրոջ խօսքն էլ լինելու է Նորանց համար հրաման հրամանի վերայ՝ հրաման հրամանի վերայ. խրատ խրատի վերայ՝ խրատ խրատի վերայ, մի քիչ այստեղ, մի քիչ այնտեղ, որպէս զի գնան և ետևի վերայ ընկնեն ու ջարդուին, և որոգայթի մէջ ընկնեն և բռնուին։
Սորա համար լսեցէք Տիրոջ խօսքը, ով ծաղրող մարդիկ, այս ժողովրդի իշխաններ, որ Երուսաղէմում է. Որովհետև ասում էք՝ Մենք ուխտ ենք դրել մահի հետ, և դժոխքի հետ դաշինք ենք կապել, որ յորդացող հեղեղը, եթէ անցնելու լինի, մեզ չի հասնիլ. որովհետև մենք ստութիւնը մեր պատսպարանը շինեցինք, և խաբէութեան մէջ ենք ծածկուած։ Վ. ասն որոյ այսպէս է ասում Եհովայ Տէրը. Ահա ես եմ որ Սիօնում դրել եմ վէմ, ընտիր վէմ, պատուական անկիւն, հաստատուն հիմունք. ով որ Նորան հաւատայ, չի փախչել։ Եւ ես իրաւունքը՝ չափին հաւասար, և արդարութիւնը՝ կշռքին հաւասար պիտի անեմ, և կարկուտը պիտի ստութեան պատսպարանը խորտակէ, և թաքուստը ջուրերը պիտի ողողեն։ Եւ ձեր ուխտը մահի հետ պիտի ջնջուի, և գժոխքի հետ արած դաշինքը պիտի չ'հաստատուի, որ երբոր յորդացող հեղեղն անցնելու լինի, դուք Նորանից առնահար պիտի լինիք։ Քանի անգամ որ անցնէ, ձեզ պիտի տանէ, որովհետև ամեն առաւօտ անց է կենալու ցերեկը և գիշերը. և մի միայն առակում է լինելու լուրը առնելը։ Որովհետև անկողինը կարճ է երկար ձգուելու համար, և ծածկոցը նեղ է նաձաձ ծածկուելու համար։ Որովհետև ինչպէս փարասին սարի վերայ՝ վեր է կենալու Տէրը, և բարկանալու է, ինչպէս եր Գաբաւանի ձորումը, որ գործէ իր գործը՝ իր օտարոտի գործը. և կատարէ իր պաշտօնը՝ իր տարօրինակ պաշտօնը։ Եւ հիմա ծաղր անողներ մի լինիք, որ ձեր կապերը աւելի չ'պնդանան, որովհետև լսեցի այն որոշուածն ու սահմանուածը Ջօրաց Եհովայ Տիրոջ կողմանէ բոլոր երկրի վերայ։
Ականջ դրէք, և լսեցէք իմ ձայնը, մտիկ տուէք, և լսեցէք իմ խօսքը։ Մի թէ ամեն օր հերկում է հերկողը ցանելու համար, և բանա՞մ տապանա՞մ իր արտ. Չէ՞ որ Նորա երեսը չի տակակուցց յետոյ ցրիւ է տալիս արջնդեղը և ցանում չամանը, և ցորենը կարգո՛վ դնում և գարին իր որո՞շ տեղը և հաճարը իր սահմանուածը։ Եւ Նա կրթել է Նորան խոհեմութեան, և ուսուցել է Նորան իր Աստուածը։ Որովհետև արջնդեղը կամնասայլով չի ծեծուիլ, և սայլի անիւը չի դարձնուիլ չամանի վերայ, այլ գաւազանով է թակվում արջնդեղը, և չամանը՝ մանակով։ Ցորենը կ'փշրուի՞, Ո՛չ, յաւիտեան. Հարը Նորան կաուում է կաուամ, և իր սայլի անիւը քշում Նորա վերայ և իր ձիերին, և Նորանք չեն փշրվում։ Սա էլ Զօրաց Եհովայ Տէրիցն է գուրս գալիս, որի խորհուրդն՝ զարմանալի, հանճարը գերազանց է։

ԳԼ. ԻԹ

Վա՛յ Արիէլին, Արիէլին, Դաւիթի բանակ տուած քաղաքին, աւելացրէք տարին տարուայ վերայ, տօները թող պտոյտ տան. Եւ ես պիտի նեղացնեմ Արիէլին, և պիտի լինի հառաչել և հառաչանք, և նա կ'լինի ինձ համար Արիէլի պէս։ Եւ բանակ պիտի տամ շրջանի պէս քեզ վերայ, և քեզ պիտի նեղեմ պատնէշներով, և քեզ դէմ պիտի հողաբլուրներ կանգնեցնեմ։ Եւ պիտի ցածանաս՝ հողիցը խօսես, և պիտի փոշիիցը մնչես քո խօսքերը, և վշուկի պէս՝ տափիցն է գուրս գալու քո ձայնը, և փոշիիցը պիտի ճռճռաս քո խօսքերը։
Եւ մնոր փոշի պէս պիտի լինի քո օտարականների բազմութիւնը, և անցնող մղեղի պէս՝

բռնաւորների բազմութիւնը. և
յանկարծակի մէկ վայրկեանի
6 մէջ կ'լինի։ Զօրաց Տիրոջ կող-
մանէ այցելութիւն է լինելու ո-
րոտմունքով, դետնաշարժով, և
մեծ ձայնով, մրրիկով, ու փո-
թորիկով, և մաշող կրակի բո-
7 ցով։ Եւ դիշերուայ տեսիլքի ե-
րազին պէս են լինելու Արիէլի
վերայ պատերազմի եկող բոլոր
ազգերի բազմութիւնը, և բոլոր
նորա և նորա բերդի վերայ յար-
ձակողները և նորա նեղիչները։
8 Եւ կ'լինի, ինչպէս որ սովածը ե-
րազ է տեսնում, թէ ուտում
է, և վեր է կենում դեսնում, որ
փորը դարտակ է, և ինչպէս որ
ծարաւն է երազ տեսնում, թէ
խմում է, և զարթնում է դես-
նում, թէ նուազած է և սիրտը
պապակվում է, այսպէս է լինե-
լու բոլոր ազգերի բազմութիւնը,
որ պատերազմի են դուրս գա-
9 լիս Սիօն սարի դէմ։ Ապշեցէք և
զարմացէք, շլացրէք ձեզ և շլա-
ցէք. նորանք արբած են, բայց չէ
թէ գինիով, նորանք դանդաչում
10 են, բայց չէ թէ ցքիից։ Որովհե-
տև Տէրը ձեզ վերայ թմրու-
թեան հոգի է թափել, և կա-
պել է ձեր աչքերը, մարգարէ-
ներին, և ձեր գլխաւորներին, որ
տեսիլք էին տեսնում, քօղար-
11 կել է։ Եւ ամեն մի բանի տե-
սիլքը պիտի լինի ձեզ համար
կնքուած գրքի խօսքերին պէս,
որ կ'տան գրագէտին և կ'ասեն.
Մէկ կարդա այս. և նա կ'ասէ.
Չեմ կարող որովհետև կնքուած
12 է։ Եւ կամ կ'տան այն գիրքը մէկ
անգրագէտի ասելով. Մէկ կար-
դա այս. և նա կ'ասէ. Ես կար-
13 դալ չ'գիտեմ։ Եւ Տէրն ասում
է. Որովհետև այս ժողովուրդը
իր բերանովն է մօտենում և իր
շրթունքներովն են ինձ պատ-
ուում, իսկ նորանց սիրտը հեռու
է ինձանից, և նորանց ինձ պատ-
ուելը մարդկանց սովորեցրած
14 պատուէր է. Դորա համար ահա
ես այսուհետև զարմանալի բա-
ներ եմ անելու այս ժողովրդի
հետ՝ զարմանալիք և զարմանք. և
պիտի փչանայ նորանց իմաստուն-
ների իմաստութիւնը, և հանճա-
րեղների հանճարը պիտի խա-
փանուի։ Վա՛յ նորանց, որ խոր- 15
հուրդը խոր տեղերում ծած-
կում են Տէրիցը, և խաւարում
է լինում նորանց գործքը, և ա-
սում են. Ո՞վ է մեզ տեսնում,
և ո՞վ է մեզ իմանում։ Ո՛հ ձեր 16
խոտորնակութեանը. մր՞թէ կա-
ւի պէս կ'համարուի բրուտը, որ
շէնքը ասէ իր շինողին՝ Նա ինձ
չէ շինել. և արարածն ասէ իր
արարչին թէ Նա չէ հասկանում։
Ահա մի փոքր քիչ ժամանակից յե- 17
տոյ Լիբանանը կ'դառնայ պտղա-
բեր արտ, և պտղաբեր արտը ան-
տառ պիտի համարուի։ Եւ այն 18
օրը խուլերը կ'լսեն գրքի խօսքե-
րը, և մէգիցն ու խաւարիցը կը
տեսնեն կոյրերի աչքերը։ Եւ 19
խեղճերը ուրախութիւն պիտի
աւելացնեն Տէրով, և չքաւոր
մարդիկը պիտի զուարճանան Իս-
րայէլի Սուրբովը։ Որովհետև 20
բռնաւորը պիտի չքանայ, և ծաղ-
րողը՝ վերջանայ, և պիտի փչա-
նան բոլոր չարութիւն խորհող-
ները. Նորանք որ մարդիս դա- 21
տի մէջ յանցաւոր են շինում,
և *դատարանում յանդիմանո-
ղին որոգայթ են դնում, և դար-
տակ բանով վայր են գցում ար-
դարին։ Սորա համար Տէրը, նա 22
որ փրկեց Աբրահամին, այսպէս
է ասում Յակոբի տան մասին.
Այլ ևս պիտի չ'ամաչէ Յակոբը։
և նորա երեսը պիտի չ'սպրտնի։
Որովհետև նա՝ նորա որդիքը իմ 23
ձեռքի գործը իրանց մէջ տեսնե-
լիս †փառաւորելու են իմ անու-
նը, և †փառաւորելու են Յակո-
բի Սուրբին, և Իսրայէլի Աստ- 24
ուածանից սարսելու են։ Եւ՝ հո-
գով մոլորուածներն իմաստու-
թիւն են հասկանալու, և տրը-
տընջողները խրատ են սովորելու։

ԳԼ. Լ

Վա՛յ ապստամբ որդկանցը, ա- 1

*Կամ՝ դրան մէջ
†Եբր.՝ սրբելու են

սում է Տէրը, որ խորհուրդ են
անում, բայց չէ թէ ինձանից,
որ դաշինք են կապում, բայց չէ
թէ իմ հոգովը, որպէս զի շա-
2 տացնեն մեղք մեղքի վերայ։ Որ
գնում են իջնում Եգիպտոս, և իմ
բերանը չեն հարցնում. որ պատըս-
պարուին Փարաւօնի պատսպարա-
նումը և որ ապաւինեն Եգիպտոսի
3 հովանիին։ Բայց Փարաւօնի պա-
տըսպարանը ձեզ համար ամօթ
պիտի լինի, և Եգիպտոսի հովա-
4 նիին ապաւինելը՝ նախատինք։ Ո-
րովհետև նորա իշխանները Տա-
յանիս են եղել, և նորա թա-
գաւորները հասել են Հանէս։
5 Ամենքը պիտի ամաչեն այն ազ-
գի մասին, որ իրանց օգուտ չ'ու-
նի, ոչ օգնութիւն և ոչ օգուտ
ունի, այլ ամօթի և խայտառա-
կութեան համար է։
6 Հարաւի անասունների պատ-
գամը։
Նեղութեան և վշտաց երկրո-
վը, որտեղից որ են մատակ առ-
իւծը և առոյգ առիւծը, իժը և
թևաւոր կիզող օձը. տանում
են իրանց ստացուածքը էշերի
մէջքի վերայ, և ուղտերի սապա-
տի վերայ իրանց գանձերը մի այն-
պիսի ժողովրդի մօտ, որ օգուտ
7 չ'ունի։ Եւ ունայն ու դարտակ
է Եգիպտոսի օգնութիւնը, նորա
համար կանչեցի նորան՝ Կոկոզա-
բան դատարկապորտներ են նո-
8 րանք։ Արդ գնա գրիր այս նո-
րանց հետ տախտակի վերայ և
գրքին վերայ նշանակիր, և դա
մնայ յետի օրուայ համար վկա-
9 յութիւն մինչև յաւիտեան։ Ո-
րովհետև դա մի ապստամբ ժո-
ղովուրդ է՝ ստախօս որդիք, որ-
դիք որ չեն ուզում լսել Տիրոջ
10 օրէնքը։ Որ ասում են տեսանող-
ներին. Մի տեսնէք. և մարգա-
րէներին թէ Մեզ համար ուղիղ
բաներ մի մարգարէանաք. մեզ
կակուղ բաներ ասեցէք, խաբէ-
11 ութիւններ մարգարէացէք։ Հե-
ռացէք ճանապարհիցը, ծռեցէք
ուղիիցը, վերցրէք մեր առաջից
12 Իսրայէլի Սուրբին։ Սորա համար
այսպէս է ասում Իսրայէլի Սուր-
բը. Որովհետև ձեր զզուանքը գա-
լիս է այս խօսքից, և ապաւինել
էք բռնութեան և ծռութեան,
և նորանց վերայ կռնել էք. Նո- 13
րա համար այս անօրէնութիւնը
ձեզ համար կ'լինի բարձր պա-
րըսպի վերայ ուռած վայր ընկ-
նող փլուածքի պէս, որի կործա-
նումը յանկարծակի անկարծ կը
գայ։ Եւ նորան փշրելու է բրու- 14
տի աման փշրելու պէս՝ փշրելու
է և չէ խնայելու, և նորա կտոր-
տանքներիցը մի խեցիի կտոր չէ
գտնուելու կրակարանիցը կրակ
վեր առնելու և փոսիցը ջուր հա-
նելու համար։ Որովհետև այս- 15
պէս է ասում Եհովայ Տէրը՝ Իս-
րայէլի Սուրբը. դառնալով և
հանդարտ կենալով կ'փրկուիք,
հանդարտութեամբ և ապաւի-
նութեամբ կ'լինի ձեր զօրութիւ-
նը. բայց դուք չէք ուզում։ Եւ 16
ասում էք. Ոչ, այլ ձիով փախ-
չենք. դորա համար փախչելու
էք. և արագընթացների վերայ
հեծնենք, դորա համար արագընթ-
թաց են լինելու ձեզ հալածող-
ները։ Զեր մէկ հազարը մէկի 17
սպառնալիքի առաջին՝ հինգի ըս-
պառնալիքի առաջին դուք պի-
տի փախչէք, մինչև որ մնաք մի
ձողի պէս սարի գլխին, և մի դրօ-
շակի պէս՝ բլուրի ծայրին։ Եւ 18
դորա համար Տէրը սպասելու է,
որ ձեզ ողորմէ, և դորա համար
բարձրանալու է որ ձեզ գթայ.
որովհետև Տէրը իրաւունքի Աստ-
ուած է. երանի՛ այն ամենին որ
սպասում են նորան։
Որովհետև մի ժողովուրդ պի- 19
տի բնակուէ Սիօնի վերայ Երու-
սաղէմումը, դու էլ լաց չես լի-
նելու. Նա քեզ պիտի ողորմէ
աղաղակիդ ձայնովը. հէնց որ նա
լսեց՝ քեզ պատասխան է տա-
լու։ Եւ Տէրը ձեզ տալու է նե- 20
ղութեան հաց և տառապանքի
ջուր, բայց քո ուսուցիչները այլ
ևս ետ չեն քաշուելու, և քո աչ-
քերը շարունակ տեսնելու են քո
ուսուցիչներին։ Եւ քո ականջնե- 21
րը լսելու են մի խօսք քո ետևի-
ցը որ ասէ. Սա է ճանապարհը՝ սո-

բանով դնացէք, երբոր աջ կողմը
պէտք է գնաք և երբոր ձախ կող-
22 մը պէտք է գնաք։ Այն ժամանակ
դուք պիղծ կ'համարէք՝ դու քո
արծաթի կուռքերի ծածկոցնե-
րը, և դու քո ոսկիի կռածոյնե-
րի ձուլուածքը. դու ցիրուցան
կ'անես դաշտանի շորի պէս, դու
23 նորանց ասելու ես՝ Դո՛ւրս։ Եւ
նա անձրև կ'տայ արտումը սեր-
մած սերմիդ, և երկրի արդիւն-
քիցը՝ հաց. և առատ ու պարարտ
կ'լինի. այն օրը քո խաշինքը ընդ-
արձակ արօտում կ'արածեն։
24 Եւ այն եզերն ու էշերը, որ եր-
կիրը կ'գործեն, պիտի աղուած
կերակուր ուտեն, թիով և հո-
25 սելիով մաքրուած։ Եւ ամեն
բարձր սարի վերայ և ամեն բար-
ձրացած բլուրի վերայ վտակներ՝
ջրերի առուներ են լինելու մեծ
կոտորածի օրը՝ աշտարակները
26 ընկնելիս։ Եւ լուսնի լոյսը արե-
գակի լոյսին պէս կ'լինի և արե-
գակի լոյսը եօթնապատիկ կ'լի-
նի՝ եօթը օրուայ լոյսին չափ, այն
օրը որը Եհովան կ'կապէ իր ժո-
ղովրդի կոտրածը և նորա հար-
ուածի խոցը կ'բժշկէ։
27 Ահա Տիրոջ անունը հեռուից
է գալիս, նորա բարկութիւնը
բորբոքուած է և բոցը՝ սաստիկ.
ու շրթունքները լիքն են բար-
կութիւնով, և լեզուն մաշող
28 կրակի պէս է։ Եւ նորա հոգին
յորդահոս գետի պէս մինչև պա-
րանոցն է հասնում, որ շարժէ
ազգերին փուչ շարժումով, և
մոլորութեան սանձ դնէ ազգերի
29 կզակին։ Դուք երգ կ'ունենաք
սուրբ տօնի գիշերուայ նման, և
սրտի ուրախութիւն՝ սրինգով
դնացողի պէս, որ դնում է Տի-
րոջ սարը Իսրայէլի վէմի մօտ։
30 Եւ Տէրը լսել է տալու իր ձայնի
փառքը, և իր բազուկի իջնելը
ցոյց է տալու սաստիկ բարկու-
թիւնով և լափող կրակի բո-
ցով, հեղեղով, փոթորկով և
31 կարկտի քարերով։ Որովհետև
Տիրոջ ձայնիցը զարհուրելու է
Ասորեստանցին, որ զարկում էր
32 գաւազանով։ Եւ որոշուած գա-
ւազանի ամեն հարուածը, որ Տէ-
րը իջեցնելու է նորա վերայ, լի-
նելու է թմբուկներով և քնար-
ներով, և պատերազմելու է նո-
րա հետ պատերազմներով շար-
ժելով իր ձեռքը։ Որովհետև վա- 33
ղուց պատրաստ է Տօփեթը, նա-
և պատրաստ է թագաւորին հա-
մար. նա խորացրել լայնացրել է.
նորա խարոյկը շատ կրակ և փայտ
ունի. Տիրոջ շունչը ծծումբի հե-
ղեղի պէս վառելու է նորան։

ԳԼ. ԼԱ

Վա՛յ նորանց, որ իջնում են Ե- 1
գիպտոս օգնութեան համար, և
ձիերի են ապաւինում և կառ-
քերի վստահում, որ շատ են. և
ձիաւորների, որ խիստ զօրաւոր
են. և չեն ապաւինում Իսրայէ-
լի Սուրբին, և Տիրոջը չեն խնդ-
րում։ Բայց նա էլ իմաստուն է, 2
և չարիք է բերում, և իր խօս-
քերը դէն չէ գցում. և վեր է
կենում չարերի տան վերայ և ա-
նօրէնութիւն գործողների օգնու-
թեան դէմ։ Եւ Եգիպտացիք 3
մարդ են, և ոչ թէ Աստուած.
և նորանց ձիանքը մարմին են և
ոչ թէ հոգի. բայց Տէրը կ'մեկ-
նէ իր ձեռքը, կ'սահէ օգնողը
ու վայր կ'ընկնի օգնուողը, և ա-
մենքը միասին կ'փչանան։ Որով- 4
հետև այսպէս է ասում ինձ Տէ-
րը. Ինչպէս մռնչում է առիւծը
և կորիւնը՝ իր որսի համար, որի
դէմ մէկտեղ կ'կանչուին հովիւ-
ների մի մեծ բազմութիւն, որ
նա նորանց ձայնիցը չի զարհու-
րիլ, և նորանց աղմուկիցը չի ընկ-
ճուիլ. նոյնպէս էլ իջնելու է
Զօրաց Տէրը պատերազմելու՝ Սի-
օն սարի և նորա բլուրի համար։
Թռթռացող թռչնիկների պէս 5
ծածկելու է Զօրաց Տէրը Երու-
սաղէմին, պաշտպանելով և փըր-
կելով, խնայելով, և ազատելով։
Ետ դարձէք դէպի նորան, ո- 6
րից Իսրայէլի որդիքը շատ խոր
ապստամբուեցին։ Որովհետև այն 7
օրը պիտի ամեն մարդ զզուի իր
արծաթի կուռքիցը և իր ոսկի

կուռքիցը, որոնք ձեր ձեռքերը
շինեցին ձեզ համար մեղք ան-
8 ելով։ Եւ վայր է ընկնելու Ասո-
րեստանը ոչ թէ մարդի սրով,
և մի սուր՝ որ մարդինը չէ՝ ու-
տելու է նորան. և նա փախչե-
լու է սուրի առաջիցը, և նո-
րա երիտասարդները հարկատու
9 են լինելու։ Նորա վէմը վախից
պիտի անցնէ և նորա իշխանները
պիտի զարհուրեն դրօշակիցը, ա-
սում է Տէրը, որի լոյսը Սիօնումն
է, և որի հնոցը՝ Երուսաղէմումը։

ԳԼ. ԼԲ

1 Ահա մի թագաւոր արդարու-
թեամբ է թագաւորելու, և իշ-
խանները իրաւունքով են իշխե-
2 լու։ Եւ ամեն մէկը քամիի դէմ
եղող պատսպարանի պէս, և փո-
թորկի դէմ եղող ծածկոցի պէս,
չոր տեղում եղող ջրերի վտակ-
ների նման, մեծ ապառաժի հո-
վանիին պէս պիտի լինի ծարա-
3 ւուտ երկրում։ Եւ տեսնողների
աչքերը պիտի չ'շլանան, և լսող-
ների ականջները ուշադիր են լի-
4 նելու։ Եւ վռազողների սիրտը
կ'հասկանայ գիտենալ, և թո-
թովախօսների լեզուն կ'շտապէ
5 պայծառ խօսել։ Այլ ևս չեն
կոչիլ տխմարին ազնուաբարոյ, և
նենգամիտին չեն ասիլ՝ Վսեմա-
6 շուք։ Որովհետև տխմարը տրխ-
մարութիւն կ'խօսի, և նորա սիր-
տը անօրէնութիւն կ'գործէ. որ
կեղծաւորութիւն անէ և Տիրոջ
մասին ծռութիւններ խօսի, որ
սովածի հոգին զրկէ հացից, և
ծարաւի խմելիքը պակասեցնէ։
7 Եւ նենգամիտի հնարքները չար
են, նա նենգութիւններ է մտա-
ծում, որ աղքատներին կորցնէ
սուտ խօսքերով, թէև անանկը
8 իրաւունքով էլ խօսի։ Իսկ ազ-
նուաբարոյ մարդը ազնիւ բաներ
է խորհում. և ազնիւ բաների
վերայ կ'կանգնէ։
9 Ով վստահալից կանայք, վեր
կացէք, ձայնս լսեցէք. ով ապա-
հով աղջկերք, իմ խօսքին ա-
կանջ դրէք։ *Օրեր կան տար- 10
ուայ համար, որ՝ պիտի դողաք,
ով ապահովներ. որ այգեկու-
թը փչացել է, և հունձքի ժա-
մանակ չէ գալու։ Ով վստահա- 11
լիցներ, դողացէք, սարսեցէք, ով
ապահովներ, հանուեցէք ու մեր-
կացէք, մէջքերնիդ քուրձ կապե-
ցէք։ Սգալով խփում են կուրծ- 12
քերին ցանկալի արտերի, պտղա-
բեր որթի համար։ Իմ ժողովրդ- 13
ի երկրի վերայ փուշ՝ ցախ պի-
տի բուսնէ. նոյն իսկ ամեն ու-
րախութեան տան վերայ զուար-
ճալի քաղաքումը։ Որովհետև 14
պալատը թողուած է, քաղաքի
աղմուկը՝ ձգուած, Օփէլ ու աշ-
տարակը յաւիտեան քարայրնե-
րի տեղ պիտի լինեն ցիռերի
զուարճութեան՝ խաշինքների ա-
րօտ լինելու համար։ Մինչև որ 15
մեզ վերայ հոգի թափուի վերե-
ւից, և անապատը պտղաբեր արտ
դառնայ, և պտղաբեր արտը ան-
տառ համարուի։ Եւ անապա- 16
տումը կ'բնակուէ իրաւունքը, և
արդարութիւնը պտղաբեր ար-
տումը կ'նստի։ Եւ արդարու- 17
թեան գործը կ'լինի խաղաղու-
թիւն, և արդարութեան ար-
դիւնքը հանգիստ ու ապահովու-
թիւն յաւիտեան։ Եւ իմ ժողո- 18
վուրդը կ'բնակուէ խաղաղաւէտ
բնակարանում, և ապահով
վրաններում և անդորր հանգչա-
րաններում։ Բայց կարկուտ է իջ- 19
նելու անտառի վերայ, և խիստ
ցած ցածանալու է քաղաքը։ Ե- 20
րանի՝ ձեզ որ ցանում էք ա-
մեն ջրերի մօտ, որ ազատ արձա-
կում էք եզան և էշի ոտքերը։

ԳԼ. ԼԳ

Վա՛յ քեզ, ով կործանող, որ 1
չ'կործանուեցար, և ով յափշ-
տակող, որ քեզ չ'յափշտակե-
ցին. երբոր վերջացնես կործանե-
լը, պիտի կործանուիս, երբոր դա-

*Կամ՝ Մի տարիից և մի քանի օրերից յետոյ։

դարես յափշտակելուց, քեզ պիտի յափշտակեն։
2 Ով Տէր, մեզ ողորմիր, քեզ ենք յուսացել. նորանց բազուկը եղիր ամեն առաւօտ, նաև մեր փրկութիւնը՝ նեղութեան
3 ժամանակին։ Աղմուկի ձայնից փախչում են ժողովուրդները, քո բարձրանալուցը ցրվում են ազգերը։
4 Եւ ձեր աւարը պիտի ժողովուի ինչպէս թրթուրն է ժողովում, և մարախի ոստնելու պէս
5 ոստոստելու են նորա վերայ։ Տէրը բարձրացած է, որովհետև բարձրումն է բնակվում նա. լցրել է Սիօնը իրաւունքով ու արդա-
6 րութիւնով։ Եւ քո ժամանակների հաստատութիւնը կ'լինի փրկութեան առատութիւն, իմաստութիւն և գիտութիւն. Տիրոջ երկիւղը կ'լինի նորա գանձը։
7 Ահա նորանց քաջաղունները աղաղակում են դրսումը, խաղաղութեան դեսպանները լաց
8 են լինում դառնապէս։ Ամայացել են ճանապարհները. դադարել է ճանապարհորդը. ուխտը քանդել է. քաղաքները անարգել. մարդիս բանի տեղ չէ հա-
9 մարում։ Տրտմած տխրած է երկիրը, ամաչած է Լիբանանը՝ թոռոմած, Սարօնը անապատի պէս է եղել, և Բասանն ու Կարմեղոսը տերևաթափ են լինում։
10 Հիմա վեր եմ կենալու, ասում է Տէրը, հիմա բարձրանալու եմ. հիմա վեր եմ բարձրանալու։
11 Ցարդով էք յղացել, մղեղ էք ծնելու. ձեր շունչը կրակ է դառ-
12 նալու որ ձեզ ուտէ։ Եւ ժողովուրդները կիր այրուելու պէս պիտի դառնան, նորանք կըտրուած փուշերի պէս կրակով պի-
13 տի այրուին։ Ով հեռաւորներ, լսեցէք ինչ որ արել եմ. իմացէք, ով մօտաւորներ, իմ զօ-
14 րութիւնը։ Սիօնումը վախենում են մեղաւորները, դող է բռնել կեղծաւորներին, թէ մեզանից ո՞վ է կարող բնակուել լափող կրակում, մեզանից ո՞վ է կարող բնակուել յաւիտենական բո-
15 ցերում։ Արդարութեամբ վարուողը և ուղղութիւն խօսողը, անիրաւութեան շահը մերժողը, կաշառք բռնելուց ձեռքը թափ տուողը, արիւնհեղութեան խօսքեր լսելուց իր ականջը խփողը, և չարութիւն տեսնելուց իր աչ-
16 քերը խփողը։ Նա բարձրերումը պիտի բնակուէ, նորա բերդը վէմերի ամրութիւններն են. նորա հացը տրվում է, նորա ջրերը ա-
17 պահով են։ Քո աչքերը տեսնելու են թագաւորին իր գեղեցկութեան մէջ, տեսնելու են լայ-
18 նութիւնների երկիրը։ Քո սիրտը վախերի վերայ է մտածելու թէ Ո՞ւր է դպիրը, ո՞ւր է կշռողը, ո՞ւր է աշտարակներ համարողը։
19 Այն խիստ ժողովրդին չես տեսնելու, այն ժողովրդին որ անծանօթ և անհասկանալի շրթունք ունէր, որ թոթովախօս ու անի-
20 մանալի լեզու ունէր։ Նայիր Սիօնին, մեր տօնախմբութեան քաղաքին. քո աչքերը կ'տեսնեն Երուսաղէմը, իբրև ապահով բնակարան՝ անսասան վրան, որի ցիցերը յաւիտեան չեն շարժուիլ, և որի ամեն չուանները չեն կըտ-
21 րուիլ։ Այլ Տէրը փառաւոր պիտի լինի այնտեղ մեզ համար, լայնատարած գետերի՝ վտակների տեղը, ուր որ չի գնալ թիաքարշ նաւը, և այնտեղով մեծ
22 նաւ չի անց կենալ։ Որովհետև մեր դատաւորը Տէրն է, մեր օրէնադիրը Տէրն է, մեր թագաւորը Տէրն է, նա է մեզ ազատողը։
23 Քո չուանները թուլացել են, իրանց կայմի խարիսխը պինդ չը բռնեցին, առագաստ չ'բացին, այն ժամանակ մեծ աւար բաժանուեցաւ, մինչև անգամ կաղերն էլ
24 կողոպուտ կողոպտեցին։ Եւ այնտեղի բնակիչը չէ ասելու թէ ես տկար եմ. այն ժողովուրդը որ բնակվում է այնտեղ՝ նորա անօրէնութիւնը թողուած է։

ԳԼ. ԼԴ

Մօտեցեք, ով ազգեր, որ լսէք, 1

և ով ժողովուրդներ, որ ուշ դնէք. լսիր, ով երկիր և նորա լրութիւնը, ով աշխարհք և նո-
2 րա վերայ բոլոր ծնուողները։ Որովհետև Տիրոջ բարկութիւնը բոլոր ազգերի վերայ է, և սրտմըտութիւնը՝ նորանց բոլոր զօրքերի վերայ։ Նա նորանց նզովել է՝
3 սպանման է մատնել։ Եւ նորանց սպանուածները դէն են գցվում, և նորանց դիակներիցը գարշահոտութիւն է բարձրանում, և սարերը հալվում են նորանց արիւ-
4 նիցը։ Եւ հալուելու են երկնքի բոլոր զօրքերը, և պիտի գալարուի երկինքը մագաղաթի պէս, և նորա բոլոր զօրքերը պիտի վայր ընկնեն, ինչպէս որ տերևը թափվում է որթիցը, և ինչպէս որ թզենին տերևաթափ է լինում։
5 Որովհետև իմ սուրն արբել է երկնքումը. ահա նա իջնում է Եդովմի վերայ, և իմ նզոված ժողովրդի վերայ դատաստանի
6 համար։ Տիրոջ սուրը լիքն է արիւնով, իւղոտուած է ճարպով, դառների ու նոխազների արիւնովը, խոյերի երիկամունքների ճարպովը. որովհետև Տիրոջ համար զոհ կայ Բօսրայումը, և մեծ մորթուածք՝ Եդովմի երկրումը։
7 Եւ նորանց հետ պիտի իջնեն դոմէշները, և զուարակները ցուլերի հետ. և նորանց երկիրը պիտի արբենայ արիւնով, և նորանց հողը ճարպով պարարտա-
8 նայ։ Որովհետև վրէժխնդրութեան օր է Տիրոջ համար, հատուցման տարի է Սիօնի վէճի
9 համար։ Եւ նորա գետերը պիտի ձիւթի փոխուին, և նորա հողը՝ ծծումբի, և նորա երկիրը վառ-
10 ուած ձիւթ պիտի լինի։ Գիշեր ու ցերեկ պիտի չհանգչի, յաւիտեան պիտի վեր ելնէ նորա ծուխը, և դարէ ցդար աւերակ պիտի մնայ, յաւիտեանս յաւիտենից նորանով անցնող պիտի
11 չ'լինի։ Եւ նորան պիտի հաւալուսներն ու ողնիները ժառանգեն, և քաջահաւն ու ագռաւը պիտի բնակուեն նորանում, և նորա վերայ պիտի քաշուի դա-
տարկութեան լարը, և ունայնութեան քարերը։ Նորա ազնուա- 12
կաններին թագաւորութեան պիտի կանչեն, բայց այնտեղ մէկն էլ պիտի չ'գտնուի. և նորա բոլոր
իշխանները պիտի ոչնչանան։ Եւ 13
նորա պալատների վերայ պիտի բուսնեն փուշեր, և եղինճ ու ցախ՝ նորա պարիսպների վերայ. և պիտի լինի չագալների բնակարան և ջայլամների գաւիթ։ Եւ 14
վայրենի կատուները պիտի հանդիպեն բորենիներին, և մի այծամարդ միւսին պիտի պատահէ, և գիշերային ճիւաղները այնտեղ պիտի հանգստանան, և այնտեղ իրանց համար հանգիստ պիտի
գտնեն։ Այնտեղ բոյն պիտի շինէ 15
նետ օձը, և ձու ածէ, և ճուտեր հանէ, և իր հովանումը պիտի խնամէ. նաև այնտեղ պիտի հաւաքուեն ուրուրները ամեն
մէկն իր ընկերի հետ։ Որոնեցէք 16
Տիրոջ գրքումը և կարդացէք, սորանցից մէկ հատը չի պակասուիլ, մէկի մօտ իր ընկերը պակաս չի լինիլ, որովհետև նորա բերանն է հրամայել. և նորա հոգին ինքն է ժողովելու նորանց։
Եւ նա ինքը նորանց վերայ վիճակ 17
է գցել. և նորա ձեռքը նորանց բաժանել է լարով. յաւիտեան պիտի ժառանգեն նորան. դարէ ցդար պիտի բնակուեն նորանում։

ԳԼ. ԼԵ

Անապատն ու չոր երկիրը կ'ու- 1
րախանան, և կ'ցնծայ ամային ու
կ'ծաղկի շուշանի պէս։ Կ'բացուի, 2
կ'ծաղկի և կ'ցնծայ ցնծալով և բարձրաձայն երգելով. Լիբանանի փառքը նորան կ'տրուի՝ Կարմեղոսի և Սարօնի վայելչութիւնը. նորանք կ'տեսնեն Տիրոջ փառքը, մեր Աստուծոյ վայելչութիւնը։
Ուժովացրէք թուլացած ձեռ- 3
քերը, և դողդոջուն ծունկերը
զօրացրէք։ Ասեցէք թուլասիրա- 4
ներին, Ուժովացէք, մի վախենաք, ահա ձեր Աստուածը գալիս է վրէժ առնելու, Աստուծոյ հատուցումով է գալիս նա և նա

5 ձեզ փրկելու է։ Այն ժամանակ
բացուելու են կոյրերի աչքերը,
և խուլերի ականջները պիտի
6 բացուին։ Այն ժամանակ լոք է
տալու կաղը եղջերուի պէս. և
համրի լեզուն օրհներգելու է.
որովհետև անապատումը ջուրեր
են բղխելու և ամայի տեղումը՝
7 առուներ։ Եւ խորշակահար եր-
կիրը լճի պիտի փոխուի, և ծա-
րաւուտը՝ ջրերի աղբիւրների.
չագալի բնակուած բնակարանու-
մը խոտ է բուսնում՝ եղէգ և
8 կնիւն։ Եւ այնտեղ պողոտայ և
ճանապարհ է լինելու, և նորան
սուրբ ճանապարհ է ասուելու.
նորա վերայ պիղծը պիտի չ՚անց-
նի. նա նորանցն է. ճանապարհը
գնացողը և տկարամիտներն էլ
9 չեն մոլորուիլ։ Այնտեղ առիւծ
չի լինիլ և դիշատիչ գազան չի
գալ նորա վերայ, և այնտեղ չի
գտնուիլ. և փրկուածները ման
10 կ՚գան։ Եւ Տիրոջ փրկուածները
ետ պիտի դառնան, և գան Սիօն
բարձրաձայն երգերով, և նորանց
գլխին՝ յաւիտենական ուրախու-
թիւն. ուրախութեան ու ցնծու-
թեան են հասնելու նորանք. և
տրտմութիւնն ու հեծութիւնը
փախչելու է։

ԳԼ. ԼԶ

1 Եւ եղաւ որ Եզեկիա թագա-
ւորի տասնեւչորսերորդ տարին
վեր եկաւ Ասորեստանի Սենեքե-
րիմ թագաւորը Յուդայի բոլոր
պարսպաւոր քաղաքների վերայ
2 և առաւ նորանց։ Եւ Ասորես-
տանի թագաւորը Ռաբսակին
շատ զօրքով Լաքիսից Երուսա-
ղէմ ուղարկեց Եզեկիա թագա-
ւորի մօտ, և նա կանգնեց թափչի
ագարակի ճանապարհին՝ վերի
3 աւազանի ջրմուղի վերայ։ Եւ նո-
րանց մօտ դուրս եկան Քեղկիայի
որդի Եղիակիմը, պալատի վերա-
կացուն և Սեբնա ատենադպիրը,
և յիշատակաց դպիր Ասափի որ-
դի Յովաքը։
4 Եւ Ռաբսակն ասեց նորանց.
ասեցէք Եզեկիային. Այսպէս է
ասում մեծ թագաւորը՝ Ասո-
րեստանի թագաւորը. Ի՞նչ է այդ
յոյսը, որի վերայ դու ապաւի-
նել ես։ Ես ասում եմ, թէ Մի-
այն շրթունքի խօսքեր են դորանք՝
թէ խորհուրդ ու զօրութիւն սա-
նիմ պատերազմի համար. Հիմա
ո՞ւմ ապաւինեցիր որ ինձանից
ապստամբուեցիր։ Ահա դու ա-
պաւինել ես այն ջախջախուած
եղէգի ցուպին՝ Եգիպտոսին, որ
եթէ մէկ մարդ նորա վերայ կռնէ,
ձեռքը կ՚մտնէ և նորան կ՚ծակէ.
այսպէս է Եգիպտոսի Փարաւօն
թագաւորը բոլոր իրան ապաւի-
նողների համար։ Բայց եթէ ինձ
ասես թէ Մենք մեր Եհովայ Ա-
ստուծուն ենք ապաւինել. մի՞թէ
դա այն չէ, որի բարձրաւանդակ-
ները և սեղանները Եզեկիան վեր-
ցրեց և Յուդային ու Երուսաղէ-
մին ասեց. Մի՞այն այս սեղանի ա-
ռաջին երկրպագութիւն արէք։
Արդ ուրեմն *դաշինք դիր իմ
տիրոջ՝ Ասորեստանի թագաւորի
հետ. և ես քեզ երկու հազար
ձի տամ, եթէ դու կարող ես
նորանց վերայ հեծնողներ դնել։
Ապա ի՞նչպէս ես կարող դէմ
դնել իմ տիրոջ փոքրիկ ծառա-
ներից մէկ կուսակալին, որ դու
կառքերի և ձիերի համար Եգիպ-
տոսին ես ապաւինում։ Եւ հի-
մա արդե՞օք ես առանց Եհովայի
եմ եկել այս երկրի վերայ նո-
րան աւերելու համար. Եհովան
ինձ ասեց. Գնա այն երկրի վերայ
և նորան աւերիր։
Եւ Եղիակիմն ու Սեբնան և
Յովաքն ասեցին Ռաբսակին. Խնդ-
րում ենք ծառաներիդ հետ †Ա-
սորերէն խօսիր, որովհետև մենք
հասկանում ենք, և մեզ հետ
Եբրայեցերէն մի խօսիր պարսպի
վերայ եղող ժողովրդի ականջի
առաջին։ Եւ Ռաբսակն ասեց. Մի՞-
թէ քո տիրոջ և քեզ մօտ է ու-
ղարկել ինձ իմ տէրը այս խօս-
քերը խօսելու. չէ՞ որ այս մարդ-

*Կամ՝ մրցիր. ոմանք՝ պատանդ տուր
†Քաղդէարէն.

կանց համար, որոնք պարսպի վե-
րայ նստած են ձեզ հետ որ ի-
րանց աղբն են ուտելու և իրանց
մէզը խմելու։
13 Եւ Ռաբսակը կանգնեց և մեծ
ձայնով աղաղակեց Եբրայեցե-
րէն և ասեց. Լսեցէք մեծ թա-
գաւորի՝ Ասորեստանի թագաւո-
14 րի խօսքը. Թագաւորը այսպէս է
ասում. Եզեկիան ձեզ չ՚խաբէ,
որովհետև նա կարող չէ ձեզ ա-
15 զատել։ Եւ Եզեկիան ձեզ Եհո-
վային չ՚յուսացնէ ասելով. Եհո-
վան մեզ անպատճառ ազատե-
լու է, և այս քաղաքը պիտի չը
տրուի Ասորեստանի թագաւո-
16 րի ձեռքը։ Եզեկիային մի լսէք,
որովհետև Ասորեստանի թագա-
ւորը այսպէս է ասում. Ինձ հետ
հաշտութիւն արէք, և դուրս ե-
կէք ինձ մօտ, և ամեն մարդ իր
որթիցը և ամեն մարդ իր թզե-
նուցն ուտէ, և ամեն մարդ իր
17 ջրհորի ջրիցը խմէ։ Մինչև որ ես
գամ և ձեզ տանեմ ձեր երկրի
պէս մի երկիր՝ ցորենի ու գինիի
երկիր, հացի ու այգիների եր-
18 կիր։ Մի դուցէ Եզեկիան ձեզ
խաբէ ասելով թէ Եհովան մեզ
ազատելու է։ Մի՞թէ փրկեցին
այն ազգերի աստուածները՝ ա-
մեն մէկն իր երկիրը Ասորեստա-
19 նի թագաւորի ձեռքիցը։ Ո՞ւր
են Եմաթի և Արփադի աստուած-
ները. ո՞ւր են Սեփարուիմի աստ-
ուածները, որ ազատէին Սամա-
20 րիան իմ ձեռքից։ Ո՞րն է այս
երկիրների բոլոր աստուածների-
ցը, որ ազատած լինեն իրանց եր-
կիրը իմ ձեռքից, որ Եհովան էլ
Երուսաղէմն ազատէր իմ ձեռ-
21 քից։ Եւ նորանք լռեցին և պա-
տասխան չ՚տուին. որովհետև
թագաւորը հրաման էր արել ա-
սելով. Նորան չ՚պատասխանէք։
22 Եւ Քեղկիայի որդի Եղիակիմը
պալատի վերակացուն և Սեբնա
ատենադպիրը և Ասափի որդի Յո-
վաքը յիշատակաց դպիրը գնա-
ցին իրանց հանդերձները պատա-
ռելով Եզեկիայի մօտ և նորան
պատմեցին Ռաբսակի խօսքերը։

ԳԼ. ԼԷ

Եւ եղաւ երբոր Եզեկիա թա- 1
գաւորը լսեց, պատառեց իր հան-
դերձները և քուրձ հագաւ ու
գնաց Տիրոջ տունը։ Եւ պալա- 2
տի վերակացու Եղիակիմին և ա-
տենադպիր Սեբնային և քահա-
նաների ծերերին քուրձեր հա-
գած ուղարկեց Ամովսի որդի Ե-
սայիա մարգարէի մօտ։ Եւ նո- 3
րանք ասեցին նորան. Այսպէս է
ասում Եզեկիան. Նեղութեան
և կշտամբանքի ու նախատինքի
օր է, որովհետև երեխաները հա-
սել են ծննդեան կէտին, բայց
ոյժ չ՚կայ ծնելու։ Թերևս լսէ քո 4
Աստուածը Ռաբսակի խօսքերը,
որին իր տէրը՝ Ասորեստանի թա-
գաւորն ուղարկեց կենդանի Ա-
ստուծուն նախատելու և այնպի-
սի խօսքերով կշտամբելու, որոնք
լսել է քո Տէր Աստուածը. ու-
րեմն աղօթք արա գտնուող մնա-
ցորդի համար։ Եւ Եզեկիա թա- 5
գաւորի ծառաները եկան Եսա-
յիայի մօտ։ Եւ Եսայիան ասեց 6
նորանց. Այսպէս ասեցէք ձեր տի-
րոջը, Տէրը այսպէս է ասում.
Մի վախենար այն խօսքերից, որ
լսեցիր, որով հայհոյեցին ինձ Ա-
սորեստանի թագաւորի ծառա-
ները։ Ահա ես նորա վերայ մի 7
ոգի կ՚ուղարկեմ, և նա մի լուր
կ՚լսէ և ետ կ՚դառնայ իր երկի-
րը, և ես սրով կ՚կործանեմ նո-
րան իր երկրումը։
Եւ Ռաբսակը ետ դառաւ և 8
գտաւ Ասորեստանի թագաւորին
Լեբնայի հետ պատերազմելիս,
որովհետև լսել էր թէ չուել էր
Լաքիսից։ Եւ նա լսել էր Եթով- 9
պացիների թագաւոր Թարակայի
մասին ասելով. Ահա գալիս է
քեզ հետ պատերազմելու. և
դեսպաններ ուղարկեց Եզեկիա-
յի մօտ ասելով. Այսպէս ասե- 10
ցէք Եզեկիային՝ Յուդայի թա-
գաւորին՝ ասելով թէ Թող քո
Աստուածը քեզ չ՚խաբէ, որին
դու ապաւինել ես ասելով. Ե-
րուսաղէմը պիտի չ՚տրուի Ասո-
րեստանի թագաւորի ձեռքը։

11 Ահա դու լսեցիր թէ ինչ են արել
Ասորեստանի թագաւորները բո-
լոր երկիրներին՝ նորանց ընաջինջ
անելով. և դո՞ւ կ'ազատուիս։
12 Մի՞թէ ազգերի աստուածները
ազատեցին նորանց, որոնց փչա-
ցրին իմ հայրերը՝ Գովզանը, Խա-
ռանը, Ռեսեփը և Թելասարում ե-
13 ղող Եդեմի որդկանցը։ Ո՞ւր է
Եմաթի թագաւորը, Արփադի
թագաւորը, Սեփարուիմ քաղա-
քի, Անայի և Աւայի թագաւորը։
14 Եւ Եզեկիան առաւ նամակա-
նիքը դեսպանների ձեռքից և
կարդաց նորան, և վեր գնաց Տի-
րոջ տունը և Եզեկիան տարա-
15 ծեց նորան Տիրոջ առաջին։ Եւ
Եզեկիան աղաչեց Տիրոջն ասե-
16 լով. Ով Զօրաց Տէր՝ Իսրայէլի
Աստուածը, որ նստած ես քե-
րովբէների վերայ, դու ես միայն
Աստուածը երկրի բոլոր թագա-
ւորութիւնների համար, դու ես
ստեղծել երկինքն ու երկիրը։
17 Խոնարհեցրու, Տէր, քո ականջը
և լսիր. բաց, ով Տէր, քո աչ-
քերը և տես. և լսիր Սենեքերի-
մի բոլոր խօսքերը, որ ուղարկեց
կենդանի Աստուծուն նախատե-
18 լու։ Արդարև, ով Տէր, Ասորես-
տանի թագաւորները աւերել են
բոլոր ազգերը և նորանց երկիրը.
19 Եւ նորանք այրել են նորանց
աստուածները կրակով, որովհե-
տև նորանք աստուածներ չէին,
այլ մարդի ձեռքի գործ՝ փայտ
ու քար. ուրեմն նորանց փչացը-
20 րին էլ։ Բայց արդ, ով Տէր մեր
Աստուած, մեզ ազատիր նորա
ձեռքիցը, որ երկրի ամեն թա-
գաւորութիւնները իմանան, որ
միայն դու կաս Եհովայ։
21 Եւ Ամովսի որդի Եսայիան մարդ
ուղարկեց Եզեկիայի մօտ ասե-
լով. Այսպէս է ասում Իսրա-
յէլի Տէր Աստուածը. որ աղա-
չեցիր ինձ Ասորեստանի թագա-
22 ւորի մասին, Սա է այն խօսքը որ
Տէրն ասում է նորա մասին.
Քեզ անարգեց, քեզ ծաղրեց Սիօ-
նի կոյս աղջիկը.
Քո ետևից գլուխը շարժեց Ե-
րուսաղէմի աղջիկը։
Ո՞ւմ նախատեցիր և հայհոյեցիր, 23
Եւ ո՞ւմ վերայ ձայն բարձրացրիր.
Եւ աչքերդ վեր հանեցիր Իսրա-
յէլի Սուրբի՝ վերայ։
Քո ծառաների ձեռքովը նախա- 24
տեցիր Տիրոջը և ասեցիր.
Իմ կառքերի շատութիւնովը վեր
ելայ սարերի բարձրութեան
վերայ,
Լիբանանի կողմերը.
Եւ կտրում եմ նորա բարձր ե-
ղևինները,
Ե- նորա ընտիր մայրերը.
Եւ մտնում եմ նորա ծայրի վերևը,
Նորա Կարմեղոսի անտառը։
Ես փորեցի և ջուր խմեցի, 25
Եւ իմ ոտների թաթերովը կը
չորացնեմ
Եգիպտոսի բոլոր դետերը։
Մի՞թէ չես լսել որ ես եմ վա- 26
ղուց արել այդ,
Եւ հին օրերից դորան ձևակեր-
պել.
Հիմա բերի այդ,
Որ աւերակների հողակոյտների
դարձնես պարսպաւոր քա-
ղաքները։
Եւ նորանց բնակիչները՝ ձեռքը 27
կարճացած,
Զարհուրեցին և ամաչեցին
Եւ եղան դաշտի խոտ
Եւ կանաչ բանջար
Եւ կտուրի խոտ,
Եւ մի արտ՝ հասկը քշելուց ա-
ռաջ։
Բայց ես գիտեմ քո բնակութիւ- 28
նը, քո ելքն ու քո մուտքը,
Եւ քո բարկութիւնը ինձ դէմ։
Քո ինձ դէմ ունեցած բարկու- 29
թեան համար,
Եւ որովհետև քո ամբարտաւա-
նութիւնը հասել է իմ ա-
կանջներին,*
Ես էլ դնում եմ իմ կարթը քո
քթին, և իմ սանձը քո բեր-
նին,
Եւ քեզ ետ եմ դարձնում քո
եկած ճանապարհովը։
Եւ ահա սա քեզ նշան. 30
Կերէք այս տարի թափուածից
բուսածը,
Եւ երկրորդ տարին ինքնիրանից
բուսածը,

Իսկ երրորդ տարին սերմեցէք ու
հնձեցէք,
Եւ այգիներ տնկեցէք ու նորանց
պտուղը կերէք։
31 Եւ Յուդայի տան ազատուած
մնացորդը
Կրկին արմատ կ'արձակէ դէպի
ցած.
Եւ պտուղ կ'տայ վերևումը։
32 Որովհետև Երուսաղէմից դուրս
կ'գայ մնացորդ,
Եւ փրկուածներ՝ Սիօն սարիցը.
Սա Զօրաց Տիրոջ նախանձն է
անելու։
33 Սորա համար այսպէս է ասում
Տէրը
Ասորեստանի թագաւորի մասին.
Նա այս քաղաքը չի մտնիլ,
Եւ մի նետ չի գցիլ այստեղ,
Եւ նորա առաջը չի գալ վահանով,
Եւ նորա դէմ պատնէշ պիտի
չ'կանգնեցնէ։
34 Իր եկած ճանապարհովը ետ
պիտի դառնայ,
Եւ այս քաղաքը չի մտնիլ,
Ասում է Տէրը։
35 Եւ ես պիտի պաշտպանեմ այդ
քաղաքը,
Որ ազատեմ դորան,
Ինձ համար և իմ ծառայ Դա-
ւիթի համար։
36 Եւ Տիրոջ հրեշտակը դուրս
եկաւ և զարկեց Ասորեստանցի-
ների բանակում հարիւր ութ-
սունևհինգ հազար. և երբոր ա-
ռաւօտը վեր կացան, և ահա
37 բոլորը մեռած դիակներ էին։ Եւ
Ասորեստանի Սենեքերիմ թա-
գաւորը չուեց գնաց դարձեալ և
38 նստեց Նինուէում։ Եւ երբոր
նա երկրպագում էր իր աստու-
ծուն Նեսրոքի տանը, նորա որ-
դիքը՝ Ադրամելէքը և Սարասարը
սպանեցին նորան սրով և իրանք
փախան Արարատի երկիրը։ Եւ
նորա որդի Ասարդանը թագաւոր
եղաւ նորա տեղ։

ԳԼ. ԼԸ

1 Այն օրերը հիւանդացաւ Եզե-
կիան մերձ ի մահ, և Ամովսի որ-
դի Եսայիա մարգարէն եկաւ նո-
րա մօտ և նորան ասեց. Այսպէս
է ասում Տէրը. Կտակդ արա քո
տան մասին, որովհետև դու պի-
տի մեռնես և չ'ապրես։ Եւ Եզե- 2
կիան իր երեսը դարձրեց դէպի
պատը և աղօթք արաւ Տիրոջը,
Եւ ասեց. Աղաչեմ, Տէր, յիշիր 3
որ քո առաջին հաւատարմու-
թեամբ և կատարեալ սրտով
գնացի և քո աչքերին հաճելի
եղածն արի։ Եւ Եզեկիան մեծ
լացով լացաւ։
Եւ Տիրոջ խօսքն եղաւ Եսա- 4
յիային ասելով. Գնա և ասիր 5
Եզեկիային թէ Այսպէս է ասում
Տէրը՝ քո հայր Դաւիթի Աստ-
ուածը. Քո աղօթքը լսեցի, քո
արտասուքը տեսայ. ահա ես պի-
տի աւելացնեմ քո օրերի վերայ
տասնևհինգ տարի։ Եւ քեզ պի- 6
տի ազատեմ Ասորեստանի թա-
գաւորի ձեռքիցը, և այս քաղա-
քը պիտի պաշտպանեմ։ Եւ սա 7
քեզ նշան լինի Տէրիցը, որ Տէրը
անելու է այս բանը, որ ասել է.
Ահա ես ետ պիտի դարձնեմ ա- 8
ստիճանների ստուերը, որ իջել է
Աքազի արևի ժամացոյցի աստի-
ճաններովը, տասը աստիճան։ Եւ
արևը ետ դառաւ տասը աստի-
ճան այն իջած աստիճաններովը։
Յուդայի թագաւոր Եզեկիայի 9
գրուածքը՝ երբոր հիւանդացաւ
և հիւանդութիւնիցն առողջա-
ցաւ։
Ես ասեցի. Իմ օրերի հանգիստ 10
ժամանակին պիտի գնամ գերեզ-
մանի դռները, պիտի զրկուիմ իմ
տարիների մնացորդիցը։ Ասեցի. 11
Տիրոջը չեմ տեսնելու՝ Տիրոջը՝
կենդանեաց երկրումը. մարդի
չեմ նայելու այլ ևս հանդերձ-
եալի բնակիչների հետ միասին։
Իմ *շրջանը չուում է, և փո- 12
խադրվում է ինձանից հովիւի
վրանի նման. ես կտրեցի իմ
կեանքը ոստայնանկի պէս. նա ինձ
կտրեց առէչիցը. ցերեկից մինչև
գիշերը ինձ կ'վերջացնես։ Սպա- 13
սեցի մինչև առաւօտը, ինչպէս
առիւծը՝ նա այնպէս կոտրատում

*Կամ՝ բնակարանը

է իմ բոլոր ոսկորները. ցերեկից
մինչև գիշերը ինձ կ'վերջացնես։
14 Կռունկի պէս՝ ծիծեռնակի պէս
ճվճվում էի, մնչում էի աղաւ-
նիի պէս, աչքերս նուաղում էին
դէպի վեր. ով Տէր, տագնապ
ունիմ, օգնիր ինձ։
15 Ի՞նչ ասեմ, որ նա ինձ ասեց
և նա էլ արաւ. կամաց պիտի
գնամ իմ բոլոր տարիներումը
16 իմ հոգիի ցաւի համար։ Ով
Տէր, նորանցով ապրում են նո-
րանք. և նորանց բոլորի մէջ է
իմ հոգիի կեանքը. և դու ինձ
17 բժշկեցիր և ապրեցրիր։ Ահա խա-
ղաղութեան համար դառնու-
թիւն եղաւ ինձ՝ դառնութիւն,
բայց դու սիրեցիր իմ անձը ոչնչա-
նալու գուբիցը հանելով, որով-
հետև բոլոր մեղքերս մէջքիդ
18 ետևը գցեցիր։ Որովհետև գե-
րեզմանը քեզ չի գովիլ, մահը
քեզ չի օրհնաբանիլ. գուբն իջ-
նողները չեն յուսալ քո ճշմար-
19 տութեանը։ Ապրողը՝ ապրողն է
քեզ օրհնելու, ինչպէս ես այսօր.
հայրը որդկանցը պիտի իմացնէ
20 քո ճշմարտութիւնը։ Տէրը պատ-
րաստ է ինձ օգնելու. ուրեմն իմ
երգերը լարաւոր նուագարաններ-
ով նուագենք, մեր կեանքի բո-
լոր օրերումը Տիրոջ տան մէջ։
21 Եւ Եսայիան ասել էր որ չոր
թուզեր առնեն և սպեղանի շի-
նեն վէրքի վերայ և կ'առողջա-
22 նայ։ Եւ Եզեկիան ասել էր. Ի՞նչ
է այն նշանը թէ Տիրոջ տունն
եմ վեր գնալու։

ԳԼ. ԼԹ

1 Այն ժամանակը Բաղադանի որ-
դի Մարովդաք-բաղադանը՝ Բա-
բիլոնի թագաւորը՝ նամականիք
և ընծայ ուղարկեց Եզեկիային,
որ լսել էր թէ հիւանդ էր և
2 առողջացել է։ Եւ Եզեկիան ու-
րախացաւ նորանց վերայ, և ցոյց
տուաւ նորանց իր գանձերի տու-
նը՝ արծաթը և ոսկին և խնկե-
ղէնները և պատուական իւղը և
իր զէնքերի բոլոր տունը և ամեն
ինչ որ գտնվում էր նորա գան-
ձարաններումը. մէկ բան չ'կար
որ Եզեկիան ցոյց տուած չ'լինէր
նորանց իր տանը և իր բոլոր թա-
գաւորութիւնումը։
Եւ Եսայիա մարգարէն եկաւ 3
Եզեկիա թագաւորի մօտ և ասեց
նորան. Ի՞նչ են ասում այս մար-
դիկը, և ո՞րտեղից են եկել քեզ
մօտ։ Եւ Եզեկիան ասեց. Հեռու
երկրից՝ Բաբիլոնից են եկել ինձ
մօտ։ Եւ նա ասեց. Ի՞նչ տեսան 4
քո տանը։ Եւ Եզեկիան ասեց.
Ամեն ինչ որ կայ տանս մէջ՝ տե-
սան. մի բան չ'կայ որ ցոյց տուած
չ'լինեմ նորանց իմ գանձարա-
նումը։ Եւ Եսայիան ասեց Եզե- 5
կիային. Լսիր Զօրաց Տիրոջ խօս-
քը։ Ահա օրեր կ'գան որ ամեն 6
ինչ որ կայ քո տանը և ինչ որ
գանձեցին քո հայրերը մինչև այս-
օր, պիտի տարուին Բաբիլոն. մէկ
բան պիտի չ'մնայ ասում է Տէրը։
Եւ քո որդիներիցը, որոնք քեզա- 7
նից յառաջ կ'գան, որոնց դու
կ'ծնես, կ'առնեն, և նորանք ներ-
քինիներ կ'դառնան Բաբիլոնի
թագաւորի պալատումը։ Եւ Ե- 8
զեկիան Եսայիային ասեց. Տիրոջ
խօսքը՝ որ դու ասեցիր, բարի է.
և ասեց. Որովհետև իմ օրերու-
մը խաղաղութիւն և ապահովու-
թիւն պիտի լինի։

ԳԼ. Խ

Մխիթարեցէք, մխիթարեցէք 1
իմ ժողովրդին, ասում է ձեր
Աստուածը. Երուսաղէմի հետ 2
սիրտը առնելով խօսեցէք. և կան-
չեցէք նորան, թէ նորա տառա-
պանքը վերջացել է, թէ նորա
անօրէնութիւնը թողուեցաւ. ո-
րովհետև նա իր բոլոր մեղքերի
համար Տիրոջ ձեռքիցը կրկնա-
պատիկ հատուցում է ստացել։
Անապատի մէջ կանչողի ձայ- 3
նը, պատրաստեցէք Տիրոջ ճանա-
պարհը, և ուղիղ արէք ամայու-
թեան մէջ շաւիղը մեր Աստու-
ծոյ համար։ Ամեն ձոր բարձրա- 4
նայ, և ամեն սար ու բլուր ցա-
ծանայ, և ծուռը ուղիղ դառ-
նայ, և խորտուբորտ տեղերը՝

5 հարթայատակ։ Եւ պիտի յայտ-
նուի Տիրոջ փառքը, և ամեն մար-
մին միասին պիտի տեսնեն. որով-
հետև Տիրոջ բերանն է խօսել։
6 Մէկ ձայն ասում է. Կանչիր.
և նա ասեց. Ի՞նչ կանչեմ. այ-
ն՝ ամեն մարմին խոտ է, և նո-
րա բոլոր վայելչութիւնը դաշտի
7 ծաղկին պէս։ Խոտը չորանում է՝
ծաղիկը թառամում, որովհետև
Տիրոջ ոգին փչեց նորա վերայ.
8 իրաւ ժողովուրդը խոտ է։ Խոտը
կ'չորանայ, ծաղիկը կ'թառամէ,
բայց մեր Աստուծոյ խօսքը կ'մը-
նայ յաւիտեան։
9 Բարձր սարի վերայ ելիր, ով
Սիօնի աւետաբերը, ձայնդ ու-
ժով բարձրացրու, ով Երուսա-
ղէմի աւետաբերը, մի վախենար,
ասիր Յուդայի քաղաքներին. Ա-
10 հա ձեր Աստուածը։ Ահա Եհո-
վայ Տէրը զօրութեամբ կ'գայ, և
նորա բազուկը կ'իշխէ նորա հա-
մար. ահա իր վարձքն իր հետ է
և իր հատուցումը՝ իր առաջին։
11 Հովիւի նման հովուելու է նա իր
հօտին, իր բազուկի վերայ է ժո-
ղովելու գառնուկներին, և իր
գրկումը կրելու է նորանց, և կա-
մաց քշելու է ծիծ տուող ոչ-
խարներին։
12 Ո՞վ չափեց ջուրերը իր ափո-
վը, և երկինքը՝ թիզովը կարգա-
դրեց, և ամփոփեց եռամասնում
երկրի հողը. և կշռեց կշռորդով
սարերը, և բլուրները՝ կշիռքով։
13 Ո՞վ քննեց Տիրոջ հոգին, և իբ-
րև նորա խորհրդական նորան
14 հասկացրե՞ց։ Ումի՞ց խորհուրդ
հարցրեց նա, որ նորան իմացնէր,
և նորան սովորեցնէր իրաւունքի
ճանապարհը, և նորան սովորե-
ցնէր գիտութիւն, և իմաստու-
թեան ճանապարհը նորան գի-
15 տեցնէր։ Ահա ազգերը դոյլին կաթ-
կաթիլին պէս են, և կշիռքի փո-
շիին հաւասար են համարվում,
ահա կղզիները վեր խաղացող
16 շամանդաղի պէս են։ Եւ Լիբա-
նանը չէ բաւական կրակի հա-
մար, և նորա անասունները ող-
ջակէզի համար բաւական չեն։
17 Բոլոր ազգերը նորա առաջին ո-
չընչի պէս են. ոչնչից էլ պակաս են
և ունայնութիւն են համարվում
նորա համար։
Ուրեմն ո՞ւմ էք նմանեցնում 18
Աստուծուն, և ի՞նչ նմանութիւն՝
հաւասարացնում նորան։ Կուռ- 19
քը արուեստաւորն է ձուլում,
և ոսկերիչը ոսկիով պատում է
նորան, և արծաթի շղթաներ է
ձուլում։ Ընծաներ տալու ան- 20
կարողը անփուտ փայտ է ընտ-
րում, իր համար մի ճարտար
արուեստաւոր է որոնում, որ նա
մի անշարժ կուռք շինէ։ Մի՞թէ 21
չ'գիտէք, մի՞թէ չ'լսեցիք, մի՞թէ
չ'պատմուեցաւ ձեզ առաջուց.
մի՞թէ չէք հասկացել երկրի հիմ-
նադրութիւնից։ Նա է երկրի շրջ- 22
ջանի վերայ նստողը, որի բնակիչ-
ները մարախների պէս են, նա է
որ երկինքը տարածում է վա-
րագոյրի պէս, և նորանց սփռել
է վրանի պէս բնակուելու հա-
մար։ Նա է իշխաններին ոչինչ շի- 23
նողը, որ երկրի դատաւորներին
ոչնչի պէս է անում։ Նորանք հա- 24
զիւ թէ տնկվում են, հազիւ թէ
ցանվում են, հազիւ թէ նորանց
բունը արմատանում է երկրում,
և նա փչում է նորանց վերայ և
նորանք չորանում են, և փոթո-
րիկը նորանց կրում է մղեղի պէս։
Ուրեմն ո՞ւմ էք ինձ նմանեցը- 25
նում, որ ես նման լինեմ, ասում
է Սուրբը։ Վեր բարձրացրէք ձեր 26
աչքերը և նայեցէք. ո՞վ է ստեղ-
ծել սորանց. նորանց զօրքերը թի-
ւով հանողը, որ նորանց ամենին
կանչում է անունով՝ մեծ իշխա-
թեամբը և սաստիկ զօրութեամ-
բը. մէկը չի կորչիլ։
Ի՞նչու համար ասում ես, ով 27
Յակոբ, և ի՞նչու ես խօսում, ով
Իսրայէլ, թէ իմ ճանապարհը
ծածկուած է Տէրիցը. և իմ Աստ-
ուածանից զանց է եղած իմ ի-
րաւունքը։ Մի՞թէ չ'գիտես, կամ 28
չե՞ս լսել, որ յաւիտենական Աստ-
ուած է Եհովան, երկրի ծայրե-
րի ստեղծողը. նա չի յոգնիլ, և
չի վաստակիլ. նորա հանճարը
անքննելի է։ Նա է յոգնածին ոյժ 29
տուողը. և նա կարողութիւն

չ'ունեցողին զօրութիւն է շա-
30 տացնում։ Եւ երիտասարդներն
կ'յոգնեն և կ'վաստակեն, և ըն-
տիրները թուլութիւնով կ'թու-
31 լանան, Բայց Տիրոջն ապաւինող-
ները կ'նորոգուին ոյժով, թևե-
րով վեր կ'սլանան արծիւների
պէս, կ'վազեն և չեն վաստակիլ,
կ'գնան և չեն յոգնիլ։

ԳԼ. ԽԱ

1 Լռեցէք ինձ մօտ, ով կղզիներ,
և ով ազգեր, նորոգուեցէք ոյ-
ժով, թող մօտենան, այն ժա-
մանակ խօսեն. միասին մօտ գանք
2 դատաստանի։ Արդարին ո՞վ զար-
թեցրեց արևելքից և կանչեց նո-
րան դէպի իր շաւիղը։ Նա ազ-
գերը գցում է նորա առաջը, և
նա թագաւորներ է նուաճում՝
փոշիի պէս դնում նորա թուրի
առաջին, և քշուած մղեղի պէս՝
3 նորա աղեղի առաջին։ Նա նո-
րանց հալածում է, անցնում
է խաղաղութիւնով, մի ճանա-
պարհով, ուր որ նա առաջ չէր
4 գնացած իր ոտքովը։ Ո՞վ գոր-
ծեց և արաւ այս. ազգերը ի սկզ-
բանէ կանչողս՝ ես Եհովաս որ
առաջինն եմ, և վերջինների հետ
էլ ես եմ։
5 Կղզիները տեսան և վախեցան,
երկրի ծայրերը դողացին, նորանք
6 մօտեցան և եկան։ Նորանց ամեն
մէկն օգնեց իր ընկերին, և իր
7 եղբօրն ասեց. Զօրացիր։ Եւ քա-
ջալերեց արուեստաւորը ոսկեր-
չին, ուռ զարկողը սալին զարկո-
ղին՝ ասելով. Կպցնելու համար
լաւ է դա, և նորան պնդացնում
է բևեռներով, որ չ'երերայ։
8 Եւ դու Իսրայէլ, իմ ծառայ,
ով Յակոբ, որ քեզ ընտրել եմ,
իմ սիրելիի՝ Աբրահամի սերուն-
9 դը. Որ քեզ առի երկրի ծայրե-
րիցը, և քեզ կանչեցի նորա ե-
զերքներիցը, և քեզ ասեցի. Դու
իմ ծառան ես. ես քեզ ընտրել
10 եմ, և քեզ չեմ մերժել։ Մի
վախենար, որովհետև ես քեզ
հետ եմ, մի վեհերիր, որովհե-
տև ես քո Աստուածն եմ. ես
զօրացրել եմ քեզ, նաև օգնել
եմ քեզ. նաև քեզ հաստա-
տել եմ իմ արդարութեան ա-
ջովը։ Ահա պիտի ամաչեն և ա- 11
մօթահար լինեն բոլոր քեզ դէմ
բորբոքուողները. ոչնչի պէս պիտի
դառնան և փչանան քեզ հետ
վիճող մարդիկը։ Դու նորանց կ'ո- 12
րոնես, բայց չես գտնիլ՝ այն քեզ
հետ կռիւ անող մարդկանցը.
ոչնչի պէս պիտի դառնան և չիք
լինեն քեզ հետ պատերազմող
մարդիկը։ Որովհետև ես Եհովաս՝ 13
քո Աստուածը՝ զօրացնում եմ
քո աջը. որ ասում եմ քեզ. Մի
վախենար, ես կ'օգնեմ քեզ։ Մի 14
վախենար, ով որդ Յակոբ, ով
Իսրայէլի խմբիկը. Ես քեզ օգ-
նելու եմ, ասում է Եհովան, և
քեզ Փրկողը Իսրայէլի Սուրբն է։
Ահա ես քեզ մի սուր, նոր, ա- 15
տամնաւոր կամնասայլ եմ շի-
նել. սարերը պիտի ոտնահար ա-
նես և փշրես, և բլուրները մղեղի
պէս անես։ Դու նորանց պիտի 16
հոսես և քամին պիտի տանէ նո-
րանց, և փոթորիկը ցիրուցան պի-
տի անէ նորանց. բայց դու Տէ-
րովը պիտի ցնծաս, և Իսրայէլի
Սուրբովը պիտի պարծենաս։
Աղքատներն ու տնանկները 17
ջուր են որոնում, և չ'կայ, նո-
րանց լեզուն ծարաւից չորացել
է. ես Եհովաս նորանց պատաս-
խան եմ տալու, Իսրայէլի Աստ-
ուածս նորանց չեմ ձգիլ։ Բլուր- 18
ների գագաթների վերայ գետեր
պիտի բանամ, և հովիտների մէջ՝
աղբիւրներ. անապատը պիտի ջրի
լիճի դարձնեմ, և չոր երկիրը՝
ջուր բղխելու տեղեր։ Անապա- 19
տումը եղևին պիտի դնեմ, սա-
տիմ, մրտենի և իւղենի ծառ.
ամայի տեղում պիտի տնկեմ
մայր, սօսի ու տօսախ մէկտեղ։
Որպէս զի տեսնեն և իմանան, և 20
մտաբերեն ու հասկանան միա-
սին, թէ Տիրոջ ձեռքն արաւ այս
բանը, և Իսրայէլի Սուրբն ստեղ-
ծեց դորան։
Մօտ բերէք ձեր դատը, ասում 21
է Տէրը, յառաջ բերէք ձեր զօ-
րաւոր փաստերը, ասում է Յակո-

22 բի թագաւորը։ Թող յառաջ
գան և մեզ իմացնեն, թէ ինչ
պիտի պատահի. ոկիզբը ի՞նչ է՝
ասեցէք, որ ուշադիր լինենք և
իմանանք վերջը, կամ թէ ա-
պագայ բաները մեզ լուր տուէք։
23 Իմացրէք ետևից եկող բաները,
և մենք էլ կ'իմանանք, թէ աստ-
ուած էք դուք. հէնց մէկ բարի
կամ մէկ չար բան գործեցէք,
որ հիանանք ու զարմանանք միա-
24 սին։ Տեսէք, դուք ոչնչից էք, և
ձեր գործքը ոչնչիցն է. գարշելի
25 է ով որ ձեզ ընտրէ։ Ես վեր
եմ կացրել հիւսիսի կողմիցը, և
նա գալիս է. արևելքիցը պիտի
կանչէ իմ անունը. և նա կոխ է
տալիս կուսակալներին ցեխի պէս.
և բրուտի պէս որ կոխ է տալիս
26 կաւը։ Ո՞վ պատմեց սկզբիցը, որ
իմանանք, և առաջուց, որ ա-
սենք՝ ճշմարիտ է. ոչ իմացնող
կայ. ոչ լուր տուող կայ, և ոչ
27 ձեր խօսքերին լսող կայ։ Առաջ
ես ասեցի Սիօնին. Ահա, ահա նո-
րանք և Երուսաղէմին աւետա-
28 բերներ տուի։ Եւ նայեցի, ու
մարդ չ'կար. և սորանցից մի խոր-
հուրդ տուող չ'կար, որոնց ես
հարցնէի, և նորանք ինձ պատաս-
29 խան տային։ Ահա նորանք ամեն-
քը սնոտի են, նորանց գործերը
փուչ են. քամի են՝ դարտակ են
նորանց ձուլածոյ կուռքերը։

ԳԼ. ԽԲ

1 Ահա իմ ծառան, որին ես հաս-
տատել եմ, իմ ընտրածը, որին
հաւանել է իմ հոգին. ես իմ
հոգին դրել եմ նորա վերայ, նա
իրաւունքը պիտի հանէ ազգերի
2 համար։ Նա չի աղաղակիլ, և
ձայն չի բարձրացնիլ, և իր ձայ-
նը լսել չի տալ դուրսումը։
3 Ջախջախած եղէգը չի փշրիլ, և
առկայծեալ պատրոյգը չի հանգ-
ցնիլ, իրաւունքը պիտի դուրս
4 բերէ ճշմարտութեամբ։ Նա չի
տկարանալ և չի թուլանալ. մին-
չև որ հաստատէ իրաւունքը երկ-
րի վերայ. և կղզիները սպասում
են նորա օրէնքին։
Այսպէս է ասում Տէր Աստ- 5
ուածը, որ ստեղծեց երկինքը և
նորան տարածեց. որ ընդարձա-
կեց երկիրը և նորանում բուսա-
ծը, որ շունչ է տալիս նորա վե-
րայ եղող ժողովրդին, և հոգի՝
նորա վերայ գնացողներին։ Ես՝ 6
Տէրս կանչել եմ քեզ արդա-
րութեամբ, և բռնում եմ քո
ձեռքը և քեզ պաշտպանում, և
քեզ պիտի ժողովրդի ուխտ շի-
նեմ և՝ ազգերի լոյս. Կոյրերի աչ- 7
քերը բանալու, բանտարկեալնե-
րին բանտից հանելու, և կապան-
քի տնից՝ խաւարի տանը նստող-
ներին։ Ես եմ Եհովան, սա է 8
իմ անունը. և ես իմ պատիւը
ուրիշին չեմ տալ. և ոչ իմ
փառքը՝ կուռքերին։ Առաջի բա- 9
ները ահա կատարուել են. և նո-
րերը ես եմ պատմում. նորանք
դեռ չ'բղխած՝ ձեզ իմացնում եմ։
Տիրոջը նոր երգ երգեցէք, նո- 10
րա գովութիւնը երկրի ծայրե-
րից, ով ծովը իջնողներ և նորան
լցնողներ, ով կղզիներ և նորանց
բնակիչները։ Զաքերը բարձրացը- 11
նեն անապատը և նորա քաղաք-
ները, այն գիւղօրայքը ուր որ
բնակվում է Կեդարը. բարձրա-
ձայն աղաղակեն *Վիմաքաղաքի
բնակիչները, սարերի գագաթիցը
ցնծան։ Պատիւ մատուցանեն Տի- 12
րոջը, և նորա փառքը պատմեն
կղզիներումը։ Տէրը դուրս է գա- 13
լու հզօրի պէս. պատերազմի մար-
դի պէս գրգռելու է իր նախան-
ձը. աղաղակելու ու նաև բարձ-
րաձայն գոչելու է, և յաղթող
է հանդիսանալու իր թշնամինե-
րի վերայ։
Ես վաղուց է լռել եմ, հան- 14
դարտ էի և ինձ զսպել էի. Բայց
հիմա ծննդականի պէս պիտի գո-
ռամ, շունչ պիտի առնեմ և
շնչեմ էլ։ Աւերակ պիտի անեմ 15
սարերն ու բլուրները, և նորանց
բոլոր խոտը պիտի չորացնեմ, և
գետերը կղզիների պէս ցամաք պի-
տի շինեմ. և լիճերը պիտի ցա-
մաքեցնեմ։ Եւ կոյրերին պիտի 16

*Եբր. Սելա. տես Գլ. ժզ. 1։

ման ածեմ իրանց չ'գիտեցած
ճանապարհովը, նորանց չ'գիտե-
ցած շաւիղներովն առաջնորդե-
լու եմ նորանց. նորանց առաջին
խաւարը լոյսի եմ դարձնելու,
դարուփոսերը՝ հաւասարի, այս
բաները պիտի անեմ սորանց, և
նորանց պիտի չ'ձգեմ։
17 Ետ պիտի քաշուին և մեծա-
պէս ամաչեն կուռքի յուսացող-
ները. որ ասում են ձուլածոյին՝
Դուք մեր աստուածներն էք։
18 Ով խուլեր, լսեցէք. և ով կոյ-
19 րեր, նայեցէք որ տեսնէք։ Ո՞վ է
կոյր՝ բացի իմ ծառան, և խուլ՝
իմ ուղարկած դեսպանի պէս.
ո՞վ է կոյր՝ նուիրեալին պէս. և
20 կոյր՝ Տիրոջ ծառային պէս։ Շատ
բաներ ես տեսել, բայց բան չես
պահել. ականջները բաց են,
21 բայց չէ լսում։ Տէրը հաւանեց
նորան իր արդարութեան համար,
օրէնքը մեծացրեց և փառաւո-
22 րեց։ Բայց նա յափշտակուած և
կողոպտուած ժողովուրդ է, նո-
րանք ամենքը որոգայթի մէջ են
ընկած փոսերում, և կալանաց
տան մէջ թագնուած են. նո-
րանք յափշտակուեցան, և ա-
ղատող չ'կայ, կողոպուտ եղան
և ասող չ'կայ թէ Ետ տուր։
23 Ձեզանում ո՞վ կայ, որ սորան
ականջ դնէ, ուշադիր լինի և լսէ
24 յետագայի համար։ Ո՞վ մատնեց
Յակոբին յափշտակուելու, և Իս-
րայէլին՝ կողոպտիչներին. չէ՞ որ
Եհովան, նա՝ որի դէմ մեղան-
չեցինք, և չ'կամեցան նորա ճա-
նապարհներովը գնալ, և որի օ-
25 րէնքը չ'լսեցին։ Եւ նա թափեց
նորա վերայ իր բարկութեան բոր-
բոքումը և պատերազմի ուժ-
գնութիւնը. և ամեն կողմից նո-
րան վառեց, բայց նա չ'իմացաւ.
և նորան այրեց, բայց նա իր ուշ-
քը չ'դարձրեց։

ԳԼ. ԽԳ

1 Եւ հիմա այսպէս է ասում Տէ-
րը՝ քո Ստեղծողը, ով Յակոբ, և
քո Արարիչը, ով Իսրայէլ. Մի
վախենար, որովհետև ես քեզ
փրկել եմ, քո անունովը կան-
չել եմ, թէ դու իմն ես։ Երբոր 2
ջրերիցն անցնես, ես քեզ հետ
եմ, և եթէ գետերովը՝ նորանք
քեզ չեն ողողիլ. երբոր գնաս
կրակի միջովը, չես այրուիլ, և
բոցը քեզ պիտի չ'վառէ։ Որով- 3
հետև ես Տէրս քո Աստուածն
եմ, Իսրայէլի Սուրբս քո Փրկիչն
եմ. ես Եգիպտոսը քեզ տեղ
փրկանք եմ տուել, Եթովպիան
և Սաբան՝ քեզ տեղ փոխարէն։
Որովհետև իմ աչքին պատուա- 4
կան երևեցար, պատիւ գտար. և
ես քեզ սիրեցի. և քո փոխարէն
մարդ պիտի տամ, և ժողովուրդ-
ներ՝ քո հոգիի փոխարէն։ Մի 5
վախենար, որովհետև ես քեզ
հետ եմ. քո սերունդը արևել-
քից եմ բերելու, և ես արև-
մուտքիցը ժողովելու եմ քեզ։
Ասելու եմ հիւսիսին. Տուր. և 6
հարաւին՝ թէ Մի արգելիր. բեր
իմ որդիներին հեռուից, և իմ
աղջիկներին՝ երկրի ծայրից. Բո- 7
լոր իմ անունով կոչուածներին,
և որոնց ես ստեղծել եմ իմ
փառքի համար, նորանց կազմե-
ցի և արի էլ։
Հանեցէք կոյր ժողովրդին, որ 8
աչքեր ունի. և խուլերին, որոնք
ականջներ ունին։ Բոլոր ազգերը 9
ժողովուին մէկտեղ, և ժողո-
վուրդները հաւաքուին. ո՞վ կայ
նորանցում որ սա իմացնէ, և ա-
ռաջի բաները մեզ լուր տայ.
Թող բերեն իրանց վկաներին որ
արդարանան, և մարդիկը լսեն և
ասեն՝ Ճշմարիտ է։ Դուք էք իմ 10
վկաները, ասում է Տէրը. և իմ
ծառան, որին ես ընտրել եմ.
որպէս զի գիտենաք և հաւատաք
ինձ, և հասկանաք որ ես եմ.
ինձանից առաջ մի աստուած չը
կազմուեցաւ, և ինձանից յետոյ
չի լինելու։ Ես՝ ես եմ Եհովայ. 11
և ինձանից ջոկ Փրկիչ չ'կայ։ Ես 12
իմացրի ու փրկեցի և լուր տուի,
և մի օտարը չ'կար ձեր մէջը.
և դուք իմ վկաներն էք, ասում
է Տէրը, որ ես եմ Աստուած։
Նաև *վաղուց ի վեր ես նոյնն 13

*Եբր. օրից

եմ, և չ'կայ իմ ձեռքից փրկող.
ես որ գործեմ, ո՞վ է որ ար-
գիլէ։
14 Այսպէս է ասում Տէրը՝ ձեր
Փրկիչը՝ Իսրայէլի Սուրբը. Ձեր
պատճառովն ուղարկեցի Բարի-
լոն, և նորանց ամենը ցած իջեցրի
իբրև փախստականներ, և Քաղ-
դէացիներին իրանց ցնծութեան
15 նաւերովը։ Ես եմ Եհովայ՝ ձեր
Սուրբը, Իսրայէլի Ստեղծողը՝
16 ձեր Թագաւորը. Այսպէս է ա-
սում Եհովան, որ ծովումը ճա-
նապարհ է շինում և զօրաւոր
17 ջրերի մէջ՝ ուղի. Որ դուրս է
բերում կառքն ու ձին, և զօրքն
ու ոյժը. միասին կ'պառկեն, բայց
վեր չեն կենալ. նորանք պատ-
բոյգի պէս կ'հանգչեն ու կ'անց-
18 նեն։ Առաջինները մի յիշէք. և
19 հին բաները մի մտաբերէք։ Ահա
ես նոր բան եմ անում. հիմա
կ'յայտնուի. մի՞թէ չէք իմանալ։
Նաև մի ճանապարհ եմ շինե-
լու անապատումը, ամայի տեղե-
20 րումն էլ՝ գետեր։ Ինձ պիտի փա-
ռաւորեն դաշտի գազանները,
չագալները և ջայլամները. որով-
հետև ջուր պիտի տամ անա-
պատումը, գետեր՝ ամայի տեղե-
րումը, իմ ընտրեալ ժողովրդին
21 խմեցնելու համար։ Այն ազգը,
որ ես կազմել եմ ինձ համար,
պիտի պատմէ իմ օրհնաբանու-
թիւնը։
22 Բայց ոչ թէ ինձ կանչեցիր,
ով Յակոբ, այլ դու ինձանից
23 ձանձրացար, ով Իսրայէլ։ Դու
ինձ համար չես բերել քո ողջա-
կէզների ոչխարները, և քո զո-
հերովը չ'փառաւորեցիր ինձ. ես
քեզ չ'ծառայեցրի ընծայով, և
քեզ չ'վաստակեցրի կնդրուկով։
24 Դու ինձ համար արծաթով
խնկեղէգ չես առել, և քո զո-
հերի ճարպովը ինձ չես կշտա-
ցրել, այլ դու ինձ նեղացրել
ես քո մեղքերովը, և ինձ վաս-
տակեցրել ես քո անօրէնութիւն-
25 ներովը։ Ես՝ ես եմ, որ ջնջում
եմ քո յանցանքները իմ պատ-
ճառով և քո մեղքերը չեմ յի-
26 շում։ Յիշեցրու ինձ, միասին
դատուինք. դու պատմիր, որպէս
զի արդարանաս։ Քո նախահայրը 27
մեղք գործեց, և քո բարեխօս-
ները ապստամբուեցին ինձ դէմ։
Եւ ես պիղծ համարեցի սրբարա- 28
նի իշխաններին և Յակոբը նզովք
շինեցի, և Իսրայէլը՝ նախատինք։

ԳԼ. ԽԴ

Եւ հիմա ականջ դիր, ով իմ 1
ծառայ Յակոբ, և ով Իսրայէլ,
որին ես հաւանել եմ։ Այսպէս 2
է ասում Եհովան՝ քեզ Ստեղ-
ծողը, քեզ արգանդից կազմողը,
որ քեզ օգնում է. Մի վախե-
նար, ով իմ ծառայ Յակոբ, և
ով *Յեսուրուն, որին ես հաւա-
նել եմ։ Որովհետև ջուր պիտի 3
թափեմ ծարաւի վերայ, և հե-
ղեղներ՝ չորութեան վերայ, ես
պիտի թափեմ իմ հոգին քո սե-
րունդի վերայ, և իմ օրհնու-
թիւնը՝ քո զաւակների վերայ։
Եւ նորանք պիտի ծլեն խոտերի 4
մէջ, ինչպէս ուռիները ջրերի
վտակների մօտ։ Սա պիտի ասէ. 5
Ես Տիրոջն եմ. նա պիտի Յակոբի
անունովը կոչուի, և միւսը իր
ձեռքովը պիտի գրէ. Տիրոջն եմ
ես. և Իսրայէլի անունովը պիտի
մականուանուի։
Այսպէս է ասում Տէրը՝ Իսրա- 6
յէլի Թագաւորը, և նորա Փրկիչը՝
Զօրաց Տէրը. Ես եմ առաջինը,
և ես եմ վերջինը. և ինձանից
ջոկ Աստուած չ'կայ։ Եւ ո՞վ կայ 7
ինձ նման որ կանչէ, թող իմա-
ցնէ և կարգադրէ ինձ համար,
իմ յաւիտենական ժողովուրդ
շինելուց հետէ. Թող ապագայ
բաները, որ կատարուելու են,
իմացնեն մեզ։ Մի զարհուրիք և 8
մի վեհերիք. չէ՞ որ ես քեզ վա-
ղուց լուր տուի, և ասեցի թէ
Դուք իմ վկաներն էք. մի՞թէ
ինձանից ջոկ Աստուած կայ. և
մէկ վէմ չ'կայ. ես չ'գիտեմ։
Կուռք շինողների ամենքն էլ ու- 9
նայնութիւն են, և նորանց ցան-
կալիքը անպիտան են. և իրանց

*Այսինքն՝ Իսրայէլ

վկաներն իրանք են. նորանք չեն
տեսնում և չեն իմանում, որ
10 ամաչեն։ Ո՞վ է որ աստուած է
շինում, և կուռք է ձուլում,
11 որ անպիտան է։ Ահա նորա բո-
լոր ընկերները պիտի ամաչեն, և
նորա արուեստաւորներն իրանց
մարդկանցից են. թող ժողովուին
ամենքը կանգնեն, նորանք պիտի
12 սարսափեն՝ ամաչեն միասին։ Եր-
կաթագործը ածուխով շինում
է տապարը, և կռաններով ձե-
ւակերպում է *նորան, և իր զօ-
րաւոր բազուկովը շինում է նո-
րան. նա սովածանում էլ է, և
ոյժը թուլանում, նա ջուր չէ
13 խմում և նուազում է։ Փայ-
տագործը քաշում է լարը և մա-
տիտով գծագրում է նորան, նո-
րան շինում է դուրով և գծա-
գրում կարկինով, և նորան մար-
դի կերպարանքի պէս շինում,
մարդի գեղեցկութեան նման, որ
14 տանը բնակուէ։ Մէկն իրան հա-
մար կտրում է եղևիններ, և առ-
նում է թեղօշ ու կաղնի, և
ընտրում է իրան համար անտա-
ռի փայտերիցը, նա տնկում է
սոճին, և անձրևը աճեցնում է։
15 Եւ նա մարդիս համար վառելիք
է լինում. և նա առնում է նո-
րանցից և տաքանում, նաև վա-
ռում է և հաց թխում, աստ-
ուած էլ է շինում նորանից և
երկրպագում նորան. նա կուռք
է շինում նորանից և նորան
16 պաշտում։ Նորա կէսը նա այ-
րեց կրակով, նորա կէսի վերայ
էլ միս եփեց կերաւ, խորոված
խորովեց ու կշտացաւ, տաքա-
նում էլ է և ասում. Ահա՛,
17 տաքացայ, կրակը տեսայ։ Եւ նո-
րա մնացածն իրան կուռք աստ-
ուած է շինում, նորան պաշ-
տում, նորան երկրպագում, և
նորան աղօթք անում և ասում.
Փրկիր ինձ, որովհետև դու ես
18 իմ աստուածը։ Նորանք չեն ի-
մանում և չեն հասկանում, ո-
րովհետև ծեփուած են նորանց
աչքերը որ չ՛տեսնեն, և նորանց
սրտերը՝ որ չ՛իմանան։ Եւ նա 19
միտք չէ անում, և գիտութիւն
չ՛ունի ու հասկացողութիւն չ՛ու-
նի, որ ասէ. Նորա կէսը ես այ-
րեցի կրակով, և նորա կայծերի
վերայ հաց էլ թխեցի, միս խո-
րովեցի ու կերայ. և մնացածը
գարշելի բան շինե՞մ, և փայտի
կոճը պաշտե՞մ։ Նա փոշիի ետևից 20
է ընկած, նորա խաբուած սիրտը
մոլորեցրել է նորան, և նա չէ
կարողանում իր հոգին ազատել,
և չէ ասում թէ Մոլորութիւն
չէ՞ իմ աջ ձեռքինը։ Յիշիր այս, 21
ով Յակոբ, և դու, ով Իսրայէլ,
որովհետև դու իմ ծառան ես.
ես քեզ ստեղծեցի, դու իմ ծա-
ռան ես, ով Իսրայէլ, դու ին-
ձանից չես մոռացուած։ Ես մէգի 22
պէս ջնջել եմ քո յանցանքնե-
րը, և ամպի պէս՝ քո մեղքերը.
դարձիր դէպի ինձ, որովհետև ես
քեզ փրկել եմ։

Ցնծացէք, ով երկինք, որով- 23
հետև Տէրն է արել. ցնծալով
աղաղակեցէք, ով երկրի խորքե-
րը. ուրախալից ձայներ հանեցէք,
ով սարեր, ով անտառ և բոլոր
նորա միջի ծառեր. որովհետև
Տէրը փրկել է Յակոբին, և նա
Իսրայէլի մէջ փառաւորուած է։

Այսպէս է ասում Տէրը՝ քո 24
Փրկիչը, քեզ արգանդից Ստեղ-
ծողը, ես եմ Եհովան, ամեն բա-
նը անողը, երկինքը մինակ տարա-
ծողը ես եմ, ես ինքս ինձանից
երկիրը ընդարձակեցի. Որ ստա- 25
խօսների նշանները փչացնում եմ,
և գուշակողներին յիմարացնում,
որ իմաստուններին ետ եմ դար-
ձնում, և նորանց գիտութիւնը
յիմարացնում, Որ հաստատում 26
եմ իմ ծառայի խօսքը, և իմ
դեսպանների խորհուրդը կատա-
րում, որ ասում եմ Երուսաղէ-
մին թէ Պիտի բնակուիս, և Յու-
դայի քաղաքներին՝ թէ Պիտի
շինուիք. և կանգնեցնում եմ
նորա աւերակները. Որ ասում 27
եմ յորձանքին՝ Զորացիր. և ցա-
մաքեցնում եմ քո գետերը. Որ 28
ասում եմ Կիւրոսին թէ Իմ հո-
վիւն ես. և իմ բոլոր կամքը նա

*Այսինքն՝ կուռքը. տես հմր. 10։

պիտի կատարէ, և պիտի ասէ
Երուսաղէմին թէ Շինուիր, և
տաճարին թէ Հիմնուիր։

ԳԼ. ԽԵ

1 Այսպէս է ասում Տէրը իր օծ-
եալին՝ Կիւրոսին, որին ես բռնել
եմ աջ ձեռքիցը, որ ազգերը
իջեցնեմ նորա առաջին, և թա-
գաւորների երանքները թուլա-
ցընեմ, որ բանամ նորա առա-
ջին դռների փեղկերը, և դռնե-
2 րը նորա առաջին չ՛կապուին։ Ես
պիտի դնամ քո առաջից, և
խորտուբորտ տեղերը պիտի հա-
ւասարեցնեմ, պղնձի դռները
պիտի փշրեմ, և երկաթի նիգե-
3 րը պիտի կոտրատեմ։ Եւ քեզ
պիտի տամ խաւարի միջի գան-
ձերը. և ծածուկ տեղերում
պահուած հարստութիւնները,
որպէս զի իմանաս թէ ես եմ Ե-
հովան, որ կանչեցի քեզ քո ա-
նունովը՝ Իսրայէլի Աստուածս.
4 Իմ ծառայ Յակոբի համար, և
իմ ընտրեալ Իսրայէլի համար՝
կանչեցի քեզ քո անունովը, ես
քեզ մականուն դրի, թէև ինձ
5 չէիր ճանաչում։ Ես եմ Տէրը,
և ուրիշը չ՛կայ. ինձանից ջոկ
Աստուած չ՛կայ. ես քեզ օգնե-
ցի, թէև դու ինձ չէիր ճանա-
6 չում. Որպէս զի իմանան արևել-
քից և արևմուտքից, որ ինձա-
նից ջոկ մէկը չ՛կայ. ես եմ Տէ-
7 րը, և ուրիշը չ՛կայ. Որ հաստա-
տում եմ լոյսը և ստեղծում
խաւարը. որ անում եմ խաղա-
ղութիւնը և ստեղծում չարիքը.
ես Տէրս եմ այս բոլորն անողը։
8 Յօղացէք վերևից, ով երկինք-
ներ, և նօսր ամպերը արդարու-
թիւն շաղ տան, երկիրը բացուի,
և ծաղկի փրկութիւն, և արդա-
րութիւն ծլի միասին. ես Եհո-
վաս եմ ստեղծել այն։
9 Վա՛յ իր Արարչի հետ վիճո-
ղին, խեցիների հետ մի խեցի
երկրիցը. մի՞թէ կաւը կ՛ասէ իր
կազմողին թէ Ի՞նչ ես անում,
և քո գործքը քո մասին, թէ Նա
10 ձեռք չ՛ունի։ Վա՛յ իր հօրն ա-
սողին թէ Ի՞նչ ես ծնում, և կը-
նոջը՝ թէ Ի՞նչ ես երկունք քա-
շում։

Այսպէս է ասում Եհովան. 11
Իսրայէլի Սուրբը և նորա Արարի-
չը, ապագայ բաներն ինձանից
հարցրէք, իմ որդկանց և իմ
ձեռքի գործքի համար ինձ պատ-
ուիրեցէք։ Ես եմ շինել երկիրը 12
և մարդին նորա վերայ ստեղծել,
իմ ձեռքերն են տարածել եր-
կինքը, և ես պատուիրում եմ
նորա բոլոր զօրքին։ Եւ ես նորան 13
զարթեցրի արդարութիւնով, և
նորա բոլոր ճանապարհներն ուղ-
ղում եմ. նա պիտի շինէ իմ
քաղաքը. և իմ գերեվարեալնե-
րին ետ պիտի ուղարկէ. առանց
վարձքի և առանց կաշառքի, ա-
սում է Զօրաց Տէրը։ Այսպէս է 14
ասում Տէրը. Եգիպտոսի վաս-
տակածը և Եթովպիայի ու եր-
կայնահասակ Սաբայեցիների վա-
ճառքը քեզ են անցնելու և քոնն
են լինելու. նորանք ման են գա-
լու քո ետևից, շղթաներով անց
են կենալու, խոնարհուելու են
քո առաջին, և քեզ աղաչանք
են անելու, թէ միայն քո մէջը
կայ Աստուած, և նորանից ջոկ
ուրիշ Աստուած չ՛կայ։

Յիրաւի դու ծածկապատուած 15
Աստուած ես, ով Իսրայէլի Փըր-
կիչ Աստուածը։ Նորանք ամեն- 16
քը պիտի ամաչեն և պատկառեն,
միասին պիտի ամօթահար լինեն
կուռք շինողները։ Իսրայէլը պի- 17
տի փրկուի Տիրոջ ձեռքով յա-
ւիտենական փրկութիւնով. պի-
տի չ՛ամաչէք և չ՛պատկառէք յա-
ւիտեանս յաւիտենից։

Որովհետև այսպէս է ասում 18
Եհովան՝ երկինքն ստեղծողը, նա
է Աստուած, որ կազմեց երկիրը,
և արաւ նորան՝ հաստատեց նո-
րան. նորան չ՛ստեղծեց դարտակ,
այլ բնակուելու համար ստեղծեց
նորան. Ես եմ Եհովան, և ու-
րիշը չ՛կայ։ Ես ոչ թէ ծածու- 19
կում եմ խօսել՝ երկրի մութ
տեղը. ես չ՛ասեցի Յակոբի սե-
րունդին՝ թէ Զուր տեղը որոնե-
ցէք ինձ. ես Եհովաս արդարու-

թիւն եմ խօսում, ճշմարիտ բա-
20 ներ եմ յայտնում։ Ժողովուե-
ցէք և եկէք, միասին մօտեցէք,
ով ազգերից ազատուածներ. չեն
հասկանում իրանց կուռքի փայ-
տը կրողները, և այնպիսի աս-
տուծոյ աղօթք անողները, որ չի
21 փրկիլ։ Իմացրէք և մօտեցրէք,
նորանք էլ միասին խորհուրդ ա-
նեն. ո՞վ է լուր տուել այս բա-
ները վաղուց, այն ժամանակից՝
իմացրել այս. չէ՞ որ ես Եհո-
վաս, և որ ուրիշ Աստուած չը
կայ ինձանից ջոկ, ճշմարիտ և
փրկող Աստուած չ՚կայ բացի ին-
22 ձանից։ Ով երկրի բոլոր ծայրե-
րը, դէպի ինձ դարձէք որ փըր-
կուիք. որովհետև ես եմ Աստ-
23 ուած, և ուրիշը չ՚կայ. Ինձա-
նով երդում արի, իմ բերանից
արդարութեան խօսք դուրս եկաւ
և ետ չի դառնալ, որ ինձ պիտի
կրկնուի ամեն ծունկ և ամեն
24 լեզու երդում անէ, Միմիայն
Տէրովը կայ ինձ համար արդա-
րութիւն և զօրութիւն, պիտի
ասէ. նորա մօտ պիտի գան և ա-
մաչեն բոլոր նորա դէմ բորբոք-
25 ուածները։ Տէրով պիտի արդա-
րանան և պարծենան Իսրայէլի
բոլոր սերունդը։

ԳԼ. ԽԶ

1 Բէլը խոնարհուեցաւ, Նեբովը
խորտակուեցաւ, նորանց կուռ-
քերը դազաններինն ու անասուն-
ներինն են. ձեր կրածները բեռ-
ներ են դառել, ծանրոցք՝ վաս-
2 տակածների համար։ Խորտակ-
ուել խոնարհուել են միասին,
չ՚կարողացան ծանրոցն ազատել,
իրանք էլ գերի գնացին։
3 Ինձ լսեցէք, ով Յակոբի տուն,
և Իսրայէլի տան բոլոր մնացոր-
դը, որ բեռնուած էիք մօր ար-
գանդից ի վեր, և տարվում էք
4 որովայնից հետէ։ Եւ մինչև ծե-
րանալն էլ ես եմ, և մինչև ա-
լևորութիւնը պիտի կրեմ ձեզ,
ես ստեղծեցի և ես պիտի կրեմ,
և ես պիտի վեր առնեմ և ազա-
տեմ։

Ո՞ւմ էք նմանեցնում ինձ և 5
հաւասարեցնում, և ինձ նմա՞ն
անում, որ նման լինենք։ Ոսկին 6
թափում են քսակիցը, և ար-
ծաթը կշռով կշռում վարձում
են ոսկերիչ, որ նորան աստուած
շինէ, յետոյ պաշտում և երկրպա-
դում էլ են։ Նորան կրում են 7
ուսի վերայ և բեռնում, և պնդա-
ցնում են իր տեղը, և նա կանգ-
նում է, իր տեղիցը չէ շարժում.
նորան աղաղակում էլ է, բայց
նա չէ պատասխանում. նորա նե-
ղութիւնիցը նորան չէ ազատում։
Յիշեցէք այս, և արիացէք, ձեր 8
միտքը բերէք, ով յանցաւորներ։
Յիշեցէք առաջինները 'ի յաւի- 9
տենից, որովհետև ես եմ Աստ-
ուած, և ուրիշը չ՚կայ աստուած.
և ինձ պէս մի ջոկը չ՚կայ. Որ 10
պատմում եմ առաջուց վերջինը,
և վաղուց՝ այն որ չէ եղած. որ
ասում եմ, թէ իմ խորհուրդը
պիտի հաստատուի, և անում եմ
իմ բոլոր ուզածը. Որ կանչում 11
եմ արևելքից գիշատիչ թռչու-
նը հեռու երկրից՝ իմ խորհրդի
մարդին. ես խօսել եմ, կատա-
րելու էլ եմ, ես որոշել եմ,
անելու էլ եմ։ Ինձ լսեցէք, ով 12
խստասիրտներ, որ հեռացած էք
արդարութիւնիցը. Ես մօտեցրել 13
եմ իմ արդարութիւնը, նա չէ
հեռանալու, և իմ փրկութիւնը
չէ ուշանալու. և Սիօնի մէջ
փրկութիւն եմ տալու Իսրայէլի
համար, որ իմ փառքն է։

ԳԼ. ԽԷ

Իջիր ու նստիր հողի վերայ, ով 1
Բաբիլոնի կոյս աղջիկ, տափին
նստիր առանց աթոռի, ով Քաղ-
դէացիների աղջիկ, որովհետև
այլ ևս քեզ քնքուշ և փափուկ
չեն կոչելու։ Առ երկանքը և ա- 2
լիւր աղա, լաչակդ բաց, քղանցքդ
վեր բարձրացրու, սրունքդ բաց
արա, անցիր դետերով։ Պիտի 3
բացուի քո մերկութիւնը, պիտի
երևայ քո նախատինքը. վրէժ
պիտի առնեմ, և չեմ խնայելու
մարդի։ Մեր Փրկչի անունը Զօ- 4

րաց Տէր է, Իսրայէլի Սուրբը։
5 Լուռ նստիր և մտիր խաւարի
մէջ, ով Քաղդէացիների աղ-
ջիկ. որովհետև այլ ևս քեզ
թագաւորութիւնների տիկին չեն
6 կոչելու։ Ես բարկացած էի իմ
ժողովրդի վերայ, պղծեցի իմ
ժառանգութիւնը, և նորանց
յանձնեցի քո ձեռքը. դու նո-
րանց գթութիւն չ՚արիր, ծերի
վերայ շատ ծանրացրիր քո լու-
7 ծը։ Եւ ասեցիր՝ Ես յաւիտեան
տիկին պիտի լինեմ. այնպէս որ
այս միտք չարիր, սորա վախճանը
8 չ՚յիշեցիր։ Եւ հիմա լսիր այս,
ով հեշտասէրդ, որ անհոգու-
թեամբ նստել ես. որ որտիդ
մէջ ասում ես. Ես եմ, և ին-
ձանից ջոկ մէկը չ՚կայ. որբևայրի
պիտի չ՚նստեմ, և անզաւակու-
9 թիւն պիտի չ՚գիտենամ։ Բայց
քեզ վերայ գալու են այս եր-
կուսը յանկարծ մէկ օրուայ մէջ՝
անզաւակութիւն և որբևայրու-
թիւն. սորանք բոլորը գալու են
քեզ վերայ քո շատ դիւթու-
թիւնների պատճառով, և քո
խիստ շատացած կախարդու-
10 թիւնների համար։ Եւ դու ա-
պաւինեցիր քո չարութեանը,
ասեցիր՝ Ինձ տեսնող չ՚կայ. քո
իմաստութիւնը և քո գիտու-
թիւնն են քեզ մոլորեցնողը.
բայց դու ասում ես քո սրտու-
մը. Ես եմ, և ինձանից ջոկ մէկը
11 չ՚կայ։ Եւ քեզ վերայ չարիք է
գալիս, որ չես հասկանալու դիւ-
թել. և քեզ վերայ մի թշուա-
ռութիւն է ընկնելու, որ չես
կարողանալու քաւել. և քեզ
վերայ յանկարծ մի աւերում է
գալու առանց քո գիտենալու։
12 Մէկ կանգնիր քո կախարդու-
թիւններովը և քո շատ դիւթու-
թիւններովը, որոնցով վաստա-
կել ես քո մանկութիւնից ի վեր.
գուցէ կարողանաս օգուտ բե-
13 րել, գուցէ վախեցնես։ Դու
ձանձրացել ես քո խորհուրդնե-
րի շատութիւնովը, թող մէկ
կանգնեն և քեզ փրկեն երկինքը
զննողները, աստեղագէտները, նոր
լուսինով գուշակողները այն բա-
նիցը, որ գալու է քեզ վերայ։
Ահա նորանք մղեղի պէս են դա- 14
ռել. կրակը պիտի այրէ նորանց,
իրանց հոգին չեն ազատելու բոցի
ձեռքիցը, մի կայծ չէ լինելու
տաքանալու համար, կամ մի կրակ՝
առաջին նստելու համար։ Այս- 15
պէս պէտք է լինեն քեզ համար
նորանք, որոնցով դու վաստա-
կել ես, նորանք՝ որոնց հետ դու
վաճառականութիւն արիր քո
մանկութիւնից ի վեր. իւրաքան-
չիւրն իր ճանապարհովը մոլոր-
ուեցաւ դնաց, քեզ ազատող
չ՚կայ։

ԳԼ. ԽԸ

Լսեցէք այս, ով Յակոբի տուն, 1
որ Իսրայէլի անունովը կոչուած
էք. որ Յուդայի ջրերիցն էք դուրս
եկել, որ երդում էք անում Ե-
հովայի անունովը և Իսրայէլի
Աստուծուն յիշում, բայց ոչ թէ
ճշմարտութիւնով և ոչ թէ ար-
դարութիւնով։ Որովհետև նո- 2
րանք սուրբ քաղաքիցն են կոչ-
վում, և Իսրայէլի Աստուծոյ վե-
րայ են կռնում, որի անունը Զօ-
րաց Տէր է։ Առաջի բաները վա- 3
ղուց եմ իմացրել, և իմ բերա-
նիցը դուրս եկան, և ես նորանց
իմացրի. ես յանկարծ կատարե-
ցի, և նորանք եղան։ Որովհե- 4
տև գիտէի, որ դու պինդ ես,
և քո շլինքը երկաթի ջիղերից
է, և քո ճակատը պղնձից է.
Նորա համար վաղուց քեզ պատ- 5
մեցի, և գալուց առաջ քեզ
լուր տուի, մի գուցէ ասես՝ Իմ
արձանս արաւ սորանց. և իմ
քանդակած ու ձուլած կուռքս
է հրամայել այն։ Դու լսեցիր, 6
մտիկ արա ամենին. և դուք չէ՞իք
խոստովանելու. քեզ այսուհետև
նորանոր բաներ եմ լուր տա-
լու և ծածուկ բաներ, որոնք դու
չ՚գիտէիր։ Հիմա են նորանք ստեղ- 7
ծագործուել և ոչ թէ վաղուց,
և այս օրից առաջ դու նորանց
չես լսել, որպէս զի չ՚ասես թէ
Ահա ես գիտէի նորանց։ Դու 8
ոչ լսել ես, և ոչ էլ գիտէիր,

և ոչ էլ ականջդ բաց էր վա-
ղուց. որովհետև ես գիտէի, որ
դու խիստ նենգաւոր ես, և ո-
րովայնիցը քեզ ապստամբ են
9 կոչում։ Իմ անուան համար ու-
շացնում եմ իմ բարկութիւնը,
և իմ փառքի համար ինձ պիտի
ետ պահեմ քեզ դէմ, որպէս զի
10 քեզ չ'փչացնեմ։ Ահա ես քեզ
մաքրեցի, և ոչ թէ արծաթի
կերպով, ես քեզ փորձեցի նեղու-
11 թեան հալոցում։ Իմ պատճա-
ռով, իմ պատճառով պիտի ա-
նեմ, որովհետև ի՞նչպէս պղծվում
է իմ անունը. և ես իմ փառքը ու-
12 րիշին չեմ տալ։ Լսիր ինձ, ով
Յակոբ և իմ կանչած Իսրայէլ,
ես նոյնն եմ, ես առաջինն եմ,
13 հէնց վերջինն էլ ես եմ։ Հէնց
իմ ձեռքն է հիմնել երկիրը, և
իմ աջ ձեռքը տարածել եր-
կինքը. ես նորանց կանչելիս, մէկ-
14 տեղ կ'կանգնեն. Ամենքդ ժո-
ղովուեցէք ու լսեցէք. նորանցից
ո՞րն է իմացրել այս բանը. Եհո-
վայի սիրածը պիտի կատարէ նորա
կամքը Բաբիլոնում, և նորա բա-
15 զուկը Քաղդէացիների վերայ։ Ես՝
ես եմ խօսել, և նորան կանչել
էլ, ես նորան բերել եմ, և նո-
րա ճանապարհը պիտի յաջող-
16 ուի։ Մօտեցէք ինձ, լսեցէք այս
բանը. ես ծածուկ չեմ խօսել
առաջուց. սա լինելու ժամանա-
կից 'ի վեր ես այնտեղ եմ, և հի-
մա Եհովայ Տէրն է ինձ ուղար-
17 կել, և նորա հոգին։ Այսպէս է
ասում Տէրը, քո Փրկիչը Իսրա-
յէլի Սուրբը. Ես եմ քո Աստ-
ուածը, որ քեզ սովորեցնում
եմ օգտակար եղողը, որ քեզ ա-
ռաջնորդում եմ քո գնալու ճա-
18 նապարհումը։ Երանի թէ ուշա-
դրութիւն անէիր իմ պատուէր-
ներին, այն ժամանակ գետի պէս
պիտի լինէր քո խաղաղութիւնը,
և քո արդարութիւնը՝ ծովի ա-
19 լիքներին պէս. Եւ աւազի նման
կ'լինէր քո սերունդը, և քո ե-
րանքի զաւակունքը՝ նորա խիճին
չափ, նորա անունը իմ առաջից
չէր կտրուիլ և չէր փչանալ։
20 Դուրս եկէք Բաբիլոնից, փա-
խէք Քաղդէացիներիցը, ցնծալի
ձայնով պատմեցէք հրատարակե-
ցէք այս, հռչակեցէք այս մինչև
երկրի ծայրը. ասեցէք, Եհովան
փրկել է իր ծառայ Յակոբին։ Եւ 21
նորանք չ'ծարաւեցին՝ նա նորանց
անապատներում ման ածելիս,
ջուրը վէմիցը հոսեցրեց նորանց
համար, և պատառեց վէմը, և
ջուրերը բղխեցին։ Խաղաղու- 22
թիւն չ'ունին ամբարիշտները, ա-
սում է Տէրը։

ԳԼ. ԽԹ

Ով կղզիներ, ինձ լսեցէք, և ու- 1
շադիր եղէք հեռուանց, ով ժո-
ղովուրդներ։ Եհովան ինձ արգան-
դիցն է կանչել, իմ մօր որովայ-
նիցը յիշել է իմ անունը. Եւ 2
իմ բերանը սրած թուրի պէս է
արել, իր ձեռքի հովանիի տա-
կին ծածկել է ինձ, և ինձ փայ-
լուն նետ է շինել, և ինձ թագ-
ցրել է իր կապարճումը։ Եւ ինձ 3
ասել է. Դու իմ ծառան ես,
ով Իսրայէլ, որ քեզանով պի-
տի փառաւորուիմ։ Բայց ես ա- 4
սում էի թէ Զուր եմ վաստա-
կում, դարտակ և ունայն տեղը
վերջացրի իմ զօրութիւնը. սա-
կայն իմ իրաւունքը Տիրոջ մօտ
է. և իմ վարձքը՝ իմ Աստուծոյ
մօտ։ Եւ հիմա ասում է Տէրը, 5
ինձ որովայնիցն իրան համար ծա-
ռայ ստեղծողը, որ Յակոբը դար-
ձընեմ իրան մօտ, և Իսրայէլը
ժողովուի նորա համար, որ փա-
ռաւորուիմ Տիրոջ առաջին, և
իմ Աստուածն իմ զօրութիւնը 6
լինի։ Եւ ասում է. Դու դեռ քիչ
է, որ դու իմ ծառան լինես,
Յակոբի ցեղերը վերականգնեցնե-
լու համար, և Իսրայէլի ազատ-
ուածները ետ դարձնելու հա-
մար, ես քեզ ազգերի լոյս էլ
եմ շինել, որ դու իմ փրկու-
թիւնը լինես մինչև երկրի ծայրը։ 7
Այսպէս է ասում Տէրը, Իս-
րայէլի Փրկիչը, նորա Սուրբը,
անարգուած հոգի ունեցողին,
ազգերի ատելի եղողին, իշխան-
ների ծառային. Թագաւորներ

պիտի տեսնեն և վեր կենան, իշ-
խաններ՝ և երկրպագութիւն ա-
նեն՝ Տիրոջ համար, որ հաւա-
տարիմ է, Իսրայէլի Սուրբի հա-
8 մար, որ քեզ ընտրել է։ Տէրն
այսպէս է ասում. Ընդունելի
ժամանակին քեզ լսեցի, և փըր-
կութեան օրը քեզ օգնեցի և
քեզ պահպանեցի, և քեզ ուխտ
շինեցի ժողովրդին, որ երկիրը
հաստատես, և ժառանգեցնես
աւերակացած ժառանգութիւն-
9 ները։ Որ ասես կապուածներին.
Դուրս եկէք, և նորանց որ խա-
ւարումն են՝ թէ փայլեցէք. Նո-
րանք ճանապարհներին պիտի ա-
րածեն, և ամեն բլուրների վե-
րայ նորանց համար արօտ կայ։
10 Նորանք պիտի չ'սովածանան և
չ'ծարաւեն, և նորանց պիտի չը
զարկէ խորշակը և արևը, որով-
հետև նորանց ողորմողը պիտի
առաջնորդէ նորանց, և ջրի աղ-
բիւրների վերայ պիտի տանէ նո-
11 րանց։ Եւ իմ բոլոր սարերը պի-
տի ճանապարհ շինեմ, և իմ
պողոտաները պիտի բարձրանան։
12 Ահա սորանք հեռուից են գա-
լիս, և ահա նորանք հիւսիսից ու
արևմուտքից, և միւսները Սի-
13 նէացիների երկրիցը։ Ցնծացէք,
ով երկինք, և բերկրացիր, ով
երկիր, և ուրախութեան ձայնով
աղաղակեցէք, ով սարեր, որով-
հետև Տէրը մխիթարել է իր ժո-
ղովրդին, և ողորմել է նորա տը-
նանկներին։
14 Բայց Սիօնն ասեց. Եհովան ինձ
ձգել է. և Տէրը մոռացել է ինձ։
15 Մի՞թէ կինը կ'մոռանայ իր կաթ-
նակեր մանուկին, որ չ'գթայ իր
որովայնի ծննդեան վերայ. Նո-
րանք եթէ մոռանան էլ, բայց
16 ես քեզ չեմ մոռանալ։ Ահա
ես իմ ձեռքի մէջ եմ նկարա-
գրել քեզ, քո պարիսպները իմ
17 դիմացն են միշտ։ Քո որդիքը պի-
տի շտապեն, քեզ քանդողներն
ու աւերողները դուրս պիտի գան
18 քեզանից։ Աչքերդ բարձրացրու
շուրջանակի և տես, բոլորը ժո-
ղովվում գալիս են քեզ մօտ.
կենդանի եմ ես, ասում է Տէրը,
որ դու նորանց ամենին էլ հագ-
նելու ես զարդի պէս, և նորան-
ցով գօտևորուելու ես հարսի
պէս։ Որովհետև քո աւերակնե- 19
րը և քո ամայի տեղուանքը, և
քո փլատակների երկիրը, հիմա
նեղ պիտի լինի բնակիչների հա-
մար. և քեզ կլանողները պիտի
հեռանան։ Դեռ ասելու են քո 20
ականջներին քո ամուլութեան
որդիքը, այս տեղը նեղ է ինձ
համար, տեղ տուր ինձ, որ բնակ-
ուեմ։ Եւ դու ասելու ես քո 21
սրտումը, սորանց ո՞վ ծնեց ինձ
համար, քանի որ ես անզաւակ
և ամուլ էի. ես գերի և աքսոր-
ուած էի, և սորանց ո՞վ է մե-
ծացրել. ահա ես մինակ էի մը-
նացել. սորանք ո՞րտեղ էին։
Այսպէս է ասում Տէր Եհո- 22
վան. Ահա իմ ձեռքը բարձրա-
ցնում եմ ազգերի վերայ, և ժո-
ղովուրդների վերայ վեր եմ հա-
նում իմ դրօշակը, և նորանք
քո որդկանցը ծոցում պիտի բե-
րեն, և քո աղջիկները ուսի վե-
րայ պիտի տարուին։ Եւ թագա- 23
ւորները պիտի լինեն քո սնուցիչ-
ները, և նորանց իշխանուհիները՝
քո դայեակները, երեսանկեալ
քեզ երկրպագութիւն պիտի ա-
նեն, և քո ոտքերի փոշին պիտի
լիզեն. և դու կ'գիտենաս, որ ես
եմ Եհովայ, որ չեն ամաչիլ ինձ
յուսացողները։ Մի՞թէ հզօրից 24
կ'առնուի աւարը, կամ արդա-
րի գերին կ'ազատուի՞։ Որովհե- 25
տև Տէրն այսպէս է ասում. Ա-
յս, աղամարդի գերին էլ կ'առ-
նուի, և հզօրի աւարն էլ կ'ա-
զատուի. և քեզ հետ վիճողնե-
րի հետ էլ ես պիտի վիճեմ, և
քո որդկանցը ես պիտի ազատեմ։
Եւ պիտի ուտեցնեմ քեզ հա- 26
րըստահարողներին իրանց միսը,
և իբր թէ նոր գինիով պիտի գի-
նովնան իրանց արիւնովը. և ա-
մեն մարմին կ'իմանայ, որ ես եմ
Տէրը՝ քո Փրկիչը, և քեզ փրկո-
ղը՝ Յակոբի հզօրը։

ԳԼ. Ծ

1 Այսպէս է ասում Տէրը. Ո՞ւր է
ձեր մօր ապահարզանի թուղթը,
որով ես նորան արձակել եմ.
կամ նա ո՞րն է իմ պարտատէր-
ներիցը, որին ծախել եմ ձեզ.
ահա դուք ձեր անօրէնութիւն-
ների համար էք ծախուել, և
ձեր մայրը ձեր յանցանքների հա-
2 մար է արձակուել։ Ի՞նչու հա-
մար ես եկայ, մարդ չ՚կար. ես
որ կանչեցի, պատասխանող չը
կար, մի՞թէ իմ ձեռքը խիստ
շատ կարճացել էր, որ չ՚կարո-
ղանայի փրկել, և կամ թէ ես
զօրութիւն չ՚ունէի՞ ազատելու.
ահա ես իմ սաստելովը ցամա-
քեցնում եմ ծովը, գետերը ա-
նապատ եմ դարձնում, հոտում
են նորանց ձուկերը ջուր չ՚լինե-
լուց և մեռնում են ծարաւից։
3 Երկինքներին խաւար եմ հագ-
ցնում, և նորանց ծածկոցը քուրձ
եմ շինում։
4 Տէր Եհովան ինձ ուսումնա-
վարժ լեզու է տուել, որ գիտե-
նամ վաստակածին օգնել խօս-
քով. նա զարթեցնում է ամեն
առաւօտ՝ զարթեցնում է իմ
ականջը որ լսեմ աշակերտների
5 պէս։ Տէր Եհովան բացել է իմ
ականջը, և ես չ՚հակառակեցի՝
6 ետ չ՚դարձայ։ Իմ թիկունքը
տուի հարուածողներին և իմ
ծնօտները՝ կռփողներին. իմ ե-
րեսը չ՚ծածկեցի նախատինքիցը և
7 թուքիցը. Սակայն Տէր Եհովան
օգնում է ինձ. նորա համար ա-
մօթապարտ չեմ լինիլ, նորա
համար իմ երեսը գայլախազի
պէս շինեցի, և գիտեմ որ պիտի
8 չ՚ամաչեմ։ Ինձ արդարացնողը
մօտ է. ո՞վ է ինձ հետ վիճում.
միասին կանգնենք. ո՞վ է իմ
դատախազը. թող մօտենայ ինձ։
9 Ահա Տէր Եհովան օգնում է
ինձ, ո՞վ է որ ինձ յանցաւոր
հանէ. ահա նորանք ամենքը շորի
պէս պիտի մաշուին, ցեցը պիտի
ուտէ նորանց։
10 Ո՞վ կայ ձեզանում Տէրիցը
վախեցող, նորա ծառայի ձայնին
լսող, որ գնում է խաւարումը
և ճառագայթ չ՚ունի. թող նա
ապաւինի Տիրոջ անուանը, և ի-
րան դցէ իր Աստուծոյ վերայ։
11 Ահա դուք ամենքդ, որ կրակ
էք վառում, և կայծերով շրջա-
պատվում, գնացէք ձեր կրակի
վառուածքի մէջ, և ձեր կրակ
տուած կայծերի մէջ։ Սա իմ
ձեռքիցն եղաւ ձեզ համար,
դուք ցաւով պիտի պառկէք։

ԳԼ. ԾԱ

1 Ինձ լսեցէք, ով արդարութեան
հետևողներ, ով Տիրոջը խնդրող-
ներ, նայեցէք այն վէմին, որից
դուք կտրուած էք, և այն հորի
գուբին, որից դուք փորուած էք.
2 Նայեցէք ձեր հայր Աբրահամին,
և ձեզ ծնող Սարրային. որով-
հետև մէկ հատ էր նա, որ ես
կանչեցի, բայց ես նորան օրհնեցի
3 և նորան բազմացրի։ Որովհետև
Տէրը պիտի մխիթարէ Սիօնին,
պիտի մխիթարէ նորա բոլոր ա-
ւերակները, և նորա անապատը
դրախտի նման պիտի շինէ, և նո-
րա ամայի տեղը՝ Տիրոջ պարտէզի
պէս. ցնծութիւն և բերկրու-
թիւն պիտի գտնուի նորանում,
գովասանութիւն և օրհներգու-
4 թեան ձայն։ Ուշադիր եղիր դէպի
ինձ, ով իմ ժողովուրդ, և ով
իմ ազգ, ինձ ականջ դիր. որով-
հետև ինձանից օրէնք է դուրս
գալու, և իմ իրաւունքը իբրև
լոյս պիտի հաստատեմ ազգերի
5 համար։ Մօտ է իմ արդարու-
թիւնը, դուրս է եկել իմ փրկու-
թիւնը, և իմ բազուկները դա-
տում են ժողովուրդներին։ Կղզի-
6 ները ինձ են յոյս դնում, և իմ
բազուկին ապաւինում։ Բարձրա-
ցրէք ձեր աչքերը դէպի երկինք,
և նայեցէք երկրին դէպի ցած.
որովհետև երկինքը պիտի ծուխի
պէս ցրիւ գայ, և երկիրը հան-
դերձի պէս պիտի մաշէ. և նորա
բնակիչները այսպէս պիտի մեռ-
նեն. բայց իմ փրկութիւնը յա-
ւիտեան պիտի լինի, և իմ ար-
դարութիւնը չի պակասիլ։

7 Լսեցէք ինձ, ով արդարութիւն
ճանաչողներ, ով ազգ, որ իմ օ-
րէնքն ունիս սրտումդ. մի վա-
խենաք մարդկանց նախատինքից,
և նորանց բամբասանքից մի զար-
8 հուրիք։ Որովհետև ցեցն է ու-
տելու նորանց հանդերձի պէս,
և մեցը ուտելու է նորանց բուր-
դի պէս. բայց իմ արդարութիւ-
նը յաւիտեան պիտի լինի, և իմ
փրկութիւնը յաւիտեանս յա-
ւիտենից։
9 Զարթնիր, զարթնիր, զօրու-
թիւն հագիր, ով Տիրոջ բա-
զուկ, զարթնիր առաջի օրերին
պէս, հին դարերին պէս, մի՞թէ
դու այն չես, որ ջարդեցիր Ռա-
հաբը, որ վիշապին խոցեցիր։
10 Մի՞թէ դու այն չես, որ ծովը
ցամաքեցրիր, մեծ անդունդի ջու-
րերը. որ ծովի խորերումը ճանա-
պարհ շինեցիր, փրկուածների
11 անցնելու համար։ Եւ Տիրոջ
փրկուածները ետ պիտի դառ-
նան, և գան Սիօն ցնծալի երգե-
րով, և յաւիտենական ուրա-
խութիւն պիտի լինի նորանց գլ-
խին, ցնծութեան և ուրախու-
թեան պիտի հասնեն. պիտի
փախչեն տրտմութիւնը և հե-
ծութիւնը։
12 Ես՝ ես եմ ձեզ մխիթարողը,
դու ո՞վ ես, որ վախենում ես
մահկանացու մարդից, և մարդի
որդիից, որ խոտի նման է շին-
13 ուած։ Եւ մոռանում ես քեզ
ստեղծող Տիրոջը, որ ատրածում
է երկինքը և երկիրը հաստա-
տում. և վախենում ես միշտ
ամեն օր բռնաւորի բարկութիւ-
նիցը, որ կարծես թէ պատրաստ
է քեզ կորցնելու, բայց ո՞ւր է
14 բռնաւորի բարկութիւնը։ Կալա-
նաւորը շուտով պիտի արձակ-
ուի, և չի մեռնիլ գուբի մէջ,
և նորա հացը չի պակասուիլ։
15 Եւ ես եմ քո Տէր Աստուածը,
որ սաստում եմ ծովին, երբոր
նորա ալիքները աղմուկ են հա-
նում. Զօրաց Եհովայ է իմ ա-
16 նունը։ Եւ իմ խօսքերը դրի քո
բերանումը, և իմ ձեռքի հովա-
նովը ծածկեցի քեզ որ երկինքը
դնեմ և երկիրը հիմնարկեմ, և
ասեմ Սիօնին՝ Իմ ժողովուրդն
ես դու։
17 Զարթնիր, զարթնիր, վեր կաց,
ով Երուսաղէմ, որ խմեցիր Տի-
րոջ ձեռքից նորա բարկութեան
բաժակը, որ թմրութեան լայնա-
գիր բաժակը խմեցիր քամեցիր։
18 Մի առաջնորդող չ՚ունի իր ծնած
բոլոր որդկանցից, և ձեռքիցը
բռնող չ՚կայ իր մեծացրած բոլոր
19 որդկանցից։ Երկու բաներ են, որ
քեզ պատահել են. ո՞վ է կա-
րող քեզ մխիթարել. կործա-
նում ու կոտորած, և սով ու
սուր. ես քեզ որո՞վը մխիթարեմ։
20 Քո որդիքը նուաղած պառկել
են ամեն փողոցների գլխին որո-
գայթի մէջ փաթաթուած վայ-
րի այծի պէս, որոնք լիքն են Տի-
րոջ բարկութիւնովը, քո Աստու-
21 ծոյ յանդիմանութիւնովը։ Ու-
րեմն լսիր այս, ով խեղճ, և ով
արբած, բայց ոչ թէ գինով.
22 Այսպէս է ասում քո Տէրը՝ Եհո-
վան, և քո Աստուածը, որ պաշտ-
պանում է իր ժողովուրդը. Ահա
առնում եմ ձեռքիցդ թմրու-
թեան բաժակը, և դու այլ ևս
23 պիտի չ՚խմես այն։ Եւ նորան դը-
նում եմ քեզ հարստահարող-
ների ձեռքին, որոնք ասում էին
քո անձին. Ծռիր որ մենք անց-
նենք. և դու քո մէջքը երկրին
հաւասար արիր և փողոցի պէս՝
անցուդարձողների համար։

ԳԼ. ԾԲ

1 Զարթնիր, զարթնիր, հագիր զօ-
րութիւնդ, ով Սիօն, քո փառա-
ւոր հանդերձները հագիր, ով
Երուսաղէմ՝ սուրբ քաղաք. ո-
րովհետև այլևս պիտի միւսան-
գամ չ՚մտնէ քո մէջը անթլփա-
2 տը և պիղծը։ Քեզ թափ տուր
հողիցը, վեր կաց, նստիր, ով Ե-
րուսաղէմ, բաց արա պարանո-
ցիդ կապերը, ով Սիօնի գերի
3 աղջիկը։ Որովհետև այսպէս է ա-
սում Տէրը. Դուք ձրի ծախուե-
ցաք, և առանց փողի պիտի փրկ-
4 ուիք։ Սորա համար այսպէս է

ասում Տէրը Եհովան. Իմ ժողովուրդն առաջ ինձ եգիպտացի այնտեղ պանդխտանալու, և Ասորեստանցիք զուր տեղը նորան ճնշեցին։ Եւ հիմա, ես ի՞նչ ունիմ այստեղ, ասում է Տէրը, որովհետև զուր վեր առնուեցաւ իմ ժողովուրդը, նորա վերայ իշխողները բղաւում են, ասում է Տէրը և միշտ ամեն օր հայհոյվում է իմ անունը։ Սորա համար պիտի գիտենայ իմ ժողովուրդը իմ անունը, սորա համար այն օրը՝ թէ ես եմ այն որ ասում եմ. Ահա ես։

Ինչ դեղեցիկ են սարերի վերայ աւետարանչի ոտքերը, որ խաղաղութիւն է քարոզում, բարիք աւետում, փրկութիւն քարոզում, որ ասում է Սիօնին՝ քո Աստուածը թագաւոր է։ Ահա քո պահապանները ձայն են բարձրացնում, միասին բարձրաձայն ցնծում, որովհետև դէմ յանդիման պիտի տեսնեն, երբոր Տէրը ես բերէ Սիօնին։ Աղաղակեցէք, բարձրաձայն ցնծացէք միասին, ով Երուսաղէմի փլատակներ. որ Տէրը մխիթարեց իր ժողովրդին, փրկեց Երուսաղէմին։ Տէրը մերկացրել է իր սուրբ բազուկը, բոլոր ազգերի աչքի առաջին, և երկրի բոլոր ծայրերը պիտի տեսնեն մեր Աստուծոյ փրկութիւնը։

Հեռացէք, հեռացէք, այնտեղից դուրս եկէք, պիղծ բանի մի դպչիք, դուրս եկէք նորա միջից, մաքուր եղէք, ով Տիրոջ սպասները կրողներդ։ Որովհետև հապճեպով չպիտի դուրս գաք, և փախչելով էլ չէք գնալ, այլ Տէրը պիտի գնայ ձեր առաջից և ձեր թիկնապահը Իսրայէլի Աստուածն է։

Ահա իմ ծառան իմաստութեամբ պիտի վարուի, պիտի մեծանայ և բարձրանայ և շատ փառաւորուի։ Ինչպէս որ շատերը ապշեցին քեզ վերայ, (այնպէս խանգարուած է նորա տեսքը մարդի պէսից, և կերպարանքը մարդի որդկանց կերպարանքից։) Նոյնպէս պիտի զարմացնէ շատ ազգեր, թագաւորները պիտի խփեն նորա առաջին իրանց բերանը. որովհետև պիտի տեսնեն այն՝ որ իրանց չէ պատմուած, և այն որ չեն լսած՝ պիտի իմանան։

ԳԼ. ԾԳ

Ո՞վ հաւատաց մեր լուրին, և Տիրոջ բազուկը ո՞ւմ յայտնուեցաւ։ Որովհետև նա մատաղատունկի պէս դուրս եկաւ նորա առաջին, և արմատի պէս՝ ծառաւատ երկրից. ոչ կերպարանք ունէր, ոչ էլ վայելչութիւն, և մենք տեսանք նորան, և մի տեսք չ'կար, որ նորան ախորժէինք։ Նա անարգուած և մարդկանց երեսից ընկած, հարուածների տէր և ցաւի տեղեակ եղաւ, և մի այնպիսի, որից պէտք է երես ծածկել. անարգուած էր, և մենք նորան ոչինչ էինք համարում։ Ցիրաւի նա մեր ցաւերը վեր առաւ, և մեր վիշտերը բեռնեց էր վրայ, բայց մենք նորան պատուհասուած էինք համարում, Աստուածանից զարկուած և նկուն եղած։ Բայց նա մեր մեղքերի համար վիրաւորուեցաւ, և մեր անօրէնութիւնների համար հարուածուեցաւ, մեր խաղաղութեան պատիժը նորա վերայ եղաւ, և նորա վէրքերովը մենք բժշկուեցանք։ Մենք ամենքս ոչխարների պէս մոլորուեցանք, իւրաքանչիւրն իր ճանապարհին դառաւ. և Տէրը նորա վերայ դրաւ մեր ամենի մեղքը։ Նա անիրաւութիւն կրեց և չարչարուեցաւ, բայց իր բերանը չ'բացաւ, ինչպէս մի ոչխար որ մորթուելու է տարվում, և ինչպէս մի մանկը մնքի իր խուզողների առաջին, այնպէս իր բերանը չ'բացաւ։ Կալանքից և դատապարտութիւնից վեր առնուեցաւ և նորա ազգատոհմը ո՞վ կարող է պատմել. որովհետև նա կտրուեցաւ կենդանիների երկրիցը. իմ ժողովրդի մեղքի համար նա զարկուեցաւ։ Եւ ամբարիշտների հետ որոշուեցաւ նորա գերեզմանը, բայց հարուստի հետ եղաւ նա մեռած ժամանակը. քանի որ նա զրկողութիւն չէր արել, և խաբէութիւն չ'կար նորա բերանում։ Բայց Տէրը հաճեց նորան զարկել՝ ցաւեցնել. երբոր նորա *հոգին մեղքի զոհն արաւ, նա պիտի սերունդ տեսնէ, և օրերը երկարացնէ. և Տիրոջ հաճութիւնը պիտի յաջողուէ նորա ձեռքովը։ Իր անձի աշխատութեան պտուղը պիտի տեսնէ և կշտանայ. իր գիտութեամբը պիտի արդարացնէ իմ արդար ծառան շատերին, որովհետև նորանց անօրէնութիւնը ինքը կրեց։ Նորա համար նորան բաժին պիտի տամ շատերի հետ, և նա հզօրների հետ աւար պիտի բաժանէ, նորա փոխարէն որ իր անձը †մահուան մահուան, և յանցաւորների հետ հաշուեցաւ. և նա շատերի մեղքը վեր առաւ, և յանցաւորների համար միջնորդեց։

ԳԼ. ԾԴ

Ցնծա, ով ամուլ, որ չէիր ծննում, բարձրաձայն աղաղակելով ցնծա և աղաղակիր, ով երկունք չ'քաշող, որովհետև երեսից ձգուածի որդիքը շատ են արամիւի որդկանցից, ասում է Տէրը։ Լայնացրու քո վրանի տեղը, և թող քո բնակարանի վարագոյրները տարածուին. մի խնայիր, երկարացրու չուաններդ, և ցից դիր պնդացրու։ Որովհետև դու պիտի աջ ու ձախ տարածուիս, և քո սերունդը պիտի ժառանգէ ազգերին, և աւերակացած քաղաքները շէնացնելու են։ Մի վախենար որովհետև պիտի չ'ամչես, և մի պատկառիր, որովհետև պիտի չ'նախատուիս. որովհետև քո մանկութեան ամօթը պիտի մոռանաս, և քո այրեւ-

*կամ անձը

†եբր. թափեց

այրութեան նախատինքը այլ ևս պիտի չ'յիշես։ Որովհետև քո այրը քեզ Ստեղծողն է, Զօրաց Եհովայ է նորա անունը, և քո Փրկիչը Իսրայէլի Սուրբն է, նա կոչվում է բոլոր երկրի Աստուած։ Որովհետև Տէրը քեզ մի երեսից ձգուած և հոգով վշտացած կնոջ պէս կանչեց, և մի երիտասարդ կնոջ պէս, որ մերժուած է, ասում է քո Աստուածը։ Մի փոքր վայրկեան քեզ թողեցի, բայց մեծ ողորմութիւններով քեզ պիտի ժողովեմ։ Բարկութիւնս տաքանալով՝ մի վայրկեան ծածկեցի երեսս քեզանից, բայց յաւիտենական ողորմութիւնով քեզ պիտի ողորմեմ, ասում է քո Փրկիչը՝ Եհովան։ Որովհետև Նոյի ջրերին պէս է սա ինձ համար, որ երդուայ արի, թէ այլ ևս պիտի չ'անցնեն Նոյի ջրերը երկրի վերայ. նոյնպէս էլ երդում արի, որ քեզ չ'բարկանամ և քեզ չ'յանդիմանեմ։ Որովհետև սարերը կ'քաշուին, և բլուրները կը սասանեն, բայց իմ ողորմութիւնը քեզանից չի քաշուիլ, և իմ խաղաղութեան ուխտը չի սասանիլ, ասում է քեզ ողորմող Տէրը։ Ով ողորմելի ալեկոծեալ անմխիթար, ահա ես քո քարերը ծարաւորով պիտի դնեմ, և քեզ պիտի հիմնեմ շափիւղաներով, եւ քո բուրգերը կարմիր յակինթներով պիտի շինեմ, և քո դռները՝ կարկեհաններով, և քո բոլոր սահմանը պատուական քարերով։ Եւ քո բոլոր որդիքը Տէրից ուսուած պիտի լինեն, և շատ պիտի լինի քո որդկանց խաղաղութիւնը։ Արդարութիւնով պիտի հաստատուիս. հեռացիր բռնութիւնից, որովհետև չես վախենալու, և արհաւիրքից՝ որովհետև քեզ չէ մօտենալու։ Ահա նորանք անպատճառ հաւաքուելու են, առանց ինձանից լինելու. ով որ քեզ վերայ հաւաքուի, քո կողմն պիտի ընկնի։ Ահա ես եմ ստեղծել դարբինին որ փչում է կրակի կայծերին, և գործիք հնարում իր արուեստի հա-

մար. նոյնպէս էլ ես եմ ստեղ-
17 ծել կործանողին որ աւերէ։ Բո-
լոր քեզ դէմ շինած գործիքը
պիտի չ՚յաջողուի, և ամեն լեզու
որ վեր կենայ քեզ դէմ դատաս-
տանի, պիտի դատապարտուի.
սա է Տիրոջ ծառաների ժառան-
գութիւնը, և նորանց արդարու-
թիւնը ինձանից է, ասում է Տէրը։

ԳԼ. ԾԵ

1 Ով բոլոր ծարաւներ, եկէք ջրե-
րին մօտ. և դուք որ փող չ՚ու-
նիք, եկէք, ծախու առէք և կե-
րէք, եկէք առէք առանց փողի,
առանց վճարի՝ գինի և կաթ։
2 Ի՞նչու էք փող վճարում, և ոչ
թէ հացի համար, և ձեր վաս-
տակը՝ չ՚կշտացնող բանի համար։
Մէկ ինձ լսեցէք, որ բարիք ու-
տէք, և ձեր հոգին զուարճանայ
3 պարարտութիւնով։ Ձեր ական-
ջը խոնարհեցրէք, և ինձ մօտ ե-
կէք, լսեցէք և ձեր հոգին կ՚ապ-
րէ. և ձեզ հետ յաւիտենական
ուխտ պիտի դնեմ՝ Դաւիթի հա-
4 ւատարիմ ողորմութիւնները։ Ա-
հա ես նորան ժողովուրդների
վկայ եմ դրել, ազգերի առաջ-
5 նորդ և հրամանատար։ Ահա չը
ճանաչած ազգիդ պիտի կանչես,
և ազգեր որ քեզ չէին ճանա-
չում, վազելու են քեզ մօտ, քո
Աստուած՝ Եհովայի պատճառով,
և Իսրայէլի Սուրբի պատճառով,
որ քեզ փառաւորեց։
6 Խնդրեցէք Տիրոջը, քանի որ
նա գտնվում է. նորան կանչե-
7 ցէք, քանի որ նա մօտ է։ Ամ-
բարիշտը թողէ իր ճանապարհը,
և անօրէն մարդը՝ իր խորհուրդ-
ները, և դառնայ Տիրոջը, և նա
կ՚ողորմէ նորան, և՝ մեր Աստու-
ծուն, որովհետև նա շատ ներող
8 է։ Որովհետև իմ խորհուրդները
ձեր խորհուրդները չեն, և ձեր
ճանապարհները իմ ճանապարհ-
9 ները չեն, ասում է Տէրը. Այլ
ինչպէս որ բարձր է երկինքը երկ-
րից, նոյնպէս էլ բարձր են իմ
ճանապարհները ձեր ճանապարհ-
ներիցը և իմ խորհուրդները
ձեր խորհուրդներիցը։ Որովհետև 10
ինչպէս որ իջնում է անձրևը և
ձիւնը երկնքից և ետ չէ դառ-
նում այնտեղ, այլ ոռոգում է
երկիրը և նորան արգասաւոր ա-
նում և բողբոջեցնում նորան,
և տալիս է սերմ սերմնացանին և
հաց՝ ուտողին, Այնպէս էլ պի- 11
տի լինի իմ բերանից դուրս եկած
խօսքը, նա պիտի պարապ ետ չը
դառնայ ինձ մօտ, այլ կատարէ
իմ ուզածը, և յաջողուի նորա-
նում, ինչի համար որ ես նորան
ուղարկեցի։ Որովհետև դուք ու- 12
րախութեամբ պիտի դուրս գաք,
և խաղաղութեամբ պիտի առաջ-
նորդուիք, սարերն ու բլուրները
պիտի բարձրաձայն ցնծան ձեր
առաջին, և դաշտերի բոլոր ծա-
ռերը պիտի ծափ տան։ Թուփի 13
փոխարէն մայր պիտի բուսնի,
դժնիկի փոխարէն մրտենի պիտի
բուսնի. և սա պիտի լինի Տիրոջ
համբաւի համար, իբրև յաւի-
տենական նշան, որ չի ջնջուիլ։

ԳԼ. ԾԶ

Այսպէս է ասում Տէրը, իրա- 1
ւունք պահեցէք, և արդարու-
թիւն արէք. որովհետև իմ փրր-
կութիւնը մօտ է որ գայ, և իմ
արդարութիւնը՝ որ յայտնուի։
Երանի այն մարդին, որ կ՚անէ 2
այս, և այն մարդի որդիին, որ
պինդ կ՚բռնէ այս, և շաբաթը
կ՚պահէ պղծելուց, և իր ձեռքը
կ՚պահէ որ և իցէ չարութիւն ա-
նելուց։
Եւ թող չ՚ասէ Տիրոջը յարող 3
օտարականի որդին այսպէս թէ
Տէրը ինձ բոլորովին բաժանել է
իր ժողովրդիցը, և թող չ՚ասէ
ներքինին. Ահա ես մի չոր ծառ
եմ։ Որովհետև Տէրը այսպէս է 4
ասում այն ներքինիներին, որոնք
պահում են իմ շաբաթները, և
ընտրում են իմ ուզածը, և հաս-
տատ են իմ ուխտումը. Ես նո- 5
րանց տեղ և անուն պիտի տամ
իմ տանն ու իմ պարիսպներու-
մը, աւելի լաւ քան թէ որդիք
և աղջկերք. և նորանց մի յաւի-

տենական անուն կ՚տամ, որ չի
6 ջնջուիլ։ Եւ այն օտարականների
որդիքը, որ յարել են Տիրոջը,
նորան ծառայելու և Տիրոջ ա-
նունը սիրելու, և նորա ծառա-
ները լինելու համար, այսինքն բո-
լոր իմ շաբաթը պղծելուց պա-
հողները և իմ ուխտը բռնողնե-
7 րը, Նորանց էլ պիտի բերեմ իմ
սուրբ սարը, և նորանց ուրախա-
ցնեմ իմ աղօթքի տան մէջ. նո-
րանց ողջակէզներն ու զոհերը ընդ-
ունելի պիտի լինեն իմ սեղանի
վերայ, որովհետև իմ տունը ա-
ղօթքի տուն պիտի կոչուի բոլոր
8 ազգերի համար։ Տէր Եհովայի
խօսքն է, որ ժողովում է Իսրա-
յէլի աքսորուածներին. Դեռ էլ
պիտի ժողովեմ բացի նորանից նո-
րա ժողովուածների վերայ։
9 Ով դաշտի բոլոր գազաններ,
եկէք ուտելու, ով անտառի բո-
10 լոր գազաններ։ Նորա պահա-
պանները բոլորը կոյր են, չ՚գի-
տեն, նորանք ամենքը համր շու-
ներ են, որ կարող չեն հաջել,
տեսանողները քնում են, սիրում
11 են մրափելը. Եւ նորանք շատա-
կեր շուներ են, ու կշտանալ չը
գիտեն. և նորանք հովիւներ են,
որ չ՚գիտեն բան հասկանալը. նո-
րանք ամենքը իրանց ճանապար-
հին դարձան, ամեն մէկն իր շա-
12 հի ետևից իր մասին. Եկէք, գինի
բերեմ, և արբենք ցքիով. և է-
գուցուայ օրն էլ այսպէս լինի,
և շատ առաւել մեծ։

ԳԼ. ԾԷ

1 Արդարը կորչում է և ուշադ-
րութիւն անող մարդ չ՚կայ, և
բարի մարդիկ վեր են առնվում
առանց մէկի իմանալու, թէ չա-
րիքի առաջից վեր առնուեցաւ
2 արդարը։ Նա մտնում է խաղա-
ղութեան մէջ. նորանք հանգ-
չում են իրանց հանգչարաններ-
ումը, որոնք ուղղութեամբ են
3 վարվում։ Բայց դուք այստեղ
մօտեցէք, ով վհուկ կնոջ որդիք,
ով պոռնկի և բոզի սերունդ։
4 Ո՞ւմ վերայ էք ծաղրում, ո՞ւմ
վերայ էք լայնացնում չեր բե-
րանը, և լեզուն՝ երկարացնում.
չէ՞ որ դուք անօրէնութեան զա-
ւակներ՝ ստութեան սերունդ էք.
Որ տաքանում էք բևեկնիի կաղա- 5
տերով ամեն կանաչ ծառի տա-
կին, որ մորթում էք մանուկնե-
րին ձորերում վէմերի խոռոչների
տակին։ Ձորի կոկած քարերն էին 6
քո բաժինը. նորանք են՝ նորանք
քո վիճակը. նորանց էլ թափե-
ցիր նուէր՝ մատուցրիր ընծայ.
մի՞թէ ես կ՚դիմանամ սորանց.
Բարձրացած և վեր ելած սարի 7
վերայ դրիր քո անկողինը, այն-
տեղ էլ բարձրացար զոհ զոհե-
լու համար։ Եւ դռների և դրան- 8
դիների ետև դրիր քո յեշեցու-
ցիչները, որ ինձանից հեռու մեր-
կացնես, ու վեր ելնես. լայնացը-
րիր անկողինդ և դաշինքով վար-
ձեցիր քեզ համար նորանցից,
նորանց անկողինը սիրեցիր, ուր
որ էլ տեսար։ Դու թագաւորի 9
մօտը գնացիր իւղով, և շատա-
ցրիր քո անուշահոտութիւնն-
երը, և դեսպաններիդ մինչև հե-
ռու տեղեր ուղարկեցիր, և խո-
նարհուեցար մինչեւ դժոխքը.
Քո ճանապարհի շատութիւնից 10
վաստակեցիր, բայց մէկ չ՚ասեցիր
թէ Յոյս չ՚կայ. ձեռքիդ վերա-
կենդանութիւնը գտար, դորա
համար ցաւ չ՚ունեցար։ Եւ ո՞ւմից 11
էիր զարհուրում և վախենում,
որ սուտ ասեցիր, և ինձ չ՚յիշե-
ցիր և հոգս չ՚արիր. չէ՞ որ ես
լռել եմ և այն էլ վաղուց՚ի վեր,
և դու ինձանից չես վախենում։
Ես պիտի յայտնեմ քո արդա- 12
րութիւնը, և քո գործերը, և նո-
րանք քեզ օգուտ չ՚ունին։ Դու 13
աղաղակելիս՝ թող ժողոված
կուռքերդ քեզ փրկեն. բայց
նորանց ամենն էլ քամին պիտի
տանի, մէկ շունչ պիտի վեր առ-
նէ, բայց ինձ յուսացողը պիտի
ժառանգէ երկիրը, և ստանայ իմ
սուրբ սարը։ Եւ նա ասում է. 14
Հորդեցէք, հորդեցէք, ճանա-
պարհ բացէք, վեր առէք խոչն
իմ ժողովրդի ճանապարհիցը։
Որովհետև այսպէս է ասում 15

Բարձրը և Բարձրեալը, յաւիտե-
նականութեան մէջ բնակողը, և
որի անունը Սուրբ է. Ես բնակ-
վում եմ բարձրումը և սուրբ
տեղը, բայց լինում եմ կոտրած
և խոնարհ հոգի ունեցողի հետ,
որ խոնարհների հոգին կենդա-
նացնեմ, և կենդանացնեմ սրտով
16 կոտրուածներին։ Որովհետև ես
չեմ վիճելու յաւիտեան, և չեմ
բարկանալու միշտ, նորա համար
որ կ'նուաղէին իմ առաջին հո-
գին և ոգիները, որոնք ես ստեղ-
17 ծել եմ։ Ես նորա ագահութեան
անօրէնութեանը համար բարկա-
ցայ, և նորան զարկեցի. ես ծած-
կուեցայ և բարկացայ, և նա ետ
ետ գնաց իր սրտի ճանապարհո-
18 վը։ Նորա ճանապարհները ես
տեսել եմ, և ես բժշկելու եմ
նորան. և նորան առաջնորդելու
ու նորան և նորա սգաւորներին
19 մխիթարելու եմ։ Շրթունքների
պտուղն ստեղծելով, խաղաղու-
թիւն, խաղաղութիւն լինի հե-
ռուներին և մօտիներին, ասում
է Տէրը, և ես պիտի բժշկեմ նո-
20 րան։ Բայց ամբարիշտները ալէ-
ծուփ ծովի նման են, որ չէ կա-
րող հանդարտել, և նորա ջու-
րերը տիղմ ու ցեխ են դուրս
21 տալիս։ Խաղաղութիւն չ'կայ,
ասում է իմ Աստուածը, ամբա-
րիշտների համար։

ԳԼ. ԾԸ

1 Կոկորդալիր գոչիր, մի խնայիր,
փողի պէս բարձրացրու ձայնդ, և
իմացրու իմ ժողովրդին իրանց
յանցանքը, և Յակոբի տանն՝ ի-
2 րանց մեղքերը. Բայց նորանք ինձ
խնդրում են օր ըստ օրէ, և ու-
զում են գիտենալ իմ ճանա-
պարհները՝ իբրև մի ազգ, որ ար-
դարութիւն է գործում, և իր
Աստուծոյ իրաւունքը զանց չէ
անում, և ինձանից հարցնում են
արդարութեան իրաւունքը, և
փափաքում են Աստուծոյ մօտե-
3 նալ. Ինչու մենք ծոմ ենք պա-
հում, և դու չես տեսնում. մենք
ճգնեցնում ենք մեր անձերը, և
դու չ'գիտես։ Ահա ձեր ծոմ օրը
բաղձանք էք կատարում, և ձեր
բոլոր աշխատաւորներին նեղում
էք։ Ահա կռուի և հակառակու- 4
թեան համար էք ծոմ պահում,
և անզգամութեան բռունցքով
զարկելու համար. դուք այս օրը
ծոմ չէք պահում, որ ձեր ձայնը
լսելի անէք բարձրումը։ Այսպէ՞ս 5
կ'լինի այն ծոմը, որին ես եմ հա-
ւանում, իբրև մի օր, որ մարդ
ճգնում է իր հոգովը, գլուխը
քաշ է գցել կնիւնի պէս, և
քուրձն ու մոխիրը անկողին է
շինել. սա՞ ես դու ծոմ կոչում,
և Տիրոջը հաճելի օ՞ր։ Ահա սա 6
է ծոմը, որին ես հաւանում եմ.
լուծիր անիրաւութեան կապանք-
ները, բաց արա լուծի կոշկոռ-
ները. և ջարդուածներին ազատ
թող տուր, և ամեն տեսակ լուծ
կոտրեցէք։ Այս, հացդ կտրիր 7
տուր սովածին, և թափառական
խեղճերին տար տունդ, երբոր մի
մերկ տեսնես, նորան հագցրու,
և քեզ պէս մարմին ունեցողից
քեզ մի ծածկիր։ Այն ժամա- 8
նակ քո լոյսը արշալոյսի պէս պի-
տի ծագի, և քո բժշկութիւնը
շուտով պիտի բուսնի, և քո ար-
դարութիւնը պիտի գնայ քո ա-
ռաջից, Տիրոջ փառքը պիտի
պահէ քեզ ետևից։ Այն ժամա- 9
նակ դու կ'կանչես, և Տէրը կը
պատասխանէ. դու կ'աղաղակես,
և նա կ'ասէ. Ահա ես։ Եթէ որ
հեռացնես քո միջից լուծը, մատ-
նելը և չարախօսութիւնը դէն
գցես, Եւ կերակրես սովածին ա- 10
խորժանօքդ, և կարօտի հոգին
կշտացնես, այն ժամանակ քո
լոյսը կ'ծագի խաւարումը, և քո
խաւարը կ'լինի կէս օրուայ պէս։
Եւ Տէրը քեզ միշտ կ'առաջնոր- 11
դէ, և կ'կշտացնէ քո անձը ե-
րաշտներումը, և ոսկորներդ կը
զօրացնէ. և ջրարբի պարտէզի
նման կ'լինես, և ջրի ակնի պէս՝
որի ջուրը չի պակասիլ։ Եւ քո- 12
նոնքը պիտի շինեն մշտակայ ա-
ւերակները. և դու կ'կանգնեցը-
նես դարերից ի վեր աւերակ հի-
մերը, և քեզ կ'կոչեն՝ Խրամա-

կարկատ և շէն ճանապարհները
13 վերանորոգող։ Եթէ ետ դար-
ձնես շաբաթից քո ոտքը, որ
բաղձանքդ չ'կատարես իմ սուրբ
օրը, և շաբաթը կոչես զուար-
ճութիւն, և Տիրոջը նուիրուա-
ծը՝ պատուական, և նորան պատ-
ուես՝ քո ճանապարհները չ'կա-
տարելով, և քո բաղձանքը չը
լրացնելով և դատարկաբանու-
14 թիւն չ'անելով, Այն ժամանակ
կ'զուարճանաս Տէրովը, և ես
քեզ վեր կ'հանեմ երկրի բարձր
տեղերը, և քեզ կ'ուտեցնեմ քո
հայր Յակոբի ժառանգութիւնը.
որովհետև Տիրոջ բերանը խօսեց։

ԳԼ. ԾԹ

1 Ահա Տիրոջ ձեռքը չէ կարճա-
ցել փրկելուց, և նորա ականջը
2 չէ ծանրացել լսելուց. Այլ ձեր
անօրէնութիւնները են բաժա-
նում ձեր և ձեր Աստուծոյ մէջ
տեղը. և ձեր մեղքերը ծածկե-
ցին նորա երեսը ձեզանից որ չը
3 լսէ։ Որովհետև ձեր ձեռքերը
պղծուած են արիւնով, և ձեր
մատերը՝ անօրէնութիւնով, ձեր
շրթունքները սուտ են խօսում,
ձեր լեզուն անիրաւութիւն է
4 արտաբերում։ Չ'կայ արդարու-
թեամբ բողոքող, և չ'կայ ճշ-
մարտութեամբ դատ վարող, նո-
րանք յոյս են դնում դարտակ
բաների, և խօսում են ունայնու-
թիւն. յղի են թշուառութիւ-
նով և կ'ծնեն անօրէնութիւն։
5 Քարբի ձուերով են թուխս գա-
լիս, և սարդի ոստայն են հինում,
նորանց ձուերիցն ուտողը կ'մեռ-
նի, և կոտրուողիցը իժ է դուրս
6 պրծնում։ Նորանց ոստայնները
հանդերձ չեն դառնալ, և չի
ծածկուիլ նորանց գործերովը,
նորանց գործերը անօրէնութեան
գործեր են, և բռնութեան գործ
7 է նորանց ձեռքինը։ Նորանց ոտ-
ները չարութեան են վազում, և
շտապում են անմեղ արիւն թա-
փելու, նորանց խորհուրդները
անօրէնութեան խորհուրդներ են,
նորանց ճանապարհներումը աւե-
րում ու ապականութիւն կայ։
Խաղաղութեան ճանապարհը չը 8
գիտեն, և իրաւունք չ'կայ նորանց
ուղիներումը. իրանց շաւիղները
ծռմռել են, ամեն ով որ նորա-
նում ման է գալիս՝ խաղաղութիւն
չ'գիտէ։ Սորա համար իրաւունքը 9
հեռացաւ մեզանից, և մեզ չէ
հասնում արդարութիւնը. սպա-
սում ենք լոյսի՝ և ահա խաւա-
րը, պայծառութեան՝ և ահա մա-
ռախուղում ենք ման գալիս։ Կոյ- 10
րերի պէս պատն ենք շօշափում,
և տչք չ'ունեցողի պէս խարխա-
փում ենք. գլորվում ենք կէս
օրին կարծես թէ գիշեր լինի,
պարարտների մէջ լինելով մե-
ռելների պէս ենք։ Ամենքս մռընչ- 11
ում ենք արջերի պէս, և աղաւ-
նիների պէս ճվճվում, սպասում
ենք դատաստանի, բայց չ'կայ,
փրկութեան՝ բայց նա մեզանից
հեռու է։ Որովհետև շատացել 12
են մեր յանցանքները քո առա-
ջին, և մեր մեղքերը վկայում են
մեզ դէմ, որովհետև մեր յան-
ցանքները մեզ հետ են, և մենք
մեր անօրէնութիւնները գիտենք։
Յանցանք ենք գործել, և ուրա- 13
ցել ենք Տիրոջը, և խոտորել ենք
մեր Աստուծուն հետևելուցը,
բռնութիւն և ապստամբութիւն
ենք խօսել, և մեր սրտերումը
փուչ բաներ մտածել։ Եւ դա- 14
տաստանը ետ է դառել, և ար-
դարութիւնը՝ հեռուանց կանգ-
նել, որովհետև ճշմարտութիւ-
նը գլորվում է հրապարակումը,
և ուղղութիւնը չէ կարողանում
ներս մտնել։ Ճշմարտութիւնը 15
աներևոյթ է դառնում, և չա-
րութիւնից հեռացողը կողոպտը-
վում է։ Եւ Տէրը տեսաւ, և սա
չար երևեցաւ նորա աչքին, որով-
հետև իրաւունք չ'մնաց։ Եւ տե- 16
սաւ որ մարդ չ'կար, և զարմա-
ցաւ որ միջնորդ չ'կար. և նորա
բազուկը օգնեց նորան, և նորա
արդարութիւնը նորան նպաստեց։
Եւ նա հագաւ արդարութիւնը 17
զրահի պէս, և փրկութեան սա-
ղաւարտը իր գլխին. և վրէժխընդ-
րութեան զգեստը հագաւ իբրև

պատմուճան, և նախանձն իր վե-
18 րայ առաւ վերարկուի պէս։ Գոր-
ծերին համեմատ հատուցում է
տալու. բարկութիւն՝ իր հակա-
ռակորդներին, հատուցում՝ իր
թշնամիներին, և կղզիներին է-
րանց վարձքը պիտի հատուցանէ։
19 Եւ պիտի վախենան Տիրոջ անու-
նից արևմուտքից եղողները, և
նորա փառքիցը՝ արևելքից եղող-
ները. երբոր թշնամին դետի պէս
գայ, Տիրոջ հոգին նորան կ'փախ-
20 ցնէ։ Եւ Փրկիչ պիտի գայ Սիօնի
համար, և Յակոբի մէջ յան-
ցանքից ետ դարձողների համար,
21 ասում է Տէրը։ Իմ էլ ուխտը
նորանց հետ սա է, ասում է Տէ-
րը. Իմ հոգին որ քեզ վերայ է,
և իմ խօսքերը որ դրել եմ քո
բերանումը, պիտի չ'պակասեն քո
բերանից և քո զաւակների բե-
րանից և քո զաւակների զաւակ-
ների բերանիցը, ասում է Տէրը,
այսուհետև մինչև յաւիտեան։

ԳԼ. Կ

1 Վեր կաց, լուսաւորուիր, որով-
հետև լոյսդ եկել է, և Տիրոջ
փառքը ծագել է քեզ վերայ։
2 Որովհետև ահա խաւարը ծած-
կել է երկիրը, և մառախուղն՝
ազգերը. բայց քեզ վերայ ծա-
գում է Տէրը, և նորա փառքը
3 երևում է քեզ վերայ։ Եւ ման
են գալիս ազգերը դէպի քո լոյսը,
և թագաւորները՝ դէպի քեզ վե-
րայ ծագած պայծառութիւնը։
4 Բարձրացրու աչքերդ շուրջանա-
կի և տես, բոլորը ժողովուած
գալիս են դէպի քեզ. քո որդիքը
հեռուանց են գալիս, և աղջկեր-
քըդ բազուկների մէջ են գրը-
5 կուած։ Այն ժամանակ կ'տես-
նես և կ'զմայլես, և սիրտդ ու-
րախութիւնից կ'դողայ և կ'լայնա-
նայ. որովհետև դէպի քեզ պի-
տի դիմէ ծովի առատութիւնը,
և ազգերի հարստութիւնը պիտի
6 գայ քեզ մօտ։ Ուղտերի երա-
մակը պիտի ծածկէ քեզ՝ Մա-
դիամի և Գեփայի կողռակները,
բոլորը Սաբայիցն են գալիս, ոսկի
և կնդրուկ են բերելու, և Տիրոջ
գովասանքներն են աւետելու։
7 Կեդարի բոլոր հօտերը քեզ մօտ
պիտի ժողովուին, Նաբէօթի խո-
յերը պիտի ծառայեն քեզ. վեր
պիտի ելնեն իմ սեղանի վերայ
իբրև ընդունելի, և ես իմ փա-
ռաց տունը պիտի փառաւորեմ։
8 Ո՞վ են սորանք, որ թռչում
են ամպի պէս, և աղաւնիների
պէս՝ դէպի իրանց վանդակները։
9 Որովհետև կղզիները սպասում են
ինձ, և Թարսիսի նաւերը առա-
ջինն են, որ քո որդկանցը բերեն
հեռուից, և նորանց հետ նորանց
արծաթն ու նորանց ոսկին, քո
Տէր Աստուծոյ և քեզ զարդա-
րող Իսրայէլի Սուրբի անունի
համար։ Եւ օտարների որդիքը
10 պիտի շինեն քո պարիսպները, և
նորանց թագաւորները քեզ պի-
տի ծառայեն. որովհետև իմ բար-
կութիւնումը քեզ զարկեցի, բայց
իմ հաճութիւնովը պիտի քեզ
11 գթամ։ Եւ քո դռները պիտի
միշտ բաց լինեն, ցերեկը և գի-
շերը պիտի չ'կապուին. որ ազգե-
րի զօրութիւնը քեզ մօտ բերեն,
և նորանց թագաւորները հան-
12 դէսով կ'գան։ Որովհետև այն
ազգը և այն թագաւորութիւնը
որ քեզ չի ծառայիլ, պիտի փչա-
նայ. և այնպիսի ազգերը պիտի
13 բոլորովին քանդուին։ Լիբանանի
փառքը քեզ մօտ պիտի գայ,
մայրը, սօսին և տօսախը մէկտեղ,
իմ սրբարանի տեղը զարդարելու
համար, և ես իմ ոտքերի տեղը
14 պիտի փառաւորեմ։ Եւ քեզ
մօտ պիտի գան ծռելով քեզ
տանջողների որդիքը, և քեզ պի-
տի երկրպագութիւն անեն ոտ-
քերիդ թաթերի մօտ բոլոր քեզ
անարգողները. և քեզ պիտի կո-
չեն. Տիրոջ քաղաք, Իսրայէլի
15 Սուրբի Սիօնը։ Նորա փոխանակ
որ եղել էիր թողուած, ատուած,
և անտես ձգուած, ես քեզ շի-
նել եմ յաւիտենական փառք,
16 ուրախութիւն՝ ազգից ազգ։ Եւ
պիտի ազգերի կաթը ծծես, և
թագաւորների ստինքն ես ծծե-
լու, և իմանալու ես, որ ես Տէրս

եմ քո Փրկիչը, և քեզ Ազատո-
17 ղը՝ Յակոբի Հզօրս։ Պղնձի տեղ
ոսկի պիտի բերեմ, և երկաթի
տեղ պիտի արծաթ բերեմ, և
փայտերի տեղ՝ պղինձ, և քարե-
րի տեղ՝ երկաթ, և քո վերա-
կացուներդ պիտի շինեմ խաղա-
ղութիւնը, և քո ոստիկաններդ՝
18 արդարութիւնը։ Այլ ևս լսելի
չի լինիլ քո երկրումը բռնու-
թիւն, և աւերում ու կոտո-
րած՝ քո սահմաններումը. և դու
Փրկութիւնը կոչելու ես քո պա-
րիսպները և քո դռները Օրհնա-
19 բանութիւնը։ Այլ ևս արևը չի
լինելու քո լոյսը ցերեկը, և լու-
սինը քեզ լոյս չի տալու լուսա-
ւորելու համար. այլ Եհովան կը
լինի քեզ համար յաւիտենական
լոյսը, և քո Աստուածը՝ քո փառ-
20 քը։ Քո արևն այլ ևս պիտի մար
չ'մտնէ, և քո լուսինը չ'նուազի,
այլ Եհովան պիտի լինի քո յա-
ւիտենական լոյսը, և պիտի վեր-
21 ջանան քո սուգի օրերը։ Եւ քո
ժողովրդի բոլորն էլ արդար պի-
տի լինեն, յաւիտեան պիտի ժա-
ռանգեն երկիրը, իբրև իմ տնկած
ընձիւղը՝ իմ ձեռքերի գործը՝
22 փառաւորուելու համար։ Ամե-
նափոքրը հազար պիտի դառնայ,
և ամենապզտիկը՝ զօրաւոր ազգ.
ես Տէրս իր ժամանակին շուտով
կ'անեմ։

ԳԼ. ԿԱ

1 Տէր Եհովայի հոգին ինձ վերայ
է, ըստ որում Տէրը օծել է ինձ.
նա ուղարկել է ինձ աղքատնե-
րին աւետիք տալու, կոտրած
սիրտ ունեցողներին բժշկելու,
գերիներին ազատութիւն հրա-
տարակելու եւ կապեալներին՝
2 արձակում. Տիրոջ համար հրա-
տարակելու ընդունելի տարին,
և վրէժխնդրութեան օրը՝ մեր
Աստուծոյ համար. բոլոր սգա-
ւորներին մխիթարելու համար.
3 Սիօնի սգաւորների համար որո-
շելու, որ նորանց փառք տրուի
մոխրի տեղ, ուրախութեան իւղ՝
սուգի տեղ, գովութեան պատ-
մուճան՝ հանգուած սրտի տեղ.
և նորանց պիտի կոչեն արդա-
րութեան բևեկնիներ, որ Տէրը
տնկել է իր փառաւորութեան
համար։ Եւ նորանք պիտի շինեն 4
այն աւերակները որ ի վաղուց
կան, առաջի փլատակները պիտի
կանգնեցնեն, և պիտի նորոգեն
աւերման քաղաքները, դարէ
ցդար ամայի մնացած տեղերը։ Եւ 5
օտարականները պիտի կանգնեն
և ձեր հօտերը հովուեն. և օ-
տարների որդիքը ձեր երկրա-
գործներն ու այգեգործները պի-
տի լինեն։ Եւ դուք պիտի Տիրոջ 6
քահանաները կոչուիք, "Մեր Ա-
ստուծոյ պաշտօնեաներ" են ասե-
լու ձեզ. ազգերի հարստութիւ-
նը պիտի ուտէք, և նորանց
փառքովը պանծաք։ Ձեր ամօթի 7
փոխարէն կրկնապատիկ ուրախու-
թիւն, և անարգանքի փոխարէն
պիտի ցնծան իրանց բաժնի վե-
րայ, սորա համար կրկնապատիկը
պիտի ժառանգեն իրանց երկ-
րումը, յաւիտենական ուրախու-
թիւն են ունենալու նորանք։ Ո- 8
րովհետև ես Տէրս սիրում եմ
իրաւունքը, ատում եմ անի-
րաւութիւնն և յափշտակու-
թիւնը, և պիտի տամ նորանց
գործերի վարձքը հաւատարմու-
թիւնով, և նորանց հետ յա-
ւիտենական ուխտ պիտի դնեմ։
Եւ պիտի ճանաչուին ազգերի 9
մէջ նորանց սերունդը, և նո-
րանց զաւակունքը ժողովուրդ-
ների մէջ. բոլոր նորանց տես-
նողները պիտի գիտենան թէ նո-
րանք Տիրոջ օրհնած սերունդն
են։
Ես ուրախութեամբ պիտի ու- 10
րախանամ Տէրովը, իմ անձը պի-
տի խնդայ իմ Աստուծովը. ո-
րովհետև նա ինձ փրկութեան
հանդերձներ հագցրեց, արդա-
րութեան պատմուճանը գցեց
ինձ վերայ. ինչպէս մի փեսայ,
որ դնում է իր խոյրը, և մի
հարսի պէս՝ որ զարդարվում է
իր զարդերովը։ Որովհետև ինչ- 11
պէս որ երկիրը բուսցնում է
իր տունկը, և ինչպէս որ պար-

տեղը ծիլ է տալիս իր մէջ սերմնացածը, այսպէս էլ Տէր Եհովան բուսցնելու է արդարութիւնը և օրհնաբանութիւնը բոլոր ազգերի առաջին։

Գլ. ԿԲ

1 Ահաւասիկ իմ ծառաս, որ նրան եմ հաստատում, իմ ընտրեալս, որով հաճեցաւ իմ հոգիս. ես իմ Հոգիս տուի նրա վրայ, նա դատաստան կ'արտադրի հեթանոսներին։
2 Նա չի գոռայ եւ չի բարձրացնի իր ձայնը, եւ չի լսեցնի իր ձայնը փողոցում։
3 Ջարդուած եղէգ չի կոտրի, եւ ծխացող մշուշ չի մարի, այլ ճշմարտութեամբ դատաստան կ'արտադրի։
4 Նա չի տկարանայ եւ չի ընկճուի, մինչեւ որ դատաստան հաստատի երկրի վրայ, եւ կղզիները նրա օրէնքին կը սպասեն։
5 Այսպէս է ասում Աստուած Տէրը, որ ստեղծեց երկինքը եւ տարածեց նրանց, որ երկիրը եւ նրա ելուստները հաստատեց, որ տուեց ժողովրդին, որ նրա վրայ է, եւ շունչ նրանց, որ գնում են նրա վրայով։
6 Ես Տէրս կանչեցի քեզ արդարութեամբ, եւ բռնեցի քո ձեռքը, եւ պահեցի քեզ, եւ տուի քեզ ուխտի համար ժողովրդի, լոյս հեթանոսների,
7 որ բանայ կոյր աչքերը, հանէ կապեալներին բանտից, եւ նրանց, որ նստած են խաւարի մէջ, հանէ բանտից։
8 Ես Տէրս եմ, սա է իմ անունս, եւ իմ փառքս ուրիշին չեմ տալ, եւ իմ գովասանքս կուռքերին չեմ տալ։
9 Ահաւասիկ առաջուայ բաները եկան, եւ նորերը ես եմ պատմում, նախքան նրանք ծագեն, ձեզ լսելի եմ անում։

10 Երգեցէք Տիրոջ նոր երգ, նրա գովասանքը երկրի ծագերից, դուք, որ ծովում իջնում էք, եւ նրա մէջ եղողներ, կղզիներ եւ նրանց բնակիչներ։
11 Անապատը եւ նրա քաղաքները թող բարձրացնեն իրենց ձայնը, Կեդարի գիւղերը, թող ուրախանան Սելայի բնակիչները, թող գոռան լերանց գագաթներից։
12 Թող փառք տան Տիրոջը, եւ կղզիներում նրա գովասանքը պատմեն։
13 Տէրը դուրս կ'գայ իբրեւ հզօր, իբրեւ պատերազմող մարդ նա կ'գրգռի իր նախանձը, կ'գոռայ, այո, կ'աղաղակի, իր թշնամիների վրայ կ'յաղթանակի։
14 Ես երկար ժամանակ լռեցի, համբերեցի, ինչպէս որ երկունքի կինը կ'համբերի, կ'կործանեմ եւ միանգամից կ'կլանեմ։
15 Լերներն ու բլուրները կ'աւերեմ, եւ նրանց բոլոր խոտերը կ'չորացնեմ, գետերը կղզիներ կ'դարձնեմ, եւ ջրհորները կ'ցամաքեցնեմ։
16 Կուրերին ճանապարհով կ'տանեմ, որ չգիտեն, նրանց կ'առաջնորդեմ անծանօթ ճանապարհներով, խաւարը նրանց առաջ լոյս կ'դարձնեմ, եւ ծուռ տեղերը ուղիղ կ'անեմ։ Ես այս բաները կ'անեմ նրանց, եւ չեմ թողնի նրանց։
17 Նրանք կ'յետ դառնան, կ'ամաչեն, որ յոյս դրին կուռքերի վրայ, որ ձուլածոյ կուռքերին ասացին, թէ դուք մեր աստուածներն էք։
18 Լսեցէք, խուլե՛ր, եւ նայեցէք, կո՛յրեր, որ տեսնէք։
19 Ո՞վ է կոյր, եթէ ոչ իմ ծառան, եւ խուլ, եթէ ոչ իմ ուղարկած պատգամաւորը, ո՞վ է կոյր, եթէ ոչ իմ ընտրեալս, եւ կոյր, եթէ ոչ Տիրոջ ծառան։
20 Դու շատ բաներ տեսար, բայց չպահեցիր, ականջները բացուած էին, բայց չլսեցիր։
21 Տէրը կամեցաւ նրա համար, որ նրա արդարութեան համար մեծացնի օրէնքը եւ փառաւորի։
22 Բայց սա կողոպտուած եւ յափշտակուած ժողովուրդ է, ամենքը նրանք որոգայթների մէջ են գերեվարուած, եւ բանտերում են պահուած, կողոպտուած են եղել, եւ չկայ, որ ազատի, եւ յափշտակուած, եւ չկայ, որ ասի՝ Դարձրո՛ւր։
23 Ո՞վ կայ ձեզանից, որ ականջ դնի այս բանին, որ ուշադրութիւն դարձնի եւ լսի ապագայ ժամանակի համար։
24 Ո՞վ Յակոբին յափշտակութեան մատնեց, եւ Իսրայէլը կողոպտողների ձեռքը, չէ՞ որ Տէրն է, որի դէմ մեղանչեցինք, եւ նրա ճանապարհներով չուզեցին գնալ, եւ նրա օրէնքին չհնազանդեցին։
25 Ուստի նա իր բարկութեան սաստկութիւնը եւ պատերազմի զօրութիւնը թափեց նրանց վրայ, եւ նրանց շրջապատեց, բայց նրանք չիմացան, եւ այրեց նրանց, բայց նրանք ուշադրութիւն չդարձրին։

Գլ. ԿԳ

1 Բայց հիմա այսպէս է ասում Տէրը, որ ստեղծեց քեզ, Յակոբ, եւ որ կազմեց քեզ, Իսրայէլ, մի՛ վախենար, որովհետեւ ես քեզ փրկեցի, քեզ անունով կանչեցի, դու իմն ես։
2 Երբ ջրերի միջով անցնես, ես քեզ հետ կ'լինեմ, եւ գետերի միջով, նրանք քեզ չեն խեղդի, եւ երբ կրակի միջով գնաս, չես այրուի, եւ բոցը քեզ չի վառի։
3 Որովհետեւ ես եմ Տէր Աստուածդ, Իսրայէլի Սուրբը, Փրկիչդ, Եգիպտոսը քո փրկութեան համար տուի, Եթովպիան եւ Սաբան քո տեղը։
4 Որովհետեւ դու իմ աչքիս թանկագին եղար, եւ պատուական, եւ ես քեզ սիրեցի, եւ մարդիկ քո տեղը տուի, եւ ազգեր քո հոգու փոխարէն։
5 Մի՛ վախենար, որովհետեւ ես քեզ հետ եմ, արեւելքից քո սերունդը կ'բերեմ, եւ արեւմուտքից քեզ կ'հաւաքեմ։
6 Հիւսիսին կ'ասեմ՝ Տո՛ւր, եւ հարաւին՝ Մի՛ արգիլիր, իմ որդիներին հեռուներից բե՛ր, եւ իմ դուստրերին երկրի ծագերից,
7 ամենայն մարդ, որ իմ անունով կոչուած է, եւ որ ստեղծեցի իմ փառքի համար, որ կազմեցի եւ շինեցի։
8 Հանի՛ր կոյր ժողովուրդը, որ աչքեր ունի, եւ խուլերին, որ ականջներ ունին։
9 Բոլոր ազգերը հաւաքուեցան, եւ ամբողջ ժողովուրդները ժողովուեցան, ո՞վ կայ նրանց մէջ, որ այս բանը պատմի, եւ առաջուայ բաները մեզ լսելի անի, թող իրենց վկաները բերեն, եւ արդարանան, եւ լսողները թող ասեն, Ճշմարիտ է։
10 Դուք իմ վկաներս էք, ասում է Տէրը, եւ իմ ծառաս, որ ընտրեցի, որ գիտենաք եւ հաւատաք ինձ, եւ հասկանաք, որ ես եմ, առաջ ինձ պէս Աստուած չեղաւ, եւ յետոյ էլ չի լինի։
11 Ես, ես եմ Տէրը, եւ ինձանից զատ փրկիչ չկայ։
12 Ես յայտնեցի, եւ փրկեցի, եւ պատմեցի, եւ ձեր մէջ օտար աստուած չկայ, դուք իմ վկաներս էք, ասում է Տէրը, եւ ես Աստուած եմ։
13 Եւ յաւիտենից ես եմ, եւ ոչ ոք չկայ, որ իմ ձեռքից ազատի, ես գործեցի, եւ ո՞վ կ'կարողանայ դարձնել։
14 Այսպէս է ասում Տէրը, ձեր Փրկիչը, Իսրայէլի Սուրբը, Բաբելոնի համար ես ուղարկեցի, եւ բոլոր նրանց, որ փախչում էին, եւ քաղդէացիները նաւերով կ'փախչեն։
15 Ես Տէրս եմ, ձեր Սուրբը, Իսրայէլի Արարիչը, ձեր Թագաւորը։
16 Այսպէս է ասում Տէրը, որ ճանապարհ արեց ծովում, եւ շաւիղ ուժեղ ջրերի մէջ,
17 որ հանեց կառքը եւ ձին, զօրքը եւ հզօրը, միասին պառկեցան, եւ չկարողացան յարուցանել, մարեցան, հանգան իբրեւ պատրոյգ։
18 Յիշեցէք առաջուայ բաները, եւ հինները մի՛ յիշէք։
19 Ահաւասիկ ես նոր բան եմ անում, հիմա կ'ծագի, չէ՞ որ դուք կ'ճանաչէք, ես անապատում ճանապարհ եմ անում, եւ անմշակ տեղում գետեր։
20 Գազանները, վիշապները եւ ջայլամները պատուեցին ինձ, որովհետեւ անապատում ջրեր եմ անում, եւ անմշակ տեղում գետեր, որ ջրեմ իմ ընտրեալ ժողովրդին,
21 որ ես ինձ համար կազմեցի, որ իմ գովասանքը պատմի։
22 Բայց դու, Յակոբ, ինձ չկանչեցիր, եւ Իսրայէլ, ինձանից չձանձրացար։
23 Ոչխարներիդ ողջակէզներ չբերեցիր ինձ, եւ քո զոհերով ինձ չպատուեցիր, ես քեզ ծառայութեան չհարկադրեցի, եւ խունկով չձանձրացրի քեզ։
24 Արծաթով ինձ համար եղէգ չգնեցիր, եւ ճարպով զոհերիդ չյագեցրիր ինձ, այլ քո մեղքերով ինձ ծառայութեան հարկադրեցիր, եւ քո անօրէնութիւններով ինձ ձանձրացրիր։
25 Ես, ես եմ, որ ջնջում եմ քո անօրէնութիւնները իմ համար, եւ քո մեղքերը չեմ յիշում։
26 Յիշեցրո՛ւ ինձ, եկէք միասին դատենք, դու պատմի՛ր, որ արդար լինես։
27 Քո առաջին հայրը մեղանչեց, եւ քո ուսուցիչները ինձ հակառակ եղան։
28 Ես սրբերի իշխանները պղծեցի, եւ Յակոբին անէծքի տուի, եւ Իսրայէլին նախատանքի։

Գլ. ԿԴ

1 Բայց հիմա լսի՛ր, Յակոբ, իմ ծառա, եւ Իսրայէլ, որ ընտրեցի,
2 այսպէս է ասում Տէրը, որ ստեղծեց քեզ, եւ քեզ կազմեց ծննդեան ժամանակ, որ քեզ կ'օգնի, Մի՛ վախենար, Յակոբ, իմ ծառա, եւ Յեսուրոն, որ ընտրեցի,
3 որովհետեւ ես ջուր կ'թափեմ ծարաւածի վրայ, եւ գետեր՝ չորացած տեղի, իմ Հոգիս կ'թափեմ քո սերնդի վրայ, եւ իմ օրհնութիւնս քո զաւակների վրայ,
4 եւ նրանք կ'բուսնեն խոտի մէջ, իբրեւ ուռենի ջրերի առուների մօտ։
5 Այս մէկը կ'ասի՝ Ես Տիրոջն եմ, եւ միւսը կ'կանչի Յակոբի անունով, եւ միւսը կ'գրի իր ձեռքով Տիրոջը, եւ Իսրայէլի անունով կ'կոչուի։
6 Այսպէս է ասում Տէրը, Իսրայէլի Թագաւորը, եւ նրա Փրկիչը, զօրութիւնների Տէրը, Ես առաջինն եմ, եւ ես վերջինն եմ, եւ ինձանից զատ Աստուած չկայ։
7 Ո՞վ կայ, որ ինձ նման կանչի, եւ պատմի, եւ ինձ համար հերթով ասի, ես հաստատեցի յաւիտենական ժողովուրդ, եւ գալիքները եւ գալիք բաները թող ասեն նրանք։
8 Մի՛ վախենաք, եւ մի՛ երկնչիք, ես ձեզ ասացի եւ պատմեցի, եւ դուք իմ վկաներս էք, ասում է Տէրը, եւ ես Աստուած եմ։
9 Ես ինձ համար կազմեցի, որ իմ գովասանքը պատմի։

Տիրոջ բոլոր մեզ սրածների համեմատ, և այն շատ բարիքը՝ Իսրայէլի տան համար, որոնք նա արաւ իր դթութիւնով ու մեծ ողորմութիւնով։
8 Եւ նա ասեց. Նորանք հէնց իմ ժողովուրդներն են, Որդիք, որոնք չեն սուտ. և նա նորանց փրկիչը եղաւ։
9 Նորանց բոլոր նեղութիւնների մէջ նա նեղուեմ էր. և նորա երեսի հրեշտակը ազատեց նորանց. իր սիրոյն ու դթութիւնով նա փրկեց նորանց, և նորանց վեր առաւ և կրեց նորանց բոլոր վաղուցեայ օրերումն։ Բայց նորանք ապրստամբեցին և բարկացրին նորա սուրբ Հոգին, նա էլ նորանց թշնամի դառաւ, և ինքը պատերազմեց նորանց հետ։
11 Եւ նա հին օրերը, Մովսէսին և իր ժողովրդին յիշեց. Ո՞ւր է նա, որ վեր հանեց նորանց ծովիցն իր հօտի հովիւովը. ո՞ւր է նա, որ նորանց մէջը դրաւ իր սուրբ Հոգին. Որ ման ածեց Մովսէսի աջ կողմին իր փառաւորութեան բազուկը, որ պատառեց ջուրերը նորանց առաջին, որպէս զի իրան համար յաւիտենական անուն շինէ։
13 Որ նորանց անցկացրեց անդունդներով, որոնք չ'սահեցին՝ ինչպէս որ ձին անապատումը։
14 Ինչպէս որ անասունը իջնում է հովիտումը. Տիրոջ Հոգին նորան հանգստացրեց. նոյնպէս էլ դու առաջնորդեցիր քո ժողովրդին, որ քեզ համար փառաւոր անուն շինես։
15 Նայիր երկնքիցը՝ և տես քո սուրբը և փառաւոր բնակարանիցը. ո՞ւր է քո նախանձն ու զօրը. քո ողիքների գալարուիլը և քո գթութիւնները դէպի ինձ՝ իրանց եան են։
16 Քաշուե՛ս, Որովհետև մեր Հայրը դու ես, թէև Աբրահամը մեզ չ'գիտեր, և Իսրայէլը մեզ չէ ճանաչում. դու ես մեր Հայրը, ով Տէր, վաղուց՝ ի վեր քո անունը մեր փրկիչ է։
17 Ինչու համար դու մեզ մոլորեցնում ես, ով Տէր, քո ճանապարհներիցը. խոստացնում մեր սրտերը, որ քեզանից չ'վախենանք. եան դարձիր քո ծառաների համար՝ քո ժառանգութեան ցեղերի համար։
18 Քիչ ժամանակ ժառանգեց քո սրբութեան ժողովուրդը. մեր թշնամիները առնակոխ արին քո սրբարանը։
19 Մենք եղել ենք այնպես որ իբր թէ դու յաւիտեան չես տիրել մեզ վերայ, որոնց վերայ կոչուած չէ եղել քո անունը։

Գլ. ԿԴ

1 Օհ թէ ճեղքէիր երկինքը՝ վայր իջնէիր. քո առաջը սարերը պիտի հալուէին՝ ինչպէս կրակով վառուած է խոխը, և ջուրը եփուում՝ կրակով. որ իմացնէիր քո անունը քո թշնամիներին, և քո երեսից դողային ազգերը։
3 Երբոր դու արիր այն սոսկալի բաները, որ մենք չէինք սպասում, և իջար, քո երեսից սարերը հալուեցան։
4 Եւ յաւիտենից՝ ի վեր չէ լսուած և ականջի չէ հասած, աչք էլ չէ տեսել, որ քեզանից բաց մէկ ուրիշ աստուած այսպէս բաներ անէ իրան յուսացողներին։
5 Դու հանդում ես ուրախ եղողին և արդարութիւն անողին, որ յիշում են քեզ քո ճանապարհներում. ահա դու բարկացար, և մենք յանցաւոր էինք. յաւէտ դորանցում ենք։ մի՞թէ մենք կ'փրկուինք։
6 Եւ մենք ամենքս պղծ բանի պէս ենք դառել, և դաշտանի շորի պէս է մեր ամեն արդարութիւնը, և տերևի պէս մենք ամենքս թոռոմել ենք, և մեր յանցանքները քամիի պէս վեր են առնում մեզ։
7 Եւ քո անունը կանչող չկայ, մէկ զարթնող՝ որ քեզանով զօրանար. որովհետև դու ծածկել ես քո երեսը մեզանից, և մեզ մաշեցնում ես մեր անօրէնութիւնների միջոցով։
8 Եւ հիմա, ով Տէր, դու ես մեր Հայրը. մենք կաւն ենք, և դու՝ մեր բրուսը, և քո ձեռքի գործ ենք մենք ամենքս։
9 Խիստ մի բարկանար, ով Տէր, և մի յաւիտեան յիշիր անօրէնութիւնը, ահա նայիր մէկ,

10 ամենքս քո ժողովուրդն ենք։ Քո
սուրբ քաղաքները անապատ են
եղել, Սիօնը անապատ է դա-
11 ռել, Երուսաղէմը՝ աւերակ։ Մեր
սրբութեան և մեր փառաց տու-
նը, որի մէջ քեզ օրհներգում
էին մեր հայրերը, կրակի ճարակ
է դառել. և մեր ամեն ցանկա-
12 լիքը ամայի են դառել։ Այս բա-
ների վերայ պիտի զսպե՞ս քեզ,
ով Տէր, պիտի լռե՞ս և մեզ ան-
չափ նեղե՞ս։

ԳԼ. ԿԵ

1 Ես որոնուեցի նորանցից, որ չէին
հարցնում. ես գտնուեցայ նո-
րանցից, որ ինձ չէին խնդրում.
և ասեցի. Ահա ես, ահա ես, այն
ազգին, որ իմ անունը չէր կան-
2 չել։ Ես տարածեցի իմ ձեռքե-
րը ամեն օր դէպի մի ապստամբ
ժողովուրդ, որոնք գնում են մի
այնպիսի ճանապարհով որ լաւ
չէ, իրանց խորհուրդների ետևից.
3 Մի այնպիսի ժողովուրդ, որ ինձ
բարկացնում են միշտ իմ առա-
ջին, որոնք զոհում են այգինե-
րում, և խունկ են ծխում աղիւս-
4 ների վերայ. Որոնք բնակվում են
գերեզմաններում, և գաղտուկ
տեղերում օթևանում, որոնք խո-
զի միս են ուտում, և որոնց ա-
մանների մէջ պղծութիւններ կան
5 փրթուած. Որոնք ասում են՝ Մէկ
կողմ քաշուիր, ինձ մի դիպչիր,
որ ես քեզանից սուրբ եմ։ Սո-
րանք ծուխ են իմ ռնգաց մէջ,
բորբոքած կրակ են ամեն օր։
6 Ահա գրուած է իմ առաջին, չը
պիտի լռեմ, այլ պիտի հատու-
ցանեմ, և հատուցանեմ նորանց
7 ծոցը. Ձեր անօրէնութիւնները և
ձեր հայրերի անօրէնութիւնները
մէկտեղ, ասում է Տէրը, որոնք
խունկ ծխեցին սարերի վերայ,
և բլուրների վերայ անարգեցին
ինձ, և ես ետ պիտի չափեմ ի-
րանց առաջի գործն իրանց ա-
ռաջին։
8 Այսպէս է ասում Տէրը. Ինչ-
պէս քաղցու է գտնվում ողկոյզի
մէջ, և ասում են. Դորան մի
փչացնիր, որովհետև օրհնութիւն
կայ միջումը, նոյնպէս եմ անելու
ես էլ իմ ծառաների համար,
որպէս զի ամենքին չ՛փչացնեմ։
Եւ Յակոբիցը սերունդ՝ և Յու- 9
դայից իմ սարերի մի ժառանգ
պիտի հանեմ, և իմ ընտրեալ-
ները պիտի ժառանգեն այն, և
իմ ծառաները՝ այնտեղ պիտի
բնակուեն։ Եւ Սարօնը պիտի հօ- 10
տերի փարախ լինի և Աքովրի ձո-
րը՝ արջառների մակաղատեղ իմ
ժողովրդի համար, որ ինձ խնդրե-
լու է։ Բայց դուք Տիրոջը թո- 11
ղողներ էք, իմ սուրբ սարը՝ մո-
ռացողներ, Գադ [illegible] սեղան
պատրաստողներ, և Մենի կուռ-
քին նուէր լցնողներ էք։ Եւ ես 12
էլ ձեզ որոշեցի սուրի համար,
և ամենքդ պիտի ծռուիք մոր-
թուելու. որովհետև կանչեցի և
դուք չ՛պատասխանեցիք, խօսեցի
և դուք չ՛լսեցիք. այլ չարութիւն
արիք իմ աչքի առաջին, և ինձ
հաճելի չ՛եղածն ընտրեցիք։ Նո- 13
րա համար Տէր Եհովան այսպէս
է ասում. Ահա իմ ծառաները
պիտի ուտեն, բայց դուք պիտի
սոված մնաք, ահա իմ ծառա-
ները պիտի խմեն, բայց դուք պի-
տի ծարաւ մնաք, ահա իմ ծա-
ռաները պիտի ուրախանան, բայց
դուք պիտի ամաչէք։ Ահա իմ 14
ծառաները պիտի ցնծան սրտի
բերկրութիւնից, բայց դուք պի-
տի գոռաք սրտի ցաւից, և սրտա-
բեկութիւնից պիտի ոռնաք։ Եւ 15
ձեր անունը պիտի թողէք իբրև
անէծք իմ ընտրեալների համար,
և Տէր Եհովան քեզ պիտի մեռ-
ցնէ, բայց իր ծառաներին պիտի
մի ուրիշ անուն կանչէ։ Որ երկ- 16
րի վերայ օրհնուողը պիտի օրհ-
նուի ճշմարիտ Աստուծով, և
երկրի վերայ երդում անողը՝ եր-
դում անէ ճշմարիտ Աստուծով,
որովհետև այն առաջի նեղու-
թիւնները մոռացուեցան, և նո-
րանք ծածկուած են իմ աչքի
առաջից։ Որովհետև ահա ես նոր 17
երկինք և նոր երկիր եմ ստեղ-
ծում, և առաջինները պիտի չը
յիշուին և միտքը պիտի չ՛գան։

[illegible] դուք պիտի ուրախանաք և
[illegible]ուիք յաւիտեանս յաւի-
[illegible] նորանով, որ ես ստեղ-
[illegible] եմ։ Որովհետև ահա ես
[illegible]ծում եմ Երուսաղէմը բերկ-
[illegible] և նորա ժողովուրդը՝ ուրա-
[illegible]թիւն։ Եւ ես պիտի ցնծամ
Երուսաղէմի վերայ, և ուրախա-
նամ իմ ժողովրդովը. և այլ ևս
պիտի չ՛լսուի նորանում լացի
20 ձայն և ողբի ձայն։ Եւ այլ ևս
պիտի չ՛լինի այնտեղից մի քանի
օրական մանուկ, և մի ծեր, որ
իր օրերը լրացրած չ՛լինի. որով-
հետև երիտասարդը պիտի հար-
իւր տարեկան մեռնի, և հարիւր
տարուան մեղաւորը պիտի ա-
21 նիծուի։ Եւ տուներ պիտի շի-
նեն և բնակուեն, և այգիներ
տնկեն ու նորանց պտուղն ուտեն։
22 Նորանք չեն շինիլ, որ ուրիշը
բնակուէ, նորանք չեն տնկել, որ
ուրիշն ուտէ. որովհետև իմ ժո-
ղովրդի օրերը ծառի օրերի չափ
պիտի լինեն, և իրանց ձեռքերի
գործը պիտի մաշեցնեն իմ ընտ-
23 րեալները։ Նորանք պիտի դար-
տակ տեղը չ՛վաստակեն, և չ՛ծնեն
թշուառութեան համար. որով-
հետև նորանք Տիրոջ օրհնեալ-
ների սերունդը կ՛լինեն, և նո-
րանց զաւակունքն էլ նորանց
հետ։ Եւ պիտի լինի, որ նորանք
դեռ չ՛կանչած՝ ես կ՛պատասխա-
նեմ և նորանք դեռ խօսելիս՝ ես
25 կ՛լսեմ։ Գայլը և գառը միասին
կ՛արածեն, և առիւծը արջառի
պէս խոտ կ՛ուտէ. և օձի կերա-
կուրը հող է լինելու։ Նորանք
պիտի չ՛վնասեն և չ՛ապականեն
իմ բոլոր սուրբ սարի վերայ, ա-
սում է Տէրը։

ԳԼ. ԿԶ

1 Այսպէս է ասում Տէրը. Երկին-
քը իմ աթոռն է և երկիրը՝ իմ
ոտքերի պատուանդանը. դա ի՞նչ
տուն է, որ շինում էք ինձ հա-
մար, և դա ի՞նչ տեղ է իմ հան-
դըստութեան համար։ Այդ ա-
մենն էլ իմ ձեռքն է արել, և
եղան այդ ամենը, ասում է Տէրը.
և ես սորան եմ մտիկ տալիս՝ խո-
նարհին և կոտրած հոգի ունե-
ցողին և իմ խօսքից դողացողին։
Արջառ մորթողը մարդասպան 3
է, գառը զոհողը շուն մորթող է,
նուէր մատուցանողը խոզի արիւն
[illegible] է, կնդրուկ *յիշեցը-
նողը կուռք օրհնող է։ Նորանք
էլ են ընտրել իրանց ճանապարհ-
ները, և իրանց սրտին հաճելի են
իրանց կուռքերը. Ես էլ եմ ընտ- 4
րում իրանց թշուառութիւնն-
երը, և նորանց վախեցած բաները
պիտի բերեմ նորանց վերայ, ո-
րովհետև ես կանչեցի և պատաս-
խանող չ՛կար, խօսեցի և նորանք
չ՛լսեցին, և չարութիւն արին իմ
աչքի առաջին, և իմ չ՛ուզած
բանը ընտրեցին։
Լսեցէք Տիրոջ խօսքը դուք, որ 5
դողում էք նորա խօսքից. ասում
են ձեր եղբայրները, որ ձեզ ա-
տում և անարգում են իմ անունի
համար՝ թող Տէրը փառաւորուի,
և մենք տեսնենք ձեզ ուրախու-
թեան մէջ. բայց նորանք պիտի
ամաչեն։
Աղաղակի ձայն կայ քաղաքի- 6
ցը, մի ձայն՝ տաճարիցը. Տիրոջ
ձայնը, որ հատուցանում է իր
թշնամիներին հատուցումը։ Դեռ 7
չ՛երկնած ծնեց, դեռ երկունքը
չ՛եկած՝ արու զաւակով ազատ-
ուեցաւ։ Ո՞վ է այսպիսի բան 8
լսել, ո՞վ այսպիսի բան տեսել,
մի՞թէ երկիրը մէկ օրում է ծը-
նում, կամ մէկ ազգը մէկ ան-
գամում է ծնվում, որ Սիօնը երկ-
նում և իսկոյն ծնում է իր որդ-
կանցը։ Ես որ բերում եմ ծնելու 9
կէտին՝ ծնել չե՞մ տալ, ասում
է Տէրը, կամ ես որ ծնել եմ
տալիս՝ պիտի կապէի՞ ասում է
քո Աստուածը։ Երուսաղէմի հետ 10
ուրախացէք, և բերկրացէք նո-
րանով, դուք ամենքդ որ նորան
սիրում էք. ուրախացէք նորա
հետ ուրախութիւնով, ով դուք
ամենքդ, որ նորա հետ սուգ էիք
անում։ Որովհետև պիտի ծծէք և 11
կշտանաք նորա մխիթարութեան

*Տ

ստինքիցը, որպէս զի դիէք և
զուարճանաք նորա փառաց ա-
ռատութիւնիցը։
12 Որովհետև այսպէս է ասում
Տէրը. Ահա ես բերում եմ խա-
ղաղութիւնը նորա վերայ գետի
պէս, և յորդահոս վտակի պէս՝
ազգերի փառքը. և դուք պիտի
ծծէք, գրկի մէջ պիտի վեր առ-
նուիք, և ծունկերի վերայ պիտի
13 գգվուիք։ Ինչպէս որ մէկ մարդ՝
որին իր մայրը կ'մխիթարէ, նոյն-
պէս էլ ես պիտի մխիթարեմ
ձեզ, և Երուսաղէմով պիտի
14 մխիթարուիք։ Եւ պիտի տես-
նէք, և ձեր սիրտերն ուրախա-
նան. և ձեր ոսկորները պիտի կա-
նաչ խոտի պէս ծաղկեն, և պի-
տի յայտնուի Տիրոջ ձեռքը իր
ծառաների վերայ, և բարկու-
թիւնը՝ նորա թշնամիների վե-
15 րայ։ Որովհետև ահա Տէրը գա-
լիս է կրակով և մրրկի պէս՝ նո-
րա կառքերը. որ իր բարկու-
թիւնը գործ դնէ եռանդով, և
իր սպառնալիքը՝ կրակի բոցով։
16 Որովհետև կրակով դատելու է
Տէրը, և իր սրովը՝ բոլոր մարմի-
նը. և շատ են լինելու Տիրոջ
սպանածները։
17 Իրանց սրբողները և իրանց մաք-
րողները պարտէզների համար մէկ
մէկի ետևից մէջտեղը, որոնք խո-
զի միս են ուտում և պիղծ բան
և մուկ, մէկտեղ պիտի բնաջինջ
18 լինեն, ասում է Տէրը։ Եւ ես նո-
րանց գործերն և նորանց խոր-
հուրդներն գիտեմ. և ժամանակը
կ'գայ որ բոլոր ազգերն ու լե-
զուները ժողովեմ, և նորանք պի-
տի գան և իմ փառքը տեսնեն։
Եւ ես նորանցում նշան պիտ-
դնեմ, և նորանցից պիտի ուղար-
կեմ իբրև ազատուածներ ազգե-
րի մօտ, այսինքն Թարսիս, Փուղ,
Ղուդ՝ աղեղնաւորներին, Թոբէլ
և Յաւան. այն հեռու կղզիները,
որ չեն լսել իմ համբաւը և չեն
տեսել իմ փառքը, և նորանք
պիտի պատմեն իմ փառքը ազ-
գերի մէջ։ Եւ նորանք պիտի բե- 20
րեն ձեր բոլոր եղբայրներին բո-
լոր ազգերից իբրև ընծայ Տիրոջ
համար ձիերով և կառքով, գա-
հաւորակներով, ջորիներով և
տաճիկ ուղտերով իմ սուրբ սա-
րը՝ Երուսաղէմ, ասում է Տէրը.
ինչպէս որ Իսրայէլի որդիքն մա-
քուր ամանով ընծայ են բերում
Տիրոջ տունը։ Եւ նորանցից էլ եմ 21
առնելու քահանաներ և Ղևտա-
ցիներ, ասում է Տէրը։ Որովհետև 22
ինչպէս որ այն նոր երկինքը և այն
նոր երկիրը, որ ես ստեղծելու
եմ, իմ առաջին պիտի կանգնին,
ասում է Տէրը, նոյնպէս էլ պի-
տի հաստատ կենայ ձեր սերուն-
դը և ձեր անունը։ Եւ պիտի լինի, 23
որ ամսից ամիս և շաբաթից շա-
բաթ պիտի գայ ամեն մարմին իմ
առաջը երկրպագելու, ասում է
Տէրը։ Եւ նորանք պիտի դուրս 24
գան և տեսնեն ինձ դէմ ապստամ-
բող մարդկանց դիերը, որովհետև
նորանց որդը չի մեռնիլ, և նո-
րանց կրակը չի հանգչիլ, և նո-
րանք պիտի զզուանք լինեն ամեն
մարմնի համար։

ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Բենիամինի երկրումն՝ Անաթով-
թի մէջ եղող քահանաներից
Քեղկիայի որդի [illegible] խօս-
քերը, Որ նորան եղաւ Տիրոջ
խօսքը Յուդայի թագաւոր՝ Ամո-
նի որդի Յովսիայի օրերումը՝ նո-
րա թագաւորութեան տասնև-
երսքերորդ տարիումը. Եւ եղաւ 3

Յուդայի թագաւոր՝ Յովսիայի
որդի Յովակիմի օրերումը մին-
չև Յովսիայի որդիի Սեդեկիայի
տասնևմէկերորդ տարուայ վերջը
մինչև Երուսաղէմի գերութիւ-
նը՝ հինգերորդ ամսումը։
4 Եւ Տիրոջ խօսքն եղաւ ինձ ա-
5 սելով. Քեզ որովայնում չ'ստեղ-
ծած՝ ես քեզ գիտէի, և արգան-
դից դեռ դու դուրս չ'եկած ես
քեզ սրբեցի, ես քեզ ազգերի
6 մարգարէ եմ դրել։ Եւ ես ա-
սեցի. Ոհ, ով Տէր Եհովայ, ահա
ես խօսել չ'գիտեմ, որովհետև
7 ես մանուկ եմ։ Եւ Տէրն ասեց
ինձ. Մի ասիր թէ Ես մանուկ
եմ, այլ ուր որ քեզ ուղարկեմ՝
գնա. և ամեն ինչ որ քեզ պատ-
8 ուիրեմ՝ խօսիր։ Մի վախենար նո-
րանց երեսիցը, որովհետև ես քեզ
հետ եմ որ քեզ ազատեմ, ա-
սում է Տէրը։
9 Եւ Տէրը մեկնեց իր ձեռքը և
դպաւ իմ բերանին, և Տէրն ա-
սեց ինձ. Ահա ես իմ խօսքերը
10 քո բերանումը դրի. Տես, ես քեզ
այսօր ազգերի վերայ և թագա-
ւորութիւնների վերայ նշանակե-
ցի, որ խլես և պոկես և փչացնես
ու կորցնես, որ շինես և տնկես։
11 Եւ Տիրոջ խօսքն եղաւ ինձ ա-
սելով. Ով Երեմիա, ի՞նչ ես
տեսնում. և ես ասեցի. Մի նշենի
12 գաւազան եմ տեսնում ես։ Եւ
Տէրն ասեց ինձ. Լաւ տեսար.
որովհետև ես պիտի հսկեմ իմ
խօսքերի համար, որ կատարեմ
այն։
13 Եւ երկրորդ անգամ եղաւ Տի-
րոջ խօսքը դէպի ինձ ասելով.
Ի՞նչ ես տեսնում դու. և ես ա-
սեցի. Մի եռացող կաթսայ եմ
տեսնում ես, և նորա երեսը հիւ-
14 սիսի կողմիցն է։ Եւ Տէրն ինձ ա-
սեց. Հիւսիսից պիտի յարձակուի
չարիքը երկրի բոլոր բնակիչների
15 վերայ։ Որովհետև ահա ես կը
կանչեմ հիւսիսի բոլոր թագա-
ւորութիւնների ցեղերը, ասում
է Տէրը, որ գան և ամեն մէկն իր
աթոռը դնէ Երուսաղէմի դռան
մուտքումը, և նորա բոլոր պա-
րիսպների վերայ շուրջանակի և
Յուդայի բոլոր քաղաքների վե-
16 րայ։ Եւ ես կ'խօսեմ իմ իրաւունք-
ները նորանց հետ նորանց բոլոր
չարութիւնների համար. որ ինձ
թողած՝ ուրիշ աստուածների են
խունկ ծխում, և իրանց ձեռքի
գործերին են երկրպագում։
17 Բայց դու մէջքդ գօտեպնդիր,
և վեր կաց ու ասիր նորանց ա-
մենը ինչ որ ես քեզ հրամայում
եմ. նորանց երեսիցը մի վախե-
նար, որ մի դուցէ քեզ վախեցը-
18 նեմ նորանց առաջին։ Եւ ահա
ես քեզ այսօր մի ամուր քաղաք
և երկաթի սիւն և պղնձի պա-
րիսպներ եմ շինում բոլոր երկրի
դէմ, Յուդայի թագաւորների և
նորա իշխանների դէմ, նորա քա-
հանաների և երկրի ժողովրդի
19 դէմ։ Եւ նորանք կ'պատերազմեն
քեզ դէմ, բայց քեզ չեն յաղ-
թիլ, որովհետև ես քեզ հետ եմ,
ասում է Տէրը, որ քեզ փրկեմ։

ԳԼ. Բ

Եւ Տիրոջ խօսքն եղաւ ինձ ա- 1
սելով. Գնա և կանչիր Երուսա- 2
ղէմի ականջներին և ասիր. Այս-
պէս է ասում Տէրը՝ Յիշեցի քեզ
համար քո երիտասարդութեան
քաղցրութիւնը, քո հարսնու-
թեան սէրը, քո իմ ետևից գալը
անապատի մէջ՝ այն չ'սերմուած
երկրումը։ Սուրբ էր Իսրայէլը 3
Տիրոջ համար, նորա արդիւնքի
առաջինեկը. բոլոր նորան ուտող-
ները յանցաւոր էին լինում, չա-
րիք էր գալիս նորանց վերայ, ա-
սում է Տէրը։ Լսեցէք Տիրոջ 4
խօսքը, ով Յակոբի տուն, և Իս-
րայէլի տան բոլոր ազգատոհմեր,
Այսպէս է ասում Տէրը, Ձեր հայ- 5
րերը ի՞նչ անիրաւութիւն գտան
ինձ վերայ, որ հեռացան ինձա-
նից, և ունայնութեան ետևից
գնացին, և ունայնացան։ Եւ չ'ա- 6
սեցին թէ Ո՞ւր է Տէրը, որ մեզ
վեր հանեց Եգիպտոսի երկրից,
որ մեզ ման ածեց անապատու-
մը, ամայութեան և փոսերի երկ-
րումը՝ չորութեան և մահուան
ստուերի երկրումը, այնպիսի մի

երկրում, որով մարդ չէ անցնում, և ուր մարդ չէ բնակվում։
7 Եւ ես ձեզ բերի մի պտղաբեր երկիր, որ ուտէք նորա պտուղը և նորա բարիքը. և դուք մտաք և անմաքուր արիք իմ երկիրը, և իմ ժառանգութիւնը պղծու-
8 թիւն շինեցիք։ Քահանաները չ'ասեցին թէ Ուր է Տէրը, և օրէնքը ձեռքին բռնողները ինձ չ'ճանաչեցին, և հովիւները ապստամբուեցին ինձ դէմ, և մարգարէքը Բահաղով մարգարէացան, և անպիտան բաների ետևիցը գնացին։
9 Սորա համար ես դեռ վիճելու եմ ձեզ հետ, ասում է Տէրը, և ձեր որդկանց որդիների հետ եմ
10 վիճելու։ Որովհետև անցկացէք Կիտացիների կղզիները և տեսէք, և մարդ ուղարկեցէք Կեդար և մէկ լաւ հասկացէք, և տեսէք, թէ արդեօք մի այդպիսի բան
11 եղած կա՞յ։ Թէ արդեօք մի ազգ փոխե՞լ է իր աստուածները թէպէտև նորանք աստուածներ չեն. բայց իմ ժողովուրդը փոխել է իր փառքը մի այնպիսի բանով,
12 որ օգուտ չ'ունի։ Երկինք, զարմացէք այս բանի վերայ, սոսկացէք և շատ հիացէք, ասում է
13 Տէրը։ Որովհետև իմ ժողովուրդը կրկնապատիկ չարութիւն գործեց, ինձ՝ կենաց ջրի աղբիւրս՝ Թողեցին որ իրանց համար հորեր փորեն՝ ծակծակոտ հորեր, որոնք չեն կարող ջուրը պահել։
14 Ծառա՞յ է Իսրայէլը, կամ թէ ընդոծի՞ն է նա. ապա ի՞նչու համար յափշտակութեան մատ-
15 նուեցաւ։ Նորա դէմ մռնչեցին առիւծի կորիւնները՝ հանեցին իրանց ձայնը, և նորա երկիրը աւերակ արին, նորա քաղաքները այրեցին, որ բնակիչ չ'մնաց։
16 Մեմփացիների ու Տափնացիների տղերքն էլ արածեցին քո գա-
17 գաթի վերայ։ Չէ՞ որ սա արաւ քեզ քո Տէր Աստուծուն ձգելդ՝ այն ժամանակ երբ նա քեզ առաջնորդում էր ճանապարհումը։
18 Եւ հիմա ի՞նչ ունիս դու Եգիպտոսի ճանապարհումը, որ Սիովրի ջուրը խմես, և ի՞նչ ունիս դու Ասորեստանի ճանապարհումը, որ Գետի ջուրը խմես։ Քեզ քո 19
չարութիւնն է խրատում, և քո անհաւատարմութիւնները են քեզ յանդիմանում։ Արդ իմացիր և տես, որ չար և դառն բան է քո Տէր Աստուծուն թողելդ, և իմ երկիւղը քեզ վերայ չ'լինելը, ասում է Զօրաց Տէր Եհովան։ Որովհետև դու ի վաղուց 20
ես կոտրել քո լուծը և քո կապերը կտորել, և ասել ես թէ Չեմ ծառայում. որովհետև ամեն բարձր բլուրի վերայ և ամեն կանաչ ծառի տակ պառկեցիր դու՝ պոռնկացար։ Եւ ես քեզ 21
տնկել էի իբրև ընտիր որթ, բոլորովին հաւատարիմ սերմ. բայց դու ինչպէ՞ս փոխուեցար ինձ համար վայրի որթի անպիտան ճիւղեր դարձար։ Որովհետև եթէ 22
բորակով լուացուիս, և շատ օճառ գործածես, քո անօրէնութիւնը պիտի մնայ իմ առաջին իբրև արատ, ասում է Տէր Եհովան։ Ի՞նչպէս կարող ես ասել. 23
Չեմ պղծուել, Բահաղների ետևից չեմ գնացել. մտիկ արա հովտի մէջ քո ճանապարհին, հասկացիր թէ ինչ ես արել, ով թեթևաշարժ մոլորաշաւիղ մա-
տակ ուղտ։ Մի վայրի էշ, որ սո- 24
վորած է անապատին, և իր հոգիի ցանկութիւնովը օդ է ծծում, ո՞վ է կարող նորա տափանքը ետ դարձնել. նորա բոլոր որոնողները չեն վաստակում, նորան իր ամսումն են գտնում։ Ետ պա- 25
հիր ոտքդ մերկութիւնից, և կոկորդդ՝ ծարաւութիւնից, բայց դու ասեցիր. *Անկարելի է՝ ոչ, որովհետև ես սիրել եմ օտարներին, և գնալու եմ նորանց ետևից։
Ինչպէս որ ամաչում է գողը, 26
երբոր բռնվում է, նոյնպէս էլ ամաչելու են Իսրայէլի տունը, նորանք՝ իրանց թագաւորները, իրանց իշխանները, և նորանց քահանաներն ու մարգարէները. Ո- 27

*Եբր. Յոյս չ'կայ

րոնք ասում են փայտին՝ Իմ հայրն ես, և քարին՝ Դու ծնեցիր ինձ. որովհետև նորանք իրանց մէջքը դարձրին դէպի ինձ և ոչ թէ երեսը. բայց իրանց ձախորդութեան ժամանակին ասում են՝ Վեր կաց և ազատիր մեզ։
28 Արդ ո՞ւր են քո աստուածները, որ շինեցիր քեզ համար. Թող նորանք վեր կենան դուցէ քեզ օգնեն քո ձախորդութեան ժամանակին։ Որովհետև քո քաղաքների չափ եղան քո աստ-
29 ուածները, ով Յուդա։ Ի՞նչու համար վիճում էք ինձ հետ, դուք ամենքդ ապստամբուել էք
30 ինձ դէմ, ասում է Տէրը։ Ես զուր եմ ծեծել ձեր որդկանցը. նորանք խրատ չեն առել. ձեր սուրը կերել է ձեր մարգարէներին ինչպէս մի ապականիչ առիւծ։
31 Ով ազգ՝ դուք, մտիկ արէք Տիրոջ խօսքին. Մի՞թէ ես Իսրայէլի համար անապատ եղայ, կամ մի մառախլապատ երկի՞ր. Ի՞նչու համար է ասում իմ ժողովուրդը՝ Ազատ ենք, այլ ևս
32 չենք գալիս քեզ մօտ։ Մի՞թէ կոյսը կ'մոռանայ իր զարդը, կամ հարսն՝ իր գօտին. բայց իմ ժողովուրդը մոռացել է ինձ այն-
33 քան օրեր որ թիւ չ'ունի։ Ի՞նչ լաւ սարքում ես քո ճանապարհը որ սէր որոնես. հէնց դորա համար էլ ընթացքդ սովորեցրել ես
34 չար կնիկների։ Քո քղանցքումը անմեղ աղքատների հոգիների արիւնները էլ է գտնվում. ես նորանց չ'գտայ թագուն որոնմամբ, այլ այս ամենի վերայ։
35 Բայց դու ասում ես թէ Ես անմեղ եմ. հէնց նորա բարկութիւնը ետ էլ է դառել ինձանից։ Ահա ես քեզ հետ պիտի դատ վարեմ քո ասելու համար,
36 թէ Չեմ մեղանչել։ Ի՞նչ ես շատ թափառում՝ ճանապարհներդ փոփոխելով, Եգիպտոսիցն էլ պիտի ամաչես, ինչպէս Ասորեստա-
37 նիցն ես ամաչել։ Սորանից էլ դուրս կ'գաս, ձեռքերդ էլ գլխիդ, որովհետև Տէրը մերժել է քո յոյսերը, և դու չես յաջողուելու նորանցում։

ԳԼ. Գ

Կասեն թէ Ահա մէկ մարդ որ 1
արձակէ իր կնոջը, և նա նորանից գնայ, և մի ուրիշ մարդի կին դառնայ, մի՞թէ մարդը էլի նորա մօտ կ'դառնայ. մի՞թէ այն երկիրը բոլորովին չէր պղծուիլ. բայց դու, թէև շատ հոմանիների հետ ես շնացել, էլի դէպի ինձ ետ դարձիր, ասում է Տէրը։
Բարձրացրու աչքերդ դէպի բը- 2
լուրները և տես, դու ո՞րտեղ չես պոռնկութիւն արել. ճանապարհներին նստել էիր նորանց համար ինչպէս Արաբացին՝ անապատումը, և երկիրը պղծեցիր քո պոռնկութիւններովն ու չարութիւններովը։ Եւ անձրևները 3
խափանուեցան, և վերջի անձրևը չ'եղաւ, բայց դու մի պոռնիկ կնկայ ճակատն ունեցար. մէկ կողմ ես դրել ամաչելը։ Ահա այ- 4
սուհետև դու ինձ կանչելու ես՝ Ով հայրս, դու ես իմ երիտասարդութեան մտերիմը։
Մի՞թէ յաւիտեան պիտի բար- 5
կանայ և բարկութիւնը միշտ պահէ. ահա քո խօսածը, և չարութիւնը անում ես և կարողանում։
Եւ Տէրն ասեց ինձ Յովսիա թա- 6
գաւորի օրերումը. Տեսա՞ր ինչ որ արաւ ապստամբ Իսրայէլը, նա գնաց ամեն բարձր սարի վերայ և ամեն կանաչ ծառի տակ և պոռնկուեցաւ այնտեղ։ Եւ 7
ես ասում էի՝ Այս ամենը անելուց յետոյ ետ կ'դառնայ դէպի ինձ, բայց նա ետ չ'դարձաւ. և նորա խաբեբայ քոյր Յուդան էլ տեսաւ։ Եւ ես տեսայ որ երբ 8
այս ամենի համար, որ ապստամբ Իսրայէլը պղծութիւն արաւ, նորան արձակեցի և արձակման թուղթ տուի նորան, նորա խաբեբայ քոյրը Յուդան չ'վախեցաւ, և գնաց ու ինքն էլ շնացաւ։
Եւ եղաւ որ նորա շնութեան 9
լրբութիւնովը երկիրը պղծուեցաւ, և նա պղծութիւն գործեց

10 քարի հետ և փայտի հետ։ Բայց
այսու ամենայնիւ էլ նորա խա-
բեբայ քոյր Յուդան դէպի ինձ
չ՚դարձաւ բոլոր սրտովը. այլ
ստութիւնով, ասում է Տէրը։
11 Եւ Տէրն ինձ ասեց՝ Ապստամբ
Իսրայէլն արդարացնում է իր
անձը խաբեբայ Յուդայից աւելի։
12 Գնա և կանչիր այս խօսքերը դէպի
հիւսիս և ասիր՝ Ետ դարձիր,
ով ապստամբ Իսրայէլ, ասում
է Տէրը. ես չեմ թափիլ իմ
բարկութիւնը ձեզ վերայ, որով-
հետև ես ողորմած եմ, ասում
է Տէրը, չեմ բարկանալ յաւիտ-
13 եան։ Միայն թէ ճանաչիր քո
անօրէնութիւնը, որ ապստամբ-
ուեցիր քո Տէր Աստուծոյ դէմ,
և սփռեցիր քո ճանապարհները
օտարների առաջին ամեն կանաչ
ծառի տակ, և իմ ձայնին չ՚լսե-
14 ցիք, ասում է Տէրը։ Դարձէք,
ով ապստամբ որդիք, ասում է
Տէրը, որովհետև ես եմ ձեր վերայ
տիրողը, և ես ձեզ առնեմ՝ քա-
ղաքից մէկին, և ազգատոհմից՝
երկուսին, և ձեզ տանեմ Սիօնը։
15 Եւ ձեզ հովիւներ տամ իմ սրտի
համեմատ, և նորանք հովուեն
ձեզ գիտութիւնով և իմաստու-
16 թիւնով։ Եւ երբոր դուք շատա-
ցած և աճած կ՚լինիք այն երկ-
րումն այն օրերը, ասում է Տէրը,
այլ ևս չեն ասիլ՝ Տիրոջ ուխ-
տի տապանակը, և նա միտք չի
ընկնիլ, և նորան չեն յիշիլ ու
չեն ուզիլ. և այլ ևս չեն շինիլ։
17 Այն ժամանակ Երուսաղէմը կ՚կո-
չեն՝ Տիրոջ աթոռ, և նորա վե-
րայ պիտի ժողովուին բոլոր ազ-
գերը Տիրոջ անունի համար Ե-
րուսաղէմումը. և այլ ևս չեն
գնալ իրանց չար սրտի կամակո-
18 րութեան ետևից։ Այն օրերը
պիտի գնան Յուդայի տունը Իս-
րայէլի տան հետ, և միասին
պիտի գան հիւսիսային երկրից
այն երկիրը, որ ես ժառանգեցրի
19 նորանց հայրերին։ Բայց ես ա-
սում էի. Քեզ ի՛նչպէս կ՚դնէի
որդկանց հետ, և կ՚տայի քեզ
ցանկալի երկիրը՝ ազգերի զար-
դարանքների զարդի ժառանգու-
թիւնը. և ասում էի. դու «Իմ
հայրս» կ՚կանչէիր ինձ, և իմ
ետևից ետ չէիր դառնալ։ Սա- 20
կայն յիրաւի ինչպէս որ մի կին
անհաւատարիմ կ՚լինի իր մար-
դին, դուք նոյնպէս անհաւատա-
րիմ եղաք ինձ, ով Իսրայէլի
տուն, ասում է Տէրը։
Մի ձայն է լսվում բլուրների 21
վերայ՝ Իսրայէլի որդկանց ողոր-
մելի լացը. որ նորանք ծռել են
իրանց ճանապարհը, մոռացել
իրանց Տէր Աստուծուն։
Ետ դարձէք, ով ապստամբ 22
որդիք. ես կ՚բժշկեմ ձեր ապըս-
տամբութիւնները։
Ահա մենք գալիս ենք դէպի
քեզ, որովհետև դու ես մեր
Աստուածը, ով Տէր։ Յիրաւի 23
սուտ էր բլուրներից՝ սարերի շա-
տութիւնից [illegible]. որով-
հետև Տէր Աստուածանից է Իս-
րայէլի փրկութիւնը։ Եւ ամօթը 24
կերել է մեր հայրերի մանկու-
թիւնից վաստակածը՝ նորանց հօ-
տերը և նորանց արջառները, նո-
րանց տղերանց և նորանց աղջկե-
րանցը։ Մենք պառկում ենք 25
մեր ամօթովը, և մեր անար-
գանքը ծածկում է մեզ. որով-
հետև մեր Տէր Աստուծոյ դէմ
մեղանչեցինք՝ մենք և մեր հայ-
րերը մեր մանկութիւնից մինչև
այսօր. և չ՚լսեցինք մեր Տէր Աս-
տուծոյ ձայնին։

ԳԼ. Դ

Եթէ դառնալու լինես, ով Իս- 1
րայէլ, ասում է Տէրը, դէպի
ինձ դարձիր, և եթէ հեռացնե-
լու լինես քո դարշելիքը իմ ա-
ռաջից, թափառական պիտի
չ՚լինես. Եւ Կենդանի է Տէրը՝ 2
ասելով, երդում պիտի անես
ճշմարտութեամբ, իրաւամբ ու
արդարութեամբ. և ազգերը պի-
տի նորանով օրհնուին և նորա-
նով պարծենան։ Որովհետև այս- 3
պէս է ասում Տէրը Յուդայի և
Երուսաղէմի մարդկանցը. Նոր
հերկ հերկեցէք ձեզ համար, և
մի սերմէք փուշերի մէջ։ Թըլ- 4

փատուեցէք Տիրոջ համար, և
հեռացրէք ձեր սրտի անթլփա-
տութիւնը, ով Յուդայի մարդիկ
և Երուսաղէմի բնակիչք. որ մի
գուցէ կրակի պէս դուրս գայ
իմ բարկութիւնը և այրէ առանց
մի հանգցնողի ձեր գործերի չա-
րութեան համար։
5 Յուդայի մէջ իմացրէք և Ե-
րուսաղէմի մէջ լուր տուէք, և
ասեցէք. Փող հնչեցրէք երկրի
վերայ. կանչեցէք, ձայնը բար-
ձրացրէք, և ասեցէք, Ժողով-
ուեցէք ու մտնենք պարսպաւոր
6 քաղաքները։ Դրօշակ բարձրա-
ցրէք դէպի Սիօն, փախէք, մի
կանգնէք. որովհետև ես չարիք
եմ բերում հիւսիսից՝ և մեծ կո-
7 տորած։ Վեր կացաւ առիւծը
իր մացառիցը և ազգերին ջար-
դողը ճանապարհուեցաւ դուրս
եկաւ իր տեղիցը. որ քո երկիրը
աւերակ անէ. քո քաղաքները
պիտի քանդուին՝ [illegible] առանց
8 բնակչի։ Սորա համար քուրձեր
հագէք, սուգ արէք ու ողբա-
ցէք, որ Տիրոջ բարկութեան
բորբոքումը մեզանից ետ չէ դար-
9 ձել։ Եւ կ՚լինի այն օրը, ասում
է Տէրը, որ պիտի կորչէ թագա-
ւորի սիրտը և իշխանների սիրտը,
և պիտի ապշեն քահանաները,
ու մարգարէները հիանան։
10 Եւ ես ասեցի. Աւա՛ղ, ով
Տէր Եհովայ, անշուշտ դու խա-
բեցիր այս ժողովուրդն ու Երու-
սաղէմը՝ ասելով թէ Ձեզ խա-
ղաղութիւն կ՚լինի. բայց սուրը
մինչև նորանց հոգին է հասել։
11 Այն ժամանակ պիտի ասուի
այս ժողովրդին ու Երուսաղէմին.
Մի տօթագին քամի է [illegible] բը-
լուրներից անապատումը՝ իմ ժո-
ղովրդի աղջկայ ճանապարհին,
որ հոսելու համար է և ոչ թէ
12 մաքրելու համար։ Սորանից մի
աւելի սաստիկ քամի գալու է
ինձ. հիմա էլ ես եմ խօսելու
նորանց հետ դատաստաններով։
13 Ահա նա ամպերի պէս է վեր
կենում, և փոթորկի պէս են նո-
րա կառքերը, արծիւներից արա-
գաշարժ են նորա ձիերը, վա՛յ
մեզ, որովհետև աւերակ դա-
ռանք։ Մաքրիր չարութիւնից քո 14
սիրտը, ով Երուսաղէմ, որպէս
զի փրկութիւն գտնես. մինչև
ե՞րբ պիտի սրտումդ մնան քո չար
խորհուրդները։ Որովհետև մի 15
ձայն իմաց է տալիս Դանից, և
թշուառութիւն է լուր տալիս
Եփրեմի սարիցը։ Յիշեցրէք ազ- 16
գերին, ահա լուր տուէք Երու-
սաղէմի մասին. պաշարողներ են
գալիս հեռաւոր երկրից, և ի-
րանց ձայնը տալիս են Յուդայի
քաղաքների վերայ։ Ագարակի 17
պահապանների պէս նորա վերայ
են շուրջանակի, որ նա ինձ դէմ
ապստամբուեց, ասում է Տէրը։
Քո ճանապարհները և քո արարք- 18
ները արին քեզ այս բանը. սա
քո չարութիւնն է. իրա՛ւ դառն,
իրա՛ւ հասել է մինչև սիրտդ։
Որովա՛յնս, որովա՛յնս, ցաւով 19
բռնուած եմ, սրտիս *խուցերը
տակնուվրայ է սրտովս, ես չեմ
լռիլ. որովհետև փողի ձայնը
լսում ես, ով իմ անձը, այն պա-
տերազմի աղաղակը։ Կոտորած 20
կոտորածի վերայ է կանչվում,
որովհետև բոլոր երկիրը աւերակ
եղաւ. յանկարծակի աւերակ ե-
ղան իմ վրանները, մի վայրկեա-
նում՝ իմ խորանները։ Մինչև ե՞րբ 21
պիտի տեսնեմ դրօշը, լսեմ փողի
ձայնը։
Որովհետև յիմար է իմ ժողո- 22
վուրդը. ինձ չ՚ճանաչեցին. նո-
րանք անմիտ զաւակներ են և բան
չ՚հասկացող. նորանք իմաստուն
են չարութիւն անելու, բայց բա-
րութիւն անելը չ՚գիտեն։
Նայեցի երկրի վերայ, և ահա 23
պարապ և անձև էր, և երկնքին՝
և նորա լոյսը չ՚կար։ Նայեցի սա- 24
րերին, և ահա դողում էին, և
բոլոր բլուրները սասանվում էին։
Նայեցի, և ահա մարդ չ՚կար, 25
և երկնքի բոլոր թռչունները փա-
խել էին։ Նայեցի, և ահա Կար- 26
մեղոսը անապատ էր. և նորա բո-
լոր քաղաքները քարուքանդուած
էին Տիրոջ երեսից և նորա բար-

*ԵԲՐ. պատերը

կութեան բորբոքման երեսից։
27 Որովհետև այսպէս է ասում
Տէրը. Բոլոր երկիրը աւերակ պի-
տի դառնայ, բայց բոլորովին
28 վերջ չեմ անելու։ Սորա համար
երկիրը պիտի սգայ, և պիտի
խաւարուի երկինքը վերևից. ըստ
որում ես ասել եմ, խորհել եմ,
և չեմ զղջալու և նորանից ետ
29 չեմ դառնալու։ Ձիաւորների և
աղեղնաւորների ձայնիցը փախ-
չում է բոլոր քաղաքը, մտնում
են ծմակները և վեր են ելնում
ապառաժները, բոլոր քաղաքնե-
րը ձգուած թողուած են, և նո-
րանցում մի բնակող մարդ չ՚կայ։
30 Եւ դո՞ւ ինչ պիտի անես, ով
աւերակացած, որ ծիրանիներ ես
հագնում, ու քեզ ոսկի զար-
դերով զարդարում, որ լայն բաց
ես անում ծարոյրոտ աչքերդ.
զուր ես քեզ գեղեցկացնում,
հոմանիքդ քեզ մերժեցին, հո-
31 գիդ են ուզում։ Որովհետև մի
ձայն լսեցի իբր թէ ծննդականի
ձայն, անդրանիկ ծնողի տառա-
պանք է Սիօնի աղջկայ ձայնը, հա-
ռաչում է և տարածում իր ձեռ-
քերը՝ Վա՛յ ինձ, որ հոգիս նուա-
ղում է սպանուածների մասին։

ԳԼ. Ե

1 Ման եկէք Երուսաղէմի փողոց-
ներումը և մէկ տեսէք ու իմա-
ցէք, և որոնեցէք նորա հրապա-
րակներումը. եթէ մի մարդ կը
գտնէք, եթէ լինի մի իրաւունք
անող և ճշմարտութիւն խնդրող,
2 ես այն քաղաքին ի՛նէրէմ։ Եւ
թէպէտ ասում են՝ Կենդանի է
Տէրը, բայց սուտ են երդում
անում։
3 Ով Տէր, մի՞թէ քո աչքերը
դէպի ճշմարտութիւնը չեն. դու
նորանց ծեծեցիր, բայց նորանք
չ՚ցաւեցին. դու նորանց վերջա-
ցրիր, չեն ուզում խրատ առնել.
նորանք իրանց երեսը ապառա-
ժիցը պինդ են արել, չեն ուզում
4 ետ դառնալ։ Բայց ես ասեցի.
Միայն աղքատներն են սորանք,
ագէտ են ու չ՚գիտեն Տիրոջ ճա-
նապարհը և իրանց Աստուծոյ ի-
րաւունքը։ Ես գնամ մեծերի մօտ 5
և նորանց հետ խօսեմ, որովհե-
տև նորանք գիտեն Տիրոջ ճա-
նապարհները՝ իրանց Աստուծոյ
իրաւունքը. բայց նորանք էլ ա-
մենքը լուծը կոտրել են, կա-
պերը կտրատել են։ Սորա հա- 6
մար նորանց պիտի առիւծը զար-
կէ անտառից, անապատների
գայլը փչացնէ նորանց, ինձն է
հսկելու նորանց քաղաքների վե-
րայ, ամեն ով որ նորանից դուրս
գայ՝ պիտի պատառուի, որովհե-
տև շատացել են նորանց յան-
ցանքները, զօրացել են նորանց
ապստամբութիւնները։
Սորա համար ես ի՞նչպէս նե- 7
րեմ քեզ, քո որդիքն ինձ թողել
են, և երդում են անում չաստ-
ուածներով. և ես կշտացրի նո-
րանց, բայց նորանք շնացան, և
խումբով բոզանոցը գնացին։ Պա- 8
բարտացած ձիերի պէս առաւօ-
տը վեր են կենում, ամեն մէկն
իր ընկերի կնոջ վերայ է խխըն-
ջում։ Մի՞թէ սորա համար այ- 9
ցելութիւն պիտի չ՚անեմ, ասում
է Տէրը, կամ սորա նման մի ազ-
գից իմ անձը վրէժ պիտի չ՚առնէ՞։
Վեր ելէք նորա պարիսպների 10
վերայ և կործանեցէք, բայց բո-
լորովին չ՚վերջացնէք. վերցրէք
նորա ոստերը, որովհետև նորանք
Տիրոջը չեն։ Որովհետև խաբե- 11
բայութեամբ խաբեցին ինձ Իս-
րայէլի տունը և Յուդայի տունը,
ասում է Տէրը։ Նորանք ուրա- 12
ցան Տիրոջը և ասեցին՝ Նա չէ,
և մեզ վերայ չարիք չի գալ. և
սուր ու սով չենք տեսնելու։ Եւ 13
մարգարէքը քամի են դառնա-
լու, և խօսողը չի լինելու նորան-
ցում. այսպէս է լինելու նորանց։
Նորա համար Զօրաց Տէր Աստ- 14
ուածը այսպէս է ասում. Որով-
հետև դուք խօսում էք այս խօս-
քը. ահա ես իմ խօսքերը քո բե-
րանումը կրակ եմ շինում, և այս
ժողովուրդը՝ փայտ. և նա նո-
րանց պիտի ուտէ։ Ահա ես ձեզ 15
վերայ հեռուից մէկ ազգ եմ բե-
րում, ով Իսրայէլի տուն, ա-

սում է Տէրը, նա զօրաւոր ազգ
է, նա հին ազգ է. մի ազգ՝ որի
լեզուն չ՚գիտես, և չես իմանում
16 թէ ինչ է խօսում։ Նորա կա-
պարճը բաց գերեզմանի պէս է,
նորանք ամենքը ախոյեաններ են։
17 Եւ նա պիտի ուտէ քո հունձ-
քը, և քո հացը, որ քո տղերքը
և աղջկերքը պիտի ուտէին, պի-
տի ուտէ քո հօտերն ու քո ար-
ջառները, պիտի ուտէ քո որթն
ու թզենին. քո ապաւինած
պարսպաւոր քաղաքները սրով
18 պիտի քարուքանդ անէ։ Բայց այն
օրերն էլ, ասում է Տէրը, ձեզ
19 պիտի բոլորովին չ՚վերջացնեմ։ Եւ
երբոր ասելու լինէք, Ի՞նչ բանի
փոխարէն արաւ մեզ մեր Տէր
Աստուածը այս ամենը, դու էլ
ասիր նորանց. Ինչպէս որ դուք
ինձ թողեցիք, և օտար աստ-
ուածներ պաշտեցիք ձեր երկրու-
մը, նոյնպէս էլ օտարների պիտի
ծառայէք ձերը չ՚եղած երկրում։
20 Սա իմացրէք Յակոբի տանը, և
հրատարակեցէք այդ Յուդայի
21 մէջ, ասելով. Մէկ լսեցէք սո-
րան, ով յիմար և անմիտ ժո-
ղովուրդ, աչքեր ունին ու չեն
տեսնում, ականջներ ունին ու
22 չեն լսում։ Չէ՞ք վախենում ին-
ձանից, ասում է Տէրը, կամ իմ
երեսիցը չէ՞ք դողում, որ աւազը
ծովին սահման դրի իբրև յաւի-
տենական կանոն, և նա նորա-
նից չի անցնիլ. թէև ծփում են
նորա ալիքները, բայց չեն յաղ-
թում, թէև դղրդում են, բայց
23 անց չեն կենում։ Սակայն այս
ազգը մի անհնազանդ և ապըս-
տամբ սիրտ ունի, նորանք ապըս-
տամբում են քանի որ գնում են։
24 Եւ չ՚ասեցին իրանց սրտումը.
Մէկ վախենանք մեր Տէր Աստ-
ուածանից, որ տալիս է անձրևը՝
առաջինը և վերջինը իր ժամա-
նակին, որ պահում է մեզ հա-
մար հունձքի համար որոշուած
25 շաբաթները։ Ձեր անօրէնու-
թիւնները դարձրին այս բաները,
և ձեր մեղքերն են խափանում
26 ձեզանից բարին։ Որովհետև ան-
զգամներ են գտնվում իմ ժո-
ղովրդի մէջ՝ դարանամուտ են լի-
նում կծկտուած թռչնորսների
պէս, որոգայթներ են լարում՝
մարդիկ որսում։ Ինչպէս որ վան- 27
դակը լիքն է լինում թռչուններ-
ով, նոյնպէս էլ լիքն են նորանց
տները նենգութիւնով. նորա հա-
մար մեծացել և հարստացել են
նորանք։ Պարարտացել են՝ փայ- 28
լում են, չարերի գործերիցն էլ
են գերազանցում. դատը չեն դա-
տում՝ որբի դատը. այսու ամե-
նայնիւ յաջողվում են, թէև աղ-
քատների իրաւունքը չեն դա-
տում։ Այս բաների համար ես 29
այցելութիւն չ՚անե՞մ, ասում է
Տէրը, կամ սորա նման մի ազ-
գից իր վրէժը չ՚առնէ՞ իմ հոգին։
Սոսկալի և քստմնելի բան է 30
լինում երկրի վերայ. Մարգա- 31
րէքը սուտ են մարգարէանում,
և քահանաները իշխում են նո-
րանց ձեռովը. և իմ ժողովուրդն
էլ այսպէս է սիրում. բայց վերջը
ի՞նչ պիտի անէք։

ԳԼ. Զ

Փախէք, ով Բենիամինի որդիք, 1
Երուսաղէմի միջիցը, և թեկուէ-
ումը փող հնչեցրէք, և Բեթա-
քարմայի վերայ նշան բարձրա-
ցրէք. որ չարիք է յարձակուել
հիւսիսից և մեծ կոտորած։ Ես 2
լռեցնում եմ վայելչագեղ և
փափկացեալ Սիօնի աղջկանը։
Նորա մօտ գալիս են հովիւներ և 3
իրանց հօտերը, նորա դէմ վրան-
ներ են կանգնեցնում շուրջանա-
կի, ամեն մէկը արածեցնում է
իր բաժնումը։ Սուրբ պատերազմ 4
որոշեցէք նորա դէմ, վեր կա-
ցէք, որ վեր գնանք կէս օրին. վա՛յ
մեզ, որ օրը դարձել է, և եր-
կարացել են երեկոյեան ստուեր-
ները։ Վեր կացէք, որ վեր գը- 5
նանք գիշերով, և կործանենք նո-
րա պալատները։ Որովհետև այս- 6
պէս է ասում Զօրաց Տէրը. Փայտ
կտրեցէք և պատնէշ կառուցէք
Երուսաղէմի դէմ. այս քաղա-
քին այցելութիւն պիտի լինի,
բոլոր նորա միջինը զրկանք է։

7 ինչպես որ ջրհորը բղխում է իր
ջուրերը, նոյնպես էլ նա բղխում
է իր չարութիւնը. նորանում
զրկանք և յափշտակութիւն է
լսվում, իմ առաջին կան միշտ
8 ցաւ և հարուած, խրատուիր,
ով երուսաղէմ, որ հոգիս քե-
զանից չ'բաժանուի, որ քեզ ա-
ւերակ երկիր չ'շինեմ անբնակ։
9 Այսպես է ասում Զօրաց Տէ-
րը. Բոլորովին ճռաքաղ պիտի
անեն որթի պես Իսրայէլի մնա-
ցորդին. ձեռքդ դարձրու քա-
ղողի պես դէպի կողովը։
10 Ո՞ւմ ասեմ և վկայեմ, որ
լսեն. ահա նորանց ականջը ան-
թլփատ է, և չեն կարող լսել,
ահա Տիրոջ խօսքը նորանց հա-
մար անարգանք եղաւ, նորանից
11 չեն ախորժում։ Սակայն Տիրոջ
բարկութիւնով լիքն եմ, յոգ-
նած եմ տանելուցը. Թափիր
ազերանց վերայ դրսումն և երի-
տասարդների բոլոր խմբի վերայ.
որովհետև մարդն էլ կնկայ հետ
պիտի բռնուին, ծերը՝ տարիները
12 առածի հետ։ Եւ նորանց տները
պիտի ուրիշների անցնին, ագա-
րակներն ու կանայքն միասին. որ
իմ ձեռքը պիտի երկարացնեմ
երկրի բնակիչների վերայ, ասում
13 է Տէրը։ Որովհետև նորանց պըզ
ատիկից մինչև նորանց մեծը, բո-
լորն էլ շահի ագահ են. և մար-
գարէից մինչև քահանան բոլորն
14 էլ սուտասաններ են։ Եւ իմ ժո-
ղովրդի աղջկայ վէրքը բժշկում
են թեթև կերպով, ասելով՝ խա-
ղաղութիւն, խաղաղութիւն.
քանի որ խաղաղութիւն չ'կայ։
15 Մի՞թէ ամաչում են պղծութիւն
անելիս, ոչ ամաչել են ամաչում,
ոչ պատկառել գիտեն. դորա
համար պիտի ընկնեն ընկնողների
հետ, և ես նորանց այցելելիս
պիտի գլորուին, ասում է Տէրը։
16 Այսպէս է ասում Տէրը. Կանգ-
նեցէք ճանապարհներին և տե-
սէք և հարցրէք վաղեմի ճանա-
պարհներից, թէ արդեօք որն է
լաւ ուղին, այն ժամանակ գնա-
ցէք նորանով. և դուք հանգըս-
տութիւն կ'գտնէք ձեր հոգինե-
րի համար։ Բայց նորանք ասում
են՝ Չենք գնում։ Եւ ձեզ վերայ 17
դիտող նշանակեցի, թէ Ուշա-
դիր եղէք փողի ձայնին, բայց
նորանք ասում են՝ Ուշադիր չենք
լինում։ Ուրեմն լսեցէք, ով ազ- 18
գեր, և իմացիր, ով ժողով,
նորանց միջինը։ Լսիր, ով եր- 19
կիր, ահա ես այս ժողովրդի վե-
րայ չարիք եմ բերելու, նորանց
խորհուրդների պտուղը. որ ուշ
չ'դարձրին իմ խօսքերին, և իմ
օրէնքն էլ մերժեցին։ Ինչու Սա- 20
բայից կնդրուկ գայ ինձ համար,
և անուշահոտ խնկեղէգը՝ հեռու
երկրից. ձեր ողջակէզները ընդու-
նելի չեն, և ձեր զոհերը ինձ հա-
ճելի չեն։ Վասն որոյ այսպէս է 21
ասում Տէրը. Ահա ես խոչընդոտ եմ
դնում այս ժողովրդի համար. և
նորանցով պիտի դողորուին հայ-
րերը և որդիքը մէկտեղ, դրացին
և նորա հարևանը պիտի կորչեն։
Այսպէս է ասում Տէրը. Ահա 22
մի ժողովուրդ է գալիս հիւսիսի
երկրիցը, և մի մեծ ազգ է դուրս
գալիս երկրի ծայրերիցը։ Աղեղ 23
և նիզակ են բռնած, անգութ են
և չեն ողորմիլ, նորանց ձայնը
գոռում է ծովի նման, և ձիերի
վերայ են հեծնում, շարուած
են պատերազմի մարդկանց պէս
քեզ դէմ, ով Սիօնի աղջիկ։
Նորա լուրը լսեցինք, մեր ձեռ- 24
քերը թուլացան, ցաւը մեզ բռնե
նեց ծննդականի երկունքի պէս։
Դուրս մի գնաք արտերը և ճա- 25
նապարհին մի կանգնէք, որով-
հետև թշնամին սուրը կայ. վախ
է շուրջանակի։
Ով իմ ժողովրդի աղջիկ, քուրձ 26
հագիր, և մոխրում թաւալուիր.
միամօրի սուգ արա՝ դառնակսկիծ
կոծ, որ յանկարծակի պիտի գայ
կործանողը մեզ վերայ։
Ես քեզ իմ ժողովրդի մէջ 27
փորձող եմ շինել իրըև մի բերդ,
որ իմանաս նորանց ճանապարհը
և փորձես։ Նորանք ամենքը կա- 28
մակոր ապստամբներ են, բանսար-
կութեամբ վարուողներ են՝ պղինձ
և երկաթ. նորանք ամենքն էլ 29
ապականիչ են։ Փուքսը պրուեւ-

ցաւ. կրակիցը վերջացաւ կապար-
ը, զուր է հալեցնում հալեցը-
նողը. որովհետև չարերը չ'ջոկ-
ուեցան։ Խոտան արծաթ են կո- 30
չելու նորանց, որովհետև Տէրը
մերժեց նորանց։

ԳԼ. Է

1 Ա՛յս խօսքն եղաւ Երեմիային
2 Տիրոջ կողմիցն ասելով. Կանգ-
նիր Տիրոջ տան դուռը և այն-
տեղ կանչիր այս խօսքը, և ա-
սիր՝ Լսեցէք Տիրոջ խօսքը, ով
բոլոր Յուդա, որ մտնում էք
այս դռներովը Տիրոջ երկրպա-
3 գելու։ Այսպէս է ասում Զօ-
րաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
Լաւացրէք ձեր ճանապարհներն
ու ձեր գործերը, և ես ձեզ կը
թողեմ, որ բնակուէք այս տե-
4 ղը։ Մի յուսաք սուտ խօսքերի
ասելով՝ Տիրոջ տաճարը, Տիրոջ
տաճարը, Տիրոջ տաճարն են աս-
5 ում։ Այլ եթէ դուք լաւացը-
նէք ձեր ճանապարհներն ու գոր-
ծերը, եթէ դուք իրաւունք ա-
նէք մարդի և իր ընկերի մէջ,
6 Օտարին, որբին և այրուհուն
չ'զրկէք, և անմեղ արիւն չ'թա-
փէք այս տեղը, և ուրիշ աստ-
ուածների ետևից չ'գնաք ձեր
7 չարիքով. Ա՛յն ժամանակ ես ձեզ
կ'թողեմ, որ բնակուէք այստեղ
այս երկրում, որ ես տուել եմ
ձեր հայրերին յաւիտենից յա-
ւիտեան։
8 Ահա դուք ձեզ համար սուտ
խօսքերի էք յոյս դնում, որոնք
9 օգուտ չ'ունին։ Մի՞թէ գողա-
նաք, սպանէք, շնութիւն ա-
նէք, և սուտ երդում անէք ու
Բահաղին խունկ ծխէք, և այն-
պիսի աստուածների ետևից գը-
10 նաք, որոնց չէիք ճանաչում. Եւ
յետոյ գաք ու կանգնէք այս
տանը, որի վերայ կանչուած է
իմ անունը, և ասէք. Ազատ-
ուեցանք բոլոր այս գարշելութիւն-
11 ներն անելու համար։ Մի՞թէ ա-
ւազակների ոյր է այս տունը,
որի վերայ կոչուած է իմ անու-
նը, ձեր աչքերի առաջին. ահա
ես էլ եմ տեսել, ասում է Տէրը։
12 Սակայն մէկ գնացէք իմ այն տե-
ղը, որ Սիլովումն է, ուր որ իմ
անունը բնակել էի տալիս առաջ,
և տեսէք, թէ ինչ եմ արել նո-
րան իմ Իսրայէլ ժողովրդի չա-
րութեան համար։
13 Եւ հիմա, որովհետև դուք
արիք այս բոլոր գործերը, ասում
է Տէրը, թէև խօսեցի ձեզ հետ
կանուխ վեր կենալով ու խօսե-
լով, բայց դուք չ'լսեցիք, և
կանչեցի ձեզ, բայց դուք չ'պա-
տասխանեցիք. Ես էլ պիտի է 14
անեմ այն տանը, որի վերայ կան-
չուած է իմ անունը, և որին
դուք ապաւինել էք, և այն տե-
ղին, որ ես տուել եմ ձեզ և
ձեր հայրերին, ինչպես որ արել
եմ Սիլովին. Եւ ձեզ պիտի է դէն 15
գցեմ իմ երեսի առաջիցը, ինչ-
պես որ դէն եմ գցել ձեր բոլոր
եղբայրներին՝ Եփրեմի բոլոր սե-
բունդին։
Ուրեմն դու մի աղօթիր այս 16
ժողովրդի համար, և նորանց հա-
մար ազաղակ ու ազաչանք մի
բարձրացներ, և նորանց համար
ինձ մի բարեխօսիր, որովհետև
ես քեզ չեմ լսելու։ Մի՞թէ դու 17
չես տեսանում, թէ նորանք ինչ
են անում Յուդայի քաղաքնե-
րում, և երուսաղէմի փողոցնե-
րում։ Որդիքը փայտեր են ժո- 18
ղովում և հայրերը կրակ են վա-
ռում, և կնիկները խմոր են հունց-
ում, որ երկնքի թագուհիի հա-
մար բլիթներ շինեն, և թափելու
նուէրներ նուիրեն ուրիշ աստ-
ուածների, որպէս զի ինձ բար-
կացնեն։ Մի՞թէ ինձ են բարկա- 19
ցնում նորանք, ասում է Տէրը.
չէ՞ որ իրանց որ ամօթահար ա-
նեն իրանց երեսը։
Սորա համար Տէր Եհովան այս- 20
պէս է ասում. Ահա իմ բար-
կութիւնն ու իմ ցասումը պիտի
թափուի այս տեղի վերայ. մարդի
վերայ և անասունի վերայ,
դաշտի ծառի վերայ և երկրի
պտղի վերայ, որ այրէ և չ'հանգչէ։
Այսպէս է ասում Զօրաց Տէրն՝ 21
Իսրայէլի Աստուածը. Ձեր ող-

Ջակեղները աւելացրէք ձեր զո-
22 հերի վերայ, և միս կերէք։ Ո-
րովհետև ես չեմ խօսել ձեր հայ-
րերի հետ և նրանց պատուէր
չեմ տուել, այն ժամանակ երբոր
նրանց դուրս հանեցի եգիպտա-
ցի երկրիցը աղջակերի և զոհի
23 վերաբերութեամբ։ Այլ սյս բա-
նը պատուիրեցի նրանց ասելով.
Լսեցէք իմ ձայնիս, և ես ձեզ
Աստուած կ'լինեմ, և դուք ինձ
համար կ'լինէք ժողովուրդ, և
գնացէք այն բոլոր ճանապարհու-
մը, որ ձեզ պատուիրում եմ,
որպէս զի ձեզ համար բարի լինի։
24 Բայց նրանք չլսեցին և ականջ
չդրին, և վարուեցան էրանց խոր-
հուրդներովը իրանց չար սրտի
կամակորութիւնով, և ետ դնա-
ցին, և ոչ թէ առաջ։ Այն օրից
25 որ ձեր հայրերը դուրս եկան Ե-
գիպտոսի երկրից մինչև այսօր,
ես ուղարկում եմ ձեզ մեր իմ
ամեն ծառաներին՝ մարգարէնե-
րին ամեն օր կանուխ վեր կենա-
26 լով ուղարկում եմ։ Բայց նո-
րանք չլսեցին ինձ և ականջ
չդրին, այլ իրանց վիզը խոտա-
ցրին՝ իրանց հայրերից չար եղան։
27 Եւ դու ասում ես նրանց այս
բոլոր բաները, բայց նրանք քեզ
չեն լսում, և դու կանչում ես
նրանց, բայց նրանք չեն պա-
28 տասխանում։ Ուրեմն ասիր նո-
րանց. Սա այն ազգն է, որ չէ
լսում իր Տէր Աստուծոյ ձայնը,
և խրատ չեն ընդունում, ճշմար-
տութիւնը կորել և կտրուել է
նրանց բերանիցը։
29 Մազերդ խուզիր և դէն դիր,
ով Երուսաղէմ, և ողբ բարձրա-
ցրու բլուրների վերայ, որ Տէրը
մերժեց և դէն դրեց իր սրամըն-
30 տութեան սերունդը։ Որովհետև
Յուդայի որդիքը չարութիւն ա-
րին իմ աչքի առաջին, ասում
է Տէրը, իրանց գարշելիքը դրին
այն տանը, որի վերայ կոչուած
է իմ անունը, որ պղծեն նրան։
31 Եւ չինեցին Տոփեթի բարձրա-
ւանդակները, որ Ենոմի որդիի
ձորումն են, որ կրակով սրբեն
իրանց աղերանքը և իրանց աղջկե-

րանքը, որն որ ես չ'պատուիրեցի,
և միտքս էլ չէր եկել։ Ուրեմն 32
ահա օրեր են գալիս, ասում է
Տէրը, որ չի ասուիլ այլ ևս Տո-
փեթի կամ Ենոմի որդիի ձոր,
այլ Սպանութեան ձոր, և Տո-
փեթումն այնքան կ'թաղեն, որ
էլ տեղ չի մնալ։ Եւ այս ժո- 33
ղովրդի դիերը կերակուր պիտի
դառնայ երկնքի թռչուններին
և երկրի գազաններին, և ոչոչ
վախեցնող չէ լինելու։ Եւ պիտի 34
դադարեցնեմ Յուդայի քաղաք-
ներից և Երուսաղէմի փողոցներից
ցնծութեան ձայնը և ուրախու-
թեան ձայնը, փեսայի ձայնը և
հարսի ձայնը, որովհետև երկիրը
աւերակ պիտի լինի։

Գլ. Ը

Այն ժամանակ ասում է Տէրը, 1
կ'հանեն Յուդայի թագաւորների
ոսկորները և նորա իշխանների
ոսկորները, քահանաների ոսկոր-
ները և մարգարէների ոսկորները
և Երուսաղէմի բնակիչների ո-
սկորներն իրանց գերեզմաններիցը։
Եւ կ'փռեն նորանց արեգակի 2
դէմ, լուսնի դէմ և երկնքի բո-
լոր զօրքերի դէմ, որոնց սիրեցին,
որոնց ծառայեցին, և որոնց հե-
տևեցին, որոնց խնդրեցին և ո-
րոնց երկրպագեցին. ոչ պիտի
հաւաքուին, ոչ էլ թաղուին.
ազբ պիտի դառնան երկրի երեսի
վերայ։ Եւ մնացը ցանկալի պիտի 3
լինի կեանքից այն ամեն մնացոր-
դի համար, որ կ'մնան այս չար
ցեղից, որոնք կ'մնան այն ամեն
տեղերումն, ուր որ նորանց տա-
բադրել էի, ասում է Զօրաց
Տէրը։
Եւ ասիր նորանց, այսպէս է 4
ասում Տէրը. Վայր կ'ընկնեն և
էլ վեր չեն կենալ, կամ ետ
կ'դառնան, և էլ դարձի չեն
գալ։ Ինչու համար է ետ դար- 5
ձել այս Երուսաղէմի ժողովուր-
դը միշտական ապստամբութիւ-
նով. պինդ բռնել են խաբեա-
նութիւնը, չեն ուզում դարձի
գալ։ Ես ուշադիր եղայ և լսեցի. 6

նորանք ուղիղ չեն խօսում, մարդ
չկայ որ զղջայ իր չարութեան
վերայ, և ասէ թէ Ես ինչ եմ
արել. ամենը դարձել են իրանց
ընթացքին, իբրև ձի որ արշա-
7 ւում է պատերազմ։ Արագիլն
անգամ օդումը գիտէ իր ժամա-
նակները, և տատրակն ու կռ-
ունկն ու ծիծեռնակը պահում
են էրանց գալու ժամանակը, բայց
իմ ժողովուրդը չ'գիտէ Տիրոջ
8 իրաւունքը։ Դուք ինչպես էք
ասում թէ Մենք իմաստուն-
ներ ենք, և թէ Տիրոջ օրէնքը
մեզ մօտ է. յիրաւի սուտացրել
9 է գպիրների սուտ գրիչը։ Իմաս-
տուններն ամաչեցին, զարհուռ-
բեցին և բռնուեցան. ահա ա-
նարգեցին Տիրոջ խօսքը, և էլ
10 ինչ իմաստութիւն ունին։ Սորա
համար ես նորանց կանայքը ու-
րիշների պիտի տամ, նորանց ա-
գարակները՝ իրանց տիրողներին,
որովհետև փոքրից մինչև մեծը
բոլորն ագահ են շահասիրու-
թեան. մարգարէիցը մինչև քա-
11 հանան բոլորը սուտ են։ Եւ
թեթև կերպով բժշկում են իմ
ժողովրդի աղջկան վէրքը, ասելով.
Խաղաղութիւն, խաղաղութիւն.
քանի որ խաղաղութիւն չկայ։
12 Պէտք է ամաչէին, որ պղծու-
թիւն գործեցին. բայց ոչ ամա-
չել են ամաչում, և ոչ պատ-
կառել գիտեն. սորա համար
պիտի ընկնեն ընկնողների հետ,
նորանց այցելելու ժամանակին
պիտի դալարուին, ասում է Տէրը։
13 Բոլորովին բնաջինջ եմ անելու
նորանց, ասում է Տէրը, խաղող
չէ լինելու որթի վերայ, և թուզ
չէ լինելու թզենիի վերայ, և
տերևը թառամելու է, և այն
որ տուել եմ նորանց, անց է
կենալու նորանցից։
14 Ինչու համար ենք նստել մենք,
հաւաքուեցէք և գնանք պարսպ-
պաւոր քաղաքների մէջ, և այն-
տեղ կորենք մեր ձայնը. որով-
հետև մեր Տէր Աստուածը կորե-
ցրեց մեր ձայնը և մեզ լեղի ջուր
խմեցրեց, որովհետև մենք մե-
15 ղանչեցինք Տիրոջ դէմ։ Խաղա-

ղութեան ապասեցինք, բայց բա-
րիք չկար. բժշկութեան ժամա-
նակին բայց ահա խռովութիւն։
Դանից է լսուում նորա ձիերի 16
ընչիւնը, նորա երիվարների վրնջե-
լու ձայնից դողում է բոլոր եր-
կիրը. և նորանք գալու են և ու-
տելու են երկիրը ու նորա լրու-
թիւնը, քաղաքը և նորանում
բնակողներին։ Որովհետև ահա 17
ես ուղարկում եմ ձեր մէջը օձեր
և քարբեր, որոնց համար թով-
չութիւնը ոչինչ է. և նորանք
պիտի կծատեն ձեզ, ասում է
Տէրը։
Ջուարթութիւնս սրտումս 18
թեան մէջ է. սիրտս ինձանում
նուաղել է։ Ահա իմ ժողովրդի 19
աղջկայ ձայնը հեռու երկրից,
Տէրը Սիոնումը չէ, կամ թէ նո-
րա թագաւորը նորանում չէ.
ինչու համար ինձ բարկացրին ի-
րանց կուռքերովը՝ օտար ունայ-
նութիւններով։ Հունձքը անցաւ, 20
ամառը վերջացաւ. բայց մենք
չ'փրկուեցանք։ Իմ ժողովրդի 21
աղջկայ վէրքի պատճառով կոտ-
րատած եմ, խաւարած եմ,
սոկումը բռնել է ինձ։ Բալա- 22
ամն չկայ Գաղաադումը, կամ
բժիշկ չկայ այնտեղ. ապա ին-
չու համար առողջութիւն չդտաւ
իմ ժողովրդի աղջիկը։

Գլ. Թ

Երանի թէ գլուխս ջուր լինէր, 1
և աչքերս արտասուքի աղբիւր,
և ես լաց կ'լինէի ցերեկ և գիշեր
իմ ժողովրդի աղջկայ սպանուած-
ների վերայ։ Ո՛հ թէ ինձ անա- 2
պատ մէջ ուղևորների իջևանա-
տուն. և ես կ'ձգէի իմ ժողո-
վուրդը և կ'գնայի նորանց մէ-
ջից, որովհետև նորանք ամեն-
քը շնացողներ են, խարեբաների
խումբ են։ Եւ նորանք լարում 3
են իրանց լեզուները սուտի հա-
մար իբրև իրանց աղեղը, և ոչ
թէ ճշմարտութեամբ են քաջա-
նում երկրի վերայ, որովհետև
մի չարութիւնից դուրս են գալիս
հինից միւսը, և ինձ չեն ճանա-

4 չում, ասում է Տէրը։ Ամեն
մարդ զգուշանայ իր ընկերիցը,
և ամենևին մէկ եղբօր մի ապա-
ւինէք, որովհետև ամեն եղբայր
խաբում է խաբէութեամբ և ա-
մեն ընկեր ման գալիս բանսար-
5 կութեամբ։ Եւ ամեն մարդ նեն-
գում է իր ընկերին, և ճշմար-
տութիւն չեն խօսում, սովորե-
ցրել են իրանց լեզուն սուտ ա-
սելու, անիրաւութիւն անելով
յոգնում են։
6 Քո բնակութիւնը խարդախու-
թեան մէջ է. խարդախութեան
համար չեն ուզում ինձ ճանա-
7 չել, ասում է Տէրը։ Դորա հա-
մար Զօրաց Տէրը այսպէս է ա-
սում. Ահա ես նորանց պիտի
հալեցնեմ և նորանց փորձեմ, ո-
րովհետև էլ ի՞նչպէս անեմ ես
8 իմ ժողովրդի աղջկայ հետ։ Մա-
հաբեր նետ է նորանց լեզուն,
նենգութիւն է խօսում, բերա-
նովը խաղաղութիւն է խօսում
իր ընկերի հետ, իսկ իր սրտումը
դարան է պատրաստում նորան։
9 Սորանց համար ես նորանց չ՚այ-
ցելե՞մ, ասում է Տէրը. կամ մի
այսպիսի ազգից իմ հոգին վրէժ
չ՚առնէ՞։
10 Սարի մասին բարձրաձայն պի-
տի լաց լինեմ և ողբամ, և անա-
պատի արօտների համար կոծ
անեմ, որովհետև այրուել են,
անցնող չ՚կայ, և խաշինքների
ձայն չեն լսում, երկնքի թռ-
չուններիցը մինչև անասունը փա-
11 խան գնացին։ Եւ ես Երուսաղէ-
մը պիտի անեմ փլատակների դէ-
զեր՝ չագալների բնակարան. և
Յուդայի քաղաքները ամայի պի-
12 տի շինեմ որ բնակող չ՚լինի։ Ո՞վ
է այն իմաստուն մարդը, որ սա
հասկանայ. և այն՝ ինչ որ խօ-
սել է Տիրոջ բերանը դէպի նո-
րան, և պատմէ այն, թէ եր-
կիրը ի՞նչու համար է փչացել,
և այրուել անապատի պէս, որ
13 անցնող չ՚կայ։ Եւ Տէրն ասեց.
Նորա համար որ թողեցին իմ
օրէնքը որ ես դրել էի նորանց
առաջին, և իմ ձայնը չ՚լսեցին
14 և նորանում չ՚վարուեցան։ Այլ
գնացին իրանց սրտի կամակորու-
թեան ետևից, և այն Բահաղնե-
րի ետևից, որ իրանց հայրերը սո-
վորեցրին իրանց։ Սորա համար 15
այսպէս է ասում Զօրաց Տէրը՝
Իսրայէլի Աստուածը. Ահա ես
այս ժողովրդին օշինդր եմ ուտե-
ցնելու, և լեղի ջուր եմ խմեցը-
նելու։ Եւ նորանց պիտի ցրուեմ 16
ազգերի մէջ, որոնց ոչ իրանք
դիտէին, ոչ իրանց հայրերը, և
նորանց ետևից պիտի սուրն ու-
ղարկեմ, մինչև որ նորանց վեր-
ջացնեմ։
Այսպէս է ասում Զօրաց Տէրը. 17
Մտածեցէք և լալկան կանայք
կանչեցէք, որ գան, և այս բանում
վարպետ կնիկների ետևից մարդ
ուղարկեցէք, որ գան։ Եւ շու- 18
տով գան և մեզ վերայ բարձրա-
ցնեն ողբը, և մեր աչքերը ար-
տասուք թափեն, և մեր արտե-
ւանունքներից ջուրեր յորդեն։
Որովհետև Սիօնից ողբի ձայն 19
լսուեցաւ՝ ինչպէ՞ս կործանուե-
ցանք, շատ ամաչեցինք. որով-
հետև ձգեցինք երկիրը, ըստ ո-
րում դէն էին գցել մեր բնակա-
րանները։ Ուրեմն, ով կանայք, 20
լսեցէք Տիրոջ խօսքը, և ձեր ա-
կանջն ընդունէ նորա բերանի
խօսքը, և ձեր աղջկերանցը ողբ
սովորեցրէք, և ամեն մէկ կին իր
ընկերին՝ լաց։ Որովհետև մահը 21
վեր ելաւ մեր պատուհանները,
մտաւ մեր պալատները, որ բնա-
ջինջ անէ երեխային փողոցից,
երիտասարդներին՝ հրապարակնե-
րից։ Ասիր թէ Տէրն այսպէս է 22
ասում. թէ Մարդկանց դիակնե-
րը վայր պիտի ընկնեն ինչպէս աղ-
բը՝ դաշտի երեսի վերայ, և ինչ-
պէս խուրձերը՝ հնձողի ետևին,
որ ժողովող չ՚լինի։ Այսպէս է 23
ասում Տէրը. Իմաստունը իր իմաս-
տութիւնովը չ՚պարծենայ, և զօ-
րաւորը իր զօրութիւնովը չ՚պար-
ծենայ, հարուստը իր հարստու-
թիւնովը չ՚պարծենայ. Այլ սո- 24
րանով պարծենայ, ով որ պար-
ծենում է, թէ հասկանում և
ճանաչում է ինձ, որ ես եմ Տէ-
րը, որ երկրի վերայ ողորմու-

թիւն, իրաւունք և արդարու-
թիւն եմ անում, որ ես սորանց
եմ հաւանում, ասում է Տէրը։
25 Ահա օրեր կ՚գան, ասում է Տէ-
րը, որ պիտի այցելեմ բոլոր թըլ-
փատուածներին և անթլփատնե-
26 րին, Եգիպտոսին և Յուդային և
Եդովմին, և Ամմոնի որդկանցը
և Մովաբին, և բոլոր մօրուքների
ծայրը կտրողներին, որ բնակ-
վում են անապատումը. որով-
հետև բոլոր ազգերը անթլփատ
են, բայց բոլոր Իսրայէլի տունը
անթլփատ է սրտով։

ԳԼ. Ժ

1 Լսեցէք այն խօսքը, որ Տէրն ա-
սում է ձեզ, ով Իսրայէլի տուն.
2 Այսպէս է ասում Տէրը, Ազգե-
րի ճանապարհները մի սովորէք,
և երկնքի նշաններիցը մի վախե-
նաք, որովհետև նորանցից հե-
3 թանոսները կ՚վախենան։ Որով-
հետև ժողովուրդների սովորու-
թիւնները ունայն են. որովհետև
անտառի փայտ է այն, որ նա
կտրել է, արուեստագէտի ձեռ-
քի գործն է՝ կացինով չինուած.
4 Արծաթով և ոսկիով նորան զար-
դարում են, բևեռներով և ու-
ռերով պնդացնում են նորան, և
5 նա չէ շարժվում։ Նորանք կոկ-
ուած արմաւենիի պէս են և չեն
խօսիլ. նորանք պէտք է տար-
ուին, որովհետև չեն գնալ. նո-
րանցից մի վախենաք, որովհետև
չարութիւն չեն անիլ. բարիք
անել էլ չ՚կայ նորանց մօտ։
6 Բնաւ չ՚կայ քեզ նմանը, ով
Տէր, դու մեծ ես, և մեծ է քո
7 անունը զօրութիւնով։ Ո՞վ չի
վախենալ քեզանից, ով ազգերի
թագաւոր, որովհետև քեզ է
վայելում. որովհետև ազգերի
բոլոր իմաստունների մէջ և նո-
րանց բոլոր թագաւորութիւնն-
երի մէջ բնաւ չ՚կայ քեզ նմանը։
8 Բայց միանգամայն անբան և ան-
միտ են, ունայնութիւնների խը-
9 րատը փայտ է։ Թիթեղացրուած
արծաթը Թարսիսից է բերվում,
և ոսկին՝ Ոփազից. արուեստա-
ւորի և ոսկերչի ձեռքի գործքն
են. կապուտակ և ծիրանի է նո-
րանց զգեստը, ամենքը վարպետ-
ների գործք են։ Սակայն Եհովան 10
ճշմարիտ Աստուած է. նա կեն-
դանի Աստուած է և յաւիտենա-
կան թագաւոր. նորա բարկու-
թիւնիցը սարսում է երկիրը, և
ազգերը չեն դիմանալ նորա բար-
կութեանը։ Այսպէս ասեցէք նո- 11
րանց. Այն աստուածները, ո-
րոնք երկինքն ու երկիրը չեն շի-
նել, պիտի բնաջինջ լինեն նո-
րանք երկրից և երկնքի տակից։
Նա է ստեղծել երկիրը իր զօ- 12
րութիւնովը, հաստատել աշ-
խարհքը՝ իր իմաստութիւնովը,
և իր հանճարովը տարածել՝ եր-
կինքը։ Նա ձայն տալիս՝ ջրերի 13
բազմութիւն է լինում երկնքու-
մը. և նա վեր է հանում գոլոր-
շիները երկրի ծայրերից, կայծակ-
ներ է շինում անձրևի համար,
և հողմը հանում է իր շտեմա-
րաններից։ Անասնացել է ամեն 14
մարդ առանց գիտութեան, պէտք
է ամաչի ամեն ոսկերիչ կուռ-
քիցը, որ սուտ է նորա ձուլա-
ծը, և հոգի չ՚կայ նորանցում։
Ունայնութիւն են նորանք, մոլո- 15
րութեան գործ, նորանց այցելու-
թիւն եղած ժամանակ պիտի կոր-
չեն։ Սորանց պէս չէ Յակոբի Բա- 16
ժինը. որովհետև նա ամենի Ստեղ-
ծողն է, և Իսրայէլը նորա ժա-
ռանգութեան վիճակն է. նորա
անունը Զօրաց Տէր է։
Ժողովիր երկրից քո ապրանք- 17
ները, ով բերդի մէջ բնակող
կին։ Որովհետև այսպէս է ասում 18
Տէրը. Ահա ես այս անգամ դէն
եմ գցելու երկրի բնակիչներին և
նորանց նեղութեան մէջ եմ դը-
նելու, որ գտնեն։
Վա՛յ ինձ իմ հարուածի հա- 19
մար, անդարմանելի է իմ վէրքը.
և ես ասեցի՝ Արդարև սա իմ
ցաւն է, և ես պէտք է տանեմ
նորան։ Իմ վրանը կործանուե- 20
ցաւ և ամեն չուաններս կտրտուե-
ցան, իմ որդիքն ինձանից յա-
ռաջ եկան և չ՚կան. այլ ևս իմ
վրանը կանգնեցնող չ՚կայ և ոչ

21 Եվ՝ իմ վարագույրներն դնող՝ Ո-
րովհետև անասնացել են հովիւ-
ները և Տիրոջը չեն խնդրեալ.
դորա համար նորանք անխոհե-
մացան, և նորանց բոլոր հօտը
22 ցրուեցաւ։ Լուրի ձայն կայ, ա-
հա գալիս է, և մեծ դղրդոց
հիւսիսի երկրիցը. որ Յուդայի
քաղաքներն աւերակ չինէ՝ այս-
ինքն շագալների բնակարան։
23 Գիտեմ, ով Տէր, որ մարդինը
չէ իր ճանապարհը, որ գնացող
մարդի բանը չէ, որ ուղղէ իր
24 դնացքը։ Ով Տէր, ինձ խրատիր,
բայց իրաւունքով. ոչ թէ քո
բարկութեամբը, որ մի գուցէ
25 ինձ ոչնչացնես։ Թափիր քո ցա-
սումն այն ազգերի վերայ, որ
քեզ չեն ճանաչում, և այն ցե-
ղերի վերայ, որոնք քո անունը
չեն կանչում, որովհետև կերան
Յակոբին, և կերան և վերջա-
ցրին նորան, և նորա բնակու-
թիւնը աւերակ դարձրին։

ԳԼ. ԺԱ.

1 Այն խօսքն է սա, որ եղաւ Ե-
րեմիային Տիրոջ կողմանէ ասե-
2 լով. Լսեցէք այս ուխտի խօսքե-
րը, և ասեցէք Յուդայի մարդ-
կանցը և Երուսաղէմի բնակիչ-
3 ներին. Եւ դու ասիր նորանց,
Այսպէս է ասում Տէրը՝ Իսրա-
էլի Աստուածը. Անիծեալ է
այն մարդը, որ չլսէ այս ուխտի
4 խօսքերին. Որ ես պատուիրել
եմ ձեր հայրերին այն օրը, որ
ես նորանց հանեցի Եգիպտոսի
երկրիցը՝ այն երկաթի հնոցիցը,
ասելով. Լսեցէք իմ ձայնին և
կատարեցէք դորանց բոլորովին
ինչպես որ ես պատուիրում եմ
ձեզ. և դուք կ'լինէք ինձ ժո-
ղովուրդ, և ես կ'լինեմ ձեզ
5 Աստուած. Որպէս զի հաստա-
տեմ այն երդումը, որ երդուել եմ
ձեր հայրերին, որ նորանց տամ
կաթ և մեղր բղխող երկիրը՝ ինչ-
պէս որ այսօր։ Եւ ես պատաս-
խանեցի ու ասեցի. Ամէն, ով
Տէր։
6 Եւ Տէրն ասեց ինձ. Կանչիր
այս բոլոր խօսքերը Յուդայի քա-
ղաքներում և Երուսաղէմի փո-
ղոցներում ասելով. Լսեցէք այս
ուխտի խօսքերը և արէք նորանց։
7 Որովհետև ես ձեր հայրերին պար-
զապէս խրատեցի այն օրից, որ
նորանց հանեցի Եգիպտոսի երկ-
րիցը մինչև այսօր, կանուխ վեր
էի կենում ու խրատում և ա-
8 սում. Լսեցէք իմ ձայնին, Բայց
նորանք չլսեցին և ականջ չդե-
րին, և ամեն մէկը գնաց իր չար
սրտի կամակորութիւնով, և ես
բերի նորանց վերայ այս ուխտի
բոլոր խօսքերը, որ պատուիրել
9 էի որ անեն, բայց չարին։ Եւ
Տէրն ասեց ինձ. Գաւազանա-
թիւն է գտնուում Յուդայի մարդ-
կանցում և Երուսաղէմի բնակիչ-
10 ներում։ Նորանք ետ դարան
դէպի իրանց առաջի հայրերի
անօրէնութիւնները, որ մերժե-
ցին լսել իմ խօսքերը, և նորանք
գնացին ուրիշ աստուածների ե-
տեւից, որ նորանց ծառայեն. Ի-
սրայէլի տունը և Յուդայի տունը
քանդեցին իմ ուխտը, որ արել
էի նորանց հայրերի հետ։
11 Վասն որոյ Տէրն այսպէս է ա-
սում. Այնա ես նորանց վերայ չա-
րիք եմ բերելու, որից նորանք
չեն կարողանալ դուրս գալ, և
կ'կանչեն դէպի ինձ, բայց ես նո-
12 րանց չեմ լսիլ։ Եւ Յուդայի քա-
ղաքները և Երուսաղէմի բնակիչ-
ները կ'գնան և կ'կանչեն այն աս-
տուածներին, որոնց իրանք խունկ
էին ծխում, բայց նորանք բնաւ
չեն օգնիլ նորանց իրանց նեղու-
թեան ժամանակին։ Որովհետև
13 քո քաղաքների չափ եղան քո
աստուածները, ով Յուդա. և
Երուսաղէմի փողոցների չափ սե-
ղանները էք շինել ամօթի համար,
սեղաններ որ բահադին խունկ
14 ծխելու համար են։ Բայց դու մի
աղօթիր այս ժողովրդի համար,
և նորանց համար աղաղակ ու
աղաչանք մի բարձրացնիր, որով-
հետև ես չեմ լսելու նորանց
դէպի ինձ կանչած ժամանակը
նորանց չարիքի համար։
15 Ինչ ունի իմ սիրելին իմ տա-

նը. շատ անօրէնութիւններ գոր-
ծելով, սուրբ միսն էլ պիտի անց
կենայ քեզանից, որ դու չարու-
թիւն անելիս ուրախանում ես։
16 «Կանաչ ձիթենի՝ գեղեցիկ՝ բա-
րեպտուղ» կոչեց Տէրը քո անուա-
նը. Բայց մեծ աղմկի ձայնով կրակ
վառեց նորա կողմերը, և նորա
17 ոստերը կոտրատուեցան։ Եւ Զօ-
բաց Տէրը, որ քեզ տնկել է,
չարիք է խօսել քեզ վերայ, Իս-
րայէլի տան և Յուդայի տան չա-
րութեան համար, որ իրանք ա-
րին, բահադին խունկ ծխելով
18 որ ինձ բարկացնեն։ Եւ Տէրն ինձ
իմացրեց, և ես գիտեմ. դու ինձ
ցոյց տուիր այն ժամանակ նորանց
19 գործերը։ Բայց ես մի ընտելա-
ցած գառի պէս էի, որ տարվում
է մորթուելու, և չ'գիտէի թէ
ինձ դէմ նենգութիւն են հնա-
րում, թէ փչացնենք ծառը իր
պտղովը, և նորան բնաջինջ ա-
նենք կենդանեաց երկրիցը, և նո-
20 րա անունը այլ ևս չյիշուի։ Սա-
կայն, ով Զօրաց Տէր՝ արդար
դատաւոր, երիկամունքներն ու
սիրտը քննող, թող տեսնեմ քո
վրէժը նորանցից. որովհետև իմ
վէճը քեզ վերայ եմ դրել։
21 Սորա համար այսպէս է ասում
Տէրը Անաթովթի մարդկանց հա-
մար, որոնք որոնում են քո հո-
գին՝ ասելով. Մի մարգարէանար
Տիրոջ անունովը, որ մեր ձեռ-
22 ը չ'մեռնիս։ Վասն որոյ այսպէս
է ասում Զօրաց Տէրը. Ահա ես
պյցելութիւն պիտի անեմ նո-
րանց, ընտիրները սրով պիտի
ընկնեն, նորանց որդիքը և նո-
րանց աղջիկները սովով պիտի
23 մեռնեն։ Եւ մնացորդ պիտի չ'ու-
նենան նորանք, որովհետև ես
չարիք եմ բերում Անաթովթի
մարդկանց վերայ՝ նորանց պյցե-
լելու տարին։

ԳԼ. ԺԲ

1 Արդար ես դու, ով Տէր, երբ-
որ վիճեմ քեզ հետ. սակայն
իրաւացի բաներ եմ խօսում քեզ
հետ. Ինչու համար յաջող է ամ-
բարիշտների ճանապարհը. Հան-
դիստ են բոլոր նենգութիւն գոր-
ծողները։ Դու նորանց տնկեցիր, 2
և նորանք արմատացան, աճում
են և պտուղ էլ են բերում.
դու մօտ ես նորանց բերանին,
բայց հեռու՝ նորանց երիկա-
մունքներից։ Եւ դու, ով Տէր, 3
գիտես ինձ, դու ինձ տեսար և
քննեցիր իմ սիրտը քեզ մօտ.
Ջոկիր նորանց մորթուելու ոչ-
խարների պէս, և *որոշիր նորանց
սպանման օրուայ համար։ Մին- 4
չև ե՞րբ պիտի սուգ անէ երկի-
րը, և բոլոր դաշտի խոտը չորա-
նայ. Նորանում բնակողների չա-
րութեան համար. փչանում են
անասունն ու թռչունը, որ նո-
րանք ասում են՝ Նա պիտի չ'տես-
նէ մեր վախճանը։
Եթէ դու հետեւակների հետ 5
վազեցիր և նորանք քեզ յոգնե-
ցրին, ապա ինչպէս պիտի մրցէիր
ձիերի հետ. և խաղաղութեան
երկրի վերայ դու որ ապահով
ես, ապա ինչպէս պիտի անէիր
Յորդանանը բարձրանալիս։ Որով- 6
հետև քո եղբայրներն էլ և քո
հօր տունն էլ՝ հենց նորանք էլ
նենգութիւն արին քեզ դէմ,
հենց նորանք էլ կանչեցին բարձ-
րաձայն քո հետևից. դու նորանց
մի հաւատար, թէև քեզ լաւ
բաներ էլ ասեն։
Ես ձգել եմ իմ տունը, բարձի 7
թողել եմ արել իմ ժառանգու-
թիւնը, իմ հոգիի սիրածը տուի
իր թշնամիների ձեռքը։ Իմ ժա- 8
ռանգութիւնն ինձ համար եղաւ
անտառի առիւծին պէս, նա իր
ձայնը արձակեց ինձ վերայ. ա-
յրա համար ես ատեցի նորան։
Իմ ժառանգութիւնը մի գոյն- 9
զոյն թռչուն է եղել ինձ հա-
մար, թռչունները յարձակուել
են նորա վերայ չուրջանակի. ե-
կէք հաւաքուեցէք, ով դաշտի
բոլոր գազաններ, բերէք որ ու-
տեն նորան։ Շատ հովիւներ ա- 10
ւերել են իմ այդին, ոտնակոխ
են արել իմ բաժինը. իմ ցան-

*Եբր. որբիր

կալի վիճակը ամայի անապատ
11 դարձրին։ Նորան անապատ դար-
ձրին, նա սուգ արաւ իմ առա-
ջին իբրև անապատ, աւերակ է
դարձել բոլոր երկիրը, որովհե-
տև մարդ չ'կայ, որ ուշ դարձնէ։
12 Անապատումը բոլոր բլուրների
վերայ ասպատակներ եկան, ո-
րովհետև Տիրոջ սուրը ուտում
է երկրի մէկ ծայրից մինչև երկրի
միւս ծայրը, խաղաղութիւն չ'կայ
13 ոչ մի մարմնի համար։ Նորանք
ցորեն են ցանել, բայց փուշ
հնձեցին. աշխատանք են քաշել,
օգուտ չ'տեսան. և դուք պիտի
ամաչէք ձեր արդիւնքներիցը Տի-
րոջ բարկութեան բորբոքման հա-
մար։
14 Այսպէս է ասում Տէրը իմ
չար դրացիների համար, որոնք
դպչում են այն ժառանգութեան,
որ տուել եմ իմ Իսրայէլ ժո-
ղովրդին. Ահա ես նորանց պիտի
խլեմ իրանց երկրի երեսիցը, և
Յուդայի տունը պիտի խլեմ նո-
15 րանց միջիցը։ Եւ երբոր ես նո-
րանց խլած կ'լինեմ, յետոյ ետ
կ'դառնամ և կ'ողորմեմ նորանց,
և ետ կ'դարձնեմ ամեն մէկին իր
ժառանգութեանը, և ամեն մար-
16 դին՝ իր երկիրը։ Եւ եթէ նո-
րանք լաւ սովորեն իմ ժողովրդի
ճանապարհները, որ իմ անու-
նովը երդում անեն՝ թէ Կենդա-
նի է Տէրը, ինչպէս որ սովորե-
ցրին իմ ժողովրդին Բահաղով
երդում անելը, այն ժամանակ
պիտի հաստատուին իմ ժողովրդի
17 մէջ։ Բայց եթէ չ'լսեն, պիտի
խլեմ այն ժողովուրդը բոլորո-
վին, և նա պիտի փչանայ, ա-
սում է Տէրը։

ԳԼ. ԺԳ

1 Այսպէս ասեց ինձ Տէրը. Գնա
և քեզ համար մի քթանի գօտի
գնիր և նորան մէջքդ կապիր, և
2 նորան ջուրը չ'կոխես։ Եւ ես
գնեցի գօտին Տիրոջ խօսքի հա-
3 մեմատ և մէջքիս կապեցի։ Եւ
Տիրոջ խօսքն երկրորդ անգամ ե-
4 ղաւ ինձ ասելով. Առ քո գնած
գօտին որ մէջքիդ է, և վեր կաց
գնա Եփրատը, և թագցրու այն-
տեղ վէմի ծակումը։ Եւ ես գնա-
ցի ու թագցրի նորան Եփրատի
մօտ, ինչպէս որ Տէրն ինձ պատ-
ուիրել էր։ Եւ եղաւ որ շատ
ժամանակ անցնելուց յետոյ Տէրն
ինձ ասեց. Վեր կաց գնա Եփ-
րատը և վեր առ այնտեղից այն
գօտին, որ ես քեզ հրամայեցի
թագցնել այնտեղ։ Եւ ես գնա-
ցի Եփրատը և քանդեցի և վեր
առայ գօտին այն տեղից, ուր որ
ես նորան թագցրել էի. բայց
ահա գօտին փտել էր և ոչ մի
բանի պիտանի չէր։ Եւ Տիրոջ
խօսքն եղաւ ինձ ասելով. Տէրն
այսպէս է ասում. Այսպէս պի-
տի փչացնեմ Յուդայի հպար-
տութիւնը և Երուսաղէմի մեծ
հպարտութիւնը։ Այս չար ժո-
ղովուրդը, որ չէ ուզում լսել
իմ խօսքերին, որ վարվում են
իրանց սրտի կամակորութիւնովը,
և գնում են ուրիշ աստուածնե-
րի ետևից, որ ծառայեն նորանց
և երկրպագութիւն անեն նորանց,
նորանք այս գօտիի պէս պիտի
դառնան, որ ոչ մի բանի պի-
տանի չէ։ Որովհետև ինչպէս որ
գօտին փակած է մարդիս մէջ-
քին, այնպէս էլ ես փակցրել
էի ինձ բոլոր Իսրայէլի տունը, և
բոլոր Յուդայի տունը, ասում է
Տէրը, որ ինձ համար ժողովուրդ
լինեն և անուն և փառք ու պար-
ծանք. բայց նորանք չ'լսեցին։
Եւ ասիր նորանց այս խօսքը.
Այսպէս է ասում Իսրայէլի Տէր
Աստուածը. Ամեն տիկ պիտի
լցուի գինիով. բայց նորանք քեզ
ասելու են. Մի՞թէ մենք բնաւ
չ'գիտէինք, որ ամեն տիկ գինի-
ով կ'լցուի։ Բայց դու ասիր նո-
րանց. Այսպէս է ասում Տէրը.
Ահա ես պիտի արբածութիւնով
լցնեմ այս երկրի բոլոր բնակիչ-
ներին և այն թագաւորներին,
որ նստում են Դաւիթի աթոռի
վերայ, և քահանաներին ու մար-
գարէներին, և Երուսաղէմի բո-
լոր բնակիչներին։ Եւ պիտի կոտ-
րատեմ մէկզմէկով, և հայրե-

րին ու որդիներին միասին, ա-
սում է Տէրը. ոչ պիտի գթամ
և ոչ խնայեմ, և ես չեմ ողոր-
մելու՝ այլ նորանց բնաջինջ եմ
անելու։
15 Լսեցէք և ականջ դրէք, մի
հպարտանաք. որովհետև Տէրն է
16 խօսում։ Փառք տուէք ձեր Տէր
Աստուծուն, դեռ չ'խաւարած,
և դեռ ձեր ոտքերը մթութեան
սարերի վերայ չ'գլորած, և դուք
կ'սպասէք լոյսի, բայց նա նորան
մահուան ստուեր կ'շինէ, և
17 թանձր մէգ կ'դարձնէ։ Բայց
եթէ չ'լսէք սորան, իմ հոգին
ծածուկ տեղերում պիտի լաց
լինի հպարտութեան համար, և
պիտի արտասուքով արտասուէ
և աչքս արտասուք պիտի թա-
փէ. որովհետև Տիրոջ հօտը գե-
րի առնուեցաւ։
18 Ասիր թագաւորին և թագու-
հիին. Խոնարհուեցէք, ցած նստե-
ցէք, որովհետև իջել է ձեր
19 գլխից ձեր փառքի թագը։ Հա-
րաւային քաղաքները կղպուեցան
և բացող չ'կայ, բոլոր Յուդան
գերութեան գնաց, ամբողջապէս
20 գերի գնաց։ Բարձրացրէք ձեր
աչքերը և տեսէք հիւսիսից եկող-
ներին, ո՞ւր է քեզ տրուած հօ-
տը՝ քո փառքի խաշինքները։
21 Ի՞նչ պիտի ասես երբոր քեզ
այցելութիւն անէ. և դու ես
նորանց սովորեցրել քեզ վերայ
գլխաւոր իշխաններ լինելու. մի՞-
թէ քեզ ցաւեր չեն բռնելու
22 ծննդական կնկայ նման։ Եւ եթէ
ասես քո սրտումը. Այս բաներն
ի՞նչու համար են ինձ հանդիպել.
քո անօրէնութեան շատութիւ-
նիցը բացուեցան քո քղանցքը,
բաց եղան քո գարշապարները։
23 Մի՞թէ Եթէովպացին կ'փոխէ իր
մորթը, կամ ինձը՝ իր խայտուց-
ները, որ դուք էլ կարողանայիք
բարութիւն անել, որ սովորած
24 էք չարութիւն անելու։ Եւ ես
նորանց պիտի ցրիւ տամ ինչպէս
մղեղ, որ տարվում է անապա-
25 տի քամիիցը։ Սա քո վիճակն է՝
քո մասն — բաժինը իմ կողմից,
ասում է Տէրը, որ դու ինձ մո-
ռացար և ստութեան ապաւինե-
ցիր։ Ուրեմն ես էլ վեր հանեցի
քո քղանցքը քո երեսի վերայ,
և երևեցաւ քո անարգանքը։ Եւ
ես քո շնութիւնները և վրնջիւն-
ները, քո գարշելի պոռնկութիւ-
նը՝ դաշտի բլուրների վերայ տե-
սել եմ, այսինքն քո պղծութիւն-
ները. վա՛յ քեզ, Երուսաղէմ.
դու քեզ չես մաքրում. էլ մին-
չև ե՞րբ։

ԳԼ. ԺԴ

Տիրոջ այն խօսքը, որ եղաւ Ե-
րեմիային երաշտութեան մասին։
Յուդան սուգ է անում, և նորա
դռները թառամել են, և մթնել
են գետնի վերայ, և Երուսաղէմի
աղաղակը վեր է ելել։ Եւ նո-
րանց ազնուականները ջրի են ու-
ղարկում իրանց պզտիկներին.
նորանք գնացին ջրհորների մօտ,
ջուր չ'գտան, ետ դառան ամա-
նները դարտակ. ամաչեցին ու
պատկառեցին և ծածկեցին ի-
րանց գլուխը։ Որովհետև գետի-
նը ճաքճաքել է, երկրի վերայ
անձրև չ'լինելու պատճառով,
երկրագործները ամաչեցին և ծած-
կեցին իրանց գլուխը։ Որովհետև
եղնիկն էլ ծնեց դաշտումը և
բաց թողեց, նորա համար որ
խոտ չ'կար։ Եւ վայրի էշերը
կանգնեցին բլուրների վերայ, չա-
գալների պէս ծծում են օդը.
նորանց աչքերը նուաղել են,
որովհետև խոտ չ'կայ։
Թէև մեր անօրէնութիւնները
վկայում են մեզ դէմ, ով Տէր,
դու արա քո անունի համար. ո-
րովհետև մեր յանցանքները շատ
են. քեզ դէմ մեղք ենք գոր-
ծել։ Ով Իսրայէլի Յոյսը, նորա
Փրկիչը նեղութեան ժամանակին.
ի՞նչու ես հիւրի պէս դարձել
երկրումը, և մի ճանապարհորդի
պէս՝ որ մտել է օթելու։ Ի՞նչու ես
հիացած մարդի պէս դարձել, մի
զօրաւորի պէս՝ որ կարող չէ օգ-
նել. սակայն դու մեր միջումն ես,
ով Տէր, և քո անունը կանչուած
է մեզ վերայ. մեզ մի թողիր։

40 Այսպէս է ասում Տէրն այս
ժողովրդին. Որովհետև նորանք
սիրեցին թափառելը, իրանց ոտ-
քերը չզսպեցին. Տէրը նորանց չը
հաւանեց, հիմա պիտի յիշէ նո-
րանց անօրէնութիւնները, և այ-
41 ցելէ նորանց մեղքերը։ Եւ Տէրն
ինձ ասեց. Մի աղօթիր այս ժո-
42 ղովրդի համար ի բարին։ Որովհետև
ծոմ պահելիս՝ ես չեմ լսում
նորանց աղաղակը, և նորանք ող-
ջակէզ և նուէր մատուցանելիս՝
ես չեմ հաւանում, որովհետև
սրով ու սովով և ժանտախտով
43 պիտի սպառեմ ես նորանց։ Եւ
ես ասեցի. Ա՛հաղ, Տէր Եհովայ,
ահա մարգարէքն ասում են նո-
րանց. Պիտի սուր չտեսնէք և
սով էլ չէ լինելու ձեզ համար.
այլ հէնց խաղաղութիւն պիտի
լինի ձեզ համար այստեղում։
44 Եւ Տէրն ինձ ասեց. Մարգարէ-
ները սուտ են մարգարէանում
իմ անունովս, ես նորանց չեմ
ուղարկել և նորանց չեմ պատ-
ուիրել, և նորանց չեմ ասել.
Նորանք սուտ տեսիլքներ և գու-
շակութիւն և անոտ բան և ի-
րանց սրտի խաբէութիւններն են
մարգարէանում ձեզ համար։
45 Ուրեմն այսպէս է ասում Տէրն
այն մարգարէների համար, որոնք
մարգարէանում են իմ անունով.
Թէև ես նորանց չեմ ուղար-
կել, և նորանք ասում են. Սուր
ու սով չէ լինելու այս երկրում.
այն մարգարէները սրով ու սո-
46 վով պիտի փչանան։ Եւ այն ժո-
ղովուրդը՝ որոնց համար նորանք
մարգարէանում են, պիտի վայր
դցուին Երուսաղէմի մէջ՝ սովի և
սուրի պատճառով, և թաղող
պիտի չլինի, այսինքն իրանք, ի-
րանց կնիկները և իրանց տղերքը
և աղջկերքը, և նորանց վերայ
պիտի թափեմ իրանց չարու-
թիւնը։
47 Եւ նորանց ասիր այս խօսքը.
Թող իմ աչքերն գիշեր ու ցե-
րեկ անդադար արտասուք թա-
փեն, որովհետև մեծ կոտորածով
հարուածուել է իմ ժողովրդի
կոյս աղջիկը՝ մի խիստ ցաւալի
հարուածով։ Եթէ դաշտն եմ
դուրս գալիս՝ ահա սրով սպան-
ուածներ են, և եթէ քաղաք եմ
մտնում՝ ահա սովից թուլացած-
ներ. որովհետև մարգարէն էլ՝
քահանան էլ՝ շուռ են գալիս
երկրի վերայ և չեն խմանում։
Մի՞թէ բոլորովին մերժել ես
Յուդային. կամ Սիօնից զզուե՞լ
է քո հոգին, ի՞նչու համար մեզ
զարկեցիր այնպէս որ չ'բժշկուինք.
սպասում ենք խաղաղութեան,
բայց բարիք չ'կայ, և բժշկու-
թեան ժամանակին՝ բայց ահա
խառնուածութիւն։ Մենք գիտենք, ով
Տէր, մեր ամբարշտութիւնը՝ մեր
հայրերի անօրէնութիւնը. որ մե-
ղանչել ենք քեզ դէմ։ Մի զզուիր
քո անունի սէրի համար, մի ա-
նարգիր քո փառքի աթոռը. յի-
շիր և մի քանդիր քո ուխտը մեզ
հետ։ Մի՞թէ հեթանոսների ու-
նայնութիւններումը մեկ անձրև
առաջ կայ. կամ թէ երկի՞նքն է
տալիս անձրևները. չէ՞ որ առաջը
դու ես, ով Տէր մեր Աստուածը,
և մենք յոյս ենք դնում քեզ,
դու ես անում այս ամեն բաները։

Գլ. ԺԵ

Եւ Տէրն ասեց ինձ. Եթէ Մով-
սէսն ու Սամուէլն էլ կանգնէին
իմ առաջին, իմ սիրտը այս ժո-
ղովրդի վերայ չէ լինելու. նորանց
դէն արա իմ երեսի առաջից որ
գնան։ Եւ եթէ քեզ ասելու լի-
նեն, Ո՞ւր դուրս գնանք, և նո-
րանց ասես՝ Տէրը այսպէս է ա-
սում. Որոնք մահուայ համար են՝
մահուանը, և որոնք սուրի հա-
մար են՝ սուրին, և որոնք սովի
համար են՝ սովին, և որոնք գե-
րութեան համար են՝ գերութեա-
նը։ Եւ ես նորանց վերայ չորս
տեսակ պատիժ եմ որոշել, ասում
է Տէրը. սուրը՝ սպանելու հա-
մար, և շները՝ պատառելու հա-
մար. և երկնքի թռչունները ու
երկրի գազանները՝ ուտելու և
ապականելու համար։ Եւ նորանց
չարչարանքի պիտի մատնեմ երկ-
րի բոլոր թագաւորութիւննե-

րին, Յուդայի Թագաւոր Եզե-
կիայի որդի Մանասէի պատճա-
ռով. նորա Երուսաղէմումն ա-
րածի համար։ Որովհետև ո՞վ
պիտի ողորմէ քեզ, ով Երուսա-
ղէմ, և ո՞վ պիտի քեզ ցաւա-
կից լինի. և ո՞վ պիտի գառնայ
քո առողջութիւնը հարցնելու։
Դու ինձ ձգեցիր, ասում է Տէ-
րը, ետ գնացիր, ես էլ իմ ձեռ-
քը երկարացնելու եմ քեզ վե-
րայ և քեզ փչացնելու եմ, ես
վաստակել եմ գթութիւն անե-
լուց։ Եւ հեծանոցով հոսելու
եմ նորանց երկրի դռներումը,
անզաւակ եմ անելու, պիտի
կորցնեմ իմ ժողովրդին. նորանք
իրանց ճանապարհներից ետ չեն
դառնում, Աւելի շատ եղան իմ
առաջին նորանց որբևայրերը ծո-
վերի աւազից, ես նորանց երի-
տասարդի մայր վերայ աւարառուն
կէս օրին եմ բերելու, յանկարծ
նորա վերայ ահ ու սարսափ եմ
գցելու։ Նաւադեցաւ եօթը ծնո-
ղը, հոգին փչեց, նորա արևը մա-
րը մնաւ դեռ օրով, նա ամա-
չեցաւ ու պատկառեցաւ. իսկ
մնացորդը նորանց թշնամիների
սրին եմ մատնելու, ասում է
Տէրը։
Վա՜յ ինձ, ով իմ մայր, որ
ինձ կուսի մարդ և վէճի մարդ
ծնեցիր բոլոր երկրի համար. ոչ
շահով փող եմ տուել, ոչ էլ
ինձ շահով փող են տուել, բայց
ամենքը ինձ անիծում են։ Տէրն
ասում է. Անշուշտ քեզ պիտի
ազատեմ յաջողութեան հա-
մար, և անշուշտ աղաչել պիտի
տամ ես թշնամին դեպի քեզ՝
ձախորդութեան ժամանակին և
նեղութեան ժամանակին։ Մի՞թէ
կ'կոտրուի երկաթը՝ նա էլ հիւ-
սիսի երկաթը և պղինձը։ Քո
ստացուածքն ու քո գանձերը
յափշտակութեան պիտի մատ-
նեմ ձրիապես, այն էլ քո բոլոր
մեղքերի պատճառով, և քո բո-
լոր սահմաններումը։ Եւ թող
եմ տալու քո թշնամիներին որ
քեզ տանեն մի երկիր, որ դու
չ'գիտես. որովհետև կրակ է վառ-
ուել իմ բարկութիւնովը, ձեզ
վերայ բորբոքուել է։
Դու գիտես, ով Տէր, ինձ յի-
շիր և ինձ այցելիր, և իմ վրէժն
առ ինձ հալածողներիցը, ինձ մի
վեր առնիր քո երկայնմտութեան
համար. իմացիր, որ քո մասին
նախատինք կրեցի։ Քո խօսքերը
գտնուեցան, և ես կերայ նորանց,
և քո խօսքն ինձ համար սրտից
ցնծութիւն և ուրախութիւն ե-
ղաւ. որովհետև քո անունը կոչ-
ուած է ինձ վերայ, ով Եհովայ
Զօրաց Աստուած։ Ես չ'նստեցի
ծիծաղողների ժողովքումը և չը
զուարճացայ. քո ձեռքի պատ-
ճառով առանձին նստեցի, որով-
հետև բարկութեամբ լցրել էիր
ինձ։ Ի՞նչու է իմ ցաւը մշտնջե-
նաւոր, և իմ հարուածը՝ անդա-
մանելի, որ չէ ուզում բժշկուիլ.
մի՞թէ դու ինձ համար իբրև խա-
բողի նման ես դառնալու, ջրերի՞
պէս՝ որ հաւատարիմ չեն։
Սորա համար այսպէս է ասում
Տէրը. Եթէ դարձի գաս, ես քեզ
ետ կ'բերեմ. իմ առաջին կ'կանգ-
նես. և եթէ հանես պատուակա-
նը անարգիցը, իմ բերանի պէս
կ'լինես. նորանք կ'դառնան դէպի
քեզ, և դու դէպի նորանց չես
դառնալ։ Եւ քեզ այս ազգի
դէմ պղնձի ամուր պարիսպ կը
շինեմ. և նորանք կ'պատերազ-
մեն քեզ դէմ և քեզ չեն յաղ-
թիլ, որովհետև ես քեզ հետ
եմ որ քեզ փրկեմ և քեզ ա-
զատեմ, ասում է Տէրը։ Եւ քեզ
պիտի ազատեմ չարերի ձեռքից,
և փրկեմ բռնաւորների ձեռ-
քիցը։

Գլ. ԺԶ

Եւ Տէրոջ խօսքն եղաւ ինձ ա-
սելով. Քեզ համար կին մի առ-
նիր, և քեզ համար աղերք և
աղջկերք չլինեն այստեղ։ Որով-
հետև Տէրը այսպէս է ասում
այստեղ ծնուած աղերքների և աղ-
ջկերանց մասին, նաև նորանց այս
երկրումս ծնող մայրերի և նո-
րանց ծնող հայրերի մասին. Յա-

ւալի մահերով պիտի մեռնեն նո-
րանք. նորանց վերայ սուգ չէ լի-
նելու, և նորանք չեն թաղուե-
լու, և նորանք աղբ պիտի դառ-
նան երկրի երեսին. և սրով ու
սովով պիտի սպառուին. և նո-
րանց դիակները կերակուր պիտի
դառնայ երկնքի թռչուններին և
5 դաշտի գազաններին։ Որովհետև
Տէրն այսպէս է ասում. Սուգի
տուն մի մտնիր և մի դնար ող-
բալու, և նորանց մի ցաւակցիր.
որովհետև ես իմ խաղաղութիւ-
նը, ողորմութիւնը և գթութիւ-
նը ետ եմ առել այս ժողովը-
6 դիցն ասում է Տէրը։ Եւ մեծերն
ու պզտիկները մեռնելու են այս
երկրում և չեն թաղուելու. և
նորանց համար սուգ չեն անե-
լու, և իրանց մարմինները չեն
կտրտելու, և իրանց մազերը չեն
7 խուզելու։ Եւ հաց չեն կտորելու
սուգի համար մեռելի մասին
մխիթարելու պատճառով, և նո-
րանց չեն խմեցնելու մխիթարու-
թեան բաժակը, նորա հօր և նո-
8 րա մօր համար։ Եւ խնջոյքի
տուն մի մտնիր, նորանց հետ
բնակուելու, ուտելու և խմելու
9 համար։ Որովհետև այսպէս է
ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի
Աստուածը. Ահա ես կ'դադա-
րեցնեմ այստեղից ձեր աչքի ա-
ռաջին և ձեր օրերումը՝ ցնծու-
թեան ձայնը և ուրախութեան
ձայնը, փեսայի ձայնը և հարսի
10 ձայնը։ Եւ երբոր դու ասած կը
լինես այս բոլոր խօսքերը այս ժո-
ղովրդին, և նորանք քեզ կ'ա-
սեն, Ի՞նչու համար է Տէրն ա-
սում մեր մասին այս բոլոր մեծ
չարիքը, և ի՞նչ է մեր անօրէ-
նութիւնը, և ի՞նչ է մեր մեղքը,
որ մեղանչած լինէինք մեր Տէր
11 Աստուծոյ դէմ. Եւ դու ասիր
նորանց. Նորա համար որ ձեր
հայրերն ինձ թողեցին, ասում
է Տէրը, և գնացին ուրիշ աստ-
ուածների ետևից, և ծառայե-
ցին նորանց ու երկրպագեցին նո-
րանց, բայց ինձ թողեցին և իմ
12 օրէնքը չ'պահեցին։ Սակայն դուք
աւելի չարութիւն գործեցիք քան
թէ ձեր հայրերը, և ահա ձեզանից
ամեն մէկը գնում է իր չար սրտի
կամակորութեան ետևից, որ ինձ
չէ լսում։ Ես էլ դէն եմ գցում 13
ձեզ այս երկրի երեսիցը մի այն-
պիսի երկիր, որ դուք չ'գիտէիք
և ոչ ձեր հայրերը, և այնտեղ
պիտի ծառայէք ցերեկ և գիշեր
ուրիշ աստուածների, որովհետև
ձեզ ողորմութիւն չեմ անելու։
Սորա համար ահա օրեր կ'դան, 14
ասում է Տէրը, որ այլ ևս չի
ասուիլ թէ՝ Կենդանի է Տէրը,
որ Իսրայէլի որդկանցը վեր հա-
նեց Եգիպտոսի երկրիցը, Այլ 15
թէ՝ Կենդանի է Տէրը, որ հանեց
Իսրայէլի որդկանցը հիւսիսի երկ-
րիցը, և այն բոլոր երկիրներիցը,
ուր որ նորանց աքսորել էր. և
ես պիտի ետ դարձնեմ նորանց
դէպի իրանց երկիրը, որ տուել
եմ իրանց հայրերին։
Ահա ես շատ ձկնորսներ եմ ու- 16
ղարկելու, ասում է Տէրը, և նո-
րանք պիտի որսան նորանց. և նո-
րանից յետոյ շատ որսորդներ եմ
ուղարկելու, և նորանք պիտի
բռնեն նորանց ամեն սարի վե-
րայից, և ամեն բլրի վերայից և
վէմերի ծակերից։ Որովհետև իմ 17
աչքերը նորանց բոլոր ճանա-
պարհների վերայ է. նորանք ծա-
ծուկ չեն իմ երեսի առաջին, և
գաղտնի չէ նորանց անօրէնու-
թիւնը իմ աչքերի առաջին։ Եւ 18
ես առաջ պիտի նորանց կրկնա-
պատիկ հատուցանեմ նորանց
անօրէնութեան և նորանց մեղքի
փոխարէն. որովհետև նորանք պղ-
ծեցին իմ երկիրը, իրանց գար-
շութիւնների և պղծութիւնների
դիերովը լցրին իմ ժառանգու-
թիւնը։
Ով Տէր, իմ զօրութիւնն ու 19
իմ բերդը, և իմ ապաստանա-
րանը նեղ օրումը. ազգերը երկ-
րի ծայրերից քեզ մօտ են գա-
լու և ասեն. Միմիայն ստութիւն
ժառանգեցին մեր հայրերը՝ ու-
նայնութիւն, և այնպէս բաներ
որոնց մէջ օգուտ չ'կայ։
Մի՞թէ մարդս իրան համար 20
աստուածներ շինէ, քանի որ նո-

21 րանք աստուածներ չեն։ Սորա
համար ահա ես նորանց պիտի ի-
մացնեմ այս անգամ, պիտի ի-
մացնեմ նորանց իմ ձեռքը և
իմ ոյժը. և պիտի գիտենան, որ
իմ անունը Եհովայ է։

ԳԼ. ԺԷ

1 Յուդայի մեղքը գրուած է եր-
կաթի գրիչով՝ ադամանդեայ
ծայրով, փորագրուած է նորանց
սրտի տախտակի վերայ, և ձեր
սեղանների եղջիւրների վերայ։
2 Նորանք յիշում են իրանց որդ-
կանց յիշելուն պէս իրանց սե-
ղաններին, և իրանց աստարովթ-
ներին կանաչ ծառերի մօտ բարձր
3 բլուրների վերան։ Ով իմ դաշտի
միջի սար, քո հարստութիւնը՝
քո բոլոր գանձերը յափշտակու-
թեան պիտի մատնեմ, քո բարձ-
րաւանդակները՝ մեղքի համար
4 քո բոլոր սահմաններում։ Եւ
պիտի զրկուիս հէնց քեզանով
քո ժառանգութիւնիցը որ քեզ
տուի, և քեզ ծառայեցնելու
եմ քո թշնամիներին՝ մի այնպի-
սի երկրում որ դու չ'գիտէիր,
որովհետև կրակ էք տուել իմ
բարկութեանը, մինչև յաւիտ-
եան պիտի վառուի։
5 Այսպէս է ասում Տէրը. Ա-
նիծեալ լինի այն մարդը, որ մար-
դի է ապաւինում, և մարմինը
իրան բազուկ շինում, և իր սրը-
6 տովը խոտորում Տէրիցը։ Նա մո-
շենիի պէս պիտի լինի անապա-
տումը, և պիտի բարիքը եկած
ժամանակը չ'տեսնէ, և պիտի
բնակուէ անապատի այրուած
տեղերումը, աղի և անբնակ երկ-
7 րումը։ Օրհնեալ լինի այն մար-
դը, որ Տիրոջն է ապաւինում, և
8 Տէրն է նորա յոյսը։ Նա նման կը
լինի մի ծառի, որ տնկուած է
ջրերի մօտ. նա իր արմատները
կ'ձգէ գետի մօտովը, և չի տես-
նիլ տաքութիւնը՝ եկած ժամա-
նակը. այլ նորա տերևները կա-
նաչ կ'լինի, և երաշտ տարին նա
չի վախենալ և չի դադարիլ պը-
տուղ տալուց։
Խորամանկ է սիրտն ամենից ա- 9
ւելի և ապականուած. նորան ո՞վ
կարող է հասկանալ։ Ես Տէրս 10
քննում եմ սիրտը, փորձում եմ
երիկամունքը, որ տամ մարդիս
իր ճանապարհներին համեմատ
և իր գործերի պտուղին համե-
մատ։
Անիրաւութեամբ հարստու- 11
թիւն շինողը իր չ'ածածովը թրխ-
սող կաքաւի պէս է. նա իր օրերի
կէսին պիտի թողէ նորան, և իր
վերջումը յիմար կ'լինի։
Փառքի աթոռ, բարձր սկզբից, 12
մեր սրբարանի տեղը, Իսրայէլի 13
յոյսը, ով Տէր, բոլոր քեզ թո-
ղողները պիտի ամաչեն. ինձանից
հեռացողները տափումն են գրը-
ուելու. որովհետև թողեցին կե-
նաց ջրի աղբիւրը՝ Տիրոջը։
Ինձ բժշկիր, ով Տէր, և ես կը 14
բժշկուիմ. փրկիր ինձ, և ես կը
փրկուիմ. որովհետև իմ պար-
ծանքը դու ես։ Ահա նորանք ինձ 15
ասում են, Ո՞ւր է Տիրոջ խօսքը,
թող մէկ գայ։ Բայց ես ետ չը 16
քաշուեցայ քո ետևից հովիւ լի-
նելուց, և ձախորդ օրուայ չեմ
բաղձացել, դու գիտես. իմ շրբ-
թունքներից դուրս եկածը քո
դիմաց առաջին էր։ Ինձ համար 17
արհաւիրք մի լինիր. իմ ապա-
ւէնը դու ես չար օրը։ Թող ա- 18
մաչեն ինձ հալածողները, իսկ ես
պիտի չ'ամաչեմ. թող նորանք
զարհուրեն, իսկ ես պիտի չ'զար-
հուրեմ. նորանց վերայ չար օր
բեր, և երկպատիկ կոտորածով
կոտորիր նորանց։
Տէրն այսպէս է ասում ինձ. 19
Գնա և կանգնիր ժողովրդի որդ-
կանց դռանը, որով Յուդայի թա-
գաւորները մտնում են և դուրս
են գալիս. և Երուսաղէմի բոլոր
դռներումը։ Եւ ասիր նորանց. 20
Լսեցէք Տիրոջ խօսքը, ով Յու-
դայի թագաւորներ և ով բոլոր
Յուդա և ով Երուսաղէմի բոլոր
բնակիչներ, որ գալիս էք այս
դռները։ Այսպէս է ասում Տէ- 21
րը. Զգուշացէք ձեր անձերի հա-
մար, և բեռ մի վեր առնէք շա-
բաթ օրը ու մի բերէք Երուսա-

22 ղէմի դռներիցը ներս։ Եւ ձեր
տներիցը բեռ մի դուրս բերէք
շաբաթ օրը, և ոչ մի գործ մի
անէք. իսկ սրբեցէք շաբաթ օրը,
ինչպէս որ պատուիրել եմ ձեր
23 հայրերին։ Բայց նորանք չ'լսեցին
և իրանց ականջը չ'ծռեցին. այլ
խստացրին իրանց պարանոցը, որ
24 չ'լսեն և որ խրատ չ'առնեն։ Եւ
եթէ ուշադրութեամբ ականջ
դնէք ինձ, ասում է Տէրը, որ
այս քաղաքի դռներիցը ներս
բեռ չ'բերէք շաբաթ օրը, և որ
շաբաթ օրը սրբէք, որ նորանում
25 ոչ մի գործ չ'անէք. Այն ժա-
մանակ այս քաղաքի դռներովը
կ'մտնեն թագաւորներ և իշխան-
ներ, որ կ'նստեն Դաւիթի ա-
թոռի վերայ՝ հեծած կառքերի
և ձիերի, թէ իրանք և թէ ի-
րանց իշխանները, Յուդայի մար-
դիկը և Երուսաղէմի բնակիչնե-
րը. և այս քաղաքը կ'բնակուի
26 յաւիտեան։ Եւ կ'գան Յուդայի
քաղաքներից և Երուսաղէմի շրջ-
ակայքից և Բենիամինի երկրի-
ցը, և դաշտիցն ու սարիցը, և
հարաւիցը, և կ'բերեն ողջակէզ
և զոհ և հացի ընծայ և կնդրուկ,
և գոհութեան ընծաներ կ'բերեն
27 Տիրոջ տունը։ Բայց եթէ ինձ չը
լսէք, որ շաբաթ օրը պահէք, որ
բեռ վեր չ'առնէք ու բերէք Ե-
րուսաղէմի դռներիցը ներս շա-
բաթ օրը, այն ժամանակ ես էլ
կրակ կ'վառեմ նորա դռներու-
մը, և նա կ'ուտէ Երուսաղէմի
պալատները և չի հանգչուիլ։

ԳԼ. ԺԸ

1 Այն խօսքը, որ Տիրոջ կողմանէ
2 եղաւ Երեմիային ասելով. Վեր
կաց իջիր բրուտի տունը, և այն-
տեղ ես քեզ լսել տամ իմ խօս-
3 քերը։ Եւ ես իջայ բրուտի տու-
նը, և ահա նա բան էր անում
4 ճախարակների վերայ։ Եւ աւեր-
ուեցաւ այն ամանը, որ նա շի-
նում էր, ինչպէս բրուտի ձեռքի
կաւին պատահում է, և նա դար-
ձաւ ու մի ուրիշ աման շինեց,
ինչպէս որ բրուտի աչքին հաճելի
էր անելու։ Եւ Տիրոջ խօսքն ե- 5
ղաւ ինձ ասելով. Մի՞թէ ես չեմ 6
կարող այս բրուտի պէս անել
ձեզ, ով Իսրայէլի տուն, ասում
է Տէրը. ահա ինչպէս որ կաւն
է բրուտի ձեռքին, նոյնպէս էք
դուք իմ ձեռքին, ով Իսրայէլի
տուն։ Ամեն անգամ որ խօսում 7
եմ մէկ ազգի կամ մէկ թագա-
ւորութեան դէմ, նորան քանդե-
լու, փուլ ածելու և կորցնելու
համար, Եթէ այն ազգը դարձ է 8
գալիս իր չարութիւնիցը, որի մա-
սին ես խօսել էի, այն ժամանակ ես
էլ զղջում եմ այն չարիքի հա-
մար, որ խորհել էի նորան անե-
լու համար։ Եւ ամեն անգամ 9
որ խօսում եմ մէկ ազգի կամ
մէկ թագաւորութեան մասին,
նորան շինելու և տնկելու համար,
Եթէ նա չարութիւն է անում 10
իմ աչքի առաջին և չէ լսում
իմ խօսքին, այն ժամանակ ես էլ
զղջում եմ այն բարիքի համար,
որ ասել էի թէ Նորան բարիք
եմ անելու։

Եւ հիմա ասիր Յուդայի մարդ- 11
կանցը և Երուսաղէմի բնակիչ-
ներին, թէ Այսպէս է ասում
Տէրը. Ահա ես ձեզ համար չա-
րիք եմ շինում, և ձեր մասին
մի խորհուրդ եմ խորհում, ե-
կէք ետ դարձէք ամեն մարդ իր
չար ճանապարհիցը, և լաւացրէք
ձեր ճանապարհները և ձեր գոր-
ծերը։ Բայց նորանք ասում են. 12
*Անհնարին է, որովհետև մենք
մեր խորհուրդների ետևիցն ենք
գնալու, և իւրաքանչիւրս իր չար
սրտի կամակորութիւնն ենք ա-
նելու։

Սորա համար այսպէս է ասում 13
Տէրը. Մէկ հարցրէք ազգերի մէջ,
ո՞վ է լսել այսպիսի բաներ. խիստ
սոսկալի բան արաւ Իսրայէլի կոյ-
սը։ Մի՞թէ դաշտի վէմիցը կ'պա- 14
կասի Լիբանանի ձիւնը, կամ կը
ցամաքե՞ն հոսող օտար ցուրտ
ջրերը։ Սակայն ինձ մոռացել է 15
իմ ժողովուրդը, ունայն բանի է
խունկ ծխում. և նորանց սահե-

*Եբր. Յոյս չ'կայ

ցրել են իրանց ճանապարհնե-
րումը, որ հին ճանապարհներ
էին, որ այնպիսի ուղիներով գը-
16 նան, որ պողոտայ չեն։ Որ նորանք
իրանց երկիրը աւերակ՝ յաւիտ-
եան սուլելու առարկայ շինեն. որ
ամեն նորա մօտով անցնողը հի-
17 անայ և գլուխը շարժէ։ Իբրև
թէ արևելեան քամիով, պիտի
նորանց ցրուեմ թշնամիի առա-
ջին. մէջք և ոչ թէ երես պիտի
ցոյց տամ նորանց կործանման
օրը։

18 Բայց նորանք ասեցին. Եկէք
հնարքներ սարքենք Երեմիայի
դէմ, որովհետև օրէնքը չի կոր-
չիլ քահանայիցը, և խորհուրդը՝
իմաստունիցը, և խօսքը՝ մարգա-
րէիցը։ Եկէք նորան զարկենք
լեզուով, և նորա ոչ մի խօսքին
մտիկ չ'անենք։

19 Ով Տէր, դէպի ինձ մտիկ ա-
րա, և լսիր ինձ հետ վիճողների
20 ձայնը։ Մի՞թէ բարիքի փոխարէն
չարութիւն կ'հատուցանուի. ո-
րովհետև նորանք փոս են փորել
իմ անձի համար. յիշիր իմ
կանգնելը քո առաջին, նորանց
համար բարեխօսելու մասին, որ
ետ դարձնեմ քո բարկութիւնը
21 նորանցից։ Սորա համար նորանց
որդկանցը մատնիր սովի և նո-
րանց յանձնիր սուրի ձեռքը, որ
նորանց կանայքը անզաւակ ու
որբևայրի դառնան, և նորանց
մարդիկը մահով սպանուածներ
լինեն, նորանց երիտասարդները՝
պատերազմում սրով զարկուած-
22 ներ։ Աղաղակ լսուի նորանց տնե-
րիցը, երբոր դու նորանց վերայ
յանկարծակի գունդեր բերես,
որովհետև փոս փորեցին ինձ բռ-
նելու համար, և վարմեր լարե-
ցին ծածուկ իմ ոտքերի համար։
23 Բայց դու, ով Տէր, գիտես նո-
րանց բոլոր խորհուրդները ինձ
դէմ մահի համար. նորանց մեղ-
քերը մի քաւիր, և նորանց մեղ-
քը քո առաջից մի ջնջիր. այլ
թող նորանք կործանուին քո ա-
ռաջին, նորանց արա քո բարկու-
թեան ժամանակին։

ԳԼ. ԺԹ

Այսպէս ասեց Տէրը. Գնա մի 1
բրուտի հողի կուժ առ, և ժո-
ղովրդի ծերերիցն ու քահանա-
ների ծերերիցն էլ. Եւ դուրս եկ 2
Ենովմի որդիի ձորը, որ Հարսու-
թի դռան մուտքի մօտին է, և
կանչիր այնտեղ այն խօսքերը, որ
կ'ասեմ քեզ։ Եւ ասիր. Լսեցէք 3
Տիրոջ խօսքը, ով Յուդայի թա-
գաւորներ, և ով Երուսաղէմի
բնակիչներ. այսպէս է ասում Զօ-
րաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
Ահա ես չարիք եմ բերելու այս
տեղի վերայ, որ ամեն լսողի ա-
կանջները ծվվան։ Նորա համար 4
որ ինձ թողեցին և օտարացրին
այս տեղը, և նորանում խունկ
ծխեցին ուրիշ աստուածների, ո-
րոնց չէին ճանաչում իրանք և
իրանց հայրերն ու Յուդայի թա-
գաւորները, և այս տեղն անմեղ-
ների արիւնով լցրին։ Եւ շինե- 5
ցին Բահաղի բարձրաւանդակնե-
րը, որ իրանց որդկանցը կրակով
այրեն, իբրև ողջակէզներ Բահա-
ղի համար, որ ես չեմ պատուի-
րել, և չեմ ասել, և միտքս էլ
չէ եկել։ Վասն որոյ ահա օրեր 6
կ'գան, ասում է Տէրը, որ այլ
ևս այստեղին Տօփէթ և Ենովմի
որդիի ձոր չի ասուիլ, այլ սպա-
նութեան ձոր։ Եւ ես պիտի խա- 7
փանեմ այս տեղումը Յուդայի և
Երուսաղէմի խորհուրդը, և նո-
րանց պիտի սրով կործանեմ ի-
րանց թշնամիների առաջին, և
նորանց հոգիները պահանջողների
ձեռքովը, և նորանց դիակները
պիտի տամ իբրև կերակուր եր-
կընքի թռչուններին և երկրի գա-
զաններին։ Եւ այս քաղաքը կը 8
շինեմ աւերակ և նախատինք.
ամեն նորա մօտով անցնողը պի-
տի հիանայ և պիտի սուլէ նորա
բոլոր հարուածների մասին։ Եւ 9
նորանց պիտի ուտեցնեմ իրանց
որդկանց միսը և իրանց աղջկե-
րանց միսը, և ամեն մարդ իր ընկ-
երի միսն է ուտելու այն պա-
շարմունքի և նեղութեան մէջ,
որով պիտի նեղեն նորանց իրանց

թշնամիքը և նորանց հոգին պահանջողները։
40 Եւ կոտրիր այն կուժը քեզ հետ գնացող մարդկանց աչքի
41 առաջին։ Եւ ասիր նորանց. Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Սրբա պէս պիտի կոտրեմ այս ժողովուրդը և այս քաղաքը, ինչպէս որ մի խոշոր կոտրւում է բրուտի անօթը, որ այլ ևս չի նորոգուիլ. և Տոփեթումը պիտի թաղուի, թաղելու տեղ չը
42 լինելու համար։ Այսպէս պիտի անեմ այս տեղին, ասում է Տէրը, և նորա բնակիչներին, և այս քաղաքը Տոփեթի պէս պիտի ա-
43 նեմ։ Եւ Երուսաղէմի տները, և Յուդայի թագաւորների տները Տոփեթի տեղին պէս պիղծ կ'լինեն, այն բոլոր տների մասին, որոնց կարներին խունկ են ծխել երկնքի բոլոր զօրքերի համար և թափելու նուէրներ են թափել օտար աստուածների։
44 Եւ Երեմիան եկաւ Տոփեթից, ուր որ Տէրը ուղարկել էր նորան մարգարէութիւն անելու, և կանգնեց Տիրոջ տան դաւիթում և ասեց բոլոր ժողովրդին.
45 Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Ահա ես այս քաղաքի վերայ և նորա բոլոր քաղաքների վերայ պիտի բերեմ այն ամեն չարիքը, որ ասել եմ նորա մասին. որովհետև նորանք խստացրել են իրանց պարանոցը, որ իմ խօսքերը չլսեն։

Գլ. Ի

4 Եւ Եմմերի որդի Փաշուր քահանան, որ իշխանաւոր վերակացու էր Տիրոջ տանը, լսեց Երեմիային որ մարգարէանում էր
2 այս խօսքերը։ Եւ Փաշուրը զարկեց Երեմիա մարգարէին և դրաւ նորան կաճղում որ Բենիամինի վերի դռանն էր Տիրոջ տանը։
3 Եւ հետևեալ օրն եղաւ որ Փաշուրը Երեմիային կաճղից հանեց. և Երեմիան ասեց նորան. Տէրը քո անունը ոչ թէ Փաշուր է կո-
չելու, այլ *Մագոր-միսաբիբ։
4 Որովհետև այսպէս է ասում Տէրը. ահա ես քեզ արհաւիրքը պիտի շինեմ քեզ համար և քո բոլոր բարեկամների համար. և նորանք պիտի ընկնեն իրանց թշնամիների սրովը, և քո աչքերը պիտի տեսանեն, և բոլոր Յուդան պիտի մատնեմ Բաբիլոնի թագաւորի ձեռքը, և նա նորանց գերի պիտի տանի Բաբիլոն, և նորանց պիտի զարկէ սրով։ 5
Եւ այս քաղաքի ամեն մթերքը և նորա բոլոր վաստակը և նորա բոլոր պատուական բաները, և Յուդայի թագաւորների բոլոր գանձերը պիտի տամ իրանց թշնամիների ձեռքը, և նորանք պիտի կողոպտեն նորանց, և նորանց առնեն և տանեն Բաբիլոն։ Իսկ դու, 6
ով Փաշուր, և քո տան բոլոր բնակիչները, գերի պիտի գնաք. և Բաբիլոն պիտի գնաս և այնտեղ մեռնես և այնտեղ թաղուիս դու և քո բոլոր բարեկամները, որոնց դու սուտ մարգարէութիւն էիր անում։

Դու ինձ համոզեցիր, ով Տէր, 7
և ես համոզուեցայ, դու ինձանից զօրաւոր եղար և յաղթեցիր. ես ծաղր եմ դառել ամեն օր, ամենքը ծիծաղում են իմ վերայ։ Որովհետև քանի անգամ 8
որ խօսեմ՝ պիտի աղաղակեմ, պիտի բողոքեմ բռնութիւն և ղրկանք. որովհետև Տիրոջ խօսքն ինձ համար ամեն օր նախատինք ու անարգանք է դառել։ Եւ ես 9
ասեցի. Նորան չյիշեմ, և չխօսեմ այլ ևս նորա անունովը. այն ժամանակ սրտիս մէջ վառուած կրակի պէս դարձաւ՝ ոսկորներումս պահուած, և ես յոգնեցի կրելուցը, և չկարողացայ։ Որովհետև ես շատերի պարսաւանքը լսեցի. վախ է շուրջանակի։ Ամբաստանեցէք և մենք էլ ենք ամբաստանելու նորա մասին, ասում են նորանք. իմ բոլոր բարեկամները նայում են իմ սայթելուն. Գուցէ կ'խաբուի, այն ժամանակ 10

*Այսինքն՝ Վախ շուրջանակի

մենք նորան կ'յաղթենք, և մեր
11 վրէժը կ'առնենք նորանից։ Բայց Տէրը ինձ հետ է զօրաւոր սխրագործի պէս, դորա համար իմ հալածողները պիտի գլորուին և պիտի չյաղթեն, նորանք որովհետև խելք չունին, պէտք է շատ ամաչեն, մի յաւիտենական անարգանքով, որ պիտի չմոռացուի։
12 Բայց ով Զօրաց Տէր, որ դու քննում ես արդարին, որ տեսնում ես երիկամունքը և սիրտը, թող տեսնեմ քո վրէժխնդրութիւնը նորանցից, որովհետև իմ
13 դատը քեզ յայտնել եմ։ Երգեցէք Տիրոջը, օրհնեցէք Տիրոջը, որ նա փրկեց աղքատի հոգին չարագործների ձեռքից։
14 Անիծեալ լինի իմ ծնուած օրը, այն օրը, որ իմ մայրը ծնեց
15 ինձ, օրհնեալ չլինի։ Անիծեալ լինի այն մարդը, որ աւետիք տուաւ իմ հօրն ասելով. Քեզ մի արու զաւակ է ծնուել, որ նորան ուրախութիւնով ուրախա-
16 ցրեց։ Եւ այն մարդը այն քաղաքների նման լինի, որոնց կործանեց Տէրը և չխնայեց, և նա աղաղակ լսէ առաւօտը և գոռում կէս օրուայ ժամանակին,
17 Որ ինձ չսպանեց արգանդիցը, որ ինձ համար իմ գերեզմանը իմ մայրը լիներ, և նորա արգանդը յղի մնար յաւիտեան։
18 Ինչու համար ես դուրս եկայ արգանդից, որ աշխատութիւն և ցաւ տեսնեմ, և իմ օրերը վերջանան ամօթով։

Գլ. ԻԱ

1 Այն խօսքը որ եղաւ Տիրոջ կողմանէ Երեմիային, երբոր Սեդեկիա թագաւորը նորա մօտ ուղարկեց Մելքիայի որդի Փաշուրին և Մաասիայի որդի Սոփոնիա
2 քահանային ասելով. Մեկ հարցրու մեզ համար Տիրոջը, որովհետև Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը պատերազմում է մեզ դէմ. գուցէ Տէրը մեզ հետ անէ իր ամեն սքանչելիքների համեմատ. և նա դէն գնայ մեզանից։
3 Եւ Երեմիան ասեց նորանց.
4 Այսպէս ասեցէք Սեդեկիային.
Այսպէս է ասում Տէրը Իսրայէլի Աստուածը. Ահա ես շուռ պիտի տամ այն պատերազմական գործիքները, որ ձեր ձեռքին են և որոնցով դուք պատերազմում էք Բաբիլոնի թագաւորի և Քաղդեացիների հետ, որ ձեզ պաշարել են պարսպի դրսից, և պիտի ժողովեմ նորանց այս քաղա-
5 քի մէջ։ Եւ ես պիտի պատերազմեմ ձեզ հետ երկարացրած ձեռքով և զօրաւոր բազուկով և բարկութիւնով և սրտմտութիւնով և մեծ ցասումով։ Եւ
6 ես պիտի զարկեմ այս քաղաքի բնակիչներին, մարդն էլ անասունն էլ. մեծ ժանտախտով պիտի մեռնեն նորանք։
7 Եւ նորանից յետոյ պիտի տամ՝ Յուդայի թագաւոր Սեդեկիային և նորա ծառաներին և ժողովուրդին ու այս քաղաքի մէջ ժանտախտից, սուրից և սովից մնացածներին Բաբիլոնի թագաւոր Նաբուգոդոնոսորի ձեռքը և իրանց թշնամիների ձեռքը և իրանց հոգիների պահանջողների ձեռքը. և նա պիտի զարկէ նորանց սրի բերանով. նորանց պիտի չխնայէ, և չգթայ և չողորմի։
8 Եւ դու այս ժողովրդին ասիր. Այսպէս է ասում Տէրը. Ահա ես դնում եմ ձեր առաջին կեանց ճանապարհը և մահուան ճանապարհը։
9 Այս քաղաքում մնացողը պիտի մեռնի սրով և սովով և ժանտախտով. բայց դուրս եկող՝ քաղդէացիների կողմն անցնողը, որոնք ձեզ պաշարել են, պիտի ապրի, և նորա անձն իր
10 համար աւար պիտի լինի։ Որովհետև ես իմ երեսը հաստատել եմ դէպի այս քաղաքը չարիքի համար և ոչ թէ բարիքի համար, ասում է Տէրը. նա պիտի Բաբիլոնի թագաւորի ձեռքը տրուի, և նա էլ պիտի կրակով այրէ նորան։
11 Եւ Յուդայի թագաւորի տանն
12 ասիր. Լսեցէք Տիրոջ խօսքը. Ով Դաւթի տուն. այսպէս է ասում

Տէրը. Առաւօտները դատաստան
արէք, և զրկեալին ազատեցէք
հարստահարողի ձեռքից, որպէս
զի ձեր գործերի չարութեան
պատճառով իմ բարկութիւնը
դուրս չ'գայ կրակի պէս և այրէ,
13 և հանգցնող չ'լինի։ Ահա ես
ձեզ դէմ եմ, ով հովտի՝ դաշ-
տի՝ վէմի բնակիչ, ասում է Տէ-
րը, որ ասում էիք, Ո՞վ է վայր
իջնելու մեզ վերայ, և ո՞վ է
14 գալու մեր բնակարանները։ Բայց
ես պիտի այցելեմ ձեզ ձեր գոր-
ծերի պտուղին համեմատ, ա-
սում է Տէրը, և կրակ պիտի վա-
ռեմ նորա անտառումը, որ սպա-
ռէ նորա բոլոր շրջակայքը։

ԳԼ. ԻԲ

1 Այսպէս է ասում Տէրը. Իջիր
Յուդայի թագաւորի տունը, և
2 ասիր այնտեղ այս խօսքը. Եւ
ասիր. Լսիր Տիրոջ խօսքը, ով
Յուդայի թագաւոր, որ նստել
ես Դաւիթի աթոռի վերայ, դու
և քո ծառաները և քո ժողո-
վուրդը, որ եկել էք այս դռնե-
3 րը, Այսպէս է ասում Տէրը. Ի-
րաւունք և արդարութիւն ա-
րէք, և զրկեալին ազատեցէք
հարստահարողի ձեռքիցը, մի
ճնշէք, մի բռնանաք օտարակա-
նին, որբին և որբևայրիին, և ան-
մեղ արիւն մի թափէք այս տե-
4 ղումը։ Որովհետև եթէ իրաւ ա-
նէք այս բանը, այն ժամանակ կը
մտնեն այս տան դռներովը Դա-
ւիթի աթոռի վերայ նստող թա-
գաւորներ՝ կառքի և ձիերի վե-
րայ հեծած՝ իրանք և իրանց ծա-
ռաներն ու իրանց ժողովուրդը։
5 Իսկ եթէ չ'լսէք այս խօսքերը,
ինձանով երդում եմ անում ես,
ասում է Տէրը, որ այս տունը ա-
6 ւերակ պիտի դառնայ։ Որովհե-
տև այսպէս է ասում Տէրը Յու-
դայի թագաւորի տան մասին.
Դու ինձ համար Գաղաադն ես՝
Լիբանանի գագաթն ես, բայց
անշուշտ քեզ անապատ պիտի
շինեմ, այնպիսի քաղաքներ, որ
7 բնակուած չեն։ Եւ քեզ դէմ
կործանողներ եմ որոշելու, ամեն
մէկն իր զէնքերովը. և նորանք
պիտի կտրեն քո ընտիր եղևին-
ները և պիտի գցեն կրակի մէջը։
Եւ շատ ազգեր պիտի անցնեն 8
այս քաղաքովը և ասեն ամեն
մէկն իր ընկերին. Ի՞նչու համար
Տէրն այսպէս արաւ այս մեծ քա-
ղաքին։ Եւ նորանք պիտի ասեն. 9
Որովհետև թողեցին իրանց Տէր
Աստուծոյ ուխտը և երկրպագու-
թիւն արին ուրիշ աստուածների
և նորանց պաշտեցին։
Լաց մի լինիք մեռնողի համար 10
և նորա մասին մի ողբաք, այլ
լաց եղէք գնացողի համար, որով-
հետև այլ ևս ետ պիտի չ'դառ-
նայ, որ տեսնէ իր ծննդեան եր-
կիրը։ Որովհետև այսպէս է ա- 11
սում Տէրը Յուդայի թագաւոր
Յովսիայի որդի Սեղղումի մասին,
որ թագաւորեց իր հօր Յովսիայի
տեղը, որ դուրս եկաւ այս տե-
ղիցը. այլ ևս ետ պիտի չ'դառ-
նայ այստեղ։ Որովհետև այնտեղ, 12
ուր որ նորան գերի էին տարել,
պիտի մեռնի, և այլ ևս պիտի չը
տեսնէ այս երկիրը։
Վա՛յ նորան, որ իր տունը ան- 13
արդարութիւնով է շինում, և
իր վերնատները՝ անիրաւութիւ-
նով, որ ձրի բանեցնում է իր
դրացիին, և նորա վարձքը չէ տա-
լիս նորան, Որ ասում է. Ես ինձ 14
համար ընդարձակ տուն և հովա-
սուն վերնատներ շինեմ, և իր
համար պատուհաններ է բաց ա-
նում և ծածկում եղևնափայ-
տով, և ներկում կարմրադոյնով։
Մի՞թէ կ'թագաւորես, որ տա- 15
քացել ես եղևնափայտի համար.
չէ՞ որ քո հայրը կերաւ և խմեց,
և իրաւունք ու արդարութիւն
արաւ. այն ժամանակ լաւ եղաւ
նորա համար։ Նա տեսաւ աղքա- 16
տի և տնանկի դատը, և լաւ էր.
մի՞թէ սա չէ ինձ ճանաչելը, ա-
սում է Տէրը։ Բայց քո աչքերն 17
ու քո սիրտն ուրիշ բանի վերայ
չէ բայց միայն քո շահասիրու-
թեան վերայ, և անմեղ արիւն
թափելու և անիրաւութեան ու
զրկողութեան վերայ, որ անես։

18 Սորա համար այսպէս է ասում
Տէրը Յուդայի թագաւոր Յով-
սիայի որդի Յովակիմի մասին.
Նորա վերայ պիտի չ'ողբան ասե-
լով՝ Վա՛յ եղբայր, վա՛յ քոյր. Նո-
րա վերայ պիտի չ'ողբան ասելով՝
Վա՛յ տէր, վա՛յ նորա փառքը։
19 Էշի թաղումով պիտի թաղուի
նա, քաշ տալով ու Երուսաղէմի
դռներիցը դուրս դէն գցելով։
20 Վեր ելիր Լիբանանը ու կան-
չիր, և Բասանի վերայ ձայնդ
բարձրացրու, և աղաղակիր Աբա-
րիմիցը. որովհետև քո բոլոր հո-
21 մանիները փշրուեցան։ Ես ասե-
ցի քեզ քո յաջողութիւնումը.
Բայց դու ասեցիր՝ Չեմ լսում.
սա է քո ճանապարհը քո ման-
կութիւնից, որ իմ խօսքը չ'լսես։
22 Քո բոլոր հովիւներին քամին է
քշելու, և քո հոմանիները գերի
պիտի գնան. իրաւ այն ժամա-
նակ պիտի ամաչես, և պիտի
պատկառես քո բոլոր չարու-
23 թիւններից։ Ով Լիբանանումը
բնակող և եղևիններում բոյն
դնող, ի՛նչ ողորմելի պիտի լի-
նես դու, երբոր քեզ վերայ կը
դան ծննդեան ցաւերը՝ մի ծնն-
24 դականի նման։ Կենդանի եմ ես,
ասում է Տէրը, որ եթէ Յուդայի
թագաւորի Յովակիմի որդի *Յե-
քոնիան մատանիի կնիք լինի իմ
աջ ձեռքումը, որ այնտեղից էլ
25 քեզ պիտի պոկեմ. Եւ քեզ պիտի
տամ քո հոգին պահանջողների
ձեռքը և նորանց ձեռքը, որոնց
երեսիցը դու վախենում ես. և
Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թա-
գաւորի ձեռքը և Քաղդէացինե-
26 րի ձեռքը։ Եւ ես դէն պիտի
գլորեմ գցեմ քեզ և քո ծնող
մօրն օտար երկիր, ուր որ չէք
ծնուել, որ այնտեղ մեռնէք։
27 Եւ այն երկիրը, ուր որ նորանց
անձը բաղձում է դառնալ, այն-
28 տեղ պիտի ետ չ'դառնան։ Մի՞-
թէ մի անարգուած փշրուած ա-
ման է այս Յեքոնիա մարդը, կամ
մի այնպիսի անօթ է, որ նորան
չ'հաւանեն. ի՞նչու համար գլոր-
ուեցան ինքը և իր սերունդը, և
քշուեցան իրանց չ'գիտեցած եր-
կիրը։ Ով երկիր, երկիր, երկիր, 29
լսիր Տիրոջ խօսքը։ Տէրն այսպէս 30
է ասում. Անզաւակ գրեցէք այս
մարդին, մի մարդ, որ յաջողու-
թիւն պիտի չ'տեսնէ իր օրերու-
մը, որովհետև չ'պիտի յաջողէ
նորա սերունդից մէկ մարդ, որ
նստի Դաւիթի աթոռի վերայ,
և էլի տիրէ Յուդայի վերայ։

ԳԼ. ԻԳ

Վայ այն հովիւներին, որ կոր- 1
ցնում և ցրւում են իմ արօտի
ոչխարներին, ասում է Տէրը։ Սո- 2
րա համար այսպէս է ասում Տէրն՝
Իսրայէլի Աստուածը, այն հովիւ-
ների մասին, որ հովւում են իմ
ժողովրդին. Դուք իմ ոչխարներին
ցրիւ տուիք և դուրս արիք և նո-
րանց վերայ տեսչութիւն չ'արիք.
ահա ես ձեզ այցելութիւն պի-
տի անեմ ձեր գործերի չարու-
թեան համար, ասում է Տէրը։
Եւ ես պիտի ժողովեմ իմ հօտի 3
մնացորդը այն ամեն երկիրներից,
ուր որ նորանց աքսորեցի, և նո-
րանց ետ պիտի դարձնեմ իրանց
փարախները. և նորանք պիտի ա-
ճեն և բազմանան։ Եւ նորանց 4
վերայ հովիւներ պիտի կանգնե-
ցնեմ, որ նորանց հովուեն, և նո-
րանք այլ ևս պիտի չ'վախենան և
չ'զարհուրեն, և պիտի չ'պակա-
սեն, ասում է Տէրը։ Ահա օրեր 5
են գալիս, ասում է Տէրը, որ Դա-
ւիթի համար վեր կ'կացնեմ ար-
դարութեան Շառաւիղ և ԻԲՐ
թագաւոր կ'թագաւորէ ու ի-
մաստութեամբ կ'վարուի, և ի-
րաւունք ու արդարութիւն կը
գործէ երկրի վերայ։ Նորա օրե- 6
րին կ'ազատուի Յուդան, և Իս-
րայէլը ապահով կ'բնակուէ. և
սա է նորա անունը, որով նա կը
կոչուի՝ ՏԷՐԸ՝ ՄԵՐ ԱՐԴԱՐՈՒ-
ԹԻՒՆԸ։ Սորա համար ահա օ- 7
րեր են գալիս, ասում է Տէրը,
որ այլ ևս չեն ասելու, թէ Կեն-
դանի է Տէրը, որ դուրս հանեց
Իսրայէլի որդկանցը Եգիպտոսի

*ԵԲՐ. Քոնիա

8 երկրիցը. Ամէն թէ՝ կենդանի է Տէրը, որ վեր հանեց և բերաւ
Իսրայէլի տան սերունդը հիւսիսի
երկրիցը և այն բոլոր երկիրներից, որ ես նորանց քշել էի,
և նորանք պիտի բնակուին իրանց
9 հողի վերայ։ Մարգարէների համար սիրտս կոտրուում է ներսումս, երերում են բոլոր ոսկորներս. ես եղել եմ մի արբած
մարդի պէս, և մի դիւնէհար մարդի նման, Տիրոջ երեսիցը և նո-
10 րա սուրբ խօսքերի երեսիցը։ Որովհետև շնացողներով լցուել է երկիրը, որ անէծքի պատճառով երկիրը սուգ է բռնել, չորացել են անապատի արօտները, և նորանց ընթացքը չար է, և նորանց
11 ոյժը ուղիղ չէ։ Որովհետև թէ մարգարէն թէ քահանան եղծուած են, իմ տանն անգամ գտել եմ նորանց չարութիւնը,
12 ասում է Տէրը։ Սորա համար նորանց ճանապարհն իրանց համար խաւարի մէջ աւելկատ տեղերի պէս պիտի լինի. նորանք պէտք է հրուին, և նորանում վայր ընկնեն, որովհետև ես նորանց վերայ չարիք եմ բերելու նորանց այցելութեան տարին, ասում է
13 Տէրը։ Եւ Սամարիայի մարգարէներում յիմարութիւն տեսայ, Բահաղով մարգարէացան և մոլորցրին իմ ժողովրդին։
14 Եւ Երուսաղէմի մարգարէներում սոսկալի բան տեսայ՝ շնանալ և սուտ քայել, որ չարագործների ձեռքերը զօրացնեն, որ ես չդառնամ ամեն մէկին իր չարութիւնից. նորանց ամենը ինձ համար Սոդոմի պէս են, և նորա բնակիչները՝ Գոմորի պէս։
15 Սորա համար այսպէս է ասում Զօրաց Տէրը մարգարէների մասին. Ահա ես նորանց օշինդր պիտի ուտեցնեմ, և նորանց լեղի
ջուր պիտի խմեցնեմ, որովհետև Երուսաղէմի մարգարէներից ապականութիւն գնաց բոլոր երկրի մէջ։
16 Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Մի լսէք ձեզ համար մարգարէացող մարգարէների խօսքերին. նորանք ձեզ խաբում են,
նորանք իրանց սրտի տեսիլքն են խօսում, և ոչ թէ Տիրոջ բերանից։ Նորանք ասում ու ասում 17
են ինձ անարգողներին. Տէրը խօսեց, խաղաղութիւն է լինելու ձեզ համար. և ամեն իր սրտի կամակորութեամբ վարուողներին ասում են. Ձեզ վերայ չարիք չի գալու։ Որովհետև ո՞վ է կանգնել Տիրոջ խորհուրդում, և տե- 18
սել ու լսել նորա խօսքը. ո՞վ է ականջ դրել նորա խօսքին ու լսել։ Ահա Տիրոջ մրրիկը բոր- 19
բոքուած դուրս եկաւ, և պտոյտ եկող թաթաւոր պտուտուելու է չարների գլխին։ Տիրոջ բարկու- 20
թիւնը էս չի դառնալու, մինչև որ անէ և մինչև որ կատարէ իր սրտի խորհուրդները. յետի օրերում պիտի պարզ հասկանաք այդ։ Ես այդ մարգարէներին չեմ 21
ուղարկել, բայց իրանք վազ են տալիս, և ես նորանց հետ չեմ խօսել, բայց իրանք մարգարէացնում են։ Եւ եթէ կանգնած լի- 22
նէին իմ խորհրդում, այն ժամանակ լսել կ'տային իմ խօսքերը իմ ժողովրդին, և նորանց ետ կ'դարձնէին իրանց չար ճանապարհներից, և իրանց չար գործերից։
Մի՞թէ ես մօտիկից եմ Աստուած, ասում է Տէրը. և հե- 23
ռուից Աստուած չէ՞մ։ կամ մի մարդ կարո՞ղ է ծածկուիլ ծածուկ տեղեր, որ ես նորան չ'տեսնեմ, ասում է Տէրը. չէ՞ որ եր- 24
կինքն ու երկիրը լցնողը ես եմ, ասում է Տէրը։ Ես լսել եմ ինչ 25
որ ասում են իմ անունով սուտ մարգարէացող մարգարէքը, ասելով. երազ եմ տեսել, երազ եմ տեսել։ Մինչև ե՞րբ է լինե- 26
լու այս սուտ մարգարէացող մարգարէների սրտում, որ մարգարէանում են իրանց սրտի խաբեութիւնը. Որոնք մտածում են 27
որ իմ ժողովրդին մոռացնել տան իմ անունը, այն երազներով որ իրար պատմում են, ինչպէս որ իրանց հայրերը մոռացան իմ ա-

28 նունը Բահաղի պատճառով։ Այն մարգարէն, որի մօտ երազ կայ, թող երազ պատմէ, և որի մօտ իմ խօսքը կայ, թող իմ խօսքը խօսէ ճշմարտութեամբ. յարդը ինչ բան ունի ցորենի հետ, ա-
29 սում է Տէրը։ Այդ իմ խօսքը կրակի նման է, ասում է Տէրը, և մուրճի պէս որ կոտրատում է
30 ապառաժը։ Սորա համար ահա ես այն մարգարէների դէմ եմ, ասում է Տէրը, որոնք իմ խօս-
31 քերն իրարից գողանում են։ Ահա ես այն մարգարէների դէմ եմ՝ ասում է Տէրը, որ վեր են առնում իրանց լեզուն և պատ-
32 գամ հրատարակում։ Ահա ես այն սուտ երազներ մարգարէացողների դէմ եմ, ասում է Տէրը, որ պատմում են նորանց և մոլորեցնում իմ ժողովրդին իրանց ստութիւններովն ու իրանց անապարհութիւնովը, և ես նորանց չեմ ուղարկել և նորանց չեմ պատուիրել, և մի շահ և օգուտ չ'ունենն այս ժողովրդի համար, ասում է Տէրը։
33 Եւ երբոր քեզ հարցնէ այս ժողովուրդը կամ մարգարէն կամ քահանան՝ ասելով թէ ինչ է Տիրոջ *բեռը, այն ժամանակ դու ասիր նորանց. Ո՞ր բեռը, և ես
34 ձեզ պիտի դէն գցեմ, ասում է Տէրը։ Եւ Տիրոջ բեռն ասող մարգարէին և քահանային ու ժողովրդին՝ ես այնպիսի մարդին ու նորա տանը պիտի այցելեմ,
35 Այսպէս ասեցէք՝ ամեն մարդ իր ընկերին և ամեն մարդ իր եղբօրը. Տէրն ինչ է պատասխանել,
36 և Տէրն ինչ է ասել. Եւ այլևս մի յիշէք Տիրոջ բեռը. որովհետև բեռն է դառնալու ամեն մարդի համար իր խօսքը, և դուք փոխել էք կենդանի Աստուծոյ խօսքը, որ Զօրաց Տէրն է մեր
37 Աստուածը։ Այսպէս ասիր մարգարէին՝ Տէրը քեզ ինչ է պատասխանել, և Տէրն ինչ է ասել։
38 Բայց եթէ Տիրոջ բեռը ասէք, ուրեմն այսպէս է ասում Տէրը,

*Այսինքն՝ պատգամը։

որովհետև դուք ասում էք այդ «Տիրոջ բեռը» խօսքը, թէև ե՜ր- 39
ուզարկեցի ձեզ մօտ ասելով՝ Մի ասէք Տիրոջ բեռը. Դորա համար ահա ես ձեզ բոլորովին պիտի մոռանամ, և ձեզ պիտի
ձգեմ իմ երեսի առաջից, և այն քաղաքը, որ տուել եմ ձեզ և ձեր հայրերին։ Եւ ձեզ վերայ 40
պիտի դնեմ յաւիտենական անարգանք և յաւիտենական նախատինք, որ չի մոռացուիլ։

ԳԼ. ԻԴ

Տէրը ինձ ցոյց տուաւ, և ահա 1
երկու կողով թուզ դրուած Տիրոջ տաճարի առաջին, նորանից
յետոյ որ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը գերի էր արել
Յուդայի թագաւոր Յովակիմի որդի Յեքոնիային և Յուդայի իշխաններին և հիւսերին ու դարբիններին Երուսաղէմից և նորանց
Բաբիլոն տարել։ Մէկ կողովը 2
շատ լաւ թուզեր էին կանխահաս թուզերի պէս, և միւս կողովը շատ վատ թուզեր, որ վատութիւնից չէին ուտուիլ։ Եւ 3
Տէրն ասց ինձ. Դաւ ինչ ես տեսնում, Երեմիա. և ես ասեցի. Թուզեր. լաւ թուզերը շատ լաւ են, իսկ վատերը՝ շատ վատ,
որ վատութիւնից չեն ուտուիլ։
Եւ Տիրոջ խօսքն եղաւ ինձ ա- 4
սելով. Այսպէս է ասում Տէրը՝ 5
Իսրայէլի Աստուածը. Ինչպէս այս լաւ թուզերին պէս պիտի մտիկ տամ Յուդայի գերեվարեալներին, որոնց ես այստեղից ուղարկեցի Քաղդէացիների երկիրը՝ ի
բարին, և իմ աչքերը պիտի 6
ուղղեմ նորանց վերայ ի բարին, և նորանց ետ պիտի դարձնեմ այս երկիրը. և նորանց պիտի շինեմ և պիտի չքանդեմ, և նորանց պիտի տնկեմ և չ'խլեմ։
Եւ նորանց մի սիրտ պիտի տամ 7
ինձ ճանաչելու, որ ես եմ Տէրը, և նորանք իմ ժողովուրդը պիտի լինեն, իսկ ես կ'լինեմ նորանց Աստուած. որովհետև իրանց բոլոր սրտովը դէպի ինձ

8 պիտի դառնան։ Իսկ այն վատ
թուզերի մասին, որոնք վատու-
թիւնից չեն ուտուիլ, այսպէս է
ասում Տէրը. Այնպէս պէտք է
անեմ Յուդայի թագաւոր Սե-
դեկիային և նորա իշխաններին և
Երուսաղէմի մնացորդին, որ մնա-
ցել են այս երկրումը, և Եգիպ-
9 տոսի երկրումը բնակողներին։ Եւ
նորանց պիտի տամ տանջանքի և
չարչարանքի՝ երկրի բոլոր թա-
գաւորութիւններին նախատինք
ու առակ ու անարգանք և ա-
նէծք լինելու համար այն բոլոր
տեղերումն ուր որ ես նորանց
10 պիտի քշեմ։ Եւ ես նորանց մէջ
կ'ուղարկեմ սուրը, սովը և ժան-
տախտը մինչև որ նորանց վեր-
ջացնեմ հողի երեսիցը, որ տուել
եմ նորանց և նորանց հայրերին։

ԳԼ. ԻԵ

1 Այն խօսքը որ եղաւ Երեմիային
բոլոր Յուդայի մասին Յուդայի
թագաւոր Յովսիայի որդի Յովա-
կիմի չորրորդ տարին, որ Բաբի-
լոնի Նաբուգոդոնոսոր թագաւո-
2 րի առաջին տարին էր, Որ ասեց
Երեմիա մարգարէն բոլոր Յու-
դայի ժողովրդին և Երուսաղէմի
բոլոր բնակիչներին ասելով.
3 Յուդայի թագաւոր Ամմոնի որ-
դի Յովսիայի տասնևերեքերորդ
տարիից [illegible] մինչև այս օրը ա-
հա քսանևերեք տարի է, որ Տի-
րոջ խօսքը լինում է ինձ, և ես
խօսում եմ ձեզ հետ կանուխ
վեր կենալով և խօսելով, բայց
4 դուք չ'լսեցիք. Եւ Տէրն ուղար-
կեց ձեզ մօտ իր բոլոր ծառա-
ներին՝ մարգարէներին կանուխ
վեր կենալով և ուղարկելով,
բայց դուք չ'լսեցիք, և ձեր ա-
5 կանջը լսելու չ'տուիք, Որոնք ա-
սում էին. Մէկ ետ դարձէք ա-
մէն մէկդ իր չար ճանապարհիցը
և ձեր չար գործերիցը, և դուք
կ'բնակուէք այն երկրումը, որ
Տէրը տուաւ ձեզ և ձեր հայ-
րերին՝ յաւիտենից մինչև յա-
6 ւիտեանս։ Մի գնաք ուրիշ աստ-
ուածների ետևից նորանց ծառա-
յելու և նորանց երկրպագելու
համար, և ինձ մի բարկացնէք
ձեր ձեռքի գործերովը. և ես ձեզ
չարիք չեմ անիլ։ Բայց դուք ինձ 7
չ'լսեցիք, ասում է Տէրը, որ ինձ
բարկացնէիք ձեր ձեռքի գործո-
վը, ձեզ համար 'ի վնաս։
Վասն որոյ այսպէս է ասում 8
Զօրաց Տէրը, Որովհետև դուք
չ'լսեցիք իմ խօսքերը, Ահա ես 9
կ'ուղարկեմ և կ'առնեմ հիւսի-
սի բոլոր ազգատոհմերը, ասում
է Տէրը, և իմ ծառայ Բաբիլոնի
Նաբուգոդոնոսոր թագաւորի
հետ [illegible], և ես նորանց կ'բե-
րեմ այս երկրի վերայ և նորա
բնակիչների վերայ, և այս բոլոր
ազգերի վերայ շուրջանակի, և
նորանց նզովածի պէս բնաջինջ
կ'անեմ և նորանց կ'շինեմ հիաց-
ման և նախատինքի [illegible] և
յաւիտենական աւերակներ։ Եւ 10
կ'կորցնեմ նորանց միջից ցնծու-
թեան ձայնը և ուրախութեան
ձայնը, փեսայի ձայնը և հարսի
ձայնը, երկանքի ձայնը և ճրագի
լոյսը։ Եւ այս բոլոր երկիրը ա- 11
նապատ և աւերակ կ'դառնայ,
և այս ազգերը պէտք է Բաբիլոնի
թագաւորին ծառայեն եօթանա-
սուն տարի։ Եւ երբոր եօթա- 12
նասուն տարին վերջացած կ'լինի,
ես կ'այցելեմ Բաբիլոնի թագա-
ւորին և այն ազգին, ասում է
Տէրը, նորանց անօրէնութեան
համար, և Քաղդէացիների երկ-
րին, և նորան յաւիտենական
աւերակներ կ'շինեմ։ Եւ կ'բե- 13
րեմ այն երկրի վերայ այն իմ
բոլոր խօսքերը, որ ասել եմ նո-
րա մասին, այս գրքի մէջ բոլոր
գրուածը, որ մարգարէացել է
Երեմիա մարգարէն բոլոր ազգե-
րի մասին։ Որովհետև նորանց 14
էլ պիտի ծառայեցնեն շատ ազ-
գեր և մեծ թագաւորներ, և ես
պիտի հատուցանեմ նորանց ի-
րանց արարքի համեմատ և իրանց
ձեռքի գործերին համեմատ։
Որովհետև այսպէս է ասում 15
ինձ Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
Առ այս բարկութեան գինիի բա-
ժակը իմ ձեռքից և խմեցրու

նորան բոլոր ազգերին, որոնց
մօտ ես քեզ ուղարկում եմ։
16 Որ խմեն և շշկլուեն և յիմարա-
նան այն սուրի պատճառով, որ
ես ուղարկում եմ նորանց մէջը։
17 Եւ ես առայ բաժակը Տիրոջ
ձեռքից և խմեցրի բոլոր ազգե-
րին, որոնց մօտ Տէրն ուղարկեց
18 ինձ. Երուսաղէմին և Յուդայի
քաղաքներին, և նորա թագա-
ւորին — նորա իշխաններին, որ
նորանց անապատ, ամայութիւն,
նախատինք ու անէծք անէ, ինչ-
19 պէս որ այսօր է. Եգիպտոսի
Փարաւօն թագաւորին, և նորա
ծառաներին, և նորա իշխաննե-
րին ու նորա բոլոր ժողովրդին.
20 Եւ բոլոր խառնիճաղանճ ժողո-
վրդին, և Հուս երկրի բոլոր
թագաւորներին, և Փղշտացինե-
րի երկրի բոլոր թագաւորներին,
այսինքն Ասկաղոնին, Գազային,
Ակկարոնին և Ազովտոսի մնա-
21 ցածներին. Եդովմին, Մովաբին
22 և Ամմոնի որդկանցը, Եւ Տիւ-
րոսի բոլոր թագաւորներին, և
Սիդոնի բոլոր թագաւորներին, և
ծովեզրեայ թագաւորներին, որ
23 ծովի այն կողմին են, Դեդանին
և Թեմային, և Բուզին, և բոլոր
[illegible]ների ծայրը կտրողներին,
24 Եւ Արաբացիների բոլոր թագա-
ւորներին, և խառնիճաղանճ ժո-
ղովուրդների բոլոր թագաւորնե-
րին, որ բնակվում են անապա-
25 տումը։ Եւ Զամբրիի բոլոր թա-
գաւորներին, և Եղամի բոլոր
թագաւորներին, և Մարաց բո-
26 լոր թագաւորներին. Եւ հիւսի-
սի բոլոր թագաւորներին՝ իրար
մօտիկներին և հեռուներին, և
աշխարհի բոլոր թագաւորու-
թիւններին, որ երկրի երեսին
են, և նորանցից յետոյ թող խմէ
27 Սիսակի թագաւորը։ Եւ ասիր
նորանց. Այսպէս է ասում Զօ-
րաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
Խմեցէք, ու արբեցէք և փսխե-
ցէք, և կործանուեցէք ու մի
կանգնէք այն սուրի առաջին, որ
ես ուղարկում եմ ձեր մէջը։
28 Եւ եթէ լինի, որ չ'ուզեն բա-
ժակն առնել քո ձեռքից խմե-
լու համար, այն ժամանակ դու
նորանց ասիր. Այսպէս է ասում
Զօրաց Տէրը. Անպատճառ պիտի
խմէք։ Որովհետև այն քաղաքի 29
վերայ, որի վերայ կոչուած է իմ
անունը, ես սկսել եմ չարիք բե-
րելու, մի՞թէ դուք անպատիժ կը
մնաք. անպատիժ չէք մնալ. որով-
հետև ես սուրը պիտի կանչեմ
երկրիս բոլոր բնակիչների վերայ,
ասում է Զօրաց Տէրը։
Եւ դու մարգարէացիր նորանց 30
մասին այս բոլոր խօսքերը և նո-
րանց ասիր. Տէրը բարձրիցը որո-
տալու է, և իր սուրբ բնակու-
թիւնիցը տալու է իր ձայնը. նա
իր բնակարանի վերայ որոտալու
է մեծաձայն, հնձան կոխողների
աղաղակին պէս պիտի կանչէ
երկրի բոլոր բնակիչների վերայ։
Աղաղակը հասնելու է մինչև երկ- 31
րի ծայրը, որովհետև Տէրը վէճ
ունի ազգերի հետ, նա դատ է
տեսնում ամեն մարմնի հետ.
նա ամբարիշտներին սուրի է մատ-
նելու, ասում է Տէրը։
Այսպէս է ասում Զօրաց Տէ- 32
րը. Ահա չարիք պիտի դուրս գայ
մէկ ազգից դէպի միւս ազգ, և
մեծ մրրիկ պիտի վեր կենայ երկ-
րի ծայրերիցը։ Եւ Տիրոջ սպան- 33
ուածներն այն օրը երկրի մէկ
ծայրից մինչև երկրի միւս ծայրը
կ'լինեն. նորանց համար սուգ
պիտի չ'լինի, և նորանք պիտի
չ'ժողովուին և չ'թաղուին. աղբ
պիտի դառնան նորանք երկրի ե-
րեսին։
Ողբացէք, ով հովիւներ, և ա- 34
ղաղակեցէք. և թաւալուեցէք,
ով հօտի ընտիրները. որովհետև
լրացել են ձեր մորթուելու և
ցիրուցան լինելու օրերը. և վայր
պիտի ընկնէք ինչպէս մի պատ-
ուական ամանն։ Եւ պիտի ան- 35
հետանայ ապաստանը հովիւնե-
րից, և փրկութիւնը՝ հօտի ընտ-
իրներիցը։ Հովիւների աղաղա- 36
կի ձայնը, և հօտի ընտիրների
ոռնալը [illegible] է. որ Տէրը աւե-
րակ է արել նորանց արօտները։
Եւ ամայացել են խաղաղութեան 37
բնակարանները, Տիրոջ սաստիկ

38 բարկութեան երեսիցը։ Նա թողեց իբրև մի առոյգ առիւծ իր բնակարանը, որովհետև նորանց երկիրը ամայի է դարձել աւերիչի բարկութեան երեսիցը, և նորա սաստիկ բարկութեան երեսիցը։

ԳԼ. ԻԶ

1 Յուդայի թագաւոր Յովսիայի որդի Յովակիմի թագաւորութեան սկզբումն այս խօսքն եղաւ Տիրոջ կողմանէ ասելով.
2 Տէրն այսպէս է ասում. Կանգնիր Տիրոջ տան գաւիթումը և ասիր երկրպագելու համար Տիրոջ տունը եկող Յուդայի բոլոր քաղաքներին այն ամեն խօսքերը, որ քեզ պատուիրել եմ նորանց ասելու, մի խօսք չ'պակասեցնես։
3 Գուցէ կ'լսեն և ետ կ'դառնան ամեն մէկն իր չար ճանապարհիցը, որ ես զղջամ այն չարիքի մասին, որ ես մտածել եմ նորանց անելու իրանց գործերի չա-
4 րութեան պատճառով։ Եւ ասիր նորանց, Այսպէս է ասում Տէրը. Եթէ ինձ չ'լսէք, որ իմ օրէնքումը վարուիք, որ ես դրել
5 եմ ձեր առաջին. Որ լսէք իմ ծառաների՝ մարգարէների խօսքերին, որոնց ես ուղարկում եմ ձեզ մօտ, որ ես կանուխ վեր կենալով ուղարկում էի, բայց
6 դուք չ'լսեցիք. Այն ժամանակ այս տունը Սելովի պէս պիտի անեմ, և այս քաղաքը անէծք պիտի շինեմ երկրի բոլոր ազգերի համար։
7 Եւ լսեցին քահանաներն ու մարգարէքը և բոլոր ժողովուրդը՝ Երեմիան այս խօսքերը Տիրոջ
8 տանը ասելիս։ Եւ եղաւ երբոր Երեմիան ասեց վերջացրեց ամեն ինչ որ Տէրը պատուիրել էր ասելու այն բոլոր ժողովրդին, այն ժամանակ բռնեցին նորան քահանաները և մարգարէքը և բոլոր ժողովուրդն ասելով՝ Դու ան-
9 պատճառ պէտք է մեռնես։ Ինչու համար մարգարէացար Տիրոջ անունով ասելով. Այս տունը Սելովի պէս պիտի դառնայ, և այս քաղաքը պիտի քանդուի և անբնակ դառնայ. և բոլոր ժողովուրդը ժողովուեցաւ Տիրոջ տունը Երեմիայի մօտ։
10 Եւ Յուդայի իշխանները լսեցին այս բաները և վեր գնացին թագաւորի տանիցը Տիրոջ տունը և նստեցին Տիրոջ տան նոր դռան
11 մուտքումը. Եւ քահանաները և մարգարէքը ասեցին իշխաններին և բոլոր ժողովրդին թէ Այս մարդը մահի արժանի է, որովհետև մարգարէացել է այս քաղաքի դէմ, ինչպէս որ լսեցիք ձեր ականջներովը։
12 Եւ Երեմիան ասեց բոլոր իշխաններին և բոլոր ժողովրդին. Տէրն ինձ ուղարկեց որ մարգարէանամ այս տան դէմ և այս քաղաքի դէմ այն բոլոր խօսքերը
13 որ լսել էք։ Եւ հիմա լաւացրէք ձեր ճանապարհները և ձեր գործերը, և լսեցէք ձեր Տէր Աստուծոյ ձայնը, և Տէրը կ'զղջայ այն չարիքի մասին, որ խօսել է ձեր
14 մասին։ Բայց ես ահա ձեր ձեռքին եմ, արէք ինձ ինչ որ հա-
15 ճոյ և ուղիղ է ձեր աչքին։ Միայն թէ լաւ իմացած լինէք, որ եթէ ինձ սպանելու լինէք, դուք անմեղ արիւն էք թափում ձեր վերայ և այս քաղաքի վերայ ու նորա բնակիչների վերայ. որովհետև ճշմարտապէս Տէրն է ինձ ուղարկել ձեզ մօտ, որ ասեմ ձեր ականջներին այս ամեն խօսքերը։
16 Եւ իշխանները և բոլոր ժողովուրդը ասեցին քահանաներին և մարգարէներին. Այս մարդը մահի արժանի չէ, որովհետև մեր Տէր Աստուծոյ անունովն է խօ-
17 սել մեզ դէմ։ Եւ երկրի ծերերից մարդիկ վեր կացան և ասեցին ժողովրդի բոլոր ժողովքին
18 թէ Մօրաստացի Միքիան մարգարէանում էր Յուդայի Եզեկիա թագաւորի օրերին. և նա ասեց Յուդայի բոլոր ժողովրդին թէ Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Սիօնը պիտի հերկուի իբրև ագարակ, և Երուսաղէմն աւերակների դէզեր պիտի դառնայ, և տաճարի սարը՝ անտառի բարձր տե-
19 ղերի պէս։ Մի՞թէ Յուդայի թագաւոր Եզեկիան և բոլոր Յուդան նորան իսկոյն մեռցրին. չէ՞ որ նա վախեցաւ Տէրից և աղօթք արաւ Տիրոջ առաջին. և Տէրը զղջաց այն չարիքի մասին, որ ասել էր նորանց դէմ. ուրեմն մենք մեծ չարութիւն արած կը լինենք մեր անձերի դէմ։
20 Եւ մի մարդ էլ կար, որ մարգարէանում էր Տիրոջ անունովը՝ Կարիաթարիմցի Սեմայիայի որդի Ուրիան. և նա մարգարէացաւ այս քաղաքի վերայ և այս երկրի վերայ Երեմիայի բոլոր խօսքերին
21 պէս։ Եւ երբոր լսեց Յովակիմ թագաւորը և բոլոր նորա քաջազունները և բոլոր իշխանները այն խօսքերը, այն ժամանակ թագաւորն ուզեց նորան սպանել. բայց երբոր Ուրիան լսեց՝ վախեցաւ և փախաւ ու գնաց Եգիպ-
22 տոս։ Եւ Յովակիմ թագաւորը Եգիպտոս մարդիկ ուղարկեց՝ Աքոբորի որդի Եղնաթանին և նորա հետ մի քանի մարդիկ ուղար-
23 կեց Եգիպտոս. Եւ նորանք հանեցին Ուրիային Եգիպտոսից և նորան բերին Յովակիմ թագաւորի մօտ, և նա նորան սպանեց սրով և նորա մարմինը գցեց ժողովրդի որդկանց գերեզմանները։
24 Բայց Սափանի որդիի Աքիկամի ձեռքը Երեմիայի հետ էր, որ նորան չ'մատնեն ժողովրդի ձեռքը նորան սպանելու համար։

ԳԼ. ԻԷ

1 Յուդայի թագաւոր Յովսիայի որդի *Սեդեկիայի թագաւորութեան սկզբումը այս խօսքն եղաւ Երեմիային Տիրոջ կողմանէ ասելով.
2 Այսպէս է ասում ինձ Տէրը. Քեզ համար կապեր և լուծեր շինիր, և նորանց դիր քո պա-
3 րանոցին։ Եւ նորանց ուղարկիր Եդովմի թագաւորին, Մովաբի թագաւորին և Ամմոնի որդկանց թագաւորին և Տիւրոսի թագաւորին և Սիդոնի թագաւորին այն դեսպանների ձեռով, որ եկել են Երուսաղէմ Յուդայի Սեդեկիա թագաւորի մօտ։ Եւ պատ-
4 ուիրիր նորանց, իրանց տէրերի մասին ասելով. Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Այսպէս ասեցէք ձեր
5 տէրերին. Ես եմ ստեղծել երկիրը և մարդը և անասունը, որ երկրի երեսին են, իմ մեծ ոյժովը և իմ մեկնած բազուկովը, և տալիս եմ այն նորան ով որ հա-
6 ճոյ է իմ աչքին։ Եւ հիմա ես տուել եմ այս բոլոր երկիրները իմ ծառայ՝ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորի ձեռքը, նաև դաշտի գազանները տուել եմ
7 նորան, որ նորան ծառայեն։ Եւ պիտի ծառայեն նորան բոլոր ազգերը, և նորա որդիին, և նորա որդու որդիին, մինչև որ գայ նորա երկրի էլ ժամանակը. և շատ ազգեր և մեծ թագաւորներ նո-
8 րան ծառայեցնեն։ Եւ պիտի լինի որ այն ազգը և այն թագաւորութիւնը որ նորան չ'ծառայէ, այսինքն Բաբիլոնի Նաբուգոդոնոսորին, և իր պարանոցը չ'դնէ Բաբիլոնի թագաւորի լուծի տակը, ես սովով, սրով և ժանտախտով պիտի այցելեմ այն ազգին, ասում է Տէրը, մինչև որ նորան սպառեցնեմ նորա ձեռովը։
9 Եւ դուք մի լսէք ձեր մարգարէներին, և ձեր հմայողներին, և ձեր երազատեսներին, և ձեր գուշակողներին և ձեր կախարդներին, որոնք ձեզ ասում են թէ Բաբիլոնի թագաւորին չէք ծա-
10 ռայելու։ Որովհետև նորանք ձեզ սուտ են մարգարէանում, որպէս զի ձեզ հեռացնեն ձեր երկրի վերայից, որ ես դուրս անեմ, և
11 դուք կորչէք։ Իսկ այն ազգը որ իր պարանոցը կ'դնէ Բաբիլոնի թագաւորի լծի տակին և նորան կ'ծառայէ, ես նորան հանգիստ պիտի թողեմ երկրի վերայ, ասում է Տէրը, և նա պիտի մշա-

*Ոմանք՝ Յովակիմի. բայց տես Հմր. 12, 19, 20։ Գլ. իը. 1։

կէ Նորան և Նորանուամ բնակուէ։
42 Եւ ես խօսեցի Յուդայի Թագաւոր Սեդեկիայի հետ այս բոլոր խօսքերի համեմատ ասելով. Դուք ձեր պարանոցները դրէք Բաբիլոնի Թագաւորի լծի տակին և ծառայեցէք Նորան և Նորա
43 ժողովրդին, և ողջ կ'մնաք։ Ինչու համար մեռնիք դուք և քո ժողովուրդը սովով, սովով և ժանտախտով, ինչպէս որ Տէրն ասել է այն ազգի մասին, որ չ'ծառայէ
44 Բաբիլոնի Թագաւորին։ Եւ մի լսէք այն մարգարէների խօսքերին, որ ձեզ ասում են թէ Դուք չէք ծառայելու Բաբիլոնի Թագաւորին, որովհետև Նորանք ձեզ սուտ են մարգարէանում։
45 Որովհետև ես Նորանց չեմ ուղարկել, ասում է Տէրը, և Նորանք սուտ են մարգարէանում իմ անունով, որպէս զի ես ձեզ դուրս անեմ և կորչէք դուք և ձեզ համար մարգարէացող մարգարէները։
46 Եւ ես խօսեցի քահանաների և այս բոլոր ժողովրդի հետ ասելով. Այսպէս է ասում Տէրը. Մի լսէք ձեր մարգարէների խօսքերին, որ մարգարէանում են ձեզ համար ասելով. Ահա Տիրոջ տան անօթները հիմա շուտով ետ են բերուելու Բաբիլոնից, որովհետև Նորանք ձեզ սուտ են
47 մարգարէանում։ Նորանց մի լսէք. ծառայեցէք Բաբիլոնի Թագաւորին, և պիտի ողջ մնաք. ինչու համար այս քաղաքը աւերակ
48 դառնայ։ Իսկ եթէ Նորանք մարգարէներ են, և եթէ Տիրոջ խօսքը կայ Նորանց մէջ, թող մէկ աղօթք անեն Զօրաց Տիրոջ, որ այն անօթները, որ մնացել են Տիրոջ տանը և Յուդայի Թագաւորի տանը և Երուսաղէմում,
49 Բաբիլոն չ'գնան։ Որովհետև այսպէս է ասում Զօրաց Տէրը, սիւներն, ծովի և մեքենովթների մասին և այն մնացած անօթների մասին, որ մնացել են այս քա-
20 ղաքում, Որոնց Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը չէ առել գերի տարել Յուդայի Թագաւոր Յովակիմի որդի Յեքոնիային Երուսաղէմից Բաբիլոն, և Յուդայի և Երուսաղէմի բոլոր ազնուականներին. Որովհետև այսպէս է ա- 21
սում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը այն անօթների մասին, որ մնացել են Տիրոջ տանը և Յուդայի Թագաւորի տանը և Երու- 22
սաղէմում. Նորանք Բաբիլոն պիտի տարուին և այնտեղ պիտի մնան մինչև Նորանց այցելելու օրը՝ ասում է Տէրը, և յետոյ Նորանց պիտի հանեմ ու ետ բերեմ այս տեղը։

Գլ. ԻՀ

Եւ եղաւ այն տարին Յուդայի Թագաւոր Սեդեկիայի Թագաւորութեան սկզբում, երրորդ տարուայ հինգերորդ ամսում Ազուրի որդի Անանիա մարգարէն, որ Գաբաւոնից է, Տիրոջ տանը քահանաների և բոլոր ժողովրդի աչքի առաջին ասեց ինձ. Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը թէ ես կոտրեցի Բաբիլոնի Թագաւորի լուծը. Մինչև երկու տարին ես ետ եմ բերելու այս տեղը Տիրոջ տան բոլոր անօթները, որոնք Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը վեր է առել այստեղից և Նորանց տարել Բաբիլոն։ Եւ Յուդայի Թագաւոր Յովակիմի որդի Յեքոնիային էլ և Յուդայի բոլոր գերիներին, որ գնացել են Բաբիլոն, ես ետ եմ դարձնելու այս տեղը, ասում է Տէրը. որովհետև ես կոտրելու եմ Բաբիլոնի Թագաւորի լուծը։
Եւ Երեմիա մարգարէն ասեց Անանիա մարգարէին քահանաների առաջին և բոլոր ժողովրդի առաջին որ կանգնած էին Տիրոջ տանը, Եւ Երեմիա մարգարէն ասեց Ամէն. այդպէս անե Տէրը, Տէրը հաստատե քո խօսքերը, որ մարգարէացար Տիրոջ տան անօթները և բոլոր գերիներին Բաբիլոնից այստեղը ետ դարձնելու համար։ Բայց մէկ լսիր այս խօսքը,

որ ես եմ խօսում քո ականջների և բոլոր ժողովրդի ականջների
8 առաջին. Այն մարգարէները, որոնք վաղուց կային ինձանից և քեզանից առաջ, մարգարէանում էին շատ երկիրների և մեծ թագաւորութիւնների դէմ պատերազմ և չարիք, և ժանտախտ։
9 Այն մարգարէն, որ խաղաղութիւն է մարգարէանում, երբոր այն մարգարէի խօսքը կատարուի, այն ժամանակ ճանաչուում է այն մարգարէն, թէ ճշմարտապէս Տէրն է ուղարկել Նորան։
10 Եւ Անանիա մարգարէն վեր առաւ լուծը Երեմիա մարգարէի պարանոցիցը և կոտրեց Նորան։
11 Եւ Անանիան ասեց բոլոր ժողովրդի աչքի առաջին թէ Այսպէս է ասում Տէրը. Ես մինչև երկու տարի որպա նման կոտրելու եմ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորի լուծը բոլոր ազգերի պարանոցի վերայից. և Երեմիա մարգարէն գնաց իր ճանապարհը։
12 Եւ Տիրոջ խօսքն եղաւ Երեմիային, Անանիա մարգարէն լուծը Երեմիա մարգարէի պարանոցի վերայից կոտրելուց յետոյ
13 ասելով. Գնա և ասիր Անանիային թէ Այսպէս է ասում Տէրը. Դու կոտրեցիր փայտի լուծերը, բայց Նորանց տեղը պիտի
14 երկաթի լուծեր շինես. Որովհետև այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Ես երկաթի լուծ եմ դնում այս բոլոր ազգերի պարանոցին Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորին ծառայելու համար, և Նորանք պիտի ծառայեն Նորան, և դաշտի գազանները էլ եմ տուել Նորան։
15 Եւ Երեմիա մարգարէն ասեց Անանիա մարգարէին. Լսիր, Անանիա, Տէրը քեզ չէ ուղարկել, և դու սուտի յուսացրիր այս
16 ժողովրդին։ Դորա համար այսպէս է ասում Տէրը. Ահա ես քեզ դուրս պիտի դցեմ երկրի երեսիցը. այս տարի պիտի մեռնես, որ ապստամբութիւն խո-
սեցիր Տիրոջ դէմ։ Եւ Անանիա 17
մարգարէն մեռաւ այն տարին՝ եօթներորդ ամսում։

Գլ. ԻԹ

Եւ սորանք են այն նամակի խօս- 1
քերը, որ Երեմիա մարգարէն ե-
րուսաղէմից ուղարկեց մնացած ծերերին և քահանաներին և մարգարէներին և բոլոր ժողովրդին, որոնց Նաբուգոդոնոսորը երուսաղէմից գերի 2
էր տարել Բաբիլոն, Յեքոնիա Թագաւորը և Թագուհին և պալատականները և Յուդայի ու երուսաղէմի իշխանները և հիւսներն ու գաղբիններն երուսաղէմից դուրս գալուց յետոյ, Ա- 3
փանի որդի Եղեասայի և Քեզկիայի որդի Գամարիայի ձեռովը, որոնց Յուդայի Թագաւոր Սեդեկիան Բաբիլոն ուղարկեց Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորի մօտ, ասելով.
Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ 4
Իսրայէլի Աստուածը բոլոր գերիներիդ, որոնց ես գերի տանել տուի երուսաղէմից Բաբիլոն. Տներ շինեցէք և բնակուեցէք, և 5
այգիներ անկեցէք և կերէք նրանց պտուղը. Կանայք առէք և 6
տղերք ու աղջկերք ծնեցէք, և ձեր տղերանց համար կանայք առէք, և ձեր աղջկերքը մարդի տուէք, որ նորանք տղերք և աղջկերք ծնեն, և շատացէք այդտեղ, և մի քիչանաք։ Եւ այն 7
քաղաքի խաղաղութիւնն ուղեցէք, ուր որ ես ձեզ գերի եմ տանել տուել և աղօթք արէք Նորա համար Տիրոջը, որ Նորա խաղաղութիւնովը ձեզ խաղաղութիւն կ'լինի։ Որովհետև այս- 8
պէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Թող ձեզ չը խաբեն ձեր մարգարէները, որ ձեր միջումն են և ձեր հմայողները, և մի լսէք ձեր երազատեսներին, որոնց երազել էք տալիս ձեզ համար։ Որովհետև Նորանք 9
սուտ են մարգարէանում ձեզ համար իմ անունովը, ես Նորանց

չեմ ուզարկել, ասում է Տէրը։
Որովհետև այսպէս է ասում
Տէրը. Որովհետև հէնց որ լրա-
ցաւ եօթանասուն տարին Բաբի-
լոնի համար, ես ձեզ պիտի այ-
ցելեմ և հաստատեմ ձեզ հա-
մար իմ բարի խօսքը, որ ձեզ ետ
բերեմ այս տեղը։ Որովհետև ես
գիտեմ այն խորհուրդները, որ
ես խորհում եմ ձեր մասին, ա-
սում է Տէրը, խաղաղութեան
խորհուրդները և ոչ թէ չարու-
թեան, որ ձեզ տամ ապագան
և յոյսը։ Եւ դուք կ'կանչէք ինձ,
և կ'գնաք ու աղօթք կ'անէք
դէպի ինձ, և ես կ'լսեմ ձեզ.
Եւ դուք ինձ կ'որոնէք և կը
գտնէք, որովհետև ինձ կ'խնդրէք
ձեր բոլոր սրտովը։ Եւ ես կ'գտա-
նուիմ ձեզ համար, ասում է
Տէրը, և ետ կ'դարձնեմ ձեր գե-
րութիւնը և կ'ժողովեմ ձեզ ա-
մեն ազգերից և ամեն տեղերից,
ուր որ ձեզ աքսորել եմ, ասում
է Տէրը, և ես ձեզ ետ կ'դար-
ձնեմ այն տեղը, որտեղից որ ես
ձեզ գերի տանել տուի։ Որով-
հետև դուք ասել էք թէ Տէրը
մեզ համար մարգարէներ է յա-
րուցրել Բաբիլոնում։
Որովհետև այսպէս է ասում
Տէրը այն թագաւորին, որ նըս-
տում է Դաւթի աթոռի վրա
և այն ամեն ժողովրդին, որ
բնակվում է այս քաղաքում,
ձեր եղբայրներին, որ ձեզ հետ
չեն գնացել գերութիւնը։ Այս-
պէս է ասում Զօրաց Տէրը, Ահա
ես ուղարկում եմ նորանց մէջ
սուրը, սովը և ժանտախտը, և
նորանց ժանտ թուզերի պէս ա-
նելեմ, որ գէշութիւնից չի ուտ-
ուիլ։ Եւ նորանց պիտի հալա-
ծեմ սրով, սովով և ժանտախ-
տով, և նորանց չարչարանքի
մատնեմ երկրի բոլոր թագաւո-
րութիւնների անէծքի ու զար-
մանքի և սուլելու ու նախատին-
քի համար ամեն ազգերի մէջ,
ուր որ ես նորանց աքսորել եմ,
Որովհետև նորանք չլսեցին իմ
խօսքերին, ասում է Տէրը, որ ես
նորանց մտ ուղարկեցի իմ ծա-
ռաներին մարգարէներին կանուխ
վեր կենալով և ուղարկելով,
բայց դուք չլսեցիք, ասում է
Տէրը։ Իսկ դուք լսեցէք Տիրոջ
խօսքը, ով բոլոր գերիներ, որոնց
ես ուղարկել եմ Երուսաղէմից
Բաբիլոն։ Այսպէս է ասում Զօ-
րաց Տէրը Իսրայէլի Աստուածը
Կովշիայի որդի Աքաաբի և Մա-
ասիայի որդի Սեդեկիայի մասին,
որ ձեզ սուտ մարգարէութիւն
են անում իմ անունովը. Ահա
ես պիտի մատնեմ նորանց Բա-
բիլոնի Նաբուգոդոնոսոր թագա-
ւորի ձեռքը, և նա նորանց պի-
տի սպանէ ձեր աչքի առաջին։
Եւ նորանցից անէծք պիտի առ-
նուի Յուդայի բոլոր գերիների
համար, որ Բաբիլոնում են, ա-
սելով Թէ Տէրը քեզ Սեդեկիայի
և Աքաաբի պէս անէ, որոնց Բա-
բիլոնի թագաւորը խորովեց կրա-
կով։ Որովհետև անզգամութիւն
արին Իսրայէլի մէջ և շնութիւն
արին իրանց ընկերների կանանցը
հետ, և իմ անունովը սուտ խօսք
խօսեցին, որ ես իրանց չէի պատ-
ուիրել, բայց ես դիտեմ և վկայ
եմ, ասում է Տէրը։
Եւ Նեհելամացի Սեմայիայի
հետ խօսիր ասելով. Այսպէս է
ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի
Աստուածը ասելով. Որովհետև
դուք քո անունովը թուղթեր ես
ուղարկել բոլոր ժողովրդին, որ
Երուսաղէմում է և Մաասիայի
որդի Սոփոնիա քահանային և
քահանաներին ասելով. Տէրը
քեզ քահանայ է դրել Յովիադա
քահանայի տեղ, որ վերակացու-
ներ լինէք Տիրոջ տանը ամեն խե-
լացնորող ու մարգարեացող մար-
դի դէմ, որ նորան դնես կոճ-
ղում և վէշ շղթայում. Եւ հիմա
ինչու չյանդիմանեցիր Անաթով-
թացի Երեմիային, որ մարգարե-
անում է ձեզ համար, Որովհետև
նա սորա համար թուղթ է ու-
ղարկել մեզ մտ Բաբիլոն, ա-
սելով Թէ երկարատև է լինելու.
տներ շինեցէք և բնակուեցէք, և
այգիներ անկեցէք և կերէք նո-
րանց պտուղը։ Եւ Սոփոնիա քա-
հանան կարդաց այս թուղթը
Երեմիա մարգարէի ականջների
առաջին։ Եւ Տիրոջ խօսքն եղաւ
Երեմիային ասելով. Լաւ ու-
ղարկիր բոլոր երկիրներին ասե-
լով. Այսպէս է ասում Տէրը Նե-
հելամացի Սեմայիայի մասին, ո-
րովհետև Սեմայիան ձեզ համար
մարգարէացաւ, քանի որ ես նո-
րան չէի ուղարկել և ձեզ սու-
տի յուսացրեց, Դորա համար
Տէրը այսպէս է ասում. Ահա ես
պիտի այցելեմ Նեհելամացի Սե-
մայիային և նորա սերունդին.
Նորա համար մարդ պիտի չլինի
այս ժողովրդի մէջ բնակող, և
նա պիտի չտեսնէ այն բարիքը,
որ ես անելու եմ իմ ժողովրդին,
ասում է Տէրը, որովհետև Տի-
րոջ դէմ ապստամբութիւն է
խօսել։

ԳԼ. Լ

Այն խօսքը որ եղաւ Երեմիա
մարգարէին Տիրոջ կողմանէ ա-
սելով. Այսպէս է ասում Տէրը
Իսրայէլի Աստուածը, Թէ Գրիր
քեզ համար մէկ գրքի մէջ այն
բոլոր խօսքերը, որ քեզ հետ խո-
սել եմ. Որովհետև ահա օրեր
են գալիս, ասում է Տէրը, որ
ետ պիտի դարձնեմ իմ Իսրայէլ
և Յուդա ժողովրդի գերութիւ-
նը, ասում է Տէրը, և նորանց
ետ պիտի դարձնեմ այն երկիրը,
որ տուել եմ իրանց հայրերին,
և պիտի ժառանգեն նորան։
Եւ սորանք են այն խօսքերը,
որ Տէրը խօսել է Իսրայէլի և
Յուդայի մասին. Թէ այսպէս է
ասում Տէրը՝ Սոկալի ձայն լսե-
ցինք, վախ կայ և խաղաղութիւն
չկայ, Մէկ հարցրէք և տեսէք,
Թէ արուն կ'ծնի՞, ապա ինչու
եմ տեսնում ամեն մարդ ձեռ-
քերը երանքին դրած ծննդականի
պէս, և ամեն երեսները փոխ-
ուած դեղնացած։ Աւա՛ղ, ո-
րովհետև մեծ է այն օրը. Նորա
նմանը չկայ. և նա նեղութեան
ժամանակ պիտի լինի Յակոբի
համար. բայց նա ազատուելու է
նորանից։ Եւ կ'լինի այն օրը, ա-
սում է Զօրաց Տէրը, ես կ'կոտ-
րեմ նորա լուծը քո պարանոցի-
ցը, և քո կապերը կ'կտրեմ. որ
նորան այլ ևս չեն ծառայեցնել
օտարները։ Եւ նորանք կ'ծառա-
յեն իրանց Տէր Աստուծուն, և
իրանց Դաւիթ թագաւորին, ո-
րին ես կ'յարուցանեմ նորանց հա-
մար։ Բայց դու մի վախենար, ով
իմ ծառայ Յակոբ, ասում է Տէ-
րը. Մի զարհուրիր, ով Իսրայէլ,
որովհետև ահա ես քեզ կ'ազա-
տեմ հեռուից և քո սերունդին
իրանց գերութեան երկրիցը. և
Յակոբը ետ կ'դառնայ և հան-
գարտ ու հանգիստ կ'լինի. և
վախեցնող չի լինիլ։ Որովհետև
ես քեզ հետ եմ, ասում է Տէ-
րը, քեզ ազատելու համար, նո-
րա համար որ պիտի վերջացնեմ
այն բոլոր ազգերը, ուր որ ես
քեզ ցրիւ եմ տուել. բայց քեզ
պիտի չվերջացնեմ, այլ քեզ պի-
տի խրատեմ իրաւունքով և քեզ
բնաւ անմեղ պիտի չհամարեմ։
Որովհետև այսպէս է ասում Տէ-
րը. Ցաւատառական է քո կոտ-
րուածքը, ցաւալի՛ քո տարուածքը.
Քո դատը դատող չկայ, կապե-
լու համար. բժշկութիւն սպե-
զանի չկայ քեզ համար։ Քո բո-
լոր համակիրները մոռացել են քեզ,
քեզ չեն որոնում. որովհետև
թշնամիի հարուածով հարուա-
ծեցի քեզ՝ անգութի պատիժով,
քո անօրէնութիւնների շատու-
թեան համար. շատացել էին քո
մեղքերը։ Ինչ ես աղաղակում
քո կտրուածքի համար, յուսա-
տառական է քո ցաւը. քո անօ-
րէնութիւնների շատութեան հա-
մար, որ շատացել էին քո մեղ-
քերը, ես արի այս բաները քեզ։
Սորա համար բոլոր քեզ ուտող-
ները պիտի ուտուին, և բոլոր քեզ
նեղողները՝ ամենքն էլ գերի պի-
տի գնան. և քեզ յափշտակող-
ները պիտի յափշտակուին, և բո-
լոր քեզ կողոպտողներին պիտի
տամ կողոպուտի։ Որովհետև ես
քեզ պիտի ապաղնի դնեմ, և
քո հարուածներիցը պիտի բժըշ-

կեմ քեզ, ասում է Տէրը. ո-
րովհետև քեզ՝ Աքսորուած կո-
չեցին, Թէ սա այն Սիօնն է, որին
խնդրող չ'կայ։
18 Այսպէս է ասում Տէրը. Ահա
ես ետ պիտի դարձնեմ Յակոբի
վրանների գերութիւնը. և նորա
բնակարաններին պիտի ողորմեմ,
և քաղաքը պիտի շինուի իր ֆլա-
տաֆների թումբի վերայ, և պա-
լատը իր կարգի համեմատ բնա-
19 կարան լինի։ Եւ նորանցից պիտի
դուրս գայ գովասանութիւն և
ուրախացողների ձայն. և նորանց
պիտի շատացնեմ, ու պիտի չը
քիչանան նորանք. և նորանց պի-
տի փառաւորեմ, և պիտի չը
20 նուաստանան։ Եւ նորա որդիքը
առաջուայ պէս պիտի լինեն, և
նորանց ժողովքը պիտի հաստատ-
ուի իմ առաջին, և ես պիտի այ-
ցելեմ նորա բոլոր հարստահա-
21 րիչներին։ Եւ նորա մեծաւորը
պիտի իրանից լինի, և նորա իշ-
խանն իր միջիցը պիտի դուրս
գայ, և ես պիտի մօտեցնեմ նո-
րան, և նա պիտի մօտ լինի ինձ.
որովհետև ո՞վ է նա որ վստա-
հանայ իր սրտովն ինձ մօտենա-
22 լու, ասում է Տէրը։ Եւ դուք
կ'լինէք ինձ համար ժողովուրդ,
և ես կ'լինեմ ձեզ համար՝ Աստ-
ուած։
23 Ահա Տիրոջ մրրիկը բարկու-
թեամբ պիտի դուրս գայ. շա-
ռաչող թաթառը պտուտուելու
24 է չարերի գլխին։ Տիրոջ բարկու-
թեան բորբոքումը ետ չի դառ-
նալու, մինչև որ անէ և մինչև
որ կատարէ իր սրտի խորհուրդ-
ները. յետի օրերումը պիտի հաս-
կանաք այս։

ԳԼ. ԼԱ.

1 Այն ժամանակ, ասում է Տէ-
րը, ես Աստուած կ'լինեմ Իսրա-
յէլի բոլոր ազգատոհմների հա-
մար. և նորանք ինձ համար ժո-
2 ղովուրդ կ'լինեն։ Այսպէս է ա-
սում Տէրը. Սուրից փախած ժո-
ղովուրդը շնորհք գտաւ անապա-
տումը, երբոր գնում էր Իսրայէ-
լին հանգստացնելու։ Հեռուանց
3 է երևացել ինձ Տէրը, թէ Յաւի-
տենական սիրով սիրել եմ քեզ.
դորա համար քաշեցի քեզ ողոր-
մութիւնով։ Եւ քեզ միւսան-
4 գամ պիտի շինեմ, և դու պիտի
շինուիս, ով Իսրայէլի կոյսը.
միւսանգամ պիտի զարդարուիս
քո թմբուկներովը, և պիտի դուրս
գաս ուրախացողների պարախում-
5 բի մէջ։ Միւսանգամ պիտի այ-
գիներ տնկես Սամարիայի սարերի
վերայ, տնկողները պիտի տնկեն
6 և քաղեն։ Որովհետև կայ այն
օրը, որ պահապանները պիտի
կանչեն Եփրեմի սարի վերայ. Վեր
կացէք և վեր գնանք Սիօն դէպի
մեր Տէր Աստուծուն։
7 Որովհետև այսպէս է ասում
Տէրը. Ուրախութեամբ երգեցէք
Յակոբի համար, և ցնծացէք ազ-
գերի գլխի վերայ, բարձրաձայն
գովաբանեցէք ու ասեցէք. Փրկիր,
ով Տէր, քո ժողովրդին՝ Իսրայէլի
8 մնացորդին։ Ահա ես նորանց պի-
տի բերեմ հիւսիսի երկրիցը, և
պիտի ժողովեմ նորանց երկրի
ծայրերիցը, նորանց հետ կոյրին
ու կաղին, յղիին ու ծնածին մի-
ասին. մի մեծ ժողովք պիտի
9 դառնայ այստեղ։ Լացով են
գալու, և աղաչանքներով եմ
բերելու նորանց. նորանց պիտի
առաջնորդեմ դէպի ջրերի վտակ-
ները, ուղիղ ճանապարհով, որի
մէջ պիտի չ'գայթակղեն. որով-
հետև ես Իսրայէլին հայր եղայ,
և Եփրեմը իմ անդրանիկն է։
10 Լսեցէք Տիրոջ խօսքը, ով ազ-
գեր, և իմացրէք հեռաւոր կղզի-
ներին, և ասեցէք. Իսրայէլին
ցրիւ տուողը պիտի ժողովէ նո-
րան, և նորան պիտի պահպանէ
11 ինչպէս հովիւն իր հօտը։ Որով-
հետև Տէրը փրկել է Յակոբին
և նորան ազատել է նորանից մի
12 աւելի զօրաւորի ձեռքից։ Եւ
պիտի գան ու ցնծան Սիօնի
բարձրութիւնովը, և պիտի հո-
սելով գան դէպի Տիրոջ բարիք-
ները, դէպի ցորենը և դէպի գի-
նին և դէպի իւղը, և դէպի հօ-
տերն ու արջառները. և նորանց

անձերը պիտի լինեն ջրուած պար-
տէզի պէս, և այլ ևս պիտի չը
13 նուաղեն։ Այն ժամանակ կոյսը
պիտի ուրախանայ պարախում-
բովը, և երիտասարդներն ու ծե-
րերը միասին. և ես կ'դարձնեմ
նորանց սուգը ուրախութեան, ու
կ'մխիթարեմ նորանց, և նորանց
կ'ուրախացնեմ նորանց տրտմու-
14 թիւնիցը։ Եւ պիտի պարարտա-
ցնեմ քահանաների հոգիները իւ-
ղով, և իմ ժողովուրդը պիտի
կշտանայ իմ բարիքովը, ասում
է Տէրը։
15 Այսպէս է ասում Տէրը. Ռա-
մայում մի ձայն լսուեցաւ դառ-
նագին ողբ՝ լաց. Ռաքէլը լաց է
լինում իր որդկանցը համար, չէ
ուզում մխիթարուիլ իր որդ-
16 կանցը համար, որ չ'կան։ Այս-
պէս է ասում Տէրը. Դադարե-
ցրու ձայնդ լալուց և աչքերդ
արտասուքից, որովհետև վարձք
կայ քո գործքի համար, ասում
է Տէրը. և ետ պիտի դառնան
17 թշնամիի երկրիցը։ Եւ յոյս կայ
քո ապագայի համար, ասում է
Տէրը, և որդիքը ետ պիտի դառ-
նան իրանց սահմանը։
18 Իրաւ ես լսել եմ Եփրեմին
ողբալիս. Ինձ խրատեցիր, և ես
խրատուեցայ չ'սովորած զուարա-
կի նման. ինձ դարձրու, և ես
կ'դառնամ, որովհետև դու ես,
19 ով Տէր, իմ Աստուածը։ Իրաւ՝
իմ դառնալուց յետոյ զղջացի, և
խելօքանալուցս յետոյ զարկեցի
իմ ազդրին, ամաչեցի և պատ-
կառեցի էլ, որովհետև կրեցի
իմ մանկութեան անարգանքը։
20 Մի՞թէ պատուական որդի է ինձ
համար Եփրեմը, կամ մի սիրա-
կան զաւակ է նա, որ քանի ան-
գամ որ խօսում եմ նորա վերայ,
էլի յիշում եմ նորան անպատ-
ճառ, սորա համար գալարում
են իմ աղիքները. ես անշուշտ
պիտի ողորմեմ նորան, ասում է
Տէրը։
21 Կսթողներ տնկիր քեզ համար,
քեզ համար սիւներ դիր. սիրադ
տուր քո գնալու ճանապարհին՝
պողոտային, ետ դարձիր, ով Իս-
րայէլի կոյսը, ետ դարձիր դէպի
22 քո այս քաղաքները։ Մինչև ե՞րբ
պիտի տարուբերուիս, ով ապըս-
տամբ աղջիկ. որովհետև Տէրը նոր
բան է ստեղծել երկրիս վերայ,
կինը պիտի շրջապատէ մարդին։
23 Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝
Իսրայէլի Աստուածը. Դեռ պիտի
ասեն այս խօսքը Յուդայի երկ-
րումը և նորա քաղաքներումը,
երբոր ես ետ կ'դարձնեմ նորանց
գերութիւնը։ Քեզ օրհնէ Տէրը,
ով արդարութեան բնակարան,
24 սուրբ սար։ Եւ նորանում պիտի
բնակուեն Յուդան և նորա բոլոր
քաղաքները միասին, երկրագործ-
25 ներ և հօտերով չուողներ։ Որով-
հետև ես պիտի զովացնեմ վաս-
տակած հոգին, և ամեն նուազած
26 հոգին պիտի կշտացնեմ։ Սորա
համար զարթնեցի և նայեցի, և
իմ քունը քաղցր էր ինձ համար։
27 Ահա օրեր են գալիս, ասում է
Տէրը, և Իսրայէլի տանը և Յու-
դայի տանը պիտի սերմեմ մարդի
սերունդ և անասունի սերունդ։
28 Եւ ինչպէս որ հսկեցի նորանց վե-
րայ՝ նորանց խլելու, փչացնելու,
քանդելու, կորցնելու և չարչա-
րելու համար, նոյնպէս պէտք է
հսկեմ նորանց վերայ շինելու և
տնկելու համար, ասում է Տէրը։
29 Այն օրերը այլ ևս չեն ասիլ՝ Հայ-
րերը ազոխ են կերել և որդկանց
30 ատամները առել է։ Այլ ամեն
մարդ իր անօրէնութեան համար
պիտի մեռնէ, ամեն մարդ որ ա-
զոխն ուտէ նորա ատամները պի-
տի առնէ։
31 Ահա օրեր են գալիս, ասում
է Տէրը, որ Իսրայէլի տան հետ
և Յուդայի տան հետ պիտի նոր
32 ուխտ կապեմ։ Ոչ թէ այն ուխ-
տի պէս, որ ես արի նորանց հայ-
րերի հետ, այն օրը որ ես բռնեցի
նորանց ձեռքիցը Եգիպտոսի երկ-
րիցը նորանց հանելու համար, որ
իմ այն ուխտը նորանք զանց ա-
րին, թէպէտ ես նորանց հետ ա-
մուսնականապէս կապուել էի,
33 ասում է Տէրը։ Այլ այս է այն
ուխտը, որ պիտի կապեմ Իսրա-
յէլի տան հետ այն օրերից յե-

տոյ, ասում է Տէրը. իմ օրէնքը պիտի դնեմ նորանց ներսումը, և նորանց սրտի վերան պիտի գրեմ այն, և ես պիտի լինեմ նորանց Աստուած, և նորանք պիտի ինձ
34 համար ժողովուրդ լինեն։ Եւ այլ ևս մէկ մարդ իր ընկերին և մէկ մարդ իր եղբօրը պիտի չ'սովորեցնէ, ասելով թէ ճանաչեցէք Տիրոջը, որովհետև նորանք ամենքը պիտի ճանաչեն ինձ, նորանց փոքրերիցը մինչև նորանց մեծերը, ասում է Տէրը. որովհետև ես պիտի ներեմ նորանց
35 անօրէնութիւնը, և նորանց մեղքերը այլ ևս պիտի չ'յիշեմ։ Այսպէս է ասում Տէրը, որ արեգակը դրել է օրւան լոյսի համար, լուսնի և աստղերի կանոնները գիշերուայ լոյսի համար, որ սաստում է ծովին, երբոր նորա ալիքները գոռում են. նորա անունը
36 Զօրաց Եհովայ է. եթէ վերանան այս կանոնները իմ առաջից, ասում է Տէրը, իսրայէլի սերունդն էլ կ'դադարին իմ առաջին ամեն ժամանակ ազգ լի-
37 նելուց։ Այսպէս է ասում Տէրը, եթէ երկինքը կ'չափուի վերևումը, և կ'քննուին երկրի հիմունքը ցածումը, ես էլ կ'մերժեմ Իսրայէլի բոլոր սերունդը իրանց բոլոր արածների համար, ասում է Տէրը։
38 Ահա օրեր են գալիս, ասում է Տէրը, որ քաղաքը պիտի շինուի Տիրոջ համար, Անանէլի աշտարակից մինչև Անկեան դուռը,
39 և պիտի էլի դուրս գնայ չափի լարը դէպի առաջ մինչև Գարեբի բլուրը և ետ դառնայ դէպի
40 Գոաթ։ Եւ դիակների ու մոխրի բոլոր ձորը և բոլոր արտերը մինչև Կեդրոն հեղեղատը մինչև Ձիերի դուռան անկիւնը դէպի արևելք, սուրբ պիտի լինի Տիրոջ համար, այլ ևս պիտի յուսխտեան չ'քանդուի և փուլ ածուի,

ԳԼ. ԼՐ

1 Ա՚յն խօսքը որ եղաւ Երեմիային Տիրոջ կողմանէ ՝ ասելով
2 Այսպէս է ասում Տէրը Իսրայէլի Աստուածը, որ ասում է քեզ, գրի՛ր քեզ համար մի գիրք այն բոլոր խօսքերը որ ես խօսեցայ քեզ հետ։
3 Որովհետև ահա օրեր են գալիս, ասում է Տէրը, որ ես դարձնեմ իմ ժողովրդեան Իսրայէլի և Յուդայի գերութիւնը, ասում է Տէրը, և նորանց տամ այն երկիրը որ տուի նորանց հարցն, և նորանք պիտի տիրեն նորան։
4 Եւ սոքա են խօսքերը որ խօսեցաւ Տէրը Իսրայէլի և Յուդայի վերայ։
5 Որովհետև այսպէս է ասում Տէրը, ահաբեկութեան ձայն լսեցինք, սարսափ և ոչ խաղաղութիւն։
6 Հարցուցէ՛ք հիմա և տեսէ՛ք արդեօք արու ծնանում է, ինչո՞ւ համար ես տեսնում ամեն մարդ իր մէջքի վերայ ձեռքը դրած ինչպէս ծննդաբերող կին, և ամեն երեսներ դարձած դէպի դեղին։
7 Վա՜յ, վա՜յ, որովհետև այդ օրը մեծ է, նորա նմանը չկայ, և Յակոբի նեղութեան ժամանակ է, բայց նորանից պիտի ազատուի։
8 Եւ այն ժամանակ, ասում է Տէրը, կը խորտակեմ նորա լուծը քո պարանոցիցդ, և կը պատռեմ քո կապանքները, և օտարներ այլևս չեն ծառայեցնի նորան,
9 Այլ կ'ծառայեն Տիրոջ իրանց Աստուծոյ և իրանց թագաւոր Դաւթին որ կը յարուցանեմ նորանց համար։
10 Եւ դու մի՛ վախենար, Յակոբ իմ ծառայ, ասում է Տէրը, և մի՛ զարհուրիր Իսրայէլ, որովհետև ահա ես կ'ազատեմ քեզ հեռուից և քո սերունդը գերութեան երկրից, և Յակոբ կը դառնայ և հանգիստ կ'լինի և հանգիստ կ'լինի և ոչ ոք չի վախեցնի նորան։
11 Որովհետև ես քեզ հետ եմ, ասում է Տէրը, որ փրկեմ քեզ, որովհետև ես կ'վերջացնեմ բոլոր ազգերը որոնց մէջ ես քեզ ցրուեցի, բայց քեզ չեմ վերջացնի, այլ կը խրատեմ քեզ իրաւունքով, և ամենևին չեմ թողնի քեզ անպատիժ։
12 Որովհետև այսպէս է ասում Տէրը, անբուժելի է քո վէրքը, և ցաւագին է քո հարուածը։
13 Չկայ քո դատաստանը որ դատի, որ կապեն քեզ, չկայ քեզ համար դարման։
14 Բոլոր քո սիրահարները մոռացան քեզ, չեն հարցնում քեզ համար, որովհետև ես հարուածեցի քեզ թշնամու հարուածով, դաժան խրատով, քո մեծ անօրէնութեան համար, որովհետև քո մեղքերը շատացան։
15 Ինչո՞ւ համար աղաղակում ես քո վէրքի համար, անբուժելի է քո ցաւը, քո մեծ անօրէնութեան համար, որովհետև քո մեղքերը շատացան, ես արի քեզ այս բաները։
16 Բայց ամենքը որ քեզ կ'ուտեն կ'ուտուին, և քո բոլոր թշնամիները գերութեան կ'գնան, և քեզ կ'կողոպտեն կ'կողոպտուին, և բոլոր քեզ կ'յափշտակեն կ'յափշտակուին։
17 Որովհետև ես քեզ կ'բժշկեմ քո վէրքերից, ասում է Տէրը, որովհետև քեզ անուանեցին հալածեալ, ասելով Սիոն, որին ոչ ոք չի փնտրում։
18 Այսպէս է ասում Տէրը, ահա ես կ'դարձնեմ Յակոբի վրանների գերութիւնը, և նորա բնակարանների վերայ կ'ողորմեմ, և քաղաքը իր աւերակների վերայ կ'շինուի, և պալատը իր տեղով կ'կանգնի։
19 Եւ նորանցից կ'ելնի գոհութեան ձայն և խաղացողների ձայն, և կ'շատացնեմ նորանց և չեն պակսի, կ'փառաւորեմ նորանց և չեն պզտիկնայ։
20 Նորա որդիքը նախկին պէս կ'լինին, և նորա ժողովը իմ առաջիս կ'հաստատուի, և կ'պատժեմ բոլոր նորա հալածողները։
21 Եւ նորա իշխանը նորանցից կ'լինի, և նորա կառավարիչը նորա միջից կ'ելնի, և կ'մերձեցնեմ նորան ինձ մօտ, որովհետև ո՞վ է նա որ իր սիրտը գրաւ ինձ մօտ մերձենալու համար, ասում է Տէրը։
22 Եւ դուք կ'լինիք ինձ համար ժողովուրդ, և ես կ'լինիմ ձեզ համար Աստուած։
23 Ահա Տիրոջ փոթորիկը, բարկութիւնը դուրս կ'գայ, սաստիկ փոթորիկ, որ կ'պտտուի չարերի գլխի վերայ։
24 Տիրոջ բարկութեան բորբոքը չի դառնայ մինչև որ կատարի և մինչև որ կենդանացնի իր սրտի խորհուրդները, վերջին օրերում դուք կ'հասկանաք այդ։

ԳԼ. ԼԱ

1 Այն ժամանակ, ասում է Տէրը, ես կ'լինիմ Իսրայէլի բոլոր ազգերի Աստուածը, և նորանք ինձ համար ժողովուրդ կ'լինին։
2 Այսպէս է ասում Տէրը, անապատում գտան ողորմութիւն սրից ազատուածները, Իսրայէլ երբ գնում էր հանգստանալու համար։
3 Տէրը երևեցաւ ինձ հեռուից, և ասաց, յաւիտենական սիրով սիրեցի քեզ, այդ պատճառով քաշեցի քեզ ողորմութեամբ։
4 Դարձեալ կ'շինեմ քեզ, և կ'շինուիս, ո՛վ կոյս Իսրայէլ, դարձեալ կ'զարդարուիս քո թմբուկներով, և կ'դուրս կ'գաս ուրախութեան խմբերի հետ։
5 Դարձեալ կ'տնկես քո խաղողի այգիները Սամարիայի լերանց վերայ, տնկողները կ'տնկեն և կ'վայելեն։
6 Որովհետև կայ օր որ պահապանները Եփրեմի լերանց վերայ կ'գոռան, կ'յառաջանանք և կ'բարձրանանք Սիոն դէպի Տէր մեր Աստուածը։
7 Որովհետև այսպէս է ասում Տէրը, ուրախացէ՛ք Յակոբի համար ցնծութեամբ, և գոռացէ՛ք ազգերի գլխի վերայ, լսելի արէ՛ք, գովեցէ՛ք և ասացէ՛ք, Տէր փրկեց իր ժողովուրդը Իսրայէլի մնացորդները։
8 Ահա ես կ'բերեմ նորանց հիւսիսի երկրից, և կ'ժողովեմ նորանց երկրի ծագերից, և նորանց մէջ կոյրեր և կաղեր, յղի կանայք և ծնանող միասին, մեծ ժողովուրդ կ'դառնայ հոս։
9 Լալով կ'գան, և աղաչանքով կ'բերեմ նորանց, կ'տանեմ նորանց հեղեղատների մօտ ուղիղ ճանապարհով, որում չեն գայթագղիլ, որովհետև ես Իսրայէլի հայր եմ եղել, և Եփրեմ իմ անդրանիկ որդիս է։
10 Լսեցէ՛ք, ազգեր, Տիրոջ խօսքը, և պատմեցէ՛ք հեռաւոր կղզիների մէջ, և ասացէ՛ք, որ ցրուողը կ'հաւաքէ Իսրայէլը, և կ'պահպանէ նորան իր հօտի պէս հովիւի պէս։
11 Որովհետև Տէրը փրկեց Յակոբը, և ազատեց նորան նորա հզօրի ձեռքից։
12 Եւ կ'գան և կ'գոռան Սիոնի բարձրութեան վերայ, և կ'հոսին դէպի Տիրոջ բարիքները, ցորենի, գինու և իւղի, և ոչխարների և արջառների վերայ, և նորանց հոգին կ'լինի ինչպէս ջրած պարտէզ, և այլևս չեն տրտմի։
13 Այն ժամանակ կ'ուրախանայ կոյս աղջիկը պարի մէջ, և երիտասարդներ և ծերեր միասին, և կ'դարձնեմ նորանց սուգը ուրախութեան, և կ'մխիթարեմ նորանց, և կ'ուրախացնեմ նորանց իրանց տրտմութիւնից։
14 Եւ քահանայապետների հոգին կ'յագեցնեմ ճարպով, և իմ բարիքներովս կ'յագենայ իմ ժողովուրդը, ասում է Տէրը։
15 Այսպէս է ասում Տէրը, ձայն լսուեցաւ Հռամայում, սուգ և դառն լալիք, Հռաքէլ լալիս է իր որդիների համար, չ'կամեցաւ մխիթարուել իր որդիների համար, որովհետև չ'կան։
16 Այսպէս է ասում Տէրը, զսպի՛ր քո ձայնը լալիքից, և քո աչքերը արտասուքից, որովհետև քո գործերի վարձատրութիւն կ'լինի, ասում է Տէրը, և նորանք կ'դառնան թշնամու երկրից։
17 Եւ յոյս կայ քո վերջի համար, ասում է Տէրը, որ քո որդիները կ'դառնան իրանց սահմանները։
18 Լսելով լսեցի Եփրեմի տխրութիւնը, խրատեցիր ինձ և խրատուեցայ, ինչպէս անսանձ եզ, դարձրո՛ւր ինձ և դարձի կ'գամ, որովհետև դու Տէր իմ Աստուածս ես։
19 Որովհետև ետ դառնալուցս զղջացի, և ուսուցանելուցս յետոյ ապաշխարեցի, ամաչեցի և ինքս ինձ նախատեցի, որովհետև իմ երիտասարդութեան նախատինքը կ'կրեմ։
20 Եփրեմ իմ սիրելի որդիս է, թէ մանկահասակ զաւակ, որովհետև ամեն անգամ որ խօսեցայ նորա հետ, յիշեցի նորան, վասն այսորիկ ներքինի կ'տրտմի նորա համար, ողորմելով կ'ողորմեմ նորան, ասում է Տէրը։
21 Կանգնի՛ր քեզ նշաններ, դի՛ր քեզ ուղղութեան սիւներ, ուշադրութիւն դարձո՛ւր ճանապարհին, ճանապարհին որով գնացիր, դարձի՛ր, ո՛վ կոյս Իսրայէլ, դարձի՛ր քո այս քաղաքները։
22 Մինչև ե՞րբ կ'տատանուիս, ո՛վ ետ դարձող դուստր, որովհետև Տէրը նոր բան ստեղծեց երկրի վերայ, էգ կ'պատէ արուին։
23 Այսպէս է ասում Տէրը Իսրայէլի Աստուածը, դարձեալ կ'ասեն այս խօսքը Յուդայի երկրում և նորա քաղաքներում, երբ դարձնեմ նորանց գերութիւնը, Տէր քեզ օրհնեսցէ, արդարութեան բնակարան, սուրբ լեռ։
24 Եւ Յուդա և նորա բոլոր քաղաքները միասին կ'բնակուին նորա մէջ, հողագործներ և հօտ տանողներ։
25 Որովհետև յագեցուցի յոգնած հոգին, և ամեն տխրած հոգի կ'լցրի։
26 Ասացի՛ր այդ, և քունս քաղցր եկաւ։
27 Ահա օրեր են գալիս, ասում է Տէրը, որ կ'սերմանեմ Իսրայէլի տունը և Յուդայի տունը մարդու սերմով և անասունի սերմով։
28 Եւ կ'լինի որ ինչպէս ես հսկեցի նորանց վերայ, որ քակեն և կործանեն, և կորուստ բերեն և չարչարեն, նոյնպէս կ'հսկեմ նորանց վերայ, որ շինեն և տնկեն, ասում է Տէրը։
29 Այն ժամանակ չ'կ'ասեն այլևս, հայրերը դառը խաղող կերան, և որդիների ատամները կ'կպչին։
30 Այլ ամեն մարդ իր անօրէնութեան համար կ'մեռնի, ամեն մարդ որ դառը խաղող կ'ուտի, նորա ատամները կ'կպչին։
31 Ահա օրեր են գալիս, ասում է Տէրը, որ նոր ուխտ կ'կապեմ Իսրայէլի տան և Յուդայի տան հետ,
32 Ոչ այն ուխտի պէս որ կապեցի նորանց հարցն այն օրը որ բռնեցի նորանց աջ ձեռքից հանելու նորանց Եգիպտոսի երկրից, որ իմ ուխտս նորանք խզեցին, թէև ես նորանց տէր էի, ասում է Տէրը։
33 Այլ այս է ուխտը որ կ'կապեմ Իսրայէլի տան հետ յետ այն օրերի, ասում է Տէրը, իմ օրէնքը կ'դնեմ նորանց ներսումը, և նորանց սրտի վերան կ'գրեմ այն, և ես կ'լինեմ նորանց Աստուած, և նորանք կ'լինին ինձ համար ժողովուրդ։
34 Եւ այլ ևս մէկ մարդ իր ընկերին և մէկ մարդ իր եղբօրը չ'սովորեցնէ, ասելով թէ ճանաչեցէք Տիրոջը, որովհետև նորանք ամենքը կ'ճանաչեն ինձ, նորանց փոքրերիցը մինչև նորանց մեծերը, ասում է Տէրը. որովհետև ես կ'ներեմ նորանց անօրէնութիւնը, և նորանց մեղքերը այլ ևս չ'յիշեմ։
35 Այսպէս է ասում Տէրը, որ արեգակը դրել է օրւան լոյսի համար, լուսնի և աստղերի կանոնները գիշերուայ լոյսի համար, որ սաստում է ծովին, երբոր նորա ալիքները գոռում են. նորա անունը
36 Զօրաց Եհովայ է. եթէ վերանան այս կանոնները իմ առաջից, ասում է Տէրը, իսրայէլի սերունդն էլ կ'դադարին իմ առաջին ամեն ժամանակ ազգ լինելուց։
37 Այսպէս է ասում Տէրը, եթէ երկինքը կ'չափուի վերևումը, և կ'քննուին երկրի հիմունքը ցածումը, ես էլ կ'մերժեմ Իսրայէլի բոլոր սերունդը իրանց բոլոր արածների համար, ասում է Տէրը։
38 Ահա օրեր են գալիս, ասում է Տէրը, որ քաղաքը պիտի շինուի Տիրոջ համար, Անանէլի աշտարակից մինչև Անկեան դուռը,
39 Եւ պիտի էլի դուրս գնայ չափի լարը դէպի առաջ մինչև Գարեբի բլուրը և ետ դառնայ դէպի
40 Գոաթ։ Եւ դիակների ու մոխրի բոլոր ձորը և բոլոր արտերը մինչև Կեդրոն հեղեղատը մինչև Ձիերի դուռան անկիւնը դէպի արևելք, սուրբ պիտի լինի Տիրոջ համար, այլ ևս պիտի յուսխտեան չ'քանդուի և փուլ ածուի,

ԳԼ. ԼՐ

1 Ա՚յն խօսքը որ եղաւ Երեմիային Տիրոջ կողմանէ ՝ ասելով
2 Այսպէս է ասում Տէրը Իսրայէլի Աստուածը, որ ասում է քեզ, գրի՛ր քեզ համար մի գիրք այն բոլոր խօսքերը որ ես խօսեցայ քեզ հետ։
3 Որովհետև ահա օրեր են գալիս, ասում է Տէրը, որ ես դարձնեմ իմ ժողովրդեան Իսրայէլի և Յուդայի գերութիւնը, ասում է Տէրը, և նորանց տամ այն երկիրը որ տուի նորանց հարցն, և նորանք պիտի տիրեն նորան։
4 Եւ սոքա են խօսքերը որ խօսեցաւ Տէրը Իսրայէլի և Յուդայի վերայ։
5 Որովհետև այսպէս է ասում Տէրը, ահաբեկութեան ձայն լսեցինք, սարսափ և ոչ խաղաղութիւն։
6 Հարցուցէ՛ք հիմա և տեսէ՛ք արդեօք արու ծնանում է, ինչո՞ւ համար ես տեսնում ամեն մարդ իր մէջքի վերայ ձեռքը դրած ինչպէս ծննդաբերող կին, և ամեն երեսներ դարձած դէպի դեղին։
7 Վա՜յ, վա՜յ, որովհետև այդ օրը մեծ է, նորա նմանը չկայ, և Յակոբի նեղութեան ժամանակ է, բայց նորանից պիտի ազատուի։
8 Եւ այն ժամանակ, ասում է Տէրը, կը խորտակեմ նորա լուծը քո պարանոցիցդ, և կը պատռեմ քո կապանքները, և օտարներ այլևս չեն ծառայեցնի նորան,
9 Այլ կ'ծառայեն Տիրոջ իրանց Աստուծոյ և իրանց թագաւոր Դաւթին որ կը յարուցանեմ նորանց համար։
10 Եւ դու մի՛ վախենար, Յակոբ իմ ծառայ, ասում է Տէրը, և մի՛ զարհուրիր Իսրայէլ, որովհետև ահա ես կ'ազատեմ քեզ հեռուից և քո սերունդը գերութեան երկրից, և Յակոբ կը դառնայ և հանգիստ կ'լինի և հանգիստ կ'լինի և ոչ ոք չի վախեցնի նորան։
11 Որովհետև ես քեզ հետ եմ, ասում է Տէրը, որ փրկեմ քեզ, որովհետև ես կ'վերջացնեմ բոլոր ազգերը որոնց մէջ ես քեզ ցրուեցի, բայց քեզ չեմ վերջացնի, այլ կը խրատեմ քեզ իրաւունքով, և ամենևին չեմ թողնի քեզ անպատիժ։
12 Որովհետև այսպէս է ասում Տէրը, անբուժելի է քո վէրքը, և ցաւագին է քո հարուածը։
13 Չկայ քո դատաստանը որ դատի, որ կապեն քեզ, չկայ քեզ համար դարման։
14 Բոլոր քո սիրահարները մոռացան քեզ, չեն հարցնում քեզ համար, որովհետև ես հարուածեցի քեզ թշնամու հարուածով, դաժան խրատով, քո մեծ անօրէնութեան համար, որովհետև քո մեղքերը շատացան։
15 Ինչո՞ւ համար աղաղակում ես քո վէրքի համար, անբուժելի է քո ցաւը, քո մեծ անօրէնութեան համար, որովհետև քո մեղքերը շատացան, ես արի քեզ այս բաները։
16 Բայց ամենքը որ քեզ կ'ուտեն կ'ուտուին, և քո բոլոր թշնամիները գերութեան կ'գնան, և քեզ կ'կողոպտեն կ'կողոպտուին, և բոլոր քեզ կ'յափշտակեն կ'յափշտակուին։
17 Որովհետև ես քեզ կ'բժշկեմ քո վէրքերից, ասում է Տէրը, որովհետև քեզ անուանեցին հալածեալ, ասելով Սիոն, որին ոչ ոք չի փնտրում։
18 Այսպէս է ասում Տէրը, ահա ես կ'դարձնեմ Յակոբի վրանների գերութիւնը, և նորա բնակարանների վերայ կ'ողորմեմ, և քաղաքը իր աւերակների վերայ կ'շինուի, և պալատը իր տեղով կ'կանգնի։
19 Եւ նորանցից կ'ելնի գոհութեան ձայն և խաղացողների ձայն, և կ'շատացնեմ նորանց և չեն պակսի, կ'փառաւորեմ նորանց և չեն պզտիկնայ։
20 Նորա որդիքը նախկին պէս կ'լինին, և նորա ժողովը իմ առաջիս կ'հաստատուի, և կ'պատժեմ բոլոր նորա հալածողները։
21 Եւ նորա իշխանը նորանցից կ'լինի, և նորա կառավարիչը նորա միջից կ'ելնի, և կ'մերձեցնեմ նորան ինձ մօտ, որովհետև ո՞վ է նա որ իր սիրտը գրաւ ինձ մօտ մերձենալու համար, ասում է Տէրը։
22 Եւ դուք կ'լինիք ինձ համար ժողովուրդ, և ես կ'լինիմ ձեզ համար Աստուած։
23 Ահա Տիրոջ փոթորիկը, բարկութիւնը դուրս կ'գայ, սաստիկ փոթորիկ, որ կ'պտտուի չարերի գլխի վերայ։
24 Տիրոջ բարկութեան բորբոքը չի դառնայ մինչև որ կատարի և մինչև որ կենդանացնի իր սրտի խորհուրդները, վերջին օրերում դուք կ'հասկանաք այդ։

ԳԼ. ԼԱ

1 Այն ժամանակ, ասում է Տէրը, ես կ'լինիմ Իսրայէլի բոլոր ազգերի Աստուածը, և նորանք ինձ համար ժողովուրդ կ'լինին։
2 Այսպէս է ասում Տէրը, անապատում գտան ողորմութիւն սրից ազատուածները, Իսրայէլ երբ գնում էր հանգստանալու համար։
3 Տէրը երևեցաւ ինձ հեռուից, և ասաց, յաւիտենական սիրով սիրեցի քեզ, այդ պատճառով քաշեցի քեզ ողորմութեամբ։
4 Դարձեալ կ'շինեմ քեզ, և կ'շինուիս, ո՛վ կոյս Իսրայէլ, դարձեալ կ'զարդարուիս քո թմբուկներով, և կ'դուրս կ'գաս ուրախութեան խմբերի հետ։
5 Դարձեալ կ'տնկես քո խաղողի այգիները Սամարիայի լերանց վերայ, տնկողները կ'տնկեն և կ'վայելեն։
6 Որովհետև կայ օր որ պահապանները Եփրեմի լերանց վերայ կ'գոռան, կ'յառաջանանք և կ'բարձրանանք Սիոն դէպի Տէր մեր Աստուածը։
7 Որովհետև այսպէս է ասում Տէրը, ուրախացէ՛ք Յակոբի համար ցնծութեամբ, և գոռացէ՛ք ազգերի գլխի վերայ, լսելի արէ՛ք, գովեցէ՛ք և ասացէ՛ք, Տէր փրկեց իր ժողովուրդը Իսրայէլի մնացորդները։
8 Ահա ես կ'բերեմ նորանց հիւսիսի երկրից, և կ'ժողովեմ նորանց երկրի ծագերից, և նորանց մէջ կոյրեր և կաղեր, յղի կանայք և ծնանող միասին, մեծ ժողովուրդ կ'դառնայ հոս։
9 Լալով կ'գան, և աղաչանքով կ'բերեմ նորանց, կ'տանեմ նորանց հեղեղատների մօտ ուղիղ ճանապարհով, որում չեն գայթագղիլ, որովհետև ես Իսրայէլի հայր եմ եղել, և Եփրեմ իմ անդրանիկ որդիս է։
10 Լսեցէ՛ք, ազգեր, Տիրոջ խօսքը, և պատմեցէ՛ք հեռաւոր կղզիների մէջ, և ասացէ՛ք, որ ցրուողը կ'հաւաքէ Իսրայէլը, և կ'պահպանէ նորան իր հօտի պէս հովիւի պէս։
11 Որովհետև Տէրը փրկեց Յակոբը, և ազատեց նորան նորա հզօրի ձեռքից։
12 Եւ կ'գան և կ'գոռան Սիոնի բարձրութեան վերայ, և կ'հոսին դէպի Տիրոջ բարիքները, ցորենի, գինու և իւղի, և ոչխարների և արջառների վերայ, և նորանց հոգին կ'լինի ինչպէս ջրած պարտէզ, և այլևս չեն տրտմի։
13 Այն ժամանակ կ'ուրախանայ կոյս աղջիկը պարի մէջ, և երիտասարդներ և ծերեր միասին, և կ'դարձնեմ նորանց սուգը ուրախութեան, և կ'մխիթարեմ նորանց, և կ'ուրախացնեմ նորանց իրանց տրտմութիւնից։
14 Եւ քահանայապետների հոգին կ'յագեցնեմ ճարպով, և իմ բարիքներովս կ'յագենայ իմ ժողովուրդը, ասում է Տէրը։
15 Այսպէս է ասում Տէրը, ձայն լսուեցաւ Հռամայում, սուգ և դառն լալիք, Հռաքէլ լալիս է իր որդիների համար, չ'կամեցաւ մխիթարուել իր որդիների համար, որովհետև չ'կան։
16 Այսպէս է ասում Տէրը, զսպի՛ր քո ձայնը լալիքից, և քո աչքերը արտասուքից, որովհետև քո գործերի վարձատրութիւն կ'լինի, ասում է Տէրը, և նորանք կ'դառնան թշնամու երկրից։
17 Եւ յոյս կայ քո վերջի համար, ասում է Տէրը, որ քո որդիները կ'դառնան իրանց սահմանները։
18 Լսելով լսեցի Եփրեմի տխրութիւնը, խրատեցիր ինձ և խրատուեցայ, ինչպէս անսանձ եզ, դարձրո՛ւր ինձ և դարձի կ'գամ, որովհետև դու Տէր իմ Աստուածս ես։
19 Ետ դառնալուցս զղջացի, և ուսուցանելուցս յետոյ ապաշխարեցի, ամաչեցի և ինքս ինձ նախատեցի, որովհետև իմ երիտասարդութեան նախատինքը կ'կրեմ։
20 Եփրեմ իմ սիրելի որդիս է, թէ մանկահասակ զաւակ, որովհետև ամեն անգամ որ խօսեցայ նորա հետ, յիշեցի նորան, վասն այսորիկ ներքինի կ'տրտմի նորա համար, ողորմելով կ'ողորմեմ նորան, ասում է Տէրը։
21 Կանգնի՛ր քեզ նշաններ, դի՛ր քեզ ուղղութեան սիւներ, ուշադրութիւն դարձո՛ւր ճանապարհին, ճանապարհին որով գնացիր, դարձի՛ր, ո՛վ կոյս Իսրայէլ, դարձի՛ր քո այս քաղաքները։
22 Մինչև ե՞րբ կ'տատանուիս, ո՛վ ետ դարձող դուստր, որովհետև Տէրը նոր բան ստեղծեց երկրի վերայ, էգ կ'պատէ արուին։
23 Այսպէս է ասում Տէրը Իսրայէլի Աստուածը, դարձեալ կ'ասեն այս խօսքը Յուդայի երկրում և նորա քաղաքներում, երբ դարձնեմ նորանց գերութիւնը, Տէր քեզ օրհնեսցէ, արդարութեան բնակարան, սուրբ լեռ։
24 Եւ Յուդա և նորա բոլոր քաղաքները միասին կ'բնակուին նորա մէջ, հողագործներ և հօտ տանողներ։
25 Որովհետև յագեցուցի յոգնած հոգին, և ամեն տխրած հոգի կ'լցրի։
26 Ասացի՛ր այդ, և քունս քաղցր եկաւ։
27 Ահա օրեր են գալիս, ասում է Տէրը, որ կ'սերմանեմ Իսրայէլի տունը և Յուդայի տունը մարդու սերմով և անասունի սերմով։
28 Եւ կ'լինի որ ինչպէս ես հսկեցի նորանց վերայ, որ քակեն և կործանեն, և կորուստ բերեն և չարչարեն, նոյնպէս կ'հսկեմ նորանց վերայ, որ շինեն և տնկեն, ասում է Տէրը։
29 Այն ժամանակ չ'կ'ասեն այլևս, հայրերը դառը խաղող կերան, և որդիների ատամները կ'կպչին։
30 Այլ ամեն մարդ իր անօրէնութեան համար կ'մեռնի, ամեն մարդ որ դառը խաղող կ'ուտի, նորա ատամները կ'կպչին։
31 Ահա օրեր են գալիս, ասում է Տէրը, որ նոր ուխտ կ'կապեմ Իսրայէլի տան հետ և Յուդայի տան հետ,
32 Ոչ այն ուխտի պէս որ կապեցի նորանց հարցն այն օրը որ բռնեցի նորանց աջ ձեռքից հանելու նորանց Եգիպտոսի երկրից, որ իմ ուխտս նորանք խզեցին, թէև ես նորանց տէր էի, ասում է Տէրը։
33 Այլ այս է ուխտը որ կ'կապեմ Իսրայէլի տան հետ յետ այն օրերի, ասում է Տէրը, իմ օրէնքը կ'դնեմ նորանց ներսումը, և նորանց սրտի վերան կ'գրեմ այն, և ես կ'լինեմ նորանց Աստուած, և նորանք կ'լինին ինձ համար ժողովուրդ։
34 Եւ այլ ևս մէկ մարդ իր ընկերին և մէկ մարդ իր եղբօրը չ'սովորեցնէ, ասելով թէ ճանաչեցէք Տիրոջը, որովհետև նորանք ամենքը կ'ճանաչեն ինձ, նորանց փոքրերիցը մինչև նորանց մեծերը, ասում է Տէրը. որովհետև ես կ'ներեմ նորանց անօրէնութիւնը, և նորանց մեղքերը այլ ևս չ'յիշեմ։
35 Այսպէս է ասում Տէրը, որ արեգակը դրել է օրւան լոյսի համար, լուսնի և աստղերի կանոնները գիշերուայ լոյսի համար, որ սաստում է ծովին, երբոր նորա ալիքները գոռում են. նորա անունը
36 Զօրաց Եհովայ է. եթէ վերանան այս կանոնները իմ առաջից, ասում է Տէրը, իսրայէլի սերունդն էլ կ'դադարին իմ առաջին ամեն ժամանակ ազգ լինելուց։
37 Այսպէս է ասում Տէրը, եթէ երկինքը կ'չափուի վերևումը, և կ'քննուին երկրի հիմունքը ցածումը, ես էլ կ'մերժեմ Իսրայէլի բոլոր սերունդը իրանց բոլոր արածների համար, ասում է Տէրը։
38 Ահա օրեր են գալիս, ասում է Տէրը, որ քաղաքը պիտի շինուի Տիրոջ համար, Անանէլի աշտարակից մինչև Անկեան դուռը,
39 Եւ պիտի էլի դուրս գնայ չափի լարը դէպի առաջ մինչև Գարեբի բլուրը և ետ դառնայ դէպի
40 Գոաթ։ Եւ դիակների ու մոխրի բոլոր ձորը և բոլոր արտերը մինչև Կեդրոն հեղեղատը մինչև Ձիերի դուռան անկիւնը դէպի արևելք, սուրբ պիտի լինի Տիրոջ համար, այլ ևս պիտի յուսխտեան չ'քանդուի և փուլ ածուի,

զովհետև իմ բարկութեան և իմ
սրտմտութեան համար եղաւ այս
քաղաքը ինձ համար այն օրիցը
որ նորան շինեցին մինչև այս օրը,
որ նորան վերացնեմ իմ առա-
32 ջիցը, Իսրայէլի որդւոյն և Յու-
դայի որդւոյ ամեն չարութեան
համար, որ նորանք գործեցին ինձ
բարկացնելու համար, նորանք և
նորանց թագաւորներն ու նորանց
իշխանները՝ նորանց քահանաները
և մարգարէները և Յուդայի մար-
դիկը և Երուսաղէմի բնակիչնե-
33 րը։ Եւ դէպի ինձ քամակ դար-
ձրին և ոչ թէ երես, թէպէտև
ես ուսուցանեցի և ուսուցի նոր
վրէ կենալով և ուսուցանե-
լով. բայց նորանք չէին լսեր
34 խրատ առնելու համար։ Այլ ի-
րանց պղծութիւնները դրին այն
տան մէջ, որի վերայ կոչուած էր
իմ անունը, որ նորան պղծէին.
35 Եւ շինեցին Բահաղի բարձրա-
ւանդակները, որ են Ենովմի որդւոյ
ձորումն է, որ իրանց տղերքն ու
աղջկերքը անցկացնեն Մողոքի
համար, որ ես նորանց չէի հրա-
մայել և մտքովս էլ չէր անցել
այդ գարշելութիւնը անելը Յու-
դային մեղանչել տալու համար։
36 Եւ հիմա սորա համար այսպէս
է ասում Տէրը՝ Իսրայէլի Աստ-
ուածը. Այս քաղաքի մասին, որ
դուք ասում էք թէ Բաբիլոնի
թագաւորի ձեռքն է տրուում
սրով, սովով և ժանտախտով.
37 Ահա ես նորանց պիտի ժողովեմ
այն բոլոր երկիրներիցը ուր որ ես
նորանց աքսորել եմ իմ բարկու-
թիւնովը և մեծ ցասումով, և
ետ պիտի բերեմ այս տեղը և
նորանց պիտի բնակեցնեմ ապա-
38 հովութիւնով։ Եւ նորանք ինձ
համար կ'լինեն ժողովուրդ, և ես
կ'լինեմ նորանց համար Աստ-
39 ուած։ Եւ ես կ'տամ նորանց
մէկ սիրտ և մէկ ճանապարհ, որ
ինձանից վախենան ամեն ժամա-
նակ, որ լաւ լինի իրանց համար
և իրանցից յետոյ իրանց որդ-
40 կանց համար։ Եւ ես յաւիտե-
նական ուխտ եմ դնում նորանց
հետ, որ ետ չդառնամ նորան-
ցից նորանց բարեութիւն անելուց,
և իմ երկիւղը կ'դնեմ նորանց
սրտերումը, որ ինձանից չ'հեռա-
նան։ Եւ ես պիտի ուրախանամ 41
նորանց բարեութիւն անելով, և
նորանց պիտի տնկեմ այս երկրում
հաւատարմութիւնով իմ բո-
լոր սրտովը և իմ բոլոր անձովը։
Որովհետև այսպէս է ասում Տէ- 42
րը. Ինչպէս որ ես բերի այս ամդի
վերայ այս բոլոր մեծ չարիքը, այն-
պէս էլ պիտի բերեմ նորանց վե-
րայ այն բոլոր բարիքը, որոնք ես
խոսել եմ նորանց մասին։ Եւ ա- 43
գարակներ պիտի առնուի այս
երկրումը, որի համար դուք ա-
սում էք թէ Ամայի է, առանց
մարդի և անասունի, Քաղդէացի-
ների ձեռքն է տրուել։ Փողով 44
ագարակներ են առնելու և մար-
հակում դրելու և կնքելու են և
վկաներով վկայելու են Բենիա-
մինի երկրումը, և Երուսաղէմի
շրջակայքումը, և Յուդայի քա-
ղաքներումը և սարի քաղաքնե-
րումը, և դաշտային քաղաքնե-
րումը և հարաւային քաղաքնե-
րումը. որովհետև ես եմ դար-
ձնելու նորանց գերութիւնը, ա-
սում է Տէրը։

ԳԼ. ԼԴ

Եւ Տիրոջ խօսքը եղաւ Երեմի- 1
ային երկրորդ անգամ և նա տա-
կաւին արգիլուած էր բանտի դա-
ւիթումը, ասելով. Այսպէս է 2
ասում Տէրը՝ այս անողը, և այս
կազմող Տէրը, որ սա հաստատո-
ւի, որի անունն Եհովայ է. Կան- 3
չիր ինձ և ես քեզ պիտի պա-
տասխանեմ, և ես քեզ պիտի
մեծամեծ և անհասանելի բաներ
իմացնեմ, որ դու չ'գիտես։ Որով- 4
հետև այսպէս է ասում Տէրը
Իսրայէլի Աստուածը այս քաղա-
քի տներին մասին և Յուդայի թա-
գաւորի տների մասին, որ քան-
դուել են պատնէշների և սուրի
համար. Գալիս են պատերազմե-
լու Քաղդէացիների հետ, և որ 5
նորանց լցնեն մարդի դիակներով,
որոնց ես պիտի զարկեմ իմ բար-
կութիւնովը և իմ սրտմտութիւ-
նովը, որովհետև ես ծածկել եմ
իմ երեսը այս քաղաքից նորանց
բոլոր չարութիւնների համար։
6 Ահա ես գնելու եմ նորա վերայ
սպեղանիք և բժշկութիւն, և
պիտի բժշկեմ նորանց, և պիտի
յայտնեմ նորանց խաղաղութեան
և ճշմարտութեան առատու-
7 թիւն. Եւ ես պիտի ետ դարձը-
նեմ Յուդայի գերութիւնը և Իս-
րայէլի գերութիւնը, և պիտի շի-
8 նեմ նորանց ինչպէս առաջ. Եւ
պիտի մաքրեմ նորանց իրանց ան-
օրէնութիւններիցը, որ մեղանչե-
ցին ինձ դէմ, և պիտի ներեմ
նորանց բոլոր անօրէնութիւնե-
րը, որով մեղանչեցին ինձ դէմ
և որով ինձ դէմ ապստամբեցին.
9 Եւ նա պիտի լինի ինձ համար ու-
րախութեան անուն, փառք և
պարծանք երկրի բոլոր ազգերի
համար, որոնք կ'լսեն այն բոլոր
բարիքը, որ ես կ'անեմ նորանց.
և նորանք պիտի վախենան և դո-
ղան այն բոլոր բարիքի համար և
այն բոլոր խաղաղութեան հա-
մար, որ ես նորան կ'անեմ։
10 Այսպէս է ասում Տէրը. Դեռ
այս տեղումը, որի համար դուք
ասում էք թէ Աւերակ է առանց
մարդի և առանց անասունի, Յու-
դայի քաղաքներումը, Երուսա-
ղէմի փողոցներումը որ աւերակ
է դարձած առանց մարդի և ա-
ռանց բնակչի և առանց անասու-
11 նի, Պիտի լսուի ցնծութեան ձայն
և ուրախութեան ձայն, փեսայի
ձայն և հարսի ձայն, նորանց ձայ-
նը որ կ'ասեն. Օրհնեցէք Զօրաց
Տիրոջը, որ բարի է Տէրը, և յա-
ւիտեան է նորա ողորմութիւնը,
և նորանց չայնը որ Տիրոջ տունը
գոհութեան նուէր են բերում,
Որովհետև ես ետ պիտի դարձը-
նեմ երկրի գերութիւնը ինչպէս
որ առաջ էր, ասում է Տէրը։
12 Այսպէս է ասում Զօրաց Տէրը.
Դեռ այս տեղումը, որ աւերակ է
առանց մարդի մինչև անասունը,
և նորա ամեն քաղաքներումը
պիտի լինեն հովիւների բնակա-
րաններ, որոնք հօտեր են մակա-
դեցնում։ Լեռնային քաղաքնե- 13
րումը, դաշտային քաղաքներու-
մը, և հարաւային քաղաքներու-
մը և Բենիամինի քաղաքներումը
և Երուսաղէմի շրջակայքումը և
Յուդայի քաղաքներումը դեռ հօ-
տեր են անց կենալու համարողի
ձեռքովը, ասում է Տէրը։
Ահա օրեր են գալիս ասում է 14
Տէրը, որ պիտի հաստատեմ այն
բարի խօսքը, որ ես ասել եմ Իս-
րայէլի տան համար և Յուդայի
տան համար։ Այն օրերը և այն 15
ժամանակը ես Դաւիթի համար
մի արդարութեան շառաւիղ պի-
տի բուսցնեմ, և նա պիտի իրա-
ւունք և արդարութիւն անէ
երկրի վերայ։ Այն օրերը Յուդան 16
պիտի ազատուի և Երուսաղէմը
պիտի ապահովութիւնով բնակ-
ուէ, և այս է որով նա պիտի
կոչուի, ԵՀՈՎԱՆ ՄԵՐ ԱՐԴԻ-
ՐՈՒԹԻՒՆԸ։ Որովհետև այսպէս 17
է ասում Տէրը, Չ'պիտի պակասէ
Դաւիթի համար մէկ մարդ նըս-
տող Իսրայէլի տան աթոռի վե-
րայ. Եւ Ղեւտացի քահանաներից 18
պակաս չ'պիտի լինի իմ առաջին
պղջակէզ մատուցանող, Հացի
ընծայ նուիրող և զոհ անող մարդ
ամեն ժամանակ։
Եւ եղաւ Տիրոջ խօսքը Երե- 19
միային ասելով. Այսպէս է ա- 20
սում Տէրը. Եթէ խափանէք իմ
ուխտը ցերեկը և իմ ուխտը գի-
շերը, որ չ'լինի ցերեկն ու գիշերն
իրանց ժամանակին, Իմ ուխտն 21
էլ կ'խափանուի իմ ծառայ Դա-
ւիթի հետ, որ նա որդի չ'ունե-
նայ թագաւորող իր աթոռի վե-
րայ. Նոյնպէս և իմ պաշտօնեայ
Ղեւտացի քահանաների հետ։
Ինչպէս որ չի համարուիլ երկնքի 22
զօրքը և չի համարուիլ ծովի ա-
ւազը, նոյնպէս պիտի շատացնեմ
իմ ծառայ Դաւիթի սերունդը, և
իմ պաշտօնեայ Ղեւտացիներին։
Եւ Տիրոջ խօսքը եղաւ Երե- 23
միային ասելով. Չե՞ս տեսնում 24
թէ ինչ են խօսում այս ժողո-
վուրդը ասելով թէ Ամն երկու
ազգատոհմերին, որոնց Տէրը
ընտրել էր, նորանց մերժել է.

և նորանք անարգում են իմ ժո-
ղովրդին, որ ազգ չ'լինի այլ ևս
25 նորանց առաջին։ Այսպէս է ա-
սում Տէրը. Եթէ ես ուխտ չ'ա-
նիմ ցերեկուայ և գիշերուայ հետ
և կանոններ չեմ դրել երկնքին
26 և երկրիս, Յակոբի և իմ ծառայ
Դաւիթի սերունդն էլ պիտի
մերժեմ, որ նորա սերունդիցը
չ'առնեմ իշխաններ Աբրահամի,
Իսահակի և Յակոբի սերունդի
վերայ, որովհետև նորանց գե-
րութիւնը պիտի դարձնեմ և նո-
րանց պիտի ողորմեմ։

ԳԼ. ԼԴ

1 Այն խօսքը որ եղաւ Երեմիային
Տիրոջ կողմանէ, երբ Բաբիլոնի
Նաբուգոդոնոսոր թագաւորը և
նորա բոլոր զօրքերը և երկրի բո-
լոր թագաւորութիւնները որ իր
իշխանութեան ձեռքումն էին, և
բոլոր ժողովուրդներովը պատե-
րազմում էին Երուսաղէմի դէմ
և նորա բոլոր քաղաքների դէմ,
ասելով.
2 Այսպէս է ասում Տէրը՝ Իս-
րայէլի Աստուածը. Գնա և խօ-
սիր Յուդայի թագաւոր Սեդե-
կիային և ասիր նորան. Այսպէս
է ասում Տէրը. Ահա ես այս քա-
ղաքը պիտի տամ Բաբիլոնի թա-
գաւորի ձեռքը, և նա պիտի այրէ
3 նորան կրակով։ Եւ դու պիտի
չ'պրծնես նորա ձեռքիցը, այլ
անպատճառ պիտի բռնուիս և
նորա ձեռքը մատնուիս, և քո
աչքերը պիտի տեսնեն Բաբիլոնի
թագաւորի աչքերը, և նորա բե-
րանը պիտի խօսէ քո բերանի
հետ, և պիտի գնաս Բաբիլոն։
4 Սակայն լսիր Տիրոջ խօսքը, ով
Յուդայի Սեդեկիա թագաւոր,
այսպէս է ասում Տէրը քո մասին.
5 Դու սրով պիտի չ'մեռնես։ Դու
խաղաղութիւնով պիտի մեռ-
նես. և ինչպէս որ քեզանից ա-
ռաջ եղող քո հայրերի առաջին
թագաւորների համար խունկեր
ծխեցին, նոյնպէս և պիտի ծխեն
քեզ համար, և Վա՛յ տէր, ա-
սելով, պիտի սուգ անեն քեզ վե-
րայ, որովհետև այս խօսքը ես խօ-
սեցի, ասում է Տէրը։
Եւ Երեմիա մարգարէն խօսեց 6
Յուդայի Սեդեկիա թագաւորի
հետ այս բոլոր խօսքերը Երուսա-
ղէմում։ Եւ Բաբիլոնի թագա- 7
ւորի զօրքը պատերազմում էր Ե-
րուսաղէմի դէմ և Յուդայի մնա-
ցած բոլոր քաղաքների դէմ, Լա-
քիսի և Ազեկայի դէմ, որովհետև
Յուդայի քաղաքների մէջ սորանք
էին մնացել պարսպաւոր քաղաք-
ներ։
Այն խօսքը որ եղաւ Երեմիային 8
Տիրոջ կողմանէ, երբոր Սեդեկիա
թագաւորը Երուսաղէմումն ե-
ղող ժողովրդի բոլորի հետ ուխտ
էր դրել, որ նորանք ազատու-
թիւն քարոզեն. Որ ամեն մարդ 9
իր ծառային և ամեն մարդ իր
աղախնին՝ Եբրայեցիին և Եբրա-
յեցուհիին ազատ արձակէ, որ
ոչ մէկը չ'ծառայեցնէ իր Հրէայ
եղբօրը։ Եւ լսեցին բոլոր իշխան- 10
ները և բոլոր ժողովուրդը, որոնք
ուխտ արին, որ ամեն մարդ իր
ծառային և ամեն մարդ իր ա-
ղախնին ազատ արձակէ, որ այլ
ևս նորան չ'ծառայեցնէ և նորանք
լսեցին ու արձակեցին։ Բայց յե- 11
տոյ ետ դառան և իրանց ազատ
արձակած ծառաներին և աղա-
խիններին ետ դարձրին և նորանց
բռնի ծառաներ և աղախիններ
արին։
Եւ Տիրոջ խօսքը եղաւ Երեմի- 12
ային Տիրոջ կողմանէ՝ ասելով.
Այսպէս է ասում Տէրը՝ Իսրայէ- 13
լի Աստուածը. Ես ուխտ արի ձեր
հայրերի հետ այն օրը որ նորանց
հանեցի Եգիպտոսի երկրիցը՝ ծա-
ռայութեան տանիցը ասելով թէ
Եօթը տարիից յետոյ ձեզանից 14
ամեն մարդ արձակէ իր Եբրայե-
ցի եղբօրը, որ ծախուած է քեզ
վերայ և ծառայել է քեզ վեց
տարի, դու նորան ազատ արձա-
կիր քո կշտիցը, բայց ձեր հայ-
րերը ինձ չ'հնազանդեցին և ա-
կանջ չ'դրին։ Եւ դուք այսօր 15
ետ էիք դառել և արել այն՝
ինչ որ ուղիղ է իմ աչքի առա-
ջին ամեն մարդ իր ընկերին ա-

զատութիւն քարոզելով, և ուխտ
էիք կապել իմ առաջին այն
տանը, որի վերայ կոչուած է իմ
16 անունը. Բայց էլի դառաք ու
պղծեցիք իմ անունը, և ետ դար-
ձրիք ամեն մարդ իր ծառային և
ամեն մարդ իր աղախնին, որոնց
ազատ արձակել էիք իրանց հա-
մար, և նորանց բռնադատեցիք,
որ ձեզ համար ծառաներ և ա-
ղախիններ լինեն։
17 Վասնորոյ այսպէս է ասում
Տէրը. Դուք ինձ չ'լսեցիք, որ ա-
զատութիւն քարոզէիք ամեն
մարդ իր եղբօրը և ամեն մարդ
իր ընկերին, ահա ես ձեզ հա-
մար ազատութիւն կ'քարոզեմ,
ասում է Տէրը, սուրին և ժանտ-
ախտին և սովին, և ձեզ պիտի
մատնեմ տանջանքի երկրի բոլոր
18 թագաւորութիւններին։ Եւ պի-
տի մատնեմ այն մարդիկը, որոնք
զանց են արել իմ ուխտը, որոնք
չեն կատարել այն ուխտի խօս-
քերը, որ արին իմ երեսի առա-
ջին, որ զուարակը բաժանեցին
երկու կտորի և կտորների միջովը
19 անցան, Այսինքն Յուդայի իշ-
խանները և Երուսաղէմի իշխան-
ները, պալատականները և քա-
հանաները և երկրի բոլոր ժողո-
վուրդը, որ անց կացաւ զուարա-
20 կի կտորների միջովը։ Եւ նորանց
պիտի մատնեմ իրանց թշնամի-
ների ձեռքը և նորանց հոգին
պահանջողների ձեռքը, և նորանց
դիակները պիտի կերակուր դառ-
նան երկնքի թռչունների համար
21 և երկրի գազանների համար։ Եւ
Յուդայի Սեդեկիա թագաւորին
և նորա իշխաններին պիտի տամ
իրանց թշնամիների ձեռքը և նո-
րանց հոգին պահանջողների ձեռ-
քը և Բաբիլոնի թագաւորի զօր-
քի ձեռքը որ ձեզանից ետ են
22 գնացել։ Ահա ես հրամայում
եմ, ասում է Տէրը, և նորանց
ետ եմ դարձնելու այս քաղաքի
վերայ, և նորանք պիտի պատե-
րազմեն նորա դէմ և նորան առ-
նեն և նորան այրեն կրակով, և
Յուդայի քաղաքները պիտի ա-
մայի անեմ՝ առանց բնակչի։

ԳԼ. ԼԵ

Այն խօսքը որ եղաւ Երեմիա 1
մարգարէին Տիրոջ կողմանէ Յու-
դայի թագաւոր Յովսիայի որդի
Յովակիմի օրերին, ասելով. Գնա 2
Ռեքաբեանց տունը և խօսիր նո-
րանց հետ, և տար նորանց Տիրոջ
տունը՝ սենեակների մէկը, և նո-
րանց գինի խմել տուր։ Եւ ես 3
Քաբասինիայի որդիի Երեմիայի
որդի Յեզոնիային և նորա եղ-
բայրներին և նորա բոլոր որդկան-
ցը վեր առայ, նաև բոլոր Ռե-
քաբեանց տունը, Եւ նորանց 4
տարի Տիրոջ տունը Աստուծոյ
մարդ Յեգդոզիայի որդի Անանի
որդկանց սենեակը, որ Սեղղումի
որդի Մաասիա դռնապանի սեն-
եակից վերև եղող իշխանների
սենեակի մօտն է, Եւ Ռեքաբ- 5
եանց տան որդկանց առաջին ա-
մաններ դրի գինիով լիքը և բա-
ժակներ, և ասեցի նորանց. Գինի
խմեցէք։ Եւ նորանք ասեցին. 6
Մենք գինի չենք խմում, որով-
հետև մեր հայրը՝ Ռեքաբի որդի
Յովնադաբը մեզ պատուիրել է
ասելով թէ Գինի չ'խմէք ոչ դուք
և ոչ ձեր որդիքը յաւիտեան։
Եւ տուն չ'շինէք, և սերմ չ'ցա- 7
նէք, և այգի չ'տնկէք, և այս բա-
ները պիտի չ'ունենաք. այլ վրան-
ներում բնակուեցէք ձեր բոլոր
օրերումը, որպէս զի շատ օրեր
ապրէք երկրի երեսին, ուր որ
դուք պանդուխտ էք։ Եւ մենք 8
լսում ենք մեր հայր Ռեքաբի որ-
դի Յովնադաբի ձայնին այն ամեն
բանում որ պատուիրել է մեզ,
որ գինի չ'խմենք մեր բոլոր օրե-
րումը՝ թէ մենք թէ մեր կանայ-
քը թէ մեր աղայքը թէ մեր աղ-
ջկերքը։ Եւ տուներ չ'շինենք 9
բնակուելու համար, և մենք այ-
գի, ագարակ և ցանք չենք ու-
նենում. Այլ վրաններում ենք 10
բնակվում, և հնազանդում ենք
ու անում այն ամենի համեմատ,
որ մեզ պատուիրել է մեր հայ-
րը՝ Յովնադաբը։ Եւ եղաւ երբոր 11
Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թա-
գաւորը եկաւ այս երկրի վերայ,

այն ժամանակ ասեցինք. Եկէք
գնանք Երուսաղէմ Քաղդէացի-
ների զօրքերի պատճառով և Ա-
սորիների զօրքերի պատճառով. և
բնակվում ենք Երուսաղէմումը։
42 Եւ եղաւ Տիրոջ խօսքը Երեմի-
43 այն ասելով. Այսպէս է ասում
Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուա-
ծը. Գնա և ասիր Յուդայի մարդ-
կանցը և Երուսաղէմի բնակիչ-
ներին. Մի՞թէ խրատ չէք առ-
նում որ իմ խօսքերին հնազան-
44 դէք, ասում է Տէրը։ Ռեքաբի
որդի Յովնադաբի խօսքերը, որ
պատուիրել է իր որդկանցը գինի
չ՛խմել, հաստատվում են, և նո-
րանք չեն խմում մինչև այսօր,
այլ հնազանդում են իրանց հօր
պատուէրին. բայց ես խօսեցի
ձեզ հետ կանուխ վեր կենալով
և խօսելով, բայց դուք ինձ չը
45 լսեցիք։ Եւ ես ձեզ մօտ ուղար-
կեցի իմ բոլոր ծառաներին՝ մար-
գարէներին, կանուխ վեր կենա-
լով և ուղարկելով, և ասեցի
Ետ դարձէք ամեն մարդ իր չար
ճանապարհիցը, և լաւացրէք ձեր
գործերը, և ուրիշ աստուածնե-
րի ետևից մի գնաք նորանց ծա-
ռայելու համար, այն ժամանակ
դուք կ՛բնակուէք այս երկրի վե-
րայ որ ես տուել եմ ձեզ և ձեր
հայրերին, բայց դուք ականջ չը
դրիք և չ՛լսեցիք ինձ։
46 Սակայն Ռեքաբի որդի Յովնա-
դաբի որդիքը կատարեցին իրանց
հօր պատուէրը, որ պատուիրել
էր իրանց, իսկ այս ժողովուրդը
47 ինձ չեն լսում։ Սորա համար այս-
պէս է ասում Զօրաց Տէր Աստ-
ուած՝ Իսրայէլի Աստուածը. Ահա
ես բերելու եմ Յուդայի վերայ
և Երուսաղէմի բոլոր բնակիչների
վերայ այն ամեն չարիքը, որ խօ-
սել եմ նորանց մասին, որովհետև
ես ասեցի նորանց, բայց նորանք
չ՛լսեցին, և կանչեցի նորանց,
բայց նորանք չ՛պատասխանեցին։
48 Եւ Երեմիան ասեց Ռեքաբ-
եանց տանը, Բէ Այսպէս է ա-
սում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստ-
ուածը. Որովհետև դուք լսել էք
ձեր հայր Յովնադաբի պատուէ-
րին, և պահում էք նորա ամեն
պատուէրները, և անում էք այն
ամենի համեմատ, որ նա ձեզ
պատուիրել է. Դորա համար այս-
պէս է ասում Զօրաց Տէրը՝ Իս-
րայէլի Աստուածը. Ռեքաբի որ-
դի Յովնադաբից միշտ իմ առա-
ջին կանգնող մարդ պիտի պա-
կաս չ՛լինի։

ԳԼ. ԼԶ.

Եւ եղաւ Յուդայի Թագաւոր 1
Յովսիայի որդի Յովակիմի չորրորդ
տարին, որ այս խօսքը եղաւ Ե-
րեմիային Տիրոջ կողմանէ ասե-
լով. Քեզ համար մի տոմս առ 2
և գրիր նորա վերայ այն բոլոր
խօսքերը, որ ասել եմ քեզ Իս-
րայէլի մասին և Յուդայի մասին
և բոլոր ազգերի մասին այն օրիցն
սկսած որ խօսեցի քեզ հետ Յով-
սիայի օրերիցը մինչև այս օրը։
Կարելի է կ՛լսէ Յուդայի տունը 3
այն բոլոր չարիքը, որ ես խորհել
եմ նորանց անելու, որպէս զի
ամեն մարդ իր չար ճանապար-
հիցը ետ դառնայ, և ես ներեմ
նորանց անօրէնութիւնը և նո-
րանց մեղքը։
Եւ Երեմիան կանչեց Ներիայի 4
որդի Բարուքին. և Բարուքը
գրեց Երեմիայի բերանից Տիրոջ
բոլոր խօսքերը, որ նա ասել էր
նորան, մի գրքի տոմսի վերայ։
Եւ Երեմիան պատուիրեց Բարու- 5
քին ասելով. Ես բանտարկուած
եմ՝ չեմ կարող գնալ Տիրոջ
տունը. Բայց դու գնա և կարդա 6
այդ տոմսիցը, որ դու գրեցիր
իմ բերանիցը, Տիրոջ խօսքերը՝
ժողովրդի ականջին Տիրոջ տանը
ծոմապահութեան օրը, նաև բո-
լոր Յուդայի մարդկանց ականջին,
որ գալիս են իրանց քաղաքների-
ցը, կարդաս նորանց։ Կարելի է 7
նորանց աղօթքը ընկնէ Տիրոջ ա-
ռաջը և ամեն մարդ ետ դառ-
նայ իր չար ճանապարհիցը, ո-
րովհետև մեծ է այն բարկու-
թիւնն ու սրտմտութիւնը, որ
Տէրը ասել է այս ժողովրդի դէմ։
Եւ Ներիայի որդի Բարուքը ա- 8

րաւ այն ամենի համեմատ, որ
նորան պատուիրել էր Երեմիա
մարգարէն, որ կարդայ Տիրոջ
խօսքերի գրքիցը Տիրոջ տանը։
9 Եւ եղաւ Յուդայի Թագաւոր
Յովսիայի որդի Յովակիմի հինգե-
րորդ տարին իններորդ ամսին ծո-
մապահութիւն քարոզեցին Տի-
րոջ առաջին Երուսաղէմի բոլոր
ժողովուրդը, և այն բոլոր ժողո-
վուրդը, որ եկել էր Յուդայի
10 քաղաքներից Երուսաղէմ։ Եւ
Բարուքը կարդաց գրքիցը Երե-
միայի խօսքերը Տիրոջ տանը Սա-
փան դպրի որդի Գամարիայի
սենեակումը վերի դաւիթումը,
Տիրոջ տան նոր դռան մուտքու-
մը ժողովրդի ականջի առաջին։
11 Եւ Սափանի որդիի Գամարիայի
որդի Միքիան լսեց Տիրոջ բոլոր
12 խօսքերը այն գրքի միջից. Եւ
իջաւ Թագաւորի տունը դպրի
սենեակը, և ահա այնտեղ նստած
էին բոլոր իշխանները՝ Եղիսամա
դպիրը և Սեմայիայի որդի Դա-
ղայիան և Աքբորի որդի Եղնա-
թանը և Սափանի որդի Գամա-
րիան և Անանիայի որդի Սեդե-
13 կիան և բոլոր իշխանները։ Եւ
Միքիան նորանց պատմեց այն ա-
մեն խօսքերը, որ լսել էր, երբոր
Բարուքը կարդում էր գրքիցը
14 ժողովրդի ականջին։ Եւ բոլոր
իշխանները ուղարկեցին Բարուքի
մօտ Քուսիի որդի Սեղեմիայի որ-
դիի Նաթանիայի որդի Յուդիին
ասելով. Այն տոմսը, որից դու
կարդացել ես ժողովրդի ական-
ջին, վեր առ և եկ. և Ներիայի
որդի Բարուքն առաւ այն տոմ-
սը իր ձեռքը և գնաց նորանց
15 մօտ։ Եւ նորանք ասեցին նորան.
Խնդրում ենք՝ նստիր, և կարդա
դորան մեր ականջին. Բարուքն
էլ կարդաց նորանց ականջին։
16 Եւ երբոր նորանք լսեցին այն բո-
լոր խօսքերը, դողալով իրար էին
նայում, և ասեցին Բարուքին.
Անպատճառ պատմելու ենք Թա-
17 գաւորին այդ բոլոր խօսքերը։ Եւ
Բարուքին հարցրին և ասեցին.
Խնդրում ենք՝ մեզ ասիր՝ ի՞նչպէս
գրեցիր այս բոլոր խօսքերը նորա
բերանիցը։ Եւ Բարուքն ասեց նո- 18
րանց. Իր բերանովը նա ինձ ա-
սում էր այս բոլոր խօսքերը և ես
գրում էի այս գրքում թանաքով։
Եւ իշխաններն ասեցին Բարու- 19
քին. Գնա և թաք կացէք դու
և Երեմիան, և մարդ չ՛իմանայ
թէ դուք որտեղ էք։
Եւ նորանք եկան որահը Թա- 20
գաւորի մօտ, բայց տոմսը պահ
տուին դպիր Եղիսամայի սենեա-
կումը, և բոլոր խօսքերը պատ-
մեցին Թագաւորի ականջին։ Եւ 21
Թագաւորը ուղարկեց Յուդիին,
որ առնէ տոմսը. և նա առաւ
նորան դպիր Եղիսամայի սենեա-
կից, և Յուդին կարդաց նորան
Թագաւորի ականջին և բոլոր իշ-
խանների ականջին, որ կանգնել
էին Թագաւորի կշտին։ Եւ Թա- 22
գաւորը կենում էր ձմերատանը
իններորդ ամսումը, և կրակարա-
նը վառուած էր նորա առաջին։
Եւ եղաւ երբոր Յուդին կար- 23
դաց երեք և չորս էջ, նա կտրեց
նորան դպրի դանակովը և գցեց
կրակը, որ կրակարանումն էր
մինչև որ բոլոր տոմսը վերջացաւ
կրակարանումն եղող կրակի վե-
րայ։ Եւ չ՛զարհուրեցան և չ՛պա- 24
տառեցին իրանց հանդերձները
ոչ Թագաւորը և ոչ նորա բոլոր
ծառաները, որ լսում էին այս
բոլոր խօսքերը. Թէպէտ և Եղնա- 25
թանը, Դաղայիան և Գամարիան
Թագաւորին պաղատեցին, որ
տոմսը չ՛այրէ. բայց նա նորանց
չ՛լսեց։ Եւ Թագաւորը հրամայեց 26
Յերամելին՝ Թագաւորի որդիին՝
և Եզրիէլի որդի Սարայիային և
Աբդիէլի որդի Սեղեմիային, որ
բռնեն դպիր Բարուքին և Երե-
միա մարգարէին, բայց Տէրը նո-
րանց ծածկեց։
Եւ Տիրոջ խօսքը եղաւ Երե- 27
միային, երբոր Թագաւորը այրել
էր այն տոմսը և այն խօսքերը,
որոնք Բարուքը գրել էր Երեմիայի
բերանից, ասելով՝ Դարձեալ քեզ 28
համար մի ուրիշ տոմս առ և
գրիր նորա վերայ այն առաջի խօս-
քերը, որոնք կային առաջի տոմ-
սի վերայ, որ Յուդայի Յովակիմ

29 Թագաւորը այրեց, Եւ Յուդայի
Յովակիմ Թագաւորին ասիր.
Այսպէս է ասում Տէրը. Դու
այրեցիր այս տոմսը ասելով Թէ
Ինչու ես գրել նորա վերայ Թէ
անպատճառ պիտի գայ Բաբիլո-
նի Թագաւորը և աւերէ երկիրը
և դադարեցնէ նորանից մարդն
ու անասունը։
30 Դորա համար այսպէս է ա-
սում Տէրը Յուդայի Յովակիմ
Թագաւորի մասին. Նորա հա-
մար նստող չ՚պիտի լինի Դաւի-
թի աթոռի վերայ և նորա դիակը
պիտի դէն գցուի ի ճնայ ցերեկը
տաքումը և գիշերը ցրտումը։
31 Եւ ես պիտի այցելեմ նորան և
նորա սերունդին և նորա ծառա-
ներին իրանց անօրէնութիւնների
համար, և պիտի բերեմ նորանց
վերայ և Երուսաղէմի բնակիչ-
ների վերայ և Յուդայի մարդ-
կանց վերայ այն բոլոր չարիքը որ
ես ասեցի նորանց, բայց նորանք
չ՚լսեցին։
32 Եւ Երեմիան մի ուրիշ տոմս
առաւ և տուաւ Ներիայի որդի
դպիր Բարուքին, և նա գրեց նո-
րա վերայ Երեմիայի բերանից այն
գրքի բոլոր խօսքերը, որ Յուդայի
Յովակիմ Թագաւորը այրել էր
կրակով, և դեռ նորանց վերայ
նորանց պէս շատ բաներ էլ ա-
ւելացուեցան։

ԳԼ. ԼԷ

1 Եւ Յովսիայի որդի Սեդեկիա
Թագաւորը Թագաւոր եղաւ Յո-
վակիմի որդի Յեքոնիայի տեղ,
որին Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր
Թագաւորը Յուդայի երկրումը
2 Թագաւոր դրաւ։ Բայց նա և նո-
րա ծառաները և երկրի ժողո-
վուրդը չ՚հնազանդեցին Տիրոջ
խօսքին, որ խօսեց Երեմիա մար-
գարէի ձեռովը։
3 Եւ Սեդեկիա Թագաւորը ու-
ղարկեց Սեղեմիայի որդի Յու-
քաղին և Մաասիայի որդի Սո-
փոնիա քահանային Երեմիա մար-
գարէի մօտ ասելով. Խնդրում
ենք՝ աղօթք արա մեզ համար
մեր Տէր Աստուծուն։ Եւ Երե- 4
միան մտնում ու դուրս էր գա-
լիս ժողովրդի մէջ, և նորան չէին
գրել բանտի տունը։ Եւ Փարա- 5
ւօնի զօրքը դուրս եկաւ Եգիպ-
տոսից, և Քաղդէացիք, որոնք
պաշարել էին Երուսաղէմը, լսե-
ցին նորանց լուրը և հեռացան
Երուսաղէմի վերայից։
Եւ Տիրոջ խօսքը եղաւ Երե- 6
միա մարգարէին ասելով. Այս- 7
պէս է ասում Տէրը՝ Իսրայէլի
Աստուածը. Այսպէս ասեցէք Յու-
դայի Թագաւորին, որ ձեզ ու-
ղարկել է ինձ մօտ ինձ հարցնե-
լու. Ահա Փարաւօնի զօրքը, որ
դուրս էր եկել ձեզ օգնելու,
ետ պիտի դառնայ իր երկիրը՝ Ե-
գիպտոս։ Եւ Քաղդէացիք էլ պի- 8
տի ետ դառնան ու պատերազ-
մեն այս քաղաքի դէմ, և պիտի
նորան առնեն և նորան կրակով
այրեն։ Այսպէս է ասում Տէրը. 9
Մի խաբէք ձեր անձերը ասելով
Թէ Քաղդէացիք անշուշտ գնա-
ցել են մեր վերայից. բայց նո-
րանք չեն գնալու։ Որովհետև ե- 10
թէ զարկէք Քաղդէացիների բո-
լոր զօրքը, որ պատերազմում է
ձեզ հետ, և նորանցից մի քանի
վիրաւորուած մարդիկ մնան, դար-
չեալ ամեն մարդ իր վրանումը
կանգնելով պիտի այս քաղաքը
կրակով այրեն։
Եւ եղաւ երբոր Քաղդէացինե- 11
րի զօրքը ետ քաշուեցաւ Երու-
սաղէմի վերայից Փարաւօնի զօր-
քի պատճառով, Այն ժամանակ 12
Երեմիան դուրս եկաւ Երուսա-
ղէմից, որ գնայ Բենիամինի եր-
կիրը որ բաժին առնէ այնտեղից
ժողովրդի մէջ. Եւ նա երբոր Բե- 13
նիամինի դռնումն էր, այնտեղ
էր մի ոստիկան՝ անունը Անանի-
այի որդիի Սեղեմիայի որդի Յե-
րիա. և նա բռնեց Երեմիա մար-
գարէին ասելով Թէ Դու անց-
նում ես Քաղդէացիների կողմը։
Բայց Երեմիան ասեց. Սուտ է, 14
ես Քաղդէացիների կողմը չեմ
անց կենում. իսկ նա նորան չը
լսեց, և Յերիան բռնեց Երեմիա-
յին, և նորան տարաւ իշխանների

15 մօտ։ Եւ իշխանները բարկացան
Երեմիայի վերայ և նորան ծեծե-
ցին և նորան գցեցին բանտը դպիր
Յովնաթանի տանը. որովհետև
դա բանտ էին շինել։
16 Երբոր Երեմիան մտաւ բանտը
և խուցերը, այնտեղ մնաց Երե-
17 միան շատ օրեր. Եւ Սեդեկիա
Թագաւորը մարդ ուղարկեց և
նորան առաւ, և Թագաւորը
հարցրեց նորան իր տանը ծա-
ծուկ և ասեց. Տիրոջ կողմանէ
խօսք կա՞յ. և Երեմիան ասեց՝
Կայ. և ասեց՝ Դու Բաբիլոնի Թա-
18 գաւորի ձեռքն ես տրուելու։ Եւ
Երեմիան ասեց Սեդեկիա Թա-
գաւորին. Ես ի՞նչ մեղք եմ ա-
րել քեզ դէմ և քո ծառաների
դէմ և այս ժողովրդի դէմ, որ
19 ինձ դրել էք բանտը։ Եւ ո՞ւր
են ձեր մարգարէները, որ մար-
գարէանում էին ձեզ ասելով
Թէ Բաբիլոնի Թագաւորը չ՚պի-
տի գայ ձեզ վերայ և այս երկրի
20 վերայ։ Եւ հիմա լսիր՝ խնդրեմ,
ով իմ տէր Թագաւոր, Թող իմ
աղաչանքը քո առաջին ընկնէ. և
ինձ ետ մի ուղարկիր դպիր Յով-
նաթանի տունը, որ այնտեղ չը
21 մեռնեմ։ Եւ Սեդեկիա Թագա-
ւորը պատուիրեց, և Երեմիային
դրին բանտի գաւիթումը, և նո-
րան տալիս էին ամեն օր մէկ նկա-
նակ հաց հացագործների փողո-
ցից, մինչև բոլոր հացը քաղա-
քից վերջացաւ։ Եւ Երեմիան մը-
նում էր բանտի գաւիթումը։

ԳԼ. ԼԸ

1 Եւ լսեցին Մատթանի որդի Սա-
փատիան և Փասուրի որդի Գո-
դողիան և Սեղեմիայի որդի Յու-
քաղը և Մեղքիայի որդի Փա-
սուրը այս խօսքերը, որ Երեմիան
խօսում էր բոլոր ժողովրդի հետ
2 ասելով. Այսպէս է ասում Տէ-
րը. Այս քաղաքում մնացողը
պիտի սրով, սովով և ժանտախ-
տով մեռնէ, իսկ դուրս եկող՝
Քաղդէացիների մօտ գնացողը պի-
տի ապրէ, և իր հոգին իրան հա-
մար աւարի պէս պիտի լինի, և
նա պիտի ապրէ։ Այսպէս է ա- 3
սում Տէրը. Անպատճառ այս քա-
ղաքը պիտի Բաբիլոնի Թագաւորի
զօրքի ձեռքը մատնուի, և նա
պէտք է առնէ նորան։ Եւ իշխան- 4
ներն ասեցին Թագաւորին. Խնդ-
րում ենք՝ Թող այս մարդը մեռ-
ցնուի, որովհետև այդ պատճա-
ռով դա թուլացնում է պատե-
րազմի մարդկանց ձեռքերը, ո-
րոնք մնացել են այս քաղաքում,
և բոլոր ժողովրդի ձեռքերը, նո-
րանց այսպիսի խօսքեր ասելով.
որովհետև այս մարդը խաղաղու-
թիւն չէ ուզում այս ժողովրդի
համար, այլ չարիք։ Եւ Սեդեկիա 5
Թագաւորն ասեց. Ահա նա ձեր
ձեռքին է, որովհետև Թագաւո-
րը ձեզ մօտ մի բան չէ կարող։
Եւ նորանք առան Երեմիային և 6
գցեցին նորան Թագաւորի որդի
Մեղքիայի դուրը որ բանտի դը-
ռանն էր. և չուաններով իջեցրին
Երեմիային, և դուրի մէջ ջուր
չ՚կար այլ տիղմ. և Երեմիան
ընկղմում էր տիղմի մէջ։
Եւ Եթէովպացի Աբդիմելէք 7
ներքինին, որ Թագաւորի տանն
էր լինում, լսեց, որ Երեմիային
գցել են դուրը. և Թագաւորը
նստել էր Բենիամինի դռանը։ Եւ 8
Աբդիմելէքը դուրս եկաւ Թա-
գաւորի տանիցը և խօսեց Թա-
գաւորի հետ ասելով. Ով տէր 9
իմ Թագաւոր, այս մարդիկը վատ
բան արին ամեն ինչ որ Երեմիա
մարգարէին արին, որ նորան գցե-
ցին դուրը. և նա կ՚մեռնէ նորա
տակին սովի պատճառով, որով-
հետև քաղաքումը այլ ևս հաց
չ՚կայ։ Եւ Թագաւորը պատուի- 10
րեց Եթէովպացի Աբդիմելէքին
ասելով. Վեր առ այստեղից քեզ
հետ երեսուն մարդ և հանիր Ե-
րեմիա մարգարէին այն դուրիցը
նորա մեռնելուց առաջ։ Եւ Աբ- 11
դիմելէքն առաւ այն մարդիկն իր
մօտ և տարաւ նորանց Թագաւո-
րի տունը շտեմարանի տակը, և
այնտեղից առաւ պատառոտած
շորեր և հինացած շորեր և իջե-
ցրեց նորանց չուաններով դուրը
Երեմիայի մօտ։ Եւ Եթէովպացի 12

Աբդիմելէքն ասեց Երեմիային.
Այդ պատառոտած և հինացած
շորերը դիր կռներիդ տակին չու-
անների տակ. և Երեմիան այն-
13 պէս արաւ։ Եւ Երեմիային վեր
քաշեցին չուաններով և նորան
հանեցին գուբիցը. և Երեմիան
կենում էր բանտի գաւիթումը։
14 Եւ Սեդեկիա թագաւորը մարդ
ուղարկեց և տարաւ Երեմիա
մարգարէին իր մօտ այն երրորդ
մուտքը որ Տիրոջ տան մօտ է,
և թագաւորն ասեց Երեմիային.
Ես քեզանից մի բան եմ հար-
ցնելու, ինձանից ոչինչ չ'ծած-
15 կես։ Եւ Երեմիան ասեց Սեդե-
կիային. Եթէ քեզ պատմեմ,
մի՞թէ ինձ չես սպանել տալ. և
եթէ քեզ խրատ տամ, ինձ չես
16 լսիլ։ Եւ Սեդեկիա թագաւորը
ծածուկ երդում արաւ Երեմի-
ային ասելով. Կենդանի է Տէրը,
որ ստեղծել է մեր այս հոգին,
որ քեզ չեմ մեռցնիլ և քեզ
չեմ տալ այս մարդկանց ձեռ-
քը, որ պահանջում են քո հո-
17 գին։ Եւ Երեմիան ասեց Սեդե-
կիային. Այսպէս է ասում Եհո-
վայ Զօրաց Աստուածը՝ Իսրայէլի
Աստուածը. Եթէ իրաւ դուրս
գաս Բաբիլոնի թագաւորի իշ-
խանների մօտ, այն ժամանակ քո
անձը ողջ պիտի մնայ, և այս քա-
ղաքը չի այրուիլ կրակով. և ողջ
18 կ'մնաս դու և քո տունը։ Իսկ
եթէ դուրս չ'գաս Բաբիլոնի թա-
գաւորի իշխանների մօտ, այն ժա-
մանակ այս քաղաքը պիտի Քաղ-
դէացիների ձեռքը մատնուի, և
նորանք պիտի այրեն նորան կրա-
կով. և դու էլ չես պրծնիլ նո-
19 րանց ձեռքիցը։ Եւ Սեդեկիա
թագաւորն ասեց Երեմիային. Ես
վախենում եմ Հրէաներիցը, ո-
րոնք անցել են Քաղդէացիների
կողմը, որ մի գուցէ ինձ նորանց
ձեռքը տան, և նորանք անար-
20 գեն ինձ։ Եւ Երեմիան ասեց.
Չեն տալ. խնդրեմ՝ լսիր Տիրոջ
ձայնին, որ ես քեզ ասում եմ,
այն ժամանակ լաւ կ'լինի քեզ
համար, և քո անձը ողջ կ'մնայ։
21 Իսկ եթէ չ'ուզես դուրս գնալ,
ահա այն բանը որ Տէրը ցոյց
տուաւ ինձ։ Եւ ահա այն բոլոր 22
կանայքը, որոնք մնացել են Յու-
դայի թագաւորի տանը, պիտի
դուրս տարուին Բաբիլոնի թա-
գաւորի իշխանների մօտ, և նո-
րանք պիտի ասեն. Քեզ հրապու-
րեցին և քեզ յաղթեցին քո բա-
րեկամները. խրուեցան տիղմի մէջ
քո ոտները, նորանք ետ քաշուե-
ցան։ Եւ քո բոլոր կանանցը և 23
քո որդկանցը պիտի դուրս հա-
նեն Քաղդէացիների մօտ, և դու
էլ չես պրծնիլ նորանց ձեռքիցը.
այլ պիտի բռնուիս Բաբիլոնի թա-
գաւորի ձեռքովը, և այս քաղա-
քը պիտի այրես կրակով։ Եւ Սե- 24
դեկիան ասեց Երեմիային. Ոչ մի
մարդ չ'իմանայ այս խօսքերը, և
դու չես մեռնիլ. Եւ երբոր իշ- 25
խանները լսեն, որ ես քեզ հետ
խօսել եմ և դան քեզ մօտ և
քեզ ասեն. Մեզ ասիր՝ ի՞նչ ես
ասել թագաւորին, մեզանից մի
ծածկիր, և մենք էլ քեզ չենք
սպանիլ, և ի՞նչ ասեց քեզ թա-
գաւորը. Այն ժամանակ ասես 26
նորանց. Ես աղաչանքս մատուցրի
թագաւորին, որ ինձ ետ չ'ուղար-
կէ Յովնաթանի տունը, որ այն-
տեղ մեռնեմ։ Եւ բոլոր իշխան- 27
ները եկան Երեմիայի մօտ և նո-
րանից հարցրին, և նա պատմեց
այս բոլոր խօսքերի համեմատ որ
թագաւորը հրամայել էր իրան,
և դադարեցին նորա հետ խօսե-
լուց, որովհետև բանը չ'յայտ-
նուեցաւ։ Եւ Երեմիան ետ դա- 28
ռաւ բանտի գաւիթը մինչև այն
օրը, որ Երուսաղէմն առնուեցաւ.
և եղաւ այնտեղ, երբոր առ-
նուեցաւ Երուսաղէմը։

ԳԼ. ԼԹ

Յուդայի թագաւոր Սեդեկիայի 1
իններորդ տարուայ տասներորդ
ամսումը եկաւ Բաբիլոնի Նաբու-
գոդոնոսոր թագաւորը և նորա
բոլոր զօրքը Երուսաղէմ և պաշա- 2
րեցին նորան։ Սեդեկիայի տասն-
եմէկերորդ տարուայ չորրորդ
ամսումը՝ ամսի իննին քաղաքը

3 նուաճուեցաւ։ Եւ Բաբիլոնի թա-
գաւորի բոլոր իշխանները եկան
նստեցին միջին դռանը այսինքն
Ներգեղսարասարը, Սամեգարնա-
բաւը, Սարսեքիմ՝ ներքինապետը,
Ներգեղսարասար մոգպետը և
Բաբիլոնի թագաւորի բոլոր մնա-
ցած իշխանները։
4 Եւ երբոր նորանց տեսան Յու-
դայի թագաւոր Սեդեկիան և
բոլոր պատերազմի մարդիկը, փա-
խան և քաղաքիցը դուրս եկան
գիշերը թագաւորի պարտէզի ճա-
նապարհովը երկու պարսպի միջի
դռնովը. և ինքը դուրս եկաւ
5 դաշտի ճանապարհը։ Եւ Քաղ-
դէացիների զօրքերը ընկան նո-
րանց ետևից և հասան Սեդեկի-
ային Երիքովի դաշտերումը և նո-
րան բռնեցին և տարին Բաբիլո-
նի Նաբուգոդոնոսոր թագաւորի
մօտ Եմաթ երկրի Ռեբղայի մէջ,
և նա վճռեց նորա դատաստանը։
6 Եւ Բաբիլոնի թագաւորը մոր-
թեց Սեդեկիայի որդկանցը նորա
աչքի առաջին Ռեբղայումը և
Բաբիլոնի թագաւորը Յուդայի
բոլոր ազնուականներին էլ մոր-
7 թեց։ Եւ կուրացրեց Սեդեկիայի
աչքերը, և նորան կապեց պղնձի
շղթաներով, նորան Բաբիլոն տա-
8 նելու համար։ Եւ Քաղդէացիք
այրեցին թագաւորի տունը և ժո-
ղովրդի տները կրակով, և Երու-
սաղէմի պարիսպները քանդեցին։
9 Եւ քաղաքումը մնացած ժողո-
վրդի մնացորդը և այն փախստա-
կաններին, որոնք անցել էին նորա
կողմը, և մնացած ժողովրդի մնա-
ցորդը Նաբուզարդան դահճա-
10 պետը գերի տարաւ Բաբիլոն։ Եւ
աղքատ ժողովրդիցը, որ ոչինչ
չ'ունէին, թողեց Նաբուզարդան
դահճապետը Յուդայի երկրումը,
և նորանց տուաւ այգիներ և
արտեր նոյն ժամանակին։
11 Եւ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր
թագաւորը պատուիրեց Երեմի-
այի մասին դահճապետ Նաբու-
12 զարդանին ասելով. Նորան առ
և աչքդ թող նորա վերայ լինի
և նորան ոչինչ չար բան չ'անես,
այլ ինչպէս որ քեզ ասէ, նորան
այնպէս արա։ Եւ Նաբուզարդան 13
դահճապետը և Նաբուսազաբան
ներքինապետը և Ներգեղսարա-
սար մոգպետը և Բաբիլոնի թա-
գաւորի բոլոր նախարարները ու-
ղարկեցին, Այսինքն սորանք մարդ- 14
ուղարկեցին և առան Երեմիային
բանտի գաւիթից, և տուին նո-
րան Սափանի որդիի Աքիկամի
որդիի Գոդոդիային, որ նորան
դուրս բերէ տանէ տունը. և նա
բնակուեց ժողովրդի մէջ։
Եւ Տիրոջ խօսքը եղաւ Երե- 15
միային, երբոր նա բանտի գաւի-
թումը արգելուած էր, ասելով.
Գնա ասիր Եթէովպացի Աբդի- 16
մելէքին թէ Այսպէս է ասում
Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուա-
ծը. Ահա ես պիտի բերեմ իմ
խօսքերը այս քաղաքի վերայ 'ի
չարն, և ոչ թէ 'ի բարին, և կը
կատարուին քո առաջին այն օրը։
Եւ կ'ազատեմ քեզ այն օրը, ա- 17
սում է Տէրը, և դու չես տրուիլ
այն մարդկանց ձեռքը, որոնց ա-
ռաջին դու վախենում ես։ Որով- 18
հետև ես քեզ անպատճառ պի-
տի պրծացնեմ, և դու սրով չես
ընկնիլ, և քո հոգին քեզ հա-
մար աւարի պէս կ'լինի, որովհե-
տև դու ինձ յուսացիր, ասում
է Տէրը։

ԳԼ. Խ

Այն խօսքը որ եղաւ Երեմիային 1
Տիրոջ կողմանէ երբոր Նաբու-
զարդան դահճապետը նորան Ռա-
մայից արձակել էր և յետոյ նո-
րան կապել շղթաներով այն բո-
լոր Երուսաղէմի և Յուդայի գե-
րիների մէջ, որ գերի էին տար-
վում Երուսաղէմ։
Եւ դահճապետը առաւ Երե- 2
միային և նորան ասեց. Քո Տէր
Աստուածը խօսել է այս չարիքը
այս տեղի վերայ. Եւ բերել է և 3
արել է Տէրը ինչպէս որ խօսել
էր, որովհետև դուք մեղանչել
էք Տիրոջ դէմ և չէք լսել նորա
ձայնին, և ձեզ եղաւ այս բանը։
Եւ հիմա ես ահա այսօր քեզ 4
արձակում եմ այդ շղթաներից,

որ քո ձեռքերի վերայ են. եթէ
քո աչքերին հաճելի է Երևում
ինձ հետ Բաբիլոն գնալը, եկ, և
ես իմ աչքը քեզ վերայ կ'դնեմ.
իսկ եթէ վատ է Երևում քո աչ-
քին ինձ հետ Բաբիլոն գնալը,
թող մնայ. տես՝ բոլոր երկիրը
քո առաջին է. ուր որ լաւ և ու-
ղիղ է Երևում քո աչքին գնալու՝
5 գնա։ Ուրեմն դեռ Սափանի որ-
դի Աքիկամի որդի Գոդողիան,
որին Բաբիլոնի թագաւորը Յու-
դայի քաղաքների վերայ է դրել,
ետ չ'դառած, դու դարձիր և
բնակուիր նորա հետ ժողովրդի
մէջ, կամ ամեն ուր որ հաճելի
է քո աչքին որ երթաս, գնա։
Եւ դահճապետը նորան պաշար
և պարգև տուաւ և արձակեց
նորան։
6 Եւ Երեմիան եկաւ Մասփա
Աքիկամի որդի Գոդողիայի մօտ
և բնակուեց նորա հետ այն ժո-
ղովրդի մէջ, որ մնացել էր երկ-
րումը։
7 Եւ երբոր լսեցին դաշտումը ե-
ղող զօրքերի գլխաւորները՝ ի-
րանք և իրանց մարդիկը, որ Բա-
բիլոնի թագաւորը վերակացու է
դրել երկրի վերայ Աքիկամի որ-
դի Գոդողիային և նորան յանձ-
նել է այն մարդկանցն ու կա-
նանցը և երեխաներին և երկրի
աղքատ լինողներիցը, որոնցից Բա-
8 բիլոն գերի չէին տարուած, Ե-
կան Մասփա Գոդողիայի մօտ,
այսինքն Նաթանիայի որդի Իս-
մայէլը և Կարէի որդիքը Յօհա-
նանը և Յոնաթանը, և Թան-
հումեթի որդի Սարայիան և Նե-
տոփաթացի Եփայի որդիքը և
Մաքաթիի որդի Յեզոնիան՝ ի-
9 րանք և իրանց մարդիկը։ Եւ Սա-
փանի որդիի Աքիկամի որդի Գո-
դողիան երդում արաւ նորանց
և նորանց մարդկանցը, ասելով.
Մի վախենաք Քաղդէացիներին
ծառայելուց. բնակուեցէք այս
երկրում և ծառայեցէք Բաբի-
լոնի թագաւորին, և ձեզ հա-
10 մար լաւ կ'լինի։ Եւ ահա ես կե-
նում եմ Մասփայում, որ կանգ-
նեմ այն Քաղդէացիների առաջին
որ գալիս են մեզ մօտ. և դուք
գինի և ամառային պտուղներ և
իւղ ժողովեցէք և դրէք ձեր ա-
մաններումը և բնակուեցէք ձեր
քաղաքներումը, որոնք բռնած
էք։ Եւ երբոր լսեցին այն ամեն 11
Հրէաները, որ Մովաբումն ու Ամ-
մոնի որդկանց մէջ և Եդովմումն
և բոլոր երկիրներումն էին, որ
Բաբիլոնի թագաւորը մնացորդ է
թողել Հրէաստանումը, և նո-
րանց վերայ դրել է Սափանի որ-
դի Աքիկամի որդի Գոդողիային,
Այն ժամանակ ետ դառան բոլոր 12
Հրէաները այն բոլոր երկիրներից,
ուր որ աքսորուած էին, և եկան
Մասփա Հրէաստանի երկիրը Գո-
դողիայի մօտ. և ժողովեցին գի-
նի և ամառային պտուղ խիստ
շատ։
Եւ Կարէի որդի Յօհանանը և 13
դաշտումը եղող բոլոր զօրավար-
ները եկան Մասփա Գոդողիայի
մօտ. Եւ ասեցին նորան. Գիտե՞ս 14
որ Ամմոնի որդկանց թագաւորը
Բաալիս ուղարկել է Նաթանիայի
որդի Իսմայէլին քո անձը սպա-
նելու համար. բայց Աքիկամի
որդի Գոդողիան նորանց չ'հաւա-
տաց։ Եւ Կարէի որդի Յօհանանը 15
ասեց Մասփայում ծածուկ Գո-
դողիային՝ թէ թող գնամ և
սպանեմ Նաթանիայի որդի Իս-
մայէլին, և ոչ մի մարդ չ'իմա-
նայ. ի՞նչու համար նա սպանէ
քո անձը, և ցրուին բոլոր Հրէ-
այքը, որոնք ժողովուել են քեզ
մօտ և կորչէ Հրէից մնացորդը։
Եւ Աքիկամի որդի Գոդողիան 16
ասեց Կարէի որդի Յօհանանին.
Մի անիր այդ բանը, որովհետև
դու սուտ ես խօսում Իսմայէլի
մասին։

ԳԼ. ԽԱ

Եւ եղաւ եօթներորդ ամսումը, 1
որ եկաւ թագաւորազն Եղիսա-
մայի որդիի Նաթանիայի որդի
Իսմայէլը, և թագաւորի նախա-
րարները և տասը մարդ իր հետը,
Մասփա Աքիկամի որդի Գոդո-
ղիայի մօտ, և միասին հաց կե-

2 րան այնտեղ Մասփայումը։ Եւ
վեր կացաւ Նաթանիայի որդի
Իսմայէլը և այն տասը մարդիկը,
որոնք նորա հետն էին, և զար-
կեցին Սափանի որդիի Աքիկամի
որդի Գոդողիային սրով և սպա-
նեցին նորան, որին Բաբիլոնի թա-
գաւորը դրել էր երկրի վերայ,
3 Եւ այն բոլոր Հրէաներին, որոնք
Գոդողիայի հետ Մասփայումն
էին, և այն Քաղդէացիներին էլ,
որոնք գտնվում էին այնտեղ.
այն պատերազմականներին կո-
տորեց Իսմայէլը։
4 Եւ եղաւ որ Գոդողիային մեռ-
ցնելու հետևեալ օրը դեռ մարդ
5 չ'գիտէր, Սիւքեմից, Սելովից և
Սամարիայից ութսուն մարդիկ
եկան իրանց մօրուքները ածիլած
և հանդերձները պատառած և
մարմինները կտորած, և նորանց
ձեռքին ընծաներ և կնդրուկ Տի-
բոջ տանը մատուցանելու հա-
6 մար։ Եւ Նաթանիայի որդի Իս-
մայէլը դուրս եկաւ նորանց դէմ
Մասփայից, և գնալիս գնում էր
ու լաց լինում. և երբոր նորանց
հասաւ, այն ժամանակ ասեց նո-
րանց. Եկէք Աքիկամի որդի Գո-
7 դողիայի մօտ։ Եւ եղաւ հէնց որ
նորանք եկան քաղաքի մէջը,
Նաթանիայի որդի Իսմայէլը նո-
րանց կոտորեց այն փոսի մէջ՝
ինքը և իր հետ եղող մարդիկը։
8 Եւ տասը մարդ գտնուեցան նո-
րանց մէջ, որ ասեցին Իսմայէ-
լին. Մեզ մի սպանիր, որովհետև
մենք դաշտումը ցորենի, գարիի,
իւղի և մեղրի ծածուկ շտեմա-
րաններ ունինք. և նա թող
տուաւ, և նորանց չ'սպանեց ի-
րանց եղբարց մէջ։
9 Եւ այն փոսը, ուր որ Իսմայէլը
ածեց այդ բոլոր մարդկանց դի-
ակները, որոնց նա սպանեց Գո-
դողիայի կշտին, այն է որ Ասա
թագաւորը շինել էր Իսրայէլի
Բաասա թագաւորի պատճառով.
Նաթանիայի որդի Իսմայէլը լցը-
ցեց նորան մեռելներով։
10 Եւ Իսմայէլը գերի արաւ Մաս-
փայում եղող ժողովրդի բոլոր
մնացորդը՝ թագաւորի աղջկանցը
և Մասփայում մնացած բոլոր ժո-
ղովուրդը, որոնց վերայ դահճա-
պետ Նաբուզարդանը դրել էր
Աքիկամի որդի Գոդողիային. և
Նաթանիայի որդի Իսմայէլը նո-
րանց գերի արաւ ու գնաց, որ
անցնէ Ամմոնի որդկանց մօտ։
Եւ Կարէի որդի Յօհանանը և 11
նորա հետ եղող բոլոր զօրավար-
ները լսեցին այն բոլոր չարիքը,
որ Նաթանիայի որդի Իսմայէլը
արել էր. Եւ առան բոլոր մարդ- 12
կանցը և գնացին Նաթանիայի
որդի Իսմայէլի հետ պատերազ-
մելու, և նորան գտան Գաբաւո-
նի շատ ջրերի մօտ։ Եւ երբոր 13
Իսմայէլի մօտ եղող բոլոր ժողո-
վուրդը տեսան Կարէի որդի Յօ-
հանանին և նորա հետ եղող բո-
լոր զօրավարներին, ուրախացան։
Եւ շուռ տուաւ այն բոլոր ժո- 14
ղովուրդը, որին Իսմայէլը գերի
էր առել Մասփայից, և ետ դա-
ռան ու գնացին Կարէի որդի Յօ-
հանանի մօտ։ Իսկ Նաթանիայի 15
որդի Իսմայէլը փախաւ ութը
մարդով Յօհանանի երեսից և
գնաց Ամմոնի որդկանց մօտ։
Եւ Կարէի որդի Յօհանանը և 16
նորա հետ եղող բոլոր զօրավար-
ները առան ժողովրդի բոլոր մնա-
ցորդը, որը Նաթանիայի որդի
Իսմայէլը գերի էր տարել Մաս-
փայից Աքիկամի որդի Գոդողի-
ային սպանելուց յետոյ՝ այսինքն
այն պատերազմող քաջ մարդիկը
և կանայքը և երեխայքը և ներ-
քինիները, որոնց գերի էր արել
Գաբաւոնից. Եւ գնացին ու մնա- 17
ցին Բեթլէհեմի կշտին եղող Քա-
մաամի պանդոկումը, որ գնան
մտնեն Եգիպտոս Քաղդէացիների
երեսիցը։ Որովհետև վախենում 18
էին նորանցից, որովհետև Նա-
թանիայի որդի Իսմայէլը սպանել
էր Աքիկամի որդի Գոդողիային,
որին Բաբիլոնի թագաւորը վերա-
կացու էր դրել երկրի վերայ։

ԳԼ. ԽԲ

Եւ մօտեցան բոլոր զօրավարնե- 1
րը և Կարէի որդի Յօհանանը և

Ովսեհիայի որդի Յեղոնիան և բոլոր ժողովուրդը փոքրիցը մինչև
2 մեծը, Եւ ասեցին Երեմիա մարգարէին. Թող մեր աղաչանքը քո առաջին ընդունելի լինի, և մեզ համար աղօթք արա քո Տէր Աստուծուդ այս բոլոր մնացորդի համար, որովհետև շատից քիչ ենք մնացել, ինչպես որ աչքդ
3 մեզ տեսնում է։ Եւ քո Տէր Աստուածը մեզ իմացնէ մեր գնալու ճանապարհը և մեր անելու
4 բանը։ Եւ Երեմիա մարգարէն ասեց նոցանց. Լսեցի, ահա ես աղօթք կ'անեմ ձեր Տէր Աստուծուն ձեր խօսքերի համեմատ, և ինչ պատասխան որ Տէրը ձեզ համար տալու լինի, ես ձեզ կ'իմացնեմ, ձեզանից մի բան ես
5 չեմ պահել։ Եւ նոքանք ասեցին Երեմիային. Տէրը մեր մէջը ճշմարիտ և հաւատարիմ վկայ լինի, որ անպատճառ կ'անենք այն ամեն խօսքերի համեմատ, որոնք քո Տէր Աստուածը կ'ուղարկէ քեզ մեզ մօտ մեր մասին,
6 այնպէս կ'անենք. թէ բարի թէ չար, մենք պիտի լսենք մեր Տէր Աստուածդ ձայնին, որի մօտ մենք քեզ ուղարկում ենք, որպէս զի մեզ համար լաւ լինի մեր Տէր
7 Աստուածդ ձայնին լսելով։ Եւ ասաը օրից յետոյ եղաւ Տիրոջ
8 խօսքը Երեմիային. Եւ նա կանչեց Կարէհ որդի Յօհանանին և նորա հետ եղող բոլոր զօրավարներին և բոլոր ժողովրդին փոքրից
9 մինչև մեծը, Եւ նոցանց ասեց. Այսպէս է ասում Տէրը՝ Իսրայէլի Աստուածը, որի մօտ դուք ինձ ուղարկեցիք, որ ձեր աղօթ-
10 քը մատուցանեմ նորան. Եթէ այս երկրումը բնակուելու լինէք, ես էլ պիտի չէն անեմ ձեզ և պիտի չ'քանդեմ, և ես պիտի անկեմ ձեզ և պիտի չ'խլեմ, որովհետև զղջացի այն չարիքի
11 համար, որ արի ձեզ։ Մի վախենաք Բաբելոնի թագաւորի երեսից, որի երեսիցը դուք վախենում էք. նոքանից մի վախենաք, ասում է Տէրը, որովհետև ես ձեզ հետ եմ ձեզ ազատելու
12 և ձեզ փրկելու նորա ձեռքիցը. Եւ ձեզ ողորմութիւններ պիտի ընծայէ ասմ, և նա ձեզ պիտի
13 ողորմէ, և նա ձեզ ետ պիտի դարձնէ ձեր երկիրը։ Եւ եթէ ասէք. Մենք չենք կենալ այս երկրումը՝ ձեր Տէր Աստուծոյ
14 ձայնին չլսելով. Ասելով թէ Ոչ, այլ պէտք է գնանք Եգիպտոսի երկիրը, որ չ'տեսնք պատերազմ չենք տեսնիլ և փողի ձայնը չենք լսիլ, և հացի համար չենք մռնվիլ, և այնտեղ կ'բնակուենք.
15 Ուրեմն հիմա Տիրոջ խօսքը լսեցէք, ով Յուդայի մնացորդ. Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Եթէ դուք ձեր երեսները ուղղէք Եգիպտոս գնալու և գնաք այնտեղ պան-
16 դխանալու, Այն ժամանակ այն սուրը, որից դուք վախենում էք, այնտեղ Եգիպտոսի երկրումը պիտի հասնէ ձեզ, և այն սովը, որից դուք զարհուրում էք, այնտեղ պիտի փակչէ ձեր հետից Եգիպտոսումը, և այնտեղ պիտի
17 մեռնէք, Եւ այն ամեն մարդիկը, որոնք իրանց երեսները ուղղել են Եգիպտոս գնալու համար, որ այնտեղ պանդխտանան, պիտի մեռնեն սրով, սովով և ժանտախտով, և նոքանցից ազատուողը
18 պրծնող պիտի չլինի այն չարեաց երեսիցը, որոնք ես պիտի բերեմ ձեզ վերայ։
Որովհետև այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Ինչպես որ Թափուեցաւ իմ բարկութիւնն ու իմ սրտմտութիւնը Երուսաղէմի բնակիչների վերայ, նոյնպէս պիտի Թափուի ձեզ վերայ իմ սրտմտութիւնը, երբոր դուք Եգիպտոս գնաք, և դուք պիտի լինիք անէծք և զարմանք և նզովք ու նախատինք. և այլ ևս չէք տեսնիլ այստեղը։
19 Տէրը ասում է ձեզ համար, ով Յուդայի մնացորդը, Եգիպտոս մի գնաք. Հաստատ իմացած լինէք, որ այսօր վկայեցի ձեզ համար,
20 Որովհետև դուք նենգութիւն արիք ձեր հոգիների դէմ, որ ինձ ուղարկեցիք ձեր Տէր Աստուածն

մօտ ասելով. Մեզ համար աղօթք արա դէպի մեր Տէր Աստուածը, և այն ամենի համեմատ ինչ որ ասէ մեր Տէր Աստուածը, այնպէս մեզ իմացրու և մենք կ'անենք։
21 Եւ ես այսօր ձեզ իմացրի, բայց դուք չէք լսում ձեր Տէր Աստուծոյ ձայնին, և այն ամենին, որոնց համար նա ինձ ձեզ մօտ է
22 ուղարկել։ Եւ հիմա հաստատ իմացած լինէք, որ սրով, սովով և ժանտախտով պիտի մեռնէք այնտեղը, ուր որ ուզում էք գնալ այնտեղ պանդխտանալու համար։

ԳԼ. ԽԴ

1 Եւ երբոր Երեմիան վերջացրեց դէպի բոլոր ժողովուրդը իրանց Տէր Աստուծոյ բոլոր խօսքերը խօսելը, որ իրանց Տէր Աստուածը ուղարկել էր նորանց մօտ՝
2 այսինքն այս ամեն խօսքերը, Այն ժամանակ Ովսեհիայի որդի Ազարիան և Կարէի որդի Յօհանանը և բոլոր ամբարտաւան մարդիկը խօսեցին և ասեցին Երեմիային. Դու սուտ ես խօսում, քեզ չէ ուղարկել մեր Տէր Աստուածը ասելով թէ Եգիպտոս մի գնաք այնտեղ պանդխտանալու հա-
3 մար. Այլ Ներիայի որդի Բարուքն է քեզ գրգռում մեզ դէմ, որ մեզ մատնէ Քաղդեացիների ձեռքը, որ մեզ մեռցնեն, և որ մեզ գերի տանեն
4 Բաբիլոն։ Եւ Կարէի որդի Յօհանանը և բոլոր զօրավարները և բոլոր ժողովուրդը չլսեցին Տիրոջ
5 ձայնին, որ Յուդայի երկրումը մնային։ Այլ Կարէի որդի Յօհանանը և բոլոր զօրավարները առան Յուդայի բոլոր մնացորդը, որոնք ետ էին դառել այն ամեն ազգերից, ուր որ աքսորուել էին, որ պանդխտանան Յուդայի
6 երկրումը։ Այսինքն մարդկանցը և կանանցը և երեխաներին և թագաւորի աղջկերանցը և այն բոլոր անձերին, որոնց թողել էր Նաբուզարդան գահճապետը Ասփանէի որդի Աքիկամի որդի Գադոդիայի մօտ, և Երեմիա մարգարէին և Ներիայի որդի Բարուքին. Եւ գնացին Եգիպտոսի եր-
7 կիրը, որովհետև չլսեցին Տիրոջ ձայնին, և գնացին մինչև Տափնաս։

Եւ Տիրոջ խօսքը եղաւ Երեմիա-
8 յին Տափնասում ասելով. Ձեռ-
9 քդ մեծ մեծ քարեր առ և նորանց թաղիր աղիւսատան կաւի մէջ, որ փարաւօնի տան մուտքումն է Տափնասի մէջ, Յուդայի մարդկանց աչքի առաջին,
10 Եւ ասիր նորանց. Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Ահա ես կ'ուղարկեմ և կ'առնեմ իմ ծառայ՝ Բաբիլոնի թագաւոր Նաբուգոդոնոսորին և նորա աթոռը կ'դնեմ այս քարերի վերայ, որոնք ես թաղեցի, և նա պիտի տարածէ իր գահոյքը
11 նորանց վերայ։ Եւ պիտի գայ և պիտի զարկէ Եգիպտոսի երկիրը, ո՛րը մահու համար՝ մահուան, և ո՛րը գերութեան համար՝ գերութեան, և ո՛րը սուրի համար՝ սուրին։ Եւ ես կրակ պիտի վառեմ
12 Եգիպտոսի աստուածների աներուքին. և նա պիտի այրէ նորանց, և նորանց գերի տանէ. և նա պիտի իր վերայ փաթաթէ Եգիպտոսի երկիրը, ինչպես որ հովիւը փաթաթում է իր հանգերձը իր վերայ. և նա խաղաղութեամբ
13 պիտի դուրս գայ։ Եւ նա պիտի կոտրատէ Եգիպտոսում եղող *Բեթսամիսի արձանները, և Եգիպտոսի աստուածների անները կրակով պիտի այրէ։

ԳԼ. ԽԴ

1 Այն խօսքը որ եղաւ Երեմիային այն բոլոր Հրէաների մասին որոնք բնակվում էին Եգիպտոսի երկրումը, այսինքն բնակվում էին Մագդոլում, Տափնասում, Մեմփիսում և Պաթրոսի երկրում, ասելով. Այսպէս է ասում
2 Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Դուք տեսաք այն ամեն չարիքը, որ ես բերի Երուսաղէմի

*Կամ՝ Աբեգակի տան

վերայ և ահա նորանք այսօր ա-
ւերակ են, և նորանցմէ բնա-
3 կող չ'կայ. Ա՜յն չարութեան
պատճառով, որ արին ինձ բար-
կացնելու համար, որ գնան խունկ
ծխեն և ուրիշ աստուածների
ծառայեն, որոնց չէին ճանաչում
ոչ իրանք, ոչ դուք, ոչ ձեր
4 հայրերը։ Եւ ես ուղարկեցի ձեզ
ճեա իմ բոլոր ծառաներին մար-
գարէներին կանուխ վեր կենա-
լով և ուղարկելով ասելով. Մի
անէք այս գարշելի բանը որ ես
5 ատում եմ։ Բայց նորանք չ'լսե-
ցին և ականջ չ'դրին, որ ետ
դառնային իրանց չարութիւնից,
որ ուրիշ աստուածների խունկ
6 չ'ծխէին։ Եւ իմ սրտմտութիւն
ու իմ բարկութիւնը թափուե-
ցաւ և վառուեցաւ Յուդայի քա-
ղաքներումը և Երուսաղէմի փո-
ղոցներումը, և նորանք անապատ
և ամայի եղան, ինչպէս որ այսօր
7 է։ Եւ հիմա այսպէս է ասում
Զօրաց Տէր Աստուածը՝ Իսրայէլի
Աստուածը. Ի՞նչու էք դուք մեծ
չարութիւն անում ձեր անձերի
դէմ, որ ձեզ համար բնաջինջ
անէք մարդն ու կինը, երեխան
ու կաթնակեր մանուկը Յուդայի
միջից, որ ձեզ համար մնացորդ
8 չ'մնայ. Որ ինձ բարկացնէք ձեր
ձեռքի գործերովը եգիպտոսի
երկրումն ուրիշ աստուածների
խունկ ծխելու համար, ուր որ
դուք մտել էք պանդխտանալու
համար, որ ձեզ բնաջինջ անէք,
և որ անէծք ու նախատինք լի-
նէք երկրի բոլոր ազգերի մէջ,
9 Մի՞թէ մոռացել էք ձեր հայ-
րերի չարութիւնները և Յուդայի
թագաւորների չարութիւնները
և նորանց կանանց չարութիւննե-
րը և ձեր չարութիւնները և ձեր
կանանց չարութիւնները, որ ա-
րել են Յուդայի երկրումը և ե-
10 րուսաղէմի փողոցներումը։ Ն-
րանք չ'խոնարհուեցան մինչև այս
օրը և չ'վախեցան և չ'գնացին
իմ օրէնքովը ու կանոններովը,
որոնց ես դրել եմ ձեր առաջին
11 և ձեր հայրերի առաջին։ Սորա
համար այսպէս է ասում Զօրաց
Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Ա՜հա
ես իմ երեսը ուղղել եմ դէպի
ձեզ չարիք՝ —Ա՛մէն— և բոլոր Յու-
դան բնաջինջ անելու համար։
12 Եւ պիտի առնեմ Յուդայի մնա-
ցորդը, որոնք ուղղել են իրանց
երեսը եգիպտոս գնալու համար,
որ այնտեղ պանդխտանան. և ա-
մենքը պիտի վերջանան եգիպտո-
սի երկրումը. սրով պիտի ընկնեն,
սովով պիտի ապառուին. փոքրիցը
մինչև մեծը՝ սրով ու սովով պի-
տի մեռնեն, և նորանք պիտի
դառնան անէծք, զարմանք և
13 նզովք ու նախատինք։ Եւ պիտի
այցելեմ եգիպտոսի երկրումը
բնակողներին, ինչպէս որ Երու-
սաղէմին եմ այցելել՝ սրովքն
սովով և ժանտախտով։
14 Եւ ազատուողը ու պրծնողը պի-
տի չ'լինի Յուդայի մնացորդից,
որոնք եկել են որ պանդխտանան
եգիպտոսի երկրումը, որ ետ
դառնան Յուդայի երկիրը, ուր
որ նորանք փափաքում են ետ
դառնալ, որ այնտեղ բնակուեն.
որովհետև ոչ ով ետ չի դառ-
նալ, բայց միայն պրծածները։
15 Եւ այն ամեն մարդիկը որոնք
գիտէին, որ իրանց կանայքը խունկ
էին ծխում՝ ուրիշ աստուածների
և բոլոր ներկայ կանայքը՝ մի մեծ
ժողով և բոլոր ժողովուրդը, որ
բնակվում էր եգիպտոսի երկրում
և Պաթուրեստում, պատաս-
16 խանեցին Երեմիային ասելով. Ա՜յն
խօսքը, որ դու ասեցիր մեզ Տի-
րոջ անունովը, մենք քեզ չենք
17 լսում։ Այլ անպատճառ մեր բե-
րանից դուրս եկած խօսքն ենք ա-
նելու երկնքի թագուհիին խունկ
ծխելով և նորան թափելու նուէր-
ներ մատուցանելով, ինչպէս որ
արել ենք մենք և մեր հայրերը,
մեր թագաւորներն ու իշխանները
Յուդայի քաղաքներումը և Երու-
սաղէմի փողոցներումը, և հացով
կուշտ էինք և յաջողակ էինք և
18 չարիք չ'տեսանք։ Բայց այն ժա-
մանակից որ դադարեցինք երկնքի
թագուհիին խունկ ծխելու և նո-
րան թափելու նուէրներ մատու-
ցանելու, ամեն բանի կարօտ ե-

ղանք և սրով ու սովով ոչա-
19 ուեցանք։ Իակ երբոր երկնքի թա-
գուհիին խունկ էինք ծխում, և
նորան թափելու նուէրներ մա-
տուցանում, մի՞թէ առանց մեր
մարդկանց էինք նորա համար
բլիթներ չինում նորան պաշտե-
լով և նորան թափելու նուէրներ
20 մատուցանում։ Եւ Երեմիան ա-
սեց բոլոր ժողովրդին՝ մարդկանցը
և կանանցը և բոլոր ժողովրդին
որ իրան խօսք պատասխան տուին,
21 և ասեց. Չէ՞ որ այն խունկը, որ
ծխում էիք Յուդայի քաղաքնե-
րումը և Երուսաղէմի փողոցնե-
րումը դուք և ձեր հայրերը, ձեր
թագաւորներն ու ձեր իշխան-
ները և երկրի ժողովուրդը չի-
շել է Տէրը և նորա միտքն են
22 ընկել. Եւ Տէրը չ'կարողացաւ
այլ ևս համբերել ձեր գործերի
չարութեան պատճառով այն
գարշելութիւնների պատճառով,
որ դուք արել էք, և ձեր եր-
կիրը եղել է աւերակ, ամայի և
նզովք առանց բնակչի, ինչպէս
23 որ այսօր կայ։ Որովհետև դուք
խունկ ծխեցիք և մեղք գործեցիք
Տիրոջ դէմ և չ'լսեցիք Տիրոջ
ձայնին և նորա օրէնքովն և կա-
նոններովը ու վկայութիւններովը
չ'գնացիք. դորա համար ձեզ
հանդիպել է այդ չարիքը, ինչ-
24 պէս որ այսօր է։
Եւ Երեմիան ասեց բոլոր ժո-
ղովրդին և բոլոր կանանցը. Լսե-
ցէք Տիրոջ խօսքը, ով եգիպտոսի
25 երկրումը եղող բոլոր Յուդա.
Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝
Իսրայէլի Աստուածը ասելով.
Դուք և ձեր կանայքը խօսեցիք
ձեր բերանովը և ձեր ձեռքով
կատարեցիք՝ ասելով. Անպատ-
ճառ պէտք է կատարենք մեր
ուխտերը որ ուխտել ենք՝ երկնքի
թագուհիին խունկ ծխելու և
նորան թափելու նուէրներ մա-
տուցանելու համար. անշուշտ
դուք կ'հաստատէք ձեր ուխտե-
րը և պիտի կատարէք ձեր ուխ-
26 տերը։ Դորա համար լսեցէք Տի-
րոջ խօսքը, ով եգիպտոսի երկ-
րումը բնակող բոլոր Յուդա. Ա՜հա
ես երդում արի իմ մեծ անու-
նովը, ասում է Տէրը, որ այլ ևս
իմ անունը պիտի չ'կանչուի բո-
լոր եգիպտոսի երկրումը ոչ մի
մարդի բերանից, ասելով Թէ
կենդանի է Տէր Եհովան։ Ա՜հա 27
ես նորանց վերայ հսկում եմ
՛ի չարն և ոչ Թէ ՛ի բարին, և
նորանք պիտի սպառուին եգիպ-
տոսի երկրումը սրով և սովով
մինչև որ վերջանան։ Եւ սակաւ 28
ազատուածները, որ ետ կ'դա-
նան եգիպտոսի երկրից Յուդայի
երկիրը, սակաւաթիւ մարդիկ կը
լինեն, և պիտի իմանան Յուդայի
մնացորդը, որոնք մտել են եգիպ-
տոսի երկիրը այնտեղ պանդխտա-
նալու համար, Թէ որի՞ խօսքը
պիտի հաստատուի՝ իմ Թէ նո-
րանցը։ Եւ սա ձեզ նշան լինի, 29
ասում է Տէրը, որ այս տեղը ես
ձեզ այցելութիւն պիտի անեմ,
որպէս զի իմանաք Թէ իմ խօս-
քերը անպատճառ պիտի հաս-
տատուին ձեզ վերայ ՛ի չարն։
Այսպէս է ասում Տէրը. Ա՜հա 30
ես մատնել եմ եգիպտոսի Վա-
փառ փարաւօն Թագաւորին իր
թշնամիների ձեռքը և նորա հո-
գին պահանջողների ձեռքը, ինչ-
պէս որ մատնեցի Յուդայի Սե-
դեկիա Թագաւորին իր թշնամի
և իր հոգին պահանջող Բաբի-
լոնի Նաբուգոդոնոսոր Թագաւո-
րի ձեռքը։

Գլ. ԽԵ

Ա՜յն խօսքը որ խօսեց Երեմիա 1
մարգարէն Ներիայի որդի Բարու-
քի հետ, երբոր նա գրքում գրում
էր այս խօսքերը Երեմիայի բերա-
նից Յուդայի Թագաւոր Յովսի-
այի որդի Յովակիմի չորրորդ տա-
րին ասելով.
Ռեզ համար այսպէս է ասում 2
Իսրայէլի Տէր Աստուածը, ով
Բարուք. Դու ասեցիր. Ո՛վ վայ 3
ինձ, որ Տէրը տրտմութիւն է
աւելացրել իմ ցաւի վերայ, ես
վաստակել եմ հեծեծելուցս, և
հանգստութիւն չեմ գտնում,
Նորան այսպէս ասիր. Տէրը այս- 4

պէս է ասում. Ահա իմ շինածը
ես քանդում եմ, և իմ տնկածը
ես խլում եմ, այսինքն այս բո-
5 լոր երկիրը։ Եւ դու քեզ հա-
մար մեծամեծ բանե՞ր ես որո-
նում. մի որոնիր. որովհետև ա-
հա ես չարիք եմ բերելու բոլոր
մարմնի վերայ, ասում է Տէրը,
և ես քո անձը քեզ տալիս եմ
իբրև աւար այն ամեն տեղերու-
մը, ուր որ գնաս։

ԳԼ. ԽԶ

1 Տիրոջ խօսքը որ եղաւ Երեմիա
2 մարգարէին ազգերի մասին, Ե-
գիպտոսի նկատմամբ Եգիպտոսի
Նեքաւով Փարաւօնի զօրքի մա-
սին, որ Եփրատ գետի մօտ Քար-
քամիսումն էր, որին զարկեց Բա-
բիլոնի Նաբուգոդոնոսոր Թագա-
ւորը Յուդայի Թագաւոր Յով-
սիայի որդի Յովակիմի չորրորդ
տարին։
3 Ասպար ու վահան պատրաս-
տեցէք, և մօտեցէք պատերազ-
4 մի. Լծեցէք ձիանքը, և ձիաւոր-
ուեցէք, ով հեծեալներ. շարուե-
ցէք սաղաւարտներով, փայլեցը-
րէք նիզակները, հագէք զրահ-
5 ները։ Ի՞նչու եմ նորանց տես-
նում զարհուրած ետ դառնալիս,
և նորանց քաջաղունները ջար-
դվում են. վազելով փախչում
են և ետ չեն նայում, երկիւղ
շուրջանակի, ասում է Տէրը։
6 Թող արագաշարժը չ՚փախչէ, և
չ՚պրծնէ զօրաւորը. հիւսիսում՝
Եփրատ գետի եզերքում պիտի
7 սահեն և կործանուին։ Ո՞վ է
սա որ վեր է գալիս գետի պէս,
գետերի նման ծփում են նորա
8 ջուրերը։ Եգիպտոսը վեր է գա-
լիս գետի պէս, և գետերի պէս
ծփում են ջուրերը. և ասում
է. Ես վեր կ՚դնամ, երկիրը կը
ծածկեմ, բնաջինջ կ՚անեմ քա-
ղաքը և նորանում բնակողներին։
9 Վեր ելէք, ով ձիանք, և կա-
տաղեցէք, ով կառքեր, և զօ-
րաւորները դուրս գան, Եթէով-
պացի և Փութացի վահան բռ-
նողները, և Ղուդացի աղեղ
բռնող լարողները։ Որովհետև 10
այս օրն է Զօրաց Եհովայ Տիրոջ
վրէժխնդրութեան օրը, որ վրէժ
առնէ իր թշնամիներից, և սուրը
պիտի ուտէ և կշտանայ և նո-
րանց արիւնովը լիանայ, որ Զօրաց
Եհովայ Տէրը զոհ ունի, հիւսի-
սային երկրումը՝ Եփրատ գետի
մօտ։ Վեր ելիր Գաղաադ, և բա- 11
լասան առ, ով Եգիպտոսի կոյս
աղջիկ. զուր ես շատացնում դե-
ղերը. սպեղանիք չ՚կայ քեզ հա-
մար։ Ազգերը լսում են քո անար- 12
գանքը, և քո աղաղակովը լցուել է
երկիրը. որովհետև զօրաւորը զօ-
րաւորովը սահում է, նորանք մի-
ասին երկուսն էլ կործանուեցան։
Այն խօսքը որ Տէրը խօսեց Ե- 13
րեմիա մարգարէին Բաբիլոնի Նա-
բուգոդոնոսոր Թագաւորի գալու
և Եգիպտոսի երկիրը զարկելու
նկատմամբ։ Պատմեցէք Եգիպտո- 14
սումը և լուր տուէք Մագդողու-
մը, և լուր տուէք Մեմփիսումը
և Տափնասումը, ասեցէք, Կանգ-
նիր և պատրաստ եղիր. որ սուրը
պիտի ուտէ քո շրջակայքը։ Ի՞ն- 15
չու կործանուեցան քո զօրաւոր-
քը. նորանք չ՚կանգնեցին, որով-
հետև Տէրը նորանց վայր գցեց։
Շատացրեց գլորուածներին. իրար 16
վերայ էլ ընկան, և ասեցին. Վեր
կաց, որ դառնանք վեր դէպի մեր
ժողովուրդը և դէպի մեր հայրենի
երկիրը բռնաւորի սուրի պատ-
ճառովը։ Այնտեղ կանչում էին՝ 17
Եգիպտոսի Փարաւօն Թագաւորը
ճայթում է, անց է կացրել ո-
րոշուած ժամանակը։ Կենդանի 18
եմ ես, ասում է Թագաւորը՝
անունը Զօրաց Տէր. որ ինչպէս
Թաբօրն է սարերի մէջ, և Կար-
մեղոսը մինչև ծովը, նա պէտք է
գայ։ Գերութեան կարասիներ 19
պատրաստիր քեզ համար, ով
Եգիպտոսում բնակող աղջիկ, որ
Մեմփիսը աւերակ պիտի դառ-
նայ, և պիտի վառուի առանց
բնակողի մնայ։
Եգիպտոսը մի գեղեցկագոյն ե- 20
րինջ է, բայց կոտորածը հիւսի-
սից գալիս է՝ գալիս։ Նորա վար- 21
ձուածներն էլ նորա մէջ պա-

րարտ երինջների նման են. որով-
հետև նորանք էլ ետ դառան,
փախան միասին՝ չ՚կանգնեցին, որ
նորանց կորստեան օրը եկաւ նո-
րանց վերայ, նորանց այցելու-
22 թեան ժամանակը։ Նորա ձայնը
դուրս է գալիս ինչպէս օձինը,
որովհետև զօրքով են դուրս գա-
լիս, և կացիններով են գալիս նո-
րա վերայ փայտահարների նման։
23 Նորանք պիտի կտրեն նորա ան-
տառը, ասում է Տէրը, թէպէտ և
նա անհամար էլ լինի. որովհետև
նորանք մարախից շատ են և թիւ
24 չ՚կայ նորանց։ Ամօթով պիտի
մնայ Եգիպտոսի աղջիկը, նա պի-
տի հիւսիսի ժողովրդի ձեռքը
25 տրուի։ Զօրաց Տէրը՝ Իսրայէլի
Աստուածը ասում է. Ահա ես
այցելում եմ Նովացի Ամոնին,
նաև Փարաւօնին և Եգիպտոսին,
և նորա աստուածներին ու նորա
Թագաւորներին, և Փարաւօնին
26 և նորան ապաւինողներին։ Եւ
նորանց պիտի մատնեմ նորանց
հոգին պահանջողների ձեռքը և
Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր Թա-
գաւորի ձեռքը և նորա ծառա-
ների ձեռքը. և այնուհետև կը
բնակուէ առաջի օրերին պէս
ասում է Տէրը։
27 Բայց դու մի վախենար, ով
իմ ծառայ Յակոբ, և մի զար-
հուրիր, ով Իսրայէլ, որովհետև
ահա ես քեզ ազատելու եմ հե-
ռուից, և քո սերունդը՝ իրանց
գերութեան երկրիցը. և Յակոբը
պիտի ետ դառնայ, և հանդիստ
ու հանդարտ լինի. և վախեցնող
28 չէ լինելու։ Դու մի վախենար,
ով իմ ծառայ Յակոբ, ասում է
Տէրը. Նորա համար որ ես քեզ
հետ եմ. որովհետև ես պիտի
վերջացնեմ բոլոր այն ազգերին,
ուր որ քեզ՝ աքսորեցի. բայց քեզ
պիտի չ՚վերջացնեմ, այլ քեզ պի-
տի խրատեմ չափաւորութեամբ,
և քեզ անպատճառ անմեղ չեմ
համարելու։

ԳԼ. ԽԷ

1 Տիրոջ այն խօսքը որ եղաւ Երե-
միա մարգարէին Փղշտացիների
նկատմամբ՝ Փարաւօնը Գազան
զարկելուց առաջ։ Տէրը այսպէս 2
է ասում. Ահա ջուրեր են վեր
գալիս հիւսիսիցը և յորդած հե-
ղեղ են դառնում, և պիտի հե-
ղեղեն երկիրը և նորա լիութիւ-
նը, քաղաքը և նորանում բնա-
կողներին. և մարդիկ պիտի աղա-
ղակեն, և երկրի բոլոր բնակիչ-
ները պիտի ոռնան։ Նորա երի- 3
վարների սմբակների տրոփելու
ձայնիցը, նորա կառքերի շաչիւ-
նից և նորա անիւների շառաչիւ-
նից, հայրերը պիտի չ՚նայեն որդ-
կանց վերայ ձեռքերի թուլու-
թիւնիցը։ Այն օրուայ համար, 4
որ գալիս է բոլոր Փղշտացիներին
կորցնելու, Տիւրոսին և Սիդոնին
բնաջինջ անելու, բոլոր ազատ-
ուած օգնականներին. որ Տէրը
պիտի աւերակ անէ Փղշտացինե-
րին, Կափթոր կղզիի մնացորդնե-
րին։ Գազայի վերայ կնտութիւն 5
եկաւ, Ասկաղոնը աւերակ եղաւ
իր հովտի մնացորդովը. մինչև ե՞րբ
պիտի քեզ կտորես։ Աւա՛ղ, ով 6
Տիրոջ սուր, մինչև ե՞րբ չես դա-
դարելու, ետ քաշուիր քո պատ-
եանը, հանդիստ եղիր և լռիր։
Ի՞նչպէս ես կարող հանդստանալ, 7
քանի որ Եհովան պատուիրել է
*քեզ. Ասկաղոնի և ծովեզերքի
դէմ նշանակել է *քեզ։

ԳԼ. ԽԸ

Մովաբի մասին այսպէս է ասում 1
Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուա-
ծը. Վա՛յ Նաբաւին, որ աւերակ
է դառել. Կարիաթեմն ամա-
չեց՝ առնուեցաւ, ամաչեց Մաս-
գաբը և զարհուրեց։ Այլ ևս 2
Մովաբի պարծենալը չ՚կայ Եսե-
բոնում. նորա վերայ չարիք են
խորհում, ասելով՝ Գնանք նորան
փչացնենք ազգութիւնից. Դու
էլ, ով Մադմէն, պիտի պապան-
ձես. ետևիցդ գալիս է սուրը։
Աղաղակի ձայն է գալիս Որոնա- 3
յիմիցը, աւերո՛ւմ և մեծ կոտո-

*ԵԲՐ. նորան։

4 բա՛ծ։ Մովաբը փշրուեցաւ. նո-
րա պզտիկները աղաղակ բար-
5 ձրացրին։ Որովհետև Ղուիթի
զառիվերովը լացով են վեր ել-
նում՝ լացով. որովհետև Որոնա-
յիմի զառիվայրի վերայ լսում են
թշնամիքը կոտորածի աղաղակ։
6 Փախէք, ազատեցէք ձեր անձը.
և մոշենիի պէս եղէք անապա-
7 տումը։ Որովհետև քո գործերին
և քո գանձերին վստահելուդ հա-
մար դու էլ պիտի առնուիս. և
Քամոսը պիտի գերի գնայ՝ նորա
քահանաները և նորա իշխանները
8 միասին իր հետ։ Եւ պիտի գայ
կործանողը ամեն քաղաքի վերայ,
և ոչ մի քաղաք պիտի չ՚պրծնէ,
և հովիտը պիտի փչանայ և դաշ-
տը աւերուի, որն որ ասել է Տէ-
9 րը։ Մովաբին թևեր տուէք, որ
թռչէ փախչէ. և նորա քաղաք-
ները աւերակ պիտի դառնան,
բնակիչ պիտի չ՚լինի նորանցում։
10 Անիծեալ լինի Տիրոջ գործը թու-
լութեամբ անողը, և անիծեալ
լինի իր սուրը արիւնից խնայողը։
11 Հանգիստ էր Մովաբն իր ման-
կութիւնից ի վեր, և հանդարտ
մնացել էր իր մրուրի վերայ, նա
չ՚թափուեցաւ ամանից ամանի, և
գերութեան չ՚գնաց. դորա հա-
մար նորա համը մնաց իրանում
12 և հոտը չ՚փոխուեցաւ։ Ուրեմն
ահա օրեր են գալիս, ասում է
Տէրը, որ ես նորա համար փո-
խադրողներ կ՚ուղարկեմ, և նո-
րանք կ՚փոխադրեն նորան, և նո-
րա ամանները կ՚դարտակեն և
նորա տիկերը կ՚պատառոտեն։
13 Եւ Մովաբը կ՚ամաչէ Քամոսից,
ինչպէս որ Իսրայէլի տունը ամա-
չեց իր ապաւինած Բեթէլից։
14 Ի՞նչպէս էք ասում, Մենք տղա-
մարդիկ ենք, և զօրաւոր մար-
15 դիկ՝ պատերազմի համար։ Մո-
վաբը քանդուեցաւ և նորա քա-
ղաքները վեր ելան, և նորա ընտիր
երիտասարդները իջան մորթուե-
լու, ասում է Թագաւորը՝ որի
16 անունը Զօրաց Տէր է։ Մօտ է
Մովաբի կորուստը որ գայ, և
նորա ձախորդութիւնը շտապում
17 է։ Ողբացէք նորա վերայ, ով բո-
լոր նորա շրջակայքը, և ով բո-
լոր նորա անունը գիտացողներ,
ասեցէք, Ի՞նչպէս կոտրուեցաւ
զօրութեան գաւազանը՝ փառաց
ցուպը։ Իջիր փառքիցը և նստիր 18
ծարաւութիւնում, ով Դեբոնում
բնակող աղջիկ. որովհետև Մո-
վաբը կործանողը քեզ վերայ է
յարձակուելու, և քարուքանդ է
անելու քո բերդերը։ Ճանապար- 19
հին կանգնիր և դիտիր, ով Ա-
րոերի բնակիչ, հարցրու փախչո-
ղին և պրծնողին, ասիր՝ Ի՞նչ դա-
ռաւ։
Ամաչեց Մովաբը, որովհետև 20
կոտրուեցաւ. ոռնա և գոռա.
պատմեցէք Առնոնումը, թէ ա-
ւերակ եղաւ Մովաբը։ Եւ դա- 21
տաստան եկաւ դաշտի երկրի վե-
րայ Քօզոնի, Յասսայի և Մեփա-
յաթի վերայ. Եւ Դեբոնի վերայ, 22
Նաբաւի վերայ, և Բեթդէբլա-
թեմի վերայ. Եւ Կարիաթեմի 23
վերայ, և Բեթդամովղի վերայ և
Բեթմաւոնի վերայ. Եւ Կարիօթի 24
վերայ, և Բօսրայի վերայ, և Մո-
վաբի երկրի բոլոր քաղաքների
վերայ, հեռաւորների և մօտա-
ւորների վերայ։ Կոտրուեցաւ Մո- 25
վաբի եղջիւրը, և նորա բազուկը
փշրուեցաւ, ասում է Տէրը։ Նո- 26
րան արբեցրէք, որովհետև նա
գոռոզացաւ Տիրոջ դէմ, որ թա-
ւալուի Մովաբն իր փսխածումը
և ինքն էլ ծաղր լինի։ Կամ մի՞թէ 27
Իսրայէլը ծաղր չ՚եղաւ քեզ հա-
մար, կամ նա գողերի միջում
գտնուեցա՞ւ. որ քանիցս որ նորա
վերայ խօսէիր, գլուխդ էիր շար-
ժում։ Զգեցէք քաղաքները և 28
վէմերում բնակուեցէք, ով Մո-
վաբի բնակիչներ. և աղաւնիի
նման եղէք, որ բոյն է դնում
անդունդի բերանի անցքումը։
Մենք լսել ենք Մովաբի ամբար- 29
տաւանութիւնը. նա շատ ամ-
բարտաւան է. նորա հպարտու-
թիւնը, և նորա ամբարտաւա-
նութիւնը, նորա գոռոզութիւնը
և նորա բարձրամտութիւնը։ Ես 30
գիտեմ, ասում է Տէրը, նորա
սրտմտութիւնը, բայց պարապ է.
նորա սնապարծ խօսքերը ոչինչ

31 չեն գործել։ Սորա համար պիտի
ողբամ Մովաբի վերայ, և աղա-
ղակեմ բոլոր Մովաբի վերայ,
Կիրհարեսի մարդկանց համար
32 հառաչում են։ Յազերի լացովը
լաց եմ լինելու քեզ վերայ, ով
Սեբամայի որթը, քո շառաւիղ-
ները անցան ծովիցը, մինչև Յա-
զերի ծովն են հասել. քո ամա-
ռային պտուղի և քո այգեկութի
վերայ աւարառու յարձակուե-
33 ցաւ։ Եւ վեր է առնուելու ու-
րախութիւնն ու ցնծութիւնը
պտղաբեր արտերիցն ու Մովաբի
երկրիցը, և գինին դադարեցնե-
լու եմ հնձաններիցը, ուրախու-
թիւնով խաղող պիտի չ՚կոխուի,
և խաղող կոխելու ուրախու-
թիւնը ուրախութիւն չէ լինե-
34 լու։ Եսեբոնի աղաղակից մինչև
Եղէաղէ մինչև Յասսա տուին ի-
րանց ձայնը. Սեգովրից մինչև Ո-
րոնայիմ եռամեայ երինջի նման.
որովհետև Նեմերիմի ջուրերը ա-
35 նապատ են դառել։ Եւ պիտի
դադարեցնեմ Մովաբից, ասում
է Տէրը, բարձրաւանդակում ող-
ջակէզ մատուցանողին, և նորա
աստուածներին խունկ ծխողին։
36 Սորա համար սիրտս հնչում է
սրինգների պէս Մովաբի վերայ,
և իմ սիրտը Կիրհարեսի մարդ-
կանց վերայ հնչում է սրինգների
պէս, սորա համար այն հարստու-
թիւնը, որ արել էին, փչանում
37 է։ Որովհետև ամեն գլուխ պի-
տի կնտանայ, և ամեն մօրուք
կտրուի, բոլոր ձեռքերի վերայ
կտրածներ պիտի լինեն, և մէջքի
38 վերայ՝ քուրձ։ Մովաբի բոլոր
կտուրների վերայ և նորա փո-
ղոցներումը բոլորովին ողբ պիտի
լինի, որ ես կոտրեցի Մովաբին
մի այնպիսի ամանի պէս, որից
չեն ախորժիլ, ասում է Տէրը։
39 Ի՞նչպէս կոտրուեցաւ. ոռնում
են. ի՞նչպէս է Մովաբը մէջքը
դարձնում ամօթով. և Մովաբը
ծաղր ու սոսկում պիտի լինի
բոլոր իրան շրջապատողների հա-
40 մար։ Որովհետև այսպէս է ա-
սում Տէրը. Ահա արծիւի պէս
թռչում է, և տարածում իր
թևերը Մովաբի վերայ։ Քաղաք- 41
ները առնվում են, և բերդերը՝
նուաճվում. և այն օրը Մովաբի
տղամարդկանց սիրտը երկանց
ցաւ քաշող կնոջ սրտին պէս կը
լինի։ Եւ Մովաբը պիտի ոչնչանայ 42
ժողովուրդ լինելուց, որովհետև
նա գոռոզացաւ Տիրոջ դէմ։ Վախ 43
ու վիհ ու վարմ քեզ վերա՛յ,
ով Մովաբի բնակիչ, ասում է
Տէրը։ Վախիցը փախչողը վիհը 44
պիտի ընկնէ, և վիհիցը դուրս
ելնողը վարմումը պիտի բռնուի.
որովհետև ես նորա վերայ այս-
ինքն Մովաբի վերայ պիտի բե-
րեմ նորանց այցելութեան տա-
րին, ասում է Տէրը։ Եսեբոնի 45
հովանումը կանգնում են ուժը
գնացած փախստականները. բայց
կրակ դուրս եկաւ Եսեբոնից և
Սեհոնի միջից՝ բոց, և կերաւ Մո-
վաբի ծայրը և աղմուկի որդկանց
գագաթը։ Վա՛յ քեզ, Մովաբ, 46
կորաւ Քամոսի ժողովուրդը, ո-
րովհետև քո տղերքը գերի առ-
նուեցան, և աղջկերքդ՝ գերու-
թեան։ Բայց ետքի օրերը ետ պի- 47
տի դարձնեմ Մովաբի գերու-
թիւնը, ասում է Տէրը։
Մինչև այստեղ է Մովաբի դա-
տաստանը։

ԳԼ. ԽԹ

Ամմոնի որդկանց նկատմամբ՝ 1
այսպէս է ասում Տէրը. Մի՞թէ
Իսրայէլը որդիք չ՚ունի. կամ նա
ժառանգ չ՚ունի՞. ի՞նչու Մեղքոմը
ժառանգեց Գադին, և նորա ժո-
ղովուրդը նորա քաղաքներումը
բնակուեց։ Սորա համար ահա 2
օրեր են գալիս, ասում է Տէրը,
որ Ամմոնի որդկանց Ռաբբայի
դէմ պատերազմի աղաղակ պիտի
լսել տամ, որ նա փլատակների
դէզ դառնայ, և նորա աղջկեր-
քը կրակով այրուին. իսկ Իսրա-
յէլը պիտի ժառանգէ իր ժա-
ռանգողներին, ասում է Տէրը։
Ոռնա, ով Եսեբոն, որ Գային 3
ոչնչացաւ, աղաղակեցէք, ով
Ռաբբայի աղջկերք, քուրձեր հա-
գէք, սուգ արէք և դէս ու դէն

փախէք ցանգերի մէջ. որ Մեղ-
քոմը գերի պիտի գնայ՝ իր քա-
հանաներն ու իշխանները մէկ-
4 տեղ։ Ի՞նչ ես հովիտներով պար-
ծենում. հովիտդ ջրի պէս գնաց,
ո՛վ ապստամբ աղջիկ, որ ապա-
ւինել էիր քո գանձերին, ասե-
լով. Ո՞վ է գալիս ինձ վերայ։
5 Ահա ես քեզ վերայ վախ եմ
բերում, ասում է Զօրաց Տէր
Եհովան, քո բոլոր շրջականերից.
և դուք պիտի ցրուիք ամեն մարդ
դէպի իր առաջը. և փախստա-
կաններին ժողովող պիտի չ՛լինի։
6 Եւ նորանից յետոյ պիտի ետ
դարձնեմ Ամմոնի որդկանց գե-
րութիւնը, ասում է Տէրը։
7 Եդովմի նկատմամբ՝ այսպէս է
ասում Զօրաց Տէրը. Մի՞թէ էլ
իմաստութիւն չ՛կայ Թեմանումը,
կորա՞ւ խորհուրդը հանճարեղ-
ներից, դարտակուեցա՞ւ նորանց
8 իմաստութիւնը։ Փախէք, դար-
ձէք, խորերը մտէք բնակուելու
համար, ով Դեդանի բնակիչներ,
որովհետև Եսաւի կորուստը պի-
տի բերեմ նորա վերայ, նորան
այցելութիւն արած ժամանակս։
9 Եթէ քեզ մօտ քաղողներ գա-
յին, մի՞թէ աւելորդ ճիռեր չէին
թողել. եթէ գողեր՝ գիշերով,
նորանք փչացնելու էին որքան
10 իրանց բաւական լինէր։ Սակայն
ես մերկացրի Եսաւին, բաց արի
նորա ծածուկ տեղերը. բայց նա
չէ կարող թաք կենալ. կորան
նորա սերունդը, նորա եղբայրնե-
րը և նորա դրացիքը, և չ՛կան։
11 Թող տուր քո որբերին, ես նո-
րանց կ՛պահեմ. և քո որբևայ-
12 րիքը թող ինձ ապաւինեն։ Որով-
հետև այսպէս է ասում Տէրը.
Ահա նորանք որ պարտաւոր չէին
բաժակը խմելու՝ անպատճառ
պէտք է խմեն, և դու որ ջանք
էիր անում անպատիժ մնալու.
անպատիժ չես մնալ, այլ ան-
43 պատճառ պիտի խմես։ Որովհե-
տև ես երդում եմ անում իմ
անձովը, ասում է Տէրը, որ ա-
մայութիւն, նախատինք, աւե-
րակ և անէծք պիտի դառնայ
Բօսրան, և նորա բոլոր քաղաք-
ները պիտի յաւիտենական աւե-
րակներ դառնան։
Լուր լսեցի Տիրոջ կողմանէ, և 14
դեսպան ուղարկուեցաւ ազգե-
րին, թէ ժողովուեցէք և գնացէք
նորա վերայ, և կանգնեցէք պա-
տերազմի։ Որովհետև ահա ես 15
քեզ պզտիկ եմ արել ազգերի
մէջ, անարգ՝ մարդկանց մէջ։
Քո ահաւորութիւնը՝ քո սրտի 16
ամբարտաւանութիւնը խաբել է
քեզ, ո՛վ վէմի խոռոչների մէջ
բնակող և բարձր բլուրներին
փակչող, եթէ արծիւի պէս բար-
ձրումը դնես քո բոյնը, այնտե-
ղից էլ քեզ պիտի իջեցնեմ, ա-
սում է Տէրը։ Եւ Եդովմը ամայի 17
պիտի լինի. ամեն նորա մօտով
անցնողը պիտի հիանայ, և նորա
բոլոր հարուածների համար պի-
տի սուլէ։ Սոդոմի ու Գոմորի և 18
նորա դրացիների կործանման պէս,
ասում է Տէրը, այնտեղ մարդ
չի բնակուիլ և մարդի որդի նո-
րանում չի պանդխտանալ։ Ահա 19
առիւծի պէս վեր պիտի գնայ Յոր-
դանանի փառքիցը ամուր բնա-
կարանը. որովհետև մի վայրկեա-
նում պիտի փախցնեմ նորան նո-
րա վերայից, և ո՞վ է ընտրուած,
որ նորա վերայ դնեմ, որովհետև
ո՞վ է ինձ նման, և ո՞վ կ՛որոշէ
իմ ժամանակը, և ո՞վ է այն հո-
վիւը, որ կանգնէր իմ առաջին։
Ուրեմն լսեցէք Տիրոջ խորհուրդը, 20
որ խորհել է Եդովմի վերայ, և
նորա մտածմունքները, որ մտա-
ծել է Թեմանի բնակիչների վե-
րայ. անպատճառ պիտի քշեն նո-
րանց հօտի փոքրերը, անպատ-
ճառ նորանց բնակարանները պի-
տի աւերէ նորանց հետ։ Նորանց 21
ընկնելու ձայնիցը երկիրը կ՛դո-
ղայ, աղաղակի ձայնը մինչև Կար-
միր ծովը կ՛լսուի։ Ահա արծիւի 22
նման վեր կ՛բարձրանայ և կը
թռչի, և իր թևերը կ՛տարածէ
Բօսրայի վերայ, և այն օրը Եդովմի
տղամարդկանց սիրտը երկանց
ցաւ քաշող կնկայ սրտին պէս
կ՛լինի։
Դամասկոսի նկատմամբ։ 23
Եմաթն ու Արփաթը ամաչե-

ցին, որովհետև վատ լուր լսեցին՝
հալվում են. ծովումը տառա-
պանք կայ՝ չէ կարող հանդար-
24 տանալ։ Թուլացել է Դամասկո-
սը, դարձել է որ փախչէ, ար-
հաւիրքը բռնել է նորան, տագ-
նապն ու երկունքը բռնել են
նորան ինչպէս ծննդական կնկան։
25 Ի՞նչպէս չ՛թողուեցաւ փառաց
քաղաքը, իմ զուարճութեան
26 քաղաքը։ Սորա համար նորա
ընտիրները վայր կ՛ընկնեն նորա
հրապարակներումը, և բոլոր պա-
տերազմական մարդիկը կ՛պա-
պանձուին այն օրը, ասում է
27 Զօրաց Տէրը։ Եւ ես կրակ պի-
տի վառեմ Դամասկոսի պարսպի
մէջ, և նա պիտի լափէ Բենա-
դադի պալատները։
28 Կեդարի նկատմամբ և Հասո-
րի թագաւորութիւնների նկատ-
մամբ, որոնց Բաբիլոնի Նաբու-
գոդոնոսոր թագաւորը զարկեց,
այսպէս է ասում Տէրը. Վեր
կացէք գնացէք Կեդարի վերայ,
և փչացրէք արևելքի որդիներին։
29 Նորանց վրանները և նորանց հօ-
տերը պիտի առնեն, նորանց վա-
րագոյրները և նորանց բոլոր կա-
րասիները, և նորանց ուղտերը
պիտի տանեն իրանց համար. և
նորանց պէտք է կանչեն, Վախ
շուրջանակի։
30 Փախէք, շատ վազեցէք, խո-
րերը մտէք բնակուելու, ով Հա-
սորի բնակիչներ, ասում է Տէրը,
որովհետև Բաբիլոնի Նաբուգո-
դոնոսոր թագաւորը ձեզ դէմ
խորհուրդ է խորհել, և ձեզ
դէմ մտածմունք է մտածել։
31 Վեր կացէք, վեր ելէք ապա-
հով և անդորր բնակող ազգի
վերայ, ասում է Տէրը, որ դռներ
չ՛ունի, նիգեր չ՛ունի, առանձին
32 է բնակվում։ Եւ նորանց ուղ-
տերը աւար պիտի դառնան, և
նորանց խաշինքների բազմութիւ-
նը՝ կողոպուտ, և ես պիտի ցըր-
ուեմ ամեն կողմ մօրուքի ծայրը
կտրողներին, և ամեն անցուդար-
ձից պիտի բերեմ նորանց կո-
33 րուստը, ասում է Տէրը։ Եւ Հա-
սորը պիտի չագալների որջ դառ-
նայ՝ յաւիտենական ամայու-
թիւն. այնտեղ մարդ պիտի չը
բնակուէ, և նորանում չ՛պան-
դրխտանայ մարդի որդի։
Տիրոջ խօսքը, որ եղաւ Երե- 34
միա մարգարէին Եղամի մասին
Յուդայի Սեդեկիա թագաւորի
թագաւորութեան սկզբումը, ա-
սելով.
Այսպէս է ասում Զօրաց Տէրը. 35
Ահա ես կոտրում եմ Եղամի ա-
ղեղը՝ նորանց զօրութեան գլխա-
ւորը։ Եւ պիտի բերեմ Եղամի 36
վերայ չորս հողմերը երկնքի չորս
կողմիցը, և նորանց պիտի ցրուեմ
այս բոլոր հողմերին, և այն ազգը
չէ լինելու, ուր գնացած չ՛լինին
Եղամի փախստականները։ Եւ ես 37
պիտի վախեցնեմ Եղամին իրանց
թշնամիների առաջին. և նորանց
հոգիները պահանջողների առա-
ջին, և նորանց վերայ ձախորդու-
թիւն պիտի բերեմ՝ իմ բարկու-
թեան բորբոքումը, ասում է Տէ-
րը, և նորանց ետևից պիտի ու-
ղարկեմ սուրը, մինչև որ նորանց
վերջացնեմ։ Եւ ես իմ աթոռը 38
պիտի դնեմ Եղամումը և այնտե-
ղից պիտի թագաւոր և իշխան-
ներ կորցնեմ, ասում է Տէրը։
Եւ պիտի լինի որ վերջի օրերումը 39
Եղամի գերութիւնը պիտի դար-
ձնեմ, ասում է Տէրը։

ԳԼ. Ծ

Այն խօսքը որ Տէրը խօսեց Քաղ- 1
դէացիների երկրի՝ Բաբիլոնի մա-
սին Երեմիա մարգարէի ձեռովը։
Իմացրէք ազգերի մէջ, հրա- 2
տարակեցէք ու դրօշակ բարձրա-
ցրէք, հրատարակեցէք, մի ծած-
կէք, ասեցէք. Բաբիլոնը առնուե-
ցաւ, Բէլը ամաչեց, Մարովդաքը
կոտրուեցաւ, ամաչեցին նորա
արձանները, կոտրատուեցան նո-
րա կուռքերը։ Որովհետև նորա 3
վերայ հիւսիսից մի ազգ եկաւ,
նա նորա երկիրը աւերակ պիտի
անէ, և նորանում բնակող չէ
լինելու. մարդից մինչև անասուն
պիտի փախչեն գնան։
Այն օրերը և այն ժամանակը, 4

ասում է Տէրը, պիտի դան Իս-
րայէլի որդիքը՝ իրանք և Յուդայի
որդիքը միասին. քայլելով ու
լալով պիտի գնան և իրանց Տէր
5 Աստուծուն որոնեն։ Սիօնն են
հարցնելու՝ երեսները դէպի այն-
տեղ, եկէք և Տիրոջը յարենք
յաւիտենական անմոռաց ուխ-
տով։
6 Կորած ոչխարներ եղան իմ ժո-
ղովուրդը, նորանց հովիւները մո-
լորեցնում են նորանց, սարերի
վերայ շուռ են ածում նորանց,
սարից դէպի բլուրը գնացին՝ ի-
րանց մակաղատեղը մոռացան։
7 Ամեն ով որ նորանց գտաւ՝ կե-
րաւ նորանց, և նորանց նեղիչներն
ասեցին՝ Մենք յանցաւոր չենք,
նորա փոխարէն, որ նորանք մեղք
են գործել Տիրոջ արդարութեան
բնակարանի դէմ, և իրանց հայ-
րերի յուսատեղի՝ Տիրոջ դէմ։
8 Փախէք Բաբիլոնի միջիցը, և
դուրս եկէք Քաղդէացիների երկ-
րիցը, և նոխազների պէս եղէք
9 հօտերի առաջին։ Որովհետև ա-
հա ես պիտի զարթնեցնեմ և
բերեմ Բաբիլոնի վերայ մեծա-
մեծ ազգերի ժողովք հիւսիսի
երկրիցը. նորանք շարվում են
նորա դէմ, և նա կ՚առնուի այն-
տեղից. նորա նետերը հմուտ
աղամարդի պէս են՝ պարապ չեն
10 ետ դառնալ։ Եւ Քաղդէացինե-
րի երկիրը աւար պիտի լինի. նո-
րա ամեն աւարառուները պիտի
կշտանան, ասում է Տէրը։
11 Որովհետև ուրախանում էք և
ցնծում էք, ով իմ ժառանգու-
թիւնը կողոպտողներ, որովհետև
ոստնում էք խոտի միջի երինջին
նման և երիվարների պէս խխըն-
12 ջում. Ձեր մայրը պիտի շատ ա-
մաչէ, ձեզ ծնողը պիտի պատ-
կառէ, ահա նա ազգերի յետինը,
անապատ, անջուր, և ամայի
13 պիտի լինի։ Տիրոջը ցասումի
պատճառով նա պիտի չ՚բնակ-
ուի, այլ պիտի բոլորովին աւե-
րակ դառնայ, Բաբիլոնի մօտով
ամեն անց կենողը պիտի հիանայ
և սուլէ նորա ամեն հարուած-
14 ների վերայ։ Շարուեցէք Բաբի-
լոնի դէմ շուրջանակի, ով բոլոր
աղեղ լարողներ, գցեցէք նորա
վերայ, նետերը մի խնայէք, որ
նա մեղանչել է Տիրոջ դէմ։
Աղաղակեցէք նորա դէմ շուր- 15
ջանակի, նա անձնատուր եղաւ.
նորա բուրգերը վայր ընկան, նո-
րա պարիսպները հիմնայատակ ե-
ղան. որովհետև սա Տիրոջ վրէժ-
խնդրութիւնն է, նորանից վրէժ-
առէք, ինչպէս նա է արել՝ արէք
իրան։ Կոտրեցէք սերմողին Բա- 16
բիլոնից և մանգաղաւորին հուն-
ձի ժամանակին բռնաւորի սուրի
երեսիցը. ամեն մարդ ետ դառ-
նայ իր ժողովրդին, և ամեն մարդ
իր երկիրը փախչէ։
Իսրայէլը մի մոլորեալ ոչխար է, 17
առիւծներն են փախցրել. նախ
նորան Ասորեստանի թագաւորը
կերաւ, և ահա յետոյ նորա ոս-
կորները փշրեց Բաբիլոնի Նաբու-
գոդոնոսոր թագաւորը։ Սորա հա- 18
մար Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստ-
ուածը այսպէս է ասում. Ահա
ես պիտի այցելեմ Բաբիլոնի թա-
գաւորին և նորա երկրին, ինչպէս
այցելել եմ Ասորեստանի թա-
գաւորին։ Եւ ես Իսրայէլին պի- 19
տի դարձնեմ իր բնակարանը. և
նա պիտի արածէ Կարմեղասումը
և Բասանումը, և Եփրեմի սարի
վերայ և Գաղաադումը պիտի
կշտանայ նորա հոգին։ Այն օրե- 20
րը և այն ժամանակը, ասում է
Տէրը, պիտի Իսրայէլի անօրէնու-
թիւնը որոնուի, բայց պիտի չը
լինի նա. և Յուդայի մեղքերը՝
բայց պիտի չ՚գտնուին. որովհետև
ես պիտի ներեմ նորանց, որոնց
մնացորդ պահեցի։
*Մերաթայիմ երկրի մասին. 21
Վեր ելիր նորա վերայ և †Փա-
կուդի բնակիչների դէմ, աւերիր
և նզովածի պէս բնաջինջ արա
նորանց ետևից, ասում է Տէրը,
և արա այն ամենի պէս որ քեզ
պատուիրում եմ. Երկրումը պա- 22
տերազմի ձայն կայ, և մեծ կո-

*Այսինքն՝ կրկնապատիկ ապստամ-
բութեան
†Այսինքն՝ պատժուած

23 տորած։ Ինչպէս կոտրուեցաւ ու
փշրուեցաւ բոլոր երկրի մուրճը,
ինչպէս աւերակ եղաւ Բաբիլոնը
24 ազգերի մէջ։ Ես որոգայթ լա-
րեցի քեզ համար, դու էլ բըռ-
նուեցար, ով Բաբիլոն, բայց դու
չ՚գիտացիր, գտնուեցար և բըռ-
նուեցար. որովհետև Տիրոջ դէմ
25 հակառակեցիր։ Տէրը բաց արաւ
իր զինարանը, և հանեց իր բար-
կութեան գործիները. որովհետև
գործ ունի Զօրաց Տէր Աստուա-
ծը Քաղդէացիների երկրումը։
26 Եկէք նորա վերայ ծայրերից, բա-
ցէք նորա շտեմարանները, դէզ
տուէք նորան խուրձի շեղջերի
պէս, և նորան նզովեցէք, նորա
27 համար մնացորդ չ՚լինի։ Փչացրէք
նորա բոլոր զուարակները, թող
նորանք իջնեն սպանդանոցը. վայ
նորանց, որովհետև եկել է նո-
րանց օրը՝ նորանց այցելելու ժա-
28 մանակը։ Բաբիլոնի երկրից փախ-
չողների և ազատուողների ձայ-
նը, որ պատմէ Սիօնում մեր Տէր
Աստուծոյ վրէժխնդրութիւնը՝ նո-
րա տաճարի վրէժխնդրութիւնը։
29 Բաբիլոնի վերայ հրաւիրեցէք
աղեղնաւորներին. ով բոլոր ա-
ղեղնաւորներ, նորա դէմ բանակ
տուէք շուրջանակի, ազատուող
չ՚լինի. նորան հատուցրէք նորա
գործքի համեմատ, այն ամենի
համեմատ որ նա է արել՝ արէք
իրան. որ նա հպարտացաւ Տի-
30 րոջ՝ Իսրայէլի Սուրբի դէմ։ Սո-
րա համար նորա երիտասարդները
պիտի ընկնեն նորա հրապարակ-
ներումը, և բոլոր պատերազմի
մարդիկը պիտի պապանձուին այն
31 օրը, ասում է Տէրը։ Ահա ես
քեզ դէմ եմ, ով հպարտ, ա-
սում է Զօրաց Եհովայ Տէրը.
որովհետև եկել է քո այցելու-
32 թեան ժամանակը։ Եւ հպարտը
պիտի սահէ և վայր ընկնէ, և մի
կանգնեցնող պիտի չ՚լինի նորա
համար, և ես նորա քաղաքների
մէջ կրակ պիտի վառեմ, և նա
պիտի լափէ նորա բոլոր շրջա-
կայքը։
33 Այսպէս է ասում Զօրաց Տէրը.
Իսրայէլի որդիքը և Յուդայի որ-
դիքը միասին զրկուեցան և բոլոր
նորանց գերի անողները բռնեցին
նորանց, չ՚ուզեցին նորանց արձա-
կել։ Նորանց Փրկիչը զօրաւոր է, 34
Զօրաց Եհովայ է նորա անունը.
նա անպատճառ պիտի ջատագովէ
նորանց դատը, որ երկրին հան-
գըստութիւն տայ, և դողացնէ
Բաբիլոնի բնակիչներին։ Սո՛ւր 35
Քաղդէացիների վերայ, ասում է
Տէրը, և Բաբիլոնի բնակիչների
վերայ, և նորա իշխանների և նո-
րա իմաստունների վերայ։ Սո՛ւր 36
շաղակրատների վերայ, որ յի-
մարանան. սո՛ւր նորա աղամարդ-
կանց վերայ, որ զարհուրեն։
Սո՛ւր նորա ձիերի և նորա կառ- 37
քերի վերայ, և նորա միջում ե-
ղող բոլոր խառնիճաղանճի վե-
րայ, որ կնիկների նման դառնան.
սո՛ւր նորա գանձերի վերայ, որ
յափշտակուին։ Զորութի՛ւն նո- 38
րա ջրերի վերայ, որ չորանան, որ
նա կուռքերի երկիր է, և սոս-
կալի բաներով գժվում են։ Դորա 39
համար այնտեղ վայրի կատուներ
և բորենիներ պիտի բնակուեն,
և ջայլամներ պիտի բնակուեն նո-
րանում, և նա պիտի չ՚բնակուի
միւսանգամ յաւիտեան, և շէն
պիտի չ՚լինի ազգէ ազգ։ Ինչպէս 40
որ Աստուած կործանեց Սոդոմն
ու Գոմորը և նորա դրացիներին,
ասում է Տէրը, այնտեղ էլ մարդ
պիտի չ՚բնակուէ, և բնակութիւն
չ՚անէ նորանում մարդի որդի։
Ահա մի ժողովուրդ է գալիս 41
հիւսիսից, և մի մեծ ազգ և շատ
թագաւորներ զարթնում են երկ- 42
րի ծայրերիցը։ Նորանք աղեղ և
դեղարդ ունին, անգութ են նո-
րանք և չեն ողորմիլ, նորանց ձայ-
նը ծովի պէս է գոռում, և ձիերի
վերայ են հեծած՝ պատրաստուած
են պատերազմի մարդի նման քեզ
դէմ, ով Բաբիլոնի աղջիկ։ Բա- 43
բիլոնի թագաւորը լսեց նորանց
լուրը, և նորա ձեռները թուլա-
ցան, տագնապը նորան բռնեց
իբրև ծննդականի երկունք։ Ահա 44
առիւծի պէս բարձրանում է
Յորդանանի փառքիցը դէպի ա-
մուր բնակարանը. որովհետև իս-

կոյն պիտի նորանց փախցնեմ նո-
րա վերայից և ո՞վ է ընտրուած,
որ նորա վերայ նշանակեմ, որով-
հետև ո՞վ է ինձ նման, և ո՞վ է
կարող իմ ժամանակը որոշել, և
ո՞վ է այն հովիւը, որ կանգնէր
45 իմ առաջին։ Ուրեմն լսեցէք Տի-
րոջ խորհուրդը, որ խորհել է
Բաբիլոնի վերայ, և նորա մտած-
մունքները, որ մտածել է Քաղ-
դէացիների երկրի վերայ. ան-
պատճառ պիտի քշեն նորանց
հօտի փոքրերը, անպատճառ պի-
տի աւերէ բնակարանը նորանց
46 հետ։ Բաբիլոնի առնուելու ձայ-
նիցը երկիրը պիտի դողայ, և ա-
ղաղակը պիտի լսուի ազգերի մէջ։

ԳԼ. ԾԱ

1 Այսպէս է ասում Տէրը, Ահա
ես պիտի գրգռեմ Բաբիլոնի վե-
րայ և իմ թշնամիների մէջ բնա-
կողների վերայ մի ապականիչ
2 հողմ։ Եւ Բաբիլոնի վերայ հո-
սողներ պիտի ուղարկեմ, և նո-
րանք պիտի հոսեն նորան և դա-
տարկեն նորա երկիրը. որ նորա
վերայ պիտի դան շուրջանակի
3 ձախորդութեան օրումը։ Աղեղ-
նաւորի դէմ աղեղ պիտի լարէ
աղեղը լարողը, և իր զրահովը
հպարտացողի դէմ. և մի խնայէք
նորա երիտասարդներին, նզովա-
ծի պէս բնաջինջ արէք նորա բո-
4 լոր զօրքերը։ Եւ սպանուածներ
պիտի ընկնեն Քաղդէացիների
երկրումը, և խոցոտուածներ՝ նո-
5 րա փողոցներումը։ Որովհետև
որբևայրի չէ թողուած Իսրայէլն
ու Յուդան իր Աստուածանից,
Զօրաց Տէրից. այլ նորանց եր-
կիրը լիքն է յանցանքով Իսրա-
6 յէլի Սուրբի դէմ։ Փախէք Բա-
բիլոնի միջիցը և ամեն մարդ ա-
զատէ իր անձը, որ չ՚փչանաք նո-
րա անօրէնութիւնովը. որովհետև
վրէժխնդրութեան ժամանակ է
Տիրոջ համար, նորա աբարքը պի-
7 տի հատուցանէ նորան։ Ոսկի
բաժակ էր Բաբիլոնը Տիրոջ ձեռ-
քին, որ արբեցնում էր բոլոր
երկիրը։ Նորա գինիիցը խմեցին
ազգերը, սորա համար յիմարա-
ցան ազգերը։ Յանկարծ վայր ընկաւ 8
Բաբիլոնը և կոտրուեցաւ,
ողբացէք նորա վերայ, բալասան
առէք նորա վէրքի համար, գուցէ
բժշկուի։
Բաբիլոնին դարմանեցինք, բայց 9
չ՚բժշկուեցաւ, թողէք նորան, և
իւրաքանչիւրս իր երկիրը գնանք.
որովհետև նորա դատաստանը
երկնքին հասաւ, և բարձրացաւ
մինչև ամպերը։
Տէրը դուրս բերաւ մեր արդա- 10
րութիւնը. Եկէք ու Սիօնումը
պատմենք մեր Տէր Աստուծոյ
գործերը։ Փայլեցրէք նետերը, 11
վահանները լցրէք, Տէրը զարթ-
նեցրեց Մարաց թագաւորների
հոգին. որ նորա մտածմունքը Բա-
բիլոնի վերայ է նորան փչացնելու
համար. որովհետև Տիրոջ վրէժ-
խնդրութիւնն է սա՝ իր տաճա-
րի վրէժը։ Բաբիլոնի պարիսպների 12
դէմ դրօշ բարձրացրէք, ուժո-
վացրէք պահապանին, դէտեր
նշանակեցէք, դարաններ պատ-
րաստեցէք. որովհետև Տէրը որո-
շեց, և տրաւ էլ իր ասածը Բա-
բիլոնի բնակիչների վերայ։ Ով 13
շատ ջրերի վերայ բնակող, շատ
գանձեր ունեցող, եկել է քո
վերջը՝ քո ագահութեան չափը։
Զօրաց Տէրը երդում է արել իր 14
անձովը, թէ Քեզ անպատճառ
պիտի լցնեմ մարդկանցով մարա-
խի պէս, և նորանք պիտի աղա-
ղակով գոռան քեզ վերայ։
Երկիրն իր զօրութիւնովը շի- 15
նողը, աշխարհքն իր իմաստու-
թիւնովը հաստատողը, նա որ իր
հանճարովը տարածել է երկին-
քը, Նա որոտալով երկնքումը 16
ջուրերը կուտակելիս, ամպեր է
բարձրացնում երկրի ծայրերիցը,
փայլատակմունք է շինում անձ-
րևի համար, և հանում է քա-
մին իր շտեմարաններիցը։ Տգէտ 17
անասուն է դառնում ամեն մարդ,
ամաչում է ամեն ոսկերիչ իր
քանդակած կուռքի համար. ո-
րովհետև սուտ է նորա ձուլած
կուռքը, և հոգի չ՚կայ նորանում։
Ունայն են նորանք՝ խաբէութեան 18

գործ, նորանց այցելութիւն ե-
ղած ժամանակը պիտի կորչեն։
19 Սորանց նման չէ Յակոբի բաժի-
նը, որովհետև նա ամենի Ստեղ-
ծողն է, Իսրայէլը նորա ժառան-
գութեան վիճակն է, Զօրաց Տէր
է նորա անունը։
20 Դու ինձ համար կռան ես,
պատերազմի գործիք ես, և ես
քեզանով ազգեր կ՚ջարդեմ, և
թագաւորութիւններ կ՚փչացնեմ
21 քեզանով։ Եւ ես քեզանով ձին
ու ձիաւորին կ՚ջարդեմ, և քե-
զանով կ՚ջարդեմ կառքն ու կա-
22 ռավարը։ Եւ քեզանով մարդն
ու կնիկը կ՚ջարդեմ, և կ՚ջար-
դեմ քեզանով ծերն ու երիտա-
սարդը, և քեզանով տղամարդն
23 ու կոյսը կ՚ջարդեմ։ Եւ քեզա-
նով կ՚ջարդեմ հովիւն ու իր հօ-
տը, և քեզանով երկրագործն ու
նորա զոյգ եզինքը կ՚ջարդեմ, և
կուսակալներն ու նախարարները
24 կ՚ջարդեմ քեզանով. Եւ կ՚հա-
տուցանեմ Բաբիլոնին և բոլոր
Քաղդէացիների բնակիչներին նո-
րանց բոլոր չարութիւնները, որ
իրանք արին Սիօնին՝ ձեր աչքի
25 առաջին, ասում է Տէրը։ Ահա
ես քեզ դէմ եմ, ով ապականիչ
սար, ասում է Տէրը. որ ապա-
կանեցիր բոլոր երկիրը, և ես
պիտի մեկնեմ իմ ձեռքը քեզ
վերայ, և քեզ պիտի գլորեմ վէ-
մերիցը, և քեզ այրած սար պի-
26 տի շինեմ։ Եւ քեզանից չեն առ-
նել ոչ անկեան քար, ոչ հիման
քար, որովհետև յաւիտենական
աւերակ պիտի դառնաս, ասում
27 է Տէրը։ Դրօշակ բարձրացրէք
երկրի մէջ, փող հնչեցրէք ազ-
գերի մէջ, նորա դէմ պատրաս-
տեցէք ազգերին, հրաւիրեցէք
նորա դէմ Արարատի, Միննիի և
Ասքանասի թագաւորութիւնն-
երը, նորա վերայ զօրավարներ նշա-
նակեցէք. ձիեր վեր հանեցէք մա-
28 զոտ մարախների չափ. Նորա դէմ
պատրաստեցէք ազգերը՝ Մարաց
թագաւորներին, նորա կուսա-
կալներին և նորա բոլոր նախա-
րարներին և նորա տէրութեան
29 բոլոր երկիրը։ Եւ երկիրը պիտի
դողայ և նեղութիւն քաշէ, որ
Բաբիլոնի վերայ պիտի կատարուի
Տիրոջ մտածմունքները, Բաբիլո-
նի երկիրը ամայի անբնակ անե-
լու համար։ Դադարեցին Բաբի- 30
լոնի տղամարդիկը պատերազմե-
լուց, բերդերում բնակուեցին,
նորանց ոյժը կտրուեցաւ, կա-
նայք դառան. նորա բնակարան-
ները այրեցին, կոտրուեցան նորա
նիգերը։ Սուրհանդակ սուրհան- 31
դակի դէմ է վազում, և լրաբեր
լրաբերի դէմ, Բաբիլոնի թագա-
ւորին իմացնելու համար, թէ
նորա քաղաքը առնուեցաւ մէկ
կողմից։ Անցքերը բռնուեցան, և 32
եղէգները այրեցին կրակով, և
պատերազմի մարդիկը խռովեցան։
Որովհետև այսպէս է ասում Զօ- 33
րաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
Բաբիլոնի աղջիկը կալի նման է,
նորան կասելու ժամանակն է, մի
քիչ ժամանակ էլ՝ և կ՚գայ նո-
րա հնձելու ժամանակը։
Մեզ կերաւ, մեզ բնաջինջ 34
արաւ Բաբիլոնի Նաբուգոդոնո-
սոր թագաւորը, մեզ դրաւ իբրև
պարապ աման, մեզ կուլ տուաւ
վիշապի պէս, իր փորը լցրեց իմ
փափկութիւններիցը, մեզ դուրս
արաւ։ Ինձ եղած զրկանքը և իմ 35
մարմինը Բաբիլոնի վերայ լինի,
պիտի ասէ Սիօնի բնակչուհին. և՝
Իմ արիւնը՝ Քաղդէացիների բնա-
կիչների վերայ, պիտի ասէ Երու-
սաղէմը։ Սորա համար այսպէս է 36
ասում Տէրը. Ահա ես եմ վա-
րում քո դատը, և ես եմ առ-
նում քո վրէժը, և նորա ծովը
ցամաքեցնում եմ, և չորացնում՝
նորա աղբիւրը։ Եւ Բաբիլոնը պի- 37
տի փլատակներ դառնայ, չագալ-
ների բնակարան, ամայութիւն և
ծաղր առանց բնակչի։ Միասին 38
պիտի գոռան առոյգ առիւծների
պէս, պիտի մռնչեն մատակ առ-
իւծների կորիւնների պէս։ Նո- 39
րանք տաքանալիս կոչունք պիտի
անեմ նորանց, և նորանց պիտի
արբեցնեմ որ զուարճանան, և
քնանան յաւիտենական քնով,
և չ՚զարթնեն, ասում է Տէրը։
Ես նորանց պիտի իջեցնեմ սպան- 40

դանոցը դառների պէս, ինչպէս
41 խոյերը նոխազների հետ։ Ի՜նչպէս
առնուեցաւ Սիսակ, և բռնուե-
ցաւ բոլոր երկրի պարծանքը,
ի՜նչպէս ամայի եղաւ Բաբիլոնն
42 ազգերի մէջ։ Ծովը վեր ելաւ
Բաբիլոնի վերայ, նորա ալիքնե-
րի շատութիւնից ծածկուեցաւ։
43 Նորա քաղաքները աւերակ պի-
տի դառնան՝ անջուր երկիր և
անապատ, մի երկիր՝ ուր ոչ մի
մարդ չէ բնակվում, և նորանով
44 մի մարդի որդի չէ անցնում։ Եւ
պիտի այցելեմ Բելին Բաբիլո-
նումը, և պիտի հանեմ նորա
կուլ տուածը նորա բերանից, և
ազգերը այլ ևս նորա մօտ չեն
գնալ. Բաբիլոնի պարիսպն էլ
45 վայր կ՚ընկնէ։ Դուրս եկէք նորա
միջիցը, ով իմ ժողովուրդ, և
իւրաքանչիւրը թող ազատէ իր
անձը, Տիրոջ բորբոքած բարկու-
46 թիւնիցը։ Եւ մի գուցէ ձեր սիր-
տը նուաղի և վախենաք՝ երկրու-
մը լուրը լսելիս. և գայ տարուայ
մէջ այն լուրը, և նորա հետևեալ
տարում դ-ա լուրը, և բռնու-
թիւն լինի երկրումը՝ այսինքն իշ-
խան իշխանի դէմ։
47 Սորա համար ահա օրեր են
գալիս, որ պիտի այցելեմ Բաբի-
լոնի կուռքերին, և նորա բոլոր
երկիրը ամօթով պիտի լինի, և
նորա բոլոր սպանուածները պի-
48 տի նորանում ընկնեն։ Եւ պիտի
ցնծան Բաբիլոնի վերայ երկինքն
ու երկիրը, և ամեն ինչ որ կայ
նորանցում, որովհետև աւերող-
ները հիւսիսից գալիս են նորա
49 համար, ասում է Տէրը։ Ինչպէս
Բաբիլոնն է վայր գցել Իսրայէլի
սպանուածներին, նոյնպէս էլ Բա-
բիլոնի բոլոր երկրի սպանուած-
50 ները պիտի վայր ընկնեն։ Ով
սուրից ազատուածներ, գնացէք,
մի կանգնէք. հեռուից յիշեցէք
Տիրոջը, և Երուսաղէմը թող ձեր
միտքը գայ։
51 Մենք ամաչում ենք, որովհետև
նախատինք լսեցինք, ամօթը ծած-
կեց մեր երեսը, որովհետև օ-
տարները մտան Տիրոջ տան սրբա-
52 րանը։ Նորա համար ահա օրեր
են գալիս, ասում է Տէրը, որ
պիտի այցելեմ նորա կուռքերին,
և նորա բոլոր երկրումը պիտի հե-
ծեն վիրաւորները։ Թէև Բաբիլո- 53
նը բարձրանայ մինչև երկինքը և
բարձրումը պնդացնէ իր զօրու-
թիւնը, իմ կողմանէ աւերողներ
պիտի գան նորա համար, ասում
է Տէրը։ Աղաղակի ձայն կայ Բա- 54
բիլոնից, և մեծ կոտորած՝ Քաղ-
դէացիների երկրիցը։ Որովհետև 55
Տէրը պիտի աւերէ Բաբիլոնը, և
կորցնէ նորանից մեծ ձայնը. որով-
հետև գոչում են նորանց ալիք-
ները շատ ջրերի նման. նորանց
ձայնը աղմուկի նման է դուրս
գալիս։ Որովհետև նորա՝ այսինքն 56
Բաբիլոնի վերայ աւերող եկաւ,
և նորա զօրաւորները առնուե-
ցան, նորանց աղեղները կոտրուե-
ցան. որովհետև Տէրը հատուցա-
նող Աստուած է, նա անպատ-
ճառ կ՚հատուցանէ։ Եւ ես պի- 57
տի արբեցնեմ նորա իշխաններին,
և նորա իմաստուններին՝ կուսա-
կալներին, և նորա նախարարնե-
րին ու նորա տղամարդիկներին,
որ յաւիտենական քնով քնանան
և չ՚զարթնեն, ասում է Թագա-
ւորը՝ որի անունը Զօրաց Տէր է։
Այսպէս է ասում Զօրաց Տէրը. 58
Բաբիլոնի լայն պարիսպները հիմ-
նայատակ պիտի լինեն, և նորա
բարձր դռները կրակով պիտի
այրուին, և ժողովուրդները դար-
տակ տեղը պիտի յոգնեն, և ազ-
գերը կրակի համար պիտի աշխա-
տեն։
Այն խօսքը որ Երեմիա մարգա- 59
րէն պատուիրեց Մաասիայի որ-
դիի Ներիայի որդի Սարայիային,
երբոր նա Յուդայի Սեդեկիա
Թագաւորի հետ Բաբիլոն գնաց
նորա Թագաւորութեան չորրորդ
տարին, և Սարայիան գլխաւոր
սենեկապան էր։ Եւ Երեմիան 60
գրեց այն ամեն չարիքը, որ գալու
էին Բաբիլոնի վերայ, մի գրքում,
այսինքն այս բոլոր խօսքերը որ
գրուած են Բաբիլոնի դէմ։ Եւ 61
Երեմիան ասեց Սարայիային. Երբ-
որ Բաբիլոն մտար, այն ժամանակ
նայիր որ կարդաս այս բոլոր խօս-

62 քերը, Եւ ասես. Ով Տէր, դու
խօսեցիր այս տեղի մասին, որ ա-
ւերես նորան, որ նորանում բնա-
կող չ՚լինի մարդից մինչև անա-
սունը, որ սա պէտք է յաւիտե-
63 նական աւերակներ դառնայ։ Եւ
երբոր վերջացրիր այս գիրքը կար-
դալը, նորանից մի քար կապիր և
64 գցիր նորան Եփրատի մէջ, Եւ
ասիր. Այսպէս պէտք է ընկղմուի
Բաբիլոնը և չ՚կանգնէ այն չար-
եաց պատճառով, որ ես պիտի
բերեմ նորա վերայ, և նորանք
պէտք է վաստակեն։
Մինչև այստեղ է Երեմիայի
խօսքերը։

ԳԼ. ԾԲ

1 Քսանևմէկ տարեկան էր Սեդե-
կիան, երբոր Թագաւոր եղաւ, և
տասնևմէկ տարի Թագաւորու-
թիւն արաւ Երուսաղէմումը, և
նորա մօր անունն էր Ամիտաղ՝
2 Լեբնացի Երեմիայի աղջիկը։ Եւ
նա չարութիւն արաւ Տիրոջ ա-
ռաջին բոլորովին այնպէս ինչ որ
3 արել էր Յովակիմը։ Որովհետև
Տիրոջ բարկութիւնը Երուսաղէ-
մի և Յուդայի վերայ էր, որ նո-
րանց դէն գցէր իր երեսի առա-
ջից, և Սեդեկիան ապստամբուեց
Բաբիլոնի Թագաւորի դէմ։
4 Եւ եղաւ որ նորա Թագաւո-
րութեան իններորդ տարումը
տասներորդ ամսուայ՝ ամսի տասին
եկաւ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր
Թագաւորը ինքը և իր բոլոր
զօրքը Երուսաղէմի վերայ, և բա-
նակ տուին նորա դէմ, և նորա
դէմ պատնէշներ շինեցին շուր-
5 ջանակի։ Եւ քաղաքը պաշարման
մէջ ընկաւ մինչև Սեդեկիա Թա-
գաւորի տասնևմէկերորդ տա-
6 րին. Չորրորդ ամսուայ՝ ամսի
իննին սովը սաստկացաւ քաղա-
քումը, և հաց չ՚կար երկրի ժո-
7 ղովրդի համար։ Եւ քաղաքը
ճղուեցաւ, և բոլոր պատերազ-
մական մարդիկը փախան և դուրս
եկան քաղաքիցը գիշերով երկու
պարիսպների միջի դռան ճանա-
պարհովը, որ Թագաւորի պար-
տէզի մօտ է, և Քաղդէացիք քա-
ղաքը շրջապատած էին. և նո-
րանք գնացին անապատի ճանա-
պարհովը։ Բայց Քաղդէացիների 8
զօրքերը ընկան Թագաւորի ետե-
ւից և հասան Սեդեկիային Երի-
քովի դաշտերումը. և նորա բոլոր
զօրքերը ցրուեցան մօտիցը։ Եւ 9
Թագաւորին բռնեցին և նորան
վեր տարան Եմաթի երկրում լի-
նող Ռեբղան, Բաբիլոնի Թագա-
ւորի մօտ. և նա վճռեց նորա դա-
տաստանը։ Եւ Բաբիլոնի Թագա- 10
ւորը մորթեց Սեդեկիայի որդ-
կանցը նորա աչքի առաջին, և
Յուդայի բոլոր իշխաններին էլ
մորթեց Ռեբղայում։ Եւ կու- 11
բացրեց Սեդեկիայի աչքերը, և
նորան կապեց պղնձի շղթաներով,
և Բաբիլոնի Թագաւորը նորան
տարաւ Բաբիլոն, և նորան բանտը
դրաւ մինչև նորա մահուան օրը։
Եւ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր 12
Թագաւորի տասնևիններորդ տա-
րին հինգերորդ ամսուայ՝ ամսի
տասնին եկաւ Նաբուզարդան
դահճապետը, որ կանգնում էր
Բաբիլոնի Թագաւորի առաջին
Երուսաղէմ։ Եւ այրեց Տիրոջ 13
տունը և Թագաւորի տունը, և
Երուսաղէմի բոլոր տները և ա-
մեն մեծ տները այրեց կրակով։
Եւ Երուսաղէմի բոլոր պատերը 14
շուրջանակի քանդեցին Քաղդէ-
ացիների բոլոր զօրքերը, որ դահ-
ճապետի հետն էին։ Եւ ժողո- 15
վրդի աղքատներիցը և ժողովրդի
մնացորդը, որ մնացել էին քա-
ղաքումը և այն փախչողներին, ո-
րոնք Բաբիլոնի Թագաւորի կողմն
էին անցկացել, և մնացած բազ-
մութիւնը գերի տարաւ Նաբու-
զարդան դահճապետը։ Եւ երկ- 16
րի աղքատներիցը Նաբուզարդան
դահճապետը այգեգործներ և
երկրագործներ թողեց։
Եւ այն պղնձի սիւները, որ Տի- 17
րոջ տանն էին, նաև մեքենովթ-
ները և պղնձի ծովը, որ Տիրոջ
տանն էր, կոտրատեցին Քաղդէ-
ացիք, և նորանց բոլոր պղինձը
տարան Բաբիլոն։ Եւ Թաղարնե- 18
րը և Թիակները և բազմակալ-

ները և կոնքերը և խնկատուփերը և բոլոր պղնձի անօթները, որանցով պաշտարկուելիւն էր լինում, վեր առան, 19 և բաժակները և բուրվառները և կոնքերը և թագարները և աշտանակները և խնկատուփերը և սկաւառակները՝ որը սակի էր սակի և որը արծաթի էր արծաթի՝ վեր առաւ դահճապետը, 20 և երկու սիւները, մէկ ծովը, տասնևերկու պղնձի եղները որ մէկենովթների *տեղն էին, որ Սողոմոն թագաւորը շինել էր Տիրոջ տան համար. այս բոլոր անօթների պղնձին կշիռը 21 չկար։ և սիւներից մէկ սիւնը տասնևուրթը կանգուն էր բարձրութիւնով, և մի դեղձան տասնևերկու կանգուն շրջապատում էր նորան, և նորա թանձրութիւնը չորս մատնաչափ էր՝ 22 մէջը դատարկ։ և մի պղնձի խոյակ կար նորա վերայ, և մէկ խոյակի բարձրութիւնը հինգ կանգուն, և ցանցեր ու նռներ կային խոյակի վերայ շուրջանակի՝ բոլորը պղնձի. և սորա նման էր և միւս սիւնը և նռները։ 23 և նռները քննատնեվեց էին մէկ կողմովը, բոլոր նռները հարիւր էին ցանցի վերայ շուրջանակի։ 24 և դահճապետը առաւ մեծ քահանայ Սարայիային և երկրորդ քահանայ Սոփոնիային և դռան 25 երեք պահապաններին, և քաղաքիցն առաւ մի ներքինի, որ պատերազմի մարդկանց վերակացուն էր, և թագաւորի առաջին կանդնողներից եօթը մարդ, որոնք գտնվում էին քաղաքումը և զօրքի գլխաւոր գրագրին, որ ղեկաւորագրում էր երկրի ժողովրդին, և վաթսուն մարդ երկրի ժողովրդից, որոնք գտնվում էին քաղաքի մէջումը։ 26 և նորանց վեր առաւ Նաբուզարդան դահճապետը և տարաւ նորանց Բաբիլոնի թագաւորի մօտ Ռիբղա։ 27 և Բաբիլոնի թագաւորը զարկեց նորանց և սպանեց նորանց Եմաթի երկրի Ռիբղայումը։ և Յուդան գերի տարաւեցաւ իր երկրից։ 28 Սա է Նաբուգոդոնոսորի գերի տարած ժողովուրդը եօթներորդ տարին երեք հազար քսանևերեք Հրէայ. Նաբուգոդոնոսորի 29 տասնևութերորդ տարին՝ երուսաղէմից ութը հարիւր երեսունևերկու Հոգի, Նաբուգոդոնոսորի 30 քսաներեքերորդ տարին Նաբուզարդան դահճապետը Հրէաներից գերի տարաւ եօթը հարիւր քառասունևհինգ Հոգի. ամենը չորս հազար վեց հարիւր Հոգի։ 31 և եղաւ Յուդայի Յովաքին թագաւորի գերութեան երեսունևեօթներորդ տարին տասնևերկուերորդ ամսուայ՝ ամի քսանևհինգին բարձրացրեց Եվմորովդաք Բաբիլոնի թագաւորը իր թագաւորելած տարին Յուդայի Յովաքին թագաւորի գլուխը և նորան հանեց բանտի տանիցը, 32 և նորա հետ քաղցրութեամբ խօսեց, և նորա աթոռը նորա հետ Բաբիլոնումն եղող թագաւորների աթոռից վեր դրաւ։ 33 և նորա բանտի հանդերձները փոխեց, և նա միշտ իր կեանքի բոլոր օրերումը հացը նորա առաջին էր ուտում։ 34 և նորա ռոճիկը միշտ կան ռոճիկ լինելով տրվում էր նորան Բաբիլոնի թագաւորի կողմանէ օր ըստ օրէ մինչև նորա մահուան օրը, նորա կեանքի բոլոր օրերումը։

*կամ՝ տակին

ԵՐԵՄԻԱՅԻ ՈՂԲԵՐԸ

ԳԼՈՒԽ Ա.

1 Ի՛նչպէս առանձին է նստում քաղմամարդ քաղաքը, որ եւայրիի պէս է դառել ազգերի մէջ մնծը, դաւառներում իշխանուհի եղողը հարկատու է դառել,

2 Գառնապէս լաց է լինում գիշերը և նորա արտասուքը նորա այտերի վերայ է, մխիթարող չունի նա իր բոլոր սիրելիներից. նորա բոլոր ընկերները խաբեցին նորան, թշնամիներ եղան նորա համար։

3 Գերի գնաց Յուդան տառապանքից և չատ ծառայութիւնից, նա բնակվում է ազգերի մէջ, հանգստութիւն չէ գտել, նորա բոլոր հալածողները հասան նորան նեղութիւնների մէջ։

4 Սիոնի ճանապարհները սուգ են անում տոնի եկողներ չլինելով, նորա բոլոր դռները ամայացած են, նորա քահանաները հեծում են, նորա կոյսերը տրտմած են, և ինքը տխրած է։

5 Նորա նեղիչները գլխաւոր եղան, նորա թշնամիքը յաջողութեան, որովհետև Տէրը նորան տրտմեցրել է նորա յանցանքների շատութեան համար. նորա երեխայքը գերի գնացին թշնամի առաջին։

6 Եւ հեռացաւ Սիոնի աղջկանց բոլոր վայելչութիւնը. նորա իշխանները ճարակ չգտնող եղջերուների նման եղան. և տկարացած գնում են հալածողի առաջին։

7 Երուսաղէմը յիշեց իր տառապանքի և թշուառութեան օրերում իր բոլոր վայելչութիւնները, որ ունէր վաղ ժամանակներից, երբոր իր ժողովուրդը թշնամիի ձեռքն ընկաւ, և օգնող չունէր, թշնամիները տեսան նորան, ծիծաղեցին նորա կործանումի վերայ։

8 Երուսաղէմը ծանր մեղանչեց, դորա համար զզուելի է համարվում, նորա բոլոր պատուողները անարգում են նորան, որովհետև տեսան նորա մերկութիւնը, նա ինքն էլ է հեծում, և ետ դառնում։

9 Նորա պղծութիւնները իր քղանցքների վերայ է. նա չյիշեց իր վերջը. և զարմանալի կերպով ցածացաւ, մխիթարիչ չունի. նայիր, ով Տէր, իմ տառապանքին, որ հպարտացաւ թշնամին։

10 Թշնամին մեկնեց իր ձեռքը նորա բոլոր ցանկալի բաներին, որովհետև տեսաւ հեթանոսներին, որ մտան իր սրբարանը, որին որ դու պատուիրել էիր, որ քո ժողովքի մէջ չմտնեն։

11 Նորա բոլոր ժողովուրդը հեծում է հաց ուզելով, իրանց ցանկալիքը տալիս են ուտելիքի՝ սիրտը ուժովցնելու համար. տես, ով Տէր, և նայիր, որ ես անարգանք եմ դառել։

12 Ձէ՛ք տեսնում, ով բոլոր ճանապարհով անցնողներ, նայեցէք և տեսէք թէ արդեօք կայ մի ցաւ իմ ցաւի նման, որ եկաւ ինձ վերայ, որին տրտմեցրել է Տէրը իր բորբոքած բարկութեան օրումը։

13 Նա բարձրից կրակ ուղարկեց իմ ոսկորների մէջ, որ նորանց տիրէ, առաջիս ցանց տարածեց, ինձ ետ դարձրեց, ամայի արաւ ինձ՝ բոլոր օրը հիւանդոտ։

14 Իմ յանցանքի լուծը նորա ձեռովը կապուեցաւ, նորանք հիւսուեցան՝ վեր ելան իմ պարանոցի վերայ. նա նուաճել է իմ ոյժը.

1938 Մայիս 19/VI
Վահան Տերեան
Կ. Պոլսահայոց

Տէրը ինձ մատնել է ձեռների, որ չեմ կարող կանգնել։
15 Տէրը անարգեց իմ բոլոր զօրաւորներին իմ միջումը, ինձ վերայ ժողովք կանչեց իմ երիտասարդներին կոտրելու համար, հնձան կոխեց Տէրը Յուդայի կոյս աղջկայ համար։
16 Սորանց համար ես լաց եմ լինում, աչքերս՝ աչքերս ջուր են թափում, որ հեռացել է ինձանից մխիթարիչը՝ իմ սիրտը հանգըստացնողը, իմ որդիքը նուաղեցան, որովհետև թշնամին զօրացաւ։
17 Սիօնը մեկնում է իր ձեռները, բայց մխիթարող չ՚կայ նորա համար. Տէրը պատուիրեց Յակոբի մասին, որ նեղիչներ լինեն նորա շուրջը. Երուսաղէմը դաշտանաւոր կին դառաւ նորանց մէջ։
18 Արդար է Տէրը, որովհետև ես նորա դէմ անհնազանդ եղայ, մէկ լսեցէք, ով բոլոր ժողովուրդներ, և տեսէք իմ ցաւը, իմ կոյսերն ու իմ երիտասարդները գերի գնացին։
19 Կանչեցի իմ սիրելիներին, նորանք ինձ խաբեցին, քահանաներս ու ծերերս քաղաքումը վախճանուեցան. երբոր կերակուր էին որոնում իրանց համար, որ իրանց սիրտը ուժովացնեն։
20 Նայիր, ով Տէր, որ նեղութեան մէջ եմ, աղիքներս գալարվում են, սիրտս տակնուվերայ է ներսումս, որովհետև սաստիկ ապստամբել եմ, դրսից սուրն է ինձ անզաւակ անում, ներսիցը՝ ինչպէս մահ։
21 Լսեցին որ ես հառաչում եմ, բայց մխիթարիչ չ՚ունիմ. իմ բոլոր թշնամիները լսեցին իմ թշուառութիւնը, ուրախացան որ դու արիր. դու բերում ես այն օրը, որ կանչեցիր, որ նորանք էլ ինձ պէս դառնան։
22 Նորանց բոլոր չարութիւնը քո առաջը գայ, և նորանց այնպէս արա ինչպէս ինձ արիր իմ բոլոր յանցանաց համար, որ իմ հառաչանքները շատ են և սիրտս նուաղած է։

ԳԼ. Բ

Ինչպէս է Տէրը ամպով պատել 1
Սիօնի աղջկանը իր բարկութիւնովը, նա երկնքից գցեց երկրի վերայ Իսրայէլի փառքը, և չ՚յիշեց իր ոտների պատուանդանը իր բարկութեան օրը։
Տէրը խորտակեց առանց խնայելու Յակոբի բոլոր բնակարանները, քանդեց իր բարկութիւնովը Յուդայի աղջկայ ամրոցները, տափովը տուաւ, ապականեց թագաւորութիւնն ու նորա իշխանները։ 2
Նա իր բորբոքած բարկութիւնովը փշրեց Իսրայէլի բոլոր եղջիւրը, ետ դարձրեց նորա աջ ձեռքը թշնամիի երեսիցը, և վառուեցաւ կրակի բոցի պէս Յակոբի մէջ՝ կերաւ շուրջանակի։ 3
Իր աղեղը լարեց թշնամիի պէս, կանգնեց իր աջովը նեղիչի նման, և կոտորեց բոլոր աչքի հաճելի բաները. կրակի պէս իր բարկութիւնը Սիօնի աղջկերանց վրանի մէջն ածեց։ 4
Տէրը թշնամիի պէս եղաւ, կործանեց Իսրայէլին, կործանեց նորա բոլոր պալատները, փչացրեց նորա բերդերը, և շատացրեց Յուդայի աղջկայ մէջ ողբն ու կոծը։ 5
Հարստահարեց այգիի պէս իր ցանգը, նորա ժողովատեղին փչացրեց, Տէրը մոռացրեց Սիօնի մէջ տօնը և շաբաթը, և անարգեց իր բարկութեան ցասումովը թագաւորին ու քահանային։ 6
Տէրը մերժեց իր սեղանը, զզուեց իր սրբարանիցը, յանձնեց թշնամիի ձեռքը նորա պալատների պարիսպները. ձայն տուին Տիրոջ տանը տօնի օրուայ պէս։ 7
Տէրը խորհեց Սիօնի աղջկայ պարիսպը քանդել, քաշեց լարը, ետ չ՚դարձրեց իր ձեռքը կործանելուց, պատնէշն ու պարիսպը սուգ անել տուաւ, միասին տրտմեցին։ 8

9 Տափը մտան նորա դռները. նա փչացրեց ու փշրեց նորա նիգերը, նորա թագաւորն ու նորա իշխանները ազգերի մէջ են. օրէնք չ՚կայ. նորա մարգարէներն էլ չեն տեսիլք գտնում Տիրոջից։
10 Հողի վերայ նստել են՝ լռել են Սիօնի աղջկայ ծերերը. փոշի բարձրացրին իրանց գլխի վերայ, քուրձեր հագան, իրանց գլուխը գետինը իջեցրին Երուսաղէմի կոյսերը։
11 Աչքերս մաշուեցան արտասուքով, աղիքներս բորբոքուել են, լեարդս գետինը թափուեցաւ իմ ժողովրդի աղջկայ բեկման համար, երեխաներն ու կաթնակերները քաղաքի հրապարակներումը նուաղելիս։
12 Իրանց մայրերին ասում են. Ո՞ւր է ցորենն ու գինին, քաղաքի հրապարակներումը վիրաւորուածների պէս նուաղելիս, և իրանց հոգին իրանց մայրերի գրկումը աւանդելիս։
13 Քեզ ի՞նչ վկայեմ, քեզ ի՞նչ օրինակ բերեմ, ով Երուսաղէմի աղջիկ, քեզ ի՞նչ նմանութիւն բերեմ որ քեզ մխիթարեմ, ով Սիօնի կոյս աղջիկ. որ քո կոտրածը մեծ է ծովի պէս, ո՞վ կը բժշկէ քեզ։
14 Քո մարգարէքը քեզ համար սուտ ու անհամ տեսիլքներ տեսան, քո անօրէնութիւնը բաց չ՚արին, որ քո գերութիւնը ետ դարձնէին, և քեզ համար սուտ պատգամներ ու *մոլորութիւններ տեսան։
15 Ծափ են տալիս քեզ վերայ բոլոր ճանապարհով անցնողները, սուլում են և իրանց գլուխը շարժում Երուսաղէմի աղջկայ վերայ ասելով, Սա՞ է այն քաղաքը, որին ասում էին՝ Գեղեցկութեան կատարելութիւն, Բոլոր երկրի ուրախութիւն։
16 Իրանց բերանը բաց արին քեզ վերայ քո բոլոր թշնամիները, սուլեցին և ատամ կրճտեցին ու ասեցին. Կուլ տուինք. հէնց սա է մեր սպասած օրը. գտանք, տեսանք։
Տէրը կատարեց իր խորհածը, 17
լրացրեց իր խօսքը որ պատուիրեց առաջի օրերից. քանդեց և չը խնայեց, և ուրախացրեց քեզ վերայ ԵՎ թշնամիին. բարձրացրեց քո նեղիչների եղջիւրը։
Նորանց սիրտն աղաղակեց դէպի 18
Տէրը. ով Սիօնի աղջկայ պարիսպ, գետի պէս արտասուք թափիր ցերեկ ու գիշեր, քեզ դադար մի տար, աչքիդ բիբը թող չ՚հանգստանայ։
Վեր կաց աղաղակիր գիշերով՝ 19
պահերի սկզբումը. սիրտդ ջրի պէս թափիր Տիրոջ երեսի առաջին, դէպի նորան բարձրացրու ձեռներդ քո երեխաների հոգիների համար, որոնք սովից նուաղում են բոլոր փողոցների գլխին։
Նայիր, ով Տէր, և տես, ո՞ւմ 20
ես այսպէս արել. մի՞թէ կանայք իրանց պտուղը՝ գրկած երեխաներին ուտեն. Տիրոջ սրբարանումը սպանուի՞ն քահանան ու մարգարէն։
Գետնի վերայ պառկեցին դրսումը տղան ու ծերը. իմ կոյսերն ու իմ երիտասարդները սրով ընկան, սպանեցիր քո բարկութեան օրումը, մորթեցիր, չ՚խնայեցիր։ 21
Տօնի օրուայ պէս կանչեցիր իմ 22
վախերը շուրջանակի. և Տիրոջ բարկութեան օրը չ՚եղան պրծնող ու ազատուող, ինչ որ գրկել ու մեծացրել էի, իմ թշնամին նորանց բնաջինջ արաւ։

ԳԼ. Գ

Ես այն մարդն եմ, որ տառապանք տեսայ նորա բարկութեան գաւազանովը։ 1
Նա ինձ տարաւ ու ման ածեց 2
խաւարում և ոչ թէ լոյսի մէջ։
Հէնց ինձ դէմ դառաւ, ձեռքը դարձրեց բոլոր օրը։ 3
Մաշեց մարմինս ու մորթս, 4
կոտրատեց ոսկորներս։
Ինձ դէմ շինեց և շրջապատեց 5
դառնութիւնով ու տառապանքով։

*Կամ՝ աքսորանքի պատճառներ

6 Մութ տեղերում ինձ նստեցրեց յաւիտենական մեռելների պէս։
7 Ետևիցս ցանցով պատեց որ դուրս չ՚գամ, ծանրացրեց իմ շղթաները։
8 Եթէ աղաղակեմ էլ և գոչեմ, նա արգելեց իմ աղօթքը։
9 Նա պատեց իմ ճանապարհները տաշած քարերով, ծռեց իմ շաւիղները։
10 Նա ինձ համար դարանակալ արջ է, մի առիւծ՝ թաքուն տեղերում։
11 Նա խոտորեցրեց իմ ճանապարհները, ինձ ցիրուցան արաւ, ինձ ամայի շինեց։
12 Լարեց իր աղեղը և ինձ կանգնեցրեց նետի նպատակի պէս։
13 Իմ երիկամունքների մէջ կոխեց իր նետերը։
14 Ես ծաղր եղայ իմ բոլոր ժողովրդին, նորանց երգը՝ բոլոր օրը։
15 Ինձ կշտացրեց դառնութիւններով, օշինդրով արբեցրեց ինձ։
16 Եւ կոտրատեց խիճերով իմ ատամները, ինձ մոխիրը դրաւ։
17 Այսպէս հեռացրիր իմ անձը խաղաղութիւնից, բարիքը մոռացել եմ։
18 Եւ ասեցի՝ Կորաւ իմ զօրութիւնը և իմ ակնկալութիւնը Տէրից։
19 Յիշիր իմ տառապանքը ու իմ թշուառութիւնը, օշինդրը և դառնութիւնը։
20 Լաւ յիշում է իմ հոգին և խոնարհվում է ինձանում։
21 Սորանք ես իմ միտքն եմ բերում, ուրեմն և յոյս ունիմ։
22 Տիրոջ ողորմութիւններն են, որ չ՚վերջացանք, որովհետև չ՚պակասեցան նորա գթութիւնները.
23 Նորանք ամեն առաւօտ նորանոր են. մեծ է քո հաւատարմութիւնը։
24 Իմ բաժինը Տէրն է, ասեց իմ հոգին, սորա համար նորան եմ յուսալու։
25 Բարի է Տէրը իրան յուսացողներին՝ այն անձին որ նորան որոնում է։
26 Լաւ է յուսալ և սպասել լռութիւնով Տիրոջ փրկութեանը։
27 Լաւ է մարդիս համար, որ լուծը իր երիտասարդութիւնումը կրէ։
28 Առանձին նստում և լռում է, որովհետև լուծ դրուեցաւ նորա վերայ։
29 Նա իր բերանը հողին է դնում, գուցէ յոյս կ՚լինի։
30 Նա իր ծնօտը տալիս է նորան զարկողին, կշտանում է նախատինքով։
31 Որովհետև Տէրը չի մերժիլ յաւիտեան։
32 Այլ թէև ցաւեցնէ էլ, դարձեալ կ՚գթայ իր ողորմութիւնների շատութեան չափ։
33 Որովհետև նա՛ի սրտէ չէ նեղացնում և տրտմեցնում մարդկանց որդիներին։
34 Իր ոտների տակին կոխ տալ երկրի ամեն կապուածներին,
35 Մարդի իրաւունքը ծռել Բարձրելոյն երեսի առաջին,
36 Մարդիս անիրաւութիւն անել իր դատումը, Տէրը չէ՞ տեսնում։
37 Ո՞վ է նա որ ասէ, և կատարուի, որ Տէրը չէ հրամայել։
38 Բարձրելոյն բերանիցը չե՞ն դուրս գալիս չարիքն ու բարիքը։
39 Ի՞նչ է տրտնջում ապրող մարդը՝ մարդը իր մեղքի մէջ։
40 Քննենք մեր ճանապարհները և փորձենք, և ետ դառնանք Տիրոջը։
41 Բարձրացնենք մեր սրտերը մեր ձեռքերի հետ դէպի երկնքում լինող Աստուածը։
42 Մենք յանցանք արինք և ապըստամբուեցինք. դու չ՚ներեցիր։
43 Քեզ բարկութիւնով ծածկեցիր և մեզ հալածեցիր, սպանեցիր ու չ՚խնայեցիր։
44 Քեզ ամպով ծածկեցիր, որ աղօթք անց չ՚կենայ։
45 Աւելուք և անարգ արիր մեզ ազգերի մէջ։
46 Մեր բոլոր թշնամիները լայն բացել են իրանց բերանը մեզ դէմ։
47 Վախ և վիհ եղաւ մեզ համար՝ աւերումն ու կոտորած։
48 Ջրի գետեր է թափում իմ աչքը իմ ժողովրդի աղջկայ բեկման համար։
49 Իմ աչքը բղխում է և չէ դադարում՝ հանգստութիւն չ՚ունի։
50 Մինչև որ նայէ և տեսնէ Տէրը երկնքիցը։
51 Աչքս ցաւում է հոգով չափ իմ քաղաքի բոլոր աղջկերանց համար։
52 Որսալու են աշխատում ինձ ճնճղուկի պէս զուր տեղը իմ թշնամիները։
53 Գուբում կտրեցին իմ կեանքը, և քար գցեցին ինձ վերայ։
54 Ջուրերն անցան գլխովս. ես ասեցի թէ կտրուեցայ։
55 Եւ կանչեցի քո անունը, ով Տէր, խորագոյն գուբիցը։
56 Ձայնս լսեցիր, մի ծածկիր ականջդ իմ հառաչանքին՝ իմ աղաղակին։
57 Դու մօտեցար՝ ես քեզ կանչած օրը, ասեցիր՝ Մի վախենար։
58 Իմ հոգիի դատը վարեցիր, ով Տէր, դու փրկեցիր իմ կեանքը։
59 Ով Տէր, դու տեսար ինձ եղած զրկանքը, պաշտպանիր իմ դատը։
60 Դու տեսար նորանց բոլոր վրէժխնդրութիւնը՝ նորանց բոլոր դիտաւորութիւնքը ինձ դէմ։
61 Լսեցիր նորանց նախատինքը, ով Տէր, նորանց բոլոր դիտաւորութիւնքը ինձ դէմ։
62 Իմ թշնամիների շրթունքները և նորանց ամեն օր արած մտածմունքները ինձ դէմ։
63 Նորանց նստելն ու նորանց վեր կենալը դիտիր, ես նորանց երգն եմ։
64 Նորանց հատուցում պիտի տաս, ով Տէր, նորանց ձեռքի գործերի համեմատ։
65 Նորանց սրտի մթութիւն պիտի տաս, քո անէծքը նորանց վերայ լինի։
66 Նորանց պիտի հալածես քո բարկութեամբը, և Տիրոջ երկնքի տակիցը նորանց բնաջինջ պիտի անես։

ԳԼ. Դ

1 Ի՞նչպէս է մթագունել ոսկին, փոխուել է մաքուր ոսկին. թափուած են սրբարանի քարերը ամեն փողոցների գլխին։
2 Սիօնի որդիքը պատուական՝ մաքուր ոսկիի հաւասար, ի՞նչպէս համարուեցան իբրև ցեխի ամաններ՝ բրուտի ձեռքի գործ։
3 Վիշապներն էլ են ծիծը հանում իրանց ձագերին կաթ տալիս, իմ ժողովրդի աղջիկը անդութ է դառել անապատի ջայլամների պէս։
4 Կաթնակերի լեզուն ծարաւութիւնից իր քիմքին կպաւ. երեխաները հաց ուզեցին, հաց կրտրող չ՚կայ նորանց համար։
5 Համեղ բաներ ուտողները քանդուած նստել են փողոցներում, որդան կարմիրի վերայ մեծացածները աղբանոցները գրկեցին։
6 Եւ մեծ եղաւ իմ ժողովրդի աղջկայ անօրէնութիւնը Սոդոմի մեղքիցը, որ հիմնայատակ եղաւ յանկարծակի, և նորան ձեռք չէր դպել։
7 Մաքուր էին նորա աղնուականները ձիւնից, սպիտակ էին կաթից. կարմիր էին մարմնով բուստերիցը, շափիւղայ էր նորանց կերպարանքը։
8 Ածուխից սև եղաւ նորանց դէմքը, չեն ճանաչվում փողոցներում. նորանց մորթը նորանց ոսկորին է կպել, չորացել է փայտի պէս։
9 Լաւ էին սուրից սպանուածները քան թէ սովից սպանուածները, որովհետև սորանք մաշուեցան՝ ագարակի պտուղներին կարօտ։
10 Ողորմած կանանց ձեռքերը եփեցին իրանց զաւակներին, նորանց համար կերակուր եղան իմ ժողովրդի աղջկայ բեկման ժամանակը։
11 Տէրը կատարեց իր բարկութիւնը, թափեց իր բորբոքած բարկութիւնը, և նա կրակ վառեց Սիօնումը, և նա լափեց նորա հիմունքը։

42 Զ'հաւատացին երկրի թագաւորները և աշխարհի բոլոր բնակիչները, թէ նեղիչն ու թշնամին կ'մտնեն Երուսաղէմի դռներովը,
43 Նորա մարգարէների մեղքերը, նորա քահանաների անօրէնութիւններից, որոնք թափում էին արդարների արիւնը նորա մէջ,
44 Թափառեցին իրբև կոյրեր փողոցներումբ. պղծուեցան արիւնով, որ կարող չէին դպչել նորանց հագուստներին։
45 Գաշուեցեք, պիղծեր, կանչում էին նորանց, գաշուեցեք, քաշուեցեք, մի դպչիք. նորանք էլ փախան և թափառեցին. ասեցին ազգերի մէջ Այլ ևս չեն բնակուելու։
46 Տիրոջ բարկութիւնը ցրուել է նորանց, էլ չէ նայելու նորանց վերայ. քահանաների երեսը չը յարգեցին, ծերերին չ'դթացին։
47 Տակաւին մնալում էին մեր աչքերը զուր տեղը մեր օգնութեանը ապաւէնով. դիտելով սպասում էինք մի ազգի, որ չէր օգնիլ։
48 Նորանք որսացին մեր քայլերը, որ չ'գնանք մեր հրապարակներումբ, մեր վերջը մօտեցաւ, մեր օրերը լցուեցան. իրաւ եկել է մեր վերջը։
49 Թեթևասլաց են մեր հալածողները երկնքի արծիւներից, սարերի վերայ մեզ հալածեցին, դաշտումբ դարան սարքեցին մեզ համար։
20 Մեր *կեանքի շունչը՝ Տիրոջ օծեալը բռնուեցաւ նորանց որոգայթներումբ, որի համար մենք ասում էինք. Նորա հովանիի տակ կ'ապրենք ազգերի մէջ։
21 Ցնծա և ուրախ եղիր, ովհ Եդոմի աղջիկ, որ բնակվում ես Հուս երկրումբ, քեզ էլ կ'անցնէ բաժակը, կ'արբես և ինքդ քեզ կ'մերկացնես։
22 Քո անօրէնութիւնը պիտի վերջանայ, ովհ Սիոնի աղջիկ, էլ գերի չի տանիլ քեզ. քո անօրէնութիւնը կ'այցելէ, ովհ Եդոմի աղջիկ, կ'յայտնէ քո մեղքերը։

*ԵԲՐ. քթի

ԳԼ. Ե

Յիշեր, ովհ Տէր, թէ մեզ ինչ եղաւ, և տես մեր անարգանքը։ 1
Մեր ժառանգութիւնը անցաւ օտարներին, մեր տները՝ օտարականներին։ 2
Որբեր եղանք առանց հօր, մեր մայրերը սրբևայրիների նման են։ 3
Մեր ջուրը փողով խմեցինք, մեր փայտը գնով է գալիս։ 4
Մեր վզին ՚ըլ-ՙել հալածվում ենք, վաստակեցինք ու հանգստութիւն չ'ունինք։ 5
Եգիպտոսին ձեռք մեկնեցինք, Ասորեստանին էլ՝ հացով կշտանալու համար։ 6
Մեր հայրերը մեզ գործեցին, և չ'կան, իսկ մենք նորանց անօրէնութիւններն ենք կրում։ 7
Ծառաներ տիրեցին մեզ վերայ, նորանց ձեռքից ազատող չ'կայ։ 8
Մեր անձի վտանգով բերինք մեր հացը, անապատումբ եղող սուրի պատճառով։ 9
Մեր մորթը փուռի պես սեւացաւ, սովի տանջանաց պատճառով։ 10
Կանանցը Սիոնի մէջ բռնադատեցին, կոյսերին՝ Յուդայի քաղաքներումբ։ 11
Իշխանները կախուեցան իրանց ձեռովը, ծերերի երեսը չ'յարգուեցան։ 12
Երիտասարդները երկանաքարը վեր առան, և տղայքը փայտի տակին ընկան։ 13
Ծերերը դադարեցին դռնիցը, երիտասարդները՝ իրանց երգեցողութիւնից։ 14
Դադարեց մեր սրտի ուրախութիւնը, մեր պարը սուգի փոխուեցաւ։ 15
Վայր ընկաւ մեր գլխի թագը, վա՛յ մեզ, որովհետև մեղանչել ենք։ 16
Սորա համար մեր սիրտը նուաղած է, սորանց համար խաւարուեցան մեր աչքերը։ 17
Սիօն սարի համար, որ աւերակ է, աղուէսներ են մեն գալիս նորանումբ։ 18
Դուս, ովհ Տէր, յաւիտեան կաս, քո աթոռը ազգից ազգ է։ 19
Ինչու՞ ես մեզ յաւիտեան մոռանում, մեզ ձգում ես երկար օրերով։ 20
Մեզ դարձրու, ովհ Տէր, դէպի քեզ, և մենք կ'դառնանք. նորոգիր մեր օրերը առաջուայ պէս։ 21
Այլ գուս մեզ բոլորովին մերժեցիր, մեզ վերայ շատ բարկացար։ 22

ԵԶԵԿԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

Եւ եղաւ երեսուներորդ տարուայ չորրորդ ամսուայ հինգին, երբոր ես գերիների մէջ էի Քոբար գետի մօտ, երկինքը բացուեցաւ, և ես տեսայ Աստուծոյ տեսիլքները։ 1
Ամսի հինգին այնինքն Յովաքին թագաւորի գերութեան հինգերորդ տարին, եղաւ Տիրոջ խօսքը Բուզիի որդի Եզեկիէլ քահանային գաղդէացիների երկրումբ Քոբար գետի մօտ, և այնտեղ Տիրոջ ձեռքը նորա վերայ եղաւ։ 2 3
Եւ ես տեսայ, և ահա մի մրրկալից հողմ էր գալիս հիւսիսից՝ մեծ ամպ և բորբոքուած կրակ, և մի պայծառութիւն նորա շուրջը. և նորա միջից՝ մի հրահալքի կերպարանք կրակի միջից։ 4
Եւ նորա միջից չորս կենդանիների նմանութիւնք. և նորանց երևոյթը սա էր. նորանց կերպարանքը մարդի նմանութիւն ունէին։ 5
Եւ չորս երես ունէր նմանից մէկը, և չորս թև ունէր նորանց ամէն մէկը։ 6
Եւ նորանց ոտները ուղիղ ոտներ էին. և նորանց ոտների թաթը զուարակի ոտների թաթին նման, և փայլում էին թեթև պղնձի կերպարանքի պէս։ 7 8
Եւ մարդի ձեռներ կային նորանց թևերի տակին նորանց չորս քառակողմերին. և չորսն էլ երեսներ ու թևեր ունէին։ 9
Մէկի թևերը կպած էին միւսներին. չուռ չէին տալիս երբոր նորանք գնում էին. ամեն մէկը ուղիղ իր դիմացն էր գնում։ 10
Եւ նորանց երեսների նմանութիւնը մարդի երես էր, և առիւծի երես աջ կողմից այն չորսի համար, և եզի երես ձախ կողմից այն չորսի համար. և չորսն էլ արծիւ երես ունէին։ 11
Եւ նորանց երեսները և թևերը բաժանուած էին վերից, ամեն մէկի երկուսը կպած էին իրար և երկուսով ծածկում էին իրանց մարմինները։ 12
Եւ ամեն մէկը գնում էր իր երեսի դիմացը, ուր որ ոգին էր լինում որ գնայ՝ նորանք գնում էին. չուռ չէին տալիս երբոր գնում էին։ 13
Եւ կենդանիների նմանութիւնը՝ նորանց կերպարանքը կրակի վառուած կայծերի պէս էր ինչպես ջահերի կերպարանք. նա մեն էր գալիս կենդանիների մէջ, և փայլում էր կրակը, և կրակիցը կայծակներ էին դուրս գալիս։ 14
Եւ կենդանիները վազում և դառնում էին փայլատակմանքի կերպարանքով։
Եւ մտիկ տուի կենդանիներին, և ահա մէկ անիւ կար գետնի վերայ կենդանիների կշտին դէպի քառակողմն։ 15
Անիւների կերպարանքը և նորանց շինուածքը ոսկեքարի պէս էր, և այն չորսն էլ մէկ նմանութիւն ունէին. և նորանց կերպարանքն ու շինուածքը իրրև թէ անիւ անիւի մէջ լինէր։ 16
Գնալիս իրանց չորս քառակողմն 17
վերայ էին գնում, չուռ չէին

48 տալիս երբոր գնում էին՝ եւ նորանց շրջանակները բարձր էին
եւ ահեղ էին. և նորանց չորս
շրջանակները լիքն էին աչքերով
49 շուրջանակի՝ եւ կենդանիները
գնալիս անիւները գնում էին նո-
րանց կողքին, և կենդանիները
երկրի վերայից բարձրանալիս ա-
20 նիւները բարձրանում էին։ Դէպի
ուր որ ոգին էր լինում գնալու
համար՝ գնում էին, ուր որ ոգին
գնար. և անիւները բարձրանում
էին նորանց կողքին, որովհետև
կենդանիի ոգին կար անիւների
21 մէջ։ Նորանք գնալիս՝ գնում
էին, և նորանք կանգնելիս՝ կանգ-
նում էին, և նորանք երկրի վե-
րայից բարձրանալիս՝ անիւները
բարձրանում էին նորա կողքին,
որովհետև կենդանիի ոգին կար
22 անիւների մէջ։ Եւ կենդանիի
գլուխների վերայ մի նմանութիւն
կար հաստատութեան ահաւոր
ակնվանիի կերպարանքի նման,
տարածուած վերևից նորանց գլ-
23 ուխների վերայ։ Եւ հաստատու-
թեան տակին նորանց թևերը
ուղիղ փոքրիկ էին դէպի
մէկմէկ. ամեն մէկը երկուսն
ունէր, որով ծածկում էր և
միւսը ունէր երկուսը, որով նո-
րանք ծածկում էին իրանց մար-
24 մինները։ Եւ ես լսեցի նորանց
թևերի ձայնը շատ ջրերի ձայնի
պէս՝ Ամենակարողի ձայնին պէս,
երբոր գնում էին, աղմուկի ձայ-
նի պէս՝ բանակի ձայնի պէս.
կանգնելիս կախ էին գցում իւ-
25 րանց թևերը։ Եւ մի ձայն եղաւ
այն հաստատութեան վերևից որ
նորանց գլխի վերայ էր. (նորանք
կանգնելիս կախ էին գցում իւ-
րանց թևերը։)
26 Եւ այն հաստատութիւնից
վեր, որ նորանց գլխի վերայ էր,
շափիւղայ քարի կերպարանքով
աթոռի նման մի բան կար, և այն
աթոռի նմանի վերայ մի նմա-
նութիւն կար մարդի կերպարան-
27 քով նորա վերայ վերևից։ Եւ ես
մոխիկ տուի հրահալքի երևոյթի
պէս կրակի կերպարանքով ներ-
սեանց շուրջանակի նորա երանքի
կերպարանքից մինչև վեր, և նո-
րա երանքի կերպարանքից դէպի
ցած տեսայ կրակի կերպարանքի
պէս, և պայծառութիւն նորա
շուրջը։ Ծիածանի կերպարանքի 28
նման, որ լինում է ամպուտի անձ-
րև օրը, այնպէս էր այն պայծա-
ռութեան կերպարանքը շուրջա-
նակի։ Սա Տիրոջ փառքի նմա-
նութեան կերպարանքն էր. և ես
տեսայ ու վայր ընկայ երեսիս վե-
րայ. և մի ձայն լսեցի որ խո-
սում էր։

Գլ. Բ

1 Եւ ինձ ասեց, Մարդի որդի,
կանգնիր ոտներիդ վերայ, որ քեզ
2 հետ խօսեմ։ Եւ Հոգին մտաւ
ինձ մէջս հէնց որ նա խօսեց ինձ հետ,
և ինձ կանգնեցրեց ոտներիս վե-
րայ. և ես լսեցի նորան, որ խո-
3 սում էր ինձ հետ։ Եւ նա ասեց
ինձ. Մարդի որդի, ես քեզ ու-
ղարկում եմ Իսրայէլի որդկանց
մօտ, այն ինձ դէմ ապստամբող
ապստամբ ազգերի մօտ. նորանք
և նորանց հայրերը յանցաւոր ե-
ղան ինձ դէմ մինչև իսկ այս օրը։
4 Եւ որդիքը պինդերես և խստա-
սիրտ են. ես քեզ նորանց մօտ
եմ ուղարկում. և ասիր նորանց.
5 Այսպէս է ասում Տէր Եհովան։
Եւ նորանք՝ թէ լսեն թէ զանց
անեն, որովհետև նորանք ապըս-
տամբ տուն են, և կ՚իմանան որ
մարգարէ է եղել իրանց մէջը։
6 Իսկ դու, մարդի որդի, մի վա-
խենար նորանցից, և նորանց խօս-
քերիցն էլ մի վախենար, թէև
մօտդ տատասկներ և փուշեր էլ
լինեն, և դու կարիճների վերայ
ես բնակվում. նորանց խօսքերիցը
մի վախենար և նորանց երեսիցը
մի զարհուրիր, թէև նորանք
ապստամբ տուն են։ Եւ իմ խօս- 7
քերն ասիր նորանց՝ թէ լսեն թէ
զանց անեն, որովհետև նորանք
ապստամբ են։
Իսկ դու, մարդի որդի, լսիր 8
թէ ես ինչ եմ ասում քեզ,
ապստամբ մի լինիր այն ապստամբ
տան պէս. բաց բերանդ և կեր
9 ինչ որ ես տալիս եմ քեզ։ Եւ
ես մոխիկ արի և ահա մի ձեռք
կար դէպի ինձ մեկնուած, և
ահա նորանում մի գրքի տոմս։
10 Եւ նա տարածեց նորան իմ
առաջին, և նա գրուած էր ա-
ռաջիցն ու ետևիցը. և նորա վե-
րայ գրուած էին ողբեր և հա-
ռաչանք ու վայ։

Գլ. Գ

1 Եւ ասեց ինձ. Մարդի որդի,
ինչ որ գտար՝ կեր, կեր այս
տոմսը, և գնա խօսիր Իսրայէլի
2 տան հետ։ Եւ ես բացի բերանս,
և նա ինձ ուտեցրեց այն տոմսը։
3 Եւ ինձ ասեց. Մարդի որդի,
փորդ կերակրիր և աստանքագ-
լցրու այս տոմսովը որ ես քեզ
եմ տալիս։ Եւ ես կերայ նորան.
և նա մեղրի պէս քաղցր էր իմ
4 բերանումը։ Եւ նա ասեց. Մար-
դի որդի, գնա մոխիր Իսրայէ-
լի տունը և խօսիր նորանց հետ
5 իմ խօսքերովը. Որովհետև դու
դժուարիմաց և ծանրալեզու ժո-
ղովրդի մօտ չես ուղարկվում,
6 այլ Իսրայէլի տան մօտ. Ոչ թէ
դժուարիմաց և ծանրալեզու շատ
ժողովուրդների մօտ, որոնց խօս-
քերը դու չես հասկանում. յի-
րաւի եթէ քեզ նորանց մօտ ու-
ղարկէի, նորանք քեզ մոխիկ կը
7 ասային։ Բայց Իսրայէլի տունը չեն
ուզելու քեզ լսել, որովհետև
նորանք չեն ուզում ինձ լսել.
որովհետև բոլոր Իսրայէլի տունը
ճակատապինդ և խստասիրտ են։
8 Այս ես պինդ եմ շինում քո
երեսը նորանց երեսի դէմ, և
ճակատդ ամուր՝ նորանց ճակա-
9 տի դէմ։ Ադամանդի պէս վէ-
մից պինդ եմ շինելու քո ճա-
կատը, նորանցից մի վախենար, և
մի զարհուրիր նորանց երեսիցը,
թէև նորանք ապստամբ տուն
10 են։
Եւ ինձ ասեց. Մարդի որդի, 8
այս ամեն խօսքերը, որ խօսում
եմ քեզ, սրտիդ մէջ դիր և ա-
11 կանջներովդ լսիր. Եւ գնա մոխիր
գերիների մէջ քո ժողովրդի որդ-

կանց մօտ և խօսիր նորանց հետ
և ասիր նորանց. Այսպէս է ա-
սում Տէր Եհովան, թէ լսեն թէ
զանց անեն։
Եւ Հոգին ինձ բարձրացրեց և 12
լսեցի իմ ետևից մի մեծ որոտ-
ման ձայն՝ Օրհնեալ է Տիրոջ փառ-
քը իր տեղիցը. Եւ ընդհ կենդա- 13
նիների իրար դպչող թևերի ձայ-
նը և նորանց կողքի անիւների
ձայնը և մեծ որոտման ձայնը։
Եւ Հոգին ինձ բարձրացրեց և 14
ինձ վեր առաւ, և ես գնում էի
դառնագին իմ Հոգիի բորբոքու-
մովը. և Տիրոջ ձեռքը ինձ վե-
րայ ամուր էր։ Եւ ես Թել-աբիբ 15
եկայ գերիների մօտ, որոնք բնակ-
վում էին Քեբար գետի մօտ. և
ուր որ իրանք նստած էին՝ ես էլ
նստեցի այնտեղ եօթն օր նորանց
մէջ ապշած։
Եւ եօթն օրից յետոյ Տիրոջ 16
խօսքը եղաւ ինձ ասելով. Մար- 17
դի որդի, ես քեզ դէտ եմ դրել
Իսրայէլի տան համար. և դու
պէտք է իմ բերանից խօսք լսես
և զգուշացնես նորանց իմ կողմանէ։
Երբոր ես ամբարշտին ա- 18
սեմ՝ Անպատճառ պէտք է մեռ-
նես, և դու նորան չզգուշացնես
և չխօսես որ զգուշացնես ամ-
բարշտին իր չար ճանապարհիցը
որ ապրէ. այն ամբարիշտը իր
ան բէնութիւնովը կ՚մեռնէ, բայց
նորա արիւնը քո ձեռքից կ՚պա-
հանջեմ։ Իսկ եթէ դու զգու- 19
շացնես ամբարշտին, և նա ես
չդառնայ իր ամբարշտութիւնից
և իր չար ճանապարհիցը. նա իր
անօրէնութիւնովը կ՚մեռնէ, իսկ
դու կ՚ազատես քո անձը։ Եւ 20
երբոր արդարը ես դառնայ իր
արդարութիւնից և չարութիւն
անէ, և ես գայթակղութիւն
դնեմ նորա առաջին՝ նա մեռ-
նէ, որովհետև դու նորան չզգու-
շացրիր. նա իր մեղքովը կ՚մեռնէ
և չի յիշուիլ նորա արած ար-
դարութիւնը. իսկ նորա արիւնը
քո ձեռից կ՚պահանջեմ։ Եւ ե- 21
թէ դու զգուշացնես արդարին,
որ չմեղանչէ արդարը և նա էլ
չմեղանչէ. նա անպատճառ կ՚ապ-

բէ, որովհետև զգուշացրուել է,
և դու կ'ազատես քո անձը։
22 Եւ այնտեղ Տիրոջ ձեռքը ե-
զաւ ինձ վերայ և ասեց ինձ.
Վեր կաց դուրս գնա հովիտը,
և ես այնտեղ կ'խօսեմ քեզ
23 հետ։ Եւ ես վեր կացայ և գնա-
ցի դուրս հովիտը, և ահա այն-
տեղ կանգնած էր Տիրոջ փառ-
քը այն փառքի պէս, որ տեսել
էի Քոբար գետի մօտ, և ես վայր
24 ընկայ երեսիս վերայ։ Եւ հոգին
եկաւ մէջս և ինձ կանգնեցրեց
ոտներիս վերայ, և խօսեց ինձ
հետ և ասեց ինձ՝ Գնա թաք
25 կաց քո տանը։ Եւ դու, մարդի
որդի, ահա քեզ վերայ կապանք-
ներ են դնելու և քեզ կապելու
են նորանցով, որ դու դուրս
26 չ'գաս նորանց մէջ։ Եւ ես քո
լեզուդ քիմքիդ եմ կպցնելու,
և դու կ'համրանաս, և դու նո-
րանց համար խրատող մարդ չես
լինելու, որովհետև նորանք ա-
27 պըստամբ տուն են։ Եւ ես քեզ
հետ խօսելիս կ'բանամ քո բե-
րանը, և դու նորանց ասես.
Այսպէս է ասում Տէր Եհովան.
Լսողը լսէ, զանց անողը զանց
անէ, որովհետև նորանք ապըս-
տամբ տուն են։

ԳԼ. Դ

1 Եւ դու, մարդի որդի, մի աղիւս
առ քեզ համար, և նորան ա-
ռաջդ դիր, և նորա վերայ մի
քաղաք գծագրիր, այսինքն Երու-
2 սաղէմը։ Եւ նորա վերայ պաշա-
րում շինիր, և նորա դէմ մարտ-
կոցներ հիմնիր, և նորա դէմ
պատնէշ դիր, և բանակներ շի-
նիր նորա դէմ, և խոյեր դիր նո-
3 րա դէմ շուրջանակի։ Եւ դու
քեզ համար մի երկաթի տա-
պակ առ և նորան դիր իբրև եր-
կաթի պարիսպ քո մէջ և քա-
ղաքի մէջ, և երեսդ դարձրու
դէպի նորան, և նա լինի պաշար-
ման մէջ, և դու նորան պաշա-
րիր. սա մէկ նշան լինի Իսրայէլի
տան համար։
4 Եւ դու պառկիր քո ձախ կող-
քին, և նորա վերայ դիր Իսրայէլի
տան անօրէնութիւնը, այն օրերի
թուովը, որ դու կ'պառկես նորա
վերայ, պիտի կրես նորանց անօ-
5 րէնութիւնը։ Եւ ես քեզ տուի
նորանց անօրէնութեան տարիներ-
ը օրերի թուով երեք հարիւր
իննսուն օր. և դու կ'կրես Իս-
6 րայէլի տան անօրէնութիւնը։ Եւ
երբոր սորանց վերջացնես, այն
ժամանակ կրկին պառկիր քո աջ
կողքին, և կրիր Յուդայի տան
անօրէնութիւնը քառասուն օր՝
ամեն մէկ տարուայ տեղ մէկ
մէկ հատ օր եմ տալիս քեզ։
7 Եւ դու դէպի Երուսաղէմի պա-
շարումը ուղղիր երեսդ և քո
մերկացրած բազուկը, և մարգա-
8 րէացիր նորանց դէմ։ Եւ ես ա-
հա կապանքներ պիտի դնեմ քեզ
վերայ, որ դու մէկ կողքիցդ միւս
կողքիդ վերայ չ'դառնաս, մինչև
որ լրացնես քո պաշարման օրերը։
9 Եւ դու վեր առ քեզ համար
ցորեն, գարի, բակլայ, ոսպ, կո-
րեկ և հաճար, և նորանց դիր
մէկ ամանում, և նորանց հաց
շինիր քեզ համար. այն օրերի
թուով որ պառկած էիր քո կող-
քին երեք հարիւր իննսուն օր ու-
10 տես այն։ Եւ կերակուրդ, որ
պիտի ուտես, կշռով լինի՝ օրը
քսան սիկղ, ժամանակից ժա-
11 մանակ ուտես այն։ Եւ ջուրը չա-
փով խմես՝ հիմենի մի վեցերոր-
դը, ժամանակից ժամանակ խմես
12 այն։ Եւ գարեղէն շօթերի պէս
ուտես այն. և մարդի աղբով
թխես այն նորանց աչքի առա-
13 ջին։ Եւ Տէրն ասեց. Իսրայէլի
որդիքը սորա նման պիղծ պիտի
ուտեն իրանց հացը այն ազգերի
մէջ, ուր որ ես նորանց կ'աքսո-
14 րեմ։ Եւ ես ասեցի. Աւա՛ղ,
ով Տէր Եհովայ, ահա իմ անձը
պղծուած չէ. և մեռելոտի ու
գազանաբեկ չեմ կերած իմ ման-
կութիւնից մինչև հիմա, և բե-
15 րանս պիղծ միս չէ մտած։ Եւ
նա ինձ ասեց. Տես՝ արջառի քա-
կորը նշանակեցի քեզ համար
մարդի աղբի տեղ, և հացդ նո-
16 րա վերայ շինիր։ Եւ ինձ ասեց.

Մարդի որդի, ահա ես պիտի
կոտրեմ հացի ցուպը Երուսա-
ղէմումը, և նորանք հացը կշռով
և տագնապով պիտի ուտեն, և
ջուրը չափով և ապշութեամբ
17 պիտի խմեն։ Որովհետև նորանք
պիտի կարօտանան հացի և ջրի,
և պիտի ապշեն իրար հետ, և
պիտի հալումաշ լինեն իրանց
անօրէնութեան մէջ։

ԳԼ. Ե

1 Եւ դու, մարդի որդի, քեզ
համար մի սուր դանակ առ,
քեզ համար մի սափրիչի ածելի
առ, և անց կացրու գլխիդ վե-
րայով և մօրուքիդ վերայով, և
քեզ համար կշռորդով մի կշիռք
առ և մասերը բաժին բաժին ա-
2 րա։ Մի երրորդը կրակով այրիր
քաղաքի մէջ, երբոր պաշարման
օրերը լրանան, և մի երրորդն առ
և դանակը կտորիր նորա շուրջը,
իսկ մի երրորդը ցրիւ տուր օդի
մէջ, և ես սուր պիտի մերկացը-
3 նեմ նորանց ետևից։ Եւ նորան-
ցից մի սակաւ թուով առ, և
ծրարիր նորանց քղանցքներիդ
4 մէջ։ Եւ էլի առ նորանցից և
կրակը գցիր նորանց և կրակով
այրիր նորանց. նորանից կրակ
պիտի դուրս դայ բոլոր Իսրայէլի
տան համար։
5 Այսպէս է ասում Տէր Եհո-
վան. Այս է Երուսաղէմը. ես
դրել եմ նորան ազգերի և նորա
6 շրջակայ երկիրների մէջը։ Բայց
նա ապստամբուեց իմ իրաւունք-
ների դէմ ազգերիցն աւելի չա-
րութիւն գործելով, և իմ կա-
նոնների դէմ իր շրջակայքում
եղող երկիրներից աւելի. որով-
հետև նորանք մերժեցին իմ դա-
տաստանները և չ'դնացին իմ կա-
7 նոններովը։ Դորա համար այսպէս
է ասում Տէր Եհովան. Որովհե-
տև դուք աղմկեցիք աւելի քան
թէ ձեր շրջակայքում եղող ազ-
գերը՝ իմ կանոններումը չ'դնա-
ցիք, և իմ իրաւունքները չ'ա-
րիք, և ձեզ շրջապատող ազգե-
րի սովորութիւնների պէս էլ
չ'արիք, Դորա համար այսպէս է 8
ասում Տէր Եհովան. Ահա ես էլ
քեզ դէմ եմ, և քո մէջ դա-
տաստաններ պիտի անեմ, ազգե-
րի աչքի առաջին։
Եւ քեզ այն բանը պիտի անեմ, 9
որ նորա նմանը երբէք էլ չեմ
արած և չեմ էլ անիլ, քո բո-
լոր գարշելութիւնների համար։
Դորա համար քո մէջ հայրերը 10
պիտի որդկանցը ուտեն, և որդի-
քը պիտի իրանց հայրերին ուտեն,
և քեզ դատաստաններ պիտի ա-
նեմ, և քո բոլոր մնացորդը պի-
տի ցրիւ տամ բոլոր կողմերը։
Դորա համար կենդանի եմ ես, 11
ասում է Տէր Եհովան, որովհե-
տև դու պղծեցիր իմ սրբարանը
քո բոլոր պղծութիւններովը և
քո բոլոր գարշելութիւններովը.
ես էլ պիտի քեզ կոտրեմ և աչքս
պիտի չ'խնայէ, և ես էլ պիտի
չ'ողորմեմ։ Քո մի երրորդը ժանտ- 12
ախտով պիտի մեռնեն և սովով
պիտի վերջանան քո մէջ, և մի
երրորդը սուրով պիտի ընկնեն
քո շուրջը, իսկ մի երրորդը ցրիւ
պիտի տամ բոլոր կողմերը և սուր
պիտի մերկացնեմ նորանց ետև-
ւիցը։ Եւ իմ բարկութիւնը կը 13
կատարուի, և պիտի հանգստա-
ցնեմ իմ սրտմտութիւնը նորանց
վերայ և վրէժ պիտի առնեմ. և
պիտի գիտենան, որ ես Տէրս եմ
խօսել իմ նախանձովը, երբոր իմ
բարկութիւնը կատարեմ նորանց
վերայ։ Եւ ես քեզ պիտի աւեր- 14
մունքի և անարգանքի մատնեմ
քեզ շրջապատող ազգերի մէջ
ամեն անցնողի աչքի առաջին։
Եւ դու անարգանք ու նախա- 15
տինք, խրատ և զարմացում պի-
տի դառնաս քեզ շրջապատող
ազգերի համար, երբոր ես քեզ
վերայ դատաստաններ անեմ,
բարկութիւնով և սրտմտութիւ-
նով և բարկութեան պատիժնե-
րով. ես Տէրս եմ ասել։
Երբոր սովի չար նետերը նո- 16
րանց վերայ գցեմ, որ նորանց ա-
պականեն, որոնք ես պիտի գցեմ
ձեզ փչացնելու համար, սովն էլ
եմ աւելացնելու ձեզ վերայ, և

ձեր հացի ցուպը պիտի կոտրեմ,
17 եւ ձեզ վերայ սով պիտի ուղարկեմ և չար գազանները, որ
քեզ անզաւակ անեն. և ժանտախտ ու արիւն պիտի անցնէ քո
միջովը, և սուր պիտի բերեմ քեզ վերայ. ես Տէրս եմ ասել։

Գլ. Զ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Մարդի որդի, երեսդ դարձրուա դէպի Իսրայէլի սարերը
և մարգարէացիր նորանց դէմ,
3 եւ ասիր. Ով Իսրայէլի սարեր, լսեցէք Տէր Եհովայի խօսքը, այս-
պէս է ասում Տէր Եհովան սա-
րերին ու բլուրներին, ձորերին ու
հովիտներին. Ահա ես ձեզ վե-
րայ սուր պիտի բերեմ. և պիտի
4 կորցնեմ ձեր բարձրաւանդակ-
ները. եւ աւերակ պիտի դառնան
ձեր սեղանները և պիտի փշրուին
ձեր արեգական կուռ-քերը, և
5 ձեր սպանուածներին պիտի դնեմ
ձեր կուռ-քերի առաջին, եւ Իս-
րայէլի որդկանց դիակները պիտի
դնեմ իրանց կուռ-քերի առա-
ջին, և պիտի ցրիւ տամ ձեր ո-
սկորները ձեր սեղանների չուրջը-
6 բը։ Ձեր ամեն բնակութիւննե-
րը քաղաքները պիտի աւե-
րուին ձեր սեղանները աւեր-
ակ դառնան, և բարձրաւան-
դակները՝ ամլանան. որպէս զի
աւերակ ու ամլի դառնան ձեր
սեղանները, և փշրուին ու խա-
փանուին ձեր կուռ-քերը, և ձեր
արեգական կուռ-քերը կտրուին
7 և ձեր արարքները ջնջուին։ Եւ
սպանուած պիտի վայր ընկնէ ձեր
մէջ, որ իմանաք թէ ես եմ Տէրը։
8 Եւ ես աւելորդ պիտի թողեմ
որ մնան ձեզ համար՝ սուրից ա-
զատուածներ ազգերի մէջ, երբ-
որ դուք ցրուած կ'լինէք երկիր-
9 ների մէջ։ Եւ ձեր ազատուած-
ները պիտի յիշեն ինձ ազգերի
մէջ, ուր որ նորանք գերի են
տարուել, որ կոտրեմ նորանց
շնացող սիրտը, որ հեռացել էր
ինձանից, և նորանց աչքերը ո-
րոնք շնացան իրանց կուռ-քերի
ետեւից. և նորանք պիտի զզուին
իրանցից այն չարութիւնների հա-
մար, որ արին իրանց բոլոր պղծու-
թիւնների նկատմամբ։ Եւ պիտի
իմանան, որ ես եմ Տէրը, որ՝ ի զուր
չեմ խօսել, թէ պիտի անեմ նո-
րանց այս չարիքը։ Այսպէս է ա-
սում Տէր Եհովան. Ձարկիր ձեռ-
քերովդ և ոտներովդ տրփիր, և
ասիր. Աւա՛ղ Իսրայէլի տան բո-
լոր չար պղծութիւններին, որ
սրով, սովով և ժանտախտով
պիտի ընկնեն։ Հեռուն ժանտախ-
տով պիտի մեռնէ, և մօտիկը
սրով պիտի ընկնէ, և մնացածն
ու պաշարուածը սովով պիտի
մեռնէ, և ես պիտի կատարեմ իմ
բարկութիւնը նորանց վերայ։ Եւ
պիտի դիտենաք որ ես եմ Տէրը,
երբոր նորանց սպանուածները կը
լինեն իրանց կուռ-քերի մէջտեղը,
իրանց սեղանների շուրջերը, ա-
մեն բարձր բլուրի վերայ սարերի
բոլոր գլխներին և ամեն կանաչ
ծառի տակ և ամեն տերեւախիտ
բեւեկնիի տակ, այնտեղ ուր որ
անուշահոտ խունկ էին մատու-
ցանում իրանց ամեն կուռ-քե-
րին։ Այսպէս իմ ձեռքը պիտի
մեկնեմ նորանց վերայ, և երկիրը
պիտի աւերակ ու աւերեալ շի-
նեմ, Դիբլաթի անապատից ա-
ւելի, նորանց բոլոր բնակութիւն-
ներում. և կ'իմանան որ ես եմ
Տէրը։

Գլ. Է

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Եւ դու, մարդի որդի,
այսպէս է ասում Տէր Եհովան
Իսրայէլի երկրին. Վախճա՛ն է ե-
կել է վախճանը երկրի չորս ծայ-
րերի համար։ Հիմա հէնց է վախ-
ճանը քեզ վերայ. այսինքն իմ
բարկութիւնը պիտի ուղարկեմ
քեզ վերայ, և քեզ պիտի դա-
տեմ քո ճանապարհների համե-
մատ, և քեզ վերայ պիտի բե-
րեմ քո բոլոր պղծութիւնները։
4 Եւ իմ աչքը քեզ պիտի չ'խնայէ,
և ես պիտի չ'ողորմեմ. այլ քո
ճանապարհները քեզ վերայ պի-
տի դնեմ, և քո պղծութիւնները

քո մէջը պիտի լինեն, և դուք
կ'իմանաք, թէ ես եմ Տէրը։
5 Այսպէս է ասում Տէր Եհո-
վան. Մէկ չարիք, ահա մէկ չա-
6 րիք է գալիս։ Վախճանն է գա-
լիս, եկել է վախճանը. արթնա-
ցել է քեզ վերայ, ահա գալիս է։
7 Գառուհասը գալիս է դէպի քեզ,
ով երկրի բնակիչ, ժամանակը
եկել է, մօտ է խռովութեան
օրը, և ոչ թէ ցնծութիւն սա-
րերի վերայ։ Հիմա մօտերիս պի-
տի թափեմ իմ սրտմտութիւնը
քեզ վերայ, և իմ բարկութիւնը
քեզ վերայ կատարեմ, և քեզ
պիտի դատեմ քո ճանապարհ-
ների համեմատ, և քեզ վերայ
բերեմ քո բոլոր գարշելութիւն-
ները։ Եւ իմ աչքը պիտի չ'խնայէ,
և ես պիտի չ'ողորմեմ, քո ճա-
նապարհների համեմատ պիտի
տամ քեզ, և քո պղծութիւն-
ները պիտի քո միջումը լինեն, և
պիտի իմանաք որ ես Տէրս եմ
10 զարկողը։ Ահա օրը, ահա գալիս
է, դուրս է եկել պատուհասը,
ծաղկել է գաւազանը, ընձիւղ-
ուել է ամբարտաւանութիւնը։
11 Բռնաւորութիւնը վեր կացաւ
իբրև ամբարշտութեան գաւա-
զան. ոչ մի բան նորանցից, ոչինչ
նորանց բազմութիւնիցն ու ոչինչ
նորանց ճոխութիւնիցը պէտք չէ
հաշ, և ոչ մի վայելչութիւն նո-
12 րանցում։ Եկաւ ժամանակը, մո-
տեցաւ օրը, դնողը չ'ուրախանայ
և ծախողը չ'ողբայ, որովհետև
բարկութիւն կայ նորա բոլոր
13 բազմութեան վերայ։ Որպա հա-
մար որ ծախողը ետ պիտի չ'դառ-
նայ էր ծախուածին, թէպէտև
նա տակաւին ապրողների մէջ
ողջ լինի. որովհետև տեսիլքը
նորա բոլոր բազմութեան համար
պիտի ետ չ'դառնայ, և մարդ իր
կեանքի անօրէնութիւնովը պիտի
չ'ուժովանայ։
14 Փողը հնչեցրին, և պատրաս-
տեցին ամենը, բայց պատերազմի
գնացող չ'կայ. որովհետև իմ
բարկութիւնը նորա բոլոր բազ-
15 մութեան վերայ է։ Սուրը դրսում,
և ժանտախտն ու սովը ներս-

գալիս, և դժուժի վերայ դուժ է լինելու, և նորանք տեսիլք պիտի որոնեն մարգարէից, և օրէնքը պիտի կորչէ քահանայից, և
27 խորհուրդը ծերերից: Թագաւորը սուգ պիտի անէ, և իշխանը ապշութիւն պիտի հագնէ, և երկրի ժողովրդի ձեռքերը պիտի դողան. Նորանց ընթացքի համեմատ պիտի անեմ նորանց, և նորանց դատաստաններով պիտի դատեմ նորանց, և նորանք կ'իմանան, որ ես եմ Տէրը:

ԳԼ. Ը

1 Եւ եղաւ որ վեցերորդ տարին վեցերորդ ամսի հինգին ես նստած էի տանս, և Յուդայի ծերերը նստած էին իմ առաջին, և այնտեղ Տէր Եհովայի ձեռքը ընկաւ
2 ինձ վերայ: Եւ մտիկ արի և ահա մի կերպարանք՝ կրակի երևոյթով, նորա երանքի կերպարանքից դէպի ցած կրակ էր, և նորա երանքից դէպի վեր մի փառաւոր կերպարանք հրահալքի
3 տեսքով: Եւ նա մի ձեռքի նմանութիւն մեկնեց և բռնեց իմ գլխի վարսքից, և հոգին վերացրեց ինձ երկրի ու երկնքի միջտեղը, և տարաւ ինձ երուսաղէմ Աստուծոյ տեսիլքներով ներքին դռան մուտքը, որ նայում է դէպի հիւսիս, ուր որ նստած էր նախանձի կուռքը՝
4 նախանձ գրգռողը: Եւ ահա այնտեղ էր Իսրայէլի Աստուծոյ փառքը, այն տեսիլքի պէս, որ տեսել էի դաշտումը:
5 Եւ ինձ ասեց. Մարդի որդի, աչքերդ բարձրացրու դէպի հիւսիս. և ես բարձրացրի աչքերս դէպի հիւսիս, և ահա սեղանի դռան հիւսիսային կողմին կար այդ նախանձի կուռքը մուտքում:
6 Եւ նա ասեց ինձ. Մարդի որդի, տեսնո՞ւմ ես դու, թէ դորանք ի՞նչ են անում, այդ մեծամեծ պղծութիւնները, որ Իսրայէլի տունը անում է այստեղ որ ես հեռանամ իմ սրբարանից, բայց էլի դարձիր տես աւելի մեծ պղծութիւններ:
7 Եւ ինձ տարաւ դաւիթի դուռը, և ես մտիկ տուի, և ահա մի ծակ կար պատի վերայ:
8 Եւ ասեց ինձ. Մարդի որդի քանդիր այս պատը. և ես քանդեցի պատը, և ահա մեկ մուտք կար:
9 Եւ նա ասեց ինձ. Կէ և տես այն դէշ պղծութիւնները, որ նորանք անում են այստեղ:
10 Եւ ես մտայ ու տեսայ և ահա ամեն սողունների և գարշելի անասունների նմանութիւններ, և Իսրայէլի տան բոլոր կուռքերը պատին վերայ փորուած շուրջանակի շուրջով:
11 Եւ եօթանասուն մարդիկ Իսրայէլի տան ծերերից և Սափանի որդի Յազոնիան նորանց մէջ կանգնած, որանք կանգնած էին նորանց առաջին. և ամեն մեկը բուրվառը ձեռքին, և խունկի ծուխի ամպը վեր էր բարձրանում:
12 Եւ ինձ ասեց. Մարդի որդի, տեսնո՞ւմ ես ինչ են անում Իսրայէլի տան ծերերը խաւարում, ամեն մարդ իր նկարների սենեակներումը, որովհետև ասում են թէ Տէրը մեզ չէ տեսնում, Տէրը թողել է երկիրը:
13 Եւ ասեց ինձ. Կրի դարձիր տես աւելի մեծ պղծութիւններ, որ նորանք անում են:
14 Եւ ինձ տարաւ Տիրոջ տան դռան մուտքը, որ դէպի հիւսիս էր. և ահա այնտեղ կանայք էին նստել, որ լաց էին լինում Թամուզի վերայ:
15 Եւ ասեց ինձ. Տեսնո՞ւմ ես, մարդի որդի. էլի դարձիր տես սորանցից աւելի մեծ պղծութիւններ:
16 Եւ ինձ տարաւ Տիրոջ տան ներքին դաւիթը, և ահա Տիրոջ տաճարի մուտքում սրահի և սեղանի մէջտեղը քսանհինգ մարդ չափ կային, քամակները դէպի Տիրոջ տաճարը և երեսները դէպի արևելք, և նորանք երկրպագութիւն էին անում դէպի արևելք արեգակին:
17 Եւ ինձ ասեց. Տեսնո՞ւմ ես, մարդի որդի, մի՞թէ թեթև բան է Յուդայի տան համար անել այս պղծութիւնները,

որ անում են այստեղ, որ լցրել են երկիրը բռնութիւնով և նորից դառել ինձ բարկացնելու համար, և ահա նորանք ճիւղը մեկ-
18 նում են դէպի իրանց քիթը: Եւ ես էլ պէտք է անեմ սրտմտութիւնով. աչքս պիտի չ'խնայէ, և ես պիտի չ'ողորմեմ. և նորանք պիտի կանչեն իմ ականջներին մեծ ազազակով, բայց ես նորանց չեմ լսելու:

ԳԼ. Թ

1 Եւ մեծ ձայնով կանչեց իմ ականջներին ասելով. Մօտեցէք, ով քաղաքի վերակացուներ, և ամեն մարդ իր ապականիչ գոր-
2 ծիքը իր ձեռքին: Եւ ահա վեց մարդ էին գալիս վերի դռան ճանապարհով, որ դէպի հիւսիս է, և ամեն մարդ իր փշրող գործիքը իր ձեռին, և նորանց մէջ մեկ մարդ կար քթանի հագուստ հագած, և մի գրագիրի թանաքամանի մէջքին. և եկան ու կանգ-
3 նեցին պղնձի սեղանի կշտին: Եւ Իսրայէլի Աստուծոյ փառքը վեր բարձրացաւ այն քերովբէի վերայից, որի վերայ որ էր, դէպի տան սեմը: Եւ կանչեց այն քթանի հագուստ հագած մարդին, որ գրագիրի թանաքամանը
4 ունէր մէջքումը. Եւ Տէրը ասեց նորան. Անց կաց քաղաքի միջովը այսինքն Երուսաղէմի միջովը, և նշան դիր այն մարդկանց ճակատներին որ հառաչում և ողբում են նորա միջումն արած բոլոր
5 պղծութիւնների համար: Եւ մեւաներին ասեց իմ ականջների առաջին. Գնացէք նորա ետևից քաղաքի միջովը և զարկէք, ձեր աչքերը չ'խնայեն, և չ'ողորմէք,
6 Ծերին, երիտասարդին, և կոյսին ու երեխային ու կանանց ոչնչեցէք փչացրէք, բայց ամեն ով, որ վերան նշանը լինի՝ նորան մի մօտենաք, և իմ սրբարանիցն սկսեցէք: Եւ նորանք սկսեցին այն ծեր մարդկանցից, որ տան
7 առաջին էին, և ասեց նորանց. Պղծեցէք տունը և դաւիթները լցրէք սպանուածներով, դուրս ելէք. և նորանք դուրս եկան և ջարդեցին քաղաքումը:
8 Եւ երբոր նորանց զարկեցին, և ես մնացի, ես վայր ընկայ երեսիս վերայ և գոչեցի և ասեցի. Աւա՛ղ, ով Տէր Եհովայ, մի՞թէ դու փչացնելու ես Իսրայէլի բոլոր մնացորդը քո սրտմտութիւնը
9 երուսաղէմի վերայ թափելով: Եւ ինձ ասեց. Իսրայէլի և Յուդայի տան անօրէնութիւնը շատ և շատ մեծ է, և երկիրը արիւնով լցուել է, և քաղաքը լիքն է անիրաւութիւնով, որովհետև ասում են թէ Տէրը թողել է երկիրը, և Տէրը չէ տեսնում:
10 Եւ հիմա ես էլ աչքովս պիտի չ'խնայեմ և պիտի չ'ողորմեմ, նորանց ճանապարհը իրանց գլուխներովը եմ տալու:
11 Եւ ահա այն քթանի հագուստ հագած մարդը, որի մէջքումն էր թանաքամանը, պատասխան տուաւ և ասեց. Ես արի ինչպէս որ ինձ հրամայել էիր:

ԳԼ. Ժ

1 Եւ ես նայեցի և ահա այն հաստատութեան վերայ, որ քերովբէների գլխի վերայ էր, շափիւղայ քարի պէս աթոռի նմանութեան կերպարանքով ի բաց երեւում էր նորանց վերայ:
2 Եւ ասեց այն քթանի հագուստ հագած մարդին ասելով. Կէ քերովբէից տակի անիւների մէջտեղը մտիր և ափերդ լցրու կրակի կայծերիցը քերովբէների միջիցը և ցրիւ տուր քաղաքի վերայ. և նա մտաւ իմ աչքերի առաջին:
3 Եւ քերովբէները կանգնած էին տան աջ կողմին այն մարդը մտնելիս, և ամպը լցրեց ներսի դաւիթը:
4 Եւ Տիրոջ փառքը բարձրացաւ քերովբէների վերայից տան սեմի վերայ, և տունը լցուեցաւ ամպովը և դաւիթն էլ լցուեցաւ Տիրոջ փառաց պայծառութիւնովը:
5 Եւ քերովբէների թևերի ձայնը լսւում էր մինչև դուրսի սրահը իբրև Ամենակարող Ա-

առածդ ձայնը երբոր խօսում է ։
6 Եւ եղաւ երբոր հրամայեց քթա-
նի հագուստ հագած մարդին ա-
սելով՝ Անիւներուն մէջից քերովբէ-
ներուն մէջտեղից կրակ վեր առ,
նա գնաց ու կանգնեց անիւի
7 մօտ. Եւ քերովբէներէն մէկը իր ձեռքը դէպի
քերովբէներուն մէջտեղը եղող
կրակը և վեր առաւ դրաւ քթա-
նի հագուստ հագածի ափումը,
և նա առաւ ու դուրս եկաւ։
8 Եւ քերովբէներուն թևերուն տակին
մի մարդի ձեռքի նմանութիւն
էր երևում։
9 Եւ ես մտիկ տուի, և ահա
չորս անիւներ կային քերովբէնե-
րի կշտին՝ մէկ անիւը մէկ քե-
րովբէի կշտին, և մէկ անիւն էլ
մէկ քերովբէի կշտին, և անիւնե-
րի կերպարանքը ոսկեքարի տես-
10 քի պէս։ Եւ նորանց չորսի կեր-
պարանքն էլ մէկ նմանութիւն
11 ունէր՝ իբր թէ անիւ անիւի մէջ
լինէր. Գնալիս դէպի չորս ա-
ռակողմն էին գնում, շուռ չէին
գալիս երբոր գնում էին, որով-
հետև այն կողմը ուր որ ուղ-
ղուած էր գլուխը՝ նորա ետևիցն
էին գնում. նորանք շուռ չէին
12 տալիս երբոր գնում էին, Եւ նո-
րանց բոլոր մարմինները և նորանց
մէջքերը ու ձեռքերը և նորանց
թևերը և անիւները լիքն էին աչ-
քերով շուրջանակի այն չորս ա-
13 նիւներն։ Անիւների մասին՝ նո-
րանց կանչեցին՝ Մրրիկ, իմ ա-
14 կանջների առաջին։ Եւ ամեն մէկը
չորս երես ունէր. մէկի երեսը
քերովբէի երեսն էր, և երկրորդի
երեսը մարդի երես էր, և երրոր-
դը՝ առիւծի երես, և չորրորդը՝
15 արծիւի երես։ Եւ քերովբէները
վերացան։ Սորանք են այն կեն-
դանիները որոնց տեսայ Քոբար
16 գետի մօտ։ Եւ քերովբէները
գնալիս անիւները կշտովը գնում
էին. և երբոր քերովբէները բար-
ձրացնում էին իրանց թևերը որ
վերանան երկրի վերայից, անիւ-
ները էլ շուռ չէին տալիս նո-
17 րանց կշտիցը։ Նորանք կանգնե-
լիս կանգնում էին, և նորանք

վերանալիս վերանում էին նորանց
հետ, որովհետև կենդանիի ոգին
կար նորանցում։
18 Եւ դուրս եկաւ Տիրոջ փառ-
քը տան աստմի վերայից և կանգ-
նեց քերովբէների վերայ։ 19 Եւ քե-
րովբէները բարձրացրին իրանց
թևերը և վերացան երկրիցը իմ
աչքերի առաջին դուրս գալով,
և անիւները նորանց մօտին, և
կանգնեցին Տիրոջ տան արևել-
եան դռան մուտքումը, և Իս-
րայէլի Աստուծոյ փառքը նորանց
վերայ էր վերևից։ 20 Սորանք էին
այն կենդանիքը, որ ես տեսայ
Իսրայէլի Աստուծոյ տակին Քո-
բար գետի մօտ և գիտացի, որ
քերովբէներ են նորանք։ 21 Ամեն
մէկը չորս չորս երես ունէին, և
ամեն մէկը չորս թև, և մարդի
ձեռքերի նմանութիւն կար նո-
րանց թևերի տակին։ 22 Եւ նորանց
երեսների նմանութիւնը այն ե-
րեսներինն էր, որ տեսել էի Քո-
բար գետի մօտ՝ նորանց կերպա-
րանքը և իրանք ամեն մէկը ու-
ղիղ դէպի առաջ էր գնում։

Գլ. ԺԱ.

1 Եւ հոգին ինձ վեր առաւ և բե-
րաւ ինձ Տիրոջ տան արևելեան
դուռը, որ ուղղուած է դէպի ա-
րեւելք, և ահա դռան մուտքու-
մը քսանհինգ մարդ կար. և Նո-
րանց մէջ տեսայ Ազուրի որդի
Յազոնիային և Բանիայի որդի Փա-
զատիային՝ ժողովրդի իշխաննե-
րին։ 2 Եւ ինձ ասեց. Մարդի որ-
դի, սորանք են անօրէնութիւն
մտածող մարդիկը, որ չար խոր-
հուրդ են տալիս այս քաղաքին.
3 Որ ասում են. Մօտիկներս ուս չէ.
տուներ չինել պէտք է. սա կաթ-
սան է, և մենք միսը։ 4 Սորա հա-
մար մարգարեացիր նորանց վե-
րայ, մարգարեացիր, մարդի որդի։
5 Եւ Տիրոջ հոգին ընկաւ ինձ
վերայ և ինձ ասեց. Ասիր՝ Տէրը
այսպէս է ասում. Դուք այսպէս
ասեցիք, ով Իսրայէլի տուն, բայց
ես իմացել եմ ձեր մտքերում
վեր կացածը։ 6 Դուք շատացրիք

ձեր սպանածները այս քաղա-
քումը, և լցրիք նորա փողոցները
7 սպանուածներով։ Սորա համար
այսպէս է ասում Տէր Եհովան.
Ձեր սպանուածները, որ դուք
նորանց մէջը դրիք, նորանք են
միսը, և նա՝ կաթսան. բայց ձեզ
8 պիտի հանեմ նորա միջիցը։ Դուք
սուրիցը վախեցիք. բայց ես սուր
եմ բերելու ձեզ վերայ, ասում
9 է Տէր Եհովան։ Եւ ձեզ պիտի
դուրս բերեմ նորա միջիցը, և
ձեզ պիտի օտարների ձեռքը
մատնեմ, և ձեզ դատաստաններ
10 պիտի անեմ։ Սրով պիտի ընկ-
նէք. Իսրայէլի սահմանի վերայ
պիտի դատեմ ձեզ. և պիտի գի-
11 տենաք թէ ես եմ Տէրը։ Սա
ձեզ համար պիտի կաթսայ չը
դառնայ, որ դուք նորանում միս
լինէիք. Իսրայէլի սահմանի վե-
12 րայ պիտի դատեմ ձեզ, Եւ դուք
պիտի գիտենաք, որ ես եմ Տէրը,
որ իմ կանոններովը չ'գնացիք, և
իմ իրաւունքները չ'կատարեցիք,
և ձեզ շրջապատող ազգերի սո-
13 վորութիւնների պէս արիք։ Եւ
եղաւ որ ես մարգարեանալիս Բա-
նիայի որդի Փազատիան մեռաւ,
և ես իմ երեսի վերայ ընկայ ու
աղաղակեցի մեծ ձայնով և ասե-
ցի. Աւա՛ղ, ով Տէր Եհովայ,
մի՞թէ պիտի փչացնես Իսրայէլի
14 մնացորդը։ Եւ Տիրոջ խօսքը ե-
15 ղաւ ինձ ասելով. Մարդի որդի,
քո եղբայրները՝ հէնց է՛ն քո եղ-
բայրները են քո ազգականները և
բոլոր Իսրայէլի տունը ամենքը,
որոնց ասում են Երուսաղէմի
բնակիչները. Հեռացէք Տիրոջ մօ-
տից. այս երկիրը մեզ է տրուած
իբրև ժառանգութիւն։
16 Դորա համար ասիր. Այսպէս
է ասում Տէր Եհովան. Թէև հե-
ռացրել եմ նորանց ազգերի մէջ,
և թէև ցրուել եմ նորանց եր-
կիրներուումը, բայց ես նորանց հա-
մար սրբարան պիտի դառնամ մի
քիչ այն երկիրներուումը, ուր որ
17 նորանք գնացել են։ Սորա հա-
մար ասիր. Այսպէս է ասում Տէր
Եհովան. Ես ձեզ պէտք է հա-
ւաքեմ ազգերի միջից, և պիտի
ժողովեմ ձեզ այն երկիրներից,
ուր որ ցրուած էք, և ձեզ պի-
տի տամ Իսրայէլի երկիրը։ 18 Եւ
այնտեղ պիտի մտնեն, և պիտի
հեռացնեն նորանից նորա բոլոր
կուռքերը, և նորա բոլոր պղծու-
թիւնները։ Եւ նորանց պիտի մէկ 19
սիրտ տամ, և նոր հոգի պիտի
դնեմ ձեր ներսումը, և պիտի հե-
ռացնեմ քարի սիրտը նորանց
մարմնիցը, և նորանց մի մարմնի սիրտ
տամ։ Որպէս զի իմ օրէնքներուս 20
մէջ գնան, և իմ իրաւունքները
պահեն և նորանց կատարեն, որ
նորանք ինձ համար ժողովուրդ
լինեն, և ես նորանց համար Աս-
տուած լինեմ։ Բայց որոնց սրտերը, 21
որ դէպի իրանց գարշելիքների ու
պղծութիւնների սիրտն է գնում,
նորանց ճանապարհը իրանց գլխո-
վը պիտի տամ, ասում է Տէր
Եհովան։
22 Եւ քերովբէները բարձրացրին
իրանց թևերը և անիւները նո-
րանց կշտին, և Իսրայէլի Աստու-
ծոյ փառքը նորանց վերայ էր վե-
րևիցը։ 23 Եւ բարձրացաւ Տիրոջ
փառքը քաղաքի մէջտեղի վերա-
յից և կանգնեց այն սարի վերայ,
որ քաղաքի արևելքումն էր։
24 Եւ հոգին ինձ վեր առաւ ու
բերաւ Քաղդեացիների երկիրը
գերիների մօտ տեսիլքում Աս-
տուծոյ հոգով. և վերացաւ իմ
վերայից այն տեսիլքը, որ տեսել
էի։ 25 Եւ ես խօսեցի գերիների հետ
Տիրոջ բոլոր խօսքերը, որ ինձ ցոյց
էր տուել։

Գլ. ԺԲ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասե-
2 լով. Մարդի որդի, դուս ապստամբ-
ների տան մէջ ես բնակվում, ո-
րոնք աչքեր ունին տեսնելու բայց
չեն տեսնում, և ականջներ ու-
նին լսելու բայց չեն լսում, որով-
հետև ապստամբների տուն են
նորանք։ 3 Իսկ դու, մարդի որդի,
քեզ համար գաղթելու գործիք-
ներ չինիր և գաղթիր ցերեկով
նորանց աչքի առաջին, և գաղ-
թիր քո տեղիցը մի ուրիշ տեղ

նորանց աչքի առաջին. դուցէ տեսանեն, թէև ապստամբների
4 տուն են նորանք, եւ դուրս բեր քո գործիքները իրեւ գաղթելու գործիքներ ցերեկով նորանց աչքի առաջին, բայց իրիկուընը դուրս եկ նորանց աչքի առաջին գերուա-
5 թեան գնացողների նման։ Նորանց աչքի առաջին պատը ծակիր և այնտեղով դուրս բեր։
6 Նորանց աչքի առաջին ուսիդ վերայ առ. դուրս եկ մթնած ժամանակը, երեսդ ծածկիր որ տափը չ'տեսանես, որովհետև քեզ նշան եմ դնում Իսրայէլի տան համար։

7 Եւ ես այնպէս արի ինչպես որ նա ինձ պատուիրել էր. գործիքները դուրս հանեցի ցերեկով ինչպես գաղթողի գործիքներ, և իրիկունը պատը ծակեցի ինձ համար ձեռքով, մթնած ժամանակը դուրս հանեցի ուսի վերայ կրելով նորանց աչքի առաջին։
8 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ առա-
9 ւօտը ասելով. Մարդի որդի, քեզ չ'ասեցին Իսրայէլի տունը՝ ապստամբների տունը, թէ Ա.դ
10 ի՞նչ ես անում։ Նորանց ասիր. Ա.յսպէս է ասում Տէր եհովան. Իշխանին է այս պատգամը եբուսացէմում և Իսրայէլի բոլոր
11 տանը, որոնք նորանում են։ Ա-սիր. Ես ձեզ համար նշան եմ, ես ինչպէս որ արի, նորանց այնպէս է լինելու, նորանք պիտի
12 գաղթեն՝ գերի գնան։ Եւ այն իշխանը որ նորանց մէջ է, ուսին վերայ է վեր առնելու մթնած ժամանակը և դուրս գայ, պատը պիտի ծակեն, որ նորանով դուրս բերեն, նա իր երեսը պիտի ծածկէ, որպէս զի աչքով տափը չը
13 տեսնէ։ Եւ նորա վերայ պիտի տարածեմ իմ ցանցը, և նա պիտի բռնուի իմ որոգայթումը, և նորան պիտի տանեմ Բաբիլոն Քաղդէացիների երկիրը, բայց նա նորան պիտի չ'տեսանէ և նա այն-
14 տեղ պիտի մեռնէ։ Եւ բոլոր նորա շուրջը եղող օգնականներին և նորա բոլոր զօրքերին ես ցրիւ կ'տամ բոլոր կողմերը, և
15 սուր կ'մերկացնեմ նորանց ետևից։ Եւ կ'իմանան որ ես եմ Տէրը, երբոր նորանց տարածեմ ազգերի մէջ և նորանց ցրիւ տամ երկրներում։ Եւ նորանցից պիտի սա-
16 կաւաթիւ մարդիկ թողեմ, որ հառ սուրից, սովից և ժանտախտից, որպէս զի պատմեն իրանց բոլոր պղծութիւնները այն ազգերի մէջ, ուր որ պիտի գնան և պիտի իմանան, որ ես եմ Տէրը։
17 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
18 սելով. Մարդի որդի, հացդ դողալով կեր, և ջուրդ տագնապով և անձկութիւնով խմիր, եւ
19 սիր այս երկրի ժողովրդին. Ա.յսպէս է ասում Տէր եհովան երուսաղէմի բնակիչներին վերայ որ Իսրայէլի երկրում են. Նորանք իրանց հացը անձկութիւնով պիտի ուտեն և իրանց ջուրը ապշութիւնով խմեն, որովհետև նորանց երկիրը պիտի ամայանայ իր լրութիւնից՝ նորանում բնակողների բոլորի անիրաւութեան
20 պատճառով։ Եւ չէն քաղաքները պիտի անապատանան, և երկիրը ամայի դառնայ. և պիտի իմանաք, որ ես եմ Տէրը։
21 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
22 սելով. Մարդի որդի, դա ի՞նչ առակ է որ ունիք Իսրայէլի երկրում, որ ասում էք. Օրերը երկարանում են, և ամեն տեսիլք
23 աչքանում է։ Սորա համար ասիր նորանց. Ա.յսպէս է ասում Տէր եհովան. Ես կ'դադարեցնեմ այդ առակը և նորան միւսանգամ չեն ասիլ իբրև առակ Իսրայէլի տան մէջ. այլ նորանց ասիր. Օրերը մօտեցել են, և ամեն տեսիլքի կատարումը։ Որովհետև այլ ևս
24 ոչ մի տեսիլք դատարկ պիտի չ'լինի և շողոքորթութեան գուշակութիւն Իսրայէլի տան մէջ։
25 Որովհետև ես եմ Տէրը. խօսեմ խօսում եմ և խօսքս կատարուի, այլ ևս պիտի չ'ուշանայ. որովհետև ձեր օրերում, ով ապստամբների տուն, մի խօսք եմ խօսում, և նորան պիտի կատարեմ, ասում է Տէր եհովան։
26 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-

27 սելով. Մարդի որդի, ահա Իսրայէլի տունը ասում են. Ա.յն տեսիլքը որ դա տեսնում է շատ օրերի համար է, և հեռու ժամանակների համար է դա մար-
28 գարէանում։ Սորա համար ասիր նորանց. Ա.յսպէս է ասում Տէր եհովան. Ա.յլ ևս իմ ոչ մի խօսքը պիտի չ'ուշանայ. խօսած խօսքս պիտի կատարեմ, ասում է Տէր եհովան։

ԳԼ. ԺԳ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Մարդի որդի, մարգարեացիր Իսրայէլի մարգարեացող մարգարէների դէմ, և ասիր իրանց սրտիցը մարգարեացողների։
3 րին. Լսեցէք Տիրոջ խօսքը. Ա.յսպէս է ասում Տէր եհովան. Վա՛յ յիմար մարգարէներին, որ իրանց հոգիի ետևից են գնում, և
4 ոչինչ չեն տեսել։ Աւերակներում եղող աղուէսների պէս են դառել քո մարգարէները, ով
5 Իսրայէլ։ Դուք վեր չ'գնացիք խրամատութիւնների տեղերը, և պարսպով չ'պատեցիք Իսրայէլի տունը, պատերազմի կանգնե-
6 լու Տիրոջ օրում։ Նորանք դատարկ տեսիլք և սուտ գուշակութիւն են տեսնում, որ ասում են. Տէրն է ասում, թէև Տէրը նորանց չէ ուղարկել. և յոյս են տալիս թէ խօսքը պիտի կատար-
7 ուի։ Չէ՞ որ դատարկ տեսիլքներ տեսաք, և սուտ գուշակութիւն խօսեցիք, և ասեցիք. Տէրն է ասում, թէև ես չէի խօսել։ Սորա համար այսպէս է ասում Տէր եհովան. Որովհետև ձեր խօսքերը դատարկ են և ձեր գուշակութիւնը՝ սուտ, Սորա համար ես
8 ձեզ դէմ եմ, ասում է Տէր եհովան, Եւ իմ ձեռքը պիտի լինի այն մարգարէների դէմ, որոնք դատարկ տեսիլք են տեսնում և սուտ գուշակում. նորանք պիտի չ'լինին իմ ժողովրդի խորհրդոմը, և Իսրայէլի տան դրքում պիտի չ'գրուին, և Իսրայէլի երկիրը պիտի չ'մտնեն, և դուք պի-
9 տի իմանաք, որ ես եմ Տէրը, Նորա համար և չէնց նորա համար որ մոլորեցնում են իմ ժողովրդը ասելով թէ՝ խաղաղութիւն է, քանի որ խաղաղութիւն չ'կայ. և սա մի պատ է շինում, և ահա
10 նորանք ցեխով ծեփում են։ Ասիր այն ցեխով ծեփողներին, թէ վայր է ընկնելու, յորդահոս անձրև է լինելու, և դուք, ով
11 կարկտաւոր քարեր, վայր ընկնէք, և մրրկալից հողմ յարձակուի։
12 Եւ ահա պատը վայր պիտի ընկնէ. մի թէ ձեզ չեն ասելու. Ո՞ր է այն ծեփը, որ ծեփեցիք։
13 Սորա համար այսպէս է ասում Տէր եհովան. Որ իմ սրտմտութիւնովը մրրկալից հողմ պիտի բաց թողեմ, և յորդահոս անձրև պիտի լինի իմ բարկութիւնովը, և կար-
14 կտաւոր քարեր սրտմտութիւնով փչացնելու համար։ Եւ պիտի քանդեմ այն պատը, որ ցեխով ծեփեցիք, և պիտի տափով տամ նորան, որ նորա հիմքը բացուի, և վայր ընկնէ, և դուք նորա մի-
15 ջումը բնաջինջ լինէք, որ իմանաք թէ ես եմ Տէրը։ Եւ իմ սրտմտութիւնը պիտի կատարեմ այդ պատի վերայ և նորան ցեխով ծեփողների վերայ, և ձեզ պիտի ասեմ. Չ'կայ պատը և չ'կան նորա ծեփողները. Ա.յսինքն
16 Իսրայէլի մարգարէները, որոնք մարգարէանում են Երուսաղէմի վերայ, և նորա մասին խաղաղութեան տեսիլք են տեսնում, քանի որ խաղաղութիւն չ'կայ, ասում է Տէր եհովան։

17 Եւ դու մարդի որդի, երեսդ դարձրու դէպի քո ժողովրդի աղջիկները, որոնք իրանց սրտիցը մարգարէանում են, և մարգա-
18 րէացիր նորանց մասին. Եւ ասիր. Ա.յսպէս է ասում Տէր եհովան. Վա՛յ այն կանանց, որ *ձեռքերի ամեն արմունկի համար բարձիկներ են կարում և լայնկներ են շինում ամեն հասակի գլխի համար հոգիներ որ-

*Կամ՝ ձեռքի ամեն յօդերի համար ծածկոցներ

ասլու նպատակով, իմ ժողովրդի հոգիները դուք սրսում էք, և մի թէ ձեր հոգիները կ'ապրեն, եւ դուք ինձ անարդում էք իմ ժողովրդի առաջին մի քանի բուռ գարիի և մի քանի կտոր հացի համար, որ մեռցնէք չ'մեռնելու հոգիները, և որ ապրեցնէք չ'ապրելու հոգիները ձեր սուտովը, որ ասում էք իմ ստուԹեան լսող ժողովրդին։ Սորա համար այսպէս է ասում Տէր եՀովան. Ահա ես ձեր բարձիկներին դէմ եմ, որոնցով դուք հոգիներ էք որսում, որ նորանց Թռուցնեմ. և նորանց պիտի պոկեմ ձեր բազուկներին վերայից, և պիտի արձակեմ այն հոգիներին որ դուք որսում էք, այն հոգիներին որ Թռչեն, եւ պիտի պատառեմ ձեր լաչակները և պիտի ազատեմ իմ ժողովրդը ձեր ձեռքից, որ նորանք այլ ևս որս չլինեն ձեր ձեռքումը, և կ'իմանաք, որ ես եմ Տէրը։ Որովհետև դուք տրտմեցնում էք արդարի սիրտը ստուԹիւնով, որին ես չեմ տրտմեցնում, և ուժ ժողացնում էք ամբարշտի ձեռքերը, որ իր չար ճանապարհից ետ չդառնայ և ապրի. Ուրեմն գարտուղ տեսիլք մի տեսնէք և այլ ևս գուշակութիւն մի գուշակէք. և ես պիտի ազատեմ իմ ժողովրդը ձեր ձեռքից, և կ'գիտենաք, որ ես եմ Տէրը։

ԳԼ. ԺԴ

Եւ մարդիկ եկան ինձ մօտ իսրայէլի ծերերից և նստեցին առաջս։ Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասելով. Մարդի որդի, այս մարդիկը իրանց կուռքերը դրել են իրանց սրտումը, և իրանց անօրէնութեան գայԹակղութիւնը դրել են իրանց երեսի առաջին. մի Թէ ես երբէք պատասխան տամ նորանց։ Սորա համար խօսիր նորանց հետ և ասիր նորանց. Այսպէս է ասում Տէր եՀովան. Ամեն մէկ մարդ իսրայէլի տանիցը, որ իր կուռքերը դրել է իր սրտումը և իր անօրէնութեան գայԹակղութիւնը դրել է իր երեսի առաջին, և գալիս է մարգարէի մօտ, ես Տէրս նորան պատասխան պիտի տամ, որ գալիս է, նորա կուռքերի շատութեան համեմատ։ Որպէս զի բռնեմ իսրայէլի տունը իրանց սրտիցը, որովք օտարացել են ինձանից իրանց բոլոր կուռքերով։

Սորա համար ասիր իսրայէլի տանը. Այսպէս է ասում Տէր եՀովան. Դարձի եկէք, և ետ դարձէք ձեր կուռքերիցը և ձեր բոլոր պղծութիւններիցը ետ դարձրէք ձեր երեսները։ Որովհետև ամեն մէկ մարդ իսրայէլի տանիցը և այն պանդուխտներիցը, որ պանդխտանում են իսրայէլի մէջ, որ օտարանայ ինձանից և իր կուռքերը դնէ իր սրտումը և իր անօրէնութեան գայԹակղութիւնը դնէ իր երեսի առաջին, և գայ մարգարէի մօտ որ նորա նով հարցնէ ինձանից, ես Տէրս եմ տալու նորա պատասխանը ինձանով։ Եւ ես իմ երեսը պիտի ուղղեմ դէպի այն մարդը և նորան աւերակ անեմ իրրև նշան և առակ, և նորան պիտի բնաջինջ անեմ իմ ժողովրդի միջից, և կ'իմանաք որ ես եմ Տէրը։

Եւ երբոր մէկ մարգարէ սխալուի ու խօսք խօսէ, ես Տէրս եմ սխալեցրել այն մարգարէին. և ես պիտի մեկնեմ իմ ձեռքը նորա վերայ և նորան փչացնեմ իմ Իսրայէլ ժողովրդի միջիցը։ Եւ նորանք պիտի կրեն իրանց պատիժը. ինչպէս որ է հարցանողի պատիժը, մարգարէի պատիժն էլ նոյնպէս պիտի լինի. Որպէս զի միւս անգամ չ'մոլորէ Իսրայէլի տունը ինձ հետևելուց, և այլ ևս չ'պղծուին իրանց բոլոր յանցանքներովը. և նորանք իմ ժողովուրդը լինեն և ես նորանց Աստուած լինեմ, ասում է Տէր եՀովան։

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասելով. Մարդի որդի, երբոր մի երկիր անհաւատարմութիւն անելով մեղանչէ ինձ դէմ, և ես մեկնեմ իմ ձեռքը նորա վերայ և կոտրեմ նորա հացի ցուպը և նորա մէջը սով ուղարկեմ, և բնաջինջ անեմ նորանցից մարդն ու անասունը. Եւ լինի որ այս երեք մարդիկը նորա մէջ լինեն՝ Նոյը, Դանիէլը և Յոբը, սորանք իրանց արդարութիւնով կ'ազատեն դոյն իրանց անձերը, ասում է Տէր եՀովան։

Եթէ ես չար գազաններ բերեմ երկիրը, որ նորան անղաւակ անեն, և նա ամայի դառնայ որ անցնող չլինի գազանների պատճառովը. Եթէ այս երեք մարդիկը նորա մէջը լինեն, կենդանի եմ ես՝ ասում է Տէր եՀովան, որ էրանց տղերանցն ու աղջկերանցն էլ չեն ազատիլ. իրանք միայն կ'ազատուին, և երկիրը անապատ կ'դառնայ։

Կամ եթէ սուր բերեմ այն երկրի վերայ, և ասեմ. Ով սուր, անց կաց այդ երկրովը, ես նորանից փչացնեմ մարդն ու անասունը, Եւ այս երեք մարդիկը նորա մէջը լինեն, կենդանի եմ ես՝ ասում է Տէր եՀովան, որ էրանց տղերանցն ու աղջկերանցն էլ չեն ազատիլ, այլ միայն իրանք կ'ազատուին։

Կամ եթէ ժանտախտ ուղարկեմ այն երկիրը և իմ սրտմտութիւնը թափեմ նորա վերայ արիւնով նորանից մարդն ու անասունը փչացնելու համար. Եւ Նոյը, Դանիէլը և Յոբը նորա մէջը լինեն, կենդանի եմ ես՝ ասում է Տէր եՀովան, որ ոչ տղայ և ոչ աղջիկ կ'ազատեն, նորանք իրանց արդարութեամբը իրանց անձը կ'ազատեն։

Որովհետև այսպէս է ասում Տէր եՀովան. Ո՞ւր մնաց որ եթէ իմ չորս չար պատիժները՝ այսինքն սուրը, սովը, և չար գազաններն ու ժանտախտը երեմ երուսաղէմի վերայ նորանից մարդն ու անասունը բնաջինջ անելու համար։ Եւ ահա նորա մէջ մնացորդ պիտի մնայ ազատուած՝ դուրս բերուած տղերքն ու աղջկերքը. ահա նորանք դուրս են գալու ձեզ մօտ, և դուք պիտի տեսնէք նորանց ճանապարհը և նորանց գործերը, և պիտի մխիթարուէք այն պատուհասի մասին, որ բերի երուսաղէմի վերայ այսինքն այն բոլորը, որ բերի նորա վերայ։ Եւ նորանք պիտի մխիթարեն ձեզ երբոր տեսնէք նորանց ճանապարհը և նորանց բոլոր գործերը. և դուք կ'իմանաք թէ ի զուր չեմ արել այն ամենը որ արի նորան, ասում է Տէր եՀովան։

ԳԼ. ԺԵ

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասելով. Մարդի որդի, ի՞նչ է արթը քան ամեն փայտերից, որթի ճիւղը որ անտառի ծառերի մէջ է։ Մի թէ նորանից փայտ կ'առնուի մի բանի գործածելու համար, կամ թէ նորանից մի ցից կ'առնուի նորանից որ և է ման կախելու համար։ Ահա կրակի մէջ է դրւում այրուելու համար. նորա երկու ծայրերն էլ կ'ուտէ կրակը, և մէջը կ'այրուի. մի թէ նա պիտանի է մի բանի. Ահա նա ամբողջ եղած ժամանակը մի բանի օգուտ չ'ունի. ուր մնաց որ կրակը նորան ուտէ, և նա այրուած լինի. մի թէ նա էլ մի բանի օգուտ կ'ունենայ։ Սորա համար այսպէս է ասում Տէր եՀովան. Ինչպէս որ է արթի փայտը անտառի փայտերի մէջ, որ տուել եմ կրակին այրելու համար, նոյնպէս էլ տուի երուսաղէմի բնակիչները. Եւ իմ երեսը պիտի ուղղեմ դէպի նորանց. նորանք մէկ կրակից դուրս կ'գան և միւս կրակը կ'ուտէ նորանց, և դուք կ'իմանաք, թէ ես եմ Տէրը, երբոր երեսս ձեր վերայ ուղղած կ'լինեմ. Եւ այս երկիրը ամայի պիտի անեմ, նորանց արած անհաւատարմութեան համար, ասում է Տէր եՀովան։

ԳԼ. ԺԶ

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասելով. Մարդի որդի, Հասկացրու

Երուսաղէմին նորա պղծութիւն-
3 ները, Եւ ասիր. Այսպէս է ա-
սում Տէր Եհովան Երուսաղէմին.
Սկիզբդ ու ծնունդդ Քանանացի-
ների երկրիցն է, հայրդ Ամօր-
հացին էր՝ և մայրդ Քետացին։
4 Եւ ծնունդդ՝ դու ծնուած օրդ
պորտդ չ՚կտրուեցաւ, և ջրով
չ՚լուացուեցար մաքրուելու հա-
մար, և աղով չ՚աղուեցար, և
խանձարուրով չ՚փաթաթուե-
5 ցար. Մի աչք քեզ չ՚խնայեց, որ
սորանցից մէկը անէր քեզ հա-
մար քեզ ողորմելով, այլ դաշ-
տի երեսը գցուեցար քո անձի
6 զզուանքովը քո ծնուած օրը։ Եւ
ես անցայ մօտովդ ու տեսայ քեզ
արեանդ մէջ կոխ տրուելիս, և
ասեցի քեզ քո արեան մէջ թէ՝
Ապրիր. Այո՛, ասեցի քեզ քո
7 արեան մէջ թէ՝ Ապրիր։ Դաշ-
տի բոյսի պէս քեզ բիւրաւոր
շինեցի, և դու շատացար ու մե-
ծացար, և հասար գեղեցկու-
թեան կատարելութեան. ստինք-
ներդ ելան և մազերդ բուսան,
բայց դու մերկ ու տկլոր էիր։
8 Եւ ես անցայ մօտովդ ու տե-
սայ քեզ, և ահա ժամանակդ
սէրի ժամանակ էր, և ես տա-
բածեցի իմ քղանցքը քեզ վե-
րայ, և ծածկեցի քո մերկու-
թիւնը, և քեզ համար երդում
անելով քեզ հետ ուխտ արի,
ասում է Տէր Եհովան, և դու
9 իմը եղար։ Եւ ես քեզ լուացի
ջրով, և արիւնդ ողողեցի քո վե-
րայից, և քեզ իւղով օծեցի։
10 Եւ քեզ նկարագործ հագուստ
հագցրի, և կօշիկներդ թէհաշի
արի, և քեզ բեհեզի դօտի կա-
պեցի, և քեզ մետաքսով ծած-
11 կեցի։ Եւ քեզ զարդարեցի զար-
դով, և ապարանջաններ դրի
ձեռքերիդ վերայ, և մանեակ՝
12 պարանոցիդ վերայ։ Եւ օղակ դրի
քո քթին, և գինտեր՝ քո ա-
կանջներին և փառաւոր պսակ՝
13 քո գլխին։ Եւ դու զարդարուե-
ցար ոսկիով և արծաթով և քո
հագուստները բեհեզ ու մետաքս
ու նկարագործ եղան. նաշիհ ու
մեղր ու իւղ կերար, և շատ ու
շատ գեղեցկացար, և թագաւո-
րութեան յաջողեցիր։ Եւ քո 14
գեղեցկութեան համբաւը դուրս
եկաւ ազգերի մէջ, որովհետև
նա կատարեալ եղաւ իմ քեզ
վերայ դրած վայելչութեան հա-
մար, ասում է Տէր Եհովան։
Բայց դու վստահացար քո գե- 15
ղեցկութեանը, և շնացար քո
անունի պատճառով, և թափե-
ցիր քո շնութիւնը ամեն անցնողի
վերայ. և նա նորանն էր լինում։
Եւ դու առար քո հանդերձնե- 16
րիցը, և քեզ համար գոյնզգոյն
բարձրաւանդակներ շինեցիր, և
շնացար նորանց վերայ. չ՚եղա՛ծ
և չ՚լինելու բա՛ն։ Եւ առար քո 17
զարդարանքի բաները այն ոսկիիցս
ու արծաթիցս, որ ես էի քեզ
տուել, և քեզ համար արուա-
կան պատկերներ շինեցիր, և նո-
րանցով շնացար։ Եւ առար քո 18
նկարագործ հագուստը և նորանց
ծածկեցիր, և իմ իւղն ու իմ
խունկը նորանց առաջը դրիր։ Եւ 19
իմ քեզ տուած հացը՝ քեզ ու-
տեցրած նաշիհը և իւղը և մեղ-
րը, դու նորանց առաջը դրիր ա-
նոյշ հոտի համար, և եղաւ էլ,
ասում է Տէր Եհովան։ Եւ ա- 20
ռար տղերքդ և աղջկերքդ, որոնց
դու ինձ համար էիր ծնել, և
զոհեցիր նորանց ուտելու համար.
մի՞թէ քիչ է քո պոռնկութիւ-
նը։ Եւ դու մորթեցիր իմ որդ- 21
կանցը, և նորանց տուիր՝ նորանց
կրակից անցկացնելով։ Եւ քո բո- 22
լոր պղծութիւնների ու պոռնկու-
թիւնների հետ չ՚յիշեցիր քո ման-
կութեան օրերը, երբոր դու մերկ
ու տկլոր էիր, և քո արեան մէջ
կոխ էիր տրվում։ Եւ եղաւ որ 23
քո բոլոր չարութիւններից յե-
տոյ, (վա՛յ, վա՛յ քեզ, ասում է
Տէր Եհովան.) Դու քեզ համար 24
բոզանոց էլ շինեցիր, և քեզ հա-
մար բարձր տեղ պատրաստեցիր
ամեն հրապարակում։ Ամեն ճա- 25
նապարհի գլխին շինեցիր քո
բարձրաւանդակները և պղծեցիր
քո գեղեցկութիւնը, և շքերդ
բաց արիր ամեն անցնողի հա-
մար, և շատացրիր քո պոռնկու-

26 թիւնները։ Եւ քո մեծանդամ
Եգիպտացի դրացիների հետ շնա-
ցար, և շատացրիր քո շնու-
թիւնները ինձ բարկացնելու հա-
27 մար։ Բայց ահա ես իմ ձեռքը
քեզ վերայ եմ մեկնել, և կար-
ճացրել եմ քո ռոճիկը, և քեզ
յանձնեցի քեզ ատող Փղշտա-
ցիների աղջկերանց հաճութեա-
նը, որոնք ամաչում են քո ցան-
կամոլ ընթացքից։
28 Եւ Ասորեստանի որդկանց հետ
էլ շնացար առանց կշտանալու,
և նորանց հետ շնացար, և չ՚կշտա-
29 ցար։ Եւ շատացրիր քո շնու-
թիւնները Քանանի երկրի վերայ
մինչև Քաղդէացիների երկիրը,
բայց սորանով էլ չ՚կշտացար։
30 Ի՜նչ նուաղ է քո սիրտը, ասում
է Տէր Եհովան, որ անում ես
այս բոլոր բաները՝ համարձակ
31 պոռնիկ կնոջ գործը. Բոզանոց-
ներդ ամեն ճանապարհի գլխին
շինելով, որ բարձրաւանդակներդ
ամեն հրապարակի մէջ շինեցիր.
և բոզի պէս չ՚եղար՝ կապէնքը ա-
32 նարգելով։ Շնացող կինը իր մար-
դի փոխարէն օտարներին է առ-
33 նում։ Ամեն պոռնկին կապէնք
կ՚տան, իսկ դու քո կապէնքը
տալիս ես հոմանիներիդ. այո՛,
դու ես նորանց կաշառում, որ
քեզ մօտ գան շրջակայքից քո
34 շնութիւնների համար։ Եւ քեզ
կանանց պատահածից ներհակն է
լինում քո պոռնկութիւններու-
մը, որ քեզ հետևող չ՚կայ շնա-
նալու համար։ Եւ դու կապէնք
տալով, և քեզ կապէնք չ՚տըր-
ուելով, դու ներհակը եղար։
35 Ուրեմն, ով պոռնիկ, լսիր Տի-
36 րոջ խօսքը. Այսպէս է ասում
Տէր Եհովան. Որովհետև տա-
բածուեցաւ քո պղինձը, և յայտ-
նուեցաւ քո մերկութիւնը հո-
մանիներիդ հետ քո պոռնկու-
թիւններովը, և քո ամեն գար-
շելի կուռքերովը, և քո որդկանց
արիւնների չափովը, որ տուիր
37 նորանց. Դորա համար ահա ես
պիտի հաւաքեմ քո ամեն հո-
մանիներին, որոնց դու հաճելի
եղար, և քո բոլոր սիրածներին,
և քո բոլոր ատածներին, և ես
նորանց պիտի շրջակայքից քեզ
վերայ ժողովեմ, և քո մերկու-
թիւնը բաց անեմ նորանց առա-
ջին, որ նորանք տեսնեն քո մեր-
կութիւնը։ Եւ քեզ պիտի դա- 38
տեմ շնացող և արիւնահեղ կա-
նանց դատաստանովը, և քեզ
սրտմտութեան ու նախանձի ար-
եանը պիտի տամ։ Եւ ես քեզ 39
նորանց ձեռքը պիտի յանձնեմ,
և նորանք պիտի քարուքանդ ա-
նեն քո բոզանոցները, և պիտի
փուլ ածեն քո բարձր տեղերը,
և քեզանից պիտի մերկացնեն քո
հանդերձները, և վեր պիտի առ-
նեն քո զարդարանքի բաները, և
քեզ պիտի թողեն մերկ ու տկլոր։
Եւ քեզ վերայ մի ժողովք պի- 40
տի կանգնեցնեն, և քեզ պիտի
քարով քարկոծեն, և քեզ պիտի
խոցոտեն իրանց սուրերովը։ Եւ 41
տներդ պիտի կրակով այրեն, և
քեզ դատաստաններ պիտի անեն
շատ կանանց աչքի առաջին, և
ես պիտի դադարեցնեմ քեզ
պոռնկութիւնից, և միւսանգամ
էլ կապէնք չես տալ։ Եւ ես 42
կ՚հանգստացնեմ իմ սրտմտու-
թիւնը քեզ վերայ, և իմ նա-
խանձը կ՚հեռանայ քեզանից, որ
ես հանգստանամ և էլ չ՚բար-
կանամ։ Որովհետև դու չ՚յիշե- 43
ցիր քո մանկութեան օրերը, այլ
ինձ բարկացրիր այս ամենովը, և
ես էլ ահա քո ճանապարհը քո
գլխովն եմ տալիս, ասում է Տէր
Եհովան, և դու չես անիլ այդ
չար խորհուրդը քո բոլոր պղծու-
թիւններից յետոյ։
Ահա ամեն առակախօսը պիտի 44
առակ ասէ քեզ վերայ թէ, Ինչ-
պէս մայրը՝ նոցնպէս էլ աղջիկը։
Դու քո մօր աղջիկն ես, որ զզուե- 45
ցաւ իր այրիցն և իր որդիներիցը,
և դու քո քոյրերի քոյրն ես, ո-
րոնք զզուեցան իրանց այրերիցն
ու իրանց որդիներիցը, ձեր մայրը
Քետացի և ձեր հայրը Ամօրհացի
է. Եւ քո մեծ քոյրը Սամարիան 46
է, ինքը և իր աղջիկները որ բնակ-
վում են քո ձախ կողմին, և քո
փոքր քոյրը քո աջ կողմին բնա-

կողն է, այսինքն Սոդոմը և իր
47 աղջիկները։ Բայց դու ոչ թէ
նորանց ճանապարհներովը գնա-
ցիր, և նորանց պղծութիւնների
պէս արիր՝ մի քիչ միայն. այլ
դու նորանցից աւելի ապակա-
նութիւն արիր քո բոլոր ճանա-
48 պարհներումը։ Կենդանի եմ ես,
ասում է Տէր Եհովան, որ քո
քոյրը Սոդոմն ինքն ու իր աղ-
ջիկները չեն արել, ինչպէս որ
դու ես արել և քո աղջիկները։
49 Ահա սա էր քո քոյր Սոդոմի
անօրէնութիւնը, հպարտութիւն,
հացի կշտութիւն և անհոգ հան-
գըստութիւն ունէր նա և իր աղ-
ջիկները. և խեղճի ու աղքատի
50 ձեռքը չէր ուժովացնում։ Եւ
նորանք հպարտացան և պղծու-
թիւններ արին իմ առաջին, և
նորանց վերացրի հէնց որ տեսայ.
51 Սամարիան էլ քո մեղքերի կէ-
սին չափ չէ մեղանչել. և դու
քո պղծութիւնները նորանցից
շատացրիր, և արդարացրիր քո
քոյրերին քո արած բոլոր պղծու-
52 թիւններով։ Դու էլ ուրեմն
կրիր քո անարգանքը, որ դա-
տապարտում էիր քո քոյրերին,
քո մեղքերի համար, որ նորան-
ցից աւելի պղծութիւն գործե-
ցիր, նորանք քեզանից արդար
են։ Ուրեմն դու էլ ամաչիր և
քո անարգանքը կրիր, որ արդա-
53 րացրիր քո քոյրերին։ Եւ ես ետ
պիտի դարձնեմ նորանց գերու-
թիւնը, Սոդոմի և նորա աղջիկ-
ների գերութիւնը, և Սամարիայի
և նորա աղջիկների գերութիւնը,
և քո գերիների գերութիւնը նո-
54 րանց միջումը։ Որպէս զի կրես
քո անարգանքը, և ամաչես քո
ամեն արածիցը նորանց մխիթա-
55 րելովդ։ Եւ քո քոյրերը՝ Սոդոմը
ու իր աղջիկները ետ պիտի դառ-
նան իրանց առաջի վիճակին, և
Սամարիան ու իր աղջիկները ետ
պիտի դառնան իրանց առաջի
վիճակին, և դու ու քո աղջիկ-
ները ետ պիտի դառնաք ձեր ա-
56 ռաջի վիճակին։ Եւ քո քոյր Սո-
դոմի լուրն անգամ չ՚կար քո բե-
րանումը քո հպարտութեան օ-
57 րումը քո չարութիւնը յայտնուե-
լուց առաջ. ինչպէս այն ժամա-
նակ որ յայտնուեցաւ ամօթը Ասո-
րիների աղջիկների առաջին և քո
բոլոր շրջակայ Փղշտացիների աղ-
ջիկների առաջին, որոնք քեզ նա-
խատում էին շուրջանակի։ Քո
58 չարագործութիւնները ու քո
պղծութիւնները դու կրեցիր, ա-
սում է Տէրը։
59 Որովհետև այսպէս է ասում
Տէր Եհովան. Ես էլ քեզ արի,
ինչպէս դու էիր արել, որ եր-
դումն անարգեցիր ուխտադրուժ
լինելով։ Իսկ ես պիտի յիշեմ
60 իմ քեզ հետ քո մանկութեան
օրերին արած ուխտը, և քեզ
հետ յաւիտենական ուխտ պիտի
հաստատեմ։ Եւ պիտի յիշես քո
61 ճանապարհները և պիտի ամա-
չես՝ քեզանից մեծ քոյրերիդ և
քեզանից փոքրներին ընդունելով
և ես նորանց քեզ պիտի տամ
իբրև աղջիկներ, թէև քո ուխ-
տիցը չեն։ Եւ ես պիտի հաստա-
62 տեմ իմ ուխտը քեզ հետ, և
դու պիտի իմանաս որ ես եմ
Տէրը։ Որպէս զի յիշես և ամաչես,
63 և միւսանգամ բերանդ չ՚բանաս
ամաչելուդ համար, երբոր ես քա-
ւութիւն անեմ քեզ համար քո
ամեն արածին, ասում է Տէր
Եհովան։

ԳԼ. ԺԷ

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
1 սելով. Մարդի որդի, մի հանե-
2 լուկ առաջարկիր և առակ ասիր
Իսրայէլի տանը. Եւ ասիր. Այս-
3 պէս է ասում Տէր Եհովան. Մեծ
արծիւը՝ թևերը մեծ՝ փետուրը
երկայն՝ փետրալից՝ գոյնզգոյն ե-
կաւ Լիբանան և առաւ եղևինի
4 գագաթը, Նորա ընձիւղների ծայ-
րը կոտրեց և տարաւ նորան Քա-
նանի երկիրը և նորան դրաւ վա-
5 ճառականների քաղաքումը։ Եւ
առաւ այն երկրի սերմերիցը և
դրաւ նորան մի ցանքի արտում.
նորան առաւ շատ ջրերի մօտ
6 տնկեց իբրև ուռի։ (Եւ նա բու-
սաւ և եղաւ մի տարածուած

որթ կարճահասակ,) որ նորա
ճիւղերը դէպի նորան ուղղուին
և արմատները նորա տակին լի-
նեն. և նա մի որթ եղաւ և ոս-
տեր հանեց և ընձիւղներ ար-
ձակեց։
7 Եւ մէկ արծիւ էլ կար մեծ՝
թևերը մեծ՝ և փետրալից. և ահա
այս որթը իր արմատները տարա-
ծեց դէպի նորան և իր ճիւղերը
դէպի նորան արձակեց, որ նո-
րան ոռոգէ իր տնկուած ածու-
8 ներիցը։ Նա տնկուեցաւ բարե-
բեր արտում շատ ջրերի մօտ,
որ ոստեր տայ և պտուղ բերէ և
9 ազնիւ որթ լինի։ Ասիր՝ Այսպէս
է ասում Տէր Եհովան, Մի՞թէ
նա կ՚յաջողէ. մի՞թէ նորա ար-
մատները չի խլիլ, և նորա պտու-
ղը չի քաղիլ, որ նա չորանայ։
Նորա բոլոր բուսած տերևները
պիտի չորանան, և առանց մեծ
բազուկի և շատ ժողովրդի, որ
նորան հանէ նորա արմատներիցը։
10 Եւ ահա թէև տնկուեցաւ, մի՞թէ
յաջողուելու է. չէ՞ որ հէնց ա-
րևելեան քամին նորան դպչելուն
պէս պիտի իսկոյն չորանայ, իր
բուսած ածուներումը պիտի չո-
րանայ։
11 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
12 սելով. Ասիր ապստամբների տա-
նը, մի՞թէ չէք հասկանում թէ
սա ինչ է. ասիր. Ահա եկաւ Բա-
բիլոնի թագաւորը Երուսաղէմ
և առաւ նորա թագաւորին և
նորա իշխաններին և նորանց տա-
13 րաւ Բաբիլոն իր մօտ։ Եւ առաւ
թագաւորի սերունդիցը մէկին և
նորա հետ ուխտ արաւ և նորան
երդում անել տուաւ, և երկրի
14 զօրաւորներին էլ առաւ. Որ թա-
գաւորութիւնը ցած լինի և չ՚կա-
րողանայ իրան բարձրացնել, որ
իր խոստումը պահէ որ ինքը
15 հաստատ լինէ։ Բայց նա ապըս-
տամբուեց նորա դէմ իր դես-
պաններին Եգիպտոս ուղարկե-
լով որ իրան ձիեր և շատ զօրք
տան. մի՞թէ յաջողուելու է.
մի՞թէ ազատուելու է այս բա-
ներն անողը. և ուխտը կ՚դրժէ՝ և
16 կ՚ազատուի՞։ Կենդանի եմ ես,
ասում է Տէր Եհովան, որ նա
պէտք է այն տեղը, ուր որ թա-
գաւորը նորան թագաւոր արաւ,
որի երդումը նա անարգեց և որի
ուխտը նա դրժեց, նորա հետ մեռ-
նէ Բաբիլոնում։ Եւ մեծ զօրքովը
17 և շատ բազմութիւնով Փարա-
ւօնը նորան մի բան չի անիլ պա-
տերազմի մէջ պատնէշ շինուելիս
և մարտկոց կազմուելիս՝ շատ հո-
գիներ կոտրելու համար։ Եւ նա
18 անարգեց երդումը, որ ուխտը
դրժէ. և ահա նա իր ձեռքը
տուել էր և այս ամենը արաւ.
նա չի ազատուիլ։
Սորա համար այսպէս է ասում
19 Տէր Եհովան. Կենդանի եմ ես որ
իմ երդումը որ նա անարգեց և
իմ ուխտը որ նա դրժեց, նորա
գլխովը պիտի տամ. Եւ նորա վե-
20 րայ պիտի տարածեմ իմ ցանցը,
և նա պիտի բռնուի իմ որոգայ-
թումը, և ես նորան պիտի տա-
նեմ Բաբիլոն և նորա հետ դատ
պիտի վարեմ այնտեղ այն յան-
ցանքի համար, որ գործեց ինձ
դէմ։ Եւ նորա բոլոր փախստա-
21 կանները նորա բոլոր զօրքերումը
պիտի սրով ընկնեն, և մնացած-
ները պիտի ցրվուին դէպի ամեն
կողմը. և դուք կ՚իմանաք, որ ես
Տէրս եմ խօսել։
Այսպէս է ասում Տէր Եհովան.
22 Ես էլ պիտի առնեմ բարձր եղե-
ւինի գագաթիցը և պիտի տնկեմ.
նորա ընձիւղների ծայրիցը պիտի
մատղաշը կարեմ և պիտի տնկեմ
ես մէկ բարձր և վեր ելած սարի
23 վերայ։ Իսրայէլի բարձր սարի վե-
րայ պիտի տնկեմ նորան. և նա
ոստեր պիտի արձակէ և պտուղ
տայ, և նա ազնիւ եղևին պիտի
դառնայ. և նորա տակին կ՚բնակ-
ուեն ամեն տեսակ թևաւոր
թռչուններ, նորա ոստերի հովա-
24 նումը կ՚բնակուեն նորանք։ Եւ
դաշտի բոլոր ծառերը պիտի գի-
տենան որ ես Տէրս եմ բարձր
ծառերը ցածացրել և ցած ծա-
ռերը բարձրացրել, կանաչ ծառը
չորացրել, և դալարեցրել չոր
ծառը. ես Տէրս ասել եմ և պի-
տի անեմ։

ԳԼ. ԺԸ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Ի՞նչ էք դուք այդ առա-
կը ասում Իսրայէլի երկրումը
ասելով. Հայրերը ազոխ կերան
և որդկանց ատամներն առան։
3 Ես կենդանի եմ, ասում է Տէր
Եհովան, որ այս առակը այլ ևս
4 պիտի չ՚ասէք Իսրայէլումը։ Ահա
բոլոր հոգիներն իմն են. ինչպէս
հօր հոգին՝ նոյնպէս և որդիի հո-
գին իմն է. մեղանչող անձը ինքը
5 պիտի մեռնէ։ Եթէ մէկ մարդ
արդար է և գործէ իրաւունք և
6 արդարութիւն, Սարերի վերայ
չ՚ուտէ, և աչքերը չ՚բարձրացնէ
դէպի Իսրայէլի տան կուռքերը,
և իր ընկերի կնկանը չ՚պղծէ, և իր
ամսական անմաքրութեան մէջ
7 լինող կնոջ չ՚մօտենայ, Եւ մար-
դի չ՚զրկէ, նորա պարտքի գրաւը
ետ դարձնէ, բռնութիւնով բան
չ՚յափշտակէ, իր հացը սովածին
տայ, և մերկին հանդերձ հագ-
8 ցնէ, Վաշխով ֆոզ չ՚տայ և տո-
կոս չ՚առնէ, իր ձեռքը ետ քաշէ
անօրէնութիւնից, ճշմարիտ դա-
տաստան անէ մէկի և միւսի
9 մէջտեղը, Նա իմ օրէնքներովն է
գնում և իմ իրաւունքները պա-
հում է որ ճշմարտութիւն անէ.
նա արդար է. նա՝ անպատճառ
պիտի ապրէ, ասում է Տէր Ե-
հովան։
10 Եւ ԷԲԷ նա ծնէ մի անիրաւ և
արիւնահեղ որդի, և նա սորան-
11 ցից միայն մէկիցն անէ. Այսինքն
նա այս ամենը չ՚անէ, այլ սարե-
րի վերայ ուտէ էլ, և իր ընկերի
12 կնկանը պղծէ, Խեղճին և աղքա-
տին զրկէ, յափշտակութիւններ
անէ, գրաւը ետ չ՚դարձնէ, և իր
աչքերը բարձրացնէ դէպի կուռ-
13 քերը՝ պղծութիւն գործէ, Վաշ-
խով ֆոզ տայ և տոկոս առնէ.
մի՞թէ նա կ՚ապրէ. նա չի ապ-
րիլ, որ անում է այս բոլոր
պղծութիւնները, նա պէտք է
անշուշտ մեռնէ. նորա արիւնը
իր վերայ լինի։
14 Կամ թէ ահա նա մի որդի
ծնէ, և նա տեսնէ իր հօր արած
բոլոր մեղքերը և վախենայ և այն-
պէս չ՚անէ. Սարերի վերայ չ՚ու- 15
տէ, և իր աչքերը վեր չ՚բարձրա-
ցնէ դէպի Իսրայէլի տան պղծու-
թիւնները, իր ընկերի կնկանը
չ՚պղծէ. Եւ մէկ մարդի չ՚զրկէ, 16
գրաւ չ՚առնէ, և յափշտակու-
թիւն չ՚անէ, իր հացը սովածին
տայ և մերկին ծածկէ հագուս-
տով, Խեղճից ետ քաշէ իր ձեռ- 17
քը, վաշխ և տոկոս չ՚առնէ, իմ
դատաստանները գործադրէ, իմ
օրէնքներումը վարուի. նա պիտի
չ՚մեռնէ իր հօր անօրէնութիւ-
նովը. նա անշուշտ պէտք է ապրէ։
Նորա հայրը, որովհետև զրկանք 18
արաւ և իր եղբօրից բան յափշտա-
կեց, և արաւ այն, ինչ որ լաւ
չէր, իր ազգի մէջ, և ահա նա
պիտի մեռնէ իր անօրէնութիւ-
նովը։
Եւ դուք ասում էք. Ի՞նչու 19
չ՚կրէ որդին հօր անօրէնութիւ-
նը։ Որովհետև որդին իրաւունք
և արդարութիւն գործեց, իմ
բոլոր օրէնքները պահեց և նո-
րանց կատարեց, նա պէտք է ան-
շուշտ ապրէ։ Այն անձը որ մե- 20
ղանչում է, նա պիտի մեռնէ.
որդին պիտի չ՚կրէ հօր անօրէնու-
թիւնը. և հայրը պիտի չ՚կրէ որ-
դիի անօրէնութիւնը. արդարի
արդարութիւնը իր վերայ պիտի
լինի, և ամբարշտի ամբարշտու-
թիւնը իր վերայ պիտի լինի։ Եւ 21
ամբարիշտը, երբոր դարձի գայ
իր բոլոր մեղքերիցը որ արել էր,
և պահէ իմ բոլոր օրէնքները և
իրաւունք ու արդարութիւն գոր-
ծէ, պէտք է անշուշտ ապրէ, նա
պիտի չ՚մեռնէ։ Նորա արած բո- 22
լոր յանցանքները պիտի չ՚յիշուին
նորան. իր արած արդարութիւ-
նովը նա պիտի ապրէ։ Մի՞թէ ես 23
երբէք կ՚ուզեմ ամբարշտի մեռ-
նելը, ասում է Տէր Եհովան. չէ՞
որ նորա իր ճանապարհից դարձի
գալն ու ապրելն իմ ուզում։ Բայց 24
եթէ արդարը ետ դառնայ իր
արդարութիւնից և անօրէնու-
թիւն անէ, և ամբարշտի արած
բոլոր պղծութիւնների պէս անէ,
մի՞թէ նա կ՚ապրէ. նորա արած

բոլոր արդարութիւնը պիտի չը
յիշուի. նա նորանցով այսինքն
իր արած յանցանքովը և իր ա-
րած մեղքովը պիտի մեռնէ։
25 Եւ դուք ասում էք. Տիրոջ
ճանապարհը ուղիղ չէ. մէկ լսե-
ցէք, ով Իսրայէլի տուն. մի՞թէ
ուղիղ չէ իմ ճանապարհը. չէ՞
որ ձեր ճանապարհը չէ ուղիղ։
26 Երբոր արդարը ետ դառնայ իր
արդարութիւնիցը և անօրէնու-
թիւն անէ և նորանցով մեռնէ,
նա իր արած անօրէնութեան հա-
27 մար պիտի մեռնէ։ Եւ երբոր ամ-
բարիշտը ետ դառնայ իր արած
ամբարշտութիւնից և իրաւունք
ու արդարութիւն անէ, նա կ՚ապ-
28 րեցնէ իր անձը. Որովհետև տե-
սաւ և ետ դառաւ իր արած բո-
լոր յանցանքներիցը. նա անշուշտ
պիտի ապրէ, պիտի չ՚մեռնէ։
29 Բայց Իսրայէլի տունն ասում
է. Տիրոջ ճանապարհը ուղիղ չէ.
մի՞թէ՝ իմ ճանապարհները ու-
ղիղ չեն, ով Իսրայէլի տուն, չէ՞
որ ձեր ճանապարհները չեն ու-
30 ղիղ։ Վասն որոյ ես ձեր ամեն
մարդին իր ճանապարհների հա-
մեմատ պիտի դատեմ, ով Իս-
րայէլի տուն, ասում է Տէր Եհո-
վան. դարձի եկէք, և ձեր բոլոր
յանցանքներիցը ետ դարձէք, որ
ձեզ համար անօրէնութեան գայ-
31 թակղութիւն չ՚դառնայ։ Դէն
դցեցէք ձեր վերայից ձեր բոլոր
յանցանքները, որով դուք յան-
ցաւոր եղաք և ձեզ համար նոր
սիրտ և նոր հոգի գործեցէք,
որովհետև ի՞նչու համար մեռ-
32 նէք, ով Իսրայէլի տուն։ Որով-
հետև ես հաճութիւն չ՚ունիմ
մեռնողի մեռնելուն, ասում է
Տէր Եհովան, ուրեմն ետ դար-
ձէք որ ապրէք։

ԳԼ. ԺԹ

1 Եւ դու ողբ բարձրացրու Իս-
րայէլի իշխանների վերայ, և ա-
2 սիր. Ի՞նչ է քո մայրը, մի մա-
տակ առիւծ, որ առիւծների մէջ
է պառկում, որ իր լակոտնե-
րին՝ կորիւնների մէջ է մեծացը-
նում։ Եւ նա մեծացրեց իր լա- 3
կոտներից մէկին, որ մի կորիւն
եղաւ, և սովորեց յափշտակու-
թիւն անել, և որ մարդ էր ու-
տում։ Եւ ազգերը լսեցին նորա 4
մասին, նա բռնուեցաւ նորանց
փոսումը. և նորան շղթաներով
տարան Եգիպտոսի երկիրը։ Եւ 5
երբոր տեսաւ որ թուլացել է՝
յոյսը կտրուել է, այն ժամանակ
իր լակոտներից մէկին առաւ, մի
կորիւն շինեց նորան։ Եւ նա ման 6
եկաւ առիւծների մէջ՝ առիւծ
եղաւ, և սովորեց յափշտակու-
թիւն անել, և մարդ ուտել։ Եւ 7
նա գիտաց նորա որբևայրիներին
և քանդեց նորանց քաղաքները,
և սարսափեց երկիրն ու նորա զօ-
րութիւնը նորա մռնչելու ձայ-
նիցը։ Եւ ազգեր վերկացան նո- 8
րա վերայ գաւառներից շուրջա-
նակի, և տարածեցին նորա վերայ
իրանց ցանցը, նա էլ բռնուեցաւ
նորանց փոսումը։ Եւ նորան շղթա- 9
ներով վանդակում դրին, և նո-
րան տարան Բաբիլոնի թագաւո-
րի մօտ, և նորան դրին բերդում.
որպէս զի նորա ձայնը միւսան-
գամ չ՚լսուի Իսրայէլի սարերի
վերայ։
Մայրդ քո նմանութիւնով ջրե- 10
րի վերայ տնկուած որթի նման է,
որ պտղատու և ոստալից եղաւ
շատ ջրերից։ Եւ նա զօրաւոր շա- 11
ռաւիղներ ունեցաւ իշխանների
գաւազանների համար, և նորա
հասակը բարձրացաւ մինչև ամ-
պերի մէջը, և նա երևեցաւ իր
բարձրութիւնովը՝ իր ճիւղերի ա-
ռատութիւնովը։ Բայց նա խլուե- 12
ցաւ բարկութիւնով՝ գետինը
գցուեցաւ, և արևելեան քամին
չորացրեց նորա պտուղը, կոտ-
րատուեցան և չորացան նորա զօ-
րաւոր ճիւղերը, կրակը լափեց
նորան։ Եւ հիմա տնկուել է ա- 13
նապատումը, չոր ու ցամաք երկ-
րումը։ Եւ կրակ դուրս եկաւ նո- 14
րա ոստերի մի շառաւիղիցը, կե-
րաւ նորա պտուղը, և նորա վե-
րայ զօրաւոր ճիւղ չ՚մնաց իշխա-
նի գաւազանի համար։ Սա ողբ
է, և ողբ պիտի լինի։

ԳԼ. Ի

1 Եւ եղաւ եօթներորդ տարումը
հինգերորդ ամսուայ տասնին, որ
Իսրայէլի ծերերից մարդիկ եկան
Եհովայից հարցնելու, և նստեցին
իմ առաջին։
2 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ
3 ասելով. Մարդի որդի, խօսիր
Իսրայէլի ծերերի հետ և ասիր
նորանց. Այսպէս է ասում Տէր
Եհովան. Դուք ինձանից հարցը-
նելո՞ւ էք եկել. կենդանի եմ
ես, որ ես ինձ հարցնուիլ չեմ
տալ ձեզանից, ասում է Տէր Ե-
4 հովան։ Մի՞թէ նորանց դատելու
ես. դատելո՞ւ ես, ով մարդի
որդի. դու նորանց իրանց հայրե-
5 րի պղծութիւնները իմացրու. Եւ
ասիր նորանց. Այսպէս է ասում
Տէր Եհովան. Ես Իսրայէլին ընտ-
րած օրս, որ ձեռքս վեր բարձ-
րացրի Յակոբի տան սերունդի
համար և յայտնուեցայ նորանց
Եգիպտոսի երկրումը, իմ ձեռքը
6 վեր բարձրացրի ասելով. Ես եմ
ձեր Տէր Աստուածը. Այն օրը որ
ես ձեռքս վեր բարձրացրի նո-
րանց համար, որ նորանց հանեմ
Եգիպտոսի երկրիցը դէպի այն
երկիրը, որ ես նորանց համար
պատրաստել էի, որ կաթ և մեղր
էր բղխում, որ ամեն երկիրների
7 զարդն է. Եւ ասեցի նորանց. Ձե-
զանից ամեն մարդ դէն դցէ իր աչ-
քերի գարշութիւնները և Եգիպ-
տոսի կուռքերովը մի պղծուիք.
ես եմ ձեր Տէր Աստուածը։
8 Բայց նորանք ապստամբուեցին
ինձ դէմ և չ'ուզեցին ինձ լսել.
ամեն մարդ իր աչքերի գարշու-
թիւնները դէն չ'գցեց, և Եգիպ-
տոսի կուռքերը չ'ձգեցին. և ես
ասեցի որ թափեմ իմ սրտմտու-
թիւնը նորանց վերայ որ իմ բար-
կութիւնը կատարեմ նորանց վե-
9 րայ Եգիպտոսի երկրումը։ Եւ ես
արի իմ անունի համար, որ չը
պղծուի այն ազգերի աչքերի ա-
ռաջին, որոնց մէջ են նորանք,
որոնց ես յայտնուեցայ նորանց
աչքերի առաջին նորանց Եգիպ-
տոսի երկրիցը հանելիս։

Եւ ես նորանց հանեցի Եգիպ- 10
տոսի երկրիցը և նորանց տարայ
անապատը. Եւ տուի նորանց իմ 11
օրէնքները, և իմ իրաւունքները
իմացրի նորանց, որոնց ո՛ր մարդ
որ կատարէ՝ կ'ապրէ նորանցով։
Նաև իմ շաբաթները տուի նո- 12
րանց որ նշան լինի իմ և նորանց
մէջ, որ իմանան թէ ես եմ նո-
րանց սրբող Տէրը։
Բայց Իսրայէլի տունը ապըս- 13
տամբուեց ինձ դէմ անապատու-
մը, նորանք չ'գնացին իմ օրէնք-
ներովը, և իմ իրաւունքները
մերժեցին, որոնց կատարող մար-
դը նորանցով կ'ապրէ, և իմ շա-
բաթները շատ պղծեցին. և ես
ասեցի թէ թափեմ իմ սրտմտու-
թիւնը նորանց վերայ անապա-
տումը նորանց բնաջինջ անելու
համար։ Եւ ես արի իմ անունի 14
համար, որ չ'պղծուի ազգերի աչ-
քերի առաջին, որոնց աչքերի ա-
ռաջին ես հանեցի նորանց։ Եւ 15
ձեռքս էլ բարձրացրի նորանց
համար անապատումը, որ նորանց
չ'տանեմ այն տուած երկիրս, որ
մեղր և կաթ է բղխում, որ զարդ
է բոլոր երկիրների համար։ Որով- 16
հետև նորանք մերժեցին իմ իրա-
ւունքները և իմ օրէնքներովը չը
գնացին և իմ շաբաթները պղծե-
ցին, որովհետև իրանց կուռքերի
ետևիցն էր գնում նորանց սիրտը։
Բայց իմ աչքը խնայեց նորանց, 17
որ նորանց չ'կորցնեմ, և նորանց
չ'վերջացրի անապատումը։
Եւ նորանց որդիներին ասեցի 18
անապատումը. Ձեր հայրերի կա-
նոններովը մի գնաք, և նորանց
սովորութիւնները մի պահէք և
նորանց կուռքերովը մի պղծուիք։
Ես եմ ձեր Տէր Աստուածը, իմ 19
օրէնքներովը գնացէք, և իմ իրա-
ւունքները պահեցէք և նորանց
կատարեցէք։ Եւ իմ շաբաթները 20
սրբեցէք, որ նորանք նշան լինեն
իմ մէջ և ձեր մէջ, որ իմանաք
թէ ես եմ Տէրը ձեր Աստուածը։
Բայց որդիքը ապստամբուեցին 21
ինձ դէմ, իմ օրէնքներովը չ'գնա-
ցին և իմ իրաւունքները չ'պա-
հեցին որ անէին նորանց, որոնց

ամեն ով որ անէ նորանցով կ'ապ-
րէ. նորանք պղծեցին իմ շաբաթ-
ները. և ես ասեցի որ իմ սրտմը-
տութիւնը թափեմ նորանց վե-
րայ, որ կատարեմ իմ բարկու-
թիւնը նորանց վերայ անապա-
22 տումը։ Սակայն ես ետ քաշեցի
իմ ձեռքը, և արի իմ անունի
համար, որ չ'պղծուի այն ազ-
գերի աչքերի առաջին որոնց աչ-
քերի առաջին ես նորանց հա-
նեցի։
23 Ես էլ իմ ձեռքը բարձրացրի
նորանց համար անապատումը, որ
նորանց ցրուեմ ազգերի մէջ և
նորանց սփռեմ երկիրների մէջ։
24 Որովհետև նորանք չ'կատարեցին
իմ իրաւունքները և մերժեցին
իմ օրէնքները և իմ շաբաթնե-
րը պղծեցին և նորանց աչքերը
իրանց հայրերի կուռքերի ետե-
25 ւիցն էր։ Եւ ես էլ նորանց օ-
րէնքներ տուի որ լաւ չէին, և
իրաւունքներ՝ որոնցով չէին կա-
26 րող ապրել։ Եւ նորանց պղծեցի
իրանց ընծաներովը ամեն արգանդ
բացողին կրակով անցկացնել տա-
լով, որպէս զի նորանց բնաջինջ
անեմ, և որպէս զի գիտենան որ
ես եմ Տէրը։
27 Սորա համար խօսիր Իսրայէլի
տան հետ, մարդի որդի, և ասիր
նորանց. Այսպէս է ասում Տէր
Եհովան. Դեռ սորանով էլ նա-
խատեցին ինձ ձեր հայրերը ինձ
դէմ անհաւատարմութիւն գոր-
28 ծելով։ Եւ ես նորանց տարել էի
այն երկիրը, որի մասին ես բար-
ձրացրել էի ձեռքս, որ նորանց
տամ այն, իսկ նորանք ամեն
բարձր բլուր և ամեն տերևալից
ծառ տեսնելով այնտեղ իրանց
զոհերը մատուցրին և իրանց
դրգռող մատաղները այնտեղ
տարան և իրանց անուշահոտ
խունկերը մատուցրին այնտեղ, և
այնտեղ թափեցին իրանց նուէր-
29 ները։ Եւ ես նորանց ասեցի. Դա
ի՞նչ բարձրաւանդակ է ուր որ
դուք գնում էք, և նորան մինչև
այս օրը բարձրաւանդակ են ան-
ուանում։
30 Սորա համար ասիր Իսրայէլի
տանը. Այսպէս է ասում Տէր
Եհովան. Մի՞թէ դուք ձեր հայ-
րերի ճանապարհովը պղծուիք և
նորանց գարշութիւնների հետե-
ւելով պոռնկանաք, Եւ ձեր ըն- 31
ծաները մատուցանելիս և ձեր
որդկանցը կրակով անցկացնելիս
պղծուիք ձեր բոլոր կուռքերովը
մինչև այսօր, և ես ինձ հարցան-
ուի՞լ կ'տամ ձեզանից, ով Իս-
րայէլի տուն, կենդանի եմ ես,
ասում է Տէր Եհովան, որ ես ինձ
ձեզանից հարցանուիլ չեմ տալ։
Եւ ձեր մտքումը վեր կացածը պի- 32
տի բնաւ չ'կատարուի, որ ասում
էք թէ Ազգերի պէս և երկրի ցե-
ղերի պէս լինենք փայտին ու քա-
րին պաշտելով։ Կենդանի եմ ես, 33
ասում է Տէր Եհովան, որ ան-
շուշտ պիտի ձեզ վերայ զօրաւոր
ձեռքով և մեկնած բազուկով
ու թափած սրտմտութիւնով տի-
րեմ. Եւ ձեզ պիտի հանեմ և 34
ձեզ ժողովեմ երկիրներից ուր որ
ձեզ ցրիւ էի տուել զօրաւոր
ձեռքով և մեկնած բազուկով և
թափած սրտմտութիւնով. Եւ 35
ձեզ պիտի տանեմ ազգերի ա-
նապատը և ձեզ հետ այնտեղ
դատուիմ երես առ երես. Ինչ- 36
պէս որ դատուեցայ ձեր հայրերի
հետ Եգիպտոսի երկրի անապա-
տումը, նոյնպէս պիտի դատուիմ
և ձեզ հետ, ասում է Տէր Եհո-
վան։ Եւ ձեզ պիտի անցկացնեմ 37
գաւազանի տակովը և ձեզ պի-
տի մտցնեմ ուխտի կապուածքի
տակ։ Եւ ես պիտի ջոկեմ ձե- 38
զանից ապստամբներին և ինձ
դէմ յանցաւոր եզողներին իրանց
պանդխտութեան երկրիցը հա-
նեմ, որ Իսրայէլի երկիրը չ'մտնեն.
և դուք պիտի իմանաք որ ես եմ
Տէրը։
Եւ դուք, ով Իսրայէլի տուն, 39
այսպէս է ասում Տէր Եհովան.
Դուք ամեն մարդ գնացէք ձեր
կուռքերին ծառայեցէք. բայց
յետոյ իրաւ որ ինձ պիտի լսէք
և իմ սուրբ անունը այլ ևս պի-
տի չ'պղծէք ձեր ընծաներովը և
ձեր կուռքերովը։ Որովհետև իմ 40
սուրբ սարի վերայ, Իսրայէլի սա-

բին վերայ, ասում է Տէր Եհովան, այնտեղ ինձ պիտի ծառայեն բոլոր Իսրայէլի տունը բոլորովին այն երկրումը. այնտեղ ես պիտի հաւանեմ նորանց և այնտեղ պիտի որոնեմ ձեր ընծաները, ձեր առաքելների երախայրիքը
44 ձեր բոլոր սուրբ բաներովը. Անուշահոտ խունկով պիտի հաճեմ ձեզ երբոր ձեզ հանեմ ազգերի միջից և ձեզ ժողովեմ այն երկիրներից ուր որ ես ձեզ ցրիւ եմ տուել, և պիտի սրբուիմ ձեզանով ազգերի աչքի առաջին,
42 և դուք կ'իմանաք թէ ես եմ Տէրը երբոր ձեզ կ'տանեմ Իսրայէլի երկիրը՝ այն երկիրը որի մասին ձեռք վեր եմ բարձրացրել որ նորանց հայրերին տամ
43 այն, և այնտեղ պիտի յիշէք ձեր ճանապարհները և ձեր բոլոր գործերը, որոնցով դուք պղծուեցաք, և պիտի զզուէք ձեր անձերից ձեր արած բոլոր
44 չարութիւնների համար. Եւ պիտի դիտենաք, որ ես եմ Տէրը, երբոր ես ձեզ կ'անեմ այս իմ անունի համար և ոչ ձեր չար ճանապարհների համեմատ, և ձեր ապականեալ արարքների համեմատ, ով Իսրայէլի տուն, ասում է Տէր Եհովան։
45 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ
46 ասելով. Մարդի որդի, երեսդ դէպի հարաւ արա և խօսք բղխիր դէպի հարաւ և մարգարէացիր հարաւային դաշտի անտառի մասին. Եւ ասիր հարաւային ան-
47 տառին. Լսիր Տիրոջ խօսքը, այսպէս է ասում Տէր Եհովան. Ահա ես քեզանում կրակ եմ վառելու, որ պիտի լափէ քո մէջ ամեն կանաչ ծառը և ամեն չոր ծառը. բորբոքուած բոցը պիտի չ'հանգչէ և ամեն կողմերը պիտի այրուին նորանով հարաւից մինչև
48 հիւսիս, Եւ ամեն մարմին պիտի տեսնէ որ ես Տէրս եմ նորան
49 վառել. Նա չ'պիտի հանգչէ։ Եւ ես ասեցի. Ա՜հ ո՛, Տէր Եհովայ, նորանք ինձ համար ասում են. Չէ՞ որ դա առակախօսութիւններ է անում,

Գլ. ԻԱ.

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասե-
2 լով. Մարդի որդի, երեսդ դէպի Երուսաղէմ արա և խօսք բղխիր սրբարանների մասին, և մարգարէացիր Իսրայէլի երկրի մասին,
3 Եւ ասիր Իսրայէլի երկրին. Այսպէս է ասում Տէրը. Ահա ես քեզ դէմ եմ և հանում եմ իմ սուրը իր պատեանիցը և պիտի բնաջինջ անեմ քեզանից արդարին և ամբարշտին։
4 Որովհետև ես պիտի բնաջինջ անեմ արդարին և ամբարշտին, ուրեմն իմ սուրը դուրս պիտի գայ իր պատեանիցը ամեն մարմնի վերայ հարաւից մինչև հիւսիս։ Եւ ամեն մարմին
5 պիտի գիտենայ, որ ես Տէրս եմ հանել իմ սուրը իր պատեանիցը, նա այլ ևս ետ չի դառնալ։
6 Եւ դու, մարդի որդի, հառաչիր, մէջքը կոտրելով և դառն հառաչանքով նորանց աչքի առաջին.
7 Եւ եթէ լինի որ քեզ ասեն. Ինչու համար ես հառաչում. դու էլ ասիր. Գոյժի համար որ գալիս է. և ամեն սիրտ պիտի հալուի, և ամեն ձեռքեր թուլանան, և ամեն հոգի պիտի նուաղէ, և ամեն ծունկեր պիտի գնան ջրի պէս. ահա կ'գայ և կ'կատարուի, ասում է Տէր Եհովան։
8 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
9 սելով. Մարդի որդի, մարգարէացիր և ասիր. Այսպէս է ասում Տէրը. Ասիր՝ Սուրը, սուրը սրուել է և մաքրուել էլ է։
10 Մեծ կոտրած անելու համար է սրուել, փայլելու համար է մաքրուել, կամ ուրախանա՞նք, Իե որդուս գաւազանը արհամարհում է ամեն փայտ, Բայց նա տուաւ նո-
11 րան մաքրուելու՝ ձեռքով բռնելու համար. այն սուրը սրուել է, և նա սրբուել է սպանողի ձեռքին դնելու համար։ Աղաղակիր
12 և ողբա, մարդի որդի, որովհետև նա իմ ժողովրդի վերայ և Իսրայէլի բոլոր իշխանների վերայ է. նորանք իմ ժողովրդի հետ սուրի են մատնուած. դորա համար

13 խփիր ազդրիդ, Որովհետև փորձը եղաւ, և ինչ, եթէ այն անարգող գաւազանն էլ չլինի, ա-
14 սում է Տէր Եհովան։ Եւ դու, մարդի որդի, մարգարէացիր և ծափ զարկ. և սուրը պիտի կրկնուի երեք անգամ՝ այսինքն մահացու վիրաւորուածների սուրը՝ որ է մեծ կոտորածի սուրը, որ
15 շրջապատում է նորանց, Որպէսզի հալուելու և խոչերը շատանալու համար նորանց բոլոր դռների վերայ դրի սուրի երկիւղը. ա՜խ, շինուել է փայլելու համար,
16 որուել է մաքրելու համար, Հաւաքուիր՝ աջ կողմն անցիր, կամ անց կաց ձախ կողմը, ուր որ ե-
17 րեսդ է դրուած։ Ես էլ եմ ծափ զարկելու, և իմ սրամտութիւնը պիտի հանգստացնեմ. ես Տէրս եմ խօսել։
18 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
19 սելով. Եւ դու, մարդի որդի, դու քեզ համար երկու ճանապարհ պատրաստիր Բաբիլոնի թագաւորի սուրը գալու համար, մէկ երկրից պիտի դուրս գան նորանք երկուսն էլ. և մի տեղ որոշիր, քաղաքի ճանապարհի
20 գլխին որոշիր. Մի ճանապարհ պատրաստիր, որ սուրը գայ Ամմոնի որդկանց Ռաբբան և Յուդայի Երուսաղէմը։
21 Որովհետև Բաբիլոնի թագաւորը կանգնել է ճանապարհի գլխին՝ երկու ճանապարհների բաժանման տեղի վերայ որ նմանութիւն անէ. նա երերացնում է նետերը՝ հարցնում է թերա-
22 փիմներին, մտիկ է տալիս լեարդին, Նորա աջ ձեռքին նմանութիւն կար Երուսաղէմի համար, որ պաշարման մեքենաներ դնեն, բերան բանան պատերազմի աղաղակով, ձայնը բարձրացնեն գազելով, մեքենաներ դնեն դռների գէմ, հողաբլուրներ կազմեն,
23 մատակոցներ շինեն, Բայց սա նորանց աչքի առաջին անուտի նմանութեան պէս պիտի լինի, ամենասաստիկ երդումներ պիտի լինէ նորանց համար. իսկ նա անօրէնութիւնը յիշեցնելու է որ բռնուին։

Սորա համար այսպէս է ասում
24 Տէր Եհովան. Որովհետև դուք յիշեցրիք ձեր անօրէնութիւնը՝ ձեր յանցանքները յայտնուելիս, որ երևան ձեր մեղքերը ձեր բոլոր գործերովը. ձեր յիշեցնելու համար ձեռքով պիտի բռնուիք,
25 Եւ դու, ով պիղծ ամբարիշտ՝ իսրայէլի իշխան, որի օրը եկել է՝ վերջի անօրէնութեան ժամանակին։ Այսպէս է ասում Տէր
26 Եհովան. Հեռացրու խոյրը և վեր առ թագը. սա այս չէ. ցածը բարձրացրու, և բարձրը ցածացրու. Տակն ի վեր՝ տակն ի վեր՝
27 տակն ի վեր պիտի անեմ նորան. սա էլ պիտի չլինի մինչև որ իրաւունքն ունեցողը գայ. նորան եմ տուել։
28 Եւ դու, մարդի որդի, մարգարէացիր և ասիր. Այսպէս է ասում Տէր Եհովան Ամմոնի որդկանց մասին և նորանց նախատանքի մասին, և ասիր. Սուրը՝ սուրը հանուած է՝ մորթելու համար մաքրուած որ փչացնէ, որպէս զի փայլէ։ Քեզ համար ունայն տե-
29 սիլքներ տեսնելիս և քեզ համար սուտ հմայութիւններ անելիս, քեզ պիտի դնեն ամբարիշտների սպանուածների վրին, որոնց օրը հասել է վերջի անօրէնութեան
30 ժամանակին։ Ետ դարձրու իր պատեանը. այնտեղ որ ստեղծուեցար՝ քո ծագման երկրումը պի-
34 տի դատեմ քեզ։ Եւ քեզ վերայ պիտի թափեմ իմ ցասումը, իմ բարկութեան կրակովը պիտի փչեմ քեզ վերայ. և քեզ պիտի մատնեմ վայրենի մարդկանց ձեռքը, որոնք վարպետ են փչացնելու համար։ Երոյ ծառակ պի-
32 տի լինես դու, քո արիւնը պիտի երկրի մէջտեղը լինի, Դու պիտի չյիշուիս, որովհետև ես Տէրս եմ խօսում։

Գլ. ԻԲ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Եւ դու, մարդի որդի,

մի՞թէ դու դատելու՝ դատելու
ես այս արիւնահեղ քաղաքը,
այլ իմացրու նորան նորա բո-
3 լոր պղծութիւնները, Եւ ասիր.
Այսպէս է ասում Տէր Եհովան.
Ով քաղաք, որ քո մէջն արիւն
ես թափում որպէս զի քո ժա-
մանակը գայ, և քո մօտ կուռ-
քեր ես շինում պղծութեան հա-
4 մար. Քո այն թափած արիւնովը
յանցաւոր եղար և քո այն շի-
նած կուռքերովը պղծուեցար, և
օրերդ մօտեցրիր և հասար քո
տարիներին, դորա համար ես
քեզ անարգանք շինեցի ազգերի
համար և ծաղր՝ բոլոր երկիրների
5 համար։ Քեզանից մօտաւորները
և հեռաւորները քեզանով ծաղր
պիտի անեն, ով վատահամբաւ
և աղմկալից։
6 Ահա Իսրայէլի իշխանները ա-
մեն մէկը իր բազուկովը քեզա-
նում է որպէս զի արիւն թափէ։
7 Հօրն ու մօրը անարգեցին քեզա-
նում, օտարականին բռնութիւն
արին քո մէջը, որբին և որբևայ-
8 րիին զրկեցին քեզանում։ Իմ
սուրբ բաներն արհամարհեցիր,
և իմ շաբաթները պղծեցիր։
9 Բանսարկու մարդիկ եղան քե-
զանում արիւն թափելու հա-
մար, և սարերի վերայ կերան քե-
զանում, եղեռնագործութիւն-
10 ներ արին քո մէջը։ Հօր մերկու-
թիւն բացին քեզանում, ամսա-
կանով անմաքուր կնկան բռնա-
11 դատեցին քեզանում. Եւ մարդ
իր ընկերի կնկայ հետ պղծու-
թիւն գործեց, և մարդ իր հար-
սին պղծեց եղեռնագործութիւ-
նով, և մարդ իր քրոջը՝ իր հօր
12 աղջկանը բռնադատեց։ Կաշառք
առան՝ քեզանում արիւն թա-
փելու համար, վաշխ ու տոկոս
առար, և ագահանալով քաշում
ես քո ընկերներիցը բռնութիւ-
նով, և ինձ մոռացել ես, ասում
13 է Տէր Եհովան։ Եւ ահա ես
զարկեցի ափերս իրար քո արած
ագահութեան վերայ և քո մէջ
եղած արիւնհեղութիւնների վե-
14 րայ։ Մի՞թէ սիրտդ կ'դիմանայ,
կամ ձեռքերդ կ'ուժովանան այն
օրերը որ ես քեզ հատուցում պի-
տի անեմ։ Ես Տէրս ասեցի և պի-
տի անեմ էլ։ Եւ ես քեզ պիտի 15
ցրուեմ ազգերի մէջ և քեզ պի-
տի փռեմ երկիրների մէջ, և պի-
տի վերջացնեմ քո պղծութիւնը
քեզանից։ Եւ դու քեզանով պի- 16
տի պղծուիս ազգերի աչքի ա-
ռաջին, և կ'իմանաս թէ ես եմ
Տէրը։
Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա- 17
սելով. Մարդի որդի, Իսրայէլի 18
տունը ինձ համար կղկղանք է
դառել, նորանք ամենքը պղինձ,
անագ և երկաթ ու կապար են
հալոցի մէջ՝ արծաթի կղկղանք
են դառել։ Սորա համար Տէր 19
Եհովան այսպէս է ասում. Որով-
հետև դուք ամենքդ կղկղանք
էք դառել, դորա համար ահա
ես ձեզ պիտի ժողովեմ Երուսա-
ղէմի մէջ։ Արծաթը և պղինձը 20
ու երկաթն ու կապարն ու անա-
գը հալոցի մէջ ժողովուելու պէս,
որ նորա վերայ կրակը փչեն որ
հալեցնեն, նոյնպէս պիտի ժողո-
վեմ ձեզ իմ բարկութիւնովն ու
սրտմտութիւնովը և դնեմ ու հա-
լեցնեմ։ Եւ ձեզ պիտի ժողովեմ 21
և ձեզ վերայ փչեմ իմ ցասման
կրակովը, որ դուք հալուիք նո-
րանում։ Ինչպէս որ արծաթը 22
հալվում է հալոցումը, նոյնպէս
էլ դուք պիտի հալուիք նորա-
նում. որ իմանաք թէ ես Տէրս
եմ թափել իմ սրտմտութիւնը
ձեզ վերայ։
Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա- 23
սելով. Մարդի որդի, ասիր նո- 24
րան. Դու մի երկիր ես որ չէ մաք-
րուել, անձրև չէ ստացել բար-
կութեան օրը։ Նորա մարգարէ- 25
ների դաւաճանութիւնը կայ նո-
րա մէջ, մռնչող՝ աւար յափշտա-
կող առիւծի պէս հոգի են ու-
տում, գանձեր ու պատուական
բաներ են առնում, նորա որբևայ-
րիներին շատացնում են նորա-
նում։ Նորա քահանաները բռնա- 26
բարում են իմ օրէնքը, և իմ
սրբութիւնները պղծեցին, սուրբի
և պիղծի մէջ տարբերութիւն
չ'արին, և անմաքուրի ու մաքու-

րի մէջ ջոկութիւնը չ'սովորեցրին
և իմ շաբաթներիցը ծածկեցին
իրանց աչքերը, և ես պղծուեցայ
27 նորանց միջումը։ Նորա իշխան-
ները նորա միջումը գայլերի պէս
աւար են յափշտակում, արիւն
թափելու՝ հոգիներ կորցնելու
համար, որպէս զի ագահութեամբ
28 քաշեն։ Եւ նորա մարգարէները
նորանց համար ցեխ են ծեփում
ունայն տեսիլքներ տեսնելով և
նորանց համար սուտ հմայելով,
ասելով թէ՝ Այսպէս է ասում
Տէր Եհովան, քանի որ Տէրը
29 չէ խօսել։ Երկրի ժողովուրդը
զրկանքներ է որ գործում է՝
յափշտակութիւններ է որ ա-
նում է, և խեղճին ու աղքատին
հարստահարում, և օտարակա-
նին զրկում անիրաւութեամբ։
30 Եւ ես նորանցից մարդ որոնեցի
պարիսպը շինող և խրամատու-
թեան առաջին կանգնող իմ դի-
մացը երկրի համար, որ նորան
չ'ապականեմ. բայց չ'գտայ։
31 Վասն որոյ նորանց վերայ թա-
փեցի իմ ցասումը՝ իմ բարկու-
թեան կրակովը սպառեցի նո-
րանց. նորանց ճանապարհը իրանց
գլխովը տուի, ասում է Տէր Ե-
հովան։

ԳԼ. ԻԳ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Մարդի որդի, երկու կա-
նայք կային՝ մէկ մօր աղջկերք,
3 Եւ նորանք պոռնկութիւն արին
Եգիպտոսումը, իրանց մանկու-
թիւնումը պոռնկութիւն արին,
այնտեղ ճմլուեցան նորանց ծի-
ծերը, և այնտեղ շօշափեցին նո-
րանց կուսութեան ստինքները։
4 Եւ նորանց անունները՝ մեծինը
Ողայ, և նորա քրոջինը Ողիբայ
էր. և նորանք իմն էին, և տղերք
ու աղջկերք ծնեցին. և նորանց
անունները՝ Սամարիան Ողայ է,
և Երուսաղէմը Ողիբայ։
5 Եւ Ողան իմը լինելովը պոռ-
նկութիւն արաւ և սիրահար-
ուեցաւ իր սիրականների վերայ.
այսինքն իր դրացի Ասորեստան-
ցիների վերայ, Կապուտակ հագ- 6
նող կուսակալների և նախարար-
ների վերայ, բոլորը շնորհալի երի-
տասարդներ, ձիաւորներ՝ ձիանք
հեծած։ Եւ նա իր պոռնկութիւ- 7
նը նորանց ընծայեց՝ Ասորեստանի
ընտիր որդկանցը ամենին. և այն
ամենովը, որոնց վերայ սիրահար-
ուել էր՝ նորանց բոլոր կուռքե-
րովը պղծուեցաւ։ Եւ իր Եգիպ- 8
տոսից բերած պոռնկութիւնները
չ'ձգեց, որովհետև նորա հետ
պառկել էին նորա մանկութեան
ժամանակին, և նորանք շօշափել
էին նորա կուսական ստինքները.
և իրանց պոռնկութիւնը թա-
փել էին նորա վերայ։ Դորա հա- 9
մար ես նորան յանձնեցի իր սի-
րականների ձեռքը՝ Ասորեստանի
որդկանց ձեռքը որոնց վերայ նա
սիրահարուել էր։ Նորանք բաց 10
արին նորա ամօթոյքը, առան նո-
րա տղերքն ու աղջկերքը, և իրան
էլ սրով սպանեցին. և նա անուա-
նի եղաւ կանանց մէջ, և դա-
տաստաններ գործադրեցին նո-
րա վերայ։
Եւ նորա Ողիբայ քոյրը տեսաւ, 11
և նորանից աւելի ապականու-
թիւն արաւ իր առփանքովը, և
իր պոռնկութիւնները իր քրոջ
պոռնկութիւններիցն աւելի. Ա- 12
սորեստանի որդկանցը սիրահար-
ուեցաւ՝ կուսակալներին և նա-
խարարներին իր դրացիներին, ո-
րոնք հագուած էին շքեղութիւ-
նով՝ ձիաւորներ՝ ձիանք հեծած,
բոլորը շնորհալի երիտասարդներ։
Եւ տեսայ որ պղծուեցաւ, եր- 13
կուսին էլ ճանապարհը մէկ էր։
Եւ իր պոռնկութիւնները աւե- 14
լացրեց. երբոր մարդիկ տեսաւ
պատի վերայ փորագրուած՝ Քաղ-
դէացիների պատկերները կարմիր
ներկերով նկարուած. Իրանց 15
մէջքերը գօտի կապած, գոյնզգոյն
խոյրեր իրանց գլուխներին, ամեն-
քը իշխանների կերպարանքով ի-
րանց ծննդեան երկրի՝ Քաղդէա-
ցիների Բաբիլոնի որդկանց նմա-
նութիւնովը. Այն ժամանակ դո- 16
րանց սիրահարուեցաւ՝ աչքերը
տեսածին պէս, և դեսպաններ

ուղարկեց նորանց մօտ Քաղդէա-
47 ցիների երկիրը։ Եւ Բաբիլոնի որ-
դիքը նորա մօտ մտան առփանքի
անկողինը և նորան պղծեցին ի-
րանց պոռնկութիւններովը. և նա
պղծուեցաւ նորանցով. և նո-
րանցից բաժանուեցաւ նորա հո-
48 գին։ Եւ նա բաց արաւ իր պոռ-
նըկութիւնները և բաց արաւ իր
ամօթոյքը. և իմ հոգին էլ բա-
ժանուեցաւ նորանից ինչպէս որ
հոգիս բաժանուել էր նորա քրո-
49 ջից։ Եւ նա շատացրեց իր պոռ-
նըկութիւնները յիշելով իր ման-
կութեան օրերը, որ պոռնկացել
20 էր Եգիպտոսի երկրումը. Եւ նա
սիրահարուեցաւ իր տարփածու-
ների վերայ, որոնց մարմինը էշե-
րի մարմին է, և ցանկութիւնը
21 ձիերի ցանկութիւն։ Եւ դու
մտիկ տուիր քո մանկութեան ե-
զեռնագործութեանը՝ Եգիպտա-
ցիները քո ստինքները շօշափեցին
քո մատաղութեան ծծերի պատ-
ճառով։
22 Սորա համար, ով Ոողիբայ,
այսպէս է ասում Տէր Եհովան.
Ահա ես քո սիրականներին վեր
եմ կացնելու քեզ վերայ, որոն-
ցից քո հոգին բաժանուել է, և
նորանց քեզ վերայ եմ բերելու
23 ամեն կողմից, Բաբիլոնի որդինե-
րին, և բոլոր Քաղդէացիներին,
Փակուդին, Սուէին և Կուէին,
Ասորեստանի բոլոր որդիքը նո-
րանց հետ, բոլորը շնորհալի երի-
տասարդներ, կուսակալներ և նա-
խարարներ, ամենքը զօրագլուխ-
ներ և անուանիներ՝ ձի հեծնող-
24 ներ։ Եւ նորանք պիտի գան քեզ
վերայ զէնքերով, կառքերով ու
անիւներով և ժողովուրդների
բազմութիւնով, և վահան ու
ասպար և սաղաւարտ պիտի դնեն
քեզ դէմ շուրջանակի, և նո-
րանց առաջին պիտի դնեմ դա-
տաստանը, որ նորանք քեզ դա-
տեն իրանց դատաստաններովը։
25 Եւ ես իմ նախանձը պիտի քեզ
դէմ ուղղեմ, և նորանք քեզ
հետ բարկութեամբ պիտի վար-
ուին. քիթդ ու ականջներդ պի-
տի վեր առնեն, և մնացորդդ
սրով պիտի ընկնէ. նորանք պի-
տի առնեն քո տղերքն և աղջկեր-
քը, և մնացորդդ կրակով պիտի
այրուի։ Եւ քեզանից պիտի հա-
նեն քո հանդերձները և պիտի
առնեն քո զարդարանքի բաները.
Եւ ես պիտի դադարեցնեմ քո
պղծագործութիւնները քեզանից
և Եգիպտոսի երկրից Բերաձ պոռ-
նըկութիւններդ. և աչքերդ պի-
տի չ՚բարձրացնես դէպի նորանց,
և միւս անգամ չես յիշիլ Եգիպ-
տոսը։
Որովհետև այսպէս է ասում
Տէր Եհովան. Ահա ես քեզ մատ-
նեցի նորանց ձեռքը որոնց դու
ատում ես, որոնցից բաժանուել
է քո հոգին։ Եւ նորանք քեզ
հետ ատելութիւնով պիտի վար-
ուին, և պիտի առնեն քո բոլոր
վաստակը, և քեզ մերկ ու տկլոր
պիտի ձգեն, և պիտի բացուի քո
պոռնկութեան ամօթոյքը և քո
պղծագործութիւնն ու քո պոռ-
նըկութիւնները։ Սորանք պէտք
է կատարուին քեզ վերայ, որով-
հետև դու ազգերին հետևելով
պոռնկութիւն արիր, նորա հա-
մար որ դու պղծուեցար նորանց
կուռքերովը։ Դու քո քրոջ ճա-
նապարհովը գնացիր, ես էլ նո-
րա բաժակը քո ձեռքին դրի։
Այսպէս է ասում Տէր Եհովան.
Դու պիտի քո քրոջ խոր և լայն
բաժակը խմես, դու պիտի ծաղր
ու ծանակ լինես. նա շատ կը պա-
րունակէ։ Արբեցութիւնով ու
տրտմութիւնով պիտի լցուիս.
ապշութեան ու հիացութեան
բաժակ է քո քրոջ Սամարիայի
բաժակը։ Եւ դու պիտի խմես
նորան և քամես և նորա կտոր-
ները պիտի լիզես. և պիտի ստինք-
ներդ նորանցով պատառոտես, ո-
րովհետև ես եմ խօսել, ասում
է Տէր Եհովան։ Սորա համար
այսպէս է ասում Տէր Եհովան.
Որովհետև դու ինձ մոռացար և
ինձ քո մէջքի քամակը գցեցիր,
ուրեմն դու էլ կրիր քո պղծա-
գործութիւնները ու պոռնկու-
թիւնները։
Եւ Տէրն ասեց ինձ. Մարդի

որդի, մի՞թէ դու դատելու ես
Ոողային և Ոողիբային. ապա նո-
րանց պատմիր իրանց պղծու-
37 թիւնները։ Որովհետև նորանք
շնութիւն են արել, և արիւն
կայ նորանց ձեռքերին, և իրանց
կուռքերովը շնացել են. և ի-
րանց որդկանցն էլ, որոնց ծնել
էին ինձ համար, կրակով անցկա-
ցրին նորանց համար որ կերակուր
38 լինեն։ Դեռ սա էլ արին ինձ.
իմ սրբարանը աղտոտեցին այն
օրը, և իմ շաբաթները պղծե-
39 ցին. Որովհետև իրանց որդկանցը
մորթեցին իրանց կուռքերի հա-
մար և միևնոյն օրը մտան իմ
սրբարանը՝ որ նորան պղծեն. և
ահա այսպէս արին իմ տան մէջ։
40 Եւ մինչև անգամ լսար ուղարկե-
ցիք հեռուից եկող մարդկանցը,
որոնց մօտ պատգամաւորը գնա-
լուն պէս, նորանք ահա իսկոյն
եկան, որոնց համար դու լուաց-
ուեցար, աչքերիդ ծարոյր դրիր
և զարդերով զարդարուեցար։
41 Եւ պատուական բազմոցի վերայ
նստեցիր, և պատրաստուած սե-
ղան կար նորա առաջին, և իմ
խունկն ու իւղը դրիր նորա վե-
42 րայ։ Եւ նորա հետ ուրախութիւն
անող մի բազմութեան ձայն կար.
և ռամիկ մարդկանց հետ անա-
պատից գինեմոլներ բերուեցան,
և նորանք ապարանջաններ էին
դնում նորանց ձեռքերին, և
պարծանքի թագեր՝ նորանց գլ-
43 խին. Եւ ես ասեցի շնութիւնն-
երի մէջ պառաւածին վերայ, Հի-
մա նորա պոռնկութիւնների հետ
44 կ՚պոռնկանան։ Եւ նորա մօտ կը
մտնեն պոռնիկ կնկայ մօտ մտնե-
լու նման, նոյնպէս մտան Ոողայի
և Ոողիբայի մօտ՝ այդ պղծագործ
45 կանանց մօտ։ Եւ արդար մար-
դիկ իրանք պիտի դատեն նորանց
շնացող կանանց դատաստանովը
և արիւնահեղների դատաստա-
նովը, որ նորանք շնացողներ են
և արիւն կայ նորանց ձեռքին։
46 Որովհետև այսպէս է ասում
Տէր Եհովան. Ես նորանց դէմ
ժողովք պիտի կանգնեցնեմ և
նորանց պիտի մատնեմ տանջանքի
և յափշտակութեան։ Եւ ժողով-
քը պիտի նորանց քարկոծէ քա-
րերով, և նորանց կտորէ իրանց
սուրերովը, նորանց տղերքն ու
աղջկերքը սպանէ և նորանց տները
կրակով այրէ։ Եւ պիտի դադա-
48 րեցնեմ պղծագործութիւնը երկ-
րից, և բոլոր կանայքը պիտի
խրատուին, որ ձեր պղծագործու-
թիւնների պէս չ՚անեն։ Եւ ձեր
49 պղծագործութիւնը ձեզ վերայ
պիտի դնեն, և դուք ձեր կուռ-
քերի մեղքերը պիտի կրէք և գի-
տենաք որ ես եմ Տէր Եհովան։

ԳԼ. ԻԴ

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ին-
1 ներորդ տարուայ տասներորդ ամ-
սուայ ամսի տասին՝ ասելով.
Մարդի որդի, դրիր քեզ համար
2 այս օրուայ անունը հէնց այսօր.
Բաբիլոնի թագաւորը հէնց այսօր
մօտացաւ Երուսաղէմին։ Եւ ա-
3 ռակով խօսիր դէպի այս ապըս-
տամբ տունը և ասիր նորանց.
Այսպէս է ասում Տէր Եհովան.
Դիր կաթսան՝ դիր, և մէջն էլ
ջուր ածիր։ Ժողովիր նորա կտոր-
4 ները մէջը՝ ամեն լաւ կտորը,
ազդրը և ուսը, ընտիր ոսկորնե-
5 րով լցրու։ Ոչխարների ընտիրներն
առ և ոսկորները դիզիր նորա տա-
կին. նորան սաստիկ եռացրու,
որ ոսկորներն էլ եփուին միջումը։
Դորա համար այսպէս է ասում
6 Տէր Եհովան. Վա՛յ արիւնահեղ
քաղաքին, այն կաթսային որի
ժանգը իրանում է և ժանգը մի-
ջիցը դուրս չէ եկած, կտոր կտոր
հանիր կտորները. նորա վերայ վի-
7 ճակ չ՚ձգուի։ Որովհետև նորա
արիւնը իրանում է. չոր ապա-
ռաժի վերայ է դրել նորան, գետ-
նի վերայ չէ թափել նորան որ նո-
8 րան ծածկէ հողով։ Իմ սրտմտու-
թիւնը վեր հանելու և վրէժը
առնելու համար նորա արիւնը
դրի չոր ապառաժի վերայ, որ
9 չ՚ծածկուի։ Սորա համար այսպէս
է ասում Տէր Եհովան. Վա՛յ
արիւնահեղ քաղաքին. ես էլ
կրակի խարոյկը պիտի մեծացնեմ։

10 Շատացրու փայտերը, վառիր
կրակը որ միսը հալուի, համեմ-
ներ էլ դիր և թող ոսկորները
11 այրուին։ Եւ յետոյ կայծերի վե-
րայ դիր պարապ, որպէս զի տա-
քանայ և այրուի պղինձը, և
հալուի նորանում նորա պղծու-
12 թիւնը՝ վերջանայ ժանգը։ Աշխա-
տութիւններով յոգնեցաւ նա,
և նորանից դուրս չ՚եկաւ նորա
շատ ժանգը՝ կրակով նորա ժան-
13 գը։ Քո անմաքրութիւնումը պղ-
ծագործութիւն կայ. որովհետև
ես քեզ մաքրեցի և դու մաքուր
չ՚եղար, այլ ևս պիտի չ՚մաքրուիս
քո պղծագործութիւնից մինչև որ
իմ սրտմտութիւնը հանգստա-
14 ցնեմ քեզ վերայ։ Ես Տէրս եմ
խօսել, պիտի գայ. և ես պիտի
կատարեմ, ես պիտի չ՚թողեմ, և
չ՚խնայեմ և չ՚զղջամ. քո ճանա-
պարհների համեմատ և քո ա-
րարքների համեմատ պիտի դատ-
ուիս, ասում է Տէր Եհովան։
15 Եւ Տիրոջ խօսքն ինձ եղաւ ա-
16 սելով. Մարդի որդի, ահա ես
վեր եմ առնում քեզանից մի
հարուածով քո աչքերի ցան-
կութիւնը, և դու պիտի ոչ ող-
բաս ոչ լաց լինես, և արտասուքդ
17 պիտի չ՚գայ։ Լռութեամբ հա-
ռաչիր, մեռելի սուգ պիտի չ՚ա-
նես. ապարօշդ կապիր գլխիդ, կօ-
շիկներդ ոտներդ հագիր, դունչդ
մի ծածկիր, և մարդկանց հացը
մի ուտիր։
18 Եւ ես առաւօտը խօսեցի ժո-
ղովրդի հետ, և իրիկունը մե-
ռաւ կինս. և ՓԻՍ առաւօտը
ինձ հրամայուածին պէս արի։
19 Եւ ժողովուրդն ինձ ասեց. Մեզ
չե՞ս իմացնել, թէ սա ինչ է նշա-
նակում մեզ համար, որ դու ա-
նում ես։
20 Եւ ես ասեցի նորանց. Տիրոջ
21 խօսքը եղաւ ինձ ասելով. Ասիր
Իսրայէլի տանը թէ Այսպէս է
ասում Տէր Եհովան. Ահա ես
պիտի պղծեմ իմ սրբարանը՝ ձեր
զօրութեան պարծանքը, ձեր աչ-
քերի ցանկութիւնը և ձեր հո-
գու խնայածը. և ձեր թողած
աղերքն ու աղջկերքը սրով պի-
տի ընկնեն։ Եւ դուք պիտի իմ 22
արածին պէս անէք, դունչ պի-
տի չ՚ծածկէք, և մարդկանց հացը
պիտի չ՚ուտէք. Եւ ձեր ապարօշ- 23
ները ձեր գլխին և ձեր կօշիկները
ձեր ոտքին լինելով պիտի սուգ
չ՚անէք և լաց չ՚լինէք, այլ պիտի
հալումաշ լինէք ձեր անիրաւու-
թիւններովը և դէպի իրար հա-
ռաչէք։ Եւ Եզեկիէլը ձեզ հա- 24
մար նշան է. նորա բոլոր արածին
պէս պիտի անէք. սա լինելիս կ՚ի-
մանաք, որ ես եմ Տէր Եհովան։
Եւ դու, մարդի որդի, ահա 25
երբոր ես վեր կ՚առնեմ նորան-
ցից իրանց զօրութիւնը, իրանց
պարծանքի ուրախութիւնը, ի-
րանց աչքերի ցանկութիւնը և
իրանց սրտի ուղածը՝ իրանց տը-
ղերքն ու աղջկերքը, Այն ժամա- 26
նակ կ՚գայ ազատուած մէկը քեզ
մօտ, որ լուր Կ՚բերէ ականջներիդ։
Այն ժամանակ բերանդ պիտի 27
բացուի այն ազատուածովը և
պիտի խօսես ու այլ ևս համր չը
մնաս, և դու նորանց համար նշան
կ՚լինես. և նորանք կ՚իմանան, որ
ես եմ Տէրը։

ԳԼ. ԻԵ

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասե- 1
լով. Մարդի որդի, երեսդ դէպի 2
Ամմոնի որդկանցն արա և մար-
գարէացիր նորանց դէմ, Եւ ա- 3
սիր Ամմոնի որդկանցը. Լսեցէք
Տէր Եհովայի խօսքը, Այսպէս է
ասում Տէր Եհովան. Որովհետև
դու՝ Վա՛շ ասեցիր իմ սրբարա-
նի մասին երբոր նա պղծուեցաւ,
և Իսրայէլի երկրի մասին՝ երբոր
նա անապատացաւ, և Յուդայի
տան մասին՝ երբոր նորանք գերի 4
գնացին. Դորա համար ահա ես
քեզ պիտի արևելքի որդկանցը
մատնեմ իբրև ժառանգութիւն,
որ նորանք իրանց գիւղերը շի-
նեն քեզանում և իրանց վրան-
ները դնեն քեզանում. նորանք
պիտի ուտեն քո պտուղները և
նորանք պիտի խմեն քո կաթը։ 5
Եւ ես Ռաբբան պիտի ուղտերի
փարախ շինեմ և Ամմոնի որդ-

կանցը՝ հօտերի մակաղատեղ, և
դուք կ՚իմանաք որ ես եմ Տէրը։
6 Որովհետև այսպէս է ասում Տէր
Եհովան, նորա համար որ դու
ծափ տուիր և ոտքով ՓԵՏԻՆԸ
տրոփեցիր և քո բոլոր արհա-
մարհանքովը հոգով չափ ուրա-
խացիր Իսրայէլի երկրի վերայ,
7 Դորա համար ահա ես իմ ձեռ-
քը մեկնում եմ դէպի քեզ, և
քեզ մատնում եմ ազգերին իբրև
յափշտակութիւն. և ես քեզ
պիտի փչացնեմ ազգերից, և քեզ
պիտի կորցնեմ երկիրներիցը. ես
քեզ բնաջինջ պիտի անեմ, և
դու կ՚իմանաս որ ես եմ Տէրը։
8 Այսպէս է ասում Տէր Եհո-
վան, որովհետև Մովաբը և Սէիրն
ասեցին թէ Ահա Յուդայի տունը
9 ամեն ազգերի պէս է. Դորա հա-
մար ահա ես պիտի բանամ Մո-
վաբի կողմը քաղաքներիցը՝ նորա
քաղաքներիցը նորա սահմաններ-
իցը, երկրի պարծանք Բեթեսի-
մօթը, Բէէլմոնը և Կարիաթեմը
10 Արևելքի որդկանց համար՝ Ամ-
մոնի որդկանց հետ միասին պիտի
սա էլ տամ իբրև ժառանգու-
թիւն, որպէս զի Ամմոնի որդկանց
յիշատակ չ՚լինի ազգերի մէջ։
11 Մովաբումն էլ եմ դատաստան-
ներ անելու, և նորանք պիտի ի-
մանան որ ես եմ Տէրը։
12 Այսպէս է ասում Տէր Եհո-
վան. Որովհետև Եդովմը ՍԱՍՏ-
ԿԱՆԻՆ գործածելով Յուդայի
տանիցը վրէժ առաւ և նորանից
վրէժ առնելով յանցանք գոր-
13 ծեց, Դորա համար այսպէս է ա-
սում Տէր Եհովան. Ես իմ ձեռ-
քը պիտի տարածեմ Եդովմի վե-
րայ, և նորանից բնաջինջ անեմ
մարդը և անասունը, և նորան
պիտի թեմանից առաւել անա-
պատ շինեմ, և մինչև Դեդան
14 պիտի սրով ընկնեն։ Եւ իմ վրէժը
պիտի կատարեմ Եդովմի վերայ
իմ ժողովուրդ՝ Իսրայէլի ձեռովը.
և նորանք պիտի անեն Եդովմի
մէջ իմ բարկութեան և իմ
սրտմտութեան համեմատ. և նո-
րանք պիտի ճանաչեն իմ վրէժը,
ասում է Տէր Եհովան։
Այսպէս է ասում Տէր Եհո- 15
վան. Որովհետև Փղշտացիք վրէժ-
խնդրութիւնով վարուեցան և հո-
գիի արհամարհանքով վրէժ ա-
ռան մշտական ատելութիւնով
ապականելով. Դորա համար այս- 16
պէս է ասում Տէր Եհովան. Ահա
ես իմ ձեռքը տարածում եմ
Փղշտացիների վերայ և նորանց
Քերեթիներին պիտի բնաջինջ ա-
նեմ, և պիտի փչացնեմ ծովի ե-
զերքում եղող մնացորդը. Եւ նո- 17
րանց մէջ մեծամեծ վրէժխնդրու-
թիւններ պիտի գործեմ սրտմտու-
թեան յանդիմանութիւններով.
և նորանք պիտի իմանան որ ես
եմ Տէրը, երբոր իմ վրէժը կ՚առ-
նեմ նորանցից։

ԳԼ. ԻԶ

Եւ եղաւ տասնև մէկերորդ տար- 1
ուայ ամսի մէկին Տիրոջ խօսքը
դէպի ինձ ասելով. Մարդի որ- 2
դի, որովհետև Տիւրոսը Երուսա-
ղէմի վերայ ասեց՝ Վա՛շ կոտ-
րուեցան ժողովուրդների դռնե-
րը, դէպի ինձ է շուռ տալիս.
ես պիտի լցուիմ. նա անապատ
է դառնում. Դորա համար այս- 3
պէս է ասում Տէր Եհովան. Ահա
քեզ դէմ եմ, ով Տիւրոս, և
շատ ազգեր պիտի յարուցանեմ
քեզ վերայ, ինչպէս որ ծովը յա-
րուցանում է իր ալիքները։ Եւ 4
նորանք պիտի քանդեն Տիւրոսի
պարիսպները և փուլ ածեն նորա
աշտարակները, և ես պիտի աւե-
լեմ նորա հողը նորանից և նո-
րան չոր ապառաժ պիտի շինեմ։
Նա ուռկան փռելու տեղ պիտի 5
դառնայ ծովի մէջ, որովհետև
ես եմ խօսել, ասում է Տէր Ե-
հովան. և նա ազգերին աւար պի-
տի դառնայ։ Եւ նորա աղջկերքը, 6
որոնք դաշտումն են, սրով պիտի
սպանուին, և պիտի իմանան որ
ես եմ Տէրը։
Որովհետև այսպէս է ասում 7
Տէր Եհովան. Ահա ես Տիւրոսի վե-
րայ պիտի բերեմ Բաբիլոնի թա-
գաւոր Նաբուգոդոնոսորին հիւ-
սիսից՝ թագաւորների թագաւո-

րին ձիերով, կառքերով ու ձի-
աւորներով և բազմութիւնով
8 ու մեծ ժողովուրդով։ Նա քո
աղջկերքը դաշտումը սրով պիտի
սպանէ, և քեզ դէմ մարտկոց
պիտի շինէ, և քեզ դէմ հողա-
բլուրներ պիտի կանգնեցնէ, և
քեզ դէմ վահան պիտի բարձրա-
9 ցնէ. Եւ իր կործանիչ մեքենա-
ները պիտի դնէ քո պարիսպների
դէմ և քո աշտարակները պիտի
10 քանդէ իր տապարներովը։ Նորա
ձիերի շատութիւնից քեզ պիտի
ծածկէ նորանց փոշին. ձիաւոր-
ների, անիւների և կառքերի
դղրդիւնիցը պիտի սասանեն քո
պարիսպները, երբոր նա մտնէ քո
դռներովը ինչպէս որ կոտրուած
11 քաղաքը կ'մտնեն։ Իր ձիերի
սմբակներովը պիտի կոխ տայ քո
բոլոր փողոցները, քո ժողովրդին
սրով պիտի սպանէ և քո զօրա-
ւոր բերդերը դետինը պիտի իջ-
12 նեն։ Եւ քո հարստութիւնը պի-
տի թալանեն և պիտի կողոպտեն
քո աւարը և պիտի քանդեն քո
պարիսպները և քարուքանդ ա-
նեն քո ցանկալի տները, և քո
քարերը ու քո փայտերը և քո
հողը պիտի ջրի մէջը թափեն։
13 Եւ ես պիտի դադարեցնեմ քո
երգերի աղմուկը, և քո քնար-
ների ձայնը այլ ևս պիտի չ'լսուի։
14 Եւ ես քեզ պիտի չոր ապառաժ
շինեմ. ուռկան փռելու տեղ
պիտի դառնաս. այլ ևս պիտի
չ'շինուիս. որովհետև ես Տէրս
եմ խօսել, ասում է Տէր Եհո-
վան։
15 Տէր Եհովան այսպէս է ասում
Տիւրոսին. Մի՞թէ քո կործան-
ման ձայնիցը՝ երբոր քո միջումը
կոտորած կատարուելով վիրա-
ւորուածների հեծելովը կղզիները
16 պիտի չ'սասանեն։ Եւ ծովի բոլոր
իշխանները պիտի իջնեն իրանց
աթոռների վերայից և պիտի հա-
նեն իրանց պատմուճանները և
իրանց նկարագործ հանդերձնե-
րիցը պիտի մերկանան, սոսկում-
ներ պիտի հագնեն, դետնի վե-
րայ պիտի նստեն և պիտի սար-
սափեն ամեն վայրկեան, և պիտի
ապշեն քեզ վերայ։ Եւ ողբ պի- 17
տի բարձրացնեն քեզ վերայ և
քեզ ասեն. Ի՞նչպէս կործանուե-
ցար, ով ծովաբնակ անուանի քա-
ղաք, որ ծովումը զօրաւոր էիր
ինքդ և բնակիչներդ, որ ահ էիք
տալիս նորա բոլոր բնակիչներին։
Հիմա պիտի զարհուրեն կղզիները 18
քո կործանման օրը, և ծովումը
եղող կղզիները պիտի ապշեն քո
կորուստովը։
Որովհետև այսպէս է ասում 19
Տէր Եհովան. Ես քեզ այն ան-
բնակ քաղաքների պէս աւերակ
քաղաք շինելիս՝ անդունդը քեզ
վերայ հանելիս, որ քեզ ծած-
կեն շատ ջրերը, Եւ քեզ գուբը 20
իջնողների հետ այն յաւիտենա-
կան ժողովրդի մօտ իջեցնելիս և
քեզ տակի երկրումը յաւիտե-
նական աւերակներումը նստեցնե-
լիս գուբը իջնողների հետ որպէս
զի չ'բնակուիս, այն ժամանակ ես
փառք կ'դնեմ կենդանեաց երկ-
րումը։ Քեզ սոսկման առարկայ 21
կ'շինեմ, և դու պիտի ոչնչանաս,
և դու պիտի որոնուիս, բայց պի-
տի այլ ևս չ'գտնուիս յաւիտեան,
ասում է Տէր Եհովան։

ԳԼ. ԻԷ

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա- 1
սելով. Եւ դու, մարդի որդի, 2
Տիւրոսի վերայ ողբ բարձրացրու,
Եւ ասիր Տիւրոսին, Ով ծովի 3
մուտքերումը բնակող, որ վաճա-
ռականութիւն ես անում ազգե-
րի հետ շատ կղզիների վերայ,
այսպէս է ասում Տէր Եհովան.
Ով Տիւրոս, դու ասեցիր՝ Ես գե-
ղեցկութեան կատարելութիւնն
եմ։ Ծովի սրտումն են քո սահ- 4
մանները. քեզ շինողները կա-
տարելագործեցին քո գեղեցկու-
թիւնը։
Սանիրի մայրից շինեցին բոլոր 5
լանջքերը քեզ համար. Լիբանանի
եղևին առան քեզ վերայ կայմ
շինելու. Քո թիակները Բասանի 6
կաղնիներից շինեցին. քո նստա-
րանները շինեցին փղոսկրից՝ պատ-
ցին Կիտացիների կղզիներից Եկած

7 տօսախով։ Եգիպտոսից Բերած
նկարագործ բեհեզից էր քո ա-
ռագաստը, որ քեզ համար դրօշ
լինէր. կապուտակ և ծիրանեգոյն
էր քո ծածկոցը Եղիսայի կղզիից
8 Բերուած։ Սիդոնի և Արուադի
բնակիչները թիավարներդ էին.
քո իմաստունները, ով Տիւրոս,
որ քեզանում կային, քո նաւա-
9 վարներն էին։ Գեբաղի ծերերը և
նորա իմաստունները, որ քեզա-
նում կային, ծակոտուածքդ
պնդացնողներն էին, ծովի բոլոր
նաւերը և նորանց նաւաստիները
քեզանում էին քո ապրանքները
10 առուտուրի դնելու։ Պարսիկներ,
Ղուդացիք և Փութացիք քո
զօրքի մէջ էին իբրև քո պատե-
րազմական մարդիկը. վահան և
սաղաւարտ կախող էին. նորանք
քեզ փառաւորութիւն տուին։
11 Արուադացիք և քո զօրքը քո
պարիսպների վերայ էին շուրջա-
նակի, և քաջասիրտներն էին քո
աշտարակների վերայ. նորանք ի-
րանց վահանները կախում էին
քո պարիսպների վերայ շուրջա-
նակի. նորանք կատարելագործե-
ցին քո գեղեցկութիւնը։
12 Թարսիսը քո վաճառականներն
էր ամեն տեսակ ապրանքի շա-
տութիւնիցը. արծաթով, եր-
կաթով, անագով և կապարով
13 անում էին քո առուտուրը։ Յա-
ւանը, Թոբելը և Մոսոքը քո վա-
ճառականներն էին. նորանք քեզ
հետ մարդկանց հոգիների և
պղնձի անօթների առուտուր էին
14 անում։ Թորգոմայի տունից ձիեր
և ձիաւորներ և ջորիներ էին բե-
րում քեզ մօտ իբրև առուտու-
15 րի ապրանք։ Դեդանի որդիքը քո
վաճառականներն էին. շատ կղզի-
ներ իբրև վաճառահանութեան
տեղեր ձեռքիդ էին. փղոսկրեայ
եղջիւրներ և ոպնիազ փայտ էին
ետ դարձնում քեզ իբրև փոխա-
16 նակութիւն։ Ասորիք քո վաճա-
ռականներն էին, քո ձեռագործ-
ների շատութեան համար. կար-
կեհանով, ծիրանեգոյնով, նկա-
րագործներով, բեհեզով, բուս-
տերով և կարմիր յակինթով ա-
նում էին քո առուտուրը։ Յու- 17
դան և Իսրայէլի երկիրը քո վա-
ճառականներն էին. Մեննիթի
ցորենով, խմորեղէնով, մեղրով,
իւղով և բալասանով անում էին
քո վաճառականութիւնը։ Դա- 18
մասկոսը քո վաճառականն էր,
ձեռագործներիդ շատութեան ա-
մեն տեսակ ապրանքի շատու-
թեան համար՝ Քեղբոնի գինիով
և սպիտակ բուրդով։ Վեդանը 19
և Յաւանը Ուզալից բերում էին
քո ապրանքները. շինած երկա-
թեղէն, կասիա և խնկեղէգն էր
լինում քո փոխանակութիւնը։
Դեդանը քո վաճառականն էր 20
կառքի պաստառակալներով։ Ա- 21
րաբացիք և Կեդարի բոլոր իշ-
խանները քո պատրաստ վաճա-
ռականներն էին. գառներով, խո-
յերով և նոխազներով էին առև-
տուր անում քեզ հետ։ Սաբայի 22
և Ռեգմայի վաճառականները քո
վաճառականներն էին, ամեն տե-
սակ գլխաւոր բուրմունքներով և
ամեն տեսակ պատուական քա-
րերով և ոսկով անում էին քո
առուտուրը։ Խառանը, Քաննէն 23
և Եդեմը, Սաբայի վաճառական-
ները, Ասորեստանն — Քաղմադը
քո վաճառականներն էին։ Նո- 24
րանք քեզ հետ վաճառականու-
թիւն էին անում շքեղ հան-
դերձներով, կապուտակ և նկա-
րագործ վերարկուներով, մա-
նածների կուտակներով, հիւս-
ուած չուաններով և եղևնափայտ-
եայ սնտուկներով քո վաճառա-
նոցներում։ Թարսիսի նաւերը քո 25
կարաւաններն էին քո վաճառք-
ների համար, և դու լցուեցար և
շատ փառաւորուեցար ծովի մի-
ջումը։
Շատ ջրերով տարան քեզ ա- 26
թիավարները. արևելեան քամին
քեզ կոտրեց ծովի միջումը։ Քո 27
ապրանքներն ու վաճառքները՝
քո առուտուրը, քո նաւաստի-
ներն ու նաւավարները, քո ծա-
կոտուածքը պնդացնողները և
քեզ հետ առուտուր անողները,
և քեզանում լինող քո բոլոր պա-
տերազմի մարդիկը և քո բոլոր

բազմութեան հետ որ քեզանում
է, պիտի ընկնեն ծովի մէջը քո
28 անկման օրը։ Քո նաւավարների
աղաղակի ձայնիցը պիտի դողան
29 արուարձանները։ Եւ պիտի իջ-
նեն իրանց նաւերիցը բոլոր թիա-
վարները, նաւաստիները՝ ամեն
նաւավարները ծովի մէջ և կանգ-
30 նեն երկրի վերայ։ Եւ իրանց ձայ-
նը լսել կ'տան քեզ վերայ և
կ'աղաղակեն դառնապէս. և հող
վեր կ'ածեն իրանց գլուխների
վերայ, և մոխրի մէջ կ'թաւալ-
31 ուեն։ Եւ իրանց մազերը կ'ածի-
լեն քո մասին և քուրձեր կ'հագ-
նեն և քեզ վերայ լաց կ'լինեն
դառն հոգով և դառն սուգով.
32 Եւ իրանց կոծ անելովը ողբ կը
բարձրացնեն քեզ վերայ, և ողբ
կ'երգեն քեզ վերայ ասելով. Ո՞վ
է Տիւրոսի նման, ծովի մէջ բնա-
33 ջինջ եղածին նման։ Քո վաճառք-
ները ծովիցը դուրս գալիս՝ շատ
ազգեր էիր կշտացնում, քո ապ-
րանքների ու քո առուտուրների
շատութիւնովը հարստացնում
34 էիր երկրի թագաւորներին, Արդ
որ ծովի միջում ջրերի խորերն
ես խորտակուել, քո վաճառք-
ներն և բոլոր բազմութիւնդ ընկ-
35 ան քո մէջը։ Կղզիների բոլոր
բնակիչները ապշել են քեզ վե-
րայ և նորանց թագաւորները
սաստիկ զարհուրուեցան. դո-
36 ղում են նորանց երեսները։ Ազ-
գերի միջի վաճառականները սու-
լում են քեզ վերայ, դու սոս-
կում եղար և ոչնչացար յա-
ւիտեան։

ԳԼ. ԻԸ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Մարդի որդի, ասիր Տիւ-
րոսի իշխանին՝ թէ Այսպէս է
ասում Տէր Եհովան. Որովհետև
սիրտդ հպարտացաւ և ասեցիր.
Ես աստուած եմ, Աստուծոյ ա-
թոռի վերայ եմ նստած ծովի
միջումը. բայց դու մարդ ես և
ոչ Աստուած, թէև դու քո սիրտը
Աստուծոյ սրտի տեղն ես դրել.
3 Ահա դու Դանիէլիցը իմաստուն
ես. ոչ մի գաղտնիք մութ չէ քեզ
համար. Քո իմաստութեամբն ու 4
հանճարովը քեզ համար հարըս-
տութիւն շինեցիր, և ոսկի ու ար-
ծաթ դրիր քո գանձարաններու-
մը. Քո շատ իմաստութիւնովը՝ 5
քո վաճառականութիւնովը շա-
տացրիր քո հարստութիւնը, և
սիրտդ բարձրացաւ քո հարստու-
թիւնովը։
Սորա համար այսպէս է ասում 6
Տէր Եհովան. Որովհետև դու քո
սիրտը Աստուծոյ սրտի նման շի-
նեցիր, Դորա համար ահա ես 7
քեզ վերայ պիտի բերեմ օտար-
ներին՝ ազգերի բռնաւորներին, և
նորանք պիտի հանեն իրանց սրերը
քո իմաստութեան գեղեցկու-
թեան վերայ, և պիտի ապակա-
նեն քո գեղեցկութիւնը։ Քեզ 8
գուբը պիտի գցեն, և դու պիտի
մեռնես վիրաւորուածների մա-
հով ծովի մէջ։ Մի՞թէ ասելու 9
ես քեզ սպանողների առաջին.
Ես աստուած եմ. քանի որ դու
մարդ ես և ոչ Աստուած՝ քեզ
սպանողների ձեռքին։ Անթլփատ- 10
ների մահով պիտի մեռնես օ-
տարների ձեռքով. որովհետև ես
խօսեցի. ասում է Տէր Եհովան։
Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա- 11
սելով. Մարդի որդի, ողբ բար- 12
ձրացրու Տիւրոսի թագաւորի վե-
րայ և ասիր նորան. Այսպէս է
ասում Տէր Եհովան. Դու կատա-
րելութեան կնիքն ես՝ լիքն իմաս-
տութիւնով, և գեղեցկութեամբ
կատարեալ։ Եդեմումն՝ Աստու- 13
ծոյ դրախտումն էիր. բոլոր պատ-
ուական քարերը քո ծածկոցն էին՝
սարդիոն, տպազիոն, անդամանդ,
ոսկեքար, եղնգնաքար և յաս-
պիս, շափիւղայ, կարկեհան և
զմրուխտ և ոսկի. քո թմբուկնե-
րի և քո սրինգների գործը քեզ
համար քո ստեղծուած օրը պատ-
բաստուեցաւ։ Դու մի օծուած 14
քերովբէ էիր ծածկող, և ես
քեզ շինեցի. Աստուծոյ սուրբ
սարի վերայ էիր. կրակի քարերի
մէջտեղ էիր ման գալիս։ Դու 15
կատարեալ էիր քո ճանապարհ-
ներումը քո ստեղծուած օրիցը

մինչև որ քեզանում անօրէնու-
16 թիւն գտնուեցաւ։ Քո առուտու-
րի շատութեան համար լցուե-
ցաւ քո ներսը զրկանքով և դու
մեղանչեցիր. և ես քեզ իբրև
պիղծ հեռացրի Աստուծոյ սարի-
ցը, և քեզ փչացրի, ով ծածկող
քերովբէ, կրակի քարերի միջից։
17 Սիրտդ հպարտացաւ քո գեղեց-
կութիւնովը. դու ապականեցիր
քո իմաստութիւնը քո գեղեց-
կութեան պատճառով. ես քեզ
գետինը պիտի գցեմ. թագաւոր-
ների առաջին քեզ տեսարան պի-
18 տի շինեմ։ Քո անօրէնութիւն-
ների շատութիւնովը՝ քո անիրաւ
վաճառականութիւնովը պղծե-
ցիր քո սրբարանները. և ես կրակ
պիտի հանեմ քո միջից. նա պի-
տի ուտէ քեզ, և ես քեզ մո-
խիր պիտի շինեմ երկրի վերայ
բոլոր քեզ տեսնողների աչքերի
19 առաջին։ Ազգերի մէջ քեզ ա-
մեն ճանաչողները պիտի ապշեն
քեզ վերայ. դու սոսկում եղար
և ոչնչացար յաւիտեան։
20 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
21 սելով. Մարդի որդի, երեսդ Սի-
դոնին դարձրու, և մարգարէացիր
22 նորա վերայ. Եւ ասիր. Այսպէս
է ասում Տէր Եհովան. Ահա ես
քեզ դէմ եմ, ով Սիդոն. և պի-
տի փառաւորուիմ քեզանում, և
պիտի իմանան որ ես եմ Տէրը,
երբոր նորանում դատաստաններ
23 անեմ և նորանում սրբուիմ։ Եւ
նորա մէջ ժանտախտ պիտի ու-
ղարկեմ և նորա փողոցների մէջ՝
արիւն. և վիրաւորուածներ պի-
տի ընկնեն նորա մէջ նորա վե-
րայի սրով շուրջանակի։ Եւ պի-
24 տի իմանան, որ ես եմ Տէրը։ Եւ
Իսրայէլի տան համար այլևս պի-
տի չ'լինի խայթող տատասկ և
ցաւացնող փուշ նորանց բոլոր
շրջականերից, որ ատում են նո-
րանց. և պիտի գիտենան, որ ես
եմ Տէր Եհովան։
25 Այսպէս է ասում Տէր Եհո-
վան. Երբոր ես կ'հաւաքեմ Իս-
րայէլի տունը այն ազգերի միջից
որոնցում ցրուել եմ, և երբոր ես
կ'սրբուիմ նորանցով ազգերի աչ-
քերի առաջին, այն ժամանակ նո-
րանք կ'բնակուեն իրանց հողի վե-
րայ, որ ես տուի իմ ծառայ Յակո-
բին։ Եւ նորանք կ'բնակուեն նորա- 26
նում ապահովութիւնով և տու-
ներ կ'շինեն և այգիներ կ'տնկեն,
և ապահով կ'բնակուեն, երբոր
ես դատաստաններ կ'անեմ իրանց
շրջակայքիցը բոլոր իրանց արհա-
մարհողներին, և կ'գիտենան որ
ես եմ Տէրը նորանց Աստուածը։

ԳԼ. ԻԹ

Տասներորդ տարուայ տասնե- 1
րորդ ամսի տասներկուսին եղաւ
Տիրոջ խօսքը ինձ ասելով. Մար- 2
դի որդի, երեսդ դարձրու դէպի
Եգիպտոսի Փարաւօն թագաւո-
րը, և մարգարէացիր նորա դէմ
և բոլոր Եգիպտոսի դէմ. Խօսիր 3
և ասիր. Այսպէս է ասում Տէր
Եհովան. Ահա ես քեզ դէմ եմ,
ով Եգիպտոսի Փարաւօն թագա-
ւոր, ով մեծ վիշապ որ պառկում
ես գետերումդ, որ ասում ես.
Իմ գետը իմն է, և ես եմ շինել
ինձ համար։ Բայց ես քո կզակ- 4
ներին կարթեր եմ անցկացնելու
և քո գետերի ձկները կպցնելու
եմ քո թեփերին, և քեզ դուրս
եմ քաշելու քո գետերիցը, նաև
քո գետերի բոլոր ձկները, որ
կպած կ'լինեն քո թեփերին։ Եւ 5
քեզ դէն պիտի գցեմ անապատը
և քո գետերի բոլոր ձկները. դու
դաշտի երեսի վերան ես ընկնե-
լու, դու պիտի չ'ժողովուիս և
պիտի չ'հաւաքուիս. ես քեզ
տալիս եմ երկրի գազաններին և
երկնքի թռչուններին իբրև կե-
րակուր։ Եւ Եգիպտոսի բոլոր 6
բնակիչները կ'գիտենան, որ ես
եմ Տէրը. որովհետև նորանք ե-
ղէգի ցուպ եղան Իսրայէլի տան
համար։ Նորանք քեզ ձեռքիցդ 7
բռնելիս, դու կոտրուեցար և նո-
րանց բոլոր թիկունքները ճղեցիր.
և նորանք քեզ վերայ կռնելիս,
դու փշրուեցար և *կանգնեցրիր
նորանց երանքները։

---

*Կամ՝ դողդոջուն արիր

8 Դորա համար այսպէս է ասում
Տէր Եհովան. Ահա ես սուր եմ
բերում քեզ վերայ, և քեզանից
պիտի փչացնեմ մարդն ու անա-
9 սունը։ Եւ Եգիպտոսի երկիրը
պիտի ամայի և անապատ դառ-
նայ, և պիտի իմանան որ ես եմ
Տէրը, որովհետև նա ասեց. Գետը
10 իմն է, և ես եմ շինել։ Դորա
համար ահա ես քեզ դէմ և քո
գետերի դէմ եմ. և Եգիպտոսի
երկիրը անապատների անապատի
պէս ամայի պիտի շինեմ Մագ-
դողից մինչև Սուհէն և մինչև
11 Եթէովպացիների սահմանը։ Ն-
որանով մարդի ոտք չ'պիտի անց
կենայ, և անասունի ոտք չ'պիտի
անց կենայ նորանով. և նա բնակ-
ուած չ'պիտի լինի քառասուն
12 տարի։ Եւ ես Եգիպտոսի երկիրը
ամայի պիտի անեմ ամայացած
երկիրների միջում, և նորա քա-
ղաքները անապատացած քաղաք-
ների միջում պիտի ամայի լինեն
քառասուն տարի. և Եգիպտա-
ցիներին պիտի ցրուեմ ազգերի
մէջ և նորանց ցիրուցան անեմ
երկիրների մէջ։
13 Որովհետև այսպէս է ասում
Տէր Եհովան. Քառասուն տարիից
յետոյ ես պիտի ժողովեմ Եգիպ-
տացիներին այն ազգերից, ուր որ
14 ցրուած են եղել։ Եւ ետ պիտի
դարձնեմ Եգիպտոսի գերութիւ-
նը, և ետ պիտի տանեմ նորանց
Պաթուրեսի երկիրը՝ իրանց ծագ-
ման երկիրը, և նորանք այնտեղ
մի ցած թագաւորութիւն պիտի
15 լինեն։ Թագաւորութիւններից
ցածը պիտի լինի, և այլ ևս պիտի
չ'բարձրանայ ազգերի վերայ. և
ես նորանց պիտի քիչացնեմ որ
16 չ'տիրեն ազգերի վերայ. Եւ այլ
ևս պիտի Իսրայէլի տան համար
ապաստանարան չ'լինի՝ անօրէնու-
թիւն յիշեցնելով նորանց ետևից
հետևելով։ Եւ նորանք պիտի ի-
մանան որ ես եմ Տէր Եհովան։
17 Եւ եղաւ քսանևեօթներորդ
տարուայ առաջին ամսի մէկին
Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասելով.
18 Մարդի որդի, Բաբիլոնի Նաբու-
գոդոնոսոր թագաւորը իր զօրքը
մեծ ծառայութեան համար ծա-
ռայեցրեց Տիւրոսի դէմ. ամեն
գլուխ կնտացաւ, և ամեն ուս
պլոկուեցաւ. բայց մի վարձք չ'ե-
ղաւ նորան և նորա զօրքին Տիւ-
րոսիցը այն նորա դէմ արած ծա-
ռայութեան համար։ Դորա հա- 19
մար այսպէս է ասում Տէր Եհո-
վան. Ահա ես տալիս եմ Եգիպ-
տոսի երկիրը Բաբիլոնի Նաբու-
գոդոնոսոր թագաւորին. և նա
պիտի վեր առնէ նորա առատու-
թիւնը և կողոպտէ նորա կողո-
պուտը և յափշտակէ նորա աւա-
րը. և — վարձք կ'լինի նորա զօր-
քին։ Իբրև վճար, որի համար նա 20
ծառայել է, տալիս եմ նորան
Եգիպտոսի երկիրը. որովհետև
ինձ համար են արել. ասում է
Տէր Եհովան։ Այն օրը մի եղջիւր 21
պիտի բուսցնեմ Իսրայէլի տան
համար, և քեզ էլ բերանի բա-
ցութիւն պիտի տամ նորանց մէջ.
և նորանք պիտի իմանան որ ես
եմ Տէրը։

ԳԼ. Լ

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա- 1
սելով. Մարդի որդի, մարգարէ- 2
ացիր և ասիր. Այսպէս է ասում
Տէր Եհովան. Ողբացէք՝ աւա՛ղ
այն օրուան։ Որովհետև օրը մօ- 3
տացել է, և մօտացել է Տիրոջ
օրը, ամպոտ օրը. դա ազգերի
ժամանակը պիտի լինի։ Եւ սուր 4
պիտի գայ Եգիպտոսի վերայ և եր-
կունք պիտի լինի Եթէովպիայու-
մը, երբոր Եգիպտոսումը կ'ընկ-
նեն սպանուածները, և վեր կ'առ-
նեն նորա առատութիւնը և
քարուքանդ կ'լինեն նորա հի-
մունքը։ Եթէովպացիք, Փութա- 5
ցիք, Ղուդացիք և բոլոր խառնի-
ճաղանճ ժողովուրդը և Քուբա-
ցիք և ուխտի երկրի որդիքը նո-
րանց հետ սրով պիտի ընկնեն։
Այսպէս է ասում Տէրը. Եգիպ- 6
տոսի օգնականներն էլ պիտի
ընկնեն, և պիտի իջնէ նորա զօ-
րութեան հպարտութիւնը, Մագ-
դողից մինչև Սուհէն սրով պիտի
ընկնեն նորանում, ասում է Տէր

7 Եհովան. Եւ պիտի ամայանան
ամայացած երկիրների միջում,
և նորա քաղաքները պիտի լինեն
անապատացած քաղաքների մէջ։
8 Եւ պիտի իմանան որ ես եմ
Տէրը, երբոր ես կրակ կ'գցեմ
Եգիպտոսի մէջ և կ'կոտրատուին
9 նորա բոլոր օգնականները։ Այն
օրը դեսպաններ պիտի դուրս գան
նաւերով իմ առաջից՝ ապահով
Եթէովպացիներին վախեցնելու
համար, և նորանց մէջ երկունք
պիտի լինի Եգիպտոսի օրուայ
պէս. որովհետև ահա գալիս է։
10 Այսպէս է ասում Տէր Եհովան.
Եւ Եգիպտոսի բազմութիւնն էլ
պիտի փչացնեմ Բաբիլոնի Նա-
բուգոդոնոսոր թագաւորի ձե-
11 ռովը։ Նա և իր ժողովուրդն իր
հետ՝ ազգերի բռնակալները բեր-
վում են երկիրը աւերակ անե-
լու, և նորանք պիտի մերկացնեն
իրանց սուրերը Եգիպտոսի վե-
րայ, և երկիրը պիտի լցնեն սպան-
12 ուածներով։ Եւ ես պիտի ցա-
մաքեցնեմ գետերը, և երկիրը
ծախեմ չարերի ձեռքը, և ամայի
անեմ երկիրը և նորա լիութիւնը
օտարների ձեռով. ես Տէրս եմ
խօսել։
13 Այսպէս է ասում Տէր Եհովան.
Ես կուռքերն էլ պիտի բնաջինջ
անեմ, և փչացնեմ չաստուած-
ները Մեմփիսից. և Եգիպտոսի
երկրիցը այլ ևս իշխան պիտի չը
լինի. և վախ պիտի դնեմ Եգիպ-
14 տոսի երկրումը։ Եւ պիտի ամայի
անեմ Պաթուրէսին, և Տայանի-
սի մէջ կրակ պիտի գցեմ, և
Նովի մէջ դատաստաններ պիտի
15 անեմ. Եւ իմ սրտմտութիւնը
պիտի թափեմ Եգիպտոսի ամ-
րութեան՝ Սինի վերայ և պիտի
ջարդեմ Նովի բազմութիւնը։
16 Եւ կրակ պիտի գցեմ Եգիպտոսի
մէջ. Սինը պիտի երկունքներով
գալարուի, և Նովը պիտի ճեղ-
քուի. և թշնամիները պիտի Մեմ-
17 փիսը ցերեկով առնեն։ Արեգի և
Բուբաստի երիտասարդները պի-
տի սրով ընկնեն. և իրանք գերի
18 պիտի գնան։ Եւ Տափնասում
ցերեկը պիտի խաւար դառնայ,
երբոր ես այնտեղ կոտրատեմ
Եգիպտոսի լուծերը, և երբոր այն-
տեղ կ'փչանայ նորա ոյժի հպար-
տութիւնը. ամպ պիտի ծածկէ
նորան, և նորա աղջկերքը գերի
պիտի գնան։ Այսպէս ես Եգիպ- 19
տոսում դատաստաններ պիտի ա-
նեմ, և նորանք պիտի իմանան որ
ես եմ Տէրը։
Եւ եղաւ տասնևմէկերորդ տար- 20
ուայ առաջին ամսի եօթին Տի-
րոջ խօսքը եղաւ ինձ ասելով.
Մարդի որդի, Եգիպտոսի Փարա- 21
ւօն թագաւորի բազուկը կոտրե-
ցի, և ահա նա պիտի չ'փաթաթ-
ուի բժշկութիւն տալու համար,
որ կապ դնեն փաթաթածի վե-
րայ, որպէս զի զօրանայ սուր
բռնելու համար։ Դորա համար 22
այսպէս է ասում Տէր Եհովան.
Ահա ես Եգիպտոսի Փարաւօն
թագաւորի դէմ եմ, և պիտի
փշրեմ նորա բազուկները՝ թէ զօ-
րաւորը թէ կոտրածը, և վայր
պիտի գցել տամ սուրը նորա
ձեռքիցը։ Եւ Եգիպտացիներին 23
պիտի ցրուեմ ազգերի մէջ և
նորանց սփռեմ երկիրների մէջ։
Բայց պիտի զօրացնեմ Բաբիլոնի 24
թագաւորի բազուկները, և իմ
սուրը պիտի դնեմ նորա ձեռ-
քին, սակայն Փարաւօնի բազուկ-
ները պիտի փշրեմ, և նա պիտի
սպանուողի հեծեծանքովը հեծէ
նորա առաջին։ Եւ Բաբիլոնի թա- 25
գաւորի բազուկները պիտի զօրա-
ցնեմ, իսկ Փարաւօնի բազուկ-
ները պիտի ընկնեն. և պիտի ի-
մանան որ ես եմ Տէրը, երբոր ես
իմ սուրը կ'տամ Բաբիլոնի թա-
գաւորի ձեռքը, և նա նորան կը
մեկնէ Եգիպտոսի երկրի վերայ.
Եւ կ'ցրուեմ Եգիպտացիներին 26
ազգերի մէջ և նորանց կ'սփռեմ
երկիրների մէջ, այն ժամանակ
կ'իմանան որ ես եմ Տէրը։

ԳԼ. ԼԱ

Եւ եղաւ տասնևմէկերորդ տար- 1
ուայ երրորդ ամսի մէկին, Տիրոջ
խօսքը եղաւ ինձ ասելով. Մար- 2
դի որդի, ասիր Եգիպտոսի Փա-

բաւօն թագաւորին և նորա
բազմութեանը. Դու ո՞ւմ ես
3 նմանում քո մեծութիւնովը։ Ա-
հա Ասորեստանցին մի եղևին էր
Լիբանանի վերայ, ոստերը գեղե-
ցիկ և տերևախիտ, հովանաւոր
և բարձրահասակ էր, և ամպերի
4 մէջ էր նորա գագաթը։ Ջրերը
նորան մեծացրին, անդունդները
նորան բարձրացրին, իր գետերը
գնում էին իր տունկի շուրջը, և
իր վտակները նա ուղարկում էր
5 դաշտի բոլոր ծառերին։ Սորա
համար նորա հասակը բարձր ե-
ղաւ դաշտի բոլոր ծառերիցը. և
աճեցին նորա ոստերը և տա-
բածուեցան նորա ճիւղերը շատ
6 ջրերից ընդարձակուելով։ Նորա
ճիւղերի վերայ բոյն էին դնում
երկնքի բոլոր թռչունները, և
նորա ճիւղերի տակ ծնում էին
դաշտի բոլոր գազանները, և նո-
րա հովանումը բնակվում էին
7 բոլոր մեծամեծ ազգերը։ Եւ նա
գեղեցիկ էր իր մեծութիւնովը,
իր ոստերի ընդարձակութիւնովը.
որովհետև նորա արմատը շատ
8 ջրերի վերայ էր։ Եղևինները նո-
րան չէին ծածկում Աստուծոյ
դրախտումը, մայր ծառերը չէին
նմանում նորա շառաւիղներին,
և սօսիները նորա ոստերի նման
չէին. ոչ մի ծառ Աստուծոյ
դրախտի մէջ չէր նմանում նո-
9 րան իր գեղեցկութիւնովը։ Ես
նորան գեղեցիկ էի շինել իր ոս-
տերի շատութիւնովը. և նախան-
ձում էին նորան Աստուծոյ դրախ-
տումը եղող բոլոր Եդեմի ծա-
ռերը։
10 Դորա համար այսպէս ասեց
Տէր Եհովան. որովհետև *բար-
ձրացաւ հասակով և իր գագա-
թը դրաւ ամպերի մէջ, և իր
սիրտը հպարտացաւ իր բարձրու-
11 թիւնովը, Ես էլ նորան տուի
ազգերի հզօրի ձեռքը. նա հա-
տուցանելով կ'հատուցանէ նո-
րան. նորա չարութեան համար
12 ես քշեցի նորան։ Եւ օտարները՝
ազգերի բռնակալները նորան ջար-
դեցին և դէն գցեցին. սարերի և
բոլոր հովիտների վերայ ընկան
նորա ոստերը և կոտրատուեցան
նորա շառաւիղները երկրի բոլոր
ձորերումը, և նորա հովանիիցը
իջան երկրի բոլոր ժողովուրդնե-
րը և դէն գցեցին նորան։ Նորա 13
ընկածների վերայ բնակուեցին
երկնքի ամեն թռչունները, և նո-
րա շառաւիղների վերայ էին դաշ-
տի ամեն գազանները։ Որպէս զի 14
իրանց հասակովը չ'հպարտանան
ամեն ջրասուն ծառերը և իրանց
գագաթները չ'դնեն ամպերի մէջ,
և իրանց հպարտութիւնովը ի-
րանց վերայ հաստատ չ'կենան բո-
լոր ջրով ոռոգուածները, որով-
հետև ամենքը մահուան են մատ-
նուած գետնի տակերումը մարդ-
կանց որդիների մէջ գուբը իջնող-
ների հետ։ Այսպէս է ասում Տէր 15
Եհովան. Նա գերեզմանը իջած
օրը սուգ անել տուի. նորա հա-
մար անդունդը ծածկեցի և տր-
գելեցի նորա գետերը, և շատ
ջրեր բռնուեցան, և սուգ հագցրի
Լիբանանին նորա մասին, և դաշ-
տի բոլոր ծառերը թառամեցին
նորա պատճառով։ Նորա անկման 16
ձայնիցը դողալ տուի ազգերին
երբոր նորան իջեցրի գերեզմանը
գուբը իջնողների հետ, և մխի-
թարուեցան գետնի տակերումը
Եդեմի բոլոր ծառերը, Լիբանանի
ընտիրներն ու լաւերը՝ բոլոր ջրով
ոռոգուածները։ Նորանք էլ նո- 17
րա հետ իջան գերեզմանը սրով
սպանուածների մօտ. և նորա բա-
զուկը եղողները, որ բնակվում էին
նորա հովանիումը ազգերի մէջ։
Ո՞ւմ ես նմանում այսպէս 18
փառքով և մեծութիւնով Եդե-
մի ծառերի մէջ. դու վայր պիտի
գցուիս Եդեմի ծառերի հետ
գետնի տակը, անթլփատների մէջ
պիտի պառկես սրով սպանուած-
ների հետ։ Այսինքն Փարաւօնը
և նորա բոլոր բազմութիւնը, ա-
սում է Տէր Եհովան։

ԳԼ. ԼԲ

Եւ եղաւ տասնևերկուերորդ 1

*Եբր. դու բարձրացար

տարուայ, տասնևերկուերորդ
ամսուայ ամսի մէկին եղաւ Տի-
2 րոջ խօսքը ինձ ասելով. Մարդի
որդի, ողբ բարձրացրու Եգիպ-
տոսի Փարաւօն թագաւորի վե-
րայ և ասիր նորան. Ազգերի մէջ
դու առիւծի էիր նմանվում. և
դու մի վիշապի նման էիր ջրե-
րումը. դու վեր էիր բղխում քո
գետերովը, և պղտորեցնում էիր
ջուրը ոտներովդ, և կոխ էիր տա-
3 լիս նորանց գետերը։ Այսպէս է
ասում Տէր Եհովան. Ես պիտի
իմ ցանցը քեզ վերայ տարածեմ
շատ ազգերի ժողովրդովը, և քեզ
վեր պիտի քաշեմ իմ ուռկա-
4 նովը։ Եւ քեզ պիտի գցեմ գետ-
նի վերայ, դաշտի երեսը պիտի
շպռտեմ քեզ, և քեզ վերայ
պիտի բնակեցնեմ երկնքի բոլոր
թռչուններին, և քեզանով պի-
տի կշտացնեմ երկրի բոլոր գա-
5 զաններին։ Եւ քո միսը պիտի սա-
րերի վերայ գցեմ, և պիտի լցնեմ
6 ձորերը քո դէզերովը։ Եւ երկրին
պիտի խմեցնեմ քո արիւնի ար-
տահոսածովը մինչև սարերն էլ,
և հեղեղատները պիտի լցուին
7 քեզանով։ Եւ քեզ հանգցնելիս
պիտի ծածկեմ երկինքը, և սուգ
պիտի հագցնեմ նորա աստղե-
րին, արեգակը ամպով պիտի
ծածկեմ, և լուսինը պիտի չ'ճա-
8 ռագայթէ իր լոյսը։ Երկնից վե-
րայ բոլոր լուսաւոր լուսատու-
ներին պիտի խաւարեցնեմ քո
պատճառով, և քո երկրի վերայ
մթութիւն պիտի բերեմ, ասում
9 է Տէր Եհովան։ Եւ շատ ժողո-
վուրդների սիրտը պիտի խռովե-
ցնեմ, երբոր քո կործանումը
հասցնեմ ազգերին այն երկիրնե-
10 րում, որոնց չէիր գիտում։ Եւ
շատ ժողովուրդներ պիտի ապ-
շեցնեմ քեզ վերայ, և նորանց
թագաւորները զարհուրանքով
պիտի քեզ վերայ զարհուրեն,
երբոր իմ սուրը կ'թռթռացնեմ
նորանց առաջին. և պիտի ամեն
մարդ ամեն վայրկեան սարսափէ
իր անձի համար քո կործանման
օրը։
11 Որովհետև այսպէս է ասում
Տէր Եհովան. Բաբիլոնի թագա-
ւորի սուրը պիտի գայ քեզ վե-
րայ։ Զօրաւորների սրերովը վայր 12
պիտի գցեմ քո բազմութիւնը,
որոնք ամենքը ազգերի բռնաւոր-
ներն են։ Եւ նորանք պիտի կո-
զոպտեն Եգիպտոսի պարծանքը,
և պիտի ոչնչանայ նորա բոլոր
բազմութիւնը։ Եւ պիտի կորցը- 13
նեմ նորա բոլոր անասունները,
շատ ջրերի վերայից, և այլ ևս
նորանց պիտի չ'պղտորէ մարդի
ոտք, և անասունի կճղակներ պի-
տի նորանց չ'պղտորեն։ Այն ժա- 14
մանակ պիտի պարզեցնեմ նորանց
ջրերը, և իւղի պէս հոսեցնեմ
նորանց գետերը, ասում է Տէր
Եհովան. Երբոր Եգիպտոսի եր- 15
կիրը աւերակ կ'դարձնեմ, և եր-
կիրը աւերակ կ'դառնայ իր լիու-
թիւնիցը. երբոր ես կ'զարկեմ
նորա միջի բոլոր բնակիչներին,
այն ժամանակ կ'իմանան թէ ես
եմ Տէրը։
Սա մի ողբ է, և ողբով պիտի 16
երգեն նորան, ազգերի աղջկերքը
պիտի ողբալով երգեն նորան, Ե-
գիպտոսի վերայ և նորա բոլոր
բազմութեան վերայ պիտի ողբա-
լով երգեն նորան, ասում է Տէր
Եհովան։
Եւ եղաւ տասնևերկուերորդ 17
տարուայ՝ ամսի տասնևհինգին,
որ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասե-
լով. Մարդի որդի, կոծ արա Ե- 18
գիպտոսի բազմութեան վերայ և
իջեցրու նորան՝ նորան և զօրաւոր
ազգերի աղջիկներին գետնի տակը
գուբը իջնողների հետ։ Դու ումի՞ց 19
ես վայելուչ. իջիր և պառկիր
անթլփատների հետ։ Սրով սպան- 20
ուածների մէջ պիտի ընկնեն,
սուրի պիտի տրուի նա, քաշքա-
շեցէք նորան և նորա բոլոր բազ-
մութիւնը։ Նորան խօսելու են 21
զօրաւորների հզօրները *գերեզ-
մանի միջից՝ նորա օգնողների հետ.
իջել պառկել են անթլփատները՝
սրով սպանուած։
Այնտեղ է Ասորեստանցին և 22
նորա՝ բոլոր ամբոխը, նորա գե-

*Կամ՝ մեռելների բնակարանի

բեզմանները նորա շրջակայքումն են. ամենքը սպանուած՝ սրով բնակածներ են ; Որի գերեզմանները
23 գուբի խորքերումն են չինուած , և իր ամբոխը իր գերեզմանների շրջակայքումն է , ամենքը սպանուած՝ սրով ընկածներ են, որոնք վախ էին տալիս կենդանեաց երկրումը։
24 Ա՛հաւեղ է Եղամացին և իր բոլոր բազմութիւնը, իր գերեզմանների շրջակայքումը, ամենքը սպանուած՝ սրով ընկածներ են , որոնք իջել են անթլփատ՝ երկրի տակերը, որոնք իրանց վախը տալիս էին կենդանեաց երկրումը, սակայն իրանց ամօթը պիտի կրեն
25 գուբը իջնողների հետ։ Սպանուածների մէջ նորան անկողին տուին իր բոլոր բազմութեան հետ , նորա շրջակայքումն են իր գերեզմանները . ամենքը անթլփատներ՝ սրով սպանուած , որ իրանց վախը տալիս էին կենդանեաց երկրումը, և որոնք պիտի կրեն իրանց ամօթը գուբը իջնողների հետ. նա սպանուածների մէջ է դրուել ։
26 Ա՛հաւեղ է Մոսոքը՝ Թոբէլը և նորա բոլոր ամբոխը, նորա շրջակայքումն են իր գերեզմանները . ամենքը անթլփատներ՝ սրով սպանուածներ, որոնք իրանց վախը տալիս էին կենդանեաց երկ-
27 րումը։ Եւ նորանք պիտի չ՛պառկեն անթլփատներից ընկնող զօրաւորների հետ , որոնք իրանց պատերազմական զէնքերովը *գերեզմանն իջան, և որոնց սուրերը իրանց գլխների տակին դրին . բայց նորանց անօրէնութիւնները իրանց ոսկորների վերայ պիտի լինի , թէև նորանք զօրաւորների երկիւղն էին կենդանեաց երկ-
28 րումը։ Եւ դու պիտի անթլփատների մէջ փշրուիս , և պառկես սրով սպանուածների հետ։
29 Ա՛հաւեղ է Եդովմը, նորա թագաւորները և նորա բոլոր իշխանները, որոնք իրանց զօրութիւնով սրով սպանուածների հետ են դրուած . նորանք պիտի պառկեն անթլփատների հետ և գուբը իջնողների հետ։

Ա՛հաւեղ են հիւսիսի իշխաններ բոլորը, և բոլոր Սիդոնացիք, որոնք իջան սպանուածների հետ. իրանց ահարկութիւնով պիտի ամաչեն իրանց զօրութիւնից, և պիտի պառկեն անթլփատ՝ սրով սպանուածների հետ , և իրանց ամօթը կրեն գուբը իջնողների հետ։

Փարաւօնը տեսնելու է նորանց, և պիտի մխիթարուի իր բոլոր ամբոխի մասին, սրով սպանուածներ են փարաւօնը և իր բոլոր զօրքերը, ասում է Տէր Եհովան։ Որովհետև ես նորա երկիւղ տուի տուի կենդանեաց երկրումը. և նա պիտի պառկեցնուի անթլփատների մէջ՝ սրով սպանուածների հետ՝ փարաւօնը և նորա բոլոր ամբոխը, ասում է Տէր Եհովան։

ԳԼ. Լ.Գ

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասելով . Մարդի որդի , խօսիր քո ժողովրդի որդկանց հետ և ասիր նորանց . Երբէ մի երկրի վերայ սուր բերեմ, և այն երկրի ժողովուրդը մէկ մարդ ընտրէ իր միջիցը և նորան իրանց համար դէտ շինեն . Եւ նա տեսնէ այն սուրը գալիս երկրի վերայ, և փողը հնչեցնէ և ժողովրդին զգուշացնէ . Բայց մէկը փողի ձայնը որոշ լսէ և չ՛զգուշանայ, և սուրը գայ և նորան վեր առնէ. նորա արիւնը նորա գլուխը պիտի լինի : Նա լսել էր փողի ձայնը և չ՛զգուշացաւ. նորա արիւնը իր վերայ պիտի լինի. և եթէ նա զգուշացած լինէր իր անձը կ՛ազատէր , Բայց եթէ դէտը տեսնէ սուրը գալիս և փողը չ՛հնչեցնէ, և ժողովուրդը չ՛զգուշանայ, և սուրը գայ և նորանցից մի հոգի վեր առնէ . նա իր անօրէնութիւնով վեր առնուեցաւ , բայց նորա արիւնը ես դէտի ձեռքիցն եմ պահանջելու։

Եւ դու, մարդի որդի, ես քեզ դէտ դրի Իսրայէլի տան վերայ , և դու պիտի իմ բերանից խօսքը լսես և նորանց զգուշացնես իմ կողմանէ : Եթէ ես ամբարշտին ասելիս , Ով ամբարիշտ , դու անպատճառ պիտի մեռնես, և դու եթէ չ՛խօսես ամբարշտին՝ իր ճանապարհից զգուշացնելու համար. այն ամբարիշտը կ՛մեռնէ իր անօրէնութեան համար , բայց նորա արիւնը քո ձեռքիցն ես կ՛պահանջեմ։ Իսկ եթէ դու զգուշացնես ամբարշտին իր ճանապարհից , որ նորանից ետ դառնայ , բայց նա ետ չ՛դառնայ , նա իր անօրէնութեան համար կ՛մեռնէ , բայց դու ազատած կ՛լինես քո անձը ։

Եւ դու , մարդի որդի , ասիր Իսրայէլի տանը . Դուք այսպէս էք խօսում և ասում թէ Մեր յանցանքներն ու մեր մեղքերը մեզ վերայ է, և մենք նորանցով մաշվում ենք . ուրեմն ի՞նչպէս պիտի ապրենք : Նորանց ասիր . կենդանի եմ ես, ասում է Տէր Եհովան, որ ես ամբարշտի մեռնելը չեմ ուզում , այլ որ ամբարիշտը դարձի գայ իր ճանապարհից և ապրէ : Դարձէք , դարձէք ձեր չար ճանապարհներից, և ինչու համար դուք մեռնէք , ով Իսրայէլի տուն ։

Եւ դու , մարդի որդի , ասիր քո ժողովրդի որդկանցը թէ Արդարի արդարութիւնը նորան չի փրկիլ երբոր նա յանցանք գործէ, և ամբարիշտը իր ամբարշտութիւնովը չի գլորուիլ երբոր իր ամբարշտութիւնից ետ դառնայ, և արդարը չէ կարող էր ապրիլ երբոր մեղանչէ։ Երբոր ես արդարին ասեմ թէ նա անպատճառ պիտի ապրէ, և նա վստահանայ իր արդարութեան վերայ և անօրէնութիւն անէ . նորա բոլոր արդարութիւնը պիտի չ՛յիշուի, և այն իր արած անօրէնութիւնովը պիտի մեռնէ, Բայց երբոր ամբարշտին ասեմ. Դու անպատճառ պիտի մեռնես, և նա ետ դառնայ իր մեղքիցը և իրաւունք ու արդարութիւն գործէ. Ամբարիշտը գրաւը ետ գարձնէ, յափշտակածը հատուցանէ , կեանքի կանոններովը գնայ առանց անօրէնութիւն գործելու . նա անշուշտ պիտի ապրէ և չ՛պիտի մեռնէ։ Ա՛ն ամեն մեղքերը , որ նա արել էր, պիտի չ՛յիշուին. նա իրաւունք ու արդարութիւն գործեց. նա անշուշտ պիտի ապրէ։

Եւ քո ժողովրդի որդիքը կ՛ասեն. Տիրոջ ճանապարհը ուղիղ չէ. բայց իրանց ճանապարհն է որ ուղիղ չէ։ Երբոր արդարը ետ դառնայ իր արդարութիւնից և անօրէնութիւն գործէ, այն ժամանակ նա պէտք է նորանցում մեռնէ։ Եւ երբոր ամբարիշտը ետ դառնայ իր ամբարշտութիւնից և իրաւունք ու արդարութիւն գործէ, նա պէտք է ապրէ նորանցով։ Բայց դուք ասում էք թէ Տիրոջ ճանապարհը ուղիղ չէ. ես ձեզանից ամեն մէկին իր ճանապարհների համեմատ պիտի դատեմ, ով Իսրայէլի տուն։

Եւ եղաւ որ մեր գերութեան տասնեւերկուերորդ տարուայ տասներորդ ամսի հինգին մէկ ազատուած եկաւ ինձ մօտ Երուսաղէմից ասելով թէ քաղաքը կատարեցաւ ։

Եւ Տիրոջ ձեռքը ինձ վերայ եղաւ այն իրիկունը ազատուածի գալուց առաջ և բացաւ իմ բերանը մինչև որ նա առաւօտը ինձ մօտ եկաւ , և բերանս բացուեցաւ և այլ ևս համր չէի ։

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասելով. Մարդի որդի , այս աւերակների բնակիչները Իսրայէլի երկրի վերայ ասում են թէ՝ Աբրահամը մէկ հատ հողը եր և ժառանգեց երկիրը. իսկ մենք շատ ենք, երկիրը մեզ կ՛տրուի իրրև ժառանգութիւն։ Դորա համար ասիր նորանց. Այսպէս է ասում Տէր Եհովան. Դուք արիւնովն էք ուտում և ձեր աչքերը բարձրացնում էք դէպի ձեր կուռքերը և արիւն էք թափում. և դուք ժառանգէ՞ք երկիրը։ Դուք հասատ կանգնած էք ձեր սրի վերայ,

*Կամ՝ մեռելների բնակարանն . ամէն՝ գժոխքն

պղծութիւն էք անում, և ձեզանից ամեն մէկը իր ընկերի կնոջը պղծում է. և դուք ժա-
27 ռանգէ՞ք երկիրը։ Այսպէս ասիր նորանց. Այսպէս է ասում Տէր Եհովան. Կենդանի եմ ես, որ աւերակներումը եղողները որով պիտի ընկնեն, և դաշտի վերայ եղողները գազաններին եմ տալիս իբրև նորանց կերակուր, և բերդերումն ու քարայրներումն եղողները ժանտախտով պիտի
28 մեռնեն։ Եւ երկիրը ամայի ու ամայացած պիտի շինեմ, և պիտի փչանայ նորա զօրութեան հպարտութիւնը. և ամայի պիտի դառնան Իսրայէլի սարերը որ
29 անց կենող չ՚լինի։ Եւ կ՚իմանան որ ես եմ Տէրը, երբոր երկիրը ամայի ու ամայացած կ՚անեմ նորանց արած բոլոր պղծութիւնների համար։
30 Իսկ դու, մարդի որդի, քո ժողովրդի որդիքը որ խօսակցում են քեզ դէմ պատերի մօտ և տների դռներումը և մէկզմէկի հետ խօսում են իրար ասելով. Մէկ եկէք ու լսեցէք թէ ինչ բան կայ դուրս եկած Տիրոջ կողմից։
31 Եւ նորանք քեզ մօտ կ՚դան հէնց որ ժողովուրդը եկաւ և քո առաջին կ՚նստեն իբրև իմ ժողովուրդ, և կ՚լսեն քո խօսքերը, բայց նորանց չեն կատարիլ. այլ նորանք իրանց բերանովը հաճութիւն ցոյց կ՚տան, բայց նորանց սիրտն իրանց ագահութեան քա-
32 մակիցն է դնում։ Եւ ահա դու նորանց համար քաղցր երգի պէս ես՝ դեղեցկաձայն և բարեյարմար. և նորանք կ՚լսեն քո խօսքերը, բայց նորանց կատարողնե-
33 րը չեն։ Եւ երբոր սա կ՚դայ, (ահա պիտի դայ), այն ժամանակ պիտի իմանան, որ իրանց միջումը մարգարէ է եղել։

ԳԼ. ԼԴ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Մարդի որդի, մարգարէացիր Իսրայէլի հովիւների մասին, մարգարէացիր և ասիր նորանց՝ այդ հովիւներին. Թէ Այսպէս է ասում Տէր Եհովան. Վա՛յ Իսրայէլի հովիւներին, որոնք իրանց են արածեցնում. հովիւները չէ՞ որ հօտը պիտի արածեցնեն։
3 Կաթը ուտում էք, և բուրդը հագնում էք, և պարարտին մորթում էք. իսկ հօտը չէք արա-
4 ծեցնում։ Տկարներին չ՚ուժովացրիք, և հիւանդին չ՚բժշկեցիք, և դուք կոտրածին չ՚կապեցիք, և մոլորուածին ետ չ՚բերիք, և կորածին չ՚որոնեցիք, այլ խստութեամբ տիրեցիք նորանց վերայ
5 և բռնութեամբ։ Եւ նորանք ցրիւ եկան հովիւ չ՚լինելու պատճառով, և կերակուր եղան դաշտի բոլոր գազաններին և ցիրուցան
6 եղան։ Մոլորվում են իմ ոչխարները ամեն սարերի վերայ և ամեն բարձր բլուրի վերայ, և երկրի բոլոր երեսի վերայ ցրուել են իմ ոչխարները. և որոնող չ՚կայ, ու հարցանող չ՚կայ։
7 Դորա համար, ով հովիւներ,
8 լսեցէք Տիրոջ խօսքը. Կենդանի եմ ես, ասում է Տէր Եհովան, որովհետև իմ հօտը յափշտակուեցաւ և իմ հօտը՝ հովիւ չ՚լինելու համար՝ դաշտի բոլոր գազաններին կերակուր եղաւ, և իմ հովիւները չ՚որոնեցին իմ ոչխարներին, և հովիւները իրանց են արածեցնում, բայց իմ ոչխար-
9 ներին չեն արածեցնում. Դորա համար, ով հովիւներ, լսեցէք Տի-
10 րոջ խօսքը. Այսպէս է ասում Տէր Եհովան. Ահա ես հովիւների դէմ եմ, և իմ ոչխարներին պիտի պահանջեմ նորանց ձեռքիցը, և նորանց պիտի դադարեցնեմ ոչխար արածեցնելուց, և հովիւները այլ ևս պիտի չ՚արածեցնեն նորանց, և պիտի ազատեմ իմ ոչխարներին նորանց բերանիցը, որ նորանք նորանց համար ուտելիք չ՚լինեն։
11 Որովհետև այսպէս է ասում Տէր Եհովան. Ահա ես ինքս եմ պահանջելու իմ ոչխարներին և
12 նորանց որոնելու. Ինչպէս որ հովիւն է որոնում իր հօտը երբոր նորանք ցրուած ժամանակ նա իր

ոչխարների մէջ է լինում, այնպէս պիտի որոնեմ իմ ոչխարներին և նորանց պիտի ազատեմ այն ամեն տեղերից, ուր որ նորանք ցրուած են եղել ամպի և
13 մառախուղի օրը. Եւ նորանց պիտի հանեմ ազգերի միջից և պիտի ժողովեմ նորանց երկիրներից և նորանց պիտի բերեմ նորանց երկիրը և նորանց պիտի արածեցնեմ Իսրայէլի սարերի վերայ, ձորերումը և երկրի բոլոր բնա-
14 կութիւններումը. Նորանց պիտի լաւ արօտում արածեցնեմ, և Իսրայէլի բարձր սարերի վերայ պիտի լինի նորանց փարախը. այնտեղ լաւ փարախի մէջ պիտի մակաղեն. և պարարտ արօտում պիտի արածեն Իսրայէլի սարերի
15 վերայ։ Ես եմ արածեցնելու իմ ոչխարներին և ես եմ նորանց մակաղել տալու, ասում է Տէր
16 Եհովան։ Կորածը որոնելու եմ, և մոլորուածը ետ եմ բերելու, և կոտրածը պիտի կապեմ և հիւանդը պիտի զօրացնեմ, և պարարտն ու զօրաւորը պիտի փչացնեմ՝ իրաւունքով պիտի հովուեմ նորանց։
17 Եւ դուք, ով իմ ոչխարները, այսպէս է ասում Տէր Եհովան. Ահա ես դատաստան եմ անելու ոչխարի և ոչխարի մէջ, խոյերի
18 և նոխազների մէջ։ Սա քի՞չ է ձեզ համար որ դուք լաւ արօտում էք արածում, ձեր արօտի մնացորդը ձեր ոտքերովը կոխ է՞լ էք տալիս. և մաքուր ջուրը խմում էք, մնացածը ձեր ոտնե-
19 րովը պղտորո՞ւմ էք։ Եւ իմ ոչխարները ձեր ոտնակոխ արածն է ուտում, և ձեր ոտներով պղտորածն է խմում։
20 Դորա համար այսպէս է ասում Տէր Եհովան նորանց. Ահա ես ինքս պիտի դատեմ պարարտ ոչ-
21 խարի և նիհար ոչխարի մէջ։ Որովհետև դուք ՏԷՐ կողքովը հրում էք և ձեր եղջիւրներովը հարում էք ամեն տկարներին, մինչև որ նորանց ցիրուցան արիք
22 դրսումը։ Բայց ես պիտի փրկեմ իմ ոչխարներին, և նորանք այլ ևս պիտի չ՚յափշտակուին, և պիտի դատեմ ոչխարի և ոչխարի մէջ։
23 Եւ նորանց վերայ մէկ հովիւ պիտի դնեմ, և նա պիտի արածեցնէ նորանց, այսինքն իմ Դաւիթ ծառային, նա պիտի արածեցնէ նորանց, և նա է լինելու նորանց
24 հովիւը։ Եւ ես Տէրս կ՚լինեմ նորանց համար Աստուած, իսկ իմ Դաւիթ ծառան՝ իշխան նորանց
25 մէջ. ես Տէրս եմ խօսել։ Եւ ձեզ հետ խաղաղութեան ուխտ պիտի դնեմ, և պիտի դադարեցնեմ չար գազաններին այդ երկրից. և նորանք կ՚բնակուեն անապատումը ապահով. և կ՚քնանան
26 անտառներումը։ Եւ նորանց և իմ բլուրի շրջակայքը պիտի օրհնութիւն շինեմ, և անձրևը պիտի ցած թափեմ իր ժամանակին. անձրևները պիտի օրհնութիւն
27 լինեն։ Եւ դաշտի ծառը պիտի իր պտուղը տայ, և երկիրը պիտի տայ իր բերքը, և նորանք ապահով պիտի լինեն իրանց երկրումը, և պիտի իմանան թէ ես եմ Տէրը, երբոր նորանց լուծի փայտերը կ՚կոտրեմ և նորանց կ՚ազատեմ իրանց ծառայեցնողների ձեռքի-
28 ցը։ Եւ այլ ևս ազգերին աւար չեն լինիլ, և երկրի գազանները նորանց չեն ուտիլ, և ապահով կ՚բնակուեն և վախեցնող չի լի-
29 նիլ։ Եւ նորանց համար մի անուանի բոյս վեր կ՚կացնեմ, որ այլ ևս սովով չ՚սպառուին այն երկրումը, և այլ ևս չ՚կրեն ազգերի նախատինքը։
30 Եւ կ՚գիտենան թէ ես՝ նորանց Տէր Աստուածը իրանց հետ եմ, և իրանք իմ ժողովուրդն են՝ Իսրայէլի տունը, ասում է Տէր Եհովան։
31 Եւ դուք իմ ոչխարները՝ իմ արօտի ոչխարները մարդիկ էք դուք. ես ձեր Աստուածն եմ, ասում է Տէր Եհովան։

ԳԼ. ԼԵ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Մարդի որդի, երեսդ Սէիր սարին դարձրու և մարգարէացիր
3 նորա մասին, Եւ ասիր նորան.

Այսպէս է ասում Տէր Եհովան. Ահա ես քեզ դէմ եմ, ով Սէիր սար, և մեկնում եմ իմ ձեռքը քեզ վերայ և ես քեզ ամայի ու
4 ամայացած պիտի անեմ։ Քո քաղաքները աւերակ պիտի անեմ, և դու ամայի պիտի դառնաս, և պիտի գիտենաս որ ես եմ Տէրը։
5 Որովհետև դու մշանջենական առելութիւն ունիս և Իսրայէլի որդւոցը սուրի ձեռք մատնեցիր նորանց պատուհասի ժամանակին, անօրէնութիւնը ծայրին
6 հասած ժամանակին։ Որպա համար կենդանի եմ ես, ասում է Տէր Եհովան, որ քեզ արիւն պիտի անեմ, և արիւնը պիտի հալածէ քեզ. քանի որում դու արիւնը չ'ատեցիր, արիւնն էլ պիտի
7 հալածէ քեզ։ Եւ ես Սէիր սարը ամայի ու ամայացած պիտի շինեմ, և նորանից պիտի փչացնեմ
8 անցնողն ու դարձողը։ Եւ պիտի լցնեմ նորա սարերը նորա սպանուածներով, և բլուրներիդ ու հովիտներիդ և բոլոր ձորերիդ մէջ պիտի սրով սպանուածներ
9 ընկնեն։ Եւ քեզ յաւիտենական անապատներ պիտի շինեմ, և քո քաղաքները պիտի չ'բնակուին, և դուք պիտի իմանաք որ ես եմ Տէրը։
10 Որովհետև դու ասեցիր թէ Այս երկու ազգերը և այս երկու երկիրները իմն են լինելու, և մենք պիտի տիրենք նորանց, թէև
11 Տէրը այնտեղ էր։ Որպա համար՝ կենդանի եմ ես, ասում է Տէր Եհովան, որ պէտք է անեմ քո բարկութեան և քո նախանձի համեմատ, որ ի գործ դրիր նորանց առելիս, և ես պիտի ճանաչուիմ նորանց մէջ երբոր կ'ա-
12 նեմ քո դատաստանը։ Եւ կ'գիտենաս, որ ես Տէրս լսել եմ քո հայհոյանքները, որ խօսեցիր Իսրայէլի սարերի դէմ, ասելով. Աւերակ եղան՝ մեզ տրուեցան
13 իբրև ուտելիք։ Եւ դուք հպարտացաք ձեր բերանով ինձ դէմ, և ձեր խօսքերը շատացրիք ինձ դէմ. ես լսել եմ։

Այսպէս է ասում Տէր Եհո- 14
վան. Բոլոր երկիրը ուրախանալիս, քեզ աւերակ պիտի անեմ։ 15
Ինչպէս որ դու ուրախացար Իսրայէլի տան ժառանգութեան վերայ, երբոր նա աւերակ եղաւ, այնպէս էլ պիտի անեմ քեզ. դու աւերակ պիտի դառնաս, ով Սէիր սար, և ով բոլոր Եդոմ. և կ'իմանան որ ես եմ Տէրը։

ԳԼ. Լ.Զ

Եւ դու, մարդի որդի, մարգա- 1
բէացիր Իսրայէլի սարերին և ասիր. Ով Իսրայէլի սարեր, լսեցէք Տիրոջ խօսքը։ Այսպէս է ասում 2
Տէր Եհովան. Որովհետև թշնամին ասեց ձեր մասին. Վա՛յ ձեզ, յաւիտենական բլուրներն էլ մեզ համար ժառանգութիւն եղան. 3
Սորա համար մարգարէացիր և ասիր. Այսպէս է ասում Տէր Եհովան. Չէնց իսկ նորա համար որ ձեզ աւերակ արին և ձեզ վերայ յարձակուեցան շուրջանակի որ մնացած ազգերին ժառանգութիւն դառնաք, և դուք լեզուանիների շրթունքն ընկաք և նախատինք եղաք ժողովրդին։ Սորա 4
համար, ով Իսրայէլի սարեր, լսեցէք Տէր Եհովայի խօսքը. Տէր Եհովան այսպէս է ասում սարերին, բլուրներին, ձորերին և հովիտներին և ամայի աւերակներին և թողուած քաղաքներին, որոնք սւար և ծաղր են դառել շուրջանակի եղող ազգերի մնացածին. Սորա համար այսպէս է 5
ասում Տէր Եհովան. Որ անշուշտ իմ նախանձի կրակովս եմ խօսել մնացած ազգերի և բոլոր Եդոմի մասին, որովհետև նորանք իմ երկիրը իրանց տուին իբրև ժառանգութիւն բոլոր սրտի ուրախութիւնով և հոգիի արհամարհանքով, որ նորան դարտակելով յափշտակեն։

Դորա համար մարգարէացիր 6
Իսրայէլի երկրի մասին և ասիր սարերին և բլուրներին, ձորերին և հովիտներին թէ Այսպէս է ասում Տէր Եհովան. Ահա ես խօ-

սեցի իմ նախանձովս ու իմ բարկութիւնովը, որովհետև դուք
7 կրեցիք ազգերի նախատինքը։ Դորա համար այսպէս է ասում Տէր Եհովան. Ես բարձրացրել եմ իմ ձեռքը երդումով, որ ձեր շուրջը եղող ազգերը իրանք պիտի քա-
8 շեն իրանց նախատինքը։ Իսկ դուք, ով Իսրայէլի սարեր, ձեզ համար ճիւղեր տուէք, և ձեր պտուղը բերէք իմ Իսրայէլ ժողովրդի համար, որ մօտեցել են
9 գալու համար։ Որովհետև ահա ես ձեր կողմին եմ, և դէպի ձեզ եմ դարձել, և դուք պիտի
10 մշակուիք և սերմանուիք։ Եւ ձեզ վերայ պիտի մարդը շատացնեմ այսինքն Իսրայէլի տունը, բոլորը. և քաղաքները պիտի շէնանան, և աւերակները պիտի
11 շինուին։ Եւ ձեզ վերայ պիտի շատացնեմ մարդը և անասունը, և նորանք պիտի բազմանան և պտղաբեր լինեն, և ձեզ պիտի բնակեցնեմ ձեր առաջի կացութեան պէս և ձեր առաջուայ վիճակից աւելի լաւութիւն պիտի անեմ, և պիտի իմանաք թէ
12 ես եմ Տէրը։ Եւ ձեզ վերայ մարդ պիտի մնան ածեմ, այսինքն իմ ժողովուրդ Իսրայէլը, և նորանք պիտի ժառանգեն քեզ, և դու նորանց ժառանգութիւնը պիտի լինես. և նորանց այլ ևս անզաւակ պիտի չ'անես։
13 Այսպէս է ասում Տէր Եհովան. Որովհետև ձեզ համար ասում են թէ Դու մարդ ուտող ես, և քո ժողովրդին անզաւակ ես ա-
14 րել. Դորա համար այլ ևս մարդ պիտի չ'ուտես և այլ ևս պիտի անզաւակ չ'անես քո ժողովրդին,
15 ասում է Տէր Եհովան։ Եւ քո մէջ այլ ևս պիտի լսել չ'տամ ազգերի նախատինքը, և այլ ևս պիտի չ'կրես ժողովուրդների անարգանքը, և քո ազգերին այլ ևս պիտի անզաւակ չ'անես, ասում է Տէր Եհովան։
16 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
17 սելով. Մարդի որդի, Իսրայէլի տունը իրանց երկրումը բնակուեցան և նորան պղծեցին իրանց ճանապարհովը և իրանց գործերովը, դաշտանաւորի պղծութեան պէս եղաւ նորանց ճանապարհը
18 իմ առաջին։ Եւ ես իմ բարկութիւնը թափեցի նորանց վերայ այն արիւնի համար, որ թափեցին երկրի վերայ, և որը պղծեցին իրանց կուռքերովը։ Եւ նորանց
19 ցրուեցի ազգերի մէջ, և նորանք ցիրուցան եղան երկիրների մէջ. նորանց ճանապարհի և նորանց գործերի համեմատ դատաստան արի իրանց։ Եւ երբոր գնացին
20 այն ազգերի մօտ, ուր որ գնացել են, պղծեցին իմ սուրբ անունը, երբոր նորանց համար ասուեցաւ. Սորանք Տիրոջ ազգն են և նորա երկրիցն են դուրս եկել։ Սակայն
21 ես գթացի իմ սուրբ անունի համար, որ Իսրայէլի տունը պղծեցին այն ազգերի մէջ, ուր որ գնացել էին։
Սորա համար ասիր Իսրայէլի 22
տանը. Այսպէս է ասում Տէր Եհովան. Չէ թէ ձեզ համար եմ անում ես, ով Իսրայէլի տուն, այլ իմ սուրբ անունի համար, որ դուք պղծեցիք այն ազգերի մէջ ուր որ գնացել էք։ Եւ ես 23
սրբեցի իմ սուրբ մեծ անունը, որ պղծուած էր այն ազգերի մէջ որոնց մէջ դուք պղծեցիք. և ազգերը պիտի գիտենան որ ես եմ Տէրը, ասում է Տէր Եհովան, երբոր ես կ'սրբուիմ ձեր մէջ նորանց աչքերի առաջին։ Եւ ձեզ 24
պիտի առնեմ ազգերի միջից և ժողովեմ ձեզ ամեն երկիրներից և ձեզ բերեմ ձեր հողը։ Եւ ձեզ 25
վերայ մաքուր ջուր պիտի սրսկեմ, և մաքուր պիտի լինէք. ձեր բոլոր պղծութիւններիցն ու ձեր բոլոր կուռքերիցը պիտի մաքրեմ
ձեզ։ Եւ ես ձեզ նոր սիրտ պի- 26
տի տամ, և նոր հոգի պիտի դնեմ ձեր միջումը, և վեր պիտի առնեմ ձեր մարմնիցը քարեղէն սիրտը և ձեզ մարմնեղէն սիրտ պիտի տամ։ Եւ իմ հոգին պիտի 27
դնեմ ձեր միջումը, և պիտի առնեմ, որ իմ օրէնքների մէջ վարուիք և իմ դատաստանները պահէք և նորանց կատարէք։ Եւ 28

բնակուէք այն երկրումը որ
տուել եմ ձեր հայրերին, և իմ
ժողովուրդը լինէք, և ես ձեր
29 Աստուածը լինեմ։ Եւ ձեզ պի-
տի ազատեմ ձեր բոլոր պղծու-
թիւններիցը, և պիտի կանչեմ
ցորենը և շատացնեմ նորան. և
ձեզ վերայ սով պիտի չ'բերեմ։
30 Եւ պիտի շատացնեմ ծառերի
պտուղը և դաշտի բերքը, որպէս
զի այլ ևս սովի նախատինք չ'քա-
31 շէք ազգերի մէջ։ Եւ դուք պի-
տի յիշէք ձեր չար ճանապարհ-
ները և ձեր գործերը որ լաւ չէին,
և պիտի զզուիք ձեզանից ձեր
անօրէնութիւնների համար և
32 ձեր պղծութիւնների համար։ Ոչ
թէ ձեզ համար եմ անում, ա-
սում է Տէր Եհովան, ոչ ձեզ
յայտնի լինի. ամաչեցէք և պատ-
կառեցէք ձեր ճանապարհներիցը,
ով Իսրայէլի տուն։
33 Այսպէս է ասում Տէր Եհո-
վան. Այն օրը որ ձեզ կ'մաքրեմ
ձեր բոլոր անօրէնութիւններիցը,
այն ժամանակ քաղաքները պիտի
մարդաբնակ անեմ, և աւերակ-
34 ները պիտի շինուին։ Եւ ամայա-
ցած երկիրը պիտի մշակուի փո-
խանակ որ ամայի էր ամեն անց-
35 նողի աչքի առաջին։ Եւ պիտի
ասեն. Այս ամայացած երկի-
րը Եդեմի դրախտի պէս է դա-
ռել և աւերակ ու ամայի և
քարուքանդ քաղաքները պա-
րըսպաւոր ու մարդաբնակ են դա-
36 ռել։ Եւ ձեր շրջակայքում մնա-
ցած ազգերը պիտի իմանան որ
ես Տէրս շինում եմ քանդուած-
ները և տնկում՝ ամայացածը.
ես Տէրս խօսեցի և պիտի կատա-
րեմ։
37 Այսպէս է ասում Տէր Եհո-
վան. Իսրայէլի տունը դեռ այս
բանն էլ պիտի խնդրէ ինձանից
որ անեմ իրանց. նորանց պիտի
շատացնեմ մարդկանցով խաշին-
38 քի պէս։ Սուրբ խաշինքի պէս,
Երուսաղէմի խաշինքների պէս
նորա տօն օրերին. այնպէս պիտի
լինեն այն աւերակ քաղաքները
մարդկանց խաշինքներով լիքը, և
պիտի իմանան որ ես եմ Տէրը։

ԳԼ. ԼԷ

Տիրոջ ձեռքը ինձ վերայ եղաւ, 1
և Տէրը ինձ դուրս հանեց հո-
գիով, և ինձ դուրս հանեց դաշ-
տի մէջը, և դա լիքն էր ոսկոր-
ներով։ Եւ ինձ ման ածեց նո- 2
րանց վերայ շուրջանակի, և ահա
նորանք խիստ շատ էին դաշտի
երեսի վերայ. և ահա շատ չորա-
ցած էին։
Եւ ինձ ասեց. Մարդի որդի, 3
մի՞թէ կ'կենդանանան այս ոսկոր-
ները. և ես ասեցի. Ով Տէր Եհո-
վայ, դու գիտես։ Եւ նա ինձ ա- 4
սեց. Մարգարէացիր այս ոսկոր-
ների վերայ և ասիր նորանց. Ով
չորացած ոսկորներ, լսեցէք Տի-
րոջ խօսքը. Այսպէս է ասում 5
Տէր Եհովան այս ոսկորներին.
Ահա ես ձեր մէջը հոգի պիտի
դնեմ, և դուք պիտի կենդանա-
նաք։ Եւ ձեզ վերայ ջիղեր պիտի 6
դնեմ, և ձեզ վերայ միս պիտի
բերեմ և ձեզ պիտի մորթով
պատեմ, և ձեր մէջը *շունչ պի-
տի դնեմ, և դուք պիտի կեն-
դանանաք. և պիտի իմանաք որ
ես եմ Տէրը։
Եւ ես մարգարէացայ ինչպէս 7
որ ինձ պատուիրուեցաւ. և մի
ձայն եղաւ հէնց որ մարգարէա-
ցայ, և ահա մի շարժում, և ոս-
կորները մօտեցան՝ ոսկոր ոսկորի
մօտ։ Եւ տեսայ, և ահա նորանց 8
վերայ ջիղեր և միս եկաւ, և մոր-
թը պատեց նորանց վերևիցը, սա-
կայն շունչ չ'կար նորանց մէջ։
Եւ ինձ ասեց. Մարգարէացիր 9
շունչին՝ մարգարէացիր, ով մար-
դի որդի, և ասիր շունչին. Այս-
պէս է ասում Տէր Եհովան, Չորս
աշխարհակողմիցը եկ, ով *շունչ,
և փչիր այս սպանուածների վե- 10
րայ որ կենդանանան։ Եւ ես մար-
գարէացայ ինչպէս որ ինձ պատ-
ուիրուել էր, և շունչը նորանց
մէջը մտաւ, և նորանք կենդա-
նացան և կանգնեցին իրանց ոտ-
ների վերայ, և մի խիստ շատ մեծ
բանակ էր։

*Կամ՝ հոգի

11 Եւ ինձ ասեց. Մարդի որդի,
այս ոսկորները բոլոր Իսրայէլի
տունն է. ահա նորանք ասում
են. Մեր ոսկորները չորացան և
մեր յոյսը փչացաւ, մենք կորած
12 ենք։ Դորա համար մարգարէա-
ցիր և ասիր նորանց. Այսպէս է
ասում Տէր Եհովան. Ահա ես
պիտի բանամ ձեր գերեզմաններ-
ը, և ձեզ՝ իմ ժողովուրդը դուրս
պիտի հանեմ ձեր գերեզմաններ-
իցը, և ձեզ պիտի տանեմ Իս-
13 րայէլի երկիրը։ Եւ դուք կ'իմա-
նաք որ ես եմ Տէրը, երբոր կը
բանամ ձեր գերեզմանները և
ձեզ ԷԲԼԱ իմ ժողովուրդը կ'հա-
14 նեմ ձեր գերեզմաններիցը։ Եւ
ես իմ հոգին ձեր մէջը կ'դնեմ,
և դուք կ'կենդանանաք, և ես
ձեզ կ'հանգստացնեմ ձեր երկրի
վերայ, և դուք կ'իմանաք որ ես
Տէրս խօսեցի և կատարեցի, ա-
սում է Տէրը։
15 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
16 սելով. Եւ դու, մարդի որդի,
քեզ համար մէկ փայտ առ և
նորա վերայ գրիր՝ Յուդայինը և
նորա ընկեր Իսրայէլի որդկանցը.
և մէկ փայտ էլ առ և նորա վե-
րայ գրիր՝ Յովսէփինը՝ Եփրեմի
փայտը և նորա ընկեր Իսրայէլի
17 բոլոր տանը։ Եւ նորանց մօտեցրու
միմեանց որ մէկ փայտ դառնան,
և նորանք միանան քո ձեռքումը։
18 Եւ երբոր քո ժողովրդի որդիքը
խօսեն քեզ հետ ասելով. Մեզ
չե՞ս ասիլ թէ սա ի՞նչ է քո ու-
19 նեցածը. Նորանց ասիր թէ Այս-
պէս է ասում Տէր Եհովան. Ա-
հա ես վեր եմ առնելու Յովսէ-
փի փայտը, որ Եփրեմի ձեռքին
է, և նորա ընկեր Իսրայէլի ցե-
ղերը, և նորանց նորա վերայ
դնեմ Յուդայի փայտի հետ և
նորանց մէկ փայտ եմ շինելու,
և նորանք մէկ պիտի լինեն իմ
20 ձեռքումը։ Եւ այն փայտերը,
որոնց վերայ դու պիտի գրես, քո
ձեռքին լինեն նորանց աչքի ա-
21 ռաջին. Եւ ասիր նորանց. Այս-
պէս է ասում Տէր Եհովան. Ահա
ես վեր եմ առնելու Իսրայէլի
որդկանցը այն ազգերի միջից,
ուր որ իրանք գնացել են, և նո-
րանց ժողովելու եմ շուրջանակի
և բերելու եմ նորանց իրանց եր-
կիրը։ Եւ նորանց մէկ ազգ եմ 22
շինելու երկրումը Իսրայէլի սա-
րերի վերայ և մէկ թագաւոր պի-
տի լինի նորանց ամենքի թագա-
ւորը, և այլ ևս երկու ազգեր չեն
լինիլ և այլ ևս պիտի չ'պառակ-
տուին երկու թագաւորութիւն-
ների։ Եւ այլ ևս պիտի չ'պղծուին 23
իրանց կուռքերովն ու գարշելի-
ներովը և իրանց բոլոր յանցանք-
ներովը, և ես պիտի ազատեմ նո-
րանց իրանց բոլոր բնակութիւն-
ներիցը, որոնց մէջ իրանք մեղք
գործեցին, և նորանց պիտի սրբ-
բեմ, և նորանք կ'լինեն իմ ժո-
ղովուրդը և ես կ'լինեմ նորանց
Աստուածը։ Եւ իմ ծառայ Դա- 24
ւիթը՝ թագաւոր նորանց վերայ,
և նորանց ամենին մէկ հովիւ կը
լինի. և իմ իրաւունքների մէջ
կ'գնան և իմ կանոնները կ'պա-
հեն և նորանց կ'կատարեն։ Եւ 25
ետ կ'դառնան այն երկիրը որ
տուել եմ իմ ծառայ Յակոբին,
ուր որ ձեր հայրերը բնակել էին.
և նորանք կ'բնակուեն նորա վե-
րայ՝ իրանք և իրանց որդիքը և
իրանց որդկանց որդիքը մինչև
յաւիտեան, և իմ ծառայ Դա-
ւիթը իշխան կ'լինի նորանց հա-
մար մինչև յաւիտեան։ Եւ նո- 26
րանց համար խաղաղութեան
ուխտ կ'դնեմ՝ յաւիտենական
ուխտ կ'լինի նորանց հետ. և նո-
րանց պիտի հաստատեմ և շա-
տացնեմ, և իմ սրբարանը նորանց
մէջ դնեմ յաւիտեան։ Եւ իմ 27
խորանը նորանց մօտ կ'լինի և ես
նորանց Աստուած կ'լինեմ և նո-
րանք իմ ժողովուրդը կ'լինեն։ Եւ 28
ազգերը կ'իմանան որ ես եմ Տէրը՝
Իսրայէլին սրբողը, երբոր իմ սրբ-
բարանը նորանց մէջ կ'լինի յա-
ւիտեան։

ԳԼ. ԼԸ

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա- 1
սելով. Մարդի որդի, երեսդ դէպի 2
Գոգն արա Մագոգի երկրում՝

դէպի Իովսէ, Մոսոքի և Թոբէլի իշխանը և մարգարէացիք նորա
3 վերայ, եւ ասիր. Այսպէս է ասում Տէր եհովան, Ահա ես քեզ դէմ եմ, ով Գոգ՝ Իովսէ, Մոսոքի և Թոբէլի իշխան։ Եւ քեզ
4 պիտի ես դարձնեմ և կաթիճեր պիտի դնեմ քո կզակներին, և քեզ պիտի հանեմ և քո բոլոր զօրքը՝ ձիերն ու ձիաւորները, բոլորը շքեղաբէնով հագուած վահանաւորների և ասպարակիրների մեծ ժողովք, որոնց ամենքն էլ սուր բռնողներ են։
5 Պարսիկները, Եթէովպացիները և Փուդացիք նորանց հետ. ամենքն էլ ասպարակիր և սաղաւարտաւոր.
6 Գոմերը և նորա բոլոր գունդերը, Թորգոմայի տունը՝ հիւսիսի ծայրերիցը և նորա բոլոր գնդերը. շատ ժողովուրդներ քեզ հետ։
7 Պատրաստ եղիր և պատրաստիր քեզ և քո բոլոր ժողովքը որ ժողովուել են, և դու նորանց
8 պահապանը եղիր։ Շատ օրերից յետոյ պիտի այցելուիս. տարիների վերջին դու պիտի գաս այն երկիրը, որ սուբիցը ետ է առնուած, և շատ ազգերից ժողովուածի վերայ Իսրայէլի սարերի վերայ, որոնք միշտ աւերակներ էին. բայց ազգերի միջից դուրս բերուեցան, և ամենքն էլ ապահով են բնակուում։
9 Բայց դու մրրիկի պէս պիտի վեր կենաս գաս, երկիրը ծածկելու համար եղող ամպի պէս պիտի լինես՝ դու և քո բոլոր գունդերը և շատ ազգեր քեզ հետ։
10 Այսպէս է ասում Տէր եհովան. Եւ այն օրը պիտի լինի, որ սրտումդ բաներ պիտի վեր կենան և դու պիտի չար խորհուրդ-
11 ներ խորհես, եւ ասես. Վեր գնամ բաց երկրի վերայ, հանգիստ ապահովների վերայ, որ ապահով բնակուել են, ամենքը բնակուում են առանց պարսպի, և նորանք նիգեր ու դռներ չ'ու-
12 նին, Աւար յափշտակելու և կողոպուտ կողոպտելու, որ ձեռքդ դարձնես մարդաշէն դաւած աւերակներին, և դէպի այն ժողովուրդը որ հաւաքուած է ազգերի միջից, որ խաշինք ու ապրանք է ստացել, որ նստել են երկրի միջին տեղը։ Սաբան և Դեդանը և Թարսիսի վաճառականները և նորա բոլոր առիւծները քեզ պիտի ասեն. Մի թէ աւար յափշտակելու համար եկար դու, մի թէ կողոպուտ կողոպտելու համար ժողովեցիր քո ժողովքը, որ արծաթ ու ոսկի վեր առնես, որ խաշինք ու ապրանք առնես, որ մեծ աւար յափշտակես։
13
14 Դորա համար մարգարէացիր, մարդի որդի, և ասիր Գոգին. Այսպէս է ասում Տէր եհովան. Ահա այն օրը, երբոր իմ ժողովուրդ Իսրայէլը ապահով կը
15 բնակուէ, կ'իմանաս, եւ կ'գաս քո տեղերից՝ հիւսիսի ծայրերիցը՝ դու ինքդ և շատ ժողովուրդներ քեզ հետ, ամենքը ձիեր հեծած, մեծ բազմութիւնով և շատ զօրքով։ Եւ դու վեր կ'գաս իմ ի-
16 սրայէլ ժողովրդի վերայ իբրև ամպ երկիրը ծածկելու. վերջի օրերումը պիտի լինի. և քեզ պիտի իմ երկրի վերայ բերեմ, որպէս զի ազգերը ինձ ճանաչեն, երբոր ես քեզանով կ'սրբուիմ նորանց աչքի առաջին, ով Գոգ։
17 Այսպէս է ասում Տէր եհովան. Դու նո՞ ես որի համար առաջի օրերը ասել եմ իմ ծառաներ՝ Իսրայէլի մարգարէների ձեռովը, որ մարգարէանում էին այն օրերը և տարիները, որ քեզ նորանց վե-
18 րայ բերեմ, եւ այն օրը պիտի լինի երբոր Գոգը կ'գայ Իսրայէլի երկրի վերայ, ասում է Տէր եհովան, իմ բարկութիւնը երեսիս
19 պիտի բարձրանայ։ Եւ իմ նախանձովը՝ իմ բարկութեան կրակովը խօսեցի, որ այն օրը անշուշտ մեծ խռովութիւն պիտի լինի Իս-
20 րայէլի երկրի վերայ։ Եւ պիտի դողան իմ երեսից ծովի ձկները և երկնքի թռչունները և դաշտի գազանները և երկրի վերայ սողացող բոլոր սողունները և ամեն մարդ որ երկրի երեսին է, և

սարերը պիտի քանդուին, և դահավէժ ժայռերը կործանուին և
21 ամեն պարիսպները գետինը պիտի ընկնին, եւ իմ բոլոր սարերի վերայ նորա դէմ սուր պիտի կանչեմ, ասում է Տէր եհովան, ամեն մարդի սուրը իր ընկերի դէմ
22 պիտի լինի։ Եւ նորա հետ պիտի դատաստանի ժանտախտով և արիւնով և յորդահոս անձրև և կարկուտի քարեր և կրակ ու ծծումբ պիտի տեղամ նորա վերայ և նորա գունդերի վերայ և նորա հետ եղող շատ ազգերի
23 վերայ։ Եւ ես պիտի փառաւորուիմ և սրբուիմ և ճանաչուիմ շատ ազգերի աչքի առաջին, և պիտի իմանան որ ես եմ Տէրը։

ԳԼ. Լ Ը

1 Եւ դու, մարդի որդի, մարգարէացիր Գոգի դէմ և ասիր. Այսպէս է ասում Տէր եհովան. Ահա ես քեզ դէմ եմ, ով Գոգ՝ Իովսի, Մոսոքի և Թոբէլի իշխան։
2 Եւ ես քեզ ետ պիտի դարձնեմ և քեզ պիտի տանեմ և քեզ վեր հանեմ հիւսիսի ծայրերիցը և քեզ պիտի բերեմ Իսրայէլի
3 սարերի վերայ։ Եւ պիտի ղարկեմ քո աղեղը ձախ ձեռքիդ և նետ վայր պիտի գցեմ աջ ձեռ-
4 քիդ։ Իսրայէլի սարերի վերայ պիտի ընկնես դու ինքդ և քո գունդերը և քեզ հետ եղող ազգերը. ամեն տեսակ թռչուոր դիշատիչ թռչնի և դաշտի գազանի կերակուր եմ արել քեզ։
5 Դաշտի երեսին պիտի ընկնես, որովհետև ես ասեցի, ասում է
6 Տէր եհովան։ Եւ կրակ պիտի ուղարկեմ Մագոգի վերայ և կղզիների ապահով բնակողների վերայ, և պիտի իմանան թէ ես եմ
7 Տէրը։ Եւ իմ սուրբ անունը պիտի ճանաչել տամ իմ Իսրայէլ ժողովրդի մէջ, և իմ սուրբ անունը այլ ևս պղծել չեմ տալ. և ազգերը կ'իմանան որ ես եմ Իսրա-
8 էլումը սուրբ եղող Տէրը։ Ահա գալիս է, և կ'կատարուի, ասում է Տէր եհովան. սա այն օրն է որ
9 ասեցի։ Եւ Իսրայէլի քաղաքների բնակիչները դուրս կ'գան և կրակ կ'վառեն, և կ'այրեն զէնքերը. և ասպարներով ու վահաններով, ազեղներով ու նետերով, ձեռքի մահակներով և նիզակներով եօթը տարի կրակ
10 կ'անեն։ Եւ փայտ չեն կրել դաշտից, և փայտ էլ չեն անել անտառներիցը, որովհետև զէնքերով պիտի կրակ անեն, և իրանցից յափշտակողներից պիտի յափշտակեն, և իրանցից կողոպտողներից պիտի կողոպտեն, ասում է Տէր եհովան։
11 Եւ այն օրը կ'լինի որ ես այնտեղ Գոգին տեղ պիտի տամ իբրև գերեզման Իսրայէլի մէջ անցաւորների ձորը՝ ծովի արևելքումը. և նա արգիլելու է անցաւորներին, և այնտեղ պիտի թաղեն Գոգին և նորա բոլոր
12 բազմութիւնը, և կ'կոչեն Գոգի բազմութեան ձորը։ Եւ Իսրայէլի տունը պիտի թաղեն նորանց՝ երկիրը մաքրելու համար եօթը ամիս։
13 Եւ երկրի բոլոր ժողովուրդը պիտի թաղէ, և սա նորանց համար համբաւ պիտի դառնայ այն օրը որ ես կ'փառաւորուիմ, ասում է Տէր եհովան։
14 Եւ մարդիկ պիտի չոկեն որ միշտ մանդան երկրումը, որոնք ման եկողների հետ թաղեն երկրի երեսի վերայ մնացածներին նորան մաքրելու համար. եօթն ամիից յետոյ պիտի որոնեն։
15 Եւ ման եկողները ման պիտի դան երկրումը, և երբոր մարդի ոսկորներ տեսան՝ նորա կշտին նշան պիտի չինեն մինչև որ թաղողները թաղեն Նորան Գոգի բազմութեան ձորումը։
16 Եւ քաղաքի անունն էլ *Համոնա պիտի լինի. և երկիրը պիտի մաքրեն։
17 Իսկ դու, մարդի որդի, այսպէս է ասում Տէր եհովան. Ասիր ամեն թռչուոր թռչնին և դաշտի բոլոր գազաններին. ժողովուեցէք ու եկէք՝ հաւաքուեցէք շուրջանակի իմ զոհի համար, որ ես

*Այսինքն՝ բազմութիւն

զոհել եմ ձեզ համար՝ մեծ զոհ
Իսրայէլի սարերի վերայ, և միս
18 կերէք ու արիւն խմեցէք։ Զօ-
բաւորների միս կերէք և երկրի
իշխանների արիւնը խմեցէք՝ խո-
յերի, գառների, նոխազների,
զուարակների, որոնք ամենքը Բա-
19 սանի պարարտներ են։ Եւ ճարպ
կերէք մինչև որ կշտանաք, և
արիւն խմեցէք մինչև որ արբե-
նաք այն զոհիցը որ ես զոհեցի
20 ձեզ համար։ Եւ կշտացէք իմ
սեղանի վերայ ձիերով և կառ-
քերով, զօրաւորներով և ամեն
պատերազմական մարդով, ա-
21 սում է Տէր Եհովան։ Եւ ես իմ
փառքը պիտի դնեմ ազգերի մէջ
և ամեն ազգերը պիտի տեսնեն
իմ դատաստանը, որ պիտի ա-
նեմ, և իմ ձեռքը որ նորանց
22 վերայ պիտի դնեմ։ Եւ Իսրայէլի
տունը պիտի իմանան, որ ես եմ
նորանց Տէր Աստուածը այս օրից
23 և յետոյ. Եւ ազգերը պիտի ի-
մանան, որ Իսրայէլի տունը իրանց
անօրէնութիւնների համար գերի
են գնացել, որովհետև ապըս-
տամբուել են ինձ դէմ, և ես
ծածկեցի իմ երեսը նորանցից, և
նորանց իրանց նեղիչների ձեռքը
մատնեցի և ամենքը սրով ընկան։
24 Նորանց պղծութիւնների և նո-
րանց յանցանքների համեմատ ա-
րի նորանց, և իմ երեսը ծածկե-
ցի նորանցից։
25 Սորա համար այսպէս է ասում
Տէր Եհովան. Հիմա ետ պիտի
դարձնեմ Յակոբի գերութիւնը
և պիտի գթամ Իսրայէլի բոլոր
տանը, և պիտի նախանձեմ իմ
26 սուրբ անունի համար։ Եւ նո-
րանք պիտի կրեն իրանց նախա-
տինքը և իրանց բոլոր ապստամ-
բութիւնը որ ապստամբեցին ինձ
դէմ երբոր ապահով բնակուել
էին իրանց երկրումը և վախեցը-
27 նող չ՚կար։ Երբոր ես նորանց ետ
կ՚բերեմ ազգերի միջից և նորանց
կ՚ժողովեմ իրանց թշնամիների
երկիրներիցը, և նորանցով կը
սրբուիմ շատ ազգերի աչքի ա-
28 ռաջին։ Այն ժամանակ նորանք
կ՚իմանան թէ ես եմ նորանց Տէր
Աստուածը, երբոր նորանց գերի
կ՚տանեմ ազգերի մօտ և կ՚հա-
ւաքեմ նորանց իրանց երկիրը, և
նորանցից այլ ևս այնտեղ չեմ
թողիլ։ Եւ այլ ևս չեմ ծածկիլ 29
իմ երեսը նորանցից. որովհետև
իմ հոգին թափած կ՚լինեմ Իս-
րայէլի տան վերայ, ասում է Տէր
Եհովան։

ԳԼ. Խ

Մեր գերութեան քսանևհինգ 1
տարումը՝ տարուայ սկզբի ամսի
տասնին, քաղաքի յաղթուելուց
յետոյ տասնևչորսերորդ տարու-
մը, նոյն օրը Տիրոջ ձեռքը եղաւ
ինձ վերայ և ինձ տարաւ այնտեղ։
Աստուծոյ տեսիլքներովը ինձ տա- 2
րաւ Իսրայէլի երկիրը և ինձ մի
շատ բարձր սարի վերայ դրաւ.
և նորա վերայ մի քաղաքի շի-
նութեան պէս բան կար դէպի
հարաւին կողմը։ Եւ ինձ տարաւ 3
այնտեղ. և ահա մի մարդ որի
երևոյթը պղնձի երևոյթի պէս
էր, և ձեռքին մի քթանի լար
և չափի եղէգը. և նա կանգնած
էր դռան մէջ։ Եւ այն մարդը 4
խօսեց ինձ հետ. Մարդի որդի,
մտիկ տուր աչքերովդ, և ականջ-
ներովդ լսիր, և ուշադրութիւն
արա այն ամենին ինչ որ ես քեզ
ցոյց եմ տալիս, որովհետև քեզ
ցոյց տալու համար բերուեցար
դու այստեղ. ամեն ինչ որ տես-
նում ես պատմիր Իսրայէլի տանը։ 5
Եւ ահա մի պարիսպ կար տա-
նիցը դուրս շրջապատ. և այն մար-
դի ձեռքին չափի եղէգը վեց կան-
գուն էր՝ մէկ կանգուն և մի ձեռ-
քի լայնութիւն. և նա չափեց
շէնքի լայնութիւնը մէկ եղէգ և
նորա բարձրութիւնը մէկ եղէգ։ 6
Եւ եկաւ այն դուռը որի երե-
սը դէպի արևելք էր և նորա ա-
ստիճաններովը վեր ելաւ և չափեց
դռան սեամը մէկ եղէգ լայն, և 7
մէկ սեամը մէկ եղէգ լայն։ Եւ
մէկ խուցը մէկ եղէգ երկայն և
մէկ եղէգ լայն էր. և խուցերի
մէջտեղերը հինգ կանգուն. և
դռան սեամը դռան սրահի կշտին

3 Եւ ներս մտաւ, և չափեց մուտ-
քի դրանդիքը՝ երկու կանգուն,
և մուտքը վեց կանգուն, և մուտ-
քի լայնութիւնը եօթը կանգուն։
4 Եւ չափեց նորա երկայնութիւ-
նը քսան կանգուն և լայնութիւնը
քսան կանգուն տաճարի երեսովը.
և ինձ ասեց. Սա սրբութեանց
սրբութիւնն է։
5 Եւ չափեց տան պատը՝ վեց
կանգուն, և ամեն մի սենեակի
լայնութիւնը, որոնք շուրջանակի
տաճարի շուրջն էին, չորս կան-
գուն էր։
6 Եւ սենեակները երեք՝ սենեակ
սենեակի վերայ երեսուն անգամ.
և մտնում էին տաճարի պատը
որ շինուած էր շուրջանակի սեն-
եակների համար որ կպչէին, բայց
իրանք կպչուած չէին տաճարի
7 պատիցը։ Եւ լայնանում և ընդ-
արձակվում էին սենեակները
միշտ դէպի վեր. որովհետև տա-
ճարը ընդարձակվում էր միշտ
դէպի վերը շուրջանակի տան
շուրջովը. դորա համար լայնա-
նում էր տունը դէպի վեր. և
այսպէս ցածի յարկիցը բարձրա-
նում էր, վերի յարկը միջինովը։
8 Եւ տեսայ տաճարի բարձրու-
թիւնը շուրջանակի, սենեակների
հիմերը ամբողջ մէկ եղէգ՝ վեց
9 կանգուն մինչև յօդուածը։ Սեն-
եակների պատի լայնութիւնը
դրսից հինգ կանգուն, և մնացա-
ծը սենեակների մէջն էր ներսիցը։
10 Եւ ՝ սենեակների միջի լայ-
նութիւնը քսան կանգուն էր
շուրջանակի տաճարի շուրջը։
11 Եւ սենեակների մուտքերը դէպի
մնացած տեղն էին, մէկ մուտքը
դէպի հիւսիս, և մէկ մուտքը
դէպի հարաւ, և մնացած տե-
ղի լայնութիւնը հինգ կանգուն
շուրջանակի։
12 Եւ անջրպետի դիմացի շէնքը
դէպի արևմտեան կողմը՝ եօթա-
նասուն կանգուն և շէնքի պատը
հինգ կանգուն լայն շուրջանակի,
և նորա երկայնութիւնը իննսուն
13 կանգուն։ Եւ չափեց տունը՝ եր-
կայնութիւնը հարիւր կանգուն,
և անջրպետը և շէնքը և նորա
պատերը հարիւր կանգուն եր-
կայն։ Եւ տաճարի երեսի լայնու- 14
թիւնը և անջրպետը դէպի արե-
ւելք հարիւր կանգուն։
Եւ չափեց շէնքի երկայնու- 15
թիւնը անջրպետի դիմացը, որ
նորա ետևի կողմին էր, և նորա
խորշերը այս կողմից և միւս կող-
մից հարիւր կանգուն. և ներսի
տաճարը և գաւիթի սրահները։
Սեմերը և վանդակապատ պա- 16
տուհանները և խորշերը շուրջա-
նակի սենեակների մօտ երեք յար-
կերումը, սեմերի առաջին տախ-
տակամած շուրջանակի՝ գետնիցը
մինչև պատուհանները, և պա-
տուհանները ծածկուած էին։
Մուտքի վերայի տեղը թէ ներսը 17
մինչև տաճարը թէ դուրսը բոլոր
պատի վերայ շուրջանակի ներսի-
ցը և դրսիցը յարմար չափերով։
Եւ քերովբէներ ու արմաւե- 18
նիներ էին շինուած, և մէկ ար-
մաւենի երկու քերովբէների մէջ-
տեղը, և քերովբէն երկու երես
ունէր։ Եւ մարդի երեսը դէպի 19
արմաւենին մէկ կողմից և առիւ-
ծի երեսը դէպի արմաւենին միւս
կողմից՝ շինուած էր բոլոր տան
համար շուրջանակի։ Գետնիցը 20
մինչև մուտքի վերևը շինուած
էին քերովբէները և արմաւենի-
ները և տաճարի պատի վերայ։
Տաճարի դրանդիքը քառակուսի 21
էին, և սրբարանի երեսը նոյն ե-
րևոյթն ունէր։
Սեղանը փայտից էր՝ երեք կան- 22
գուն բարձրութիւնը և նորա եր-
կայնութիւնը երկու կանգուն և
անկիւններ ունէր. և նորա յա-
տակն ու պատերը փայտից էին։
Եւ ինձ ասեց. Սա է Տիրոջ ա- 23
ռաջին եղող սեղանը։ Եւ տա-
ճարն ու սրբարանը երկու դուռ
ունէին։ Եւ դռները երկու փեղ- 24
կանի էին, երկու ծալուող փեղ-
կերով, երկու փեղկեր մէկ փեղ-
կին և երկու փեղկեր միւսին։
Եւ նորանց վերայ այսինքն տա- 25
ճարի դռների վերայ քերովբէներ
և արմաւենիներ էին շինուած
ինչպէս որ շինուած էր պատերի
վերայ. և փայտամած կար սրահի

26 դէմ դրսի կողմից։ Եւ վանդա-
կապատ պատուհաններ և ար-
մաւենիներ այս կողմից և այն
կողմից սրահի կողքերքին և տան
և փայտամածի կողմանքին։

ԳԼ. ԽԲ

1 Եւ ինձ դուրս տարաւ դուրսի
դաւիթը դէպի հիւսիսի ճանա-
պարհովը և ինձ բերաւ այն սեն-
եակը, որ անջրպետի առաջին էր
և որ դէպի հիւսիսային կողմի
2 շէնքի առաջին էր։ Այն հարիւր
կանգուն երկարութեան առա-
ջին՝ մուտքը դէպի հիւսիս որի
լայնութիւնը յիսուն կանգուն
3 էր։ Ներսի դաւիթի քսան կան-
գունի առաջին և դուրսի դաւի-
թի քարայատակի առաջին խորշ
4 խորշի դէմ եռայարկ. Եւ սեն-
եակների դիմաց մի ճեմելիք՝
տասը կանգուն լայն ներսևից և
մի ճանապարհ՝ մէկ կանգուն. և
նորանց մուտքերը դէպի հիւսիս։
5 Եւ վերի սենեակները կարճ էին,
որովհետև խորշերը նորանցից
տեղ էին առնում այսինքն շէնքի
6 տակի և միջի յարկերիցը։ Որով-
հետև եռայարկ էին նորանք և
սիւներ չ՚ունէին դաւիթների
սիւների նման. նորա համար նե-
զանում էին տակի և միջի յար-
7 կերիցը գետնից սկսած։ Եւ մի պատ
կար դրսից սենեակների կշտովը
դէպի դուրսի դաւիթը սենեակ-
ների դիմացը երկայնութիւնը յի-
8 սուն կանգուն։ Որովհետև դրսի
դաւիթի սենեակների երկայնու-
թիւնը յիսուն կանգուն էր, և
ահա տաճարի դիմացը հարիւր
9 կանգուն էր։ Եւ այս սենեակնե-
րի տակին մի մուտք արևելքից
նորանց մօտ գնալու համար դուր-
10 սի դաւիթի կողմից։ Դաւիթի
պատի լայնութիւնովը դէպի ա-
րևելք անջրպետի առաջին և շէն-
11 քի առաջին սենեակներ էին։ Եւ
դէպի նորանց առաջին մի ճանա-
պարհ կար դէպի հիւսիս եղող
սենեակների երևոյթին պէս թէ
նորանց երկայնութեան, թէ լայ-
նութեան և նորանց ելքերի և
նորանց ձևերի և մուտքերի նկատ-
մամբ։ Եւ նոյնպէս էլ սենեակ- 12
ների մուտքերը որոնք դէպի հա-
րաւն էին, մի մուտք կար ճանա-
պարհի գլխին այսինքն դէմուդէմ
եղող պատի առաջի ճանապարհի՝
արևելեան ճանապարհի գլխին
երբոր գալիս են։
Եւ ինձ ասեց. Հիւսիսի սեն- 13
եակները և հարաւի սենեակները
որոնք անջրպետի առաջին են,
նորանք սուրբ սենեակներն են,
ուր որ Տիրոջը մօտեցող քահա-
նաները պիտի ուտեն ամենասուրբ
բաները, այնտեղ պիտի դնեն ա-
մենասուրբ բաները և հացի ընծ-
ան և մեղքի պատարագն ու
յանցանքի պատարագը. որովհե-
տև այն տեղը սուրբ է։ Երբոր 14
քահանաները այնտեղ մտնեն,
պիտի դուրս չ՚գան սուրբ տեղիցը
դէպի դրսի դաւիթը, այլ այն-
տեղ պիտի դնեն իրանց զգեստ-
ները որոնցով նորանք պաշտօն են
մատուցանում, որովհետև նորանք
սուրբ են. ուրիշ հագուստներ
հագնեն և մօտենան ժողովրդի
վերաբերեալ բաներին։
Եւ վերջացրեց ներսի տան չա- 15
փերը, և ինձ դուրս տարաւ այն
ճանապարհովը, որի երեսը դէպի
արևելք էր, և նորան չափեց շուր-
ջանակի։ Նա չափեց արևելեան 16
կողմը չափի եղէգովը՝ հինգ հար-
իւր եղէգ չափի եղէգովը շուր-
ջանակի։ Չափեց հիւսիսային կող- 17
մը՝ հինգ հարիւր եղէգ չափի ե-
ղէգովը շուրջանակի։ Չափեց հա- 18
րաւային կողմը՝ հինգ հարիւր ե-
ղէգ չափի եղէգովը. Դառաւ 19
դէպի արևմտեան կողմը՝ չափեց
հինգ հարիւր եղէգ չափի եղէգո-
վը. Չորս կողմիցը չափեց նորան. 20
նա շուրջանակի պատեր ունէր.
երկայնութիւնը հինգ հարիւր և
լայնութիւնը հինգ հարիւր, սուր-
բը և անսուրբը բաժանելու հա-
մար։

ԳԼ. ԽԳ

Եւ ինձ տարաւ դուռը այսինքն 1
դէպի արևելք նայող դուռը։ Եւ 2

ահա Իսրայէլի Աստուծոյ փառ-
քը գալիս էր արևելքի ճանա-
պարհից, և նորա ձայնը շատ ջրերի
ձայնի նման էր, և երկիրը լու-
սաւորուեցաւ նորա փառքիցը։
3 Եւ տեսիլքը նման էր այն տե-
սիլքին, որ տեսել էի իբրև իմ
տեսած տեսիլքը, երբոր գալիս էի
քաղաքը աւերելու. և տեսիլք-
ները նման էին այն տեսիլքին,
որ տեսել էի Քոբար գետի մօտ.
և ես վայր ընկայ երեսիս վերայ։
4 Եւ Տիրոջ փառքը եկաւ տու-
նը այն դռան ճանապարհովը որի
5 երեսը դէպի արևելք է։ Եւ հո-
գին վեր առաւ ինձ և տարաւ
ներսի դաւիթը, և ահա Տիրոջ
6 փառքը լցրել էր տունը։ Եւ ես
տանիցը դէպի ինձ մի խօսող լսե-
ցի, և մի մարդ կանգնել էր կըշ-
7 տիս։ Եւ ասեց ինձ. Մարդի որ-
դի, տեսի իմ աթոռի տեղը և ոտ-
ների դարշապարների տեղը, ուր
որ ես պիտի բնակուեմ Իսրայէլի
որդկանց մէջ յաւիտեան. և այլ
ևս պիտի չ՚պղծեն Իսրայէլի տու-
նը իմ անունը՝ իրանք և իրանց
թագաւորները իրանց պոռնկու-
թիւններովը և իրանց թագաւոր-
ների դիերովը իրանց բարձրա-
8 ւանդակներումը, Իրանց սեմերը
իմ սեմերի հետ և իրանց դրան-
դիքը իմ դրանդիքի մօտ դնելով.
Թէև պատը կար իմ և նորանց
մէջտեղ. բայց նորանք պղծեցին
իմ սուրբ անունը իրանց արած
պղծութիւններովը, և ես սպա-
ռեցի նորանց իմ բարկութիւ-
9 նովը։ Հիմա թող հեռացնեն ի-
րանց պոռնկութիւնը և իրանց
թագաւորների դիակները ինձա-
նից. և ես կ՚բնակուեմ նորանց
մէջ յաւիտեան։
10 Դու, մարդի որդի, պատմիր
Իսրայէլի տանը այս տունը, որ
ամաչեն իրանց անօրէնութիւն-
ներիցը. և թող չափեն գաղափա-
11 րը։ Եւ եթէ ամաչեն բոլոր իրանց
արածներիցը, տանը ձևը և նորա
կարգաւորութիւնը և նորա ել-
քերը և մուտքերը և նորա բոլոր
ձևերը, և նորա կանոնները և նո-
րա բոլոր ձևերը և նորա բոլոր
օրէնքները հասկացրու նորանց, և
գրիր նորանց աչքի առաջին, որ
նորանք պահեն նորա բոլոր ձևը,
և նորա բոլոր կանոնները և կա-
տարեն նորանց։ Սա է տաճարի 12
օրէնքը. սարի գլխին նորա բոլոր
գաւառը շուրջանակի ամենա-
սուրբ է. ահա սա է տաճարի օ-
րէնքը։
Եւ սորանք են սեղանի չափերը 13
կանգունով, (կանգունը՝ մէկ կան-
գուն և մէկ թաթ) և խորքը մէկ
կանգուն բարձր և մէկ կանգուն
լայն, և նորա սահմանը եզերքի
վերայ շուրջանակի մէկ թիզ. և
սա սեղանի հիմքն է։ Եւ գետնի 14
խորքից մինչև տակի շրջանակը
երկու կանգուն և լայնութիւնը
մէկ կանգուն, և փոքր շրջանակից
մինչև մեծ շրջանակը չորս կան-
գուն և լայնութիւնը մէկ կան-
գուն։ Եւ կրակարանը չորս կան- 15
գուն, և կրակարանից վերև
չորս եղջիւրները։ Եւ կրակարանը 16
տասնևերկու կանգուն երկայն՝
տասնևերկու կանգուն լայնու-
թեամբ՝ քառակուսի նորա չորս
կողմի վերայ։ Եւ շրջանակը տասն- 17
ևչորս երկայն և տասնևչորս լայ-
նութիւնով իր չորս քառակող-
մերին, և սահմանը նորա շուրջը
կէս կանգուն, և նորա խորքը մէկ
կանգուն շուրջանակի. և նորա
աստիճանները դէպի արևելք էին։
Եւ ասեց ինձ. Մարդի որդի, 18
այսպէս է ասում Տէր Եհովան.
Սորանք են սեղանի կանոնները
նորան շինելիս, որ նորա վերայ ող-
ջակէզ մատուցանեն և նորա վե-
րայ արիւն սրսկեն։
Եւ տուր Ղևտացի քահանա- 19
ներին, որոնք Սադովկի սերուն-
դիցն են որ մօտենում են ինձ,
ասում է Տէր Եհովան, ինձ ծա-
ռայելու համար, արջառներից
մէկ զուարակ մեղքի պատարագի
համար։ Առ նորա արիւնիցը և 20
քսիր նորա չորս եղջիւրներին և
շրջանակի չորս անկիւններին և
սահմանին շուրջանակի, և նորան
սրբիր և քաւիր նորան։ Եւ առ 21
մեղքի պատարագի զուարակը և
այրիր նորան տաճարի որոշուած

22 տեղը սրբարանից դուրս։ Եւ երկ-
րորդ օրը մի կատարեալ այծի
նոխազ մատուցրու մեղաց պա-
տարագի համար, և սրբեն սե-
ղանը ինչպէս որ սրբեցին զուա-
23 բակովը։ Երբոր սրբելը վերջացնես
մի կատարեալ զուարակ մա-
տուցրու արջառներից և ոչխար-
24 ներից մի կատարեալ խոյ։ Եւ
նորանց մատուցրու Տիրոջ առա-
ջին, և քահանաները նորանց վե-
րայ աղ ածեն և նորանց ողջա-
25 կէզ մատուցանեն Տիրոջը։ Եօթն
օր մատուցանես օրը մէկ նոխազ
մեղքի պատարագի համար, և
արջառներից մի զուարակ և ոչ-
խարներից մի խոյ, կատարեալ-
26 ները պիտի մատուցուին։ Եօթն
օր քաւութիւն անեն սեղանին և
նորան սրբեն, և նորան նուիրեն։
27 Եւ երբոր այդ օրերը վերջանան,
այն ժամանակ ութերորդ օրը և
այնուհետև էլ պէտք է քահա-
նաները սեղանի վերայ մատու-
ցանեն ձեր ողջակէզները և ձեր
խաղաղութեան զոհերը. և ես
պիտի ընդունեմ ձեզ, ասում է
Տէր Եհովան։

ԳԼ. ԽԴ

1 Եւ ինձ ետ դարձրեց դուրսի
սրբարանի դռան ճանապարհովը,
որ նայում է դէպի արևելք. և
2 նա կղպուած էր։ Եւ Տէրն ասեց
ինձ. Այս դուռը կղպուած պի-
տի մնայ. չ'պիտի բացուի, նորա-
նով պիտի չ'մտնեն, որովհետև
Իսրայէլի Տէր Աստուածը մտաւ
նորանով. ուրեմն կղպուած պի-
3 տի մնայ։ Իսկ իշխանը ինքը իբրև
իշխան նստէ այնտեղ Տիրոջ ա-
ռաջին հաց ուտելու համար. նա
դռան սրահի ճանապարհովը պի-
տի մտնէ, և նոյն ճանապարհովը
դուրս գայ։
4 Եւ ինձ տարաւ հիւսիսային
դռան ճանապարհովը տան ա-
ռաջը, և տեսայ, և ահա լցրել
էր Տիրոջ փառքը Տիրոջ տունը.
5 և ես ընկայ երեսիս վերայ։ Եւ
Տէրն ասեց ինձ. Մարդի որդի,
ուշադրութիւն արա և տես աչ-
քերովդ և ականջներովդ լսիր ա-
մեն ինչ որ խօսում եմ քեզ
հետ Տիրոջ տան բոլոր կանոնների
նկատմամբ և նորա բոլոր օրէնքի
նկատմամբ. և ուշդ դարձրու
տան մուտքին սրբարանի բոլոր
ելքերովը։ Եւ ասիր ապստամբ- 6
ներին՝ այսինքն Իսրայէլի տանը.
Այսպէս է ասում Տէր Եհովան.
Բաւական է ձեզ համար ձեր բո-
լոր պղծութիւնները, ով Իսրա-
յէլի տուն, Որ դուք ներս էք 7
բերում օտարների որդկանցը՝
սրտով անթլփատներին՝ մարմնով
անթլփատներին, որ իմ սրբարա-
նումը լինեն իմ տունը պղծելու
համար, դուք իմ հացը, ճարպը
և արիւնը մատուցանելիս. և նո-
րանք դրժեցին իմ ուխտը, ձեր
բոլոր պղծութիւններից ի զատ։
Եւ չ'պահեցիք իմ սուրբ բաների 8
պահպանութիւնը, այլ իմ սրբա-
րանումն իմ պահպանութիւնը
անելու համար ձեզ համար պա-
հապաններ դրիք։
Այսպէս է ասում Տէր Եհո- 9
վան. Ոչ մի օտարազգի՝ սրտով
անթլփատ և մարմնով անթլփատ
պիտի չ'մտնէ իմ սրբարանը բոլոր
օտարազգիներից, որոնք Իսրայէլի
որդկանց մէջ են։ Այլ և Ղևտա- 10
ցիքն էլ, որոնք հեռացան ինձա-
նից Իսրայէլի ինձ դէմ արած մո-
լորութիւնովը մոլորուելով և ի-
րանց կուռքերին հետևելով, պի-
տի իրանց անօրէնութիւնները
կրեն։ Եւ սպասաւորներ պիտի լի- 11
նեն իմ սրբարանումը տան դռնե-
րին որոշուած և տանը ծառայող-
ներ. նորանք պէտք է մորթեն ող-
ջակէզը և զոհը ժողովրդի հա-
մար. և նորանք պէտք է կանգ-
նեն նորանց առաջին նորանց ծա-
ռայելու համար։ Որովհետև նո- 12
րանց ծառայութիւն արին իրանց
կուռքերի առաջին, և Իսրայէլի
տան համար անօրէնութեան գայ-
թակղութիւն եղան. դորա հա-
մար ձեռքս բարձրացրի նորանց
վերայ, ասում է Տէր Եհովան,
որ կրեն իրանց անօրէնութիւն-
ները։ Եւ պէտք է ինձ չ'մօտենան՝ 13
ինձ համար քահանայութիւն ա-

նելու և իմ բոլոր սուրբ բաներ-
ին և ամենասուրբ բաներին մօ-
տենալու համար. այլ իրանց նա-
խատինքը պիտի կրեն և իրանց
14 արած պղծութիւնները։ Սակայն
նորանց պիտի տանը պահապանու-
թիւնը պահպանողներ շինեմ նո-
րա բոլոր ծառայութեան հա-
մար, և այն ամեն բանի համար
որ նորանում պիտի կատարուի։
15 Բայց Ղևտացի քահանաները՝
Սադովկի որդիքը, որոնք պահե-
ցին իմ սրբարանի պահապանու-
թիւնը Իսրայէլի որդիքը ինձանից
ապստամբուելու ժամանակ, նո-
րանք պիտի մօտենան ինձ որ ինձ
ծառայեն, և պիտի կանգնեն իմ
առաջին ինձ ճարպ և արիւն մա-
տուցանելու, ասում է Տէր Եհո-
16 վան։ Նորանք պիտի իմ սրբա-
րանը մտնեն, և նորանք պիտի
մօտենան իմ սեղանին ինձ ծա-
ռայելու համար, և պիտի պահ-
17 պանեն իմ պահպանութիւնը։ Եւ
կ'լինի որ նորանք ներսի գաւիթի
դռներովը մտնելիս՝ պէտք է կտա-
ւի հանդերձներ հագնեն, և նո-
րանց վերայ բուրդ պիտի չ'գայ,
նորանք ներսի գաւիթի դռնե-
րումը և ներսումը ծառայելու
18 ժամանակ։ Կտաւի ապարօշներ
պիտի լինեն նորանց գլխին և
կտաւի վարտիքներ՝ նորանց ե-
րանքների վերայ. քրտնեցնող գօ-
19 տի պիտի չ'կապեն։ Եւ դրսի գա-
ւիթը գնալիս երբոր դուրս են
գալիս դրսի գաւիթը ժողովրդի
մօտ՝ պէտք է այն հանդերձները
հանեն, որոնցով նորանց պաշ-
տօն են մատուցանում, և նո-
րանց պիտի սուրբ սենեակներումը
դնեն, և ուրիշ հանդերձներ
հագնեն, որպէս զի ժողովուրդը
չ'սրբեն իրանց հանդերձներովը։
20 Եւ իրանց գլուխը պիտի չ'ածիլեն
և իրանց վարսերը չ'երկայնացնեն.
իրանց գլխի մազերը պէտք է ան-
21 պատճառ խուզեն։ Եւ բնաւ գի-
նի պիտի չ'խմեն քահանաները
երբոր ներքին գաւիթն են գա-
22 լիս։ Եւ որբևայրին ու արձակ-
ուածը իրանց համար կին չ'առ-
նեն, այլ Իսրայէլի տան սերուն-
դից եղող կոյսը, կամ այն որբե-
ւայրին որ մի քահանայից որբե-
ւայրի է մնացել, առնեն։ Եւ իմ 23
ժողովրդին սովորեցնեն սուրբի և
անսուրբի տարբերութիւնը, և
պիղծի ու մաքուրի տարբերու-
թիւնը պիտի հասկացնեն նորանց։
Եւ դատերի վերայ նորանք պէտք 24
է կենան դատելու համար իմ
դատաստաններումը և նորանց
դատեն իմ օրէնքովը և իմ կա-
նոններովը, և իմ տօները պիտի
պահեն և իմ շաբաթները սրբեն։
Եւ մեռած մարդի մօտ պիտի չը 25
գնան որ չ'պղծուին, այլ միայն
իր հօր և մօր, տղու և աղջկայ,
եղբօր և քրոջ մօտ գնան որ մար-
դի չէ գնացած, դորանց մեռած
դիակի մօտ թող պղծուին։ Եւ մէկը 26
իր մաքրուելուց յետոյ եօթը օր
համարէ իրան համար։ Եւ նա 27
սրբարանը ներսի գաւիթը սրբա-
րանում պաշտօն մատուցանելու
մտած օրը, նա պիտի մատուցանէ
իր մեղքի պատարագը, ասում է
Տէր Եհովան։
Եւ սա նորանց համար ժառան- 28
գութիւն լինի՝ ես եմ նորանց
ժառանգութիւնը. և նորանց կալ-
ուածք չ'տաք Իսրայէլումը. ես
եմ նորանց կալուածքը։ Հացի 29
ընծան, մեղքի պատարագը և
յանցանքի պատարագը նորանք
պիտի ուտեն. և Իսրայէլի մէջ
ամեն նուիրուածը նորանցը պիտի
լինի։ Եւ ամեն բանի բոլոր երա- 30
խայրիների առաջինը, և ամեն
բանի բոլոր ընծան ձեր բոլոր ընծ-
աներից քահանաներինը լինի. և
ձեր ցորենեղէնների երախայրի-
ները տուէք քահանային, որ օրհ-
նութիւնը հանգչէ քո տան վե-
րայ։ Ոչ մի մեռած կամ գազա- 31
նաբեկ, թէ թռչուն թէ անա-
սուն, պիտի չ'ուտեն քահանա-
ները։

ԳԼ. ԽԵ

Եւ երբոր վիճակ գցէք երկրի 1
վերայ ժառանգելու, Տիրոջ հա-
մար մի սուրբ նուէր պիտի նուի-
րէք երկրիցը. երկայնութիւնը

քսանեւհինգ հազար երկայն, և
լայնութիւնը տասը հազար. սա
սուրբ է շուրջանակի բոլոր սահ-
2 մաններում։ Սորանից պէտք է լինի
սրբարանի համար հինգ հարիւ-
րով հինգ հարիւր քառակուսի
շուրջանակի. և յիսուն կանգուն
նորա արուարձանը շուրջանակի։
3 Եւ այս չափածից չափիր երկայ-
նութիւնով քսանեւհինգ հազար
և լայնութիւնով տասը հազար.
և նորանում պիտի լինի սրբա-
4 րանը՝ ամենասուրբ տեղը։ Սա
սուրբ պիտի լինի երկրիցը սրբա-
րանին ծառայող քահանաների
համար, որոնք մօտենում են Տի-
րոջը ծառայելու, և նորանց հա-
մար տների տեղ պիտի լինի, և
սուրբ՝ սրբարանի համար։
5 Եւ քսանեւհինգ հազար երկայ-
նութիւնով և տասը հազար լայ-
նութիւնով պիտի լինի Ղևտա-
ցիներին, որոնք ծառայում են
տանը, իբրև իրանց կալուածք.
նաև քսան սենեակ։
6 Եւ քաղաքին կալուածք տաք
հինգ հազար լայն, և երկայնու-
թիւնը քսանեւհինգ հազար սրբա-
րանի ընծայի կշտին. սա բոլոր
Իսրայէլի տան համար պիտի լինի։
7 Իսկ իշխանին՝ սրբարանի կալ-
ուածքի և քաղաքի կալուածքի
այս կողմից և այն կողմից, սրբա-
րանի ընծայի դիմաց և քաղաքի
կալուածքի դիմաց, ծովի կողմից
դէպի արևմուտք և արևելեան
կողմից դէպի արևելք. և երկայ-
նութիւնով ժառանգութիւնն-
ի մէկի մօտովը արևմտեան սահ-
մանից մինչև արևելեան սահմանը։
8 Իբրև երկիր նորա կալուածքը լի-
նի սա Իսրայէլի մէջ. և այլ ևս
չ՚հարստահարեն իմ իշխանները
իմ ժողովրդին. և երկիրը տան
Իսրայէլի տանը նորանց ցեղերի
համեմատ։
9 Այսպէս է ասում Տէր Եհո-
վան. Բաւական է ձեզ, ով Իս-
րայէլի իշխաններ, զրկանքն ու
յափշտակութիւնը հեռացրէք.
և իրաւունք ու արդարութիւն
արէք. վեր առէք ձեր բռնի պա-
հանջմունքները իմ ժողովրդի վե-
րայից, ասում է Տէր Եհովան։
Արդար կշիռք և արդար արդու 10
և արդար մար ունեցէք։ Արդուն 11
և մարը մէկ չափ լինեն, որպէս
զի մարը քոռի տասներորդը պա-
րունակէ և արդուն էլ քոռի
տասներորդը պարունակէ. քոռի
համեմատ լինի նորա չափը։ Եւ 12
սիկղը քսան կերագ, ձեր մնասը
քսան սիկղ, քսանեւհինգ սիկղ և
տասնեւհինգ սիկղ լինի։
Սա է ձեր մատուցանելու ընծան՝ 13
մէկ վեցերորդ արդու մէկ
քոռ ցորենից, և մէկ վեցերորդ
արդու մէկ քոռ գարիցը։ Եւ 14
իւղի կանոնը՝ մէկ մար իւղից մէկ
մարի տասներորդը մէկ քոռից.
կամ տասը մարից որ մէկ խօմէր
է, որովհետև տասը մարը մէկ
խօմէր է։ Եւ Իսրայէլի ջրարբի 15
արօտների հօտերից՝ երկու հար-
իւրից մէկ ոչխար. իբրև հացի ընծայ
և ողջակէզ և խաղաղու-
թեան զոհ, որ նորանց համար
քաւութիւն լինի, ասում է Տէր
Եհովան։ Երկրի բոլոր ժողովուր- 16
դը պարտական են այս ընծան Իս-
րայէլումը իշխան եղողին։
Եւ իշխանի վերայ պիտի լինեն 17
ողջակէզները և հացի նուէրը և
թափելու ընծան տօներին և ամ-
սագլուխներին և շաբաթներին և
Իսրայէլի տան բոլոր տօներին. նա
պէտք է մատուցանէ մեղքի պա-
տարագը և հացի նուէրը և ող-
ջակէզը և խաղաղութեան զոհե-
րը Իսրայէլի տան համար քաւու-
թիւն անելու համար։
Այսպէս է ասում Տէր Եհո- 18
վան. Առաջի ամսի առաջինին
վեր առ մի կատարեալ զուարակ
արջառներից, և նորան մեղքի
պատարագ արա սրբարանի հա-
մար։ Եւ քահանան առնէ մեղքի 19
պատարագի արիւնիցը և քսէ տան
դրանդիքին և սեղանի շրջանակի
չորս անկիւններին և ներսի գա-
ւիթի դռան դրանդիքին։ Եւ 20
այսպէս պիտի անես ամսի եօթին
սխալուած և անմիտ մարդի հա-
մար, և տան համար քաւութիւն
արէք։
Առաջի ամսի տասնեւչորսերորդ 21

դուռը՝ մէկ. Ղևիի դուռը՝ մէկ։
32 Եւ արևելեան կողմին չորս հա-
զար հինգ հարիւր, և երեք դուռ.
այսինքն Յովսէփի դուռը՝ մէկ.
Բենիամինի դուռը՝ մէկ. Դանի
33 դուռը՝ մէկ։ Եւ հարաւային կող-
մին չորս հազար հինգ հարիւր
չափ, և երեք դուռ. Շմաւոնի
դուռը՝ մէկ. Իսաքարի դուռը՝
մէկ. Զաբուղոնի դուռը՝ մէկ։
Արևմտեան կողմին չորս հազար 34
հինգ հարիւր, նորա դռները ե-
րեք. Գադի դուռը՝ մէկ. Ասերի
դուռը՝ մէկ. Նեփթաղիմի դու-
ռը՝ մէկ։ Շրջապատը տասնեւութը 35
հազար չափ. և քաղաքի անունը
այն օրից *Եհովա-շամմա է։

ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Յուդայի Թագաւոր Յովակիմի
Թագաւորութեան երրորդ տա-
րին Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր
Թագաւորը եկաւ Երուսաղէմ և
2 պաշարեց նորան։ Եւ Տէրը Յու-
դայի Յովակիմ Թագաւորին և
Աստուծոյ տան անօթների մի
մասը նորա ձեռքը մատնեց, և
նա նորանց տարաւ Սենաար եր-
կիրը իր աստուծոյ տունը. և ա-
նօթները դրաւ իր աստուծոյ
գանձատանը։
3 Եւ Թագաւորն ասեց իր ներք-
նապետ Ասփանէզին, որ բերէ Իս-
րայէլի որդկանցից և Թագաւո-
րական սերունդից ու իշխանա-
4 զուններից՝ Բնաւ արատ չ՚ունե-
ցող և գեղեցկադէմ և ամեն
իմաստութեան ընդունակ և գի-
տութեան տեղեակ և հանճա-
րեղ և Թագաւորական պալա-
տումը կանգնելու կարողութիւն
ունեցող տղերք, և նորանց սո-
վորեցնէ Քաղդէացիների գիրն ու
5 լեզուն։ Եւ Թագաւորը նորանց
համար օրական ռոճիկ որոշեց
Թագաւորի կերակուրիցը և իր
խմած գինիիցը. և որ նորանց
սնուցանէ երեք տարի. և յետոյ
կանգնեն Թագաւորի առաջին։
Եւ նորանցում կային Յուդայի 6
որդիներից Դանիէլը, Անանիան,
Միսայէլը և Ազարիան։ Եւ ներք- 7
նապետը նորանց անուններ դրաւ.
և Դանիէլին՝ Բաղդասասար, Ա-
նանիային՝ Սեդրաք, Միսայէլին՝
Միսաք և Ազարիային՝ Աբեդնա-
գով։
Եւ Դանիէլը որոշեց իր սրտու- 8
մը, որ իրան չ՚պղծէ Թագաւորի
կերակրովը և նորա խմած գի-
նիովը, և խնդրեց ներքնապետիցը,
որ իրան չ՚պղծէ։ Եւ Աստուած 9
Դանիէլին շնորհք և ողորմութիւն
տուաւ ներքնապետի առաջին։
Եւ ներքնապետը ասեց Դանիէլին. 10
Ես վախենում եմ իմ տէր Թա-
գաւորից, որ որոշել է ձեր ուտե-
լիքը և խմելիքը. որովհետև ի՞նչու
համար նա ձեր երեսները վատ
տեսնէ այն տղերանց երեսներից որ
ձեզ հասակակից են, և ինձ գլխա-
պարտ անէք Թագաւորի մօտ։
Եւ Դանիէլն ասեց †Մելսարին, 11
որին ներքնապետը դրել էր Դա-
նիէլի, Անանիայի, Միսայէլի և
Ազարիայի վերայ, Աղաչում եմ՝ 12

*Այսինքն՝ Տէրը այնտեղ է։
†Սեղանապետին

փորձիր ծառաներիդ մի տասն
օր, և մեզ ուտելու համար ընդ-
եղէն և խմելու համար ջուր
13 տան. Եւ երևան քո առաջին
մեր դէմքը և այն տղերանց դէմ-
քը որ թագաւորի կերակրիցն
ուտում են, և ինչպէս որ տես-
նես, նորա համեմատ արա ծա-
14 ռաներիդ հետ։ Եւ նա լսեց նո-
րանց այս բանի համար, և նորանց
15 փորձեց տասն օր։ Եւ տասն օրից
յետոյ նորանց դէմքը աւելի լաւ
և մարմնով գէր էին քան թէ
այն ամեն տղերքը, որոնք ուտում
16 էին թագաւորի կերակրիցը։ Եւ
Մելսարը վեր էր առնում նորանց
թագաւորական կերակուրը և
նորանց խմելու գինին և նորանց
ընդեղէն էր տալիս։
17 Եւ Աստուած այս չորս տղե-
րանց գիտութիւն և հանճար
տուաւ ամեն դպրութիւնում և
իմաստութիւնում, և Դանիէլը
հասկանում էր ամեն տեսիլք և
18 երազ։ Եւ այն օրերը վերջանա-
լուց յետոյ, որ թագաւորը հրա-
մայել էր նորանց բերել, այն ժա-
մանակ ներքնապետը բերաւ նո-
րանց Նաբուգոդոնոսորի առաջը։
19 Եւ թագաւորը խօսեց նորանց
հետ, և նորանցից մէկը չ'գտնուե-
ցաւ Դանիէլի, Անանիայի, Մի-
սայէլի և Ազարիայի պէս. և նո-
րանք կանգնեցին թագաւորի ա-
20 ռաջին։ Եւ իմաստութեան գի-
տութեան վերաբերեալ ամեն
բանում, որ թագաւորը հարցը-
նում էր նորանցից, թագաւորը
նորանց տասնապատիկ գերազանց
էր գտնում իր բոլոր թագաւո-
րութիւնումը եղող մոգերիցն ու
21 հմայողներիցը։ Եւ Դանիէլը մնաց
մինչև Կիւրոս թագաւորի առաջի
տարին։

ԳԼ. Բ

1 Եւ Նաբուգոդոնոսորի թագա-
ւորութեան երկրորդ տարին Նա-
բուգոդոնոսոր երազներ տեսաւ
և խռովուեցաւ նորա հոգին. և
նորա քունը գնաց նորա վերայից։
2 Եւ թագաւորը հրամայեց կան-
չել մոգերին և հմայողներին և
կախարդներին ու Քաղդէաներին,
որ թագաւորին պատմեն նորա
երազները. և նորանք եկան ու
կանգնեցին թագաւորի առաջին։
Եւ թագաւորն ասեց նորանց. 3
Ես մի երազ տեսայ, և իմ հո-
գին խռովուեցաւ, որ իմանամ
այն երազը։ Եւ Քաղդէաները ա- 4
սեցին թագաւորին Քաղդէարէն.
Թագաւոր, յաւիտեան կաց, ա-
սիր երազը քո ծառաներին, և
մենք իմացնենք մեկնութիւնը։
Թագաւորը պատասխանեց և ա- 5
սեց Քաղդէաներին. *Խօսքը դուրս
է եկել ինձանից, եթէ ինձ չ'ի-
մացնէք երազը և նորա մեկնու-
թիւնը, կտոր կտոր պիտի յօ-
շատուիք, և ձեր տները աղբանոց
պիտի դառնան։ Բայց եթէ երազը 6
և նորա մեկնութիւնը իմացնէք,
ինձանից պարգևներ, տուրքեր և
ծանր պատիւ կ'ստանաք. ուրեմն
երազն ու նորա մեկնութիւնը ի-
մացրէք ինձ։ Նորանք կրկին ան- 7
գամ պատասխանեցին և ասեցին.
Թագաւորը թող ասէ երազը իր
ծառաներին, և մենք կ'իմացնենք
նորա մեկնութիւնը։ Թագաւորը 8
պատասխանեց և ասեց. Ես ճշմա-
րիտ գիտեմ, որ դուք ժամանակ
էք որոնում, որովհետև տեսնում
էք որ *Խօսքը դուրս է եկել ին-
ձանից։ Իսկ եթէ ինձ չ'իմացնէք 9
երազը, ձեզ համար մէկ դատա-
վճիռ կայ. որովհետև դուք որո-
շել էք սուտ և ապականեալ բան
խօսելու իմ առաջին, մինչև որ
ժամանակը փոխուի. ուրեմն ասե-
ցէք ինձ երազը, և ես կ'իմանամ
թէ դուք ինձ նորա մեկնութիւնն
էլ կ'ասէք։ Քաղդէաները պա- 10
տասխանեցին թագաւորի առա-
ջին և ասեցին. Երկրի վերայ մարդ
չ'կայ, որ կարողանայ թագաւորի
բանը իմացնել. և դորա համար
էլ ոչ մի թագաւոր՝ մեծ և իշ-
խան սորա նման մի բան չէ պա-
հանջած ոչ մի մոգից, հմայողից և
Քաղդէայից։ Եւ այն բանը որ թա- 11
գաւորը պահանջում է դժուար

*Կամ՝ բանը և կամ՝ հրամանը

է, և մի ուրիշը չ'կայ, որ թա-
գաւորի առաջին իմացնէ այն
բացի աստուածներից, որոնց բնա-
կութիւնը մսեղէնների մէջ չէ։
12 Սորա համար թագաւորը սրտ-
մտեցաւ և շատ բարկացաւ և
հրամայեց կոտորել Բաբիլոնի բո-
13 լոր իմաստուններին։ Եւ հրամանը
դուրս եկաւ, և իմաստունները
կոտորվում էին. և որոնեցին Դա-
նիէլին և նորա ընկերներին որ
14 նորանց սպանեն։ Այն ժամանակ
Դանիէլն իմաստութեամբ և խո-
հեմութեամբ խօսեց թագաւորի
դահճապետ Արիովքի հետ, որ
դուրս էր եկել Բաբիլոնի իմաս-
15 տուններին կոտորելու. Խօսեց և
ասեց թագաւորի իշխան Արիով-
քին. Ի՞նչու համար է այս խիստ
հրամանը թագաւորի կողմից.
այն ժամանակ Արիովքն իմացրեց
16 բանը Դանիէլին։ Եւ Դանիէլը
մտաւ և խնդրեց թագաւորից որ
ժամանակ տրուի իրան, և նա
մեկնութիւնը կ'իմացնէ թագա-
17 ւորին։ Այն ժամանակ Դանիէլը
գնաց տուն, և բանը իմացրեց
իր ընկերներին՝ Անանիային, Մի-
18 սայէլին և Ազարիային, Որ ողոր-
մութիւն խնդրեն երկնքի Աստ-
ուածանից այս գաղտնիքի մա-
սին, որ չ'կոտորուին Դանիէլը և
նորա ընկերները Բաբիլոնի մնա-
ցած իմաստունների հետ։
19 Այն ժամանակ գիշերուայ տե-
սիլքում յայտնուեցաւ Դանիէլին
այն գաղտնիքը. և Դանիէլն օրհ-
20 նեց երկնից Աստուծուն։ Դանիէլը
խօսեց և ասեց. Օրհնեալ լինի
Աստուծոյ անունը յաւիտենից
մինչև յաւիտեան, որ իմաստու-
թիւնը և զօրութիւնը նորանն է։
21 Եւ նա է ժամանակները և ժա-
մերը փոխողը, թագաւորներ ի-
ջեցնողը և թագաւորներ դնողը.
նա է տալիս իմաստութիւն ի-
մաստուններին, և հանճար՝ գիտ-
22 նականներին։ Նա է խոր և ծա-
ծուկ բաները յայտնողը, որ գի-
տէ մութի մէջ եղածը, և լոյսը
23 նորա հետ է բնակվում։ Քեզ,
ով իմ հայրերի Աստուած, օրհ-
նում և փառաբանում եմ ես,
որ իմաստութիւն և զօրութիւն
տուիր ինձ, և հիմա ինձ իմացրիր
ինչ որ խնդրել էինք քեզանից,
որ թագաւորի բանը մեզ իմա-
ցրիր։
Վասն որոյ Դանիէլը մտաւ Ա- 24
րիովքի մօտ, որին թագաւորը
նշանակել էր Բաբիլոնի իմաս-
տուններին կորցնելու համար.
գնաց և այսպէս ասեց նորան.
Բաբիլոնի իմաստուններին մի կոր-
ցնիր. ինձ թագաւորի առաջը
տար, և ես իմացնեմ մեկնութիւ-
նը թագաւորին։ Այն ժամանակ 25
Արիովքը շտապելով Դանիէլին
թագաւորի առաջը տարաւ և
նորան այսպէս ասեց թէ Մի մարդ
եմ գտել Յուդայի գերիներից,
որ պիտի իմացնէ մեկնութիւնը
թագաւորին։ Թագաւորը պա- 26
տասխանեց և ասեց Դանիէլին,
որի անունը Բաղդասասար էր.
Կարո՞ղ ես արդեօք ինձ իմացնել
իմ տեսած երազը և նորա մեկ-
նութիւնը։
Դանիէլը պատասխանեց թա- 27
գաւորի առաջին և ասեց. Այդ
գաղտնիքը որ թագաւորը պա-
հանջում է, չեն կարող իմաս-
տունները, հմայողները, մոգերը
և բաղդ նայողները թագաւորին
իմացնել. Բայց կայ Աստուած 28
երկնքումը՝ գաղտնիքներ յայտ-
նող, և նա յայտնում է Նաբու-
գոդոնոսոր թագաւորին ինչ որ
պիտի լինի յետին օրերումը. քո
երազը և գլխիդ տեսիլքը քո ան-
կողնի վերայ սա է. Դու, ով 29
թագաւոր, խորհրդածութիւն-
ներ էիր անում քո անկողնի վե-
րայ թէ սորանից յետոյ ինչ պի-
տի լինի, և գաղտնիքներ յայտ-
նողը քեզ իմացրեց թէ ինչ պի-
տի լինի։ Եւ ինձ, ոչ թէ ամեն 30
ապրողներից աւելի իմաստու-
թիւն ունենալուս համար, յայտ-
նուեցաւ այս գաղտնիքը, այլ նո-
րա համար որ մեկնութիւնը ի-
մացնուի թագաւորին, և որ գի-
տենաս քո սրտի խորհուրդները։
Դու, ով թագաւոր, տեսնում 31
էիր, և ահա մի մեծ արձան. այդ
արձանը մեծ էր և նորա պայծա-

ռութիւնը գերազանց՝ կանգնած
քո առաջին. և նորա երևոյթը
32 ահաւոր էր։ Այս արձանի գլուխը
մաքուր ոսկիից էր. նորա կուրծ-
քը և բազուկները՝ արծաթից,
նորա մէջքն ու ազդրերը՝ պղնձից.
33 Սրունքները՝ երկաթից, նորա ոտ-
ները՝ մէկ մասը երկաթից մէկ
34 մասը կաւից։ Դու տեսնում էիր
մինչև որ մի քար կտրուեցաւ՝
առանց ձեռքի, և զարկուեցաւ
արձանի ոտներին, որ երկաթից
ու կաւից էին, և նորանց փշրեց։
35 Այն ժամանակ փշրուեցան միա-
սին երկաթը, կաւը, պղինձը,
արծաթը և ոսկին, և ամառուայ
կալերի մղեղին պէս եղան, և քա-
մին տարաւ նորանց, և բնաւ տեղ
չ՚գտնուեցաւ նորանց համար.
բայց այն քարը, որ զարկեց ար-
ձանին, մեծ սար եղաւ և լցրեց
36 բոլոր երկիրը։ Սա է երազը, և
նորա մեկնութիւնն ասենք թա-
գաւորի առաջին։
37 Դու, ով թագաւոր, թագա-
ւորաց թագաւոր ես, որովհետև
երկնից Աստուածը քեզ թագա-
ւորութիւն, կարողութիւն, զօ-
րութիւն և պատիւ է տուել.
38 Եւ ամեն տեղեր ուր որ մարդ-
կանց որդիք են բնակվում՝ դաշ-
տի գազանները և երկնից թըռ-
չունները քո ձեռքն է տուել, և
քեզ իշխան է դրել նորանց ա-
մենի վերայ. դու ես նորա այն
39 ոսկի գլուխը։ Եւ քեզանից յետոյ
վեր է կենալու մի ուրիշ թագա-
ւորութիւն քեզանից ցած. և մի
ուրիշ երրորդ թագաւորութիւն
պղնձից, որ կ՚տիրէ բոլոր երկրին։
40 Եւ չորրորդ թագաւորութիւնը
պինդ կ՚լինի երկաթի նման. ըստ
որում երկաթը փշրում և ջար-
դում է ամեն բան, և ոա էլ
այս ամենը կոտրատող երկաթին
41 նման կ՚փշրէ և կ՚կոտրատէ։ Եւ
որ տեսար ոտները և մատերը՝ մի
մասը բրուտի կաւից, և մի մասը
երկաթից, դա մի բաժանուած
թագաւորութիւն է լինելու, և
երկաթի պնդութիւնիցն է ու-
նենալու, որովհետև տեսար եր-
կաթը տղմուտ կաւի հետ խառ-
նուած։ Եւ ոտների մատերը՝ մի 42
մասը երկաթից, մի մասը կաւից՝
ոա է, թէ այն թագաւորութիւ-
նը մասամբ պինդ է լինելու, և
մէկ մասը դիւրաբեկ է լինելու։
Եւ որ դու տեսար երկաթը խառ- 43
նուած տղմուտ կաւի հետ, ոա
է՝ թէ նորանք խառնուելու են
մարդկանց սերունդի հետ, բայց
մէկզմէկ պիտի չ՚կպչեն. ահա ինչ-
պէս երկաթը չի խառնուիլ կաւի
հետ։
Եւ այն թագաւորների օրերու- 44
մը երկնքի Աստուածը մէկ թա-
գաւորութիւն է վեր կացնելու,
որ յաւիտեանս չի աւերուիլ, և
նորա տէրութիւնը ուրիշ ազգի
չի տրուիլ. նա պիտի փշրէ և վեր-
ջացնէ այս բոլոր թագաւորու-
թիւնները. իսկ նա ինքը կ՚մնայ
յաւիտեանս։ Որովհետև դու տե- 45
սար որ սարիցը մի քար կտրուե-
ցաւ առանց ձեռքի, և նա փշրեց
երկաթը, պղինձը, կաւը, արծա-
թը և ոսկին. մեծ Աստուածը ի-
մացրեց թագաւորին, թէ սորա-
նից յետոյ ինչ է լինելու. և ե-
րազը հաստատ է և մեկնութիւ-
նը ստոյգ։
Այն ժամանակ Նաբուգոդոնո- 46
սոր թագաւորը ընկաւ իր երեսի
վերայ, և Դանիէլին երկրպագու-
թիւն արաւ, և ընծաներ ու ա-
նուշահոտ բաներ հրամայեց որ
մատուցանեն նորան։ Թագաւորը 47
պատասխանեց Դանիէլին և ա-
սեց. Ցիրաւի որ ձեր Աստուածն
է աստուածների Աստուածը և
թագաւորների Տէրը և գաղտ-
նիքներ յայտնողը. որովհետև դու
կարողացար յայտնել այս գաղտ-
նիքը։ Այն ժամանակ թագաւորը 48
մեծացրեց Դանիէլին և շատ մեծ
պարգևներ տուաւ նորան, և նո-
րան իշխան դրաւ Բաբիլոնի բոլոր
գաւառի վերայ, և Բաբիլոնի բո-
լոր իմաստունների վերայ՝ գլխա-
ւոր իշխան։ Եւ Դանիէլը խնդրեց 49
թագաւորից, և նշանակեց Բաբի-
լոնի գաւառը կառավարելու հա-
մար Սեդրաքին, Միսաքին և Ա-
բեդնագովին. և Դանիէլը թա-
գաւորի դռանն էր լինում։

ԳԼ. Գ

1 Նաբուգոդոնոսոր թագաւորը մի
ոսկի արձան շինեց՝ նորա բարձրու-
թիւնը վաթսուն կանգուն, լայ-
նութիւնը վեց կանգուն. նորան
կանգնեցրեց Դուրայի դաշտումը
2 Բաբիլոնի գաւառումը։ Եւ Նա-
բուգոդոնոսոր թագաւորը ու-
ղարկեց որ հաւաքեն կուսակալ-
ներին, նախարարներին և կառա-
վարիչներին, գլխաւոր դատաւոր-
ներին, գանձապետներին, խոր-
հրդականներին, օրէնսգէտներին
և գաւառների բոլոր իշխաններ-
ին, որ գան Նաբուգոդոնոսոր
թագաւորի կանգնեցրած արձանի
3 նաւակատիքին։ Այն ժամանակ
ժողովուեցան կուսակալները, նա-
խարարները և կառավարիչները,
գլխաւոր դատաւորները, գան-
ձապետները, խորհրդականները,
օրէնսգէտները և գաւառների բո-
լոր իշխանները Նաբուգոդոնոսոր
թագաւորի կանգնեցրած արձա-
նի նաւակատիքին, և կանգնեցին
այն արձանի առաջին, որ կանգ-
նեցրել էր Նաբուգոդոնոսորը։
4 Եւ մունետիկը կանչում էր ու-
ժով. Ձեզ են ասում, ով ժողո-
վուրդներ, ազգեր և լեզուներ,
5 Երբոր լսէք փողի, սրնգի, քնարի,
ջութակի, տաւիղի, տիկի և ա-
մեն տեսակ նուագարանների ձայ-
նը, վայր ընկէք և երկրպագու-
թիւն արէք այն ոսկի արձանին,
որ կանգնեցրեց Նաբուգոդոնոսոր
6 թագաւորը։ Եւ ով որ չ՚ընկնէ և
երկրպագութիւն չ՚անէ, իսկոյն
պիտի գցուի կրակով բորբոքուած
7 հնոցի մէջը։ Ուրեմն երբոր լսե-
ցին բոլոր ժողովուրդները փողի,
սրնգի, քնարի, ջութակի, տա-
ւիղի, և ամեն տեսակ նուագա-
րանների ձայնը, ընկնում էին բո-
լոր ժողովուրդները, ազգերը և
լեզուները և երկրպագութիւն
էին անում այն ոսկի արձանին,
որ կանգնեցրել էր Նաբուգոդո-
նոսոր թագաւորը։
8 Այս պատճառով այն ժամա-
նակին մօտեցան մի քանի Քաղ-
դէացի մարդիկ և չարախօսու-
թիւն արին Հրէաներից. Խօսեցին 9
և ասեցին Նաբուգոդոնոսոր թա-
գաւորին. Ցաւիտեան կաց, ար-
քայ. Դու, ով թագաւոր, հրա- 10
ման արիր որ ամեն մարդ, որ լսէ
փողի, սրնգի, քնարի, ջութակի,
տաւիղի, տիկի և ամեն տեսակ
նուագարանների ձայնը, ընկնէ
և երկրպագութիւն անէ ոսկի
արձանին. Եւ ով որ չ՚ընկնէ և 11
երկրպագութիւն չ՚անէ, պիտի
գցուի կրակով բորբոքուած հնո-
ցի մէջը։ Մի քանի Հրէայ մարդիկ 12
կան, որոնց դու որոշել ես Բա-
բիլոնի գաւառը կառավարելու
համար՝ Սեդրաքը, Միսաքը և
Աբեդնագովը. այս մարդիկը քո
հրամանին չեն լսում, ով թա-
գաւոր, քո աստուածներին չեն
պաշտում, և քո կանգնեցրած
ոսկի արձանին երկրպագութիւն
չեն անում։
Այն ժամանակը Նաբուգոդո- 13
նոսորը սրտմտութեամբ և բար-
կութեամբ հրամայեց որ բերեն
Սեդրաքին, Միսաքին և Աբեդ-
նագովին. և այն ժամանակը բե-
րին այն մարդկանցը թագաւորի
առաջին։ Նաբուգոդոնոսորը նո- 14
րանց պատասխան տուաւ և ա-
սեց. Նպատակո՞վ է, ով Սեդ-
րաք, Միսաք և Աբեդնագով, որ
դուք չէք պաշտում իմ աստու-
ծուն, և իմ կանգնեցրած արձա-
նին երկրպագութիւն չէք անում։
Արդ եթէ պատրաստ էք որ երբ 15
լսէք փողի, սրնգի, քնարի, ջու-
թակի, տաւիղի, տիկի և ամեն
նուագարանների ձայնը, վայր ըն-
կէք և երկրպագութիւն արէք
իմ շինած արձանին. բայց եթէ
երկրպագութիւն չ՚անէք, իսկոյն
պիտի գցուիք կրակով բորբոք-
ուած հնոցի մէջը. և ո՞ր աստ-
ուածն է որ ձեզ ազատէ իմ
ձեռքից։
Եւ Սեդրաքը, Միսաքը և Ա- 16
բեդնագովը պատասխանեցին և
ասեցին թագաւորին. Մենք պէտք
չ՚ունինք այս բանի մասին քեզ
պատասխան տալու, ով Նաբու-
գոդոնոսոր։ Ահա մեր Աստուածը, 17
որին մենք պաշտում ենք, կարող

է մեզ ազատել կրակով բոր-
բոքուած հնոցիցը. և քո ձեռ-
քիցն էլ, ով թագաւոր, նա մեզ
18 կ'ազատէ։ Եւ եթէ ոչ, թող
քեզ յայտնի լինի, ով թագա-
ւոր, որ քո աստուծուն մենք
չենք պաշտում և քո կանգնե-
ցրած արձանին երկրպագութիւն
չենք անում։
19 Այն ժամանակ Նաբուգոդոնո-
սորը լցուեցաւ բարկութիւնով,
և նորա երեսի կերպարանքը
փոխուեցաւ Սեդրաքի, Միսաքի
և Աբեդնագովի վերայ, պատաս-
խանեց և հրամայեց, որ վառեն
հնոցն եօթնապատիկ աւելի քան
20 թէ սովոր էին վառել։ Եւ տղա-
մարդիկների՝ զօրաւոր տղամար-
դիկների հրամայեց, որ կապեն
Սեդրաքին, Միսաքին և Աբեդ-
նագովին և գցեն կրակով բոր-
21 բոքուած հնոցի մէջը։ Այն ժա-
մանակ այս մարդիկը կապե-
ցին իրանց անդրավարտիքներովը,
պատմուճաններովը և վերարկու-
ներովը և միւս հանդերձներովը
և գցեցին կրակով բորբոքուած
22 հնոցի մէջը։ Որովհետև թագա-
ւորի խօսքը սաստիկ էր և հնոցը
չափազանց վառուած էր, այն
մարդկանցը, որոնք վեր առան
Սեդրաքին, Միսաքին և Աբեդ-
նագովին, սպանեց կրակի բոցը.
23 Եւ այս երեք մարդիկը՝ Սեդրա-
քը, Միսաքը և Աբեդնագովը ընկ-
ան կրակով բորբոքուած հնոցի
մէջը կապուած։
24 Այն ժամանակ Նաբուգոդոնո-
սոր թագաւորը ապշել էր և
շտապելով վեր կացաւ և խօսեց
և ասեց իր խորհրդականներին.
Չէ՞ որ մենք երեք մարդ գցեցինք
կրակի մէջը՝ կապուած. նորանք
պատասխանեցին և ասեցին թա-
գաւորին. Այո, ով թագաւոր։
25 Նա էլ պատասխանեց և ասեց.
Ահա ես չորս մարդ եմ տեսնում՝
արձակուած ման են գալիս կրակի
մէջը. և վնաս չ'կայ նորանց վե-
րայ. և չորրորդի կերպարանքը
աստուածների որդիի է նման։
26 Այն ժամանակ մօտեցաւ Նաբու-
գոդոնոսորը կրակի հնոցի դռանը,
պատասխանեց և ասեց. Ով Սեդ-
րաք, Միսաք և Աբեդնագով,
Բարձրեալ Աստուծոյ ծառաներ,
դուրս ելէք եկէք։ Այն ժամա-
նակ Սեդրաքը, Միսաքը և Աբեդ-
նագովը դուրս եկան կրակի մի-
ջիցը։ Եւ ժողովուեցան կուսա- 27
կալները, նախարարները, և կա-
ռավարիչները և թագաւորի խոր-
հրդականները, մտիկ տուին այն
մարդկանցը, որ նորանց մարմնի
վերայ կրակը չէր տիրել և նո-
րանց գլխի մազը չէր այրուել և
նորանց անդրավարտիքները չէին
փոխուել, և կրակի հոտն էլ չը
կար նորանց վերայ։
Նաբուգոդոնոսորը պատասխան 28
տուաւ և ասեց. Օրհնեալ է Սեդ-
րաքի, Միսաքի և Աբեդնագովի
Աստուածը, որ ուղարկեց իր հրեշ-
տակին և ազատեց իր ծառաներ-
ին, որոնք նորան ապաւինեցին
և թագաւորի խօսքը անարգեցին,
և իրանց մարմինները տուին, որ-
պէս զի չ'պաշտեն և չ'երկրպա-
գեն ոչ մի աստուծոյ, բացի ի-
րանց Աստուածանից։ Եւ ինձա- 29
նից հրաման է դուրս գալիս, որ
ամեն ժողովուրդ, ազգ և լեզու
որ սխալ բան ասէ Սեդրաքի, Մի-
սաքի և Աբեդնագովի Աստուծոյ
դէմ, պիտի կտոր կտոր յօշատուի
և նորա տունը աղբանոց պիտի
դառնայ, որովհետև չ'կայ մի ու-
րիշ աստուած որ կարող լինի
այսպէս ազատել։ Այն ժամա- 30
նակ թագաւորը յաջողութիւն
տուաւ Սեդրաքին, Միսաքին և
Աբեդնագովին Բաբիլոնի գաւա-
ռումը։

ԳԼ. Դ.

Նաբուգոդոնոսոր թագաւոր. 1
բոլոր ժողովուրդներին, ազգերին
և լեզուներին, որոնք բնակվում
են բոլոր երկրի վերայ, շատանայ
ձեր խաղաղութիւնը։ Այն նշան- 2
ները և հրաշքները, որ ինձ հետ
արաւ Բարձրեալ Աստուածը, հա-
ճոյ է երևում իմ առաջին յայտ-
նել ՝ի՛ն, Նորա նշանները ո՛ր-քան 3
մեծ են. և նորա հրաշքները ո՛ր-

քան զօրաւոր են. նորա թագա-
ւորութիւնը յաւիտենական թա-
գաւորութիւն է, և նորա իշխա-
նութիւնը մնում է դարէ ցդար։
4 Ես Նաբուգոդոնոսորս հանգիստ
էի իմ տանը, և զուարճանում
5 էի իմ պալատումը. Երազ տե-
սայ, որ ինձ վախեցրեց, և խոր-
հուրդներ ստեղի անկողնիս վե-
րայ, և գլխիս տեսիլքները ինձ
6 խռովեցրին։ Եւ ինձանից հրաման
դուրս եկաւ, որ իմ առաջին բե-
րեն Բաբիլոնի բոլոր իմաստուն-
ներին, որ ինձ յայտնեն երազի
7 մեկնութիւնը։ Այն ժամանակ ե-
կան՝ մոգերը, հմայողները, Քաղ-
դէաները և բաղդ նայողները, և
ես երազը ասեցի նորանց առա-
ջին. բայց նորանք ինձ չ'իմացրին
8 մեկնութիւնը։ Եւ վերջապէս ե-
կաւ առաջիս Դանիէլը, որի ա-
նունն է Բաղդասասար՝ իմ աս-
տուծոյ անուան պէս, և որի մէջ
կայ սուրբ աստուածների հոգին.
և ես ասեցի երազը նորա առա-
9 ջին. Ով Բաղդասասար՝ մոգերի
իշխան, որովհետև դիտեմ որ
սուրբ աստուածների հոգին կայ
քեզանում և ոչ մի գաղտնիք
քեզ նեղութիւն չի տալ. երա-
զիս տեսիլքները, որ տեսայ, ա-
ա՛ է, և նորա մեկնութիւնը ասիր։
10 Եւ իմ գլխի տեսիլքները ան-
կողնիս վերայ ա՛ա էր. տեսնում
էի, և ահա մի ծառ երկրի մէջ
և նորա բարձրութիւնը մեծ էր։
11 Այն ծառը մեծանում էր և զօ-
րանում, և նորա բարձրութիւնը
հասաւ երկնքին, և նա տեսնվում
էր մինչև բոլոր երկրի ծայրը։
12 Նորա տերևները գեղեցիկ էին և
նորա պտուղները առատ. և նո-
րա վերայ կերակուր կար ամենի
համար. նորա տակին հովանա-
ւորվում էին դաշտի գազանները
և նորա ոստերի վերայ բնակվում
էին երկնքի թռչունները, և նո-
րանից էր կերակրվում ամեն
13 մարմին։ Ես տեսնում էի իմ
գլխի տեսիլքներումն անկողնիս
վերայ, և ահա մի պահապան և
14 մի սուրբ իջաւ երկնքիցը։ Նա
կանչեց ուժով և այսպէս ասեց.
Ծառը կտրեցէք, և ոստերը կտո-
րեցէք տերևները թօթափեցէք,
և պտուղները ցրուեցէք. գազան-
ները փախչեն նորա տակից և
թռչունները նորա ոստերիցը։
Բայց նորա արմատի բունը թո- 15
ղեցէք երկրումը, և երկաթի ու
պղնձի կապանքով, դաշտի խո-
տերի մէջ, և երկնքի ցօղովը թը-
ջուի, և նորա բաժինը անասուն-
ների հետ լինի երկրի խոտերի
մէջ. Նորա սիրտը մարդկութիւ- 16
նից փոխուի, և նորան անասունի
սիրտ տրուի, և նորա վերայով
եօթը ժամանակ անց կենան։ Պա- 17
հապանների վճռովն է պատգա-
մը, և սրբերի խօսքովը՝ խնդիրքը.
որպէս զի ապրողներն իմանան թէ
Բարձրեալն է տիրում մարդկանց
թագաւորութեան վերայ, և ում
որ ուզում է՝ տալիս է այն, և
մարդկանց անարգին դնում է
նորա վերայ։ Այս երազը տեսայ 18
ես Նաբուգոդոնոսոր թագաւորս.
իսկ դու, Բաղդասասար, ասիր
մեկնութիւնը, որովհետև իմ
թագաւորութեան բոլոր իմաս-
տունները չ'կարողացան ինձ իմա-
ցնել մեկնութիւնը. բայց դու
կարող ես, որովհետև քեզանում
սուրբ աստուածների հոգին կայ։
Այն ժամանակ Դանիէլը, որի 19
անունը Բաղդասասար էր, մէկ
ժամ հիացած մնաց և նորա խոր-
հուրդները նորան խռովեցրին։
Թագաւորը պատասխանեց և ա-
սեց. Ով Բաղդասասար, երազը և
մեկնութիւնը թող քեզ չ'խռո-
վեցնէ։ Բաղդասասարը պատաս-
խանեց և ասեց. Ով տէր իմ, ե-
րազը քեզ ատողների՛ն և նորա
մեկնութիւնը քո թշնամիների՛ն։
Այն ծառը որ տեսար, որ մեծա- 20
ցաւ և ուժովացաւ և նորա բար-
ձրութիւնը հասաւ երկնքին, և
նա տեսնվում էր բոլոր երկրումը,
Եւ նորա տերևները գեղեցիկ և 21
պտուղը առատ էր, և կերակուր
կար նորա վերայ ամենի համար.
նորա տակին բնակվում էին դաշ-
տի գազանները, և նորա ոստերի
վերայ կենում էին երկնքի թռ-
չունները. Նա դու ես, ով թա- 22

գաւոր, որ մեծացար և ուժովա-
ցար և քո մեծութիւնը բար-
ձրացաւ և հասաւ երկնքին, և
քո իշխանութիւնը հասաւ երկրի
23 ծայրը։ Եւ որ Թագաւորը մի պա-
հապան և սուրբ տեսաւ իջնելիս
երկնքից որ ասեց. Կտրեցէք ծա-
ռը, և աւերեցէք նորան, բայց
նորա արմատի բունը թողեցէք
երկրումը, և երկաթի ու պղնձի
կապերով լինի, դաշտի խոտե-
րումը մնայ, և երկնքի ցօղովը
թրջուի, և դաշտի գազանների
հետ լինի նորա բաժինը, մինչև
որ եօթը ժամանակ անց կենան
24 նորա վերայ. Սա է մեկնութիւ-
նը, ով Թագաւոր, և Բարձրեալի
վճիռն է այդ, որ հասել է իմ
25 տէր Թագաւորին։ Եւ քեզ ար-
տաքսելու են մարդկանց միջից և
դաշտի անասունների հետ պիտի
լինի քո բնակութիւնը, և խոտ
են ուտեցնելու քեզ արջառների
պէս, և երկնքի ցօղովը թրջուե-
լու ես. և եօթը ժամանակ է
անց կենալու քեզ վերայ, մինչև
որ իմանաս թէ Բարձրեալն է տի-
րում մարդկանց Թագաւորու-
թեան վերայ, և որին որ ուզում
26 է՝ տալիս է այն։ Եւ որ ասեցին
թէ մնայ ծառի արմատի բունը,
դա է որ քո Թագաւորութիւնը
պէտք է վերահաստատուի քեզ
համար այն պատճառով որ հաս-
կացած կ'լինես որ իշխողը երկընք-
27 քումն է։ Դորա համար, ով Թա-
գաւոր, թող իմ խրատը քեզ
հաճոյ երևայ, և քո մեղքերը
արդարութիւնով *դէն դցիր,
և քո անօրէնութիւնները՝ աղ-
քատներին ողորմելով. †եթէ եր-
կայն պէտք է լինի՝ քո խաղա-
ղութիւնը։
28 Այս ամենը պատահեց Նաբու-
29 գոդոնոսոր Թագաւորին։ Տասն-
ևերկու ամսից յետոյ նա ճե-
մում էր Թագաւորական պալա-
տի վերայ որ Բաբելոնումն է։
30 Թագաւորը պատասխանեց և ա-
սեց. Ահա այն մեծ Բաբիլոնը, որ
ես Թագաւորութեան տուն եմ
շինել իմ մեծ զօրութեամբը և
իմ մեծութեան փառքի համար։
Խօսքը դեռ Թագաւորի բերա- 31
նումն էր, որ երկնքիցը մի ձայն
իջաւ թէ Քեզ են ասում, ով
Նաբուգոդոնոսոր արքայ, Թա-
գաւորութիւնդ գնաց քեզանից։
Եւ մարդկանցից քեզ պիտի ար- 32
տաքսեն և դաշտի անասունների
հետ պիտի լինի քո բնակութիւ-
նը, խոտ են ուտեցնելու քեզ ար-
ջառների պէս. և եօթը ժամա-
նակ է անց կենալու քեզ վերայ
մինչև որ իմանաս թէ Բարձրեալն
է տիրում մարդկանց Թագաւո-
րութեան վերայ, և ում որ ու-
զում է՝ տալիս է այն։ Նոյն ժա- 33
մումը կատարուեցաւ խօսքը Նա-
բուգոդոնոսորի վերայ. և մարդ-
կանց միջից արտաքսուեցաւ, և
խոտ էր ուտում արջառների պէս,
և երկնքի ցօղովը թրջվում էր
նորա մարմինը մինչև որ նորա մա-
զերը երկարացան ինչպէս արծիւ-
ներինը, և նորա եղունդները
թռչունների պէս։
Եւ այն օրերից յետոյ ես Նա- 34
բուգոդոնոսորս աչքերս բարձրա-
ցրի դէպի երկինքը, և խելքս ինձ
վերայ եկաւ և Բարձրեալին օրհ-
նեցի, և գովեցի և փառաւորեցի
յաւիտեանս կենդանի եղողին,
որի իշխանութիւնը յաւիտենա-
կան իշխանութիւն է և նորա Թա-
գաւորութիւնը դարէ ցդար։ Եւ 35
երկրիս բոլոր բնակիչները ոչինչի
պէս են համարվում, և նա իր
ուզածին պէս է անում երկնքի
զօրքովը և երկրի բնակիչներովը,
և մէկը չ'կայ որ զարկէ նորա
ձեռքին և նորան ասէ. Ի՞նչ ես
անում։ Այն ժամանակ խելքս 36
ինձ վերայ եկաւ, և իմ Թագա-
ւորութեան փառքը, իմ պատիւը
և իմ մեծվայելչութիւնը եկաւ
ինձ վերայ. և իմ խորհրդական-
ներն և իմ մեծամեծներն որոնե-
ցին ինձ, և ես հաստատուեցայ
իմ Թագաւորութեան վերայ,
և չափազանց վեհափառութիւն
տրուեցաւ ինձ։
Արդ ես Նաբուգոդոնոսորս գո- 37

*Կամ՝ քաւիր
†Կամ՝ Թերևս երկայն լինի

վում, բարձրացնում և փառա-
ւորում եմ երկնքի Թագաւորին,
որովհետև նորա բոլոր գործերը
ճշմարտութիւն՝ և նորա ընթաց-
քը իրաւունք են, և որովհետև
ամբարտաւանութեամբ վարուող-
ներին նա կարողանում է ցա-
ծացնել։

ԳԼ. Ե

1 Բաղդասար Թագաւորը մեծ
հացկերոյթ արաւ իր մեծամեծ-
ներից հազարի համար, և այն
հազարի առաջին գինի խմեց։
2 Բաղդասարը, երբոր գինին ճա-
շակել էր, հրամայեց որ բերեն
այն ոսկի և արծաթի անօթնե-
րը, որոնք վեր էր առել նորա
*հայր Նաբուգոդոնոսորը Երու-
սաղէմի տաճարիցը, որ խմեն նո-
րանցով Թագաւորը և նորա մե-
ծամեծները, նորա կանայքը և
3 նորա հարճերը։ Այն ժամանակ
բերին այն ոսկի անօթները, որ
վեր էին առուել Երուսաղէմում
եղող Աստուծոյ տաճարիցը, և
նորանցով խմեցին Թագաւորը և
նորա մեծամեծները, նորա կա-
4 նայքը և նորա հարճերը։ Գինին
խմեցին և գովեցին ոսկի և ար-
ծաթի, պղնձի, երկաթի, փայտի
և քարի աստուածներին։
5 Նոյն ժամումը դուրս եկան
մարդի ձեռքի մատեր և գրեցին
աշտանակին հանդէպ Թագաւո-
րական պալատի պատի ծեփի վե-
րայ, և Թագաւորը տեսաւ այն
ձեռքի թաթը որ գրում էր։
6 Այն ժամանակ Թագաւորի գոյնը
փոխուեցաւ, և նորա խորհուրդ-
ները նորան խռովեցրին, և նորա
մէջքի յօդերը լուծվում էին, և
նորա ծունկերը մէկզմէկու էին
7 խփվում։ Թագաւորը աղաղակեց
ուժով, որ բերեն հմայողներին,
Քաղդէաներին և բաղդ նայող-
ներին. Թագաւորը պատասխա-
նեց և ասեց Բաբիլոնի իմաստուն-
ներին. Ով որ կարդայ այս գրը-
ուածքը և մեկնութիւնը ինձ ի-
մացնէ, նա ծիրանի պիտի հագնէ
և ոսկի մանեակ նորա պարանո-
ցին, և Թագաւորութեան մէջ
երրորդ իշխան պիտի լինի։ Այն 8
ժամանակ եկան Թագաւորի բո-
լոր իմաստունները, բայց չ'կա-
րողացան գրուածքը կարդալ և
մեկնութիւնը իմացնել Թագա-
ւորին։ Այն ժամանակ Բաղդա- 9
սար Թագաւորը սաստիկ խռովե-
ցաւ, և նորա գոյնը փոխուեցաւ
նորա վերայ, և նորա մեծամեծ-
ները սարսափեցին։
Թագուհին խնջոյքի տունը ե- 10
կաւ Թագաւորի և նորա մեծա-
մեծների խօսքի պատճառովը.
Թագուհին պատասխանեց և ա-
սեց. Արքայ, յաւիտեան կաց, քո
խորհուրդները քեզ չ'խռովեցնեն
և գոյնդ չ'փոխուի։ Քո Թագաւո- 11
րութեան մէջ մի մարդ կայ, որի
մէջ կայ սուրբ աստուածների
հոգին. և քո հօր օրերումը լոյս
և հանճար և աստուածների ի-
մաստութեան պէս իմաստութիւն
գտնուեցաւ նորանում, և հայրդ
Նաբուգոդոնոսոր Թագաւորը նո-
րան մոգերի, հմայողների, Քաղ-
դէաների, բաղդ նայողների գլ-
խաւոր դրաւ՝ քո հայրը, ով Թա-
գաւոր։ Որովհետև մի գերազանց 12
հոգի և գիտութիւն և հանճար
կայ նորանում երազներ մեկ-
նելու, խրթնաբանութիւնները
յայտնելու և կնճիռներ լուծե-
լու, այդ Դանիէլումը, որի անու-
նը Թագաւորը Բաղդասասար դը-
րաւ. Թող կանչուի Դանիէլը և
նա կ'իմացնէ մեկնութիւնը։
Այն ժամանակ Դանիէլը տար- 13
ուեցաւ Թագաւորի առաջին.
Թագաւորը պատասխանեց և ա-
սեց Դանիէլին. Դո՞ւ ես Դանիէլը
այն Հրէայ գերիներից, որոնց իմ
հայր Թագաւորը բերաւ Հրէաս-
տանից։ Եւ ես լսել եմ քո մա- 14
սին թէ աստուածների հոգի կայ
քեզանում, և լոյս ու հանճար
և գերազանց իմաստութիւն կայ
քեզ մօտ. Եւ հիմա իմ առաջին 15
իմաստուններ, հմայողներ բեր-

*Տես հմր. 11, 13։ բ Թագ. Թ. 7։ բ Մն. ժե. 16։ Երեմ. իէ. 7՝ «նախահայր»։

ուեցան, որ այս գրուածքը կարդային և նորա մեկնութիւնը ինձ իմացնէին. բայց չ'կարողացան իմացնել այս խօսքի մեկնութիւնը.
16 Եւ ես լսեցի քո մասին, որ կարող ես մեկնել մեկնութիւն և կնճիռներ լուծել. արդ եթէ կարող ես կարդալ գրուածքը և նորա մեկնութիւնը ինձ իմացնել, ծիրանի կ'հագնես և ոսկի մանեակ՝ պարանոցիդ վերայ. և թագաւորութեան մէջ երրորդ իշխան կ'լինես։
17 Այն ժամանակ Դանիէլը պատասխանեց և ասեց թագաւորի առաջին. Պարգևներդ քեզ լինեն, և ընծաներդ ուրիշի տուր. իսկ ես կ'կարդամ գրուածքը թագաւորի համար և մեկնու-
18 թիւնը կ'իմացնեմ իրան։ Դու, ով թագաւոր, Բարձրեալն Աստուած թագաւորութիւն և մեծութիւն և փառք ու պատիւ տուաւ քո հօրը՝ Նաբուգոդոնո-
19 րին։ Եւ այն մեծութիւնից, որ տուել էր նորան, բոլոր ժողովուրդները, ազգերը և լեզուները դողում և վախենում էին նորա առաջին. որին որ ուզում էր՝ սպանում էր, և որին որ ուզում էր՝ ապրեցնում էր, և որին որ ուզում էր՝ բարձրացնում էր, և որին որ ուզում էր՝ ցածացնում
20 էր։ Բայց երբոր նորա սիրտը հպարտացաւ և նորա հոգին խըստացաւ ամբարտաւանութեամբ, նա ընկաւ իր թագաւորութեան աթոռիցը, և նորա պատիւը առ-
21 նուեցաւ նորանից։ Եւ մարդկանց որդիների՝ միջից արտաքսուեցաւ, և նորա սիրտը անասունների պէս եղաւ, և նորա բնակութիւնը վայրի էշերի հետ էր, արջառների պէս խոտ էին ուտեցնում նորան, և երկնքի ցօղովը թրջվում էր նորա մարմինը, մինչև որ իմացաւ որ Բարձրեալ Աստուածն է տիրում մարդկանց թագաւորութեան վերայ, և որին որ ուզում
22 է՝ դնում է նորա վերայ։ Եւ դու նորա որդի, Բաղդասար, չ'խոնարհեցրիր քո սիրտը, թէև այս ամենը գիտէիր. Այլ երկնքի Տի- 23
րոջ դէմ քեզ բարձրացրիր և նորա տան անօթները բերին քո առաջին, և դու ու քո մեծամեծները և քո կանայքն ու քո հարճերը գինի խմեցիք նորանցով, և արծաթի ու ոսկի, պղնձի, երկաթի, փայտի և քարի աստուածներին գովեցիր, որոնք ոչ տեսնում են, ոչ լսում և ոչ իմանում. բայց այն Աստուծուն, որի ձեռքին է քո շունչը և որինն են քո բոլոր ճանապարհները, չ'փառաւորեցիր. Այն ժամանակ այն 24
ձեռքի թաթը ուղարկուեցաւ նորա առաջից, և այս գրուածքը նկարուեցաւ։ Եւ այս է այն 25
նկարուած գրուածքը. ՄԱՆԷ, ՄԱՆԷ, ԹԵԿԷՂ ՈՒ ՓԱՐՍԻՆ։ Այս է խօսքի մեկնութիւնը. 26
Մանէ, Աստուած համարել է քո թագաւորութիւնը և նորան վերջացրել. Թեկէղ, կշռուեցար 27
կշիռքով և պակաս գտնուեցար. Փարէս, բաժանուեցաւ քո թա- 28
գաւորութիւնը և տրուեցաւ Մարաց և Պարսից։
Այն ժամանակ Բաղդասարը 29
հրամայեց, և Դանիէլին ծիրանի հագցրին, և ոսկի մանեակ՝ նորա պարանոցին, և մունետիկ կանչել տուին նորա մասին, որ երրորդ իշխան լինի թագաւորութեան մէջ։
Նոյն գիշերը Քաղդէացիների 30
Բաղդասար թագաւորը սպանուեցաւ։ Եւ Մարաց Դարեհը առաւ 31
թագաւորութիւնը՝ երբոր վաթսունևերկու տարեկանի չափ էր։

ԳԼ. Զ

Հաճոյ երևեցաւ Դարեհի ա- 1
ռաջին՝ թագաւորութեանը վերայ հարիւր քսան կուսակալներ դնելու, որոնք լինեն բոլոր թա-
գաւորութեան մէջ։ Եւ սորանց 2
վերայ երեք հրամանատար, որոնցից մէկը Դանիէլն էր, որոնց այն կուսակալները հաշիւ տան, որ
թագաւորին վնաս չ'լինի։ Այն 3
ժամանակ այս Դանիէլը նախապատիւ եղաւ հրամանատարներից և կուսակալներից որովհետև նորանում գերազանց հոգի կար, և թագաւորը մտածում էր որ նորան բոլոր թագաւորութեան վերայ դնէ։
4 Այն ժամանակ հրամանատարները և կուսակալները աշխատում էին մի պատճառ գտնելու Դանիէլի դէմ կառավարութեան կողմանէ, բայց բնաւ մի պատճառ և չարութիւն չ'կարողացան գտնել, որովհետև նա հաւատարիմ էր և ոչ մի յանցանք և չարութիւն չ'գտնուեցաւ նո-
5 րա վերայ։ Այն ժամանակ այս մարդիկն ասեցին թէ Մենք Դանիէլի դէմ բնաւ մի պատճառ չենք գտնելու, այլ նորա վերայ կ'գտնենք Աստուծոյ օրէնքի կողմանէ։
6 Այն ժամանակ հրամանատարները և կուսակալները ժողովուեցան թագաւորի մօտ և այսպէս ասեցին նորան. Ով Դարեհ թա-
7 գաւոր, յաւիտեան կաց։ Խորհրդակցել են թագաւորութեան բոլոր հրամանատարները, նախարարները և կուսակալները, խորհրդականները և կառավարիչները, որ թագաւորը մի հրաման որոշէ և մի արգելք հաստատուի, որ ամեն ով որ մի խնդրուած խնդրէ որ և է աստուածանից և մարդից մինչև երեսուն օր բացի քեզանից, ով թագաւոր, նա
8 գցուի առիւծների գուրը։ Հիմա, ով թագաւոր, հաստատիր այս արգելքը և ստորագրիր հրովարտակը, որ չ'փոխուի Մարաց և Պարսից օրէնքի համեմատ, որ
9 անխափանելի է։ Վասն որոյ Դարեհ թագաւորը ստորագրեց հրովարտակը և արգելքը։
10 Եւ երբոր Դանիէլն իմացաւ թէ հրովարտակը ստորագրուեցաւ՝ գնաց իր տունը, և իր պատուհանները բաց էին վերնատանը դէպի Երուսաղէմ, և օրը երեք անգամ նա ծունկի վերայ էր գալիս և աղօթք էր անում և գովաբանում էր իր Աստուծուն, ըստ որում նա սորանից առաջ
11 այսպէս էր անում։ Այն ժամանակ այն մարդիկը ժողովուեցան և գտան Դանիէլին խնդրելիս և աղաչելիս իր Աստուծոյ առաջին։
Այն ժամանակ մօտեցան և ասե- 12
ցին թագաւորի առաջին թագաւորի արգելքի մասին. Չէ՞ որ դու մի արգելք ստորագրեցիր որ ամեն մարդ որ խնդրէ որ և է աստուածանից և մարդից մինչև երեսուն օր բացի քեզանից, ով թագաւոր, պիտի գցուի առիւծների գուրը. թագաւորը պատասխանեց և ասեց. Հաստատ է այդ բանը Մարաց և Պարսից օրէնքին համեմատ որ չի խափանուիլ։
Այն ժամանակ պատասխանեցին 13
և ասեցին թագաւորի առաջին. Թէ Դանիէլը, որ Հրէաստանի գերիներիցն է, քեզ, ով թագաւոր, և քո ստորագրած արգելքն մի ինչ չէ համարում, և օրը երեք անգամ խնդրուածք
է խնդրում։ Այն ժամանակ թա- 14
գաւորը, երբոր լսեց այս խօսքը, շատ տրտմեց ինքնիրանում, և միտքը դրաւ Դանիէլի վերայ որ նորան ազատէ, և մինչև արեգակի մտնելը ջանք էր անում նորան ազատելու։ Այն ժամանակ 15
այն մարդիկը թագաւորի մօտը ժողովուեցան և թագաւորին ասեցին. Իմացիր, ով թագաւոր, որ Մարաց և Պարսից օրէնք է, որ թագաւորի հաստատած ամեն արգելքն ու հրամանը չի
փոխուիլ։ Այն ժամանակ թա- 16
գաւորն ասեց, և բերին Դանիէլին և նորան գցեցին առիւծների գուրը. թագաւորը պատասխանեց և ասեց Դանիէլին. Քո Աստուածը, որին դու պաշտում ես անդադար, նա ազատէ քեզ։ Եւ մի 17
քար բերին և դրին գուբի բերանին. և թագաւորը կնքեց նորան իր կնիքովը և իր մեծամեծների կնիքովը, որ Դանիէլի նկատմամբ մի բան չ'փոխուի։ Յետոյ 18
թագաւորը գնաց իր պալատը, և գիշերը անցրեց առանց ուտելու, և *նուագարաններ էլ բերել

*Կամ՝ կերակուր և կամ՝ պար խաղացող աղջկերք

չ՚առաւ իր առաջը. և քունը գնաց նորա վերայից։
19 Այն ժամանակ թագաւորը արշալուսին վեր կացաւ կանուխ և շտապելով գնաց առիւծներուն
20 գուբը. եւ երբոր գուբին մօտեցաւ, Դանիէլին կանչեց տրտում ձայնով. թագաւորը խօսեց և ասեց Դանիէլին. Ով Դանիէլ՝ կենդանի Աստուծոյ ծառայ, քու Աստուածը, որին դուն պաշտում ես անդադար, կարողացա՞ւ քեզ
21 ազատել առիւծներէն։ Այն ժամանակ Դանիէլը խօսեց թագաւորի հետ. Ով թագաւոր, յաւիտեան ապրէ կաց։
22 Իմ Աստուածը ուղարկեց իր հրեշտակը, և նա փակեց առիւծներուն բերանը, և նոքա ինձ չ՚վնասեցին, որովհետև նորա առաջին մաքրութիւն գտնուեցաւ ինձ վերայ, և քու առաջին էլ, ով թագաւոր,
23 մի յանցանք չեմ արել։ Այն ժամանակ թագաւորը շատ ուրախացաւ իրանում, և հրամայեց որ Դանիէլին գուբա հանեն գուբէն։ Եւ Դանիէլը գուբա բերուեցաւ գուբէն, և նորա վերայ ոչ մի վնաս չ՚գտնուեցաւ, որովհետև հաւատացել էր իր Աստուծոյն։
24 Եւ թագաւորը հրամայեց, և այն մարդկանցը բերին, որոնք Դանիէլի չարախօսութիւնն արել էին, և գցեցին առիւծներուն գուբը՝ նորանց, նորանց որդկանցը և նորանց կանանցը. և նորանք դեռ չէին հասել գուբի յատակին, որ առիւծները յափշտակեցին նորանց և նորանց բոլոր ոսկորները փշրեցին։
25 Այն ժամանակ Դարեհ թագաւորը գրեց բոլոր ժողովուրդներին, ազգերին և լեզուներին, որոնք բնակվում են ամեն երկրում, Շատանայ ձեր խաղաղութիւնը։
26 Ինձանից հրաման դուրս եկաւ, որ իմ թագաւորութեան բոլոր իշխանութեան մէջ դողան և վախենան Դանիէլի Աստուծոյ երեսից, որ նա է կենդանի Աստուածը և կայ յաւիտեան, և նորա թագաւորութիւնը չի քանդուիլ, և նորա իշխանութիւնը
27 մինչև վերջն է. Նա է ազատում և փրկում, և նշաններ ու հրաշքներ անում երկնքում և երկրի վերայ, որ Դանիէլին ազատեց առիւծներուն ձեռքից։
28 Եւ այս Դանիէլը յաջողութիւն գտաւ Դարեհի թագաւորութիւնում և Պարսիկ Կիւրոսի թագաւորութիւնում։

ԳԼ. Է

1 Բաբելոնի Բաղդասար թագաւորի առաջին տարին Դանիէլն երազ տեսաւ, և իր անկողնում՝ իր գլխի տեսիլքները. յետոյ գրեց երազը. գլխաւոր բանը ասեց։
2 Դանիէլը խօսեց և ասեց. Գիշերը տեսանում էի տեսիլքում և ահա երկնքի չորս կողմերը յարձակվում էին մեծ ծովի վերայ։
3 Եւ չորս մեծամեծ գազաններ ելան ծովիցը՝ տարբեր մէկմէկից։
4 Առաջինը առիւծի պէս էր և արծիւի թևեր ուներ. և տեսնում էի մինչև որ նորա թևերը պոկուեցան, և նա վեր առնուեցաւ երկրիցը, և ոտներին վերայ մարդի պէս կանգնեցուեցաւ, և մարդի սիրտ տրուեցաւ նորան։
5 Եւ ահա մի ուրիշ գազան՝ երկրորդը՝ արջի նման, և մէկ կողմի վերայ կանգնեց, և երեք կողքի ոսկորներ ուներ բերանումը ատամների մէջ, և այսպէս ասեցին նորան. Վեր կաց՝ շատ միս կեր։
6 Սորանից յետոյ նայում էի, և ահա մի ուրիշը ինձի նման, որի մէջքին չորս թռչնի թևեր կային. և չորս գլուխ ուներ գազանը, և իշխանութիւն տրուեցաւ նորան։
7 Սորանից յետոյ տեսնում էի գիշերուայ տեսիլքում, և ահա մի չորրորդ գազան՝ ահեղ, սոսկալի և չափազանց զօրաւոր, որ երկաթի մեծ մեծ ատամներ ուներ, ուտում էր և փշրում և մնացածը ոտներովը կոխ էր տալիս, և նա տարբեր էր իրանից առաջ եղող բոլոր գազաններիցը, և տասը եղջիւր ուներ։
8 Ես մտիկ էի տալիս այն եղջիւրներին, և ահա մի ուրիշ փոքր եղջիւր դուրս

եկաւ նորանց մէջ, և այն առաջի եղջիւրներից երեքը խլուեցան նորա առաջիցը. և ահա մարդի աչքերի պէս աչքեր կային այդ եղջիւրի վերայ և մի մեծ մեծ բաներ խօսող բերան։
9 Ես տեսնում էի մինչև որ աթոռներ գրուեցան, և Հինաւուրցը նստեց. նորա հագուստը՝ ձիւնի պէս սպիտակ, և նորա գլխի մազը՝ մաքուր սորի պէս. նորա աթոռը կրակի բոց, նորա անիւները վառուած կրակ։
10 Մի կրակի գետ էր հոսում և գնում նորա առաջիցը. հազար հազարներ ծառայում էին նորան և բիւր բիւրեր կանգնած էին նորա առաջին. առեանը նստեց և գրքերը բացուեցան։
11 Ես տեսնում էի, այն ժամանակ եղջիւրի խօսած մեծ մեծ խօսքերի համար, և մտիկ էի տալիս մինչև որ գազանը սպանուեցաւ և կորաւ նորա մարմինը,
12 և տրուեցաւ կրակի բոցին։ Եւ միւս գազաններիցը առնուեցաւ նորանց իշխանութիւնը, և նորանց տրուած էր եղել մի կենաց երկարութիւն մինչև մի ժամ և ժամանակ։
13 Ես տեսնում էի գիշերուայ տեսիլքներում, և ահա երկնքի ամպերով դալիս էր մարդի որդիի նման, և մինչև Հինաւուրցը եկաւ, և նորա առաջին մօտեցրին նորան։
14 Եւ նորան տրուեցաւ իշխանութիւն և պատիւ ու թագաւորութիւն, որ բոլոր ժողովուրդները, ազգերը և լեզուները նորան ծառայեն. նորա իշխանութիւնը յաւիտենական իշխանութիւն է, որ չի անցնիլ և նորա թագաւորութիւնը չի քանդուիլ։
15 Ես Դանիէլս վշտացայ սրտովս իմ միջումը, և իմ գլխի տեսիլքները ինձ խռովեցրին։
16 Ես մօտեցայ կանգնածներից մէկին և հարցրի այս բոլոր բաների իսկութիւնը. և նա ասեց ինձ և բաների մեկնութիւնը իմացրեց ինձ։
17 Այս չորս մեծ գազանները՝ չորս թագաւորներ են վեր կենալու
18 երկրիցը, իսկ թագաւորութիւնը առնելու են Բարձրեալի սուրբերը և ժառանգելու են թագաւորութիւնը մինչև յաւիտեան և մինչև յաւիտեանս յաւիտենից։
19 Յետոյ ուզեցի չորրորդ գազանի իսկութիւնն իմանալ, որ ամենից տարբեր էր և խիստ ահեղ, ատամները երկաթի և եղունգները պղնձի, ուտում էր, փշրում էր և մնացածը իր ոտներովը կոխ էր տալիս։
20 Եւ նորա գլխի վերայ տասը եղջիւրների մասին, և այն միւսի մասին, որ դուրս եկաւ և նորա առաջիցը երեքը ընկան, որ այս եղջիւրը աչքեր ուներ և մեծ մեծ բաներ խօսող բերան. և նորա կերպարանքը մեծ էր քան թէ իր ընկերներինը։
21 Ես տեսնում էի, և այն եղջիւրը պատերազմ էր անում սուրբերի հետ, և նորանց յաղթեց։
22 Մինչև որ եկաւ Հինաւուրցը, և իրաւունք տրուեցաւ Բարձրեալի սուրբերին, և ժամանակը հասաւ որ սուրբերը առնեն թագաւորութիւնը։
23 Այսպէս ասեց. Չորրորդ գազանը չորրորդ թագաւորութիւն է լինելու երկրի վերայ, որ տարբեր պիտի լինի բոլոր թագաւորութիւններից, և պիտի ուտէ բոլոր երկիրը և նորան պիտի ոտնահարէ և փշրէ։
24 Եւ այն տասը եղջիւրները՝ այն թագաւորութիւնից տասը թագաւորներ են վեր կենալու, և նորանցից յետոյ մի ուրիշն է վեր կենալու, և նա տարբեր է լինելու առաջիններից, և նա երեք թագաւոր է կործանելու։
25 Եւ բարձրեալին դէմ խօսքեր է խօսելու և Բարձրեալի սուրբերին հարատևացնելու է, և խորհելու է որ ժամանակներն ու օրէնքները փոխէ, և նորանք պիտի նորա ձեռքը տրուին մինչև մի ժամանակ և (երկու) ժամանակներ և կէս ժամանակ։
26 Բայց առեանը պիտի նստէ, և նորա իշխանութիւնը պիտի վեր առնեն, որ փչացնեն և կորցնեն իսպառ։
27 Եւ թագաւորութիւնն ու իշխանութիւնը և բոլոր երկնքի տակին եղող թագաւորութիւնների մեծութիւնը պիտի տրուի Բար-

ձրեալի սուրբերի ժողովրդին. նորա թագաւորութիւնը յաւիտենական թագաւորութիւն է և բոլոր իշխանութիւնները պիտի նորան ծառայեն և հնազանդեն։
28 Մինչև այստեղ է խօսքը վերջը. ինձ Դանիէլիս շատ խռովեցուցին իմ խորհուրդները, և գոյնս փոխուեցաւ իմ վրաս, և խօսքը պահեցի իմ սրտումը։

Գլ. Ը

1 Թագաւորի թագաւորութեան երրորդ տարիումը մի տեսիլք երևեցաւ ինձ Դանիէլիս, այն սկզբումը ինձ երևցածիցը յետոյ։ 2 Եւ ես տեսայ տեսիլքում. և եղաւ որ ես տեսնելիս՝ ես Եղամի գաւառումն եղող Շուշան մայրաքաղաքումն էի. և տեսայ տեսիլքում որ ես Ուլայ գետի մօտ էի։
3 Եւ ես բարձրացրի իմ աչքերը և տեսայ, և ահա գետի կշտին մէկ խոյ կար կանգնած, և նա երկու եղջիւր ուներ, և այն եղջիւրները բարձր էին, և մէկը միւսիցը աւելի բարձր էր, և այն 4 բարձրը յետոյ վեր եկաւ։ Տեսայ՝ խոյը խփում էր դէպի արևմուտք և դէպի հիւսիս և դէպի հարաւ, և ոչ մի գազան չէր կանգնում նորա առաջին և նորա ձեռիցն ազատող չ'կար. այլ նա անում էր իր հաճութեան պէս, և մեծացաւ։
5 Եւ երբոր ես մտածում էի, ահա մի այծերի քօշ եկաւ արևմուտքից բոլոր երկրի երեսի վերայ, և գետնին չէր դպչում, և քօշը մի երևելի եղջիւր ուներ 6 իր աչքերի մէջտեղը։ Եւ նա հասաւ այն երկու եղջիւրաւոր խոյին, որ տեսել էի գետի կշտին կանգնած, և նորա վերայ վազեց իր զօրութեան կատաղութիւնով։ 7 Եւ ես տեսայ նորան որ հասաւ խոյի մօտ, և դառնացած նորա վերայ՝ զարկեց խոյին և կոտրատեց նորա երկու եղջիւրները, և այժ չ'կար խոյումը նորա առաջին կանգնելու. և նորան դցեց գետինը և կոխ տուաւ նորան, և մէկը չ'կար որ խոյին ազատէր նորա ձեռիցը։ 8 Եւ այծերի քօշը խիստ մեծացաւ, և հենց որ ուժովացաւ նորա մեծ եղջիւրը կոտրուեցաւ, և նորա տեղը չորս երևելիները դուրս եկան դէպի երկնից չորս կողմերը։ 9 Եւ նորանցից մէկից մի փոքր եղջիւր դուրս եկաւ, և նա չափազանց մեծացաւ դէպի հարաւ և դէպի արևելք և դէպի փառաւորը. 10 եւ մեծացաւ մինչև երկնքի զօրքը, և զցեց գետինը այն զօրքիցը և աստղերիցը և նորանց կոխ տուաւ։ 11 Եւ մինչև զօրաց իշխանը բարձրացաւ, և նորանից վեր առաւ մշտնջենականը, և կործանուեցաւ նորա սրբարանի բնակարանը։ 12 Եւ մէկ զօրք տրուեցաւ մշտնջենական ընծէի հետ ամբարշտութեան համար, և ճշմարտութիւնը զցեց գետինը, և անում էր ու յաջողում։ 13 Եւ ես լսեցի մէկ սուրբ խօսելիս, և մէկ սուրբ ասեց այն ինչ խօսողին, Մինչև ե՞րբ է մշտնջենական ընծէի տեսիլքը և աւերող ամբարշտութիւնը, որ սրբարանն էլ զօրքն էլ պիտի տրուին ոտնակոխութեան։ 14 Եւ նա ասեց ինձ. Մինչև երկու հազար երեք հարիւր իրիկուն-առաւօտ. յետոյ սրբարանը պիտի արդարանայ։
15 Եւ եղաւ որ երբոր ես Դանիէլս տեսիլքը տեսայ, այն ժամանակ հասկացողութիւն էի որոնում, և ահա կանգնած էր դէմ առաջս մարդի երևոյթի պէս. 16 եւ ես լսեցի մի մարդի ձայն Ուլայի միջից, և նա կանչեց ու ասեց. Ով Գաբրիէլ, հասկացրու դրան տեսիլքը։ 17 Եւ նա եկաւ կանգնած տեղիս մօտը, և երբոր նա եկաւ՝ ես վախեցայ և ընկայ երեսիս վերայ, և նա ինձ ասեց. Հասկացիր, ով մարդի որդի, որ վերջի ժամանակի համար է տեսիլքը։ 18 Եւ նա ինձ հետ խօսելիս ես թմրած վայր ընկայ երեսիս վերայ գետինը, և նա ինձ դիպաւ և ինձ կանգնեցրեց կանգնած տեղիս վերայ։ 19 Եւ ասեց. Ահա քեզ իմացնում եմ թէ ինչ է լինելու բարկութեան վերջումը, որովհետև վերջի որոշ ժամանակի 20 համար է։ Այն երկու եղջիւրաւորը խոյը, որ տեսար, Մարաց և Պարսից թագաւորներն է. 21 եւ այն այծերի քօշը Յունաց թագաւորն է. և այն մեծ եղջիւրը նորա աչքերի մէջտեղը՝ առաջին թագաւորն է։ 22 Եւ այն կոտրուածը որի տեղը չորսը դուրս եկաւ, չորս թագաւորութիւններ են դուրս գալու ազգիցը, բայց ոչ թէ նորա զօրութեամբը։ 23 Եւ նորանց թագաւորութեան վերջին՝ երբոր ամբարիշտները կը լրացնեն, մի պինտերես և խորագէտ թագաւոր վեր կ'կենայ. 24 եւ կ'զօրանայ նորա իշխանութիւնը, բայց ոչ թէ նորա զօրութեամբը, և աքսանչելիքներով պիտի աւերէ և յաջողէ ու կատարէ, և պիտի փչացնէ զօրաւորներին և սրբերի 25 ժողովուրդը։ Եւ նորա խելքովը պիտի յաջողուի խաբեութիւնը նորա ձեռովը, և նա պիտի իր սրտումը հպարտանայ, և խաղաղութեան մէջ շատերին պիտի կորցնէ, և վեր պիտի կենայ իշխանաց Իշխանի դէմ, բայց առանց ձեռքի պիտի կոտրուի։ 26 Եւ երեկուայ ու առաւօտուայ տեսիլքը, որ ասուեցաւ, ճշմարիտ է. և դու տեսիլքը փակիր, որովհետև շատ օրերի համար է։ 27 Եւ ես Դանիէլս նուաղեցի և հիւանդացայ մի քանի օր. յետոյ վեր կացայ և արի թագաւորի գործը, և զարմացած էի տեսիլքի մասին, և մէկ հասկացնող չ'կար։

Գլ. Թ

1 Ասուերոսի որդի Դարեհի առաջին տարին, որ Մարաց սերունդից էր և թագաւոր գրուեցաւ Քաղդէացիների թագաւորութեան վերայ, 2 Նորա թագաւորութեան առաջին տարին ես Դանիէլս իմացայ գրքերումը այն տարիների թիւը, որոնց համար Տիրոջ խօսքը եղել էր Երեմիա մարգարէին, թէ պիտի վերջացնէր Երուսաղէմի աւերմունքները եօթանասուն տարիով։
3 Եւ ես դարձրի իմ երեսը դէպի Տէր Աստուածն, որ ազօթք և աղաչանք մատուցանեմ ծոմով և քուրձով ու մոխիրով։ 4 Եւ աղօթեցի իմ Տէր Աստուածն և խոստովանուեցայ ու ասեցի. Ո՜հ, Տէր, մեծ Աստուած և ահաւոր, որ ուխտ և ողորմութիւն ես պահում քեզ սիրողներին և պատուիրանքներդ պահողներին. 5 մենք մեղանչեցինք և անօրէնութիւն գործեցինք և ամբարիշտ եղանք ու ապստամբուեցինք և խոտորեցինք քո պատուիրանքներիցն ու իրաւունքներիցդ։ 6 Եւ չ'լսեցինք քո ծառաներին մարգարէներին, որոնք խօսեցին քո անունովը մեր թագաւորների, մեր իշխանների և մեր հայրերի հետ և երկրի բոլոր ժողովրդի հետ։ 7 Քոնն է, ով Տէր, արդարութիւնը, իսկ մերը երեսի ամօթը, ինչպէս որ այսօր է, Ցուդայի մարդկանցը և Երուսաղէմի բնակիչներին և բոլոր Իսրայէլին մօտաւորներին և հեռաւորներին այն ամեն երկիրներում, ուր որ նորանց աքսորել ես նորանց այն յանցանքի համար, որ գործեցին քեզ դէմ։ Տէր, մերն 8 է երեսի ամօթը՝ մեր թագաւորներինը, մեր իշխաններինը և մեր հայրերինը, որ մեղանչեցինք քեզ դէմ։ Մեր Տէր Աստուածն է 9 ողորմութիւնը և ներողութիւնը, որովհետև մենք ապստամբեցինք նորա դէմ, և չ'լսեցինք մեր Տէր 10 Աստուծոյ ձայնին, որ գնայինք նորա օրէնքովը, որոնք նա դրաւ մեր առաջին իր ծառաների՝ մարգարէների ձեռովը։ Եւ բոլոր Իսրայէլը զանց արաւ քո օրէնքը և խոտորեցաւ, որ չ'լսէ քո ձայնին և թափուեցաւ մեզ վերայ այն անէծքը և երդումը որ գրուած է Աստուծոյ ծառայ Մովսէսի օրէնքումը. որովհետև մենք մեղանչեցինք նորա դէմ։ 12 Եւ նա հաստատեց իր խօսքերը, որ ասել էր մեր մասին և մեզ դատող մեր դատաւորների մասին՝ մեզ վերայ մեծ չարիք բերելով,

այնպէս որ երկնքի տակ եղած չէ
ինչպէս որ եղաւ Երուսաղէմին։
13 Մովսէսի օրէնքումը գրուածին
պէս այս բոլոր չարիքը եկաւ մեզ
վերայ, սակայն մենք չ'խնդրե-
ցինք մեր Տէր Աստուծոյ երեսը,
որ եւս դառնայինք մեր անօրէ-
նութիւններիցը և խելամտեինք
14 քո ճշմարտութեան մէջ։ Եւ Տէրը
հսկեց այս չարիքի համար և նո-
րան բերաւ մեզ վերայ. որով-
հետև արդար է մեր Տէր Աս-
տուածը իր արած բոլոր գործերի
մասին. իսկ մենք չ'լսեցինք նորա
15 ձայնին։ Եւ արդ, ով մեր Տէր
Աստուած, որ քո ժողովուրդը ե-
գիպտոսի երկրիցը հանեցիր հզոր
ձեռքով, և քեզ համար անուն
շինեցիր, ինչպէս որ այսօր է.
մենք մեղանչեցինք անօրինացանք։
16 Ով Տէր, քո բոլոր արդարութեան
համեմատ, աղաչեմ ենք, թող
եւս դառնայ քո բարկութիւնը և
սրտմտութիւնը քո սուրբ սարից՝
քո Երուսաղէմ քաղաքիցը. ո-
րովհետև մեր մեղքերի համար և
մեր հայրերի անօրէնութիւնների
համար Երուսաղէմը և քո ժողո-
վուրդը նախատինք ենք դառել
17 մեր բոլոր շրջականներին։ Եւ արդ,
ով մեր Աստուած, լսիր քո ծա-
ռայի աղօթքը և նորա աղաչանք-
քը, և փայլեցրու քո երեսը քո
ամայացած սրբարանի վերայ Տի-
18 րոջ շնորհիւ։ Ականջ դիր, ով
իմ Աստուած, և լսիր, բաց աչ-
քերդ և տես մեր աւերակները և
այն քաղաքը որի վերայ կոչուած
է քո անունը, որովհետև ոչ թէ
մեր արդարութիւնների համար
ենք աղաչում մենք աղօթելով
քո առաջին, այլ քո շատ ողոր-
19 մութիւնների համար։ Ով Տէր,
լսիր, ով Տէր, ներիր, ով Տէր
ականջ դիր և կատարիր, մի
ուշացներ քեզ համար, ով իմ
Աստուած, որովհետև քո անունն
է կոչուած քո քաղաքի և քո
ժողովրդի վերայ։
20 Եւ ես տակաւին խօսում էի
և աղօթում և խոստովանում էի
իմ մեղքը և իմ ժողովրդի Իս-
րայէլի մեղքը և իմ աղաչանքը
մատուցանում էի իմ Տէր Ա-
ստուծոյ առաջին իմ Աստուծոյ 21
սուրբ սարի համար. Եւ ես տա-
կաւին խօսում էի աղօթքումս,
որ այն Գաբրիէլ մարդը, որ տե-
սիլքումը տեսել էի սկզբումը
*թռուցած նուաղած ժամանա-
կին՝, դպաւ ինձ երեկոյեան զոհի
ժամանակին, Եւ հասկացնելով 22
խօսում էր ինձ հետ, և ասեց.
Ով Դանիէլ, հիմա դուրս եկայ
որ քեզ իմաստութիւն տալոցե- 23
ցնեմ. քո աղաչանքի սկզբումը
խօսք դուրս եկաւ, և ես եկայ
իմացնելու, որ դու ցանկալի ես.
ուրեմն հասկացիր խօսքը և իմացիր
տեսիլքը. Եօթանասուն եօթնեակ 24
է վճռուած քո ժողովրդի և քո
սուրբ քաղաքի վերայ, յանցանքը
վերջացնելու և մեղքերը կնքելու
և անօրէնութիւնը քաւելու և
յաւիտենական արդարութիւն
բերելու և տեսիլքն ու մարգա-
բերքը կնքելու և ամենասուրբը
օծելու համար։ Եւ իմացիր ու 25
հասկացիր, որ Երուսաղէմը դար-
ձեալ շինելու համար հրամանը
դուրս գալուց մինչև †Մեսիա իշ-
խանը եօթը եօթնեակ և վեթ-
սունևերկու եօթնեակ կայ, ու
դարձեալ պիտի շինուի հրապա-
րակը և պարիսպը, այն էլ նեղ
ժամանակներում։ Եւ վեթսունև- 26
երկու եօթնեակից յետոյ պիտի
Մեսիան մահով դատապարտուի
բայց չէ թէ իրան համար. և ե-
կող իշխանի ժողովուրդը պիտի
փչացնէ քաղաքը և սրբարանը,
և նորա վերջը իբր թէ հեղեղով
կ'լինի, և մինչև պատերազմի վեր- 27
ջը աւերումներ են որոշուած։ Եւ
նա պիտի զօրացնէ ուխտը շա-
տերի համար մէկ եօթնեակ, և
եօթնեակի կէսին պիտի դադա-
րեցնէ զոհը և պատարագը. և
գծուէի ծայրի վերայ աւերածի
պղծութիւնը կ'լինի մինչև որ
վերջնական և նախասահմանեալ
պատուհասը կ'թափուի աւերածի
վերայ։

*կամ՝ շուտով թռչելով,
†Այսինքն՝ Օծեալ

ԳԼ. Ժ.

1 Պարսից Կիւրոս թագաւորի եր-
րորդ տարին խօսք յայտնուեցաւ
Դանիէլին, որի անունը Բաղդա-
սասար էր կոչվում, և խօսքը
ճշմարիտ էր և զօրքը մեծ. և նա
հասկացաւ խօսքը և տեղեկու-
թիւն ուներ տեսիլքի համար։
2 Ա,ն օրերը ես Դանիէլս սուգի
մէջ էի երեք եօթնեակ օրեր.
3 Ախորժելի հաց չ'կերայ և միս ու
գինի չ'մտաւ բերանս, և բնաւ
չ'օծուեցայ մինչև որ երեք եօթնե-
եակ օրերը լրացան։
4 Եւ առաջի ամսուայ քսանե-
չորերորդ օրը ես մեծ գետի՝
այսինքն Տիգրիսի եզերքին էի.
5 Եւ աչքերս բարձրացրի ու տե-
սայ, և ահա մէկ մարդ՝ կտաւ
հագած և մէջքը գօտի կապած
6 Ոփազի ոսկիից. Եւ նորա մարմի-
նը ոսկեքարի նման էր, և նորա
դէմքը կայծակի երևոյթին պէս
և աչքերը կրակի բոցերի պէս և
նորա բազուկներն ու ոտները
փայլուն պղնձի տեսքի նման, և
7 ձայնի պէս։ Եւ մինակ ես Դա-
նիէլս էի տեսնում այս տեսիլքը,
և այն մարդիկը՝ որոնք ինձ հետ
էին, տեսիլքը չէին տեսնում,
այլ մեծ երկիւղ ընկաւ նորանց
8 վերայ և փախան թաքուսաը։ Եւ
ես մինակ մնացի և տեսայ այս
մեծ տեսիլքը, և ինձանումս զօ-
րութիւն չ'մնաց, և իմ վայելչու-
թիւնը փոխուեցաւ ապականու-
թեան, և ես էլ այժ չ'ուներցայ։
9 Եւ լսեցի նորա խօսքերի ձայնը,
և երբոր նորա խօսքերի ձայնը
լսեցի, ես թմրած եղայ ընկայ
երեսիս վերայ, և երեսս գետինն
էր։
10 Եւ ահա մի ձեռք դպաւ ինձ,
և կանգնեցրեց ինձ ծունկերիս և
11 ձեռքերիս թաթերի վերայ, Եւ
ասեց ինձ. Ով Դանիէլ ցանկալի
մարդ, հասկացիր այն խօսքերը
որ ես ասում եմ քեզ և կանգ-
նիր կանգնած տեղդ, որովհետև
հիմա քեզ մեռ ուղարկուեցայ.
և նա այս խօսքը ինձ հետ խօսե-
լիս՝ ես կանգնեցի դողալով։ Եւ 12
նա ինձ ասեց. Մի վախենար, ով
Դանիէլ, որովհետև այն առաջին
օրիցը որ սիրտ տուիր հասկանա-
լու, և քո անձը խոնարհեցնելու
քո Աստուծոյ առաջին, քո խօս-
քերը լսուել են, և ես եկայ քո
խօսքերի համար։ Եւ Պարսից թա- 13
գաւորութեան իշխանը կանգնել
էր իմ դիմացը քսանևմէկ օր. և
ահա Միքայէլը՝ առաջի իշխան-
ներից մէկը եկաւ ինձ օգնելու.
և ես մնացի այնտեղ Պարսից թա-
գաւորի կշտին։ Եւ ես եկայ քեզ 14
հասկացնելու թէ ինչ պիտի պա-
տահէ քո ժողովրդին վերջի օրե-
րումը, որովհետև տեսիլքը տա-
կաւին այն օրերի համար է։ Եւ 15
նա այսպէս խօսքեր ինձ հետ խօ-
սելիս, ես երեսս դէպի գետինն
արի և համր եղայ։
Եւ ահա մարդի որգկանց նմա- 16
նութիւնով մէկը դպաւ շրթունք-
ներիս, և ես բերանս բաց արի և
խօսեցի և ասեցի իմ առաջը
կանգնողին. Ով տէր իմ, այս տե-
սիլքովը ես դառան դէպի ինձ
իմ ցաւերը, և ես էլ այժ չ'ու-
նեցայ։ Եւ ինչպէս պիտի կարո- 17
ղանայ այս իմ տիրոջ ծառան խօ-
սել այս իմ տիրոջ հետ. որով-
հետև ինձանումս հիմակուանից
այժ չ'կայ, և ինձանումս շունչ
չ'մնաց։ Եւ կրկին դպաւ ինձ այն 18
մարդի կերպարանքը և
ինձ զօրացրեց. Եւ ասեց. Մի վա- 19
խենար, ով ցանկալի մարդ, խա-
ղաղութիւն քեզ, զօրացիր, զօ-
րացիր. և նա ինձ հետ խօսելիս
ես զօրացայ և ասեցի. Թող խօսէ
տէրս, որովհետև ինձ զօրացրիր։
Եւ նա ասեց. Գիտե՞ս թէ ին- 20
չու համար եկայ քեզ մօտ, և
հիմա ետ պիտի դառնամ Պար-
սից իշխանի հետ պատերազմե-
լու. և ես դուրս եկած ժամա-
նակը, ահա Յունաց իշխանը պի-
տի գայ։ Սակայն ես քեզ խոս- 21
ցուեմ եմ ճշմարտութեան գրք-
քումը գրուածը, և մեկը չ'կայ
որ ինձ հետ զօրեղանայ սրանց
դեմ բացի ձեր իշխան Միքայէ-
լից։

Գլ. ԺԱ.

1 Եւ ես Մարաց Դարեհ թագաւորէն առաջին տարին կանգնել եմ նորա հետ՝ ուժ տալու եւ
2 նորան օգնելու։ Եւ հիմա քեզ ճշմարտութիւնը իմացնեմ. Ահա դեռ երեք թագաւորներ են վեր կենալու Պարսից համար, եւ չորրորդը մեծ հարստութիւնով պիտի հարստանայ ուրիշ քան թէ ամենքը. եւ երբոր նա ուժ տայ իր հարստութիւնովը, այն ժամանակ նա ամենին պիտի գրգռէ Յունաց թագաւորութեան դէմ։
3 Եւ վեր կ'կենայ մի զօրաւոր թագաւոր, որ մեծ իշխանութիւնով կ'իշխէ եւ կ'անէ իր հաճութեան պէս։
4 Եւ հենց որ բարձրացաւ, պիտի կոտրուի նորա թագաւորութիւնը եւ պիտի բաժանուի երկնքի չորս կողմերին. բայց ոչ թէ իր յաջորդներին եւ ոչ էլ այն իշխանութեան պէս, որ իշխած էր. որովհետեւ նորա թագաւորութիւնը պիտի քանդուի եւ ուրիշներինը լինի ասրանցից զատ։
5 Եւ պիտի զօրանայ Հարաւի թագաւորը, եւ նորա իշխաններից մէկը պիտի զօրանայ նորա վերայ եւ տիրէ. մեծ իշխանութիւն պիտի լինի նորա իշխանութիւնը։
6 Եւ մի քանի տարիներից յետոյ պիտի իրար հետ դաշնակցեն, եւ Հարաւի թագաւորի աղջիկը պիտի գնայ Հիւսիսի թագաւորին հաշտութիւն անելու համար. բայց բազուկի ոյժ պիտի չ'ունենայ, եւ պիտի չ'դիմանայ նորա բազուկն էլ. այլ պիտի մատնուին՝ ինքը եւ նորա բերողները եւ նորա ծնողները եւ նորան այն ժամանակներում օգնողները։
7 Բայց նորա արմատների ընձիւղներից մէկը վեր կ'կենայ նորա համար, եւ նա կ'գայ զօրքով եւ կ'մտնէ Հիւսիսի թագաւորի ամրոցը եւ կ'գործէ նորանցում եւ կը
8 զօրեղանայ։ Եւ նա նորանց աստուածներն էլ նորանց ձուլածոյ կուռքերի եւ սակեղէն ու արծաթեղէն ցանկալի առաններով հետ գերի պիտի տանէ Եգիպտոս. եւ մի քանի տարի նա բարձր պիտի լինի Հիւսիսային թագաւորից։
9 Եւ պիտի մտնէ Հարաւային թագաւորի թագաւորութեան մէջ, եւ ետ գառնայ իր երկիրը։
10 Եւ նորա որդիքը պիտի դիմաւորուին եւ շատ զօրքերի բազմութիւն ժողովեն. եւ նա անպատճառ պիտի գայ եւ հեղեղէ ու անցնէ. եւ ետ գառնալիս էլ պիտի պատերազմէ մինչեւ նորա ամրոցը։
11 Բայց Հարաւի թագաւորը պիտի գառնանայ եւ պիտի դուրս գայ ու պատերազմէ նորա հետ այսինքն Հիւսիսի թագաւորի հետ. նա էլ մեծ բազմութիւն է հաներլու, եւ այն բազմութիւնը
12 նորա ձեռքն է տրուելու։ Եւ բազմութիւնը պիտի բարձրանայ, նորա սիրտը պիտի հպարտանայ, եւ նա բիւրաւորներ պիտի վայր դցէ, բայց պիտի չ'ուժականայ։
13 Եւ Հիւսիսի թագաւորը ետ պիտի գառնայ եւ մի բազմութիւն հանէ առաջինից շատ. եւ մի քանի ժամանակներից յետոյ անպատճառ պիտի գայ մեծ զօրքով եւ մեծ պատրաստութիւնով։
14 Եւ այն ժամանակները շատերը վեր են կենալու Հարաւային թագաւորի դէմ, եւ քո ժողովրդի բռնաւորների որդիքը պիտի բարձրանան, որ հաստատուն տեսիլքը, բայց պիտի ընկնեն։
15 Եւ Հիւսիսի թագաւորը պիտի գայ, եւ հողաբլուրներ պիտի կուտէ եւ առնէ պարսպաւոր քաղաքները. եւ Հարաւի բազուկները պիտի չ'դիմանան եւ նորա ընտրեալների ժողովուրդն էլ, եւ դիմանալու ոյժ էլ չի լինիլ։
16 Եւ նորա դէմ եկողը պիտի իր հաճութեան պէս անէ, եւ կանգնող չի լինիլ նորա առաջին. եւ նա պիտի կանգնէ փառաւոր երկրում, եւ նա պիտի
17 փչանայ նորա ձեռովը։ Եւ իր երեսը պիտի ուղղէ որ գայ իր թագաւորութեան բոլոր ոյժովը, եւ ուղիղները նորա հետ. եւ նա պիտի գործէ, եւ կանանց աղջիկը պիտի տայ նորան որ փչացնէ նորան. բայց նա պիտի չ'կանգնէ,
18 եւ նա նորանը պիտի չ'լինի։ Յետոյ նա իր երեսը պիտի դարձնէ դէպի կղզիները եւ շատերը պիտի առնէ. եւ մի իշխան պիտի դադարեցնէ նորա նախատինքը դէպի նորան, առանց նորա նախատինքը
19 իրան ետ դարձնելու։ Եւ նա ետ պիտի դարձնէ իր երեսը դէպի իր երկրի ամրոցները, բայց պիտի գլորուի եւ վայր ընկնի ու չը գտնուի։
20 Եւ նորա տեղը մէկը վեր կ'կենայ, որ կ'ուղարկէ հարկապատհանչին թագաւորութեան փառքով, եւ նա մէկ քանի օրերից յետոյ կ'կորուի, բայց ոչ բարկութիւնով եւ ոչ պատերազմով։
21 Եւ նորա տեղը մէկ անարգը վեր կ'կենայ, որ նորան թագաւորական պատիւ չեն տալ. բայց նա կ'գայ հանդարտութիւնով եւ կ'յափշտակէ թագաւորութիւնը
22 շողոքորթութիւններով։ Եւ հեղեղի բազուկները պիտի ընկըղմուին նորա առաջին եւ ջարդուին, եւ ուխտի իշխանն էլ։
23 Եւ նորա հետ եղած դաշնակցութիւնից նա նենգութիւն պիտի անէ, եւ վեր պիտի գնայ եւ ոյժ
24 ստանայ քիչ ազգով։ Խաղաղ եւ պարարտ գաւառը պիտի մտնէ, եւ պիտի անէ այն ինչ որ չէին արել նորա հայրերը եւ նորա հայրերի հայրերը. կողոպուտ, աւար եւ առատաձեռնութիւն պիտի բաշխէ նորանց, եւ պարիսպների դէմ պիտի մտածմտածէ, բայց
25 մինչեւ մի ժամանակ։ Եւ իր զօրութիւնն ու իր սիրտը պիտի մեծ զօրքով գրգռէ Հարաւային թագաւորի դէմ, եւ Հարաւային թագաւորը պիտի պինդ պատերազմի մեծ եւ խիստ զօրաւոր զօրքով, բայց պիտի չ'դիմանայ. որովհետեւ նորա դէմ խորհուրդներ պիտի խորհեն։
26 Եւ նորա կերակուրները ուտողները նորան պիտի կոտրեն. եւ նորա զօրքը պիտի ընկղմէ. եւ շատ սպանուածներ պիտի ընկնեն։
27 Եւ այս երկու թագաւորների էլ սրտերը չարութեան համար է. եւ մէկ սեղանի վերայ սուտ են խօսելու, բայց չէ յաջողելու, որովհետեւ ատկաւին վախճանի կայ որոշուած ժամանակի համար։
28 Եւ նա երկիրը պիտի դառնայ մեծ առատաձեռնով, եւ նորա սիրտը սուրբ ուխտի դէմ է լինելու. եւ պիտի գործէ եւ ետ գառնայ իր երկիրը։
29 Որոշուած ժամանակին ետ պիտի դառնայ եւ գնայ Հարաւի վերայ. բայց առաջինի եւ վերջինի նման չի լինիլ։
30 Որովհետեւ Կիտացիների նաւերը նորա վերայ պիտի գնան, եւ նա պիտի թուլանայ. եւ նա ետ պիտի դառնայ ու բարկանայ սուրբ ուխտի դէմ եւ գործէ, եւ ետ պիտի գառնայ եւ ուշը դարձնէ սուրբ ուխտը ձգողների վերայ։
31 Եւ բազուկներ են վեր կենալու նորա կողմից, եւ նորանք պիտի պղծեն սրբարանը՝ ամրոցը եւ հեռացնեն մշանջենական պատարագը եւ պիտի դնեն աւերածի պղծութիւնը։
32 Եւ ուխտին դէմ ամբարշտութիւն անողներին պիտի հրապուրէ շողոքորթութիւնով, բայց իրանց Աստուածն ճանաչողների ժողովուրդը պիտի զօրանայ եւ գործէ. եւ ժողովրդի
33 իմաստուններն շատերին պիտի սովորեցնեն, բայց մի քանի ժամանակ պիտի ընկնեն սրով ու կրակով, գերութիւնով ու յափշտակութիւնով։
34 Եւ նորանք ընկնելիս մի փոքր օգնութիւնով պիտի օգնուին, եւ շատերը շողոքորթութիւններով նորանց պիտի յարեն։
35 Եւ իմաստուններից ոմանք պիտի ընկնեն, որ նորանց միջով փորձէ եւ մաքրէ եւ սպիտակացնէ մինչեւ վերջի ժամանակը. որովհետեւ դեռ մինչեւ որոշ ժամանակն է։
36 Եւ թագաւորը իր հաճութեան պէս պիտի անէ, եւ իրան բարձրացնելու եւ մեծացնելու է ամեն աստուածութիւնից վեր, եւ աստուածների Աստուծոյ դէմ ահռելի բաներ է տալու, եւ պիտի յաջողի մինչեւ որ կատարէ բարկութիւնը, որովհետեւ նախասահմանուածը պիտի գործադրուի։
37 Եւ իր հայրերի աստ-

ուածներին մի բան պիտի չ'հասմարէ, և կանանց ցանկութիւնը, և ոչ մի աստուած մի բան պիտի չ'համարէ, որովհետև իրան ամենից մեծ է համարելու։ Սակայն ամրոցներուն աստուածուն՝ իրան տեղը՝ կ'պատուէ և իր հայրերուն չ'ճանաչած աստուածուն կ'պատուէ ոսկով ու արծաթով և պատուական քարերով ու ցանկալի բաներով։ Եւ պիտի գործէ ամրոցներուն պնդութիւնովը օտար աստուածով հետ. ով որ ճանաչէ նորան՝ փառքը պիտի շատացնէ, և նորանց տիրել պիտի տայ շատերուն վերայ, և երկիր է բաժանելու իբրև վարձք։

Եւ վերջին ժամանակումը նորա հետ պիտի զարկուի հարաւի թագաւորը և մրրիկի պէս նորա վերայ է յարձակելու հիւսիսի թագաւորը կառքերով և ձիաւորներով և շատ նաւերով, և երկիրները պիտի մտնէ և պիտի ողողէ ու անցնէ։ Եւ պիտի դայ փառաւոր երկիրը, և շատերը պիտի կործանուին. բայց սորանք պիտի ազատուին նորա ձեռիցը՝ Եդովմը և Մովաբը և Ամմոնի որդւոցանց գլխաւոր մասը։ Եւ նա իր ձեռքը պիտի մեկնէ դէպի երկիրները. և Եգիպտոսի երկիրը չի ազատուիլ։ Եւ պիտի տիրէ Եգիպտոսի ոսկի և արծաթի դանձերին և բոլոր ցանկալիքներին. և Լիբէացիք ու Եթէովպացիք նորան հետևող կ'լինեն։ Բայց լուրերը պիտի խռովեցնեն նորան արևելքից և հիւսիսից, և նա պիտի դուրս գայ մեծ բարկութիւնով որ շատերին փչացնէ և բնաջինջ անէ. Եւ նա իր պալատի պէս վրանները տարածելու է ծովերի մէջտեղը դէպի փառաւոր սուրբ սարը. և պիտի հասնէ իր վախճանին. և նորան օգնող պիտի չ'լինի։

ԳԼ. ԺԲ

Եւ այն ժամանակ վեր կ'կենայ այն մեծ իշխան Միքայէլը, որ կանգնած է քո ժողովրդի որդւոցանց վերայ. և նեղութեան ժամանակ կ'լինի, որը եղած չէ քանի որ մի ազգ կայ մինչ այս ժամանակը, և այն ժամանակ քո ժողովուրդը կ'ազատուի՝ ամեն ով որ գտնուի գրքումը գրուած։ Եւ երկրի հողումը գնացողներէն շատերը պիտի զարթնեն ոմանք ի յաւիտենական կեանք, իսկ ոմանք ի յաւիտենական նախատինք և անարգանք։ Եւ իմաստունները պիտի փայլեն երկինքի հաստատութեան լոյսին պէս և շատերին արդարութեան առաջնորդողները՝ աստղերին պէս յաւիտեանս յաւիտենից։

Եւ դուս, ով Դանիէլ, փակիր այս խօսքերը և կնքիր գիրքը մինչև վերջի ժամանակը. շատերը պիտի քննեն, և գիտութիւնը պիտի շատանայ։

Եւ ես Դանիէլս տեսայ, և ահա երկու ուրիշը կանգնել էին, մէկը գետի այսափին՝ միւսը գետի այն փին։ Եւ ասեց այն կտաւ հագած մարդին, որ գետի ջրերից վեր էր. Մինչև ե՞րբ է այս զարհուրելացից վերջը։ Եւ ես լսեցի, որ այն կտաւ հագած մարդը, որ գետի ջրերից վեր էր, իր աջ և ձախ ձեռքը բարձրացրեց դէպի երկինքը և երդում արաւ յաւիտեանս կենդանի եղողովը, թէ մի ժամանակ, երկու ժամանակներ և կէս. և երբոր վերջացնայ սուրբ ժողովրդի ձեռքի փշրբուիլը, այս ամենը պիտի կատարուի։

Եւ ես լսեցի, բայց չ'հասկացայ, և ասեցի. Ով տէր իմ, ի՞նչ պիտի լինի սորանց վերջը. Եւ նա ասեց. Գնա, Դանիէլ, որովհետև այս խօսքերը փակուած և կնքուած են մինչև վերջի ժամանակը։ Շատերը պիտի մաքրուին և սպիտականան և լրծուի փորձուին, իսկ ամբարիշտները պիտի ամբարշտանան, և ոչ մի ամբարիշտ պիտի չ'հասկանայ. բայց իմաստունները պիտի հասկանան։ Մշտնջենական պղծութիւնը դնելուս և աւերածի պղծութիւնը դնելուս ժամանակից յետոյ հազար երկուհարիւր իննսուն օր է։ Երանի նորան որ կ'սպասէ և կ'հասնի հազար երեք հարիւր երեսունեւ հինգ օրուան։ Բայց դուս գնա մինչև վախճանը և հանգստացիր, և կ'կանգնես օրերի վերջին քո վիճակումը։

ՈՎՍԷԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

Տէրոջ խօսքը, որ եղաւ Բէերիի որդի Ովսէէին Յուդայի Թագաւորներէն՝ Ոզիայի, Յովաթամի, Աքազի և Եզեկիայի օրերուն և Իսրայէլի Թագաւոր Յովասի որդի Յերոբովամի օրերուն։

Սկզբումը Տէրը Ովսէէի հետ խօսելով՝ Տէրը ասեց Ովսէէին. Գնա քեզ համար մի պոռնկուհի Թեան կին և պոռնկութեան որդիք առ. որովհետև երկիրը բոլորովին պոռնկացել է Տիրոջը հետևելուց։

Եւ նա գնաց և առաւ Դաբելայիմի աղջիկ Գոմերին. և նա յղացաւ և նորա համար մի որդի ծնեց։ Եւ Տէրն ասեց նորան. Նորա անունը դիր Յեզրայէլ, որովհետև քիչ ժամանակից յետոյ պիտի պահանջեմ Յեզրայէլի արիւնները Եհուի տանիցը, և պիտի դադարեցնեմ Իսրայէլի տան Թագաւորութիւնը։ Եւ այն օրը կ'լինի, որ կ'կոտրեմ Իսրայէլի աղեղը Յեզրայէլի հովտումը։

Եւ նա դարձեալ յղացաւ և ծնեց մի աղջիկ։ Եւ նա ասեց նորան. Դորա անունը *Լօ-րուհամա դիր, որովհետև այլ ևս չեմ ողորմելու Իսրայէլի տանը որ նորանց ներեմ։ Բայց Յուդայի տանը ողորմելու եմ։ և նորանց պէտք է փրկեմ իրանց Տէր Աստուածովը, և նորանց չեմ փրկել աղեղով և սրով ու պատերազմով՝ ձիերով ու ձիաւորներով։

Եւ նա կաթեց կարեց Լօ-րուհամային, և յղացաւ ու ծնեց մի տղայ. Եւ նա ասեց նորան. Դորա անունը դիր †Լօ-ամմի, որովհետև դուք իմ ժողովուրդը չէք, և ես էլ ձեզ Աստուած չեմ լինիլ։ Եւ Իսրայէլի որդւոցանց թիւը ծովի աւազի պէս պիտի լինի որ չի չափուիլ և չի համարուիլ. և պիտի լինի որ՝ այնտեղ որ նորանց ասուեցաւ՝ Դուք իմ ժողովուրդը չէք, նորանց պիտի ասուի՝ կենդանի Աստուածոյ որդիք։ Եւ Յուդայի որդիքն ու Իսրայէլի որդիքը պիտի ժողովուին մէկտեղ, և իրանց վերայ մէկ իշխան դնեն և վեր դնան երկրիցը, որովհետև մեծ է Յեզրայէլի օրը։

ԳԼ. Բ

Ձեր եղբայրներին ասեցէք՝ ‡Ամմի և ձեր քոյրերին՝ ||Րուհամա. Վիճեցէք ձեր մօր հետ, վիճեցէք, որովհետև նա իմ կինը չէ, և ես նորա այրը չեմ. որ նա հեռացնէ իր պոռնկութիւնները իր երեսից, և իր շնութիւնները իր ատինքի մէջիցը։ Որ մի գուցէ նորան հանեմ մերկացնեմ, և նորան

*Այլ.՝ չ'ողորմեալ

†Այլ.՝ ոչ իմ ժողովուրդ

‡Այլ.՝ իմ ժողովուրդ

||Այլ.՝ ողորմեալ

ներկայացնեմ իր ծնունդն օրին
պէս. և նորան անապատի պէս
չինեմ, և նորան անջուր երկրի
պէս անեմ և ծարաւով մեռցնեմ
4 նորան. Եւ նորա որդկանցը չ'ո-
ղորմեմ, որ պոռնկութեան որ-
5 դիք են նորանք։ Որովհետև նո-
րանց մայրը պոռնկացաւ, խայ-
տառակութեամբ նորանց ծնողը որ
առեց. Գնամ իմ համբոյրների
հետևից, որոնք որ տալիս են իմ
հացը և ջուրը, բուրդն ու քթա-
6 նը, իւղը և խմելիքներս։ Ուրա
համար ահա ես փուշերով ցանդ
պիտի քաշեմ *նորա ճանապար-
հին և նորան պիտի պատեմ պա-
տով, որ նա իր շաւիղները չ'գտնէ։
7 Եւ նա կ'գնայ իր համբոյրների ե-
տևից, բայց նորանց չի հասնիլ, և
նորանց կ'որոնէ, բայց չի գտնիլ.
այն ժամանակ կ'ասէ. Եա գա-
նամ գնամ իմ առաջի մարդի
մօտ, որովհետև ինձ համար այն
8 ժամանակը լաւ եր քան թէ հի-
մա։ Եւ նա չ'գիտեր, որ ես էի
տալիս իրան ցորենը, գինին և
իւղը. և ես նորա արծաթը շա-
տացրի և ոսկին, որոնցով նորանք
9 բահաղները չինեցին։ Դորա հա-
մար ես պիտի առնեմ ցորենս իր
ժամանակին և գինիս իր եղա-
նակին, և պիտի խլեմ բուրդս ու
քթանս, որ նորա մերկութիւնը
10 ծածկելու համար էր. Եւ հիմա
պիտի յայտնեմ նորա անզգամու-
թիւնը նորա համբոյրների առա-
ջին, և ոչ ոք չէ կարող նորան
11 ազատել իմ ձեռքից։ Եւ պիտի
դադարեցնեմ նորա բոլոր ուրա-
խութիւնները, նորա տօները,
ամսագլուխները և շաբաթները.
12 և նորա բոլոր հանդիսաւոր ժա-
մանակները. Եւ պիտի աւերեմ
նորա որթերը և թզենիները, ո-
րոնց համար ասում եր ինձ Ն-
րանք իմ կապիկն են, որ իմ
համբոյրները տուել են ինձ. և
ես նորանց անտառ պիտի չինեմ,
և գաշտի գազանները պիտի ու-
13 տեն նորանց։ Եւ նորան պիտի
պատժեմ բահաղիմների օրերի
համար, որոնցում նա խունկ եր
ծխում նորանց, և զարդարվում
եր օղերովը և պատճառանքովը,
և իր համբոյրների հետից գնում,
և ինձ մոռացել եր, ասում է
Տէրը։

Սորա համար ահա ես նորան 14
կ'համոզեմ, և նորան կ'տանեմ
անապատը, և կ'խօսեմ նորա սրտի
հետ։ Եւ ես կ'տամ նորան իր 15
այգիները այնտեղից, և Աքովրի
ձորը իբրև յոյսի դուռ, և նա
կ'պատասխանէ այնտեղ իր ման-
կութեան օրերի պէս և իր եգիպ-
տոսի երկրից վեր գալու օրուան
պէս։ Եւ կ'լինի այն օրը, ասում 16
է Տէրը, որ ինձ Ով իմ այր կը
կանչես, և ինձ այլ ևս †բահաղա
չես կոչիլ։ Եւ ես կ'հեռացնեմ 17
բահաղիմների անունները նորա
բերանից. և նորանք այլ ևս պի-
տի չյիշուին իրանց անուններովը։
Եւ նորանց համար ուխտ պիտի 18
դնեմ այն օրը գաշտի գազաննե-
րի հետ և երկնքի թռչուննների
հետ և երկրի սողուննների հետ.
և աղեղը, սուրը և պատերազմը
պիտի կոտրեմ երկրից, և նորանց
պիտի պառկեցնեմ ապահովու-
թեամբ։ Եւ քեզ պիտի նշանեմ 19
ինձ համար յաւիտեան. և քեզ
պիտի նշանեմ ինձ համար ար-
դարութիւնով և իրաւունքով, և
ողորմութիւնով ու գթութիւ-
նով։ Եւ քեզ պիտի նշանեմ ինձ 20
համար ճշմարտութիւնով, և դու
կ'ճանաչես Տիրոջը։ Եւ կ'լինի այն 21
օրը, որ ես կ'պատասխանեմ, ա-
սում է Տէրը, կ'պատասխանեմ
երկնքին, և նա կ'պատասխանէ 22
երկրին։ Եւ երկիրը կ'պատասխա-
նէ ցորենին, գինիին և իւղին, և
նորանք կ'պատասխանեն Յեզրա-
յէլին։ Եւ նորան պիտի սերմա- 23
նեմ ինձ համար երկրի վերայ
և պիտի ողորմեմ չ'ողորմեալին,
և կ'ասեմ նորան որ իմ ժողո-
վուրդը չէ. Դու իմ ժողովուրդն
ես, և նա կ'ասէ. Ով իմ Աստ-
ուած։

*Եբր.՝ քո

†Այլ՝ Տէրս

Գլ.՝ Գ

1 Եւ Տէրն ասեց ինձ. Կրկի գնա մի
ընացող կին սիրիր՝ ընկերիցը սի-
րուած, ինչպէս որ Տէրը սիրում է
իսրայէլի որդկանցը, իսկ նորանք
դառնում են դէպի ուրիշ աստ-
ուածներ և չամիչի կարկանդակ-
2 ներ են սիրում։ Եւ ես առայ նո-
րան ինձ համար տասնեհինգ ար-
ծաթով և մէկ ու կէս քոռ գա-
3 րիով, և ասեցի նորան. Շատ
օրերով կ'նստես ինձ համար, չես
պոռնկանալ, և մարդի չես մե-
տնիլ, իսկ ես էլ նոյնպէս քո
նկատմամբ։
4 Որովհետև շատ օրեր իսրայէլի
որդիքը պիտի նստեն առանց թա-
գաւորի և առանց իշխանի, և ա-
ռանց զոհի ու առանց կոթողի, և
առանց եփուդի ու առանց թե-
5 րափիմի։ Յետոյ պիտի դառնան
իսրայէլի որդիքը և որոնեն իրանց
Տէր Աստուծուն և իրանց Դա-
ւիթ թագաւորին, և դողալով
մտնեն Տիրոջը և նորա բարու-
թեանը վերջի օրերում։

Գլ.՝ Դ

1 Լսեցէք Տիրոջ խօսքը, ով Ի-
սրայէլի որդիք, որ Տէրը վէճ ունի
երկրի բնակիչների հետ, որով-
հետև ճշմարտութիւն չ'կայ, ո-
ղորմութիւն չ'կայ, և Աստուծոյ
գիտութիւն չ'կայ երկրի մէջ։
2 Երդնուլն ու սուտը և սպանելն
ու գողանալն ու պոռնկանալը
դուրս են թափուել. և արիւն-
ները արիւնների են հասնում։
3 Դորա համար երկիրը սուգ պիտի
անէ, և պիտի նուաղին նորա բո-
լոր բնակիչները գաշտի գազաննե-
րի և երկնքի թռչուննների հետ,
և ծովի ձկերն էլ պիտի վերջա-
4 նան։ Սակայն թող մարդ չ'վիճէ,
և մարդ չ'յանդիմանէ. բայց քո
ժողովուրդը քահանայի հետ վի-
5 ճաղների պէս է։ Եւ դու կ'գլոր-
ուիս ցերեկը, և կ'գլորուի քեզ
հետ մարգարէն էլ գիշերը, և
պիտի բնաջինջ անեմ քո մօրը։
6 Իմ ժողովուրդը բնաջինջ ե-
ղաւ գիտութիւն չ'լինելուն հա-
մար. որովհետև դու մերժեցիր
գիտութիւնը, ես էլ քեզ եմ
մերժելու իմ քահանայութիւն-
ը. և դու մոռացար քո Աստու-
ծոյ օրէնքը, ես էլ քո որդկանցն
եմ մոռանալու։ Որչափ որ բազ- 7
մացան, այնչափ մեղանչեցին ինձ
դէմ. Նորանց փառքը ես անար-
գութեան պիտի փոխեմ։ Նորանք 8
ուտում են իմ ժողովրդի մեղքը,
և սրտով ցանկանում են նորանց
անօրէնութեանը։ Եւ պիտի լինի 9
ինչպէս ժողովրդին նոյնպէս էլ
քահանային, և նորանց պիտի
պատժեմ նորանց ճանապարհնե-
րի համեմատ, և նորանց գործերը
պիտի հատուցանեմ իրանց։ Եւ 10
նորանք կ'ուտեն ու չեն կշտա-
նալ, կ'պոռնկանան ու չեն բազ-
մանալ. որովհետև թողել են Տի-
րոջը որ չ'հնազանդեն։
Շնութիւնը, գինին և քաղցուն 11
տանում են սիրտը։ Իմ ժողո- 12
վուրդը իր փայտին է հարցնում,
և իր ցուցը պիտի խնացնէ նորան.
որովհետև պոռնկութեան հոգին
խաբել է, և պոռնկացան իրանց
Աստուծուն չ'հպատակելով։ Սա- 13
րերի գլուխներին զոհ են մա-
տուցանում, և բլուրների վերայ
ծխում կաղնիի, կաղամախի և
բևեկնիի տակ՝ քանի որում հով-
նին սիրուն է. սորա համար ձեր
աղջիկները պիտի պոռնկանան, և
ձեր հարսները շնութիւն անեն։
Ես չեմ պատժել ձեր աղջիկնե- 14
րին նորանք պոռնկանալիս, և ձեր
հարսներին՝ երբոր նորանք շնա-
նան. որովհետև սորանք պոռնիկ-
ների հետ բաժանուած են, և
նուիրեալ բոզերի հետ զոհում
են. և ժողովուրդը, որ չէ հաս-
կանում, կորչում է։
Թէև դու պոռնկանաս, ով Ի- 15
սրայէլ, Յուդան թող յանցաւոր
չլինի. և մի գնաք Գաղգաղա, և
վեր մի եկնէք Բեթաւան, և եր-
դում մի անէք՝ կենդանի է Տէրը։
Որովհետև ապստամբ երինջի պէս 16
ապստամբել է Իսրայէլ. հիմա
նորանց պիտի արածեցնէ Տէրը
գառների պէս լայնարձակ տեղ։

17 Եփրեմը կուռքերին է փակել.
18 թող տուր դորան։ *Խոտորնակ է
նորանց արբեցողութիւնը՝, շնու-
թիւնով շնացել են, սիրով սի-
րահարուել են ամօթի նորա իշ-
19 խանները։ Քամին նորան փաթա-
թել է իր թևերի մէջ և նորանք
պիտի ամաչեն իրանց զոհերիցը։

ԳԼ. Ե

1 Լսեցէք այս, ով քահանաներ,
և ականջ դրէք, ով Իսրայէլի
տուն, և ուշադիր եղէք, ով Թա-
գաւորի տուն, որ դատաստան
կայ ձեզ համար, որովհետև դուք
որոգայթ եղաք Մասփայում, և
տարածուած վարմ՝ Թաբօրի վե-
2 րայ։ Եւ ապականութիւնով մո-
լորուողները խորասոյզ եղան,
բայց ես նորանց ամենին պիտի
3 խրատեմ։ Ես ճանաչում եմ Եփ-
րեմին, և Իսրայէլը ծածկուած
չէ ինձանից. որովհետև դու հի-
մա շնացար, ով Եփրեմ, Իսրա-
4 յէլը պղծուած է։ Թոյլ չեն տա-
լիս նորանց գործերը, որ ետ դառ-
նան իրանց Աստուծոյ մօտ. որով-
հետև նորանցում շնութեան հո-
գի կայ, և Տիրոջը չեն ճանաչում։
5 Եւ Իսրայէլի հպարտութիւնը
պիտի խոնարհուի նորանց առա-
ջին, և Իսրայէլն ու Եփրեմը պի-
տի գլորուին իրանց անօրէնու-
թեամբը, Յուդան էլ պիտի գլոր-
6 ուի նորանց հետ։ Նորանք իրանց
ոչխարներովն ու արջառներովը
պիտի գնան Տիրոջը որոնելու,
բայց պիտի չ՚գտնեն, նա քաշուել
7 է նորանցից։ Նորանք անհաւա-
տարմութիւն արին Տիրոջը, որ
օտար որդիներ ծնան. հիմա ա-
միսը պիտի ուտէ նորանց իրանց
վիճակներովը։
8 Շեփոր հնչեցրէք Գաբաայումը,
փող՝ Ռամայումը, բարձրաձայն
կանչեցէք Բեթաւանումը, քո ե-
9 տևիցը, ով Բենիամին։ Եփրեմը
ամայի պիտի դառնայ իր յանդի-
մանութեան օրը. Իսրայէլի ցեղե-
րումը ճշմարտութիւնն իմացրի։

*Կամ՝ խնճոյքը որ վերջացաւ,

Յուդայի իշխանները սահմանը 10
փոխողների պէս եղան, նորանց
վերայ պիտի թափեմ ջրերի
պէս իմ բարկութիւնը։ Եփրեմը 11
ճնշուած է և դատաստանով
փշրուած, որ յօժարակամ գնաց
հրամանի ետևիցը։ Բայց ես ցեցի 12
պէս եմ Եփրեմի համար, և ու-
տիճի պէս՝ Յուդայի տան համար։
Եւ Եփրեմը տեսաւ իր ցաւը և 13
Յուդան՝ իր վէրքը, և Եփրեմը
գնաց Ասորեստան, և Յարէբ Թա-
գաւորի մօտ ուղարկեց. բայց նա
կարող չէ ձեզ առողջացնել, և
չի առողջացնիլ ձեր վէրքը։ Որով- 14
հետև ես առիւծի պէս եմ Եփ-
րեմի համար, և առոյգ առիւծի
պէս՝ Յուդայի տան համար. ես՝
ես պիտի պատառեմ ու գնամ,
պիտի տանեմ և ազատող պիտի
չ՚լինի։ Գնում եմ՝ ետ եմ դառ- 15
նում իմ տեղը, մինչև որ իրանց
յանցանքը խոստովանեն և իմ ե-
րեսը որոնեն. երբոր նորանք նե-
ղութեան մէջ լինեն կանուխ պի-
տի ինձ դիմեն։

ԳԼ. Զ

Եկէք ու ետ դառնանք Տիրոջ 1
մօտ, որ նա պատառեց, և նա էլ
կ՚բժշկէ մեզ. նա զարկեց, նա էլ
կ՚պատէ մեզ։ Նա մեզ կ՚կեն- 2
դանացնէ երկու օրից յետոյ, եր-
րորդ օրը նա մեզ կ՚կանգնեցնէ,
և մենք կ՚ապրենք նորա առաջը։
Եւ կ՚ճանաչենք, և էլ կ՚հետե- 3
ւենք ճանաչելու Տիրոջը, արշա-
լոյսի պէս պատրաստ է նորա ել-
քը, և նա պիտի գայ մեզ համար
անձրևի պէս, վերջի անձրևի պէս
որ ոռոգում է երկիրը։
Ի՞նչ անեմ քեզ, ով Եփրեմ, 4
ի՞նչ անեմ քեզ, ով Յուդա, որ
ձեր բարութիւնը առաւօտեան
ամպին պէս է, և վաղահաս ցօղի
նման է որ անցնում է։ Նորա 5
համար տաշեցի մարգարէներովը,
նորանց սպանեցի իմ բերանի խօս-
քերովը, և քո դատաստանները
դուրս կ՚գայ իբրև լոյս։ Որովհետև 6
ողորմութիւն եմ ուզում և ոչ թէ
զոհ, և Աստուծոյ գիտութիւն՝

7 քան թէ ողջակէզներ։ Բայց նո-
րանք Ադամի պէս ուխտը զանց
են անում, այնտեղ ինձ անհաւա-
8 տարմութիւն արին։ Գաղաադը
անօրէնութիւն անողների քա-
ղաք է, շաղախուած է արիւնով։
9 Աւազակները մարդի ետևից դա-
րան մտնելու պէս քահանաների
խումբը Սիւքեմի ճանապարհումը
մարդիկ են սպանում, և եղեռնա-
10 գործութիւն անում։ Իսրայէլի
տանը սոսկալի բաներ տեսայ,
այնտեղ է Եփրեմի պոռնկութիւ-
11 նը, Իսրայէլը պղծուեցաւ։ Քեզ
համար էլ, ով Յուդա, մի հունձք
կայ, երբոր ես ետ կ՚դարձնեմ
իմ ժողովրդի գերութիւնը։

ԳԼ. Է

1 Ես Իսրայէլին բժշկելիս յայտ-
նուեցաւ Եփրեմի անօրէնութիւ-
նը և Սամարիայի չարութիւնները,
2 որովհետև նորանք ստութիւն են
գործում, գողը ներս է մտնում,
աւազակների գունդը դրսումը
2 մերկացնում է։ Եւ իրանց սրբ-
տումը չեն ասում թէ Ես յի-
շում եմ նորանց բոլոր չարու-
թիւնը, հիմա նորանց գործերը
պաշարում են նորանց. նորանք
3 իմ երեսի առաջին են։ Իրանց
չարութիւնովը ուրախացնում են
Թագաւորին, և իրանց ստու-
4 թիւններովը՝ իշխաններին։ Նո-
րանք ամենքը շնացողներ են, մի
Թոնիրի նման որ վառուած է
հաց թխողիցը, որ դադարում է
արծարծելուց՝ խմոր հունցելուց
5 մինչև նորա թթուելը։ Մեր Թա-
գաւորի օրումը հիւանդացան իշ-
խանները գինիի տաքութիւնից,
նա մեկնեց իր ձեռքը ծաղր ա-
6 նողների հետ։ Որովհետև նորանք
իրանց սիրտը Թոնիրի պէս են շի-
նել իրանց դարանումը, բոլոր
գիշերը գնում է նորանց հաց-
թուխը, առաւօտը նա վառվում
7 է բոցավառ կրակի պէս։ Նո-
րանք ամենքը տաքացել են Թո-
նիրի պէս. և ուտում են ի-
րանց դատաւորներին. նորանց
բոլոր Թագաւորներն ընկել են.

նորանցում ինձ կանչող չ՚կայ։
Եփրեմը խառնուել է ժողո- 8
վուրդներին, Եփրեմը դառել է
մի չ՚դարձուած կարկանդակ։ Օ- 9
տարները կերան նորա զօրութիւ-
նը, բայց ինքը չ՚գիտէ. ալևորու-
թիւն էլ է թափուել վերան,
դարձեալ ինքը չ՚գիտէ։ Եւ Իս- 10
րայէլի զօրութիւնը խոնարհուել
է նորա հանդէպ, բայց նորանք
ետ չեն դառնում իրանց Տէր Ա-
ստուծոյ մօտ, և այսու ամենայնիւ
նորան չեն որոնում։ Եւ Եփրեմը 11
եղել է մի միամիտ աղաւնիի պէս՝
անխելք. Եգիպտացիներին են
կանչել, Ասորեստան են գնում։
Հէնց որ նորանք գնացին, ես իմ 12
վարմը պիտի տարածեմ նորանց
վերայ, նորանց պիտի իջեցնեմ
երկնքի թռչունի պէս, և նորանց
պիտի պատժեմ ինչպէս որ լուր
է տրուել նորանց ժողովքին։
Վա՛յ նորանց, որ փախան ին- 13
ձանից, աւերո՛ւմ նորանց, որ ինձ
դէմ յանցաւոր եղան. Թէև ես
նորանց փրկեցի. բայց նորանք ինձ
դէմ ստութիւններ են խօսում։
Եւ նորանք չ՚աղաղակեցին ինձ 14
դէմ իրանց սրտովը, երբոր ող-
բում էին իրանց անկողինների վե-
րայ, նորանք ցորենի և գինիի հա-
մար խռնվում են, խոտորում են
ինձ դէմ։ Եւ ես խրատեցի, զօ- 15
րացրի նորանց բազուկը, իսկ նո-
րանք ինձ դէմ չարութիւն խոր-
հեցին։ Նորանք դառնում են, 16
բայց ոչ թէ դէպի Բարձրեալը,
նորանք խաբեբայ աղեղի պէս են
դառել, նորանց իշխանները սրով
պիտի ընկնեն իրանց լեզուի կա-
տաղութիւնից. նա նորանց նա-
խատինքը կ՚լինի Եգիպտոսի երկ-
րումը։

ԳԼ. Ը

Փողը բերանի՛ դ. արծիւի պէս 1
յարձակվում է Տիրոջ տան վերայ
Բշնամին, որովհետև զանց արին
իմ ուխտը, և իմ օրէնքի դէմ
յանցանք գործեցին։ Դէպի ինձ 2
են աղաղակում. Ով Աստուած,
մենք Իսրայէլս ճանաչում ենք

3 քեզ։ Իսրայէլը մերժեց բարին,
թշնամին պիտի հալածէ նորան։
4 Նորանք թագաւոր դրին, բայց
ոչ թէ ինձանից. իշխաններ դրին,
բայց ես չ'իմացայ. իրանց ար-
ծաթն ու իրանց ոսկին իրանց
համար կուռքեր շինեցին, որպէս
զի բնաջինջ լինեն։
5 Քո որթը մերժուեցաւ, ով
Սամարիա, վառուեցաւ իմ բար-
կութիւնը նորանց վերայ. մինչև
ե՞րբ պիտի նորանք չ'կարողանան
6 սրբուիլ։ Որովհետև նա էլ է Իս-
րայէլիցը. արուեստաւորը շինեց
նորան, և նա Աստուած չէ. ո-
րովհետև փշուր փշուր պիտի
7 դառնայ Սամարիայի որթը։ Ո-
րովհետև քամի սերմեցին և
մրրիկ պիտի հնձեն. նա հասկ
չ'ունի. բոյսը չի շինելու խիւսը.
եթէ շինէ էլ՝ օտարներն են կուլ
8 տալու։ Իսրայէլը կուլ գնաց.
հիմա ազգերի մէջ պիտի լինեն
9 անախորժ ամանի պէս։ Որովհետև
նորանք գնացին Ասորեստան. վայ-
րենի էշը ման է գալիս իրան հա-
մար. Եփրեմը սիրականներ է
10 վարձում։ Թէև վարձեն էլ ազ-
գերի մէջ, ես նորանց պիտի ժո-
ղովեմ. և նորանք *կ'հանգստա-
նան մի քիչ իշխանաց թագաւո-
11 րի բեռիցը։ Որովհետև Եփրեմը
շատացրեց սեղանները մեղանչե-
լով, սեղանները նորա համար
12 մեղքի պատճառ եղան։ Եւ ես նո-
րան գրեցի իմ բիւրաւոր օրէնք-
ները. իսկ նորանք օտարոտի բանի
13 պէս համարուեցան։ Իբրև իմ
ընծաների զոհեր նորանք միս են
զոհում և ուտում, Տէրը նո-
րանց չէ հաւանում. հիմա նա
պիտի յիշէ նորանց անօրէնու-
թիւնը և պատժէ նորանց մեղ-
քերը. նորանք Եգիպտոս պիտի
14 ետ դառնան։ Որովհետև Իսրա-
յէլը մոռացաւ իր Արարչին և
պալատներ շինեց. և Յուդան շա-
տացրեց պարսպաւոր քաղաքնե-
րը։ Բայց ես կրակ պիտի ուղար-
կեմ նորանց մէջ, և նա պիտի
լափէ նորա պալատները։

*Կամ՝ կ'չարչարուին

ԳԼ. Թ

Մի ուրախանար, ով Իսրա- 1
յէլ, ցնծութեամբ ժողովուրդ-
ների պէս, որ պոռնկութիւն ա-
րիր քո Աստուծոյ դէմ. կապէնք
սիրեցիր ամեն ցորենի կալի վերայ։
Կալը և հնձանը նորանց չի կերակ- 2
րիլ, և քաղցուն պիտի սաէ նո-
րան։ Նորանք չեն բնակուիլ Տի- 3
րոջ երկրումը, այլ Եփրեմը ետ
պիտի դառնայ Եգիպտոս. և Ա-
սորեստանում պիղծ բաներ պիտի
ուտէ։ Նորանք գինիի նուէր պի- 4
տի չ'մատուցանեն Տիրոջը և նո-
րան ընդունելի չեն նորանց զոհե-
րը. սգաւորների հացի պէս են
նորանց համար. նորա բոլոր ու-
տողները պիտի պղծուին, որով-
հետև նորանց հացը նորանց ան-
ձերի համար պիտի չ'մտնէ Տիրոջ
տունը։ Ի՞նչ էք անելու տօնի օրը, 5
և Տիրոջ տօնախմբութեան օ՞րը։
Որովհետև ահա գնում են կոր- 6
ծանումիցը, Եգիպտոսը պիտի ժո-
ղովէ նորանց, Մեմփիսը նորանց
թաղէ. նորանց ցանկալի արծա-
թեղէնները եղինճը պիտի ժա-
ռանգէ, փուշ պիտի լինի նորանց
վրաններումը։ Եկան այցելու- 7
թեան օրերը, եկան հատուցման
օրերը, Իսրայէլը պիտի իմանայ.
անմիտ է մարգարէն, խելագար՝
ներշնչեալ մարդը քո անօրէնու-
թեան շատութեան և մեծ հա-
կառակութեան համար։ Մտիկ է 8
տալիս Եփրեմը իմ Աստուծուն.
մարգարէն որոգայթ է լարում
նորա բոլոր ճանապարհների վե-
րայ, հակառակութիւն՝ իր Ա-
ստուծոյ տան մէջ։ Ապականուե- 9
ցան խրուեցան Գաբաայի օրերի
պէս. Նա պիտի յիշէ նորանց ան-
օրէնութիւնը, պատժէ նորանց
մեղքերը։
Խաղողի պէս գտայ ես անա- 10
պատումը Իսրայէլին. Թզենիի ա-
ռաջի երախայրիի պէս տեսայ ձեր
հայրերին. նորանք եկան Բաալ-
փեգովր, և իրանց նուիրեցին ա-
մօթի ու պիղծ եղան իրանց սի-
րածին պէս։ Եփրեմի փառքը 11
թռչնի պէս պիտի թռչտէ. ոչ

ծնունդ, ոչ արգանդ և ոչ յղու-
12 թիւն պիտի լինի։ Թէև իրանց որդ-
կանցը մեծացնեն, դարձեալ պի-
տի մարդից զուրկ թողեմ նո-
րանց. որովհետև վա՛յ էլ նորանց,
13 երբոր ես ետ քաշուիմ։ Եփրե-
մը՝ ինչպէս որ Տիւրոսը տեսայ,
տնկուած էր զուարճալի տեղ.
բայց Եփրեմը իր որդկանցը դուրս
14 պիտի հանէ սպանողի մօտը։ Տուր
նորանց, ով Տէր. ի՞նչ պիտի տաս.
տուր նորանց վիժող արգանդ և
15 ցամաք ստինքներ։ Նորանց բոլոր
չարութիւնը Գաղգաղայումն է.
որովհետև այնտեղ ատեցի նո-
րանց իրանց գործերի չարութեան
համար, նորանց արտաքսելու եմ
իմ տանիցը, էլ չեմ սիրելու նո-
րանց. նորանց բոլոր իշխանները
16 ապստամբներ են։ Հարուածուե-
ցաւ Եփրեմը. նորանց արմատը
չորացաւ. պտուղ չեն տալու.
թէև ծնեն էլ, նորանց արգան-
դի ցանկալիներին էլ պիտի մեռ-
ցնեմ։
17 Նորանց մերժելու է իմ Աստ-
ուածը, որովհետև նորան չ'լսե-
ցին. և թափառողներ պիտի լի-
նեն ազգերի մէջ։

ԳԼ. Ժ

1 Մի սաղարթածաւալ որթ է
Իսրայէլը. պտուղ է բերում ի-
րան համար. նա շատացրել է
սեղանները իր երկրի արդիւնքի
չափ. որքան լաւ է երկիրը, նորանք
այնքան լաւացնում են կուռքերը։
2 Կոկուած էր նորանց սիրտը. հի-
մա յանցաւոր կ'լինեն. նա պիտի
ջարդէ նորանց սեղանները, փչա-
3 ցնէ նորանց կուռքերը։ Որովհետև
հիմա նորանք պիտի ասեն. Մենք
թագաւոր չ'ունինք, որովհետև
Տէրից չ'վախեցինք, և թագաւորն
4 ի՞նչ կ'անէ մեզ։ Խօսքեր են խօ-
սել, սուտ երդուել, ուխտ դնե-
լիս, և դատաստանը սէզի պէս
պիտի բուսնէ արտի ակօսների վե-
5 րայ։ Բեթաւանի որթերի պատ-
ճառով պիտի վախենան Սամա-
րիայի բնակիչները, որ սուգ պի-
տի անէ նորա վերայ նորա ժողո-
վուրդը, և նորա քուրմերը գո-
ղալու են նորա փառքի համար.
որովհետև նա գերի պիտի գնայ
նորանից։ Նա էլ է Ասորեստան 6
տարուելու իբրև ընծայ Յարէբ
թագաւորի համար, ամօթը պի-
տի բռնէ Եփրեմին, և Իսրայէլը
պիտի ամաչէ իր խորհրդիցը։ Սա- 7
մարիան բնաջինջ պիտի լինի իր
թագաւորովը, ջրի երեսի փրփու-
րին պէս։ Եւ քարուքանդ պիտի 8
լինեն Աւենի բարձրաւանդակնե-
րը՝ Իսրայէլի մեղքը, փուշ ու
տատասկ պիտի բուսնի նորանց
սեղանների վերայ. և պիտի ասեն
սարերին. Ծածկեցէք մեզ, և
բլուրներին՝ Ընկէք մեզ վերայ։
Գաբաայի օրերիցը մեղք գոր- 9
ծեցիր, ով Իսրայէլ. այնտեղ
կանգնեցին. նորանց չ'հասաւ Գա-
բաայումը պատերազմը չարու-
թեան որդկանց դէմ։ Իմ ուզա- 10
ծովը նորանց կ'խրատեմ էլ, և
նորանց վերայ ժողովուրդներ կը
ժողովեմ, նորանք իրանց երկու
անօրէնութիւնների համար կապ-
ուած ժամանակը։ Եւ Եփրեմը մի 11
սովորած երինջ է՝ կալ կասել
սիրող, բայց ես նորա վզի գեղեց-
կութեան վերայ լուծ կ'անցնեմ,
կառքի եմ լծելու Եփրեմին. Յու-
դան պիտի հերկէ. Յակորը պիտի
տափանէ նորա համար։
Սերմեցէք ձեզ համար արդա- 12
րութիւնով, հնձեցէք ողորմու-
թեան համեմատ, խամահատ
մշակեցէք ձեզ համար, ըստ ո-
րում ժամանակ է Տիրոջը որոնե-
լու, մինչև որ ինքը գայ և արդա-
րութիւն տեղայ ձեզ վերայ։
Դուք ամբարշտութիւնով էք 13
հերկել, անօրէնութիւն հնձե-
ցիք. ստութեան պտուղը կերաք.
որովհետև դու ապաւինեցիր քո
ճանապարհին և քո զօրաւորների
բազմութեանը։ Ուրեմն խռովու- 14
թիւն է վեր կենալու քո ժողո-
վուրդների մէջ, և քո բոլոր բեր-
դերը պիտի քանդուին, ինչպէս
Սաղման քանդեց Բեթարբէլը պա-
տերազմի օրը. մայրը որդկանցը
հետ ջարդուեցաւ։ Այսպէս է 15
անելու ձեզ Բեթէլը, ձեր չարու-

թեան չար լինելու համար. աքաղալոյին պիտի բոլորովին բնաջինջ լինի Իսրայէլի թագաւորը։

ԳԼ. ԺԱ

1 Երբոր մանուկ էր Իսրայէլը, ես սիրեցի զնա, և Եգիպտոսից
2 կանչեցի իմ որդին։ Կանչեցին նորանց, բայց նորանք դնացին նորանց առաջից. Բահաղիմներին զոհ մատուցին, և կուռքերին խունկ ծխեցին։ Բայց ես ման ածեցի Եփրեմին. նորանց բռնում էի իրանց բազուկներից, սակայն չ'իմացան թէ ես եմ բժշկում նորանց։ Մարդի լարերով
4 ես նորանց քաշեցի՝ սիրոյ կապերով, և ես նորանց համար եղայ իբրև նորանց ծնօտներից լուծը հանող, և հանդարտ կերակրել նորանց դէմ՝ ուտեցնում էի։ Ես
5 չ'պիտի դառնայ նա Եգիպտոս. այլ Ասորեստանն է նորա թագաւորը, որովհետև չ'ուզեցին
6 դառնալ։ Եւ պատյտ պիտի տայ սուրը նորա քաղաքների վերայ, և վերջացնէ նորա նիգերը ու լափէ
7 նորանց խորհուրդների մասին։ Եւ իմ ժողովուրդը հակամիտ է ինձանից խոտորուելու. թէև դէպի Բարթեան են կանչվում նորանք, ոչ‌ոք վեր չեն կենում։
8 Ես քեզ ի՞նչպէս թող տամ, ով Եփրեմ, և քեզ յանձնե՞մ, ով Իսրայէլ. ես քեզ ի՞նչպէս Ադմայի պէս անեմ, Սեբոյիմի պէս չինե՞մ. գալարվում է սիրտս ինձանում, միանգամայն քերքռուել է կարեկցութիւնս։
9 Ես չեմ գործադրել իմ բորբոքած բարկութիւնը, կրկին չեմ աւերել Եփրեմին. որովհետև ես Աստուած եմ և ոչ թէ մարդ. քո միջումը Սուրբ եմ, և չեմ
10 գալ զրդռմունքով։ Տիրոջ ետեւից պիտի դնան. առիւծի պէս է գոչելու նա. երբոր նա գոչէ, որդիքը կ'գան արագապէս ա-
11 րևմուտքից։ Նորանք արագապէս պիտի գան Թռչնի պէս Եգիպտոսից, և աղաւնիի պէս՝ Ասորեստանի երկրիցը. և ես նորանց պիտի բնակեցնեմ իրանց աներոաւմը, ասում է Տէրը։

ԳԼ. ԺԲ

1 Ինձ ստութիւնով պաշարել է Եփրեմը, և նենգութիւնով Իսրայէլի տունը. բայց Յուդան տակաւին տիրում է Աստուծով, և հաւատարիմ է սուրբերի հետ։
2 Եփրեմը քամի է արածում, և արևելեան քամի եւևից դնում. ամեն օր ստութիւնն ու աւերումը շատացնում է, և դաշինք են դնում Ասորեստանի հետ, և իւղ են տանում Եգիպտոս։
3 Եւ Յուդայի հետ էլ վէճ ունի Տէրը, և պիտի այցելէ Յակոբին նորա ճանապարհներին համեմատ, նորա գործերին համեմատ պիտի հատուցանէ նորան։
4 Արգանդումը բռնեց եղբօր գարշապարիցը, և իր ոյժովը գօտեմարտեց Աստուծոյ հետ։
5 Եւ գօտեմարտեց հրեշտակի հետ և յաղթեց, լաց եղաւ և աղաչանք արաւ նորան. Բեթէլումը գտաւ նորան, և այնտեղ խօսեց մեզ հետ, Այսինքն
6 Տէրը Զօրաց Աստուածը, որի յիշատակը Եհովայ է։ Եւ դու քո
7 Աստուածդ դարձիր, ողորմութիւն և իրաւունք պահիր, և քո Աստուածդ յուսա միշտ։
8 Եբրէմը վաճառական է. նորա ձեռքին խաբեութեան կշիռք կայ, նա սիրում է հարստահարել։
9 Բայց Եփրեմն ասում է. Իրաւ հարստացայ, ինձ համար ստացուածք գտայ. իմ բոլոր վաստակներումը մի անօրէնութիւն չեն գտնիլ որ մեղք լինի։
10 Բայց ես քո Տէր Աստուածն եմ եգիպտոսի երկրիցը, դեռ քեզ վրաններուն մէջ եմ բնակեցնելու հանդիսաւոր օրերի պէս։
11 Որովհետև ես խօսեցի մարգարէների հետ, և շատացրի տեսիլքները. և մարգարէների ձեռով առակախօսութիւն արի։
12 Անշուշտ անօրէն է Գաղաատը, իրաւ ունայն են դառել. Գաղգաղում յուլն արջառներ մորթեցին, նորանց սեղաններն էլ քարակոյտ-

ների նման են արտի ակօսների վերայ։
13 Եւ Յակոբը փախաւ Ասորիների դաշտը, և Իսրայէլը ծառայեց կնոջ համար, և կնոջ համար հովիւ էր։
14 Եւ Տէրն պահապան եղաւ։ Եւ մի մարգարէով Տէրը վեր հանեց Իսրայէլին Եգիպտոսից, և մի մարգարէով նա պահպանուեցաւ։
15 Եփրեմը դառնապէս բարկացրեց Ա[illegible], և նորա արիւնը նորա վերայ պիտի թափէ, և նորա նախատինքը նորան հետ պիտի դարձնէ նորա Տէրը։

ԳԼ. ԺԳ

1 Երբոր Եփրեմը խօսում էր, դողում էին. բայց բարձրացաւ Իսրայէլի մէջ, և յանցանք գործեց
2 Բահաղով և մեռաւ։ Եւ հիմա էլի մեղք են գործում, և իրանց համար ձուլածոյ կուռքեր են շինում իրանց արծաթից՝ իրանց խելքի համեմատ արձաններ, որ ամենքը արուեստաւորի գործ են. իրանք ասում են նորանց. Զոհ անող մարդիկը համբուրեն որթերին։ Դորա համար պիտի առաւօտեան ամպի պէս լինեն. և ցօղին պէս որ շուտով անցնում դնում է. մէղեի պէս, որ փոթորիկը վեր է հանում կալից, և ծխնելոյզից դուրս եկած ծուխին
4 պէս։ Սակայն ես քո Տէր Աստուածն եմ Եգիպտոսի երկրիցն ի վեր. և ինձանից զատ մի Աստուած չես ճանաչում, և մի փրկիչ
5 չ'կայ բացի ինձանից։ Ես քեզ ճանաչեցի անապատումը, տօթա-
6 կէզ երկրումը։ Իրանց արօտին համեմատ նորանք կշտացան, կըշտացան և նորանց սիրտը հպարտացաւ. սորա համար ինձ մոռացան։
7 Եւ ես նորանց համար պիտի առիւծի պէս լինեմ, ինձու նման պիտի դարան մտնեմ ճա-
8 նապարհի մօտ։ Նորանց պիտի հանդիպեմ ձագերը կորցրած արջու նման, և պիտի ճղռտեմ նորանց սրտի փականքը, և նորանց այնտեղ պիտի ուտեմ առիւծի պէս. դաշտի գազանը պիտի պատռէ նորանց։ Քեզ կորցնում 9
է, ով Իսրայէլ, այն, որ դու ինձ՝ քո օգնութեանը դէմ էս։ Ո՞ւր 10
է հիմա քո թագաւորը, որ քեզ ազատէ քո բոլոր քաղաքներումը, և ո՞ւր են քո դատաւորները, որոնց համար ասում էիր. Տուր ինձ թագաւոր և իշխաններ։ Ես 11
քեզ թագաւոր տուի իմ բարկութիւնովը, և կ'առնեմ իմ սրտմտութիւնովը, Եփրեմի անօ- 12
րէնութիւնը կապուած է, ծածկուած է նորա մեղքը։ Ննդա- 13
կանի ցաւեր են գալիս նորա վերայ. նա անխելք տղայ է. որովհետև ժամանակով չէր կանգնել որդեծննդեան արգանդի բերանումը։ *Դժոխքի ձեռքիցը պիտի 14
ազատեմ նորանց, մահուանից պիտի պրծեցնեմ նորանց. ո՞ւր է ժանտախտդ, մահ, ո՞ւր է աւերմունքդ, դժո՛խք. զղջումը ծածկուած է իմ աչքերից։ Որովհետև 15
նա պտղաբեր է եղբայրների մէջ. Բայց արևելեան քամին պիտի գայ, Տիրոջը հողմը վեր է կենալու անապատիցը, և պիտի ցամաքի նորա աղբիւրը, և չորանայ նորա ակը. նա պիտի կողոպտէ ամեն 16
ցանկալի բաների գանձը։ Սամարիան աւերակ պիտի դառնայ, որապստամբուեց իր Աստուածն դէմ. սրով պիտի ընկնեն, նորանց երեխաները պիտի ջախջախուին. և նորանց յղի կանայքը պիտի ճեղքուին։

ԳԼ. ԺԴ

1 Ես դարձիր, ով Իսրայէլ, քո Տէր Աստուածն մօտ, որովհետև դու ցլորուել ես անօրէնութեան պատճառով։ Ձեզ հետ խօսքեր 2
վեր առէք և ես դարձէք Տիրոջ մօտ. ասացէք նորան. Ամեն անօրէնութիւն վեր առ, և ընդունիր բարութեամբ, և մենք պիտի մատուցանենք մեր շրթունքների զոհարարկները։ Ասորեստանցին 3
մեզ չի փրկիլ. ձիերի վերայ չենք հեծնիլ, և մեր ձեռաց գործերին

*կամ՝ մեռելների բնակարանի

չենք ասել միւսանգամ. Ով մեր
Աստուած. որովհետև որբը քե-
զանից կ'գտնէ ողորմութիւն։
4 Նորանց խոտորմունքը պիտի
բժշկեմ, նորանց պիտի ձրի սի-
րեմ, որովհետև իմ բարկութիւ-
5 նը ետ է դառել նորանցից. Ես
ցօղի պէս պիտի լինեմ Իսրայէլի
համար. նա շուշանի պէս պիտի
ծաղկէ, և արմատներ պիտի դցէ
6 Լիբանանի պէս։ Նորա ոստերը
պիտի տարածուին, և նորա վա-
յելչութիւնը ձիթենիի պէս, և
նորա բուրմունքը Լիբանանի պէս
7 պիտի լինի։ Ետ պիտի դառնան
նորա հովանում նստողները. պի-
տի կենդանանան ցորենով, և
ծաղկեն որթի պէս, նորա յիշա-
տակը Լիբանանի գինիին պէս պի-
տի լինի։ Եփրեմը պիտի ասէ. Ես 8
էլ ինչ ունիմ կուռքերի հետ։
Ես լսեցի նորա խնդրուածքը, և
նորան խնամեցի, ես կանաչ մայրի
ծառի պէս եմ. ինձանից է քո
պտուղը գտնուելու։
Ո՞վ է իմաստուն, որ հասկա- 9
նայ այս, կամ հասկացող, որ գի-
տենայ սորանց. որովհետև ուղիղ
են Տիրոջ ճանապարհները և ար-
դարները գնում են նորանցով.
իսկ յանցաւորները կ'գլորուին
նորանցում։

ՅՈՎԷԼԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա.

1 Տիրոջ խօսքը, որ եղաւ Փա-
թուէլի որդի՝ Յովէլին։
2 Լսեցէք այս, ով ծերեր, և ա-
կանջ դրէք, ով երկրի բոլոր
բնակիչներ, այսպիսի բան եղե՞լ
է արդեօք ձեր օրերին, և կամ
3 ձեր հայրերի օրերին։ Սորա մա-
սին պատմեցէք ձեր որդկանցը,
և ձեր որդիքն իրանց որդկանցը,
և նորանց որդիքը ուրիշ սերուն-
4 դի։ Խառնիճից մնացածը մորեխը
կերաւ, և մորեխից մնացածը
ջորեակը կերաւ, և ջորեակից
մնացածը երևիլը կերաւ։
5 Զարթնեցէք, ով արբածներ,
և լացէք և ողբացէք, ով ամեն
գինի խմողներ, քաղցուին հա-
մար որ կտրուել է ձեր բերանի-
6 ցը։ Որովհետև մի ազգ է վեր ե-
կել իմ երկրի վերայ՝ զօրաւոր և
անթիւ, նորա ատամները առիւ-
ծի ատամներ են, և մատակ առ-
7 իւծի ժանիքներ ունի։ Նա իմ
որթը աւերեց, թզենիս կոտրա-
տեց, բոլորովին պլոկեց ու դէն
գցեց. նորա ուռերը սպիտակա-
ցան։
Ողբա կոյսի պէս, որ քուրձով 8
գօտևորուած է իր երիտասար-
դութեան տիրոջ վերայ։ Հացի 9
ընծան և նուէրը կտրուել է Տի-
րոջը տանիցը, սուգ են անում
Տիրոջը ծառայող քահանաները։
Արտը աւերուել է, երկիրը սուգ 10
է անում, որ աւերուել է ցորե-
նը, չորացել քաղցուն, թոռոմել
իւղը։
Ամաչեցէք, ով երկրագործներ. 11
ողբացէք, ով այգեգործներ, ցո-
րենին համար և գարիին համար
որ փչացել է արտի բերքը։ Որթը 12
չորացել է, և թզենին թոռո-
մել, նռնենին, արմաւենին էլ և
խնձորենին՝ արտի բոլոր ծառերը
չորացել են. որովհետև ցամաքել
է ուրախութիւնը մարդկանց որ-
դիներիցը։
Գօտևորուեցէք տարշով և սուգ 13

արէք, ով քահանաներ, ողբա-
ցէք, ով սեղանի սպասաւորներ,
եկէք՝ գիշերը քուրձերով անցը-
րէք, ով իմ Աստուծոյ սպասա-
ւորները, որ խափանուել է ձեր
Աստուծոյ տանիցը հացի ընծան
14 և նուէրը։ Ծոմ սրբեցէք, հան-
դէս կանչեցէք. ժողովեցէք ծե-
րերին՝ երկրի բոլոր բնակիչներին
ձեր Տէր Աստուծոյ տունը և ա-
ղաղակեցէք Տիրոջը։
15 Վա՛յ այն օրին, որովհետև մօտ
է Տիրոջ օրը. և իբրև աւերմունք
է գալիս Ամենակարողի կողմից։
16 Ահա մեր աչքի առաջին կտրուել
է կերակուրը, մեր Աստուծոյ
տանիցը՝ ուրախութիւնն ու ցն-
17 ծութիւնը։ Սերմերը փտել են
հողի կոշտերի տակին, ամա-
յացել են շտեմարանները, քան-
դուել՝ ամբարները, որ խորշակա-
18 հար է եղել ցորենը։ Ինչպէս են
հեծում անասունները, շշկլուել
են արջառների հօտերը, որով-
հետև արօտ չ'կայ նորանց հա-
մար, ոչխարների հօտերն էլ
19 տանջվում են։ Դէպի քեզ եմ
աղաղակում, ով Տէր, որ կրակը
կերել է անապատի արօտները,
և բոցը այրել է դաշտի բոլոր
20 ծառերը։ Դաշտի անասուններն
էլ են քեզ մտիկ տալիս, որ չո-
րացել են ջրերի վտակները, և
կրակը այրել է անապատի ա-
րօտները։

ԳԼ. Բ

1 Փող հնչեցրէք Սիօնումը, և ազդ
աղաղակեցէք իմ սուրբ սարի վե-
րայ. դողան երկրի բոլոր բնակիչ-
ները, որ Տիրոջ օրը եկել է, որ
2 մօտ է նա։ Խաւարի և մէգի օրը,
ամպի և մառախուղի օրը. ինչ-
պէս որ արշալոյսը տարածվում
է սարերի վերայ, մի բազմաթիւ
և զօրաւոր ազգ է գալիս, որի
նմանը չէ եղել յաւիտենից և
նորանից յետոյ էլ չի լինիլ,
մինչև տարիները դարէ ցդար։
3 Նորա առաջից կրակը պիտի ու-
տէ, և նորա ետևից բոցը պիտի
այրէ, Եդեմի դրախտին պէս կը
լինի երկիրը նորա առաջին, իսկ
նորա ետևից ամայի անապատին
պէս, և մէկ ազատուած անգամ
չի ունենալ։
Զիերի կերպարանք է նորանց 4
կերպարանքը, և ձիաւորների պէս
պիտի վազեն։ Կառքերի ձայնին 5
պէս սարերի գլխին ոստոստում
են յարդ ուտող կրակի բոցի ձայ-
նի պէս, մի հզօր ժողովրդի պէս,
որ շարուած է պատերազմի։ Նո- 6
րանց երեսիցը պիտի տագնապեն
ժողովուրդները, բոլոր երեսները
պիտի ետ քաշեն գոյնը։ Զօրա- 7
ւորների պէս պիտի վազեն, պա-
տերազմի մարդկանց պէս վեր պի-
տի ելնեն պարսպի վերայ, և ա-
մեն մարդ իր ճանապարհներովը
պիտի գնայ, և պիտի չ'փոխեն ի-
րանց շաւիղները։ Եւ մէկն իր ըն- 8
կերին պիտի չ'հրէ, ամեն մէկն
իր ճանապարհովը պիտի գնայ. և
եթէ զէնքի վերայ էլ ընկնեն,
պիտի չ'վիրաւորուին։ Քաղաքու- 9
մը պիտի վազվազեն, պարսպի վե-
րայ պիտի վազեն, վեր պիտի
ելնեն տները պատուհաններովը
ներս պիտի մտնեն գողի նման։
Նորանց երեսիցը երկիրը պիտի 10
դողայ, երկինքը սարսէ, արեգակն
ու լուսինը պիտի խաւարուին, և
աստղերը ետ քաշեն իրանց լոյսը։
Եւ Տէրը պիտի տայ իր ձայնը իր 11
զօրքերի առաջին, որ շատ մեծ է
նորա բանակը, որովհետև զօրա-
ւոր է իր խօսքը կատարողը։ Որով-
հետև մեծ է Տիրոջ օրը և շատ
ահեղ, և ո՞վ կարող է դիմանալ
նորան։
Սակայն հիմա էլ, ասում է 12
Տէրը, դէպի ինձ դարձէք ձեր բո-
լոր սրտովը, և ծոմով ու լացով
և սգով։ Եւ պատառեցէք ձեր 13
սրտերը, ու չէ թէ ձեր հանդերձ-
ները, և ետ դարձէք դէպի ձեր
Տէր Աստուածը, ըստ որում ո-
ղորմած և գթած է, երկայնա-
միտ և բազումողորմ և զղջացող
չարիքի համար։ Ո՞վ գիտէ, գու- 14
ցէ դարձեալ զղջայ. և իր ետևի-
ցը օրհնութիւն թողէ, հացի ընծայ
և թափելու նուէր ձեր Տէր
Աստուծուն համար։

15 փող հնչեցրէք Սիօնում, ծոմ
սրբեցէք, հանդէս հրաւիրեցէք։
16 ժողովուրդ հաւաքեցէք, ժողով-
քը սրբեցէք, ծերերին ժողովե-
ցէք. երեխաներին ու մանուկնե-
րին հաւաքեցէք, փեսան դուրս
գայ իր սենեակիցը, և հարսը՝ իր
17 առագաստիցը։ Արտի և սեղանի
մէջտեղը լաց լինեն քահանանե-
րը՝ Տիրոջ ծառաները. և ասեն.
խնայիր, ով Տէր, քո ժողովրդին,
և քո ժառանգութիւնը մի տար
նախատինքի, որ ազգերը տիրեն
նորանց վերայ. ինչու համար ա-
սեն ազգերի մէջ. Ո՞ւր է նորանց
Աստուածը։
18 Այն ժամանակ Տէրը պիտի նա-
խանձէ իր երկրի համար, և ո-
19 ղորմէ իր ժողովրդին։ Եւ Տէրը
պիտի պատասխանէ և ասէ իր
ժողովրդին. Ահա ես ձեզ հա-
մար ուղարկում եմ ցորեն, գինի
և իւղ, որ պիտի կշտանաք նո-
րանով. և ձեզ այլ ևս նախա-
տինք պիտի չ'անեմ ազգերի մէջ.
20 Եւ հիւսիսացուն պիտի հեռա-
ցնեմ ձեր վերայից, և նորան պի-
տի քշեմ մի չոր և ամայի երկիր,
երեսը դէպի արևելեան ծովը և
քամակը դէպի հետի ծովը և նորա
վատ հոտը պիտի բարձրանայ, և
կ'բարձրանայ նորա գարշահոտու-
թիւնը, որովհետև մեծ բաներ է
21 կատարել։ Մի վախենար, ով եր-
կիր, ցնծա և ուրախացիր, որ
22 Տէրը մեծ բաներ է անում։ Մի
վախենաք, ով դաշտի անասուն-
ներ, որ կանաչելու են անապատի
արօտները, որովհետև ծառը տա-
լու է իր պտուղը, թզենին և
որթը պիտի տան իրանց զօրու-
23 թիւնը։ Եւ ով Սիօնի որդիք,
ցնծացէք և ուրախացէք Տիրոջ-
մով՝ ձեր Աստուծով. որ կ'տայ
ձեզ ուսուցիչ արդարութեան
համար. և ձեզ համար անձրև
կ'իջեցնէ՝ առաջի և վերջի անձրև
24 առաջուայ պէս։ Եւ կալերը կը
լցուին ցորենով, և հնձանները
25 կ'յորդեն գինիով և իւղով։ Եւ
ես կ'հատուցանեմ ձեզ այն տա-
րիները, որ կերան մորեխը, ջոր-
ջակը, երեխլը և խառնիճը, այն
իմ մեծ զօրքը որ ուղարկեցի ձեր
մէջը։ Եւ պիտի ուտէք ու ուտէք 26
և կշտանաք, և օրհնաբանէք ձեր
Տէր Աստուծոյ անունը, որ ձեզ
համար հրաշքներ արաւ. և իմ
ժողովուրդը պիտի չ'ամաչէ յա-
ւիտեան։ Եւ պիտի իմանաք որ 27
ես Իսրայէլի մէջ եմ, և ես եմ
ձեր Տէր Աստուածը, ու միւսը
չ'կայ. և իմ ժողովուրդը պիտի
չ'ամաչէ յաւիտեան։
Եւ պիտի լինի յորանից յետոյ, 28
որ իմ հոգին պիտի թափեմ ա-
մեն մարմնի վերայ, և պիտի մար-
գարէանան ձեր տղերքն ու ձեր
աղջկերքը, ձեր ծերերը երազներ
պիտի երազեն. ձեր երիտասարդ-
ները տեսիլքներ պիտի տեսանեն։
Եւ ծառաներին ու աղախիններին 29
վերայ էլ պիտի թափեմ այն օ-
րերը իմ հոգին։ Եւ նշաններ պի- 30
տի տամ երկնքումը ու երկրիս
վերայ. արիւն և կրակ և ծուխի
սիւներ։ Արեգակը պիտի փոխուի 31
խաւարի, և լուսինը՝ արեան, Տի-
րոջ մեծ և ահեղ օրը գալուց
առաջ։ Եւ պիտի լինի, որ ամեն 32
ով որ կանչէ Տիրոջ անունը, կը
փրկուի. որովհետև Սիօն սարի
վերայ և Երուսաղէմումը փրկու-
թիւն կ'լինի՝ Տիրոջ ասածին պէս.
և այն մնացորդների վերայ, որոնց
Տէրը կ'կանչէ։

Գ.

Որովհետև ահա այն օրերը և 1
այն ժամանակը, որ ես եմ կ'դար-
ձնեմ Յուդայի և Երուսաղէմի
գերութիւնը. Այն ժամանակ կը 2
ժողովեմ բոլոր ազգերը, և նո-
րանց կ'իջեցնեմ Յովսափատի հո-
վիտը, և այնտեղ նորանց հետ
դատ կ'վարեմ իմ ժողովրդի և
իմ ժառանգութիւն՝ Իսրայէլի
համար, որին ցրուեցին ազգերի
մէջ, և իմ երկիրը բաժանեցին։ 3
Եւ իմ ժողովրդի վերայ վիճակ
ձգեցին, և տղային տուին պոռնկի
վաճառի տեղ, և աղջիկը ծախե- 4
ցին գինիի և խմեցին։ Եւ դուք
էլ ինչ էք ինձ համար, ով Տիւ-
րոս և Սիդոն, և ով բոլոր Փղշտա-

ցիների սահմաններ, միթէ դուք
ինձ հատուցում էք անելու, և
կամ դուք ինձ հատուցանողնիր
էք. հեշտ և շուտով ես կ'դար-
ձնեմ ձեր հատուցումը ձեր գլուխ
5 ին. Որովհետև իմ արծաթն ու
ոսկին առաք դուք, և իմ ցան-
կալի բարի բաները տարաք ձեր
6 մեհեանները։ Եւ Յուդայի որ-
դիներին ու Երուսաղէմի որդի-
ներին Յունաց որդիանց ծախե-
ցիք. որպէս զի նորանց հեռացնէք
7 իրանց սահմանից։ Ահա ես պի-
տի զարթնեցնեմ նորանց տնտես-
ից ուր որ նորանց ծախեցիք, և
ձեր հատուցումը ես պիտի դար-
8 ձնեմ ձեր գլխին։ Եւ պիտի ծա-
խեմ ձեր տղերքն ու աղջկերքը
Յուդայի որդիանց ձեռը, և նո-
րանք պիտի ծախեն նորանց Սա-
բայեցիներին՝ այն հեռու ազգին.
որովհետև Տէրն է խօսել։
9 Հրատարակեցէք այս՝ ազգերի
մէջ, պատերազմ որոշեցէք. զարթնեցրէք զօրամարդիկներին.
մօտենան վեր դնան բոլոր պա-
10 տերազմի մարդիկը։ Ձեր խոփերը
սուրեր շինեցէք, և ձեր յօտց-
ները՝ նիզակներ. թող տկարն
11 ասէ. Զօրամարդ եմ ես։ Շուտա-
ցէք և եկէք, ով բոլոր շրջակայ
ազգեր, և ժողովուեցէք. այնտեղ
տար, ով Տէր, քո զօրաւորներին։
12 Զարթնեն և վեր գան ազգերը
Յովսափատի հովիտը, որովհետև
այնտեղ պիտի նստեմ բոլոր շրջա-
կայ ազգերը դատելու համար։
13 Մանգաղը գցեցէք, որովհետև
հասել է հունձը, եկէք, իջէք,
որովհետև լցուել է հնձանը. ա-
ւազանները յորդում են. որով-
հետև շատ է նորանց չարու-
թիւնը։ Բազմութիւններ, բազ- 14
մութիւններ վճռի հովիտումը,
որովհետև մօտ է Տիրոջ օրը վճռի
հովիտումը։ Արեգակն ու լուսինը 15
պիտի խաւարեն, և աստղերը ետ
քաշեն իրանց լոյսը։ Եւ Տէրը պի- 16
տի գոչէ Սիօնից, և Երուսաղէ-
մից ձայն պիտի տայ, և երկինքը
ու երկիրը պիտի դողան. բայց
Տէրը ապաւէն կ'լինի իր ժողովրդի
համար, և ամրոց՝ Իսրայէլի որդ-
կանց համար։ Եւ դուք պիտի 17
իմանաք, որ ես եմ ձեր Տէր Աստ-
ուածը, որ բնակվում եմ իմ
սուրբ Սիօն սարումը. և Երուսա-
ղէմը սուրբ պիտի լինի, և օտար-
ներ այլ ևս չեն անց կենալ նո-
րա միջով։
Եւ պիտի լինի այն օրը որ սա- 18
րերը քաղցու պիտի ծորեցնեն, և
բլուրները կաթ հոսեցնեն, և Յու-
դայի բոլոր ձորերը ջուր պիտի
բղխեն, և Տիրոջ տանից մի աղ-
բիւր պիտի դուրս գայ, և ոռոգի
Սատիմի ձորը։ Եգիպտոսը ամայի 19
պիտի դառնայ, և Եդովմը մի
ամայի անապատ պիտի դառնայ,
Յուդայի որդկանց դէմ բռնած
անիրաւութեան համար. որով-
հետև անմեղ արիւն թափեցին
նորանց երկրումը։ Բայց Յուդան 20
յաւիտեան պիտի բնակուէ, և
Երուսաղէմը՝ դարէ դար։ Եւ 21
նորանց արիւնը պիտի մաքրեմ,
որ չէի մաքրել. և Տէրը պիտի
բնակուէ Սիօնումը։

ԱՄՈՎՍԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Ա.մովսի խօսքերը, որ Թեկուէի հովիւներիցն էր, որ նա տեսաւ Իսրայէլի մասին Ցուդայի Ոզիա Թագաւորի օրերին և Իսրայէլի Թագաւոր՝ Յովասեան Յերոբովամի օրերին, երկու տարի գետնաշարժից առաջ։ 2 Եւ ասեց. Տէրը Սիօնից պիտի կանչէ, և Երուսաղէմից պիտի տայ իր ձայնը. և առուգ պիտի անեն հովիւների արօտանները, և կարմելոսի գլուխը պիտի չորանայ։

3 Այսպէս է ասում Տէրը, Դամասկոսի երեք յանցանքի համար, և չորսի համար՝ ետ չեմ դարձնելու նրա պատիժը. որովհետև նորանք երկաթի կամնասայլերով կալի պէս կասեցին Գաղաադին. 4 Ա.յլ կրակ պիտի դնեմ Ազայէլի տունը, որ լափէ Բենադադի պալատները։ 5 Եւ պիտի կարեմ Դամասկոսի նիգը, և պիտի կորեմ քնակիչը Աւենի հովիտից, և գաւազան բռնողը՝ Եդեմի տունից, և գերի պիտի գնայ Ասորիների ժողովուրդը Կիր, ասում է Տէրը։

6 Այսպէս է ասում Տէրը, Գազայի երեք յանցանքի համար, և չորսի համար՝ ետ չեմ դարձնելու. որովհետև նորանք գերիներին գերի քշեցին բոլորովին որ յանձնեն Եդոմացիներին. 7 Ա.յլ կրակ պիտի ուղարկեմ Գազայի պարսպի վերայ, և պիտի լափէ նորա պալատները։ 8 Եւ պիտի կորեմ քնակիչը Ազովտոից, և գաւազան բռնողը՝ Ասկալոնից, և իմ ձեռքը պիտի Ակկարոնի վերայ դարձնեմ, որ կորչի փղշտացիների մնացորդը, ասում է Տէրը Եհովան։

Այսպէս է ասում Տէրը. Տիւրոսի երեք յանցանքի համար, և չորսի համար՝ ետ չեմ դարձնելու. որովհետև նորանք գերիները բոլորովին մատնեցին Եդոմացիներին, և չյիշեցին եղբայրական ուխտը. Ա.յլ կրակ պիտի դնեմ Տիւրոսի պարսպի վերայ, և նա պիտի լափէ նորա պալատները։

Այսպէս է ասում Տէրը. Եդոմի երեք յանցանքի համար, և չորսի համար՝ ետ չեմ դարձնելու. որովհետև սրով հալածեց իր եղբօրը, և կորեց իր ողորմութիւնը, և միշտ պատառեց իր բարկութիւնը, և իր ցասումը պահեց յաւիտեան. Ա.յլ ես կրակ պիտի դնեմ Թեմանի մէջ, և պիտի լափէ Բոսրայի պալատները։

Այսպէս է ասում Տէրը. Ա.մմոնի որդկանց երեք յանցանքի համար, և չորսի համար՝ ետ չեմ դարձնելու. որովհետև նորանք ծռեցին Գաղաադի յղիներին, որպէս զի լայնացնեն իրանց սահմանները. Բայց ես կրակ պիտի վառեմ Ռաբբայի պարսպի վերայ, և պիտի լափէ նորա պալատները, պատերազմի օրը աղաղակի ժամանակին, փոթորկի օրը մրրկի մէջ. Եւ նորանց Թագաւորը գերի պիտի գնայ, Թէ ինքը Թէ իր իշխանները միասին, ասում է Տէրը։

ԳԼ. Բ

Այսպէս է ասում Տէրը. Մովաբի երեք յանցանքի համար, և չորսի համար՝ ետ չեմ դարձնելու. որովհետև նա այրեց Եդոմի Թագաւորի ոսկորները կիր չէնէց. Բայց կրակ պիտի դնեմ Մովաբի վերայ, և պիտի լափէ Կարիոթի պալատները, և պիտի աղաղակով մեռնի Մովաբը, աղմուկով և փողի ձայնով։ Եւ պիտի փշացնեմ

դատաւորը նորա միջիցը, և նորա բոլոր իշխաններին պիտի մեռցնեմ իրան հետ, ասում է Տէրը։

4 Այսպէս է ասում Տէրը. Յուդայի երեք յանցանքի համար, և չորսի համար՝ ետ չեմ դարձնելու. որովհետև նորանք անարգեցին Տիրոջ օրէնքը, և նորա պատուիրանքները չ'պահեցին. այլ նորանց մոլորեցրին իրանց սուտերը, որոնց հետից գնացել էին իրանց հայրերը. 5 Բայց ես կրակ պիտի դնեմ Յուդայի մէջ, և պիտի լափէ Երուսաղէմի պալատները։

6 Այսպէս է ասում Տէրը. Իսրայէլի երեք յանցանքի համար, և չորսի համար՝ ետ չեմ դարձնելու. որովհետև նորանք արդարը ծախեցին փողով, և անանկը՝ մի զոյգ կօշիկի. 7 Որոնք փափաքում են երկրի հողին աղքատների գլխին, որոնք չքաւորների ճանապարհը ծռում են, և մարդ ու իր հայրը դէնոյն աղջկան մօտ են գնում, որպէս զի պղծեն իմ սուրբ անունը։ 8 Եւ գրաւ դրուած հանդերձների վերայ են պառկում, ամեն մի սեղանի կշռին. և զրկուածների գինին են խմում իրանց աստուածների տանը։ 9 Բայց ես բնաջինջ արի Ամորհացիին նորանց առաջին, որի բարձրութիւնը եղևինների բարձրութեան պէս էր, և որ պինդ էր կաղնիների նման. և ես փչացրի նորա պտուղը իր վերայից, և նորա արմատները՝ տակիցը։ 10 Եւ ես ձեզ վեր հանեցի եգիպտոսի երկրիցը, և ձեզ մեն ամեցի անապատումը քառասուն տարի, որ ժառանգէիք Ամորհացիների երկիրը։ 11 Եւ ձեր որդկանցից մարգարէներ վեր կացրի և ձեր երիտասարդներից ուխտաւորներ, ապա այսպէս չէ՞, ով Իսրայէլի որդիք, ասում է Տէրը։ 12 Սակայն դուք ուխտաւորներին գինի խմեցրիք, և մարգարէներին պատուիրեցիք՝ ասելով. Մի մարգարէանաք։ 13 Ահա ես ձեզ վայր պիտի ճնշեմ, ինչպես որ ճնշում է սրանեքով լիքը սայլը։ 14 Եւ փախչելը կ'կորչի արագընթացից. և զօրաւորին չի քաջացնել նորա ոյժը և տղամարդը չի ազատել իր անձը։ 15 Եւ աղեղ բռնողը չի դիմանալ, և իր ոտներով թեթև չի պրծնիլ, և ձի հեծածը չի ազատել իր անձը։ 16 Եւ տղամարդկանցի մէջ քաջասիրտը մերկ պիտի փախչի այն օրը, ասում է Տէրը։

ԳԼ. Գ

Լսեցէք այս խօսքը, որ Տէրը ասում է ձեր մասին, ով Իսրայէլի որդիք, այն բոլոր ազգատոհմի համար, որ վեր բերի եգիպտոսի երկրից, ասելով. 2 Միայն ձեզ եմ ճանաչել երկրի բոլոր ազգատոհմից ներից, դորա համար ձեզ պիտի պատժեմ ձեր ամեն անօրէնութիւնների համար։ 3 Մի՞թէ երկուսը կ'գնան միասին, եթէ համաձայնուած չլինեն։ 4 Մի՞թէ առիւծը կ'մռնչէ անտառումը, եթէ որս չ'ունենայ. Մի՞թէ առիւծը ձայնը կ'հանէ իր որջիցը, եթէ ոչ բան որսած չլինի։ 5 Մի՞թէ վայր կ'ընկնի թռչունը երկրի վերայ վարսի մէջը, եթէ նորա համար լարուած եղած չլինի. Մի՞թէ վարսը վեր կ'առնուի երկրի վերայից, եթէ մի որս որսած չլինի։ 6 Կամ եթէ փող փչուի քաղաքումը, և ժողովուրդը չի վախենալ, կամ չարիք կ'լինի՞ մի քաղաքումը, որ Տէրը չլինի արած այն։ 7 Որովհետև Տէր Եհովան ոչ մի բան չի անիլ, եթէ չ'յայտնէ իր խորհուրդը իր ծառաներին՝ մարգարէներին։ 8 Առիւծը մռնչել է, ո՞վ չի վախենում. Տէր Եհովան է խօսում, ո՞վ չի մարգարեանալ։

9 Հրատարակեցէք Ազովտոի պալատների վերայ, և Եգիպտոսի երկրի մէջ պալատների վերայ, և ասեցէք. Ժողովուեցէք Սամարիայի սարերի վերայ, և մտիկ արէք նորա միջի շատ խռովութիւններին և նորա միջի հարստահարութիւններին։ 10 Եւ չ'գիտեն ուղղութիւն անել, ասում է Տէրը, իրանց պալատներումը զրկանք ու յափշտակութիւն դիզողները։

11 Սորա համար այսպէս է ասում
Տէր Եհովան. Թշնամի՛, և այն էլ
երկրի շուրջը. և նա պիտի ի-
ջեցնէ քեզանից քո ոյժը, և քո
պալատները պիտի կողոպտուին։
12 Այսպէս է ասում Տէրը. Ինչ-
պէս որ հովիւն է ազատում ա-
ռիւծի բերանից երկու ոլոքներ
կամ մի ականջի բլթակ, այն-
պէս էլ պիտի ազատուին Իսրա-
յէլի որդիքը, որոնք բնակվում
են Սամարիայումը՝ բազմոցի ան-
կիւնի վերայ և դամասկեայ ան-
կողնի վերայ։
13 Լսեցէք և վկայեցէք Յակոբի
տանը, ասում է Տէր Եհովան՝
14 Զօրաց Աստուածը. Այն օրը երբոր
կ՛բերեմ Իսրայէլի յանցանքների
պատիժը իր վերայ, և կ՛պատժեմ
Բեթէլի սեղանները. այն ժամանակ
կ՛կոտրուին սեղանի եղջիւրներն
15 ու գետինը կ՛ընկնեն։ Եւ ես կ՛ջար-
դեմ ձմերային տունը և ամարային
տունը, և կ՛կորչեն փղոսկրեայ
տունները, և բնաջինջ կ՛լինեն մե-
ծամեծ տները, ասում է Տէրը։

ԳԼ. Դ

1 Լսեցէք այս խօսքը, ով Սամա-
րիայի սարի վերայ եղող Բասանի
էգ երինջներ, որ զրկում էք աղ-
քատներին, որ ոտնահարում էք
տնանկներին, որ ասում էք ձեր
2 տէրերին. Բերէք որ խմենք։ Տէր
Եհովան երդում է անում իր
սրբութիւնովը, թէ ահա օրեր
են գալիս ձեզ վերայ, որ ձեզ
վեր կ՛առնէ կարթերով, և ձեր
3 սերունդին՝ ձկան կարթերով։ Եւ
դուք քանդուած տեղերով դուրս
կ՛գաք ամեն մէկդ իր հանդէ-
պով, և բերդը պիտի *գցուիք,
ասում է Տէրը։
4 Եկէք Բեթէլ և յանցանք գոր-
ծեցէք, Գաղգաղայումը շատա-
ցրէք յանցանք գործելը. և մա-
տուցրէք ամեն առաւօտ ձեր
զոհերը, ամեն երեք օրը՝ ձեր
5 տասանորդները։ Եւ շնորհակա-
լութեան զոհը խմորուած խնկե-
ցէք, և քարոզեցէք կամաւոր ընծաներ և հրատարակեցէք, որովհետև այսպէս էք սիրել, ով Իսրայէլի որդիք, ասում է Տէր Եհովան։ Ես էլ ձեզ ատամների մաքրութիւն տուի ձեր ամեն քաղաքներումը, և հացի կարօտութիւն ձեր բոլոր տեղերումը. և դուք ետ չ՛դարձաք ինձ մօտ, ասում է Տէրը։ Եւ ես էլ ձեզանից արգելեցի անձրևը հունձին դեռ երեք ամիս լինելով. և մէկ քաղաքի վերայ անձրև տեղացի, իսկ միւս քաղաքի վերայ անձրև չ՛տեղացի, մէկ վիճակի վերայ անձրև եկաւ, և այն վիճակը, որի վերայ անձրև չ՛եկաւ, չորացաւ։ Եւ երկու երեք քաղաք հաւաքուեցան եկան մէկ քաղաք ջուր խմելու համար, բայց չ՛կշտացան. և դուք ետ չ՛դարձաք ինձ մօտ, ասում է Տէրը։ Ձեզ զարկեցի խորշակով և դալուկով, ձեր բազմաթիւ այգիները և պարտէզները և թզենիներն ու ձիթենիքը խառնիճը կերաւ. և դուք ետ չ՛դարձաք ինձ մօտ, ասում է Տէրը։ Ձեր մէջը ժանտախտ գցեցի Եգիպտոսի կերպով, սրով սպանեցի ձեր երիտասարդներին, ձեր ձիերը գերի անելով, և ձեր բանակների գարշահոտութիւնը մինչև ձեր քթերն էլ հանեցի. և դուք ետ չ՛դարձաք ինձ մօտ, ասում է Տէրը։ Կործանեցի ձեզ ինչպէս Աստուած Սոդոմն ու Գոմորը կործանեց, և հրդեհից ազատուած խանձողի պէս եղաք. և դուք ետ չ՛դարձաք ինձ մօտ, ասում է Տէրը։ Սորա համար քեզ այսպէս եմ անելու, ով Իսրայէլ, և հէնց որ ես քեզ հետ այսպէս կ՛անեմ, պատրաստուիր քո Աստուծուն դիմաւորելու, ով Իսրայէլ։ Որովհետև ահա նա, որ կազմում է սարերը և ստեղծում է քամին, և իմացնում մարդին, թէ ինչ է նորա մտածմունքը, որ արշալոյսը խաւար է անում, և ման է գալիս երկրի բարձրերի վերայ. Եհովայ Զօրաց Աստուած է նորա անունը։

*Կամ՝ դցէք

ԳԼ. Ե

1 Լսեցէք այս խօսքը, որով ես ողբում եմ ձեզ վերայ, ով Իս-
2 րայէլի տուն։ Ընկաւ, այլ եւս
վեր չի կենալու Իսրայէլի կոյսը,
փռուել է իր երկրի վերայ, կանգ-
3 նեցնող չ՛ունի։ Որովհետև այս-
պէս է ասում Տէր Եհովան. Այն
քաղաքումը, որ հազար էր դուրս
բերում, պիտի մնայ հարիւր, և
հարիւր դուրս բերողումը տասը
պիտի մնայ Իսրայէլի տան հա-
4 մար։ Որովհետեւ այսպէս է ա-
սում Տէրը Իսրայէլի տանը. Ինձ
5 որոնեցէք, և կ՛ապրիք։ Բայց Բե-
թէլը մի որոնէք, և Գաղգաղան
մի մտնէք, և Բերսաբէէն մի
գնաք. որովհետև Գաղգաղա ան-
պատճառ գերի պիտի գնայ, և
6 Բեթէլը պիտի *ոչնչանայ։ Տիրոջը
որոնեցէք և կ՛ապրիք, որ նա
չ՛յարձակուի կրակի պէս Յովսէ-
փի տան վերայ, և նա լափէ, և
Բեթէլը հանգցնող չ՛ունենայ.
7 Դուք որ օշինդր էք դարձնում
իրաւունքը, և արդարութիւնը
8 գետնով տալիս. Որոնեցէք նորան,
որ արաւ Բազմաստեղն ու Հայկը,
որ մահուան ստուերը առաւօտ
է դարձնում, և ցերեկը մթնե-
ցնում է գիշերի. որ ծովի ջրերը
կանչում է, և նորանց ածում է
երկրի երեսի վերայ, նորա անունը
9 Եհովայ է։ Որ աւերմունք է փայ-
լատակեցնում բռնաւորի վերայ,
և աւերմունքը մինչև ամրոցն է
գալիս։
10 Դռան մէջ ատում են յան-
դիմանողին, և զզվում են ուղիղ
11 խօսողից։ Դորա համար՝ որովհե-
տև ոտնահար էք անում աղքա-
տին, և նորանից ցորենի պար-
գևներ էք առնում. դուք սրբա-
տաշ քարից տներ կ՛շինէք, բայց
նորանցում չէք բնակուիլ, ցան-
կալի այգիներ կ՛տնկէք, բայց նո-
12 րանց գինին չէք խմիլ։ Որովհետև
ես գիտեմ ձեր շատ յանցանք-
ները և ձեր ծանր մեղքերը, ար-
դարին նեղողներ, կաշառք առ-
նողներ, որոնք աղքատներին ծը-
ռում են դռան մէջ։ Դորա հա- 13
մար իմաստունը այն ժամանակ
պիտի լռէ, որովհետև նա չար
ժամանակ է լինելու։ Բարութիւն 14
որոնեցէք և ոչ թէ չարութիւն,
որ ապրիք, և այսպէս Զօրաց Տէր
Աստուածը ձեզ հետ կ՛լինի, ինչ-
պէս որ ասել էք։ Ատեցէք չա- 15
րութիւնը և սիրեցէք բարին, և
դռան մէջ հաստատեցէք իրա-
ւունքը, գուցէ Զօրաց Տէր Աստ-
ուածը գթայ Յովսէփի մնացոր-
դին։
Դորա համար այսպէս է ասում 16
Տէրը՝ Զօրաց Եհովայ Աստուածը,
ամեն հրապարակներում ողբ պի-
տի լինի, և ամեն փողոցներում
Վա՛յ վա՛յ պիտի ասեն, և երկ-
րագործին պիտի սուգի կանչեն,
և ողբի՝ ողբ գիտացողներին։ Եւ 17
ամեն այգիներում ողբ է լինելու,
որովհետև ես պիտի անցնեմ քո
միջովը, ասել է Տէրը։
Վա՛յ Տիրոջ օրուանը ցանկա- 18
ցողներին, ձեզ ի՞նչ պէտք է Տի-
րոջ օրը. նա խաւար է, և ոչ թէ
լոյս։ Ինչպէս որ մարդ կ՛փախչէ 19
առիւծի բերանից, և արջը կ՛հան-
դիպէ նորան. կամ տունը կ՛մտնէ
ու ձեռքը կ՛կռնեցնէ պատին, և
օձը կ՛կծէ նորան. Ահա Տիրոջ 20
օրը խաւար է և ոչ թէ լոյս, և
մառախուղ և ոչ թէ պայծա-
ռութիւն ունի նա։
Ես ատում եմ, մերժում եմ 21
ձեր տօները, և չեմ հոտոտում
ձեր հանդէսներումը։ Թէև ինձ 22
ողջակէզներ էլ մատուցանէք և
ձեր հացի ընծաներն էլ, ես չեմ
ընդունիլ. և ձեր պարարտ անա-
սունների խաղաղութեան զոհին
մտիկ չեմ տալ։ Քո երգերի աղ- 23
մուկը հեռացրու ինձանից, որ
չ՛լսեմ տաւիղներիդ եղանակը։
Բայց թող իրաւունքը յորդէ ջրի 24
պէս, և արդարութիւնը վարար
գետի պէս։ Զոհեր և հացի ընծանե՞ր էիք մատուցանում ինձ 25
անապատումը, այն քառասուն
տարին, ով Իսրայէլի տուն։ Այլ 26
դուք կրեցիք ձեր Մողոքի վրանը
և ձեր Հռեմփայ աստուծոյ աստղը

*Եբր. դառնայ Աւեն։

ձեր պատկերները որ շինել էիք
27 ձեզ համար։ Ուրեմն ձեզ դերի
պիտի անել տամ Դամասկոսից
այն կողմ, ասում է Տէրը, որի
անունը Զօրաց Աստուած է։

ԳԼ. Զ

1 Վա՛յ Սիօնումն ապահով նոտող-
ներին, և Սամարիայի սարի վերայ
վստահացողներին, ազգերի գլխա-
ւոր նշանաւորներին, որոնց մօտ
2 գալիս է Իսրայէլի տունը։ Անցէք
Քաղանէ և տեսէք, և այնտեղից
գնացէք մեծ Եմաթը, և Փղշտա-
ցիների Գէթը իջէք. մի՞թէ լաւ
են այս թագաւորութիւններից,
կամ նորանց սահմանը մե՞ծ է
3 ձեր սահմանից։ Վա՛յ նորանց որ
չար օրը հեռի են համարում, և
մօտեցնում բռնութեան աթո-
4 ռը, Որ պառկում են փղոսկրեայ
անկողինների վերայ, և մեկնվում
իրանց մահիճների վերայ, և ու-
տում հօտերից գառնուկները և
պարարտացնելու գոմերից՝ որթե-
5 րը։ Որ խաղ են ասում տաւի-
ղի ձայնակցութեամբ, Դաւիթի
նման նուագարաններ հնարում։
6 Որ բաժակներովը գինի են խմում,
և գլխաւոր իւղով օծվում, և
չեն ցաւում Յովսէփի բեկման
7 վերայ։ Դորա համար հիմա պիտի
գերի գնան առաջի գերիների
հետ. և պիտի հեռանայ խրախ-
ճանացողների զուարճանքը։
8 Երդուել է Տէր Եհովան իր
անձովը՝ ասում է Զօրաց Տէր
Աստուածը, ես զզվում եմ Յա-
կոբի պարծանքիցը, և ատում եմ
նորա պալատները, և պիտի մատ-
նեմ քաղաքն ու իր լիութիւնը։
9 Եւ եթէ լինի որ մէկ տան տասը
մարդ մնալու լինեն, նորանք էլ
10 պիտի մեռնեն։ Եւ վեր պիտի
առնէ նորան իր հօրեղբայրը և
նորա այրողը, որ ոսկորները դուրս
տանէ տանիցը, և պիտի ասէ տան
մէջ եղողին. Էլ կա՞յ մօտդ. և
նա պիտի ասէ. Ոչ. նա էլ պիտի
ասէ. Լռիր, որովհետև Տիրոջ
11 անունը յիշել չ՛կայ։ Որովհետև
ահա Տէրը հրամայում է, և նա
պիտի փշուր փշուր անէ մեծ տու-
նը, և փոքր տունը կոտրատէ։
Մի՞թէ ձիերը ապառաժի վե- 12
րայ կ՛վազեն, կամ թէ նա եզնե-
րով կ՛հերկուի՞. որ դուք դառ-
նութեան էք փոխել իրաւունքը,
և արդարութեան պտուղը՝ օ-
շինդրի։ Դուք ոչինչ բանով ու-
բախացողներդ, որ ասում էք.
Ահա մեր ոյժովը մեզ համար եղ-
ջիւրներ առանք։ Որովհետև ա- 13
հա, ով Իսրայէլի տուն, ես ձեզ
վերայ մի ազգ եմ վեր կացնում,
ասում է Եհովայ Զօրաց Աստ-
ուածը, որ ձեզ նեղեն Եմաթի
մուտքից մինչև անապատի հե-
ղեղատը։

ԳԼ. Է

Ինձ այնպէս ցոյց տուաւ Տէր 1
Եհովան, որ ահա կազմեց մո-
րեխներ յետին խոտի բուսնելու
սկզբումը. և ահա վերջին խոտը
թագաւորի հունձքից յետոյ է։
Եւ եղաւ երբոր երկրի խոտը կե- 2
րել վերջացրել էին, այն ժամա-
նակ ես ասեցի. Ով Տէր Եհովայ,
աղաչում եմ, ներիր. ի՞նչպէս
պիտի կանգնէ Յակոբը, որ պզտիկ
է։ Տէրը զղջաց սորա վերայ. Չը 3
լինի, ասեց Տէրը։
Ինձ այսպէս ցոյց տուաւ Տէր 4
Եհովան, և ահա կանչում էր որ
դատէ կրակով Տէր Եհովան, և
նա կերաւ մեծ անդունդը, և կե-
րաւ վիճակն էլ։ Եւ ես ասեցի. 5
Ով Տէր Եհովայ, մէկ դադարիր,
Յակոբն ի՞նչպէս կանգնէ, որով-
հետև փոքր է, Տէրը զղջաց սորա 6
մասին, Սա էլ թող չ՛լինի, ա-
սեց Տէր Եհովան։
Ինձ այսպէս ցոյց տուաւ, և 7
ահա Տէրը կանգնել էր լարաւոր
պարսպի վերայ, և ձեռքին մի
լարագունտ. Եւ Տէրն ասեց ինձ. 8
Դու ի՞նչ ես տեսնում, ով Ա-
մովս. և ես ասեցի. Մի լարա-
գունտ. և Տէրը ասեց. Ահա ես
լարագունտ եմ դնում իմ Իս-
րայէլ ժողովրդի մէջ. այլ ևս
չեմ անցկենալ նորա մօտով։ Եւ 9
աւերակ պիտի դառնան Իսահակի

բարձրաւանդակները, և Իսրայէլի
սրբարանները պիտի քանդուին,
և վեր պիտի կենամ Յերոբովամի
տան վերայ սրով։
10 Եւ մարդ ուղարկեց Բեթէլի
քահանայ Ամասիան Իսրայէլի Յե-
րոբովամ թագաւորի մօտ ասե-
լով. Քեզ դէմ դաւաճանու-
թիւն է անում Ամովսը Իսրայէլի
տան մէջ, երկիրը չէ կարող դի-
մանալ նորա բոլոր խօսքերին։
11 Որովհետև Ամովսն այսպէս է ա-
սում. Յերոբովամը սրով պիտի
մեռնէ, և Իսրայէլը պիտի ան-
պատճառ գերի տարուի իր երկրի
վերայից։
12 Եւ Ամասիան ասեց Ամովսին.
Ով տեսանող, գնա փախիր քեզ
համար Յուդայի երկիրը, և այն-
տեղ հաց կեր և այնտեղ մար-
13 գարէացիր։ Եւ Բեթէլումն այլ
ևս չ՛շարունակես մարգարէանա-
լը, որ նա թագաւորի սրբարանն
է, և թագաւորութեան տունն
է նա։
14 Եւ Ամովսը պատասխանեց և
ասեց Ամասիային. Ես մարգարէ
չեմ և մարգարէի որդի չեմ, այլ
տուարած եմ ես և մոլաթուզ
15 քաղող։ Բայց Տէրն ինձ վեր ա-
ռաւ հօտերի ետևիցը, և Տէրն
ինձ ասեց. Գնա մարգարէացիր
16 իմ Իսրայէլ ժողովրդին։ Եւ հի-
մա լսիր Տիրոջ խօսքը. Դու ասում
ես՝ Իսրայէլի մասին մի մարգա-
րէանար, և մի ճչար Իսահակի
17 տան վերայ։ Սորա համար Տէրն
այսպէս է ասում. Քո կինը քա-
ղաքի մէջ պիտի պոռնկանայ և
քո որդիներն ու քո աղջկերքը
սրով պիտի ընկնեն, և քո երկի-
րը լարով պիտի բաժանուի, և
դու պիտի պիղծ երկրի վերայ
մեռնես, և Իսրայէլն էլ պիտի
անպատճառ գերի տարուի իր
երկրի վերայից։

ԳԼ. Ը

1 Այսպէս ցոյց տուաւ ինձ Տէր
Եհովան, և ահա մի կողով ա-
2 մառային պտուղ. Եւ ասեց. Դու
ի՞նչ ես տեսնում, ով Ամովս. և
ես ասեցի՝ Մի կողով ամառային
պտուղ. և Տէրն ինձ ասեց. Վեր-
ջը եկել է իմ Իսրայէլ ժողովրդի
վերայ, այլ ևս չեմ անց կենալ
միւսանգամ նորա մօտով։ Եւ 3
պիտի ողբան տաճարի երգերը
այն օրը, ասում է Տէր Եհո-
վան. շա՛տ դիակներ, ամեն տեղ
ձգուած՝ լուռ։
Լսեցէք այս, ով դուք տնան- 4
կին կլանողներ, և երկրի աղքատ-
ներին փչացնելու ցանկացողներ. Որ 5
ասում էք. Ե՞րբ է անցնելու ամ-
սագլուխը, որ ցորեն վաճառա-
շահենք, և շաբաթը՝ որ բանանք
հացի չտիմարանները, որ փոքրացը-
նենք արդուն և մեծացնենք սիկ-
ղը, և նենգենք խարդախութեան
կշիռքը։ Որ փողով ծախու առ- 6
նենք աղքատներին, և տնանկնե-
րին մի զոյգ կօշիկով. և ցորենի
խոտանովը շահավաճառուենք։
Տէրը երդում արաւ Յակոբի մեծ 7
վայելչութիւնովը, թէ նորանց բո-
լոր գործերը յաւիտեան չեմ մո-
ռանալու։ Մի՞թէ այս բանի վե- 8
րայ երկիրը չի դողալ, և սուգ
բռնիլ ամեն նորանում բնակողը.
և վեր պիտի գնայ Նեղոսի պէս
նորա ամենը, և պիտի քշուի և
ոռոգուի Եգիպտոսի Նեղոսի պէս։
Եւ այն օրը պիտի լինի, ասում է 9
Տէր Եհովան, որ արեգակը մար
եմ մտցնելու կէս օրին, և խա-
ւարեցնելու եմ երկրի համար
լոյս օրին։ Եւ ձեր տօները պիտի 10
սուգի դարձնեմ, և ձեր բոլոր
երգերը՝ ողբի. և ամեն մէջքի վե-
րայ քուրձ պիտի դնեմ, և ամեն
գլխի վերայ՝ կնտութիւն, և պի-
տի անեմ ինչպէս մէկ հատիկի
սուգ, և նորա վախճանը դառ-
նութեան օրուայ պէս։
Ահա օրեր են գալիս, ասում 11
է Տէր Եհովան, որ սով պիտի
ուղարկեմ երկրի վերայ, ոչ թէ
հացի սով և ոչ ջրի ծարաւ, այլ
Տիրոջ խօսքը լսելու։ Եւ պիտի 12
թափառեն ծովից մինչև ծով և
հիւսիսից մինչև արևելք, և նո-
րանք պիտի ման գան Տիրոջ խօս-
քը որոնելու համար, և պիտի
չ՛գտնեն։ Այն օրը պիտի նուաղեն 13

գեղեցիկ կոյսերը և երիտասարդ-
11 ները ծարաւով. Որոնք երդնում
են Սամարիայի յանցանքովը և
ասում. կենդանի է քո աստ-
ուածդ, ով Դան, և կենդանի է
Բերսաբէէի ճանապարհը. նորանք
պիտի ընկնեն և այլևս վեր չ-
կենան։

ԳԼ. Թ

1 Տիրոջը տեսայ սեղանի վերայ
կանգնած, որ ասեց. Զարկ խո-
յակին որ սեմերը դողան, և նո-
րանց փչրիր նորանց ամենի գլխի
վերայ. և նորանց միացորդին
սրով պիտի սպանեմ. նորանցից
մի փախստական պիտի չ'փախչ-
2 չ'պրծնիլ։ Եթէ նորանք ծակեն
դժոխքն անցնեն, այնտեղից էլ
իմ ձեռքը նորանց պիտի առնէ.
եթէ երկինքն էլ ելնեն, այնտե-
ղից էլ պիտի իջեցնեմ նորանց։
3 Եւ եթէ Կարմէղոսի գլխին թաք-
չուին, այնտեղից պիտի փնտռեմ
և առնեմ նորանց, և եթէ իմ
աչքի առաջին ծովի խորքումը
ծածկուին, այնտեղից էլ օձին
պիտի հրամայեմ, և նա պիտի
4 կծէ նորանց։ Եւ եթէ նորանք
գերի գնան իրանց թշնամիների
առաջին, այնտեղից սուրին պիտի
հրամայեմ և նա պիտի սպանէ
նորանց. և իմ աչքը պիտի դնեմ
նորանց վերայ չարիքի համար, և
ոչ թէ բարիքի համար։
5 Եւ Զօրաց Եհովայ Տէրը պի-
տի դիպչի երկրին, և նա պիտի
հալուի, և բոլոր նորանում բնա-
կողները պիտի սուգ անեն, և նա
վեր պիտի գնայ Նեղոսի պէս նո-
րա բոլորը, և պիտի հեղեղուի
6 Եգիպտոսի Նեղոսի պէս. Նա որ
երկինքումն է շինում իր վերնա-
նները, և նորա կամարը երկրի
վերայ հաստատում. նա որ կան-
չում է ծովի ջրերը և նորանց
թափում է երկրի երեսի վերայ.
Եհովայ է նորա անունը։

Մի՞թէ դուք ԷԹէովպացիների 7
որդկանց պէս չէք ինձ համար,
ով Իսրայէլի որդիք, ասում է
Տէրը. չէ՞ որ Իսրայէլին վեր հանե-
ցի Եգիպտոսի երկրից, և Փղշտա-
ցիներին՝ Կափթորից, և Ասորի-
ներին՝ Կիրից։ Ահա Տէր Եհովայի
աչքերը այդ մեղաւոր թագաւո-
րութեան վերայ է. և ես նորան
պիտի փչացնեմ երկրի երեսի վե-
րայից. միայն թէ բոլորովին պի-
տի չ'փչացնեմ Յակոբի տունը,
ասում է Տէրը։ Որովհետև ահա 9
ես հրամայում եմ, և պիտի մո-
ղեմ ամեն ազգերի մէջ Իսրայէլի
տունը. ինչպէս որ մնողով կ'մաղ-
ուի, որ մի հատ վայր չ'ընկնէ
երկրի վերայ։ Սրով պիտի մեռ- 10
նեն իմ ժողովրդի բոլոր մեղա-
ւորները, որոնք ասում են Մեզ
չի հասնիլ և մեր առաջը չի գալ
չարիքը։

Այն օրը պիտի կանդնեցնեմ 11
Դաւիթի ընկած խորանը, և պիտի
նորոգեմ նորա պատուածքը
ները, պիտի կանդնեցնեմ նորա
քանդուածքները և նորան պիտի
շինեմ ինչպէս վաղեմի օրերումը.
Որպէս զի նորանք ժառանգեն Ե- 12
դոմի մնացորդը, և այն բոլոր
ազգերը, որոնց վերայ կ'յիշուի
իմ անունը, ասում է Տէրը՝ այս
բաները անող։ Ահա օրեր պիտի 13
գան, ասում է Տէրը, որ հեր-
կողը կ'հասնի հնձողին, և խա-
ղող կոխողը՝ սերմ ցանողին. և
սարերը քաղցու կ'կաթեցնեն, և
բոլոր բլուրները կ'հալուին։
Եւ ես եմ կ'դարձնեմ իմ ի- 14
րայել ժողովրդի դերութիւնը, և
նորանք պիտի շինեն աւերակ քա-
ղաքները, և բնակուեն, և այգի-
ներ պիտի անկեն և խմեն նորանց
գինին, և պարտէզներ պիտի շի-
նեն և ուտեն նորանց պտուղնե-
րը։ Եւ ես պիտի անկեմ նորանց 15
իրանց երկրի վերայ, և նորանք այլ
ևս պիտի չ'պոկուին իրանց երկրի
վերայից, որ տուել եմ իրանց,
ասում է Տէրը՝ քո Աստուածը։

ԱԲԴԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

1 Աբդիայի տեսիլքը։
Այսպէս է ասում Տէր Եհովան
Եդովմի մասին. Լուր լսեցինք Տի-
րոջ կողմանէ, և դեսպան ու-
ղարկուեցաւ ազգերի մէջ Թէ վեր
կացէք, որ նորա վերայ պատե-
2 րազմի վեր կենանք։ Ահա քեզ
պզտիկ եմ արել ազգերի մէջ,
3 դու շատ անարգուած ես։ Քո
սրտի հպարտութիւնը քեզ խա-
բել է, ով վէմի խոռոչներումը
բնակող, որի բնակարանը բարձր
է, որ սրտումդ ասում ես. Ո՞վ
4 կ'իջեցնէ ինձ երկիրը։ Թէև ար-
ծիւի պէս բարձրանաս, և թէև
աստղերի մէջ դնես քո բոյնը,
քեզ այնտեղից պիտի իջեցնեմ,
5 ասում է Տէրը։ Եթէ գողեր
գային քեզ մօտ կամ դիւերային
աւազակները, (ի՜նչպէս կործան-
ուեցար.) մի՞թէ չէին գողանալ
օրքան իրանց բաւական է. եթէ
կթողները գային քեզ մօտ, մի՞թէ
6 չէին թողել ճիւռեր։ Ի՜նչպէս
քննուեցաւ Եսաւ. որոնուեցան
7 նորա ծածուկ տեղերը։ Մինչև
սահմանն ուղարկեցին քեզ քո
բոլոր դաշնակիցները, քեզ խա-
բեցին քեզ յաղթեցին քեզ հետ
խաղաղութիւն ունեցողները, քո
հացը որոգայթ դրին քո տակին.
Հասկացողութիւն չ'կայ նորա-
նում։
8 Ահա այն օրը, ասում է Տէրը,
պիտի փչացնեմ իմաստուններին
Եդովմից, և հանճարը Եսաւի
9 սարիցը։ Եւ քո զօրաւորները պի-
տի զարհուրեն, ով Թեման, որ-
պէս զի մարդ բնաջինջ լինի Ե-
10 սաւի սարիցը սպանուելով։ Եղ-
բօրդ Յակոբի անիրաւութեան
համար քեզ ամօթը պիտի ծած-
կէ, և դու բնաջինջ պիտի լինես
յաւիտեան։ Դու հանդէպ կանգ- 11
նած օրը, այն օրը որ օտարները
գերի արին նորա զօրքը, և օտար-
ազգիները մտան նորա դռները,
և երուսաղէմի վերայ վիճակ գցե-
ցին, դու էլ նորանց մէկի նման
էիր։ Եւ պիտի մտիկ չ'անէիր քո 12
եղբօր օրը՝ նորա օտարի օրը, և
պիտի չ'ուրախանայիր Յուդայի
որդկանց վերայ նորանց կորուստեան
օրը, և պիտի չ'մեծացնէիր բե-
րանդ նեղութեան օրը։
Դու պիտի չ'մտնէիր իմ ժողովրդի 13
դռնովը նորանց թշուառութեան
օրը, դու էլ պիտի մտիկ չ'անէիր
նորա ձախորդութեանը՝ նորա
թշուառութեան օրը, և պիտի
չ'ես չ'երկարացնէիր նորա ապ-
րանքին նորա թշուառութեան 14
օրը։ Եւ պիտի չ'կանգնէիր ճանա-
պարհի գլխին նորա ազատուած-
ներին բնաջինջ անելու համար, և
պիտի չ'մատնէիր նորա մնացած-
ները նեղութեան օրը։ Որովհետև 15
մօտիկ է Տիրոջ օրը բոլոր ազգե-
րի վերայ, ինչպէս որ դու արիր,
քեզ էլ այնպէս պիտի անեն. քո
հատուցումը ետ պիտի դառնայ
քո գլխին։ Որովհետև ինչպէս որ 16
դուք խմեցիք իմ սուրբ սարի
վերայ, բոլոր ազգերն էլ պիտի
խմեն միշտ, նորանք պիտի խմեն
ու կլանեն, և չ'եղածի պէս դառ-
նան։
Բայց Սիօն սարի վերայ փրկուած- 17
ներ կ'լինեն, և նա սրբութիւն է
լինելու. և Յակոբի տունը պիտի
ստանայ իր ստացուածքները։ Եւ 18
Յակոբի տունը կրակ պիտի լինի
և Յովսէփի տունը՝ բոց, և Եսաւի
տունը՝ յարդ, և պիտի վառուին
նորանց մէջ և ուտեն նորանց, և
Եսաւի տունը մնացորդ չի ունե-

19 նալ. որ Տէրն է խօսել։ Եւ հա-
բաւացիք պիտի տիրեն Եսաւի
սարին, և դաշտայինք՝ Փղշտա-
ցիների երկրին, և պիտի տիրեն
Եփրեմի դաշտին և Սամարիայի
դաշտին, և Բենիամինը՝ Գաղաա-
20 դին. Եւ Իսրայէլի որդկանց այս
զօրքի գերիները՝ Քանանացիների
երկրին մինչև Սարեփթա, և Երու-
սաղէմի գերիները՝ որ Սեփարա-
թումն են, նորանք պիտի տիրեն
հարաւային քաղաքներին։ Եւ ա- 21
զատիչներ պիտի վեր ելնեն Սիօն
սարը, Եսաւի սարը դատելու հա-
մար. և Տիրոջը պիտի լինի թա-
գաւորութիւնը։

ՅՈՎՆԱՆԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ Ամա-
թիի որդի Յովնանին ասելով.
2 Վեր կաց գնա Նինուէ մեծ քա-
ղաքը, և քարոզիր նորա դէմ.
որովհետև նորանց չարութիւնը
3 վեր է եկել իմ առաջին։ Բայց
Յովնան վեր կացաւ, որ Տիրոջ
երեսիցը Թարսիս փախչէ, և ի-
ջաւ Յոպպէ և մի նաւ գտաւ
որ Թարսիս էր գնում, և նորա
վարձքը տուաւ, ու նորա մէջն
իջաւ, որ նորանց հետ Թարսիս
գնար Տիրոջ երեսիցը։
4 Եւ Տէրը մի մեծ քամի հանեց
ծովի վերայ, և մեծ փոթորիկ ե-
ղաւ ծովումը, և նաւը ուզում
5 էր փշրուիլ։ Եւ նաւավարները
վախեցան, և ամեն մարդ իր աս-
տուծուն էր աղաղակում, և այն
կարասիները, որ նաւումն էին,
գցեցին ծովը, որ իրանց վերայից
թեթևացնեն. իսկ Յովնանը իջել
էր նաւի խորքը և պառկել ու
6 խոր քնել։ Եւ նաւապետը նորա
մօտ եկաւ և ասեց նորան, Ի՞նչ
ես մրափել. վեր կաց աղաղակիր
քո Աստուծուն, գուցէ Աստուած
յիշէ մեզ, և մենք չ՚կորչենք։
7 Եւ մէկզմէկի ասում էին. Ե-
կէք վիճակ գցենք ու իմանանք,
թէ ո՞ւմ պատճառով է եկել
մեզ այս չարիքը. և վիճակ գցե-
ցին, և վիճակը ընկաւ Յովնանին։
Եւ նորան ասեցին. Մէկ ասիր 8
մեզ, թէ ո՞ւմ պատճառով է
այս չարիքը եկել մեզ վերայ, ի՞նչ
է քո բանը, և ո՞րտեղից ես գա-
լիս. ո՞րն է քո երկիրը, և դու ո՞ր
ժողովրդիցն ես։ Եւ նա նորանց 9
ասեց. Ես Եբրայեցի եմ, և ես
պաշտում եմ երկնքի Աստու-
ծուն՝ Տիրոջը, որ ստեղծել է ծո-
վը և ցամաքը։ Եւ այն մարդիկը 10
վախեցան մեծ վախով և ասեցին
նորան. Դա ի՞նչ ես արել դու.
որովհետև այն մարդիկն իմացան
որ նա փախչում է Տիրոջ երե-
սիցը, որովհետև պատմեց նորանց։
Եւ ասեցին նորան. Մենք քեզ 11
ի՞նչ անենք, որ ծովը դադարէ
մեզ վերայ. որովհետև ծովը գնա-
լով ալեկոծվում էր։ Եւ նա ա- 12
սեց նորանց. Առէք ինձ և գցեցէք
ինձ ծովը, և ծովը կ՚դադարէ ձեզ
վերայ. որովհետև ես գիտեմ որ
իմ պատճառով է եկել այս մեծ
փոթորիկը ձեզ վերայ։
Եւ այն մարդիկը թիավարում 13
էին որ ետ հասնեն ցամաքին, բայց
չէին կարողանում, որովհետև
ծովը գնալով ալեկոծվում էր
նորանց վերայ։ Եւ նորանք աղա- 14
ղակեցին Եհովային և ասեցին.
Ո՛հ, Եհովայ, աղաչում ենք, թող
չ՚կորչենք այս մարդի անձի պատ-
ճառով, և անմեղ արիւն մի դնիր

մեզ վերայ, որովհետև դու, ով
Եհովայ, ինչպէս որ ուզում ես՝
15 անում ես։ Եւ առան Յովնանին
և ծովը գցեցին նորան. և ծովը
դադարեց իր կատաղութիւնիցը։
16 Եւ այն մարդիկը մեծ երկիւղով
վախեցան Տէրիցը, և զոհեր մա-
տուցին Տիրոջը և ուխտեր արին։
17 Եւ Տէրը հրամայեց մի մեծ
ձկան, որ Յովնանին կուլ տայ.
և Յովնանը ձկան փորումն էր ե-
րեք օր և երեք գիշեր։

ԳԼ. Բ

1 Եւ Յովնանը աղօթք արաւ իր
Տէր Աստուծուն ձկան փորիցը.
2 Եւ ասեց. Իմ նեղութիւնիցը
կանչեցի դէպի Տէրը, և նա ինձ
պատասխանեց. անդունդի փորի-
ցը աղաղակեցի, և դու լսեցիր
3 իմ ձայնը։ Եւ դու ինձ գցեցիր
անդունդը՝ ծովերի մէջ. և հե-
ղեղներն ինձ պաշարեցին. քո
բոլոր կոհակները և ալիքները
անց էին կենում ինձ վերայով։
4 Եւ ես ասեցի՝ Ես վռնտուած եմ
քո աչքի առաջից, սակայն էլի
պիտի նայեմ քո սուրբ տաճա-
5 րին։ Ինձ շրջապատեցին ջրերը
մինչև հոգիս, անդունդն ինձ պա-
շարել էր, կնիւն գլխիս փաթաթ-
6 ուեցաւ։ Ես սարերի հիմանց
մօտն իջայ, երկիրն իր նիգերովը
ետևիս էր յաւիտեան. բայց դու
իմ կեանքը հանեցիր *կորուս-
տիցը, ով իմ Տէր Աստուած։
7 Հոգիս ինձ վերայ նուաղելիս՝ յի-
շեցի Տիրոջը, և իմ աղօթքը քեզ
մօտ հասաւ քո սուրբ տաճարը։
8 Փուչ ունայնութիւնների նայող-
ները իրանց լինելու ողորմութիւնը
թողում են։
9 Բայց ես օրհներգութեան ձայ-
նով քեզ զոհ պիտի մատու-
ցանեմ. արած խոստմունքս պի-
տի կատարեմ. փրկութիւնը Տի-
10 րոջն է։ Եւ Տէրը հրամայեց
ձկանը. և նա Յովնանին փսխեց
ցամաքը։

*Կամ՝ դուբիցը

ԳԼ. Գ

Եւ Տիրոջ խօսքը երկրորդ ան- 1
գամ եղաւ Յովնանին ասելով.
Վեր կաց գնա Նինուէ մեծ քա- 2
ղաքը և քարոզիր նորա դէմ այն
քարոզութիւնը, որ ես քեզ կ՚ա-
սեմ. Եւ Յովնանը վեր կացաւ ու 3
գնաց Նինուէ Տիրոջ խօսքին հա-
մեմատ, և Նինուէն մեծ քաղաք
էր Աստուծոյ համար՝ երեք օրուայ
ճանապարհ։ Եւ Յովնանը սկսեց 4
քաղաքը մտնել մէկ օրուայ ճա-
նապարհ, և քարոզում էր ու
ասում. Դեռ քառասուն օր կայ,
և Նինուէն պիտի կործանուի։
Եւ Նինուէի մարդիկը հաւա- 5
տացին Աստուծուն, և ծոմ հրա-
տարակեցին և քուրձեր հագան
մեծերից մինչև պզտիկները։ Եւ 6
խօսքը հասաւ Նինուէի թագա-
ւորին, և նա վեր կացաւ իր ա-
թոռիցը և հանեց պատմուճանը
իր վերայից և քուրձ հագաւ և
նստեց մոխրի վերայ. Եւ կանչել 7
տուաւ ու ասեց Նինուէումը
թագաւորի և նորա մեծամեծ-
ների հրամանովն ասելով. Մարդ
և անասուն, արջառ և ոչխար
ոչինչ չ՚ճաշակեն, չ՚արածեն և
ջուր չ՚խմեն. Եւ քուրձ հագնեն 8
մարդիկ և անասունք, և ուժով
աղաղակեն առ Աստուած, և ա-
մեն մարդ ետ դառնայ իր չար
ճանապարհիցը և իր ձեռքերումն
եղող անիրաւութիւնիցը։ Ով գի- 9
տէ, գուցէ Աստուած ետ դառ-
նայ և զղջայ, և ետ դառնայ իր
սաստիկ բարկութիւնիցը ու մենք
չ՚կորչենք։ Եւ Աստուած տեսաւ 10
նորանց գործերը, որ ետ դառան
իրանց չար ճանապարհիցը, և
Աստուած զղջաց այն չարեաց մա-
սին, որ ասել էր թէ պիտի անէ
նորանց, և չ՚արաւ։

ԳԼ. Դ

Եւ Յովնանը տրտմեց մեծ տըրտ- 1
մութիւնով և զայրացաւ. Եւ 2
աղօթք արաւ Տիրոջը և ասեց.
Ո՛հ Տէր, սա չէ՞ր իմ խօսքը քանի
որ դեռ իմ երկրումն էի. դորա

համար էլ աճապարեցի որ փախ-
չեմ Թարսիս. որովհետև գիտէի,
որ դու ողորմած, գթած, եր-
կայնամիտ և բազումողորմ Աստ-
ուած ես և կ'զղջաս չարիքի հա-
3 մար։ Եւ հիմա, ով Տէր, ազա-
չում եմ առ հոգիս ինձանից.
որովհետև մեռնելս ապրելուցս
4 լաւ է։ Եւ Տէրն ասեց. *Մի՞թէ
լաւ է որ բարկացել ես։
5 Եւ Յովնանը դուրս եկաւ քա-
ղաքիցը և նստեց քաղաքի արևել-
եան կողմին, և իրան համար
այնտեղ մի հովանի շինեց և նո-
րա տակին նստեց շուքի մէջ
մինչև որ տեսնէ թէ ինչ է լինե-
6 լու քաղաքին։ Եւ Տէր Աստուա-
ծը հրամայեց մի դդմենու, որ
նա վեր ելաւ Յովնանի վերայ որ
շուք անէ նորա գլխի վերայ, որ
նորան ազատէ իր տառապան-
քիցը. և Յովնանը ուրախացաւ
դդմենու վերայ մեծ ուրախու-
թիւնով։
7 Եւ Աստուած հրամայեց մի
որդնի առաւօտուայ արշալոյսը
ծագելիս, և նա զարկեց դդմե-
նուն, և սա չորացաւ։ Եւ եղաւ 8
երբոր արեգակը ծագեց, այն ժա-
մանակ Աստուած հրամայեց ա-
րևելեան խորշակահար քամուն,
և արևը զարկեց Յովնանի գլխին,
և նա թուլացաւ, և իր անձի
համար ուզում էր մեռնել, և
ասեց. Մեռնելս լաւ է ապրե-
լուցս։
Եւ Աստուած ասեց Յովնանին. 9
Մի՞թէ լաւ է որ բարկացել ես
դդմենու մասին. և նա ասեց.
Լաւ է, որ բարկացել եմ մինչև
մահ։
Եւ Տէրն ասեց. Դու ափսոսում 10
ես դդմենու մասին, որի վերայ
աշխատութիւն չ'քաշեցիր և որին
չ'մեծացրիր, որն որ մէկ գիշեր-
ուայ մէջ եղաւ և մէկ գիշերուայ
մէջ փչացաւ։ Իսկ ես չ'ափսոսա՞մ 11
Նինուէ մեծ քաղաքի մասին, ո-
րի մէջ կան հարիւր քսան հա-
զար մարդից աւելի, որոնք չեն
հասկանում իրանց աջ ու ձախ
ձեռքը, և շատ անասուն։

ՄԻՔԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Տիրոջ խօսքը որ եղաւ Մօրստա-
ցի Միքիային Յուդայի Յովաթամ,
Աքազ և Եզեկիա թագաւորների
օրերին, որ նա տեսաւ Սամա-
րիայի և Երուսաղէմի մասին։
2 Լսեցէք, ով բոլոր ժողովուրդ-
ներ, ուշադրութիւն արա, ով
երկիր և նորա բոլոր լրութիւնը.
և Տէր Եհովան վկայ լինի ձեզ
դէմ, Տէրը իր սուրբ տաճարիցը։
3 Որովհետև ահա Տէրը դուրս է
գալիս իր տեղիցը, և պիտի իջնէ
և ման գայ երկրի բարձրաւան-
դակների վերայ։ Եւ սարերը պի- 4
տի հալուին նորա տակին, և հո-
վիտները պիտի ճեղքուին ինչպէս
մոմ կրակի առաջին, ինչպէս ջուր
որ իջնում է զառիվայրից։ Յա- 5
կոբի յանցանքի համար է այս ա-
մենը և Իսրայէլի տան մեղքերի
համար. ո՞վ է Յակոբի յանցան-
քը, չէ՞ որ Սամարիան. և ո՞վ է
Յուդայի բարձրաւանդակները, 6
չէ՞ որ Երուսաղէմը։ Եւ Սամա-
րիան պիտի դաշտի քարակոյտ
շինեմ՝ այգի տնկելու տեղեր,
և նորա քարերը պիտի թափեմ
ձորը, և բանամ նորա հիմերը։
Եւ նորա բոլոր կուռքերը պիտի 7
կոտրատուին, և նորա բոլոր վարձ-

*Մի՞թէ խիստ բարկացել ես։

քերը պիտի կրակով այրուին,
և նորա բոլոր արձանները պի-
տի ամայի անեմ. որովհետև
բոզի վարձքից է ժողովել. ուրեմն
բոզի վարձքի էլ պիտի դառ-
նան։
8 Սորա համար պիտի ողբամ և
հառաչեմ, պիտի կողոպտուած
և մերկ ման գամ, սուգ պիտի
անեմ չագալների պէս և կոծ՝
9 ջայլամների պէս։ Որովհետև ան-
բժշկելի են նորա վէրքերը, որով-
հետև եկաւ մինչև Յուդան, հա-
սաւ իմ ժողովրդի դռանը՝ մինչև
10 Երուսաղէմ։ Գէթի մէջ մի ի-
մացնէք, բնաւ լաց մի լինիք,
*Բեթափբայումը փոշու մէջ պի-
11 տի թաւալուիմ. Անց կաց քեզ
համար, ով †Սափիրի բնակչուհի,
ամօթով մերկ. դուրս չէ եկել
‡Սաանանի բնակչուհին, ‖Բեթե-
սելի կոծը պիտի առնէ ձեզանից
12 իր օթևանը։ Որովհետև դալար-
վում է բարեաց համար **Մա-
րօթի բնակչուհին, որովհետև
չարիք պիտի իջնէ Տիրոջ կողմից
13 մինչև Երուսաղէմի դուռը։ Ձին
կառքին լծիր, ով Լաքիսի բնակ-
չուհի, դա մեղքի սկիզբն է Սիօնի
աղջկայ համար. որովհետև քե-
զանում գտնվում են Իսրայէլի
14 յանցանքները։ Դորա համար ը-
ծաներ պիտի տաս Մօրեսեթ-
գեթին. ††Աքզիբի տները պիտի
ստեն Իսրայէլի թագաւորներին։
15 Դեռ ժառանգ պիտի բերեմ քեզ
համար, ով ‡‡Մարեսայի բնակ-
չուհի մինչև Ոդողոմ պիտի հաս-
16 նէ Իսրայէլի փառքը։ Գերծիր
և կտրիր մազերդ քո փափուկ
որդկանց համար, լայնացրու
կնտութիւնդ արծիւի պէս, ո-
րովհետև գերի տարուեցան քե-
զանից։

*Այսինքն՝ Փոշու տուն
†Այսինքն՝ Գեղեցկութիւն
‡Այսինքն՝ Ելք
‖Այսինքն՝ Մերձակայ տուն
**Այսինքն՝ Դառնութիւններ
††Այսինքն՝ Ստութիւն
‡‡Այսինքն՝ Ժառանգութիւն

ԳԼ. Բ

Վա՛յ անօրէնութիւն խորհող- 1
ներին, և իրանց անկողինների վե-
րայ չարութիւն գործողներին.
նորանք անում են այն՝ առա-
ւօտեան լոյսին, որ իրանց ձեռքն
է իրանց ոյժը։ Եւ նորանք ցան- 2
կանում են ագարակների և յա-
փշտակում, և ցանկանում են
տների՝ և առնում. և բռնաբա-
րում են մարդին ու իր տանը և
մարդին ու նորա ժառանգու-
թեանը։ Դորա համար այսպէս է 3
ասում Տէրը. Ահա ես չարիք եմ
խորհում այս ազգի վերայ. որ-
տեղից որ չէք կարողանալ քա-
շել ձեր պարանոցները, և չէք
գնալ հպարտութեամբ, որով-
հետև ժամանակը չար է։ Այն 4
օրը ձեզ վերայ առակ են խօսե-
լու, և ողբալի ողբով ողբալու են
ասելով. Բոլորովին փչացանք. իմ
ժողովրդի բաժինը նա փոխեց,
նա ի՞նչպէս է վեր առնում ին-
ձանից, խոտորողին բաժանում է
մեր դաշտերը։ Դորա համար դու 5
լար ձգող պիտի չ'ունենաս Տի-
րոջ ժողովքումը։
Նորանք՝ Մի մարգարէանաք, 6
ասելով մարգարէանում են։ Նո-
րանք չ'պիտի մարգարէանան ‖‖նո-
րանց վերայ. նախատինքը չի վեր-
նալ։ Ով Յակոբի տուն կոչուածդ, 7
մի՞թէ Տիրոջ հոգին կարճ է.
կամ սորա՞նք են նորա գործերը.
մի՞թէ իմ խօսքերը լաւ չեն ու-
ղիղ վարուողի համար։ Եւ իմ ժո- 8
ղովուրդը ***անցեալումն իբրև
թշնամի է վեր կացել. հանդեր-
ձի վերայից յափշտակում էք
պատմուճանը ապահով անցու-
դարձողներից, պատերազմից ետ
դարձողներից։ Իմ ժողովրդի կա- 9
նանցը վռնտում էք իրանց զուար-
ճալի տներիցը, նորանց երեխա-
ների վերայից առնում էք իմ
փառքը յաւիտեան։ Վեր կացէք 10
ու գնացէք, որովհետև սա չէ
հանգստութեան տեղը. այն պըղ-

‖‖Կամ՝ նորանց.
***Կամ՝ երէկ

ծուխեան պատճառով, որ պիտի կործանէ, և այն եկ առատիկ
11 կործանումով, եթէ մի մարդ թեթեւաբարոյ և առագաստա՝ -ւ ինձ գիրի և օդին վերայ մարգարեանամ, ահա նա կ'լինի այս ազգի մարգարէն։
12 Անպատճառ պիտի ժողովեմ ձեզ ամենիդ, ով Յակոբ, անպատճառ պիտի հաւաքեմ Իսրայէլի մնացորդը բոսորայի ոչխարների պէս, ինչպէս մի հօտ իր փարախի մէջ. պիտի աղմուկ հանեն մարդկանց բազմութիւն
13 պատճառով։ Ելոյմտացոր վեր է ելնում նորանց առաջին, նորանք խրամատում և անց են կենում դռնովը ու նորանով դուրս գալիս, և նորանց թագաւորը անց է կենում նորանց առաջին, և Տէրն էլ նորանց պարագլուխ։

Գլ. Գ

1 Եւ ես ասեցի. Մէկ լսեցէք, ով Յակոբի գլխաւորներ, և Իսրայէլի տան իշխաններ, չէ՞ որ դուք պէտք է իմանաք իրաւունքը.
2 Դուք՝ բարին ատողներդ և չարը սիրողներդ, որ մաշկում էք մարդկանց կաշին իրանց վերայիցը, և նորանց միսը իրանց ոսկորներիցը։
3 Որ ուտում էք իմ ժողովրդի միսը, և պոկում էք նորանց կաշին իրանց վերայիցը, և նորանց ոսկորները փշրում, և նրանց կտորում ինչպէս կաթսայում և ինչպէս միս՝ պատուկի
4 մէջ։ Այն ժամանակ կ'ազաղակեն դէպի Տէրը, և նորանց չէ պատասխանել նա, և իր երեսը կ'ծածկէ նորանցից այն ժամանակին, որովհետև նորանք չարացրել են իրանց արարքները։
5 Այսպէս է ասում Տէրը իմ ժողովուրդը մոլորեցնող մարգարէների մասին, որ կծում են իրանց առանիներով, և ազաղակում՝ խաղաղութիւն, և ով որ նորանց բերանը ոչ բան չ'դնէ, նորա դէմ պատերազմ կ'հրամարակեն. Վասն որոյ գիշերը կ'լինէ ձեզ որ տեսիլք չ'տեսնէք. և ձեզ խաւար կ'լինէ որ գուշակութիւն չ'անէք. և արեգակը պիտի մուր մտնէ մարգարէների վերայ, և օրը խաւարէ նորանց վերայ։ Եւ պիտի ամչեն տեսանողները, և պիտի ամօթահարուին գուշակողները և չորս շրթունքները ծածկեն նորանք ամենքը, որովհետև չ'կայ Աստուծոյ պատասխան։ Սակայն ես լցուած եմ զօրութիւնով Տիրոջ հոգովը, նաև դատաստանով ու արիութիւնով, որ իմացնեմ Յակոբին իր յանցանքը, և Իսրայէլին իր մեղքը։
9 Մէկ սա լսեցէք, ով Յակոբի տան գլխաւորներ, և Իսրայէլի տան իշխաններ, իրաւունքից զզուողներ, որ ամեն ուղիղ բանը ծռում էք. Սիոնը արիւնհեղութեամբ շինելով, և երուսաղէմը՝ անիրաւութեամբ։ Նորա գլխաւորները կաշառքով են դատում, և նորա քահանաները վարձքով են ասողբեցնում, և նորա մարգարէները փողով են մարգարէանում, և Տիրոջ վերայ են կռնում՝ ասելով. Չէ՞ որ Տէրը մեր մէջն է, մեզ վերայ չարիք չի գալ։ Դորա համար Սիոնը ձեր պատճառով պիտի իբրև ագարակ հերկուի, և երուսաղէմը աւերակների գեղեր դառնայ, և տաճարի սարը՝ անտառի բարձրաւանդակներ։

Գլ. Դ

1 Եւ վերջի օրերը պիտի լինի որ Տիրոջ տան սարը հաստատուն պիտի լինի սարերի գլխին, և բարձր պիտի լինի բլուրներից, և ժողովուրդները հոսելով նորա մօտ պիտի գնան.
2 Եւ շատ ազգեր պիտի գնան և ասեն. Եկէք վեր գնանք Տիրոջ սարը, և Յակոբի Աստուծոյ տունը, որ նա մեզ սովորեցնէ իր ճանապարհները, և որ մենք գնանք նորա շաւիղներովը, որովհետև Սիոնից պիտի դուրս գայ օրէնքը, և Տիրոջ խօսքը՝ երուսաղէմից։
3 Եւ նա շատ ժողովուրդների մէջ դատաստան պիտի անէ, և զօրաւոր ազգերին պիտի յանդիմանէ մինչև հեռաւորները. և նորանք պէտք է կոտրատեն իրանց սուրերը խոփեր չէնէն, և իրանց նիզակները՝ յօտացներ, ազգ ազգի վերայ սուր պիտի չ'բարձրացնէ, և այլ ևս պատերազմ պիտի չ'սովորեն։
4 Այլ ամեն մարդ պիտի իր որթի տակին բնակուէ, և իր թզենու տակին, և վախեցնող պիտի չ'լինի, որովհետև Զօրաց Տիրոջ բերանն է ասել։
5 Որովհետև բոլոր ժողովուրդները՝ իւրաքանչիւրն իր աստուածոյ անունովն է գնում, իսկ մենք մեր Տէր Աստուծոյ անունովը պիտի գնանք յաւիտեանս յաւիտենից։
6 Այն օրը, ասում է Տէրը, պիտի ժողովեմ կաղը, և աքսորուածը պիտի հաւաքեմ, և այն
7 եղ՝ որին չարիք եմ արել։ Եւ կաղը պիտի մնացորդ շինեմ, և հեռու քշուածը զօրաւոր ազգ. և Տէրը պիտի թագաւորէ նորանց վերայ Սիոն սարումն, այսուհետև
8 մինչև յաւիտեան։ Եւ դու, ով հօտի աշտարակ, Սիոնի աղջկան բլուրը, մինչև քեզ է գալու և հասնելու առաջի իշխանութիւնը, երուսաղէմի աղջկան թագաւորութիւնը։
9 Հիմա ինչու ես գոռում գոչում թագաւորը մէջդ չէ՞, կամ թէ խորհրդականդ կորե՞լ է, որ քեզ ծննդականի պէս ցաւ է բռնել։ Գալարիր և ցաւագնիր ծննդականի պէս, ով Սիոնի աղջիկ, որովհետև հիմա դուրս ես գալու քաղաքիցը, և պիտի բնակուես դաշտումը, և պիտի գնաս մինչև Բաբիլոն, և այնտեղ պիտի ազատուիս։ Տէրը քեզ այնտեղ
11 պիտի ազատէ քո թշնամիների ձեռքիցը։ Եւ հիմա քեզ վերայ շատ ազգեր են ժողովուել, որոնք ասում են. Թող պղծուի, և մեր աչքերը տեսնեն Սիոնին։
12 Բայց նորանք չ'գիտեն Տիրոջ խորհուրդները, և չեն հասկանում նորա խորհուրդը, որովհետև նա նորանց ժողովելու է ինչպես ոռանների կալի մէջ։ Վեր կաց ու կալը կասիր, ով Սիոնի աղջիկ, որովհետև ես քո եղջիւրը երկաթի պիտի անեմ, և քո կճղակները պիտի պղնձի շինեմ, և դու շատ ժողովուրդներ պիտի մանրես. և ես Տիրոջը պիտի նուիրեմ նորանց աշխատանքը, և նորանց առատաձեռնը բոլոր երկրի Տիրոջը։

Գլ. Ե

1 Հիմա դու քեզ դունդ կազմիր, ով գնդի աղջիկ, պաշարուեմն է դրուել մեզ վերայ, գաւազանով պիտի հարուածեն Իսրայէլի դատաւորի ծնօտին։
2 Եւ դու, ով Բեթլեհեմ Եփրաթա, փոքր ես Յուդայի հազարաւորների մէջ, -ւ-ից քեզանից պիտի դուրս գայ ինձ համար նա որ իշխան լինի Իսրայէլին, և նորա ելքը վաղուց՝ յաւիտենական օրերից է։
3 Դորա համար նորանց պիտի ձգէ մինչև ծնանողի ծնելու ժամանակը, և նորա եղբայրների մնացորդը ետ պիտի դառնայ Իսրայէլի որդկանց մօտ։
4 Եւ նա պիտի կանգնէ և հովուէ Տիրոջ ոյժովը, իր Տէր Աստուծոյ անուան մեծափառութեամբը, և նորանք պիտի բնակուեն, որովհետև հիմա պիտի մեծանայ մինչև երկրի ծայրերը։
5 Եւ սա խաղաղութիւն պիտի լինի, Ասորեստանցին երբոր մեր երկիրը մտնէ, և երբոր մեր պալատներում, այն ժամանակ մենք կ'կանգնեցնենք նորա դէմ եօթը հովիւ և ութ իշխան մարդ։
6 Եւ նորանք պիտի հովուեն Ասորեստանի երկիրը սրով և Ներբուվիթ երկիրը՝ իր դռներովը, և նա պիտի ազատէ Ասորեստանցիներից, երբոր նորանք մեր երկիրը մտնեն և մեր դան մեր սահմաններում։
7 Եւ Յակոբի մնացորդը պիտի շատ ժողովուրդների մէջ Տիրոջ կողմից եւ ցողին պէս լինի, այն շաղին պէս որ չ-ւ-ւ-ւ ինձ վերայ, որ մարդի չէ սպասում, և մարդի որդկանց չէ յուսում։
8 Եւ Յակոբի մնացորդը ազգերի մէջ պիտի լինի շատ ժողովուրդների մէջ, ինչպէս առիւծն անտառի անասունների մէջ, ինչպէս կո-

բիւնը ոչխարների հօտերի մէջ, որ եթէ անցնէ ու կոխ տայ և պատառէ, ազատող չի լինիլ։
9 Թող ձեռքդ բարձրանայ քո թշնամիների վերայ, և քո բոլոր ասխնները բնաջինջ կ'լինեն։
10 Եւ պիտի լինի այն օրը որ պիտի բնաջինջ անեմ քո ձիերը քո միջիցը և պիտի կորցնեմ քո
11 կառքերը։ Եւ պիտի բնաջինջ անեմ քո երկրի քաղաքները, և
12 պիտի քանդեմ քո բերդերը։ Եւ պիտի բնաջինջ անեմ քո ձեռից կախարդութիւնները, և դուշակողներ պիտի չ'ունենաս դու։
13 Եւ պիտի բնաջինջ անեմ քո դրօշակալները և քո արձանները քո միջիցը, և այլ ևս չես երկրպագիլ քո ձեռաց գործերին։ Եւ
14 պիտի կործանեմ քո Աստարթվիները քո միջիցը, և պիտի փչացնեմ քաղաքները։ Եւ վրէժ
15 պիտի կատարեմ բարկութեամբ և սրտմտութեամբ այն ազգերին որոնք չեն լսում։

Գլ. Զ

1 Ա՛կ լսեցէք Տիրոջ ասածը. Վեր կաց, դատ վարիր սարերի առաջին, և բլուրները լսեն քո ձայնը։
2 Լսեցէք, ով սարեր, Տիրոջ դատը, և դուք, ով հաստատուն հիմունք երկրի. որովհետև Տէրը դատ ունի իր ժողովրդի հետ, և խօսելի է հետ պիտի վիճէ։
3 Ով իմ ժողովուրդ, ես քեզ ի՞նչ եմ արել, և ինչով եմ քեզ յոգնեցրել, պատասխանիր ինձ։
4 Որովհետև ես քեզ հանել եմ եգիպտացի երկրիցը, և ծառայութեան տանիցը քեզ ազատել եմ, և քո առաջն ուղարկեցի Մովսէսին, Ահարոնին և Մարիամին։
5 Ով իմ ժողովուրդ, մէկ յիշիր թէ ի՞նչ էր խորհում Մովաբի Բաղակ թագաւորը, և թէ նորան ի՞նչ պատասխանեց Բէովրեան Բաղաամ. Սատիմից մինչև Գաղգաղա, որպէս զի գիտենաս Տիրոջ արդար գործերը։
6 Ես ինչով դիմաւորեմ Տիրոջը, ընկնեմ բարձրեալ Աստուծոյ առաջին. արդեօք դիմաւորեմ նորան ողջակէզներո՞վ, մէկ տարեկան որթերո՞վ։
7 Մի թէ Տէրը կը հաճի հազարաւոր խոյերի, կամ բիւրաւոր իւղի գետերի՞. արդե՞օք իմ անդրանիկը տամ իրեև իմ յանցանքի պատարագ, իմ որովայնի պտո՞ւղը իրեև իմ անձի մեղքի զո՞հ։
8 Գէզ յայտնել է, ով մարդ, թէ ինչ է բարին. և Տէրը ի՞նչ է ուզում քեզանից, սոյն միայն իրաւունք անել, ողորմութիւն սիրել, և խոնարհութեամբ վարուիլ քո Աստուծոյ հետ։
9 Տիրոջ ձայնը կանչում է քաղաքին, և իմաստութիւնը նկատում է քո անունը. լսեցէք պատժի գաւազանը և նորա վճռողին։
10 Դեռ անօրէնի տանը անօրէնութեան գանձեր կա՞ն, և նուազած արդու որ անիծեալ է։
11 Մի՞թէ ես մաքուր կ'համարեմ անօրէնութեան կշռաւորին և խարդախ քարերի քսակաւորին։
12 Որի հարուստները լիքն են զրկանքով, և նորա բնակիչները սուտ են խօսում. և նորանց բերանումը նենգաւոր լեզու կայ։
13 Ուրեմն ես էլ հիւանդացնում եմ քեզ զարկելով, և աւերակ եմ անում քո մեղաց պատճառով։
14 Դու պիտի ուտես, ու չ'կշտանաս, և քո անօթութիւնը քո փորումը պիտի ճաչ. և դու կ'քարշես, բայց չես ազատիլ, և ինչ որ ազատես՝ սրի պիտի մատնեմ։
15 Դու պիտի սերմես, բայց չ'հնձես, դու ձէթ պիտի կոխես, բայց իւղով չ'օծուիս. և քաղցած՝ բայց գինի պիտի չը խմես։
16 Եւ պահվում են Ամրիի հրամանները, և Աքաաբի տան բոլոր գործերը, և դուք գնում էք նորանց խրատներովը, որպէս զի քեզ ամայի անեմ, և նորա բնակիչները սուլելու առարկայ. և դուք պիտի կրէք իմ ժողովրդի նախատինքը։

Գլ. Է

1 Վա՛յ ինձ, որ ամառային պտղաքաղի նման եմ դառել, այգեկութի ճաշաքաղի պէս. ողկոյզ չ'կայ ուտելու, մի կանխահաս թուզ՝ որը փափաքում է սիրտս։
2 Կորչում է բարեպաշտը երկրիցը, և ուղիղը չ'կայ մարդկանց մէջ. ամենքը արիւնների համար դաբան են սարքում, ամեն մարդ իր եղբօրը որսում է վարմով։
3 Դէպի չարութիւն են ձեռքերը, որ յաջողեն, իշխանը պահանջում է ընծայ, և դատաւորը վարձքով է դատ տեսնում, և մեծ մարդը իր սրտի ցանկացածն է խօսում. և նորանք ոլորում են բանը։
4 Ընտրեալ լաւագոյնը փուչի նման է, ուղիղը փշեղէն ցանկից հոտ. քո դիտերի օրը եկաւ քո այցելութիւնը, հիմա պիտի լինի նորանց չփոթութիւնը։
5 Մի հաւատաք բարեկամին, ընկերին մի վստահիք, ծոցիդ պատկողիցը պահիր բերանիդ դուռները։
6 Որովհետև որդին անարգում է հօրը, աղջիկը վեր է կենում իր մոր վերայ, հարսը իր սկեսրի վերայ. մարդիս թշնամիները իր ընտանիքն են։
7 Բայց ես Տիրոջը կ'սպասեմ, և կ'յուսամ իմ փրկութեան Աստուծուն. ինձ պիտի լսէ իմ Աստուածը։
8 Մի ուրախանար ինձ վերայ, ով իմ թշնամի, որովհետև ընկնում, վեր կ'կենում, թէև խաւարի մէջ նստում Տէրը ինձ լոյս կ'լինի։
9 Տիրոջ բարկութիւնը պիտի կրեմ, (որ նորա դէմ մեղք եմ գործել,) մինչև որ նա պաշտպանէ իմ դատը և ինձ իրաւունք անէ, ինձ հանէ լոյսը, որ նորա արդարութիւնը տեսնեմ։
10 Ա՛յն ժամանակ իմ թշնամին տեսնէ, և ամօթը նորան ծածկէ, որ ասում էր ինձ թէ Ո՞ւր է քո Տէր Աստուածը. իմ աչքերը տեսնեն նորան. հիմա նա ոտնակոխ պիտի լինի ինչպէս փողոցի ցեխը։

Ա՛յն օրը որ պարիսպներդ կը շինուին, նոյն օրը պատուէրը կը հեռանայ։
12 Ա՛յն օրը մինչև քեզ մօտ են գալու Ասորեստանից և եգիպտոսի քաղաքներից, և եգիպտոսից մինչև Գետը, և ծովից ծով ու սարից սար։
13 Եւ երկիրը ամայի պիտի լինի իր բնակիչների պատճառով, իրանց գործերի պատուղների համար։
14 Հովուիր ժողովրդին քո գաւազանովդ՝ քո ժառանգութեան հօտերը, առանձին նստողներին անտառումը կարմելոսումը. թող արածեն Բասանումը և Գաղատացումը վաղ օրերի պէս։
15 Ես եգիպտոսի երկրից դուրս գալու օրերի պէս նորան հրաշքներ պիտի ցոյց տամ, Ազգերը պիտի տեսնեն և ամչնան իրանց բոլոր արիութիւնից, ձեռքը պիտի դնեն բերանի վերայ, նորանց ականջները պիտի խլանան։
17 Հող պիտի լիզեն օձի պէս, երկրի սողուններուի պէս, դողալով պիտի գան իրանց թաքուստաններից, մեր Տէր Աստուածանից պիտի դողան, այո՛, քեզանից պիտի վախենան։
18 Ո՞վ է Աստուած քեզ նման, անօրէնութիւն վեր առնող, և իր ժառանգութեան մնացորդի մեղքից անց կենող, որ չէ պահում իր բարկութիւնը յաւիտեան, որովհետև նա ողորմութիւն սիրող է։
19 Նա դարձեալ մեզ պիտի ողորմէ, նա պիտի ոտնակոխ մեր անօրէնութիւնները. և մեր բոլոր մեղքերը դու կ'գցես ծովի խորքերը։
20 Հաւատարմութիւն պիտի անես Յակոբին և ողորմութիւն Աբրահամին, որ երդում ես արել մեր Հայրերին վաղ օրերից ի վեր։

ՆԱՈՒՄԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Նինուէի պատգամը։ Ելկեսացի
Նաումի տեսիլքի գիրքը։
2 Նախանձոտ և վրէժխնդիր Աստ-
ուած է Տէրը, վրէժխնդիր է Տէրը
և բարկութեան տէր, վրէժ առ-
նող է Տէրը իր ոսոխներից, և
բարկութիւն պահող իր թշնա-
3 միների դէմ։ Տէրը երկայնամիտ
է և մեծազօր, և երբէք չի ար-
դարացնիլ յանցաւորին. Տիրոջ
ճանապարհը մրրկի և փոթորկի
մէջ է, և ամպերը նորա ոտների
4 փոշին են։ Նա սաստում է ծո-
վին և նորան ցամաքեցնում, և
բոլոր գետերը չորացնում. Թա-
ռամում են Բասանն ու Կարմե-
ղոսը, և Լիբանանի ծաղիկը թա-
5 ռամում է։ Սարերը դողում են
նորանից և բլուրները հալվում
են, երկիրը բարձրանում է նորա
առաջին, նաև աշխարհը և բոլոր
6 նորանում բնակողները։ Նորա
ցասման առաջին ո՞վ կ'կանգնէ,
և ո՞վ կ'դիմանայ նորա բարկու-
թիւնը բորբոքելիս, նորա սրտմ-
ռութիւնը թափվում է կրակի
պէս, և ապառաժները ճաքում
են նորա առաջին։
7 Բարի է Տէրը, ամրոց է նեղու-
թեան օրումը. և նա ճանաչում
8 է իրան ապաւինողներին։ Յոր-
դահոս հեղեղով պիտի վերջ
տայ նորա տեղին, և նորա թշնա-
միներին պիտի հալածէ խաւարը։
9 Ի՞նչ էք մտածում Տիրոջ դէմ.
վերջ տուողը նա է. նեղութիւնը
երկու անգամ վեր չի կենալ։
10 Որովհետև մինչև որ նորանք փու-
շերի պէս խճճուած են, և իբր
իրանց գինիովը արբածներ, պիտի
սպառուին բոլորովին չոր յարդի
11 պէս։ Քեզանից դուրս եկաւ Տի-
րոջ դէմ չարութիւն մտածող
12 անօրէն խորհրդականը։ Այսպէս
է ասում Տէրը. Թէև անդորր են
ու այսքան բազմաթիւ, բայց և
այնպէս պէտք է կտրուին, և նա
պիտի անցնի. Թէև ես քեզ նե-
ղել եմ, այլ ևս չեմ նեղիլ։ Եւ 13
հիմա պիտի նորա լուծը կոտրեմ
քո վերայից, և կապերդ պիտի
կտրեմ։ Եւ Տէրը հրամայել է 14
քո մասին. այլ ևս սերունդ պի-
տի չ'լինի քո անունիցը, քո աստ-
ուածների տանիցը պիտի բնաջինջ
անեմ քանդակածն ու ձուլածոյ
կուռքն. քո գերեզմանը պիտի
շինեմ, որովհետև դու անարգ
եղար։ Ահա սարերի վերայ աւե- 15
տիք բերողի ոտները, որ խաղա-
ղութիւն է քարոզում. տօնիր,
ով Յուդա, քո տօները, կատա-
րիր ուխտերդ. որ այլ ևս անօրէն
պիտի չ'անցնէ քո միջովը, բոլորը
բնաջինջ եղաւ։

ԳԼ. Բ

Խորտակող է վեր դալիս քեզ 1
դէմ. պահիր պարիսպը. ճանա-
պարհին նայիր, մէջքդ պնդացրու,
ոյժդ շատ զօրացրու։ Որովհետև 2
Տէրը ետ է դարձրել Յակոբի վա-
յելչութիւնը, Իսրայէլի վայելչու-
թեան պէս. որովհետև դարտա-
կողները դարտակել են նորանց,
և նորանց որթի ուռերը փչացը- 3
րել են։ Նորա տղամարդների վա-
հանը կարմրած է, քաջազուններ-
ը որդան կարմիրով են ներկուած,
բոցացայտ պողպատով պատուած է
կառքը նորա պատրաստութեան
օրը, և նոճի նիզակները ծածան- 4
վում են։ Փողոցներումը կատա-
ղում են կառքերը, իրար են
բաղխում հրապարակներումը,
նորանց երևոյթը ջահերի պէս է,
կայծակների պէս են վազվազում։
Նա յիշում է իր զօրաւորներ- 5
ին, նորանք գլորվում են գնալիս,

շտապում են դէպի պարիսպը, և
պատսպարանը պատրաստուած է։
6 Գետերի դռները պիտի բացուին,
7 և պալատը պիտի հալուի։ Եւ
որոշուեցաւ, որ նա գերութեան
հանուի, և նորա աղախինները
ճչում են իբր աղաւնիների ձայ-
նով, իրանց սրտերին ծեծելով։
8 Եւ Նինուէ ջրերի աւազանի պէս
էր իր առաջի օրերիցն ի վեր. և
նորանք փախչելիս՝ Կանգնեցէք,
կանգնեցէք, ի՛ասէն, բայց ու-
9 շադրող չ'կայ։ Արծաթ կողոպ-
տեցէք, ոսկի կողոպտեցէք. և
վախճան չ'ունին զարդերը՝ ծան-
րաբեռնուած ամեն տեսակ ցան-
10 կալի սպասներով։ Դարտակ ու
դարտակուած ու դատարկա-
ցրուած է. և սիրտը հալվում և
ծունկերը դողում, և ամեն մէջ-
քերը երերվում են, և ամենքի
երեսը սպրտնում է։
11 Ո՞ւր է առիւծների բնակարա-
նը, և կորիւնների արօտատեղին,
ուր որ ման էին գալիս արու առ-
իւծը, մատակ առիւծը և առ-
իւծի լակոտը. և վախեցնող չը
12 կար։ Առիւծը պատառում էր՝
իր լակոտներին բաւականանալու
չափ, և խեղդում էր իր մատակ
առիւծների համար. և լցնում
էր որսով իր մորիները, և իր
բնակարանները յափշտակութիւ-
13 նով։ Ահա ես քեզ դէմ եմ, ա-
սում է Զօրաց Տէրը, և պիտի
ծուխով այրեմ նորա կառքերը,
և քո կորիւնները պիտի սուրն
ուտէ. և երկրիցը պիտի քո որսը
բնաջինջ անեմ, և այլ ևս պիտի
չ'լսուի քո դեսպանների ձայնը։

ԳԼ. Գ

1 Վա՛յ արիւնհեղութեանց քա-
ղաքին, բոլորը լիքն է ստու-
թեամբ՝ յափշտակութեամբ. որ-
2 սը պակաս չէ. Խարազանի շռին-
դը և անիւի շառաչման ձայնը, և
սրընթաց ձին ու ցնցուող կառ-
3 քը. Վեր վեր խաղացող ձիաւորը
և թուրի պսպղոցը և նիզակի
շողշողոցը, և շատ վիրաւորները
և մեռածների բազմութիւնը, և
անթիւ դիակները, որոնց դիակ-
ների վերայ գլորվում են։ Պոռնկի 4
պոռնկութիւնների շատութեան
համար, որ լաւ շնորհալի է իբրև
կախարդութիւնների տիկին, որ
ազգերը ծախում է իր պոռնկու-
թիւնովը, և ազգատոհմները՝ իր
կախարդութիւններովը։ Ահա ես 5
քեզ դէմ եմ, ասում է Զօրաց
Տէրը, և պիտի քո քղանցքը բա-
նամ քո երեսին, և ցոյց տամ ազ-
գերին քո մերկութիւնը, և թա-
գաւորութիւններին՝ քո անար-
գանքը։ Եւ քեզ վերայ պիտի 6
պղծութիւններ գցեմ ու քեզ
խայտառակեմ, և քեզ հանդէս
պիտի դնեմ։ Եւ պիտի լինի որ 7
ամեն քեզ տեսնողը պիտի փախչէ
քեզանից և պիտի ասէ՝ Աւերակ
եղաւ Նինուէն, ո՞վ պիտի ողբայ
նորա վերայ, ո՞րտեղից որոնեմ
քեզ համար մխիթարիչներ։
Մի՞թէ դու լաւ ես Նով-ամո- 8
նից, որ շրջապատուած ջրերով՝
գետերում էր բնակվում, որի
խրամը ծովն էր, ծովից էր նորա
պարիսպը։ Եթէովպացիք էին նո- 9
րա ոյժը, և Եգիպտացիք՝ որ ծայր
չ'ունին. Փութացիք և Լիբէացիք
քեզ օգնական էին։ Նա էլ պէտք 10
է աքսոր գնայ գերութիւնով և
նորա մանուկներն էլ պիտի ջար-
դուին ամեն ճանապարհի գլխին,
և նորա պատուականների վերայ
վիճակ պիտի գցեն, և նորա բո-
լոր մեծամեծները պիտի կապուին
շղթաներով։ Դու էլ պիտի արբ- 11
ես՝ անյայտ դառնաս, դու էլ
պիտի ապաստանարան որոնես
թշնամուցը։ Քո բոլոր բերդերը 12
թզենիներ են կանխահաս թուզե-
րով. հէնց որ թափահարուին,
իսկոյն կ'ընկնեն ուտողի բերանը։
Ահա քո ժողովուրդը կանայք է 13
քո միջումը, քո թշնամիների ա-
ռաջին պիտի բացուին քո երկրի
դռները, կրակը պիտի ուտէ քո
նիգերը։ Պաշարման համար ջուր 14
քաշիր քեզ համար, պնդացրու
բերդերդ, ցեխը մտիր և կոխ տուր
կաւը, նորոգիր աղիւսի փուռը։
Այնտեղ քեզ կրակը պիտի ու- 15
տէ, սուրը պիտի քեզ ջարդէ,

ջորեակի պէս քեզ ուտէ. բազ-
մացրու քեզ ջորեակի պէս, շա-
16 տացրու քեզ մորեխի պէս. Դու
շատացրիր քո վաճառականները
երկնքի աստղերիցն աւելի. ջոր-
եակը տարածուեցաւ ու թռաւ։
17 Քո թագակիրները մորեխի պէս
են, և քո զօրավարները՝ անթիւ
մորեխների պէս. որոնք ցուրտ օրը
հանգչում են ցանգերի վերայ,
արեգակը ծագելիս՝ չուում են,
և չ՛գիտացվում նորանց տեղը թէ
ուր են։ Քնած են քո հովիւնե-
18 րը, ով Ասորեստանի թագաւոր,
պառկած են քո ազնուականները,
ցրուած է քո ժողովուրդը սարե-
րի վերայ, և ժողովող չ՛կայ։
Ամոքումն չ՛կայ քո կոտրուածքի 19
համար, անբուժելի է քո վէրքը,
ամեն քո լուրն լսողները քեզ
վերայ ծափ են տալիս. որովհետև
ո՞ւմ վերայ չէ անցել միշտ քո
չարութիւնը։

ԱՄԲԱԿՈՒՄԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Այն պատգամը, որ տեսաւ Ամ-
բակում մարգարէն։
2 Մինչև ե՞րբ, ով Տէր, աղաղա-
կեմ ես, և դու չ՛լսես, աղաղա-
կեմ դէպի քեզ զրկա՛նք, և դու
3 չ՛ազատես։ Ի՞նչու ես ինձ անօ-
րէնութիւն տեսնել տալիս, տա-
ռապանք ցոյց տալիս. և յափշտա-
կութիւն և զրկանք կայ իմ ա-
ռաջին, և կռիւ է լինում, և վէճ
4 բարձրանում։ Սորա համար օրէն-
քը խափանուել է և իրաւունքը
մշտատև չէ հանդիսանում, ո-
րովհետև ամբարիշտը շրջապա-
տում է արդարին. դորա համար
դատաստանն էլ ծուռ է դուրս
գալիս։
5 Նայեցէք ազգերի մէջ և տե-
սէք, և զարմանալով հիացէք,
որ մի գործ է գործում ձեր օրե-
րումը, որ չէք հաւատալ եթէ
6 պատմուի։ Որովհետև ահա ես
յարուցանում եմ Քաղդէացինե-
րին, այն դառն ու արագընթաց
ազգը, որ գնում է դէպի երկրի
լայնութիւնները, որ տիրէ իրանը
7 չ՛եղող բնակութիւններին։ Նա
սոսկալի և ահարկու է, նորա
դատաստանն ու իշխանութիւնը
նորանից դուրս կ՛գայ։ Եւ ինձե- 8
րից աւելի արագաշարժ են նորա
ձիերը, և աւելի կատաղի՝ քան
թէ երեկոյեան գայլերը, և պիտի
արշաւեն նորա ձիաւորները, և
նորա ձիաւորները հեռուից պի-
տի գան, և պիտի թռչեն ար-
ծիւի պէս որ յարձակվում է ու-
տելու։ Ամենքը զրկանքի համար 9
են գալիս, իրանց երեսների յար-
ձակմունքը դէպի առաջ է, և
աւազի չափով գերիներ պիտի ժո-
ղովէ։ Եւ նա ծաղր պիտի անէ 10
թագաւորներին, և իշխանները
նորա խաղալիկը պիտի լինեն, նա
ծիծաղելու է ամեն ամրոցի վե-
րայ, որովհետև նա հող է դիզե-
լու և նորան առնելու է։ Այն 11
ժամանակ միտքը պիտի փոխուի
և հպարտանայ ու յանցաւոր
դառնայ, ԷԲ՛ թէ իր այս զօրու-
թիւնը իր աստուծունն է։
Ահա դու ի յաւիտենից ես, 12
ով իմ Տէր Աստուած, իմ Սուր-
բը. մենք չենք մեռնելու։ Ով Տէր,
դու նորան դատաստանի համար
ես դրել. և, ով Վէմ, դու նորան

յանդիմանութեան համար ես
13 հաստատել։ Դու, որ աչքերդ
մաքուր են չարութիւն տեսնե-
լուց, և անիրաւութեան մտիկ
տալ չես կարող, ի՞նչու ես մտիկ
տալիս նենգաւորներին, և լռում՝
ամբարիշտն իրանից արդարին
14 կուլ տալիս։ Եւ մարդս շինել
ես ծովի ձկների պէս, սողուններ-
ի պէս՝ որոնց վերայ տիրող չը
15 կայ։ Նորանց ամենին հանել է
կարթով, նորանց քաշում է իր
ուռկանովը, և նորանց ժողովում
է իր ցանցովը, դորա համար ու-
16 րախանում է և ցնծում։ Դորա
համար զոհ է մատուցանում իր
ուռկանին և խունկ ծխում՝ իր
ցանցին. որովհետև նորանցով
պարարտ է նորա բաժինը, և նորա
կերակուրը պարարտացրուածն է։
17 Արդե՞օք այս պատճառով նա
դատարկէ իր ուռկանը, և միշտ
ազգերը խեղդէ առանց խղճալու։

ԳԼ. Բ

1 Իմ պահապանութեան տեղը
կանգնեմ, և կենամ պարսպի վե-
րայ, և մտիկ տամ տեսնեմ թէ
ի՞նչ է խօսելու ինձ հետ. և ի՞նչ
պիտի պատասխանեմ իմ յան-
դիմանութեան մասին։
2 Եւ Տէրը ինձ պատասխան տուաւ
և ասեց. Գրիր տեսիլքը և որոշ
նշանակիր տախտակների վերայ,
որպէս զի վազէ նորան կարդա-
3 ցողը։ Որովհետև տեսիլքը տա-
կաւին որոշուած ժամանակի հա-
մար է, և շտապում է վախճա-
նին, և չի ստիլ. եթէ ուշանայ
էլ, սպասիր նորան, որովհետև
անպատճառ պիտի գայ և ետ չի
4 մնալ։ Ահա նա գոռոզացել է,
նորա հոգին ուղիղ չէ իրանում,
բայց արդարը իր հաւատքովը
5 պիտի ապրէ։ Եւ մանաւանդ գի-
նին խաբեբայ է, ամբարհաւաճ
մարդը հաստատ չի մնալ, որ
դժոխքի պէս լայնացրել է իր հո-
գին, և ինքը մահուան պէս է ու
չէ կշտանում. և իր մօտ ժողո-
վեց բոլոր ազգերը, և իր մօտը
հաւաքեց ամեն ժողովուրդները։
Մի՞թէ սորանք ամենքը նորա վե- 6
րայ առակ չեն հանելու, և ծաղ-
րական հանելուկներ՝ նորա մա-
սին, և ասելու. Վա՛յ իրանը չ՛ե-
ղածը շատացնողին, (մինչև ե՞րբ.)
և իր վերայ ծանր գրաւներ բեռ-
նողին։ Մի՞թէ յանկարծ չեն 7
վեր կենալու քեզ կծողները, և
զարթնելու՝ քեզ տեղահան ա-
նողները, և դու աւար ես դառ-
նալու նորանց համար։ Որովհետև 8
դու շատ ազգեր ես կողոպտել,
քեզ էլ պիտի կողոպտեն բոլոր
ազգերի մնացորդները, մարդկանց
արիւնների և երկրի — քաղաքի
և նորանում ամեն բնակողների
զրկանքին համար։
Վա՛յ իր տան համար չար վաս- 9
տակ վաստակողին, որպէս զի իր
բոյնը բարձր տեղը դնէ, չարի
ձեռիցն ազատուելու համար։
Անարգանք խորհեցիր քո տան 10
համար, շատ ազգերի կործանու-
մով, և մեղանչեցիր քո հոգովը։
Որովհետև քարը պիտի պատիցն 11
աղաղակէ, և գերանը պատաս-
խան պիտի տայ փայտերի միջիցը։
Վա՛յ քաղաքը արիւններով 12
շինողին, և աւանը անիրաւու-
թեամբ հաստատողին, Չէ՞ որ ա- 13
հա սա Զօրաց Տէրիցն է. որ ազ-
գերը կրակի համար են յոգնում,
և ժողովուրդները դարտակ տեղն
են վաստակում։ Որովհետև եր- 14
կիրը պիտի լցուի Տիրոջ փառքի
գիտութեամբը, ինչպէս որ ջրերը
ծածկում են ծովը։
Վա՛յ իր ընկերին խմեցնողին, 15
որ բարկութիւնդ թափում ես
ու նաև արբեցնում, որպէս զի
տեսնես նորանց մերկութիւնը։
Դու փառքից աւելի ամօթով 16
կշտացար, դու էլ խմիր և մեր-
կացիր, դէպի քեզ պիտի դառ-
նայ Տիրոջ աջի բաժակը, և անար-
գանքը՝ քո փառքի վերայ։ Որով- 17
հետև Լիբանանի զրկանքը պի-
տի ծածկէ քեզ, և գազանների
յափշտակութիւնը քեզ պիտի
վախեցնէ, մարդկանց արիւնների
և երկրի — քաղաքի և նորանում
ամեն բնակողների զրկանքի հա-
մար։

18 Ինչ օգուտ ունի կուռքը, որն
որ քանդակել է նորան արուեստաւորը, ձուլածոյ կուռքը և
ստութիւն սովորեցնողը, որ իր
քանդակածը քանդակողը ապաւինում է նորա վերայ, և համր
19 կուռքեր շինում։ Վայ նորան,
որ փայտին ասում է՝ Զարթնիր.
Վեր կաց է ասում մունջ քարին.
մի՞թէ նա սովորեցնող է. ահա
նա պատուած է ոսկով և արծաթով, իսկ բնաւ հոգի չ՚կայ
20 նորա միջումը։ Սակայն Տէրը իր
սուրբ տաճարումն է, լռիր նորա
առաջին, ով բոլոր երկիր։

ԳԼ. Գ

1 Ամբակում մարգարէի աղօթքը։
Շիկիօնօթի վերայ։
2 Ով Տէր, լսել եմ քո լուրը և
վախեցել, ով Տէր, վերանորոգիր
քո գործը տարիների մէջ, տարիների մէջ իմացրու, և բարկութեան մէջ ողորմութիւն յիշիր։
3 Աստուած Թեմանիցն եկաւ, և
Սուրբը՝ Փարան սարիցը. (Սէլայ.)
նորա փառքը ծածկեց երկինքը, և
նորա դովաբանութեամբը լցուաւ
4 երկիրը։ Եւ պայծառութիւնը
լոյսի պէս էր, ճառագայթներ
ունէր իր կողմին, և այնտեղ էր
նորա զօրութեան ծածկոյթը։
5 Նորա առաջին գնում էր ժանտախտը, և հրատագնապ տենդը
դուրս էր գալիս նորա ոտների
6 ետևից։ Նա կանգնեց և չափեց
երկիրը, նայեց և դողացրեց ազգերը, և պատառոտուեցան վաղեմի սարերը, խոնարհուեցան
մշտական բլուրները, յաւիտենական ընթացք ունի նա։
7 Տագնապի տակ տեսայ Քուշանի վրանները, սարսեցին Մադիամի երկրի առագաստները։
8 Մի՞թէ գետերին է բարկացել
Տէրը, կամ գետերին էր քո ցասումը, կամ ծովին՝ քո սրտմտութիւնը, որ հեծար ձիերիդ՝ փրկու-
9 թեան կառքերիդ։ Բոլորովին
մերկացաւ քո աղեղը, ցեղերին
արտ քո երդումների և խօսքի
համեմատ. (Սէլայ.) գետերով պա-
տառեցիր երկիրը։ Քեզ տեսան 10
սարերը և դողացին, ջրի հեղեղը
անցաւ. անդունդը տուաւ իր
ձայնը. դէպի վեր բարձրացրեց իր
ձեռքերը։ Արեգակը, լուսինը, 11
կանգնում են իրանց կայանումը,
նորանք ընթանում են քո նետերի լոյսովը, քո նիզակի փայլուն
պայծառութիւնովը։ Բարկու- 12
թեամբ քայլում ես երկրի վերայ,
սրտմտութեամբ ոտնակոխում ես
ազգերին։ Դու դուրս եկար քո 13
ժողովրդի փրկութեան համար,
քո օծեալի փրկութեան համար,
ջարդեցիր գլուխը անօրէնի տանիցը, հիմունքը մերկացնելով մինչև
պարանոցը։ (Սէլայ.) Դու ծակե- 14
ցիր նորա դաւազանովը նորա զօրավարների գլուխը, որոնք փոթորկի պէս յարձակվում են, որ
ինձ ցրիւ տան. որոնք ուրախութիւն ունին իբր թէ տնանկին
ուտելու են ծածուկ տեղը։ Դու 15
ճանապարհորդեցիր ծովումը քո
ձիերովը, շատ ջրերի յորձանուտումը։ Լսեցի և ներսս սարսա- 16
փեց, ձայնիցը դողացին շրթունքներս, փտութիւն մտաւ իմ ոսկորների մէջ, և ես սարսափեցի
իմ տեղը, որ հանգստանամ նեղութեան օրը, երբոր ժողովրդի
վերայ է գալիս նա, որ նորան նեղում է։
Թէև թզենին չ՚ծաղկի, և որ- 17
թերի վերայ բերք չ՚լինի, ձիթենու արդիւնքը ստէ, և արտերը
կերակուր չ՚տան, կտրուի ոչխարը
փարախիցը, և արջառ չ՚լինի գոմերումը, Սակայն ես Տէրովը պի- 18
տի ցնծամ, պիտի իմ փրկութեան Աստուծովն ուրախանամ։
Տէր Եհովան իմ զօրութիւնն է, 19
և իմ ոտները եղնիկներինի նման
է անում. և ինձ իմ բարձր տեղերի վերայ է ման ածում։
Գլխաւոր երաժշտին իմ նուագարաններով։

ՍՈՓՈՆԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Տիրոջ խօսքը, որ եղաւ Եզեկիայի որդի՝ Ամարիայի որդի՝ Գոդողիայի որդի՝ Քուսիի որդի՝ Սոփոնիային՝ Յուդայի թագաւորի
Ամոնի որդիի Յովսիայի օրերումը։
2 Բոլորովին բնաջինջ պիտի ա-
նեմ ամեն բան երկրի երեսից,
3 ասում է Տէրը։ Բնաջինջ պիտի
անեմ մարդն ու անասունը, բնաջինջ պիտի անեմ երկնից թռչուններն ու ծովի ձկները, և գայթակղութիւնները ամբարիշտների հետ, և պիտի փչացնեմ մարդը երկրի երեսից, ասում է Տէրը։
4 Եւ պիտի մեկնեմ իմ ձեռքը Յուդայի վերայ, և Երուսաղէմի բոլոր բնակչաց վերայ. և պիտի
բնաջինջ անեմ այս տեղից Բահաղի մնացորդը, քուրմերի ա-
5 նունը քահանաների հետ. Եւ
կտուրների վերայ երկնքի զօրքերին երկրպագողներին, և այն
երկրպագողներին, որոնք Տիրոջմով են երդնում, և Մեղքոմով
երդում անողներին. Եւ Տիրոջ
ետևից խոտորողներին, և Տիրոջը
չ՚փնտռողներին և չ՚խնդրողներին։
7 Լռիր Տէր Եհովայի առաջին,
որովհետև մօտ է Տիրոջ օրը, որովհետև Տէրը զոհ է պատրաստել, որբել է իր կոչնականներ-
8 ին։ Եւ պիտի լինի Տիրոջ զոհի
օրումը, որ պիտի պատժեմ իշխաններին և թագաւորի որդիներին և ամեն օտար զգեստ հագ-
9 նողներին։ Եւ պիտի պատժեմ
բոլոր սեմովը լոք տուողին այն
օրը, որոնք իրանց տիրոջ տունը
լցնում են զրկանքով, և խար-
10 դախութեամբ։ Եւ պիտի լինի
այն օրը ասում է Տէրը, աղաղակի ձայն Զկանց դռնիցը, և հեծեծանք՝ Մասենայից, և մեծ կո-
11 տորած՝ բլուրներիցը։ Ողբացէք,
ով Մաքթեսի բնակիչներ, որովհետև փչացել է Քանանու բոլոր
ժողովուրդը, բնաջինջ է եղել
բոլոր արծաթ կրողները։
Եւ պիտի լինի այն ժամանակը, 12
որ ես Երուսաղէմը պիտի քննեմ
ճրագներով, և պիտի պատժեմ
իրանց մրուրի վերայ նստող մարդկանցը, որոնք ասում են իրանց
սրտումը. Տէրը ոչ բարիք է ա-
նում ոչ չարիք։ Եւ նորանց ստաց- 13
ուածքը աւար պիտի դառնայ, և
նորանց տուները՝ աւերակներ. և
պիտի տուներ շինեն, բայց չ՚բնակուեն, և պիտի այգիներ տնկեն,
բայց գինին չ՚խմեն։
Մօտ է Տիրոջ մեծ օրը, մօտ է 14
և շատ շտապում է, ահա Տիրոջ
օրուան ձայնը. դառնապէս աղաղակում է այնտեղ աղամարդը։
Բարկութեան օր է այն օրը, նե- 15
ղութեան և տառապանքի օր,
կործանման և աւերման օր, խաւարի և մէգի օր, ամպի և մա-
ռախուղի օր. Փողի և աղաղակի 16
օր պարսպաւոր քաղաքների դէմ,
և բարձրացած աշտարակների
դէմ։ Եւ ես պիտի նեղեմ մարդ- 17
կանց, որ կոյրերի պէս ման գան,
որովհետև Տիրոջ դէմ մեղանչեցին, և նորանց արիւնը պիտի
թափուի փոշիի պէս, և նորանց
միսը՝ աղբերի պէս։ Նորանց ար- 18
ծաթն էլ, նորանց ոսկին էլ չէ
կարող նորանց ազատել Տիրոջ
բարկութեան օրը, և նորա նախանձի կրակովը պիտի սպառուի
բոլոր երկիրը, որովհետև նա պիտի վերջացնէ և պիտի պատուհասէ երկրի բոլոր բնակիչներին։

ԳԼ. Բ

Քննեցէք ձեր անձերը և քննու- 1
թիւն արէք, ով անամօթ ազգ։
Դեռ որոշումը չ՚ծնած, օրը մղեղի 2

պէս է անցնում, դեռ Տիրոջ
բորբոքած բարկութիւնը ձեզ
վերայ չ՚եկած, դեռ Տիրոջ բար-
կութեան օրը ձեզ վերայ չ՚ե-
3 կած։ Խնդրեցէք Տիրոջը, ով երկ-
րի բոլոր խոնարհներ, որ կատա-
րում էք նորա իրաւունքը, որո-
նեցէք արդարութիւն, որոնեցէք
խոնարհութիւն, գուցէ ծած-
կուած պահուիք Տիրոջ բարկու-
4 թեան օրը։ Որովհետև Գազան
թողուած է լինելու, և Ասկա-
ղոնը՝ աւերակ, Ազովտոսին կէս-
օրին են աքսորելու, և Ակկարոնը
5 պիտի վարուի։ Վա՛յ ծովեզեր-
քումը բնակողներին, Քերեթի-
ների ազգին. Տիրոջ խօսքը ձեզ
դէմ է, ով Փղշտացիների երկիր՝
Քանան. որ ես քեզ պիտի փչա-
6 ցնեմ, որ բնակող չ՚լինի։ Եւ ծո-
վեզերքը պիտի դառնայ հովիւ-
ների գետնափոր արօտներ և հօ-
7 տերի մակաղատեղիք։ Եւ ծովե-
զերքը Յուդայի տան մնացորդինը
պիտի լինի. և նորանք պիտի ա-
բածեցնեն նորանց վերայ, Ասկա-
ղոնի տներումը իրիկունը պիտի
մակաղեն, որովհետև նորանց Տէր
Աստուածը պիտի այցելէ նորանց,
և նորանց գերութիւնը պիտի ետ
դարձնէ։
8 Լսեցի Մովաբի նախատինքը, և
Ամմոնի որդկանց հայհոյութիւն-
ները, որով նախատեցին իմ ժո-
ղովրդին, և գոռոզացան նորանց
9 սահմանի դէմ։ Դորա համար,
Կենդանի եմ ես, ասում է Զօրաց
Տէրը՝ Իսրայէլի Աստուածը, որ
Մովաբը Սոդոմի պէս պիտի դառ-
նայ, և Ամմոնի որդիքը Գոմորի
պէս, եղինճների ստացուածք և
աղի հանք և ամայի՝ մինչև յա-
ւիտեան. իմ ժողովրդի մնացորդը
պիտի յափշտակէ նորանց, և ազ-
գիս մնացորդը պիտի ժառանգէ
10 նորանց։ Սա պիտի լինի նորանց
համար իրանց ամբարտաւանու-
թեան տեղ, որովհետև նորանք
նախատեցին և ամբարտաւանա-
ցան Զօրաց Տիրոջ ժողովրդի դէմ։
11 Ահարկու է Տէրը նորանց դէմ,
որովհետև նա ոչնչացնելու է
երկրի բոլոր աստուածները, և
նորան երկրպագութիւն պիտի ա-
նեն իւրաքանչիւրն իր տեղից ազ-
գերի բոլոր կղզիները։
Դուք էլ, ով Եթէովպացիք, 12
իմ սրովն պիտի սպանուիք։
Եւ նա մեկնելու է իր ձեռքը 13
հիւսիսի վերայ, և կորցնելու է
Ասորեստանցիին, և Նինուէն ա-
մայի է անելու, չոր երկիր՝ ինչ-
պէս անապատը։ Եւ նորա մէջ 14
պիտի հօտերով մակաղեն ազգե-
րի բոլոր գազանները, հաւալուսն
էլ, ոզնին էլ պիտի օթևանեն
նորա խոյակներումը. նորանց ձայնը
պիտի հնչէ պատուհաններումը,
աւերմունքը շէմքումը պիտի լի-
նի. որովհետև նորա եղևնազար-
դը նա մերկացրեց։ Սա է ցնծա- 15
ցող քաղաքը, որ ապահով բնակ-
ուել էր, որ իր սրտումն ասում
էր. Ես եմ, և ինձանից ջոկ էլ
չ՚կայ. ի՛նչպէս աւերակ և գա-
զանների մակաղատեղի եղաւ.
ամեն նորա մօտով անցնողը պի-
տի սուլէ ու ձեռքը շարժէ։

ԳԼ. Գ

Վա՛յ ապստամբին և պիղծին, 1
հարստահարող քաղաքին։ Չ՚լսեց 2
ձայնին, խրատ չ՚ընդունեց, Տի-
րոջը չ՚ապաւինեց, իր Աստուծուն
չ՚մօտեցաւ։ Նորա իշխանները նո- 3
րա մէջ մռնչող առիւծներ են,
նորա դատաւորները երեկոյեան
գայլեր են, որոնք մի բան չեն թո-
ղում առաւօտուայ համար։ Նո- 4
րա մարգարէքը սնապարծ՝ խար-
դախ մարդիկ են, նորա քահա-
նայքը պղծում են սրբարանը,
բռնաբարում են օրէնքը։ Տէրը 5
արդար է նորա մէջ, նա անօրէ-
նութիւն չէ անում, առաւօտ
առաւօտ նա ի լոյս է հանում իր
իրաւունքը անխոնջ, բայց անի- 6
րաւը ամօթ չ՚գիտէ։ Ազգերը ես
բնաջինջ եմ արել, ամայացել են
նորանց աշտարակները, անապա-
տացրել եմ նորանց փողոցները,
որ անցնող չ՚կայ, աւերակ են
դառել նորանց քաղաքները ան- 7
մարդ և անբնակ։ Ասեցի. Միայն
վախենայիր ինձանից՝ խրատ ընդ-

դունէիր. և նորա բնակարանը
բնաջինջ չի դառնալ, որքան էլ
որ նորան պատժելու լինեմ։ Սա-
կայն նորանք կանուխ վեր կացան
և ապականեցին իրանց բոլոր ա-
րարքը։
8 Ուրեմն ինձ սպասեցէք, ասում
է Տէրը, մինչև իմ որսի վեր կե-
նալու օրը. որովհետև իմ իրա-
ւունքն է ազգերը ժողովել, թա-
գաւորութիւնները հաւաքել, որ
նորանց վերայ թափեմ իմ ցա-
սումը՝ իմ բարկութեան բոլոր
բորբոքումը. որովհետև իմ նա-
խանձի կրակովը պիտի սպառուի
բոլոր երկիրը։
9 Որովհետև այն ժամանակ ժո-
ղովուրդների շրթունքները մաքուր
շրթունքներ պիտի դարձնեմ, որ
ամենքը կանչեն Տիրոջ անունը
նորան համամտաբար ծառայելու
10 համար։ Եթէովպիայի գետերի
այն կողմից պիտի իմ երկրպա-
գողները՝ իմ ցրուածների աղջիկը
11 ինձ ընծայ բերեն։ Այն օրը պի-
տի չ՚ամաչես քո բոլոր գործերի-
ցը, որոնցով ինձ դէմ յանցանք
արիր, որովհետև այն ժամանակ
կ՚հեռացնեմ քո միջից քո հպար-
տութեան զուարճութիւնները,
և այլ ևս չես հպարտանալ միւս-
անգամ իմ սուրբ սարի վերայ։
12 Եւ քո միջումը պիտի մնացորդ
թողեմ մի խոնարհ և աղքատ
ժողովուրդ, և նորանք պիտի յու-
13 սան Տիրոջ անուանը։ Իսրայէլի
մնացորդը անօրէնութիւն չեն ա-
նելու, և սուտ չեն խօսելու, և
նորանց բերանումը խաբեբայու-
թեան լեզու չի գտնուելու, ո-
րովհետև նորանք պիտի արածեն
և մակաղեն, և վախեցնող չի
լինիլ։
Ցնծա, ով Սիօնի աղջիկ, աղա- 14
ղակիր, ով Իսրայէլ. ուրախա-
ցիր ու զուարճացիր բոլոր սրտով,
ով Երուսաղէմի աղջիկ։ Տէրը վեր 15
առաւ քո դատաստանները. նա
վռնտել է քո թշնամիին, Իսրա-
յէլի թագաւորը՝ Տէրը քո մի-
ջումն է, այլ ևս չարիք չես տես-
նելու։
Այն օրը Երուսաղէմին պիտի 16
ասուի. Մի վախենար. ով Սիօն,
ձեռքերդ չ՚թուլանան։ Քո Տէր 17
Աստուածը քո միջումը զօրաւոր
է, նա փրկում է, նա պիտի ու-
րախանայ քեզ վերայ զուարճու-
թեամբ, նա պիտի լռէ իր սիրովը,
և պիտի ցնծայ քեզ վերայ խնդա-
լով։ Հանդիսաւոր տօների մասին 18
տրտմածներին պիտի ժողովեմ,
նորանք քեզանից են. նորանց վե-
րայ բեռ է նախատինքը։ Ահա ես 19
այն ժամանակ պիտի գործեմ քո
բոլոր նեղիչների հետ, և կաղին
պիտի ազատեմ, և աքսորուածին
պիտի ժողովեմ, և նորանց գո-
վասանք և անուանի պիտի անեմ,
նորանց նախատինքի բոլոր երկ-
րումը։ Այն ժամանակ ձեզ պի- 20
տի բերեմ, և այն ժամանակ ձեզ
պիտի ժողովեմ. որովհետև ձեզ
անուանի և գովելի պիտի անեմ
երկրի բոլոր ժողովուրդներումը,
երբոր ետ կ՚դարձնեմ ձեր գե-
րութիւնը ձեր աչքի առաջին,
ասում է Տէրը։

ԱՆԳԷԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Դարեհ Թագաւորի երկրորդ
տարին՝ վեցերորդ ամսուայ ամսի
մէկին Տիրոջ խօսքը եղաւ Անգէ
մարգարէի ձեռովը Յուդայի իշ-
խան Սաղաթիէլեան Զօրաբաբէ-
լին և մեծ քահանայ Յովսեդեկ-
2 եան Յեսուին, ասելով. Այսպէս
է ասում Զօրաց Տէրը թէ Այս
ժողովուրդն ասում է. Ժամա-
նակը չէ եկել՝ Տիրոջ տունը շին-
3 ուելու ժամանակը։ Եւ Տիրոջ
խօսքը եղաւ Անգէ մարգարէի ձե-
4 ռովը, ասելով. Ձեզ համար ժա-
մանա՞կ է արդեօք, որ ձեր ձե-
ղունազարդ տներումը բնակուէք,
իսկ այս տունը աւերա՞կ մնայ։
5 Եւ հիմա այսպէս է ասում Զօ-
րաց Տէրը. Ձեր ուշը դարձրէք
6 ձեր ճանապարհներին։ Սերմել
էք շատ, բայց բերել էք քիչ,
կերել էք, բայց չէք կշտացել,
խմեցիք, բայց ծարաւը չ՚հանգ-
ցրիք, հագնուեցաք, բայց չ՚տա-
քացաք. և վարձկանը վարձի հա-
մար գործում է ծակուած քսա-
կով։
7 Այսպէս է ասում Զօրաց Տէ-
րը, Ձեր ուշը դարձրէք ձեր ճա-
8 նապարհներին։ Վեր ելէք սարը
և փայտ բերէք, և տունը շինե-
ցէք. այն ժամանակ ես կ՚հաւա-
նեմ դորան և կ՚փառաւորուիմ,
9 ասում է Տէրը։ Նայեցիք շա-
տին, և ահա քիչ եղաւ, և բերիք
տուն, բայց ես փչեցի միջին։ Ի՞ն-
չու համար, ասում է Զօրաց
Տէրը. իմ տան համար, որ աւե-
րակ է. իսկ ձեզանից իւրաքան-
չիւրը վազ է տալիս իր տան
10 համար։ Սորա համար ձեզ վե-
րայ երկինքը պիտի արգիլէ ցօղը և
երկիրը պիտի արգիլէ իր պտուղը։
11 Եւ ես երաշտութիւն կանչեցի
երկրի վերայ և սարերի վերայ, և
ցորենի վերայ, և քաղցուի վերայ
և իւղի վերայ, և երկրի բերքի
վերայ, և մարդկանց վերայ ու
անասունների վերայ, և ձեռքի
բոլոր վաստակի վերայ։
Այն ժամանակ լսեց Սաղաթի- 12
էլեան Զօրաբաբէլը և մեծ քա-
հանայ՝ Յովսեդեկեան Յեսուն և
ժողովրդի բոլոր մնացորդը իրանց
Տէր Աստուծոյ ձայնին և Անգէ
մարգարէի խօսքերին, ինչպէս որ
իրանց Տէր Աստուածը նորան ու-
ղարկել էր. և ժողովուրդը վա-
խեց Տիրոջ երեսից։ Եւ Տիրոջ 13
դեսպան Անգէն ասեց Տիրոջ դես-
պանութեամբը ժողովրդին, ասե-
լով. Ես ձեզ հետ եմ, ասում է
Տէրը։ Եւ Տէրը զարթեցրեց Յու- 14
դայի իշխան՝ Սաղաթիէլեան Զօ-
րաբաբէլի հոգին և մեծ քահա-
նայ՝ Յովսեդեկեան Յեսուի հոգին
և ժողովրդի բոլոր մնացորդի հո-
գին և գնացին ու գործ գործե-
ցին իրանց Զօրաց Տէր Աստուծոյ
տանը, Վեցերորդ ամսի քսանև- 15
չորսին՝ Դարեհ Թագաւորի երկ-
րորդ տարին։

ԳԼ. Բ

Եօթներորդ ամսի քսանևմէկին 1
եղաւ Տիրոջ խօսքը Անգէ մար-
գարէի ձեռովը, ասելով. Մէկ 2
ասիր Յուդայի իշխան Սաղաթի-
էլեան Զօրաբաբէլին և մեծ քա-
հանայ՝ Յովսեդեկեան Յեսուին և
մնացորդ ժողովրդին թէ՝
Ո՞վ է ձեզանում մնացորդ, որ 3
տեսել է այս տունը իր առաջի
փառաւորութիւնովը, և դուք
ի՞նչպէս էք տեսնում նորան հի-
մա, չէ՞ որ սա ոչինչի պէս է նո-
րա մօտ ձեր աչքերի առաջին։
Սակայն հիմա զօրացիր, ով Զօ- 4
րաբաբէլ, ասում է Տէրը, և զօ-
րացիր դու, ով Յովսեդեկեան

Յեսու՝ մեծ քահանայ։ Եւ զօրա-
ցիր, ով երկրի բոլոր ժողովուրդ,
ասում է Տէրը, և աշխատեցէք,
որովհետև ես ձեզ հետ եմ, ա-
սում է Զօրաց Տէր Աստուածը։
5 Այն խօսքի համեմատ որ ես կա-
պել եմ ձեզ հետ՝ դուք Եգիպ-
տոսից դուրս գալիս, իմ հոգին
կենում է ձեր միջումը. մի վա-
6 խենաք։ Որովհետև այսպէս է ա-
սում Զօրաց Տէրը. Մէկ անգամ
էլ, մի քիչ չեռոց կ՚շարժեմ եր-
կինքն ու երկիրը, և ծովն ու ցա-
7 մաքը. Եւ կ՚շարժեմ բոլոր ազ-
գերը, և կ՚գան բոլոր ազգերի
ցանկալիքը, և կ՚լցնեմ այս տու-
նը փառքով, ասում է Զօրաց
8 Տէրը։ Իմն է արծաթը, և իմն է
ոսկին. ասում է Զօրաց Տէրը։
9 Այս վերջի տան փառքը մեծ պի-
տի լինի առաջուանինիցը, ասում
է Զօրաց Տէրը, և այստեղումը
խաղաղութիւն պիտի տամ, ա-
սում է Զօրաց Տէրը։
10 Իններորդ ամսի քսանևչորսին
Դարեհի երկրորդ տարին, Տիրոջ
խօսքը եղաւ Անգէ մարգարէի
11 ձեռովը, ասելով. Այսպէս է ա-
սում Զօրաց Տէրը. Մէկ հարցրու
օրէնքը քահանաներից, ասելով.
12 Թէ ահա մի մարդ սուրբ միս
տանէ իր հանդերձի քղանցքու-
մը, և իր քղանցքովը դպչէ հացի
և ապուրի և գինու և իւղի և
ինչ և իցէ կերակուրի, մի՞թէ նա
սուրբ կ՚դառնայ։ Եւ քահանայ-
քը պատասխանեցին և ասեցին.
13 Ոչ։ Եւ Անգէն ասեց. Եթէ այս
ամեն բաներին դպչէր, մի մեռե-
լով պղծուածը, կ՚պղծուի՞։ Եւ
քահանայքը պատասխանեցին ու
14 ասեցին. Կ՚պղծուի։ Եւ Անգէն
պատասխանեց ու ասեց. Այսպէս
է այս ժողովուրդը և այսպէս է
այս ազգը իմ առաջին, ասում
է Տէրը, և այսպէս է նորանց
ձեռքի բոլոր գործքը. և ինչ որ
մատուցանեն այնտեղ՝ պիղծ է։
Ուրեմն մի լաւ ուշ դարձրէք այս 15
օրից դէպի առաջ քանի որ քար
քարի վերայ դրուած չէր Տիրոջ
տաճարումը. Երբոր մէկը գալիս 16
էր սորանից առաջ քսանանոց
դէզի մօտ, այն ժամանակ տասն
էր դառնում. գնում էր կարասի
մօտ յիսուն հանելու, և քսան
էր դառնում։ Ես զարկեցի ձեզ 17
խորշակով ու դալուկով և կար-
կուտով, ձեր ձեռաց բոլոր գոր-
ծերը, և դուք դէպի ինձ չէք
գալիս, ասում է Տէրը։ Մէկ ձեր 18
ուշադրութիւնը դարձրէք այս օ-
րից և էլ առաջուց իններորդ ամսի
քսանևչորսերորդ օրիցը, այսինքն
այն օրիցն որ հիմնուեցաւ Տի-
րոջ տաճարը, դարձրէք ձեր ու-
շադրութիւնը։ Մի՞թէ սերմը 19
դեռ ամբարումն է, և թզենին
ու նռնենին և ձիթենին պտուղ
չե՞ն բերել. այս օրից ի վեր պի-
տի օրհնեմ։
Եւ Տիրոջ խօսքը կրկին անգամ 20
եղաւ Անգէին, ամսի քսանևչոր-
սին, ասելով. Ասիր Յուդայի իշ- 21
խան Զօրաբաբէլին թէ Ես պիտի
շարժեմ երկինքն ու երկիրը, Եւ 22
տակնիվեր պիտի անեմ թագա-
ւորութիւնների աթոռը, և պի-
տի կորցնեմ ազգաց թագաւո-
րութիւնների զօրութիւնը, և
տակնիվեր պիտի անեմ կառքն
ու նորա հեծեալը, և պիտի ցա-
ծանան ձիանքն ու իրանց հեծ-
եալները. ամեն մէկն իր եղբօր
սրովը։ Այն օրը, ասում է Զօրաց 23
Տէրը, ես քեզ կ՚առնեմ, ով իմ
ծառայ Սաղաթիէլեան Զօրաբա-
բէլ, ասում է Տէրը. և քեզ
կ՚շինեմ ինչպէս մի կնիք. որով-
հետև ես քեզ հաւանել եմ,
ասում է Զօրաց Տէրը։

ԶԱՔԱՐԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա.

1 Դարեհի երկրորդ տարուայ ու-
թերորդ ամսուն եղաւ Տիրոջ
խօսքը Ադդովի որդի Բարաքիայի
որդի՝ Զաքարիա մարգարէին ա-
սելով.
2 Բարկացած է Տէրը ձեր հայ-
3 րերի վերայ բարկութիւնով։ Եւ
նոցանց ասիր. Այսպէս է ասում
Զօրաց Տէրը. Դէպի ինձ դար-
ձէք, ասում է Զօրաց Տէրը, և
ես էլ դէպի ձեզ կ'դառնամ,
4 ասում է Զօրաց Տէրը։ Մի լինէք
ձեր հայրերի նման, որոնց աղա-
չակում էին առաջի մարգարէ-
ները՝ ասելով. Այսպէս է ասում
Զօրաց Տէրը. Էհ Ձեր չար ճանա-
պարհներից և ձեր չար արարք-
ներից մէկ ետ դարձէք, բայց
նոքանք չլսեցին և ինձ ականջ
5 չդրին, ասում է Տէրը։ Ձեր հայ-
րերն ո՞ւր են. և միթէ յաւիտե-
ան պիտի ապրէին մարգարէքը։
6 Սակայն իմ խօսքերն ու պատ-
ուէրները, որոնք ես պատուիրել
էի իմ ծառաներին՝ մարգարէնե-
րին, չէ՞ որ հասան ձեր հայրե-
րին. սակայն նոքանք ետ դառան
և ասեցին. Ինչպէս որ Զօրաց
Տէրը մտածում էր մեզ անելու
մեր ճանապարհներին ու մեր ա-
րարքներին համեմատ, այնպէս է
արել մեզ հետ։
7 Դարեհի երկրորդ տարուայ
տասնևմէկերորդ ամսուայ՝ այս-
ինքն Սեբաթի ամսի քսանևչորս-
երորդ օրը եղաւ Տիրոջ խօսքը Ադ-
դովի որդի Բարաքիայի որդի Զա-
քարիա մարգարէին, ասելով.
8 Տեսայ գիշերը, և ահա մի մարդ՝
հեծած մի աշխէտ ձիի վերայ, և
նա կանգնել էր ձորումը եղող
մրտենիների մէջտեղը. և նորա
հետին կային աշխէտ, պիտակ ու
սպիտակ ձիանք։ Եւ ասեցի. Ո-
9 րանք ինչ են, տէր իմ, և ա-
սեց ինձ այն հրեշտակը որ ինձ
հետ խօսում էր թէ Ես քեզ ցոյց
կ'տամ թէ որանք ինչ են։ Եւ
10 մրտենիների մէջտեղը կանգնող
մարդը պատասխանեց և ասեց.
Սորանք նորանք են, որ Տէրը ու-
ղարկել է երկրումը ման գալու։
11 Եւ նորանք պատասխանեցին մըր-
տենիների մէջտեղը կանգնող Տի-
րոջ հրեշտակին և ասեցին. Ման
եկանք երկրումը, և ահա բոլոր
երկիրը նստած և հանգիստ է։
12 Եւ Տիրոջ հրեշտակը պատասխա-
նեց և ասեց. Ով Զօրաց Տէր,
մինչև ե՞րբ չես ողորմելու երու-
սաղէմին և Յուդայի քաղաքնե-
րին, որոնց վերայ ահա հօթանա-
սուն տարի է՝ բարկացած ես։ Եւ
13 Տէրը պատասխանեց ինձ հետ խո-
սող հրեշտակին բարի խօսքերով՝
14 մխիթարական խօսքերով։ Եւ ինձ
հետ խօսող հրեշտակը ասեց ինձ.
Կանչիր և ասիր. Այսպէս է ա-
սում Զօրաց Տէրը. Մեծ նախան-
ձով ես նախանձել եմ Երուսա-
15 ղէմի և Սիոնի համար։ Եւ ես
բարկութիւնով բարկացել էի
հանդարտ ազգերի վերայ, որով-
հետև ես քիչ էի բարկացել,
բայց նորանք օգնեցին չարութեան
16 համար։ Սորա համար Տէրը այս-
պէս է ասում. Ես ետ եմ դառ-
նում Երուսաղէմին ողորմու-
թիւններով. իմ տունը պէտք է
շինուի նորանում, ասում է Զօ-
րաց Տէրը, և լար պիտի ձգուի
17 Երուսաղէմի վերայ։ Էլի կանչիր
ասելով. Այսպէս է ասում Զօ-
րաց Տէրը. Դեռ պիտի յորդին
իմ քաղաքները բարիքներով, և
Տէրը պիտի դեռ մխիթարէ Սիո-

նին, և դեռ պիտի ընտրէ Երու-
սաղէմին։
18 Եւ աչքերս բարձրացրի ու նա-
19 յեցի և ահա չորս եղջիւր։ Եւ
ասեցի ինձ հետ խօսող հրեշտա-
կին. Սորանք ինչ են. և նա ա-
սեց ինձ. Սորանք այն եղջիւրներն
են որոնք ցրուեցին Յուդային,
20 Իսրայէլին և Երուսաղէմին։ Եւ
Տէրն ինձ չորս արուեստաւոր ցոյց
21 տուաւ։ Եւ ես ասեցի. Սորանք
գալիս են որ ինչ անեն. և նա
ասեց. Սորանք այն եղջիւրներն
են, որոնք ցրուեցին Յուդային,
այնպէս որ մարդ չ'բարձրացրեց
իր գլուխը. և սորանք եկել են
որ նորանց վախեցնեն, որ վայր
դցեն Յուդայի երկրի դէմ՝ նո-
րան ցրուելու համար՝ եղջիւր
բարձրացնող ազգերի եղջիւրները։

ԳԼ. Բ

1 Եւ ես աչքերս վեր բարձրացրի
ու նայեցի, և ահա մի մարդ և
2 ձեռքին մի չափելու լար։ Եւ
ասեցի. Դու ո՞ւր ես գնում. և
նա ասեց ինձ. Երուսաղէմը չա-
փելու, որ տեսնեմ թէ որքան է
3 լայնութիւնը և որքան երկայնու-
թիւնը։ Եւ ահա այն ինձ հետ
խօսող հրեշտակը դուրս եկաւ, և
մի ուրիշ հրեշտակ դուրս եկաւ
4 նորա դիմացը. Եւ ասեց նորան.
Վազիր՝ ասիր այս տղային թէ՝
Լայնարձակ պիտի բնակուէ Ե-
րուսաղէմը իրանում եղած մարդ-
կանց և անասնոց պատճառովը։
5 Եւ ես պիտի նորա համար հրե-
ղէն պարիսպ լինեմ շուրջանակի,
ասում է Տէրը, և փառաց հա-
մար պիտի լինեմ նորանում։
6 Ա՛խ, ա՛խ, էլ փախէք հիւսիսի
երկրիցը, ասում է Տէրը, որով-
հետև երկնքի չորս հողմերին պէս
ցրուել եմ ձեզ, ասում է Տէրը։
7 Ա՛խ Սիոն, ազատուիր քեզ, որ բնակ-
ւում ես Բաբիլոնի աղջկայ մօտ։
8 Որովհետև այսպէս է ասում Զօ-
րաց Տէրը. Փառքի ետևից ու-
ղարկել է նա ինձ ձեզ կողոպ-
տող ազգերի մօտ. որովհետև
ձեզ դպչողը նորա աչքերի բիբին է
9 դպչում։ Որովհետև ահա ես իմ
ձեռքը շարժելու եմ նորանց վե-
րայ, և նորանք պիտի իրանց ծա-
ռաներին աւար դառնան. և կը
գիտենաք, որ Զօրաց Տէրն է ինձ
ուղարկել։ Ցնծա և ուրախացիր,
10 ով Սիոնի աղջիկ, որովհետև ա-
հա ես գալիս եմ ու կ'բնակուեմ
քո միջումն, ասում է Տէրը։
11 Եւ այն օրը շատ ազգեր Տիրոջն
են յարելու, և ինձ ժողովուրդ
են լինելու. և ես քո միջումն եմ
բնակուելու, և դու կ'գիտենաս,
որ Զօրաց Տէրն է ինձ ուղարկել
քեզ մօտ։ Եւ Տէրը պիտի ժա-
12 ռանգէ իր ժառանգութիւնը Յու-
դան, սուրբ երկրի վերայ, և էլի
պիտի հաւանէ Երուսաղէմին։
13 Լուռ ամեն մարմին Տիրոջ առա-
ջին, որ նա զարթնեց իր սուրբ
բնակութիւնիցը։

ԳԼ. Գ

1 Եւ նա ինձ ցոյց տուաւ մեծ
քահանայ Յեսուին, որ կանգնել
էր Տիրոջ հրեշտակի առաջին. և
սատանան կանգնել էր նորա աջ
2 կողմին նորան հակառակելու հա-
մար։ Եւ Տէրն ասեց սատանային.
Տէրը քեզ յանդիմանէ, ով սա-
տանայ, և Տէրը քեզ յանդիմա-
նէ որ ընտրել է Երուսաղէմին.
մի՞թէ սա կրակից ազատուած
խանձող չէ։
3 Եւ Յեսուն կեղտոտ հագուստ-
ներ էր հագել և կանգնել հրեշ-
4 տակի առաջին։ Եւ նա պատաս-
խանեց ու ասեց իր առաջը կանգ-
նողներին թէ Հեռացրէք նորա
վերայից այդ կեղտոտ հագուստ-
ները. և նորան ասեց. Տես՝ ես քո
վերայից վեր առայ քո անօրէնու-
թիւնը, և քեզ պատուական զգեստներ եմ հագցնում։ Եւ ես 5
ասեցի, որ նորա գլխին մաքուր
խոյր դնեն. և մաքուր խոյր դրին
նորա գլխին և հանդերձներ հագ-
ցրին նորան. և Տիրոջ հրեշտակը
կանգնած էր։
Եւ Տիրոջ հրեշտակը վկայեց 6
7 Յեսուին և ասեց. Այսպէս է ա-
սում Զօրաց Տէրը. եթէ իմ ճա-

նապարհներովը գնաս, և եթէ
իմ պահպանութիւնը պահես,
այն ժամանակ դու էլ իմ տունը
կ'դատես, և իմ սրահներն էլ
կ'պահես, և ես քեզ *ընթացք
կ'տամ այս կանգնողների մէջ։
8 Մէկ լսիր, ով մեծ քահանայ
Յեսու, դու և քո առաջին նստող
բարեկամներդ, որ նորանք նշանի
մարդիկ են. որովհետև ահա ես
պիտի բերեմ իմ ծառայ՝ Շա-
9 ռաւիղին։ Որովհետև ահա այն
քարը, որ դրել եմ Յեսուի ա-
ռաջին. մէկ քարի վերայ եօթը
աչքը կայ, ահա ես փորագրում
եմ նորա փորագիրը, ասում է
Զօրաց Տէրը, և այն երկրի անօ-
րէնութիւնը պիտի մէկ օրում
10 վեր առնեմ։ Այն օրը, ասում
է Զօրաց Տէրը, դուք միմեանց
կ'կանչէք որթի տակը և թզենիի
տակը։

ԳԼ. Դ

1 Եւ ետ դառաւ ինձ հետ խօսող
հրեշտակը և ինձ զարթեցրեց
ինչպէս որ մի մարդ կ'զարթեցը-
2 նեն իր քնիցը։ Եւ ինձ ասեց.
Ի՞նչ ես տեսնում դու. և ես ա-
սեցի. Տեսնում եմ որ ահա մի
բոլորովին ոսկի աշտանակ և մի
բաժակ նորա գագաթին, և եօթը
ճրագ նորա վերայ, և եօթը խո-
ղովակներ այն եօթը ճրագների
համար, որ նորա գագաթին են։
3 Եւ երկու ձիթենի նորա կշտին՝
մէկը բաժակի աջ կողմիցը և
4 մէկը նորա ձախ կողմիցը։ Եւ ես
պատասխանեցի և ասեցի ինձ
հետ խօսող հրեշտակին թէ Սո-
5 րանք ի՞նչ են, տէր իմ։ Եւ ինձ
հետ խօսող հրեշտակը պատաս-
խանեց ինձ և ասեց. Մի՞թէ չը
գիտես թէ սորանք ինչ են. և ես
6 ասեցի. Ոչ, տէր իմ։ Եւ նա պա-
տասխանեց և ասեց ինձ թէ Սա
Տիրոջ խօսքն է առ Զօրաբաբէլ՝
ասելով. Ոչ թէ զօրութիւնով,
և ոչ թէ ոյժով, այլ իմ հոգո-
7 վը, ասում է Զօրաց Տէրը։ Դու
ո՞վ ես, ով մեծ սար. դու Զօ-
րաբաբէլի առաջին մի դաշտ ես.
և նա դուրս պիտի հանէ գլխի
քարը աղաղակներով Շնո՛րհք,
շնո՛րհք նորան։
Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա- 8
սելով. Զօրաբաբէլի ձեռքերն 9
են հիմնել այս տունը, և նորա
ձեռքերն էլ պիտի աւարտեն. և
կ'գիտենաս, որ Զօրաց Տէրն է
ինձ ձեզ մօտ ուղարկել։ Որով- 10
հետև ո՞վ է փոքր բաների օրը
անարգում. և ուրախանում ու
նայում են Զօրաբաբէլի ձեռքի
կապարագնտակին, սորանք եօթն-
եանք Տիրոջ աչքերն են, որոնք
ման են գալիս բոլոր երկրումը։
Եւ ես պատասխան տուի ու 11
ասեցի նորան. Ի՞նչ են այս երկու
ձիթենիքը աշտանակի աջ կողմին
և նորա ձախ կողմին։ Եւ երկրորդ 12
անգամ պատասխանեցի և ասեցի
նորան. Ի՞նչ են այս երկու ձիթե-
նիի հասկերը, որոնք երկու ոսկի
խողովակների միջով ոսկի ի-ղը
թափում են իրանցից։ Եւ նա 13
ինձ ասեց թէ Մի՞թէ չ'գիտես
թէ սորանք ինչ են. և ես ասեցի.
Ոչ, տէր իմ։ Եւ նա ասեց. սո- 14
րանք են երկու օծեալները, որոնք
կանգնում են բոլոր երկրի Տիրոջ
առաջին։

ԳԼ. Ե

Եւ ես ետ դառայ ու աչքերս 1
բարձրացրի և տեսայ, և ահա մի
թռչող տոմս։ Եւ նա ինձ ասեց. 2
Ի՞նչ ես տեսնում դու. և ես ա-
սեցի. Ես մի թռչող տոմս եմ
տեսնում, երկայնութիւնը քսան
կանգուն, և լայնութիւնը տասը
կանգուն։ Եւ նա ինձ ասեց. Սա 3
բոլոր երկրի երեսի վերայ դուրս
եկող անէծքն է, որովհետև ա-
մեն գողութիւն անող այս կող-
մին համեմատ պիտի ջնջուի. իսկ
երդում անողը միւս կողմին հա-
մեմատ պիտի ջնջուի։ Ես նորան 4
հանել եմ, ասում է Զօրաց Տէրը,
և նա պիտի մտնէ գողանողի տու-
նը և իմ անունովը սուտ երդում
անողի տունը, և նորա տան մէջ

*Կամ՝ առաջնորդ և կամ՝ ճեմելիք

պիտի օթևանէ և նորան պիտի
սպառէ նորա փայտերովն ու քա-
րերովը։
5 Եւ ինձ հետ խօսող հրեշտակը
դուրս եկաւ և ինձ ասեց. Մէկ
աչքերդ բարձրացրու և մտիկ
տուր, թէ ինչ է այս դուրս ե-
6 կողը։ Եւ ես ասեցի. Ի՞նչ է. և
նա ասեց. Սա արդուն է դուրս
եկողը. և ասեց. Սա նորանց աչ-
7 քերն են բոլոր երկրումը։ Եւ ա-
հա մի կապարեայ տաղանդ վեր
բարձրացուեցաւ, և ահա մի կին՝
8 նստած արդուի մէջ։ Եւ նա ա-
սեց. Սա Զարութիւնն է, և նո-
րան գցեց արդուի մէջը, և կա-
պարագնտակն էլ գցեց նորա բե-
9 րանին։ Եւ ես բարձրացրի աչ-
քերս և մտիկ տուի, և ահա եր-
կու կին էին դուրս գալիս, և
քամի կար նորանց թևերումը, և
նորանք արագիլի թևերի պէս
թևեր ունէին, և նորանք վեր
առան այն արդուն երկրի ու
10 երկնքի մէջտեղը։ Եւ ես ասեցի
ինձ հետ խօսող հրեշտակին.
Սորանք ո՞ւր են տանում այդ
11 արդուն։ Եւ նա ասեց ինձ. Որ-
պէս զի նորա համար տուն շի-
նեն Սենաարի երկրումը, և պիտի
հաստատուի, և այնտեղ պիտի
դրուի իր խարսխի վերայ։

ԳԼ. Զ

1 Եւ ես ետ դառայ ու աչքերս
բարձրացրի, և տեսայ, և ահա
չորս կառք էին դուրս գալիս եր-
կու սարերի մէջտեղից, և սարե-
2 րը պղնձի սարեր էին։ Առաջի
կառքի ձիերը աշխէտ էին, և
երկրորդ կառքի ձիերը սև էին.
3 Եւ երրորդ կառքի ձիերը սպի-
տակ ու չորրորդ կառքի ձիերը
4 պիսակ էին *գորշագոյն։ Եւ ես
պատասխան տուի և ասեցի ինձ
հետ խօսող հրեշտակին. Սորանք
5 ի՞նչ են, տէր իմ։ Եւ հրեշտակը
պատասխան տուաւ ու ասեց ինձ.
Սորանք երկնքի չորս հողմերն են,
որոնք դուրս են գալիս բոլոր
երկրի Տիրոջ առաջին կանգնե-
լուց։ Այն սև ձիերը, որ նորան 6
[illegible] են, դուրս են գալիս դէպի
հիւսիսի երկիրը, և սպիտակները
դուրս են գալիս նորանց ետևից,
և պիսակները դուրս են գալիս
դէպի հարաւի երկիրը։ Եւ գոր- 7
շագոյնները դուրս եկան, և ու-
զեցին որ գնան ման գան երկրու-
մը. և նա ասեց. Գնացէք ման ե-
կէք երկրի վերայ. և նորանք ման
եկան երկրի վերայ։ Եւ նա աղա- 8
ղակեց դէպի ինձ և խօսեց ինձ
հետ ասելով. Տես՝ դէպի հիւսիսի
երկիրը դուրս եկողները հանգ-
չեցրին իմ հոգին հիւսիսի երկ-
րումը։
Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա- 9
սելով. Վեր առ գերիներից՝ Հեղ- 10
դայից, Տուբիայից և Յեդայիայից,
և նոյն օրը գնա դու ինքդ և մտիր
Բաբիլոնից եկող Սոփոնիայի որ-
դիի Յովսիայի տունը. Եւ արծաթ 11
ու ոսկի առ և պսակներ շինիր,
և դիր մեծ քահանայ Յովսեդեկ-
եան Յեսուի գլխին. Եւ ասիր նո- 12
րան թէ Այսպէս է ասում Զօ-
րաց Տէրը թէ Ահա մի մարդ՝ ա-
նունը Շառաւիղ. նա իր տեղիցը
պիտի բուսնէ, և շինէ Տիրոջ տա-
ճարը։ Եւ նա կ'շինէ Տիրոջ տա- 13
ճարը, և նա մեծափառութիւն է
կրելու, և պիտի բազմէ ու իշխէ
իր աթոռի վերայ, և նա քահա-
նայ է լինելու իր աթոռի վերայ,
և խաղաղութեան խորհուրդ պի-
տի լինի երկուսի մէջտեղը։
Եւ պսակները պիտի լինին Հե- 14
լեմին, Տուբիային ու Յեդայիային
և Սոփոնիայի որդի Հենին իբրև
յիշատակ Տիրոջ տաճարումը։
Եւ հեռաւորները պիտի գան ու 15
շինեն Տիրոջ տաճարումը, այն
ժամանակ կ'գիտենաք, որ Զօրաց
Տէրն է ինձ ուղարկել ձեզ մօտ։
Եւ սա պիտի լինի, եթէ իրաւ
լսէք ձեր Տէր Աստուծոյ ձայնին։

ԳԼ. Է

Եւ եղաւ որ Դարեհ թագաւորի 1
չորրորդ տարումը Տիրոջ խօսքը
եղաւ Զաքարիային իններորդ ամ-

*Կամ՝ զօրաւոր

2 սի՝ այսինքն Քասղևի չորսին, Երբոր Սարասարին և Ռեկեմմելէքին և նորա մարդկանցը Աստուծոյ տունը ուղարկեցին, որ Տիրոջ առաջին աղօթք մատուցանեն.
3 Ասելով Զօրաց Տիրոջ տան վերայ եղող քահանաներին և մարգարէներին. Արդեօ՞ք լաց լինեմ հինգերորդ ամիսը ինձ պահելով, ինչպէս որ այսքան տարիներ ա-
4 րել եմ։ Եւ Զօրաց Տիրոջ խօսքը
5 եղաւ ինձ ասելով. Ասիր այս երկրի բոլոր ժողովրդին և քահանաներին թէ Երբոր ծոմ էիք պահում և սուգ անում հինգերորդ ու եօթներորդ ամիսները ահա այս եօթանասուն տարին, մի՞թէ ինձ համար էիք ծոմ պա-
6 հում։ Եւ երբոր ուտում էիք, ու երբոր խմում էիք, մի՞թէ ձեզ համար չէիք ուտում և
7 ձեզ համար խմում։ Մի՞թէ նոյն խօսքերը չ՚հրատարակեց Տէրը առաջի մարգարէների ձեռովը, քանի որ Երուսաղէմը և նորա շրջակայ քաղաքները շէն և հանգիստ էին, և հարաւային ու դաշտային կողմերը շէն էին։
8 Եւ Տիրոջ խօսքը եղաւ Զաքա-
9 րիային ասելով. Այսպէս է ասում Զօրաց Տէրը թէ Արդար դատաստան արէք, և ողորմութիւն ու գթութիւն արէք ամեն
10 մէկդ իր եղբօրը. Եւ որբևայրիին ու որբին, օտարականին ու տնանկին մի զրկէք, և միմեանց դէմ չարութիւն մի մտածէք ձեր
11 սրտերումը։ Բայց նորանք մերժեցին ականջ դնել, և ուսը խոտորեցրին, և իրանց ականջները
12 ծանրացրին որ չ՚լսեն։ Եւ իրանց սիրտը անդամանդի պէս շինեցին, որ չ՚լսեն օրէնքը և այն խօսքերը որ Զօրաց Տէրը իր հոգովը առաջի մարգարէների ձեռովը ուղարկեց. և մեծ բարկութիւն եղաւ
13 Զօրաց Տիրոջ կողմանէ։ Եւ եղաւ որ ինչպէս նա կանչեց, ու նորանք չ՚լսեցին, այնպէս էլ նորանք կանչեցին և ես չ՚լսեցի,
14 ասում է Զօրաց Տէրը։ Եւ ես փոթորիկով քշեցի նորանց ամեն ազգերի մէջ, որոնց նորանք չը գիտէին, և երկիրը ամայացաւ նորանց ետևից անցուդարձից, և ցանկալի երկիրը ամայի արին։

ԳԼ. Ը

Եւ Զօրաց Տիրոջ խօսքը եղաւ 1
ասելով. Այսպէս է ասում Զօ- 2
րաց Տէրը. Ես նախանձեցի Սիօնի համար մեծ նախանձով, և մեծ բորբոքումով նախանձեցի նորա
համար։ Այսպէս է ասում Տէրը. 3
Ես դարձել եմ Սիօնին և բնակուելու եմ Երուսաղէմում, և Երուսաղէմը պիտի Հաւատարիմ քաղաք կոչուի, և Զօրաց Տիրոջ սարը՝ Սուրբ սար։
Այսպէս է ասում Զօրաց Տէրը. 4
Տակաւին ծերեր և պառաւներ պիտի բնակուեն Երուսաղէմի հրապարակներումը, և ամեն մարդ իր գաւազանը ձեռքին՝ օրերի շա-
տութիւնիցը։ Եւ քաղաքի հրա- 5
պարակները լիքը պիտի լինեն աղերքով ու աղջկերքով, որոնք խաղ են անելու նորա հրապարակներումը։
Այսպէս է ասում Զօրաց Տէրը. 6
Եթէ դժուար լինի այս ժողովրդի մնացորդի աչքի առաջին այն օրերին, մի՞թէ իմ աչքերի առաջին էլ պիտի դժուար լինի, ասում է Զօրաց Տէրը։
Այսպէս է ասում Զօրաց Տէրը. 7
Ահա ես ազատելու եմ իմ ժողովրդին արևելեան երկրիցը և
արևմտեան երկրիցը։ Եւ նորանց 8
բերելու եմ, որ բնակուեն Երուսաղէմի մէջ, և ինձ համար ժողովուրդ լինեն և ես նորանց համար Աստուած լինեմ ճշմարտութիւնով և արդարութիւնով։
Այսպէս է ասում Զօրաց Տէրը. 9
Թող զօրանան ձեր ձեռքերը, ով դուք, որ այս խօսքերը այս օրերում այն մարգարէների բերանից լսում էք, որոնք կային Զօրաց Տիրոջ տանը տաճարը շինուելիս։ Որովհետև այն օրերից 10
առաջ մարդի վարձքը չ՚կար, և անասունի վարձքը ոչինչ էր, և դուրս եկողն ու մտնողը խաղաղութիւն չ՚ունէին նեղութեան

պատճառովը, որովհետև ես ամեն մարդկանց իրար դէմ էի
11 հանել։ Բայց հիմա ես այն առաջին օրերին պէս պիտի չ՚լինեմ այս ժողովրդի մնացորդի համար, ա-
12 սում է Զօրաց Տէրը։ Որովհետև ցանգը խաղաղութեամբ է լինելու, որթը իր պտուղը պիտի տայ, և երկիրը պիտի իր արդիւնքը տայ, և երկինքը պիտի տայ իր ցօղը, և այս ժողովրդի մնացորդին ժառանգել պիտի տամ այս
13 բոլորը։ Եւ պիտի լինի որ ինչպէս դուք անէծք էիք ազգերի մէջ, ով Յուդայի տուն և Իսրայէլի տուն, նոյնպէս էլ պիտի ազատեմ ձեզ, որ դուք օրհնութիւն լինէք. մի վախենաք. Թող զօրա-
14 նան ձեր ձեռքերը։ Որովհետև այսպէս է ասում Զօրաց Տէրը. Ինչպէս որ մտադիր էի չարիք անելու ձեզ, երբոր ձեր հայրերը զայրացրին ինձ, ասում է Զօրաց
15 Տէրը, և ես չ՚զղջացի. Նոյնպէս դարձեալ մտադիր եմ այս օրերը բարիք անելու Երուսաղէմին և Յուդայի տանը. մի վախենաք։
16 Սորանք են այն բաները, որ պէտք է անէք. Ճշմարտութիւն խօսեցէք ամեն մէկդ իր ընկերի հետ, արդարութիւնով ու խաղաղ դատաստանով դատեցէք ձեր
17 դռներումը։ Եւ ամեն մէկդ իր ընկերի չարիքը մի խորհէք ձեր սրտերումը, և սուտ երդում մի սիրէք, որովհետև այս ամենը ես ատում եմ, ասում է Տէրը։
18 Եւ Զօրաց Տիրոջ խօսքը եղաւ
19 ինձ ասելով, Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Չորրորդ ամսի ծոմը, և հինգերորդի ծոմը, և եօթներորդի ծոմը և տասներորդի ծոմը Յուդայի տան համար պիտի ցընծութիւն և ուրախութիւն և խնդալից օրեր դառնան, ուրեմն ճշմարտութիւնն ու խաղաղութիւնը սիրեցէք։
20 Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Տակաւին ժողովուրդներ պիտի գան և շատ քաղաքների բնակիչ-
21 ներ. Եւ մէկի բնակիչները պիտի գնան միւսի մօտ ասելով. Եկէք գնանք Տիրոջ առաջը աղօթք ա-
նելու և Զօրաց Տիրոջը խնդրելու.
ես էլ եմ գալիս։ Եւ շատ ժո- 22
ղովուրդներ ու զօրաւոր ազգեր պիտի գան Զօրաց Տիրոջը խնդրելու Երուսաղէմումը, և Տիրոջ առաջին աղօթելու։ Այսպէս է 23
ասում Զօրաց Տէրը. Այն օրերը կ՚բռնեն ազգերի ամեն լեզուներից տասը մարդ, այսինքն կ՚բռնեն մի Հրէայ մարդի քղանցքը, ասելով. Գնանք ձեզ հետ, որովհետև լսել ենք որ Աստուած ձեզ հետ է։

ԳԼ. Թ

Տիրոջ խօսքի պատգամը Հադ- 1
րաքի երկրի դէմ. Եւ Դամասկոսը նորա հանգչելու տեղն է, որովհետև Տիրոջ աչքը մարդկանց և Իսրայէլի բոլոր ցեղերի
վերայ է։ Եւ Եմաթն էլ դպած 2
է նորան, նաև Տիւրոսն ու Սիդոնը, թէև շատ իմաստութիւն ունին։ Եւ Տիւրոսն իրան համար 3
ամրոց շինեց, և արծաթը դիզեց հողի պէս, և մաքուր ոսկին՝ փողոցների ցեխին պէս։ Ահա Տէրը 4
նորան պիտի նուաճէ, և զարկէ ծովումը նորա զօրութիւնը, և նա կրակով պիտի սպառուի։
Տեսնելու է Ասկաղոնը և վա- 5
խենալու է, Գազան էլ տագնապելու է շատ, և Ակկարոնն էլ, որովհետև ցամաքելու է յոյսը. և կորչելու է թագաւորը Գազայից, և Ասկաղոնը պիտի չ՚բնակ-
ուի։ Եւ *պոռնկորդին պիտի 6
բնակուէ Ազովտոսումը, և բնաջինջ պիտի անեմ Փղշտացիների
հպարտութիւնը։ Եւ պիտի վե- 7
րացնեմ նորա արիւնը իր բերանիցը, և նորա պղծութիւնները՝ իր ատամների միջիցը. և նա էլ է մնացորդ լինելու մեր Աստուծոյ համար, և նա պիտի տոհմապետի պէս լինի Յուդայի մէջ, և Ակկարոնը՝ Յեբուսացիների պէս։
Եւ ես բանակ պիտի դնեմ իմ 8
տան համար զօրքերի՝ անցուդար-

*Կամ՝ օտարազգին

ձողի պատճառովը, և այլ ևս նո-
րանց վերայ բռնաւոր չի անց կե-
նալ. որովհետև հիմա տեսել եմ
իմ աչքերովը։
9 Մեծապէս ուրախացիր, ով Սի-
օնի աղջիկ, ցնծութեամբ աղա-
ղակիր, ով Երուսաղէմի աղջիկ,
ահա քո թագաւորը գալիս է
քեզ մօտ, նա արդար ու փրկա-
գործ է, հեզ, և էշի վերայ հե-
ծած, այսինքն էշի ձագի՝ յաւա-
10 նակի վերայ։ Եւ պիտի բնաջինջ
անեմ կառքը Եփրեմից և ձին՝
Երուսաղէմից, և պիտի փչանայ
պատերազմի աղեղը, և նա խա-
ղաղութիւն է խօսելու ազգե-
րին, և նորա իշխանութիւնը պի-
տի լինի ծովից մինչև ծով, և գե-
11 տիցը մինչև երկրի ծայրերը։ Քո
էլ ուխտի արիւնովը թող տուի
քո գերիներին այն գուբիցը, որի
12 մէջ ջուր չ՚կար։ Ետ դարձէք
ամրոցը, ով յոյսի գերիներ, այս-
օր էլ եմ ծանուցանում, թէ
կրկնապատիկ եմ վճարելու քեզ։
13 Որովհետև Յուդան պիտի ինձ
համար լարեմ իբրև աղեղ, և
պիտի լցնեմ Եփրեմին, և քո
որդկանցը պիտի գրգռեմ, ով
Սիօն, քո որդկանց վերայ, ով
Յունաստան, և քեզ պիտի զօ-
14 րաւորի սուրի պէս շինեմ։ Եւ
Տէրը պիտի երևայ նորանց վերայ,
և կայծակի պէս պիտի դուրս
գայ նորա նետը, և Տէր Եհովան
պիտի հնչեցնէ փողը, և պիտի
գնայ հարաւային մրրիկներով։
15 Զօրաց Տէրը պիտի պաշտպան լի-
նի նորանց վերայ, և նորանք պիտի
ոպառեցնեն ու ոտնակոխ անեն
իբր պարսաքարեր. և պիտի խմեն
ու աղմուկ հանեն գինիի պէս, և
պիտի լցուին տաշտի պէս՝ ինչ-
16 պէս սեղանի անկիւնները։ Եւ
այն օրը նորանց Տէր Աստուածը
պիտի փրկէ նորանց իր ժողովրդի
հօտին պէս, որովհետև իբր թա-
դի քարեր պիտի պսպղան նորա
17 երկրի վերայ։ Որովհետև ի՞նչ
մեծ է նորա բարութիւնը, և ի՞նչ
մեծ նորա գեղեցկութիւնը. ցո-
րենը երիտասարդներ և քաղցուն
կոյսեր է բուսցնելու։

ԳԼ. Ժ

Խնդրեցէք Տէրից անձրև ետքի 1
անձրևի ժամանակին. Տէրը կայ-
ծակներ է շինում, և անձրև ու
տարափ կ՚տայ նորանց. ամեն
մէկին խոտ՝ իր ագարակումը։
Որովհետև թերափիմները ունայ- 2
նութիւն են խօսել, և գուշա-
կողները սուտ են տեսել, և փուչ
երազներ են խօսել, դարտակ են
մխիթարել. սորա համար հօտի
պէս պիտի չուեն, ճնշուելու են,
որովհետև հովիւ չ՚կայ։ Հովիւ- 3
ների վերայ բորբոքուեցաւ իմ
բարկութիւնը, և նոխազներին
պիտի այցելեմ, որովհետև Զօ-
րաց Տէրը այցելեց իր հօտը՝ Յու-
դայի տունը, և նորանց շինեց ինչ-
պէս իր փառաւոր երիվարը պա-
տերազմի մէջ։ Նորանից է ան- 4
կիւնաքարը, նորանից է բևեռը,
նորանից է պատերազմի աղեղը,
նորանից է դուրս գալիս ամեն
զօրավար մէկտեղ։ Եւ պիտի լի- 5
նեն տղամարդկանց պէս, որ կոխ
են տալիս պատերազմումը փո-
ղոցների ցեխի մէջ, և պիտի պա-
տերազմեն, որովհետև Տէրը նո-
րանց հետ է, և պիտի ամաչեն
ձիանք հեծնողները։ Եւ ես պիտի 6
քաջացնեմ Յուդայի տունը, և
փրկեմ Յովսէփի տունը, և նո-
րանց պիտի բնակեցնեմ, որով-
հետև նորանց ողորմել եմ. և
նորանք պիտի լինեն իբր թէ ես
նորանց չէի մերժել, որովհետև
ես եմ նորանց Տէր Աստուածը,
և նորանց պիտի լսեմ։ Եւ զօրա- 7
ւորի պէս պիտի լինի Եփրեմը, և
նորանց սիրտը պիտի ուրախանայ
իբր թէ գինիով, և նորանց որ-
դիքն էլ պիտի տեսնեն և ուրա-
խանան, նորանց սիրտը պիտի
ցնծայ Տէրովը։ Ես նորանց պիտի 8
սուլեմ և նորանց ժողովեմ, ո-
րովհետև ես փրկել եմ նորանց,
և նորանք պիտի շատանան ինչ-
պէս որ շատ էին։ Թէև ես նո- 9
րանց ցանեմ ազգերի մէջ, բայց
նորանք հեռու տեղերում էլ
պիտի յիշեն ինձ, և պիտի ապ-
րեն իրանց որդկանց հետ և ետ

10 դառնան։ Եւ ես նորանց ետ պի-
տի դարձնեմ Եգիպտոսի երկրի-
ցը, և Ասորեստանից պիտի ժո-
ղովեմ նորանց. և նորանց պիտի
բերեմ Գաղաադի երկիրը և Լի-
բանանը, և տեղ չ՚պիտի գտնուի
11 նորանց համար։ Եւ նա պիտի
անց կենայ նեղութեան ծովովը,
և պիտի զարկէ ծովումը ալիքնե-
րին, և պիտի չորանան գետի բո-
լոր խորութիւնները, և պիտի ի-
ջեցնուի Ասորեստանի հպարտու-
թիւնը, և Եգիպտոսի գաւազանը
12 պիտի հեռանայ։ Եւ նորանց պի-
տի զօրացնեմ Տէրովը, և նորանք
ման պիտի գան նորա անունովը,
ասում է Տէրը։

ԳԼ. ԺԱ

1 Բաց արա դռներդ, ով Լիբա-
նան, և կրակը լափէ քո եղևին-
2 ները։ Թող ողբայ մայր ծառը,
որովհետև ընկել է եղևինը, ո-
րովհետև ազնուականները կո-
ղոպտուել են. Թող ողբան Բա-
սանի կաղնիները, որովհետև իջել
3 է անմատչելի անտառը։ Հովիւ-
ների ողբալու ձայնը գալիս է, ո-
րովհետև կողոպտուել է նորանց
փառքը, գալիս է կորիւնների
մռնչելու ձայնը, որովհետև կո-
ղոպտուել է Յորդանանի շքե-
ղութիւնը։
4 Այսպէս է ասում իմ Տէր
5 Աստուածը. Արածացրու մոր-
թուելու հօտը, որոնց առնողնե-
րը մորթում են ու յանցաւոր
չեն. և որոնց ծախողները ասում
են. Օրհնեալ լինի Տէրը որ հա-
րըստացայ. և նորանց հովիւները
6 չեն գթալու նորանց վերայ։ Ո-
րովհետև այլ ևս չեմ գթալու
երկրի բնակիչների վերայ, ասում
է Տէրը, և ահա ես մարդկանց
իրար ձեռը պիտի գցեմ և իր
թագաւորի ձեռը, և նորանք պի-
տի զարկեն երկիրը, և պիտի չը
փրկեմ նորանց ձեռիցը։
7 Եւ ես արածեցրի այն մոր-
թուելու հօտը, այսինքն հօտի
թշուառները, և ես երկու գա-
ւազան առայ, մէկին կոչեցի

*Գեղեցկութիւն և միւսին կոչե-
ցի Կապեր, և արածեցրի հօտը։
Եւ փչացրի երեք հովիւներին 8
մէկ ամսում, որովհետև սիրտս
վրդովուել է նորանց վերայ, և
նորանց սիրտերն էլ ինձանից էին
զզուել։ Եւ ես ասեցի. Ձեզ չեմ 9
հովուելու, մեռնողը թող մեռ-
նէ, և փչանողը փչանայ. և մնա-
ցածները թող մէկզմէկի միս ու-
տեն։ Եւ ես վեր առայ իմ գա- 10
ւազանը՝ Գեղեցկութիւնը, և
կոտրեցի նորան, որ ցրեմ իմ
ուխտը, որ արել եմ բոլոր ազ-
գերի հետ։ Եւ նա քանդուեցաւ 11
նոյն օրը, և այսպէս ճանաչեցին
հօտի խեղճերը, որ սպասում էին
ինձ, թէ սա Տիրոջ խօսքն է։
Եւ ես նորանց ասեցի. Եթէ 12
հաճելի է ձեր աչքին, տուէք իմ
վարձքը, իսկ եթէ ոչ, թող
տուէք. և նորանք կշռեցին իմ
վարձքը երեսուն արծաթ։ Եւ 13
Տէրն ասեց ինձ, Դէն գցիր դա
բրուտի մօտ, պատուական գին
է, որով ես գնահատուեցայ
նորանց կողմից. և ես առայ այն
երեսուն արծաթը, և գցեցի նո-
րան Տիրոջ տունը բրուտի մօտ։
Եւ կոտրեցի իմ երկրորդ գա- 14
ւազանը՝ Կապերը. որ քանդեմ
Յուդայի և Իսրայէլի միջի եղբայ-
րութիւնը։
Եւ Տէրն ասեց ինձ. Էլի քեզ 15
համար յիմար հովիւի գործիքներ
առ։ Որովհետև ահա ես երկրի 16
վերայ մի հովիւ եմ յարուցանե-
լու, նա կորչողին պիտի չ՚այցելէ,
և ցրուածը պիտի չ՚որոնէ, և կոտ-
րածը պիտի չ՚բժշկէ, կանգնածին
պիտի չ՚խնամէ. այլ գէրերի միսը
պիտի ուտէ և նորանց կճղակնե-
րը փշրէ։ Վա՛յ փուչ հովիւին, 17
որ ձգում է հօտը. սո՛ւրը նորա
բազուկի վերայ և նորա աջ աչքի
վերայ. նորա բազուկը պիտի ան-
պատճառ չորանայ, և նորա աջ
աչքը պիտի անպատճառ խա-
ւարուի։

---

*Կամ՝ Շնորհք

ԳԼ. ԺԲ

1 Տիրոջ խօսքի պատգամը Խարա-
ՀԷլի մասին. ասում է Տէրը, որ
տարածում է երկինքը և հիմ-
նում է երկիրը և ստեղծում է
2 մարդի հոգին նորա միջումը. Ա-
հա ես երուսաղէմը թմրութեան
բաժակ եմ շինելու բոլոր շրջա-
կայ ազգերի համար, և Յուդայի
վերայ էլ պիտի լինի երուսաղէմի
3 պաշարման ժամանակին։ Եւ պի-
տի լինի որ այն օրը ես երուսա-
ղէմը ծանր քար եմ շինելու բո-
լոր ազգերի համար, ամեն նորան
բարձրացնողները պիտի անպատ-
ճառ ջարդուին, և նորա վերայ
պիտի ժողովուին երկրի բոլոր
4 ազգերը։ Ա՛յն օրը, ասում է
Տէրը, պիտի ամեն ձի զարկեմ
սոսկումով, և նորա հեծեալին՝
գիժութիւնով, իսկ Յուդայի
տան վերայ պիտի բանամ աչ-
քերս, և ժողովուրդների բոլոր
ձիերը պիտի զարկեմ կուրու-
5 թիւնով։ Եւ Յուդայի առաջնո-
պետները պիտի ասեն իրանց
սրտումը. Ինձ համար զօրութիւն
են երուսաղէմի բնակիչները իր-
անց Աւետարանչ Տէր Ամենակալ
6 Ա՛յն օրը ես Յուդայի առաջնո-
պետներին պիտի շինեմ կրակի
վառարանի պէս փայտերի մէջ, և
կրակի ջահի պէս՝ արտերի մէջ,
և նորանք պիտի ուտեն աջ ու
ձախ բոլոր շրջակայ ժողովուրդ-
ներին, և երուսաղէմը դարձեալ
իր տեղը պիտի բնակուի Երու-
7 սաղէմումը։ Եւ Տէրը պիտի փրկէ
առաջ Յուդայի վրանները, որ-
պէս զի չ'հպարտանայ Դաւիթի
տան պարծանքը, և երուսաղէմի
բնակչի պարծանքը՝ Յուդայի վե-
8 րայ։ Ա՛յն օրը Տէրը պիտի պաշտ-
պանէ երուսաղէմումը բնակողին,
և նորանց միջի դիւրագայթողը
այն օրը Դաւիթի պէս պիտի լի-
նի, և Դաւիթի տունը՝ Աստուա-
ծոյ պէս, Տիրոջ հրեշտակին պէս
9 նորանց առաջին։ Եւ պիտի լինի
այն օրը որ ես պիտի ջանամ փչա-
ցնելու այն բոլոր ազգերը, որոնք
10 կ'գան երուսաղէմի վերայ։ Եւ

պիտի թափեմ Դաւիթի տան
վերայ, և երուսաղէմացիների բնա-
կողի վերայ շնորհքի և աղօթքի
հոգին. և նորանք պիտի մտիկ
տան ինձ, որին խոցեցին. և սուգ
պիտի անեն նորա վերայ միամօրի
սուգի պէս. և պիտի ցաւեն նո-
րա վերայ, ինչպէս որ անդրանկի
վերայ կ'ցաւեն։ Ա՛յն օրը սուգը 11
մեծ պիտի լինի երուսաղէմումը,
ինչպէս Ադադ-ռիմմոնի սուգը
Մակեդդոնի դաշտումը։ Եւ եր- 12
կիրը պիտի սուգ անէ, ամեն մի
ազգատոհմ առանձին. Դաւիթի
տան ազգատոհմը առանձին և
նորանց կանայքն առանձին,
Նաթանի տան ազգատոհմը առան-
ձին և նորանց կանայքն առան- 13
ձին. Ղևիի տան ազգատոհմը ա-
ռանձին և նորանց կանայքն ա-
ռանձին, Ակէտեի ազգատոհմը
առանձին և նորանց կանայքն ա- 14
ռանձին։ Բոլոր մնացեալ ազգա-
տոհմները ամեն մէկն առանձին,
և նորանց կանայքն առանձին։

ԳԼ. ԺԳ

Ա՛յն օրը մի ազբիւր է լինելու 1
բացուած Դաւիթի տան համար
և երուսաղէմի բնակիչների հա-
մար, մեղքի համար և պղծու-
թեան համար։ Եւ այն օրը պիտի 2
լինի, ասում է Զօրաց Տէրը, որ
բնաջինջ պիտի անեմ կուռքերի
անունները երկրից, և այլ ևս
պիտի չ'յիշուին. և մարգարէնե-
րին էլ և պղծութեան հոգին էլ 3
պիտի վերացնեմ երկրից։ Եւ պի-
տի լինի որ երբ մի մարդ էլի
մարգարէանայ, այն ժամանակ
նորան պիտի ասեն նորա հայրը և
մայրը՝ նորա ծնողները. Չ'ապրիս,
որ սուտ խօսեցիր Տիրոջ անու-
նովը. և նորան պիտի խոցեն նո-
րա հայրն ու մայրը՝ նորա ծնող-
ները՝ նա մարգարէանալիս։ Եւ 4
այն օրը պիտի լինի որ պիտի ա-
մաչեն մարգարէները, ամեն մէկը
իր տեսիլքից՝ մարգարէանալիս.
և մազի վերարկու չեն հագնելու՝
խաբելու նպատակով։ Եւ պիտի 5
ասէ. Ես մարգարէ չեմ. ես մի

երկրագործ մարդ եմ. որովհետև
մի մարդ ինձ ծախու է առել
6 իմ երեխայութիւնիցը։ Եւ նո-
րան ասելու են. Ա՛ս ինչ հար-
ուածներ են ձեռքերիդ մէջ. և
նա ասելու է. Ա՛յս հարուածքը
ես ստացել եմ իմ բարեկամնե-
րի տանը։
7 Ով սուր, վեր կաց իմ հովիւի
վերայ և իմ ընկեր մարդի վերայ,
ասում է Զօրաց Տէրը. զարկէ
հովիւին, և ոչխարները ցրուին,
և ես էս պիտի դարձնեմ իմ
8 ձեռքը փոքրների վերայ։ Եւ պի-
տի լինի բոլոր երկրումը, ասում
է Տէրը, երկու մասը նորանում
պիտի կորուի մեռնի, իսկ եր-
րորդը պիտի կենայ նորանում։
9 Եւ այն երրորդ մասը պիտի ա-
նեմ կրակի մէջ, և նորանց պի-
տի զտեմ ինչպէս արծաթն են
զտում. և նորանց պիտի փորձեմ
ինչպէս փորձում են ոսկին, նա
կ'կանչէ իմ անունը և ես կ'պա-
տասխանեմ նորան. ես կ'ասեմ.
Նա իմ ժողովուրդն է. և նա
կ'ասէ. Տէրը իմ Աստուածն է։

ԳԼ. ԺԴ

1 Ա՛հա մէկ օր է գալիս Տիրոջ
համար, և քո աւարը պիտի բա-
2 ժանուի քո մէջ։ Եւ ես պիտի
ժողովեմ բոլոր ազգերը երուսա-
ղէմի վերայ պատերազմի համար,
և քաղաքը պիտի առնուի, և
տները պիտի կողոպտուին, և կա-
նայքը պղծուին, և քաղաքի կէսը
գերի գնայ. բայց ժողովրդի մնա-
ցորդը պիտի քաղաքիցը չ'կորուի։
3 Եւ Տէրը դուրս պիտի գայ, և
պիտի պատերազմէ այն ազգերի
հետ, ինչպէս նորա պատերազմի
4 օրը՝ ճակատամարտի օրումը։ Եւ
նորա ոտները կանգնած կ'լինեն
այն օրը Ձիթենեաց սարի վերայ,
որ երուսաղէմի առաջն է դէպի
արևելք, և կ'պատռուի Ձի-
թենեաց սարը միջիցը դէպի ա-
րևելք ու արևմուտք. խիստ մեծ
ձոր կ'լինի, և սարի կէսը կ'քաշուի
դէպի հիւսիս, և կէսը՝ դէպի
5 հարաւ։ Եւ դուք կ'փախչէք ի-

սարերի ձորը. որովհետև
ձորը՝ իտի հասնի Ասել
պիտի փախչէք ինչպէս
նաշարժի իջը փախաս
Ողիա թագաւորի
պիտի գայ իմ Տէ
բոլոր սուրբերը քե
այն օրը պիտի լինի,
նիլ, պայծառները կ'
Եւ մէկ օր կ'լինի՝ Տէ
նի, ոչ ցերեկ և ոչ գի
բիկաւոյ ժամանակին
Եւ պիտի լինի որ այն օր
նի ջրեր դուրս կ'գան Ե
միից նորանց կէսը դէպի
ծովը, և նորանց կէսը դ
բևմահան ծովը. ամեռ
կ'լինի։ Եւ Տէրը թագաւոր
բոլոր երկրի վերայ. այն օր
կ'լինի Տէրը, և նորա անուն
մէկ։ Բոլոր երկիրը դաշտ
պիտի դառնայ Գաբաայից մ
Ռիմմոնը երուսաղէմի հարաւ
կողմը. և պիտի բարձրանայ
տեղը բնակուէ Բենիամինի դ
մինչև Առաջի դռան տեղը մ
Անկեան դուռը. և Անանէլ
աշտարակից մինչև Թագաւո
հնձանները։ Եւ պիտի բնակու
նորանում, և նզովք է՛լ չի լի
և երուսաղէմն ապահով պ
բնակուէ։
Եւ սա պիտի լինի այն
ուածը՝ որով Տէրը պիտի հա
ծէ բոլոր ժողովուրդնե
բանք պատերազմողին Ե
մի դէմ. նորանց մարմ
հալուի՝ իրանց աչքերին
կանգնած և նորանց աչքերը
տի հալուին իրանց խոչերումը
և նորանց լեզուն պիտի հալուի
իրանց բերանումը։ Եւ պիտի լինի
այն օրը որ Տիրոջ խառնաթիւնը
մեծ պիտի լինի նորանցումը, և
ամեն մարդ պիտի բռնէ իր ընկե
րի ձեռքը, և նորա ձեռքը պիտ
բարձրանայ իր ընկերի ձեռքի
դէմ։ Եւ Յուդան էլ է պատե
րազմելու երուսաղէմի դէմ, և
պիտի ժողովուի բոլոր շրջակայ
ազգերի առատաձեռնութիւնը,
ոսկեղէն և հանդերձներ
շատաթիւ։ Եւ ա

ուղտի ու էշի և բոլոր
ների հարուածը, որ կը
այն բանակների մէջ, պիտի
ուածի պէս լինի։ Եւ բո-
զգերից մնացածը, ո-
էին Երուսաղէմի վե-
պիտի գնան տարուց
բաց Տիրոջ Թագաւորին
ելու, և տաղաւարահա-
ը կատարելու։ Եւ պիտի
ր երկրի ազգատոհմներից
, վեր չ'գնայ Երուսաղէմ
ց Տիրոջ Թագաւորին երկրը-
ելու, նորանց վերայ անձրև
ելու։ Եւ եթէ Եգիպտոսի
ոհմը վեր չ'ելնէ և չ'գայ,
ձրանց վերայ անձրև չէ գա-
ի՛լիտի լինի նորանց վերայ այն
բուածը, որով Տէրը պիտի

զարկէ այն ազգերին որ վեր չը
գնացին, որ տօնէին տաղաւարա-
հարաց տօնը։ Սա պիտի լինի Ե-
գիպտոսի պատիժը և այն ամեն
ազգերի պատիժը, որ վեր չ'գնա-
ցին տաղաւարահարաց տօնը տօ-
նելու։

Այն օրը ձիերանց սանձերի զար-
դի վերայ լինելու է ՍՐԲՈՒԹԻՒՆ
ՏԵԱՌՆ և Տիրոջ տան կաթսա-
ները սեղանի առաջի կոնքերի
պէս պիտի լինեն։ Եւ Երուսաղէ-
մում ու Յուդայում ամեն կաթ-
սայ սուրբ պիտի լինի Զօրաց Տի-
րոջը, և բոլոր զոհ անողները պի-
տի գան և նորանցից առնեն ու
նորանց մէջ եփեն, և այն օրը այլ
ևս Քանանացի չի լինելու Զօրաց
Տիրոջ տանը։

ՄԱՂԱՔԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա.

ոջ խօսքի պատգամը Իսրա-
մասին Մաղաքիայի ձեռովը։
ձեզ սիրել եմ, ասում է
Տէրը, իսկ դուք ասում էք. Ի՞ն-
չով ես սիրել մեզ։ Մի՞թէ Ե-
սաւը եղբայրը չէ Յակոբին, ա-
սում է Տէրը, և ես Յակոբին եմ
3 սիրել։ Իսկ Եսաւին ատել եմ,
և նորա սարերը ամայի եմ արել.
և նորա ժառանգութիւնը անա-
պատի չագալներին եմ տուել։
Թէև Եդոմն ասէ. Մենք կոր-
ծանուեցանք, բայց դարձեալ
պիտի շինենք աւերակները. Զօ-
րաց Տէրն էլ այսպէս է ասում.
Նորանք կ'շինեն, բայց ես կ'քան-
ի՛ եմ. և նորանց կ'կոչեն Անօրէ-
ն սահման, և մի ժողո-
ի դէմ Տէրը բարկացած

է յաւիտեան։ Եւ ձեր աչքերը
պիտի տեսնեն, և դուք էլ պի-
տի ասէք. Մեծ է Տէրը Իսրայէլի
սահմանից վեր։

Տղան իր հօրը կ'մեծարէ, և
ծառան՝ իր տիրոջը. եթէ ես էլ
հայր եմ, ո՞ւր է իմ մեծարանքը.
և եթէ տէր եմ ես, ո՞ւր է իմ
երկիւղը, ասում է ձեզ Զօրաց
Տէրը, ով իմ անունը անարգող
քահանաներ, որ ասում էք թէ
Ի՞նչով ենք անարգում քո անու-
նը։ Իմ սեղանի վերայ պիղծ հաց
մատուցանելով. բայց դուք ա-
սում էք. Մենք ի՞նչով ենք քեզ
պղծում. ձեր ասելովը՝ թէ Տի-
րոջ սեղանը անարգուած է։ Ապա
երբոր կոյրը մատուցանում էք
զոհելու, վատ չէ՞. կամ երբոր
մատուցանում էք կաղը կամ հի-
ւանդը, վատ չէ՞. նորան մէկ քո

ծառայելը, և ի՞նչ օգուտ որ
մեծ նորա պահպանութիւնները
պահել ենք, և սուգով վարուե-
15 ցանք Զօրաց Տիրոջ առաջին։ Եւ
հիմա մենք երանում ենք գո-
ռոզներին, և բարեշէն էլ են
անօրէնութիւն անողները, մինչև
անգամ Աստուծուն էլ փորձում
են և պրծնում։

16 Այն ժամանակ խօսեցին Տէրից
վախեցողները իրար հետ, և Տէրը
ականջ դրաւ ու լսեց, և յիշա-
տակի գիրք գրուեցաւ նորա ա-
ռաջին Տէրից վախեցողների հա-
մար, և նորա անունը պատուական
17 համարողների համար։ Եւ նորանք
իմը կ'լինեն, ասում է Զօրաց
Տէրը, այն օրը, որ ես կ'անեմ,
իմ սեպհականութիւնը. և ես նո-
րանց կ'խնայեմ ինչպէս մի մարդ
իր որդիին կ'խնայէ, որ ծառա-
18 յում է իրան։ Եւ դուք ետ կը
դառնաք և կ'տեսնէք արդարի
ու ամբարշտի տարբերութիւնը.
Աստուծոյ ծառայութիւն անողին
և ծառայութիւն չ'անողին տար-
բերութիւնը։

ԳԼ. Դ

1 Որովհետև ահա գալիս է այն
օրը, որ վառուած է թոնիրի պէս,
և բոլոր գոռոզներն ու չարա-
գործները յարդի պէս են լինելու.
և նորանց պէտք է այրէ այն ե-
կող օրը, ասում է Զօրաց Տէրը,
որ նորանց համար արմատ և ոստ
պիտի չ'թողէ։ Բայց ձեզ համար, 2
որ իմ անունից վախենում էք,
պիտի ծագէ արդարութեան ա-
րեգակը, և բժշկութիւն պիտի
լինի նորա թևերի վերայ, և դուք
դուրս պիտի գաք ու ոստնէք գո-
մի պարարտ որթերի պէս։ Եւ 3
պիտի կոխ տաք ամբարիշտներին,
որովհետև նորանք մոխիր պիտի
դառնան ձեր ոտների թաթերի
տակ այն օրը, որ ես կ'անեմ, ա-
սում է Զօրաց Տէրը։

Յիշեցէք իմ ծառայ Մովսէսի 4
օրէնքը, որ նորան պատուիրեցի
Քորեբի վերայ բոլոր Իսրայէլի մա-
սին, կանոններ և իրաւունքներ։
Ահա ես կ'ուղարկեմ ձեզ հա- 5
մար Եղիա մարգարէն, Տիրոջ մեծ
և ահեղ օրը գալուց առաջ. Եւ 6
նա պիտի դարձնէ հայրերի սիրտը
դէպի որդիքը և որդկանց սիրտը
դէպի իրանց հայրերը. որ մի
գուցէ ես գամ և երկիրը զար-
կեմ անէծքով։

ՄԵՐ ՏԷՐ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԸ

ՅՈՅՆ ԲՆԱԳՐԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ա. ՅԱԿՈԲ ՊՈՅԱՃԵԱՆԻ ՏՊԱՐԱՆՈՒՄԸ

ՏՊԱԳՐՈՒԵՑԱԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՒ

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԾԱԽՍՈՎԸ

1905

ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ
ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Աբրահամի որդի Դաւիթի որ-
դի Յիսուս Քրիստոսի ծննդեան
գիրքը։
2 Աբրահամը ծնեց Իսահակին.
Իսահակը ծնեց Յակոբին. Յա-
կոբը ծնեց Յուդային և նորա եղ-
3 բայրներին. Յուդան ծնեց Փա-
րէսին և Զարային Թամարից.
Փարէսը ծնեց Եսրոնին. Եսրոնը
4 ծնեց Արամին. Արամը ծնեց Ա-
մինադաբին. Ամինադաբը ծնեց
Նաասոնին. Նաասոնը ծնեց Սաղ-
5 մոնին. Սաղմոնը ծնեց Բոոսին
Ռախաբից. Բոոսը ծնեց Ովբէդին
Հռութից. Ովբէդը ծնեց Յեսսէ-
6 ին. Յեսսէն ծնեց Դաւիթ թա-
գաւորին։ Դաւիթ թագաւորը
ծնեց Սողոմոնին Ուրիայի կնոջից.
7 Սողոմոնը ծնեց Ռոբովամին. Ռո-
բովամը ծնեց Աբիային. Աբիան
8 ծնեց Ասային. Ասան ծնեց Յովսա-
փատին. Յովսափատը ծնեց Յով-
րամին. Յովրամը ծնեց Ողիային.
9 Ողիան ծնեց Յովաթամին. Յովա-
թամը ծնեց Աքազին. Աքազը
10 ծնեց Եզեկիային. Եզեկիան ծնեց
Մանասէին. Մանասէն ծնեց Ա-
մոնին. Ամոնը ծնեց Յովսիային։
11 Յովսիան ծնեց Յեքոնիային՝ և նո-
րա եղբայրներին, Բաբիլոնի գե-
12 րութեան ժամանակին։ Բաբիլոնի
գերութիւնից յետոյ Յեքոնիան
ծնեց Սաղաթիէլին. Սաղաթիէլը
13 ծնեց Զօրաբաբէլին. Զօրաբաբէլը
ծնեց Աբիուդին. Աբիուդը ծնեց
Եղիակիմին. Եղիակիմը ծնեց Ա-
զովրին. Ազովրը ծնեց Սադովկին. 14
Սադովկը ծնեց Աքինին. Աքինը
ծնեց Եղիուդին. Եղիուդը ծնեց 15
Եղիազարին. Եղիազարը ծնեց
Մատթանին. Մատթանը ծնեց
Յակոբին. Յակոբը ծնեց Յովսէ- 16
փին՝ Մարիամի մարդին, որից
ծնուեցաւ Յիսուսը, որ ասվում
է Քրիստոս։ Արդ՝ բոլոր ազգերը 17
Աբրահամից մինչև Դաւիթ տասն-
ևչորս ազգ են, և Դաւիթից մին-
չև Բաբիլոնի գերութիւնը տասն-
ևչորս ազգ, և Բաբիլոնի գերու-
թիւնից մինչև Քրիստոսը տասն-
ևչորս ազգ։
Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն 18
այսպէս էր. այսինքն նորա մայրը՝
Մարիամը նշանուած լինելով Յով-
սէփին՝ դեռ մինչև նորանց իրար
մօտ գալը Սուրբ Հոգիիցը յղա-
ցած գտնուեցաւ։ Եւ նորա մար- 19
դը Յովսէփը արդար լինելով, և
նորան խայտառակել չուզելով,
խորհեց ծածուկ արձակել նորան։
Եւ մինչդեռ նա մտածում էր 20
այս, ահա Տիրոջ հրեշտակը ե-
րազում երևեցաւ նորան և ա-
սեց. Յովսէփ՝ Դաւիթի որդի, մի
վախենար տէզ մօտ առնել քո կին
Մարիամին, որովհետև նորանում
ծնուածը Սուրբ Հոգիիցն է։ Եւ 21
նա որդի կ'ծնի, և նորա անունը
*Յիսուս դնես. որովհետև նա իր
ժողովրդին կ'փրկէ իրանց մեղ-

*Այսինքն՝ Փրկիչ։

22 քերիջը, եւ այս ամենը եղաւ, որ կատարուի մարգարէի ձեռով
Տէրին ասուածը որ ասում է.
23 Ահա կոյսը կ'յղանայ և որդի կը
ծնի. և նորա անունն Իմմանուէլ
կ'կանչեն. որ թարգմանվում է
24 Աստուած մեզ հետ։ Եւ Յովսէ-
փը քնիցը զարթնելով այնպէս
արաւ, ինչպէս Տէրոջ հրեշտակը
հրամայեց իրան. և առաւ իր
25 կնիկն էր մօտ։ Եւ չ'գիտեր նո-
րան մինչև որ նա իր անդրանիկ
որդին ծնեց, և նորա անունը կո-
չեց Յիսուս։

ԳԼ. Բ

1 Եւ երբոր Յիսուսը ծնուեց Հրէ-
աստանի Բեթլէհէմում Հերով-
դէս թագաւորի օրերումը, ահա
արևելքից մոգեր եկան Երուսա-
2 ղէմ, եւ ասեցին. Ո՞րտեղ է
Հրէաների ծնուած թագաւորը.
որովհետև մենք տեսանք նորա
աստղը արևելքումը, և եկանք
3 նորան երկրպագելու։ Եւ երբ-
որ Հերովդէս թագաւորը լսեց,
շփոթուեցաւ, և բոլոր Երուսա-
4 ղէմը նորա հետ։ Եւ նա բոլոր
քահանայապետներին և ժողովրդի դպիրներին ժողովելով նո-
րանցից հարցրեց, Թէ ո՞րտեղ
5 պիտի ծնուի Քրիստոսը։ Եւ նո-
րանք ասեցին նորան. Հրէաստա-
նի Բեթլէհէմումը. որովհետև
այսպէս է գրուած մարգարէի
6 ձեռովը. Եւ դու, Բեթլէհէմ
Յուդայի երկիր, բնաւ փոքրա-
գոյն չես Յուդայի իշխանների մէջ.
որովհետև քեզանից իշխան պիտի
գուրս գայ, որ իմ Իսրայէլ ժո-
7 ղովուրդին հովուէ։ Այն ժամա-
նակ Հերովդէսը մոգերին թա-
գուն կանչելով, նորանցից ուսու-
գեց այն երևոյթ աստղի ժամա-
8 նակը։ Եւ նորանց Բեթլէհէմ ու-
ղարկելով ասեց. Գնացէք ամէն
իմացէք այն երեխայի համար, և
երբոր գտնէք, ինձ իմացրէք, որ
ես էլ գամ երկրպագեմ նորան։
9 Եւ նորանք՝ երբոր լսեցին թա-
գաւորիցը՝ գնացին. և ահա այն
աստղը, որ տեսան արևելքումը,
նորանց առաջին գնում էր, մին-
չև որ եկաւ կանգնեց այն տեղ-
վերայ, ուր էր երեխան։ Եւ երբ-
որ նորանք տեսան այն աստղը,
մեծ ուրախութիւնով ուրախա-
ցան շատ։ Եւ երբոր տունը մտան,
գտան երեխային իր մայր Մա-
րիամի հետ, և ընկնելով երկրպա-
գեցին նորան, և իրանց գանձերը
բացին՝ ընծայ տուին նորան՝ ոսկի
և կնդրուկ և զմուռս։ Եւ երա-
զում հրաման առան չ'դառ-
նալ Հերովդէսի մօտ. և ուրիշ
ճանապարհով գնացին իրանց եր-
կիրը։
13 Եւ երբոր նորանք այն տեղից
գնացին, ահա Տէրոջ հրեշտակն
երևեցաւ երազում Յովսէփին և
ասեց. Վեր կաց՝ վեր առ երե-
խային և նորա մօրը, և փախիր
Եգիպտոս, և մնա այնտեղ, մինչև
որ ասեմ քեզ. որովհետև Հե-
րովդէսը որոնելու է երեխային որ
կորցնէ նորան։ Եւ նա վերկացաւ
վեր առաւ երեխային և նորա
մօրը գիշերով, և տեղափոխուե-
ցաւ Եգիպտոս, և այնտեղ
էր մինչև Հերովդէսի վախճանը.
Որ կատարուի Տէրոջ ասուածը
մարգարէի ձեռովը, որ ասում է.
Եգիպտոսից կանչեցի իմ որդիին։
16 Այն ժամանակ Հերովդէսը տես-
նելով թէ խաբուեցաւ մոգերիցը,
շատ բարկացաւ. և ուղարկեց կո-
տորեց այն ամէն երեխաներին,
որ Բեթլէհէմումը և նորա չորս
կողմերումն էին երկու տարեկան-
ներին և նորանցից ցած երին, այն
ժամանակին նայելով որ ասուածից
մոգերիցը։ Այն ժամանակ կա-
տարուեցաւ Երեմիա մարգարէի
ձեռով ասուածն, որ ասում է.
18 Ձայն լսուեցաւ Ռամայի մէջ՝ ողբ
և լաց և կոծ. Ռաքելը իր որդ-
կանց վերայ լաց էր լինում, և
չէր կամենում մխիթարուիլ, ո-
րովհետև չ'կան։
19 Եւ երբոր Հերովդէսը մեռաւ,
ահա Տէրոջ հրեշտակն երազում
երևեցաւ Յովսէփին Եգիպտոսում,
20 եւ ասեց. Վեր կաց՝ վեր առ

*Որդի՝ տեսան

երեխային և նորա մօրը և գնա
Իսրայէլի երկիրը. որովհետև ե-
րեխայի կեանքը որոնողները մե-
21 ռել են։ Եւ նա վերկացաւ վեր
առաւ երեխային և նորա մօրը և
22 եկաւ Իսրայէլի երկիրը։ Եւ լսե-
լով թէ Արքեղայոս է թագա-
ւորում Հրէաստանի վերայ իր
հայր Հերովդէսի տեղ, վախե-
ցաւ գնալ այնտեղ, և երազում
պատգամ առնելով գնաց Գա-
23 լիլեայի կողմերը. Եւ եկաւ բնակ-
ուեց այն քաղաքումը որ Նազա-
րէթ է ասվում. որ կատարուի
մարգարէների ձեռով ասուածը
Թէ՝ Նազովրեցի կ'կոչուի։

ԳԼ. Գ

1 Այն օրերումն եկաւ Յովհաննէս
Մկրտիչը, քարոզում էր Հրէաս-
2 տանի անապատումը, եւ ասում.
Ապաշխարեցէք, որ մօտեցել է
3 երկնքի թագաւորութիւնը։ Ո-
րովհետև սա է այն ասուածը
Եսայի մարգարէի ձեռովը, որ ա-
սում է. Անապատումը կանչողի
ձայնը. պատրաստ արէք Տիրոջ
ճանապարհը, ուղիղ արէք նորա
4 շաւիղները։ Եւ ինքը Յովհաննէ-
սը ունէր իր հագուստը ուղտի
բրդից, և կաշեայ գօտի իր մէջ-
քին, և նորա կերակուրն էր մա-
5 րախ և վայրի մեղր։ Այն ժամա-
նակ դուրս էին գնում նորա մօտ
Երուսաղէմը և բոլոր Հրէաստանը
և Յորդանանի բոլոր կողմերը,
6 և մկրտուում էին Յորդանանի
մէջ նորանից՝ իրանց մեղքերը
7 խոստովանելով։ Եւ երբոր նա
տեսաւ որ փարիսեցիներից և Սա-
դուկեցիներից շատերը գալիս էին
իր մկրտութեանը, ասեց նորանց.
Իժի զաւակներ, ո՞վ ցոյց տուեց
ձեզ փախչել այն գալու բար-
8 կութիւնից։ Արդ ապաշխարու-
թեան արժանի պտուղ արէք.
9 Եւ մի կարծէք ասել ձեր մի-
ջումը Մենք հայր ունինք Աբրա-
համին. որովհետև ասում եմ
ձեզ, Թէ Աստուած կարող է
այս քարերից որդիներ յարուցա-
10 նել Աբրահամի համար։ Արդէն
կացինն էլ ծառերի արմատին
դրուած է. արդ ամէն ծառ, որ
բարի պտուղ չէ բերում, կը
կարուի ու կրակի մէջ կ'գցուի։
11 Ես ջրով եմ մկրտում ձեզ ա-
պաշխարութեան համար. բայց
իմ ետևից եկողն ինձանից զօրա-
ւոր է, որի կօշիկները վեր առնե-
լու ես արժանի չեմ. նա ձեզ կը
մկրտէ Սուրբ Հոգով և կրակով։
12 Որ հասելին նորա ձեռին է, և նա
կ'սրբէ իր կալը և իր ցորենը կը
հաւաքէ շտեմարանը, իսկ յարդը
կ'սրբէ անշեջանելի կրակով։
13 Այն ժամանակ Յիսուսը գա-
լիլեայից եկաւ Յորդանան Յով-
հաննէսի մօտ նորանից մկրտուե-
14 լու։ Եւ Յովհաննէսն արգելում
էր նորան և ասում. Ինձ պէտք
է քեզանից մկրտուիլ, և դու
ինձ մօտ ես գալիս։ Եւ Յիսուսը
պատասխան տուաւ և ասեց նո-
րան. Թոյլ տուր հիմա, որովհետև
այսպէս է վայելում մեզ, որ ա-
մէն արդարութիւն կատարենք։
Այն ժամանակը թոյլ տուաւ
նորան։ Եւ մկրտուելուց յետոյ
Յիսուսը շուտով դուրս եկաւ
ջրից. և ահա երկինքը բացուե-
ցաւ նորա համար, և նա տեսաւ
Աստուծոյ Հոգին որ վայր էր իջ-
նում աղաւնի պէս և գալիս նո-
րա վերայ։ Եւ ահա երկնքից
ձայն էր, որ ասում էր. Դա է իմ
սիրելի որդին, որին ես հաւանեցի։

ԳԼ. Դ

1 Այն ժամանակ Յիսուսը Հոգիից
անապատը տարուեցաւ, որ փոր-
2 ձուի ասուածիցը։ Եւ քառա-
սուն օր և քառասուն գիշեր ծոմ
3 պահելուց յետոյ սովեց։ Եւ փոր-
ձիչը նորա մօտ գալով ասեց. Եթէ
Աստուծոյ որդի ես, ասիր որ այս
4 քարերը հաց լինեն, Նա էլ պա-
տասխան տուաւ և ասեց. Գրուած
է՝ Ոչ միայն հացով կ'ապրի մարդ,
այլ ամէն խօսքով, որ գալիս է
Աստուծոյ բերանիցը։
5 Այն ժամանակ սատանան նո-
րան առաւ տարաւ սուրբ քա-
ղաքը, և կանգնեցրեց նորան տա-

6 ճարի աշտարակի վերայ, Եւ ա-
սեց նորան. Եթէ Աստուծոյ որ-
դի ես, քեզ վայր գցիր. որով-
հետև գրուած է թէ Իր հրեշ-
տակներին կ'հրամայէ քեզ հա-
մար, և ձեռների վերայ կ'բար-
ձրացնեն քեզ, որ քո ոտքը քա-
7 րի չ'դիպցնես երբէք։ Յիսուսը
նորան ասեց. Դարձեալ գրուած
է, թէ Մի փորձիր Տիրոջը՝ քո
Աստուծուն։
8 Դարձեալ առաւ տարաւ նո-
րան սատանան մի շատ բարձր
սար՝ և ցոյց տուաւ նորան աշ-
խարհքի բոլոր թագաւորութիւն-
9 ները և նորանց փառքը, Եւ ա-
սեց նորան. Սորանց ամենը քեզ
կ'տամ, եթէ ընկած երկրպագես
10 ինձ։ Այն ժամանակ ասեց նորան
Յիսուսը. *Դէն գնա, սատանայ.
որովհետև գրուած է թէ Տիրոջը՝
քո Աստուծուն երկրպագիր և
11 միայն նորան պաշտիր։ Այն ժա-
մանակ սատանան թողեց նորան,
և ահա հրեշտակներ մօտ եկան
և ծառայում էին նորան։
12 Եւ երբոր Յիսուսը լսեց, թէ
Յովհաննէսը մատնուեցաւ, հե-
13 ռացաւ գնաց Գալիլեա. Եւ Նա-
զարէթը թողած եկաւ բնակուեց
ծովեզրեայ Կափառնայումումը,
Զաբուղոնի և Նեփթաղիմի սահ-
14 մաններումը. Որ կատարուի Ե-
սայի մարգարէի ձեռով ասուա-
15 ծը, որ ասում է, Զաբուղոնի
երկիրը և Նեփթաղիմի երկիրը՝
ծովի ճանապարհը՝ Յորդանանի
այն կողմը, հեթանոսների Գա-
16 լիլեան. Ժողովուրդ, որ խաւարի
մէջ նստած էր, մեծ լոյս տե-
սաւ. և նորանց որ մահի երկ-
րումը և ստուերումը նստած էին,
17 լոյս ծագեց նորանց։ Այն ժա-
մանակից Յիսուսն սկսեց քարո-
զել և ասել. Ապաշխարեցէք,
որովհետև մօտեցել է երկնքի
թագաւորութիւնը։
18 Եւ Յիսուսը Գալիլեացիների ծո-
վի եզրումը ման գալիս՝ տեսաւ
երկու եղբարց՝ Սիմօնին որ Պետ-
րոս է կոչուած, և նորա Անդ-
րէաս եղբօրը, որ ուռկան
գցում ծովը, որովհետև ձկնորս
էին. Եւ ասեց նորանց. Իմ ետևից 19
եկէք, և ես ձեզ մարդկանց որ-
սորդ կ'շինեմ։ Եւ նորանք շու- 20
տով իրանց ուռկանները թողած
նորա ետևից գնացին։ Եւ այն 21
տեղից առաջ գնալով ուրիշ եր-
կու եղբայրներին տեսաւ, Զե-
բեդեան Յակոբոսին և նորա եղ-
բայր Յովհաննէսին՝ նաւումն ի-
րանց հայր Զեբեդէոսի հետ ի-
րանց ուռկանները շինելիս, և նո-
րանց կանչեց։ Նորանք էլ շու- 22
տով նաւը և իրանց հօրը թո-
ղած, նորա ետևից գնացին։
Եւ Յիսուսը ման էր գալիս բո- 23
լոր Գալիլեայումը՝ սովորեցնելով
նորանց ժողովարաններումը և
քարոզելով արքայութեան աւե-
տարանը, և ժողովրդի մէջ եղած
ամեն հիւանդութիւն և ամեն
ցաւ բժշկելով։ Եւ նորա համ- 24
բաւը դուրս եկաւ բոլոր Սիւրիա.
և նորա մօտ բերին ամեն հիւանդ-
ներին որ կերպ կերպ ցաւերով
և տանջանքներով նեղվում էին,
և դիւահարներ և լուսնոտներ և
անդամալոյծներ. և նա նորանց
բժշկեց։ Եւ նորա ետևից շատ 25
ժողովուրդներ էին գնում Գա-
լիլեայիցը և Դեկապոլիսիցը և Ե-
րուսաղէմիցը և Հրէաստանիցը և
Յորդանանի այն կողմիցը։

ԳԼ. Ե

Եւ ժողովուրդները տեսնելով 1
վեր ելաւ սարը. և երբոր ինքը
նստեց, նորա աշակերտներն եկան
նորա մօտ։ Եւ նա իր բերանը բա- 2
նալով նորանց սովորեցնում էր
և ասում։
Երանի հոգով աղքատներին, 3
որ նորանցն է երկնքի թագաւո-
րութիւնը։ Երանի սգաւորներին, 4
որ նորանք կ'մխիթարուին։ Երա- 5
նի հեզերին, որ նորանք կ'ժա-
ռանգեն երկիրը։ Երանի նորանց, 6
որ սոված և ծարաւ են արդա-
րութեան, որ նորանք կ'կշտա-
նան։ Երանի ողորմածներին, որ 7
նորանք ողորմութիւն կ'գտնեն։

*Ոմանք՝ յետս

ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄԸ ՅԻՇՈՒԱԾ ՁԱՓԵՐԻ, ԿՇԻՌՆԵՐԻ ԵՒ ԴՐԱՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. Երկայնութեան չափեր

	Մեթր և 100որդ
Ուղուկ, չորս մատնաչափ,	0.08
Թիզ, 3 ուղուկ,	0.23
Կանգուն, 2 թիզ,	0.46
Գրկաչափ, 4 կանգուն,	1.85
Եզեկիէլի եղէգը, 6 կանգուն,	2.77
Ասպարէզ, 100 գրկաչափ,	184.94
Շաբաթ օրուայ ճանապարհ, 6 ասպարէզ,	1,109.62
Մղոն, 8 ասպարէզ,	1,479.50

2. Հեղանիւթների չափեր*

	Լիտր և 100որդ
Ճաշակ,	0.32
Հիմէն, 12 ճաշակ,	3.83
Մար, 6 Հիմէն,	22.97
Քոռ կամ խօմէր, 10 մար,	229.68

3. Արմտիքների չափեր*

	Լիտր և 100որդ
Կապիճ,	1.27
Օմէր, կամ տասանորդ, արդուին 10 մասը,	2.30
Գրիւ, 6 կապիճ,	7.65
Արդու, 3 գրիւ,	22.97
Քոռ կամ խօմէր, 10 արդու,	229.68

4. Կշիռներ

	Կրամ և 100որդ
Կերատ,	0.71
Սիկղ, 20 կերատ,	14.25
Մնաս, 100 սիկղ,	1,425.51
Տաղանդ, 3000 սիկղ,	42,765.50

5. Եբրայեցիների արծաթ եւ ոսկի դրամների եւ կշիռների արժէքը

	Ֆրանք և 100որդ
ԱՐԾԱԹԻ	
Սիկղ,	2.86
Մնաս,	286.46
Տաղանդ,	8,593.75
ՈՍԿԻԻ	
Սիկղ,	45.83
Մնաս,	4,583.33
Տաղանդ,	137,500.00

6. Հռովմայեցիների դրամների արժէքը

	Ֆրանք և 100որդ
Լումայ,	0.01
Նաքարակիտ, 2 լումայ,	0.02
Դանկ, 4 նաքարակիտ,	0.07
Դահեկան, 10 դանկ,	0.72
Երկդրամեան, 2 դահեկան,	1.43
Սատեր, 4 դահեկան,	2.86
Մնաս, 100 դահեկան,	71.59

*Յիշեալ չափերը, յատկապէս հեղանիւթների և արմտիքների, ոմանք աւելի և ոմանք պակաս են հաշիւ անում։

ուայ տեսաւոս կին հուէիցը մնա
գալով նորա հանգերձի ծայրին
21 դիպաւ ։ Որովհետև իր ի խոս-
տաս ասում էր եթէ միայն նորա հան-
22 գերձին դիպչիմ՝ կ՝փրկուիմ։ Բայց
երբոր Յիսուսը ետ դարձաւ, նո-
րան տեսաւ և ասեց՝ Դուստր, դո-
դուստր, քո հաւատքը քեզ ապ-
բեցրեց. և կինը ազատուեցաւ
նոյն ժամից ։
23 Եւ երբոր Յիսուսն եկաւ իշխա-
նի տունը և տեսաւ փող փղղ-
24 ներըը և չփոթուած ամբոխը, Ն-
րանց ասեց. Դէն գնացէք, որով-
հետև այդ աղջիկը մեռած չէ,
այլ քնած է ։ Եւ նորանք ծաղր
25 էին անում նորան։ Եւ երբոր ամ-
բոխը դուրս արուեցաւ, ինչը ներս
մտաւ նորա ձեռքիցը բռնեց, և
26 աղջիկը վերկացաւ։ Եւ այս համ-
բաւը դուրս եկաւ այն բոլոր եր-
կիրը ։
27 Եւ Յիսուսն այն տեղից անց-
նելիս, երկու կոյր նորա ետևից
գնում էին, աղաղակում և ա-
սում. Ողորմիր մեզ, Որդի Դա-
28 ւիթի ։ Եւ երբոր տունը մտաւ,
կոյրերը նորա մօտ եկան. և Յի-
սուսը նորանց ասեց. Հաւատո՞ւմ
էք թէ կարող եմ այդ անել,
29 Նորան ասացին. Այո՛, Տէր։ Այն
ժամանակ նորանց աչքերին դի-
պաւ և ասեց. Ձեր հաւատքի
30 պէս թող լինի ձեզ։ Եւ նորանց
աչքերը բացուեցան։ Եւ Յիսուսը
նորանց սաստեց և ասեց. Զգո՛ւշ
31 կացէք, oչ ոք չ՝իմանայ։ Իսկ նո-
րանք դուրս գնացին՝ հռչակեցին
նորան այն բոլոր երկրումը։
32 Եւ երբոր նորանք դուրս էին
գնում, ահա մի համր դիւա-
33 հար մարդ բերին նորա մօտ։ Եւ
երբոր դևը դուրս հանուեցաւ,
համրը խօսեց. և ժողովուրդները
զարմացան և ասեցին թէ երբեք
34 Իսրայէլի մէջ այսպիսի բան չ՝ե-
րևեցաւ։ Բայց փարիսեցիները ա-
սում էին թէ Դևերի իշխանին
է հանում դևերը ։
35 Եւ Յիսուսն ամեն քաղաքները
և գիւղերը մեն էր գալիս, նո-
րանց ժողովարաններումը սովո-
բեցնելով և արքայութեան աւե-
տարանը քարոզելով և ժողովրդի
մէջ ամեն ցաւն և ամեն հիւան-
դութիւնը բժշկելով։ Եւ նա ժո- 36
ղովուրդներին տեսնելով, գթաց
նորանց վերայ, որ յոգնած և
ցիրուցան եղած էին, ինչպէս ո-
խարներ որ հովիւ չ՝ունին։ Այն 37
ժամանակ իր աշակերտներին ա-
սեց. Հունձքը շատ է, բայց մշակ-
ները քիչ։ Արդ՝ աղաչեցէք Տնձի 38
Տիրոջը, որ մշակներ հանէ իր
հունձի մէջ։

Գլ. Ժ

Եւ իր տասներկու աշակերտ- 1
ներին իր մօտ կանչեց, և նորանց
իշխանութիւն տուաւ պիղծ հո-
գիների վերայ, որ նորանց հաներ,
և ամեն ցաւ և ամեն հիւանդու-
թիւն բժշկեն ։
Եւ այն տասներկու առաքեալ- 2
ների անուններն այս են. առա-
ջինը Սիմոն՝ Պետրոս կոչուածը,
և նորա եղբայրն Անդրէաս ։ Յա- 3
կոբոս Զեբեդեանը և նորա եղ-
բայրը՝ Յովհաննէս. Փիլիպպոս և
Բարթողոմէոս. Թովմաս և Մատ-
թէոս մաքսաւորը. Յակոբոս Ալփ-
եանը. և Դևբէոսը որ Թադէոս
մականուանուեցաւ, Սիմոն Կա- 4
նանացին՝ և Յուդա Իսկարիով-
տացին, որ մատնեց էլ նորան ։
Այս տասներկուսին ուղար- 5
կեց Յիսուսը, նորանց պատուէր
տուաւ և ասեց. Հեթանոսների
ճանապարհ չ՝գնաք, և Սամարա-
ցիների քաղաք չ՝մտնէք. Բայց 6
աւելի գնացէք Իսրայէլի տան կո-
րած ոչխարների մօտ։ Եւ երբոր 7
կ՝գնաք, քարոզեցէք և ասեցէք,
թէ երկնքի արքայութիւնը մո- 8
տեցել է. Հիւանդներին բժշկե-
ցէք, բորտաներին արբեցէք, մե-
ռելներին յարուցէք, դևերը հա-
նեցէք. Ձրի առել էք, ձրի տուէք։ 9
Վճար չ՝առնէք ոսկի, և ոչ ար-
ծաթ, և ոչ պղինձ գօտ ձեր գո- 10
տիների մէջ. Ոչ ճանապարհի
պարկ, և ոչ երկու հանդերձ, և
ոչ կօշիկներ, և ոչ գաւազան.
որովհետև մշակն իր կերակուրին 11
արժանի է։ Եւ որ քաղաք կամ

դիւղ որ մտնէք, հարցրէք թէ
նորանում ո՛վ է արժանի, և այն-
տեղ կացէք՝ մինչև որ դուրս
12 գնաք։ Եւ երբոր տունը կ՛մտնէք,
13 բարև տուէք նորան։ Եւ եթէ
այն տունն արժանի է, ձեր բա-
րևը նորա վերայ գայ, բայց եթէ
արժանի չէ, ձեր բարևը ետ դառ-
14 նայ դէպի ձեզ։ Եւ ով որ ձեզ
չ՛ընդունի և ոչ էլ ձեր խօսքին
ականջ դնէ, երբոր այն տանի-
ցը կամ այն քաղաքիցը դուրս
գնաք, ձեր ոտների փոշին թօ-
15 թափեցէք։ Ճշմարիտ ասում եմ
ձեզ որ Սոդոմացիների և Գոմո-
բացիների երկրի համար աւելի
հեշտ կ՛լինի դատաստանի օրումը
քան թէ այն քաղաքին։
16 Ահա ես ուղարկում եմ ձեզ
ինչպէս ոչխարներ գայլերի մէջ,
ուստի խորագէտ եղիք ինչպէս
օձերը, և միամիտ՝ ինչպէս աղաւ-
17 նիները։ Եւ զգոյշ կացէք մարդ-
կանցից. որովհետև ձեզ դա-
տաստանի կ՛մատնեն, և իրանց
ժողովարանների մէջ կ՛ծեծեն
18 ձեզ, Եւ կուսակալների և թա-
գաւորների առաջը կ՛տարուիք
իմ պատճառովը, նորանց և հե-
թանոսներին վկայութիւն լինելու
19 համար։ Բայց երբոր մատնեն ձեզ,
հոգս մի անէք՝ թէ ի՞նչպէս կամ
ի՞նչ պիտի խօսիք. որովհետև նոյն
ժամումը կ՛տրուի ձեզ ինչ որ
20 պիտի խօսիք։ Որովհետև չէ թէ
դուք էք խօսողները, բայց ձեր
Հօր Հոգին, որ ձեզանում խօ-
21 սում է։ Եւ եղբայր եղբօրը մահի
կ՛մատնէ, և հայրը որդուն, և
որդիքը վեր կ՛կենան իրանց ծնող-
ների վերայ, և կ՛սպանեն նո-
22 րանց։ Եւ ամենից կ՛ատուիք իմ
անունի համար. բայց ով որ կը
համբերէ մինչև վերջը, նա կ՛ապ-
23 րի։ Եւ երբոր հալածեն ձեզ այս
քաղաքումը, փախէք ուրիշը. ո-
րովհետև ճշմարիտ ասում եմ
ձեզ, դուք չէք վերջացնիլ Իսրա-
յէլի քաղաքները մինչև որ մարդի
24 Որդին կ՛գայ։ Աշակերտը վարդա-
պետիցը բարձր չէ, և ո՛չ ծառան
25 բարձր է իր տէրիցը։ Բաւական է
աշակերտին որ իր վարդապետի
նման լինի, և ծառային՝ իր տիրոջ
նման։ Եթէ տան տիրոջը Բէեղ-
զեբուղ կոչեցին, ապա ո՞րքան
աւելի նորա ընտանիքը։ Ուստի մի 26
վախենաք նորանցից. որովհետև
ոչինչ չ՛կայ ծածուկ որ չ՛յայտ-
նուի, և թագուն բան՝ որ չ՛ի-
մացուի։ Ինչ որ ասում եմ ձեզ 27
խաւարումը, լոյսի մէջ ասեցէք.
և ինչ որ ականջում լսում էք,
կտուրների վերայ քարոզեցէք։
Եւ մի վախենաք նորանցից, որ 28
մարմինն սպանում են և հոգին
չեն կարող սպանել, բայց աւելի
վախեցէք նորանից, որ կարող է
հոգին էլ մարմինն էլ կորցնել գե-
հենի մէջ։ Չէ՞ որ երկու ճնճղուկ 29
մէկ դանկի են ծախվում, և նո-
րանցից մէկը չի ընկնիլ գետինն
առանց ձեր Հօր։ Իսկ ձեր գլխի 30
ամեն մազերն էլ համարուած
են։ Ուրեմն մի վախենաք. դուք 31
շատ ճնճղուկներից աւելի լաւ
էք։ Արդ՝ ամեն ով որ ինձ մարդ- 32
կանց առաջին դաւանէ, ես էլ
նորան կ՛դաւանեմ իմ Հօր առա-
ջին որ երկնքումն է։ Եւ ով որ 33
ինձ ուրանայ մարդկանց առա-
ջին, ես էլ կ՛ուրանամ նորան իմ
Հօր առաջին որ երկնքումն է։
Մի կարծէք թէ ես եկայ երկրիս 34
վերայ խաղաղութիւն գցելու.
չ՛եկայ խաղաղութիւն գցելու,
այլ սուր։ Որովհետև եկայ բա- 35
ժանելու մարդն իր հօր դէմ, և
աղջիկն՝ իր մօր դէմ, և հարսն՝
իր սկեսրի դէմ։ Եւ մարդի թըշ- 36
նամիներն իր ընտանիքը կ՛լինին։
Ով որ հօրը կամ մօրը ինձանից 37
աւելի է սիրում, նա ինձ արժա-
նի չէ. և ով որ որդին կամ աղ-
ջիկն ինձանից աւելի է սիրում,
նա ինձ արժանի չէ։ Եւ ով որ չէ 38
առնում իր խաչն և իմ ետևից
գալիս, նա ինձ արժանի չէ։ Ով 39
որ իրան անձը գտնում է՝ կ՛կոր-
ցնէ նորան. և ով որ իր անձն ինձ
համար կորցրեց՝ նա կ՛գտնէ նո-
րան։ Ով որ ձեզ ընդունում է, 40
ինձ է ընդունում. և ով որ ինձ
ընդունում է, ինձ ուղարկողին է
ընդունում։ Ով որ մարգարէ է 41
ընդունում մարգարէի անունով,

նա մարգարէի վարձք կ՛առնէ. և
ով որ արդար է ընդունում ար-
դարի անունով, արդարի վարձք
42 կ՛առնէ։ Եւ ով որ այս փոքրնե-
րից մէկին միայն մի ամանն ցուրտ
ջուր խմեցնէ աշակերտի անունով,
ճշմարիտ ասում եմ ձեզ, նա
չի կորցնիլ իր վարձքը։

ԳԼ. ԺԱ

1 Եւ եղաւ երբոր Յիսուսն իր
տասնևերկու աշակերտներին
պատուէր տալը վերջացրեց, այն
տեղից գնաց նորանց քաղաքնե-
րումը սովորեցնելու և քարո-
զելու։
2 Եւ Յովհաննէսը բանտումը
Քրիստոսի գործերը լսելով, իր
աշակերտներից երկուսին ուղար-
3 կեց։ Եւ նորան ասեց, Դո՞ւ ես
այն որ գալու էիր, թէ ուրիշի
4 սպասենք։ Եւ Յիսուսը պատաս-
խան տուաւ և նորանց ասեց.
Գնացէք Յովհաննէսին պատմե-
ցէք ինչ որ լսում էք և տեսնում
5 էք։ Կոյրերը տեսնում են, և
կաղերը գնում են, բորոտները
սրբվում են, և խուլերը լսում
են, մեռելները յարութիւն են
առնում, և աղքատներին աւե-
6 տարան է քարոզվում. Եւ երա-
նելի է նա, որ ինձ վերայ չի դայ-
թակղուիլ։
7 Բայց երբոր նորանք գնացին,
Յիսուսն սկսեց ժողովուրդներին
ասել Յովհաննէսի համար. Ի՞նչ
տեսնելու դուրս գնացիք անա-
պատը, մի եղէ՞գ քամուց շար-
8 ժուած։ Ապա ի՞նչ տեսնելու
դուրս գնացիք. մի մա՞րդ փա-
փուկ շորերով հագուած. ահա
փափուկ հագնողները թագաւոր-
9 ների տներումն են։ Բայց ի՞նչ
տեսնելու դուրս գնացիք, մի
մարգարէ՞. այս, ասում եմ ձեզ,
10 մարգարէից էլ աւելին։ Որովհետև
սա այն է՝ որի համար դրուած
է. Ահա ես իմ հրեշտակը ու-
ղարկում եմ քո երեսի առա-
ջին, որ քո ճանապարհը քո ա-
11 ռաջին պատրաստէ։ Ճշմարիտ ա-
սում եմ ձեզ կանանց ծնած-
ների մէջ չէ վեր կացել Յովհան-
նէս Մկրտչից մի մեծը, բայց եր-
կընքի արքայութեան միջի փոքրը
նորանից մեծ է։ Բայց Յովհաննէս 12
Մկրտչի օրերիցը մինչև հիմա եր-
կընքի արքայութիւնն ուժով է
առնվում, և ուժովները յափշ-
տակում են նորան։ Որովհետև 13
բոլոր մարգարէները և օրէնքը
մինչև Յովհաննէսը մարգարէա-
ցան։ Եւ եթէ կամենում էք ըն- 14
դունիլ՝ նա Եղիան է, որ գալու
էր։ Ով որ լսելու ականջ ունի՝ 15
թող լսէ։ Բայց ո՞ւմ նմանեցնեմ 16
այս ազգը, այն երեխաների նման
է, որ փողոցներումը նստած ի-
րանց ընկերներին կանչում են,
Եւ ասում. Մենք փող փչեցինք 17
ձեզ համար, և դուք պար չ՛ե-
կաք. մենք ողբացինք ձեզ հա-
մար, և դուք կոծ չ՛արիք։ Որով- 18
հետև Յովհաննէսն եկաւ, ոչ ու-
տում էր և ոչ խմում էր. և ա-
սում են, Դև կայ նորանում.
Մարդի Որդին եկաւ, ուտում է 19
և խմում է, և ասում են. Ահա
ուտող և գինի խմող մարդ, մաք-
սաւորների և մեղաւորների բա-
րեկամ, և իմաստութիւնն ար-
դարացաւ իր որդիներիցը։
Այն ժամանակ նա սկսեց նա- 20
խատել այն քաղաքներին, որոն-
ցում եղան նորա հրաշքների շա-
տերը, որ չ՛ապաշխարեցին։ Վայ 21
քեզ, Քորազին. վայ քեզ, Բեթ-
սայիդա. որովհետև եթէ Տիւրո-
սի և Սիդոնի մէջ եղած լինէին
այն հրաշքները, որ ձեր մէջ ե-
ղան, շատոնց քրձով և մոխրով
ապաշխարել էին։ Բայց ասում 22
եմ ձեզ, Տիւրոսին և Սիդոնին
աւելի հեշտ կ՛լինի դատաստանի
օրումը քան թէ ձեզ։ Եւ դու, 23
Կափառնայում, որ մինչև երկին-
քը բարձրացած ես, մինչև դժոխ-
քը կ՛ցածանաս. որովհետև եթէ
Սոդոմի մէջ եղած լինէին այն
հրաշքները որ քեզանում եղան,
մինչև այսօր դեռ կ՛մնային։ Բայց 24
ասում եմ ձեզ, որ Սոդոմացի-
ների երկրի համար աւելի հեշտ
կ՛լինի դատաստանի օրումը, քան
թէ քեզ։

25 Այն ժամանակը Յիսուսը պա-
տասխան տուաւ և ասեց. Գոհա-
նում եմ քեզանից, ով Հայր՝
երկնքի և երկրի Տէր, որ իմաս-
տուններիցն և գիտուններիցն այս
բաները ծածկեցիր և երեխանե-
26 րին յայտնեցիր։ Այո, ով Հայր.
որովհետև այսպէս հաճոյ եղաւ
27 քո առաջին։ Ամեն բան ինձ
տրուեցաւ իմ Հօրիցը. և ոչ ով
չէ ճանաչում Որդիին՝ բայց մի-
այն Հայրը. և ոչ ով չէ ճանա-
չում Հօրը՝ բայց միայն Որդին.
և ում որ Որդին կամենայ յայտ-
28 նել։ Ինձ մօտ եկէք, ամեն վաս-
տակածներ և բեռնաւորուած-
ներ, և ես հանգիստ կ'տամ ձեզ։
29 Ձեզ վերայ առէք իմ լուծը և
ինձանից սովորեցէք. որովհետև
ես հեզ եմ և սրտով խոնարհ, և
ձեր անձերի համար հանգստու-
30 թիւն կ'գտնէք։ Որովհետև իմ
լուծը քաղցր է, և իմ բեռը՝
թեթև։

ԳԼ. ԺԲ

1 Այն ժամանակ Յիսուսը շաբաթ
օրը գնաց արտերի միջովը, և նո-
րա աշակերտները սովեցին, և
սկսեցին հասկ պոկել և ուտել։
2 Եւ երբոր Փարիսեցիները տեսան,
նորան ասեցին. Ահա քո աշա-
կերտներն անում են ինչ որ ար-
3 ժան չէ շաբաթ օրն անել։ Նա
էլ ասեց նորանց. Դուք չէ՞ք
կարդացել, թէ ինչ արաւ Դա-
ւիթը, երբոր ինքը սովեց և նորա
4 հետ լինողներն էլ. Ինչպէս Ա-
ստուծոյ տունը մտաւ և առաջա-
ւորութեան հացը կերաւ, որ
օրինաւոր չէր նորան ուտել, և
ոչ էլ նորա հետ լինողներին,
5 բայց միայն քահանաներին։ Կամ
չէ՞ք կարդացել օրէնքումը, որ
քահանաները շաբաթ օրերումն
տաճարի մէջ շաբաթը պղծում
6 են, և անմեղ են։ Բայց ես ա-
սում եմ ձեզ՝ որ տաճարիցն էլ
7 մեծն է այստեղ։ Բայց եթէ գի-
տէիք՝ ի՞նչ է «Ողորմութիւն եմ
ուզում և ոչ թէ զոհ.» դուք
չէիք դատապարտիլ անմեղներին։
Որովհետև մարդի Որդին շաբա- 8
թի էլ տէրն է։
Եւ Յիսուսը այն տեղից գնաց՝ 9
եկաւ նորանց ժողովարանը։ Եւ 10
ահա մի մարդ կար՝ ձեռքը չորա-
ցած. նորան հարցրին և ասեցին
թէ Շաբաթ օրը արժա՞ն է բժշ-
կութիւն անել, որ նորանից չա-
րախօսեն։ Եւ նա ասեց նորանց. 11
Ո՞վ կ'լինի ձեզանից այն մարդը,
որ մէկ ոչխար ունենայ, և եթէ
նա շաբաթ օրը ընկնի փոսի մէջ,
մի՞թէ չի բռնիլ նորան և վեր
հանիլ։ Ապա ո՞րքան առաւել է 12
մարդը ոչխարից. ապա ուրեմն
արժան է շաբաթ օրը բարիք
գործել։ Այն ժամանակ ասեց 13
այն մարդին. Ձեռքդ մեկնիր, նա
էլ մեկնեց, և նա ողջ եղաւ ինչ-
պէս միւսը։ Բայց Փարիսեցիները 14
դուրս գնացին և նորա դէմ խոր-
հուրդ արին, թէ ինչպէս կորցնեն
նորան։
Եւ Յիսուսն իմանալով՝ հեռա- 15
ցաւ այն տեղից, և շատ ժողո-
վուրդներ գնացին նորա ետևից.
և նա նորանց ամենին բժշկեց։
Եւ նորանց սաստեց՝ որ նորան 16
յայտնի չ'անեն. Որ կատարուի 17
Եսայի մարգարէի ձեռով ասուա-
ծը որ ասում է. Ահա իմ ծա- 18
ռան, որին ես ընտրեցի, և իմ
սիրելին՝ որին իմ անձը հաւանել
է. իմ Հոգին նորա վերայ կ'դնեմ,
և նա հեթանոսներին իրաւունք
կ'պատմէ։ Նա ոչ կ'հակառակէ, 19
և ոչ կ'աղաղակէ, և ոչ էլ հրա-
պարակների մէջ մէկը նորա ձայնը
կ'լսէ։ Ջախջախուած եղէգը չի 20
փշրիլ, և հանգչող պատրոյգը
չի հանգցնիլ մինչև որ դատաս-
տանը յաղթութեան հանէ։ Եւ 21
հեթանոսները յոյս կ'դնեն նորա
անունին։
Այն ժամանակը մի կոյր և համր 22
դիւահար բերուեցաւ նորա մօտ,
և նա նորան բժշկեց. այնպէս որ
կոյրը և համրը խօսեց էլ տեսաւ
էլ։ Եւ բոլոր ժողովուրդները 23
զարմացան և ասում էին. Մի՞թէ
սա է Դաւիթի որդին. Բայց Փա- 24
րիսեցիները լսելով ասեցին. Դա
դևերն սարիշ բանով չէ հանում,

բայց միայն դևերի իշխան Բէեղ-
25 զեբուղի ձեռովը։ Եւ Յիսուսը
նորանց խորհուրդներն իմանալով,
ասեց նորանց. Ամեն թագաւո-
րութիւն որ իր դէմ բաժանուած
է՝ կ'աւերուի, և ամեն քաղաք
կամ տուն որ իր դէմ բաժանուած
26 է՝ չի մնալ։ Եւ թէ որ սատանան
սատանային հանում է, իր դէմ
բաժանուեցաւ. էլ ի՞նչպէս նո-
րա թագաւորութիւնը կ'կենայ։
27 Եւ եթէ ես Բէեղզեբուղով եմ
հանում դևերը, ձեր որդիքն ի՞ն-
չով են հանում. սորա համար
նորանք կ'լինին ձեր դատաւոր-
28 ները։ Բայց եթէ ես Աստուծոյ
Հոգիովն եմ հանում դևերը, ու-
րեմն Աստուծոյ արքայութիւնը
29 ձեզ վերայ հասել է։ Կամ ի՞նչ-
պէս մէկը կարող է զօրաւոր
մարդի տունը մտնել՝ և նորա
կարասիները յափշտակել. եթէ
առաջ չ'կապէ այն զօրաւորին, և
յետոյ նորա տունը կ'յափշտակէ։
30 Ով որ ինձ հետ չէ, ինձ հակա-
ռակ է. և ով որ ինձ հետ չէ ժո-
31 ղովում՝ ցրվում է։ Սորա համար
ասում եմ ձեզ. Ամեն մեղք և
հայհոյանք կ'թողուի մարդկանց,
բայց Հոգիին դէմ հայհոյանքը չի
32 թողուիլ մարդկանց։ Եւ ով որ
մարդի Որդիին դէմ բան ասէ՝ կը
թողուի նորան. բայց ով որ Սուրբ
Հոգիին դէմ ասէ, նորան չի թող-
ուիլ ոչ այս աշխարհքումը և ոչ
33 գալու աշխարհքումը։ Կամ ծառը
բարի արէք՝ և նորա պտուղն էլ
բարի, կամ ծառը չար արէք՝ և
նորա պտուղն էլ չար. որովհետև
34 ծառը պտղիցը կ'ճանաչուի։ Ի-
ժերի զաւակներ, դուք ի՞նչպէս
կարող էք բարի խօսել՝ որ չար
էք. որովհետև սրտի աւելացածի-
35 ցը կ'խօսի բերանը։ Բարի մարդն
իր սրտի բարի գանձիցը բարիք-
ները կ'հանէ, և չար մարդը չար
գանձիցը չար բաներ կ'հանէ։
36 Բայց ասում եմ ձեզ, թէ ամեն
դատարկ խօսքի համար, որ մար-
37 դիկ խօսեն՝ դատաստանի օրը հա-
մար պիտի տան։ Որովհետև քո
խօսքիցը կ'արդարանաս, և քո
խօսքիցը կ'դատապարտուիս։
Այն ժամանակ գպիրներիցը և 38
Փարիսեցիներիցը ոմանք պատաս-
խան տուին և ասեցին. Վարդա-
պետ, ուզում ենք քեզանից մի
նշան տեսնել։ Նա էլ պատաս- 39
խան տուաւ և նորանց ասեց.
Չար և շնացող ազգը նշան է ու-
զում, և նշան չի տրուիլ նորան,
բայց միայն Յովնան մարգարէի
նշանը։ Որովհետև ինչպէս Յով- 40
նանը երեք օր և երեք գիշեր կէտի
փորումն էր, այնպէս մարդի Որ-
դին երեք օր և երեք գիշեր երկ-
րի սրտումը կ'լինի։ Նինուէացի 41
մարդիկը վեր կ'կենան դատաս-
տանումը այս ազգի հետ, և կը
դատապարտեն սորան. որ նորանք
Յովնանի քարոզութիւնովն ա-
պաշխարեցին. և ահա Յովնանիցը
մեծն է այստեղ։ Հարաւի թա- 42
գուհին վեր կ'կենայ դատաստա-
նումը այս ազգի հետ, և կ'դա-
տապարտէ սորան. որ երկրի ծայ-
րերից եկաւ Սողոմոնի իմաստու-
թիւնը լսելու. և ահա Սողոմո-
նիցն էլ մեծն է այստեղ։
Եւ երբոր պիղծ ոգին դուրս է 43
գալիս մարդից, անջուր տեղե-
րում ման է գալիս հանգիստ
խնդրելով, և չէ գտնում։ Այն 44
ժամանակ ասում է, Ետ դառ-
նամ իմ տունը՝ որտեղից դուրս
եկայ, և գալիս է նորան գտնում
է պարապ, սրբուած և յարդար-
ուած։ Այն ժամանակ գնում է 45
իրանից էլ աւելի չար եօթն ու-
րիշ ոգիներ է առնում իր հետ,
և մտնում բնակվում է այնտեղ.
և այն մարդի յետինն աւելի չար
է լինում քան թէ առաջինը.
այսպէս կ'լինի և այս չար ազգին։
Եւ նա տակաւին ժողովուրդ- 46
ների հետ խօսելիս, ահա նորա
մայրը և նորա եղբայրները դուրսը
կանգնած՝ ուզում էին նորա հետ
խօսել։ Եւ մէկն ասեց նորան. 47
Ահա մայրդ և եղբարքդ դուր-
սը կանգնած՝ ուզում են քեզ
հետ խօսել։ Նա էլ պատասխան 48
տուաւ իրան ասողին և ասեց.
Ո՞վ է իմ մայրը, և ո՞վ են իմ
եղբայրները։ Եւ իր ձեռքը դէպի 49
իր աշակերտները մեկնելով ասեց.

Ահա իմ մայրը և իմ եղբայրնե-
50 րը։ Որովհետև ով որ իմ Հօր
կամքը կատարէ որ երկնքումն է,
նա է իմ եղբայրը, քոյրը և մայրը։

ԳԼ. ԺԳ

1 Այն օրը Յիսուս տանից դուրս
գալով ծովի եզերքումը նստեց։
2 Եւ շատ ժողովուրդներ նորա մօտ
ժողովուեցան, մինչև որ նա նաւը
մտաւ նստեց. և բոլոր ժողո-
վուրդը ծովեզերին կանգնել էր։
3 Եւ նորանց հետ շատ բաներ խո-
սեց առակներով՝ ասելով,
4 Ահա սերմ ցանողը դուրս գնաց
սերմ ցանելու. և նա սերմելիս՝
մի քանիսը ճանապարհի մօտ ըն-
կաւ, և երկնքի թռչուններն ե-
5 կան և կերան նորանց։ Եւ ուրիշ-
ներն ընկան քարքարուտ տեղ,
ուր շատ հող չ'կար, և շուտով
բուսան՝ խոր հող չ'ունենալու
6 պատճառաւ։ Բայց երբոր արե-
գակը ծագեց, տապացաւ. և ո-
րովհետև արմատ չ'ունէին՝ չորա-
7 ցան։ Եւ ուրիշներն ընկան փշերի
մէջ, և փշերը դուրս եկան և
8 խեղդեցին նորանց։ Եւ ուրիշներն
ընկան բարի երկրի վերայ, և
պտուղ էին տալիս, որը հարիւր,
և որը վաթսուն, և որը երեսուն։
9 Ով որ լսելու ականջ ունի՝ թող
լսէ։
10 Եւ աշակերտները մօտ գալով
ասեցին նորան. Ինչու առակնե-
11 րով ես խօսում նորանց հետ։ Նա
էլ պատասխան տուաւ և ասեց
նորանց. Որովհետև ձեզ տրուած
է երկնքի արքայութեան խոր-
հուրդները գիտենալ, բայց նո-
12 րանց չէ տրուած։ Որովհետև ով
որ ունի՝ նորան կ'տրուի և կ'ա-
ւելցնայ. և ով որ չ'ունի, ունե-
ցածն էլ կ'առնուի նորանից։
13 Նորա համար եմ առակներով
խօսում նորանց հետ, որ տես-
նելով չեն տեսնում, և լսելով
14 չեն լսում, և չեն իմանում։ Եւ
նորանց վերայ կատարւում է Ե-
սայիի մարգարէութիւնն, որ ա-
սում է. Լսելով կ'լսէք, և չէք
իմանալ, և տեսնելով կ'տեսնէք,
և չէք տեսնիլ։ Որովհետև թան-
15 ձրացաւ այս ժողովրդի սիրտը, և
էրանց ականջներովը ծանր լսեցին,
և իրանց աչքերը խփեցին, մի
գուցե աչքերով տեսնեն և ա-
կանջներով լսեն և սրտով իմա-
նան, և ետ դառնան, և ես նո-
16 րանց բժշկեմ։ Բայց երանելի են
ձեր աչքերը՝ որ տեսնում են, և
ձեր ականջները՝ որ լսում են։
17 Որովհետև ճշմարիտ ասում եմ
ձեզ, որ շատ մարգարէներ և ար-
դարներ ցանկացան տեսնել ինչ
որ տեսնում էք և չ'տեսան, և
լսել ինչ որ լսում էք և չ'լսեցին։
18 Դուք հիմա լսեցէք սերմ ցա-
19 նողի առակը։ Այն ամենից՝ որ
արքայութեան խօսքը լսում է և
չէ իմանում, գալիս է չարը և
յափշտակում նորա սրտի մէջ
սերմածը. սա է ճանապարհի մօտ
20 սերմածը։ Եւ քարքարուտ տեղը
սերմածը նա է, որ խօսքը լսելիս
շուտով ուրախութիւնով ընդու-
21 նում է նորան։ Բայց արմատ չ'ու-
նի իր մէջ, այլ ժամանակաւոր
է. և երբոր նեղութիւն կամ հա-
լածանք են լինում այն խօսքի
համար, շուտով գայթակղում է։
22 Եւ փշերի մէջ սերմածը նա է,
որ խօսքը լսում է, և այս աշ-
խարհքի հոգսերը, և հարստու-
թեան խաբերայութիւնը խեղ-
դում են այն խօսքը, և անպտուղ
23 է լինում։ Բայց բարի երկրումը
սերմածը նա է, որ խօսքը լսում
է և իմանում. որ և պտուղ է
տալիս, որը հարիւր և որը վաթ-
սուն և որը երեսուն։
24 Մի ուրիշ առակ նորանց ա-
ռաջին դրաւ և ասեց. Երկնքի
արքայութիւնը նմանուեցաւ մի
մարդի, որ իր արտումը բարի
25 սերմ ցանեց։ Եւ մարդիկը քնե-
լիս, նորա թշնամին եկաւ և ցորե-
նի մէջ որոմներ ցանեց և գնաց։
26 Եւ երբոր խոտը բուսաւ և պտուղ
տուաւ, այն ժամանակ որոմներն
27 էլ երևեցան։ Եւ տան տիրոջ
ծառաները մօտ գալով ասեցին
նորան. Տէ՛ր, միթե դու քո ար-
տումը բարի սերմ չ'սերմեցիր,
ապա ինչ տեղից են որոմները,

28 Նա էլ ասեց նորանց. Թշնամի
մարդ է արել այդ։ Ծառաներն
էլ ասեցին նորան. Հիմա կամե-
նա՞ս ես որ գնանք քաղենք նո-
29 րանց դուրս հանենք։ Նա էլ ա-
սեց. Ոչ. մի գուցե որոմները քա-
ղելիս՝ ցորենն էլ նորանց հետ
30 պոկէք։ Թող տուէք որ երկուսը
միասին մեծանան մինչև հունձքը,
և հնձի ժամանակին հնձողներին
կ'ասեմ. Առաջ որոմները քաղե-
ցէք և նորանց խուրձ խուրձ կա-
պեցէք այրելու, իսկ ցորենը ժո-
ղովեցէք իմ ամբարի մէջ։
31 Մի ուրիշ առակ դրաւ նորանց
առաջին և ասեց. Երկնքի արքա-
յութիւնը նման է մանանեխի հա-
տի, որ մի մարդ առաւ իր արտի
32 մէջ սերմեց. Որ ամեն սերմունք-
ից փոքրն է, բայց երբոր կ'աճի,
բոլոր բանջարներից մեծ է, և
ծառ է լինում, այնպէս որ երկնքի
թռչունները գալիս են նորա ճղե-
րումը հանգիստ առնում։
33 Մի ուրիշ առակ խօսեց նորանց.
Երկնքի արքայութիւնը նման է
խմորի՝ որ մի կնիկ առաւ և ե-
րեք չափ ալիւրի մէջ թաղցրեց
մինչև որ բոլորը խմորուեցաւ։
34 Այս բոլորը Յիսուս առակներ-
ով խօսեց ժողովուրդների հետ,
և առանց առակի չէր խօսում
35 նորանց հետ, Որ մարգարէի ձե-
ռով ասուածը կատարուի՝ որ ա-
սում է, Առակներով կ'բանամ
իմ բերանը, և դուրս կ'ըղեմ
աշխարհքի սկզբից ծածկուած-
ները։
36 Այն ժամանակ Յիսուս ժո-
ղովուրդներին թողնելով եկաւ
տունը, և նորա աշակերտները նո-
րա մօտ եկան և ասեցին. Մեկնիր
37 մեզ արտի որոմների առակը։ Նա
էլ պատասխան տուաւ և ասեց
նորանց, Բարի սերմը ցանողը մարդի Որդին է։
38 Եւ արտը աշխարհքս է, և բարի սերմը նորանք են, որ
արքայութեան որդիքն են. և ո-
րոմները չարի որդիքն են։ Եւ
39 թշնամին, որ նորանց սերմեց,
սատանան է. և հունձքն աշ-
խարհքի վերջն է, և հնձողները
40 հրեշտակներն են։ Արդ՝ ինչպես
որ որոմները հաւաքվում են և
կրակով այրվում, այնպես կ'լինի
աշխարհքիս վերջումը։ Մարդի
41 Որդին կ'ուղարկէ իր հրեշտակ-
ներին, և նորա արքայութիւնից
կ'հաւաքեն բոլոր գայթակղու-
թիւնները և անօրէնութիւն գոր-
ծողներին։ Եւ կ'գցեն նորանց
42 կրակի փուռն մէջը. այնտեղ կը
լինի լացը և ատամների կրճտելը։
43 Այն ժամանակ արդարները կը
ծագեն ինչպես արեգակը իրանց
Հօր արքայութեան մէջ։ Ով որ
լսելու ականջ ունի՝ թող լսէ։
44 Դարձեալ նման է երկնքի ար-
քայութիւնը մի գտած մէջ թագ-
ցրուած գանձի, որ նորան մի
մարդ գտնելով թագցրեց, և ու-
րախութիւնից գնում ամեն ինչ
որ ունի ծախում է, և արած
առնում։
45 Դարձեալ նման է երկնքի ար-
քայութիւնը մի վաճառական
մարդի, որ գեղեցիկ մարգարիտ-
46 ներ է որոնում. Որ մի թանկա-
գին մարգարիտ գտնելով, գնաց
ամեն ինչ որ ունէր՝ ծախեց, և
առաւ նորան։
47 Դարձեալ նման է երկնքի ար-
քայութիւնը ծովը գցուած ուռ-
կանի, որ ամեն տեսակից ժողո-
48 վում է. Որ երբոր լցուեցաւ՝ ա-
մբոխը հանեցին, ու նստեցին լա-
ւերը ժողովեցին ամաններում,
և անպէտքները դուրս գցեցին։
49 Այսպէս կ'լինի աշխարհքի վեր-
ջումը. հրեշտակները դուրս կը
գան և կ'ջոկեն չարերին արդա-
50 րների միջից. Եւ կ'գցեն նորանց
կրակի փուռն մէջ. այնտեղ կը
լինի լացը և ատամների կրճտելը։
51 Յիսուս ասեց նորանց. Իմացաք
այդ բոլորը։ Ասեցին նորան. Այո,
52 Տէր, Նա էլ ասեց նորանց. Սորա
համար ամեն գիպր, որ երկնքի
արքայութեանն է աշակերտել,
նման է տանտէր մարդի, որ հա-
նում է իր գանձից նոր և հին
բաներ։
53 Եւ եղաւ՝ երբոր Յիսուս այս
առակները վերջացրեց, գնաց այն-
54 տեղից։ Եւ գալով իր գաւառը,
նորանց ժողովարանումը սովորե-

ցնում էր նորանց, այնպէս որ
զարմանում էին նորանք և ա-
սում, Ո՞րտեղից է սորան այս ի-
մաստութիւնը և զօրութիւնն-
55 ը։ Չէ՞ որ սա հիւսան որդին է.
չէ՞ որ սորա մայրը Մարիամ է
կոչվում. և եղբայրները՝ Յակո-
բոս և Յովսէս և Սիմոն և Յու-
56 դա. Եւ չէ՞ որ սորա ամեն քոյ-
րերը մեզ մօտ են, ապա ո՞րտե-
ղից է սորան այս ամեն բաները։
57 Եւ գայթակղում էին նորա վե-
րայ։ Յիսուսն էլ նորանց ասեց.
Մի մարգարէ անարգուած չէ,
բայց միայն իր դաւառի և իր
58 տան մէջ։ Եւ այնտեղ շատ զօ-
րութիւններ չ՛արաւ նորանց ան-
հաւատութեան պատճառովը։

ԳԼ. ԺԴ

1 Այն ժամանակը Հերովդէս չոր-
րորդապետը Յիսուսի համբաւը
2 լսեց. Եւ ասեց իր ծառաներին.
Նա Յովհաննէս Մկրտիչն է. նա
մեռելների միջից յարութիւն է
առել, և նորա համար զօրու-
թիւններ են գործվում նորանով։
3 Որովհետև Հերովդէսը բռնեց
Յովհաննէսին, կապեց նորան և
բանտի մէջ դրաւ՝ իր եղբայր՝ Փի-
լիպպոսի կնոջ Հերովդիայի հա-
4 մար։ Որովհետև Յովհաննէսը նո-
րան ասում էր, Բէ Արժան չէ
քեզ, որ դու դորան ունենաս։
5 Եւ ուզում էր նորան սպանել,
Բայց ժողովրդիցը վախենում էր,
որովհետև նորան ընդունում էին
6 ինչպէս մարգարէ։ Եւ երբոր Հե-
րովդէսի ծննդեան օրն եղաւ,
Հերովդիայի աղջիկը հանդէսի մէջ
պարեց՝ և հաճոյ թուեցաւ Հե-
7 րովդէսին։ Ապա նա էլ երդու-
մով խոստացաւ նորան տալ ինչ
8 որ ուզէ։ Նա էլ առաջ իր մօ-
րից խրատ առնելով՝ ասեց. Տուր
այստեղ սկուտեղի վերայ Յով-
9 հաննէս Մկրտչի գլուխը։ Եւ թա-
գաւորը տրտմեցաւ, բայց իր եր-
դումների և իր հետ նստողների
10 համար հրամայեց որ տրուի։ Եւ
ուղարկեց բանտումը գլխատեց
11 Յովհաննէսին։ Եւ նորա գլուխը
բերին սկուտեղի վերայ և տուին
աղջկանը. և նա տարաւ իր մօրը։
Եւ նորա աշակերտներն եկան՝ 12
մարմինը վեր առան և թաղեցին
նորան. և եկան պատմեցին Յի-
սուսին։
Եւ Յիսուսը լսելով այնտեղից 13
նաւով գնաց առանձին մի անա-
պատ տեղ։ Եւ ժողովուրդներն
երբոր լսեցին, այն քաղաքներից
ոտով գնացին նորա ետևից։
Եւ երբոր Յիսուսը դուրս ե- 14
կաւ, շատ ժողովուրդ տեսաւ և
գթաց նորանց վերայ և բժշկեց
նորանց հիւանդներին։ Եւ երբոր 15
իրիկուն եղաւ, աշակերտները նո-
րա մօտ եկան և ասեցին. Տեղս
անապատ է, և ժամանակն արդ-
էն անցել է. ժողովուրդներն
արձակիր որ գնան գիւղերն ի-
րանց համար կերակուր առնեն։
Յիսուսն էլ ասեց նորանց. Պէտք 16
չէ որ գնան, դուք տուէք նորանց
ուտել։ Նորանք էլ ասեցին նո- 17
րան. Մենք այստեղ բան չ՛ունինք,
բայց միայն հինգ հաց և երկու
ձուկ։ Նա էլ ասեց. Նորանք այս- 18
տեղ բերէք ինձ մօտ։ Եւ հրա- 19
մայեց որ ժողովուրդները խոտերի
վերայ նստեն. և հինգ հացը և
երկու ձուկն առաւ՝ դէպի եր-
կինքը նայեց՝ օրհնեց, և կտրեց,
հացերը տուաւ աշակերտներին,
և աշակերտները ժողովուրդնե-
րին։ Եւ ամենքը կերան և կշտա- 20
ցան, և կտորների աւելացածը
տասներկու քթոց լիքը վեր ա-
ռան։ Եւ ուտողները հինգ հա- 21
զարի չափ մարդիկ էին բացի կա-
նանցից և երեխաներից։
Եւ Յիսուսը շուտով իր աշա- 22
կերտներին ստիպեց, որ նաւը
մտնեն և իրանից առաջ անցնեն
այն կողմը, մինչև որ ինքն այն
ժողովուրդներին արձակէ։ Եւ 23
երբոր ժողովուրդներին արձակեց,
վեր ելաւ սարը, առանձին ա-
ղօթք անելու. և երբոր իրիկուն
եղաւ, միայն ինքն էր այնտեղ։
Բայց նաւն արդէն ծովի մէջ տեղն 24
էր և ալէկոծվում էր, որովհետև
քամին ներհակ էր։ Եւ գիշերի 25
չորրորդ պահին Յիսուսը ծովի

վերայ գնալով նորանց մօտ եկաւ։
26 Եւ աշակերտներն երբոր տեսան
նորան ծովի վերայ գնալիս, շփոթ-
ուեցան և ասեցին, թէ Աչքի ե-
րևոյթ բան է, և վախից աղաղա-
27 կեցին։ Եւ Յիսուսը շուտով խօ-
սեց նորանց հետ և ասեց. Քաջ
28 եղէք, ես եմ՝ մի վախենաք։ Եւ
Պետրոսը պատասխան տուաւ նո-
րան և ասեց, Տէ՛ր, եթէ դու ես,
հրամայիր ինձ, որ ջրերի վերայով
29 քեզ մօտ գամ։ Նա էլ ասեց,
Եկ։ Եւ Պետրոսը նաւիցը իջնե-
լով ջրերի վերայովը գնաց, որ
30 դայ Յիսուսի մօտ։ Եւ տեսնելով
որ քամին սաստիկ է, վախեցաւ,
և երբոր սկսեց ընկղմուիլ, աղա-
ղակեց և ասեց, Տէ՛ր, փրկիր ինձ։
31 Եւ շուտով Յիսուսը իր ձեռքը
մեկնեց՝ նորան բռնեց և ասեց նո-
րան. Թերահաւատ, ի՞նչու երկ-
32 մտեցիր։ Եւ երբոր նաւը մտան,
33 քամին հանդարտեց։ Եւ նաւի
մէջ լինողները մօտ գալով նորան
երկրպագեցին և ասեցին. Ճշմա-
րիտ՝ դու Աստուծոյ Որդին ես։
34 Եւ միւս կողմն անցնելով ե-
35 կան Գեննեսարէթի երկիրը։ Եւ
այնտեղի մարդիկը նորան ճանա-
չելով, ուղարկեցին բոլոր շրջա-
կայքը և ամեն հիւանդները նո-
36 րա մօտ բերին։ Եւ նորան աղա-
չում էին՝ որ միայն նորա հան-
դերձի ծայրին դիպչեն. և նորանք
որ դիպան, *փրկուեցան։

ԳԼ. ԺԵ

1 Այն ժամանակ Երուսաղէմացի
դպիրները և Փարիսեցիները Յի-
2 սուսի մօտ եկան և ասեցին. Ի՞ն-
չու համար քո աշակերտները ծե-
րերի աւանդութիւնը զանց են
անում, որովհետև իրանց ձեռ-
քերը չեն լուանում, երբոր հաց
3 են ուտում։ Նա էլ պատասխան
տուաւ և ասեց նորանց. Ապա
դուք ի՞նչու էք Աստուծոյ պատ-
ուիրանքը զանց անում՝ ձեր ա-
4 ւանդութեան համար։ Որովհե-
տև Աստուած պատուիրեց և ա-
սեց. Պատուիր քո հօրը և մօրը։
Եւ իր հօրը կամ մօրը †բամբա- 5
սողը մահով մեռնի։ Բայց դուք 6
ասում էք. Բէ Ո՛վ որ հօրը կամ
մօրը ասէ՝ պատարագ է այն որ
ինձանից պիտի շահուէիր, նա
թող չ՛պատուէ իր հօրը և իր
մօրը։ Եւ ձեր աւանդութեան
համար Աստուծոյ պատուէրը խա-
փանել էք։ Կեղծաւորներ, լաւ 7
մարգարէացաւ ձեր մասին Եսա-
յիան ասելով. Այս ժողովուրդը 8
իրան բերանովն է մօտենում ինձ,
և շրթունքներովն է ինձ պատ-
վում, բայց իրանց սիրտն ինձա-
նից հեռացած ջոկուած է։ Զուր 9
տեղն են պաշտում ինձ՝ վարդա-
պետութիւններ սովորեցնելով, որ
մարդկանց պատուէրներ են։ Եւ 10
ժողովուրդներն իրան մօտ կան-
չելով, ասեց նորանց. Լսեցէք և
իմացէք. Ոչ թէ բերանը մտնողն 11
է պղծում մարդին, այլ բերա-
նիցը դուրս եկողը՝ նա է պղծում
մարդին։
Այն ժամանակ նորա աշակերտ- 12
ները մօտ գալով ասեցին նորան.
Գիտե՞ս որ Փարիսեցիներն այն
խօսքը լսելով դայթակղուեցին։
Նա էլ պատասխան տուաւ և 13
ասեց. Ամեն տունկ, որ իմ երկ-
նաւոր Հայրը չ՛տնկեց, կ՛պոկուի։
Թոյլ տուէք նորանց. կոյր առաջ- 14
նորդներ են կոյրերի, և երբոր կոյ-
րը կոյրին առաջնորդէ, երկուսն
էլ փոսի մէջ կ՛ընկնեն։ Պետ- 15
րոսը նորան պատասխան տուաւ
և ասեց. Այս առակը մեկնիր
մեզ։ Յիսուսն էլ ասեց. Դո՞ւք 16
էլ տակաւին անխելք էք։ Տա- 17
կաւին չէ՞ք հասկանում, թէ ա-
մեն ինչ որ բերանն է մտնում,
փորն է գնում և արտաքնոցն է
գցվում։ Բայց բերանիցը դուրս 18
եկող բաները սրտիցն են դուրս
գալիս, և նորանք են մարդին պըղ-
ծում։ Որովհետև սրտիցը դուրս 19
են գալիս չար խորհուրդներ, սպա-
նութիւններ, շնութիւններ, պոռ-
նըկութիւններ, գողութիւններ,
սուտ վկայութիւններ, հայհոյու-

*Այսինքն՝ բժշկուեցան։

†Կամ՝ անիծողը

20 թիւններ։ Սորանք են մարդին
պղծողը, բայց անլուայ ձեռքով
ուտելը մարդին չէ պղծում։
21 Եւ Յիսուսը այնտեղից դուրս
եկաւ գնաց Տիւրոսի և Սիդոնի
22 կողմերը։ Եւ ահա մի Քանանացի
կին այն սահմաններից դուրս ե-
կած աղաղակում էր նորան և
ասում. Ողորմիր ինձ, Տէ՛ր, Դա-
ւիթի որդի, իմ աղջիկը չարա-
23 չար դիւահարվում է։ Եւ նա
նորան մէ՛ խօսք պատասխան չը
տուաւ. և նորա աշակերտները
մօտ գալով աղաչում էին նորան
և ասում. Արձակիր դորան, ո-
րովհետև մեր ետևիցն աղաղա-
24 կում է։ Նա էլ պատասխան
տուաւ և ասեց. Ես չեմ ուղար-
կուել՝ եթէ ոչ Իսրայէլի տան
25 կորած ոչխարների մօտ։ Այն կինն
էլ եկաւ՝ նորան երկրպագում էր
26 և ասում. Տէ՛ր, օգնիր ինձ։ Նա
էլ պատասխան տուաւ և ասեց.
Լաւ չէ երեխաների հացն առ-
27 նել և շներին գցել։ Նա էլ ա-
սեց. Այո, Տէր, սակայն շներն
էլ իրանց տէրերի սեղանից ըն-
կած փշրանքներիցն են ուտում։
28 Այն ժամանակ Յիսուսը պատաս-
խան տուաւ և ասեց նորան. Ով
կին, մեծ է քո հաւատքը. քեզ
լինի ինչպէս ուզում ես. և նորա
աղջիկը բժշկուեց նոյն ժամիցը։
29 Եւ Յիսուսը այնտեղից գնալով
Գալիլեայի ծովի մօտ եկաւ, և
վեր ելաւ սարը՝ այնտեղ նստեց։
30 Եւ շատ ժողովուրդներ եկան նո-
րա մօտ, որ իրանց հետ ունէին
կաղեր, կոյրեր, համրեր, հաշման-
դամներ, և ուրիշ շատեր, և նո-
րանց դցեցին Յիսուսի ոտները,
31 և նա նորանց բժշկեց։ Մինչև որ
ժողովուրդները զարմանում էին,
տեսնելով համրերին խօսելիս,
հաշմանդամներին առողջ, կա-
ղերին գնալիս և կոյրերին տես-
նելիս. և փառաւորեցին Իսրայէ-
լի Աստուծուն։
32 Եւ Յիսուսը իր աշակերտները
մօտը կանչելով ասեց. Գութս
շարժում է այս ժողովրդի վե-
րայ, որովհետև արդէն երեք օր
է իմ մօտս են և բան չ՛ունին որ
ուտեն. և նորանց չեմ ուզում
սոված ճանապարհ գցել, մի
գուցէ նուաղեն ճանապարհումը։
Եւ նորա աշակերտները նորան 33
ասեցին. Ո՞րտեղից է մեզ այս
անապատումը այնչափ հաց, որ
այդքան ժողովուրդը կշտացնենք։
Եւ Յիսուսը նորանց ասեց. Քանի՞ 34
հաց ունիք. նորանք էլ ասեցին,
Եօթը, և մի քանի փոքր ձկներ։
Եւ նա հրամայեց ժողովրդին, որ 35
գետնի վերայ նստեն։ Եւ այն 36
եօթն հացը և ձկներն առաւ,
գոհացաւ, կտրեց և իր աշակերտ-
ներին տուաւ, և աշակերտները
ժողովրդին։ Եւ ամենքը կերան 37
և կշտացան. և կտորների աւե-
լացածը եօթը զամբիւղ լիքը վեր
առան։ Եւ ուտողները չորս հա- 38
զար մարդիկ էին՝ կանանցից և
երեխաներից ջոկ։
Եւ ժողովուրդներն արձակե- 39
լուց յետոյ մտաւ նաւը և եկաւ
Մագդաղէի սահմանները։

ԳԼ. ԺԶ

Եւ Փարիսեցիները և Սադուկե- 1
ցիները նորա մօտ եկան, և փոր-
ձելով նորանից ուզում էին որ
երկնքիցը մի նշան ցոյց տայ նո-
րանց։ Նա էլ պատասխան տուաւ 2
և ասեց նորանց. Իրիկուն դա-
ռած ժամանակ ասում էք՝ Պարզ
կ՛լինի, որովհետև երկինքը կար-
մրել է։ Եւ առաւօտը՝ Այսօր 3
մրրիկ կ՛լինի, որովհետև երկինքը
պղտորած կարմրացել է։ Կե՛ղծա-
ւորներ, երկնքի երեսը գիտէք
քննել, բայց ժամանակների նշան-
ները չէ՞ք կարող։ Չար և շնացող 4
ազգը նշան է խնդրում. և նշան
չի տրուիլ նորան, բայց միայն
Յովնան մարգարէի նշանը։ Եւ նո-
րանց թողեց գնաց։
Եւ նորա աշակերտները այն 5
կողմը գնալիս մոռացան հաց վեր
առնել։ Եւ Յիսուսը նորանց ա- 6
սեց. Տեսէք և զգոյշ կացէք Փա-
րիսեցիների և Սադուկեցիների
խմորիցը։ Իսկ նորանք իրանց մի- 7
ջումը միտք էին անում և ասում
թէ Հաց չենք վեր առել։ Եւ 8

Յիսուսը այս իմանալով ասեց. Ի՞ն-
չու էք միտք անում ձեր միջումը,
թե՛րահաւատներ, թէ հաց չէք
9 վեր առել։ Տակաւին չէ՞ք իմա-
նում, և չէ՞ք էլ յիշում այն
հինգ հացը հինգ հազար մարդ-
կանցը, և քանի՞ քթոց վեր ա-
10 ռաք։ Ոչ էլ այն եօթը հացը չորս
հազար մարդկանցը, և քանի՞
11 զամբիւղ վեր առաք. Ի՞նչպէս
չէք իմանում, որ հացի համար
չ՛ասեցի ձեզ՝ զգոյշ կենալ Փա-
րիսեցիների և Սադուկեցիների
12 խմորիցը։ Այն ժամանակ հաս-
կացան, որ չ՛ասեց հացի խմորիցն
զգոյշ կենալ, այլ Փարիսեցիներ-
ի և Սադուկեցիների վարդա-
պետութիւնիցը։
13 Եւ Յիսուսը դուրս գնաց Փի-
լիպպեայ Կեսարիայի կողմերը, և
իր աշակերտներին հարցնում էր
և ասում. Մարդիկ ինձ համար
ո՞վ են ասում, որ մարդի Որդին
14 լինի։ Նորանք էլ ասեցին. Ոմանք՝
Բէ Յովհաննէս Մկրտիչն է. իսկ
միւսները՝ Եղիան. ուրիշներն էլ՝
Երեմիան, կամ մարգարէների
15 մէկը։ Նորանց ասեց. Իսկ դուք
ո՞վ էք ասում ինձ համար, թէ
16 լինիմ։ Սիմօն Պետրոսը պատաս-
խան տուաւ և ասեց. Դու ես
Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ
17 Որդին։ Եւ Յիսուսը պատասխան
տուաւ և ասեց նորան. Երանի
քեզ, Սիմօն՝ Յովնանի որդի, ո-
րովհետև մարմինը և արիւնը չը
յայտնեց քեզ, բայց իմ Հայրը
18 որ երկնքումն է։ Ես էլ ասում
եմ քեզ, որ դու ես *Պետրոս,
և այդ վէմի վերայ կ՛շինեմ իմ
եկեղեցին, և դժոխքի դռները
19 չեն յաղթիլ նորան։ Եւ ես կը
տամ քեզ երկնքի արքայութեան
բանալիները, և այն որ կապես
երկրի վերայ, կապուած կ՛լինի
երկնքումը. և այն որ երկրի վե-
րայ արձակես, արձակուած կը
20 լինի երկնքումը։ Այն ժամանակ
իր աշակերտներին պատուիրեց,
որ ոչ ոքի չ՛ասեն, թէ նա է
Քրիստոսը։

*Այսինքն՝ վէմ

Այնուհետև Յիսուսը սկսեց 21
աշակերտներին յայտնել, թէ
պէտք է նորան Երուսաղէմ գնալ
և ծերերիցը և քահանայապետ-
ներիցը և դպիրներիցը շատ չար-
չարանքով չարչարուիլ, սպան-
ուիլ և երրորդ օրը յարութիւն
առնել։ Եւ Պետրոսը նորան մի 22
կողմ տանելով սկսեց նորան յան-
դիմանել և ասել՝ Քաւ լիցի քեզ,
Տէ՛ր, այդ չ՛լինի քեզ։ Եւ նա 23
դառաւ՝ ասեց Պետրոսին. յետս
դնա, սա՛տանայ, դու գայթակ-
ղութիւն ես ինձ. որովհետև դու
միտք չես անում Աստուծոյ՝ այլ
մարդկանց բաները։
Այն ժամանակ Յիսուսը իր ա- 24
շակերտներին ասեց. Եթէ մէկը
կամենում է իմ ետևից գալ,
թող իր անձն ուրանայ և իր խաչն
առնէ, և իմ ետևից գայ։ Որով- 25
հետև ով որ իր անձը ուզէ ապ-
րեցնել, կ՛կորցնէ նորան, և ով
որ իր անձը կորցնէ ինձ համար՝
կ՛գտնէ նորան։ Որովհետև ի՞նչ 26
օգուտ ունի մարդ, որ բոլոր աշ-
խարհքն ստանայ և իր անձը կոր-
ցնէ. կամ ի՞նչ գին կ՛տայ մարդ
իր անձը փրկելու համար։ Որով- 27
հետև մարդի Որդին գալու է իր
Հօր փառքովն իր հրեշտակների
հետ. և այն ժամանակ ամեն մէ-
կին կ՛հատուցանէ նորա գործերի
համեմատ։ Ճշմարիտ ասում եմ 28
ձեզ, այստեղ կանգնողներից կան
ոմանք, որ մահ չեն ճաշակել,
մինչև որ մարդի Որդին տեսնեն
իր թագաւորութիւնովը գալիս։

ԳԼ. ԺԷ

Եւ վեց օրից յետոյ Յիսուսը
Պետրոսին և Յակոբին և նորա
եղբայր Յովհաննէսին իր հետն
առաւ, և նորանց առանձին մի
բարձր սար հանեց։ Եւ նորանց
առաջին կերպարանափոխուե-
ցաւ, և նորա երեսը փայլեց ինչ-
պէս արեգակը, և նորա հանդերձ-
ները լոյսի պէս սպիտակ եղան։
Եւ ահա երևեցան նորանց Մով-
սէսը և Եղիան, որ նորա հետ խօ-
սում էին։ Եւ Պետրոսը պատաս-

խանեց և ասեց Յիսուսին. Տէր, լաւ է որ մենք այստեղ լինենք. եթէ կամենաս, այստեղ երեք տաղաւար շինենք, մէկը քեզ համար, մէկը Մովսէսին, և մէկը Եղիային։ 5 Եւ նա տակաւին խօսելիս, ահա մի լուսաւոր ամպ հովանի եղաւ նորանց վերայ. և ահա մի ձայն եղաւ այն ամպիցը և ասեց. Դա է իմ սիրելի Որդին, որին ես հաւանել եմ. դորան լսեցէք։ 6 Եւ աշակերտները լսելով իրանց երեսների վերայ ընկան, և շատ վախեցան։ 7 Եւ Յիսուսը մօտեցաւ նորանց բռնեց և ասեց. Վեր կացէք և մի վախենաք։ 8 Եւ նորանք իրանց աչքերը բարձրացրին, ու ոչ ոքին չտեսան, միայն Յիսուսին։

9 Եւ նորանք սարիցը իջնելիս, Յիսուսը նորանց պատուիրեց և ասեց. Ոչ ոքի չասէք այդ տեսիլքը, մինչև որ մարդի Որդին մեռելներից յարութիւն առնէ։ 10 Եւ նորա աշակերտները հարցրին նորանից և ասեցին. Ապա ի՞նչու դպիրները ասում են, թէ Առաջ Եղիան պէտք է գայ։ 11 Յիսուսն էլ պատասխանեց և ասեց նորանց. Իրաւ առաջ Եղիան կ'գայ և ամեն բան կ'վերանորոգէ։ 12 Բայց ես ասում եմ ձեզ, որ Եղիան արդէն եկել է, և նորան չ'ճանաչեցին. այլ ինչ որ ուզեցին նորան արին. այնպէս էլ մարդի Որդին չարչարուելու է նորանցից։ 13 Այն ժամանակ աշակերտները հասկացան, թէ Յովհաննես Մկրտչի համար ասեց նորանց։

14 Եւ երբոր նորանք ժողովրդի մօտ եկան, մի մարդ մօտեցաւ նորան և առաջը ծունկ դնելով ասում էր. 15 Տէր, իմ որդուն ողորմիր, որ լուսնատում է և չարաչար տանջվում է. որովհետև յաճախ անգամ կրակն է ընկնում, և շատ անգամ ջուրը։ 16 Եւ ես նրան քո աշակերտների մօտ բերի, և չկարողացան նորան բժշկել։ 17 Յիսուսն էլ պատասխանեց ասեց. Ով անհաւատ և խոտորեալ ազգ, մինչև ե՞րբ պիտի ձեզ հետ լինեմ, մինչև ե՞րբ պիտի ձեզ համբերեմ. նորան ինձ մօտ բերէք այստեղ։ 18 Եւ Յիսուսը նորան սաստեց. և դևը նորանից դուրս եկաւ, և տղան նոյն ժամից բժշկուեցաւ։ 19 Այն ժամանակ աշակերտներն առանձին Յիսուսի մօտ եկան և ասեցին. Մենք ինչու չկարողացանք հանել նորան։ 20 Յիսուսն էլ ասեց նորանց, Ձեր թերահաւատութեան համար. որովհետև ճշմարիտ ասում եմ ձեզ եթէ մանանեխի հատի չափ հաւատք ունենաք, այս սարին կ'ասէք փոխադրուիր այստեղից այնտեղ, և նա կ'փոխադրուի. և ոչինչ անկարելի չի լինիլ ձեզ համար։ 21 Բայց այս ցեղը դուրս չի դալ եթէ ոչ աղօթքով և ծոմով։

22 Եւ երբոր նորանք Գալիլեայի մէջ միասին էին գալիս, Յիսուսը նորանց ասեց. Մարդի Որդին մարդկանց ձեռն է մատնուելու։ 23 Եւ նորան կ'սպանեն, և երրորդ օրը յարութիւն կ'առնէ. և նորան շատ տրտմեցան։

24 Եւ երբոր նորանք Կափառնայում եկան, երկդրամեան ուղղողները Պետրոսի մօտ եկան և ասեցին. Ձեր վարդապետը երկդրամը չէ՞ վճարում։ 25 Նա ասեց՝ Այո։ Եւ երբոր տունը մտաւ, Յիսուսը նորանից առաջ սկսեց և ասեց, Քեզ ի՞նչպես է երևում, Սիմոն, երկրի թագաւորներն ումի՞ց են առնում հարկը կամ տուրքը, իրանց որդիների՞ց թէ օտարներից։ 26 Պետրոսն ասեց նորան. Օտարներից։ Յիսուսը նորան ասեց. Ապա ուրեմն ազատ են որդիները։ 27 Բայց որպէսզի նորանց չ'գայթակղեցնենք, գնա ծովը և կարթը գցիր, և առաջին դուրս եկող ձուկն առ՝ բերանը բաց, և մի սատեր կ'գտնես. այն առ տուր նորանց իմ և քո տեղ։

Գլ. ԺԸ

1 Ա՛յն ժամուն մէջ աշակերտները Յիսուսի մօտ եկան և ասեցին. Ո՞վ է մեծ երկնքի արքայութեան մէջ։ 2 Եւ Յիսուսն իր մօտ մի երեխայ կանչեց և նորան իրանց մէջտեղը կանգնեցրեց։ 3 Եւ ասեց. Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթէ դարձի չգաք և երեխաների պէս չլինիք, երկնքի արքայութեան մէջ չէք մտնիլ։ 4 Ուրեմն որ ոք որ այս երեխայի պէս խոնարհի, նա է մեծ երկնքի արքայութեան մէջ։ 5 Եւ որ ոք որ այսպիսի մի երեխայ ընդունի իմ անունով, նա ինձ է ընդունում։ 6 Բայց որ ոք որ այս փոքրիկներից մէկին որ հաւատում են ինձ գայթակղեցնի, նորան աւելի լաւ է որ մի մեծ ջրաղացի քար կախուի նորա վզից և նա խորտակուի ծովի խորութեան մէջ։ 7 Վա՛յ աշխարհիս գայթակղութիւնների համար. որովհետև գայթակղութիւնները պիտի գան, բայց վա՛յ այն մարդուն որ գայթակղութիւնը գալիս է նորանով։ 8 Եւ եթէ քո ձեռքը կամ ոտքը քեզ գայթակղեցնում է, կտրիր և գցիր քեզանից. քեզ համար լաւ է կաղ կամ հաշտ կեանքի մտնել, քան թէ երկու ձեռք կամ երկու ոտք ունենալով յաւիտենական հրի մէջ ընկնել։ 9 Եւ եթէ քո աչքը քեզ գայթակղեցնում է, հանիր և գցիր քեզանից. քեզ համար լաւ է մի աչքով կեանքի մտնել, քան թէ երկու աչք ունենալով գեհենի հրի մէջ ընկնել։ 10 Զգուշացէք որ ոչ մի այս փոքրիկներից չարհամարհէք, որովհետև ասում եմ ձեզ որ նորա հրեշտակները միշտ երկնքում իմ հօր երեսը տեսնում են։ 11 Որովհետև Յովհաննէս եկաւ ձեզ մօտ արդարութեան ճանապարհով, և չհաւատացիք նորան, բայց մաքսաւորները և պոռնիկները հաւատացին նորան. և դուք տեսնելով չդղջացիք յետոյ, որ հաւատաք նորան։

12 Ի՞նչ կ'կարծէք. Եթէ մի մարդ հարիւր ոչխար ունենայ և նորանից մէկը մոլորուի, ինն ու իննսունը չ'թողնի՞ լերանց վերայ և կ'գնայ որոնելու մոլորուածին։ 13 Եւ եթէ գտնի նորան, ճշմարիտ եմ ասում ձեզ, նորանով աւելի կ'ուրախանայ քան ինն ու իննսուն չմոլորուածներով։ 14 Նոյնպէս ձեր երկնաւոր հօր կամքը չէ որ այս փոքրիկներից մէկը կորչի։

15 Եւ եթէ քո եղբայրը մեղանչէ քեզ դէմ, գնա և նորան նախատիր միայնակ նորա և քո մէջ. եթէ քեզ լսէ, շահեցար քո եղբայրը։ 16 Եւ եթէ չլսէ, առ քեզ հետ մի կամ երկու հոգի, որ ամեն խօսք երկու կամ երեք վկայի բերանով հաստատուի։ 17 Եւ եթէ նորանց չլսէ, ասա եկեղեցուն. և եթէ եկեղեցուն չլսէ, նա քեզ հեթանոսի և մաքսաւորի պէս թող լինի։ 18 Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ինչ որ կապէք երկրի վերայ, կապուած կ'լինի երկնքում, և ինչ որ արձակէք երկրի վերայ, արձակուած կ'լինի երկնքում։ 19 Դարձեալ ասում եմ ձեզ, որ եթէ երկրի վերայ երկու հոգի համաձայնուին ձեզանից ինչ որ խնդրելու լինին, նորանց համար կ'լինի իմ հօրից որ երկնքում է։ 20 Որովհետև ուր որ երկու կամ երեք հոգի իմ անունով ժողովուած են, այնտեղ ես նորանց մէջ եմ։

21 Այն ժամանակ Պետրոս մօտեցաւ և ասեց նորան. Տէր, քանի անգամ իմ եղբայրը ինձ դէմ մեղանչէ, և ես նորան ներեմ, մինչև եօթն անգամ։ 22 Յիսուսն ասեց նորան. Ոչ եօթն անգամ, այլ եօթանասուն անգամ եօթն անգամ։

23 Ուստի երկնքի արքայութիւնը նման է մի թագաւորի որ կամեցաւ իր ծառաների հետ հաշիւ տեսնել։ 24 Եւ երբոր սկսեց հաշիւ տեսնել, մի պարտական նորան բերին որ տասը հազար տալանդ էր պարտական։ 25 Եւ որովհետև նա չունէր որ հատուցանէ, տէրը հրամայեց որ նորան ծախեն և ինչ որ ունի, և հատուցանեն։ 26 Ուստի ծառան ընկաւ նորա առաջ երկրպագեց նորան և ասեց. Տէր, համբերիր ինձ և ամեն բան կ'հատուցանեմ քեզ։ 27 Տէրը գթաց այն ծառայի վերայ, արձակեց նորան և պարտքը ներեց նորան։ 28 Եւ երբոր այն ծառան դուրս եկաւ, գտաւ իր ընկերներից մէկին որ հարիւր դահեկան էր պարտական նորան, և բռնելով նորան խեղդում էր և ասում. Հատուցանէ ինչ որ պարտական ես։ 29 Ուստի նորա ընկերը ընկաւ նորա առաջ և աղաչում էր նորան և ասում. Համբերիր ինձ և ամեն բան կ'հատուցանեմ քեզ։ 30 Եւ նա չուզեց, այլ գնաց և նորան բանտ դրեց մինչև որ հատուցանէ ինչ որ պարտական էր։ 31 Եւ երբոր նորա ընկերները տեսան ինչ որ եղաւ, շատ տրտմեցան և եկան իրանց տիրոջը պատմեցին ամեն ինչ որ եղաւ։ 32 Ուստի նորա տէրը կանչեց նորան և ասեց նորան. Չար ծառայ, ամեն պարտքը ներեցի քեզ, որովհետև աղաչեցիր ինձ։ 33 Չէ՞ որ դու էլ քո ընկերին ողորմելու էիր, ինչպէս որ ես քեզ ողորմեցի։ 34 Եւ նորա տէրը բարկացաւ և նորան տանջողներին յանձնեց մինչև որ ամեն պարտքը հատուցանէ նորան։ 35 Նոյնպէս և իմ երկնաւոր հայրը կ'անի ձեզ, եթէ ամենքդ ձեր եղբայրներին սրտի ձեզ համար չներէք։

Գլ. ԺԹ

1 Եւ Յիսուսը պատասխանեց և դարձեալ խօսեց նորանց հետ առակներով, ասելով. 2 Երկնքի արքայութիւնը նմանեցաւ մի թագաւոր մարդի, որ իր որդուն հարսանիք արաւ։ 3 Եւ իր ծառաներն ուղարկեց որ հարսանիքի կանչեն հրաւիրուածներին. և նորանք չ'կամեցան գալ։ 4 Դարձեալ ուրիշ ծառաներ ուղարկեց և ասեց. Ասեցէք հրաւիրուածներին, ահա իմ ճաշը պատրաստեցի. իմ արջառները և մատաղները մորթուած են, և բոլորը պատրաստ է. եկէք հարսանիքը։ 5 Իսկ նորանք անհոգ լինելով գնացին մէկն իր արտը, միւսն իր առուտուրին։ 6 Եւ մնացածները բռնեցին նորա ծառաներին նախատեցին և սպանեցին։ 7 Բայց թագաւորը լսելով բարկացաւ, և իր զօրքն ուղարկեց այն սպանողներին սատակեցրեց, և նորանց քաղաքն այրեց։ 8 Այն ժամանակ իր ծառաներին ասեց. Հարսանիքը պատրաստ է, բայց հրաւիրուածներն արժանի չէին։ 9 Արդ գնացէք դէպի ճանապարհների անցքերը, և որ էլ գտնէք, կանչեցէք հարսանիքը։ 10 Եւ այն ծառաները դուրս գնացին ճանապարհները, և ժողովեցին ամենին որ գտան՝ չարը և բարին, և հարսանիքը բազմականներով լցուեցաւ։ 11 Բայց երբոր թագաւորը մտաւ որ բազմականներին մտիկ անէ, այնտեղ մի մարդ տեսաւ՝ հարսանիքի հանդերձ չ'հագած։ 12 Եւ ասաւ նորան. Ընկեր, ինչպէս ներս եկար հարսանիքի հանդերձ չ'հագած։ Եւ նա պապանձուեցաւ։ 13 Այն ժամանակ թագաւորը ասաւ ծառաներին. Կապեցէք նորա ձեռքերն ու ոտքերը և տարէք դուրս խաւարի մէջ, որտեղ լացն է և ատամների կրճտումը։ 14 Որովհետև շատերն են կոչուածներ, բայց քչերն ընտրեալներ։

15 Այն ժամանակ փարիսեցիները գնացին և խորհուրդ արին որ նորան իր խօսքի մէջ բռնեն։ 16 Եւ իրանց աշակերտները Հերովդեսի հետ նորա մօտ ուղարկեցին ասելով. Վարդապետ, գիտենք որ դու ճշմարիտ ես և Աստուծոյ ճանապարհը ճշմարտութեամբ ես ուսուցանում, և քեզ համար չէ որ մարդկանց երեսը նայում ես։ 17 Ուստի ասա մեզ, ինչ կ'կարծես, արժան է՞ կայսրին հարկ տալ թէ ոչ։ 18 Յիսուսն իմացաւ նորանց չարութիւնը և ասեց. Ինչու ինձ փորձում էք, կեղծաւորներ։ 19 Ցո՛յց տուէք ինձ հարկի դրամը։ Եւ նորանք մի դահեկան բերին նորա առաջ։ 20 Եւ նա նորանց ասեց. Ումի՞ պատկերն է այս և ումի՞ գրութիւնը։ 21 Նորանք ասացին. Կայսրի։ Յիսուսն ասեց նորանց. Ուրեմն տուէք կայսրին որ կայսրինն է, և Աստուծոյ որ Աստուծոյն է։ 22 Եւ երբոր այս խօսքը լսեցին, զարմացան և թողին նորան և գնացին։

23 Այն օրը Սադուկեցիները որ ասում են թէ յարութիւն չկայ, նորա մօտ եկան և հարցրին նորանից 24 և ասացին. Վարդապետ, Մովսէս ասաց, եթէ մարդ մեռնի և զաւակ չթողնի, նորա եղբայրը թող նորա կնոջը առնի և իր եղբօր սերունդ յարուցանէ։ 25 Եւ մեր մէջ եղան եօթը եղբայրներ, և առաջինը կնութիւն արաւ և մեռաւ, և որովհետև զաւակ չունէր, կնոջը թողեց իր եղբօրը։ 26 Նոյնպէս և երկրորդը և երրորդը մինչև եօթներորդը։ 27 Եւ յետոյ քան զամենայն ինչ կինն էլ մեռաւ։ 28 Ուստի յարութեան ժամանակ այս եօթ եղբայրներից որի՞ կինը կ'լինի նա, որովհետև բոլորն էլ ունեցան նորան։ 29 Յիսուսն պատասխանեց և ասեց նորանց. Մոլորուած էք, չգիտենալով գրքերը և Աստուծոյ զօրութիւնը։ 30 Որովհետև յարութեան ժամանակ ոչ կ'առնուին և ոչ կ'տրուին կանայք, այլ երկնքում Աստուծոյ հրեշտակների պէս կ'լինին։ 31 Եւ մեռելների յարութեան մասին չէ՞ կարդացել ձեզ Աստուծոյ խօսքը որ ասում է։ 32 Ես եմ Աբրահամի Աստուած և Իսահակի Աստուած և Յակոբի Աստուած։ Աստուած մեռելների չէ այլ կենդանիների։ 33 Եւ ամբոխը լսելով նորա ուսուցանելը զարմացան նորա վարդապետութեան վերայ։

34 Եւ փարիսեցիները լսելով որ նա Սադուկեցիներին բերանը գոցեց, հաւաքուեցան։ 35 Եւ նորանցից մի օրինաց վարդապետ նորան փորձելով հարցրեց և ասաց. 36 Վարդապետ, ո՞ր է մեծ պատուիրանը օրինաց մէջ։ 37 Յիսուսն ասեց նորան. Կ'սիրես քո Տէր Աստուածդ քո ամբողջ սրտով և քո ամբողջ անձով և քո ամբողջ մտքով։ 38 Այս է մեծ և առաջին պատուիրանը։ 39 Եւ երկրորդն էլ նորա նման է. կ'սիրես քո ընկերը քեզ պէս։ 40 Այս երկու պատուիրանների վերայ կախուած են ամբողջ օրէնքը և մարգարէները։

41 Եւ երբոր փարիսեցիները հաւաքուած էին, Յիսուսն հարցրեց նորանց 42 և ասաց. Ի՞նչ կ'կարծէք Քրիստոսի մասին, ումի՞ որդին է։ Նորանք ասացին. Դաւթի։ 43 Յիսուսն ասեց նորանց. Ուրեմն ինչու Հոգով Դաւիթ նորան Տէր է կոչում և ասում է։ 44 Տէրն ասաց իմ Տիրոջը, նստիր իմ աջ կողմը մինչև որ քո թշնամիները քո ոտքերի տակ դնեմ։ 45 Եթէ Դաւիթ նորան Տէր է կոչում, ինչպէս նորա որդի է լինում։ 46 Եւ ոչ ոք չկարողացաւ նորան մի խօսք պատասխանել, և ոչ ոք յետոյ համարձակուեցաւ նորան հարցեր տալ։

Գլ. ԻԲ

1 Եւ Յիսուսը պատասխանեց և դարձեալ խօսեց նորանց հետ առակներով, ասելով. 2 Երկնքի արքայութիւնը նմանեցաւ մի թագաւոր մարդի, որ իր որդուն հարսանիք արաւ։ 3 Եւ իր ծառաներն ուղարկեց որ հարսանիքի կանչեն հրաւիրուածներին. և նորանք չ'կամեցան գալ։ 4 Դարձեալ ուրիշ ծառաներ ուղարկեց և ասեց. Ասեցէք հրաւիրուածներին, ահա իմ ճաշը պատրաստեցի. իմ արջառները և մատաղները մորթուած են, և բոլորը պատրաստ է. եկէք հարսանիքը։ 5 Իսկ նորանք անհոգ լինելով գնացին մէկն իր արտը, միւսն իր առուտուրին։ 6 Եւ մնացածները բռնեցին նորա ծառաներին նախատեցին և սպանեցին։ 7 Բայց թագաւորը լսելով բարկացաւ, և իր զօրքն ուղարկեց այն սպանողներին սատակեցրեց, և նորանց քաղաքն այրեց։ 8 Այն ժամանակ իր ծառաներին ասեց. Հարսանիքը պատրաստ է, բայց հրաւիրուածներն արժանի չէին։ 9 Արդ գնացէք դէպի ճանապարհների անցքերը, և որ էլ գտնէք, կանչեցէք հարսանիքը։ 10 Եւ այն ծառաները դուրս գնացին ճանապարհները, և ժողովեցին ամենին որ գտան՝ չարը և բարին, և հարսանիքը բազմականներով լցուեցաւ։ 11 Բայց երբոր թագաւորը մտաւ որ բազմականներին մտիկ անէ, այնտեղ մի մարդ տեսաւ՝ հարսանիքի հանդերձ չ'հագած։ 12 Եւ ասաւ նորան. Ընկեր, ինչպէս ներս եկար հարսանիքի հանդերձ չ'հագած։ Եւ նա պապան-

նորանց ասեց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ մաքսաւորները և պոռնիկները ձեզանից առաջ կը մտնեն Աստուծոյ արքայութիւնը։ 32 Որովհետև Յովհաննէս եկաւ ձեզ մօտ արդարութեան ճանապարհով, և չհաւատացիք նորան, բայց մաքսաւորները և պոռնիկները հաւատացին նորան. և դուք տեսնելով չդղջացիք յետոյ, որ հաւատաք նորան։

33 Մի ուրիշ առակ լսեցէք. Մի տանուտէր մարդ կար որ այգի տնկեց և նորան ցանգով պատեց. և նորա մէջ հնձան փորեց և աշտարակ շինեց. և տուաւ նորան մշակների, և գնաց հեռու աշխարհ։ 34 Եւ երբոր պտղի ժամանակը մօտեցաւ, ուղարկեց իր ծառաները մշակների մօտ նորա պտուղները առնելու։ 35 Եւ մշակները նորա ծառաներին բռնեցին՝ մէկին տանջեցին, մէկին սպանեցին, մէկին քարկոծեցին։ 36 Դարձեալ ուղարկեց ուրիշ ծառաներ առաջիններից շատ, և նորանց նոյնպէս արին։ 37 Եվերջապէս իր որդուն նորանց մօտ ուղարկեց ասելով, իմ որդուց կ'ամաչեն։ 38 Բայց մշակները որդուն տեսնելով, երանք իրանց ասեցին. Սա է ժառանգը, եկէք սպան սպանենք, և նորա ժառանգութիւնը մերինք։ 39 Եւ բռնեցին նորան, այգուցը դուրս հանեցին և սպանեցին։ 40 Արդ երբոր այն այգու տէրը գայ, ինչ կ'անէ այն մշակներին։ 41 Նորան ասեցին. Չարերին չարչար կ'կորցնէ, և այգին կ'տայ ուրիշ մշակների, որ պտուղները կ'տան նորան իրանց ժամանակը։ 42 Ներուսէն Յիսուսը նորանց ասեց. Դուք երբեք չէ՞ք կարդացել գրքում՝ Այն քարը, որ շինողներն անարգեցին, նա եղաւ անկիւնի գլուխ. սա Տիրոջից եղաւ, և մեր աչքերի առաջին զարմանալի է։ 43 Եւ Սորա համար ասում եմ ձեզ, որ Աստուծոյ արքայութիւնը ձեզանից վեր կ'առնուի և մի ազգի կ'տրուի, որ նորա պտուղները կը բերէ։ 44 Եւ այս քարի վերայ ընկնողը կ'փշրուի. և ում վերայ որ նա ընկնի կ'ջարդէ նորան։

45 Եւ երբոր քահանայապետները և փարիսեցիները նորա առակները լսեցին, հասկացան որ իրանց համար է ասում։ 46 Եւ ուզում էին որ բռնեն նորան, բայց ժողովուրդներից վախեցան. որովհետև նորան մարգարէի տեղ էին ընդունում։

Գլ. ԻԳ

1 Եւ Յիսուսը պատասխանեց և դարձեալ խօսեց նորանց հետ առակներով, ասելով. 2 Երկնքի արքայութիւնը նմանեցաւ մի թագաւոր մարդի, որ իր որդուն հարսանիք արաւ։ 3 Եւ իր ծառաներն ուղարկեց որ հարսանիքի կանչեն հրաւիրուածներին. և նորանք չ'կամեցան գալ։ 4 Դարձեալ ուրիշ ծառաներ ուղարկեց և ասեց. Ասեցէք հրաւիրուածներին, ահա իմ ճաշը պատրաստեցի. իմ արջառները և մատաղները մորթուած են, և բոլորը պատրաստ է. եկէք հարսանիքը։ 5 Իսկ նորանք անհոգ լինելով գնացին մէկն իր արտը, միւսն իր առուտուրին։ 6 Եւ մնացածները բռնեցին նորա ծառաներին նախատեցին և սպանեցին։ 7 Բայց թագաւորը լսելով բարկացաւ, և իր զօրքն ուղարկեց այն սպանողներին սատակեցրեց, և նորանց քաղաքն այրեց։ 8 Այն ժամանակ իր ծառաներին ասեց. Հարսանիքը պատրաստ է, բայց հրաւիրուածներն արժանի չէին։ 9 Արդ գնացէք դէպի ճանապարհների անցքերը, և որ էլ գտնէք, կանչեցէք հարսանիքը։ 10 Եւ այն ծառաները դուրս գնացին ճանապարհները, և ժողովեցին ամենին որ գտան՝ չարը և բարին, և հարսանիքը բազմականներով լցուեցաւ։ 11 Բայց երբոր թագաւորը մտաւ որ բազմականներին մտիկ անէ, այնտեղ մի մարդ տեսաւ՝ հարսանիքի հանդերձ չ'հագած։ 12 Եւ ասաւ նորան. Ընկեր, ինչպէս ներս եկար հարսանիքի հանդերձ չ'հագած։ Եւ նա պապան-

7 հրամայեց նորանց. Էշը և աւա-
նակը բերին՝ և իրանց հանդերձ-
ները նորանց վերայ դցեցին, և
8 նա նորանց վերայ նստեց։ Եւ
խիստ շատ ժողովուրդներ իրանց
հանդերձները ճանապարհի վե-
րայ փռեցին. ուրիշներն էլ ծա-
ռերիցը ճիւղեր էին կտրում և
9 ճանապարհումը փռում։ Եւ ա-
ռաջից և ետևից գնացող ժողո-
վուրդները աղաղակում էին և
ասում. Ովսաննա Դաւիթի որ-
դուն, օրհնեալ է Տիրոջ անու-
նովն եկողը. Ովսաննա բարձունք-
ներումը։
10 Երբոր նա Երուսաղէմ մտաւ,
բոլոր քաղաքը դղրդաց և ասեց.
11 Սա ո՞վ է։ Եւ ժողովուրդներն
ասում էին. Սա Յիսուս մարգա-
րէն է՝ Գալիլեայի Նազարէթիցը։
12 Եւ Յիսուսը մտաւ Աստուծոյ
տաճարը և դուրս արաւ տաճա-
րի մէջ բոլոր ծախողներին և առ-
նողներին, և փող փոխողների սե-
ղանները և աղաւնի ծախողների
13 աթոռները կործանեց. Եւ ասեց
նորանց. Գրուած է՝ Իմ տունը
աղօթքի տուն պիտի կոչուի. և
դուք աւազակների այր էք ա-
րել դորան։
14 Եւ տաճարի մէջ կոյրեր և կա-
ղեր եկան նորա մօտ և նա նո-
15 րանց բժշկեց։ Երբոր քահանա-
յապետները և դպիրները տեսան
այն հրաշքները որ արաւ, և այն
երեխաներին էլ տաճարումն ա-
ղաղակելիս և ասելիս՝ Ովսաննա
16 Դաւիթի որդուն, նեղացան. Եւ
ասեցին նորան. Լսո՞ւմ ես, դո-
րանք ի՞նչ են ասում։ Յիսուսն
էլ ասեց նորանց. Այս, դուք
երբէք չէ՞ք կարդացել թէ Մա-
նուկների և կաթնակերների բե-
րանից օրհնութիւն կատարեցիր։
17 Եւ նա նորանց թողելով գնաց
քաղաքիցը դուրս՝ Բեթանիա և
գիշերն այնտեղ մնաց։
18 Եւ առաւօտանց երբոր ետ էր
19 դառնում քաղաքը, սովեց։ Եւ
այն ճանապարհի վերայ մի թզե-
նի տեսնելով
և նորա վերա
բայց միայն տ

Այլ ևս քեզանից պտուղ չ՛լինի
յաւիտեան. և թզենին իսկոյն չո-
20 րացաւ։ Եւ աշակերտները տես-
նելով զարմացան և ասեցին. Ի՞նչ-
պէս թզենին իսկոյն չորացաւ։
21 Յիսուսն էլ պատասխանեց և ա-
սեց նորանց. Ճշմարիտ ասում եմ
ձեզ. թէ որ հաւատք ունենաք
և չ՛երկմտիք, ոչ թէ միայն կ՛ա-
նէք թզենիին եղածը, այլ թէ որ
այդ սարին էլ ասէք՝ վեր կաց և
22 ընկիր ծովը, կ՛լինի։ Եւ ամեն ինչ
որ աղօթքի մէջ խնդրէք հաւա-
տալով, կ՛առնէք։
23 Եւ երբոր եկաւ տաճարը, նա
սովորեցնելիս, քահանայապետ-
ները և ժողովրդի ծերերը նորա
մօտ եկան և ասեցին. Ի՞նչ իշխա-
նութիւնով ես անում այդ բա-
ները, և ո՞վ տուաւ քեզ այդ
24 իշխանութիւնը։ Յիսուսն էլ պա-
տասխանեց և ասեց նորանց. Ես
էլ ձեզանից մէկ բան կ՛հարցնեմ.
եթէ այն ինձ ասէք, ես էլ ձեզ
կ՛ասեմ թէ ինչ իշխանութիւնով
25 եմ անում այս բաները։ Յովհան-
նէսի մկրտութիւնը ո՞րտեղից էր,
երկնքի՞ց թէ մարդկանցից. և նո-
րանք իրանց մէջ միտք էին ա-
26 նում և ասում. Եթէ ասենք՝
երկնքից, կ՛ասէ մեզ՝ Ապա ի՞նչու
չ՛հաւատացիք նորան. իսկ եթէ
ասենք՝ մարդկանցից, ժողովրդի-
ցը վախենում ենք, որովհետև
ամենքը Յովհաննէսին մարգարէի
27 տեղ են ընդունում։ Եւ պատաս-
խանեցին Յիսուսին և ասեցին.
Չ՛գիտենք։ Նա էլ նորանց ասեց.
Ես էլ չեմ ասիլ ձեզ՝ թէ ի՞նչ
իշխանութիւնով եմ անում այս
բաները։
28 Բայց ի՞նչպէս է երևում ձեզ.
մի մարդ երկու որդի ունէր. և
եկաւ առաջինին ասեց. Որդի,
գնա այսօր իմ այգումը բան արա։
29 Նա էլ պատասխանեց և ասեց.
Չեմ կամենում. բայց յետոյ
30 զղջաց և գնաց։ Եւ միւսի մօտ
գնաց և ասեց այնպէս. Նա էլ
պատասխանեց և ասեց. Կ՛գնամ,
31 [illegible]էր. և չ՛գնաց։ Հիմա այս երկու-
[illegible]ց ո՞րն արաւ հօր կամքը։ Նո-
[illegible] ասեցին. Առաջի

43 ձուեցաւ։ Այն ժամանակ թա-
գաւորն ասեց ծառաներին. Դորա
ոտները և ձեռքերը կապեցէք.
վեր առէք դորան դրսի խաւարը
դցեցէք. այնտեղ կ՛լինի լացը և
44 ատամների կրճտելը։ Որովհետև
շատեր են կանչուած, բայց քի-
չեր՝ ընտրուած։
45 Այն ժամանակ փարիսեցիները
գնացին նորա համար խորհուրդ
արին, թէ ի՞նչպէս խօսքով որս-
46 դայթ դնեն նորան։ Եւ իրանց
աշակերտներին Հերովդէսեանն-
երի հետ նորա մօտ ուղարկեցին և
ասեցին, Վարդապետ, գիտենք
որ ճշմարիտ ես՝ և Աստուծոյ ճա-
նապարհը սովորեցնում ես ճշ-
մարտութիւնով, և ոչ մի մար-
դից հոգս չ՛ունիս. որովհետև
մարդի երեսպաշտութիւն չես ա-
47 նում։ Արդ՝ ասիր մեզ, ի՞նչպէս
է երևում քեզ, Կայսրին հարկ
48 տալ պէ՞տք է, թէ չէ։ Եւ Յի-
սուսը նորանց չարութիւնն իմա-
նալով ասեց. Ի՞նչու էք փորձում
49 ինձ, կեղծաւորներ։ Ցոյց տուէք
ինձ հարկի ստակը, և նորանք մի
դահեկան բերին տուին նորան։
20 Եւ նորանց ասեց. Այս պատկերը
կամ գիրը ո՞ւմն է։ Ասեցին նո-
21 րան. Կայսեր։ Այն ժամանակ ա-
սեց. Ուրեմն կայսրինը կայսրին
տուէք և Աստուծունը՝ Աստու-
22 ծուն։ Եւ լսելով զարմացան. և
նորան թողեցին գնացին։
23 Այն օրը Սադուկեցիները նորա
մօտ եկան՝ որ ասում են թէ յա-
րութիւն չ՛կայ՝ և նորան հար-
24 ցրին, Եւ ասեցին. Վարդապետ,
Մովսէսն ասեց, Եթէ մի մարդ
առանց զաւակի մեռնէ, թող
նորա եղբայրը նորա կինն առնէ,
և իր եղբօր համար զաւակ յա-
25 րուցանէ։ Հիմա մեզ մօտ եօթը
եղբարք կային. և առաջինը կին
առաւ և մեռաւ, և որովհետև
զաւակ չ՛ունէր՝ իրան կինը թո-
26 ղեց իր եղբօրը։ Այնպէս էլ երկ-
րորդ եղբայրը և երրորդը՝ մինչև
27 եօթներորդը։ Եւ ամենից յետոյ
28 կինը մեռաւ։ Հիմա յարութիւ-
նումը այն եօթից որի՞ն կ՛լինի
կին. որովհետև ամենքը նորան

առան։ Յիսուսն էլ պատասխա-
29 նեց և ասեց նորանց. Մոլորուած
էք, որ չ՛գիտէք գիրքերը, և ոչ
Աստուծոյ զօրութիւնը։ Որովհե-
30 տև յարութիւնումը ոչ կին են
առնում, և ոչ մարդի գնում.
այլ երկնքումն Աստուծոյ հրեշ-
տակների նման են։ Իսկ մեռելնե-
31 րի յարութիւն առնելու համար,
չէ՞ք կարդացել այն Աստուածա-
նից ձեզ խօսուածը որ ասում է.
32 Ես եմ Աբրահամի Աստուածը,
և Իսահակի Աստուածը, և Յա-
կոբի Աստուածը։ Աստուած մե-
ռելների Աստուած չէ, այլ կեն-
33 դանիների։ Եւ ժողովուրդները
լսելով զարմանում էին նորա վար-
դապետութեան վերայ։
34 Բայց փարիսեցիներն երբոր լսե-
ցին, թէ Սադուկեցիներին պա-
պանձեցրեց, հաւաքուեցան մէկ-
35 տեղ։ Եւ նորանցից մէկը՝ մի օրի-
նական՝ հարցրեց փորձելով նո-
36 րան և ասեց. Վարդապետ, ո՞ր
պատուիրանքն է մեծ օրէնքումը.
37 Յիսուսն էլ ասեց նորան. Սիրիր
քո Տէր Աստուծուն քո բոլոր
սրտովը քո բոլոր անձովը և քո
38 բոլոր մտքովը։ Սա է առաջին և
39 մեծ պատուիրանքը։ Երկրորդն
է սորան նման. Սիրիր քո ընկե-
40 րին քո անձի պէս։ Այս երկու
պատուիրանքից կախուած են բո-
լոր օրէնքը և մարգարէքը։
41 Եւ երբոր փարիսեցիները հա-
ւաքուած էին, Յիսուսը նորան-
42 ցից հարցրեց և ասեց. Ձեզ ի՞նչ-
պէս է երևում Քրիստոսի հա-
մար. նա ո՞ւմ որդին է։ Նորան
43 ասեցին. Դաւիթի։ Նորանց ա-
սեց. Ապա ի՞նչպէս Դաւիթը հո-
գով նորան Տէր է կոչում, ա-
44 սելով. Տէրն իմ Տիրոջս ասեց.
Իմ աջ կողմը նստիր, մինչև քո
թշնամիները քո ոտների պատ-
45 ուանդան դնեմ։ Արդ՝ եթէ Դա-
ւիթը նորան Տէր է կոչում, նա
46 ի՞նչպէս է նորա որդի։ Եւ ոչ ոք
չէր կարողանում մի բան պա-
տասխան տալ նորան. և այն օ-
րից յետոյ էլ մէկը չէր համար-
ձակում նորանից մի բան հարցը-
նելու։

ԳԼ. ԻԳ

1 Այն ժամանակ Յիսուսը ժողո-
վուրդների և իր աշակերտների
2 հետ խօսեց և ասեց. Մովսէսի
աթոռի վերայ դպիրները և Փա-
3 րիսեցիները նստեցին։ Արդ՝ ինչ
էլ որ ասեն ձեզ պահել, պա-
հեցէք և արէք, բայց նորանց
գործերի պէս մի անէք. որովհե-
տև ասում են բայց չեն անում։
4 Որովհետև ծանր և դժուարակիր
բեռներ են կապում և դնում
մարդկանց ուսերին, բայց իրանց
մատովը չեն ուզում շարժել նո-
5 րանց։ Եւ իրանց բոլոր գործերն
անում են մարդկանց երևելու
համար, իրանց դրապանակները
լայնացնում են և իրանց հան-
դերձի քղանցքները մեծացնում.
6 Սիրում են ընթրիքներումն առա-
ջին բազմոցը, և ժողովարաննե-
րումն առաջին աթոռները, և
7 փողոցների մէջ բարևները. Եւ
մարդկանցից Ռաբբի Ռաբբի կոչ-
8 ուիլը։ Բայց դուք Ռաբբի չ՚կան-
չուիք, որովհետև մէկն է ձեր
ուսուցիչը՝ Քրիստոսը. և դուք
9 ամենքդ եղբարք էք։ Եւ երկրիս
վերայ մէկին ձեզ հայր չ՚կանչէք.
որովհետև մէկն է ձեր Հայրը՝ նա
10 որ երկնքումն է։ Ոչ էլ ուսու-
ցիչներ կանչուեցէք, որովհետև
մէկն է ձեր Ուսուցիչը՝ Քրիստոսը։
11 Եւ ձեզանից մեծը թող ձեր ծա-
12 ռան լինի։ Ով որ իր անձը բար-
ձրացնէ՝ կ՚խոնարհուի. և ով որ
իր անձը խոնարհեցնէ՝ կ՚բար-
ձրանայ։
13 Իսկ վայ ձեզ, դպիրներ և Փա-
րիսեցիներ՝ կեղծաւորներ, որ փա-
կում էք երկնքի արքայութիւնը
մարդկանց առաջին, որ ինքներդ
չէք մտնում, և մտնողներին էլ
14 թոյլ չէք տալիս մտնել։ [Վայ
ձեզ, դպիրներ և Փարիսեցիներ՝
կեղծաւորներ, որ ուտում էք
որբևայրիների տները, և պատ-
ճառանքով երկար աղօթք ա-
նում. նորա համար աւելի դա-
տապարտութիւն կ՚ստանաք։]
15 Վայ ձեզ, դպիրներ և Փարիսե-
ցիներ՝ կեղծաւորներ, որ շուռ էք
գալիս ծովն ու ցամաքը, որ մէկը
նորահաւատ անէք. և երբոր լի-
նում է, նորան ձեզանից երկու
տակ աւելի գեհենի որդի էք ա-
նում։ Վայ ձեզ, կոյր առաջ- 16
նորդներ, որ ասում էք, Ով որ
տաճարովն երդում անէ, մի բան
չէ. բայց ով որ տաճարի ոսկովն
երդում անէ, պարտական է։ Յի- 17
մարներ և կոյրեր. ո՞րն է արդեօք
աւելի մեծ, ոսկի՞ն թէ տաճարը,
որ սրբում է ոսկուն։ Եւ, Ով որ 18
սեղանովն երդում անէ, մի բան
չէ. բայց ով որ նորա վերայ լի-
նող պատարագովն երդում անէ,
պարտական է։ Յիմարներ և կոյ- 19
րեր. ո՞րն է արդեօք աւելի մեծ,
պատարա՞գը թէ սեղանը, որ
սրբում է պատարագին։ Արդ՝ 20
սեղանովն երդում անողը նորա-
նով՝ և այն բոլոր բաներովն է եր-
դում անում որ նորա վերայ են։
Եւ տաճարովն երդում անողը 21
նորանով և նորանում բնակողովն
է երդում անում։ Եւ երկնքովն 22
երդում անողը Աստուծոյ աթո-
ռովն է երդում անում և նո-
րա վերայ նստողովը։ Վայ ձեզ, 23
դպիրներ և Փարիսեցիներ՝ կեղ-
ծաւորներ. որ անանուխի և սա-
միթի և չամանի տասանորդը տա-
լիս էք, և թողում էք օրէնքի
ծանր ծանր բաները՝ դատաստանը
և ողորմութիւնը և հաւատքը.
սա պէտք էր անել՝ և այն չը
թողել։ Կոյր առաջնորդներ, որ 24
մժեղը քամում էք, բայց ուղտը
կուլ էք տալիս։ Վայ ձեզ, դպիր- 25
ներ և Փարիսեցիներ՝ կեղծաւոր-
ներ, որ մաքրում էք բաժակի և
սկաւառակի դրսի կողմը, բայց
ներսևանց լիքն են յափշտակու-
թիւնով և անիրաւութիւնով։ 26
Կոյր Փարիսեցի, առաջ մաքրիր
բաժակի և սկաւառակի մէջը,
որ նորանց դուրսն էլ մաքուր 27
լինի։ Վայ ձեզ, դպիրներ և Փա-
րիսեցիներ՝ կեղծաւորներ, որ նը-
ման էք ծեփած գերեզմանների,
որ դրսևանց գեղեցիկ են երևում,
բայց ներսևանց լիքն են մեռել-
ների ոսկորներով և ամեն պղծու- 28
թիւնով։ Այնպէս էլ դուք՝

դրսևանց արդար էք երևում
մարդկանց բայց ներսևանց լիքն
էք կեղծաւորութիւնով և անօ-
29 րէնութիւնով։ Վայ ձեզ, դպիր-
ներ և Փարիսեցիներ՝ կեղծաւոր-
ներ, որ մարգարէների տապան-
ները շինում էք՝ և արդարների
30 գերեզմանները զարդարում. Եւ
ասում էք, Եթէ մենք լինէինք
մեր հայրերի օրերումը, մասնա-
կից չէինք լինիլ նորանց հետ
31 մարգարէների արիւնին։ Ուրեմն
դուք ձեր մասին վկայում էք,
թէ որդիք էք մարգարէների սպա-
32 նողներին։ Եւ դուք ձեր հայրերի
33 չափը լցրէք։ Օձեր, իժերի զա-
ւակներ, դուք ի՞նչպէս էք փախ-
չելու գեհենի դատաստանիցը։
34 Դորա համար ահա ես ձեզ մօտ
մարգարէներ և իմաստուններ և
դպիրներ կ՚ուղարկեմ. և նորան-
ցից կ՚սպանէք և կ՚խաչէք և նո-
րանցից ձեր ժողովարաններումը
կ՚տանջէք՝ և քաղաքից քաղաք
35 կ՚հալածէք, Որպէսզի ձեզ վերայ
դայ ամեն արդար արիւն, որ երկ-
րի վերայ թափուել է՝ արդար
Աբէլի արիւնիցը մինչև Բարա-
քիայի որդի Զաքարիայի արիւնը,
որին սպանեցիք տաճարի և սե-
36 ղանի մէջտեղը։ Ճշմարիտ ասում
եմ ձեզ, այս բոլորը կ՚գայ այս
ազգի վերայ։
37 Երուսաղէմ Երուսաղէմ, մար-
գարէները կոտորող, և քեզ
մօտ ուղարկուածները քարկո-
ծող. քանի անգամ կամեցայ քո
երեխաները ժողովել, ինչպէս
հաւը ժողովում է իր ձագերը
թևերի տակը. և դուք չ՚կամե-
38 ցաք։ Ահա ձեր տունն աւերուած
39 կ՚թողուի ձեզ. Որովհետև ա-
սում եմ ձեզ, Բէ այսուհետև
չէք տեսնիլ ինձ՝ մինչև որ ասէք.
Օրհնեալ է Տիրոջ անունով ե-
կողը։

ԳԼ. ԻԴ

1 Եւ Յիսուսը դուրս եկած գնում
էր տաճարիցը, և աշակերտները
մօտ եկան՝ որ ցոյց տան նորան
2 տաճարի շինուածքը։ Յիսուսն էլ
պատասխանեց և ասեց նորանց.
Չէ՞ք տեսնում այդ ամենը. Ճշմա-
րիտ ասում եմ ձեզ. այդտեղ
քար քարի վերայ չի թողուիլ որ
չ՚քանդուի։
Եւ երբոր նա Զիթենեաց սա- 3
րի վերայ նստած էր, աշակերտ-
ներն առանձին նորա մօտ եկան
և ասեցին. Ասիր մեզ, այդ ե՞րբ
կ՚լինի. և ի՞նչ կ՚լինի քո գալստեան
և աշխարհքիս վերջի նշանը։ Յի- 4
սուսն էլ պատասխանեց և ասեց
նորանց. Զգոյշ կացէք, որ մէկը
ձեզ չ՚խաբէ։ Որովհետև շատերը 5
կ՚գան իմ անունովը և կ՚ասեն՝
Ես եմ Քրիստոսը. և շատերին կը
մոլորեցնեն։ Պատերազմներ և պա- 6
տերազմների համբաւներ կ՚լսէք,
զգոյշ կացէք, որ չ՚շփոթուիք.
որովհետև ամենը պէտք է լինի.
բայց դեռ վերջը չէ։ Որովհետև 7
ազգ ազգի վերայ վեր կ՚կենայ, և
թագաւորութիւն թագաւորու-
թեան վերայ. և սովեր կ՚լինին.
և մահտարաժամներ՝ և տեղ տեղ
երկրաշարժութիւններ կ՚լինին։
Բայց այս ամենը ցաւերի սկիզբն 8
է։ Այն ժամանակ ձեզ նեղու- 9
թեան կ՚մատնեն. և ձեզ կ՚սպա-
նեն, և իմ անունի համար ամեն
ազգերից ատուած կ՚լինիք։ Եւ 10
այն ժամանակ շատերը կ՚գայ-
թակղին, և իրար կ՚մատնեն և
իրար կ՚ատեն։ Եւ շատ սուտ 11
մարգարէներ դուրս կ՚գան՝ և շա-
տերին կ՚մոլորեցնեն։ Եւ անօրէ- 12
նութեան շատանալու պատճա-
ռովը՝ շատերի սէրը կ՚սառչի։ Բայց 13
ով որ մինչև վերջը համբերէ՝ նա
կ՚փրկուի։ Եւ արքայութեան այս 14
աւետարանը բոլոր տիեզերքումը
կ՚քարոզուի ամեն հեթանոսներին
վկայութիւն լինելու համար, և
այն ժամանակ կ՚գայ վերջը։
Արդ՝ երբոր տեսնէք աւերածի 15
պղծութիւնը, Դանիէլ մարգա-
րէի ձեռով ասուածը, որբու-
թեան տեղումը կանգնած. կար-
դացողը մտածէ. Այն ժամանակ 16
նորանք որ Հրէաստանումն են՝
թող փախչեն սարերը։ Ով որ 17
կտուրի վերայ լինի՝ թող վար
չ՚գայ մի բան վեր առնելու իր

18 տանիցը։ Եւ ով որ յանդումն է՝
թող յետ չ՛դառնայ իր հան-
19 դերձները վեր առնելու։ Բայց
վայ այն օրը յղիներին և ծիծ
20 տուողներին։ Եւ աղօթք արէք,
որ ձեր փախչելը ձմեռը չ՛լինի,
21 ոչ էլ շաբաթ օրը։ Որովհետև
այն ժամանակը մեծ նեղութիւն
կ՛լինի, որ նմանը աշխարհքիս
սկզբիցը մինչև հիմա չ՛եղաւ, և
22 ոչ էլ երբէք կ՛լինի։ Եւ եթէ
այն օրերը չ՛կարճացնուէին, ոչ
մի մարմին չէր փրկուիլ. բայց
ընտրուածների համար այն օրերը
23 կ՛կարճացնուին։ Այն ժամանակ
եթէ մէկն ասէ ձեզ՝ Ահա այս-
տեղ է Քրիստոսը, կամ այնտեղ.
24 չ՛հաւատաք։ Որովհետև սուտ
քրիստոսներ և սուտ մարգարէ-
ներ վեր կ՛կենան, և մեծ նշան-
ներ և հրաշքներ կ՛տան մինչև որ
եթէ կարելի լինէր, ընտրուած-
25 ներին էլ կ՛մոլորեցնէին։ Ահա
26 առաջուց ասեցի ձեզ։ Արդ եթէ
ասեն ձեզ. Ահա անապատումն
է, դուրս չ՛գնաք. Ահա ներսի
27 սենեակումն է. չ՛հաւատաք։ Ո-
րովհետև ինչպէս կայծակը դուրս
է գալիս արևելքից և երևում
մինչև արևմուտք. այնպէս էլ
կ՛լինի մարդի Որդուն գալուստը։
28 Որովհետև որտեղ մեռած մար-
մինը լինի, այնտեղ կ՛հաւաքուին
արծիւները։
29 Եւ շուտով այն նեղութեան
օրերիցն յետոյ արեգակը կ՛խա-
ւարի, և լուսինն իր լոյսը չի տալ.
և աստղերը երկնքից վայր կ՛ընկ-
նեն, և երկնքի զօրութիւնները
30 կ՛շարժուին։ Եւ այն ժամանակ
կ՛երևի մարդի Որդու նշանը եր-
կընքումը, և այն ժամանակ կոծ
կ՛անեն երկրի բոլոր ազգերը. և
կ՛տեսնեն մարդի Որդին գալիս
երկնքի ամպերի վերայ զօրու-
31 թիւնով և շատ փառքով։ Եւ
նա կ՛ուղարկէ իր հրեշտակները
մեծաձայն փողով, և նորանք կը
ժողովեն նորա ընտրուածներին
չորս հողմից՝ երկնքի ծայրերից
մինչև նորա միւս ծայրերը։
32 Թզենուցը սովորեցէք առակը.
երբոր նորա ճղերն արդէն կա-
կուղացել են և տերևը բուսել է,
գիտէք որ մօտ է ամառը։ Այս-
պէս էլ դուք. երբոր այս ամենը
տեսնէք, իմացէք որ մօտ է՝ դրռ-
ներին է։ Ճշմարիտ ասում եմ
ձեզ՝ Այս ազգը չի անցնիլ, մին-
չև որ այս ամենը լինի։ Երկինքն
ու երկիրը կ՛անցնեն, բայց իմ
խօսքերս չեն անցնիլ։
Իսկ այն օրուայ և ժամի հա-
մար ոչ ով չ՛գիտէ, ոչ էլ երկնքի
հրեշտակները, բայց միայն իմ
Հայրը։ Եւ ինչպէս Նոյի օրերն,
այնպէս կ՛լինի և մարդի Որդու
գալուստը։ Որովհետև ինչպէս որ
էին ջրհեղեղից առաջ եղած օ-
րերը, ուտում էին և խմում էին,
կին էին առնում և մարդի էին
գնում, մինչև այն օրն, որ Նոյը
մտաւ տապանը. Եւ չ՛գիտացին,
մինչև որ ջրհեղեղն եկաւ, և ա-
մենքը վեր առաւ, այնպէս կ՛լինի
և մարդի Որդու գալուստը։
Այն ժամանակ երկու հոգի կը
լինին արտումը. մէկը կ՛առնուի
և մէկը կ՛թողուի։ Եւ երկու հո-
գի մի ջաղացում կ՛աղան՝ մէկը
կ՛առնուի և մէկը կ՛թողուի։
Արդ՝ արթուն կացէք. որ չը
գիտէք թէ ո՞ր ժամում ձեր Տէրը
կ՛գայ։ Բայց այս իմացէք, որ ե-
թէ տան տէրը գիտենար թէ որ
պահում կ՛գայ գողը, արթուն
կ՛կենար և թող չէր տալ որ իր
տունը ծակեն։ Սորա համար
դուք էլ պատրաստ կացէք որ
այն ժամին, որ դուք չէք կար-
ծում, մարդի Որդին կ՛գայ։ Ու-
րեմն ո՞վ է այն հաւատարիմ և
իմաստուն ծառան, որի տէրը նո-
րան իր ծառաների վերայ դրաւ,
որ նորանց կերակուրը տայ ժա-
մանակին։ Երանի այն ծառային,
որ նորա տէրը, երբոր գայ, նորան
այնպէս անելիս գտնէ։ Ճշմարիտ
ասում եմ ձեզ, որ նորան իր ա-
մեն ունեցածների վերայ կ՛դնէ։
Բայց եթէ այն չար ծառան իր
սրտումն ասէ, Իմ տէրը գալը ու-
շացնում է. Եւ սկսէ իր ծառա-
յակիցներին ծեծել՝ և արբեցող-
ների հետ ուտել և խմել. Այն
ծառայի տէրը մի օր կ՛գայ, որ

նա չէ սպասում, և մի ժամ՝ որ
51 նա չ՛գիտէ. Եւ նորան միջիցը կը
կտրէ, և նորա բաժինը կեղծա-
ւորների հետ կ՛դնէ. այնտեղ կը
լինի լացը և ատամների կրճտելը։

ԳԼ. ԻԵ

1 Այն ժամանակ կ՛նմանի երկնքի
արքայութիւնը տասը կոյսերի,
որ իրանց լապտերները վեր ա-
ռան և դուրս եկան փեսային
2 դիմաւորելու։ Նորանցից հինգը
իմաստուն էին, և հինգը յիմար։
3 Այն յիմարները վեր առան իրանց
լապտերները, բայց ձէթ վեր չ՛ա-
4 ռան իրանց հետ։ Սակայն իմաս-
տուններն իրանց ամաններումը
ձէթ վեր առան իրանց լապտեր-
5 ների հետ մէկտեղ։ Եւ երբոր
փեսան ուշացաւ, ամենքը թմրե-
6 ցան և քնեցին։ Եւ կէս գիշերին
աղաղակ եղաւ՝ Ահա փեսան գա-
լիս է. դուրս եկէք նորան դիմա-
7 ւորելու։ Այն ժամանակ ամեն
կոյսերը վերկացան և իրանց լապ-
8 տերները պատրաստեցին։ Բայց
յիմարներն ասեցին իմաստուններ-
ին. Տուէք մեզ ձեր իւղիցը, ո-
րովհետև մեր լապտերները հանգ-
9 չում են։ Իմաստուններն էլ պա-
տասխանեցին և ասեցին. Մի գու-
ցէ մեզ և ձեզ բաւական չ՛լինի.
բայց աւելի լաւ՝ գնացէք ծա-
խողների մօտ և գնեցէք ձեզ հա-
10 մար։ Եւ երբոր նորանք գնացին
գնելու, փեսան եկաւ. և պատ-
րաստները նորա հետ հարսանիքը
մտան, և դուռն փակուեցաւ։
11 Եւ յետոյ այն միւս կոյսերն էլ
եկան և ասեցին. Տէր, Տէր բաց
12 մեզ։ Նա էլ պատասխանեց և
ասեց. Ճշմարիտ ասում եմ ձեզ.
13 Ես չեմ ճանաչում ձեզ։ Արդ՝
արթուն կացէք. որովհետև չ՛գի-
տէք ոչ օրը և ոչ ժամը, [որ նո-
րանում մարդի Որդին կ՛գայ։]
14 Որովհետև ինչպէս մի մարդ,
որ օտար երկիր էր գնում, իր
ծառաներին կանչեց, և իր ունե-
15 ցածը նորանց յանձնեց։ Եւ մէ-
կին հինգ քանքար տուաւ, և
միւսին՝ երկու, և միւսին՝ մէկ,
իւրաքանչիւրին իր կարողութեան
չափ, և շուտով գնաց։ Եւ այն
հինգ քանքար առնողը գնաց նո-
րանցով բան արաւ և ուրիշ հինգ
քանքար էլ շահեց։ Այնպէս էլ
նա՝ որ երկուսն ———, ուրիշ եր-
կուսն էլ շահեց։ Իսկ այն մէկն
առնողը գնաց՝ գետինը փորեց՝ և
իր տիրոջ արծաթը թաղցրեց։
Եւ շատ ժամանակից յետոյ գա-
լիս է այն ծառաների տէրը և նո-
րանցից հաշիւ առնում։ Եւ այն
հինգ քանքար առնողը մօտ ե-
կաւ. ուրիշ հինգ քանքար էլ
առաջ բերաւ և ասեց. Տէր, ինձ
հինգ քանքար տուիր, տես, ու-
րիշ հինգ քանքար էլ շահեցի
նորանց վերայ։ Նորա տէրն էլ
ասեց նորան. Լա՛ւ, բարի և հա-
ւատարիմ ծառայ, քիչ բաների
վերայ հաւատարիմ էիր, ես քեզ
շատ բաների վերայ կ՛դնեմ. մտիր
քո տիրոջ ուրախութիւնը։ Եւ
այն երկու քանքար առնողն էլ
մօտ եկաւ և ասեց. Տէր, ինձ
երկու քանքար տուիր. տես, եր-
կու ուրիշ քանքար էլ շահեցի
նորանց վերայ։ Նորա տէրը նո-
րան ասեց. Լա՛ւ, բարի և հաւա-
տարիմ ծառայ. քիչ բաների վե-
րայ հաւատարիմ էիր, ես քեզ
շատ բաների վերայ կ՛դնեմ. մտիր
քո տիրոջ ուրախութիւնը։ Եւ
այն մէկ քանքար առնողն էլ մօտ
եկաւ և ասեց. Տէ՛ր, ես ճանա-
չում էի քեզ, որ դու մի պինդ
մարդ ես. հնձում ես ուր որ չը
սերմեցիր, և հաւաքում ես, ուր
որ չ՛փռեցիր։ Եւ վախենալով
գնացի՝ թաղցրի քո քանքարը
գետնի մէջ. ահա քոնը առ։ Նո-
րա տէրն էլ պատասխանեց և
ասեց նորան. Չար և ծոյլ ծա-
ռայ, գիտէիր որ ես հնձում եմ
ուր որ չ՛սերմեցի, և հաւաքում
եմ ուր որ չ՛փռեցի։ Ուրեմն պէտք
էր որ իմ արծաթը սեղանաւոր-
ներին տայիր՝ և ես կ՛գայի տոկո-
սով կ՛առնէի իմը։ Արդ՝ առէք
դորանից քանքարը, և տուէք
տասը քանքարն ունեցողին։ Որով-
հետև ամեն ով որ ունի՝ նորան
կ՛տրուի և կ՛աւելանայ, բայց նա

որ չ'ունի՝ նորանից այն ունեցածն
30 էլ վեր կ'առնուի։ Եւ այն ան-
պիտան ծառային հանեցէք դրսի
խաւարը, այնտեղ կ'լինի լացը և
ատամների կրճտելը։
31 Եւ երբոր մարդի Որդին իր
փառքովը կ'գայ և ամեն սուրբ
հրեշտակները նորա հետ, այն
ժամանակ կ'նստի իր փառաց ա-
32 թոռի վերայ. Եւ ամեն ազգերը
կ'ժողովուին նորա առաջը, և նա
նորանց կ'բաժանէ իրարից ինչ-
պէս հովիւը բաժանում է ոչ-
33 խարներն այծերիցը. Եւ ոչխար-
ներն իր աջ կողմին կ'կանգնեցնէ,
իսկ այծերը՝ ձախ կողմին։
34 Այն ժամանակ թագաւորը կ'ա-
սէ իր աջ կողմիններին, Եկէք,
ով իմ Հօր օրհնածները, ժառան-
գեցէք աշխարհքի սկզբից ձեզ
համար պատրաստուած թագա-
35 ւորութիւնը։ Որովհետև սովեցի,
և դուք տուիք ինձ ուտել. ծա-
րաւեցի և խմեցրիք ինձ. օտար
էի, և ինձ ձեզ մօտ առաք.
36 Մերկ էի, և հագցրիք ինձ. հի-
ւանդ էի, և ինձ այցելեցիք.
բանտի մէջ էի, և ինձ մօտ ե-
37 կաք։ Այն ժամանակ արդարները
կ'պատասխանեն նորան և կ'ա-
սեն. Տէ'ր, ե՞րբ տեսանք քեզ
սոված, և կերակրեցինք, կամ
38 ծարաւ, և խմեցրինք։ Ե՞րբ տե-
սանք քեզ օտար, և մեզ մօտ
առանք, կամ մերկ, և հագցր-
39 ինք։ Ե՞րբ տեսանք քեզ հի-
ւանդ, կամ բանտի մէջ, և ե-
40 կանք քեզ մօտ։ Թագաւորն էլ
կ'պատասխանէ և կ'ասէ նորանց.
Ճշմարիտ ասում եմ ձեզ, որով-
հետև այս իմ փոքր եղբայրներից
մէկին արիք, ինձ արիք։
41 Այն ժամանակ կ'ասէ ձախ
կողմիններին էլ. Ինձանից դէն
գնացէք, ով անիծեալներ, յաւի-
տենական կրակի մէջ, որ պատ-
րաստուած է սատանայի և նորա
42 հրեշտակների համար։ Որովհետև
ես սովեցի, և դուք չ'տուիք ինձ
ուտել, ծարաւեցի, և ինձ չ'խմե-
43 ցրիք։ Օտար էի՝ և ինձ ձեզ մօտ
չ'առաք, մերկ՝ և ինձ չ'հագցրիք,
հիւանդ և բանտի մէջ՝ և ինձ
չ'այցելեցիք։ Այն ժամանակ նո- 44
րանք էլ կ'պատասխանեն և կ'ա-
սեն. Տէ'ր, քեզ ե՞րբ տեսանք
սոված, կամ ծարաւ, կամ օ-
տար, կամ մերկ, կամ հիւանդ,
կամ բանտի մէջ, և քեզ ծա-
ռայութիւն չ'արինք։ Այն ժամա- 45
նակ կ'պատասխանէ նորանց և
կ'ասէ. Ճշմարիտ ասում եմ ձեզ՝
որովհետև այս փոքրներից մէկին
չ'արիք, ինձ էլ չ'արիք։
Եւ սորանք կ'գնան յաւիտե- 46
նական տանջանքը, իսկ արդար-
ները՝ յաւիտենական կեանքը։

ԳԼ. ԻԶ

Եւ եղաւ երբոր Յիսուսը այս ա- 1
մեն խօսքերը վերջացրեց, իր աշա- 2
կերտներին ասեց. Գիտէք, որ եր-
կու օրից յետոյ զատիկ կ'լինի.
և մարդի Որդին կ'մատնուի խաչ- 3
ուելու։ Այն ժամանակ քահա-
նայապետները և դպիրները և ժո-
ղովրդի ծերերը ժողովուեցան այն
քահանայապետի սրահը, որի ա- 4
նունը Կայիափա էր։ Եւ խոր-
հուրդ արին, որ Յիսուսին բռնեն 5
նենգութեամբ և սպանեն։ Բայց
ասում էին, Այս տօնին ոչ, որ
ժողովրդի մէջ խռովութիւն չը
լինի։
Եւ երբոր Յիսուսը Բեթանիա 6
էր՝ Սիմօն բորոտի տանը, Նորա 7
մօտ մի կին եկաւ, որ մի շիշ ծան-
րագին իւղ ունէր, և նորա գլխի
վերայ թափեց, երբոր նա սեղան 8
նստած էր։ Նորա աշակերտներն
էլ տեսնելով նեղացան և ասե-
ցին. Ի՞նչու եղաւ այդ կորուստը. 9
Որովհետև կարող էր այդ իւղը
շատի ծախուիլ և աղքատներին 10
տրուիլ։ Յիսուսն էլ իմանալով
ասեց նորանց. Ի՞նչու էք այդ կնո-
ջը նեղութիւն տալիս, որ դա մի
բարի բան գործեց ինձ վերայ։ 11
Որովհետև աղքատներն ամեն
ժամանակ ունիք ձեզ հետ. բայց 12
ինձ միշտ ձեզ հետ չ'ունիք։ Դա
այդ իւղն իմ մարմնի վերայ թա-
փելով, իմ թաղուելու մասին 13
արաւ։ Բայց ճշմարիտ ասում եմ
ձեզ, ուր որ էլ բոլոր աշխարհքի

մէջ այս աւետարանը քարոզուի,
կ'խօսուի նա էլ, որ դա արաւ՝
դորա յիշատակի համար։
14 Այն ժամանակ տասնևերկու-
սից մէկը, որ Յուդա Իսկարիով-
տացի էր ասվում, գնաց քահա-
15 նայապետների մօտ և ասեց. Ի՞նչ
էք կամենում ինձ տալ, և ես
ձեզ մատնեմ նորան։ Եւ նորանք
երեսուն արծաթ կշռեցին տուին
16 նորան։ Եւ նա այնուհետև յար-
մար ժամանակ էր որոնում, որ
նորան մատնէ։
17 Եւ բաղարջակերաց առաջին
օրը աշակերտները Յիսուսի մօտ
եկան և ասեցին նորան, Ո՞րտեղ
ես կամենում, որ քեզ համար
զատիկը պատրաստենք ուտելու։
18 Նա էլ ասեց. Գնացէք քաղաքն՝
այսինչի մօտ, և ասեցէք նորան.
Վարդապետն ասում է՝ Իմ ժա-
մանակը մօտ է. քեզ մօտ եմ ա-
նելու զատիկն իմ աշակերտների
19 հետ։ Եւ աշակերտներն արին
ինչպէս Յիսուսը հրամայեց նո-
րանց. և զատիկը պատրաստեցին։
20 Եւ երբոր իրիկուն եղաւ տասն-
21 ևերկուսի հետ սեղան նստեց։ Եւ
նորանք ուտելիս, ասեց. Ճշմա-
րիտ ասում եմ ձեզ, որ ձեզա-
22 նից մէկը կ'մատնէ ինձ։ Եւ նո-
րանց ամեն մէկը շատ տրտմած՝
սկսեցին նորան ասել. միթէ ե՞ս
23 եմ, Տէր։ Նա էլ պատասխանեց
և ասեց. Նա որ ինձ հետ իր
ձեռքը սկաւառակի մէջ մտցրեց,
24 նա կ'մատնէ ինձ։ Իրաւի մարդի
Որդին կ'գնայ, ինչպէս նորա հա-
մար գրուած է. բայց վա՛յ այն
մարդին, որի ձեռով մարդի Որ-
դին կ'մատնուի. լաւ էր նորան,
թէ այն մարդը ծնուած չ'լինէր։
25 Յուդան էլ՝ նորա մատնողը՝ պա-
տասխանեց և ասեց. Միթէ ե՞ս
եմ, Վարդապետ։ Նորան ասեց,
Դու ասեցիր։
26 Եւ նորանք դեռ ուտում էին,
Յիսուսը հացն առաւ և օրհնե-
լով կտրեց, և աշակերտներին
տուաւ և ասեց. Առէ՛ք կերէք,
27 այս է իմ մարմինը։ Եւ բաժակն
առաւ, գոհացաւ, նորանց տուաւ
և ասեց. Խմեցէ՛ք դորանից ա-
մենքդ։ Որովհետև այդ է իմ ար- 28
իւնը նոր ուխտի, որ թափվում
է շատերի համար ի թողութիւն
մեղաց։ Միայն ասում եմ ձեզ, 29
թէ Այսուհետև որթի այս բեր-
քիցն էլ չեմ խմիլ մինչև այն
օրը, որ դորան ձեզ հետ նոր կը
խմեմ իմ Հօր արքայութեան մէջ։
Եւ օրհներգելուց յետոյ դուրս 30
ելան Զիթենեաց սարը։ Այն ժա- 31
մանակ Յիսուսը նորանց ասեց.
Դուք ամենքդ այս գիշեր կ'գայ-
թակղիք ինձանից. որովհետև
գրուած է՝ Ես հովիւը կ'զարկեմ՝
և հօտի ոչխարները կ'ցրուին։
Բայց իմ յարութիւն առնելուցը 32
յետոյ ձեզանից առաջ կ'գնամ
Գալիլեա։ Պետրոսը պատասխա- 33
նեց և ասեց նորան. Թէև ամենքը
գայթակղեն քեզանից, ես երբէք
չեմ գայթակղիլ։ Յիսուսը նորան 34
ասեց. Ճշմարիտ ասում եմ քեզ.
այս գիշեր դեռ հաւը չ'խօսած՝
երեք անգամ կ'ուրանաս ինձ։
Պետրոսը նորան ասեց. եթէ քեզ 35
հետ մեռնելու էլ լինիմ, չեմ
ուրանալ քեզ. այնպէս էլ բո-
լոր աշակերտներն էին ասում։
Այն ժամանակ Յիսուսը նո- 36
րանց հետ մի տեղ եկաւ՝ անունը
Գեթսեմանի, և ասեց աշակերտ-
ներին. Այդտեղ նստեցէք, մինչև
որ ես գնամ աղօթք անեմ այն-
տեղ։ Եւ Պետրոսին և Զեբեդեայի 37
երկու որդկանցն իր հետ առաւ,
սկսեց տրտմիլ և վշտանալ։ Այն 38
ժամանակ նորանց ասեց. Հոգիս
մեռնելու չափ տրտմած է. այս-
տեղ մնացէք, և ինձ հետ ար-
թուն կացէք։ Եւ մի քիչ առաջ 39
գնալով իր երեսի վերայ ընկաւ,
աղօթք էր անում և ասում. Իմ
Հայր, եթէ կարելի է, թող այս
բաժակն ինձանից անցնի. սակայն
ոչ թէ ինչպէս ես եմ կամենում,
այլ ինչպէս դու։ Եւ աշակերտ- 40
ների մօտ է գալիս, և նորանց
քնի մէջ է գտնում և ասում է
Պետրոսին. Այդպէս մէկ ժամ
է՞լ չ'կարացիք ինձ հետ արթուն
կենալ։ Արթուն կացէք և ա- 41
ղօթք արէք, որ փորձութեան
մէջ չ'մտնէք. հոգին յօժար է,

42 բայց մարմինը տկար։ Դարձեալ
երկրորդ անգամ Յիսուսը գնաց,
աղօթք արաւ՝ և ասեց. Իմ Հայր,
եթէ կարելի չէ որ այս բաժակն
ինձանից անցնի առանց իմ նորան
43 խմելուս, քո կամքը լինի։ Եւ
գալով նորանց դարձեալ քնի
մէջ է գտնում. որովհետև նո-
րանց աչքերը ծանրացել էին։
44 Նորանց թողեց՝ դարձեալ գնաց,
և երրորդ անգամ աղօթք արաւ
45 և միևնոյն խօսքն ասեց։ Այն ժա-
մանակ գալիս է իր աշակերտնե-
րի մօտ և նորանց ասում. Այ-
սուհետև քնեցէք և հանգստա-
ցէք. որ ահա հասել է ժամը, և
մարդի Որդին մատնվում է մե-
46 ղաւորների ձեռը։ Վեր կացէք
գնանք, ահա հասաւ ինձ մատ-
նողը։
47 Եւ նա տակաւին խօսում էր,
ահա Յուդան՝ այն տասնևերկու-
սից մէկը եկաւ, և նորա հետ
մեծ ամբոխ սրերով և բիրերով՝
քահանայապետների և ժողովրդի
48 ծերերի կողմից։ Եւ նորան մատ-
նողը նորանց նշան էր տուել և
ասել. Որին որ համբուրեմ՝ նա
49 է, նորան բռնեցէք։ Եւ շուտով
Յիսուսի մօտ եկաւ և ասեց.
Բարև, վարդապետ. և համբու-
50 րեց նորան։ Յիսուսն էլ ասեց
նորան. Ընկեր, ինչու համար ե-
կար. և այն ժամանակ մօտ եկան՝
Յիսուսին ձեռք ձգեցին՝ և բռնե-
51 ցին նորան։ Եւ ահա Յիսուսի
հետ լինողներից մէկը ձեռքը
մեկնեց, իր սուրը հանեց, և քա-
հանայապետի ծառային դարկե-
52 լով ականջը կտրեց։ Այն ժա-
մանակ Յիսուսը նորան ասեց.
Սուրդ տեղը դիր. որովհետև բո-
լոր սուր վեր առնողները սրով
53 պիտի կորչեն։ Կամ կարծո՞ւմ ես
թէ չեմ կարող հիմա իմ Հօրն
աղաչել, որ հասցնէ ինձ աւելի
քան տասնևերկու գունդ հրեշ-
54 տակներ։ Բայց ի՞նչպէս կ՚կա-
տարուին գրքերը, թէ այսպէս
պէտք է լինել։
55 Այն ժամին Յիսուսն այն ամ-
բոխներին ասեց. Ինչպէս մի ա-
ւազակի՞ վերայ սրերով և բիրե-
րով դուրս եկաք ինձ բռնելու.
ամեն օր ձեզ մօտ նստում էի և
տաճարումը սովորեցնում էի, և
չ՚բռնեցիք ինձ։ Բայց այս ամենը
56 եղաւ, որ մարգարէների գրքերը
կատարուին։ Այն ժամանակ բո-
լոր աշակերտները նորան թողե-
ցին փախան։
Բայց նորանք Յիսուսին բռնե-
57 ցին տարան Կայիափա քահանա-
յապետի մօտ, ուր որ դպիրները
և ծերերը ժողովուած էին։ Պետ-
58 րոսն էլ գնում էր նորա ետևից
հեռուանց մինչև քահանայապե-
տի սրահը, և ներս մտաւ, ծա-
ռաների հետ նստեց՝ վերջը տես-
նելու։ Բայց քահանայապետները
59 և ծերերը և բոլոր ատեանը Յի-
սուսի դէմ սուտ վկայութիւն
էին որոնում որ նորան սպանեն,
բայց չ՚գտան։ Եւ թէպէտ շատ
60 սուտ վկաներ էին եկել, բայց չը
գտան. վերջապէս երկու սուտ
վկաներ առաջ եկան, Եւ ասե-
64 ցին. Սա ասեց Ես կարող եմ Ա-
ստուծոյ տաճարը քանդել՝ և ե-
րեք օրումը շինել նորան։ Եւ քա-
62 հանայապետը վեր կացաւ նորան
ասեց. Ոչինչ չե՞ս պատասխա-
նում. դորանք ի՞նչ են վկայում
քեզ դէմ։ Եւ Յիսուսը լուռ էր
63 կենում։ Եւ քահանայապետը
պատասխանեց և ասեց նորան.
Երդում եմ տալիս քեզ կենդա-
նի Աստուծովը որ մեզ ասես, թէ
դո՞ւ ես Քրիստոսը Աստուծոյ որ-
դին։ Յիսուսն էլ նորան ասեց.
64 Դու ասեցիր. սակայն ասում եմ
ձեզ, որ հիմիկուց յետոյ կ՚տես-
նէք մարդի Որդին Զօրութեան
աջ կողմը նստած՝ և երկնքի ամ-
պերի վերայ գալիս։ Այն ժամա-
65 նակ քահանայապետն իր հան-
գերձները պատառեց և ասեց թէ
Հայհոյեց. էլ ի՞նչ պէտք են մեզ
վկաներ. ահա հիմա դորա հայ-
հոյանքը լսեցիք։ Ի՞նչպէս է երե-
66 ւում ձեզ։ Նորանք էլ պատաս-
խանեցին և ասեցին. Մահապարտ
է։ Այն ժամանակ թքեցին նորա
67 երեսին, և բռնցքով ծեծեցին նո-
րան, ոմանք էլ ապտակ տուին
նորան, ասելով. Մարգարէացիր
68

[illegible]ինչև ե՞րբ պիտի ձեզ
[illegible] մինչև ե՞րբ պիտի
[illegible]ւմ. նորան ինձ մօտ
[illegible] նորան բերին նորա
[illegible]ոն որ տեսաւ, շու-
[illegible] թափահարեց նորան.
[illegible]ինն ընկած թաւալում
[illegible]ելով։ Նորա հօրը հար-
[illegible]ինի՞ ժամանակ է, որ
[illegible]ւ դորան. նա էլ ասեց՝
[illegible]ութիւնիցը. Եւ շատ ան-
[illegible] էլ կրակի մէջ գցեց և ջրի
[illegible], որ դորան կորցնէ, սակայն
եթէ մի բան կարող ես, օգնիր
22 մեզ՝ գթալով մեզ վերայ։ Յի-
սուսն էլ նորան ասեց. Այն՝ եթէ
կարող ես հաւատալ, ամեն բան
23 կարելի է հաւատացողին։ Եւ
շուտով տղայի հայրն աղաղա-
կեց և արտասուքով ասեց, Հա-
ւատում եմ, Տէր, իմ անհա-
24 ւատութեանն օգնիր։ Եւ երբոր
Յիսուսը տեսաւ թէ ամբոխը դիղ-
վում է, պիղծ ոգուն սաստեց և
ասեց նորան. Համր և խուլ ոգի,
ես հրամայում եմ քեզ, դորա-
նից դուրս եկ, և այլ ևս դորա
25 մէջ չ՚մտնես։ Եւ նա աղաղակե-
լով և սաստիկ թափահարելով
նորան, դուրս եկաւ. և նա մե-
ռելի պէս եղաւ. մինչև որ շա-
տերն ասում էին թէ Մեռաւ։
26 Եւ Յիսուսը նորա ձեռքիցը բռնեց,
վերկացրեց նորան. և նա կանգ-
նեց։ Եւ երբոր նա տուն մտաւ
աշակերտներն առանձին հարցրին
նորան թէ Մենք ի՞նչու չ՚կարո-
ցանք հանել նորան։ Եւ նա
[illegible]ց նորանց. [illegible]յդ ցեղը ուրիշ
[illegible] դուրս գայ,
[illegible]ով։
[illegible] Գա-
[illegible] և

Եւ եկաւ Կափառնայում. և 32
երբոր տանն էր, նորանց հարցը-
նում էր՝ Ի՞նչ էիք ճանապարհին
իրար հետ վիճում։ Բայց նորանք 33
լռում էին, որովհետև ճանա-
պարհին իրար հետ վիճում էին,
թէ ո՞վ է մեծը։ Եւ նա նստեց 34
տասնևերկուսին կանչեց և ասեց
նորանց. Եթէ մէկն ուզում է
առաջին լինել, թող ամենից յե-
տին և ամենի *ծառայ լինի։ Եւ 35
մի երեխայ առաւ, կանգնեցրեց
նորան նորանց միջումը. և նորան
գրկելով ասեց նորանց. Ով որ 36
այսպիսի երեխաներից մէկին իմ
անունովը ընդունի՝ ինձ է ընդու-
նում. և ով որ ինձ ընդունի՝ ինձ
չէ ընդունում, այլ ինձ ուղար-
կողին։ Եւ Յովհաննէսը նորան 37
պատասխանեց և ասեց. Վարդա-
պետ, մէկին տեսանք, որ քո ա-
նունովը դեւեր էր հանում, և
մեր ետևից չէր գալիս, և մենք
արգիլեցինք նորան, որովհետև
մեր ետևից չէր գալիս։ Յիսուսն 38
էլ ասեց. Մի արգիլէք նորան.
որովհետև ոչ ով չ՚կայ՝ որ իմ
անունովը մի զօրութիւն անէ,
և կարողանայ շուտով հայհոյել
ինձ։ Որովհետև ով որ մեզ հա- 39
կառակ չէ, մեր կողմն է։ Որով- 40
հետև ով որ մի բաժակ ջուր
խմեցնէ ձեզ իմ անունովը՝ թէ
դուք Քրիստոսինն էք, ճշմարիտ
ասում եմ ձեզ, նա չի կորցնիլ
իր վարձքը։ Եւ ով որ գայթակ- 41
ղեցնէ այս փոքրներից մէկին, որ
ինձ հաւատում են, աւելի լաւ
էր նորան, որ նորա վզիցը մի
ջաղացի քար անցնուի, և ծովը
գցուի։ Եւ եթէ քո [illegible] 42
գայթակղեցնի՝ [illegible]
[illegible]

նական կեանքը, քան թէ երկու
ոտք ունենաս՝ և գեհենը ընկնիս՝
այն անանցանելի կրակի մէջ.
45 Որտեղ նորանց որդը չէ մեռնում՝
46 և կրակը չէ անցնում։ Եւ եթէ
քո աչքը քեզ գայթակղեցնէ,
դուրս հանիր նորան. լաւ է քեզ՝
որ մէկ աչքով Աստուծոյ արքա-
յութիւնը մտնես, քան թէ եր-
կու աչք ունենաս՝ և կրակի գե-
47 հենն ընկնիս։ Որտեղ նորանց որդը
չէ մեռնում՝ և կրակը չէ անց-
48 նում։ Որովհետև բոլորը կրակով
պէտք է աղանուի, և ամեն զոհ
49 աղով պէտք է աղանուի։ Աղը
բարի է. իսկ եթէ աղն անհա-
մանայ, ի՞նչով պիտի համովացը-
նէք. աղ ունեցէք ձեր անձերու-
մը, և իրար հետ խաղաղութիւն
արէք։

ԳԼ. Ժ

1 Եւ այն տեղից վերկացաւ եկաւ
Հրէաստանի սահմանները՝ Յոր-
դանանի այն կողմովը. և ժողո-
վուրդները դարձեալ հաւաք-
վում էին նորա մօտ, և ինչպէս
որ սովոր էր՝ դարձեալ սովորե-
ցնում էր նորանց։
2 Բայց Փարիսեցիները մօտ ե-
կան, նորան հարցրին, թէ Ա-
ժա՞ն է մարդիս որ կինը արձակէ.
3 և փորձում էին նորան։ Նա էլ
պատասխանեց և ասեց նորանց,
Մովսէսն ի՞նչ պատուիրեց ձեզ։
4 Նորանք էլ ասեցին. Մովսէ-
սը հրաման տուաւ՝ արձակման
5 թուղթ գրել, և արձակել։ Եւ
Յիսուսը պատասխանեց և ասեց
նորանց. Նա ձեր քարասրտու-
թեան համար այն պատուիրանքը
...տեղծագոր-

հարցրին նորանից։ Եւ
նորանց. Ով որ կինն
մի ուրիշն առնէ, շ
գործում նորա դէմ։
մի կին իր մարդին արձ
րիշ մարդու գնայ, շնո
գործում։
Եւ նորա մօտ երեխանն
բերում՝ որ դպչի նորանց.
աշակերտները սաստում էին
բողներին։ Իսկ երբոր Յիսու
տեսաւ, բարկացաւ, և ասեց նո-
րանց. Թոյլ տուէք երեխաներին
ինձ մօտ գան, և մի արգիլէք դո-
րանց. որ այսպիսիներին է Ա-
տուծոյ արքայութիւնը։ Ճշմա-
րիտ ասում եմ ձեզ, Ով որ Ա-
տուծոյ արքայութիւնը չ՚ընդունի
ինչպէս երեխայ, նա չի մտնիլ նո-
րա մէջ։ Եւ նորանց առաւ գիր-
կը, ձեռքը դրաւ նորանց վերայ,
և օրհնեց նորանց։
Եւ այնտեղից ճանապարհը դը-
նալիս, մէկը վազելով եկաւ՝ ծունը
դրաւ, նորան հարցնում էր և
ասում. Բարի վարդապետ, ի՞նչ
գործեմ, որ յաւիտենական կեան-
քը ժառանգեմ։ Յիսուսն էլ ա-
սեց նորան. Ի՞նչու ես ինձ բարի
ասում. ոչ ով բարի չ՚կայ, բայց
միայն մէկը՝ Աստուած։ Պատուի-
րանքները գիտես՝ Մի շնար, Մի
սպանիր, Մի գողանար, Մի սուտ
վկայիր, Մի զրկիր, Քո հօրը և
մօրը պատուիր։ Նա էլ պատաս-
խանեց և ասեց նորան. Վարդա-
պետ, այդ ամենն իմ երեխայու-
թիւնից պահել եմ։ Յիսուսն էլ
նորան մտիկ տուաւ՝ նորան ս
րեց, և ասեց նորան. Մէ
պակաս է
ունիս
տուր.

ընթրիքներում առաջին բազմոց-
40 ներ։ Որ որբևայրիների տները ու-
ասում են, և պատճառանքով եր-
կար աղօթք են անում. դորանք
աւելի ևս դատապարտութիւն
կ՚առնեն։
41 Եւ Յիսուսը գանձանակի դի-
մացը նստած մտիկ էր անում,
թէ ժողովուրդն ինչպէս էր *փող
գցում գանձանակը, և շատ հա-
րուստներ շատ բաներ էին գցում։
42 Եւ մի աղքատ որբևայրի եկաւ
երկու լումայ գցեց, որ մի նա-
43 քարակիտ է։ Եւ իր աշակերտ-
ներին իրան մօտ կանչեց, և ասեց
նորանց. Ճշմարիտ ասում եմ
ձեզ՝ թէ այս աղքատ որբևայրին
գանձանակը գցողների ամենից
44 աւելի գցեց։ Որովհետև ամենքն
իրանց աւելորդիցը գցեցին. բայց
սա իր չքաւորութիւնիցը ամեն
ինչ որ ունէր գցեց, իր կեանքի
բոլոր ապրուստը։

ԳԼ. ԺԴ

1 Եւ երբոր նա տաճարիցը դուրս
էր գալիս, նորա աշակերտներիցը
մէկը նորան ասեց. Վարդապետ,
տես ի՞նչպիսի քարեր և ի՞նչպիսի
2 շինուածներ։ Եւ Յիսուսը պա-
տասխանեց և ասեց նորան. Տես-
նո՞ւմ ես այդ մեծ շինուածները.
քար քարի վերայ չի թողուիլ՝ որ
չ՚քանդուի։
3 Եւ երբոր նա Ձիթենեաց սարի
վերայ նստած էր տաճարի դիմա-
ցը, Պետրոսը և Յակոբոսը և Յով-
հաննէսը և Անդրէասը առանձին
4 հարցնում էին նորան. Ասիր մեզ,
դորանք ե՞րբ կ՚լինեն. և նշանն
ի՞նչ է, երբոր այդ բոլոր բաները
5 պիտի կատարուին։ Յիսուսն էլ
պատասխանեց և սկսեց նո-
րանց ասել. Զգոյշ կացէք, մի
6 գուցէ մէկը ձեզ խաբէ։ Որով-
հետև շատերը կ՚գան իմ անու-
նովը, և կ՚ասեն՝ թէ Ես եմ Քրիս-
տոսը. և շատերին կ՚մոլորեցնեն։
7 Բայց երբոր պատերազմներ և պա-
տերազմների լուրեր կ՚լսէք, մի

*Յուն. պղինձ

շփոթուիք, որովհետև պէտք է
որ լինեն. Բայց դեռ վերջը չէ։
Որովհետև ազգ ազգի վերայ վեր 8
կ՚կենայ, և թագաւորութիւն
թագաւորութեան վերայ. և տեղ
տեղ երկրաշարժներ կ՚լինեն, և
սովեր և խռովութիւններ կ՚լի-
նեն. սորանք նեղութիւնների
սկիզբն են։ Բայց դուք զգոյշ 9
կացէք ձեր անձերին, որ ձեզ
ատեանների կ՚մատնեն, և ժողո-
վարանների մէջ կ՚ծեծուիք, և
կուսակալների և թագաւորների
առաջին կ՚կանգնիք ինձ համար
նորանց վկայութիւն լինելու։ Եւ 10
բոլոր ազգերին պէտք է առաջ
աւետարանը քարոզուի։ Բայց 11
երբոր ձեզ կ՚տանեն որ մատնեն,
առաջուց հոգս չ՚անէք թէ ի՞նչ
պիտի խօսիք, և ոչ էլ մտածե-
ցէք. այլ ինչ որ այն ժամումը
կ՚տրուի ձեզ, այն խօսեցէք. ո-
րովհետև դուք չէք խօսողները՝
բայց Սուրբ Հոգին։ Եւ եղբայր 12
եղբօր կ՚մատնէ մահի, և հայրը
որդուն. և որդիք վեր կ՚կենան
ծնողների վերայ, և նորանց կը
սպանեն։ Եւ ամենին ատելի կ՚լի- 13
նիք իմ անունի համար. բայց ով
որ մինչև վերջը համբերէ՝ նա
կ՚ապրի։
Եւ երբոր տեսնէք աւերածի 14
պղծութիւնը, որ ասուած է Դա-
նիէլ մարգարէիցը, կանգնած այն
տեղումը որ արժան չէ. (ով որ
կարդում է, միտք առնէ.) այն
ժամանակ նորանք որ Հրէաստա-
նումն են, թող սարերը փախչեն։
Եւ ով որ կտրի վերայ է, թող 15
չ՚իջնէ տան մէջ, և չ՚մտնէ իր տա-
նիցը մի բան վեր առնելու։ Եւ 16
անդումը լինողը թող ետ չ՚դառ-
նայ իր հանդերձը առնելու։ Բայց 17
վայ այն օրերումը յղացածներին
և ծիծ տուողներին։ Եւ աղօթք 18
արէք, որ ձեր փախչելը ձմեռ ժա-
մանակին չ՚լինի։ Որովհետև այն 19
օրերը նեղութիւններ կ՚լինեն. որ
այնպիսիները աշխարհի սկզբիցը,
որ Աստուած ստեղծել է, մինչև
հիմա չեն եղած, և երբէք չեն
լինիլ։ Եւ եթէ Տէրն այն օրերը 20
չէր կարճացրել, ոչ մի մարմին

չէր ապրիլ, բայց ընտրուածների
համար, որոնց ընտրեց, այն օրերը
21 կարճացրեց։ Եւ այն ժամանակ
եթէ մէկը ձեզ ասէ. Ահա այս-
տեղ է Քրիստոսը, կամ ահա
22 այնտեղ, մի հաւատաք։ Որովհե-
տեւ սուտ քրիստոսներ և սուտ
մարգարէներ վեր կ'կենան. և
նշաններ և հրաշքներ կ'տան, որ
եթէ կարելի լինէր, ընտրուած-
23 ներին էլ մոլորեցնեն։ Բայց դուք
զգոյշ կացէք, ահա ասեցի առա-
ջուց բոլորը։
24 Բայց այն օրերումն այն նեղու-
թիւնից յետոյ արեգակը կ'խա-
ւարի, և լուսինն իր լոյսը չի տալ։
25 Եւ երկնքի աստղերը կ'թափուին,
և երկնքումը լինող զօրութիւն-
26 ները կ'շարժուին։ Եւ այն ժա-
մանակ կ'տեսնեն մարդի Որդին
ամպերով գալիս շատ զօրութիւ-
27 նով և փառքով։ Եւ այն ժա-
մանակ իր հրեշտակները կ'ու-
ղարկէ, և իր ընտրուածներին
չորս հողմիցը կ'ժողովէ, երկրի
ծայրիցը մինչև երկնքի ծայրը։
28 Բայց թզենուցը սովորեցէք առա-
կը. երբոր նորա ճղերը արդէն
կ'կակղին և տերևները կ'արձակ-
ուին գիտէք թէ ամառը մօտ է։
29 Այնպէս էլ դուք, երբոր տես-
նէք այս բոլորը լինելիս, իմացէք
30 թէ մօտիկ է դռներին։ Ճշմարիտ
ասում եմ ձեզ, թէ այս ազգը
չի անցնիլ, մինչև որ այս բոլորը
31 լինի։ Երկինքն և երկիրը կ'անց-
նեն, բայց իմ խօսքերը չեն անց-
նիլ։
32 Միայն այն օրուայ և ժամի հա-
մար ոչ ով չ'գիտէ, ոչ հրեշտակ-
ները երկնքումը և ոչ Որդին,
33 բայց միայն Հայրը։ Զգուշացէք,
արթուն կացէք և աղօթք արէք.
որովհետև չ'գիտէք թէ ժամա-
34 նակը երբ է։ Ինչպէս մի մարդ,
որ հեռու աշխարհք գնալիս իր
տունը թողէ, և իր ծառաներին
իշխանութիւն տայ, և ամեն մէ-
կին իր գործը, և դռնապանին
հրաման տայ, որ արթուն կենայ։
35 Արդ արթուն կացէք, որ չ'գի-
տէք թէ տանտէրը երբ կ'գայ,
իրիկո՞ւնը, թէ կէս գիշերը, թէ
հաւի խօսելու ժամանակին, թէ
առաւօտանց. Որ չ'լինի թէ յան- 36
կարծ գալով ձեզ քնած գտնէ։
Բայց ինչ որ ձեզ ասում եմ, 37
ամենին եմ ասում. Արթուն
կացէք։

ԳԼ. ԺԴ

Եւ երկու օրից յետոյ զատիկն 1
էր և բաղարջակերք, և քահա-
նայապետները և դպիրները որո-
նում էին թէ ի՞նչպէս նորան
նենգութեամբ բռնեն սպանեն։
Բայց ասում էին՝ Ոչ ԲԷ տօնումը, 2
մի գուցէ ժողովրդի մէջ խռո-
վութիւն լինի։
Եւ երբոր Բեթանիա էր, Սի- 3
մոն բորոտի տան սեղան նստած,
մի կին եկաւ՝ որ մի շիշ աղնիւ
թանկագին նարդոսի իւղ ունէր,
և շիշը կոտրեց՝ նորա գլխի վերայ
թափեց։ Բայց կային ոմանք որ 4
իրանց մէջ դժուարացան, ասե-
լով. Ի՞նչու համար եղաւ իւղի
այդ կորուստը։ Որովհետև կա- 5
րելի էր դորան երեք հարիւր դա-
հեկանից աւելի թանկ ծախել,
և աղքատներին տալ. և շատ
յանդիմանում էին այն Ինկանը։
Յիսուսն էլ ասեց. Թոյլ տուէք 6
դորան. Ի՞նչու էք նեղութիւն
տալիս դորան. ՊՊ մի բարի բան
գործեց ինձ վերայ։ Որովհետև 7
ամեն ժամանակ աղքատներին
ձեզ հետ ունիք, և երբոր կամե-
նաք՝ կարող էք նորանց բարի ա-
նել. բայց ինձ ամեն ժամանակ
ձեզ հետ չ'ունիք։ Դա ինչ որ 8
ունէր, արաւ. առաջուց իմ մար-
մինն օծեց՝ թաղման համար։ Ճշ- 9
մարիտ ասում եմ ձեզ, ուր որ
այս աւետարանը քարոզուի, բո-
լոր աշխարհքի մէջ դորա յիշա-
տակի համար նա էլ կ'խօսուի՝
որ դա արաւ։
Եւ Յուդա Իսկարիովտացին՝ 10
այն տասնևերկուսից մէկը՝ քա-
հանայապետների մօտ գնաց, որ
նորան մատնէ նորանց։ Նորանք 11
էլ երբոր լսեցին՝ ուրախացան և
խոստացան նորան արծաթ տալ.
և որոնում էր թէ ի՞նչպէս յար-

մար ժամանակով մատնէ նորան։
12 Եւ բաղարջակերաց առաջին
օրը, երբոր զատկի գառը մորթում
էին, նորա աշակերտները նորան
ասեցին. Ի՞նչտեղ ես կամենում,
որ գնանք պատրաստենք, որ զա-
13 տիկն ուտես։ Եւ իր աշակերտ-
ներից երկուսին ուղարկեց և ա-
սեց նորանց. Գնացէք քաղաքը,
և մի մարդ կ'պատահի ձեզ՝ ջրի
կուժ տանող, նորա ետևից գնա-
14 ցէք։ Եւ ուր որ մտնէ, այն տան
տիրոջն ասեցէք, թէ Վարդա-
պետն ասում է՝ Ո՞ւր է այն իջե-
ւանը, ուր զատիկն ուտեմ ա-
15 շակերտներիս հետ։ Եւ նա մի
մեծ վերնատուն ցոյց կ'տայ ձեզ՝
սարքուած պատրաստ. այնտեղ
16 պատրաստեցէք մեզ համար։ Եւ
նորա աշակերտները ելան ու ե-
կան քաղաքը, և գտան ինչպէս
նորանց ասեց. և զատիկը պատ-
րաստեցին։
17 Եւ երբոր իրիկուն եղաւ, ե-
18 կաւ տասնևերկուսին հետ։ Եւ
երբոր սեղան նստեցին և ուտում
էին, Յիսուսը ասեց. Ճշմարիտ
ասում եմ ձեզ, որ ձեզանից
մէկը կ'մատնէ ինձ. Նա որ ինձ
19 հետ ուտում է։ Նորանք էլ
սկսեցին տրտմել և մէկը մէկից
յետոյ նորան ասել, Մի՞թէ ես.
20 և միւսը՝ Միթէ ե՞ս։ Նա էլ
պատասխանեց և ասեց նորանց.
Տասնևերկուսիցդ մէկը՝ նա որ
ձեռքը ինձ հետ սկաւառակի մէջ
21 կոխեց։ Բայց մարդի Որդին կ'գնայ՝
ինչպէս նորա համար գրուած է.
սակայն վայ այն մարդին, որի ձե-
ռովն մարդի Որդին կ'մատնուի.
լաւ էր նորան, եթէ այն մարդը
ծնուած չ'լինէր։
22 Եւ նորանք ուտելիս, Յիսուսը
հաց առաւ՝ օրհնեց՝ կտրեց և
տուաւ նորանց և ասեց. *Առէք
կերէք". այս է իմ մարմինը։
23 Եւ բաժակն առաւ՝ գոհացաւ,
տուաւ նորանց, և ամենքը խմե-
24 ցին նորանից. Եւ ասեց նորանց.
Այս է իմ արիւնը նոր ուխտի,
որ շատերի համար թափվում է։
25 Ճշմարիտ ասում եմ ձեզ թէ
այլ ևս որթի բերքիցը չեմ խմիլ
մինչև այն օրը, երբոր նորան նոր
խմեմ Աստուծոյ արքայութեան
մէջ։
26 Եւ օրհներգելուց յետոյ դուրս
27 ելան Զիթենեաց սարը։ Եւ Յի-
սուսը նորանց ասեց թէ Ամենքդ
այս գիշեր կ'գայթակղիք ինձա-
նից. որովհետև գրուած է՝ Բէ
Հովիւը կ'զարկեմ՝ և ոչխարները
կ'ցրուին։ Բայց իմ յարութիւն 28
առնելուց յետոյ ձեզանից առաջ
կ'գնամ Գալիլեա։ Պետրոսն էլ 29
ասեց նորան. Թէև ամենքն էլ
գայթակղին, բայց ես ոչ։ Յի- 30
սուսն էլ նորան ասեց. Ճշմարիտ
ասում եմ քեզ, թէ այսօր,
հէնց այս գիշեր հաւը երկու ան-
գամ չ'խօսած, երեք անգամ
կ'ուրանաս ինձ։ Բայց նա առա- 31
ւել ևս ասում էր. Թէ որ քեզ
հետ մեռնել էլ պէտք լինի ինձ,
ես քեզ չեմ ուրանալ. այնպէս
էլ ամենքն էին ասում։
Եւ եկան մի տեղ՝ որի անունը 32
Գեթսեմանի էր. և նա իր աշա-
կերտներին ասեց. Այստեղ նստե-
ցէք, մինչև ես աղօթք անեմ։
Եւ Պետրոսին և Յակոբոսին և 33
Յովհաննէսին իր հետ առաւ, և
սկսեց զարհուրել և տխրել։ Եւ 34
ասեց նորանց. Իմ անձը մահի
չափ խիստ տրտմած է. այստեղ
մնացէք և արթուն կացէք։ Եւ 35
մի քիչ առաջ գնաց, գետնի վե-
րայ ընկաւ, և աղօթք էր անում,
որ եթէ կարելի է, այն ժամն ի-
րանից անցնէ։ Եւ ասում էր. 36
Աբբա, Հայր, ամեն բան կարելի
է քեզ, այս բաժակն ինձանից
անցրու. բայց ոչ թէ ինչ որ ես
եմ կամենում, այլ ինչ որ դու։
Եւ դալիս է գտնում նորանց 37
քնած և ասում Պետրոսին. Սի-
մոն, քնո՞ւմ ես, չ'կարացի՞ր մէկ
ժամ արթուն կենալ։ Արթուն 38
կացէք և աղօթք արէք, որ փոր-
ձութեան մէջ չ'մտնէք. հոգին
յօժար է, բայց մարմինը տկար։
Եւ դարձեալ գնաց աղօթք ա- 39
րաւ, նոյն խօսքերն ասելով։ Եւ 40
ետ դառաւ՝ նորանց դարձեալ

*Ոմանք՝ Առէք.

քնած գտաւ, որովհետև նորանց
աչքերը ծանրացել էին, և չ'գի-
տէին Թէ ինչ պատասխանեն նո-
41 բան։ Եւ երրորդ անգամն է գա-
լիս և ասում նորանց. Այսուհե-
տև քնեցէք և հանգիստ առէք.
բաւական է. ժամն եկաւ. ահա
մարդի Որդին մատնվում է մե-
42 ղաւորների ձեռք։ Վեր կացէք
գնանք, ահա մատնեցաւ ինձ մատ-
նողը։
43 Եւ շուտով՝ դեռ նա խօսելիս՝
եկաւ Յուդան՝ այն տասնեերկու-
սից մէկը. և նորա հետ շատ ամ-
բոխ սրերով և բիլերով՝ քահա-
նայապետներիցը և դպիրներիցը և
44 ծերերիցը։ Նորան մատնողն էլ
նորանց նշան էր տուել՝ և ասել,
Որին որ ես համբուրեմ, նա է,
նորան բռնեցէք և զգուշութեամբ
45 տարէք։ Եւ եկաւ՝ շուտով մո-
տեցաւ նորան և ասեց. Ռա՛բբի,
Ռա՛բբի, և համբուրեց նորան։
46 Եւ նորանք իրանց ձեռքը գցեցին
նորա վերայ և բռնեցին նորան։
47 Եւ նորա մօտ կանգնածներից
մէկը սուրը քաշեց՝ քահանայա-
պետի ծառային զարկեց, և ա-
48 կանջը կտրեց։ Եւ Յիսուսը պա-
տասխանեց և ասեց նորանց. Ինչ-
պէս մի աւազակի՞ վերայ սրերով
և բիլերով դուբս եկաք ինձ
49 բռնելու։ Ամեն օր ձեզ մօտ էի
տաճարում սովորեցնելով, և ինձ
չ'բռնեցիք. բայց որպէս զի գրքերը
50 կատարուին։ Եւ ամենքը նորան
51 թողեցին փախան։ Եւ մէկ երի-
տասարդ նորա հետից գնում էր,
որ կտաւ էր գցել մերկ մարմնի
վերայ, և երիտասարդները բռո-
52 նեցին նորան։ Իսկ նա կտաւը
թողեց և մերկ փախաւ նորանցից։
53 Եւ Յիսուսին տարան քահա-
նայապետի մօտ, և բոլոր քահա-
նայապետները և դպիրները և ծե-
54 րերը նորա մօտ էին գալիս։ Եւ
Պետրոսն էլ հետևանից գնաց նո-
րա հետից մինչև քահանայապե-
տի սրահի ներսը, և սպասաւոր-
ների հետ նստել էր և կրակի
55 մօտ տաքանում էր։ Բայց քա-
հանայապետները և բոլոր ատ-
եանը Յիսուսի դեմ վկայութիւն
էին որոնում որ նորան սպանեն.
ասկայն չէին գտնում։ Որովհետև 56
շատերը սուտ վկայութիւն էին
տալիս նորա դէմ, բայց վկայու-
թիւնները իրար յարմար չէին։
Եւ ոմանք վերկացան և նորա դէմ 57
սուտ վկայում էին և ասում՝
Թէ Մենք լսեցինք դորանից, որ 58
ասում էր՝ Թէ Ես այդ ձեռա-
գործ տաճարը կ'քանդեմ, և ե-
րեք օրում ուրիշը կ'շինեմ ան-
ձեռագործ։ Սակայն այնպէս էլ 59
նորանց վկայութիւնն իրար յար-
մար չէր։ Եւ քահանայապետը 60
վերկացած մէջտեղը՝ Յիսուսին
հարցրեց և ասեց. Ոչինչ չե՞ս պա-
տասխանում. ինչ են վկայում
դորանք քեզ դէմ։ Իսկ նա լուռ 61
էր կենում՝ և ոչինչ պատասխան
չէր տալիս. քահանայապետը
դարձեալ նորան հարցնում էր
և ասում. Դո՞ւ ես Քրիստոսը՝
Օրհնեալի Որդին։ Յիսուսն էլ 62
պատասխանեց, Ես եմ. և դուք
կ'տեսնէք մարդի Որդին զօրու-
թեան աջ կողմը նստած, և եր-
կնքի ամպերովն եկած։ Եւ քա- 63
հանայապետն իր հանդերձները
պատառելով ասեց. Էլ ինչ պէտք
է մեզ վկաներ։ Լսեցիք հայհո- 64
յանքը. ինչպէս է երևում ձեզ.
Նորանք էլ ամենքը դատապար-
տեցին նորան, թէ Մահապարտ է։
Եւ ոմանք սկսեցին նորա վերայ 65
թքել, և երեսը ծածկել, և
բռունցքով ծեծել նորան և նո-
րան ասել, Մարգարէացիր. և
սպասաւորները նորան ապտակնե-
րով ծեծում էին։
Եւ երբոր Պետրոսը վարը սրա- 66
հումն էր, քահանայապետի աղա-
խիններից մէկը գալիս է, և տես- 67
նում է Պետրոսին որ տաքանում
է, մտիկ է տալիս նորան՝ և ա-
սում. Դու էլ էիր Յիսուս Նա-
զովրեցու հետ։ Բայց նա ուրա- 68
ցաւ և ասեց. Չ'գիտեմ և չեմ
էլ հասկանում, թէ դու ինչ ես
ասում. և դուրս գնաց նախա-
սրահը և հաւը խօսեց։ Եւ աղա- 69
խինը նորան տեսաւ, դարձեալ
սկսեց ասել այնտեղ կանգնած-
ներին Թէ Սա նորանցից է։ Բայց 70

նա դարձեալ ուրացաւ. և մի
քիչ յետոյ այնտեղ կանգնած-
ները դարձեալ ասեցին Պետրո-
սին. Ճշմարի՛տ դու էլ նորանցից
ես, որովհետև Գալիլեացի ես և
71 քո խօսուածքն էլ նման է։ Բայց
նա սկսեց անիծել և երդուել ա-
նել Թէ ես չ'գիտեմ այն մար-
72 դին, որ դուք ասում էք։ Եւ
հաւը երկրորդ անգամ խօսեց։
Եւ Պետրոսը յիշեց այն խօսքը, որ
Յիսուսը նորան ասեց Թէ Հաւը
դեռ երկու անգամ չ'խօսած
դու երեք անգամ կ'ուրանաս
ինձ. և սկսեց լալ։

ԳԼ. Ժ.Ե

1 Եւ շուտով առաւօտանց քա-
հանայապետները ծերերի և դ-
պիրների հետ և բոլոր ատեանը
խորհուրդ արին, Յիսուսին կա-
պեցին՝ և տարան մատնեցին Պի-
2 ղատոսին։ Եւ Պիղատոսը նորան
հարցրեց. Դո՞ւ ես Հրէից Թա-
գաւորը. նա էլ պատասխանեց և
3 ասեց նորան. Դու ես ասում։ Եւ
քահանայապետները շատ ամ-
բաստանութիւններ էին անում
4 նորանից. Եւ Պիղատոսը դարձ-
եալ հարցրեց նորան և ասեց.
Ոչինչ պատասխան չե՞ս տալիս.
տես ո՛րքան են վկայում քեզ
5 դէմ։ Բայց Յիսուսը դարձեալ
ոչինչ չ'պատասխանեց, մինչև որ
Պիղատոսը զարմացաւ։
6 Բայց նա ամեն տոնի ժամանա-
կին մէկ բանտարկեալ էր արձա-
կում նորանց համար, որին որ
7 խնդրում էին։ Եւ Բարաբբա
ասուած մէկը կար այն խռովա-
րարների հետ կապուած, որ ի-
րանց խռովութիւնում մարդաս-
8 պանութիւն էին արել։ Եւ ամ-
բոխն սկսեց բարձր ձայնով աղա-
ղակել և խնդրել, որ անէ ինչ-
պէս միշտ անում էր նորանց։
9 Պիղատոսն էլ պատասխանեց նո-
րանց և ասեց. Կամենո՞ւմ էք՝
Հրէից Թագաւորը կ'արձակեմ
10 ձեզ համար։ Որովհետև գիտէր որ
քահանայապետները նախանձով
11 էին մատնել նորան։ Բայց քահա-
նայապետներն ամբոխին դրդուե-
ցին, որ աւելի Բարաբբային արձա-
կէ նորանց համար։ Եւ Պիղատոսը 12
դարձեալ պատասխանեց նորանց և
ասեց. Ապա ինչ էք ուզում որ ա-
նեմ նորան որին ասում էք Հրէից
Թագաւոր։ Եւ նորանք դարձեալ 13
աղաղակեցին, խաչիը նորան։ Պի- 14
ղատոսն էլ նորանց ասեց. Ապա
ինչ չար բան է արել. և նորանք
առաւել ևս աղաղակում էին,
խաչիր դորան։ Բայց Պիղատոսը՝ 15
որովհետև կամենում էր ամբոխը
գոհացնել, Բարաբբային արձա-
կեց նորանց համար. և Յիսուս-
ին ծեծեց՝ նորանց յանձնեց, որ
խաչուի։
Եւ զինուորները նորան տարան 16
սրահի ներսը այսինքն պալատը.
և բոլոր գունդը մէկտեղ կանչե-
ցին, Եւ նորան ծիրանի հագցրին 17
և փշերից շինած պսակ գրին նո-
րա գլխին. Եւ սկսեցին նորան ող-
ջոյն տալ. Բարե՛ւ, Հրէից Թա-
գաւոր։ Եւ նորա գլուխը եղէգով 19
ծեծում էին, և նորա վերայ
թքում էին՝ և ծունկ գնելով
երկրպագում էին նորան։ Եւ 20
երբոր ծաղր արին նորան, այն ծի-
րանին նորանից հանեցին, և իր
հանդերձները հագցրին, և դուրս
տարան որ խաչեն նորան։
Եւ պահակ բռնեցին Սիմոն 21
Կիւրենացուն, Ալեքսանդրի և
Ռուփոսի հօրը՝ որ արտից գա-
լով այն տեղից անցնում էր, որ
նորա խաչը վեր առնէ։ Եւ նորան 22
տարան մի Գողգոթա տեղ՝ որ Թարգմանվում է Գան-
կի տեղ։ Եւ նորան զմռսած գի- 23
նի էին տալիս խմելու, բայց նա
չ'առաւ։ Եւ նորան խաչեցին և 24
բաժանեցին նորա հանդերձները
վիճակ գցելով նորանց վերայ՝ Թէ
ով ինչ պիտի առնէ։ Եւ ժամը 25
երրորդն էր՝ որ նորան խաչեցին։
Եւ նորա յանցանքի գիրը գրուած 26
էր՝ ՀՐԷԻՑ ԹԱԳԱՒՈՐԸ։ Եւ նո- 27
րա հետ երկու աւազակ խաչե-
ցին, մէկը նորա աջ կողմին և
մէկը ձախ կողմին։ Եւ կատար- 28
ուեցաւ այն գիրը, որ ասում է,
Անօրէնների հետ համբուեցաւ։

29 Եւ այնտեղով անցնողները նոքան
հայհոյում էին, իրանց գլուխները
շարժելով ու ասելով, Վա՛յ,
ով տաճարը քանդող ու երեք
30 օրումը շինող, Ապրեցրու քո ան-
31 ձը և իջիր խաչից։ Նոյնպես էլ
քահանայապետները դպիրների
հետ միասին ծաղր էին անում և
ասում. Ուրիշներին ապրեցրեց՝
իր անձը չէ կարողանում ապրե-
32 ցնել։ Քրիստոսը՝ Իսրայելի թա-
գաւորը թող հիմա խաչից իջնէ,
որ տեսնինք և հաւատանք. և
նորա հետ խաչուածներն էլ էին
նոքան նախատինք տալիս։
33 Եւ երբոր ժամը վեցը եկաւ,
խաւար եղաւ բոլոր երկրի վերայ
34 մինչև ինը ժամը։ Եւ իններորդ
ժամին Յիսուսը մեծ ձայնով ա-
ղաղակեց և ասեց. Էլ՛ի Էլ՛ի լա՛-
մա սաբաքթանի. որ թարգմանվում է՝ Իմ Աստուած, իմ Աստ-
35 ուած, ի՞նչու թողիր ինձ։ Եւ
այնտեղ կանգնածներից ոմանք,
երբոր լսեցին, ասում էին. Ահա
36 Եղիային է կանչում։ Եւ մէկը
վազեց մի սպունգ քացախով
լցրեց, և եղէգի վերայ դրաւ,
տուաւ նոքան՝ որ խմէ, և ասեց.
Թողէք տեսնենք, Եղիան կ'գա՞յ
որ նոքան վայր բերէ։
37 Եւ Յիսուսը մեծ ձայն արձա-
38 կեց՝ և հոգին տուաւ։ Եւ տա-
ճարի վարագոյրն երկու պատառ-
ուեցաւ՝ վերևից մինչև ցածը։
39 Եւ հարիւրապետը, որ այնտեղ
նորա դիմացը կանգնած էր, երբ
որ տեսաւ թէ Յիսուսը այսպես
աղաղակելով հոգի տուաւ, ա-
սեց. Ճշմարիտ, այս մարդն Ա-
40 ստուծոյ Որդի էր։ Կանայք էլ կա-
յին, որ հեռուանց մտիկ էին
տալիս, որոնց միջումն էր Մարի-
ամ Մագդաղենացին, և փոքր
Յակոբոսի և Յովսէսի մայրը Մա-
41 րիամ և Սալովմէն, Որոնք էլ,
երբոր նա Գալիլեա էր, նորա ե-
տևից գնում և նորան ծառա-
յում էին. և ուրիշ շատ կանայք
էլ, որ նորա հետ Երուսաղէմ
էին եկել։
42 Եւ երբոր արդէն իրիկուն ե-
ղաւ, որովհետև ուրբաթ էր՝
այսինքն շաբաթից առաջի օրը։
43 Եկաւ Արիմաթիայի Յովսէփը՝ մի
երևելի խորհրդական, որ ինքն էլ
Աստուծոյ արքայութեան սպա-
սում էր. համարձակվելով մտաւ
Պիղատոսի մօտ, և խնդրեց Յի-
44 սուսի մարմինը։ Եւ Պիղատոսը
զարմացաւ, թէ արդէն մեռել է.
և հարիւրապետին իրան մօտ կան-
չեց, նորան հարցրեց և ասեց. Թէ
45 Շատո՞նց է որ մեռաւ։ Եւ հա-
րիւրապետից տեղեկանալով,
մարմինը Յովսէփին շնորհեց։ Եւ
46 Յովսէփը կտաւ առաւ և նորան
իջեցրեց կտաւով պատեց, և նո-
րան մի գերեզմանի մէջ դրաւ,
որ փորուած էր քարից. և մի քար
թաւալեց գերեզմանի դուռը։
47 Եւ Մարիամ Մագդաղենացին և
Յովսեսի մայր Մարիամն էլ տես-
նում էին թէ ուր որ նա դրուեցաւ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ երբոր շաբաթն անցաւ, Մա-
րիամ Մագդաղենացին և Յակոբի
մայրը Մարիամն և Սալովմէն խունկեր առան, որ գան նորան օծեն։
2 Եւ միաշաբաթի առաւօտանց
շատ կանուխ արեգակը ծագելիս
գալիս են գերեզմանը։
3 Եւ իրար ասում էին. Ո՞վ կ'թաւալեցնէ քարը մեզ համար գերեզմանի
4 դռնիցը։ Եւ նայեցան տեսան, որ
քարը գերեզմանիցը հեռու էր
թաւալած, որովհետև շատ մեծ
5 էր։ Եւ երբոր գերեզմանը մտան,
մի երիտասարդ տեսան՝ աջ կող-
մը նստած՝ սպիտակ պատմուճան
հագած. և շատ զարհուրեցին։
6 Եւ նա ասեց նորանց. Մի զար-
հուրիք, դուք խաչուած Նազով-
րեցի Յիսուսն էք որոնում. նա
յարուցեալ է, այստեղ չէ,
տես այն տեղը՝ ուր որ նորան
7 դրին։ Բայց գնացէք, նորա աշա-
կերտներին և Պետրոսին ասեցէք,
Թէ Նա ձեզանից առաջ կ'գնայ
Գալիլեա. այնտեղ կ'տեսնէք նո-
8 րան ինչպես նա ձեզ ասեց։ Եւ
շուտով դուրս եկան փախան գե-
րեզմանիցը, և նորանք դողալ և

սարսափով բռնուած էին, և ոչ
9 ոքի ոչինչ չ'ասեցին. որովհետև
վախենում էին։
Եւ Յիսուսը երբոր յարութիւն
առաւ՝ միաշաբաթի առաւօտանց
առաջ երևեցաւ Մարիամ Մագ-
դաղենացուն, որից եօթը դև էր
10 հանել։ Եւ նա գնաց պատմեց նո-
րա հետ լինողներին, որ սուգ էին
11 անում և լաց լինում։ Եւ նորանք
էլ լսելով, թէ կենդանի է, և
երևեցաւ նորան, չ'հաւատացին։
12 Սորանից յետոյ ուրիշ կերպա-
րանքով երևեցաւ նորանցից եր-
կուսին, որ ման գալով յանդն
13 էին գնում։ Եւ նորանք էլ գնացին
այն միւսներին պատմեցին, բայց
նորանց էլ չ'հաւատացին։
14 Վերջը երբոր այն տասնմէկը
սեղան էին նստած, նորանց երե-
ւեցաւ և նորանց անհաւատու-
թիւնը և քարասրտութիւնը յան-
դիմանից, որ չ'հաւատացին նո-
րանց, որ նորան տեսել էին յա-
րութիւն առած։
15 Եւ նորանց ասեց. Գնացէք բո-
լոր աշխարհը, աւետարանը քա-
րոզեցէք ամեն արարածի։
16 Ով որ հաւատաց և մկրտուեցաւ կ'փրկուի. և ով որ չ'հաւատաց՝ կը
դատապարտուի։ Նորանց էլ, որ
17 հաւատացին, այս նշանները կը
հետևին. իմ անունովը դևեր կը
հանեն, նոր լեզուներ կ'խօսեն.
18 Օձեր վեր կ'առնեն, և եթէ մի
մահացու խմիչ, նորանց վնաս
չի տալ. հիւանդների վերայ ձեռք
կ'դնեն, և նորանք կ'առողջանան։
19 Աբդ Տէրը նորանց հետ խօսե-
լուց յետոյ, երկինքը համբարձաւ,
20 Աստուծոյ աջ կողմը նստեց։ Նո-
րանք էլ դուրս գնացին, ամեն
տեղ քարոզում էին, և Տէրը
գործակցում էր նորանց և խօսքը
հաստատում էր այն նշաններովը
որ հետևում էին։ Ամէն։

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ

ՂՈՒԿԱՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Որովհետև շատերը ձեռնարկե-
ցին մեր մէջ հաստատուած բա-
ների պատմութիւնը վերստին
2 կարգել. Ինչպես մեզ աւանդե-
ցին սկզբից ականատես և խօս-
քին սպասաւոր լինողները, ես
էլ, որ սկզբիցը բոլոր բաներին
ճշմարտութիւնով հետևեցի, կա-
մեցայ կարգաւ գրել քեզ, ա՛վ
3 պատուականդ Թէոփիլէ. Որ իմա-
նաս այն բաների առուգութիւնը,
որ ասվորեցիր։
4 Հրեաստանի Թագաւոր Հերով-
5 դէսի օրերումը մի քահանայ կար
անունը Զաքարիա, Աբիայի դա-
սակարգութիւնից, և նորա կինն
Ահարոնի աղջիկներից, և նորա
6 անունն Եղիսաբէթ։ Երկուսն էլ

Աստուծոյ առաջին արդար էին,
և Տիրոջ բոլոր պատուիրանքներ-
ումը և իրաւունքներումը գը-
7 նում էին անարատ։ Եւ նորանք
զաւակ չ'ունէին, որովհետև Եղի-
սաբեթը ամուլ էր. և երկուսն
էլ իրանց օրերը անց էին կացրել։
8 Եւ եղաւ, երբոր նա քահա-
նայութիւն էր անում իրան հա-
սած դասակարգութեան օրերու-
9 մը Աստուծոյ առաջին, Քահա-
նայութեան սովորութեան պէս,
իրան ընկաւ, որ Տիրոջ տաճարը
մտնէ խնկարկութիւն անելու։
10 Եւ ժողովրդի բոլոր բազմութիւ-
նը դուրսն աղօթք էին անում
11 խնկարկութեան ժամանակին։ Եւ
Տիրոջ հրեշտակը երևեցաւ նո-
րան՝ կանգնած խնկի սեղանի աջ
12 կողմին։ Եւ Զաքարիան տեսնե-
լով շփոթուեցաւ, և վախ ընկաւ
13 նորա վերայ։ Եւ հրեշտակն ա-
սեց նորան. Մի վախենար, Զա-
քարիա. որովհետև քո աղօթքը
լսուեցաւ, և քո կինն Եղիսաբե-
թը մի որդի կ'ծնի քեզ, և նորա
14 անունը Յովհաննէս կ'դնես։ Եւ
քեզ ուրախութիւն և ցնծու-
թիւն կ'լինի, և շատերը նորա
15 ծնունդովը կ'ուրախանան։ Որով-
հետև նա մեծ կ'լինի Տիրոջ ա-
ռաջին. և գինի և օղի չի խմիլ,
և դեռ իր մօր որովայնիցը Սուրբ
16 Հոգով կ'լցուի։ Եւ Իսրայէլի որդի-
ներից շատերին կ'դարձնէ դէպի
17 իրանց Տէր Աստուածը։ Եւ ինքն
կ'գայ նորա առաջից Եղիայի հո-
գովը և զօրութիւնովը, որ հայ-
րերի սրտերը դէպի որդիքը դար-
ձնէ, և անհնազանդները՝ արդար-
ների իմաստութեան մէջ, որ Տի-
րոջ համար բարեկարգ ժողովուրդ
18 պատրաստէ։ Եւ Զաքարիան ա-
սեց հրեշտակին. Ես ի՞նչով ճա-
նաչեմ այդ. որովհետև ես ծեր
եմ, և իմ կինն իր օրերն անց է
19 կացրել։ Եւ հրեշտակը պատաս-
խանեց և ասեց նորան. Ես Գաբ-
րիէլն եմ, որ Աստուծոյ առաջին
կանգնում եմ, և ուղարկուեցայ
քեզ հետ խօսելու և այս բաներ-
20 ը քեզ աւետիք տալու։ Եւ ա-
հա համր կ'լինես, և չես կարե-
նալ խօսել, մինչև այն օրն՝ որ
այս բաները կ'լինին. որովհետև
չ'հաւատացիր իմ այս խօսքերին՝
որ իրանց ժամանակին կ'կատար-
ուին։ Եւ ժողովուրդը սպասում 21
էր Զաքարիային, և զարմանում
էին նորա տաճարի մէջ ուշանա-
լու համար։ Եւ երբոր դուրս ե- 22
կաւ, չէր կարենում խօսել նո-
րանց հետ. և իմացան՝ որ տա-
ճարի մէջ տեսիլք է տեսել. և
նա նշաններով էր խօսում նո-
րանց հետ, և մնում էր պապան-
ձուած։ Եւ եղաւ, երբոր նորա 23
պաշտօնի օրերը կատարուեցան,
գնաց իր տունը։ Եւ այն օրերից 24
յետոյ նորա կին Եղիսաբեթը
յղացաւ, և հինգ ամիս իր անձը
ծածուկ պահում էր և ասում.
Թէ այսպէս արաւ ինձ Տէրն այս 25
օրերումն, որ ինչ վերայ նայեց՝ որ
իմ նախատինքը մարդկանց միջից
վեր առնէ։
Եւ վեցերորդ ամսումը Գաբ- 26
րիէլ հրեշտակն Աստուածանից
ուղարկուեցաւ Գալիլեայի մի քա-
ղաք, որի անունը Նազարէթ էր,
Մի կոյսի մօտ, որ նշանուած էր 27
մի մարդի, որի անունը Յովսէփ էր՝
Դաւիթի տանիցը. և այն կոյսի
անունը Մարիամ էր։ Եւ հրեշ- 28
տակը նորա մօտ գալով ասեց.
Ողջոյն քեզ, ով շնորհընկալ.
Տէրը քեզ հետ. օրհնեալ ես դու
կանանց մէջ։ Եւ նա նորան տես- 29
նելով շփոթուեցաւ նորա խօսքի
համար, և իր մտքումը մտածում
էր, թէ ի՞նչպիսի բան պիտի լինի
այս ողջոյնը։ Եւ հրեշտակը ասեց 30
նորան. Մի վախենար, Մարիամ.
որովհետև Աստուածանից շնորհք
գտար։ Եւ ահա կ'յղանաս՝ և որ- 31
դի կ'ծնես. և նորա անունը Յի-
սուս կ'դնես։ Նա մեծ կ'լինի, և 32
Բարձրեալի Որդի կ'կոչուի. և Տէր
Աստուածը նորա Դաւիթ հօր ա-
թոռը կ'տայ նորան. և նա յա-
ւիտեան կ'թագաւորէ Յակոբի
տան վերայ. Եւ նորա թագաւո- 33
րութեանը վերջ չի լինիլ։ Եւ 34
Մարիամն ասեց հրեշտակին. Սա
ի՞նչպէս կ'լինի. ըստ որում ես
այր չ'դիտեմ։ Հրեշտակը պա- 35

տասխանեց և ասեց նորան. Սուրբ
Հոգին կ'գայ քեզ վերայ, և Բար-
ձրեալի զօրութիւնը քեզ վերայ
կ'հովանաւորէ, վասն որոյ և այն
ծնուած սուրբն էլ Աստուծոյ Որ-
36 դի կ'կոչուի։ Եւ ահա քո ազգա-
կանն՝ Եղիսաբեթը, նա էլ մի
որդիով յղի է իր ծերութիւ-
նումը. և սա այն ամուլ կոչուա-
37 ծի վեցերորդ ամիսն է։ Որովհե-
տև Աստուծոյ առաջին ոչ մի
38 բան անկարելի չէ։ Մարիամն էլ
ասեց. Ահա Տիրոջ աղախինն եմ.
Թող քո խօսքի պէս լինի ինձ։
Եւ հրեշտակը գնաց նորանից։
39 Մարիամն այն օրերումը վեր-
կացաւ՝ շտապելով լեռնակողմը
40 գնաց՝ Յուդայի քաղաքը. Եւ
Զաքարիայի տունը մտաւ, և Ե-
41 ղիսաբեթին բարևեց։ Եւ եղաւ,
երբոր Եղիսաբեթը Մարիամի բա-
րևը լսեց, երեխան նորա որովայ-
նումը խաղաց. և Եղիսաբեթը
42 Սուրբ Հոգիով լցուեցաւ։ Եւ
մեծ ձայնով աղաղակեց և ա-
սեց. Օրհնեալ ես դու կանանց
մէջ. և օրհնեալ է քո որովայնի
43 պտուղը. Եւ սա ի՞նչ տեղից է
ինձ, որ իմ Տիրոջ մայրն ինձ մօտ
44 եկաւ։ Որովհետև ահա, երբոր
քո բարևի ձայնն իմ ականջներին
հասաւ, երեխան որովայնումս ու-
45 րախանալով խաղաց։ Եւ երանի
նորան, որ հաւատաց, թէ այն
բաները կ'կատարուին, որ Տէրիցն
46 իրան ասուած են։ Եւ Մարիամը
ասեց. Թող իմ անձը փառաւորէ
47 Տիրոջը։ Եւ իմ հոգին ուրախա-
48 ցաւ իմ Փրկիչ Աստուծովը։ Ո-
րովհետև իր աղախնի խոնարհու-
թեանը մտիկ տուաւ, որովհետև
ահա այսուհետև բոլոր ազգերը
49 կ'երանեն ինձ։ Որովհետև Հզօրը
մեծամեծ բաներ արաւ ինձ, և
50 սուրբ է նորա անունը։ Եւ նորա
ողորմութիւնը ազգից ազգ նո-
րանից վախեցողներին վերայ է։
51 Զօրութիւն արաւ իր բազուկովը,
ցրուեց ամբարտաւաններին ի-
52 րանց սրտի մտածմունքովը։ Զօ-
րաւորներին աթոռներից իջեցը-
րեց, և խոնարհներին բարձրա-
53 ցրեց։ Սովածներին բարիքներով
լցրեց, և հարուստներին դատարկ
արձակեց։ Իր Իսրայէլ ծառային 54
օգնեց իր ողորմութիւնը յիշելով.
Ինչպէս մեր հայրերի հետ խօ- 55
սեց. Աբրահամին և նորա զաւա-
կին՝ մինչև յաւիտեան։
Եւ Մարիամը մնաց նորա մօտ 56
երեք ամիսի չափ. և յետոյ դար-
ձաւ իր տունը։
Եւ Եղիսաբեթի ծնելու ժամա- 57
նակը լրացաւ, և որդի ծնեց։ Եւ 58
նորա դրացիները և ազգականներ-
ը լսեցին, թէ Տէրն իր ողորմու-
թիւնը մեծ արաւ նորա վերայ.
և ուրախանում էին նորա հետ։
Եւ եղաւ՝ ութերորդ օրումն 59
եկան երեխային թլփատելու, և
նորան իր հօր անունովը Զաքա-
րիա էին կոչում։ Եւ նորա մայրը 60
պատասխանեց և ասեց. Ոչ, այլ
Յովհաննէս կոչուի։ Եւ ասեցին 61
նորան, թէ Ոչ ոք չ'կայ քո ազ-
գումը, որ այդ անունով կոչվում
լինի։ Եւ նշաններով հարցնում 62
էին նորա հօրը, թէ ի՞նչ է կա-
մենում որ նա կոչուի։ Եւ նա 63
տախտակ խնդրեց, գրեց և ասեց,
Դորա անունը Յովհաննէս է. և
ամենքը զարմացան։ Եւ իսկոյն 64
նորա բերանը և լեզուն բացուե-
ցաւ. և խօսում էր՝ Աստուծուն
օրհնելով։ Եւ ահ ընկաւ ամենքի 65
վերայ, որ նորանց չորս կողմովը
բնակվում էին. և Հրէաստանի
բոլոր լեռնակողմումը այս ամեն
բաները պատմվում էին։ Եւ բո- 66
լոր լսողներն իրանց սրտերումն
էին դնում և ասում. Այս երե-
խան ի՞նչ պիտի լինի։ Եւ Տիրոջ
ձեռը նորա հետ էր։
Եւ նորա հայրը՝ Զաքարիան 67
Սուրբ Հոգիով լցուեցաւ, մար-
գարէացաւ և ասեց. Օրհնեալ է 68
Իսրայէլի Տէր Աստուածը, որ այ-
ցելութեան եկաւ, և փրկութիւն
արաւ իր ժողովրդի համար։ Եւ 69
փրկութեան եղջիւր վերկացրեց
մեզ համար իր Դաւիթ ծառայի
տանը։ Ինչպէս որ խօսեց յաւի- 70
տենից իր սուրբ մարգարէների
բերանովը. Փրկութիւն մեր թըշ- 71
նամիներիցը. և բոլոր մեզ ատող-
ների ձեռիցը. Որ մեր հայրերի 72

վերայ աղօրմաւթիւն անէ, և իր
73 սուրբ ուխտը յիշէ. Ա՛յն երդում
մը, որ մեր Հայր Աբրահամին
74 երդուաւ, որ մեզ տայ, Որ մեր
Թշնամիներէն ձեռքէն ազատուած
75 առանց երկիւղ պաշտենք իրան Սբբ-
բաւթիւնով և արդարաւթիւնով
նորա առաջին մեր կեանքի բոլոր
76 օրերումը։ Եւ դուն, երեխայ,
Բարձրեալի մարգարէ կ'կոչուիս.
որովհետև կ'գնաս Տիրոջ երեսի
առաջից նորա ճանապարհները
77 պատրաստելու, Որ նորա ժողո-
վրդին տաս փրկութեան գիտու-
թիւնը իրանց մեղքերի թողու-
78 թեան մէջ Մեր Աստուծոյ գթած
սրտմաւթեան համար, որով ծա-
գող արեգակը վերեւիցը այցելեց
79 մեզ. Որ լոյս տայ խաւարումն և
մահի ստուերումը նստողներին.
որ մեր ոտները դէպի խաղաղու-
թեան ճանապարհն ուղղէ։
80 Եւ երեխան աճեալ էր և զօ-
րանալով. և անա-
պատներումն էր, մինչև այն օրն
որ նա երեւեցաւ Իսրայէլին։

Գլ. Բ

4 Եւ այն օրերումն եղաւ, որ Հրա-
մանն դուրս եկաւ Օգոստոս կայ-
սերից, որ բոլոր աշխարհը գրուին։
2 Սա առաջին աշխարհագիրն եղաւ
Կիւրենիի Սիւրիայի կառավարու-
3 թեան ժամանակումը։ Եւ ամէն
քը գնում էին գրուելու՝ ամէն
4 մէկն իր քաղաքը։ Յովսէփն էլ
Գալիլեայիցը՝ Նազարէթ քաղա-
քիցը գնաց Հրէաստան Դաւիթի
քաղաքն, որ Բեթլէհէմ է կոչ-
ւում. որովհետև նա Դաւիթի
5 տանիցը և ազգիցն էր. Որ գրուի
իր նշանած Մարիամի հետ, որ
6 յղի էր։ Եւ եղաւ երբոր նորանք
այնտեղ էին, նորա ծնելու օրերը
7 լրացան։ Եւ իր անդրանիկ որդին
ծնեց, և պատեց խանձարուրնե-
րով և մսուրի մէջ դրաւ. որով-
հետև այն իջևանումը տեղ չէր
նորանց համար։
8 Եւ այն տեղումը հովիւներ կա-
յին գաշտումը կացող, որ գի-
շերն իրանց հօտերը պահում էին։
9 Եւ ահա Տիրոջ հրեշտակը կանգ-
նեց նորանց առաջին, և Տիրոջ
փառքը նորանց շուրջը ծագեց.
10 և մեծ վախով վախեցան։ Եւ
հրեշտակն ասեց նորանց. Մի վա-
խենաք, որովհետև ահա մեծ ու-
րախութիւն եմ աւետում ձեզ,
որ բոլոր ժողովրդին պիտի լինի.
11 Թէ այսօր ձեզ Փրկիչ ծնաւեցաւ
Դաւիթի քաղաքումը. որ է Քրիս-
տոս Տէրը։ Եւ այս լինի ձեզ նշան.
12 Ի երեխայ կ'գտնէք խանձարուրնե-
րով պատած, և մսուրի մէջ
դրած։ Եւ յանկարծակի այն
13 հրեշտակի հետ եղաւ երկնաւոր
զօրքի մի բազմութիւնը, որ Աս-
տուծուն օրհնում էին և ասում։
14 փառք Աստուծոյ բարձունքումը,
և երկրի վերայ խաղաղութիւն,
և մարդկանց մէջ հաճութիւն։
15 Եւ եղաւ երբոր հրեշտակները
նորանցից վերացան երկինքը, այն
հովիւ մարդիկն իրար ասեցին.
Եկէք գնանք մինչև Բեթլէհէմ,
և տեսնենք այս եղած բանը, որ
16 Տէրը ցոյց տուաւ մեզ։ Եւ շտա-
պելով եկան և գտան Մարիամին
և Յովսէփին, և երեխային մսուրի
17 մէջ դրած։ Եւ երբոր տեսան՝
իմացրին այն բանն, որ այս երե-
խայի համար ասուեցաւ նորանց։
18 Եւ բոլոր լսողները զարմացան այն
բանների համար, որ հովիւները
19 նորանց հետ խօսեցան։ Իսկ Մա-
րիամն այս բոլոր բանները պահում
էր, և իր սրտումը մտածում էր։
20 Եւ հովիւները դարձան գոհա-
նում էին այն բոլոր բանների հա-
մար, որ լսեցին և տեսան, ինչպես
որ նորանց ասուեցաւ։
21 Եւ երբոր ութ օր լրացաւ,
որ մանուկը թլփատուելու, նորա
անունը Յիսուս կոչուեցաւ, այն
որ հրեշտակիցը կոչուած էր նա
դեռ արգանդումը չ'յղացուած։
22 Եւ երբոր նորա մաքրուելու
օրերը լրացան, Մովսէսի օրէնքի
պէս, նորան տարան երուսաղէմ,
23 որ Տիրոջ առաջին կանգնեցնեն։
Ինչպես Տիրոջ օրէնքումը գրուած
է, Թէ Ամէն արու որ արգանդ
բանայ, Տիրոջը սուրբ պիտի կոչ-

24 ուի։ Եւ որ Տիրոջ օրէնքումը
ասուածին պէս պատարագ բե-
րեն մի զոյգ տատրակ, կամ ա-
ղաւնու երկու ձագ։
25 Եւ ահա երուսաղէմումը մի
մարդ կար, որի անունը Սիմէոն
էր, և այս մարդը արդար և աստ-
ուածավախ էր, և սպասում էր
Իսրայէլի մխիթարութեանը, և
Սուրբ Հոգի կար նորա վերայ։
26 Եւ նորան պատգամ էր եղած
Սուրբ Հոգիիցը, որ մահ չի տես-
նիլ, մինչև որ Տիրոջ Քրիստոսին
27 կ'տեսնէ։ Եւ Հոգիովն եկաւ տա-
ճարը, և երբոր ծնողքը Յիսուս
երեխային բերին, որ օրէնքի ա-
ւանդութեան պէս նորա վերայ ա-
28 նեն, Նա էլ առաւ նորան ըն-
դունեց իր գիրկը, և Աստուծուն
29 օրհնեց, և ասեց. Հիմա արձա-
կում ես քո ծառային, ով Տէր,
քո խօսքի պէս խաղաղութիւ-
30 նով. Որովհետև իմ աչքերը տե-
31 սան քո փրկութիւնը, Որ պատ-
րաստեցիր ամեն ժողովուրդների
32 առաջին։ Լոյս՝ հեթանոսներին
լուսաւորելու, և փառք՝ քո ի-
33 րայէլ ժողովրդի համար։ Եւ Յով-
սէփը և նորա մայրը զարմացել
էին այն բաների վերայ, որ նորա
34 համար խօսւում էին։ Եւ Սի-
մէոնն օրհնեց նորանց, և նորա
մայրը Մարիամին ասեց, Ահա այս
մանուկը կայ Իսրայէլի մէջ շա-
տերի համար ընկնելու և կանգ-
նելու և հակառակութեան նշան։
35 Եւ իսկ քո անձովը սուր կ'անցը-
նէ, որ շատ սրտերից խորհուրդ-
ները յայտնուին։
36 Եւ այնտեղ էր Աննա մարգա-
րէուհին՝ փանուէլի աղջիկն Ա-
սերի ցեղիցը. սա ինքը շատ օրեր
էր անցրել, և իր կուսութեան
ժամանակիցն եօթը տարի էր
37 ապրել մարդի հետ. Եւ ութսուն
և չորս տարուայ չափ որքևայրի
էր, որ տաճարիցը չէր հեռա-
նում. ծոմերով և աղօթքներով
գիշեր ու ցերեկ ծառայում էր
38 Աստուծուն։ Սա էլ նոյն ժամու-
մը վերկացաւ՝ Տէրիցը դոհանում
էր և խօսում էր նորա մասին
այն ամենին որ Երուսաղէմի
մէջ փրկութեան սպասում էին։
39 Եւ երբոր ամենը Տիրոջ օրէնքի
պէս կատարեցին, նա դառան
Գալիլեա՝ իրանց Նազարէթ քա-
ղաքը։ Երեխան էլ աճում էր
40 և զօրանում հոգիով՝ իմաստու-
թիւնով լցուած. և Աստուծոյ
շնորհքը նորա վերայ էր։
41 Եւ նորա ծնողքը տարուց տա-
րի երուսաղէմ էին գնում զատ-
կի օրին։ Եւ երբոր նա տասն-
42 և երկու տարեկան եղաւ, նորանք
օրի սովորութեան պէս երու-
սաղէմ գնացին, Եւ երբոր օրերը
43 կատարելուց յետոյ եւ դառան,
Յիսուս տղան երուսաղէմումը
մնաց. և չիմացան Յովսէփը և
նորա մայրը, Եւ կարծելով, թէ
44 նա ճանապարհակիցների հետ կը
լինի, մի օրուայ ճանապարհ ե-
կան՝ և նորան որոնում էին ազ-
գականների և ծանօթների մէջ։
45 Եւ երբոր նորան չ'գտան, եւ
դառան երուսաղէմ և որոնում
էին նորան։ Եւ երեք օրից յետոյ
46 եղաւ, որ նորան տաճարի մէջ
գտան, վարդապետների մէջ նըս-
տած՝ նորանց ականջ էր դնում,
և նորանցից հարցնում էր։ Եւ
47 ամենքն, որ նորանից լսում էին,
զարմանում էին նորա իմաստու-
թեան և պատասխանների վերայ։
48 Եւ երբոր նորան տեսան, շատ
զարմացան. և նորա մայրն ասեց
նորան. Որդեակ, ինչու համար
մեզ այսպէս արիր. ահա, հայրդ
և ես ցաւելով որոնում էինք
քեզ։ Եւ նա նորանց ասեց. Ին-
49 չու համար էիք ինձ որոնում.
դուք չ'գիտէի՞ք թէ պէտք է, որ
ես իմ Հօր գործ լինեմ։ Եւ նո-
50 րանք չ'հասկացան այն խօսքը որ
նորանց հետ խօսեց։ Եւ նա նո-
51 րանց հետ իջաւ և գնաց Նազա-
րէթ. և նորանց հնազանդ էր. և
նորա մայրը այս բոլոր բանները
պահում էր իր սրտումը։ Եւ Յի-
52 սուս զարգանում էր իմաստու-
թիւնով և հասակով, և շնորհ-
քով՝ Աստուծոյ և մարդկանց
մօտ։

ԳԼ. Գ

1 Տիբերիոս կայսեր տէրութեան
տասնեւհինգերորդ տարում, Պոն-
տացի Պիղատոսի Հրէաստանի վե-
րայ կուսակալութեան ժամանա-
կին, և Հերովդէսի՝ Գալիլեայի
վերայ չորրորդապետութեան ժա-
մանակին, և նորա եղբայր Փի-
լիպպոսի՝ Իտուրացիների և Տրա-
քոնացիների երկրի վերայ չոր-
րորդապետութեան ժամանակին,
և Լիւսանիայի Աբելինացիների
վերայ չորրորդապետութեան ժա-
2 մանակին, Աննայի և Կայիափայի
քահանայապետութեան օրերու-
մը Աստուծոյ խօսքն եղաւ Զա-
քարիայի որդի Յովհաննէսին ա-
3 նապատումը։ Եւ նա եկաւ Յոր-
դանանի ամեն կողմերը, ապաշ-
խարութեան մկրտութիւնը քա-
րոզելով մեղքերի թողութեան
4 համար. Ինչպէս Եսայիա մար-
գարէի խօսքերի գրքումը գրուած
է՝ որ ասում է Կանչողի ձայնը
անապատումը. պատրաստ արէք
Տիրոջ ճանապարհը, և ուղիղ
5 արէք նորա շաւիղները։ Ամեն
ձոր լցուի, և ամեն սար և բլուր
խոնարհուի. և դժուարները հեշտ
լինեն, և խորտուբորտները հարթ
6 ճանապարհներ լինեն. Եւ ամեն
մարմին Աստուծոյ փրկութիւնը
կ'տեսնէ։
7 Եւ այն ժողովուրդներին, որ
դուրս էին եկած նորանից մկր-
տուելու, ասեց. Իժերի զաւակ-
ներ, ո՞վ սովորեցրեց ձեզ փախ-
չել այն գալու բարկութիւնից։
8 Արդ ապաշխարութեան արժանի
պտուղներ արէք. և մի սկսէք
ասել ձեր միջումը՝ Մենք Աբրա-
համն ունինք հայր. որովհետև
ասում եմ ձեզ, թէ Աստուած
կարող է այս քարերիցը որդիներ
9 հանել Աբրահամի համար։ Բայց
արդէն կացինն էլ ծառերի ար-
մատի մօտ դրած է. արդ ամեն
ծառ որ բարի պտուղ չէ բերում,
կ'կտրուի և կրակի մէջ կ'գցուի։
10 Եւ ժողովուրդները նորան հար-
ցնում էին և ասում. Ապա ի՞նչ
11 անենք։ Եւ նա պատասխանեց և
ասեց նորանց. Նա որ երկու հան-
դերձ ունի, թող մինը չ'ունեցո-
ղին տայ. և նա էլ, որ կերակուր
ունի, թող նոյնպէս անէ։ Եւ 12
մաքսաւորներն էլ եկան մկրտուե-
լու, և նորան ասեցին. Վարդա-
պետ, ի՞նչ անենք։ Նա էլ ասեց 13
նորանց. Ձեզ հրամայածիցն ա-
ւելի պահանջելով ոչ մի բան մի
առնէք։ Եւ զինուորներն էլ էին 14
հարցնում նորան և ասում. Ա-
պա մենք ի՞նչ անենք, նորանց էլ
ասեց. Ոչ մէկին մի հարստահա-
րէք, ոչ էլ զրպարտութիւն ա-
րէք, և ձեր թոշակովը բաւա-
կանացէք։
Ժողովուրդն էլ դեռ սպասե- 15
լիս և ամենքն իրանց սրտերումն
մտածելիս՝ Յովհաննէսի համար,
թէ մի՛ գուցէ լինի նա Քրիստո-
սը, Յովհաննէսն ամենին պատաս- 16
խանեց և ասեց. Ես ջրով եմ
մկրտում ձեզ. բայց ինձանից ա-
ւելի զօրաւորն է գալիս, որ ես
արժանի չեմ նորա կօշիկների
կապերը լուծելու. Նա ձեզ Սուրբ
Հոգով և կրակով կ'մկրտէ։ Որ 17
հոսելին նորա ձեռքին է, և նա
իր կալը կ'սրբէ, և ցորենն իր ամ-
բարը կ'ժողովէ, իսկ դարմանը
կ'այրէ անշէջ հրով։ Եւ ուրիշ 18
էլ շատ բաներ յորդորելով ա-
ւետարանում էր ժողովրդին։
Բայց Հերովդէս չորրորդապետը՝ 19
նորանից յանդիմանուած իր եղ-
բայր Փիլիպպոսի կնկայ Հերով-
դիայի մասին, և այն ամեն չար
գործերի համար, որ Հերովդէսն
արաւ, Ամենի վերայ սա էլ աւե- 20
լացրեց, որ Յովհաննէսին բանտի
մէջ դրաւ։
Եւ բոլոր ժողովրդի մկրտուե- 21
լու ժամանակին եղաւ, որ երբոր
Յիսուսն էլ մկրտուեցաւ՝ և ա-
ղօթք էր անում, երկինքը բաց-
ուեցաւ, Եւ Սուրբ Հոգին մարմ- 22
նաւոր տեսիլքով աղաւնու պէս
իջաւ նորա վերայ. և երկնքիցը
ձայն եղաւ որ ասում էր. Դու
ես իմ սիրելի Որդին, ես քեզ
հաւանեցի։
Եւ ինքն Յիսուս սկսած էր ե- 23
րեսուն տարեկանի չափ լինել,

որ ինչպէս կարծվում էր, Յով-
սէփի որդին էր. և նա Հեղիին.
24 և նա Մատթատի. Եւ նա Ղե-
ւիի. և նա Մեղքիի. և նա Յան-
25 նէի. և նա Յովսէփի. Եւ նա Մա-
տաթիայի. և նա Ամովսի. և նա
Նաւումի. և նա Եսղիի. և նա
26 Նանգէի. Եւ նա Մաաթի. և նա
Մատաթիայի. և նա Սէմէիի. և
27 նա Յովսէփի. և նա Յուդայի. Եւ
նա Յովհաննայի. և նա Բէսայի.
և նա Զօրաբաբէլի. և նա Սա-
28 ղաթիէլի. և նա Ներէիի. Եւ նա
Մեղքիի. և նա Ադդէիի. և նա
Կովսամի. և նա Եղմովդադի. և
29 նա Էրի. Եւ նա Յովսէսի. և նա
Եղիազարի. և նա Յովրիմի. և նա
30 Մատթատի. և նա Ղևիի. Եւ նա
Սիմէօնի. և նա Յուդայի. և նա
Յովսէփի. և նա Յովնանի. և նա
31 Եղիակիմի. Եւ նա Մելիայի. և
նա Մայնանի. և նա Մատատա-
թայի. և նա Նաթանի. և նա
32 Դաւիթի. Եւ նա Յեսսէի. և նա
Ովբէդի. և նա Բոոսի. և նա Սաղ-
33 մոնի, և նա Նաասոնի. Եւ նա Ա-
մինադաբի. և նա Արամի. և նա
Եսրոնի. և նա Փարէսի. և նա
34 Յուդայի. Եւ նա Յակոբի. և նա
Իսահակի. և նա Աբրահամի. և
35 նա Թարայի. և նա Նաքովրի. Եւ
նա Սերուքի. և նա Ռագաւի. և
նա Փաղեկի. և նա Եբերի. և նա
36 Սաղայի. Եւ նա Կայնանի. և նա
Արփաքսադի. և նա Սէմի. և նա
37 Նոյի. և նա Ղամէքի. Եւ նա
Մաթուսաղայի. և նա Ենովքի.
և նա Յարեդի. և նա Մաղաղի-
38 էլի. և նա Կայնանի. Եւ նա Ե-
նովսի. և նա Սէթի. և նա Ադա-
մի. և նա Աստուծոյ։

ԳԼ. Դ

1 Եւ Յիսուսը Սուրբ Հոգիով լը-
ցուած Յորդանանիցը ետ դառաւ
և Հոգիովը տարուեցաւ անապա-
2 տը։ Քառասուն օր սատանայիցը
փորձուեցաւ. և այն օրերումը
ոչինչ չ'կերաւ, և երբոր նորանք
լրացան, սովեց։
3 Եւ սատանան նորան ասեց.
Եթէ Աստուծոյ որդի ես, ասիր
այդ քարին որ հաց լինի։ Եւ Յի- 4
սուսը նորան պատասխանեց և
ասեց. Գրուած է, թէ Ոչ միայն
հացով կ'ապրի մարդ, այլ Ա-
ստուծոյ ամեն խօսքովը։
Եւ սատանան նորան մի բարձր 5
սար հանեց՝ և աշխարհի բոլոր թա-
գաւորութիւնները ցոյց տուաւ
նորան մի վայրկեանի մէջ։ Եւ 6
սատանան ասեց նորան. Այս բո-
լոր իշխանութիւնը և սորանց
փառքը քեզ կ'տամ. որ ինձ է
տրուած. և ում որ կամենում
եմ տալիս եմ սորան։ Արդ դու, 7
եթէ իմ առաջը ընկած երկրպա-
գութիւն անես, բոլորը քոնը կը
լինի։ Եւ Յիսուսը նորան պատաս- 8
խանեց և ասեց. *Գնա յետս,
սատանայ. որովհետև՝ գրուած
է, թէ քո Տէր Աստուծուն պէտք
է երկրպագութիւն անես, և նո-
րան միայն պաշտես։
Եւ նա տարաւ նորան Երուսա- 9
ղէմ, և տաճարի աշտարակի վե-
րայ կանգնեցրեց և ասեց նորան.
Եթէ Աստուծոյ որդի ես, այստե-
ղից քեզ վայր գցիր. Որովհետև 10
գրուած է, թէ Իր հրեշտակնե-
րին կ'հրամայէ քեզ համար, որ
քեզ պահեն. Եւ որ ձեռքերի 11
վերայ քեզ վեր առնեն, որ երբէք
քո ոտքը քարի չ'դպցնես։ Յիսու- 12
սը նորան պատասխանեց և ասեց,
թէ Ասուած է՝ Մի փորձիր քո
Տէր Աստուծուն։ Եւ սատանան 13
երբոր բոլոր փորձութիւնը կա-
տարեց, հեռացաւ նորանից մին-
չև մի ժամանակ։
Եւ Յիսուսը Հոգիի զօրութիւ- 14
նովը ետ դառաւ Գալիլեա. և նո-
րա համբաւը դուրս գնաց այն
գաւառի ամեն կողմերը։ Եւ նա 15
սովորեցնում էր նորանց ժողով-
արաններումը, և ամենից փառա-
ւորվում էր։
Եւ եկաւ Նազարէթ, ուր որ 16
մեծացել էր. և իր սովորութեան
պէս շաբաթ օրը ժողովարանը
մտաւ, և կանգնեց որ կարդայ։
Եւ Եսայիա մարգարէի գիրքը 17
տուին նորան. և երբոր գիրքը

*Ոմանք չ'ունին։

բացաւ՝ այն տեղը գտաւ, ուր
18 գրուած էր. Տիրոջ Հոգին ինձ
վերայ է, որի համար եւ օծեց
ինձ. նա ինձ ուղարկել է աղ-
քատներին աւետարանելու, սրբ-
տով կոտրատածներին բժշկելու,
19 գերիներին թողութիւն քարոզե-
լու, և կոյրերին տեսութիւն.
խոցուածներին արձակելու ազա-
տելով, Տիրոջ ընդունելի տարին
20 քարոզելու: եւ գիրքը խփեց՝
պաշտօնեային տուաւ, նստեց, և
ժողովարանի մէջ ամենքի աչքե-
21 րը նորան էին մտիկ տալիս: եւ
նա սկսաւ ասել նորանց, թէ
Այսօր այս գիրքը կատարուեցաւ
22 ձեր ականջներուդ: եւ ամենքը
վկայում էին նորան, և զարմա-
նում էին այն շնորհաց խօսքերի
վերայ, որ դուրս էին գալիս նո-
րա բերանիցը. և ասում էին.
23 Չէ՞ որ սա Յովսէփի որդին է: եւ
նա նորանց ասեց, Ի հարկէ այս
առակը կ'ասէք ինձ. Բժի՛շկ, քո
անձը բժշկիր. որչափ բաներ լսե-
ցինք՝ կափառնայումի մէջ եղած,
քո հայրենիքումը այստեղ էլ
24 արա: եւ ասեց. Ճշմարիտ ասում
եմ ձեզ, թէ Ոչ մի մարգարէ
ընդունելի չէ իր հայրենիքումը:
25 եւ ճշմարտութեամբ ասում եմ
ձեզ, Ընդ եղիայի օրերին Իսրա-
յելի մէջ շատ որբևայրիներ կա-
յին, երբոր երկինքը երեք տարի
և վեց ամիս փակուեցաւ, այն-
պես որ բոլոր երկրի վերայ մեծ
26 սով եղաւ: եւ եղիան նորանցից
ոչ ոքի մօտ չ'ուղարկուեցաւ,
բայց միայն Սիդոնացիների Սա-
րեփթան՝ մի որբևայրի կնոջ մօտ:
27 եւ շատ բորոտներ կային Իսրա-
յելի մէջ եղիսէ մարգարէի ժա-
մանակին. և նորանցից ոչ ոք չը
սրբուեցաւ, բայց միայն Նեեման
28 Ասորին: եւ ամենքը բարկութիւ-
նով լցուեցան ժողովարանի մէջ,
29 երբոր այս լսեցին: եւ վեր կա-
ցան՝ նորան քաղաքիցը դուրս հա-
նեցին, և տարան նորան մինչև այն
սարի գլուխը որի վերայ նորանց
քաղաքը շինուած էր, որ բարձր
30 տեղիցը վայր գցեն նորան: իսկ նա
նորանց միջումն անցաւ գնաց:

31 Եւ իջաւ Կափառնայում՝ Գա-
լիլեացիների քաղաքը, և շաբաթ-
32 օրը սովորեցնում էր նորանց: եւ
նորանք զարմանում էին նորա
վարդապետութեան վերայ, որ
նորա խօսքը իշխանութիւնով էր:
33 եւ ժողովարանումը մի մարդ կար,
որ դևի ոգի ուներ, և մեծ
34 ձայնով աղաղակեց, եւ ասեց.
Թող տուր. ինչ բան ունիս մեզ
հետ, Յիսուս Նազովրեցի. եկար
մեզ կորցնելո՞ւ. գիտեմ քեզ,
դու ով ես, Աստուծոյ Սուրբը:
35 Յիսուսը սաստեց նորան և ասեց.
Պապանձի՛ր և դուրս եկ գորա-
նից. և դևը նորան գետինը զար-
կեց մէջտեղը՝ և դուրս եկաւ նո-
րանից, և ոչ մի վնաս չ'տուաւ
36 նորան: եւ զարմանք եղաւ ա-
մենքի վերայ, և իրար հետ խո-
սում էին և ասում. Սա ինչ
բան է, որ իշխանութիւնով և
զօրութիւնով պիղծ ոգիներին
հրամայում է, և նորանք դուրս են
37 գալիս: եւ նորա համբաւը գնում
էր շրջակայքի ամեն տեղը:

38 Եւ վերկացաւ ժողովարանիցը,
և մտաւ Սիմոնի տունը. Սիմոնի
39 զոքանչն էլ սաստիկ տենդով
բռնուած էր. և նորան աղաչե-
ցին նորա համար: եւ նա նորա
մօտը կանգնեց՝ սաստեց տենդին,
և թողեց նորան. և նա իս-
կոյն վերկացաւ՝ և ծառայում էր
նորանց:

40 Եւ արեգակը մտնելիս՝ ամենքը,
որ կերպ կերպ ցաւերով հիւանդ-
ներ ունէին, նորանց բերում էին
նորա մօտ. նա էլ նորանց ամեն
մէկի վերայ ձեռք էր դնում՝ և
42 բժշկում նորանց: Շատերից էլ
դևեր էին դուրս գալիս, աղա-
ղակում էին և ասում, թէ Դու
ես Քրիստոսը Աստուծոյ Որդին,
և նա սաստելով նորանց թոյլ
չէր տալիս որ խօսեն, որովհետև
գիտէին որ նա Քրիստոսն է:

43 Եւ երբոր ցերեկ եղաւ, դուրս
եկաւ գնաց անապատ տեղ. և
ժողովուրդները որոնում էին նո-
րան, և եկան մինչև նորա մօտ,
և արգելում էին նորան, որ չը
44 գնայ իրանցից: Նա էլ ասեց նո-

րանց, Ես ուրիշ քաղաքներին էլ
պէտք է Աստուծոյ արքայութիւ-
նը աւետարանեմ, որովհետև խոկ
45 սորա համար ուղարկուեցայ: եւ
քարոզում էր Գալիլեայի ժողո-
վարանների մէջ:

Գլ. Ե

1 Եւ եղաւ, երբոր ժողովուրդը
նորա վերայ կիսվում էր Աստու-
ծոյ խօսքը լսելու, և ինքը Գեն-
նեսարէթի ծովակի մօտ կանգ-
2 նած էր. եւ երկու նաւ տեսաւ՝
ծովակի մօտ կանգնած, ձկնորս-
ները էլ նորանցից դուրս էին ե-
կած՝ և ուռկանները լուանում
3 էին: եւ նա մտաւ այն նաւերի
մէկի մէջ որ Սիմոնինն էր, և
խնդրեց նորան նաւը ցամաքիցը մի
քիչ ներս տանել. նստեց և նաւիցը
սովորեցնում էր ժողովուրդներին:
4 Եւ երբոր խօսելուց դադարեց,
Սիմոնին ասեց. Նո՛ւշ դէպի խորը
տար, և ձեր ուռկանները գցե-
5 ցէք որսի: եւ Սիմոնը պատաս-
խանեց և ասեց նորան. Վարդա-
պե՛տ, բոլոր գիշերն այխատե-
ցանք՝ և ոչինչ չ'բռնեցինք, բայց
6 քո խօսքի համար ուռկանը կը
գցեմ: եւ երբոր այս արին,
ձկներուն մի մեծ բազմութիւն
ներս փակեցին, և նորանց ուռ-
7 կանը պատռուելում էր: եւ նշան
էին անում միւս նաւի մէջ լինող
ընկերներին, որ գան իրանց օգ-
նեն. և նորանք եկան, և երկու
նաւը լցրին մինչև որ թաղվում
8 էին: Սիմոն Պետրոսն էլ տեսնե-
լով՝ ընկաւ Յիսուսի ծնկերի մա-
ռաչին և ասեց. Ինձանից դուրս
գնա, որ ես մեղաւոր մարդ եմ,
9 Տէր: Որովհետև ահ պատեց նո-
րան և ամենքին էլ, որ նորա հետ
10 էին, այն ձկների որսի համար որ
բռնեցին, Այնպես էլ Զեբեդեայի
որդիներին՝ Յակոբոսին և Յովհան-
նէսին, որ Սիմոնի ընկերներն էին,
և Յիսուսը Սիմոնին ասեց. Մի
11 վախենար՝ այսուհետև մարդիկ
որսող կ'լինես: եւ նաւերը հանե-
ցին ցամաքը, ամեն բաները թո-
ղեցին, և նորա ետևիցը գնացին:

12 Եւ եղաւ, երբոր նա քաղաք-
ներիցը մէկումն էր, ահա մի
մարդ բորոտութիւնով լիքը, երբ-
որ Յիսուսին տեսաւ, երեսի վե-
րայ ընկնելով, նորան աղաչեց և
ասեց. Տէր, եթէ կամենաս, կա-
րող ես ինձ սրբել: եւ նա իր
13 ձեռքը մեկնելով դպաւ նորան և
ասեց. Կամենում եմ, սրբուի՛ր.
և շատով բորոտութիւնը հեռա-
ցաւ նորանից: եւ ինքը պատուի-
14 րեց նորան, որ ոչ ոքի չ'ասէ,
այլ թէ՝ Գնա, անձդ ցոյց տուր քա-
հանային, և քո սրբութեան հա-
մար ընծան բեր, ինչպես Մովսէսը
հրամայեց՝ նորանց վկայութեան
համար: Բայց նորա վերայ խո-
15 սակցութիւնը առաւել ևս տա-
րածվում էր, և շատ ժողովուրդ-
ներ ժողովվում էին՝ որ լսեն
և իրանց հիւանդութիւններիցը
16 բժշկուին նորանով: Իսկ նա քաշ-
վում էր անապատ տեղերանք,
և աղօթք էր անում:

17 Եւ մէկ օր եղաւ, որ ինքը սո-
վորեցնում էր. և փարիսեցիները
և օրէնքի վարդապետները նստած
էին, որ Գալիլեայի ամեն գիւղա-
քաղաքներիցը և Հրէաստանից և
Երուսաղէմիցը հաւաքուած էին.
և Տիրոջ զորութիւնը կար նո-
18 րանց բժշկելու համար: եւ ահա
մարդիկ մահճակով մի մարդ էին
բերում, որ անդամալոյծ էր, և
ուզում էին նորան ներս տանել,
19 և նորա առաջը դնել: եւ երբոր
չ'գտան թէ որ տեղով նորան
ներս տանեն՝ այն ամբոխի պատ-
ճառովը, վեր ելան կտուրը, և
օճաղքիցը կախեցին նորան մահ-
ճակով մէջտեղը Յիսուսի առաջին:
20 եւ նա նորանց հաւատքը տես-
նելով նորան ասեց. Ով մարդ,
քո մեղքերը թողուած լինեն
21 քեզ: եւ գրիչները և փարիսե-
ցիները սկսեցին խորհել և ասել:
Սա ո՞վ է, որ հայհոյանք է խո-
սում. ո՞վ կարող է մեղք թո-
22 ղել՝ բացի միայն Աստուածից: Յի-
սուսն էլ երբոր նորանց խոր-
հուրդներն իմացաւ, պատասխա-
նեց և նորանց ասեց. Ինչ էք
23 խորհում ձեր սրտերումը. Ո՞րն է

աւելի հեշտ. ասել՝ Մեղքերդ
թողուած լինեն քեզ, թէ ասել՝
24 Վեր կաց և ման եկ։ Բայց որ
իմանաք, թէ մարդի Որդին իշ-
խանութիւն ունի երկրի վերայ
մեղքեր թողելու. անդամալոյծին
ասեց. Քեզ եմ ասում, Վեր
կաց և մահիճդ առ, և գնա քո
25 տունը։ Եւ նա իսկոյն նորանց ա-
ռաջին վեր կացաւ, իր վերայ ա-
ռաւ այն՝ ինչի վերայ պառկած
էր, և գնաց իր տունը՝ Աստու-
26 ծուն փառաւորելով։ Եւ զար-
մանք բռնեց ամենքին, և փառք
էին տալիս Աստուծուն. և ահով
լցուեցան, և ասում էին, թէ
Նորանշան բաներ տեսանք այսօր։
27 Եւ նորանից յետոյ Յիսուսը
դուրս գնաց և մի մաքսաւոր տե-
սաւ՝ անունը Ղևի, մաքս առնե-
լու տեղը նստած, և նորան ա-
28 սեց, Իմ ետևից եկ։ Եւ նա
ամեն բան թողեց, վերկացաւ
29 գնաց նորա ետևից։ Եւ Ղևին նո-
րան մեծ ընդունելութիւն արաւ
իր տան մէջ. և շատ բազմու-
թիւն կար մաքսաւորների և ու-
րիշների, որ նորանց հետ սեղան
30 էին նստել։ Եւ նորանց դպիրնե-
րը և Փարիսեցիները տրտնջում
էին նորա աշակերտների մօտ և
ասում. Ի՞նչու էք մաքսաւորնե-
րի և մեղաւորների հետ ուտում
31 և խմում։ Եւ Յիսուսը պատաս-
խանեց և ասեց նորանց. Առողջ-
ները կարօտ չեն բժշկի, այլ հի-
32 ւանդները։ Ես չեմ եկել ար-
դարներին կանչելու, այլ մեղա-
ւորներին՝ ապաշխարութեան։
33 Նորանք էլ ասեցին նորան. Ի՞նչ-
ու Յովհաննէսի աշակերտները
ստէպ ծոմ են պահում և ա-
ղօթքներ են անում, նոյնպէս էլ
Փարիսեցիները. իսկ քո աշակերտ-
34 ները ուտում են և խմում։ Նա
էլ ասեց նորանց. Մի՞թէ կարող
էք հարսանիքի տղաներին, քանի
որ փեսան նորանց հետ է, ծոմ
35 պահել տալ։ Բայց օրեր կ'գան,
երբոր փեսան վեր կ'առնուի նո-
րանցից. ապա այն օրերումը ծոմ
36 կ'պահեն։ Մի առակ էլ ասեց
նորանց թէ Ոչ ով մի նոր հան-
դերձի կարկատան հին հանդեր-
ձի վերայ չի գցիլ. ապա թէ ոչ,
այն նորն էլ կ'պատառէ, և հնի
հետ չի միաբանուիլ այն կտորը
որ նորիցն է։ Եւ ոչ ով նոր գինի 37
հին տկերի մէջ չի ածիլ. ապա
թէ ոչ, նոր գինին տկերը կ'պա-
տառէ. ինքն էլ կ'թափուի,
տկերն էլ կ'կորչեն։ Այլ նոր 38
գինին նոր տկերի մէջ պէտք է
ածուի, և երկուսն էլ կ'պահ-
ուին։ Եւ ոչ ով չ'կայ, որ հինը 39
խմէ շուտով նորը կամենայ, ո-
րովհետև ասում է, թէ Հինն
աւելի քաղցր է։

ԳԼ. Զ

Եւ երկրորդի առաջի շաբաթ 1
օրումն եղաւ որ նա անցնում էր
արտերի միջով, և նորա աշա-
կերտները հասկ էին պոկում՝
ափի մէջ շփում և ուտում։
Եւ Փարիսեցիներից ոմանք ասե- 2
ցին նորանց. Այդ ի՞նչու էք ա-
նում, որ շաբաթ օրն օրէնք չէ։
Եւ Յիսուսը նորանց պատասխա- 3
նեց և ասեց. Դուք չէ՞ք կարդա-
ցել այն որ Դաւիթն արաւ, երբ-
որ սովեց ինքը և նորա հետ լի-
նողները. Ինչպէս նա Աստուծոյ 4
տունը մտաւ, և առաջաւորու-
թեան հացերն առաւ և կերաւ,
և իր հետ լինողներին էլ տուաւ.
որոնց օրէնք չէր ուտել, բացի
միայն քահանաներին։ Եւ ասեց 5
նորանց, թէ Մարդի Որդին տէր
է շաբաթի էլ։
Եւ մի ուրիշ շաբաթ օր էլ 6
եղաւ, որ ժողովարանը մտաւ՝ և
սովորեցնում էր. և այնտեղ մի
մարդ կար, և նորա աջ ձեռքը
չորացած էր։ Եւ դպիրները և 7
Փարիսեցիները սպասում էին նո-
րան, թէ շաբաթ օրումը կ'բժշկէ՞,
որ նորանից չարախօսելու պատճառ
գտնեն։ Նա էլ գիտէր նորանց 8
խորհուրդները, և այն մարդին,
որի ձեռքը չորացած էր, ասեց.
Վեր կաց, և կանգնիր մէջ տեղը.
և նա վեր կացաւ կանգնեց։ Արդ 9
Յիսուսը ասեց նորանց. Հարցնում
եմ ձեզանից. Ի՞նչ է արժան շա-

բաթ օրը, բարի՞ բան անել՝ թէ
չար գործել. Հոգի ապրեցնե՞լ՝
10 թէ կորցնել։ Եւ չորս կողմովը
նորանց ամենի վերայ նայելով
ասեց այն մարդին. Ձեռքդ մեկ-
նիր, նա էլ այնպէս արաւ. և
նորա ձեռքը առողջացաւ միւսի
11 պէս։ Նորանք էլ կատաղութիւ-
նով լցուեցան, և իրար հետ խօ-
սում էին, թէ ի՞նչ անեն Յի-
սուսին։
12 Եւ այն օրերումն եղաւ, որ ե-
լաւ սարը աղօթք անելու, և
բոլոր գիշերն անցրեց աղօթք ա-
13 նելով դէպի Աստուած։ Եւ երբ-
որ առաւօտ եղաւ, կանչեց իր
աշակերտները, և ընտրեց նորան-
ցից տասնևերկուսին, որոնց ա-
14 ռաքեալ էլ անուանեց. Սիմօ-
նին, որին Պետրոս էլ անուանեց,
և նորա եղբայրը՝ Անդրէասին,
Յակոբոսին և Յովհաննէսին, Փի-
լիպպոսին և Բարթողոմէոսին.
15 Մատթէոսին և Թովմասին, Յա-
կոբոս Ալփեանին, և Նախանձա-
16 յոյզ կոչուած Սիմօնին. Եւ Յա-
կոբի Յուդային, և Յուդա Իս-
կարիովտացուն, որ մատնիչ էլ
17 դառաւ։ Եւ իջաւ նորանց հետ
մի տափարակ տեղ կանգնեց. և
այնտեղ էր նորա աշակերտների
ժողովը և ժողովրդի մի մեծ բազ-
մութիւն բոլոր Հրէաստանից և
Երուսաղէմից և Տիւրոսի և Սի-
18 դոնի ծովեզերքից, Որ եկան նո-
րանից լսելու, և իրանց հիւան-
դութիւններից բժշկուելու. և
պիղծ ոգիներից չարչարուողները.
19 և բժշկվում էին։ Եւ բոլոր ժո-
ղովուրդը ուզում էր դպչել նո-
րան, որովհետև նորանից զօրու-
թիւն էր դուրս գալիս և ամենին
բժշկում։
20 Եւ նա իր աչքերը դէպի իր
աշակերտները բարձրացրեց՝ և ա-
սեց. Երանի աղքատներիդ, որ
ձերն է Աստուծոյ արքայութիւ-
21 նը։ Երանի հիմա սովածներիդ,
որ պիտի կշտանաք. երանի հիմա
լացողներիդ, որ պիտի ծիծաղիք
22 Երանի ձեզ, երբոր մարդիկ ձեզ
ատեն, և երբոր ձեզ ջոկեն և
նախատեն, և ձեզ վերայ չար ա-
նուն հանեն՝ մարդի Որդու պատ-
ճառովը։ Ուրախ եղէք այն օրու- 23
մը և ցնծացէք, որ ահա ձեր
վարձքը շատ է երկնքումը. որով-
հետև այդպէս էին անում մար-
գարէներին նորանց հայրերը։ Բայց 24
վայ ձեզ՝ հարուստներիդ, որ ձեր
մխիթարութիւնն ընդունեցիք։
Վայ ձեզ՝ որ կշտացել էք, որ 25
պիտի սովիք. վայ ձեզ՝ որ հիմա
ծիծաղում էք, որ սուգ պիտի
անէք, և լաց պիտի լինիք։ Վայ 26
ձեզ՝ երբոր ամեն մարդիկ ձեզա-
նից բարի ասեն, որովհետև այդ-
պէս էին անում սուտ մարգա-
րէներին նորանց հայրերը։
Բայց ձեզ՝ որ լսում էք, ասում 27
եմ. Սիրեցէք ձեր թշնամիներին,
բարի արէք ձեզ ատողներին։
Օրհնեցէք ձեզ անիծողներին, ա- 28
ղօթք արէք ձեզ նեղացնողների
վերայ։ Քո մէ՛ երեսին զարկողին 29
միւսն էլ դէմ արա. և նա՝ որ
քո վերարկուն քեզանից հանում
է, շապիկդ էլ մի արգելիր նո-
րանից։ Ամենին՝ որ ուզում է քե- 30
զանից, տուր, և քոնը առնողիցը
ետ մի առնիր։ Եւ ինչպէս կամե- 31
նում էք՝ որ մարդիկ ձեզ անեն,
նոյնպէս էլ դուք արէք նորանց։
Եւ եթէ դուք ձեզ սիրողներին 32
սիրէք, ի՞նչ շնորհք է ձեզ, որով-
հետև մեղաւորներն էլ են իրանց
սիրողներին սիրում։ Եւ եթէ ձեր 33
բարերարներին բարի անէք, ի՞նչ
շնորհք է ձեզ, որովհետև մեղա-
ւորներն էլ են այնպէս անում.
Եւ եթէ փոխ էք տալիս նորանց՝ 34
որ նորանցից ետ առնելու յոյս
ունիք, ի՞նչ շնորհք է ձեզ. որով-
հետև մեղաւորներն էլ են մե-
ղաւորներին փոխ տալիս, որ հա-
ւասար չափը ետ առնեն։ Բայց 35
սիրեցէք ձեր թշնամիներին, և
բարի արէք և փոխ տուէք ոչինչ
ակնկալելով. և ձեր վարձքը շատ
կ'լինի, և Բարձրեալի որդիք կը
լինիք. որովհետև նա քաղցր է
երախտամոռների և չարերի վե-
րայ։ Ուրեմն ողորմած եղէք, ինչ- 36
պէս ձեր Հայրն էլ ողորմած է։
Եւ մի դատէք, և չէք դատուիլ. 37
մի դատապարտէք, և չէք դա-

տապարտուիլ. *արձակեցէք՝ և
38 կ'արձակուիք։ Տուէք և կ'տրուի
ձեզ. լաւ չափով՝ թափ տրուած
շարժուած լիփ լիքը կ'տան ձեր
գոգը. որովհետև այն չափովը որ
չափէք, նորանով կ'չափուի ձեզ։
39 Մի առակ էլ ասեց նորանց,
Մի՞թէ կարող է կոյրը կոյրին
առաջնորդել, չէ՞ որ երկուսն էլ
40 փոսը կ'ընկնեն. Աշակերտն իր
վարդապետիցը բարձր չէ. բայց
ամեն կատարեալն իր վարդապե-
տի պէս կ'լինի։
41 Եւ ի՞նչու քո եղբօր աչքումը
շիւղը տեսնում ես, և քո աչքի
միջի գերանը չես նշմարում։
42 Կամ ի՞նչպէս կարող ես եղբօրդ
ասել. Եղբայր, թող քո աչքի
միջի շիւղը հանեմ, բայց քո աչ-
քի միջի գերանը չես տեսնում.
կեղծաւոր, առաջ քո աչքիցը
գերանը հանիր, և ապա մտիկ
կ'տաս, որ քո եղբօր աչքիցը շիւ-
43 ղը հանես։ Որովհետև բարի ծառ
չ'կայ, որ չար պտուղ բերէ. և
ոչ էլ չար ծառ, որ բարի պտուղ
44 բերէ։ Որովհետև ամեն մէկ ծառ
իր պտղիցն է ճանաչվում. որով-
հետև փշերից թուզ չեն քա-
ղում, և ոչ մորենուցը խաղող
45 են կթում։ Բարի մարդն իր սրտի
բարի գանձիցը բարի է բղխում,
և չար մարդն իր սրտի չար գան-
ձիցը չար է բղխում, որովհետև
սրտի աւելացածիցն խօսում է
նորա բերանը։
46 Եւ ի՞նչու էք ինձ Տէր Տէր կո-
չում, և չէք անում այն որ ա-
47 սում եմ։ Ամեն ով որ ինձ մօտ
է գալիս և իմ խօսքերը լսում՝
և նորանց անում, ցոյց տամ ձեզ՝
48 թէ ո՞ւմ նման է։ Նման է մի
տուն շինող մարդի, որ փորեց և
խորացրեց, և հիմը ժայռի վերայ
դրաւ, և երբոր ջրի հեղեղներ
եղան, գետն այն տանը զարկեց,
և չ'կարողացաւ շարժել նորան,
որովհետև ժայռի վերայ էր հաս-
49 տատուած։ Բայց իմ խօսքերը լսող
և չ'անողը, նման է մի մարդի՝ որ
տունը հողի վերայ շինեց առանց

*Կամ՝ ներեցէք և կ'ներուի ձեզ։

հիման. որ գետը նորան զարկեց,
և շուտով վայր ընկաւ. և այն
տան կործանումը մեծ եղաւ։

ԳԼ. Է

Եւ իր բոլոր խօսքերը ժողովրդի 1
ականջներին խօսելը կատարելուց
յետոյ մտաւ Կափառնայում։ Եւ 2
մի հարիւրապետի ծառայ հի-
ւանդացած մեռնելու մօտ էր, որ
պատուական էր նորա համար։
Եւ նա Յիսուսի համար լսելով, 3
Հրէաներից ծերեր նորա մօտ ու-
ղարկեց՝ նորան աղաչելով, որ
գայ իր ծառային ապրեցնէ։ Նո- 4
րանք էլ Յիսուսի մօտ եկան՝ նո-
րան թախանձանօք աղաչում էին
և ասում, թէ Արժանի է նա,
որ այս անես նորան։ Որովհետև 5
մեր ազգին սիրում է, և ժողո-
վարանն էլ նա շինեց մեզ հա-
մար։ Եւ Յիսուսը նորանց հետ 6
գնաց. երբոր նա տանիցը տա-
կաւին շատ հեռու չէր, հարիւ-
րապետը բարեկամներ ուղարկեց
նորա մօտ և ասեց նորան. Տէր,
մի յոգնիր, որովհետև արժանի
չեմ, որ իմ յարկի տակ մտնես։
Նորա համար ես իմ անձն էլ 7
արժանաւոր չ'համարեցի՝ քեզ
մօտ գալու. այլ խօսքով ասիր,
և ծառաս կ'բժշկուի։ Որովհետև 8
ես էլ իշխանութեան տակ դըր-
ուած մարդ եմ, որ իմ ձեռի
տակ զինուորներ ունիմ, և սորան
ասում եմ՝ Գնա, և նա գնում
է. և ուրիշին՝ Եկ, և գալիս է.
և իմ ծառային՝ Այս բանն արա,
և անում է։ Եւ Յիսուսը այս 9
լսելով՝ զարմացաւ նորա վերայ,
և դարձաւ իր ետևից գնացող
ժողովրդին ասեց. Ասում եմ ձեզ՝
թէ Իսրայէլի մէջ էլ այսպիսի
հաւատք չ'գտայ։ Եւ այն ուղար- 10
կուած մարդիկը ետ դառան տուն,
և հիւանդ ծառային բժշկուած
գտան։
Եւ հետևեալ օրը եղաւ, որ 11
Նային ասուած քաղաքն էր գը-
նում, և նորա հետ գնում էին
նորա աշակերտներից շատերը և
և շատ ժողովուրդ։ Եւ երբոր մօ- 12

տեցաւ քաղաքի դռանը, ահա
մի մեռել էին դուրս բերում՝ իր
մօր միածնունդ որդին. և նա
որբևայրի էր. և քաղաքիցն էլ
մի մեծ բազմութիւն կար նորա
13 հետ։ Եւ Տէրը նորան տեսաւ՝
գթաց նորա վերայ և ասեց նո-
14 րան. Մի լար։ Եւ մօտ եկաւ՝
դագաղին դպաւ. և տանողները
կանգնեցին. և ասեց. Երիտա-
սարդ, քեզ եմ ասում՝ Վեր
15 կաց։ Եւ մեռելը վերկացաւ,
նստեց և սկսեց խօսել. և նորան
16 տուաւ իր մօրը։ Եւ ահ բռնեց
ամենքին, և Աստուծուն փառք
էին տալիս և ասում, թէ Մի
մեծ մարգարէ է վեր կացել մեր
մէջ, և թէ Աստուած իր ժո-
17 ղովրդին այցելել է։ Եւ այս ձայ-
նը նորա համար դուրս գնաց բո-
լոր Հրէաստանը և բոլոր շրջա-
կայքը։
18 Եւ Յովհաննէսին պատմեցին իր
աշակերտներն այս բոլոր բաների
19 համար։ Եւ Յովհաննէսն իր ա-
շակերտներից երկուսին կանչեց
իրան մօտ, ուղարկեց Յիսուսի
մօտ և ասեց. Դո՞ւ ես այն որ
գալու է, թէ ուրիշի սպասենք։
20 Այն մարդիկն էլ նորա մօտ գա-
լով ասեցին. Յովհաննէս Մկըր-
տիչը մեզ ուղարկել է քեզ մօտ՝
և ասում է, Դո՞ւ ես այն որ գա-
21 լու է, թէ ուրիշի սպասենք։ Եւ
այն ժամին շատերին բժշկեց հի-
ւանդութիւններից և հարուած-
ներից և չար ոգիներից, և շատ
22 կոյրերին տեսնել շնորհեց։ Եւ
Յիսուսը պատասխանեց և ասեց
նորանց. Գնացէք Յովհաննէսին
պատմեցէք ինչ որ տեսաք և լսե-
ցիք. որ կոյրերը տեսնում են,
կաղերը գնում են, բորոտները
սրբվում են, խուլերը լսում են,
մեռելները յարութիւն են առ-
նում, աղքատներին աւետարան
23 է քարոզվում։ Եւ երանելի է
նա, որ ինձ վերայ չի գայթակղիլ։
24 Եւ երբոր Յովհաննէսի ուղար-
կած մարդիկը գնացին, սկսեց
ժողովուրդների հետ Յովհաննէսի
համար ասել, Ի՞նչ տեսնելու
դուրս գնացիք անապատը, մի ե-
ղէ՞գ քամուց շարժուած։ Ապա 25
ի՞նչ տեսնելու դուրս գնացիք, մի
մա՞րդ՝ փափուկ հանդերձներ հա-
գած. ահա նորանք որ փառաւոր
հանդերձներում և փափկութիւ-
նում են՝ թագաւորների պալատ-
ներումն են։ Ապա ի՞նչ տեսնելու 26
դուրս գնացիք, մի մարգարէ՞.
այս, ասում եմ ձեզ, որ մար-
գարէից էլ աւելին։ Սա այն է, 27
որի համար գրուած է, թէ Ահա
իմ *հրեշտակն ուղարկում եմ
քո առաջից, որ պատրաստէ քո
ճանապարհը քո առաջին։ Որով- 28
հետև ասում եմ ձեզ, որ կա-
նանց ծնուածների մէջ Յովհան-
նէս Մկրտչից աւելի մեծ մար-
գարէ ոչ ով չ'կայ. բայց Աստու-
ծոյ արքայութեան միջի փոքրա-
գոյնը նորանից մեծ է։
Եւ բոլոր ժողովուրդն երբոր 29
այս լսեցին՝ և մաքսաւորները՝ Աս-
տուծուն արդարացրին Յովհան-
նէսի մկրտութիւնովը մկրտուե-
լով։ Բայց Փարիսեցիները և օրի- 30
նականները անարգեցին Աստու-
ծոյ խորհուրդն իրանց անձերի
համար՝ նորանից չ'մկրտուելով։
†Տէրն էլ ասեց. Արդ ո՞ւմ 31
նմանցնեմ այս ազգի մարդիկը.
և ո՞ւմ են նման։ Նման են այն 32
երեխաներին որ հրապարակնե-
րումը նստած են և իրար կան-
չում են և ասում. Մենք փող
հնչեցինք ձեզ համար՝ և դուք
պար չ'եկաք, ողբ երգեցինք և
չ'լացիք։ Որովհետև Յովհաննէս 33
Մկրտիչն եկաւ, ո՛չ հաց էր ու-
տում, ո՛չ էլ գինի խմում, և
ասում էք՝ դև ունի։ Մարդի Որ- 34
դին եկաւ, ուտում է և խմում
է, և ասում էք. Ահա ուտող և
գինի խմող մարդ, մաքսաւորների
և մեղաւորների բարեկամ։ Եւ 35
իմաստութիւնը արդարացաւ բո-
լոր իր որդիներիցը։
Փարիսեցիներից մէկն աղաչում 36
էր նորան, որ հաց ուտէ իր հետ.
և նա մտաւ Փարիսեցիի տունը
սեղան նստեց։ Եւ ահա այն քա- 37

*դեսպանն
†Ոմանք չ'ունին։

ղաքուամբ մի կին կար, որ մեղաւոր էր, երբոր իմացաւ, թէ նա փարիսեցիի տանը անկան է նըստած, մի շիշ անուշահոտ իւղ
38 բերաւ։ Եւ նորա ոտներէն մօտ նորա ետևից կանգնած, լաց էր լինում, և սկսեց արտասուքովը նորա ոտները թրջել, և իր գլխի մազերովը սրբում էր, և նորա ոտները համբուրում էր, և իւ-
39 ղովը օծում։ Եւ փարիսեցին էլ, որ նորան կանչել էր, երբոր տեսաւ, իր մտքումն ասում էր. Սա եթէ մի մարգարէ էր, ապա կը գիտենար՝ թէ ով կամ ինչպիսի կին է նա, որ իրան մօտենում է,
40 որովհետև մեղաւոր է։ Եւ Յիսուսը պատասխանեց և ասեց նորան. Սիմոն, մի բան ունիմ քեզ ասելու. նա էլ ասեց. Ասիր,
41 վարդապետ. և ասէ. Մի փոխատուող երկու պարտական ունէր, մէկը հինգ հարիւր դահեկան էր
42 պարտական և միւսը յիսուն։ Եւ երբոր նորանք բան չունէին վճարելու, երկուսին էլ շնորհեց. արդ նորանցից ո՞րն ուելի կ'սիրէ
43 նորան, *ասիր։ Սիմոնն էլ պատասխանեց և ասեց. Ինձ այսպէս է երևում, թէ նա՝ որ նորան շատ շնորհեց. Նա էլ ասեց նո-
44 րան. Ուղիղ դատեցիր։ Եւ դառնալով դէպի կինը, Սիմոնին ասեց. Տեսնո՞ւմ ես այս կինը. ես քո տունը մտայ, իմ ոտներին դու ջուր չես տուել, բայց սա իր արտասուքովը թրջեց ոտներս, և իր գլխի մազերովը սրբեց։
45 Դու ինձ համբոյր չես տուել. իսկ սա՝ քանի որ այստեղ եմ մտել՝ ոտներս համբուրելուց չը
46 դադարեց։ Դու իւղով չօծեցիր իմ գլուխը. սա անուշահոտ իւղով
47 օծեց իմ ոտները։ Վասնորոյ ասում եմ քեզ. Սորա շատ մեղքերն իրան թողուած կ'լինին, որովհետև շատ սիրեց. բայց որին որ քիչ կ'թողուի՝ նա քիչ կը
48 սիրէ։ Եւ նորան ասեց. Քո մեղ-
49 քերը թողուած լինին քեզ։ Եւ նորա հետ սեղան նստողներն սկսեցին իրանց մտքումն ասել. Սա ո՞վ է, որ մեղք էլ է թողում։ Եւ նա ասեց այն կնկանը. 50
Քո հաւատքն ապրեցրեց քեզ. գնա խաղաղութիւնով։

Գլ. Ը

Եւ նորանից յետոյ եղաւ, որ 1
նա ման էր գալիս քաղաքները և գիւղերը քարոզելով և Աստուծոյ արքայութիւնն աւետարանելով. և այն տասներկուսն էլ նորա հետ. Եւ մի քանի կանայք, 2
որ չար ոգիներից և հիւանդութիւններից բժշկուած էին. Մագդաղենացի կոչուած Մարիամը, որ նորանից եօթը դև էին դուրս եկել, Եւ Յովհաննան՝ Հերովդեսի տան տեսուչ Քուզայի կինը, և Շուշանը, և շատ ուրիշներ, որ իրանց ստացուածքներիցը նորան ծառայութիւն էին անում։

Եւ երբոր մեծ բազմութիւն էր 4
հաւաքուած, և ամեն մէկ քաղաքից նորա մօտ էկան, առակով ասեց. Սերմ ցանողը դուրս գընաց իր սերմը ցանելու. և նա 5
սերմելիս՝ որը ճանապարհի մօտ բնկաւ՝ և կոխուեցաւ, և երկնքի թռչունները նորան կերան։ Եւ 6
ուրիշը ապառաժի վերայ բնկաւ. և բուսնելու ժամանակին չորացաւ՝ հիւթի պակասութեան պատճառով։ Եւ ուրիշն բնկաւ 7
փշերի մէջ, և փշերը նորա հետ բուսան և խեղդեցին նորան։ Եւ 8
ուրիշն բնկաւ այն բարի և պարարտ երկրի վերայ. և բուսաւ՝ հարիւրապատիկ պտուղ տուաւ. այս բաները խօսելիս՝ աղաղակեց. Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։

Աշակերտներն էլ նորան հարցնում էին, թէ ի՞նչ է այն առակը։ Նա էլ ասեց. Ձեզ տրուած 10
է Աստուծոյ արքայութեան խորհուրդները դիտենալ, բայց ուրիշներին՝ առակներով խօսում եմ. որ տեսնելով չ'տեսնեն, և լսելով չ'իմանան։

Արդ առակն այս է. Սերմը Աս- 11
տուծոյ խօսքն է։ Ճանապարհի 12

*Ոմանք չ'ունին։

մօտինն էլ նորանք են, որ լսում են և յետոյ սատանան գալիս է և խօսքը նորանց սրտիցը հանում է, որ չ'հաւատան՝ և փրկուին։
13 Ապառաժի վերայինները էլ նորանք են, որ երբոր կ'լսեն, խօսքը ուրախութիւնով ընդունում են. սակայն սորանք արմատ չ'ունին. մի առ ժամանակ հաւատում են, բայց փորձութեան
14 ժամանակին հեռանում են։ Փշերի մէջ ընկողն էլ նորանք են, որ խօսքը լսած են լինում, բայց հոգսերից և հարստութիւնից և կեանքի զուարճութիւններից՝ գնալով խեղդվում են, և ան-
15 պտուղ են լինում։ Բայց այն պարարտ երկրի միջինը, նորանք են, որ բարի և յօժար սրտով խօսքը լսում և ընդունում են, և համբերութիւնով պտուղ են տալիս։
16 Ոչ ով ճրագ չի վառիլ և անօթիով թագցնիլ՝ կամ մահիճի տակ դնիլ. այլ ճրագակալի վերայ կ'դնէ, որ ներս մտնողները
17 լոյսը տեսանեն։ Որովհետև ծածուկ բան չ'կայ՝ որ չ'յայտնուի. և ոչ թագուն բան, որ չ'իմացուի
18 և յայտնուի։ Ուրեմն տեսէք թէ ինչպես էք լսում. որովհետև ով որ ունի, նորան կ'տրուի, և ով որ չ'ունի, այն էլ որ կարծում է թէ ունի, նորանից վեր կ'առնուի։
19 Եւ նորա մայրը և նորա եղբայրները նորա մօտ եկան, և չէին
20 կարողանում բազմութեան պատճառով նորա մօտ հասնել, Նորան իմաց արին և ասեցին. Մայրդ և եղբայրներդ դուրսը կանգնած
21 ուզում են քեզ տեսնել։ Նա էլ պատասխանեց և ասեց նորանց. Իմ մայրը և իմ եղբայրները նորանք են, որ Աստուծոյ խօսքը լսում են և անում։
22 Եւ մէկ օր եղաւ, որ նա նաւ մտաւ, և նորա աշակերտներն էլ և նա ասեց նորանց. Անց կենանք
23 ծովակի միւս կողմը. և ճանապարհ բնկան։ Եւ երբոր նաւով գնում էին՝ նա քնեց. և քամու փոթորիկ բնկաւ ծովակի մէջ, և նաւը լցվում էր, և վտանգի

մէջ էին։ Եւ մօտ եկան. նորան 24
արթնացրին և ասեցին. Վարդապետ, վարդապետ, կորչում ենք. Նա էլ վերկացաւ, և քամուն և ջրի ալեկոծութեանը սաստեց, և հանդարտեցին, և խաղաղութիւն եղաւ։ Եւ ասեց նորանց. Ո՞ւր է 25
ձեր հաւատքը, և նորանք խիստ վախեցան զարմացան, և իրար ասում էին. Սա ո՞վ է արդեօք որ քամիներին և ջրերին էլ է հրաման տալիս, և հնազանդում են սորան։

Եւ նաւով գնացին *Գադարացիների երկիրը, որ Գալիլեայի դիմացի կողմն է։ Եւ նա դուրսը 26 27
ցամաքը գնալիս, քաղաքիցը մի մարդ պատահեց նորան, որ դևեր ունէր բաւական ժամանակից հետէ, և հագուստ չէր հագած և տան մէջ չէր կենում այլ գերեզմաններումը։ Եւ Յիսուսին որ 28
տեսաւ, աղաղակեց և նորա առաջին ընկաւ, և մեծ ձայնով ասեց. Քեզ ինչ բան կայ ինձ հետ, Յիսուս Որդի բարձրեալ Աստուծոյ. աղաչում եմ քեզ՝ մի տանջիր ինձ։ Որովհետև նա պիղծ 29
ոգուն հրամայում էր որ այն մարդուցը դուրս գայ. որովհետև շատ ժամանակ էր որ յափշտակել էր նորան, և չղթաներով ու ոտնակապերով կապած պահվում էր, բայց կապանքները կըտրում էր, և դևիցը անապատ տեղեր էր տարվում։ Յիսուս էլ 30
նորան հարցրեց՝ և ասեց. Անունդ ինչ է. Նա էլ ասեց. Լեգէոն, որովհետև շատ դևեր էին մտած նորա մէջ։ Եւ աղաչում էին նո- 31
րան, որ չ'հրամայէ նորանց գնալ անդունդը։ Եւ այնտեղ շատ խո- 32
զերի մի երամակ կար, որ այն սարի վերայ արածում էին, և նորանք աղաչում էին նորան, որ հրաման տայ իրանց մտնել նորանց մէջը. և նա հրաման տուաւ նորանց։ Դևերն էլ այն մարդիցը 33
դուրս եկան՝ խոզերի մէջ մտան, և երամակն այն գահավէժ տեղիցը վազեց ծովակի մէջ և խեղ-

*Ոմանք՝ Գերգեսացիների

34 դուեցաւ ։ Խոզաբածներն էլ որ
տեսան այն եղած բաները, փա-
խան և գնացին քաղաքի և ագա-
35 րակների մէջ պատմեցին ։ Եւ
դուրս ելան այն եղած բանը տես-
նելու ։ Եւ Յիսուսի մօտ եկան,
և նստած գտան այն մարդը որից
դևերը դուրս էին եկել, հագ-
36 ուած և ղպատուցած Յիսուսի
ոտների մօտ. և վախեցան ։ Եւ
նորանք էլ որ տեսել էին, պատ-
մեցին նորանց, թէ ինչպէս փրկ-
37 ուեցաւ դիւահարը ։ Եւ Գադա-
րացիների շրջակայքի բոլոր բազ-
մութիւնը աղաչեցին նորան որ
իրանցից գնայ որ մեծ ահով
բռնուած էին. Նա էլ նաւ մտաւ
38 և դարձաւ ։ Եւ այն մարդն էլ,
որից դևերը դուրս էին եկել,
նորան աղաչում էր, որ նորա
հետ լինի. բայց Յիսուսը արձա-
39 կեց նորան և ասեց. Դարձիր քո
տունը, և պատմիր ինչ որ Աստ-
ուած քեզ արաւ. և նա գնաց
քարոզում էր բոլոր քաղաքում
ինչ որ Յիսուսը իրան արաւ ։
40 Եւ եղաւ երբոր Յիսուսը ետ
դարաւ, ժողովուրդն ընդունեց
նորան. որովհետև ամենքն սպաս-
41 ում էին նորան ։ Եւ ահա մի
մարդ եկաւ՝ անունն Յայրոս, և
նա ժողովարանի իշխան էր. և
Յիսուսի ոտներն ընկնելով աղա-
չում էր նորան, որ իր տունը
42 մտնէ։ Որովհետև մի միածնուհի
աղջիկ ուներ, իբր տասներկու
տարեկան, և նա մեռնում էր.
և նորա գալու ժամանակ՝ ժող-
ովուրդները նեղում էին նորան ։
43 Եւ մի կին կար տասներկու
տարուց հետէ տեռատեսութեան
մէջ, որ իր բոլոր ինչքը բժիշկ-
ների ծախսելով չէր կարողացել
44 ոչ մէկից բժշկուիլ ։ Սա մօտ ե-
կաւ հետիցը, նորա հանդերձի
ծայրին դպաւ. և իսկոյն նորա
45 արիւնի վտակը կանգնեց։ Եւ Յի-
սուսը ասեց. Ո՞վ է որ ինձ դպաւ.
և երբոր ամենքն ուրանում էին,
ասեց Պետրոսը և նորա հետ լի-
նողները. Վարդապետ, ժողո-
վուրդները անդադար են քեզ և
նեղում, և դու ասում ես, Ո՞վ
է որ ինձ դպաւ։ Եւ Յիսուսը ա- 46
սեց. Մէկը դպաւ ինձ. որովհետև
ես իմացայ՝ որ զօրութիւն դուրս
եկաւ ինձանից։ Եւ երբոր տեսաւ 47
կինը, որ ծածուկ չմնաց, դողա-
լով եկաւ՝ նորա առաջին ընկաւ,
և բոլոր ժողովրդի առաջին պատ-
մեց նորան, թէ ինչ պատճառով
նորան դպաւ, և թէ ինչպէս ի-
նքն բժշկուեցաւ ։ Նա էլ ասեց 48
նորան. Դստեր, դուստր, քո
հաւատքը բժշկեց քեզ, գնա խա-
ղաղութիւնով ։
Եւ նա տակաւին խօսելիս ժո- 49
ղովրդապետի տանիցը մէկն ե-
կաւ, և նորան ասեց, թէ Աղ-
ջիկդ մեռաւ. մի աշխատացնիր
վարդապետին։ Բայց Յիսուսը երբ- 50
որ լսեց, նորան պատասխանեց և
ասեց. Մի վախենար, միայն հա-
ւատա, և կ'ապրի ։ Եւ երբոր 51
տունն էր մտնում, ոչ ոքի չ'թո-
ղեց ներս մտնել, բայց միայն
Պետրոսին, և Յակոբոսին և Յով-
հաննէսին, և աղջկայ հօրը և մօ-
րը ։ Եւ ամենքը լաց էին լինում 52
և նորա վերայ սուգ անում. և
նա ասեց, Լաց մի լինիք, մեռած
չէ, այլ քնած է։ Բայց ծաղր էին 53
անում նորան, գիտենալով՝ որ
մեռել է։ Իսկ նա ամենքին դուրս 54
հանեց, և նորա ձեռքիցը բռնե-
լով՝ կանչեց և ասեց. Աղջիկ, վեր
կաց։ Եւ նորա հոգին դարձաւ, 55
և նա իսկոյն կանգնեց. և հրա-
մայեց, որ նորան բան տան ու-
տելու։ Եւ նորա ծնողքը զարմա- 56
ցան. և նա պատուիրեց, որ ոչ
ոքի չ'ասեն եղածը ։

ԳԼ. Թ

Եւ իր տասներկու աշակերտ- 1
ներին մէկտեղ կանչեց, և նո-
րանց զօրութիւն և իշխանու-
թիւն տուաւ բոլոր դևերի վե-
րայ, և հիւանդութիւնները բժշ-
կելու։ Եւ նորանց ուղարկեց Աս- 2
տուածոյ արքայութիւնը քարոզե-
լու, և հիւանդներին բժշկելու։
Եւ ասեց նորանց. Ոչինչ վեր չ'առ- 3
նէք ճանապարհի համար. ոչ գա-
ւազան, ոչ պարկ, ոչ հաց, ոչ
արծաթ, ոչ երկու երկու վե-
րկոու ունենալ ։ Եւ ո՛ր տուն 4
որ մտնէք՝ այնտեղ մնացէք, և
այնտեղից դուրս գնացէք։ Եւ ո-
րանք որ ձեզ չ'ընդունեն, այն
քաղաքիցը դուրս գնալիս, ձեր
ոտներիցը փոշին էլ թօթափե-
ցէք՝ նորանց վկայութիւն լինելը-
համար։ Եւ նորանք դուրս գնա- 5
ցին՝ և ման էին գալիս գիւղերը
աւետարանը քարոզելով, և ամեն
տեղ բժշկութիւններ անելով ։
Եւ Հերովդէս չորրորդապետը 7
լսեց նորանից եղած բոլոր խոր-
հուրդը. և տարակուսանաց մէջ էր
նորա համար՝ որ ոմանք ասում
էին, Թէ Յովհաննէսը մեռելնե- 8
րից յարութիւն է առել, և ո-
մանք էլ, Թէ Եղիան յայտնուել
է. և ուրիշները, Թէ Առաջի մար-
գարէներից մէկը յարութիւն է
առել. Եւ Հերովդէսն ասեց. 9
Յովհաննէսին գլխատեցի. բայց
սա ո՞վ է, որի մասին ես այսպի-
սի բաներ եմ լսում. և ուզում
էր տեսնել նորան ։
Եւ առաքեալները դարձան և 10
պատմեցին նորան ինչ որ արին. և
նորանց առաւ և գնաց առանձին
մի անապատ տեղ՝ մի քաղաքի
մօտ, որ կոչվում էր Բեթսայի- 11
դա։ Եւ ժողովուրդները իմանա-
լով, նորա ետևից գնացին. և նո-
րանց ընդունեց և նորանց հետ
Աստուծոյ արքայութեան մասին
խօսում էր, և նորանից՝ որ բժշկու-
թեան կարօտ էին՝ բժշկում էր։
Եւ օրն սկսեց տարաժամել. 12
տասներկուքն էլ մօտ եկան և
ասեցին նորան. Արձակիր այդ ժո-
ղովուրդը, որ շրջակայ գիւղերը
և ագարակները գնան, իջևանեն,
և կերակուր գտնեն. որովհետև
այստեղ անապատ տեղում ենք։
Եւ նորանց ասեց. Դուք տուէք 13
դորանց ուտել. Նորանք էլ ա-
սեցին. Մենք հինգ հացից և եր-
կու ձկնից աւելի չ'ունինք, եթէ
ոչ՝ գնանք այդ բոլոր ժողովրդի 14
համար կերակուր գնենք ։ Որով-
հետև հինգ հազարի չափ մար-
դիկ էին։ Եւ նա իր աշակերտ-
ներին ասեց. Նստեցրէք դորանց

գա գա յիսուն յիսուն ։ Եւ 15
այնպէս արին, և ամենքին նստե-
ցրին ։ Եւ այն հինգ հացն և եր- 16
կու ձուկն առաւ, դէպի երկինքը
նայեց, օրհնեց նորանց և կարեց,
և տալիս էր աշակերտներին, որ
ժողովրդի առաջին դնեն ։ Ամեն- 17
քը կերան և կշտացան. և կտոր-
ների փշրանքները վեր առան
տասներկու զամբիւղ ։
Եւ եղաւ, երբոր նա առանձին 18
աղօթք էր անում, աշակերտներն
էլ նորա հետ էին. և հարցրեց
նորանց և ասեց. Ժողովուրդներն
ինձ համար ո՞վ են ասում, Թէ
լինեմ։ Նորանք էլ պատասխանե- 19
ցին և ասեցին. Յովհաննէս Մկըր-
տիչը, ուրիշներն էլ՝ Եղիան, ու-
րիշներն էլ, Թէ Առաջի մարգա-
րէներից մէկը յարութիւն է ա-
ռել ։ Եւ նորանց ասեց. Բայց 20
դուք ո՞վ էք ասում ինձ համար
Թէ լինեմ. Պետրոսը պատասխա-
նեց և ասեց. Աստուծոյ Քրիստո-
սը ։ Նա էլ ասատեց նորանց, և 21
պատուիրեց՝ որ այս բանը ոչ ոքի
չ'ասեն ։ Եւ ասեց, Թէ Պէտք է 22
մարդի Որդին շատ չարչարուի և
անարգուի ծերերիցը և քահա-
նայապետներիցը և դպիրներիցը,
և սպանուի և երրորդ օրում
յարութիւն առնէ։ Եւ ամենքին 23
ասում էր. Եթէ մէկը կամենում
է իմ ետևից գալ, թող իր անձն
ուրանայ և ամեն օր իր խաչն ա-
նէ և իմ ետևից գայ։ Որովհետև 24
ով որ կամենայ իր անձն ապրե-
ցնել՝ կ'կորցնէ նորան. և ով որ
իր անձն կորցնէ ինձ համար՝ նա
կ'ապրեցնէ նորան ։ Քանի՞ բիէ 25
օգուտ է մարդի, որ բոլոր աշ-
խարհքս ստանայ, և իր անձը կոր-
ցնէ, կամ վնասուի ։ Որովհետև 26
ով որ ինձ և իմ խօսքերն ամօթ
համարէ, մարդի Որդին էլ նորան
ամօթ կ'համարէ, երբոր գայ իր,
և Հօր և սուրբ հրեշտակների
փառքով։ Բայց ճշմարիտ ասում 27
եմ ձեզ. Այստեղ կանգնածնե-
րիցը ոմանք կան, որ մահ չեն ճա-
շակիլ, մինչև որ Աստուծոյ աս-
քայութիւնը տեսնեն ։
Եւ եղաւ, որ այս խօսքերից 28

ութ օրի չափ յետոյ, Պետրոսին
և Յովհաննէսին և Յակոբին ա-
ռաւ՝ և վեր ելաւ սարը աղօթք
29 անելու։ Եւ եղաւ որ նա աղօթք
անելիս, նորա երեսի կերպարանքն
ուրիշ կերպ եղաւ. և նորա հա-
գուստը սպիտակ փայլուն եղաւ։
30 Եւ ահա երկու մարդ խօսում
էին նորա հետ, որ Մովսէսն և
31 Եղիան էին. Նորանք փառքով
երևեցած խօսում էին նորա վախ-
ճանի համար, որ Երուսաղէմումը
32 կատարուելու էր։ Բայց Պետրոսը
և նորա հետ լինողները քնով
ծանրացած էին, և երբոր զարթ-
նեցին՝ տեսան նորա փառքը, և
այն երկու մարդկանցը որ նորա
33 մօտ կանգնած էին։ Եւ եղաւ որ
նորանք նորանից հեռանալիս,
Պետրոսն ասեց Յիսուսին. Վար-
դապետ, լաւ է մեզ համար այս-
տեղ կենալ. և երեք տաղաւար
շինենք, մէկը քեզ համար, և
մէկը Մովսէսին, և մէկը Եղի-
այի. և չ՛գիտէր թէ ինչ էր խօ-
34 սում։ Եւ երբոր նա այս ասում
էր մի ամպ եկաւ և նորանց վե-
րայ հովանի արաւ. և վախեցան,
35 երբոր այն ամպի մէջ մտան։ Եւ
ձայն եղաւ ամպիցն, որ ասեց.
Դա է իմ սիրելի Որդին, դորան
36 լսեցէք։ Եւ այն ձայնն որ եղաւ,
Յիսուսը մինակ գտնուեցաւ. և
նորանք լռեցին, և այն օրերումն
ոչ ոքի ոչինչ չ՛պատմեցին այն
բաներիցն, որ տեսան։
37 Եւ հետևեալ օրը եղաւ որ
նորանք սարիցն իջնելիս, շատ ժո-
ղովուրդ նորա առաջին եկաւ։
38 Եւ ահա ժողովրդիցը մի մարդ
աղաղակեց և ասեց. Վարդա-
պետ, աղաչում եմ քեզ, մտիկ
տուր իմ որդուն, որովհետև
39 միածնունդս է։ Եւ ահա ոգի
բռնում է նորան, և նա յան-
կարծ գոռում է, և նորան գետ-
նով է տալիս փրփրեցնելով, և
հազիւ հեռանում է նորանից՝
40 նորան կոտրատելուց յետոյ։ Եւ
ես քո աշակերտներին աղաչեցի,
որ հանեն նորան, բայց չ՛կարո-
41 ղացան։ Յիսուսն էլ պատասխա-
նեց և ասեց. Ով անհաւատ և
թիւր ազգ, մինչև ե՞րբ ձեզ հետ
պիտի լինեմ և համբերեմ ձեզ.
քո որդին այստեղ բեր։ Եւ նա 42
դեռ մօտ գալիս՝ դևը գետնով
զարկեց նորան և շատ սաստիկ
թափահարեց։ Իսկ Յիսուսը սաս- 43
տեց պիղծ ոգուն, և երեխային
բժշկեց. և նորան տուաւ իր հօ-
րը։ Եւ ամենքը զարմանում էին 44
Աստուծոյ մեծափառութեան վե-
րայ։

Եւ երբոր ամենքը զարմանում
էին այն բոլոր բաների վերայ, որ
Յիսուսը անում էր, իր աշակերտ-
ներին ասեց. Այս խօսքերը դուք
ձեր ականջներումը դրէք. որով-
հետև մարդի Որդին մարդկանց 45
ձեռն է մատնուելու։ Բայց նո-
րանք չէին իմանում այն խօսքը
և ծածկուած էր նորանցից, որ
չ՛հասկանան նորան. և վախենում
էին հարցնել նորան այն բանի
համար։
Մի խորհուրդ էլ մտաւ նո- 46
րանց մէջ՝ այն թէ՝ նորանցից ո՞վ
լինի մեծը։ Յիսուսն էլ նորանց 47
սրտերի մտածմունքներն իմանա-
լով մի երեխայ առաւ՝ և նորան
կանգնեցրեց իրան մօտ, Եւ ա- 48
սեց նորանց. Ով որ այս երեխա-
յին ընդունի իմ անունովը, ինձ
է ընդունում. և ով որ ինձ ընդ-
ունի, ինձ ուղարկողին է ընդու-
նում. որովհետև ով որ ձեր ա-
մենիդ մէջ փոքրագոյն է, նա մեծ
կ՛լինի։
Յովհաննէսն էլ պատասխանեց 49
և ասեց. Վարդապետ, մէկը տե-
սանք, որ քո անունովը դևեր էր
հանում, և արգիլեցինք նորան,
որովհետև մեզ հետ չէ ման գա- 50
լիս։ Եւ Յիսուսը նորանց ասեց.
Մի արգիլէք նորան. որովհետև
ով որ մեզ հակառակ չէ, մեր
կողմն է։
Եւ եղաւ, երբոր նորա վերա- 51
նալու օրերը կատարվում էին,
*նա իր երեսը հաստատեց՝ որ
գնայ Երուսաղէմ։ Եւ իր երեսի 52
առաջին պատգամաւորներ ու-
ղարկեց. և գնացին՝ Սամարացի-

*հաստատ որոշեց

ների մի գիւղը մտան, որ նորա
53 համար բան պատրաստեն։ Բայց
նորանք չ՛ընդունեցին նորան, որ
նորա երեսը [illegible] էր Երու-
54 սաղէմ գնալու։ Երբոր նորա ա-
շակերտները՝ Յակոբոսը և Յով-
հաննէսը տեսան՝ ասեցին. Տէր՝
կամենո՞ւմ ես ասենք, կրակ իջ-
նէ երկնքիցը և նորանց սատկե-
ցնէ ինչպէս Եղիան էլ արաւ։
55 Նա էլ դարձաւ՝ սաստեց նո-
րանց և ասեց. Դուք չ՛գիտէք՝ թէ
56 ո՛ր հոգու էք դուք։ Որովհետև
մարդի Որդին չ՛եկաւ՝ մարդկանց
հոգիները կորցնելու, այլ ապ-
րեցնելու. և գնացին ուրիշ գիւղ։
57 Եւ եղաւ որ նորանք գնալիս,
ճանապարհին մի մարդ նորան
ասեց. Ես քո ետևիցը կ՛գամ՝
58 ո՛րտեղ որ գնաս, Տէր։ Յիսուսն
էլ նորան ասեց. Աղուէսները
որջեր ունին, և երկնքի թռչուն-
ները բոյներ. բայց մարդի Որդին
տեղ չ՛ունի, որ գլուխը դնէ։
59 Մի ուրիշին էլ ասեց. Իմ ե-
տևիցն եկ. և նա ասեց. Տէր,
հրաման տուր, որ գնամ առաջ
60 իմ հայրը թաղեմ։ Յիսուսը նո-
րան ասեց. Թող մեռելներն ի-
րանց մեռելներին թաղեն. իսկ
դու գնա Աստուծոյ արքայու-
թիւնը քարոզիր։
61 Մի ուրիշն էլ ասեց. Տէր,
քո ետևից կ՛գամ. միայն թէ
առաջ հրաման տուր ինձ, որ
62 իմ տանը բարև մնա ասեմ։ Յի-
սուսն էլ նորան ասեց. Ոչ ով որ
ձեռքը մաճի վերայ է դնում և
ետևին մտիկ անում, յարմար չէ
Աստուծոյ արքայութեան հա-
մար։

ԳԼ. Ժ

1 Սորանից յետոյ Տէրն ուրիշ եօ-
թանասուն հոգի էլ կարգեց. և
նորանց երկու երկու իր երեսի
առաջին ուղարկեց այն բոլոր
2 քաղաքներն և տեղերն, որտեղ
որ ինքը գնալու էր։ Եւ ասում
էր նորանց. Հունձքը շատ է, բայց
մշակները քիչ. ուրեմն աղաչե-
ցէք հունձքի Տիրոջը, որ մշակ-
ներ հանէ իր հունձքը։ Գնացէք. 3
ահա ես ուղարկում եմ ձեզ
ինչպէս գառներ գայլերի մէջ։
Վեր մի առնէք ոչ քսակ, ոչ 4
պարկ, ոչ կօշիկներ. և ճանա-
պարհին ոչ ոքի բարև չ՛տաք։ Եւ 5
որ տուն որ մտնէք, առաջ ասե-
ցէք՝ խաղաղութիւն այս տանը։
Եւ թէ որ այնտեղ խաղաղու- 6
թեան որդի լինի, ձեր խաղաղու-
թիւնը նորա վերայ կ՛մնայ. ապա
թէ ոչ՝ դէպի ձեզ ետ կ՛դառ-
նայ։ Եւ այն տանը մնացէք, նո- 7
րանց ունեցածիցը կերէք և խմե-
ցէք. որովհետև մշակն իր վարձ-
քին արժանի է. տանից տուն մի
փոխուիք։ Եւ որ քաղաք որ մըտ- 8
նէք, և ձեզ ընդունեն, կերէք՝
ինչ որ կ՛դնեն ձեր առաջին։ Եւ 9
նորա միջի հիւանդներին բժշկե-
ցէք. և նորանց ասեցէք՝ թէ Ա-
ստուծոյ արքայութիւնը մօտեցել
է ձեզ վերայ։ Բայց որ քաղաք 10
որ մտնէք, և ձեզ չ՛ընդունեն՝
դուրս նորա հրապարակները գա-
լով ասեցէք. Այն փոշին էլ, որ 11
ձեր քաղաքիցը մեզ կպել է,
թօթափում ենք ձեզ վերայ.
միայն թէ սա գիտացէք, որ Ա-
ստուծոյ արքայութիւնը մօտեցել
է ձեզ։ Եւ ասում եմ ձեզ, 12
որ Սոդոմացիների համար աւելի
հեշտ կ՛լինի այն օրումը՝ քան թէ
այն քաղաքին։ Վա՛յ քեզ, Քո- 13
րազին. վայ քեզ, Բեթսայիդա.
որովհետև եթէ Տիւրոսի և Սի-
դոնի մէջ եղած լինէին այն զօ-
րութիւնները՝ որ ձեր մէջ եղան,
վաղուց քուրձի և մոխրի մէջ
նստած ապաշխարել էին։ Սա- 14
կայն Տիւրոսի և Սիդոնի համար
աւելի հեշտ կ՛լինի դատաստա-
նումը քան թէ ձեզ։ Եւ դու՝ 15
Կափառնայում, որ մինչև երկինքը
բարձրացած ես, մինչև դժոխքը
պիտի ցածանաս։ Ձեզ լսողը, ինձ 16
է լսում. և ձեզ անարգողը, ինձ
է անարգում. և ինձ անարգողը,
ինձ ուղարկողին է անարգում։
Եւ այն եօթանասունքը ուրա- 17
խութիւնով ետ դառան և ասե-
ցին, Տէր, դևերն էլ հնազան-
դում են մեզ քո անունովը։ Եւ 18

նորանց ասեց. Տեսնում էի սա-
տանային, որ կայծակի պէս եր-
19 կընքիցը վայր էր ընկնում։ Ահա
իշխանութիւնը տուի ձեզ, կո-
խել օձերի և կարիճների վերայ և
թշնամու բոլոր զօրութեանը վե-
20 բայ, և ձեզ ոչինչ չի վնասիլ։ Սա-
կայն նորա համար մի ուրախանաք՝
որ ոգիները ձեզ հնազանդում են,
բայց առաւել ուրախացէք, որ
ձեր անունները գրուած են եր-
կընքումը։
21 Նոյն ժամումն Յիսուսը *Հո-
գովը ցնծաց և ասեց. Գոհանում
եմ քեզանից, Հայր, երկնքի և
երկրի Տէր, որ իմաստուններից և
գիտուններից այս բաները ծած-
կեցիր և մանուկների յայտնե-
ցիր։ Այո, ով Հայր. որովհետև
այսպէս հաճոյ եղաւ քո առա-
22 ջին։ Ամեն բան տրուեցաւ ինձ
իմ Հօրիցը. և ոչ ով չ՚գիտէ թէ
ով է Որդին, բայց միայն Հայրը.
և ով է Հայրը՝ բայց միայն Որ-
դին, և ում որ Որդին կամենայ
յայտնել։
23 Եւ դարձաւ դէպի աշակերտ-
ներն առանձին՝ և ասեց. Երանի
այն աչքերին՝ որ տեսնում են այն
24 որ դուք էք տեսնում։ Որովհե-
տև ասում եմ ձեզ, թէ շատ
մարգարէներ և թագաւորներ կա-
մեցան տեսնել այն որ դուք էք
տեսնում, և չ՚տեսան. և լսել այն
որ դուք էք լսում, և չ՚լսեցին։
25 Եւ ահա մէկ օրինական վեր-
կացաւ՝ նորան փորձում էր ա-
սելով. Վարդապետ, ի՞նչ գոր-
ծեմ որ յաւիտենական կեանքը
26 ժառանգեմ։ Նա էլ ասեց նո-
րան. Օրէնքումն ի՞նչ է գրուած,
27 ի՞նչպէս ես կարդում։ Նա էլ
պատասխանեց և ասեց. Սիրիր
քո Տէր Աստուծուն քո բոլոր
սրտիցը, քո բոլոր անձիցը, քո
բոլոր զօրութիւնիցը, և քո բոլոր
մտքիցը. և քո ընկերին՝ քո անձի
28 պէս։ Եւ նորան ասեց. Ուղիղ
պատասխանեցիր. այդ արա՝ և
29 կ՚ապրես։ Իսկ նա՝ որովհետև
կամենում էր իր անձն արդարա-
ցնել՝ Յիսուսին ասեց. Եւ իմ ընկերն ո՞վ է։ Յիսուսն էլ պա-
30 տասխանեց և ասեց. Մի մարդ
Երուսաղէմից իջնում էր Երի-
քով. և աւազակների ՀԵՌ ընկաւ, նորանք էլ մերկացրին նո-
րան՝ և խոցոտեցին նորան, կիսա-
մահ թողեցին գնացին։ Եւ դիպ-
31 ուածով մի քահանայ էր իջնում
նոյն ճանապարհովը, և նորան
տեսաւ՝ անցաւ։ Նոյնպէս էլ մի
32 Ղևտացի այն տեղը հասաւ եկաւ
և տեսաւ՝ անցաւ։ Մի Սամարա-
33 ցի էլ, որ ճանապարհորդում էր,
եկաւ այնտեղ և նորան տեսնե-
լով գթաց։ Եւ մօտ եկաւ՝ նո-
34 րա խոցերը փաթաթեց՝ վերան
ձէթ և գինի ածելով. և իր ա-
նասունի վերայ դրած տարաւ նո-
րան մի իջևան, և նորան հոգ
35 տարաւ։ Եւ հետևեալ օրն երբ-
որ այն տեղիցը դուրս էր գնում,
երկու դահեկան հանեց և իջե-
ւանի տիրոջը տուաւ և ասեց նո-
րան. Դորան հոգ տար, և ինչ որ
աւելի ծախք անես, ես միւսան-
գամ ետ դառնալիս կ՚վճարեմ
36 քեզ։ Հիմա այն երեքից ո՞րն է
երևում քեզ՝ թէ ընկեր է եղել
այն աւազակների ՀԵՌ ընկած
37 մարդին։ Նա էլ ասեց. Նա՝ որ
ողորմութիւն արաւ նորան։ Ապա
Յիսուսը նորան ասեց. Գնա, դու
էլ այնպէս արա։
38 Եւ եղաւ որ նորանք գնալիս,
ինքն էլ մի գիւղ մտաւ. և մի
կին՝ անունը Մարթա՝ ընդունեց
39 նորան իր տունը։ Եւ նա մի քոյր
ունէր՝ անունը Մարիամ. և սա
Յիսուսի ոտների մօտ նստեց, և
40 լսում էր նորա խօսքերը։ Մար-
թան էլ ծառայութեան համար
շատ զբաղմունքի մէջ էր, ԵԿԱ-
կանգնեց և ասեց. Տէր, հոգդ
չէ՞ որ քոյրս ինձ մինակ թողեց
ծառայելու. ուրեմն ասիր դորան,
41 որ օգնէ ինձ։ Յիսուսը պատաս-
խանեց և ասեց նորան. Մարթա,
Մարթա, դու հոգս ես քաշում
և շատ բաներով զբաղուած ես.
42 Բայց մէկ բան է պէտք. Մարի-
ամը բարի բաժինն ընտրեց, որ
վեր չի առնուիլ նորանից։

*Ոմանք՝ Սուրբ Հոգովը

ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղաւ որ մի տեղ աղօթք էր
անում. և երբոր դադարեց, իր
աշակերտներից մէկն ասեց նո-
րան. Տէ՛ր, սովորեցրու մեզ ա-
ղօթք անելը, ինչպէս Յովհան-
նէսն էլ իր աշակերտներին սովո-
2 րեցրեց։ Եւ ասեց նորանց. Երբոր
աղօթք անէք, ասեցէք. Մեր
Հայր, որ երկնքումն ես, քո ա-
նունը սուրբ լինի. քո արքայու-
թիւնը գայ։ Քո կամքը լինի՝ ինչ-
պէս երկնքումն այնպէս էլ երկ-
3 րիս վերայ։ Մեր ամեն օրուայ
4 հացը օրէցօր տուր մեզ։ Եւ թող
մեզ մեր մեղքերը. որովհետև
մենք էլ թողում ենք ամենին,
որ պարտական է մեզ. և մեզ
փորձանքի մէջ մի տանիր, այլ
փրկիր մեզ չարիցը։
5 Եւ նորանց ասեց. Ձեզանից ո՞վ
է, որ բարեկամ ունենայ, և կէս
գիշերին նորա մօտ գնայ, և նո-
րան ասէ. Բարեկամ, ինձ երեք
6 հաց փոխ տուր. Որովհետև իմ
բարեկամն ինձ մօտ եկաւ ճա-
նապարհիցը, և ես բան չ՚ունիմ՝
7 որ նորա առաջին դնեմ։ Եւ նա
պատասխանէ ներսիցն և ասէ.
Մի յոգնեցնիր ինձ. դուռն ար-
դէն փակուած է, և երեխաներս
ինձ հետ անկողնումն են. չեմ
կարող վեր կենալ և տալ քեզ։
8 Ասում եմ ձեզ, Եթէ վեր էլ
չ՚կենայ և նորան տայ նորա բա-
րեկամ լինելու համար, սակայն
նորա թախանձանքի համար վեր
կ՚կենայ և կ՚տայ նորան ինչ որ
9 էլ պէտք լինի։ Եւ ես ասում
եմ ձեզ, խնդրեցէք՝ և կ՚տրուի
ձեզ, որոնեցէք և կ՚գտնէք, դու-
ռը թակեցէք՝ և կ՚բացուի ձեզ։
10 Որովհետև ամեն ով որ խնդրում
է՝ առնում է, և ով որ որոնում
է՝ գտնում է, և ով որ դուռը
թակում է՝ բացվում է նորան։
11 Եւ ձեզանից ո՞ր հօրիցն իր որ-
դին հաց ուզէ, մի՞թէ քար կը
տայ նորան. կամ եթէ ձուկ՝
մի՞թէ ձկան տեղ օձ կ՚տայ նո-
12 րան։ Եւ կամ ձու ուզէ, մի՞թէ
13 կարիճ կ՚տայ նորան։ Արդ եթէ
դուք, որ չար էք՝ գիտէք բարի
պարգևներ տալ ձեր որդկանցը,
էլ ո՞րքան աւելի երկնաւոր Հայ-
րը Սուրբ Հոգին կ՚տայ նորանց,
որ ուզում են նորանից։
14 Եւ մի դև էր հանում, որ համր
էր. և եղաւ որ դևը դուրս գա-
լիս համրը խօսեց. և ժողովուրդ-
15 ները զարմացան։ Եւ նորանցից
ոմանք ասեցին. Դա դևերի իշ-
խան՝ Բէեղզեբուղովն է հանում
16 դևերը։ Ուրիշներն էլ փորձելով
մի նշան էին խնդրում նորանից
17 երկնքիցը։ Բայց նա նորանց մտած-
մունքները իմանալով ասեց նո-
րանց. Ամեն թագաւորութիւն,
որ իր մէջ բաժանուած է՝ կ՚ա-
ւերուի, և տուն՝ տան դէմ բա-
ժանուած կ՚կործանուի։ Ապա ե-
18 թէ սատանան ինքն իրան դէմ
բաժանուած է, նորա թագաւո-
րութիւնն ի՞նչպէս կ՚կենայ. ո-
րովհետև ասում էք, թէ ես Բէ-
եղզեբուղովն եմ հանում դևե-
19 րը։ Եթէ ես Բէեղզեբուղովն եմ
հանում դևերը, ապա ձեր որդիքն
ի՞նչով են հանում. դորա հա-
մար նորանք կ՚լինին ձեր դատա-
20 ւորները։ Բայց եթէ ես Աստու-
ծոյ մատովն եմ հանում դևերն,
ուրեմն Աստուծոյ արքայութիւնը
21 ձեզ վերայ հասել է։ Երբոր զօ-
րաւորը զինուորուած իր տունը
պահէ, նորա ստացուածքը խա-
22 ղաղութեան մէջ են։ Բայց եթէ
նորանից էլ աւելի զօրաւորը
գայ՝ նորան յաղթէ, նորա զէն-
քերը՝ որ յոյսն նորանց վերայ էր
դրել, կ՚հանէ և նորա աւարը
23 կ՚բաժանէ։ Ով որ ինձ հետ չէ՝
ինձ հակառակ է, և ով որ ինձ
հետ չէ ժողովում՝ ցրվում է։
24 Երբոր պիղծ ոգին դուրս է
գալիս մարդիցը՝ անջուր տեղե-
րանքում ման է գալիս և հան-
գիստ որոնում. և երբոր չէ գըտ-
նում՝ ասում է. Ետ դառնամ
իմ տունը՝ որտեղից դուրս եկայ։
25 Եւ գալիս՝ նորան որբուած և զար-
26 դարուած է գտնում։ Այն ժա-
մանակ գնում է և իրանից էլ
աւելի չար եօթը ոգիներ է առ-
նում՝ և մտնում բնակվում է

այնտեղ, և այն մարդի յետինն աւելի չար է լինում քան թէ առաջինը։

27 Եւ եղաւ որ նա այս խօսելիս, ժողովրդի միջից մի կին ձայն բարձրացրեց և ասեց. Երանի այն 28 ծոցին՝ որ քեզ կրեց, և այն ծծերին՝ որ քեզ ծծեցրին։ Նա էլ ասեց. Այո՛, երանի նորանց, որ Աստուծոյ խօսքը լսում են և նորան պահում։

29 Եւ երբոր ժողովուրդները նորա վերայ դիզվում էին, սկսեց ասել. Այս ազգը չար է. նշան է խնդրում, և նշան չի տրուիլ սորան՝ բայց միայն Յովնան մարգարէի նշանը։ 30 Որովհետև ինչպէս Յովնանը նշան եղաւ Նինուէացիների համար, այնպէս էլ մարդի 31 Որդին այս ազգին կ'լինի։ Հարաւի թագուհին դատաստանում վեր կ'կենայ այս ազգի մարդկանց հետ և կ'դատապարտէ նորանց, որովհետև երկրի ծայրերից եկաւ Սողոմոնի իմաստութիւնը լսելու, և ահա Սողոմոնից էլ աւելին է այստեղ։ 32 Նինուէի մարդիկը դատաստանում վեր կ'կենան այս ազգի հետ և կ'դատապարտեն սորան, որովհետև նորանք Յովնանի քարոզութիւնով ապաշխարեցին. և ահա Յովնանից էլ աւելին է այստեղ։

33 Ոչ ոք ճրագը չէ վառում և թագուն տեղ դնում և ոչ գերեզմանի տակ, այլ ճրագակալի վերայ, որ ներս մտնողները լոյսը 34 տեսնեն։ Մարմնի ճրագը աչքն է։ Արդ երբոր աչքդ պարզ է, բոլոր մարմինդ էլ լուսաւոր կ'լինի, բայց երբոր չար է, մարմինդ էլ 35 խաւար կ'լինի։ Ուրեմն՝ զգոյշ կաց, մի գուցէ այն լոյսը, որ 36 քեզանում է, խաւար լինի։ Եթէ բոլոր մարմինդ լուսաւոր է և ոչ մի խաւար մասը չ'կայ, բոլորը լուսաւոր կ'լինի. ինչպէս երբոր ճրագն իր ճառագայթով լուսաւորէ քեզ։

37 Եւ նա այս խօսելիս, մի փարիսեցի աղաչում էր նորան, որ նորա մօտ հաց ուտէ. և նա մտաւ 38 տեղն նստեց։ Փարիսեցին էլ տեսնելով զարմացաւ, որ ճաշից առաջ չ'լուացուեց։ Տէրն էլ ա- 39 սեց նորան. Հիմա դուք փարիսեցիներդ բաժակի և ամանի դրսի կողմը սրբում էք. բայց ձեր ներսը լիքն է յափշտակութիւնով և չարութիւնով։ Անմիտներ, չէ՞ 40 որ դուրսը անողը ներսն էլ արաւ։ Բայց տուէք ողորմութիւն տուէք, և ահա ամեն 41 բաներ սուրբ են ձեզ համար։ Բայց վայ ձեզ փարիսեցիներիդ, 42 որ անանուխի և փեգենայի և ամեն բանջարի տասանորդ էք տալիս, և Աստուծոյ իրաւունքը և սէրը զանց էք անում. այս պէտք էր անել, և նորանք չ'թողել։ Վայ ձեզ փարիսեցիներիդ, որ 43 սիրում էք ժողովարանների մէջ առաջի աթոռները, և հրապարակներում՝ բարեները։ Վայ ձեզ 44 դպիրներիդ և փարիսեցիներիդ, կեղծաւորներ, որ դուք այն գերեզմանների պէս էք, որ անյայտ են, և մարդիկը որ նորանց վերայ գնում են չ'գիտեն։

45 Եւ պատասխանեց օրինականներից մէկը և ասեց նորան. Վարդապետ, այդ ասելով մեզ էլ 46 նախատինք տալիս։ Նա էլ ասեց, Եւ ձեզ օրինականներիդ էլ վայ. որովհետև դժուար տանելի բեռներով բեռնում էք մարդկանց, և դուք ձեր մատների մէկով էլ չէք մտնեում այն բեռներին։ Վայ ձեզ որ մարգարէների 47 գերեզմանները շինում էք, և հէնց ձեր հայրերը սպանեցին նորանց։ Ապա ուրեմն վկայում էք 48 և հաւանում էք ձեր հայրերի գործերին. որովհետև նորանք կոտորեցին նորանց, և դուք շինում էք նորանց գերեզմանները։ Սորա համար Աստուծոյ իմաս- 49 տութիւնն էլ ասեց. Մարգարէներ և առաքեալներ կ'ուղարկեմ նորանց մօտ, և նորանցից կ'սպանեն և կ'հալածեն։ Որ բոլոր մարդարէների արիւնը, որ աշխարհքի 50 սկզբից թափուած է, այս ազգից պահանջուի։ Աբելի արիւնից մինչև Զաքարիայի արիւնը, որ սեղանի և տաճարի մէջ կորաւ. այո՛, ասում եմ ձեզ, այս 51 ազգից կ'պահանջուի։ Վայ ձեզ՝ օրինականներիդ, որ դիտութեան բանալիքը վեր էք առել. դուք չէք մտել, և մտնողներին էլ արգիլել էք։

53 Եւ երբոր այս բաներն ասում էր նորանց, դպիրները և փարիսեցիներն սկսեցին ատամիկ սատպել, և շատ բաների համար նո- 54 րա հետ հակառակել. Եւ նորան աչքի տակ առած՝ ուզում էին, նորա բերանից մի բան որսալ, որ մեղադրեն նորան։

Գ.Լ. ԺԲ

1 Այն միջոցին երբոր հազարներով ժողովուրդները դիզվում էին՝ մինչև որ իրար կոխ էին տալիս, սկսեց իր աշակերտներին ասել. Առաջ ձեր անձերը զգոյշ պահեցէք փարիսեցիների խմորից, 2 որ է կեղծաւորութիւնը։ Որովհետև ոչինչ չ'կայ ծածուկ, որ չ'յայտնուի. և թագուն, որ չ'իմացուի։ 3 Ուստի ինչ որ խաւարում ասեցիք, լոյսի մէջ կը լսուի. և ինչ որ ներսի սենեակներում ականջում խօսեցիք, կտուրների վերայ կ'քարոզուի։ 4 Բայց ասում եմ ձեզ՝ իմ բարեկամներին. Մի վախենաք նորանցից՝ որ մարմինն սպանում են, և նորանից յետոյ աւելի բան 5 չ'ունեն՝ որ անեն։ Բայց ցոյց տամ ձեզ, թէ ումից պէտք է վախենաք. Նորանից վախեցէք, որ սպանելուց յետոյ իշխանութիւն ունի գեհենի մէջ գցելու. այո՛, ասում եմ ձեզ՝ նորանից վախեցէք։ 6 Չէ՞ որ հինգ ճնճղուկ երկու դանկի են ծախվում. և նո- 7 րանցից մէկն էլ Աստուծոյ առաջին մոռացուած չէ։ Բայց ձեր գլխի բոլոր մազերն էլ համրուած են. ուրեմն մի վախենաք. 8 որովհետև դուք շատ ճնճղուկներից աւելի լաւ էք։ Իսկ ասում եմ ձեզ, թէ Ամեն ով որ ինձ մարդկանց առաջին դաւանէ, մարդի Որդին էլ նորան կ'դաւանէ Աստուծոյ հրեշտակների առաջին։ 9 Եւ ով որ ինձ ուրանայ մարդկանց առաջին, նա էլ կ'ուրացուի Աստուծոյ հրեշտակների առաջին։ 10 Եւ ամեն ով որ մարդի Որդու դէմ բան ասէ, կ'թողուի նորան. բայց ով որ Սուրբ Հոգուս դէմ հայհոյեց, նորան չի թողուիլ։ Եւ երբոր 11 տանեն ձեզ ժողովարանները և դատաւորների և պետութիւնների առաջին, հոգս մի՛ անէք՝ թէ ինչպէս և ի՛նչ պատասխանէք, կամ ի՛նչ ասէք։ Որովհետև 12 Սուրբ Հոգին նոյն ժամուն կը սովորեցնէ ձեզ՝ թէ ինչ պէտք է խօսել։

13 Եւ ժողովրդից մէկն ասեց նորան. Վարդապետ, իմ եղբօրն ասիր, որ ժառանգութիւնն ինձ 14 հետ բաժանէ։ Նա էլ ասեց նորան. Մարդ, ո՞վ կարգեց ինձ ձեզ վերայ դատաւոր կամ բաժանարար։ 15 Եւ նորանց ասեց. Տեսէք և զգոյշ կացէք ագահութիւնից, որ մարդիս առատութիւնից աւաւելութիւնիցը չէ նորա կեանքը։ 16 Եւ նորանց մի առակ խօսեց և ասեց. Մի հարուստ մարդի արտը առատ պտուղ տուաւ։ 17 Եւ նա իր մտքումն մտածում էր և ասում. Ինչ անեմ, որ տեղ չ'ունիմ որ իմ պտուղներն ամբարեմ ժողովեմ։ 18 Եւ ասեց. Այս կ'անեմ. իմ շտեմարանները կ'քանդեմ, և աւելի մեծերը կ'շինեմ, և իմ բոլոր բերքերն ու բարիքները այնտեղ կը ժողովեմ։ 19 Եւ իմ անձին կ'ասեմ. Ով անձն, շատ բարիքներ ունիս շատ տարիների համար ամբարուած. հանգստացիր, կեր, խմիր, զուարճացիր։ 20 Բայց Աստուած նորան ասեց. Անմիտ. հէնց այս գիշեր հոգիդ քեզանից կ'պահանջեն. ապա այս որ պատրաստեցիր՝ ո՞ւմ կ'լինի։ 21 Այսպէս էլ նա՝ որ իր անձի համար գանձ է հաւաքում, և Աստուծով չէ հարուստ։

22 Իր աշակերտներին էլ ասեց. Դորա համար ասում եմ ձեզ. Հոգս մի անէք ձեր կեանքի հա-

մաբ՝ ըն ինչ պիտի ուտէք. ոչ էլ մարմնի համար՝ թէ ինչ պիտի
23 հագնիք։ Հոգին աւելի է կերա-
կուրքից, և մարմինը՝ հագուս-
24 տից։ Մտիկ արէք ագռաւնե-
րին. որ ոչ սերմանւմ են և ոչ
հնձանւմ են. որոնք ոչ չառնմա-
րաններ ունին և ոչ ամբարներ,
և Աստուած կերակրւմ է նո-
րանց. դուք որքան աւելի ար-
ժէք ունիք թռչուններից քան
զանից ոմն կարող է իր հոգս
անելովն իր հասակի վերայ մի
26 կանգուն աւելացնել։ Արդ եթէ
ամենափոքր բանի համար կարող
չէք, ինչու էք ուրիշ բաների հա-
27 մար հոգս անում։ Մտիկ արէք
շուշաններին. ինչպես են մեծա-
նում. ոչ ջանք են անում և ոչ
մանում. բայց ասում եմ ձեզ
Սողոմոնն էլ իր բոլոր փառքի
մէջ նորանց մէկի նման չ'հա-
28 գաւ։ Իսկ եթէ յանդի խոտն,
որ այսօր կայ և էգուց փուռն
մէջ է գցվում, Աստուած այն-
պես է հագցնում, որքան ևս
առաւել ձեզ, թերահաւատ-
29 ներ։ Եւ դուք մի որոնէք թէ
ինչ ուտէք կամ ինչ խմէք, և
30 մի գրգռուիք։ Որովհետև այդ
բոլոր բաներն աշխարհքի հեթա-
նոսներն են որոնում. բայց ձեր
Հայրը գիտէ՝ որ դորանք ձեզ
31 պէտք են։ Սակայն Աստուծոյ
արքայութիւնը խնդրեցէք, և այդ
32 բոլորը կ'աւելանայ ձեզ։ Մի վա-
խենար, փոքր հօտ. որովհետև
ձեր Հայրը հաճեցաւ, որ արքա-
33 յութիւնը տայ ձեզ։ Ձեր առա-
ւածքը ծախեցէք և ողորմա-
ծութիւն տուէք. ձեզ համար չ'հի-
նացող քսակներ շինեցէք՝ անպա-
կաս գանձ՝ երկնքումն, որտեղ
գող չէ մօտենում և ոչ էլ ցեց
34 է ապականում։ Որովհետև որ-
տեղ որ ձեր գանձն է, այնտեղ
35 էլ ձեր սրտերը կ'լինին։ Թող ձեր
գօտիները պինդ կապուած լինին
մէջքին, և ճրագները վառուած։
36 Եւ դուք նման եղէք մարդկանց,
որ սպասում են իրանց տիրոջը,
թէ նա երբ եւս կ'դառնայ հար-
սանիքից, որ երբոր գայ և դռները
թակէ, շուտով բանան նորա հա-
մար։ Երանի այն ծառաներին, 37
որ տէրը գալիս արթուն գտնէ
նորանց. ճշմարիտ ասում եմ
ձեզ, թէ գօտին մէջքը կ'կապէ
և նորանց տեղան կ'նստեցնէ և
առաջ եկած կ'ծառայէ նորանց։
Եւ եթէ երկրորդ կամ երրորդ 38
պահին գայ և այնպէս գտնէ,
երանի այն ծառաներին։ Բայց սա 39
իմացէք, որ եթէ տան տէրը գի-
տենար՝ թէ գողն ո'ր ժամին կը
գայ. արթուն կ'կենար և թող
չէր տալ իր տունը ծակել։ Արդ 40
դուք էլ պատրաստ եղէք, որով-
հետև այն ժամին, որ չէք կար-
ծում, մարդի Որդին կ'գայ։
Եւ Պետրոսը ասեց նորան. Տէր, 41
այդ առակը մե՞զ ես ասում՝ թէ
ամենքին էլ։ Տէրն էլ ասեց. 42
Ուրեմն ո՞վ է այն հաւատարիմ
և իմաստուն տնտեսը, որին իր
տէրը իր գերդաստանի վերայ
կարգէ, որ նորանց կերակուրը
ժոյ ժամանակին։ Երանի այն 43
ծառային, որ իր տէրը երբոր գայ,
այնպէս անելիս գտնէ նորան։
Ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ 44
իր բոլոր առաջաւածքների վերայ
կ'դնէ նորան։ Բայց եթէ այն 45
ծառան իր սրտումն ասէ, իմ
տէրն ուշանում է գալու, և
սկսէ ծառաներին և աղախիննե-
րին ծեծել, ուտել ու խմել և
արբենալ, կ'գայ այն ծառային 46
տէրն այն օրը, որ նա չէ սպա-
սում, և այն ժամին, որ նա չէ
գիտէ, և նորան միջիցը կ'կտրէ,
և նորա բաժինն անհաւատարիմ
ներէն հետ կ'դնէ։ Եւ այն ծա- 47
ռան, որ իր տիրոջ կամքը գիտե-
նալով չէ պատրաստել և ոչ էլ
արել նորա կամքի պէս, շատ ծեծ
կ'ուտէ։ Եւ նա որ չ'գիտենալով 48
ծեծի արժանի բան գործեց, քիչ
կ'ծեծուի. այն ամենին որ շատ
արուեց՝ նորանից շատ կ'ուզուի.
և ում որ շատ պահ արուեց՝ նո-
րանից էլ աւելի կ'պահանջեն։
Ես եկայ որ կրակ գցեմ երկ- 49
րիս վերայ. և ինչ ուզում եմ,
եթէ արդէն իսկ բորբոքուել
է։ Բայց մի մկրտութիւն ունիմ 50

մի նատիր առաջի բարձի վերայ.
մի գուցե քեզանից մի առաւել
պատուաւորը լինի կանչուած նո-
9 րա կողմից։ Եւ նա՝ որ քեզ և
նորան կանչեց, գայ և քեզ ասէ.
Սորան տեղ տուր. և այն ժամա-
նակ սկսես ամօթով վերջի տեղը
10 նստել։ Հապա երբոր կանչուած
ես, գնա վերջի տեղը նատիր. որ-
պէս զի, երբոր քեզ կանչողը
գայ, ասէ քեզ. Բարեկամ, վերև
նատիր. այն ժամանակ քեզ հետ
նստողների առաջին փառք կը
11 լինի քեզ։ Որովհետև ամեն ով
որ իր անձը բարձրացնում է՝ կը
խոնարհեցւի. և ով որ իր անձը
խոնարհեցնում է, կ'բարձրանայ։
12 Եւ իրան կանչողին էլ ասեց.
Երբոր ճաշ կամ ընթրիք ես ա-
նում, մի կանչիր քո բարեկամ-
ներին, և ոչ քո եղբայրներին, և
ոչ քո ազգականներին, և ոչ քո
հարուստ հարևաններին, մի գու-
ցե նորանք էլ նորա փոխարէն
կանչեն քեզ և հատուցում լինի
13 քեզ։ Այլ երբոր հացկերոյթ ես
անում, կանչիր աղքատներ-
ին, խեղերին, կաղերին, կուրե-
14 րին։ Եւ երանելի կ'լինիս. որով-
հետև բան չ'ունին որ փոխարէն
վճարեն քեզ. որովհետև ար-
դարների յարութեան ժամանա-
կին կ'լինի քեզ հատուցումը։
15 Եւ երբոր մեղան նստողներից
մէկն այս բաները լսեց, նորան
ասեց. Երանի նորան, որ Աստու-
ծոյ արքայութիւնում հաց կ'ու-
16 տէ։ Եւ նա ասեց նորան. Մի
մարդ մեծ ընթրիք արաւ և շա-
17 տերին հրաւիրեց։ Եւ ընթրիքի
ժամանակին իր ծառան ուղար-
կեց, որ հրաւիրածներին ասէ.
Եկէք, որովհետև արդէն ամենը
18 պատրաստ է։ Եւ ամենքն ակա-
ցին մէկ մէկ ետ քաշուիլ. ա-
ռաջինն ասեց նորան. Ագարակ
առայ, և պէտք է գնամ՝ նորան
տեսնեմ. աղաչում եմ քեզ,
19 ինձ հրաժարուած համարիր։ Եւ
միւսն ասեց. Հինգ լուծ եզ ա-
ռայ, և գնում եմ որ նորանց
փորձեմ. աղաչում եմ քեզ,
20 ինձ հրաժարուած համարիր։ Եւ
միւսն ասեց. Կին եմ առել, և
նորա համար չեմ կարող գալ։
21 Եւ այն ծառան եկաւ, այս բա-
ները պատմեց իր տիրոջը. այն
ժամանակ տան տէրը բարկացած
ասեց իր ծառային. Դուրս գնա
շուտով քաղաքի հրապարակնե-
րը և փողոցները, և աղքատներին
և խեղերին, և կաղերին և կու-
րերին մեզդուս այստեղ։ Եւ ծա- 22
ռան ասեց. Տէր, եղաւ ինչ-
պես հրամայեցիր, և դեռ էլ տեղ
կայ։ Եւ տէրն ասեց ծառային. 23
Դուրս գնա ճանապարհները և
ցանկերը, և ստիպիր որ մտնեն,
որ իմ տունը լցուի։ Որովհետև 24
ասում եմ ձեզ, թէ այն կան-
չուած մարդկանցից ոչ մէկն իմ
ընթրիքը չի ճաշակիլ։
Եւ շատ ժողովուրդներ գնում 25
էին նորա հետ. և դարձաւ նո-
րանց ասեց. Եթէ մէկն ինձ մօտ 26
գայ, և չ'ատէ իր հօրը և մօրը,
կնոջը և որդիներին, և եղբայր-
ներին և քոյրերին, և հենց իր
անձին էլ. նա չէ կարող իմ ա-
շակերտ լինիլ։ Եւ ով որ իր խաչը 27
վեր չ'առնի և իմ ետևից գայ,
նա չէ կարող իմ աշակերտ լի-
նիլ։ Որովհետև ձեզանից ո՞վ է, 28
որ կամենայ աշտարակ շինել, և
առաջ չ'նստի և ծախսը հաշուէ
թէ ուստեղից համար ըստ-ունի
ըստ ունի՞։ Որ մի գուցէ երբոր 29
հիմքը դնէ և չ'կարողանայ ա-
ւարտել, ամեն տեսնողներն սկը-
սեն ծաղր անել նորան, և ա- 30
սեն. Թէ Այս մարդն սկսեց շի-
նել, և չ'կարողացաւ աւարտել։
Կամ ո՞ր թագաւորն է, որ գնայ 31
ուրիշ թագաւորի հետ պատե-
րազմ անելու. մի՞թէ չի նստիլ
առաջ խորհուրդ անիլ՝ թէ տասը
հազարով կարո՞ղ է դէմ կենալ
նորան, որ քսան հազարով գա-
լիս է իր վերայ։ Ապա թէ ոչ, 32
քանի որ նա հեռու է, պատգա-
մաւոր կ'ուղարկէ և կ'աղաչէ որ
խաղաղութիւն անէ։ Արդ այս- 33
պէս էլ ձեզանից ամեն մէկն, որ
իր բոլոր ինչքից չ'հրաժարուի,
չէ կարող ինձ աշակերտ լինել։
Աղը լաւ բան է. բայց եթէ աղն 34

անհամանայ, ինչով պիտի հա-
35 մեղանայ։ Ոչ հողի համար է պի-
տանի և ոչ աղբի համար, այլ
դուրս կ'դնեն նորան. ով որ լսե-
լու ականջ ունի, թող լսե։

ԳԼ. ԺԵ

1 Եւ բոլոր մաքսաւորներն և մե-
ղաւորները մօտենում էին նո-
2 րան, որ լսեն նորանից։ Եւ փա-
րիսեցիներն և դպիրները տրտն-
ջում էին և ասում, թէ Սա ըն-
դունում է մեղաւորներին և նո-
րանց հետ ուտում։
3 Եւ այս առակն ասեց նորանց։
4 Ձեզանից ո՞վ է այն մարդը, որ
հարիւր ոչխար ունենայ, և նո-
րանցից մէկը կորցնէ. չի՞ թողիլ
իննսուն և ինը անապատումը, և
այն կորածի ետևից գնալ, մինչև
5 որ գտնէ նորան։ Եւ երբոր գտնէ,
ուրախանալով իր ուսերի վերայ
6 կ'դնէ նորան։ Եւ տուն գալով,
բարեկամներին և դրացիներին կը
կանչէ և նորանց կ'ասէ. Ուրա-
խացեք ինձ հետ. որովհետև իմ
7 կորած ոչխարը գտայ։ Ասում եմ
ձեզ, թէ այսպէս ուրախութիւն
կ'լինի երկնքումը մէկ մեղաւորի
համար, որ ապաշխարէ, քան թէ
իննսուն և ինն արդարների հա-
մար, որոնց ապաշխարութիւն
8 պէտք չէ։ Կամ ո՞վ է այն կինը,
որ տասը դրամ ունենայ, և եթէ
մէկ դրամ կորցնէ, ճրագ չի՞ վա-
ռիլ և տունն աւելել և սաստիկ
9 որոնել, մինչև որ գտնէ։ Եւ երբոր
կ'գտնէ, բարեկամներին և դրա-
ցիներին կ'կանչէ և կ'ասէ. Ու-
րախացեք ինձ հետ. որովհետև
դրամը գտայ, որ կորցրել էի։
10 Ասում եմ ձեզ, այսպէս էլ Ա-
ստուծոյ հրեշտակների առաջին
ուրախութիւն կ'լինի մէկ մեղա-
ւորի համար որ կ'ապաշխարէ։
11 Եւ ասեց. Մի մարդ երկու որ-
12 դի ունէր. Եւ նորանցից փոքրն
ասեց հօրը. Հայր, տուր ինձ ինչ
որ բաժին կ'հասնէ ինձ ստաց-
ուածքից։ Եւ նա ապրանքը բա-
13 ժանեց նորանց։ Եւ շատ օր չանց-
ցած՝ փոքր որդին ամեն բաները
ժողովեց հեռու երկիր գնաց. և
այնտեղ իր ստացուածքը վատ-
նեց, անառակ ապրելով։ Եւ
երբոր բոլորը հատցրեց, սաստիկ
սով եղաւ այն երկրումը և ինքն
սկսեց չքաւորել։ Եւ գնաց այն
երկրի քաղաքացիներից մէկի մօտ
մնաց. և նա նորան ուղարկեց իր
յանդը որ խոզ արածեցնէ։ Եւ
նա ցանկանում էր իր փորն լե-
ցնել այն եղջիւրներովն, որ խո-
զերն ուտում էին, բայց ոչ ով
չէր տալիս նորան։ Եւ ինքն իրան
գալով ասեց. Քանի՛ վարձկան-
ներ ունի իմ հայրը՝ հացով լըց-
ուած. և ես այստեղ սովամահ
կորչում եմ։ Վեր կենամ գնամ
իմ հօր մօտ, և նորան ասեմ.
Հայր, մեղանչեցի երկնքի դէմ և
քո առաջին։ Եւ այլևս արժանի
չեմ քո որդի կոչուելու. ինձ քո
վարձկանների մէկի պէս արա։
Եւ վերկացաւ եկաւ իր հօր մօտ,
և դեռ որ նա հեռու էր, հայրը
տեսաւ նորան և դութը շարժեց.
և վազեց՝ նորա վզովը ընկաւ, և
համբուրեց նորան։ Եւ որդին ա-
սեց նորան. Հայր, մեղանչեցի
երկնքի դէմ և քո առաջին, և
այլ ևս չեմ արժանի քո որդի
կոչուելու։ Հայրն էլ ասեց իր
ծառաներին. Առաջի պատմու-
ճանը հանեցէք և հագցրէք նո-
րան, և մատանի դրէք նորա ձեռ-
քին, և կօշիկներ նորա ոտներին։
Եւ մատաղ եղը բերէք մորթե-
ցէք, և ուտենք ուրախ լինենք.
Որ այս իմ որդին մեռած էր, և
կենդանացաւ. և կորած էր, և
գտնուեցաւ. և սկսեցին զուար-
ճանալ։ Եւ նորա մեծ որդին
յանդումն էր. և երբոր եկաւ
տանը մօտեցաւ, երգերի և պար
գալու ձայնը լսեց։ Եւ ծառա-
ներից մէկին կանչեց իրան մօտ,
հարցնում էր թէ այդ ի՞նչ է։
Նա էլ ասեց նորան. Թէ եղ-
բայրդ եկել է, և քո հայրը
մատաղ եղը մորթեց, որովհետև
ողջ և առողջ ընդունեց նորան։
Եւ նա բարկացաւ, և չէր ուզում
ներս մտնել, բայց հայրը դուրս
եկաւ, աղաչում էր նորան։ Նա

էլ պատասխանեց և ասեց հօրը.
Ահա այսքան տարի է, որ քեզ
ծառայում եմ, և քո պատուէ-
րից երբէք դուրս չեմ եկել. բայց
ինձ երբէք մի ուլ չ'տուիր, որ
իմ բարեկամների հետ ուրախ
30 լինէի. իսկ երբոր այդ քո որդին
եկաւ, որ քո ստացուածքը պոռ-
նիկների հետ կերաւ, մատաղ
31 եղը մորթեցիր դորա համար։ Նա
էլ ասեց նորան. Որդեակ, դու
ամեն ժամանակ ինձ հետ ես, և
ամեն ինչ որ իմն է՝ քոնն է։
32 Բայց ուրախ լինել և խնդալ
պէտք էր. որ այս քո եղբայրը
մեռած էր և կենդանացաւ. կո-
րած էր և գտնուեցաւ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ իր աշակերտներին էլ ասեց.
Մի հարուստ մարդ կար, որ մի
տնտես ունէր. և նորանից գան-
գատ եղաւ նորան, իբր թէ նա
վատնում է նորա ստացուածքը։
2 Եւ նորան կանչեց և ասեց. Սա
ինչ է որ ես լսում եմ քեզա-
նից. տուր քո տնտեսութեան
համարը. որովհետև այլ ևս կա-
րող չես տնտես լինել։ Տնտեսն
3 էլ իր մտքումն ասեց. Ինչ ա-
նեմ, որ իմ տէրը տնտեսութիւնն
ինձանից առնում է. հերկել չեմ
4 կարող, մուրանալու ամաչում
եմ։ Գիտեմ ինչ կ'անեմ, որ՝
երբոր տնտեսութիւնից դուրս
դամ, ինձ ընդունեն իրանց տնե-
5 րը։ Եւ իր տիրոջ պարտականա-
ներին մի մի իրան մօտ կանչեց և
ասեց առաջինին. Ինչքան ես
6 պարտական իմ տիրոջը։ Նա էլ
ասեց. Հարիւր մար ձէթ. և նո-
րան ասեց. Առ գիրդ, և նստիր՝
7 շուտով գրիր յիսուն։ Յետոյ
միւսին ասեց. Դո՛ւ ինչքան ես
պարտական. Նա էլ ասեց. Հար-
իւր քոռ ցորեն. և նորան ասեց.
8 Առ գիրդ և գրիր ութսուն։ Եւ
տէրը գովեց անիրաւ տնտեսին,
որ իմաստութիւնով գործեց. ո-
րովհետև այս աշխարհքի որդիքը
լոյսի որդիներից իմաստուն են
9 իրանց ցեղի մէջ. Եւ ես ասում
եմ ձեզ. Անիրաւ մամոնայից բա-
րեկամներ արէք ձեզ համար. որ
երբոր պակասուիք, յաւիտենա-
կան բնակարանների մէջ ընդու-
նեն ձեզ։ Փիչ բանի մէջ հաւա-
տարիմը, շատ բանի մէջ էլ հա-
ւատարիմ է. և փիչ բանի մէջ
անիրաւը, շատ բանի մէջ էլ
անիրաւ է։ Արդ թէ որ անիրաւ
մամոնայի մէջ հաւատարիմ չ'ե-
ղաք, ճշմարիտ հոգևոր-ընչքն ո՞վ
կ'տայ ձեր ձեռք։ Եւ եթէ օտար
բանի մէջ հաւատարիմ չ'եղաք,
ձերն ո՞վ կ'տայ ձեզ։
10 Ոչ մի ծառայ չէ կարող եր-
կու տիրոջ ծառայել. որովհետև
կամ մէնին կ'ատէ և միւսին կը
սիրէ. կամ մէնին կ'պատուէ և
միւսին կ'արհամարհէ. կարող
չէք Աստուծոյ ծառայել և մա-
մոնային։
11 Այս բոլոր բաները լսում էին
փարիսեցիները, որ արծաթասէր
էին, և ծիծաղում էին նորա վե-
րայ։ Եւ նորանց ասեց. Դուք
էք, որ մարդկանց առաջին ձեր
անձերը արդարացնում էք, բայց
Աստուած գիտէ ձեր սրտերը.
որովհետև մարդկանց առաջին
բարձրը պիղծ է Աստուծոյ առա-
ջին։ Օրէնքը և մարգարէները
մինչև Յովհաննէան են. նորանից
յետոյ Աստուծոյ արքայութիւնն
է աւետարանվում, և ամեն մարդ
ջանք է անում ուժով մտնել
նորա մէջ։ Եւ աւելի հեշտ է որ
երկինքն և երկիրս անցնեն, քան
թէ օրէնքի մէկ պզտիկ նշանա-
գիրը վայր ընկնէ։ Ամեն ով որ
արձակում է իր կինը և ուրիշն
առնում, շնութիւն է գործում,
և ով որ մարդից արձակուած
կնին է առնում՝ շնութիւն է գոր-
ծում։
19 Եւ մի հարուստ մարդ կար,
և շատ ազնիւ ծիրանի և բեհեզ
էր հագնում. և ամեն օր փա-
ռաւոր զուարճութիւն էր ա-
20 նում։ Մի աղքատ մարդ էլ կար,
անունը Ղազարոս, որ նորա դռան
մօտ գցուած էր խոցերով լիքը.
21 Եւ ցանկանում էր իրան կշտա-
ցնել այն փշրանքներից, որ հա-

բուստի սեղանիցն ընկնում էին. այլ և շներն էլ գալիս էին և
22 նորա խոցերը լիզում էին։ Եւ եղաւ որ աղքատը մեռաւ, և հրեշտակները տարան նորան Աբրահամի գոգը. հարուստն էլ մե-
23 ռաւ՝ և թաղուեցաւ։ Եւ դժոխքումն՝ մինչ տանջանքի մէջ էր գտնվում, իր աչքերը բարձրացրեց, հեռուանց Աբրահամին տեսաւ, և Ղազարոսին էլ նորա
24 գոգումը։ Եւ նա աղաղակեց և ասեց. Հայր Աբրահամ, ինձ ողորմիր, և Ղազարոսին ուղարկիր, որ իր մատի ծայրը թրջէ ջրով, և իմ լեզուն հովացնէ. որովհետև այս կրակի բոցի մէջ
25 տանջվում եմ։ Աբրահամն էլ ասեց. Որդեակ, յիշիր, որ դու ընդունեցիր քո բարիքը քո կեանքումը, և նմանապէս էլ Ղազարոսը՝ չարչարանքները. և հիմա սա այստեղ մխիթարվում է, իսկ
26 դու տանջվում ես։ Եւ ի վերայ այսր ամենայնի մեր և ձեր մէջ մեծ անդունդ է հաստատուած, որ այստեղից ձեզ մօտ անցնել ուզողները չ՚կարողանան, և ոչ էլ այդտեղից մեզ մօտ անցնեն։
27 Եւ ասեց. Ուրեմն աղաչում եմ քեզ, հայր, որ դորան ուղար-
28 կես իմ հօր տունը. Որովհետև ես հինգ եղբայր ունիմ. որ նորանց վկայութիւն տայ, որ նորանք էլ չ՚գան այս տանջանքի
29 տեղը։ Աբրահամն ասեց նորան, Նորանք Մովսէսին և մարգարէներին ունին, թող նորանց լսեն։
30 Նա էլ ասեց. Ոչ, հայր Աբրահամ, այլ եթէ մեռելներից մէկը նորանց մօտ գնայ, կ՚ապաշխարեն։
31 Եւ նորան ասեց. Եթէ Մովսէսին և մարգարէներին ականջ չեն դնում, չեն էլ համոզուիլ՝ եթէ մեռելներից մէկը յարութիւն առնէ։

ԳԼ. ԺԷ

1 Եւ աշակերտներին ասեց. Անկարելի է, որ գայթակղութիւններ չ՚գան. բայց վայ նորան որի
2 ձեռովը կ՚գան։ Աւելի լաւ է նորան, որ նորա վզիցը մի էշի ջաղացի քար կախուէր և ծովը գցուէր, քան թէ այս փոքրներից մէկին գայթակղեցնէ։

Զգոյշ կացէք ձեր անձերին։ Եթէ քո եղբայրը մեղանչէ քեզ դէմ, յանդիմանիր նորան. և եթէ ապաշխարէ, ներիր նորան։
4 Եւ եթէ օրը եօթն անգամ քեզ դէմ մեղանչէ՝ և եօթն անգամ քեզ մօտ դառնայ և ասէ՝ Ապաշխարում եմ, ներիր նորան։
5 Եւ առաքեալներն ասեցին Տիրոջը. Մեր հաւատքն աւելացրու։
6 Եւ Տէրն ասեց. Եթէ մանանեխի հատի չափ հաւատք ունենայիք, այս թզենուն կ՚ասէիք. Պոկուիր և ծովի մէջ տնկուիր, և նա կը հնազանդէր ձեզ։
7 Բայց ձեզանից ո՞վ է նա, որ մի հողագործ կամ հովիւ ծառայ ունենայ, որ երբոր յանդիցը գայ տուն մտնէ, շուտով ասէ նո-
8 րան, թէ Եկ սեղան նստիր։ Այլ չի՞ ասիլ նորան, Թէ պատրաստիր ինչ որ իրիկունս պիտի ուտեմ, և գօտիդ կապիր ինձ ծառայիր, մինչև որ ուտեմ և խմեմ, և յետոյ դու էլ կ՚ուտես և կ՚խմես։
9 Մի՞թէ այն ծառայիցը շնորհակալ կ՚լինի, որ այն բոլոր իրան հրամայուածներն արաւ. չ՚կարծեմ։
10 Այնպէս էլ դուք, երբոր բոլոր ձեզ հրամայուած բաներն անէք, ասեցէք՝, թէ Մենք անպիտան ծառաներ ենք. որովհետև այն ենք արել, ինչ որ պարտական էինք անելու։
11 Եւ եղաւ՝ երբոր նա Երուսաղէմ էր գնում, ինքը Սամարիայի և Գալիլեայի միջովն էր անցնում։
12 Եւ նա մի գիւղ մտնելիս, տասը բորոտ մարդիկ պատահեցան նորան, որ հեռուանց կանգնեցին,
13 Եւ իրանց ձայնը բարձրացրին և ասեցին. Յիսուս՝ Վարդապետ,
14 մեզ ողորմիր։ Եւ երբոր տեսաւ՝ ասեց նորանց. Գնացէք ձեր անձերը քահանաներին ցոյց տուէք։ և եղաւ, որ նորանք գնալիս՝ սրբուեցան։
15 Եւ նորանցից մէկն, երբոր տեսաւ թէ բժշկուեցաւ, ետ դառաւ՝ բարձր ձայնով փա-

ռաւորում էր Աստուծուն։ Եւ իր երեսի վերայ ընկաւ նորա ոտների առաջին, և գոհանում էր նորանից. և ինքը Սամարացի
17 էր։ Յիսուսն էլ պատասխանեց և ասեց. Չէ՞ որ տասն էլ սրբուե-
18 ցան. ապա այն ինն ո՞ւր են։ Ետ դառնողներ չ՚գտնուեցան, որ Աստուծուն փառք տան, բացի այս
19 այլազգին։ Եւ ասեց նորան. Վեր կաց՝ գնա. քո հաւատքն ապրեցրեց քեզ։
20 Երբոր Փարիսեցիներիցն հարցուեցաւ, թէ Աստուծոյ արքայութիւնն ե՞րբ պիտի գայ, պատասխանեց նորանց և ասեց. Աստուծոյ արքայութիւնը դրսի նշա-
21 նով չի գալ։ Ոչ էլ կ՚ասեն, Թէ Ահա այստեղ է, կամ՝ ահա այնտեղ է. որովհետև ահա Աստուծոյ արքայութիւնը հէնց ձեր ներսումն է։
22 Աշակերտներին էլ ասեց. Օրեր կ՚գան, որ դուք կ՚ցանկանաք մարդի Որդու օրերից մէկը տես-
23 նել, և չէք տեսնիլ։ Եւ ձեզ կ՚ասեն՝ Ահա այստեղ է, կամ՝ ահա այնտեղ է, չ՚գնաք և ետե-
24 ւիցը չ՚հետևիք։ Որովհետև ինչպէս կայծակն որ փայլում երկընքի տակիցը՝ լոյս է տալիս մինչև երկնքի ֆ-ս տակը, այնպէս էլ կ՚լինի մարդի Որդին իր
25 օրումը։ Բայց առաջ պէտք է որ նա շատ չարչարուի և անարգուի
26 այս ազգիցը։ Եւ ինչպէս եղաւ Նոյի օրերումն, այնպէս էլ կը լինի մարդի Որդու օրերումը։
27 Ուտում էին և խմում էին՝ կին էին առնում՝ և մարդի էին գընում, մինչև այն օրն որ Նոյը մտաւ տապանը, և ջրհեղեղն ե-
28 կաւ և ամենքին կորցրեց։ Նմանապէս էլ ինչպէս Ղովտի օրերումն եղաւ. ուտում էին, խմում էին, առնում էին՝ ծախում էին,
29 տնկում էին՝ շինում էին։ Եւ այն օրն որ Ղովտը Սոդոմիցը դուրս եկաւ, կրակ և ծծումբ տեղաց երկնքիցը և ամենքին կորցրեց։
30 Նոյն կերպովն էլ կ՚լինի այն օրումը, որ մարդի Որդին կ՚յայտ-
31 նուի։ Այն օրումն ով որ կտրի վերայ լինի և իր բաները տան մէջ, թող չ՚իջնէ նորանց առնելու. և յանդումը լինողն էլ այնպէս թող ետ չ՚դառնայ։
32 Յիշեցէք Ղովտի կինը։
33 Ով որ ուզէ իր անձն ապրեցնել, կ՚կորցնէ նորան. և ով որ կորցնէ նորան, կ՚ապրեցնէ նորան։
34 Ասում եմ ձեզ. Նոյն գիշերումն երկու հոգի մէկ մահիճի մէջ կ՚լինին, մէկը կ՚առնուի և միւսը կ՚թողուի։
35 Երկու հոգի միասին աղալու վերայ կը լինին, մէկը կ՚առնուի և միւսը կ՚թողուի. և երկու հոգի արտումը կ՚լինին, մէկը կ՚առնուի և միւսը կ՚թողուի։
36 Եւ պատասխանեցին և նորան ասեցին. Տէր, ո՞րտեղ։
37 Նա էլ ասեց նորանց. Որտեղ մարմինն է, արծիւներն էլ այնտեղ կ՚հաւաքուին։

ԳԼ. ԺԸ

1 Մի առակ էլ ասեց նորանց՝ նորա վերայ թէ պէտք է ամեն ժամանակ աղօթք անել և չ՚ձանձրանալ։
2 Եւ ասեց. Մի դատաւոր կար մի քաղաքում, որ Աստուածանից չէր վախենում, և մարդից չէր ամաչում։
3 Եւ մի որբևայրի էլ կար այն քաղաքումը, և նորա մօտ էր գալիս և ասում, Իրաւունք արա ինձ իմ ոսոխիցը։
4 Եւ նա մի ժամանակ չ՚կամեցաւ. նորանից յետոյ իր մտքումն ասեց. Թէև Աստուածանից չեմ վախենում, և մարդկանցից չեմ ամաչում,
5 Սակայն որովհետև այս որբևայրին յոգնեցնում է ինձ, իրաւունք անեմ նորան, որ վերջապէս չ՚գայ ինձ ձանձրացնէ։
6 Եւ Տէրն ասեց. Լսեցէք թէ անիրաւ դատաւորն ի՞նչ է ասում։
7 Բայց Աստուած մի՞թէ իր ընտրեալների համար իրաւունք չի անիլ, որ ցերեկ և գիշեր աղաղակում են դէպի նա, թէև նորանց վերայ երկայնամիտ էլ լինի։
8 Ասում եմ ձեզ թէ Շուտով իրաւունք կ՚անէ նորանց համար։ Սակայն մարդի Որդին գալիս՝ արդեօք հաւատք կ՚գտնէ՞ երկրի վերայ։

9 Ոմանց էլ, որ իրանցմէ վստահ էին, թէ արդար են և ուրիշներին ոչինչ էին համարում, այս
10 առակն ասաց Երկու մարդ վեր ելան տաճարն աղօթք անելու. մէկը փարիսեցի և միւսը մաքսաւոր։ Փարիսեցին առանձին
11 կանգնած այս էր աղօթք անում. Ով Աստուած, գոհանում եմ քեզանից, որ չեմ ինչպէս ուրիշ մարդիկը՝ յափշտակող, անիրաւ, շնացող, կամ ինչպէս էլ այս
12 մաքսաւորը. Շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում, և իմ բոլոր ստացուածքներիցը տասա-
13 նորդ եմ տալիս։ Եւ մաքսաւորը հեռու կանգնած իր աչքերն էլ չէր կամենում դէպի երկինքը բարձրացնել. այլ իր կուրծքը ծեծում էր և ասում. Ով Աստուած, աղօթքիր ինձ մեղաւորիս։
14 Ասում եմ ձեզ, թէ սա արդարացած իջաւ իր տունը քան թէ նա. որովհետև ամէն ինքն իրան բարձրացնողը կ'խոնարհուի, և ինքն իրան խոնարհեցնողը կ'բարձրանայ։

15 Երեխաներ էլ էին բերում նորա մօտ, որ նորանց դպչի. աշակերտներն էլ երբոր տեսան, յան-
16 դիմանում էին նորանց։ Բայց Յիսուս նորանց իրան մօտ կանչեց, և ասեց. Թոյլ տուէք երեխաներին ինձ մօտ գալ, և մի արգիլէք դորանց. որովհետև այդպիսիներին է Աստուծոյ արքայու-
17 թիւնը։ Ճշմարիտ ասում եմ ձեզ թէ ով որ Աստուծոյ արքայութիւնը չ'ընդունի ինչպէս երեխայ՝ նա չի մտնիլ նորա մէջ։

18 Եւ մէկ իշխան հարցրեց նորան և ասեց. Բարի վարդապետ, ինչ գործեմ, որ յաւիտենական
19 կեանքը ժառանգեմ։ Յիսուսն էլ նորան ասեց. Ինչու ես ինձ բարի ասում. ոչ ով բարի չէ բացի
20 մէկը՝ Աստուած։ Պատուիրանքները դիտես. Մի շնար, Մի սպաներ, Մի գողանար, Մի սուտ վկայիր, Պատուիր քո հօրը և մօրը։
21 Նա էլ ասեց. Այդ ամէնն իմ երեխայութիւնիցը պահել եմ։
22 Յիսուսն էլ երբոր այս լսեց՝ նորան ասեց. Մի բան տակաւին պակաս է քեզ. ամէն ինչ որ ունիս՝ ծախիր, և աղքատներին տուր, և գանձ կ'ունենաս երկընքումը, և եկ հետևիր ինձ։
23 Նա էլ այս լսելով տրտմեց. որովհետև սաստիկ հարուստ էր։
24 Յիսուսն էլ երբոր նորան տրտմած տեսաւ, ասեց. Ինչպէս դժուար կ'մտնեն Աստուծոյ արքայութիւնը նորանք, որ ստացուածքներ ունին։
25 Որովհետև ասելի հեշտ է ուղտն ասեղի ծակով անցնել, քան թէ հարուստն Աստուծոյ արքայութիւնը մտնել։
26 Եւ նորանք որ լսեցին՝ ասում էին. Իսկ ո՞վ կարող է փրկուիլ։
27 Նա էլ ասեց. Այն բաներն որ կարելի չեն մարդկանց մօտ, կարելի են Աստուծոյ մօտ։
28 Պետրոսն ասեց. Ահա մենք բոլորը թողեցինք և քո հետից եկանք։
29 Նա էլ ասեց նորանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ թէ ոչ ով չ'կայ, որ թողել է տուն, կամ ծնողներ, կամ եղբայրներ, կամ կին, կամ որդիք՝ Աստուծոյ արքայութեան համար,
30 Որ բազմապատիկ չ'առնէ այս ժամանակումը, և այն գալու աշխարհքումը յաւիտենական կեանքը։

31 Եւ այն տասնևերկուսին մտան առաւ և ասեց նորանց. Ահա վեր ենք ելնում Երուսաղէմ. և կը կատարուին մարգարէներէն ձեռովն մարդի Որդու համար բոլոր
32 գրուածները։ Որովհետև հեթանոսներին կ'մատնուի, և ծաղր կ'լինի, կ'նախատուի, և նորա վերայ կ'թքուի։
33 Եւ կ'ծեծեն կը սպանեն նորան. և երրորդ օրը յարութիւն կ'առնէ։
34 Եւ նորանք սորանցից ոչինչ չ'իմացան, և խօսքը ծածկուած էր նորանցից, և ասածները չէին իմանում։

35 Եղաւ, որ նա Երիքովին մօտենալիս, մի կոյր ճանապարհի վերայ նստած մուրացկանութիւն էր անում։
36 Եւ երբոր ժողովրդի անցնելը լսեց, հարցնում էր թէ
37 Դա ինչ է։ Եւ պատմեցին նորան, թէ Յիսուս Նազովրեցին է անցնում։
38 Եւ նա աղաղակեց և

ասեց. Յիսուս՝ որդի Դաւթի, ինձ ողորմիր։ Եւ նորանք՝ որ առաջից գնում էին, յանդիմանում էին նորան, որ լռէ. իսկ նա էլ աւելի էր աղաղակում. Որդի Դաւթի, ինձ ողորմիր։
40 Յիսուսն էլ կանգնեց և հրամայեց, որ նորան իրան մօտ բերեն. և երբոր նա մօտ եկաւ, հարցրեց
41 նորան և ասեց. Ինչ ես ուզում, որ անեմ քեզ. և նա ասեց. Տէր,
42 որ տեսնեմ։ Եւ Յիսուսն էլ ասեց նորան. Տես. քո հաւատքը ապրեցրեց քեզ։ Եւ իսկոյն տեսնում էր, և նորա հետից գնում էր՝ Աստուծուն փառաւորելով. և բոլոր ժողովուրդը որ տեսաւ՝ օրհնութիւն էր տալիս Աստուծուն։

ԳԼ. ԺԹ

1 Եւ մտած՝ Երիքովի միջովն անց-
2 նում էր։ Եւ ահա մի մարդ՝ անունով Զաքէոս կոչուած, որ նա մաքսապետ էր, և ինքը հարուստ
3 էր։ Եւ ուզում էր Յիսուսին տեսնել թէ ով է, բայց բազմութեան պատճառով չէր կարողանում. որովհետև հասակով կարճ
4 էր։ Եւ առաջ վազեց՝ վեր ելաւ մի ժանասաթզենի, որ տեսնէ նորան. որովհետև այնտեղովը պիտի անցնէր։ Եւ երբոր այն տեղն եկաւ, Յիսուսը վեր նայեց և նորան ասեց. Զաքէ, շուտ արա իջիր. որովհետև ինձ այսօր պէտք
6 է քո տանը կենալ։ Նա էլ շտապելով իջաւ և ուրախութիւնով
7 ընդունեց նորան։ Եւ բոլոր տեսնողները տրտնջում էին և ասում թէ Մեղաւոր մարդի մօտ մտաւ
8 հանգիստ առնելու։ Զաքէոսն էլ կանգնեց և Տիրոջն ասեց. Տէր, ահա իմ ինչքերի կէսն աղքատներին կ'տամ. և եթէ մէկին զրպարտութիւնով զրկել եմ՝ չո-
9 րեքպատիկ կ'վճարեմ։ Յիսուսն էլ նորան ասեց թէ Այսօր փրկութիւն եղաւ այս տանը. որովհետև սա էլ Աբրահամի որդի է։
10 Որովհետև մարդի Որդին եկաւ, որ որոնէ ևապրեցնէ կորածին։

11 Եւ դեռ որ նորանք այս բաները լսում էին, մի առակ ասելացրեց և ասեց, որովհետև Երուսաղէմին մօտենում էր, և նորանք կարծում էին, թէ Աստուծոյ արքայութիւնը իսկոյն յայտնուելու է։ Ապա ասեց. Մի ազ-
12 նուական գնաց հեռու երկիր, որ թագաւորութիւն առնէ իրան
13 համար և էս դառնայ։ Եւ իր տասը ծառաներին կանչեց, տասը մնաս տուաւ նորանց, և ասեց նորանց. Բանեցրէք մինչև որ դամ։ Բայց նորա քաղաքացիներն ա-
14 տում էին նորան. և նորա հետևիցը պատգամաւորներ ուղարկեցին և ասեցին. Չենք ուզում որ դա թագաւորէ մեզ վերայ։ Եւ
15 եղաւ՝ որ նա թագաւորութիւնն առած եւս դառաւ և ասեց որ կանչեն այն ծառաներին, որոնց տուել էր արծաթը, որ իմանայ թէ ով ինչ շահուեցաւ։ Եւ ա-
16 ռաջինն եկաւ և ասեց. Տէր, քո մնասը շահեց տասը մնաս։ Եւ
17 նորան ասեց. Լաւ, բարի ծառայ, որովհետև քիչումը հաւատարիմ եղար, տասը քաղաքի վերայ իշխանութիւն ունեցիր։ Եւ
18 երկրորդն եկաւ և ասեց. Տէր, քո մնասը հինգ մնաս շահեց։
19 Նորան էլ ասեց. Դու էլ հինգ
20 քաղաքի վերայ եղիր։ Եւ ուրիշն էլ եկաւ և ասեց. Տէր, ահա քո մնասը՝ որ վարշամակի մէջ պատած պահած էի։ Որովհետև
21 վախենում էի քեզանից. որովհետև դու խիստ մարդ ես. վեր ես առնում ինչ որ չես դրել, և հնձում ես ինչ որ չես սերմել.
22 Եւ ասեց նորան. Քո բերանիցը դատում եմ քեզ, չար ծառայ. դիտէիր որ ես խիստ մարդ եմ, որ վեր եմ առնում ինչ որ չեմ դրել, և հնձում եմ ինչ որ չեմ
23 սերմել։ Էլ ինչու իմ արծաթը սեղանաւորներին չ'տուիր, որ ես գայի շահով եմ առնէի նորան։
24 Եւ այնտեղ կանգնողներին ասեց. Առէք դորանից մնասը, և տուէք տասը մնասն ունեցողին։
25 Եւ նորան ասեցին. Տէր, տասը մնաս ունի։ Սորա համար ասում եմ
26

ձեզ, թէ ամեն ունեցողին կը
տրուի. և չ'ունեցողիցը ինչ էլ
27 որ ունի, վեր կ'առնուի։ Իսկ այն
իմ թշնամիներին, որ չէին ու-
զում, որ ես նորանց վերայ թա-
գաւորեմ, այստեղ բերէք և
28 սպանեցէք իմ առաջին։ Եւ եր-
բոր այս ասեց, առաջ գնաց, որ
վեր ելնէ Երուսաղէմ։
29 Եւ եղաւ երբոր Բեթփագէին և
Բեթանիային մօտեցաւ, այն սա-
րին մօտ՝ որ Զիթենեաց սար է
կոչվում, իր աշակերտներից եր-
30 կուսին ուղարկեց և ասեց. Գնա-
ցէք այդ դիմացի գիւղը, և երբ-
որ մէջը մտնէք, մի կապած ա-
ւանակ կ'գտնէք, որի վերայ
երբէք ոչ մի մարդ նստած չէ.
31 նորան արձակեցէք բերէք։ Եւ
եթէ մէկը հարցնէ ձեզ՝ Թէ Ի՞ն-
չու էք արձակում, նորան այս-
պէս ասեցէք թէ Տիրոջը պէտք է
32 սա։ Ուղարկուածներն էլ երբոր
գնացին, այնպէս գտան ինչպէս
33 նորանց ասեց։ Եւ նորանք ա-
ւանակն արձակելիս՝ նորա տէ-
րերն ասեցին նորանց. Ի՞նչու էք
34 արձակում այդ աւանակը։ Ն-
որանք էլ ասեցին. Տիրոջը պէտք
35 է սա։ Եւ նորան բերին Յի-
սուսի մօտ. և իրանց հանդերձ-
ները աւանակի վերայ գցեցին, և
36 Յիսուսին հեծեցրին։ Եւ նորա
գնալու ժամանակին իրանց հան-
դերձները փռում էին ճանա-
37 պարհի վերայ։ Եւ երբոր նա ար-
դէն մօտեցաւ Զիթենեաց սարի
զառիվայրին, աշակերտների բո-
լոր բազմութիւնն ուրախութիւ-
նով սկսեց օրհնել Աստուծուն
բարձր ձայնով՝ այն բոլոր զօրու-
թիւնների համար, որ տեսել
38 էին։ Եւ ասում էին. Օրհնեալ
է Տիրոջը անունովն եկող թա-
գաւորը. խաղաղութիւն լինի եր-
կընքումը և փառք բարձունքնե-
39 րումը։ Եւ Փարիսեցիներից ոմանք
ժողովրդի միջիցը նորան ասեցին.
Վարդապետ, յանդիմանիր աշա-
40 կերտներիդ։ Եւ նա պատասխա-
նեց և ասեց՝ Ասում եմ ձեզ՝ որ
եթէ սորանք լռեն, քարերն են
աղաղակելու։

Եւ երբոր մօտեցաւ, տեսաւ
քաղաքը, լացաւ նորա վերայ և
ասեց. Եթէ դո՛ւ էլ իմանայիր՝
գոնեա այս օրուայ օրը քո խա-
ղաղութեան մասին. բայց հիմա
ծածկուեցաւ քո աչքերիցը։ Ո- 43
րովհետև օրեր կ'գան քեզ վե-
րայ, և քո թշնամիները չորս կող-
մովդ պատնէշ կ'պատեն, և կը
պաշարեն քեզ և ամեն կողմից
քեզ կ'նեղացնեն. Եւ հիմնայա- 44
տակ կ'անեն քեզ և քո որդիքն
էլ քո միջումը. և չեն թողիլ
քո միջումը քար քարի վերայ.
փոխանակ որ չ'ճանաչեցիր քեզ
այցելելու ժամանակը։
Եւ տաճարը մտաւ սկսեց դուրս 45
հանել նորանում ծախողներին և
առնողներին. Եւ նորանց ասեց. 46
Գրուած է Թէ Իմ տունն աղօթ-
քի տուն է, և դուք նորան ա-
ւազակների այր էք արել։
Եւ ամեն օր սովորեցնում էր 47
նորանց տաճարումը. բայց քա-
հանայապետները և դպիրները և
ժողովրդի գլխաւորներն ուզում
էին կորցնել նորան։ Եւ չէին 48
գտնում թէ ինչ անեն. որով-
հետև բոլոր ժողովուրդը նորա-
նից կախուած էր լսելով։

ԳԼ. Ի

Եւ եղաւ որ այն օրերի մէկին 1
նա տաճարումը ժողովրդին սո-
վորեցնելիս և աւետարանելիս,
քահանայապետները և դպիրները 2
ծերերին հետ վերայ հասան։ Եւ
ասեցին նորան. Ասիր մեզ, ի՞նչ
իշխանութիւնով ես անում այդ
բաները, կամ ո՞վ է այդ իշխա- 3
նութիւնը քեզ տուողը։ Եւ նա
պատասխանեց և ասեց նորանց.
Ես էլ ձեզ մի բան հարցնեմ, և 4
ասեցէք ինձ. Յովհաննէսի մկըր-
տութիւնը երկնքի՞ցն էր, թէ 5
մարդկանցից։ Եւ նորանք իրանց
միջումը միտք արին և ասեցին. 6
Եթէ ասենք, Երկնքիցը. կ'ասէ.
Ապա ի՞նչու չ'հաւատացիք նո-
րան. և եթէ ասենք, Մարդկան-
ցից, բոլոր ժողովուրդը կ'քարկո-
ծէ մեզ. որովհետև համոզուած

ն թէ Յովհաննէսը մարդարէ է։
Եւ պատասխանեցին թէ չ'գի-
տեն, թէ ո՛ր տեղից է։ Եւ Յի-
սուսն էլ նորանց ասեց. Ես էլ
ձեզ չեմ ասիլ՝ թէ ինչ իշխա-
նութիւնով եմ անում այս բա-
ները։
9 Եւ սկսեց այս առակն ասել
ժողովրդին. Մի մարդ այգի
տնկեց, և մշակների տուաւ նո-
րան, և ինքն օտարութիւն գնաց
10 շատ ժամանակով։ Եւ ժամանա-
կին մի ծառայ ուղարկեց մշակ-
ների մօտ, որ այգու պտղիցն ի-
րան տան. բայց մշակները ծեծե-
ցին նորան և դատարկ ետ ու-
11 ղարկեցին։ Եւ նորա վերայ մի
ուրիշ ծառայ էլ ուղարկեց. և
նորանք նորան էլ ծեծեցին, ան-
պատիւ արին և դատարկ ետ ու-
12 ղարկեցին։ Եւ նորա վերայ մի
երրորդին էլ ուղարկեց. նորանք
նորան էլ վիրաւորեցին դուրս
13 հանեցին։ Եւ այգու տէրն ասեց.
Ի՞նչ անեմ. իմ սիրելի որդին ու-
ղարկեմ. գուցէ նորան տեսնե-
14 լով ամաչեն։ Բայց մշակներն
երբոր նորան տեսան՝ իրար հետ
խորհուրդ արին և ասեցին. Սա
է ժառանգը. եկէք սպանենք սո-
րան. որ ժառանգութիւնը մերը
15 լինի։ Եւ այգուցը դուրս հանե-
ցին նորան և սպանեցին. արդ՝
այգու տէրն ի՞նչ կ'անէ նորանց։
16 Կ'գայ և այն մշակներին կ'կոր-
ցնէ, և այգին ուրիշների կ'տայ։
Լսողներն էլ ասեցին. Քաւ լիցի։
17 Իսկ նա մտիկ տուաւ նորանց և
ասեց. Ապա ի՞նչ է այն գրուածը
Թէ Այն քարն՝ որ շինողներն ա-
նարգեցին նա անկիւնի գլուխ
18 եղաւ։ Ամեն այս քարի վերայ
ընկնողը կ'փշրուի, և ում վերայ
որ նա ընկնի, կ'ջարդէ նորան։
19 Եւ քահանայապետներն և դպիր-
ները նոյն ժամումն ուզում էին
ձեռք ձգել նորա վերայ, բայց
ժողովրդիցը վախեցան. որովհետև
իմացան, որ իրանց համար ասեց
այն առակը։
20 Եւ դարանամուտ լինելով խա-
բեբայ մարդիկ ուղարկեցին, որ
կեղծաւորութիւնով իրանց ան-

ձերն արդար էին ցոյց տալիս, որ
խօսքով բռնեն նորան՝ տէրու-
թեան և կուսակալի իշխանու-
թեանը նորան մատնելու համար։
Եւ նորան հարցրին և ասեցին. 21
Վարդապետ, գիտենք որ ուղիղ
ես խօսում և սովորեցնում, և
երեսպաշտութիւն չես անում.
այլ ճշմարտութիւնով սովորե-
ցնում ես Աստուծոյ ճանապարհը։
Արժա՞ն է մեզ՝ Կայսրին հարկ 22
տալ թէ ոչ։ Նորանց խորաման- 23
կութիւնը հասկանալով, ասեց
նորանց. Ի՞նչու էք ինձ փորձում.
Ցոյց տուէք ինձ մի դահեկան։ 24
Ո՞ւմ պատկերը և գիրն ունի սա։
Պատասխանեցին և ասեցին. Կայ-
սեր։ Եւ նա ասեց նորանց. Ու- 25
րեմն կայսրինը կայսրին տուէք,
և Աստուծունը Աստուծուն։ Եւ 26
չ'կարողացան խօսքով բռնել նո-
րան ժողովրդի առաջին. և նորա
պատասխանի վերայ զարմանալով
լռեցին։
Սադուկեցիները, որ հակառա- 27
կում են թէ յարութիւն չ'կայ,
ոմանք մօտ եկան և հարցրին նո-
րան, Եւ ասեցին. Վարդապետ, 28
Մովսէսը գրեց մեզ, Եթէ մէկի
եղբայրը մեռնէ, որ կին ունենայ,
և ինքն անզաւակ մեռնէ, որ նո-
րա եղբայրն այն կինն առնէ և
իր եղբօր համար զաւակ յարու-
ցանէ։ Հիմա եօթն եղբարք կային, 29
և առաջինը կին առաւ և առանց
զաւակի մեռաւ։ Եւ երկրորդն 30
առաւ այն կինը, և նա էլ մե-
ռաւ առանց զաւակի։ Երրորդն 31
էլ առաւ նորան. այսպէս այն
եօթն էլ, և որդիք չ'թողեցին,
և մեռան։ Եւ ամենից յետոյ այն 32
կինն էլ մեռաւ։ Արդ յարու- 33
թեան ժամանակին նորանցից ո-
րի՞ն պիտի լինի կին. որովհետև
այն եօթն էլ կին առան նորան։
Եւ Յիսուսը պատասխանեց և ա- 34
սեց նորանց. Այս աշխարհքի որ-
դիքը կին են առնում և մարդի
են գնում։ Բայց նորանք որ ար- 35
ժանի լինին այն աշխարհքին հաս-
նելու և մեռելներից յարութիւն
առնելու, ոչ կին կ'առնեն և ոչ
մարդի կ'գնան։ Եւ ոչ իսկ կարող 36

են մեռնել, որովհետև հրեշ-
տակների հաւասար են և Ա-
ստուծոյ որդիք, յարութեան որ-
37 դիք լինելով։ Բայց թէ մեռել-
ները յարութիւն կ'առնեն, Մով-
սէսն էլ մարգարէացաւ մորենու
մօտ, ինչպէս Տիրոջ համար ա-
սում է՝ Աբրահամի Աստուած և
Իսահակի Աստուած և Յակոբի
38 Աստուած։ Իսկ Աստուած մե-
ռելներինը չէ, այլ կենդանիներ-
ինը. որովհետև ամենքը կենդա-
39 նի են նորա համար։ Դպիրներից
ոմանք պատասխանեցին և ասե-
ցին. Վարդապետ, լաւ ասեցիր.
40 Եւ այլևս չէին համարձակում
նորանից ոչ մի բան հարցնելու։
41 Եւ նորանց ասեց. Ի՞նչպէս են
ասում Քրիստոսի համար՝ թէ
42 Դաւիթի որդի է։ Եւ Դաւիթն
ինքը Սաղմոսների գրքումն ասում
է. Տէրն իմ Տիրոջն ասեց՝ Իմ
43 աջ կողմը նստիր, Մինչև որ քո
թշնամիները ոտներիդ պատուան-
44 դան դնեմ։ Արդ եթէ Դաւիթը
Տէր է կոչում նորան, ապա ի՞նչ-
պէս է նորա որդի։
45 Եւ երբոր բոլոր ժողովուրդը
լսում էր, ասեց իր աշակերտնե-
46 րին. Զգոյշ կացէք դպիրներիցը,
որ փառաւոր պատմուճաններով
կամենում են ման գալ և սի-
րում են հրապարակներումը բա-
րև առնելը, և ժողովարանների
մէջ առաջին աթոռները, և ընթ-
47 րիքներումը վերևի տեղերը։ Որ
որբևայրիների տներն ուտում են,
և պատճառանքով երկար ա-
ղօթք են անում. նորանք աւելի
դատապարտութիւն կ'ընդունեն։

ԳԼ. ԻԱ

1 Եւ մտիկ տուաւ, տեսաւ հա-
րուստներին, որ իրանց տուրքը
2 գանձանակն էին գցում։ Մի որ-
բևայրի աղքատ կին էլ տեսաւ,
որ երկու լումայ գցեց այնտեղ։
3 Եւ ասեց. Ճշմարիտ ասում եմ
ձեզ, թէ այս աղքատ որբևայ-
4 րին ամենիցն աւելի գցեց։ Որով-
հետև նորանք ամենքն իրանց ա-
ւելացածներիցը գցեցին Աստու-
ծոյ ընծաների մէջ, իսկ սա իր
կարօտութիւնիցն իր բոլոր ապ-
րուստն՝ որ ունէր՝ գցեց։
Եւ երբոր ոմանք ասում էին
տաճարի համար թէ Գեղեցիկ
քարերով և *նուէրներով զար-
դարուած է, ասեց. Այդ բոլորն 6
որ տեսնում էք, օրեր կ'գան,
որ այդտեղ քար քարի վերայ
չի թողուիլ որ չ'քանդուի։ Եւ 7
հարցրին նորան և ասեցին. Վար-
դապետ, ե՞րբ կ'լինին սորանք և
ի՞նչ է նշանը՝ երբոր սորանք լի-
նին։ Նա էլ ասեց. Զգոյշ կացէք՝ 8
մի խաբուիք. որովհետև շատերը
կ'գան իմ անունովը և կ'ասեն,
թէ Ես եմ. և ժամանակը մօտե-
ցաւ. արդ նորանց ետևից մի
գնաք։ Բայց երբոր պատերազմ- 9
ներ և խռովութիւններ կ'լսէք,
մի զարհուրիք. որովհետև պէտք
է որ առաջ նա լինի, բայց դեռ
շուտով վերջը չէ։ Այն ժամա- 10
նակ նորանց ասեց. Ազգ ազգի
վերայ կ'կենայ և թագաւորու-
թիւն թագաւորութեան վերայ։
Եւ մեծամեծ դետնաշարժներ և 11
տեղ տեղ սովեր և մահտարա-
ժամներ կ'լինին. և երկնքիցն ա-
հաւոր բաներ և մեծամեծ նշան-
ներ կ'լինին։ Բայց այս բոլոր բա- 12
ներիցն առաջ իրանց ձեռները
ձեզ վերայ կ'ձգեն և կ'հալա-
ծեն. ժողովարանների և բանտերի
մէջ կ'մատնեն, և կ'տանեն թա-
գաւորների և կուսակալների ա-
ռաջ՝ իմ անունի համար։ Եւ սա 13
կ'լինի ձեզ վկայութեան համար։
Արդ ձեր սրտի մէջ դրէք, որ 14
առաջուց հոգս չ'անէք պատաս-
խանելու համար։ Որովհետև ես 15
բերան և իմաստութիւն կ'տամ
ձեզ. որին չեն կարողանալ հա-
կառակ խօսիլ և ոչ ընդդիմա-
նալ ձեր բոլոր հակառակորդնե-
րը։ Եւ կ'մատնուիք ծնողներից 16
և եղբայրներից և ազգականնե-
րից և բարեկամներից էլ, և ձե-
զանից կ'սպանեն։ Եւ բոլորին 17
ատելի կ'լինիք իմ անունի հա-
մար։ Եւ ձեր գլխիցը մի մազ 18

*Գրաբար՝ աշտարակներով

չի կորչիլ։ Եւ ձեր համբերու-
թեամբը կ'շահէք ձեր հոգիները։
Բայց երբոր կ'տեսնէք Երուսա-
ղէմը զօրքերով շրջապատուած,
այն ժամանակ գիտացէք, թէ
21 նորա աւերումը մօտ է։ Այն ժա-
մանակ նորանք, որ Հրէաստա-
նումն են, թող սարերը փախ-
չեն. և նորանք, որ նորա միջումն
են, թող հեռանան. և նորանք,
որ նորա գաւառներումն են,
22 թող չ'մտնեն նորա մէջ։ Որով-
հետև այն օրերը վրէժխնդրու-
թեան օրեր են, որ ամեն գրը-
23 ուածները կատարուին։ Բայց այն
օրերումը վա՛յ յղիներին և ծիծ
տուողներին. որովհետև մեծ նե-
ղութիւն կ'լինի երկրիս վերայ, և
բարկութիւն այդ ժողովրդի վե-
24 րայ։ Եւ սրի բերանով կ'ընկնեն,
և բոլոր հեթանոսների մէջ գերի
կ'տարուին. և Երուսաղէմը հե-
թանոսներից ոտնակոխ կ'լինի,
մինչև որ հեթանոսների ժամա-
25 նակները կատարուին։ Եւ նշան-
ներ կ'լինին արեգակումը և լուս-
նումը և աստղերումը, և երկրի
վերայ հեթանոսները խռովու-
թեամբ կ'տագնապին, ծովը կը
26 գոչէ և կ'ծփան ալիքները։ Որով-
հետև մարդկանց սրտերը կ'նուա-
ղին վախից և այն բաների սպա-
սելուցն, որ բոլոր աշխարհքի վե-
րայ պիտի գան. որովհետև եր-
կընքի զօրութիւնները կ'շար-
27 ժուին։ Եւ այն ժամանակ կ'տես-
նեն մարդի Որդին ամպերի վե-
րայ եկած զօրութեամբ և մեծ
28 փառքով։ Եւ երբոր այս բաները
կ'սկսեն լինիլ, վեր նայեցէք և
բարձրացրէք ձեր գլուխները. որ
ձեր փրկութիւնը մօտ է։
29 Եւ նորանց մի առակ ասեց.
Տեսէք թզենին և բոլոր ծառերը։
30 Երբոր արդէն բողբոջած են,
տեսնելով՝ ինքներդ իմանում էք,
31 թէ ամառը մօտ է։ Այնպէս էլ
դուք երբոր այս բոլոր բաները
եղած տեսնէք, գիտացէք, որ
Աստուծոյ արքայութիւնը մօտ է։
32 Ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ
այս ազգը չի անցնիլ, մինչև այս
33 բոլորը լինի։ Երկինքը և երկիրս
կ'անցնեն, բայց իմ խօսքերը չեն
անցնիլ։ Զգոյշ կացէք անձնե- 34
րիդ, մի գուցէ ձեր սրտերը ծան-
րանան շատակերութիւնով և արբ-
եցութիւնով և ապրուստի հոգ-
սերով, և այն օրը յանկարծ հաս-
նէ ձեզ վերայ. Որովհետև որո- 35
գայթի պէս կ'հասնէ այն ամենքի
վերայ, որ բոլոր երկրի երեսի վե-
րայ բնակած են։ Ուրեմն արթուն 36
կացէք, և ամեն ժամանակ ա-
ղօթք արէք, որ արժանի լինիք
ազատուիլ այն բոլոր բաներիցը,
որ պիտի լինին, և կանգնել մար-
դի Որդու առաջին։
Եւ ցերեկները տաճարումը սո- 37
վորեցնում էր և գիշերները դուրս
էր գալիս և կենում այն սարումն,
որ Զիթենեաց սար էր կոչվում։
Եւ ժողովուրդն առաւօտանց կա- 38
նուխ գնում էր տաճարը նորա
մօտ նորանից լսելու։

ԳԼ. ԻԲ

Եւ բաղարջակերաց տօնը մօտե- 1
ցաւ, որ զատիկ է կոչվում։ Եւ 2
քահանայապետները և դպիրները
որոնում էին, թէ ինչպէս սպա-
նեն նորան. որովհետև ժողովրդի-
ցը վախենում էին։
Սատանան էլ մտաւ Իսկարի- 3
ովտացի ասուած Յուդայի մէջ,
որ տասնևերկուսի թուիցն էր։
Եւ գնաց քահանայապետների և 4
իշխանների հետ խօսք կապեց,
թէ նորան ինչպէս մատնէ նո-
րանց։ Եւ նորանք ուրախացան և 5
խոստացան արծաթ տալ նորան։
Եւ նա խօսք տուաւ և յարմար 6
ժամանակ էր որոնում՝ որ նորան
մատնէ նորանց առանց ամբոխի։
Եւ բաղարջակերաց օրն եկաւ, 7
որ նորանում պէտք էր զատիկը
մորթել։ Եւ Պետրոսին և Յով- 8
հաննէսին ուղարկեց և ասեց.
Գնացէք զատիկը պատրաստեցէք
մեզ համար որ ուտենք, և նո-
րանք ասեցին. Ի՞նչպէս ես կա- 9
մենում, որ պատրաստենք։ Նա 10
էլ ասեց նորանց. Ահա երբոր
քաղաքը կ'մտնէք, մի մարդ կը
պատահի ձեզ, որ ջրի կուժ է

կրում. Նորա ետևից գնացէք այն
11 տունն, ուր որ նա կ'մտնէ։ Եւ
տան տիրոջն ասեցէք. Վարդա-
պետն ասում է քեզ, Ո՞ւր է
այն օթևանը, ուր ես զատիկն
ուտեմ իմ աշակերտների հետ։
12 Եւ նա ձեզ մի մեծ վերնատուն
ցոյց կ'տայ սարքուած. այնտեղ
13 պատրաստեցէք։ Եւ նորանք գնա-
ցին այնպէս դտան, ինչպէս որ
ասեց նորանց. և զատիկը պատ-
րաստեցին։
14 Եւ երբոր ժամն եղաւ, նա սե-
ղան նստեց. և տասնևերկու ա-
15 ռաքեալներն էլ նորա հետ։ Եւ
նորանց ասեց. Ցանկանալով ցան-
կացայ՝ այս զատիկը ձեզ հետ
ուտել իմ չարչարուելուցն ա-
16 ռաջ։ Որովհետև ասում եմ ձեզ,
թէ սորանից էլ երբէք չեմ ու-
տիլ, մինչև որ կատարուի Ա-
17 ստուծոյ արքայութիւնումը։ Եւ
բաժակն առաւ՝ գոհացաւ և ա-
սեց. Առէք գորան և ձեր մի-
18 ջումը բաժանեցէք։ Որովհետև
ասում եմ ձեզ, թէ որթի բեր-
քիցն էլ չեմ խմիլ, մինչև որ
Աստուծոյ արքայութիւնը գայ։
19 Եւ հաց առաւ, գոհացաւ,
կտրեց և նորանց տուաւ, և ա-
սեց. Այս է իմ մարմինը, որ
ձեզ համար տրվում է. այս արէք
20 իմ յիշատակի համար։ Այնպէս
էլ ընթրիքից յետոյ բաժակն ա-
ռաւ, և ասեց. Այս բաժակը
նոր ուխտն է իմ արիւնովը, որ
ձեզ համար թափվում է։
21 Սակայն ահա իմ մատնողի
ձեռքն ինձ հետ սեղանի վերայ
22 է։ Եւ մարդի Որդին գնում է
ինչպէս սահմանուած է. բայց
վայ այն մարդին, որի ձեռովը կը
23 մատնուի։ Եւ նորանք սկսեցին
հարցուփորձ անել իրանց մէջ,
թէ իրանցից ո՞վ է արդեօք նա,
որ այն բանը գործելու է։
24 Նորանց միջումը մի վէճ էլ
եղաւ, թէ իրանցից ո՞վ պիտի
25 մեծ համարուի։ Եւ նա ասեց նո-
րանց. Ազգերի թագաւորները
տիրապետում են նորանց վերայ,
և նորանց վերայ իշխանութիւն
անողները բարերար են կոչվում։
Բայց դուք ոչ այնպէս. այլ ձեր
միջի մեծը՝ թող փոքրագոյնի պէս
լինի, և առաջնորդը ծառայողի
պէս։ Որովհետև ո՞վ է մեծ. սե-
ղան նստո՞ղը թէ ծառայողը. չէ՞
որ սեղան նստողը. բայց ես ձեր
միջումը ծառայողի պէս եմ։ Իսկ 28
դուք էք, որ միշտ ինձ հետ կե-
նում էիք իմ փորձութիւնն-
երումը։ Եւ ես ուխտում եմ ձեզ 29
թագաւորութիւն՝ ինչպէս իմ Հայրն
էլ ինձ թագաւորութիւն ուխ-
տեց. Որ ուտէք և խմէք իմ սե- 30
ղանի վերայ իմ արքայութիւ-
նումը, և աթոռների վերայ նըս-
տէք՝ Իսրայէլի տասնևերկու ցե-
ղերին դատաստան անելու հա-
մար։
Եւ Տէրն ասեց. Սիմօն, Սիմօն. 31
ահա սատանան ձեզ ուզեց, որ
մաղէ ցորենի պէս. Բայց ես ա- 32
ղաչեցի քեզ համար, որ քո հա-
ւատքը չ'պակասի. և դու երբոր
դառնաս, եղբայրներիդ հաստա-
տիր։ Նա էլ ասեց նորան. Տէր, 33
ես պատրաստ եմ քեզ հետ բան-
տը և մահն էլ գնալու։ Եւ նա 34
ասեց. Ասում եմ քեզ, Պետրոս,
այսօր հաւը չի խօսիլ, մինչև որ
դու երեք անգամ ուրանաս՝ թէ
ինձ չ'դիտես։
Եւ նորանց ասեց. Երբոր ու- 35
ղարկեցի ձեզ առանց քսակի, և
պարկի և կօշիկների, մի՞թէ կա-
րօտացաք մի բանի։ Նորանք էլ 36
ասեցին. Ոչինչի. ապա ասեց նո-
րանց. Բայց հիմա քսակ ունեցողը
թող առնէ, այնպէս էլ պարկը.
և չ'ունեցողը՝ թող իր հանդեր-
ձը ծախէ և իրան համար սուր 37
առնէ։ Որովհետև ասում եմ
ձեզ, թէ դեռ այս գրուածն էլ
պէտք է կատարուի ինձանում,
թէ Անօրէնների հետ համարուե-
ցաւ. որովհետև ինչ որ ինձ հա-
մար ասուած է, կատարվում է։
Նորանք էլ ասեցին. Տէր, ահա 38
այստեղ երկու սուր կայ. և նա
ասեց նորանց. Բաւական է։
Եւ դուրս ելաւ իր սովորու- 39
թեան պէս գնաց Ձիթենեաց սա-
րը, և աշակերտներն էլ նորա
ետևից գնացին։ Եւ երբոր այն 40

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա

1 Սկզբումն էր Բանը. և Բանն Ա-
ստուծոյ մօտ էր. և Բանն Աստ-
2 ուած էր։ Նա սկզբումն Աստու-
3 ծոյ մօտ էր։ Ամեն ինչ նորանով
եղաւ, և առանց նորան ոչինչ
4 չ'եղաւ, ինչ որ եղաւ։ Նորանով
էր կեանքը, և կեանքը մարդ-
5 կանց լոյսն էր։ Եւ լոյսը խաւա-
րումը լոյս է տալիս. և խաւարը
չ'իմացաւ նորան։
6 Մի մարդ եղաւ Աստուածա-
նից ուղարկուած, անունը Յով-
7 հաննէս։ Սա վկայութեան հա-
մար եկաւ, որ այն Լոյսի համար
վկայէ. որ ամենքը նորանով հա-
8 ւատան։ Նա չէր Լոյսը, այլ որ
Լոյսին համար վկայէ։
9 Այն էր ճշմարիտ Լոյսը, որ ա-
մեն մարդի լուսաւորում է, որ
10 գալիս է աշխարհքը։ Աշխարհ-
քումն էր, և աշխարհքը նորանով
եղաւ, և աշխարհքը նորան չ'ճա-
11 նաչեց։ Իրանների մէջ եկաւ, և
իրանները նորան չ'ընդունեցին։
12 Բայց որոնք որ նորան ընդունե-
ցին, իշխանութիւն տուաւ նո-
րանց Աստուծոյ որդիներ լինելու
նորանց, որ նորա անունին հա-
13 ւատում են։ Որոնք ոչ արիւնից
և ոչ մարմնի կամքից, և ոչ մար-
դի կամքից, այլ Աստուածանից
ծնուեցան։ Եւ Բանը մարմին ե-
ղաւ՝ և բնակուեց մեր մէջ. և
նորա փառքը տեսանք՝ ինչպէս
Հօրից եղած միածնի փառք՝ շնորհ-
քով և ճշմարտութիւնով լիքը։
Յովհաննէսը վկայում է նորա 15
համար. և աղաղակեց և ասեց,
Սա էր, որի համար ասում էի,
թէ Ինձանից յետոյ եկողը, ինձա-
նից առաջ եղաւ. որովհետև ին-
ձանից առաջ էր։ Եւ նորա լիու- 16
թիւնիցը մենք ամենքս առանք
շնորհք շնորհքի տեղ։ Որովհետև 17
օրէնքը Մովսէսի ձեռովը տրուե-
ցաւ. շնորհքը և ճշմարտութիւ-
նը Յիսուս Քրիստոսի ձեռովն ե-
ղաւ։ Աստուծուն ոչ ով երբէք 18
չէ տեսել. Բայց միածին Որդին,
Հօր ծոցումը լինողը, նա պատ-
մեց։
Եւ այս է Յովհաննէսի վկայու- 19
թիւնը, երբոր Հրէաներն Երու-
սաղէմից քահանաներ և Ղևտա-
ցիներ ուղարկեցին նորա մօտ,
որ հարցնեն նորան, թէ Դու ո՞վ
ես։ Եւ նա խոստովանեց և չ'ու- 20
րացաւ. և խոստովանեց. թէ Ես
չեմ Քրիստոսը։ Եւ նորան հար- 21
ցրին. Ապա ո՞վ, Եղիա՞ն ես. և
նա ասեց. Չեմ. Մարգարէ՞ն ես
դու. և նա պատասխանեց, Ոչ։
Արդ ասեցին նորան. Ապա ո՞վ 22
ես, որ պատասխան տանք մեզ
ուղարկողներին. ի՞նչ ես ասում
քեզ համար։ Ասեց. Ես եմ ա- 23
նապատումը կանչողի ձայնը, թէ
Ուղղեցէք Տիրոջ ճանապարհը,
ինչպէս Եսայիա մարգարէն ասեց։
Եւ ուղարկուածները Փարիսեցի- 24

վում էին մեզանում, երբոր ճա-
նապարհին մեզ հետ խօսում էր,
և ինչպէս գրքերը բաց էր անում
մեզ համար։
33 Եւ նոյն ժամին վերկացան՝
ետ դառան Երուսաղէմ, և այն
տասնևմէկին ժողովուած գտան,
34 և նորանց հետ լինողներին. Որ
ասում էին թէ Արդարև Տէրը
յարութիւն է առել, և երևա-
35 ցել Սիմօնին։ Եւ նորանք պատ-
մում էին այն որ ճանապարհին
եղաւ, և թէ ինչպէս իրան ճա-
նաչեցրեց իրանց՝ հաց կտրելու
ժամանակին։
36 Եւ նորանք այս խօսելիս, Յի-
սուսն ինքը կանգնեց նորանց մի-
ջումը և նորանց ասեց. Խաղա-
37 ղութիւն ձեզ։ Եւ նորանք զար-
հուրելով վախեցած, համարում
38 էին, թէ ոգի են տեսնում։ Եւ
նորանց ասեց. Ի՞նչու էք շփոթ-
ուած. ի՞նչու համար խորհուրդ-
ներ ենվերկենում ձեր սրտերումը։
39 Տեսէք իմ ձեռքերը և իմ ոտնե-
րը, որ ես ինքս եմ. շօշափեցէք
ինձ և տեսէք. որովհետև ոգին
մարմին և ոսկերք չ՛ունի, ինչպէս
40 ինձ էք տեսնում որ ունիմ։ Եւ
սա որ ասեց, ձեռքերն ու ոտնե-
41 րը ցոյց տուաւ նորանց։ Եւ քանի
որ դեռ չէին հաւատում ուրա-
խութիւնից և զարմացած էին,
ասեց նորանց. Կերակուր ունի՞ք
42 այս տեղ։ Եւ նորանք խորոված
ձկան կտոր տուին նորան՝ և մեղ-
բախորիսխ։ Եւ առաւ կերաւ նո- 43
րանց առաջին։ Եւ ասեց նորանց. 44
Այս այն բաներն են՝ որ ձեզ հետ
խօսեցի, քանի որ ես ձեզ հետ
էի, թէ պէտք է կատարուի Մով-
սէսի օրէնքումը և մարգարէնե-
րումը և սաղմոսներումը բոլոր ինձ
համար գրուածները։ Այն ժա- 45
մանակ նորանց միտքը բացաւ, որ
գրքերը իմանան։ Եւ նորանց ա- 46
սեց թէ Այսպէս է գրուած, և
այսպէս պէտք էր Քրիստոսին չար-
չարուիլ և երրորդ օրը մեռել-
ների միջից յարութիւն առնել.
Եւ նորա անունովը ապաշխարու- 47
թիւն և մեղքերի թողութիւն
քարոզուիլ բոլոր ազգերի մէջ
Երուսաղէմից սկսած։ Եւ դուք 48
այս բաների համար վկաներ էք։
Եւ ահա ես իմ Հօր խոստմունքը 49
կ՛ուղարկեմ ձեզ վերայ. դուք
էլ նստեցէք Երուսաղէմ քաղա-
քումը, մինչև վերևիցը զօրու-
թիւն հագնիք։
Եւ նորանց հանեց մինչև Բե- 50
թանիա. և իր ձեռքերը բարձրա-
ցրեց և օրհնեց նորանց։ Եւ եղաւ 51
որ նա նորանց օրհնելիս, ջոկուեց
նորանցից, և վերանում էր եր-
կինքը։ Եւ նորանք երկրպագեցին 52
նորան, և մեծ ուրախութիւնով
ետ դառան Երուսաղէմ։ Եւ ա- 53
մեն ժամանակ տաճարումն էին.
գովում և օրհնում էին Աստու-
ծուն։ Ամէն։

---

25 ներիցն էին։ Եւ նորան հարցրին
և ասեցին. Ապա ի՞նչու ես մկրտ-
ում, եթէ դու ոչ Քրիստոսն
ես և ոչ Եղիան, և ոչ մարգա-
26 րէն։ Յովհաննէսը պատասխանեց
նորանց և ասեց. Ես ջրով եմ
մկրտում. բայց ձեր միջումը կայ
27 Մէկը, որին դուք չ՛գիտէք։ Նա է
ինձանից յետոյ եկողը. որ ինձա-
նից առաջ եղաւ. որ ես արժա-
նի չեմ, նորա կօշիկների կապը
28 արձակելու։ Սա Բեթաբարայումն
եղաւ Յորդանանի այն կողմին
ուր որ Յովհաննէսը մկրտում էր։
29 Հետևեալ օրը Յովհաննէսը
տեսնում է Յիսուսին իրան մօտ
գալիս, և ասում է. Ահա Ա-
ստուծոյ Գառը, որ վեր է առ-
30 նում աշխարհքի մեղքը։ Սա է,
որի համար ես ասում էի, Բէ
ինձանից յետոյ մի մարդ է գա-
լիս, որ ինձանից առաջ եղաւ,
որովհետև ինձանից առաջ էր։
31 Եւ ես նորան չ՛գիտէի. այլ որ
նա յայտնի լինի Իսրայէլին, նո-
րա համար ես եկայ ջրով մկրտ-
32 ելու։ Եւ վկայեց Յովհաննէսը
և ասեց թէ Տեսնում էի Հոգին,
որ աղաւնու պէս վայր էր գալիս
երկնքիցը և նորա վերայ մնում։
33 Եւ ես չ՛գիտէի նորան. բայց նա
որ ինձ ուղարկեց ջրով մկրտե-
լու, նա ասեց ինձ թէ Որի վե-
րայ որ տեսնես Հոգին վայր է
գալիս և նորա վերայ մնում,
նա է Սուրբ Հոգով մկրտողը։
34 Եւ ես տեսայ և վկայեցի թէ Սա
է Աստուծոյ Որդին։
35 Հետևեալ օրը դարձեալ կանգ-
նած էր Յովհաննէսը, և նորա
36 աշակերտներիցը երկուսը։ Եւ
մտիկ տուաւ Յիսուսին, որ ման
էր գալիս, և ասեց. Ահա Ա-
37 ստուծոյ Գառը։ Եւ այն երկու
աշակերտները լսեցին նորանից՝ որ
խօսում էր, և գնացին Յիսուսի
38 ետևից։ Յիսուսն էլ դարձաւ նո-
րանց տեսաւ, որ գնում էին իր
ետևից, և ասեց նորանց. Ի՞նչ
էք ուզում. նորանք ասեցին նո-
րան. Ռաբբի, (որ թարգմանուած
ասվում է՝ վարդապետ.) ո՞րտեղ
39 ես կենում։ Նորանց ասեց. Եկէք
և տեսէք. եկան և տեսան Բէ
որտեղ էր կենում. և այն օրը
նորա մօտ մնացին. ժամն էլ տասի
մօտ էր։ Անդրէասը՝ Սիմօն Պետ- 40
րոսի եղբայրն՝ այն երկուսից մէկն
էր, որ Յովհաննէսիցը լսեցին և
նորա ետևից գնացին։ Սա առաջ 41
գտնում է իր Սիմօն եղբօրն և
նորան ասում. Մեսիան գտել
ենք, (որ թարգմանվում է Քրիս-
տոս)։ Եւ բերաւ նորան Յիսուսի 42
մօտ. Յիսուսն էլ նորան մտիկ
տուաւ և ասեց. Դու Սիմօնն ես՝
Յովնանի որդին. դու պիտի կոչ-
ուիս Կեփաս, (որ թարգմանվում
է Պետրոս)։
Հետևեալ օրը կամեցաւ Յի- 43
սուսը դուրս գնալ Գալիլեա. և
գտնում է Փիլիպպոսին, և ասում
նորան. Իմ ետևից եկ։ Փիլիպ- 44
պոսն էլ Բեթսայիդայիցն էր,
Անդրէասի և Պետրոսի քաղա-
քիցը։ Փիլիպպոսն էլ գտնում է 45
Նաթանայէլին և ասում նորան.
Նա որի մասին գրեց Մովսէսն օ-
րէնքումը, և մարգարէներն էլ,
գտանք՝ Յովսէփի որդի Յիսուսին՝
Նազարէթիցը։ Եւ Նաթանայէլը 46
նորան ասեց. Կարելի՞ որ Նազա-
րէթիցը մի բարի բան լինի. Փի-
լիպպոսը նորան ասեց. Եկ և տես։
Յիսուսը տեսաւ Նաթանայէլին 47
իրան մօտ գալիս՝ և ասեց նորա
համար. Ահա ճիշդ Իսրայէլացի.
որի մէջ նենգութիւն չ՛կայ։ Նա- 48
թանայէլն ասում է նորան. Ի՞նչ
տեղից ես ճանաչում ինձ. Յի-
սուսը պատասխանեց և ասեց նո-
րան. Փիլիպպոսը դեռ քեզ չը
կանչած քեզ տեսայ որ թզե-
նու տակն էիր. Նաթանայէլը 49
պատասխանեց և ասեց. Ռաբ-
բի, դու Աստուծոյ Որդին ես.
Դու ես Իսրայէլի թագաւորը։
Յիսուսը պատասխանեց և ասեց 50
նորան. Որովհետև ես ասեցի
քեզ թէ թզենու տակ տեսայ
քեզ, հաւատո՞ւմ ես. սորան-
ցից էլ աւելի մեծ բաներ կը
տեսնես։ Եւ նորան ասեց. Ճշմա- 51
րիտ ճշմարիտ ասում եմ ձեզ,
այսուհետև կ՛տեսնէք երկինքը
բացուած, և Աստուծոյ հրեշ-

տակներին մարդի Որդու վերայ
ելնելիս և իջնելիս ։

ԳԼ. Բ

1 Եւ երրորդ օրը հարսանիք էր
Գալիլեայի Կանայումը, և Յիսու-
2 սի մայրն այնտեղ էր ։ Յիսուսն
էլ կանչուեցաւ այն հարսանիքը
3 և նորա աշակերտներն էլ ։ Եւ
երբոր գինին պակասեց, Յիսուսի
մայրն ասեց նորան. Գինի չ'ու-
4 նին ։ Յիսուսը նորան ասեց, Քեզ
ի՞նչ բան կայ ինձ հետ, կին.
իմ ժամանակը դեռ չէ հասել ։
5 Նորա մայրն ասեց սպասաւորնե-
րին. Ինչ որ ասէ ձեզ, արէք ։
6 Այնտեղ վեց քարէ կարասներ
կային Հրէաների մաքրուելու հա-
մար, որոնցից ամեն մէկը երկու
կամ երեք մար էին տանում ։
7 Յիսուսը նորանց ասեց. Այդ կա-
րասները ջրով լցրէք. և նորանց
8 լցրին մինչև վերը ։ Եւ նորանց
ասեց. Հիմա առէք և տարէք սե-
ղանապետին. և նորանք տարան ։
9 Եւ երբոր վերակացուն այն գինի
դառած ջուրը ճաշակեց, (և չ'գի-
տէր թէ ինչ տեղից է. բայց սպա-
սաւորները գիտէին՝ որ ջուրը
լցրել էին) սեղանապետը փեսա-
10 յին կանչեց, Եւ նորան ասեց.
Ամեն մարդ առաջ լաւ գինին է
տալիս. և երբոր արբենան, այն
ժամանակ վատը. դու լաւ գինին
11 մինչև հիմա պահեցիր ։ Նշանների
սկիզբը Յիսուսն այս արաւ Գա-
լիլեայի Կանայումը. և իր փառ-
քը յայտնեց. և նորա աշակերտ-
ները հաւատացին նորան ։
12 Սորանից յետոյ Յիսուսն իջաւ
Կափառնայում, ինքն և իր մայրը
և իր եղբայրները և իր աշակերտ-
ները. և շատ օրեր չ'մնացին այն-
տեղ ։
13 Եւ Հրէաների զատիկը մօտ էր,
և Յիսուսը ելաւ Երուսաղէմ ։
14 Եւ տաճարումը գտաւ եզներ և
ոչխարներ և աղաւնիներ ծախող-
ներին, և սեղանաւորներին նըս-
15 տած. Եւ չուանից խարազան շի-
նեց, և ամենին տաճարիցը դուրս
հանեց՝ ոչխարներն էլ և եզներն
էլ, և սեղանաւորների պղինձ-
ները ցրուեց և տախտակները
կործանեց ։ Եւ աղաւնի ծախող- 16
ներին ասեց. Դորանց վեր առէք
այստեղից. իմ Հօր տունը մի շինէք
առուտուրի տուն ։ Եւ նորա ա- 17
շակերտները յիշեցին, թէ գրուած
է, Քո տան նախանձը կերաւ
ինձ ։
Արդ Հրէաները պատասխանե- 18
ցին և ասեցին նորան. Ի՞նչ նշան
ես ցոյց տալիս մեզ, որ անում
ես այդ ։ Յիսուսը պատասխանեց 19
և ասեց նորանց. Քանդեցէք այդ
տաճարը, և երեք օրում կ'կանգ- 20
նեցնեմ նորան ։ Հրէաներն էլ ա-
սեցին. Այս տաճարը քառա-
սունևվեց տարում շինուեցաւ,
և դու երեք օրումը կ'կանգնե- 21
ցնե՞ս դորան ։ Բայց նա իր մարմնի 22
տաճարի համար էր ասում ։ Արդ
երբոր նա մեռելների միջից յա-
րութիւն առաւ, նորա աշակերտ-
ները յիշեցին, թէ նա ասեց նո-
րանց այս բանը. և հաւատացին
գրքին՝ և այն խօսքին որ ասեց
Յիսուսը ։
Եւ երբոր Երուսաղէմումն էր 23
զատկի տօնին, շատ մարդիկ հա-
ւատացին նորա անունին. տես-
նելով նորա այն նշանները, որ
անում էր ։ Բայց Յիսուս ինքն իր 24
անձը չէր հաւատում նորանց.
որովհետև ինքն ամենը գիտէր ։
Եւ որովհետև պէտք չէր որ մէկը 25
վկայէր մարդի համար. որովհե-
տև ինքը գիտէր թէ ինչ կար մար-
դումը ։

ԳԼ. Գ

Եւ Փարիսեցիներիցը մի մարդ 1
կար՝ անունը Նիկոդեմոս՝ Հրէա- 2
ների իշխան ։ Սա գիշերը Յիսուսի
մօտ եկաւ և ասեց նորան. Ռաբ-
բի, գիտենք որ Աստուածանից
վարդապետ ես եկել. որովհետև
ոչ ով չէ կարող այդ նշաններն
անել՝ որ դու ես անում, եթէ 3
Աստուած նորա հետ չ'լինի ։ Յի-
սուսը պատասխանեց և ասեց նո-
րան. Ճշմարիտ ճշմարիտ ասում
եմ քեզ. Եթէ մէկը վերստին

չ'ծնուի՝ կարող չէ Աստուծոյ ար-
4 քայութիւնը տեսնել ։ Նիկոդե-
մոսը նորան ասեց. Մարդ ի՞նչպէս
կարող է ծնուիլ՝ որ ծեր է. մի՞-
թէ կարող է երկրորդ անգամ
իր մօր արգանդը մտնել և ծըն-
5 ուիլ ։ Յիսուսը պատասխանեց.
Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ
քեզ. եթէ մէկը ջրից և Հոգուց
չ'ծնուի, նա կարող չէ Աստուծոյ
6 արքայութիւնը մտնել ։ Մարմնի-
ցը ծնուածը մարմին է. և Հո-
7 գուցը ծնուածը հոգի է ։ Մի
զարմանար՝ որ ասեցի քեզ թէ
Պէտք է ձեզ՝ վերստին ծնուիլ ։
8 Քամին որտեղ ուզում է՝ փչում
է, և նորա ձայնը լսում ես. բայց
չ'գիտես թէ ո՞ր տեղից է գալիս
և ո՞ր տեղ է գնում. այսպէս է
9 ամեն Հոգուցը ծնուածը ։ Նիկո-
դեմոսը պատասխանեց և ասեց
նորան. Այդ ի՞նչպէս կարող է
10 լինիլ ։ Յիսուսը պատասխանեց և
ասեց նորան. Դու ես Իսրայէլի
վարդապետը, և այս չ'գիտե՞ս ։
11 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ
քեզ, թէ ինչ որ գիտենք՝ խօ-
սում ենք, և ինչ որ տեսանք՝
վկայում ենք. և մեր վկայու-
12 թիւնը չէք ընդունում ։ Եթէ
երկրաւոր բաներն ասեցի ձեզ,
և չէք հաւատում, ապա ի՞նչ-
պէս կ'հաւատաք, եթէ երկնա-
13 ւոր բաներն ասեմ ։ Եւ ոչ ով
վեր չ'ելաւ երկինքը, եթէ ոչ
երկնքից իջնողը՝ մարդի Որդին՝ նա
14 որ երկնքումն է ։ Եւ ինչպէս Մով-
սէսն օձը բարձրացրեց անապա-
տումը, այնպէս պէտք է մարդի
15 Որդուն բարձրացուիլ. Որ ամեն
նորան հաւատացողը չ'կորչի, այլ
յաւիտենական կեանքն ունենայ ։
16 Որովհետև Աստուած այնպէս սի-
րեց աշխարհքը որ իր միածին Որ-
դին տուաւ. որ ամեն նորան հա-
ւատացողը չ'կորչի, այլ յաւի-
17 տենական կեանքն ունենայ ։ Որով-
հետև Աստուած իր Որդին չ'ու-
ղարկեց աշխարհքը, որ աշխարհ-
քին դատէ, այլ որ աշխարհքը
18 նորանով փրկուի ։ Նորան հաւա-
տացողը չի դատապարտուիլ, իսկ
չ'հաւատացողն արդէն դատա-
պարտուած է. որովհետև չ'հա-
ւատաց Աստուծոյ միածին Որդու
անունին ։ Եւ սա է դատաստա- 19
նը, որ լոյսն եկաւ աշխարհքը, և
մարդիկ խաւարն աւելի սիրեցին
քան թէ լոյսը, որովհետև նո-
րանց գործերը չար էին ։ Որովհե- 20
տև ամեն չար գործողը ատում
է լոյսին, և չէ գալիս դէպի լոյ-
սը, որ նորա գործերը չ'յանդի-
մանուին ։ Իսկ ճշմարտութիւն 21
գործողը գալիս է դէպի լոյսը,
որ նորա գործերը յայտնուին, որ
Աստուծով գործուեցան ։
Սորանից յետոյ եկաւ Յիսուսը 22
և նորա աշակերտները Հրէաստա-
նի երկիրը. և այնտեղ նորանց
հետ մնում՝ և մկրտում էր ։ Եւ 23
Յովհաննէսն էլ Այենոնումն էր
մկրտում՝ Սաղեմի մօտ. որովհե-
տև այնտեղ շատ ջուր կար. և
գալիս էին և մկրտվում էին ։ Ո- 24
րովհետև Յովհաննէսը դեռ բան-
տի մէջ չէր գցուած ։
Արդ Յովհաննէսի աշակերտ- 25
ները Հրէաների հետ վէճ ունե-
ցան մաքրութեան համար ։ Եւ 26
Յովհաննէսի մօտ եկան և ասե-
ցին նորան. Ռաբբի, նա որ Յոր-
դանանի այն կողմումն էր քեզ
հետ, որի համար դու վկայեցիր,
ահա նա մկրտում է, և ամենքը
նորա մօտ են գալիս ։ Յովհաննէ- 27
սը պատասխանեց և ասեց. Մարդ
չէ կարող ոչինչ վեր առնել, ե-
թէ երկնքիցը տրուած չ'լինի նո-
րան ։ Դուք ինքներդ վկայում էք 28
ինձ համար, որ ասեցի ձեզ, թէ
Ես Քրիստոսը չեմ, այլ թէ նո-
րա առաջից ուղարկուած եմ ։
Հարսն ունեցողն է փեսայ. բայց 29
փեսայի բարեկամը, որ կանգնած
է և լսում է նորան, ուրախու-
թիւնով ուրախանում է փեսայի
ձայնի համար. արդ իմ այս ու-
րախութիւնը լցուած է ։ Նորան 30
պէտք է աճել, և ինձ փոքրա-
նալ ։ Վերևից եկողն ամենից վեր 31
է. երկրիցը լինողը երկրիցն է և
երկրիցն է խօսում. երկնքից ե-
կողն ամենից վեր է. Ինչ որ տե- 32
սաւ և լսեց, նա է վկայում. և
նորա վկայութիւնը ոչ ով չէ ըն-

33 դունում։ Նորա վկայութիւնն
ընդունողը կնքեց, թէ Աստուած
34 ճշմարիտ է։ Որովհետև նա որին
Աստուած ուղարկեց, Աստուծոյ
բանն է խօսում. որովհետև Աստ-
ուած Հոգին չափով չէ տալիս։
35 Հայրը սիրում է Որդուն, և ա-
մեն բան նորա ձեռն է տուել։
36 Որդուն հաւատացողը յաւիտե-
նական կեանք ունի. իսկ Որդուն
չ'հնազանդողը կեանքը չի տես-
նիլ, այլ Աստուծոյ բարկութիւ-
նը մնում է նորա վերայ։

ԳԼ. Դ.

1 Եւ երբոր Տէրն իմացաւ, որ Փա-
րիսեցիները լսեցին, թէ Յիսուսը
աւելի աշակերտներ է անում և
մկրտում քան թէ Յովհաննէսը,
2 (Թէպէտև Յիսուսը ինքը չէր
մկրտում՝ այլ նորա աշակերտ-
3 ները.) Հրէաստանի երկիրը թողեց
և դարձեալ եկաւ Գալիլեա։
4 Եւ պէտք էր որ Սամարիայի մի-
5 ջովն անցնէր։ Արդ նա Սամա-
րիայի մի քաղաքն եկաւ, անու-
նը Սիւքար, այն տեղի մօտ, որ
Յակոբը տուաւ իր որդի Յովսէ-
6 փին։ Եւ Յակոբի մի աղբիւրը
կար այնտեղ. և Յիսուսը ճանա-
պարհիցը վաստակած այն աղ-
բիւրի վերայ նստեց. և ժամը
վեցին դէմ էր։
7 Արդ Սամարիայից մի կին ե-
կաւ, որ ջուր հանէ. Յիսուսը նո-
րան ասեց. Ինձ ջուր տուր խմեմ.
8 Որովհետև նորա աշակերտները
քաղաքն էին դնացել, որ կերա-
9 կուր առնեն։ Սամարացի կինն էլ
ասեց նորան. Դու որ Հրէայ ես,
ի՞նչպէս ես ինձանից ջուր ու-
զում խմել, որ մի Սամարացի
կին եմ. որովհետև Հրէաները
չեն խառնվում Սամարացիների
10 հետ։ Յիսուսը պատասխանեց և
ասեց նորան, Եթէ Աստուծոյ
պարգևը գիտենայիր, և թէ ով
է նա, որ քեզ ասում է, թէ
Տուր ինձ խմել, ապա դու նո-
րանից կ'խնդրէիր, և նա կենդա-
11 նի ջուր կ'տար քեզ։ Կինը նո-
րան ասեց. Տէր, դու դոյլ էլ
չ'ունիս, և հորը խոր է. ապա
ո՞րտեղից ունիս կենդանի ջուրը։
Մի՞թէ դու աւելի մեծ ես քան 12
մեր հայր Յակոբը, որ այս հորը
տուաւ մեզ. և ինքը սորանից
խմեց, և նորա որդիքը և նորա
անասունները։ Յիսուսը պատաս- 13
խանեց և ասեց նորան. Ամեն այդ
ջրիցը խմողը դարձեալ կ'ծարա-
ւի. բայց ով որ խմէ այն ջրիցը
որ ես կ'տամ նորան, նա յա-
ւիտեան չի ծարաւիլ։ Այլ այն 14
ջուրը, որ ես կ'տամ նորան, ջրի
աղբիւր կ'լինի նորանում, որ յա-
ւիտենական կեանքի համար կը
բղխէ։ Կինը նորան ասեց. Տէր, 15
տուր ինձ այն ջուրը, որ չ'ծա-
րաւիմ, և չ'գամ այստեղ ջուր
հանելու։ Յիսուսը նորան ասեց. 16
Գնա կանչիր քո մարդին, և եկ
այստեղ։ Կինը պատասխանեց և 17
ասեց. Ես մարդ չ'ունիմ. Յիսուսը
նորան ասեց. Լաւ ասեցիր թէ
Մարդ չ'ունիմ. Որովհետև դու 18
հինգ մարդ ես ունեցել, և նա
որ հիմա ունիս, քո մարդը չէ.
դա ճշմարիտ ասեցիր։ Կինը նո- 19
րան ասեց. Տէր, տեսնում եմ
որ դու մարգարէ ես։ Մեր հայ- 20
րերը այս սարումը երկրպագու-
թիւն արին. և դուք ասում էք,
թէ Երուսաղէմումն է այն տեղն,
ուր պէտք է երկրպագութիւն
անել։ Յիսուսը նորան ասեց. Կին, 21
հաւատա ինձ, որ ժամանակ կը
գայ, որ այն ժամանակ ոչ այս
սարումը կ'երկրպագէք Հօրը, և
ոչ էլ Երուսաղէմումը։ Դուք 22
երկրպագում էք նորան, որ դուք
չ'գիտէք. մենք երկրպագում ենք
նորան, որ գիտենք. որովհետև
փրկութիւնը Հրէաներիցն է։ Բայց 23
ժամանակ կ'գայ, և հիմա է, որ
ճշմարիտ երկրպագողները հոգով
և ճշմարտութիւնով կ'երկրպա-
գեն Հօրը, որովհետև Հայրն էլ
այսպէս է ուզում իր երկրպա-
գողներին։ Աստուած Հոգի է, և 24
նորան երկրպագողները պէտք է
հոգով և ճշմարտութիւնով եր-
կրպագեն։ Կինն ասեց նորան. 25
Գիտեմ, որ Մեսիան պիտի գայ
(որ Քրիստոս է կոչվում). երբոր

նա կ'գայ, ամեն բան կ'պատմէ
26 մեզ։ Յիսուսը նորան ասեց. Ես
եմ, որ քեզ հետ խօսում եմ։
27 Եւ սորա վերայ եկան նորա ա-
շակերտները, և զարմանում էին,
որ կնկայ հետ խօսում էր. բայց
ոչ ոք չ'ասեց, Ի՞նչ ես ուզում,
կամ ի՞նչ ես խօսում դորա հետ։
28 Կինն էլ իր կուժը թողեց, և
դնաց քաղաք, և մարդկանց ա-
29 սեց. Եկէք տեսէք մի մարդ, որ
ինձ ասեց բոլորը ինչ որ գործել
եմ. արդեօք նա՞ է Քրիստոսը։
30 Եւ դուրս ելան քաղաքիցը, և
նորա մօտ էին գալիս։
31 Եւ այն միջոցին աշակերտները
խնդրում էին նորան և ասում.
32 Ռաբբի, կեր։ Նա էլ ասեց նո-
րանց. Ես կերակուր ունիմ ու-
33 տելու, որ դուք չ'գիտէք։ Աշա-
կերտներն էլ իրար ասում էին.
Արդեօ՞ք մի մարդ դորան բան
34 բերաւ ուտելու։ Յիսուսն ասեց
նորանց. Իմ կերակուրը նա է, որ
ինձ ուղարկողի կամքն անեմ, և
35 նորա գործը կատարեմ։ Մի՞թէ
դուք չէք ասում, թէ Դեռ չորս
ամիս կայ, և հունձքը կ'գայ.
ահա ես ասում եմ ձեզ. Բար-
ձրացրէք ձեր աչքերը, և տեսէք
արտերը, որ սպիտակացել են և
36 արդէն հնձին հասել։ Եւ հնձողը
վարձք է առնում, և յաւիտե-
նական կեանքի մէջ պտուղ ժո-
ղովում. որ սերմողը և հնձողը
37 իրար հետ ուրախանան։ Որով-
հետև սորանում ճշմարիտ է այն
խօսքը, թէ Ուրիշ է սերմողը, և
38 ուրիշ է հնձողը։ Ես ուղարկեցի
ձեզ հնձել այն, որ դուք չ'աշ-
խատեցիք. ուրիշներն աշխատե-
ցին, և դուք նորանց աշխատան-
քի մէջը մտաք։
39 Եւ Սամարացիների այն քա-
ղաքիցը շատերը հաւատացին նո-
րան այն կնկայ խօսքի համար, որ
վկայում էր, թէ Ասեց ինձ բո-
40 լորը ինչ որ գործել էի։ Արդ
երբոր Սամարացիները նորա մօտ
եկան, նորան աղաչեցին, որ ի-
րանց մօտ մնայ. և երկու օր մնաց
41 այնտեղ։ Եւ էլ շատերը հաւա-
տացին նորան՝ նորա խօսքի հա-
մար։ Եւ այն կնկան էլ ասում 42
էին, թէ Այլ ևս քո խօսքերի
պատճառով չենք հաւատում.
որովհետև մենք ինքներս լսեցինք,
և գիտենք որ ճշմարտապէս սա
է աշխարհի Փրկիչը՝ Քրիստոսը։
Եւ երկու օրից յետոյ այնտե- 43
ղից դուրս եկաւ դնաց Գալիլեա։
Որովհետև Յիսուսն ինքը վկայեց, 44
թէ Մարգարէն իր հայրենիքումը
պատիւ չ'ունի։ Բայց երբոր Գա- 45
լիլեա եկաւ, Գալիլեացիներն ը-
դունեցին նորան. տեսնելով այն
բոլորն, որ տօնին արաւ Երուսա-
ղէմումը. որովհետև նորանք էլ
եկել էին այն տօնին։
Եւ Յիսուսը դարձեալ եկաւ 46
Գալիլեայի Կանան, ուր ջուրը
գինի արաւ. մի *ազնուական
մարդ կար, որի որդին Կափառ-
նայումի մէջ հիւանդ էր։ Նա 47
լսելով թէ Յիսուսը Հրէաստա-
նիցն եկել է Գալիլեա, եկաւ նո-
րա մօտ և աղաչում էր, որ իջնէ
և իր որդուն բժշկէ. որովհետև
մեռնելու մօտ էր։ Յիսուսն էլ 48
նորան ասեց, Եթէ նշաններ և
հրաշքներ չ'տեսնէք՝ չէք հաւա-
տալ։ Ազնուականը նորան ասեց. 49
Տէր, իջիր դեռ քանի որ չէ մե-
ռել երեխաս։ Յիսուսը նորան 50
ասեց. Գնա, քո որդին կենդանի
է. և մարդը հաւատաց այն խօս-
քին՝ որ Յիսուսը նորան ասեց, և
գնաց։ Եւ դեռ որ իջնում էր, 51
նորա ծառաները նորան դիմաւո-
րեցին և աւետիս տուին և ասե-
ցին թէ Քո տղան կենդանի է։
Նա էլ նորանց հարցնում էր 52
այն ժամի համար, որ նորանում
սկսեց լաւանալ. և նորան ասե-
ցին թէ Երէկ ժամը եօթին տեն-
դը թողեց նորան։ Այն ժամա- 53
նակ հայրն իմացաւ, թէ նոյն
ժամին է, որ Յիսուսը նորան ա-
սեց թէ Քո որդին կենդանի է.
և հաւատաց ինքը և նորա բոլոր
տունը։ Սա դարձեալ երկրորդ 54
նշանն արաւ Յիսուսը, երբոր Հրէ-
աստանիցն եկաւ Գալիլեա։

---

*Կամ՝ թագաւորի պաշտօնեայ

Գլ. Ե

1 Սորանից յետոյ ուրեմն էր Հրեաների տօնը, եւ Յիսուս վեր եկաւ Երուսաղէմ։
2 Իսկ Երուսաղէմում *Ոչխարաց դռան մօտ մի աւազան կայ, որ Եբրայեցերէն Բեթհեզդա է կոչւում, որ հինգ սրահ
3 ունի։ Նորանցում խիստ շատ հիւանդներ կային՝ պառկած, կոյրեր, կաղեր, չորացածներ, [որ ջրի շարժուելուն էին սպասում, Որովհետեւ Տիրոջ հրեշտակը ժամանակ ժամանակ վայր էր գալիս այն աւազանը եւ ջուրը շարժում. եւ ջուրի շարժուելուց
4 յետոյ նորա մէջ առաջ մտնողը բժշկւում էր՝ ինչ հիւանդութեան էլ որ ունենար։] Եւ այնտեղ մի մարդ կար, որ երեսուն
6 եւ ութ տարի էր հիւանդութեան մէջ։ Երբոր Յիսուս նորան պառկած տեսաւ, եւ գիտաց, թէ արդէն շատ ժամանակից է, նորան ասեց. Կամենա՞ս առողջ լինել։
7 Նել։ Հիւանդը պատասխանեց նորան. Տէր, մարդ չ'ունիմ, որ երբոր ջուրը շարժւում է՝ ինձ աւազանի մէջ դնէ. եւ մինչ ես գալիս եմ, ուրիշն ինձանից
8 առաջ իջնում է մէջը։ Յիսուս նորան ասեց. Վեր կաց, մահիճդ
9 առ եւ մտի՛ երկ։ Եւ մարդն իսկոյն առողջացաւ, եւ վեր առաւ իր մահիճը եւ մտնում էր գալիս. եւ օրը
10 շաբաթ էր։ Հրեաներն էլ ասեցին բժշկուածին. Շաբաթ է, արժան չէ քեզ, որ մահիճդ վեր
11 առնես։ Նա պատասխանեց նորանց. Նա՛ որ ինձ բժշկեց, նա ասեց ինձ. Մահիճդ առ եւ մտի՛
12 երկ։ Ասդ հարցրին նորան եւ ասեցին. Ո՞վ է այն մարդը, որ քեզ ասեց. Մահիճդ առ եւ մտի՛ երկ։
13 Բայց բժշկուածը չգիտէր թէ ո՛վ է. որովհետեւ Յիսուսը այն տեղի ամբոխի պատճառով խոյս
14 տուաւ։ Յետոյ Յիսուսը նորան գտաւ տաճարում՝ եւ նորան ասեց. Ահա առողջացար, այլ եւս չմեղանչես, որ եւ աւելի
15 չար բան չլինի քեզ։ Մարդը գնաց եւ Հրեաներին պատմեց, թէ Յիսուսն է, որ նորան առողջացրել է։
16 Եւ նորա համար Հրեաները Յիսուսին հալածում էին, եւ սպանել էին նորան ուզում, որ շաբաթ օրն անում էր այն բանը։
17 Եւ Յիսուսը պատասխանեց նորանց. Իմ Հայրը մինչեւ հիմա գործում է, եւ ես էլ գործում եմ։
18 Նորա համար Հրեաներն էլ աւելի ուզում էին սպանել նորան, որ ոչ թէ միայն շաբաթ օրն էր քանդում, այլ Աստուածն էլ իրան Հայր էր ասում, իր անձն Աստուծուն հաւասար անելով։
19 Յիսուսը պատասխանեց եւ ասեց նորանց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ Ես Որդին իրանից կարող չէ ոչինչ անել, թէ որ չ'առնէ Հօրն անելիս. որովհետեւ
20 ինչ որ նա անում է, հէնց Որդին էլ այն բանը նորա նման է անում։ Որովհետեւ Հայրը սիրում է Որդուն, եւ ամեն բան ցոյց է տալիս նորան, որ ինքն անում է,
21 եւ սորանցից էլ աւելի մեծ մեծ գործեր ցոյց կ'տայ նորան, որ դուք զարմանաք։ Որովհետեւ ինչպէս որ Հայրը մեռեալներին յարուցանում է եւ կենդանի անում, այնպէս էլ Որդին, որոնց որ կամենում է, կենդանի է անում։ Որովհետեւ Հայրը ոչ մէկին
22 էլ չէ դատում, այլ ամեն դատաստանը տուաւ Որդուն. Որ
23 ամենքը պատուեն Որդուն, ինչպէս որ պատուում են Հօրը. Որդուն չ'պատուողը՝ Հօրն էլ չէ պատուում, որ ուղարկեց նորան։
24 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Թէ Իմ խօսքը լսողը, եւ ինձ ուղարկողին հաւատացողը, յաւիտենական կեանք ունի. եւ դատաստան չի մտնիլ, այլ մահիցը փոխուեցաւ դէպի կեանք։
25 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ թէ ժամանակ կ'գայ՝ եւ հիմա է, որ մեռեալներն Աստուծոյ Որդու ձայնը կ'լսեն, և լսողները կ'ապրին։ Որովհետեւ ինչպէս որ
26 Հայրն իր անձում կեանք ունի,

այնպէս էլ Որդուն տուաւ՝ որ
27 իր անձում կեանք ունենայ։ Եւ նորան իշխանութիւն տուաւ, որ դատաստան էլ անէ. որովհետեւ
28 մարդի Որդի է։ Սորա վերայ մի զարմանաք. որովհետեւ ժամանակ կ'գայ, որ ամենքը՝ որ գերեզմանների մէջ են, նորա ձայնը կ'լսեն։
29 Եւ դուրս կ'գան նորանք որ բարի են գործել՝ դէպի կեանքի յարութիւնը, և նորանք որ չար են արել՝ դէպի դատաստանի յարութիւնը։ Ես ինձանից չեմ կարող ոչինչ անել. ինչպէս լսում եմ՝ այնպէս եմ դատում, և իմ դատաստանն արդար է. որովհետեւ իմ կամքը չեմ որոնում, այլ
31 ինձ ուղարկող Հօր կամքը։ Եթէ ես ինձ համար վկայեմ իմ վկայութիւնը ճշմարիտ չէ։
32 Ուրիշն է որ ինձ համար վկայում է. և ես գիտեմ որ ճշմարիտ է այն վկայութիւնը, որ վկայում է ինձ
33 համար։ Դուք ուղարկեցիք Յովհաննէսի մօտ, և նա վկայութիւն
34 տուաւ ճշմարտութեանը։ Իսկ ես ոչ թէ մարդկանցից եմ առնում վկայութիւնը. այլ սա առում եմ, որ դուք ապրիք։
35 Նա այն ճրագն էր՝ որ վառվում էր և լոյս էր տալիս. և դուք կամեցաք մի առ ժամանակ ուրախանալ նորա լոյսով։ Բայց ես աւելի մեծ վկայութիւն ունիմ
36 քան թէ Յովհաննէսը, այսինքն այն գործերն, որ Հայրն ինձ տուաւ, որ կատարեմ նորանց. նոյն այն գործերն՝ որ գործում
37 եմ, ինձ համար վկայում են, թէ Հայրն ուղարկեց ինձ։ Եւ ինձ ուղարկող Հայրն ինքն ինձ համար վկայեց. դուք ոչ նորա
38 ձայնը լսեցիք երբէք, և ոչ նորա կերպարանքը տեսաք. Եւ ոչ նորա խօսքն ունիք բնակուած ձեզանում, որովհետեւ այն որ նա
39 ուղարկեց, դուք չէք հաւատում նորան։ Քննեցէք գրքերը որ դուք կարծում էք թէ նրանցով ունիք յաւիտենական
40 կեանք, և նորանք են որ ինձ համար վկայում են։ Եւ դուք չէք կամենում ինձ մօտ գալ, որ
41 կեանք ունենաք։ Ես մարդկանցից փառք չեմ առնում։ Բայց
42 ճանաչում եմ ձեզ, որ Աստուծոյ սէրը չ'ունիք ձեր անձերում։
43 Ես իմ Հօր անունովն եկայ, և ինձ չէք ընդունում. եթէ ուրիշը գայ իր անունովը, նորան կ'ընդունիք։ Ինչպէս կարող էք դուք
44 հաւատալ, որ իրարից էք փառք առնում, և այն փառքը որ միայն Աստուածանից է, չէք որնում։ Մի կարծէք, թէ ես Հօր
45 մօտ ամբաստանութիւն կ'անեմ ձեզանից. կայ որ ձեզանից ամբաստանութիւն է անում՝ Մովսէսը, որի վերայ դուք ձեր յոյսը դրել էք։ Որովհետեւ եթէ դուք
46 Մովսէսին հաւատայիք, ինձ էլ կ'հաւատայիք. որովհետեւ նա ինձ համար գրեց։ Բայց եթէ նորա
47 գրածներին չէք հաւատում, ինչպէս իմ խօսքերին կ'հաւատաք։

Գլ. Զ

1 Սորանից յետոյ Յիսուսը գնաց Գալիլեայի Տիբերեաս ծովի միւս կողմը։ Եւ շատ ժողովուրդ գնում
2 էր նորա հետեւից. որովհետեւ տեսնում էին նորա նշանները, որ
3 նում էր հիւանդների վերայ։ Յիսուսն էլ վեր եկաւ սարը, և նստեց իր աշակերտների հետ
4 սրանում։ Եւ Հրեաների զատիկի տօնը մօտ էր։
5 Յիսուսն էլ իր աչքերը բարձրացրեց և տեսաւ, որ շատ ժողովուրդ էր գալիս իրան մօտ. ասեց Փիլիպպոսին. Ինչ տեղից հաց առնենք, որ դորանք ուտեն։
6 Բայց այս ասեց՝ նորան փորձելով. որովհետեւ ինքը գիտէր թէ
7 ինչ պիտի անէր։ Փիլիպպոսը պատասխանեց նորան. Երկու հարիւր դահեկանի հաց բաւական չէ դորանց, որ ամեն մէկը մի
8 քիչ առնէ։ Նորա աշակերտներից մէկը, Անդրէասը՝ Սիմոն Պետրոսի եղբայրն՝ ասեց նորան.
9 Այստեղ մէկ տղայ կայ, որ հինգ գարիւ հաց ունի և երկու փոքր ձուկ. բայց սա ինչ է այդչափ մարդկանց համար։
10 Յիսուսն էլ

ասեց. Մարդկանցը նստեցրէք.
և շատ խոտ կար այն տեղը. և
մարդիկը նստեցին համարով իբր
11 հինգ հազար։ Եւ Յիսուսը հա-
ցերն առաւ՝ գոհացաւ և բաժա-
նեց աշակերտներին, և աշակերտ-
ներն էլ նստողներին, նոյնպէս
էլ ձկներիցը որչափ որ կամե-
12 ցան։ Եւ երբոր կշտացան, ասեց
իր աշակերտներին. Ժողովեցէք
աւելացած կտորները՝ որ բան
13 չ'կորչի։ Եւ ժողովեցին, և կտոր-
ներիցը տասնևերկու կողով
լցրին այն հինգ գարիէ հացիցը,
որ ուտողներիցն աւելացաւ։
14 Բայց մարդիկն՝ երբոր տեսան այն
նշանն որ արաւ Յիսուսը, ասում
էին թէ Սա է ճշմարտապէս այն
մարգարէն որ պիտի աշխարհք
15 գար։ Յիսուսն էլ իմանալով թէ
գալու են իրան յափշտակեն, որ
թագաւոր շինեն իրան, դարձեալ
16 մինակ գնաց սարը։ Եւ երբ որ
իրիկուն եղաւ, նորա աշակերտ-
17 ները իջան ծովի եզրը. Եւ նաւը
մտնելով գնացին ծովի այն կող-
մը՝ Կափառնայում. և արդէն
մթնել էր, և Յիսուսը չէր եկել
18 նորանց մօտ։ Եւ ծովն էլ սաս-
տիկ քամու փչելուցը յուզվում
19 էր։ Եւ երբոր թիավարելով
քսանևհինգ կամ երեսուն ասպ-
արէզի չափ առաջ էին գնա-
ցել, տեսան Յիսուսին ծովի վե-
րայ քայլելով գալիս, որ նաւին
20 մօտենում էր և վախեցան։ Նա
էլ ասեց նորանց. Ես եմ մի վա-
21 խենաք։ Եւ կամենում էին նո-
րան ընդունել նաւի մէջ. և նա-
ւը շուտով հասաւ այն երկիրը,
որ գնում էին։
22 Հետևեալ օրն այն ժողովուր-
դը, որ ծովի այն կողմին էր,
տեսնելով որ ուրիշ նաւ չ'կար
այնտեղ մէկիցը ջոկ՝ որ նորա
աշակերտները նորա մէջ մտան.
և որ Յիսուսը իր աշակերտների
հետ նաւը չէր մտած, բայց մի-
այն նորա աշակերտները գնացին։
23 (Բայց Տիբերեայիցը ուրիշ նաւեր
եկան այն տեղի մօտ, ուր հացը
24 կերան Տիրոջ գոհանալովը։) Արդ
երբոր ժողովուրդը տեսաւ, որ
Յիսուսն այնտեղ չէ, և ոչ էլ
նորա աշակերտները, իրանք էլ
նաւերը մտան և եկան Կափառ-
նայում, Յիսուսին որոնելով։ Եւ 25
երբոր նորան ծովի այն կողմին
գտան, նորան ասեցին. Ռաբբի,
ե՞րբ եկար այստեղ։ Յիսուսը պա- 26
տասխանեց նորանց և ասեց. Ճշ-
մարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ.
դուք ինձ որոնում էք՝ ոչ թէ
նորա համար որ նշաններ տեսաք,
բայց որ հացիցը կերաք և կշտա-
ցաք։ Գործեցէք ոչ թէ կորչելու 27
կերակուրի համար, այլ այն կե-
րակուրի, որ մնացող է յաւիտե-
նական կեանքի մէջ, որ մարդի
Որդին կ'տայ ձեզ. որովհետև
Աստուած Հայրը կնքեց նորան։
Արդ նորան ասեցին. Ի՞նչ անենք, 28
որ Աստուծոյ գործերը գործենք։
Յիսուսն էլ պատասխանեց և նո- 29
րանց ասեց. Սա է Աստուծոյ գոր-
ծը, որ հաւատաք նորան, որին
նա ուղարկեց։ Եւ նորան ասե- 30
ցին. Ապա դու ի՞նչ նշան ես ա-
նում, որ տեսնենք և հաւատանք,
ի՞նչ ես գործում։ Մեր հայրերը 31
անապատումը մանանան կերան.
ինչպէս գրուած է թէ Երկնքիցը
հաց տուաւ նորանց ուտելու։
Յիսուսն էլ նորանց ասեց. Ճշմա- 32
րիտ ճշմարիտ ասում եմ ձեզ.
ոչ թէ Մովսէսը տուաւ ձեզ
այն հացը երկնքից, այլ իմ Հայ-
րը տալիս է ձեզ երկնքից ճշմա-
րիտ հացը։ Որովհետև Աստուծոյ 33
հացը նա է՝ որ երկնքիցն է իջ-
նում, և որ աշխարհքին կեանք
է տալիս։ Նորանք էլ ասեցին. 34
Տէր, ամեն ժամանակ տուր մեզ
այդ հացը։ Յիսուսն էլ նորանց 35
ասեց. Ես եմ կեանքի հացը. ինձ
մօտ եկողը չի սովիլ, և ինձ հա-
ւատացողը երբէք չի ծարաւիլ։
Բայց ես ասեցի ձեզ, թէ տեսաք 36
էլ ինձ, և չէք հաւատում։ Այն 37
ամենը որ Հայրն ինձ տալիս է,
ինձ մօտ կ'գայ. և ինձ մօտ եկո- 38
ղին ես դուրս չեմ հանիլ։ Ո-
րովհետև ես իջայ երկնքիցը, որ
ոչ թէ իմ կամքն անեմ, այլ 39
ինձ ուղարկողի կամքը։ Սա է ինձ
ուղարկող Հօր կամքը, որ այն

մի հօտ և մի հովիւ կ'լինին։
17 Նորա համար իմ Հայրը սիրում
է ինձ, որ իմ անձը դնում եմ,
որպէս զի դարձեալ առնեմ նո-
18 րան։ Ոչ ով նորան վեր չէ առ-
նում ինձանից. այլ ես ինքս եմ
ինձանից դնում նորան. ես իշ-
խանութիւն ունիմ նորան դնելու
և իշխանութիւն ունիմ նորան
դարձեալ առնելու. այս պատ-
19 ուէրն առայ իմ Հօրիցը։ Արդ
դարձեալ բաժանմունք եղաւ
Հրէաների մէջ այս խօսքերի հա-
20 մար։ Եւ նորանցից շատերն ա-
սում էին թէ Դև ունի, և գժվում
է. ի՞նչու էք ականջ դնում դո-
21 րան։ Ուրիշներն ասում էին. Այս
խօսքերը դիւահարի խօսքեր չեն.
մի՞թէ դևը կարող է կոյրի աչ-
քերը բանալ։
22 Այն ժամանակ Երուսաղէմումը
նաւակատիք տօն եղաւ, և ձմեռն
23 էր։ Եւ Յիսուսը ման էր գա-
լիս տաճարումը Սողոմոնի սրահի
24 մէջ։ Հրէաներն էլ նորան շրջա-
պատեցին և ասեցին նորան. Մին-
չև ե՞րբ ես պահում մեր հոգի-
ները տարակուսանքի մէջ. եթէ
դու ես Քրիստոսը, համարձակ
25 ասիր մեզ։ Յիսուսը պատասխա-
նեց նորանց. Ասեցի ձեզ, և չէք
հաւատում. այն գործերը որ իմ
Հօր անունովը գործում եմ, նո-
րանք վկայում են ինձ համար։
26 Բայց դուք չէք հաւատում. ո-
րովհետև իմ ոչխարներիցը չէք,
27 ինչպէս որ ասեցի ձեզ։ Իմ ոչ-
խարներն իմ ձայնը լսում են, և
ես ճանաչում եմ նորանց, և իմ
28 ետևից գալիս են։ Եւ ես յաւի-
տենական կեանք եմ տալիս նո-
րանց, և նորանք յաւիտեան չեն
կորչիլ, և ոչ ով չի յափշտակիլ
29 նորանց իմ ձեռիցը։ Իմ Հայրը որ
նորանց տուաւ ինձ, ամենից մեծ
է, և ոչ ով կարող չէ իմ Հօր
30 ձեռիցը յափշտակել նորանց։ Ես
և Հայրը մի ենք։
31 Հրէաները դարձեալ քարեր
վեր առան, որ նորան քարկոծեն։
32 Յիսուսը նորանց պատասխանեց.
Շատ բարի գործեր ցոյց տուի
[illegible] իմ Հօրիցը. նորանցից [illegible]
գործի համար էք ինձ քարկոծում։
Հրէաները պատասխանեցին և ա- 33
սեցին. Բարի գործի համար քեզ
չենք քարկոծում, այլ հայհոյու-
թեան համար. և որ դու մարդ
լինելով՝ քո անձն Աստուած ես
անում։ Յիսուսը նորանց պատաս- 34
խանեց. Գրուած չէ՞ ձեր օրէն-
քումը, թէ Ես ասեցի՝ Աստուած-
ներ էք։ Եթէ նորանց Աստուած- 35
ներ է ասում, որ Աստուծոյ խօսքն
եղաւ նորանց. (և կարելի չէ որ
գիրքը եղծանուի.) Ապա նորան որ 36
Հայրը սրբեց և ուղարկեց աշ-
խարհք, դուք ասում էք, թէ
Հայհոյում ես, որ ասեցի, թէ
Աստուծոյ Որդի եմ։ Եթէ իմ Հօր 37
գործերը չեմ գործում, մի հա-
ւատաք ինձ։ Ապա եթէ գործում 38
եմ, թէև ինձ էլ չ'հաւատաք,
գոնէ գործերին հաւատացէք, որ
ճանաչէք և հաւատաք, թէ Հայրն
ինձանում է և ես նորա մէջ։
Դարձեալ ուզում էին նորան 39
բռնել, բայց նորանց ձեռիցը
դուրս եկաւ։ Եւ դարձեալ գնաց 40
Յորդանանի այն կողմը, այն տե-
ղը, որ Յովհաննէսն էր առաջուց
և մկրտում էր. և այնտեղ էր
կենում։ Եւ շատերը նորա մօտ 41
եկան և ասում էին. թէ Յովհան-
նէսը ոչ մի նշան չ'գործեց։ Բայց 42
բոլորն ինչ որ Յովհաննէսը նորա
համար ասեց, ճշմարիտ էր. և
այնտեղ շատերը հաւատացին նո-
րան։

ԳԼ. ԺԱ.

Եւ մի հիւանդ կար, անունը Ղա- 1
զարոս, Բեթանիայիցը, Մարիամի
և նորա քոյր Մարթայի գիւղիցը։
Մարիամն էլ նա էր, որ Տիրոջը 2
իւղով օծեց և նորա ոտները
սրբեց իր մազերովը. [illegible]
Ղազարոսը հիւանդ [illegible] Եւ նորա 3
քոյրերն ուղարկե[illegible]
ասեցին. Տէր, ա[illegible]
սիրում ես՝ հիւ[illegible]
սուսն [illegible]
հիւ[illegible]
մար[illegible]

ինչու էք դարձեալ կամենում
լսել. մի՞թէ դուք էլ էք կամե-
նում նորան աշակերտ լինել։
28 Նորանք նախատեցին նորան և
ասեցին. Դու ես նորա աշա-
կերտ. իսկ մենք Մովսէսի աշա-
29 կերտներն ենք։ Մենք գիտենք,
որ Աստուած Մովսէսի հետ խօ-
սեց. բայց սորան չ՛գիտենք թէ
30 ո՞րտեղից է. Մարդը պատասխա-
նեց և նորանց ասեց. Հէնց դա է
զարմանալին որ դուք չ՛գիտէք թէ
ո՞ր տեղից է, և նա իմ աչքերը
31 բացաւ։ Եւ գիտենք, որ Աստ-
ուած մեղաւորներին չէ լսում.
այլ եթէ մէկը աստուածապաշտ
է՝ և նորա կամքը կատարում
32 է, նորան լսում է։ Աշխարհքի
սկզբից հետէ չէ լսուած որ մէկը
կոյր ծնուածի աչքերը բացած
33 լինի։ Եթէ սա Աստուածանից
չէր, ոչինչ չէր կարող անել։
34 Պատասխանեցին և նորան ասե-
ցին. Դու բոլորովին մեղքի մէջ
ես ծնուել, և դո՞ւ ես մեզ սովո-
րեցնում. և դուրս արին նորան։
35 Յիսուսը լսեց, որ նորան դուրս
արին. և նորան գտաւ և ասեց
նորան. Դու հաւատո՞ւմ ես Ա-
36 ստուծոյ Որդուն։ Նա պատասխա-
նեց և ասեց. Տէր, ո՞վ է նա՝ որ
37 հաւատամ նորան։ Յիսուսն էլ
նորան ասեց. Տեսար էլ նորան.
և քեզ հետ խօսողն էլ նա ինքն
38 է։ Եւ նա ասեց. Հաւատում եմ,
39 Տէր, և երկրպագեց նորան։ Եւ
Յիսուսն ասեց. Ես դատաստանի
համար եկայ այս աշխարհքը, որ
չտեսնողները տեսնեն, և տես-
նողները կուրանան։
40 Եւ Փարիսեցիներից ոմանք, որ
նորա հետ էին, լսեցին այս, և
ասեցին նորան. Մի՞թէ մենք էլ
41 կոյր ենք։ Յիսուսը նորանց ասեց.
Եթէ կոյր լինէիք, մեղք չէիք
ունենալ. բայց հիմա ասում էք,
թէ Տեսնում ենք. նորա համար
[illegible]ը մնում են։

· Ժ

[illegible] ասում եմ
[illegible] չէ մտնում

ոչխարների դաւիթը, այլ ուրիշ
կողմից է վեր ելնում, նա գող է
2 և աւազակ։ Բայց դռնովը մտնո-
3 ղը, ոչխարների հովիւն է։ Դռնա-
պանը նորա համար բաց է անում.
և ոչխարները նորա ձայնը լսում
են, և նա իր ոչխարներն իրանց
անունովը կանչում է, և նորանց
4 դուրս է հանում։ Եւ երբոր իր
ոչխարները դուրս է հանում, նո-
րանց առաջից գնում է, և ոչ-
խարները գնում են նորա ետևից.
որովհետև նորա ձայնը ճանա-
5 չում են։ Բայց օտարի ետևից
չեն գնում. այլ նորանից փախ-
չում են, որովհետև օտարների
ձայնը չեն ճանաչում։
6 Այս առակը Յիսուսը ասեց նո-
րանց. բայց նորանք չ՛գիտէին թէ
7 ինչ էր այն որ խօսում էր նորանց
հետ։ Յիսուսը դարձեալ նորանց
ասեց. Ճշմարիտ ճշմարիտ ասում
8 եմ ձեզ, թէ Ես եմ ոչխարների
դուռը։ Ամենքը՝ որ ինձանից ա-
ռաջ եկան, գողեր են և աւա-
զակներ. և ոչխարներն էլ նորանց
9 չ՛լսեցին։ Ես եմ դուռը. եթէ
մէկն ինձանով ներս մտնէ, կ՛ապ-
րի. և կ՛մտնէ և դուրս կ՛գայ, և
40 արօտ կ՛գտնէ։ Գողը չէ գալիս,
բայց միայն որ գողանայ և սպանէ
և կորցնէ. ես եկայ որ կեանք
ունենան, և էլ աւելի ունենան։
11 Ես եմ բարի հովիւը. բարի հո-
վիւն իր անձը դնում է ոչխար-
12 ների համար։ Բայց վարձկանը որ
հովիւ չէ, որ ոչխարներն իրանը
չեն, տեսնում է գայլին գալիս,
և թողում է ոչխարները և փախ-
չում. և գայլը յափշտակում է
նորանց և ցրվում է ոչխարներին։
13 Եւ վարձկանը փախչում է, որով-
հետև վարձկան է, և ոչխարների
14 համար հոգս չ՛ունի։ Ես եմ բա-
րի հովիւը, և ես իմիններին ճա-
նաչում եմ, և իմիններիցն էլ
15 ճանաչվում եմ։ Ինչպէս Հայրն է
ինձ ճանաչում, ես էլ ճանա-
չում եմ Հօրը, և իմ անձը դնում
16 եմ ոչխարների համար։ Եւ ուրիշ
ոչխարներ էլ ունիմ, որ այս գա-
ւիթիցը չեն, և նորանց էլ պէտք
է բերեմ. և իմ ձայնին կ՛լսեն, և

տասը՝ կենդանի Աստուծոյ Որդին։
71 Յիսուսը պատասխանեց նորանց.
Չէ՞ որ ես ձեզ տասնևերկուսիդ
ընտրեցի, և ձեզանից մէկը սա-
72 տանայ է։ Եւ սա Իսկարիովտացի
Սիմոնեան Յուդայի մասին էր ա-
սում. որ նա էր մատնելու նո-
րան. և ինքը տասնևերկուսից
մէկն էր։

ԳԼ. Է

1 Եւ սորանից յետոյ Յիսուսը ման
էր գալիս Գալիլեայի մէջ. որով-
հետև չէր կամենում Հրէաստա-
նումը ման գալ, որովհետև Հրէա-
ները որոնում էին սպանել նո-
րան։
2 Եւ Հրէաների տաղաւարահա-
3 րաց տօնը մօտիկ էր։ Եւ նորա
եղբայրներն ասեցին նորան. Այս-
տեղից դուրս եկ և գնա Հրէաս-
տան, որ քո աշակերտներն էլ
տեսնեն քո գործերը, որ գոր-
4 ծում ես. Որովհետև ոչ ով չ՛կայ՝
որ թագուն մի բան անէ, և ուզէ
ճանաչուած լինել. եթէ դու այդ
բաները գործում ես, քո անձը
5 յայտնիր աշխարհքին։ Որովհետև
իր եղբայրներն էլ չէին հաւա-
6 տում նորան։ Յիսուսն էլ ասեց
նորանց. Իմ ժամանակը դեռ հա-
սած չէ, բայց ձեր ժամանակը
7 միշտ պատրաստ է. Աշխարհքը
կարող չէ ձեզ ատել. բայց ինձ
ատում է, որ ես նորա համար
վկայում եմ, թէ նորա գործերը
8 չար են։ Դուք գնացէք այն տօ-
նին, ես դեռ չեմ գնում այն տօ-
նին, որովհետև իմ ժամանակը
9 դեռ լրացած չէ։ Սա որ նորանց
10 ասեց, մնաց Գալիլեայումը։ Երբ-
որ նորա եղբայրները գնացին, այն
ժամանակ ինքն էլ գնաց այն տօ-
նին, ոչ թէ յայտնի, այլ իբր
գաղտնաբար։
11 Եւ Հրէաները որոնում էին նո-
րան այն տօնումը և ասում, Ո՞ր-
12 տեղ է նա։ Եւ ժողովուրդների
մէջ շատ զրոյց կար նորա հա-
մար. ոմանք ասում էին թէ բա-
րի մարդ է. ուրիշներն էլ ասում
էին. Ոչ, այլ ժողովրդին մոլո-

րեցնում է։ Սակայն ոչ ով հա-
մարձակ չէր խօսում նորա վերայ՝
Հրէաների վախի համար։
Եւ երբոր տօնն արդէն կէս ե-
ղաւ, Յիսուսը վեր ելաւ տաճա-
րը և սովորեցնում էր։ Եւ Հրէա-
ները զարմանում էին և ասում.
Սա ի՞նչպէս գիտէ գիրքերը ա-
ռանց սովորած լինելու։ Յիսուսը
պատասխանեց նորանց և ասեց.
Իմ վարդապետութիւնն իմը չէ,
այլ ինձ ուղարկողինն է։ Եթէ
մէկը կամենում է նորա կամքն
անել, նա կ՛իմանայ այս վարդա-
պետութեան համար, թէ արդեօք
Աստուածանի՞ց է, կամ եթէ ես
իմ անձիցն եմ խօսում։ Իր ան-
ձիցը խօսողը, իր անձի փառքն է
որոնում. բայց նա որ իրան ու-
ղարկողի փառքն է որոնում, նա
ճշմարիտ է և անիրաւութիւն չը
կայ նորանում։ Չէ՞ որ Մովսէսը
տուաւ ձեզ օրէնքը, և ձեզանից
ոչ ով չէ կատարում օրէնքը։
Ի՞նչու էք ուզում ինձ սպանել.
ժողովուրդը պատասխանեց և ա-
սեց. Դև ունիս. ո՞վ է ուզում
քեզ սպանել։ Յիսուսը պատաս-
խանեց և ասեց նորանց. Մի գործ
գործեցի, և ամենքդ զարմացել
էք։ Նորա համար Մովսէսը ձեզ
տուաւ թլփատութիւնը. (ոչ թէ
Մովսէսիցն է, այլ հայրերիցը.)
և շաբաթ օրը մարդ էք թլփա-
տում։ Եթէ մարդ շաբաթ օրու-
մը թլփատութիւն է ընդունում,
որ Մովսէսի օրէնքը չ՛քանդուի,
ինձ բարկանո՞ւմ էք, որ ես ամ-
բողջ մարդ բժշկեցի շաբաթ օրը։
Աչքի երևութով մի դատէք, այլ
ուղիղ դատաստան արէք։
Արդ Երուսաղէմացիներից ո-
մանք ասում էին. Չէ՞ որ սա նա
է, որին ուզում են սպանել։ Եւ
ահա համարձակ խօսում է, և
ոչինչ չեն ասում դորան. մի գու-
ցէ իրաւ իշխաններն էլ իմացան,
որ սա է ճշմարտապէս Քրիստոսը։
Բայց սորան գիտենք. Թէ որ տե-
ղից է. իսկ Քրիստոսն երբոր գայ,
ոչ ոք չի գիտենալ թէ որ տեղից
է։ Յիսուսն էլ՝ սովորեցնելիս ա-
ղաղակեց տաճարումն ասելով՝

ամենը որ նա ինձ առաւ, նորա-
նից չ'կորցնեմ. այլ յետին օրուա-
40 մը յարուցանեմ նրան։ Եւ սա
է ինձ ուղարկողի կամքը. որ ա-
մեն ով որ տեսնէ Որդուն և հա-
ւատայ նորան, յաւիտենական
կեանք ունենայ. և ես յետին օ-
րուամը կ'յարուցանեմ նորան։
41 Հրէաներն էլ տրտնջում էին
նորանից, որ ասեց, Ես եմ եմ
42 երկնքից իջած հացը։ Եւ ասում
էին. Չէ՞ որ սա Յիսուսն է Յով-
սէփի որդին, որի հօրը և մօրը
ճանաչում ենք. ապա սա ինչ-
պէս է ասում, Ես երկնքից եմ
43 իջել։ Յիսուսն էլ պատասխանեց
և ասեց նորանց. Մի տրտնջաք
44 իրար հետ։ Ոչ ով կարող չէ ինձ
մօտ գալ, եթէ Հայրն՝ որ ինձ
ուղարկեց՝ չ'քաշէ նորան. և ես
յետին օրուամը կ'յարուցանեմ նո-
45 րան։ Գրուած է մարգարէների
մէջ. Եւ ամենքն Աստուածա-
նից սովրած կ'լինին. արդ ամեն
ով որ Հօրից լսում և սովրում
46 է, գալիս է ինձ մօտ։ Իբր չէ թէ
մէկը տեսել է Հօրը. բայց միայն
նա, որ Աստուածանից է. նա
47 տեսել է Հօրը։ Ճշմարիտ ճշմա-
րիտ ասում եմ ձեզ. Ինձ հա-
ւատացողը յաւիտենական կեանք
48 ունի. Ես եմ կեանքի հացը։
49 Ձեր հայրերը մանանան կերան
50 անապատումը, և մեռան. Սա
է այն հացը, որ երկնքից է իջ-
նում որ եթէ մէկը սորանից ու-
51 տէ, չի մեռնիլ։ Ես եմ կենդա-
նի հացն, որ երկնքից է իջել։
52 Եթէ մէկն այս հացից ուտէ,
յաւիտեան կ'ապրի. և այն հացն
որ ես կ'տամ՝ իմ մարմինն է,
որ ես նորան աշխարհքի կեանքի
համար կ'տամ։
53 Հրէաներն էլ իրար հետ կըռ-
ւում էին և ասում. Սա ինչպէս
կարող է էր մարմինը տալ մեզ
54 ուտելու համար։ Յիսուսն էլ
նորանց ասեց. Ճշմարիտ ճշմարիտ
ասում եմ ձեզ, եթէ մարդի Որ-
դու մարմինը չ'ուտէք և նորա
արիւնը չ'խմէք, կեանք չ'ունիք
55 ձեր անձերումը։ Իմ մարմինը ու-
տողը և իմ արիւնը խմողը յա-
ւիտենական կեանք ունի. և ես
յետին օրուամը կ'յարուցանեմ նո-
րան։ Որովհետև իմ մարմինը 56
ճշմարիտ կերակուր է, և իմ ար-
իւնը ճշմարիտ խմիլիք է։ Իմ մար- 57
մինն ուտողը և իմ արիւնը խմողը
մնում է ինձանում, և ես նորա-
նում։ Ինչպէս ինձ ուղարկեց կեն- 58
դանի Հայրը, և ես կենդանի եմ
Հօր համար. այնպէս էլ նա որ
ինձ ուտում է, կենդանի կ'լինի
ինձ համար։ Սա է այն հացը՝ որ 59
երկնքիցն է իջել. ոչ թէ ինչպէս
ձեր հայրերը մանանան կերան և
մեռան. այս հացն ուտողը յա-
ւիտեան կ'ապրի։
Այս ասեց ժողովարանումը երբ 60
որ կափառնայում էր մէջ սովրե-
ցնում էր։
Եւ նորա աշակերտներից շա- 61
տերը որ լսեցին, ասեցին. Խիստ
է այդ բանը, ո՞վ կարող է լսել
դորան։ Բայց երբոր Յիսուսը գի- 62
տաց իր անձնումը, թէ իր աշա-
կերտները տրտնջում էին դորա
համար, նորանց ասեց. Դա այդ-
թիակղեցնո՞ւմ է ձեզ։ Ապա ի՞նչ 63
եւ ծռեէ՞ թէ մարդի Որդին
տեսնէք՝ վեր գնալիս, ուր որ ա-
ռաջ էր։ Հոգին է կենդանացը- 64
նողը, մարմինը ոչինչ օգուտ չէ
տալիս. այն բանն որ ես ձեզ հետ
խօսեցի, հոգի է և կեանք է։ Բայց 65
ձեզանից կան ոմանք, որ չեն հա-
ւատում, որովհետև Յիսուսը
սկզբիցը գիտեր թէ ով են չ'հա-
ւատացողները, և ով է նա՝ որ
պիտի մատնէր նորան։ Եւ ասեց. 66
Նորա համար ասեցի ձեզ՝ թէ ոչ
ով կարող չէ ինձ մօտ գալ, ե-
թէ իմ Հօրիցը տրուած չլինի
նորան։
Սորանից յետոյ նորա աշա- 67
կերտներից շատերը ետ գնացին,
և այլևս մանի չէին գալիս նորա
հետ։ Յիսուսն էլ ասեց այն 68
տասնևերկուսին, Մի՞թէ դուք
էլ ուզում էք գնալ։ Սիմոն 69
Պետրոսն էլ պատասխանեց նո-
րան. Տէր, ո՞ւմ մօտ գնանք. յա-
ւիտենական կեանքի խօսքեր ու-
նես դու։ Եւ մենք հաւատացինք 70
և ճանաչեցինք, թէ դու ես Քրիս-

5 բանով փառաւորուի։ Եւ Յիսու-
սը սիրում էր Մարթային և նո-
6 րա քրոջը և Ղազարոսին։ Եւ
երբոր լսեց, թէ նա հիւանդ է,
այն ժամանակ երկու օր մնաց
7 այն տեղը, ուր որ էր. Ապա նո-
րանից յետոյ ասեց աշակերտանե-
րին. Նկնէք գարձեալ գնանք Հրէ-
8 աստան։ Աշակերտներն ասեցին
նորան. Ռաբբի. հիմա Հրէաներն
ուզում էին քեզ քարկոծել. և
գարձեալ այնտե՞ղ ես գնում։
9 Յիսուսը պատասխանեց. Չէ՞ որ
օրը տասներկու ժամ ունի. և-
թէ մէկը ցերեկը մանի գայ, չի
սահիլ. որովհետև այս աշխարհ-
10 քի լոյսը տեսնում է, իսկ եթէ
մէկը գիշերը մանի գայ, կ'սահի.
որովհետև լոյս չ'կայ նորանում։
11 Այս ասեց, և սորանից յետոյ
ասեց նորանց. Մեր Ղազարոս
բարեկամը քնեց. բայց կ'գնամ,
12 որ զարթնեցնեմ նորան։ Եւ նո-
րա աշակերտներն ասեցին նորան.
Տէր, թէ որ քնել է՝ կ'առող-
13 ջանայ։ Բայց Յիսուսը նորա մահ-
ուան համար էր ասել. նորանք
էլ կարծում էին, թէ քունն քնե-
14 լու համար էր ասում։ Այն ժա-
մանակ Յիսուսը յայտնի ասեց
15 նորանց. Ղազարոսը մեռաւ։ Եւ
ես ուրախ եմ ձեզ համար, որ
ես այնտեղ չէի, որ դուք հաւա-
տաք իմ. բայց գնանք նորա մօտ։
16 Եւ ասեց Թովմասը (երկուորեակ
կոչուածը) աշակերտակիցներին.
Մենք էլ գնանք նորա հետ մեռ-
նենք։
17 Յիսուսն էլ եկաւ՝ նորան արդէն
չորս օր գերեզմանի մէջ գրուած
18 գտաւ։ Եւ Բեթանիան մօտ էր
Երուսաղէմին տասնեհինգ ստա-
19 պարէզի չափով։ Եւ Հրէաներից
շատերը եկել էին Մարթային և
Մարիամի մօտ, որ մխիթարեն
20 նորանց իրանց եղբօր մասին։ Արդ
երբոր Մարթան լսեց, թէ Յի-
սուսը գալիս է, գնաց նորան գի-
մաւորելու. բայց Մարիամը տանը
21 նստած էր։ Եւ Մարթան ասեց
Յիսուսին. Տէր, եթէ այստեղ
լինէիր, իմ եղբայրը չէր մեռնիլ։
22 Բայց հիմա էլ գիտեմ, թէ ինչ
որ Աստուածանից խնդրես, Աստ-
ուած կ'տայ քեզ։ Յիսուսը նո- 23
րան ասեց. Քո եղբայրը յարու-
թիւն կ'առնէ։ Մարթան նորան 24
ասեց. Գիտեմ որ յարութիւն
կ'առնէ յարութիւնուամբ յետին
օրը։ Յիսուսը նորան ասեց. Ես 25
եմ յարութիւնը և կեանքը. ինձ
հաւատացողը թէև մեռնի էլ,
կ'ապրի։ Եւ ամեն ով որ կեն- 26
դանի է և ինձ հաւատում է,
յաւիտեան չի մեռնիլ. Հաւա-
տո՞ւմ ես սորան։ Նորան ասեց. 27
Այո՛, Տէր, ես հաւատացել եմ,
թէ դու ես Քրիստոսն՝ Աստուծոյ
Որդին, որ պէտք է աշխարհքը գա-
լիր։ Եւ երբոր այս ասեց, գնաց 28
թագուն կանչեց իր Մարիամ
քրոջը, և ասեց. Վարդապետը
եկել է և կանչում է քեզ։ Նա 29
երբոր լսեց, շուտով վերկացաւ,
և եկաւ նորա մօտ։ Յիսուսը դեռ 30
չէր եկել գիւղը, այլ այն տեղն
էր, ուր որ Մարթան եկաւ նո-
րա առաջը։ Բայց Հրէաները, որ 31
տանը նորա հետ էին և նորան
մխիթարում էին, երբոր Մարիա-
մին տեսան, թէ շուտով վերկա-
ցաւ և գնաց, նորա ետևից գնա-
ցին. ասելով թէ Գերեզմանն է
գնում, որ այն տեղ լայ։ Բայց 32
երբոր Մարիամ այն տեղ եկաւ,
ուր Յիսուսն էր, և տեսաւ նո-
րան, նորա առներն ընկաւ և ա-
սեց նորան. Տէր, եթէ այստեղ
լինէիր, իմ եղբայրը չէր մեռնիլ։
Յիսուսն էլ երբոր նորան տեսաւ 33
որ լայ էր լինում, և նորա հետ
եկած Հրէաներն էլ՝ որ լայ էին
լինում, իր հոգովը խռովեց և
յուզուեց, Եւ ասեց. Ո՞ւր դրիք 34
նորան. Նորան ասեցին. Տէր, եկ
և տես։ Յիսուսը արտասուեց։ 35
Հրէաներն ասում էին. Տես ինչ- 36
պէս էր սիրում նորան։ Նորան- 37
ցից էլ ոմանք ասում էին. Մի՞թէ
սա որ կույրի աչքերը բացաւ, չէր
կարող անել՝ որ սա էլ չ'մեռ-
նէր։ Եւ Յիսուսը դարձեալ խռո- 38
ված եկաւ գերեզմանը. և այն մի
քարայր էր, և մի քար նորա վե-
րայ գրուած։ Յիսուսը ասեց. Առ- 39
քարը վեր առէք. մեռելի քոյրը

Մարթան ասեց նորան. Տէր, արդէն հոտած է. որովհետև չորս
40 օրուայ է։ Յիսուսը նորան ասեց.
Չ'ասեցի՞ քեզ, որ եթէ հաւատաս, Աստուծոյ փառքը կ'տես-
41 նես։ Եւ քարը վեր առան, ուր որ
մեռելը դրուած էր. Յիսուսն էլ
իր աչքերը դէպի վեր բարձրացը-
րեց և ասեց. Հայր, գոհանում
42 եմ քեզանից, որ ինձ լսեցիր։ Եւ
ես գիտէի, որ միշտ լսում ես
ինձ. բայց այս շրջակայ ժողովրդի
համար ասեցի, որ հաւատան թէ
43 դու ուղարկեցիր ինձ։ Եւ այս
ասելով՝ մեծ ձայնով աղաղակեց.
44 Ղազարոս, դուրս եկ։ Եւ մե-
ռելը դուրս եկաւ՝ ոտները և ձեռ-
քերը պատանով կապած, և ե-
րեսը վարշամակով պատած։ Յի-
սուսը նորանց ասեց. Արձակեցէք
դորան, և թողէք գնայ։
45 Եւ Հրէաներից շատերը, որ
Մարիամի մօտ էին եկել և տե-
սան ինչ որ արաւ Յիսուսը, հա-
46 ւատացին նորան։ Բայց նորանցից
ոմանք գնացին Փարիսեցիների
մօտ, և ասեցին նորանց ինչ որ
Յիսուսն արաւ։
47 Եւ քահանայապետները և Փա-
րիսեցիները ատեան ժողովեցին,
և ասեցին. Ի՞նչ անենք, որ այդ
մարդը շատ նշաններ է անում։
48 Եթէ դորան այդպէս թողենք,
ամենքը կ'հաւատան դորան, և
Հռովմայեցիք կ'գան վեր կ'առ-
նեն մեր երկիրն էլ և ազգն էլ։
49 Եւ նորանցից մէկը՝ Կայիափան,
որ այն տարուայ քահանայապետն
էր, ասեց նորանց. Դուք ոչինչ
50 չ'գիտէք, Եւ չէք էլ մտածում,
որ լաւ է մեզ համար՝ որ մէկ
մարդ մեռնի ժողովրդի համար,
51 քան թէ բոլոր ազգը կորչի։ Բայց
սա իրանից չ'ասեց. այլ որովհե-
տև այն տարուայ քահանայա-
պետն էր, մարգարէացաւ՝ թէ
Յիսուսը պիտի մեռնէր ազգի հա-
52 մար։ Եւ ոչ թէ միայն ազգի
համար, այլ որ նա Աստուծոյ
ցրուած որդիքն էլ մէկտեղ ժո-
ղովէ։
53 Արդ այն օրից հետէ խորհուրդ
54 արին, որ նորան սպանեն։ Յի-
սուսն էլ համարձակ չէր ման գա-
լիս Հրէաների մէջ. այլ այն տե-
ղից գնաց մի երկիր, անապատի
մօտ, Եփրայեմ ասուած քաղա-
քը. և այնտեղ կենում էր իր
աշակերտների հետ։
Եւ Հրէաների զատիկը մօտ էր, 55
և այն գաւառից շատերը զատ-
կից առաջ վեր ելան Երուսաղէմ,
որ իրանց անձերը սրբեն։ Եւ որո- 56
նում էին Յիսուսին, և իրար ա-
սում էին՝ տաճարումը կանգ-
նած. Ի՞նչպէս է երևում ձեզ.
մի՞թէ այս տօնին չի գալ. բայց
քահանայապետները և Փարիսե-
ցիները հրաման էին տուել, որ՝
եթէ մէկը գիտենայ թէ ուր է,
իմաց տայ, որ բռնեն նորան։

ԳԼ. ԺԲ

Եւ Յիսուսը զատկից վեց օր ա- 1
ռաջ եկաւ Բեթանիա, որտեղ
մեռած Ղազարոսն էր, որին մե-
ռելներից յարութիւն տուաւ։
Եւ այնտեղ հացկերութիւն ա- 2
րին նորա համար. և Մարթան
ծառայում էր, և Ղազարոսը նո-
րա հետ սեղան նստողներից մէկն
էր։ Մարիամն էլ մի լիտր նար- 3
դոսի ազնիւ մեծագին իւղ ա-
ռաւ, Յիսուսի ոտները օծեց, և
իր մազերովը սրբում էր նորա
ոտները. և տունը լցուեցաւ իւղի
հոտովը։ Եւ ասեց նորա աշա- 4
կերտներից մէկը՝ Յուդա Սիմօն-
եան Իսկարիովտացին, որ նորան
մատնելու էր՝ Ի՞նչու համար այդ 5
իւղը երեք հարիւր դենարի չը
ծախուեցաւ, և աղքատներին
տրուեցաւ։ Բայց սա ասեց, ոչ 6
թէ որովհետև աղքատների հա-
մար նորա հոգն էր. այլ որ գող
էր՝ և քսակը ունէր, և ընկածը
պահում էր։ Յիսուսն էլ ասեց. 7
Թոյլ տուր դորան, նա իմ պա-
տանքի օրուան համար էր պա-
հել այդ։ Որովհետև աղքատնե- 8
րին միշտ ձեզ հետ ունիք. բայց
ինձ միշտ չ'ունիք։
Եւ Հրէաներից շատ ժողովուրդ 9
գիտաց, թէ նա այնտեղ է, և
եկան, ոչ թէ միայն Յիսուսի հա-

մար, այլ որ Ղազարոսին էլ
տեսնեն, որին մեռելներից յա-
10 րութիւն տուաւ։ Քահանայա-
պետներն էլ խորհուրդ արին,
11 որ Ղազարոսին էլ սպանեն։ Ո-
րովհետև Հրէաներից շատերը նո-
րա պատճառովը գնում էին և
հաւատում էին Յիսուսին։
12 Նորա հետևեալ օրը շատ ժո-
ղովուրդ, որ եկել էին տօնին,
երբոր լսեցին, թէ Յիսուսը գալիս
13 է Երուսաղէմ, Արմաւի ծառերի
ճղեր առան, և դուրս գնացին
նորա առաջին, աղաղակում էին.
Ովսաննայ, օրհնեալ է նա որ Տի-
րոջ անունովը գալիս է, Իսրայէլի
14 թագաւորը։ Եւ Յիսուսը մի ա-
ւանակ գտաւ, և նորա վերայ
նստեց. ինչպէս գրուած է՝ Թէ
15 Մի վախենար, Սիօնի աղջիկ, ա-
հա քո թագաւորը գալիս է՝ էշի
16 աւանակի վերայ նստած։ Եւ նո-
րա աշակերտներն առաջ չ'իմա-
ցան այս բաները. բայց երբ որ
Յիսուսը փառաւորուեցաւ՝ այն
ժամանակ յիշեցին, թէ այս նո-
րա համար գրուած էր. և այն
17 բանը արին նորան։ Եւ ժողո-
վուրդը՝ որ նորա հետ էր, վկա-
յում էր, թէ Ղազարոսին գե-
րեզմանիցը դուրս կանչեց. և մե-
ռելներից յարութիւն տուաւ
18 նորան։ Եւ նորա համար էլ ժո-
ղովուրդը գնաց նորա առաջին,
որ լսեցին թէ նա արել էր այն
19 նշանը։ Բայց Փարիսեցիներն իրար
մէջ ասում էին. Տեսնո՞ւմ էք,
որ ոչինչ օգուտ չ'ունիք. ահա
աշխարհքը նորա ետևից գնաց։
20 Եւ կային ոմանք Հելլենացիք՝
նորանցից, որ եկել էին այնտեղ,
որ երկրպագեն այն տօնումը։
21 Նորանք եկան Փիլիպպոսի մօտ
որ Գալիլեայի Բեթսայիդայիցն
էր, նորան խնդրում էին և ա-
սում. Տէր, կամենում ենք Յի-
22 սուսին տեսնել։ Փիլիպպոսը գա-
լիս է Անդրէասին ասում. Անդ-
րէասը և Փիլիպպոսը ասում են
23 Յիսուսին։ Յիսուսն էլ պատաս-
խանեց նորանց՝ և ասեց. Ժամը
հասաւ, որ մարդի Որդին փա-
24 ռաւորուի։ Ճշմարիտ ճշմարիտ
ասում եմ ձեզ. եթէ ցորենի
հատը հողի մէջ չ'ընկնի և մեռ-
նի, ինքը մինակ կ'մնայ. բայց ե-
թէ մեռնի, շատ պտուղ կ'բերէ։
Իր անձը սիրողը՝ կ'կորցնէ նորան, 25
և իր անձն ատողը այս աշխարհ-
քումը, յաւիտենական կեանքի
մէջ կ'պահէ նորան։ Եթէ մէկը 26
ծառայէ ինձ, թող նա իմ ետևից
գայ. և ուր ես եմ, այնտեղ էլ
իմ պաշտօնեան կ'լինի. եթէ մէկը
ծառայէ ինձ, Հայրը կ'պատուէ
նորան։ Հիմա իմ անձը խռոված 27
է. և ի՞նչ ասեմ. Հայր, ազա-
տիր ինձ այս ժամիցը. սակայն
իսկ սորա համար եկայ այս ժամի
մէջ։ Հայր, փառաւորիր քո ա- 28
նունը։ Եւ երկնքիցը ձայն եկաւ,
Թէ Փառաւորեցի էլ և դարձեալ
կ'փառաւորեմ։ Եւ ժողովուրդը, 29
որ կանգնած էր և լսում էր, ա-
սում էին, Որոտմունք եղաւ. ու-
րիշներն ասում էին. Հրեշտակ
խօսեց նորա հետ։ Յիսուսը պա- 30
տասխանեց և ասեց. Այս ձայնը
ոչ թէ ինձ համար եղաւ, այլ
ձեզ համար։ Հիմա դատաստան 31
է այս աշխարհքի. հիմա այս աշ-
խարհքի իշխանը դուրս կ'գցուի։
Եւ ես երբոր բարձրանամ երկրի- 32
ցը, ամենքին կ'քաշեմ ինձ մօտ։
Եւ այս ասում էր, որ ցոյց տայ, 33
թէ ինչպիսի մահով պիտի մեռ-
նի։ Ժողովուրդը պատասխանեց 34
նորան. Մենք օրէնքիցը լսեցինք,
թէ Քրիստոսը յաւիտեան կ'կե-
նայ. և դու ի՞նչպէս ես ասում,
թէ պէտք է մարդի Որդին բար-
ձրանայ. ո՞վ է այն մարդի Որդին։
Յիսուսն էլ ասեց նորանց. Մի 35
քիչ ժամանակ դեռ լոյսը ձեզ
հետ է. գնացէք, քանի որ լոյսն
ունիք, որ խաւարը ձեզ չ'հասնէ.
և խաւարումը գնացողը չ'գիտէ,
Թէ ո՞ւր է գնում։ Քանի որ լոյսն 36
ունիք, հաւատացէք լոյսին, որ
լոյսի որդիք լինիք։ Յիսուսը այս
բանը խօսեց, և գնաց թագցուե-
ցաւ նորանցից։
Եւ թէպէտ նա այնքան նշան- 37
ներ արել էր նորանց առաջին,
նորանք չէին հաւատում նորան.
Որ Եսայիա մարգարէի խօսքը կա- 38

տարուի, որ ասեց. Տէր, ո՞վ
հաւատաց մեր լուրին, և Տիրոջ
բազուկը ո՞ւմ յայտնուեցաւ։
39 Նորա համար չէին կարողանում
հաւատալ. որ Եսայիան դարձ-
40 եալ ասում է. Նորանց աչքերը
կուրացրեց, և նորանց սրտերը
թմրացրեց, որ աչքով չ'տեսնեն,
և սրտով չ'իմանան, և դառնան՝
41 և ես բժշկեմ նորանց։ Եսայիան
սա ասեց, երբոր նորա փառքը
տեսաւ, և նորա համար խօսեց։
42 Բայց և այնպէս իշխաններիցը շա-
տերը հաւատացին նորան. սա-
կայն փարիսեցիների պատճառովը
չէին դաւանում, որ ժողովարա-
43 նիցը դուրս չ'գցուին։ Որովհետև
մարդկանց փառքն աւելի սիրե-
ցին քան թէ Աստուծոյ փառքը։
44 Եւ Յիսուսը աղաղակում էր և
ասում. Ինձ հաւատացողը չէ թէ
ինձ է հաւատում, այլ ինձ ու-
45 ղարկողին։ Եւ ինձ տեսնողը, ինձ
46 ուղարկողին է տեսնում։ Ես լոյս
եկայ աշխարհքը, որ ամեն ինձ
հաւատացողը խաւարի մէջ չը
47 մնայ։ Եւ եթէ մէկն իմ խօսքե-
րին լսէ և չ'հաւատայ, ես չեմ
դատիլ նորան. որովհետև ես չ'ե-
կայ որ աշխարհքը դատեմ, այլ
48 որ փրկեմ աշխարհքը։ Ինձ ա-
նարգողը և իմ խօսքերը չ'ըն-
դունողը ունի իրան դատողին.
այն խօսքն՝ որ ես խօսեցի, նա
49 կ'դատէ նորան յետին օրը։ Որով-
հետև ես իմ անձիցը չ'խօսեցի.
բայց ինձ ուղարկող Հայրը, նա
պատուէր տուաւ ինձ, թէ ինչ
պիտի ասեմ և ինչ պիտի խօսեմ։
50 Եւ գիտեմ, որ նորա պատուի-
րանքը յաւիտենական կեանք է.
ուրեմն ինչ որ ես խօսում եմ,
ինչպէս Հայրն ասեց ինձ՝ այնպէս
եմ խօսում։

ԳԼ. ԺԳ

1 Զատկի տօնիցն առաջ՝ Յիսուսը
գիտաց, որ իր ժամը հասել է, որ
այս աշխարհքիցը փոխուի դէպի
Հայրը, իրաններին՝ որ այս աշ-
խարհքումն են՝ սիրեց. և մինչև
վերջը սիրեց նորանց։

Եւ երբոր ընթրիք էր լինում, 2
սատանան արդէն Յուդա Սիմոն-
եան Իսկարիովտացու սրտի մէջ
էր գցել, որ մատնէ նորան։ Յի- 3
սուսը գիտենալով որ Հայրն ա-
մեն բան իր ձեռն է տուել, և
որ Աստուածանից դուրս եկաւ,
և Աստուծոյ մօտ է գնում. Ընթ- 4
րիքիցը վերկացաւ և հանդերձ-
ները վայր դրաւ, և մի ղենջակ
առաւ իր մէջքը պատեց։ Յետոյ 5
ջուր ածեց կոնքը, և սկսեց աշա-
կերտների ոտները լուանալ, և
այն ղենջակովը սրբել որ մէջքին
պատած էր։ Եւ Սիմոն Պետրոսի 6
մօտ եկաւ. և նա նորան ասեց.
Տէր, դո՞ւ ես իմ ոտները լուա-
նում։ Յիսուսը պատասխանեց և 7
ասեց նորան. Ինչ որ ես անում
եմ, դու հիմա չես իմանում,
բայց սորանից յետոյ կ'իմանաս։
Պետրոսը նորան ասեց. Դու իմ 8
ոտները չես լուանալ յաւիտեան.
Յիսուսը պատասխանեց նորան.
Եթէ քեզ չ'լուանամ, ինձ հետ
բաժին չ'ունիս։ Սիմոն Պետրոսն 9
ասեց նորան. Տէր, ոչ թէ իմ ոտ-
ները միայն, այլ իմ ձեռքերը և
գլուխն էլ։ Յիսուսը նորան ա- 10
սեց. Լուացածին բան պէտք չէ,
բացի ոտները լուանալ. այլ բո-
լորովին մաքուր է. և դուք մա-
քուր էք, բայց ոչ թէ ամենքդ։
Որովհետև գիտէր իրան մատնի- 11
չին. նորա համար ասեց. Ոչ թէ
ամենքդ մաքուր էք։ Եւ երբոր 12
նորանց ոտները լուացաւ, իր հան-
դերձներն առաւ՝ և դարձեալ
սեղան նստեց, և նորանց ասեց.
Գիտէ՞ք ես ինչ արի ձեզ։ Դուք 13
ինձ կանչում էք Վարդապետ և
Տէր, և լաւ էք ասում, որովհե-
տև եմ։ Արդ եթէ ես Տէրս և 14
Վարդապետս՝ ձեր ոտները լուա-
ցի, դուք էլ պէտք է իրար ոտ-
ները լուանաք։ Որովհետև ես 15
ձեզ օրինակ տուի, որ ինչպէս
ես ձեզի արի, դուք էլ անէք։
Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ 16
ձեզ. Ծառան իր տէրիցը մեծ չէ.
ոչ էլ ուղարկուածը մեծ է իրան
ուղարկողիցը։ Եթէ այս գիտէք, 17
երանելի էք՝ թէ որ այս անէք։

18 Ձեր բոլորիդ համար չեմ ասում.
ես գիտեմ նորանց, որ ընտրեցի.
բայց որ գրուածը կատարուի,
Բէ Նա որ ինձ հետ հաց էր ու-
տում, ինձ դէմ իրան կրունկը
19 բարձրացրեց։ Հիմիկուց ասում
եմ ձեզ՝ լինելուց առաջ, որ
երբոր լինի՝ հաւատաք թէ ես
20 եմ։ Ճշմարիտ ճշմարիտ ասում
եմ ձեզ. Ով որ ընդունէ նորան,
որ ես կ'ուղարկեմ, ինձ է ըն-
դունում. և ինձ ընդունողը ինձ
ուղարկողին է ընդունում։
21 Յիսուսն այս ասելով տրտմեց
հոգովը. և վկայեց և ասեց. Ճշմա-
րիտ ճշմարիտ ասում եմ ձեզ,
թէ ձեզանից մէկը կ'մատնէ ինձ։
22 Աշակերտներն էլ իրար մտիկ էին
տալիս տարակուսած, թէ ո՞ւմ
23 համար է ասում։ Եւ նորա ա-
շակերտներից մէկը Յիսուսի գո-
գին նստած էր, որին Յիսուսը
24 սիրում էր։ Սիմոն Պետրոսը նո-
րան ակնարկեց որ հարցնէ թէ
նա ո՞վ է, որի համար ասում է։
25 Եւ նա Յիսուսի լանջքովն ընկած,
ասեց նորան. Տէր, նա ո՞վ է։
26 Յիսուսը պատասխանեց. Նա է՝ որ
ես պատառը թաց կ'անեմ և
նորան կ'տամ. և պատառը թաց
արաւ և տուաւ Յուդա Սիմոն-
27 եան Իսկարիովտացուն։ Եւ պա-
տառիցը յետոյ սատանան մտաւ
նորա մէջ. և Յիսուսը նորան ա-
սեց. Ինչ որ անում ես՝ շուտով
28 արա։ Եւ այս բանը սեղան նը-
ստողներից ոչ ով չ'իմացաւ, թէ
ի՞նչ պատճառով ասեց նորան։
29 Որովհետև ոմանք կարծում էին,
թէ որովհետև Յուդան քսակն
ունէր. Յիսուսը նորան ասեց. Բէ
առ՝ ինչ որ այս տօնին պէտք է
մեզ. կամ թէ աղքատներին բան
30 տայ։ Եւ նա երբոր պատառն ա-
ռաւ, շուտով դուրս գնաց. և
գիշեր էր։
31 Եւ երբոր դուրս գնաց, Յի-
սուսն ասեց. Հիմա մարդի Որ-
դին փառաւորուեցաւ. և Աստ-
ուած նորանում փառաւորուե-
32 ցաւ։ Եթէ Աստուած նորանում
փառաւորուեցաւ, Աստուած էլ
նորան կ'փառաւորէ իր անձումը.
և շուտով կ'փառաւորէ նորան։
Որդեակք, տակաւին մի քիչ 33
ժամանակ էլ ձեզ հետ եմ. ինձ
կ'որոնէք, և ինչպէս Հրէաներին
ասեցի, թէ Որտեղ որ ես եմ
գնում, դուք չէք կարող գալ.
և հիմա էլ ձեզ եմ ասում։ Նոր 34
պատուիրանք եմ տալիս ձեզ, որ
իրար սիրէք. ինչպէս ես ձեզ սի-
րեցի, որ դուք էլ իրար սիրէք։
Սորանով կ'գիտենան ամենքը թէ 35
իմ աշակերտներն էք, եթէ ի-
րար վերայ սէր ունենաք։ Սիմոն 36
Պետրոսը նորան ասեց. Տէր, ո՞ւր
ես գնում. Յիսուսը պատասխա-
նեց նորան. Որ տեղ որ ես գնում
եմ, դու հիմա չես կարող իմ
ետևից գալ. բայց յետոյ իմ ե-
տևից կ'գաս։ Պետրոսը նորան ա- 37
սեց. Տէր, ի՞նչու չեմ կարող հի-
մա քո ետևից գալ. իմ անձը
քեզ համար կ'դնեմ։ Յիսուսը 38
պատասխանեց նորան. Քո ա՞նձը
կ'դնես ինձ համար. Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ քեզ, որ
հաւը դեռ չի խօսիլ, որ դու
երեք անգամ կ'ուրանաս ինձ։

ԳԼ. ԺԴ

Ձեր սիրտերը թող չ'խռովին. 1
Աստուծուն հաւատացէք, և ինձ
հաւատացէք։ Իմ Հօր տանը շատ 2
բնակարաններ կան. ապա թէ ոչ
ես ձեզ կ'ասէի. Գնում եմ ձեզ
համար տեղ պատրաստելու։ Եւ 3
եթէ գնամ և ձեզ համար տեղ
պատրաստեմ, դարձեալ կ'գամ
և ձեզ ինձ մօտ կ'առնեմ. որ
ուր ես եմ, դուք էլ լինիք։ Եւ 4
որ տեղ որ ես գնում եմ՝ գի-
տէք, և ճանապարհը գիտէք։
Թովմասը նորան ասեց. Տէր, 5
մենք չ'գիտենք թէ որ տեղ ես
գնում. և ի՞նչպէս կարող ենք
ճանապարհը գիտենալ։ Յիսուսը 6
նորան ասեց. Ես եմ ճանապար-
հը և ճշմարտութիւնը և կեան-
քը. ոչ ով չի գալիս Հօր մօտ,
եթէ ոչ ինձանով։ Եթէ ինձ 7
գիտենայիք, իմ Հօրն էլ կ'գիտե-
նայիք. և սորանից յետոյ կ'գի-
տենաք նորան և տեսաք նորան։

8 Փիլիպպոսը նորան ասեց. Տէր,
Հայրը ցոյց տուր մեզ, և բաւա-
9 կան է մեզ։ Յիսուսը նորան ա-
սեց. Այսքան ժամանակ ձեզ
հետ եմ, և ինձ չ՚ճանաչեցի՞ր,
Փիլիպպոս. ինձ տեսնողը Հօրը
տեսաւ. և դու ի՞նչպէս ես ա-
սում. Հայրը ցոյց տուր մեզ։
10 Չե՞ս հաւատում, որ ես Հօր մէջ
եմ, և Հայրն ինձանում է. այն
բանն՝ որ ես խօսում եմ ձեզ
հետ, իմ անձիցը չեմ խօսում.
բայց Հայրը՝ որ ինձանում բնա-
կած է, նա է գործում այդ գոր-
11 ծերը։ Հաւատացէք ինձ, որ ես
Հօր մէջ եմ, և Հայրն ինձանում
12 է։ Ապա թէ ոչ, իսկ այն գոր-
ծերի համար հաւատացէք ինձ.
ճշմարիտ ճշմարիտ ասում եմ
ձեզ, թէ ինձ հաւատացողը այն
գործերն որ ես գործում եմ, նա
էլ կ՚գործէ, և նորանցից էլ ա-
ւելի մեծ բաներ կ՚գործէ. որով-
հետև ես իմ Հօր մօտ եմ գնում։
13 Եւ ինչ որ էլ խնդրէք իմ ա-
նունովը, այն կ՚անեմ, որ Հայրը
14 փառաւորուի Որդումը։ Եթէ իմ
անունովը մի բան խնդրէք, ես
15 կ՚անեմ։ Եթէ ինձ սիրում էք,
իմ պատուիրանքները պահեցէք։
16 Եւ ես Հօրը կ՚աղաչեմ, և ուրիշ
Մխիթարիչ կ՚տայ ձեզ. որ մնայ
17 ձեզ հետ յաւիտեան։ Ճշմար-
տութեան Հոգին, որին աշխարհ-
քը կարող չէ ընդունել. որ չէ
տեսնում նորան. և ոչ էլ ճա-
նաչում նորան. բայց դուք նո-
րան ճանաչում էք, որովհետև
ձեզ մօտ է մնում և ձեզ հետ
18 կ՚լինի։ Չեզ որբ չեմ թողիլ.
19 կ՚գամ ձեզ մօտ։ Մի փոքր ժա-
մանակ էլ, և աշխարհքն էլ չի
տեսնիլ ինձ, բայց դուք կ՚տես-
նէք ինձ. որովհետև ես կենդա-
նի եմ, և դուք կենդանի կ՚լինիք։
20 Այն օրը դուք կ՚ճանաչէք, որ
ես իմ Հօր մէջ եմ, և դուք ին-
21 ձանում, և ես ձեզանում։ Ով որ
իմ պատուիրանքներն ունի և նո-
րանց պահում է, նա է ինձ սի-
րողը. և ինձ սիրողն իմ Հօրիցը
կ՚սիրուի. և ես կ՚սիրեմ նորան,
և ինձ կ՚յայտնեմ նորան։

Ասեց նորան Յուդան՝ ոչ թէ 22
Իսկարիովտացին. Տէր, ի՞նչ է,
որ մեզ կ՚յայտնես քեզ՝ և աշ-
խարհքին ոչ։ Յիսուսը պատաս- 23
խանեց և նորան ասեց. Եթէ մէկն
ինձ սիրում է, իմ խօսքը կ՚պահէ
և իմ Հայրը կ՚սիրէ նորան. և նո-
րա մօտը կ՚գանք և բնակու-
թիւն կ՚անենք նորա մօտ։ Ինձ 24
չ՚սիրողը իմ խօսքերը չէ պահում.
և այն խօսքը որ լսում էք՝ իմը
չէ, այլ ինձ ուղարկող Հօրը։
Այս խօսեցի ձեզ հետ՝ քանի որ 25
ձեզ մօտ եմ։ Բայց Մխիթարիչը՝ 26
Սուրբ Հոգին, որ Հայրը կ՚ու-
ղարկէ իմ անունովը, նա ամեն
բան կ՚սովորեցնէ ձեզ, և կ՚յիշե-
ցնէ ձեզ ամեն ինչ որ ձեզ ա-
սեցի։ Խաղաղութիւն եմ թո- 27
ղում ձեզ, իմ խաղաղութիւնն
եմ տալիս ձեզ. ոչ թէ ինչպէս
աշխարհքն է տալիս՝ ես տալիս
եմ ձեզ. ձեր սիրտը չ՚խռովի և
չ՚վախենայ։ Լսեցիք, որ ես ասե- 28
ցի ձեզ, թէ Գնում եմ, և կ՚գամ
ձեզ մօտ. եթէ ինձ սիրէիք, ա-
պա ուրախ կ՚լինէիք՝ որ ասեցի,
Հօր մօտ եմ գնում. որովհետև
իմ Հայրը մեծ է ինձանից։ Եւ 29
հիմա ասեցի ձեզ՝ լինելուց ա-
ռաջ. որ երբոր լինի. հաւատաք։
Այլ ևս շատ չեմ խօսիլ ձեզ 30
հետ, որովհետև այս աշխարհքի
իշխանը գալիս է, և ինձանում
ոչինչ չ՚ունի։ Այլ որպէս զի աշ- 31
խարհքը իմանայ, թէ ես սիրում
եմ Հօրը. և ինչպէս Հայրը պատ-
ուիրեց ինձ, այնպէս եմ անում.
վեր կացէք, գնանք այս տեղից։

ԳԼ. ԺԵ

Ես եմ ճշմարիտ որթը, և իմ 1
Հայրը մշակն է։ Ամեն ճիւղ, որ 2
ինձանում է և պտուղ չէ բե-
րում, Նա կարում է նորան. և
ամեն պտուղ բերողին մաքրում
է, որ էլ աւելի պտղաբեր լինի։
Դուք արդէն մաքուր էք այն 3
խօսքի համար, որ ձեզ հետ խօ-
սեցի։ Կացէք ինձանում՝ և ես 4
ձեզանում. ինչպէս որ ճիւղն իր
անձիցը կարող չէ պտուղ բերել։

եթէ որթումը չ՚մնայ, այսպէս
ոչ էլ դուք՝ եթէ ինձանում չը
5 մնաք։ Ես որթն եմ՝ դուք ճիւ-
ղերը. նա որ ինձանում մնում է,
և ես նորանում, նա շատ պտուղ
է բերում. որովհետև առանց
ինձ չէք կարող ոչինչ անել։
6 Եթէ մէկն ինձանում չէ մնում,
նա դուրս կ՚գցուի ինչպէս ճիւ-
ղը, և կ՚չորանայ. և ժողովում
են նորանց և կրակի մէջ գցում.
7 և այրվում է։ Եթէ կենաք ին-
ձանում՝ և իմ խօսքերը ձեզա-
նում կենան, ինչ որ էլ կամե-
նաք, կ՚խնդրէք, և կ՚լինի ձեզ։
8 Սորանով փառաւորուեցաւ իմ
Հայրը, որ շատ պտուղ բերէք.
և իմ աշակերտները լինիք։
9 Ինչպէս իմ Հայրն ինձ սիրեց,
ես էլ ձեզ սիրեցի. կացէք իմ
10 սէրի մէջ։ Եթէ իմ պատուի-
րանքները պահէք, իմ սէրի մէջը
կ՚կենաք. ինչպէս ես իմ Հօր
պատուիրանքները պահեցի, և
11 կենում եմ նորա սէրի մէջ։ Այս
բաները խօսեցի ձեզ հետ, որ
իմ ուրախութիւնը ձեզանում
մնայ, և ձեր ուրախութիւնը
12 լցուած լինի։ Սա է իմ պատուի-
րանքը, որ իրար սիրէք, ինչպէս
13 որ ես ձեզ սիրեցի։ Ոչ ով նո-
րանից աւելի մեծ սէր չ՚ունի, որ
մէկն իր անձը դնէ իր բարեկամ-
14 ների համար։ Դուք իմ բարե-
կամներն էք, եթէ անէք ինչ որ
15 ես պատուիրում եմ ձեզ։ Այլ
ևս ծառայ չեմ ասում ձեզ, ո-
րովհետև ծառան չ՚գիտէ, թէ
իր տէրն ինչ է գործում. բայց
ձեզ բարեկամ ասեցի, որովհե-
տև ամեն ինչ որ լսեցի իմ Հօ-
16 րիցն, իմացրի ձեզ։ Ոչ թէ դուք
ինձ ընտրեցիք. այլ ես ընտրեցի
ձեզ, և ձեզ դրի, որ դուք
գնաք և պտուղ բերէք. և ձեր
պտուղը մնայ. որպէսզի ինչ որ
իմ Հօրիցը խնդրէք իմ անունովը,
17 տայ ձեզ։ Սա եմ պատուիրում
ձեզ, որ իրար սիրէք։
18 Եթէ աշխարհքը ձեզ ատում
է, գիտացէք, որ ինձ ձեզանից
19 առաջ է ատել։ Եթէ այս աշ-
խարհքիցը լինէիք, ապա աշ-
խարհքն իրանը կ՚սիրէր. բայց ո-
րովհետև աշխարհքիցը չէք, այլ
ես ձեզ ընտրեցի աշխարհքիցը,
նորա համար աշխարհքն ատում
է ձեզ։ Յիշեցէք այն խօսքն, որ 20
ես ասեցի ձեզ թէ ծառան իր
տէրիցը մեծ չէ. եթէ ինձ հալա-
ծեցին, ձեզ էլ են հալածելու.
եթէ իմ խօսքը պահեցին՝ ձերն
էլ կ՚պահեն։ Բայց այս ամենը 21
կ՚անեն ձեզ իմ անունի համար.
որովհետև չ՚ճանաչեցին ինձ ու-
ղարկողին։ Եթէ ես չէի եկել 22
եւ նորանց հետ խօսել, նորանք
մեղք չէին ունենալ. բայց հիմա
պատճառանք չ՚ունին իրանց մեղ-
քի համար։ Ինձ ատողն իմ Հօրն 23
էլ է ատում։ Եթէ այն գործե- 24
րը չէի գործել նորանց միջումը,
որ մէկ ուրիշը չ՚գործեց, մեղք
չէին ունենալ. բայց հիմա տե-
սան էլ, և ատեցին ինձ էլ և
իմ Հօրն էլ։ Այլ այս եղաւ որ- 25
պէսզի այն խօսքը կատարուի, որ
նորանց օրէնքումը գրուած է,
թէ Զուր տեղն ատեցին ինձ։
Բայց երբոր Մխիթարիչը կ՚գայ, 26
որ ես Հօրիցը կ՚ուղարկեմ ձեզ,
ճշմարտութեան Հոգին, որ Հօ-
րիցն է դուրս գալիս, նա կ՚վկա-
յէ ինձ համար։ Եւ դուք էլ կը 27
վկայէք, որովհետև սկզբիցն ինձ
հետ էք։

ԳԼ. ԺԶ

Այս խօսեցի ձեզ հետ, որ չը 1
գայթակղիք։ Իրանց ժողովարան- 2
ներիցը ձեզ դուրս կ՚հանեն. և
ժամանակ էլ կ՚գայ՝ որ ամեն
ով որ սպանէ ձեզ, կ՚կարծէ թէ
Աստուծուն պաշտօն է մատու-
ցանում։ Եւ սա կ՚անեն ձեզ. ո- 3
րովհետև ոչ Հօրը ճանաչեցին և
ոչ ինձ։ Այս էլ խօսեցի ձեզ 4
հետ, որ երբոր ժամանակը գայ,
սորանք յիշէք, թէ ես ասեցի
ձեզ։ Բայց այս բաներն սկզբիցը
չ՚ասեցի ձեզ, որովհետև ես ձեզ
հետ էի։
Բայց հիմա ինձ ուղարկողի 5
մօտ եմ գնում. և ձեզանից ոչ
մէկը չէ հարցնում ինձ, թէ Ո՞ւր

6 ես գնում։ Այլ որովհետև այս
բաները խօսեցի ձեզ հետ,
տրտմութիւնը լցրեց ձեր սիրտը։
7 Բայց ես ճշմարտութիւնն եմ
ասում ձեզ, թէ լաւ է ձեզ հա-
մար, որ ես գնամ. որովհետև ե-
թէ չ'գնամ, Մխիթարիչը չի գալ
ձեզ մօտ. բայց եթէ գնամ, նո-
8 րան կ'ուղարկեմ ձեզ մօտ։ Եւ
նա՝ երբոր գայ՝ աշխարհքին կը
յանդիմանէ մեղքի համար, և
արդարութեան համար, և դա-
9 տաստանի համար։ Մեղքի հա-
մար, որովհետև ինձ չեն հաւա-
10 տում։ Արդարութեան համար,
որովհետև ես իմ Հօր մօտ եմ
գնում, և ինձ այլ ևս չէք տես-
11 նիլ։ Եւ դատաստանի համար,
որովհետև այս աշխարհքի իշխա-
12 նը դատապարտուած է։ Տակա-
ւին շատ բան ունիմ ձեզ ասե-
լու, բայց հիմա չէք կարող տա-
13 նիլ։ Բայց երբոր նա՝ ճշմարտու-
թեան Հոգին կ'գայ, նա կ'ա-
ռաջնորդէ ձեզ ամեն ճշմարտու-
թեան մէջ. որովհետև իր ան-
ձիցը չի խօսիլ, այլ ինչ որ կը
լսէ՝ կ'խօսի, և գալու բաները կը
14 պատմէ ձեզ։ Նա ինձ կ'փառա-
ւորէ, որովհետև իմիցը կ'առնէ
15 և կ'պատմէ ձեզ։ Ամեն ինչ որ
Հայրն ունի՝ իմն է. Նորա հա-
մար ասեցի ձեզ, թէ իմիցը
16 կ'առնէ և կ'պատմէ ձեզ։ Մի
քիչ ժամանակ էլ, և չէք տես-
նիլ ինձ. և դարձեալ մի քիչ, և
կ'տեսնէք ինձ. որովհետև ես Հօր
մօտ եմ գնում։
17 Նորա աշակերտներից սմանք ի-
րար ասում էին. Սա ի՞նչ է, որ
ասում է մեզ. Մի քիչ ժամանակ
և չէք տեսնիլ ինձ, և դարձեալ
մի քիչ, և կ'տեսնէք ինձ. և,
18 թէ Ես Հօր մօտ եմ գնում։ Եւ
ասում էին. Ի՞նչ է այն որ ա-
սում է՝ Քիչ ժամանակ. մենք չը
գիտենք, թէ ինչ է խօսում։
19 Եւ Յիսուսը իմացաւ, որ ու-
զում էին հարցնել իրան, և ա-
սեց նորանց. Դորա՞ համար էք
հարցնում իրար, որ ասեցի, թէ
Մի քիչ ժամանակ, և չէք տեսնիլ
ինձ, և դարձեալ մի քիչ, և կը
տեսնէք ինձ։ Ճշմարիտ ճշմա- 20
րիտ ասում եմ ձեզ. որ դուք
լաց կ'լինիք և կ'ողբաք և աշ-
խարհքը կ'ուրախանայ. դուք կը
տրտմիք, այլ ձեր տրտմութիւնն
ուրախութիւն կ'լինի։ Կինը, երբ- 21
որ ծնում է, տրտմութիւն ունի,
որ նորա ժամանակը հասել է,
բայց երբոր երեխան ծնեց, նե-
ղութիւնն էլ չէ յիշում այն ու-
րախութեան համար, որ մի մարդ
ծնուեցաւ աշխարհքի մէջ։ Եւ 22
դուք էլ հիմա տրտմութիւն ու-
նիք, բայց դարձեալ կ'տեսնեմ
ձեզ. և ձեր սիրտը կ'ուրախանայ.
և ձեր ուրախութիւնը ոչ ոք չի
առնիլ ձեզանից։ Եւ այն օրը 23
ոչինչ չէք հարցնիլ ինձ. Ճշմա-
րիտ ճշմարիտ ասում եմ ձեզ,
թէ ինչ որ Հօրիցը խնդրէք իմ
անունովը, կ'տայ ձեզ։ Մինչև 24
հիմա ոչինչ չ'խնդրեցիք իմ ա-
նունովը. խնդրեցէք և կ'առնէք,
որ ձեր ուրախութիւնը կատար-
եալ լինի։ Այս բաներն առակ- 25
ներով խօսեցի ձեզ հետ. բայց
ժամանակ կ'գայ, որ էլ առա-
կով չեմ խօսիլ ձեզ հետ. այլ
յայտնապէս կ'պատմեմ ձեզ Հօր
համար։ Այն օրումն իմ անու- 26
նովը կ'խնդրէք. և չեմ ասում
ձեզ, թէ ես ձեզ համար կ'աղա-
չեմ Հօրը։ Նորա համար որ Հայրն 27
ինքը սիրում է ձեզ. որովհետև
դուք ինձ սիրել էք և հաւա-
տացել էք, թէ ես Աստուածա-
նից դուրս եկայ։ Հօրիցը դուրս 28
եկայ և եկայ աշխարհք. դարձ-
եալ թողում եմ աշխարհքը և
գնում եմ Հօր մօտը։
Աշակերտները նորան ասեցին. 29
Ահա հիմա յայտնի ես խօսում,
և ոչ մի առակ չես ասում։ Հի- 30
մա գիտենք, որ դու բոլորը գի-
տես. և պէտքդ չէ, որ մէկը
հարցնէ քեզ. սորանով հաւա-
տում ենք, թէ դու Աստուածա- 31
նից դուրս եկար։ Յիսուսը պա-
տասխանեց նորանց. Հիմա հա- 32
ւատում է՞ք։ Ահա ժամանակ
կ'գայ, և հիմա եկած է, որ ա-
մեն մէկդ կ'ցրուիք իր տեղը, և
ինձ մինակ կ'թողէք. բայց ես

ճանաչեցին որ դու ուղարկեցիր
26 ինձ։ Եւ ես քո անունը ճանա-
չեցրի նորանց, և կ'ճանաչեցնեմ.
որ այն սէրն, որով ինձ սիրեցիր՝
նորանցում լինի, և ես էլ նո-
րանցում։

ԳԼ. ԺԸ

1 Յիսուսը այս ասելուց յետոյ իր
աշակերտների հետ դուրս գնաց
Կեդրոն հեղեղատի միւս կողմը,
որտեղ մի պարտէզ կար. որի մէջ
մտաւ ինքը և իր աշակերտները։
2 Յուդան՝ նորան մատնողն էլ գի-
տէր այն տեղը. որովհետև Յի-
սուսը շատ անգամ ժողովուել
էր այնտեղ իր աշակերտների
3 հետ։ Եւ Յուդան զինուորների
գունդը և քահանայապետներից
և Փարիսեցիներից սպասաւորներ
առնելով եկաւ այնտեղ ջահե-
րով և լապտերներով և զէնքե-
4 րով։ Բայց Յիսուսը՝ երբոր գի-
տաց այն ամեն բաները, որ գա-
լիս էին իր վերայ, դուրս եկաւ
նորանց ասեց. Ո՞ւմ էք ուզում։
5 Պատասխանեցին նորան. Յիսուս
Նազովրեցուն. Յիսուսը նորանց
ասեց. Ես եմ. Յուդան՝ նորան
մատնողն էլ կանգնած էր նո-
6 րանց հետ։ Երբոր ասեց նորանց
թէ Ես եմ, նորանք ետ ետ գնա-
ցին, և գետնի վերայ ընկան։
7 Եւ դարձեալ հարցրեց նորանց.
Ո՞ւմ էք ուզում. և նորանք ա-
սեցին. Յիսուս Նազովրեցուն։
8 Յիսուսը պատասխանեց. Ձեզ ա-
սեցի թէ Ես եմ. արդ թէ որ
ինձ էք ուզում, թող տուէք
9 դորանց, որ գնան։ Որ կատարուի
այն խօսքը որ ասեց, թէ Նո-
րանց որ ինձ տուիր, նորանցից
10 ոչ մէկն էլ չ'կորցրի։ Բայց Սիմօն
Պետրոսը, որ սուր ունէր, քա-
շեց նորան և քահանայապետի
ծառային զարկեց, և նորա աջ
ականջը կտրեց գցեց. և այն
ծառայի անունը Մաղքոս էր։
11 Յիսուսն էլ Պետրոսին ասեց.
Սուրդ դիր պատեանի մէջը. այն
բաժակը որ իմ Հայրը տուաւ
ինձ, ես այն չ'խմե՞մ։
Եւ զինուորների գունդը և հա- 12
զարապետը և Հրէաների սպասա-
ւորները բռնեցին Յիսուսին, և
կապեցին նորան. Եւ տարան նո- 13
րան առաջ Աննայի մօտ. որով-
հետև Կայիափայի աներն էր, որ
այն տարուայ քահանայապետն
էր։ Սա այն Կայիափան էր, որ 14
Հրէաներին խրատ տուաւ, թէ
Լաւ է, մէկ մարդ կորչի ժողո-
վրդի համար։ Եւ Սիմօն Պետ- 15
րոսը և միւս աշակերտը գնում
էին Յիսուսի ետևից։ Այն աշա-
կերտը ծանօթ էր քահանայա-
պետին, և Յիսուսի հետ մտաւ
քահանայապետի սրահը։ Պետ- 16
րոսն էլ դռան մօտ կանգնած էր
դուրսը. այն միւս աշակերտը որ
քահանայապետին ծանօթ էր,
դուրս եկաւ և դռնապանին ա-
սեց, և Պետրոսին ներս մտցրեց։
Եւ այն աղջիկը՝ որ դռնապան 17
էր՝ Պետրոսին ասեց. Մի՞թէ դու
էլ այն մարդի աշակերտներիցն
ես. և նա ասեց. Չեմ։ Ծառա- 18
ներն ու սպասաւորներն էլ կանգ-
նել էին՝ կրակ արած, որովհետև
ցուրտ էր, և տաքանում էին.
Պետրոսն էլ նորանց հետ կանգ-
նած էր և տաքանում էր։ Եւ 19
քահանայապետը Յիսուսին հար-
ցրեց նորա աշակերտների հա-
մար և նորա վարդապետութեան
համար։ Յիսուսը պատասխանեց 20
նորան. Ես յայտնի խօսեցի աշ-
խարհքին. ես միշտ սովորեցրի
ժողովարանումը և տաճարումը,
որտեղ ամեն տեղից Հրէաները
ժողովվում են, և ծածուկ ոչինչ
չ'խօսեցի։ Ի՞նչու ես ինձ հարցը- 21
նում. լսողներին հարցրու, թէ
ես ինչ խօսեցի նորանց. ահա նո-
րանք գիտեն, ես ինչ եմ ասել։
Երբոր նա սա ասեց, սպասաւոր- 22
ներից մէկը, որ այնտեղ կանգ-
նած էր, Յիսուսին ապտակ տուաւ
և ասեց. Ա՞յդպէս ես պատաս-
խանում քահանայապետին։ Յի- 23
սուսը նորան պատասխանեց. Ե-
թէ չար խօսեցի, վկայիր այն չա-
րի համար. բայց եթէ բարի, ի՞ն-
չու ես զարկում ինձ։ Եւ Աննան 24
նորան կապած ուղարկեց Կա-

մինակ չ'եմ. որովհետև Հայրն ինձ
33* հետ է։ Այս բաները խօսեցի ձեզ
հետ, որ ինձանում խաղաղու-
թիւն ունենաք. աշխարհքումը նե-
ղութիւն կ'ունենաք. բայց քաջա-
ցէք, ես յաղթել եմ աշխարհքին։

ԳԼ. ԺԷ

1 Յիսուսը այս խօսեց, և իր աչ-
քերը բարձրացրեց դէպի երկին-
քը և ասեց. Հայր, ժամը հա-
սել է, փառաւորիր քո Որդուն,
որ քո Որդին էլ քեզ փառա-
2 ւորէ. Ինչպէս նորան իշխանու-
թիւն տուիր ամեն մարմնի վերայ
որ յաւիտենական կեանք տայ
այն ամենին՝ որ տուիր նորան։
3 Եւ սա է յաւիտենական կեան-
քը, որ ճանաչեն քեզ միայն
ճշմարիտ Աստուած. և նորան,
որ ուղարկեցիր՝ Յիսուսին Քրիս-
4 տոսին։ Ես քեզ փառաւորեցի
երկրի վերայ. այն գործը կատա-
րեցի, որ տուիր ինձ՝ որ անեմ։
5 Եւ հիմա, փառաւորիր ինձ դու,
Հայր, քեզ մօտ այն փառքովը,
որ աշխարհքի լինելուցն առաջ
6 ունէի քեզ մօտ։ Քո անունը
յայտնեցի այն մարդկանց, որ
աշխարհքիցը տուիր ինձ. քոնն
էին, և ինձ տուիր նորանց. և
7 քո խօսքը պահեցին։ Հիմա իմա-
ցան, որ այն ամենը որ ինձ տուիր՝
8 քեզանից է. Որովհետև այն խօս-
քը՝ որ ինձ տուիր, ես նորանց
տուի. և նորանք ընդունեցին, և
ճշմարտութեամբ իմացան, որ
քեզանից դուրս եկայ. և հա-
ւատացին, թէ դու ուղարկեցիր
9 ինձ։ Ես նորանց համար եմ ա-
ղաչում. ոչ թէ աշխարհքի հա-
մար եմ աղաչում. այլ նորանց
համար՝ որ ինձ տուիր, որ քոնն
10 են։ Եւ ինչ որ իմն է, բոլորը
քոնն է. և ինչ որ քոնն է՝ իմն
է. և ես փառաւորուած եմ նո-
11 րանցում։ Եւ ես այլ ևս աշ-
խարհքումս չեմ, իսկ նորանք
աշխարհքումս են, և ես քեզ
մօտ եմ գալիս. ով Սուրբ Հայր,
պահիր նորանց քո անունովը,
որոնց տուիր ինձ, որ մէկ լինեն
ինչպէս մենք։ Երբոր ես աշխարհ- 12
քումը նորանց հետ էի, ես էի
պահում նորանց քո անունովը.
նորանց որ տուիր ինձ, պահեցի.
և նորանցից ոչ մէկը չ'կորաւ.
բայց միայն կորուստի որդին, որ
գրուածը կատարուի։ Բայց հի- 13
մա ես քեզ մօտ եմ գալիս. և
այս բանը խօսում եմ աշխարհ-
քումը, որ իմ ուրախութիւնը
կատարեալ ունենան իրանց ան-
ձերումը։ Եւ քո խօսքը նորանց 14
տուի, և աշխարհքը նորանց ա-
տեց, որովհետև աշխարհքիցը
չեն, ինչպէս ես էլ աշխարհքիցը
չեմ։ Ես չեմ աղաչում, որ աշ- 15
խարհքիցը վեր առնես նորանց.
այլ որ նորանց պահես չարիցը։
Այս աշխարհքիցը չեն, ինչպէս 16
ես էլ աշխարհքիցը չեմ։ Նորանց 17
սուրբ արա քո ճշմարտութիւնո-
վը. քո խօսքը ճշմարտութիւն է։
Ինչպէս դու ինձ ուղարկեցիր աշ- 18
խարհք, ես էլ նորանց ուղարկեցի
աշխարհք։ Եւ ես նորանց հա- 19
մար իմ անձը սուրբ եմ անում,
որ նորանք էլ ճշմարտութիւնով
սրբուած լինեն։ Բայց ոչ թէ մի- 20
այն նորանց համար եմ աղա-
չում, այլ նորանց համար էլ,
որ նորանց խօսքովը կ'հաւատան
ինձ։ Որ ամենքը մէկ լինեն, ինչ- 21
պէս դու, Հայր, ինձանում, և
ես քեզանում, որ նորանք էլ
մեզանում մէկ լինեն. որ աշ-
խարհքը հաւատայ, թէ դու ու-
ղարկեցիր ինձ։ Եւ ես այն փառ- 22
քըն որ ինձ տուիր՝ նորանց տուի,
որ մէկ լինեն՝ ինչպէս մենք էլ
մէկ ենք։ Ես նորանցում՝ և դու 23
ինձանում, որ կատարեալ լինեն
միութիւնում, որպէսզի աշխարհ-
քը դիտենայ, թէ դու ուղար-
կեցիր ինձ. և սիրեցիր նորանց՝
ինչպէս ինձ սիրեցիր։ Հայր, նո- 24
րանք որ ինձ տուիր, կամենում
եմ, որ ինչ տեղ որ ես եմ՝ նո-
րանք էլ ինձ հետ լինեն. որ իմ
փառքը տեսնեն, որ տուիր ինձ.
որովհետև աշխարհքի հիմնելուցն
առաջ սիրեցիր ինձ։ Արդար Հայր, 25
աշխարհքը չ'ճանաչեց քեզ. բայց
ես ճանաչեցի քեզ, և սորանք

մոսների գրքումն գրուած է, Թէ
Նորա բնակութիւնը աւերակ
պիտի լինի, և նորանում բնա-
կող չ'լինի. և նորա պաշտօնը
21 ուրիշն առնէ։ Հիմա պէտք է այս
մարդկանցիցը, որ մեզ հետ են
եղել այն բոլոր ժամանակը, որ
Տէր Յիսուսը մեզ հետ մտաւ և
22 դուրս ելաւ, Յովհաննէսի մկրտ-
ութիւնիցն սկսած մինչև այն
օրը, որ մեզանից վերացաւ, սո-
րանցից մէկը մեզ հետ վկայ լինի
23 նորա յարութեանը։ Եւ երկու
հոգի կանգնեցրին՝ Յովսէփին՝ որ
Բարսաբա էր կոչվում, որ Յուս-
տոս անուանուեցաւ, և Մատա-
24 թիային։ Եւ աղօթք անելով ա-
սեցին. Դու, Տէր. ամենի սրտա-
գէտ. այս երկուսից մէկը յայտ-
25 նիր, որին ընտրեցիր, Որ այս
պաշտօնի և առաքելութեան վի-
ճակն առնէ, որից Յուդան ընկ-
կաւ՝ իր տեղը գնալու համար։
26 Եւ նորանց վերայ վիճակ գցեցին,
և վիճակն ընկաւ Մատաթիային
վերայ, և նա տասնեմէկ առա-
քեալների հետ համարուեցաւ։

ԳԼ. Բ

1 Եւ երբոր Պենտէկոստէի օրերը
լրացան, ամենքը միաբան մէկ-
2 տեղ էին։ Եւ յանկարծակի եր-
կընքիցը մի հնչիւն եղաւ՝ սաս-
տիկ փչող քամու պէս. և լցրեց
բոլոր տունը՝ ուր նստած էին։
3 Եւ երևեցան նորանց բաժանուած
լեզուներ ինչպէս կրակից. և նըս-
տեց նորանց ամեն մէկի վերայ։
4 Եւ ամենքը Սուրբ՝ Հոգով լցուե-
ցան, և սկսեցին ուրիշ լեզուներ-
ով խօսել, ինչպէս որ Հոգին
5 նորանց խօսել էր տալիս։ Եւ
Երուսաղէմումը բնակուած էին
Հրէաներ՝ Աստուածավախ մար-
դիկ՝ երկնքի տակի ամեն ազգե-
6 րից։ Եւ երբոր այս ձայնը եղաւ,
բազմութիւնն եկաւ մէկտեղ և
կիտուեցաւ. որովհետև ամեն
մէկը լսում էր նորանց, որ իր
7 լեզուովը խօսում էին։ Եւ ա-
մենքը հիանում էին և զարմա-
նում, և իրար ասում էին. Չէ՞
որ ահա սորանք ամենքը, որ խօ-
սում են, Գալիլեացի են։ Եւ 8
ինչպէս մենք ամեն մէկս մեր
լեզուովը լսում ենք որ նորանում
ծնուած ենք. Պարթևներ և Մարք 9
և Եղամացիք, և բնակողներ Մի-
ջագետի. Հրէաստանի և Կապա-
դովկիայի, Պոնտոսի և Ասիայի
մէջ. Փռիւգիայի և Պամփիւլիայի 10
մէջ, Եգիպտոսումը. և Լիբիացի-
ների կողմերումը Կիւրենէի մօտ,
և նորաեկ Հռովմայեցիներ, Հրէա- 11
ներ և նորահաւատներ, Կրետա-
ցիներ և Արաբացիներ, լսում
ենք. որ նորանք մեր լեզուներովը
Աստուծոյ մեծամեծ բաները խօ-
սում են։ Եւ հիանում էին ա- 12
մենքը և զարմանում, և մէկը
միւսին ասում էին, Սա ինչ պի-
տի լինի։ Իսկ ուրիշները ծաղր 13
անելով ասում էին, Քաղցուով
արբած են։
Եւ Պետրոսը վերկացաւ այն 14
տասնեմէկի հետ, իր ձայնը բար-
ձրացրեց, և նորանց հետ խօսեց.
Ով Հրէաստանցի մարդիկ. և ա-
մենքդ՝ որ բնակուած էք Երու-
սաղէմումը, սա ձեզ յայտնի լի-
նի, և իմ խօսքերին ականջ դրէք։
Որովհետև չէ թէ ինչպէս դուք 15
էք կարծում, սորանք արբած են.
որովհետև օրուայ երրորդ ժամն
է։ Այլ սա Յովէլ մարգարէի 16
ձեռովն ասուածն է, Եւ կ'լինի 17
յետի օրերումը, ասում է Աստ-
ուած, որ իմ Հոգուցը կ'թափեմ
ամեն մարմնի վերայ, և ձեր որ-
դիները և ձեր աղջիկները կ'մար-
գարէանան. և ձեր երիտասարդ-
ները տեսիլքներ կ'տեսնեն, և ձեր
ծերերը երազներ կ'տեսնեն։ Եւ 18
իմ ծառաների վերայ և իմ ա-
ղախինների վերայ էլ այն օրե-
րումն իմ Հոգուցը կ'թափեմ. և
կ'մարգարէանան։ Եւ նշաններ 19
կ'տամ վերևը երկնքումը, և
նշաններ ներքևը երկրումը, ար-
իւն և կրակ և ծխի մառախուղ։
Արեգակը խաւար կ'դառնայ, և 20
լուսինն արիւն, Տիրոջ մեծ և
երևելի օրը գեռ չ'եկած։ Եւ կը 21
լինի, ամեն ով որ Տիրոջ անունը
կ'կանչէ՝ կ'փրկուի։ Ով Իսրայէ- 22

լացի մարդիկ, այս խօսքերը լսեցէք. Յիսուս Նազովրեցին՝ այն մարդը՝ որ Աստուածանից ցոյց տրուեցաւ ձեզանում զօրութիւններով և հրաշքներով և նշաններով, որ Աստուած նորա ձեռովն արաւ ձեր միջումը. ինչ-
23 պէս դուք էլ գիտէք. Նորան, որ Աստուծոյ սահմանուած խորհրդովը և կանխագիտութիւնովը մատնուած էր, առաք անօրէնների ձեռով փայտի վերայ
24 բևեռած, սպանեցիք. Որին Աստուած յարութիւն տուաւ մահի ցաւերը լուծելով. որովհետև կարելի չէր, որ նա բռնուի նո-
25 րանից։ Վասն զի Դաւիթն ասում է նորա համար. Առաջուց տեսնում էի Տիրոջն ամեն ժամանակ իմ առաջին. որ իմ աջ
26 կողմն է, որ չ՚սասանիմ։ Սորա համար իմ սիրտն ուրախ եղաւ, և լեզուս ցնծացաւ, և իմ մարմինն էլ յուսով կ՚բնակուէ։
27 Որովհետև իմ անձը չես թողիլ *գերեզմանումը, և ոչ էլ քո Սուրբին ապականութիւն տես-
28 նել կ՚տաս։ Կեանքի ճանապարհները ճանաչեցրիր ինձ. քո երեսի ուրախութիւնովը կ՚լցնես ինձ։
29 Մարդիկ եղբարք, պէտք է համարձակութեամբ ասեմ ձեզ Դաւիթ նահապետի համար. թէ նա մեռաւ էլ՝ թաղուեցաւ էլ. և նորա գերեզմանը մինչև այսօր
30 մեր միջումն է։ Իսկ որովհետև մարգարէ էր, և գիտէր, որ Աստուած երդումով երդուաւ նորան, որ նորա երանքի պաղիցը մարմնի կողմանէ յարուցանէ Քրիստոսին նորա աթոռի վերայ
31 նստեցնելու համար. Առաջուց իմացած՝ խօսեց Քրիստոսի յարութեան համար, թէ նորա անձը *գերեզմանումը չ՚թողուեցաւ՝ և ոչ էլ նորա մարմինն ա-
32 պականութիւն տեսաւ։ Սոյն այս Յիսուսին Աստուած յարութիւն տուաւ որի վկաներն ենք մենք
33 ամենքս։ Արդ Աստուծոյ աջովը բարձրացած, և Սուրբ Հոգու խոստմունքը Հօրիցն առած, թափեց այս, որ դուք հիմա տեսնում և լսում էք։ Որովհետև 34
ոչ թէ Դաւիթը վեր ելաւ երկինքը. բայց ինքն ասում է. Տէրն իմ Տիրոջն ասեց. Իմ աջ կողմին նստիր, Մինչև քո թշնամիները 35
քո ոտների պատուանդան դնեմ։ Հիմա թող ստոյգ գիտենայ Իս- 36
րայէլի բոլոր տունը, որ Աստուած նորան Տէր և Օծեալ արաւ, սոյն այս Յիսուսին, որին դուք խաչեցիք։

Եւ երբոր այս լսեցին, իրանց 37
սրտերումը զղջացին. և ասեցին Պետրոսին և միւս առաքեալներին, Ի՞նչ անենք, մարդիկ եղբարք։ Պետրոսն էլ նորանց ա- 38
սեց. Ապաշխարեցէք՝ և ձեզանից ամեն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունովը՝ մեղքերի թողութեան համար, և Սուրբ Հոգու պարգևը կ՚ընդունիք։ Որովհետև ձեզ և ձեր որդ- 39
կանց համար է այս խոստմունքը, և այն ամեն հեռաւորների համար, որոնց մեր Տէր Աստուածը կ՚կանչէ։ Եւ ուրիշ շատ խօսքե- 40
րով վկայութիւն էր դնում, և յորդորում և ասում. Ազատուեցէք այս թիւր ազգիցը։ Եւ 41
նորանք որ նորա խօսքը յօժարութեամբ ընդունեցին՝ մկրտուեցան. և այն օրը երեք հազարի չափ հոգիք աւելացան։ Եւ միշտ 42
հետևում էին առաքեալների վարդապետութեանը և հաղորդութեանը և հացի կտրելին՝ և աղօթքներին։

Եւ ամեն անձի վերայ վախ ե- 43
կաւ. շատ հրաշքներ և նշաններ էլ էին գործվում առաքեալների ձեռովը։ Եւ բոլոր հաւատացեալ- 44
ներն իրար հետ մէկտեղ էին, և ամեն բան հասարակաց ունէին։ Եւ ապրանքները և բոլոր բաները 45
ծախում էին, և բաշխում էին այն ամենին, ում ինչ բան որ պէտք էր լինում։ Ամեն օր միա- 46
բանութեամբ տաճարումն էին լինում, և հաց էին կտրում տներումը, և ուրախութիւնով և

*Կամ՝ մեռելների բնակարանումը. Գրաբ. դժոխքումը

սրտի միամտութիւնով կերա-
47 կուր էին ուտում. Աստուծուն օրհնում էին, և բոլոր ժողովրդի առաջին շնորհք ունէին. և Տէրն ամեն օր փրկուածներին աւելացնում էր եկեղեցու հետ։

ԳԼ. Գ

1 Պետրոսն և Յովհաննէսը գնում էին միասին տաճարը իններորդ
2 ժամի աղօթքին։ Եւ մի մարդ կար իր մօր որովայնիցը կաղ, որին վերկալած՝ ամեն օր գընում էին տաճարի այն դռան մօտ, որ Գեղեցիկ էր կոչվում, տաճարը մտնողներիցը ողորմու-
3 թիւն խնդրելու համար։ Երբոր նա տեսաւ Պետրոսին և Յովհաննէսին, որ գնում էին մտնեն տաճարը, աղաչում էր, որ ողորմու-
4 թիւն առնէ նորանցից։ Պետրոսը Յովհաննէսի հետ մտիկ արաւ
5 նորան և ասեց. Մեզ նայիր։ Նա էլ ուշը դարձրեց դէպի նորանց, սպասելով որ մի բան առնէ նո-
6 րանցից։ Պետրոսն էլ ասեց. Արծաթ և ոսկի չ՚ունիմ. բայց ինչ որ ունիմ, այն քեզ կ՚տամ. Յիսուս Քրիստոսի՝ Նազովրեցու ա-
7 նունովը վեր կաց և ման եկ։ Եւ աջ ձեռքիցը բռնեց՝ վերկացրեց նորան. և շուտով հաստատուեցան նորա սրունքը և բարձքը։
8 Վեր թռաւ, կանգնեց և ման էր գալիս, և նորանց հետ մտաւ տաճարը ման գալով և վազ տալով և Աստուծուն օրհնելով։
9 Եւ բոլոր ժողովուրդը տեսաւ նորան, որ ման էր գալիս և Աստու-
10 ծուն օրհնում էր։ Եւ ճանաչում էին նորան, որ սա էր, որ ողորմութեան համար նստում էր տաճարի Գեղեցիկ դռանը. և լցուեցան երկիւղով և զարմանքով այն եղածի համար։
11 Եւ քանի որ այն բժշկուած կաղը Պետրոսին և Յովհաննէսին բռնած էր, բոլոր ժողովուրդը վազեց նորանց մօտ այն սրահը, որ Սողոմոնի սրահ էր կոչվում՝
12 զարմացած։ Երբոր Պետրոսը տեսաւ, պատասխանեց ժողովրդին. Ով Իսրայէլացի մարդիկ, ի՞նչու էք զարմացել սորա վերայ, կամ մե՞զ վերայ ինչու էք սաստիկ նայում, իբր թէ մենք մեր զօրութիւնովը և քաջութիւնովն արած լինինք, որ դա ման դայ. Աբրահամի և Իսահակի և Յա- 13
կոբի Աստուածը՝ մեր հայրերի Աստուածը, փառաւորեց իր *Որդի Յիսուսին. որին դուք մատնեցիք, և ուրացաք Պիղատոսի առաջին երբոր նա վճռեց՝ որ արձակէ նորան։ Եւ դուք այն Սուր- 14
բին և Արդարին ուրացաք, և խնդրեցիք որ մի մահապարտ մարդ շնորհէ ձեզ։ Իսկ կեանքի 15
Առաջնորդին սպանեցիք, որին Աստուած մեռելներից յարութիւն տուաւ. որի վկաներն ենք մենք։ Եւ նորա անունի հաւատ- 16
քովը սորան՝ որ տեսնում էք և ճանաչում էք, նորա անունը հաստատեց. և նոյն հաւատքը՝ որ նորանով է՝ այս առողջութիւնը տուաւ դորան ձեր ամենի առաջին։ Եւ հիմա, եղբարք, գիտեմ, 17
որ անգիտութեամբ արիք՝ ինչպէս ձեր իշխաններն էլ։ Բայց Աստ- 18
ուած, ինչ որ առաջուց բոլոր մարգարէների բերանովը պատմեց՝ Քրիստոսի չարչարուելու համար, այնպէս էլ կատարեց։ Ուրեմն 19
զղջացէք և ետ դարձէք, որ ձեր մեղքերը ջնջուին. Որ Տիրոջ երե- 20
սիցը հանգստանալու ժամանակները գան. և նա ուղարկէ առաջուց ձեզ համար քարոզուած Յիսուս Քրիստոսին. Որին երկինքը 21
պէտք է ընդունի, մինչև այն ամեն բաների հաստատուելու ժամանակները, որոնց համար խօսեց Աստուած իր բոլոր սուրբ մարգարէների բերանովը յաւիտենից հետէ։ Որովհետև Մովսէսը հայ- 22
րերին ասեց. թէ Ձեր Տէր Աստուածը մարգարէ վեր կ՚կացնէ ձեզ համար ձեր եղբայրների միջիցը ինձ նման, նորան լսեցէք ամեն բանի համար՝ ինչ որ խօսի ձեզ։ Եւ կ՚լինի, որ ամեն անձն՝ 23
որ այն մարգարէին չ՚լսէ, նա ժո-

*Կամ՝ ծառայ

ղովրդի միջիցը թող սատակուի։
24 Եւ բոլոր մարգարէները որ Սա-
մուէլից սկսած մարգարէացան,
25 այս օրերը պատմեցին։ Դուք էք
այն մարգարէների որդիքը՝ և այն
ուխտի, որ Աստուած մեր հայ-
րերի հետ հաստատեց, և Աբրա-
համին ասեց. Եւ քո զաւակովը
պիտի օրհնուին երկրի բոլոր ազ-
26 գերը։ Աստուած առաջ ձեզ հա-
մար վերկացրեց իր Որդի Յի-
սուսին, և նորան ուղարկեց՝ որ
նա ձեզ օրհնէ, որ ամեն մէկը
ետ դառնաք ձեր չարութիւնն-
երիցը։

ԳԼ. Դ

1 Եւ նորանք տակաւին ժողովրդի
հետ խօսելիս *քահանաները և
տաճարի իշխանը և Սադուկեցի-
2 ները նորանց վերայ հասան, Սաս-
տիկ բարկացած նորա համար՝ որ
նորանք ժողովրդին սովորեցնում
էին, և քարոզում էին Յիսուսի
ձեռովը մեռելներից յարութիւն
3 առնելը։ Եւ իրանց ձեռքերը
գցեցին նորանց վերայ, և բանտի
մէջ դրին մինչև հետևեալ օրը.
որովհետև արդէն իրիկուն էր։
4 Եւ այս խօսքը լսողներից շատերը
հաւատացին. և մարդկանց հա-
մարը հինգ հազարի չափ եղաւ։
5 Եւ հետևեալ օրը եղաւ որ
նորանց իշխանները և ծերերը և
դպիրները ժողովուեցան Երու-
6 սաղէմ։ Եւ Աննա քահանայա-
պետը և Կայիափան, և Յովհան-
նէսը և Աղեքսանդրոսը, և այն
ամենը որ քահանայական ցեղիցն
7 էին։ Եւ նորանց կանգնեցնելով
մէջտեղը՝ հարցնում էին Թէ ի՞նչ
զօրութիւնով կամ ո՞ր անունով
8 արիք դուք այս։ Այն ժամանակ
Պետրոսը Սուրբ Հոգով լցուած
նորանց ասեց. Ով ժողովրդի իշ-
9 խաններ՝ և Իսրայէլի ծերեր. Եթէ
մենք այսօր հարցաքննվում ենք
մի տկար մարդի երախտիքի հա-
մար, թէ ում ձեռովը սա բժշ-
10 կուեցաւ, թող յայտնի լինի ձեզ
ամենիդ՝ և բոլոր Իսրայէլի ժո-
ղովրդիդ, որ Յիսուս Քրիստոսի՝
Նազովրեցու անունովը՝ որին դուք
խաչեցիք, և որին Աստուած յա-
րութիւն տուաւ մեռելներից,
նորանով սա հիմա ձեր առաջին
11 առողջ կանգնած է։ Նա է ձե-
զանից՝ շինողներիցդ անարգուած
քարը, որ անկիւնի գլուխ եղաւ։
12 Եւ էլ մի ուրիշ ոչ մէկով փրկու-
թիւն չ՚կայ. որովհետև ուրիշ
անուն էլ չ՚կայ երկնքի ներքև
մարդկանց տրուած, որով կա-
13 րելի լինի մեզ փրկուիլ։ Եւ Պետ-
րոսի և Յովհաննէսի համարձա-
կութիւնը տեսնելով, և գիտե-
նալով, որ առանց ուսմունքի և
տգէտ մարդիկ են, զարմանում
էին. միայն ճանաչում էին նո-
14 րանց՝ որ Յիսուսի հետ էին։ Եւ
այն բժշկուած մարդին էլ տես-
նելով նորանց հետ կանգնած,
ոչինչ չ՚ունէին պատասխանելու։
15 Եւ հրամայեցին նորանց, որ ատ-
եանիցը դուրս գնան, և իրար
16 հետ խորհուրդ արին, Եւ ասե-
ցին. Ի՞նչ անենք այս մարդկանցը,
որ երևելի նշան եղաւ սորանց
ձեռովը. որ Երուսաղէմի մէջ բո-
լոր բնակողներին յայտնի է, և
17 կարող չենք ուրանալ։ Այլ որ-
պէս զի աւելի չ՚տարածուի ժո-
ղովրդի մէջ, սաստիկ սպառնանք
նորանց, որ այլ ևս այն անունովը
չ՚խօսեն մարդկանց ոչ մէկի հետ։
18 Եւ նորանց կանչեցին՝ պատուէր
տուին, որ ամենևին չ՚խօսեն, և
19 ոչ էլ սովորեցնեն Յիսուսի անու-
նովը։ Բայց Պետրոսը և Յովհան-
նէսը պատասխանեցին նորանց և
ասեցին. Եթէ արժան է Աստու-
ծոյ առաջին՝ որ ձեզ աւելի ա-
կանջ դնենք քան թէ Աստու-
20 ծուն, դուք դատեցէք։ Վասնզի
մենք չենք կարող այն որ տեսանք
21 և լսեցինք, չ՚խօսել։ Իսկ նորանք
սպառնալով արձակեցին նորանց,
և ոչինչ չ՚գտնելով թէ ինչպէս
պատիժ տան նորանց ժողովրդի
պատճառովը. որովհետև ամենքն
22 էլ այն եղածի համար փառք
էին տալիս Աստուծուն։ Վասնզի
այն մարդը քառասուն տարուց

*Ոմանք՝ քահանայապետները

աւելի էր, որի վերայ այս բժշկու-
թեան նշանը եղաւ։
23 Եւ արձակուելուց յետոյ ե-
կան իրանցների մօտ, և պատմե-
ցին ինչ որ քահանայապետները
24 և ծերերն ասեցին նորանց։ Եւ
նորանք երբոր լսեցին, միաբա-
նութեամբ իրանց ձայները բար-
ձրացրին դէպի Աստուած և ա-
սեցին. Տէր, դու ես Աստուած,
որ արիր երկինքը և երկիրը՝ ծովը
և նորանց մէջի բոլոր բաները։
25 Որ քո Դաւիթ ծառայի բերա-
նովը խօսեցիր և ասեցիր. Ի՞նչու
համար ազգերը խռովեցին՝ և
ժողովուրդներն ունայն բաներ
26 մտածեցին։ Երկրի թագաւորնե-
րը վերկացան. և իշխանները մէկ
տեղ հաւաքուեցան Տիրոջ դէմ
27 և նորա Օծեալի դէմ։ Որովհետև
արդարև հաւաքուեցան քո սուրբ
Որդի Յիսուսի վերայ, որին օծե-
ցիր, Հերովդէսը և Պոնտացի Պի-
ղատոսը՝ հեթանոսների հետ և
Իսրայէլի ժողովուրդների հետ,
28 Որ անեն՝ ինչ որ քո ձեռքը և
կամքն առաջուց սահմանեց լի-
29 նելու։ Եւ հիմա, Տէր, նայիր
նորանց սպառնալիքին, և տուր
քո ծառաներին, բոլոր համար-
ձակութիւնով քո խօսքը խօսել.
30 Որ քո ձեռքը մեկնես, որ բժշկու-
թիւն, և նշաններ և հրաշքներ
լինեն, քո սուրբ Որդի Յիսուսի
31 անունովը։ Եւ նորանք աղօթք
անելիս՝ շարժուեցաւ այն տեղը,
ուր որ ժողովուած էին, և ա-
մենքը Սուրբ Հոգով լցուեցան. և
Աստուծոյ խօսքը խօսում էին
համարձակութեամբ։
32 Եւ հաւատացեալների բազմու-
թեան սիրտը և հոգին մէկ էր.
և ոչ ոք չէր ասում իր ստաց-
ուածքի մէկի համար՝ թէ իրանն
է. այլ նորանց համար ամեն բա-
33 ները հասարակաց էին։ Եւ ա-
ռաքեալները մեծ զօրութիւնով
վկայութիւն էին տալիս Տէր Յի-
սուսի յարութեան համար. և
մեծ շնորհք կար նորանց ամենի
34 վերայ։ Որովհետև նորանց մէջ
ոչ մէկը կարօտութիւն չ՚ունէր.
վասնզի նորանք որ ագարակների
կամ տների տէր էին, ծախում
էին, և ծախուածի գինը բերում
էին, Առաքեալների ոտների մօտ 35
էին դնում. և ամեն մէկին տրը-
վում էր ինչ որ պէտք էր ունե-
նում։ Եւ Յովսէսը որ առաքեալ- 36
ներիցը Բառնաբաս կոչուեցաւ,
որ Մխիթարութեան որդի կը
թարգմանուի, Ղևտացի, ծնը-
դեամբ Կիպրացի, Նա մի ագա- 37
րակ ունէր, ծախեց և գինը բե-
րաւ առաքեալների ոտների մօտ
դրաւ։

ԳԼ. Ե

Եւ մի մարդ՝ անունն Անանիա, իր 1
Սափիրա կնոջ հետ՝ մի կալուածք
ծախեց։ Եւ նորա գնիցը թագ- 2
ցրեց, որ կինն էլ գիտէր. և մի
բաժինը բերաւ առաքեալների
ոտների մօտ դրաւ։ Եւ Պետրոսը 3
ասեց. Անանիա, ի՞նչու համար
սատանան քո սիրտը լցրեց, որ
դու սուտ խօսես Սուրբ Հոգուն,
և ագարակի գնիցը թագցնես։ Չէ՞ 4
որ նա որ կենում էր՝ քոնն էր, և
ծախուած էլ քո իշխանութեան
տակն էր. Ի՞նչ է՝ որ այս բանը
դրիր քո սրտի մէջ. ոչ թէ մարդ-
կանց սուտ խօսեցիր. այլ Ա-
ստուծուն։ Եւ Անանիան հէնց որ 5
այս խօսքը լսեց, վայր ընկաւ և
հոգին հանեց. և մեծ վախ եղաւ
ամենքի վերայ, որ այդ լսեցին։
Երիտասարդներն էլ վերկացան՝ 6
պատանեցին նորան, և տարան
թաղեցին։ Եւ եղաւ երբոր երեք 7
ժամի չափ անցաւ, նորա կինն
որ չ՚գիտէր եղածը՝ ներս մտաւ։
Պետրոսը պատասխանեց նորան և 8
ասեց. Ասիր ինձ՝ թէ ա՞յնչափի
ծախեցիք ագարակը. նա էլ ասեց.
Այո, այնչափի։ Պետրոսն էլ ա- 9
սեց նորան. Ի՞նչ է՝ որ միաբանե-
ցաք դուք, որ Տիրոջ Հոգին փոր-
ձէք. ահա քո մարդը թաղողների
ոտները դռան մօտ են, քեզ էլ
կ՚հանեն։ Եւ նա իսկոյն վայր ըն- 10
կաւ նորա ոտների առաջին՝ և
հոգին հանեց. երիտասարդներն
էլ ներս մտան՝ նորան մեռած
գտան, և հանեցին՝ իր մարդի

11 մօտ թաղեցին, եւ մեծ ահ եղաւ
բոլոր եկեղեցւոյ վերայ, եւ ամեն-
12 քի վերայ որ այս լսեցին։ Եւ ա-
ռաքեալներէն ձեռովը շատ նշան-
ներ եւ հրաշքներ էին լինում ժո-
ղովրդի մէջ. ամենքը միասին
13 Սողոմանի սրահումն էին, եւ ու-
րիշներից ոչ ոք չէր համարձա-
կում յարիլ նոցանց. բայց ժո-
ղովուրդը մեծարում էր նոցանց,
14 եւ առաւել ևս շատանում էին
Տիրոջ հաւատացեալները, Ե-
ր մի բազմութիւն մարդկանց
15 և կանանց։ Մինչև որ հիւանդ-
ները հանում էին հրապարակ-
ները, և իրանց պատգարակնե-
րովն և մահիճներովն այնտեղ էին
դնում, որ Պետրոսը անցնելիս,
գոնե նորա շուքը նորանցից մէկի
16 վերայ բնկնէ։ Եւ շրջակայ քա-
ղաքներից բազմութիւնը հաւաք-
վում էին Երուսաղէմ, որ բե-
րում էին հիւանդներին և պիղծ
ոգիներից չարչարուածներին. որ
ամենքն էլ բժշկվում էին։
17 Եւ վերկացաւ քահանայապե-
տը և ամենքը որ նորա հետ էին,
և Սադուկեցիների աղանդը, և
18 նախանձով լցուեցան. Եւ ձեռք
դրեցին առաքեալներին, և նո-
րանց գրին հասարակաց բանտի
19 մէջ։ Բայց Տիրոջ հրեշտակը գի-
շերով բանտի դռները բացաւ,
և նորանց դուրս հանելով ասեց.
20 Գնացէք և կանգնեցէք տաճարի
մէջ և այս կեանքի բոլոր խօս-
քերը խօսեցէք ժողովրդի հետ։
21 Եւ երբոր լսեցին, առաւօտանց
մտան տաճարը և սովորեցնում
էին. քահանայապետն էլ եկաւ
և նորանք էլ որ նորա հետ էին,
և կանչեցին առեանը և խորհրդի
արդկանց բոլոր ծերակոյտը մեկ-
տեղ, և ուղարկեցին բանտը որ
22 բերեն նորանց։ Եւ երբոր սպա-
սաւորներն եկան, նորանց չգտան
բանտի մէջ. և ետ դառան պատ-
23 մեցին, եւ ասեցին թէ Բանտը
բոլոր զգուշութեամբ փակած
գտանք, և պահապաններն էլ
դուրսը դուռն մօտ կանգնած.
բայց երբոր բաց արինք ներսումը
24 ոչ ովքին չգտանք, եւ երբոր քա-

հանայապետը և տաճարի իշխանը
այս խօսքը լսեցին, հիանում էին
նորանց համար, թէ սա ինչ պի-
տի լինի։ Եւ մէկն եկաւ նորանց
25 պատմեց, թէ Ահա այն մարդիկը,
որ բանտի մէջ դրիք, տաճարում
կանգնած ժողովրդին են ժո-
ղովրդին։ Այն ժամանակ իշխանն
26 սպասաւորներին հետ գնաց նո-
րանց բերաւ առանց բռնութեան.
որովհետև ժողովրդից վախե-
նում էին որ չքարկոծեն։ Եւ
27 երբոր բերին նորանց կանգնեցրին
առեանում. և քահանայապետը
28 հարցրեց նորանց, եւ ասեց. Չէ՞
որ պատուիրելով պատուիրեցինք
ձեզ՝ որ չ՚ուսուցանէք այդ անու-
նով. և ահա Երուսաղէմը լցրիք
ձեր ուսմունքովը, և կամենում
էք այն մարդի արիւնը մեզ վե-
րայ բերել։
29 Պետրոսը և առաքեալները պա-
տասխանելով ասեցին. Աստուծոյ
պէտք է աւելի հնազանդել քան
30 թէ մարդկանց։ Մեր հայրերի
Աստուածը յարուցանեց Յիսուսին՝ որին դուք փայտից կա-
31 խած սպանեցիք։ Աստուած նո-
րան Առաջնորդ և Փրկիչ բար-
ձրացրեց իր աջովը, որ Իսրայելին
ապաշխարութիւն և մեղքերի թո-
32 ղութիւն տայ։ Եւ մենք նորա
վկաներն ենք այս բանների հա-
մար, և Սուրբ Հոգին էլ, որ
Աստուած իրան հնազանդողներին
33 տուաւ։ Եւ նորանք երբոր լսե-
ցին, կատաղում էին. և խոր-
հում էին, որ նորանց սպանեն։
34 Բայց մի փարիսեցի վերկացաւ
առեանումը՝ անունը Գամաղիէլ,
օրէնքի վարդապետ՝ բոլոր ժո-
ղովրդի առաջին պատուաւոր,
հրամայեց որ առաքեալներին մի
35 քիչ դուրս տանեն, Եւ նորանց
ասեց. Ով Իսրայէլացի մարդիկ,
զգուշացէք այս մարդկանց հա-
36 մար, թէ ինչ պիտի անէք. Որով-
հետև այս օրերից առաջ Թևդասը
վերկացաւ՝ ասելով թէ ինքը մի
բան է. որ թուով չորս հարիւրի
չափ մարդիկ նորան յարեցան.
որ ինքը սպանուեցաւ՝ և ամենքն
էլ՝ որ նորան հնազանդել էին՝

ետաքով լցուած մարդ էր, և
Փիլիպպոսին և Պրոքորոսին և Նի-
կանովրային և Տիմոնային և Պար-
մենային և Անտիոքացի նորահա-
ւատ Նիկողայոսին։ Նորանց կանգ- 6
նեցրին առաքեալների առաջին.
և աղօթք անելով ձեռք դրին
նորանց վերայ։ Եւ Աստուծոյ խոս- 7
քը աճում էր և աշակերտների
համարը խիստ շատանում էր Ե-
րուսաղէմում. և քահանաներից
էլ շատ բազմութիւն հնազանդ-
վում էին հաւատքին։
Ստեփաննոս էլ հաւատքով և 8
զօրութիւնով լցուած, մեծ մեծ
հրաշքներ և նշաններ էր անում
ժողովրդի մէջ։ Եւ վերկացան 9
մանք այն ժողովարանից որ *Լի-
բերտինացիների էր կոչվում. և
Կիւրենացիներից և Ալեքսանդ-
րացիներից և նորանցից որ Կիլի-
կիայից և Ասիայից էին, և վիճա-
բանում էին Ստեփաննոսի հետ.
Եւ չէին կարողանում դէմ կե- 10
նալ այն իմաստութեանը և այն
հոգուն, որով նա խօսում էր։
Այն ժամանակ դ ւոնէ մարդկանց 11
հրապուրեցին որ ասեն, թէ Մենք
լսեցինք դորանից, որ հայհոյու-
թեան բաներ էր խօսում՝ Մով-
սէսի և Աստուծոյ դէմ։ Եւ ժո- 12
ղովրդին և ծերերին և դպիրնե-
րին գրգռեցին. և վերայ հասան
յափշտակեցին նորան՝ և տարան
առեանը. Եւ ետ վկաներ կանգ- 13
նեցրին, որ ասում էին. Այս
մարդը չէ դադարում այս սուրբ
տեղի և օրէնքի դէմ հայհոյու-
թեան բաներ խօսելուց։ Որովհե- 14
տև մենք լսեցինք դորանից՝ որ ա-
սում էր, թէ Այս Յիսուս Նա-
զովրեցին այս տեղը կ՚քանդէ, և
կ՚փոխէ Մովսէսի մեզ տուած
սովորութիւնները։ Եւ առեանում 15
մը նստողների ամենք երբոր մեկ
տեսին նորան՝ նորա երեսը հրեշ-
տակի երեսի նման տեսան։

Գլ. Է

Եւ քահանայապետն ասեց թէ 1

37 ցրուեցան և ոչինչ եղան։ Նորա-
նից յետոյ Գալիլեացի Յուդան
վերկացաւ աշխարհագրի օրերում.
և շատ ժողովուրդ քաշեց իր
կողմը. Նա էլ կորաւ և ամենքն
էլ որ նորան հնազանդել էին,
38 ցիրուցան եղան։ Եւ հիմա ա-
սում եմ ձեզ. Հեռու կացէք
այդ մարդկանցից, և թողէք գո-
րանց. որովհետև եթէ այդ խոր-
հուրդը կամ այդ գործը մարդ-
39 կանցից է, կ՚քանդուի. Բայց եթէ
Աստուածանից է, չէք կարող
քանդել. դորան. մի գուցե Աս-
տուծոյ դէմ կռիւ անող էլ
40 գտնուիք։ Նորանք էլ համձնուե-
ցան նորան. և առաքեալներին
կանչեցին՝ ծեծեցին, և պատուէր
տուին, որ չ՚խօսեն Յիսուսի ա-
նունովը. և արձակեցին նորանց։
41 Իսկ նորանք ուրախանալով գնա-
ցին առեանի երեսից. որովհետև
արժանի եղան նորա անունի հա-
42 մար անարգուիլ։ Եւ բոլոր օրը
չէին դադարում տաճարումը և
տներումը ասվորեցնել և Յիսուս
Քրիստոսին աւետարանել։

Գլ. Զ

1 Եւ այն օրերում՝ երբոր աշա-
կերտները շատացան, *Հելլենա-
խօսներն կողմանէ տրտունջ եղաւ
Եբրայեցիների դէմ թէ նորանց
որբևայրիները ամեն օրուայ մա-
տակարարութիւնների մէջ ան-
2 տես էին լինում։ Եւ տասնևեր-
կուսը կանչեցին աշակերտների
բազմութիւնը և ասեցին. Մեզ
վայել չէ որ Աստուծոյ խօսքը
3 թողած սեղանին ծառայենք։ Հի-
մա, եղբայրներ, ձեզանից եօթը
վկայուած մարդիկ ընտրեցէք,
Սուրբ Հոգով և իմաստութիւ-
նով լցուած, որոնց այս պիտոյքի
4 վերայ դնենք։ Իսկ մենք աղօթ-
քին և խօսքի պաշտամունքին
5 հետևինք։ Եւ այս խօսքը բոլոր
բազմութեան առաջին հաւանելի
երևեցաւ. և ընտրեցին Ստեփան-
նոսին որ Սուրբ Հոգով և հա-

*Այլն՝ Հելլենախօս Հրեաների

*Այլն՝ Ազատուածների

Աբդեաք այդ բաներն այդպէ՛ս
2 են։ Նա էլ ասեց. Մարդիկ՝ եղ-
բայրներ և հայրեր, լսեցէք.
փառքի Աստուածն երևեցաւ մեր
հայր Աբրահամին, որ Միջագե-
տաումն էր, դեռ խառանի մէջ
չ'բնակուած. և ասեց նորան.
3 Դուրս ել քո երկրիցը և քո ազ-
գիցը, և եկ այն երկիրն որ ես
4 ցոյց կ'տամ քեզ։ Այն ժամա-
նակ Քաղդեացիների երկրիցը
դուրս եկաւ՝ խառանումը բնակ-
ուեց. և այն տեղից նորա հօր
մեռնելուց յետոյ՝ նորան փո-
խագրեց պանդխտացրեց այս երկ-
րումը, որ նորանում դուք հիմա
5 բնակուած էք։ Եւ սորանում
ժառանգութիւն չ'տաւաւ նո-
րան, և ոչ էլ մի ոտքի քայլի
փեզ, և խոստացաւ նորան այս
տեղը ստացուածք տալ նորան.
և նորանից յետոյ նորա զաւա-
կին, նա դեռ որդի չ'ունենացած։
6 Եւ Աստուած այսպէս խօսեց.
Թէ՝ Նորա զաւակը պանդուխտ
կ'լինի օտար երկրի մէջ. և կ'ծա-
ռայեցնեն նորան, և կ'չարչարեն
7 չորս հարիւր տարի։ Եւ այն ազ-
գին, որին կ'ծառայեն, նորան ես
կ'դատեմ, ասեց Աստուած. և
սորանից յետոյ դուրս կ'գան և
8 այստեղ ինձ կ'պաշտեն։ Եւ նորան
թլփատութեան ուխտը տուաւ.
և յետոյ Իսահակին ծնեց, և ու-
թերորդ օրը թլփատեց նորան.
և Իսահակը Յակոբին, և Յակոբը
տասնևերկու նահապետներին։
9 Եւ նահապետները նախանձելով
Յովսէփին վերայ ծախեցին եգիպ-
տոս. և Աստուած նորա հետ էր։
10 Եւ փրկեց նորան իր բոլոր նեղու-
թիւններիցը. և նորան շնորհք և
իմաստութիւն տուաւ եգիպտա-
ցի փարաւոն Թագաւորի առա-
ջին. և նորան իշխան կանգնեցրեց
եգիպտոսի և իր բոլոր տան վե-
11 րայ։ Եւ սով եկաւ եգիպտոսի
բոլոր երկիրը և Քանանն էլ, և
մեծ նեղութիւն. և մեր հայրերը
12 կերակուր չէին գտնում։ Եւ Յա-
կոբը լսելով թէ եգիպտոսումը
ցորեն կայ, մեր հայրերին ուղար-
13 կեց առաջին անգամ։ Եւ երկ-
րորդումը Յովսէփն իրան ճանա-
չել տուաւ իր եղբայրներին. և
Յովսէփի ազգը յայտնի եղաւ փա-
րաւոնին։ Յովսէփն էլ ուղարկեց 14
և կանչեց իր հայր Յակոբին, և
բոլոր ազգատոհմին՝ եօթանասու-
նևհինգ հոգի։ Եւ Յակոբն ի- 15
ջաւ եգիպտոս, և վախճանեց ինքը
և մեր հայրերը։ Եւ փոխագրուե- 16
ցան Սիւքէմ, դրուեցան այն գե-
րեզմանումը, որ Աբրահամը Սիւ-
քեմի հայր Եմմորի որդիներից
առաւ արծաթով։ Եւ երբոր 17
խոստմունքի ժամանակը մօտե-
ցաւ՝ որ Աստուած Աբրահամին
երդումով խոստացել էր, ժողո-
վուրդը աճեց և շատացաւ ե-
գիպտոսումը. Մինչև որ մի ու- 18
րիշ թագաւոր վերկացաւ եգիպ-
տոսումը՝ որ Յովսէփին չէր ճա-
նաչում։ Նա հնարք գործածեց 19
մեր ազգի դէմ, և մեր հայրերին
չարչարեց՝ որ իրանց երեխաները
դուրս գցեն, որ չ'ապրեն։ Որ այն 20
ժամանակ Մովսէսն էլ ծնուեց,
և գեղեցիկ էր Աստուծոյ
առաջին. որ իր հօր տանն երեք
ամիս կերակրուեցաւ։ Եւ երբ որ 21
դուրս գցեցին նորան, փարաւոնի
աղջիկը վեր առաւ նորան և մե-
ծացրեց նորան՝ իրան համար իբ-
րև որդի։ Եւ Մովսէսը վարժուե- 22
ցաւ եգիպտացիների բոլոր իմաս-
տութիւնովը. և զօրաւոր էր
խօսքերով և գործերով։ Եւ երբ- 23
որ նորա քառասուն տարեկան
ժամանակը լրացաւ, նորա սրտի
մէջ ընկաւ՝ որ իր եղբայրներին
Իսրայէլի որդիներին այցելու- 24
թիւն անէ. Եւ երբոր տեսաւ, որ
նորանցից մէկը զրկուած էր, պաշ-
պանեց և այն զրկուածի վրէժն
առաւ՝ եգիպտացուն սպանելով։ 25
Կարծում էր թէ նորա եղբայր-
ները կ'իմանան, որ Աստուած նո-
րա ձեռովը փրկութիւն պիտի
տայ նորանց. բայց նորանք չ'իմա-
ցան։ Եւ հետևեալ օրն երևեցաւ 26
նորանց, որ կռիւ էին անում, և
յորդորեց նորանց դէպի խաղա-
ղութիւն, ասելով. Մարդիկ,
դուք եղբայրներ էք, ինչու էք 27
իրար զրկում։ Բայց նա՝ որ ընկե-

րին զրկում էր, մերժեց նորան
և ասեց. Քեզ ո՞վ կանգնեցրեց
մեզ վերայ իշխան և դատաւոր։
28 Մի թէ դու կամենում ես ինձ
էլ սպանել, ինչպէս երէկ եգիպ-
29 տացուն սպանեցիր։ Եւ Մովսէսը
փախաւ այս խօսքի վերայ, և
պանդխտեաց եղաւ Մադիամի երկ-
րումը, ուր երկու որդի ծնեց։
30 Եւ երբոր քառասուն տարի լրա-
ցաւ, Սինա սարի անապատումը
Տիրոջ հրեշտակն երևեցաւ նո-
րան կրակի բոցով՝ մորենումը։
31 Եւ Մովսէսն երբոր տեսաւ՝ զար-
մացաւ այն տեսիլքի համար, և
երբոր մտենում էր որ մտիկ
անէ, Տիրոջ ձայնը եղաւ նորան.
32 Ես եմ քո հայրերի Աստուածը,
Աբրահամի Աստուածը և Իսա-
հակի Աստուածը և Յակոբի
Աստուածը. և Մովսէսը զարհու-
րած չէր համարձակում նայել։
33 Եւ Տէրն ասեց նորան. Կօշիկ-
ներդ հանիր ոտներիդդ, որովհե-
տև այդ տեղը որ դու կանգնել
34 ես, սուրբ երկիր է։ Տեսնելով
տեսայ իմ ժողովրդի չարչարանք-
ները որ եգիպտոսումն է, և լսեցի
նորանց հառաչանքը և ինջայ որ
նորանց փրկեմ և հիմա եկ, քեզ
35 ուղարկեմ եգիպտոս։ Հէնց այն
Մովսէսին որին ուրացան և ա-
սեցին. Քեզ ո՞վ կանգնեցրեց
մեզ վերայ իշխան և դատաւոր,
Աստուած նորան իշխան և փրկիչ
ուղարկեց հրեշտակի ձեռովը, որ
36 մորենումն երևեցաւ նորան։ Նա
հանեց նորանց՝ և հրաշքներ և
նշաններ արաւ եգիպտոսի երկ-
րումը, և կարմիր ծովումը, և
անապատումը քառասուն տարի։
37 Սա այն Մովսէսն է, որ ասեց Իս-
րայէլի որդիներին, Ձեր Տէր Աստ-
ուածը մի մարգարէ վեր կ'կացնէ
ձեզ համար ձեր եղբայրներիցն
38 ինձ նման. նորան լսեցէք։ Սա է՛
որ եղաւ ժողովրդի մէջ անապա-
տումն այն հրեշտակի հետ, որի
հետ Սինա սարումը խօսեց՝ և
մեր հայրերի հետ. որ կենդանի
պատգամներ առաւ՝ որ տայ մեզ
39 Որին մեր հայրերը չ'կամեցան
հնազանդ լինել. այլ մերժեցին
և իրանց սրտերովը կատ դարձան
40 եգիպտոս. Եւ Ահարոնին ասե-
ցին. Մեզ համար աստուածներ
շինիր, որ մեր առաջին գնան.
որովհետև այն Մովսէսն՝ որ ե-
գիպտոսի երկրիցը մեզ հանեց,
չ'գիտենք թէ ինչ եղաւ նորան։
41 Եւ այն օրերումը մի հորթ շինե-
ցին, և զոհ մատուցրին կուռքին
և ուրախանում էին իրանց ձեռ-
քերի գործերովը։ Եւ Աստուած 42
երես դարձրեց և նորանց մատ-
նեց՝ որ երկնքի զօրութեանը պաշ-
տեն. ինչպէս որ գրուած է մար-
գարէների գրքումն. Մի՞ թէ զո-
հեր և պատարագներ բերիք ինձ
քառասուն տարի անապատումն,
ով Իսրայէլի տուն. Եւ Մոդոքի 43
վրանն առաք, և ձեր Հռեմփա
աստուծոյ աստղն. այն պատկեր-
ները որ արիք նորանց երկրպա-
գութիւն տալու համար. և ես
ձեզ կ'փոխագրեմ Բաբիլոնից այն
կողմը։ Վկայութեան խորանը 44
մեր հայրերի հետ անապատումն
էր. ինչպէս հրամայեց տուաւ Մով-
սէսի հետ խօսողը, որ նորան անէ
այն օրինակի պէս՝ որ տեսաւ։ Ուր 45
նորան մեր հայրերն էլ առան
բերին Յեսուի հետ այն ազգերի
կալուածքը, որ Աստուած դուրս
արաւ մեր հայրերի երեսիցը.
մինչև Դաւիթի օրերը. Ուր Ա- 46
ստուծոյ առաջին շնորհք գտաւ,
և խնդրեց որ Յակոբի Աստուա-
ծոյ համար բնակարան գտնէ։
Բայց Սողոմոնը նորա համար տուն 47
շինեց. Սակայն Բարձրեալը ոչ 48
թէ ձեռագործ տաճարներումն է
բնակվում՝ ինչպէս մարգարէն ա-
սում է. Երկինքն իմ աթոռն է, 49
և երկիրն իմ ոտների պատուան-
դան. Ինչպիսի տուն պիտի շինէք
ինձ համար, ասում է Տէրը, կամ
ո՞րն է իմ հանգիստ առնելու
տեղը։ Չէ՞ որ իմ ձեռն արաւ 50
այս ամենը։ Խոստովանողներ՝ 51
և սրտերով և ականջներով չէ
թլփատուածներ. դուք միշտ
Սուրբ Հոգուն հակառակում էք.
ինչպէս ձեր հայրերը այնպէս էլ
դուք։ Մարգարէներից ո՞րին չէ 52
հալածեցին ձեր հայրերը, և սպա-

նեցին նորանց՝ որ առաջուց պատմեցին այն Աբդարի գալուստեան համար, որի դուք հիմա մատնիչներն և սպանողներն եք. 53 դուք՝ որ օրէնքն առաք հրեշտակների մատակարարութեամբն, և չ'պահեցիք։

54 Եւ այս խօսքերը լսելով, իրանց սրտերում կատաղում էին, և առամները կրճտեցնում էին 55 նորա վերայ։ Իսկ նա լցուած Սուրբ Հոգով՝ դէպի երկինքը նայեց և Աստուծոյ փառքը տեսաւ, և Յիսուսին՝ կանգնած Աստուծոյ աջ կողմումը. և ասեց. Ահա տեսնում եմ երկինքը բացուած, և Մարդի Որդին կանգնած Աստուծոյ աջ կողմումը։ 56 Իսկ նորանք մեծաձայն աղաղակելով խփեցին իրանց ականջները, և միասին յարձակուեցան նորա վերայ։ 57 Եւ քաղաքիցը դուրս հանելով նորան քարկոծում էին. և վկաներն իրանց հանդերձները դնում էին մի երիտասարդի առների մօտ՝ որ Սօղոս էր կոչուում։ 58 Եւ քարկոծում էին Ստեփաննոսին, որ կանչում էր և ասում. Տէր Յիսուս, ընդունիր իմ հոգին։ 59 Եւ ծունկ դրաւ և բարձր ձայնով աղաղակեց. Տէր, այդ մեղքը մի համարիր դորանց համար. և այս ասելով՝ ննջեց. և Սօղոս կամակից էր նորա սպանուելուն։

ԳԼ. Ը

1 Եւ այն օրերում մեծ հալածմունք եղաւ Երուսաղէմում ընդդէմ եկեղեցու վերայ. և ամենքը ցրուեցան Հրէաստանի և Սամարիայի երկիրների մէջ, բացի առաքեալներից։ 2 Եւ աստուածավախ մարդիկ Ստեփաննոսին վեր առան՝ և մեծ սուգ արին նորա վերայ։ 3 Բայց Սօղոսը վնաս էր տալիս եկեղեցուն. և տանից տուն էր մտնում, և մարդկանց և կանանց քաշում մատնում էր բանտի մէջ։

4 Իսկ ցրուածները գնում էին գալիս՝ խօսքն աւետարանելով։ 5 Եւ Փիլիպպոսն իջաւ Սամարիայի մի քաղաքը՝ և Քրիստոսին քարոզում էր նորանց։ 6 Ժողովուրդներն էլ միաբան ականջ էին դնում Փիլիպպոսի խօսածներին, լսելով և տեսնելով այն նշանները, որ անում էր։ 7 Որովհետև պիղծ ոգիներ ունեցողների շատերից, մեծաձայն աղաղակելով դուրս էին գալիս. և շատ անդամալոյծներ 8 և կաղեր բժշկուում էին. և մեծ 9 ուրախութիւն եղաւ այն քաղաքումը։ Եւ մի մարդ՝ անունը Սիմոն, առաջուց այն քաղաքումը մոգութիւն էր անում, և Սամարացիների ազգին ապշեցնում էր՝ ասելով թէ ինքը մի մեծ բան է։ 10 Որին ամենքն էլ փոքրից մինչև մեծը մտիկ էին անում, և ասում էին՝ Սա է Աստուծոյ այն մեծ զօրութիւնը։ 11 Եւ մտիկ էին անում նորան. որովհետև շատ ժամանակ մոգութիւններով ապշեցրել էր նորանց։ 12 Բայց երբոր հաւատացին Փիլիպպոսին, որ աւետարանում էր Աստուծոյ արքայութեան և Յիսուսի Քրիստոսի անունի բանները, ամենքն էլ մկրտուում էին՝ թէ մարդիկ և թէ կանայք։ 13 Եւ Սիմոնն ինքն էլ հաւատաց, և երբ որ մկրտուեցաւ՝ միշտ Փիլիպպոսի հետ էր. և տեսնելով այն նշանները և մեծ մեծ զօրութիւնները, որ լինում էին, զարմանում էր։ 14 Երբոր Երուսաղէմ լինող առաքեալները լսեցին, թէ Սամարիան Աստուծոյ խօսքը ընդունեց, Պետրոսին և Յովհաննէսին ուղարկեցին նորանց մօտ։ 15 Որոնք իջան և աղօթք արին նորանց վերայ, որ Սուրբ Հոգին առնեն. 16 Որովհետև դեռ նորանցից ոչ մէկի վերայ չէր իջել. միայն Տէր Յիսուսի անունովը մկրտուած էին։ 17 Այն ժամանակ ձեռք էին դնում նորանց վերայ, և նորանք ընդունում էին Սուրբ Հոգին։ 18 Սիմոն երբոր տեսաւ՝ թէ առաքեալների ձեռք դնելովը՝ Սուրբ Հոգին տրւում է, փող բերաւ նորանց և ասեց. 19 Ինձ էլ տուէք այս իշխանութիւնն, որ ում վերայ ձեռք դնեմ՝ Սուրբ Հոգին առնէ։

20 Պետրոսն էլ ասեց նորան. Քո արծաթիդ քեզ հետ կորչի. որովհետև դու կարծեցիր, թէ Աստուծոյ պարգեւը փողով կ'առնուի։ 21 Դու բաժին և վիճակ չունիս այդ բանումը. որովհետև քո սիրտը ուղիղ չէ Աստուծոյ առաջին։ 22 Արդ ապաշխարիր քո այդ չարութիւնիցը՝ և Աստուծուն աղաչիր, որ թերևս թողուի քեզ քո սրտի չար խորհուրդը։ 23 Որովհետև տեսնում եմ քեզ՝ որ դառն մաղձի և անիրաւութեան կապանքի մէջ ես։ 24 Սիմոնն էլ պատասխանեց և ասեց. Դուք ինձ համար ազօթք արէք Տիրոջը, որ ինձ վերայ մի բան չգայ նորանցից, որ դուք ասեցիք։ 25 Եւ նորանք վկայութիւն տալով և Տիրոջ խօսքը խօսելով, դառան Երուսաղէմ. և Սամարացիների շատ գիւղերի մէջ աւետարանում էին։

26 Եւ Տիրոջ հրեշտակը խօսեց Փիլիպպոսի հետ և ասեց. Վեր կաց և գնա հարաւային կողմը՝ այն ճանապարհը, որ Երուսաղէմից իջնում է Գազա, որ անապատ է։ 27 Եւ նա վեր կացաւ գնաց. և ահա մի Եթէովպացի մարդ, Եթէովպացիների կանթակա թագուհու Ներքինի մի իշխանը, որ նորա բոլոր գանձի վերայ էր, որ եկել էր Երուսաղէմ երկրպագութիւն անելու։ 28 Եւ էտ դառնալիս իր կառքումը նստած կարդում էր Եսայիա մարգարէի էջը։ 29 Եւ Հոգին էլ Փիլիպպոսին ասեց. Մօտեցիր և հասիր այդ կառքին։ 30 Եւ Փիլիպպոսն առաջ վազելով լսեց որ Եսայիա մարգարէի էջը կարդում, և ասեց. Հասկանո՞ւմ ես արդեօք կարդացածդ։ 31 Նա էլ ասեց՝ Ինչպէս կ'կարողանամ, եթէ մէկը չ'առաջնորդէ ինձ. և Փիլիպպոսին աղաչեց, որ վեր նստի նորա հետ։ 32 Եւ գրքի պարունակութիւնն որ կարդում էր՝ այս էր. Ինչպէս ոչխար տարուեցաւ մորթուելու. և ինչպէս գառն իր խուզողի առաջ լռեց, կացած՝ այնպէս չէ բանում իր բերանը։ 33 Նորա խոնարհու-

թիւնովը նորա դատաստանը վեր առնուեցաւ, նորա ցեղն ո՞վ պիտի պատմէ. որովհետև նորա կեանքը երկրիցս վեր է առնուում։ 34 Եւ ներքինին պատասխանեց Փիլիպպոսին և ասեց. Աղաչում եմ քեզ, մարգարէն սա ո՞ւմ համար է ասում. իրա՞ն համար, թէ մի ուրիշի համար։ 35 Փիլիպպոսն էլ իր բերանը բացաւ, և այս գրքից սկսած՝ Յիսուսն աւետարանեց նորան։ 36 Երբոր ճանապարհումը գնում էին, եկան մի ջրի մօտ. և ներքինին ասեց. Ահա ջուր. ինչ է արգելում ինձ, որ մկրտուիմ։ 37 Եւ Նորան ասեց Փիլիպպոսը. Եթէ բոլոր սրտից հաւատաս, կարելի է. և նա պատասխանեց և ասեց. Հաւատում եմ՝ թէ Աստուծոյ Որդին է Յիսուս Քրիստոսը։ 38 Եւ հրաման տուաւ որ կառքը կանգնէ. և երկուսն էլ իջան ջուրը՝ Փիլիպպոսը և ներքինին, և նա մկրտեց նորան։ 39 Եւ երբոր ջրից դուրս եկան, Տիրոջ Հոգին Փիլիպպոսին յափշտակեց. և ներքինին այլ ևս չ'տեսաւ նորան. և նա ուրախութեամբ գնում էր իր ճանապարհը։ 40 Եւ Փիլիպպոսը գտնուեցաւ Ազովտոսումը. և մանն գալով աւետարանում էր ամեն քաղաքներին մինչև որ եկաւ Կեսարիա։

ԳԼ. Թ

1 Բայց Սօղոսը դեռ սպառնալիք և մահ շնչելով Տիրոջ աշակերտների վերայ, քահանայապետի մօտ եկաւ, 2 և նորանից թղթեր խնդրեց Դամասկոս՝ ժողովարանների վերայ. որ եթէ մէկին գտնէ այն ճանապարհին հետևող՝ մարդիկ կամ կանայք, նորանց կապած բերէ Երուսաղէմ։ 3 Եւ նա գնալիս մօտեցաւ Դամասկոսին, և յանկարծակի նորա չորս կողմից լոյս փայլեց երկնքիցը։ 4 Եւ նա գետնի վերայ ընկած՝ մի ձայն լսեց, որ ասում էր նորան. Սաւուղ, Սաւուղ, ինչու ես ինձ հալածում։ 5 Եւ նա ասեց. Ո՞վ ես, Տէր. և Տէրն ասեց. Ես Յի-

սուսն եմ, որին դու հալածում
ես. դժուար է քեզ՝ խթանին
6 քացի տալ։ Եւ դողալով ու
զարհուրելով ասեց. Տէր, ի՞նչ
7 ես կամենում որ անեմ։ Եւ Տէրն
ասէց նորան. Կանգնիր և մտիր
քաղաքը, և կ'ասուի քեզ՝ թէ
ինչ է պէտք քեզ անել. բայց այն
մարդիկը՝ որ նորա հետ գնում
էին, ապուշ կանգնած էին. ձայնը
լսում էին, բայց ոչինչ չէին տես-
8 նում։ Սօղոսն էլ վերկացաւ
գետնիցը, իր աչքերը բաց անե-
լով ոչ ոքին չէր տեսնում, և
նորա ձեռքիցը բռնած մտցրին
9 Դամասկոս։ Եւ երեք օր չէր տես-
նում. և ոչ ուտում էր և ոչ
խմում։
10 Եւ Դամասկոսումը մի աշակերտ
կար՝ անունն Անանիա. և Տէրը
11 տեսիլքի մէջ նորան ասեց. Անա-
նիա. և նա ասեց. Ահա ես, Տէր։
Եւ Տէրը նորան ասէց. Վեր կաց
գնա այն փողոցը՝ որ կոչվում է
Ուղիղ. և Յուդայի տանը որոնիր
մի Սօղոս անունով Տարսօնացի
մարդ, որովհետև ահա աղօթք է
12 անում։ Եւ նա տեսիլքի մէջ տե-
սաւ մի Անանիա անունով մարդ,
որ մտաւ և ձեռքը դրաւ իրան
13 վերայ, որ տեսնէ։ Անանիան էլ
պատասխանեց. Տէր, ես այն մար-
դի համար շատերից լսեցի, թէ
որչափ չարիք արաւ քո սուրբե-
14 րին Երուսաղէմումը։ Եւ այստեղ
էլ քահանայապետներիցն իշխա-
նութիւն ունի, որ այն ամենքին
կապէ, որ քո անունը կանչում
15 են։ Տէրն էլ ասեց նորան. Գնա,
որովհետև նա ինձ համար ընտըր-
ուած անօթ է, որ իմ անունը
տանէ հեթանոսների, թագա-
ւորների՝ և Իսրայէլի որդկանց
16 առաջին։ Որովհետև ես ցոյց կը
տամ նորան, թէ որչափ պիտի
չարչարուի իմ անունի համար.
17 Եւ Անանիան գնաց՝ և մտաւ այն
տունը. և ձեռքերը դրաւ նորա
վերայ, և ասեց. Սաւուղ եղ-
բայր, Տէրն ուղարկեց ինձ, այն
Յիսուսը, որ երևեցաւ քեզ ճա-
նապարհումը, որ գալիս էիր, որ
տեսնես՝ և Սուրբ Հոգով լցուիս։

18 Եւ շուտով նորա աչքերիցը թե-
փերի պէս վայր ընկան. և իսկոյն
տեսաւ, և վերկացաւ մկրտուե-
19 ցաւ. Եւ կերակուր առաւ՝ զօ-
րացաւ։ Եւ Սօղոսը մի քանի օր
Դամասկոսումը լինող աշակերտ-
ների հետ եղաւ։
20 Եւ շուտով ժողովարաններու-
մը Քրիստոսին քարոզեց. Թէ Սա
21 է Աստուծոյ Որդին։ Ամենքն էլ՝
որ լսում էին, զարմանում էին
և ասում. Չէ՞ որ սա էր՝ որ Ե-
րուսաղէմումը հալածում էր այս
անունը կանչողներին. և հէնց նո-
րա համար է այստեղ եկել, որ
սորանց կապած տանի քահանա-
22 յապետների մօտ։ Բայց Սօղոսն
աւելի ևս զօրանում էր՝ և յաղ-
թում էր այն Հրէաներին, որ
Դամասկոսումը բնակուած էին.
ապացուցանելով թէ սա է Քրիս-
23 տոսը։ Երբոր բաւական օրեր լրա-
ցան, Հրէաները խորհուրդ արին՝
24 որ սպանեն նորան։ Բայց նորանց
նենգութիւնը յայտնուեցաւ Սօ-
ղոսին, որ գիշեր և ցերեկ դռները
պահում էին՝ որ նորան սպանեն։
25 Աշակերտներն էլ նորան գիշերով
առան, և զամբիւղով պարսպիցը
կախելով իջեցրին։
26 Եւ երբոր Սօղոսը Երուսաղէմ
եկաւ, ջանք էր անում. որ աշա-
կերտներին յարի. և ամենքը նո-
րանից վախենում էին, և չէին
հաւատում՝ թէ աշակերտ է։
27 Բայց Բառնաբասը նորան առաւ՝
տարաւ առաքեալների մօտ. և
նորանց պատմեց՝ թէ ինչպէս ճա-
նապարհումը Տիրոջը տեսաւ, և
թէ նորա հետ խօսեց, և ինչպէս
28 Դամասկոսումը համարձակ քա-
րոզեց Յիսուսի անունը։ Եւ նո-
րանց հետ էր Երուսաղէմումը
մտնելով և դուրս գալով, և Տէր
29 Յիսուսի անունը համարձակ քա-
րոզելով։ Եւ Հելլենախօսների հետ
էլ խօսում էր՝ և վիճաբանու-
թիւն էր անում. և նորանք որո-
30 նում էին, որ սպանեն նորան։
Եւ եղբայրները իմանալով, նո-
րան իջեցրին Կեսարիա, և ուղար-
կեցին նորան Տարսօն։
31 Բայց եկեղեցիները բոլոր Հրէ-

աստանի՝ Գալիլեայի և Սամա-
րիայի մէջ խաղաղութիւն ու-
նէին, շինվում էին, և Տիրոջ եր-
կիւղին հետևում. և Սուրբ Հո-
գու մխիթարութեամբը շատա-
նում էին։
32 Եւ եղաւ երբոր Պետրոսը ման
էր գալիս ամեն տեղ, եկաւ այն
սրբերի մօտ, որ Լիւդիայի մէջ
33 բնակուած էին։ Եւ այնտեղ մի
մարդ գտաւ, անունը Ենեա, որ
ութ տարի մահիճի մէջ անդա-
34 մալոյծ դրած էր։ Եւ Պետրոսն
ասեց նորան. Ենեա, Յիսուս Քրիս-
տոսը քեզ բժշկում է, վեր կաց
և անկողինդ շինիր. և նա շուտով
35 վերկացաւ։ Եւ տեսան նորան
ամենքը որ բնակուած էին Լիւ-
դիայի և Սարօնի մէջ, որոնք
36 դարձան դէպի Տէրը։ Եւ Յոպ-
պէի մէջ մի աշակերտ եղած կին
կար՝ անունը Տաբիթա, որ թարգ-
մանուած ասվում է Այծեմնիկ.
սա լիքն էր բարի գործերով և
ողորմութիւններով, որ անում
37 էր։ Եւ եղաւ այն օրերումը, որ
նա հիւանդացաւ և մեռաւ. և
նորան լուացին դրին վերնատանը։
38 Եւ Լիւդիան Յոպպէին մօտիկ
լինելով, աշակերտները լսեցին՝
թէ Պետրոսը այնտեղ է, նորա
մօտ երկու մարդ ուղարկեցին
աղաչելու, որ չ'ուշանայ նորանց
39 մօտ գալու։ Եւ Պետրոսը վեր-
կացաւ եկաւ նորանց հետ. և
երբ որ եկաւ, նորան հանեցին այն
վերնատունը. և ամեն որբևայրի-
ները նորա չորս կողմովը կանգ-
նեցին, լաց էին լինում և ցոյց
էին տալիս այն հագուստները և
այն հանդերձները որ Այծեմնիկը
շինում էր, քանի որ նորանց հետ
40 էր։ Եւ Պետրոսը ամենին դուրս
հանեց, ծունկ դրաւ՝ աղօթք ա-
րաւ. և դարձաւ դէպի մարմինն
և ասեց. Տաբիթա, վեր կաց. և
նա աչքերը բաց արաւ. և Պետ-
րոսին որ տեսաւ՝ ուղիղ նստեց։
41 Եւ նա ձեռքը տուաւ նորան՝ և
վերկացրեց նորան. և կանչեց
սուրբերին և որբևայրիներին, և
նորանց առաջին կենդանի կանգ-
42 նեցրեց նորան։ Եւ յայտնի եղաւ

բոլոր Յոպպէի մէջ, և շատերը
հաւատացին Տիրոջը. Եւ նա շատ
43 օր մնաց Յոպպէումը՝ մի կաշեգործ
Սիմօնի մօտ։

ԳԼ. Ժ

Կեսարիայումը մի մարդ կար՝ ա-
1 նունը Կոռնելիոս՝ հարիւրապետ,
Իտալացի կոչուած գնդիցը. Բա-
2 րեպաշտ և աստուածավախ իր
բոլոր տնովը. շատ ողորմութիւն-
ներ էր անում ժողովրդին, և ա-
մեն ժամանակ աղօթք անում
3 դէպի Աստուած։ Նա օրուայ
իբրև իններորդ ժամին տեսիլքի
մէջ յայտնի տեսաւ Աստուծոյ
հրեշտակը, որ մտնելով նորա
մօտ՝ ասում էր նորան, Կոռնե-
4 լիոս։ Նա էլ նորան նայելով շատ
վախով բռնուեցաւ, և ասեց,
Ի՞նչ է, Տէր. և նա ասեց նորան,
Քո աղօթքներն ու քո ողորմու-
թիւնները վեր ելան Աստուծոյ
5 առաջին՝ յիշատակի համար։ Եւ
հիմա մարդիկ ուղարկիր Յոպպէ,
և կանչիր Սիմօնին, որ Պետրոս է
6 կոչվում։ Նա հիւր է մի կաշե-
գործ Սիմօնի մօտ, որի տունը ծո-
վի մօտ է. նա կ'ասէ քեզ ինչ
7 պէտք է անել։ Եւ երբոր գնաց
այն հրեշտակն՝ որ Կոռնելիոսի
հետ խօսում էր, իր ծառաներ-
ից երկուսին՝ և իր սպասաւորներ-
ից մէկ բարեպաշտ զինուոր կան-
8 չեց. Եւ բոլորը պատմեց նորանց,
և ուղարկեց նորանց Յոպպէ։
9 Եւ հետևեալ օրն երբոր նո-
րանք ճանապարհ ընկան, և այն
քաղաքին մօտեցան, Պետրոսը վեր
ելաւ կտուրը վեց ժամի մօտերը
10 աղօթք անելու. Սովեց՝ և կա-
մենում էր ճաշել, և նորանք
Իրախուր պատրաստելիս՝ մտքի
յափշտակութիւն եղաւ նորա
11 վերայ։ Եւ տեսաւ երկինքը բաց-
ուած. և մի մեծ կտաւի պէս
անօթ չորս ծայրիցը կապած՝ ի-
12 ջաւ երկրի վերայ, Որի մէջ կային
երկրի ամեն կերպ չորքոտանիներ-
ը և գազանները և սողունները
13 և երկնքի թռչունները։ Եւ ձայն
եղաւ նորան. Վեր կաց, Պետրոս,

14 մորթիր՝ և կեր։ Պետրոսն էլ ա-
սեց. Քաւ լիցի, Տէր, որովհետև
ես երբէք պիղծ կամ անմաքուր
15 բան չ՚կերայ։ Եւ դարձեալ երկ-
րորդ անգամ ձայն եղաւ նորան,
Այն որ Աստուած սրբեց, դու
16 պիղծ մի համարիր։ Այս երեք
անգամ եղաւ, և այն անօթը
17 վերացաւ երկինքը։ Եւ երբոր
Պետրոսը զարմացած էր իր մըտ-
քումը, թէ ինչ պիտի լինի այն
տեսիլքը՝ որ տեսաւ, ահա Կոռ-
նելիոսից ուղարկուած մարդիկը՝
Սիմոնի տունը որոնելով դռան
18 մօտ կանգնեցին. Եւ կանչելով
հարցնում էին, թէ Սիմոնն՝ որ
Պետրոս է կոչվում՝ այստեղ է
19 հիւր։ Եւ դեռ Պետրոսը այն
տեսիլքի համար միտք էր անում,
Հոգին նորան ասեց. Ահա երեք
20 մարդիկ քեզ որոնում են։ Բայց
վեր կաց իջիր. և գնա նորանց
հետ առանց խղճմտանք անելու,
որովհետև ես եմ ուղարկել նո-
21 րանց։ Եւ Պետրոսն իջաւ այն
մարդկանց մօտ որ Կոռնելիոսիցը
նորա մօտ էին ուղարկուած, և
ասեց. Ահա ես եմ, որին որո-
նում էք. ի՞նչ բան կայ որի
22 համար եկաք դուք։ Նորանք էլ
ասեցին, Կոռնելիոս հարիւրա-
պետն՝ արդար և աստուածավախ
մարդ, որ Հրէաների բոլոր ազ-
գիցը բարի վկայութիւն ունի,
նա հրաման առաւ մի սուրբ
հրեշտակից, որ քեզ կանչէ իր
տունը և քեզանից խօսքեր լսէ։
23 Եւ ներս կանչեց նորանց՝ և ընդ-
ունեց իբրև հիւր։

Եւ հետևեալ օրը Պետրոսը
նորանց հետ գնաց. և այն եղ-
բայրներիցն՝ որ Յոպպէումն էին,
24 մի քանիսը նորա հետ եկան։ Եւ
հետևեալ օրը մտան Կեսարիա.
և Կոռնելիոս իր ազգականներին
և ընտանի բարեկամներին կան-
չել էր, և սպասում էր նորանց։
25 Եւ եղաւ երբոր Պետրոսը ներս
էր մտնում, Կոռնելիոսը դիմա-
ւորեց նորան, և ոտներն ընկած
26 երկրպագեց։ Պետրոսն էլ կանգ-
նեցրեց նորան և ասեց. Վեր կաց,
27 ես ինքնս էլ մարդ եմ։ Եւ նորա
հետ խօսելով ներս մտաւ. և այն-
տեղ շատ մարդ ժողովուած գը-
տաւ։ Եւ նորանց ասեց. Դուք 28
գիտէք, ինչպէս ապօրէն բան է
Հրէայ մարդի համար մի այլազ-
գու դպչիլ կամ մօտենալ. բայց
Աստուած ինձ ցոյց տուաւ, ոչ
մէկ մարդի էլ պիղծ կամ ան-
մաքուր չ՚ասել։ Սորա համար էլ 29
առանց ընդդէմ խօսելու եկայ,
երբոր կանչուեցայ. Հիմա հար-
ցնում եմ, ի՞նչ բանի համար
կանչեցիք ինձ։ Եւ Կոռնելիոսը 30
ասեց. Չորս օրից առաջ մինչև
այս ժամը՝ ծոմ էի պահում և
իններորդ ժամին իմ տան մէջ
աղօթք էի անում, և ահա մի
մարդ կանգնեց իմ առաջին սպի-
տակ հանդերձներով, և ասեց.
Կոռնելիոս, քո աղօթքը լսուե- 31
ցաւ, և քո ողորմութիւնները
յիշուեցան Աստուծոյ առաջին։
Հիմա ուղարկիր Յոպպէ, և կան- 32
չիր Սիմոնին՝ որ Պետրոս է կոչ-
վում. սա մի կաշեգործ Սիմոնի
տանը հիւր է՝ ծովի մօտ. *երբ որ
նա գայ, քեզ հետ կ՚խօսի։ Եւ 33
ես իսկոյն քեզ մօտ ուղարկեցի.
դու էլ լաւ արիր, որ եկար.
Հիմա մենք ամենքս Աստուծոյ
առաջին կանգնած ենք, որ լսենք
այն ամենն՝ որ Տէրիցը քեզ հրա-
մայուած է։

Պետրոսը իր բերանը բանալով 34
ասեց. Ճշմարտութեամբ հաս-
կանում եմ, որ Աստուած աչառ-
չէ. Այլ ամեն ազգումն, ով որ 35
վախենում է նորանից՝ և արդա-
րութիւն է գործում, ընդունելի
է նորան։ Այն խօսքը որ ուղար- 36
կեց Իսրայէլի որդկանցը համար,
խաղաղութիւն աւետարանել Յի-
սուս Քրիստոսի ձեռովը. (սա է
ամենի Տէրը.) Դուք ինքներդ 37
գիտէք այն բանն, որ եղաւ բոլոր
Հրէաստանումը Գալիլեայից սկը-
սած այն մկրտութիւնից յետոյ,
որ Յովհաննէսը քարոզեց. Այն 38
Յիսուսին որ Նազարէթիցն է,
թէ ինչպէս նորան Աստուած
Սուրբ Հոգով և զօրութիւնով

*Ոմանք չ՚ունին։

օծեց. որ ման եկաւ բարի անե-
լով և սատանայիցը բոլոր հա-
րըստահարուածներին բժշկելով.
որովհետև Աստուած նորա հետ
39 էր։ Եւ մենք վկայ ենք այն ամեն
բաներին, որ Հրէաների երկրումը
և Երուսաղէմումն արաւ. որին
40 փայտից կախած սպանեցին։ Նո-
րան Աստուած յարութիւն տը-
ւաւ երրորդ օրը. և յայտնի ա-
41 րաւ նորան։ Ոչ թէ բոլոր ժո-
ղովրդին, այլ մեզ՝ Աստուածա-
նից առաջագոյն ընտրուած վկա-
ներիս. որ կերանք և խմեցինք
նորա հետ՝ նորա մեռելներից յա-
42 րութիւն առնելուց յետոյ։ Եւ
պատուիրեց մեզ ժողովրդին քա-
րոզել՝ և վկայութիւն դնել, թէ
ինքն է Աստուածանից սահմա-
նուած դատաւորը մեռելներին և
43 կենդանիներին։ Բոլոր մարգարէ-
ները վկայութիւն են տալիս նո-
րա մասին, որ նորա անունովը
մեղքերի թողութիւն կ՚առնէ ա-
մեն նորան հաւատացողը։

44 Եւ Պետրոսը դեռ այս բանը
խօսելիս, Սուրբ Հոգին իջաւ այն
45 խօսքը լսողների բոլորի վերայ։ Եւ
զարմացան Պետրոսի հետ եկող
հաւատացեալները, որ թլփա-
տութիւնիցն էին. որ հեթանոս-
ների մէջ էլ Սուրբ Հոգու պար-
46 գևը թափվում էր։ Որովհետև
լսում էին՝ որ նորանք լեզուն-
երով խօսում և Աստուծուն փա-
47 ռաւորում էին։ Այն ժամանակ
Պետրոսը պատասխանեց. Մի՞թէ
մէկը կարող է ջուրը արգիլել,
որ սորանք չ՚մկրտուին, որ Սուրբ
Հոգին ընդունեցին ինչպէս և
48 մենք։ Եւ նորանց հրամայեց որ
Տիրոջ անունովը մկրտուին. այն
ժամանակ աղաչեցին նորան՝ որ
մի քանի օր մնայ։

ԳԼ. ԺԱ

1 Եւ առաքեալները և այն եղ-
բայրները՝ որ Հրէաստանի կողմե-
րումն էին, լսեցին որ հեթանոս-
ներն էլ ընդունեցին Աստուծոյ
2 խօսքը։ Բայց երբոր Պետրոսը վեր
ելաւ Երուսաղէմ, այն հաւա-
տացեալները, որ թլփատութիւ-
նիցն էին վիճում էին նորա դէմ,
Եւ ասում էին, թէ Դու անթըլ- 3
փատ մարդկանց մօտ մտար, և
նորանց հետ կերար։ Եւ Պետրոսը 4
սկսեց կարգով պատմել նորանց՝
և ասեց. Ես Յոպպէ քաղաքումն 5
աղօթք էի անում՝ և մտքի յա-
փշտակութեան մէջ տեսիլք տե-
սայ, որ մեծ կտաւի պէս մի ա-
նօթ՝ չորս ծայրից կախուած՝
երկնքիցը վայր էր գալիս, և ե-
կաւ մինչև ինձ մօտ։ Երբոր աչքս 6
նորա մէջ գցած նայում էի, և
տեսայ երկրի չորքոտանիները, և
գազանները, և սողունները, և
երկնքի թռչունները. Եւ ձայն 7
լսեցի, որ ասում էր ինձ. վեր
կաց Պետրոս, մորթիր և կեր։ Եւ 8
ասեցի. Քաւ լիցի, Տէր. որովհե-
տև երբէք պիղծ կամ անմաքուր
բան իմ բերանը չէ մտած։ Ձայնը 9
երկնքիցն ինձ երկրորդ անգամ
պատասխանեց. Այն որ Աստուած
սրբեց, դու պիղծ մի համարիր։
Եւ այս երեք անգամ եղաւ, և 10
բոլորը դարձեալ վերացաւ եր-
կինքը։ Եւ ահա շուտով երեք 11
մարդիկ եկան կանգնեցին այն
տան առաջին, ուր որ ես էի. Կե-
սարիայիցն ինձ մօտ ուղարկուած։
Եւ Հոգին ինձ ասեց, որ նորանց 12
հետ գնամ՝ առանց խղճմտանք
անելու. այս վեց եղբայրներն էլ
ինձ հետ եկան, և մտանք այն
մարդի տունը։ Եւ պատմեց մեզ, 13
թէ ինչպէս տեսաւ հրեշտակն իր
տանը, որ կանգնած էր՝ և ասում
էր նորան. Ուղարկիր Յոպպէ, և
կանչիր Պետրոս կոչուած Սիմո-
նին. Նա քեզ հետ բաներ կ՚խօ- 14
սի, որ նորանով կ՚փրկուիս դու՝
և քո բոլոր տունը։ Եւ երբոր 15
սկսեցի խօսել, Սուրբ Հոգին ի-
ջաւ նորանց վերայ ինչպէս և մեզ
վերայ սկզբումը։ Եւ ես յիշեցի 16
Տիրոջ այն խօսքը՝ որ ասում էր.
Յովհաննէսը ջրով մկրտեց. բայց
դուք Սուրբ Հոգով կ՚մկրտուիք։
Ուրեմն՝ եթէ Աստուած միևնոյն 17
պարգևը տուաւ նորանց, ինչպէս
և մեզ, որ Տէր Յիսուս Քրիստո-
սին հաւատացինք, ապա ես ո՞վ

էի որ կարողանայի Աստուծուն
18 արգելել։ Եւ երբոր լսեցին այս
բաները, լռեցին և փառաւորում
էին Աստուծուն՝ և ասում էին.
Ուրեմն հեթանոսներին էլ Աստ-
ուած կեանքի համար ապաշխա-
րութիւն տուաւ։
19 Եւ նորանք որ ցրուած էին այն
նեղութիւնիցը, որ Ստեփաննոսի
վերայ եղաւ, մինչև Փիւնիկէ և
Կիպրոս և Անտիոքիա հասան. և
ոչ ոքի չէին խօսում Աստուծոյ
խօսքը, բայց միայն Հրէաներին։
20 Եւ նորանցից ոմանք կային՝ Կիպ-
րացի և Կիւրենացի մարդիկ, որ
Անտիոք մտած խօսում էին *Յոյ-
ների հետ՝ աւետարանելով Տէր
21 Յիսուսը։ Եւ Տիրոջ ձեռը նորանց
հետ էր. և բազմաթիւ մարդիկ
հաւատացին՝ և դէպի Տէրը դար-
22 ձան։ Այս բանի լուրը հասաւ
Երուսաղէմի եկեղեցու ական-
ջին, և Բառնաբասին ուղարկե-
23 ցին որ գնայ մինչև Անտիոք։ Նա
երբոր եկաւ, և Աստուծոյ շնորհ-
քը տեսաւ՝ ուրախ եղաւ, և յոր-
դորում էր ամենին՝ որ սրտի յօ-
ժարութեամբ Տիրոջ հետ մնան։
24 Որովհետև նա բարի և Սուրբ
Հոգով և հաւատքով լցուած
մարդ էր. և շատ ժողովուրդ ա-
25 ւելացաւ Տիրոջ համար։ Եւ Բառ-
նաբասը դուրս եկաւ Տարսոն,
որ Սօղոսին որոնէ, և նորան գտաւ
26 բերաւ Անտիոք։ Եւ եղաւ որ
նորանք մի բոլոր տարի ժողով-
վում էին եկեղեցու մէջ, և շատ
ժողովուրդ էին սովորեցնում, և
աշակերտներն առաջ Անտիոքու-
մը Քրիստոնեայ անուանուեցան։
27 Եւ այն օրերումն Երուսաղէ-
միցը մարգարէներ իջան Անտիոք։
28 Եւ նորանցից մէկն՝ անունն Ա-
գաբոս, վերկացաւ՝ Հոգովն իմաց
տուաւ, թէ բոլոր աշխարհքի
վերայ մեծ սով է լինելու, որ
Կղօդիոս կայսեր ժամանակին ե-
29 ղաւ էլ։ Բայց աշակերտներն ո-
րոշեցին որ իրանցից ամեն մէկն,
որքան որ կարող էր, օգնութիւն
ուղարկէ Հրէաստանումը բնակ-
ուած եղբայրներին. Որ արին էլ,
30 և ուղարկեցին երէցների մօտ՝
Բառնաբասի և Սօղոսի ձեռովը։

ԳԼ. ԺԲ

Այն ժամանակը Հերովդէս թա-
գաւորը ձեռք գցեց, որ եկեղե-
ցուցը մի քանիսին չարչարէ։ Եւ
2 Յակոբոսին՝ Յովհաննէսի եղբօրը,
3 սրով սպանեց։ Եւ տեսնելով որ
Հրէաներին հաճելի է, նորա վե-
րայ Պետրոսին էլ բռնեց. (և բա-
4 զարջակերաց օրերն էր։) Նորան
երբ որ բռնեց՝ բանտը դրաւ, և
մատնեց չորս կարգ չորսական
զինուորների որ պահեն նորան.
և կամենում էր զատկից յետոյ
նորան բերել ժողովրդի առաջին։
5 Եւ Պետրոսը բանտումը պահուած
էր. բայց նորա համար անդադար
աղօթք էր լինում եկեղեցուցը
6 դէպի Աստուած։ Եւ երբոր Հե-
րովդէսը կամեցաւ նորան դուրս
բերել, այն գիշերը Պետրոսը
քնած էր երկու զինուորների մէջ
երկու շղթայով կապուած. և
պահապանները դռան առաջին
7 բանտը պահպանում էին։ Եւ
ահա Տիրոջ հրեշտակը կանգնեց,
և տան մէջ լոյս ծագեց. և խթեց
Պետրոսի կողին՝ նորան արթնա-
ցրեց և ասեց. Վեր կաց շուտով.
8 և շղթաները վայր ընկան նորա
ձեռներիցը։ Եւ հրեշտակն ասեց
նորան. Գօտիդ կապիր և հողա-
թափներդ հագիր ոտներիդ, և
նա այնպէս արաւ. և ասեց նո-
9 րան. Հանդերձներդ քեզ վերայ
գցիր և իմ ետևից եկ։ Եւ նա
դուրս եկաւ գնում էր նորա ե-
տևից, և չ՛գիտէր թէ ճշմարիտ
է հրեշտակից եղածը. որովհետև
կարծում էր թէ երազ է տես-
10 նում։ Եւ երբոր նորանք անցան
առաջի պահապաններից և երկ-
րորդից, եկան մինչև երկաթի
դուռը որ դէպի քաղաքն էր տա-
նում. որ ինքն իրանից բացուե-
ցաւ նորանց համար, և դուրս
գալով մի փողոց անցան, և շու-
11 տով հրեշտակը նորանից հեռա-
ցաւ։ Եւ Պետրոսը ինքն իրան

*Ոմանք՝ Հելլենախօսների

գալով ասեց. Հիմա ճշմարիտ
իմացայ, որ Տէրն իր հրեշտակն
ուղարկեց, և փրկեց ինձ Հերով-
դէսի ձեռիցը, և Հրէաների ժո-
ղովրդի բոլոր սպասած բաներիցը։
12 Եւ մտածելով եկաւ Մարկոս կոչ-
ուած Յովհաննէսի մայր Մարիա-
մի տունը, ուր շատերը ժողով-
13 ուած՝ աղօթք էին անում։ Եւ
փողոցի դուռը որ թակեց, մի
աղախին՝ անունը Հռովդէ մօտ
14 եկաւ, որ ականջ դնէ. Եւ Պետ-
րոսի ձայնը ճանաչեց, ուրախու-
թիւնիցը դուռը բաց չ՛արաւ.
ներս վազեց և պատմեց, թէ
Պետրոսը դռանը կանգնած է։
15 Նորանք էլ ասեցին նորան՝ Գիժ-
ուել ես. իսկ նա հաստատում
էր թէ այսպէս է. և նորանք ա-
սում էին թէ Նորա հրեշտակն է։
16 Բայց Պետրոսը կանգնած ստէպ
դուռը թակում էր. երբոր բաց
արին, տեսան նորան և զարմա-
17 ցան։ Եւ նա ձեռքով նշան արաւ
նորանց որ լուռ կենան. և պատ-
մեց նորանց, թէ ինչպէս Տէրը
բանտիցն իրան հանեց. և ասեց.
Այս բանը պատմեցէք Յակոբո-
սին և եղբայրներին. և դուրս ե-
18 կաւ գնաց ուրիշ տեղ։ Եւ երբոր
առաւօտ եղաւ՝ մեծ խռովու-
թիւն կար այն զինուորների մէջ.
19 Թէ Պետրոսը ի՞նչ եղաւ։ Բայց
Հերովդէսը երբոր նորան ուզեց և
չ՛գտաւ, պահապաններին քննեց
և հրամայեց սպանել. և Հրէաս-
տանիցն իջաւ Կեսարիա՝ և այնտեղ
էր լինում։
20 Եւ Հերովդէսը շատ բարկացած
էր Տիւրացիների և Սիդոնացիներ-
ի վերայ. և նորանք միաբան ե-
կան նորա մօտ. և Բղաստոսին՝
թագաւորի ներսի տան վերա-
կացուին՝ համոզելով՝ խաղաղու-
թիւն էին խնդրում. որովհետև
նորանց երկիրը՝ արքունիքիցն
21 էր կերակրվում։ Մի որոշուած
օր, Հերովդէսը թագաւորական
զգեստ հագած ատեանումը նըս-
տած էր, և հրապարակաւ ատե-
22 նաբանում էր դէպի նորանց։ Եւ
ամբոխն աղաղակում էր, թէ
Դա Աստուծոյ ձայն է, և ոչ թէ
մարդի։ Եւ իսկոյն Տիրոջ հրեշ-
23 տակը զարկեց նորան, որովհետև
Աստուծուն չ՛տուաւ փառքը. և
որդներով լցուեցաւ՝ մեռաւ։
Եւ Աստուծոյ խօսքն աճում
24 էր և շատանում։ Բառնաբասը
25 և Սօղոսը իրանց պաշտօնը կատա-
րելով Երուսաղէմիցը ետ դառան.
և իրանց հետ էին առել Յով-
հաննէսին էլ, որ Մարկոս էր
կոչուած։

ԳԼ. ԺԳ

Եւ Անտիոքումն՝ այն տեղի եկե-
1 ղեցու մէջ կային մի քանի մար-
գարէներ և վարդապետներ.
Բառնաբասը՝ և Նիւգէր ասուած
Շմաւոնը, և Ղուկիոս Կիւրենա-
ցին, և Հերովդէս չորրորդապետի
սննդակից Մանայէնը, և Սօղոսը։
Սորանք երբոր Տիրոջը պաշտօն
2 էին մատուցանում և ծոմ էին
պահում, Սուրբ Հոգին ասեց.
Ինձ համար որոշեցէք Բառնաբա-
սին և Սօղոսին այն գործի հա-
մար, որ ես գորանց կանչել եմ։
Այն ժամանակ ծոմ պահեցին և
3 աղօթք արին, նորանց վերայ ձեռք
գրին՝ արձակեցին։
Եւ նորանք էլ Սուրբ Հոգուցն
4 ուղարկուած՝ իջան Սելևկիա, և
այն տեղից նաւով գնացին Կիպ-
5 րոս։ Եւ Սաղամինա հասնելով
Աստուծոյ խօսքը պատմում էին
Հրէաների ժողովարաններումը.
Յովհաննէսին էլ սպասաւոր ու-
6 նէին։ Ման եկան կղզին մինչև
Պափոս. և մի մոգ գտան՝ սուտ
մարգարէ Հրէայ, որի անունը
7 Բարեյեսու էր։ Որ փոխանորդ
բդեշխ Սերգիոս Պօղոսի, իմաս-
տուն մարդի, հետ էր. սա Բառ-
նաբասին և Սօղոսին իրան մօտ
կանչելով ուզում էր որ Աստու-
8 ծոյ խօսքը լսէ։ Բայց նորան հա-
կառակ կացաւ Եղիմաս մոգը.
որովհետև այսպէս է թարգման-
վում նորա անունը. սա ուզում
էր փոխանորդ բդեշխին հաւատ-
9 քիցը փոխել։ Բայց Սօղոսը, որ
Պօղոսն է՝ Սուրբ Հոգով լցուած
10 մտիկ տուաւ նորան, Եւ ասեց.

Ով ամեն խաբեբայութիւնով և
ամեն խորամանկութիւնով լրցուած
սատանայի որդի, ամեն
արդարութեան թշնամի. դու
չե՞ս դադարում Տիրոջ ուղիղ
41 ճանապարհները ծռելուց։ Եւ
հիմա ահա Տիրոջ ձեռը քեզ
վերայ է, և կոյր կ'լինես որ չը
տեսնես արեգակը՝ մինչև մի ժա-
մանակ. և իսկոյն մութ և խաւ-
ար ընկաւ նորա վերայ, և ման
գալով ձեռք բռնող մարդիկ էր
42 որոնում։ Այն ժամանակ փոխա-
նորդ բդեշխն երբոր տեսաւ այդ
եղածը, հաւատաց, և Տիրոջ
վարդապետութեան վերայ զար-
մացաւ։
43 Եւ Պօղոսը և հետը լինողները
Պափոսից դուրս ելան՝ եկան Պամ-
փիւլիայի Պերգէն. բայց Յով-
հաննէսը նորանցից բաժանուեց
44 ետ դառաւ Երուսաղէմ։ Եւ նո-
րանք Պերգէից գնացին՝ եկան
Պիսիդիայի Անտիոքը. և շաբաթ
օրը ժողովարանը մտան նստեցին։
45 Եւ օրէնքն ու մարգարէները կար-
դալուց յետոյ, ժողովրդապետ-
ները նորանց մօտ ուղարկեցին և
ասեցին. Մարդիկ եղբարք, եթէ
դուք այդ ժողովրդին համար
յորդորական խօսքեր ունիք՝ խօ-
46 սեցէք։ Պօղոսն էլ վերկացաւ՝
ձեռքը շարժեց և ասեց. Ով Իս-
րայէլացի մարդիկ, և դուք՝ որ
Աստուածանից վախենում էք,
47 լսեցէք։ Այս Իսրայէլ ժողովրդի
Աստուածը ընտրեց մեր հայրե-
րին. և ժողովուրդը բարձրացրեց
պանդխտութիւնումն Եգիպտոսի
երկրի մէջ. և բարձր բազուկով
նորանց այն տեղից դուրս հանեց։
48 Եւ քառասուն տարու չափ ժա-
մանակ նորանց կերակրեց անա-
49 պատումը։ Եւ Քանանի երկրումը
եօթն ազգեր խորտակեց և նո-
րանց երկիրը նորանց ժառանգել
20 տուաւ։ Եւ սորանից իբր չորս
հարիւրեյիսուն տարի յետոյ նո-
րանց դատաւորներ տուաւ մին-
21 չև Սամուէլ մարգարէն։ Եւ ապա
թագաւոր ուզեցին, և Աստուած
տուաւ նորանց Կիսի որդի Սա-
ուղը՝ մի մարդ Բենիամինի ցե-
ղիցը, քառասուն տարի։ Եւ նո- 22
րան փոխելով, Դաւիթին նորանց
համար թագաւոր կանգնեցրեց,
որ նորա համար էլ վկայութիւն
տուաւ և ասեց. Յեսսէի որդի
Դաւիթին գտայ իմ սրտի պէս
մարդ, որ նա իմ բոլոր կամքը
կ'անէ։ Սորա զաւակիցն Աստ- 23
ուած իր խոստմունքի պէս Իսրա-
յէլացիների համար Յիսուս Փրկի-
չը վերկացրեց։ Որ Յովհաննէսը՝ 24
նորա *գալուց առաջ, կանխաւ
ապաշխարութեան մկրտութիւնը
քարոզեց Իսրայէլի բոլոր ժո-
ղովրդին։ Եւ երբոր Յովհաննէսը 25
վերջացնում էր իր ընթացքը՝ ա-
սում էր. Ինձ համար ո՞վ էք
կարծում որ լինեմ. ես այն չեմ.
բայց ահա իմ ետևից գալիս է
նա, որ ես չեմ արժանի նորա
ոտների կօշիկն արձակելու։ Մար- 26
դիկ եղբարք, Աբրահամի ցեղի
որդիքներ, և ով որ ձեզանում
աստուածավախ են. ձեզ ուղար-
կուեցաւ այս փրկութեան խօս-
քը։ Որովհետև Երուսաղէմում 27
բնակողները, և նորանց իշխաններ-
ը՝ չ'ճանաչեցին նորան, և ոչ էլ
մարգարէների ձայները՝ որ ամեն
շաբաթ օրեր կարդացվում են.
այլ դատապարտելով կատարե-
ցին։ Եւ թէպէտ մի մահի պատ- 28
ճառ չ'գտան, Պիղատոսիցն ուզե-
ցին որ նա սպանուի։ Եւ երբոր 29
այն ամենը որ նորա համար գրը-
ուած էր, կատարեցին, փայտիցը
վայր բերին՝ դրին գերեզման։
Բայց Աստուած նորան մեռելնե- 30
րից յարութիւն տուաւ, որ շատ
օրերով երևեցաւ նորանց, Որ 31
նորա հետ Գալիլեայից ելել էին
Երուսաղէմ, որոնք նորա համար
վկաներ են ժողովրդի առաջին։
Եւ մենք աւետարանում ենք ձեզ 32
այն խոստմունքը, որ հայրերին 33
եղած էր. Որ Աստուած այն կա-
տարեց մեզանում՝ որ նորանց որ-
դիքն ենք, Յիսուսին յարուցա-
նելով. ինչպէս երկրորդ սաղմո-
սումն գրուած է. Դու իմ Որդին
ես. ես այսօր ծնեցի քեզ։ Եւ թէ 34

*Կամ՝ մտնելուց

մեռելներից յարութիւն տուաւ
նորան, որ էլ չ'պիտի դառնայ
ապականութեան մէջ՝ այսպէս
ասեց. թէ Ձեզ կ'տամ Դաւիթի
հաւատարիմ սուրբ խոստմանք-
35 ները։ Որովհետև ուրիշ տեղում
էլ ասում է. Քո սուրբին ապա-
կանութիւն տեսնել չես տալ։
36 Բայց Դաւիթն իր դարումը ծա-
ռայեց Աստուծոյ կամքին, և
ննջեց, և իր հայրերի հետ դրուե-
ցաւ և ապականութիւն տեսաւ։
37 Բայց նա, որին Աստուած յա-
րութիւն տուաւ, ապականու-
38 թիւն չ'տեսաւ։ Արդ թող յայտ-
նի լինի ձեզ, մարդիկ եղբարք,
որ սորանով մեղքերի թողու-
թիւն է աւետարանվում ձեզ.
39 Եւ այն ամեն բաներիցը, որ Մով-
սէսի օրէնքովը չ'կարողացաք ար-
դարանալ, սորանով ամեն հա-
40 ւատացողը կ'արդարանայ։ Արդ
զգոյշ կացէք՝ որ չ'լինի թէ ձեզ
վերայ գայ մարգարէներից ասու-
41 ածը Թէ Տեսէք, անարգողներ,
և զարմացէք և փճացէք. որ ես
մի գործ եմ գործում ձեր օրե-
րումը. մի գործ, որ նորան չէք
հաւատալ եթէ մէկը պատմէ
ձեզ։
42 Եւ երբոր այնտեղից դուրս ե-
կան, *աղաչում էին որ միւս շա-
բաթումն էլ այն բանը խօսեն ի-
43 րանց համար։ Երբոր ժողովուրդն
արձակուեցաւ, Հրէաներից՝ և նո-
րահաւատ բարեպաշտ մարդկան-
ցից շատերը գնում էին Պօղոսի
և Բառնաբասի ետևից. որոնք նո-
րանց հետ խօսելով նորանց հա-
մողում էին որ շարունակեն Աս-
44 տուծոյ շնորհքի մէջ կենալ։ Եւ
հետևեալ շաբաթ օրն, համար-
եա թէ բոլոր քաղաքը հաւաք-
ուեցաւ՝ Աստուծոյ խօսքը լսե-
45 լու։ Երբոր Հրէաներն ամբոխը
տեսան նախանձով լցուեցան և
Պօղոսից ասուած խօսքերին դէմ
խօսելով հակառակում և հայ-
46 հոյում էին։ Պօղոսը և Բառնա-
բասն էլ համարձակութեամբ ա-

*Ոմանք՝ աղաչում էին հեթանոս-
ները

սում էին. Առաջ պէտք էր որ
Աստուծոյ բանը ձեզ խօսուէր.
բայց որովհետև դուք մերժում
էք նորան և արժան չէք համա-
րում ձեզ յաւիտենական կեան-
քին, ահա դէպի հեթանոսներն
ենք դառնում։ Որովհետև Տէրն 47
այսպէս պատուիրեց մեզ Թէ Քեզ
հեթանոսների լոյս դրի, որ դու
փրկութիւն լինես մինչև երկրի
ծայրերը։ Հեթանոսներն այս լսե- 48
լով ուրախանում էին. և Տիրոջ
խօսքը փառաւորում էին. և հա-
ւատացին քանիսը որ կարգուած
էին դէպի յաւիտենական կեան-
քը։ Եւ Տիրոջ խօսքը տարածվում 49
էր այն բոլոր գաւառը։ Բայց 50
Հրէաները գրգռեցին բարեպաշտ
և պատուաւոր կանանցը և քա-
ղաքի գլխաւորներին, և հալա-
ծանք վերկացնելով Պօղոսի և
Բառնաբասի վերայ՝ նորանց դուրս
արին իրանց սահմաններիցը։ Եւ 51
նորանք իրանց ոտների փոշին թօ-
թափեցին նորանց վերայ, և ե-
կան Իկոնիոն։ Եւ աշակերտները 52
լցվում էին ուրախութիւնով՝ և
Սուրբ Հոգով։

ԳԼ. ԺԴ

Եւ եղաւ Իկոնիոնումն որ նորանք 1
միասին մտնում էին Հրէաների
ժողովարանը, և այնպէս խօսում
որ Հրէաներից և Յոյներից մեծ
բազմութիւն հաւատացին։ Բայց 2
չ'հաւատացող Հրէաները հեթա-
նոսների սիրտերը գրգռեցին և
չարացրին եղբայրների դէմ. Եւ 3
նորանք շատ ժամանակ այնտեղ
մնացին համարձակ խօսելով Տի-
րոջ վերայ, որ վկայում էր իր
շնորհաց խօսքին. և նշաններ և 3
հրաշքներ էր լինել տալիս նորանց
ձեռովը։ Եւ տարաձայնութիւն 4
եղաւ քաղաքի բազմութեան մէջ.
և ոմանք Հրէաների կողմն էին,
և ոմանք առաքեալների կողմը։
Երբոր հեթանոսները և Հրէաներն 5
իրանց իշխաններովը նորանց վե-
րայ յարձակեցին, որ նորանց նա-
խատեն և քարկոծեն, Նորանք ի- 6
մացան՝ և փախան Լիկայոնացի-

ների Լիւստրա և Դերբէ քա-
ղաքները և նորանց շրջակայքը,
և այնտեղ աւետարանում էին։
7 Եւ Լիւստրայումը մի մարդ՝
ոտներով տկար՝ նստած էր, որ իր
մօր որովայնիցը կաղ էր ծնուած,
8 և երբէք ման եկած չէր։ Սա լսեց
Պօղոսի խօսքերը. նա էլ նորա
վերայ նայեց, և երբոր տեսաւ
որ հաւատք ունի փրկուելու,
9 Մեծ ձայնով ասեց. Ոտներիդ
վերայ ուղիղ կանգնիր. և նա
10 ցատկելով՝ ման էր գալիս։ Եւ
ժողովուրդը Պօղոսի արածը տես-
նելով, իրանց ձայնը բարձրացը-
րին Լիկայոներէն և ասեցին.
Աստուածները մարդկանց նման
11 եղած վայր եկան մեզ մօտ։ Եւ
Բառնաբասին Դիոս էին կոչում,
և Պօղոսին Հերմէս. որովհետև
12 նա էր խօսքի առաջնորդը։ Բայց
Դիոսի քուրմը՝ որ քաղաքի ա-
ռաջին կար, ցուլեր և պսակներ
բերաւ դռների մօտ և այն բազ-
մութեան հետ՝ կամենում էր
13 զոհ անել։ Եւ երբոր Բառնաբաս
և Պօղոս առաքեալները լսեցին,
իրանց հանդերձները պատառած՝
ամբոխի մէջ վազեցին, մեծ ձայ-
14 նով կանչում էին, Եւ ասում.
Մարդիկ, այդ ի՞նչու էք անում.
մենք էլ ձեզ նման կիրքեր ու-
նեցող մարդիկ ենք. որ աւետա-
րանում ենք ձեզ՝ այդպիսի ու-
նայն բաներից ետ դառնալ դէպի
կենդանի Աստուածը. որ ստեղ-
ծեց երկինքն ու երկիրը և ծովը՝
15 և ամեն ինչ որ նորանց մէջ է։ Որ
անցած դարերումը թոյլ տուաւ
ամեն հեթանոսներին՝ որ իրանց
16 ճանապարհներովը գնան. Թէ-
պէտև ինքն իրան առանց վկա-
յութեան չ՛թողեց, բարերարու-
թիւն անելով երկնքիցը տուաւ
ձեզ անձրևներ և պտղաբեր ժա-
մանակներ, կերակուրներով և
ուրախութիւնով ձեր սրտերը
17 լցնելով։ Եւ այս ասելով՝ հազիւ
թէ ժողովուրդներին դադարեցը-
րին, որ զոհ չ՛անեն իրանց հա-
մար։
18 Եւ Անտիոքից և Իկոնիոնից
Հրէաներ եկան՝ ժողովուրդներին
համոզեցին և Պօղոսին քարկոծ
անելով՝ քաղաքիցը դուրս քաշե-
ցին, և կարծում էին թէ մեռած
է։ Եւ երբոր աշակերտները նո- 19
րան շրջապատեցին, վեր կացաւ
մտաւ քաղաքը. և հետևեալ օրը
Բառնաբասի հետ դուրս եկաւ
գնաց Դերբէ. Այն քաղաքումն 20
էլ աւետարանեցին, և շատերին
աշակերտ շինեցին. և ապա ետ
դառան Լիւստրա և Իկոնիոն և
Անտիոք. Աշակերտների սրտերը 21
հաստատեցին, և յորդորեցին որ
հաստատ կենան հաւատքի մէջ.
և թէ շատ նեղութիւններով
պէտք է մեզ մտնել Աստուծոյ
արքայութիւնը։ Նորանց ամեն 22
մէկ եկեղեցիների համար երէց-
ներ ձեռնադրեցին, աղօթք արին
ծոմ պահելով, և նորանց յանձ-
նեցին այն Տիրոջը, որին հաւա-
տացել էին։ Եւ Պիսիդիայի մէջ 23
ման գալով եկան Պամփիւլիա։
Եւ երբոր Պերգէի մէջ Տիրոջ 24
խօսքը խօսեցին, իջան Ատալիա։
Եւ այնտեղից նաւով գնացին Ան- 25
տիոք, որ այն տեղից Աստուծոյ
շնորհքին յանձնուած էին՝ այն
գործի համար՝ որ կատարեցին։
Եւ երբոր եկան՝ ժողովեցին եկե- 26
ղեցին պատմեցին ինչ որ Աստ-
ուած արաւ իրանց հետ, և թէ
նա հեթանոսների համար հա-
ւատքի դուռը բացաւ։ Եւ շատ 27
ժամանակ այնտեղ մնացին աշա-
կերտների հետ։

ԳԼ. ԺԵ

Եւ Հրէաստանից ոմանք իջել 1
էին եղբայրներին սովորեցնում
էին որ Եթէ չ՛թլփատուիք Մով-
սէսի սովորութեանը պէս, չէք 2
կարող փրկուիլ։ Եւ Պօղոսը և
Բառնաբասը նորանց հետ բաւա-
կան հակառակութիւն և վէճ ա-
նելուց յետոյ, վճռեցին որ Պօ-
ղոսը և Բառնաբասը և նորանցից
մի քանիսն այն խնդրի համար
վեր գնան Երուսաղէմ առաքեալ- 3
ների և երէցների մօտ։ Նորանք
էլ եկեղեցուցը ճանապարհ գրց-
ուեցան, և Փիւնիկէի և Սամա-

րիայի միջովն անցնելով պատ-
մում էին հեթանոսների դառ-
նալը, և մեծ ուրախութիւն էին
4 անում բոլոր եղբայրներին։ Եւ
երբոր հասան Երուսաղէմ, եկե-
ղեցուցը և առաքեալներիցը և
երէցներիցն ընդունուեցան, և
պատմեցին ինչ բաներ որ Աստ-
5 ուած իրանց հետ արաւ։ Փարի-
սեցիների աղանդից մի քանի հա-
ւատացեալներ վերկացան և ա-
սում էին, թէ Պէտք է թլփա-
տել դորանց և պատուիրել որ
Մովսէսի օրէնքը պահեն։
6 Եւ առաքեալները և երէցները
ժողովուեցան, որ տեսնեն այս
7 բանի համար։ Եւ շատ քննու-
թիւն լինելուց յետոյ Պետրոսը
վերկացաւ և նորանց ասեց. Մար-
դիկ եղբարք, դուք գիտէք, որ
առաջին օրերից ձեր միջումն
Աստուած ընտրեց որ իմ բերա-
նովը հեթանոսներն աւետարանի
8 խօսքը լսեն և հաւատան։ Եւ
որտագէտ Աստուածը վկայու-
թիւն տուաւ նորանց, Սուրբ Հո-
գին տալով նորանց ինչպէս և
9 մեզ։ Եւ ոչինչ խտրութիւն չ՛ա-
րաւ նորանց և մեր մէջ, հա-
ւատքով սրբելով նորանց սրտերը։
10 Եւ հիմա ի՞նչու էք Աստուծուն
փորձում, որ մի լուծ դնէք ա-
շակերտների վզի վերայ, որ ոչ
մեր հայրերը և ոչ մենք կարո-
11 ղացանք տանել։ Այլ հաւա-
տում ենք որ Տէր Յիսուս Քրիս-
տոսի շնորհքովը կ՛ապրենք ինչ-
պէս նորանք էլ։
12 Եւ բոլոր բազմութիւնը լռեց,
և լսում էին Բառնաբասին և Պօ-
ղոսին որ պատմում էին թէ Աստ-
ուած որչափ նշաններ և հրաշք-
ներ արաւ նորանց ձեռովը հե-
13 թանոսների մէջ։ Եւ երբոր նո-
րանք լռեցին, Յակոբոսը պատաս-
խանեց և ասեց. Մարդիկ եղ-
14 բարք, ինձ լսեցէք։ Շմաւոնը
պատմեց, թէ ինչպէս Աստուած
առաջուց այց արաւ, որ հեթա-
նոսներիցը ժողովուրդ առնէ իր
15 անունի համար։ Եւ սորա հետ
միաբանվում են մարգարէների
խօսքերը. ինչպէս էլ գրուած է.
Սորանից յետոյ կ՛դառնամ՝ և 16
Դաւթի վայր ընկած բնակարանը
կ՛շինեմ, և նորա քանդուածները
նոր կ՛շինեմ՝ և կ՛կանգնեցնեմ
նորան. Որ մարդկանց մնացածնե- 17
րը Տիրոջը խնդրեն. և այն բոլոր
հեթանոսները՝ որոնց վերայ իմ
անունը կոչուած է, ասում է Տէ-
րը. Նա որ այս բոլորն անում է։
Յաւիտենից հետէ յայտնի է Տի- 18
րոջը իր բոլոր գործերը։ Նորա հա- 19
մար ես էլ յարմար եմ համա-
րում, նեղութիւն չ՛տալ նորանց՝
որ հեթանոսներիցն են դառնում
դէպի Աստուած։ Բայց որ թուղթ 20
գրուի նորանց, որ ետ քաշուին
կուռքերի պղծութիւններից, և
պոռնկութիւնից. և խեղդուածից
և արիւնից։ Որովհետև Մովսէսն 21
առաջին դարերից հետէ ամեն
քաղաքներում իրան քարոզիչ-
ներն ունի և ժողովարանների մէջ
ամեն շաբաթ օր կարդացվում է։
Այն ժամանակ հաճոյ երևե- 22
ցաւ առաքեալներին և երէցներին
բոլոր եկեղեցու հետ, որ իրանցից
ընտրուած մարդիկ ուղարկեն Ան-
տիոք՝ Պօղոսի և Բառնաբասի
հետ, Բարսաբայ կոչուած Յու-
դային, և Շիղային՝ որ գլխաւոր
մարդիկ էին եղբայրների մէջ.
Եւ նորանց ձեռովը գրեցին այս 23
բանը.
Առաքեալներս և երէցներս և
եղբայրներս, Անտիոքի և Սիւրիա-
յի և Կիլիկիայի մէջ լինող եղ-
բայրներիդ՝ որ հեթանոսներիցն
էք, ողջոյն։ Որովհետև լսեցինք, 24
որ ոմանք մեր միջից դուրս գալով
խռովեցրին ձեզ խօսքերով և ձեր
անձերը խախտեցին, ասելով որ
թլփատուիք և օրէնքը պահէք.
որոնց մենք չ՛հրամայեցինք. Մեզ 25
միաբան ժողովուածներիս հաճոյ
երևեցաւ, որ ընտրուած մարդիկ
ուղարկենք ձեզ մօտ մեր սիրելի-
ների՝ Բառնաբասի և Պօղոսի հետ.
Մարդիկ, որ իրանց անձերը մատ- 26
նած են մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի անունի համար։ Արդ Յու- 27
դային և Շիղային ուղարկեցինք.
որ իրանք էլ խօսքով միևնոյն
բանը պատմեն։ Որովհետև Սուրբ 28

Հոգուն և մեզ հաճոյ երևեցաւ,
աւելի բեռ չ՛դնել ձեզ վերայ
29 այս հարկաւոր բաներից ջոկ։ Որ
հեռու կենաք կուռքի զոհուա-
ծից և արիւնից՝ և խեղդուածից
և պոռնկութիւնից. որ սորանցից
ձեր անձերը պահելով լաւ կ՛ա-
նէք. ողջ կացէք։
30 Եւ սորանք արձակուեցան՝ ե-
կան Անտիոք, և ժողովուրդը հա-
31 ւաքեցին՝ և թուղթը տուին։ Եւ
կարդալով ուրախացան այն մխի-
32 թարութեան վերայ։ Եւ Յուդան
և Շիղան, որովհետև նորանք էլ
մարգարէներ էին, շատ խօսքե-
րով մխիթարեցին և հաստատե-
33 ցին եղբայրներին։ Եւ մի ժամա-
նակ կենալուց յետոյ, եղբայրնե-
րիցը խաղաղութիւնով արձակ-
34 ուեցան դէպի առաքեալները. Եւ
Շիղային հաճոյ երևեցաւ՝ այն-
35 տեղ մնալ։ Բայց Պօղոսը և Բառ-
նաբասը Անտիոքի մէջ մնում էին,
և Տիրոջ խօսքը շատ ուրիշ բա-
ների հետ սովորեցնում էին և
աւետարանում։
36 Բայց մի քանի օրերից յետոյ Պօ-
ղոսն ասեց Բառնաբասին. Դառ-
նանք և այցելութիւն անենք մեր
եղբայրներին ամեն քաղաքնե-
րում, որոնց մէջ Տիրոջ խօսքը
քարոզեցինք, տեսնենք թէ ինչ-
37 պէս են։ Եւ Բառնաբասը կամե-
նում էր Մարկոս կոչուած Յով-
38 հաննէսին էլ վեր առնել։ Բայց
Պօղոսն արժան էր համարում,
որ Պամփիւլիայի մէջ իրանցից
ջոկուածին, և նորանց հետ գոր-
ծի մէջ չ՛եկածին իրանց հետ
39 չ՛առնեն։ Եւ այսպէս դժտու-
թիւն եղաւ, մինչև որ ջոկուեցան
իրարից. Բառնաբասը Մարկոսին
առաւ և նաւով գնաց Կիպրոս։
40 Եւ Պօղոսը Շիղային ընտրեց ճա-
նապարհ ելաւ, եղբայրներիցն
Աստուծոյ շնորհքին յանձնուած։
41 Եւ մտն էր գալիս Սիւրիայի և
Կիլիկիայի կողմերը, և եկեղեցիներ-
ը հաստատում էր։

ԳԼ. ԺԶ.

1 Եւ եկաւ հասաւ Դերբէ և
Լիւստրա. և ահա մէկ աշակերտ
կար այնտեղ՝ անունը Տիմոթէոս.
որ մի հաւատացեալ Հրէայ կնկայ՝
և Յոյն հօր որդի էր։ Որ բարի 2
վկայութիւն ունէր Լիւստրացի
և Իկոնիացի եղբայրներիցը։ Պօ- 3
ղոսը կամեցաւ, որ սա գնայ իր
հետ. և առաւ թլփատեց նորան՝
այն տեղերումը լինող Հրէաների
պատճառովը, որովհետև ամենքը
գիտէին որ նորա հայրը Յոյն էր։
Եւ երբ որ անցնում էին այն քա- 4
ղաքներովը, աւանդում էին նո-
րանց պահել այն հրամանները,
որ Երուսաղէմումը լինող առաք-
եալներիցը և երէցներիցը պատ-
ուիրուած էին։ Եւ եկեղեցիները 5
հաւատքով հաստատվում էին,
որ օրէցօր թուով աւելանում
էին։
Եւ Փռիւգիան և Գաղատացի- 6
ների երկիրը ման եկան, Սուրբ
Հոգուցն արգելուելով որ Ասիայի
մէջ Աստուծոյ խօսքը չ՛խօսեն։
Երբ որ եկան Միւսիայի կողմե- 7
րը, ջանք էին անում որ գնան
դէպի Բիւթանիա, և Հոգին թոյլ
չ՛տուաւ նորանց։ Եւ Միւսիա- 8
յովն անցնելով իջան Տրովադա։
Եւ գիշերումը տեսիլք երևեցաւ 9
Պօղոսին. մէկ Մակեդոնացի մարդ
կանգնած էր, աղաչում էր նո-
րան՝ և ասում. Անցիր Մակե-
դոնիա՝ և օգնիր մեզ։ Եւ երբոր 10
տեսաւ տեսիլքը, շուտով ուզե-
ցինք դուրս գալ Մակեդոնիա.
հասկանալով որ Տէրն է հրաւի-
րել մեզ, որ աւետարանենք նո-
րանց։
Եւ Տրովադայից դուրս եկած՝ 11
ուղիղ գնացինք Սամօթրակէ. և
հետևեալ օրը Նէապոլիս. Եւ 12
այնտեղից Փիլիպպէ, որ Մակե-
դոնացիների բաժնի առաջինն է՝
Կոլոնիա քաղաք. և մենք քաղա-
քումը մի քանի օր մնացինք, Եւ 13
շաբաթ օրը քաղաքիցը դուրս
գնացինք դէպի գետը, ուր որ
սովոր էին աղօթք անելու. և նը-
ստած խօսում էինք ժողովուած
կանանց հետ։ Եւ մի կին՝ անունը 14
Լիդիա՝ ծիրանավաճառ, Թիւա-
տիր քաղաքիցը, աստուածավախ,

լսեց. որի սիրտը Տէրը բացաւ, որ
Պօղոսի խօսածներին մտիկ անէ։
15 Եւ երբոր նա և իր տունը մկրտ-
ուեցաւ, աղաչեց ասելով. Եթէ
ինձ Տիրոջը հաւատացած համա-
րէք, մտէք իմ տունը՝ մնացէք.
և բռնադատեց տարաւ մեզ։
16 Եղաւ որ մենք աղօթքի գնա-
լիս, մի աղախին պատահեց մեզ՝
որ հարցուկ ոգի ունէր. որ կա-
խարդութիւնովն իր տէրերին շատ
17 շահ էր բերում։ Սա Պօղոսի և
մեր ետևից ընկած՝ աղաղակում
էր և ասում. Այս մարդիկը Բար-
ձրեալ Աստուծոյ ծառաներն են,
որ ձեզ պատմում են փրկու-
18 թեան ճանապարհը։ Եւ շատ օ-
րեր այս բանն անում էր. Պօղոսն
էլ զայրացած դարձաւ և ասեց
այն ոգուն. Յիսուս Քրիստոսի ա-
նունովը պատուիրում եմ քեզ,
դուրս եկ դորանից. և նոյն ժա-
19 մումը դուրս եկաւ։ Եւ երբոր
նորա տէրերը տեսան թէ իրանց
շահի յոյսը կտրուեցաւ, Պօղոսին
և Շիղային առան՝ քաշեցին հրա-
20 պարակն, իշխանների մօտ։ Եւ
նորանց տարան զօրագլուխների
մօտ և ասեցին. Այս մարդիկը
խռովեցնում են մեր քաղաքը՝ ի-
21 րանք Հրէաներ լինելով. Եւ այն-
պիսի սովորութիւններ են քարո-
զում, որ մեզ արժան չէ ընդու-
նել, և ոչ էլ անել. որ Հռով-
22 մայեցի ենք։ Եւ ամբոխը կիտուե-
ցաւ նորանց վերայ. և զօրագլուխ-
ները նորանց հանդերձները հա-
նեցին, և հրաման տուին որ ծե-
23 ծեն։ Եւ նորանց շատ խոցեր տա-
լուց յետոյ բանտը գցեցին, բան-
տապետին պատուիրելով, որ նո-
24 րանց զգուշութեամբ պահէ։ Նա
էլ այն պատուէրն առած, նո-
րանց ներսի բանտը գցեց. և նո-
րանց ոտները պնդացրեց կոճ-
ղումը։
25 Եւ կէս գիշերին Պօղոսը և Շի-
ղան աղօթք անելով օրհնում
էին Աստուծուն. և բանտար-
կուածներն էլ նորանց ականջ
26 էին դնում։ Եւ յանկարծակի
մեծ շարժ եղաւ՝ մինչև որ բան-
տի հիմունքներն էլ շարժվում
էին. և իսկոյն բոլոր դռները
բացուեցան, և ամենքի կապանք-
ներն արձակուեցան։ Երբոր բան- 27
տապետն էլ զարթնելով տեսաւ
բանտի դռները բացուած, սուրը
քաշեց և կամենում էր ինքն ի-
րան սպանել. որովհետև կար-
ծում էր՝ թէ կապուածները փա-
խել են։ Եւ Պօղոսը մեծ ձայնով 28
կանչեց և ասեց. Անձիդ չար բան
չ՛անես, որովհետև ամենքս այս-
տեղ ենք։ Ճրագ ուզեց և ներս 29
վազեց, և դողալով Պօղոսի և Շի-
ղայի առաջին ընկաւ։ Եւ նորանց 30
դուրս հանեց և ասեց. Տէրեր,
ես ի՞նչ պէտք է անեմ որ փրկ-
ուիմ։ Եւ նորանք ասեցին. Հա- 31
ւատա Տէր Յիսուս Քրիստոսին,
և կ՛փրկուիս դու՝ և քո տունը։
Եւ Տիրոջ խօսքը խօսեցին նորան՝ 32
և այն ամենին, որ նորա տանն
էին։ Եւ նա նորանց վեր առաւ 33
գիշերի նոյն ժամումը և խոցերիցը
լուացաւ. և իսկոյն մկրտուեցաւ
ինքը՝ և բոլոր իրանները։ Եւ նո- 34
րանց տարաւ իր տունը, նորանց
առաջին սեղան դրաւ. և ուրախ
եղաւ բոլոր ընտանիքովն Աստու-
ծուն հաւատալով։ Եւ երբ որ 35
լուսացաւ, զօրագլուխները նուի-
րակներին ուղարկեցին և ասեցին.
Արձակիր այդ մարդկանցը։ Եւ 36
բանտապետն այս խօսքերը պատ-
մեց Պօղոսին, թէ Զօրագլուխ-
ներն ուղարկեցին՝ որ արձակուիք.
ուրեմն հիմա դուրս եկէք, գնա-
ցէք խաղաղութեամբ։ Բայց Պօ- 37
ղոսն ասեց նորանց. Հրապարա-
կաւ ծեծեցին մեզ՝ անմեղներիս
որ Հռովմայեցի մարդիկ ենք, և
բանտը գցեցին. և հիմա մեզ թա-
գո՞ւն են հանում. ոչ. այլ թող
իրանք գան մեզ հանեն։ Եւ նուի- 38
րակներն այն խօսքերը պատմեցին
զօրագլուխներին. և նորանք վա-
խեցան՝ երբոր լսեցին թէ Հռով-
մայեցի են. և եկան աղաչեցին
նորանց։ Եւ երբոր հանեցին, 39
խնդրում էին որ քաղաքիցը գը-
նան։ Եւ բանտիցը դուրս եկան 40
մտան Լիդիայի տունը. և եղբայր-
ներին տեսնելով, նորանց մխիթա-
րեցին և գնացին։

ԳԼ. ԺԷ

1 Եւ Ամփիպօլիսի և Ապողոնիայի
միջովը ման գալով՝ եկան Թեսա-
ղոնիկէ, ուր էր Հրէաների ժո-
2 ղովարանը։ Եւ Պօղոսը սովորու-
թեանը պէս մտաւ նորանց մօտ,
և երեք շաբաթ օրէր նորանց հետ
3 խօսեց գրքերիցը. Բաց էր անում՝
և առաջներին գնում, թէ պէտք
էր Քրիստոսը չարչարուէր՝ և մե-
ռելներիցը յարութիւն առնէր.
և թէ Քրիստոսը այս Յիսուսն է
4 որ ես պատմում եմ ձեզ։ Եւ
նորանցից ոմանք հաւատացին, և
Պօղոսի և Շիղայի հետ միացան.
և աստուածավախ Յոյներից էլ
շատ բազմութիւն, և գլխաւոր
5 կանանցիցն էլ ոչ սակաւ։ Բայց
չ՚հաւատացող Հրէաները նա-
խանձելով և փողոցից մի քանի
անպիտան մարդիկ առնելով ազ-
մուկ արին և քաղաքի մէջ շփո-
թութիւն շինեցին. և Յասոնի
տան վերայ յարձակելով՝ ուզում
էին, որ նորանց տանեն հրապա-
6 րակը։ Եւ երբոր չ՚գտան նորանց՝
Յասոնին և մի քանի եղբայրնե-
րին քաշելով տանում էին քա-
ղաքապետների մօտ, և սաստիկ
աղաղակում՝ թէ այս աշխարհքը
շփոթեցնողներն այստեղ էլ հա-
7 սան. Որոնց Յասոնն ընդունել է.
և սորանք ամենքը կայսեր հրա-
մաններին հակառակ են գոր-
ծում, ասելով թէ մի ուրիշն է
8 թագաւոր՝ Յիսուսը։ Եւ շփոթե-
ցրին ժողովրդին և քաղաքապետ-
ներին, որ լսում էին այս բաները։
9 Եւ Յասոնիցն ու ուրիշներիցն ե-
բաշխաւորութիւն առան, և նո-
10 րանց արձակեցին։ Բայց եղբայր-
ները Պօղոսին և Շիղային շու-
տով գիշերանց ճանապարհ գցե-
ցին դէպի Բերիա. որ երբոր այն-
տեղ հասան, գնացին Հրէաների
11 ժողովարանը։ Բայց սորանք ա-
ւելի ազնիւ էին քան թէ նո-
րանք՝ որ Թեսաղոնիկէումն էին.
որ խօսքը բոլոր յօժարութեամբ
ընդունեցին. ամեն օր Գրքերը
քննում էին, թէ այս այսպէ՞ս է։
12 Եւ նորանցից շատերը հաւատա-
ցին. և Յոյն պատուաւոր կա-
նանցից և մարդկանցից էլ ոչ
սակաւ։ Բայց երբոր Թեսաղոնի- 13
կէի Հրէաները գիտացին, թէ Բե-
րիայի մէջ էլ Աստուծոյ խօսքը
պատմուեցաւ Պօղոսից, այնտեղ
էլ եկան՝ ժողովուրդները գրգը-
ռելով։ Այն ժամանակ եղբայր- 14
ները Պօղոսին շուտով ուղարկե-
ցին՝ որ մինչև ծովը գնայ. և Շի-
ղան և Տիմոթէոսն այնտեղ մնա-
ցին։ Եւ Պօղոսին տանողները նո- 15
րան մինչև Աթէնք տարան. և
պատուէր առնելով Շիղայի և
Տիմոթէոսի համար՝ որ շուտով
գան նորա մօտ, գնացին։
Եւ երբոր Պօղոսն Աթէնքումը 16
նորանց սպասում էր, նորա հո-
գին սաստիկ զայրանում էր ի-
րանում, որ տեսնում էր քաղա-
քը կուռքերով լիքը. Եւ խօսում 17
էր ժողովարանումը Հրէաների և
բարեպաշտ մարդկանց հետ և փո-
ղոցումն ամեն օր պատահողների
հետ։ Եպիկուրեան և Ստոյիկեան 18
փիլիսոփաներից ոմանք նորա հետ
հակառակում էին. և ոմանք ա-
սում էին. Այս սերմանաքաղն
ի՞նչ է ուզում ասել. բայց ու-
րիշներն էլ. Երևում է, որ օտար
աստուածների քարոզիչ է. որով-
հետև Յիսուս և յարութիւն էր
աւետարանում։ Եւ առան նո- 19
րան տարան Արիսպագոսն՝ ասե-
լով. Կարո՞ղ ենք իմանալ, թէ
ի՞նչ է քո այդ խօսած նոր վար-
դապետութիւնը. Որովհետև օ- 20
տար բաներ ես բերում մեր ա-
կանջներին. հիմա կամենում ենք
իմանալ՝ թէ դորանք ի՞նչ պիտի
լինին։ Որովհետև բոլոր Աթենա- 21
ցիք և այնտեղ կենող օտարներ-
ը՝ ուրիշ ոչ մի բանի չէին պա-
րապում, բայց միայն որ նոր բան
ասեն կամ լսեն։
Պօղոսն էլ կանգնեց Արիսպա- 22
գոսի միջին և ասեց. Ով Աթե-
նացի մարդիկ, ես ձեզ ամեն կեր-
պով կրօնասէր եմ տեսնում.
Որովհետև ման գալիս և ձեր պաշ- 23
տամունքներին մտիկ տալիս, մի
սեղան էլ գտայ, որի վերայ գրած
էր։ ԱՆԾԱՆՕԹ ԱՍՏՈՒԾՈՒՆ.

այն որ դուք առանց ճանաչելու
պաշտում էք. ես նորան եմ
24 պատմում ձեզ։ Այն Աստուածը,
որ աշխարհքս և ամեն բան՝ որ
նորանում կայ՝ արաւ, նա երկնքի
և երկրիս Տէրը լինելով ձեռա-
գործ տաճարներում չէ բնակ-
25 վում։ Եւ ոչ էլ մարդկանց ձե-
ռով է պաշտվում իբր թէ մի
բանի կարօտ. նա է ամենի կեանք
և շունչ՝ և ամեն բան տուողը։
26 Եւ նա մէկ արիւնից մարդկանց
բոլոր ազգերն արաւ, որ երկրի
բոլոր երեսի վերայ բնակուեն.
որոշուած ժամանակներ և նո-
րանց բնակութեան սահմանները
հաստատեց, որ Աստուծուն
27 խնդրեն. Որ լինի թէ խարխափեն
նորան և գտնեն. Թէ և ինքը հե-
28 ռու չէ մեր ամեն մէկիցը։ Որով-
հետև մենք նորանով ենք ապ-
րում և շարժվում և կանք.
ինչպէս ձեր բանաստեղծներից ո-
մանք էլ ասեցին, թէ Նորա ազ-
29 գիցն էլ ենք։ Արդ որովհետև
Աստուծոյ ազգիցն ենք, պէտք
չէ համարենք, թէ Աստուածու-
թիւնը նման լինի ոսկու կամ
արծաթի կամ քարի՝ մարդի
վարպետութեամբ և մտքով քան-
30 դակուած։ Բայց Աստուած տգի-
տութեան ժամանակներն անտես
անելով, հիմա մարդկանց պատ-
ուիրում է, ամենին ամեն տեղ
31 ապաշխարել։ Մէկ օր հաստա-
տեց որ նորանում աշխարհքս
արդարութեամբ պիտի դատէ
այն մարդի ձեռովը, որ սահմա-
նեց նորանով ամենին հաւատք
տալ, որին մեռելներից յարու-
թիւն տուաւ։
32 Երբոր լսեցին մեռելների յա-
րութիւնը, ոմանք ծաղր էին ա-
նում. ոմանք էլ ասում էին,
Այդ բանի համար քեզանից դար-
33 ձեալ կ՚լսենք։ Եւ այսպէս Պօ-
ղոսը նորանց միջիցը դուրս եկաւ։
34 Բայց մի քանի մարդիկ նորա
կողմն անցնելով հաւատացին.
որոնց հետ էր Դիոնեսիոս Արիս-
պագացին, և մի կին՝ անունը
Դամարիս, և ուրիշներ էլ նո-
րանց հետ։

ԳԼ. ԺԸ

Սորանից յետոյ Պօղոսն Աթէն- 1
քից բաժանուեց եկաւ Կորնթոս։
Եւ մի Հրէայ գտաւ՝ անունը Ա- 2
կիւղաս, ազգով Պոնտացի, և նո-
րա Պրիսկիղա կինն էլ, Իտալիա-
յից նոր եկած, Կղօդիոսի հրա-
մանի համեմատ՝ որ բոլոր Հրէա-
ները Հռովմից հեռանան. և նո-
րանց մօտ գնաց։ Եւ որովհետև 3
արհեստակից էր, մնաց նորանց
մօտ և բան էր անում. որովհետև
արհեստով վրանակար էին։ Եւ 4
խօսում էր ժողովարանումն ա-
մեն շաբաթ օր և Հրէաներին և
Յոյներին համոզում էր։ Եւ երբ- 5
որ Շիղան և Տիմոթէոսն իջան
Մակեդոնիայից, Պօղոսը հոգովը
վառվում էր վկայելով Հրէաներ-
ին թէ Յիսուսն է Քրիստոսը։
Եւ երբոր նորանք հակառակում 6
էին և հայհոյում, հանդերձնե-
րը թօթափեց և ասեց նորանց.
Ձեր արիւնը ձեր գլուխը, ես ան-
պարտ եմ, այսուհետև հեթա-
նոսներին եմ գնում։ Եւ այն 7
տեղից գնաց մտաւ մէկի տունը՝
որի անունը Յուստոս էր, մի աստ-
ուածապաշտ մարդ. որ նորա տու-
նը ժողովարանի կից էր։ Կրիս- 8
պոս ժողովրդապետը հաւատաց
Տիրոջն իր բոլոր տնովը. և Կորն-
թացիներից շատերը երբոր լսե-
ցին՝ հաւատացին և մկրտուեցան։
Եւ Տէրն ասեց գիշերումը տե- 9
սիլքով Պօղոսին, Մի վախենար՝
այլ խօսիր՝ և լուռ մի կենար։
Որովհետև ես քեզ հետ եմ, և 10
ոչ ով քեզ դէմ չի կենալ՝ քեզ
վնասելու. որովհետև ես շատ
ժողովուրդ ունիմ այս քաղա-
քումը։ Եւ այնտեղ մէկ տարի և 11
վեց ամիս նստեց՝ և նորանց սո-
վորեցնում էր Աստուծոյ խօսքը։
Եւ երբոր Գաղիոնը փոխանորդ 12
բդեշխ էր Աքայիայումը, Հրէա-
ները միաբան վերկացան Պօղոսի
վերայ, և նորան տարան ատեա-
նը. Ասելով, թէ Սա օրէնքի հա- 13
կառակ հրապուրում է մարդ-
կանց Աստուած պաշտել։ Եւ 14
երբոր Պօղոսն իր բերանը ուզում

էր բանալ Գաղիոնը Հրէաներին
ասեց. Ով Հրէաներ, եթէ մի
անիրաւութիւն կամ մի չար
նենգութիւն լինէր, ինձ արժան
15 էր որ լսէի։ Բայց եթէ խնդիրը
խօսքի և անունների և ձեր օրէն-
քի համար է, դուք ինքներդ
տեսէք. որովհետև այդպիսի բա-
ների դատաւոր չեմ ուզում լի-
16 նել։ Եւ նորանց հանեց դատաս-
17 տանիցը։ Եւ բոլոր Յոյները Սոս-
թենէս ժողովրդապետին բռնե-
ցին և ատեանի առաջին ծեծում
էին. և Գաղիոնը սորանց համար
ոչինչ հոգս չէր անում։
18 Բայց Պօղոսը տակաւին շատ
օրեր մնալուց յետոյ, եղբայր-
ներիցը հրաժարուելով, նաւով
գնում էր դէպի Սիւրիա. և Պրիս-
կիղան և Ակիւղասն նորա հետ,
Կենքրայումը գլուխը խուզեց. որ
19 ուխտ ունէր։ Եւ երբոր հասաւ
Եփեսոս, նորանց այնտեղ թո-
ղեց, և ինքը ժողովարանը մտնե-
լով Հրէաների հետ խօսում էր։
20 Եւ երբոր նորանք աղաչում էին
նորան՝ որ շատ ժամանակ այնտեղ
21 մնայ, յանձը չ՛առաւ։ Բայց նո-
րանցից հրաժարեց և ասեց. *Ան-
պատճառ պէտք է ես առաջիկայ
տօնը Երուսաղէմումն անեմ.
Աստուծոյ կամքովը դարձեալ
ձեզ մօտ կ՛դառնամ. և Եփեսո-
22 սիցը վերկացաւ, Եւ իջաւ Կե-
սարիա, վեր ելաւ, և բարև տուաւ
եկեղեցուն, և վայր եկաւ Ան-
23 տիոք։ Եւ այնտեղ մի ժամանակ
մնալուց յետոյ, դուրս եկաւ՝ որ
կարգով ման գայ Գաղատացի-
ների աշխարհքումը և Փռիւգիա-
յումը, բոլոր աշակերտները հաս-
տատելով։
24 Եւ մի Հրէայ՝ անունը Ապողոս,
ազգով Աղեքսանդրացի, ճարտա-
րախօս մարդ՝ եկաւ հասաւ Ե-
փեսոս, որ զօրաւոր էր Գրքերո-
25 վը։ Սա Տիրոջ ճանապարհին տե-
ղեկացած էր, և հոգով վառ-
ուած՝ Տիրոջ համար խօսում էր՝
և ստոյգ սովորեցնում էր. բայց
միայն Յովհաննէսի մկրտութիւնը
գիտէր։ Սա սկսեց ժողովարա- 26
նումը համարձակ խօսել. և երբ-
որ Ակիւղասն և Պրիսկիղան նո-
րանից լսեցին, նորան իրանց մօտ
առան, և էլ աւելի ստոյգ Ա-
ստուծոյ ճանապարհը բացատրե-
ցին նորան։ Եւ երբոր նա կամե- 27
ցաւ գնալ Աքայիա, եղբայրները
քաջալերելով գրեցին աշակերտ-
ներին, որ նորան ընդունեն. երբ-
որ նա այնտեղ հասաւ, հաւա-
տացեալներին շատ օգնութիւն
էր տալիս շնորհքի ձեռովը։ Որով- 28
հետև խիստ սաստիկ յանդիմա-
նում էր Հրէաներին հրապարա-
կաւ Գրքերիցը ցոյց տալով, թէ
Քրիստոսը Յիսուսն է։

ԳԼ. ԺԹ

Եւ եղաւ որ Ապողոսը Կորնթո- 1
սումն եղած ժամանակ, Պօղոսը
որ վերի կողմերումը ման էր ե-
կել եկաւ Եփեսոս. և մի քանի
աշակերտներ գտնելով՝ Ասեց նո- 2
րանց. Արդեօք Սուրբ Հոգին ընդ-
ունեցի՞ք երբոր հաւատացիք.
նորանք ասեցին նորան. Մենք
չենք էլ լսել թէ Սուրբ Հոգի
կայ։ Եւ ասեց նորանց. Ապա ի՞ն- 3
չով մկրտուեցաք. նորանք էլ ա-
սեցին. Յովհաննէսի մկրտութիւ-
նովը։ Եւ Պօղոսն ասեց. Յովհան- 4
նէսը ժողովրդին ապաշխարու-
թեան մկրտութիւնովն էր մկրտ-
ում և ասում թէ նա՝ որ նո-
րա ետևից պիտի գայ, նորան հա-
ւատան. այսինքն է՝ Քրիստոս Յի-
սուսին։ Եւ երբոր լսեցին, Տէր 5
Յիսուսի անունովը մկրտուեցան։
Եւ երբոր Պօղոսը ձեռք դրաւ 6
նորանց վերայ, Սուրբ Հոգին ե-
կաւ նորանց վերայ. և նորանք
լեզուներ էին խօսում և մարգա-
րէանում։ Եւ ամենքը տասնևեր- 7
կու մարդի չափ էին։ Եւ ժողո- 8
վարանի մէջ մտած երեք ամիս
համարձակ խօսում էր, և Ա-
ստուծոյ արքայութեան մասին
համոզում էր։ Եւ երբոր մի քա- 9
նիսը յամառում էին և ընդդի-
մանում այն ճանապարհը բամ-
բասելով բազմութեան առաջին,

*Ոմանք չ՛առնին։

նա բաժանուեցաւ նորանցից՝ և
աշակերտներին ջոկեց. և ամեն
օր խօսում էր մի Տիւրանի դպ-
10 բանոցումը։ Եւ այս եղաւ մի եր-
կու տարի, մինչև որ Ասիայի բո-
լոր բնակիչները՝ Հրէաները և Յոյ-
11 ները Տիրոջ խօսքը լսեցին։ Եւ
Աստուած նշանաւոր զօրութիւն-
ներ էր անում Պօղոսի ձեռովը։
12 Մինչև որ նորա մարմնի վերայից
թաշկինակներ և վարշամակներ
տանում էին գնում հիւանդնե-
րի վերայ և ցաւերը հեռանում
էին նորանցից, և չար ոգիները
13 դուրս էին գալիս։ Եւ թափա-
ռական Հրէաներից ոմանք, որ
երդմնեցուցիչ էին, համարձակե-
ցին Տէր Յիսուսի անունը կանչել
չար ոգիներ ունեցողների վերայ
ասելով. Երդում ենք տալիս ձեզ
այն Յիսուսովն որ Պօղոսը քարո-
14 զում է։ Հրէայ քահանայապետ
Սկևայի եօթը որդիքն էին, որ
15 այս անում էին։ Չար ոգին պա-
տասխանեց և ասեց. Յիսուսին
գիտեմ, և Պօղոսին ճանաչում
16 եմ, բայց դո՞ւք ով էք։ Եւ այն
մարդը՝ որ նորանում չար ոգի
կար՝ յարձակելով նորանց վերայ
բռնեց, նորանց յաղթահարեց,
մինչև որ մերկ և խոցուած այն
17 տանիցը փախան։ Եւ այս յայտ-
նի եղաւ բոլոր Հրէաներին և
Յոյներին, որ Եփեսոսումը բնակ-
ուած էին. և ահ ընկաւ նորանց
ամենի վերայ. և Տէր Յիսուսի
18 անունը մեծանում էր։ Եւ հա-
ւատացեալներից շատերը գալիս
էին՝ խոստովանում էին, և իրանց
19 գործերը պատմում էին։ Եւ կա-
խարդութեան հետևողներից շա-
տերը գրքերը բերում էին, և ա-
մենի առաջին այրում էին. և
նորանց գինը համրեցին՝ և գտան
20 յիսուն հազար արծաթի։ Եւ
այսպէս Տիրոջ խօսքը աճում էր
և զօրանում։
21 Եւ երբոր այս կատարուեցաւ,
Պօղոսը միտքը դրաւ՝ որ Մակե-
դոնիայի և Աքայիայի միջովն
անցնելով՝ գնայ Երուսաղէմ՝ ա-
սելով՝ թէ Իմ այնտեղ գնալուց
յետոյ, պէտք է ինձ որ Հռովմ
էլ տեսնեմ։ Եւ իրան սպասա- 22
ւորութիւն անողներից երկուսին՝
Տիմոթէոսին և Երաստոսին ու-
ղարկեց Մակեդոնիա, և ինքը մի
առ ժամանակ մնաց Ասիայումը։
Եւ այն ժամանակ ոչ սակաւ 23
խռովութիւն եղաւ այն ճանա-
պարհի համար։ Որովհետև մի 24
արծաթագործ՝ անունը Դեմետ-
րիոս, Արտեմիսի արծաթէ տա-
ճարներ շինելով ոչ սակաւ շահ
էր տալիս վարպետներին. Որոնց 25
հետ և այս արհեստի բանուոր-
ներին ժողովեց և ասեց. Ո՛վ մար-
դիկ, դուք ինքներդ գիտէք, որ
այս գործիցն է մեր շահը։ Եւ 26
տեսնում էք ու լսում էք, որ
այս Պօղոսը չէ թէ միայն Եփե-
սացիներից, բայց համարեա թէ
բոլոր Ասիացիներից շատ ժողո-
վուրդ համոզելով այն կողմը
դարձրեց. որ ասում է թէ Ձեռ-
քով շինուածները աստուածներ
չեն։ Եւ այս բանը ոչ թէ միայն 27
մեր արհեստն է վտանգի մէջ
գցում որ անարգուի, բայց մեծ
աստուածուհու Արտեմիսի տա-
ճարն էլ ոչինչի տեղ է համար-
վում. և նորա մեծութիւնն էլ
կ՛քանդուի, որին բոլոր Ասիան և
աշխարհքը պաշտում է։ Եւ նո- 28
րանք այս լսելով՝ բարկութեամբ
լցուեցան աղաղակում էին և ա-
սում, Մեծ է Եփեսացիների Ար-
տեմիսը։ Եւ բոլոր քաղաքը շփո- 29
թութիւնով լցուեցաւ. ամենքն
էլ միասին վազեցին թէատրոնը
քաշելով Գայիոսին և Արիստար-
քոս Մակեդոնացուն՝ Պօղոսի ճա-
նապարհակիցներին։ Բայց Պօղոսը 30
երբոր կամեցաւ ամբոխի մէջ մըտ-
նել, աշակերտները չ՛թողեցին
նորան։ Ասիայի գլխաւորներից ո- 31
մանք էլ, որ նորա բարեկամներն
էին, ուղարկեցին նորա մօտ՝ և
աղաչում էին, որ թէատրոնի մէջ
չ՛գնայ։ Եւ ամեն մէկը մի ուրիշ 32
բան էր աղաղակում. որովհետև
ժողովքը խռովուած էր. և նո-
րանցից շատերը չ՛գիտէին, թէ
ի՞նչու համար են հաւաքուած։
Եւ այն բազմութեան միջիցն Ա- 33
ղեքսանդրոսին առաջ բերին. և

երբոր Հրէաները նորան առաջ
քաշեցին, Աղեքսանդրոսը ձեռքը
շարժեց՝ և կամենում էր ամբո-
34 խին պատասխանել։ Բայց երբոր
գիտացին՝ թէ Հրէայ է, ամենքն
էլ մէկ ձայնով երկու ժամի չափ
աղաղակում էին թէ Մեծ է Ե-
35 փեսացիների Արտեմիսը։ Բայց ա-
տենագպիրը ամբոխին հանդար-
տեցնելուց յետոյ ասեց. Ո՛վ Ե-
փեսացի մարդիկ, ո՞վ է այն
մարդը՝ որ չ՛գիտէ թէ Եփեսա-
ցիների քաղաքը մեծ Արտեմիս
աստուածուհու և Դիոսից ընկ-
ած կուռքի տաճարի պաշտօն-
36 եան է. Եւ որովհետև այդ ան-
վիճելի կերպով այդպէս է, պէտք
է ձեզ որ հանդարտ կենաք և
յանդգնութեամբ բան չ՛գործէք։
37 Որովհետև այդ մարդկանցը բե-
րիք, որ ոչ կռքի տուն կողոպ-
տողներ և ոչ ձեր աստուածու-
հուն հայհոյանք տուողներ են։
38 Ուրեմն՝ եթէ Դեմետրիոսը և նո-
րա հետ լինող վարպետները մէ-
կի հետ բան ունին, ատեան կայ
և փոխանորդ բդեշխ կայ, թող
39 միմիանցից գանգատ անեն։ Իսկ
եթէ մի ուրիշ բանի համար է
ձեր խնդիրը, թող օրինաւոր ժո-
40 ղովքում վճռուի։ Վասնզի մեզ
էլ մեծ վտանգ կայ այս օրուայ
կռուի համար որ ամբաստան-
ուինք. որովհետև մի պատճառ
չ՛կայ, որ այս ժողովքի համար
կարող լինէինք պատասխան տալ.
և այս ասելով՝ ժողովուրդին ար-
ձակեց։

ԳԼ. Ի

1 Եւ աղմուկը դադարելուց յե-
տոյ՝ Պօղոսն աշակերտներին կան-
չեց, և հրաժարական ողջոյն
տուաւ՝ և դուրս եկաւ որ գնայ
2 Մակեդոնիա։ Եւ այն կողմերը
ման գալով և նորանց շատ խօս-
քերով յորդորելով, եկաւ Ելլա-
3 դա։ Եւ երբոր երեք ամիս կա-
ցաւ, Հրէաները նենգութեան
խորհուրդ արին նորա համար,
երբոր կամենում էր դուրս գալ
Սիւրիա. Ինքն էլ խորհուրդ ա-
բաւ՝ որ Մակեդոնիայի միջովը
ետ դառնայ։ Եւ մինչև Ասիա 4
նորա հետ գնում էր Սոպատրոս
Բերիացին. և Թեսաղոնիկեցինե-
րից Արիստարքոսը և Սեկունդո-
սը՝ և Գայիոս Դերբացին և Տիմո-
թէոսը, և Ասիացիք՝ Տիւքիկոսը
և Տրոփիմոսը։ Սորանք առաջ 5
գնալով սպասում էին մեզ Տրո-
վադայումը։ Եւ մենք բաղարջա- 6
կերաց օրերիցն յետոյ նաւով
գնացինք Փիլիպպէիցը, և մինչև
հինգ օրն եկանք Տրովադա նո-
րանց մօտ. ուր եօթն օր դադա-
րեցինք։
Եւ միաշաբաթի օրը դեռ որ 7
ժողովուած էինք հաց կտրելու
համար, Պօղոսը նորանց խօսում
էր, որովհետև հետևեալ օրը
գնալու էր. և խօսքն երկարացը- 8
րեց մինչև կէս գիշեր։ Եւ շատ
լապտերներ կային այն վերնա-
տանն, ուր որ մենք ժողովուած 9
էինք։ Եւ Եւտիքոս անունով մի
երիտասարդ պատուհանի վերայ
նստած էր. Պօղոսի երկար խօսե-
լու ժամանակ խոր քնի մէջ էր
մտել. նա խոր քնով բռնուած
տան երրորդ դստիկոնիցը վայր
ընկաւ, և վեր առնուեցաւ մե- 10
ռած։ Եւ Պօղոսն իջաւ նորա վե-
րայ ընկաւ. և գիրկն առնելով
նորան՝ ասեց. Մի շփոթուիք, որ
հոգին իրանումն է։ Եւ վեր ե- 11
լաւ հացը կտրեց և կերաւ. և
շատ խօսեց մինչև առաւօտը, և
յետոյ դուրս եկաւ գնաց։ Եւ 12
այն պատանուն բերին կենդանի,
և անչափ մխիթարուեցան։ Իսկ 13
մենք նաւը մտանք գնացինք Ա-
սոն, որ Պօղոսին դարձեալ այն
տեղից մեզ հետ առնէինք. վասն-
զի այնպէս էր պատուիրել՝ նորա
համար որ ինքն ցամաքովն էր
գնալու։ Եւ երբոր Ասոնումը 14
հանդիպեցաւ մեզ, վեր առանք
նորան եկանք Միտիլինէ։ Եւ այն 15
տեղից նաւով գնացինք՝ հետև-
եալ օրը եկանք Քիոսի դիմացը,
և միւս օր հասանք Սամոս. և
Տրոգիլիոնումը մնալով հետև- 16
եալ օրն եկանք Միլետոս։ Որով-
հետև Պօղոսը որոշել էր՝ որ Ե-

փեսոսի մօտովը նաւով անցնէ՝ որ
չ՛լինի թէ նա Ասիայի մէջ ժա-
մանակ կորցնէ. որովհետև շտա-
պում էր, որ եթէ կարելի լինի
նորան՝ Պենտեկոստէի օրը Երու-
սաղէմումը լինի։
17 Եւ Միլետոսից ուղարկեց Ե-
փեսոս՝ եկեղեցու երէցներին կան-
18 չեց։ Եւ երբոր եկան նորա մօտ,
ասեց նորանց. Դուք գիտէք որ
այն առաջին օրիցն հետէ որ Ա-
սիա եկայ, ինչպէս եղայ ամեն
19 ժամանակ ձեզ հետ, Ամենայն
խոնարհութեամբ Տիրոջը ծառա-
յելով և շատ արտասուքով և
փորձութիւններով որ Հրէաների
նենգութիւններիցը պատահեցան
20 ինձ. Որ ինչպէս ետ չ՛պահեցի ոչ
մի օգտակար բան, որ չ՛պատմեմ
և սովորեցնեմ ձեզ՝ թէ հրապա-
րակներում և թէ տան մէջ։
21 Հրէաներին և Յոյներին վկայու-
թիւն տալով՝ ապաշխարել դէպի
Աստուած, և մեր Տէր Յիսուս
22 Քրիստոսին հաւատալ։ Եւ հիմա
ահա ես հոգով կապուած գնում
եմ Երուսաղէմ. և չ՛գիտեմ թէ
այնտեղ ինչ պիտի պատահէ ինձ։
23 Միայն թէ Սուրբ Հոգին քաղա-
քից քաղաք վկայում է՝ և ա-
սում, թէ կապանքներ և նե-
ղութիւններ սպասում են ինձ։
24 Բայց ես մի բանի տեղ չեմ դնում
և իմ անձն էլ պատուական չեմ
համարում՝ որ ուրախութեամբ
կատարեմ իմ ընթացքը, և այն
պաշտօնը որ Տէր Յիսուսից ա-
ռայ, որ Աստուծոյ շնորհաց ա-
ւետարանին վկայեմ։ Եւ հիմա
ահա ես գիտեմ, որ իմ երեսն
այլ ևս չէք տեսնիլ դուք ա-
մենքդ, որ ձեր մէջը ման եկայ
Աստուծոյ արքայութիւնը քա-
րոզելով։ Սորա համար այս օր-
ուայ օրը վկայութիւն եմ դնում
ձեզ՝ որ ես ամենիդ արիւնիցն
27 անմեղ եմ։ Որովհետև ես ետ
չ՛քաշուեցայ Աստուծոյ բոլոր
28 կամքը ձեզ պատմելուց։ Արդ
զգոյշ կացէք ձեր անձերին՝ և
բոլոր հօտին, որի մէջ Սուրբ Հո-
գին ձեզ վերակացուներ դրաւ,
որ արածեցնէք Աստուծոյ եկեղե-
ցին, որ իր արիւնովն ստացաւ։
Որովհետև ես գիտեմ, որ իմ հե- 29
ռանալուց յետոյ յափշտակող
գայլեր կ՛գան ձեր մէջը, որ հօ-
տին չեն խնայիլ։ Եւ հէնց ձե- 30
զանից մարդիկ վեր կ՛կենան, որ
ծուռ բաներ կ՛խօսեն, որ աշա-
կերտներին իրանց ետևից քաշեն։
Սորա համար արթուն կացէք, 31
յիշելով որ երեք տարի գիշեր և
ցերեկ չ՛դադարեցի ամեն մէկիդ
արտասուքով խրատելու։ Եւ հի- 32
մա՝ ձեզ Աստուծուն եմ յանձ-
նում, եղբարք, և նորա շնորհքի
խօսքին, որ նա կարող է շինել՝ և
ամեն սրբուածների հետ ձեզ ժա-
ռանգութիւն տալ։ Ես ձեզանից 33
մէկի արծաթին կամ ոսկուն կամ
հանդերձին չ՛ցանկացայ։ Դուք 34
ինքներդ գիտէք, որ այս ձեռնե-
րը վաստակեցին իմ պէտքը, և
նորանց էլ՝ որ ինձ հետ էին։ Ա- 35
մեն բան ցոյց տուի ձեզ՝ որ այս-
պէս պէտք է աշխատել, և տկար-
ներին հոգ տանել, և Տէր Յի-
սուսի խօսքը յիշել, որ ինքն ա-
սեց. Աւելի երանելի է տալը քան
թէ առնելը։ Եւ երբոր այս ա- 36
սեց, ծունկ դրաւ ամենի հետ և
աղօթք արաւ։ Եւ ամենքն էլ շատ 37
լաց էին լինում, և Պօղոսի վզովն
ընկած՝ նորան համբուրում էին։
Յաւում էին մանաւանդ այն 38
խօսքի համար՝ որ ասում էր, թէ
նորա երեսը այլևս պիտի չ՛տես-
նեն. և նորան ճանապարհ գցեցին
դէպի նաւը։

ԳԼ. ԻԱ

Եւ երբոր եղաւ՝ որ մենք դուրս 1
եկանք և նորանցից բաժանուե-
ցանք, ուղիղ գնալով եկանք
Կով, և հետևեալ օրը՝ Հռոդոն,
և այն տեղից՝ Պատարա։ Եւ մի 2
նաւ գտանք, որ Փիւնիկէ էր
գնում, նորա մէջ մտանք գնա-
ցինք։ Եւ երբոր Կիպրոսն երևե- 3
ցաւ, նորան թողինք ձախ կողմը,
և նաւն ուղղեցինք դէպի Սիւ-
րիա և իջանք Տիւրոս. որովհետև
նաւը բեռը այնտեղ պիտի թա-
փէր։ Եւ աշակերտներին գտնե- 4

լով՝ այնտեղ եօթն օր մնացինք. Նորանք Ս–ոէ Հոգու ձեռամբը Պօղոսին ասում էին, որ վեր չ'ելլէ
5 Երուսաղէմ։ Եւ երբոր մենք այն օրերը կատարեցինք, դուրս եկանք գնացինք. ամենքը՝ կանանցով և երեխաներով մեզ ճանապարհ դրեցին մինչև քաղաքի դուրսի կողմը. և ծովի եզերին մեր
6 ծունկ դրինք աղօթք արինք։ Եւ իրարից բաժանուելով՝ վեր ելանք նաւը. և Նորանք նա դարձան իրանց տեղերը։ Եւ մենք ծովի
7 ճանապարհորդութիւնը վերջացնելով՝ Տիւրոսիցը դուրս եկանք Պտողեմայիս. և եղբայրներին աղջկան տուինք՝ և Նորանց
8 մօտ մեկ օր մնացինք։ Եւ հետևեալ օրն այն տեղից դուրս ելանք մենք, *Պօղոսի բնկերները, և կանք Կեսարիա. և Փիլիպպոս աւետարանչի տունը մտնելով, որ այն եօթից էր, Նորա մօտ մնա-
9 ցինք։ Նա չորս կոյս աղջկներ ունէր, որ մարգարէութիւն էին
10 անում։ Եւ երբոր մենք այնտեղ շատ օրեր մնում էինք, Հրէաստանից մի մարգարէ իջաւ անունն
11 Ագաբոս։ Եւ նա մեզ մօտ եկաւ, Պօղոսի գօտին առաւ իր ձեռներն և ոտները կապեց և ասեց, Սուրբ Հոգին այսպէս է ասում. Այն մարդին՝ որի գօտին է այս, Հրէաները երուսաղէմումը այսպէս կ'կապեն, և հեթանոսների
12 ձեռք կ'մատնեն։ Եւ երբոր այս լսեցինք, աղաչում էինք մենք, և այն տեղացիք էլ, որ վեր չ'ելլէ
13 Նէ Երուսաղէմ։ Այն ժամանակ Պօղոսը պատասխանեց և ասեց. Ինչ էք անում, որ լաց էք լինում և սիրտս ճմլում. որովհետև ես ոչ միայն կապուելու բայց Երուսաղէմումը մեռնելու էլ
14 պատրաստ եմ Տէր Յիսուս Քրիստոսի անունի համար։ Եւ երբոր Նա ականջ չ'դրաւ, լուռ կացինք՝ և ասեցինք. Տիրոջ կամքը լինի։
15 Եւ այն օրերից յետոյ պատրաստուած վեր ելանք Երուսա-
16 ղէմ։ Եւ այն կեսարացի աշակերտներից էլ մեզ հետ եկան, և տանում էին մեզ մի Մնասոն անուն կիպրացի մարդի՝ հին աշակերտի մօտ, որ Նորա մօտ կենանք։ Եւ երբոր մենք Երուսա-
17 ղէմ մտանք, եղբայրները մեզ ուրախութեամբ ընդունեցին։ Յայց
18 հետևեալ օրը Պօղոսը մեզ հետ գնաց Յակոբոսի մօտ, և բոլոր երէցները եկան։ Եւ ողջոյն տալով
19 Նորանց՝ մին մին պատմում էր ինչ որ Աստուած հեթանոսների մէջ արաւ իր ծառայութիւնովը։
20 Եւ Նորանք լսելով, փառաւորում էին Տիրոջը, և ասում էին Նորան. Եղբայր, տեսնո՞ւմ ես, քանի բիւրաւոր հաւատացեալ Հրէաներ կան, և ամենքն օրէնքի նախանձաւոր են։
21 Յայց քեզ համար իմացել են, թէ հեթանոսների մէջ լինող ամեն Հրէաներին սովորեցնում ես Մովսէսից հետ քաշուել, ասելով որ իրանց երեխաներին չ'թլփատեն, և սովորութիւնների պէս չ'վարուին։ Ինչ ինչ կ'լինի. անպատ-
22 ճառ պէտք է բազմութիւնը մեկ տեղ գայ, որովհետև կ'լսեն որ եկել ես։ Ինչս ասա արա՝ որ քեզ
23 ասում ենք. Մեզանում չորս մարդ կան, որ ուխտ են դրած
24 իրանց անձերի վերայ։ Նորանց առ՝ և Նորանց հետ սրբուիր. և Նորանց վերայ ծախք արա՝ որ էրանց գլխները ածիլեն. և ամենքը գիտենան, թէ ինչ որ քեզ համար իմացել էին՝ ոչ ինչ է. այլ թէ դու էլ միաբան ես օ-
25 րէնքը պահելով։ Յայց այն հաւատացեալ հեթանոսների համար մենք ուղարկեցինք՝ որոշելով, որ Նորանք այնպիսի բան չը պահեն, բայց միայն զգուշանան կուռքի զոհից և արիւնից և խեղդուածից, և պոռնկութիւնից։
26 Այն ժամանակ Պօղոսը այն մարդկանցն առաւ, հետևեալ օրը Նորանց հետ սրբուեցաւ, և տաճարը մտաւ իմաց տալով սրբութեան օրերի լրանալը. մինչև որ Նորանց ամեն մեկի համար պատարագը մատուցուեցաւ։
27 Եւ երբոր այն եօթն օրը լրա-

Արդեօք դու այն եգիպտացին չե՞ս, որ այս օրերից առաջ չփոթըթրեցրիր ասուր և չորս հազար †սիկարեան մարդիկ հանեց անապատը։ Եւ Պօղոսն ասեց. Ես 39
Հրէայ մարդ եմ՝ Կիլիկիայի Տարսոնիցը, ոչ թէ աննշան քաղաքի քաղաքացի. աղաչում եմ քեզ՝ հրաման տուր ինձ, որ այդ ժողովրդի հետ խօսեմ։

Եւ երբոր նա հրամայեց, Պօ- 40
ղոսն աստիճանների վերայ կանգնեց և գլխով ժողովուրդը ձեռքը շարժեց. և երբոր շատ լուռ կացին, սկսեց Եբրայեցիների լեզուով խօսել՝ և ասեց.

Գլ. ԻԲ

Մարդիկ եղբայրներ և հայրեր, 1
հիմա իմ ձեզ պատասխան ասելս լսեցէք։ Եւ երբոր լսեցին 2
թէ Եբրայեցիների լեզուով էր Նորանց հետ խօսում, էլ աւելի
լուռ կացին։ Եւ նա ասեց. Ես 3
Հրէայ մարդ եմ Կիլիկիայի Տարսոնումը ծնուած՝ այս քաղաքումը մեծացած, Գամալիէլի ոտքի մօտ, հայրենական օրէնքի ճշմարտութեան պէս վարժուած. Աստուծոյ մասին նախանձաւոր էի՝ ինչպես այսօր դուք ամենքդ էք։
Որ այս ճանապարհը հալածեցի 4
մինչև ի մահ. որ մարդկանց և կանանց կապում էի և մատնում բանտերի մէջ։ Ինչպես քահանայապետն էլ ինձ վկայում է՝ և 5
ծերերի բոլոր ժողովն էլ. որոնցից թղթեր էլ առած գնում էի Գամասկոս եղբայրների մօտ, որ այնտեղ լինողներին էլ կապած բերեմ Երուսաղէմ, որ պատժուին։ Եւ եղաւ որ երբ ես գնա- 6
լիս Գամասկոսին մօտենում էի, կէս օրուայ դէմ յանկարծակի երկնքիցը մի սաստիկ լոյս փայլեց իմ չորս կողմովը։ Եւ ես վայր 7
ընկայ գետինը, և մի ձայն լսեցի՝ որ ասում էր ինձ. Սաւուղ, Սաւուղ, ինձ ինչու ես հալածում
Եւ ես պատասխանեցի, Տէր՝ 8

դաւ ո՞վ ես. և նա ինձ ասաց. Ես Յեսուա Նազովրեցին եմ՝ որին դու հալածում ես։ Բայց ինձ 9
հետ լինողները լոյսը տեսնում էին և վախով լեցվում էին, բայց ինձ հետ խոսողի ձայնը չէին լսում։
Եւ ես ասեցի, Ինչ անեմ՝ Տէր. 10
և Տէրն ասեց ինձ, վեր կաց՝ գնա Դամասկոս, և այնտեղ կ'ասուի քեզ ամեն բանի համար,
որ քեզ համար որոշուած է անել։ Եւ երբոր այն լոյսի փառքիցը չէի տեսնում, ինձ հետ լինողները ձեռքիցս բռնեցին՝ և ես 11
մտայ Դամասկոս։ Եւ մի Անանիա մարդ՝ օրէնքի համեմատ աստուածավախ, որ Դամասկոսում 12
բնակող բոլոր Հրեաներիցը բարի վկայութիւն ունէր, նա եկաւ ինձ մօտ կանգնեց և ասեց. Սաւուղ եղբայր, վեր նայիր։ Եւ ես նոյն ժամուին վեր նայեցի դէպի նա և նա ինձ ասեց. Մեր հայրերի Աստուածն առաջուց քեզ 13
ընտրեց, որ նորա կամքը ճանաչես, և այն Արդարին տեսնես, և նորա բերանիցը ձայն լսես. Որովհետև նորա համար վկայ կ'լինես 14
բոլոր մարդկանց առաջին այն բանների համար, որ տեսար և լսեցիր։ Եւ հիմա ինչու ես ուշանում, վեր կաց մկրտուիր և քո մեղքերը լուա՝ Տիրոջ անունը 15
կանչելով։ Եւ եղաւ երբոր ես ետ դարձայ Երուսաղէմ, և աստուածային աղօթք էի անում, 16
մտքի յափշտակութիւն ինձ բռնեց. Եւ ես նորան տեսայ որ ինձ ասում էր. Շտապիր շուտ դուրս եկ Երուսաղէմից. որովհետև չեն ընդունիլ քո վկայութիւնը՝ որ ինձ համար տալիս 17
ես։ Եւ ես ասեցի. Տէր՝ նորանք գիտեն՝ որ ես բանտեր էի դնում և ժողովարաններում ծեծում էի 18
քեզ հաւատացողներին. Եւ երբոր քո Աստիփանոս վկայի արիւնը թափվում էր, ես ինքս նորա մօտ կանգնած էի, և նորա սպանմանը կամակից էի, և նորա սպանողների հանդերձները պահում 19
էի։ Եւ նա ասեց ինձ. Գնա, որովհետև ես քեզ հեռու հեթանոսների մէջ կ'ուղարկեմ։ 20
Եւ մինչև այս խօսքն ականջ 22
էին դնում նորան. և իրանց ձայները բարձրացրին՝ և ասեցին. Այդպիսի մարդին երկրիցս վեր առ. որովհետև պէտք չէ դա ապրի։ Եւ երբոր նորանք աղաղակում էին և հանդերձները վեր 23
գցում, և փոշին օդի մէջ ցանում, Հազարապետը հրամայեց, 24
որ նա բերդը տարուի. ասելով թէ պէտք է ծեծելով հարցնել նորան, որ իմանամ, թէ ինչ յանցանքի համար էին նորա վերայ այնպէս աղաղակում։ Եւ 25
երբոր նորան կաշէ փոկերով պինդ կապեցին, Պօղոսն ասեց մօտը կանգնած հարիւրապետին թէ Աւրա՞ն է որ դուք Հռովմայեցի և չդատապարտուած մարդին ծեծէք։ Եւ երբոր լսեց հարիւ- 26
րապետը, մօտեցաւ հազարապետին պատմեց և ասեց. Զգուշացիր թէ ինչ ես կամենում անել, որովհետև այս մարդը Հռովմայեցի է։ Եւ հազարապետը մօտ 27
եկաւ և նորան ասեց. Ասիր ինձ թէ դու Հռովմայեցի ես. և նա ասեց. Այո. Եւ հազարապետը 28
պատասխանեց թէ ես շատ փողով ստացայ այս քաղաքացիութիւնը, և Պօղոսը ասեց. Իս հէնց 29
ծնուած եմ։ Եւ նորանք որ նորան ետ հարցաքննելու էին, շուտով հեռացան նորանից. և հազարապետն էլ վախեցաւ երբոր իմացաւ թէ Հռովմայեցի է. որովհետև կապել էր նորան։
Եւ հետևեալ օրը կամենալով 30
ճշմարիտն իմանալ, թէ ինչ է Հրեաների ամբաստանութիւնը, նորան արձակեց կապերիցը և հրամայեց որ քահանայապետները և բոլոր ատեանը կանչեն. և Պօղոսին էլ բերաւ նորանց մէջ կանգնեցրեց։

Գլ. ԻԳ

Եւ Պօղոսն ատեանին մտիկ ար- 1
ուաւ՝ և ասեց. Արդիկ եղբարք, ես բոլորովին բարի խղճմտանքով վարուել եմ Աստուծոյ առաջին
մինչև այսօր։ Եւ Անանիա քա- 2
հանայապետը մօտը կանգնողներին հրամայեց, որ նորա բերանին զարկեն։ Այն ժամանակ Պօղոսն 3
ասեց նորան. Աստուած պիտի քեզ զարկէ՝ ծեփած պատ. և դու նստել ես ինձ օրէնքի համեմատ դատելու, և օրէնքի հակառակ հրամայում ես՝ որ ես զարկուիմ։ Եւ նորա մօտ կանգնածներն ասեցին. Աստուծոյ քահանայապետին ես հայհոյանք տալիս։ Եւ Պօղոսը ասեց. Եղ- 5
բարք, ես չգիտէի՝ որ քահանայապետ է. որովհետև գրուած է՝ Իշխան ժողովրդի իշխանին չը
հայհոյես։ Երբոր Պօղոսն իմացաւ 6
որ մէկ մասը Սադուկեցիներից է և միւս մասը Փարիսեցիներից, ատեանի մէջ աղաղակեց. Մարդիկ եղբարք, ես Փարիսեցի եմ, և Փարիսեցու որդի. մեռելների յոյսին և յարութեանը համար եմ ես դատուում։ Եւ երբոր նա 7
այս ասեց, Փարիսեցիների և Սադուկեցիների մէջ երկպառակութիւն ընկաւ. և բազմութիւնը բաժանուեցաւ։ Որովհետև Սա- 8
դուկեցիք ասում են թէ ոչ յարութիւն կայ, ոչ հրեշտակ, և ոչ հոգի. բայց Փարիսեցիք երկուսն էլ դաւանում են։ Եւ 9
մեծ աղաղակ եղաւ. և Փարիսեցիների կողմից դպիրները վերկացան, հակառակում էին և ասում. Ոչինչ չարութիւն չենք գտնում այս մարդումը. բայց եթէ հոգի խօսեց դորանում կամ հրեշտակ, մենք Աստուծոյ հետ չմարտնչենք։ Եւ երբոր խռովու- 10
թիւնը շատացաւ, հազարապետը վախեցաւ՝ մի գուցէ Պօղոսը նորանցից պատառուի. զինուորներին հրամայեց, որ իջնեն նորան յափշտակեն նորանց միջիցը, և բերեն բերդը։ Եւ հետևեալ գի- 11
շերը Տէրը կանգնեց նորա մօտ և ասեց. Քաջացիր, Պօղոս, որովհետև ինչպես ինձ համար երուսաղէմում վկայեցիր, այնպէս էլ պէտք է Հռովմում վկայես։
Եւ երբոր առաւօտ եղաւ՝ ճը- 12

րեաներից ոմանք միաբանեցան և իրանց անէծքը նզովեցին ասելով, որ չուտեն և չխմեն, մինչև որ Պօղոսին չսպանեն։ Եւ քառա- 13
սունից աւելի էին այս երդումը իրար հետ անողները։ Նորանք 14
քահանայապետների և ծերերի մօտ եկան և ասեցին. Նզովքով նզովեցինք մեր անձերը՝ որ ոչինչ չճաշակենք մինչև որ Պօղոսին սպանենք։ Բայց դուք հիմա ատեանի հետ իմաց արէք հազարապետին, որ եգուց նորան վայր բերէ ձեզ մօտ, իբր թէ կամենում էիք աւելի ևս ճշմարտութեամբ բան իմանալ նորա համար. մենք էլ նորա մօտ գալուց առաջ պատրաստ ենք նորան սպանելու։ Եւ Պօղոսի քրոջ որ- 16
դին երբոր նորանց այս գաւառանութիւնը լսեց, եկաւ մտաւ բերդը և Պօղոսին պատմեց։ Եւ 17
Պօղոսը հարիւրապետներից մէկին կանչեց իրան մօտ և ասեց. Այս պատանին տար հազարապետի մօտ, որ բան ունի նորան պատմելու։ Եւ նա առաւ նորան հա- 18
զարապետի մօտ տարաւ և ասեց. Կապուած Պօղոսն ինձ կանչեց և աղաչեց, այս պատանին քեզ մօտ բերել, որ բան ունի քեզ խօսելու։ Հազարապետը նորա ձեռ- 19
քիցը բռնեց, գնաց առանձին տեղ, հարցնում էր, թէ ինչ բան ունես ինձ ասելու։ Եւ նա 20
ասեց թէ Հրեաները միաբանեցան քեզ աղաչելու, որ եգուց Պօղոսին վայր բերես ատեանը, իբր թէ կամենում էին աւելի ճշմարիտ քննութիւն անել նորա համար։ Բայց դու մի հաւա- 21
տար նորանց. որովհետև նորանցից քառասունից էլ աւելի մարդիկ դարան են մտել նորա համար, որ իրանց անձերն էլ նզովեցին, որ չուտեն և չխմեն մինչև որ նորան չսպանեն. և հիմա պատրաստ են և քո հրամանին են սպասում։ Ապա հազարա- 22
պետն այն պատանուն արձակեց և պատուէր տուաւ, թէ ոչ ոքի չասես, որ այս բանն իմաց արիր ինձ։

23 Եւ հարիւրապետներից երկու-
սին կանչեց և ասեց. Երկու հար-
իւր զինուոր պատրաստեցէք, որ
գնան մինչև Կեսարիա. և եօթա-
նասուն ձիաւոր և երկու հար-
իւր էլ տիգաւոր՝ գիշերուայ
24 ժամը երեքից. Եւ դրաստներ էլ
պատրաստեցէք, որ Պօղոսին հե-
ծացնեն և ապահով հասցնեն
25 Փելիքս կուսակալի մօտ։ Եւ մի
նամակ գրեց, որի օրինակն այս էր։
26 Կղօդիոս Լիւսիաս. պատուական
27 կուսակալ Փելիքսին ողջոյն։ Այս
մարդին որ Հրէաներից բռնուած
էր և նորանցից սպանուելու մօտ
էր, զինուորներով վերայ հասայ
պրծացրի, իմանալով որ Հռով-
28 մայեցի է։ Եւ ուզելով որ նորա
յանցանքն իմանամ՝ որի համար
ամբաստանութիւն էին անում
դորանից, վայր բերի դորան նո-
29 րանց ատեանը։ Եւ գտայ նորան
իրանց օրէնքի մի խնդիրների հա-
մար ամբաստանուած, և մեռնե-
լու կամ կապուելու արժանի
30 ոչինչ յանցանք չ՚ունէր։ Եւ երբ-
որ ականջս հասաւ, որ Հրէաների
կողմից այն մարդի համար նեն-
դութիւն կայ, նորան իսկոյն քեզ
մօտ ուղարկեցի. և չարախօսնե-
րին էլ հրաման տուի, որ դորա-
նից քո առաջին խօսեն. Ողջ կաց։
31 Եւ զինուորները իրանց հրա-
մայուածի պէս՝ Պօղոսին առան
և գիշերով տարան Անտիպատ-
32 րիս։ Եւ հետևեալ օրը ձիաւոր-
ներին թողեցին, որ նորա հետ
գնան, և իրանք ետ դառան բեր-
33 դը։ Եւ նորանք մտան Կեսարիա.
և թուղթը կուսակալին տուին,
և Պօղոսին էլ նորա առաջին
34 ներկայացրին։ Եւ երբոր կար-
դաց՝ կուսակալը հարցրեց թէ
ո՞ր գաւառից է. և երբոր տեղե-
35 կացաւ թէ Կիլիկիայիցն է, Ա-
սեց. Կ՚լսեմ քեզ՝ երբոր քո ամ-
բաստանողներն էլ կ՚գան. և
հրամայեց՝ որ Հերովդէսի պալա-
տումը պահեն նորան։

ԳԼ. ԻԴ

1 Եւ հինգ օրից յետոյ Անանիա
քահանայապետը ծերերի և մի
ճարտարախօս Տերտիւղոս անուն
մարդի հետ իջաւ, և իմաց արին
կուսակալին Պօղոսի համար։ Եւ 2
երբոր նորան կանչեց, Տերտիւղո-
սը սկսեց ամբաստանել և ասել.
Որովհետև քեզանով շատ խաղա- 3
ղութիւն ենք գտել՝ և այս ազգի
համար շատ բաների կարգադրու-
թիւն է եղել քո խնամք տանելովը,
ամեն կերպով և ամեն տեղ շատ
գոհութեամբ շնորհակալ ենք քե-
զանից, ով պատուական Փելիքս։
Բայց որպէսզի աւելի նեղութիւն 4
չ՚տամ քեզ, աղաչում եմ՝ որ հա-
մառօտաբար լսես մեզ քո հեղու-
թեամբը։ Որովհետև մենք գտանք 5
այս մարդին որ ապականիչ և
խռովարար է այն ամեն Հրէաներ-
ին, որ բոլոր աշխարհքումը
կան. և Նազովրեցիների *աղանդի
առաջնորդ է. Որ տաճարն էլ 6
ուզեց պղծել. որին բռնեցինք էլ.
և մեր օրէնքի պէս ուզեցինք դա-
տաստան էլ անել։ Բայց Լիւսի- 7
աս հաղարապետն եկաւ՝ և մեծ
բռնութեամբ մեր ձեռքերիցը
հանեց, Հրամայելով որ նորա դա- 8
տախաղներն էլ գան քեզ մօտ.
որ դու վերաքննելով կարող ես
տեղեկանալ այն ամեն բանի հա-
մար, որ մենք գանգատում ենք
դորանից։ Հրէաներն էլ միաբան 9
եղած ասեցին, թէ Այդպէս է։
Պօղոսն էլ պատասխանեց՝ երբ- 10
որ կուսակալը նորան ակնարկեց
որ խօսէ, Գիտենալով որ դու
շատ տարուց հետէ այս ազգի
դատաւորն ես, աւելի յօժարու-
թեամբ իմ մասին պատասխան
եմ տալիս։ Որովհետև դու կա- 11
րող ես գիտենալ, որ տասնևեր-
կու օրից աւելի չէ՝ որ ես եկայ
երկրպագութիւն անել Երուսա- 12
ղէմումը։ Եւ ոչ տաճարումն են
գտել ինձ մի մարդի հետ խօսե-
լիս, կամ շատ մարդ մէկտեղ
հաւաքելիս, և ոչ ժողովարանու-
մը, Եւ ոչ էլ քաղաքումը. և 13
ոչ էլ կարող են քո առաջին
ցոյց տալ այն, որոնց համար հի-

*Կամ՝ հերձուածի

մա ամբաստանում են ինձանից։
14 Բայց սա եմ խոստովանում քեզ.
Թէ այն ճանապարհովն՝ որ ա-
սում են հերձուած, այնպէս
պաշտում եմ հայրենական Ա-
ստուծուն, ամեն բաների հաւա-
տալով որ օրէնքումը և մարգա-
15 րէներումը գրուած է. Յուսալով
այն Աստուծուն որին դորանք էլ
սպասում են, թէ արդարների և
մեղաւորների յարութիւն պիտի
16 լինի։ Որ հէնց սորա համար ինքս
ջանք եմ անում, որ ամեն ժամ
մաքուր խղճմտանք ունենամ Ա-
ստուծոյ առաջին և մարդկանց ա-
17 ռաջին։ Արդ շատ տարիներից
յետոյ եկայ որ իմ ազգին ո-
ղորմութիւն անեմ և ընծաներ
18 բերեմ. Որ այդ բանի մէջ մի քա-
նի Ասիացի Հրէաներ ինձ գտան
տաճարումը սրբուած, ոչ շա-
19 տերի և ոչ էլ ամբոխի հետ։ Որ
նորանց պէտք էր գալ քո առա-
ջին և գանգատ անել, եթէ մի
20 բան ունենային ինձանից։ Կամ
հէնց սորանք իրանք թող ասեն,
թէ ինձանում ինչ անիրաւու-
թիւն գտան՝ դեռ քանի որ ատ-
21 եանումը կանգնած էի։ Բայց
այս մէկ խօսքի համար, որ նո-
րանց միջումը կանգնած աղաղա-
կեցի, թէ Մեռելների յարու-
թիւն առնելուն համար եմ ես
այսօր դատվում ձեզանից։
22 Փելիքսն էլ երբոր լսեց այս
բաները, նորանց ուշացրեց, ո-
րովհետև շատ լաւ տեղեկացած
էր այն ճանապարհի համար, և
ասեց. Երբ որ Լիւսիաս հաղա-
րապետը իջնէ, կ՚տեղեկանամ
23 ձեր գործին։ Եւ հարիւրապետին
հրամայեց՝ որ Պօղոսին պահէ՝
բայց արձակութիւն տայ. և նո-
րա մարդկանցից ոչ մէկին չ՚ար-
գիլէ՝ նորան ծառայութիւն ա-
նելու կամ նորա մօտ գնալու։
24 Եւ մի քանի օրից յետոյ Փե-
լիքսն եկաւ իր Դրուսիլա կնկայ
հետ, որ Հրէայ էր, Պօղոսին
կանչեց՝ և նորանից Քրիստոսի
25 հաւատքի համար բան լսեց։ Եւ
երբոր նա խօսում էր արդարու-
թեան և ժուժկալութեան և
գալու դատաստանի համար, Փե-
լիքսը շատ ահով բռնուեցաւ, և
պատասխանեց. Դու հիմա գնա,
երբոր ժամանակ ունենամ, կը
կանչեմ քեզ։ Բայց նա յոյս էլ 26
ունէր, որ Պօղոսիցը մի բան կը
տրուի իրան, որ նորան արձակէ
և նորա համար շատ անգամ կան-
չում էր նորան և նորա հետ խօ-
սում։ Եւ երբոր երկու տարին 27
լրացաւ, Փելիքսի տեղ եկաւ
Փեստոս Պորկիոսը. և որովհետև
Փելիքսը կամեցաւ Հրէաներին մի
շնորհք անել, Պօղոսին կապած
թողեց։

ԳԼ. ԻԵ

Եւ Փեստոսը երբոր իր իշխանու- 1
թեան երկիրը հասաւ, երեք օ-
րից յետոյ Կեսարիայից վեր ե-
լաւ Երուսաղէմ։ Եւ քահանա- 2
յապետը և Հրէաների գլխաւոր-
ները Պօղոսի համար իմաց տուին
նորան, Եւ աղաչում էին՝ այս 3
շնորհքը խնդրելով նորանից, որ
Երուսաղէմ կանչէ նորան, որով-
հետև դարան էին գործել՝ որ
ճանապարհին սպանեն նորան։
Բայց Փեստոսը պատասխանեց թէ 4
Պօղոսը Կեսարիայումը կ՚պահուի.
և ինքն էլ շուտով այնտեղ է
գնալու։ Եւ ձեզանից որոնք որ 5
կարող են, ասեց, թող միասին
գան. և եթէ այն մարդումը մի
յանցանք կայ՝ թող նորանից
գանգատ անեն։ Եւ այնտեղ 6
տասն օրից աւելի մնալով իջաւ
Կեսարիա. և հետևեալ օրը ատ-
եան նստեց, և հրամայեց Պօղո-
սին բերել։ Եւ նա երբոր եկաւ՝ 7
նորա չորս կողմովը կանգնեցին
Երուսաղէմից եկած Հրէաները.
շատ և ծանր ամբաստանութիւն-
ներ բերելով Պօղոսի դէմ՝ որ
չէին կարողանում ապացուցա-
նել։ Որովհետև նա պատասխան 8
էր տալիս, թէ Ոչ Հրէից օրէնքի
և ոչ տաճարի, և ոչ Կայսեր
դէմ մի մեղք եմ գործել։ Բայց 9
Փեստոսը կամենալով Հրէաներին
շնորհք անել, պատասխանեց Պօ-
ղոսին և ասեց. Կամենո՞ւմ ես

Երուսաղէմ գնալ՝ և այնտեղ
այդ բաների համար դատուիլ
10 իմ առաջին։ Պօղոսն էլ ասեց.
Ես Կայսեր ատեանումն եմ կանգ-
նած, որ այնտեղ պէտք է ես
դատուիմ. Հրէաներին ոչինչ վը-
նաս չեմ տուել, ինչպէս դու էլ
11 լաւ գիտես։ Բայց թէ որ անի-
րաւութիւն ունիմ և մեռնելու
արժանի բան եմ գործել՝ մեռ-
նելուց չեմ քաշվում. իսկ եթէ
այնպիսի մի բան չ՚կայ, որ սո-
րանք ինձանից ամբաստանում
են, ոչ ով ինձ կարող չէ դո-
րանց շնորհել. ես դէպի Կայսրն
12 եմ բողոքում։ Այն ժամանակ
Փեստոսը խորհրդակիցների հետ
խօսեց՝ և պատասխանեց, Դէպի
Կայսրը բողոքեցիր, Կայսեր մօտ
կ՚գնաս։
13 Երբոր մի քանի օր անցաւ,
Ագրիպպաս Թագաւորը և Բերի-
նիկէն եկան Կեսարիա՝ Փեստո-
14 սին շնորհաւորելու։ Եւ երբոր
այնտեղ շատ օրեր անցկացրին,
Փեստոսը Պօղոսի համար իմացը-
րեց Թագաւորին՝ և ասեց. Այս-
տեղ մի մարդ է մնացել Փե-
15 լիքսիցը կապուած. Որի համար՝
երբոր Երուսաղէմ էի, քահա-
նայապետներն ու Հրէաների գըլ-
խաւորներն իմացրին ինձ, խնդրե-
լով նորա դատապարտութիւնը։
16 Որոնց պատասխանեցի թէ Հռով-
մայեցիներին օրէնք չէ՝ որ մի
մարդ կորստեան շնորհուի մինչև
որ ամբաստանեալն իր ամբաս-
տանողներին իր դիմացը չ՚ունե-
նայ՝ և այն ամբաստանութեան
համար պատասխան տալու պա-
17 տեհութիւն չ՚ստանայ։ Եւ երբ-
որ նորանք ինչ հետ այստեղ ե-
կան բնաւ չ՚ուշացրի, այլ հե-
տևեալ օրը ատեան նստած հրա-
18 մայեցի այն մարդին բերել։ Եւ
երբոր ամբաստանողներն առաջ
եկան, ոչ մի յանցանք յառաջ
չէին բերում իմ կասկածածնե-
19 րից։ Այլ թէ իրանց կրօնքի
համար մի քանի խնդիրներ ու-
նէին նորա հետ, և մի մեռած
Յիսուսի համար որ նորա համար
Պօղոսը ասում էր թէ կենդանի
է։ Բայց երբոր ես տարակուսե-
ցայ այսպիսի բաները քննելու՝
ասեցի թէ արդեօք կամենո՞ւմ է
Երուսաղէմ գնալ և այնտեղ
դատուիլ այդ բաների համար։
Բայց երբոր Պօղոսը բողոքեց, որ
Վեհափառ Կայսեր քննութեան
համար պահուի, հրաման տուի
նորան պահել, մինչև որ ուղար-
կեմ Կայսեր մօտ։ Ագրիպպասն
էլ Փեստոսին ասեց. Ես էլ կը
կամենայի լսել այդ մարդին. և
նա ասեց. Էգուց կ՚լսես։
Եւ հետևեալ օրն երբոր Ագ-
րիպպասն և Բերինիկէն մեծ հան-
դէսով եկան, և հաղարապետ-
ների և քաղաքի պատուաւոր
մարդկանց հետ ատեանը մտան,
Փեստոսը հրամայեց և Պօղոսին
բերին։ Եւ Փեստոսն ասեց. Ով
Ագրիպպաս Թագաւոր և բոլոր
մարդիկ որ մեզ հետ էք, տես-
նում էք սորան, որի համար Հրէ-
աների բոլոր ժողովուրդն իմ ա-
ռաջին եկան Երուսաղէմումը և
այստեղ աղաղակելով թէ նա
այլ ևս պիտի չ՚ապրի։ Բայց ես
տեղեկացայ, որ դա ոչինչ մեռ-
նելու արժանի բան չէ գործել.
և երբոր դա ինքը դէպի Վեհա-
փառը բողոքեց, խորհուրդ արի
որ ուղարկեմ։ Որի համար մի
հաստատ բան չ՚ունիմ որ գրեմ
իմ տիրոջը. Նորա համար դորան
բերի ձեր առաջին, և մանաւանդ
քո առաջին, ով Ագրիպպաս Թա-
գաւոր, որ վերաքննելով մի բան
ունենամ գրելու։ Որովհետև ինձ
անպատշաճ է երևում, որ մի
կապած մարդ ուղարկեմ, և նո-
րա դէմ ասուած յանցանքները
չ՚իմացնեմ։

ԳԼ. ԻԶ

Եւ Ագրիպպասը Պօղոսին ասեց.
Քեզ հրաման է որ քո մասին խօ-
սես. այն ժամանակ Պօղոսը ձեռ-
քը մեկնեց և պատասխան էր
տալիս. Այն ամենի համար որի
մասին Հրէաները ամբաստանում
են ինձանից, ով Ագրիպպաս Թա-
գաւոր, իմ անձը երանելի եմ

համարում, որ այսօր քո առա-
3 ջին պատասխան պիտի տամ։ Մա-
նաւանդ որ դու տեղեակ ես
Հրէից բոլոր սովորութիւններին
և խնդիրներին. Նորա համար ա-
ղաչում եմ, որ համբերութեամբ
4 լսես ինձ։ Արդ իմ կեանքին, որ
տղայութիւնիցս հետէ՝ 'ի սկզբա-
նէ իմ ազգի մէջ՝ Երուսաղէմումն
եմ եղել, բոլոր Հրէաները տեղ-
5 եակ են. Որովհետև վաղուց գի-
տեն, (եթէ կամենան վկայու-
թիւն տալ,) որ ես մեր կրօնքի
ճշմարտագոյն կուսակցութեան
համեմատ Փարիսեցի եմ ապրել։
6 Եւ հիմա Աստուածանից մեր
հայրերի եղած խոստմունքի յոյ-
սին համար ատեանումը կանգնած
7 դատվում եմ. Որին մեր տասն-
ևերկու ցեղը գիշեր և ցերեկ
անդադար պաշտելով սպասում
են հասնել. և այդ յոյսի հա-
մար ամբաստանվում եմ Հրէա-
ներիցն, ով Ագրիպպաս արքայ։
8 Ի՞նչ, անհաւատալի՞ բան է ե-
րևում ձեզ, որ Աստուած մե-
9 ռելներին յարուցանում է։ Եւ
հէնց ես ինքս հարկաւոր էի հա-
մարում, որ Յիսուս Նազովրեցու
անունի հակառակ շատ բաներ
10 գործեմ. Որ Երուսաղէմումն արի
էլ. և սուրբերից շատերին ես
բանտարկեցի քահանայապետնե-
րիցն իշխանութիւն առած, և
նորանք սպանուելիս հաւանու-
11 թիւն էի տալիս։ Եւ բոլոր ժո-
ղովարաններումը շատ անգամ
պատիժ տալով նորանց բռնա-
դատում էի որ հայհոյեն. և էլ
աւելի նորանց վերայ կատաղած՝
հալածում էի մինչև դրսի քա-
12 ղաքները։ Որով և երբոր քահա-
նայապետների իշխանութիւնովը
և հրամանովը գնում էի Դա-
13 մասկոս, Կէս օրուայ ժամանա-
կին ճանապարհի վերայ տեսայ,
ով արքայ, որ երկնքիցն արե-
գակին լոյսիցն աւելի մի լոյս
ծագեց իմ չորս կողմովը՝ և նո-
րանցով էլ՝ որ ինձ հետ գնում
14 էին։ Եւ երբոր մենք ամենքս
գետնի վերայ ընկանք՝ մի ձայն
լսեցի, որ Եբրայեցիների բար-
բառով ինձ ասում էր. Սաւուղ,
Սաւուղ, ի՞նչու ես ինձ հալա-
ծում. դժուար է քեզ՝ խթանի
դէմ քացի տալ։ Եւ ես ասեցի.
Դու ո՞վ ես, Տէր. և նա ասեց.
Ես Յիսուսն եմ, որին դու հալա-
ծում ես։ Բայց վեր կաց՝ և ոտ-
ներիդ վերայ կանգնիր, որովհե-
տև նորա համար երևեցայ քեզ,
որ քեզ ձեռս առնեմ պաշտօն-
եայ և վկայ լինելու այն բաներ-
ին՝ որ դու տեսար, և այն բա-
ներին որոնցով պիտի երևամ
քեզ. Որ ազատեմ քեզ այդ ժո-
ղովրդիցը և հեթանոսներիցը. ո-
րոնց մէջ ես հիմա քեզ ուղար-
կում եմ. Նորանց աչքերը բա-
նալու, և խաւարիցը դէպի լոյսը
դարձնելու, և սատանայի իշխա-
նութիւնիցը դէպի Աստուած.
որ նորանք մեղքերի թողութիւն՝
և սրբերի հետ ժառանգութիւն
առնեն՝ ինձ հաւատալով։ Ուս-
տի, ով Ագրիպպաս արքայ, ես
անհնազանդ չ՚եղայ այն երկնա-
յին տեսիլքին։ Այլ առաջ նո-
րանց՝ որ Դամասկոսումը և Երու-
սաղէմումն էին և բոլոր Հրէաս-
տանի երկրումը և հեթանոսնե-
րին պատմեցի, ապաշխարել և
դառնալ դէպի Աստուծուն, ա-
պաշխարութեան արժանի գոր-
ծեր գործելով։ Սորա համար
Հրէաներն ինձ տաճարումը բռնե-
լով ուզում էին սպանել։ Իսկ
որովհետև Աստուածանից ինձ օգ-
նութիւն հասաւ՝ ես մինչև այսօր
կանգնած վկայում եմ փոքրին
և մեծին. Նորանից դուրս ոչինչ
չ՚ասելով՝ որ մարգարէները, և
Մովսէսը խօսեցին այն լինելու
բաների համար. Թէ Քրիստոսը
պիտի չարչարուի, և նա առաջի-
նը մեռելներից յարութիւն ա-
ռած՝ լոյս պիտի քարոզէ ժո-
ղովրդին և հեթանոսներին։
Եւ նա այս պատասխանը տա-
լիս, Փեստոսը մեծ ձայնով ասեց.
Գժվում ես, Պօղոս, շատ կար-
դացողութիւններդ մոլորեցնում
են քեզ։ Նա էլ ասեց. Ես չեմ
գժվում, ով ազնիւ Փեստոս,
այլ ճշմարտութեան և զգաս-

տութեան խօսքեր՝ եմ խօսում։
26 Որովհետև թագաւորն էլ այս
բաները գիտէ, որի հետ էլ հա-
մարձակ խօսում եմ. որովհետև
չեմ կարծում որ սորանցից մէկն
էլ նորանից ծածկուած լինի.
որովհետև այս բանը անկիւնի
27 մէջ եղած չէ։ Հաւատո՞ւմ ես
մարգարէներին, ով Ագրիպպաս
արքայ. գիտեմ որ դու հաւա-
28 տում ես։ Ագրիպպասն էլ Պօ-
ղոսին ասեց. Քիչ է մնում որ
ինձ համոզես որ քրիստոնեայ
29 դառնամ։ Եւ Պօղոսն ասեց.
Աստուածանից կ՚խնդրէի՝ թէ
քիչ թէ շատ՝ ոչ միայն դու,
այլ այն ամենն էլ՝ որ այսօր
լսում են ինձ, այնպէս լինէին
ինչպէս ես եմ, այս կապանքնե-
րիցը ջոկ։
30 Եւ երբոր նա այս ասել էր,
վերկացաւ թագաւորը և կու-
սակալը և Բերինիկէն, և նորանց
31 հետ նստողները. Եւ գնալիս, ի-
րար հետ խօսում էին և ասում
թէ Այս մարդը մեռնելու կամ
կապանքի արժանի բան չէ գոր-
32 ծել։ Բայց Ագրիպպասը Փեստո-
սին ասեց. Կարելի էր այս մար-
դին արձակել՝ եթէ դէպի Կայսրը
բողոքած չ՚լիներ։

ԳԼ. ԻԷ

1 Երբոր հրաման եղաւ մեզ, որ
նաւով գնանք Իտալիա, Պօղոսին
և ուրիշ մի քանի կապուածներ
էլ տուին մի հարիւրապետի, որի
անունը Յուլիոս էր՝ Սեբաստոսի
2 գնդիցը։ Եւ մտնելով մի Ադրա-
մինտացի նաւ՝ որ գնալու էր Ա-
սիայի կողմերը, ճանապարհ ըն-
կանք. Արիստարքոս Մակեդոնա-
ցի Թեսաղոնիկեցին էլ մեզ հետ
3 էր։ Եւ միւս օրը իջանք Սիդոն. և
Յուլիոսը մարդասիրութիւն ցոյց
տալով Պօղոսին՝ հրամայեց որ
բարեկամների մօտ գնայ և խնամք
4 գտնէ։ Եւ այնտեղից ճանա-
պարհուելով նաւով գնացինք
Կիպրոսի ցած կողմովը՝ քամու
ներհակ լինելու պատճառովը։
5 Այն ժամանակ Կիլիկիայի և
Պամփիւլիայի ծովի միջով գնա-
լով՝ իջանք Լիկիացիների Մի-
ռան։ Եւ հարիւրապետն այնտեղ 6
մի Աղեքսանդրացի նաւ գտաւ՝
որ Իտալիա էր գնում, և մեզ
նորա մէջ մտցրեց։ Եւ շատ օրեր 7
ծանր նաւելով հազիւ հասանք
Կնիդի կողմերը. և երբոր քամին
չ՚թողեց մեզ, նաւով գնացինք
Կրետէի ցած կողմը Սաղմոնայի
մօտ։ Եւ երբոր նորանով դժուա- 8
րութիւնով անցանք՝ եկանք մի
տեղ, որ կոչվում էր Գեղեցիկ
նաւահանգիստ. որի մօտ էր Ղաս-
եա քաղաքը։
Եւ որովհետև շատ ժամանակ 9
էր անցել՝ և նաւով գնալու հա-
մար վտանգաւոր էր, ծոմի ժա-
մանակն էլ արդէն անցած լինե-
լով, Պօղոսը խրատ էր տալիս,
Նորանց ասելով. Ով մարդիկ, 10
տեսնում եմ որ այս նաւարկու-
թիւնը նեղութիւնով և շատ
վնասով է լինելու, ոչ թէ միայն
բեռնին և նաւին, այլ մեր ան-
ձերին էլ։ Բայց հարիւրապետը 11
նաւապետին և նաւավարին ա-
ւելի էր ականջ դնում քան թէ
Պօղոսի խօսքերին։ Որովհետև այն 12
նաւահանգիստն անյարմար էր
երևում ձմեռն անցկացնելու հա-
մար, շատերը խորհեցին որ այն-
տեղից գնան. որ ձմեռը մնալու
համար գուցէ կարողանան Փիւ-
նիկէն հասնիլ՝ Կրետացիների այն
նաւահանգիստը որ դէպի արև-
մտեան հարաւի կողմը և դէպի
արևմտեան հիւսիսն էր նայում։
Եւ երբոր հարաւի քամին մեղմօ- 13
րէն փչեց, կարծում էին թէ
իրանց նպատակին կ՚հասնեն. և
ճանապարհ ընկած անցնում էին
Կրետէի մօտովը։ Եւ շատ ժա- 14
մանակ չէր անցել՝ որ նորա վե-
րայ մի մրրկալից հողմ ընկաւ,
որ Եւրակիկլոն էր կոչվում։ Եւ 15
երբոր նաւը բռնուեցաւ և հողմի
դէմ չ՚կարողացաւ դիմանալ,
բաց ընկած գնում և գալիս
էինք։ Եւ դիմելով մի կղզու՝ որ 16
Կղօդա էր կոչվում, հազիւ կա-
րողացանք մակոյկը բռնել։ Որն 17
առնելով օգնութեան գործածե-

ցին և նաւը տակիցը կապեցին,
և վախենալով՝ որ յորձանուտը
չ՚ընկնեն, առագաստը իջեցրին, և
18 այնպէս գնում և գալիս էին։ Եւ
երբոր մենք շատ նեղութիւն էինք
քաշում փոթորկից, հետևեալ
օրը Բեռնէրը ծովի մէջ էին գցում.
19 Եւ երրորդ օրը մեր ձեռքովը
նաւի գործիքը դուրս թափեցինք։
20 Եւ երբոր շատ օրեր՝ ոչ արև և
ոչ աստղեր էին երևում, և փո-
թորիկն էլ քիչ չէր որ մեզ վե-
րայ կար, ապա մեր ազատուելու
21 բոլոր յոյսը կտրուեցաւ։ Եւ ո-
րովհետև շատ օր սոված էին,
այն ժամանակ Պօղոսը նորանց
մէջ կանգնած ասեց. Ով մար-
դիկ, պէտք էր ձեզ՝ ինձ լսէիք,
և Կրետէիցը դուրս չ՚գայիք՝ և
այս նեղութիւնիցը և վնասիցը
22 պրծնէիք։ Եւ հիմա էլ խրատում
եմ ձեզ՝ որ սրտապինդ կենաք.
որ ձեզանից ոչ մէկի անձին էլ
վնաս չի լինիլ, բացի այդ նաւի-
23 ցը։ Որովհետև այս գիշեր երևե-
ցաւ ինձ այն Աստուծոյ հրեշ-
տակը՝ որ ես նորանն եմ, և որին
24 էլ պաշտում եմ. Եւ ասեց. Մի
վախենար, Պօղոս. պէտք է քեզ՝
Կայսեր առաջին կանգնես. և ա-
հա Աստուած շնորհել է քեզ այդ
25 բոլոր քեզ հետ նաւողները։ Սորա
համար սրտապինդ կացէք, ով
մարդիկ. որովհետև հաւատում
եմ Աստուծուն, որ այսպէս կ՚լի-
26 նի ինչպէս ինձ հետ խօսեց։ Բայց
պէտք է մի կղզի ընկնենք։
27 Երբոր տասնևչորսերորդ գիշերն
եղաւ՝ քանի որ դեռ Ադրիակա-
նի անդունդներումը տարուբեր-
վում էինք, կէս գիշերումը նա-
ւավարները կարծում էին՝ թէ
28 մի ցամաքի հասած լինեն։ Եւ
գնդերը գցելով քսան գիրկ խոր
գտան. և մի քիչ էլ առաջ գնա-
լով էլի գցեցին՝ և տասնևհինգ
29 գիրկ գտան։ Եւ որովհետև վախե-
ցան որ մի գուցէ քարոտ տեղերի
մէջ ընկնեն. յետի կողմիցը չորս
խարիսխ գցեցին և սպասում էին
30 լուսանալուն։ Բայց երբոր նաւա-
վարներն ուզում էին՝ որ նաւիցը
փախչեն և մակոյկը իջեցրին ծովը.
այն պատճառանքով՝ իբր թէ ա-
ռաջի կողմիցն էլ պիտի խարիսխ
գցեն, Պօղոսը հարիւրապետին և 31
զինուորներին ասեց. Եթէ դո-
րանք նաւումը չ՚մնան, դուք չէք
կարող ապրիլ։ Այն ժամանակ 32
զինուորները մակոյկի չուանները
կտրեցին՝ և նորան դէն գցեցին։
Եւ երբոր ուզում էր առաւօտ 33
լինել, Պօղոսն ամենին աղաչում
էր՝ որ կերակուր առնեն, ասելով.
Այսօր տասնևչորսերորդ օրն է՝
որ դուք սպասելով անօթի էք
մնացել, և մի բան չէք կերել։
Նորա համար աղաչում եմ ձեզ, 34
որ կերակուր ուտէք, որովհետև
սա ձեր ազատութեան համար է.
վասնզի ձեզանից մէկի գլխիցը մի
մազ չի ընկնիլ։ Եւ սա ասելով, 35
հաց առաւ ամենքի առաջին
Աստուածանից գոհացաւ, կտրեց
և սկսեց ուտել։ Եւ ամենքը քա- 36
ջալերուեցան, և իրանք էլ կե-
րակուր առան։ Եւ նաւի մէջ ա- 37
մենքս երկու հարիւր եօթանա-
սունևվեց հոգի էինք։ Երբոր այն 38
կերակրովը կշտացան, նաւը թե-
թևացրին՝ ցորենը ծովը թափելով։
Եւ երբոր առաւօտ եղաւ՝ եր- 39
կիրը չէին ճանաչում, բայց մի
գոգ էին տեսնում՝ որ ծովեզը
էր. և մտածում էին որ եթէ
հնար լինի, նաւն այնտեղ պրծա-
ցնեն։ Եւ խարիսխները կտրելով 40
ծովը գցեցին. ղեկերի կապերը
թուլացրին. և առագաստը վեր
առան՝ քամուն տուին դէպի ծո-
վի եզրի կողմը։ Եւ մի տեղ ըն- 41
կան՝ որ երկու կողմիցը ծով ու-
նէր. և նաւը նստեցրին. և նաւի
առաջի կողմը խրուած անշարժ
մնաց, և յետի կողմն ալիքների
սաստկութիւնիցը քանդվում էր։
Եւ զինուորները խորհուրդ էին 42
արել՝ որ կապուածներին սպանեն,
մի գուցէ մէկը լողայ փախչի։
Բայց հարիւրապետը կամենալով 43
Պօղոսին ապրեցնել, նորանց այն
խորհրդիցը արգիլեց. և հրամա-
յեց որ լող տալ կարողացողներն
առաջ ընկնեն և դուրս գնան
ցամաքը։ Եւ մնացածներն էլ որը 44
տախտակներով և որը նաւի ուրիշ

քաներով. և այնպէս եղաւ որ ամենքը պըծան դուրս եկանցամքը։

ԳԼ. ԻՀ

4 Եւ երբոր ազատուեցանք, այն ժամանակ իմացանք՝ որ այն կղզուն անունը Մելիտէ էր. բայց բարբարոսները ոչ սակաւ մարդասիրութիւն ցոյց տուին մեզ։ Վասն 2 զի կրակ վառեցին և մեզ ամենս ընդունեցին մեր վերայ եկած անձրեւի և սաստիկ ցրտի համար։ Եւ Պօղոսը՝ երբոր շատ 3 խռիւ էր հաւաքել և կրակի վերայ էր դնեւմ, տաքութիւնից մի իժ դուրս եկաւ և նորա ձեռքիցը բռնեց։ Եւ երբոր բար- 4 բարոսները տեսան գազանը նորա ձեռքիցը կախուած, իրար ասում էին, Այս մարդն անպատճառ մարդասպան է, որ ծովիցը ազատուելուց յետոյ արդար իրաւունքը չ'թողեց որ ապրի։ Եւ 5 նա այն գազանը կրակին մէջ թափ տուաւ. և իրան ոչինչ վնաս չ'եղաւ։ Իսկ նորանք սպասում էին, թէ կամ կ'ուռենայ, կամ յանկարծակի մեռած վայր կ'ընկնի. և երբոր շատ սպասեցին, և տեսան որ վնաս չ'եղաւ նորան, իրանց խօսքը դարձրին, և ասում էին, թէ Սա մի աստուած է։ Եւ այնտեղի չորս կող- 7 մերը կային այն կղզուց գլխաւորի դիւղերը, որի անունը Պապլիոս էր. որ մեզ երեք օր իրան մօտ առաւ և սիրով ընդունեց։ Եւ 8 եղաւ որ Պապլիոսի հայրը ջերմով և թանչքով հիւանդացած պառկած էր. Պօղոսը նորա մօտ մտաւ՝ և աղօթք արաւ, և ձեռքերը նորա վերայ դրաւ, և նորան բժշկեց։ Եւ երբոր այս 9 եղաւ, ուրիշ հիւանդներն էլ որ այն կղզումը կային, գալիս էին 10 և բժշկվում։ Որոնք շատ պատուով էլ պատուեցին մեզ. և երբոր գնացինք, ինչ որ պէտք 11 էր տուին։ Եւ երեք ամսից յետոյ վեր եկանք մի Աղեքսանդրացի նաւ, որ ձմեռը այն կղզումն էր անցկացրել և Դիոսկուրացի նշանն ուներ։ Եւ իջանք 12 Սիրակուսա, և երեք օր այնտեղ մնացինք։ Այնտեղից պտոյտ տալով հասանք Հռեգիոն. և մէկ օրից յետոյ երբոր հարաւի քամին փչեց, երկրորդ օրը եկանք 13 Պատիողոս։ Ուր եղբայրներ էլ գտանք, որոնք աղաչեցին որ եօթն օր այնտեղ մնանք. և այսպէս եկանք Հռոմ։ Եւ երբոր այն- 14 տեղից եղբայրները մեր մասին լսեցին, մեր առաջը գուրս եկան մինչև Ապիփոսի վաճառանոցը և երեք իջևանները. Պօղոսը որ նորանց տեսաւ, Աստուածանից գոհացաւ և քաջալերեցաւ։

Եւ երբոր մտանք Հռոմ, հար- 16 իւրապետը կապուածները զօրապետին յանձնեց. և Պօղոսին հրաման եղաւ որ իր պահապան զինուորի հետ առանձին կենայ։ Եւ 17 երեք օրից յետոյ եղաւ որ Պօղոսը Հրէաների գլխաւորներին կանչեց. և երբոր եկան, նորանց ասեց. Արդիւկ եղբարք, ես ժողովրդի կամ հայրենական սովորութիւնների հակառակ մի բան չ'գործած, երուսաղէմիցը կապուած մտանուեցայ Հռոմայեցիների ձեռք։ Որոնք ինձ դատելով 18 կամեցան թող տալ, որովհետև ինձանում մեռնելու ոչինչ յանցանք չ'կար։ Բայց երբոր Հրէաները հակառակում էին, ստիպուեցայ դէպի կայսրը բողոքել. ոչ թէ իբր իմ ազգիցը մի մեղադրանք ունենալու բան ունէի։ Եւ այս 20 պատճառի համար աղաչեցի ձեզ հիմա որ տեսնեմ և խօսեմ. որովհետև Իսրայէլի այն յոյսին համար եմ ես այս շղթայով կապուած։ Նորանք էլ ասեցին 21 նորան. Մենք քեզ համար Հրէաստանիցը ոչ թուղթ ենք առացել և ոչ էլ եղբայրներից մէկը եկաւ և քեզ համար մի չար բան պատմեց կամ խօսեց։ Բայց 22 կ'բաղձայինք քեզանից լսել թէ ինչ ես խորհում. որովհետև այդ աղանդի համար մեզ յայտնի է, որ ամեն տեղ դուրս դէմ են խօսում։ Երբոր նորա հետ մէկ օր 23 որոշել էին, շատ մարդիկ եկան նորա մօտ այն հիւրանոցը, որանց Աստուծոյ արքայութիւնը վկայութիւնով պատմում էր, և Յիսուսին համար նորանց համոզում էր Մովսէսի օրէնքիցը և մարգարէներից առաւօտանց մինչև իրիկունը։ Եւ ոմանք խօս- 24 քերին համոզվում էին, իսկ ոմանք չէին հաւատում։ Եւ իրար հետ չ'միաբանած արձակուեցան, երբոր Պօղոսը այս մէկ խօսքն ասեց թէ Սուրբ Հոգին նոյնիսկ մարգարէի ձեռովը մեր հայրերի հետ լաւ խօսեց, և ասեց. Գնա 26 ժողովրդի մօտ և ասիր. Դուք լսելով կ'լսէք և չէք իմանալ. և տեսնելով կ'տեսնէք և չէք տես- 27 նել, Որովհետև այս ժողովրդի սիրտը թանձրացաւ, և էրանց ականջներով ծանր լսեցին, և էրանց աչքերը խփեցին. որ մի գուցէ աչքով տեսնեն և ականջներով լսեն, և սրտով իմանան և դարձի գան, և ես բժշկեմ նորանց։ Եւ 28 հիմա յայտնի լինի ձեզ, որ Աստուծոյ փրկութիւնն ուղարկուեցաւ հեթանոսներին, և նորանք կ'լսեն։ *Եւ երբոր նա այս ասեց. 29 Հրէաները գուրս գնացին նորանից. և իրանց մէջ շատ վիճաբանութիւն ունէին։

Եւ Պօղոսը ամբողջ երկու տա- 30 րի, իր վարձքով բռնած տաւնը մնաց։ Եւ ամեն իրան մօտ եկող- 31 ներին ընդունում էր. Աստուծոյ 32 արքայութիւնը քարոզելով, և Տէր Յիսուս Քրիստոսի համար ասվորեցնելով, անխափան ամեն համարձակութեամբ։

Հռոմէական
ապա եղբայրներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս Յիսուս Քրիստոսի ծառայ՝ կանչուած առաքեալ՝ Աստուծոյ աւետարանի համար որոշուած, 2 Այն որ առաջուց խոստացաւ իր մարգարէների ձեռովը սուրբ 3 գրքերումի, Իր Որդու համար, որ մարմնի կողմանէ Դաւիթի 4 զաւակից եղաւ. Եւ Աստուծոյ Որդի սահմանուեցաւ զօրութիւնով սրբութեան Հոգու կողմանէ՝ մեռելներից յարութիւն առնելուցը, մեր Տէր Յիսուս Քրիստոսի համար, Որով ընդունեցինք շնորհք և առաքելութիւն՝ հաւատքի հնազանդութեան համար ամեն ազգերի մէջ նորա անունի համար. Որոնց մէջումը 6 դուք էլ Յիսուս Քրիստոսի կանչուածներն էք. Ձեզ ամենից՝ որ 7 Հռովմում էք՝ Աստուծոյ սիրելիներից՝ կանչուած սուրբերից՝ շնորհք լինի ձեզ և խաղաղութիւն Աստուածանից՝ մեր Հօրիցը և Տէր Յիսուս Քրիստոսիցը։

*Որոնք չ'սանդին այս գոհարը։

8 Առաջ գոհանում եմ Աստ-
ուածանից Յիսուս Քրիստոսի ձե-
ռովը ձեր ամենի համար. որ ձեր
հաւատքը բոլոր աշխարհքի մէջ
9 պատմվում է։ Որովհետև Աստ-
ուած ինձ վկայ է, որին ես պաշ-
տում եմ իմ հոգովը նորա Որ-
դու աւետարանումը, թէ ինչ-
պէս անդադար ձեզ յիշում եմ։
10 Ամեն ժամանակ իմ աղօթքնե-
րումն աղաչելով՝ որ լինի թէ մի
անգամ յաջողուի ինձ Աստու-
ծոյ կամքովը ձեզ մօտ գալ։
11 Որովհետև շատ ցանկանում եմ
ձեզ տեսնել, որ մի հոգևոր
շնորհք հաղորդեմ ձեզ ձեր հաս-
12 տատուելու համար. Այսինքն՝ որ
ձեզ հետ մխիթարուիմ մեր փո-
խադարձ՝ իմ և ձեր հաւատքի
13 միջոցով։ Եղբարք, չեմ կամե-
նում որ դուք չ՚գիտենաք, թէ
շատ անգամ միտքս դրի որ ձեզ
մօտ գամ, (Բէևա մինչև հիմա ար-
գիլուեցայ.) որ ձեր միջումն էլ
պտուղ ունենամ՝ ինչպէս և ու-
14 րիշ հեթանոսների մէջ։ Որովհե-
տև ես Յոյներին և Բարբարոսնե-
րին, իմաստուններին և անմիտ-
15 ներին պարտական եմ։ Այնպէս՝
իմովսանն յօժար եմ ձեզ էլ, որ
Հռովմումն էք՝ աւետարանը քա-
րոզել։
16 Որովհետև ես Քրիստոսի աւե-
տարանը ամօթ չեմ համարում.
որովհետև Աստուծոյ զօրութիւն
է փրկելու համար ամեն հաւա-
տացողին, առաջ Հրէային՝ և
17 յետոյ Յոյնին։ Որովհետև Աս-
տուծով արդարութիւնը նորա-
նով յայտնվում է՝ հաւատքից
հաւատքի մէջ. ինչպէս գրուած է
թէ Արդարը հաւատքից կ՚ապրի։
18 Որովհետև Աստուծոյ բարկու-
թիւնն երկնքիցը յայտնվում է
մարդկանց ամեն ամբարշտու-
թեան և անիրաւութեան վերայ,
որ ճշմարտութիւնն անիրաւու-
19 թիւնով բռնում են։ Որովհետև
Աստուծոյ գիտելիքը յայտնի է
նորանցում. որ Աստուած յայտ-
20 նեց նորանց։ Որովհետև նորա
աներևոյթ բաները աշխարհքի
սկզբիցն ստեղծուածներովն ի-
մացուելով տեսնվում են, որ է՝
նորա մշտնջենաւոր զօրութիւնը
և Աստուածութիւնը, այնպէս որ
անպատասխան մնան։ Որովհետև 21
Աստուծուն ճանաչելով, նորան
Աստուծոյ պէս չ՚փառաւորեցին՝
կամ շնորհակալ չ՚եղան. այլ ի-
րանց մտածմունքներումն ունայ-
նացան և նորանց անմիտ սրտերը
խաւարուեցան։ Ասելով թէ ի- 22
մաստուն են՝ յիմարեցան. Եւ 23
անեղծ Աստուծոյ փառքը փոխե-
ցին եղծանելի մարդի և թռչուն-
ների և չորքոտանիների և սողուն-
ների պատկերի նմանութեան
հետ. Նորա համար Աստուած 24
էլ նորանց մատնեց իրանց սրտերի
ցանկութեան մէջ՝ պղծութեան
համար. որ խայտառակեն իրանց
մարմիններն իրանց անձերումը։
Որոնք Աստուծոյ ճշմարտութիւ- 25
նը ստութեան հետ փոխեցին.
և երկրպագեցին և պաշտեցին
ստեղծուածներին քան թէ Ստեղ-
ծողին. որ օրհնեալ է ի յաւիտ-
եանս. ամէն։ Նորա համար Աստ- 26
ուած մատնեց նորանց անարգ
կիրքերի. և նորանց էգերը բնա-
կան գործածութիւնը փոխեցին
անբնականի հետ։ Այնպէս էլ 27
արուները կնոջ բնական գործա-
ծութիւնը թողելով. իրանց ցան-
կութիւններովն իրար հետ բոր-
բոքուեցան. արուներն արուների
հետ խայտառակութիւն էին գոր-
ծում, և այն փոխարէնը՝ որ ար-
ժան էր իրանց մոլութեանն՝ ի-
րանց անձերումը ընդունում էին։
Եւ ինչպէս որ չ՚ընտրեցին՝ Աստու- 28
ծուն ունենալ իրանց գիտու-
թեան մէջ, Աստուած մատնեց
նորանց անարգ մտքի որ անարժան
բաներ գործեն. Որոնք լցուած են 29
ամեն անիրաւութիւնով, պոռ-
նըկութիւնով, անզգամութիւ-
նով, ագահութիւնով, չարու-
թիւնով, լիքը նախանձով, մար-
դասպանութիւնով, կռիւով,
նենգութիւնով, չարաբարու-
թիւնով. Քսուներ, բամբասող- 30
ներ, աստուածատողներ, թշնա-
մանողներ, ամբարտաւաններ, գո-
ռողներ, չար բաներ հնարողներ,

31 ծնողների անհնազանդներ. Ան-
միտներ, ուխտագրուժներ, ան-
գութներ, անհաշտներ, անողորմ-
32 ներ. Որ Աստուծոյ իրաւունքները
հասկանալով՝ թէ այսպիսի բա-
ներ գործողները մահի արժանի
են, ոչ թէ միայն այս բաներն
անում են, այլ գործողներին էլ
կամակից են լինում։

ԳԼ. Բ

1 Նորա համար առանց պատաս-
խան տալու ես, ով մարդ՝ ով որ
էլ լինես, որ դատում ես. որով-
հետև ինչով որ ուրիշին դատում
ես, քեզ ես դատապարտում.
որ դու նոյնն ես գործում որ
2 ինքդ դատում ես։ Բայց մենք
գիտենք, որ Աստուծոյ դատաս-
տանը ճշմարտութեամբ է նո-
րանց վերայ, որ այսպիսի բաներ
3 գործում են։ Իսկ, ով մարդ, որ
դատում ես այսպիսի բաներ գոր-
ծողներին, և որ դու նոյնն ես
գործում, մի՞թէ կարծում ես՝
թէ դու կ՚պրծնիս Աստուծոյ
4 դատաստանիցը։ Կամ թէ նորա
քաղցրութեան առատութիւնը
և համբերութիւնը և երկայն-
մտութիւնը արհամարհո՞ւմ ես.
չ՚գիտենալով որ Աստուծոյ քաղց-
րութիւնը քեզ ապաշխարու-
5 թեան է տանում։ Բայց դու քո
խստութիւնովը և անզեղջ սրտո-
վը բարկութիւն ես կիտում քո
անձի համար՝ բարկութեան և
այն Աստուծոյ արդար դատաս-
6 տանի յայտնութեան օրումը, Որ
նա ամեն մէկին իր գործերի պէս
7 հատուցումը կ՚տայ. Նորանց, որ
բարի գործերի մէջ են յարատե-
ւում, և փառք և պատիւ և
8 անապականութիւն են որոնում,
յաւիտենական կեանք. Բայց նո-
րանց՝ որ հակառակութիւնից են՝
և ճշմարտութեան անհնազանդ
և անիրաւութեան ետևից գնա-
ցած, բարկութիւն և սրտմտու-
9 թիւն. Նեղութիւն և տառա-
պանք այն ամեն մարդի վերայ՝
որ չարութիւն է գործում. ա-
ռաջ Հրէայի՝ և յետոյ Յոյնի։
Իսկ փառք և պատիւ և խաղա- 10
ղութիւն ամեն բարի գործողին.
առաջ Հրէային՝ և յետոյ Յոյնին։
Որովհետև Աստուծոյ մօտ աչա- 11
ռութիւն չ՚կայ։ Որովհետև նո- 12
րանք՝ որ առանց օրէնքի մեղք
գործեցին, առանց օրէնքի էլ կը
կորչեն. և նորանք՝ որ օրէնքի տակ
մեղք գործեցին օրէնքով կ՚դատ-
ուին։ (Որովհետև ոչ թէ օրէնքը 13
լսողներն են Աստուծոյ առաջին
արդար, այլ օրէնքը կատարող-
ները կ՚արդարանան։ Ուրեմն երբ- 14
որ հեթանոսները՝ որ օրէնք չ՚ու-
նին՝ բնութեամբ օրէնքի գործերն
անեն, սորանք թէև օրէնք չ՚ու-
նին իրանք են իրանց համար օ-
րէնք. Որոնք ցոյց են տալիս թէ 15
օրէնքի գործը նորանց սրտերումը
գրուած է՝ նորանց խղճմտանքի
վկայութիւնովը, և իրանց խոր-
հուրդների իրար յանդիմանելովը,
կամ թէ իրաւունք տալովը.)
Այն օրը՝ որ Աստուած մարդկանց 16
ծածուկ բաները կ՚դատէ իմ ա-
ւետարանի համեմատ Յիսուս
Քրիստոսի ձեռովը։
Ահա դու Հրէայ ես անուան- 17
վում, և կռթնվում ես օրէնքի
վերայ, և պարծենում ես Աստու-
ծով։ Եւ նորա կամքը գիտես, և 18
զանազանում ես տարբեր բաները
օրէնքիցը խրատուած լինելով,
Եւ քո անձի վերայ վստահու- 19
թիւն ունիս՝ որ կոյրերի առաջ-
նորդ ես. և խաւարեալների լոյս.
Անմիտների խրատիչ, երեխաների 20
վարդապետ. որ օրէնքի գիտու-
թեան և ճշմարտութեան կեր-
պարանքն ունիս օրէնքումը. Արդ 21
դու՝ որ ուրիշին սովորեցնում ես,
քո անձին չե՞ս սովորեցնում. դու
որ քարոզում ես չ՚գողանալ, գո-
ղանո՞ւմ ես։ Որ ասում ես շնու- 22
թիւն չ՚գործել՝ շնութի՞ւն ես գոր-
ծում. դու՝ որ կռքերիցը գարշում
ես՝ սրբապղծութի՞ւն ես անում։
Դու՝ որ օրէնքովը պարծենում 23
ես, օրէնքին դէմ գործելով Աս-
տուծուն անարգո՞ւմ ես։ Որովհե- 24
տև Աստուծոյ անունը ձեր պատ-
ճառովը հայհոյվում է հեթա-
նոսների մէջ, ինչպէս և գրուած է։

25 Արդ թլփատութիւնը շահաւոր է՝ թէ որ օրէնքը պահող եւ. ապա եթէ օրէնքի դէմ յանցաց. ցաւոր ես, քո թլփատութիւնն
26 անթլփատութիւն եղաւ։ Ի՞նչ թէ որ անթլփատութիւնն օրէնքի իրաւունքները պահէ, չէ՞ որ նորա անթլփատութիւնը՝ թլփա-
27 տութիւն կ՚համարուի։ Եւ ի բնէ անթլփատութիւնը՝ օրէնքը կատարելով կ՚դատապարտէ քեզ, որ գրով և թլփատութիւնով օ-
28 րէնքի դէմ յանցաւոր ես. Որովհետեւ նա չէ Հրէայ՝ որ դրսի երեւոյթով է, և այն չէ թլփատութիւնը՝ որ մարմնով գրսի ե-
29 րեւոյթով է. Այլ նա՝ որ ծածուկ Հրէայ է, և սրտի թլփատութիւնը հոգով և ոչ թէ գրով՝ որի գովասանքը ոչ թէ մարդկանցից է, այլ Աստուածանից։

ԳԼ. Գ

1 Արդ ի՞նչ է Հրէայի առաւելութիւնը, կամ ի՞նչ է թլփատու-
2 թեան օգուտը։ Շատ, ամեն կերպով. առաջ Հէնց նա որ Աստուծոյ պատգամները նորանց հա-
3 ւատացուեցան։ Բայց ի՞նչ. եթէ ոմանք չ՚հաւատացին, մի՞թէ նորանց անհաւատութիւնն Աստուծոյ հաւատքը կ՚խափանէ. քաւ
4 լիցի։ Արդ թող Աստուած ճշմարիտ լինի, իսկ ամեն մարդ սուտ. ինչպէս գրուած է, Որ արդար լինես քո խօսքերումդ, և
5 յաղթես քո դատուելումդ։ Բայց եթէ մեր անիրաւութիւնն Աստուծոյ արդարութիւնը յայտնի երեւացնում է, ի՞նչ ասենք. մի՞թէ անիրաւ է Աստուած, որ
6 բարկութիւնը բերում է։ Մարդի կերպով եմ ասում, քաւ լիցի. ապա Աստուած ի՞նչպէս
7 կ՚դատէ աշխարհքը։ Որովհետեւ եթէ Աստուծոյ ճշմարտութիւնն իմ ստութիւնովս աւելացաւ նորա փառքի համար, էլ ի՞նչու եմ ես մեղաւորի պէս դատուում։
8 Եւ ի՞նչու համար այնպէս չ՚անենք՝ ինչպէս չարախօսում ենք, և ինչպէս ոմանք ասում են մեզ համար, թէ ասում լինինք, թէ Չար գործենք՝ որ բարին գայ. որոնց դատաստանը արդար է։

Եւ հիմա ի՞նչ. աւելի՞ ենք. ամենևին ոչ. որովհետեւ առաջ մեղադրեցինք Հրէաներին և Հեթանոսներին, թէ ամենքը մեղքի տակ են. ինչպէս որ գրուած է, թէ Արդար չ՚կայ՝ մէկն էլ չ՚կայ։
Չ՚կայ իմացող, չ՚կայ Աստուծուն
խնդրող. Ամենքը խոտորեցան, միասին անպիտան եղան. չ՚կայ բարութիւն անող, մինչև մէկն էլ չ՚կայ։ Նորանց կոկորդը բաց գերեզման է, և իրանց լեզուներով նենգութիւն են անում. իժերի թոյն կայ նորանց շրթունքների տակ։ Որոնց բերանը անէծքով և դառնութիւնով լիքն է։
Որոնց ոտները շուտափնաց են արիւն թափելու համար։ Կործանում և թշուառութիւն է նորանց ճանապարհներումը։ Եւ խաղաղութեան ճանապարհը չը ճանաչեցին։ Աստուծոյ երկիւղը նորանց աչքերի առաջին չէ։ Բայց գիտենք, թէ ամեն ինչ որ օրէնքն ասում է նորանց է ասում, որ օրէնքի տակ են. որ ամեն բերան խփուի, և բոլոր աշխարհքը Աստուծոյ առաջին դատապարտ լինի։ Որովհետեւ օրէնքի գործերիցը ոչ մի մարմին չի արդարանալ նորա առաջին. որովհետեւ օրէնքովը լինում է մեղքի գիտութիւն։

Բայց հիմա առանց օրէնքի Աստուծոյ արդարութիւնը յայտնուած է, օրէնքից և մարգարէներից վկայուած լինելով. Այսինքն Աստուծոյ արդարութիւնը որ Յիսուս Քրիստոսի հաւատքիցն է, այն ամենի համար և ամենի վերայ, որ հաւատում են. որովհետեւ խորութիւն չ՚կայ։ Որովհետեւ ամենքը մեղանչեցին, և Աստուծոյ փառքիցը պակասած են. Զրի են արդարանում նորա շնորհքովը՝ այն փրկութեան ձերոմով՝ որ Յիսուս Քրիստոսումն է։
Որին Աստուած առաջուց սահմանեց քաւութիւն լինելու համար հաւատալով նորա արիւնովը,

որ իր արդարութիւնը ցոյց տայ՝ այն առաջուց գործուած մեղքերի թոյլատուութեան համար՝ Աս-
26 տուծոյ ներելու ժամանակին, Որ իր արդարութիւնը երեւացնէ այս ժամանակումը. որ ինքն լինի արդար և արդարացնող նորան՝ որ
27 Յիսուսի հաւատքից է. Ուրեմն ո՞ւր է պարծանքը. խափանուեցաւ. ո՞ր օրէնքով. գործերի՞ օրէնքո՞վը. ոչ, այլ հաւատքի օրէնքովը։
28 Ուրեմն համարում ենք, որ մարդը հաւատքով է արդարանում առանց օրէնքի գործերի։
29 Մի՞թէ Աստուած միայն Հրէաներինն է, և հեթանոսներինն էլ չէ. այո, հեթանոսներինն էլ
30 է։ Որովհետեւ մէկ Աստուած է՝ որ արդարացնում է թլփատութիւնը հաւատքից, և անթլփատութիւնը նոյն հաւատքովը։
31 Արդ մի՞թէ օրէնքը խափանում ենք հաւատքովը. քաւ լիցի. այլ օրէնքը հաստատում ենք։

ԳԼ. Դ

1 Արդ ի՞նչ ասենք, թէ մեր Աբրահամ հայրը գտաւ մարմնի
2 կողմանէ։ Որովհետեւ եթէ Աբրահամը գործերով արդարացած լինէր՝ պարծանք կ՚ունենար. բայց
3 ոչ թէ Աստուծոյ առաջին։ Որովհետեւ ի՞նչ է ասում. Աբրահամն հաւատաց Աստուծուն, և արդարութիւն համարուեցաւ նորան։ Բայց նորան՝ որ
4 գործք է անում, վարձքը չէ համարվում շնորհքի պէս, այլ
5 պարտքի պէս։ Բայց նորան՝ որ գործք չէ անում այլ հաւատում է նորան, որ ամբարշտին արդարացնում է, նորա հաւատքը համարվում է արդարութիւն։
6 Ինչպէս որ Դաւիթն էլ այն մարդի երանութիւնն է ասում, որին Աստուած արդարութիւն է համարում առանց գործերի։
7 Երանի՛ նորանց՝ որոնց անօրէնութիւնները թողուեցան, և որոնց մեղքերը ծածկուեցան։
8 Երանի է այն մարդին, որին Տէրը մեղք չի համարիլ։ Արդ այս երանութիւնը՝ կամ թէ անթլփատութեան վերայ էլ է. որովհետեւ ասում ենք՝ թէ Աբրահամի հաւատքը արդարութիւն համարուեցաւ։
10 Արդ ի՞նչպէս համարուեցաւ. երբոր թլփատութիւնո՞ւմ էր՝ թէ անթլփատութիւնո՞ւմը. ոչ թէ թլփատութիւնում այլ անթլփատութիւնում։ Եւ թլփա-
11 տութեան նշանն առաւ էնքան արդարութեան կնիք այն հաւատքի որ անթլփատութիւնում էր, որ նա հայր լինի այն ամեն հաւատացեալների՝ որ անթլփատութիւնիցն են՝ որ նորանց էլ համարուի արդարութիւնը։
12 Եւ թլփատութեան հայր հա՛մբուէ ոչ միայն նորանց՝ որ թլփատութիւնիցն են, այլ նորանց էլ՝ որ այն հաւատքի հետքերն են գնում, որ մեր հայր Աբրահամն անթլփատութիւնումն ունէր։ Որովհետեւ
13 ոչ թէ օրէնքովը էր՝ Աբրահամին կամ նորա զաւակին այն խոստումնը թէ նա աշխարհքի ժառանգն է, այլ հաւատքի արդարութիւնիցը։ Որովհետեւ եթէ
14 օրէնքից լինողներն են ժառանգ, ապա հաւատքն ունայն էր՝ և խոստումնը կ՚խափանուէր։ Որով-
15 հետեւ օրէնքը բարկութիւն է գործում. որովհետեւ ուր օրէնք չ՚կայ՝ օրինազանցութիւն էլ չը կայ։ Սորա համար հաւատքիցն
16 է, որ շնորհքով լինի. որ խոստումնը հաստատ լինի ամեն զաւակի համար, ոչ միայն օրէնքիցը լինողի համար, այլ նորա համար էլ որ Աբրահամի հաւատքիցն է, որ մեր ամենի հայրն է։
17 Ինչպէս որ էլ գրուած է, թէ Շատ ազգերի հայր արի քեզ Աստուծոյ առաջին, որին հաւատաց, որ մեռելներին կենդանի է անում՝ և չ՚լինող բաները լինողի պէս է կանչում։
18 Որ առանց յոյսի՝ յոյսով հաւատաց՝ թէ շատ ազգերի հայր կ՚լինի. ինչպէս ասուեցաւ՝ Թէ Այնպէս պիտի լինի քո զաւակը։
19 Եւ չ՚տկարացաւ հաւատքով, այնիհետ մտիկ չ՚արաւ իր մարմնին որ արդէն

մեռած էր, ինքը իրրև հարիւրամեայ լինելով, և ոչ էլ Սառայի արգանդի մեռած լինելուն։
20 Եւ Աստուծոյ խոստմանքի համար չ'երկմտեց անհաւատութիւնով, այլ զօրացաւ հաւատքով, և Աստուծուն փառք տուաւ։
21 Եւ իր մտքումը համոզուած էր, թէ նա որ խոստացաւ, կարող է
22 և անել։ Ընդա համար էլ արդարութիւն համարուեցաւ նրան։
23 Բայց ոչ միայն նրա համար գրուեցաւ թէ նրան համարուեցաւ արդարութիւն.
24 Այլ մեզ համար էլ, որ մեզ պիտի համարուի, որ հաւատում ենք նրան՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսին յարութիւն տուաւ մեռելներից.
25 Որ մատնուեցաւ մեր յանցանքների համար. և յարութիւն առաւ մեզ արդարացնելու համար։

Գլ. Ե

1 Արդ մենք՝ հաւատքով արդարացած լինելով Աստուծոյ հետ խաղաղութիւն ունինք՝ մեր Տէր
2 Յիսուս Քրիստոսի ձեռովը։ Որով ընդունեցինք հաւատքով այս շնորհքի մէջ մտնելն էլ, որ նրանում կանգնած ենք, և պարծենում ենք Աստուծոյ փառքի
3 յոյսովը։ Եւ ոչ միայն այսպէս, այլ նեղութիւնների մէջ էլ պարծենում ենք. դիտենալով որ նեղութիւնը համբերութիւն է
4 գործում, համբերութիւնը՝ փորձառութիւն, փորձառութիւնը՝
5 յոյս. Ցոյսն էլ չէ ամչեցնում. որովհետև Աստուծոյ սէրը փըռուած է մեր սրտերի մէջ Սուրբ Հոգու ձեռովը՝ որ տրուեցաւ
6 մեզ։ Որովհետև երբոր մենք դեռ տկար էինք՝ Քրիստոսը մեզ համար իր ժամանակումն մեռաւ
7 բիշտների տեղ մեռաւ։ Վ անդի հազիւ թէ մի արդարի համար մէկը մեռնի. (բայց մի բարի մարդի համար իջե թէ մէկը հա-
8 մարձակի մեռնիլ.) Բայց Աստուած յայտնեց իր սէրը դէպի մեզ, որ՝ երբոր մենք դեռ մեղաւոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռաւ. Ապա ո՞րքան աւելի
9 հիմա, որ արդարացանք նորա արիւնովը կ'փրկուինք նորանով
10 բարկութիւնից։ Որովհետև թէ որ դեռ թշնամի էինք, Աստուծոյ հետ հաշտեւեցանք նորա Որդու մահովը, ո՞րքան աւելի որ հաշտուած ենք, կ'ապրինք նորա
11 կեանքովը։ Եւ ոչ միայն այսքան. այլ Աստուծով էլ պարծենում ենք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը, որով հիմա հաշտութիւնն ընդունեցինք։

Սորա համար՝ ինչպես մէկ մարդի ձեռովը մեղքը մտաւ աշխարհքը, և այն մեղքովն էլ մահը. և այսպէս մահն ամեն մարդկանց վերայ տարածուեցաւ, քանզի որում
13 ամենքը մեղանչեցին։ (Որովհետև մինչև օրէնքը՝ մեղք կար աշխարհքումը, բայց մեղքը չէ համարվում քանի որ օրէնք չ'կայ։ Բայց
14 մահը թագաւորեց Ադամից մինչև Մովսէսը Ադամի մեղքի նման չ'մեղանչողների վերայ էլ. որ օրինակ է նորան որ գալու էր։
15 Բայց շնորհքն այնպես չէ՝ ինչպես յանցանքը. որովհետև եթէ մէկի յանցանքովը շատերը մեռան, էլ ո՞րքան աւելի Աստուծոյ շնորհքն ու պարգևը մէկ մարդի՝ Յիսուս
16 Քրիստոսի շնորհքովն աւելացաւ շատերի վերայ։ Եւ պարգևն այնպես չէ՝ ինչպես այն մէկ մեղանչողից եղաւ. որովհետև դատաստանն այն մէկ մեղքիցը
17 դէպի դատապարտութիւն տարաւ. բայց շնորհքը շատ մեղքերից արդարութեան մէջ է պատ-
18 նում։ Որովհետև եթէ մէկի մեղքովը մահը թագաւորեց այն մէկի ձեռովն, էլ ո՞րքան աւելի նորանք, որ ընդունում են շնորհքի լիութիւնն ու արդարութեան պարգևները կեանքով կ'թագաւորեն՝ այն մէկ Յիսուս Քրիստոսի ձեռովը։) Արդ ուրեմն՝ ինչպես որ մէկի յանցանքովն ամեն մարդկանց վերայ դատապարտութիւն եկաւ, նոյնպես էլ մէկի արդարութիւնովն ամեն մարդկանց վե-

րայ կեանքի արդարութիւն է
19 գալու։ Որովհետև ինչպես որ մէկ մարդի անհնազանդութիւնովը շատերը մեղաւորներ եղան, այնպես էլ մէկի հնազանդութիւնովը շատերը արդարներ կ'լինին։
20 Բայց օրէնքը մէջ ընկաւ՝ որ յանցանքը շատանայ. բայց ուր որ աւելի եղաւ մեղքը, այնտեղ աւելի և շատացաւ շնորհքը։
21 Որպէս դի ինչպես մեղքը թագաւորեց մահի ձեռովը, այնպէս էլ շնորհքը թագաւորէ արդարութիւնով յաւիտենական կեանքի մէջ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը։

Գլ. Զ

1 Արդ ի՞նչ ասենք. մնա՞նք մեղքի
2 մէջ, որ շնորհքը շատանայ։ Քաւ լիցի. մենք որ մեռանք մեղքին, էլ ի՞նչպես դեռ կ'ապրենք նո-
3 րանում, կամ չ'գիտէ՞ք թէ քանիներս որ Յիսուս Քրիստոսով մկրտուեցանք՝ նորա մահուանը
4 մկրտուեցանք։ Մկրտութիւնովը նորա հետ թագուեցանք մահի մէջ. որ ինչպես Քրիստոսը Հօր փառքովը մեռելների միջից յարութիւն առաւ, այնպես մենք էլ կեանքի նորոգութեան մէջ
5 մանք դանք։ Որովհետև եթէ նորա մահի նմանութիւնովը նորա հետ անկուեցանք, ապա նորա յարութեանն էլ նմա՛ կ'լինինք։
6 Այս գիտենալով, որ մեր հին մարդը նորա հետ խաչուեցաւ, որ մեղքի մարմինը խափանուի, որ այլ ևս չ'ծառայենք մեղքին։
7 Որովհետև նա որ մեռնում է՝
8 արդարացած է մեղքիցը։ Եւ եթէ Քրիստոսի հետ մեռանք, հաւատում ենք՝ որ նորա հետ
9 էլ կ'ապրենք։ Գիտենալով՝ որ Քրիստոսը մեռելների միջից յարութիւն առած լինելով, այլևս չէ մեռնում, և մահը նորա վե-
10 րայ այլ ևս չէ տիրում։ Որովհետև այն որ մեռաւ՝ մեղքին մեռաւ մէկ անգամ, և այն որ կենդանի է՝ Աստուծուն է կեն-
11 դանի։ Նոյնպես էլ դուք ձեր

անձերը մեղքին մեռած համարեցէք, և Աստուծուն կենդանի՝ մեր Տէր Քրիստոս Յիսուսի ձեռովը։ Սորա համար թող մեղքը 12
չ'թագաւորէ ձեր մահկանացու մարմնի մէջ, որ հնազանդիք նորա ցանկութիւններին։ Եւ ձեր 13
անդամները անիրաւութեան գործիք մի ներկայացնէք մեղքին. այլ ձեր անձերը ներկայացրէք Աստուծուն՝ ինչպես մեռելներից կենդանացածներ, և ձեր անդամներն արդարութեան գործիք Աստուծուն։ Որովհետև մեղքը չի 14
տիրել ձեզ վերայ. որովհետև օրէնքի տակ չէք, այլ շնորհքի տակ։

Արդ ի՞նչ. մե՞ղք գործենք, ո- 15
րովհետև օրէնքի տակ չենք՝ այլ շնորհքի տակ. քաւ լիցի։ Դուք 16
չ'գիտե՞ք, թէ ում որ ձեր անձերը ծառայ էք ներկայացնում՝ նորան հնազանդելու, ծառաներ էք նորան որին հնազանդում էք. թէ մեղքին՝ դէպի մահ, և թէ հնազանդութեան՝ դէպի արդարութիւն։ Բայց շնորհակալու- 17
թիւն Աստուծոյ. որ մեղքի ծառայ էիք, բայց սրտով հնազանդեցիք այն վարդապետութեան օրինակին՝ *որին յանձնուեցաք։ Ուրեմն դուք մեղքիցն ազատ- 18
ուած՝ ծառայեցիք արդարութեանը։ Մարդկօրէն եմ ասում 19
ձեր մարմնի տկարութեան համար. որ ինչպես ձեր անդամները ծառայ ներկայացրիք պղծութեանն ու անօրէնութեանը՝ անօրէնութեան համար, նոյնպես էլ հիմա ձեր անդամները ծառայ ներկայացրէք արդարութեանը սրբանալու համար։ Որովհետև 20
երբոր մեղքի ծառայ էիք՝ ազատ էիք արդարութիւնից։ Արդ ի՞նչ 21
պտուղ ունէիք այն ժամանակ, որոնց համար հիմա ամօթ էք քաշում. որովհետև նորանց վերջը մահ է։ Բայց հիմա որ մեղ- 22
քից ազատուած և Աստուծոյ ծառայ եղած էք՝ ձեր պտուղն ունիք սրբանալու համար, և նորա

*կամ՝ որով հրահանգուեցաք։

վերջը յաւիտենական կեանքն է։
23 Որովհետև մեղքի վարձքը մահն
է. բայց Աստուծոյ շնորհքը՝ յա-
ւիտենական կեանք՝ մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի ձեռովը։

ԳԼ. Է

1 Կամ չ՚գիտէ՞ք, եղբարք, (որով-
հետև օրէնք գիտացողների հետ
եմ խօսում) որ օրէնքը մարդի
վերայ տիրում է՝ քանի որ նա
2 կենդանի է։ Որովհետև մարդ ու-
նեցող կնիկը՝ իր կենդանի մար-
դի հետ կապուած է օրէնքով.
բայց եթէ մարդը մեռնի՝ մարդի
3 օրէնքիցն արձակուած է։ Ու-
րեմն՝ քանի որ մարդը կենդանի
է՝ նա շնացող է կոչվում, եթէ
ուրիշ մարդի գնայ. բայց եթէ
մարդը մեռնի, օրէնքիցն ազատ
է՝ որ շնացող չ՚լինի եթէ ուրիշ
4 մարդի գնայ։ Այսպէս էլ, եղ-
բարք, դուք Քրիստոսի մարմնովը
մեռաք օրէնքին՝ որ ուրիշի լի-
նիք՝ նորան որ մեռելների միջից
յարութիւն է առել, որ պտուղ
5 բերենք Աստուծուն։ Որովհետև
քանի որ մարմնով էինք, մեղքե-
րի կիրքերը՝ որ օրէնքովն էին՝
զօրանում էին մեր անդամներու-
մը, որ մենք պտուղ բերենք մա-
6 հին։ Բայց հիմա արձակուեցանք
օրէնքիցը մեռնելով նորան՝ որով
որ բռնուած էինք, որպէս զի հո-
գու նորոգութիւնովը ծառայենք՝
և ոչ թէ գրի հնութիւնովը։
7 Արդ ի՞նչ ասենք. օրէնքը մե՞ղք
է. քաւ լիցի. բայց ես մեղքը չէի
գիտենալ՝ եթէ ոչ օրէնքով. և
ցանկութիւնը չէի ճանաչել՝ եթէ
օրէնքը չէր ասել՝ Մի ցանկանար։
8 Մեղքը առիթ առնելով պատ-
ուիրանքովը, ինձանում ամեն
ցանկութիւն գործեց. որովհետև
առանց օրէնքի մեղքը մեռած է։
9 Եւ ես առանց օրէնքի մի ժա-
մանակ կենդանի էի. բայց երբոր
պատուիրանքը եկաւ, մեղքը կեն-
10 դանացաւ։ Իսկ ես մեռայ, և
այն պատուիրանքն՝ որ կեանքի
համար էր, ինձ մահի պատճառ
11 եղաւ։ Որովհետև մեղքը առիթ
առած պատուիրանքովը՝ խաբեց
ինձ և նորանով սպանեց։ Ու- 12
րեմն՝ օրէնքը սուրբ է՝ և պատ-
ուիրանքն էլ սուրբ և արդար և
բարի։
Ապա բարի՞ն ինձ մահ եղաւ. 13
քաւ լիցի. այլ մեղքը. որ մեղքն
երևի որ բարիովն ինձ մահ գոր-
ծեց. որ մեղքն աւելի ևս մեղա-
ւոր լինի պատուիրանքի ձեռովը։
Որովհետև գիտենք՝ որ օրէնքը 14
հոգևոր է. բայց ես եմ մարմնա-
ւոր՝ մեղքի տակ ծախուած։ Ո- 15
րովհետև ինչ որ գործում եմ
չ՚գիտեմ. որովհետև ոչ թէ ինչ
որ կամենում եմ՝ այն եմ գոր-
ծում. այլ ինչ որ ատում եմ,
այն եմ գործում։ Եւ եթէ ինչ 16
որ չեմ կամենում՝ այն եմ գոր-
ծում, օրէնքի համար վկայում
եմ՝ թէ բարի է։ Արդ ուրեմն ոչ 17
թէ ես եմ գործում այն, այլ
ինձանում բնակուած մեղքը։ Ո- 18
րովհետև գիտեմ որ ինձանում
(այսինքն իմ մարմնումը) մի բա-
րի բան չէ բնակվում. քանզի
կամենալն կայ իմ մօտը. բայց
բարին անելը չեմ գտնում։ Քան- 19
զի ոչ թէ բարին՝ որ կամենում
եմ, անում եմ. այլ չարը՝ որ
չեմ կամենում, այն եմ գոր-
ծում։ Ուրեմն եթէ այն որ չեմ 20
կամենում ես, այն եմ անում.
էլ ես չեմ անում այն, բայց
ինձանում բնակուած մեղքը։ Ու- 21
րեմն գտնում եմ այդ օրէնքը՝
որ երբ ես կամենում եմ բարին
անել, չարն իմ մօտը կայ։ Որով- 22
հետև ես հաւանում եմ Աստու-
ծոյ օրէնքին՝ ներսի մարդովը։
Բայց տեսնում եմ ուրիշ օրէնք 23
իմ անդամներումը՝ որ իմ մտքի
օրէնքի դէմ պատերազմում է,
և ինձ գերի է բռնում այն մեղ-
քի օրէնքովը՝ որ իմ անդամնե-
րումն է։ Ես ի՞նչ խեղճ մարդ 24
եմ. ո՞վ կ՚ապրեցնէ ինձ այս մա-
հի մարմնիցը։ Շնորհակալ եմ 25
Աստուածանից մեր Տէր Յիսուս
Քրիստոսի ձեռովը։ Արդ ուրեմն
ես ինքս մտքով ծառայում եմ
Աստուծոյ օրէնքին, իսկ մարմնով
մեղքի օրէնքին։

ԳԼ. Ը

1 Ուրեմն հիմա դատապարտու-
թիւն չ՚կայ Յիսուս Քրիստոսումը
լինողների համար, *որ մարմնա-
ւորապէս չեն վարվում, այլ հո-
2 գևորապէս։ Որովհետև կեանքի
հոգու օրէնքը Յիսուս Քրիստո-
սումն՝ ազատեց ինձ մեղքի և մա-
3 հի օրէնքիցը։ Որովհետև այն որ
անկարելի էր օրէնքին, որ տկար
էր մարմնի պատճառովը, Աստ-
ուած իր Որդին ուղարկելով
մեղքի մարմնի նմանութիւնովը և
մեղքի համար՝ մեղքին դատա-
4 պարտեց այն մարմնումը. Որ օ-
րէնքի արդարութիւնը կատարուի
մեզանում, որ մարմնաւորապէս
չենք վարվում՝ այլ հոգևորա-
5 պէս։ Որովհետև մարմնաւոր լի-
նողները մարմնի բաներն են մտա-
ծում. իսկ հոգևոր լինողները՝
6 հոգու բաները։ Որովհետև մարմնի
խորհուրդը մահ է. և հոգու
խորհուրդը՝ կեանք և խաղաղու-
7 թիւն։ Որովհետև մարմնի խոր-
հուրդը Աստուծոյ դէմ թշնա-
մութիւն է. որովհետև Աստու-
ծոյ օրէնքին չէ հնազանդում, և
8 կարող էլ չէ։ Եւ նորանք՝ որ
մարմնով են, չեն կարող Ա-
9 ստուծուն հաճոյ լինիլ։ Բայց
դուք մարմնով չէք՝ այլ հոգով,
եթէ Աստուծոյ Հոգին ձեզա-
նում բնակուած է. իսկ եթէ
մէկը Քրիստոսի Հոգին չ՚ունի՝ նա
10 նորանը չէ։ Եւ եթէ Քրիստոսը
ձեզանում է՝ ապա մարմինը մե-
ռած է մեղքի համար, և հոգին
կենդանի է արդարութեան հա-
11 մար։ Եւ եթէ Յիսուսին մեռել-
ներից յարուցանողի Հոգին ձե-
զանում բնակուած է, ապա
Քրիստոսին մեռելներից յարու-
ցանողը ձեր մահկանացու մար-
միններն էլ կ՚կենդանացնէ իր
Հոգովը, որ ձեզանում բնակ-
ուած է։
12 Ապա ուրեմն, եղբարք, պար-
տական ենք ոչ թէ մարմնին՝
13 մարմնի պէս ապրելու։ Որովհե-
տև եթէ մարմնաւորապէս ապ-
րէք՝ կ՚մեռնէք. բայց եթէ հո-
գով մարմնի գործերն սպանէք՝
կ՚ապրէք։ Որովհետև որոնք որ 14
Աստուծոյ Հոգովն են վարվում,
նորանք Աստուծոյ որդիք են։ Ո- 15
րովհետև դուք ծառայութեան
հոգին չ՚առաք որ դարձեալ վա-
խենաք. այլ որդեգրութեան հո-
գին առաք, որով աղաղակում
ենք՝ Աբբա, Հայր։ Նոյն ինքն Հո- 16
գին վկայութիւն է տալիս մեր
հոգուն հետ, որ մենք Աստուծոյ
որդիք ենք։ Եւ եթէ որդիք՝ ա- 17
պա ժառանգներ էլ, Աստուծոյ
ժառանգներ և Քրիստոսի ժա-
ռանգակիցներ. որ եթէ նորա
չարչարանքներին կցորդ ենք՝
փառքին էլ մասնակից լինինք։
Որովհետև այնպէս եմ դա- 18
տում որ այս ժամանակի չարչա-
րանքները արժանի չեն բազդատ-
ուելու այն գալու փառքին հետ,
որ մեզանում պիտի յայտնուի։
Որովհետև ստեղծուածների ե- 19
ռանդալից ակնկալութիւնը Ա-
ստուծոյ որդկանց յայտնութեանն
է սպասում։ Նորա համար որ 20
ստեղծուածները հնազանդեցին
ունայնութեան, ոչ թէ կամքով
այլ նորա համար՝ որ հնազան-
դեցրեց այն յոյսով, Որ՝ ստեղծ- 21
ուածներն իրանք էլ ապակա-
նութեան ծառայութիւնիցը կ՚ա-
զատուին՝ Աստուծոյ որդկանց
փառաւոր ազատութեան մէջ
մտնելով։ Որովհետև գիտենք որ 22
բոլոր ստեղծուածները մինչև հի-
մա միասին հառաչում են և
ցաւի մէջ են։ Եւ ոչ միայն նո- 23
րանք, այլ ինքներս էլ որ Հոգու
առաջին պտուղն ունինք, մենք
էլ մեր անձերումը հառաչում
ենք՝ որդեգրութեանն սպասելով
այսինքն մեր մարմնի ազատութեա-
նը։ Որովհետև յոյսով փրկուե- 24
ցանք. բայց յոյսը որ տեսնվում
է, յոյս չէ. վասնզի այն բանը,
որ մէկը տեսնում է՝ էլ ի՞նչպէս
կ՚յուսայ։ Բայց եթէ այն որ չենք 25
տեսնում, նորան յոյս ունինք,
ապա համբերութեամբ սպասում
ենք։ Այսպէս էլ Հոգին օգնում 26

*Ոմանք չ՚ունին։

է մեր տկարութիւններին, որով-
հետեւ թէ ինչ բանի համար պի-
տի աղօթք անենք՝ ինչպէս ար-
ժան է, չ'գիտենք. բայց ինքը
Հոգին անբարբառ հառաչանքով
27 բարեխօս է լինում, եւ սրտերը
քննողը գիտէ թէ ինչ է Հոգու
խորհուրդը. որովհետեւ Աստու-
ծուն ըստ կերպով սուրբերի
համար բարեխօսում է։
28 Բայց գիտենք, որ Աստուծուն
սիրողներին ամեն բաները գոր-
ծակից են լինում դէպի բարին
նորանց՝ որ նախասահմանելովը
29 կանչուած են։ Որովհետեւ նո-
րանց որ առաջուց ճանաչեց, ա-
ռաջուց էլ սահմանեց իր Որդու
պատկերին կերպարանակից լի-
նել. որ նա անդրանիկ լինի շատ
30 եղբայրների մէջ։ Եւ որոնց ա-
ռաջուց սահմանեց, նորանց կան-
չեց էլ. և որոնց կանչեց, նորանց
արդարացրեց էլ. և որոնց ար-
դարացրեց, նորանց փառաւոր էլ
31 արաւ։ Ապա ի՞նչ ասենք այս
բաների համար. եթէ Աստուած
մեր կողմն է՝ ո՞վ է մեզ հակա-
32 ռակ. Որ իր Որդին էլ չ'խնայեց,
այլ մեր ամենի համար մատնեց
նորան. էլ ի՞նչպէս նորան հետ
33 ամեն բան չի շնորհիլ մեզ։ Ո՞վ
է որ Աստուծոյ ընտրեալներին
դէմ մեղադիր լինի. Աստուած է
34 որ արդարացնում է։ Ո՞վ է որ
դատապարտէ. Քրիստոսը որ մե-
ռաւ և աւելի՝ որ յարութիւն
էլ առաւ և Աստուծոյ ազ կողմն
է, որ մեզ համար բարեխօս էլ է։
35 Ապա ո՞վ կ'զատանէ մեզ Քրիս-
տոսի սիրոյը. տառապանք, թէ
նեղութի՞ւն, թէ հալածանք, թէ
թէ սո՞վ, թէ մերկութի՞ւն,
36 թէ վտանգ, թէ սո՞ւր, ինչպէս
գրուած է, թէ քեզ համար
մեռցնելում ենք բոլոր օրը և մր-
թուելու ոչխարի պէս համար-
37 ուեցանք։ Բայց այս ամեն բաներ-
ում առաւել և յաղթում
ենք նորա միջոցով՝ որ մեզ սի-
38 րեց։ Որովհետեւ համոստ գի-
տեմ, որ ոչ մահ, ոչ կեանք, ոչ
հրեշտակները, ոչ իշխանութիւն-
ները, ոչ զօրութիւնները, ոչ
39 կայ բաներ, ոչ գալու բաներ, եւ
ոչ բարձրութիւն, ոչ խորու-
թիւն, և ոչ մէկ ուրիշ առեղծ-
ուած բան կարող է մեզ բաժա-
նել Աստուծոյ սէրիցը՝ որ մեր
Տէր Յիսուս Քրիստոսումն է։

Գլ. Թ

1 Ճշմարիտն եմ ասում Քրիստո-
սումը՝ ու սուտ չեմ ասում, իմ
խղճմտանքն էլ վկայում է ինձ
2 Սուրբ Հոգով։ Որ մեծ տրտմու-
թիւն է ինձ և անպակաս ցաւ
3 իմ սրտին. Որ կ'ինդրէի ես ինքս
նզովուած լինիլ Քրիստոսից իմ
եղբայրների և մարմնաւոր ազ-
4 գականների համար. Որոնք Իսրա-
յէլացի են. որոնցն է որդեգրու-
թիւնը, և փառքը և ուխտերը,
և օրինադրութիւնը և պաշտօնը
5 և խոստումները. Որոնց են հայ-
րերը՝ և որոնցից է Քրիստոսը
մարմնի կողմանէ, որ է ամենի
վերայ Աստուած, օրհնեալ յա-
6 ւիտեանս. ամէն։ Բայց ոչ իբր
թէ Աստուծոյ խօսքը դեռինն է
ընկել. որովհետեւ ոչ թէ ամենքը
որ Իսրայէլից են՝ նորանք են Իս-
7 րայէլը. Եւ ոչ թէ նորանք որով-
հետեւ Աբրահամի սերունդ են,
ամենքը որդիք են. այլ Իսահա-
կով քեզ համար սերունդ պիտի
8 կոչուի։ Այսինքն՝ ոչ թէ մարմնի
որդիքն են Աստուծոյ որդիք. այլ
խոստման որդիքն են սերունդ
9 համարվում։ Որովհետեւ խոստ-
ման խօսքը սա է. Թէ Այս ժա-
մանակումը կ'գամ և Սառային
10 որդի կ'լինի. Եւ ոչ միայն այսքան.
բայց Ռեբեկան էլ որ մեկից յղա-
ցաւ՝ մեր Հայր Իսահակիցը. Քան-
11 զի նորանք ասկաւին չ'ծնուած,
և մի բարի կամ չար բան էլ չը
գործած, որպէս զի ընտրութեան
պէս Աստուծոյ նախասահմանու-
թիւնը հաստատ մնայ։ Ոչ թէ
12 գործերիցն՝ այլ կանչողիցը, աս-
աւեցաւ նորան. Թէ մեծը պիտի
13 ծառայէ փոքրին. ինչպէս գրուած
է, Յակոբին սիրեցի, և Եսաւին
14 ատեցի։

Հիմա ի՞նչ ասենք. մի՞թէ Աս-
տուծոյ մօտ անիրաւութիւն կայ.
15 քաւ լիցի։ Որովհետեւ Մովսէսին
ասում է. Կ'ողորմիմ ում որ
կ'ողորմիմ, և կ'գթամ ում որ
16 կ'գթամ։ Ապա ուրեմն ոչ կա-
մեցողից է, և ոչ էլ վազողիցը,
այլ Աստուածանից որ ողորմում
17 է։ Որովհետեւ գիրքն ասում է
փարաւոնին, Թէ Հենց նորա հա-
մար գրդռեցի քեզ որ քեզանումս
ցոյց տամ իմ զօրութիւնը, և
18 իմ անունն ամեն երկրի մէջ
պատմուի։ Ապա ուրեմն ում որ
կամենում է ողորմում է. և ում
կամենում է խստացնում է։
19 Ապա ինձ կ'ասես, Էլ ի՞նչու է
մեղադրում. Նորա կամքին ո՞վ
20 հակառակ կ'կենայ։ Բայց դու
ո՞վ ես, մարդ, որ Աստուծուն
դէմ պատասխան ես տալիս. մի-
թէ առեղծուածը կ'ասէ իր Առեղ-
ծողին՝ Թէ ինչու այդպէս արիր
21 ինձ։ Մի՞թէ բրուտը իշխանու-
թիւն չ'ունի հողի վերայ, որ մի-
ևնոյն զանգուածիցը շինէ մէկը
պատիւի անօթ, և միւսը անար-
22 գութեան։ Եւ ի՞նչ եթէ Աստ-
ուած՝ կամենում էր ցոյց տալ
բարկութիւնը և յայտնել իր զօ-
րութիւնը, շատ երկայնմտու-
թեամբ համբերեց բարկութեան
անօթներին՝ որ կորուստի համար
23 պատրաստուած էին. Եւ որ
յայտնի ցոյց տայ իր փառքի մե-
ծութիւնը՝ ողորմութեան անօթ-
ների վերայ, որոնց առաջուց
24 պատրաստեց փառքի համար. Որ
մեզ էլ կանչեց, ոչ թէ միայն
Հրեաներից, այլ հեթանոսներից
25 էլ. Ինչպէս որ Ովսէէի գրքումն
էլ ասում է. Ամն որ իմ ժողո-
վուրդը չէ, ինձ ժողովուրդ կը
կանչեմ. և չ'սիրուածը սիրուած.
26 Եւ կ'լինի որ այնտեղ որ ասուե-
ցաւ նորանց՝ Թէ դուք իմ ժո-
ղովուրդ չէք, այնտեղ նորանք
կենդանի Աստուծոյ որդիք կ'կոչ-
27 ուին։ Եսայիան աղաղակում է
Իսրայէլի համար. Թէև Իսրայէլի
որդկանց համարը ծովի աւազին
պէս շատ լինի, փոքր մնացորդը
28 կ'փրկուի։ Որովհետեւ մի կարճ և
համառօտ բան կ'անէ Տէրը աս-
29 տուածոյ մօտ անիրաւութիւն կայ.
քաւ լիցի։ Որովհետեւ Մովսէսին
ասում է. Կ'ողորմիմ ում որ
կ'ողորմիմ, և կ'գթամ ում որ
16 կ'գթամ։ Ապա ուրեմն ոչ կա-
մեցողից է, և ոչ էլ վազողիցը,
այլ Աստուածանից որ ողորմում
17 է։ Որովհետեւ գիրքն ասում է
փարաւոնին, Թէ Հենց նորա հա-
մար գրդռեցի քեզ որ քեզանումս
ցոյց տամ իմ զօրութիւնը, և
18 իմ անունն ամեն երկրի մէջ
պատմուի։ Ապա ուրեմն ում որ
կամենում է ողորմում է. և ում
կամենում է խստացնում է։
19 Ապա ինձ կ'ասես, Էլ ի՞նչու է
մեղադրում. Նորա կամքին ո՞վ
20 հակառակ կ'կենայ։ Բայց դու
ո՞վ ես, մարդ, որ Աստուծուն
դէմ պատասխան ես տալիս. մի-
թէ առեղծուածը կ'ասէ իր Առեղ-
ծողին՝ Թէ ինչու այդպէս արիր
21 ինձ։ Մի՞թէ բրուտը իշխանու-
թիւն չ'ունի հողի վերայ, որ մի-
ևնոյն զանգուածիցը շինէ մէկը
պատիւի անօթ, և միւսը անար-
22 գութեան։ Եւ ի՞նչ եթէ Աստ-
ուած՝ կամենում էր ցոյց տալ
բարկութիւնը և յայտնել իր զօ-
րութիւնը, շատ երկայնմտու-
թեամբ համբերեց բարկութեան
անօթներին՝ որ կորուստի համար
23 պատրաստուած էին. Եւ որ
յայտնի ցոյց տայ իր փառքի մե-
ծութիւնը՝ ողորմութեան անօթ-
ների վերայ, որոնց առաջուց
24 պատրաստեց փառքի համար. Որ
մեզ էլ կանչեց, ոչ թէ միայն
Հրեաներից, այլ հեթանոսներից
25 էլ. Ինչպէս որ Ովսէէի գրքումն
էլ ասում է. Ամն որ իմ ժողո-
վուրդը չէ, ինձ ժողովուրդ կը
կանչեմ. և չ'սիրուածը սիրուած.
26 Եւ կ'լինի որ այնտեղ որ ասուե-
ցաւ նորանց՝ Թէ դուք իմ ժո-
ղովուրդ չէք, այնտեղ նորանք
կենդանի Աստուծոյ որդիք կ'կոչ-
27 ուին։ Եսայիան աղաղակում է
Իսրայէլի համար. Թէև Իսրայէլի
որդկանց համարը ծովի աւազին
պէս շատ լինի, փոքր մնացորդը
28 կ'փրկուի։ Որովհետեւ մի կարճ և
համառօտ բան կ'անէ Տէրը աս-
տուածոյ մօտ անիրաւութիւն կայ.

29 քաւ լիցի։ Որովհետեւ Մովսէսին
ասում է. Կ'ողորմիմ ում որ
կ'ողորմիմ, և կ'գթամ ում որ
16 կ'գթամ։ Ապա ուրեմն ոչ կա-
մեցողից է, և ոչ էլ վազողիցը,
այլ Աստուածանից որ ողորմում
17 է։ Որովհետեւ գիրքն ասում է
փարաւոնին, Թէ Հենց նորա հա-
մար գրդռեցի քեզ որ քեզանումս
ցոյց տամ իմ զօրութիւնը, և
18 իմ անունն ամեն երկրի մէջ
պատմուի։ Ապա ուրեմն ում որ
կամենում է ողորմում է. և ում
կամենում է խստացնում է։
19 Ապա ինձ կ'ասես, Էլ ի՞նչու է
մեղադրում. Նորա կամքին ո՞վ
20 հակառակ կ'կենայ։ Բայց դու
ո՞վ ես, մարդ, որ Աստուծուն
դէմ պատասխան ես տալիս. մի-
թէ առեղծուածը կ'ասէ իր Առեղ-
ծողին՝ Թէ ինչու այդպէս արիր
21 ինձ։ Մի՞թէ բրուտը իշխանու-
թիւն չ'ունի հողի վերայ, որ մի-
ևնոյն զանգուածիցը շինէ մէկը
պատիւի անօթ, և միւսը անար-
22 գութեան։ Եւ ի՞նչ եթէ Աստ-
ուած՝ կամենում էր ցոյց տալ
բարկութիւնը և յայտնել իր զօ-
րութիւնը, շատ երկայնմտու-
թեամբ համբերեց բարկութեան
անօթներին՝ որ կորուստի համար
23 պատրաստուած էին. Եւ որ
յայտնի ցոյց տայ իր փառքի մե-
ծութիւնը՝ ողորմութեան անօթ-
ների վերայ, որոնց առաջուց
24 պատրաստեց փառքի համար. Որ
մեզ էլ կանչեց, ոչ թէ միայն
Հրեաներից, այլ հեթանոսներից
25 էլ. Ինչպէս որ Ովսէէի գրքումն
էլ ասում է. Ամն որ իմ ժողո-
վուրդը չէ, ինձ ժողովուրդ կը
կանչեմ. և չ'սիրուածը սիրուած.
26 Եւ կ'լինի որ այնտեղ որ ասուե-
ցաւ նորանց՝ Թէ դուք իմ ժո-
ղովուրդ չէք, այնտեղ նորանք
կենդանի Աստուծոյ որդիք կ'կոչ-
27 ուին։ Եսայիան աղաղակում է
Իսրայէլի համար. Թէև Իսրայէլի
որդկանց համարը ծովի աւազին
պէս շատ լինի, փոքր մնացորդը
28 կ'փրկուի։ Որովհետեւ մի կարճ և
համառօտ բան կ'անէ Տէրը աս-
29 տուածոյ մօտ անիրաւութիւն կայ.
քաւ լիցի։ Որովհետեւ Մովսէսին
ասում է. Կ'ողորմիմ ում որ
կ'ողորմիմ, և կ'գթամ ում որ
16 կ'գթամ։ Ապա ուրեմն ոչ կա-
մեցողից է, և ոչ էլ վազողիցը,
այլ Աստուածանից որ ողորմում
17 է։ Որովհետեւ գիրքն ասում է
փարաւոնին, Թէ Հենց նորա հա-
մար գրդռեցի քեզ որ քեզանումս
ցոյց տամ իմ զօրութիւնը, և
18 իմ անունն ամեն երկրի մէջ
պատմուի։ Ապա ուրեմն ում որ
կամենում է ողորմում է. և ում
կամենում է խստացնում է։
19 Ապա ինձ կ'ասես, Էլ ի՞նչու է
մեղադրում. Նորա կամքին ո՞վ
20 հակառակ կ'կենայ։ Բայց դու
ո՞վ ես, մարդ, որ Աստուծուն
դէմ պատասխան ես տալիս. մի-
թէ առեղծուածը կ'ասէ իր Առեղ-
ծողին՝ Թէ ինչու այդպէս արիր
21 ինձ։ Մի՞թէ բրուտը իշխանու-
թիւն չ'ունի հողի վերայ, որ մի-
ևնոյն զանգուածիցը շինէ մէկը
պատիւի անօթ, և միւսը անար-
22 գութեան։ Եւ ի՞նչ եթէ Աստ-
ուած՝ կամենում էր ցոյց տալ
բարկութիւնը և յայտնել իր զօ-
րութիւնը, շատ երկայնմտու-
թեամբ համբերեց բարկութեան
անօթներին՝ որ կորուստի համար
23 պատրաստուած էին. Եւ որ
յայտնի ցոյց տայ իր փառքի մե-
ծութիւնը՝ ողորմութեան անօթ-
ների վերայ, որոնց առաջուց
24 պատրաստեց փառքի համար. Որ
մեզ էլ կանչեց, ոչ թէ միայն
Հրեաներից, այլ հեթանոսներից
25 էլ. Ինչպէս որ Ովսէէի գրքումն
էլ ասում է. Ամն որ իմ ժողո-
վուրդը չէ, ինձ ժողովուրդ կը
կանչեմ. և չ'սիրուածը սիրուած.
26 Եւ կ'լինի որ այնտեղ որ ասուե-
ցաւ նորանց՝ Թէ դուք իմ ժո-
ղովուրդ չէք, այնտեղ նորանք
կենդանի Աստուծոյ որդիք կ'կոչ-
27 ուին։ Եսայիան աղաղակում է
Իսրայէլի համար. Թէև Իսրայէլի
որդկանց համարը ծովի աւազին
պէս շատ լինի, փոքր մնացորդը
28 կ'փրկուի։ Որովհետեւ մի կարճ և
համառօտ բան կ'անէ Տէրը աս-
տուածոյ մօտ անիրաւութիւն կայ.

29 քաւ լիցի։ Որովհետեւ Մովսէսին
ասում է. Կ'ողորմիմ ում որ
կ'ողորմիմ, և կ'գթամ ում որ
16 կ'գթամ։ Ապա ուրեմն ոչ կա-
մեցողից է, և ոչ էլ վազողիցը,
այլ Աստուածանից որ ողորմում
17 է։ Որովհետեւ գիրքն ասում է
փարաւոնին, Թէ Հենց նորա հա-
մար գրդռեցի քեզ որ քեզանումս
ցոյց տամ իմ զօրութիւնը, և
18 իմ անունն ամեն երկրի մէջ
պատմուի։ Ապա ուրեմն ում որ
կամենում է ողորմում է. և ում
կամենում է խստացնում է։
19 Ապա ինձ կ'ասես, Էլ ի՞նչու է
մեղադրում. Նորա կամքին ո՞վ
20 հակառակ կ'կենայ։ Բայց դու
ո՞վ ես, մարդ, որ Աստուծուն
դէմ պատասխան ես տալիս. մի-
թէ առեղծուածը կ'ասէ իր Առեղ-
ծողին՝ Թէ ինչու այդպէս արիր
21 ինձ։ Մի՞թէ բրուտը իշխանու-
թիւն չ'ունի հողի վերայ, որ մի-
ևնոյն զանգուածիցը շինէ մէկը
պատիւի անօթ, և միւսը անար-
22 գութեան։ Եւ ի՞նչ եթէ Աստ-
ուած՝ կամենում էր ցոյց տալ
բարկութիւնը և յայտնել իր զօ-
րութիւնը, շատ երկայնմտու-
թեամբ համբերեց բարկութեան
անօթներին՝ որ կորուստի համար
23 պատրաստուած էին. Եւ որ
յայտնի ցոյց տայ իր փառքի մե-
ծութիւնը՝ ողորմութեան անօթ-
ների վերայ, որոնց առաջուց
24 պատրաստեց փառքի համար. Որ
մեզ էլ կանչեց, ոչ թէ միայն
Հրեաներից, այլ հեթանոսներից
25 էլ. Ինչպէս որ Ովսէէի գրքումն
էլ ասում է. Ամն որ իմ ժողո-
վուրդը չէ, ինձ ժողովուրդ կը
կանչեմ. և չ'սիրուածը սիրուած.
26 Եւ կ'լինի որ այնտեղ որ ասուե-
ցաւ նորանց՝ Թէ դուք իմ ժո-
ղովուրդ չէք, այնտեղ նորանք
կենդանի Աստուծոյ որդիք կ'կոչ-
27 ուին։ Եսայիան աղաղակում է
Իսրայէլի համար. Թէև Իսրայէլի
որդկանց համարը ծովի աւազին
պէս շատ լինի, փոքր մնացորդը
28 կ'փրկուի։ Որովհետեւ մի կարճ և
համառօտ բան կ'անէ Տէրը աս-
տուածոյ մօտ անիրաւութիւն կայ.

29 քաւ լիցի։ Որովհետեւ Մովսէսին
ասում է. Կ'ողորմիմ ում որ
կ'ողորմիմ, և կ'գթամ ում որ
16 կ'գթամ։ Ապա ուրեմն ոչ կա-
մեցողից է, և ոչ էլ վազողիցը,
այլ Աստուածանից որ ողորմում
17 է։ Որովհետեւ գիրքն ասում է
փարաւոնին, Թէ Հենց նորա հա-
մար գրդռեցի քեզ որ քեզանումս
ցոյց տամ իմ զօրութիւնը, և
18 իմ անունն ամեն երկրի մէջ
պատմուի։ Ապա ուրեմն ում որ
կամենում է ողորմում է. և ում
կամենում է խստացնում է։
19 Ապա ինձ կ'ասես, Էլ ի՞նչու է
մեղադրում. Նորա կամքին ո՞վ
20 հակառակ կ'կենայ։ Բայց դու
ո՞վ ես, մարդ, որ Աստուծուն
դէմ պատասխան ես տալիս. մի-
թէ առեղծուածը կ'ասէ իր Առեղ-
ծողին՝ Թէ ինչու այդպէս արիր
21 ինձ։ Մի՞թէ բրուտը իշխանու-
թիւն չ'ունի հողի վերայ, որ մի-
ևնոյն զանգուածիցը շինէ մէկը
պատիւի անօթ, և միւսը անար-
22 գութեան։ Եւ ի՞նչ եթէ Աստ-
ուած՝ կամենում էր ցոյց տալ
բարկութիւնը և յայտնել իր զօ-
րութիւնը, շատ երկայնմտու-
թեամբ համբերեց բարկութեան
անօթներին՝ որ կորուստի համար
23 պատրաստուած էին. Եւ որ
յայտնի ցոյց տայ իր փառքի մե-
ծութիւնը՝ ողորմութեան անօթ-
ների վերայ, որոնց առաջուց
24 պատրաստեց փառքի համար. Որ
մեզ էլ կանչեց, ոչ թէ միայն
Հրեաներից, այլ հեթանոսներից
25 էլ. Ինչպէս որ Ովսէէի գրքումն
էլ ասում է. Ամն որ իմ ժողո-
վուրդը չէ, ինձ ժողովուրդ կը
կանչեմ. և չ'սիրուածը սիրուած.
26 Եւ կ'լինի որ այնտեղ որ ասուե-
ցաւ նորանց՝ Թէ դուք իմ ժո-
ղովուրդ չէք, այնտեղ նորանք
կենդանի Աստուծոյ որդիք կ'կոչ-
27 ուին։ Եսայիան աղաղակում է
Իսրայէլի համար. Թէև Իսրայէլի
որդկանց համարը ծովի աւազին
պէս շատ լինի, փոքր մնացորդը
28 կ'փրկուի։ Որովհետեւ մի կարճ և
համառօտ բան կ'անէ Տէրը աս-

29 քաւ լիցի։ Որովհետեւ Մովսէսին
ասում է. Կ'ողորմիմ ում որ
կ'ողորմիմ, և կ'գթամ ում որ
16 կ'գթամ։ Ապա ուրեմն ոչ կա-
մեցողից է, և ոչ էլ վազողիցը,
այլ Աստուածանից որ ողորմում
17 է։ Որովհետեւ գիրքն ասում է
փարաւոնին, Թէ Հենց նորա հա-
մար գրդռեցի քեզ որ քեզանումս
ցոյց տամ իմ զօրութիւնը, և
18 իմ անունն ամեն երկրի մէջ
պատմուի։ Ապա ուրեմն ում որ
կամենում է ողորմում է. և ում
կամենում է խստացնում է։
19 Ապա ինձ կ'ասես, Էլ ի՞նչու է
մեղադրում. Նորա կամքին ո՞վ
20 հակառակ կ'կենայ։ Բայց դու
ո՞վ ես, մարդ, որ Աստուծուն
դէմ պատասխան ես տալիս. մի-
թէ առեղծուածը կ'ասէ իր Առեղ-
ծողին՝ Թէ ինչու այդպէս արիր
21 ինձ։ Մի՞թէ բրուտը իշխանու-
թիւն չ'ունի հողի վերայ, որ մի-
ևնոյն զանգուածիցը շինէ մէկը
պատիւի անօթ, և միւսը անար-
22 գութեան։ Եւ ի՞նչ եթէ Աստ-
ուած՝ կամենում էր ցոյց տալ
բարկութիւնը և յայտնել իր զօ-
րութիւնը, շատ երկայնմտու-
թեամբ համբերեց բարկութեան
անօթներին՝ որ կորուստի համար
23 պատրաստուած էին. Եւ որ
յայտնի ցոյց տայ իր փառքի մե-
ծութիւնը՝ ողորմութեան անօթ-
ների վերայ, որոնց առաջուց
24 պատրաստեց փառքի համար. Որ
մեզ էլ կանչեց, ոչ թէ միայն
Հրեաներից, այլ հեթանոսներից
25 էլ. Ինչպէս որ Ովսէէի գրքումն
էլ ասում է. Ամն որ իմ ժողո-
վուրդը չէ, ինձ ժողովուրդ կը
կանչեմ. և չ'սիրուածը սիրուած.
26 Եւ կ'լինի որ այնտեղ որ ասուե-
ցաւ նորանց՝ Թէ դուք իմ ժո-
ղովուրդ չէք, այնտեղ նորանք
կենդանի Աստուծոյ որդիք կ'կոչ-
27 ուին։ Եսայիան աղաղակում է
Իսրայէլի համար. Թէև Իսրայէլի
որդկանց համարը ծովի աւազին
պէս շատ լինի, փոքր մնացորդը
28 կ'փրկուի։ Որովհետեւ մի կարճ և
համառօտ բան կ'անէ Տէրը աս-

տուածոյ մօտ անիրաւութիւն կայ.

Մօտիկ է քեզ խօսքը, քո բե-
րանումն ու քո սրտումն է, այս-
ինքն հաւատքի խօսքն որ մենք
9 քարոզում ենք։ Որովհետև եթէ
բերանովդ Յիսուսին Տէր դաւա-
նես, և սրտումդ հաւատաս թէ
Աստուած յարութիւն տուաւ
նորան մեռելներից, կ'ապրես։
10 Քանզի սրտով հաւատում ենք
արդարանալու համար, և բերա-
նով դաւանում ենք փրկուելու
11 համար։ Որովհետև գիրքն ասում
է. Ամեն ով որ հաւատայ նորան՝
12 չի ամաչիլ։ Որովհետև խտրու-
թիւն չ'կայ Հրէայի և Յոյնի մէջ.
որովհետև նոյն Տէրը ամենի Տէրն
է, առատ ամենի համար՝ որ
13 կանչում են նորան։ Վասնզի ա-
մեն ով որ Տիրոջ անունը կանչէ
կ'ապրի։
14 Արդ ի՞նչպէս կանչեն, որին չը
հաւատացին. և ի՞նչպէս հաւա-
տան, որից չ'լսեցին. և ի՞նչպէս
15 լսեն առանց քարոզողի. Եւ ի՞նչ-
պէս քարոզեն, եթէ չ'ուղար-
կուին. ինչպէս գրուած է, Որպէ՞ս
գեղեցիկ են նորանց ոտները՝ որ
խաղաղութիւն են քարոզում և
բարի բաներ են աւետիք տալիս։
16 Բայց ոչ թէ ամենքը հնազանդ
եղան աւետարանին։ Որովհետև
Եսայիան ասում է. Տէր, ո՞վ հա-
17 ւատաց մեր լուրին։ Ուրեմն հա-
ւատքը լսելուցն է, և լսելը՝ Ա-
18 ստուծոյ խօսքիցը։ Բայց ես ասում
եմ. Մի՞թէ չ'լսեցին. մանաւանդ
որ նորանց ձայնը դուրս գնաց
բոլոր երկիրը. և նորանց խօսքը՝
19 մինչև աշխարհքի ծայրերը։ Բայց
ասում եմ. Մի՞թէ Իսրայէլը չը
գիտաց. առաջ Մովսէսն է ա-
սում. Ես ձեզ նախանձաւոր կը
շինեմ մի ոչինչ ժողովրդով, և
մի անմիտ ազգով կը կսկծացը-
20 նեմ ձեզ։ Բայց Եսայիան աւելի
համարձակում է և ասում. Ես
գտնուեցայ նորանցից որ ինձ չէին
որոնում. յայտնի եղայ նորանց
որ ինձ համար չէին հարցնում։
21 Բայց Իսրայէլին ասում է. Բոլոր
օրն իմ ձեռքերը մեկնեցի դէպի
մի անհնազանդ և հակառակող
ժողովուրդ։

ԳԼ. ԺԱ

Արդ ասում եմ, Մի՞թէ Աստ- 1
ուած դէն գցեց իր ժողովուրդը.
քաւ լիցի. որովհետև ես էլ Իս-
րայէլացի եմ՝ Աբրահամի սերուն-
դիցն, Բենիամինի ցեղիցը։ Աստ- 2
ուած դէն չ'գցեց իր ժողովուրդը
որին առաջուց ճանաչեց. կամ
թէ չ'գիտէ՞ք թէ գիրքն ինչ է
ասում Եղիայի համար [illegible]
[illegible]. ի՞նչպէս նա Իսրայէլի դէմ
գանգատում է Աստուծոյ առա-
ջին. Տէր, քո մարգարէներին կո- 3
տորեցին և քո սեղանները կոր-
ծանեցին. և միայն ես մնացի, և
իմ անձն որոնում են։ Բայց Աստ- 4
ուածային պատգամն ի՞նչ է ա-
սում նորան. Եօթը հազար մարդ
թողի ինձ համար, որ Բահաղին
ծունր չ'դրին։ Հէնց այսպէս էլ 5
այս ժամանակումը շնորհքի ընտ-
րութեան պէս մի մնացորդ եղաւ։
Բայց եթէ շնորհքով է՝ էլ գոր- 6
ծերից չէ. ապա թէ ոչ՝ շնորհքն
էլ շնորհք չի լինիլ. բայց եթէ
գործերից է, էլ շնորհք չէ. ապա
թէ ոչ՝ գործն էլ գործ չէ։ Ու- 7
րեմն ի՞նչ. այն որ Իսրայէլը որո-
նում էր՝ նորան չ'հասաւ, բայց
ընտրուածները հասան, և միւս-
ները կուրացան։ Ինչպէս գրուած 8
է. Աստուած տուաւ նորանց թըմ-
րութեան հոգի. աչքեր՝ որ չտես-
նեն, և ականջներ՝ որ չ'լսեն, մին- 9
չև այս օրուայ օրը։ Եւ Դաւիթն
ասում է. Նորանց սեղանը թող
որոգայթ լինի նորանց՝ և որս
և դայթակղութիւն՝ և հատու- 10
ցումն նորանց համար։ Թող նո-
րանց աչքերը խաւարուին՝ որ չը
տեսնեն. և նորանց թիկունքները
միշտ ծռեցրու։ Ուրեմն ասում 11
եմ. Մի՞թէ գլորուեցան՝ որ կոր-
ծանուին. քաւ լիցի. բայց նորանց
գլորուելովը հեթանոսների փըր-
կութիւնն եղաւ՝ որ նախանձի
գրգռէ նորանց։ Բայց եթէ նո- 12
րանց յանցանքը աշխարհքին մե-
ծութիւն է, և նորանց նուաս-
տութիւնը հեթանոսների մեծու-
թիւն, էլ ո՞րքան աւելի նորանց 13
լիութիւնը։ Բայց ձեզ հեթանոս-

ներիդ ասում եմ, Որովհետև
ես հեթանոսների առաքեալ եմ՝
իմ պաշտօնը փառաւոր կ'անեմ.
14 Որ գուցէ իմ մարմինը լինողներին
նախանձի գրգռեմ, և նորանցից
15 մի քանիսն ապրեցնեմ։ Քանզի
եթէ նորանց մերժումը աշխարհ-
քի հաշտութիւն է, ապա նո-
րանց ընդունելութի՞ւնն ինչ է,
եթէ ոչ՝ կենդանութիւն մեռել-
16 ներից։ Եւ եթէ երախայրին սուրբ
է՝ ապա զանգուածն էլ. և եթէ
արմատը սուրբ է՝ ապա ճիւղերն
17 էլ։ Բայց եթէ ճիւղերիցը ոմանք
կոտրուեցան, և դու որ վայրի
ձիթենի էիր՝ նորանցում պատ-
ուաստուեցար, և հաղորդ եղար
արմատին՝ և ձիթենու պարար-
18 տութեանը, Մի պարծենար այն
ճիւղերի դէմ. բայց եթէ պար-
ծենաս, դու չես արմատը վեր
բռնում, այլ արմատը՝ քեզ։
19 Արդ կ'ասես, Ճիւղերը կոտրուե-
ցան՝ որ ես պատուաստուիմ։
20 Լաւ. նորանք անհաւատութիւ-
նով կոտրուեցան, և դու հա-
ւատքով հաստատուեցար. մի
ամբարտաւանանար, այլ վախե-
21 ցիր։ Որովհետև եթէ Աստուած
բնական ճիւղերին չ'խնայեց, մի
22 գուցէ քեզ էլ չ'խնայէ։ Արդ
տես Աստուծոյ քաղցրութիւնը և
սաստկութիւնը. կործանուածներ-
ի վերայ սաստկութիւնը, և
քեզ վերայ քաղցրութիւնը, ե-
թէ այն քաղցրութիւնումը կե-
նաս. ապա թէ ոչ՝ դու էլ կը
23 կտրուիս։ Եւ նորանք էլ՝ եթէ
անհաւատութիւնումը չ'կենան՝
կ'պատուաստուին. որովհետև
Աստուած կարող է դարձեալ
24 պատուաստել նորանց։ Վասնզի
եթէ դու ի բնէ վայրի ձիթենու-
ցը կտրուեցար՝ և բնութեան
դէմ բարի ձիթենու վերայ պատ-
ուաստուեցար, էլ ո՞րքան աւելի
նորանք որ բնական են կ'պատ-
ուաստուին իրանց ձիթենու վե-
25 րայ։ Որովհետև չեմ կամենում,
եղբարք, որ չ'գիտենաք այս խոր-
հուրդը, որ ձեր անձերումը ի-
մաստուն չ'լինիք, որ մի մասով
Իսրայէլին կուրութիւն եղաւ,
մինչև որ հեթանոսների լրու-
թիւնը մտնէ։ Եւ այսպէս բոլոր 26
Իսրայէլը կ'ապրի. ինչպէս գրուած
է, թէ Սիօնիցը Փրկիչը կ'գայ՝ և
ամբարշտութիւնները դէն կ'գցէ
Յակոբիցը։ Եւ այս է իմ ուխտը 27
նորանց հետ, երբոր նորանց մեղ-
քերը վեր կ'առնեմ։ Աւետարա- 28
նի նկատմամբ նորանք թշնամի
են ձեր պատճառովը, ընտրու-
թեան նկատմամբ՝ սիրելի են հայ-
րերի համար։ Որովհետև Աստու- 29
ծոյ շնորհքը և կոչումը զզջալ
չ'ունի։ Վասնզի ինչպէս դուք էլ 30
մի ժամանակ չէիք հաւատում
Աստուծուն, և հիմա ողորմու-
թիւն գտաք նորանց անհաւա-
տութիւնովը, Այնպէս էլ նորանք 31
հիմա չ'հաւատացին ձեր ողոր-
մութիւնովը. որ նորանք էլ ո-
ղորմութիւն գտնեն։ Որովհետև 32
Աստուած ամենին անհաւատու-
թեան մէջ արգիլեց որ ամենին
ողորմի։
Ո՜վ Աստուծոյ մեծութեան և 33
իմաստութեան և գիտութեան
խորութիւնը. ինչպէ՞ս անքննելի
են նորա դատաստանները, և ան-
հասկանալի են նորա ճանապարհ-
ները։ Որովհետև ո՞վ գիտաց Տի- 34
րոջ միտքը, կամ ո՞վ եղաւ նո-
րա խորհրդակից։ Կամ ո՞վ նո- 35
րան առաջուց [illegible] տուաւ, որ
նորա հատուցումն առնէ նորա-
նից։ Որովհետև նորանից և նորա- 36
նով և դէպ ի նա է ամեն բան.
նորան փառք յաւիտեան. ամէն։

ԳԼ. ԺԲ

Արդ աղաչում եմ ձեզ, եղ- 1
բարք, Աստուծոյ ողորմութիւնո-
վը, որ ձեր մարմինները ներկայա-
ցնէք կենդանի, սուրբ և Աստու-
ծոյ ընդունելի պատարագ, որ է
ձեր բանաւոր պաշտօնը։ Եւ մի 2
կերպարանուիք այս աշխարհքի
կերպարանքովը. այլ նորոգուեցէք
ձեր մտքի նորոգութեամբը, որ
դուք քննէք թէ ի՞նչ է Աստու-
ծոյ կամքը՝ բարին, հաճելին և
կատարեալը։ Որովհետև Աստու- 3
ծոյ շնորհքովն՝ որ ինձ տրուած է՝

ասեմ եմ ձեր մէջ ամենին, քան չ'մտածել նորանից աւելի, քան
Թէ արժան է մտածել, այլ մտա-
ծել պարկեշտ կենալ ա՛ֆրխո՛
ինչպէս որ Աստուած ամեն մէկին
4 հաւատքի չափը բաժանեց։ Որով-
հետև ինչպէս մէկ մարմնի մէջ
շատ անդամներ ունինք, և այն
ամեն անդամները միևնոյն գործը
5 չ'ունին, Այնպէս էլ շատերս մէկ
մարմին ենք Քրիստոսասմբ, բայց
ամեն մէկը միմեանց անդամ ենք։
6 Մեր թէ զանազան պարգևներ
ունինք այն շնորհքի պէս որ մեզ
տրուած է. Թէ մարգարէութիւն
հաւատքի չափովը համեմատեսցուք.
7 Թէ *պաշտօն պաշտօնեայ լինինք.
Թէ մէկը սովորեցնող է՝ վարդա-
8 պետութեան մէջ լինի, Թէ մխի-
թարող է՝ մխիթարութեան մէջ.
բաշխողը՝ ղուարթութիւնով. վե-
րակացու գրուածը՝ ջանքով. ո-
9 ղորմողը՝ յօժարութիւնով. Սէրն
առանց կեղծաւորութեան. չարն
առեցէք, բարիին հետևեցէք։
10 Եղբայրսիրութիւնով իրար վե-
րայ գթած եղէք. պատիւ տալու
11 մէջ իրար առաջ անցէք։ Ջանքի
մէջ թոյլ չլինիք. հոգովը ջերմե-
ռանդ եղէք, Տիրոջը ծառայեցէք։
12 Յուսով ուրախացէք, նեղութեան
համբերեցէք, ազօթքում յարա-
13 տևեցէք։ Սրբերի պիտոյքներին
հաղորդ եղէք. հիւրասիրութեան
14 հետևեցէք։ Ձեզ հալածողներին
օրհնեցէք, օրհնեցէք և մի անի-
15 ծէք։ Ուրախացողների հետ ու-
րախացէք, և լացողների հետ լա-
16 ցէք։ Իրար վերայ միևնոյն խոր-
հուրդը ունեցէք. բարձր բաներըը
մի խորհիք. այլ խոնարհների հետ
խոնարհուեցէք. ձեր անձերումբ
17 իմաստուն մի լինիք։ Մէկին չարի
տեղ չար մի հատուցանէք. ա-
մեն մարդկանց առաջին բարի
18 խորհուրդ ունեցէք։ Եթէ կարելի
է՝ որքան ձեզանից է կախուած՝
ամեն մարդկանց հետ խաղաղու-
19 թիւն ունեցէք։ Ձեր անձերի հա-
մար վրէժխնդրութիւն մի անէք,
սիրելիներ. այլ բարկութեան տեղ

*կամ՝ ապաստանութիւն

տուէք. որովհետև գրուած է՝
Վրէժխնդրութիւնն իմն է. ես
հատուցումբ կ'տամ, ասում է
Տէրը։ Արդ եթէ քո թշնամին սո-
ված է, հաց տուր նորան. և եթէ
ծարաւ է, ջուր տուր նորան. ո-
րովհետև այս անելով կրակի կոյ-
ծեր կ'ժողովես նորա գլխի վերայ։
Մի յաղթուիր չարիցը, այլ բա-
րիովը յաղթիր չարին։

ԳԼ. ԺԴ

Ամեն անձը թող հնազանդ
բարձր իշխանութիւններին. որով-
հետև չ'կայ իշխանութիւն որ չէ
Աստուածանից. և ներկայ իշխա-
նութիւնները Աստուածանից են
կարգուած։ Ուրեմն իշխանու-
թեանը հակառակողը Աստուծոյ
հրամանին է հակառակում. և
հակառակողները իրանց անձերին
դատաստան կ'ընդունին։ Որով-
հետև իշխանները բարի գործերի
համար վախ պատճառ չեն, այլ
չար գործերի. կամենո՞ւմ ես որ
իշխանութիւնից չ'վախենաս, բա-
րին գործիր, և նորանից գովասանք
կ'ընդունիս։ Որովհետև պատաս-
ուր է նա Աստուծոյ քեզ հա-
մար դէպի բարին. սակայ եթէ չա-
րը գործես՝ վախեցիր. որովհետև
զուր տեղը սուրը չէ կրում. ո-
րովհետև նա պատասուր է Աս-
տուծոյ՝ վրէժխնդիր բարկութիւն
բերելը չարը գործողի համար։
Վանորոյ պէտք է հնազանդ լի-
նել՝ ոչ միայն բարկութեան հա-
մար, այլ խղճմտանքի համար էլ։
Սորա համար հարկ էլ էք վճա-
րում. որովհետև նորանք պատա-
սուրներ են Աստուծոյ որ իսկ
այս բանին հոգ են տանում։
Ուրեմն ամենին վճարեցէք եղած
պարտքը. ում որ հարկ պարտ է՝
հարկը, ում որ մաքս՝ մաքսը,
ում որ վախ՝ վախը, ում որ պա-
տիւ՝ պատիւը։

Ոչ ոյի ոչինչ պարտական չը
մնաք՝ բացի իրար սիրելուց. որով-
հետև ընկերին սիրողը օրէնքը
կատարել է։ Վասն զի այն Մի
շնորը, Մի սպանանիը, Մի գո-

ղանարը, Մի սուտ վկայիը, և
Մի ցանկանարը, և ուրիշ ինչ
պատուիրանք էլ որ կայ, այս
խօսքումն է բովանդակուած, Թո-
10 ընկերը սիրիր քո անձի պես։ Սէրն
իր ընկերին չար չի անիլ. ուրեմն
օրէնքի լրումը սէրն է։
11 Եւ այս ուշ՝ իմանալով ժա-
մանակը. որ ժամ է արդէն քնից
զարթնել. որովհետև հիմա մեզ
աւելի մօտ է փրկութիւնը՝ քան
Թէ այն ժամանակ՝ որ հաւատա-
12 ցինք։ Գիշերն անցաւ գնաց, և
ցերեկը մօտեցել է. ուրեմն դէն
դնենք խաւարի գործերը, և հագ-
13 նենք լոյսի զէնքերը։ Ինչպէս ցե-
րեկումբ պարկեշտութեամբ մանք
գանք. ոչ Թէ անառակութիւն-
ներով և արբեցութիւններով և
խառն անկողիններով և պղծու-
թիւններով, ոչ հակառակու-
14 թիւնով և ոչ նախանձով։ Բայց
Տէր Յիսուս Քրիստոսին հագեք.
և մարմնի համար խնամք մի տա-
նիք դէպի ցանկութիւն։

ԳԼ. ԺԴ

1 Բայց հաւատքի մէջ տկար լի-
նողին ընդունեցէք առանց կար-
2 ծիքների վերայ վիճելու։ Մէկը
հաւատում է՝ Թէ ամեն բան
կարող է ուտել. բայց տկարը
3 բանջար է ուտում։ Ուտողը չ'ա-
նարգէ չ'ուտողին. և չ'ուտողը
չ'դատէ ուտողին. որովհետև
4 Աստուած ընդունեց նորան. Դու
ո՞վ ես՝ որ ուրիշի ծառային դա-
տում ես. իր Տիրոջ համար է
կանգնում կամ ընկնում. բայց
կ'կանգնի, որովհետև Աստուած
կարող է կանգնեցնել նորան։
5 Մէկը օրն օրից աւելի է համա-
րում, իսկ միւսն ամեն օր մէկ է
համարում. ամեն մէկը Թող իր
6 միտքը հաստեցնէ։ Օրին մտիկ ա-
նողը, Տիրոջ համար է մտիկ ա-
նում. և օրին մտիկ չ'անողը, Տի-
րոջ համար չէ մտիկ անում. և
ուտողը Տիրոջ համար է ուտում,
որովհետև Աստուածանից գոհա-
նում է. և չ'ուտողը Տիրոջ հա-
մար չէ ուտում, և Աստուածա-
7 նից գոհանում է։ Որովհետև մե-
զանից ոչ ով ինքն իրան համար
չէ ապրում, և ոչ ով ինքն իրան
համար չէ մեռնում։ Որովհետև
8 եթէ ապրենք՝ Տիրոջ ենք ապ-
րում, և եթէ մեռնենք՝ Տիրոջ
ենք մեռնում. ուրեմն Թէ ապ-
րենք և Թէ մեռնենք՝ Տիրոջն ենք։
9 Վասնզի նոյն իսկ նորա համար
էլ Քրիստոսը մեռաւ և կենդա-
նացաւ՝ որ մեռելների և կենդա-
նիների վերայ տիրէ։ Բայց դու
10 ինչու համար ես դատում քո
եղբօրը, կամ ինչու ես քո եղ-
բօրն անարգում. որովհետև ա-
մենս Քրիստոսի առաջի առա-
ջին պիտի կանգնենք։ Որովհետև
11 գրուած է՝ Ես կենդանի եմ, ա-
սում է Տէրը. որ ամեն ծունկ
ինձ պիտի կրկնուի և ամեն լեզու
խոստովան լինի Աստուածուն։ Ու-
12 րեմն մեզանից ամեն մէկն իր ան-
ձի համար պիտի հաշիւ տայ Ա-
ստուածուն։ Այսուհետև այլևս ի-
13 րար չ'դատենք. այլ աւելի այս
դրէք ձեր մտքումբ, որ եղբօր
գլորում կամ գայթակղութիւն
չ'դնենք։ Գիտեմ և համոսատ ե-
14 մանում եմ Տէր Յիսուսումբ, որ
ոչ մի բան պիղծ չէ ինքն իրանով-
բացի ով որ մի բան պիղծ է հա-
մարում, նորա համար պիղծ է։
Բայց եթէ կերակուրի պատճա-
15 ռով քո եղբայրը տրտմում է,
դու այլ ևս նորա հետ սիրով չես
վարվում, քո կերակուրովը մի
կորցնիր նորան, որի համար Քրիս-
տոսը մեռաւ։ Արդ ձեր բարի բա-
16 նը չ'չարաբասուի։ Որովհետև Ա-
17 ստուծոյ արքայութիւնն ուտելիք
և խմելիք չէ. այլ արդարութիւն և
խաղաղութիւն և ուրախու-
թիւն Սուրբ Հոգովը։ Վասնզի
18 նա որ սորանցումբ Քրիստոսին
ծառայում է, Աստուածուն հա-
ճելի է, և մարդկանց գովելի։
19 Ապա ուրեմն խաղաղութեան և
միմեանց շինութեան բաներին ե-
տևից գնանք, Կերակուրի պատ-
20 ճառով մի քանդիր Աստուծոյ
գործը. ամեն բան մաքուր է.
բայց չար է այն մարդի համար՝
որ գայթակղութիւն տալով է

21 ուտում։ Լաւ է միս չ'ուտել և
գինի չ'խմել. և այն բանը չ'անել՝
որ նորանով քո եղբայրը գլոր-
վում է կամ գայթակղում է
22 կամ տկարանում է։ Դու հա-
ւա՞տք ունիս. քեզ համար ու-
նեցիր Աստուծոյ առաջին. երանի
նորան՝ որ իր անձը չ'դատապար-
տէ նորանով, որ ընդունում է։
23 Իսկ նա որ խղճմտանք է անում,
եթէ ուտէ դատապարտուած է,
որովհետև հաւատքից չէ. և ա-
մեն ինչ որ հաւատքից չէ, մեղք է։

ԳԼ. ԺԵ

1 Մենք որ զօրաւոր ենք՝ պէտք է
տկարների տկարութիւնը վեր
առնենք, և միայն մեր անձերին
2 հաճոյ չ'լինինք։ Ապա մեզանից
ամեն մէկը թող հաճոյ լինի ըն-
կերին դէպի բարին՝ շինութեան
3 համար։ Որովհետև Քրիստոսն էլ
ոչ թէ իր անձին հաճոյ եղաւ,
այլ ինչպէս գրուած է, Թէ Քեզ
նախատողների նախատինքներն
4 ինձ վերայ ընկան։ Նորա համար
ինչ որ գրուեցաւ՝ մեր սովորելու
համար գրուեցաւ, որ համբերու-
թեամբ և գրքերի մխիթարու-
5 թեամբը յոյսն ունենանք։ Եւ
համբերութեան և մխիթարու-
թեան Աստուածը տայ ձեզ մի-
ևնոյն բանը խորհել իրար հետ
Քրիստոս Յիսուսի կամքի համե-
6 մատ։ Որ միաբան մէկ բերանով
փառաւորէք Աստուծուն, և մեր
Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը։
7 Վասնորոյ իրար ընդունեցէք, ինչ-
պէս Քրիստոս էլ մեզ ընդունեց
8 Աստուծոյ փառքի համար։ Բայց
ասում եմ թէ Յիսուս Քրիստո-
սը թլփատութեան սպասաւոր
եղաւ Աստուծոյ ճշմարտութեան
համար, որ հայրերի խոստումնե-
9 րը հաստատէ։ Բայց հեթանոս-
ները ողորմութեան համար փա-
ռաւորում են Աստուծուն, ինչ-
պէս գրուած է Թէ Սորա համար
կ'գոհանամ քեզանից *հեթա-
նոսների մէջ, և քո անունին սաղ-
մոս կ'ասեմ։ Եւ դարձեալ ա-
սում է. Ուրախացէք, ով հե-
թանոսներ, նորա ժողովրդի հետ։
Եւ դարձեալ՝ Օրհնեցէք Տիրոջը,
ամեն հեթանոսներ, և գովեցէք
նորան, ամեն ժողովուրդներ։ Եւ
դարձեալ Եսայիան ասում է.
Յեսսէի արմատը կ'լինի, և նա որ
հեթանոսների համար իշխան կը
կանգնի, նորան յոյս կ'դնեն հե-
թանոսները։ Եւ յոյսի Աստուա-
ծը լեցնէ ձեզ ամեն ուրախու-
թիւնով և խաղաղութիւնով,
հաւատալու մէջ, որ յուսով ա-
ւելանաք Սուրբ Հոգու զօրու-
թիւնովը։
Եւ ես ինքս էլ, եղբարքս, ձեզ
համար հաստատ եմ, որ դուք
լիքն էք բարութիւնով, լեցուած
ամեն գիտութիւնով, որ կարող
էք իրար էլ խրատել։ Բայց հա-
մարձակեցի, եղբարք, փոքր ի շա-
տէ գրել ձեզ. իբր թէ ձեզ յի-
շեցնեմ Աստուածանից ինձ տըր-
ուած այն շնորհքի պատճառովը.
Որ ես Յիսուս Քրիստոսի սպասա-
ւորն եմ հեթանոսների մէջ. Ա-
ստուծոյ աւետարանը մատակա-
րարող, որ հեթանոսների պա-
տարագն ընդունելի լինի՝ Սուրբ
Հոգովը սրբուած։ Արդ պարծանք
ունիմ Քրիստոս Յիսուսին Ա-
ստուծոյ առաջին։ Որովհետև ես
չեմ համարձակիլ մի բան խօ-
սել՝ որը Քրիստոս չ'գործեց ին-
ձանով՝ հեթանոսները հնազան-
դեցնելու համար՝ խօսքով և
գործքով։ Նշանների և հրաշք-
ների զօրութիւնով, Աստուծոյ
Հոգիի զօրութիւնով. այնպէս որ
ես Երուսաղէմիցն սկսած պտոյտ
տալով մինչև Լիւրիկացիների
կողմերը Քրիստոսի աւետարա-
նովը լցրել եմ։ Այնպէս ջանք
արի աւետարանը քարոզելու, ոչ
թէ որտեղ որ Քրիստոսի անունն
անուանուած էր, որ մի գուցէ
ուրիշի հիման վերայ շինեմ. այլ
ինչպէս որ գրուած է. Թէ որոնց
չէ պատմուած նորա համար՝ կը
տեսնեն, և որոնք որ չեն լսել
միտք կ'անեն։ Սորա համար էլ
շատ անգամ արգիլուեցայ ձեզ

*Կամ՝ ազգերի

23 մօտ գալուց։ Բայց հիմա որ այս
կողմերումն այլ ևս տեղ չ'ու-
նիմ, և շատ տարուց հետէ խիստ
փափաք ունիմ ձեզ մօտ գալու,
24 Երբ որ անցկենամ Սպանիա, կը
գամ ձեզ մօտ. յոյս ունիմ որ
անցկենալու ժամանակս տեսնեմ
ձեզ. և ձեզանից ճանապարհ
գցուիմ այնտեղ, եթէ առաջ
25 մի քիչ ձեզանով լիանամ։ Բայց
հիմա Երուսաղէմ եմ գնում
սուրբերին ծառայութիւն անե-
26 լու։ Որովհետև Մակեդոնացիք և
Աքայեցիք հաճեցան մի հաղոր-
դութիւն անել աղքատ սրբերին
27 որ Երուսաղէմումն են. Հաճե-
ցան, նոյն իսկ պարտական էլ
են նորանց. որովհետև եթէ հե-
թանոսները նորանց հոգևոր բա-
րիքներին մասնակից եղան, պէտք
է՝ որ մարմնական բաներում էլ
28 ծառայեն նորանց։ Արդ այս որ
կատարեմ և նորանց պտուղն իր
տեղը հասցնեմ, կ'անցնեմ Սպա-
29 նիա ձեր միջովը։ Եւ գիտեմ որ
երբոր ձեզ մօտ գամ, Քրիստոսի
աւետարանի առատ օրհնութիւ-
նովը կ'գամ։
30 Եւ աղաչում եմ ձեզ, եղ-
բարք, մեր Տէր Յիսուս Քրիստոսի
ձեռովը և Հոգու սիրովը, որ ինձ
պատերազմակից լինիք՝ ինձ հա-
մար աղօթքներ անելով դէպի
31 Աստուած. Որ ազատուիմ այն
անհնազանդներիցը որ Հրէաստա-
նումն են. և իմ ծառայութիւնը
որ Երուսաղէմումն անելու եմ՝
32 սուրբերին ընդունելի լինի. Որ
ուրախութիւնով ձեզ մօտ գամ
Աստուծոյ կամքովը, և ձեզ հետ
33 հանգիստ առնեմ։ Եւ խաղաղու-
թեան Աստուածը ձեր ամենի
հետ լինի. ամէն։

ԳԼ. ԺԶ

1 Յանձնում եմ ձեզ մեր Փիբէ
քոյրը, որ սպասաւոր է Կենքրայի
2 եկեղեցու։ Որ նորան ընդունէք
Տէրով. ինչպէս սուրբերին ար-
ժան է. և հոգ տանիք նորան ինչ
բան որ ձեզանից պէտք ունե-
նայ, որովհետև ինքն էլ շատերին
խնամք է տարել, և իսկ ինձ էլ։
Բարև տուէք Պրիսկիղային և 3
Ակիւղասին՝ իմ գործընկերներին
Քրիստոս Յիսուսումը. Որ իմ անձի 4
տեղ իրանց վիզն առաջարկեցին,
որոնցից ոչ միայն ես եմ շնորհա-
կալ՝ այլ և հեթանոսների բոլոր
եկեղեցիները. Եւ նորանց տանը 5
լինող եկեղեցուն. բարև տուէք
Եպենետին՝ իմ սիրելուն որ Ա-
քայեայի անդրանիկն է ի Քրիս-
տոս։ Բարև տուէք Մարիամին՝ որ 6
շատ աշխատեց մեր վերայ։ Բարև 7
տուէք Անդրոնիկոսին և Յունիա-
յին՝ իմ ազգականներին, և գե-
րութեանս ընկերներին. որ ա-
ռաքեալների մէջ երևելի են՝ որ
ինձանից առաջ են եղել Քրիս-
տոսումը։ Բարև տուէք Ամպղիա- 8
սին իմ սիրելուն Տէրումը։ Բարև 9
տուէք Ուրբանոսին՝ մեր գոր-
ծակցին Քրիստոսումը, և Ստա-
քէսին իմ սիրելուն։ Բարև տուէք 10
Ապեղեսին՝ որ ընտիր է Քրիստո-
սումը։ Բարև տուէք նորանց՝ որ 11
Արիստոբուղոսի տանիցն են. բա-
րև տուէք Հերովդիոնին՝ իմ ազ-
գականին. բարև տուէք նորանց,
որ Նարկիսէի տանիցն են Տէրու-
մը։ Բարև տուէք Տրիփանոսին և 12
Տրիփոսին՝ որ աշխատաւորներ են
Տէրումը. բարև տուէք Պերսիդէ
սիրելուն՝ որ շատ աշխատեց Տէ-
րումը։ Բարև տուէք Ռուփոսին՝ 13
որ ընտիր է Տէրումը. և նորա և
իմ մօրը։ Բարև տուէք Ասիւնկ- 14
րիտոսին, Փղեգոնտին, Երմասին,
Պատրոբային, Երմեսին, և եղբայր-
ներին՝ որ նորանց հետ են։ Բարև 15
տուէք Փիղողոգին և Յուլիային
և Ներէոսին և նորա քրոջը և Ո-
ղիմպիային և բոլոր սուրբերին՝ որ
նորանց հետ են։ Բարև տուէք 16
իրար սուրբ համբոյրով. բարև
են տալիս ձեզ Քրիստոսի բոլոր
եկեղեցիները։
Աղաչում եմ ձեզ, եղբարք, 17
որ մտիկ տաք նորանց՝ որ հերձ-
ուածներ և գայթակղութիւն-
ներ են շինում այն վարդապե-
տութիւնիցը դուրս՝ որ դուք սո-
վորեցիք՝ և հեռու քաշուեցէք
նորանցից։ Որովհետև այդպիսի- 18

ները մեր Տէր Քրիստոսին չեն
ծառայում, այլ իրանց որովայ-
նին. և քաղցր խօսքերով և գո-
վութիւնով խաբում են անմեղ-
19 ների սրտերը։ Որովհետև ձեր
հնազանդութիւնն ամենի ա՛ի՛ն՛ի՛ը
հասաւ. և սորա համար ուրախ
եմ ձեզ համար. միայն ուզում
եմ՝ որ դուք իմաստուն լինիք
դէպի բարին՝ և միամիտ դէպի
չարը։
20 Եւ խաղաղութեան Աստուածը
խորտակէ սատանային ձեր ոտնե-
րի տակ շուտով. մեր Տէր Յիսուս
Քրիստոսի շնորհքը լինի ձեզ հետ.
ամէն։
21 Բարև են տալիս ձեզ Տիմո-
թէոսը իմ գործընկերը, և Ղու-
կիոսը և Յասոնը և Սոսիպատրոսը
22 իմ ազգականները։ Բարև եմ
տալիս ձեզ ես՝ Տերտիոս, որ այս
23 թուղթը գրեցի Տէրումը։ Բարև
է տալիս ձեզ Գայիոսը՝ իմ և բո-
լոր եկեղեցու հիւրընկալը. բարև
է տալիս ձեզ Երաստոսը՝ քաղա-
քիս *հոգատարը, և Կուարտոս
եղբայրը։ Մեր Տէր Յիսուս Քրիս- 24
տոսի շնորհքը լինի ձեր ամենի
հետ. ամէն։
Բայց նորան, որ կարող է ձեզ 25
հաստատ պահել իմ աւետա-
րանի և Յիսուս Քրիստոսի քա-
րոզութեան համեմատ, այն խոր-
հրդի յայտնութեանը համե-
մատ որ յաւիտենական ժամա-
նակներից լուռ պահուած էր,
Բայց հիմա մարգարէական գրքե- 26
րով յայտնուեցաւ՝ յաւիտենա-
կան Աստուծոյ հրամանին պէս,
և հաւատքին հնազանդելու հա-
մար բոլոր հեթանոսների մէջ ճա-
նաչուեցաւ. Մի միայն իմաստուն 27
Աստուծուն, Յիսուս Քրիստոսի
ձեռովը, նորան փառք յաւիտ-
եանս։ Ամէն։

ՊՕՂ ՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի կան-
չուած առաքեալ Աստուծոյ կամ-
2 քովը, և Սոսթենէս եղբայր. Աս-
տուծոյ եկեղեցուն, որ Կորնթո-
սումն է, Յիսուս Քրիստոսումը
սրբուածներիդ՝ կանչուած սուր-
բերիդ՝ այն ամենի հետ, որ մեր
Տէր Յիսուս Քրիստոսի անունը
կանչում են ամեն տեղ, իրանցը
3 և մերը։ Շնորհք լինի ձեզ հետ
և խաղաղութիւն Աստուած մեր
Հօրիցը՝ և Տէր Յիսուս Քրիստո-
սիցը։
Ամեն ժամանակ գոհանում եմ 4
իմ Աստուածանից ձեր մասին,
Աստուծոյ այն շնորհքի համար՝
որ տրուած է ձեզ Քրիստոս Յի- 5
սուսումը. Որ ամեն բանի մէջ
հարստացաք նորանով՝ ամեն խօս-
քով և ամեն գիտութիւնով։

*Կամ՝ դանձապետը

6 Ինչպէս Քրիստոսի վկայութիւնը
7 հաստատուեցաւ ձեր մէջ։ Որ
դուք չ՛պակասուիք ոչ մի շնորհ-
քով մեր Տէր Յիսուս Քրիստոսի
8 յայտնութեանը սպասելով. Որ
և կ՛հաստատէ ձեզ մինչև վերջը՝
անմեղադրելի մեր Տէր Յիսուս
9 Քրիստոսի օրումը։ Հաւատարիմ
է Աստուած՝ որի ձեռով կան-
չուեցաք դէպի նորա Որդու՝ մեր
Տէր Յիսուս Քրիստոսի հաղոր-
դութիւնը։
10 Աղաչում եմ ձեզ, եղբարք,
մեր Տէր Յիսուս Քրիստոսի անու-
նովը, որ ամենդ միևնոյն խօսքն
ունենաք, և երկպառակութիւն-
ներ չ՛լինին ձեր մէջ. այլ միև-
նոյն մտքի և միևնոյն կարծիքի
11 մէջ հաստատուած լինիք։ Որով-
հետև ձեր մասին ինձ լուր հա-
սաւ, եղբարք, Քղուէի ընտանի-
քիցը, թէ հակառակութիւններ
12 կան ձեզանում։ Եւ այս եմ ա-
սում՝ որ ձեզանից ամէն մէկն
ասում է. Ես Պօղոսեան եմ, և
Ես Ապողոսեան, և Ես Կեփաս-
13 եան, և՝ Ես Քրիստոսեան։ Բա-
ժանուա՞ծ է Քրիստոսը. մի՞թէ
Պօղոսը խաչուեցաւ ձեզ համար՝
կամ Պօղոսի՞ անունովը մկրտուե-
14 ցաք։ Գոհանում եմ Աստուա-
ծանից որ ես ձեզանից ոչ մէկին
չ՛մկրտեցի. բայց միայն Կրիսպո-
սին և Գայիոսին. որ մէկը չ՛ա-
15 սէ, թէ իմ անունովը մկրտեցի։
16 Եւ Ստեփանի տունն էլ մկրտե-
ցի. էլ չ՛գիտեմ, թէ մի ուրիշն
էլ մկրտեցի։
17 Որովհետև Քրիստոս չ՛ուղար-
կեց ինձ մկրտելու, այլ աւետա-
բանը քարոզելու. ոչ թէ խօսքի
իմաստութեամբ, որպէսզի ունայն
18 չ՛լինի Քրիստոսի խաչը։ Որովհետև
խաչի խօսքը կորածների համար
յիմարութիւն է, բայց մեզ փրր-
կուածներիս համար Աստուծոյ
19 զօրութիւն է։ Որովհետև գրուած
է. Իմաստունների իմաստութիւ-
նը կ՛կորցնեմ, և խելօքների խոր-
20 հուրդները կ՛անարգեմ։ Ո՞ւր է
իմաստուն, ո՞ւր է դպիր, ո՞ւր է
այս աշխարհքի քննող. չէ՞ որ
Աստուած այս աշխարհքի իմաս-
տութիւնը յիմարացրեց։ Ուրեմն՝ 21
որովհետև Աստուծոյ իմաստու-
թեան մէջ աշխարհքը իմաստու-
թիւնով չ՛ճանաչեց Աստուծուն,
Աստուած հաճեց որ քարոզու-
թեան յիմարութիւնովը ապրեցը-
նէ հաւատացեալներին։ Եւ որով- 22
հետև Հրէաները նշան են ուզում,
և Յոյներն իմաստութիւն են
խնդրում. Մենք էլ քարոզում 23
ենք խաչեալ Քրիստոսը, Հրէա-
ներին գայթակղութիւն և Յոյ-
ներին յիմարութիւն։ Բայց այն 24
կանչուած Հրէաներին և Յոյնե-
րին, Քրիստոսը ՔՐԻՍՏՈՍ ԻՆՔ Ա-
ստուծոյ զօրութիւն և Աստուծոյ
իմաստութիւն։ Վասնզի Աստու- 25
ծոյ յիմարն աւելի իմաստուն է
քան թէ մարդիկ և Աստուծոյ
տկարն աւելի զօրաւոր է քան
թէ մարդիկ։ Հէնց ձեր կոչումին 26
մտիկ արէք, եղբայրներ, որ ոչ
թէ շատ իմաստուններ մարմնի
կողմանէ, և ոչ թէ շատ զօրա-
ւորներ, և ոչ թէ շատ ազնուա-
կաններ. Այլ այս աշխարհքի յի- 27
մարներին Աստուած ընտրեց՝ որ
ամաչեցնէ իմաստուններին. և աշ-
խարհքիս տկարներին Աստուած
ընտրեց՝ որ ամաչեցնէ զօրաւոր-
ներին։ Եւ աշխարհքիս անտոհմ- 28
ներին և անարգուածներին Աստ-
ուած ընտրեց՝ և ոչինչներին, որ
մի բան լինողներին ոչնչացնէ։ Որ- 29
պէսզի ոչ մի մարմին չ՛պարծենայ
նորա առաջին։ Եւ դուք նորանից 30
էք Յիսուս Քրիստոսումը՝ որ Աստ-
ուածանից մեզ համար եղաւ ի-
մաստութիւն, և արդարութիւն
և սրբութիւն և փրկութիւն։
Որ ինչպէս գրուած է, Նա որ 31
պարծենում է՝ թող Տէրովը պար-
ծենայ։

ԳԼ. Բ.

Եւ ես էլ, եղբարք, որ ձեզ մօտ 1
եկայ, ոչ թէ խօսքի կամ իմաս-
տութեան գերազանցութիւնովն
եկայ Աստուծոյ վկայութիւնը
ձեզ պատմելու։ Որովհետև միտ- 2
քըս չէի դրած՝ մի ուրիշ բան
գիտենալ ձեր մէջ բայց միայն

Յիսուս Քրիստոսին՝ և այն էլ
3 խաչուածին։ Եւ ես տկարու-
թիւնով և վախով և շատ դո-
4 ղով եղայ ձեզ մօտ։ Եւ իմ
խօսքը և քարոզութիւնը ոչ թէ
մարդկային իմաստութեան պա-
տիր խօսքերովն եղաւ, այլ Հո-
գու և զօրութեան ապացուցու-
5 թեամբը. Որ ձեր հաւատքը
մարդկանց իմաստութիւնով չը
լինի՝ այլ Աստուծոյ զօրութիւ-
6 նովը։ Բայց իմաստութիւն ենք
խօսում կատարեալների հետ, և
ոչ թէ այս աշխարհքի իմաստու-
թիւնը, և ոչ էլ այս աշխարհքի
իշխաններինը՝ որ պիտի խափան-
7 ուին։ Այլ Աստուծոյ ծածուկ ի-
մաստութիւնն ենք խօսում խոր-
հրդով, որ Աստուած յաւիտե-
նից առաջ սահմանեց նորան մեր
8 փառքի համար։ Որն այս աշ-
խարհքի իշխաններիցն ոչ ով չը
ճանաչեց. քանզի եթէ ճանաչած
լինէին՝ փառքի Տիրոջը չէին խաչ
9 հանիլ. Այլ ինչպէս գրուած է.
Ինչ որ աչք չ'տեսաւ և ականջ
չ'լսեց և մարդի սիրտ չ'ընկաւ,
այն պատրաստեց Աստուած ի-
10 րան սիրողների համար։ Բայց
մեզ յայտնեց Աստուած իր Հո-
գովը. որովհետև Հոգին ամեն
բաները քննում է, և Աստուծոյ
11 խորքն էլ։ Որովհետև մարդկան-
ցից ո՞վ գիտէ մարդի բաները ե-
թէ ոչ մարդի հոգին, որ նորա-
նում է. այնպէս էլ Աստուծոյ
բաներն ոչ ով չ'գիտէ, եթէ ոչ
12 Աստուծոյ Հոգին։ Եւ մենք ոչ
թէ այս աշխարհքի հոգին ա-
ռանք, այլ այն Հոգին՝ որ Աստ-
ուածանից է. որ ճանաչենք այն
բաները որ Աստուածանից տրուե-
13 ցաւ մեզ։ Որն էլ խօսում ենք՝
ոչ թէ մարդկային իմաստու-
թեան սովորած խօսքերով, այլ
Սուրբ Հոգու սովորեցրածներովը՝
հոգևորներն հոգևորների հետ
14 համեմատելով։ Բայց շնչաւոր
մարդն Աստուծոյ Հոգու բաները
չէ ընդունում. որովհետև նո-
րանք յիմարութիւն են նորա
համար. և չէ կարող էլ գիտե-
նալ՝ որովհետև հոգևոր կերպով
են քննվում։ Բայց հոգևոր մար-
դը ամեն բան քննում է, և ինքը
ոչ ոքից չէ քննվում։ Որովհետև
ո՞վ գիտաց Տիրոջ միտքը, որ բան
սովորեցնէ նորան. բայց մենք
Քրիստոսի միտքն ունինք։

ԳԼ. Գ

Եւ ես, եղբարք, չ'կարողացայ
ձեզ հետ խօսել ինչպէս հոգևոր-
ների հետ, այլ ինչպէս մարմնա-
ւորների հետ, ինչպէս մանուկ-
ների հետ Քրիստոսումը. Կաթ
խմեցրի ձեզ, և ոչ թէ կերա-
կուր. որովհետև տակաւին չէիք
կարող, այլ հիմա էլ դեռ չէք
կարող։ Որովհետև տակաւին
մարմնաւոր էք. վասնզի տակաւին
նախանձ և կռիւ և բաժանում-
ներ կան ձեզանում. չէ՞ որ մարմ-
նաւոր էք և մարդկօրէն էք վար-
վում։ Որովհետև երբոր մէկն ա-
սէ, Ես Պօղոսեան եմ, և միւսը
Ես Ապողոսեան. չէ՞ որ մարմնա-
ւոր էք։ Արդ ո՞վ է Պօղոսը կամ
ո՞վ է Ապողոսը. միայն պաշտօն-
եաներ, որոնց ձեռովը հաւատա-
ցիք. և ամեն մէկին՝ ինչպէս Տէրը
տուաւ։ Ես տնկեցի, Ապողոսը
ջուր տուաւ, բայց Աստուած մե-
ծացրեց։ Ուրեմն ոչ տնկողն է մի
բան, ոչ էլ ջուր տուողը. բայց
աճեցնող Աստուածը։ Տնկողը և
ջուր տուողը մէկ են. բայց ամեն
մէկն իր վարձքը կ'առնէ իր աշ-
խատանքի չափովը։ Որովհետև
մենք Աստուծոյ գործակիցներ
ենք. դուք Աստուծոյ մշակու-
թիւնը՝ Աստուծոյ շինուածն էք։
Աստուծոյ շնորհքի չափովը՝ որ
ինձ տրուած է, իմաստուն ճար-
տարապետի պէս հիմք դրի. բայց
ուրիշը շինում է. միայն թէ ա-
մեն մէկը մտիկ տայ թէ ինչպէս
է շինում։ Որովհետև ոչ ով ու-
րիշ հիմք չէ կարող դնել՝ քան
թէ որ դրուած է, որ է Յիսուս
Քրիստոսը։ Եթէ մէկն այս հի-
ման վերայ շինէ ոսկի, արծաթ,
ազնիւ քարեր, փայտ, խոտ, ե-
ղէգն. Ամեն մէկի գործը պիտի
յայտնուի. որ օրը կ'երևեցնէ.

որովհետև կրակով պիտի յայտ-
նուի. և ամեն մէկի գործը թէ
14 ինչպէս է, կրակը կ'փորձէ։ Եթէ
մէկի գործը՝ որ շինեց՝ հաստատ
15 կենայ, վարձք կ'առնէ. Ե- եթէ
մէկի գործն այրուի՝ վնաս կ'քաշէ
բայց ինքը կ'ապրէ. այլ այնպէս՝
16 ինչպէս թէ կրակով։ Չ'գիտէ՞ք
որ դուք Աստուծոյ տաճար էք
և Աստուծոյ Հոգին բնակուած է
17 ձեզանում։ Եթէ մէկն Աստու-
ծոյ տաճարն ապականէ, նորան
էլ Աստուած կ'ապականէ. որով-
հետև Աստուծոյ տաճարը սուրբ
է՝ որ դուք էք։
18 Ոչ ով իր անձը չ'խաբէ. եթէ
ձեզանից մէկը կարծում է թէ
իմաստուն է այս աշխարհքումը,
թող նա յիմար լինի՝ որ իմաս-
19 տուն լինի։ Որովհետև այս աշ-
խարհքի իմաստութիւնը յիմա-
րութիւն է Աստուծոյ առաջին.
վասնզի գրուած է՝ Թէ իմաստուն-
ներին բռնում է իրանց խորագի-
20 տութեան մէջ։ Եւ դարձեալ Թէ
Տէրը ճանաչում է իմաստուններ-
ի մտածմունքները, որ ունայն
21 են։ Ուրեմն ոչ ով չ'պարծենայ
22 մարդկանցով. Որովհետև ամեն
բան ձերն է. Թէ Պօղոսը, Թէ
Ապողոսը, Թէ Կեփասը, Թէ աշ-
խարհքը, Թէ կեանքը, Թէ մահը,
Թէ ներկայ բաները, Թէ դալու
23 բաները, ամեն բան ձերն է։ Դուք
Քրիստոսինը և Քրիստոսը Աստու-
ծունը։

ԳԼ. Դ

1 Թող ամեն մարդ այսպէս հա-
մարէ մեզ՝ ինչպէս Քրիստոսի
պաշտօնեաներ և Աստուծոյ խոր-
2 հուրդների տնտեսներ։ Արդ տն-
տեսների մէջ այն է պահանջ-
վում որ մէկը հաւատարիմ գրտ-
3 նուի։ Բայց ինձ համար ոչինչ
բան է՝ որ ձեզանից դատուիմ,
կամ մարդկային *դատաստանից.
այլ ես իմ անձն էլ չեմ դա-
4 տում։ Որովհետև իմ անձի հա-
մար ես բան չ'գիտեմ. բայց սո-
բանով չեմ արդարանում. ո-
րովհետև ինձ դատողը Տէրն է։
Ուրեմն ժամանակից առաջ մի
դատէք. մինչև Տէրը գայ՝ որ խա-
ւարի ծածուկ բաները կ'բերէ էլ
լոյսի մէջ, և սրտերի խորհուրդ-
ները կ'յայտնէ, և այն ժամանակ
ամեն մէկին գովասանք կ'լինի
Աստուածանից։
Այս բանը, եղբարք, իմ անձի
և Ապողոսի վերայ օրինակ բերի
ձեզ համար. որ մեզանից սովո-
րէք գրուածիցն աւելի բան չը
խորհել. որ չ'լինի թէ մէկը մէկի
վերայ հպարտանայ ընկերի պատ-
ճառովը։ Որովհետև ո՞վ է քեզ
որոշում. ի՞նչ ունիս դու՝ որ չես
առել. և եթէ առել ես, ի՞նչու
ես պարծենում չ'առածի պէս։
Արդէն կշտացած էք. արդէն
հարստացաք, առանց մեզ թա-
գաւորեցիք և երանի թէ թա-
գաւորէիք, որ մենք էլ ձեզ հետ
թագաւորէինք։ Որովհետև ինձ
այսպէս է երևում՝ թէ Աստուած
մեզ առաքեալներիս շատ յետին
արաւ՝ մահապարտների պէս. ո-
րովհետև աշխարհքի տեսարան
եղանք, հրեշտակների էլ՝ մարդ-
կանց էլ։ Մենք յիմար ենք Քրիս-
տոսի համար, իսկ դուք՝ իմաս-
տուն Քրիստոսումը. մենք տկար՝
իսկ դուք զօրաւոր. դուք փառա-
ւորուած իսկ մենք անարգուած։
Մինչև այս օրուայ ժամը սովում
էլ ենք՝ ծարաւում էլ, մերկ էլ
գնում ենք և գլխներս զարկվում
էլ է և աստանդական ման ենք
գալիս։ Եւ աշխատում ենք մեր
ձեռքերովը գործելով. բամբա-
սում են մեզ, իսկ մենք օրհնում
ենք. հալածում են և մենք համ-
բերում ենք. Հայհոյում են,
մենք աղաչանք ենք անում. ինչ-
պէս աւելուք եղանք աշխարհքին՝
ամենի ջնջոց լինելով մինչև հիմա։
Ոչ թէ ձեզ ամաչեցնելով եմ
այս գրում. այլ ինչպէս իմ սի-
րելի որդիներին խրատում եմ։
Որովհետև թէ և տասը հազար
վարդապետներ ունենաք Քրիս-
տոսումը, բայց ոչ թէ շատ հայ-
րեր. վասնզի Քրիստոս Յիսուսում

*Յուսարէն՝ օրից։

ես ծնեցի ձեզ աւետարանովը։
46 Ուրեմն աղաչում եմ ձեզ՝ որ ինձ
47 նմանող լինիք։ Նորա համար Տի-
մոթէոսին ուղարկեցի ձեզ մօտ,
որ իմ սիրելի և հաւատարիմ որ-
դին է Տէրով. որ ձեզ յիշեցնէ
իմ ճանապարհները՝ որ Քրիստո-
սումն են, ինչպէս ամեն տեղ ա-
մեն եկեղեցիներումը սովորեցը-
48 նում եմ։ Մի քանիսը հպար-
տացել են իբր թէ ես չեմ գալ
49 ձեզ մօտ։ Բայց շուտով կ՚գամ
ձեզ մօտ, եթէ Տէրը կամենայ.
և կ՚հասկանամ ոչ թէ հպար-
տացածների խօսքերը, այլ զօ-
20 րութիւնը։ Որովհետև Աստուծոյ
արքայութիւնը ոչ թէ խօսքով
21 է՝ այլ զօրութիւնով։ Ի՞նչպէս էք
կամենում, գաւազանո՞վ գամ
ձեզ մօտ, թէ սիրով և հեզու-
թեան հոգով։

ԳԼ. Ե

1 Առ հասարակ լսվում է ձեր
մէջ պոռնկութիւն, և այնպիսի
պոռնկութիւն՝ որ հեթանոսների
մէջ էլ չ՚կայ, այնպէս որ մէկն
2 իր հօր կինն ունենայ։ Եւ դուք
հպարտացած էք՝ և աւելի սուգ
չէ՞ք մտնում՝ որ ձեր միջիցը վեր
առնուի նա, որ այն բանը գոր-
3 ծեց։ Որովհետև ես՝ թէ և մարմ-
նով բացակայ եմ բայց հոգով
ներկայ՝ արդէն վճռել եմ ներ-
կայ լինողի պէս՝ նորան, որ այն-
4 պիսի բան գործեց, Մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի անունովը՝ ձեր և
իմ հոգու մէկտեղ ժողովուելու
ժամանակ մեր Տէր Յիսուս Քրիս-
5 տոսի զօրութեան հետ, Այնպի-
սին մատնել սատանային՝ մար-
մինը կորչելու համար. որ հոգին
ապրի մեր Տէր Յիսուսի օրումը։
6 Ձեր պարծանքը լաւ չէ. չ՚գիտէ՞ք
որ մի փոքր խմորը բոլոր զան-
7 գուածը խմորեցնում է։ Դէն
գցեցէք հին խմորը, որ նոր զան-
գուած լինէք, ինչպէս որ անխմոր
էք. որովհետև մեր զատիկը մոր-
թուեցաւ մեզ համար՝ Քրիստո-
8 սը։ Ուստի տօն կատարենք ոչ
թէ հին խմորով, և ոչ էլ չարու-
թեան և անզգամութեան խմորո-
վը, այլ մաքրութեան և ճշմար-
տութեան չ՚խմորուածովը։ Գրե- 9
ցի ձեզ թղթումը՝ չ՚խառնուիլ
պոռնիկների հետ։ Եւ ոչ թէ ա- 10
մենևին այս աշխարհքի պոռնիկ-
ների հետ, կամ ագահների հետ,
կամ յափշտակողների հետ, կամ
կռապաշտների հետ, ապա թէ
ոչ՝ պէտք էր ձեզ որ հէնց աշ-
խարհքիցը դուրս գնայիք։ Բայց 11
հիմա գրեցի ձեզ՝ չ՚խառնուիլ,
որ եթէ մէկը, որ եղբայր է ան-
ուանուած, լինի պոռնիկ, կամ
ագահ, կամ կռապաշտ, կամ
նախատող, կամ արբեցող, կամ
յափշտակող, այնպիսիին հետ
հաց էլ չ՚ուտել։ Որովհետև ինձ 12
ի՞նչ պէտք է՝ որ դրսիններին էլ
դատեմ. չէ՞ որ դուք ներսիններ-
ին պիտի դատէք։ Իսկ դրսիններ- 13
ին Աստուած կ՚դատէ. բայց
դուք չարը ձեր միջիցը վեր ա-
ռէք։

ԳԼ. Զ

Ձեզանից մէկն՝ եթէ բան ունե- 1
նայ իր ընկերի հետ, համարձակ-
վո՞ւմ է անիրաւների առաջին
դատուիլ և ոչ թէ սուրբերի ա- 2
ռաջին։ Կամ թէ չ՚գիտէ՞ք որ
սուրբերն աշխարհքս կ՚դատեն. և
եթէ ձեզանով աշխարհքը դատ-
վում է, ապա չէք արժան անարգ 3
բաների դատաստան անելու։ Չը
գիտէ՞ք որ մենք հրեշտակներին
կ՚դատենք. էլ ո՞րքան աւելի երկ- 4
րաւոր բաները։ Եթէ երկրաւոր
բաների համար դատաստան ու-
նիք, եկեղեցու ցած մարդկանցը
ձեզ համար դատաւոր նստեցը- 5
րէք։ Ձեզ ամաչեցնելու համար
եմ ասում. այնքան մի իմաս-
տուն մարդ էլ չ՚կա՞յ ձեր միջու-
մը, որ կարող լինի իրաւունք ո- 6
րոշել իր եղբայրների մէջ։ Այլ
եղբայր եղբօր հետ դատաստան
է գնում, և այն էլ անհաւատ- 7
ների առաջին։ Եւ հէնց արդէն
բոլորովին պակասութիւն է ձեր
միջումը որ դատաստաններ ունիք
իրար հետ. ի՞նչու չէք աւելի

դուք զրկվում. և ի՞նչու չէք ա-
ւելի դուք անիրաւութիւն քա-
8 շում։ Բայց դուք էք զրկում և
անիրաւութիւն անում, և այն էլ
9 ձեր եղբայրներին։ Կամ թէ չ՚գի-
տէ՞ք որ անիրաւներն Աստուծոյ
արքայութիւնը չեն ժառանգիլ։
Մի խաբուիք. ոչ պոռնիկները,
ոչ կռապաշտները, ոչ շնացող-
10 ները, Ոչ իգացողները, ոչ արուա-
գէտները, ոչ գողերը, ոչ ագահ-
ները, ոչ արբեցողները, ոչ նա-
խատողները, և ոչ յափշտակող-
ները Աստուծոյ արքայութիւնը
11 չեն ժառանգիլ։ Եւ մի քանի-
ներդ այսպէսներ էիք, բայց
լուացուեցաք՝ բայց սրբուեցաք՝
բայց արդարացաք Տէր Յիսուսի
անունովը և մեր Աստուծոյ Հոգովը։
12 Ամեն բան օրինաւոր է ինձ,
բայց ամենն օգուտ չէ. ամեն
բան օրինաւոր է ինձ, բայց ես
չ՚պիտի մի բանի իշխանութեան
13 տակ լինիմ։ Կերակուրները փորի
համար, և փորը կերակուրների
համար. բայց Աստուած սորան
էլ նորանց էլ կ՚խափանէ. միայն
թէ մարմինը պոռնկութեան հա-
մար չէ, այլ Տիրոջ համար. և
14 Տէրը մարմնին համար։ Բայց Աստ-
ուած, որ մեր Տիրոջն էլ յարու-
թիւն տուաւ, ձեզ էլ կ՚յարու-
15 ցանէ իր զօրութեամբը։ Չ՚գի-
տէ՞ք՝ որ ձեր մարմինները Քրիս-
տոսի անդամներ են. ապա Քրիս-
տոսի անդամներն առնեմ պոռ-
նիկի անդա՞մ շինեմ. քաւ լիցի։
16 Կամ թէ չ՚գիտէ՞ք, որ նա՝ որ
պոռնիկին յարում է, մէկ մար-
մին է նորա հետ. որովհետև Եր-
կուսն, ասում է, մէկ մարմին
17 կ՚լինին։ Եւ նա՝ որ Տիրոջն է յա-
րում՝ մէկ հոգի է նորա հետ։
18 Փախէք պոռնկութիւնիցը. ամեն
մեղք որ մարդ գործէ, իր մարմնի-
ցը դուրս է. բայց պոռնկութիւն
անողն, իր մարմնի մէջ է մեղան-
19 չում։ Կամ թէ չ՚գիտէ՞ք, որ
ձեր մարմինները Սուրբ Հոգու
տաճար են՝ որ ձեզանում է, որ
նորան Աստուածանից ունիք. և
20 ձերինը չէք։ Որովհետև մեծ
դնով գնուեցաք. ուստի փառա-
ւորեցէք Աստուծուն ձեր մարմ-
նումը և ձեր հոգումն՝ որ Աս-
տուծունն են։

ԳԼ. Է

Բայց այն բաների համար՝ որ ինձ 1
գրեցիք, ասում եմ թէ Լաւ է մար-
դիս որ կնկայ չ՚մօտենայ։ Սակայն 2
պոռնկութեան պատճառով՝ թող
ամեն մարդ իր կինն ունենայ. և
ամեն մէկ կին թող իր մարդն
ունենայ։ Մարդը թող իր կնկայ 3
պարտքը վճարէ. և այնպէս էլ
կինն իր մարդին։ Կինն իր մարմնի 4
վերայ իշխանութիւն չ՚ունի, այլ
մարդը. այնպէս էլ մարդն իր
մարմնի վերայ իշխանութիւն չ՚ու-
նի, այլ կինը։ Իրար մի զրկէք. 5
բայց միայն իրար հետ միաբան-
ուելով մի քիչ ժամանակի հա-
մար, որ *ծոմապահութեան և
աղօթքի պարապուիք. և դարձ-
եալ մէկտեղ դարձէք, որ սա-
տանան չ՚փորձէ ձեզ՝ ձեր ան-
ժուժկալութեան պատճառովը.
Բայց այս թոյլ տալով եմ ա- 6
սում, և ոչ թէ հրամանով։ Ո- 7
րովհետև կամենում եմ՝ որ ա-
մեն մարդ ինձ պէս լինէր. բայց
ամեն մարդ իր յատուկ շնորհքն
ունի Աստուածանից. մէկն այս-
պէս և միւսն այնպէս։ Սակայն 8
ամուրիներին և որբևայրիներին
ասում եմ, թէ Լաւ է նորանց
համար՝ որ ինձ պէս մնան։ Ապա 9
եթէ ժուժկալութիւն չ՚ունին,
թող ամուսնանան. որովհետև
աւելի լաւ է ամուսնանալ, քան
թէ վառուիլ։ Բայց ամուսնա- 10
ցածներին պատուիրում եմ, ոչ
թէ ես՝ այլ Տէրը, որ կինը չ՚բա-
ժանուի իր մարդիցը։ Ապա եթէ 11
բաժանուի էլ, թող առանց ա-
մուսնանալու մնայ՝ կամ իր մար-
դին հետ հաշտուի. և որ մարդն
էլ կինը չ՚թողէ։ Բայց ուրիշնե- 12
րին ես եմ ասում, ոչ թէ Տէրը.
Եթէ մի եղբայր անհաւատ կին
ունի, և նա հաճի նորա հետ
բնակուել՝ թող նորան չ՚թողէ։

*Ոմանք չ՚ունին։

13 Եւ մի կին՝ որ անհաւատ մարդ
ունի, և նա հաճի նորա հետ
բնակուել՝ թող նորան չ՚թողէ։
14 Որովհետև անհաւատ մարդը
սրբուած է կնկանովը, և անհա-
ւատ կինը սրբուած է մարդովը.
ապա թէ ոչ՝ ձեր որդիքը պիղծ
կ՚լինէին. բայց հիմա սուրբ են։
15 Բայց եթէ անհաւատը բաժան-
վում է, թող բաժանուի. այս-
պիսի բաների մէջ մի եղբայր
կամ քոյր գերի եղած չէ. Աստ-
ուած մեզ կանչեց խաղաղու-
16 թեան մէջ։ Որովհետև ի՞նչ գի-
տես, կին, գուցէ քո մարդը
կ՚ապրեցնես. կամ ի՞նչ գիտես,
մարդ, գուցէ քո կինը կ՚ապրե-
17 ցնես. Միայն թէ ամեն մէկին
ինչպէս Տէրը բաժին է տուել.
ամեն մէկն ինչպէս Աստուած
կանչեց նորան, այնպէս գնայ. և
ես այնպէս եմ ամեն եկեղեցի-
ներումը պատուէր տալիս։
18 Մէկը թլփատուա՞ծ կանչուե-
ցաւ, թող անթլփատ չ՚ձևանայ.
մէկը անթլփատութիւնո՞ւմ կան-
չուեցաւ՝ թող չ՚թլփատուի.
19 Թլփատութիւնն ոչինչ է, և ան-
թլփատութիւնն ոչինչ. այլ Ա-
ստուծոյ պատուիրանքների պա-
20 հելը։ Ամեն մէկն՝ որ կոչումի մէջ
որ կանչուեցաւ, նորանում կե-
21 նայ։ Ծառա՞յ կանչուեցար, հոգս
մի անիր. բայց եթէ կարենաս
ազատ էլ լինել՝ աւելի նա գոր-
22 ծածիր։ Որովհետև Տէրով կան-
չուած ծառան՝ Տիրոջ ազատն է.
այնպէս էլ ազատ կանչուածը
23 Քրիստոսի ծառայ է։ Մէ՞ծ գնով
գնուեցաք՝ մարդկանց ծառայ մի
24 լինիք։ Ամեն մէկն ինչ կոչումի
մէջ որ կանչուեցաւ, եղբարք,
թող նորանում մնայ Աստուծոյ
առաջին։
25 Բայց կոյսերի համար հրաման
չ՚ունիմ Տէրիցը. միայն խրատ եմ
տալիս ինչպէս Տէրիցը ողորմու-
թիւն գտած՝ հաւատարիմ լինե-
26 լու համար։ Արդ ես համարում
եմ թէ այսպէս լաւ է ներկայ
նեղութեան պատճառով, որ լաւ
27 է մարդին՝ այնպէս լինել։ Կնկայ
հետ կապուա՞ծ ես՝ մի աշխատիր
արձակուելու. կնկանից արձակ-
ուա՞ծ ես՝ կին մի որոնիր։ Բայց 28
եթէ ամուսնանաս, չ՚մեղանչեցիր.
և եթէ մի կոյս ամուսնանայ, չը
մեղանչեց. միայն թէ այնպիսի-
ները մարմնի նեղութիւն կ՚ունե-
նան. իսկ ես խնայում եմ ձեզ։
Բայց սա եմ ասում, եղբարք, 29
թէ ժամանակս կարճ է այսու-
հետև, որ կին ունեցողներն էլ
չ՚ունեցողների պէս լինէին. Եւ 30
լաց լինողներն չ՚լացողների պէս.
և ուրախացողները չ՚ուրախացող-
ների, և ծախու առնողները չ՚ու-
նեցողների պէս. Եւ այս աշխարհ- 31
քը գործածողները չար կերպով
չ՚գործածողների պէս. որովհետև
այս աշխարհի կերպարանքն անց-
նում է։ Բայց կամենում եմ որ 32
դուք առանց հոգսի լինիք. չ՚ա-
մուսնացողը Տիրոջ բաների հա-
մար է հոգս անում, թէ ինչպէս
հաճոյ լինի Տիրոջը։ Բայց ամուս- 33
նացածը աշխարհի բաների հա-
մար է հոգս անում, թէ ինչպէս
հաճոյ լինի կնկանը։ Եւ իրարից 34
տարբեր են կինը և կոյսը. չ՚ա-
մուսնացած կոյսը Տիրոջ բաների
համար է հոգս անում՝ որ սուրբ
լինի մարմնով և հոգով, իսկ ա-
մուսնացած կինը աշխարհքի բա-
ների համար է հոգս անում, թէ
ինչպէս հաճոյ լինի մարդին։ Մի- 35
այն թէ՝ սա ես ձեր շահի հա-
մար եմ ասում. և ոչ թէ որ ձեզ
համար *որոգայթ գցեմ. այլ
պարկեշտութեան համար՝ և ա-
ռանց արգելքի Տիրոջը ծառայե-
լու համար։ Բայց եթէ մէկն ա- 36
մօթ համարէ իր կոյսի համար՝
թէ չափահասութիւնից անցել
է, և այնպէս պէտք է լինել,
ինչ որ կամենում է թող անէ.
չէ մեղանչում. թող ամուսնա-
նան։ Բայց նա՝ որ իր սրտի մէջ 37
հաստատ է՝ և պէտք էլ չ՚ունի,
նա իր կամքի վերայ իշխանու-
թիւն ունի, և նա վճռեց իր
սրտումն՝ որ իր կոյսը պահէ, նա
լաւ է անում։ Նոյնպէս և նա՝ 38
որ իր կոյսը մարդի է տալիս,

*Յուն. խեղդելու չուան

լաւ է անում, և նա՝ որ մարդի
չէ տալիս, աւելի լաւ է անում։
39 Կինը կապուած է օրէնքով քանի
ժամանակ որ նորա մարդը կեն-
դանի է. բայց եթէ նորա մարդը
ննջէ, ազատ է ում հետ որ կա-
մենայ ամուսնանալու, միայն թէ
40 Տէրով։ Բայց էլ աւելի երանելի
է թէ որ այնպէս կենայ՝ իմ
խրատի պէս. այսպէս եմ համա-
րում, թէ ես էլ ունիմ Աստու-
ծոյ Հոգին։

ԳԼ. Ը

1 Բայց կուռքի զոհերի համար
գիտենք, որովհետև ամենքս գի-
տութիւն ունինք. գիտութիւնը
հպարտացնում է, բայց սէրը շի-
2 նում է։ Եթէ մէկը կարծում է
թէ բան գիտէ, նա դեռ բան
չ՚գիտաց՝ ինչպէս պէտք է գիտել։
3 Բայց եթէ մէկը Աստուծուն սի-
րէ, նա ճանաչուած է նորանից։
4 Արդ կուռքի զոհուած կերա-
կուրների համար գիտենք, որ
կուռքը ոչինչ է աշխարհքում. և
որ ուրիշ ոչ մի Աստուած չ՚կայ
5 բացի այն մէկը։ Որովհետև թէ-
պէտև կան որ աստուածներ են
անուանվում՝ թէ երկնքումը թէ
երկրիս վերայ, ինչպէս որ շատ
աստուածներ կան և շատ տէրեր,
6 Բայց մեզ համար մէկ Աստուած
կայ՝ Հայրը, որիցն են ամեն բա-
ները, և մենք նորա համար. և
մէկ Տէր Յիսուս Քրիստոս որով
են ամեն բաները, և մենք նորա-
7 նով։ Սակայն ամենը այս գիտու-
թիւնը չ՚ունին. որովհետև ոմանք
կուռքի մասին խղճմտանքով
են ուտում մինչև հիմա իբրև
կուռքերին զոհուած, և նո-
րանց խղճմտանքը տկար լինելով՝
8 պղծվում է։ Բայց կերակուրը
մեզ չի կանգնեցնիլ Աստուծոյ
առաջին. որ եթէ ուտենք՝ մի
բանով չենք աւելանալ, և եթէ
չ՚ուտենք՝ մի բանով չենք պա-
9 կասիլ։ Միայն թէ զգոյշ կա-
ցէք՝ որ այդ ձեր իշխանութիւնը
գայթակղութիւն չ՚լինի տկար-
10 ներին։ Որովհետև եթէ մէկը
տեսնէ քեզ՝ որ գիտութիւն ու-
նիս՝ կուռքի տան մէջ սեղան
նստած, չէ՞ որ նորա խղճմտան-
քը, որ տկար է, համարձակու-
թիւն կ՚ստանայ զոհուած բանն
ուտելու։ Եւ այն տկար եղբայրը 11
կ՚կորչի քո գիտութեան պատ-
ճառովը, որի համար Քրիստոսը
մեռաւ։ Եւ այսպէս եղբայրների 12
դէմ մեղանչելով. և այն տկարնե-
րի խղճմտանքը զարկելով Քրիս-
տոսի դէմ մեղք էք գործում։
Վասն որոյ՝ եթէ կերակուրն իմ 13
եղբօրը գայթակղեցնում է, ես
յաւիտեան միս չեմ ուտիլ, որ
իմ եղբօրը չ՚գայթակղեցնեմ։

ԳԼ. Թ

Չէ՞ որ առաքեալ եմ, չէ՞ որ 1
ազատ եմ, չէ՞ որ մեր Տէր Յի-
սուս Քրիստոսին տեսայ, չէ՞ որ
դուք իմ գործն էք Տէրով։ Թէև 2
ուրիշներին առաքեալ չ՚լինեմ,
բայց հէնց ձեզ առաքեալ եմ որ
իմ առաքելութեան կնիքը դուք
էք Տէրով։ Իմ պատասխանը ինձ 3
քննողների դէմ սա է. Մի՞թէ 4
մենք իշխանութիւն չ՚ունինք ու-
տելու և խմելու։ Մի՞թէ իշխա- 5
նութիւն չ՚ունինք քոյր կին ման
ածելու մեզ հետ, ինչպէս ուրիշ
առաքեալները և Տիրոջ եղբար-
քը, և Կեփասը։ Կամ մի՞թէ միայն 6
ես և Բառնաբասը իշխանութիւն
չ՚ունինք չ՚գործելու։ Ո՞վ է որ 7
երբէք իր պաշարովն զինուորու-
թիւն անէ. ո՞վ է որ այգի տնկէ՝
և նորա պտղիցը չ՚ուտէ. ո՞վ է
որ հօտ արածեցնէ՝ և հօտի կաթ-
նիցը չ՚ուտէ։ Մի՞թէ ես այս բա- 8
ները մարդի կերպով եմ ասում,
կամ չէ՞ որ օրէնքն էլ է ասում
այս բաները։ Որովհետև Մովսէսի 9
օրէնքումը գրուած է՝ Կալի մէջ
աշխատող եզան դունչը մի կա-
պիր. մի՞թէ Աստուած եզների
համար էր հոգս անում։ Կամ 10
չէ՞ որ մանաւանդ մեզ համար է
ասում. որովհետև մեզ համար
գրուեցաւ, որ հերկողը պէտք է
յոյսով հերկէ. և կասողն իր
յոյսը վայելելու յոյսովը կասէ։

11 Եթէ մենք ձեզանում հոգևոր-
ները սերմեցինք, մեծ բա՞ն է որ
ձեզանից մարմնաւորները հնձենք,
12 եթէ ուրիշները ձեզ վերայ այդ
իշխանութիւնը վայելում են, ո՞չ
առաւել ևս մենք. բայց մենք
այս իշխանութիւնը չ'բանեցրինք.
այլ ամեն բանի համբերում ենք,
որ արգելք չ'դնենք Քրիստոսի ա-
13 ւետարանին։ Չ'գիտե՞ք թէ նո-
րանք՝ որ սրճարում գործում
են, սրճարիցն են ուտում. և
նորանք՝ որ սեղանի պաշտօնեա-
ներ են, սեղանից են բաժին առ-
14 նում։ Այնպես էլ Տէրը հրաման
տուաւ աւետարանը քարոզողնե-
15 րին աւետարանից ապրել։ Բայց
ես սորանցից ոչ մէկն էլ չ'բա-
նեցրի. և այս բանները չ'գրեցի որ՝
ինձ այդպես լինի. որովհետև ա-
ւելի լաւ է ինձ մեռնել, քան
թէ մէկն իմ պարծանքը ունայ-
16 նացնէ։ Որովհետև եթէ աւետա-
րանը քարոզեմ, դա ինձ պար-
ծանք չէ. որովհետև դա հարկ է
դրուած ինձ վերայ. և վայ է
ինձ, եթէ աւետարանը չ'քարո-
17 զեմ։ վ անող եթէ յօժար կամ-
քով անեմ այս, վարձք ունիմ.
իսկ եթէ ակամայ՝ անտեսու-
18 թիւնը յանձնուած է ինձ։ Ապա
ինչ է իմ վարձքը. այն որ՝ աւե-
տարանելիս ձրի տամ Քրիստոսի
աւետարանը, որ աւետարանի մէջ
իմ իշխանութիւնը գէշ կերպով
19 չ'բանեցնեմ։ Որովհետև ամենից
ազատ լինելով, իմ անձը ամեն-
քին ծառայ արի, որ շատերին
20 շահեմ։ Հրէաներին Հրէայի պէս
եղայ, որ Հրէաներին շահեմ,
21 Օրէնքի տակ լինողներին օրէնքի
տակ լինողի պէս եղայ, *որ օրէն-
քի տակ լինողներին շահեմ. օ-
րէնքը չ'ունեցողներին օրէնք չ'ու-
նեցողի պէս եղայ. (իբր չէ թէ
նեցողի պէս եղայ. (իբր չէ թէ
ես Աստուծոյ առաջին օրէնքը
չ'ունեմ, այլ Քրիստոսի օրէնքի
տակ եմ) որ օրէնք չ'ունեցողներին
22 շահեմ։ Տկարներին տկարի պէս
եղայ, որ տկարներին շահեմ.
ամենին ամեն բան եղայ, որ ինչ
և իցէ մի քանիսին ապրեցնեմ։
23 Ա.յս անում եմ աւետարանի հա-
մար, որ նորան կցորդ լինիմ։
24 Չ'գիտե՞ք, թէ մարաթոնի մէջ
վազողներն՝ ամենքն են վազում.
բայց մէկն է յաղթանակն առ-
նում. դուք այնպես վազեցէք որ
հասնէք։ Եւ ամեն ով որ մրցում
25 է ամեն բանից ժուժկալ է լի-
նում. հիմա նորանք դրո՛ւ են որ
մի ապականելի պսակ առնեն, իսկ
մենք՝ անապականելի։ Ուրեմն ես
26 այնպես եմ վազում, ոչ թէ ինչ-
պէս անստոյգ. այնպես եմ մըր-
նում ոչ թէ ինչպէս օդին զար-
27 կելով։ Այլ իմ մարմինը ծեծում
եմ և նուաճում, որ մի գուցէ
ուրիշներին քարոզելով, ինքս ան-
պիտան գտնուիմ։

Գլ. Ժ

1 Ձեմ կամենում, եղբայրք, որ
չ'գիտենաք՝ թէ մեր հայրերն ա-
մենն էլ ամպի տակն էին. և
2 ամենը ծովի միջովն անցան։
3 ամենը Մովսէսով մկրտուեցան
ամպումն և ծովումն։ Եւ ամենն
4 էլ նոյն հոգևոր կերակուրը կե-
րան։ Եւ ամենն էլ նոյն հոգևոր
խմելիքը խմեցին. որովհետև այն
հոգևոր վէմից էին խմում՝ որ
5 գնում էր նորանց հետ. և այն
վէմն էր Քրիստոսը։ Բայց Աստ-
ուած նորանցից շատերին չ'հա-
ւանեց. որովհետև անապատումն
6 փռուած ընկան։ Եւ սորանք մեզ
օրինակի համար եղան. որ մենք
չար բաների ցանկացող չ'լինենք,
7 ինչպէս նորանք ցանկացան։ Եւ
կռապաշտ մի լինիք ինչպես նո-
րանցից ոմանք. ինչպես գրուած
է, Ի՛ժողովուրդը նստեց ուտե-
լու և խմելու, և վերկացան որ
8 խաղան։ Եւ պոռնկութիւն էլ
չ'անենք, ինչպես նորանցից ոմանք
պոռնկութիւն արին, և մէկ օ-
րում քսանևերեք հազար հոգի
9 վայր ընկան։ Եւ Քրիստոսին էլ
չ'փորձենք, ինչպես նորանցից էլ
ոմանք փորձեցին, և օձերիցը սա-
տակեցին։ Եւ չ'տրտնջաք էլ ինչ-
10 պես նորանցից էլ ոմանք տրտնջա-
ցին, և սատակչի ձեռովը կորան։

11 Եւ այն ամենն օրինակի համար
էր նորանց հանդիպում, բայց
մեզ խրատի համար գրուեցաւ,
որոնց դարերի վերջը հասաւ։
12 Ուրեմն ով որ համարում է թէ
հաստատ կանգնած է, թող
զգոյշ լինի, որ վայր չ'ընկնի։
13 Ձեզ ուրիշ փորձութիւն չէ պա-
տահել բացի մարդկային։ Եւ
Աստուած հաւատարիմ է. որ չի թողիլ ձեզ ձեր
կարողութիւնիցը վեր փորձուե-
լու, այլ փորձութեան հետ ելքն
էլ կ'պատրաստէ, որ կարողա-
նաք համբերել,
14 Ընդա համար, իմ սիրելիք,
փախէք կռապաշտութիւնիցը։
15 Ինչպէս իմաստուններին հետ եմ
խօսում, դուք ինքներդ դատե-
16 ցէք այն որ ասում եմ։ Այն
օրհնութեան բաժակը, որ օրհ-
նում ենք, չէ՞ որ հաղորդութիւն
է Քրիստոսի արիւնի. այն հացը,
որ կտրում ենք, չէ՞ որ հաղոր-
դութիւն է Քրիստոսի մարմնին,
17 Որովհետև մէկ հաց, մէկ մարմին
ենք մենք շատերս. վասնզի ա-
մենքս այն մէկ հացից ենք վա-
18 խճում։ Տեսէք Իսրայէլին մարմնի
կողմանէ. չէ՞ որ զոհաւածներն
ուտողները մասնակից են սեղա-
19 նին։ Ուրդ ինչ ասեմ. միթէ
կուռքը մի բան է, և կամ թէ
կուռքերի զոհաւածները մի բա՞ն
20 են, Բայց այն որ հեթանոսները
զոհում են, դևերին են զոհում,
և ոչ թէ Աստուծուն. իսկ ես
չեմ կամենում, որ դուք դևերին
մասնակից լինէք. չէք կարող Տի-
րոջ բաժակը խմել և դևերի բա-
21 ժակը. Չէք կարող Տիրոջ սեղա-
նիցը վայելել՝ և դևերի սեղա-
22 նիցը, կամ թէ Տիրոջը նախանձի
դրդուո՞նք. միթէ նորանից աւելի
զօրաւոր ենք։
23 Ամեն բան օրինաւոր է ինձ,
բայց ամեն բան օգուտ չէ. ամեն
բան օրինաւոր է ինձ, բայց ամեն
24 բան շինութիւն չէ տալիս։ Ոչ
ով միայն իր անձի օգուտը չ'ո-
րոնէ, այլ ամեն մէկն ընկերինն
էլ։ Ամեն ինչ որ ապանդանոցու- 25
մը ծախվում է, կերէք առանց
մի բան քննելու խղճմտանքի
պատճառով։ Որովհետև Տիրոջն 26
է երկիրը և նորա բոլոր լիութիւ-
նը։ Եթէ անհաւատներից մէկը 27
կանչէ ձեզ, և դուք կամենաք
գնալ, ամեն բան որ ձեր առաջին
դրան, կերէք, առանց մի բան
քննելու խղճմտանքի պատճա-
ռով։ Բայց եթէ մէկն ասէ ձեզ, 28
թէ դա կուռքի զոհած բան
է, մի ուտէք՝ նորա պատճառով
որ իմացրեց, և խղճմտանքի պատ-
ճառով. որովհետև Տիրոջն է եր-
կիրը և նորա բոլոր լիութիւնը։
Բայց խղճմտանք եմ ասում՝ ոչ 29
թէ ձերը, այլ ընկերինը. որով-
հետև ինչու իմ ազատութիւնը
պիտի դատուի ուրիշի խղճմտան-
քից, Թէ որ ես շնորհակալութիւ- 30
նով վայելում եմ, ինչու հայ-
հոյուիմ այն բանի համար՝ որի
համար ես գոհանում եմ։ Ուրեմն 31
թէ ուտէք թէ խմէք, թէ ինչ
գործ էլ որ անէք, ամեն բան Աս-
տուծոյ փառքի համար արէք։
Առանց գայթակղութիւն տալու 32
եղէք Հրեաներին և Յոյներին և
Աստուծոյ եկեղեցուն, ինչպէս ես 33
էլ ամեն բանով ամենին հաճոյ եմ
լինում. իմ անձի օգուտը չ'որոնե-
լով, բայց շատերինը որ փրկուին։

Գլ. ԺԱ

1 Ինձ նմանող եղէք, ինչպէս ես
էլ Քրիստոսի։ Աւրդ գովում եմ 2
ձեզ, եղբայրք, որ իմ ամեն բա-
ները յիշում էք, և ինչպես պատ-
ուիրեցի ձեզ, այն պատուէրները
պահում էք, Բայց կամենում եմ 3
որ դուք գիտենաք, թէ ամեն
մարդի գլուխը Քրիստոսն է, և
կնկայ գլուխը մարդը, և Քրիս-
տոսի գլուխն՝ Աստուած։ Ամեն 4
մարդ՝ երբոր աղօթք է անում
կամ մարգարէանում՝ և գլուխը
ծածկած ունենայ, անպատիւ է
անում իր գլուխը։ Եւ ամեն կին՝ 5
երբոր աղօթք է անում կամ մար-
գարէանում՝ բաց գլխով, անպա-
տիւ է անում իր գլուխը. վասնզի

*Ոմանք աւելացնում են՝ չէ թէ ես օրէնքի տակ էի,

մի և նոյն է թէ ածիլուած է։
6 Որովհետև եթէ կինը չ'ծածկուի, թող ուրեմն իր մազերն էլ կտրէ. բայց եթէ կնկան ամօթ է մազերը կտրելը կամ ածիլելը, թող
7 ծածկուի։ Սակայն մարդին պէտք չէ որ իր գլուխը ծածկէ, որովհետև Աստուծոյ պատկերը և փառքն է. բայց կինը մարդի
8 փառքն է։ Քանզի ոչ թէ մարդն է կնկանից, այլ կինն է մար-
9 դից։ Եւ որովհետև ոչ թէ մարդը կնկան համար ստեղծուեցաւ, այլ կինը մարդի համար։
10 Նորա համար պէտք է, որ կինը *շուք դնէ գլխի վերայ հրեշտակների
11 համար։ Բայց դարձեալ ոչ կինն առանց մարդի, և ոչ մարդն առանց կնկայ, Տէրոջմէ։
12 Որովհետև ինչպէս որ կինը մարդից է՝ այնպէս էլ մարդը կնկայ միջոցով է. բայց ամէնն Աստուածանից։ Դուք ինքներդ դա-
13 տեցէք. մի կնկայ վայելո՞ւմ է որ չ'ծածկուած աղօթք անէ Աստուածոյ։ Կամ հէնց բնութիւնն
14 ինքը չէ՞ սովորեցնում ձեզ, որ եթէ մարդը էշխոյ մազեր ունենայ, այն անարգանք է նորան։
15 Բայց եթէ կինն երկար մազեր ունի, այն փառք է նորան. որովհետև երկար մազերը հագուստի
16 տեղ է տրուած նորան։ Բայց եթէ մէկը կամենում է հակառակել, մենք այնպիսի սովորութիւն չ'ունինք, և ոչ էլ Աստուծոյ եկեղեցիները։
17 Բայց այս էլ պատուիրելովս չեմ գովում, որ դուք ոչ թէ դէպի լաւագոյնն այլ դէպի
18 վատթարն էք ժողովւում։ Որովհետև նախ և առաջ երբոր մէկտեղ էք ժողովւում եկեղեցու մէջ, լսում եմ որ բաժանումներ կան ձեր մէջ, և մասամբ
19 էլ հաւատում եմ։ Որովհետև հերձուածներ էլ պէտք է լինին ձեր մէջ, որ ընտիր լինողները
20 յայտնի լինեն ձեզանում։ Արդ երբոր մէկտեղ էք ժողովւում, սա Տէրունական ընթրիքն ուտել
21 չէ, Որ ամեն մէկն առաջ իր ընթրիքն է անում ուտելու ժամանակ, և մէկը սոված է, և
22 միւսը արբած։ Մի՞թէ տուն չ'ունէք ուտելու և խմելու. կամ թէ Աստուծոյ եկեղեցին արհամարհո՞ւմ էք, և չքաւորներին ամաչեցնում. ձեզ ինչ ասեմ. գովե՞մ ձեզ. այդ բանումը չեմ
23 գովում։ Որովհետև ես Տէրից ընդունեցի այն որ ձեզ էլ աւանդեցի. որ Տէր Յիսուսն այն գիշերը որ մատնվում էր, հաց ա-
24 ռաւ, և գոհանալուց յետոյ կտրեց և ասեց. Առէք, կերէք. այս է իմ մարմինը՝ որ ձեզ համար կտրվում է. այս արէք իմ
25 յիշատակի համար։ Այնպէս էլ ընթրիքն ուտելուց յետոյ բաժակն —— և ասեց. Այս բաժակը նոր ուխտն է իմ արիւնով. այս արէք՝ քանի անգամ որ խմէք, իմ յիշատակի համար։
26 Որովհետև քանի անգամ որ այս հացն ուտէք, և այս բաժակը խմէք, Տիրոջ մահը պատմեցէք
27 մինչև որ նա կ'գայ։ Ուրեմն ով որ այս հացն ուտէ՝ կամ Տիրոջ բաժակը խմէ անարժանութեամբ, նա պարտական կ'լինի Տիրոջ
28 մարմնին և արիւնին։ Ուրեմն թող մարդ փորձէ իր անձը, և ապա այն հացից ուտէ՝ և այն բաժակից խմէ։
29 Որովհետև անարժանութեամբ ուտողը և խմողը իր անձի համար դատապարտանի է ուտում և խմում, որ չէ որոշում
30 Տիրոջ մարմինը։ Նորա համար էլ ձեր միջումը շատ հիւանդներ և ցաւագարներ կան. և շատեր էլ ննջած են։
31 Որովհետև եթէ մեր անձերը դատէինք, չէինք
32 դատապարտուիլ։ Բայց դատուելով Տէրից խրատվում ենք, որ աշխարհի հետ չ'դատապարտուինք։ Ուրեմն, եղբարքս, երբոր
33 ժողովուիք ուտելու համար, իրար սպասեցէք։
34 Այս եթէ մէկը սոված է՝ թող էշ տանն ուտէ. որ դատապարտութեան համար չ'ժողովուիք. բայց ուրիշ բաներն՝ երբոր կ'գամ՝ այն ժամանակ կ'պատուիրեմ։

*Յոյն. իշխանութիւն

ԳԼ. ԺԲ

1 Բայց հոգևոր պարգևների համար, եղբարքս, չեմ կամենում որ
2 չ'գիտենաք։ Դուք գիտէք թէ երբ որ հեթանոս էիք, անձայն կուռքերի մոտ էիք տարվում
3 ինչպէս որ առաջնորդվում էիք։ Նորա համար յայտնում եմ ձեզ, որ ոչ ով չէ՝ Աստուծոյ Հոգովը խօսող որ Յիսուսին նզովեալ ասէ. և ոչ ով չէ կարող Յիսուսին Տէր ասել՝ եթէ ոչ Հո-
4 գով Սրբով։ Պարգևները զանա-
5 զան են, բայց Հոգին նոյնն է։ Եւ պաշտօնները զանազան են, բայց
6 Տէրը նոյնն է։ Եւ ներգործուածները զանազան են, բայց Աստուած նոյնն է, որ ամէնը ա-
7 մէնքի մէջ ներգործում է։ Բայց ամեն մէկին տրուած է Հոգու յայտնութիւնը օգտի համար։ Որովհետև մէկին Հոգուցը տրուած է իմաստութեան խօսք. և ուրիշին գիտութեան խօսք՝ նոյն Հո-
9 գու չափովը։ Մի՛սին հաւատք նոյն Հոգովը. ուրիշին բժշկութեան պարգևներ նոյն Հոգովը։
10 Ուրիշին զօրութիւնների ներգործութիւններ. և ուրիշին մարգարէութիւն. ուրիշին հոգիների ընտրութիւն. ուրիշին այլ և այլ լեզուներ. ուրիշին լեզուների
11 թարգմանութիւններ։ Բայց այս ամէնը հէնց մի և նոյն Հոգին է ներգործում, ամեն մէկին բաժանելով ինչպէս կամենում է։
12 Ինչպէս էլ մարմինը մէկ է և անդամներ շատ ունի, և մէկ մարմնի բոլոր անդամները շատ լինելով մարմինը մէկ է, այսպէս
13 էլ Քրիստոսը։ Որովհետև մենք էլ ամենքս մէկ Հոգով մկրտուեցանք մէկ մարմին լինելու. թէ Հրեաներ, թէ Յոյներ. թէ ծառաներ, թէ ազատներ, և ամենքս մէկ Հոգիից խմեցինք։
14 Որովհետև մարմինն էլ մէկ ան-
15 դամ չէ, այլ շատ։ Եթէ ոտքն ասէ. Որովհետև ձեռք չեմ՝ մարմնիցը չեմ. մի՞թէ նորանով
16 մարմնիցը չի լինիլ։ Եւ եթէ ականջն ասէ, Որովհետև աչք չեմ՝ մարմնիցը չեմ. մի՞թէ նորանով
17 մարմնիցը չի լինիլ։ Եթէ բոլոր մարմինն աչք լինէր, ո՞րտեղ էր լսելիքը. և եթէ բոլոր մարմինը լսելիք լինէր, ո՞րտեղ էր հոտա-
18 տելիքը։ Բայց հիմա Աստուած անդամները՝ նորանց ամեն մէկը դրաւ մարմնի մէջ ինչպէս կամեցաւ։ Եւ եթէ ամենը մէկ ան-
19 դամ լինէր, ո՞րտեղ էր մարմինը։
20 Բայց հիմա անդամները շատ են, իսկ մարմինը մէկ։ Աչքը չէ կա-
21 րող ձեռքին ասել, Ինձ պէտք չես. կամ գարձեալ գլուխը առներին՝ Ինձ պէտք չէք։ Այլ մա-
22 նաւանգ մարմնի այն անդամները՝ որ երևում են թէ տկարագոյն են, նորանք հարկաւոր են։ Եւ
23 նորանք՝ որ կարծում ենք թէ մարմնոյ շատ անարգաւածներն են, նորանց առաւել և պատիւ
24 ենք անում. և մեր անվայելուչ անդամներն աւելի վայելչութիւն ունին։ Եւ մեր վայելուչ անդամներիս մի բանի պէտք չ'ունին. բայց Աստուած մարմինը բարեխառնեց, ցածին աւելի պատիւ տա-
25 լով։ Որ մարմնի մէջ տարաձայնութիւն չ'լինի, այլ որ անդամներն իրար համար նոյն հոգսն
26 ունենան։ Եւ եթէ մէկ անդամը ցաւում է, բոլոր անդամներն էլ նորա հետ ցաւում են. և եթէ մէկ անդամը փառաւորվում է,
27 բոլոր անդամներն էլ նորա հետ ուրախանում են։ Արդ դուք Քրիստոսի մարմինն էք, և մէկ
28 մէկ նորա անդամներ։ Եւ ոմանց դրաւ Աստուած եկեղեցում. առաջ՝ առաքեալներին. երկրորդ՝ մարգարէներին. երրորդ՝ վարդապետներին. յետոյ *զօրութիւններ. յետոյ բժշկութիւնների պարգևներ, օգնութիւններ, կառավարութիւնները, այլ և այլ
29 լեզուներ։ Մի՞թէ ամեն առաքեալներ են. մի՞թէ ամենը մարգարէներ են. մի՞թէ ամենը վարդապետներ են. մի՞թէ ամենը զո-
30 րութիւններ ունեն։ Մի՞թէ ամենը բժշկութիւնների պարգև-

*Տրաշքներ

ներ ունին. մի՞թէ ամենը լեզուներ են խօսում. մի՞թէ ամենը թարգմանում են։
31 Բայց դուք նախանձաւոր եղէք լաւագոյն պարգևներին. և ես էլ աւելի գերազանց ճանապարհ ցոյց տամ ձեզ։

ԳԼ. ԺԳ

1 Եթէ մարդկանց և հրեշտակների լեզուներով խօսիմ, բայց սէր չ՚ունիմ, ես եղայ ձայն հանող պղինձ, կամ հնչեցող ծնծղայ։
2 Եւ եթէ մարգարէութիւն ունենամ, և գիտենամ ամեն խորհուրդները և ամեն գիտութիւնը. և եթէ ամեն հաւատքն ունենամ, մինչև սարերն էլ տեղափոխելու, բայց սէր չ՚ունիմ,
3 ոչինչ եմ։ Եւ եթէ իմ ամեն ապրանքներն աղքատներին ուտեցնեմ և իմ մարմինը մատնեմ որ այրուի, բայց սէր չ՚ունիմ, ես
4 ոչինչ օգուտ չեմ ունենալ։ Սէրը երկայնամիտ է՝ քաղցր է. սէրը չէ նախանձվում, չէ գոռոզանում,
5 չէ հպարտանում։ Չէ լրբանում, իրը չէ որոնում, չէ դրգռվում,
6 չարը չէ մտածում. Անիրաւութեան վերայ չէ ուրախանում, բայց ուրախանում է ճշմարտութեան հետ.
7 Ամեն բանի դիմանում է. ամեն բան հաւատում է, ամեն բանի համար յոյս ունի, ամեն բանի համբերում է։
8 Սէրը երբէք չի վերջանալ. եթէ մարգարէութիւններ կան՝ կ՚խափանուին. եթէ լեզուներ՝ կ՚լռեն. եթէ գիտութիւն՝ կ՚խափանուի։
9 Որովհետև փոքր ի շատէ գիտենք. և փոքր ի շատէ մարգարէանում
10 ենք։ Բայց երբոր կատարեալը գայ, այս փոքր ի շատէն կ՚խա-
11 փանուի։ Երբոր երեխայ էի՝ երեխայի պէս էի խօսում, երեխայի պէս էի մտածում, երեխայի պէս էի համարում. բայց երբոր մարդ եղայ, այն երեխայութեան բա-
12 ները խափանեցի։ Որովհետև հիմա հայելու մէջ օրինակով ենք տեսնում, բայց այն ժամանակ դէմադէմ. հիմա փոքր ի շատէ
եմ տեղեակ, բայց այն ժամանակն այնպէս կ՚գիտենամ՝ ինչպէս գիտեցուած եմ։ Ապա ու-
13 րեմն մնում է հաւատք. յոյս, սէր. այս երեքը, և սորանցից մեծը սէրն է։

ԳԼ. ԺԴ

Սէրին հետևեցէք, և հոգևոր
1 պարգևներին նախանձաւոր եղէք. և մանաւանդ որ մարգարէանաք։
2 Որովհետև լեզուներով խօսողը, մարդկանց հետ չէ խօսում, այլ Աստուծոյ հետ. որովհետև ոչ ով չէ լսում, բայց հոգով խոր-
3 հուրդներ է խօսում։ Իսկ մարգարէացողը, մարդկանց հետ շինութիւն և մխիթարութիւն և
4 սփոփութիւն է խօսում։ Լեզուով խօսողը իր անձն է շինում, իսկ
5 մարգարէացողը եկեղեցին է շինում։ Ես կամենում եմ որ դուք ամենդ լեզուներով խօսիք. բայց մանաւանդ որ մարգարէանաք. որովհետև աւելի մեծ է մարգարէացողը, քան թէ լեզուներով խօսողը, միայն եթէ թարգմանէ, որ եկեղեցին շինութիւն առնէ։
6 Բայց հիմա, եղբարք, եթէ ձեզ մօտ գամ և լեզուներով խօսիմ, ի՞նչ օգուտ կ՚տամ ձեզ՝ եթէ չը խօսիմ ձեզ հետ կամ յայտնութիւնով, կամ գիտութիւնով, կամ մարգարէութիւնով, կամ
7 վարդապետութիւնով։ Այնպէս էլ անշունչ բաները որ ձայն են տալիս, թէ փող թէ քնար, եթէ ձայներով զանազանութիւն չ՚անեն, ի՞նչպէս կ՚ճանաչուի փողի փչելը, կամ քնարի հնչելը։
8 Որովհետև եթէ փողն էլ անորոշ ձայն տայ, ո՞վ կ՚պատրաստուի
9 պատերազմի համար։ Այսպէս էլ դուք. եթէ լեզուներով բանը յայտնի չ՚ասէք, այն խօսածն ի՞նչպէս կ՚իմացուի. որովհետև էիր թէ օդի մէջ խօսողներ կ՚լինիք։
10 Որովհետև այնքան այլ և այլ ձայներ կան աշխարհքումը, և նորանց ոչ մէկն էլ առանց նշա-
11 նակութեան չէ։ Արդ եթէ ես ձայնի զօրութիւնը չ՚գիտենամ,

ես խօսողին խուժ կ՚լինիմ, և
12 խօսողն ինձ համար՝ դուժ։ Այսպէս էլ դուք, որովհետև հոգևոր պարգևներին նախանձաւոր էք, եկեղեցու շինութեան համար ջանք արէք, որ էլ առաւե-
13 լանաք։ Վասնորոյ լեզուով խօսողը, թող աղօթք անէ, որ թարգ-
14 մանէ էլ։ Վասնզի եթէ ես աղօթք անեմ չտար լեզուով, իմ հոգին է աղօթք անում. բայց
15 միտքս անպտուղ է։ Ուրեմն ի՞նչ է, աղօթք անեմ հոգով, աղօթք անեմ մտքով էլ. սաղմոս ասեմ հոգով, սաղմոս ասեմ մտքով
16 էլ։ Ապա եթէ դու օրհնես հոգով, նա որ տգէտի տեղն է բռնում ի՞նչպէս Ամէն ասէ քո օրհնութեանը, քանի որ չ՚գիտէ
17 թէ ի՞նչ ես ասում։ Դու իրաւ որ լաւ ես գոհանում. բայց
18 միւսը չէ շինվում։ Գոհանում եմ իմ Աստուածանից, որ ձեր ամենիցն աւելի լեզուներով խօ-
19 սում եմ։ Բայց եկեղեցու մէջ աւելի կամենում եմ որ հինգ խօսք իմ մտքովը խօսիմ. որ ուրիշներին էլ բան սովորեցնեմ քան թէ բիւրաւոր խօսքեր լեզուներով։
20 Եղբարք, մտքով տղայ մի լինիք. բայց չարութեան կողմանէ տղայ եղէք, իսկ մտքով կատար-
21 եալ եղէք։ Օրէնքումը գրուած է, թէ Օտար լեզուներով և օտար շրթունքներով կ՚խօսիմ այս ժողովրդի հետ. բայց և այնպէս ինձ ականջ չեն դնիլ, ասում է
22 Տէրը։ Ուրեմն լեզուները նշանի համար են՝ ոչ թէ հաւատացեալներին, այլ անհաւատներին. բայց մարգարէութիւնը ոչ թէ անհաւատների համար է, այլ
23 հաւատացեալների։ Արդ եթէ բոլոր եկեղեցին մէկ տեղ գայ, և ամենքը լեզուներով խօսին. և տգէտներ կամ անհաւատներ մտնեն այնտեղ, մի՞թէ չեն ասիլ
24 թէ դուք գժուած էք։ Բայց եթէ ամենը մարգարէանան, և մի անհաւատ կամ տգէտ գայ մտնէ, նա ամենիցը կ՚յանդի-
25 մանուի, ամենիցը կ՚քննուի։ Եւ
այսպէս նորա սրտի գաղտնիքը յայտնի կ՚լինի. և ապա երեսի վերայ ընկած Աստուծուն երկրպագութիւն կ՚անէ, խոստովանելով թէ արդարև Աստուած ձեր միջումն է։
Ուրեմն ի՞նչ է, եղբարք. երբ 26
որ մէկտեղ ժողովուիք, ձեզանից ամեն մէկը սաղմոս ունի, վարդապետութիւն ունի, յայտնութիւն ունի, լեզու ունի, թարգմանութիւն ունի. ամենը շինութեան համար լինի։ Եթէ մէկը լեզուով 27
խօսի, թող երկու, և եթէ էլ աւելի շատ՝ երեք լինեն. մէկը միւսից յետոյ. և մէկը թող թարգմանէ։ Բայց եթէ թարգ- 28
մանող չ՚կայ, թող լռէ եկեղեցումը. թող իրան համար և Աստուծոյ հետ խօսի։ Բայց մարգա- 29
րէներից թող երկուսը կամ երեքը խօսին, և ուրիշները քննեն։ Բայց եթէ մի ուրիշին, որ այն- 30
տեղ նստած է՝ յայտնութիւն լինի, առաջինը թող լռէ։ Որով- 31
հետև կարող էք մէկ մէկից յետոյ ամենդ մարգարէանալ. որ ամենը սովորին և ամենը մխի-
թարուին։ Եւ մարգարէից հոգի- 32
ներն էլ մարգարէներին հնազանդում են։ Որովհետև Աստուած 33
խռովութեան Աստուած չէ, այլ խաղաղութեան, ինչպէս սուրբերի բոլոր եկեղեցիներումը։
Ձեր կանայքը եկեղեցիներումը 34
լուռ կենան. որովհետև նորանց հրաման չ՚կայ խօսելու, այլ որ հնազանդ լինեն, ինչպէս օրէնքն էլ ասում է։ Բայց եթէ մի բան 35
կամենան սովորիլ, թող տան մէջ իրանց մարդկանցից հարցնեն. որովհետև կնկանն անվայել է եկեղեցում խօսել։ Կամ թէ Ա- 36
ստուծոյ խօսքը ձեզանի՞ց դուրս եկաւ, կամ միայն ձե՞զ հասաւ։ Բայց եթէ մէկը կարծէ՝ թէ նա 37
մարգարէ է կամ հոգևոր, թող գիտենայ ինչ որ գրեցի ձեզ, որ Տիրոջ պատուիրաններն են։ Բայց 38
եթէ մէկը տգէտ է, թող տգէտ լինի։ Ուրեմն, եղբարք, ջանք ա- 39
րէք որ մարգարէանաք. և լեզուներով խօսելը մի արգելէք։ Ամեն 40

քան թող պարկեշտութեամբ և կարգով լինի։

Գլ. ԺԵ

1 Իմացնում եմ ձեզ, եղբարք, այն աւետարանը՝ որ աւետարանեցի ձեզ, որն էլ ընդունեցիք,
2 որի մէջ էլ կանգնած էք. Որով փրկվում էլ էք, այն բանով՝ որ ձեզ աւետարանեցի. եթէ ամուր բռնէք նորան. եթէ զուր տեղը
3 չէք հաւատացել։ Որովհետև ես առաջուց այն տուի ձեզ, որ ես էլ ընդունեցի, թէ Քրիստոս մեր մեղքերի համար մեռաւ՝ գրքերի
4 համեմատ, եւ թէ թաղուեցաւ, և թէ երրորդ օրը յարութիւն առաւ՝ գրքերի համեմատ։ Եւ
5 թէ երևեցաւ Կեփասին, յետոյ այն տասնևերկուսին։ Յետոյ ե-
6 րևեցաւ հինգ հարիւրից աւելի եղբայրներին մէկ անգամ, որոնցից շատերը մինչև հիմա ևս են, բայց մի քանիսն էլ ննջեցին։
7 Եւ յետոյ երևեցաւ Յակոբին, յետոյ բոլոր առաքեալներին։
8 Ամենից յետոյ՝ իբր թէ մի վի-
9 ժած՝ ինձ էլ երևեցաւ։ Որովհետև ես առաքեալների յետինն եմ. որ արժանի չեմ առաքեալ կոչուելու. որովհետև Աստուծոյ
10 եկեղեցին հալածեցի։ Բայց Աստուծոյ շնորհքով եմ ինչ որ եմ. և նորա շնորհքն որ ինձանում է ունայն չեղաւ. այլ նորանից ամենից աւելի աշխատեցի. ոչ թէ ես, այլ Աստու-
11 ծոյ շնորհքը որ ինձ հետ է։ Արդ թէ ես՝ թէ նորանք, այսպէս ենք քարոզում, և դուք այսպէս հաւատացիք։
12 Բայց եթէ Քրիստոսը քարոզվում է՝ թէ մեռելներից յարութիւն է առել, ինչպէս են ձեզանից ոմանք ասում, թէ Մե-
13 ռելների յարութիւն չկայ։ Եթէ մեռելների յարութիւն չկայ, ապա Քրիստոսն էլ չէ յարու-
14 թիւն առել։ Եւ եթէ Քրիստոսը յարութիւն չէ առել, ուրեմն ունայն է մեր քարոզութիւնը, և ունայն է ձեր հաւատքն էլ։
15 Եւ մենք էլ Աստուծոյ սուտ վկաներ ենք գտնվում, որ Աստուծոյ համար վկայեցինք, թէ Քրիստոսին յարութիւն տուաւ, որին չյարուցրեց, եթէ արդարև մեռելները յարութիւն չեն առ-
16 նում։ Որովհետև եթէ մեռելները յարութիւն չեն առնում, ապա Քրիստոս էլ յարութիւն
17 չէ առել։ Եւ եթէ Քրիստոս յարութիւն չէ առել՝ ունայն է ձեր հաւատքը և դուք ձեր մեղքերի
18 մէջ էք։ Ուրեմն նորանք էլ, որ Քրիստոսում ննջեցին, կորան։
19 Եթէ մրայն այս կեանքումն ունինք յոյս Քրիստոսի վերայ, ամեն մարդկանցից աւելի ողորմելի
20 ենք։ Բայց հիմա Քրիստոսը յարութիւն է առել մեռելներից,
21 ինքը ննջածների առաջինիկ եղաւ։ Ուրեմն որովհետև մարդով եղաւ մահը, և մարդով էլ մե-
22 ռելների յարութիւնը. Քանզի ինչպէս Ադամով ամենը մեռնում են, այնպէս էլ Քրիստոսով ամենը կենդանանում են։
23 Եւ ամեն մէկն իր կարգումը. առաջի պտուղը Քրիստոսը և յետոյ Քրիստոսինները նորա գալուժամանակումը։
24 Եւ յետոյ վախճանը, երբ որ թագաւորութիւնը Աստուծուն և Հօրը կ'տայ. երբոր կ'ոչնչացնէ ամեն իշխանութիւնը և ամեն պետութիւնը և զօրութիւնը։ Որովհետև պէտք է որ
25 նա թագաւորէ, մինչև որ բոլոր թշնամիներն իր ոտների տակ դնէ։ Յետին թշնամին որ կ'ոչնչանայ մահն է. վասնզի ամեն
26 բան հնազանդեցրեց նորա ոտների տակ։ Բայց երբոր ասէ՝ թէ Ամեն
27 բան հնազանդ է նորան, յայտնի է որ բացի նորանից որ ամեն
28 բան հնազանդեցրեց նորան։ Բայց երբոր ամենը կ'հնազանդի նորան, այն ժամանակ ինքը Որդին էլ կը հնազանդի նորան՝ որ ամենը հնազանդեցրեց նորան. որ Աստուած
29 լինի ամենը ամենուն։ Ապա եթէ ոչ, ինչ կ'անեն մեռելների համար մկրտուողները եթէ արդարև մեռելները յարութիւն չառնեն. ել ինչու են նորանց

30 համար մկրտվում։ Եւ մենք ինչու ամեն ժամանակ վտանգի մէջ
31 ենք։ Երդնում եմ ձեր վերայ ունեցած պարծանքովս, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսումն ունիմ, թէ ես ամեն օր մեռնում եմ։
32 Եթէ մարդկօրէն Եփեսոսում գազանների կռիւ մէջ մտայ, ինչ օգուտ էր ինձ համար, եթէ մեռելները յարութիւն չեն առնում. ուտենք և խմենք, որովհետև եղուց կ'մեռնինք։
33 Մի խաբուիք. չար ընկերակցութիւնները ապականում են բարի վարքերը։
34 Արթուն կացէք արդարութեամբ և մեղք մի գործէք. որովհետև մի քանիսն Աստուծոյ մասին տգէտ են. այս ձեզ ամաչեցնելու համար եմ ասում։
35 Բայց մէկը կ'ասէ. Մեռելներն ինչպէս յարութիւն կ'առնեն, և
36 թէ ինչ մարմնով կ'գան։ Անմիտ, այն որ դու սերմանում ես, չի կենդանանալ՝ եթէ չ'մեռնի։
37 Եւ այն որ սերմանում ես, ոչ թէ այն մարմինն ես սերմանում որ պիտի բուսնի, այլ մերկ հատը. թէ ցորենի լինի, թէ ուրիշ սերմանիք.
38 Ների։ Եւ Աստուած մարմին է տալիս նորան ինչպէս կամենում է, և սերմանիքների ամեն մէկին
39 իրանց մարմինը։ Ամեն մարմին միևնոյն մարմինը չէ. ուրիշ է մարդկանց մարմինը, ուրիշ է անասուններների մարմինը. ուրիշ է ձկների մարմինը, ուրիշ է թռչունների մարմինը։ Կան երկնաւոր մարմիններ էլ, երկրաւոր
40 մարմիններ էլ. բայց ուրիշ է երկնաւորների փառքը, և ուրիշ
41 է երկրաւորների փառքը։ Ուրիշ է արեգակի փառքը, և ուրիշ է լուսնի փառքը, և ուրիշ է աստղերի փառքը. որովհետև մի աստղ միւսից զանազանվում է
42 փառքով։ Այնպես էլ մեռելների յարութիւնը. սերմվում է ապականութիւնով, և յարութիւն է առնում անապականութիւնով։
43 Սերմվում է անարգութիւնով, և յարութիւն է
44 առնում զօրութիւնով։ Սերմվում է շնչաւոր մարմին, և յարութիւն է առնում հոգևոր մարմին. կայ շնչաւոր մարմին, կայ և հոգևոր մարմին։ Այսպէս
45 էլ գրուած է, թէ Առաջին մարդն Ադամը կենդանի շունչ եղաւ, երկրորդ Ադամը կենդանարար հոգի։ Մինչն թէ հոգևորն
46 առաջ չէ, այլ շնչաւորը, և յետոյ հոգևորը։ Առաջին մարդը երկրից է՝ հողեղէն. Բայց
47 երկրորդ մարդն է Տէրը երկնքից։
48 Ինչպէս հողեղէնը, այնպէս էլ հողեղէնները. և ինչպէս երկնաւորը, այնպէս էլ երկնաւորները։
49 Եւ ինչպէս հողեղէնի պատկերը հագանք, երկնաւորի պատկերն էլ պիտի հագնինք։
50 Այն թէ ասում եմ, եղբարք, որ մարմին և արիւն չեն կարող Աստուծոյ արքայութիւնը ժառանգել. և ոչ էլ ապականութիւնը ժառանգում է անապականութիւնը։
51 Ահա մի խորհուրդ եմ ասում ձեզ. Ոչ թէ ամենքս կը ննջենք, այլ ամենքս կ'փոխուինք։
52 Ցանկարծ մի ակնթարթում յետին փողի ժամանակին. որովհետև փողը կ'փչուի, և մեռելները յարութիւն կ'առնեն ապականելի, և մենք կ'փոխուինք։
53 Վասնզի պէտք է որ այս ապականացուն հագնէ անապականութիւնը, և այս մահկանացուն հագնէ անմահութիւնը։ Եւ երբ-
54 որ այս ապականացուն անապականութիւնը կ'հագնէ, և այս մահկանացուն անմահութիւնը, այն ժամանակ կ'լինի այն խօսքը որ գրուած է թէ Մահն ընկղմուեցաւ յաղթութեան մէջ։ Ով
55 մահ, ո՞ւր է քո խայթոցը. *Դերեզման, ո՞ւր է քո յաղթութիւնը։ Մահի խայթոցը մեղքն է։
56 և մեղքի զօրութիւնը՝ օրէնքը։
57 Բայց շնորհակալութիւն Աստուծուն, որ տուաւ մեզ յաղթութիւնը մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը։ Ուրեմն, սիրելի եղ-
58 բարքս, հաստատ եղէք, անշարժ կացէք, ամեն ժամանակ աւելի

*Մեռելների բնակարան։ Ոմանք՝ գժոխք

առաջացէք Տիրոջ գործումը, գիտացէք, որ ձեր աշխատանքը զուր չէ Տէրումը։

ԳԼ. ԺԶ

1 Բայց այն տուրք ժողովելու կողմանէ՝ որ սուրբերի համար է, ինչպէս Գաղատացիների եկեղեցիներին պատուիրեցի, այնպէս էլ
2 դուք արէք։ Ամեն մէկ միաշաբաթ օրերը ձեզանից ամեն մէկը թող իրան մօտ հաւաքէ՝ ինչ որ
3 կ'յաջողուի։ Որ չ'լինի թէ երբոր գամ, այն ժամանակ ժողովելը լինի. բայց երբոր գամ՝ որոնց որ թղթերով ընտրեցիք, նորանց կ'ուղարկեմ՝ որ ձեր ընծան տա-
4 նեն Երուսաղէմ։ Եւ եթէ ինձ էլ արժան լինի գնալ, թող ինձ
5 հետ գնան։ Բայց ձեզ մօտ կը գամ՝ երբ որ Մակեդոնիայի միջովն կ'անցնիմ. որովհետև Մակեդոնիայի միջովը ման կ'գամ։
6 Եւ կարելի է որ ձեզ մօտ կը մնամ՝ կամ թէ ձմեռը կ'անցընեմ. որ դուք ինձ ճանապարհ դնէք՝ որ տեղ որ գնալու լինեմ։
7 Որովհետև չեմ կամենում որ ձեզ հիմա անցնողի պէս տեսնեմ. յոյս ունիմ որ մի ժամանակ ձեզ մօտ կենամ, եթէ Տէրը
8 հրամայէ։ Բայց հիմա Եփեսոսումն եմ կենում՝ մինչև Պեն-
9 տեկոստէն։ Վասնզի մեծ և արդիւնաւոր դուռ է բացուած ինձ, և հակառակողները շատ են։
10 Հիմա եթէ Տիմոթէոսը գայ, նայեցէք որ անվախ լինի ձեզ մօտ. որ Տիրոջ գործն է գոր-
11 ծում, ինչպէս որ ես էլ։ Արդ մէկը չ'անարգէ նորան. և խաղաղութիւնով ճանապարհ դրէք նորան՝ որ ինձ մօտ գայ. որ սպասում են նորան եղբայրների հետ։
12 Իսկ Ապողոս եղբօր համար Փիտաղէ, որ շատ աղաչեցի նորան որ ձեզ մօտ գայ եղբայրների հետ. բայց ամենևին կամք չ'ունէր որ հիմա գար. բայց կ'գայ երբոր յարմար ժամանակ կ'ունենայ։
13 Արթուն եղէք, հաստատ կացէք հաւատքումը. արիացէք և ուժովացէք։
14 Ձեր բոլոր բաները թող սիրով լինին։
15 Աղաչում եմ ձեզ, եղբարք, գիտէք Ստեփանի տունը, որ Աքայեցիների առաջի պտուղն է, և իրանց անձերը սուրբերի ծառայութեան նուիրեցին։
16 Որ դուք էլ հնազանդ լինիք այնպիսիներին, և այն ամենին, որ գործի և աշխատանքի ընկեր են։
17 Ուրախ եղայ Ստեփանի և Փորտունատի և Աքայիկոսի գալու համար, որ նորանք ձեր պակասութիւնը լցրին։
18 Որովհետև իմ և ձեր հոգուն հանգիստ տուին. ուրեմն ճանաչեցէք այնպիսիներին։
19 Բարև են տալիս ձեզ Ասիացիների եկեղեցիները. շատ բարև են տալիս ձեզ Տէրով Ակիւղասը և Պրիսկիղան այն եկեղեցու հետ՝ որ նորանց տանն է։
20 Բարև են տալիս ձեզ բոլոր եղբարքը. բարև տուէք իրար սուրբ համբոյրով։
21 Իմ Պօղոսի ձեռքի բարևն է։
22 Եթէ մէկը Տէր Յիսուսին չ'սիրէ, անիծուած լինի. *մարան աթա։
23 Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհ-
24 քը ձեզ հետ լինի։ Եւ իմ սէրը ձեր ամենի հետ Քրիստոս Յիսուսումն. Ամէն։

*Այսինքն՝ մեր Տէրը գալիս է։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ՝ Աստուծոյ կամքովը, և Տիմոթէոս եղբայրը. Աստուծոյ եկեղեցուն որ Կորնթոսումն է՝ ամեն սուրբերի հետ որ բոլոր Աքա-
2 յիայումն են. Շնորհք լինի ձեզ և խաղաղութիւն՝ Աստուած մեր Հօրիցը. և Տէր Յիսուս Քրիստոսիցը։
3 Օրհնեալ լինի Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, գթութիւնների Հայրը և ամեն
4 մխիթարութեան Աստուածը, Որ մխիթարում է մեզ մեր ամեն նեղութիւնումը, որ մենք կարող լինենք մխիթարել նորանց որ ամեն տեսակ նեղութիւնում են՝ այն մխիթարութիւնովն որով մենք Աստուածանից մխիթար-
5 վում ենք։ Որովհետև ինչպէս Քրիստոսի չարչարանքներն աւելանում են մեզանում, այնպէս էլ Քրիստոսի ձեռովը շատանում
6 է մեր մխիթարութիւնը։ *Եւ եթէ նեղութիւն ենք քաշում, այն ձեր մխիթարութեան և փրկութեան համար է. որ յաջողվում է այն չարչարանքների համբերութիւնովը, որ մենք էլ չարչարվում ենք. և եթէ մխիթարվում ենք, այն ձեր մխիթարութեան և փրկութեան համար է։
7 Եւ մեր յոյսը ձեզ համար հաստատ է. որովհետև գիտենք թէ ինչպէս չարչարանքներին մասնակից էք, այնպէս էլ մխիթարութեանը։
8 Վասնզի չենք կամենում, եղբարք, որ դուք չ'գիտենաք այն նեղութիւնն որ Ասիայումը մեզ եղաւ. որ մեր կարողութիւնից աւելի ծանրաբեռնուեցանք. մինչև որ մեր կեանքի յոյսն էլ կըտրել էինք։
9 Բայց հէնց մենք ինքներս մեզ վերայ մահուան վճիռն ունէինք. որպէս զի մեր անձերի վերայ յոյս չ'դնենք, այլ Աստուծոյ վերայ որ մեռելներին յարուցանում է։
10 Որ այնպիսի մահից մեզ փրկեց և փրկում էլ է. Որին յոյս ունինք՝ թէ տակաւին կ'փրկէ էլ ձեր մեզ համար արած աղօթքի օգնականութեամբը որ շատ մարդկանցից մեզ եղած շնորհքի համար շատերի ձեռովը գոհութիւն մատուցանուի մեզ համար։
12 Որովհետև մեր պարծանքը սա է՝ մեր խղճմտանքի վկայութիւնը, որ սրբութիւնով և Աստուծոյ պարզութիւնովը և ոչ թէ մարմնական իմաստութիւնով, այլ Աստուծոյ շնորհքովը վարուեցանք աշխարհքի մէջ, և էլ աւելի դէպի ձեզ։
13 Վասնզի ուրիշ բաներ չենք գրում ձեզ, այլ միայն նա որ կարդում էք կամ հէնց ճանաչում էք. և յոյս ունիմ թէ մինչև վերջն էլ կ'ճանաչէք։
14 Ինչպէս էլ փոքր ի շատէ ճանաչեցիք մեզ. որովհետև ձեր պարծանքն ենք. ինչպէս դուք էլ մերը՝ Տէր Յիսուսի օրումը։

*Ոմանք՝ Եթէ նեղութիւն ենք քաշում, այն ձեր մխիթարութեան և փրկութեան համար է. և եթէ մխիթարվում ենք, այն ձեր մխիթարութեան և փրկութեան համար է, որ յաջողվում է այն չարչարանքների համբերութիւնովը որ մենք էլ չարչարվում ենք. և մեր յոյսը ձեզ վերայ հաստատ է։

15 Եւ այս վստահութիւնովը կա-
մենում էի առաջ ձեզ մօտ գալ,
որ դուք երկրորդ շնորհք ընդու-
16 նիք. Եւ ձեզանից գնալ Մակե-
դոնիա. և դարձեալ Մակեդո-
նիայից ձեզ մօտ գալ, և ձեզա-
նից ճանապարհ գցուիլ դէպի
17 Հրէաստան։ Արդ եթէ այս միտքն
արի՝ մի՞թէ թեթևամտութիւն
գործածեցի. և կամ թէ այն որ
խորհում եմ մարմնի՞ կերպով
եմ խորհում. որ իմ կողմանէ
18 այսն այս լինի, և ոչը՝ ոչ։ Եւ
Աստուած հաւատարիմ է, որ
մեր խօսքը դէպի ձեզ այս և ոչ
19 չ՚եղաւ։ Որովհետև Աստուծոյ
Որդին Յիսուս Քրիստոսը, որ մե-
զանով ձեր մէջ քարոզուեցաւ,
ինձանով և Սիղուանոսով և Տի-
մոթէոսով, այս և ոչ չ՚եղաւ.
20 այլ այս եղաւ նորանում։ Որով
հետև որքան Աստուծոյ խոստ-
մունքներ որ կան՝ նորանում է
այսն, և նորանում է ամենը Ա-
ստուծոյ փառքի համար մեզանով։
21 Բայց մեզ ձեզ հետ Քրիստոսումը
հաստատողը և մեզ օծողը Աստ-
22 ուած է. Որ մեզ կնքեց էլ. և
Հոգու գրաւը մեր սրտերի մէջ
23 տուաւ։ Բայց ես Աստուծուն
վկայ եմ կանչում իմ անձի վե-
րայ. որ ձեզ խնայելու համար
24 միւսանգամ չ՚եկայ Կորնթոս. Ոչ
թէ ձեր հաւատքի վերայ տիրա-
պետում ենք՝ այլ ձեր ուրախու-
թեանը գործընկեր ենք, որովհե-
տև դուք հաւատքով հաստատ
կանգնած էք։

ԳԼ. Բ

1 Բայց ես այս որոշեցի ինձանում
որ դարձեալ տրտմութիւնով չը
2 գամ ձեզ մօտ։ Որովհետև եթէ
ես ձեզ տրտմեցնեմ, էլ ո՞վ է
ինձ ուրախացնողը եթէ ոչ ին-
3 ձանից տրտմողը։ Եւ հէնց այս
գրեցի ձեզ, որ մի գուցէ ես ե-
կած ժամանակը տրտմութիւն
քաշեմ նորանցից որոնցից պէտք
էր ինձ ուրախ լինիլ, վստահ
լինելով ձեր ամենի վերայ, որ
իմ ուրախութիւնն ձեր ամենինն
է։ Որովհետև շատ նեղութիւնից 4
սրտիս տագնապից գրեցի ձեզ
շատ արտասուքով. ոչ թէ՝ որ
տրտմիք, այլ որ իմ սէրը գիտե-
նաք, որն ես առատօրէն ունիմ
ձեզ վերայ։
Ապա եթէ մէկը տրտմեցրել է, 5
ոչ թէ ինձ է տրտմեցրել, այլ
փոքր ՚ի շատէ, որ չ՚ծանրացնեմ՝
ձեզ ամենիդ։ Բաւական է այն- 6
պիսի մարդին համար այն խրատը,
որ շատերիցը Եղաւ։ Այսուհետև 7
ընդհակառակը՝ աւելի ներեցէք,
և մխիթարեցէք. մի գուցէ շատ
սաստիկ տրտմութիւնից այնպի-
սին խեղդուի։ Սորա համար աղա- 8
չում եմ ձեզ, որ սէրը հաստա-
տէք նորա վերայ։ Որովհետև նո- 9
րա համար գրեցի էլ ձեզ, որ
ձեզ փորձով գիտենամ, թէ
արդեօք ամեն բանի մէջ հնա-
զա՞նդ էք։ Բայց եթէ դուք մէ- 10
կին մի բան ներէք, ես էլ. որով-
հետև ես էլ եթէ մի բան ներեմ,
որին որ ներում եմ՝ ձեզ համար
է Քրիստոսի առաջին։ Որ սատա- 11
նան մեզ զրկանք չ՚անէ. որ նո-
րա խորհուրդներին անտեղեակ
չենք։
Բայց երբոր ես հասայ Տրո- 12
վադա Քրիստոսի աւետարանի
համար, և դուռն ինձ համար
բաց էր Տէրով, իմ հոգու մէջ 13
հանգստութիւն չ՚ունէի. որ իմ
Տիտոս եղբօրն այնտեղ չ՚գտայ.
այլ նորանցից հրաժարելով գնա-
ցի Մակեդոնիա։
Բայց շնորհակալութիւն Ա- 14
ստուծուն՝ որ ամեն ժամանակ մեզ
յաղթող է անում Քրիստոսումը
և իր գիտութեան հոտը մեզա-
նով յայտնվում է ամենայն տեղ։
Որովհետև մենք Քրիստոսի անուշ 15
հոտն ենք Աստուծոյ առաջին,
փրկուածների մէջ և կորածների
մէջ։ Ոմանց համար մահուայ հոտ 16
դէպի մահ. և ոմանց համար
կեանքի հոտ դէպի կեանք. և այս
բաների համար ո՞վ բաւական
կ՚լինի։ Որովհետև շատերին պէս 17
չենք, որ Աստուծոյ խօսքը խար-
դախում են. այլ ինչպէս պար-
զութիւնից, ինչպէս Աստուածա-

նից՝ Աստուծոյ առաջին խօսում
ենք Քրիստոսում։

ԳԼ. Գ

1 Դարձեալ սկսում ե՞նք մեր ան-
ձերը յանձնարարել. կամ թէ
ոմանց պէս պէտք են մեզ յանձ-
նարարական թղթեր ձեզ վերայ՝
կամ ձեզանից յանձնարարական-
2 ներ։ Մեր թուղթը դուք էք՝ մեր
սրտի մէջ գրուած՝ ամեն մարդ-
կանցից իմացուած և կարդաց-
3 ուած։ Դուք յայտնի էք թէ
Քրիստոսի թուղթն էք՝ մեր ծա-
ռայութիւնովը եղած. և գրուած՝
ոչ թէ թանաքով, այլ կենդա-
նի Աստուծոյ Հոգովը. ոչ թէ
քարի տախտակների վերայ, այլ
սրտի մարմնեղէն տախտակների
4 վերայ։ Եւ այսպիսի վստահու-
թիւն ունինք առ Աստուած
5 Քրիստոսի ձեռովը։ Ոչ թէ մենք
մեզանից բաւական ենք մի բան
միտք անելու ինչպէս մեզանից,
այլ մեր բաւական լինելն Աստ-
6 ուածանից է. Որ մեզ բաւական
էլ արաւ Նոր Կտակարանի պաշ-
տօնեայք լինելու՝ ոչ թէ գրի,
այլ հոգու. որովհետև գիրն
սպանում է, այլ հոգին կենդա-
7 նացնում է։ Բայց եթէ մահի
պաշտօնը գրով քարերի վերայ
փորուած՝ փառքով եղաւ, մին-
չև որ Իսրայէլի որդիքը չէին կա-
րող Մովսէսի երեսին մտիկ ա-
նել նորա երեսի փառքի համար,
8 որ խափանուող էր, Ո՞րքան ա-
ւելի հոգու պաշտօնը փառքով
9 չ՚լինի։ Որովհետև եթէ դատա-
պարտութեան պաշտօնը փառ-
քով էր, ապա ո՞րքան աւելի ար-
դարութեան պաշտօնը փառքով
10 է։ Վասնզի այն փառաւորն էլ
փառաւոր չէ այս մասին այն գե-
11 րազանցող փառքի համար։ Որով-
հետև եթէ այն խափանուողը
փառքով էր, ո՞րքան աւելի փառ-
12 քով է հաստատ մնացողը։ Արդ
այսպիսի յոյս ունենալով շատ
համարձակութեամբ ենք վար-
13 վում։ Եւ ոչ թէ ինչպէս Մով-
սէսն իր երեսի վերայ քօղ էր
գցում՝ որ Իսրայէլի որդիքը չը
նայեն խափանուելիք բաներէ վախ-
ճանին. Բայց նորանց միտքը կու- 14
րացաւ. որ մինչև այս օրուայ օրը
այն քօղը մնում է Հին Կտակա-
րանի կարդացմունքի վերայ վեր
չ՚առնուած, որովհետև Քրիստո-
սով խափանվում է։ Այլ մինչև 15
այսօր երբոր Մովսէսին կարդում
են, մի քօղ ընկած է նորանց
սրտերի վերայ։ Բայց երբոր դէպի 16
Տէրը կ՚դառնան, այն քօղը վեր
կ՚առնուի։ Որովհետև Տէրն է Հո- 17
գին. որտեղ որ Տիրոջ Հոգին է՝
այնտեղ է ազատութիւն։ Բայց 18
մենք ամենս՝ բաց երեսով Տիրոջ
փառքն ինչպէս հայելու մէջ
տեսնելով՝ նոյն պատկերի նման
կերպարանափոխվում ենք փառ-
քից դէպի փառք, ինչպէս թէ
Տիրոջ Հոգուցը։

ԳԼ. Դ

Սորա համար այս պաշտօնն ու- 1
նենալով, ինչպէս որ ողորմու-
թիւն գտանք, չենք ձանձրանում,
Այլ ամօթալի ծածուկ բաները 2
մերժել ենք. և խորամանկու-
թեամբ չենք վարվում։ Եւ Ա-
ստուծոյ խօսքն էլ չենք ծռում.
այլ ճշմարտութեան յայտնու-
թիւնովը մեր անձերն ընդունե-
լի ենք անում ամեն մարդկանց
խղճմտանքին՝ Աստուծոյ առաջին։
Իսկ եթէ մեր աւետարանը ծած- 3
կուած էլ լինի, նա կորածների
մէջ է ծածկուած։ Որոնցում այս 4
աշխարհքի աստուածը այն ան-
հաւատների սրտերը կուրացրեց,
որ Քրիստոսի փառաւոր աւետա-
րանի լուսաւորութիւնը չ՚ծագէ
նորանց վերայ. որ աներևոյթ Ա-
ստուծոյ պատկերն է։ Որովհետև 5
մենք ոչ թէ մեր անձերն ենք քա-
րոզում, այլ Տէր Յիսուս Քրիս-
տոսին. և մեզ ձեր ծառաներ Յի-
սուսի համար։ Որովհետև Աստ- 6
ուած որ ասեց թէ խաւարիցը
լոյս ծագէ, ինքը մեր սրտերի մէջ
ծագեցրեց՝ Աստուծոյ փառքի
գիտութեան լուսաւորութիւնը
տալու համար Յիսուս Քրիստոսի

7 գեմքեամբ։ Բայց այս գանձն ունինք հողի անօթներուն մէջ, որ զօրութեան գերազանցութիւնը Աստուծոյ լինի, և ոչ թէ մեզ
8 ցանից։ Ամեն բանի մէջ նեղուած ենք, բայց չենք ճնշուած. կարծր ենք, բայց չենք տարակուսած.
9 դէպ. Հալածուած, բայց երբեք չենք կանգած. վայր բնկած, բայց չը
10 կորած։ Ամեն ժամանակ Յիսուսի մեռնելը մեր մարմնովը կրելով ենք, որ Յիսուսի կեանքն էլ մեր մարմնովը յայտնուի։ Որովհետև մենք կենդանիներս միշտ Յիսուսի համար մահի ենք մատնըւում, որ Յիսուսի կեանքն էլ յայտնուի մեր մահկանացու
12 մարմնովը։ Ա՛յնպէս որ մահը մեզմանում է գործելու, և կեանքը ձեզմանում։ Բայց միևնոյն
13 հաւատքի հոգին ունենալով, ինչպէս գրուած է. Հաւատացի և նորա համար խօսեցի. մենք էլ հաւատալով ենք՝ և որա համար
14 էլ խօսում ենք։ Գիտենալով որ Տէր Յիսուսին յարուցանողը մեզ էլ Յիսուսի հետ կ՚յարուցանէ, և ձեզ հետ իր առաջին կ՚կանգ-
15 նեցնէ։ Որովհետև ամեն բան ձեզ համար է, որ շատացած շնորհքը շատերի գոհութիւնից՝ աւելցնայ Աստուծոյ փառքի համար։
16 Ուստի չենք թուլանում. այլ թէ և մեր դրսի մարդը փճանում է, բայց մեր ներսի
17 մարդն օրեցօր նորոգվում է։ Որովհետև մեր այժմեան թեթև նեղութիւնը յաւիտենական փառքի մեծութիւն է գործում մեզ համար,
18 որ այս երևող բաներին չենք մնիկ անում, այլ աներևոյթներին. որովհետև երևողները ժամանակաւոր են, իսկ չերևողները յաւիտենական։

ԳԼ. Ե

1 Որովհետև գիտենք որ եթէ մեր վրանի երկրաւոր շինուածքը քանդուի, Աստուածմէնից մի շինուածք ունինք՝ անձեռագործ մի տուն, որ յաւիտենական է երկնքումը։ Եւ հենց սորանում
2 հառաչում ենք ցանկանալով հագնել մեր այն բնակութիւնը
3 որ երկնքիցն է։ Միայն թէ՝ երբոր
4 այն հագնենք, մերկ չգտնուինք։ Որովհետև մենք այս վրանի տակ լինողներս հառաչում ենք ծանրութիւն կրելով. որ չենք կամենում հանուիլ, այլ այն ևս վերայ հագնել. որ մահկանացուն կեանքի մէջ ընկղմուի։ Բայց այս
5 բանը մեզ յաջողել տուողը Աստուած է. որ Հոգու գրաւն էլ տուաւ մեզ։ Ուստի համար ամեն
6 ժամանակ համարձակութիւն ունինք, և գիտենք թէ այս մարմնում կենալով Տէրիցը օտարացում ենք։ (Որովհետև հաւատքով ենք գնում, և ոչ թէ երևոյթով։) Բայց վստահ ենք և
8 աւելի ընտրում ենք այս մարմնիցը գուրս գնալ, և Տիրոջ մօտ
9 մնանել։ Ուստի համար էլ ջանք ենք անում, որ թէ կենանք՝ և թէ գուրս գնանք՝ հաճոյ լինենք
10 նորան։ Որովհետև մենք ամենս պէտք է յայտնի լինենք Քրիստոսի առաջի՝ որ ամեն մէկն ընդունի իր մարմնովն՝ ինչ որ գործեց՝ թէ բարի, և թէ չար։
11 Աւդ Տիրոջ սպառնալութիւնը գիտենալով, մարդկանց համոզում ենք. բայց Աստուծոյ առաջին յայտնի ենք. և ես յոյս ունիմ՝ որ ձեր խղճմտանքումն
12 էլ յայտնի ենք։ Ոչ թէ գարձեալ մեր անձերը ձեզ յանձնաբարում ենք. այլ պատճառ ենք տալիս ձեզ՝ մեզ համար պարծենալու, որ մի բան ունենաք նորանց դէմ, որ պարծենում են աչքի առաջին և ոչ թէ սրտով։
13 Որովհետև եթէ գժուած ենք՝ Աստուծոյ համար է. և եթէ զգաստ
14 ենք՝ ձեզ համար է։ Վ՚առնի Քրիստոսի սէրը սոխզում է մեզ՝ որ սա ենք միտք անում, թէ եթէ
15 մէկն ամենի տեղ մեռաւ, ուրեմն ամենը մեռած են. Եւ ամենի համար մեռաւ, որ կենդանի լինողները այլ ևս ոչ թէ իրանց անձերի համար կենդանի լինեն, այլ նորա համար՝ որ իրանց

համար մեռաւ, և յարութիւն
16 առաւ։ Ուրեմն այսուհետև մենք ոչ ոքին չ՚գիտենք՝ մարմնի կողմանէ. և թէև Քրիստոսին էլ գիտէինք մարմնի կողմանէ, այլ
17 հիմա այլ ևս չ՚գիտենք։ Ուրեմն եթէ մէկը Քրիստոսումն է՝ նոր ստեղծուած է. հիները անցան,
18 ահա ամեն բան նոր եղաւ։ Բայց այն ամենն Աստուածմանից է. որ մեզ իրան հետ հաշտեցրեց Յիսուս Քրիստոսի ձեռովը. և մեզ հաշտութեան պաշտօնը տուաւ։
19 Որովհետև Աստուած էր Քրիստոսումն որ աշխարհքը հաշտեցրեց իրան հետ, և նորանց յանցանքները չ՚համարեց նորանց և հաշտութեան խօսքը մեր միջո-
20 ւմը գրաւ։ Արդ Քրիստոսի կողմից պատգամաւորութիւն ենք անում, իբրև թէ Աստուած է յորդորում մեզանով. աղաչում ենք Քրիստոսի տեղ հաշտե-
21 ցեք Աստուծոյ հետ։ Որովհետև Աստուած նորան, որ մեզ չ՚գիտէր, մեզ համար մեղք արաւ, որ մենք Աստուծոյ արդարութիւնը լինենք նորանում։

ԳԼ. Զ

1 Եւ մենք գործակից լինելով նաև աղաչում ենք, որ դուք Աստուծոյ շնորհքը զուր տեղը չ՚ընդունէք։
2 Որովհետև ասում է. Ընդունելի ժամանակում լսեցի քեզ, և փրկութեան օրումն օգնեցի քեզ. ահա հիմա է ընդունելի ժամանակ. ահա հիմա է
3 փրկութեան օր։ Ոչ մի բանով ոչ մի գայթակղութիւն չենք տալիս, որ պաշտօնը չ՚նախատուի.
4 Այլ ամեն բանի մէջ մեր անձերը ընծայում ենք ինչպես Աստուծոյ պաշտօնեաներ՝ շատ համբերութիւնով նեղութիւններում, վիշտերում, չարչարանքներում, կծծերում, բանտերում, խռովութիւններում,
6 աշխատանքներում, հսկումներում, ծոմերում, Սրբութիւնով, գիտութիւնով, երկայնմտութիւնով, քաղցրութիւնով,

Սուրբ Հոգով, անկեղծ սիրով,
7 ճշմարտութեան խօսքով, Աստուծոյ զօրութիւնով, արգանդութեան զէնքերովը աջ կողմից և ձախ կողմից. փառքով և ան-
8 նարգանքով, պատուանքով և գաւաոանքով, ինչպես մոլորեցնողներ՝ բայց ճշմարիտներ. Ինչպես չ՚ճանաչուածներ, բայց լաւ
9 ճանաչուածներ. ինչպես մեռածներ, բայց ահա կենդանի ենք. ինչպես պատժուածներ, բայց
10 չ՚սպանուածներ, ինչպես տրտմածներ, բայց միշտ ուրախներ. ինչպես աղքատներ, բայց շատերին հարստացնողներ. ինչպես թէ
11 ոչինչ չ՚ունեցողներ, բայց ամեն բան ունեցողներ։ Մեր բերանը բացուած է դէպի ձեզ, ով Կորնթացիներ, մեր սիրտը լայնացած է։ Դուք մեզանից նեղու-
12 թիւն չ՚ունիք, միայն թէ ձեր օրտերումն էք նեղվում։ Եւ մի
13 և նոյն հատուցումը ունենալով, (ինչպես թէ որդիների հետ եմ խօսում.) դուք էլ լայնացէք։
14 Անհաւատների հետ պղնձուած լծակից մի լինիք. որովհետև ինչ մասնակցութիւն ունի արդարութիւնը անօրէնութեան հետ. և
15 ինչ հաղորդութիւն ունի լոյսը խաւարի հետ։ Եւ ինչ միաբանութիւն ունի Քրիստոսը Բելիարի հետ. կամ ինչ բաժին
16 ունի հաւատացեալն անհաւատի հետ։ Կամ ինչ համաձայնութիւն ունի Աստուծոյ տաճարը կուռքերի հետ. որովհետև դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք. ինչպես Աստուած ասեց Ես նրանցում կ՚բնակուեմ, և նորանցում մէն կ՚գամ և նորանց Աստուած կ՚լինեմ, և նորանք իմ ժո-
17 ղովուրդ։ Ուստի համար՝ նորանց միջիցը դուրս գնացէք և բաժանուեցէք, ասում է Տէրը, և պիղծ բաներին մի դպչիք։ Եւ ես կ՚ընդունեմ ձեզ, և ես ձեզ Հայր
18 կ՚լինիմ. և դուք ինձ որդիներ և աղջիկներ կ՚լինիք, ասում է Ամենակարող Տէրը։

ԳԼ. Է

1 Արդ այսպիսի խոստումներ ու-
նենալով, սիրելիներ, մեր անձե-
րը սրբենք հոգու և մարմնի ա-
մեն պղծութիւնիցը, սրբութիւնը
կատարենք Աստուծոյ ահովը։
2 Տեղ արէք մեզ. մենք ոչ ոքի
վնաս չենք տուել, ոչ ոքին չենք
փճացրել, ոչ ոքին չենք զրկել։
3 Ոչ թէ դատապարտելու համար
եմ ասում. որովհետև առաջուց
ասեցի, որ դուք մեր սրտերումն
էք՝ չեզ հետ միասին կենդանի լի-
4 նելու և մեռնելու էլ։ Իմ հա-
մարձակութիւնը շատ է դէպի
ձեզ. շատ է իմ պարծանքը ձեզ
վերայ. մխիթարութիւնով լիքն
եմ. ուրախութիւնով աւելա-
ցած եմ մեր ամեն նեղութիւ-
5 նումը։ Որովհետև երբոր հասանք
Մակեդոնիա, մեր մարմինը ոչինչ
հանգիստ չ՚ունեցաւ, այլ ամեն
բանի մէջ նեղվում էինք. դրսիցը
կռիւներ՝ ներսիցն ահ ու վախ։
6 Բայց խոնարհներին մխիթարող
Աստուածը մխիթարեց մեզ Տի-
7 տոսի գալովը. Ոչ միայն նորա
գալովը, այլ և այն մխիթարու-
թիւնովը՝ որով նա ձեր միջումը
մխիթարուել էր, երբոր նա պատ-
մեց մեզ ձեր սրտի փափաքը՝ ձեր
ողբալը՝ և ձեր ջերմեռանդու-
թիւնը ինձ համար, մինչև որ ես
8 աւելի ևս ուրախացայ. Որ թէև
տրտմեցրի ձեզ այն թղթովը՝
չեմ զղջում, թէ և զղջացած էլ
էի, որովհետև տեսնում եմ որ
այն թուղթը, թէև մի փոքր ժա-
9 մանակ, ձեզ տրտմեցրեց։ Հիմա
ուրախ եմ, ոչ թէ նորա համար
որ տրտմեցիք՝ այլ որ տրտմեցիք
ապաշխարութեան համար. որ
դուք Աստուծոյ սաղաթ կերպով
տրտմեցիք, որ մեզանից ոչ մի
10 բանով չ՚վնասուիք։ Որովհետև
Աստուծոյ սաղաթ կերպով տրտ-
մութիւնը, ապաշխարութիւն է
գործում փրկութեան համար ա-
ռանց զղջալու. բայց աշխարհքի
տրտմութիւնը մահ է գործում։
11 Որովհետև ահա հէնց նա որ դուք
Աստուծոյ սաղաթ կերպով տրտ-
մեցիք, որքան ջանք գործեց ձե-
զանում, նաև արդարացումն,
նաև զայրոյթ, նաև վախ, նաև
փափաք, նաև նախանձ, նաև
վրէժխնդրութիւն. ամեն բանով
ցոյց տուիք ձեր անձերը, որ ան-
մեղ էք այն բանումը։ Ուրեմն 12
թէև գրեցի ձեզ՝ ոչ թէ զրկողի
համար էր, և ոչ էլ զրկեալի հա-
մար այլ որ ձեր ջանքը՝ որ մեզ
վերայ ունիք, յայտնի լինի ձեզ
մօտ՝ Աստուծոյ առաջին։ Նորա 13
համար մխիթարուած ենք ձեր
մխիթարութեան համար. և մա-
նաւանդ աւելի ուրախացանք Տի-
տոսի ուրախութեան համար. որ
նորա հոգին ձեր ամենիցը հան-
գիստ էր առած։ Որովհետև ինչ 14
որ էլ ձեզ համար պարծեցայ
նորա առաջին, չ՚ամաչեցի. այլ
ինչպէս ամեն բան ճշմարտութիւ-
նով խօսեցինք ձեզ հետ, այնպէս
էլ մեր պարծանքը ճշմարիտ ե-
ղաւ Տիտոսի առաջին։ Եւ նորա 15
սէրն էլ աւելի է ձեզ վերայ,
երբոր յիշում է ձեր ամենի հնա-
զանդութիւնը, թէ ինչպէս ահով
և դողով ընդունեցիք նորան։
Արդ ուրախ եմ, որ ամեն բանի 16
մէջ վստահութիւն ունիմ ձեզ
վերայ։

ԳԼ. Ը

Բայց, եղբարք, իմացնում ենք 1
ձեզ Աստուծոյ այն շնորհքը, որ
Մակեդոնացիների եկեղեցիներին
տրուած է։ Որովհետև նեղու- 2
թեան մեծ փորձի մէջ նորանց
ուրախութեան առաւելութիւնը
և նորանց ծանր աղքատութիւնը
շատ առատաձեռն եղաւ նորանց
պարզութիւնովը։ Որովհետև ի- 3
րանց կարողութեան չափ, վկա-
յում եմ, և կարողութիւնիցն
էլ աւելի յօժար կամքով, Շատ 4
աղաչանքով աղաչում էին մեզ,
որ այն պաշտօնի ընծան և պաշ-
տօնի հաղորդութիւնը՝ սուրբերի
համար, ընդունենք մենք։ Եւ ոչ 5
թէ որքան որ յոյս ունէինք, այլ
իրանց անձերն էլ տուին առաջ
Տիրոջը և ապա մեզ՝ Աստուծոյ

6 կամքովը. Որ մենք էլ Տիտոսին
աղաչեցինք, որ ինչպէս առաջուց
սկսեց՝ այնպէս կատարէ այդ
7 շնորհքն էլ ձեր միջումը։ Բայց
ինչպէս ամեն բանի մէջ աւելա-
նում էք հաւատքով, և խօս-
քով, և գիտութիւնով, և ամեն
ջանքով, և ձեր սէրովը դէպի
մեզ, որպէս զի այդ շնորհքումն
8 էլ աւելանաք։ Ոչ թէ հրաման
տալով եմ ասում, բայց ուրիշ-
ների ջանք անելու համար, և ձեր
սէրի անկեղծութիւնը փորձելով։
9 Որովհետև գիտէք մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի շնորհքը, որ ձեզ
համար աղքատացաւ նա՝ որ հա-
րուստ էր, որ դուք նորա աղքա-
10 տութիւնովը հարստանաք։ Եւ
այս բանի մէջ մի խրատ եմ տա-
լիս. որ սա օգուտ է ձեզ. որ ոչ
թէ միայն անելը այլ և կամե-
նալն առաջուց սկսեցիք հերուա-
11 նից։ Բայց հիմա անելն էլ կա-
տարեցէք. որ ինչպէս յօժարու-
թիւն կայ կամենալու, այնպէս
էլ կատարելը լինի ունեցածից։
12 Որովհետև եթէ յօժարութիւն
կայ, ունեցածի չափովն է ընդու-
նելի և ոչ թէ չ՚ունեցածի չա-
13 փովը։ Վասնզի ոչ թէ ուրիշնե-
րին հանգստութիւնն եմ կամե-
14 նում, և ձեզ նեղութիւն. Բայց
հաւասարութիւնով՝ այժմեան
ժամանակում ձեր աւելութիւնը
ծառայէ նորանց պակասութեանը,
որ նորանց աւելութիւնն էլ ծա-
ռայէ ձեր պակասութեանը, որ
հաւասարութիւն լինի. ինչպէս
15 գրուած է. Թէ նա որ շատ՝ չ՚ա-
ւելացաւ. և նա որ քիչ՝ չ՚պա-
16 կասեց. Բայց շնորհակալութիւն
Աստուծուն, որ նոյն ջանքը ձեզ
համար տուաւ Տիտոսի սրտի մէջ.
17 Որովհետև նա աղաչանքն ընդու-
նեց, և շտապելով յօժար կամ-
18 քով ձեզ մօտ եկաւ։ Եւ նորա
հետ ուղարկեցինք այն եղբօրը,
որ գովասանք սանի աւետարա-
նումն ամեն եկեղեցիների մէջ։
19 Եւ ոչ թէ միայն այսքան, այլ
եկեղեցիներիցն էլ ընտրուած՝
մեր ճանապարհորդութեան ընկեր
այս շնորհքումը, որին մենք
ծառայում ենք Տիրոջ փառքի
համար և ձեր յօժար սրտովը.
Այս բանիցն զգուշանալով, որ 20
չ՚լինի թէ մէկը արատաւորէ մեզ
այս առատութիւնում, որին մենք
ծառայում ենք։ Որովհետև մտա- 21
ծում ենք բարի բաներ անել՝ ոչ
միայն Տիրոջ առաջին, այլ և
մարդկանց առաջին։ Եւ նորանց 22
հետ ուղարկեցինք մեր եղբօրը՝
որին փորձել ենք շատ բաների
մէջ շատ անգամ որ ժիր է. և
հիմա էլ աւելի ջանք անող այն
մեծ վստահութեամբը որ սանի
դէպի ձեզ։ Իսկ եթէ Տիտոսի 23
համար խօսք լինի, նա իմ ընկերն
է՝ և ձեզ համար իմ գործակիցը.
և եթէ մեր եղբայրների համար,
նորանց եկեղեցիների *առաքեալ-
ներ են՝ և Քրիստոսի փառքը։
Ուրեմն ձեր սէրի և մեր ձեր հա- 24
մար պարծենալու ապացոյցը ցոյց
տուէք դորանց ամեն եկեղեցի-
ների առաջին։

ԳԼ. Թ

Որովհետև սուրբերի համար լի- 1
նելու պաշտօնի մասին, աւելորդ
է ինձ ձեզ գրելը։ Վասնզի գի- 2
տեմ ձեր յօժարութիւնը, որով
Մակեդոնացիների մէջ ձեզ հա-
մար պարծենում եմ. թէ Աքա-
յեցիները հերուանից պատրաստ
են, և ձեր նախանձը շատերին
գրգռեց։ Եւ եղբայրներին ու- 3
ղարկեցի, որ մեր ձեզ վերայ
պարծենալն զուր չ՚լինի այս մա-
սին. այլ ինչպէս ասել եմ, պատ-
րաստուած լինիք։ Որ չ՚լինի թէ՝ 4
երբոր Մակեդոնացիներ ինձ հետ
գան՝ և ձեզ անպատրաստ գըտ-
նեն, ամօթով լինենք մենք (որ
չ՚ասենք թէ՝ դուք,) այս պար-
ծանքի վստահութեամբը։ Արդ 5
հարկաւոր համարեցի եղբայրնե-
րին աղաչել, որ առաջ ձեզ մօտ
գան, և առաջուց պատրաստեն
ձեր առաջուց խոստացած †օրհ-
նութիւնը, որ պատրաստ լինի,

*ուղարկուածներ
†կամ՝ ընծան

այնպէս ինչպէս օրհնութիւն, և
ոչ թէ ինչպէս ագահութիւն։
6 Որովհետև սա եմ ասում, թէ
խնայելով սերմողը, խնայելով էլ
կ'հնձէ. և առատութեամբ սեր-
մողը, առատութեամբ էլ կ'հնձէ։
7 Ամեն մէկն ինչպէս որ սրտի յօ-
ժարութիւն կայ, ոչ թէ տրտմու-
թիւնով կամ հարկադրութիւ-
նով. որովհետև Աստուած սի-
8 րում է ուրախ տուողին։ Բայց
Աստուած կարող է ամեն շնորհք-
ներն աւելացնել ձեզանում. որ
ամեն բանի մէջ ամեն ժամանակ
ամեն բաւականութիւն ունենա-
լով ամեն բարի գործի համար
9 աւելանաք։ Ինչպէս գրուած է.
Փռեց աղքատներին տուաւ. Նո-
րա արդարութիւնը մնում է յա-
10 ւիտեան։ Բայց նա՝ որ սերմ ցա-
նողին սերմ է պարգևում, և
հաց՝ կերակուրի համար, նա կը
պարգևէ և կ'շատացնէ ձեր սեր-
մունքը, և կ'աճեցնէ ձեր արդա-
11 րութեան պտուղը։ Ամեն բանի
մէջ հարստացած ամեն լիութիւ-
նով որ մեզանով գոհութիւն է
12 բերում Աստուծուն։ Որովհետև
այս տուրքի պաշտօնը ոչ թէ մի-
այն սուրբերի պակասութիւնն է
լրացնում, այլ և շատերի գո-
հութիւնը շատացնում է Աս-
13 տուծոյ համար։ Որ այս պաշտօ-
նի փորձովն Աստուծուն փառա-
ւորեն ձեր Քրիստոսի աւետարա-
նին հնազանդ դաւանութեանը
համար. և այն առատ հաղոր-
դութեան համար որ նորանց և
14 ամենին լինում է. Եւ նորանց ա-
ղօթքովը ձեզ համար, որ փա-
փաքեն ձեզ Աստուծոյ այն ա-
ռատ շնորհքի համար՝ որ ձեզա-
15 նում է։ Եւ շնորհակալութիւն
Աստուծուն նորա անպատմելի
պարգևի համար։

ԳԼ. Ժ

1 Բայց ես ինքս՝ Պօղոս աղաչում
եմ ձեզ Քրիստոսի հեղութիւ-
նովն ու հանդարտութիւնովը, որ
խոնարհ եմ երես առ երես ձեր
միջումը լինելիս, իսկ հեռուից
համարձակ եմ դէպի ձեզ։ Ա- 2
ղաչում եմ որ չ'լինի՝ թէ մօտից
էլ այն վստահութիւնով համար-
ձակ լինեմ որ համարում եմ
յանդգնիլ մի քանիսի դէմ, որ
մեզ համար կարծում են՝ թէ
մարմնաւորապէս ենք վարվում։
Որովհետև թէ և *մարմնով ենք 3
վարվում, բայց մարմնաւորապէս
չենք զինուորութիւն անում։ Ո- 4
րովհետև մեր զինուորութեան
զէնքերը մարմնաւոր չեն, այլ Ա-
ստուծով զօրաւոր, բերդեր քան-
դելու. խորհուրդներ ենք քան-
դում, Եւ ամեն բարձրութիւն՝ 5
որ գոռոզանում է Աստուծոյ գի-
տութեան դէմ. և գերի ենք
բռնում ամեն միտք Քրիստոսին
հնազանդեցնելու համար։ Եւ 6
պատրաստ ենք վրէժ առնելու
ամեն անհնազանդութեան հա-
մար՝ երբ որ ձեր հնազանդու-
թիւնը կատարեալ լինի։ Երեսի՞ 7
էք նայում. եթէ մէկն իր անձի
վերայ վստահ է թէ Քրիստոսինն
է, թող իր մտքումն այս էլ մտա-
ծէ, թէ ինչպէս որ նա Քրիստո-
սինն է, այնպէս էլ մենք ենք
Քրիստոսինը։ Որովհետև եթէ մի 8
աւելի բան պարծենալու լինեմ
մեր իշխանութեան համար որ
Տէրը տուաւ մեզ՝ ձեր շինութեան
և ոչ թէ կործանման համար,
չեմ ամաչիլ։ Որ չ'երևիմ իբր 9
թէ վախեցնում եմ ձեզ այս
թղթերովը։ Որովհետև թղթերը՝ 10
ասում են՝ ծանր են և սաստիկ.
բայց մարմնի կերպարանքը տկար՝
և խօսքն էլ անարդ։ Այնպիսին 11
թող սա միտք անէ, թէ ինչպէս
որ ենք հեռուանց խօսքով մեր
թղթերովը, այնպէս էլ ենք մօ-
տանց գործով։ Որովհետև չենք 12
համարձակում մեր անձը կշռել
և բաղդատել ոմանց հետ՝ որ ի-
րանց անձերը գովելով յանձնա-
րարում են. այլ նորանք իրան-
ցով իրանց անձերը չափելով, և
իրանց անձերը իրանց հետ բաղ-
դատելով, չեն հասկանում։ Բայց 13
մենք չափից դուրս չենք պարծե-

*Յուն. մարմնի մէջ

նում. այլ այն կանոնի չափովը,
որն Աստուած բաժանեց մեզ՝
14 հասնել մինչև ձեզ մօտ էլ։ Որ
ոչ թէ իբր թէ ձեզ մօտ չ'հա-
սած մեր անձերը երկայնացնում
ենք. որովհետև մինչև ձեզ մօտ
էլ հասանք Քրիստոսի աւետա-
15 րանովը։ Եւ չափից դուրս չենք
պարծենում՝ ուրիշների աշխա-
տանքով, բայց յուսալով թէ
ձեր հաւատքը աճելիս՝ մենք էլ
կ'մեծանանք ձեզանում մեր կա-
նոնի չափովը՝ առաւելութեամբ։
16 Որ ձեզանից այն կողմն էլ աւե-
տարանը քարոզենք՝ և օտար կա-
նոնով պատրաստուածների վերայ
17 չ'պարծենանք։ Եւ ով որ պարծե-
նում է՝ թող Տէրովը պարծենայ։
18 Որովհետև ոչ թէ իր անձը յանձ-
նարարողն է ընտիր. այլ նա՝ ո-
րին Տէրն է յանձնարարում։

ԳԼ. ԺԱ

1 Երանի թէ մի քիչ իմ անմտու-
թեանը ներէիք. բայց ներում էլ
2 էք ինձ։ Վասնզի ձեզ համար
նախանձաւոր եմ Աստուծոյ նա-
խանձովը. որովհետև ձեզ մի
մարդի նշանեցի՝ որ մի սուրբ
կոյս կանգնեցնեմ Քրիստոսի ա-
3 ռաջին։ Բայց վախենում եմ՝ մի
գուցէ ինչպէս օձն իր խորաման-
կութեամբը խաբեց Եւային, այն-
պէս էլ ձեր միտքն ապականուի
այն միամտութիւնիցը՝ որ Քրիս-
4 տոսումն է։ Որովհետև եթէ մէկը
գայ և ուրիշ Յիսուս քարոզէ՝ որ
մենք չ'քարոզեցինք, կամ ուրիշ
հոգի առնէք՝ որ չ'առաք, կամ
ուրիշ աւետարան որ չ'ընդունե-
5 ցիք, լաւ կ'համբերէիք։ Որովհե-
տև կարծեմ թէ ոչ մի բանով
պակաս չեմ քան թէ մեծամեծ
6 առաքեալները։ Թէև տգէտ լի-
նիմ խօսքով, բայց ոչ թէ գի-
տութիւնով. այլ ամեն բանի
մէջ բոլորովին յայտնուեցանք
7 ձեզ։ Կամ թէ մե՞ղք գործեցի՝
որ իմ անձը խոնարհեցրի. որ
դուք բարձրանաք. որովհետև
Աստուծոյ աւետարանը ձրի ա-
8 ւետարանեցի ձեզ։ Ուրիշ եկե-
ղեցիներ կողոպտեցի. և վարձք
առայ ձեզ ծառայելու համար։
Եւ երբոր ձեզ մօտ էի՝ մի բանի 9
պակասութիւն քաշած ժամա-
նակս էլ, ձեզանից մէկին ծան-
րութիւն չ'տուի. որովհետև իմ
պակասութիւնը Մակեդոնիայից
եկած եղբարքը լրացրին. և ամեն
բանի մէջ իմ անձն առանց ձեզ
ծանրութիւն տալու պահեցի, և
կ'պահեմ էլ։ Քրիստոսի ճշմար- 10
տութիւնն է ինձանում. որ այս
պարծանքն Աքայիայի կողմերու-
մը չի խափանուիլ ինձանից։ Ին- 11
չու համար. որովհետև ձեզ չե՞մ
սիրում. Աստուած գիտէ։ Այն 12
որ անում եմ՝ կ'անեմ էլ, որ
պատճառ որոնողների պատճառը
կտրեմ. որ ինչով որ պարծենում
են՝ նորանք էլ մեզ նման գտնուին։
Որովհետև այնպիսիները սուտ ա- 13
ռաքեալներ, նենգաւոր մշակներ,
Քրիստոսի առաքեալների պէս
կերպարանուողներ են։ Եւ զար- 14
մանալի էլ չէ. որովհետև սատա-
նան ինքն էլ լոյսի հրեշտակի
կերպարանքն իրան վերայ է առ-
նում։ Ուրեմն մեծ բան չէ որ 15
նորա պաշտօնեաներն էլ կերպա-
րանուին արդարութեան պաշ-
տօնեաների նման. որոնց վերջը
իրանց գործերին պէս կ'լինի։
Դարձեալ ասում եմ. չ'լինի որ 16
մէկն ինձ յիմար համարէ. ապա
թէ ոչ գոնեա յիմարի պէս ընդ-
ունեցէք ինձ որ ես էլ մի քիչ
պարծենամ։ Ինչ որ խօսում եմ, 17
ոչ թէ Տիրոջ կամքի համեմատ
եմ խօսում, այլ ինչպէս անմտու-
թեամբ այս պարծանքի նիւթին
նկատմամբ։ Եւ որովհետև շա- 18
տերը մարմնի կողմանէ պարծե-
նում են, ես էլ կ'պարծենամ։
Վասնզի յօժարութեամբ համբե- 19
րում էք անմիտներին՝ իմաստուն
գոլով։ Որովհետև համբերում 20
էք, եթէ մէկը ձեզ ծառայեցնէ,
եթէ մէկը ձեր բանն ուտէ, եթէ
մէկը բան առնէ, եթէ մէկը գո-
ռոզանայ, եթէ մէկը ձեր երե-
սին զարկէ։ Անարգանքի համար 21
եմ ասում. իբր թէ մենք տկար
էինք. ինչ բանով որ մէկը հա-

մարձակէ պարծենալ, անմտու-
թիւնով եմ ասում, ես էլ եմ
22 համարձակում։ Եբրայեցի՞ են,
ես էլ. Իսրայէլացի՞ են, ես էլ.
Աբրահամի զաւա՞կ են, ես էլ։
23 Քրիստոսի պաշտօնեանե՞ր են,
յիմարութիւնով եմ ասում՝ թէ
էլ աւելի ես, մանաւանդ աշխա-
տանքներով, ծեծերով էլ աւե-
լի, բանտերի մէջ մանաւանդ,
24 մահերով շատ անգամ։ Հրէա-
ներիցը հինգ անգամ՝ քառա-
սունից մէկը պակաս ծեծ ընդու-
25 նեցի։ Երեք անգամ ձաղկով
ծեծուեցայ. մէկ անգամ քար-
կոծուեցայ. երեք անգամ նա-
ւակոծ եղայ. մի ցերեկ ու գի-
26 շեր անդնդումը մնացի։ Շատ ան-
գամ ճանապարհներում. դետե-
րից վտանգներ, աւազակներից
վտանգներ, ազգիցս վտանգներ,
հեթանոսներից վտանգներ, քա-
ղաքի մէջ վտանգներ, անապա-
տի մէջ վտանգներ, ծովի մէջ
վտանգներ, սուտ եղբայրներից
27 վտանգներ։ Ջանքի մէջ և աշ-
խատանքի մէջ. շատ անգամ
արթնութիւնների մէջ. սովի և
ծարաւի մէջ. շատ անգամ ծոմի
մէջ. ցրտի և մերկութեան մէջ։
28 Բացի արտաքին նեղութիւնները,
ինձ վերայ կիտվում է՝ ամեն օր
29 ամեն եկեղեցիների հոգսը։ Ո՞վ
կ՚տկարանայ՝ և ես չեմ տկարա-
նալ. ո՞վ կ՚գայթակղէ՝ և ես
30 չեմ բորբոքուիլ։ Եթէ պարծե-
նալ պէտք լինի, իմ տկարու-
31 թիւնովը կ՚պարծենամ։ Աստ-
ուած և մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի Հայրը՝ որ յաւիտեան օրհ-
նեալ է՝ գիտէ որ սուտ չեմ ա-
32 սում. Դամասկոսումն Արետա
թագաւորի ազգապետը Դամաս-
կացիների քաղաքումը պահա-
պաններ էր դրել, որ ինձ բռնէ.
33 Եւ ես պատուհանիցը քթոցով
կախուեցայ պարսպիցը, և փա-
խայ նորա ձեռիցը։

ԳԼ. ԺԲ

1 Պարծենալը յիրաւի օգուտ չէ
բերում ինձ. բայց կ՚գամ Տիրոջ
տեսիլքներին և յայտնութիւնն-
երին։ Մէկ մարդ գիտեմ Քրիստո- 2
սումը տասնեւչորս տարուց ա-
ռաջ, թէ մարմնով էր՝ չ՚գիտեմ,
և թէ առանց մարմնի էր՝ չ՚գի-
տեմ, Աստուած գիտէ. նա յա-
փշտակուեցաւ մինչև երրորդ
երկինքը։ Եւ գիտեմ այնպիսի 3
մարդին թէ մարմնով՝ և թէ ա-
ռանց մարմնի էր՝ չ՚գիտեմ. Աստ-
ուած գիտէ. Որ նա յափշտակ- 4
ուեցաւ դրախտի մէջ. և անա-
սելի բաներ լսեց՝ որ մարդի պէտք
չէ նորանց խօսել։ Այնպիսուն 5
համար կ՚պարծենամ. բայց իմ
անձի համար չեմ պարծենալ,
բայց միայն իմ տկարութիւնն-
երովը։ Որովհետև եթէ կամենամ 6
էլ պարծենալ՝ անմիտ չեմ լինիլ.
որ ճշմարիտն եմ ասում. բայց
խնայում եմ, որ մի գուցէ մէկն
ինձ համար աւելի բան համարէ,
քան թէ այն՝ որ ինձանում տես-
նում է կամ ինձանից լսում։ Եւ 7
որ յայտնութիւնների առաւելու-
թեամբը չ՚հպարտանամ, մարմ-
նիս համար խայթ տրուեցաւ
ինձ՝ սատանայի հրեշտակ, որ ինձ
բռունցքով ծեծէ, որ չ՚գոռոզա-
նամ։ Սորա համար երեք անգամ 8
աղաչեցի Տիրոջը, որ նորան հե-
ռացնէ ինձանից։ Եւ նա ինձ ա- 9
սեց. Բաւական է քեզ իմ շնորհ-
քը, որովհետև իմ զօրութիւնը
տկարութեան մէջ է կատար-
վում. արդ աւելի յօժարու-
թեամբ իմ տկարութիւններովը
կ՚պարծենամ. որ Քրիստոսի զօ-
րութիւնը բնակուէ ինձանում։
Վասնորոյ հաւանել եմ տկա- 10
րութիւնների, թշնամանքների,
վիշտերի, հալածանքների, և նե-
ղութիւնների Քրիստոսի համար.
որ երբոր տկարանում եմ, այն
ժամանակ զօրանում եմ։ Անմիտ 11
եղայ պարծենալովս. դուք ինձ
բռնադատեցիք. որ պէտք էր ինձ
վկայութիւն առնել ձեզանից.
որովհետև ոչ մի բանով պակաս
չ՚եղայ քան թէ այն մեծամեծ
առաքեալները, թէև ես ոչինչ
եմ։ Բայց առաքեալի նշանները 12
ձեր մէջ գործուեցան՝ ամեն համ-

բերութիւնով, նշաններով և
հրաշքներով և զօրութիւններով։
13 Որովհետև ի՞նչ է որ նորանով
պակաս գտնուեցաք քան թէ ու-
րիշ եկեղեցիները. եթէ ոչ նո-
րանով՝ որ ես ծանրութիւն չ՚տուի
ձեզ. ներեցէք ինձ այդ վնասը։
14 Ահա երրորդ անգամն է որ
պատրաստ եմ ձեզ մօտ գալու,
և ձեզ ծանրութիւն չեմ տալ.
որովհետև ձեր բանը չեմ որո-
նում՝ այլ ձեզ. նորա համար որ
ոչ թէ որդիքը հայրերի համար
պէտք է գանձ հաւաքեն, այլ
15 հայրերը որդկանց համար։ Բայց
ես յօժարութեամբ ձեր անձերի
համար ծախք կ՚անեմ, և ծախք
կ՚լինիմ. թէև աւելի սիրելով
ձեզ՝ ես քիչ սիրուիմ։
16 Բայց թող լինի. ես ծանրու-
թիւն չ՚եղայ ձեզ. սակայն խո-
րագէտ լինելով՝ վարպետու-
17 թեամբ բռնեցի ձեզ։ Մի՞թէ
նորանց ձեռովը՝ որ ձեզ մօտ ու-
ղարկեցի՝ մի բան քաշեցի ձեզա-
18 նից։ Աղաչեցի Տիտոսին՝ և նորա
հետ այն եղբօրն էլ ուղարկեցի,
մի՞թէ Տիտոսը ձեզանից մի բան
քաշեց. չէ՞ որ մենք նոյն հոգով
վարուեցանք. չէ՞ որ նոյն ճանա-
պարհով գնացինք։
19 Դարձեալ կարծո՞ւմ էք թէ
մենք խօսքով մեզ պաշտպանում
ենք. Աստուծոյ առաջին Քրիս-
տոսումը խօսում ենք. և ամեն
բան, սիրելիներ, ձեր շինութեան
20 համար է։ Որովհետև վախենում
եմ, որ մի գուցէ իմ գալու ժա-
մանակը ձեզ այնպէս չ՚գտնեմ՝
ինչպէս կամենում եմ. և ես
գտնուիմ ձեզ համար ինչպէս էլ
դուք չէք կամենում. որ չ՚լինին
կռիւներ, նախանձներ, բարկու-
թիւններ, դրդռութիւններ, չա-
բախօսութիւններ, քսութիւն-
ներ, ամբարտաւանութիւններ,
21 խռովութիւններ։ Որ մի գուցէ
դարձեալ իմ գալու ժամանակ՝
իմ Աստուածն ինձ ցածացնէ ձեզ
մօտ. և սուգ մտնեմ շատերի
համար որ առաջուց մեղք գոր-
ծեցին, և ապաշխարած չ՚լինին
այն պղծութեան և պոռնկու-
թեան և գիճութեան համար՝ որ
գործեցին։

ԳԼ. ԺԳ

Այս երրորդ անգամն է որ ձեզ 1
մօտ եմ գալիս. երկու և երեք
վկաների բերանից ամեն բան կը
հաստատուի։ Առաջուց ասեցի և 2
առաջ էլ ասում եմ իբր մօտ
լինող երկրորդ անգամ. և հիմա
հեռուանց գրում եմ այն առա-
ջուց մեղք գործածներին և ամեն
ուրիշներին. որ եթէ դարձեալ
գամ, չեմ խնայիլ։ Քանի որ 3
դուք ապացոյց էք որոնում թէ
Քրիստոսն ինձանով խօսում է,
նա որ ձեր միջումը տկար չէ, այլ
զօրաւոր է ձեզանում։ Որովհետև 4
թէև խաչուեցաւ տկարութիւ-
նից, բայց կենդանի է Աստուծոյ
զօրութիւնովը. որ մենք էլ թէև
տկարանում ենք նորա համար՝
բայց կենդանի կ՚լինենք նորա
հետ Աստուծոյ զօրութիւնովը
ձեզ համար. Փորձեցէք ձեր ան- 5
ձերը, թէ արդեօք հաւատքո՞ւմն
էք. քննեցէք ձեր անձերը. կամ
թէ չ՚գիտէ՞ք ձեր անձերը՝ որ Յի-
սուս Քրիստոսը ձեզանում է.
միայն եթէ անպիտան լինիք։ Բայց 6
յոյս ունիմ որ գիտենաք, թէ
մենք անպիտան չենք։ Եւ ես ա- 7
ղօթում եմ դէպի Աստուած որ
չար բան չ՚անէք. ոչ թէ որ մենք
ընտիր երևինք, բայց որ դուք
բարին գործէք, և մենք անպի-
տանի պէս լինենք։ Որովհետև մի 8
բան չենք կարող ճշմարտութեան
դէմ. բայց ճշմարտութեան հա-
մար։ Ուրախանում ենք, երբոր 9
մենք տկարանում ենք և դուք
զօրանում էք. որ հէնց դա էլ
աղօթքով խնդրում ենք, այսինքն
ձեր կատարելութիւնը։ Նորա 10
համար այս հեռուանց գրում
եմ. որ չ՚լինի թէ իմ գալու ժա-
մանակ սաստկութեամբ վարուիմ
իմ իշխանութեան չափովը, որ
Տէրը տուաւ ինձ շինելու և ոչ
թէ քանդելու համար։
Վերջապէս, եղբարք, ուրախ 11
եղէք, կատարեալ եղէք, մխի-

թարուեցէք, միաբան եղէք, և
խաղաղութիւն արէք. և սէրի և
խաղաղութեան Աստուածը ձեզ
12 հետ լինի։ Իրար բարև տուէք
սուրբ համբոյրով. բարև են տա-
լիս ձեզ բոլոր սուրբերը։ Տէր Յի- 13
սուս Քրիստոսի շնորհքը, և Ա-
ստուծոյ սէրը, և Սուրբ Հոգու
հաղորդութիւնը ձեր ամենի հետ.
Ամէն։

ՊՕՂ ՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս առաքեալ ոչ թէ մարդ-
կանցից և ոչ թէ մարդի ձեռով,
այլ Յիսուս Քրիստոսի և Հայր
Աստուծոյ ձեռովը, որ մեռելնե-
րից յարութիւն տուաւ նորան։
2 Եւ ամեն եղբարքը՝ որ ինձ հետ
են. Գաղատիայի եկեղեցիներիդ։
3 Շնորհք լինի ձեզ և խաղաղու-
թիւն Հայր Աստուածանից և մեր
4 Տէր Յիսուս Քրիստոսից, Որ իր
անձը մեր մեղքերի համար տուաւ,
որ մեզ այս չար աշխարհքիցը
փրկէ՝ Աստուծոյ և մեր Հօր կամ-
5 քի պէս։ Որին լինի փառք յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն։
6 Զարմանում եմ, որ այսպէս
շուտով փոփոխվում էք ձեզ
Քրիստոսի շնորհքի մէջ կանչողից
7 դէպի ուրիշ աւետարան։ Որ ու-
րիշը չ՚կայ. միայն թէ կան ոմանք
որ ձեզ խռովեցնում են, և կա-
մենում են Քրիստոսի աւետա-
8 րանը փոխել։ Բայց եթէ մենք
էլ, կամ երկնքիցը մի հրեշտակ
աւետարանէ ձեզ նորանից ու-
րիշ քան թէ որ մենք աւետա-
րանեցինք ձեզ, նզովուած լինի։
Ինչպէս առաջ ասեցինք՝ և հիմա 9
դարձեալ ասում եմ, եթէ մէկն
աւետարանէ ձեզ նորանից ուրիշ
քան որ դուք առաք՝ նզովուած
լինի։ Որովհետև հիմա մարդկա՞նց 10
եմ հաճեցնում, թէ Աստուծուն.
կամ ուզում եմ մարդկա՞նց հա-
ճոյ լինել. եթէ տակաւին մարդ-
կանց հաճոյ լինէի, Քրիստոսի
ծառայ չէի։
Իմացնում եմ ձեզ, եղբարք, 11
այն աւետարանը, որ ինձանից ա-
ւետարանուեցաւ, որ նա մարդից
չէ։ Որովհետև ես էլ ոչ մարդից 12
առայ նորան, և ոչ էլ սովորեցի.
այլ Յիսուս Քրիստոսի յայտնու-
թիւնովը։ Վասնզի դուք իմ վար- 13
քը լսել էք, որ մի ժամանակ
Հրէութեան մէջ էի. որ չափիցը
դուրս հալածում էի Աստուծոյ
եկեղեցին, և կործանում էի նո-
րան։ Եւ Հրէութեան մէջ իմ 14
հասակակիցների շատերից յա-
ռաջադէմ էի իմ ազգի մէջ, ա-
ւելի նախանձաւոր լինելով իմ
հայրենական աւանդութիւնների
համար։ Բայց երբոր բարեհաճեց 15
Աստուած, որ իմ մօր որովայ-
նիցն ինձ որոշել և իր շնորհքովն

16 կանչել է, Որ իր Որդին ինձանով
յայտնէ. որ նորան հեթանոսների
միջումն աւետարանեմ. այն ժա-
մանակ իսկոյն մարմնի և արիւնի
17 հետ խորհուրդ չ՚արի. Եւ ոչ էլ
գնացի Երուսաղէմ նորանց մօտ,
որ ինձանից առաջ առաքեալներ
էին. այլ գնացի Արաբիա, և
18 կրկին դարձայ Դամասկոս։ Այ-
նուհետև երեք տարուց յետոյ
գնացի Երուսաղէմ, Պետրոսին
տեսնելու. և տասնևհինգ օր նո-
19 րա մօտ եղայ։ Եւ առաքեալնե-
րից մի ուրիշին չ՚տեսայ, բայց
միայն Տիրոջ եղբայր՝ Յակոբին։
20 Բայց ինչ որ ձեզ գրում եմ,
ահա Աստուծոյ առաջին, որ
21 սուտ չեմ ասում։ Յետոյ եկայ
Սիւրիայի և Կիլիկիայի կողմերը։
22 Եւ երեսով անծանօթ էի Հրէ-
աստանի եկեղեցիներին՝ որ Քրիս-
23 տոսումն էին։ Բայց միայն լսել
էին, թէ Նա որ մի ժամանակ
մեզ հալածում էր, հիմա այն
հաւատքն է աւետարանում որ
24 առաջ կործանում էր։ Եւ ին-
ձանով փառաւորում էին Ա-
ստուծուն։

ԳԼ. Բ

1 Ապա տասնևչորս տարուց յե-
տոյ դարձեալ գնացի Երուսա-
ղէմ, Բառնաբասի հետ, և Տի-
2 տոսին էլ ինձ հետ առայ։ Եւ
գնացի յայտնութիւնով. և նո-
րանց իմացրի այն աւետարանը՝
որ քարոզում եմ հեթանոսների
մէջ, և մասնաւորապէս նորանց՝
որ Հ՞ի կարծուած էին. որ չ՚լինի
3 թէ զուր տեղը վազեմ կամ վա-
զած լինեմ։ Բայց Տիտոսն էլ որ
ինձ հետ էր՝ Հելլենացի լինելով,
չ՚բռնադատուեցաւ թլփատուե-
4 լու։ Եւ այն ներս պրծած սուտ
եղբայրների պատճառով, որ ներս
պրծան մեր ազատութիւնը լրտե-
սելու համար, որ Քրիստոս Յի-
սուսումն ունինք, որ մեզ ծա-
5 ռայեցնեն։ Որոնց մի ժամ էլ ա-
կանջ չ՚դրինք՝ հնազանդ լինելու
համար, որ աւետարանի ճշմար-
տութիւնը ձեզանում հաստատ-
մնայ։ Բայց այն Հ՞ի կարծուած- 6
ների համար, թէ մի բան լինին,
(թէ ինչ էին մի ժամանակ, նա
ես հոգս չեմ անում. Աստուած
*աչառութիւն չէ անում.) որ
այն Հ՞ի կարծուածներն այնպիսի
բան չ՚իմացրին ինձ։ Բայց ընդհա- 7
կառակը, երբոր տեսան թէ ան-
թլփատութեան աւետարանն ինձ
հաւատացուած է, ինչպէս Պետ-
րոսին թլփատութեան աւետարա-
նը. (Որովհետև նա որ Պետրոսին 8
յաջողեց թլփատութեան առա-
քելութիւնում, ինձ էլ յաջողեց
հեթանոսների մէջ։) Եւ երբոր 9
իմացան այն շնորհքը որ ինձ տրը-
ուած էր, Յակոբոսը և Կեփասը
և Յովհաննէսը, որ սիւներ էին
կարծուած, ինձ և Բառնաբասին
աջ ձեռը տուին հաղորդակցու-
թեան համար. որ մենք հեթա-
նոսների մէջ լինինք, և նորանք
թլփատութեան մէջ։ Բայց միայն 10
որ ազքատները յիշենք. որ ես էլ
ջանք արի նոյնն անելու։ Բայց 11
երբ որ Պետրոսը եկաւ Անտիոք,
ես նորան հակառակ կեցայ, որ
մեղադրելի էր։ Վասնզի մի քա- 12
նի մարդիկ դեռ չ՚եկած Յակոբի-
ցը, նա անխտիր ուտում էր հե-
թանոսների հետ. բայց երբոր ե-
կան, ետ էր քաշվում և իր անձը
ջոկում, վախենալով նորանցից
որ թլփատութիւնիցն էին։ Եւ 13
նորա հետ ուրիշ Հրէաներն էլ
կեղծաւորութիւն տրին. մինչև
որ Բառնաբասն էլ ծռուեցաւ նո-
րանց կեղծաւորութիւնովը։ Բայց 14
երբոր տեսայ, որ աւետարանի
ճշմարտութեան համեմատ ու-
ղիղ չեն գնում, ամենքի առա-
ջին ասեցի Պետրոսին. Եթէ դու,
Հրէայ լինելովդ, հեթանոսի պէս
ես վարվում և ոչ թէ Հրէայի
պէս, էլ ի՞նչու ես բռնադատում
հեթանոսներին որ Հրէայի պէս
վարուին։ Մենք որ բուն Հրէաներ 15
ենք, և ոչ թէ հեթանոսների մի-
ջից մեղաւորներ. Գիտենք որ 16
մարդ օրէնքի գործերիցը չէ ար-
դարանում, բայց միայն Յիսուս

*Յուն. մարդի անձ չէ ընդունում.

Քրիստոսի հաւատքիցը. և մենք
Ցիսուս Քրիստոսին հաւատացինք,
որ Քրիստոսի հաւատքիցն ար-
դարանանք, և ոչ թէ օրէնքի
գործերիցը. որովհետև օրէնքի
գործերիցն ոչ մի մարմին չի ար-
17 դարանալ. իսկ եթէ մենք որ
ուզում ենք Քրիստոսով արդա-
րանալ, ինքներս էլ մեղաւոր
գտանուինք, ուրեմն Քրիստոսը
մեզքի պաշտօնեայ է. քաւ լիցի։
18 Վասնզի՝ եթէ այն որ քանդեցի՝
նորան կրկին շինեմ, ապա ես
ինքս իմ անձը մեղաւոր եմ երե-
19 ւեցնում. որովհետև ես օրէն-
քովն օրէնքին մեռայ, որ ապ-
րեմ Աստուծոյն. ես Քրիստոսի
20 հետ խաչուած եմ, և կենդանի
եմ, ոչ թէ այլ ևս ես, այլ
Քրիստոս է կենդանի ինձանում.
և ինչ որ հիմա կենդանի եմ
մարմնով՝ Աստուծոյ Որդու հա-
ւատքովն եմ կենդանի. որ ինձ
սիրեց և իր անձը ինձ համար
21 մատնեց։ և ես Աստուծոյ շնոր-
քը չեմ անարգում. որովհետև
եթէ արդարութիւնն օրէնքիցն
էր, ուրեմն Քրիստոսը զուր տեղ
մեռաւ։

Գլ. Գ

1 Ո՛վ անմիտ Գաղատացիներ, ո՞վ
կախարդեց ձեզ որ ճշմարտու-
թեանը չ'հնազանդիք. որոնց հա-
մար աչքերի առաջին նկարա-
գրուեցաւ Յիսուս Քրիստոսը
2 խաչուած ձեր մէջ։ Այս միայն
կամենում եմ սովորել ձեզանից.
օրէնքի գործերի՞ց ընդունեցիք
Հոգին՝ թէ հաւատքի լսելուցը։
3 Այդքան անմի՞տ էք. Հոգով
սկսեցիք, և հիմա մարմի՞ով էք
4 վերջանում. Այնքան նեղութիւն-
ները զո՞ւր տեղը կրեցիք. թէ որ
5 զուր էլ լինի։ Արդ ձեզ Հոգին
բաժանողը և ձեր միջումը զօրու-
թիւններ գործողը, օրէնքի գոր-
ծերի՞ց է թէ հաւատքի լսելու-
6 ցը։ Ինչպէս որ Աբրահամը հա-
ւատաց Աստուծոյն, և այն նո-
րա համար արդարութիւն հա-
7 մարուեցաւ։ Ուրեմն գիտացէք.
թէ նորանք որ հաւատքիցն են,
նորանք են Աբրահամի որդիք։
8 Գիրքն էլ առաջուց գիտենալով,
որ Աստուած հաւատքիցն է ար-
դարացնում հեթանոսներին՝ ա-
ռաջուց Աբրահամին խոստացաւ,
թէ քեզանում պիտի օրհնուին
9 բոլոր ազգերը։ Ուրեմն նորանք որ
հաւատքից են, օրհնվում են հա-
10 ւատացեալ Աբրահամի հետ։ Ո-
րովհետև որոնք որ օրէնքի գոր-
ծերից են, անէծքի տակ են. վասն-
զի գրուած է թէ Անիծեալ լինի
ամեն մարդ, որ չէ կենում օրէն-
քի գրքի մէջի բոլոր գրուածնե-
րումը, որ ամենն անէ։ Եւ թէ
11 օրէնքովն ոչ ով չէ արդարանում
Աստուծոյ առաջին, դա յայտնի
է. որովհետև Արդարը հաւատ-
քիցը կ'ապրէ։ Բայց օրէնքը հա-
ւատքիցը չէ այլ՝ նորանց կատա-
րող մարդը կ'ապրէ նորանով։
12 Քրիստոս գնեց մեզ օրէնքի ա-
նէծքիցը մեզ համար անէծք լի-
նելով. (վասնզի գրուած է թէ
Անիծեալ լինի ամեն փայտից
13 կախուածը։) Որ Աբրահամի օրհ-
նութիւնը հեթանոսների մէջ լի-
նի Քրիստոս Ցիսուսով, որ մենք
Սուրբ Հոգու խոստումնքն ընդու-
14 նենք հաւատքով։ Մարդկօրէն
եմ ասում, եղբարք. ապաքէն մի
մարդի հաստատուած կտակը ոչ
ով չէ անարգում. և ոչ էլ նո-
15 րա վերայ ուրիշ հրաման աւե-
լացնում։ Եւ Աբրահամին խոս-
տացուեցան այն խոստումնքները,
16 և նորա զաւակին. չէ ասում,
Եւ զաւակներին՝ ինչպէս շատե-
րին, այլ ինչպէս մէկին. Եւ քո
17 զաւակին. որ է Քրիստոսը։ Բայց
սա եմ ասում. Այն կտակը, որ
առաջուց Աստուածմնից հաս-
տատուած էր Քրիստոսի վերայ,
չորս հարիւր և երեսուն տարուց
յետոյ եղած օրէնքը չի քանդիլ
18 որ խոստումնքը խափանուի։ Որով-
հետև եթէ ժառանգութիւնն օ-
րէնքից լինէր, ապա խոստումնքից
19 չէր. բայց Աստուած խոստումն-
քով շնորհեց Աբրահամին։ Արդ
օրէնքն ինչ է. նա յանցանքների
պատճառով աւելացաւ. մինչև
որ գայ այն զաւակը, որին ե-
ղած խոստումնքը հրեշտակներով
կարգուած միջնորդի ձեռով։
20 Բայց միջնորդը մէկի չէ, սակայն
21 Աստուած մէկ է։ Ուրեմն օրէնքն
Աստուծոյ խոստումնքներին հա-
կառա՞կ է. քաւ լիցի. որովհետև
եթէ օրէնք տրուած լիներ որ
կարող լիներ կենդանի անել,
ապա իրաւի օրէնքից կ'լիներ ար-
22 դարութիւնը։ Բայց գիրքը փա-
կեց ամենքը մեղքի ներքև, որ
խոստումնքը Յիսուս Քրիստոսի
հաւատքիցը տրուի հաւատա-
23 ցողներին։ Դեռ որ հաւատքը չէր
եկած օրէնքի ներքև փակուած
պահվում էինք այն հաւատքի
համար, որ պէտք էր յայտնուէր։
24 Ուրեմն օրէնքը մեզ համար դաս-
տիարակ եղաւ դէպի Յիսուս
Քրիստոսը, որ հաւատքից ար-
25 դարանանք։ Բայց երբոր հա-
ւատքն եկաւ, այլևս դաստիա-
26 րակի տակ չենք։ Որովհետև ա-
մենքդ Աստուծոյ որդիք էք Քրիս-
27 տոս Յիսուսի հաւատքովը։ Վասն-
զի ամենքդ որ Քրիստոսի
մկրտուեցաք, Քրիստոսին հա-
28 գած էք։ Այլ ևս ոչ Հրէայ կայ
և ոչ Յոյն, ոչ ծառայ կայ և ոչ
ազատ, ոչ արու կայ և ոչ էգ.
որովհետև դուք ամենքդ մէկ էք
29 Քրիստոս Յիսուսումը։ Ապա ե-
թէ դուք Քրիստոսինն էք, ուր-
եմն Աբրահամի զաւակ էք՝ և
խոստումնքի համեմատ ժառանգ-
ներ։

Գլ. Դ

1 Բայց ասում եմ. քանի ժամա-
նակ որ ժառանգը երեխայ է՝ ծա-
ռայից ոչինչ տարբերութիւն
չ'ունի, թէև ամեն բանի տէր է։
2 Բայց վերակացուների և տնտես-
ների ներքև է մինչև հօր որոշած
3 ժամանակը։ Այնպէս էլ մենք,
քանի որ երեխաներ էինք՝ աշ-
խարհի սկզբունքների ներքև
4 ծառայութեան մէջ էինք։ Բայց
երբոր ժամանակի լրումն եկաւ,
Աստուած ուղարկեց իր Որդին՝
կնկանից ծնուած՝ և օրէնքի ներքև

եղած, Որ օրէնքի տակ լինողնե-
րին փրկէ, որ որդեգրութիւնն 5
ընդունենք։ Եւ որովհետև դուք
որդիք էք, Աստուած իր Որդու 6
Հոգին ուղարկեց ձեր սրտերի
մէջ, որ աղաղակում է Աբբա
Հայր։ Ուրեմն այլ ևս ծառայ 7
չես այլ որդի. և եթէ որդի՝ Աս-
տուծոյ ժառանգ էլ Քրիստոսով։
Բայց այն ժամանակ որ Աստու- 8
ծուն չ'գիտէիք, ծառայում էիք
նորանց որ ի բնէ աստուածներ
չեն։ Բայց հիմա որ ճանաչե- 9
ցիք Աստուծուն, մանաւանդ թէ
Աստուածմնից ճանաչուեցաք,
ինչպես էք կրկին ևս դառնում
դէպի այն տկար և աղքատ սկզբ-
մունքները, որոնց կամենում էք
դարձեալ ծառայել։ Օրեր էք 10
պահում և ամիսներ և ժա-
մանակներ և տարիներ։ Վախե- 11
նում եմ ձեզանից՝ որ մի գուցէ
զուր տեղն աշխատեցի ձեր մի-
ջումը։
Ինձ նման եղէք, որովհետև ես 12
էլ ձեզ նման եմ. եղբարք, աղա-
չում եմ ձեզ, դուք ինձ ոչ մի
վնաս չէք տուել։ Եւ գիտէք որ 13
մարմնի տկարութիւնով աւետա-
րանեցի ձեզ առաջին անգամը.
Եւ իմ փորձանքն՝ որ իմ մարմ- 14
նումն էր, չ'անարգեցիք և չ'ար-
համարհեցիք, այլ ինչպես Ա-
ստուծոյ հրեշտակ ընդունեցիք
ինձ՝ ինչպես Քրիստոս Յիսուսին։
Արդ ինչ էր այն ձեր երանու- 15
թիւնը. որովհետև վկայում եմ
ձեզ համար, որ եթէ կարելի էր՝
ձեր աչքերն էլ կ'հանէիք և ինձ
կ'տայիք։ Ուրեմն թշնամի եղայ 16
ձեզ՝ ձեզ հետ ճշմարիտը խոսե-
լով։ Նախանձով են ձեզ հա- 17
մար, ոչ թէ ի բարին. այլ կա-
մենում են արգելել մեզ որ նո-
րանց համար նախանձաւոր լինէք։
Սակայն լաւ է բարի բանում մի- 18
մեն ժամանակ նախանձաւոր լի-
նել, և ոչ թէ միայն երբ որ ձեզ
մօտ լինեմ։ Իմ որդեակներ, որ 19
ձեզ կրկին ծնեալ եմ ցաւով,
մինչև որ Քրիստոսը կերպարանուի
ձեզմանումն։ Կամենում էի որ հի- 20
մա ձեզ մօտ գամ և ձայնս փոխեմ։

որովհետև տարակուսած եմ ձեզ
համար։
21 Ասեցէք ինձ դուք, որ կամե-
նում էք օրէնքի տակ լինել, օ-
22 րէնքը չէք լսում։ Որովհետև
գրուած է, թէ Աբրահամը եր-
կու որդիք ունէր, մինն աղախ-
23 նիցը, և միւսն ազատիցը։ Բայց
նա՝ որ աղախնիցն էր՝ մարմնի կող-
մանէ էր ծնուած, և նա՝ որ ա-
զատիցն՝ խոստմունքի համեմատ։
24 Այս բաները այլաբանօրէն են.
որ նորանք երկու կտակարաններն
են, մէկը Սինա սարիցը ծառա-
յութեան մէջ ծնուած՝ որ է
25 Հագարը։ Որովհետև Հագարը
Սինա սարն է՝ Արաբիայումն, որ
հաւասար է այժմեան Երուսա-
ղէմին, որ իր զաւակներովը հան-
26 դերձ ծառայ է։ Բայց վերին Ե-
րուսաղէմն ազատ է, որ մեր ա-
27 մենիս մայրն է։ Որովհետև գրը-
ուած է թէ, Ցնծա, ով ամուլ որ
չէիր ծնում, գոչիր և աղաղակիր
դու՝ որ ծնելու ցաւ չէիր քա-
շում. որովհետև աւելի շատ են
թողուածի որդիքը քան թէ ա-
28 րամբիինը։ Իսկ մենք, եղբարք,
Իսահակի պէս խոստմունքի որ-
29 դիք ենք։ Բայց ինչպէս որ այն
ժամանակ մարմնի կողմանէ ծնու-
ածը հալածում էր նորան՝ որ
հոգու կողմանէ էր, այնպէս էլ
30 հիմա։ Բայց գիրքն ինչ է ա-
սում. Դուրս հանիր աղախնին և
նորա որդուն. որ աղախնի որդին
ժառանգութիւն չ՚պիտի ստանայ
31 ազատի որդու հետ։ Սորա հա-
մար, եղբարք, աղախնի որդիք
չենք, այլ ազատի։

ԳԼ. Ե

1 Արդ այն ազատութիւնովը որ
Քրիստոսը մեզ ազատեց, հաս-
տատ կացէք և դարձեալ ծա-
ռայութեան լծի տակ մի մտնէք։
2 Ահա ես Պօղոս ասում եմ ձեզ,
որ եթէ թլփատուիք, Քրիստոսը
3 ձեզ օգուտ չի անիլ։ Եւ դարձ-
եալ վկայում եմ ամեն մարդի
համար որ թլփատվում է, թէ
նա պարտական է բոլոր օրէնքը
կատարելու։ Խափանուած էք 4
Քրիստոսից դուք, որ օրէնքով էք
կամենում արդարանալ. շնորհ-
քիցն ընկած էք։ Որովհետև մենք 5
Հոգով հաւատքիցն ենք սպա-
սում արդարութեան յոյսին։
Վասնզի Քրիստոս Յիսուսումը ոչ 6
թլփատութիւնն է մի բան կա-
րող, և ոչ անթլփատութիւնը.
այլ հաւատքը որ սիրով գործում
է։ Լաւ էիք վազում, ձեզ ո՞վ 7
ետ կանգնեցրեց՝ որ չ՚հնազան-
դիք ճշմարտութեանը։ Այդ հա- 8
մոզումը նորանից չէ որ կանչեց
ձեզ։ Մի քիչ խմորը բոլոր զան- 9
գուածը խմորեցնում է։ Ես ձեզ 10
վերայ յոյս ունիմ Տէրովը՝ որ ու-
րիշ բան չէք մտածիլ. և ձեզ
խռովեցնողը դատապարտութիւն
կ՚քաշէ ով որ էլ լինի։ Բայց ես, 11
եղբարք, եթէ տակաւին թլփա-
տութիւն եմ քարոզում, էլ ի՞ն-
չու համար եմ հալածվում. ու-
րեմն խաչի՝ գայթակղութիւնը
խափանուած է։ Երանի թէ բո- 12
լորովին կտրուէին նորանք որ ձեզ
խռովեցնում են։
Որովհետև դուք ազատութեան 13
համար էք կանչուել, եղբարք.
միայն թէ ձեր ազատութիւնը
պատճառ չ՚տայ մարմնին. այլ սի-
րով ծառայեցէք իրար։ Որովհե- 14
տև բոլոր օրէնքն այս մէկ խօս-
քումն է կատարվում. Քո ընկե-
րին քո անձի պէս սիրիր։ Բայց 15
եթէ իրար կծէք և ուտէք, զգու-
շացէք որ իրարից չ՚փճանաք։ Բայց 16
ասում եմ. Հոգով գնացէք, և
մարմնի ցանկութիւնը չէք կա-
տարիլ։ Որովհետև մարմինը ցան- 17
կանում է հոգուն հակառակ, և
հոգին մարմնին հակառակ. և սո-
րանք իրար հակառակ են, որ մի
գուցէ այն որ դուք կամենում
էք՝ այն անէք։ Բայց եթէ Հոգուց 18
էք առաջնորդվում, օրէնքի տակ
չէք. Եւ յայտնի են մարմնի գոր- 19
ծերը, որ են՝ շնութիւն, պոռնը-
կութիւն, պղծութիւն, դիճու-
թիւն, Կռապաշտութիւն, կա- 20
խարդութիւն, թշնամութիւն-
ներ, կռիւներ, նախանձներ, բար-
կութիւններ, հակառակութիւն-

ներ, երկպառակութիւններ, բա-
21 ժանմունքներ, Զար նայուածներ,
սպանութիւններ, արբեցութիւն-
ներ, անառակութիւններ, և ինչ
որ սորանց նման են. որ առաջուց
ասում եմ ձեզ, ինչպէս էլ ա-
ռաջուց ասում էի, թէ այսպիսի
բաներ գործողներն Աստուծոյ
արքայութիւնը չեն ժառանգիլ։
22 Բայց Հոգու պտուղն է՝ սէր, ու-
րախութիւն, խաղաղութիւն, եր-
23 կայնմտութիւն, Քաղցրութիւն,
բարութիւն, հաւատք, հեզու-
թիւն, ժուժկալութիւն. այնպի-
24 սիների դէմ օրէնք չ՚կայ։ Բայց
նորանք որ Քրիստոսինն են, ի-
րանց մարմինը խաչ հանեցին կիր-
քերովը և ցանկութիւններովը
25 միասին։ Եթէ Հոգով ենք ապ-
26 րում, Հոգով վարուինք։ Մնա-
պարծ չ՚լինինք իրար գրգռելով,
և իրար վերայ նախանձելով։

ԳԼ. Զ

1 Եղբարք, եթէ մէկը յանկարծ
բռնուի մի յանցանքով, դուք որ
հոգևոր էք, այնպիսին հաստա-
տեցէք հեզութեան հոգով, զգու-
2 շացիր քո անձին, որ դու էլ չը
փորձուիս։ Իրար բեռը վեր ա-
ռէք, և այսպէս Քրիստոսի օրէն-
3 քը կատարեցէք։ Որովհետև եթէ
մէկը համարում է թէ մին բան
է և չէ, նա իր անձը խաբում է։
4 Բայց ամեն մէկը թող իր գործը
կշռէ, և ապա միայն իր անձի
վերայ պարծանք կ՚ունենայ, և
5 ոչ թէ ուրիշի վերայ. Որ ամեն
մէկն իր բեռը պիտի վեր առնէ։
6 Խօսքին աշակերտողը թող վար-
դապետին մասնակից անէ ամեն
7 բարի բաներով։ Մի խաբուիք.
Աստուած չի ծաղրուիլ։ Որով- 8
հետև ինչ որ մարդ սերմէ, ան
էլ կ՚հնձէ. իր մարմնի մէջ սեր-
մողը մարմնիցն ապականութիւն
կ՚հնձէ, և Հոգու մէջ սերմողը
Հոգուցն յաւիտենական կեանք
կ՚հնձէ։ Եւ չ՚ձանձրանանք բարին 9
գործելուցը, որովհետև իր ժա-
մանակին կ՚հնձենք՝ եթէ չ՚թու-
լանանք։ Ուրեմն քանի որ ժա- 10
մանակ ունինք, բարի գործենք
ամենին, մանաւանդ հաւատքի
ընտանիներին։
Տեսէք թէ ինչպիսի գրերով 11
գրեցի ձեզ իմ ձեռովը։ Որոնք 12
որ կամենում են հաճոյ երևել
մարմնի կողմանէ, նորանք ստի-
պում են ձեզ՝ որ թլփատուիք.
միայն որ Քրիստոսի խաչի համար
չ՚հալածուին։ Որովհետև այն 13
թլփատուածներն իրանք էլ օ-
րէնքը չեն պահում. այլ կամե-
նում են որ դուք թլփատուիք,
որ ձեր մարմնովը պարծենան։ Սա- 14
կայն ինձ քաւ լիցի պարծենալ,
բայց միայն մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի խաչովն. որ նորանով աշ-
խարհքն ինձ համար խաչուած է,
և ես էլ աշխարհքին։ Որովհետև 15
Քրիստոս Յիսուսումը ոչ թլփա-
տութիւնը մի բան է, և ոչ ան-
թլփատութիւնը, բայց նոր արա-
րածը։ Եւ այն ամենն որ այս կա- 16
նոնի համեմատ են վարվում,
խաղաղութիւն լինի նորանց վե-
րայ և ողորմութիւն, և Աստու-
ծոյ Իսրայէլին վերայ։ Սորանից 17
յետոյ թող մէկը չ՚աշխատեցնէ
ինձ. որ ես կրում եմ Տէր Յի-
սուսի վէրքի նշաններն իմ մարմնի
մէջ։ Մեր Տէր Յիսուս Քրիստոսի 18
շնորհքը, եղբարք, ձեր հոգու
հետ լինի. Ամէն։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ Աստուծոյ կամքովը. այն սուրբերին որ Եփեսոսումն են, և Քրիստոս Յիսուսումը հաւատացեալներին. Շնորհք լինի ձեզ և խաղաղութիւն Աստուած՝ մեր Հօրիցը, և Տէր Յիսուս Քրիստոսիցը։

3 Օրհնեալ է Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը. որ մեզ օրհնեց ամեն հոգևոր օրհնութիւնով երկնաւոր բաներումը Քրիստոսով։ Ինչպէս որ ընտրեց մեզ նորանով աշխարհքի ստեղծելուցն առաջ, որ մենք սուրբ և անարատ լինենք նորա առաջին սիրով. Մեզ առաջուց սահմանելով, որ իրան որդեգիր լինենք Յիսուս Քրիստոսի ձեռովն՝ 6 իր կամքի հաճութեան պէս, Իր փառաւոր շնորհքի գովասանքի համար. որ նորանով շնորհք ցոյց տուաւ մեզ այն Սիրելիովը։ Որով ունինք փրկութիւնը նորա արիւնովը՝ մեղքերի թողութիւնը իր շնորհքի մեծութեան չափովը. 8 Որ աւելացաւ մեզանում ամեն իմաստութիւնով և գիտութիւնով. Ցոյց տալով մեզ իր կամքի խորհուրդն իր հաճութեան պէս. որ առաջուց դրաւ իրանում. 10 Ժամանակների լրութեան անտեսութեան համար, որ ամեն բան բովանդակուի Քրիստոսումը, ինչ որ երկնքումն է՝ և ինչ որ երկրումը, նորանում. Որով որ էլ ստացանք ժառանգութիւնը մենք առաջուց որոշուած լինելով, նորա յառաջադրութեան պէս, որ ամեն բան յաջողում է իր կամքի խորհուրդների պէս. Որ մենք 12 գովասանք լինենք նորա փառքին, որ առաջուց մեր յոյսը Քրիստոսի վերայ ենք դրել։ Որ նորանում 13 և դուք յոսացաք, երբոր ճշմարտութեան խօսքը լսեցիք՝ ձեր փրկութեան աւետարանը, որին էլ երբոր հաւատացիք՝ խոստմունքի Սուրբ Հոգովը կնքուեցաք։ Որ մեր ժառանգութեան 14 գրաւն է, մինչև ստացուածքի փրկութիւնը, նորա փառացը գովասանքի համար։

Նորա համար ես էլ լսելով 15 ձեր հաւատքը, որ ունիք Տէր Յիսուսի վերայ, և ձեր սէրը դէպի ամեն սուրբերը, Ձեմ դադարում ձեզ համար գոհութիւն 16 տալուց՝ ձեզ իմ աղօթքներումը յիշելով. Որ մեր Տէր Յիսուս 17 Քրիստոսի Աստուածը՝ փառքի Հայրը տայ ձեզ իմաստութեան և յայտնութեան հոգի՝ իր գիտութիւնովը. Որ ձեր սրտերի 18 աչքերը լուսաւորուելով՝ գիտենաք, թէ ի՞նչ է նորա կոչումի յոյսը, և ի՞նչ է իր ժառանգութեան փառաւոր մեծութիւնը սուրբերումը. Եւ ի՞նչ է նորա 19 զօրութեան գերազանց մեծութիւնը մեզանում, որ հաւատացինք, իր կարող զօրութեան յաջողութեան պէս, Որ Քրիստոսումը 20 գործադրեց՝ նորան մեռելների միջից յարուցանելով, և իր աջ կողմը նստեցրեց երկնաւորներումը, Ամեն իշխանութիւնից և պետութիւնից և զօրութիւնից և տէրութիւնից վեր՝ և ամեն անունից վեր՝ որ անուանվում է, 21 ոչ միայն այս աշխարհքումը, այլ և այն հանդերձեալումը։ Եւ ամեն բան հնազանդեցրեց նորա ոտների տակ, և նորան գլուխ դրաւ եկեղեցուն՝ բոլոր բաների 23 վերայ, Որ է նորա մարմինը, այն լրումը որ ամենն ամենի մէջ լրացնում է։

ԳԼ. Բ

1 Եւ դուք, որ մեռած էիք յան- 2 ցանքներումը և մեղքերումը. Որոնցում մի ժամանակ գնում էիք այս աշխարհքի սովորութեան պէս՝ օդի իշխանութեան իշխանի պէս, այն հոգու պէս՝ որ հիմա ներգործում է ապստամբութեան 3 որդիների մէջ. Որոնց մէջ մենք ամենս էլ մի ժամանակ ման էինք գալիս մեր մարմնի ցանկութիւններումը՝ մարմնի և մտքի կամքը կատարելով, և բնութեամբ բարկութեան որդիք էինք 4 ինչպէս ուրիշներն էլ. Բայց Աստուած, որ մեծ է ողորմութեամբ, իր շատ սէրի համար որ սիրեց 5 մեզ, Երբ որ մեռած էինք յանցանքներում, մեզ կենդանի արաւ Քրիստոսի հետ. շնորհքով 6 էք փրկուած։ Նորա հետ ՀՂ յարոյց, և նորա հետ երկնաւորներումը նստեցրեց՝ Քրիստոս Յի- 7 սուսումը։ Որ նոր եկող դարերում յաւիտեան ցոյց տայ իր շնորհքի գերազանց մեծութիւնը, Քրիստոս Յիսուսի մեզ վերայ ցոյց տուած քաղցրութիւնովը։ 8 Որովհետև շնորհքով էք փրկուած հաւատքի ձեռովը. և սա ոչ թէ ձեզանից է, այլ Աստուծոյ պար- 9 գևն է. Ոչ թէ գործերից, որ 10 մէկը չ՚պարծենայ։ Վասնզի նորա ստեղծուածն ենք՝ Քրիստոս Յիսուսով հաստատուած. բարի գործերի համար. որոնց համար Աստուած առաջուց պատրաստեց մեզ, որ նորանցում վարուինք։

11 Վասն որոյ յիշեցէք որ դուք՝ մի ժամանակ հեթանոսներ մարմնով, որ անթլփատութիւն են կոչուած՝ մարմնի մէջ ձեռքով արած թլփատութեան կողմա- 12 նէ, Որ այն ժամանակ առանց Քրիստոսի էիք, և հեռացած Իսրայէլի քաղաքակցութիւնիցը. և օտարացած խոստմունքի ուխտերիցը, յոյս չ՚ունէիք. և անաստուած էիք աշխարհքումս։ Բայց հիմա Յիսուս Քրիստոսի ձեռովը դուք՝ որ ժամանակով հեռաւոր էիք, մօտաւոր եղաք Քրիստոսի արիւնովը։ Վասնզի նա է 14 մեր խաղաղութիւնը որ երկուսին մէկ արաւ և մէջ տեղի բաժանող պատը՝ թշնամութիւնը քանդեց իր մարմնովը. Հրամաններով 15 գրած պատուիրանքների օրէնքը խափանելով. որ իրանով երկուսին մէկ նոր մարդ ստեղծէ, խաղաղութիւն անելով. Եւ երկուսին 16 մէկ մարմնով հաշտեցնէ Աստուծոյ հետ՝ իր խաչովը, թշնամութիւնը նորանով սպանելով։ Եւ եկաւ աւետարանեց խաղաղութիւն ձեզ հեռաւորներիդ՝ 17 և խաղաղութիւն մօտաւորներին։ Վասնզի նորանով երկուսս մէկ 18 Հոգով ունինք մօտենալը Հօր մօտ։ Ուրեմն այսուհետև այլ ևս օտար 19 և պանդուխտ չէք, այլ սուրբերի հետ քաղաքացիներ և Աստուծոյ ընտանիքներ, Առաքեալների և մարգարէների հիմքի 20 վերայ շինուած. որի անկիւնի գլուխը Յիսուս Քրիստոսն է. Որ 21 նորանում բոլոր շինուածքը միասին յարմարուած աճում է, որ լինի սուրբ տաճար Տէրով. Որ 22 նորանում դուք էլ նորա հետ շինվում էք Աստուծոյ բնակարան Հոգով։

ԳԼ. Գ

Սորա համար ես Պօղոս՝ Յիսուս 1 Քրիստոսի կապուածս ձեզ հեթանոսներիդ համար. Անշուշտ 2 դուք լսած էք Աստուծոյ շնորհքի այն անտեսութիւնը, որ ինձ տրուած է ձեզ համար։ Որ յայտ- 3 նութիւնով ցոյց տրուեցաւ ինձ այն խորհուրդը. (ինչպէս առաջուց կարճառօտ գրեցի ձեզ. Որ 4 կարող լինիք կարդալ և իմանալ իմ տեղեկութիւնը, որ Քրիստոսի խորհրդի համար է.) Որ ու- 5

ըիշ դարերում մարդկանց զա-
ւակներին ցոյց չ՚տրուեցաւ. ինչ-
պէս հիմա իր սուրբ առաքեալ-
ներին և մարգարէներին յայտ-
6 նուեցաւ՝ Հոգով. Որ հեթանոս-
ները ժառանգակիցներ և մարմ-
նակիցներ են, և Քրիստոսումն
խոստմունքի մասնակից՝ աւետա-
7 բանովը։ Որի ես սպասաւորը ե-
զայ՝ Աստուծոյ շնորհքի պարգևի
պէս՝ որ տրուեցաւ ինձ, նորա
զօրութեան ներգործելու պէս.
8 Ինձ՝ ամեն սուրբերի յետինիս՝
տրուեցաւ այս շնորհքը, որ հե-
թանոսների մէջ աւետարանեմ
Քրիստոսի անքննելի հարստու-
9 թիւնը. Եւ ամենին լուսաւորեմ,
թէ ի՞նչ է այն խորհրդի տնտե-
սութիւնը, որ յաւիտեաններից
հետէ ծածկուած էր Աստուծոյ
մոտ՝ որ ամեն բան ստեղծեց (Յի-
10 սուս Քրիստոսով)։ Որ հիմա իշխա-
նութիւններին և պետութիւն-
ներին երկնաւորներումն եկեղե-
ցու ձեռովը յայտնուի Աստու-
ծոյ բազմապատիկ իմաստութիւ-
11 նը. Այն յաւիտենական յառա-
ջադրութեան պէս, որ մեր Տէր
Քրիստոս Յիսուսի ձեռովն արաւ.
12 Որով ունինք համարձակութիւ-
նը և յուսով մոտենալը նորան
հաւատալով։
13 Վասն որոյ աղաչում եմ, որ
չ՚ձանձրանաք իմ նեղութիւնն-
երումը, ձեզ համար որ ձեր փառ-
14 քն է։ Սորա համար կրկնում
եմ իմ ծունկերը մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի Հօր առաջին,
15 Որից ամեն նահապետութիւն
երկնքումը և երկրումս անուն է
16 առնում, Որ իր փառքի հարըս-
տութեան պէս տայ ձեզ, որ զօ-
րութեամբ հաստատուիք իր Հո-
գու ձեռովը ներսի մարդումը։
17 Որ Քրիստոսը հաւատքով բնակ-
ուի ձեր սրտերումը. և դուք սի-
րով արմատ գցած և հաստատ-
18 ուած լինիք։ Որ ամեն սուրբերի
հետ իմանաք, թէ ի՞նչ է լայ-
նութիւնը և երկայնութիւնը և
բարձրութիւնը և խորութիւնը.
19 Որ ճանաչէք Քրիստոսի սէրը որ
ամեն գիտութիւնից գերազանց
է. որ Աստուծոյ ամեն լիութիւ-
նովը լցուիք։ Բայց նորան՝ որ կա- 20
րող է առատութեամբ անել
ամեն բաներից աւելի քան որ
խնդրում ենք և իմանում, այն
զօրութեան չափովը՝ որ մեզա-
նում ներգործում է. Նորան 21
փառք լինի եկեղեցումը, որ Քրիս-
տոս Յիսուսումն է, ամեն դարե-
րում յաւիտեանս յաւիտենից։
Ամէն։

ԳԼ. Դ

Արդ աղաչում եմ ձեզ ես՝ Տի- 1
րոջ համար կապուածս, որ այն-
պէս գնաք ինչպէս որ կ՚վայելէ
այն կոչումին որի մէջ կանչուե-
ցաք։ Ամեն խոնարհութիւնով և 2
հեզութիւնով և երկայնմտու-
թիւնով, սիրով իրար համբերե-
լով։ Ջանալով Հոգու միաբա- 3
նութիւնը պահել խաղաղու-
թեան կապովը։ Մէկ մարմին և 4
մէկ հոգի. ինչպէս կոչուեցաք էլ
ձեր կոչումի մէկ յոյսի մէջ։
Մէկ Տէր, մէկ հաւատք, մէկ 5
մկրտութիւն. Մէկ Աստուած և 6
ամենքի Հայր, որ ամենքի վերայ
և ամենքի հետ՝ և ձեր ամենքի
մէջ է։ Բայց մեր ամեն մէկիս 7
տրուած է շնորհքը՝ Քրիստոսի
պարգևի չափի պէս։ Սորա հա- 8
մար ասում է. Ի՞ՆՔ Վեր ելաւ
բարձրը, գերի առաւ գերութիւ-
նը. և մարդկանց պարգևներ
տուաւ։ Այն վեր ելաւը ի՞նչ է, 9
եթէ ոչ՝ որ առաջ վայր իջաւ
երկրի ցած կողմերը։ Այն վայր 10
իջնողը նոյն ինքն է, որ ամեն եր-
կինքներիցն աւելի բարձր վեր ե-
լաւ, որ ամենը լրացնէ։
Եւ նա մի քանիսին տուաւ ա- 11
ռաքեալներ լինելու, մի քանիսին
մարգարէներ, մի քանիսին աւե-
տարանիչներ, մի քանիսին հո-
վիւներ և վարդապետներ, Սուր- 12
բերի կատարելութեանը համար,
պաշտօնի գործի համար, Քրիս-
տոսի մարմնի շինութեան հա-
մար. Մինչև որ ամենքս հասնենք 13
հաւատքի և Աստուծոյ Որդին
ճանաչելու միութեանը. և կա-

տարեալ մարդ լինենք Քրիստոսի
14 կատարեալ հասակի չափովը. Որ
այլ ևս երեխայ չ՚լինենք երեր-
ուած ու տատանուած վարդա-
պետութեան ամեն քամուցը
մարդկանց խաբեբայութիւնովը
որ մոլորեցնեն խաբեբայութեան
15 խորամանկութիւնովը։ Բայց ճշ-
մարիտ լինելով սէրի մէջ՝ աճինք
նորանում ամեն բանով, որ է
16 գլուխը՝ Քրիստոսը. Որից բոլոր
մարմինը միասին կազմուելով և
միասին յարմարուելով ամեն
յօդուածի ձեռնտուութեամբը
ամեն մէկ անդամի ներգործու-
թեան չափովը մարմնոյ աճիլը
գործվում է՝ իր անձը սիրով շի-
նելու համար։
17 Արդ սա եմ ասում և վկա-
յում Տէրով, որ դուք այլ ևս
չ՚գնաք ինչպէս ուրիշ հեթանոս-
ներն են գնում իրանց մտքի ու-
18 նայնութիւնովը, Որ խաւարուած
են մտքով, և օտար՝ Աստուծոյ
կեանքիցը, այն տգէտութեան
պատճառովը որ նորանցում է.
իրանց սրտերի կուրութեան հա-
19 մար։ Որ անզգայացած՝ իրանց
անձերը մատնեցին անառակու-
թեան ամեն պղծութեան գոր-
20 ծերի մէջ ագահութիւնով, Բայց
դուք Քրիստոսին այսպէս չ՚սովո-
21 րեցիք. Եթէ նորանից լսեցիք, և
նորանով սովորեցիք՝ ինչպէս որ
ճշմարտութիւնն է Յիսուսումը.
22 Որ ձեզանից դուրս հանէք առա-
ջի գնացքի պէս եղող հին մարդը
որ խաբեբայութեան ցանկու-
23 թիւնովն ապականուած է. Եւ
ձեր մտքի հոգովը նորոգուէք.
24 Եւ նոր մարդին հագնէք՝ որ Ա-
ստուծոյ պատկերին պէս ստեղծ-
ուած է՝ ճշմարտութեան արդա-
րութիւնովը և սրբութիւնովը։
25 Նորա համար դէն գցելով ստու-
թիւնը՝ խօսեցէք ճշմարտութիւնն
ամեն մարդ իր ընկերի հետ,
26 վասնզի իրար անդամ ենք։ Բար-
կանաք՝ մի մեղանչէք. Թող ա-
րեգակը ձեր բարկութեան վե-
27 րայ չ՚մտնէ։ Եւ տեղի չ՚տաք
28 սատանային։ Նա որ գողանում
էր, թող էլ չ՚գողանայ, այլ
մանաւանդ աշխատէ իր ձեռնե-
րովը բարին գործելով. որ ունե-
նայ տալու՝ պէտք ունեցողին։
Ոչ մի գէշ խօսք չ՚դուրս գայ 29
ձեր բերանիցը. բայց այն՝ որ բարի
է՝ շինութեան համար հարկաւոր,
որ շնորհք տայ լսողներին։ Եւ մի 30
տրտմեցնէք Աստուծոյ Սուրբ Հո-
գին, որով կնքուեցաք փրկու-
թեան օրուայ համար։ Ամեն 31
դառնութիւն և բարկութիւն և
սրտմտութիւն և աղաղակ և հայ-
հոյութիւն թող վեր առնուի
ձեզանից՝ ամեն չարութեան հետ։
Եւ իրար հետ քաղցր եղէք, 32
գթած՝ իրար ներելով, ինչպէս
Աստուած էլ Քրիստոսով ձեզ
ներեց։

ԳԼ. Ե

Արդ նմանող եղէք Աստուծուն 1
ինչպէս սիրելի որդիներ։ Եւ սէ- 2
րով գնացէք, ինչպէս որ Քրիս-
տոսն էլ մեզ սիրեց, և իր անձը
մեզ համար մատնեց, պատարագ
և զոհ Աստուծոյ անոյշ հոտ լի-
նելու. Բայց պոռնկութիւն և 3
ամեն պղծութիւն, կամ ագա-
հութիւն թող չ՚անուանուի ձե-
զանում՝ ինչպէս սուրբերին կը
վայելէ։ Եւ դարշութիւն, կամ 4
յիմար խօսքեր, կամ խեղկատա-
կութիւն, որ չեն վայելում. այլ
մանաւանդ գոհութիւն։ Որովհե- 5
տև սա գիտէք, որ ոչ մի պոռ-
նիկ, կամ պիղծ, կամ ագահ,
որ կռապաշտ է՝ ժառանգութիւն
չ՚ունի Քրիստոսի և Աստուծոյ
արքայութիւնումը։ Ոչ ով թող 6
չ՚խաբէ ձեզ դարտակ խօսքերով.
որովհետև այս պատճառով էլ՝
Աստուծոյ բարկութիւնը գալիս
է անհնազանդութեան որդիների
վերայ։ Ուրեմն մասնակից մի լի- 7
նիք նորանց։ Վասնզի մի ժամա- 8
նակ խաւար էիք, իսկ հիմա լոյս
էք Տէրումը. լոյսի որդիների
պէս գնացէք։ Որովհետև Հոգու 9
պտուղը ամեն բարութիւնով է,
և արդարութիւնով, և ճշմար-
տութիւնով։ Փորձեցէք թէ ինչ 10
է հաճոյ Տիրոջը։ Եւ մասնակից 11

մի լինիք խաւարի անպտուղ գոր-
ծերին. այլ մանաւանդ յանդի-
12 մանեցէք։ Որովհետև նորանց մի-
ջումը ծածուկ գործուածները
13 խօսքով ասելն էլ ամօթ է։ Բայց
ամեն բան՝ լոյսիցը յանդիման-
ուած՝ յայտնի է լինում. վասն
զի ամեն բան՝ որ յայտնի է լի-
14 նում, լոյս է։ Սորա համար էլ
ասում է. Վեր կաց, ով քնած,
և վեր կանգնիր մեռելներից, և
Քրիստոսը կ'լուսաւորէ քեզ։
15 Արդ նայեցէք թէ ինչպէս զգու-
շութեամբ վարուիք. ոչ թէ ինչ-
16 պէս անխելքներ, Այլ ինչպէս ի-
մաստուններ. գնեցէք ժամանա-
17 կը. որ օրերը չար են, Նորա հա-
մար մի լինիք անմիտ, այլ իմա-
ցէք թէ ինչ է Տիրոջ կամքը։
18 Եւ մի արբենաք գինով, որ նո-
րանում անառակութիւն կայ,
19 այլ լցուեցէք Հոգով, խօսելով
ձեր մէջ սաղմոսներով և օրհ-
նութիւններով և հոգևոր երգե-
րով, երգեցէք և սաղմոսեցէք
20 ձեր սրտերումը Տիրոջը։ Ամեն
ժամանակ ամեն բանի համար
գոհացէք Աստուածանից և Հօ-
րիցը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի
անունովը։
21 Իրար հնազանդ եղէք Աստու-
22 ծոյ վախովը։ Կանայք. հնազան-
դեցէք ձեր մարդկանցը ինչպէս
23 Տիրոջը։ Մարդը կնոջ գլուխն է՝
ինչպէս Քրիստոս էլ եկեղեցու
գլուխը, և ինքն է մարմնին Փրկի-
24 չը։ Բայց ինչպէս եկեղեցին հնա-
զանդ է լինում Քրիստոսին, այն-
պէս էլ կանայք՝ իրանց մարդ-
25 կանցն ամեն բանի մէջ։ Մար-
դիկ, սիրեցէք ձեր կանանցը, ինչ-
պէս Քրիստոսն էլ սիրեց եկեղե-
ցուն և իր անձը մատնեց նորա
26 համար. Որ նորան սրբացնէ՝ մաք-
րելով ջրի աւազանովը՝ խօսքով.
27 Որ իր առաջին փառաւոր կանգ-
նեցնէ եկեղեցին, որ չ'ունենայ
մի արատ կամ խորշոմութիւն
կամ ուրիշ բաներ, որ սուրբ և
28 անարատ լինի։ Այսպէս պէտք է
մարդիկ սիրեն իրանց կանանցը,
ինչպէս իրանց մարմինները. ով
որ իր կնոջը սիրում է, իրան է
սիրում։ Վասնզի ոչ ով իր անձը 29
չէ ատել, այլ կերակրում է և
պահպանում է նորան. ինչպէս
Տէրն էլ եկեղեցին։ Որովհետև 30
նորա մարմնի անդամներն ենք,
նորա մարմնիցը և նորա ոսկորնե-
րիցը։ Սորա համար մարդը կ'թո- 31
ղէ իր հօրը և մօրը, և իր կնկան
կ'յարէ և երկուսը մէկ մարմին
կ'լինին։ Այս խորհուրդը մեծ է, 32
բայց ես Քրիստոսի և եկեղեցու
վերայ եմ ասում։ Սակայն դուք 33
էլ մի ըստ միոջէ ամեն մէկն իր
կնկանը թող այնպէս սիրէ ինչ-
պէս իր անձը. և կինը վախենայ
իր մարդիցը։

ԳԼ. Զ

Որդիք, հնազանդ եղէք ձեր ծնող- 1
ներին Տէրով. որ այն է արժանը։
Պատուիր քո հօրը և մօրը, սա է 2
առաջին պատուիրանքը խոստ-
մունքով, Որ քեզ լաւ լինի, և 3
երկար ապրես երկրի վերայ։ Եւ, 4
հայրեր, մի բարկացնէք ձեր որդ-
կանցը. այլ մեծացրէք նորանց
խրատով և Տիրոջ ուսմունքովը։
Ծառաներ, հնազանդ եղէք ձեր 5
մարմնաւոր տէրերին, վախով և
դողալով՝ ձեր սրտի միամտու-
թեամբն ինչպէս Քրիստոսին. Ոչ 6
թէ աչքի առաջին ծառայելով
մարդկանց հաճոյ լինողների պէս,
այլ ինչպէս Քրիստոսի ծառաներ,
որ Աստուծոյ կամքն են անում
սրտանց, Յօժարութեամբ ծառա- 7
յելով Տիրոջը և ոչ թէ մարդ-
կանց. Գիտենալով որ ամեն մէկն 8
ինչ բարի որ անէ, նոյնը կ'ընդ-
ունի Տէրիցը. Թէ ծառայ լինի 9
և թէ ազատ։ Եւ դուք, տէրեր,
նոյնն արէք նորանց՝ թողելով
սպառնալիքը. գիտացէք որ հէնց
ձեզ ինքներիդ էլ Տէր կայ եր-
կընքումը. և նորա առաջին երես-
պաշտութիւն չ'կայ։
Այսուհետև, եղբայրներս, զօ- 10
րացէք Տէրով և նորա զօրու- 11
թեան կարողութիւնովը։ Եւ Աս-
տուծոյ սպառազինութիւնը հա-
գէք, որ կարող լինիք սատանայի
հնարքներին հակառակ կենալ։

12 Որովհետև մեր պատերազմը ա-
րիւնի և մարմնի հետ չէ, այլ իշ-
խանութիւնների և պետութիւն-
ների հետ, այս աշխարհի խաւա-
րի աշխարհակալների հետ, այն
չար հոգիների հետ որ երկնաւոր-
13 ների մէջ են։ Սորա համար Աս-
տուծոյ սպառազինութիւնն ա-
ռէք, որ կարող լինիք հակառակ
կենալ չարութեան օրումը, և
ամենը կատարելով հաստատ
14 կանգնել. Արդ հաստատ կանգ-
նեցէք ձեր մէջքերը ճշմարտու-
թեամբ գօտևորուած, և ար-
15 դարութեան զրահը հագած, Եւ
ՏԷՐ ոտները կօշիկ հագած խա-
ղաղութեան աւետարանի պատ-
16 րաստութիւնովը։ Եւ ամենի վե-
րայ հաւատքի վահանն առէք.
որով կարող լինիք չարի ամեն
17 կրակոտ նետերը հանգցնել։ Եւ
փրկութեան սաղաւարտն առէք,
և Հոգու սուրը՝ որ Աստուծոյ
18 խօսքն է։ Ամեն աղօթքով և աղա-
չանքով աղօթք արէք ամեն ժա-
մանակ Հոգով. և սորանում հսկե-
ցէք բոլոր յարատևութեամբ և
աղաչանքով ամեն սուրբերի հա-
մար, Եւ ինձ համար էլ. որ ինձ 19
խօսք տրուի իմ բերանը բանալու
ժամանակ, որ համարձակութիւ-
նով հասկացնեմ աւետարանի
խորհուրդը. Որի համար ես պատ- 20
գամաւոր եմ կապանքներում,
որ նորանով համարձակ լինեմ,
ինչպէս որ պէտք է ինձ խօսիլ։
Բայց որպէսզի դուք էլ գի- 21
տենաք ինձ համար, թէ ինչ եմ
գործում, ամեն բան կ'իմացնէ
ձեզ Տիւքիկոս եղբայրը և Տէ-
րում պաշտօնեան. Որին հէնց 22
դորա համար ուղարկեցի ձեզ
մօտ, որ մեր մասին տեղեկանաք,
և նա ձեր սրտերը մխիթարէ։
Խաղաղութիւն լինի եղբայրնե- 23
րի հետ, և սէր՝ հաւատքով
Աստուած Հօրիցը և Տէր Յիսուս
Քրիստոսիցը։ Շնորհք լինի այն 24
ամենի հետ, որ մեր Տէր Յիսուս
Քրիստոսին սիրում են անկեղ-
ծութեամբ։ Ամէն։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ՓԻԼԻՊՊԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Տիմոթէոս՝ Յիսուս Քրիս-
տոսի ծառաները. ամեն սուրբե-
րին Քրիստոս Յիսուսումը, որ
Փիլիպպէումն են, եպիսկոպոս-
ների և սարկաւագների հետ.
2 Շնորհք լինի ձեզ հետ և խաղա-
ղութիւն Աստուած մեր Հօրիցը,
և Տէր Յիսուս Քրիստոսիցը։
Գոհանում եմ իմ Աստուա- 3
ծանից ամեն ժամանակ որ ձեզ
յիշում եմ. Որ ամեն ժամանակ 4
իմ ամեն աղաչանքներումը ձեր
ամենի համար աղօթք եմ անում
ուրախութիւնով. Ձեր աւետա- 5
րանին հաղորդ լինելու համար
այն առաջի օրիցը մինչև հիմա։
Եւ հաստատ համոզուած եմ սո- 6
րան, թէ նա որ ձեզանում սկսեց

այս բաբի գործը, կ'կատարէ եւ մինչև Յիսուս Քրիստոսի օրը ;
7 ինչպես որ պէտք է ինձ մտածել այս բոլոր ձեր ամենի համար. ու-
րովհետեւ ձեզ իմ սրտի մէջ ու-
նիմ իմ կապանքներուս մէջ, եւ ա-
ւետարանի ջատագովութեան եւ
հաստատութեան ժամանակ. որ
դուք ամենդ ինձ հետ շնորհքին
8 հաղորդ եղաք : Վասնզի Աստ-
ուած ինձ վկայ է, թէ ինչպես
ձեր ամենիդ փափաքումն եմ Յի-
9 սուս Քրիստոսի գութովը. Եւ
սա աղօթք եմ անում, որ ձեր
սէրն էլ աւելի եւ աւելի հարստա-
նայ գիտութիւնով եւ ամեն հաս-
10 կացողութիւնով. Որ դուք լա-
ւագոյնն ընտրէք, որ մաքուր լի-
նիք եւ առանց դատապարտութեան
11 Քրիստոսի օրուն, Ըդդարուս-
թեան պտուղներով լցուած՝ Յի-
սուս Քրիստոսի ձեռքով, Աստու-
ծոյ փառքի եւ գովասանքի հա-
մար :
12 Կամենում եմ, եղբարք, որ
գիտենաք, թէ ինչ բան որ իմ
մասին եղաւ, աւելի աւետարանի
յառաջադիմութեան համար յա-
13 ջողուեցաւ : Մինչև որ իմ կա-
պանքներդ Քրիստոսումն յայտնի
եղան բոլոր պալատին եւ ուրիշ
14 ամենին էլ. Եւ Տէրումն եղբայր-
ներից շատերը իմ կապանքներու-
վը քաջալերուած աւելի համար-
ձակ եղան Աստծոյ խօսքը ա-
15 նանց վախ խօսելու, Ոմանք նա-
խանձով և հակառակութեան
պատճառով, և ոմանք էլ բա-
րեհաճութեամբ մտքով քարոզում են
16 Քրիստոսին : *Եւ ոմանք հակա-
ռակութիւնից են քարոզում
Քրիստոսին, և ոչ թէ անկեղծ.
կարծելով թէ իմ կապանքներիս
17 վերայ նեղութիւն բերեն, *Իսկ ո-
մանք սիրից. գիտենալով որ Աստ-
ուածոյ պատրաստի ունենալով որ
18 ինձ համար եմ : Բայց ի՞նչ.
ինչ կերպով էլ որ լինի, թէ
պատճառանքով և թէ ճշմար-
տութիւնով Քրիստոսն է քարոզ-
վում. և սրա համար ուրախ
եմ՝ և ուրախ էլ կ'լինիմ, Վասն-
զի գիտեմ, թէ այս բանը վեր-
ջապէս ինձ փրկութեան պատ-
ճառ կ'լինի ձեր աղօթքովը և
Յիսուս Քրիստոսի Հոգւոյ ձեռքն-
տութիւնովը : Իմ ակնկալու-
թեան և յոյսի համեմատ ոչ մի
բանով ամօթի չեմ լինիլ, այլ բո-
լոր համարձակութիւնով ինչպես
ամեն ժամանակ, հիմա էլ Քրիս-
տոսը փառաւորուի իմ մարմնում,
թէ կեանքով և թէ մահով:
21 Վասնզի ինձ համար կեանքը Քրիս-
տոս է, և մեռնիլը շահ: Բայց
22 եթէ մարմնի մէջ ապրիլը իմ գոր-
ծիս պտուղ է ինձ՝, էլ չ'գի-
տեմ՝ թէ ո՞րն ընտրեմ:
23 Երկու կողմից էլ նեղ տեղ եմ. փա-
փաքելով գալ և Քրիս-
տոսի հետ լինել. որ շատ աւելի
24 լաւ է. Բայց մարմնում կենալը
աւելի հարկաւոր է ձեզ համար:
25 Եւ հաւատա համոզուած սա գի-
տեմ. որ կ'կենամ և կ'ծնամ ձեր
ամենի հետ, որ դուք զարգանաք
26 և ուրախ լինիք հաւատքով : Որ
ձեր պարծանքը աւելի լինի Քրիս-
տոս Յիսուսով ինձանով՝ իմ
դարձեալ ձեզ մօտ գալու հա-
մար :
27 Միայն թէ Քրիստոսի աւետա-
րանին վայելող կերպով գնացէք.
որ՝ թէ գամ և տեսնեմ ձեզ, և
թէ հեռու լինիմ և լսեմ ձեր
մասին, որ հաստատ էք մէկ հո-
գով և մէկ շունչով պատերազ-
միք աւետարանի հաւատքի հա-
մար: Եւ ոչ մի բանով մի զար-
28 հուրիք հակառակորդներից, որ
դա նրանց համար նշան է կո-
րուստի, և ձեզ համար՝ փրկու-
թեան: Եւ ձեզ Աստուածմանից
29 այդ շնորհք եղաւ Քրիստոսի հա-
մար, ոչ միայն հաւատալ նորան,
այլ նորա համար չարչարուիլ էլ:
30 Նոյն պատերազմն ունենալով որ
ինձանում տեսաք, և հիմա ին-
ձանից լսում էք:

*Որոնք 16րդ տողը 17էդ չեն գնում:

ԳԼ. Բ

1 Արդ եթէ մխիթարութիւն կայ

Քրիստոսով, եթէ սէրի սփոփու-
թիւն, եթէ Հոգւոյ հաղորդակա-
թիւն, եթէ գթածութիւն և ո-
2 ղորմութիւն. Ապ- լցրէք իմ ու-
րախութիւնը, որ նոյն միտքն ու-
նենաք, նոյն սէրն ունենալով,
միաշունչ մի և նոյնը խորհէք:
3 Ոչ մի բան չ'լինի գրգռութեամբ, և
ոչ էլ անպատրծութիւնով, այլ
խոնարհութիւնով թող մէկը
միւսին իր անձից աւելի լաւ
4 համարէ : Մինակ ձեր անձերի
բաներին մտիկ չ'տանք, այլ ամեն
5 մէկն իր ընկերի բաներէն էլ: Ձեր
ամեն մէկը թող այն մտածէ, որ
6 էլ Քրիստոս Յիսուսումն էր. Որ
Աստուծոյ կերպարանքումը լինել-
լով, յափշտակութիւն չ'համա-
րեց Աստուծուն հաւասար լի-
7 նել: Այլ իր անձն ունայնացու-
ցեց, և ծառայի կերպարանք առ-
նելով մարդկանց նման լինելով
և կերպարանքով մարդի պէս
8 գտնուելով. Խոնարհեցուց,
և հնազանդ եղաւ մինչև ի մահ՝
9 և այն էլ խաչի մահ: Նորա հա-
մար էլ Աստուած շատ բարձրա-
ցրեց նորան, և նորան մի անուն
շնորհեց, որ ամեն անունից աւելի
10 բարձր է. Որ Յիսուսի անունովը
կրկնուի ամեն ծունկ երկնաւոր-
ների և երկրաւորների և երկրի
11 տակ լինողների, Եւ ամեն լեզու
դաւանէ, թէ Յիսուս Քրիստոսը
Տէր է Հօր Աստուծոյ փառքի
12 համար: Ուրեմն, իմ սիրելիներս,
ինչպես ամեն ժամանակ հնազան-
դեցիք՝ ոչ միայն իմ ներկայու-
թիւնումն, այլ հիմա էլ աւելի
իմ բացակայութիւնումն, ահով
և դողալով գործեցէք ձեր անձե-
13 րի փրկութիւնը: Վասն զի Աստ-
ուած է՝ որ ներգործում է ձե-
զանում կամենալն էլ՝ անելն էլ
14 էր հաճութեան պէս: Ամեն բան
գործեցէք առանց տրտնջանքի և
15 վիճաբանութիւնների, Որ լինիք
անբիծ և անարատ՝ որդիք Աս-
տուծոյ առանց մեղադրանքի այն
կամակոր և ծուռ ազգի մէջ.
որոնց միջումը երևիք ինչպես լոյս
16 տուողներ աշխարհքի մէջ. կեանքի խօսքը պահելով ինձ պար-
ծանք լինելու համար Քրիստոսի
օրուն, որ զուր տեղը չ'վազեցի,
և զուր չ'աշխատեցի: Բայց թէև 17
ընծայուիմ ձեր հաւատքի պա-
տարագի և պաշտամունքի վերայ՝
ուրախ եմ, և ձեր ամենի հետ
ուրախանում եմ: Այնպես էլ 18
դուք ուրախացէք և ինձ հետ
ուրախացէք:
Բայց յոյս ունիմ Տէր Յիսուս- 19
ումն, որ Տիմոթէոսին շուտով
ուղարկեմ ձեզ մօտ, որ սիրտս
էլ հանգստանայ, երբոր ձեր վի-
ճակն իմանամ: Վասնզի մէկը 20
չ'ունիմ միաբերան, որ մտերմութեամբ
հոգս տանէ ձեզ համար: Վասն- 21
զի ամենքն իրանց բաներն են ո-
րոնում և ոչ թէ Յիսուս Քրիս-
տոսինը: Բայց դուք գիտէք նորա 22
ընտիր լինելը, որ ինչպես մի որդի
Հօրը՝ այնպես ինձ հետ ծառա-
յեց աւետարանին: Ուրեմն յոյս 23
ունիմ որ սորան ուղարկեմ իս-
կոյն, երբոր իմ անձի մասին կը
տեղեկանամ: Բայց վստահ եմ 24
Տէրումը, որ ինքս էլ շուտով
գամ: Միայն հարկաւոր համա- 25
րեցի՝ որ Եպափրոդիտոս եղբօրը՝
գործիս և զինուորութեանս ըն-
կերին, այն ձեր *առաքեալին, և
իմ պէտք լինող բաների պաշ-
տօնեային ուղարկեմ ձեզ մօտ:
Վասնզի ինքն էլ խիստ փափաք 26
ունէր ձեզ ամենիդ տեսնելու և
հոգս էր քաշում՝ որ լսել էիք
թէ նա հիւանդացաւ: Եւ իրաւի 27
որ հիւանդացաւ մերձ ի մահ,
բայց Աստուած ողորմեց նորան.
ոչ միայն նորան, այլ ինձ էլ,
որ տրտմութիւն տրտմութեան
վերայ չ'ունենամ: Ուրեմն աւելի 28
շտապով ուղարկեցի նորան, որ
տեսնելով նորան դարձեալ ու-
րախ լինիք, և ես էլ առանց
տրտմութեան լինեմ: Արդ ըն- 29
դունեցէք նորան Տէրումն ամեն
ուրախութիւնով, և այնպիսիներ-
ին պատուական համարեցէք:
Վասն զի Քրիստոսի գործի հա- 30
մար մինչև մահի մօտեցաւ. իր
անձը վտանգի մէջ դնելով, որ

*ուղարկածին

ձեր ինձ ծառայելու պակասութիւնը լրացնէ։

ԳԼ. Գ.

1 Այսուհետև, իմ եղբարք, ուրախ եղէք Տէրումը, մի և նոյն բաները ձեզ գրելը ինձ համար ձանձրութիւն չէ, բայց ձեզ ա-
2 պահովութիւն է։ Զգոյշ կացէք շներիցը. զգոյշ կացէք չար մշակներիցը. զգոյշ կացէք կրճատու-
3 թիւնիցը։ Վասն զի մենք ենք թլփատութիւնը, որ հոգով պաշտում ենք Աստուծուն, և պարծենում ենք Քրիստոս Յիսուսովը, և մարմնի վերայ վստահութիւն
4 չ՚ունինք։ Թէ և ես վստահութիւն ունիմ մարմնի կողմանէ էլ. եթէ մի ուրիշը կարծէ որ մարմնով վստահ լինի, աւելի ևս
5 ես։ Ութ օրուայ թլփատուած, Իսրայէլի ազգիցը, Բենիամինի ցեղիցը, Եբրայեցի Եբրայեցիներից, օրէնքի կողմանէ Փարիսեցի,
6 Ջերմեռանդութեան կողմանէ հալածող էի եկեղեցուն, օրէնքի արդարութեան մտիկ տալով ա-
7 նարատ էի։ Բայց ինչ բան որ ինձ շահ էր, այն վնաս համարե-
8 ցի Քրիստոսի համար։ Եւ հէնց ամեն բաներ էլ վնաս եմ համարում իմ Տէր Յիսուս Քրիստոսի գերազանց գիտութեան համար, որի պատճառով ամեն բանից զրկուեցայ, և աղբ եմ համարում, որ Քրիստոսին շա-
9 հեմ, Եւ նորանում գտնուիմ. և ոչ թէ իմ արդարութիւնն ունենամ՝ որ օրէնքիցն է, այլ այն որ Քրիստոսի հաւատքիցն է. այն արդարութիւնը որ Աստուա-
10 ծանից է հաւատքով. Որ ճանաչեմ նորան՝ և նորա յարութեան զօրութիւնը՝ և նորա չարչարանքի մասնակից լինելը, նորա մահուան կերպարանակից լինե-
11 լով. Որպէսզի մեռելների յա-
12 րութեանը հասնեմ։ Ոչ իբր արդէն բռնած լինեմ, կամ թէ արդէն կատարեալ եղած լինեմ, բայց հետևում եմ որ իցէ թէ հասնեմ նորան, ինչպէս որ էլ հէնց Քրիստոս Յիսուսիցը բռնուած եմ։ Եղբարք, ես իմ անձը 13
չեմ համարում որ հասած լինեմ, բայց մէկ բան կայ, ետևի բաները մոռանալով, դէպի առաջի լինողներն եմ նկրտում։ Հետևում եմ դէպի նպատակը՝ Ա- 14
ստուծոյ վերին կոչումի մրցանակին Քրիստոս Յիսուսումը։ Արդ 15
որոնքս կատարեալ ենք, այս մտածենք, և եթէ մի բան ուրիշ կերպով մտածէք, այն էլ Աստուած կ՚յայտնէ ձեզ։ Միայն թէ ինչի 16
որ հասանք, նոյն կանոնով վարուինք, նոյնը մտածենք։ Ինձ նմա- 17
նող եղէք, եղբարք, և նայեցէք այն կերպով գնացողներին ինչպէս մեզ օրինակ ունիք։ Վասնզի 18
շատերն են գնում, որոնց համար շատ անգամ ասում էի ձեզ. և հիմա էլ լալով ասում եմ, որ Քրիստոսի խաչի թշնամիներ են. Որոնց վերջը կորուստ է, որոնց 19
Աստուածն իրանց որովայնն է. և փառքը՝ իրանց ամօթն է. որոնք երկրաւոր բաներն են մտածում։ Բայց մեր քաղաքականութիւնը 20
երկնքումն է, որ այնտեղից սպասում ենք Փրկչին՝ Տէր Յիսուս Քրիստոսին. Որ կ՚նորոգէ մեր խո- 21
նարհ մարմինը որ իր փառաւոր մարմնին կերպարանակից լինի այն զօրութիւնովը, որ կարող է ամեն բան հնազանդեցնել իրան։

ԳԼ. Դ.

Ուրեմն, իմ սիրելի և բաղձալի 1
եղբարք, իմ ուրախութիւնը և իմ պսակը. այսպէս հաստատ կացէք Տէրումը, սիրելիներ։
Եւոդիային աղաչում եմ, և 2
Սիւնտիքին աղաչում եմ, որ միևնոյնը խորհին Տէրումը։ Այո, 3
քեզ էլ եմ աղաչում, իմ հարազատ լծակից, դու էլ օգնիր նորանց, որ ճիգ թափելով աշխատեցին աւետարանումն ինձ հետ միասին և Կղեմէսի հետ և իմ ուրիշ գործակիցների հետ էլ, որ նորանց անունները կեանքի գրքումն են։ Ուրախ եղէք Տէ- 4
րումն ամեն ժամանակ. դարձեալ

5 ասում եմ՝ ուրախ եղէք։ Ձեր հեզութիւնը թող յայտնի լինի ամեն մարդկանց. Տէրը մօտ է։
6 Ոչինչ հոգս մի անէք. այլ ամեն բանում աղօթքով և աղաչանքով և գոհութիւնով՝ ձեր խնդրուածքները թող յայտնի
7 լինեն Աստուծուն։ Եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամեն մտքից վեր է, կ՚պահպանէ ձեր սրտերն ու միտքերը Քրիստոս Յիսուսու-
8 մը։ Այսուհետև, եղբարք, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ պարկեշտ, ինչ որ արդար, ինչ որ սուրբ, ինչ որ սիրուն, ինչ որ բարի անուն, թէ առաքինութիւն է, և թէ գովութիւն է, այն մտածե-
9 ցէք։ Հէնց այն որ սովորեցիք, և ընդունեցիք, և լսեցիք. և ինձանում տեսաք, այն արէք. և խաղաղութեան Աստուածը ձեզ հետ կ՚լինի։
10 Ես մեծապէս ուրախացայ Տէրումը, որ դուք արդէն դարձեալ միտքերնիդ բերիք հոգալ ինձ համար, ինչպէս էլ հոգում էիք, բայց պատշաճ ժամանակ չէիք
11 գտնում։ Ոչ թէ կարօտութեան պատճառով եմ ասում. վասնզի ես սովորեցի ինչի մէջ որ կամ,
12 նորանով բաւական լինել։ Գիտեմ պակասութիւն քաշել, և աւելութիւնով լինելն էլ. ամեն բանի մէջ ամենին լաւ տեղեկացած եմ՝ կշտանալն էլ սովելն էլ. աւելութիւնով ունենալն էլ, պակասութիւն քաշելն էլ։
Ամեն բան կարող եմ ինձ զօ- 13
րացնող Քրիստոսով։ Սակայն լաւ 14
արիք որ հաղորդ եղաք ինձ իմ նեղութիւնումը։ Դուք ինքներդ 15
էլ, Փիլիպպեցիք, գիտէք, որ աւետարանի սկզբումը՝ երբոր Մակեդոնիայից դուրս եկայ ոչ մի եկեղեցի հաղորդութիւն չ՚արաւ ինձ տալու կամ առնելու հաշիւով. բայց միայն դուք։ Վասն- 16
զի Թեսաղոնիկէի մէջ էլ մի երկու անգամ ինձ պէտք եղած բաները ուղարկեցիք։ Իբր ոչ թէ 17
տուրքն եմ ուզում, այլ պտուղն եմ ուզում, որ աւելանայ ձեր հաշիւին։ Բայց ես ամեն բան ա- 18
ռել եմ, և առատութիւն ունիմ. լիքն եմ, որ Եպափրոդիտոսի ձեռովն ընդունեցի այն որ ձեզանից է՝ անուշ հոտ ընդունելի պատարագ՝ Աստուծոյ հաճոյ։
Եւ իմ Աստուածը լրացնէ ձեր 19
ամեն կարօտութիւնն իր հարըստութեան չափովը՝ փառքով Քրիստոս Յիսուսումը։ Բայց Ա- 20
ստուծուն՝ մեր Հօրը փառք լինի յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
Բարև տուէք ամեն սուրբերին 21
Քրիստոս Յիսուսումը։ Բարև են 22
տալիս ձեզ ինձ հետ լինող եղբայրները։ Բարև են տալիս ձեզ 23
ամեն սուրբերն, մանաւանդ կայսրի տանիցը լինողները։ Տէր 24
Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամենիդ հետ լինի։ Ամէն։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ Աստուծոյ կամքովը, և Տի-
2 մոթէոս եղբայրը. Կողոսայում լինող սուրբերին և հաւատացեալ եղբայրներին Քրիստոսումը։ Շնորհք լինի ձեզ հետ՝ և խաղաղութիւն Աստուած մեր Հօրիցը՝ և Տէր Յիսուս Քրիստոսիցը։
3 Գոհանում ենք Աստուածանից և մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրիցը՝ ամեն ժամանակ ձեզ հա-
4 մար աղօթք անելով. Երբոր լսեցինք ձեր հաւատքը, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի վերայ, և սէրը՝ որ դէպի ամեն սուրբերն ունիք.
5 Այն յոյսի համար՝ որ պահվում է ձեզ համար երկնքումն, որի համար առաջուց լսեցիք աւե-
6 տարանի ճշմարիտ խօսքովը. Որ հասաւ ձեզ, ինչպէս ամեն աշխարհի մէջ, և պտուղ է բերում, ինչպէս ձեր միջումն էլ, այն օրիցն հետէ՝ որ լսեցիք և Աստուծոյ շնորհքը ճանաչեցիք
7 ճշմարտութիւնով։ Ինչպէս էլ սովորեցիք Եպափրասիցը՝ մեր սիրելի ծառայակցիցը, որ ձեզ համար Քրիստոսի հաւատարիմ
8 պաշտօնեայ է, Որ էլ պատմեց մեզ ձեր սէրը հոգով։
9 Նորա համար մենք էլ այն օրիցը հետէ որ լսեցինք, չենք դադարում ձեզ համար աղօթք անելուց և խնդրուածք մատուցանելուց որ լցուիք նորա կամքի գիտութիւնովը, ամեն իմաստութիւնով և հոգևոր հանճարով.
10 Որ դուք գնաք ինչպէս արժանի է Տիրոջը, ամեն բանի մէջ հաճոյ լինելով նորան, ամեն բարի գործով պտղաբեր լինիք և աճիք Աստուծոյ գիտութեան մէջ. Ա-
11 մեն զօրութիւնով զօրացած իր փառքի զօրութեան համեմատ, ամեն համբերութեան և երկայնմտութեան մէջ ուրախութիւնով. Եւ գոհութիւն տաք
12 Հօրը որ մեզ արժանացրեց մասնակից լինելու սուրբերի վիճակին լոյսումը. Որ փրկեց մեզ խա-
13 ւարի իշխանութիւնիցը և փոխադրեց մեզ իր սիրելի Որդու արքայութեան մէջ, Որի ձեռովն
14 ունինք փրկութիւն նորա արիւնովը՝ մեղքերի թողութիւնը. Որ
15 աներևոյթ Աստուծոյ պատկերն է՝ ամեն ստեղծուածներից առաջ ծնուած։ Վասն զի նորանով ա-
16 մեն բան ստեղծուեցաւ ինչ որ երկնքումն՝ և ինչ որ երկրիս վերայ է՝ երևողները և չ՚երևողները, թէ աթոռները, թէ տէրութիւնները, թէ պետութիւնները, թէ իշխանութիւնները. ամեն բաները նորանով՝ և նորա համար ստեղծուեցան։ Եւ նա ամենից
17 առաջ է, և ամեն բան նորանով
18 է հաստատ. Եւ նա է մարմնի այսինքն եկեղեցու գլուխը, որ նա է սկիզբը, մեռելների անդրանիկը. որպէս զի ամեն բանի մէջ
19 նա լինի առաջինը։ Որովհետև Աստուած հաճեց, որ նորանում Աստուածութեան բոլոր լիութիւնը
20 բնակուի։ Եւ նորանով ամենը հաշտեցնէ իրան հետ, խաղաղութիւն անելով նորա ձեռովը նորա խաչի արիւնովը, թէ երկրիս վերայ թէ երկնքումը լինողներին։
21 Եւ ձեզ էլ, որ մի ժամանակ

օտարացած և թշնամի էիք մտքով
22 չար գործերումը, Հիմա հաշտեցրեց իր մսեղէն մարմնի մէջ իր մահի ձեռովը, որ ձեզ սուրբ, և անբիծ, և անարատ կանգնեցնէ
23 իր առաջին։ Եթէ հաւատքի մէջ հիմնուած և հաստատ կենաք, և առանց շարժուելու այն աւետարանի յոյսիցը՝ որ լսեցիք, որ երկընքի տակ լինող բոլոր արարածներին քարոզուեցաւ. որին ես
24 Պօղոս պաշտօնեայ եղայ։ Հիմա ուրախ եմ իմ չարչարանքներումը ձեզ համար, և լրացնում եմ Քրիստոսի նեղութիւնների պակասը իմ մարմնումը նորա մարմնի
25 տեղ որ է եկեղեցին, Որի ես պաշտօնեայ եղայ, Աստուծոյ այն տնտեսութեան պէս, որ ինձ տրուած է ձեզ համար Աստուծոյ խօսքը կատարելու համար.
26 Այն խորհուրդը որ ծածկուած էր յաւիտենից և դարերից, իսկ հիմա յայտնուեցաւ իր սուրբե-
27 րին. Որոնց Աստուած կամեցաւ ցոյց տալ, թէ ինչ է այս խորհրդի փառաւոր ճոխութիւնը հեթանոսներումը, որ է Քրիստոսը ձեզանում՝ այն փառքի յոյսը։
28 Որին մենք քարոզում ենք ամեն մարդի խրատելով և ամեն մարդի սորվեցնելով ամեն իմաստութիւնով, որ ամեն մարդի կատարեալ կանգնեցնենք Քրիստոս
29 Յիսուսումը. Որի համար էլ աշխատում եմ ճիգ թափելով նորա ներգործութեան չափովը, որ ինձանում ներգործում է զօրութիւնով։

ԳԼ. Բ

1 Վասն զի կամենում եմ որ գիտենաք դուք, թէ ինչպիսի ճիգ եմ թափում ձեզ համար և Լաւոդիկեցիների համար, և որոնք իմ երեսը մարմնով չեն
2 տեսել. Որ նորանց սրտերը մխիթարուին սիրով միացած. և կատարեալ իմաստութեան ամեն ճոխութեանը հասնին, այսինքն Աստուծոյ և Հօր և Քրիստոսի
3 խորհուրդը իմանալու. Որի մէջ ծածկուած կան իմաստութեան և գիտութեան ամեն գանձերը։
4 Բայց սա եմ ասում, որ մի գուցէ մէկը մոլորեցնէ ձեզ հրապուրական խօսքերով։ Վասն զի թէև
5 մարմնով բացակայ եմ, բայց հոգով ձեզ հետ եմ. ուրախանալով ձեր կարգը տեսնելով, և ձեր հաւատքի հաստատութիւնը՝ որ Քրիստոսի վերայ է։ Ու-
6 րեմն ինչպէս Քրիստոս Յիսուս Տէրն ընդունեցիք՝ նորանում գնացէք. Արմատացած և նորա-
7 նում շինուած, և հաւատքումը հաստատուած՝ ինչպէս որ սովորեցիք՝ աճելով նորանում գոհութիւնով։ Զգոյշ կացէք՝ մի
8 գուցէ մէկը յափշտակէ ձեզ փիլիսոփայութիւնով և դարտակ խաբեբայութիւնով, մարդկանց աւանդութեան պէս, աշխարհքիս սկզբունքների պէս և ոչ թէ Քրիստոսի պէս։ Որովհե-
9 տև նորանում բնակուած է Աստուածութեան ամեն լիութիւնը մարմնապէս։ Եւ դուք նորանով
10 լցուած էք, որ նա է ամեն իշխանութեան և պետութեան գլուխը. Որով դուք թլփատուե-
11 ցաք անձեռագործ թլփատութիւնով, մարմնական մեղքերի մարմինը մերկանալովը Քրիստոսի թլփատութիւնովը. Թաղուելով
12 նորա հետ մկրտութիւնումը, որով յարութիւն էլ առաք նորա հետ Աստուծոյ ազդեցութեան հաւատքովը, որ յարութիւն տուաւ նորան մեռելներից։ Եւ ձեզ որ մի ժամանակ մեռած
13 էիք մեղքերումը և ձեր մարմնի անթլփատութիւնումը, իրան հետ կենդանացրեց բոլոր մեղքերը ձեզ շնորհելով։ Եւ ջնջեց այն
14 մեզ հակառակ ձեռագիրը հրամաններովը որ մեզ հակառակ էր, և նորան վեր առաւ մէջ տեղիցը և խաչափայտին վերայ բևեռեց.
15 Իշխանութիւններին և պետութիւններին մերկացնելով, յայտնապէս խայտառակեց և նորանց յաղթանակեց իրանում։
16 Արդ թող մէկը չ՚դատէ ձեզ ուտելու կամ խմելու համար,

կամ տօնի կամ ամսագլխի կամ
17 շաբաթների մասին։ Որոնք նոր
գալու բաների ստուերներն են,
18 բայց մարմինը Քրիստոսինն է։ Ոչ
ով չ'զրկէ ձեզ մրցանակիցը՝ ինք-
նակամ խոնարհութիւնով և
հրեշտակների կրօնքով՝ միջամուխ
լինելով այն բաներին որ չէ տե-
սած և զուր տեղը գոռոզացած է
19 իր մարմնաւոր մտքումը. Եւ չը
բռնելով Գլուխը, որից բոլոր մար-
մինը յօդուածներով և խաղե-
րով հաղորդուած և կցուած՝
մեծանում է Աստուծոյ աճմուն-
20 քովը։ Արդ եթէ Քրիստոսի հետ
մեռաք այս աշխարհքի սկզբունք-
ներիցը՝ էլ ի՞նչու էք այս աշխարհ-
քի մէջ կենդանիների պէս այս-
պէսի կանոններով կապվում, թէ
21 Մի մօտենար, մի ճաշակիր, մի
22 դպչիր. Որ ամենն ապականու-
թեան համար են գործածու-
թեամբ, մարդկանց պատուի-
րանքների և վարդապետութիւն-
23 ների պէս։ Որոնք իմաստութեան
կերպարանք ունին ինքնահնար
կրօնքով և խոնարհութիւնով և
մարմնին չ'խնայելով, մի տեսակ
չ'պատուելով մարմինը յագեցը-
նելը։

ԳԼ. Գ

1 Արդ եթէ Քրիստոսի հետ յա-
րութիւն առաք, ապա խնդրե-
ցէք վերինները, որտեղ Քրիստոսն
է նստում Աստուծոյ աջ կողմը։
2 Վերինները մտածեցէք, ոչ թէ
3 երկրի վերայինները. Վասն զի
դուք մեռաք՝ և ձեր կեանքը
ծածկուած է Քրիստոսի հետ
4 Աստուծոյ մէջ։ Բայց երբոր Քրիս-
տոս՝ մեր կեանքը կ'յայտնուի,
այն ժամանակ դուք էլ նորա
հետ կ'յայտնուիք փառքով։
5 Ուրեմն սպանեցէք ձեր ան-
դամները որ երկրի վերայ են,
պոռնկութիւնը, պղծութիւնը,
կիրքը, չար ցանկութիւնը, և ա-
դահութիւնը որ կռապաշտու-
6 թիւն է։ Որոնց համար Աստու-
ծոյ բարկութիւնը գալիս է ան-
հնազանդութեան որդիների վե-
7 րայ, Որոնց մէջ դուք էլ մի ժա-
մանակ գնացել էք, երբոր կեն-
8 դանի էիք նորանցում։ Բայց հի-
մա դուք էլ դէն դրէք այն ա-
մենը, բարկութիւնը, սրտմտու-
թիւնը, չարութիւնը, հայհոյու-
թիւնը, ամօթալի խօսքերը ձեր
9 բերանիցը։ Սուտ մի խօսիք իրար
հետ. հանեցէք հին մարդն իր
10 գործերովը։ Եւ հագէք նոր մարդը
որ նորոգուած է գիտութիւնով
11 իր ստեղծողի պատկերի պէս։ Ուր
ոչ Յոյն կայ և ոչ Հրէայ, ոչ
թլփատութիւն՝ և ոչ անթլփա-
տութիւն, խուժ դուժ, Սկիւ-
թացի, ծառայ, ազատ. բայց
Քրիստոսն է ամենը և ամենի
12 մէջ։ Ուրեմն հագէք՝ ինչպէս Ա-
ստուծոյ ընտրուածներ՝ սուրբեր
և սիրելիներ՝ ողորմասիրտ գթա-
ծութիւն, քաղցրութիւն, խո-
նարհութիւն, հեզութիւն, եր-
13 կայնմտութիւն. Իրար համբերե-
լով, և իրար ներելով. եթէ մէկը
միւսի դէմ տրտունջ ունենայ,
ինչպէս Քրիստոսն էլ ձեզ ներեց,
14 այնպէս էլ դուք. Եւ այս ամենի
վերայ հագէք սէրը, որ կատարե-
15 լութեան կապն է։ Եւ Աստուծոյ
խաղաղութիւնը իշխէ ձեր սրտե-
րումը, որի մէջ էլ կանչուեցաք
մէկ մարմնով, և գոհացող եղէք։
16 Քրիստոսի խօսքը բնակուի ձեր
միջումն առատապէս ամեն իմաս-
տութիւնով. իրար սովորեցրէք և
խրատեցէք, սաղմոսներով և օրհ-
նութիւններով և հոգևոր երգե-
րով և շնորհքով օրհներգեցէք
17 Տիրոջը ձեր սրտերումը։ Եւ ամեն
ինչ որ էլ անէք խօսքով կամ
գործով, ամենը Տէր Յիսուսի ա-
նունովն արէք, գոհութիւն տա-
լով Աստուծուն և Հօրը նորա ձե-
ռովը։
18 Կանայք, հնազանդ եղէք ձեր
մարդկանցը, ինչպէս կ'վայելէ Տէ-
19 րումը։ Մարդիկ, սիրեցէք ձեր
կանանցը, և դառն մի լինիք նո-
20 րանց դէմ։ Որդիք, հնազանդ ե-
ղէք ձեր ծնողներին ամեն բանի
մէջ. վասն զի այդ հաճոյ է Տէ-
21 րոջը։ Հայրեր, մի զայրացնէք
ձեր որդկանցը, որ չ'վհատին։

22 Ծառաներ, հնազանդ եղէք ա-
մեն բանի մէջ ձեր մարմնաւոր
տէրերին ոչ թէ աչքի առաջ
ծառայութիւն անելով մարդա-
հաճոյների պէս. բայց սրտի միա-
մտութեամբ Աստուածանից վա-
23 խենալով։ Եւ ամեն ինչ որ էլ
անէք, սրտանց արէք, ինչպէս
Տիրոջը, և ոչ թէ մարդկանց.
24 Գիտենալով որ Տէրիցը կ'առնէք
ժառանգութեան հատուցումը.
վասնզի Տէր Քրիստոսին էք ծա-
25 ռայում։ Բայց անիրաւը հատու-
ցում կ'ստանայ իր արած անի-
րաւութեան համար. աչառու-
թիւն չ'կայ։

ԳԼ. Դ

1 Տէրեր, իրաւունքը և հաւասա-
րը տուէք ծառաներին. գիտե-
նալով որ դուք էլ Տէր ունիք
երկնքումը։
2 Աղօթքին միշտ հետևեցէք. և
արթուն կացէք նորանում գո-
3 հութիւնով։ Եւ մեզ համար էլ
աղօթք արէք, որ Աստուած բա-
նայ մեզ համար խօսքի դուռը
խօսել Քրիստոսի խորհուրդը, որի
4 համար էլ կապուած եմ։ Որ
յայտնեմ նորան՝ ինչպէս ինձ
5 արժան է խօսել։ Իմաստութիւ-
նով վարուեցէք դրսինների հետ,
6 և ժամանակը գնեցէք։ Ձեր խօս-
քը ամեն ժամանակ շնորհքով՝
աղով համեմած լինի, որ գիտե-
նաք թէ ինչպէս արժան է ձեզ
ամեն մէկին պատասխան տալ։
7 Իմ մասին ամենը կ'իմացնէ
ձեզ Տիւքիկոս սիրելի եղբայրը
և հաւատարիմ պաշտօնեան և
8 ծառայակիցը Տէրումը, Որին հէնց
դորա համար ուղարկեցի ձեզ
մօտ, որ իմանայ ձեր մասին և
մխիթարէ ձեր սրտերը. Ոնեսիմոս 9
հաւատարիմ և սիրելի եղբօր
հետ, որ ձեզանից է. նորանք ա-
մենը կ'իմացնեն ձեզ ինչ որ այս-
տեղ լինում է։ Բարև է տալիս 10
ձեզ Արիստարքոսն՝ իմ գերու-
թեան ընկերը, և Բառնաբասի
եղբօր որդի Մարկոսը. որի հա-
մար պատուէր առաք, որ եթէ
ձեզ մօտ գայ, ընդունիք նորան։
Եւ Յիսուսը որ Յուստոս է ան- 11
ուանվում, որոնք թլփատութիւ-
նիցն են. միայն դորանք են իմ
գործակիցները Աստուծոյ արքա-
յութիւնումն, որ ինձ համար էլ
մխիթարութիւն եղան։ Բարև է 12
տալիս ձեզ Եպափրաս՝ Քրիստոսի
ծառան, որ ձեզանից է. ամեն
ժամանակ ձեզ համար պատե-
րազմում է աղօթքներում, որ
կատարեալ և լցուած լինիք Ա-
ստուծոյ բոլոր կամքումը։ Վասնզի 13
վկայում եմ նորա համար որ շատ
նախանձ ունի ձեզ համար, և նո-
րանց համար որ Լաւոդիկէումն
և Յերապօլիսումն են։ Բարև է 14
տալիս ձեզ բժիշկ Ղուկաս սի-
րելին և Դեմասը։ Բարև տուէք 15
Լաւոդիկէումը լինող եղբայրնե-
րին և Նիմփային և նորա տան ե-
կեղեցուն։ Եւ երբոր ձեզ մօտ 16
կարդացուի այս թուղթը՝ Լաւո-
դիկեցիների եկեղեցումն էլ կար-
դալ տուէք. և որ Լաւոդիկիայից
եկածն էլ դուք կարդաք։ Եւ Ար- 17
քիպոսին ասեցէք. Զգոյշ եղիր այն
սպասաւորութեանը որ ընդունե-
ցիր Տէրումը, որ նորան կատարես։
Այս բարևը իմ Պօղոսիս ձեռքովն 18
է, յիշեցէք իմ կապանքը. շնորհ-
քը լինի ձեզ հետ. Ամէն։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ

Ս. ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Սիղուանոս և Տիմոթէոս, Թեսաղոնիկեցիներուն եկեղեցւոյն Աստուած Հօրմէ և Տէր Յիսուս Քրիստոսմէ. շնորհք ւմէ ձեզ հետ և խաղաղութիւն մեր Հայր Աստուածմանէ և Տէր Յիսուս Քրիստոսիցը.

2 Գոհանալմ ենք Աստուածմանից ամեն ժամանակ ձեր ամենի համար ձեզ յիշելով մեր աղօթքներուն. և անդադար յիշելմ ենք ձեր հաւատքի գործը և սիրի աշխատանքը, և մեր Տէր Յիսուս Քրիստոսի յոյսի համբերութիւնը Աստուծոյ և մեր Հօր առաջին.

4 Գիտենալով, Աստուածմանից սիրուած եղբայրք, ձեր ընտրութիւնը;

5 Որ մեր աւետարանը ձեզ մնա չ'եղաւ միայն խօսքով, այլ և զօրութիւնով և Հոգով Սուրբով և շատ լիութիւնով. ինչպես լաւ գիտէք, թէ որպիսիք եղանք ձեր

6 միջումը ձեզ համար։ Եւ դուք նմանող եղաք մեզ և Տիրոջ՝ խօսքն ընդունելով շատ նեղութեան մէջ Սուրբ Հոգու ուրախութիւնով.

7 Որ դուք օրինակ եղաք ամեն հաւատացեալներին Մակեդոնիայի և Աքայիայի մէջ։

8 Որովհետև ձեզմանից հռչակուեցաւ Տիրոջ խօսքը. ոչ միայն Մակեդոնիայի և Աքայիայի մէջ, այլ և ամեն տեղ դուրս եկաւ ձեր հաւատքը առ Աստուած. այնպես որ պէտք չէ մեզ մի բան

9 խօսել։ Որովհետև հենց իրանք պատմում են մեր մասին թէ ինչպիսի մուտք ունեցանք ձեզ մնա և ինչպես դուք դարձաք կուռքերից դէպի Աստուած, որ ծառայէք կենդանի և ճշմարիտ Աստուծոն։ Եւ սպասէք նորա Որդուն երկնքից, որին յարուցին մեռելների միջից՝ Յիսուսին որ փրկում է մեզ գալու բարկութիւնից։

ԳԼ. Բ

1 Որովհետև ինքներդ գիտէք, եղբայրք, այն մեր ձեզ մնա մանելը, որ ունայն չ'եղաւ. Այլ առաջ

2 չարչարուելով և անարգուելով, ինչպես գիտէք, փիլիպպէոսում համարձակեցանք մեր Աստուծով խօսել ձեզ Աստուծոյ աւետարանը մեծ հակառակութիւնով։

3 Որովհետև մեր յորդորանքը ոչ մոլութիւնից է, և ոչ պղծութիւնից, և ոչ խաբերայութիւնով։

4 Այլ ինչպես մենք Աստուածմանից ընտրուեցանք որ աւետարանը մեզ հաւատացուի, այնպես էլ խօսում ենք ոչ թէ իբր մարդկանց հաճոյ լինողներ, այլ Աստուածուն՝ որ մեր սրտերը քննում է։

5 Որովհետև երբէք շողբորթութեան խօսքերով չ'եղանք, ինչպես գիտէք. և ոչ էլ ագահութեան պատճառանքով. Աստուած վկայ է։

6 Եւ ոչ մարդկանցից փառք խնդրեցինք, ոչ ձեզմանից, և ոչ ուրիշներից, թէև կարող էինք ինչպես Քրիստոսի առաքեալներ ծանրութիւն լինել, բայց հեզահոգի եղանք ձեր մէջ ինչպես որ մի դայեակ սնուցանում է իր երեխաներին։

7 Այնպես էլ մենք խանդակաթ սէր ունենալով դէպի ձեզ, հաճեցանք ոչ թէ միայն Աստուծոյ աւետարանը տալ ձեզ, այլ մեր անձերն էլ, որովհետև մեր սիրելիներն եղաք։

9 Վասնզի յիշում էք, եղբայրք, մեր աշխատանքը և ջանքը, որ գիշեր և ցերեկ գործում էինք, որ ձեզմանից ոչ մեկին ծանրութիւն չ'տանք. և Աստուծոյ աւետարանը քարոզում

10 էինք ձեզ։ Դուք ինքներդ վկայ էք և Աստուած էլ, թէ ինչպես արդարութեամբ և արդարութեամբ և անարատութեամբ եղանք ձեզ

11 հաւատացեալներիդ մէջ։ Ինչպես գիտէք, որ ձեզմանից ամեն մեկին՝ ինչպես մի հայր իր որդիներին՝ Յորդորում և մխիթարում էինք, և վկայութիւն էինք տալիս, որ դուք գնաք, ինչպես այն Աստուածուն կ'վայելէ, որ

13 ձեզ իր արքայութեան և փառքի մէջ կանչեց։ Ընդա համար էլ մենք անպակաս գոհանում ենք Աստուածմանից, որ դուք Աստուծոյ քարոզութեան խօսքը մեզմանից առած ընդունեցիք, ոչ թէ իբր մարդկանց խօսք, այլ ինչպես որ ճշմարիտ է՝ Աստուծոյ խօսք. որ և ներգործում է ձեզ

14 հաւատացեալներումդ։ Որովհետև, եղբայրք, դուք նման եղաք Աստուծոյ այն եկեղեցիներին, որ Քրիստոս Յիսուսումն են Քրիստոս Յիսուսումը. որովհետև դուք էլ նոյնը կրեցիք ձեր ազգականներից. ինչպես նորանք էլ Հրեա-

15 ներից. Որոնք Տէր Յիսուսին էլ սպանեցին և իրանց մարգարէներին, և մեզ հալածեցին և Աստուծոյ անհաճոյ եղան. և բոլոր

16 մարդկանց հակառակ են. Որ մեզ արգելում են խօսել հեթանոսներին որ փրկուին, որ իրանց մեղքերը կատարեալ անեն ամեն ժամանակ, և հասել է նորանց վերջայ բարկութիւնը մինչև վերջը։

17 Բայց մենք, եղբայրք, թէև ժամանակ ձեզմանից որը մնացինք երեսով և ոչ սրտով, բայց աւելի ևս շատացինք ձեր երեսը

18 տեսնելու մեծ փափաքով։ Նորա

ԳԼՈՒԽ Գ

1279

համար ևս Զօրաս մի երկու անգամ կամեցայ ձեզ մնա գալ, և սատանան խափանեց մեզ։ Որով-

19 հետև ո՞վ է մեր յոյսը կամ ուրախութիւնը կամ պարծանքի պսակը, եթէ ոչ դուք Տէրումէ մեր Տէր Յիսուս Քրիստոսի առաջին նորա գալու ժամանակումը։

20 Վասնզի դուք էք մեր փառքը և ուրախութիւնը։

ԳԼ. Գ

1 Վասն որոյ այլ ևս չ'համբերելով բարեաւ երևեցաւ մեզ, որ մենք մինակ մնանք Աթենքումը։

2 Եւ ուղարկեցինք մեր Տիմոթէոս եղբայրը և Աստուծոյ ծառան և Քրիստոսի աւետարանին մէջ մեր գործակիցը, որ ձեզ հաստատէ և մխիթարէ ձեր հաւատքի համար,

3 Որ չ'սասանիք այս նեղութիւններումը, վասն զի դուք ինքներդ գիտէք, որ հենց սորա համար կանղնած ենք։ Որովհետև

4 երբոր էլ ձեզ մնա էինք, կանխաւ ասում էինք ձեզ, թէ նեղութիւններ ենք կրելու. ինչպես որ եղաւ էլ, և իմացանք էլ։

5 Սորա համար ևս էլ այլ ևս չ'համբերելով, ուղարկեցի որ ձեր հաւատքը գիտենամ, որ մի գուցէ փորձիչը ձեզ փորձէց և մեր աշխատանքը զուր լինի։ Բայց հի-

6 մա երբոր Տիմոթէոսը ձեզմանից եկաւ մեզ մնա, և ձեր հաւատքի և սէրի աւետիքը տուաւ մեզ, որ ամեն ժամանակ մեր բարի յիշատակը չէր խափան ունիք, փափաքելով մեզ տեսնել՝ ինչպես մենք էլ ձեզ, Որոա հա-

7 մար, եղբայրք, մխիթարուեցանք ձեզ վերայ այն մեր ամեն վիշտումը և նեղութիւնումը ձեր հաւատքի համար։ Որովհետև հի-

8 մա մենք կենդանի ենք, եթէ դուք հաստատ կենաք Տէրումը։ Վասն-

9 զի ինչ գոհութիւն կարող ենք մատուցանել Աստուծուն ձեր մասին այն ամեն ուրախութեան համար, որով ուրախանում ենք ձեզ վերայ մեր Աստուծոյ առաջին,

10 Գիշեր և ցերեկ առաւել ևս

աղաչեմ ենք, որ ձեր երեսը տեսնենք, և ձեր հաւատքի պա-
11 կասութիւնը լրացնենք. Բայց ինքն Աստուած և մեր Հայրը և մեր Տէրը Յիսուս Քրիստոս ուղղէ
12 մեր ճանապարհը դէպի ձեզ, իսկ ձեզ աճեցնէ և աւելցնէ Տէրը սիրով դէպի իրար և դէպի ամե-
13 նը, ինչպէս որ մենք էլ դէպի ձեզ, Որ ձեր սրտերը հաստատուն անարատ արդարութիւնով Աստուծոյ և մեր Հօր առաջին մեր Տէր Յիսուս Քրիստոսի իր ամեն սրբերովը գալու ժամանակումը։

ԳԼ. Դ

1 Ա, յսուհետև, եղբարք, աղաչեմ ենք ձեզ և յորդորում ենք Տէր Յիսուսումը, ինչպէս որ ընդունեցիք մեզմէն, թէ ինչպէս
2 պէտք է ձեզ գնալ և հաճոյ լինել Աստուծոյ, որ էլ աւելի յառաջանաք։ Վասնզի գիտէք թէ ինչպիսի պատուիրանքներ տուինք ձեզ Տէր Յիսուսումը։
3 Որովհետև սա է Աստուծոյ կամքը՝ ձեր սրբութիւնը. որ դուք
4 ետ կենաք պոռնկութիւնից, Եւ ձեզանից ամեն մէկը գիտենայ իր անօթը պահել սրբութեամբ և
5 պատուով, Ոչ թէ ցանկութեան կիրքով, ինչպէս հեթանոսները
6 էլ որ Աստուծուն չ'գիտեն։ Ոը լինի որ մէկը մի բանում չափից անցնէ և իր եղբօրը զրկէ. որովհետև Տէրն այդ բոլոր բաների համար վրէժխնդիր է. ինչպէս ա-
7 ռաջուց էլ ասեցինք ձեզ և վկայութիւն տուինք։ Որովհետև Աստուած մեզ չ'կանչեց պղծութեան մէջ, այլ սրբութեան
8 մէջ։ Ուրեմն նա որ անարգում է, ոչ թէ մարդի է անարգում, այլ Աստուծուն, որ և տուաւ մեզ Սուրբ Հոգին։
9 Բայց եղբայրասիրութեան համար պէտք չ'ունինք մի բան գրել ձեզ, որովհետև դուք ինքներդ Աստուածմանից սովորած էք իրար
10 սիրելու. Որ հէնց այդ էլ անում էք այն բոլոր եղբայրներին, որ ամբողջ Մակեդոնիայումն են. և աղաչում ենք ձեզ, եղբարք, որ էլ աւելանաք, Եւ ջանք անէք
11 որ հանդարտ լինիք. և ամեն մէկին իր գործը գործէ. և ձեր ձեռովը աշխատէք, ինչպես որ պատուիրեցինք ձեզ, որ պարկեշտութեամբ վարուիք դրսինների հետ և ոչ մի բանով կարօտ չ'լինիք։
12 Չենք կամենում, եղբարք, որ տգէտ լինիք նոյնեցեալների նկատմամբ. որ չ'տրտմիք ինչպես ուրիշները որ յոյս չ'ունին։ Որովհետև
13 եթէ հաւատում ենք, որ Յիսուս մեռաւ և յարութիւն առաւ, այնպէս էլ Աստուած նոյնեցեալներին Յիսուսի ձեռով կ'բերէ
14 նորա հետ։ Որովհետև սա ենք ասում ձեզ Տիրոջ խօսքովը, թէ մենք որ կենդանի մնացած ենք մինչև Տիրոջ գալը, նոյնեցեալներից չենք առաջանալ։ Որովհե-
15 տև ինքը Տէրը հրամանով, հրեշտակապետի ձայնով և Աստուծոյ փողով վայր կ'դայ երկնքիցը. և
16 Քրիստոսով մեռելներն առաջ յարութիւն կ'առնեն, Եւ յետոյ մենք, որ կենդանի ենք մնացած նորանց հետ միասին ամպերով օդի մէջ կ'յափշտակուինք Տիրոջը դիմաւորելու և այնպէս ա-
17 մեն ժամանակ Տիրոջ հետ կ'լինենք։ Ուրեմն իրար մխիթարեցէք այս խօսքերովը։

ԳԼ. Ե

1 Բայց այն ժամերի և ժամանակների համար, եղբարք, պէտք չունինք գրել ձեզ։
2 Որովհետև դուք ինքներդ հաստատ գիտէք, թէ Տիրոջ օրը ինչպես գիշերուայ գող
3 այնպես կ'հասնէ։ Վասն զի երբ որ կ'ասեն թէ խաղաղութիւն և ապահովութիւն է, այն ժամանակ յանկարծակի կ'հասնէ նորանց վերայ կորուստը ինչպես ցաւը յղիի վերայ, և նորանք չեն
4 պրծնիլ։ Իսկ դուք, եղբարք, խաւարումը չէք, որ այն օրը դողի
5 պէս ձեզ վերայ հասնէ։ Դուք ամենդ լոյսի որդիք էք և ցերեկի որդիք, գիշերինը չենք և ոչ խա-
6 ւարինը, Ապա ուրեմն չ'քնենք ուրիշների պէս, բայց արթուն և զգաստ լինենք։
7 Որովհետև նորանք որ քնում են գիշերն են քնում, և նորանք որ արբում են
8 գիշերն են արբում, իսկ մենք ցերեկինը լինելով արթուն լինինք՝ հագած հաւատքի և սիրի զրահը, և փրկութեան յոյսի սաղաւարտը։
9 Որովհետև Աստուած մեզ չ'դրաւ բարկութեան համար, այլ փրկութիւնը առանելու համար մեր Տէր Յիսուս Քրիս-
10 տոսի ձեռովը. Որ մեզ համար մեռաւ, որ թէ արթուն լինինք և թէ քնինք, նորա հետ միասին
11 ապրինք։ Սորա համար իրար մխիթարեցէք, և իրար չինութիւն տուէք՝ ինչպես անում էլ էք։
12 Եւ աղաչում ենք ձեզ, եղբարք, որ ճանաչէք ձեր միջումը աշխատողներին և ձեր վերակացուներին Տէրումը, և ձեր խրատողներին էլ։
13 Եւ նորանց առաւելապէս պատուեցէք սիրով իրանց գործի պատճառով. իրար հետ խաղաղութիւնով վարուեցէք։
14 Աղաչում ենք ձեզ, եղբարք, խրատեցէք անկարգներին, մխիթարեցէք փոքրասիրտերին, օգնական եղէք տկարներին, երկայնամիտ եղէք ամենի հետ։
15 Զգոյշ կացէք՝ մի գուցէ մէկը չարի տեղ չար հատուցանէ, այլ ամեն ժամանակ բարիին հետևեցէք իրար հետ և ամենի հետ։
16 Ամեն ժամանակ ուրախ եղէք։
17 (18) Անդադար աղօթք արէք։
18 Ամեն բանի մէջ գոհացեք. որովհետև սա է Աստուծոյ կամքը ձեզ վերայ Քրիստոս Յիսուսումը։
19 (19) Հոգին մի հանգցնէք։
20 Մարգարէութիւնները մի անարգէք։
21 Ամեն բան փորձեցէք, բարին ամուր բռնեցէք։
22 Ամեն կերպ չար բանից հեռու կացէք։
23 Եւ ինքը խաղաղութեան Աստուածը ձեզ սուրբ անէ բոլորովին. և ձեր բոլոր հոգին և շունչը և մարմինը անարատ պահպանի Քրիստոս մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալը։
24 Հաւատարիմ է նա որ կանչեց ձեզ, որ կ'անէ էլ։
25 Եղբարք, աղօթք արէք մեզ համար էլ։
26 Բարև տուէք բոլոր եղբայրներին սուրբ համբոյրով։
27 Երդում եմ տալիս ձեզ Տէրովը, որ այս թուղթը բոլոր սուրբ եղբայրներին կարդացուի։
28 Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեզ հետ լինի. Ամէն։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Սիղուանոս և Տիմոթէոս. Թեսաղոնիկեցիների եկեղեցուն Աստուած մեր Հօրումն և
2 Տէր Յիսուս Քրիստոսումն. Շնորհք լինի ձեզ հետ և խաղաղութիւն Աստուած մեր Հօրիցը և Տէր Յիսուս Քրիստոսիցը։
3 Պարտենք ամեն ժամանակ Աստուածանից գոհանալ ձեզ համար, եղբարք, ինչպես արժան է, որ ձեր հաւատքը խիստ մեծանում է, և ձեր ամեն մէկի սէրն աւելանում է իրար վերայ։
4 Այնպես որ մենք ինքներս ձեզանով պարծենում ենք Աստուծոյ եկեղեցիներումն ձեր համբերութեան և

Հաւատքի համար ձեր բոլոր հալածանքներուն մէջ նեղութիւն-
ներուն, որոնց դուք համբե-
5 րեալ էք։ Ու՞ր Աստուծոյ ար-
դար դատաստանի նշան է. որ
դուք արժանի լինիք Աստուծոյ
արքայութեանը, որի համար էլ
6 նեղութիւն էք քաշում. Որ եթէ
իրաւունք է Աստուծոյ առաջին
ձեզ նեղացնողներին նեղութիւն
7 հատուցանել. եւ ձեզ նեղուած-
ներիդ հանգիստ մեզ հետ Տէր
Յիսուսի երկնքից յայտնուելումը
իր զօրութեան հրեշտակներով,
8 Կրակի բոցով վրէժ առնելու նե-
րանցից, որ Աստուծուն չեն ճա-
նաչում, և չեն հնազանդում
մեր Տէր Յիսուսի աւետարանին.
9 Որոնք պատիժ կ'կրեն յաւիտե-
նական կորուստը Տիրոջ երեսից
և նորա փառաւոր զօրութիւնի-
10 ցը. Երբոր կ'գայ, որ փառաւոր
լինի իր սուրբերումը, և զարմա-
նալի բոլոր հաւատացեալներու-
մը. (որովհետև մեր վկայութիւ-
նը ձեզ վերայ հաւատացուեցաւ)
11 այն օրումը։ Ա՛յս պատճառով
էլ ամեն ժամանակ աղօթք ենք
անում ձեզ համար որ մեր Աստ-
ուածը ձեզ արժանի անէ չէր կո-
չումին և կատարէ բոլոր բարի
համաձայնութիւնը, և հաւատքի գոր-
12 ծը զօրութիւնով. Որ մեր Տէր
Յիսուս Քրիստոսի անունը փա-
ռաւորուի ձեզանում և դուք
նորանում, մեր Աստուծոյ և Տէր
Յիսուս Քրիստոսի շնորհքի պես։

Գլ. Բ

1 Աղաչում ենք ձեզ, եղբարք,
մեր Տէր Յիսուս Քրիստոսի գա-
լստեան և մեր նորա մօտ ժո-
2 ղովուելու համար. Որ դուք շու-
տով չ'շարժուիք ձեր մտքից և
չ'զարհուրիք ոչ հոգով, և ոչ
խօսքով, և ոչ թղթով իբր թէ
մեզանից ըլլա՞ւ, որպես թէ
Քրիստոսի օրն եկած հասած լի-
3 նի։ Մէկը չ'խաբէ ձեզ ոչ մի կեր-
պով. որովհետև նա չի գալ եթէ
առաջ չ'գայ ապստամբութիւնը,
և յայտնուի անօրէնութեան

մարդը՝ կորուստի որդին, Ա-
4 հակառակորդը որ գերազանցած է
այն ամենի վերայ, որ Աստուած
կամ Աստուծոյ պաշտօնեայ է
անուանուած. մինչև որ նա Ա-
ստուծոյ տաճարի մէջ (իբրև Աստ-
ուած) նստի, և իր անձը ցոյց տայ
5 թէ Աստուած է։ Չէ՞ք յիշում,
որ քանի որ ձեզ մօտ էի, այս
6 բաներն ասում էի ձեզ։ Եւ հի-
մա գիտէք այն որ խափանում է,
որ նա իր ժամանակին յայտնուի։
7 Որովհետև անօրէնութեան խոր-
հուրդը արդէն զօրանում է. մի-
այն թէ մինչև որ մէջ առնիցը
վեր առնուի այժմ խափանողը։
8 Եւ այն ժամանակ կ'յայտնուի
այն անօրէնը, որին Տէրը կ'սա-
տակեցնէ իր բերանի հոգով, և
կ'խափանէ իր գալստեան յայտ-
9 նութիւնով։ Որի գալը սատա-
նայի ներգործութիւնից է, ա-
մեն զօրութիւնով և սուտ նշան-
10 ներով և հրաշքներով. Եւ անի-
րաւութեան ամեն խաբեբայու-
թիւններով կորուսեալների մէջ.
փոխանակ նորա որ ճշմարտու-
թեան սէրը չ'ընդունեցին որ ապ-
րեն, և նորա համար Աստուած
11 մոլորութեան ներգործութիւն
կ'ուղարկէ նորանց, որ հաւատան
12 սուտութեան. Որ դատապարտուին
ամենը որ չ'հաւատացին ճշմար-
տութեանը, բայց հաւանեցին
անօրէնութեանը։ Իսկ մենք պարտ
ենք ամեն ժամանակ Աստուածա-
նից շնորհակալ լինել ձեզ հա-
մար Տէրից սիրուած եղբարք, որ
Աստուած սկզբից ընտրեց ձեզ
փրկութեան համար Հոգու սրբու-
թեան և ճշմարիտ հաւատքի մէջ.
13 Որի մէջ կանչեց ձեզ մեր աւե-
տարանով մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի փառքն առնելու համար։
14 Ուրեմն, եղբարք, հաստատ կա-
ցէք, և պինդ բռնեցէք այն ա-
ւանդութիւնները, որ սովորեցիք
թէ խօսքով և թէ մեր թղթով։
15 Բայց ինքը մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսը և մեր Աստուածը և Հայ-
րը, որ սիրեց մեզ և յաւիտե-
նական մխիթարութիւն տուաւ
մեզ և բարի յոյս շնորհքով,

մխիթարէ ձեր սրտերը և հաս-
տատէ ձեզ ամեն բարի խօսքի և
գործերի մէջ։

Գլ. Գ

1 Ա՛յսուհետև, եղբարք, աղօթք
արէք մեզ համար, որ Տիրոջ
խօսքն յառաջանայ, և ամեն տեղ
փառաւորուի ինչպես որ էլ ձեզ
2 մօտ։ Եւ որ փրկուինք անօրէն և
անզգամ մարդկանցից. որովհետև
3 հաւատքն ամենի բան չէ։ Բայց
Տէրը հաւատարիմ է, որ կ'հաս-
տատէ ձեզ և կ'պահէ այն չա-
4 րիցը։ Վստահութիւն ունինք
ձեզ վերայ Տէրով, որ այն բա-
ներն որ պատուիրեցինք ձեզ, և
5 անում էք և կ'անէք էլ։ Իսկ
Տէրը ուղղէ ձեր սրտերը դէպի
Աստուծոյ սէրը և դէպի Քրիս-
տոսի համբերութիւնը։
6 Եւ պատուիրում ենք ձեզ,
եղբարք, մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի անունովն, որ նա քաշուիք
ամեն եղբայրից, որ անկարգ է
վարվում. և ոչ թէ այն պատ-
ուիրանքի պէս որ ընդունեց մե-
7 զանից։ Որովհետև դուք ինքներդ
գիտէք, թէ ինչպես պէտք է ձեզ
մեզ նմանիլ. որովհետև ձեր
մէջ անկարգութիւնով չ'վարուե-
8 ցանք։ Եւ ոչ էլ ձրի հաց կե-
րանք մէկի մօտ, այլ ջանքով և
աշխատանքով գիշեր և ցերեկ

գործելով, որ ձեզանից մէկին
ծանրութիւն չ'տանք։ Ոչ իբր թէ 9
իշխանութիւն չ'ունինք, այլ որ
մեր անձներն օրինակ տանք ձեզ
որ մեզ նմանիք։ Որովհետև երբ- 10
որ ձեզ մօտ էինք, սա էինք պատ-
ուիրում ձեզ, որ եթէ մէկը չէ
կամենում գործել՝ թող չ'ուտէ
էլ։ Որովհետև ձեզանից ոմանց 11
համար լսում ենք որ անկարգու-
թիւնով են վարվում, բան չեն
գործում, այլ հետաքրքիր մեն
են գալիս։ Այնպիսիներին պատ- 12
ուիրում ենք և աղաչում ենք
մեր Տէր Յիսուս Քրիստոսովը որ
հանդարտութիւնով աշխատեն և
իրանց հացն ուտեն։ Բայց դուք, 13
եղբարք, մի ձանձրանաք բարիք
գործելուց։ Եւ եթէ մէկը չ'հնա- 14
զանդէ մեր խօսքին այս թղթով,
դուք նշանակեցէք նորան, և մի
խառնուիք նորա հետ որ ամաչէ։
Բայց թշնամու պէս մի համա- 15
րէք, այլ խրատեցէք նորան ինչ-
պես եղբայր։ Իսկ ինքը խաղա- 16
ղութեան Տէրը տայ ձեզ խաղա-
ղութիւնը ամեն ժամանակ, և
ամեն կերպով. Տէրը ձեր ամենի
հետ լինի։
Ա՛յս բարևը իմ Պօղոսիս ձեռ- 17
քինն է, որ նշան է ամեն թղթե-
րումը. Ա՛յսպէս եմ գրում։ Մեր 18
Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը
ձեր ամենի հետ լինի։ Ամէն։

թիւ 1931 նոյեմբեր 31 իւ։ Յետոյ Պաւղ
Ա. տ. Աստուածաբ. շարունակ 7իւ

Սոքրթ
Սմիրնա Ա. տ. Աստուածաբ ջնուկ
Սմիրնայ թիւ 1933 Հայոց թիւ 26 իւ
թիւ 1936 փետրուար 11 իւ Յետոյ
Ա. տ. Աստուածաբ
Սմիրնայ Սոքրթ
օրը եղեալ շարունակ 7իւ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս Յիսուս Քրիստոսի առաքեալ մեր փրկիչ Աստուծոյ և Յիսուս Քրիստոսի՝ մեր յոյսին հրամանով.
2 Տիմոթէոս՝ սիրելի որդեա՛ հաւատքով. շնորհք, ողորմութիւն և խաղաղութիւն քէն Աստուած մեր Հօրէն եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսէն։
3 Ինչպէս որ ազաչեցի քեզ, որ նիփեսոսաւմը մնա՝ Մակեդոնիա գնալիս, որ պատուիրես ոմանց որ օտար ուսմունք չ'ուսուցանեն.
4 մանկ չ'տան առասպելների և ազգահամարների, որ վերջ չ'ունին, որ աւելի վիճաբանութիւններ են գրգռում, քան թէ Աստուծոյ շինութիւնը հաւատքով. Իսկ պատուիրանքի վախճանը սէրն է սրտից, և բարի խղճմտանքով, և անկեղծ հաւատքից.
6 Որոնից ոմանք խոտորելով ուղնայն խօսքերի՝ նիւթ գնացին,
7 կամենում են օրէնքի վարդապետ լինել, և իրանք չեն իմանում ոչ այն որ խօսում են, և ոչ էլ այն բաները որ պնդում են։
8 Եւ գիտենք որ օրէնքը բարի է, եթէ մէկն օրինաւորապէս
9 գործածէ նորան, Սա իմանալով որ արդարին օրէնք չ'կայ, այլ անօրէններին և անհնազանդներին, ամբարիշտներին, և մեղաւորներին, անսուրբներին, և պիղծներին, հայրասպաններին, և մայրասպաններին, մարդասպաններին,
10 պոռնիկներին, արուագէտներին, մարդագողներին, սուտ ասողներին, սուտ երդում անողներին, և եթէ ուրիշ ինչ հակառակ է առողջիա վարդապետութեանը,
11 ըստ ուրախալի Աստուծոյ փառաւոր աւետարանի, համեմատ, որն ինձ հաւատացուեցաւ։
12 Եւ շնորհակալ եմ ինձ մեր Տէր Յիսուս Քրիստոսէն՝ զորացնողիդը, որ ինձ հաւատարիմ համարեց և ապաստանութեան մէջ դրաւ,
13 որ առաջուց հայհոյիչ և հալածող և թշնամանող էի, բայց ողորմութիւն գտայ, որովհետև չ'գիտենալով էի գործում անհաւատութիւնով։ Բայց և աւելի շատ եղաւ մեր Տիրոջ շնորհքը հաւատքով և սիրով որ Քրիստոս Յիսուսումն է։
15 Ճշմարիտ է այս խօսքը և ամեն ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշխարհք եկաւ մեղաւորները փրկելու, որոնց առաջինը ես եմ։
16 Սակայն նորա համար ողորմութիւն գտայ, որ Յիսուս Քրիստոսը առաջ ինձանումն ցոյց տայ բոլոր երկայնամտութիւնը օրինակ լինելու նորանց, որ պիտի հաւատան նորան յաւիտենական կեանքի համար։
17 Բայց յաւիտենից թագաւորին, այն անեղծին և անտեսանելիին, այն մէկ Աստուծոյն լինի պատիւ և փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։
18 Այս պատուիրանքն աւանդում եմ քեզ, Տիմոթէոս որդեակ, առաջուց քեզ վերայ եղած մարգարէութիւնների պէս, որ նորանցով պատերազմիս բարի պատերազմը.
19 Ունենալով հաւատք և բարի խղճմտանք, որ մի քանիսը դէն դնելով հաւատքումը

20 նաւակոծութիւն քաշեցին. Որոնցից են Հիմենոսը և Ալեքսանդրոսը, որոնց մատնեցի սատանային որ խրատուին չ'հայհոյել։

ԳԼ. Բ

1 Սորդ ազաչում եմ, ամենից առաջ ազօթք անել, խնդրուածք, ազաչանք, գոհութիւն ամեն
2 մարդկանց համար, թագաւորների և ամեն իշխանաւորների համար. որ խաղաղ և հանգստաբար կեանք վարենք, բոլոր աստուածապաշտութիւնով և արդութիւն։
3 Նայ. Որովհետև սա բարի և ընդունելի է մեր փրկիչ Աստուծոյ առաջին,
4 Որ կամենում է որ ամեն մարդիկ փրկուին, և ճշմարտութեան գիտութիւնը գան։
5 Որովհետև մէկ Աստուած կայ, և մէկ միջնորդ Աստուծոյ և մարդկանց մէջ Քրիստոս Յիսուս մարդ,
6 Որ իր անձը ամենի համար փրկանք տուաւ, որ վկայութիւն ի իր ժամանակներում։ Որին ես քարոզիչ և առաքեալ կարգուեցայ (ճշմարիտ եմ ասում, սուտ չեմ խօսում)։ հեթանոսների վարդապետ՝ հաւատքի և
8 ճշմարտութեան մէջ։ Ուրդ կամենում եմ, որ մարդիկ ամեն տեղ ազօթք անեն, սուրբ ձեռքեր վեր բարձրացնեն առանց բարկութեան և երկմտութեան։
9 Այնպես էլ կանայքը վայելուչ հագուստով ամօթխածութիւնով և պարկեշտութիւնով իրանց անձերը զարդարեն, ոչ թէ հիւսուածներով, կամ ոսկիով կամ մարգարիտներով կամ թանկագին հանդերձներով։
11 բարի գործերով, կինը թող հանդարտութեամբ ամենայն ամեն հնազանդութիւնով։ կինը թող չ'ուսուցանէ ոչ էլ մարդին վերայ իշխէ, այլ որ լուռ կենայ։
13 Որովհետև Ադամն առաջ ստեղծուեցաւ և յետոյ Եւան։ Եւ Ադամ չ'խաբուեցաւ այլ կինը խաբուելով մեղք գործեց։ Սակայն կ'ապրի որդեծնութեան համար, եթէ կենայ հաւատքի և սէրի և սրբութեան մէջ պարկեշտութեան հետ։

ԳԼ. Գ

1 Ճշմարիտ է այս խօսքը, եթէ մէկը եպիսկոպոսութեան է ցանկանում բարի գործի է ցանկանում,
2 Բայց եպիսկոպոսն պէտք է անարատ լինել, մէկ կնկան մարդ, զգաստ, խոհեմ, պարկեշտ, հիւրասէր, սովորեցնելու յարմար.
3 Ոչ գինեմոլ, ոչ զարկող, այլ հանգարտ, կռիւ չ'անող, ոչ արծաթասէր.
4 բարի վերակացու լինող, որ որդիներ ունենայ հնազանդութեան մէջ ամեն պարկեշտութիւնով.
5 կացուցանել չ'գիտենայ, ինչպէս նա Աստուծոյ եկեղեցուն խնամք կ'առնի)։ Ոչ նորահաւատ, որ
6 չ'գոռոզանայ և սատանայի դատաստանն ընկնի։ Բայց պէտք է
7 նորան, դրսիններից բարի վկայութիւն էլ ունենայ, որ չ'ընկնի նախատինքի և սատանայի որոգայթի մէջ։
8 Այնպես էլ սարկաւագները պէտք է ծանրաբարոյ լինեն, ոչ երկու լեզուանի, ոչ գինու մոլի, ոչ ամօթալից շահ սիրող. Այլ
9 հաւատքի խորհուրդը սուրբ խղճմտանքի մէջ ունեցող։ Եւ
10 սրանք առաջ թող փորձուին, և յետոյ այն պաշտօնը մանեն, եթէ անարատ լինեն։ Այնպես էլ
11 նոցանց կանայքը պէտք է ծանրաբարոյ լինեն. ոչ թէ չարախօս, այլ զգաստ, ամեն բանի մէջ հաւատարիմ։
12 Սարկաւագները մէկ կնկան մարդ լինեն, իրանց որդիկանցը և իրանց անձերն բարի վերակացու։
13 Որովհետև պաշտօնը լաւ կատարողներն իրանց անձերի համար բարի աստիճան են շահում, և շատ համարձակութիւն՝ այն հաւատքումը որ Քրիստոս Յիսուսումն է։
14 Սա գրում եմ քեզ յուսալով

15 որ շուտով քեզ մօտ գամ։ Իսկ
եթէ ուշանամ, որ գիտենաս թէ
ինչպէս պէտք է Աստուծոյ տան
մէջ վարուիլ. որ է կենդանի
Աստուծոյ եկեղեցի, սիւն և հաս-
տատութիւն ճշմարտութեան։
16 Եւ յայտնապէս մեծ է աստ-
ուածպաշտութեան խորհուրդը.
Աստուած յայտնուեցաւ մարմ-
նում, արդարացաւ Հոգով, ե-
րևեցաւ հրեշտակներին, քարոզ-
ուեցաւ հեթանոսներին, հաւա-
տացուեցաւ աշխարհքումը և վե-
րացաւ փառքով։

ԳԼ. Դ

1 Եւ Հոգին յայտնի ասում է թէ
յետին ժամանակներումը ոմանք
հաւատքիցը կ'հեռանան, և մտիկ
կ'տան մոլար ոգիների և դևերի
2 վարդապետութիւնների, Ստա-
խօսների կեղծաւորութեամբը, ո-
րոնց խղճմտանքը տաղուած է.
3 Որ ամուսնանալուց կ'արգիլեն,
կ'հրաժարեն կերակուրներից որ
Աստուած ստեղծեց հաւատաց-
եալների և ճշմարտութիւնը ճա-
նաչողների համար որ գոհու-
4 թեամբ վայելեն։ Որովհետև Ա-
ստուծոյ բոլոր ստեղծուածները
բարի են, և ոչ մի բան խոտան
չէ. երբոր գոհութիւնով ըն-
5 դունուի։ Որովհետև սրբվում է
Աստուծոյ խօսքովը և աղօթքով։
6 Եթէ այս բաները եղբայրներին
խրատ տաս, Յիսուս Քրիստոսի
բարի պաշտօնեայ կ'լինես, սնուած
հաւատքի խօսքերովը, և այն բա-
րի վարդապետութիւնովն որին
7 հետևեցիր։ Եւ պիղծ ու պառա-
ւական առասպելներիցը ետ կաց.
բայց վարժեցրու քո անձը աստ-
8 ուածպաշտութեան։ Որովհետև
մարմնի վարժութիւնը քիչ բանի
համար է օգտակար. բայց աստ-
ուածպաշտութիւնն ամեն բանի
համար օգտակար է, ունենալով
այժմեան և գալու կենաց խոստ-
9 մունքը։ Ճշմարիտ է այս խօսքը
և ամեն ընդունելութեան ար-
10 ժանի։ Որովհետև հէնց սորա հա-
մար էլ աշխատում ենք և նա-
խատվում, որ յոյս ենք դրել
կենդանի Աստուծոյ վերայ, որ
Փրկիչ է ամեն մարդկանց, և
մանաւանդ հաւատացեալներին։
11 Այս բաները պատուիրիր և սո-
12 վորեցրու։ Ոչ ոք քո մանկութիւ-
նը չ'անարգէ. այլ օրինակ եղիր
հաւատացեալներին խօսքով, վար-
քով, սիրով, հաւատքով, սրբու-
13 թիւնով. Մինչև որ գամ՝ միտք
դիր կարդալուն, յորդորմունքին
14 և վարդապետութեանը։ Անհոգ
մի լինիր այն քեզանում եղած
շնորհքի համար. որ քեզ տրուե-
ցաւ մարգարէութիւնով երիցու-
15 թեան ձեռնադրութեամբը։ Սո-
րանք մտածիր, սորանցում կաց,
որ քո յառաջադիմութիւնը ա-
16 մենին յայտնի լինի։ Զգոյշ կաց
անձիդ և վարդապետութեանդ,
և դորանում յարատևիր. որով-
հետև այդ անելով քո անձն էլ
կ'ապրեցնես, և քեզ լսողնե-
րին էլ։

ԳԼ. Ե

1 Ծերին սաստիկ մի յանդիմանիր,
այլ յորդորիր ինչպէս հօր, երի-
տասարդներին եղբայրների պէս։
2 Պառաւներին մայրերի պէս, մատ-
ղաշ կանանցը՝ քոյրերի պէս բո-
3 լոր սրբութիւնով։ Որբևայրինե-
4 րին պատուիր՝ որ ճշմարիտ որ-
բևայրի են։ Բայց եթէ մէկ որ-
բևայրի որդիք և թոռներ ունե-
նայ, թող առաջ սովորեն իրանց
ընտանիքումը որդիական սէր ցոյց
տալ և փոխարէն հատուցանել
ծնողներին. որովհետև սա բարի
5 է և Աստուծոյ առաջին ընդու-
նելի։ Իսկ նա որ ճշմարիտ որբևայ-
րի է և մինակ մնացած, նա յոյսը
Աստուծոյ վերայ է դնում, և
6 գիշեր և ցերեկ աղօթքին և ա-
ղաչանքին հետևում։ Բայց փափ-
7 կասէր որբևայրին կենդանոյն մե-
8 ռած է։ Եւ այս բաները պատ-
ուիրիր, որ անարատ լինեն։ Բայց
եթէ մէկը իրանների և մանաւանդ
ընտանիքների համար խնամք չը
տանի, նա հաւատքիցն ուրացած
է և անհաւատից էլ չար է։

9 Որբևայրի նա ընտրուի, որ վաթ-
սուն տարուց պակաս չէ և մէկ
10 մարդի կին եղած է. Բարի գոր-
ծերով վկայուած, եթէ երեխա-
ներ է մեծացրել, հիւրեր ընդու-
նել, սուրբերի ոտները լուացել,
նեղացածներին ձեռնտու եղել,
ամեն բարի գործերին հետևել։
11 Բայց մատղաշ որբևայրիներիցը
ետ կաց. որ երբոր ցանկութիւ-
նով լցվում են՝ Քրիստոսի հա-
կառակ՝ կամենում են ամուս-
12 նանալ. Եւ դատապարտութիւն
են ընդունում, որ առաջին հա-
13 ւատքը դէն գցեցին։ Միանգա-
մայն էլ ծոյլ են սովորում տու-
ները ման գալով. և ոչ թէ մի-
այն ծոյլ այլ և շատախօս, և հե-
տաքրքիր, և խօսում են ինչ որ
14 պէտք չէ։ Կամենում եմ որ մատ-
ղաշ որբևայրիներն ամուսնանան,
որդիք ծնեն, տնաշէն լինեն. ԵՒ
հակառակողին ոչ մի պատճառ
15 չ'տան հայհոյանք անելու։ Որով-
հետև արդէն մի քանիսը խո-
տորուեցան սատանայի ետևիցը։
16 Եթէ մի հաւատացեալ մարդ
կամ հաւատացեալ կին որբևայ-
րիներ ունենայ, նա թող նորանց
խնամք տանէ. և եկեղեցուն ծան-
րութիւն չ'լինի, որ ճշմարիտ որ-
բևայրիներին խնամք տանէ։
17 Լաւ վերակացութիւն անող
երէցները թող երկուպատիկ պա-
տիւի արժանի լինեն. մանաւանդ
նորանք որ խօսքով և վարդապե-
18 տութիւնով են աշխատում։ Ո-
րովհետև գիրքն ասում է Բէ
Կալի մէջ աշխատող եղի դունչը
չ'կապես. Բէ մշակը արժանի է իր
19 վարձքին։ Երէցի վերայ գանգատ
մի ընդունիր. բայց միայն երկու
20 կամ երեք վկաներով։ Մեղան-
չողներին ամենի առաջին յան-
դիմանիր, որ ուրիշներն էլ վա-
21 խենան։ Վկայութիւն եմ դնում
Աստուծոյ և Յիսուս Քրիստոսի և
ընտրուած հրեշտակների առա-
ջին, որ այս բաները պահես ա-
ռանց նախապաշարման. ոչինչ
22 չ'անելով աչառութեամբ։ Ձեռը
շուտով մի դնիր մէկի վերայ, և
ուրիշների մեղքերին մասնակից
մի լինիր. քո անձը սուրբ պահիր։
23 Այսուհետև միայն ջուր չը
խմես, այլ մի քիչ գինի գործա-
ծիր քո ստամոքսի և քո շուտ
շուտ տկարանալու համար։
24 Կան մարդիկ, որոնց մեղքերը
յայտնի են, և առաջուց դատաս-
տանի հասած. իսկ ոմանցն էլ ե-
տևիցն են գալիս։ Այնպէս էլ
25 բարի գործերը յայտնի են. և ու-
րիշ կերպ լինողներն էլ չեն կա-
րող ծածկուիլ։

ԳԼ. Զ

1 Նորանք որ ծառայութեան լծի
տակ են, թող իրանց տէրերին
ամեն պատիւի արժանի համա-
րեն. որ Աստուծոյ անունը և վար-
դապետութիւնը չ'հայհոյուի։
2 Իսկ հաւատացեալ տէրեր ունե-
ցողները թող չ'անարգեն նորա
համար որ եղբարք են. այլ առա-
ւել ևս ծառայեն. նորա համար
որ հաւատացեալ են և սիրելի,
որ բարերարութեանը մասնակից
են. այս բաները սովորեցրու և
3 յորդորիր։ Իսկ եթէ մէկն ուրիշ
կերպ բան սովորեցնէ և մտիկ
չ'անէ մեր Տէր Յիսուս Քրիստոսի
ողջամիտ խօսքերին, և աստուած-
պաշտութեան համեմատ վարդա-
4 պետութեանը, Նա գոռոզացած
է, ոչինչ չ'իմանալով. այլ ախ-
տացած է վիճաբանութիւնների՝
և խօսքերով հակառակելու հա-
մար, որ նորանից լինում է նա-
խանձ, կռիւ, հայհոյութիւն,
5 չար կարծիքներ, Դատարկ վէճեր
այնպիսի մարդկանց որ մտքով
ապականուած և ճշմարտութիւ-
նիցը հեռացած են. որ աստուած-
պաշտութիւնը շահավաճառու-
թիւն են համարում. այնպիսինե-
6 րիցը ետ քաշուիր։ Բայց մեծ շա-
հավաճառութիւն է իրաւ աստ-
ուածպաշտութիւնը բաւակա-
7 նութեան հետ միասին։ Որովհե-
տև ոչինչ չենք բերել աշխարհքս
և յայտնի է որ ոչինչ էլ չենք
8 կարող դուրս տանիլ։ Բայց եթէ
կերակուր և հագուստ ունինք,
9 նորանցով բաւականանանք։ Իսկ

նորանք որ կամենում են հարըստանալ փորձութեան և որոգայթի և շատ անմիտ վնասակար ցանկութիւնների մէջ են ընկնում. որ ընկղմում են մարդկանց սատակումի և կորուստի
10 մէջ։ Որովհետև արծաթսիրութիւնը ամեն չարիքների արմատն է. որին մի քանիսը անձնատուր լինելով հաւատքիցը մոլորուեցան, և իրանց անձերը շատ ցաւերով խոցեցին։
11 Բայց դու, ով Աստուծոյ մարդ, փախիր սորանցից, և հետևիր արդարութեան, աստուածպաշտութեան, հաւատքի, սէրի, համ-
12 բերութեան, հեզութեան։ Պատերազմիր հաւատքի բարի պատերազմը, և բռնիր յաւիտենական կեանքը որի մէջ կանչուեցար, և դաւանեցիր բարի դաւանութիւնը շատ վկաների ա-
13 ռաջին։ Պատուիրում եմ քեզ Աստուծոյ առաջին որ ամեն բան կենդանի է անում, և Քրիստոս Յիսուսի առաջին որ բարի դաւանութիւնը վկայեց Պոնտացի
14 Պիղատոսի առաջին. Որ դու պատուիրանքը անբիծ և անարատ պահես, մինչև մեր Տէր Յիսուս Քրիս-
15 տոսի յայտնութիւնը։ Որ իր ժամանակին ցոյց կ'տայ Երանելին և միայն Հզօրը, Թագաւորների Թագաւորը և տէրերի Տէրը, Որ 16
միայն նա անմահութիւն ունի անմատոյց լոյսի մէջ բնակուած. որ մարդկանցից ոչ ոք չ'տեսաւ և ոչ էլ կարող է տեսնել. նորան լինի պատիւ և զօրութիւն յաւիտեանս. Ամէն։
Ներկայ աշխարհիս հարուստ- 17
ներին պատուիրիր որ չ'գոռոզանան, և ոչ էլ ունայն մեծութեան վերայ յոյս դնեն, այլ կենդանի Աստուծոյ վերայ որ ամեն բան տալիս է մեզ առատապէս վայելելու համար։ Բարի 18
գործեն, բարի գործերով հարըստանան, առատաձեռն և խ-
րոտներին հաղորդող լինեն։ Իրանց 19
անձերի համար բարի հիմ գանձեն հանդերձեալի համար, որ յաւիտենական կեանք ձեռք բերեն։
Ով Տիմոթէոս, պահիր ՔԵՂ 20
տրուած աւանդը, և ետ կաց պիղծ ունայնաբանութիւններից և սուտանուն գիտութեան հա-
կառակութիւններից. Որ մի քա- 21
նիսը ընդունելով հաւատքիցը մոլորուեցան. շնորհքը քեզ հետ լինի։ Ամէն։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս Յիսուս Քրիստոսի առաքեալ Աստուծոյ կամքովը, կեանքի խոստմունքի պէս, որ Քրիս-
2 տոս Յիսուսումն է, Տիմոթէոս՝ սիրելի որդուս, շնորհք, ողորմութիւն և խաղաղութիւն լինի Աստուած Հօրիցը և մեր Տէր Յիսուս Քրիստոսիցը։
Շնորհակալ եմ Աստուածա- 3
նից, որին պաշտում եմ իմ նախնիքներից. մաքուր խղճմտանքով, որ անպակաս յիշում եմ քեզ

իմ աղօթքներումը գիշեր և ցե-
4 րեկ, Ցանկանալով քեզ տեսնել երբ յիշում եմ քո արտասուքը. որ ուրախութիւնով լցուիմ.
5 Միտքս բերելով այն անկեղծ հաւատքը որ քեզանում է. որ առաջ քո Լօիդա տատումը և քո Եւնիկէ մօրումը բնակուեցաւ, համոզուած եմ որ քեզանում
6 էլ։ Այդ պատճառով միտքդ եմ բերում որ արծարծես Աստուծոյ այն շնորհքն, որ քեզանում է իմ ձեռքերը ՔԵՂ ԼԵՐԱՅ
7 դնելովը։ Որովհետև Աստուած չ'տուաւ մեզ երկչոտութեան հոգի, այլ զօրութեան և սէրի և
8 զգաստութեան։ Ուրեմն ամօթ մի համարիր մեր Տիրոջ վկայութիւնը, և ոչ էլ ինձ որ նորա կապուածն եմ. այլ միասին չարչարուիր աւետարանի համար Աստուծոյ զօրութեան համեմատ,
9 Որ փրկեց մեզ, և սուրբ կոչումով կանչեց. ոչ թէ մեր գործերի համեմատ, այլ իր յառաջադրութեան և շնորհքի համեմատ, որ տրուեցաւ մեզ Քրիստոս Յիսուսումը յաւիտենական
10 դարերից առաջ, Եւ հիմա յայտնուեցաւ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի երևելովը. որ խափանեց մահն և լոյսի մէջ բերաւ կեանքն ու անմահութիւնը աւե-
11 տարանի միջոցով, Որին ես քարոզիչ և առաքեալ կարգուեցայ,
12 և հեթանոսների վարդապետ։ Որ այդ պատճառով էլ չարչարանքները կրում եմ. բայց ամօթ չեմ համարում. որովհետև գիտեմ թէ ո՞ւմ եմ հաւատացել. և համոզուած եմ թէ նա կարող է իմ աւանդը պահել մինչև այն
13 օրը։ Ունեցիր ողջամիտ խօսքերի օրինակը, որ ինձանից լսեցիր հաւատքով և սիրով որ Քրիստոս Յիսուսումն է։
14 Այն բարի աւանդը պահիր Սուրբ Հոգովը, որ բնակուած է
15 մեզանում։ Սա գիտես, որ ինձանից ետ քաշուեցան այն ամենը որ Ասիայումն էին. որոնցից
16 են Փիգելոս և Հերմոգինէս։ Տէրը ողորմութիւն տայ Ոնեսիփորոսի տանը, որ շատ անգամ հանգըստացրեց ինձ, և իմ կապանքն ամօթ չ'համարեց. Այլ երբոր 17
Հռովմումն էր, շատ ջանքով որոնեց ինձ և գտաւ։ Տէրը տայ 18
նորան որ ողորմութիւն գանէ Տէրիցն այն օրումն. և թէ որքան ծառայութիւն արաւ ինձ Եփեսոսումը որ դու ԻՆՔԴ լաւ գիտես։

ԳԼ. Բ

Արդ դու, իմ որդեակ, զօրա- 1
ցիր այն շնորհքովը որ Քրիստոս Յիսուսումն է։ Եւ այն բաները 2
որ ինձանից լսեցիր շատ վկաներով, յանձնիր հաւատարիմ մարդկանց որ կարող լինեն ուրիշներին սովորեցնել։ Իսկ դու 3
նեղութիւնները կրիր ինչպէս Քրիստոս Յիսուսի բարի զինուոր. Ոչ մի զինուորութիւն անող այս 4
աշխարհքի գործերովը չէ զբաղվում, որպէս զի զօրապետին հաճոյ լինի։ Եւ եթէ մէկը մրցէ էլ՝ 5
պսակ չի ստանալ եթէ օրինաւորապէս չ'մրցէ։ Աշխատող հո- 6
ղագործն առաջ պէտք է պտղիցը վայելէ։ Իմացիր ինչ որ ա- 7
սում եմ. Տէրը քեզ իմաստութիւն տայ ամեն բանի մէջ։ Յի- 8
շիր Յիսուս Քրիստոսին մեռելների միջից յարութիւն առածին, որ Դաւիթի սերունդիցն է, իմ
աւետարանի համեմատ. Որի հա- 9
մար չարչարվում եմ մինչև կապանքի մէջ լինել չարագործի պէս. բայց Աստուծոյ խօսքը կապուած
չէ։ Վասն որոյ ամեն բանի համ- 10
բերում եմ ընտրուածների համար. որ նորանք էլ հասնեն այն փրկութեան, որ Քրիստոս Յիսուսումն է յաւիտենական փառքի
հետ։ Ճշմարիտ է այս խօսքը. որ 11
եթէ հետը մեռանք՝ հետն էլ
կ'ապրենք։ Եթէ համբերենք, 12
հետն էլ կ'թագաւորենք. և եթէ ուրանանք, նա էլ կ'ուրանայ
մեզ։ Եւ եթէ չ'հաւատանք, նա 13
հաւատարիմ կ'մնայ, իր անձը
չէ կարող ուրանալ։ Այս բանը 14
յիշեցրու Տիրոջ առաջին վկայութիւն դնելով, որ խօսքերով կռիւ

չ'անեն, որ ոչինչի պիտանի չէ և
լսողներին է միայն կործանում։
15 Ջանք արա որ քո անձն ընտիր
կանգնեցնես Աստուծոյ առաջին
էբր մի մշակ առանց ամօթի, որ
ճշմարտութեան խօսքն ուղիղ
16 մատակարարես։ Բայց պիղծ ու-
նայնախօսութիւնից ետ քաշ-
ուիր. որովհետև աւելի առաջ
կ'գնան ամբարշտութեան մէջ։
17 Եւ նորանց խօսքերը քաղցկեղի
պէս ճարակում է. որոնցից են
18 Հիմենոսը և Փիլետոսը, Որոնք
ճշմարտութիւնից մոլորել են,
ասելով թէ Հարութիւն յարու-
թիւնն արդէն եղած է. և կոր-
ծանում են ոմանց հաւատքը։
19 Բայց Աստուծոյ հաստատ հիմքը
կանգնած է և այս կնիքն ունի,
թէ Տէրը ճանաչում է նորանց որ
իրն են. և թէ ետ կենայ անիրա-
ւութիւնից այն ամենն որ Քրիս-
20 տոսի անունն կանչում է։ Բայց
մի մեծ տան մէջ ոչ միայն ոս-
կեղէն և արծաթեղէն անօթներ
կան. այլ փայտէ և հողէ էլ.
կան որ պատիւի համար են, և
կան որ անարգութեան համար
21 են։ Եթէ մէկը իր անձը մաքրէ
այդպիսիներից, նա պատուական
անօթ կ'լինի՝ սրբուած և իր Տի-
րոջն օգտակար՝ ամեն բարի գոր-
ծերի համար պատրաստուած։
22 Երիտասարդական ցանկութիւն-
ներից փախիր. այլ հետևիր ար-
դարութեան, հաւատքի, սէրի,
խաղաղութեան, Տիրոջ անունը
սուրբ սրտանց իրանց վերայ կան-
23 չողների հետ։ Բայց յիմար և
անկիրթ վիճաբանութիւններից
ետ քաշուիր. իմանալով որ կռիւ-
24 ներ են ծնում։ Բայց Տիրոջ ծա-
ռային պէտք չէ կռիւ անել,
այլ ամենի հետ հեզահոգի լի-
նել, սովորեցնող, ոխ չ'պահող,
25 Հակառակողներին հանդարտու-
թիւնով խրատել. թերևս Աստ-
ուած նորանց ապաշխարութիւն
տայ ճշմարտութիւնն իմանալու
26 համար, Եւ սատանայի որոգայ-
թիցն զգաստանալու, որից նո-
րանք որսացուել են նորա կամ-
քին ծառայելու համար։

ԳԼ. Գ

Սա գիտացիր, որ յետի օրերումը 1
չար ժամանակներ կ'գան։ Որով- 2
հետև մարդիկ կ'լինին ինքնասէր,
արծաթասէր, ամբարտաւան. հը-
պարտ, հայհոյիչ, ծնողների ան-
հնազանդ, ապերախտ, անսուրբ,
Անդութ, անհաշտ, բանսարկու, 3
անժուժկալ, դաժան, անբարե-
սէր, Մատնիչ, յանդուգն, գո- 4
ռող, աւելի ցանկասէր քան թէ
աստուածասէր։ Որ աստուած- 5
պաշտութեան կերպարանքն ու-
նին, բայց նորա զօրութիւնն ու-
րացած են. նորանցից էլ ետ քաշ-
ուիր։ Որովհետև սորանցից են որ 6
տունէ տուն են մտնում, և գե-
րի անում մեղքերով բեռնաւոր-
ուած տկարամիտ կնիկներին, որ
կերպ կերպ ցանկութիւններով
վարուած են. Որ ամեն ժամանակ 7
սովորում են, և երբէք դէպի
ճշմարտութեան գիտութիւնը չեն
կարողանում գալ, Այլ ինչպէս 8
որ Յանէսը և Յամրէսը Մովսէսին
հակառակ կեցան, այնպէս էլ
սորանք են հակառակ կենում
ճշմարտութեանը, մարդիկ՝ մըտ-
քով ապականուած, անպիտան՝
հաւատքի համար։ Բայց աւելի 9
չեն յառաջանալ. որ սորանց
անմտութիւնն ամենին յայտնի
կ'լինի. ինչպէս նորանցն էլ եղաւ։
Բայց դու հետևեցիր իմ վարդա- 10
պետութեանը, վարմունքին, դի-
տաւորութեանը, հաւատքին, եր-
կայնմտութեանը, սէրին, համբե-
րութեանը, Հալածմունքներին, 11
չարչարանքներին. ինչպէս որ ե-
ղան ինձ Անտիոքումը և Իկոնիս-
նումը և Լիւստրայումը. ինչպիսի
հալածանքների համբերեցի. և ա- 12
մենիցն ինձ ազատեց Տէրը։ Եւ ա-
մենը որ կամենում են աստուած-
պաշտութեամբ ապրիլ Քրիստոս
Յիսուսումը, հալածանք պիտի 13
կրեն. Բայց չար և խաբեբայ մար-
դիկն յառաջ կ'գնան չարու-
թեան մէջ, մոլորեցնելով և մո- 14
լորելով։ Բայց դու հաստատ
կաց նորանցում, որ սովորեցիր և
հաւատացիր. և գիտենալով թէ

15 ումից սովորեցիր. Եւ որ մանկու-
թիւնիցդ սուրբ գրքերը գիտես,
որ կարող են քեզ իմաստուն
անել փրկութեան համար այն
հաւատքի ձեռովն որ Քրիստոս
16 Յիսուսումն է։ *Ամեն Գիրք աստ-
ուածաշունչ են և օգտակար՝,
վարդապետութեան, և յանդի-
մանութեան, և ուղղելու, և ար-
դարութեան խրատելու համար.
17 Որ Աստուծոյ մարդը կատարեալ
լինի ամեն բարի գործերի համար
պատրաստուած։

ԳԼ. Դ

1 Արդ այս վկայութիւնը դնում
եմ Աստուծոյ և Տէր Յիսուս
Քրիստոսի առաջին որ դատելու
է կենդանիներին և մեռելներին
իր յայտնութիւնումը ու թա-
2 գաւորութիւնումը. Խօսքը քա-
րոզիր. վերայ հասիր թէ ժամա-
նակին լինի թէ ժամանակից
դուրս, յանդիմանիր, սաստիր,
յորդորիր ամեն երկայնմտու-
թիւնով և վարդապետութիւ-
3 նով։ Որովհետև ժամանակ կ'գայ
որ ողջամիտ վարդապետութեանը
չեն համբերիլ. այլ իրանց յա-
տուկ ցանկութիւնների համե-
մատ վարդապետներ կ'դիզեն ի-
րանց վերայ, իրանց լսելիքների
4 մարմաջելու պէս։ Եւ իրանց լսե-
լիքը ճշմարտութիւնից ետ կը
դարձնեն և առասպելների ետևից
5 կ'մոլորին։ Բայց դու արթուն
կաց ամեն բանի մէջ նեղութիւն-
ներ կրելով. աւետարանչի գոր-
ծը գործիր. քո պաշտօնը կատա-
6 րիր։ Որովհետև ես արդէն նուիր-
վում եմ, և իմ բաժնուելու
7 ժամանակը հասած է։ Բարի պա-
տերազմը պատերազմեցի, ըն-
թացքը կատարեցի, հաւատքը
8 պահեցի. Այսուհետև մնում է
ինձ արդարութեան պսակը, որ
Տէրը կ'տայ ինձ այն օրումը՝ ար-
դար դատաւորը. և ոչ միայն
ինձ, այլ և ամենին, որ սիրեցին
նորա յայտնութիւնը։
Շտապիր որ շուտով ինձ մօտ 9
գաս. որովհետև Դեմասը թողեց
ինձ և այս աշխարհքը սիրեց, և
գնաց Թեսաղոնիկէ. Կրէսկէսը 10
Գաղատիա. Տիտոսը՝ Դաղմատիա.
Ղուկասն է միայն ինձ հետ.
Մարկոսին առնես հետդ բերես. 11
որ ինձ ծառայութեան համար
պէտք է։ Տիւքիկոսին ուղարկեցի 12
Եփեսոս։ Վերարկուն, որ Տրովա- 13
դայումն Կարպոսի մօտ թողեցի,
գալիս՝ բեր, գրքերն էլ, մանա-
ւանդ մագաղաթները։ Աղեք- 14
սանդրոս դարբինն ինձ շատ չա-
րութիւն արաւ. Տէրը նորան հա-
տուցում տայ իր գործերի պէս։
Դու էլ նորանից զգուշացիր. որ 15
նա շատ հակառակ կեցաւ մեր
խօսքերին։ Ատեանումն առաջին 16
անգամ պատասխանելիս՝ ոչ ով չը
կանգնեց իմ կողմը, այլ ամենքը
ինձ թողեցին. թող չ'համարուի
նորանց։ Իսկ Տէրն ինձ մօտ կանգ- 17
նեց, և զօրացրեց ինձ որ ինձա-
նով քարոզութիւնը հաստատ-
ուի, և բոլոր հեթանոսները լսեն.
և ես ազատուեցայ առիւծի բե-
րանից։ Եւ կ'փրկէ ինձ Տէրն ա- 18
մեն չար բանից և կ'ազատէ կը
հասցնէ իր երկնային արքայու-
թեանը. որին լինի փառք յա-
ւիտեանս յաւիտենից. Ամէն։
Բարև տուր Պրիսկէին և Ա- 19
կիւղային, և Ոնեսիփորի տանը,
Երաստոսը մնաց Կորնթոսումը. 20
և Տրոփիմոսին հիւանդ թողեցի
Մելիտոսումը։ Շտապիր որ ձմե- 21
ռիցն առաջ գաս։ Բարև է տա-
լիս քեզ Եւբուղոսը, և Պուդէսը
և Լինոսը, և Կլաւդիան և բոլոր
եղբարքը։ Տէր Յիսուս Քրիստոսը 22
քո հոգու հետ լինի. շնորհք ձեզ
հետ։ Ամէն։

*Կամ՝ Ամեն աստուածաշունչ Գիրք օգտակար են

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ՏԻՏՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս Աստուծոյ ծառայ և Յի-
սուս Քրիստոսի առաքեալ. Աս-
տուծոյ ընտրուածների հաւատքի
և աստուածապաշտական ճշմար-
տութեան գիտութեան համե-
2 մատ, Յաւիտենական կեանքի
յոյսովը, որ յաւիտենական դա-
րերից առաջ խոստացաւ անսուտ
3 Աստուածը. Բայց իր ժամանա-
կին յայտնեց իր խօսքը քարո-
զութիւնով, որ ինձ հաւատաց-
ուեցաւ մեր Փրկիչ Աստուծոյ
4 հրամանի համեմատ. Տիտոս՝ սի-
րելի որդուս, մեր հասարակաց
հաւատքի համեմատ, շնորհք,
ողորմութիւն և խաղաղութիւն
լինի Աստուած Հօրիցը և Տէր Յի-
սուս Քրիստոսիցը՝ մեր Փրկչիցը։
5 Նորա համար թողի քեզ Կրե-
տէի մէջ որ պակասորդները ուղ-
ղես, և ամեն մէկ քաղաքում
երէցներ կարգես, ինչպէս ես քեզ
6 պատուիրեցի. Եթէ մէկն անա-
րատ է, մէկ կնկան մարդ, հա-
ւատացեալ որդիք ունենայ որոնց
վերայ անառակութեան գանգատ
7 չ՚կայ կամ անհնազանդ չեն։ Ո-
րովհետև եպիսկոպոսը պէտք է
անարատ լինի ինչպէս Աստուծոյ
տնտես. ոչ յանդուգն, ոչ բար-
կացող, ոչ գինեմոլ, ոչ զար-
8 կող, ոչ պիղծ շահ սիրող։ Այլ
հիւրասէր, բարեսէր, խոհեմ,
9 արդար, սուրբ, ժուժկալ. Հաս-
տատ բռնելով վարդապետու-
թեան հաւատարիմ խօսքը, որ
կարող լինի ողջամիտ վարդապե-
տութիւնով յորդորել էլ, և
հակառակողներին յանդիմանել
էլ։ Որովհետև շատ անհնազանդ-
ներ, զրախօսներ, խաբեբաներ
կան, մանաւանդ նորանք որ թըլ-
փատութիւնիցն են։ Որոնց պէտք
է պապանձեցնել, որ ամբողջ
տները կործանում են, սովորե-
ցնելով այն որ արժան չէ պիղծ
շահի պատճառով։ Նորանցից
մէկը՝ հէնց իրանց յատուկ մար-
գարէ՝ ասեց. Կրետացիք միշտ
ստախօս են, չար գազաններ, դա-
տարկափոր։ Այս վկայութիւնը
ճշմարիտ է. նորա համար սաս-
տիկ յանդիմանիր նորանց, որ ա-
ռողջ լինեն հաւատքումը. Եւ
մտիկ չ՚տան Հրէական առասպել-
ներին և այն մարդկանց պատուի-
րանքներին որ ճշմարտութիւնիցը
թեքուած են։ Ամեն բան սուրբ
է սուրբերին. բայց պիղծերին և
անհաւատներին ոչ մի բան սուրբ
չէ, այլ պղծուած է նորանց միտ-
քը և խորհուրդները։ Խոստովա-
նում են թէ Աստուծուն գիտեն,
բայց իրանց գործերովն ուրանում
են նորան. պիղծ են և անհնա-
զանդ և ամեն բարի գործի հա-
մար անպիտան։

ԳԼ. Բ

Բայց դու խօսիր ինչ որ կ՚վայելէ
ողջամիտ վարդապետութեանը։
Ծերերը զգաստ լինեն, ծանրաբա-
րոյ, խոհեմ, ողջամիտ՝ հաւատ-
քով, սիրով, համբերութեամբ.
Նոյնպէս էլ պառաւները սրբա-
վայել վարմունքով լինեն, ոչ
բանսարկու, ոչ գինեմոլ, այլ բա-

4 րի խրատ տուող. Որ զգաստա-
ցնեն մատղաշ կանանցը՝ լինել
5 այրասէր և որդեսէր, խոհեմ,
մաքուր, անարատ, բարեգործ,
իրանց մարդկանց հնազանդ, որ
Աստուծոյ խօսքը չ՚հայհոյուի։
6 Նոյնպէս էլ յորդորիր երիտա-
7 սարդներին որ խոհեմ լինեն. Ա-
մեն կողմանէ քո անձը բարի գոր-
ծերի օրինակ դնելով՝ վարդապե-
տութեան մէջ անեղծութիւն,
8 ծանրաբարոյութիւն, Ողջամիտ
խօսք անմեղադրելի. որ հակա-
ռակորդը ամաչէ, ձեզ վերայ
չար ասելու բան չ՚ունենալով։
9 Ծառաներն իրանց տէրերին հնա-
զանդ լինեն, ամեն բաների մէջ
հաճոյ լինեն, ոչ թէ հակառակ
10 խօսողներ. Բան չ՚թագցնեն, այլ
կատարեալ բարի հաւատարմու-
թիւն ցոյց տան. որ մեր Փրկիչ
Աստուծոյ վարդապետութիւնը
զարդարեն ամեն բաների մէջ։
11 Որովհետև Աստուծոյ շնորհքը ե-
րևեցաւ. որ փրկարար է, ամեն
12 մարդկանց համար. Որ խրատում
է մեզ, որ ուրանանք ամբարշ-
տութիւնը և աշխարհական ցան-
կութիւնները. և խոհեմութեամբ
և արդարութեամբ և աստուած-
պաշտութեամբ ապրենք այս աշ-
13 խարհումը. Սպասելով այն երա-
նելի յոյսին և մեծ Աստուծոյ և
մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի
14 փառքի յայտնութեանը, Որ իր
անձը մեզ համար տուաւ, որ մեզ
ամեն անօրէնութիւնից փրկէ, և
սրբէ իրան համար յատուկ ժո-
ղովուրդ չինէ բարի գործերի նա-
15 խանձաւոր։ Այդ բաները խօսիր
և յորդորիր և յանդիմանիր բո-
լոր սաստկութիւնով. ոչ ով
քեզ չ՚անարգէ։

ԳԼ. Գ

1 Նորանց միտքը բեր, որ իշխա-
նութիւններին և պետութիւն-
ներին հնազանդեն, հպատակեն,
և ամեն բարի գործերի համար
2 պատրաստ լինին. Ոչ մէկին չը
հայհոյեն, կռիւ չ՚անեն, հեզ
լինեն, ամեն մարդկանց ամեն
քաղցրութիւն ցոյց տան։ Որով-
հետև մենք էլ էինք մի ժամա-
նակ անմիտ, անհնազանդ, մոլո-
րած, ցանկութիւնների և կերպ
կերպ անառակութիւնների ծա-
ռայողներ, վարվում էինք չարու-
թիւնով և նախանձով, ատելի
էինք, և իրար ատող։ Բայց երբ
4 որ մեր Փրկիչ Աստուծոյ քաղց-
րութիւնը և մարդասիրութիւնը
յայտնուեցաւ, Ոչ թէ արդա-
րութեան գործերիցը, որ մենք
արինք, այլ իր ողորմութեան
համեմատ փրկեց մեզ միւսան-
գամ ծնուելու աւազանովը, և
Սուրբ Հոգու նորոգութիւնովը։
Որ առատութիւնով թափեց մեզ
6 վերայ մեր Փրկիչ Յիսուս Քրիս-
տոսի ձեռովը, Որ նորա շնորհ-
քովն արդարացած ժառանգ լի-
նենք յաւիտենական կեանքի յոյ-
սովը։ Ճշմարիտ է այս խօսքը և
8 կամենում եմ, որ դու այս բա-
ները հաստատես, որ Աստուծուն
հաւատացողները ջանք անեն բա-
րի գործերի մէջ կենալու, սո-
րանք են բարի և մարդկանց օգ-
տակար։ Բայց յիմար վիճաբա-
9 նութիւններից, ազգահամարնե-
րից և հակառակութիւններից, և
օրէնքի կռիւներից ետ քաշուիր.
որ անօգուտ և ունայն են։ Հերձ-
10 ուածող մարդից, երբոր առաջին
և երկրորդ անգամ խրատել ես,
ետ կաց։ Գիտենալով որ այնպի-
11 սին ծռուած է և մեղք է գործում
ինքն իր անձը դատապարտելով։
Երբոր Արտեմասին կամ Տիւ-
12 քիկոսին ուղարկեմ քեզ մօտ
շտապիր որ գաս Նիկոպօլիս ինձ
մօտ. որովհետև որոշել եմ ձմեռն
այնտեղ մնալ։ Եւ օրինական Զե-
13 նասին և Ապողոսին շուտով ճա-
նապարհ դիր. և նայիր որ ոչ մի
բան չ՚պակասի նորանց։ Բայց մե-
14 րիններն էլ թող սովորեն բարի
գործերի մէջ կենալ հարկաւոր
պիտոյքների համար, որ անպը-
տուղ չ՚լինին։ Բարև են տալիս
15 քեզ այն ամենը որ ինձ հետ են.
բարև տուր նորանց որ սիրում
են մեզ հաւատքով. շնորհքը ձեր
ամենի հետ լինի։ Ամէն։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս Յիսուս Քրիստոսի կապ-
ուածը և Տիմոթէոս եղբայրը, Փի-
լիմոն սիրելուն և մեր գործակցին,
2 Եւ Ապփիա սիրելուհուն և Ար-
քիպոսին՝ մեր զինուորակցին և
3 քո տան եկեղեցուն. Շնորհք լինի
ձեզ հետ և խաղաղութիւն Աստ-
ուած մեր Հօրիցը և Տէր Յիսուս
Քրիստոսիցը։
4 Գոհանում եմ Աստուածանից՝
ամեն ժամանակ յիշելով քեզ
5 իմ աղօթքներումը. Լսելով քո
սէրը և հաւատքը, որ ունիս
դէպի Տէր Յիսուսը, և դէպի ա-
6 մեն սուրբերը, Որ քո հաւատքի
հաղորդակցութիւնը պտղաբեր
լինի այն ամեն բարի բաների գի-
տութիւնովը որ ձեզանում է
7 Քրիստոս Յիսուսումը։ Որովհետև
շատ ուրախութիւն և մխիթա-
րութիւն ընդունեցինք քո սիրոյ
վերայ, որ սուրբերի սրտերը քե-
զանով հանգիստ են գտել, եղ-
բայր։
8 Վասն որոյ՝ թէպէտ շատ հա-
մարձակութիւն ունիմ Քրիստո-
սումը հրամայել քեզ այն որ
9 արժան է. Սակայն սէրի համար
աւելի աղաչում եմ, մի այնպի-
սի լինելով՝ ինչպէս ծերունի Պօ-
ղոսս, և հիմա էլ Յիսուս Քրիս-
10 տոսի կապուածս։ Աղաչում եմ
քեզ իմ որդու համար, որին
ծնեցի իմ կապանքներումը, այս-
11 ինքն Ոնեսիմոսի համար, Որ մի
ժամանակ անպիտան էր քեզ.
բայց հիմա քեզ և ինձ պիտա-
նի, նորան ուղարկեցի ԺԵՂ ՏՕՏ։
12 Դու էլ դորան որ իմ սրտի կտորն
է ընդունիր։ Ես կամենում էի 13
նորան ինձ մօտ պահել, որ քո
փոխանակ ծառայութիւն անէ
ինձ աւետարանի կապանքներու-
մը։ Բայց առանց քո կամքի չը 14
կամեցայ ոչինչ անել, որ քո
բարիքը իբրև ստիպմամբ չ՛լինի,
այլ կամաւ։ Եւ թերևս հէնց 15
սորա համար մի ժամանակ բաժ-
նուեցաւ ԺԵՂԱՆԻՑ, որ յաւիտեանս
ունենաս դորան։ Այլ ոչ ևս ինչ- 16
պէս ծառայ, այլ ծառայից բարձր,
ինչպէս սիրելի եղբայր. մանա-
ւանդ ինձ, բայց ո՞րքան աւելի
քեզ, թէ մարմնի և թէ Տիրոջ
կողմանէ։ Եթէ ինձ ԺՈ ընկեր ես 17
համարում, ընդունիր դորան ինչ-
պէս ինձ։ Եւ եթէ քեզ մի վնաս 18
է արած կամ պարտական է, նա
ինձ հաշուիր։ Ես Պօղոսս իմ ձեռ- 19
քովը գրեցի, ես կ՛վճարեմ. որ
չ՛ասեմ քեզ թէ դու քո անձն
էլ ինձ պարտական ես։ Այս, 20
եղբայր, թող օգտուիմ քեզա-
նից Տէրումը. հանգստացրու իմ
սիրտը Տէրումը։ Քո հնազանդու- 21
թեան վերայ համոզուած գրեցի
քեզ, գիտենալով որ ասածիցս
աւելի կ՛անես։
Միանգամայն ինձ համար կե- 22
նալու տեղ էլ պատրաստիր. որ
յոյս ունիմ որ ձեր աղօթքներո-
վը շնորհուիմ ձեզ։ Բարև է տա- 23
լիս քեզ Եպափրասն իմ գերու-
թեան ընկերը Քրիստոս Յիսու-
սումը. Մարկոսը, Արիստարքոսը, 24
Դեմասը, Ղուկասը իմ գործա-
կիցները։ Մեր Տէր Յիսուս Քրիս- 25
տոսի շնորհքը ձեր հոգու հետ
լինի։ Ամէն։

[ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ] ԹՈՒՂԹԸ

ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Շատ մասերով և շատ կերպե-
րով Աստուած առաջուց խօսե-
լով մեր հայրերի հետ մարգա-
2 րէների ձեռով, Այս վերջի օրե-
րումը խօսեց մեզ հետ Որդովը,
որին ամեն բանի ժառանգ դրաւ,
3 որով *աշխարհքն էլ արաւ. Որ
նորա փառքի լոյսը լինելով և
նորա էութեան նկարագիրը, որ
իր զօրութեան խօսքովն ամեն բան
կրում է՝ մեր մեղքերի սրբու-
թիւնն իրանով անելուց յետոյ
նստեց Աստուծոյ մեծութեան աջ
4 կողմը բարձունքներումը, Եւ
հրեշտակներիցն այնքան աւելի
լաւ եղաւ, որքան նորանցից ա-
ւելի գերազանց անուն ժառան-
5 գեց։ Որովհետև հրեշտակներից
որի՞ն ասեց երբէք, Իմ որդին ես
դու, ես այսօր ծնեցի քեզ. և
դարձեալ՝ Ես նորան Հայր կ՛լի-
6 նիմ, և նա ինձ Որդի կ՛լինի։ Եւ
երբոր անդրանիկին միւսանգամ
աշխարհք կ՛մտցնէ ասում է. Եւ
երկրպագեն նորան Աստուծոյ
7 բոլոր հրեշտակները։ Բայց հրեշ-
տակների համար ասում է. Նա
որ իր հրեշտակները հոգիներ ա-
րաւ, և իր պաշտօնեաները կրակի
8 բոց։ Բայց Որդուն ասում է, Քո
աթոռն, ով Աստուած, մինչև
յաւիտեանս յաւիտենից է. քո
թագաւորութեան գաւազանը
9 ուղիղ գաւազան է։ Սիրեցիր ար-
դարութիւնը և ատեցիր անօրէ-
նութիւնը. սորա համար օծեց
քեզ, ով Աստուած, քո Աստ-
ուածը ուրախութեան իւղով ա-
ւելի քան թէ քո ընկերներին։
Եւ դու, ով Տէր, ի սկզբանէ եր- 10
կիրը հիմնեցիր. և երկինքները քո
ձեռքի գործն են։ Նորանք կ՛կոր- 11
չեն, բայց դու կ՛կենաս կ՛մնաս.
և ամենը ձորձի պէս կ՛մաշուին.
Եւ վերարկուի պէս կ՛գալարես 12
նորանց և կ՛փոխուին, բայց դու
նոյնն ես և քո տարիները չեն
պակասիլ։ Եւ հրեշտակներից ո- 13
րի՞ն ասեց երբէք. Իմ աջ կողմը
նստիր, մինչև որ քո թշնամիները
քո ոտների պատուանդան դնեմ։
Չէ՞ որ ամենը սպասաւոր հոգի- 14
ներ են ուղարկուած սպասաւո-
րութիւն անելու նորանց համար,
որ փրկութիւնը պիտի ժառան-
գեն։

ԳԼ. Բ

Նորա համար պէտք է մեզ ա- 1
ռաւել ևս ականջ դնենք այն մեր
լսած բաներին, որ մի գուցէ պա-
կասուինք։ Որովհետև եթէ հրեշ- 2
տակների ձեռով խօսած բանը
հաստատ եղաւ, և ամեն յան-
ցանք և անհնազանդութիւն ըն-
դունեց իր արդար պատիժը, Ապա- 3
մենք ի՞նչպէս կ՛պրծնենք, եթէ
անհոգ լինենք այսպիսի մեծ փրկ-
ութեան համար, որ սկիզբն ա-
ռաւ խօսուելու Տէրիցը, և լսող-
ների ձեռովը մեր միջումը հաս-
տատուեցաւ. Աստուած էլ միա- 4
սին վկայեց նշաններով և հրաշք-
ներով, և կերպ կերպ զօրութիւն-
ներով, և Սուրբ Հոգու պարգև-
ներովն ինչպէս ինքը կամեցաւ։
Որովհետև ոչ թէ հրեշտակնե- 5
րին հնազանդ արաւ այն հան-
դերձեալ աշխարհքը, որի մասին
խօսում ենք։ Մէկը վկայեց մէկ 6
տեղ ասելով. Մարդն ի՞նչ է որ

*Կամ՝ յաւիտեաններն

604

գու յիշես նորան, կամ մարդի որդին որ այցելես նորան։ Մի քիչ ցած արիր նորան հրեշտակներից փառքով և պատիւով պսակեցիր նորան, և քո ձեռքի գործերի վերայ կանգնեցիր նորան, Ամեն բան հնազանդ արիր նորա ոտների տակ. որովհետև ամենն որ հնազանդեցրեց նորան, ոչինչ չթողեց որ հնազանդ չլինի նորան. բայց հիմա տակաւին չենք տեսնում թէ ամեն բան հնազանդած է նորան։ Բայց հրեշտակներից մի քիչ ցածացած տեսնում ենք Յիսուսին մահի չարչարանքի համար. փառքով և պատիւով պսակուած, որ Աստուծոյ շնորհքով ամենի համար մահը ճաշակէ։ Որովհետև վայելում էր նորան, որի համար է ամեն բան և որով ամեն բան, որ շատ որդիք փառքի մէջ տանելիս՝ նորանց փրկութեան առաջնորդին չարչարանքով կատարէ։ Որովհետև թէ սրբողը, և թէ սրբուածները, ամենը մէկիցն են. և այդ պատճառով ամօթ չէ համարում նորանց եղբայր կոչել և ասել. Կ'պատմեմ քո անունը իմ եղբայրներին, *ժողովրդի մէջ կ'օրհնեմ քեզ. Եւ դարձեալ, Ես եմ յոյս կ'դնեմ նորա վերայ. և դարձեալ. Ահա ես և իմ մանուկները որ Աստուած տուաւ ինձ։ Արդ որովհետև մանկունքն արիւնի և մսի մասին մասնակից եղան, ինքն էլ շատ նման կերպով մասնակից եղաւ նորանց. որ էր մահուով խափանէ մահի իշխանութիւնն ունեցողին այսինքն սատանային, Եւ ազատէ նորանց որ մահի վախով իրանց բոլոր կեանքի մէջ ծառայութեան մէջ բռնուած էին։ Որովհետև բնաւ հրեշտակների ձեռք չէ տալիս այլ Աբրահամի սերունդին է ձեռք տալիս։ Ուստի պէտք էր նորան որ բոլորովին եղբայրներին նմանուի. որ ողորմած լինի, և հաւատարիմ քահանայապետ ստանաւածակոյս կազմանէ որ ժողովրդի մեղքերը քաւէ։ Որովհետև ինքը որ չարչարեցաւ և փորձեցաւ, կարող է օգնութիւն տալ փորձուողներին։

Գլ. Գ

Ուստի, սուրբ եղբարք, երկնաւոր կոչումին մասնակիցք, մտիկ տուէք մեր դաւանութեան Առաքեալին և քահանայապետին՝ Քրիստոս Յիսուսին, Որ հաւատարիմ է իրան հաստատողին, ինչպէս Մովսէսն էլ նորա բոլոր տան մէջ։ Որովհետև նա աւելի փառքի արժան եղաւ քան Մովսէսը որքան որ տունիցն աւելի պատիւ ունի նորա շինողը. Որովհետև ամեն տուն մէկից է շինւում. բայց նա որ ամենն արաւ՝ Աստուած է։ Եւ Մովսէսը հաւատարիմ է բոլոր տան մէջ ինչպէս ծառայ՝ այն ասուելու բաներին վկայ լինելու համար։ Բայց Քրիստոսն ինչպէս որդի իր տան վերայ որի տունը մենք ենք, եթէ յոյսի համարձակութիւնը և պարծանքը մինչև վերջը հաստատ բռնենք։

Նորա համար՝ ինչպէս Սուրբ Հոգին ասում է. Այսօր՝ եթէ նորա ձայնը լսէք, Մի խստացնէք ձեր սրտերը ինչպէս բարկանալու ժամանակին, փորձութեան օրը անապատի մէջ. Ուր որ ձեր հայրերը փորձեցին ինձ, քննեցին ինձ և տեսան իմ գործերը քառասուն տարի։ Նորա համար զզուեցի այն ազգիցը և ասեցի. Միշտ մոլորւում են սրտով. և նորանք չճանաչեցին իմ ճանապարհներս։ Այնպէս որ ես երդուեմ սրի իմ բարկութիւնուս, թէ պիտի չը մտնեն իմ հանգստի մէջ։ Նայեցէք. եղբարք, մի գուցէ ձեզանից մէկուս անհաւատութեան չար սիրտ լինի որ ապստամբուի կենդանի Աստուածանից, Այլ իրար յորդորեցէք ամեն մէկ օր. քանի որ այսօր է ասուում. որ ձեզանից մէկը չխստանայ մեղքի խաբեութիւնովը։ Որովհետև մասնակից եղանք Քրիստոսին, եթէ այն հաստատութեան սկիզբը մինչև վերջը պինդ բռնենք. Քանի որ ասւում է. Այսօր եթէ նորա ձայնը լսէք մի խստացնէք ձեր սրտերն ինչպես որ բարկացնելու ժամանակը։ Որովհետև ոմանք որ լսել էին, բարկացրին. բայց ոչ թէ եգիպտոսից Մովսէսի միջոցով բոլոր դուրս եկածները։ Ումի՞ց զղուեցաւ այն քառասուն տարին. չէ՞ որ մեզք գործողներից որոնց ոսկորները ընկան անապատի մէջը։ Եւ որո՞նց երդուեցաւ որ իր հանգստի մէջ չպիտի մտնեն, եթէ ոչ անհաւատներին։ Եւ տեսնում ենք որ չկարողացան մտնել անհաւատութեան պատճառով։

Գլ. Դ

Ուրեմն վախենանք, մի գուցէ երբէք նորա հանգստի մէջ մտնելու խոստումնէրը մնալիս, ձեզանից մէկը պակասած գտնուի։ Որովհետև մենք էլ ենք աւետիքն առել ինչպես և նորանք. բայց նորանց օգուտ չբերաւ աւետիքն քարոզութեան խօսքը, որովհետև չխառնուեցաւ հաւատքի հետ լսողների մէջ։ Բայց մենք հաւատացեալքս մտնում ենք այն հանգստի մէջ, ինչպէս ասեց Ինչպէս երդուայ իմ բարկութիւնուս, թէ պիտի չմտնեն իմ հանգստի մէջ. թէև գործերն աշխարհքի սկզբից կատարուած էին։ Որովհետև մէկ տեղ եօթներորդ օրուայ համար այսպէս է ասում. Եւ Աստուած եօթներորդ օրուն հանգիստ առաւ իր բոլոր գործերից։ Եւ այս տեղ դարձեալ ասում է թէ Պիտի չմտնեն իմ հանգստի մէջ։ Արդ որովհետև մնում է որ մի քանիսը նորա մէջ մտնեն, և նորանք որ առաջուց աւետիքն առան, չմտան անհաւատութեան պատճառով. Կրկին ուրիշ օր է հաստատում. Այսօր Դաւիթով ասելով այնքան ժամանակներից յետոյ՝ ինչպէս որ ասուեցաւ Այսօր եթէ նորա ձայնը լսէք մի խստացնէք ձեր սրտերը։ Որովհետև եթէ Յեսուն նորանց հանգստի մէջ էր տարել, նորանից յետոյ ուրիշ օրի համար էլ չէր խօսիլ։ Ուրեմն մնում է մի հանգստանալ Աստուծոյ ժողովրդի համար։ Որովհետև նորա հանգիստը մտնողը. ինքն էլ հանգստացաւ իր գործերից. ինչպես Աստուած էլ իրաններից։ Ուրեմն ջանանք այն հանգստի մէջ մտնելու. որ մի գուցէ մէկը նոյն անհաւատութեան օրինակի պէս ընկնի։ Որովհետև Աստուծոյ խօսքը կենդանի է և զօրաւոր և ամեն երկսայրի սուրից աւելի կարուկ է, և թափանցում է մինչև շունչի և ոգու և յօդուածների և ծուծի բաժանումը. և քննող է սրտի մտքերը և խորհուրդները։ Եւ չկայ մի արարած աներևոյթ նորա երեսից. բայց ամենն էլ մերկ և բաց է նորա աչքերի առաջին որի հետ է մեր բանը։

Արդ որովհետև մեծ քահանայապետ ունինք երկինքներովը անցած՝ Աստուծոյ Որդին Յիսուսին, պինդ բռնենք դաւանութիւնը։ Որովհետև ոչ թէ այնպէս քահանայապետ ունինք որ չը կարողանայ մեր տկարութիւններին հետ կարեկից լինել. այլ փորձուած ինչ նմանութեամբ, բայց առանց մեղքի։ Ուրեմն համարձակութիւնով մտնենք շնորհքի աթոռին, որ ողորմութիւն ընդունենք և շնորհք գտնենք պատշաճ ժամանակին օգնելու։

Գլ. Ե

Որովհետև ամեն քահանայապետ մարդկանցից առնուած մարդկանց համար է դրւում աստուածային բաներում. որ ընծաներ և զոհեր մատուցանէ մեղքերի համար։ Որ նա կարող է կարեկից լինել տգէտներին և մոլորուածներին. որ ինքն էլ տկարութիւնով պատուած է։ Եւ այն

*կամ՝ եկեղեցու։

պատճառով պէտք է ինչպէս ժո-
ղովրդի համար նոյնպէս էլ իր
անձի համար պատարակ մատու-
4 ցանէ մեղքերի համար։ Եւ ոչ
թէ մէկն իր անձի համար պա-
տիւը առնում է. այլ նա որ
Աստուածանից կանչուած է, ինչ-
5 պէս Ահարօնը։ Այսպէս էլ Քրիս-
տոսը ոչ թէ ինքն իր անձը փա-
ռաւորեց, որ Քահանայապետ լի-
նի. այլ նա որ ասեց նորան Թէ
Իմ Որդին ես դու, ես այսօր
6 ծնեցի քեզ։ Ինչպէս էլ մի ու-
րիշ տեղ ասում է. Դու քահա-
նայ ես յաւիտեան Մելքիսեդեկի
7 կարգի պէս։ Նա որ իր մարմնի
օրերումը աղօթք և աղաչանք
սաստիկ աղաղակով և արտա-
սուքով մատուցանում էր նո-
րան որ կարող էր ազատել նո-
րան մահից. և լսուեցաւ իր բա-
8 րեպաշտութեան համար։ Թէ և
Որդի էր, այն չարչարանքներից
9 հնազանդութիւնը սովորեց։ Եւ
երբոր կատարուեցաւ բոլոր իրան
հնազանդողների համար յաւի-
տենական փրկութեան պատճառ
10 եղաւ. Աստուածանից անուան-
ուելով Քահանայապետ Մելքի-
11 սեդեկի կարգի պէս։ Որի համար
շատ բան ունինք ասելու, և
դժուար է մեկնել, որովհետև
դուք դանդաղ եղաք լսելիքով։
12 Որովհետև ժամանակին նայելով
պիտի վարդապետ լինէիք. կրկին
կարօտ էք սովորելու թէ ինչ են
Աստուծոյ խօսքերի առաջին նշա-
նագիրները, և կարօտողներ ե-
ղաք կաթի և ոչ թէ հաստատ
13 կերակուրի։ Որովհետև ամեն ով
որ կաթնակեր է, անհմուտ է
արդարութեան խօսքին, որովհե-
14 տև տղայ է։ Բայց կատարեալ-
ների համար է հաստատ կերա-
կուրը. որոնց զգայարանները վար-
ժողութեամբ կրթուած են բա-
րին և չարը զանազանելու։

ԳԼ. Զ.

1 Ուստի Քրիստոսի մասին սկզբնա-
կան խօսքը թողելով դէպի կա-
տարեալը դանք. առանց կրկին
հիմը դնելու մեռած գործերից
ապաշխարութեան և Աստուծոյ
հաւատալու համար. Եւ մկրտու- 2
թիւնների ուսմունքի. և ձեռք
դնելու, և մեռելների յարու-
թեան և յաւիտենական դատաս-
տանի համար։ Եւ սա անենք, եթէ 3
Աստուած հրաման տայ։ Որովհե- 4
տև անկարելի է նորանց որ մէկ ան-
գամ լուսաւորուած, այն երկնա-
ւոր պարգևի համն առած, և
Սուրբ Հոգուն մասնակից եղած,
Եւ Աստուծոյ բարի խօսքի, և 5
հանդերձեալ աշխարհքի զօրու-
թիւնները ճաշակած են, Եթէ 6
կործանվում են, որ նորանք դարձ-
եալ նորոգուին ապաշխարու-
թեան համար. որովհետև Աս-
տուծոյ Որդուն իրանց համար
կրկին խաչեցին և խայտառակ
արին։ Վասնզի այն երկիրը, որ 7
իր վերայ շատ անգամ եկած
անձրևը խմէ, և շահաւոր ար-
դիւնք բուսեցնէ նորանց համար,
որոնց ձեռովն էլ մշակվում է,
նա Աստուածանից օրհնութիւն
կ'ընդունի։ Բայց այն որ փուշ և 8
տատասկ է բերում, անպիտան է
և անէծքի մօտ. և նորա վերջն
այրուիլ է։ Իսկ ձեզ համար, սի- 9
րելիներ, հաստատ յոյս ունինք
լաւագոյն և փրկութեան վերա-
բերեալ բաների մասին։ Որովհե- 10
տև Աստուած անիրաւ չէ որ մո-
ռանայ ձեր գործքը և այն սէրի
աշխատանքը, որ նորա անունի
համար ցոյց տուիք, որ ծառա-
յում էիք սուրբերին և ծառա-
յում էք։
Եւ փափաքում ենք որ ձեզա- 11
նից ամեն մէկը նոյն ջանքը ցոյց
տայ, որ յոյսը հաստատ մնայ մին-
չև վերջը։ Որ հիւանդամիտ չ'լի- 12
նիք. այլ նմանող լինիք հա-
ւատքով և երկայնմտութիւնով
խոստմունքները ժառանգողնե-
րին։ Որովհետև երբոր Աստուած 13
խոստմունքը տուաւ Աբրահամին,
այն պատճառով որ ուրիշ աւե-
լի մեծը չ'ունէր՝ որ նորանով եր-
դում անէր, Իր անձովն երդում 14
արաւ և ասեց. Այո, օրհնելով
կ'օրհնեմ քեզ, և շատացնելով

15 կ'շատացնեմ քեզ։ Եւ այսպէս
երկայնամիտ լինելով, հասաւ
16 խոստմունքին։ Իրաւի մարդիկ ա-
ւելի մեծովն են երդում անում,
և նորանց բոլոր հակառակու-
թեան վճիռը բանը հաստատելու
17 համար՝ երդումն է։ Որով Աստ-
ուած առաւել ևս կամենալով
խոստմունքի ժառանգողներին
ցոյց տալ իր խորհրդի անփոփոխ
18 լինելը, երդումը մէջ բերաւ. Որ
երկու անփոփոխելի բանով, ո-
րոնցով անկարելի է որ Աստուած
սուտ խօսի, հաստատուն մխի-
թարութիւն ունենանք, մենք որ
ապաւինեցանք մեր առջևը դրած
19 յոյսը բռնելու. Որ հաստատ և
անշարժ խարիսխի պէս ունինք
մեր անձի համար. որ և մտնում
է վարագուրի ներսի կողմն էլ,
20 Ուր որ մեզ համար Առաջնորդ
մտաւ Յիսուսը, Մելքիսեդեկի
կարգի պէս յաւիտենական Քա-
հանայապետ եղած։

ԳԼ. Է

1 Որովհետև այս Մելքիսեդեկը
Սաղէմի թագաւոր էր. բարձրեալ
Աստուծոյ Քահանայ. որ դիմա-
ւորեց Աբրահամին, երբոր նա
թագաւորների կոտորելուցն ետ
էր դառնում և օրհնեց նորան՝
2 Որին Աբրահամ ամեն բաներից
տասանորդ էլ տուաւ. նա ա-
ռաջ թարգմանվում է արդա-
րութեան թագաւոր, և յետոյ
Սաղէմի թագաւոր, որ է խաղա-
3 ղութեան թագաւոր. Անհայր,
անմայր, առանց ազգահամարի.
որ ոչ օրերի սկիզբն ունի, և ոչ
կեանքի վերջ. այլ Աստուծոյ
Որդու նման եղած կենում մնում
է քահանայ մշտնջենաւոր։
4 Հիմա տեսէք թէ քանի մեծ էր
սա, որին Աբրահամ նահապետն
էլ տասանորդ տուաւ այն աւա-
5 րիցը։ Եւ Ղևիի որդիներիցը նո-
րանք, որ ընդունում են քահա-
նայութիւնը, հրաման ունին ժո-
ղովրդիցը տասանորդ առնելու
օրէնքի համեմատ, այսինքն ի-
րանց եղբայրներիցը. թէպէտ և
նորանք էլ Աբրահամի երանքիցն
են ելած։ Բայց նա, որի ազգա- 6
համարը նորանցից չէր, տասա-
նորդ առաւ Աբրահամիցը. և օրհ-
նեց նորան որ խոստմունքներն ու-
նէր։ Հիմա առանց որ և է հա- 7
կառակութեան՝ նուազը լաւա-
գոյնիցն է օրհնվում։
Եւ այստեղ մահկանացու մար- 8
դիկ են առնում տասանորդ. բայց
այնտեղ նա, որ վկայուեցաւ թէ
կենդանի է։ Եւ կարելի է ասել, 9
թէ Աբրահամի պատճառով
Ղևին էլ որ տասանորդ է առ-
նում, տասանորդ տուաւ։ Որով- 10
հետև նա տակաւին իր հօր ե-
րանքումն էր, երբոր Մելքիսեդե-
կը նորան դիմաւորեց։
Ապա ուրեմն եթէ կատարե- 11
լութիւնը Ղևտացիների քահա-
նայութիւնովն էր, (որովհետև
ժողովուրդը նորա վերայ հիմ-
նուելով օրէնքն ընդունեց), էլ
ինչ պէտք կայ, որ Մելքիսեդե-
կի կարգի պէս մի ուրիշ քահա-
նայ վեր կենայ և ոչ թէ Ահա-
րօնի կարգի պէս ասուի։ Բայց 12
երբոր քահանայութիւնը փոխ-
վում է, հարկ է որ օրէնքին էլ
փոփոխութիւն լինի։ Որովհետև 13
նա, որի համար այս բաներն ասա-
վում են, ուրիշ ցեղի էր մասնա-
կից, որից ոչ ոք սեղանին չ'մօ-
տեցաւ։ Վասնզի յայտնի է, որ 14
մեր Տէրը Յուդայի ցեղիցը ծա-
գեց, որ այն ցեղի վերայ Մովսէ-
սը ոչ մի բան չ'խօսեց քահանա-
յութեան համար։ Եւ սա առա- 15
ւել ևս յայտնի է, երբ Մելքի-
սեդեկի նմանութեան պէս ուրիշ
քահանայ է վեր կենում, Որ ոչ 16
թէ մարմնաւոր պատուէրի օրէն-
քի պէս եղաւ, այլ անվախճան
կեանքի զօրութեան պէս։ Ուրեմն 17
վկայում է, թէ Դու քահանայ
ես յաւիտեան Մելքիսեդեկի
կարգի պէս։ Վասնզի խափանումն 18
է լինում առաջի պատուիրանքին
իր տկարութեան և անօգուտ
լինելու համար։ (Որովհետև օ- 19
րէնքն ոչինչ կատարեալ չ'արաւ)
և ներս է մտնում մի ազնուա-

գոյն յոյս, որով մօտենում ենք
Աստուծուն։
20 Եւ որքան որ առանց երդումի
չէ. (որովհետև նորանք առանց
երդումի են քահանայ եղած.
21 Բայց սա երդումով նորա ձեռ-
վը որ ասեց նորան. Տէրը երդում
արաւ և չի զղջալ, դու քահա-
նայ ես յաւիտեան Մելքիսեդեկի
22 կարգի պէս.) Այնքան աւելի ազ-
նիւ ուխտի երաշխաւոր եղաւ
Յիսուսը։
23 Եւ նորանք շատ քահանաներ
են եղել. նորանց միշտ մնալը մա-
հով արգիլուելու պատճառով.
24 Բայց սա, որովհետև յաւիտեան
է կենում, քահանայութիւնն
25 ունի անանցանելի. Ուստի և բո-
լորովին կարող է փրկել նորանց
որ նորանով մօտենում են Ա-
ստուծուն, որովհետև միշտ կեն-
դանի է որ նորանց համար բա-
րեխօսութիւն անէ։
26 Որովհետև այսպիսի քահանա-
յապետ էր վայելում մեզ, սուրբ,
անմեղ, անարատ, մեղաւորնե-
րիցը ջոկուած և երկնքիցը վեր
27 բարձրացած. Որին ամեն օր պէտք
չէ ինչպէս ուրիշ քահանայա-
պետներին, որ առաջ իր մեղքե-
րի համար պատարագներ մատու-
ցանէ և յետոյ ժողովրդի մեղքերի
համար. որովհետև սա մէկ ան-
գամ կատարեց այդ իր անձը
28 պատարագ մատուցանելով։ Ո-
րովհետև օրէնքը մարդիկ է
կանգնեցնում քահանայապետ-
ներ, որ տկարութիւն ունին.
բայց երդումի խօսքը որ օրէնքի-
ցը յետոյ է Որդուն՝ որ յաւիտ-
եան կատարեալ է։

ԳԼ. Ը.

1 Եւ ասածներիս բովանդակու-
թիւնը սա է. մենք այնպիսի քա-
հանայապետ ունինք, որ Մեծա-
փառութեան աթոռի աջ կողմը
2 նստեց երկնքումը. Պաշտօնեայ
սրբութիւններին և ճշմարիտ խո-
րանին, որն որ Տէրը կանգնեցրեց
3 և ոչ թէ մարդ։ Որովհետև ամեն
քահանայապետ ընծաներ և պա-
տարագներ մատուցանելու հա-
մար է կարգվում. ուստի սորան
էլ պէտք է որ մի բան ունենայ
մատուցանելու։ Որովհետև եթէ 4
երկրի վերայ լինէր, քահանայ
չէր լինիլ, քանի որ կենում էին
դեռ նորանք, որ օրէնքի պէս պա-
տարագ էին մատուցանում. Ո- 5
րոնք երկնաւոր բաների օրինակո-
վը և շուքովն էին ծառայում,
ինչպէս հրաման եղաւ Մովսէսին,
որ խորանը շինելու էր. Մտիկ
տուր, ասում է, որ ամեն բան
անես այն օրինակի պէս, որ ցոյց
տրուեցաւ քեզ սարումը։ Բայց 6
հիմա Յիսուսն աւելի ազնիւ պաշ-
տամունքի հասաւ, որքան որ ինքն
աւելի լաւ ուխտի միջնորդ է, որ
աւելի ազնիւ խոստմունքների վե-
րայ օրինադրուեցաւ։
Որովհետև եթէ այն առաջինն 7
առանց պակասութեան լինէր,
էլ երկրորդին համար տեղ չէր
որոնուիլ։ Վասնզի նորանց յան- 8
դիմանելով ասում է. Ահա օրեր
կ'գան, ասում է Տէրը, որ ես նոր
ուխտ կ'կատարեմ Իսրայէլի տան
և Յուդայի տան հետ, Ոչ թէ 9
այն ուխտի պէս որ նորանց հայ-
րերի հետ արի այն օրումն, որ
նորանց ձեռիցը բռնեցի Եգիպ-
տացիների երկրիցը հանելու հա-
մար. որովհետև նորանք չ'մնացին
իմ ուխտի մէջ, և ես էլ ան-
փոյթ եղայ նորանց համար, ա-
սում է Տէրն։ Որովհետև սա է 10
այն ուխտը, որ կ'դնեմ Իսրայէլի
տան հետ այս օրերից յետոյ, ա-
սում է Տէրը. ես կ'տամ իմ օ-
րէնքները նորանց մտքի մէջ և
նորանց սրտերի վերայ կ'գրեմ նո-
րանք. և նորանց կ'լինիմ Աստ-
ուած, և նորանք կ'լինին ինձ ժո-
ղովուրդ։ Եւ նորանց ամեն մէկը 11
չի սովորեցնիլ իր ընկերին, և ոչ
էլ ամեն մէկն իր եղբօրը և ա-
սիլ, Ճանաչիր Տիրոջը. որովհետև
ամենն էլ կ'ճանաչեն ինձ նորանց
փոքրներիցը մինչև մեծը։ Որով- 12
հետև նորանց անօրէնութիւնն-
ը ներող կ'լինիմ, և նորանց մեղ-
քերը և նորանց անօրէնութիւն-
ներն այլ ես չեմ յիշիլ։

13 Նոր ասելով, այն առաջինը
հնացրեց. և այն որ հնանում է
և ծերանում, մօտ է ապակա-
նութեան։

ԳԼ. Թ.

1 Իրաւ որ առաջի ուխտն էլ ու-
նէր պաշտամունքի իրաւունքը
2 աշխարհական սրբարանը. Որով-
հետև առաջի խորանն այսպէս
պատրաստուեցաւ. նորանում էր
աշտանակը և սեղանը և հացերի
նուէրը. սա կոչվում էր սրբու-
3 թիւն. Իսկ երկրորդ վարագուրի
ետևը մի խորան կար որ Սրբու-
թիւն սրբութեանց էր կոչվում.
4 Որ ունէր ոսկէ բուրվառը, և
ուխտի տապանակը ամեն կող-
մից ոսկով պատած. որ նորա-
նում կար ոսկէ սափորը մանա-
նայովը, և Ահարոնի գաւազանը
որ ծաղկեց, և ուխտի տախտակ-
5 ները։ Եւ նորանից բարձր փառ-
քի քերովբէները որ հովանի էին
անում քաւութիւնի վերայ, ո-
րոնց համար պէտք չէ հիմա ման-
րամասն ասել։
6 Եւ այս բաներն այսպէս պատ-
րաստուած լինելով, քահանա-
ներն ամեն ժամանակ մտնում
էին առաջին խորանը պաշտա-
7 մունքները կատարելու։ Բայց
երկրորդի մէջ մտնում էր քահա-
նայապետը տարին մէկ անգամ,
և ոչ առանց արիւնի, որ մա-
տուցանում էր իրան համար և
ժողովրդի *սխալմունքների հա-
8 մար։ Սուրբ Հոգին նորանով ցոյց
էր տալիս, որ դեռ սրբութիւն-
ների ճանապարհը յայտնուած
չէր, քանի որ առաջի խորանը
9 դեռ հաստատ կանգնած էր, Որ
օրինակ էր այն յառաջիկայ ժա-
մանակի համար, որ նորանում
ընծաներ և զոհեր էին մատու-
ցանվում, որ խղճմտանքի հա-
մեմատ չէին կարող կատարեալ
անել պաշտօն մատուցանողին,
10 Միայն կերակուրներով և խմե-
լիքներով և կերպ կերպ լուաց-
մունքներով, և մարմնի արգա-
րութիւններով, մինչև ուղղու-
թեան ժամանակը թողուած։
Բայց Քրիստոս որ եկաւ, հան- 11
դերձեալ բարիքների քահանա-
յապետը, աւելի մեծ և կատար-
եալ և անձեռագործ խորանովն,
այսինքն այն որ այս արարածնե-
րիցը չէ. Եւ ոչ թէ նոխազների և 12
զուարակների արիւնով, այլ բուն
իր արիւնովը մէկ անգամ մտաւ
այն սրբատեղին և յաւիտենական
փրկութիւն գտաւ։ Որովհետև 13
եթէ ցուլերի և նոխազների ար-
իւնը և երինջների մոխիրը որսկե-
լով սրբում էր պղծուածնե-
րին մարմնաւոր սրբութիւն ստա-
նալու համար, Էլ ո՞րքան աւելի 14
Քրիստոսի արիւնը, որ յաւիտե-
նական հոգով իր անձն անարատ
պատարագ մատուցրեց Աստու-
ծուն, ձեր խղճմտանքը կ'սրբէ
այն մեռած գործերից որ կենդանի
Աստուծուն պաշտէք։
Եւ սորա համար նա նոր ուխտի 15
միջնորդ է, որ երբոր մահն եղաւ
այն առաջի ուխտի ժամանակումն
գործուած յանցանքների քաւու-
թեան համար, խոստմունքն առնեն
յաւիտենական ժառանգութեան
կանչուածները։ Որովհետև որ- 16
տեղ որ կտակ կայ, հարկաւոր է
որ կտակարարի մահը մէջ մտնէ.
Որովհետև կտակը մեռնելուց յե- 17
տոյ է հաստատ. որ նա երբէք
զօրութիւն չ'ունենալ քանի որ
կտակարարը կենդանի է։ Ուստի 18
և առաջինն էլ առանց արիւնի
չ'հաստատուեցաւ։ Վասնզի Մով- 19
սէսը երբոր օրէնքի ամեն պատ-
ուիրանքները պատմեց ժողովրդին,
ցուլերի և նոխազների արիւնն ա-
ռաւ ջրի և կարմիր բրդի և զո-
պայի հետ, և բուն այն գրքի և
բոլոր ժողովրդի վերայ սրսկեց,
Եւ ասեց. Սա այն *ուխտի արիւնն 20
է, որ Աստուած նորան պատուի-
րեց ձեզ։ Եւ խորանի և պաշտա- 21
մունքի բոլոր անօթների վերայ
էլ արիւնը նոյնպէս սրսկեց։ Եւ 22
համարեա թէ ամեն բան արիւ-

*Յուն. տգիտութիւնների

*Կամ՝ կտակի

նով է սրբվում օրէնքին համե-
մատ, և առանց արիւն թափե-
լու թողութիւն չէ լինում։
23 Արդ հարկաւոր էր որ երկընքումը եղած բաների օրինակներն
այսպիսի բաներով սրբուին. բայց
բուն երկնաւորները նորանից ա-
ւելի աղնիւ պատարագներով։
24 Վասնզի ոչ թէ ձեռագործ սրբա-
տեղերը մտաւ Քրիստոսը որ ճշ-
մարտի օրինակներն էին, այլ բուն
իսկ երկնքի մէջ որ հիմա Ա-
ստուծոյ երեսի առաջին երևի մեզ
25 համար։ Ոչ թէ որպէս զի շատ
անգամ իր անձը պատարագ մա-
տուցանէ ինչպէս քահանայա-
պետը, որ ամեն տարի մտնում
էր [illegible] սրբութիւնն օտար
26 արիւնով։ Ապա թէ ոչ պէտք էր
որ աշխարհքի սկզբից յետոյ շատ
անգամ չարչարուէր, բայց հիմա
ժամանակների վերջումը մէկ ան-
գամ յայտնուեցաւ, որ մեղքը
27 դէն դցէ իր պատարագովը։ Եւ
ինչպէս մարդկանց համար սահ-
մանուած է մէկ անգամ մեռնել
և նորանից յետոյ դատաստանը.
28 Նոյնպէս էլ Քրիստոսը մէկ ան-
գամ պատարագուեցաւ շատերի
մեղքերը վեր առնելու համար.
և երկրորդ անգամն առանց մեղ-
քի կ'յայտնուի իրան սպասողնե-
րին փրկութեան համար։

ԳԼ. Ժ

1 Որովհետև օրէնքը գալու բա-
րիքների շուքն ունենալով, և ոչ
թէ այն բաների յատուկ կեր-
պարանքը, ամեն տարի մատուց-
ուած մի և նոյն պատարագնե-
րովը չէր կարող կատարեալ ա-
2 նել մատուցանողներին։ Ապա թէ
ոչ՝ կ'դադարէին մատուցանե-
լուց, որովհետև պաշտօն մատու-
ցանողներն էլ մեղքի խղճմտանք
չէին ունենալ՝ մէկ անգամ սրբ-
3 բուած լինելով։ Բայց նորանցով
ամեն տարի մեղքերի յիշատակ
4 էր լինում։ Վասնզի անկարելի է
որ նոխազների և ցուլերի արիւնը
5 մեղքեր վեր առնէ։ Նորա հա-
մար աշխարհք մտնելիս ասում է.
Զոհ և պատարագ չ'կամեցար,
բայց մի մարմին պատրաստեցիր
ինձ համար. Ողջակէզների և մեղ- 6
քի համար պատարագներ չ'հաճե-
ցիր։ Այն ժամանակ ասեցի թէ 7
Ահա գալիս եմ, գրքի տոմսումը
գրուած է ինձ համար քո կամքն
անելու, ով Աստուած։ Վերե- 8
ւումն ասելով թէ զոհի և պա-
տարագի և ողջակէզների և մեղ-
քի համար պատարագներ չ'կամե-
ցար և չ'հաճեցիր նորանց, որոնք
օրէնքի համեմատ մատուցան-
վում են. Այն ժամանակ ասում 9
է. Ահա գալիս եմ քո կամքն ա-
նելու, ով Աստուած, առաջինը
դէն է դցում որ երկրորդը հաս-
տատէ։ Որ այն կամքովը մենք 10
սրբուեցանք մէկ անգամ Յիսուս
Քրիստոսի մարմնի պատարագովը։
Եւ ամեն *քահանայապետ ա- 11
մեն օր կանգնած պաշտօն է կա-
տարում. և նոյն պատարագներն
է մատուցանում շատ անգամ,
որ երբէք չեն կարող մեղքեր վեր
առնել։ Բայց սա մեղքերի հա- 12
մար մէկ պատարագ մատուցա-
նելով մշտնջենաւորապէս նստեց
Աստուծոյ աջ կողմը։ Եւ այսու- 13
հետև սպասում է մինչև որ իր
բոլոր թշնամիներն իր ոտների
պատուանդանը դրուին։ Որով- 14
հետև մէկ պատարագով յա-
ւիտեան կատարեց սրբուողներին։
Բայց Սուրբ Հոգին էլ վկայում 15
է մեզ, այն առաջուց ասելովը.
Թէ Սա է այն ուխտն որ կ'դնեմ 16
նորանց հետ այն օրերից յետոյ,
ասում է Տէրը, կ'տամ իմ օ-
րէնքները նորանց սրտերի մէջ, և
նորանց խորհուրդների վերայ կը
գրեմ նորանց։ Եւ ապա ասում է. 17
Նորանց մեղքերը և նորանց անօ-
րէնութիւնները էլ չեմ յիշիլ։
Բայց որ տեղ որ սորանց թողու- 18
թիւնը կայ, այնտեղ էլ մեղքի
համար պատարագ պէտք չէ։
Արդ, եղբարք, որովհետև հա- 19
մարձակութիւն ունինք սրբա-
րանը մտնելու Յիսուսի արիւնովը,
Որն որ նորոգեց մեզ համար նոր 20

*Ոմանք՝ քահանայ

և կենդանի ճանապարհ վարա-
գուրի միջովն, այսինքն իր մարմ-
21 նովը. Եւ մի մեծ քահանայ՝ Ա-
22 ստուծոյ տան վերայ. Ապա թող
մօտենանք նորան ճշմարիտ սրբ-
տով, հաւատքի լրութեամբ, Ֆր
սրտերը մաքրուած չար խղճմտան-
քից, և մեր մարմինը լուացուած
23 սուրբ ջրով. Պինդ բռնենք յոյսի
դաւանութիւնն՝ անսայթաք. որ
24 հաւատարիմ է խոստացողը։ Եւ
զգուշանանք իրար համար՝ դէպի
սէր և բարի գործեր գրգռելով.
25 Եւ չ'թողենք մեր իրար հետ ժո-
ղովուիլը, ինչպէս ոմանց սովո-
րութիւն է. բայց իրար յորդո-
րենք, և այնքան աւելի՝ որքան
տեսնում էք որ օրը մօտեցած է։
26 Որովհետև եթէ մենք ճշմար-
տութեան գիտութիւնն ընդու-
նելուց յետոյ յօժար կամքով
մեղք գործենք, այլ ևս նորանից
յետոյ մեղքերի համար զոհ չէ
27 մնում, Այլ դատաստանի ահա-
ւոր սպասելը, և կրակի զայրոյթը
որ հակառակողներին կ'լափէ։
28 Մէկը, որ Մովսէսի օրէնքն ա-
նարգում էր, առանց ողորմու-
թեան երկու կամ երեք վկայի
29 խօսքով մեռնում էր։ Էլ ո՞րքան
աւելի, կարծում էք, սաստիկ
պատժի կ'արժանանայ, նա որ
Աստուծոյ Որդուն ոտքի տակ
կոխեց, և ուխտի արիւնը պիղծ
համարեց որով նա սրբուեցաւ,
և շնորհքի Հոգուն նախատեց։
30 Որովհետև գիտենք նորան որ ա-
սեց. Իմն է վրէժխնդրութիւնը
ես հատուցումը կ'տամ, ասում
է Տէրը. և դարձեալ, Թէ Տէրը
31 կ'դատէ իր ժողովրդին։ Սարսա-
փելի բան է կենդանի Աստուծոյ
ձեռքն ընկնիլը։
32 Արդ յիշեցէք առաջին օրերը,
որ դուք լուսաւորուելուց յետոյ
շատ չարչարանքների ճիգերին
33 համբերեցիք։ Երբեմն նախա-
տինքների և նեղութիւնների մէջ
խայտառակուեցաք, և երբեմն
էլ այնպիսի վիճակում լինողնե-
34 րի հետ մասնակից եղաք։ Որով-
հետև իմ կապանքների հետ էլ
չարչարուեցաք, և ձեր ստաց-
ուածքների յափշտակութիւնն
էլ ուրախութիւնով ընդունե-
ցիք. գիտենալով որ ձեր անձերի
համար աւելի լաւ և մնայուն
ստացուածք ունիք երկնքումը։
Ուրեմն դէն մի դցէք ձեր վստա- 35
հութիւնը, որ մեծ վարձքի հա-
տուցումն ունի։ Որովհետև համ- 36
բերութիւն է պէտք ձեզ, որ
Աստուծոյ կամքն անելով խոստ-
մունքն ստանաք։ Որովհետև մի- 37
այն մի քիչ ժամանակ էլ, և նա
որ գալու է՝ կ'գայ և չի ուշանալ։
Բայց արդարը հաւատքից կ'ապ- 38
րի. և եթէ մէկը ետ քաշուի,
իմ անձը նորան չի հաւանիլ։
Իսկ մենք ետ քաշուողներիցը 39
չենք որ կորչենք. այլ հաւատ-
քիցն ենք որ Ֆր հոգիները փրկ-
ուին։

ԳԼ. ԺԱ

Հաւատքն էլ յուսացած բա- 1
ների հաստատութիւնը՝ և չ'երե-
ւեցող բաների ապացոյցն է։ Ո- 2
րովհետև նորանով առաջինները
վկայութիւն ընդունեցին։
Հաւատքով ենք իմանում, որ 3
աշխարհքներն Աստուծոյ խօսքովը
հաստատուեցան, որ չ'երևողնե-
րիցն այս տեսնուողներս եղած են։
Հաւատքով Հաբէլը Կայէնիցն 4
աւելի լաւ պատարագ մատու-
ցրեց Աստուծուն, որով վկայու-
թիւն ընդունեց թէ արդար է,
երբոր Աստուած նորա պատարագ-
ների վերայ վկայութիւն տուաւ.
որ նորանով տակաւին հիմա էլ
խօսում է թէպէտ և մեռել է։
Հաւատքով Ենովքը փոխուե- 5
ցաւ որ մահ չ'տեսնէ. և չէր գտնը-
վում. որովհետև Աստուած փո-
խեց նորան. որ իրան փոխուե-
լուցն առաջ վկայուեցաւ որ հա-
ճելի էր Աստուծուն։ Բայց ա- 6
ռանց հաւատքի անկարելի է հա-
ճոյ լինել. որովհետև Աստուծուն
մօտեցողը պէտք է հաւատայ,
թէ նա կայ, և թէ իրան խնդրող-
ներին վարձահատոյց կ'լինի։
Հաւատքով Նոյը պատգամ 7
առնելով դեռ չ'երևացած բանե-

բի համար և երկիւղած լինելով
շինեց սապանը իր տան փրկու-
թեան համար, որով աշխարհքիս
դատապարտեց. և ժառանգ ե-
ղաւ հաւատքով լինող արդա-
րութեանը։
8 Հաւատքով Աբրահամը երբոր
կանչուեցաւ՝ հնազանդ եղաւ
դուրս գնալու այն տեղ, որ ժա-
ռանգութեան համար առնուլու
էր. և դուրս եկաւ գնաց առանց
գիտենալու թէ ուր է գնում։
9 Հաւատքով պանդխտեաց եղաւ
աւետեաց երկրումն իբր օտարու-
թիւնում. խարաններում բնակ-
ուելով Իսահակի և Յակոբի
հետ, որ նոյն խոստմունքի ժա-
10 ռանգակիցներն էին. Որովհետև
ապասում էր այն հիմունքով
հաստատուած քաղաքին, որի
ճարտարապետը և արարիչն Աս-
ուած է։
11 Հաւատքով Սառան ինքն էլ ա-
բերմն առնելու զօրութիւն ըն-
դունեց. և տարիքամ հասակի
մէջ որդի ծնեց. որովհետև հա-
ւատարիմ համարեց խոստացո-
12 ղին։ Ընդրա համար և այն մէկի-
ցը, այն էլ այն մեռած պիտա
ծիցը՝ շատութեամբ ծնունդ էին,
ինչպէս երկնքի աստղերը և ինչ
պէս անհամար աւազը ծովի ափի
մօտ։
13 Սրանք ամենը մեռան հա-
ւատքի մէջ. առանց խոստմունք-
ները ստանալու, այլ հեռուանց
տեսնում էին նորանց և ուրա-
խանում. և բարևում էին և
դաւանում, թէ օտարներ և
14 պանդխտաններ են երկրումն։ Ո
րովհետև այնպիսի բաներ խօսող-
ները յայտնի ցոյց են տալիս, որ
15 մի հայրենիք են որնում։ Եւ
եթէ այն էին յիշում որից դուրս
եկան, ապագին ժամանակ ու-
16 նէին հետ դառնալու։ Բայց հիմա
աւելի աղնիւին են ցանկանում,
այսինքն երկնաւորին. և նորա
համար Աստուած ամօթ չէ հա-
մարում՝ նորանց Աստուածը կոչ-
ուելու. որովհետև մի քաղաք է
պատրաստել նորանց համար։
17 Հաւատքով Աբրահամը Իսա-

հակին դ-փորձ մատուցեց երբո-
ր փորձուեցաւ. և միածնին մա-
տուցանում էր նա որ խոստմունքն
ընդունել էր։ Որ ասուեցաւ թէ 18
Իսահակով քեզ զաւակ կ'կոչ-
ի։ Մտածելով թէ Աստուած 19
կարող է մեռելներից էլ յարու-
ցանել. ուստի օրինակի համար
էլ ընդունեց նորան։
Հաւատքով Իսահակը Յակոբին 20
և Եսաւին օրհնեց հանդերձեալ
բաների մասին։ Հաւատքով Յա- 21
կոբը մեռնելիս Յովսէփի որդ-
կանց ամեն մէկին օրհնեց, և իր
գաւազանի ծայրի վերայ երկրպա-
գութիւն արաւ։ Հաւատքով 22
Յովսէփը վախճանելիս յիշեց Իս-
րայէլի որդկանց գնալու
մասին, և իր ոսկորների համար
հրաման տուաւ։
Հաւատքով Մովսէսը երբոր 23
ծնուեցաւ՝ երեք ամիս թաքուն
պահուեցաւ իր ծնողքի ձեռովը.
վասնզի տեսան թէ մանուկը գե-
ղեցիկ էր. և չ'վախեցին թագա-
ւորի հրամանից։ Հաւատքով 24
Մովսէսը երբոր մեծացաւ՝ չ'կա-
մեցաւ փարաւոնի աղջկայ որդի
կոչուիլ։ Աւելի լաւ համարեց 25
Աստուծոյ ժողովրդի հետ չար-
չարուիլ, քան թէ մի առ ժա-
մանակ մեղքի զուարճութիւնն
ունենալ։ Աւելի մեծ հարստու- 26
թիւն համարելով Քրիստոսի նա-
խատինքը եգիպտացիների հա-
րստութիւնից դանձերից. որովհետև աչք
դրած մտիկ էր տալիս վարձքի
հատուցմանը։ Հաւատքով թողեց 27
նա եգիպտացոց չ'վախենալով թա-
գաւորի բարկութիւնից. որով-
հետև համբերեց՝ Անտեսանելուն
տեսնողի պէս։ Հաւատքով արաւ 28
զատիկը և արիւնի սրսկումը. որ
առաջինեկներին աւերակիչը չ'մա-
տնէր նորանց։
Հաւատքով անցան Կարմիր ծո- 29
վակից ինչպէս ցամաքով. որի փորձն
եգիպտացիներն անելիս խեղդուե-
ցան։
Հաւատքով Երիքովի պարիսպ- 30
ները վայր ընկան, երբոր եօթն
օր նորա շուրջը պատեցին։
Հաւատքով Ռահաբ պոռնիկը 31

չ'կորաւ անհաւատների հետ, որ
լրտեսներին ընդունել էր խաղա-
ղութիւնով։
32 Եւ էլ ինչ ասեմ. որ ժամա-
նակս բաւական չէ որ պատմեմ
Գեդէոնի, Բարակի, Սամփոնի,
Յեփթայէի, Դաւիթի և Սա-
մուէլի և մարգարէների
33 համար, Որոնք հաւատքով թա-
գաւորութիւնների յաղթեցին,
արդարութիւն գործեցին, խոստ-
մունքներ ստացան, առիւծների
34 բերաններ խցկեցին. կրակի զո-
րութիւն անցրին. սրի բերանից
պրծան. տկարութիւնից զօրաց-
ան պատերազմի մէջ զօրաւոր
եղան. օտարների բանակներն
35 փախցրին. Կանայք իրանց մե-
ռելներն ընդունեցին յարութիւ-
նից. ուրիշներն էլ խոտա չար-
չարուեցան ազատութիւնը չ'ըն-
դունելով, որ լաւագոյն յարու-
36 թեան հասնեն. Միւսներն էլ նա-
խատինքների և ծեծերի, կա-
պանքների և բանտի փորձը ա-
37 ռան. Քարկոծուեցան, ազռցուե-
ցան, փորձանքի մէջ ընկան, սրով
ապանուած մեռան. ոչխարի մոր
թերով և այծի կաշիներով մեռ
եկան. կարօտութիւն քաշելով,
38 նեղուած, չարչարուած. Որ աշ
խարհքը նորանց արժանի չէր.
անապատներում մոլորուեցան և
ասրերում և այրերում և երկրի
խոռոչներում։
39 Եւ սորանք ամենը հաւատքով
վկայութիւն առան, բայց խոստ-
40 մունքը չ'ընդունեցին. Որովհետև
Աստուած մեզ համար աւելի
լաւ բան նախապատրաստեց, որ
նորանց առանց մեզ չ'կատար-
ուին։

Գ Լ. ԺԲ

1 Ուստի մենք էլ որ վկաների այս-
քան *բազմութիւն ունինք մեզ
շրջապատած, դէն գցենք ամեն
ծանրութիւն, և հեշ դիւրաս-
պաշարող մեղքը. և համբերու-
թեամբ վազենք մեր առաջին

գրած սպարէզին ընթացքը. Աչքի 2
առնք հաւատքի զօրագլուխին և
կատարողին՝ Յիսուսին, որ իր ա-
ռաջին դրուած ուրախութեան
փոխանակ խաչը յանձն առաւ,
և ամօթն արհամարհելով՝ Աս-
տուծոյ աթոռի աջ կողմը նստեց։
Որ իսկ մտածեցէք նորա վե- 3
րայ, որ իրան դէմ եղած այսպի-
սի հակառակութիւն քաշեց մե-
ղաւորներից, որ գուք ձեր ան-
ձերովը չ'յոգնիք թուլացած։ Տա- 4
կաւին մինչև արիւն հակառակ չէք
կացած մեղքին։ Եւ մոռացաք այն 5
մխիթարութիւնն որ ձեզ հետ
ինչպէս որդիների հետ խոսում
է. Իմ որդեակ, մի անարգիր Տի-
րոջ խրատը. և ոչ էլ վհատուիր,
նորանից յանդիմանուած ժամա-
նակ։ Որովհետև Տէրը իրան սի- 6
րածին խրատում է. Նա ծեծում
է ամեն որդի որ ընդունում է։
Եթէ խրատին համբերէք, Աստ- 7
ուած ձեզ հետ ինչպէս որդկանց
հետ կ'վարուի. որովհետև ո՞ր որ-
դին է որ հայրը նորան չէ խրա-
տում։ Բայց եթէ առանց խրատի 8
էք, որին ամենը մասնակից եղան,
ուրեմն խորթ էք և ոչ որդիք։
Դեռև մենք մեր մարմնաւոր հայ- 9
րերը խրատող ունենալով նորանց
ամաչում էինք. չէ՞ որ առաւել ևս պիտի հնազանդիմք հո-
գիների Հօրը, և ապրենք։ Որով- 10
հետև սորանք մի քիչ ժամանակ
իրանց հաճոյ երևեցածի պէս
խրատում էին, բայց նա՝ օգտի
համար, որ նորա սրբութիւնն բն-
դունենք։ Եւ ամեն խրատ հէնց 11
նոյն ժամանակին ուրախութիւն
չէ երևում, այլ տրտմութիւն.
բայց յետոյ նորանով վարժուած-
ներին արդար խաղաղութեան
պտուղ է վճարում։
Ընդրա համար հասատացեալք 12
թուլացած ձեռները, և տկարա-
ցած ծունկերը, Եւ ձեր ոտների 13
համար ուղիղ ճանապարհներ
շինեցէք. որ կաղը չ'գլորուի, այլ
մանաւանդ բժշկուի։ Հետևեցէք 14
խաղաղութեան ամենի հետ և
սրբութեան, որ առանց նորան

*Յոյն. ամպ

15 ոչ ով Տիրոջը չի տեսնիլ. Զգոյշ
կացէք, որ մէկը յետ մնացող
չ'լինի Աստուծոյ շնորհքիցը. որ
մի դառն արմատ վեր չ'բուսնէ
և նեղութիւն տայ, և նորանով
16 շատերը պղծուին։ Որ չ'լինի մէկը
պոռնիկ և պիղծ ինչպէս Եսաւը,
որ մի կերակուրի համար իր
17 անդրանկութիւնը ծախեց։ Որով-
հետև գիտէք որ թէև յետոյ
կամեցաւ օրհնութիւնը ժառան-
գել, բայց մերժուեցաւ. որով-
հետև ապաշխարութեան տեղի
չ'գտաւ, թէև արտասուքով
խնդրեց նորան։
18 Որովհետև դուք չէք մօտեցել
շօշափելի սարին, որ կրակով
վառուած էր և այն մէգին և
19 խաւարին և մրրկին. Եւ փողի
հնչումին և խօսքերի ձայնին, ո-
րից հրաժարուեցան լսողները,
որ խօսքը չ'շարունակուի նորանց։
20 Վասնզի չէին դիմանում այն
հրամանին. Եթէ մի անասուն էլ
մօտենայ սարին՝ քարկոծուի կամ
21 նետով սպանուի։ Եւ այնպէս
ահաւոր էր տեսիլքն, որ Մով-
սէսն ասում էր, Բէ Զարհուրում
22 եմ և դողում։ Այլ մօտեցել
էք Սիօն սարին, և կենդանի Ա-
ստուծոյ քաղաքին, երկնաւոր Ե-
րուսաղէմին, և բիւրաւոր հրեշ-
23 տակներին, Եւ երկնքումը գրուած
անդրանիկների հանդէսին և ե-
կեղեցուն, և ամենի դատաւոր
Աստուծուն, և կատարեալ ար-
24 դարների հոգիներին. Եւ նոր
կտակարանի միջնորդ՝ Յիսուսին.
և այն արիւնի սրսկմանը որ ա-
ւելի լաւ է խօսում քան թէ
Հաբէլի արիւնը։
25 Զգոյշ կացէք որ չ'մերժէք նո-
րան որ խօսեց. որովհետև եթէ
չ'կարողացան պրծնել երկրիս վե-
րայ պատգամ տուողին մերժող-
ները, որքա՛ն աւելի ապա մենք
եթէ երկնքից խօսողին մերժենք։
26 Որի ձայնն այն ժամանակ երկիրը
շարժեց. և հիմա խոստացել է և
ասում է թէ Միւսանգամ ևս
կ'շարժեմ, ոչ միայն երկիրը բայց
27 երկինքն էլ։ Բայց այն Միւսան-
գամը ցոյց է տալիս որ շարժուող
բաներն իբրև եղածներ պիտի
փոխուին, որ հաստատ մնան չը
շարժուողները։ Ուստի անշարժ 28
թագաւորութիւն ընդունած լի-
նելով պինդ բռնենք այն շնորհքը
որով պաշտում ենք հաճու-
թեամբ Աստուծուն, ահով և
երկիւղածութեամբ։ Որովհետև 29
մեր Աստուածը փճացնող կրակ է։

ԳԼ. ԺԳ

Եղբայրսիրութիւնը հաստատ 1
մնայ. Հիւրասիրութիւնը մի մո- 2
ռանաք. որ նորանով ոմանք ա-
ռանց գիտենալու հրեշտակներ
ընդունեցին։ Յիշեցէք կապեալ- 3
ներին որպէս թէ դուք էլ նո-
րանց հետ կապուածներ. և չար-
չարուողներին որպէս թէ դուք
էլ մարմնում լինողներ էք։ Ա- 4
մուսնութիւնը ամեն կողմանէ
պատուական է և անկողինը սուրբ.
բայց շնացողներին և պոռնիկնե-
րին Աստուած կ'դատէ։ Վարքն 5
առանց արծաթասիրութեան լի-
նի. բաւական համարեցէք այն որ
ձեռներումդ ունիք. որովհետև
ինքն ասեց, թէ Չեմ թողիլ քեզ
և երեսից չեմ գցիլ։ Այնպէս որ 6
համարձակ ենք ասելու. Տէրն է
իմ օգնականը, և ես չեմ վախե-
նալ, ի՞նչ կ'անէ ինձ մարդը։
Յիշեցէք ձեր առաջնորդներին որ 7
Աստուծոյ բանը խօսեցին ձեզ.
նայեցէք նորանց վարմունքի վախ-
ճանին և նման եղէք նորանց հա-
ւատքին։ Յիսուս Քրիստոսը նոյն 8
է երէկ և այսօր և յաւիտեան։
Կերպ կերպ և օտար ուսմունք- 9
ներով մի տատանուիք. որովհե-
տև լաւ է որ սիրտը շնորհքով
հաստատուի ոչ թէ կերակուր-
ներով, որոնցով ոչինչ օգուտ
չ'ունեցան նորանք որ այնպէս
գնացին։ Մենք ունինք սեղան, 10
որից ուտելու իշխանութիւն չ'ու-
նին խորանի պաշտամունքին ծա-
ռայողները. Որովհետև այն անա- 11
սունների արիւնը, որ քահանա-
յապետի ձեռովը սրբարանի մէջ
է տարվում մեղքի համար, նո-
րանց մարմիններն այրվում են

12 բանակից դուրս։ Նորա համար
Յիսուս էլ որպէսզի բուն իր
արիւնովը ժողովրդին սրբէ, դռան
դրսի կողմումը չարչարուեցաւ։
13 Ուրեմն ԷԼԷԺ բանակի դուրսը
գնանք նորա մօտ, և նորա նա-
խատինքը մեզ վերայ առնենք։
14 Որովհետև այստեղ հաստատ
մնացող քաղաք չ'ունինք. այլ
15 հանդերձեալն ենք որոնում։ Ուս-
տի նորա ձեռովն ամեն ժամա-
նակ Աստուծուն օրհնութեան
պատարագ մատուցանենք. այս-
ինքն նորա անունը դաւանող
16 շրթունքների պտուղ։ Իսկ բա-
բերարութիւնը և հաղորդակցիլը
մի մոռանաք. որ այնպիսի պա-
տարագներին հաւանում է Աստ-
17 ուած։ Ականջ դրէք ձեր առաջ-
նորդներին, և հնազանդեցէք. որ
նորանք հսկում են ձեր հոգինե-
րի համար որպէս թէ հաշիւ պի-
տի տան որ ուրախութիւնով
անեն այն և ոչ թէ հառաչելով.
18 որ դա ձեզ օգուտ չէ։ Աղօթք
արէք մեզ համար, որովհետև հա-
մոզուած ենք որ բարի խղճմտանք
ունինք կամենալով ամեն բանի
մէջ բարւոք վարուիլ։ Եւ առա- 19
ւել ևս աղաչում եմ որ այս
անէք, որ շուտով դառնամ ձեզ
մօտ։
Եւ խաղաղութեան Աստուա- 20
ծը որ մեռելներից վեր հանեց
ոչխարների մեծ Հովիւն յաւիտե-
նական ուխտի արիւնովը՝ մեր Տէր
Յիսուսին, Հաստատէ ձեզ ամեն 24
բարի գործի մէջ նորա կամքն
անելու, և գործէ ձեզանում ինչ
որ հաճոյ է նորա առաջին Յի-
սուս Քրիստոսի ձեռովը. որին լինի
փառք յաւիտեանս յաւիտենից։
Ամէն։
Աղաչում եմ ձեզ, եղբարք, 22
համբերութեամբ տարէք այս
մխիթարութեան խօսքը. և քիչ
էլ գրեցի ձեզ։ Իմացէք թէ Ա- 23
եղբայր Տիմոթէոսը արձակուած
է. եթէ նա շուտով գայ՝ նորա
հետ կ'տեսնեմ ձեզ։ Բարև տուէք 24
ձեր բոլոր առաջնորդներին, և
բոլոր սուրբերին, բարև են տա-
լիս ձեզ նորանք որ Իտալիայի
կողմերիցն են։ Շնորհքը ձեր ա- 25
մենի հետ լինի։ Ամէն։

ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԹՈՒՂԹԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Յակոբոս Աստուծոյ և Տէր Յի-
սուս Քրիստոսի ծառայ. տասն-
ևերկու ցեղերիդ որ ցրուած էք,
ողջոյն։
2 Բոլորովին ուրախութիւն հա-
մարեցէք, եղբարքս, երբոր կերպ
կերպ փորձանքների մէջ ընկնիք.
Գիտենալով որ ձեր հաւատքի 3
փորձառութիւնը համբերութիւն
է գործում։ Իսկ համբերութիւ- 4
նը թող կատարեալ գործ ունե-
նայ. որ կատարեալ և ամբողջ
լինիք, և ոչ մի բանի պակասու-
թիւն չ'ունենաք։
Բայց եթէ մէկը ձեզանից ի- 5
մաստութեան պակասութիւն ու-

նի թող խնդրէ Աստուածանից,
որ ամենին տալիս է առատու-
թեամբ և չէ նախատում, և
6 կ'տրուի նորան։ Միայն թէ թող
հաւատքով խնդրէ առանց երկ-
մտելու, որովհետև երկմտողը
նման է ծովի հողմակոծուած և
7 տատանուած ալիքին։ Այն մար-
դը թող չ'կարծէ, որ Տէրիցը մի
8 բան կ'առնէ։ Երկմիտ մարդը
անհաստատ է իր բոլոր ճանա-
պարհներումը։
9 Թող խոնարհ եղբայրը պար-
10 ծենայ իր բարձրութիւնովը։ Եւ
հարուստն իր խոնարհութիւնովը
որովհետև խոտի ծաղկի նման
11 կ'անցնի։ Վասնզի արեգակը ծա-
գեց իր սաստիկ տաքութիւնովը
և խոտը չորացրեց, և նորա ծա-
ղիկը թափուեցաւ, և նորա երե-
սի գեղեցկութիւնը կորաւ. այն-
պէս էլ հարուստն իր ճանա-
պարհներումը կ'թոռոմի։
12 Երանելի է այն մարդը որ համ-
բերում է փորձութեան վասնզի
եթէ փորձուելով ընտիր գտնուի
կեանքի պսակը կ'առնէ, այն որ
Տէրը խոստացաւ իրան սիրողնե-
13 րին։ Ոչ ով, որ փորձութեան
մէջ է, չ'ասէ թէ Աստուածանից
եմ փորձվում. որովհետև Աստ-
ուած չար բաներով չէ փորձվում
ինքն էլ ոչ մէկին չէ փորձում
14 Բայց ամեն մէկը փորձվում է
բուն իր ցանկութիւնիցը հրա-
15 պուրուած և խաբուած։ Եւ այ-
նուհետև որ ցանկութիւնը յղա-
ցած է՝ ծնվում է մեղք. և մեղքն
էլ երբոր կատարվում է՝ մահ
16 կ'ծնի։ Մի խաբուիք իմ սիրելի
17 եղբարք. Ամեն բարի տուրք, և
ամեն կատարեալ պարգև վե-
րևիցն է իջնում լոյսի Հօրիցը.
որի մէջ բնաւ փոփոխում կամ
18 դարձուածքի շուք չ'կայ։ Նա
կամենալով ծնեց մեզ ճշմար-
տութեան խօսքով, որ մենք նո-
րա արարածների երախայրի լի-
19 նենք։ Ուստի, իմ սիրելի եղբայր-
ներ, թող ամեն մարդ շուտ լինի
լսելու համար, և ծանր՝ խօսելու
համար, և ծանր՝ բարկանալու
20 համար։ Որովհետև մարդի բար-
կութիւնն Աստուծոյ արդարու-
թիւնը չէ գործում։
Սորա համար ամեն աղտեղու- 21
թիւն և չարութեան առաւելու-
թիւնը դէն դցեցէք, և խոնար-
հութիւնով ընդունեցէք չէր մէջ
սերմուած խօսքը, որ կարող է
ձեր հոգիները ապրեցնել։
Բայց խօսքը անող եղէք, և ոչ 22
միայն լսողներ՝ ձեր անձերը խա-
բելով։ Վասնզի եթէ մէկը միայն 23
խօսքի լսող է և ոչ անող, նա
նման է այն մարդին որ պշուցած
մտիկ է տալիս իր իսկական երե-
սին հայելու մէջ. Որովհետև նա- 24
յելով տեսաւ իրան և անցաւ,
և շուտով մոռացաւ թէ ինչպէս
էր։ Բայց նա որ ազատութեան 25
կատարեալ օրէնքի մէջ աչքը
գցած մտիկ տուաւ և նորանում
կացաւ, նա մոռացուկ լսող չ'ե-
ղաւ այլ գործ կատարող. նա իր
անելովը երանելի է։ Եթէ ձեզա- 26
նից մէկը կարծում է թէ կրօ-
նասէր է և իր լեզուն չ'սանձա-
հարէ, այլ իր սիրտը խաբէ, այն-
պիսի մարդի կրօնասիրութիւնը
զուր է. Սուրբ և անարատ կրօ- 27
նասիրութիւնն Աստուծոյ և Հօր
առաջին սա է, որբերին և այրի-
ներին այցելել նորանց նեղու-
թեան մէջ, և իր անձն աշխարհ-
քից անարատ պահել։

ԳԼ. Բ

Եղբարքս, մի գուցէ աչառու- 1
թեամբ ունենաք մեր Տէր Յիսուս
Քրիստոսի հաւատքը, որ փառքի
Տէրն է։ Եթէ մի մարդ մտնէ ձեր 2
ժողովարանը, որ ոսկի մատանի և
պայծառ հագուստ ունենայ. և
մի աղքատ էլ մտնէ այնտեղ
կեղտոտ հագուստով, Եւ մտիկ 3
տաք նորան որ պայծառ հագուստ
ունի, և ասէք նորան. Դու այս-
տեղ նստիր պատիւով, և աղ-
քատին ասէք թէ դու այդտեղ
կանգնիր. կամ թէ Եկ նստիր
այստեղ պատուանդանիս մօտ.
Եւ խղճմտանք չէ՞ք անում ձե- 4
զանում, և չ'եղա՞ք չար խոր-
հուրդների դատաւորներ։ Լսե- 5

ցէք, սիրելի եղբարքս, չէ՞ որ
Աստուած ընտրեց այս աշխարհ-
քի աղքատներին, որ հարուստ
են հաւատքով, և ժառանգներ
այն արքայութեանը որ Աստուած
խոստացաւ իրան սիրողներին։
6 Բայց դուք անպատուեցիք աղ-
քատին. չէ՞ որ հարուստներն են
ձեզ հարստահարում և նորանք
են ձեզ դատաստան քաշում։
7 Չէ՞ որ նորանք են հայհոյում
այն բարի անունը որ ձեզ վերայ
8 կանչուած է։ Արդ եթէ թագա-
ւորական օրէնքը կատարէք գրը-
ուածին համեմատ թէ Սիրիր քո
ընկերին քո անձի պէս, լաւ էք
9 անում։ Բայց եթէ աչառու-
թիւն էք անում, մեղք էք ա-
նում՝ յանդիմանուած օրէնքիցը
10 ինչպէս օրինազանցներ։ Վասն զի
ով որ բոլոր օրէնքը պահէ և մէ-
կումը մեղանչէ, ամեն օրէնքին
11 եղաւ պարտական։ Որովհետև
այն Շնութիւն մի անիր ասողը
ասեց էլ, Մի սպանիր, իսկ եթէ
շնութիւն չ'անես բայց սպանես,
12 եղար օրինազանց։ Այնպէս խօ-
սեցէք և այնպէս արէք, որպէս
թէ ազատութեան օրէնքով էք
13 դատուելու։ Որովհետև անողորմ
դատաստան պիտի լինի ողորմու-
թիւն չ'անողի վերայ. և ողոր-
մութիւնը պարծենում է դատաս-
տանի դէմ։
14 Ի՞նչ է օգուտը, եղբարքս, ե-
թէ մէկն ասէ թէ հաւատք ունի
և գործ չ'ունենայ. մի՞թէ հա-
ւատքը կարող է ապրեցնել նո-
15 րան. Եթէ մի եղբայր կամ քոյր
մերկ լինին կամ օրուայ կերակրին
16 կարօտ. Եւ ձեզանից մէկն ասէ
նորանց. Գնացէք խաղաղու-
թեամբ, տաքացէք և կշտացէք.
և մարմնի պէտք եղածը չ'տաք
նորանց, օգուտն ի՞նչ կ'լինի։
17 Այսպէս էլ հաւատքը, եթէ
գործ չ'ունենայ, ըստ ինքեան
18 մեռած է։ Բայց մէկը կ'ասէ թէ
Դու հաւատք ունիս, և ես գործ
ունիմ. ցոյց տուր ինձ քո հա-
ւատքը *գործերից, և ես էլ ցոյց
կ'տամ քեզ իմ հաւատքն իմ
գործերիցը։ Դու հաւատում ես 19
թէ մէկ է Աստուած, լաւ ես ա-
նում. դևերն էլ են հաւատում
և սարսափում են. Բայց կամե- 20
նո՞ւմ ես գիտենալ, ով դար-
տակ մարդ, որ հաւատքն առանց
գործերի մեռած է։ Մեր հայր 21
Աբրահամը չէ՞ որ գործերով ար-
դարացաւ իր որդի Իսահակին
պատարագ տնելով սեղանի վե-
րայ։ Տեսնո՞ւմ ես որ հաւատքը 22
նորա գործերի հետ միասին գոր-
ծեց. և այն գործերովը հաւատ-
քը կատարեալ եղաւ. Եւ կա- 23
տարուեցաւ Գրքի խօսքը որ ա-
սում է. Եւ Աբրահամը հաւա-
տաց Աստուծուն և արդարու-
թիւն համարուեցաւ նորա հա-
մար. և Աստուծոյ բարեկամ կոչ-
ուեցաւ։ Արդ տեսնո՞ւմ էք որ 24
մարդ գործերով է արդարանում,
և ոչ միայն հաւատքով։ Նոյն- 25
պէս էլ Ռախաբ պոռնիկը. չէ՞ որ
գործերով արդարացաւ, երբոր
լրտեսներին իրան մօտ առաւ և
ուրիշ ճանապարհով արձակեց։
Որովհետև ինչպէս որ մարմինն 26
առանց հոգու մեռած է, այնպէս
և հաւատքն առանց գործերի մե-
ռած է։

ԳԼ. Գ

Շատ վարդապետներ մի լինիք, 1
եղբարքս. գիտենալով որ մեծ
դատաստան պիտի ընդունիք։ Ո- 2
րովհետև շատ բաներով մեղան-
չում ենք ամենս։ Եթէ մէկը
խօսքով չէ մեղանչում նա կա-
տարեալ մարդ է, որ կարող է
իր բոլոր մարմինը սանձահարել։
Տես, ձիերի բերանը սանձ ենք 3
դնում, որ նորանք հնազանդեն
մեզ, և նորանց բոլոր մարմինը
կառավարում ենք։ Ահա նաւերն 4
էլ, որ այսչափ մեծ են և սաս-
տիկ քամիներից քշվում են, մի
փոքր ղեկով կառավարվում են
որ կողմն որ ղեկավարի միտքը
կամենայ։ Այնպէս էլ լեզուն՝ մի 5
փոքր անդամ է, բայց մեծ մեծ
բաներ է խօսում. տես, մի փոքր

*Ոմանք՝ առանց գործերի

կրակը ո՞րքան բան է վառում։
6 Լեզուն էլ կրակ է՝ այդ անի-
բաւութեան աշխարհքը. այսպէս
է լեզուն դրուած մեր անդամ-
ների մէջ, որ նա բոլոր մարմինն
ապականում է և կրակով վա-
ռում է մեր գոյութեան անիւը,
և ինքը բորբոքուած է գեհենիցը։
7 Որովհետև գազանների, և թռ-
չունների, և սողունների, և ծո-
վում լինողների բոլոր բնութիւնը
նուաճուած է և նուաճվում է
8 մարդկային բնութիւնից։ Բայց
մարդկանց լեզուն ոչ ով կարող
չէ նուաճել, մի անզուսպ չար
է՝ լցուած մահաբեր թոյնով։
9 Նորանով օրհնում ենք Աստուած
և Հայրը, և նորանով անիծում
ենք մարդկանց, որ Աստուծոյ
նմանութիւնովը ստեղծուած են։
10 Միևնոյն բերանից դուրս են գա-
լիս օրհնութիւն և անէծք. պէտք
չէ, եղբարքս, որ սա այսպէս լինի։
11 Մի՞թէ մի աղբիւր նոյն ակնից
քաղցր և դառն ջուր կ'բղխէ։
Մի՞թէ կարելի է, եղբարքս, որ
թզենին ձիթապտուղ բերէ, կամ
որթը թուզ. այնպէս էլ աղի
աղբիւրը չէ կարող քաղցր ջուր
13 հանել։ Ո՞վ է ձեզանում իմաս-
տուն և խելացի, թող իր բարի
վարքովը ցոյց տայ իր գործերը
իմաստութեան հեզութիւնովը։
14 Բայց եթէ դառն նախանձ և հա-
կառակութիւն ունիք ձեր սրտե-
րումը, մի պարծենաք և սուտ մի
15 ասէք ճշմարտութեան դէմ։ Այս
իմաստութիւնը վերևից իջած չէ,
այլ երկրաւոր, շնչաւոր և դի-
16 ւական։ Որովհետև ուր որ նա-
խանձ և կռիւ կայ, այնտեղ ան-
կարգութիւն և ամեն չար բա-
17 ներ կան։ Բայց վերին իմաստու-
թիւնը նախ և առաջ սուրբ է,
և յետոյ խաղաղարար, հեզ,
հլու, ողորմութիւնով և բարի
պտուղներով լիքը, անկողմնա-
18 սէր, անկեղծ։ Եւ արդարութեան
պտուղը խաղաղութիւնով է
սերմվում նորանց համար որ խա-
ղաղութիւն են անում։

ԳԼ. Դ.

Ո՞րտեղից են պատերազմունք-
ներ և կռիւներ ձեր միջումը. չէ՞
որ այստեղից է, այսինքն ցանկու-
թիւններիցը որ պատերազմում
են ձեր անդամներումը։ Ցանկա-
նում էք և չ'ունիք. սպանում
էք և նախանձում էք և չէք կա-
րողանում հասնել. պատերազ-
մում էք՝ կռվում էք, բայց չ'ու-
նիք, որովհետև չէք խնդրում։
Խնդրում էք և չէք առնում, ո-
րովհետև չար կերպով էք խնդ-
րում, որ ձեր ցանկութիւնն-
երումը վատնէք։ Շնացողներ, չ'գի-
տէ՞ք որ աշխարհքիս սէրը թշնա-
մութիւն է Աստուծոյ դէմ. արդ
ով որ կարողանայ աշխարհքի բա-
րեկամ լինել, իր անձն Աստու-
ծոյ թշնամի կ'անէ։ Կամ թէ
կարծում էք Սուրբ Գիրքը պա-
ր՞պ տեղն է ասում, Նախան-
ձով փափաքում է հոգին որ
բնակուած է մեզանում. Բայց
աւելի շնորհք է տալիս. նորա հա-
մար ասում է. Աստուած ամ-
բարտաւաններին հակառակ է
կենում, բայց խոնարհներին շը-
նորհք է տալիս։ Արդ հնազան-
դեցէք Աստուծուն, հակառակ
կացէք սատանային, և նա կ'փախ-
չի ձեզանից։ Մօտեցէք Աստու-
ծուն, և նա կ'մօտենայ ձեզ։
Սրբեցէք ձեր ձեռքերը, ով մե-
զաւորներ, և ձեր սրտերը մաք-
րեցէք, ով երկմիտներ։ Տառա-
պեցէք և սուգ արէք և լացէք.
ձեր ծիծաղը թող սուգ դառնայ,
և ձեր ուրախութիւնը՝ տրտմու-
թիւն։ Խոնարհեցէք Տիրոջ առա-
ջին, և նա կ'բարձրացնէ ձեզ։
Իրար մի բամբասէք, եղբարք.
իր եղբօրը բամբասողը կամ իր
եղբօրը դատողը օրէնքն է բամ-
բասում և օրէնքն է դատում.
արդ՝ եթէ օրէնքը դատում ես,
էլ օրէնքի կատարող չես այլ
դատաւոր։ Մէկն է օրէնսդիրը
[և դատաւորը] որ կարող է փը-
կել և կորցնել. դու ո՞վ ես որ
ուրիշին դատում ես։
Ահա, ով դուք, որ ասում էք։

թէ Այսօր և էգուց գնանք այս-
ինչ քաղաքը, և այնտեղ մի տա-
րի լինենք և վաճառենք և շա-
14 հինք. Դուք որ չ'գիտէք էգուց-
15 վայ օրը. Ի՞նչպիսի բան է ձեր
կեանքը. որ մի շոգի է, որ մի քիչ
ժամանակ երևում է և յետոյ ա-
ներևութանում. փոխանակ որ
պէտք էր ասէիք, Եթէ Տէրը կա-
մենայ և ապրենք, այս բանը կամ
16 այն բանը կ'անենք։ Բայց հիմա
պարծենում էք ձեր ամբարտա-
ւանութիւնումը. ամեն այդպիսի
17 պարծանքը չարութիւն է։ Արդ
ով որ բարին գիտենայ և չ'անէ,
նորա համար մեղք է։

ԳԼ. Ե

1 Աղէ հիմա, ով հարուստներ,
լացէք և ողբ արէք ՅԻՐ թշուա-
ռութիւնների վերայ, որ պիտի
2 գան ձեզ վերայ։ Ձեր հարստու-
թիւնը փտել է, և ձեր հան-
դերձները ցեցի կերակուր եղան.
3 Ձեր ոսկին և արծաթը ժանգո-
տած, նորանց ժանգը վկայ կ'լինի
ձեզ դէմ, և ձեր միսերը կ'ուտէ
կրակի նման. դուք գանձեր դի-
4 զեցիք յետին օրերումը։ Ահա
այն մշակների վարձքը որ ձեր
արտերը հնձել են, և որ դուք
զրկել էք. աղաղակում է, և
հնձողների աղաղակները հասան
զօրութեանց Տիրոջ ականջը։
5 Երկրի վերայ փափուկ ապրեցիք
և զբօսացիք. ձեր սրտերը գի-
բացրիք ինչպէս մորթուելու օր-
6 ուայ համար։ Դատապարտեցիք,
սպանեցիք արդարին, նա հակա-
ռակ չէ կենում։
7 Արդ, եղբարքս, երկայնամիտ
եղէք մինչև Տիրոջ գալուստը.
ահա մշակը երկայնամիտ եղած
սպասում է երկրի պատուական
պտղին, մինչև որ առաջի և վեր-
8 ջի անձրևն առնէ։ Երկայնամիտ
եղէք դուք էլ, հաստատեցէք
ձեր սրտերը. որ Տիրոջ գալուստը
9 մօտեցել է։ Մի հառաչէք իրար
դէմ, եղբարք, որ չ'դատուիք.
ահա Դատաւորը դռան առաջին
կանգնած է։ Եղբարք, չարչա-
10 րանքի և երկայնմտութեան օրի-
նակ առէք մարգարէներին, որ
Տիրոջ անունովը խօսեցին։ Ահա
11 համբերողներին երանի ենք տա-
լիս. Յոբի համբերութիւնը լսել
էք, և Տիրոջ նորա համար արած
վախճանը տեսաք. որ Տէրը բազ-
մագութ է և ողորմած։
Եւ ամեն բանից առաջ, եղ-
12 բարք, երդում մի անէք ոչ եր-
կընքովը, ոչ երկրովը և ոչ էլ մի
ուրիշ երդումով, բայց թող լի-
նի ձեր այսն այս և ոչը ոչ. որ
դատաստանի տակ չ'ընկնիք։
Եթէ ձեզանից մէկը նեղու-
13 թիւն է քաշում, թող աղօթք
անէ. եթէ մէկն ուրախանում է,
թող սաղմոս ասէ։ Եթէ ձեզա-
14 նից մէկը հիւանդ է, թող եկե-
ղեցու երէցներին կանչէ, որ նո-
րա վերայ աղօթք անեն, նորան
իւղով օծեն Տիրոջ անունովը. Եւ
հաւատքով աղօթքը կ'փրկէ այն
հիւանդին, և Տէրը վեր կ'կացնէ
նորան. և եթէ մեղք գործած
լինի, կ'թողուի նորան։ Իրար
16 խոստովանեցէք ՅԻՐ յանցանքները,
և իրար վերայ աղօթք արէք, որ
բժշկուիք, շատ զօրաւոր է ար-
դարի աղօթքը ներգործելով։ Ե-
17 զիան մարդ էր մեզ պէս՝ կրքի
ենթակայ. և ջերմեռանդ աղօթք
արաւ որ անձրև չ'գայ, և անձրև
չ'եկաւ երկրի վերայ երեք տարի
և վեց ամիս։ Եւ դարձեալ ա-
18 ղօթք արաւ, և երկինքն անձրև
տուաւ, և երկիրն իր պտուղը
բուսեցրեց։
Եղբարք, եթէ ձեզանից մէկը
19 մոլորուի ճշմարտութեան ճանա-
պարհիցը, և մէկը դարձնէ նո-
րան, թող գիտենայ, թէ մեղա-
20 ւորին իր մոլորութեան ճանա-
պարհիցը դարձնողը, մի հոգի կը
փրկէ մահից և մեղքերի շատու-
թիւնը կ'ծածկէ։

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Պետրոս Յիսուս Քրիստոսի առաքեալ, ընտրուած օտարականներիդ որ ցրուած էք Պոնտոսի, Գաղատիայի և Կապադովկիայի և Ասիայի և Բիւթանիայի երկիր-
2 ներում. Հօր Աստուծոյ կանխադիտութեան պէս, Հոգու սրբութիւնովը, հնազանդութեան և Յիսուս Քրիստոսի արիւնին սրսկելու համար. շնորհք և խաղաղութիւն շատանայ ձեզ վերայ։
3 Օրհնեալ է Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առատ ողորմութեան համեմատ մեզ վերստին ծնեց դէպի կենդանի յոյսը, Յիսուս Քրիստոսի մեռելներից յարութիւն
4 առնելովը, Դէպի այն անեղծ և անարատ և անթառամ ժառանգութիւնը, որ երկնքումը պահ-
5 ուած է ձեզ համար. Որ Աստուծոյ զօրութեամբը պահպանվում էք հաւատքով դէպի պատրաստուած փրկութիւնը, որ յայտնուելու էր յետին ժամանակու-
6 մը։ Որ նորանով կ'ուրախանաք, թէև հիմա՝ ինչպէս որ հարկը պահանջում է՝ մի քիչ տրտմած էք կերպ կերպ փորձանքների մէջ,
7 Որ ձեր հաւատքի փորձառութիւնն աւելի պատուական գտնուի քան կորստեան ոսկին, որ կրակով է փորձվում, գովութեան պատիւի և փառքի համար Յիսուս Քրիստոսի յայտնու-
8 թիւնումը. Որին չ'տեսած սիրում էք. որ նորան հաւատացիք թէեւ հիմա չէք տեսնում, և ուրախ էք անպատմելի և փառաւոր խնդութիւնով, Ձեր հաւատքի վախ- 9
ճանն ընդունելով, այսինքն հոգիների փրկութիւնը։ Որ այն փրկու- 10
թեան համար որոնեցին և քննեցին մարգարէները, որ մարգարէանում էին այն շնորհքի համար որ լինելու էր ձեզանում, Քննե- 11
լով թէ որ՝ և ինչպիսի ժամանակի համար էր գուշակում Քրիստոսի Հոգին որ նորանցում էր, առաջուց վկայելով Քրիստոսի չարչարանքները և նորանից յետոյ լինելու փառքը։ Որոնց յայտնուե- 12
ցաւ, որ ոչ թէ իրանց անձերին, այլ մեզ էին մատակարարում այն բաները, որ հիմա պատմուեցան ձեզ նորանց ձեռովը, որ աւետարանեցին ձեզ Սուրբ Հոգովը որ երկնքիցն ուղարկուեցաւ. որի մէջ հրեշտակները ցանկանում են տեսնելով թափանցել։
Նորա համար ձեր մտքի մէջքը 13
գօտեպնդած, և զարթնացած, կատարելապէս յուսացէք այն շնորհքին որ հասնում է ձեզ Յիսուս Քրիստոսի յայտնութիւնումը, Հնազանդ որդկանց պէս, 14
չ'նմանելով այն ձեր տգիտութեան ժամանակի առաջի ցանկութիւններին։ Այլ ձեզ կանչող 15
Սուրբին պէս, դուք էլ սուրբ եղէք ձեր բոլոր վարքերումը. Որով- 16
հետև գրուած է, Սուրբ եղէք, որ ես սուրբ եմ։ Եւ եթէ Հայր 17
էք կանչում նորան, որ առանց աչառութեան դատաստան է անում ամեն մէկի գործին պէս ապա ձեր պանդխտութեան ժամանակը վախով վարուեցէք. Գի- 18

տենալով որ ոչ թէ ապականացու արծաթով կամ ոսկով փրկուեցաք ձեր հայրենաւանդ
19 ունայն վարմունքիցը. Այլ Քրիստոսի պատուական արիւնովը, ինչպէս մի անբիծ և անարատ
20 գառի։ Որ առաջուց ճանաչուած էր աշխարհքի սկզբիցն առաջ, բայց ժամանակների վերջումն ե-
21 րևեցաւ ձեզ համար, Ձեզ՝ նորանով այն Աստուծուն հաւատացողներիդ, որ նորան մեռելներից յարուցրեց, և փառքը նորան տուաւ, որ ձեր հաւատքը և յոյսն Աստուծոյ վերայ լինի։
22 Սուրբ Հոգուն միջոցով ձեր անձերը սրբելով ճշմարտութեան հնազանդութեամբ, անկեղծ եղբայրսիրութեան համար, մաքուր սրտով իրար սերտ սիրեցէք.
23 Վերստին ծնուած լինելով ոչ թէ ապականութեան սերմից այլ անապական սերմից. Աստուծոյ կենդանի և յաւիտենական խօս-
24 քովը։ Որովհետև ամեն մարմին խոտի պէս է, և մարդի ամեն փառքը խոտի ծաղկի պէս. խոտը չորացաւ և նորա ծաղիկը թափ-
25 ուեցաւ։ Իսկ Տիրոջ խօսքը մնում է յաւիտեան. և սա այն խօսքն է, որ ձեզ աւետարանուեցաւ։

ԳԼ. Բ

1 Արդ՝ դէն գցելով ամեն չարութիւնը և ամեն խարէութիւնը, և կեղծաւորութիւնները, և նախանձը, և ամեն չարախօսութիւ-
2 նը, Նորածին երեխաների պէս ցանկացէք այն բանաւոր անխարդախ կաթին որ նորանով աճէք
3 [դէպի փրկութիւնը]. Եթէ ճաշակել էք որ Տէրը քաղցր է։
4 Որին մօտեցել էք՝ այն կենդանի Վէմին, որ թէև մարդկանցից անարգուած, բայց Աստուծոյ մօտ ընտրուած և պատուական
5 է։ Դուք էլ կենդանի քարերի պէս շինուեցէք հոգևոր տաճար, սուրբ քահանայութիւն, որ հոգևոր պատարագներ մատուցանէք Աստուծոյ ընդունելի՝ Յիսուս
6 Քրիստոսի ձեռովը։ Որովհետև գրքումն էլ կայ, Բէ Ահա Սիօնումն անկիւնի գլուխ՝ ընտիր պատուական քար եմ դնում, և նորան հաւատացողը չի ամաչիլ։
Արդ՝ ձեզ հաւատացեալներիդ 7
պատուականութիւնն է. բայց անհաւատներին այն քարը որ շինողներն անարգեցին, նա անկիւնի գլուխ եղաւ. Եւ գլորման 8
քար, և գայթակղելու վէմ որ գայթակղում են խօսքին չ'հաւատալով. որ նորա համար էլ գրուած են։ Բայց դուք ընտիր 9
ազգ էք, թագաւորական քահանայութիւն, սուրբ ազգ, սեփհական ժողովուրդ, որ քարոզէք նորա առաքինութիւնները, որ ձեզ խաւարիցը կանչեց իր զարմանալի լոյսի մէջ. Որ դուք ժամանակով ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստուծոյ ժողովուրդ էք. որ ողորմուած չէիք, բայց հիմա ողորմուածներ։
Սիրելիներ, աղաչում եմ՝ ձեզ 11
ինչպէս պանդուխտներ և օտարականներ, հեռու կացէք մարմնաւոր ցանկութիւններիցը, որ կռվում են հոգու դէմ։ Ձեր 12
վարքը հեթանոսների մէջ բարի պահեցէք, որ ինչ բանով որ ձեզ չարագործների պէս բամբասում են, ձեր բարի գործերը տեսնելով փառաւորեն Աստուծուն այցելութեան օրումը։
Արդ հնազանդեցէք ամեն մարդ- 13
կային կարգի՝ Տիրոջ համար. Թէ թագաւորի ինչպէս թէ մի վեր-
նագոյնի. Թէ կուսակալների ինչ- 14
պէս նորանից ուղարկուածների՝ չարագործները պատժելու և բարեգործները գովելու համար։ Որ- 15
ովհետև Աստուծոյ կամքն այսպէս է, որ բարի գործերով պապանձեցնէք անխելք մարդկանց տգիտութիւնը։ Ինչպէս ազատ- 16
ներ, և ոչ թէ ազատութիւնն ինչպէս չարութեան ծածկոց ունեցողներ. այլ ինչպէս Աստուծոյ ծառաներ։ Ամենին պատ- 17
ուեցէք. եղբայրութիւնը սիրեցէք. Աստուածանից վախեցէք. թագաւորին պատուեցէք։
Ծառաները հնազանդ լինին տէ- 18

բերին ամեն վախով, ոչ միայն
բարիներին և հեզահոգիներին,
19 բայց ժանտաբարոներին էլ։ Ո-
րովհետև սա շնորհք է եթէ
մէկն դէպի Աստուած ունեցած
խղճմտանքովը նեղութիւնների
20 համբերէ անիրաւ տեղը։ Վասն-
զի ինչ գովասանք է, եթէ մե-
ղանչէք և նորա համար ծեծուիք,
ու համբերէք. այլ եթէ բարիք
գործէք և նորա համար չարչար-
ուիք ու համբերէք, դա է շնորհք
21 Աստուածանից։ Որովհետև դուք
հէնց այդ բանի մէջ կանչուեցաք
որ Քրիստոս էլ չարչարուեցաւ
և ձեզ էլ օրինակ թողեց որ նո-
22 րա հետքերին հետևիք. Որ մեղք
չ՚գործեց, և նենգութիւն չ՚գըտ-
23 նուեցաւ նորա բերանումը. Որ
նախատուելիս՝ փոխարէնը չէր
նախատում. չարչարուելիս՝ չէր
սպառնում, բայց դատաստանը
յանձնում էր արդար դատաւո-
24 րին. Որ ինքն մեր մեղքերն իր
մարմնումը խաչափայտի վերայ
բարձրացրեց. որ մեղքերիցը հե-
ռանալով արդարութեան հա-
մար ապրենք, որ նորա խոցերովը
25 բժշկուեցաք։ Որովհետև մոլոր-
ուած ոչխարների պէս էիք. բայց
հիմա դարձաք դէպի ձեր հոգի-
ների Հովիւը և Տեսուչը։

ԳԼ. Գ

1 Նոյնպէս էլ, կանայք, հնազանդ
եղէք ձեր մարդկանցը, որ եթէ
նորանցից ոմանք էլ անհնազանդ
լինեն խօսքին, կանանց վարքովը
2 առանց խօսքի շահուին, Տես-
նելով ձեր երկիւղածութեամբ
3 պարկեշտ վարքը։ Որ ձեր զար-
դարանքը չ՚լինի դրսևանց մազերի
հիւսելը, և ոսկեղէնների շարելը
կամ շքեղ հանդերձներ հագ-
4 նելը. Այլ սրտի ծածուկ մարդը
հեզ և հանդարտ հոգու անեղ-
ծութեամբը. որ դա Աստուծոյ
5 առաջին շատ թանգագին է։ Ո-
րովհետև այսպէս էլ մի ժամա-
նակով այն սուրբ կանայքը, որ
իրանց յոյսն Աստուծոյ վերայ
էին դրել, զարդարում էին ի-
րանց անձերն իրանց մարդկանցը
հնազանդելով։ Ինչպէս Սառան 6
հնազանդ էր Աբրահամին, նորան
տէր կոչելով, որի որդիներ էք
եղել դուք, որ բարեգործ լինէք
և ոչ մի երկիւղից չ՚վախենաք։
Նմանապէս, մարդիկ, իմաստու- 7
թիւնով բնակուեցէք նորանց
հետ. ինչպէս տկար անօթի՝ կա-
նանց պատիւ տալով, իբրև կեան-
քի շնորհքի ժառանգակիցներ. որ
ձեր աղօթքը չ՚խափանուի։
Եւ վերջապէս ամենդ համա- 8
միտ, կարեկից, եղբայրասէր, բա-
րեսիրտ, քաղցրաբարոյ եղէք։
Չարի փոխարէն չար չ՚հատուցա- 9
նէք, կամ բամբասանքի փոխա-
րէն բամբասանք. այլ ընդ հա-
կառակն օրհնեցէք, գիտենալով
որ իսկ սորա մէջ կանչուեցաք,
որ օրհնութիւնը ժառանգէք։ Ո- 10
րովհետև ով որ կամենում է
կեանք սիրել և լաւ օրեր տես-
նել, թող իր լեզուն չարութիւ-
նից լուռ պահէ, և իր շրթունք-
ները՝ որ նենգութիւն չ՚խօսեն.
Չարիցը ետ քաշուի և բարի անէ, 11
խաղաղութիւն որոնէ և նորան
հետևէ։ Որովհետև Տիրոջ աչ- 12
քերն արդարների վերայ են, և
նորա ականջները դէպի նորանց
աղօթքը, Տիրոջ երեսը չարա-
գործների վերայ է։ Եւ ով է 13
նա որ չարչարէ ձեզ, եթէ դուք
բարիին հետևող լինիք։ Բայց 14
թէև չարչարուիք էլ արդարու-
թեան համար, երանելի էք. բայց
նորանց երկիւղիցը մի վախենաք
և մի շփոթուիք։ Այլ Տէր Ա- 15
ստուծուն ձեր սրտի մէջ սուրբ
պահեցէք. և միշտ պատրաստ ե-
ղէք հեղութեամբ և երկիւղա-
ծութեամբ պատասխան տալու
ամենին, որ ձեր մէջ եղած յոյսի
համար պատճառ հարցնէ։ Եւ 16
բարի խղճմտանք ունենաք, որ
ինչ բանի համար որ չարախօ-
սում են ձեզանից ինչպէս չարա-
գործներից, ամօթով մնան նո-
րանք որ Քրիստոսում ձեր բարի
վարքը բամբասում են։ Որովհե- 17
տև աւելի լաւ է, եթէ Աստու-
ծոյ կամքը սա կամենում է, բարի

գործելով չարչարուիլ, քան թէ
18 չար գործելով։ Որովհետև Քրիս-
տոսն էլ մէկ անգամ մեղքերի
համար չարչարուեցաւ, այն Ա-
րդարն անարդարների վերայ, որ
մեզ մօտեցնէ Աստուծուն. որ
թէև մեռաւ մարմնով, բայց
19 կենդանի եղաւ հոգով։ Որով
գնաց բանտումը եղող հոգինե-
20 րին էլ քարոզեց։ Որոնք մի ժա-
մանակ ապստամբ էին, երբոր
Աստուծոյ երկայնմտութիւնը
համբերում էր նորանց Նոյի օրե-
րումը տապանը պատրաստուե-
լիս, որի մէջ քիչ այսինքն ութ
21 հոգի ջրիցը պրծան. Որի օրինակն
այսինքն մկրտութիւնը մեզ էլ
հիմա ապրեցնում է, ոչ թէ
մարմնի աղտը դէն դցելով, այլ
բարի խղճմտանքի վկայութիւնը
առ Աստուած, Յիսուս Քրիստոսի
22 յարութիւնովը։ Որ գնացել է
երկինքը, և Աստուծոյ աջ կողմն
է. հրեշտակներն և իշխանու-
թիւններն և զօրութիւններն
հնազանդելով նորան։

ԳԼ. Դ

1 Արդ Քրիստոս որ մարմնով մեզ
համար չարչարուեցաւ, դուք
էլ նոյն մտքովը զինուորուեցէք
որ մարմնով չարչարուողը մեղ-
2 քից զադարեց։ Որ այլ ևս ոչ
թէ մարդկանց ցանկութիւնների
պէս, այլ Աստուծոյ կամքի պէս
ապրիք մարմնում մնացած ժա-
3 մանակը։ Որովհետև բաւական է
մեզ որ մեր կեանքի անցած ժա-
մանակը հեթանոսների կամքը
կատարեցինք, որ վարվում էինք
գիճութիւններով, ցանկութիւն-
ներով, գինեմոլութիւններով, ա-
նառակութիւններով, արբեցու-
թիւններով, կամ անօրէն կռա-
4 պաշտութիւններով. Որ դորա
վերայ զարմանում են, որ դուք
նորանց հետ չէք վազում նոյն
անկարգ զեղխութեան մէջ, և
5 հայհոյում են, Որ նորանք պիտի
հաշիւ տան նորան, որ պատրաստ
է դատաստան անելու կենդանի-
6 ներին և մեռելներին։ Որովհետև
իսկ սորա համար մեռելներին էլ
աւետարանուեցաւ, որ մարդի
կողմանէ մարմնով դատուին,
բայց կենդանի լինեն Աստուծոյ
կողմանէ հոգով։
Եւ ամեն բանի վերջը մօտեցել 7
է, ուրեմն պարկեշտ կացէք և
արթուն եղէք աղօթքներում։
Բայց ամենից առաջ սէրը սերտ 8
ունեցէք իրար հետ, որ սէրը ծած-
կում է մեղքերի շատութիւնը։
Հիւրասէր եղէք իրար հետ ա- 9
ռանց տրտնջանքի։ Ամեն մէկդ՝ 10
ինչպէս որ շնորհք է ընդունել՝
այն իրար մատակարարեցէք. ինչ-
պէս Աստուծոյ կերպ կերպ շնոր-
հաց լաւ տնտեսներ։ Եթէ մէկը 11
խօսում է թող ինչպէս Աստու-
ծոյ հրամաններ խօսի. եթէ մէկը
մատակարարում է թող լինի
ինչպէս այն զօրութիւնից, որ
Աստուած է շնորհում. որ ամեն
բանի մէջ Աստուած փառաւոր-
ուի Յիսուս Քրիստոսի ձեռովը.
որին լինի փառք և զօրութիւն
յաւիտեանս յաւիտենից. Ամէն։
Սիրելիներ, օտար բան մի հա- 12
մարէք այն բորբոքուած նեղու-
թիւնը որ ձեզ փորձելու համար
լինում է, իբր թէ մի օտար բան
է պատահում ձեզ։ Այլ ուրախ 13
եղէք իբրև թէ Քրիստոսի չար-
չարանքին մասնակից եղածներ,
որ նորա փառքի յայտնութեան
ժամանակումն էլ ցնծալով ու-
րախանաք։ Եթէ նախատուիք 14
Քրիստոսի անունի համար, երա-
նելի էք. որովհետև փառքի և
Աստուծոյ Հոգին հանգչում է
ձեզ վերայ, նորանցից նա հայ-
հոյվում է, բայց ձեզանից փա-
ռաւորվում։ Ձեզանից մէկը չը 15
չարչարուի ինչպէս մարդասպան,
կամ գող, կամ չարագործ, կամ
ինչպէս ուրիշի բանին խառնուող.
Բայց եթէ ինչպէս Քրիստոնեայ 16
չարչարուի, թող չ՚ամաչէ, այլ
փառք տայ Աստուծուն այս մա-
սին։ Որովհետև ժամանակն է որ 17
դատաստանն սկսէ Աստուծոյ տա-
նիցը. բայց եթէ առաջ մեզա-
նից, ապա ինչ լինի նորանց վեր-
ջը որ Աստուծոյ աւետարանին

18 անհնազանդ են։ Եւ եթէ ար-
դարն հազիւ է ապրում, ապա
ամբարիշտը և մեղաւորը ո՞րտեղ
19 կ'երևայ։ Սորա համար Աստու-
ծոյ կամքի պէս չարչարուողներն
էլ թող ինչպէս հաւատարիմ
Ստեղծողին յանձնեն իրանց հո-
գիները բարեգործութիւնով։

ԳԼ. Ե

1 Ձեր մէջի երէցներին աղաչում
եմ երէցընկերս և Քրիստոսի չար-
չարանքների վկայս, և այն յայտ-
նուելու էլ փառքի մասնակիցս,
2 Արածեցրէք Աստուծոյ հօտը որ
ձեզ մօտ է, վերակացու լինելով
ոչ թէ ստիպուած, այլ յօժար
կամքով, ոչ թէ պիղծ շահասի-
րութիւնով՝ այլ յօժարութիւ-
3 նով. Ոչ թէ ինչպէս վիճակների
վերայ տիրապետելով, այլ հօ-
4 տին օրինակներ լինելով։ Եւ երբ-
որ Հովուապետն կ'երևի, փառքի
անթառամ պսակը կ'ընդունէք։
5 Այսպէս էլ դուք, երիտա-
տարդներ, հնազանդեցէք ծերե-
րին, ամենդ իրար հնազանդելով
խոնարհութիւնը հագէք. որ
Աստուած ամբարտաւաններին
հակառակ է կենում, բայց խո-
6 նարհներին շնորհք է տալիս։ Խո-
նարհեցէք Աստուծոյ հզօր ձեռի
տակ, որ ձեզ բարձրացնէ ժա-
մանակով։ Ձեր բոլոր հոգսը նո-
րա վերայ գցեցէք, որովհետև նա
հոգս է անում ձեզ համար։
Արթուն եղէք, հսկում արէք. 8
որովհետև ձեր ոսոխ թշնամին՝
ստատանան՝ գոռոզ առիւծի պէս
մտն է գալիս և որոնում է թէ
որին կուլ տայ։ Որին հակառակ 9
կացէք հաւատքով հաստատ-
ուած, գիտենալով որ ձեր եղ-
բայրներն էլ որ աշխարհքիս մէջ
են նոյն չարչարանքներն են քա-
շում։
Եւ ամեն շնորհքի Աստուածը, 10
որ մեզ կանչեց իր յաւիտենա-
կան փառքի մէջ Քրիստոս Յի-
սուսով, ձեզ որ մի քիչ չարչար-
վում էք, կատարեալ անէ, հաս-
տատէ, զօրացնէ, հիմնէ. Նորան 11
լինի փառք և իշխանութիւն յա-
ւիտեանս յաւիտենից. Ամէն։
Սիղուանոս հաւատարիմ եղբօր 12
ձեռովն, ինչպէս որ կարծում եմ,
կարճառօտ գրեցի, որ յորդորեմ
և այս բանի համար վկայեմ, թէ
սա է Աստուծոյ ճշմարիտ շնորհ-
քը, որի մէջ դուք կանգնած էք։
Բարև է տալիս ձեզ ձեզ հետ 13
ընտրուած եկեղեցին որ Բաբիլո-
նումն է. և իմ որդի Մարկոսը։
Իրար բարև տուէք սէրի համ- 14
բոյրով. խաղաղութիւն լինի ձեզ
ամենիդ որ Քրիստոս Յիսուսումն
էք։ Ամէն։

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Շմաւոն Պետրոս՝ Յիսուս Քրիս-
տոսի ծառայ և առաքեալ, Չէզ՝
որ մեզ հետ նոյն պատուական
հաւատքին հասաք մեր Աստու-
ծոյ և Փրկիչ Յիսուս Քրիստոսի
2 արդարութիւնովը. Շնորհք և խա-
ղաղութիւն շատանայ ձեզ վե-
րայ Աստուծոյ և մեր Տէր Յի-
սուսի գիտութիւնովը։
3 Ինչպէս որ նորա աստուածա-
յին զօրութիւնը շնորհեց մեզ այն
ամենը որ կեանքի և աստուա-
ծապաշտութեան համար պէտք է
նորա գիտութիւնովը, որ մեզ
կանչեց փառքով և առաքինու-
4 թիւնով. Որոնցով ամենամեծ
և պատուական խոստմունքներ են
տրուած մեզ. որ նորանցով հա-
զորդակից լինիք աստուածային
բնութեանը՝ աշխարհքի մէջ ցան-
կութիւնից եղած ապականու-
5 թիւնից հեռու փախչելով։ Եւ
սոյն այս բանի համար ամեն ջանք
անելով ձեր *հաւատքովը ներ-
կայացրէք առաքինութիւնը, և
առաքինութիւնովը գիտութիւ-
6 նը, Եւ գիտութիւնովը ժուժ-
կալութիւնը, և ժուժկալութիւ-
նովը համբերութիւնը, և համ-
բերութիւնովն աստուածպաշ-
7 տութիւնը, Եւ աստուածպաշ-
տութիւնովն եղբայրսիրութիւ-
նը, և եղբայրսիրութիւնովը սէ-
8 րը։ Որովհետև այս բաները ձե-
զանում մնալով և աճելով դա-
տարկ և անպտուղ չեն անիլ ձեզ
մեր Տէր Յիսուս Քրիստոսի գի-
տութիւնումը։ Բայց նա որ այս 9
բաներն իրան մօտ չ'ունի, կոյր է
և կարճատես, մոռացած լինելով
իր առաջին մեղքերից սրբուիլը։
Սորա համար, եղբարք, աւելի 10
ջանք արէք որ ձեր կոչումը և
ընտրութիւնը հաստատ անէք.
որովհետև սորանք անելով երբէք
յանցանքի մէջ չէք ընկնիլ։ Ո- 11
րովհետև այսպէս առատութիւ-
նով կ'տրուի ձեզ մտնել մեր
Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի
յաւիտենական արքայութիւնը։
Ուստի ես զանցառու չեմ լի- 12
նիլ ձեզ յիշեցնելու սորանց հա-
մար, թէ և գիտէք և հաստատ-
ուած էք այս ներկայ ճշմարտու-
թիւնումը։ Եւ իրաւունք եմ հա- 13
մարում, որ քանի որ այս վրանի
մէջ եմ զարթնեցնեմ ձեզ յի-
շեցնելով։ Գիտեմ որ շուտով 14
պիտի ինձանից հանեմ իմ այս
վրանը, ինչպէս մեր Տէր Յիսուս
Քրիստոսը յայտնեց ինձ։ Բայց 15
ջանք էլ կ'անեմ որ մշտ կա-
րողանաք իմ աշխարհքից դուրս
գալուց յետոյ այս բաները յի-
շել։ Որովհետև մենք ոչ թէ 16
վարպետութեամբ հնարուած ա-
ռասպելների հետևելով ցոյց
տուինք ձեզ մեր Տէր Յիսուս
Քրիստոսի զօրութիւնը և գա-
լուստը. այլ ականատես լինելով
նորա մեծափառութեանը։ Որով- 17
հետև նա Հայր Աստուածանից
պատիւ և փառք առաւ, երբոր
այն մեծվայելչութեան փառքիցն
այնպիսի ձայն եկաւ նորան Թէ

*Կամ՝ հաւատքի վերայ աւելա-
ցրէք առաքինութիւնը, և առա-
քինութեան վերայ գիտութիւ-
նը, ևլն։

Դա է իմ սիրելի Որդին որին ես
18 հաւանել եմ։ Եւ այս ձայնը մենք
լսեցինք երկնքիցն եկած, երբոր
նորա հետ այն սուրբ սարումն
19 էինք։ Եւ մարգարէական աւելի
հաստատ խօսքն ունինք, որ եթէ
նորան մտիկ անէք, լաւ կ'անէք,
ինչպէս մի ճրագի որ լոյս է տա-
լիս մութ տեղը, մինչև որ ցերեկը
լուսանայ և լուսաբերը ծագի
20 ձեր սրտերումը։ Բայց առաջ այս
գիտացէք, որ Գրքերի ամեն մար-
գարէութիւն իր յատուկ մեկ-
21 նութիւնը չ'ունի։ Որովհետև եր-
բէք մի մարգարէութիւն չ'տրր-
ուեցաւ մարդկանց կամքի պէս,
բայց Սուրբ Հոգուցը շարժուած
խօսեցան Աստուծոյ մարդիկը։

ԳԼ. Բ

1 Եւ սուտ մարգարէներ էլ կային
այն ժողովրդի մէջ, ինչպէս ձեր
մէջ էլ պիտի սուտ վարդապետ-
ներ լինեն. որ ներս կ'մտցնեն
կորստական հերձուածողութիւն-
ներ. և ուրանալով այն Տիրոջը
որ իրանց գնեց, իրանց վերայ
2 շուտահաս կորուստ կ'բերեն։ Եւ
շատ մարդիկ կ'հետևեն նորանց
կորստեանը. որոնց պատճառով
ճշմարտութեան ճանապարհը կը
3 հայհոյուի։ Եւ ագահութիւ-
նով իրանց մտքից հնարած խօս-
քերով ձեզ վաճառաշահու-
թեան կ'գործածեն, որոնց դա-
տաստանը վաղուց պատրաստուած
պարապ չէ, և նորանց կորուստը
չէ ննջում։
4 Որովհետև եթէ Աստուած այն
հրեշտակներին, որ մեղանչեցին,
չ'խնայեց, այլ խաւարի կապան-
քովը տարտարոսը գցած դատաս-
5 տանի համար պահել տուաւ. Եւ
առաջին աշխարհքին էլ չ'խնա-
յեց, այլ Նոյին, որ ութերորդն
էր, այն արդարութեան քարոզ-
չին՝ պահեց երբոր ամբարիշտնե-
րի աշխարհքի վերայ ջրհեղեղը
6 ածեց. Եւ Սոդոմացիների և Գո-
մորացիների քաղաքները մոխիր
դարձնելով կործանմամբ դատա-
պարտեց, յետոյ եկող ամբա-
րիշտներին օրինակ՝ դնելով. Եւ 7
փրկեց արդար Ղովտին որ անօ-
րէնների անառակ վարմունքնե-
րովը ձանձրացել էր։ Որովհետև 8
այն արդարը՝ նորանց մէջ բնակ-
ուելով՝ տեսնելովը և լսելովը, օրէ-
ցօր իր արդար հոգին տանջվում
էր նորանց անօրէն գործերովը.
Տէրը գիտէ աստուածապաշտնե- 9
րին փրկել փորձանքից, և անի-
րաւներին պահել դատաստանի
օրուայ համար որ տանջուին։
Մանաւանդ նորանց որ պղծա- 10
լից ցանկութիւնով մարմնի ետևից
են գնում. և տէրութիւնը անար-
գում, յանդուգներ, ինքնահա-
ւաններ, որ չեն վախենում փառ-
քը հայհոյելով։ Մինչդեռ հրեշ- 11
տակներն, որ զօրութիւնով և
կարողութիւնով աւելի մեծ են,
հայհոյանքի դատաստանը չեն
բերում նորանց վերայ Տիրոջ ա-
ռաջին։ Իսկ սորանք ինչպէս ան- 12
բան անասուններ, որ ի բնէ ծըն-
ուած են որսի և ապականութեան
համար, հայհոյում են այն բա-
ները որ չ'գիտեն, իրանց ապա-
կանութիւնովը կ'ապականուին։
Անիրաւութեան վարձքն ստանա- 13
լով, որ ցերեկուայ փափկութիւ-
նը զուարճութիւն են համարում,
աղտ են և կեղտ, և իրանց խա-
բեբայութիւններովը զուարճա-
նում են, ձեզ հետ միասին ու-
տել խմելիս։ Աչքեր ունին պոռ- 14
նրկութիւնով լիքը, որ մեղքիցը
չեն դադարում. խաբում են ան-
հաստատ անձերին, որ ագահու-
թիւնով բռնուած սրտեր ունին,
անէծքի որդիք։ Որ շիտակ ճա- 15
նապարհը թողած մոլորուեցան,
Բէովրեան Բաղաամի ճանապար-
հին հետևելով, որ անիրաւու-
թեան վարձքը սիրեց. Որ իր անօ- 16
րէնութեան յանդիմանութիւնն
ստացաւ. անխօս էշը մարդի ձայ-
նով խօսելով՝ արգիլեց մարգարէի
յիմարութիւնը։ Սորանք անջուր 17
աղբիւրներ են, մրրկից քշուած
ամպեր, որոնց համար խաւարի
մթութիւնը պահուած է յա-
ւիտեան։ Որովհետև ունայնու- 18
թեան հպարտ բաներ խօսելով՝

գիճութիւններով խաբում են
մարմնի ցանկութիւններով նո-
րանց, որ ճշմարտապէս փախել
են մոլորութեան մէջ վարուող-
19 ներից։ Նորանց ազատութիւն են
խոստանում, և իրանք ապակա-
նութեան ծառաներ են. որով-
հետև ինչ բանով որ մէկը յաղ-
20 թուի, նորան էլ ծառան է։ Ո-
րովհետև եթէ աշխարհքի պրղ-
ծութիւններիցը մեր Տէր և Փրկիչ
Յիսուս Քրիստոսի գիտութիւնո-
վը փախչողները կրկին նորանում
շաղախուած յաղթուին, նորանց
վերջը չար եղաւ քան թէ առա-
21 ջինը։ Որովհետև լաւ էր նորանց
որ չ'ճանաչէին արդարութեան
ճանապարհը, քան թէ ճանաչե-
ցին և յետ քաշուեցան այն
սուրբ պատուիրանքիցը, որ ա-
22 ւանդուեցաւ նորանց։ Եւ նորանց
պատահեց այն ճշմարիտ առակի
խօսքը թէ Շունը վերադառնում
է դէպի իր փսխածը, և լուաց-
ուած խոզը՝ թաւալուելու ցեխի
մէջ։

ԳԼ. Գ

1 Սիրելիներ, սա արդէն երկրորդ
թուղթն եմ գրում ձեզ, որոն-
ցով ձեր մաքուր միտքը յիշեցը-
2 նելով զարթնեցնեմ, Որ յիշէք
սուրբ մարգարէներից առաջուց
ասուած խօսքերը և մեր՝ Տիրոջ
և Փրկչի առաքեալներիս պատ-
3 ուիրանքները։ Բայց առաջ այս
գիտացէք, որ յետին օրերումը
ծաղր անողներ կ'գան, որ իրանց
ցանկութիւնների պէս կ'վար-
4 ուին։ Եւ կ'ասեն. Ո՞ւր է նորա
գալստեան խոստումը, վասնզի
այնուհետև որ հայրերը վախ-
ճանեցան ամեն բան նոյնպէս կե-
նում մնում է աշխարհքի ստեղ-
5 ծագործութիւնիցն հետէ։ Վասն-
զի նորանք ուզում են այս բանը
մոռանալ, թէ երկինքները վա-
ղուց էին և երկիրս ջրից և ջրով
հաստատուած է Աստուծոյ խօս-
6 քովը. Նորա համար այն հին աշ-
խարհքը ջրհեղեղով ապական-
7 ուած կորաւ։ Եւ այժմեան եր-
կինքը և երկիրս նոյն խօսքովը
պահպանուած պահվում են կրա-
կի համար դատաստանի և ամ-
բարիշտ մարդկանց կորստեան օ-
րումը։ Բայց այս մէկն էլ ձեզա- 8
նից ծածուկ չ'լինի, սիրելիներ, որ
Տիրոջ մօտ մէկ օրը հազար տար-
ուայ պէս է, և հազար տարին
ինչպէս մէկ օր։ Տէրը չի ուշացնիլ 9
խոստումը, ինչպէս ոմանք ուշա-
ցնել են կարծում, բայց երկայ-
նամիտ է լինում մեզ վերայ, ո-
րովհետև չէ կամենում որ կոր-
չողներ լինեն, բայց որ ամենն ա-
պաշխարութեան հասնեն։ Բայց 10
Տիրոջ օրը (գիշերուայ) գողի պէս
կ'գայ. որ նորանում երկինքը
շառաչիւնով կ'անցնէ և տարերքը
կրակով վառուած կ'հալուին, և
երկիրը և նորանում եղած բա-
ներն էլ կ'այրուին։ Հիմա որ սո- 11
րանք ամենը հալուելու բաներ են.
ի՞նչպէս պէտք է դուք գտնուիք
սուրբ և աստուածապաշտ վար-
քում։ Սպասելով և արտորալով 12
Տիրոջ գալստեան օրին հասնել,
որ նորանում երկինքները կրակով
այրուած կ'լուծուին. և տարերքը
կրակ ընկած կ'հալուին։ Բայց նո- 13
րա խոստմունքի պէս՝ նոր երկնքի
և նոր երկրի ենք սպասում. ո-
րոնցում արդարութիւն է բնակ-
վում։
Սորա համար, սիրելիներ, սո- 14
րանց սպասելով ջանք արէք որ
անբիծ և անարատ գտնուիք նո-
րա առաջին խաղաղութեան մէջ։
Եւ մեր Տիրոջ երկայնմտութիւ- 15
նը փրկութիւն համարեցէք. ինչ-
պէս մեր սիրելի եղբայր Պօղոսն
էլ Աստուածանից իրան տրուած
իմաստութեան պէս գրեց ձեզ։
Ինչպէս ամեն թղթերումն էլ 16
խօսում է այս բաների համար.
որոնցում մի քանի դժուարիմաց
բաներ կան. որ անուսումները և
անհաստատները նորանց ծռում
են, ինչպէս միւս գրքերն էլ՝ ի-
րանց անձերի կորստեան համար։
Ուրեմն դուք, սիրելիներ, առա- 17
ջուց իմանալով զգոյշ կացէք,
որ մի գուցէ անօրէնների մոլորու-
թիւնովը յափշտակուելով ընկ-

նէք ձեր հաստատութիւնիցը։
18 Եւ աճեցէք մեր Տէր և Փրկիչ
Յիսուս Քրիստոսի շնորհքովը և
գիտութիւնովը. նորան լինի փառք
և հիմա և մինչև յաւիտենական
օրն։ Ամէն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Այն որ սկզբիցն էր, որ լսեցինք,
որ մեր աչքերովը տեսանք, որին
նայեցինք, և մեր ձեռքերը շօ-
շափեցին՝ կեանքի բանի համար.
2 (Եւ կեանքը յայտնուեցաւ, և
մենք տեսանք, և վկայում ենք,
և պատմում ենք ձեզ յաւիտե-
նական կեանքը, որ Հօր մօտ էր
3 և երևեցաւ մեզ։) Այն որ տե-
սանք և լսեցինք, պատմում ենք
ձեզ, որ դուք էլ հաղորդու-
թիւն ունենաք մեզ հետ. և մեր
հաղորդութիւնը Հօր հետ և նո-
րա Որդի Յիսուս Քրիստոսի հետ։
4 Եւ սա գրում ենք ձեզ, որ ձեր
ուրախութիւնը կատարեալ լինի։
5 Եւ սա է այն աւետիքը, որ
նորանից լսեցինք և պատմում
ենք ձեզ, թէ Աստուած լոյս է,
և ոչ մի խաւար չ՚կայ նորանում։
6 Եթէ ասենք թէ հաղորդութիւն
ունինք նորա հետ, և խաւարի
մէջ ման գանք, սուտ ենք ասում
և ճշմարտութիւնը չենք անում։
7 Բայց եթէ լոյսի մէջ ման գանք
ինչպէս նա է լոյսի մէջ, հաղոր-
դութիւն ունինք իրար հետ, և
նորա Որդի Յիսուս Քրիստոսի ար-
իւնը մեզ սրբում է ամեն մեղ-
8 քից։ Եթէ ասենք թէ մեղք չ՚ու-
նինք, մեր անձերը խաբում ենք
և ճշմարտութիւնը չ՚կայ մեզա-
նում։ Ապա թէ մեր մեղքերը 9
խոստովանենք, նա հաւատարիմ է
և արդար որ մեր մեղքերը թողէ
մեզ, և սրբէ մեզ ամեն անիրա-
ւութիւնից։ Եթէ ասենք թէ 10
մեղք չ՚գործեցինք, ստախօս ենք
անում նորան, և նորա խօսքը
մեզանում չէ։

ԳԼ. Բ

Իմ որդեակներս, սա գրում եմ 1
ձեզ որ չ՚մեղանչէք, և եթէ մէկը
մեղանչէ, բարեխօս ունինք Հօր
մօտ Յիսուս Քրիստոս արդարին։
Եւ նա քաւութիւն է մեր մեղ- 2
քերի համար. և ոչ միայն մե-
րինների բայց բոլոր աշխարհքի էլ։
Եւ սորանով գիտենք որ ճանա- 3
չեցինք նորան, եթէ նորա պատ-
ուիրանքները պահենք։ Ով որ ա- 4
սում է Թէ ճանաչեցի նորան և
նորա պատուիրանքները չէ պա-
հում, ստախօս է, և ճշմարտու-
թիւնը չ՚կայ նորանում։ Բայց ով 5
որ նորա խօսքը պահէ, իրաւի Ա-
ստուծոյ սէրը նորանում կատար-
եալ է. սորանով ճանաչում ենք
որ նորանում ենք։ Ով որ ասում 6
է թէ նորանում եմ բնակվում,
պէտք է, ինչպէս որ նա գնաց,
ինքն էլ այնպէս գնայ։
Եղբայրներ, ոչ թէ մի նոր 7
պատուիրանք եմ գրում ձեզ,

այլ հին պատուիրանքը որ սկզ-
բիցն ունէիք և հին պատուի-
րանքն այն խօսքն է որ լսեցիք
8 սկզբիցը։ Դարձեալ նոր պատ-
ուիրանք եմ գրում ձեզ, որ
ճշմարիտ է նորանում և ձեզա-
նում. որ խաւարն անցնում է, և
ճշմարիտ լոյսն արդէն երևում է։
9 Ով որ ասում է, Թէ լոյսի մէջ
է և իր եղբօրն ատում է, մինչև
10 հիմա խաւարի մէջ է։ Նա որ իր
եղբօրը սիրում է, լոյսի մէջ է
մնում, և գայթակղութիւն չը
11 կայ նորանում։ Բայց նա որ իր
եղբօրն ատում է, խաւարումն է,
և խաւարի մէջ է ման գալիս, և
չ՚գիտէ թէ ուր է գնում, որով-
հետև խաւարը կուրացրեց նորա
աչքերը։
12 Գրում եմ ձեզ, որդեակներ,
որ ձեր մեղքերը թողուած են
13 ձեզ նորա անունի համար։ Գրում
եմ ձեզ, հայրեր, որ ճանաչե-
ցիք նորան որ սկզբիցն է. գրում
եմ ձեզ, երիտասարդներ, որ
14 դուք յաղթեցիք չարին։ Գրում
եմ ձեզ, մանկունք, որ ճանա-
չեցիք Հօրը. գրեցի ձեզ, հայ-
րեր, որ ճանաչեցիք նորան որ
սկզբիցն է. գրեցի ձեզ, երիտա-
սարդներ, որ դուք զօրաւոր էք.
և Աստուծոյ խօսքը բնակվում է
ձեզանում, և դուք յաղթել էք
15 չարին։ Մի սիրէք աշխարհքը. և
ոչ էլ այն որ աշխարհքի մէջ է։
16 Եթէ մէկն աշխարհքը սիրէ, Հօր
սէրը նորանում չէ. որովհետև
ամեն ինչ որ աշխարհքումն է՝
մարմնի ցանկութիւնը, աչքերի
ցանկութիւնը և այս կեանքի ամ-
բարտաւանութիւնը, Հօրիցը չէ,
17 այլ աշխարհքիցն է։ Եւ աշ-
խարհքը անցնում է և նորա
ցանկութիւնն էլ, բայց Աստու-
ծոյ կամքն անողը մնում է յա-
ւիտեան։
18 Որդեակներ, վերջի ժամանակն
է, և ինչպէս լսեցիք թէ Նեռը
գալիս է, և այժմ շատ նեռեր
են եղել, որ սորանից իմանում
ենք թէ վերջի ժամանակն է։
19 Մեզանից դուրս գնացին, բայց
մեզանից չէին. որովհետև եթէ
մեզանից լինէին, ապա մեզ հետ
մնացած կ՚լինէին. բայց որ յայտ-
նի լինեն թէ նորանք ամենը մե-
զանից չեն. Եւ դուք օծութիւն 20
ունիք այն սուրբիցը և ամեն բան
գիտէք։ Չ՚գրեցի ձեզ իբր թէ 21
ճշմարտութիւնը չ՚գիտէք, այլ
թէ գիտէք նորան, և՝ թէ ամեն
ստութիւն այն ճշմարտութիւնի-
ցը չէ։ Ո՞վ է ստախօսը, եթէ ոչ 22
նա որ ուրանում է թէ Յիսուսը
չէ Քրիստոսը. նա Նեռն է, որ
ուրանում Հօրը և Որդուն։ Ամեն 23
ով որ Որդուն ուրանում է, Հօրն
էլ չ՚ունի. նա որ Որդուն դաւա-
նում է, Հօրն էլ ունի։ Արդ այն 24
որ դուք լսեցիք սկզբիցը, թող
բնակուէ ձեզանում. եթէ բնակ-
ուէ ձեզանում այն որ սկզբիցը
լսեցիք, դուք էլ կ՚բնակուէք
Որդու և Հօր մէջ։ Եւ սա է այն 25
խոստմունքը որ նա աւետարանեց
մեզ, այսինքն յաւիտենական
կեանքը։ Այս բաները գրեցի ձեզ՝ 26
ձեզ մոլորեցնողների մասին։ Եւ 27
այն օծութիւնը, որ դուք նորա-
նից ընդունեցիք բնակվում է ձե-
զանում. և դուք պէտք չ՚ունիք
որ մէկը սովորեցնէ ձեզ. այլ
ինչպէս այն օծութիւնը սովորե-
ցնում է ձեզ ամեն բանի հա-
մար, ճշմարիտ էլ է և սուտ չէ.
և ինչպէս նա սովորեցրեց ձեզ,
կացէք նորանում։
Եւ հիմա, որդեակներ, կացէք 28
նորանում. որ երբոր նա կ՚յայտ-
նուի, համարձակութիւն ունե-
նանք, և չ՚ամաչենք նորանից նո-
րա գալուստի ժամանակումը։ Ե- 29
թէ գիտէք որ նա արդար է, կ՚ի-
մանաք թէ ամեն ով որ արդա-
րութիւն է անում, նորանից է
ծնուած։

ԳԼ. Գ

Տեսէք թէ Հայրն ինչպիսի սէր 1
շնորհեց մեզ, որ Աստուծոյ որ-
դիք կոչուինք, սորա համար աշ-
խարհքը չէ ճանաչում մեզ, որ
նորան չ՚ճանաչեց։ Սիրելիներ, 2
հիմա Աստուծոյ որդիք ենք, և
տակաւին յայտնուած չէ թէ

ինչ պիտի լինինք. բայց գիտենք
թէ, երբոր նա կ'յայտնուի, նմա-
նը նման կ'լինինք, որովհետև
կ'տեսնենք նորան ինչպէս որ է։
3 Եւ ամեն ով որ այս յոյսն ու-
նի իրմանում, սրբում է իր անձն
4 ինչպէս որ նա սուրբ է։ Ամեն ով
որ մեղք է գործում, նա անօրէ-
նութիւն էլ է անում, և մեղքն
5 է անօրէնութիւնը։ Եւ գիտէք որ
նա յայտնուեցաւ որ մեր մեղ-
քերը վեր առնէ. և նորանում
6 մեղք չկայ։ Ամեն ով որ նորա-
նում մնում է չէ մեղանչում.
և ամեն ով որ մեղանչում է, չէ
տեսել նորան և ոչ էլ ճանա-
7 չել նորան։ Մանկունք, ոչ ոք
ձեզ չխաբէ. նա որ արդարու-
թիւն է անում, արդար է, ինչ-
8 պէս նա էլ արդար է։ Եւ նա
որ մեղք է անում, սատանայից
է. որովհետև սատանան հէնց
սկզբից մեղանչում է։ Նորա հա-
մար յայտնուեցաւ Աստուծոյ
Որդին, որ սատանայի գործերը
9 քանդէ։ Ամեն ով որ Աստուա-
ծանից է ծնուած, մեղք չէ ա-
նում. որովհետև նորա սերմը նո-
րանում մնում է, և չէ կարող
մեղանչել, որովհետև Աստուա-
10 ծանից է ծնուած։ Սորանով են
յայտնի Աստուծոյ Որդիքը և
սատանայի որդիքը։
Ամեն ով որ արդարութիւն չէ
անում, նա Աստուածանից չէ,
և ոչ էլ նա՛ որ իր եղբօրը չէ
11 սիրում։ Որովհետև սա է պատ-
ուիրանքը, որ սկզբից լսեցիք, որ
12 իրար սիրենք։ Ոչ թէ այնպէս
ինչպէս որ Կայէնն էր չարիցը և
իր եղբօրն սպանեց. և ինչու հա-
մար սպանեց նորան, որովհետև
իր գործերը չար էին և իր եղ-
13 բօրինը արդար։ Մի զարմանաք,
եղբայրքս, եթէ աշխարհքս ատէ
14 ձեզ։ Մենք գիտենք որ մահիցը
դէպ կեանք փոխուեցանք. որով-
հետև եղբայրներին սիրում ենք.
բայց ով որ չէ սիրում եղբօրը,
15 մնում է մահի մէջ։ Ամեն ով
որ իր եղբօրն ատում է, մարդասպան է. և գիտէք որ ա-
մեն մարդասպան յաւիտենական
կեանք չունի հատատուած ի-
16 րանում։ Սորանով դիտացինք
(Քրիստոսի) սէրը, որ նա իր անձը
տուաւ մեզ վերայ. և մենք պար-
տական մեր եղբայրների վերայ
դնել մեր անձերը։ Ով որ այս
17 աշխարհքի ապրանքն ունենայ, և
տեսնէ իր եղբայրը կարօտ է ի-
նէ, և իր դուռը փակէ նորանից,
ինչպէս Աստուծոյ սէրը բնակ-
18 ուած կ'լինի նորանում։ Որդեակ-
ներ, չ'սիրենք խօսքով և ոչ էլ
լեզուով, այլ գործով և ճշմար-
տութիւնով։
19 Եւ սորանով ենք ճանաչում
թէ ճշմարտութիւնից ենք, և
20 նորա առաջին ի հանդէս բերենք
մեր սրտերը. Որ եթէ մեր սիրտը
մեղադրէ մեզ, այլ Աստուած
մեր սրտիցն աւելի մեծ է և ամեն
21 բան գիտէ։ Սիրելիներ, եթէ մեր
սրտերը չ'մեղադրեն մեզ, հա-
մարձակութիւն ունինք առ Աստ-
22 ուած։ Եւ ինչ որ խնդրինք կ'ստա-
նենք նորանից. որովհետև նորա
պատուիրանքները պահում ենք,
և նորա առաջին հաճոյ եղածնե-
23 րը անում ենք։ Եւ սա է նորա
պատուիրանքը, որ հաւատանք
նորա Որդի Յիսուս Քրիստոսի ա-
նունին, և իրար սիրենք, ինչպէս
նա պատուիրանք տուաւ մեզ։
24 Եւ նա որ նորա պատուիրանք-
ները պահում է, մնում է նորա-
նում և նա նորանում. և սորա-
նից գիտենք թէ բնակվում է մե-
զանում՝ այն Հոգուցը որ տուաւ
մեզ։

ԳԼ. Դ

1 Սիրելիներ, ամեն Հոգու մի հա-
ւատաք, այլ փորձեցէք Հոգիները
թէ արդեօք Աստուածանից են.
որովհետև շատ սուտ մարգարէ-
ներ են դուրս եկել աշխարհք։
2 Սորանով ճանաչեցէք Աստուծոյ
Հոգին. ամեն Հոգի որ խոստա-
վանում է Յիսուս Քրիստոսին
մարմնով եկած, Աստուածանից
3 է։ Եւ ամեն Հոգի որ չէ խոստա-
վանում Յիսուս Քրիստոսին մարմ-
նով եկած, Աստուածանից չէ.

և նա հնեմի հոգին է, որ լսեցիք
թէ գալիս է, և հիմա արդէն
4 աշխարհումն է։ Դուք Աստուա-
ծանից էք, որդեակներ, և յաղ-
թեցիք նորանց. որովհետև աւելի
մեծ է նա որ ձեզանումէ, քան
5 թէ նա որ աշխարհքիս մէջ է։
Նորանք աշխարհքից են. նորա
համար աշխարհքից են խօսում.
և աշխարհքը լսում է նորանց։
6 Մենք Աստուածանից ենք. ով որ
Աստուծուն ճանաչում է՝ լսում
է մեզ, ով որ Աստուածանից
չէ, չէ լսում մեզ. սորանից ենք
ճանաչում ճշմարտութեան Հո-
գին և խաբէութեան Հոգին։
7 Սիրելիներ, իրար սիրենք, որ
սէրն Աստուածանից է. և ամեն
ով որ սիրում է Աստուածանից
է ծնուած, և ճանաչում է Աս-
8 տուծուն։ Նա որ չէ սիրում,
Աստուծուն չէ ճանաչել. որով-
9 հետև Աստուած սէր է։ Սորա-
նով Աստուծոյ սէրն երևեցաւ
մեզանում, որ Աստուած իր մի-
ծին Որդուն աշխարհք ուղարկեց,
որ նորանով կեանք ունենանք։
10 Սորանում է սէրը, որ ոչ թէ
մենք սիրեցինք Աստուծուն, այլ
որ նա սիրեց մեզ, և ուղարկեց
իր Որդուն քաւութիւն մեր մեղ-
11 քերի համար։ Սիրելիներ, եթէ
Աստուած այսպէս սիրեց մեզ,
ապա մենք էլ պէտք է իրար սի-
12 րենք։ Աստուծուն երբէք մէկը
չէ տեսել. եթէ իրար սիրենք
Աստուած մեզանում է բնակ-
վում, և նորա սէրը կատարեալ
13 է մեզանում։ Սորանով գիտենք,
որ մենք նորանում ենք բնակ-
ուած և նա մեզանում. որ իր
14 Հոգուցը տուաւ մեզ։ Եւ մենք
տեսանք և վկայում ենք, որ
Հայրն իր Որդուն ուղարկեց աշ-
15 խարհքի փրկիչ լինելու։ Ով որ
դաւանի թէ Յիսուս է Աստուա-
ծոյ Որդին, Աստուած նորանում
է բնակվում և նա Աստուածում
16 նում։ Եւ մենք ճանաչեցինք և
հաւատացինք այն սէրը, որ Աստ-
ուած ունի մեզ վերայ. Աստուած
սէր է, և ով որ մնում է սէրի
մէջ, Աստուծոյ մէջ է բնակ-
վում, և Աստուած նորանում։
17 Սորանում է սէրը կատարեալ
մեզ հետ, որ համարձակութիւն
ունենանք դատաստանի օրում.
որովհետև ինչպէս նա է, այնպէս
էլ մենք ենք այս աշխարհքում։
18 Վախ չ'կայ սէրի մէջ. այլ կա-
տարեալ սէրը հեռացնում է վախ-
ը. որովհետև վախը տանջանք
ունի. բայց նա որ վախենում է,
կատարեալ չէ սէրի մէջ։ Մենք
19 սիրենք նորան, որովհետև առաջ
նա սիրեց մեզ։ Եթէ մէկն ասէ թէ
20 Սիրում եմ Աստուծուն և իր եղ-
բօրն ատէ, նա ստախօս է. որով-
հետև նա որ իր տեսած եղբօրը
չէ սիրում, Աստուծուն որ չէ
տեսել՝ ինչպէս կարող է սիրել։
21 Եւ այս պատուիրանքն ունինք
նորանից, թէ նա որ Աստուծուն
սիրում է, իր եղբօրն էլ սիրէ։

ԳԼ. Ե

1 Ամեն ով որ հաւատում է թէ
Յիսուս Քրիստոսը, Աստուա-
ծանից է ծնուած և ամեն ով որ
ծնողին սիրում է, նորանից ծնուա-
ծին էլ սիրում է։ Սորանով ենք
2 ճանաչում թէ Աստուծոյ որդի-
ներին սիրում ենք, երբոր սիրում
ենք Աստուծուն, և նորա պատ-
3 ուիրանքները պահում։ Որովհե-
տև սա է Աստուծոյ սէրը որ նո-
րա պատուիրանքները պահենք.
և նորա պատուիրանքները ծանր
4 չեն։ Որովհետև ամեն ով որ Աստ-
ուածանից է ծնուած յաղթում
է աշխարհքին. և սա է յաղթու-
թիւնն, որ աշխարհքին յաղթեց,
5 մեր հաւատքը։ Եւ ո՞վ
է որ յաղթում է աշխարհքին,
եթէ ոչ նա, որ հաւատում է,
թէ Յիսուս Աստուծոյ Որդին է։
6 Սա է որ եկաւ ջրով և արիւ-
նով՝ Յիսուս Քրիստոսը. ոչ թէ
միայն ջրով, բայց ջրով և արիւ-
նով. և Հոգին է վկայողը, որով-
հետև Հոգին է ճշմարտութիւնը։
7 Որովհետև երեք են որ [երկինքում
մէ վկայում են, Հայրը և Բանը
և Սուրբ Հոգին. և սրա երեքը մի
8 են։ Եւ երեք են որ երկրումը]

վկայում են. Հոգին, և ջուրը,
և արիւնը. և այս երեքը միաբան
9 են։ Եթէ մարդկանց վկայու-
թիւնն ընդունում ենք, Աստու-
ծոյ վկայութիւնն աւելի մեծ է.
որովհետև սա է Աստուծոյ վկա-
յութիւնն, որ վկայեց իր Որդու
10 մասին։ Ով որ հաւատում է Ա-
ստուծոյ Որդուն, վկայութիւնն
ունի իր անձումը. ով որ չէ հա-
ւատում Աստուծուն, ստախօս է
արել նորան. որովհետև չ՚հա-
ւատաց այն վկայութեանն, որ
Աստուած վկայեց իր Որդու մա-
11 սին։ Եւ սա է վկայութիւնը, որ
Աստուած յաւիտենական կեանք
տուաւ մեզ. և այս կեանքը նո-
12 րա Որդու մէջ է։ Ով որ Որդուն
ունի, նա կեանքն ունի. և ով որ
Աստուծոյ Որդուն չ՚ունի, կեան-
քը չ՚ունի։
13 Այս բաները գրեցի ձեզ՝ Ա-
ստուծոյ Որդու անունին հաւա-
տացեալներիդ, որ գիտենաք թէ
14 յաւիտենական կեանք ունիք։ Եւ
սա է այն համարձակութիւնը որ
ունինք դէպի նորան, թէ ինչ որ
նորա կամքի պէս խնդրում ենք,
15 լսում է մեզ։ Եւ եթէ գիտենք
թէ լսում է մեզ, ինչ որ խնդ-
րում ենք, գիտենք որ առնում
ենք մեր խնդրուածքներն, որ
խնդրեցինք նորանից։
Եթէ մէկը տեսնէ իր եղբօրը 16
որ մեղանչել է այնպիսի մեղքով
որ դէպի մահ չէ, թող խնդրէ,
և Աստուած կեանք կ՚տայ նորան
այսինքն նորան որ մեղանչել է ոչ
թէ դէպի մահ. կայ մեղք որ
դէպի մահ է, նորա համար ես
չեմ ասում որ խնդրես։ Ամեն 17
անիրաւութիւն մեղք է. և կայ
մեղք որ դէպի մահ չէ։
Գիտենք որ ամեն ով որ Աստ- 18
ուածանից է ծնուած, մեղք չէ
գործում, բայց նա որ Աստուա-
ծանից է ծնուած, իր անձը պա-
հում է, և չարը չէ մօտենում
նորան։ Գիտենք որ Աստուածա- 19
նից ենք, և բոլոր աշխարհքը չա-
րութեան մէջ է կենում։ Եւ 20
գիտենք որ Աստուծոյ Որդին ե-
կաւ և մեզ միտք տուաւ, որ
ճշմարիտը ճանաչենք. և ճշմարի-
տումն ենք, այսինքն նորա Որդի
Յիսուս Քրիստոսումը, նա է ճշ-
մարիտ Աստուածը և յաւիտենա-
կան կեանքը։ Որդեակներ, պա- 21
հեցէք ձեր անձերը կուռքերից։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

1 Երէցը, ընտրեալ *Կիւրիային,
և նորա որդիներին, որոնց ես սի-
րում եմ ճշմարտութիւնով, (և
ոչ միայն ես, այլ այն ամենն էլ
որ ճշմարտութիւնը ճանաչել են։)
2 Այն ճշմարտութեան պատճա-
ռովը որ մեղանում մնում է, և
մեզ հետ կ՚լինի յաւիտեան։ 3
Զեզ հետ լինի շնորհք, ողորմու-
թիւն, խաղաղութիւն Աստուած
Հօրից, և Տէր Յիսուս Քրիստո-
սից՝ Հօր Որդուցը, ճշմարտու-
թիւնով և սիրով։ 4
Շատ ուրախացայ որ քո որդի-
ներից գտայ որ ճշմարտութիւ-

*Այսինքն՝ տիկինին

նով են գնում, ինչպէս որ հրա-
5 ման առանք Հօրից։ Եւ հիմա
աղաչում եմ քեզ, *Կիւրիայ,
ոչ իբր թէ մի նոր պատուիրանք
եմ գրում քեզ, այլ այն որ
սկզբից ունէինք, որ իրար սի-
6 րենք։ Եւ սա է սէրը, որ նո-
րա պատուիրանքների համեմատ
գնանք. և սա է պատուիրանքը,
որ ինչպէս լսեցիք սկզբից՝ այն-
7 պէս գնաք։ Որովհետև շատ մո-
լորեցուցիչներ դուրս եկան աշ-
խարհք որ չեն դաւանում Յի-
սուս Քրիստոսին մարմնով եկած.
նա է մոլորեցուցիչը և Նեռը։
8 Զգոյշ կացէք ձեր անձերին որ
չ՚կորցնենք այն որ վաստակեցինք.
այլ որ բոլոր վարձք առնենք։
9 Ամեն ով որ յանցանք է գոր-
ծում, և չէ կենում Քրիստոսի
վարդապետութեան մէջ, Աստ-
ուած չ՚ունի. ով որ կենում
է Քրիստոսի վարդապետութեան
մէջ, նա ունի Որդուն էլ Հօրն
էլ։ Եթէ մէկը ձեզ մօտ գայ և 10
այս վարդապետութիւնը չ՚բերէ,
մի ընդունիք նորան ձեր տունը,
և բարև մի տաք նորան։ Որով- 11
հետև ով որ բարև տուէ նորան,
մասնակից կ՚լինի նորա չար գոր-
ծերին։
Շատ բան ունէի ձեզ գրելու, 12
բայց չ՚կամեցայ թղթով և թա-
նաքով գրել. այլ յոյս ունիմ
գալ ձեզ մօտ, և բերանէ բերան
խօսել, որ մեր ուրախութիւնը
կատարեալ լինի։ Բարև են տա- 13
լիս քեզ քո ընտրեալ քրոջ որ-
դիքը։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

1 Երէցը, սիրելի Գայիոսիդ, որին
ես սիրում եմ ճշմարտութիւ-
2 նով։ Սիրելի, աղօթք եմ անում,
որ ամեն բանի մէջ յաջող և ա-
ռողջ լինես, ինչպէս քո հոգին
3 յաջող է։ Որովհետև շատ ու-
րախացայ երբոր եղբարքն եկան,
և քո ճշմարտութիւնը վկայե-
ցին, ինչպէս որ դու ճշմարտու-
4 թեան մէջ գնում ես։ Սորանից
աւելի մեծ ուրախութիւն չ՚ու-
նիմ, որ լսում եմ թէ իմ որ-
դիները ճշմարտութեան մէջ են
5 գնում։ Սիրելի, հաւատարմա-
բար ես գործում այդ ինչ որ
անում ես եղբայրներին և օտա-
րականներին. Որոնք վկայեցին քո 6
սէրի համար եկեղեցու առաջին,
որ լաւ կ՚անես եթէ նորանց Ա-
ստուծոյ արժանաւոր կերպով ճա-
նապարհ դցես։ Որովհետև նորա 7
անունի համար դուրս եկան ա-
ռանց մի բան առնելու հեթա-
նոսներից։ Արդ պէտք է մենք ը- 8
դունենք այսպիսիներին, որ գոր-
ծակից լինենք ճշմարտութեանը։
Ես գրեցի եկեղեցուն. բայց 9
Դիոտրէփէսը որ ուզում է նո-
րանց միջումը առաջինը լինել,
մեզ չէ ընդունում։ Սորա հա- 10
մար եթէ գամ նորա գործերը

*Այսինքն՝ տիկին

կ'յիշեմ որ չար խօսքերով շատախօսութիւն է անում մեզ վերայ, և սրանով էլ չ'բաւականացած՝ ա՛չ ինքն է ընդունում եղբայրներին, և նորանց էլ որ ուզում են ընդունել, արգելում
11 է և եկեղեցուց հանում։ Սիրելի, չարին նմանող մի լինիր, այլ բարիին. ով որ բարի է գործում Աստուածանից է, և ով որ չարիք է գործում Աստուածան
12 չէ տեսել։ Դեմետրիոսը վկայութիւն ունի ամենից և նոյն իսկ ճշմարտութիւնից էլ, և մենք էլ վկայում ենք. և գիտէք որ մեր վկայութիւնը ճշմարիտ է։

13 Շատ բան ունէի քեզ գրելու, բայց չեմ կամենում թանաքով
14 և գրիչով գրել քեզ։ Բայց յոյս ունիմ շուտով քեզ տեսնել, և
15 բերանէ բերան կ'խօսենք։ Խաղաղութիւն լինի քեզ հետ. բարև են տալիս քեզ սիրելիքը. բարև տուր մեր սիրելիներին անուն առնուն։

ՅՈՒԴԱ ԱՌԱՔԵԱԼԻ

ԹՈՒՂԹԸ

1 Յուդա Յիսուս Քրիստոսի ծառայ, և Յակոբոսի եղբայր. Աստուած Հօրից սրբուած, և Յիսուս Քրիստոսումն պահուած կան-
2 չուածներիդ. Ողորմութիւն և խաղաղութիւն և սէր շատանայ ձեզ վերայ։
3 Սիրելիներ, որովհետև ամէն ջանք արի որ գրեմ ձեզ մեր հասարակաց փրկութեան համար, հարկ եղաւ ինձ որ գրեմ ձեզ և յորդորեմ, որ մրցիք սրբերին միանգամ ասանդուած հաւատ-
4 քով։ Որովհետև մի քանի մարդիկ ներս սզծան, որոնք առաջուց հատատուած էին այն այս դատաստանի համար, ամբարիշտներ, որ մեր Աստուծոյ շնորհքն ա՛զատակութեան դարձնին, և ուրանում են այն միայն Իշխանին, [Աստուածն] և մեր Տէր
5 Յիսուս Քրիստոսին, յակ ես կամենում եմ յիշեցնել ձեզ, որ արդէն այս բանը գիտէք, թէ Տէրը ժողովրդին փրկեց եգիպտոսի երկրիցը. և յետոյ չ'հաւատացողներին կորցրեց։ Եւ այն
6 հրեշտակներին որ իրանց իշխանութիւնը չ'պահեցին, այլ իրանց բնակութիւնը թողցին, յաւիտենական կապանքներով խաւարի մէջ պահեց մեծ օրուայ դատաստանի համար, ինչպէս Սոդոմ և Գոմորը և նորանց շուրջի
7 քաղաքները, հէնց սրանց կերպով պոռնկելով և ուրիշ մարմնի ետևից գնալով՝ օրինակի համար մեր առաջին դրուած են, յաւիտենական կրակի դատաստանն
8 ընդունելով։ Եւ նմանապէս էլ սրանք, որ ցնորուած լինելով մարմինը պղծում են, տէրութիւնը անարգում են, և փառքը
9 հայհոյում են։ Եւ Միքայէլ հրեշտապետը, երբոր սատանայի հետ վիճելով պատասխան էր տալիս Մովսէսի մարմնին համար, չ'համարձակեց հայհոյանքի դատաստան անել, բայց ասեց

10 Տէրը քեզ յանդիմանէ։ Իսկ սրանք այն բաները, որ չեն իմանում, հայհոյում են. և ինչ որ էլ անխօս անասունի պէս բնականաբար գիտեն, նորանցում ա-
11 պականւում են։ Վա՛յ նորանց, որ կայէնի ճանապարհովը գնացին, և բաղաամի մոլորութեանովը վարձքին նուիրուեցան, և կորչի հակառակութեան պէս
12 կորան։ Սորանք ֆ›իլէ›ռիեան ժայռեր են ձեր սէրի խնջոյքներում, որ աներկիւղ միասին ուտել խմելիս, իրանց անձերն են արած հնձանում։ Անջուր ամպեր են քամիներից տատանուած, պտղակորոյս անպտուղ ծառեր, երկու անգամ մեռած արմատախիլ եղած.
13 վրովռ կատաղած ալիքներ, որ իրանց անձերի ամօթն են փրփրեցնում. մոլար աստղեր, որոնց պահուում է յաւիտեան խաւարի մութը։
14 Ենովքն էլ, որ եօթներորդն է Ադամից, սրանց համար մարգարէացաւ և ասեց. Ահա Տէրը
15 եկաւ իր բիւրաւոր սուրբերովը, Որ դատաստան անէ ամենին, և նորանց ամբարիշտներին յանդիմանէ իրանց արած բոլոր ամբարիշտ գործերի համար, և բոլոր այն խիստ խօսքերի համար, որ
16 ամբարիշտ մեղաւորները նորա դէմ խօսեցին։ Սորանք տրտնջողներ և փափաղներ են, որ իրանց անձերի ցանկութիւնների պէս են գնում. և նորանց բերանը ամբարտաւան բաներ է խօսում, երեսպաշտութիւն են անում շահի
17 համար։ Բայց դուք, սիրելիներ, յիշեցէք մեր Տէր Յիսուս Քրիստոսի առաքեալներից առաջուց ասած խօսքերը։ Որովհետև ա-
18 ռաջ էին ձեզ, թէ վերջի ժամանակներում ծաղր անող մարդիկ կ'լինին, որ իրանց ամբարիշտ ցանկութիւնների ետևից կ'գնան։
19 Սորանք են որ ջոկում հեռացնում են իրանց, չնչաւորներ որ Հոգին չ'ունին։ Բայց դուք, սի-
20 րելիներ, ձեր անձերը ձեր սուրբ հաւատքի վերայ շինեցէք Սուրբ Հոգով, աղօթք անելով։ Որ ձեր
21 անձերը Աստուծոյ սէրի մէջ պահէք, սպասելով մեր Տէր Յիսուս Քրիստոսի ողորմութեանը յաւիտենական կեանքի համար։ Եւ մի
22 քանիսին ողորմեցէք խորհուրդ անելով։ Եւ մի քանիսին վախով
23 ապրեցրէք կրակից յափշտակելով. ատելով այն պատմուճանն էլ որ մարմնից աղտոտուած է։
24 Եւ նորան որ կարող է անարատ պահել ձեզ և անկեղծ կանգնեցնել իր փառքի առաջին
25 սիրոյ ցնծութիւնով. Այն մեկ իմաստուն Աստուածն և մեր Փրկչին [մեր Տէր Յիսուս Քրիստոսով] փառք և մեծութիւն, զօրութիւն և իշխանութիւն, [բոլոր դարերից առաջ] և հիմա և ամեն յաւիտեաններում։ Ամէն։

Այս թարգմանութիւնը կատարուած է 1924 թուականին Վենետիկում Մխիթարեան միաբանութեան գրատանը մէջ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Յիսուս Քրիստոսի յայտնութիւ-
նը, որ Աստուած տուաւ իր ծա-
ռաներին ցոյց տալու, ինչ որ
շուտով պիտի լինի, և իմացրեց
իր հրեշտակի ձեռովն ուղարկե-
լով իր Յովհաննէս ծառային.
2 Որ վկայեց Աստուծոյ խօսքին և
Յիսուս Քրիստոսի վկայութեանը,
3 որ տեսաւ. Երանելի են այս մար-
գարէութեան խօսքերը կարդա-
ցողը և լսողները, և սորանում
գրուածները պահողները. որով-
հետև ժամանակը մօտեցել է։
4 Յովհաննէս, եօթը եկեղեցիներ-
ին, որ Ասիայումն էք, շնորհք
լինի ձեզ հետ և խաղաղութիւն
նորանից որ է, և որ էր, և որ
գալու է, և այն եօթը Հոգիներ-
ից, որ նորա աթոռի առաջին
5 են. Եւ Յիսուս Քրիստոս հաւա-
տարիմ վկայից, որ մեռելներից
անդրանիկը՝ և երկրի թագաւոր-
ների իշխանն է. նորան որ մեզ
սիրեց և մեր մեղքերիցն լուա-
6 ցաւ մեզ իր արիւնովն. Եւ մեզ
թագաւորներ և քահանաներ ա-
րաւ Աստուծոյ և իր Հօր հա-
մար. նորան փառք և զօրութիւն
յաւիտեանս յաւիտենից. Ամէն։
7 Ահա նա գալիս է ամպերով.
և ամեն աչք կ'տեսնէ նորան, և
նորանք որ խոցեցին նորան. և
նորա վերայ կոծ կ'անեն երկրի
8 ամեն ազգերը. Այս, Ամէն։ Ես
եմ Ալփան և Օմեղան [սկիզբը և
վերջը] ասում է Տէրը, նա որ է
և որ էր և որ գալու է, Ամենա-
կալը։

Ես՝ Յովհաննէս ձեր եղբայր և 9
հաւասար ընկեր նեղութեան և
արքայութեան և Յիսուս Քրիս-
տոսի համբերութեան, Պատմոս
ասուած կղզումն էի Աստուծոյ
խօսքի համար, և Յիսուս Քրիս-
տոսի վկայութեան համար։ Եւ 10
կիրակի օրը եղայ Հոգում. և իմ
ետևից մի մեծ ձայն լսեցի ինչ-
պէս փողի ձայն, որ ասում էր.
[Ես եմ Ալփան և Օմեղան, ա-
ռաջինը և վերջինը։ Եւ] ինչ որ 11
տեսնում ես գրիր մի գրքի մէջ,
և ուղարկիր այն եօթը եկեղեցի-
ներին որ Ասիայումն են՝ Եփեսոս,
Զմիւռնիա, և Պերգամոն, և
Թիւատիրա, և Սարդէս, և Փի-
լադելփիա և Լաւոդիկէ։ Եւ ես 12
ետ դարձայ այն ձայնը տեսնե-
լու, որ ինձ հետ խօսում էր, և
երբոր դարձայ եօթը ոսկի ճրա-
գակալ տեսայ. Եւ այն եօթը 13
ճրագակալների միջումը մէկը մար-
դի Որդու նման, պճղնաւոր պատ-
մուճան հագած, և ստինքների
մօտ ոսկի գօտի կապած։ Եւ նո- 14
րա գլուխը և մազերը սպիտակ
բուրդի և ձիւնի պէս սպիտակ
էին, և նորա աչքերը կրակի բոցի
պէս։ Եւ նորա ոտները կարմրած 15
պղնձի պէս իբրև հնոցի մէջ կրակ
եղած, և նորա ձայնը շատ ջրերի
ձայնի պէս։ Եւ իր աջ ձեռքու- 16
մը եօթն աստղեր ունէր, և նորա
բերանիցը սրած երկբերան սուր
էր դուրս գալիս, և նորա երեսն
ինչպէս արեգակը որ ճառագայ-
թում է իր զօրութեամբը։ Եւ 17
երբոր տեսայ նորան, մեռածի
պէս ընկայ նորա ոտների առաջին.

և նա իր աջ ձեռքն ինձ վերայ
դրաւ և ասեց ինձ. Մի վախե-
նար, ես եմ Առաջինը և Վեր-
18 ջինը, Եւ կենդանին. և ես մե-
ռած էի, և ահա կենդանի եմ
յաւիտեանս յաւիտենից, ամէն.
և ունիմ դժոխքի և մահի բա-
19 նալիները։ Գրիր ինչ որ տեսնում
ես, ինչ որ է, և ինչ որ նորանից
20 յետոյ լինելու է։ Այս եօթն
աստղերի խորհուրդն որ իմ աջ
ձեռքի մէջ տեսար, և այն եօթը
ոսկի ճրագակալները. այն եօթն
աստղերը եօթը եկեղեցիների
հրեշտակներն են, և այն եօթը
ճրագակալները եօթը եկեղեցի-
ներն են։

ԳԼ. Բ

1 Եփեսոսի եկեղեցու հրեշտակին
գրիր. Սա է ասում այն եօթն
աստղերն իր աջ ձեռքումն ու-
նեցողը, որ եօթը ոսկի ճրագա-
2 կալների մէջ մտն է գալիս. Գի-
տեմ քո գործերը և քո աշխա-
տութիւնը և քո համբերութիւ-
նը. և որ չարերին չես կարողա-
նում համբերել, և փորձեցիր
նորանց որ առաքեալ են ձևա-
նում, և չեն, և գտար որ սուտ
3 են։ Եւ նեղութիւններ կրեցիր և
համբերութիւն ունիս, և իմ ա-
նունի համար աշխատեցիր, և չը
4 թուլացար։ Բայց քեզ դէմ այս
ունիմ, որ քո առաջին սէրը թո-
5 ղել ես։ Արդ յիշիր, թէ որտե-
ղից վայր ընկար, և զղջա, և ա-
ռաջի գործերն արա. ապա թէ
ոչ՝ կ'դամ շուտով քեզ մօտ,
և քո ճրագակալը կ'շարժեմ
իր տեղիցը եթէ չ'ապաշխա-
6 րես։ Բայց այս բանն ունիս,
որ Նիկողայոսեանների գործերն
ատում ես, որոնք ես էլ եմ ա-
7 տում։ Ով որ ականջ ունի, թող
լսէ ինչ որ Հոգին ասում է եկե-
ղեցիներին. Ով որ յաղթում է՝
նորան կեանքի ծառիցն ուտել
կ'տամ, որ Աստուծոյ դրախտի
մէջ է։
8 Եւ Զմիւռնիայի եկեղեցու հրեշ-
տակին գրիր. Սա է ասում Ա-
ռաջինը և Վերջինը որ մեռած
էր, և կենդանացաւ։ Գիտեմ քո 9
գործերը և նեղութիւնը և աղ-
քատութիւնը. բայց դու հա-
րուստ ես. և [Հիւսիմ] նորանց հայ-
հոյանքը որ ասում են թէ իրանք
Հրէայ են և չեն, այլ սատանայի
ժողովք են։ Բնաւ մի վախենար 10
այն բաներիցը որ կրելու ես. ահա
բանսարկուն ձեզանից բանտի մէջ
է գցելու, որ փորձուիք, և նե-
ղութիւն կ'ունենաք տասն օր.
հաւատարիմ եղիր մինչև ի մահ,
և կեանքի պսակը կ'տամ քեզ։
Ով որ ականջ ունի թող լսէ ինչ 11
որ Հոգին ասում է եկեղեցիներ-
ին. Ով որ յաղթում է, երկ-
րորդ մահիցը չի վնասուիլ։
Եւ Պերգամոնի եկեղեցու հրեշ- 12
տակին գրիր. Սա է ասում սրած
երկրայրի սուրն ունեցողը։ Գի- 13
տեմ քո գործերը, և թէ՝ որ տեղ
ես բնակվում, ուր որ սատանայի
աթոռն է. և իմ անունը պա-
հում ես, և իմ հաւատքը չ'ու-
րացար այն օրերը, որ իմ Անտի-
պաս հաւատարիմ վկան սպան-
ուեցաւ ձեր մէջ. ուր որ սատա-
նան է բնակվում։ Բայց քեզ 14
դէմ մի քիչ բաներ ունիմ. որ
այդ տեղ Բաղաամի վարդապե-
տութիւնը պահողներ ունիս որ
Բաղակին սովորեցրեց, գայթակ-
ղութիւն դնել Իսրայելի որդ-
կանց առաջին, որ նորանք կուռ-
քի մատաղ ուտեն և պոռնկու-
թիւն անեն։ Այսպէս դու էլ 15
Նիկողայոսեանների վարդապե-
տութիւնը պահողներ ունիս, որ
ես ատում եմ։ Ապաշխարիր, 16
ապա թէ ոչ՝ շուտով քեզ մօտ
կ'դամ, և կ'պատերազմեմ նո-
րանց հետ իմ բերանի սրովը։ Ով 17
որ ականջ ունի թող լսէ ինչ որ
Հոգին ասում է եկեղեցիներին.
Ով որ յաղթում է այն թագ-
ցրած մանանայիցն ուտել կ'տամ
նորան. և սպիտակ խիճ կ'տամ
նորան. և այն խիճի վերայ մի նոր
անուն գրուած, որ ոչ ոք չ'գի-
տէ, բացի նա որ առնում է։
Եւ Թիւատիրայի եկեղեցու 18
հրեշտակին գրիր. Սա է ասում

Աստուծոյ Որդին, որի աչքերը
կրակի բոցի պէս են, և նորա
ոտները կարմրած պղնձի նման։
19 Գիտեմ քո գործերը, և սէրը, և
քո ծառայութիւնը, և հաւատ-
քը, և քո համբերութիւնը, և
քո գործերը, և որ վերջիններն
աւելի են քան թէ առաջինը։
20 Բայց քեզ դէմ մի քիչ բաներ
ունիմ. որ Յեզաբէլ կնկանը թոյլ
ես տալիս որ իրան մարգարէուհի
է ասում, և իմ ծառաներին ոս-
վորեցնում և մոլորեցնում է, որ
պոռնկութիւն անեն և կուռքի
21 մատաղ ուտեն։ Եւ նորան ժա-
մանակ տուի որ ապաշխարէ իր
պոռնկութիւնիցը, և նա չ'ա-
22 պաշխարեց։ Ահա ես նորան ան-
կողինի մէջ կ'գցեմ, և նորա հետ
շնացողներին էլ՝ մեծ մեծ նեղու-
թիւնների մէջ. եթէ չ'ապաշ-
23 խարեն իրանց գործերիցը։ Եւ նո-
րանց որդիքը մահով կ'սպանեմ.
և բոլոր եկեղեցիները կ'ճանաչեն
որ ես եմ երիկամունքները և
սրտերը քննողը. և կ'տամ ձեզ
ամեն մէկիդ իր գործերի համե-
24 մատ։ Իսկ ես ասում եմ ձեզ և
միւսներին որ Թիւատիրայումն
էր, որ այս վարդապետութիւնը
չ'ունիք, և որ սատանայի խորու-
թիւնները չ'ճանաչեցիք, ինչպէս
ասում են. Ձեզ վերայ ուրիշ
25 ծանրութիւն չեմ գցիլ։ Բայց
այն որ ունիք պահեցէք մինչև որ
26 ես կ'գամ։ Եւ ով որ յաղթում
է և իմ գործերը պահում մինչև
վերջը, նորան իշխանութիւն կը
27 տամ ազգերի վերայ. (Եւ նա
կ'հովուէ նորանց երկաթէ գա-
ւաղանով. բրուտի ամանի պէս
28 կ'փշրուին նորանք։) Ինչպէս ես
էլ իմ Հօրիցն ընդունեցի. և ես
կ'տամ նորան առաւօտեան աստ-
29 ղը։ Ով որ ականջ ունի թող լսէ
ինչ որ Հոգին ասում է եկեղե-
ցիներին։

ԳԼ. Գ

1 Եւ Սարդէսի եկեղեցու հրեշ-
տակին գրիր. Սա է ասում Ա-
ստուծոյ եօթը Հոգիները և եօթն
աստղերն ունեցողը. Գիտեմ քո
գործերը, որ անուն ունիս թէ
կենդանի ես, բայց մեռած ես։
Արթուն եղիր, և հաստատիր 2
մնացածներին որ մեռնելու մօտ
են. որովհետև քո գործերը կա-
տարեալ չ'գտայ Աստուծոյ առա-
ջին։ Արդ յիշիր թէ ինչպէս ըն- 3
դունեցիր և լսեցիր. և պահիր և
ապաշխարիր. ապա թէ չ'արթնա-
նաս՝ ես կ'գամ քեզ վերայ գողի
պէս. և չես իմանալ թէ որ ժա-
մում քեզ մօտ կ'գամ։ Բայց մի 4
քանի *անձինք ունիս Սարդէսի
մէջն էլ, որ իրանց հանդերձները
չ'կեղտոտեցրին. և նորանք սպի-
տակներով ման կ'դան ինձ հետ,
որովհետև արժանի են։ Ով որ 5
յաղթում է, նա սպիտակ հան-
դերձներ կ'հագնէ. և նորա ա-
նունը կեանքի գրքիցը չեմ ջնջիլ.
և կ'դաւանեմ նորա անունն իմ
Հօր առաջին և նորա հրեշտակ-
ների առաջին։ Ով որ ականջ ու- 6
նի թող լսէ ինչ որ Հոգին ա-
սում է եկեղեցիներին։

Եւ Փիլադելփիայի եկեղեցու 7
հրեշտակին գրիր. Սա է ասում
Սուրբը՝ Ճշմարիտը, որ Դաւիթի
բանալիներն ունի. որ բանում է
և ոչ ով չէ փակում, և փակում
է և ոչ ով չէ բանում։ Գիտեմ 8
քո գործերը. ահա քո առաջին
ի բացուած դուռ գրի, և նո-
րան ոչ ով կարող չէ փակել,
որովհետև քիչ զօրութիւն ու-
նիս, և իմ խօսքը պահեցիր, և
իմ անունը չ'ուրացար։ Ահա ես 9
տալիս եմ սատանայի ժողովքիցը
եղողներին, որ իրանց համար ա-
սում են թէ Հրէայ են և չեն,
այլ սուտ են ասում, ահա կ'ա-
նեմ նորանց, որ կ'դան քո ոտնե-
րի առաջին և երկրպագութիւն
կ'անեն, և կ'ճանաչեն թէ ես սի-
րեցի քեզ։ Որովհետև իմ համ- 10
բերութեան խօսքը պահեցիր, ես
էլ քեզ կ'պահեմ այն փորձու-
թեան ժամիցը, որ գալու է այս
աշխարհքի վերայ, որ փորձէ երկ-
րի երեսի վերայ բնակողներին։

*Յուն. անուններ

11 Ահա ես գալիս եմ շուտով. պա-
հիր այն որ ունիս, որ ոչ ով
12 չ'առնէ քո պսակը։ Ով որ յաղ-
թում է սիւն կ'անեմ նորան իմ
Աստուծոյ տաճարումը, և այլ
ևս դուրս չի գնալ. և նորա վե-
րայ կ'գրեմ իմ Աստուծոյ ա-
նունը, և իմ Աստուծոյ քաղաքի
անունը, այն նոր Երուսաղէմի
անունը որ իջնում է երկնքիցն
իմ Աստուածանիցը, և իմ նոր
13 անունը։ Ով որ ականջ ունի թող
լսէ ինչ որ Հոգին ասում է եկե-
ղեցիներին։

14 Եւ Լաւոդիկէի եկեղեցու հրեշ-
տակին գրիր. Սա է ասում Ա-
մէնը, հաւատարիմ և ճշմարիտ
Վկան, Աստուծոյ արարածների
15 Սկիզբը։ Գիտեմ քո գործերը որ
ոչ ցուրտ ես և ոչ տաք. ո՛հ թէ
16 ցուրտ լինէիր կամ տաք։ Ուրեմն
որովհետև գաղջ ես, և ոչ տաք
և ոչ ցուրտ, քեզ պիտի փսխեմ
17 իմ բերանիցը։ Որովհետև ասում
ես, թէ Ես հարուստ եմ և մե-
ծացայ, և ոչ բանի կարօտ չեմ.
բայց չ'գիտես թէ դու թշուառ,
և ողորմելի, և աղքատ, և կոյր,
18 և մերկ ես։ Ես խրատ եմ տալիս
քեզ, ինձանից կրակում փոր-
ձուած ոսկի առ, որ հարստա-
նաս, և սպիտակ հանդերձներ՝ որ
հագնիս, որ քո մերկութեան ա-
մօթը չ'երևի. և գեղ դիր աչ-
19 քերիդ որ տեսնես։ Ես որոնց որ
սիրում եմ յանդիմանում եմ,
և խրատում եմ. ուրեմն ջանք
20 արա և ապաշխարիր։ Ահա ես
դռան առաջին կանգնած եմ
և թակում եմ. եթէ մէկը լսէ
իմ ձայնը և դուռը բանայ, կը
մտնեմ նորա մօտ և ընթրիք կ'ա-
նեմ նորա հետ, և նա ինձ հետ։
21 Ով որ յաղթում է, կ'տամ նո-
րան, որ ինձ հետ նստի իմ ա-
թոռի վերայ, ինչպէս ես էլ յաղ-
թեցի և նստեցի իմ Հօր հետ
22 նորա աթոռի վերայ։ Ով որ ա-
կանջ ունի թող լսէ ինչ որ Հո-
գին ասում է եկեղեցիներին։

ԳԼ. Դ

1 Եւ սորանից յետոյ տեսայ, և
ահա մի բացուած դուռ երկնք-
ումը, և այն առաջին ձայնը,
որ լսեցի փողի պէս որ խօսում
էր ինձ հետ, ասեց. Վեր ելիր
այստեղ, և ես ցոյց տամ քեզ
ինչ որ լինելու է սորանից յետոյ։
Եւ ես շուտով Հոգում եղայ. և 2
ահա մի աթոռ կար երկնքումը.
և աթոռի վերայ մէկը նստած։
Եւ նստողը յասպիս և սարդիոն 3
քարի երևոյթի նման էր. Եւ ա- 4
թոռի չորս կողմովը ծիածան կար
զմրուխտի երևոյթի նման. և ա-
թոռի չորս կողմովը քսանևչորս
աթոռներ. և այն աթոռների վե-
րայ քսանևչորս երէցներ նստած՝
սպիտակ հանդերձներ հագած,
և իրանց գլուխներին ոսկի պսակ-
ներ։ Եւ աթոռիցը փայլատակ- 5
ներ և որոտմունք և ձայներ էին
դուրս գալիս. և եօթը զամբար-
ներ՝ կրակով բորբոքուած աթո-
ռի առաջին, որոնք Աստուծոյ
եօթը հոգիներն են։ Եւ աթոռի 6
առաջին ապակեայ ծով կար
ակնվանու նման, և աթոռի մէջ
և աթոռի չորս կողմովը չորս կեն-
դանիք՝ առաջից և ետևից լիքն
աչքերով։ Եւ առաջին կենդա- 7
նին առիւծի նման էր, և երկրորդ
կենդանին՝ զուարակի նման, և
երրորդ կենդանին մարդի նման
երես ունէր, և չորրորդ կենդա-
նին թռչող արծուի նման։ Եւ 8
չորս կենդանիների իւրաքանչիւրը
վեց թև ունէին, իրանց չորս կող-
մովը և ներսևանց լիքն էին աչ-
քերով. և հանգստութիւն չ'ու-
նէին ցերեկ և գիշեր ասելով.
Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր Աստ-
ուած ամենակարող, որ էր, և
որ է, և որ գալու է։ Եւ երբոր 9
այն կենդանիները փառք, և պա-
տիւ, և գոհութիւն են տալիս
աթոռի վերայ նստողին որ կեն-
դանի է յաւիտեանս յաւիտե-
նից, Քսանևչորս երէցները ընկ- 10
նում են աթոռի վերայ նստողի
առաջին, և երկրպագում նո-
րան, որ կենդանի է յաւիտեանս
յաւիտենից և իրանց պսակները
գցում են աթոռի առաջին և
ասում. Արժանի ես, Տէր, որ 11

առնեա փառքը, և պատիւը, և զօրութիւնը. որ դու ստեղծեցիր
ամեն բաները և քո կամենալովը
կան և ստեղծուեցան։

Գլ. Ե

1 Եւ աթոռի վերայ նստողի աջ
ձեռքումը մի գիրք տեսայ, որ
ներսեւանից և դրսեւանից գրուած
2 էր, եօթը կնիքով կնքուած։ Եւ
մի զօրաւոր հրեշտակ տեսայ որ
մեծ ձայնով քարոզում էր. Ո՞վ
է արժանի բանալ այս գիրքը և
3 սորա կնիքները լուծել։ Եւ ոչ
ով ոչ երկնքումը և ոչ երկրի
վերայ և ոչ երկրի ներքեւումն,
չէր կարողանում այն գիրքը բա-
նալ, և ոչ էլ նայել նորա մէջ։
4 Եւ ես շատ լաց էի լինում, որ
ոչ ով չ'գտանուեցաւ արժանի այն
գիրքը բանալու [և կարդալու]
5 և ոչ նորա մէջ նայելու։ Եւ ե-
րեցներից մէկն ասեց ինձ. Լաց
մի լինիր, ահա յաղթեց առիւծը
որ Յուդայի ցեղից է՝ Դաւիթի
Արմատը, որ գիրքը բանայ և նո-
6 րա եօթը կնիքները լուծէ։ Եւ
տեսայ, և ահա այն աթոռի մէջ
և չորս կենդանիների մէջ և ե-
րեցների մէջ մի Գառն կանգնած
մորթուածի նման, որ եօթը եղ-
ջիւր ունէր և եօթն աչք, որ Ա-
ստուծոյ եօթը Հոգիքն են, որ ու-
7 ղարկուում են բոլոր երկիրը։ Եւ
նա եկաւ և գիրքն առաւ աթո-
8 ռի վերայ նստողի աջ ձեռքից։ Եւ երբոր գիրքն առաւ չորս
կենդանիները և քառասնչորս ե-
րեցները երկնում էին Գառի առաջին. ամեն մէկը ունէին քնար-
ներ և ոսկի բուրվառներ խնկով
լիքը, որ սուրբերի աղօթքն է։
9 Եւ նոր երգ են երգում և ա-
ռում. Արժանի ես առնելու այդ
գիրքը և դորա կնիքները բանա-
լու, որովհետև մորթուեցար, և
քո արիւնովը մեզ գնեցիր Ա-
ստուծոյ համար ամեն ցեղից և
լեզուից և ժողովրդից և ազգից.
10 Եւ մեր Աստուծոյ համար մեզ
թագաւորներ և քահանաներ ա-
րիր, և երկրի վերայ թագաւո-
րութիւն կ'անենք։ Եւ տեսայ, 11
և շատ հրեշտակների ձայն լսեցի
աթոռի և չորս կենդանիների և
երեցների չորս կողմից. և նորանց
համարն էր բիւրերի բիւրեր և 12
հազարների հազարներ. Որ մեծ
ձայնով ասում էին. Արժանի է
մորթուած Գառն առնելու և զօ-
րութիւն, և հարստութիւն, և
իմաստութիւն, և կարողութիւն,
և պատիւ, և փառք, և օրհնու-
թիւն։ Եւ ամեն ստեղծուած, որ 13
երկնքումն է, և երկրի վերայ, և
երկրի տակ, և ծովումը. և նո-
րանք ամենը որ նորա մէջ են,
լսեցի որ ասում էին. Աթոռի վե-
րայ նստողին և Գառին լինի օրհ-
նութիւնը, և փառքը, և կարո-
ղութիւնը յաւիտեան յաւիտե- 14
նից։ Եւ չորս կենդանիները ա-
սում էին, Ամէն. և քսանևչորս
երեցները քնկան և երկրպագու-
թիւն արին նորան որ կենդանի
է յաւիտեանս յաւիտենից։

Գլ. Զ

1 Եւ տեսայ երբոր Գառը այն կնիք-
ներից մէկը բացաւ, և այն չորս
կենդանիներից մէկիցը լսեցի որ
որոտմունքի ձայնի պէս ասում
2 էր. Եկ և տես։ Եւ տեսայ, և ա-
հա մի սպիտակ ձի, և նորա վե-
րայ նստողը մի աղեղ ունէր. և
մի պսակ տրուեցաւ նորան, և
նա դուրս եկաւ յաղթելով և
յաղթելու համար։
3 Եւ երբոր երկրորդ կնիքը բա-
ցաւ, երկրորդ կենդանիցը լսեցի
4 որ ասում էր. Եկ և տես։ Եւ
մի ուրիշ ձի դուրս եկաւ կար-
միր. և նորա վերայ նստողին տըր-
ուեցաւ որ խաղաղութիւնը վեր
առնէ երկրիցը, և որ իրար մոր-
թեն. և մի մեծ սուր տրուեցաւ
նորան։
5 Եւ երբոր երրորդ կնիքը բա-
ցաւ, երրորդ կենդանիցը լսեցի
որ ասում էր. Եկ և տես։ Եւ տե-
սայ և ահա մի սեւ ձի, և նորա
վերայ նստողը մի կշիռք ունէր
6 իր ձեռքումը։ Եւ չորս կենդա-
նիների մէջիցը մի ձայն լսեցի որ

ասում էր. Մի կապիճ ցորենը
մի դենարի, և երեք կապիճ գա-
րին մի դենարի, և ձէթին և գի-
նուն վնաս չ'տաս։
7 Եւ երբոր չորրորդ կնիքը բա-
ցաւ, չորրորդ կենդանու ձայնը
լսեցի որ ասում էր. Եկ և տես։
8 Եւ տեսայ, և ահա մի գեղնա-
կանաչ ձի, և նորա վերայ մի
նստող անունը Մահ, և Դժոխքը
գնում էր նորա առաջից. և իշ-
խանութիւն տրուեցաւ նորանց
աշխարհքի չորրորդ բաժնի վերայ
սրով և սովով և մահով և երկրի
գազաններովն սպանել։
9 Եւ երբոր հինգերորդ կնիքը
բացաւ, տեսայ սեղանի ներքև
նորանց հոգիները որ մորթուած
էին Աստուծոյ խօսքի համար և
այն վկայութեան համար որ ու-
10 նէին, Որ մեծ ձայնով աղաղա-
կում էին և ասում. Մինչև ե՞րբ,
ով սուրբ Տէր և ճշմարիտ, չես
դատում, և մեր արիւնի վրէժը
չես առնում երկրի վերայ բնա-
11 կողներից։ Եւ նորանց իւրաքան-
չիւրին սպիտակ հանդերձներ
տրուեցան, և ասուեցաւ նորանց,
որ տակաւին մի քիչ ժամանակ
հանգիստ առնեն, մինչև որ նո-
րանց ծառայակիցները և նորանց
եղբայրներն էլ կատարուին որ
նորանց պէս սպանուելու են։
12 Եւ տեսայ, երբոր վեցերորդ
կնիքը բացաւ, և ահա մեծ շարժ
եղաւ, և արեգակը սեւացաւ մա-
զեղէն քուրձի պէս, և լուսինն
13 արիւնի պէս եղաւ։ Եւ երկնքի
աստղերը թափուեցան երկրի վե-
րայ ինչպէս թզենին իր խակ
պտուղը թափում է՝ սաստիկ
14 քամուց շարժուած։ Եւ երկինքը
տեղից քաշվում էր գալարուող
գրքի պէս. և բոլոր սարերն ու
կղզիներն իրանց տեղիցը շար-
15 ժուեցան։ Եւ երկրի թագաւոր-
ները և մեծամեծները և հա-
րուստները և հազարապետները
և զօրաւորները և ամեն ծառայ
և ամեն ազատ թագցրին իրանց
անձերը սրերի և սարերի ժայ-
16 ռերի մէջ, Եւ ասում էին սա-
րերին և ժայռերին. Վայր ընկէք
մեզ վերայ, և ծածկեցէք մեզ
աթոռի վերայ նստողի երեսից,
և Գառի բարկութիւնից. Որ 17
նորա բարկութեան մեծ օրը ե-
կել է, և ո՞վ կարող է կանգնել։

Գլ. Է

1 Եւ սորանից յետոյ տեսայ չորս
հրեշտակ՝ կանգնած երկրի չորս
անկիւնումը, և երկրի չորս քա-
մին բռնած, որ քամի չ'փչէ երկրի
վերայ, ոչ էլ ծովի վերայ, և ոչ
2 մի ծառի վերայ։ Եւ մի ուրիշ
հրեշտակ տեսայ, որ գնում էր
գալիս արեւելքիցը, և կենդանի
Աստուծոյ կնիքն ունէր, և մեծ
ձայնով աղաղակեց այն չորս
հրեշտակներին որոնց իշխանութիւն
տրուեցաւ երկրին և ծովին վնաս
3 անելու, Եւ ասում էր. Վնաս մի
տաք ոչ երկրին, ոչ ծովին. և ոչ
էլ ծառերին, մինչև որ մեր Ա-
ստուծոյ ծառաների վերայ կնիք
դնենք նորանց ճակատներումն։
4 Եւ կնքուածների համարը լսեցի
հարիւր քառասունևչորս հազար
կնքուած իսրայէլի որդկանց ա-
մեն ցեղերիցը։ Յուդայի ցեղիցը 5
տասնևերկու հազար կնքուած.
Ռուբէնի ցեղիցը տասնևերկու
հազար կնքուած. Գադի ցեղիցը
տասնևերկու հազար կնքուած.
6 Ասերի ցեղիցը տասնևերկու հա-
զար կնքուած. Նեփթաղիմի ցե-
ղիցը տասնևերկու հազար կընք-
քուած. Մանասէի ցեղիցը տասն-
7 ևերկու հազար կնքուած. Շմա-
ւոնի ցեղիցը տասնևերկու հազար
կնքուած. Ղևիի ցեղիցը տասնե-
րկու հազար կնքուած. Իսաքա-
րի ցեղիցը տասնևերկու հազար
կնքուած. Զաբուղոնի ցեղիցը 8
տասնևերկու հազար կնքուած.
Յովսէփի ցեղիցը տասնևերկու
հազար կնքուած. Բենիամինի ցե-
ղիցը տասնևերկու հազար կընք-
քուած։
9 Եւ սորանից յետոյ տեսայ,
և ահա մի շատ ժողովուրդ որ
ոչ ով չէր կարող համարել, ա-
մեն ազգից և ցեղերից և ժող-
ովուրդներից և լեզուներից կանգ-

նած աթոռի առաջին և Գառի
առաջին, և սպիտակ հանդերձ-
ներ հագած, և իրանց ձեռքե-
10 րումն արմաւենիներ. Եւ աղա-
ղակում էին բարձր ձայնով և
ասում. Փրկութիւնը մեր Ա-
ստուծուն, որ նստում է աթոռի
11 վերայ, և Գառին։ Եւ բոլոր
հրեշտակները կանգնել էին ա-
թոռի և երէցների և չորս կեն-
դանիների չորս կողմովը, և ընկ-
նում էին երեսների վերայ ա-
թոռի առաջին և երկրպագում
12 էին Աստուծուն, Ասելով. Ամէն.
օրհնութիւնը և փառքը և ի-
մաստութիւնը և գոհութիւնը և
պատիւը և կարողութիւնը և զօ-
րութիւնը չինի մեր Տէր Աստու-
ծուն յաւիտեանս յաւիտենից.
13 Ամէն։ Եւ երէցներից մէկը պա-
տասխանելով ասեց ինձ. Սորանք
որ սպիտակ հանդերձներ են հա-
գել՝ ո՞վ են և կամ ո՞րտեղից են
14 եկել։ Եւ ես ասեցի նորան. Տէր,
դու գիտես. և նա ասեց ինձ.
Սորանք են որ գալիս են այն մեծ
նեղութիւնիցը, և իրանց հան-
դերձները լուացին և սպիտակա-
15 ցրին Գառի արիւնովը։ Նորա
համար Աստուծոյ աթոռի առա-
ջին են, և պաշտում են նորան
ցերեկ և գիշեր նորա տաճարի
մէջ. և աթոռի վերայ նստողը
*իր վրանը կ'տարածէ նորանց
16 վերայ. Այլ ևս ոչ կ'սովեն և
ոչ կ'ծարաւին, և չի ընկնիլ նո-
րանց վերայ ոչ արևը և ոչ մի
17 տաքութիւն։ Որովհետև Գառը՝
որ աթոռի մէջ է, կ'հովուէ նո-
րանց և կ'առաջնորդէ նորանց
դէպի կենդանի ջրերի աղբիւր-
ներ. և Աստուած կ'սրբէ ամեն
արտասուքը նորանց աչքերիցը։

ԳԼ. Ը

1 Եւ երբոր եօթներորդ կնիքը բա-
ցաւ, լռութիւն եղաւ երկնքումը
իբրև կէս ժամի չափ։
2 Եւ տեսայ այն եօթը հրեշտակ-
ները որ Աստուծոյ առաջին կանգ-
նած էին. և եօթը փող տրուե-
ցաւ նորանց։ Եւ մի ուրիշ հրեշ- 3
տակ եկաւ կանգնեց սեղանի ա-
ռաջին, և ոսկի խնկանոց ունէր.
և շատ խունկ տրուեցաւ նորան,
որ բոլոր սուրբերի աղօթքների
հետ մատուցանէ այն ոսկի սեղա-
նի վերայ որ աթոռի առաջին էր։
Եւ վեր ելաւ խնկերի ծուխը սուր- 4
բերի աղօթքների հետ հրեշտակի
ձեռքիցն Աստուծոյ առաջին։ Եւ 5
հրեշտակն այն խնկանոցն առաւ և
լցրեց սեղանի կրակիցը, և գցեց
երկրի վերայ, և ձայներ և որոտ-
մունքներ. և փայլատակներ և
շարժ եղաւ։ Եւ այն եօթը հրեշ- 6
տակները, որ եօթը փողերն ու-
նէին, իրանց պատրաստեցին որ
փչեն։
Եւ առաջին հրեշտակը փողը 7
փչեց, և եղաւ կարկուտ և կրակ
արիւնով խառնուած և ընկաւ
երկրի վերայ. և երկրի երրորդ
բաժինը այրուեցաւ, և ծառերի
երրորդ բաժինը այրուեցաւ, և
բոլոր կանաչ խոտերը այրուեցան։
Եւ երկրորդ հրեշտակը փողը 8
փչեց, և իբրև մի մեծ սար կրա-
կով բորբոքուած ընկաւ ծովի
մէջ. և ծովի երրորդ բաժինն ար-
իւն դառաւ։ Եւ ծովի մէջ շունչ 9
ունեցող արարածների երրորդ
բաժինը մեռաւ, և նաւերի եր-
րորդ բաժինը փճացաւ։
Եւ երրորդ հրեշտակը փողը 10
փչեց. և երկնքիցը մի մեծ աստղ
ընկաւ ղամբարի պէս բորբոք-
ուած, և ընկաւ գետերի երրորդ
բաժնի և ջրերի աղբիւրների վե-
րայ։ Եւ աստղի անունը Օշինդը 11
էր. և ջրերի երրորդ բաժինը օ-
շինդը դառաւ, և շատ մարդիկ
մեռան ջրերիցը, որ դառնացել
էին։
Եւ չորրորդ հրեշտակը փողը 12
փչեց, և վիրաւորուեցաւ արե-
գակի երրորդ բաժինը, և լուսնի
երրորդ բաժինը, և աստղերի եր-
րորդ բաժինը. որ նորանց երրորդ
բաժինը խաւարուի. և ցերեկը
երրորդ բաժինը լոյս չտայ, և գի-
շերն էլ նմանապէս։
Եւ տեսայ, և լսեցի մի հրեշ- 13

*Գրաբ. բնակուած է նորանց մէջ.

տակ որ երկնքի միջովը թռչում
էր և մեծ ձայնով ասում. Վա՛յ,
վա՛յ, վա՛յ նորանց որ բնակուած
են երկրի վերայ, այն երեք հրեշ-
տակների փողի միւս ձայներիցը,
որոնք փչելու են։

ԳԼ. Թ

1 Եւ հինգերորդ հրեշտակը փողը
փչեց. և տեսայ մէկ աստղ էր
երկնքիցը ընկել երկրի վերայ. և
անդունդի գուբի բանալին տրը-
2 ուեցաւ նորան, Եւ անդունդի
գուբը բացաւ, և գուբիցը ծուխը
գուրս էր գալիս մեծ հնոցի ծու-
խի պէս. և արեգակը և օդը խա-
ւարուեցան գուբի ծուխիցը։
3 Եւ ծուխիցը մարախներ էին
գուրս գալիս երկրի վերայ. և նո-
րանց իշխանութիւն տրուեցաւ
ինչպէս որ երկրի կարիճներն իշ-
4 խանութիւն ունին։ Եւ նորանց
ասուեցաւ, որ երկրի խոտին վնաս
չ'տան, և ոչ մի խոտի, և ոչ մի
ծառի, բայց միայն այն մարդ-
կանց, որ Աստուծոյ կնիքը չ'ու-
նին իրանց ճակատների վերայ։
5 Եւ տրուեցաւ նորանց, որ չ'սպա-
նեն նորանց, այլ հինգ ամիս չար-
չարեն նորանց. և նորանց չարչա-
րանքը կարիճի խայթոցի պէս
էր երբոր մի մարդի կծում է։
6 Եւ այն օրերումը մարդիկ մա-
հը կ'խնդրեն և չեն գտնիլ նո-
րան. և կ'ցանկանան մեռնիլ, և
7 մահը կ'փախչի նորանցից։ Եւ մա-
րախների նմանութիւնը նման էր
ձիերի. որ պատրաստուած են
պատերազմի համար, և նորանց
գլուխների վերայ իբրև պսակներ
կային ոսկու նման. և նորանց երես-
ները մարդկանց երեսների նման.
8 Եւ մազեր ունէին կանանց մա-
զերի պէս. և նորանց ատամներն
9 առիւծի ատամների նման էին։ Եւ
զրահներ ունէին ինչպէս երկաթէ
զրահներ. և նորանց թևերի ձայ-
նը նման էր շատ ձիերի կառքե-
րի ձայնի որ վազում են պատե-
10 րազմ։ Եւ ագիներ ունէին կա-
րիճների նման, և խայթոցներ
կային նորանց ագիներումը. և
նորանց իշխանութիւնն էր հինգ
ամիս մարդկանց չարչարել։ Եւ 11
իրանց վերայ թագաւոր ունէին
անդունդի հրեշտակը. և նորա
անունը Երրայեցերէն *Աբադդոն
և Յունարէն նորա անունն էր
*Ապոլլիոն։ Մէկ վայն անցաւ, 12
ահա տակաւին երկու վայը գա-
լիս են սորանից յետոյ։
Եւ վեցերորդ հրեշտակը փողը 13
փչեց. և մի ձայն լսեցի այն ոսկի
սեղանի չորս եղջիւրներիցը որ Ա-
ստուծոյ առաջին էին, Որ ասում 14
էր վեցերորդ հրեշտակին որ փողն
ունէր. Արձակիր այն չորս հրեշ-
տակները որ Եփրատ մեծ գետի
վերայ կապուած են։ Եւ այն 15
չորս հրեշտակներն արձակուե-
ցան, որ պատրաստուած էին այն
ժամի և օրուայ և ամսուայ և
տարուայ համար, որ մարդկանց
երրորդ բաժինը սպանեն։ Եւ նո- 16
րանց ձիաւոր զօրքի համարը եր-
կու բիւրերի բիւրեր էր, և լսեցի
նորանց համարը։ Եւ այսպէս տե- 17
սայ ձիանքը տեսիլքի մէջ, և նո-
րանց վերայ նստողներն ունէին
հրեղէն և յակնթեղէն և ծծմբե-
ղէն զրահներ, և ձիերի գլուխ-
ներն առիւծի գլուխների նման.
և նորանց բերանիցը կրակ և ծուխ
և ծծումբ էր գուրս գալիս։ Եւ 18
այս երեքիցը մարդկանց երրորդ
բաժինը մեռաւ, այսինքն կրակիցը
և ծուխիցը և ծծումբիցը, որ նո-
րանց բերանիցը գուրս էր գալիս։
Որովհետև նորանց զօրութիւնն 19
իրանց բերաններումն է, և իրանց
ագիներումը, որ նորանց ագիներն
օձի նման են, որ գլուխներ ունէին
և նորանցով վնասում էին։ Եւ 20
մնացեալ մարդիկը որ չ'մեռան
այս վէրքերիցը, չ'ապաշխարեցին
իրանց ձեռքերի գործերիցը, որ
չ'երկրպագեն դևերին և ոսկէ և
արծաթէ և պղնձէ և քարէ և
փայտէ կուռքերին, որ ոչ տես-
նել կարող են, և ոչ լսել, և ոչ
գնալ։ Եւ չ'ապաշխարեցին իրանց 21
մարդասպանութիւններիցը, և ոչ
էլ իրանց կախարդութիւններիցը,

*Այսինքն՝ կորուսիչ.

և ոչ էլ իրանց պոռնկութիւնից, և ոչ իրանց գողութիւնից։

Գլ. Ժ

1 Եւ մի ուրիշ զօրաւոր հրեշտակ տեսայ երկնքիցը վայր գալիս, և ամպ հագած և գլխին ծիածան. և նորա երեսը արեգակի նման. և նորա սոներքը կրակի սիւնի
2 պէս։ Եւ նա իր ձեռքումը մի փոքր գիրք ունէր բացած, և իր աջ ոտքը դրաւ ծովի վերայ, և
3 ձախը հողի վերայ. Եւ մեծ ձայնով աղաղակեց ինչպէս առիւծն գոռում է. և երբոր աղաղակեց, այն եօթը որոտմունքն իրանց ձայնովը խօսեցին։ Եւ երբ-
4 որ եօթը որոտմունքն իրանց ձայնովը խօսեցին, պիտի գրէի. և ձայն լսեցի երկնքիցը որ ասում էր. Կնքիր այն բաները որ եօթը որոտմունքը խօսեցին, և սորանք
5 մի գրիր։ Եւ այն հրեշտակը որ տեսայ ծովի վերայ և ցամաքի վերայ կանգնած, իր աջ ձեռքը
6 դէպի երկինքը բարձրացրեց, Եւ երդուաւ յաւիտեանս յաւիտենից կենդանիովը, որ ստեղծեց երկինքը և ինչ որ նորանում է, և երկիրը և ինչ որ նորանում է, և ծովը և ինչ որ նորանում է.
7 թէ այլևս ժամանակ չ'կայ։ Բայց եօթներորդ հրեշտակի ձայնի օրերումն երբոր փողը կ'փչէ, Աստուծոյ խորհուրդն էլ կ'կատարուի, ինչպէս աւետարանեց իր ծառայ մարգարէներին։
8 Եւ այն ձայնն որ երկնքիցը լսեցի դարձեալ խօսեց ինձ հետ և ասեց. Գնա առ այն բաց գրքոյկը, որ ծովի և ցամաքի վերայ կանգ-
9 նած հրեշտակի ձեռքին է։ Եւ ես գնացի հրեշտակի մօտ և ասեցի նորան. Տուր ինձ այդ գրքոյկը. և նա ասեց ինձ. Առ և կեր զայն, և սա կ'դառնանայ փորումդ, բայց բերանումդ քաղցր
10 կ'լինի մեղրի պէս։ Եւ գրքոյկն առայ հրեշտակի ձեռքիցը և կերայ նորան. և բերանումս քաղցր էր մեղրի պէս. և երբոր կերայ նորան, դառնացաւ փորումս։ Եւ 11
ասեց ինձ. Պէտք է դու դարձեալ մարգարէանաս ժողովուրդների և ազգերի և լեզուների և շատ թագաւորների վերայ։

Գլ. ԺԱ

Եւ ինձ մի եղէգ տրուեցաւ գա- 1
ւազանի նման. և հրեշտակը կանգնած էր և ինձ ասում էր. Վեր կաց և չափիր Աստուծոյ տաճարը և սեղանը և նորանում երկրպագողներին։ Եւ գաւիթը, որ տա- 2
ճարիցը դուրս է, դուրս դցիր և մի չափիր, որովհետև նա հեթանոսներին է տրուած. և սուրբ քաղաքը կոխ կ'տան քառասուն ե-
րկու ամիս։ Եւ իմ երկու 3
վկաներին կ'տամ, և հազար երկու հարիւրևվաթսուն օր կ'մարգարէանան քուրձ հագած։ Ա- 4
րանք են այն երկու ձիթենիները և երկու ճրագակալները, որ երկրի Աստուծոյ առաջին կանգնած են։ Եւ եթէ մէկը կամենայ նո- 5
րանց վնասել, կրակ է դուրս գալիս նորանց բերանիցը և լափում է նորանց թշնամիներին. և եթէ մէկը կամենայ վնասել նորանց՝ այսպէս պիտի սպանուի։ Սորանք 6
իշխանութիւն ունին երկինքը փակելու որ անձրև չ'գայ նորանց մարգարէութեան օրերումը. և իշխանութիւն ունին ջրերի վերայ նորանց արիւն դարձնելու, և երկիրն ամեն կերպ պատուհասներով հարուածելու քանի անգամ որ կամենան։ Եւ երբոր 7
իրանց վկայութիւնը կ'կատարեն, այն գազանը որ անդունդիցը դուրս կելոդ գալանը կռիւ կ'տայ նորանց հետ, և կ'յաղթէ նորանց և կ'սպանէ նորանց։ Եւ նորանց 8
դիերը ընկած կ'մնան այն մեծ քաղաքի հրապարակումն, որի անունն հոգևորապես Սոդոմ և Եգիպտոս է կոչվում. որտեղ մեր Տէրն էլ խաչուեցաւ։ Եւ 9
կ'տեսնեն ժողովուրդներից և ցեղերից և լեզուներից և ազգերից նորանց դիերը երեք օր և կէս, և թոյլ չեն տալ որ նորանց դիեն-

10 գերեզմաններուն մէջ։ Եւ երկրի վերայ բնակողները կ'ուրախանան և կ'ինդան. և իրար ընծաներ կ'ուղարկեն. որ այս երկու մարգարէները չորչարեցին երկրի վերայ բնակողներին։
11 Եւ երեք և կէս օրից յետոյ Աստուածանից կենդանի հոգի եկաւ մտաւ նորանց մէջ, և նորանք իրանց ոտների վերայ կանգնեցին. և մեծ վախ ընկաւ նորանց տես-
12 նողների վերայ։ Եւ մեծ ձայն *լսեցի երկինքիցը որ ասում էր նորանց. Վեր եկէք այստեղ. և վեր եկան երկինքն ամպով. և նորանց թշնամիները տեսան նո-
13 րանց։ Եւ նոյն ժամուն մեծ շարժ եղաւ, և քաղաքի տասներորդ բաժինը կործանուեցաւ, և այն շարժումից եօթը հազար մարդիկ սպանուեցան. և մնացեալները մեծ վախով բռնուեցան, և փառք տուին երկնքի Աստու-
14 ծուն։ Երկրորդ վայն անցաւ, և երրորդ վայը գալիս է շուտով։
15 Եւ եօթներորդ հրեշտակը փողը փչեց, և մեծ ձայներ եղան երկինքումն որ ասում էին. Աշխարհքի թագաւորութիւնները մեր Տիրոջը և նորա Քրիստոսինը եղան. և նա կ'թագաւորէ յա-
16 ւիտեանս յաւիտենից։ Եւ քսան և չորս երէցները որ Աստուծոյ առաջին իրանց աթոռների վերայ նստած էին, իրանց երեսներին վերայ ընկան և երկրպագե-
17 ցին Աստուծուն, ասելով. Գոհանում ենք քեզանից, Տէր Աստուած Ամենակալ, որ էիր և ես, [և որ գալու ես] որ քո մեծ զօրութիւնն առար և թագաւորե-
18 ցիր։ Եւ ազգերը բարկացան, և եկաւ քո բարկութիւնը, և մեռելների ժամանակը որ դատուին. և որ վարձքը տաս քո ծառայ մարգարէներին և սուրբերին, և քո անունից վախեցողներին՝ փոքրներին և մեծերին, և երկիրն ապականողներին ապականես։
19 Եւ Աստուծոյ տաճարը որ երկնքումն էր բացուեցաւ, և երևեցաւ Աստուծոյ տապանակը իր տաճարումը, և եղան փայլատակներ և ձայներ և որոտմունքներ, և շարժ և մեծ կարկուտ։

Գլ. ԺԲ

Եւ մի մեծ նշան երևեցաւ եր- 1
կնքումը. մի կին՝ արեգակն իր վերայ առած. և լուսինը նորա ոտների տակ. և նորա գլխի վերայ տասներկու աստղերի պսակ։ Եւ 2
նա յղի լինելով՝ ազաղակում էր երկունք քաշելով և չորչարուելով որ ծնէ։
Եւ մի ուրիշ նշան երևեցաւ 3
երկնքումը. և ահա մի մեծ վիշապ կրակի պէս կարմիր, որ եօթը գլուխ ունէր և տասն եղջիւր, և նորա գլուխների վերայ եօթը թագ. Եւ նորա ապին քա- 4
շում էր երկնքի աստղերի երրորդ բաժինը, և նորանց գցեց երկրի վերայ և վիշապը կանգնած էր այն կնկայ առաջին որ պիտի ծնէր, որ երբոր ծնէ, կուլ տայ նորա զաւակին։ Եւ նա մի 5
արու զաւակ ծնեց, որ պիտի բոլոր ազգերին երկաթէ գաւազանով հովուէ. և նորա որդին յափշտակուեցաւ Աստուծոյ մօտ և նորա աթոռի մօտ։ Եւ կինը 6
փախաւ անապատը, ուր Աստուածանից պատրաստուած տեղ ունէր, որ այնտեղ կերակրեն նորան հազար երկու հարիւրեվաթսուն օր։
Եւ պատերազմ եղաւ երկնքու- 7
մը. Միքայէլը և նորա հրեշտակները պատերազմեցին վիշապի դէմ. և պատերազմեց վիշապը և իր զօրքերը. Եւ չ'կարողացան 8
դէմ կենալ, և ոչ էլ տեղ գտնուեցաւ նորանց համար երկնքումը։ Եւ վար գցուեցաւ մեծ վիշապը՝ 9
այն առաջի օձը, որ Բանսարկու և սատանայ է կոչվում, այն որ ամբողջ աշխարհքը մոլորեցնողը վար գցուեցաւ երկրի վերայ և իր հրեշտակներն էլ իրան հետ վար գցուեցան։ Եւ մեծ ձայն 10
լսեցի որ ասում էր երկնքումը.

*Ոմանք՝ լսեցին

Հիմա փրկութիւնը և զօրութիւ-
նը և թագաւորութիւնը եղաւ
մեր Աստուծուն, և իշխանու-
թիւնը եղաւ նորա Օծեալին, որ
վայր գցուեցաւ մեր եղբայրների
չարախօսը, որ չարախօսում էր
նորանցից Աստուծոյ առաջին ցե-
11 րեկ և գիշեր. Եւ նորանք յաղ-
թեցին նորան՝ Գառի արիւնովը
և *իրանց վկայութեան խօսքովը.
և չ՚սիրեցին իրանց հոգին մինչև
12 ի մահ։ Սորա համար ուրախա-
ցէք, ով երկինք, և որ բնակուած
էք նորանում. վա՛յ երկրին և ծո-
վին, [և նորանցում բնակողնե-
րին] որ Բանսարկուն վայր իջաւ
ձեզ մօտ, որ մեծ բարկութիւն
ունի, դիտենալով, որ քիչ ժա-
մանակ ունի։
13 Եւ երբոր տեսաւ վիշապը, թէ
վայր գցուեցաւ երկրի վերայ,
ընկաւ այն կնկայ ետևից որ արու
14 զաւակը ծնեց։ Եւ այն կնկան
երկու մեծ արծուի թև տրուե-
ցաւ, որ թռչի անապատն՝ իր
տեղը. ուր որ կերակրվում է մի
ժամանակ, և ժամանակներ և կէս
15 ժամանակ օձի երեսիցը։ Եւ օձն
իր բերանիցը գետի պէս ջուր
թափեց այն կնկայ ետևից, որ
16 նորան ընկղմէ։ Եւ երկիրն օգնեց
այն կնկան, և երկիրն իր բերանը
բացաւ և այն գետը կուլ տուաւ
որ վիշապն իր բերանիցը թափեց։
17 Եւ վիշապը բարկացաւ այն կնկայ
վերայ, և գնաց պատերազմ ա-
նելու նորա միւս զաւակների
հետ, որ Աստուծոյ պատուի-
րանքները պահում են, և Յի-
սուսի [Քրիստոսի] վկայութիւնն
ունին։
18 Եւ ծովի տեսաղի վերայ †կանգ-
նեց։

ԳԼ. ԺԳ

1 Եւ տեսայ ծովիցը մի գազան
դուրս գալիս, որ եօթը գլուխ
ունէր և տասը եղջիւր, և նորա
եղջիւրների վերայ տասը թագ,
և նորա գլուխների վերայ հայ-
հոյութեան անուն։ Եւ այն գա- 2
զանը որ տեսայ ինձու նման էր, և
նորա ոտները արջի ոտների նման,
և նորա բերանն առիւծի բերանի
նման. և վիշապը տուաւ նորան
իր զօրութիւնը և իր աթոռը և
մեծ իշխանութիւն։ Եւ տեսայ 3
նորա գլուխներից մէկը մեռնելու
չափ խոցուած. և նորա մահի
վէրքը ողջացաւ. և բոլոր երկիրը
զարմացաւ այն գազանի ետևիցը։
Եւ երկրպագեցին այն վիշապին, 4
որ իշխանութիւն տուաւ այն գա-
զանին, և երկրպագեցին գազա-
նին ասելով. Ո՞վ է այս գազանի
նման. կամ ո՞վ է կարող դորա
հետ պատերազմել։ Եւ նորան 5
տրուեցաւ մի բերան մեծ մեծ
բաներ և հայհոյանք խօսող, և
իշխանութիւն տրուեցաւ նորան
քառասունեւերկու ամիս իր ոտ-
ղանի անելու։ Եւ նա իր բերանը 6
բացաւ Աստուծոյ դէմ հայհո-
յանքով, որ հայհոյէ նորա ա-
նունին և նորա խորանին, և եր-
կընքումը բնակողներին։ Եւ նո- 7
րան իշխանութիւն տրուեցաւ որ
սուրբերի հետ պատերազմ անէ
և նորանց յաղթէ. և իշխանու-
թիւն տրուեցաւ նորան ամեն
ցեղի և լեզուի և ազգի վերայ.
Եւ կ՚երկրպագեն նորան երկրի 8
վերայ բոլոր բնակողները, որոնց
անունները գրուած չեն Գառի
կեանքի գրքի մէջ որ աշխարհքի
սկզբիցը հետէ մորթուած է։ Ե- 9
թէ մէկն ականջ ունի թող լսէ։
Եթէ մէկը գերութեան քաշէ, 10
գերութեան պիտի քաշուի. եթէ
մէկը սրով սպանէ, պիտի սրով
սպանուի. այստեղ է սուրբերի
համբերութիւնը և հաւատքը։
Եւ ես տեսայ մի ուրիշ գազան 11
դուրս գալիս երկրիցը, և երկու
եղջիւր ունէր գառի նման. բայց
խօսում էր վիշապի նման։ Եւ 12
այն առաջի գազանի բոլոր իշխա-
նութիւնը բանեցնում էր նորա
առաջին. և այնպէս էր անում,
որ երկիրը և նորա վերայ բնա-
կողները երկրպագեն այն առաջի
գազանին որի մահի վէրքը ողջա-

*Գրաբ. նորա
†Ոմանք՝ կանգնեցի

13 ցել էր։ Եւ մեծ նշաններ է ա-
նում, որ երկնքիցը կրակ էլ է
վայր բերել տալիս երկրի վերայ
14 մարդկանց առաջին։ Եւ մոլորե-
ցնում է երկրի վերայ բնակող-
ներին այն նշաններովը որ տրուած
էին նորա ձեռքը, որ գործէ գա-
զանի առաջին, ասելով երկրի
բնակողներին որ պատկեր շինեն
այն գազանին որ սուրի վէրքն ու-
15 նէր և ապրեց։ Եւ տրուեցաւ նո-
րան, որ հոգի տայ գազանի պատ-
կերին, որ պատկերը խօսի էլ. և
անէ էլ՝ որ նորանք, որ չ՚երկրպա-
գեն գազանի պատկերին, սպան-
16 ուին։ Եւ ստիպում է ամենին՝
փոքրերին և մեծամեծներին, հա-
րուստներին և աղքատներին, ա-
զատներին և ծառաներին, որ նո-
րանց դրոշմ տայ նորանց աջ
ձեռքումը կամ նորանց ճակա-
17 տումը։ Եւ որ ոչ ով չ՚կարողա-
նայ գնել կամ ծախել բացի նո-
րանից, որ գազանի դրոշմը կամ
նորա անունն ունի կամ նորա
18 անունի համարը։ Այստեղ է ի-
մաստութիւնը. ով որ միտք ու-
նի թող գազանի թիւը համարէ.
որ մարդի թիւ է, և նորա թիւը
վեց հարիւր վաթսունեւվեց է։

ԳԼ. ԺԴ

1 Եւ տեսայ և ահա Գառը կանգ-
նած էր Սիօն սարի վերայ, և
նորա հետ հարիւր քառասուն-
եւչորս հազար հոգիք, որ [նորա
անունը և] նորա Հօր անունը
գրած ունէին իրանց ճակատների
2 վերայ։ Եւ ձայն լսեցի երկնքիցը՝
շատ ջրերի ձայնի պէս, և մեծ
որոտմունքների ձայնի պէս. և
քնար ածողների ձայնի պէս լսե-
ցի, որ իրանց քնարներն ածում
3 էին։ Եւ երգում էին մի նոր երգ
աթոռի առաջին և չորս կենդա-
նիների առաջին և երէցների ա-
ռաջին. և ոչ ով չէր կարող ու-
սանել այն երգը բացի այն հար-
իւր քառասունեւչորս հազարնե-
րից, որ երկրից փրկուել էին։
4 Սորանք են որ կանանց հետ չը
խառնակուեցան, որովհետև կոյս
են. սորանք են որ Գառի ետևից
գնում են ուր որ նա գնայ. սո-
րանք փրկուեցան մարդկանցից
Աստուծուն և Գառին իբրև երա-
խայրի։ Եւ նորանց բերանումը 5
նենգութիւն չ՚գտնուեցաւ, որով-
հետև անարատ են [Աստուծոյ
աթոռի առաջին։]
Եւ տեսայ մի ուրիշ հրեշտակ 6
թռչելիս երկնքի մէջ, որ յաւի-
տենական աւետիք ունէր, որ ա-
ւետարանէր երկրի վերայ բնակող-
ներին. և ամեն ազգի և ցեղի և
լեզուի և ժողովրդի։ Եւ մեծ 7
ձայնով ասում էր. Վախեցէք
Աստուածանից, և փառք տուէք
նորան. որովհետև նորա դատաս-
տանի ժամը եկաւ. և երկրպա-
գեցէք երկինքը և երկիրը և ծովը
և ջրերի աղբիւրները Ստեղծողին։
Եւ մի ուրիշ հրեշտակ եկաւ 8
նորա ետևից ասելով. Ընկա՛ւ,
ընկա՛ւ Բաբիլոն մեծ քաղաքը, ո-
րովհետև իր պոռնկութեան բար-
կութեան գինուցը խմեցրեց բո-
լոր ազգերին. Եւ մի երրորդ հրեշ- 9
տակ եկաւ նորանց ետևից մեծ
ձայնով ասելով. Ով որ երկրպա-
գութիւն է անում գազանին և
նորա պատկերին և դրոշմ ընդու-
նում իր ճակատի կամ իր [աջ]
ձեռքի վերայ, Այնպիսին Աստու- 10
ծոյ սրամտութեան *գինուցը պի-
տի խմէ, որ անխառն ածուած է
նորա բարկութեան բաժակի մէջ.
և պիտի տանջուի կրակի և ծծմբի
մէջ սուրբ հրեշտակների և Գա-
ռի առաջին։ Եւ նորանց տան- 11
ջանքի ծուխը վեր է ելնում յա-
ւիտեանս յաւիտենից. և հան-
գիստ չ՚ունին ցերեկ և գիշեր նո-
րանք որ երկրպագեցին գազանին
և նորա պատկերին, և ով որ էլ
ընդունում է նորա անունի դրոշ-
մը։ Այստեղ է սուրբերի համբե- 12
րութիւնը. այստեղ են Աստու-
ծոյ պատուիրանքները և Յիսուսի
հաւատքը պահողները։
Եւ երկնքից մի ձայն լսեցի որ 13
ասում էր ինձ. Գրիր, Երանելի
են այն մեռելները որ Տէրումն են

*Գրաբ. բաժակիցը

ննջում այսուհետև. այո, Հոգին
ասում է որ իրանց աշխատան-
քիցը հանգիստ կ'առնեն, և նո-
րանց գործերը գնում են նորանց
հետևից։
14 Եւ տեսայ, և ահա մի սպիտակ
ամպ, և ամպի վերայ մէջը նստած
մարդի Որդու նման, որ իր գլխի
վերայ ոսկի պսակ, և իր ձեռ-
քումը սուր դերանդի ունէր։
15 Եւ մի ուրիշ հրեշտակ դուրս
եկաւ տաճարիցը, որ մեծ ձայնով
աղաղակում էր ամպի վերայ
նստողին. Ուղարկիր քո դերան-
դին և հնձիր. որովհետև քո ժա-
մանակն եկաւ հնձելու, որ երկրի
16 հունձքը հասել է։ Եւ ամպի վե-
րայ նստողը վայր դցեց իր դե-
րանդին երկրի վերայ, և երկիրը
հնձուեցաւ։
17 Եւ մի ուրիշ հրեշտակ դուրս
եկաւ տաճարիցը որ երկնքումն
է, որ սա էլ սուր դերանդի ու-
18 նէր։ Եւ մի ուրիշ հրեշտակ դուրս
եկաւ սեղանիցը որ իշխանութիւն
ունէր կրակի վերայ, և մեծ ա-
ղաղակով գոչեց սուր դերանդին
ունեցողին ասելով. Ուղարկիր քո
սուր դերանդին և երկրի այգու
ողկոյզները քաղիր, որովհետև
19 նորա խաղողը հասել է։ Եւ հրեշ-
տակն իր դերանդին դցեց երկրի
վերայ, և երկրի այգու խաղողը
քաղեց, և դցեց Աստուծոյ բար-
20 կութեան մեծ հնձանի մէջ։ Եւ
հնձանը կոխուեցաւ քաղաքիցը
դուրս, և դուրս եկաւ արիւնը
հնձանիցը մինչև ձիերի սանձքը
հաղարևվեց հարիւր ասպարէզի
չափ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ տեսայ մի ուրիշ մեծ և զար-
մանալի նշան երկնքումը, եօթը
հրեշտակ որ վերջի եօթը պա-
տուհասներն ունէին. որովհետև
Աստուծոյ բարկութիւնը նորան-
2 ցով կատարուեցաւ։ Եւ տեսայ
իբրև ապակեղէն ծով կրակով
խառնուած. և նորանց որ յաղ-
թում են գազանին և նորա պատ-
կերին և նորա դրոշմին և նորա
անունի թիւին, որ կանգնած էին
ապակեղէն ծովի վերայ, և Ա-
ստուծոյ քնարներն ունէին։ Եւ 3
երգում էին Աստուծոյ ծառայ
Մովսէսի երգը և Գառի երգը,
ասելով. Մեծ և զարմանալի են
քո գործերը, Տէր Աստուած Ամե-
նակալ, արդար և ճշմարիտ են
քո ճանապարհները, ով սուրբե-
րի թագաւոր։ Ո՞վ է որ քեզա- 4
նից չ'վախենայ, ով Տէր, և քո
անունը չ'փառաւորէ. որ միայն
դու ես սուրբ. վասնզի բոլոր ազ-
գերը կ'դան և քո առաջին եր-
կրպագութիւն կ'անեն, որովհե-
տև քո իրաւունքները յայտ-
նուեցան։
Եւ սորանից յետոյ տեսայ, և 5
ահա բացուեցաւ վկայութեան
խորանի տաճարը երկնքումը։ Եւ 6
դուրս եկան տաճարիցը այն եօթը
հրեշտակները, որ այն եօթը պա-
տուհասներն ունէին, մաքուր և
պայծառ կտաւ հագած, և ստինք-
ների մօտով ոսկէ գօտիներ կա-
պած։ Եւ այն չորս կենդանիներ- 7
ից մէկն այս եօթը հրեշտակներին
եօթը ոսկի սկաւառակ տուաւ՝
յաւիտեանս յաւիտենից կենդա-
նի Աստուծոյ բարկութիւնովը
լիքը։ Եւ տաճարը լցուեցաւ Ա- 8
ստուծոյ փառքից և նորա զօրու-
թիւնից ելած ծուխովը. և ոչ
ով կարող չէր մտնել տաճարը,
մինչև որ այն եօթը հրեշտակնե-
րի եօթը պատուհասները կա-
տարուին։

ԳԼ. ԺԶ

Եւ մեծ ձայն լսեցի տաճարիցը 1
որ ասում էր այն եօթը հրեշ-
տակներին. Գնացէք և Աստուծոյ
բարկութեան սկաւառակները
թափեցէք երկրի վերայ։
Եւ առաջինը գնաց և իր սկա- 2
ւառակը թափեց երկրի վերայ,
և չարաչար պալարներ եղան այն
մարդկանց վերայ, որ գազանի
դրոշմն ունէին և նորա պատկե-
րին երկրպագում էին։
Եւ երկրորդ հրեշտակն իր սկա- 3
ւառակը թափեց ծովը, և արիւն

դառաւ մեռածի արիւնի նման.
և ամեն կենդանի շունչ ստատ-
կեց որ ծովումն էր։
4 Եւ երրորդ հրեշտակն իր սկա-
ւառակը թափեց գետերի և ջրե-
րի աղբիւրների մէջ և արիւն ե-
5 ղաւ։ Եւ ձայն լսեցի ջրերի հրեշ-
տակիցը որ ասում էր. Արդար
ես, Տէր, որ ես և էիր և սուրբ՝
որ այս դատաստաններն արիր։
6 Որովհետև սուրբերի և մարդա-
րէների արիւնը թափեցին. նորա
համար էլ արիւն տուիր նորանց
7 խմելու, որ արժան են։ Եւ մի
ուրիշը լսեցի սեղանիցը որ ասում
էր. Այո, Տէր Աստուած Ամենա-
կալ, ճշմարիտ և արդար են քո
դատաստանները։
8 Եւ չորրորդ հրեշտակն իր սկա-
ւառակը թափեց արեգակի վե-
9 րայ։ Եւ տրուեցաւ նորան որ
մարդկանց խորշակահար անէ
կրակով. և խորշակահար եղան
մարդիկ ոաստիկ տաքով և հայ-
հոյեցին Աստուծոյ անունին որ
այս պատուհասների վերայ իշ-
խանութիւն ունի. և չ'ապաշխա-
րեցին որ փառք տան նորան։
10 Եւ հինգերորդ հրեշտակն իր
սկաւառակը թափեց գազանի ա-
թոռի վերայ. և նորա թագաւո-
րութիւնը խաւարուած եղաւ. և
իրանց լեզուները ծամում էին
11 տանջանքիցը. Եւ երկնքի Աստու-
ծուն հայհոյեցին իրանց ցաւերի
և պալարների պատճառովը. և
չ'ապաշխարեցին իրանց գործե-
րիցը։
12 Եւ վեցերորդ հրեշտակն իր
սկաւառակը թափեց մեծ գետ՝
Եփրատի վերայ, և նորա ջուրը
ցամաքեց որ արևելքի թագա-
ւորների ճանապարհը պատրաս-
13 տուի։ Եւ տեսայ՝ վիշապի բե-
րանիցը և գազանի բերանիցը և
սուտ մարգարէի բերանիցը երեք
պիղծ հոգի էին դուրս գալիս գոր-
14 տերի նման։ Որովհետև նորանք
դևերի ոգիք են, որ նշաններ են
անում, նորանք գնում են երկրի
և բովանդակ տիեզերքի թագա-
ւորների մօտ որ նորանց ժողովեն
Ամենակարող Աստուծոյ այն մեծ
օրուայ պատերազմի համար։ Ա- 15
հա գալիս եմ գողի նման, երանի
նորան որ արթուն է, և իր հան-
գերձները պահում է. որ մերկ
ման չ'գայ, և նորա ամօթանքը
չ'տեսնեն. Եւ ժողովեցին նորանց 16
այն տեղ որ Եբրայեցերէն Ար-
մագեդոն է կոչվում։
Եւ եօթներորդ հրեշտակն իր 17
սկաւառակը թափեց օդի վերայ.
և մեծ ձայն դուրս եկաւ երկնքի
տաճարիցը և աթոռիցը որ ա-
սում էր. Եղա՛ւ։ Եւ եղան ձայ- 18
ներ և փայլատակներ և որոտ-
մունք, և մեծ շարժ եղաւ որ
այնպիսի չէր եղած քանի որ մար-
դիկ երկրի վերայ են՝ այնպիսի
մեծ շարժ էր. Եւ մեծ քաղաքը 19
երեք կտոր եղաւ, և ազգերի քա-
ղաքները վայր ընկան. և մեծ Բա-
բիլոնը յիշուեցաւ Աստուծոյ ա-
ռաջին, որ իր ցասման բարկու-
թեան գինու բաժակը նորան տայ։
Եւ ամեն կղզի փախաւ, և սա- 20
րերը չ'գտնուեցան։ Եւ երկնքիցը 21
տաղանդաչափ մեծ մեծ կարկուտ
էր իջնում մարդկանց վերայ, և
մարդիկ հայհոյեցին Աստուծուն
այն կարկտի հարուածի համար,
որ ոաստիկ մեծ է նորա պատու-
հասը։

ԳԼ. ԺԷ

Եւ այն եօթը սկաւառակներն 1
ունեցող եօթը հրեշտակներից
մէկն եկաւ և խօսեց ինձ հետ ա-
սելով. Եկ քեզ ցոյց տամ այն մեծ
պոռնկի դատաստանը, որ այն
շատ ջրերի վերայ նստում է, Որի 2
հետ պոռնկուեցան երկրի թա-
գաւորները և երկրի բնակիչները
նորա պոռնկութեան գինովն ար-
բեցին։ Եւ ինձ առաւ տարաւ հո- 3
գով մի անապատ. և տեսայ մի
կին՝ նստած կարմիր գազանի վերայ՝
լիքը հայհոյութեան անուններով
որ եօթը գլուխ ունէր և տասը
եղջիւր։ Եւ այն կինը որ ծիրանի 4
և կարմիր էր հագած, և ոսկով
և պատուական ակունքներով և
մարգարիտներով զարդարուած
մի ոսկի բաժակ ունէր իր ձեռ-

քումը, լիքը գարշելութիւնն-
ով և իր պիղծ պոռնկութիւնո-
5 վը. Եւ նորա ճակատումը գրուած
էր մի անուն՝ խորհուրդ, Մեծ
Բաբիլոն, պոռնիկների և երկրի
6 գարշելիների մայրը. Եւ տեսայ
այն կինը արբած սուրբերի աբ-
իւնովը և Յիսուսի վկաների աբ-
իւնովը. և երբոր տեսայ նորան,
7 մեծ զարմանքով զարմացայ. Եւ
հրեշտակն ասեց ինձ. Ինչու հա-
մար զարմացար. ես ասեմ քեզ
այդ կնկայ խորհուրդը, և այն
գազանինը, որ նորան վեր է ա-
ռել, որ եօթը գլուխը ունի և
8 տասը եղջիւրը. Գազանը որ տե-
սար, կար և չ՚կայ, և անդուն-
դիցն է դուրս գալու և կորուստն
է գնալու, և կ՚զարմանան երկրի
վերայ բնակողները որոնց անուն-
ները գրուած չեն կեանքի գրքի
մէջ աշխարհքի սկզբից հետէ,
երբոր տեսնեն այդ գազանը որ
9 կար, և չ՚կայ, թէև է. Այստեղ
է այն միտքը որ իմաստութիւն
ունի. այն եօթը գլուխը եօթն
սարեր են որ կինը նորանց վերայ
նստած է. և եօթը թագաւորներ
10 են. Հինգը ընկան, և մէկը կայ,
միւսը դեռ չէ եկել. և երբոր
գայ մի քիչ ժամանակ պէտք է
11 մնայ. Եւ այն գազանը որ կար
և չ՚կայ, նա էլ ութերորդն է և
այն եօթնիցն է, և կորուստն է
12 գնում. Եւ այն տասը եղջիւրը
որ տեսար, տասը թագաւորներ
են. որոնք դեռ թագաւորութիւն
չեն առել, այլ թագաւորի պէս
իշխանութիւն են անում մէկ
13 ժամ այն գազանի հետ. Սորանք
մէկ կամք ունին, և իրանց զօ-
րութիւնը և իշխանութիւնը կը
14 տան գազանին. Սորանք պատե-
րազմ կ՚անեն Գառի հետ, և
Գառը կ՚յաղթէ նորանց, որով-
հետև տէրերի Տէր է, և թա-
գաւորների թագաւոր. և նորանք
որ նորա հետ են, կոչուած,
ընտրուած և *հաւատարիմ են.
15 Եւ ասեց ինձ. Այդ ջրերը, որ
տեսար ուր որ պոռնիկը նստած
է. ժողովուրդներ են, և բազ-
մութիւններ և ազգեր և լեզու-
ներ. Եւ տասը եղջիւրը, որ տե- 16
սար գազանի վերայ, նորանք կ՚ա-
տեն պոռնկին, և նորան ամայի
և մերկ կ՚անեն, և նորա միսերը
կ՚ուտեն և կրակով կ՚այրեն նո-
րան. Որովհետև Աստուած գրաւ 17
նորանց սրտերի մէջ որ նորա
կամքն անեն, և միակամ լինեն,
և իրանց թագաւորութիւնը տան
գազանին մինչև որ Աստուծոյ
խօսքերը կատարուին. Եւ կինը, 18
որ տեսար, այն մեծ քաղաքն է,
որ թագաւորութիւն ունի երկրի
թագաւորների վերայ.

ԳԼ. ԺԸ

Եւ սորանից յետոյ տեսայ մի 1
հրեշտակ երկնքիցը վայր գալիս,
որ մեծ իշխանութիւն ունէր, և
երկիրը լուսաւորուեցաւ նորա
փառքիցը. Եւ զօրութեամբ ա- 2
ղաղակեց մեծ ձայնով և ասեց.
Ընկա՛ւ, ընկա՛ւ մեծ Բաբիլոնը,
և եղաւ դևերի բնակութիւն և
ամեն պիղծ հոգու արգելանոց,
և ամեն անսուրբ և ատելի թռ- 3
չունի վանդակ. Որովհետև նորա
պոռնկութեան բարկութեան գի-
նուցը խմեցին բոլոր ազգերը, և
երկրի թագաւորները նորա հետ
պոռնկուեցան. և երկրի վաճա-
ռականները նորա զեղխութեան
զօրութիւնիցը հարստացան. Եւ 4
մի ուրիշ ձայն լսեցի երկնքիցը
որ ասում էր. Դուրս եկէք դո-
րանից, ով իմ ժողովուրդ, որ
մասնակից չ՚լինիք դորա մեղքե-
րին, և որ դորա պատուհասիցը
չ՚ընդունիք. Վասնզի դորա մեղ- 5
քերը հասան մինչև երկինքը, և
Աստուած յիշեց դորա անիրա-
ւութիւնները. Հատուցումն արէք 6
դորան ինչպէս դա հատուցում
տուաւ ձեզ, և երկուպատիկ
տուէք դորան իր գործերի չա-
փովը. այն բաժակը որ դա լցրեց,
լցրէք դորա համար երկուպատիկ. 7
Եւ որչափ որ իրան փառաւորեց
և զեղխացաւ, այնչափ տանջանք
և սուգ տուէք դորան. որովհետև

*Գրաբ. հաւատացեալ

նա իր սրտումն ասում է. Թա-
գուհի եմ նստած, և այրի չեմ,
8 և բնաւ սուգ չեմ տեսնիլ. Նո-
րա համար մէկ օրում պիտի դան
դորա վերայ իր հարուածները՝
մահ, և սուգ, և սով, և կրա-
կով կ՚այրուի, որովհետև զօրա-
ւոր է Տէր Աստուածը՝ դորա դա-
9 տաստանն անողը. Եւ լաց և կոծ
կ՚անեն դորա վերայ երկրի թա-
գաւորները որ դորա հետ պոռ-
նկուեցան և զեղխութիւն արին,
երբոր կ՚տեսնեն դորա այրուելու
10 ծուխը, հեռու կանգնած դորա
տանջանքի վախիցը, և կ՚ասեն.
Վա՛յ, վա՛յ քեզ, մեծ քաղաքդ
Բաբիլոն, զօրաւոր քաղաք. որ
մէկ ժամում եկաւ քո դատաս-
11 տանը. Եւ երկրի վաճառական-
ները ողբ և սուգ կ՚անեն նորա
վերայ, որ այլ ևս ոչ ոք չէ առ-
12 նում նորանց ապրանքը. Ոսկու
և արծաթի և պատուական ա-
կունքների և մարգարիտի և բե-
հեղի և ծիրանիի և մետաքսի և
որդան կարմիրի ապրանքը. և ա-
մեն խնկէ փայտը և ամեն փղոս-
կրեայ անօթը, և ամեն ազնիւ
փայտից և պղնձից և երկաթից
և մարմարիոնից շինած անօթը.
13 Եւ կինամոնը և խունկերը և իւղը
և կնդրուկը և գինին և ձէթը,
և նաշիհը և ցորենը և արջառ-
ներն ու ոչխարները. և ձիանքը և
կառքերը, և մարմինները և մարդ-
14 կանց հոգիները. Եւ քո հոգու
ցանկացած պտուղները գնացին
քեզանից, և ամեն շքեղ և լու-
սափայլ վայելչութիւնները գնա-
ցին քեզանից, և այլ ևս բնաւ
15 չես գտնիլ նորանց. Եւ այս բա-
ների վաճառականները, որ նո-
րանից հարստացան հեռուից կը
կանգնեն նորա տանջանքի վա-
խիցը լաց և սուգ անելով, կ՚ա-
16 սեն. Վա՛յ, վա՛յ մեծ քաղաք որ
բեհեղ և ծիրանի և որդան կար-
միր էիր հագած, և ոսկով և
ազնիւ քարերով և մարգարիտով
17 զարդարուած: Որովհետև մէկ
ժամի մէջ այդչափ մեծութիւնը
աւերակ եղաւ. և ամեն նաւա-
վար և այն ամենն որ նաւով
գնում են տեղ տեղ, և նաւաս-
տիները և նորանք որ ծովումն են
գործում, հեռուից կանգնեցին,
Եւ աղաղակում էին նորա այ- 18
րուելու ծուխը տեսնելով և ա-
սում. Ո՞րն է այս մեծ քաղաքին
նման. Եւ հող ցանեցին իրանց 19
գլուխների վերայ, և մեծ ձայ-
նով աղաղակեցին լաց և սուգ
անելով և ասեցին. Վա՛յ, վա՛յ
մեծ քաղաք որ նորանում հարըս-
տացան բոլոր ծովի վերայ նաւեր
ունեցողները նորա պատուակա-
նութիւնիցը. որովհետև մէկ ժա-
մի մէջ աւերակ դառաւ. Ուրախ 20
եղէք նորա վերայ, երկինք և սուրբ
առաքեալներ և մարգարէներ, որ
Աստուած ձեր դատաստանը դա-
տեց դորա վերայ.
Եւ մէկ զօրաւոր՝ հրեշտակ մի 21
քար առաւ մեծ ջաղացաքարի
պէս և գցեց ծովի մէջ ասելով.
Այսպէս ուժով պիտի վայր գցուի
Բաբիլոն մեծ քաղաքը, և այլ ևս
չ՚գտնուի. Եւ քնարերգների, և 22
երաժիշտների և որնգահարների,
և փողահարների ձայնը այլևս
պիտի չ՚լսուի քո միջումը և այլ-
ևս ոչ մի արհեստագէտ բնաւ չի
գտնուիլ քեզանում. և ջաղացի
ձայն այլևս չի լսուիլ քեզանում.
Եւ ճրագի լոյս այլևս լոյս չի 23
տալ քեզանում. և փեսայի և
հարսի ձայնը այլևս բնաւ չի
լսուիլ քեզանում. որովհետև քո
վաճառականները երկրի մեծա-
մեծներն էին. քո կախարդու-
թիւնովը մոլորուեցան բոլոր ազ-
գերը. Եւ նորանում գտնուեցաւ 24
մարգարէների և սուրբերի և երկ-
րի վերայ բոլոր սպանուածների
արիւնը.

ԳԼ. ԺԹ

Եւ սորանցից յետոյ լսեցի շատ 1
բազմութեան մեծ ձայնի պէս մի
ձայն երկնքումը որ ասում էր.
Ալէլուիա, փրկութիւնը և փառ-
քը և պատիւը և զօրութիւնը
մեր Տէր Աստուծուն. Որովհետև 2
ճշմարիտ և արդար են նորա դա-
տաստանները. որովհետև նա այն

մեծ պոռնիկին դատեց նորա
պոռնկութիւնովը, և իր ծառա-
ների արիւնի վրէժն առաւ նորա
3 ձեռքիցը։ Եւ երկրորդ անգամ
ասեցին, Ալէլո՛ւիա. և նորա ծու-
խը բարձրանում էր յաւիտեանս
4 յաւիտենից։ Եւ քսան և չորս
երէցները և չորս կենդանիները
վայր ընկան և երկրպագեցին Ա-
ստուծոյն որ աթոռի վերայ նստած
էր և ասացին. Ամէն, Ալէլո՛ւիա։
5 Եւ աթոռիցը մի ձայն գուրս ե-
կաւ ասելով. Օրհնեցէք մեր Ա-
ստուծոյն, ով նորա բոլոր ծառա-
ները, և նորանից վախեցողները,
6 փոքրերը և մեծերը։ Եւ ես լսեցի
իբր մի մեծ բազմութեան ձայն
և իբր շատ ջրերի ձայն, սաստիկ
որոտմունքի ձայնի նման. որ ա-
սում էր. Ալէլո՛ւիա, որովհետև
Ամենակալ Տէր Աստուածը թա-
7 գաւորեց։ Խնդանք և ուրախ լի-
նենք, և փառք տանք նորան որ
եկաւ Գառի հարսանիքը, և նո-
8 րա կինը պատրաստեց իրան։ Եւ
տրուեցաւ նորան որ սպիտակ
սուրբ և լուսափայլ բեհեզ հագ-
նի. (որովհետև բեհեզը սուրբերի
.9 արդարութիւնն է։) Եւ ասեց ինձ.
Գրիր, երանելի են Գառի հար-
սանիքի բընթրիքին կանչուածնե-
րը. և ասեց ինձ. Սորանք Աստու-
10 ծոյ ճշմարիտ խօսքերն են։ Եւ
ես ընկայ նորա ոտների առաջին
որ երկրպագեմ նորան, և ասեց
ինձ. Զգոյշ կաց, մի անէր. ես ծա-
ռայակից եմ քեզ և քո եղբայր-
ներին, որ Յիսուս Քրիստոսի վկա-
յութիւնն ունին. Տէր Աստուա-
ծուն երկրպագիր. որովհետև Յի-
սուսի վկայութիւնը մարգարէու-
թեան հոգին է։
11 Եւ տեսայ երկինքը բացուած,
և ահա մի սպիտակ ձի, և նա որ
նորա վերայ նստած էր, կոչվում
էր Հաւատարիմ և ճշմարիտ, և
արդարութիւնով է դատաստան
12 անում և պատերազմում։ Եւ
նորա աչքերը կրակի բոցի պէս,
և նորա գլխի վերայ շատ պսակ-
ներ. և անուն ունէր գրած, որ
ոչ ով չ'գիտեր բայց միայն ինքն։
13 Եւ իր վերայ հանդերձ էր հա-
գած արիւնով ներկուած, և նո-
րա անունն կոչվում է Աստուծոյ
Բան։ Եւ երկնքի զօրքերը նորա 14
ետևից գնում էին սպիտակ ձիերի
վերայ սպիտակ և մաքուր բե-
հեզ հագած։ Եւ նորա բերանիցը 15
գուրս է գալիս սրած սուր, որ
նորանով զարկէ ազգերին. և ինքը
հովուում է նորանց երկաթէ գա-
ւազանով. և ինքը կոխում է Ա-
մենակարող Աստուծոյ բարկու-
թեան և սրտմտութեան գինու
հնձանը։ Եւ իր հանդերձի վերայ, 16
և իր ազդրի վերայ գրած էր ա-
նունը, ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԹԱԳԱ-
ՒՈՐ ԵՒ ՏԻՐԵՐԻ ՏԻՐ։
Եւ տեսայ մի ուրիշ հրեշտակ 17
որ կանգնած էր արեգակի վերայ,
և մեծ ձայնով աղաղակեց ասե-
լով ամեն թռչուններին որ եր-
կնքի մէջ թռչում են. Եկէք
հաւաքուեցէք մեծ Աստուծոյ
ընթրիքին. Որ ուտէք թագաւոր- 18
ների մարմինները, և հազարա-
պետների մարմինները և հզօրնե-
րի մարմինները. և ձիերի և նո-
րանց վերայ նստողների մարմին-
ները, և ամենի մարմինները՝ ա-
զատների և ծառաների, մեծերի
և փոքրերի։
Եւ տեսայ գազանը և երկրի 19
թագաւորները և նորանց զօրքե-
րը մեկ տեղ ժողովուած որ պա-
տերազմ անեն ձիին վերայ նստողի
հետ և նորա զօրքերի հետ։ Եւ 20
գազանը բռնուեցաւ, և նորա հետ
սուտ մարգարէն էլ որ նշաններ
էր անում նորա առաջին, որով-
հետև մոլորեցրեց նորանց որ գա-
զանի դրոշմն առան, և նորանց
էլ որ երկրպագեցին նորա պատ-
կերին. Եւ երկուսն էլ կենդանի
կերպով լիճը
կենդանի գցուեցան կրակի լիճի 21
մէջը որ ծծմբով այրվում է։ Եւ
մնացեալները սպանուեցան ձիին
վերայ նստողի սրիցը, որ նորա բե-
րանիցը դուրս էր գալիս. և բո-
լոր թռչունները կշտացան նորանց
մսերիցը։

Գլ. Ի

1 Եւ տեսայ մի հրեշտակ վայր
գալիս երկնքիցը, որ դժոխքի բա-
նալին ուներ, և մի մեծ շղթայ
2 իր ձեռքումը։ Եւ նա բռնեց այն
վիշապին այն առաջի օձին որ է
Բանաւարկուն և սատանան, և կա-
3 պեց նորան հազար տարի։ Եւ
գցեց նորան անդունդի մէջ, և
փակեց և կնիք դրաւ նորա վե-
րայ որ էլ չ'մոլորեցնէ ազգերին
մինչև որ հազար տարին լրանայ.
և նորանից յետոյ պէտք է որ
նա մի քիչ ժամանակ արձակուի։
4 Եւ տեսայ աթոռներ, և նո-
րանց վերայ նստեցին. և դատա-
ւորութիւն տրուեցաւ նորանց.
և նորանց հոգիքը որ գլխատուել
էին Յիսուսի վկայութեան հա-
մար և Աստուծոյ խօսքի համար,
և նորանց որ չ'երկրպագեցին գա-
զանին և ոչ էլ նորա պատկերին,
և նորա դրոշմը չ'առան իրանց
ճակատի և ոչ էլ իրանց [ձ]
ձեռքի վերայ, և սորանք կեն-
դանացան և Քրիստոսի հետ թա-
գաւորութիւն արին հազար տա-
5 րի. Իսկ մեռելների մնացեալները
չ'կենդանացան, մինչև որ հազար
տարին լրանայ։ Սա առաջի յա-
6 րութիւնն է։ Երանելի և սուրբ
է, որ բաժին ունի առաջի յա-
րութեան մէջ. սորանց վերայ իշ-
խանութիւն չ'ունի երկրորդ մա-
հը. այլ Աստուծոյ և Քրիստոսի
քահանաներ կ'լինին. և նորա հետ
կ'թագաւորեն հազար տարի։
7 Եւ երբոր հազար տարին կը
լրանայ կ'արձակուի սատանան իր
բանտիցը. և գուրս կ'գնայ որ
մոլորեցնէ այն ազգերը, որ երկրի
չորս անկիւնումն են, և Գոգը և
Մագոգը, որ հաւաքէ նորանց
պատերազմի, որոնց թիւը ծովի
8 աւազի չափ է։ Եւ վեր գնացին
երկրի լայնութեան վերայ, և
սուրբերի բանակը և սիրելի քա-
ղաքը շրջապատեցին. Եւ երկնքի-
ցը կրակ իջաւ Աստուածանից և
լափեց նորանց. և Բանաւարկուն
որ նորանց մոլորեցնում էր գցուե-
ցաւ կրակի և ծծմբի լիճը, ուր
որ էին գազանը և սուտ մարգա-
10 րէն, Եւ կ'չարչարուին գիշեր և
ցերեկ յաւիտեանս յաւիտենից։

Եւ տեսայ մի սպիտակ մեծ ա- 11
թոռ, և նորա վերայ նստողին.
որի երեսից երկինքը և երկիրը
փախան. և տեղ չ'գտնուեցաւ
նորանց համար։ Եւ տեսայ մե- 12
ռելները մեծ և փոքր կանգնած
աթոռի առաջին. և գրքեր բաց-
ուեցան, և մի ուրիշ գիրք էլ
բացուեցաւ, որ է կեանքի Գիրքը.
և մեռելները դատուեցան այն
գրքերում գրուածներից իրանց
գործերի համեմատ։ Եւ ծովը իր 13
մէջի մեռելները տուաւ, և մահը
և դժոխքը իրանց մէջի մեռելնե-
րը տուին. և ամեն մէկին իրանց
գործերի համեմատ դատուեցան։
Մահը և դժոխքը գցուեցան կրա- 14
կի լճի մէջ. սա երկրորդ մահն
է։ Եւ եթէ մէկը գրուած չ'գտ- 15
նուեցաւ կեանքի գրքի մէջ, կրա-
կի լճի մէջ գցուեցաւ։

Գլ. ԻԱ

Եւ տեսայ նոր երկինք և նոր 1
երկիր. որովհետև առաջի երկին-
քը և երկիրն անցաւ. և էլ ծով
չ'կայ։ Եւ ես՝ [Յովհաննէս] ե- 2
սայ սուրբ քաղաքը՝ նոր Երուսա-
ղէմը վայր գալիս Աստուծանից
երկնքիցը պատրաստուած ինչպես
մի զարդարուած հարս իր մարդի
համար։ Եւ մի մեծ ձայն լսեցի 3
երկնքիցը, որ ասում էր. Ահա Ա-
ստուծոյ խորանը մարդկանց հետ,
և նա կ'բնակուի նորանց հետ,
և նորանք կ'լինին նորան ժողո-
վուրդ, և ինքն Աստուած նորանց
հետ կ'լինի նորանց Աստուած։ 4
Եւ կ'չջէ Աստուած բոլոր ար-
տասուքը նորանց աչքերիցը. և
մահն այլևս չի լինիլ, ոչ սուգ,
և ոչ աղաղակ. և ոչ ցաւ այլևս
չի լինիլ, որովհետև առաջիններն
անցան։ Եւ աթոռի վերայ նըս- 5
տողն ասեց. Ահա ամեն բան նոր
եմ անում. և ասեց ինձ. Գրիր.
որ այս խօսքերը ճշմարիտ և հա-
ւատարիմ են։ Եւ ինձ ասեց. 6
Եղաւ, ես եմ Ալփան և Օմեգան.
Սկիզբը և վերջը. ես ձրի կ'տամ
ծարաւին կեանքի ջրի աղբիւրիցը։ 7
Ով որ յաղթէ, ամենը կ'ժառան-

գէ. և ես կ'լինիմ նորան Աստ-
ուած, և նա կ'լինի ինձ որդի։
8 Իսկ վախկոտներին և անհաւատ-
ներին, և պիղծերին և մարդաս-
պաններին և պոռնիկներին, և
կախարդներին և կռապաշտներին
և ամեն ստախօսներին բաժինը
այս լճումը կ'լինի որ կրակով և
ծծմբով վառուած է։ Սա է երկ-
րորդ մահը։
9 Եւ այն եօթը հրեշտակներից
մէկը, որ եօթը սկաւառակն ու-
նէին վերջի եօթը պատուհասներ-
ովը լցուած, ինձ մօտ եկաւ,
խօսեց ինձ հետ և ասեց. Եկ ցոյց
տամ քեզ այն հարսը, որ Գառի
10 կինն է. Եւ առաւ տարաւ ինձ
հոգով մի մեծ և բարձր սար, և
ինձ ցոյց տուաւ այն մեծ քա-
ղաքը՝ սուրբ Երուսաղէմը, որ
վայր էր գալիս Աստուածանից
11 երկնքիցը. Եւ Աստուծոյ փառքն
ունէր. և նորա լուսաւորութիւնը
պատուական ակունքի նման ինչ-
պէս բիւրեղացած յասպիս փար։
12 Որ մեծ և բարձր պարիսպ ունէր,
և տասնևերկու դուռ ունէր, և
դռների վերայ տասնևերկու հրեշ-
տակ, և նորանց վերայ անուններ
էին գրուած որ Իսրայէլի որդ-
կանց տասնևերկու ցեղերի անուն-
13 ներն են։ Արևելքից երեք դուռ,
հիւսիսից երեք դուռ, հարաւից
երեք դուռ, և արևմուտքից երեք
14 դուռ։ Եւ քաղաքի պարիսպը
տասնևերկու հիմեր ունէր, և նո-
րանց վերայ Գառի տասնևերկու
առաքեալների տասնևերկու ա-
15 նունները։ Եւ ինձ հետ խօսողը
մի ոսկի եղէգ ունէր, որ չափէր
քաղաքը, և նորա դռները, և նո-
16 րա պարիսպը. Եւ քաղաքը քա-
ռակուսի էր. և նորա երկայնու-
թիւնն այնչափ է որչափ նորա
լայնութիւնը, և չափեց քաղաքը
եղէգովը, և նորա չափը տասն-
ևերկու հազար ասպարէզ, նորա
երկայնութիւնը և լայնութիւնը
և բարձրութիւնը հաւասար է։
17 Եւ նորա պարիսպը չափեց հար-
իւր քառասուն և չորս կանգուն.
մարդի չափով որ հրեշտակինն է։
18 Եւ նորա պարիսպի շինուածքը
յասպիս փարէց էր. և քաղաքը
մաքուր ոսկի էր իստակ ապակու
նման։ Եւ քաղաքի պարիսպի հի- 19
մունքը զարդարուած էին ամեն
ազնիւ ակունքներով. առաջին
հիմը յասպիս, երկրորդը շափի-
զայ, երրորդը քաղկեդոն, չոր-
րորդը զմրուխտ, Հինգերորդը ե- 20
ղընգնաքար, վեցերորդը սարդիոն,
եօթներորդը ոսկեքար, ութերոր-
դը բիւրեղ, իններորդը տպա-
զիոն, տասներորդը քրիսոպրասոս,
տասնևմէկերորդը յակինթ, տասն-
ևերկուերորդը ամեթովս։ Եւ 21
տասնևերկու դուռը տասնևեր-
կու մարգարիտից՝ ամեն մէկ դու-
ռը մէկ մարգարիտից. և քաղա-
քի հրապարակը մաքուր ոսկի
ինչպէս թափանցիկ ապակի։ Եւ 22
տաճար չ'տեսայ նորա մէջ, ո-
րովհետև Տէր Աստուած Ամենա-
կալը և Գառն է նորա տաճարը։
Եւ քաղաքը ոչ արեգակին և ոչ 23
լուսնի պէտք չ'ունէր, որ լոյս
տան նորա մէջ. որովհետև Աս-
տուծոյ փառքը լուսաւորում էր
նորան, և նորա ճրագը Գառն էր։
Եւ [փրկեալների] ազգերը նորա 24
լոյսովը պիտի գնան. և երկրի
թագաւորները իրանց փառքը և
պատիւը կ'բերեն նորա մէջ։ Եւ 25
նորա դռները չեն փակուիլ ցե-
րեկը, որովհետև գիշեր չի լինիլ
այնտեղ։ Եւ ազգերի փառքը և 26
պատիւը կ'բերեն նորա մէջ։ Եւ 27
բնաւ չի մտնիլ նորա մէջ ոչ մի
անմաքրութիւն անող և պղծու-
թիւն և ստութիւն գործող, բայց
միայն նորանք որ Գառի կեանքի
գրքի մէջ գրուած են։

ԳԼ. ԻԲ

Եւ ցոյց տուաւ ինձ մի մաքուր 1
գետ, կենդանի ջրի ակնվանու
նման փայլուն, որ դուրս էր գա-
լիս Աստուծոյ և Գառի աթոռից։
Եւ նորա հրապարակի միջումը և 2
գետի այս կողմին և այն կողմին
կեանքի ծառ կար, որ տասնևեր-
կու կերպ պտուղ էր բերում.
ամեն մէկ ամիս տալիս էր իր
պտուղը. և այն ծառի տերևը

3 բժշկում էր հեթանոսներին։ Եւ
այլ ևս նզովք բնաւ չի լինիլ. և
Աստուծոյ և Գառի աթոռը նո-
րանում կ'լինի. և նորա ծառա-
4 ները կ'պաշտեն նորան։ Եւ նորա
երեսը կ'տեսնեն, և նորա անունը
5 նորանց ճակատների վերայ։ Եւ
գիշեր չի լինիլ այնտեղ, և ճրա-
գի և արեգակի լոյս պէտք չէր
նորանց. որովհետև Տէր Աստ-
ուածը լուսաւորում է նորանց,
և կ'թագաւորեն յաւիտեանս
յաւիտենից։
6 Եւ ասեց ինձ. Այս խօսքերը
հաւատարիմ և ճշմարիտ են. և
Տէրը՝ սուրբ մարգարէից Աստ-
ուածն իր հրեշտակն ուղարկեց
որ իր ծառաներին ցոյց տայ այն
7 որ շուտով պիտի լինի։ Ահա
շուտով գալիս եմ. երանի նորան
որ այս գրքի մարգարէութեան
խօսքերը պահում է։
8 Եւ ես Յովհաննէս՝ այս բաներ-
ը լսող և տեսնող, երբոր լսեցի
և տեսայ, ընկայ որ երկրպագեմ
այն հրեշտակի ոտների առաջին,
որ այս բաները ցոյց էր տա-
9 լիս ինձ։ Եւ նա ինձ ասեց.
Զգուշացիր. մի անիր. որովհետև
ես ծառայակից եմ քեզ և քո
եղբայր մարգարէների և այս գրքի
մարգարէութեան խօսքերը պա-
հողների. Աստուծուն երկրպա-
10 գիր։ Եւ ասեց ինձ. Մի կնքիր
այս գրքի մարգարէութեան խօս-
քերը. որովհետև ժամանակը մօտ
11 է։ Անիրաւութիւն գործողը թող
էլ անիրաւանայ, և կեղտոտը
թող էլ կեղտոտուի, և արդարը
թող էլ արդարանայ, և սուրբը
12 թող էլ սրբուի։ Եւ ահա շու-
տով գալիս եմ և իմ վարձքն ինձ
հետ, որ ամեն մէկին կ'հատու-
ցանեմ ինչպէս իր գործը կ'լինի։
Ես եմ Ալֆան և Օմեղան. սկիզբը 13
և վերջը, առաջինը և վերջինը։
Երանելի են նորա պատուիրանք- 14
ները պահողները. որ նորանցը կը
լինի իշխանութիւնը կեանքի ծա-
ռի վերայ, և քաղաքի դռնովը
ներս կ'մտնեն։ Բայց դուրսն են 15
շները և կախարդները և պոռնիկ-
ները և սպանողները և կռապաշտ-
ները. և ամեն ստութիւն սիրողն
ու գործողը։
Ես Յիսուս իմ հրեշտակն ու- 16
ղարկեցի, որ վկայէ ձեզ այս բա-
ները եկեղեցիների մասին. ես եմ
Դաւիթի արմատը և սերունդը
և առաւօտեան պայծառ աստղը։
Եւ Հոգին և հարսն ասում են. 17
Եկ. և լսողն ասէ, Եկ. և նա որ
ծարաւ է՝ թող գայ, և նա որ
կամենում է՝ թող առնէ կեանքի
ջուրը ձրի։
Որովհետև ես վկայում եմ ա- 18
մենին որ լսում է այս գրքի մար-
գարէութեան խօսքերը. եթէ մէ-
կը բան աւելացնէ սորանց վերայ,
Աստուած կ'աւելացնէ նորա վե-
րայ այն պատուհասները որ այս
գրքումը գրուած են։ Եւ եթէ 19
մէկն այս գրքի մարգարէութեան
խօսքերիցը բան պակասեցնէ,
Աստուած կ'պակասեցնէ նորա
բաժինը կեանքի գրքիցը, և սուրբ
քաղաքիցը, և այս գրքում գրը-
ուածներիցը։ Այս բաներին վկա- 20
յողը ասում է. Այո. ես շուտով
գալիս եմ։ Ամէն։ Եկ, Տէր Յի-
սուս։
Մեր Տէր Յիսուս Քրիստոսի 21
շնորհքը լինի ձեր ամենի հետ։
Ամէն։





